ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

# «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ»

# ՀԱՄԱԲԱՐԲԱՌ

Կազմեց՝ բանասիրական գիտությունների թեկնածու
Սուսաննա Գրիգորյան

## ԳԻՐՔ Բ

## Բ - Ծ

ԵՐԵՎԱՆ
«Տիգրան Մեծ» հրատարակչություն
2012

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:**

**Պատասխանատու խմբագիր՝**
**բանասիրական գիտությունների դոկտոր**
**Լ. Շ. Հովհաննիսյան**

**Գրիգորյան, Ս. Մ.**
«Գիրք հարցմանց», Համաբարբառ/Գրիգոր Տաթևացի: Կազմ.՝ Ս. Մ. Գրիգորյան: Խմբ.՝ Լ. Շ. Հովհաննիսյան, - Եր.: «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2012.
Հ. Բ. - 1168 էջ:

*Բնագրային համաբարբառը գրեթե փոխարինում է բնագրին: Գրիգոր Տաթևացու նշանավոր «Գիրք հարցմանց»-ը հրատարակվել է 1729 թվականին, Կ. Պոլսում: Նրա բնագրային համաբարբառը կարող է դառնալ սեղանի գիրք՝ թե հոգևորական գործչի, թե բանասերի, թե հայագիտությամբ և միջնադարով զբաղվող յուրաքանչյուր մասնագետի համար:*

© Սուսաննա Գրիգորյան, 2012

# Բ

**ԲԱԲԻԼԱՑԻ** - Եւ յետ գերութեանն իսրայէլի անցեալ ամք **ճլե**, ել արքայն *բաբիլացւոց* նաբուգոդոնոսոր ի վերայ երուսաղէմի. ի **ժ** ամի թագաւորութեանն յովակիմայ. և էառ հարկ ի նմանէ. և զմեծ մասն սրբութեանց տաճարին աւերեաց: - 447. Եւ եղև գերութիւնն *բաբիլացւոց* **ի** ամ ի վերայ յուդայ և ո՛չ ի վերայ իսրայէլի որպէս ասէր երեմիա: - 447. Երրորդ՝ որպէս զստնդիայի մանուկն **է** ամ խրատէ՛ դայեակն. այսպէս ժողովուրդն որ ել յերկրէն իւրեանց, երկիրն *բաբիլացւոց* **ի** ամ ի գիրկս իւր դայեկեաց զնոսա և սնոյց. զի յետ դարձին յերկիրն իւրեանց՝ զբարիս գործեսցեն: - 448. Չորրորդն ի դաւթէ՛ մինչև ցգերութիւնն *բաբիլացւոց*: - 467

**ԲԱԲԻԼՕՆ** - ...ի *բաբիլօն* տալով մեզ զմիսայէլ, զանանիա, և զազարիա: - 28. Եւ յետ **եճ** և **իե** ամաց ջրհեղեղին էր սկիզբն շինուածոյ ամբարտակին ի աշխարհին *բաբելօնի* ի դաշտին քաղանէ: - 297. Սարդիոն. շիկագոյն արիւնատեսիլ. գտանի ի *բաբիլօն*. և թափանց է և դեղ առողջութեան: - 348. Յակինթ. կարմիր է. գտանի առ *բաբիլոնիւ*: - 348. Տևեալ ամս **ն**. մինչ ի սեդեկիա որ գերեցաւ ի *բաբիլօն*. և հրձիգ եղև տաճարն և եւուսաղէմ: - 446. Եւ զդանիէլ՝ և **զգ** մանկունքն՝ և **ժռ** այր ի մեծամեծացն գերի տարաւ ի *բաբիլօն*: - 447. Եւ ըմբռնեաց զսեդեկիա արքա յուդայ, և փորեալ զաչսն տարաւ ի *բաբիլօն*: - 447. Եւ յետ ե ամսոյ՝ նաբուզարդան դահճապետն հրձիգ արար զերուսաղէմ և զտաճարն և զտուն թագաւորացն. և զպարիսպն կործանեաց. և զսիւնսն պղնձի և զաւազանն և զամենայն կահ պղնձի և արծաթի տարաւ ի *բաբիլօն*: - 447. Վասն է՞ր **ի** ամ եդ զվճիռ գերւոյն *բաբիլօնի* ի ձեռն երեմիայի: - 448. Չորրորդ՝ գերիլն ի *բաբիլօն* զգերութիւն բնութեանս նշանակէ. և եօթանասուն ամն զեօթն դար կենցաղոյս. և ապա դարձումն ի հայրենի բնակութիւնն մեր ի ձեռն փրկչին մերոյ և աստուծոյ: - 448. Դարձեալ՝ յերիս ժամանակս ազատեցան ի *բաբիլօնէ՛*. այսինքն կիւրոսիւ սաղմանասարաւ. դարեհիւ զօրաբաբէլ. արտաշէսիւ եզր դպիր և նէեմի: - 448. Ա՛րդ՝ ծնանի ի *բաբելօն* ի ցեղէն դանայ. և եկեսցէ յերուսաղէմ և թլփատեսցէ զինքն: - 707. Իսկ վաթսունն *զբաբելօնի* պատկերն **կ** կանգուն երկայն, և **զ** լայն. յորում ընդարձակեցաւ կռամոլութիւն: - 708

**ԲԱԳԻՆ +** Իններորդ, գեթէօն՝ այն որ զցօղն ետես ի վերայ գեղման, զիօր իւրոյ զեզն պարարակ հրամանաւ հրեշտակին ի մէջ գիշերին պատարագեալ. և զանտառն և զսեղանն բահաղու կործանեալ և զերծեալ ի ձեռաց նոցա. որ էր օրինակ փրկչին. զի նա՛ է եզն պարարակ պատարագեալ. և ի մէջ գիշերի *զբագինսն* դժոխոց կործանեալ և յարուցեալ և ապրեալ ի մահու: - 513. մինչ խօսիլ տայ *բագնեաց*, և լերանց գնալ, և ծառոց ծաղկիլ և չորանալ. և մեռելոց յառնել. և հրոյ իջանել յերկնից. և չար հոգւովն խօսիլ տայ այլ և այլ լեզուս: - 708

**ԲԱԶԱՅ, ԲԱԶԷ +** Կամ կտուց. որպէս *բազէի*: - 216. Այլ այժմ վասն զգեստուց պահեմք զոչխարս. և վասն կերակրոյ զեզինս. և վասն բեռին զէշս. և վասն բառնալոյ զմեզ զձիս. և վասն զթշնամիս հալածելոյ զշունս. և վասն զթռչունս ըմբռնելոյ *զբազէս*. և զայլսն նմանապէս: - 217. Սոքա՛ են հոսանք ջուրցն լիութեան. զորոց յերգս գտանի սիրելոյ. որ ի խորութիւնն հայեցեալ աղաւնւոյն, ի գալստենէ *բազային* զգուշանայ: - 756

**ԲԱԶԿԱՏԱՐԱԾ +** Եւ տէրն *բազկատարած* ի խաչին զսատանայ կործանէր: - 329

**ԲԱԶԿՈՒՐԱՐ +** Այլ և բազպան, և *բազկուրար* զահեակ ուսովն: - 608. *Բազկուրար* յահեակ բազուկն ուսովն ածեալ՝ և կապեալ ի վերայ արմնկանն ի կախ ունելով: - 608

**ԲԱԶՄԱԲԱՆ +** Եւ երրորդն որ է նշանակաւ, ա՛յլ առաւել և ընդարձակ և *բազմաբա՛ն* է. վասն զի խառնի ի զգալիսս. որ բազո՛ւմ է և բաժանեալ: - 123

**ԲԱԶՄԱԲԱՇԽ +** Եւ հոգին սուրբ *բազմաբա՛շխ* է և անպակաս հեղումն ի վերայ մարմնոյ: - 523

**ԲԱԶՄԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ** - Զագահութիւնն՝ *բազմաբաշխութիւնն*. որ ետ զմարմին իւր ի կերակուր և զարիւնն իւր ըմպելի. զհոգին ի գին. զջուր կողին ի լուացումն. զհանդերձն՝ խաչողացն. զմարմինն՝ աշակերտացն. և զմայրն՝ յոհաննու: - 489

**ԲԱԶՄԱԲԵՂՈՒՆ +** Եւ զայս առնէ միտքն իբրև մշակ. որ առեալ զսերմն և *բազմաբեղունս* աճեցուցանէ. այսպէս և միտքն խորհելով զչարն՝ զայսոսիկ ախտս առաւելու ի մեզ: - 564

**ԲԱԶՄԱԳՈՒԹ +** Են և ասին, որպէս աստուած. արարիչ. ողորմած. *բազմագութ*: - 55

**ԲԱԶՄԱԴԷՄ +** Նաև անբարիշտ կամք նորա դարձել է յատելութիւն և ի նախանձ մարդոյն. զի ամենայն ջանիւ նկրտի ի կործանումն նորա *բազմադիմի* փորձութեամբ: - 146

**ԲԱԶՄԱԴԻՄԻ +** Բազմօրինակ մասամբք և *բազմադիմի* ստուերակերպութեամբ: - 456. Այլ *բազմադիմի* է մեկնութիւնն «որ ասիցէ բան զորդւոյ մարդոյ՝ թողցի»: – 566

**ԲԱԶՄԱԵՂԱՆԱԿ** - Գիտելի՛ է, զի ոչ են *բազմաեղանակ* ասի: - 111. *Բազմաեղանա՛կ* է: - 308. Եւ գիտելի է, զի *բազմաեղանակ* տեսանի գործ ողորմութեան և արդարութեանն աստուծոյ: - 457. Եւ *բազմաեղանակ* է օծումն: - 474. *Բազմաեղանա՛կ* է: - 665

**ԲԱԶՄԱԶԱՆ +** Իսկ յերիս երրեակս թըւեալ՝ *բազմազա՛ն* է իմանալի: - 134. Հինգերորդ՝ զի *բազմազան* կենդանիք ի ջուրս զտեղի կալցեն: - 207. Եւ թէպէտ կարելի՛ է ըստ *բազմազան* եղանակաց այս կարգ համեմատութեան ի սոյն խնամով աշխատասիրաց: - 304. Արդ՝ *բազմազան* եղանակաւ համեմատի մեծն մովսէս փրկչին մերոյ քրիստոսի...: – 328. Խնկաղացն՝ *բազմազան* առաքինութեամբ խնկեալք: - 346. Դարձեալ՝ *բազմազա՛նք* են առաքինութիւնքն ի մեզ հանդերձ քաղցրութեամբն: - 381. Քսանևէ, Վասն անապականութեան մարմնոյն քրիստոսի *բազմազան* վկայութեամբք: - 455. Արդ՝ կարգեցին *բազմազան* վկայութիւնս զոր հաստատապէս տօնեմք զծնունդն քրիստոսի ի վեցն յունվարի: - 483. Այլ սակայն բնախօս քննութեամբ ցուցցուք *բազմազան* եղանակաւ: - 498. Տեսութիւնն է աստուծոյ. որք ըստ *բազմազան* գործոց իւրեանց տեսանեն. և որպէս ի տան փառաւորին: - 686. Եւ ոմանք յորոց սրբազան առաջնորդն մեր, պակասութիւն ասաց զոլ զորս յետոյ կրեցին անդամք նորա. այսինքն ըզհատումն մասանց. այրումն հրոյ. և այլ իմն *բազմազան* տանջանս. յորմէ թուով պակասեաց ի քրիստոս և յաւելաւ անդամս իւր: - 781. Եւ այլք ի բազմազան տանջանարանս մաշեալք: - 788

**ԲԱԶՄԱԶԱՆԱՊԷՍ** - Դարձեալ՝ հասարակն և յատուկն աստուածային՝ *բազմազանապէս* ասի ի սրբոյն դիոնիսեայ: - 105

**ԲԱԶՄԱԺԱՄԱՆԱԿԵԱՅ +** Նախ՝ զի *բազմաժամանակեա՛յ* է: - 114. Այլ զի *բազմաժամանակեայ* է և յաւիտենից: - 114

**ԲԱԶՄԱԽԱՉ +** Եւ ունին զգեստ՝ նափորտ *բազմախաչ*. և ի վերայ եմիփորոն ե կրկին խաչիւ զարդարեալ: - 607

**ԲԱԶՄԱԾԻՆ +** Զի սրտիւն ապրին մարմնակեր գազանք. և հեշտ ցանկութեամբ *բազմածին* կենդանիք աճեն. և երկչոտութեամբ ապրին նապաստակք և տկարք ի հզօրից...: – 563

**ԲԱԶՄԱԿԱՆ +** Յորժամ ըզսարսափելի գլուխն յովհաննու մկրտչին՝ բերին ի մէջ *բազմականացն* հերովդէի, - 656

**ԲԱԶՄԱԿԵՐՈՒԹԻՒՆ +** Չորրորդ՝ ի խրախութիւն գինւոյ՝ ժ մեղք գործին. այսինքն Նա՛խ՝ *բազմակերութիւն*. – 322

**ԲԱԶՄԱԿԵՑՈՒԹԻՒՆ +** Եւ *բազմակեցութեամբ* էհաս մինչև յելսն յեգիպտոսէ: - 320

**ԲԱԶՄԱԿՈՒԼ** - Բերանն մեծ՝ *բազմակո՛ւլ* է և անգութ և անհնազանդ: - 247

**ԲԱԶՄԱՀԱՒԱՔ +** Զոր և ես զօրէն մշակաց *բազմահաւաք* պտղոց. կամ փունջ մի անուշահոտ բազմերանգ ծաղկանց. կամ չնչին թռչնոյ զխորհիսխ մեղու. կամ որպէս զլոմայս այրւոյն տառապեալ գոյիւ: - 772

**ԲԱԶՄԱՁԵՒ +** Եւ թէ՝ դատաստանն աստուծոյ է՛ միաձև *բազմաձև* և ամենաձև. և այլ սոյնպիսիք եթէ բերեն վկայութիւն. և թէ մտացածին բանիւ հաւանութիւն տան: - 705

**ԲԱԶՄԱՄԱՅՐ** - Տասներորդ՝ *բազմամա՛յր* եղև սառա ըստ նահապետացն. *բազմամա՛յր* է և կոյսն ըստ հաւատացելոցն. *բազմամա՛յր* է և եկեղեցի ըստ վերածնելոցն...: - 307

**ԲԱԶՄԱՄԱՐՄԻՆ +** և որկրամոլութեամբ նման *բազմամարմինք*. և ատելութեամբ զերծանի ոչխարն ի գայլէ. և խորոխտումն մեծարգոյ առնէ զձին. և այլն նմանապէս: - 563

**ԲԱԶՄԱՆԱՄ +** Եւ բարին մի է և ի միո՛յ պատճառ է որէ աստուած. թէպէտ առ մեզ ի բազումս *բազմանայ*: - 23. Ա՛րդ՝ տեսութիւն զրոց սրբոց մի և նոյն ելով՝ առ բազումս *բազմանայ*. որպէս մի և նոյն պարզագոյն ջուր՝ իւրաքանչիւր բնութիւնս տնկոց: - 93. Նոյնպէս և էութիւնն աստուծոյ ի յէքս *բազմացեալ*. և աստուած անունն ի բազում աստուածս. և մնացեալ նոյն մի աստուած ըստ պօղոսի, «մեզ մի է աստուած հայր յորմէ ամենայն»: – 106. Վեցերորդ՝ միակն պատկելով *բազմանայ*. և աստուած է շարունակօղ բազմութեան էից: - 109. Երկոտասաներորդ՝ զի ընդ բազումս *բազմանայ*, և ի միութեան իւրում կայ և մնայ ըստ միոյն օրինակի: - 110. Ո՞րպէս *բազմանայ* և բազմապատկի աստուած: - 110. Նախ՝ զի մի անձն հօր *բազմացաւ* ի յանձն որդւոյ. և բազմապատկի ի յանձն հոգւոյն սրբոյ: - 110. Երկրորդ՝ *բազմանայ* ի նախագաղափարն. և բազմապատկի յարարչագործութիւն եղելոցս: - 110. Երրորդ՝ *բազմանայ* ի յէութիւն եղելոցս. և բազմապատկի ի կեանս. ի շնորհս. և յայլ պարգևս: - 110. Չորրորդ՝ *բազմանայ* ի սեռս և ի տեսակս. և

բազմապատկի դարձեալ ի տեսակս և յանհատս նոցա: - 110. Հինգերորդ՝ *բազմանայ* ի նախկինս և ի սկզբնաւորս. և բազմապատկի յածանցեալս ի նոցանէ և յառաջ եկեալս: - 110. Զորօրինակ՝ միակ թիւն ի բազումս *բազմանայ*, և մի է ըստ ինքեան: - 112. Եւ դարձեալ՝ որպէս ամենայն գիծ բոլորակին՝ ի միջին կէտն միաւորին առ միմեանս. և հեռացեալք ի միջին կէտէն բաժանին ի միմեանց. և զորօրինակ՝ մի է սեռն՝ և ի բազում տեսակս *բազմանայ*: - 112. Եւ որպէս մի է արեգակն, և *բազմանայ* ի ներգործութիւնս իւր: - 113. Եւ որպէս մի է ձայնն, *բազմանայ* ի բազում լսելիս: - 113. Եւ որպէս մի է կնիք մատանւոյն, և *բազմանայ* ի կնքեալ մոմս: - 113. Այսպէս մի է յարացոյցն ըստ ինքեան. և *բազմանայ* ըստ *բազմացելոցն* ի նմանէ: - 113. Զի որքան ի վերուստ ի վայր իջանէ՝ ի բազումս բաժանի. որպէս ի սեռէ ի տեսակս և յանհատս իջեալ *բազմանայ*: - 123. Վասն երկրորդ մի՞ է թէ բազում, ասեմք եթէ՝ ի սկիզբն մի է ըստ էութեան ի միոյ պատճառէ՛ յառաջ եկեալ. և ի բազումս *բազմացեալ* ըստ որակութեան. որպէս է արփեան և ըստ աստիճանաց: - 140. Իսկ բազմատեսա՛կ է՝ յորժամ ի զգայութիւնս եկեալ *բազմանայ*: - 143. Երկրորդ՝ զի առաջին և սկիզբն է թուոց. որպէս միակն թիւ *բազմանայ* և խառնի յայլս, այսինքն՝ ի **ժ**. ի **ճ**. ի **ռ**. և ի բիւրն. և ի միութենէն իւրմէ ո՛չ որոշի: - 178. Եւ զի կաւ և տիղմ և գարշութիւնք *բազմանան*: - 197. Երրորդ՝ ամպն ի սակաւ ժամանակս աճէ՛ և *բազմանայ*: - 206. Իսկ **ժ**երորդ՝ յորում ամուսնութիւնն մխիթարութիւն տուաւ մեռելոյն. ըստ այնմ, «աճեցէք և *բազմացարուք* և լցէք զերկիր»: – 280. Եւ որ քան օրս յաւելու, նոյնպէս և ցաւս մեր *բազմանայ*: - 292. Վասն որոյ օրհնութեամբ ցրուեաց զնոսա ի վերայ երկրի, զի աճեսցին և *բազմասցին* և լցցեն զերկիր ծննդօք և շինութեամբ և բարեգործութեամբ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն ամէն: - 298. Ուստի *բազմացեալ* լցին զարևելս ի պալի. յորմէ թագաւորք պարսից և հայոց արշակունիք կոչեցեալ: - 330. Չորրորդ՝ զի յայտնեսցի թէ՝ ի մէջ ծառայութեանն յեգիպտոս այնքան բազմացոյց զնոսա խնամքն աստուծոյ. այսքան բազմութիւնս ի տեղիս իւրեանց խաղաղութեամբ բնակեալ՝ ո՞րքան անթիւ *բազմասցին*: - 377. Եւ մին այր կարէ՛ ի բազում կանանց ծնանիլ զաւակ. այլ մին կնոջ ի բազում արանց ո՛չ *բազմանայ* ծնունդ: - 401. Եօթներորդ՝ զի ի *բազմա՛ցելոց* հոգի ասէ նիւսացին միաւորի ընդ մարմնոյ: - 479. Սակայն մի և նոյն բանն *բազմանայ* ի բազումս. որպէս ի հրեշտակս և ի մարդիկ. ի հին և ի նոր օրէնս. այլ ի միութենէն ո՛չ բաժանի: - 529. Զի մի է ըստ իւրում անձնաւոր գոյութեանն. և *բազմանայ* ի բազումս երևեալ: - 529. Զոր օրինակ, ներտրամադրեալ բանն մի է՝ և յառաջ բերեալ *բազմանայ* ի լսելիս և ի գիրս: - 529. Եւ դարձեալ զոր օրինակ, բան թագաւորին մի է, այլ ի բազում լեզուս և ի բազում լսելիս և ի բազում թուղթս որակացեալ և *բազմացեալ*, յիւրում միութենէն ո՛չ է քակտեալ: - 529. Զի յատուկ է անմարմնոյ, որպէս ի բազումս *բազմանայ* և ի միութենէն ո՛չ բաժանի, այսպէս ի մասունս մասնաւորի և ի բոլորէն ո՛չ քակտի: - 529-530. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ նոյն անձնաւոր բանն աստուծոյ է յաւետարանս խօսեցեալ յայնժամ *բազմացեալ* է անձամբ և գոյութեամբ: - 530. Դարձեալ զորօրինակ, մարմինն քրիստոսի մի և նոյն էր ի խաչին բևեռեալ, և մի և նոյն մարմինն է ի բազում նշխարս միաւորեալ և ո՛չ *բազմացեալ*. զի նոյն է գոյացութիւն հացին և գոյացութիւն մարմնոյն քրիստոսի: - 530. Զի *բազմանայ* և ի միութեան մնայ. բովանդակի անբովանդակապէս. և բաժանի անբաժանապէս. որ է մի և նոյն տեսակաւ և գոյացութեամբ որպէս ցուցաւ: - 530. Պսակն է խորհուրդ մեծ. որով օրհնութիւնն աստուծոյ կատարեալ լինի. որպէս ասաց «աճեցէք և *բազմացարուք* և լցէք զերկիր»: - 609. Նոյնպէս և ի դրախտին նախ օրհնեաց աստուած և ասէ «աճեցէք և *բազմացարուք* և լցէք զերկիր»: - 610. Եւ դարձեալ գործս այս լրումն է աստուածային հրամանին որ ասէ «աճեցէք և *բազմացարուք»*: - 613. Վասն որոյ յերկրի աստ *բազմանան* թուով. և ապա՛ միահաղոյն մտցեն անդ որպէս բազմութիւնք հրեշակաց: - 662. Բարեաց՝ զի քաւեսցին փոշետեսակ յանցանք ինչ. և կամ զի պսակքն *բազմասցին*: - 668. Ասաց աստուած առաջին մարդոյն «աճեցէք և *բազմացարուք* և լցէք զերկիր»: - 716. Եւ որ քան գործեմք զմեղս, այնքան *բազմանայ* ծնունդն նոցա. և ծուլութիւն և հեշտութիւն մեր սնունդ է նոցա: - 753. Սպառիլ սիրոյ և հատումն յուսոյ. *բազմանալ* անօրէնութեանց և տիրել անզղջութեանց: - 789

**ԲԱԶՄԱՆԿՈՂԻՆ +** Եւ այլ բազում և զանազան ազգապղծութիւն ընդ հոգևորս և ընդ մարմնաւորս. երկու եղբարց և բ քերց. և ընդ քերց հոգևոր մօր. և անխտիր ի *բազմանկողինս* և այլս բազումս որ զազիր է խօսելոյ օրէնքէ նոցա: - 552

**ԲԱԶՄԱՆՇԱՆԱԿ +** Ոչ կարելն *բազմանշանա՛կ* է: - 44

**ԲԱԶՄԱՇԱՐԱՒ +** Եւ լուասցէ *զբազմաշարաւ* զազրացեալ ոսկերս՝ մեղօք մեռելոյս: - 773

**ԲԱԶՄԱՉԱՐՉԱՐ +** Մետասաներորդ, նախ ետ զայս կեանքս որ է՛ ցաւալից և *բազմաչարչար*. – 663

**ԲԱԶՄԱՉԵԱՅ +** Տասներորդ՝ յատուկ առանձնապէս տըպաւորութիւնք խորհրդական. որպէս քերօբէքն *բազմաչեայք* և ընդ թևանք. և սերօբէքն սրբաբան՝ ընդ աթոռոցն քառակերպեան: - 138

**ԲԱԶՄԱՊԱՏԻԿ +** Ութևժերորդ՝ *բազմապատիկ* մեծ է քան զերկիր. և փո՛քր քանակով ցուցանի: - 127. Չորրորդ՝ զի ընդ ծառս դրախտին և յանթառամ ծաղիկս և ի *բազմապատիկ* պտուղսն պչուցեալ էին, ո՛չ զերկնչիլն գիտէին և ո՛չ զամաչելն: - 278. Նախ նշանակէ *զբազմապատիկ* չարութիւն նոցա: - 334. Նա՛խ ցուցանէ զառատութիւն պարգևացն աստուծոյ, որ ո՛չ զուգակշիռ գործոցն հատուցանէ, այլ *բազմապատիկ* և հազարաւոր: - 351. Այսպէս *բազմապատիկ* թողութիւն շնորհէ քահանայականն կարգ՝ ծեռնդնելով և բանիւ շնորհաց սրբելով: - 605

**ԲԱԶՄԱՊԱՏԿԵՄ +** Ո՞րպէս բազմանայ և *բազմապատկի* աստուած: - 110. Նախ՝ զի մի անձն հօր բազմացաւ ի յանձն որդւոյ. և *բազմապատկի* ի յանձն հոգւոյն սրբոյ: - 110. Երկրորդ՝ բազմանայ ի նախագաղափարն. և *բազմապատկի* յարարչագործութիւն եղելոցս: - 110. Երրորդ՝ բազմանայ ի յէութիւն եղելոցս. և *բազմապատկի* ի կեանս. ի շնորհս. և յայլ պարգևս: - 110. Չորրորդ՝ բազմանայ ի սեռս և ի տեսակս. և *բազմապատկի* դարձեալ ի տեսակս և յանհատս նոցա: - 110. Հինգերորդ՝ բազմանայ ի նախկինս և ի սկզբնաւորս. և *բազմապատկի* յաճանցեալս ի նոցանէ և յառաջ եկեալս: - 110. Եւ ա՛յսպէս *բազմապատկելով* զհազարն և զբիւրն՝ յանբաւս ելանէ: - 141. Հինգերորդ՝ էեկի շնորհօք *բազմապատկեալ* ի հոգւոյն. ոչ առաւելու արգելեալ. և ոչ նուազէ բաշխեալ: - 444

**ԲԱԶՄԱՊԱՐՏ +** Բազում ողորմ առ *բազմապարտ* դարձեալսն ի մեղաց. որպէս պարտապանն բիւր քանքարոյ: - 351

**ԲԱԶՄԱԶԱՆ +** Զի նա՛ ծնաւ զմեզ ըստ բանի՝ *բազմաջան* երկօք. կրթեալ ի մամուլս վարժարանի և ի յոյսն կենդանի: - 773

**ԲԱԶՄԱՍՏՈՒԱԾ +** Ութերորդ՝ թէ *բազմաստուածք* ասեն: - 30. Զի թէ ասէք հայր աստուած՝ և որդի աստուած՝ և հոգի աստուած, *բազմաստւած* էք որպէս հեթանոսքն: - 54. Ասեն դարձեալ թէ՝ և հեթանոսք մի աստուածս անուանեն զամենայն կուռս, այլ բազումք են. որպէս և մարդկութեանս մի ասի բնութիւն, այլ բազումք են մարդիկք. ապա և դուք *բազմաստւածք* էք: - 54. Զի՞նչ պատասխանեմք երկաբնակացն որք հարցանեն զմեզ, թէ մասունքն քրիստոսի աստուած է՝ այսինքն ոտքն և ձեռքն և գլուխն ապա *բազմաստուածք* էք: - 91. Ապա ուրեմն յայտնապէս նոքա ուրանան զայս, և ասեն թէ՝ ձեռքն քրիստոսի ոչ է աստուած. և գլուխն քրիստոսի ո՛չ է աստուած. և այլն. զի մի *բազմաստուածք* լիցին: - 91. Զա՛յս հարցեր, եթէ մասունքն քրիստոսի աստուած են, նաև *բազմաստուած* էք. զի բազում են մասունքն: - 92. Իսկ թէ ասես միայնաբար աստուած է մարմինն՝ և աստուած է հոգին. այսու ո՛չ լինիս *բազմաստուած*. զի մի՛ է աստուածութիւնն ի սոսա միաւորեալ էութեամբ և գոյացութեամբ: - 93. Դարձեալ՝ որպէս ասելն զհայր աստուած, և որդի աստուած, և հոգի աստուած, ո՛չ է *բազմաստուած*. այլ մի աստուած: - 93. Նոյնպէս և ասելն թէ՝ մարմինն քրիստոսի աստուած է. և արիւնն աստուած է. և հոգին աստուած է. ո՛չ է *բազմաստուած*. այլ մի աստուած: - 93

**ԲԱԶՄԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ +** Եւ թէ ասես միայնաբար՝ աստուած է մարմինն. և աստուած է արիւնն, լինի *բազմաստուածութեան* ցոյցք: - 92

**ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ +** Եզինքն՝ արդիւնարարք և *բազվաստակ*: - 374

**ԲԱԶՄԱՏԵՍԱԿ +** Նմանապէս և սէրն է միատեսակ և *բազմատեսակ*: - 143. Իսկ *բազմատեսա՛կ* է՝ յորժամ ի զգայութիւնս եկեալ բազմանայ: - 143

**ԲԱԶՄԱՑՈՒՑԱՆԵՄ +** Առաջին պատճառ, զի ընդ ինքեան մարդկայինս բնութիւն այլայլո՛տ է և ցաւօք. և յորժամ աստուած ևս *բազմացուցանէ*, ո՞վ կարէ զաղէտն պատմել: - 292. Չորրորդ՝ զի յայտնեսցի թէ՝ ի մէջ ծառայութեանն յեգիպտոս այնքան *բազմացոյց* զնոսա խնամքն աստուծոյ. այսքան բազմութիւնս ի տեղիս իւրեանց խաղաղութեամբ բնակեալ՝ ո՞րքան անթիւ բազմասցին: - 377. Նա՛խ՝ բնական. զի կամէր աստուած *բազմացուցանել* զծնունդն: - 401

**ԲԱԶՄԱՒՈՐ +** Դժոխ՝ զդժուար զնեղ և զանձուկն նշանակէ. և կոչի *բազմաւոր*, Նախ վասն բազում կրիցն. ուր լալ աչացն է և կրճել ատամանց և խաւար ներքին և արտաքին և այլն: - 505

**ԲԱԶՄԱՒՈՐԱԿԱՆ +** Վասն է՞ր ասի դժոխք *բազմաւորական*. և ոչ դժոխ միաւորական: - 505

**ԲԱԶՄԱՔՐԻՍՏՈՍ** - Եւ ես ասեմ քեզ. զի թէ մասունքն քրիստոսի քրիստոս է, ապա *բազմաքրիստոս* էք և դուք: - 92

**ԲԱԶՄԵՐԱՆԳ +** Զոր և ես զօրէն մշակաց բազմահաւաք պտղոց. կամ փունջ մի անուշահոտ *բազմերանգ* ծաղկանց. կամ չնչին թռչնոյ զխորիսխ մեղու. կամ որպէս զլոմայս այրւոյն տառապեալ գոյիւ: - 772

**ԲԱԶՄԻՄ +** Նմանապէս և որդին միածին էր ի ծոց հօր և յարգանդ կուսին. ի խաչին անարգեալ՝ և

յաթոռ փառաց *բազմեալ*...: – 71. Վասն որոյ ասէ տէրն՝ «բազումք գայցեն յարևելից և *բազմեսցեն* յարքայութեան. և որդիքն արքայութեան ելցեն ի խաւարն արտաքին: – 310. Յնգետասաներորդ՝ ընդ աջմէ *բազմեցաւ* մայրն սողոմոնի: - 441. Նա՛խ՝ քառադէմ կառքն եզեկիէլի, և տէր *բազմեալ* ի վերայ: - 494. Յինգերորդ՝ զի խոստովանի ամենայն լեզու թէ տէր է յիսուս քրիստոս ի փառս հօր աստուծոյ *բազմեալ*: - 529. Ոմանք ասեն թէ ի հասարակ ընթրիսն յորժամ *բազմեցան*՝ ի հասարակ սեղանոյն թացեալ զպատառն ետ յուդայի. - 599. Իսկ տեարքն *բազմեալ* ի հանգիստ վայելման: - 656. Կամ ոսկի՝ արծաթ՝ ականս. զի արդարքն առաւել պայծառանան և ապա՛ *բազմին* ի սեղան հօրն երկնաւորի պաշտելովն ի քրիստոսէ: - 721. և Դարձեալ, զի յարևելս *բազմեալ* դատաւորն. և աջակողմեանքն լինին ի վերայ օդոյ ի կողմն հիւսիսոյ. և ձախակողմեանքն վայր ի յերկրի ի կողմն հարաւոյ. - 731. Ա՛րդ՝ ի վերայ երից սոցա *բազմեալ* է տէր մեր յիսուս քրիստոս ո՛չ միայն յերկրի, այլ և յերկինս...: - 736. Երրորդ՝ ժամանակ կենցաղոյս մինչև ի մահ, է՛ ընդունելութեան աստուծոյ. ըստ որում *բազմեալ* է յաթոռ շնորհաց ըստ առաքելոյ. իսկ յետ այնորիկ ո՛չ ևս. զի փոխի յաթոռ դատաստանաց ըստ աւետարանին: - 780

**ԲԱԶՄԻՄԱՍՏ +** Երկրորդ՝ զի ի բազում ժամանակս *բազմիմաստք:* - 378

**ԲԱԶՄՈՑ +** Եւ ապա ի գիշերին դնին սրբութիւնքն ի վերայ *բազմոցին* մինչև յառաւօտն անշարժապէս որպէս ասացաք: - 647

**ԲԱԶՄՈՒԹԻՒՆ +** Ասեմք առ այս, եթէ այսու վկայե՛ս և դու մեզ՝ թէ ո՛չ է հարկ. զի ի բոլոր քաղաքն այնքան բիւր մարդիկ՝ ծեր և տղայ՝ ե՛րբ և ո՛ւր ի մի շարժումն աստեղաց ծնան, որք ի միասին կործանեցան. կամ *բազմութիւն* զօրացն. կամ որք ի նաւին կային. զի սոքա ամենեքեան յայլևայլ ժամանակս և այլևայլ շարժումն աստեղաց էին ծնեալք. ապա ուրեմն ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. Երրորդ՝ ի միակէ, զի ամենայն *բազմութիւն* է ի միակէ՛. որպէս տեսակն յանհատէ. և գիծն ի կիտէ. և բազում թիւ է՛ ի միոյն: - 25. Զի ո՛չ նա այսմ և ո՛չ սա այնմ կարէ միակ գոլ. վասն որոյ հա՛րկ է գոլ այնպիսի միակ՝ որ և ամենայն *բազմութեան* և միակաց է՛ միակ. որ է աստուած: - 26. Այսպէս է միութեամբ որոշեալ և բաժանեալ. և *բազմութեամբ* միացեալ: - 106. Ըստ այսմ ապա և *բազմութիւն* արարածոցս միո՛յ են հաղորդեալ. մի սկզբան. մի աստուծոյ. և մի խնամողի: - 106. Վեցերորդ՝ միակն պատկելով բազմանայ. և աստուած է շարունակօղ *բազմութեան* էից: - 109. Իսկ ի ներքուստ ի վեր՝ ի *բազմութենէ* առ մինն ընթանայ. որպէս խորհրդական աստուածաբանութիւնն արտաքոյ թողեալ *զբազումութիւն* էից և ի մինն ընթացեալ, որ ամենեւին անբանութիւն է և անիմացութիւն. անճառելի. անիմանալի. և լռութեամբ պատիւ յամենայն արարածոց: - 123. Վասն է՞ր այնչափ *բազմութիւնք* ջուրց եղեն: - 207. Երկրորդ՝ զի երկիր չո՛ր է և ցամաք, պարտ էր լինիլ *բազմութեան* ջուրց. զի խառնեսցի ընդ երկիր և ծննդականս արասցէ: - 207. Այս ամենայն և առաւել քան զայս օգտութիւն է ի *բազմութեանց* ջուրց: - 208. Երրորդ՝ զառատ *բազմութիւնն* նշանակէ: - 212. Յի՞նչ պէտս են այնչափ *բազմութիւնք* բուսոց և ծառոց: - 212. Ա՛րդ՝ եթէ մնայ հինն ընդ նորոյն հանապազ. նա՛ ծանրանայ. և ո՛չ կարէ զայն քան ամաց *բազմութիւն* պտղոցն կրել, և այսպէս լինին ամենայն ծառքն կոտորեալ և ապականեալ...: – 224. Նոքա յերկար ապրէին՝ զի յաճախեսցին բարիք և ծնունդք նոցա. և մեք պակաս, զի կարճեսցին չարիք և *բազմութիւնք* մարդկան: - 291. Եւ ի քրիստոս *բազմութիւն* ամենայն հաւատացելոց սերեալք անդամք յանդամոց նորա և մարմինք ի մարմնոյ նորա ծննդեամբ ի նմանէ աւազանաւն: - 306. Չորրորդ՝ զի յայտնեսցի թէ՝ ի մէջ ծառայութեանն յեգիպտոս այնքան բազմացոյց զնոսա խնամքն աստուծոյ. այսքան *բազմութիւնս* ի տեղիս իւրեանց խաղաղութեամբ բնակեալ՝ ո՞րքան անթիւ բազմասցին: - 377. Երկրորդ՝ զի այն քան *բազմութիւնք* հաւատացելոց կորնչելո՛ց էին, որ ո՛չ վայելէր ամէնիմաստ գիտութեանն աստուծոյ: - 467. Եւ որպէս անչափ են սպեղանիք և դեղք բժշկականք մարմնոյ ի բազում և զանազան ծաղիկս խոտոյ և յարմատս, ի տերևս ի պտուղս. և յայլսն. զի սոքա յայտնեն *զբազմութիւն* հիւանդութեանց մարմնոյ: - 531. Վասն որոյ յերկրի աստ բազմանան թուով. և ապա՛ միահաղոյն մտցեն անդ որպէս *բազմութիւնք* հրեշակաց: - 662. Ուր ետես զիդ երիցունսն շուրջ զաթոռովն աստուծոյ. և *զբազմութիւն* հոգւոց սրբոց յամենայն ազգաց ժողովեալ անդ: - 688. Զի՞նչ լինին *բազմութիւնք* նշանաց խաչին: - 732. Երրորդ, *բազմութիւնք* երկնաւոր զօրացն ընդ նմա իջցեն...: - 737. Որքան մնացին հրեշտակք ի յերկինս, նոյնքան և *բազմութիւնք* ի մարդկանէ ընտրեսցին: - 760. Եւ յետ նոցա ամենայն *բազմութեանց* ժողովելոց յամենայն ազգաց ասէ. որք եկին ի բազում վշտաց աշխարհի. այսինքն որք զանազան առաքինութեամբ և բազում նեղութեամբ մտին ի հանգիստն: - 760. Նա՛խ վասն *բազմութեանն.* որպէս ասէ տեսիլն...: – 763. Զվիշտս յայտ առնէ անցելոցն նուազութիւն և կորուսելոցն *բազմութիւն*: - 764. Ոչ այլ ինչ գոլով սիւն աշխարհի զգալապէս, բայց միայն *բազմութիւն*

լերանց և քարանց: - 788. Զոր և անբաւ *բազմութեամբ* ասպատակեալ աւերեաց զաշխարհս հայոց, պարսից, վրաց, և զամենայն արևելեայս: - 788

**ԲԱԶՄՕՐԵԱՅ +** Որպէս ասաց հրեշտակն եղիայի, «արի՛ կե՛ր և ա՛րբ. զի ի *բազմօրեայ* ճանապարհ ես ընթանալոյ». որ է՛ քառասունք պահոցն: - 657

**ԲԱԶՄՕՐԻՆԱԿ +** Թողում զայլսն *բազմօրինակ* համանմանութիւն: - 305. Զայս և այլ սոյնպիսիս *բազմօրինակ* ստուերագրութեամբ առ ճշմարտութիւն իրին. իսկութեամբ ոչ գոլ անհնարին երկասիրացդ ի սոյն դեգերմամբ զոր ի պարապ ժամու քննութեան: - 306. Վեցերորդ, նոքա հանապազ մատուցանէին վասն հանապազ յանցմանն ի *բազմօրինակ* մեղս...: – 354. *Բազմօրինակ* մասամբք և բազմադիմի ստուերակերպութեամբ: - 456

**ԲԱԶՈՒԿ +** Եօթներորդ՝ եթէ մասն աստուծոյ կոչի հոգին սուրբ. և աջ և *բազուկ* է որդին. ապա ուրեմն և ի նմանէ՛ է: - 61. *Բազուկն* **բ** ոսկր: - 243. Ի սոցանէ երակ կտրէ մարդն ի *բազկացն*: - 244. *Բազուկն* երկայն որ միջին մատն հասանէ ի ծունկն՝ ուժե՛ղ է: - 247. Ձեռն բարձր և *բազուկ* հզօր: - 285. Զի՞նչ է ձեռն բարձր և *բազուկ* հզօր: - 395. Չորրորդ՝ ձեռն գործոց է նշանակ, և *բազուկն* զօրութեան զի անաշխատ գործէ: - 395. Իսկ որդին աջ և *բազուկ* է հօր, վասն որոյ աջմէ հօր նստի: - 441. Եւ տէրն *զբազուկս* ի վերայ խաչին: - 441. Եւ այն էր զի զաքարիա ի վերայ *բազկացն* յովսեփու թլփատեաց զնա: - 486. Զնախանձն՝ տարածումն *բազկացն*. որ նշանակէ՛ զգիրկս արկանելն սիրով: - 489. Երկրորդն է՛ տարածումն *բազկացն* ի գիրկ արկանել. և նշան ընդունելոյ զդարձեալսն ի մեղաց: - 489. Վասն այն ո՛չ ետ մարիամու մերձենալ. այլ պահեաց զնա *բազկին* այնմիկ որ նստոյց զնա ընդ աջմէ իւրմէ: - 518. Բազկուրար յահեակ *բազուկն* ուսովն ածեալ՝ և կապեալ ի վերայ արմնկանն ի կախ ունելով: - 608. Եւ զայս երիցս ասացեալ՝ էջ մարմինն սուրբ ի վերայ *բազկացն* յովսեփայ: - 631. Այսորիկ են երեք *բազուկքն* անգուցեալք իբրև ուռս որթոյ. ուստի ճշմարտութիւնն ասէ յաւետարանին, «ես եմ որթն ճշմարիտ, և դուք ուռ»: - 755

**ԲԱԶՈՒՄ +** Եւ թէ ոք ասիցէ, *բազում* բանք մեր բացորոշակի լինին ի հանդերձեալն. որպէս թագաւորն յորժամ ասէ շինեսցի քաղաք, և շինի. և ասեմք թէ այսանուն մարդ մեռանելոց է, և մեռանի. և աղօթեմք և լինի. և այլն նմանապէս անէծք կամ օրհնութիւնք: - 9. Եւ այս վասն *բազում* պատճառի: - 13. Զորօրինակ՝ թէ *բազում* մարդիկ անցանեն զճանապարհայն, և մերձ կացեալն տեսանէ նախ ըզմինն՝ և ապա զերկուսն՝ և որ զկնի: - 15. Զի նախախնամութեամբ *բազում* բարիս յառաջած է ի չարէ. որպէս սատանայի թոյլ տալ, զի փորձեսցին բարիքն և յաւելցին պսակքն: - 17. Եւ գիտելի է այս, եթէ նախասահմանութիւնն աստուծոյ առնէր հարկ գործոց մարդկան, չարի և բարւոյ, լինէր *բազում* անպատշաճութիւն որ վասն բախտին ասացեալ եղև. զորև աստ կարգեսցուք: - 20. Եւ բարին մի է և ի միո՛յ պատճառ է որէ աստուած. թէպէտ առ մեզ ի *բազումս* բազմանայ: - 23. Իսկ չարն *բազում* է և ի *բազում* պատճառաց: - 23. Երրորդ՝ ի միակէ, զի ամենայն բազմութիւն է ի միակէ՛. որպէս տեսակն յանհատէ. և գիծն ի կիտէ. և *բազում* թիւ է՛ ի միոյն: - 25. Ա՛րդ՝ *բազում* աւուրք անցին յետ մէսիային ծերոյ, այսինքն աւելի՛ քան զհազար և չորս հարիւր ամ. ապա և ո՛չ էր նա մէսիայն: - 27. Ապա ուրեմն ամենայնն ցուցանէ *զբազումս*: - 27. Դարձեալ՝ ի գալստեանն քրիստոսի՝ *բազում* գազանաբարոյ անբարիշտք եկին ի հնազանդութիւն քրիստոսի: - 28. Զի որպէս գիջակնութիւնն չտայ թոյլ տեսանել յստակ, այսպէս երկիւղն յետս քարշէ *զբազումս* ո՛չ հաւատալ ի քրիստոս որպէս ասէ յօհաննէս. «զայս ասացին ծնօղքն կուրին՝ զի երկնչէին ի հրէիցն խոստովան լինիլ զքրիստոս»: - 32. Եւ սոքա գիտութեամբ յանձինս իւրեանց անարգեցին. «զի լաւ էր նոցա թէ բնաւ չէին ծանուցեալ զարդարութեան ճանապարհն. քան թէ ծանեան և յետս կացին ի սուրբ պատասխանի». և այլս *բազում* նմանապէս: - 34. Եւ այս վասն *բազում* բաղդատութեան կոչին սոքա նեռն: - 34. Ութերորդ՝ զնա օ՛ձ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն *զբազումս*. և արտաքսեն ի դրախտէ եկեղեցւոյ. և թոյնք իժից ի ներքոյ շրթանց ունելով և խայթոց՝ զի առորս մերձենան, ի յսկիզբն բանից կամ ի վերջն՝ մահացուցանեն զհոգիս. երկճղի ունելով լեզու նենգաւոր՝ չար և բարի, ծածուկ և յայտնի: - 35. Եւ այլս *բազում* բաղդատութիւն գոլով հերձւածողի և նեռինն. և զորս տէրն գնեաց՝ սոքա ուրացեալք՝ ածեն ի վերայ անձանց զերագահասն կորուստ: - 35. Ապա թէ ոչ՝ հա՛րկ է քեզ ասել ըստ *բազում* անուանցն և *բազում* բնութիւնս գոլ աստուծոյ: - 38. Ութերորդ հարցումն արիանոսացն, զի ասէ սօղօմոն՝ «տէր ըստացաւ զիս ի սկիզբն ճանապարհաց իւրոց յամենայն գործս իւր». և զի յառաջ էր քան զմարմնական ծնունդն քրիստոսի *բազում* ամօք. ապա ուրեմն զառաջին լինելութիւնն ասէ ստեղծուած քան զամենայն եղելոց ասեն: - 40. Իսկ վասն չարչարանաց հնազանդութեանն քրիստոսի *բազում* պատճառս դնէ յայսմ վայրի աստուածաբանն գրիգորիոս: - 42. Իսկ բանն աստուած է՛ ծնեալ ի հօրէ՝ այլ

ո՛չ բաժանեալ. որպէս ո՛չ բաժանի բան՝ ի մտաց. թէպէտ ի *բազում* լսելիք մտանէ. և թէ ի վերայ քարտիսի մարմին զգենու: - 45. Իսկ մի և ճշմարիտ ասելովն՝ յատկացնէ՛ ի *բազում* և ի սուտ աստուածոց հեթանոսաց որ անուամբ միա՛յն են: - 47. Է՛ և այլ *բազում* միտք վասն բանին. զոր մեք զսակաւն գրեցաք: - 49. Իսկ այլ *բազում* օրինակ երրորդութեանն ասացաւ ի վերոյ յերեք համարն: - 53. Տասներորդ՝ թէ բանն աստուծոյ և հոգին արարա՛ծ են և այլ բնութիւն, յայնժամ ո՛չ լինի մի աստուած. այլ *բազում* և զանազան աստուած. զի յոլովութիւնն յոլովութիւն է աստուծոյ. որպէս թէ երեք բնութիւնն երեք աստուած, և երկու բնութիւնն երկու աստուած: - 56. Եւ ցուցանէ զմիոյն ի *բազումս* ծաւալումն շնորհաց հոգոյն: - 60. Այլ և մեծն դիոնէսիոս ի *բազում* տեղիս միաւորեալ և մի բնութիւն խոստովանի բանին աստուծոյ մարդացելոյ: - 83. Զի թէ ասես միաւորական, ահա՛ արարեր դու զանձն բնութիւն. զի բնութիւն է միարար ըստ պորփիւրի, տեսակին կցորդութեամբ *բազում* մարդիկ **մու**: - 86. Ոչ նմանամասնաբար. զի նոքա բոլորին՝ և միմեանց հոմանունաբար ասին. որպէս փայտ ի *բազում* փայտս: - 88. Մինն է ընդ դէմ երկուին և *բազմին*. և նոյնն է ընդ դէմ այլին: - 91. Զա՛յս հարցեր, եթէ մասունքն քրիստոսի աստուած են, նաև բազմաստուած էք. զի *բազում* են մասունքն: - 92. Եւ դարձեալ որպէս ասեմք զմարմինն և զարիւնն և զհոգին և զբանն քրիստոս՝ և ո՛չ է *բազում* քրիստոս: - 93. Նոյնպէս ասելն զնոսա աստուած՝ո՛չ է *բազում* աստուած: - 93. Ա՛րդ՝ տեսութիւն գրոց սրբոց մի և նոյն ելով՝ առ *բազումս* բազմանայ. որպէս մի և նոյն պարզագոյն ջուր՝ իւրաքանչիւր բնութիւնս տնկոց: - 93. Եւ այսպէս *բազում* է ի գիրս հարցմանցս վասն միաւորութեան բանին և մարմնոյն ընդ դէմ նեստորի և երկաբնականց. որ բաւական լուծումն է բանիս: - 95. **բ**) Վասն յարացուցի. մի է. և *բազում*: - 101. Զի խաւարի միտքն. և մոլորի՛ իմացումն. և կապի ընդարձակ տեսութիւնն. և ծանրանայ_թեթեւութիւնն. և անջատի ի *բազումս*. և տգեղանայ պատկերն: - 104. Եւ միտքն ի *բազում* օրինակաց ի ճշմարտութիւն հաստատեալ: - 104. Ա՛րդ՝ միութիւն սուրբ Երրորդութեանն *բազում* է և յայտնի: - 104. Նմանապէս և հասարակն թէպէտ *բազում* է, այլ երկոտասան գլխով նշանակի. նախ Բնութիւն. որ նոյն է էութիւն. ապա Բարութիւն. Կամք. Անմահութիւն. Իմաստութիւն. Լուսաւորութիւն. Գեղեցկութիւն. Անփոփոխութիւն. Ցնծութիւն. Փառք. Իշխանութիւն. և Արարչութիւն: - 105. Որպէս կնիք մատանւոյ ի *բազում* մոմս: - 106. Եւ որպէս գիծն կոչեցեալ այբ՝ ի *բազում* վանգս բաժանեալ. և մնացեալ մի: - 106. Նոյնպէս և էութիւնն աստուծոյ ի յէքս բազմացեալ. և աստուած անունն ի *բազում* աստուածս. և մնացեալ նոյն մի աստուած ըստ պօղոսի, «մեզ մի է աստուած հայր յորմէ ամենայն»: – 106. Նախ՝ զի ո՛չ է *բազում*, այլ մի: - 109. Մետասաներորդ՝ որպէս մինն ի *բազումս* եկեալ ընդարձակի. և ի *բազմաց* ի մինն ընթացեալ նեղի: - 110. Երկոտասաներորդ՝ զի ընդ *բազումս* բազմանայ, և ի միութեան իւրում կայ և մնայ ըստ միոյն օրինակի: - 110. Յարացոյցս այս մի՞ է՝ թէ *բազում*: - 112. Այլ *բազո՛ւմ* է և զանազան ըստ պատկերի և նմանութեան յարացուցելոցս որք են *բազումք*. զի աստուած միով յարացուցիւ *զբազումս* տեսանէ. որպէս անմարմնութեամբն զմարմնաւորս տեսանէ. և յաւիտենիւ զժամանակեայս: - 112. Այսպէս ի մի և ի նոյն սկիզբն որ է՛ յարացոյցն՝ *զբազում* սկսեալքս ըստ յարացուցին: - 112. Եւ *բազում* է ըստ *բազում* պատկերաց: - 112. Զորօրինակ՝ միակ թիւն ի *բազումս* բազմանայ, և մի է ըստ ինքեան: - 112. Եւ դարձեալ՝ որպէս ամենայն գիծ բոլորակին՝ ի միջին կէտն միաւորին առ միմեանս. և հեռացեալք ի միջին կէտէն բաժանին ի միմեանց. և զորօրինակ՝ մի է սեռն՝ և ի *բազում* տեսակս բազմանայ: - 112. Եւ որպէս մի է ձայնն, բազմանայ ի *բազում* լսելիս: - 113. Եւ վասն օրինացն մովսէսի ասէ օրէնքն, «յաւիտենական լիցի». որ նշանակէ *զբազում* ժամանակս: - 115-116. Դարձեալ՝ զնիւթեղէնսն աննիւթապէս տեսանէ. և զբաղադրեալսն պարզ. և զժամանակեայսն յաւիտենական. և *զբազումս* և զբաժանեալս միեղէն և անբաժան: - 118. Երրորդ՝ և բաժանի և զանազանի ի *բազումս*. և այնպէս շրջագայութեամբ գտանէ զճշմարիտն. և այսպէս է բնական քննութիւն իմաստասիրացն: - 120. Չորրորդ՝ միեղէն է նոցա տեսութիւնն և ի միոյ. իսկ մերս *բազում* և ի *բազմաց*. զի բաժանեալ զգայարանօք զբաժանեալ իրս տեսանեմք: - 120. Վասն *բազում* պատճառի: - 121. Նախ՝ զի բանականն առ երկրաւորս և *բազում* ճշմարտութեամբ կատարի: - 122. Եւ երրորդն որ է նշանակաւ, ա՛յլ առաւել և ընդարձակ և բազմաբա՛ն է. վասն զի խառնի ի զգալիսս. որ *բազո՛ւմ* է և բաժանեալ: - 123. Զի որքան ի վերուստ ի վայր իջանէ՝ ի *բազումս* բաժանի. որպէս ի սեռէ ի տեսակս և յանհատս իջեալ բազմանայ: - 123. Կամ որպէս բունն մի է ծառոյն, և ճուղքն և տերևքն *բազում*. նմանապէս և աստուածաբանութիւնն: - 123. Պատասխանեմ առաջնոյն, թէպէտ մի և նոյն ուրացական մասնիկն որ է ո՛չն՝ գործէ՛ զուրացումն և զբառնալն, այլ ուրացումն և բառնալն ո՛չ է նոյն. զի *բազում* պատահի որ գործին նոյն է որպէս ձեռն. այլ գործելն ո՛չ է նոյն. որպէս կտրելն և կարելն: - 124. Այսպէս և այլք *բազումք* գոն հաւասարութիւնք: - 125. Եւ այս վասն *բազում* յատկութեան: - 125. Այլ վասն *բազում* պատճառի աննման նմանութեամբ գրեցին: - 131. Երրորդ՝ զի անդ *բազմաց* շրտնու տեսութիւնն.

և աստ միայն զօրանայ տեսողական մասն միոյն. որպէս աշակերտին եղիսէի: - 133. Եւ քերօբէն որ է՛ *բազում* գիտութիւն՝ ի դէմս որդւոյ. զի նա՛ է իմաստութիւն և գիտութիւն հօր ըստ առաքելոյն: - 135. Երկրորդ՝ մի՞ թէ *բազում*: - 140. Վասն երկրորդ մի՞ է թէ *բազում*, ասեմք եթէ՝ ի սկիզբն մի է ըստ էութեան ի միոյ պատճառէ՛ յառաջ եկեալ. և ի *բազումս* բազմացեալ ըստ որակութեան. որպէս է արփեան և ըստ աստիճանաց: - 140. Եւ դարձեալ՝ *զբազումքս* միաւորէ՛ ինքեամբ՝ առ պատճառն իւր. որպէս լոյս արևու ի *բազում* տեսութիւնս: - 140. Եւ ըստ որում մի է սկիզբն և կատարումն և թափանցումն. վասն որոյ միով և ինքեամբ գիտէ *զբազումս*. և ո՛չ որպէս մեք *բազմօր զբազումս:* - 142. *Բազումք* բազում ինչ ասեն: - 147. Քառասունսմի) Յատկութիւնք ջուրց ութն թուով. և զի *բազում* են ջուրք. և դառն է ծով և աղի: - 155. Ասեմ թէ *բազում* եղանակաւ: - 156. Հինգերորդ՝ գործ բնութեանն է մի առ *բազումս*. իսկ կամացն *բազում* առ *բազումս*: - 156. Վասն *բազում* պատճառի: - 158. Երրորդ՝ և թէպէտ իցեն *բազում* արբանեակք շինւածոյն, այլ մինն է արհեստաւորն և պատճառ: - 164. Իսկ աննմանութիւն *բազում* ևս: - 164. Ութերորդ՝ զի *բազմօր զբազումս* տեսանեմք, կամ *բազմօր* զմի: - 164. Իսկ նախատեսութիւնն աստուծոյ միով *զբազումս* տեսանէ, և միով զմի: - 164. Եւ այլ *բազում* զանազանութիւն է գործոց մարդկան և աստուծոյ. զի մեք կարօտ եմք նիւթոյ. ժամանակի. տեղւոյ. օգնականի: - 164. Երկրորդ՝ զի *բազումք* գայթակղութեամբ կորնչին. արդ ի հարկէ որպէս ասացաւ՝ կամ միոյ կամ *բազմաց* լինի կորուստ: - 167. Եւ ուսեալք զայս, ընկա՛լ և այժմ զլուծումն խնդրոյն. եթէ լինելութիւն աշխարհի ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ ո՛չ է զօրութեամբ՝ այլ ներգործութեամբ վասն *բազում* պատճառի: - 168. Հինգերորդ՝ գոյացութիւն մի է, և պատահումն *բազում*: - 170. Զի թէ գոյր պատահումն ի յաստուած, լինէր *բազում* և ո՛չ մի. իսկ աստուած մի է և ո՛չ *բազում*...: – 170. Եւ ըստ *բազում* բաղդատութեան կոչի աստուած գոյ: - 171. Եօթներորդ՝ մի է գոյն՝ և *բազում* պատահմունք. և մի է աստուած՝ և բազում եղեալքս: - 171. Եօթներորդ՝ մի է գոյն՝ և բազում պատահմունք. և մի է աստուած՝ և *բազում* եղեալքս: - 171. Այլ ունին սոքա *բազում* զարմանալի տեսութիւնս: - 175. Դարձեալ՝ ա՛յլ է բնութիւն մարմնոյն. ա՛յլ ոսկերացն. և ա՛յլ է ջիլն և երակն և մորթն և մազն և իւրաքանչիւր մաղձքն. ըստ այսմ ապա ասա՛ և *բազում* բնութիւնս քրիստոսի: - 176. Եւ այս վասն *բազում* պատճառի: - 177. Վեցերորդ՝ զի ի *բազում* բանս մտանէ և գրի քան զայլ ձայնաւորս. և յա՛յտ է, զի *բազում* իմաստութիւնս ծնանի: - 178. Դարձեալ՝ իմաստութեամբն տիրեմք ծովու և ցամաքի. և *բազում* բարութիւն հոգւոյ և մարմնոյ ի նմանէ ծնանի: - 178. Եւ ևս *բազումք*. զի աշխարհ կոչի աշխարհարարն. և աշխարհս. և մարդս ըստ հոմերոնի: - 179. Ապա ուրեմն հա՛րկ է մի գոլ աշխարհի և ո՛չ *բազում*: - 179. *Բազումք* են. որպէս ասէ մարգարէն՝ «երկինք երկնից». և առաքեալն ասէ վասն քրիստոսի, «որ ելն ի վերոյ քան զամենայն երկնիս»: – 183. Վարդապետք ասեն թէ վասն *բազում* պատճառի: - 192. Երրորդ՝ *բազում* աստուածախօսութիւնք ի նմա եղեն. յելանելն նոյի ի տապանէն. և առ աբրահամ. և առ մովսէս ի սինա լեառն. և տուչութիւն օրինացն ի կիրակէ եղև: - 193. Եւ *բազումք* տեսանեն զսուրն ի մէջ պատենիցն հալեալ, և պատեանքն անխանձ մնացեալ: - 204. Տասներորդ՝ ի ներքոյ անկանի *բազում* ամբոխմանց: - 207. Այսմ *բազում* են պատճառք: - 207. *Բազումք* դնեն այսմ պատճառ: - 208. Եւ այլք ասեն թէ՝ *բազում* աղբիւրք բղխեն ի ծովն. որպէս մեռայի ջուրն, և փոխեն զծովն ի դառն: - 208. Յաղագս Երկրորդին ասի «ջուրք *բազում* ժողովուրդ *բազում»*: – 209. Յաղագս Ութերորդին ասի, «առաքե՛ա զձեռն քո և փրկեա՛ զիս ի ջուրց *բազմաց*, և ի ձեռաց որդւոց օտարաց»: – 209. Յաղագս Տասներորդին ասի «գիտութեամբ տեառն լցաւ երկիր իբրև ջուրք *բազումք* որ ծածկեն զծովս»: – 209. Ասեմք թէ՝ ամենայն մարմնական կենդանիք ի չորից տարերաց են եղեալ. և յայտ է ի *բազում* պատճառաց: - 214. Ասեմք թէ՝ *բազումք* են: - 216. Վասն *բազում* պիտոյից որ գոյ ի նոսա: - 217. Իսկ մարդոյս հնարք և իմաստութիւնն բանականութեամբ է. վասն այն *բազում* է ի նոսա հնարք. և առաւել և նուազ, և ո՛չ հաւասարք: - 218. Զի մարդս *բազում* հրօք զբաղեալ է ի միտս. իսկ նոքա միայն ի բնութիւնս իւրեանց փութով ճանաչեն: - 218. Ո՞րպէս գիտեմք թէ մարդն իշխան է ի վերայ անասնոց. զի ահա՛ *բազումք* անհնազանդք են. որպէս վայրիք և գազանք և այլք: - 220. Եւ զի մարդն թագաւոր և իշխան է ամենայն կենդանեաց՝ յա՛յտ է ի *բազմաց*: - 220. Որպէս դանիէլ առիւծուցն յաղթեաց. և պօղոս իժին. և *բազում* ճգնաւորաց որք անապատս էին՝ գազանք և անասունք սպասաւորէին նոցա: - 220. Եւ *բազում* վարդապետք ի մէնջ և յօտարաց այսմ համաձայնին: - 221. Եւ *բազում* մտացածին բանս տողեն: - 225. Ասեն սուրբք, որպէս ի միոյ լուսոյ *բազում* լոյսք վառին: - 226. Ասեմք վասն *բազում* պատճառի: - 229. Եւ վասն *բազում* պատճառի յետոյ ստեղծաւ մարդս: - 230. Վասն *բազում* պատճառի: - 232. Չորրորդ՝ ի գլուխ մարդոյն սակաւ է հողն և օդն *բազում*. վասն այն ի վերո՛յ է: - 233. Իսկ այլ կենդանեացն հողն *բազում* է. վասն որոյ ծանրացեալ ի վա՛յր հակէ: - 233. Նա՛խ ցուցանի զի մի է արարիչ սոցա, և *բազում* արարածք. յաղագս որոյ նմանին և զանազանին: - 237. Այժմ տեսցուք թէ

զի՞նչ է շահն աննման պատկերաց. զի *բազում* վնաս էր լինելոց թէ անհատք ո՛չ էին որոշեալ դիմօք: - 238. Ութերորդ՝ զի ո՛չ երևէր բարեկամն և թշնամին. սիրելին և ատելին. և լինէին *բազում* սպանութիւնք և աւերք. զի ոչ զգուշանային միմեանց: - 238. Որպէս բունն մի է ծառոյն. և ի *բազում* ճիւղս բաժանի: - 244. Չորրորդ՝ զի *բազմաց* լինի նշան պատահական և ո՛չ բնական: - 246. Եւ ա՛յս է բացադարձութիւն իմացմանն. զոր ի *բազում* տեղիս ասեն վարդապետք: - 251. Երկրորդ՝ բոյս մեղաց և հոգ կենցաղոյս ի սիրտն *բազո՛ւմ* է: - 251. Ծանիր և զայս. զի *բազում* զարմանագործութիւն գոյ ի սմա: - 256. Եւ *բազում* ևս այսպիսիս: - 256. Եւ բնակա՛ն է, զի յանկատարէն ի կատարեալն ելանէ. որպէս աստիճանաւ ի գլուխ սանդղոյն. և ի սակաւուն ի *բազումս*. այսպէս և հոգի: - 258. Այսմ ասեն վարդապետք *բազում* պատճառս: - 266. Ուստի յա՛յտ է՝ զի յառաւել կերակրի և աւելի աճէ և *բազումս* ծնանի տունկն քան զանասունս: - 266. Զիմաստութիւնն հոմանուն է և ի *բազում* տեսակս որոշի. և բնաւքն ամենայն՝ մտա՛ցն են ներգործութիւն. վասն այն կոչի իմաստութիւն որ է իմացութիւն: - 269. Եւ ըստ այսմ *բազում* եղանակաւ ասի մարդն պատկեր աստուծոյ: - 271. Վասն *բազում* պատճառի: - 276. Այլ կամ իբր զիրեշտակս, կամ որպէս ի միոյ լուսոյ *բազումք*, կամ կուսութեամբ ծնունդ. որպէս սուրբ կոյսն մարիամ աստուածածին սրբութեամբ և կուսութեամբ ծնեալ փոխեաց զկարգ բնութեան ծննդեանս որ ի սերմանէ առն և կնոջ. զի սա՛ ծնունդ միայն ի մօրէ՛: - 280. Եւ թէ մին կին *բազում* այր չառնոյր. այլ մարդն առնոյր. և զկին եղբօրն առնուլ: - 285. Աստ հայր ազգաց *բազմաց* եղև. մանաւանդ թէ և նորին իսկ քրիստոսի ըստ մարմնոյն: - 288. Եւ եղիաս նախանձախնդիրն աստուծոյ. և այլք *բազումք*: - 288. Եւ նախնին կրօնաւորաց մեծն անտոն. և այլք *բազումք* ըստ տեառն հրամանի, թէ «որ արասցէ և ուսուսցէ, նա մեծ կոչեսցի»: – 288. Երկրորդ՝ զի մարդիկք *բազում* ամս յաճախէին ի մեղս յուսով վերջին ապաշխարութեանն. և յետոյ սովորեալ ի մեղս ո՛չ կարէին դառնալ, *ամենքին* կորնչէին: - 292. Չորրորդ՝ յա՛յտ է, զի աշխարհս հայոց բ գետով և տապանաւն առաւելու քան *զբազումս*: - 295. Եւ այս վասն *բազում* պատճառի: - 295. Զայն է իմանալ, որ ի բաժանել զլեզուս, բան և բառ և անուն խա՛ռն գտանին *բազում* ազգաց: - 297. Եւ յայսմանէ երևի *բազում* բարութիւն: - 298. Իսկ մեզ հոգևորապէս ետ պարգև զբնակութիւնս երկնից. ուստի մերժեցաւ հակառակորդն մեր սատանայ. զոր ասէ՝ (տեղի անկելոց հրեշտակաց.) թէպէտ և յետո՛յ կատարէ որպէս և նոցայն *բազում* ամօք և չարչարանօք: - 306. Տասներորդ՝ բազմամա՛յր եղև սառա ըստ նահապետացն. բազմամա՛յր է և կոյսն ըստ հաւատացելոցն. բազմամա՛յր է և եկեղեցի ըստ վերածնելոցն. «զի *բազումք* են որդիք սկնդկիդ առաւել քան զարամբւոյն» ասէ: - 307. Անդրանիկ է իսահակ ի մէջ *բազմացն*: - 308. Անդրանիկ է էմմանուէլն ի *բազում* եղբարս: - 308. Չորրորդ՝ զի մի է և միակ անդրանիկն ի մէջ *բազում* եղբարց. որպէս մի է գլուխն և *բազում* անդամք: - 310. Իսկ այն որ երբեմն անդրանիկն խոտիւր և կրտսերն ընտրիւր, *բազում* ունի խորհուրդ և նշանակութիւն: - 310. Զերրորդն՝ զի *բազում* եղեն յազգէ նորա մարտիրոսք վասն քրիստոսի յետոյ: - 313. Այլ և *բազում* բաղդատութիւն է մուտն իէլի յեգիպտոս և ելն անտի: - 314. Եւ այս վասն *բազում* պատճառի: - 315. Եւ թէպէտ յովսէ՛փ իջոյց ի խաչէն, և յովսէփ և նիկոդիմոս պատեցին, այլ ինքն կամաւն էջ ի *բազւկսն* յովսեփայ և պատեցաւ զմռով: - 316. *Բազում* ունի խորհուրդ: - 321. Ասեմք եթէ՝ *բազում* շահ և օգտութիւն է ի բանս նոցա յաշխարհի արդարոց և մեղաւորաց: - 325. և յայնցանէ աճեցոյց տէր զինչս և զանասունս նորա. որպէս յանապատին զսակաւն աճեցոյց նկանակ, և *զբազումսն* կերակրեաց: - 326. Իսկ զխորհուրդ նորն ադամայ *բազումս* տպաւորէր: - 327. Քսանևթ, մովսէս միայն եմուտ յեգիպտոս և *բազմօք* ել: - 329. Երկրորդ՝ զի գաւազանն մովսէսի մի վիշապ եղեալ կլանէր *զբազում* վիշապս նոցա որ և հե՛տն միանգամայն ո՛չ երևէր. ընդէ՞ր ապա և նոցայն ո՛չ եկուլ զմովսէսին. քանզի սո՛ւտ էր: - 335. Երրորդ՝ զի *բազում* օրհնութիւնս փոխանակէին ի զանազան համսն: - 339. Վասն *բազում* պատճառի: - 342. *Բազում* է խորհուրդն. բայց նախ հրեշտակաց յարմարի ցոյցք տապանին. զի նոքա են անապական և անմահ: - 344. *Բազում* ողորմ առ բազմապարտ դարձեալսն ի մեղաց. որպէս պարտապանն բիւր քանքարոյ: - 351. Վասն *բազում* պատճառի մեծահրաշ սքանչելիքս եղև առ մովսէս: - 352. Եւ այս *բազում* զանազանութեամբ: - 353. Չորրորդ՝ ի *բազում* անսուրբ իրաց առնու մեղուն. ի սուրբ իրացէ նւէրքն աստուծոյ: - 356. Չորրորդ, ի *բազում* ամանս փոփոխի. փոփոխականն մեղքն է: - 356. Սոքա նշանակեն զնահատակսն որք *բազում* վշտաց և փորձանաց համբերեցին: - 357. Եւ ըստ միտս, զի առաքինութիւնն է ի փառս աստուծոյ. այլ և ի պատիւ և ի գովութիւն մարդկան. զի *բազումք* հաղորդին սրբութեան նորա: - 358. Նա՛խ՝ բերել ի դուռն խորանին և տաճարին. և ո՛չ ի *բազում* մեհեանս. զի ցուցցէ զմինն աստուած՝ և յանուն նորա ընծայել: - 359. Եւ ո՛չ յօշէին զթռչունքն. զի անբաժանելի՛ է յինքեան աստուածութիւնն և մարդկութիւնն. այլ և *զբազումս* հաղորդութեամբն իւրով մի՛ արար անբաժանելի: - 361. Այլ խորհուրդն է, Նա՛խ՝ զի օրինակ *բազում* է, և ճշմարտութիւնն մի: - 374. Նա՛խ՝ էպատիկ՝ *զբազո՛ւմն*

Նշանակէ. իբր թէ ըստ բազում մեղաց մերոց *բազում* և առաւել է պատուհասն: - 376. Երկրորդ՝ զի ի *բազում* ժամանակս բազմիմաստք: - 378. *Բազո՛ւմ* է տեսութիւնն: - 384. Եւ *բազո՛ւմ* է տեսութիւնն: - 385. Երրորդ, զի մարգարէութեամբ նորա *բազում* ազգաց հեթանոսաց օգուտ եղև. զի յայնմանէ եկին մոգք և երկիր պագին քրիստոսի: - 387. Այլ ոմանք մնացեալք ի մարմնի, և *բազումք* ժամանեալք յօթևանս վերին: - 391. Զի ասեն եթէ՝ **խ** օր էր պայմանն ադամայ. յետ **խ** աւուր ուտէր ասեն՝ ի փայտէն գիտութեան և սրբութեամբ որդիս ծնանէր. և ապա՛ ուտէր ի կենաց փայտէն և վերափոխեր. և այլ *բազում* բանս տողե՛ն: - 391. Եւ դարձեալ՝ զի *բազմացն* շատ տացէ զբաժին երկրին, և սակաւուցն փոքր: - 392. Այլ ե թագաւորք մադիանացիքն էին, և **բ** այսորքիկ. որ են է դևք է գլխաւոր մեղաց. որք ի կեանս պատերազմին, և յետ մահու ընդ հոգւոցն *բազումք*: - 393. *Բազում* է խորհուրդն: - 394. *Բազո՛ւմ* է տեսութիւնն: - 395. Այլ և մարգարէքն և առաքեալքն և *բազում* սուրբք և արդարք յազգէ նոցա եղեն: - 398. Եւ հայր աստուած որ ո՛չ կատարի կամք նորա ի մեզ. յայնժամ ըստ *բազում* գթութեան իւրոյ առաքեաց զմիածին որդին որ փոխանակ մեր կախեցաւ զփայտէն և ազատեաց զմեզ յանծիցն օրինաց...: – 400. Վասն է՞ր է որ մին կին թէ *բազում* այր առնէ՝ պոռնիկ է. և թէ այրն *բազում* կանայս առնէր, չէր պոռնիկ որպէս ի հինն օրէնս: - 401. Այլ որ մարդն առնոյր *բազում* կանայս՝ և կինն ո՛չ, ա՛յս է պատճառն: - 401. Եւ մին այր կարէ՛ ի *բազում* կանանց ծնանիլ զաւակ. այլ մին կնոջ ի *բազում* արանց ո՛չ բազմանայ ծնունդ: - 401. Երկրորդ՝ բարոյական. զի մին կնոջ ի *բազում* արանց ո՛չ երևի հարազատ զաւակն. իսկ մի այր ի *բազում* կանանց կարէ՛ ծնանիլ հարազատ մանկունս և սիրել զնոսա: - 401. Երրորդ՝ օրինական. զի որպէս մին գլխոյ *բազում* անդամ կարէ՛ լինիլ. այլ ո՛չ անդրադարձեալ: - 401. Նոյնպէս գլուխ է այր կարէ՛ *բազում* կանայս առնուլ: - 401. Եւ մի է աստուած և արարածք *բազումք*: - 401. Եւ մի հաւատ և հաւատացեալք *բազումք*: - 401. Իսկ մի այր և *բազում* հաւատք և *բազում* աստուածք՝ շնութիւն է հոգևոր: - 401. Մի ճանապարհ գալն է. և է *զբազումս* ասէ ի փախչիլն: - 404. Եւ առ այս յարմարեն *բազում* տեսութիւնս վարդապետք եկեղեցւոյ: - 409. Այլ և քարինք *բազումք* էին ի վեր և ի վայր՝ բաց ի յունաց յոր անցանէին. որ կրթեալ և սրբեալ էին: - 415. Վեցերորդ՝ զի թէ լինի անկարօտ գող և զրկօղ, ընդ տեառն իւրոյ կորուսանէ և զինչսն. որպէս աքարն որ ունէր *բազում* ստացւածս, և գողացաւ ի նզովիցն երիքովի. տեսին ամենայն ժողովուրդն և ցասեան ի վերայ նորա և իրաւունս ետուն սատակմանն: - 416. **Բարձրամեծարն գործոյ ներմարդութեան բանին աստուծոյ՝ *բազում* եղեն նախատիպք խորհրդոյ. որպէս մովսէս, յովսէփ, իսահակ**: - 417. Եօթներորդ՝ ռահաբ եթող զկուռս և *զբազում* հոմանիս. և ցանկացաւ յեսուայ: - 417. Արին Սամփսոն *բազում* բաղդատութեամբ խորհուրդ և օրինա՛կ է Տեառն մերոյ ամենազօր փրկողին: - 421. Երրորդ՝ զի ոտք և ձեռք կապեալ *բազումք* զգաւակս զոհէին նմա. նոյնպէս և նորայն հատան: - 426. Կամ զի աղքատասէ՛ր էր դաւիթ և *բազումք* շրջէին ընդ նմա, վասն այն յեփուսացիքն նախանձեցան: - 431. Եւ *բազում* իրօք օրինակն համեմատի առ ճշմարտութիւնն: - 435. Ոմանք ասեն եթէ արիւն *բազում* եհեղ դաւիթ: - 439. Ասեմք եթէ՝ մովսէս արիւն եհեղ. և յեսու *բազում*. և սամուէլ. և ո՛չ մեղանչեցին: - 439. Քսանևդ, եբեր *բազում* պատարագս. ոսկի և ակն և խունկ: - 441. Ութերորդ՝ *բազում* աշխատութիւն անձին կալաւ: - 442. Իններորդ՝ և *բազում* ծախիւք և փարթամութեամբ եկն: - 442. Չորրորդ՝ ի տիպ մարմնոյն փրկական. զի ոչ յաւելու ի *բազում* պատարագելն. և ոչ նւազէ ի ճաշակելն: - 444. Չորեքտասաներորդ, Օծեալ և քրիստոս *բազում* եղանակաւ: - 454. Եւ այսպէս *բազումս* տեսանի ըստ մասին գործ ողորմութեան և արդարութեանն աստուծոյ: - 458. Զի օծեալք սոքա էին քահանայք և թագաւորք. յորոց և *բազումք* մարգարէք եղեն: - 461. Վասն *բազում* պատճառաց: - 461. *Բազում* պատճառաւ եկեղեցի սուրբ խոստովանի աստուածածին զկոյսն: - 466. Այս քան վասն բանին մարդեղութեան, զի *բազում* են պատճառք ասացեալ վարդապետաց. զոր մեք ըզսակաւն եդաք աստ: - 468. Այլ և ի զաւակն էին *բազում* սքանչելիք: - 469. Նա՛խ՝ ի *բազում* եղբարս. և երկրորդ՝ երէց և առաջին: - 472. Եւ զառաջինն կոչի անդրանիկ՝ յորժամ եղև ի *բազում* եղբարս. լինելով մարդ և որդի մարդոյ: - 472. Հինգերորդ՝ զի հոգի միաւորեալ ընդ մարմնոյ՝ է՛ ի մարմնումն էութեամբ և ո՛չ այլ ուրեք թէ և մտօք *բազումս* տեսանէ: - 478. Իսկ ի միաւորութիւն փրկչին բոլորից՝ բանն անդրանիկ կոչի և ի *բազում* եղբարս. և մարդն միածին հօր...: – 479. Հնգետասաներորդ՝ յա՛յտ է յայսմանէ. զի վասն տօնի տեառնընդառաջին առաքեաց յուստիանոս կայսրն յէմ զօրս *բազում* երիցս անգամ, - 484-485. Այլ պատշա՛ճ էր թլփատութիւն նորա վասն *բազում* պատճառի: - 485. Այլ ասեն վարդապետք *բազում* պատճառս: - 486. Զի օծն ի *բազում* ժամանակս վիշապ լինի: - 488. Չորրորդ՝ զի ի տօնի զատկին ի մէջ *բազում* ժողովրդոց: - 490. Զի պետրոս քարոզեալ ասէ հոգւոցն որ ի *բազում* ժամս կատարի: - 495. Ոմանք դ ասեն. և այլք՝ *բազումք*. զի ի գերեզմանի ասեն տանջիլ. և յօդս. և ի ծովս. և ի վէմս: - 504. Եւ որպէս ի մի արքայութիւնն օթևանք և փառք *բազում* են ըստ գործոցն. այսինքն երեսնաւոր. վաթսնաւոր. և ճաւոր: - 504-505. Նոյնպէս ի մի դժոխքն տեղիք *բազումք*

են և տանջանք: - 505. Դժոխ՝ զդժուար զնեղ և զանձուկն նշանակէ. և կոչի բազմաւոր, Նախ վասն *բազում* կրիցն. ուր լալ աչացն է և կրճել ատամանց և խաւար ներքին և արտաքին և այլն: - 505. Երկրորդ՝ վասն *բազում* մասանցն. որք կրեն զտանջանս մարմնոյ մասամբ և զգայութեամբ. և հոգւոյ զօրութեամբ և մտաց իմացմամբ: - 505. Նմանապէս և աստ յայսմ աւուր շաբաթու որ ի կիրակէ յարութեան տօնեմք, այժմ յինն ժամուն ի վեր նախատօնակ առնեմք յարութեանն քրիստոսի. և այս վասն *բազում* պատճառի: - 509. Նա՛և *բազում* տեսակք են ի ջուրս և ի յօդս. որպէս չղջիկանն առանց արեան է կե՛ր զամենայն: - 511. Այլ որք ուղղաձնութեան են աշակերտք՝ ի մէջ գիշերի ասեն զժամ յարութեանն քրիստոսի ի գերեզմանէն. որոց հետևիմք և մեք և հաստատեմք *բազում* վկայութեամբ և օրինակաւ: - 512. Իսկ պատանքն ո՛չ ծալեալ. զի խորհուրդ տըՆօրէնութեանն ո՛չ ամենևիմբ յայտնի է և ո՛չ անյայտ. որպէս կտաւն *բազո՛ւմ* ունէր փոթուածս: - 517. *Բազում* պատճառս ասեն վարդապետք: - 519. Նա՛խ՝ զի հաստատեսցի յարութիւն իւր *բազում* կերպիւ: - 520. Իսկ հոգին սուրբ երագ էջ յառաքեալսն. զոր արեգակն քրիստոս *բազում* ամօք յերկարեալ մարմնով ել յերկինս: - 522. Եւ *բազումք* զհոգին ո՛չ կարեն ընդունել. «զի ո՛չ ճանաչեն և ո՛չ տեսանեն զնա) որպէս ասաց տէր»: - 522. Այլ ընդ տն մերոյ *բազումք* խօսակիցք եղեն և տեսին: - 522. Եւ այս *բազում* համեմատութեամբ: - 523. Երկրորդ, մի է՝ թէ *բազում* բանն աստուծոյ և սուրբ գրոց: - 525. Քառասունևզ, Երեքսրբեանն *բազում* հարցմամբ: - 527. Բանն աստուծոյ մի է թէ *բազում*. զի *բազում* երևի ի հին և ի նոր կտակս և յիւրաքանչիւր թուղթս գրեալ. – 529. Սակայն մի և նոյն բանն բազմանայ ի *բազումս*. որպէս ի հրեշտակս և ի մարդիկ. ի հին և ի նոր օրէնս. այլ ի միութենէն ո՛չ բաժանի: - 529. Եւ թէ ոք ասիցէ, երևի այպէս ասելդ թէ՝ մի է և *բազում*. և այս ո՞րպէս լինի: - 529. Ասեմք առ այս, եթէ ո՛չ է արտաքոյ ուղիղ տեսութեան եթէ մի է առ հօր և *բազում* է առ մեզ: - 529. Զի մի է ըստ իւրում անձնաւոր գոյութեանն. և բազմանայ ի *բազումս* երևեալ: - 529. Եւ այս *բազումս* որ առ մեզ է, ի *բազում* թուղթս գրեալ մի և նոյն բանն է որ նախ քան զյաւիտեանս ի հօրէ ծնեալ: - 529. **Եւ դարձեալ զոր օրինակ, բան թագաւորին մի է, այլ ի *բազում* լեզուս և ի *բազում* լսելիս և ի *բազում* թուղթս որակացեալ և բազմացեալ, յիւրում միութենէն ո՛չ է քակտեալ**: - 529. Զի յատուկ է անմարմնոյ, որպէս ի *բազումս* բազմանայ և ի միութենէն ո՛չ բաժանի, այսպէս ի մասունս մասնաւորի և ի բոլորէն ո՛չ քակտի: - 529-530. Ասեմք առ այս թէ՝ մի և նոյն անձնաւոր բանն աստուծոյ է յաւետարանս խօսեցեալ. այլ ո՛չ է *բազում* անձն և գոյութիւն բանին: - 530. Զոր օրինակ, մի՛ է արեգակն անձամբ և գոյութեամբ, և ի *բազում* լուսանցս և ի հայելւոջ երևեալ նոյն մի անձամբ և գոյութեամբ և ո՛չ *բազում*: - 530. Դարձեալ զորօրինակ, մարմինն քրիստոսի մի և նոյն էր ի խաչին բևեռեալ, և մի և նոյն մարմինն է ի *բազում* նշխարս միաւորեալ և ո՛չ բազմացեալ. զի նոյն է գոյացութիւն հացին և գոյացութիւն մարմնոյն քրիստոսի: - 530. **Եւ որպէս անչափ են սպեղանիք և դեղք բժշկականք մարմնոյ ի *բազում* և զանազան ծաղիկս խոտոյ և յարմատս, ի տերևս ի պտուղս. և յայլսն. զի սոքա յայտնեն զբազմութիւն հիւանդութեանց մարմնոյ:** - 531. Եւ այս վասն *բազում* յատկութեանց գլխոյ: - 532. Նա՛խ՝ որպէս մի է գլուխ, և անդամք *բազում*: - 532. Իսկ հաւատացեալք *բազումք*: - 532. և Երկրորդ, մի անուն՝ և նշանակեալքն *բազումք*. որպէս խոյ է յերկինս և յերկրի և ի ծովս. նոյնպէս մի կոչի եկեղեցի կենդանի մարդն և շինեալն ի քարանց և եկեղեցին անդրանկացն յերկինս. սակայն զանազա՛ն են որպիսութեամբ: - 533. Իսկ գործ առաքելութեանն է ըստ *բազում* օրինակի: - 535. **Երրորդ, դիւական. որպէս կռոց սուտ մարգարէքն. սեդեկիայն և այլոց *բազմաց*. որ այժմ երևին ի պատասխանիս կախարդաց. նաև հաւկռիչք և գարէդիւթք. որք են բնաւ սուտք և ոչինչք**: - 536. Զորօրինակ, քահանայ ոք ի վաճառանոցն ի *բազում* հացս և ի գինիս ասասցէ «ա՛յս է մարմին իմ և արիւն իմ» ո՛չ կատարի. զի ոչ ունի զդիտաւորութիւնն. նոյնպէս և աստ: - 539. ...և զթէոդորիտոս եդին գլուխ ժողովոյն վասն մարդահաճութեան թագուհւոյն և թագաւորին. և զդէոսկորոս հայրապետն աղէքսանդրու, և զպետրոս անտիոքու, և զտիմոթէոս և զանատօլ, և զայլս *բազումս* խոտեցին. և վկայեցին նոքա ճշմարտութեան: - 543. Եւ յետոյ *բազումք* զղջացան և ասացին, պատառեցաք զկանոնս հաւատոյ: - 543. Եւ զպղոքոնոս աշակերտաց *բազմաց* վարդապետ. և ծեր, որ զմեռեալս յարուցանէր սքանչելեօք: - 544. Ժողովեալ խ եպիսկոպոսաց և *բազում* վարդապետաց և ժողովրդոց. կողմակալք և մարզպանք, մեծամեծօքն հայոց, և սպարապետն վարդան ազգայնօքն իւր: - 544. Երրորդ ժողովն է դվնայ, ի չորրորդ ամի թագաւորութեանն կոստանդեայ հռոմոց. հրամանաւ մեծի կաթողիկոսին հայոց ներսէսի շինողի. և այլ է և **Ժ** եպիսկոպոսաց՝ և վարդապետաց *բազմաց* և իշխանաց...: – 544. Եւ տէր սիոն հայոց կաթողիկոսն անդր հասեալ *բազում* եպիսկոպօսօք և մեծամեծ ազատօք հայոց և իշխանօք նոցին. ընդ դէմ աղանդոց ա՛յնր ժամանակի, և թուլութեան կարգաւորաց եկեղեցւոյ, և բռնութեան իշխանաց: - 545. Ժողովեալ *բազում* եպիսկոպոսաց յամենայն կողմանց. և իշխանաց և մեծամեծաց հայոց. կարգեցին սահմանս կանոնականս **իբ** գլխով. և պայծառացուցին զեկեղեցի սուրբ: -

անբանականք: - 248. *Բանականք* են Միտք. Տրամախոհութիւն. Կարծիք. Կամք. Ընտրողութիւն: - 248. Զի *բանական* մասունքն տեսականաւն զարդարի: - 248. Իսկ անհնազանդ բանին՝ որպէս *բանականն* և տնկականն: - 249. Եւ ըստ այսմ զանազանին երեքկին զօրութիւնք հոգւոյն. այսինքն տնկական. զգայական. և *բանական*: - 249. Զի տնկական հոգին յօժարի՛ գոլ. և զգայականն բարեպէս գոլ. և *բանականն* ևս բարեպէս գոլ. զի ո՛չ երբէք հանգչի, մինչև միաւորեսցի ընդ ևս բարեգունին: - 249. Իսկ *զբանականն* և զիմաստութիւնն՝ կատարեալքն հասակաւ. յորժամ բանին մասն կատարի ի մարդն: - 251. Նոյնպէս և ի *բանական* որակութիւնս հոգւոյն՝ նման և աննման, հաւասար և անհաւասար բացատրեաց. այսինքն խոհեմ և տգէտ. հեզ և բարկացօղ. ողջախոհ և ցանկասէր. և այլ զանազան բարս բնական՝ մարդոյն: - 252. Պատասխանեմք առ այս եթէ՝ փչումն ո՛չ *զբանական* հոգին ասեն սուրբ հարքն. զի մարդ ասելով զհոգի և զմարմին նշանակեաց. և զմարմինն զի ի նիւթո՛յ է՝ ի հողոյ ասաց. այսինքն ի **դ** տարերաց որ է՛ ի հողն. և զհոգին ո՛չ նշանակեաց թէ ուստի՞ է. զի յանէից է ստեղծումն նորա: - 253. Եւ դարձեալ՝ եթէ տամք զփչումն՝ *բանական* հոգւոյն ըստ ոմանց, և այսու յետո՛յ իմանալ զհոգին քան զմարմինն մեղանչումն է ճշմարտութեան ըստ **ե** եղանակի: - 253. Եւ թէ ոք ասիցէ, զի՞նչ է այս որ յետ **խ**, կամ **ձ** աւուր ստեղծանի *բանական* հոգին: - 254. Զի կազմողական զօրութիւնն որ է՛ ի նիւթն՝ ազդումն առեալ յարարչադիր հրամանէն, նախ կազմէ՛ և պատրաստէ՛ զնիւթն առ ի յընդունելոյ զտնկականն. և ապա զզգայականն. յետ որոյ *զբանականն* ի ծագմանէն աստուծոյ: - 254. Նախ՝ զի նիւթն այն ունի առ ինքն բնական զկենդանութիւն տնկականին. և տնկականն մա՛սն է զգայականին. և զգայականն *բանականին*. և սոքա ո՛չ որոշին ի բոլորէն. զի մի են էութեամբ ի մարդն թէպէտ ա՛յլ են ներգործութեամբ: - 254. Եւ թէ ասէ ոք, ո՞րպէս է *բանական* հոգին նախ զօրութեամբ և յետոյ ներգործութեամբ: - 254. Ասեմք եթէ՝ ի կողմանէ նիւթո՛յն կարելի է ասել. զի զոմն ունի, և զոմն ընդունի. այսինքն զտնկականն ունի, և ընդունի *զբանականն*: - 254. Զի զօրութիւն ունի այս նիւթ՝ ընդունել *զբանականն*. զոր նիւթ անասնոցն ո՛չ կարէ ընդունել: - 254-255. Եւ յորժամ ծնանայ ի կերպ մարդոյ, յայնժամ *բանական* հոգին երևի ի նմա ի խնամոցն աստուծոյ: - 255. Այսպէս և *բանական* հոգւոյն նշոյլք է զգայականն և տնկականն: - 255. Այսպէս և *բանական* հոգին համանգամայն երևի ընդ ծնանալ մարմնոյն: - 255. Նախ տնկականն. և ապա զգայականն. և ուր սոքա երևին ի հրամանէն աստուծոյ, երևի և անդ *բանականն*: - 255. Չորրորդ՝ զի ո՛չ է այն մեռելութիւն միայն՝ որ *բանականն* կամ շունչն պակասի. այլ և որ տնկականն պակասի. որպէս քար. ա՛յն է իսկապէս մեռեալ: - 256. Եւ թէ ասիցէ ոք, ապա երևի թէ և *բանական* հոգին ի ծնողա՛ցն հատանի կամ գոյանայ: - 257. Եթէ տընկական. եթէ զգայական. և եթէ *բանական*: - 257. Այլ և հատումն ամենևին ո՛չ ասի հոգւոյն. ո՛չ տնկականի և ո՛չ զգայականի և ո՛չ *բանականի*: - 257. Նա՛խ՝ զի անմարմին է հոգին. վասն որոյ ո՛չ հատանի. ո՛չ տընկականն. ո՛չ զգայականն. և ո՛չ *բանականն*: - 257. Իսկ *բանականս* մարդ ո՛չ ամենևին նախախնամութեամբ է. զի հոգին ո՛չ ի ծնողաց, այլ ի շնորհացն աստուծոյ պարգևի: - 257. Զի նախախնամութեամբ ունի զտնկականն և զզգայականն. և ստեղծմամբ *զբանական* հոգին զպատկերն աստուծոյ: - 257. Եւ դարձեալ՝ նոյն ինքն *բանական* հոգին ո՛չ նոր ստեղծումն է և ո՛չ հին: - 257. Ապա ուրեմն *բանական* հոգին նախախնամութեամբ է և ստեղծմամբ: - 258. Եւ դարձեալ պարզ և յայտնի, այսպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին եթէ, *բանականին* շնորհ ընդ լրումն մարդկութեանս թա՛փ էանց ի տեսութիւնն աստուծոյ՝ որքանութիւնն և որպիսութիւնն...: - 258. Եւ ի կատարիլ մարմնոյն՝ հեղու ի նա զհոգի *բանական* ըստ նախատես գաղափարի այնորիկ որ էր ի միտս արարչին յառաջ քան զլինիլն աշխարհի: - 258. Եւ թէ ոք ասիցէ, վասն է՞ր նախ զտնկականն տայ և ապա *զբանական* հոգին: - 258. Եւ ըստ անասնոցն հաւասարութեան նախ գոյանայ անասնականն որ է տնկականն և զգայականն. և յետոյ *բանականն*: - 258. Ոմն նախախնամութեամբ. որպէս տնկականն և զգայականն. և ոմն ստեղծմամբ. որպէս *բանականն*: - 258. Իսկ հոգի մի է մարդոյ ի միոյ նախախնամութենէ յառաջ բերեալ. յանկատար նիւթն եղեալ զտնկականն և զզգայականն. և ի կատարեալն զհոգի *բանական* ծագեալ: - 259. Այսինքն *բանականն* ի մարդն. և զգայականն յանասունս. և տընկականն ի բոյսս: - 259. Եւ ըստ որում իմանայ և խորհի, կոչի *բանական* հոգի. որպէս այլուր բաժանի ի տեսողական զօրութիւնն. և յիմացականն. և ի յիշողականն. մնալով անբաժանելի ներգործէ՛ ի նոսա: - 259. Իսկ թէ զսոսա **գ** տեսակս ասես, կամ զօրութիւնս, կամ մասունս *բանական* հոգւոյն, մի՛ է տեսութիւնն: - 259. Այսպէս և զգայականն և տնկականն մասունք են *բանականին*՝ նախ եղեալ ի մարմինն. և յորժամ *բանականն* հեղի ի մարմինն, յայնժամ և սոքա հեղին ընդ նմա. զի զօրութիւնք և մասունք են նորա ըստ օրինակի նախասացեալ երրորդ թուոյն: - 259-260. Այսպէս իմա և *զբանական* հոգւոյն. որ ի մարդն մի է և զանազանապէս ներգործէ: - 260. Եւ թէ ասիցէ ոք, երևի ապա թէ առաջին զօրութիւն հոգւոյն տնկականն է՝ և վերջին

*բանականն* որ է՛ յոյժ անպատշաճ: - 260. Ասեմք առ այս, եթէ *բանականն* առաջին է ըստ պատւոյ քան զզգայականն. և զգայականն քան զտնկականն: - 260. Այլ հակադարձեալ սոքա ըստ կարգի և ըստ դասու՝ յառա՛ջ է տնկականն քան զզգայականն, և նա՛ քան *զբանականն* ի յերևումն. այլ էութեամբ համանգամայն են. որպէս անդ ուրեմն ասացաք վասն հոգւոյ և մարմնոյ: - 260. Դարձեալ ըստ կարգիս հարցանեմ թէ յո՞րժամ, և ի քանի՞ս սկսանի ներգործել տնկականն և զգայականն և *բանականն*: - 261. Եւ ի **իա** աւուրցն ի վեր՝ երևեալ շնչոյն ձևակերպէ՛ զկերպ մարդոյ մինչ ի **խ** օր արու մանկան. և իսկոյն հեղի ի նա՛ հոգին *բանական* ի շնորհացն աստուծոյ ծագեալ ի նա: - 261. Արդ՝ **ժ** թիւն կատարեալ է. և չորսն տարրական է. այսինքն զի կատարեալ հոգին *բանական* ի նո՛յն ժամն խառնեալ միաւորի ընդ մարմնոյն տարրական, և կերպացեալ լինի մի մարդ մի դէմ և մի բնութիւն մարդոյ ի հոգւոյ և ի մարմնոյ. որպէս քառասունն ի տասանց և ի չորից է գոյացեալ: - 262. Այսպէս և շնչականն գոյացեալ ի իերորդ աւուր՝ կիսակատար գոլով *բանականին* զնոյն ունի խորհուրդ: - 262. Տնկական. զգայական. և *բանական*. վասն որոյ է ամսեայ ծնեալն ապրի և շնորհալի լինի վասն շնորհալի թուոյ եօթներորդին: - 263. Դարձեալ **գ** ամիս տնկականին որպէս ասացաք. և **գ** զգայականին. և գ *բանականին*: - 264. Եւ չորիցս կրկնեալ **է**-ից մինչև ի **իը** ամն, լինի երիտասարդ. և կատարի *բանական* մասն: - 265. Եւ կրկնեալ ի հնգետասանէն մինչև ի **լ**, կատարի երիտասարդական հասակն. որ է **գ** տասամբ կատարեալ. ունելով զցանկականն և զցասմնականն և *զբանականն* լիով առ ինքեան: - 265. Եւ անտի յառաջ *զբանական* մասին կատարումն և զկայ՝ ցուցեալ: - 267. Նա՛խ՝ զի *բանականի* և անբանի սերմ ո՛չ խառնին ի միմեանս: - 267. Իսկ զի *բանական* միտքն ո՛չ տեսանէ զերազն, այլ անբան մասն, որ է՛ տնկականն ի մեզ. նա՛ յածի յերազն. և ցուցանի այս ի կրկին իրաց: - 268. Երկրորդ՝ զի *բանական* միտքն և զգայականն խափանեալ է ի գործոյ յորժամ ննջէ ոք: - 268. Երրորդ՝ իմաստութիւն ասի և *բանական* քննութիւն. որք բանիցն տեղեկացեալ ընտրեն զստոյգն ի ստոյն: - 269. Վեշտասաներորդ՝ զի *բանական* է: - 272. Զի իր ինչ յաւելու մարդն ի վերայ կենդանւոյն, որ է՛ *բանականն*: - 272. Դարձեալ՝ մարդո՛յն է կարգաւորել զկիրս բարկութեան և ցանկութեան ըստ կանոնաց *բանականին*: - 274. Իսկ ըստ նշանակութեան ցուցանէր *զբանական* հոգին. որով կենդանացաւ մարդն: - 282. Այլ գիտելի է, զի **դ** սեռիւք որոշի կապ *բանականացս*. այսինքն հոգեկան և մարմնական և միջակօրէն: - 317. Որպիսութեան, որպէս *բանական*: - 318. Այլ կոչի տաճար և զգեստ *բանական* հոգւոյն մարմինն իւրական որպէս ամենայն մարդկան: - 319. Գունդն՝ *բանական* հոգին: - 347. Հինգերորդ, այն զգայական. և աստ *բանական*. և անդ իմացական: - 355. Երկրորդ՝ ցուցանէ թէ *բանական* հոգիս մեր ո՛չ կորնչի: - 371. Հինգերորդ՝ որպէս արիւն անասնոց ի հողոյ է և ի հող լուծանի. և *բանական* հոգիս մեր յաստուծոյ է և առ աստուած երթայ: - 371. Դարձեալ, տասն են մասունք զգալի արարածոց. այսինքն՝ է մոլորական գունդք. և ը՝ անմոլարքն. և իններորդ ի լուսոյդ ի վայր. և մարդս **ժ** երորդ ի վերայ նոցա. որ է՛ *բանական* և բաժին աստուծոյ: - 376. Նա՛խ՝ ի պարգևաց *բանականաց*. որպէս հրեշտակաց և հոգւոյս մեր: - 406. Երկրորդ՝ զի մի՛ անբանքն՝ աստուծոյ պատւականք երևեսցին քան *զբանականքս*: - 416. այսինքն բնական և *բանական* և գրաւոր օրինօք ո՛չ գտեալ. այլ ի ձեռն աւետարանին: - 426. Տասներորդ՝ զի սողոմոն ի քարանց ձեռագործաց կազմէր տաճար աստուծոյ. իսկ քրիստոս *զբանական* հոգիս մարդկան շինէր օթևան սուրբ երրորդութեանն: - 442. Դարձեալ՝ նշանակէ՛ զերիս օրէնս. *զԲանականն*. զԳրեալն. և զԱւետարանն: - 449. Իսկ հաւասարապէս պատշաճի բոլոր *բանական* եղելոցս ըստ տեղւոյն դիպման: - 457. Նախ՝ անբաժանելի միաւորութիւն *բանականին* առ աստուած: - 462. Երկրորդ՝ բոլորովին նուաճումն ստորին մասանց *բանականին*: - 462. Իսկ զչորրորդ սրբութիւնն որ է՛ միաւորութիւն *բանականին* առ աստուած, և միշտ ներգործապէս դիմել առ աստուած որպէս հրեշտակք. ընկալաւ աստուածածին կոյսն ի յղանալն զորդին աստուծոյ: - 463. Եւ այն ևս սքանչելիք, որ ի փոքրագոյն մարմինն ընկալեալ եղև հոգի *բանական*, և տեսակաւորեալ որպէս քառասնօրեայ մանուկ յարգանդի: - 470. Դարձեալ ի սկիզբն յղութեան անդ *բանական* հոգւով գիտաց զամենայն միաւորեալ ընդ բանին: - 470. Հինգերորդ՝ որպէս մարմինն զգայական միաւորեալ ընդ *բանական* հոգոյ՝ ո՛չ է և ոչ ասի զգայական. այլ *բանական* մարդ: - 477. *Բանականն* աբրահամու: - 494. Նա՛խ՝ զի *բանական* մարդ կամաւորո՛քն է մարդ, և ո՛չ ակամայիւքն. որպէս կատարեալ էր մարմինն ադամայ նախ քան զմեղանչելն: - 502. Եւ դարձեալ զի ակամայքն ի մարդոյս բնութիւն յետամտականք են և անասնականք, և ո՛չ բնական *բանականիս* բնութեան: - 502. և տէր մեր յետ յերից օրինաց՝ այսինքն բնական *բանական* և գրաւական՝ երևեալ ի գիշեր կենցաղոյս և իջեալ ի դժոխս աւերելով զնա դարձոյց զերկոսին ժողովուրդս իւր...: – 514. Եւ բաց յայսցանէ **գ** այլ մասնական կամ տեսական ասա. այսինքն բարոյական. *բանական*. վարդապետական: - 528.

*Բանականն* աքրահամու. բանականաբար ի շարժմանց արարածոց ծանուցեալ զաստուած: - 528. Այն անասնական, և այս *բանական*: - 538. Եւ որպէս նախ զգայականն և ապա *բանականն*: - 541. Այլ սոքա ամենայնքն նախկին և պատւականք են. այսինքն քահանայ քան զսարկաւագ. և *բանական* քան զգայական. և ներգործութեամբ քան զօրութեամբ. այսպէս արձակելն քան զկապելն: - 541. Մ՛որդ՝ մեղք մտացն թէպէտ ըստ *բանականին* և մարմնականին չէ կատարեալ, այլ ի տեսակս իւր կատարեալ է: - 556. Ձի կամ հրաժարէ՛ և թիւրի *բանականաւ*. ըստ այսմ է՛ նախանձ: - 561. Վասն բանին և անձնիշխան կամացն. զի անձնիշխան կամք անասնոց ո՛չ է. այլ *բանականին*: - 563. Այսպէս ապա գիտելի է, զի և հրեշտակք վասն այն մեղանչեն որ են *բանականք* և անձնիշխանք: - 563. Որ է՛ հաւատ՝ յոյս՝ սէր. և սոքա երեքեան հեղո՛ւմն են յաստուածային շնորհացն ի *բանական* ոգիս. որով ուղղիմք յերկնային կեանս: - 577. Այլ գիտելի է, զի առաքինութեամբն ուղղի հոգին ի զօրութիւնս իւր. քանզի խոհեմութիւնն ուղղէ *զբանականն*. արիութիւնն զցասմնականն. ողջախոհութիւնն զցանկականն. իսկ արդարութիւնն ուղղէ՛ զամենայն զօրութիւնս: - 578. Երկրորդ՝ *բանական*: - 640. Տասներորդ, **բ** են *բանականաց* տեսակ. մինս տարրական. և միւսն գերաշխարհիկ ի_վերոյ քան զիինգերորդ էութիւնս երկնից. – 654. Չորրորդ ըստ *բանական* հոգւոյն յառաքինութիւն և ի չարութիւն: - 663. Նոյնպէս *զբանական* սերմս զայս երէկ քաղեցաք ի հող, - 680. Երրորդ՝ զի գ են տեսակք հոգւոց. տնկական, զգայական, *բանական*. և սոքօք մեղանչեմք: - 681. Այլ և *բանական* հոգւոյն **գ** են զօրութիւնք. բան ցասումն և ցանկութիւն: - 681. ...նման է պղատոնի մարմնափոխութեանցն. որ ի *բանական* մարդոյն ի զգայականն, և անտի ի տունկն ասեն, - 687. Այլ և նոքա որ յարգանդի մօրն մեռանին թէ առին *զբանական* հոգին: - 724. Երկրորդ՝ զի թէ մարդոյ մարմին որ է՛ *բանական* և կենդանի՝ ապականի մահուամբ. ապա ուրեմն և խաչն ևս ապականի զի ո՛չ կենդանի է և ո՛չ *բանական*: - 732. Նոյն և կամք և կիրք և ներգործութիւն մարդկային ընդ աստուածայինն միաւորեալ. միջնորդելով հոգւոյ *բանականի*՝ աստուածութեանն՝ և մարմնոյն. որ է՛ ներգործութեամբ միշտ աստուած և փրկիչ բնութեամբ. քրիստոս. նոր ադամ. էմմանուէլ ճշմարտութեամբ: - 770. Բարւոք ասացաւ յարարչէն. զի թէ և բնութիւն քարց երևակայութեան, և արհեստ հանդերձ երևակայութեամբ, սակայն կամք արարչական ետ նոցա բնական և *բանական* կարողութիւն. և ոչ ինչ վայրապար կազմեն զտեսակ գոյացական և զտեսակ պատահական. խնդրելով ոմն պարզ նիւթ. և ոմն տեսակացեալ: - 786

**ԲԱՆԱԿԱՆԱԲԱՐ** - Բանականն՝ աքրահամու. *բանականաբար* ի շարժմանց արարածոց ծանուցեալ զաստուած: - 528

**ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ +** Եւ թէպէտ մարմինք մարդկան են տարրականք, այլ բարի և չար ներգործի ըստ կամաց և ո՛չ ըստ *բանականութեան*: - 10. Եւ *բանականութեան* սկիզբն և կատարումն: - 101. Զի՞նչ է *բանականութեան* սկիզբն և կատարումն: - 121. Զոր մարդիկ *բանականութեամբ* և արւեստիւք ստացան զզէնս զանազանս ի յերկաթոյ ի պատսպարանս ինքեանց: - 216-217. Իսկ մարդոյս հնարք և իմաստութիւնն *բանականութեամբ* է. վասն այն բազում է ի նոսա հնարք. և առաւել և նուազ, և ո՛չ հաւասարք: - 218. Երրորդ՝ զի *բանականութեամբ* կարեն սանձիլ սոքա, յորժամ կամեսցին: - 246. Զոր ընդ դերևս հանէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան այսպէս եթէ, որք զհոգին յառաջ ասեն գոյանալ քան զմարմին. և վասն մեղաց եդեալ ի մարմին մարդոյ. որ է՛ համանման *բանականութեամբ*. և է՛ իներքոյ երկնային կենաց՝ զի մարմնաւո՛ր է: - 252. Այսպէս և հոգին ընդ անկատար նիւթոյն ունի զկերակրիլն. և յորժամ հաստատի զգայութեամբն ծաղկի. և յևս հաստատիլն՝ *բանականութեամբ* պտղաբերի ի վերին խնամոցն որպէս պտուղն այն յարեգակնէ՛: - 255. Զի թէ ո՛չ էր ասացեալ ընդ պատկերին զնմանն լինիլ, ամենայն ոք պատճառէր, և զմարդն պաշտելով անկանէր ի կռապաշտութիւն. վասն որոյ ասաց զնմանն, թէ յորժամ տեսցեն պատկերակից աստուծոյ զմարդն *բանականութեամբ* անմահութեամբ և այլովքն որ ինչ է ի հոգիս, իմանայցեն և զզանազանութիւնն աստուծոյ: - 274. Քանզի ի գործս առաքինութեան յորդորէ՛ զմեզ բնութիւն և *բանականութիւն*. և շնորհն յորդորէ՛ զքնութիւնն: - 578. Յարամնայութիւն է հաստատ և միշտ յարակայութիւն ի բարեպէս քննել *բանականութեանն*: - 580

**ԲԱՆԱԿԵՏՂ +** Յիսուսնուգ, *Բանակետղ* ժողովրդեանն խաչաձև. և վրան ժամուն ի միջի: - 284.

**ԲԱՆԱԿԻՄ +** Երրորդ՝ անդրանիկ են հրեշտակք քան զմարդիկ ըստ կարգի և պատւոյ. թէպէտ *բանականեմք* որպէս նոքա: - 309. Ո՞րպէս *բանակէին* **բժ**ան ցեղքն: - 378. Ի **դ** կողմն խորանին *բանակեցան* **բժ**ան ցեղքն. և ի մէջ նոցա խորանն էր Ղևտական ցեղօքն: - 378. Ի յարևելից կողմն *բանակէր* **գ** ազգ: - 378. Նոյնպէս և Ղևտացիքն շուրջ զխորանաւն *բանակէին* ի մէջ **բժ**ան ցեղիցն. և խորանն ի միջի նոցա այսպէս: - 378. Երրորդ՝ ի *բանակիլն* խաչաձև *բանակեցան* երկոտասան ցեղքն, և խորանն ի միջի. որ նշանակէ՛ զխորանն եկեղեցւոյ՝ խորհրդով խաչին քարոզեալ ընդ **դ** կողմ աշխարհի: - 616

**ԲԱՆԱԿՐՈՒԹԻՒՆ** - Վասն որոյ յայսմանէ և յառաջ հաստատի մարդ ի հանճարս *բանակրութեան* և ի տեսութիւն իմացման մինչև ի խթ ամն որ է եօթնիցս եօթն: - 265

**ԲԱՆԱՄ +** Որք զաչս իմաստից յիմանալի ճառագայթիցն խուսափեցին թիւր կամօք, և խոտոր մտօք. զանուղղայս խորհելով, և զանպատշաճս բարբառելով. յարձակեալ անկապ լեզւաւ և անդուռն շրթամբք *բացեալ* յերկինս. ցոպ բերանով ի բարձունս բարբանջելով. և յածեալ ընդ երկրաւ լեզուագարելով. որոց դատաստանն ի բնէ ո՛չ դատարկանայ. և կորուստն ո՛չ նիրհեսցէ: - 31. Եօթներորդ՝ զնա փոքր եղջիւր կոչէ դանիէլ. խեթկի և մեծամեծս բարբառելով. և սոքա խեթկեն զեկեղեցի. և *բանան* զհայհոյիչ բերանս իւրեանց յերկինս, և զլեզուս ածէին զերկրաւ: - 35. Զի ա՛յս է ըստ մարգարէին՝ «զբերան իմ *բացի*՝ և առի զհոգի». զի առաւել նախատակիլն է՛ *բանալ* բերանոյն: - 50. Այլ և ո՛չ տեղի պատահական. որպէս աստ և անդ. զի ոչէ ի տեղոջ իմիք պարունակեալ. և ո՛չ *բացեայ* ի տեղւոջէ իմիք զատեալ. զի նա՛ է ամենցուն տեղի: - 172. Զի ըստ իմաստ նոյն է՛ աստուած ամենայն ուրէք և ո՛չ ուրէք. ոչ ի տեղւոջ իմիք՝ և ո՛չ *բացեայ* ի տեղւոջէ իմիք. այլ վերոյ սորա, և ներքոյ սորա. ի մէջ սորա, և արտաքոյ սորա: - 180. Ի քթթելական՝ որքան վաղվաղակի կարես *բանալ* զակն՝ զբոլորն համանգամայն ստեղծ: - 227. Վտարականն է՝ յորժամ եփի և հալի կերակուրն, *բանա՛յ* զդրունսն և բաժանէ զնոսա: - 242. Նմանապէս և զմիջին դուռն *բանայ*, և զպարզ կերակուրն ի լեարդն յուղարկէ. և նա ներկէ յարիւն և բաժանէ: - 242. Որ բազում անգամ *բանայ* և խփէ՝ երկչոտ է և թոյլ: - 246. Այսպէս և ի նորս սուրբն ստեփաննոս որ եղև առաջին մարտիրոս և վկայ քրիստոսի՝ հեղլով զարիւն իւր. տեսանէր *բացեալ* զերկինս և զյիսուս ընդ աջմէ աստուծոյ: - 288. Երրորդ՝ զի նա՛խ *բանայ* զարգանդ ծնողին և գայ ի կեանս. որ և ե օր աւելի ստանայ զկեանս յարգանդի: - 310. Եւ տէրն զերկիր շարժեաց և զգերեզմանս *եբաց*. և **գ** ժամ խաւար էած փոխանակ **գ** աւուր խաւարին եգիպտոսի: - 329. Երեմիա և աշակերտն՝ տարան ի գիշերի զտապանակն և որ առ նմայն էին՝ ի լեառն սինա. և անդ կնքեցին ի վիմին անւամբն աստուծոյ ասելով, ո՛չ ոք *բացցէ* զսա՞ թէ ոչ մովսէս որ եբերն. և ո՛չ ոք *բացցէ*՝ թէ ոչ ահարօն: - 345. Սոքա ամենայնքն զբերանս մտաց *բացեալ* ունին առ մինն և ճշմարիտ ջահն քրիստոս: - 347. Եւ ծիթենիքն՝ կրկին բարութիւնք խաչին. որ զարքայութիւնն *եբաց* և զդժոխս աւերեաց: - 347. Որ իսկապէս մեզ վայել է քրիստոս եկեալ և դժոխք աւերեալ և արքայութիւնն *բացեալ*: - 358-359. Իսկ իշխանութիւնն երկրաւոր, վասն որոյ *բացաւ* երկիր և եկուլ զդադան: - 381. Նա՛խ՝ զի բերան մեղաւորի մի՛ *բացցի* ի ժողովրդեանն աստուծոյ: - 388. ...և ապա ըստեամբք կերակրէ զնա մայր իւր բանիւն աստուծոյ. զոր ասեն յաշխարհի, եթէ զմին դուռն փակէ աստուած, նա զերկուքն *բանայ*. զի յորժամ զմին դուռն պորտին փակեցաւ, **բ** ստինքն *բացան*: - 397. Որ և մովսէս եկեալ ի թաբօր վկայէր նմա, և աղերսէր ելանել ի խաչ և *բանալ* զդուռն արքայութեան. որում մարգարէքն սպասէին: - 411. Եւ որպէս շնորհք մկրտութեան առաւել է քան զբլփատութիւն նոցա, զի զմեղս սրբէ և զարքայութիւնն *բանայ*: - 433. Դարձեալ, զի է անգամ էր սաստկութիւն սովոյն, է անգամ աղօթիւք *եբաց*: - 444. Բայց զի յուսացեալ ի բանն ճշմարտութեան յաղագս որոյ բանս հարցափորձութեան, հետևելով ուսուցչացն ուղղութեան, և յուսոյ ուսողացդ նպաստութեան. *բացցուք* զբերանս մտաց, և ծգեսցուք ի մեզ զհոգին շնորհաց: - 456. Սակայն ըստ ներգործութեան մեծագոյն է սրբութիւն մկրտութեանն. զի տպաւորէ զկնիքն. այլ և *բանայ* զդուռն արքայութեան. այլ և պատրաստէ՛ զմարդն առ ի խորհուրդս ամենայն. զոր ո՛չ ներգործեն ա՛յլ երկոքին եզական շնորհքն: - 462. Հինգերորդ՝ *բանալ* դրանն ի գնալն քառասնօրեայ ի տաճարն: - 471. Երկրորդն որ ասէ «*բացաւ* երկինս» որ ցուցանէ թէ մկրտելոյն առ ժամայն *բացեալ* է դուռն արքայութեանն: - 487. Երկրորդ՝ ի ներգործութիւնն. զի մկրտութիւնն քրիստոսի արդարացուցանէ և զդուռն երկնից *բանայ*. և յովհաննուն ո՛չ: - 488. Երրորդ՝ գերեզմանք *բացան*: - 490. Եւ գերեզմանք *բացան*. զի կարօ՛տ էին ննջեցեալքն նմա. և նոքա փակեցին ըզգերեզմանս սրտից իւրեանց: - 490. Եւ չարչարանքն քրիստոսի երկու իրս ներգործեաց. նախ զպարտիս մեղաց վճարեաց. երկրորդ զդրունս երկնից *եբաց*: - 503. Զբերան մտացն ասէ. այսինքն է՛ յօժարութիւն հոգւոյն որ առնու զհոգին սուրբ. ըստ այնմ որ ասէր, «*բա՛ց* զբերան քո և լցից զդա»: – 523. Երկրորդ՝ որ քան *բանայ* զբերանն՝ առնու զօդն: - 523. Զայն խնդրէ պօղոս յաշակերտացն. «զի ինձ տացի բան ի *բանալ* բերանոյ»: – 523. Եւ որպէս եղիա որ կապեաց զերկինս և փախեաւ ի սիդոն. նոյն նմա հրամայեաց աստուած *բանալ* զերկինս. նմանապէս և այս: - 542. Ա՛րդ՝ մեղանչելն մարդոյ այնպէս է որ զակն խփեաց ի լուսոյն և խաւարեցաւ. սակայն լոյսն ծագէ՛ դեռևս ի վերայ աչացն և սակաւ փայլէ ի ներքս. և յորժամ *բանայ* վաղվաղակի լոյս տեսանէ: - 562. Իսկ յոյսն որ էր ի սուրբն ստեփաննոս յորժամ ետես զերկինս *բացեալ*...: – 574. Զի նորին գործն է որ *բանայ* և փակէ զդուռն եկեղեցոյ: - 606. Եւ ի նազերեթացոց ժողովրդանոցին դպիր ցուցաւ ի կարդալն զեսայի մարգարէն՝ յոտն և *բացաւ* գլխով: - 606. Ո՛չ միայն զգլուխս *բանամբ*, այլ և զձեռս համբառնամբ

ի վեր. որպէս և յովսէփ ասաց: - 635. Այլ և յընթերցումն աւետարանին զգլուխս *բանամբ*: - 635. Զի ի դ տեղւոջս յայս՝ պա՛րտ է ժողովրդեանն զգլուխս *բանալ*: - 635. Բայց կին մարդոյ ո՛չ է պարտ *բանալ* զգլուխն, այլ առաւել ծածկել յեկեղեցւոջ: - 635. Իսկ որ այժմ աբեղայք ո՛չ *բանան* զգլուխս յամենայն աղօթս, այս է պատճառն, - 635. Այլ ի պատարագն պարտ է *բանալ* զգլուխս որ պատարագիչն է ամենայն ոք որ և իցէ. թէ քահանայ և թէ եպիսկոպոս և կամ ա՛յլ ոք: - 635. Այս է՝ զի ի *բանալ* դրանն դղրդեցաւ քաղաքն երուսաղէմ. - 638. ...և յորժամ *բացին* զգերեզմանն, գտին թափուր ի սուրբ մարմնոյն. - 681. Եւ այս է խորհուրդն. զի յայնմ աւուր խաչեցաւ քրիստոս, և գերեզմանք *բացան* և այլն: - 684. Զի այս ո՛չ է ի կարգէ դատաստանին. այլ ի սքանչելեաց միածնին. որպէս արեգական խաւարիլն, և գերեզմանաց *բանիլն*, և այլն: - 697. Վեցերորդ՝ զի գործ աստուծոյ է ի նւաստ և ի փոքր ինչ իր զմեծամեծսն ներգործել. որպէս կաւովն զկուրին աչքն *եբաց*, և ի վիմէն ջուր բղխեցոյց **բժ**ան. և այլ բազումս: - 733-734. Զի ի վերոյ կացցէ դատաւորն, և ի ներքոյ դժոխքն *բացեալ*: - 738. Որք որպէս գիրք յայնժամ *բացեալք* եղիցին. քանզի վարդապետութիւնք նոցա և օրինակք՝ ամենեցունց յայտնեսցին. ի յորս ամենեքեան իբրև ի գիրս տեսցեն թէ զի՞նչ պարտ էր առնել կամ խոտել ինքեանց: - 742. Վասն եօթներորդին, որք զմեղս խոստովան լինիլ ո՛չ կամեցան զորս առնել ո՛չ էր պարտ. վասն այնորիկ անդանօր ամենեցուն մերկացեալ և *բացեալ* յաւիտեան յամօթ լինին: - 752-753. Եւ վասն այն ասի արքայութիւնն աստուծոյ, զի պատուիրանօքն որ յաւետարանն կամ յայլ գիրս սուրբս գտանին, պահողացն արքայութեանն մուտ *բացեալ* լինի. և ներքին մարդս ամրացեալ հաստատի: - 754. Կանայք առաջի դրան խորանին նստեալք՝ են հաւատացեալքն. որք դրան երկնաւոր պալատին *բանիլ* ինքեանց ակն կալեալ մնան: - 756

**ԲԱՆԱՍԷՐ +** Եւ զայսոսիկ պա՛րտ է *բանասէր* անձանց ի միտ առնուլ: - 218. Արդ՝ ես վերջին ծնունդս եկեղեցւոյ և տրուպս *բանասիրաց*, Գրիգոր պիտակ անուն խնդրող բանին. բացայայտեցի զբանս Յարցմանց ի լուսաւոր բանից վարդապետաց եկեղեցւոյ: - 772. Ի խնդրոյ ումեմն *բանասիրի* Ատոմի ուղղափառի: - 772. Այլ ի պատճառս տալ իմաստից. որով ո՛չ յագեսցի ակն ի տեսոյ. ի գլուխ գոլոյ իմաստնոյ. մանաւանդ և ի շահ օգտի *բանասէր* մտաց միեղէն եղբարց: - 773

**ԲԱՆԱՒՈՐ +** Ուստի յա՛յտ է ի սահմանէն. ամենայն մարդ կենդանի *բանաւոր* մահկանացու մտաց և հանճարոյ ընդունակ: - 74. Եւ դու պետրոս՝ մարդ կենդանի *բանաւոր* մահկանացու մտաց և հանճարոյ ընդունակ: - 74. Զի էակքս ամենայն՝ ոմանք *բանաւորք* են և ո՛չ միշտ ներգործականք. որպէս մարդս: - 173. Եւ ոմանք միշտ ներգործեն և ո՛չ են *բանաւոր*. որպէս հուրն: - 173. Իսկ աստուածայինն է ընդդէմ սոցա. զի է *բանաւոր* և է միշտ ներգործական որպէս ասացաւ: - 173. Գոյացութիւն որ սկիզբն է ամենեցուն և նախասեռ. և ի նմանէ զուգաբաժանեալ մարմինն. և շնչաւորն. և զգայունն. և կենդանին. և *բանաւորն*. և մարդն. ո՞չ ապաքէն բնութիւն են սոքա այլևայլ. և ժողովեալ գոյացուցանեն զմի անհատն պետրոս անշփոթ միութեամբ: - 176. Եւ զի անշփո՛թ են սոքա յատկութեամբ՝ յայտ է. ուստի ասեմք, պետրոս մա՛րդ է և *բանաւոր* և կենդանի և զգայուն և շնչաւոր և մարմին և գոյացութիւն: - 176. Չորրորդ՝ զի չէ՛ր *բանաւոր*, և բանից տեսակով խաբեաց զմարդն: - 218. Դարձեալ՝ մա՛րդն է կենդանի *բանաւոր* և մահկանացու: - 275. Երրորդ՝ նշանակէ՛ թէ իւրաքանչիւր ոք իշխա՛ն է մատուցանել զինքն *բանաւոր* պատարագ աստուծոյ: - 359-360. Այլ և ունիմք *զբանաւոր* պատարագս՝ զհոգի և զմարմին մեր սրբութեամբ փոխանակեալ նմա: - 362. Նահապետքն ունէին կրկին պատարագ. *բանաւոր* և անբան. որպէս Աբէլ. Նոյ. Աբրահամ. և այլքն: - 362. Այլ զանբան պատարագն ուսան հեթանոսք և կռոց մատուցին. և այն սովորութեամբն իէլ մատոյց աստուծոյ զանբան կենդանիս մինչ եկն քրիստոս և եղև ինքն *բանաւոր* պատարագ, և զնոյնս աւանդեաց մեզ: - 362. Երկրորդ՝ նշանակէ՛ *զբանաւոր* պատարագս մեր. այսինքն զհոգի զմարմին և զմիտս մեր անարատ մատուցեալ: - 374. Իսկ չորրորդ դորակ գինւոյն և իւղոյն ընդ նաշհոյ և գառինն, նշանակէ՛ *զբանաւոր* և զկենդանի պատարագս մեր: - 375. Երկրորդ յա՛յտ է ի բաժանմանէ. զի յերիս բաժանի տեսակ մեղաց. այսինքն ի մտաւորն, ի *բանաւորն*, և ի մարմնաւորն: - 556. Իսկ նորոյս պատարագն *բանաւո՛ր* է և անարիւն. – 617. Վեցերորդ՝ զի եկեղեցին փարա՛խ է *բանաւոր* հօտից. և ո՛չ անբանից: - 617. Չորրորդ՝ զի այս՝ է՛ խօսուն և *բանաւոր* պատարագ և այն անբան զենումն զոր խօսեցաւ վասն հնոյն...: - 658

**ԲԱՆԱՒՈՐԻԼ** - Դարձեալ զօրութիւնք հոգւոյն բաժանին երրակի ըստ երից ներգործութեանցն. որ է՛ կենդանանալն. զգալն. և *բանաւորիլն*: - 249. Իսկ զերրորդ գործն որ է իմանալն և *բանաւորիլն*, ունի հոգին և յետ անջատելոյն ի մարմնոյն: - 260. Դարձեալ՝ մարդո՛յս է խօսիլ և *բանաւորիլ*. զի այլ կենդանեացն նմանութեամբ է և ո՛չ իսկապէս: - 275. Նա՛խ՝ զի յադամ եղև ներգործեալ. և ի մեզ *բնաւորեալ*. և ի քրիստոս առեալ: - 495

**ԲԱՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ +** Եւ այս կազմողական զօրութեանն է որ նախ պատրաստէ՛ զնիւթ առ կեանքն. և ապա ի զգայութիւնն. և ապա ի *բանաւորութիւնն*: - 255. Վեցերորդ՝ *բանաւորութիւն*: - 279

**ԲԱՆԵՂԷՆ +** Իսկ մեզ նորոյս հրամայէ՛ *զբանեղէնն* մատուցանել որ է՛ հոգի և մարմին և կամք...: – 396. Աստ անարիւն պատարագն մատչի. և ի մեզ *բանեղէն* պատարագն հոգի և մարմին միշտ նուիրեալ կենդանի: - 614. Նոյնպէս և մեք *զբանեղէն* պատարագս մեր տամք ի քահանայս ընծայել աստուծոյ, և բերել զշնորհքն թէ «խաղաղութիւն ամենեցուն»: - 624

**ԲԱՆԷԱՍ** - *Բանէաս* Մանէոն և այլքն քնարօք երգէին: - 641

**ԲԱՆՋԱՐ +** Արեգի. որպէս թէ յառնեն բոյսք և *բանջարք* աստուածային հրամանաւն: - 201. Նա՛խ՝ որպէս հատանեմք քաղելով *զբանջարն* և ապա՛ ուտեմք, նոյնպէս զենումք զկենդանին և ապա՛ ուտեմք: - 295. Դարձեալ՝ *զբանջարն* ընտրելով ուտեմք. այս է զի զվնասակարն և զդառն և զժահահոտն ի բաց ձգեմք և զչորրորդ մասն ուտեմք: - 295

**ԲԱՆՍԱՐԿՈՒ +** *Բանսարկո՛ւն* է վիշապն որպէս ասէ յոբ՝ «եդեր շրուշակ ի քիմս նորա, և արարեր խաղալիկ հրեշտակաց»: - 151. Նոյնպէս և առ մեզ՝ որք մրցին և ջանան ընդ դէմ *բանսարկուին* և մեռուցանեն զէ գլուխ նորա՝ նոքա զնոյն պսակն ժուժկալութեամբ և առաքինութեամբ ընդունին ի գլուխս իւրեանց յիւրաքանչիւրոցն զորս կոխեն և յաղթահարեն. որպէս ասէ ի տեսիլն, «որ ոք յաղթէ՞ ընկալցի զպսակն կենաց ի գլուխս իւր»: – 152. Իսկ *բանսարկուն* սատիէլ՝ զմի յերից մասանցն զչորրորդն քարշեաց ընդ ինքեան և կործանեաց յերկիր. որպէս ասէ տեսիլն...: – 152. Այլ և ի թունից *բանսարկուին* ներկին և լինին չար: - 237. Նա՛խ՝ ասի մահու մեռանիլ, իբր թէ է՛ ոմն անձնաւոր մահ որ է՛ *բանսարկուն*. և նովաւ մեռանիցիս ասէ: - 277. Արդ՝ առաջինն և վերջինն վայելչակա՛ն է յոբայ և աստուծոյ. իսկ միջին երկուքն բարեկամացն յոբայ, և չար *բանսարկուին* յարմարի: - 323. Դարձեալ՝ յաղթեաց զսատանայ այնու, զի իմացաւ զչար հնարսն նորա և պատասխանէր զընդ դէմ. որպէս կնոջն և բարեկամացն և որք զգուժն բերէին. զի գիտէր ի *բանսարկուէն* լինիլ: - 323. Նախ՝ զի շարժեալք էին ի *բանսարկուէին*. որպէս երբեմն ի ձեռն կնոջն. և յայնժամ բարեկամօքն մարտնչէր ընդ յոբայ: - 324. Վասն առաջնոյն, զի գիտէր զնոսա շարժեալ ի չարասիրէն. և յաղթելով զնոսա յաղթեաց *զբանսարկուն* սատանայ: - 324. Սոյնպէս բարեկամք յոբայ թէպէտ շարժեալք էին ի *բանսարկուէն*, այլ աստուծոյ հոգւովն զօգտակարսն բարբառէին. վասն այն գրեցան բանք նոցա ի սուրբ գիրս: - 325. Վասն է՞ր այնչափ դիմամարտս յարուցանէր *բանսարկուն* ի վերայ յոբայ. որպէս զկինն և զբարեկամսն և զձառայքն և զայլսն: - 325. Չորրորդ՝ տեսեալ զմովսէս առաւել փառաւորեալ, և յետ վախճանին թոյլ ետ ներողութիւնն աստուծոյ ժպրհիլ *բանսարկուին* ստգտանօք մեղաց. զի մի՛ տացեն նմա զգերազանց պատիւն աստուած կարծելով: - 410. Եւ տէր ծածուկ տնօրէնութեամբն գործոց յաղթեաց *բանսարկուին*: - 419. Իններորդ՝ յետ է աւուր կորոյս *զնաաս* խռովարար, որ բրէր զաջոյ ակն իէլի. և տէր մեր զխռովարար *բանսարկուն*, որ բրէ՛ զակն իմացականին մարդոյ...: – 427. Մին ի մէջ եւայի և *բանսարկուին*. որով մուծաւ մահ ի ներս: - 465. Եւ զապականութիւնն հետևեցոյց *բանսարկուն* սատանայ: - 496. Իսկ ապականութիւնն վերջին. հետևեալ ի հնարից *բանսարկուին*: - 496. Երկրորդ՝ զմահ կրեաց. զի ինքն եդ զմահն պատիժ ի վերայ մեր. իսկ զմեղքն և զապականութիւն՝ *բանսարկուն* և ադամ արկին ի բնութիւնս. վասն որոյ զոր ինքն ոչ եդ՝ ո՛չ կրեաց մարմնով իւրով: - 496. Եւ պատճառն ասացաւ ի վերոյ, զոր ինչ ինքն եդ զպատիժ՝ նմանեաւն եբարձ. և զորս յանձնիշխան կամաց մարդոյն և ի *բանսարկուէն* արկածք, զայնոսիկ հակառակաւն ելոյծ տէր մեր յիսուս քրիստոս: - 498. Դարձեալ ի սկզբանէն ցուցցուք. մահն պատիժ է յարարչէն եդեալ. և ապականութիւնն ի *բանսարկուէն* արկեալ հետևանք մահուն: - 498. Երկրորդ՝ ապականութիւն և մեղք ո՛չ է գործ արարչի. այլ մեղանչականին ադամայ և արկածք *բանսարկուին*. վասն որոյ տէրն զարկուածս *բանսարկւին* ո՛չ հպեցոյց ի մարմինն իւր. ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն տեառն: - 498-499. Եւ սոքա մտօք և ո՛չ մարմնով կատարին. որպէս յայտ է ի *բանսարկուն* սատանայ որ յանցեաւ հպարտութեամբ և նախանձով: - 556. Դարձեալ զանազանին. զի գործ մեղացն է յայլմէ՛ առ մեզ՝ կամ ի մէնջ առ այլս. այսինքն ի պատրանաց *բանսարկուին* և ի չարաց ոմանց առ մեզ. և ի մէնջ առ ընկերակիցս մեր: - 569. Ա՛րդ՝ յայտնեալ է նա և որոշեալ ի մէջ ամենայն փայտից գոլ արմատ արդարութեան որով փրկեցաք ի *բանսարկուէն:* - 734

**ԲԱՆՏ +** Եւ տէր մեր լոյս ծագեաց ի *բանտ* դժոխոցն: - 313. Եւ տէրն ի մէջ գիշերի յարեաւ և ազատեաց զարգելեալսն ի *բանտէն*: - 330. Մետասաներորդ՝ դնի ի *բանտ*, և կապի՛ ի շղթայս մեղաց: - 424. Հինգերորդ՝ փրկեաց զհոգիսն ի *բանտէ* դժոխոցն...: – 473. Զոր օրինակ՝ զմահապարտ ոմն թագաւորն հրամայէ՛ դահճին ի *բանտ* դնել. դարձեալ զնոյն թագաւորն աղերսեն և նա հրամայէ՛

արձակել ի *բանտէն*: - 492. Երկրորդ՝ զի վասն բացման դրանց երկնից՝ լոյս ծագեաց ի *բանտին* ըստ եսայեայ...: – 504. Իսկ միջին դժոխք որ կոչի *բանտ* դժոխոց՝ է՛ միջակ մեղաւորաց. որք ունին հաւատ և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալք. կամ գործք և ո՛չ հաւատ. որպէս թերահաւատք և անհաւատք: - 505. Վեշտասաներորդ՝ ի մէջ գիշերի յարեաւ, զի զհոգիսն ի խաւարային *բանտէն* ի լոյս կենաց շրջեսցէ: - 514. Եւ եփրեմի ներբողեա՛նն այլ՝ ցոյց զա՛յս տայ. թէ դահիճն ետես ի *բանտին* որ այսպէս աղօթէր: - 659. Այսպէս է վախճան մաքուր և սուրբ հոգւոցն. ուրախութեամբ ընթացեալ ի պսակն և զերծեալ ի *բանտէ* խաւարային մարմնոյ: - 669. Որպէս որք ի խաւար *բանտից* զերծանին և ազատեալք զլոյս տեսանեն. նոյնպէս և հոգին բաժանեալ ի մարմնոյ. և են ի լոյս և յերանութեան հանգիստն: - 669. և նա ցաւօք և տրտմութեամբ և հեծութեամբ կայ անդ ի խաւարին *բանտն* ընդ այլ խաւարասէր հոգւոցն: - 669. Ի մարմնոյ բաժանեալ հոգին պայծառանայ տեսութեամբ. որպէս որք ի խաւար *բանտից* ազատին: - 685. Որպէս ծառայքն փարաւոնի ի տան *բանտին* ընդ յովսեփայ: - 689. Դատաւոր աստուած. և դահիճ հրեշտակք. և *բանտ* դժոխքն: - 704. Չորրորդ պակասութիւն է՝ զի այժմ է՛ մարմին մեր թանձր և կոպիտ. այլ յայնժամ բառնի այս ի մարմնոյ և լինի անօսր և թափանցիկ. զոր ոչ պարիսպ կամ *բանտ* ըմբռնել կարիցէ: - 722. Երկրորդ՝ *բանտ:* - 751. Վասն երկրորդին ասէ տէր, (դատաւորն մատնեսցէ դահճի, և արկանիցի ի *բանտ* և ո՛չ ելանիցէ անտի.) զի ո՛չ է հատուցումն մեղաց և ո՛չ զրաւ տանջանաց: - 751. ասիցէ ոք, ապա զիա՞րդ ա՛յլք ի ծննդոց նորա որք ընդ նմա ի *բանտէն* ազատեցան, պատժապարտք գոլով...: - 775

**ԲԱՆՏԱՐԿԵԱԼ +** Եօթներորդ՝ յովսէփ մխիթարէ՛ր *զբանտարկեալսն:* - 313

**ԲԱՆՏԱՐԳԵԼ ԼԻՆԵԼ +** Երրորդ՝ *զբանտարգել լինիլն*. որ ցուցանէ նախդիրն: - 740

**ԲԱՆՏԵՄ +** Ուր արկեալ էր սատանայ զաթոռ իւրոյ իշխանութեանն. և անդ արգելեալ *բանտէ՛ր* զհոգիսն որ յադամայ. մինչ ի գնալ անդ անմահ թագաւորին մերոյ և աստուծոյ յիսուսի քրիստոսի: - 504

**ԲԱՇ +** Եւ տևէ՛ որքան է նիւթ գոլորշոյն. և լուսեղէն *բա՛շս* արձակէ առ ի ցուցանել թէ ո՛չ է ի բնական աստեղաց: - 203

**ԲԱՇԽԵՄ +** Եւ դարձեալ՝ հոգին որ ի հօրէ ելանէ և կայանայ յորդի. և ի ձեռն որդւոյ իբր զհայրական բարի ամենայն գոյիցս *բաշխի* երկնաւորաց և երկրաւորաց. նախ քան զմարմնանալն՝ և ի մարդեղութեանն: - 61. Իսկ հոգին առնու յիմաստութեանց և զօրութեանց որդւոյ և *բաշխէ՛* արարածոց: - 65. Նախ՝ զի ամենայն բանից և իմաստութեանց է *բաշխօղ*: - 121. Նմանապէս և իմանալի արեգակն արդարութեան քրիստոս՝ ըստ հաւասարութեան *բաշխէ* զմարմնաւորս...: - 127. Տասներորդ՝ ըստ չափու և կարողութեան *բաշխէ*. որպէս ի կեանս յայսմիկ, և ի հանդերձեալն առաւել զի կարիցեմք տանել: - 185. Եօթներորդ՝ մելքիսեդեկ ինքնին մատոյց զպատարագն քաղցելոց և ծարաւելոց. որպէս և քրիստոս ո՛չ միջնորդօք հրեշտակաց կամ մարդկան, այլ ինքնին *բաշխեաց* զմարմին և զարիւն իւր՝ քաղցեալ և ծարաւեալ ազգի: - 301. Իսկ ի նորս ճշմարտութենէ պատարագ քրիստոս. որ միշտ *բաշխի* յեկեղեցի: - 362. Ա՛յն է որ ի վերնատունն զմարմինն և զարիւնն իւր *բաշխեաց* յառաքեալսն: - 362. Չորրորդ՝ զի ցուցցէ նոցա՝ յեօթանց զմինն աղքատաց և կարօտելոց *բաշխել*: - 372. Հինգերորդ՝ գաւազանաւ բղխէր. զի իշխանութեամբ *բաշխի* առ ամենայն ոք: - 386. Ա՛րդ՝ զերկու օրհնութիւնս բ կտակօք *բաշխեաց* մարդկան. զմարմնոյ աճումն և ընչից՝ ետ իէլի. և զհոգւոյ աճումն կուսութեամբ և աղքատութեամբ՝ ետ քրիստոնէից: - 403. Եւ *բաշխեաց* երկոտասան առաքելօքն աստ զնոր օրէնս, և անդ զվերին ժառանգութիւնն հաւատացելոց իւրոց: - 419. Երրորդ՝ ի տիպ երկնաւոր հացին որ *բաշխելոց* էր քրիստոնէից: - 427. Եւ յետոյ բաշխումն նշխարաց. որպէս դաւիթ *բաշխեաց* ամենայն իէլի բլիթ մի հաց, և պատառ մի ի տապակէ՛ և ի կասկարայիցն: - 431. Երեսունևէ, զհաց սրբութեանն *բաշխեաց* մանկանցն. և տէրն զհացն սուրբ և երկնային հաւատացելոց: - 437. Այլ և օրհնութիւն *բաշխեաց* յաւարէն ամենայն ծանօթից. և տէրն առեալ աւար *բաշխեաց* պարգևս որդւոց մարդկան: - 437. Հինգերորդ՝ էեկի շնորհօք բազմապատկեալ ի հոգւոյն. ոչ առաւելու արգելեալ. և ոչ նուազէ *բաշխեալ*: - 444. Իններորդ՝ խորհրդական մարմինն սուրբ զոր *բաշխեաց* ի վերնատունն՝ էր անապական և կենարար...: - 499. Ասեմք թէ՝ ի վերնատունն զհինն կատարեաց մինչ զմարմինն *բաշխեաց* և նոր օրէնս եդ. և մեք հնոյն ո՛չ եմք պարտական: - 510. Երեքտասաներորդ՝ ամաղեկացիք գերեցին զկողմն հրէաստանի և զայլազգիս. և դաւիթ զհետ մտեալ յետ գ աւուր և հարեալ ի գիշերի և ի վաղիւն մինչ յերեկոյ. և դարձուցեալ զերկոսին կանայս իւր. և ո՛չ մնաց գերի և ո՛չ մի. և յաւարէ աստի *բաշխեաց* ամենայն սիրելեաց իւրոց: - 514. և ո՛չ մի հոգի եթող ի դժոխս. այլ զամենայն ազատեաց յարուցեալ ի մեռելոց. և *բաշխեաց* պարգևս որդւոց մարդկան: - 514. Եւ հոգին սուրբ բղխէ ի հօրէ՝ և

առնու յորդւոյ զիմաստութիւն և *բաշխէ՛* յարարածս բոլոր: - 523. Նա՛խ առ հրէայսն. որ գիտէին զհոգին սուրբ՝ շնորհաց *բաշխօղ*. ուստի ելից հոգին զբէսէլիէլ ճարտարապետ. և զեօթնարփեան շնորհս թուէ եսայի...: – 566. Զի որպէս *բաշխի* մարմինն, նոյնպէս և մասնաւորեսցի արիւնն առ հասարակ: - 598. Եւ սուրբն բարսեղ կեսարացի այսպէս *բաշխէր* ժողովրդեանն. որպէս գրեալ է ի պատմութեան նորին յունվարի **ա**: - 599. ...և յետոյ քան զամենայն *բաշխեաց* զմարմինն իւր...: - 599. ...այսպէս և օգոստինոս վարդապետն Ֆռանկաց ի խորհրդոց գիրս **ծա** համարն ասէ, թէ յառաջագոյն *բաշխեաց* զխորհուրդ մարմնոյ և արեանն և տուեալ յուդայի: - 599. Եւ այս է ճշմարիտն. քանզի յօրհնեալ հացէն որ *բաշխեաց* և ետ առաքելոցն, այլ ո՛չ մնաց: - 599. Յայս միտս և տէր մեր *բաշխեաց* զմարմինն և ետ առաքելոցն ի վերնատունն: - 600. Եւ առաւել յարմարէ քահանային զշնորհս հոգւոյն սրբոյ *բաշխել*, քան թէ զանձն: - 625. Նոյնպէս յետ ամենայն խորհրդական աղօթից՝ առ հայր ամբառնամք և աղերսեմք զհոգին սուրբ *բաշխել* մեզ...: - 634. Այսինքն ի հօրէ յառաջ բղխէ հոգին առ որդի. և նովաւ *բաշխի* մեզ: - 639. Երրորդ, զայս ի քրիստոսէ ուսաք. զի գոհացաւ ի հօրէ և ապա՛ *բաշխեաց* զգարեղէն նկանակսն և աճեաց...: – 654. և Եօթներորդ կոչի հնձան եկեղեցի սուրբ. ուր ամենայն առաքինութիւնք մեր ժողովին. ու ճմլէ ապաշխարութեամբ և *բաշխէ՛* զգինի շնորհաց. - 749. Եւ կրկին է ունակութիւն կենաց. այսինքն նախ ունելով յինքեան զկեանս, և ապա *բաշխելով* այլոց: - 765. Այսպէս վասն երկնային և իմանալի տնկոցն որ կոչին ծառ կենաց. ունելով յինքեան զկեանս և *բաշխելով* այլոց ամենեցուն զխնամս: - 767. Ո՛չ իբր կարօտի բազմաց *բաշխողի*. կամ փորձողի փորձոյ սիրալի: - 773

**ԲԱՇԽՈՒՄՆ +** Եւ յետոյ *բաշխումն* նշխարաց. որպէս դաւիթ բաշխեաց ամենայն իէլի բլիթ մի հաց, և պատառ մի ի տապակէ՛ և ի կասկարայիցն: - 431. Չորրորդ դարձեալ՝ դ թև խաչին նշանակէ զչորս բարերարութիւնս քրիստոսի. զի վերին մասն ցուցանէ զբացումն արքայութեանն երկնից. ներքինն զաւերումն դժոխոց. աջն *զբաշխումն* շնորհաց. ահեակն զթողութիւն մեղաց: - 493. Եւ ապա՛ իբր զկնիք *զբաշխումն* շնորհաց ի հոգւոյն սրբոյ աղերսեմք: - 633

**ԲԱՌ +** Եւ ո՛չ ասի ի գիրս սուրբս ըստ այդմ *բառի*, բայց այլ կերպիւ ցուցանէ զայդ. այսինքն զի ասէ, «Ես եմ ալֆա և օմեգա». յայսմանէ իմանամք զանսկիզբն և զանվախճանն: - 55. Այսպէս զհոգւոյն թէ յայտնապէս աստուած ասիլ ծածկեցաւ, և այլ իմն *բառիւ* յայտնեցաւ. որ ցուցանէ զնոյն ճշմարտապէս աստուած կատարեալ. որպէս թէ, «հոգի աստուծոյ, հոգի *տեառն*, հոգի ճշմարտութեան, հոգի բարի, հոգի սուրբ»: - 55. Հինգերորդ՝ *բառն*: - 177. Երկրորդ՝ զի ձեռամբ գրչի մտանէ ի *բառ*. և առանց բերանոյ բարբառի. և տեսանի աչաց. և լսի ականջաց. և ուսուցանէ զմիտս: - 177. Այլ և ժողովէ՛ զբանն և որոշէ. այսինքն զհեգ. *զբառ*. զբան. և զիմաստութիւն: - 178. Զայն է իմանալ, որ ի բաժանել զլեզուս, բան և *բառ* և անուն խա՛ռն գտանին բազում ազգաց: - 297. Դարձեալ՝ պիտանի է ի ստուգաբանութիւնս բանի. զի թէ ոք զամենայն լեզուս գիտիցէ, ոչ ինչ *բառի* կարօտանայ: - 297. Հաւատարիմ *բառս*՝ որ ի սուրբ գիրս՝ ըստ չորից եղանակաց իմասցի: - 457. *Զբառս* զայս ընդունելութեան դնէ՝ ընդ քեզ. այսինքն տէրն յետ ծննդեանն ընդ քեզ յաւիտեանս յաւիտենից. որպէս ասէր ընդ աշակերտսն «ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս»: – 464. Զի՞նչ է չորեքկին *բառս* որ ասեմք, պակասեալ. այւելեալ. լցեալ. և անցեալ զաւուրբք: - 666. Պարսիկ *բառ* է՝ ներքոյ հողոյ: - 678

**ԲԱՌԱՉԵՄ +** որք են, *բառաչել*, կառաչել, խխնչել, և այլն նմանապէս: - 640

**ԲԱՌԱՔԱ** - Յարեդին *բառաքա*՛: - 299

**ԲԱՌՆԱԲԱՍ** - Եւ որոշօղ. «որոշեցէք զպօղոս և *զբառնաբաս»*: - 52

**ԲԱՌՆԱՄ +** Դարձեալ՝ թէ ի հարկէ է՝ ապա *բարձեա՛լ* են ամենայն սկզբունք բարոյական առաքինութեանց. այսինքն խոհեմութեան. արիութեան. ողջախոհութեան. և արդարութեան. զի սոքա ըստացեալ լինին առ ոմանս՝ և ո՛չ ի հարկէ: - 11. Իսկ չարն կորեաւ յորժամ *բարձաւ* ի հոգւոյն. զի չարն ո՛չ է է՝ և ո՛չ գոյ: - 23. Իսկ մեծութիւն կռապաշտութեան այնքան էր՝ մինչ միածին որդին պատարագեցաւ մարմնով, և ապա *բարձաւ* մեղք կռամոլութեանն յաշխարհէ: - 33. Եւ թէ ասեն տգիտաբար, քակեն զնկարն. *բառնի* և էութիւն հօր: - 36. Զի թէ կամաւ, կամա՛ցն ես որդի և ոչ հօր. թէ այդպէս է, *բարձեր* զպատճառն քո զհայր. *բարձար* և դու ի տեսակաց մարդկան: - 36. Իսկ թէ յոչ կամայ, այլ ուրեմն բռնադատութեամբ քարշեցաւ յաստուածութիւն. և *բարձեր* զանսկզբնութիւն նորա: - 36. Ի յայս տարակուսանքս՝ որ է ստութիւն յերկուց կողմանց, *բառնի* էութիւն հօր. և լինի արարած որդի: - 36. Զի թէ ասեն էր յառաջ քան զծնունդն որդի. իսկ էութիւնն հօր հայրութիւն է. և թէ ոչ էր որդւոյ հայր՝ *բառնի* յէութենէն իւրմէ, իսկ թէ ոչ էր և յետոյ ծնաւ՝ ո՞ւմ արդեօք իցէր հայր. զի ո՛չ էր որդի: - 36-37. Զի թէ յումեքէ է, *բարձեր* զանսկզբնութիւն և զանծնելութիւն հօր: - 37. Հինգերորդ՝ զի որ եդեր նախկին

զպակասութիւնն, *բարձեր* զէութիւնն հօր և որդւոյ: - 38. Այլ որ եղև փոխանակ հնոյն նոր անդամ. և նզովք կոչեցաւ վասն իմ և մեղք այն որ ո՛չ արար զմեղս, և ելոյծ զանէծս և *եբարձ* զմեղս: - 42. Ապա ուրեմն ոչ առնէ յանձնէ և որդի, զի անհնար է *բառնիլ* աստուածութեանն: - 45. Ըստ քում բանիդ աստ հօ՛ր տաս զաստուածութիւնն և *բառնաս* յորդւոյ. և ի մարգարէն՝ որդւոյ ասես զաստուածութիւնն և *բառնաս* ի հօրէ, ապա հա՛րկ է քեզ լինիլ անաստուած. զի միովն միւսոյն յաղթութիւն տաս: - 47. Իններորդ՝ զի գալստեամբն իւրով *եբարձ* զանբանութիւնս մեր և զանգիտութիւն. էած զմեզ ի ճշմարիտ գիտութիւն աստուածութեան իւրոյ: - 49. Իսկ որք *բառնան* զաստուածութիւնն ի միոյն՝ և ո՛չ երկոցունց տան զաստուածութիւնն, իմա՛, ըստ առաքելոյն զօրութիւն և իմաստութիւն է հօր որդի. և բան՝ ըստ աւետարանին յօհաննու: - 51. Տե՛ս՝ զի միովն *բառնի* երկուքն. և ասեմք թէ երեքն: - 51. Դարձեալ՝ որք ո՛չ ասեն աստուած զհոգին, առաջին հերձուած՝ զի զհայր *բառնան*: - 51. Ապա ուրեմն օրինակս զանձն հոգւոյն *բառնայ*: - 62. Եւ *բարձեալ* զխտրոցս բաժանման ասէ՝ երկոքեանն մի՛ են. առնլովն աստուծոյ և մարդանալովն. և մարդոյն աստուածանալովն. ահա զբնութեանցն միաւորութիւնն եցոյց: - 80. Զի միաւորեալն ո՛չ բաժանի. վասն զի միութիւնն *եբա՛րձ* զերկուութիւնն: - 83. Թէ բնութեամբ միացան, ապա տարբերութիւնք բնութեանցն *բարձան*: - 85. Թէպէտ բնութեամբ միաւորին՝ տարբերութիւնն ո՛չ *բառնի*. զի տարբերութեանցն մնալ՝ խափանումն ո՛չ առնէ միաւորութեանն. որպէս հոգւոյ և մարմնոյ. ոսկւոյ և հրոյ. և ծանի՛ր՝ զի կրկին է տարբերութիւն. բաղկացական և բաժանական: - 85. Քսանևմիերորդ՝ արդ՝ եթէ քրիստոս տգէտ ունէր միտս, և տկար հոգի, և ապականացու մարմին և եկն քրիստոս զի *բարձցէ* զտկարութիւնս մեր. և լուսաւորեսցէ որ նստէաք ի խաւարի. և նա՛ է գառն աստուծոյ որ *բառնայ* զմեղս աշխարհի և զապականութիւն: - 99. Եւ արդ՝ տգէտն զտգիտութիւն ո՛չ կարէ *բառնալ*. և ո՛չ մեղաւորն զմեղս. և ո՛չ ապականացուն զապականութիւն. և ո՛չ սոսկ մարդ զմարդ կարէ փրկել. զի սո՛ւտ է փրկութիւն մարդոյ: - 99. Ապա ուրեմն *բարձօղն* տգիտութեանց ո՛չ ունէր տգիտութիւն. և *բարձօղն* մեղաց և ապականութեանց՝ ո՛չ մեղք և ո՛չ ապականութիւն: - 99. Եւ որպէս հուր յերկաթ միաւորեալ *բառնայ* ի նմանէ զցրտութիւնն և զսևութիւնն և մնայ ծանրութիւնն...: - 100. Որպէս յորժամ ասեմք *բառնալով* ո՛չէ, ո՛չ բան, ո՛չ միտ, ո՛չ որդիութիւն, ո՛չ հայրութիւն. և այլն: - 124. Նախ՝ զի նոյն ուրացական մասնիկն այն՝ այսինքն ո՛չն՝ ներգործէ՛ զուրացումն և *զբառնալն*: - 124. Երկրորդ՝ զի ընդդիմակ *բառնալոյն* դրութիւնն է. և ընդդիմակ ուրացութեան՝ խոստովանութիւնն: - 124. Ա՛րդ՝ մի և նոյն է դրութիւն և խոստովանութիւն. ապա մի և նոյն է *բառնալն* և ուրանալն: - 124. Իսկ բացբարձականքն՝ ո՛չ զէութիւն կամ զփառս աստուծոյ *բառնայ*, այլ զոր յետ էութեանն աստուծոյ է և ի նմանէ ստեղծեալ՝ և զխոնարհութիւնսն *բառնայ*: - 124. Պատասխանեմ առաջնոյն, թէպէտ մի և նոյն ուրացական մասնիկն որ է ո՛չն՝ գործէ՛ զուրացումն և *զբառնալն*, այլ ուրացումն և *բառնալն* ո՛չ է նոյն. զի բազում պատահի որ գործին նոյն է որպէս ձեռն. այլ գործելն ո՛չ է նոյն. որպէս կտրելն և կարելն: - 124. Զի ոմանց տացի և յաւելցի. և յոմանց *բարձցի* և պակասեսցի ըստ չափու ունակութեան ընդունողաց: - 127. Եօթներորդ՝ զի և յաստուածպետականն ծայրութիւն *բառնալով* առաւել քան դնելով գամք ի ծանօթութիւն: - 132. Նախ՝ զի մի՛ անձնիշխանութիւնն *բարձցի* ի մէնջ: - 161. Երկրորդ՝ վասն ատելութեան. զի *բարձար* զսէրն: - 177. Ոմանց որակ գունոց տայ. որպէս խնծորոյ. և զոմանց *բառնա՛յ*. որպէս զմարդոյ: - 186-187. Եւ զի չարագործա՛ցն է ապաւէն, և ամօթոյ *բարձօղ*: - 196. Այլ այժմ վասն զգեստուց պահեմք զոչխարս. և վասն կերակրոյ զեզինս. և վասն բեռին զէշս. և վասն *բառնալոյ* զմեզ զձիս. և վասն զթշնամիս հալածելոյ զշունս. և վասն զթռչունս ըմբռնելոյ զբազէս. և զայլսն նմանապէս: - 217. Եւ մովսէս զի՞նչ էր *բարձեալ*. և զի՞նչ ասաց ի ծովուն: - 283. Իսկ երեսունն, մինչ ի մեծն թէոդոս. որ *եբարձ* զամենայն մեհեանս կռոցն և բարձրացաւ սուրբ խաչն ի գլուխս գմբեթարդ սուրբ եկեղեցեաց: - 294. Եւ տէրն *եբարձ* ի յուս իւր զփայտ խաչին մինչ ի նոյն տեղի գողգոթային ուր զենանէր իսահակ: - 306. Զառաջինն մխիթարեցաւ աստուածածին կուսիւն մարիամաւ. որ առանց երկանց և ցաւոց ծնաւ զմիածինն որդի, որ *եբարձ* զարտասուս վշտաց մօրն հռաքէլի: - 312. Եւ քրիստոս մարմնով ի գերեզման և հոգւով ի դժոխս եմուտ և *եբարձ* զմահ և զապականութիւն: - 313. Նոյնպէս և քրիստոս զզէն և զզօրութիւն սատանայի *եբարձ* որ էր մեղքն և մահ դժոխոցն: - 314. Քսաներորդ, և որպէս յովսէփ եթող զքուրմն և զերկիր նոցա, զոր քրիստոս էր *բառնալոց* զմեծամեծ մեղսն և զկռապաշտութիւնն. զի ըստ առն և զօրութիւն իւր. և ըստ աստուծոյ և գործք իւր: - 314. Նոյնպէս և տէր մեր յետոյ *բառնալո՛ց* է զչար. գազանն զորդին կորստեան և զպաշտօնեայսն նորա ի կատարածի: - 314. Զմահ *եբարձ* մահուամբն, և զապականութիւն կորոյս յարութեամբն, անապական մարմնով յարուցեալ ի գերեզմանէն: - 317. Երկրորդ՝ և արդարք առնեն ընդ դէմ սմին ի յամօթ չարին. որ հնարեցաւ ի ձեռն մեղացն՝ մահուամբ *բառնալ* զմարդկութիւնս. այլ հրամանաւն արարչին ծննդեամբք տևէ՛ և յերկարէ՛

բնութիւնս: - 321. Մովսէս զի՞նչ ունէր *բարձեալ*: - 338. Եւ զի *բառնալո՛ց* էր ի նոցանէ չքնաղ կերակուրն: - 340. Չորրորդ՝ ինքն անկարօտ գոլով ստեղծեաց զարարածս. և *բարձեալ* կրէ՛ զամենայն բանիւ. և նոյն ինքն հրամայէ՛ խորան կազմել: - 342. Աշտանակ ոսկի, անապական զօրութիւնն աստուծոյ որ խնամէր զնոսա և *բարձեալ* կրէր: - 346. Չորրորդ՝ ի խորհուրդ հին օրինացն որ *բարձաւ* և նոր օրէնք տւաւ: - 350. Նոխազ, զի մեղս մեր *եբարձ*: - 361. Եւ արիւնն, զմեղս մեր *բարձեալ* յինքեան և տարեալ ի դաշտն առ հայր յերկինս. զի որպէս մեռեալ մարմնովն քաւեաց զմեղս. նոյնպէս և անմահ աստուածութեամբն կենդանացոյց և յերկինս եհան: - 369. Եւ որ հասարակն, և սմա՛ մարմնոյն և հոգւոյն ո՛չ խտրի. զի եղբայր յեղբօրէ օգնեալ՝ զմիմեանց *բառնան* զտկարութիւն: - 370. Զի որք զերեսաց հացն ի սեղանն *բառնային* սարկաւագունք են: - 379. Որ և միով հպմամբ ի լանջսն՝ մաքրեցաւ աշակերտն յայսպիսի կրից. քանի՞ առաւել որ *եբարձ* զապականութիւնս ազատ լիցի յայսպիսի կրից: - 383. Որ և տրտմեցաւ տէրն մինչ ի մահ. զի զտրտմութիւնս մեր *եբարձ*: - 387. Նա՛խ՝ որպէս եղև մեղք և *եբարձ* զմեղս. նոյնպէս եղև անէծք և *եբարձ* զանէծս: - 400. Երրորդ՝ զայս անէծս *եբարձ* քրիստոս: - 403. Երկրորդ՝ զփայտէն կախիլով *եբարձ* զանէծսն և ետ մեզ օրհնութիւն: - 403. Տասներորդ՝ ի սկզբանէ հայհոյիչ աստուածամարտ էր սատանայ. և վասն այն զմարդիկ կորուսանէր մեղօք. որում զվճիռն և զասստն տէրն ետ, և դատապարտեաց զմեղս ի մարմնի իւրում. և *եբարձ* մահուամբն զմահ, և որ զիշխանութիւն մահուն ունէր: - 410. Հինգերորդ՝ *բառնի* շնորհքն աստուծոյ: - 424. Նա՛խ՝ զի պա՛րտ էր ուսով *բառնալ* զտապանակն որպէս հրամայեաց աստուած. և նոքա սայլիւ բերէին որպէս այլազգիքն: - 431. Երրորդ՝ զի ո՛չ էր քահանայ. վասն որոյ յետոյ ասէր դաւիթ ցքահանայսն, դո՛ւք ղևտացիքդ սրբեցէք և *բարձէք* զտապանակն. զի մի՛ լիցուք որպէս զօզիա: - 431. Յորժամ մեղայ ասաց՝ վասն է՞ր ոչ *եբարձ* զպատիժն. զի ահա՛ խայտառակեցան կանայք նորա: - 432. Զի գա՛յ զղջումն և խոստովանութիւն՝ որ զմեղքն *բառնայ* և զպատիժն ընդ նմին. որպէս հատեալ տունկ՝ չորանան ճիւղքն. որ բոլորով սրտիւ զղջայ և խոստովանի և այլ ո՛չ գործէ: - 432. Ասեմ թէ ոչ, զի կատարեալ խոստովանութիւնն թողու զմեղս, *բառնայ* զպատիժն, և ջնջէ՛ զյիշատակ մեղացն. մինչ զի ո՛չ երևի ի դատաստանին աստուծոյ: - 432. Երկրորդ՝ վասն տկարութեան օրինացն. զի ի հինն ո՛չ կարէր *բառնալ* զմեղս առանց մարմնական փոխարինաց և յիշատակութեանց: - 433. Քսաներորդ, բժան եզինք *բարձեալ* զծովն: - 441. Եւ զօսանալ ձեռինն *զբառնալ* թագաւորութեանն: - 442. Եւ եղիսէ նովին հոգւովն օրհնեաց և *եբարձ* զանէծսն: - 445. Իսկ մկրտութիւնն *բառնայ* զերկոսին. այսինքն զմեղս և զմահ: - 445. Տնեցին զամս մծ. մինչ յովսէէ որդի ելայ. որ գերի վարեցաւ յասորեստան. և *բարձաւ* թագաւորութիւնն իէլի: - 446. Եւ առաջնորդեն օծեալ քահանայքն յետ դարձին նձգ ամ. մինչև *բարձան* օծեալքն հրէից և ծնաւ ճշմարիտ օծեալն քրիստոս: - 449. Երրորդ՝ սրբութիւն յատկական. որպէս սրբոյ կուսին, *բառնայ* զսկզբնական մեղս և զարմատն և դիւրասահութիւն մեղանչելոյն մահու չափ և ներելապէս: - 462. Եւ գիտելի է, զի թէպէտ մեծագո՛յն է ըստ ինքեան սրբութիւն արգանդին քան զսրբութիւն մկրտութեանն. այնու, զի *բառնայ* զդիւրասահութիւն մեղանչելոյն: - 462. Զի *բարձօղն* աշխարհի՝ ձեռամբ կնոջ *բարձեալ* լինի: - 470. Երկրորդ՝ զի մի՛ ապականութիւն կրեսցէ մարմին *բարձողին* զապականութիւն: - 470. Տասներորդ՝ ասի ոմանց թէ ի ժամ ծննդեանն քրիստոսի արգելման ամենայն ծնունդք մինչև ծնաւ *բարձօղն* երկանց ամենայն ծննդոց. զի նա՛ լինէր անդրանիկ ամենայն ծննդոց: - 472. Զի տրտմութիւն արտասուաց ընդ մահուանն *բարձաւ*. իսկ ամօթ և ցաւք մարմնոյ՝ ընդ մեղացն *բարձան*. որպէս ի հատանիլ արմատոյ՝ չորանան ստեղունքն: - 474. Երրորդ՝ զի իւրաքանչիւր հասակի զմեղս *բարձցէ*. որպէս ծննդեամբն զերկունս ելոյծ. և մահուամբն զմահ. նոյնպէս և տղայ և մանուկ և երիտասարդ հասակաւ զնոսա արդարացոյց: - 479. Նա՛խ՝ բամբասողօք. որք *բառնան* զբարեկամս և զբարի համբաւս: - 486. Երրորդ՝ հերիտիկոսօք. որք *բառնան* զհոգին: - 486. Չորրորդ՝ բռնաւորօք. որք *բառնան* զմարմինն: - 486. Առաջին մկրտութիւն ջրհեղեղն. որ *եբարձ* հատանելով զմեղս յաշխարհէ: - 488. Որ զապականութիւն և զմահ *եբարձ* աւերելով զնա և ազատելով զհոգիսն: - 489. Իսկ այժմ վասն խաչին նախ գիտելի է, զի չարչարանքն քրիստոսի ընդ դէմ է և *բարձօղ* է մոլորութեանց մեղաց: - 489. Երրորդ՝ զի *եբարձ* զհոգին շնորհաց: - 491. Այլ և փայտն *բարձեալ* ի վերայ իշոյն իսահակայ: - 494. Դարձեալ՝ մահն ադամայ զմահ եմոյծ ի բնութիւնս. և մահն քրիստոսի ելոյծ զմահ և *եբարձ*. և մահ մեր ո՛չ մուծանէ և ո՛չ լուծանէ: - 496. Յաղագս որոյ զմահն կրեաց քրիստոս. զի այսպէս *բարձցէ* յերկուց կողմանց զմեղս և զապականութիւն: - 497. Եւ թէ ոք ասիցէ, որպէս մահուամբ զմահ *եբարձ*, այսպէս և ապականութեամբ զապականութիւն: - 497. Զի որպէս մահուամբ զմահ *եբարձ*, և ապականութեամբ զապականութիւն, և անիծիւք զանէծք, և մեղօք զմեղս որպէս դու ժայթքե՛ս: - 497. Այսպէս և տէր մեր նմանեաւ, որպէս անիծիւք զանէծս՝ և մահուամբ զմահ *եբարձ*. իսկ հակառակաւն՝

անապական և անմեղ մարմնովն զմեղս և զապականութիւն ելոյծ: - 498. Եւ պատճառն ասացաւ ի վերոյ, զոր ինչ ինքն եդ զպատիժ՝ նմանեաւն *եբարձ*. և զորս յանձնիշխան կամաց մարդոյն և ի բանսարկուէն արկածք, զայնոսիկ հակառակաւն ելոյծ տէր մեր յիսուս քրիստոս: - 498. Յայտնի՛ է ամենեցուն և առանց երկբայութեան՝ զի քրիստոս մեռաւ ըստ գրոց. և մահուամբ *եբարձ* զմահ և զապականութիւն: - 498. Դարձեալ ասեմք, եթէ միով հպմամբ լանջացն յիսուսի մաքրեցաւ աշակերտն յայսպիսի կրից. քանի՞ առաւել *բարձօղն* ապականութեանց ազատ լիցի յայսպիսի կրից: - 502. Երրորդ՝ մեղքն էր դժոխք և տանջանք մեղաւորաց. և քրիստոս *եբարձ* զմեղս. ապա աւերեա՛ց զդժոխս: - 506. Այլ ա՛րդ՝ տէրն մահուամբ զմահ մեռոյց որ է՛ դժոխքն այժմ. և յարութեամբն *եբարձ* զապականութիւն մարմնոյ ի հանդերձեալն. ապա ուրեմն աւերեաց զդժոխս: - 506. Վեցերորդ՝ թէ զմասն դժոխոց աւերեաց, և զմասն մահու *եբարձ*, և զմասն անիծից, և զմասն պարտուց և զայլսն: - 506. ...զի ուսցին *բառնալ* զտկարութեան այլոց. որպէս քրիստոս զնոցայն *եբարձ*. իսկ թէ նախ զիօգին առեալ էին՝ ո՛չ կարէին *բառնալ* զայլոց տկարութիւնն: - 521. Զի սուտ է *բառնալն* զոր ունի: - 568. Այս է՝ զմեղքն՝ զկամքն չար՝ և զսատանայ՝ որ խռովարարք էին *եբարձ* ի միջոյ. և արար խաղաղութիւն յերկինս և յերկրի: - 585. Երրորդ՝ զիրեշտակս ընդ մարդիկ. և զիրեղէն սուրն և զթշնամութիւն *եբարձ*: - 585. Դարձեալ՝ կրկին է գալուստն քրիստոսի. յառաջինն զիոգւոյ պատիժն *եբարձ*. և յերկրորդն զմարմնոյն. զի երկրորդ է մարմինն հոգւոյն: - 592. Եւ խաչն զոր *եբարձ* ի լուծ պարանոցին: - 594. ...զի խոստովանեալ մեղքն *բարձուի*, այլ պատիժն ո՛չ: - 603. ընդ *բառնիլ* մեղացն *բարձաւ* և պատիժ գեհենին. որպէս տէր մեր եթող զմեղս անդամալուծին. և *բարձան* պատիժքն: - 603. Ասեմք թէ, ի հնարից չարին *բարձին* մարդիկք զխոստովանութիւնն որ հարկաւոր էր, յայն ապաւինեալ թէ՝ ի վերջին օրն օծանիմք ձիթով բալասամինաւ և արդարանամք: - 604. Որպէս ազգն յունաց և վրաց և ասորւոց *բարձեալ* են զխոստովանութիւնն. որ անհնա՛ր է առանց խոստովանելոյ արդարանալ մարդոյ: - 604. Վասն որոյ հայրապետք եկեղեցւոյ լա՛ւ համարեցան զվայելչականն *բառնալ* որ ո՛չ ի լինիլն յաւելուած առնէ ...: - 604. ...և ո՛չ ի *բառնիլն* ապականէ զկարգ եկեղեցւոյ. որ է վերջին օծումն. - 604. քան թէ *բառնալ* զխոստովանութիւնն որ հարկաւոր է. առանց որոյ ո՛չ գոյ ներգործական մեղացն թողութիւն գտանել: - 604. ...և գո՛րծ է նոցա, հրամանաւ քահանային աւետարան կարդալ, քարոզել, և *բառնալ* քշոց և բուրբառ. և նստիլ ամենևին ո՛չ: - 608. Երրորդն ասեն եթէ՝ բ ազգն գեթսոնի և բ գունդն մերարեայ՝ զչորս փոքրիկ աստիճանս ունէին ի խորանն. զպահպանութիւնն մինչ ի ջահընկալն որ զաշտանակն *բառնային*. և որդիքն կահաթու էին բարձրագոյնք: - 609. Չորեքկերպեան կենդանիքն է՛ խաչն. և տեսեալն ի վերայ նորա՝ գառն որ *բառնայ* զմեղս աշխարհի: - 638. Իսկ զի չորիցն *բարձեալ* տանին, նշանակէ որ բ հրեշտակք պահապանք ամբառնան զիոգին...: - 671. Որոյ պատճառ է, զի դատապարտութիւնն ադամայ *բարձաւ* քրիստոսիւ. և չարաց տանջանքն է՛ ի դատաստանին: - 690. Իսկ արմաւենեօքն զոր *բարձեալ* են ի ձեռս՝ զյաղթութիւնն նկարագրեն: - 696. Երկրորդ, զի *բառնայ* զերկրորդ գալուստն քրիստոսի և զհատուցումն դատաստանին: - 698. նոքա քաւարան ասելով *բառնան* զերկիւղ դատաստանին: - 698. և յարութեամբն *եբարձ* զապականութիւն որ է՛ խայթոց նմին: - 706. ...այս է պակասութիւնս ի յարութեանն *բառնի* և եօթն զարդ ընդունի: - 722. Առաջին պակասութիւն է հոգւոյն իմացականին խաւարն և տգիտութիւնն. իսկ ի յարութեանն *բառնի* այս ի հոգւոյն և լինի լոյս պայծառ՝ և գիտութիւն աստուածային տեսութեանն...: - 722. ...և այս *բառնի* ի հոգւոյն և լինի ամրութիւն և հաստատութիւն. զի զաստուած հաստատապէս ըմբռնեմք և բնաւ ո՛չ բաժանիմք ի նմանէ և ոչ մոռանամք: - 722. և այս *բառնի* ի հոգւոյն և ընդունի ուրախութիւն և տարփումն հոգևոր առ աստուած...: - 722. ...իսկ այս ամենայն *բառնի* ի մարմնոյն և դնի անմահութիւն անապականութիւն և անչարչարութիւն. զի բնաւ ո՛չ չարչարի...: - 722. *Բառնի* այս և լինի թեթև երագ և արի յամենայն բարեգործութիւնս: - 722. Չորրորդ պակասութիւն է՝ զի այժմ է՛ մարմին մեր թանձր և կոպիտ. այլ յայնժամ *բառնի* այս ի մարմնոյ և լինի անօսր և թափանցիկ. զոր ոչ պարիսպ կամ բանտ ըմբռնել կարիցէ: - 722. Ոմանք այսպէս կարծեն թէ՝ հաստատութիւնդ *բարձցի* ի միջոյ մինչ վերին երկինքն երևի: - 729. Այն է ծալիլ և գալարիլ օդոյդ երկնի. և ո՛չ թէ հաստատութիւնն վերին էութեամբ ի բաց *բառնի* ըստ ոմանց: - 729. Եւ հրեշտակք զխաչն *բարձեալ* առաջի երթիցեն. և զմեռեալս՝ փողով և ձայնիւ ընդ առաջ նորա զարթուսցեն: - 734. Դարձեալ, ձորն յովսափաթու կոչի ձոր դատաստանի. այսինքն է կալն ուռնայի, ուր դաւթի խոստացաւ անդ առնել դատաստան. յորժամ սեղան շինեաց և պատարագեաց զեզինսն և *բարձաւ* մահն: - 737. Իսկ յետ դատաստանին և այս ևս՝ *բարձցի* ի նոցանէ առ ի տանջանս իւրեանց. յորժամ անարժան համարեսցին նաև ի տեսանելն զայն: - 741. Երկրորդ՝ կամ մահուամբ զերծանին. իսկ անդ *բարձեալ* է մահ. զի «խնդրեսցեն ասէ զմահ և ո՛չ գտցեն»: - 750. Նախ ի տեսանելն զերեսս

աստուածային որ է անճառելի ցնծութիւն. որպէս ասեն վարդապետք, այն է ճշմարիտ և միայն ուրախութիւն, և ո՛չ յաղագս ստեղծուածոյ, այլ ի ստեղծողին լինի. զոր իբրև ստանայցես, ո՛չ ոք *բարձցէ* ի քէն: - 762. ...մարմնով մեռելոցն անթիւ օճիրս ստախօսութեան գործէր. զանտի կենաց զյարութեան յուսոյ և զիատուցմանց ըստ գործոց` *բառնալով.* զերկիւղ դժոխոց և զսէր արքայութեան. և զամենայն ինչ որ նմանէ այսմ հոգևոր բարութեան: - 775. Որպէս ասեն երբեմն ժամանակի ի կոստանդնուպօլիս հռչակեալ քաղաքի, մոլորեալ յոյնք ի մոլորեալ երիտասարդէ՛ միոջէ՛, *բարձին* յեկեղեցւոյ զերգ երեքսրբենին: - 775. Զի անապական մարմնով եդաւ ի գերեզմանի. *բառնալով* զապականութիւն նախնւոյն. և իջանելով ի դժոխս` *եբարձ* զպատիժ նորին: - 776. Ամենայն իր բնութեան` գոյացակա՛ն է նորին. և ամենայն պարգևք այսինքն շնորհք պատահական է ի զարդ նմին. յաղագս որոյ ո՛չ *բառնին* գոյացականքն. որպէս անմահութիւն դիւի և բան մարդոյ: - 782. Եւ *բառնին* շնորհականքն. որպէս եռակին ասացեալ ադամայ. և լոյս մտաց. և երանութիւն դիւաց: - 782. Յիրաւի ընդ *բառնիլ* շաղկապին, *բառնի* և կապակցեալն նմին: - 782. Իսկ առ լուծումն խնդրոյս թէ վասն է՞ր արդեօք առ նորս շնորհ` որպէս աւազանին և կարգին ո՛չ *բառնի* ընդ *բառնիլ* շաղկապին. իսկ առ հնովն *բարձաւ*. որպէս յա՛յտ է ի վերոյ ասիցդ ադամայ և յայլոցն: - 782. Զի թէ կորուսեալ էր, այսինքն *բարձեալ* ամենևին յազգէն ադամայ, ուստի՞ գոյր որդւոց նորա. կամ ո՞րպէս առ ջրհեղեղաւն *բառնիւր բարձեալն*: - 782. Դարձեալ, ամենայն շնորհք առ ո ոք և իցէ` *բառնի* վասն մեղաց. ո՛չ ըստ ունակութեան` այլ ըստ ներգործութեան կամ նշանակութեան: - 782. Զորօրինակ, ժանգ հայելւոյ ո՛չ զընդունակութիւնն *բառնայ*, այլ զտեսութիւնն. և յետ սրբելոյն, նոյն ծածկեալն երևի ի նմա: - 782. Այսպէս և ժանգ յանցանաց մկրտելոց և քահանայից` *բառնայ* զգործ` կամ զնշանակութիւն շնորհացն. իսկ յետ սրբութեան զղջմամբ` զիա՞րդ կրկնի ունակացեալն ի նմա՛: - 782. Զի որպէս *բառնի* վասն մեղաց, նոյնպէս տացի վասն զղջմանն: - 783. Յա՛յտ է զի ի *բառնիլ* ոչէին` էութիւն հաստատի բացասութեամբ կրկին. իսկ ստորասութեամբ նոյն մնայ: - 787

**ԲԱՍԵՄԱԹԱՅ** - Եւ էր յազգէն եսաւայ ի կնոջէն *բասեմաթայ*` դստեր իսմայէլի. և եերորդ ծնունդ էր յաբրահամէ: - 320

**ԲԱՍԻԼԻՈՍ** - Այլ որք ուղիղ դատեցան վարդապետք եկեղեցւոյ ըստ տեսլեանն յօհաննու. որպէս մեծն անդրէաս և համախոհք նմին սուրբն իրինոս, եպիփան, և *բասիլիոս*: - 687

**ԲԱՍԻՐ +** Տրտունջն դժգոհանքն է. և բամբասանքն *բասիր* բանք զայլմէ՛: - 381

**ԲԱՐԱԿ +** Եւ հուրն է ի սիրտն. զի սիրտն ջե՛րմ է և նման է հրոյ. լայն է տակն և *բարակ* ծայրքն: - 232. Երկայն և *բարակ*` նախանձո՛տ է: - 246. Շրթունքն *բարակ* և բերանն մեծ, ուժեղ է և մեծասիրտ: - 247. Շրթունքն *բարակ* և բերանն և փոքր բերանն` թուլասիրտ է: - 247. Ձայնն *բարակ*` տխո՛ւր է և կարծոտ: - 247. Վիզն երկայն և *բարակ*` չարախորհուրդ է: - 247. Ուսքն *բարակ* և վերամբարձ, դարանակա՛լ է: - 247. Մատունքն փոքր և *բարակ*, յիմարի՛ է ցոյց: - 247. Կշտերն *բարակ*` խորագէ՛տ է: - 247. Ոտք *բարակ* և կարճ, չարաբարո՛յ է: - 247. Իսկ հերն կիսասև և ոչ յոյժ *բարակ*` զբարեբարոյն և զբարի կազմուածն ցուցանէ: - 248. Այլ` մոշավայրին է *բարակ* և անպտուղ: - 330

**ԲԱՐԱԿ** - Չորրորդն *Բարակ*. որդի ամենեմայ ի կեդեսայ նեփթաղէմի ամս **խ**: - 420

**ԲԱՐԱՌՆԱԲԱՐ +** Որպէս ասեմք *բարառնաբար*, (ծով ետես և փախեաւ. զի՞ է քեզ ծով: - 41

**ԲԱՐԱՔԻԷԼ** - Եօթներորդ` *բարաքիէլ*. սկիզբն աստուածայնոյ: - 144

**ԲԱՐԲԱՆՋԵՄ +** Յնգետասաներորդ` թէ չարն է յաստուծոյ` և սկիզբն ամենայնի է աստուած, որև չարեաց ըստ նոցա, ապա ո՛չ է սկզբնաչար առաջին գտակն չարեաց սատանայ. որպէս նոքայն *բարբանջեն*: - 14. Որք զաչս իմաստից յիմանալի ճառագայթիցն խուսափեցին թիւր կամօք, և խոտոր մտօք. զանուղղայս խորհելով, և զանպատշաճս բարբառելով. յարձակեալ անկապ լեզւաւ և անդուռն շրթամբք բացեալ յերկինս. ցոպ բերանով ի բարձունս *բարբանջելով*. և յածեալ ընդ երկրաւ լեզուագարելով. որոց դատաստանն ի բնէ ո՛չ դատարկանայ. և կորուստն ո՛չ նիրհեսցէ: - 31. Եւ թէ մարմինն քրիստոսի չէ աստուած, և հոգին քրիստոսի չէ աստուած, որպէս նոքա *բարբանջեն*. ապա և բոլորն քրիստոս չէ աստուած. զի բոլորն քրիստոս յաստուածութենէն միաւորեալ լինի մի քրիստոս. և բաժանեալ ո՛չ է քրիստոս: - 91

**ԲԱՐԲԱՌ +** Նիւթ *բարբառոց:* - 202. Տասներորդ` մի և նոյն միտք է յաստուած որով զամենայն տեսանէ և զամենայն *բարբառ* լսէ. նոյնպէս և ի մարդս մի իմացումն է որ զանազան զգայարանօք իմանայ: - 271-272. Իսկ թէ այլ ինչ էր` և *բարբառն* և տեսիլն սամուէլի, սուտ է և ո՛չ ճշմարիտ: - 430. Եօթներորդ` բանին էր պատշաճ պատմել զհօրէ. և երևիլ մեզ. որպէս ներտրամադրեալ բանն յառաջ գայ և լինի *բարբառ* և գրեալ ի քարտիսի, երևի և շօշափի: - 468. ...և գայր *բարբառ* յերկնից,

«փառաւորեցից». զխաչէն ասէր: - 632. Եւ անդ յաւուր կիրակէի յառաւօտին միաբան ի մի *բարբառ* յաւելին յերգս հրեշտակացն և զայս. «օրհնութիւն քեզ ի բարձունս»: - 635. Փողք են առաքեալքն. զի «ընդ ամենայն երկիրել *բարբառ* նոցա»: - 639. Ամենայն եղանակք *բարբառոց* ի հինգ տրամատին: - 639. Հինգերորդ՝ որ հաւասա՛ր է բանն և ձայնն ի լեզուն. որպէս *բարբառ* խօսից: - 639. Յետ որոյ սպանօղք նոցա լուիցեն այսպիսի *բարբառ*, «եղիա՛ և ենո՛վք ելէք աստ»...: - 709. Թէպէտ ո՛չ ունին բանք և ոչ խօսք, այլ ընդ ամենայն երկիր ել *բարբառ* վկայութեան նոցա. զի ամենայն տեղիք և ամենայն ժամանակք մարդկան առ նոսա է՛ յայտնի: - 729. Եւ զայս յայտնեն գիրք սուրբք. զի աւետարանն ի մէջ գիշերի ասէ զժամ յարութեանն «եղև *բարբառ* ահա փեսա գայ արիք»: - 747-748

**ԲԱՐԲԱՌԵՄ +** Որք զաչս իմաստից յիմանալի ճառագայթիցն խուսափեցին թիւր կամօք, և խոտոր մտօք. զանուղղայս խորհելով, և զանպատշաճս *բարբառելով*. յարձակեալ անկապ լեզաւ և անդուռն շրթամբք բացեալ յերկինս. ցոպ բերանով ի բարձունս բարբանջելով. և յածեալ ընդ երկրաւ լեզուագարելով. որոց դատաստանն ի բնէ ո՛չ դատարկանայ. և կորուստն ո՛չ նիրհեսցէ: - 31. Սոյնպէս բարեկամք յոբայ թէպէտ շարժեալք էին ի բանսարկուէն, այլ աստուծոյ հոգւովն զօգտակարսն *բարբառէին*. վասն այն գրեցան բանք նոցա ի սուրբ գիրս: - 325

**ԲԱՐԲԱՌԻՄ +** Երկրորդ՝ զի ձեռամբ գրչի մտանէ ի բառ. և առանց բերանոյ *բարբառի*. և տեսանի աչաց. և լսի ականջաց. և ուսուցանէ զմիտս: - 177

**ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍ** - Զաբողո՛ն է և *Բարդուղիմէոս*: - 348. զԹադէոս. և *զԲարդուղիմէոս*. և զՅուդայ յակոբեան. որ կայ ի յորմի. որ սեպհական քաղաք է հայոց: - 549. Ասաց զայս *բարթուղիմիէոս*: - 573

**ԲԱՐԵԱՏԵԱՑ +** Խնամք մարդասիրութեանն աստուծոյ որ զամենայն յամենայնի տընօրինէ՛, արգել զայս. զի մի՛ ունիցին ինչ ի մտի յարուցեալքն ի մեռելոց. ապա թէ ոչ, որ ի սկզբանէ *բարէատեացն* էր և մարդասպան, բազում և զանազան երևոյթս...: - 775

**ԲԱՐԵԲԱԽՏՈՒԹԻՒՆ +** Չորրորդ, զի ո՛չ լինի ի դիպուածոց ինչ. որպէս սղից ոմանց պատահին *բարեբախտութիւն*, կամ վատաբախտութիւն. ա՛րդ՝ թէ է՛ ամենայն ի հարկէ, ո՛չ լինին վերոյ ասացեալքս: - 8. Երրորդ՝ *բարեբախտութեան*: - 209. Նախանձն է նախանձիլ ընդ այլոց *բարեբախտութիւն*: - 569

**ԲԱՐԵԲԱՆԵՄ +** Եւ վասն տեառն ասէ «հրեշտակք մերձեալ զօրացուցանէին զնա». որ է՛ սպաւորեալ *բարեբանէին*: - 418

**ԲԱՐԵԲԱՆԻՉ, ԲԱՐԵԲԱՆՈՂ +** Որում Գոհացողական Օրհնութիւն. և *Բարեբանօղ* Փառատրութիւն. Յամենայն գոյեղէն բնութեանց. ի վեհագունից մինչ ի հուսկ յետինս: - 771

**ԲԱՐԵԲԱՆՈՒԹԻՒՆ +** Վերինն որ առ աստուած և առ սուրբս, երբեմն յայտնութիւն լսի. երբեմն գոհութիւն և *բարեբանութիւն*. երբեմն մաղթանք և աղաչանք: - 539

**ԲԱՐԵԲԱՍՏՈՒԹԻՒՆ +** զի սուտ *բարեբաստութեամբ* նոցա զայլս խաբեսցէ: - 708. Իսկ յայսպիսի տեսութենէս ո՛չ ուրախանան, այլ տրտմին. և այս վասն նախանձու նոցա ընդ *բարեբաստութիւնս* այլոց: - 741

**ԲԱՐԵԲԱՐՈՅ +** Այսպէս ի բնական ստեղծումն հոգւոյն՝ ոմն խոհեմ և ոմն անզգամ. ցանկասէր՝ և ողջախոհ. *բարեբարոյ*՝ և չարաբարոյ լինին: - 19. Գոյնն միջակ ի մէջ սպիտակին և սևին՝ ցուցանէ զուշիմն և *զբարեբարոյն*: - 247. Իսկ հերն կիսասև և ոչ յոյժ բարակ՝ *զբարեբարոյն* և զբարի կազմուածն ցուցանէ: - 248

**ԲԱՐԵԲՈՅՍ +** Եւ մաղթե՛մ եղբայրական սիրով, ըստ բնածին *բարեբոյս* բարուցդ ածխոյժ մտօք ուղղապէս որոնել. զթերին լնլով և զաւելորդն կշռել: - 789

**ԲԱՐԵԳՈՅՆ +** Ոմանք ասեն և առնեն. *բարեգո՛յն* է: - 537. Եւ որք լսեն և առնեն, առաւել *բարեգոյն* է: - 537

**ԲԱՐԵԳՈՐԾ +** Վեցերորդ՝ զի ո՛չ *բարգործքն* լինէին գովելի, և ո՛չ չարքն պարսաւելի: - 20. Եւ դարձեալ ճաշքն ցուցանեն յերիս հասակս *զբարեգործսն.* և ընթրիսն զվերջին հասակին յորում ննջեմք ի գերեզմանի: - 656. Եւ զկնի ասէ՝ «յետ ժամանակաց եկեսցէ տէր ծառայիցն հատուցանել վարձս *բարեգործաց* և դատապարտել զհեղգս»: - 693

**ԲԱՐԵԳՈՐԾԵՄ +** Եւ սուրբ հոգին զչարութիւնն վարէ՛ և սրբեալ *բարեգործէ՛* զհոգին: - 523

**ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ +** Հինգերորդ՝ զի գործ արարչութեան է մի միայն առնելն. իսկ գործ խնամելոյն է՛ առնել և թոյլ տալ երբեմն երբեմն ըստ պիտոյից *բարեգործութեան*: - 158. Տասներորդ՝ **զ** թիւն նշանակէ զժամանակս *բարեգործութեան*. այլ շաբաթն ուր հանգեաւ աստուած՝ զհանգիստն

յաւիտենական: - 193. Եօթն ազգ *բարեգործութեան* տեսակ երևի աստ ի հաբէլ. վասն որոյ և է պարգևաց արժանացաւ: - 286. Վասն որոյ օրհնութեամբ ցրուեաց զնոսա ի վերայ երկրի, զի աճեսցին և բազմասցին և լցցեն զերկիր ծննդօք և շինութեամբ և *բարեգործութեամբ* ի փառս ամենասուրբ Երրորդութեանն ամէն: - 298. Եւ դարձեալ տամ զքեզ ի խորհուրդ սուրբ եկեղեցոյ. զոր ինչ գործեսցես, եղիցի քեզ ի *բարեգործութիւն* և ի փառս հանդերձեալ կենացն ամէն: - 602. Զի որդին մարմնացաւ և նա՛ նուիրէ *զբարեգործութիւնս* մեր առ հայր: - 625. Պատւական ակունք սէրն առ աստուած և առ ընկերն. ուստի ամենայն *բարեգործութիւնք* կատարին: - 702. Բառնի այս և լինի թեթև երագ և արի յամենայն *բարեգործութիւնս*: - 722. Զի ամենայն բոյս *բարեգործութեան* ի սերմանց հաւատոյն բուսանի և պտղաբերի: - 769

**ԲԱՐԵԳՈՒՆԻՆ** - Զի տնկական հոգին յօժարի՛ գոլ. և զգայականն բարեպէս գոլ. և բանականն ևս բարեպէս գոլ. զի ո՛չ երբէք հանգչի, մինչև միաւորեսցի ընդ ևս *բարեգունին*: - 249

**ԲԱՐԵԽԱՌՆ +** Եւ են *բարեխառն* և չորացուցիչ: - 205. Իսկ միջինն Ապէլիօդ. *բարեխառն*. անձրև, և արև: - 205. Երրորդ՝ տեղիք են *բարեխառն* ի շող ժամու, և ամրո՛ցք ի խռովութեան աւուրս: - 211. Կամ ի խառնուածոյ տարերացն՝ չարախառն և *բարեխառն* գոլ: - 251. Նախ բնական խելքն. որ ի *բարեխառն* կազմուածոյ հանդիպի. որպէս էր՝ ակիտոփէլին և քուսեայ բարեկամին դաւթի: - 537

**ԲԱՐԵԽԱՌՆԵՄ +** Չորեքտասաներորդ՝ *բարեխառնէ* զժամս տօթոյ և ցրտոյ: - 126. Եւ զի ջերմ և ցուրտն *բարեխառնին*: - 197. Նախ՝ զի շնչմունք հողմոց ի բարձունս են, և զբարձանց ջերմութիւնն *բարեխառնեն*: - 211. Հինգերորդ՝ սպիտակ ճրագունն. զի հո՛վ է բնութեամբ զջերմութիւն աչացն *բարեխառնէ*. նա և գեղեցկացուցանէ՛: - 239. Եւ աղի ջուրն է՛ ի յաչքն. զի զջերմութիւնն *բարեխառնէ*՛: - 240. Երկրորդն ուղեղ գլխոյն է. հով է և գէճ ընդ դէմ սրտին ջերմութեանն և չորութեանն. զի *բարեխառնեսցէ* զնոսա. և իւր տանուտէր լուսինն է: - 241. Իսկ ողորմութիւն *բարեխառնէ* զխստութիւնն: - 459. Պսակն ընդ դէմ ցանկութեան. զոր *բարեխառնէ* և անմեղադրելի առնէ: - 588. Իսկ արտասուքն աղի և ջրատեսակ. զի *բարեխառնեսցէ* մինն զջերմութիւն հրոյ, և միւսն՝ զի մի՛ նեխիցին պարուտակք աչաց. շրջապատեալ երակացն լուսոյ: - 786

**ԲԱՐԵԽԱՌՆՈՒԹԻՒՆ +** Եւ հիւսիսայնոցն ո՛չ բուսանի վասն խիստ ցրտոյն. և միջերկրայքս վասն *բարեխառնութեանն* մորուս ունին: - 245. Եւ զխ ամ շինեցին յամառն և ձմեռն ըստ *բարեխառնութեան* տեղւոյն. մինչև հասին յործկուտ օդն թանձրացեալ ի գոլորշեաց և ջերմացեալ յարևուն: - 297

**ԲԱՐԵԽՆԱՄ +** Ի կամս Հայրենի *բարեխնամ* գթութեանցն աստուծոյ: - 771

**ԲԱՐԵԽՕՍ +** Նա՛խ՝ զի քահանայն արեան *բարեխօս* է, և ո՛չ արիւնահեղ: - 296. Նա՛խ՝ զի *բարեխօ՛ս* են արեան: - 366. Իններորդ՝ յայնժամ ո՛չ ոք լինէր արանց միջնորդ և *բարեխօս*: - 480. Այլ և զերկոտասան գունդս հրեշտակաց յերկինս և զ**բժ**ան առաքեալսն *բարեխօս* մատուցանեմք առ աստուած: - 624. Զի ի կիրակէ և ի տէրունական տօնս ո՛չ կարօտիմք *բարեխօսի*. այլ երգս սրովբէականս նուագեմք: - 627. Այլ զի և մեք նոցին բաղձասցուք և նոցա մասնակից լիցուք և զնոսա *բարեխօս* կալցուք և զնոսա՛ օրինակ դիցուք. - 628. Նա՛խ՝ զի առ որդին մարմնացեալ՝ և զգուք մօրն *բարեխօս* արկանեմք: - 633-634. Երկրորդ՝ զի պատարագն է դէմ յանդիման լինի քրիստոսի. և ո՛չ եմք կարօտ *բարեխօսի*: - 634. Իսկ մեծացուսցէքն, և խաչի, և հանգստեան, հանապազո՛րդք են. զի միշտ *բարեխօսք* են: - 642. Նա՛խ՝ զի յաղօթս զկոյսն սուրբ *բարեխօս* մաղթեմք. և զխաչն սուրբ՝ պահապան: - 642. Իսկ ճշմարտութիւնն ի մեզ, վասն ե զգայարանացս սրբութեան. որով մեղանչեմք՝ սրբիմք պահօք և ապա՛ սրբոցն ի *բարեխօս* մեզ: - 653. *բարեխօս* դնելով զնոսա զչորեքշաբաթս և զուրբաթս պահեմք: - 654. Եւ ոչ մի ինչ ունի յոյս փրկութեան. ո՛չ օգնական. ո՛չ *բարեխօս*. ո՛չ ողորմութիւն. և ո՛չ այլ ինչ այնպիսի որ արաժանաւորացն է: - 669

***ԲԱՐԵԽՕՍ ԼԻՆԵԼ +*** Այսպէս և հոգւոյն բարեխօսելն է. զի ինքն ծագէ ի սիրտս մեր *զբարեխօսն լինիլ* յաղօթս. այսինքն զայն խնդրել որ ինչ ի փառս աստուծոյ է: - 59

***ԲԱՐԵԽՕՍ ՈՒՆԵԼ +*** Եւ երկրորդ՝ զի գ *բարեխօս ունիմք* առ Երրորդութիւնն սուրբ: - 295. Ի խնկոց սեղանն քաւէ՛ր արիւնն. զի զաղօթս սրբոցն *բարեխօս ունիմք* ընդ խորհրդաւոր արեանն: - 360

**ԲԱՐԵԽՕՍԵՄ +** Իննևտասաներորդ՝ *Բարեխօսելն* որդւոյ և հոգւոյ: - 29. Իսկ զի *բարեխօսել* լսեմք հոգւոյ և որդւոյ: - 48. Ոչ թէ նըւաստ է քան զհայր, կամ ծառայաբար ծունր կրկնելով *բարեխօսէ*՛: - 48. Այլ ա՛յս է հոգւոյն *բարեխօսելն*, զի յորժամ կամք յաղօթս՝ ո՛չ գիտեմք զպատշաճն խնդրել. ապա հոգին անմռունչ տայ մեզ իմաստ զպատշաճն աղօթել: - 48. Ապա այս աղաչանքս զոր ինչ առնեմք ի ծագմանէ հոգւոյն սրբոյ, *բարեխօսել* ասի հոգոյն սրբոյ: - 48. Այսպէս իմա և զորդւոյ *բարեխօսելն*: - 48.

Այս է ասէ աստուածաբանն գրիգոր՝ *բարեխօսելն* որդւոյ: - 48. Նախ՝ ասէ մակեդոն եթէ աղօթել և *բարեխօսել* ո՛չ յարմարի աստուծոյ. զի եթէ *զքրիստոսէ՛* ասի՝ վասն մարդկութեանն է: - 59. Այսպէս և հոգւոյն *բարեխօսելն* է. զի ինքն ծագէ ի սիրտս մեր զբարեխօսն լինիլ յաղօթս. այսինքն զայն խնդրել որ ինչ ի փառս աստուծոյ է: - 59. Երկրորդ՝ առ ի *բարեխօսել* վասն մարդկան հաւատացելոց: - 519. Եօթներորդ՝ թէ առ մարդ մեղանչեն՝ առ աստուած *բարեխօսեն* և հաշտի: - 566. Զի անուշահոտ վարուք հաճոյ եղեն աստուծոյ. և բուրմամբ աղօթից *բարեխօսե՛ն* վասն մեր: - 628. ո՛չ կարեմք այլոց *բարեխօսել*. - 650. Յոգիք արդարոցն զամենայն գիտեն զոր ինչ վասն նոցա գործեմք. և վասն մեր *բարեխօսե՛ն* և կատարե՛ն զխնդիրս: - 685

**ԲԱՐԵԽՕՍՈՒԹԻՒՆ +** Եւ այժմ յոյս մեր է՛ կրկին. նախ առ սուրբս վասն օժանդակութեան և *բարեխօսութեան*: - 574. ...զի նոցա *բարեխօսութեամբն* ընկալցի զպահքն մեր: - 650. զի նա կենդանեացս աղօթի՛ց է կարօտ, և մեք նորա *բարեխօսութեանն* առ քրիստոս: - 673

**ԲԱՐԵԿԱՄ +** Վեցերորդ՝ *զբարեկամս* և զթշնամիս ցուցանէ: - 185. Վեցերորդ՝ *զբարեկամ* հրեշտակս՝ և զթշնամին սատանայ ցուցանէ՛: - 185. Ութերորդ՝ զի ո՛չ երևէր *բարեկամն* և թշնամին. սիրելին և ատելին. և լինէին բազում սպանութիւնք և աւերք. զի ոչ զգուշանային միմեանց: - 238. Իսկ պատուիրանքն՝ *բարեկամի* առ *բարեկամս* քաղցրութեամբ. որպէս հօր առ որդիս. և եղբօր առ եղբարս: - 277. Եւ կապ ուխտի որպէս *բարեկամաց*: - 317. Ոմանք ասեն թէ՝ *բարեկամքն* իւր որ էին յազգէն եսաւայ ելիփազ. սովփար. և բաղդատ. որք եկին մխիթարել զնա ի վշտացն, նոքա գրեցին. որպէս ինքն ասէր, «ո՛ տայր ինձ գրել զբանս իմ յիշատակ յաւիտենից»: – 320. Եօթներորդ՝ *բարեկամաց* թշնամանքն յերկար հակառակութեամբ: - 322. Եւ ոմանք **ե** ասեն. **ա**, արտաքին ինչքն. **բ**, զաւակաց մահն. **գ**, մարմնոյն հարուածքն. **դ**, կնոջն կագն. **ե**, *բարեկամաց* հակառակիլն: - 322. Արդ՝ առաջինն և վերջինն վայելչակա՛ն է յոբայ և աստուծոյ. իսկ միջին երկուքն *բարեկամացն* յոբայ, և չար բանսարկուին յարմարի: - 323. Դարձեալ գիտելի՛ է, զի յոբ կրկնելով զբանսն՝ ուղղէ՛ր *զբարեկամսն* և ընկրկէ՛ր զսատանայ. զի այսպէս ամենայն ոք կարէ՛ յաղթել սատանայի յորժամ զընկերն ուղղէ ի բանս կամ ի գործս կամ ի հաւատս և յայլսն. յայնժամ սատանայ թիւրի և հեռանայ: - 323. Դարձեալ՝ յաղթեաց զսատանայ այնու, զի իմացաւ զչար հնարսն նորա և պատասխանէր զընդ դէմ. որպէս կնոջն և *բարեկամացն* և որք զգուժն բերէին. զի գիտէր ի բանսարկուէն լինիլ: - 323. Վասն է՞ր այնչափ հակառակեցան *բարեկամքն* ընդ յոբայ: - 324. Նախ՝ զի շարժեալք էին ի բանսարկուէին. որպէս երբեմն ի ձեռն կնոջն. և յայնժամ *բարեկամօքն* մարտնչէր ընդ յոբայ: - 324. Չորրորդ՝ կեղծաւորութիւն է և խաբէութիւն գովելն զչարն և զանիրաւն. վասն այն ո՛չ ասաց *բարեկամացն* բարիս՝ զի չարք էին: - 325. Սոյնպէս *բարեկամք* յոբայ թէպէտ շարժեալք էին ի բանսարկուէն, այլ աստուծոյ հոգւովն զօգտակարսն բարբառէին. վասն այն գրեցան բանք նոցա ի սուրբ գիրս: - 325. Վասն է՞ր այնչափ դիմամարտս յարուցանէր բանսարկուն ի վերայ յոբայ. որպէս զկինն և *զբարեկամսն* և զծառայքն և զայլսն: - 325. Յինգերորդ՝ ըստ առաջին կարգին դարձեալ ասացին *բարեկամքն* յոբայ՝ թէ հաճո՛յ ես աստուծոյ՝ լուիցէ և խօսեսցի աստուած. վասն այն առաջի նոցա խօսեցաւ և վկայեաց: - 326. Չորրորդ՝ որոտն և մրրիկն յամպոյն՝ զսպառնալիս *բարեկամացն* նշանակէ: - 326. Այլ ա՛յս է ճշմարիտն, զի ամենայն *բարեկամքն* որ ժողովեցան յետոյ և մխիթարեցին զնա՛, իւրաքանչիւրքն բերին մէն մի որոջ ոչխարի և դ դրամ ոսկի անգիր ընծայեցին նմա ի սատար խրախութեանն. – 326. Որպէս և յոբ ըստ կարծեաց *բարեկամաց* ասէր՝ «ե՛ս մոլորեցայ»: – 327. Եօթներորդ՝ յոբ ի *բարեկամացն* նախատեալ. և տէր մեր յազգէ իւրմէ չարչարեալ և չարախօսեալ: - 327. Ութերորդ՝ յոբ ո՛չ անիծանէր, այլ աղօթիւքն *զբարեկամսն* փրկէր. և տէր մեր ի վերայ խաչողացն աղօթէր: - 327. Երկրորդ՝ դարձեալ նոյն ինքն սատանա՛յ է օձն. որ փոխեցաւ ի *բարեկամի* ձև. և պատրեաց զնախաստեղծսն: - 332. Վեցերորդ՝ զի զփառս եթող և զսէր *բարեկամաց*: - 442. Նա՛խ՝ բամբասողք. որք բառնան *զբարեկամս* և զբարի համբաւս: - 486. Տասներորդ, զի ցուցցէ թէ թշնամեաց նորա ո՛չ է իշխանութիւն բուռն հարկանել զնմանէ. իսկ *բարեկամաց* նորա գոյ իշխանութիւն այլով իւիք մերձենալ ի նա. այսինքն սիրով և երկիւղիւ յայնմիկ զոր ունեն զնա: - 518. Նախ բնական խելքն. որ ի բարեխառն կազմուածոյ հանդիպի. որպէս էր՝ ակիտոփէլին և քուսեայ *բարեկամին* դաւթի: - 537. և Յառաջ շարժումն է բարկութիւն. զի վասն չարեաց ասէ *բարեկամ*: - 560. Գթութիւն է արենակցաց և *բարեկամաց* սպասաւորել ստէպ: - 579. Դարձեալ ասեն զբանն ղուկասու, «որ ունիցի *բարեկամ* և երթայ առ նա ի գիշերի, և նա ասէ՝ մանկունքս ընդ ինև են»: - 696. Զի ասէ մեծն իգնատիոս մեկնիչն յայսմ բանի, եթէ *բարեկամ* եկեալ՝ զպահանջօղ հրեշտակն ասէ յօր մահուն. իսկ առաջին *բարեկամ* է՛ աստուած: - 697

**ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ +** Եւ զի *բարեկամութեամբ* եկն և շրջեցաւ ի թշնամութիւն, ինքն յետս շրջի ի խածանելն: - 219. Շնորհ է յիշատակ *բարեկամութեանց*. և կամք անդրէն հատուցմանց: - 579

**ԲԱՐԵԿԱՐԳԵՄ +** Այլ արդ՝ է քրիստոս ամենայն՝ սիրով յօդեալ են ի միմեանս՝ և *բարեկարգեալք*: - 21

**ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ +** Զի այսպէս ի կազմուածոյ քո ուսցիս *զբարեկարգութիւն* և զպատիւ առ վերինս և առ ներքինս և առ հաւասարս: - 232

**ԲԱՐԵԿԵՆԴԱՆ +** Եւ կարգաւ բաժանելն. և թափել գինւոյն. և ընթրիսն. և *բարեկենդանն*: - 527. Վասն է՞ր ի բուն *բարեկենդանն* զձայնն ի վերջ փոխեմք: - 641. ...այլ վասն յարութեանն քրիստոսի բուն *բարեկենդան* կարգեցաւ, - 651. Եւ զայս դնեն պատճառ թէ՝ ի ժամանակս ինչ՝ զօրք հեծելոց նոցա ո՛չ հասին ի *բարեկենդանն*...: – 651. Զի՞նչ է խորհուրդ *բարեկենդանին* որ յամենայն տեղիս ի վանորայս և յանապատս ներե՛ն սակաւ ինչ ի չափաւոր վայելս: - 657. Յայսմանէ է առեալ հրաման վասն *բարեկենդանի*: - 657. Նոյնպէս և *բարեկենդանս*. զի ի լեառն պահո՛ց ելանեմք: - 657. Նա՛խ՝ նշանակէ՛ *բարեկենդանին* արծակութիւնն զպահոց նեղութիւնս...: – 657. Դարձեալ, նշանակէ՛ *բարեկենդանն* զդրախտին կեանքն. ամենայնիւ առանց կարօտութեան: - 657. Եւ դարձեալ՝ *բարեկենդանն* նշանակէ՛ զառաքինութիւն հոգւոյն ամենայնիւ փարթամացեալ: - 657. Եւ ի մեծ *բարեկենդանին* ** դ** շաբաթն և ուրբաթն հանգստեան: - 660. Եւ զի՞նչ է որ ի մեծի *բարեկենդանին* **զբ** չորեքշաբաթ և զուրբաթն հանգստեան ասեմք: - 684

**ԲԱՐԵԿԵՆԴԱՆԱՑՈՒՑԱՆԵՄ +** Եւ յորժամ յետոյ սուրբ հարքն զմիջին երկոքին շաբաթս *բարեկենդանացուցին*, - 650

**ԲԱՐԵԿԵՑԻԿ +** Զի ունօղքն *բարեկեցիկ* կենօք, և ոչ նոյնպիսիքն սովամահ տուայտեալք: - 789

**ԲԱՐԵՄԻՏ +** Որ և աղաչեմ *զբարեմիտ* հանդիպօղսդ՝ եղբայրական սիրով հաւանիլ. զպակասն լնուլ և զաւելիսն կշռել: - 772

**ԲԱՐԵՊԱՇՏ +** Իններորդ՝ նա՛ ի տաճարին նստի և ուսուցանէ. և սոքա ի ներքս ի յեկեղեցի. զկերպարանս *բարեպաշտի* ունելով արտաքոյ՝ ծածկեալ են գառնենեաւ զգայլենիս: - 35. Նոյնպէս յորժամ բնակին *բարեպաշտք* ի մէջ անհաւատից, Նա՛խ՝ զի աղօթք նոցա պահապան է նոցա: - 302. Երրորդ՝ զի հաւատք *բարեպաշտիցն* առաւելացաին: - 302. Որ եղև յերեքտասան ամի թագաւորութեանն ովսէի *բարեպաշտ* արքայի յուդայ: - 447. Որք վասն այնորիկ ասին աւազան, զի զուրբս *բարեպաշտ* բանիւք առատաբանս առնեն: - 756. Վեցերորդ, այլ և *բարեպաշտ* թագաւորք՝ և իշխանք՝ և իշխեցեալք՝ ունին զայս կարգ. թէ օրինօք կենցաղավարին ըստ հրամանացն աստուծոյ: - 757

**ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ +** Եւ այսպէս փախչելով ի թիւր ծայրիցն, զմիջինն պահելով ընթացք *բարեպաշտութեան*, անշփոթ և անբաժան միութիւն, խոստովանիմք զքրիստոս՝ աստուած մարդացեալ. մի անձն և մի բնութիւն. և մի կամք և գործք ըստ ուղղութեանն բանի: - 81. Եւ ունէր է որդիս և գ դստերս նման *բարեպաշտութեան* ինքեան: - 321. Նա՛խ՝ զի հայր նոցա *բարեպաշտութեամբ* սնուցանէր զնոսա. և վկայեցաւ առ աստուած արդար գոլ: - 322. և նա՛ վկայեաց վասն գերութեան ժողովրդեանն. այլ վասն *բարեպաշտութեան* ովսիա ո՛չ գնաց գերի: - 447. Հինգերորդ՝ ճանապարհ կոչի *բարեպաշտութեան* հաւատոց...: - 666

**ԲԱՐԵՊԷՍ** - Զի տնկական հոգին յօժարի՛ գոլ. և զգայականն *բարեպէս* գոլ. և բանականն ևս *բարեպէս* գոլ. զի ո՛չ երբէք հանգչի, մինչև միաւորեսցի ընդ ևս բարեգունին: - 249. Յարամնայութիւն է հաստատ և միշտ յարակայութիւն ի *բարեպէս* քնել բանականութեանն: - 580

**ԲԱՐԵՍԷՐ +** Քասանք, բարի և *բարեսէր* է աստուած. նոյնպէս և զմարդն բարի և *բարեսէր* ստեղծ: - 272. Միտք և կամք *բարեսէրք*: - 380. Միայն *բարեսէր* կամօք յիշատակ բարի առ քոյդ արծանագրեսցի ի տէր: - 789

**ԲԱՐԵՍՈՒՆ** - Զի ի վերին մասն օդոյն է մերձեցեալ՝ որ է առաւել *բարեսուն*. և ամպոց և հողմոց շարժմունք ի միջին մասն օդոյն ծնանին. և ի դրախտն ո՛չ հասանեն: - 222

**ԲԱՐԵՐԱՐ +** Չորրորդ՝ հասարակ է ի միոյ *բարերար* կամաց յառաջ եկելոց հաղորդեալ անհաղորդաբար ըստ համեմատութեան: - 106. Յասարակութիւն է, Նախ՝ զի ի միոյ *բարերար* կամաց յառաջ եկին գործ արարչութեան...: – 157. Վեցերորդ՝ *բարերարն* աստուած իւր արարչութեանն կցորդեաց զադամ՝ անուանս դնելովն: - 219. *Բարերար* և բնութեամբ բարի է աստուած. ուստի ի բարերարութեանց նորա յառաջե՛ն առ մեզ գործ ողորմութեան և գործ արդարութեան...: – 457. Երկրորդ, հայի՛ առ ի մի և նոյն *բարերար* կամացն յառաջ եկեալ գործքն. աստուածային՝ արարչական՝ և արքունական. որ է գործ ստեղծման և նախախնամութեան: - 746. Որ և ձեզ յիշողացդ և մեզ

յուսողացս առհասարակ ողորմեսցի *բարերար* և բազում ողորմ մարդասէրն աստուած և տէրն մեր յիսուս քրիստոս ամէն: - 773

**ԲԱՐԵՐԱՐԵՄ +** Առ տարակուսեալս *բարերարեա՛*. աղաչեմ: - 93. Այլ ի ստեղծումն էիցս՝ սէրն առաջին է քան զբարին. զի ի սիրո՛յ շարժեցաւ յառաջ *բարերարել* և խնամել: - 129. Դարձեալ՝ ի սուրբ գիրս է՛ ուրեք որ *զբարերարելն* աստուծոյ նշանակէ՞ հրամայել ասէ: - 277. Զի *բարերարե՛ն* և պատուհասե՛ն. զոմանս պահելով ի խաղաղութեան: - 345. Վեցերորդ՝ քրիստոս երբեմն *բարերարէ՛ր* և երբեմն տանջէ՛ր: - 566. Զի որպէս կարողութիւնն աստուծոյ երևի ի ստեղծանելն և ողորմութիւնն ի *բարերարելն*, այսպէս և արդարութիւնն ի հատուցանելն: - 778. Նոյնպէս ողորմութեան և արդարութեան է միշտ *բարերարելն* և պատժելն ըստ նախասահման գիտութեան նորին նախքան զլինիլն էիցս ըստ առաքելոյ: - 779

**ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆ +** Բարերար և բնութեամբ բարի է աստուած. ուստի ի *բարերարութեանց* նորա յառաջե՛ն առ մեզ գործ ողորմութեան և գործ արդարութեան...: – 457. Չորրորդ դարձեալ՝ դ թև խաչին նշանակէ զչորս *բարերարութիւնս* քրիստոսի. զի վերին մասն ցուցանէ զբացումն արքայութեանն երկնից. ներքինն զաւերումն դժոխոց. աջն զբաշխումն շնորհաց. ահեակն զթողութիւն մեղաց: - 493

**ԲԱՐԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ +** Որ և յարազուարճ *բարերջանկութեամբ* լի և ամենազան քաղցրորակ պտղաւէտութեամբ տընկեսցիս ծառ բարձրաբերձ յընթացս հոգւոյն ի մէջ եկեղեցւոյ տանս թորգոմեան ազգիս հայկազնեան: - 558

**ԲԱՐԻ +** Առաջին պատճառն աստուած՝ եդ զզօրութիւն իւր յաստեղս. և նոքա ազդե՛ն ի մեզ, և դարձուցանեն զմեզ ըստ իւրեանց շարժութեանն ի չար կամ ի բարի: - 7. Եւ թէպէտ մարմինք մարդկան են տարրականք, այլ *բարի* և չար ներգործի ըստ կամաց և ո՛չ ըստ բանականութեան: - 10. Ասեմք առ այս, թէպէտ խառնուածք մարմնոյն լինին ի շարժմանէ՛ աստեղացն, այլ բազումք անձնիշխան կամօք նըւաճեն զվատախառնութիւն մարմնոյն, և գործեն *զբարիս*: - 10. Դարձեալ՝ ունիմք խորհուրդ, և ընտրեմք զառնելիսն, և խոտեմք զոչ առնելիսն. և բազում անգամ խորհելովն հանդիպիմք *բարւոյ*, և փախչիմք ի չարէ. և խորհուրդն ի հնարաւորա՛ցն է որպէս ասացաւ և ո՛չ ի հարկաւորացն: - 11. Դարձեալ, թէ է հարկ, վասն է՞ր աղօթք և պատարագք և ողորմութիւնք և այլն՝ դարձուցանեն զմերձեալ չարիսն, և փոխեն ի *բարիս*: - 11. Դարձեալ, որոյ է իր գործեացն՝ նորա՛ է և ներգործութիւնն. եթէ առնել և եթէ կրել. արդ՝ մարդո՛յ է հոգին և մարմինն և ձեռն. մարդո՛յ է ուրեմն և գործ նոցին, եթէ չար և եթէ *բարի*: - 11. Եւ որպէս կիրք ցաւոցն մարդոյն են, զի ըզգա՛յ զկսկիծն. նոյնպէս և կիրք հեշտութեանն նորա՛ են, եթէ չարեաց և եթէ *բարեաց*, ապա ուրեմն մեր է ներգործութիւնն և ո՛չ հարկին: - 11. Դարձեալ թե ի հարկէ՛ է ոչ լինին օգուտ խրատք և սպառնալիք և ուսմունք. որովք բազումք յորդորին ի *բարիս*, և հեռանան ի չարեաց կենցաղոյս: - 11. Դարձեալ, թէ է՛ հարկ՝ ո՛չ են իրաւունք դատաստանի և քննութիւն. և ո՛չ օրէնք քաղաքական. և ո՛չ արժանապէս հատուցմունք *բարեաց* և չարեաց. զի հարկն բռնադատեաց գործել զայս. հարկին եղիցին պատիւք և պատիժք. և ո՛չ մարդոյն: - 12. Դարձեալ, թէ է՛ հարկ՝ անիրաւք են և ինքեանք աստեղքն. զի ոմանց *բարիս* գրեն, և ոմանց չարիս. զոմանս մեծատունս և զոմանս աղքատս. հեշտ կեանս և դժւարս. երկարակեացս և սակաւակեացս. բազում անգամ անարժանիցն *բարիս* խոստանան, և արժանեացն չարիս: - 12. Դարձեալ ասեն թէ՝ աստեղք ունին բնութիւնս ներհակս միմեանց. չար և *բարի*. և միմեանց դիպեալ ներհականան իրերաց. և առնեն չար կամ *բարի* խռովութիւն կամ խաղաղութիւն. աւեր կամ շինութիւն. և այլն: - 12. Եւ շարժումն նոցա ո՛չ պատճառէ զչար և *զբարիս* մարդկան. այլ են պատճառք աւուրց և ժամանակաց և եղանակաց. ծնանելոյ և աճելոյ. և նշան ապագայից որպէս ասացաք. այլ նշանն ո՛չ է պատճառ չար լինելոյ ումեք կամ *բարի*: - 12. Եւ շարժումն նոցա ո՛չ պատճառէ զչար և *զբարիս* մարդկան. այլ են պատճառք աւուրց և ժամանակաց և եղանակաց. ծնանելոյ և աճելոյ. և նշան ապագայից որպէս ասացաք. այլ նշանն ո՛չ է պատճառ չար լինելոյ ումեք կամ *բարի*: - 12. Զորօրինակ՝ ի կենդանեաց բազումք նշանակեն զլինելոց իրաց, և ո՛չ են նոքա պատճառք լինելոյ չարեացն կամ *բարեաց*: - 12. Ասելով թէ պատճառ ամենայնի՝ *բարեաց* և չարեաց մերոց ո՛չ մեք եմք, այլ է՛ առաջին պատճառն աստուած. որք փախչելով յառաջ ասացեալ բախտէ՛ և ճակատագրէ՛ աստեղացն, փոխանակ նոցա յառաջին պատճառն վերագրեն զհարկն. որպէս զի մի՛ ասիցեն երկու սկիզբն ըստ մանիքոսի: - 13. Այլ մեք դասք ուղղափառաց, հետևօղք ճշմարտասիրութեան, ընդդիմանամք այսմ ասելով թէ աստուած ո՛չ է պատճառ չարեաց. այլ միա՛յն *բարեաց*: - 13. Նախ՝ զի *բարին* էութիւն է. ուստի յա՛յտ է՝ զի հակադարձին առ միմեանս. զի ամենայն որ *բարի*՛ է՝ է է. և ամենայն որ է է՝ *բարի*՛ է: - 13. Երկրորդ՝ *բարին* ունակութիւն է, և չարն պակասութիւն նմին. որպէս խաւարն լուսոյ: - 13. Երրորդ՝ *բարին* ճշմարիտ է, և

ճշմարիտն *բարի*: - 13. Հինգերորդ՝ *բարին* կարգաւոր է և չարն անկարգութիւն: - 13-14. Այլ արդ՝ ամենայն պատճառ առաւել է քան զպատճառելին. եթէ *բարեաց* և եթէ չարեաց. ապա անհնարին հերձուած է ասել զչարն յաստուծոյ: - 14. Իններորդ՝ եթէ չարն է յաստուծոյ, ապա և կամի՛ զչարն. յայնժամ լինի կրկին կամք աստուծոյ. չար և *բարի*. զի կրկին գործ՝ ի կրկին կամաց առաջագայի: - 14. Տասներորդ՝ եթէ չարն է յաստուծոյ և կամի զչարն, ապա *զբարին* ո՛չ կամի. ապա թէ *զբարին* ո՛չ կամի, *բարին* ուրեմն ո՛չ է յաստուծոյ: - 14. Թէ անկարութեամբ՝ ահա բռնադատեալ է. և թէ կարողութեամբ առնէ ըզչար՝ անկա՛ր է առնել *զբարի*: - 14. Չորեքտասաներորդ՝ թէ չարն է յաստուծոյ, ինքն *բարի* է և առնէ ըզչա՞ր, թէ չար է և առնէ զչար: - 14. Զի եթէ *բարի* է և առնէ զչար, ահա ներհակ գործ է ինքեան: - 14. Իսկ թէ չար է և առնէ զչար, ո՛չ ոք է ի յէակս *բարի*: - 14. Վեշտասաներորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ որպէս *բարին*, և երկուցն սկիզբն է աստուած, և արդ՝ եթէ միևնոյն է սկիզբն երկուցն, անկարելի է ներհակացն ի միասին ունիլ մի սկիզբն. զի լինէր սկիզբն այն ո՛չ պարզ. այլ երկատեսակ. և ո՛չ միեղէն՝ այլ բաժանեալ և այլայլեալ. նաև լինէր ինքն ինքեան հակառակ, և յառաջ եկելոցն ի նմանէ: - 14. Եօթնևտասներորդ՝ զի թէ չարն և *բարին* ունին մի սկիզբն, որպէս ընդդիմաբաժանեալ տեսակքն զսեռն: - 14. Եւ լինէր *բարին* և չարն ի սեռէ աստուծոյ, որ է անհնարին: - 14. Այլ ի յաստուած զօրութեամբ իր ո՛չ ինչ գոյ, ո՛չ *բարի* և ո՛չ չար: - 14. Իսկ թէ բաղդատութեամբ, աստուած *բարի՛* է և ի *բարւոյն* *բարի* լինի և ո՛չ չար: - 14. Իսկ թէ ըստ ինքեան է չարն յաստուծոյ, նա ո՛չ լինէր *բարին* յաստուծոյ. զի ըստ ինքեան՝ հարկաւոր է և գոյացական և անփոփոխ: - 15. Քսաներորդ՝ զի ի հարկէ *բարի* է աստուած. որպէս ի հարկէ էա՛կ է. այլ արդ՝ հարկաւոր *բարին* է միշտ *բարի* և գոյացական *բարի* և զուտ *բարի*: - 15. Եւ զի ի հարկէ ունի զգոլն *բարի*՝ անկար է ո՛չ գոլ *բարի*: - 15. Եւ զի միշտ է *բարի*՝ անկա՛ր է լինիլ ո՛չ *բարի*: - 15. Եւ զի գոյացական է *բարի*, անկա՛ր է լինիլ պատահական չար: - 15. Եւ զի զո՛ւտ և իսկապէս է *բարի*՝ անկար է խառնիլ չար: - 15. Եւ արդ՝ բաւական է այսչափ որպէս ցուցաւ, թէ աստուած ո՛չ է պատճառ չարեաց, այլ *բարեաց* միայն: - 15. Երկրորդ՝ ասեն թէ աստուած նախքան զլինիլն մեր՝ ի նախատեսութիւնն իւր ետես զամենայն լինելոցն այնպէս. զչարն չար, և *զբարին բարի*: - 15. Դարձեալ ասեմք՝ թէպէտ տեսանէ աստուած զամենայն նախքան զլինիլն իւրեանց, սակայն տեսութիւնն աստուծոյ ո՛չ հարկ է ի վերայ նոցա լինիլ չար կամ *բարի*: - 15-16. Նո՛յնպէս և տեսութիւնն աստուծոյ ո՛չ հարկէ ի վերայ մեր գործ *զբարի* կամ զչար. այլ կամք մեր: - 16. Երրորդ՝ ասեն թէ կամքն աստուծոյ ո՛չ է ընդունայն. և ո՛չ ոք կայ ընդդէմ կամացն աստուծոյ. վասն որոյ զորինչ կամի՝ այնպէս առնէ. զոմն չար և զոմն *բարի*: - 16. Դարձեալ ասեմք՝ թէ կամքն աստուծոյ ո՛չ է ընդունայն. զի զոր ինչ կամի առնէ. այլ կամեցաւ և արար զմեզ անձնիշխան և տէր գործոց մերոց. եթէ չար՝ և եթէ *բարի*: - 16. Չորրորդ ասեն՝ թէ չարն ո՛չ է յաստուծոյ, ապա երևի թէ այլ ոմն է չարի սկիզբն, և այլ ոմն *բարւոյ*. և լինի բ սկիզբն *բարի* և չար ըստ մանիքոսի: - 16. Ասեմ զառաջինն եթէ՝ չար ո՛չ է յաստուծոյ. զի աստուած *բարի՛* է բնութեամբ. և ի *բարւոյն* չար ո՛չ գայ յառաջ. որպէս ո՛չ ի լուսոյն խաւար: - 16. Այլ և ո՛չ ի բնութենէ. զի բնութիւնք ամենայն հրեշտակաց կամ մարդկան *բարի՛* են ի *բարւոյն* յառաջ եկեալ. այլ չարն է՛ յանձնիշխան կամաց եկամուտ ի բնութիւնս: - 16. Այլ և ո՛չ ի բնութենէ. զի բնութիւնք ամենայն հրեշտակաց կամ մարդկան *բարի՛* են ի *բարւոյն* յառաջ եկեալ. այլ չարն է՛ յանձնիշխան կամաց եկամուտ ի բնութիւնս: - 16. Այլ և ո՛չ է բնութիւն. ո՛չ մասն և ո՛չ բոլոր. այլ պակասութիւն ունակութեան. զի *բարին* ունակութիւն է, և չարն պակասութիւն նորին. որպէս խաւարն լուսոյ, և հիվանդութիւնն առողջութեան, և մահ կենաց: - 16. Նախ թէ աստուած ստեղծ զկամքն *բարի*. և *զբարին* եդ առաջի կամիլ. իսկ նա անձնիշխանութեամբ հեռացեալ ի *բարւոյն*՝ գտա՛կ եղև չարին. զի չարն ո՛չ այլ ինչ է, բայց հեռացումն. կամ պակասութիւն *բարւոյ*. ապա ուրեմն թէպէտ բանն և կամքն է աստուծոյ, այլ կամիլն և ընտրելն զչարն՝ ոչ է յաստուծոյ, այլ կամացն և բանին: - 16. Զորօրինակ՝ արուեստաւոր ոք կազմէ սուր ի պատճառս *բարւոյ*. այլ որ նորգործեաց չար՝ նա եղև չարին պատճառ: - 16. Դարձեալ ասեմք թէ՝ աստուած ստեղծ զկամքն նաև զհրեշտակս և զմարդիկ *բարի*. և կամի *զբարին* և բռնադատէ՛ սիրել *զբարին*: - 17. Ուստի յա՛յտ է թէ սերմանեաց ի բնութիւնս *զբարին*, և օրէնս եդ *բարւոյ*. այլ և խրատ և յորդորումն և պարգևս *բարեաց*: - 17. Նմանապէս և աստուած գոլով *բարի*՝ ճանաչէ զչարս: - 17. Նմանապէս և աստուած միակ միջնորդութեամբ ճանաչէ *զբարին* ըստ ինքեան ի յատուկ տեսակն իւր. և ճանաչէ զչարն կրկին միջոցաւ. այսինքն զի է՛ հակակայ *բարւոյն*. և է՛ պակասութիւն նմին որպէս ասացաւ: - 17. Ասեմք նախ եթէ՝ չարն ո՛չ է յաստուծոյ որպէս *բարին*. զի *բարին* ըստ կամա՛ց է. իսկ չարն թոյլ տալով է. և ա՛յլ է կամացն որ յօժարութեամբ է, և այլ է թոյլ տալովն որ իբր ի յո՛չ կամացէ: - 17. Դարձեալ, թոյլ տալ և ներել չարեաց՝ վասն *բարւոյ* է: - 17. Զի նախախնամութեամբ բազում *բարիս* յառաջած է ի չարէ. որպէս սատանայի թոյլ տայ, զի փորձեսցին *բարիքն* և յաւելցին պսակքն: - 17. Նաև

մարդկան չարեաց թոյլ տալ. զի կամ ընտրեսցեն *զբարիս*՝ կամ յետոյ զղջասցին. և այլ պէսպէս նախախնամութեամբ որպէս ինքն գիտէ աստուած՝ ներէ՛ չարեաց. որպէս տեսանելոց եմք յառաջիկայսդ: - 17. Իսկ սկիզբն և կատարումն ի մեզ, որպէս նախածանօթ ընտրեալքն յառաջ քան զլինիլն աշխարհի. որ այժմ *բարի* գործովք կատարեսցին ըստ նախասահմանելոյն իւրեանց: - 18. Իսկ որ սկիզբն ի մէնջ՝ և կատարումն ի խնամոցն աստուծոյ, այսինքն յորժամ սկսանիմք *զբարին* և նա՛ աւարտէ՛ ի *բարին*: - 18. Եւ թէ սկսանիմք զչար, և նա փոխէ ի *բարին* ըստ *բարի* խնամոցն իւրոց: - 18. Դարձեալ ասեմք թէ՝ ո՛չ է *բարի* առանց աստուծոյ կամացն. և ո՛չ չար առանց թոյլ տալոյ նորա. ա՛յն է որ ասէ՝ տերև ո՛չ անկանի, և մազ մի ի գլխոյ. զի ո՛չինչ կարեմք առնել առանց կամաց՝ կամ առանց գիտութեան՝ կամ առանց թոյլ տալոյն աստուծոյ: - 18. Դարձեալ, չորեքկին են հատուցմունք. *բարի*՛ փոխանակ *բարւոյ*, և չար փոխանակ չարի. որ է՛ գործ արդարութեան: - 18. Եւ *բարի* փոխանակ չարի, որ է անբաւ գթութեանն և ողորմութեանն աստուծոյ: - 18. Իսկ չար փոխանակ *բարւոյ* ո՛չ առնէ ըստ որում անիրաւութիւնէ. այլ առնէ երբեք ըստ որում նախախնամութիւնէ. զի ի չարէն լինիցի *բարի*. թէպէտ մեզ չար երևի, այլ այս ևս *բարի* է. որպէս հիւանդութիւն. փորձութիւն. և այլն: - 18. Իսկ չար փոխանակ բարւոյ ո՛չ առնէ ըստ որում անիրաւութիւնէ. այլ առնէ երբեք ըստ որում նախախնամութիւնէ. զի ի չարէն լինիցի *բարի*. թէպէտ մեզ չար երևի, այլ այս ևս *բարի* է. որպէս հիւանդութիւն. փորձութիւն. և այլն: - 18. ...ապա ուրեմն ամենայն ոք ի հարկէ գրոյն այնորիկ լինի. եթէ չար և եթե *բարի*: - 18. Արդ՝ ժամանակեայ արդարութիւնն յայտնի է որ անձնիշխան կամօք փոփոխի. երբեմն ի չար և երբեմն ի *բարի*. և ժամանէ փրկութեան կամ դատապարտութեան: - 18. Ապա ուրեմն յաստուծոյ է չարն և *բարին*: - 19. Նա՛խ՝ եթէ ուշիմ և ապուշ և այլն ըստ կարգի, սոքա եթէ ի մարմնոյն խառնուածոյ պատճառին՝ և եթէ բնական որակութեամբ հոգւոյն՝ նման և աննման գոլ, առանց ներգործելոյ ո՛չ չար են և ո՛չ *բարի*. ո՛չ գով. և ո՛չ պարսաւ հետևի. որպէս և ո՛չ բնական *բարուց* անաւնոց: - 19. Ա՛յսպէս և ցանկասէրն ի *բարւոյն* ուղղեսցի: - 19. Դարձեալ ասեմք թէ՝ ըստ ինքեան սոքա ոչ են չար. այլ *բարի*. որպէս տգէտն ի մեղաց. և բարկութիւնն ընդդէմ չարեաց. և ցանկացօղն *բարեաց*. զի ըստ բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն: - 19. Ապա ուրեմն ամենայն ինչ որ յաստուծոյ է՝ *բարի* է, և ո՛չ չար: - 19. Այլ արդ՝ եդ աստուած զսոսա բնական որակութիւնս ի մասունս հոգւոյն. եդ և զանձնիշխան կամքն տէր և իշխան իներքս ի հոգին. զի կառավարէ և առաջնորդէ՛ հոգւոյն. զվատ որակն ի *բարին* ուղղել, և *զբարին* ի նոյնն պահել և առաւելուլ. զի այս է գործ անձնիշխանին: - 19. Ապա թէ զայս ո՛չ առնէ, անձնիշխան կամօք հետևի չարին և ո՛չ ի բնուէ, զոր աստուած *բարի* է ստեղծեալ: - 19. Այսպէս առնէ զոմն արդար և զոմն մեղաւոր. չար՝ և *բարի*: - 19. Ապա ուրեմն և զոմն չար և զոմն *բարի* ստեղծանէ: - 19. Նախ՝ եթէ աղքատութիւն և մեծութիւն տիրելն և ծառայելն, է՛ յաստուծոյ. սակայն ոմանց կամելով՝ և ոմանց ներելով և թոյլ տալով. այսինքն *զբարի* մեծատունս և զաղքատս կամելով առնէ. և ըզչարսն ներելով և թոյլ տալով առնէ: - 19. Այսպէս և զարդարս և զմեղաւորս. զչարս և *զբարիս*. զոմանս կամելով առնէ *բարիս*, և զոմանս թոյլ տալով առնէ չար. ապա ուրեմն ո՛չ են ի կամացն աստուծոյ չարութիւնք և ո՛չ մեղքն: - 19. Ա՛յսպէս առնէ զչարս և զմեղաւորս, զի ի ձեռն *բարեաց* օգտեսցին և ի լաւութիւն գայցեն: - 19-20. Եւ գիտելի է այս, եթէ նախասահմանութիւնն աստուծոյ առնէր հարկ գործոց մարդկան, չարի և *բարւոյ*, լինէր բազում անպատշաճութիւն որ վասն բախտին ասացեալ եղև. զորև աստ կարգեսցուք: - 20. Նախ՝ զի ընդունայն լինէին խոստմունքն. *բարեացն* վարձս և չարեացն պատիժս: - 20. Երկրորդ՝ անիրաւ լինէին հատուցմունքն. *բարեացն բարիս* և չարեացն չարիս: - 20. Ութերորդ՝ ընդ վա՛յր էին ուսմունք և յորդորմունք ի *բարիս*. որովք փախչիմք ի չարէն, և հասանիմք *բարւոյն*: - 20. Իններորդ՝ աւելորդք էին դժոխք և արքայութիւն. որք տեղիք են *բարեաց* և չարաց: - 20. Տասներորդ՝ զի սուտ լինէին ամենայն օրէնք բնական՝ գրական և աւտրնական. զի սոքա ամենքն խրատեն զմեզ խոտորիլ ի չարէ՝ և առնել *զբարի*. և այլն ամենայն: - 20. Այսքան ընդդէմ նոցա՝ որք յաստուծոյ ասեն *զբարիս*. և զչարս: - 20. Իսկ ընդդէմ մանիքեցւոցն՝ որք ասեն **բ** սկիզբն, չար՝ և *բարի*. այսպէս հանդիպեսցուք և պատասխանեսցուք ի կարճոյ: - 20. Իններորդ՝ թէ են բ սկիզբն չար և *բարի*, կամ հաղորդին միմեանց՝ կամ ոչ: - 21. Իսկ թէ հաղորդին, ո՛չ կարէ լինիլ չար. զի չարն *բարւոյն* պակասութիւնէ. և սոյնպէս մի է սկիզբն: - 21. Տասներորդ՝ **բ** սկիզբն՝ գերագոյն *բարին*. և ծայրագոյն չարն՝ կամ ըստ ինքեանց կայանան, կամ ո՛չ: - 21. Եւ եթէ կայանան ըստ ինքեանց, ո՛չ ոքն է չար. զի կայանալն ըստ ինքեան *բարի*՛ է: - 21. Արդ՝ *բարի* և չար ո՛չ են հակակայք որպէս առինչք. զի առ ինչքն համանգամա՛յն են. և ի միմեանց բաղկանան. իսկ *բարին* և չարն ո՛չ են համանգամայն. և չարն ի *բարւոյն* ո՛չ գոյանայ. և ո՛չ *բարին* ի չարէն: - 21. Եւ ո՛չ են որպէս ստորասութիւնք և բացասութիւնք, որ միայն ի բա՛նն են հակակայք. որպէս ճշմարիտ, և սուտ. այլ չար և *բարի*՝ ի բանս և ի գործս պատահին: - 21. Եւ ո՛չ

որպէս ներհականք. որպէս ջերմ և ցուրտ. սպիտակ և սեաւ. զի սոքա որակութիւնք են. իսկ *բարին* էութիւն է, և չարն ո՛չ է էութիւն: - 21. Այլ թըւի որպէս ունակութիւն և պակասութիւն. զի *բարին* ունակութիւն է, և չարն պակասութիւն նմին. որպէս կուրութիւն երեսաց՝ և խաւար լուսո՛յ է պակասութիւն: - 21. Իսկ ի *բարւոյն* ի չար՝ և ի չարէն ի *բարի* կարէ ոք փոխիլ: - 21. Ասեմք առ այս եթէ՝ *բարի* և չար ըստ ենթակային ներհակք են միմեանց. իսկ ըստ ինքեանց՝ ունակութիւն և պակասութիւն որպէս ասացաք: - 21. Զի՞նչ է գործ *բարւոյն* և գործ չարին: - 22. *Բարին* էացուցիչ է և խնամօղ: - 22. Չարն ո՞րպէս է ոչ է. զի ահա՛ ներհականա՛յ *բարւոյն*. որպէս առաքինութիւն և չարութիւն: - 22. Զի է՛ ինչ որէ է՛ և *բարի*. որպէս ամենայն էութիւնք: Եւ է որ ո՛չ է է՝ և *բարի*. որպէս նիւթ անորակ: - 22. Եւ է որ ո՛չ է է՝ և *բարի*. որպէս նիւթ անորակ: - 22. Եւ է և ո՛չ *բարի*. որպէս կամքն չար: - 22. Եւ ո՛չ է. և ո՛չ *բարի*. որպէս չարն արտաքոյ էութեան և արտաքոյ *բարւոյ*: - 22. Այլ և ո՛չ յէից է չարն. զի ամենայն որ է է՝ *բարի*՛ է և անդրադարձեալ ևս…: – 22. Այլ և ո՛չ սկիզբն է էից. զի ի չարէն *բարի* ո՛չ լիցի: - 22. Երկրորդ, ասեմք եթէ՝ չարն կրկին իմանի. է՛ որ ինքնաչա՛ր է. որ պարզ և ամենևիմբ չարն է. և արտաքոյ *բարւոյ* և էութեան է. որ ո՛չ ուրեք է. և ո՛չ երբեք. և ո՛չ էր. և ո՛չ է. և ո՛չ լինիլ կարող է. որ է ո՛չ ինչ: - 22. Եւ է չար՝ որ խա՛ռն է ընդ *բարւոյ*. և ի յէութեան գոյանայ. որպէս հիւանդութիւնն ի յողջութեան. ապականությիւնն ի մարմնի: - 22. Այսպէս և *բարին* է՛ որ պարզ և միեղէն *բարի* է. որպէս աստուած. զի անփոփոխ և միշտ *բարի* է. զի էութեամբ *բարի* է. և *բարին* էութիւն է աստուծոյ: - 22. Եւ է՛ որ խառն *բարի* է. որպէս առ մեզ պատահեալ *բարիս* որ ունակութիւն է. զի ա՛յլ է էութիւն մեր, և ա՛յլ է *բարի* յէութեան մերում: - 22-23. Այս *բարիս* ի հրեշտակս անփոփոխ և սերտ է. իսկ ի մեզ փոփոխական է: - 23. Զի փոփոխական է հոգիս մեր. երբեմն *բարի* և երբեմն չար: - 23. Այլ այս զանազանի. զի *բարին* բնական ունակութիւն է մեզ. զի ի *բարին* եմք գոյացեալ: - 23. Իսկ չարն է եկամուտ և պակասութիւն *բարւոյն*: - 23. Եւ *բարին* մի է և ի միո՛յ պատճառ է որէ աստուած. թէպէտ առ մեզ ի բազումս բազմանայ: - 23. Այսպէս հոգին էութիւն է և ընդունակ *բարւոյ* և չարի. այսինքն առաքինութեան և չարութեան: - 23. Նոյնպէս և *բարին* միշտ *բարի* է. թէպէտ ի հոգւոյն պակասեցաւ, դեռևս ի յէութեան է. զի է է *բարին*. և էութիւն ո՛չ կորնչի: - 23. Ապա ուրեմն յա՛յտ է զի *բարին* ըստ ենթակային և ըստ ինքեան՝ էութիւն է: - 23. Յաւասար են ի յոչինչ գոլն չարն որ ներհականայ *բարւոյ*, և ոչինչն որ ներհականայ էի: - 23. Իսկ չարն ո՛չ փափագի *բարի* լինիլ: - 23. Իսկ չարն *բարւոյ* ո՛չ հաղորդի և ո՛չ լինի *բարի*: - 23. Երրորդ՝ ոչ էն ըստ ինքեան ո՛չ *բարի* է և ո՛չ չար. և չարն ըստ ինքեան չա՛ր է. թէպէտ և *բարի*: - 23. Յինգերորդ՝ ոչ ինչն ի յենթակայս եղեալ՝ ո՛չ ներհականայ էի. թէպէտ ըստ ինքեան ներհա՛կ է. և չարն ի յենթակայն երևեալ՝ ներհականայ և կորուսանէ՛ *զբարին*. թէպէտ ըստ ինքեան ոչ ինչ է և ոչ գոյ: - 23. Եւ զայլ ամենայն բնախօսութիւն յաղագս *բարւոյ* և չարի՝ գտցես ի Դիոնէսիոսի ի չորս գլուխն յաստուածային անուանսն. և ի ստորոգութիւնսն ի հակակայից ճառն. և ի սահմանս դաւթի ի վերջն որ է «ամենայն չար տանջելի»: - 24. Ութևժերորդ՝ Չիք ոք *բարի*. բայց մի աստուած: - 29. Երրորդ՝ մոլորեցուցիչ կոչի. և հերձուածօղք մոլորեն զուղիղ հաւատս քրիստոնէին. և *զբարի* գործս նոցա: - 35. Ութերորդ՝ զնա օ՛ձ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն զբազումս. և արտաքսեն ի դրախտէ եկեղեցւոյ. և թոյնք իժից ի ներքոյ շրթանց ունելով և խայթոց՝ զի առորս մերձենան, ի յսկիզբն բանից կամ ի վերջն՝ մահացուցանեն զհոգիս. երկճղի ունելով լեզու նենգաւոր՝ չար և *բարի*, ծածուկ և յայտնի: - 35. Զի միշտ է է, ո՛չ ոչ էանայ. և միշտ *բարի* և լոյս է, ո՛չ չարանայ և խաւարի: - 44. Իմա՛, որպէս բրուտն կարէ՛ գործել անօթ ինչ, այլ ո՛չ երկինք, և երբեմն ի *բարւոջ* և երբեմն ի չար և ապականեալ. այլ ըստ այսմ ո՛չ լինի աստուած: - 44. Վասն այն տէրն ընկրկեաց զօրինականն թէ միայն ծայրագոյն *բարի* է՛ աստուած. և ի մարդկանէ ո՛չ ոք ունի զայս: - 47. Եւ դու ընդ է՛ր ասես լինել ինձ ըստ մարդկան երկրորդաբար *բարի*. զի աստուածութեամբս եմ ընդ հօր ծայրագոյն *բարի*: - 47. Եկն առ յիսուս ասելով՝ «վարդապետ *բարի*». զի լսիցէ՝ աշակերտ *բարի*: - 47. *Բարի*՛ է հայր. «զի չիք ոք *բարի*՝ բայց մի աստուած»: - 57. *Բարի*՛ է և որդի. որպէս ասէ՝ «ո՜ որ միայն բարերա՛րդ ես աստուած իմ յիսուս»: - 57. *Բարի*՛ է և հոգին սուրբ. ըստ այնմ «հոգի քո *բարի* առաջնորդեսցէ ինձ»: - 57. Իսկ այլք՝ հոգի զհրեշտակական հոգին ասեն. որ տըւեալ է առ ի պահպանութիւն մեզ. զի նա ուղղէ զմեզ ի *բարիս*, և զաղօթս մեր մատուցանէ աստուծոյ: - 59. Եւ դարձեալ՝ հոգին որ ի հօրէ ելանէ և կայանայ յորդի. և ի ձեռն որդւոյ իբր զհայրական *բարի* ամենայն գոյիցս բաշխի երկնաւորաց և երկրաւորաց. նախ քան զմարմնանալն՝ և ի մարդեղութեանն: - 61. Եւ ըստ այսմ լինին մանեայ **բ** աստուածքն. մինն *բարւոյ* և մինն չարի արարիչ. որ է անաստուածութիւն: - 62. Եւ կամ յորժամ որպէս զիւր *բարի* շնորհէր իւրայնոցն՝ մարմնապէս փչեալ ի նոսա ասելով՝ «առէք հոգի սուրբ»: – 69. Եւ մեք զնոյն դաւանութիւնն պինդ կալցուք անշարժ յուսով ի կեանս և ի մահ և յետ մահու. և նորին խոստացեալ *բարեացն* արժանի լիցուք ի քրիստոս յիսուս ի տէր մեր: - 101. Սէր և Սիրելի և *Բարի*

է Աստուած: - 102. Եւ պատճառականքն. որպէս *բարի*. իմաստուն. և այլն: - 106. Եօթներորդ՝ ոչէ ասի չարն. զի պակասութիւն է *բարւոյ* և արտաքոյ բնութեան: - 111. Երկրորդ՝ զի նախ՝ գո՛յ և է է. և ապա *բարի* և իմաստուն և այլն: - 111. Զի անդրանիկ է էն անուն՝ քան զամենայն *բարի* և ազնիւ և այլն. վասն որոյ ասաց մովսէսի՝ «ես եմ որ էնն»: – 111. Երրորդ՝ զի նախ՝ էի և գոյացութեան հաղորդեաց զեղեալքս, և ապա կենաց և իմաստութեան և այլն. զի նախ է գոլն մեր, և ապա *բարի* գոլն: - 111. Այլ է՛ յարացոյցն ի յաստուած. և ի տեսութիւն նորա. և ի *բարի* կամս: - 112. Զի առ աստուած՝ ո՛չէ սոսկ տեսութիւն արտաքոյ. այլ յինքն տեսանելով զյարացոյցն. և զմեզ ի յարացոյցն մեր իբր լինիլ մեզ նախ ի յաստուած, և ապա ի յէութեան մերում. և ո՛չ որպէս փոփոխումն ինչ ի *բարի* կամացն: - 112. Երրորդ՝ ի պատրանաց թշնամւոյն մոռանայ *զբարի* բանս: - 120. Որպէս գործնականն որ է բարոյականն՝ սկսեալ է ի *բարւոյն* աստուծոյ. և կատարի առ *բարին*: - 121. Որպէս է՛ *բարի*. գեղեցիկ. լոյս. կեանք. իմաստութիւն. և այլն: - 122. Եւ քրիստոսիւ լուսաւորեալք որոշեցաք *զբարի* և զչար: - 126. Նոյնպէս հրեշտակաց և դիւաց՝ չարաց ի մարդկանէ և *բարեաց* ընտրութեան հոգի ընկալաք: - 126. Եւ է՛ ինքն *բարի* և գեղեցիկ, կոչի սիրելի: - 128. Այսպէս *բարին* է սկիզբն մեր. և մէջ. և վախճան: - 128. Զի ի *բարւոյն* եմք յառաջ եկեալ. և ի *բարին* հաստատեալ. և ի *բարին* կատարիմք: - 128. Ապա ուրեմն *բարին* սկիզբն է մեր և վախճան: - 128. *Բարի՞ն* է առաջին յաստուած, թէ սէրն: - 128. Սակայն ըստ մեր իմացմանս հասարակ է *բարին* քան զսէրն. զի ասեմք՝ սէրն *բարի* է. ազնիւն *բարի* է. և այլն. որպէս ասեմք՝ մարդն կենդանի է. ձին կենդանի է. և այլն: - 128-129. Այլ ի ստեղծումն էիցս՝ սէրն առաջին է քան *զբարին*. զի ի սիրո՛յ շարժեցաւ յառաջ բարերարել և խնամել: - 129. Վեցերորդ՝ զի թէպէտ անա՛րգ են՝ ունին *զբարի* գոլն ստեղծմամբ և նախախնամութեամբ: - 132. Իսկ հրեշտակք փոխեն զոսսա և զիմացականն վասն *բարւոյ*. զոր դևք ո՛չ կարեն փոխել: - 133. Իսկ աստուած կարէ՛ փոխել և զկամքն՝ որ է՛ ախորժակ ի չարէն առ *բարին*. զոր հրեշտակք ո՛չ կարեն փոխել. այլ միայն զարթուցանեն զախորժակն և օգնեն: - 133. Ութերորդ՝ զի ազատ և անձնիշխան կամօք ընտրեն *զբարին* և խոտեն զչարն. և դիւրասերտեալք ի *բարին*, և դժուարաշարժք ի չարն: - 137. Չորրորդ՝ զի *զբարին* սիրեցին: - 139. Եւ *զբարւոյ* ցանկութիւնս ունին: - 140. Զամենայն հրեշտակս *բարի* արար աստուած, այլ ո՛չ ծայրագոյն *բարիս*. այլ միջակս. որ է ի մէջ անփոփոխ և փոփոխական *բարւոյն*. այնպէս՝ զի թէ դառնային և սիրէին զայն՝ որ ի վեր քան զինքեանս, ելանէին յորդիսութիւն շնորհաց և փառաց. որպէս այժմ են հրեշտակք *բարիք*: - 146. Իսկ թէ դառնային ի ներքոյ ինքեանց առ փոփոխական *բարին*, անկանէին ի չար մեղացն և ի չար պատժոցն. որպէս այժմ դևք և ի կատարածի: - 146. Յոգնորն այն է՝ զի անկաւ անձնիշխան կամօք ի *բարւոյն* ի չարն, ի լուսոյն ի խաւարն, ի գիտութենէն յանգիտութիւն, յանմեղութենէն ի մեղս, յերանութենէն ի թշուառութիւն, ի սիրոյն յատելութիւն: - 146. Զի յետ անկմանն եղև խստացեալ և անզեղջ ի չարն. կորացեալ ի ճշմարտութենէն. անկեալ ի *բարւոյն*. տկարացեալ ի զօրութենէն. արտաքսեալ յաստուածային խոկմանէն: - 146. Նախ՝ զի գոյին այնպիսի հրեշտակք որք մնացին ի *բարին*: - 149. Երկրորդ՝ զի պա՛րտ էր տեսանել այլոցն զմեղս նոցա և զպատիժ և մնալ ի *բարին*: - 149. Այլ ետ նոցա անձնիշխան կամս՝ զի կամովին ընտրեսցեն *զբարին* և արդարապէս զհատուցումն ընկալցին զի մի՛ երբեք մեղանչել կարիցեն: - 149. *Բարի* ինչ ո՛չ կամին և ո՛չ ամենևին կարեն: - 149. Չորրորդ՝ զի ի դևն շրջեալ է տրտնջականն ըստ յառաջանալոյ ի *բարին*: - 151. Յիսունևէ) Զի՞նչ էր պտուղն ադամայ, և գիտութիւն *բարւոյ* և չարի: - 155. Զի առնելն է հաճոյական գործ առանց կասկածանաց. որպէս *բարի* առնել *բարեաց*, որ է՛ արդարութեանն աստուծոյ. և չար առնել չարեաց, որև այս է՛ խրատ ուղղութեան. այլ *բարի* առնել չարեաց, այս ողորմութեան է և գթութեան. այսոքիկ առնելոյն են տեսակք: - 158. Իսկ չար առնել *բարեացն* է գործ անիրաւութեան, և ո՛չ գոյ յաստուած: - 158. Դարձեալ այսպէս մեկնեն եթէ՝ փորձութիւնն ըստ ինքեան ո՛չ է *բարի*. այլ պատահմամբ լինի *բարի*. յորժամ համբերութիւնն մեծ դնի և յաղթիցէ. իսկ յորժամ համբերութիւն ոչ լիցի, ըստ ինքեան չար և վատ է փորձութիւնն. վասն այն տէրն արգելուլ հրամայէ: - 160. Դարձեալ այսպէս մեկնեն եթէ՝ փորձութիւնն ըստ ինքեան ո՛չ է բարի. այլ պատահմամբ լինի *բարի*. յորժամ համբերութիւնն մեծ դնի և յաղթիցէ. իսկ յորժամ համբերութիւն ոչ լիցի, ըստ ինքեան չար և վատ է փորձութիւնն. վասն այն տէրն արգելուլ հրամայէ: - 160. Եւ բաժանմամբ ցուցանի. զի դ ազգ է *բարին*: - 160. Նախ է՛ *բարի*՝ որ ինքն վասն իւր խնդրի. որպէս առողջութիւն: - 160. Եւ այսպէս խնդրի արքայութիւնն. զի ըստ ինքեա՛ն *բարի* է: - 160. Երկրորդ՝ որ ինքն ո՛չ է *բարի*, այլ պատճառէ՛ զա՛յլ *բարի*. որպէս դառն դեղն զառողջութիւնն: - 160. Երրորդ՝ որ է՛ ինքն *բարի*, և պատճառէ՛ զայլ բարի. զորօրինակ՝ որպէս քաղցր դեղն պատճառէ՛ զառողջութիւն: - 160. Երրորդ՝ որ է՛ ինքն բարի, և պատճառէ՛ զայլ *բարի*. զորօրինակ՝ որպէս քաղցր դեղն պատճառէ՛ զառողջութիւն: - 160. Եւ այսպէս են մարմնաւոր *բարիք*. որպէս ոսկի և այլ ինչ. որ ի ձեռն

ողորմութեան պատճառէ՛ զհանդերձեալ *բարիսն*: - 160. Չորրորդ՝ որ ինքն ո՛չ է *բարի*, և ո՛չ պատճառէ զբարի. բայց թէ պատահմամբ: - 160. Չորրորդ՝ որ ինքն ո՛չ է բարի, և ո՛չ պատճառէ *զբարի*. բայց թէ պատահմամբ: - 160. Եւ ըստ ա՛յսմ կերպի է փորձութիւնն *բարի*. զի բնութեամբ չար է. և պատճառէ՛ զչար մեղքն. բայց պատահեցաւ ոմանց զի յաղթեցին փորձութեանց և ընտրիք երևեցան: - 160. Ապա թէ զկամքն երետ՝ ուրախանայ և կենայ ի մօտն մինչև զմեղքն գործել տայ և հանէ ի *բարւոյն*: - 161. Իսկ աստուած փորձէ զմարդ՝ զի գիտէ զնա՛ *բարի* և հաւատարիմ. այլ ծածկեա՛լ է յայլոց. փորձէ՞ զի յայտնի լիցի ամենայն աշխարհի առաքինութիւն նորա: - 161. Եւ այսու զանազանի փորձութիւնն աստուծոյ և սատանայի, Նախ՝ որպէս ասացաք՝ աստուած փորձէ՛ զի յայտնեսցէ զբարութիւնն. և սատանայ փորձէ զի հանցէ ի *բարւոյն*: - 161. Նմանապէս և աստուած ո՛չ կարէ զչար, զի առաւել կարէ *զբարին*: - 163. Նոյնպէս վասն առաւել *բարի* կամացն ո՛չ կամի և ո՛չ կարէ առնել զաշխարհս ո՛չ է: - 163. Իսկ ներհական հակակայքն և այլքն կարեն փոփոխիլ ի միմեանս. որպէս չարն և *բարին*. ջերմն և ցուրտն: - 165. Իսկ Որակ կոչի, որպէս *բարի*, լոյս, քաղցր, և գեղեցիկ: - 171. Չորրորդ՝ զի ծնանիմք ի *բարի* կամացն աստուծոյ յառաջ գիտութեամբ նորին. և ապա գոյանամք արդեամբ և գոյացութեամբ ըստ իւրաքանչիւր տեսակաց: - 179. Հինգերորդ՝ *զբարիս* և զչարս որոշէ՛: - 185. Իսկ ամառն նորին նման. զի հունձք է և կատարած գործոց *բարեաց*. և ո՛չ ժամանակ սերմանելոյ կամ բուսանելոյ: - 198. Վասն այն պա՛րտ է զժամանակ կենցաղոյս ի *բարին* ծախել. զի զառաջին ժամանակն ո՛չ ոք կարէ վերստին ստանալ: - 199. Ասէ՝ երկի՛ր և կա՛ց ի կասկածանս. զի երկիւղ կայ անկանելոյ ի *բարւոյն*: - 210. Նշանակեն զնոսա՝ որք ունին զպտուղս *բարի* գործոց. և զծաղիկն հաւատոյ. և զհոտ գիտութեան՝ ամենայն մարդկան անոյշ: - 212. Եւ են ոմանք որ զթև հաւատոյ և զթեփ *բարեաց* գործոց ունին. և պիտանիք են աստուծոյ: - 215. Երրորդ՝ ստեղծան նոքա՝ զի ի նոցա՛ ջանից ընթերցմանց և *բարեաց* գործոց օրինակ առցուք. որպէս են մրջմունք և սարդք, և այլք այսպիսիք: - 217. Տասներորդ՝ անունն յարմար նշանակութիւն է կենդանեաց ըստ *բարուցն* և զանազան կերպիցն եղեալ. զի ամենայն անուն՝ յիրէն և ի գործոյն և ի ձայնէն դնի: - 220. Եւ ամենայն ծառք զզուտ *բարիս* հոգէկանս: - 222. Եւ ծառ գիտութեանն զպատրւակեալ *բարիս* մարմնական: - 222. Զի՞նչ էր պտուղն գիտութեան *բարւոյ* և չարի: - 223. Նոյնպէս և նա գիտութեան էր պատճառ *բարւոյ* և չարի որպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին: - 223. Դարձեալ ասեն ոմանք, նախ քան զուտելն ի պտղոյն՝ գիտէր ադամ *զբարին* փորձիւ, և զչարն գիտութեամբ. իսկ յորժամ եկեր՝ գիտաց զչարն փորձիւ, և *զբարին* գիտութեամբ. այն է գիտութիւն *բարւոյ* և չարի: - 223. Եւ այլք ասեն թէ՝ պատճա՛ռ էր *բարւոյ* և չարի՝ ո՛չ ըստ ինքեան, այլ օրինօքն: - 223. Զի թէ հնազանդեալ էր օրինացն, լինէր *բարւոյ* պատճառ. և ո՛չ հնազանդեալ՝ եղև չարի պատճառ: - 223. Որ է՛ ընտրողութիւն *բարւոյ* և չարի՝ կատարելոցն իմաստիւք: - 224. Իսկ սուրբն նիւսացին ասէ թէ՝ կրկին է *բարին:* - 224. Մինն պարզ և զուտ *բարին* ներքոյ և արտաքոյ. որպէս առաքինութիւն. և հոգևոր գործն. յայսպիսիքս հրամայէ՛ մեզ մերձենալ: - 224. Եւ է՛ միւս *բարի* խառնակն և պատրուակեալն. որպէս է աշխարհական *բարին*. զի գունով և երևելեաւ *բարի* է, այլ ի ներքոյ ծածկեալ չա՛ր է. յայսմանէ հրաժարէ՛ զմեզ ոչ մերձենալ: - 224. Զի այնպիսի *բարին* մահու լինի առիթ: - 224. Երրորդ՝ զի զդէմս ունիցիմք միշտ ի յերկինս. և զթիկունս յերկիր. և հանապազ ի *բարին* յառաջեմք ոտիւք և ձեռօք և ո՛չ դառնամք ի չարն: - 234. Եւ թէ ոք ասիցէ՝ աստուած զամենայն ինչ *բարի*՛ է ստեղծեալ, և սոքա չար երևին: - 237. Ասեմք թէ՝ սոքա ի մասնաւոր հոգւոյն *բարի* են բնաւորեալ նախանձ ցանկութիւն և այլն. և վասն *բարւո՛յ* են եղեալ. այլ մարդն կամօք իւրովք փոխէ՛ զբնական *բարին* ի չարն: - 237. Եօթներորդ՝ զի ո՛չ կարէին ընտրել և խոտել զչարն և *զբարին*, և զսուրբն և զանսուրբն ի մարդկանէ, թէ գործ սորին է այս կամ այն. այլ աննեղութեամբ յարակցեին պղծոյն, և զխեղդ ոգւոց նորա ընդունէին: - 238. Իսկ հերն կիսասև և ոչ յոյժ բարակ՝ զբարեբարոյն և *զբարի* կազմուածն ցուցանէ: - 248. Եւ առ հասարակ ասեմ զայս դնել ի մտի. զի չափաւորութիւն անդամոցն ըստ ձևոյն և ըստ գունոյն և ըստ քանակութեան և ըստ կազուածոյն և ըստ շարժմանն, նշանակէ *զբարի* մտացն ընդաբոյս յարմարութիւնն: - 248. Դարձեալ՝ ասէ պղատոն, եթէ մարդն որ ունի զնմանութիւն անասնոց ինչ՝ հետևի և *բարուց* նոցին: - 248. Եւ կատարումն *զբարին*: - 248. Ճշմարտութիւն առ *բարին*: - 248. Իսկ բանն սկիզբն առեալ ի խոկմանէն, զտեղի առնու ի *բարին*: - 248. Եւ երկուցն կատարումն է՛ ի յաստուած. քանզի նա՛ է ճշմարտութիւնն. և նա՛ է *բարին*: - 248. Եւ է՛ ճշմարիտն *բարի*, և *բարին* ճշմարիտ, անդրադարձութեամբ: - 248. *Բարին* ճանապարհ. և Շաւիղ նորա՝ զգուշութիւնն: - 250. Չորրորդ՝ բնութեամբ *բարին* մերձաւո՛ր է: - 251. Չորրորդ՝ մոռացեալ է *զբարին*. որպէս ասէ առակն (որ թողեալ է զուսումն մանկութեան և մոռացեալ զուխտն աստուածեղէն:) – 251. Կամ ի չար ուսումնակցաց և *բարեաց*: - 251. Իսկ դիւականն ընդդէմ այսմ՝ վասն մոլորութեան զանազան երևմունս ցուցանէ

**ԲԱՐՁՐԱՆԱՄ +** Զի որ խոնարհեցաւ բանն ի մարմին՝ նո՛յն *բարձրացաւ* մարմնով. և որ էջն ի ստորինս երկիր, նո՛յն է որ ելն ի վերոյ քան զամենայն երկինս. և որ ունայնացաւ՝ նո՛յն ելից զամենայն: - 94. Վասն որոյ միեղէն տեսանեն և պարզ. որպէս զծագումն լուսոյ առանց ճանապարհորդութեան լուսաւորեալ. և միշտ *բարձրանան* տեսութեամբ: - 119. Իսկ շնորհականն է ընդդէմ այսոցիկ. զի պարզ և միեղէն իմացմամբ *բարձրանայ* յաստուածային գիտութիւնն. և այնպէս ի զարմացման լինի տեսութեամբ նորին: - 120. Երկրորդ՝ հրեշտակք *բարձրանան* ի տեսութիւնն աստուծոյ. և մարդիկ խոնարհին և շեղին ի յիմացուածն: - 120. Երեքտասաներորդ՝ խոնարհի և *բարձրանայ*: - 186. Եւ է մոլորականքն ընդ սոսա գնալով խոնարհին և *բարձրանան*: - 189. Իսկ մոլորակքն ի գօտիս իւրեանց շարժականք են. զի *բարձրանան* և խոնարհին: - 189. Եւ երրորդ *զբարձրանալն* ի ներքին վայրէ ի բարձր տեղիս: - 289. Իսկ երեսունն, մինչ ի մեծն թէոդոս. որ եբարձ զամենայն մեհեանս կռոցն և *բարձրացաւ* սուրբ խաչն ի գլուխս գմբեթարդ սուրբ եկեղեցեաց: - 294. Բոլոր տարի մի. զի այսպէս ասէ գիրն թէ՝ **ճծ** օր *բարձրացաւ* ջուրն. և յետոյ ճծ օր ցածուցաւ. որ լինի **ժ** ամիս: - 294. Եւ բարձրացուցին զժ ամսոյ ճանապարհ ընդ ելն և ընդ էջն. որչափ *բարձրացաւ* ջուրն **ճծ** օր, և **ճծ** օր դարձեալ իջաւ: - 296-297. Եւ տէրն *եբարձ* ի յուս իւր զփայտ խաչին մինչ ի նոյն տեղի գողգոթային ուր զենանէր իսահակ: - 306. Եւ տէր ինքն *բարձրացաւ* ի խաչ և զհարեալսն ի թունիցն դիւաց բժշկէր: - 329. Դարձեալ՝ ամենայն որ ի լեառն աստիճանէ *բարձրանայ* որպէս զմովսէս և կամ այլ ինչ, պա՛րտ է սրբութեամբ պաշտել: - 331. Զայս խորհուրդ յինքն ձգեաց տէրն ասելով. «որպէս մովսէս բարձրացոյց զօձն յանապատին, նոյնպէս *բարձրանալ* պա՛րտ է որդւոյ մարդոյ»: – 386. Նա՛խ՝ որպէս *բարձրացաւ* օձն ի ձողին. նոյնպէս տէրն մեր ի խաչին: - 386. Այլ և ո՛չ հաւատացին որ ասաց, «որպէս մովսէս բարձրացոյց զօձն յանապատի, նոյնպէս *բարձրանալ* պարտ է որդւոյ մարդոյ»: - 405. Եւ ինքն առ ինքն կրկին խոնարհելով և *բարձրանալով*: - 426. Այլ և գոհացաւ ի վերջոյ ի վերայ ամենայն յաղթութեանցն. և տէր մեր ի վերայ ամենայն ներգործութեանցն. որ և ամենայն օրհնութիւնքն ի տէրն ակնարկէ. որ եղև գլուխ հեթանոսաց. յաղթեաց մահու և *բարձրացաւ* ի գերեզմանէ: - 438. Վասն է՞ր կամեցաւ ի փայտի *բարձրանալ* և մեռանիլ: - 491. Եւ ձողն յորում՝ օձն պղնձի *բարձրացաւ*: - 494. ...և մեղօք ծանրացեալ էջ ի ներքին կէտս դժոխոցն, և այլ ո՛չ կարէր *բարձրանալ*. մինչ ի վերին կիտէն բանն աստուած էջ ի ներքին կէտն. և ապա ել ադամ ի վերին կէտն երկնից: - 503. Իննժ՝ պատշա՛ճ էր ի մէջ գիշերի յառնել. զի ի նոյն ժամն սկսանի արեգակն *բարձրանալ*, և յառաւօտն ծագէ՛ առ մեզ: - 515. Ամբարտաւանութիւն է որ բաղձայ զյատուկ *բարձրանալն* իւր, և անկարգ և անսահման լինի: - 569. Զի սատանայ այլ մեղք ո՛չ գործեաց, քան թէ խորհեցաւ զյատուկ *բարձրանալն* իւր. որպէս ասէ եսայի, «ելից ի վերայ ամպոց և զաթոռն իմ եդից յաստեղս և եղէց նման բարձրելոյն»: – 569. և ի յարութեանն առնուն զփառս հատուցմանց հոգւով և մարմնով. և այնպէս փառաց ի փառս *բարձրանան* որպէս ասի յերգս: - 689. Դարձեալ, հոգիք սրբոց ա՛յժմ են ի յերկինս և առ երկինս որպէս ցուցաւ. և յայնմ աւուր փառաց ի փառս *բարձրանալ* հաւատացեալ լինի: - 759. Եւ ես յորժամ *բարձրացայց*, զամենեսեան ձգեցից առ իս: - 759. Եօթներորդ՝ վասն բարձրութեանն ի ջանուց մշակաց. զի որ քան առաւել բրի ի ներքոյ երկիրն և քարինս դնի, այն քան առաւել *բարձրանայ*: - 766

***ԲԱՐՁՐԱՑԵԱԼ +*** Իննևժերորդ՝ զի թէ առանձնապէս մարդ է, ապա հետևի բաժանեալ բնութիւն և **բ** կամք և կրկին ներգործութիւն. յայնժամ ո՛չ լինի բանն մարդ եղեալ. այլ մարդն բնակութեամբ ի փառս բանին *բարձրացեալ*: - 68. Նախ՝ զի թեթև է ամպն այն. վասն որոյ յոյժ *բարձրացեալ* է: - 206. Երկրորդ՝ զի ամենայն ուրեք հողն ընդ ջրոյն խա՛ռն է. և յա՛յտ է ի ջրհոս. և ջուրն այն որ *բարձրացեալ* է ընդ հողոյն՝ իջանէ ի խոնարհ և բղխէ աղբիւր: - 209. Նոյնպէս և թագաւորք երկրի և իշխանք՝ որք *բարձրացեալ* են փառօք և դատա՛րկ յառաքինութեանց, են որպէս հովանաւորք: - 212. իսկ թէ թափի հիւնն. այս լինի կամ յատակս ծառոցն ծորեալ և ապականեալ. և կամ ամենայն ամբարեալ և ժողովեալ և *բարձրացեալ* քան զծառս դրախտին որ է անպատշաճ: - 224. Նա՛խ՝ լերինք և բլուրք մշտնջենաւորք կոչին հրեշտակացն դասք *բարձրացեալք* յերկինս և անշարժութեամբ սերտեալք. վասն նոցա ասէ՝ «լուսատու ես դու սքանչելապէս լերանցն յաւիտենից». և նոքա ի կամս աստուծոյ անմահապէս օրհնեցան: - 319. Իսկ լեառն հողեղէն բնութեանս մերում, կամաւ հօր վկայելով ի վերայ նորա՝ և հաճութեամբ սուրբ հոգւոյն աղաւնակերպ իջմամբ, և անքակտելի միացեալ բանիւն եղև լեառն մածեալ մշտնջենաւոր և անեզր յաւիտենիւ *բարձրացեալ* օրհնութեամբ և առաւելեալ: - 320. Նոյնպէս և *բարձրացեալ* են գիտութեամբ առաւել քան զմարդիկք, և պակաս քան զաստուծոյ: - 344. Արդ եղիսիէէ նշանակէ՛ զբանն աստուած. որ փոքրկացաւ և բովանդակեցաւ ի ծոց կուսին ի մարմնի միաւորեալ. և ապա ի խաչն *բարձրացեալ* կեանս շնորհեաց մարդկան: - 446. Ի վերայ երկրի՝ ի խաչ *բարձրացեալ*: - 520. Երրորդ՝ ամբարձեալ ձեռօք վերանայր յերկինս վասն երկուց. նախ՝ զի զինքնն ընծայեսցէ հօրն. երկրորդ՝ զի զթշնամիսն հարկանիցէ զօրաւոր ձեռամբ *բարձրացեալ*: - 520. Եւ թէ «տեսի զամբարիշտն վերացեալ *բարձրացեալ*. անցի և ահա ոչ էր. խնդրեցի և ո՛չ գտաւ տեղի նորա»: – 562. Նոյն սարասիւք այժմ ի ձեռն փրկչին մերոյ յիսուսի՝ տապանակաւ խաչին և աղօթիւք սուրբ եկեղեցւոյս՝ *բարձրացեալ* պարիսպն չարութեան եօթնից զգայութեանց մեղաց որոշօղ ի մէջ մեր և աստուծոյ, կործանեսցի ի սպառ: - 627. Եւ խաչն *բարձրացեալ* զի նշան խաչին քրիստոսի յայնժամ ընդ երկնիւք ծագեսցէ և զչորս կողմ աշխարհի լցուսցէ: - 676. Եւ այն որ ի վերայ վառին նիւթեղէն զգեստէ, զի գայցէ խաչն ի վերայ լուսեղէն ամպոյ. յօդս *բարձրացեալ* և ցոլացեալ. - 676. Նստի քրիստոս ի բարձրագոյն աթոռ ի վերայ օդոյդ, և սուրբքն ընդ աջմէ. այսինքն ի վեր ի փառս ընդ նմա ի վերայ օդոյդ. հաւատոյ և գործոյ թևօ՛քն *բարձրացեալ* իբր զարծուի: - 738. Երրորդ՝ ծառ կենաց իմանին տունկք իմանալի դրախտին. այսինքն բանակք երկնաւոր զօրացն. միշտ յարազուարճ բերկրանօք *բարձրացեալ* ի փառս: - 767

**ԲԱՐՁՐԱՑՈՒՑԱՆԵՄ +** Իննևտասներորդ՝ Զի՞նչ է հաւասարն աստուծոյ, և *բարձրացոյցն*, և շնորհեացն անուն: - 30. Եւ զի՞նչ է «զնա առաւել *բարձրացոյց»*: – 93. Եւ թէ՝ «զնա առաւել *բարձրացոյց»*: – 93. Վասն որոյ ասէ՝ ընդ դէմ ասացելոցս խոնարհութեանց՝ Աստուած զնա առաւել *բարձրացոյց*: - 94. Նոյն և *բարձրացոյց*. «փառաւոր արարի ասէ»: – 94. Եւ ասես՝ վասն չարչարանացն խոնարհութեան՝ առաւել զնա *բարձրացոյց* աստուած: - 94. Ի վերուստ բախէ՛ և ի վե՛ր *բարձրացուցանէ* : - 202. Քաղելով գործելն այն է, որ **ժե** կանգուն հաւասար *բարձրացոյց*, զի մեծահասակ կենդանիքն հանգիցեն: - 293. Եւ *բարձրացուցին* **զժ** ամսոյ ճանապարհ ընդ ելն և ընդ էջն. որչափ բարձրացաւ ջուրն **ճծ** օր, և **ճծ** օր դարձեալ իջաւ: - 296-297. Ութևժ, մովսէս զօձն *բարձրացոյց* որ զօձահարսն բժշկէր: - 329. Իբր թէ զսոսա ի վե՛ր *բարձրացուցի* և ի սէր սրտի իմում ունիմ: - 348. Իսկ մովսէս հրամանաւն աստուծոյ արար պղնձի օձ. և *բարձրացոյց* ի դուռն խորանին. և որ հայէր ի նա՝ ապրէր ի թունից օձիցն: - 386. Զայս խորհուրդ յինքն ձգեաց տէրն ասելով. «որպէս մովսէս *բարձրացոյց* զօձն յանապատին, նոյնպէս բարձրանալ պա՛րտ է որդւոյ մարդոյ»: – 386. Երրորդ՝ զօրաւոր հարուածքն եգիպտոսի, որ ո՛չ ոք կարէր հասանիլ և բռնել զպատիժն. որպէս ոք հարկանէ և դարձեալ *բարձրացուցանէ* զձեռն: - 395. Այլ և ո՛չ հաւատացին որ ասաց, «որպէս մովսէս *բարձրացոյց* զօձն յանապատի, նոյնպէս բարձրանալ պարտ է որդւոյ մարդոյ»: - 405. Այլ և ո՛չ հաւատացին որ ասաց, «ես յորժամ *բարձրացայց* յերկրէ՛, զամենեսեա՛ն ձգեցից առ իս»: – 405. Այլ և ո՛չ հաւատացին որ ասաց՝ «յորժամ *բարձրացուսջիք* զորդի մարդոյ, յայնժամ գիտասջիք թէ ե՛ս եմ»...: – 405. Ըստ որում ասաց, «այժմ իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս. և ես յորժամ *բարձրացայց* ի խաչ, զամենայնսին առ իս ձգեցից»: – 503. Եւ «յորժամ *բարձրացայց*՝ զամենեսեան ձգեցից առ իս»: - 705. Այսու խորհրդով *բարձրացուցանեմք* զխաչն ի վերայ վառի. և ժամահար զկնի: - 732

**ԲԱՐՁՐԵԱԼ +** Իններորդ հարցումն հակառակորդաց՝ որ ասէ սիրաք՝ «ես ի բերանոյ *բարձրելոյն* ելի անդրանիկ ամենայն ստեղծուածոց»: - 41. Իսկ բանիւ գործոյ խօսի աստուած ընդ դիւին. նա՛և հրեշտակք ընդ սատանայի. որպէս որոտ և կայծակունք հրոյ ի վերայ նոցա. ըստ այնմ, «որոտաց տէր

յերկնից. և *բարձրեալն* ետ զձայն իւր ի կարկուտ և ի կայծակունս հուր»: – 145. Զորմէ ասէր արուսեակն, «ելից յերկինս և եղէց նման *բարձրելոյ»*: – 184. Եւ ա՛յս է սահմանն ազգաց որպէս ասէ մարգարէն, «յորժամ բաժանեաց *բարձրեալն* զազգս ամենայն, կացոյց սահմանս հեթանոսաց». այսինքն զլեզուս զանազան. «ըստ թուոյ հրեշտակացն աստուծոյ». այսինքն ըստ թուոյ հ ազգապետացն: - 297. Ըստ այնմ, «քահանայ էր ասէ աստուծոյ *բարձրելոյ»*: – 301. Զի ի խորհուրդ մկրտութեանն ի յառնուլ ջուր, հոգին սուրբ և զօրութիւն *բարձրելոյն* և ողջոյն հօրն ի ծեռն հրեշտակին որ հերքէր զմեղս ըստ մկրտութեան: - 462. Նա՛խ՝ զի կազմեսցի զօրութեամբ *բարձրելոյն* ի հոգւոյն սրբոյ և ո՛չ նպաստութեամբ մարդոյ: - 470. Մինչև ցայն՝ «*բարձրեալ* ես դու միայն տէր մեր յիսուս քրիստոս»: - 635. Այլ և լինի հայհոյիչ. զի խօսեսցի բան ընդ դէմ *բարձրելոյն*: - 707

**ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ +** Այլ զի խոնարհեցաւ ի *բարձրութենէ* փառացն և ընդ նուաստ բնութեան մերում միաւորեցաւ. ա՛յս է որ առաքեալ ասի: - 40. Իսկ թէ մարդ աստուածացեալ, ստէ՛ ուրեմն առաքեալն՝ ի լրութենէն ունայնութիւն ասացեալ. զի այս ընդդէմ նորին ի նըւաստութենէ ի *բարձրութիւնս* ելանէ: - 68. Իսկ առաւել *բարձրութիւնն*. զի որպէս անհամեմա՛տ է խոնարհութիւն՝ աստուծոյ մարդանալ և չարչարիլ. և անզուգական *բարձրութիւն* է մարդոյս բնութեան ընդ աջմէ աստուծոյ նստիլ և հաւասարիլ: - 94. Պօղոս առաքեալն ասէ, «Զի՞նչ է լայնութիւն՝ երկայնութիւն՝ խորութիւն՝ և *բարձրութիւն* աստուծոյ»: – 129. Լայնութիւն՝ իմաստութիւնն է. երկայնութիւն՝ զօրութիւնն. խորութիւն՝ անյայտութիւնն. *բարձրութիւն* անհասութիւնն: - 129. *Բարձրութիւն* իմաստութիւնն է. որ գերազա՛նց է քան զամենայն միտս. և ամենայն ինչ մերկապարանո՛ց կայ առաջի նորա: - 129. Եւ բարձրութիւն որ ի յերկինս էհան: - 129. Անպ՝ *զբարձրութիւնն* նշանակէ ի վերայ այլոց. և Դարձեալ՝ անպ զմարգարէսն. իբր հրամանատո՛ւ լինիլ մարգարէիցն: - 148. Յանոյ թուեցաւ նոցա *բարձրութիւն* նորա. խորհելով՝ զի թէ նա աստուծոյ յաղթեալ էր, նոքա ևս այլոցն իշխէին կարողութեամբ: - 149. «Աստեղս» զհրեշտակս կոչէ վասն *բարձրութեան* և պայծառ լուսոյն որպէս հրեշտակք ի յերկինս: - 152. Նախ կոչի երկինք ամենասուրբ Երրորդութիւնն. զի անհաս *բարձրութեամբ* գերազանցեալ է յամենայն եղելոց: - 183. Յինգերորդ՝ երկին կոչի ամենասուրբ Երրորդութիւնն վասն լուսաւորութեան և անհաս *բարձրութեանն* յամենայն եղելոց որպէս ասացաւ: - 184. Իսկ աստեղագէտք զհասարակ օրն. յորում արեգակն ի *բարձրութիւնս* իւր հասանէ: - 194. Եւ զի արեգակն ի *բարձրութիւն* իւր է: - 196. Եւ զի արևն է ի *բարձրութիւն* իւր: - 197. Երկրորդ՝ զի ունի զերեք յատկութիւնս երկնից. որ է՛ *բարձրութիւն*. լուսաւորութիւն. և անմահութիւն: - 221. Իսկ այլք ասեն թէ՝ վասն առաւել *բարձրութեանն* լոյս արեգականն ո՛չ երբէք հեռանայ ի նմանէ. թէպէտ ի ներքոյ երկրի անցանէ. որպէս լուսինն թէպէտ ի վերին կամարն լինի, զլոյսն առնու յարևէն որ ի ներքին կամարն: - 222. Եւ **լ** կանգուն *բարձրութիւնն*, զի բարձր հասա՛կ է մարդոյն. և պապ լինի երեսնամենի: - 293. Զոր ոմանք **լ** ստադիոն ասեն *զբարձրութիւնն* և զլայնութիւնն շուրջանակի **խղռ** քայլք. այսինքն **խղ** մղոն ծգեալ ասի: - 297. և *Բարձրութիւնն* աստուածային իշխանութեանն: - 493. Երրորդ՝ այնու ցուցանի և պարգևի մեզ *Բարձրութիւն* յուսոյ: - 493. Նոճն *զբարձրութիւն* խոկմանն. և Զիթենին զկակղութիւն ողորմութեանն: - 495. Եւ զայս փոխեն ոմանք այսպէս. զսէրն առ բարութիւնն. զյոյսն ի *բարձրութիւնն*. և զհաւատն առ ճշմարտութիւնն: - 578. Երկրորդ՝ աթոռ թագաւորական ի նշանակ *բարձրութեան*: - 736. Եւ եսայի ետես զտէր նստեալ յաթոռ *բարձրութեան*: - 736. Երկրորդ ի տեղւոյն *բարձրութենէ*: - 762. Երկրորդ՝ ի տեղւոյն *բարձրութեան* եռակի ուրախութիւն ընտրելոցն հանդիպեսցի: - 763. Եօթներորդ՝ վասն *բարձրութեանն* ի ջանուց մշակաց. զի որ քան առաւել բրի ի ներքոյ երկիրն և քարինս դնի, այնքան առաւել բարձրանայ: - 766

**ԲԱՐՈՅԱԿԱՆ +** Դարձեալ՝ թէ ի հարկէ է՝ ապա բարձեա՛լ են ամենայն սկզբունք *բարոյական* առաքինութեանց. այսինքն խոհեմութեան. արիութեան. ողջախոհութեան. և արդարութեան. զի սոքա ըստացեալ լինին առ ոմանս՝ և ո՛չ ի հարկէ: - 11. Որպէս գործնականն որ է *բարոյականն* սկսեալ է ի բարւոյն աստուծոյ. և կատարի առ բարին: - 121. Կրկին է այսմ պատճառ. այսինքն բնական և *բարոյական*: - 182. Եւ *բարոյականն* է այս: - 182. Եւ այսմ կրկին է պատճառ. բնական և *բարոյական*: - 234. Իսկ *բարոյականն*, Նա՛խ՝ զի յերեսն փչեաց զշունչ կենդանի. վասն որոյ յերեսն ունի զգայարանս մարմնոյ: - 234. Այսմ գոյ բնական և *բարոյական* պատճառ: - 243. Իսկ *բարոյական* պատճառ: - 243. Արդ է՛ այսմ կրկին պատճառ. նախ բնական, և երկրորդ *բարոյական*: - 258. Իսկ *բարոյականն* այս ինչ է. զի զպատկերն արարչական և զառաջին կեանս դրախտին կորուսաք, և զանասնեղէն պատկերն և զերկրորդ և զախտաւոր կեանս ընտրեցաք. յիրաւի շրջեցաւ ի մեզ և լինելութիւն հոգւոյն: - 258.

Երկրորդ՝ *բարոյական*. զի մին կնոջ ի բազում արանց ո՛չ երևի հարազատ զաւակն. իսկ մի այր ի բազում կանանց կարէ՛ ծնանիլ հարազատ մանկունս և սիրել զնոսա: - 401. Եւ բաց յայսցանէ գ. այլ մասնական կամ տեսական ասա. այսինքն *բարոյական*. բանական. վարդապետական: - 528. *Բարոյականն* նոյի, որ ի բարուց վարդապետեալ բնակէր ի յանապատ և պահէր զկուսութիւն եծ ամ: - 528. Եւ գիտելի է, զի եռակի՛ է սէրն. բնական. *բարոյական*. և շնորհական: - 575. *Բարոյականն* առ ընկերն. և Շնորհականն առ աստուած: - 575. Դարձեալ՝ խոհեմութիւն է ուղղել զառաքինութիւնս ըստ *բարոյական* իմաստասիրութեանն: - 580. Որ է՛ *բարոյականն* տնտեսականն և քաղաքականն: - 580. Դարձեալ կոչին և *բարոյական* և տնտեսական և քաղաքական առաքինութիւնք. որպէս ասացաւ ի վերոյ ի ճառս խոհեմութեան: - 582. Ասի այսմ բազում պատճառ. բնական և *բարոյական*. և նախ բնական: - 723. Չորրորդ, հաւատն է՛ աստուածային առաքինութիւն. իսկ դևք զի են խստացեալ ի չար՝ ո՛չ ունին զղջումն որ է *բարոյական*. ապա և ոչ հաւատ որ է վերնագոյն և բարի կամաց խոկումն առ աստուած: - 784

**ԲԱՐՈՅԱԿԱՆԱՊԷՍ +** Եւ նախ վասն առաջնոյն ցուցցուք բնականապէս և *բարոյականապէս*: - 162

**ԲԱՐՈՅՔ +** Է և այլ ինն աննմանութիւն հոգւոյ ըստ իմացմանն. առաւել և նուազ. ուշիմ և ապուշ. չկամ և կամեցող. հեզ և յանդուգն. ցանկացող և ողջախոհ. ըստ բնական *բարոյիցն* որակացեալ. նման և աննման գոլով իրերաց: - 237

**ԲԱՐՈՒ +** Չորրորդ՝ զի մի իցէ նեղասիրտ և տառապեալ *բարուք* տեսանելով զինքն ի չքաւորութեան ստեղծեալ. այլ տեսցէ զամենայն կատարեալ. զի արծակ և առատ *բարուք* սնանիցի և վայելեսցէ: - 230

**ԲԱՐՈՒԹԻՒՆ +** Յինգերորդ՝ է՛ ո՛չ խնդրել զօգնութիւնն աստուծոյ ի հաւատալն. զի հաւատն ո՛չ է բնական. զի ըստ այսմ միապէս լինէր ամենեցուն. այլ ի *բարութենէն* աստուծոյ ծրի պարգևքէ: - 32. Ասեմք եթէ՝ օրինականն որպէս զմարդո՛յ *բարութիւն* կարծէր ունել քրիստոսի՝ այլ ո՛չ գերագոյն. զի և մարդիկք բարի անուանին. որպէս թէ (բարի առնէ տէր բարեաց.) և թէ՝ (մարդ բարի ի բարի գանձուց սրտի իւրոյ բղխէ զբարի:) - 47. Չորրորդ՝ կարողութիւնն հօր. իմաստութիւնն որդւոյ. *բարութիւնն* հոգւոյն: - 105. Եւ դարձեալ՝ զի կարողութիւնն նախ է քան զիմաստութիւնն. և իմաստութիւնն նա՛խ է քան *զբարութիւնն*: - 105. Նմանապէս և հասարակն թէպէտ բազում է, այլ երկոտասան գլխով նշանակի. նախ Բնութիւն. որ նոյն է էութիւն. ապա *Բարութիւն*. Կամք. Անմահութիւն. Իմաստութիւն. Լուսաւորութիւն. Գեղեցկութիւն. Անփոփոխութիւն. Ցնծութիւն. Փառք. Իշխանութիւն. և Արարչութիւն: - 105. Եւ աստ երևումն և խրատ ուղղութեան. պատիժ կամ պարգևք *բարութեան*: - 133. Նախ՝ զի սերօբէն խոկայ *զբարութիւնն* աստուծոյ. և քերօբէն զճշմարտութիւնն. և աթոռք զուղղութիւնն: - 135. Ո՛չ մի ժամանակս կատարեալ. քանզի «ի ճշմարտութեան ո՛չ եկաց» ասէ տէրն. այլ վաղվաղակի իբրև ստեղծաւ՝ անկաւ և ո՛չ յամեաց. և ո՛չ ի յաւիտենական քաղցրութենէն ճաշակեաց. վասն որոյ ո՛չ երանեցաւ և ո՛չ մնաց ի *բարութեան*: - 147. Քսաներորդ) Վասն լուսոյ և *բարութեան* նորին: - 154. Իսկ ի նոյն ինքն՝ առաջին է նախախնամութիւնն առ աստուած, և ապա՛ ստեղծումն. զի վասն նախախնամական *բարութեանն* կամեցաւ ստեղծանել զեղեալքս. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս ի դ գլուխն որ յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց: - 157-158. Բայց թէ թոյլ տըւութեամբ՝ որ մեզ երևի չար. և է՛ ծածուկ *բարութիւն* ի նմա: - 158. Եւ այսու զանազանի փորձութիւնն աստուծոյ և սատանայի, Նախ՝ որպէս ասացաք՝ աստուած փորձէ՛ զի յայտնեսցէ *զբարութիւնն*. և սատանայ փորձէ զի հանցէ ի բարւոյն: - 161. Դարձեալ՝ իմաստութեամբն տիրեմք ծովու և ցամաքի. և բազում *բարութիւն* հոգւոյ և մարմնոյ ի նմանէ ծնանի: - 178. *Բարութիւնն* աստուծոյ. զի իցեն՝ որոց *զբարութիւն* իւր հաղորդէ՛: - 179. Չորրորդ՝ հոգևոր *բարութիւնքն* և վարծք սրբոցն կոչին երկինք...: – 183. Զի՞նչ է *բարութիւն* լուսոյն որ ասէ՝ «ետես աստուած զլոյսն զի բարի է»: – 185. Բազում ինչ *բարութիւն* և յատկութիւն է լուսնի: - 185. Ութերորդ՝ ամպն առեալ ի ծովէն ծածկաբար, և ապա ցօղէ՛ յերկիր յայտնապէս. և լցուցանէ զնա ամենայն *բարութեամբ*: - 206. Առաջին՝ որպէս յերկինս նախ տեսանին աստեղք, և ապա *բարութիւնք* երկնից. այսպէս և ի բոյսս: - 213. Իններորդ՝ ա՛ռն են բերան և լեզուն. ուստի ներքին կիրք հոգւոյն և ամենայն *բարութիւնք* յառաջեն ի մեզ: - 234. Իսկ անբանք՝ Երևակայութիւն. Զգայութիւն. Յօժարութիւն. *Բարութիւն*. Ցանկութիւն: - 248. Եւ նման աստուծոյ, զի սիրեմք *զբարութիւն* որպէս ասացաւ ի վերոյ: - 273. Դարձեալ՝ խառնակիլ լեզուին ա՛յն է որ ընդ պատուհասն *զբարութիւնն* խառնեաց. զի թէպէտ բաժանումն լեզուաց պատուհաս երևի, այլ պիտանի՛ է: - 297. Եւ յայսմանէ երևի բազում *բարութիւն*: - 298. Եւ ծիթենիքն՝ կրկին *բարութիւնք* խաչին. որ զարքայութիւնն եբաց և զդժոխս աւերեաց: - 347. Այսինքն զամենայն յաջողուածս հոգևոր և մարմնաւոր,

և զմասն անմահութեան կենաց յուսոյն, ո՛չ վասն մեր արժանաւորութեան համարել. այլ *բարութեան* և ողորմութեանն աստուծոյ: - 360. Երկոտասան լրտեսաց տասունքն չա՛ր համբաւէին. և երկուքն *զբարութիւն* երկրին: - 380. Երրորդ՝ հեթանոսաց ազգ. որ նախ քան զմկրտիլն բնական *բարութեամբ* և երկիւղիւ գան յաստուածապաշտութիւն և մկրտին: - 390-391. Երկրորդ՝ վասն մեծ *բարութեանցն* ի հեռաստանէ էարկ հիմն մարդեղութեան իւրոյ ի զաւակէ՛ նոցա լինիլ: - 398. Այլ և ի վերայ այսր ամենայնի անասելի *բարութիւն*. զարիւնն իւր ետ ի փրկութիւն մեզ. ուստի ի հնոյն արգելեաց զարիւն զենմանցն. մեզ զիւրն արիւն ետ ի ճաշակումն: - 398. Երկրորդ՝ զներքինս օրհնեմք, և աստուծոյ *բարութեանցն* կցորդեմք. ողորմութեան, պարգևաց, կամ այլ ինչ շնորհաց. և այսու եղանակաւ օրհնեմք զքահանայս. զժողովուրդս. զմեռեալս և զկենդանիս: - 406. Այլ և ցուցանի թէ զայլ ամենայն *բարութիւնս* ո՛չ խնայէ մեզ զոր ինչ և խնդրեմք ի նմանէ: - 468. Լայնութիւնն՝ աստուածային *բարութեանն*: - 493. Եւ դարձեալ ի *բարութիւն* և ի հանգիստ ելեալ ի ծախողակի՛ կենցաղոյս: - 521. Իսկ ազգիս Հայոց ի յաստուծոյ առանձնական *բարութիւն* պարգևեալ այսորիկ: - 555. Այսպէս և հանդիպեալ հպարտութեանն՝ ելանեն ամենայն *բարութիւնք* մեր: - 562. Դարձեալ՝ հաւատովն հաւատամք՝ որ միայն իւր *բարութեամբն* զմեզ ստեղծեաց և վերստին փրկեաց և ո՛չ ի հարկէ: - 571. Յոյսն ի *բարութիւնն*. ըստ այնմ «ակն կալցուք յուսոյն և *բարութեանն* աստուծոյ»: – 578. Եւ զայս փոխեն ոմանք այսպէս. զսէրն առ *բարութիւնն*. զյոյսն ի բարձրութիւնն. և զհաւատն առ ճշմարտութիւնն: - 578. Իմաստութիւն է որով ճանաչեմք *զբարութիւնն* աստուծոյ. որ տուեալ լինի ընդ դէմ յիմարութեան: - 582. Վասն երրորդին՝ վկայե՛մք և կցորդիմք *բարութեան* նորա և երանութեան: - 624. ...զի հաղորդիցուք *բարութեան* նորա: - 624. Իսկ և եօթներորդն խոստովան լինիլ *բարութեան* և արդարութեան տն. և մերձիլ խնդրուածովք. և օրհնել զաստուած նոր օրհնութեամբ յետ աստեացս: - 630. Երկրորդ, զի ի սմա հանգեաւ աստուած ի գործոց իւրոց ի *բարութիւնն*: - 647. Ո՛չ միայն մարմնով, այլ և հոգւով. թէ չունի զմասն *բարութեան*: - 670. Ասեմք եթէ՝ մտանելն առ աստուած այն է՝ որ հեռանայ ի չարութեանց և լինի ի *բարութեան* և ո՛չ փոփոխի ի չար, աստուծոյ պահելովն. - 695. Եւ որպէս ելաք ի բարի կենաց և մտաք ի չար մահն, այսպէս և ելեալք ի մահուանէ մտաք յանեզր և անվախճան կեանքն և *բարութիւն*: - 724. Եւ պա՛րտ է գիտել զի ի միոյ սեռէ *բարութեանցն* աստուծոյ՝ յառաջե՛ն առ մեզ ողորմութիւն և արդարութիւն. կրկին տեսակ կամ գործք կամ զօրութիւն. որպէս ի մեզ երկոքին ձեռք մարմնոյ. և որպէս իմացումն և կամք հոգւոյ: - 745. Եւ որպէս մեք յարաժամ միտեմք ի գործ *բարութեան* կամ չարութեան. և գործ նորա միտէ՛ յողորմութեան կամ արդարութեան հատուցումն. - 745. և ամենայն որ ինչ փափկութիւն գտանիցի՝ աշխատութիւն. մինչ զի *բարութիւնն* աստուծոյ յանհունս գերազանցէ՛ քան զամենայն ստեղծեալ *բարութիւնս*: - 762. Զի թէ աստուածային *բարութեանց* շաւղացն շաւիղք այս քան ունին քաղցրութիւնս, զի՞նչ ունի ինքն աղբիւրն անուշութեան աստուած: - 762. Դաւիթ ասէր «ծարաւի է անձն իմ առ քեզ աստուած աղբիւր կենդանի». որ ամենայն *բարութիւնք* աշխարհի իբրև շիտք են հոսեալ յայնմանէ: - 762. Այլ յայնժամ լցցի ի *բարութենէ* ցանկութիւն: - 766. ...մարմնով մեռելոցն անթիւ օճիրս ստախօսութեան գործէր. զանտի կենաց զյարութեան յուսոյ և զհատուցմանց ըստ գործոց՝ բառնալով. զերկիւղ դժոխոց և զսէր արքայութեան. և զամենայն ինչ որ նմանէ այսմ հոգևոր *բարութեան*: - 775

**ԲԱՐՈՒՔ** - Անգէ: Զաքարիա: Մաղաքիա: Երեմիա: *Բարուք*: Ողբք: Դանիէլ: Եզեկիէլ: - 450. Որպէս ասէ *բարուք* «ո՛վ իսրայէլ ո՛րպէս զի մեծ է տունն աստուծոյ և ընդարձակ տեղի ստացուածոյ նորա»: – 763.

**ԲԱՐՍԵՂ** - Եւ *բարսեղ* ի քրիստոսի ծնունդն յիւրական ճառին ասէ, անուն դիցուք տօնիս աստուածայայտնութիւն: - 482. Հինգերորդ, կանոնս եդեալ է և հաստատեալ ի նիկիոյն՝ ի *բարսղին* ի յեփրեմին՝ և յայլոցն, - 652

**ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ** - Հնգետասաներորդ՝ ի մէջ գիշերի՛ է յարութիւնն. որպէս ասէ ոսկէբերանն ի յարութեան ճառին, և սուրբն նիւսացին, և *բարսեղ կեսարացին*, և գրիգոր սկևռացին, և այլք...: - 514

**ԲԱՐԻՈՔ +** Իսկ պօղոս զբանս զայս վերաբերէ ի հոգին սուրբ ի գործքն ասելով՝ «*բարւո՛ք* խօսեցաւ հոգին սուրբ ի ձեռն եսայեայ առ հարսն մեր ասելով, լըւիջիք և մի՛ իմասջիք»: – 58. Որպէս ասէ սուրբն իրինոս զբանս յուստիանոսի, թէ *բարւոք* ասաց վկայն յուստիանոս եթէ՝ «մինչ ի գալուստն քրիստոսի ո՛չ իշխէր հայհոյել զաստուած, զի յո՛յս ունէր դառնալոյ ի փառս. այլ յորժամ լուաւ զպարտութիւն իւր և զարտաքսիլն ի փառաց, ապա քարացաւ ի չարութեան իմաստութեան սիրտ նորա. և անամօթաբար հայհոյէր զնա և մատնիւր յաւիտենից տանջանացն»: – 153. Ապա դուք *բարւոք* առնէք չտալ հաղորդ ժողովրդեանն զի մի՛ յուդա լիցին: - 598. Այսպէս *բարւոք* տեսցես ինձ յամենայն ուրէք ըստ ժամանակի զգործս յարմարեալ: - 780. *Բարւոք* ասացաւ յարարչէն. զի թէ և բնութիւն թարց երևակայութեան, և

արհեստ հանդերձ երևակայութեամբ, սակայն կամք արարչական ետ նոցա բնական և բանական կարողութիւն. և ոչ ինչ վայրապար կազմեն զտեսակ գոյացական և զտեսակ պատահական. խնդրելով ոմն պարզ նիւթ. և ոմն տեսակացեալ: - 786. Ծանի՛ր սիրելի ընթերցող, զի վասն դիւրապէս վարելոյ զցանկս, Յո՛յժ *բարւոր* է քեզ՝ քանի մի ինչ անգամ իբր յաճախակի ընթեռնուլ զցանկս զայս: - 808

**ԲԱՐՔ +** Եւ գիտելի՛ է, զի յա՛յսց խառնուածոց լինի *բարք* իմն և ախտ ի մարդն: - 245. Երևի ապա թէ ճշմարիտ են պատկերացոյցքն, որ *զբարս* մարդոյն յայտնեն: - 246. Նոյնպէս և ի բանական որակութիւնս հոգւոյն՝ նման և աննման, հաւասար և անհաւասար բացատրեաց. այսինքն խոհեմ և տգէտ. հեզ և բարկացող. ողջախոհ և ցանկասէր. և այլ զանազան *բարս* բնական՝ մարդոյն: - 252. Երրորդ՝ հարուածն է մունն որ է՛ մանր տիզ. կամ մոծակ. կամ մժեխ. ի ցուցանել զի մանրակըծո՛ւ էին *բարուք* և խոցոտիչք բանիւք: - 334. Նախ ցուցանէ զխոհեմութիւն *բարուց* որ ընդունելի է աստուծոյ և մարդոյ. այլ պարզութիւնն է՛ պատարագ: - 356. Եօթներորդ՝ քածաւարին. այլամազն խառնեալ. զանազան *բարուց* նշանակ: - 371. Բարոյականն՝ նոյի, որ ի *բարուց* վարդապետեալ բնակէր ի յանապատ և պահէր զկուսութիւն եճ ամ: - 528. Առաջինն ուսուցանէ կարգաւորել *զբարս* իւր առ ինքն: - 580

**ԲԱՑ +** Եւ *բաց* յայսցանէ՝ ի յուղեղէն **բ բ** երակ գայ յիւրաքանչիւր զգայարանս. **բ** յաչքն. **բ** յականջն. **բ** ի քիթն. **ա** ի բերանն. մին ի լեզուն. **բ** ի ձեռքն. **բ** ի յոտքն. որ լինի **ժբ**: - 244. *Բաց* աչքն յիմա՛ր է: - 246. Եւ *բաց* յայսցանէ՝ բնական որակօք ներհա՛կք են միմեանց **դ** տարերքդ որպէս ցուցաւ ի վերոյ: - 278. Յնգետասաներորդ՝ առիւծն յորժամ ննջէ՝ *բա՛ց* ունի զաչսն: - 316. Է և ա՛յլ կապ *բաց* յայսցանէ, այսինքն Անձնական, որպէս հոգւոյ և մարմնոյ: - 318. Եւ *բաց* յայսցանէ. կոչի զգեստ բնակութեան լոյսն անմատոյց և խաւարն անգիտութեան. զի «բնակեալ է ի լոյս անմատոյց», և «եդ զխաւար ի ծածկոյթ իւր»: – 318. Եւ *բաց* յայսցանէ և արտաքոյ սոցա, Լեառն պարարտ կոչի սուրբ Երրորդութիւնն ի մարգարէէն: - 320. Եւ *բաց* յայսցանէ **բ** ակն յանդիմանութեան զոր անդամանդեայ կոչէին, և էր ի պճղնաւոր զգեստին ի վերայ ուսոց քահանայապետին յորժամ մտանէր ի սուրբն սրբոց երիցս ի տարւոջն, ի տօնի զատկին և յիսներորդացն և ի քաւութեանն: - 349. *Բաց* յայսցանէ բճճք գլուխ ոսկի տուփ խնկով: - 359. Եւ *բաց* յայսցանէ **գ** այլ մասնական կամ տեսական ասա. այսինքն բարոյական. բանական. վարդապետական: - 528. Եւ *բաց* յայսցանէ և արտաքոյ սոցա, ո՛չ օրհնին և ո՛չ անիծանին. ո՛չ կապին և ո՛չ արձակին: - 540. Եւ *բաց* յայսցանէ՝ Ղևեայ ցեղք քահանայիցն: - 609. Վասն է՞ր զսուրբ աստուածն *բաց* գլխով երգեմք: - 635. Եւ ա՛յս է խորհուրդն. եթէ մեր ամենայն ինչ յայտնի և *բա՛ց* է ծածկագիտին: - 635. ...և մեք *բաց* գլխով զձեռս տարածեալ զնորա նմանութիւնն բերեմք ի մեզ: - 635

**ԲԱՑ (ԲԱՑ Ի) +** Չորրորդ՝ այսու առաւել զմիակամութիւն ցուցանէ. զի մի՛ է կամք իւր և հօրն. վասն այն ո՛չ կարէ առանց հօր. զի ո՛չ է որդւոյ այլ կամք զի զոր ինչ կամեսցի *բաց ի* հօրէ արասցէ: - 45. Էառ փրկիչն զամենայն, զի փրկեսցէ զամենայն. *բաց ի* մեղաց. զի մեղքն եկամուտ է և ո՛չ է ի բնութենէս. զի բնութիւնս անմեղ ստեղծաւ յաստուծոյ: - 50. Զի ունին ծնունդ ըզնմանն իւրեանց, և ունին զելումն *բաց ի* ծննդենէն. որպէս ի ձիոյն ձիակապիկն. և յարջառոյն մեղու. և յայլոցն որդն: - 53. Եւ այն զի ո՛չ ինչ ունի մինն նըւազ քան զերկուքն, և ո՛չ երկուքն առաւել քան զմին, *բաց* յառանձնութեանցն: - 74. Զի աստուածայինքն առհասարա՛կ են *բաց ի* յառանձնաւոր դիմացն: - 106. Դարձեալ՝ ոչ ինչ պատուական քան զժամանակ. զի զինչ և իցէ յաշխարհի՝ երկու մասունքն կարե՛ն համանգամայն գոլ ի միասին *բաց ի* ժամանակէ և ի հասակէ՛. զի ժամանակին **բ** մասն անհնա՛ր է համանգամայն գոլ ի միասին. զի և **բ** պահք ո՛չ կարեն համանգամայն գոլ: - 199. Եւ ի գիրս սուրբս՝ մարգարէից այլոց ազգաց անուանք ո՛չ յիշին *բաց ի* հայոցս: - 201. Եւ մինչ զգիրն յառաջ կալան թէ այսու՛ փորձիմք, այլ ո՛չ ոք գիտաց կարդալ՝ *բաց* յեբրայեցւոցն. վասն այն ասի եբեր, թէ զառաջին լեզուն նա՛ եբեր: - 299. Եւ **դ** է քառասունքն մովսէսի *բաց ի* յեւսայն արտաքոյ միգին: - 352. Եւ *բաց* յայսցանէ մասնաւորք այս են: Մուրկն: Երախայրին: - 359. *Բաց ի* քաւութենէն որ ի սուրբն սրբոց՝ ի ներս և ի դուրս **ժ** էր բովանդակն: - 364. Այլ և քարինք բազումք էին ի վեր և ի վայր՝ *բաց ի* յունաց յոր անցանէին. որ կրթեալ և սրբեալ էին: - 415. Ասեմք առ այս, թէ յԵրրորդութիւնն սուրբ մի է բանն և իմաստութիւնն և բնութիւն և կեանք և ներգործութիւն և այլն ամենայն. *բաց* յառանձնութենէն որ է ծնօղ ծնեալ և բղխեալ: - 530. Նա՛խ՝ ի լուծանել զճրագալոյցսն ի պանիր՝ ի յիւղ՝ և յա՛յլ այսպիսի կերակուր *բաց ի* մսոյ: - 554. Երկրորդ՝ ի յաղուհացսն ո՛չ ունել հրաման պատարագ մատուցանել *բաց ի* շաբաթէ՛ և ի կիրակիէէ՛: - 554. Բայց ոմանք բերանաբաց եղեալ հակառակին՝ զծնունդն և որ ըստ նորին ամենեցուն առ հասարակ միաբանեալ *բաց ի* հայոց: - 554. Որպէս և տօն ծննդեանն զոր միաբան ասեն տօնել այլոց քրիստոնէից *բաց ի* հայոց. և զի և այն աւանդութիւն է և տօնախմբութիւն և ո՛չ հաւատ: - 554. Եւ թէ այս ո՛չ է գրեալ,

նա՛ և ո՛չ այն եթէ մեղանչեաց ուրէք զամենայն կեանս իւր *բաց ի* միոյն. և ո՛չ մեղանչելն կրկին՝ ապաշխարութիւն է առաջնոյն: - 778

**ԲԱՑԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ +** Իննևժերորդ՝ Յարցման հոգւոյն և *բացադարձութիւն* իմացմանն: - 228. Եւ ա՛յս է *բացադարձութիւն* իմացմանն. զոր ի բազում տեղիս ասեն վարդապետք: - 251

**ԲԱՑԱԽՕՍՈՒԹԻՒՆ +** Երրորդ՝ անկումն նոցա է՛ր ակնկալութիւն տանջանցն. և զայս մինչ ի քրիստոս ո՛չ գիտացին զպատրաստեալ տանջանս իւրեանց. այլ յորժամ *զբացախօսութիւն* գեհենին լուան ի քրիստոսէ՝ ասէին՝ (մի՛ յառաջ քան զժամանակն տանջէր զմեզ սուրբդ աստուծոյ. գիտե՛մք զքեզ զի տանջօ՛ղ ես մեր:) - 153

**ԲԱՑԱԿԱՅ +** Զի՞նչ է պատճառ՝ որ արտաբերեալ բանս մեր միաւորեալ է ընդ ձայնի. և *բացակայքն* զձայնն լսեն՝ և զբանն ո՛չ: - 131

**ԲԱՑԱԿԱՏԱՐԵՄ +** Իսկ հաւատ ուղղակի և վարձատրելի՝ է՛ մարդկայինս ազգի ի ճանապարհի աստի կենաց. և չորիւք *բացակատարի:* - 784

**ԲԱՑԱԿԱՑԵԱԼ +** Երրորդ՝ *բացակացեալն* ընդ աղօտ լսէ ո՛չ զձայն բերանոյն, այլ զձայն բախման օդոյն. որպէս արձագանչումն յինքն նկարէ զձայնն և ո՛չ զբանն: - 131

**ԲԱՑԱՅԱՅՏԵՄ +** Այլ այսորիկ զհաւասար պատիւն *բացայայտեն*: - 61. Նոյնպէս և ասելն՝ Երրորդութիւն. սովին քըւով *բացայայտի*: - 105. Մարդն մատթէոս՝ զօրինաւոր ծնունդն *բացայայտեալ*: - 133. Այլ զուղիղ պատճառն *բացայայտէ՛* եսայի մարգարէն: - 148. Աղաչեմ զոր յիշեցաւ ի վերոյ *բացայայտել*, եթէ ի նախատեսութիւնն աստուծոյ աշխարհ զօրութեամբ ո՛չ ասի: - 167. Եօթներորդ՝ զի **գ** տեսակ հոգոց *բացայայտեսցին*. որ է՛ անկատար՝ և միջակ՝ և կատարեալ: - 231. Իսկ չորրորդն է՛ պատարագ տեառն մերոյ քրիստոսի որ ի մի դէմ անձնաւորութեան **գ** երես պատարագին *բացայայտեցաւ*: - 306. Երրորդ՝ անդ նկարեալ էր մեր հոգևորն. և աստ *բացայայտեալ* խորհուրդ տնօրէնութեան քրիստոսի աստուծոյ մերոյ: - 353. Ա՛րդ՝ *բացայայտեսցի՛* պատճառն: - 365. Իսկ չորրորդն է՛ պատարագ տեառն մերոյ քրիստոսի որ ի մի դէմ անձնաւորութեան **գ** երես պատարագին *բացայայտեցաւ*. այսինքն մեծ գոլ մատուցօղն և ընդունօղն և պատարագն: - 491. Եւ այսպէս *բացայայտի*, զի երկու իրս խնդրին առ ի ճշմարիտ մարգարէ գոլ: - 536. Եւ այս զանազան կարծիքս վասն այն է, զի գիրք սուրբք չե՛ն յայտնի *բացայայտեալ* զնոսա: - 687. Որպէս ի սահման իւր *բացայայտի*...: - 715. Արդ՝ ես վերջին ծնունդս եկեղեցւոյ և տրուպս բանասիրաց, Գրիգոր պիտակ անուն խնդրօղ բանին. *բացայայտեցի* զբանս Յարցմանց ի լուսաւոր բանից վարդապետաց եկեղեցւոյ: - 772. Եւ յայսմանէ *բացայայտի* այս, զի աստուած միշտ անփոփոխ է. իսկ ժամանակն միշտ փոփոխական է. իսկ մեք երբեմն փոփոխական և երբեմն ո՛չ: - 779

**ԲԱՑԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ +** Եւ ի *բացայայտութիւն* այսմ բանի՝ ծանիր ըստ օրինակի: - 20. Աhա՛ այս ի կարճոյ *բացայայտութիւն* ծածկեալ ամբարշտութեանց, որք **բ** բնութիւնս սահմանեն ի վերայ միոյն քրիստոսի. թէպէտ անձն մի համբաւեն համածայն մեզ, սակայն որոշմամբ բնութեանց լինին տարաձայն մեզ և եկեղեցեացն աստուծոյ: - 90. Եւ զայլ մասնապէս *զբացայայտութիւն* կոչմանց ամենայն դասուց՝ գտցես յայլուրեք ի բանն գրեալ որ ասէ՝ «ո՜ արար զհրեշտակս յոգիս»: – 136. Զորոյ *զբացայայտութիւն* սորա այսպէս իմասցուք: - 177. Եւ թէպէտ գերազանցեալ են այսորիկ փառք քան որք այժմ ունին յերկրի. այլ սակայն օրինակաւ սակաւ ինչ *բացայայտութիւն* առցուք: - 761.

**ԲԱՑԱՍԱԿԱՆ +** Երրորդ՝ **Ե** ստորասական է. և **Ե** *բացասական*: - 340

**ԲԱՑԱՍԵՄ +** Որպէս արեգակն զի ո՛չ այրէ որ է հեռաւոր պատճառ. այլ հուրն ի նմանէ առեալ զջերմութիւն ի մերձ գոլով այրէ՛. որպէս յա՛յտ է ի հայելւոջն, որ առեալ զնշոյլս յարեգականէն՝ այրէ՛. ա՛յսպէս և բանս մեր ի հարկէ նոցա լինի՝ զոր ստորասեմք կամ *բացասեմք:* - 8

**ԲԱՑԱՍՈՒԹԻՒՆ +** Իսկ բանին արիստոտէլի՝ թէ ի հակասութեանց մի կողմն ճշմարիտ է, այսինքն կամ ստորասութիւնն կամ *բացասութիւնն*: - 9. Յակասական. որպէս ստորասութիւն և *բացասութիւն*: - 21. Եւ ո՛չ են որպէս ստորասութիւնք և *բացասութիւնք*, որ միայն ի բա՛նն են հակակայք. որպէս ճշմարիտ, և սուտ. այլ չար և բարի՝ ի բանս և ի գործս պատահին: - 21. Ո՛չ թէ *բացասութիւնքս* այսորիկ զլինիլն ցուցանէ, այլ թէ ո՛չ էր ամէնիւ: - 46. Ա՛յս է աստուածաբանութիւնն դրութեամբ և բացբարձմամբ. որ է՛ ըստորասութեամբ և *բացասութեամբ*. և ճառելի և անճառելի: - 123. Այսպէս և ոչն. որպէս անդ՝ ուր ասէ արիստոտէլ՝ «ո՛չ մարդ» որ է անորոշելի անուն. և «ո՛չ նստի» որ է՛ *բացասութիւն*. և ա՛յլ է անորիշ անունն. և այլ *բացասութիւն* ստորասութեան: - 124. Ընդ այսմ և որ ի ձէնջ արկեալ եղև. թէ վասն է՞ր է զի երկու *բացասութիւն* լինի մի ստորասութիւն. իսկ **բ** ստորասութիւն ո՛չ կազմէ մի *բացասութիւն*: - 787. Զի է՛ *բացասութիւն* բացբարձօղ

ամենայնի ուր և դիպեսցի. որպէս զէութիւն այսպէս զոչէութիւն: - 787. Յա՛յտ է զի ի բառնիլ ոչէին՝ էութիւն հաստատի *բացասութեամբ* կրկին. իսկ ստորասութեամբ նոյն մնայ: - 787. Եւ ևս. *բացասութիւն* ինքն ինքեան քակտիչ բացատրի կրկնելովն. իսկ ստորասութիւն ո՛չ: - 787. Եւ ըստ այլ կերպի փոփոխին սոքա ի միմեանս և լինի ստորասութիւնն *բացասութիւն*, և *բացասութիւնն* ստորասութիւն: - 787

**ԲԱՑԱՏ +** Երրորդ՝ ստորևն կից, և վերևն *բացատ*: - 178. Եղև՞ *բացատ* ժամանակի ի ստեղծանելն: - 227. Որպէս ասեն վարդապետք, ի վերջին ծովէն սպանիու մինչև ի հնդիկս սակաւ աւուրց *բացատ* գոյ թէ վարեսցէ հողմ զնաւն: - 763

**ԲԱՑԱՏՐԵՄ +** Նոյնպէս և ի բանական որակութիւնս հոգւոյն՝ նման և աննման, հաւասար և անհաւասար *բացատրեաց*. այսինքն խոհեմ և տգէտ. հեզ և բարկացօղ. ողջախոհ և ցանկասէր. և այլ զանազան բարս բնական՝ մարդոյն: - 252. «Աղախին տեառն» *բացատրէ՛* զկատարեալ խոնարհութիւնն: - 465. Եւ ևս. բացասութիւն ինքն ինքեան քակտիչ *բացատրի* կրկնելովն. իսկ ստորասութիւն ո՛չ: - 787

**ԲԱՑԱՐՁԱԿ +** Այլ ա՛յս է, Զի ճանաչէ՛ իբրև զաստուած. այլ իբրև զմարդ անգիտնայ. զի *բացարձա՛կ* է որդւոյն անունն. այսինքն անորոշակի. զի որոյ և տացես թէ բանին և թէ մարմնոյն՝ կարէ՛ ասիլ: - 48. Վեցերորդ՝ ոչէ ասին և *բացարձակքն* որ ի հանդերձեալն. զի դեռևս ո՛չ են. այլ՝ լինելոց են միշտ: - 111. Երկրորդ՝ զի ողորմութիւն է *բացարձակ* և պարզապէս բարի. իսկ արդարութիւնն է խառնել բարի. ըստ որում հատուցանէ բարեացն բարիս, և չարեացն տանջանս: - 458. Այլ և էն և օն՝ անփակ գիր է. որպէս այն «ես եմ աստուած որ էն» և *բացարձակ*: - 638

**ԲԱՑԱՐՁԱԿԱՊԷՍ** - Զի իմաստութիւնն է ճանաչումն աստուծոյ *բացարձակապէս*. իսկ հանճարն է ճանաչումն համեմատաբար. այսինքն համեմատելով զստեղծուածս առ ստեղծօղն: - 270

**ԲԱՑԱՓԱՅԼԵՄ +** Փայլակն լինի ի շիջեալ հրոյն ջրով ամպոյն և հողմով որ ի մէջն է, վերստին արծարծի և արտաքս *բացափայլէ*: - 203

**ԲԱՑԱՔԱՅԼՈՒԹԻՒՆ +** Նախ ի պատճառէ, զի ամենայն պատճառելեաց խնդրի պատճառս. և այնպէս պատճառի միւս պատճառ. և այսպէս *բացաքայլութեամբ* յանհունս ո՛չ է գիտութիւն: - 25

**ԲԱՑԲԱՐՁԱԿԱՆ +** *Զբացբարձականսն* ի վերայ աստուծոյ՝ որպէս անճառ և անսահման՝ ո՛չ ըստ պակասութեան կոչեմք, այլ ըստ գերազանցութեան: - 24. Զի ոչս այս *բացբարձակա՛ն* է. որպէս թէ ո՛չ չափով տայ աստուած զհոգին որդւոյ. այսինքն է՝ զի ոչ տայ և ո՛չ չափէ: - 46. **ժթ**) Զանազանին *բացբարձականքն*. և ուրացականքն: - 102. Եւ *բացբարձականքն*. որպէս անեղ. անմահ: - 106. Իսկ *բացբարձականքն* ի խորհրդական աստուածաբանութեանն է. նախ որ է՛ և ո՛չ ասի. որպէս անսկիզբն և անվախճան. ո՛չ բան և ո՛չ միտ. ո՛չէ և այլն: - 123. Որո՞վ զանազանին և հաւասարին *բացբարձականքն* և ուրացականքն. զի մի և նոյն երևին: - 124. Ո՛չ են մի *բացբարձականքն* և ուրացականքն: - 124. Իսկ *բացբարձականն* ըստ գերազանցութեան է. զի գերազա՛նց բան է՝ և գերագունա՛կ միտ. և գերագոյն և առաւել հայր՝ և որդի. և ո՛չ ըստ մեր կարգիս որպէս մեր բանս է և միտք: - 124. Իսկ *բացբարձականքն* ո՛չ զէութիւն կամ զփառս աստուծոյ բառնայ, այլ զոր յետ էութեանն աստուծոյ է և ի նմանէ ստեղծեալ՝ և զխոնարհութիւնսն բառնայ: - 124. Ապա ուրեմն ա՛յլ է *բացբարձականն* և այլ է ուրացականն: - 124

**ԲԱՑԲԱՐՁՈՂ +** Զի է՛ բացասութիւն *բացբարձօղ* ամենայնի ուր և դիպեսցի. որպէս զէութիւն այսպէս զոչէութիւն: - 787

**ԲԱՑԲԱՐՁՈՒԹԻՒՆ** - Դարձեալ՝ որպէս *բացբարձութեամբն* ասի հայր աստուած՝ անսկիզբն և անվախճան. ունելով զայս և զայն ի պարզ միութեան իւրում. և ո՛չ է **բ** անձն կամ **բ** բնութիւն: - 77

**ԲԱՑԲԱՐՁՈՒՄՆ +** Ծանիր և զայս ուշիմ մտօք, զի ամենայն աստուածաբանութիւն նախ յերկուս բաժանի. այսինքն դրութեամբ և *բացբարձմամբ*: - 123. Ա՛յս է աստուածաբանութիւնն դրութեամբ և *բացբարձմամբ*. որ է՛ ըստորասութեամբ և բացասութեամբ. և ճառելի և անճառելի: - 123. Եւ առ ընդունակ նոցին դադարիլ շնորհին գործելոյ, *բացբարձումն* է շնորհին իջելոյ: - 783

**ԲԱՑԵՐԵՍ +** Եւ *բացերես* ի ճակա՛տն ունի: - 363

**ԲԱՑԵՐԵՒԱԿԱՆ +** Եւ կատարեալ տեսութիւն *բացերևականն* բանի յայտնի՛ է աշխատասէր մտաց. որ յաղագս մեկնութեան լուծումն գրոց. և գո՛ն առ քեզ: - 787

**ԲԱՑՈՐՈՇ** - Իսկ ենթադրութիւն է զանազանելին և ո՛չ զանազանեալն *բացորոշ* յատկութեամբ. որպէս ոմն մարդ: - 174. Իսկ անձն է զանազանեալ հանդերձ *բացորոշ* յատկութեամբ. որպէս պետրոս: - 174

**ԲԱՑՈՐՈՇԱԿԻ** - Զի ի վերայ մշտնջենաւորացն *բացորոշակի* յերեք ժամանակս՝ այսինքն յանցեալն ի ներկայն և յապագայն՝ մինն ճշմարիտ է և մինն սուտ. որպէս հրոյ ջերմութիւնն և արեգական լոյսն: -

9. Իսկ ի վերայ փոփոխականացս ո՛չ նմանապէս. զի յանցեալ ժամանակս և ի ներկայս *բացորոշակի* մինն ճշմարիտ է և մինն ստէ՛. որպէս ասեմք՝ երէկ անձրև էր, կամ ո՛չ էր. այսօր անձրև է, կամ ո՛չ է: - 9. Իսկ ի վաղիւն ո՛չ գիտեմք թէ անձրև է թէ ոչ. զի գիտեմք որ մինն լինի. այս՝ կամ այն՝ որ և հանդիպի. անձրև՝ կամ ո՛չ. այլ ի հարկէ *բացորոշակի* ո՛չ գիտեմք զմինն: - 9. Եւ թէ ոք ասիցէ, բազում բանք մեր *բացորոշակի* լինին ի հանդերձեալն. որպէս թագաւորն յորժամ ասէ շինեսցի քաղաք, և շինի. և ասեմք թէ այսանուն մարդ մեռանելոց է, և մեռանի. և աղօթեմք և լինի. և այլն նմանապէս անէծք կամ օրհնութիւնք: - 9

**ԲԱՑՈՐՈՇԱՊԷՍ** - Եւ որովհետև ծանեաք զայս, արդ պատասխանեմք առարկութեանցն, եթէ որքան է՛ ի հարկաւոր պատճառ է՛, լինի *բացորոշապէս* բանն ճշմարիտ. որպէս բան թագաւորի. և մարդոյն մեռանիլն. և արև ծագելն. և լինիլն գարուն յետ ձմռան: - 10

**ԲԱՑՈՐՈՇԵՄ +** Իսկ արձակապէս և գերազանցն՝ զնոյն անեղութիւն Երրորդութեանն *բացորոշէ*: - 113. Եւ գոյացութիւն ասեմ, որով տարորոշի ընդդէմ ոչ գոյին. և որակութեամբ *բացորոշի* յանմարմին էութեանց. ուստի բաղկանայ մարմին գոյացութեամբ և որակութեամբ: - 175. Իսկ էն անսկիզբն և անվախճան է. յորմէ երրորդ աստուածաբանութիւն մեզ *բացորոշի*: - 312

**ԲԱՑՈՒՄՆ +** Եւ որպէս կորխ դադան և աբիրոն վասն հակառակութեանցն ընդ մովսէս և ահարոն՝ հրով և *բացմամբ* երկրի դատապարտեցան: - 288. Երրորդն է՛ *բացումն* կողին. ի նշան ամէնառատ գնոջ փրկութեան մերոյ: - 489. Չորրորդ դարձեալ՝ **դ** թև խաչին նշանակէ զչորս բարերարութիւնս քրիստոսի. զի վերին մասն ցուցանէ *զբացումն* արքայութեանն երկնից. ներքինն զաւերումն դժոխոց. աջն զբաշխումն շնորհաց. ահեակն զթողութիւն մեղաց: - 493. Երկրորդ՝ զի վասն *բացման* դրանց երկնից՝ լոյս ծագեաց ի բանտին ըստ եսայեայ. «որք ի կապանս էք ելէք. և որք ի խաւարի յայտնեցարուք»: – 504. Վեցերորդ վկայութիւն ի *բացմանէ* կողին քրիստոսի: - 595

**ԲԱՑՈՒՆՉՆ** - *Բացունչն* զուարթ է և ուժեղ: - 246

**ԲԱՑՈՒՍՏ կմ Ի ԲԱՑՈՒՍՏ +** Երեքտասաներորդ՝ որպէս զհետ իսահակայ չոքան երկուք ի ծառայիցն և կացին *ի բացուստ*: - 306

**ԲԱՒ +** «Իմաստութեան նորա ո՛չ գոյ *բաւ»*. այսինքն հոգւոյն սրբոյ: - 56. Զի մեծ է և անճառ և անպատում զօրութիւն և իմաստութիւն աստուծոյ. ըստ այնմ՝ «մեծ է տէր և մեծ է զօրութիւն նորա. և իմաստութեան նորա ո՛չ գոյ *բաւ»*: – 231

**ԲԱՒԱԿԱՆ +** Այլ այս չէ *բաւական*. զի զմի իրն ինքեան մերձ ասէ որ անհնա՛ր է: - 37. Զի թէ պատասխանեմք թէ ո՛չ է հարկ թէ սկսեալն ամենայն իրօք և դադարեսցի. որպէս հրեշտակք և հոգիք մարդկան. զի են սկսեալք և ո՛չ դադարին. է՛ այս պատասխանի, այլ ո՛չ *բաւական*: - 37. Եւ այսպէս բազում է ի գիրս հարցմանցս վասն միաւորութեան բանին և մարմնոյն ընդ դէմ նեստորի և երկաբնականց. որ *բաւական* լուծումն է բանիս: - 95. Են և ա՛յլ հասարակութիւն և յատկութիւն նոցա. որոց *բաւական* է այսչափս առ այժմուս: - 138. Իւր ձեռօքն ցանէր և որթ վաստակէր իւր *բաւական*: - 300. Նա՛խ՝ զի *բաւակա՛ն* էր ասելն «արար աստուած զմարդն ի պատկեր իւր». զի բարի է աստուած: - 325. Երկրորդ՝ զի ո՛չ էին *բաւական* բնակութեան երկրին: - 416. Երկրորդ՝ կոչի դաւիթ որ է՛ սիրեցեալ և *բաւական* ձեռօք. և տէր մեր սիրեցեալ ի հօրէ և ի մարդկանէ իբր զորդիս մի եղջերոյ. և նա՛ է *բաւական* յամենայն գործս և ի պարգևս: - 435. Ա՛րդ՝ ի կենդանեաց երկրքինն պահանջին. իսկ հոգւոցն *բաւակա՛ն* է միայն ներքին իմացումն զի չունին մարմին: - 508. Հնգետասաներորդ, զի *բաւական* համարեցաւ ի պատիւ կանանց զայն՝ զի յառաջագոյն մերձեցաւ ի նոսա ծննդեամբ. իսկ յետ յարութեանն կամի՛ զի ա՛րք նախ մերձեսցին ի նա մինչ դեռ ո՛չ է ելեալ նա առ հայր: - 518. Նախ՝ որ գիտէ. և թէպէտ գիտէ, ասէ թէ չեմ *բաւական* խօսելոյ: - 537. Սոքա են **բ** սուրքն *բաւական* որ ասաց պետրոս «են աստ բ սուրք»: – 538. Իսկ թէ հարկաւոր ժամանակ հանդիպի զպատւական մասունքն միայն. և կամ զերեսս միայն *բաւական* է լուանալ: - 588. Այլ թէ որ հասակաւ մեծ է, խնդրի յատուկ հաւատ. իսկ թէ տղայ է՝ *բաւական* է խորհուրդն եկեղեցւոյ: - 588. Եւ թէ ասեն՝ *բաւակա՛ն* է ժողովրդեանն միայն մարմինն. - 600. Հինգերորդ, յաղագս ջերմ սիրոյն առ աստուած՝ ո՛չ *բաւական* համարեցաւ միայն լեզուաւ երգել աստուծոյ. - 641. Իններորդ հարցմանս *բաւական* լիցի ի Փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ Ամէն: - 659. Եւ *բաւական* է սակաւս ի բազմաց սուրբ գրոց վկայութիւն եթէ գոյ ճշմարտապէս յարութիւն մարդկան: - 716. Ո՛չ ըստ *բաւական* բանի առեալ զլուծումն. այլ ըստ կարի տկարութեան արտայայտումն. մանաւանդ հարկեալ ի սիրոյ քումդ եղբայրական խնդրոյ: - 788

**ԲԱՒԱԿԱՆԱԲԱՐ +** Հինգերորդ՝ զի կանոն ընդհանուր ժողովոցն որ եղեն առ նոսա՝ *բաւականաբար* դաւանութիւն հաւատոյ տըւեալ է: - 64

**ԲԱԽԱԿԱՆՈՒԹԻՒՆ +** Եւ *բաւականութիւն* սոցա է այսպէս. զի եմք մարմին հոգի և միտք գոյացեալ. և ունիմք կարիս և ինչս և շնորհք և կռօնք: - 389. Եւ *բաւականութիւն* է զարդուցն պատճառի յերից մասանց հոգւոյն և ի չորս տարերաց մարմնոյն: - 721-722. Ամենայն բարեաց անկարօտ *բաւականութիւն*: - 761

**ԲԱԽԵՄ +** Եւ մեծն ի ծնունդս որովայնի՝ խրաց մի կօշկաց նորին լուծելոյ ոչ *բաւէր*: - 456

**ԲԱՔՈՒ** - Եւ ի *բարու* յեզրն կազբիական ծովուն. ուստի ծծումբն զօրութեամբ ունի զհուրն: - 208

**ԲԵԴՅԱ** - Դամեքայն *բեդիա*: - 299

**ԲԵԷՂԶԵԲԻՒՂ** - Այլ նոքա ամենեքեան ա՛զգ են դիւաց. և ըստ զանազան գործոյն՝ զանազան անուան հանդիպեցան. որպէս դևն պոռնկութեան, և հպարտութեան, և *բեէղզեբիւղ*, բեհմովթ, և այլն: - 150

**ԲԵԹԱՆԻԱ** - Եւ որ՝ քան զայս աւելի ասեն, որպէս տնօրինեցար. կամ ընծայեցար. կամ քո տէրութեամբդ. կամ որ եկիր ի *բեթանիա*. կամ ի վերնատունն: - 634

**ԲԵԹԷԼ** - Իսկ պատճառելն թէ «նիստ յերիքով և ի *բեթէլ*՝» փորձէ՛ զաշակերտն: - 445

**ԲԵԹԼԷՅԷՄ** - Երրորդ՝ կոտորեալ մանկունքն *բեթլեհէմի* ո՛չ էին ի զաւակացն հռաքէլի որպէս ցուցաւ ի վերոյ: - 312. Որ նշանակէր՝ «աստուած ի հարաւոյ եկեսցէ» ի թագաւորի և քահանայի ցեղէն. զի *բեթլեհէմ* հարաւ է երուսաղէմի: - 379. Եւ ջուրն *բեթլեհէմի*: - 413. Տասներորդն եսեբոն *բեթլեհէմացի* ամս **ե**: - 420. Զի՞նչ էր կարօտիլն դաւթի ջրոյն *բեթլեհէմի*: - 434. Երրորդ՝ ջուր *բեթլեհէմի* է՛ տէր մեր. որ զծարաւս մեր զովացոյց: - 434. Եօթներորդ, զառաջինն օծաւ ի *բեթլեհէմ*. և տէր մեր ի ծնունդն կոչեցաւ օծեալ ի հրեշտակին: - 435. Կոտորեաց սաւուղ զքահանայս վասն դաւթի. և հերովդէս զմանկունսն *բեթլեհէմի*: - 437. Դաւիթ ծարաւեալ ջրոյն *բեթլեհէմի* ծնիցելոյն ի կուսէ. և ծարաւեալ տէրն ի խաչին փրկութեան մարդկան ազգի: - 438. Բերին **գ** արք ի ջրոյն *բեթլեհէմի*. և **գ** աւետարանիչքն զծնունդն քրիստոսի: - 438. Եւ սա՛ շինէ *զբեթլեհէմ* քաղաք ի գետինս յուդայի: - 452. Յիսուս ծնանի ի *բեթլեհէմ* հրէաստանի: - 453. Իսկ ի մօր կողմանէ՝ մարիամ էր ի քահանայից ցեղէն, զի մատթան քահանայն բնակէր ի *բեթլեհէմ*, և ունէր երիս դստերս: - 460. Մարիամ ամուսնացաւ ի *բեթլեհէմ* և ծնաւ զսողոմի զմանկաբարձն յիսուսի. ո՛չ որ մայր եղև որդւոցն զեբեթեայ. զի այն. սողովմէ դուստր է յովսեփայ աստուածահօրն...: – 460. ...և Սովիէ ի նոյն *բեթլեհէմ* ծնաւ զեղիսաբեթ մայր մկրտչին...: – 460. Եւ յա՛յսմանէ յա՛յտ է, զի սուրբքն զծնունդն և զյայտնութիւնն ի միասին տօնէին. և յետոյ բաժանեցին ոմանք վասն *բեթլեհէմի* և յորդանանու: - 482. Նախ ի *բեթլեհէմ*. և ապա՛ ի քեբրոն. և յետ եօթն ամաց ի վերայ ամենայն իէլի օծաւ: - 673

**ԲԵԹՍԱՅԻԴ** - Եւ ծնունդն ի քորազին. և սնունդն ի *բեթսայիդայ*. և թագաւորեալ ի բիւզանդիայ: - 706

**ԲԵԼԲԷՔՈՎՐ** - Զի թէ անիծեալ էր, յորժամ ժողովուրդն անկաւ ի սատակումն ի *բելբէքովր*, ասէին թէ ի նորա անիծիցն եղև: - 388

**ԲԵԼԻԱՐ +** Դարձեալ անցեալ ընդ ապաշխարութիւն և սատակեալ զորդիսն *բելիարայ*, ապա՛ ժառանգեսցեն զարքայութիւնն երկնից ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ: - 419. և տէրն մարտեաւ ընդ *բելիարայ* և յաղթեաց մահու. և քակեաց զդժոխս. էառ աւար զգերեալսն և էհան յարքայութիւնն երկնից. տալով նոցա զանթառամ պսակն: - 438. ...ուր *բելիարն* նստի. զորս աւերեաց քրիստոս, և շինեն մեղսասէրք: - 679

**ԲԵԿԱՆԵՄ +** Եօթներորդ՝ *զբեկեալսն* պատէ՛: - 49. Ասեմք առ այս Նա՛խ՝ եթէ թողութիւնն է ի զղջումն. և կարգն է ի յանձն ապականեալ. ապա ուրեմն իրաւի թէպէտ զթողութիւն ընկալաւ զղջմամբն, սակայն ի կարգն ո՛չ մտանէ ապականեալ և շրջեալ անձամբ և բնութեամբ, զորօրինակ *բեկեալ* և կցեալ անօթ՝ ո՛չ թւի ի կարգ անարատիցն: - 166. Եւ ըստ չափու թանձրութեանն պատառեալ *բեկանի*, և ի վայր բերմամբ գնդի ի ջերմութենէ օդոյն, և լինի կարկուտ: - 205. Վասն զի կարկուտն *բեկանիւր* և հուրն այրէր *զբեկեալն*: - 334. Երկրորդ՝ *բեկեալն* ի գործոց բարեաց: - 371. Որպէս և այլ ուր ասէ՝ «զոսկր նորա մի՛ *բեկանէք»*. այլ զդիւրալուրն պատմեցէք: - 405. Երրորդ՝ վասն հասարակ յարութեանն. զորմէ լուաւ սատանայ և *բեկաւ* ողն նորա: - 409. Զի որպէս զհայելին ո՛չ *բեկանէ* շառաւիղ արեգականն: - 469. Զօծումն մարմնական ընկալաւ ի պոռնիկ կնոջէն յորժամ *եբեկ* զշիշ իւղոյն ի գլուխ նորա ի տան սիմոնի: - 474. Եւ զայս ի քրիստոսէ ուսաք. զի այսպէս խաչանման *բեկանէր* զհացն երկոքին ձեռօքն: - 655. **Դեկ նաւին ի ջուրս *բեկեալ* թուի. և ցաւոտ գլխոյ լերինք շարժեալ**: - 662

**ԲԵԿՈՒՄՆ +** Իսկ սողոմոն ասէ, «ի մոլորիլ ժողովրդոց՝ *բեկումն* հզօրաց»: - 147

**ԲԵՅԵԶ +** Ծիրանին ջրոյ. զի կոնքիլոսն որ ներկէ՛ զծիրանին՝ ի ջրո՛յ է. և *Բեհեզն* սպիտակ՝ երկրի. զի վուշն յերկրէ լինի: - 342. և *Բեհեզն*՝ լուսոյ տարածումն ի ներքոյ...: – 348. ...ասէ նոյն տեսիլն **ծէ**

գլուխն, «տուաւ հարսինն զգենուլ *բեհեզս* սպիտակս սուրբս և լուսափայլս». և *բեհեզն* է՛ արդարութիւն սրբոցն: - 712. Եւ ունի *բեհեզն* վեց յատկութիւնս որ նշանակէ զվայելչութիւն հոգւոց սրբոցն ելեալք ի մարմնոյ: - 712. Նա՛խ՝ զի *բեհեզն* է՛ անօսր. ցուցանէ զանօսր էութիւն և զմտածութիւն սրբոցն առանց թանձրութեան մարմնոյ: - 712

**ԲԵՅՄՈՎԹ +** Այլ նոքա ամենեքեան ա՛զգ են դիւաց. և ըստ զանազան գործոյն՝ զանազան անուան հանդիպեցան. որպէս դեն պոռնկութեան, և հպարտութեան, և բէէլզեբիւղ, *բեհմովք*, և այլն: - 150. Դարձեալ՝ վիշապն ի յորդանան էր բունեալ. որպէս ասէ յոբ «*բեհմովքն* ննջէ՛ ի գիճային տեղիս. և զջուրս յակնակապիճս իւր ընդունի». այսինքն ի գէճ ցանկութիւնն: - 489

**ԲԵՂՆԱՒՈՐԵՄ +** Այսպէս և արու մանկանն յաջ կողմն *բեղնաւորեալ*՝ վասն ջերմութեան լերդին և լեղւոյն՝ փութով կատարի անդամօք: - 261. Եւ դարձեալ՝ զի սրբեսցի արդն *բեղնաւորելոյ*: - 369. **Ուստի յա՛յտ է, զի որակ ծնողացն խառնի ի *բեղնաւորիլն*. ի դաշտանւոյն գօդի. ի հիւանդութենէ, ի շիկութենէ. որպէս ադամ տրտմութեամբ ծնաւ զորդին կայէն. ցաւած ծնողացն ցաւածին որդի**: - 439. Յինգերորդ՝ ապականութիւն մեր մարմնոցս է՛ ի սերմանէ հօր ի ծեռն կնոջ խառնեալ. իսկ մարմին բանին ո՛չ է ի սերմանէ հօր և մօր. այլ ի կուսական արգանդէ և յանապական արենէ *բեղնաւորեալ* որպէս ցուցաւ ի վերոյ ի սոյն գլուխ ի **Ժ** համարն. ապա ուրեմն անապակա՛ն է մարմին բանին աստուծոյ: - 499. Եւ երկրորդ, ընդ դէմ օրինացն աստուծոյ կորուսանի *բեղնաւորիլն* վասն յաճախ սերմանցն: - 613

**ԲԵՄ +** Եւ վերինն քահանայից *բեմն* տեղիք պատարագաց: - 294. Ուր *բեմն* է. և մէջ եկեղեցւոյն. և արտաքին գաւիթն. կամ ժամատունն: - 343. Իսկ ելանելն ի *բեմն*, զի յետ բոլոր անօրէնութեանցն քրիստոս ել յերկինս և նստաւ ընդ աջմէ հօր աստուծոյ: - 594. զի յայտնապէս զարիւնն ո՛չ տայր, և ծածկապէս զմարմինն. զի յօրհնեալ մարմնոյն ո՛չ տայր. այլ սոսկ հաց որ ի *բեմն*: - 599. Եւ թէ ասեն՝ ամենայն նշխարքն օրհնեալ է ի *բեմն*: - 599. Ասեմք թէ՝ ամենայն նշխարքն որ ի *բեմն* և ի խորհրդանոցն օրհնեցաւ այսօր, զնոյնն ի վաղիւն առնոյք և օրհնէք: - 599. Դարձեալ՝ թէ դու հաւատաս զարիւնն ի մարմինն կապեալ, մի՛ հաներ զտեսակ արեանն ի *բեմն*. այլ նշխար միայն օրհնեա և լիցի մարմին և արիւն քրիստոսի: - 600. Որոյ գործն է սպասաւորել քահանային ի խորհուրդ եկեղեցոյն. զսկիհն պատրաստել, զաւետարանն կարդալ ի *բեմն*: - 606. Երկրորդ, որպէս նա եռայարկեան խորան, որ է՛ գաւիթն, և մէջն և *բեմն*: - 613. Այլ և ոմանք ի հանդերձեալն ո՛չ ունին պատասխանի առաջի ահաւոր *բեմին* քրիստոսի: - 628. Վասն այն և տեղեաւ փոխեմք. զմարգարէսն ի մէջ եկեղեցւոյն, և զառաքեալսն մերձ *բեմին* ընթեռնումք: - 643. Եւ գրակալը և *բեմն*, լեառն սինա անմատոյց բազմաց: - 644. և դնեն ի մէջ եկեղեցւոյն ի ներքոյ *բեմին*: - 671. Նոյնպէս թէ քահանայ իցէ՝ կարգիւն պատեն և դնեն ի վերայ *բեմին*. առաջի սեղանոյն: - 671. Դարձեալ՝ դնեն զքահանայս առաջի սեղանոյն ի վերայ *բեմին*, և զկրօնաւորս ի մէջ եկեղեցւոյն, և զաշխարհականս առ դուռն, նշանակէ զզանազան տեղիս: - 672

**ԲԵՆԵՏԻՔՏՈՍ -** Ի գիրս *բենետիքտոսի* հարցեալ եղև թէ ո՞ւր են դժոխքն. և տուաւ պատասխանի թէ՝ յանկեան և յեզր ծովուն ի ներքոյ երկրի ի խաւարչուտ վայրս: - 504. Երկրորդ, զի մեծ ճգնաւորն *բենետիքտոս* որ է՛ յազգէ նոցա՝ ասէ, «պահելի է զչորեքշաբաթի օրն մինչև ցինն ժամն»: - 652

**ԲԵՆԻԱՄԵՆ -** Նա՛խ՝ զի ի ծնանիլն *բենիամենի*՝ մեռաւ մայրն և որդի վշտաց եղև նմա: - 312. Երկրորդ՝ զի **Խ** քաղաք առին ի *բենիամենէ՛* յուդայի ցեղքն վասն շնութեան կնոջն պատահելոյ. և կոտորեցին զնոսա առ հասարակ **իեռ** արս. և մնաց վեց հարիւր այր զոր յետոյ ըստացան ժառանգութիւն իւրեանց. որպէս յա՛յտ է ի դատաւորաց վերջքն: - 312. Նախ եմուտ ցեղն *բենիամենի*: - 338. Վասն որոյ նախ տուաւ թագաւորութիւնն *բենիամենի* որ էր սաւուղ: - 338. *Բենիամին* է՛ և Յակօբոս: - 349. Եփրեմ. Մանասէ. և *Բենիամին*. **բժան** բիւր և **ըռբճ** զօրք նոցա: - 378. Երրորդ՝ նա՛ ի կրտսեր ազգէ *բենիամենի* թագաւորեաց ամենայն իսրայէլի. և տէր մեր յազգէ մարդկան կրտսերաց առեալ մարմին և թագաւորեալ ամենայն զօրութեանց երկնից: - 426. Նա՛խ՝ թուել հրամայեաց, որպէս այն որ թոյլ ետ իսրայէլի մարտնչիլ ընդ *բենիամենի*, և անկան **լռ** ի դասուց նոցա: - 434. Ուստի յա՛յտ է, զի ցեղն իէլի ըճռ էին. և ցեղն յուդայ **եճռ**. և ցեղն քահանայից և *բենիամենի* ո՛չ անկաւ ի թիւ: - 434

**ԲԵՌՆ +** Այլ այժմ վասն զգեստուց պահեմք զոչխարս. և վասն կերակրոյ զեզինս. և վասն *բեռին* զէշս. և վասն բառնալոյ զմեզ զձիս. և վասն զբշնամիս հալածելոյ զշունս. և վասն զթռչունս ըմբռնելոյ զբազէս. և զայլսն նմանապէս: - 217. Եօթներորդ՝ սապատողն. կուզն. կամ ելուստ ի թիկունքն. որ ո՛չ կրէ *զբեռն* քահանայութեան հպարտութեամբ: - 370. Նշանակէ զադամայինս մարմին ի կերակրոյ պտղոյն հաւասարեալ անբանից՝ ընդ *բեռամբ* մեղաց: - 423. Եւ զորօրինակ՝ ի ստորոտ լերին հասեալ զգրաստի *բեռինս* առեալ՝ թողումք յարօտս սակաւիկ մի: - 657

**ԲԵՌՆԱԿԻՐ +** Եւ քարահատք և *բեռնակիրըն* **ճճռ**` յայլազգեացն եկամուտք էին: - 440

**ԲԵՍԷԼԻԷԼ** - Երկրորդ` շնորհիւ ընկալեալք որպէս *բեսէլիէլ*. եղիաբ ուրիեանց. և սողոմոն: - 269. Եւ ճարտարապետք խորանին` *բեսելիէլ* ոսկւոյ և արծաթոյ: - 344. Նա՛խ առ հրէայսն. որ գիտէին զհոգին սուրբ` շնորհաց բաշխօղ. ուստի ելից հոգին *զբէսէլիէլ* ճարտարապետ. և զեօթնարփեան շնորհս թուէ եսայի...: - 566

**ԲԵՐ +** Երկրորդ ունիմք վկայութիւն ի քրիստոսէ յորժամ ետ զարիւնն ի տեսակ գինւոյն` ասաց, «ո՛չ արբից ի *բերոյ* որթոյ մինչև արբից զդա նոր արքայութեան հօր իմոյ». և ջուրն ո՛չ է *բեր* որթոյ: - 595

երկոտասաներորդն օր է *բնական* **իդ** ժամուց. զորմէ ասի, «եղև երեկոյ և եղև վաղորդայն օր մի»: – 195. Իսկ ծանրութիւն երկաթոյն *բնական* է. վասն որոյ ո՛չ կորնչի: - 202. Եւ տնէ՛ որքան է նիւթ գոլորշոյն. և լուսեղէն բա՛շս արձակէ առ ի ցուցանել թէ ո՛չ է ի *բնական* աստեղաց: - 203. Նա՛խ՝ զի արարիչն աստուած *բնական* զծովս աղի և դա՛ռն արար. զի մի՛ հոտեսցին կենդանիքն ի նմա: - 208. Առաջին՝ *բնական*: - 209. Այլ ես ասեմ թէ՝ *բնական* որակ գունոց **դ** են: - 212. Այս երկուքս *բնական* պատճառ: - 213. Դարձեալ՝ յետ մահու հոգի մարդոյն ծաղկի և գեղեցկանայ առաքինութեամբն իւրով և *բնական* պայծառութեամբն: - 213. Երրորդ՝ զի ադամայ ետ աստուած *զբնական* իմաստութիւնն առ ի ցուցանել զլաւագոյն ծնունդս բանին՝ հրամայէ՛ անունս դնել: - 219. Վասն զի *բնական* լուսաւո՛ր է օդս որ ի մէջ դրախտին: - 222. Երկրորդ՝ զի հողն *բնակա՛ն* ունի զթանձրութիւն, և այլքն խառնմամբ ի նմանէ. և մարմինս մեր թա՛նձր է ի հողոյ: - 229. Եւ այսմ կրկին է պատճառ. *բնական* և բարոյական: - 234. Եւ *բնականն*, Նա՛խ՝ զի նմանիմք երկրի որ յերեսն ունի զգեղեցկութիւն բուսոց, և ի թիկունս ոչ: - 234. Եւ ասեմք այսմ պատճառ *բնական* և բանական: - 236. Եւ *բնական*, Նա՛խ այսպէս. զի ամենայն իր մարմնական ի նոյն տարերաց են բաղկացեալ. վասն որոյ ունին նմանութիւն առ միմեանս: - 236. Է և այլ իմն աննմանութիւն հոգւոյ ըստ իմացմանն. առաւել և նւազ. ուշիմ և ապուշ. չկամ և կամեցօղ. հեզ և յանդուգն. ցանկացօղ և ողջախոհ. ըստ *բնական* բարոյիցն որակացեալ. նման և աննման գոլով իրերաց: - 237. Ասեմք թէ՝ սոքա ի մասնաւոր հոգւոյն բարի են բնաւորեալ նախանձ ցանկութիւն և այլն. և վասն բարւո՛յ են եղեալ. այլ մարդն կամօք իւրովք փոխէ՛ *զբնական* բարին ի չարն: - 237. Տասներորդ՝ զի և բանականս մարդ՝ քան զանբան կենդանիս տգէտ լինէր. վասն զի ամենայն կենդանի ունի *բնական* ճանաչումն իւրոց և օտարաց. ըստ այնմ որ արագիլ արդար՝ կերակրէ զիւր ծնօղսն միայն. և տատրակ մենացեալ ի զուգակցէն, ո՛չ զուգի ընդ ա՛յլ տատրակի: - 238-239. Նախ՝ *բնական*. զի յառաջ եղեալն աչացն անփոփո՛խ է իրօք. և ականջին ձայնն և բանն փոփոխական: - 239. Զի աչաց լոյսն հուր է. և հուրն վերընթա՛ց է. վասն այն ի *բնականսն* նայելով հեշտանայ, և ի բռնութեամբն դժուարի և զարհուրի: - 239. Այսմ գոյ *բնական* և բարոյական պատճառ: - 243. Նա՛խ՝ *բնական*: - 243. Սիրտն իշխա՛ն է անձինն. յորժամ երկնչի՝ զարիւնն առ ինքն ժողովէ իբր զօրք առ թագաւորն. և մնայ մորթն *բնական* գունովն դեղին: - 245. Չորրորդ՝ զի բազմաց լինի նշան պատահական և ո՛չ *բնական*: - 246. Եւ զոմանս ունի խառնեալս ընդ մարմնոյ. որպէս է *բնական* զօրութիւն կենդանականն և շնչականն որպէս ասացաւ ի վերոյ: - 249. Եւ գիտելի՛ է, զի *զբնական* արւեստն տղայքն առաւել ուսանին: - 251. Նոյնպէս և ի բանական որակութիւնս հոգւոյն՝ նման և աննման, հաւասար և անհաւասար բացատրեաց. այսինքն խոհեմ և տգէտ. հեզ և բարկացօղ. ողջախոհ և ցանկասէր. և այլ զանազան բարս *բնական* մարդոյն: - 252. Նախ՝ զի նիւթն այն ունի առ ինքն *բնական* զկենդանութիւն տնկականին. և տնկականն մա՛սն է զգայականին. և զգայականն բանականին. և սոքա ո՛չ որոշին ի բոլորէն. զի մի են էութեամբ ի մարդն թէպէտ ա՛յլ են ներգործութեամբ: - 254. Արդ է՛ այսմ կրկին պատճառ. նախ *բնական*, և երկրորդ բարոյական: - 258. Եւ *բնակա՛ն* է, զի յանկատարէն ի կատարեալն ելանէ. որպէս աստիճանաւ ի գլուխ սանդղոյն. և ի սակաւուն ի բազումս. այսպէս և հոգի: - 258. Ըստ *բնականին* այս է. զի ամենայն իր որ լինի՝ յանկատարութենէ ի կատարումն ելանէ, և ի զօրութենէ ի ներգործութիւն որպէս ի վերոյ ասացաւ: - 267. Զի է՛ որ *բնական* է, և է՛ որ աստուածային, և է՛ որ դիւական: - 268. Իսկ *բնական* երազն բաժանի ի չորս ըստ սրբոյն նիւսացւոյ ի գիրս կազմութեան: - 268. Նա՛խ՝ հանճարն է՛ *բնական* իմաստութիւնն շնորհական: - 270. Դարձեալ՝ ըստ երից *բնական* զօրութեանց հոգւոյն պատկեր եմք աստուծոյ. այլ սրբութեամբ արդարութեամբ և առաքինութեամբ նման եմք աստուծոյ: - 273. Դարձեալ՝ ասեմք եթէ գ կերպիւ մարդն իմանի պատկեր. այսինքն *բնական*, շնորհաց, և փառաց: - 273. *Բնական* պատկեր է, որով իմանամք և կարեմք սիրել զաստուած. և այս հասարա՛կ է բարեաց և չարաց: - 273-274. Եւ բաց յայսցանէ՝ *բնական* որակօք ներհա՛կք են միմեանց դ տարերքդ որպէս ցուցաւ ի վերոյ: - 278. Եւ այլ ևս. նոքա չունէին օրէնք գրաւոր, պա՛րտ էր նոցա յերկար կեալ և ի *բնական* օրէնս կրթել զծնունդս և զազգս իւրեանց: - 291. Եօթներորդ՝ նշանակէ թէ *բնական* և անփոփոխ ո՛չ է անդրանկութիւնն. այլ ստացական և փոփոխական: - 310. *Բնական* որակ տարերացն Սևն է՛ երկրի. և Սպիտակն ջրոյ. Կարմիրն օդոյ. և Դեղինն հրոյ: - 342. Դարձեալ՝ գուբն *բնական* և ներքին սէրն է. և ողորմութիւնն երկրորդ և արտաքին: - 350-351. Դարձեալ՝ աստուած յառաջնումն ծննդեան յորժամ զյանցաւորս ըստ *բնական* մեղացն՝ ջրհեղեղաւն ջնջեաց. յերկրորդումն ծննդեան յորժամ զյանցաւորս ի կռապաշտութիւն՝ կարմիր ծովովն ընկղմեաց. յերրորդումն ծննդեան տուժեաց, յորժամ զյանցաւորս գրաւորական օրինացն պատերազմօք սատակեաց: - 351. Իններորդ՝ ի յօրինակ արդարոցն լուսոյն. որ ո՛չ կարօտին արտաքին լուսոյ, սոյնպէս և մովսէս ո՛չ կարօտէր. զի ո՛չ *բնական* էր

լոյսն. զի աչք *բնական* տեսութիւն ունի, այլ ո՛չ թէ լոյս: - 352. Որպէս նախ քան զօրէնս, *բնական* քննութեամբ ընտրէին մարդիկ. կամ զանճոռնի մեծն, կամ զամենևին փոքրն, կամ զգարշն տեսութեամբ, կամ զվնասակարն, ուտելոյ պիղծ ասէին զսոսա: - 364. Երրորդ` զենումն. զի լիցի բաժանումն արեան և շնչոյ և *բնական* կենդանութեանն: - 365. Երրորդ` ընտրութիւն է ի զենումն. զի բաժանեսցի նախ արիւնն, և ընդ նմա՛ շունչն և *բնական* ջերմութիւնն: - 366. Զի թէ նախ *բնական* ջերմութիւնն պակասի, այս լինի *բնական* մահ. ո՛չ է ուտելի: - 366. Նա՛խ` *բնականն*. որ է բարի իմացուածն և խորհուրդ որ ո՛չ արդիւնանայ: - 368. և Դարձեալ ասեն, *բնական* մեղքն խտրութեան մնաց ի գրաւորն, նոյնպէս ի նորս. որպէս սերմնակաթն և դաշտանին. այլ պատիժն փոխեցաւ հինն ի նորս: - 369. Նա՛խ` նշանակէ՛ զնահապետսն. **իե** ազգ որ *բնական* օրինօք արդարացան նախ, և ապա՛ գրաւորն *բնականաւն* զօրացեալ արդարացոյց զնոսա: - 390. Երրորդ` հեթանոսաց ազգ. որ նախ քան զմկրտիլն *բնական* բարութեամբ և երկիւղիւ գան յաստուածապաշտութիւն և մկրտին: - 390-391. Նա՛խ` բանիւ ասաց. զի նահապետք *բնական* օրէնք ընկալան. աբրահամ. նոյ. և այլք: - 395. Իսկ երկիրն նոր օրինացս ո՛չ *բնական* իմաստութեամբ հեթանոսաց ոռոգի, այլ շնորհօքն աստուծոյ և հաւատով դալարի: - 398. Նա՛խ` *բնական*. զի կամէր աստուած բազմացուցանել զծնունդն: - 401. այսինքն *բնական* և բանական և գրաւոր օրինօք ո՛չ գտեալ. այլ ի ձեռն աւետարանին: - 426. Իսկ ա՛յլ վարդապետք ասեն, թէ ետ *զբնական* օրէնս որպէս նոյի և յառաջ քան զնա: - 467. Եւ *զբնականն* աբրահամու. իսկ զգրաւորն մովսիսի: - 467. Վեցերորդ` դարձուցանել զմարդն յորդէգրութիւն աստուծոյ` *բնական* որդւոյն էր պատշաճ. վասն որոյ որդին աստուծոյ որդի մարդոյ եղև զի զմեզ արասցէ որդիս աստուծոյ: - 468. Այլ ա՛րդ` բանն աստուած եղև մարդ և անմեղ պահեաց *զբնական* կիրս. և ներգործական կրիւքն հնազանդ եղև հօր` մահու չափ և մահու խաչի: - 492. *Բնականն* որ ադամայ: - 494. Եւ այս գիտելի է, զի կրկին են կիրք. նախ *բնական*. և ապա եկամտական: - 496. Եւ է՛ *բնականն* կիրք, որպէս քաղց. ծարաւ. ննջել. աշխատիլ. և այլն: - 496. Եւ ասին սոքա *բնականք*, զի նախ քան զյանցանելն ի դրախտին` բնաւորապէս գոյին առ ադամ: - 496. Եւ դարձեալ զի ակամայքն ի մարդոյս բնութիւն յետամտականք են և անասնականք, և ո՛չ *բնական* բանականիս բնութեան: - 502. Եւ տէրն ի մարդեղութեան իւրում ընկալաւ զոր ինչ *բականն* էր մարդոյս բնութեան. և ոչ զեկամուտ անասնականն: - 502. Զի **բ** օր ասացեալ է ի վարդապետաց. մին *բնական* օր և միւսն շնորհական: - 508. Եւ *բնական* աւուր սկիզբն է ծագումն լուսոյն. և շնորհականին ի մէջ գիշերն: - 508. *Բնական* օրն է մարմնաւոր. որ բաժանէ զպահս և զուտիսս: - 508. Եւ շնորհականն հոգևոր. ուր սկսանին ամենայն տօնք սրբոց **զ** ժամով յառաջ քան *զբնական* օրն: - 508. Այս ըստ *բնական* իրաւանց: - 511. ...և տէր մեր յետ յերից օրինաց` այսինքն *բնական* բանական և գրաւական` երևեալ ի գիշեր կենցաղոյս և իջեալ ի դժոխս աւերելով զնա դարձոյց զերկոսին ժողովուրդս իւր...: – 514. Յինգերորդ որ ուղիղն է. զի **բ** է օր. *բնական* և արուեստական. և ասացեալքդ ամենայն յարուեստական օրս նկատեն և ի չարչարանս: - 516. Այլ պիտո՛յ է *բնական* **գ** տիւ և **գ** գիշեր գոլ ի սիրտ երկրի որպէս ասաց քրիստոս: - 516. Օրէնք սեռական **գ** է. *բնական*. գրաւորական. աւետարանակ: - 528. Ա՛րդ` ըստ կարգի` *Բնականն* ադամայ տուաւ: - 528. Ա՛րդ` տգիտութիւնն *բնակա՛ն* է մարդոյ. փոփոխումն ստացական. և հիւանդութիւնն դիւական: - 531. Իսկ առաքեալն փոխէ՛ զայս կարգ *բնական* ի կարգ արհեստական և զարժանաւորսն նախադասէ: - 535. Առաջին` ի *բնական*. որպէս երէոց, անասնոց, թռչնոց, և մրջմանց. որպէս ցուցաւ ի վերոյ ի ժգ գլուխն, ծա համարն: - 536. Նախ *բնական* խելքն. որ ի բարեխառն կազմուածոյ հանդիպի. որպէս էր` ակիտոփէլին և քուսեայ բարեկամին դաւթի: - 537. Ո՞չ ապաքէն մովսէս ի հինն որոշեաց զսուրբս և անսուրբս. մանաւանդ թէ յաւուրս նոյի գոյր ընտրութիւնս. այսպէս ցուցաւ և մեզ պահելի իբր *զբնական* օրէնս. այլ սոցա ոչինչ է պիղծ ի կենդանեաց: - 552. Երկրորդ պատճառ, զի այսոսիկ անասունքն գործեն ըստ *բնական* կարգին. իսկ մեք ի հակառակն փոխեմք: - 564. Եւ գիտելի է, զի եռակի՛ է սէրն. *բնական*. բարոյական. և շնորհական: - 575. *Բնական* սէրն է առ ինքն: - 575. Յերից. Նա՛խ` ի *բնական* իրաւանց. ըստ այնմ «զոր ինչ կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արարէք և դուք նոցա»: – 577. Եւ այս տուեալ լինի յաստուծոյ ընդ դէմ երկիւղին որով նմանին քրիստոսի. զի ո՛չ երկնչէր ի *բնական* մահուանէն. որ ասէր «հոգիս յօժար է բայց մարմինս տկար»: - 582. Երկրորդ` զի օգնակա՛ն են *բնական* զօրութեանց հոգւոյն: - 583. Այսպէս և ի թիւ երանութեանցս է՛ կարգ *բնական*. զի արժանաւորքն ի վերջո՛յ դնին: - 583. Բայց գիտելի է, զի գործ մկրտութեանն է սրբել զհոգիս յամենայն մեղաց զոր ունիցի. թէ *բնական* թէ ներգործական և ի պատժոց մեղացն. զի թէ նոր մկրտեալն մեռանի, առ ժամայն թռչի ի կեանս յաւիտենականս: - 590. Ապա ուրեմն յիրաւի` զի *բնական* արդարութիւն ի տղայն ո՛չ գտանի, յարդարութենէն աստուծոյ արդարապէս մերժի և ընդ անիրաւսն տանջի: - 591. Գիտելի է, զի նախ

առաջին բաժանի ազգն ի *բնականն* և յօրինացն՝ և ի հոգևորն: - 611. Արդ՝ *բնականն* է մարմնոյն. և օրինացն խնամութեամբ. և հոգևորն որդեգրութեամբ. - 611. Այս *բնական* ազգակցութիւն և աստիճանք օրինացն: - 611. Իսկ օրինաց ազգն որ են խնամիքն, և *բնականն* որ են մարմնականքն, ո՛չ լինին խնամիք մինչ ի **դ** ծնունդն: - 612. Իսկ պոռնկութիւնն ի *բնական* օրէնս և ի գրաւորն և ի նորս խոտեալ է: - 613. Եւ այն որ **բ** ձայնիցն մի է մեսեդին. զի դարն ադամայ և ենովքայ միապէս *բնական* օրինօքն վարեին: - 629. Եւ զի չորք են ձայնք *բնականք* ըստ չորից տարերց, ցուցցի հոգեպէս: - 640. Եւ *բնակա՛ն* է զի նախ ի յանկատարն և ապա՝ ի կատարեալն ելցեն: - 662. Ա՛րդ՝ եթէ ըստ *բնականին* է հիւանդութիւնն, պա՛րտ է բժշկական դեղով առողջանալ. - 665. Իսկ մարմնաւոր մահն բաժանի ի **դ**. այսինքն ի *բնականն*, ի պատահականն, յանձնիշխանականն, և ի խնամականն: - 668. Եւ որպէս այս *բնական* եղև ի մեզ ամենայն մարդոյ: - 670. ...որպէս ասէ մեկնիչն տեսլեան. եթէ սպիտակ հանդերձն շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է. որ սրբութիւն մեղաց մերոց արար քրիստոս. յոր ամենայնքն վայելեցաք. զի յորժամ սրբի հոգին, *բնական* ունի զպայծառութիւնն: - 690. ...քանզի յորժամ սրբի հոգին՝ *բնական* ունի զպայծառութիւնն: - 696. Զի յորժամ սրբի հոգին ի մեղաց, *բնական* ունի զպայծառութիւնն: - 712. Սակայն հաստատի յարութիւնն *բնական* քննութեամբ և սուրբ գրոց վկայութեամբ: - 714. Եւ *բնական* քննութեամբ նախ այսպէս եթէ՝ տեսանեմք ի քաղաքական օրէնս զի գոյ դատաստան. այսինքն բարեացն պատիւ և չարացն պատիժ. - 715. Ապա ուրեմն գոյ յարութիւն. և այս ըստ *բնականին*: - 715. իսկ հոգիք սրբոցն նախ ծաղկին *բնական* պայծառութեամբն իւրեանց որպէս ցուցաւ ի վերոյ, և ապա՛ յետոյ արդեամբք պտղոյն կատարին ի հանդերձեալ կեանքն: - 721. Ասի այսմ բազում պատճառ. *բնական* և բարոյական. և նախ *բնական*: - 723. Արդ ցուցցուք թէ ճշմարիտ անապական է սուրբ խաչն *բնական* քննութեամբ և սուրբ գրոց վկայութեամբ: - 733. Իններորդ, զի *բնական* օրինացն **գ** են վկայք. բանն և գիրն և աւետարանն. որ տուաւ նահապետացն և մարգարէիցն և առաքելոցն: - 742-743. Նախ հոգւոյ ընդ մարմնոյ *բնական* արդարութեամբ հաւասարիլ: - 745. Չորրորդ, կշիռն նշանակէ՛ զգործս մարդկան. ըստ կշռոյ օրինացն հաւասարել և հատուցանել. եթէ ըստ *բնականին* կամ ըստ գրոյն և աւետարանին. որում շատ տուաւ առաւել պահանջել: - 747. Զի նախ քան զյանցանելն ադամ ունէր զկիրս *բնական* և անգոսնելի. որպէս կերակրիլն, ննջելն, և այլն: - 759. Այսպէս և օդն յորս եկաց փրկիչն յետ յարութեանն, փոփոխեսցէ *զբնական* նսեմութիւնն իւր և պայծառասցի որպէս զեթերն: - 759. Նախ բնական առարկութեամբ ըստ փիլիսոփայիցն հասողութեան. և սա՛ կոչի գիտութիւն: - 784. Բարւոք ասացաւ յարարչէն. զի թէ և բնութիւն թարց երևակայութեան, և արհեստ հանդերձ երևակայութեամբ, սակայն կամք արարչական ետ նոցա *բնական* և բանական կարողութիւն. և ոչ ինչ վայրապար կազմեն զտեսակ գոյացական և զտեսակ պատահական. խնդրելով ոմն պարզ նիւթ. և ոմն տեսակացեալ: - 786. *Բնական* բարք մարդոյն - 795

**ԲՆԱԿԱՆԱԲԱՐ +** Նախ *բնականաբար* քննութեամբ: - 733. Այս *բնականաբար*: - 782

**ԲՆԱԿԱՆԱԿԱՆ** - Դարձեալ՝ հանճարն է ի *բնականականն.* գիտութիւնն յուսումնականն. և իմաստութիւնն յաստուածաբանականն: - 270

**ԲՆԱԿԱՆԱՊԷՍ +** Դարձեալ՝ *բնականապէս* ամենայն նախանձ ունի սիրել զինքն, և ատել զայլս: - 128. Իսկ գնդակ որ է կղմնաւոր՝ շարժի հոգին, յորժամ *բնականապէս* լուսափայլի յաստուածային գիտութիւնս տեսութեամբ և մտածութեամբ. և այնպէս հոգէպէս ի յաստուած միաւորի. որպէս աշակերտաց առաքելոց և մարգարէից: - 142. Եւ նախ վասն առաջնոյն ցուցցուք *բնականապէս* և բարոյականապէս: - 162. Զի մարդն ունի զգլուխն ի վեր որպէս երկինքն. և զոտքն ի վայր որպէս երկիրս. վասն որոյ ամենայն ծորմունք *բնականապէս* զառիվա՛յր հոսին. իսկ ծառն ծռեալ ունի զգլուխն ի վայր, և զոտսն ի վեր. կամ թէ ծռեա՛լ ունի զոտս և զստեղունս յայս կոյս և յայն կոյս: - 214. Այլ և գիտելի է, զի ամենայն կենդանեաց *բնականապէս* հնարք ետ աստուած վասն օգտի նոցա և փրկութեան: - 218. Ապա ուրեմն ունի *բնականապէս* զկենդանութիւն: - 256. Արդ՝ տնկական զօրութիւնն *բնականապէս*՝ է նիւթն. որով կազմի և պատրաստի նիւթն առ տեսակս ազգի իւրեանց: - 262. Առաջինն խոհեմք և իմաստունք *բնականապէս*. որպէս նահապետքն առաջինք. աբրահամ. իսահակ. յակոբ. յոբ. կուռնէլիոս. և այլքն: - 269. Դարձեալ՝ *բնականապէս* ըմբռնէ գիտութիւնն զայն զոր ներգործէ բնութիւնն. իսկ գործն աստուածային՝ գիտութեամբ ո՛չ ըմբռնի. այլ հաւատո՛վք իմանի: - 292. Երրորդ՝ ծնաւ իսահակ ո՛չ *բնականապէս* ըստ բնութեան կարգի. զի անցեալ էին զաւուրբք. այլ էր աստուծոյ պարգև: - 304. Զսոյն և մեզ պարգևեաց ծնանիլ ի ջրոյ, և ի հրոյ, և ի հոգւոյ, և յարութեամբն մարմնոյ. իսկ ի մօրէ՛ *բնականապէս*: - 329. Այս *բնականապէս*: - 620. Նոյնպէս և աղքատութիւնն *բնականապէս* բաժանի ի չորս: - 664. Քսանևդ, այժմ ցուցից *բնականապէս* քննութեամբ: - 693. Դարձեալ՝ ծածկութիւն

յանցանաց՝ է՛ *բնականապէս* մեզ ի տերևոյ անտի. իսկ յանդիմանութիւն է ծածկելոց յայտ արարողութիւն. վասն որոյ ամենքեան դժկամակ երևին: - 774

**ԲՆԱԿԱՐԱՆ +** Եւ թէ և նա՛ է *բնակարան*, ապա ո՛չ ինչ ունի քան զմեզ առաւել: - 66. Մետասաներորդ՝ զի թէ է՛ ինքն *բնակարան* և տաճար, կազմէ և զմեզ *բնակարան* և տաճար իւր: - 67. Երեքտասաներորդ՝ զի թէ վասն *բնակարան* գոլոյ՝ մարմին նորա է կենդանարար: - 67. Ապա ուրեմն եղիցին ամենայն *բնակարանացն* մարմինք կենդանարար զոր անհնար է և զմտաւ ածել: - 67. Արդ՝ եթէ առաքեալքն որ *բնակարանք* են հոգւոյն՝ ճանաչեն զհոգին աստուած, և մարդկութիւնն քրիստոսի ո՛չ ճանաչէ, փոքր քան *զբնակարանքն* եղիցի քրիստոս: - 99. Առաջինն է մարդկան *բնակարան*: - 210. Ութերորդ՝ Առաջին երկինն է *բնակարան* հրեշտակաց և հրեշտակացելոց: - 221. Եւ է՛ տաճար որոշեալ. որպէս արտաքին *բնակարանք* մեր: - 319. Նոյնպէս և տեառն մերոյ կոչի տաճար արտաքին *բնակարան*. որպէս կոյսն մարիամ, և հաւատացեալ ժողովուրդք, և շինուածք տաճարաց: - 319. Սոքա՛ են ի սրբութիւն սրբոցն որ է՛ լուսեղէն երկինքն *բնակարան* անմարմին զօրացն: - 345. Եւ արտաքոյ՝ կուրծքն քահանայապետին, որ է՛ *բնակարան* սրտին: - 367. Չորրորդ, սա՛ կոչի տաճար աստուծոյ և *բնակարան*...: – 614. Եւ լինիլ ի յառաջին սրբութեանն տաճար և *բնակարան* հոգւոյն աստուծոյ: - 615. ...որովք լինիմք տաղաւար և *բնակարան* աստուծոյ: - 653.

**ԲՆԱԿԵՄ +** Նոյնպէս և հերձուածօղք պղծեն զտաճարն աստուծոյ և զհաւատն սուրբ՝ որով քրիստոս ի մեզ *բնակի*, և մեք ի նա՛: - 35. Երեքտասաներորդ՝ *բնակիլ* ի սիրտ սրբոց միայն աստուծոյ է. որպէս ասէ յառաջին կորնթացոցն, «ո՛չ գիտէք եթէ տաճար աստուծոյ էք. և հոգի աստուծոյ *բնակեալ* է ի ձեզ»: – 58. Որպէս ասէ առաքեալն, «վասն այսորիկ դնեմ ծունր առ հայր տեառն մերոյ յիսուսի քրիստոսի *բնակելոյ* ի սիրտս մեր»: – 66. Տասներորդ՝ զի թէ նա վասն բնակութեանն երկրպագելի է և աստուած, ո՛չ միայն եղիցի նա՛ աստուած, այլև ամենայն երկնաւորք և երկրաւորքս. որք *բնակեալ* ունին զաստուած և կոչին անուամբ աստուածք: - 67. Այլ խոստովանիմք զբանն աստուած՝ ոչ մասամբ, այլ լրութեամբ իւր մարմնացեալ և մարդացեալ ըստ պօղոսի թէ՝ «ի նմա՛ *բնակէ* ամենայն լրումն աստուածութեանն մարմնապէս»: – 76. Իսկ սուրբն կիւրեղ ընդ դէմ նեստորի զինէր. որ ասէր բնակութեամբ զբանն ի մարմնի. և նախ զմարդն ծնեալ ի կուսէն և շրջեալ ի յերկրի, և յետոյ *բնակեալ* բանն աստուած յետ մկրտութեանն. և յետ յարութեանն փառաւորեաց զնա և զօրացոյց յարակցութեամբ ընդ ինքեան: - 79. Այլ նոքա ո՛չ խոստովանին զաստուած մարդացեալ. այլ՝ կամ ի նախագոյացեալ անձն *բնակեալ* ասեն զաստուածայինն բնութիւն, և կամ շնորհօք որդիացեալ որպէս նեստորի թըւի: - 81. Դարձեալ՝ մի բնութիւն ասէ ապօղինար. որ զհոգի և զմիտս ուրացաւ. և միայն զմարմին ասէ առեալ, և ի տեղի հոգւոյ զբանն *բնակեալ*: - 81. Նախ՝ զի պետութիւնք պատշաճին առ հայր. և հրեշտակապետքն առ որդի իբր յերկուց միացեալ. և հրեշտակքն ի դէմս հոգւոյն իբր նախ եկաւորեալք յամենայն ուրեք, և ապա յորդի և ի հայր *բնակեալ*: - 136. Ութերորդ՝ զի ի լոյ՛ս են *բնակեալ*: - 139. Եւ յօհաննէս զսա օդո՛յ դասէ. վասն այն նոյն անուամբն՝ պօղոս իշխան օդոյս կոչէ. կամ զի յօդս են *բնակեալ* և իշխեն մարդկան: - 150. Եւ միւսն հոգևոր. յորում հոգևոր գոյացութիւնք. այսինքն հրեշտակք *բնակին*: - 180. Ա՛րդ՝ եթէ մարդն անապական էր՝ յապականացու տեղւոջ ո՛չ *բնակէր*. ապա թէ ոչ ի տեղւոջէն եղև ապականացու և ո՛չ ի գործոյն: - 223. Կարգաւոր էր նախ պատրաստել զարքունիս որ է երկինք և երկիր. և զգահոյս որ է՛ դրախտն. և զսպասաւորքն որ են կենդանիքն. և զմեծութիւնս տնկոց և բուսոց. մանաւանդ ոսկւոյ և արծաթոյ և ականց ի սիրտ երկրի գանձել. և ապա՛ թագաւորին *բնակիլ*: - 230. Ուստի միջակ գոլով ըստ էութեան՝ և ի միջակ վայրս դրախտին *բնակեալ*: - 231. Երկրորդ՝ զի թէ այլ և այլ էր հոգի, ի յայլ հոգւոյ տեղիս ո՛չ *բնակէր* այլ հոգի որպէս յայլո՛յ կաղապար. և ա՛յլ դրօշած ի յա՛յլ կնիք. այլ մի է. վասն այն որ յետոյ երևի, յառաջնոյն խառնուածն կարէ՛ *բնակիլ*: - 259. Երրորդ՝ զի ընդդէմ դրախտին *բնակեցաւ* և ի միշտ նախանձէն մաշեցաւ: - 279. Ի դրախտն, զի թանձր մարմնով ո՛չ *բնակին* յիմանալեացն կայանս. և յօդս կախիլ անպատշա՛ճ էր: - 289. Եւ այլք ասեն թէ՝ գետն առ որով *բնակեալ* էր նա՝ փայտ բերէր, անտի անուանեցաւ եբեր: - 299. *Բնակէր* ի ներքոյ գողգոթային ուր ադամայ գերեզմանն էր: - 300. Վասն է՞ր ղովտ ի սոդոմ *բնակեցաւ*: - 302. Նոյնպէս յորժամ *բնակին* բարեպաշտք ի մէջ անհաւատից, Նա՛խ՝ զի աղօթք նոցա պահապան է նոցա: - 302. Բոլորն ամենայն **դճլ** ա՛մ է յաւետեացն աբրահամու մինչև յելսն յեգիպտոսէ՛. այլ զերկու ճե ամն հարքն յերկրին քանանու *բնակեցան.* և զբ ճիե ամն որդիքն յեգիպտոս կացին...: - 337. Չինգերորդ՝ զի և վայրի անասնոց և գազանաց բաժին լիցի ի վաստակն մեր. զի նոցա է երկիրս այս և տեղիք ուր մեք *բնակեցար*: - 372. Չորրորդ՝ զի յայտնեսցի թէ՝ ի մէջ ծառայութեանն յեգիպտոս այնքան բազմացոյց զնոսա խնամքն աստուծոյ. այսքան բազմութիւնս ի տեղիս իւրեանց

խաղաղութեամբ *բնակեալ*՝ ո՞րքան անթիւ բազմացին: - 377. Այլ ի կուսանս հանգչի. որք հրեշտակաց նմանք եղեն կուսութեամբ. վասն այն ասեն աստուած *բնակեալ* է յերկինս ուր կուսանք են հրեշտակք. և ո՛չ յերկրի ուր ամուսնացեալք են: - 404. Դաւիթ եթող զիրէաստան և *բնակեցաւ* յայլազգիս. և որդի նորա եթող զիրէայս և հանգեաւ ի հեթանոս: - 437. Դաւիթ չորս ամ *բնակեցաւ* ի գէթ մինչ մեռաւ սաւուղ. և տէր մեր յեգիպտոս՝ մինչ մեռաւ հերովդէս: - 437. Եւ ի պահպանութիւն աշխարհին հրէից՝ առաքեաց սաղմանասար յերկրէն ասորւոց պանդուխտս որ *բնակեցան* ի սամարիայ և սամարացիք կոչեցան: - 447. Իսկ ի մօր կողմանէ՝ մարիամ էր ի քահանայից ցեղէն, զի մատթան քահանայն *բնակէր* ի բեթլէհէմ, և ունէր երիս դստերս: - 460. Երրորդ՝ զի ո՛չ ինչ յորոց ստեղծ աստուած գարշի *բնակիլ*. մանաւանդ յարգանդի զարդարեալ կուսութեամբ. զի զոր ստեղծ ձեռօք, *բնակէ*՛ ի տան ձեռագործի իւրոյ: - 469. Եւ աւուրք պաշտամանն էր երկոտասան. **Ե** օր քաւութեանն վասն որթոյն յանապատին. և **Է** օր տաղաւարահարացն ի յիշատակ խորանաւ *բնակելոյն* յանապատին ամս խ. և այլ սքանչելեացն զոր գործեցաւ անդ: - 483. Մետասաներորդ՝ փախստեայ դաւիթ *բնակէր* ի ներքնումն այրի. և սաւուղ ննջեաց յարտաքին այրին: - 513. Իսկ զտեղի համբարձմանն քրիստոսի միտք ո՛չ կարէ ցուցանել. զի ի լոյս անմատոյց է *բնակեալ* և ի ներքին կողմն վարագուրին ըստ առաքելոյն: - 519. Բարոյականն՝ նոյի, որ ի բարուց վարդապետեալ *բնակէր* ի յանապատ և պահէր զկուսութիւն **եճ** ամ: - 528. Զի հոգի է աստուած. և յիմացական միտս և ի հոգիս *բնակէ*. և չէ՛ օգուտ մարմնոյն սրբութիւն յորժամ միտքն զբաղեալ է ի չարիս. զի հեռանայ ի սիրոյն աստուծոյ և ի բնակութեանց նորա. «զի հոգին սուրբ փախչի ի նենգութենէ»: – 558. Իսկ յորժամ սուրբ հոգին ելանէ, պիղծ հոգին այսինքն սատանայ *բանկէ*՛ ի նա: - 570. Չորրորդ՝ ի խաղաղութեան *բնակի*. զի ուր խնդութիւն է՝ խաղաղութիւն է. և ուր խաղաղութիւն է՝ խնդութիւն է: - 584. Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, նա յիս *բնակեսցէ* և ես ի նմա: - 600. Մինն բնակութիւնն, և միւսն *բնակեալն*. որ է՛ ժողովուրդ և ժողովարան: - 613. Եօթներորդ՝ զի աստուած սուրբ է որ *բնակէ* ի տաճարն: - 615. Իններորդ սրբեմք, զի *բնակելոցս* ի սմա և պաշտօնէիցս պա՛րտ է սուրբ լինի զի մի՛ պղծեսցեն զսրբութիւնսն: - 615. Երկրորդ, ի կոյսն *բնակեցաւ* բանն **թ** ամիս. և ի խաչն յաւիտեանս յաւիտենից: - 642. Դարձեալ՝ բուրվառն է կոյսն մարիամ. և հուր աստուածութիւնն ի նմա *բնակեալ*. - 645. ...որոց ցանկացան և ելին յաշխարհէս և ի լոյս են *բնակեալ*: - 647. Երկրորդ՝ այն տեղի անմարմնո՛ց է ոչ կարէր մարդս մարմնով անդ *բնակիլ*. - 662. այլ նախ *բնակեսցէ* հոգւով, և ընտանացեալ մտցէ և մարմնով: - 662. և հող զգլխով արկեալ, ի խաւար *բնակիմք* և այլն: - 670. ...զի կենդանիք *բնակին* ի վերայ յերկրի, և մեռեալք ի ներքոյ երկրի: - 677. Այսինքն սուրբն սրբոց որ է արքայութիւնն երկնից. ուր աստուածութիւնն է *բնակեալ*. և քերովբէիւք սպասաւորեալ: - 682. ուր արդարք և մեղաւորք ի միասին *բնակին* կարօտ կերակրոց և ըմպելեաց: - 682. Եւ որպէս ի քրիստոս *բնակեալ* է ամենայն լրումն աստուածութեան որպէս ասէ թեսաղոնիկեցոց. նոյնպէս և ի նեռն ամենայն լրումն անօրէնութեան...: - 707. ...զի ի նմա՛ *բնակէ* գլուխն ամենայն չարեաց: - 707. Այլ և որք ի մի խնամս վայելեցին յաստուծոյ. յարև և յանձրև. և ի մի տեղիք *բնակեցան* և մի պիտոյիւք շատացան. և նոքա զտուօղն ո՛չ ճանաչեցին: - 738. Եւ արդ՝ ի յաւարտիլ դատաստանին յորժամ ասէ եկա՛յք, վասն է՞ր իջանեն յերկիր, կամ ի դրախտն *բնակին*: - 759

**ԲՆԱԿԵՏՂ +** Եւ կամ որպէս ճանապարհորդք հեռացեալք ի տանէ՞ յորժամ դարձցին վերստին ի տունս իւրեանց, նախ թողուն զվերջին *բնակետղն* ուստի դիմեցինն երթալ: - 280

**ԲՆԱԿԵՑՈՒՑԱՆԵՄ +** Նախ՝ զի հովիւն ի դալար վայրի *բնակեցուցանէ*. այսինքն ի վայրենացեալ գրոց սրբոց գիտութիւնն: - 49

**ԲՆԱԿԻՉ +** Երկրորդ՝ զորպիսութիւն և զձև աշխարհիս ցուցանէր ի խորանն եռայարկեան ի չորից նիւթոց փոխանակ **դ** տարերաց յանապական և յապականացու *բնակչաց*: - 342. Զի շաբաթացեալ հանգչիցի երկիր ի չար *բնակչաց*: - 376. Եւ շինուածք են դասք ամենայն արդարոց. նոքին դարձեալ մարմնով *բնակիչք* և հաւատով շինուածք: - 532. Երկրորդ՝ ծառ կենաց են *բնակիչք* վերնոյն սիօնի. տնկեալք յաղբիւրն կենաց որ իջանէ յաթոռոյն աստուծոյ ի մէջ նոցա. ունելով զանմահ կեանս յաւիտենից: - 765

**ԲՆԱԿՈՒԹԻՒՆ +** Որք ուրանան զբնութեամբ միաւորութիւն աստուծոյ մարդացելոյն, այլ միայն *բնակութեամբ* և շնորհիւ որդէգրութեան ելեալ յաստուածութեանն փառս. որպէս ասեն նեստորականքն: - 66. Ա՛րդ եթէ երկրպագելի և աստուած՝ և այս վասն *բնակութեան* աստուծոյ, ապա ուրեմն եղեալ առ ժամայն աստուած և օտար ըստ բնութեան: - 67. Տասներորդ՝ զի թէ նա վասն *բնակութեանն* երկրպագելի է և աստուած, ո՛չ միայն եղիցի նա՛ աստուած, այլև ամենայն երկնաւորք և

երկրաւորքս. որք բնակեալ ունին զաստուած և կոչին անուամբ աստուածք: - 67. Իններորդ՝ զի թէ առանձնապէս մարդ է, ապա հետևի բաժանեալ բնութիւն և բ կամք և կրկին ներգործութիւն. յայնժամ ո՛չ լինի բանն մարդ եղեալ. այլ մարդն *բնակութեամբ* ի փառս բանին բարձրացեալ: - 68. Իսկ սուրբն կիւրեղ ընդ դէմ նեստորի զինէր. որ ասէր *բնակութեամբ* զբանն ի մարմնի. և նախ զմարդն ծնեալ ի կուսէն և շրջեալ ի յերկրի, և յետոյ բնակեալ բանն աստուած յետ մկրտութեանն. և յետ յարութեանն փառաւորեաց զնա և զօրացոյց յարակցութեամբ ընդ ինքեան: - 79. Եւ զի դառնան ամենայնքն ի *բնակութիւնս* իւրեանց: - 196. Չինգերորդ՝ *բնակութիւնք* եղջերւաց և մանր և մեծ էրէոց. ըստ այնմ «լերինք բարձունք են եղջերւաց և վէմք ապաւէնք նապաստակաց»: – 211. Չորրորդ՝ *բնակութիւնք* գազանաց: - 212. Իսկ մեզ հոգևորապէս ետ պարգև *զբնակութիւնս* երկնից...: - 306. Եւ բաց յայսցանէ. կոչի զգեստ *բնակութեան* լոյսն անմատոյց և խաւարն անգիտութեան...: – 318. Եւ այն՝ զի զամենայն ճարպ և զամենայն արիւն ո՛չ ուտէին յամենայն տեղիս *բնակութեան* իւրեանց: - 360. Յամենայն *բնակութիւնս*: - 360. Երկրորդ՝ զի ո՛չ էին բաւական *բնակութեան* երկրին: - 416. Չորրորդ՝ գերիլն ի բաբիլօն՝ զգերութիւն բնութեանս նշանակէ. և եօթանասուն ամն զեօթն դար կենցաղոյս. և ապա դարձումն ի հայրենի *բնակութիւնն* մեր ի ձեռն փրկչին մերոյ և աստուծոյ: - 448. Զի հոգի է աստուած. և յիմացական միտս և ի հոգիս բնակէ. և չէ՛ օգուտ մարմնոյն սրբութիւն յորժամ միտքն զբաղեալ է ի չարիս. զի հեռանայ ի սիրոյն աստուծոյ և ի *բնակութեանց* նորա...: – 558. Մինն *բնակութիւնն*, և միւսն բնակեալն. որ է՛ ժողովուրդ և ժողովարան: - 613. Քառասունք, Վասն *բնակութեան* անտի: - 661. վասն որոյ զնոյն խաչն և զաւետարանն տարեալ ի տուն՝ օրհնեմք *զբնակութիւնս* մեր: - 684. Երրորդ, ասէ առաքեալն թաղէոս, եթէ հոգի ամենայն մարդոյ որ ելանէ ի մարմնոյ, են նոցա օթևանք և *բնակութիւն* ի հանգստեան...: – 691. Ասեմք, շինուած տաճար և *բնակութիւն* երկնից զերանելի մարմինն ասէ: - 695. Իսկ *զբնակութիւն* փառացն այլ ուր պատրաստ ասէ և ոչ տուեալ: - 695. ...և ապա տացի սրբոցն վերին տաճարին *բնակութիւնն*: - 703. Յետ այնորիկ զի՞նչ լինիցի *բնակութիւն* աշխարհի: - 759. Փոփոխեսցի բնութիւն. և *բնակութիւն* աշխարհի...: - 759. Յետ յարութեանն ո՞ւր և ո՞ր քան իցէ տեղիք *բնակութեան*: - 760

**ԲՆԱԿՑԱՊԷՍ +** Եւ այս թէ առընչապէս, և թէ *բնակցապէս* ուղղակի՛ իմասցի. ըստ այնմ, «հայր ի յիս և ես ի հայր». և «հոգւով սրբով գործեմ զգործս»...: - 108

**ԲՆԱՒ +** Չորրորդ՝ զօրութիւն և ներգործութիւն են հակակա՛յ իրերաց. ապա թէ է զօրութեամբ և ներգործութեամբ՝ զո՛յ ինքն ինքեան հակակայ որ է *բնաւ* սուտ: - 168. Զիմաստութիւնն հոմանուն է և ի բազում տեսակս որոշի. և *բնաւքն* ամենայն՝ մտա՛ցն են ներգործութիւն. վասն այն կոչի իմաստութիւն որ է իմացութիւն: - 269. Իսկ բարեաց չար առնել՝ անիրաւութիւն է. որ ո՛չ գոյ *բնաւ* առ աստուած. ո՛չ ի կեանս յայս և ո՛չ ի հանդերձելումն: - 408. Երրորդ, դիւական. որպէս կռոց սուտ մարգարէքն. սեդեկիայն և այլոց բազմաց. որ այժմ երևին ի պատասխանիս կախարդաց. նաև հաւկռիչք և գարէղիբք. որք են *բնաւ* սուտք և ոչինչք: - 536. Ապա և ո՛չ աղօթք և պաշտօն քահանայից կամ տուրք կամ պատարագք է օգուտ հոգւոյն ըստ քեզ որ է *բնաւ* սուտ և չար հերձուած: - 605. Եւ յորժամ ո՛չ առնէ *բնաւ*՝ մահու չափ մեղանչէ: - 620. Իսկ մեծացուսցէն ի կիրակէի, *զբնաւ* տնօրէնութիւնն պատմէ. զի թէ ոչ էր ծնեալ՝ և ո՛չ էր խաչեալ. և ո՛չ յարուցեալ. և ո՛չ զմեզ փրկեալ: - 628. Սուտ են *բնաւ* և մոլորումն է նոցա այն և անօրէնութիւն: - 651. Ո՛չինչ *բնաւ*. քանզի յորմէ հետէ քրիստոս ի գերեզման եդաւ ամենայն հողք օրհնեցան...: - 678. ...և այս բառնի ի հոգւոյն և լինի ամրութիւն և հաստատութիւն. զի զաստուած հաստատապէս ըմբռնեմք և *բնաւ* ո՛չ բաժանիմք ի նմանէ և ոչ մոռանամք: - 722. ...իսկ այս ամենայն բառնի ի մարմնոյն և դնի անմահութիւն անապականութիւն և անչարչարութիւն. զի *բնաւ* ո՛չ չարչարի. - 722. Եւ դ տարերքդ իւրաքանչիւր դադարին ի տեղի իւրեանց և *բնաւ* ո՛չ փոփոխին: - 727. Զի ո՛չ երբէք անկար և անգութ և անիրաւ ասել զնա ցուցանի *բնաւ* ուրէք. զի «յողորմութիւն և յիրաւունս հաստատեալ է աթոռ նորա»: - 778

**ԲՆԱՒԻՆ +** Երանելին պօղոս՝ զխորհուրդն աստուածպաշտութեան յայտնի և մեծ ասէ. ըստ որում երևեցաւ բանն մարմնով. *բնաւին* ապա բաժանելն ի մարմնոյն ամբարշտութիւն է և իմացմամբ և բանիւ: - 93

**ԲՆԱՒՈՐԱԿԱՆ +** Առաջինն է սակաւ ինչ միայն յանցուած տեսութեան ըստ *բնաւորական* մտածութեան նորա առ ամենայն իրս: - 558

**ԲՆԱՒՈՐԱՊԷՍ +** Եւ ասին սոքա բնականք, զի նախ քան զյանցանելն ի դրախտին՝ *բնաւորապէս* գոյին առ ադամ: - 496. Եւ այսպէս լինի կատարեալ. մեղք խառնեալ օտարին գաղտնապէս, ընդ մտածութեանն *բնաւորապէս*: - 558. Ապա *բնաւորապէս* ընդ դէմ գոյ երից որպիսութեանց սա՛ մեզ

չորրորդ գոլով. ոչ ունել ինչ ի մտի. մոռանալով միշտ. ո՛չ գիտել և ո՛չ յիշել ինչ զանտի կենաց: - 775. Յաղագս որոյ որ ինչ գոյ միոյն յայտնի և ներգործական մասունք, գոն նոքա և միւսոյն *բնաւորապէս* ծածուկ և զօրութեամբ: - 786

**ԲՆԱՒՈՐԻՄ +** Դարձեալ՝ այն զօրութիւնն միշտ է. զի *բնաւորեալ* է ընդ ներգործութեան. իսկ միւս զօրութիւնն երբեմն է. զի կամ նախ է ներգործութեան. որպէս մանկան հիւսնել: - 168. Նա՛խ՝ զի սերմնական զօրութիւնն է ի մէջն *բնաւորեալ*. ուստի բոլորապէս և հաւասար տայ շարժիլ տնկոյն: - 213. Ասեմք թէ՝ սոքա ի մասնաւոր հոգւոյն բարի են *բնաւորեալ* նախանձ ցանկութիւն և այլն. և վասն բարւո՛յ են եղեալ. այլ մարդն կամօք իւրովք փոխէ՛ զբնական բարին ի չարն: - 237. Եւ այս ներգործեալ եղև ի յադամ. և կամ առեալ ի քրիստոս. և կամ *բնաւորեալ* ի մեզ: - 275. Չորրորդ՝ միաւորութիւն ասեմք գոլ և զգանգումն որ ի նա է՛ և ի չորո՛յ *բնաւորեցաւ* լինիլ. յորում ո՛չ ամբողջ պահի բան որակութեանն: - 476. Դարձեալ, *բնաւորեալ* է մարդոյ՝ զի ամենայն ոք կարծէ զինքն ճշմարիտ և արդար. այլ որ ունի զճշմարտութիւնն նա՛ է ճշմարիտ և արդար: - 551. Այլ և ի յանբան կենդանիս *բնաւորեցաւ* գոլ. որպէս ուղտ խոհեմ. և առիւծ արի. տատրակ ողջախոհ. և արագիլ արդար: - 581. Եւ ըզկուրծն բախելն, որ *բնաւորեալ* է կանանց յապաշաւելն զկուրծսն բախել և ողբալ: - 628. Իսկ է՛ իր ինչ ի բոլոր տեսակս մարդկային *բնաւորեալ*, և ո՛չ է բնութեամբ. որպէս այս: - 773. Իսկ ուղղակին. զի մոռացումն բնաւորեալ է առ խառնուած կազմութեան մարդոյ. իսկ խրատ՝ յանդիմանութեան է՛ ի ցոյց ինքեան: - 774. Զի հաճելի՛ է *բնաւորեալ* գովութիւն մարդոյ. ըստ որում մեծարեցաւ տիրական պատուով. և է՛ այս հասարակ: - 774. Եւ այլք թէ՝ պատրուակ գոն ի խինծս արգանդի *բնաւորեալ*. յիւրաքանչիւր աւուրս հնգից՝ մին մին քակտին երկամբք. և ապա՛ արձակի ծնունդն: - 785. Զլինիլ արտասուաց՝ ուսուցանեն գիրք կազմութեան և որ ի բժշկաց, յերիս բաժանմանէ *բնաւորեալ* կերակրոց: - 786

**ԲՆՈՒԹԵՆԱԿԱՆ** - Զի գ են եղանակք անուանց. այսինքն *բնութենական* որ ի նախնւոյն կոչի: - 312. *Բնութենական*, որպէս ցասումն և ցանկութիւն: - 318

**ԲՆՈՒԹԵՆԱԿԻՑ +** Այլ զի մեք թողեալք և անտես եղեալք յաստուծոյ վասն յանցանացն, զղջմս մեր տպաւորէ՛ յինքեան. *բնութենակից* գոլով մեր և գլուխ անդամոցս: - 42. Զորօրինակ՝ որդի թագաւորի պատկե՛ր է թագաւորին. զի *բնութենակից* է նմա: - 273. «Եւ առն ամենայնի գլուխ է քրիստոս». զի անդամք քրիստոսի եմք և *բնութենակիցք*: - 532. Երկրորդ, ընդ նոսա այլ ընդ այլո՛յ է միացեալ. իսկ ընդ եկեղեցի՝ առ *բնութենակից* և գոյակից: - 757

**ԲՆՈՒԹԻՒՆ +** Երկրորդ, այլ և ո՛չ է *բնութեան* բերք և արուեստից, եթէ ամենայն են ի հարկէ. զի զանազան *բնութիւնք* և արուեստք զանազանապէս ներգործեն: - 8. Աստ ուրեմն ի հարկէ՛ երևեցաւ թէ գոն և են սոքա ասացեալքս, այսինքն գործ *բնութեան* և գործ կամաց և գործ պատահմանց. և ո՛չ ոք ուրաստ լինի վասն սոցա: - 8. Դարձեալ ասեն թէ՝ աստեղք ունին *բնութիւնս* ներհակս միմեանց. չար և բարի. և միմեանց դիպեալ ներհականան իրերաց. և առնեն չար կամ բարի խռովութիւն կամ խաղաղութիւն. աւեր կամ շինութիւն. և այլն: - 12. Դարձեալ ասեն ըստ փիլիսոփային թէ՝ ո՛չ աստուած՝ և ո՛չ *բնութիւնն* և ո՛չ արհեստ՝ վայրապար իրս երբեք ստեղծանեն. ապա թէ աստեղքն ո՛չ ունին զօրութիւն ազդելոյ՝ վայրապա՛ր են ստեղծեալք յարարչէն: - 13. Նախ՝ եթէ դու քեզէ՛ն խոստովանեցար եթէ ոչ գոյ հարկ. այլ՝ աստուած և *բնութիւնն* և արհեստն ևս ներգործեն. ապա թէ է գործ արհեստի և *բնութեան*, ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. Նախ՝ եթէ չարն ո՛չ է յաստուծոյ և ո՛չ ի բնութենէ և ո՛չ ի *բնութեան* և ո՛չ է *բնութիւն*: - 16. Ասեմ զառաջինն եթէ՝ չար ո՛չ է յաստուծոյ. զի աստուած բարի՛ է *բնութեամբ*. և ի բարւոյն չար ո՛չ գայ յառաջ. որպէս ո՛չ ի լուսոյն խաւար: - 16. Այլ և ո՛չ ի բնութենէ. զի *բնութիւնք* ամենայն հրեշտակաց կամ մարդկան բարի՛ են ի բարւոյն յառաջ եկեալ. այլ չարն է՛ յանձնիշխան կամաց եկամուտ ի *բնութիւնս*: - 16. Այլ և ո՛չ ի *բնութեան*. զի ո՛չ է չարն ի բնութեան ուրուք. այլ արտաքոյ *բնութեան* պատահեալ: - 16. Այլ և ո՛չ է *բնութիւն*. ո՛չ մասն և ո՛չ բոլոր. այլ պակասութիւն ունակութեան. զի բարին ունակութիւն է, և չարն պակասութիւն նորին. որպէս խաւարն լուսոյ, և հիվանդութիւնն առողջութեան, և մահ կենաց: - 16. Ուստի յա՛յտ է թէ սերմանեաց ի *բնութիւնս* զբարին, և օրէնս եդ բարւոյ. այլ և խրատ և յորդորումն և պարգևս բարեաց: - 17. Դարձեալ ասեմք թէ՝ ըստ ինքեան սոքա ոչ են չար. այլ բարի. որպէս տգէտն ի մեղաց. և բարկութիւնն ընդդէմ չարեաց. և ցանկացօղն բարեաց. զի ըստ *բնութեան* գործելով ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփային: - 19. Դարձեալ ասեմք թէ՝ սոքա ո՛չ են *բնութիւնք* ի հոգին. այլ որակութիւնք զանազանք և աննմանութիւնք. որպէս պատկերք երեսացն: - 19. Նոյնպէս չափ և սահման՝ *բնութեա՛ն* է: - 23. Իսկ չարն արտաքո՛յ է էութեան և *բնութեան*. վասն որոյ անբաւ է և անպատճառ: - 23. Ո՛չ է ըստ չարափառացն ասել ուղղակի՝ թէ նախանձու կամ վասն փառաց որպէս ասեն, զի

անգիտութեամբն պատուեսցի. ընդունա՛յն է կարծիքս այս. ասել զոր չէ՛ արժան անախտ և պարզ *բնութեանն* աստուծոյ: - 24. Հինգերորդ՝ Կարէ՞ և հայր ծնեալ ասիլ ի նոյն *բնութենէ* գոլ: - 29. Վեցերորդ՝ Հայր անուն արար չութեան՞ է, թէ *բնութեան*: - 29. Երկրորդ՝ օտար ի *բնութէ* և արարած ասեն: - 29. Չորրորդ՝ ոչինչ արգելէ ըզհոգին լինիլ որդի, թէ է՛ ի նոյն *բնութենէ*: - 30. Հինգերորդ՝ Հայր և Հոգի ո՛չ մարմնացեալ. թէպէտ մի *բնութիւն* է երրորդութեանն: - 30. Վեցերորդ՝ Մարդկային *բնութեամբն* աստուած է, թէ աստուածութեամբն մարդ: - 30. Եօթներորդ՝ Վասն է՞ր ուրանան քաղկեդոնիկք *զբնութեամբ* միաւորութիւնն: - 30. Մետասաներորդ՝ Թէ ո՞րպէս ասէ աստուածաբանն *բնութիւնք* երկուք: - 30. Չորեքտասաներորդ՝ Զի՞նչ մի *բնութիւն*. և զի՞նչ երկուս. և զի՞նչ երկուցն եղեալ մի *բնութիւն*: - 30. Երկրորդ՝ է՛ դարձուցանել զիմացումն ի հաւատալեացն, և յայնցանէ որ ածեն զմարդն առ հաւատալն. այնպիսին խաբեալ է. զի *բնութեամբ* է մարդոյ ո՛չ տեսանել զյետոյս իւր. և ո՛չ առանց աչաց հայելոյ: - 31. Երրորդ՝ է՛ նրբութիւն իմանալեացն և *բնութիւն* իմացմանն. որպէս բժոտ աչքն ո՛չ տեսանէ զմազն ի հեռաստանէ: - 31. Մետասաներորդ՝ զի հայրենի՛ է եղեալ աւանդութիւնն, և սովորութիւնն ստացական *բնութիւնն*: - 33. Երրորդ՝ հրէայքն ո՛չ խոստովանին երեք անձինք և մի *բնութիւն*: - 34. Եւ սոքա ուրանան զերրորդութիւն անձանցն ի միում *բնութեան*: - 34. Ոմանք սոսկ մարդ ասելով բաժանեն զաստուածութիւնն **բ** *բնութիւն*, **բ** կամք, և բաժանեալ գործ, և այլն: - 35. Վեցերորդ՝ հակառակէ քրիստոսի՝ և քրիստոնէից. և սոքա հակառակին սուրբ եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ. և զոր բանն աստուած առեալ զմարդկայինս *բնութիւն* միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն՝ սոքա ընդդէմ նմին որոշեն զբանն ի մարմնոյն. զի մի՛ իցէ աստուած մարդացեալ ըստ նոցա՝ և մարմինն աստուած. և պատճառս հայթայթելով պատրեն զմարդիկ: - 35. Ապա ուրեմն *բնութեամբ* և էութեամբ է որդի. և ոչ թէ կամաւ կամ ոչ կամայ: - 36. Իսկ թէ ոչ կամաւ. ո՛ է որ զնա բռնադատեաց. զի *բնութիւնն* ողջախո՛հ է. և յայտնէ զայս կուսութեամբ կեալն բազմաց: - 36. Զի և յօհան դամասկացին ասէ հարկ գոլ ամենայն սկզման ունել դադարումն. այլ զի հրեշտակք և հոգիք ոչ դադարին, այս կամա՛ցն աստուծոյ է պահպանութիւն, և ոչ *բնութեան* նոցա. զի յո՛չ էից եղեալքն՝ կարեն յոչ էութիւն փոխիլ: - 37. Այլ մեր պատասխանին առ այս՝ է՛ այս ինչ, թէ միշտ ծնունդ է ի հօրէ ըստ *բնութեանն* որդի. այլ անձամբ կատարեալ. որպէս լոյս ի հրոյն միշտ ծնանի և ոչ է անկատար՝ յօրինակ որդւոյ: - 37. Դարձեալ առարկեն, եթէ աստուած է հայր՝ և անծին է *բնութեամբ*, և որդի ծնեալ է, ապա ուրեմն ո՛չ է որդի աստուած. զի ծնելութիւն և անծնելութիւն հակառա՛կ են միմեանց. որպէս սեաւ սպիտակի կամ լոյս խաւարի: - 38. Իսկ այսոքիկ առանձնաւորութիւնք են հօր և որդւոյ. և ո՛չ են *բնութիւնք* անծնելութիւնն և ծնելութիւնն. այլ ի մի և ի նոյն *բնութեանն*: - 38. Ապա թէ ոչ՝ հա՛րկ է քեզ ասել ըստ բազում անուանցն և բազում *բնութիւնս* գոլ աստուծոյ: - 38. Եւ զի ո՛չ է անծնելութիւնն *բնութիւն* աստուծոյ՝ որպէս ասել թէ աստուած: - 38. Երկրորդ՝ զի անծնելութիւն և ծնելութիւն ըստ քո ասելոյդ եթէ *բնութիւն* իցէ՝ հակառակութիւն եդեր յաստուածութիւնն: - 38. Ապա ուրեմն ո՛չ է անծնելութիւնն և ծնելութիւնն որիշ որիշ *բնութիւն*. այլ ի նոյն ի մի *բնութեանն* աստուծոյ: - 38. Դարձեալ՝ զի յիմարութիւն և իմաստութիւն են ի նոյն և ի մի *բնութիւն* մարդոյն, և ո՛չ ասին հակառակ միմեանց. այլ միապէս ունի յիմարն զիմաստնոյն *բնութիւն* և զսահման: - 38. Այսպէս անծնելութիւն և ծնելութիւն ո՛չ են հակառակ միմեանց *բնութիւնք* այլ ի մի և ի նոյն *բնութիւնն*: - 38. Հինգերորդ առարկեն, թէ իցէ մի և նոյն *բնութիւն* հօր և որդւոյ, և որդի ծնեալ ի նոյն *բնութենէ*, կարէ՛ ասիլ և հօր ծնանիլ ի յորդւոյ ի նոյն բնութենէն. զի *բնութիւնն* մի է: - 38. Դարձեալ՝ ո՛չ կարէ ծնանիլ որդի զհայր՝ թէպէտ ունի զհօր *բնութիւնն*. որպէս դու ծնեալ ի հօրէն քո՝ ո՛չ կարես ծնանիլ զհայր քո և լինիլ հայր հօրն քում. թէպէտ ունիս յամենայնի *զբնութիւն* հօր քոյ: - 38. Վեցերորդ առարկեն թէ՝ որ հայր կոչեմք աստուծոյ՝ *բնութեա՞նն* է անուն՝ թէ արարչութեանն: - 39. Թէ *բնութեանն* է, ապա ասեն որդի ո՛չ ունի զնոյն *բնութիւնն*. զի *բնութիւնն* մի է աստուծոյ: - 39. Եթէ որպէս հօր, է՛ հայրութիւն միայն. իւր լինի և *բնութիւնն*: - 39. Պատասխանեմք՝ թէ հայր ո՛չ *բնութեանն* է անուն՝ և ո՛չ արարչութեանն. այլ առանձնաւորութեանն. զի այնու յատկանայ յորդւոյ և ի հոգւոյ: - 39. Դարձեալ ասի մեծ ըստ պատճառին, և հաւասար ըստ *բնութեանն*: - 39. Դարձեալ ասի մեծ բանն աստուած քան զմարդկային *բնութիւնս*: - 39. Թէպէտ մեկնեն և այլ ազգ, թէ որ զմարդկայինս *բնութիւն* հաւասարեցոյց փառաց իւրոց և հաղորդ արար աստուածութեանն, ոչ ինչ զրկումն համարեցաւ. զի *բնութիւնն* մի է: - 39-40. Դարձեալ քննեսցուք ըստ մեզ. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ հայր մեծ է քան զորդի. զի երկոքին նոյն ինքն աստուածութեանն իմանին. ըստ այնմ որ զմեր նուաստ և տկար *բնութիւնս* միացոյց ընդ իւրում աստուածութեանն, և անտեսանելին տեսանիւր՝ և ծառայի կերպիւ շրջէր վասն տնօրէնութեան՝ ասի փոքր յայս միաւորութեանս քան զհայր. իսկ ըստ այնմ որ է՛ անճառ և նախքան զյաւիտեանս ծնունդ ի

հօրէ՛, հաւասա՛ր է հօր և ոչ փոքր: - 40. Այլ զի խոնարհեցաւ ի բարձրութենէ փառացն և ընդ նուաստ *բնութեան* մերում միաւորեցաւ. ա՛յս է որ առաքեալ ասի: - 40. Երրորդ՝ զի է՛ հնար առնուլ ի վերայ մարմնական իմաստութեանց՝ և արհեստից հանճարաց՝ և բնականին ներգործութեանց ի *բնութիւն* իւրին յառաջ ածելով զէութիւնն. թէ ասեմք զիմաստութիւնս զայս ստեղծեալ նախկին. որ ասացաւ «ամենայն գործոց»: - 40. Ապա ուրեմն ծնունդն նախքան զամենայն բլուրս՝ էր ի սկզբանն ի *բնութենէ* հօր. իսկ ստեղծումն վասն մարմնալոյն. զի իւր է մարմինն: - 41. Տեսցուք և զգործն յաղագս որոյ օծաւ. այսինքն միացաւ մարդկութիւնն աստուածութեամբն. զի «գործք ձեռաց նորա արդարութիւնք և իրաւունք են» ասէ. այս զի ճշմարիտ և անաչա՛ռ արար դատաստան. և իրաւա՛մբք զգերեալ *բնութիւն* մարդկան յազատութիւն դարձելոյց: - 41. Իսկ այլ վարդապետք ասեն թէ՝ բանիւս այսու՝ ցուցանի կերպ աստուածային ծննդեանն. քանզի ի ծնունդն՝ ծնեալն առնու *զբնութիւն* ծնողին որ է՛ կատարելութիւն: - 41. Արդ ասի որդին ծնեալ և ստեղծեալ. զի ի ստեղծմանէն իմանի անփոփոխութիւն հօրն. և ի ծննդենէն միութիւն *բնութեանն* հօր և որդւոյ: - 41. Առ որս ասեմք՝ թէ որդի ո՛չ ասի անդրանիկ վասն գոլոյն ի կարգէ ստեղծուածոց, զի ո՛չ ոք ստեղծուած՝ էառ *զբնութիւն* աստուծոյ որպէս որդին: - 41. Եւ այս վասն միութեան *բնութեան* և կամաց հօր և որդւոյ: - 42. Գլուխ գոլով մեր և լեզու. զտկարութիւն *բնութեան* անդամոցս ցուցանելով հօր: - 42. Երրորդ՝ ի խրատ մեզ. զի որպէս չարչարանօքն ազատութիւն արար մարդկային *բնութեանս*, այսպէս ամէն ոք չարչարանօք իւրովք ազատեսցի ի պատժոց ներգործական մեղացն: - 43. Զի նմա՛ *բնութեամբ* է հայր, և մեզ ըստ շնորհաց: - 43. ...աստուած վասն մարդկութեանն, և հայր փառացն որ է բանն աստուած ի *բնութենէ* հօրն ծնեալ անմարմին. որ յետոյ միաւորեցաւ ի մարմին: - 44. Հինգերորդ՝ որ *բնութեամբ* անկարելի է. որպէս ծնեալն կրկին ծնանիլ. և յուղտու ընդ ասեղ անցանել: - 44. Եւ թէ լինէր՝ գոյր և ի *բնութենէ* օտար. հետևէր ապա ոչ գոլ որդի հօր. թէ ոչ էր ի նոյն *բնութենէն*. ապա և ոչ հայր. զի հայր որդւո՛վն է հայր: - 44. Տե՛ս՝ զի ի մի *բնութիւն* օտարութիւն ո՛չ ասի. վասն այն է աստուծոյ կամքն մի և ներգործութիւնքն մի. զի *բնութիւնն* մի է: - 45. Տարակուսելի է առ այս, զի թէ հա՛րկ է որոց *բնութիւնքն* մի գոլ՝ նոցա և կամքն և ներգործութիւնն մի լինիլ. ընդէ՞ր ապա զի մարդկային *բնութիւնս* մի է և նոյն հօրն և որդւոյն՝ և ո՛չ է կամքն և գործքն մի: - 45. Եւ պատճառն է այս. զի թէպէտ մի է *բնութիւն* ծնողաց և ծնիցելոց, բայց ոչ ունին զմի կամս. զի հատեալ բաժանեցաւ որդին ի հօրէն: - 45. Ասեմք զայս ըստ մարդկութեանն. զի ո՛չ ունէր *բնութիւնս* մեր. այլ յորժամ միացաւ ընդ բանին և եղև որպէս առօղն և առեալն իշխան և տէր ամենեցուն: - 46. Այլ որպէս բանին սեպհական է և *բնութեամբ* և ո՛չ ստացմամբ, այսպէս իմացիր և մարմնոյն վասն անճառ միաւորութեան բանին զի իւր է մարմինն. վասն այն ոչ ինչ բանին է՝ ասի մարմնոյն: - 46. Որ ցուցանէ թէ՝ ամենևին ժամն այն ո՛չ ումեք է հասանելի յեղելոցս, այլ առաջին անեղ *բնութեանն* աստուծոյ: - 48. Անանուն անուանելի է աստուած. զի անունն սահմա՛ն է. և սահմանն յայտնիչ *բնութեանն*: - 49. Բայց թըւի թէ՝ Էն և Աստուածն մեծ է աստուծոյ *բնութեանն* քան զայլսն: - 49. Այսորիկ իբր առնչակա՛ն են և ո՛չ առանձին *բնութեանն*: - 49. Նախ՝ զի է ի *բնութենէ* հօր: - 49. Զի արդարութիւն արար քրիստոս *բնութեանս* մերոյ գերեալ ի սատանայէ՛: - 50. Էառ փրկիչն զամենայն, զի փրկեսցէ զամենայն. բաց ի մեղաց. զի մեղքն եկամուտ է և ո՛չ է ի *բնութենէս*. զի *բնութիւնս* անմեղ ստեղծաւ յաստուծոյ: - 50. Զի ասեն զմինն արարիչ՝ զօրութեամբ և *բնութեամբ* անսահմանելի: - 51. Իսկ զմիւսն գործակից՝ զօրութեամբ անսահմանելի. զի իւր ասեն արար գործակից. իսկ *բնութեամբ* սահմանելի. զի արարած է: - 51. Իսկ զմիւսն զօրութեամբ և *բնութեամբ* սահմանելի. զի արարած և պաշտօնեայ և ծառա՛յ է ասեն: - 51. Ապա ասեն՝ թէ գոյացութիւն է և ո՛չ յայլում՝ այսինքն ի հայր, օտա՛ր է ի *բնութենէն*. արարա՛ծ է և ո՛չ աստուած: - 52. Կամ նա՝ զի և հայր է ամենակատար՝ ընդէ՞ր ո՛չ լինիցի որդի, զի է՛ ի նոյն *բնութենէն*: - 53. Ասեն դարձեալ, օրինակ տուք զի լիցի ի նոյն *բնութենէն* մինն ծնունդ՝ և միւսն ո՛չ ծնունդ. և ապա՛ հաւատամք աստուած զհոգին: - 53. Պատասխանեմք թէ ցո՛յց մեզ սոյնպէս աստուած երեք անձինք ի մի *բնութիւն*. և ես ցուցանեմ զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ: - 53. Եւ ապա՛ զադամ, զի ունի զսէթ ծնունդ՝ և զևա ո՛չ ծնունդ. այլ հատումն ի նոյն *բնութենէ*. և ընդ միով սահմանաւ գոլ ծնողին և հատմանն և ծնիցելոյն: - 53. Վեցերորդ՝ որ փոխին այլք յայլոց *բնութենէ* վասն առատութեան *բնութեանն*. որպէս կարպասածին ճըճին ունի սա ծնունդ սերմամբ իւր զնմանն. և ունի ելումն զկերպասն: - 53. Ասեն դարձեալ թէ՝ և հեթանոսք մի աստուածս անուանեն զամենայն կուռս, այլ բազումք են. որպէս և մարդկութեանս մի ասի *բնութիւն*, այլ բազումք են մարդիկք. ապա և դուք բազմաստուածք էք: - 54. Իսկ աստուած ո՛չ այսպէս. այլ որպէս մի է *բնութեամբ*՝ և կամօք և զօրութեամբ մի: - 54. Եւ այսքան է միաւորութիւնն, զի որքան մին ինքն առ ինքն ունի *զբնութիւնն* և զզօրութիւնն և զկամքն, նոյնքան և ունի առ երկուսն. թէ զհայր իմանաս՝ թէ զորդի՝ թէ զհոգին: - 54. Դարձեալ հարցանեն

թէ՝ զիա՞րդ ասէք երեք և մի *բնութիւն*. զի գ միոյ *բնութեանն* ո՛չ հաղորդի. այլ մինն հաղորդի միոյ *բնութեանն*, և երկուքն երկուքին. և երեքն երեքին. զի որքան է թիւն, այնքան բնութեան թըւակից լինի: - 54. Եւ այլ անուն՝ այլոյ *բնութեան* ո՛չ թըւակցի. որպէս ո՛չ մի երկուին և կամ՝ երկուքն երեքին: - 54. Ապա ուրեմն զի դուք **գ** ասէք՝ հայր և որդի և հոգի, ըստ թըւոյն և երեք *բնութեան* հաղորդին և ո՛չ միոյն: - 54. Պատասխանեմք թէ՝ ամենայն թիւ ո՛չ *բնութեան* է յայտնիչ՝ այլ քանիութեան ներքոյ արկելոյ թըւին: - 54. Տե՛ս՝ զի այլ և այլեն *բնութեամբ*, և անւամբ թըւակից առնէ: - 54. Իսկ մովսէս՝ որ միոյ *բնութեան* էին հաղորդք և միոյն անւան քերովբէքն, մի յաջմէ և մի յահեկէ ասէ: - 54. Եւ իմաստասէրքն զհոմանունսն որ ո՛չ էր ի նոյն տեսակէ կամ ի *բնութենէ*՝ թւակցէին: - 54. Նաև բնական քննութեամբ. զի յորժամ ասես՝ մի և մի՝ եղև երկու. և այժմ ունի զերկուին *բնութիւն*: 55. Իսկ յորժամ քակես՝ լինի մի և մի. քակեցաւ այժմ ի յառաջին *բնութենէն* ըստ քեզ՝ և ունի դեռևս զնոյն համարն: -55. Եղև ապա նոյն իրն *բնութիւն* և ո՛չ *բնութիւն* որ անկա՛ր է: - 55. Ապա ուրեմն և հայր և որդի և հոգի թէպէտ թըւով գ են, այլ ոչ **գ** *բնութիւնք*: - 55. Տասներորդ՝ թէ բանն աստուծոյ և հոգին արարա՛ծ են և այլ *բնութիւն*, յայնժամ ո՛չ լինի մի աստուած. այլ բազում և զանազան աստուած. զի յոլովութիւնն յոլովութիւն է աստուծոյ. որպէս թէ երեք *բնութիւնն* երեք աստուած, և երկու *բնութիւնն* երկու աստուած: - 56. Հինգերորդ ասեն, եթէ հոգին սուրբ առնու *զբնութիւնն* ի հօրէ՝ լինի որդի նորին. զի այն կոչի որդի որ ունի *զբնութիւնն* ի հօրէ ի նոյն տեսակէ: - 60. Իսկ թէ ո՛չ ունի *զբնութիւնն* հօր աստուծոյ՝ ո՛չ ուրեմն է աստուած: - 60. Պատասխանեմք եթէ՝ թէպէտ հոգին ունի *զբնութիւնն* ի հօրէ՝ սակայն ո՛չ ծննդեամբ որպէս որդի, այլ բղխմամբ. որպէս շունչն և բանն ունին զէութիւնն հոգւոյն այլ և այլ կերպիւ. և որպէս ադամ յառաջ էած յինքենէ զսէթ և զևա. զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ. և ունին երեքեանն զմի և զնոյն *բնութիւն* մարդոյ: - 60. Եթէ զհոգին ի հօրէ և յորդւոյ ասէք, զա՞նձն ասէք բղխեալ, եթէ *զբնութիւնն*: - 62. Զի եթէ *զբնութիւնն*, ահա բաժանեցիք *զբնութիւնն* ի բղխօղ և ի բղխեալ. որպէս ի ծնօղ և ի ծնեալ. որ է մակեդոնի և արիոսի: - 62. Չորրորդ՝ խօսքն նոյն է *բնութեամբ* ընդ բանին և մտացն. և հոգին սուրբ նոյն է *բնութեամբ* ընդ հօր և որդւոյ: - 66. Որք ուրանան *զբնութեամբ* միաւորութիւն աստուծոյ մարդացելոյն, այլ միայն բնակութեամբ և շնորհիւ որդէգրութեան ելեալ յաստուածութեանն փառս. որպէս ասեն նեստորականքն: - 66. Այլ ի հարկէ բ գոլ խոստովանին. զոմն *բնութեամբ*՝ և զոմն շնորհիւ: - 66. Վեցերորդ՝ զի թէ մեք շնորհիւ՝ որդեգրեալքս կերպանամք առ ճշմարիտ և *բնութեամբ* որդին, և թէ և նա՛ է ըստ մեզ շնորհիւ, պիտո՛յ է նմա վերնագոյն *բնութեամբ* որդի մարմնացեալ ի յոր կերպասցի և սա՛ ի նմանութիւն նորա շնորհօք որդի: - 67. Ա՛րդ եթէ երկրպագելի և աստուած՝ և այս վասն բնակութեան աստուծոյ, ապա ուրեմն եղեալ առ ժամայն աստուած և օտար ըստ *բնութեան*: - 67. Վեշտասաներորդ՝ մանաւանդ զի յոյժ անվայելուչ է կարգել զծառայն ընդ տեառն՝ և զստեղծուածն ընդ ստեղծողին՝ յորժամ ա՛յլ է *բնութեամբ*: - 67. Իննևժերորդ՝ զի թէ առանձնապէս մարդ է, ապա հետևի բաժանեալ *բնութիւն* և բ կամք և կրկին ներգործութիւն. յայնժամ ո՛չ լինի բանն մարդ եղեալ. այլ մարդն բնակութեամբ ի փառս բանին բարձրացեալ: - 68. Քսաներորդ՝ այսպէս Երրորդութիւնն լինի չորրորդութիւն. և թիւ և աւելւած եղեալ ի *բնութիւնն* և ի դէմքն. եթէ ա՛յլ է առանձնապէս մարդ և ա՛յլ աստուած: - 68. Զկատարեալն ի վերայ անձի՞նն ասէք, թէ ի վերայ *բնութեանն*: - 68. Զի թէ ի վերայ *բնութեանն*, **բ** կատարելութիւն մուծիք յԵրրորդութիւնն. զի Երրորդութիւնն մի *բնութիւն* է կատարեալ. և մի *բնութիւն* մարդոյ: - 68. Զի թէ աստուած մարդացեալ, ապա զիա՞րդ ուրանայք և բաժանէք յերկուս *բնութիւնս* զաստուածն և մարդն: - 68. Ա՛րդ՝ ո՛վ բաժանօղք, ո՞ր *բնութիւն* է ի քրիստոս երկրպագելի: - 68. Ո՛վ երկաբնակ՝ դու զո՞ր *բնութիւն* ի քրիստոս ասես մի տէր. զաստուծոյն՝ թէ զմարդոյն: - 68. Իսկ թէ և զերկու *բնութիւնն* ասես տէր, ընդդէմ խօսիս առաքելոյն որ մի ասաց զտէր մեր յիսուս քրիստոս՝ որպէս և զհայր: - 69. Վեցերորդ՝ «դո՛ւ ես քրիստոս որդի աստուծոյ». հարցանեմ զքեզ ո՛վ բաժանօղդ, ի քրիստոս զո՞րն *բնութեամբ* ասես որդի աստուծոյ: - 69. Զի թէ զաստուածութիւնն *բնութեամբ* ասես, ապա զմարդկութիւնն շնորհօ՛ք ասես: - 69. Իսկ եթէ զմարդկութիւնն *բնութեամբ* որդի ասացեր, ահա որ հաներ զբանն յորդիութենէ: - 69. Իսկ թէ զերկուսն, ահա՛ որ երկու *բնութիւն* ասացեր գոլ հօր: - 69. Շնորհօ՞ք ասեմք այժմ հոգի քրիստոսի և ո՞չ *բնութեամբ*: - 69. Եւ հարցանեմ բաժանօղսդ քրիստոսի եթէ՝ յո՛ր *բնութիւն* մկրտիս. յաստուծոյն թէ ի մարդոյն: - 69. Զի թէ միայն յաստուծոյն, արկանես զանմահ *բնութիւնն* ընդ մահուամբ...: - 69. Իսկ թէ միայն ի մարդոյն *բնութիւնն*, ահա տակաւին ևս անկատա՛ր ես. զի ի սոսկ մարդոյն մահ մկրտեցար: - 69. Հարցանեմ զբաժանօղսդ յերկուս, զո՞ր *բնութիւն* կերակրիս որով կենդանանաստ: - 69. Զի թէ զաստուծոյն ըստ ինքեան, ահա և անուտելի՛ է բանին *բնութիւնն*: - 69. Ասա՛ ո՛վ բաժանօղդ, ո՛ր *բնութիւն* ասէ զայս ի քրիստոս: - 69. Այսքան հարցուածս է ընդդէմ երկաբնակացն որք ուրանան զմիաւորութիւն *բնութեանցն* քրիստոսի: - 70. Զի թէ բանին, անձման ինչ

հրեշտակացն և չորք կենդանիքն *զբոլոր* երկնային զօրսն նշանակեն, նոյնպէս և իդ երիցունքն *զբոլոր* դասս սրբոցն: - 711. Վեցերորդ, զի **բժան** ցեղապետք էին հնոյն. և **բժան** առաքեալ նորոյս. զերկոցունց ազգաց նահապետսն դնելով *զբոլոր* թիւ ամենայն ազգին, նշանակէ՛: - 712. Եւ զգործս *բոլոր* մարմնոյ յերկրի հաստատեցաք. թէ երկնաւոր թէ երկրաւոր: - 714. իսկ թէ մարդս ոչ յառնէ, աշխարհ անկատար մնայ. զի *բոլորն* մասամբն է կատարեալ: - 715. Նա՛խ՝ զի շնորհն աստուածային պատկերին որ համանգամայն կամեցաւ *զբոլոր* բնութիւնս ըստ հրեշտակացն օրինակի մուծանել ի կեանս...: - 716. ...և ո՛չ էր պարտ մասին փոփոխիլ առանց *բոլորին*. - 717. ...այլ յորժամ *բոլոր* արարածք ազատեսցին յապականութենէ ծառայութեան որպէս գրէ հռոմ յայնժամ և մարմինք մարդկան յանապականութիւն վերափոխեսցին: - 717. Այն նիւթն զոր ի ծնողացն ունիմք՝ *բոլոր* առնէ. զի սկիզբն է գոյացութեան մեր. - 718. Ապա ուրեմն կենդանեաց մարմինն ոչ յառնէ ի մեզ ըստ *բոլոր* նիւթոյն, այլ ըստ չափոյ զօրութեանն որ փոխեցաւ ի մեզ և եղև մարմին մարդոյ, ա՛յն մարմինն յառնէ: - 718. Ի յայս միտս մարմնաւոր հարսն է զգեստուք զարդարի. **գ** զարդ գլխոյն և **դ** *բոլոր* մարմնոյն: - 721. Ասեն վարդապետք թէ՝ *բոլոր* ամենայն անդամօք յառնեն անթերի: - 725. ...զի լցցին նոքա ի *բոլոր* մարմնոյն որպէս գարեղէն նկանակ հացիցն: - 725. Ամբողջ գոլն որպէս *բոլոր* անդամօքն: - 725. Այլ որպէս կայծ հրոյ և անօթ արեգական բոլորովիմք է լոյս, նոյնպէս և անդ *բոլոր* անդամօքն փայլեսցին իբրև զարեգակն: - 726. Զի վերին մարմինք երկինք և լուսաւորք ամենևին անապակա՛ն են. իսկ դ տարերք թէպէտ ըստ մասին ապականին, այլ ըստ *բոլորին* ո՛չ...: - 727. ...այսինքն *բոլոր* ամենայն անդամօք մարմնոյն յաստուածութիւնն հանգիցէ. զի դադարեսցի եկեղեցի յամենայն աշխատութեանց: - 736. Չորրորդ, զի հնազանդին նմա *բոլոր* արարածք...: - 737. Իսկ մեղաւորքն ի ծախմէ. այսինքն վայր ի յերկիր ծանրացեալ մեղօքն. որպէս կապար ի յերկիր հակեալ. ուր *բոլորով* սրտիւ սիրեցին զնա: - 738. Զի *բոլոր* Երրորդութիւնն դատէ՛ զմեղաւորս, և մարդկութեամբն խօսի ընդ նոսա քրիստոս: - 738. Երկրորդ՝ ի ստեղծումն յարարչութեան *բոլորից*՝ ուրախ եղև տէր յարարածս իւր և յորդիս մարդկան ըստ սողոմոնի: - 748. Որպիսութեան կրիցն չափ ո՛չ է անտի տանջանացն. զի *բոլոր* աստի նեղութիւնս համեմատեալ այնմ՝ է՛ որպէս կաթիլ մի ի ծովէ և կայծ մի ի հնոցէ: - 751. Կամ լինէիր ազատ որպէս զօգոստոս. որում *բոլոր* աշխարհ ծառայեաց: - 761. Այլ թէ ի սոցանէ մի մի ուրուք տուեալ լինէր, փոխանակ թագաւորութեան համարէր. իսկ թէ սոքօք ամենեքումբք վայելեսցէ, զերագոյն *բոլոր* աշխարհի լինէր: - 761. Զի անդ *բոլոր* մարմինն ընդ այն է՛ երկինն հրեղէն յորում է լոյս յաւէտ: - 763. Վասն մեծի սիրոյն՝ ժառանգութիւնն այն ամենեցուն մի է իւրաքանչիւր ումեք *բոլորն* և ո՛չ մասնաւորն: - 764. Կանո՛ն է իմաստասիրաց, զի իր որ բնութեամբ լինի, *բոլոր* տեսակին պարտի գոլ: - 773. Իսկ է՛ իր ինչ ի *բոլոր* տեսակս մարդկային բնաւորեալ, և ո՛չ է բնութեամբ. որպէս այս: - 773. Իսկ հրեշտակական կենաց է **հրաշափառապէս** գիտել և ո՛չ մոռանալ միշտ. ըստ որում զանցեալսն և զհանդերձեալսն ներկայապէս կրեն. *զբոլորն* համանգամայն և կատարեալ...: - 774. Նմանապէս և *բոլորս* մարդկութիւն կրեցին զապականութիւն ի նոյն ադամայ. ծնունդ գոլով նորին ցանկութեանն: - 776. Նախ՝ զի ո՛չ է *բոլոր* մարդ. այլ կիսամասնեայ: - 780. Եւ նոյն ինքն տէրն *բոլորից* վկայ քարոզութեան զգործս կատարէր. զի սովորութիւն է մարդկան քան զլուր լսելեաց տեսութեան աչաց հաւանիլ: - 785

**ԲՈԼՈՐԱԲԱՐ +** Ասեմք նախ՝ եթէ որպէս ասացաք ներքինք զվերնոցն մասնաւորապէս ունին. որպէս վերինք զներքնոցն *բոլորաբա՛ր*: - 137

**ԲՈԼՈՐԱԿ +** Զորօրինակ ո՛չ է անզգուշագոյն յառել ի *բոլորակս* արեգական՝ զի շրտնու և ի սակաւուն զոր ունի. ըստ այսմ խընայեաց աստուած ի յազինս մարդկային, զի մի՛ կրիցեմք ըզկիրս զանկելոյ արուսեկին. որ ո՛չ կարացեալ տանիլ մեծութեան փառացն՝ զրկեցաւ և ի չափաւորէն: - 24. Որպէս տեսանեմք ի *բոլորակս* արեգականն և մի ասեմք զարեգակն. իսկ թէ հայիմք ի լոյսն և ի ջերութիւնն **գ** իմանամք: - 54. Եւ դարձեալ՝ որպէս ամենայն գիծ *բոլորակին* ի միջին կէտն միաւորին առ միմեանս. և հեռացեալք ի միջին կէտէն բաժանին ի միմեանց. և զորօրինակ՝ մի է սեռն՝ և ի բազում տեսակս բազմանայ: - 112. *Բոլորակ*՝ այսինքն ի բնական ներգործութեանց. որպէս հրոյ այրելն և ծեան ցրտացուցանելն: - 142. Նախ այսպէս ասեն եթէ՝ տարերքն գնդաձև պատեալ են զմիմեանս և ամրացեալ. զի *բոլորակ* հուրն պատեալ է զօդ. և օդ զջուր. և ի մէջ ջրոյն երկիր է՛ հաստատեալ: - 181. Չորրորդ՝ հաւասարակշիռ է երկիրս *բոլորակի*. և յամենայն կողմանէ ծանրութիւնն ի մէջն ժողովի. և այսպէս ինքն ի վերայ իւր հաստատեալ է: - 182. Որպէս կարակնին կէտ անշա՛րժ է, և պատճառէ *զբոլորակ* ծիրն: - 182. Վարդապետք ասեն թէ ամենայն երկինք ի հարկէ պարտին ունել *զբոլորակ* ձև: - 182. Եւ *բոլորակ* ձևն պա՛րզ է քան զամենայն ձև. զի եռանկիւնին յերից գծից բաղկանայ, և քառանկիւնին ի քառից. նոյնպէս և այլքն: - 182. Իսկ *բոլորակ* ձևն ի միոյ գծոյ բաղկանայ: - 182. Ապա

ուրեմն պարզ էութեան երկնից պարտ է ունել զպարզ ձև որ է *բոլորակն*: - 182. Երկրորդ՝ զի *բոլորակ* ձևն պարունակօ՛ղ է. և երկինքն զամենայն պարունակեալ ունի ի ծոց իւր: - 182. Ապա ուրեմն պա՛րտ է զի ունիցի զձև *բոլորակ*: - 182. Երրորդ՝ զի *բոլորակն* սո՛ւր է ի շարժումն. և երկինքն սրագո՛յն է ի շարժումն, որ ի շրջիլն իւրում շօշափէ՛ զերկիր ի մի կէտ: - 182. Ապա ուրեմն *բոլորակ* ձևն պատշա՛ճէ երկնից: - 182. Իսկ *բոլորակ* ձևն ի մէջ ամենայն ձևոց է կատարեալ: - 182. Երրորդ՝ զի վեցեակ թիւն ի մէջ ամենայն թուոց առաջին կատարեալ է. և զ թիւն է ի *բոլորակ* ձևն. զի որ քան է ի միջին կիտէն ի բոլոր ծիրն, վեց այնչափ է իւր *բոլորակ* ծիրն: - 182-183. Ապա ուրեմն *բոլորակ* ձևն որ կատարեալ է՝ պատշաճի կատարեալ մամնոյ երկնից: - 183. Հինգերորդ՝ թէ երկինքն ո՛չ էր *բոլորակ*՝ այլ քառանկիւնի կամ եռանկիւնի, յորժամ շարժէին անկիւնքն՝ յորմէ տեղւոջէ վերանային՝ մնային առանց տեղւոյ. և տեղի անկեանցն առանց մարմնոյ: - 183. Վեցերորդ՝ զի թէ երկինքն ո՛չ էր *բոլորակ*, յայնժամ արեգակն և այլ աստեղք յորժամ գային ի մէջ երկնից, մեծագոյն երևէին. քանզի ի միջին կիտէն երկնից առ մեզ է ուղղական գիծ. իսկ յարևելից առ մեզ է՛ խոտորնակի գիծ. և ուղղական գիծն կա՛րճ է քան զխոտորնակ գիծն: - 183. Երրորդ՝ զի *բոլորակ* ունի ձևս. որ է կատարեալ վեցեկի չափովք: - 184. Եւ այս ևս գիտելի է, զի որպէս հրեղէն երկինն հոմանուն է, այսինքն լուսեղէնն որ ի սկզբանէ ստեղծաւ. և *բոլորակ* հրոյն: - 184. Եւ յորժամ առնու զլոյսն յարևոյն, ի յեզրն երկրիս ձևն *բոլորակ* է՝ խաւար մնա մէջն: - 187. Գէջ օդն գոգացեալ և դէմ եղեալ արեգականն՝ առնու զլոյսն ի նմանէ ըստ *բոլորակ* ձևոյ նորա: - 203. *Բոլորակ* գլխոյն երկնի: - 232. Է՛ ի *բոլորակն*, և է՛ յամենայնսն սփռեալ: - 342. Երես զիսկութիւն աստուածութեանն նշանակէ. զոր աստի կենօքս ո՛չ ոք կարէ տեսանել. որպէս *զբոլորակ* արեգականն. այլ ի հանդերձեալն տեսանեն ընտրեալք ըստ չափու: - 350. Իսկ թերափն է *բոլորակ* հանդերձ ծածկոյթ տապանակին: - 425. Որպէս ձևն *բոլորակ*՝ և գոյնն՝ ենթակայ նիւթովն: - 476. Իսկ գրապան՝ վարդապետք և քահանայք պահապանք ժողովրդեանն. որք *բոլորակի* զգեստ կոչեցան քրիստոսի: - 534. Բայց կրկին է զրկումն լուսոյ. մի՝ որ ի ճառագայթէ՛ լուսոյն զակն խփէ և խաւարի. և **բ**՝ որ ընդ դէմ *բոլորակի* արեգականն հայիցի՝ կորուսանէ զլոյսն և խաւարի: - 562

**ԲՈԼՈՐԱԿԱՁԵՒ +** Հոլաթևն և սաւառնեալ, արձակ և պարզ *բոլորակաձևն* է: - 638

**ԲՈԼՈՐԱԿՈՒԹԻՒՆ +** Ութևժերորդ՝ լուսով և ջերմութեամբ մե՛րձ է յամենայնսն. և *բոլորակութեամբ* հեռի: - 186

**ԲՈԼՈՐԱՁԵՒ +** Վասն է՞ր ամենայն տունկք *բոլորաձև* բուսանին: - 213. Դարձեալ՝ զի տնկականն վերափչո՛ւմն է օդոյն հանդերձ խոնաւութեամբն երկրի. վասն որոյ *բոլորաձև* արտաքս գայ և լինի ծառ: - 213. Եւ յամ և յամիս մշտակայ *բոլորաձև*՝ շարժումն նոցա: - 767. Այլ և շարժումն երկնից *բոլորաձև* կարէ՛ ասիլ. մասամբ զօրութեամբ, և մասամբ ներգործութեամբ: - 788

**ԲՈԼՈՐԱՊԱՏ** - Պճղնաւորն կապոյտ *բոլորապատ*՝ երկինքն է: - 348

**ԲՈԼՈՐԱՊԷՍ +** Նախ՝ որպէս սեռ ի տեսակս *բոլորապէս* տեսանի և ո՛չ մասամբ. այս է՝ զի գոյացութիւնն որ է սեռ՝ բոլոր է ի մարմինն և յանմարմինն. և կենդանին բոլոր ի բանականն և բոլոր յանբանն: - 89. Երրորդ՝ զի վերինքն զներքնոցն ունին *բոլորապէս* զամենայն. և ներքինքն զվերնոցն մասնաբար ըստ չափու իւրեանց. և քահանայապետն ունի զաստիճան ներքնոցն բոլորապէս. և ներքինք զվերին քահանայապետիցն մասնապէս: - 136. Երրորդ՝ զի վերինքն զներքնոցն ունին բոլորապէս զամենայն. և ներքինքն զվերնոցն մասնաբար ըստ չափու իւրեանց. և քահանայապետն ունի զաստիճան ներքնոցն *բոլորապէս*. և ներքինք զվերին քահանայապետիցն մասնապէս: - 136. Ապա յա՛յտ է զի ա՛յլ է կարգ շնորհականին, և այլ է կարգ բնականին. զի բնականք ներքինք զվերնոցն *բոլորապէս* ունին և կոչին. այլ ո՛չ անդրադարձեալ. որպէս անհատն զտեսակն և զսեռն *բոլորապէս* ունի և կոչի. զի պետրոս մարդ է և կենդանի և կոչի. այլ կենդանին մարդ՝ կամ մարդն պետրոս ո՛չ է և ո՛չ ասի: - 136. Եւ արդ որպէս ցուցաւ՝ վերինք մինչ ի միջինս ունին *բոլորապէս* զներքնոցն. և ներքինքն մասնաւորաբար մինչ ի զօրութիւնսն՝ յաղագս առ հասարակ զօրութիւնք կոչին: - 137. Նա՛խ՝ զի սերմնական զօրութիւնն է ի մէջն բնաւորեալ. ուստի *բոլորապէս* և հաւասար տայ շարժիլ տնկոյն: - 213. Եւ այդպէս պտուղքն *բոլորապէս* կատարին: - 213. Պերճական պարսիկն. և համեղ հայոյն. որ *բոլորապէս* կարօ՛ղ է զամենայն լեզու ուղղակի ուսանիլ: - 297. Եւ որպէս յինն ժամու ուրբաթուն լոյս ծագեաց հոգւոցն ի դժոխս, նոյնպէս և յինն ժամու շաբաթուն լոյս ծագէ զճառագայթս իւր արեգակն արդարութեան քրիստոս. մինչ յառաւօտուն *բոլորապէս* տեսանի ինքն յարուցեալ ի մեռելոց: - 509. Եւ որոց պարգևի մասնաւոր այս շնորհ, թէ և ո՛չ *բոլորապէս* ըստ նոցայն: - 537. Մեղք անունն մի է, և *բոլորապէս* յերիս տեսակս որոշի. այսինքն ի սկզբնականն, և ի մահացուն, և ի ներելին: - 567.

*Բոլորապէս* դ է. այսինքն Նախ ըստ տարերց ի լինելութիւն և յապականութիւն: - 663. ...մինչ ի յարութիւնն առցէ բոլորիւ *բոլորապէս* զփառս և զպսակս զանվախճան տեսութիւնն աստուծոյ: - 705

**ԲՈԼՈՐԱՊՏՈՒՂ +** Մետասաներորդ, *բոլորապտուղ*. որ է հանապազորդ գառն խորովեալ յառաւօտն և յերիկոյն մին հացով և **դ** մասն դորակի գինով: - 359

**ԲՈԼՈՐԵՄ +** Նուազի՛ և *բոլորի՛*: - 186. Իսկ քաղելով գործելն, զի սկսեալ բնութիւնս մեր ի գլխոյն լայնանայ ի թիկունքն՝ և նրբի ի կրունկն, և *բոլորեալ* դարձեալ կատարի ի գլուխն: - 293. Եւ ծնօտ՝ որ է՛ զիկն *բոլորեալ*. զիմանալի կերակուրն նշանակէ նոցա. զի ծնօտն գործի է կերակրոյ: - 344. Առաքեալքն. ընդ տիւ և ընդ գիշեր *բոլորեալ*: - 631. Այլ և յամիսն և ի տարին *բոլորի*: - 683

**ԲՈԼՈՐՈՎԻՄԲ, ԲՈԼՈՐՈՎԻՆ +** Համանգամայն՝ այսինքն *բոլորովիմբ*. կամ զոյգ և հաւասար. կամ միանգամայն: - 90. *Բոլորովիմբն* է ընդ դէմ երկաբնակացն. որք մասամբ ասեն աստուած և մարդ զքրիստոս. այսինքն յաստուածութենէ և ի մարդկութենէ ժողովեալ աստուած և մարդ: - 90. Ասէ սուրբն կիւրեղ ընդ դէմ նոցա թէ՝ «համանգամայն» այսինքն *բոլորովիմբ* աստուած և *բոլորովիմբ* մարդ: - 90. Այս է միտքն որ ասէ՝ համանգամայն աստուած և մարդ. այսինքն *բոլորովիմբ* և հաւասար և անբաժան աստուած և մարդ: - 91. Բոլո՛ր է՝ յորժամ զիմացումն մտաց յամենայն եղելոց առ ինքն ժողովէ՛, և այնպէս *բոլորովիմբ* յաստուած հպի և միանայ. և ա՛յս է ի բոլոր սրտէ և ի բոլոր մտաց սիրել զաստուած. և զայս ունին ընտրեալքն մարգարէք և առաքեալք: - 142. Հինգերորդ՝ զի հոգևոր բնութիւնն միանգամ միայն է շրջելի. վասն զի *բոլորովին* շրջէ զինքն՝ զոր ո՛չ առնէ մարդն. զի մարմինն միշտ մարտնչի ընդ հոգին. որպէս յառաջիկայդ ասի **լբ** գլուխն: - 151. Մետասաներորդ՝ մարդոյս գործ մասնաւոր և մի զկնի միոյ. իսկ աստուծոյն համանգամայն և *բոլորովիմբ*: - 157. Այլ և ի միտ ածցուք զփառս երկնային կենաց ուստի անկաք, և անդ դիմելոց եմք. զի տեսութիւն մտացն զհոգին ընդ ինքեան ի վեր տանի. և նա զշունչն. և շունչն ընդ արեանն է կապեալ. և արիւնն ընդ մարմնոյն. զգայարանքն ընդ մարմնոյն. և լինի մարդն *բոլորովին* երկնային: - 233. Զի պա՛րտ է անպարտ գոլ *բոլորովին*. զի քրիստոս կատարեալ անարա՛տ է աստուածութեամբ և մարդկութեամբ: - 370. Իսկ որ *բոլորովին* հաւանին՝ վիո՛ւկ են և արտաքսեալ յեկեղեցւոյ: - 429. Տէր մեր *բոլորովին* եղև երկրորդ ադամ: - 434. Երկրորդ՝ *բոլորովին* նուաճումն ստորին մասանց բանականին: - 462. Յորժամ *բոլորովիմբ* մարդն ի ձեռն մկրտութեանն սրբի, սերմն նորա ո՞րպէս է անսուրբ: - 592. *Բոլորովիմբ* մարդ ի ձեռն մկրտութեանն ներքուստ և արտաքուստ սրբի. բայց դարձեալ սերմն նորա ի ձեռն մարմնոյն ցանկութեանն պղծի: - 592. Հինգերորդ՝ որք *բոլորովիմբ* զղջացեալք և թողեալք զմեղս՝ գործեն զբարիս. զնոսա հովուէ՛ դպիրն սաղմոսիւք և ալէլուիւք: - 608. Այլ որպէս կայծ հրոյ և անօթ արեգական *բոլորովիմբ* է լոյս, նոյնպէս և անդ բոլոր անդամօքն փայլեսցին իբրև զարեգակն: - 726. Առաջին՝ հուր վառեալ. այնպէս, որ թէ *բոլորովին* ծովք ի վերայ հեղցին՝ ո՛չ շիջանիցի: - 752. Ա՛րդ՝ սոքա ամենայնքին մասնաւոր և փոփոխական են և հակառակաւ. զի՞նչ իմանաս զանտի երանութիւնն. որ *բոլորովիմբ* է, և անփոփոխ, և առանց հակառակի յաւիտենական: - 762. Մի դէմն յերրորդութենէն որդի լինի. մի դէմ ի մարդկութենէս ի կուսէ առեալ բնութիւն մարդկութեան, աստուածութիւնն *բոլորովին* յաղագս անհաս միաւորութեանն ըստ ոսկէբերանին յոհաննու: - 770. Այլ *բոլորովին* զհամագոյ և ըզհամառօտ և զանաւելորդ Երրորդութիւնն փառաւորեա միշտ և հանապազ: - 771

**ԲՈԼՈՐՈՒԹԻՒՆ +** Դարձեալ ասէ սուրբն դիոնէսիոս՝ ի չորրորդ թուղթն. «յիսուս՝ որ անդրանիկ է քան զամենայն, ընդ ամենայն մարդկան էապէս շարակարգեալ. որպէս նոյն ըստ *բոլորութեան* ճշմարտապէս մարդ եղեալ»: – 83. Երբեմն նշանակէ՛ *զբոլորութիւնն*. որպէս ասէ՝ «աստուած սէր է». և այս առաւել լինի անձնականապէս և էականապէս: - 575

**ԲՈԿ +** Երրորդ՝ զայն ցուցանէ որ կեանք դրախտին դարձաւ առ նոսա յանապատին անկարօտ ամենայնի. զի զգեստն ո՛չ մաշէր. այլ աճէ՛ր ընդ տղայոցն. և ոտն *բոկ*՝ և ոչ՛ կոշկոճէր. - 397

**ԲՈԿԵՂ +** Իսկ պան բաղարջն է՛ նաշիհն զանգեալ իւղով. և որպէս *բոկեղն* եփեալ ի թոնրի: - 357

**ԲՈՂԲՈՋ +** Դարձեալ ասէ՝ «զի է՛ աղբիւրեղէն աստուածութիւն հայր. իսկ որդի և հոգի աստուածածննողութեանն. թէ այսպէս պիտոյ է ասել *բողբոջք* աստուածատունկք. և կամ որպէս ծաղիկք և գերագոյն լոյսք»: - 64. Եւ դարձեալ ասէ՝ «վասն զի է՛ աղբերեղէն աստուածութիւն հայր. իսկ որդի և հոգի՝ աստուածածննողութեանն հօր. որպէս *բողբոջք* աստուածատունկք. և որպէս ծաղիկք և գերագոյն լոյսք»: - 106

**ԲՈՅԹՆ +** Ի յա՛յս միտս յորժամ խաչ նկարեմք, զծագ մատին աջոյ մերձ ի *բոյթն* առնեմք որ է՛ ի համարն զերորդ. զկէս զին նշանակելով: - 345

**ԲՈՅՈՍ** - Ռահաբ՝ որ ծնաւ *զբոյոս* ի սաղմանա՛յ: - 300. Յռուբ՝ որ ծնաւ զովբէթ ի *բոյոսայ*: - 300. Սաղմոն ամաց լե՝ ծնաւ *զբոյոս*: - 452. *Բոյոս* ամաց **ճը**՝ ծնանի զովբէթ. առեալ *բոյոսս* իւր կին զհռութ մովաբացի: - 452

**ԲՈՅՍ +** Դարձեալ ասեն, թէ ամենայն ստորնային մարմինք՝ կառավարին վերնային մարմնովք. որպէս յա՛յտ է ի չորս եղանակս տարւոյն. այլև ծնունդ և աճումն՝ և *բոյսք* և պտուղք՝ ի շարժմանէ նոցա պատճառին. և շարժումն նոցա է՛ հարկաւոր. ապա ուրեմն ամենայն ինչ լինի ի հարկէ: - 10. Դարձեալ ասեն հակառակօղքն, թէ *բոյսք* և ծաղիկք և պտուղք երկրի ունին զօրութիւն ազդողական. իսկ աստեղք երկնից ո՞չ ունիցին: - 12. Ասեմք առ այս թէպէտ ունին զօրութիւնս, բայց այլ և այլ կերպիւ. զի *բոյսք* որք յերկրի են դարմանիչք և բժշկութիւնք մարմնոց. այլ երկնային աստեղքն են արարիչք լուսոյ և ժամանակաց. և ի նշանս ապագայից. զի յամենայն ուստեք տեսեալ պատրաստեսցին մարդիկք. որպէս ասէ գիր, եղիցին լուսատու լինիլ երկրի. ի ժամանակս և ի նշանս: - 12. Չորրորդ՝ զայլայլումն օդոց և *բուսոց*: - 26. Եւ ի միոյ աստուծոյ եղեն **Ժ** դասք հրեշտակաց ընդ մարդկան. և հարիւր գունդքն ըստ ոչխարաց առակին. և **Ռ** կենդանեաց տեսակքն որ յերկրի. և բիւր անկենդան *բուսոց*. և անթիւ գոյեղէնք: - 109. Եւ աստուած յայտնի է ի բանականքս իմացմամբ և պատկերաւ. այլ ի կենդանիս և ի *բոյսս* և ի գոյսս սակաւ ինչ նմանութեամբ: - 109-110. Տասներորդ՝ *բուսոց* և տնկոց աճումն շնորհէ: - 126. Եւ *զբոյսս* զանազան առաքինութեանց ընծիւղեալ երևեցուցանեն: - 126. Վասն *բուսուց* և տնկոց՝ և կանաչութեան նոցա. և ծաղկի, և պտղոյ, և համոյ, և հոտոյ նոցա: - 155. Քառասունմէ) Վասն ծառոյ՝ և ձևոյ և անուան նոցին. և զի *բոյսք* փութով աճեն քան զծառս: - 155. Եօթներորդ՝ *բուսուց* և տնկոց և ամենայն կենդանեաց ծննդեան և աճման: - 196. Եւ դարձեալ՝ գարնան եղանակն սկիզբն է ստեղծման աշխարհի և *բուսուց* և ամենայն ծննդոց. վասն որոյ ի սոյն ժամանակս առաւել բուսանին և նորոգին ամենեքեան: - 198. Իսկ ձմեռն է կատարած և վերջք կենցաղոյս. վասն այն *բոյսք* և ծնունդք դադարին և չորանան: - 198. Եւ դարձեալ ի գարունն բուսանին *բոյսք*. և յամառն կատարին. և յաշունն ժողովին. և ի ձմեռն վայելեն. և յիւրաքանչիւր ժամանակս՝ իւր գործն առաւելու: - 198. Մեհեկի. զի տունկք և *բոյսք* որպէս զմեռեալ զլինին եղեմնապատ և ձիւնաթաղ. մէհէկի. այսինքն ածի: - 201. Արեգի. որպէս թէ յառնեն *բոյսք* և բանջարք աստուածային հրամանաւն: - 201. Չորրորդ՝ զի տունկք և *բոյսք* ի ներքին հիւթոյ և ի վերին անձրևոյ միշտ դալար մնացեն: - 207. Եւ զի *բուսօք* և ծաղկօք և ծառօք զարդարի: - 211. Չորրորդ՝ ի պէտս *բուսոց* և բժշկական խոտոց...: – 211. Յի՞նչ պէտս են այնչափ բազմութիւնք *բուսոց* և ծառոց: - 212. Բազում ինչ է պիտանութիւն *բուսոց*: - 212. Չորրորդ՝ զի նիւթք եղեն երկնաւոր խորհրդոյն. որպէս ի տնկոց փայտ խաչին. և յայլ *բուսոց* հաց պատարագին և գինի. և ձէթ մեռոնի կազմեցաւ: - 212. Վասն է՞ր ամենայն *բոյսք* կանաչ լինին գունով: - 212. Առաջին՝ որպէս յերկինս նախ տեսանին աստեղք, և ապա բարութիւնք երկնից. այսպէս և ի *բոյսս*: - 213. Վասն որոյ ի հրոյն ոմն սևանայ. որպէս խաղող. և կէսք կարմրին և դեղնին. որպէս *բոյսք*՝ և տերևք չորացեալ ի հրոյ: - 213. Վասն է՞ր ամենայն *բոյսք* զձևն զառ ի վեր ունին: - 213. Վասն է՛ր *բոյսք* փութով աճին և դալարին քան զտունկ և զծառ: - 214. Նա՛խ՝ զի *բոյսք* և խոտք մե՛րձ են երկրի, զշարժումն նորա դիւրա՛ւ ընդունին: - 214. Նախ՝ զի ծառայք են միշտ վասն այլոց. որպէս մարդս միշտ տէր է. և անասունքն տէր և ծառայք. զի ծառայք են մարդկան, և տէր *բուսոց*. իսկ *բոյսք* և տունկք միշտ ծառայք են: - 214. Նմանապէս և կոչին փայտ. զի ի փտելոյ և յապականելոյ գոյանան այսպէս. յորժամ բորբոսի երկիր՝ նա՛ զարմատն ի վայր արձակէ և *զբոյսն* ի վեր: - 214. Եւ ո՛չ այս միայն, այլ և *բոյսք* և տունկք ունին բնութեամբ զէնս պահապան ինքեանց: - 217. յԵրրորդ օրն, *բոյսք* և տունկք և դրախտն: - 226. Կարգաւոր էր նախ պատրաստել զարքունիս որ է երկինք և երկիր. և զգահոյս որ է՛ դրախտն. և զսպասաւորքն որ են կենդանիքն. և զմեծութիւնս տնկոց և *բուսոց*. մանաւանդ ոսկւոյ և արծաթոյ և ականց ի սիրտ երկրի գանձել. և ապա՛ թագաւորին բնակիլ: - 230. Որպէս *բոյսք* վասն անասնոց. այսինքն է՛ այլոցն. ուստի անասունք կերակրիլով ծառայեն մարդոյն: - 230. Յաղագս որոյ նախ եղեալքն՝ են վասն վերջնոցն. որպէս *բոյսք* անասնոց, և անասունք վասն մարդոյն: - 230. Մազն *բուսոց* և տնկոց: - 232. Եւ բնականն, Նա՛խ՝ զի նմանիմք երկրի որ յերեսն ունի զգեղեցկութիւն *բուսոց*, և ի թիկունս ոչ: - 234. Երկրորդ՝ *զբոյս* ախտից և զայլ հոգս պակա՛ս ունի: - 251. Երկրորդ՝ *բոյս* մեղաց և հոգ կենցաղոյս ի սիրտն բազո՛ւմ է: - 251. Եւ ասի զմարդոյն թէ վասն նորա է ամենայն. այսինքն անասունք և *բոյսք*. և անա՛րգ է *բոյս* քան զանասուն. և անասուն քան զմարդ: - 253. Այսինքն բանականն ի մարդն. և զգայականն յանասունս. և տընկականն ի *բոյսս*: - 259. Այսինքն. ազգն՝ տեղին՝ և ժամանակն. որպէս ի սերմանս *բուսո՛ց* է տեսանել: - 261. Իսկ որ հասարակն է սոցա և պատշաճաւոր, ունին զնոյն հասարակութիւն *բուսոց* ի նոյն ժամանակս: - 261. Եւ ունին զայս ամենայն *բոյսք* և տունկք: - 262. Վասն որոյ *բոյսք* առ հասարակ յերեք ամիսս ծնանին, և ի

չորրորդումն կատարին յաւելեալ ի վերայ զկազմողական զօրութիւնն: - 262. Զի *բոյս* մանունք և չորքոտանիք մանունք կարեն ի նոյն ամի զնմանն ծնանիլ ըստ վերոյ ասացեալ երրեակ թուոյ ամսոյ, կամ կրկին վեցեկի: - 264. Երրորդ այսպէս. ի լուսնոյդ ի վայր տարրական հուրն և որ ի նմա երեւոյթք լուսոյ. օդն և թռչունք. ջուր և լօղականք. երկիր և *բոյսք*. մարդ և անասունք: - 343. Երրորդ՝ չտալ երկրի *զբոյս*. և ո՛չ ծառոց պտուղ: - 376. Եւ զհերսն պատարագել աստուծոյ, նախ զինքնածին *բոյսքն* ի յանձնէ իւրմէ, և ապա՛ զայլսն ի յանասնոց: - 390. Երկրորդ՝ ի *բուսոց* և ի պտղոց. որպէս ձէթ և այլք: - 407. Տընկականք՝ այսինքն *բոյսք* և պտուղք յորմէ և հատցին թէ ի մարդոյ և թէ յայլ կենդանեաց՝ կերակրելիք են: - 511. Զորօրինակ՝ կանաչ *բոյս*՝ թէպէտ ի ցօղուն և ի հասկ՝ չէ՛ կատարեալ. այլ ի տեսակս իւր կատարեալ է: - 556. Երկրորդ՝ զի կենդանիք և *բոյսք* ստեղծան վասն մարմնաւոր կենդանութեան մարդկան. - 727. Երրորդ պատճառ, ասեն իմաստունքն թէ ծնունդք կենդանեաց և *բուսոց* լինին ի շարժմանէ երկնային մարմնոց. իսկ ի կատարածի խափանի շարժումն նոցա. վասն այն անբան կենդանիք և տունկք խափանին: - 727. և վառեսցեն զերկինս որ է՛ օդն. և զերկիր և զլերինս և զդաշտս և *զբոյսս* և զկենդանիս. և զժանկս մեղաց որպէս աւէ աստուածաբանն գրիգոր: - 731. Զի ամենայն *բոյս* բարեգործութեան ի սերմանց հաւատոյն բուսանի և պտղաբերի: - 769

**ԲՈՍՈՐ +** Եւ անուն մօր նորա *բոսոր*: - 320

**ԲՈՎԱՆԴԱԿ +** Այսպէս զի հոգին քրիստոսի ճանաչէ զամենայն *բովանդակն* կարողութիւնն իւր. և զամենայն յորս կարէ: - 100. Ապա ուրեմն յա՛յտ է ի բաժանման է թէ ի յաստուած ո՛չ գոյ իր ինչ զօրութեամբ. այլ *բովանդակնն* ներգործութեամբ որպէս ցուցաւ: - 169. Իններորդ՝ զփորուածս երկնից *բովանդակ* լնու: - 185. Եւ նախ ի չորս դէմս բաժանին ամենայն հողմունք. և իւրաքանչիւրքն դարձեալ յերիս բաժանին. որ լինի *բովանդակնն* **բժ**ան: - 205. Եւ ատամունքն **լբ** ոսկր. որ լինի *բովանդակնն* **լզ** ոսկր: - 243. Եւ թաթք ձեռացն **լբ** ոսկր. որ լինի *բովանդակ* ձեռքն ի թիկանցն **խ** ոսկր: - 243. Որ լինի *բովանդակ* ոսկր ոտիցն **խբ**: - 243. Որ լինի այր մարդոյն՝ **յկզ** երակ *բովանդակնն*: - 244. Եւ **ժէ** գլխաւոր ջիլքն, և մին բուն ջիլն. որ լինի *բովանդակնն* **յկզ** ջիլք: - 244. Եւ **ժ** էր *բովանդակ* ամենայն սեղանքն: - 284. Այն է, որ *բովանդակ* մարմինն այնպէս խոցոտեալ էր կեղով՝ և լուծեալ ի շարաւ և ի թարախ. որ ո՛չ կարէր յոտին կալ կամ սողալ ուրեք. և ո՛չ ըմբռնիւր յայլմէ: - 322-323. Ապա ուրեմն *բովանդակ* երևեցաւ **ե** զէն որով յաղթեմք թշնամոյն: - 324. Որ լինի *բովանդակ* կեանքն յոբայ **բճխը** ամ: - 327. Որ լինի *բովանդակնն* մինչև յելսն եգիպտոսի, **գռոծթ** ամ ըստ եօթանասնիցն: - 337. Եւ **ժ** բան է՛ օրինացն. և **խգ** իրաւանցն. *բովանդակնն* **ծգ**. խորհուրդ ազատութեան մերոյ հաւատով Երրորդութեանն: - 340. Այլ թէ հարցանեն զորքանութիւն սիւնիցն. **ծ** սիւն ի մէջ խորանին. և **թ** սիւն վարագուրացն. և մի թափանց ի մէջն յարևելից յարևմուտս. որ լինի **կ**. և **ձ** սփռիչ. և **խ** նիգք. և ամենայնն ոսկեպատ. որ *բովանդակնն* լինի **ճձ** ի ներքս: - 343. Լինի *բովանդակնն* տարի մի: - 344. Չորրորդ՝ և *բովանդակնն* **ե** կանգուն, ցուցանէ թէ ո՛չ են նոքա ի չորից տարերց. այլ **ե**երորդ էութիւն են. որպէս ասեն ոմանք. անմարմին անփոփոխ և անմահ. որ ո՛չ է տարրականացս: - 344. և Դարձեալ՝ գուքն *բովանդակ* և կատարեալ սէրն է. և ողորմութիւնն մասնաւոր. զի ողորմութիւն ի գթո՛յն յառաջի և սփռի ի մեզ: - 351. Ա՛րդ՝ հինն նորոյս օրինակ էր՝ ի *բովանդակնն* ա՛ղ խառնիւր: - 356. Եւ յայսմանէ՝ հանեն մասն զերիկամունս և զլերդափոյթն և *զբովանդակ* ճարպն ի հոտ անուշից տեառն: - 358. Եւ զայլն *բովանդակ* մորթով և փորոտիւք և գլխով հանեն ի մոխրակոյտն և այրեն անդ: - 358. Եւ այսոքիկ մասնաւոր նուէրք *բովանդակք* զոր հրամայեաց մովսէս: - 359. Եւ ողջակէզ սրբութեան է՝ յետ ապաշխարութեան զբարիս գործել. և *զբովանդակ* զհոգի և զմարմին մեր նուիրել աստուծոյ: - 362. Բաց ի քաւութենէն որ ի սուրբն սրբոց՝ ի ներս և ի դուրս **ժ** էր *բովանդակնն*: - 364. Այլ ա՛յս է ուղիղն. զի *բովանդակնն* ամենայն **թ** դասք են հրեշտակաց. այլ անկեալքն ի նոցանէ՝ են ի չափ միոյ դասու. և մարդիկ զնոցա տեղին լնուն: - 376. *Բովանդակ* անցեալքն ի հանդէս՝ **զճռ** էին. որ է՛ **կ** բիւր. և **գռ** և **ոծ**: - 378. *Բովանդակն* ամենայն **լզ** թագաւորք: - 414. Եւ տէր մեր խաչիւ և մարմնով *զբովանդակ* թշնամիսն կործանեաց: - 423. Եօթնեժ, **գռ** առակս և **եռ** օրհնութիւնս ասի սողոմոնի *բովանդակնն*: - 441. ...և երեք ամ պաշարեալ էառ զնա. և գերի վարեաց զթագաւորն ովսէէ որդի ելայ. և **զժ** ցեղն *բովանդակ* տարաւ յասորեստան: - 447. Նախ մասնաւոր հրէից. և ապա մեր եկեղեցւոյ. և ի կատարածի *բովանդակքն*...: – 449. Այլ զերկոտասանքն մին գիրք, և զերեմիայն մին գիրք համարեալ, լինի **լզ** գիրք հին կտակքն *բովանդակ*: - 450. Իբր լինի **լզ** հին կտակարանք և **լզ** նորս. *բովանդակնն* **հբ**: - 451. Որ լինի *բովանդակնն* **իբ**: - 451. Այլ և *բովանդակ* ամենայն բևեռք **թ** էր ի վերայ խաչին: - 495. Այլ ա՛րդ՝ մովսէս *բովանդակ* զժողովուրդն եհան յանապատ: - 507. ...և ո՛չ կարացին *բովանդակ* ապաշխարել...: - 683

**ԲՈՎԱՆԴԱԿԱՊԷՍ +** Իսկ բանն աստուած կատարեալ լրիւ մարդացեալ *բովանդականապէս*. հոգի մարմին և միտս ունելով անշփոթ կատարելութեամբ և անբաժ ենթակայութեամբ: - 479

**ԲՈՎԱՆԴԱԿԵՄ +** Իսկ զի ասէ՝ «առաքեցայ» ո՛չ թէ տեղւոջէ ի տեղի. որպէս մեք *բովանդակնեալքս* ի մի տեղի. զի առաքիմք շարժմամբ ի միւսն: - 40. Նոյնպէս բանն աստուած մի քրիստոս է *բովանդակնեալ* մարմնովն անբաժանելի: - 125. Եօթներորդ՝ սկիզբն և վախճան գիտութեամբն ասի. զի զսկիզբն էից և զկատարածն ի ներքոյ իւր ամենահաս գիտութեանն *բովանդակնեալ* ունի: - 129-130. Երկրորդ՝ տեղի լսի սահման. ըստ որում *բովանդակնէ՛* զբնութիւն իրին: - 172. Եւ երկրորդ՝ զի լրիւ աստուածութիւն բանին է՛ *բովանդակնեալ* ի մարմնի և ո՛չ մասամբ...: - 319. Զի այսպէս *բովանդակնին*: - 337. Արդ եղիսիէէ նշանակէ՛ զբանն աստուած. որ փոքրկացաւ և *բովանդակնեցաւ* ի ծոց կուսին ի մարմնի միաւորեալ. և ապա ի խաչն բարձրացեալ կեանս շնորհեաց մարդկան: - 446. Իսկ վարդապետք եկեղեցւոյ *բովանդակնեալ* զամենայն՝ զ եղանակաւ ասեն զծնունդն քրիստոսի: - 471. Զի բազմանայ և ի միութեան մնայ. *բովանդակնի* անբովանդակապէս. և բաժանի անբաժանապէս. որ է մի և նոյն տեսակաւ և գոյացութեամբ որպէս ցուցաւ: - 530. *Բովանդակեալ* ոչ զամենայն որ ամենեցունց է գիտելի. այլ զբանս բազումս որ բազմա՛ց է պիտանի և խնդրելի: - 772

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ +** Դարձեալ անեղ ասի աստուած՝ իբր պատճառ անեղից. և նախ քան զամենայն անեղ. և կատարումն. և *բովանդակնութիւն* ամենայն անեղի: - 113. Երրորդ՝ զի ամենեցուն կատարումն է և *բովանդակնութիւն*. ապա այսպէս գիտէ զամենեսեան. ըստ որում սկիզբն է և կատարումն, յամենայնսն թափանցեալ է և ունի: - 141-142. Իսկ Ուր ոչ ասեմք տեղի աստուծոյ. զի տեղի որ է՛ *բովանդակնութիւն*, եռաբա՛ր ասի: - 172

**ԲՈՐ +** Նա՛ կեղ և մուն յարուցանէր ի մարմին նոցա. և քրիստոս *զբոր* և զցաւս սրբէր ի մարմնոցն: - 328. *Բորն* նշանակէ՛ զմեղքն: - 367. Նա՛խ՝ զի *բորն* պիսակ՝ մեռելութիւն է մարմնոյ. և մեղքն հոգոյ: - 366. Երկրորդ, *բորն* պղծէ՛ զմարմինն. և մեղքն զհոգին: - 367. Երրորդ, աճէ *բորն*. նոյնպէս և մեղքն ի բոլոր անձն: - 367. Չորրորդ, փոխի՛ *բորն*. և մեղքն ի միմեանս: - 367. Իններորդ, *բորն* **գ** ազգ է. սպին սպիտակ շիտ. և պալար միատարր. և պաղպաջ շիտ աստ և անդ. որ է՛ մտաց և հոգւոյ և մարմնոյ մեղքն: - 367. Տասներորդ, սրբի *բորն* դեղով. ջնջի և մեղքն ապաշխարութեամբ: - 367. Մարմնոյն *բորն*, գործոց մեղքն. և գլխոյն, հաւատոցն: - 367. Եւ **դ** է՛ ձործին *բորն*: - 367. Դարձեալ՝ **գ** իրա՛ց էր *բորն*. մարմնոյն՝ հանդերձին՝ և տանն: - 367

**ԲՈՐԲՈՍ +** Եթէ խորհրդական մարմինն քրիստոսի անապակա՛ն է, ուստի գոյանան կենդանիք և *բորբոսք*: - 339

**ԲՈՐԲՈՍԻՄ +** Նմանապէս և կոչին փայտ. զի ի փտելոյ և յապականելոյ գոյանան այսպէս. յորժամ *բորբոսի* երկիր՝ նա՛ զարմատն ի վայր արձակէ և զբոյսն ի վեր: - 214

**ԲՈՐԲՈՔ +** Նա՛խ՝ նշանակէ՛ ի մեզ զջերմեռանդ *բորբոք* այրեցման սրտին. որ ի բա՛ց հանէ զօձիսն և արտասւէ. - 670

**ԲՈՐԲՈՔԵՄ +** Եւ սէր առ աստուած բանիւն *բորբոքեցաւ*...: – 125. Իսկ ախորժելի իրն *բորբոքէ՛* զախորժակն որպէս փայտ զհուր: - 134. Երկրորդ՝ զի սերօբէն *բորբոքէ* ի սէրն որ է անմիջոց կապ. և քերօբէն ի ճանաչումն ճշմարտութեան. և աթոռքն ի յուղղութիւնն. և նոքա են վերակացուք դատաստանի իրաւանց: - 135. Իսկ փայտն. մարմնոյ ցամաքութիւն և պարկեշտութիւն. որ առաւել *բորբոքէ* զպատարագն: - 360. Եւ յա՛յտ է յայսմանէ, զի հուր *բորբոքեալ* է ի բարկութենէ. ո՛չ յէութենէ և ո՛չ ի կամաց իմ, այլ ի բարկութենէ: - 408. «Եղիցի ինձ» յայտնէ *զբորբոքեալ* սէրն: - 465. Զսառուցեալսն ի հաւատս *բորբոքեն*. և զվառեալսն չարութեամբ՝ շիջուցանեն. որպէս զելիմաս և զսիմոն: - 523. Հուր *բորբոքեն*, - 669. Իսկ որք շինեն փայտ, այսինքն *զբորբոքեալ* սէր ժամանակաւորացս: - 702. Զի տանջանարանք կազմեն, սառնամանիք ցուցանեն, հուր *բորբոքեն*: - 703. Տասներորդ, զի հուր *բորբոքի*, ըստ մարգարէին, «հուր առաջի նորա *բորբոքեսցի*»: - 730-731. Վեցերորդ, զի ահագին փառօք գայցէ փողով մեծաւ և ամպախաղաց որոտմամբ և շարժմամբ և հրով *բորբոքելոյ* որպէս ի սինայ: - 737. Ի ներքուստ խիղճ մտացն խածեալ, և արտաքուստ աշխարհ *բորբոքեալ*: - 738. Վասն առաջնոյն, որք աստ հրով ցանկութեանցն վառեցան, արդարապէս *բորբոքին*: - 752

**ԲՈՐԲՈՔՈՒՄՆ +** Առաջին միտք՝ զի ասաց թէ (հայր գործէ՛ և ես գործեմ.) և վասն այնր զչարացան հրէայքն, այժմ իբր թէ զնուաստագոյնս ճառէ ի զիջումն *բորբոքման* նոցա: - 45. Զի աստուած առնէ *զբորբոքումն* ախորժակին. որպէս հուր որ վառէ՛ զփայտ: - 133-134. Չորրորդ՝ զի *բորբոքումն* բարկութեանն աստուծոյ է՛ յաւիտենական: - 750

**ԲՈՐՈՏ +** Քառասունեւզ, Վասն *բորոտից*. և նշանակութեանն և սրբելոյն: - 284. ...**զդ**՝ անդամալոյծ միակողմանց բժշկութիւն. **էդ**՝ *բորոտից* սրբութիւն. **ըդ**՝ բոլոր մարմնոյն հիւանդաց և ջերմացելոց առողջութիւն. **թդ**՝ զդևսն հանէր. **ժդ**՝ զմեռեալսն յարուցանէր: - 328. *Բորոտից* սրբիլն **բ** հաւ. զմինն զենուլ և զմինն յարիւն թաթաւել և թողուլ. և գառն և տատրակ և աղաւնի: - 359. Զի՞նչ է **բ** հաւն ի սրբիլ *բորոտին*. մին զենեալ, և միւսն արեամբն թաթաւեալ և ի բաց թողեալ: - 368. Դարձեալ՝ *բորոտն* ադամ: - 368. Այս էր սրբութիւն *բորոտին* մարմնոյ. և ի մեզ հոգւոյ: - 368. Հինգերորդ, է օրեայ սրբութիւնք *բորոտացն* և կալ արտաքոյ բանակին՝ ի պիղծ մերձեցեալք: - 653

**ԲՈՐՈՏԱՆԱՄ, ԲՈՐՈՏԻՄ +** Զի՞նչ է որ *բորոտեցաւ* ձեռն: - 332. Երկրորդ՝ բնութիւնս ադամայ եւ ի դրախտէն և *բորոտացաւ* զանազան մեղօք. մինչև բանն էարկ ի ծոց աստուածութեան իւրոյ և հաստատեցաւ յառաջինն: - 332. Հինգերորդ՝ *բորոտիլն* զմահն եգիպտացւոց նշանակէր. և ողջանալն զկենդանանալն որդւոցն իէլի որ ի մահ գրաւեալ էին: - 332. Նախ ցուցանէ թէ՝ զազիր են գործօք և *բորոտեալ* մեղօք. վասն որոյ գարշ կենդանեօք ապականէր զնոսա: - 334. Երրորդ, թէ լուացեալ և կրկին *բորոտիւր*՝ այրիւր: - 367. Ապա թէ *բորոտիմք* ծածուկ մեղօք ի մարմնի՝ կապեալ բերանով առանց խոստովանելոյ, արտաքսիմք յեկեղեցւոյ՝ ի հանգստենէ՝ և ի փառաց արդարոց: - 368. Սա՛ *բորոտեցաւ* համարձակեալ ի տաճարն խնկարկել: - 452

**ԲՈՐՈՏՈՒԹԻՒՆ +** Որպէս եղև առ մարիամ *բորոտութիւն* վասն բանբասելոյն զմովսէս. որ աստ սակաւ ինչ տանջեցաւ, զի մի՛ ելցէ յերկնից ժառանգութենէն: - 159. Չորրորդ՝ մին ձեռն մովսէսի մեռաւ *բորոտութեամբ*. զի մին ազգ փրկեցաւ նովաւ: - 332

**ԲՈՑ +** Իսկ նախանձն աստուծոյ պարզապէս միայն ունի սիրել և զայլս և ո՛չ ատել. զի նախանձն աստուծոյ՝ սիրոյ առաւելութիւնն է. որպէս *բոցն* հրոյ: - 128. Եւ **գ** է գոյացութիւն նոցա. անմարմին՝ անմահ՝ և հրեղէն գոյն...: – 151. Զոր օրինակ հուրն հալէ զոսկին և *բոցն* ջնջէ ի նմանէ զժանկն: - 497. Ո՛չ բանն որպէս հալածու կաղապարեալ. և կամ մարմինն որպէս *բոց* ի հրոյ և ծուխ անօսր լուծեալ յօդդ: - 770

**ԲՈՑԵՂԷՆ +** Արդ ահա ա՛յսոքիկ են ծառ կենաց ի յերկինս և յերկրի տնկեալ. փոխանակ ծառոյն կենաց ի դրախտին եդեմայ. յորմէ հրաժարեցոյց և պարսպեաց *բոցեղէն* սրովն զճանապարհ նորին: - 771

**ԲՈՒԹ +** Եւ այս տուեալ է յաստուծոյ ընդ դէմ նոցա որ հաստ և *բութ* ունին զիմացումն: - 582

**ԲՈՒԺԵՄ +** իսկ «տեսլեամբ գեղեցիկ», զի նստի յերկինս և հայի յանդունդս. և հայելով ի հիւանդս *բուժէր*, և զմեղաւորս սրբէր: - 436

**ԲՈՒԼՂԱՐ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Բուլղարք*: - 298

**ԲՈՒՆ +** Կամ որպէս *բունն* մի է ծառոյն, և ճուղքն և տերևքն բազում. նմանապէս և աստուածաբանութիւնն: - 123. Որպէս *բունն* մի է ծառոյն. և ի բազում ճիւղս բաժանի: - 244. Եւ **ժէ** գլխաւոր ջիլքն, և մին *բուն* ջիլն. որ լինի բովանդակն **յկզ** ջիլք: - 244. ...իսկ քահանայապետն մեր եմուտ ո՛չ յօրինակս ճշմարտութեան, այլ ի *բուն* իսկ յերկինս յանդիման լինիլ յերեսացն աստուծոյ վասն մեր: – 355. Վասն է՞ր *բուն* գիրքն աքիմելէք ասէ, և աւետարանն աբիաթար: - 427. Ասեն վարդապետք թէ *Բունն* կիպարի էր վերուստ ի վայր. և Խոտորնակն արմաւենի: - 494. Իսկ ապականութիւն այլայլութեամբն ի ներքս մտանէ, և զորոշեալն ի միմեանց՝ դարձեալ օցտէ՛ և այլայլէ՛. մինչ զմարմինն ի *բուն* տարերս լուծանէ, և զհոգին յաներևոյթ տեղիս: - 498. Եւ թէ ո՞րպէս, ի *բուն* գիրս յայտնի է աշխատողաց անդ գտցես: - 583. Երկրորդ «որ եկիր և գալոց ես». քառասնօրեայ գալստեանն, և ծաղկազարդին, և *բուն* յինանց կիրակմտին զա՛յս ասա: - 634. Զտարւոյն ոստն ջարդեն ի վերայ *բնոյն*. և որ աճէ՛ զայն քաղեն և հիւսեն. Պտղակորոյս որպէս ձիթենի: - 638. Վասն է՞ր ի *բուն* բարեկենդանն զձայնն ի վերջ փոխեմք: - 641. ...այլ վասն յարութեանն քրիստոսի *բուն* բարեկենդան կարգեցաւ...: - 651. Եւ այլք ոմանք վեցերորդ կարծիս ստացեալ ասեն *զբուն* կատարեալ բարեաց հոգիսն ժողովեալ ի հրեշտակացն դասս...: – 687. Եւ *զբուն* չարսն ի դժոխս. որք են անհաւատք, և չարք, և կռապաշտք...: – 687. ...ուր ազգին *բունն* է և գլուխ՝ ա՛նդ հնչեցուցանէ որ ազգին առաջնորդն է: - 713. Ոմանք ո՛չ դատին այլ դատապարտին որպէս *բուն* չարքն և յայտնի մեղաւորքն...: – 738-739. Ոմանք ո՛չ դատին և ո՛չ դատապարտին. որպէս *բուն* արդարքն և կատարեալքն. որոց ասէ տէրն «ի դատաստան ո՛չ մտանեն, այլ փոխեցան ի մահուանէ ի կեանս»: – 739. Արդ բանիւ մտաց խօսի ընդ *բուն* արդարս և ընդ հրեշտակս որք դատենն զայլս: - 739. Եւ բանիւ գործոյ խօսի ընդ *բուն* չարս և ընդ դևս որք առաքին ի տանջանս: - 739

***Ի ԲՆԷ +*** Որք զաչս իմաստից յիմանալի ճառագայթիցն խուսափեցին թիւր կամօք, և խոտոր

մտօք. զանուղղայս խորհելով, և զանպատշաճս բարբառելով. յարձակեալ անկապ լեզւաւ և անդուռն շրթամբք բացեալ յերկինս. ցոպ բերանով ի բարձունս բարբանջելով. և յածեալ ընդ երկրաւ լեզուագարելով. որոց դատաստանն *ի բնէ* ո՛չ դատարկանայ. և կորուստն ո՛չ նիրհեսցէ: - 31. Ոչ ունիմք վեհագոյն քան զհաւատն. տիպ աստուծոյ ճշմարտի դրոշմեալ ի մեզ *ի բնէ*. մեր իրահանգ և զարդ: - 769

**ԲՈՒՆԵՄ +** Դարձեալ՝ վիշապն ի յորդանան էր *բունեալ*., ...այսինքն ի գէճ ցանկութիւնն: - 489. Յորս իբրև յոստս թռչունք երկնից՝ այսինքն սուրբքն հանգուցեալ են և *բունի՛ն*: - 755

**ԲՈՒՌՆ +** Երկրորդ՝ զուղղութեան գործոց *բուռն* էհար. և յուսացաւ թէ գո՛յ հատուցումն գործոց, և բարեաց փոխարէն: - 289. Եւ դարձեալ բանն աստուած *բուռն* էհար զզաւակէն աբրահամու և եղև անօթ թագաւորական: - 332. Չորրորդ՝ նշանակ իմանալւոյն դագոնայ, որ զգլուխ իւր ամբարձ ընդ դէմ աստուծոյ. և ընդ *բռամբ* էարկ և կոխեաց զմարդկային ազգ. զորս խորտակեաց տէր մեր: - 426. Երրորդ՝ փրկեաց ի *բուռն* ծառայութենէ սատանայի...: – 473. Որ և անդ ժամանեաց տէրն և կապեաց զհզօրն. և զկարծրացեալ ամրոցն աւերեաց. և կողոպտեաց ի նմանէ զհոգիսն մարդկան որ յադամայ հետէ ընդ *բռամբ* ունէր: - 503. Երկրորդ՝ զի դժոխքն այն էր *բուռն* զօրութիւնն սատանայի. և քրիստոս կապեաց զհզօրն ըստ աւետարանին. ապա ուրեմն քրիստոս աւերեաց զդժոխս: - 506. Տասներորդ, զի ցուցցէ թէ թշնամեաց նորա ո՛չ է իշխանութիւն *բուռն* հարկանել զնմանէ. իսկ բարեկամաց նորա գոյ իշխանութիւն այլով իւիք մերձենալ ի նա. այսինքն սիրով և երկիւղիւ յայնմիկ զոր ուտեն զնա: - 518. Վասն որոյ *բռունք* յափշտակեն. և բազում նեղութեամբ մտանեն: - 663. Շող յաստուծոյ ծագեալ հաւատ. զերկնից կախեալ լար իմն լուսեղէն. զորմէ *բուռն* հարեալ ձեռն զձեռամբ փոփոխեալ. ի ծովու սքանչելեաց յերկինս և յօդս վերանալ: - 769

**ԲՈՒՍԱՆԱՑԻ** - Եւ այս են **hp** լեզուքն: ...*Բուսանացիք*: - 298

**ԲՈՒՍԱՆԻՄ +** Եւ զի *բուսանին* և աճին ամենայն սերմանիք: - 197. Վասն է՞ր յամառն և ի ձմեռն ոչ *բուսանին* սերմանիք: - 197. Իսկ գարունն և աշունն հաւասար արդարութիւն է տուընջեան և գիշերոյ. վասն որոյ *բուսանին* սերմանիք: - 198. Եւ դարձեալ՝ գարնան եղանակն սկիզբն է ստեղծման աշխարհի և բուսուց և ամենայն ծննդոց. վասն որոյ ի սոյն ժամանակս առաւել *բուսանին* և նորոգին ամենեքեան: - 198. Իսկ ամառն նորին նման. զի հունձք է և կատարած գործոց բարեաց. և ո՛չ ժամանակ սերմանելոյ կամ *բուսանելոյ*: - 198. Եւ դարձեալ ի գարունն *բուսանին* բոյսք. և յամառն կատարին. և յաշունն ժողովին. և ի ձմեռն վայելեն. և յիւրաքանչիւր ժամանակս՝ իւր գործն առաւելու: - 198. Վասն է՞ր ամենայն տունկք բոլորաձև *բուսանին*: - 213. Եւ յո՛ր մասն մարմնոյն զինութիւն և ջերմութիւն առաւել լինի, անդ մազ *բուսանի*: - 240. Ասեմք եթէ երանքն. զի թէ հատանեն զերանսն, մարդն լինի որպէս կին. և մորուս ո՛չ *բուսանի*: - 245. Վասն է՞ր թաքարին մորուս ո՛չ *բուսանի*: - 245. Յնդկացւոցն մորուս ո՛չ *բուսանի* վասն սաստիկ ջերմոյն: - 245. Եւ հիւսիսայնոցն ո՛չ *բուսանի* վասն խիստ ցրտոյն. և միջերկրայքս վասն բարեխառնութեանն մորուս ունին: - 245. Իսկ զի կէսք քարց և անմորուք լինին, զի ջլապինտ է մորթ երեսացն որպէս զքաթ ձեռաց. վասն որոյ մազ ո՛չ *բուսանի*: - 245. Յերք *բուսեալ* ի ճակատն, ցուցանէ զգազանաբարքն: - 246. Թէ ժամանակն ցուրտ է կամ ջերմ. և երկիրն գէջ կամ չոր. և սերմն հոտեալ կամ աղանձեալ. և սերմանօղ ո՛չ լինի կամ ոչ սերմանէ. վասն որոյ ո՛չ *բուսանի*: - 256. Որպէս ճիւղ հատեալ ի ծառէ և տընկեալ յերկրի, ճիւղն է հատեալ ի ծառէն, այլ կենդանութիւնն ո՛չ. ուստի յա՛յտ է զի տընկեալ ճիւղն նոյն կենդանութեամբն *բուսանի* զոր ունի առ ինքն: - 257. Ոմանք ըստ ազգի և տեսակի իւրեանց հով և ջերմ՝ չոր և գէջ գոլով, փուքով կամ յապաղելով *բուսանին*: - 261. Եւ թէպէտ զնանիր խոտոյ ասեն ի նոյն ժամն *բուսանիլ* և կատարիլ և խամրիլ, ի նոյն թուոյս ոչ ելանէ ժամուք կամ մասամբք: - 263. Վասն որոյ յեօթն ամիսս ատամն *բուսանի* տղայոց. և յեօթն ամն դարձեալ փոխի: - 264. Զայս կարգ պահէ՛ և ի զարգացման հասակին. զի մինչև ցեօթն ամն ատամն *բուսանելով* և փոփոխելով՝ նշանակէ՛ զկերակրականն: - 267. Նոյնպէս առաջին օրէնքն շարժեաց զնուա ի *բուսանիլ*. և երկրորդն յաճումն և ի պտուղ: - 393. Նաև զամենայն գլխաւոր մեղս ընդ հզօր խորհուրդ ասէ սուրբն եւագրիոս. վասն զի նախ ի խորհուրդն տնկի ամենայն սերմն մեղաց. և ապա ի մարմինն *բուսանի* և աճէ: - 557. Դարձեալ, զի ամենայն մեղք նախ ի խորհուրդն սերմանի և ապա *բուսանի* և աճէ գործելովն: - 559. Զոր օրինակ ցորեան մերկ սերմանի և խոտօք և պատենօք *բուսանի*: - 592. ...որպէս սերմանիքն թաղեալ կենդանանան և *բուսանին*. նոյնպէս և մարդոյս մարմին: - 677. ...այսօր հոգևոր ջրով դարձեալ ոռոգանեմք, զի *բուսցի* ի գարնանաշարժ յարութեանն: - 680. ...ի գարունն ո՛չ թէ դժնիկն խլեալ *բուսանի*, այլ տնկեալ վարդենին. եթէ արմատն ոչ մնայ դժնկին: - 714. Նոյնպէս կատարեալ խոստովանութեամբն կորնչի մեղքն և *բուսանի* արդարութիւնն: - 714. Նա՛խ՝ զի որպէս նախ սերմանի և ապա *բուսանի*. այսպէս

և մարդն նախ մեռանի և ապա՛ կենդանանայ...: - 720. Երկրորդ, որպէս հատ մերկ անկանի և *բուսանի* ծաղկեալ և զարդարեալ տերևով...: - 720. Երրորդ, որպէս նոյն հատն սերմանեալ նոյն հատն *բուսանի* ըստ ազգի իւրում...: - 720. Ութերորդ, բարի և չար սերմանիքն ի միասին *բուսանին* և նման մինչ ի հունձս. մանաւանդ մինչ ի կալն...: - 721. Իններորդ, ամենայն սերմանիք *բուսեալք*՝ ի մի հասակ այսինքն ի կատարելութեանն իւրեանց ժամանեն ի հունձս...: - 721. Տասներորդ, որպէս հատն սերմանեալ և *բուսեալ* և չարչարեալ և ընդ հուր անցեալ՝ ապա՛ ի սեղան եղեալ պատուեցի: - 721. Դարձեալ որպէս հատն մերկ սերմանի և մերկ ո՛չ *բուսանի*. այլ զարդարեալ խոտով և տերևով եօթն թուով: - 721. Զի ամենայն բոյս բարեգործութեան ի սերմանց հաւատոյն *բուսանի* և պտղաբերի: - 769

**ԲՈՒՍՈՒՑԱՆԵՄ +** Իսկ գարունն և աշունն է՛ միջակ և ջերմ և գէջ՝ *բուսուցանէ*: - 197. Իսկ աշունն զնմանութիւն գարնան ունի. վասն այն և նա՛ *բուսուցանէ* : - 198. Նա՛խ՝ որպէս կանուխ անձրևն *բուսուցանէ* և անազանն սնուցանէ և պտղաբերէ՛: - 393. Որպէս անպտուղ երկիր կորուսանէ զբարի սերմանս և փուշ *բուսուցանէ*. նոյնպէս և մեք զբարի սերմանս որ եդ ի մեզ աստուած ի չարն փոխարկեմք: - 564. Զոր ընկալեալ զսերմն հրամանաց աստուծոյ, և *բուսուցեալ* ի մեզ՝ տամք պտուղ **լ**, **կ**, և **ճ**: - 757

**ԲՈՒՐԱՍՏԱՆ +** Մարգաց. որ է՛ ժամանակ ածելոյ զմարդ. որ ի դաշտս և ի հովիտս իցեն. յայգեստանս և ի *բուրաստանս*. յորժամ արեգակն առ շամբն և յետ շանն իցէ. զի ի **ժգն**՝ մո՛ւտ է ամռան: - 201. Յնգետասաներորդ՝ մի և նոյն գոլով մտանէ ի *բուրաստանս*, և զանազան գոյնս և համս և հոտս յառաջ բերէ: - 207

**ԲՈՒՐԱՍՏԱՆԱՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Բուրաստանացիք*: - 298

**ԲՈՒՐԲԱՌ** - և գո՛րծ է նոցա, հրամանաւ քահանային աւետարան կարդալ, քարոզել, և բառնալ քշոց և *բուրբառ*. և նստիլ ամենևին ո՛չ: - 608

**ԲՈՒՐԳԱԹՈՒՐ** - Յինգերորդ՝ *զբուրգաթուրն* զոր ասեն: - 553. Իսկ երկրորդն՝ որ ի *բուրգաթուրն* ասեն քաւեալ և ելեալ յերկինս...: - 687

**ԲՈՒՐԳՆ +** Նա՛խ՝ զի հաստատութիւն և *բրգո՛ւնք* են աշխարհի: - 211. Երրորդ՝ ի յառնելն զարարածս լերամբք և բլրօք. զի լերինք և բլուրք, հիմունք և *բրգունք* են աշխարհի. վասն որոյ օրհնեցան անշարժապէս...: – 319. Զի որպէս սիւն տան, և ոսկերք մարմնոյ, և *բրգունք* աշտարակի: - 788

**ԲՈՒՐԵԼԻ –** Եւ յերեքին յաւետարանսն մեծ կացեալ խնկօր *բուրելեօք:* - 618

**ԲՈՒՐԵՄ +** Եւ ի հողմոյն յայնմանէ հոտ անուշութեան դրախտին *բուրեաց* ի նոսա. և տեսիլ իմանալի տեսին, և լուր իմանալի լուան. և յայնմանէ մոռացան զառաջինն. և որպէս ի քնոյ զարթուցեալք ո՛չ լսէին զլեզուս միմեանց: - 298. Կնդրուկ անուշահոտ *բուրեալ*. և Գինի ուրախարար ի զմայլումն հոգւոր: - 361. Չորրորդ և ուղիղ, որպէս ասէ տեսիլն հրեշտակք առնուին զխունկս որ է՛ աղօթք սրբոցն, և նուիրէին ի սեղանն ոսկի որ է՛ քրիստոս. և ի նմանէ *բուրէր* ծուխն առ հայր: - 625. ...իսկ խունկն մերձեալ ի հուրն և զհոտն *բուրեալ*՝ է՛ մարմինն միաւորեալ ընդ բանին. և զհոտ անոյշ *բուրեալ* աշխարհի: - 645

**ԲՈՒՐՈՒՄՆ +** Աստ բուրվառ խնկոց. և ի մեզ *բուրումն* աղօթից: - 614. Նոյնպէս և խունկն զհւղաբերից կանանցն և *զբուրումն* հանդերձելոյն առ մեզ: - 628. Զի անուշահոտ վարուք հաճոյ եղեն աստուծոյ. և *բուրմամբ* աղօթից բարեխօսե՛ն վասն մեր: - 628. Ապա՛ զկնի երից մանկանցն աղօթից որով քաւիմք ի մեղաց. ի փառս տալն ի բարձունս՝ անուշահոտ *բուրմամբ* նուիրեմք: - 628. Նա՛խ՝ որպէս ասեն ոմանք՝ Բուրվառն նշանակէ զմարդկութիւնն քրիստոսի. և Յուրն զաստուածութիւնն. Ծխումն *զբուրումն* հոգւոյն սրբոյ: - 645

**ԲՈՒՐՎԱՌ +** Եւ զպղինձն ի *բուրվառացն* կորխեանց **մծ** իցն. յորմէ արար զնուարտանն ծածկոյթ պղնձի սեղանոյն. նշան յանդգնութեան նոցա: - 344. Եւ նոյն զաւազան յարմատոյն յեսսեայ. և *բուրվառն* հօր ի հոտ անուշից: - 345. Եւ զխաչն հրաշագործ՝ զկենսատու մանանայն. և *բուրվառ* զխունկս աղօթից. վէմն սեղանն սուրբ. և քերովբէք քշոցքն **բ**: - 345. Կամ զի օտար հուր եդին ի *բուրվառն* որ չէր օրէն: - 364. Եւ այլք ասեն թէ՝ կորխեանքն այրեցան մարմնով, վասն այն հոգւով սրբեցան. և *բուրվառք* նոցա սրբեցան: - 381-382. Վասն է՞ր զնշան ընտրութեան ի *բուրվառս* և ի գաւազանս տայ: - 382. Նա՛խ՝ *բուրվառն* օրինա՛կ էր ահարոնի, և գաւազանն՝ մովսէսի: - 382. Երկրորդ՝ երկուքն ևս ահարոնի. զի *բուրվառն* ոսկի զմաքուր քահանայութիւնն ցուցանէ. և գաւազանն զիշխանութիւնն: - 382. Երրորդ՝ զի *բուրվառովն* աստուծոյ ընծայէր և գաւազանաւն զշնորհս ի ժողովրդեանն: - 382. Չորրորդ՝ *բուրվառն* աղօթք մեռելոց. և գաւազանն խրատ կենդանեաց: - 382.

Յայս միտս ի բերել ընծային ի սեղանն՝ է դասք քահանայից կան ի սպասու. և երգեն եղանակաւ. և քշոց և *բուրվառ* և զանգակ հնչէ: - 431. Յիսուներորդ, *Բուրվառ.* և գրակալ. և նախատօնակն: - 527. Աստ *բուրվառ* խնկոց. և ի մեզ բուրումն աղօթից: - 614. Զի՞նչ է աւետարանին, Ո՜րթի. և մոմ վառեմք. և *բուրվառ* շարժեմք: - 644. Եւ ձայն *բուրվառ ին* որպէս փողքն: - 644. Զի՞նչ է *բուրվառին* խորհուրդ: - 645. Նա՛խ՝ որպէս ասեն ոմանք՝ *Բուրվառն* նշանակէ զմարդկութիւնն քրիստոսի. և Յուրն զաստուածութիւնն. Ծխումն զբուրումն հոգւոյն սրբոյ: - 645. Դարձեալ՝ *բուրվառն* է կոյսն մարիամ. և հուր աստուածութիւնն ի նմա բնակեալ. - 645. Դարձեալ՝ սիրտք մեր *բուրվա՛ռ* է. և աղօթքն խունկ. և հուրն ջերմ սէրն նիւթ *բուրվառին*: - 645. *Բուրվառ* ի ձեռն և գիր աւետարանին, «ելի ի հօրէ և եկի յաշխարհ». կամ այլ ինչ...: – 674. Զի՞նչ է *բուրվառն* ոսկի և քնարն ի ձեռս նոցա: - 713. *Բուրվառն* ոսկի և խունկն՝ այսինքն զի զաղօթս երկրաւորաց սուրբքն և հրեշտակք մատուցանեն քրիստոսի: - 713

**ԲՌՆԱԲԱՐ +** Զլաւագոյն կայս զոր աստուած տուեալ էր նմա՝ կամեցաւ ակամայ յաստուծոյ ի՛ւր շորթել. և այլոցն *բռնաբար* տիրապետել և հրամայել: - 149. Եւ է՛ որ զմեղքն թողու՝ և զպատիժն կրէ. որք յայլմէ *բռնաբա՛ր* խոստովանին և պատահմամբ, և դարձեալ սխալին. այսպիսեաց մեղքն միայն թողլի: - 432

**ԲՌՆԱԴԱՏԵՄ +** Դարձեալ, թէ է՛ հարկ՝ ո՛չ են իրաւունք դատաստանի և քննութիւն. և ո՛չ օրէնք քաղաքական. և ո՛չ արժանապէս հատուցմունք բարեաց և չարեաց. զի հարկն *բռնադատեաց* գործել զայս. հարկին եղիցին պատիւք և պատիժք. և ո՛չ մարդոյն: - 12. Թէ անկարութեամբ՝ ահա *բռնադատեալ* է. և թէ կարողութեամբ առնէ զչար՝ անկա՛ր է առնել զբարի: - 14. Դարձեալ ասեմք թէ՝ աստուած ստեղծ զկամքն նաև զհրեշտակս և զմարդիկ բարի. և կամի զբարին և *բռնադատէ՛* սիրել զբարին: - 17. Իսկ զչար ո՛չ կամի. և ո՛չ *բռնադատէ* ի չարն. այլ տանջանս և պատիժս եդ գործողացն զչար. ապա ուրեմն չարն ո՛չ է յաստուծոյ. և ո՛չ կամի զչար ուրուք: - 17. Իններորդ՝ զի նոցա բանականն է մոլորեալ. և ո՛չ ցասումն և ցանկութիւնն. յորոց վերայ բանն *բռնադատէ* խղճիւն, և ստիպէ զնոսա յուղղութիւն. այլ ինքն կառավարն խոհեմութիւնն մոլորեալ ո՛չ ուղղի: - 32. Որ է տարակուսանք այս, եթէ գոյր ոմն մեծ քան զհայր՝ զի *բռնադատեաց* զնա՛: - 36. Եւ կամ զիա՞րդ *բռնադատեալն* աստուած իցէ: - 36. Իսկ թէ ոչ կամաւ. ո՛ է որ զնա *բռնադատեաց* . զի բնութիւնն ողջախո՛հ է. և յայտնէ զայս կուսութեամբ կեալն բազմաց: - 36. Զի թէ ոչ կամաւ, *բռնադատեցաւ* յայլ իմն հզօրէ՛. և հաներ յաստուածութենէն: - 36. Զի *բռնադատեալն* ոչ լինի աստուած. իսկ թէ կամաւ, կամացն եղեր արարած և ո՛չ աստուծոյ: - 36. Զի թէ այնպիսիք էին որ ո՛չ կարէին մեղանչել՝ իբր կապեալք լինէին և *բռնադատեալք*, և վարձս ո՛չ առնուին: - 149. Այլ արդ՝ սուրբ գիրք վկայեն, և ճշմարիտ հաւատն *բռնադատէ՛* աստուած խոստովանիլ զծնեալն ի կուսէն. ապա ուրեմն և ծնօղն է՛ աստուածածին: - 466. Այլ և արտասուքն *բռնադատէ՛* զաստուած յողորմութիւն. որպէս բազում որդիք մօրն...: - 620

**ԲՌՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ +** Իսկ թէ յոչ կամայ, այլ ուրեմն *բռնադատութեամբ* քարշեցաւ յաստուածութիւն. և բարձեր զանսկզբնութիւն նորա: - 36

**ԲՌՆԱԿԱԼ +** Եւ մարմնաւոր իշխան զթագաւորս և *զբռնակալս*. զի մարմնապէս կառավարեսցեն զմարդիկ և խրատեսցեն վասն մեղաց: - 538

**ԲՌՆԱՄԻՏ** - Վասն է՞ր միհ տղայն ուշիմ և մտացի լինի. և մինն ապուշ և *բռնամիտ*: - 251

**ԲՌՆԱՆԱՄ +** Չորրորդ՝ տուտն նշանակէ զսեռն. որ ի վերջին ժամանակս *բռնանայ* և քարշէ՛ զերրորդ մասն աստեղաց: - 152. Չորրորդ՝ որպէս արու *բռնացա՛ւ* տէր ի քակել զօրէնս բնութեան. և խզեաց զկապ կուսանաց և զմայրական. այսինքն զի որ մա՛յր է՝ կոյս ո՛չ է. և որ կոյս է՝ մայր ո՛չ է: - 480

**ԲՌՆԱՒՈՐ +** Նմանապէս և զայս սահման լեզուի ո՛չ ոք կարէ փոփոխել. ո՛չ *բռնաւոր* և ո՛չ իշխան. բայց միայն աստուած որ եդ զսա: - 298. Չորրորդ՝ *բռնաւորօք*. որք բառնան զմարմինն: - 486. Ասեմք թէ՝ զի մի՛ սովորեսցին և զպատուաւորս և *զբռնաւորս* և զայլս թաղեսցեն: - 617

**ԲՌՆԵՄ +** Եւ թէ այս բ երակս *բռնուի* մարդն կուրանայ: - 239. Երրորդ՝ զօրաւոր հարւածքն եգիպտոսի, որ ո՛չ ոք կարէր հասանիլ և *բռնել* զպատիժն. որպէս ոք հարկանէ և դարձեալ բարձրացուցանէ զձեռն: - 395

**ԲՌՆՈՒԹԻՒՆ +** Եւ զի հարկեցաւ *բռնութեամբ*՝ ոչ է աստուած: - 36. Երկրորդ՝ զօրաւոր մասն է տուտն սողնոց. ցուցանէ *զբռնութեամբ* քարշելն ընդ ինքեան: - 152. Երկրորդ՝ *բռնութեամբ* զհոգիս ի տանջանս տանելոյ մինչ ի քրիստոս: - 153. Երրորդ՝ ծանրութիւն երկրիս ի վայր հակէ. և *բռնութիւն* հողմոյ ի վեր: - 182. Նոյն և սա՛ գոլորշի՛ է վերացեալ հողմոց. և մերձեցեալ ի հուռն՝ վառի՛ ի նմանէ. և *բռնութեամբ* հողմոյն վարեալ երևի իբրև զթռիչ աստղ և փութով շիջանի: - 203. Զի աչաց լոյսն հուր է.

և հուրն վերընթա՛ց է. վասն այն ի բնականսն նայելով հեշտանայ, և ի *բռնութեամբն* դժուարի և զարհուրի: - 239. Չինգերորդ՝ մահ և *բռնութիւն* սատանայի տիրեալ էր մարդկան. ի հաւատ կործանման նոցա անմահացոյց զենովք և վերացոյց զեղիա: - 289. Եւ յայտնի նշան մոլորութեան նոցա ա՛յս է, զի այնպիսեացն կատարօղք վատթարք են գործովք և մոլի. և առ դևս տանին զմարդիկք *բռնութեամբ*...: – 389. Եւ փոխանակ հոգւոյն՝ հրեշտակական օգնութեանն կարօտացաւ ցուցանել զտիրապէս իշխօղն բնութեան. որ և կշտամբեաց *զբռնութեամբ* թագաւորելն նորա: - 410. Նա՛խ՝ զի ոչ կամայ էր և *բռնութեամբ* : - 415. Ութերորդ՝ յօրինակ փրկչին յիսուսի, որ *զբռնութիւն* թշնամւոյն խորտակեաց և զխաբէութիւնն եթող. զի փորձեցին ընտրեալքն և խոտեցին վատթարքն: - 417. Եւ տէր մեր յաղթեաց իշխանին դիւաց. և եհատ զնորայն *բռնութիւն* աջոյ. և զոմանս եթող ձախիւ թիւրելոյ և զընտիրս որոշելոյ: - 419. Եւ յորում ժամու ել մովսէս յեգիպտոսէ և եհան զժողովուրդն, ի նոյն ժամն յարեաւ քրիստոս ի մեռելոց և եհան ազատեաց զհոգիսն ի հրահալոց չարութենէ դժոխոցն և ի *բռնութեանց* իմանալի փարաւոնին: - 512. Նա՛խ՝ զի մարմնաւորին հնազանդիմք յոչ կամաց. *բռնութեամբ* և ի հարկէ: - 538. Եւ տէր սիոն հայոց կաթողիկոսն անդր հասեալ բազում եպիսկոպոսօք և մեծամեծ ազատօք հայոց և իշխանօք նոցին. ընդ դէմ աղանդոց ա՛յնր ժամանակի, և թուլութեան կարգաւորաց եկեղեցւոյ, և *բռնութեան* իշխանաց: - 545. Վրէժխնդրութիւն է ջատագով լինիլ. որով *բռնութիւն* և անիրաւութիւն և ամենայն վնասակար ի բաց մերժի: - 579. **Եւ երկրորդ անպատշաճութիւն, զի յասելն թէ՝ ես կու մկրտեմ. երևի թէ նուիրեալն ո՛չ իւր կամաւն է եկեալ ի մկրտութիւն, այլ *բռնութեամբ* և ի հարկէ՛ կու մկրտեմ:** - 588. Զի *բռնութեամբ* և առանց հաւանելոյ միմեանց՝ այսինքն փեսային և հարսին՝ ո՛չ հաստատի պսակն: - 610. ...**զի բազում արգելմունք գոն պսակին. որպէս ազգակցութիւնն հոգևոր կամ մարմնաւոր. կամ տկարութիւն բնութեանն. կամ պոռնկութիւնն. կամ այսահարութիւնն. կամ ծառայութիւնն. կամ *բռնութեամբն* . կամ այլ ինչ այսպիսի պատճառ. որով բաժանին այրն և կինն**: - 610. Ա՛յն է որ սատանայ խաբէութեամբ և *բռնութեամբ* զօրացեալ էր և իշխան եղեալ ի վերայ մարդկան. ի կեանս զանազան չարեօք և կռոց պաշտմամբ...: – 705. Իններորդ, զի *բռնութիւն* սատանայի էր կապեալ զնոսա. և տէր մեր կապեաց զնա ընդ խաչափայտին. որ նա ինքն էր դրունք դժոխոց. ապա ուրեմն արձակեցան անտի: - 777

**ԲՐԵՄ +** Տասներորդ՝ *բրե՛ն* զաչս խղճի մտացն և զյուսոյն: - 424. Իններորդ՝ յետ է աւուր կորոյս *զնաաս* խռովարար, որ *բրէր* զաջոյ ակն իսրայէլի. և տէր մեր զխռովարար բանսարկուն, որ *բրէ՛* զակն իմացականին մարդոյ...: – 427. Եւ որպէս ի հիմնարկութեան եկեղեցւոյ խաչիւ և աւետարանաւ *բրել* է աստիճանաւ...: – 674. Եօթներորդ՝ վասն բարձրութեանն ի ջանուց մշակաց. զի որ քան առաւել *բրի* ի ներքոյ երկիրն և քարինս դնի, այն քան առաւել բարձրանայ: - 766

**ԲՐՈՒՏ +** Ասեմք եթէ՝ գոգ և մագօգն՝ հոգևորապէս իմացեալ լինին ամենայն հալածօղք եկեղեցւոյ. զորս սատակեսցէ՛ տէր յիսուս զամենեսեան որպէս ասէ սաղմոսն՝ «որպէս զանօթ *բրտի* փշրեսցես զնոսա»: - 28. **Իմա՛, որպէս *բրուտն* կարէ՛ գործել անօթ ինչ, այլ ո՛չ երկինք, և երբեմն ի բարւոջ և երբեմն ի չար և ապականեալ. այլ ըստ այսմ ո՛չ լինի աստուած**: - 44

**ԲՕԹ +** Ասի և *բօթ*. այսինքն սուգ և տրտմութիւն վասն ելիցն ի դրախտէն, և լսելոյն՝ (հող էիր և ի հող դարձիցս: - 200. զոր նշանակէ դ թիւն. և ուրբաթն սուգ և *բօթ* լսի՝ պահելի՛ է: - 653

# Գ

**ԳԱԲԱՒՈՆ –** Քսանգ՝ յեսու փրկեաց *զգաբաւոն* ի **ե** թագաւորացն որք պաշարէին: - 419

**ԳԱԲԱՒՈՆԱՑԻ** - Տասներորդ՝ զի ուսցին նոքա ի նոցանէ զբարիսն, և մնասցեն ժառանգ երկրին. որպէս *գաբաւոնացիքն*: - 417. Իններորդ, ապրեցոյց *զգաբաւոնացիսն* որք երկեան և ապաւինեցան ի նա: - 418

**ԳԱԲՐԻԷԼ** - Երկրորդքն՝ մեծագոյնս աւետարանեն, որպէս *գաբրիէլ*: - 136. Առաջին՝ *գաբրիէլ*. որ է՛ պատկեր աստուծոյ: - 144. Այսպէս և յովակիմ ի յուդայէ՛ էր և ունէր զաննա զդուստր մատթանայ ի ցեղէն ղևեայ. վասն այն ազգական մարիամու զեղիսաբեթ ասէր *գաբրիէլ*: - 461. Վասն է՞ր հրեշտակապետն *գաբրիէլ* աւետեաց կուսին, և ո՛չ մարդ ոք: - 463. Ա՛րդ՝ աստի մինչ ի նիսանի **ժէ**, և յապրիլի է՝ կատարի **է** ամիս. յորում առաքեցաւ *գաբրիէլ* առ կոյսն մարիամ յաւուր չորեքշաբաթու: - 483. Առաջին վասն պատգամաց. որպէս *գաբրիէլ* առ կոյսն սուրբ: - 535. Եւ որպէս հրեշտակապետն *գաբրիէլ*, նախ ետ զաւետիս սրբոյ կուսին, և նա՛ խորհիէր ի միտս. - 610. Դարձեալ՝ ի խորհուրդ գոչման փողոյն այն որ ի բարձունս. զի նախ յերկնից գոչէ փողն *գաբրիէլի* և ժողովէ զհոգիսն...: – 618. վասն զի *գաբրիէլ* հրեշտակապետաց դասուն է պետ, - 713. Եւ *գաբրիէլ* վկայէ՛ր «տացէ նմա տէր աստուած զաթոռն դաւթի հօր իւրոյ, և թագաւորեսցէ ի վերայ տանն յակոբայ ի յաւիտեանն, և թագաւորութեան նորա վախճան մի՛ լիցի»: - 736

**ԳԱԲՐԻԷԼԵԱՆ** - Իսկ զի ասէ «*գաբրիէլեան* փող»...: - 713

**ԳԱԳԱԹՆ +** Ա՛յս է ծայրագոյն *գագաթն* աստուածաբանութեան: - 123. Այսպէս մարմին մարդոյ որ քան է երկայնութեամբ ի *գագաթէ*՛ գլխոյն մինչև ի ներբանս ոտիցն, նոյն քան է լայնութիւն ի մէջ երկուց երկայն մատիցն ծեռաց: - 232. Ներքին կզակն և վերին. և **բ** քնատեղն մին ոսկր. և *գագաթն*: - 243. Եւ **յ** կանգուն երկայն, զի ի կրնկէն ի *գագաթն* լար չափեալ՝ **դ** պատ առնու զգլխովն: - 293

**ԳԱԴ** - *Գա՛դ* է և Թադէոս: - 348. Ռուբէն. Շմաւոն. և *Գադ*. **ժե** բիւր և **ռնծ** զօրք նոցա: - 378

**ԳԱԶԱ** - Իններ, էջ ի *գազայ* ի տուն պոռնկի: - 423. Ութերորդ՝ արին սամփսոն որ օրինա՛կ էր ամենազօր տն մերոյ, էջ ի *գազա* ի տիպ աշխարհի. և օթեցաւ ի պոռնկատունն յօրինակ դժոխոցն. յորում պաշարեցին զքաղաքն այլազգիքն: - 513

**ԳԱՌՆ +** Երրորդն է նշանական աստուածաբանութիւն. որ ի զգալի կերպարանաց փոխակցիմք յիմանալի տեսութիւնն. թէ զի՞նչ նշանակէ մարդ երևելին. կամ առիւծ. *գառն*. հուր. լոյս. և այլն: - 122. Երեսունգ, Երեսաց հացն. և *գառն*. և աշտանակն. և քահանայական զգեստն: - 284. Նոքա *գառն* դնէին, և մեք ո՛չ: - 284. Եւ մի՛ եփել *զգառն* ի կաթն: - 285. Չորրորդ՝ զի զանարատսն և զպարարտսն մատուցանէր յօրինակ անարատ *գառինն* քրիստոսի. և ճարպաւորն՝ լուսոյ աստուածութեանն: - 286. Չորրորդ, նա՛ *զգառն* զատկին եղեն որով ազատեցան ի փարաւոնէ: - 327. Եւ քրիստոս *գառն* ճշմարիտ զենաւ և ազատեաց զմեզ ի սատանայէ՛: - 328. Իսկ յաւուր **ե** շաբաթոջ երեկունն *զգառն* զենին և ելին յայգ ուրբաթի. նիսանի **ժե**. որ էր առաջին ամիս նոցա. և ի կիրակէ անցին ընդ ծովն որ էր նիսանի **ժէ**: - 337. Նա՛խ՝ սեղան երեսաց հացին և *գառին* ի հիւսիսոյ կողմն: - 346. Ա՛րդ՝ **գ** հաց՝ և *գառն* խորովեալ դնէին յառաւօտուն. և չորրորդ մասն դորակի գինւոյ. նոյնպէս և յերեկոյն հանապազորդ: - 346. Այլ որք յամառելով յօրինակն՝ ա՛ղ խառնեն ի խորհուրդն, պա՛րտ է նոցա խառնել և ձէթ և մուրկ և խունկ և միս *գառին*. կամ զանգեալ ի կասկարայս, կամ օծեալ ի տապակի, զի զօրինակն կատարեսցեն. և հեռասցին ի ճշմարտութենէն: - 357. Վասն է՞ր յերեսաց սեղանն հաց և գինի և *գառն* դնէին. և մեք *զգառն* ո՛չ դնեմք: - 357. *Գառն* օրինա՛կ էր քրիստոսի. զի կոչեցաւ գառն աստուծոյ. ա՛յլ զգալի *գառն* ո՛չ եղև: - 357. *Գառն*՝ որդիք քրիստոնէի. և Ուլն՝ որդիք հեթանոսի յորժամ գան յեկեղեցին սրբին և նւիրին աստուծոյ: - 358. Մետասաներորդ, բոլորապտուղ. որ է հանապազորդ *գառն* խորովեալ յառաւօտն և յերիկոյն մին հացով և **դ** մասն դորակի գինով: - 359. Բորոտից սրբիլն **բ** հաւ. զմինն զենուլ և զմինն յարիւն թաթաւել և թողուլ. և *գառն* և տատրակ և աղաւնի: - 359. Այլ և յիսներեկին է է *գառինս*. և ի նոր մտիցն կրկին հաց ևս: - 359. *Գառն*, զի անմեղ և կերակրելի՛ է և որդի աստուծոյ: - 361. Իսկ ի ներսն, **ա**՝ հացին երեսաց և *գառին*. **բ**՝ խնկոցն. **գ**՝ շօթին և զհացին. **դ**՝ մին ա՛յլ **զ** հացին. զի **ժբ** հաց էր. և **բ** սեղան: - 364. Նա՛խ՝ *գառն* հանապազորդ. և նուէրք յերեսաց սեղանն և յողջակիզաց: - 372. Իսկ է *գառն* անարատ, է զգայարանքն սուրբ: - 373. Նա՛խ՝ զի **ը** էին նւէրք պատարագացն. է *գառն*. և մի խոյ: - 373. Զուարակն, և Խոյն, և *Գառն*, և Նոխազն, և այլ Նուէրն: - 374. Զուարակն է պատարագեալ. և խոյ մեզ ծնեալ. և *գառն* կերակրելի. և նոխազ զմեղս մեր առեալ: - 374. *Գառինք*՝ նորածնեալք աւազանաւն: - 374. Իսկ չորրորդ դորակ գինւոյն և իւղոյն ընդ նաշիոյ և *գառինն*, նշանակէ՛ զբանաւոր և զկենդանի պատարագս մեր: - 375. Այլ և ուղղիցին դ տուն է կիսամասնեայ. ընդ սրբոյ խաչեցարին հզօր և անմահ *գառինն* եղեալ: - 375. Ա՛յս է խորհուրդ առաւօտու և երեկոյի *գառինն* և նուէրք նորա: - 375. Երրորդ՝ մինչ *գառն* լինի ի կաթն մօր՝ մի՛ զենցես աստ. զի գութն առաւե՛լ է: - 399. Հինգերորդ և մեծն ա՛յս է, զի *գառն* քրիստոս է. և կաթն օրէնք. և մայր ժողովուրդն: - 399. Ապա թէ ոչ՝ և *գառն* կերաւ ի վերնատանն, կե՛ր և դու ի պահոցն: - 510. Որ այսպիսի էր պատկեր աւուրն. յաւուր **ե** շաբաթոջ երեկոյին ի չորեքտասան լուսնին *զգառն* զենին և ելին յայգ ուրբաթի **ժե** ամսեանն. և ի կիրակէ անցին ընդ ծովն որ էր նիսանի **ժէ**: - 513. Երկրորդ՝ *գառն* զենուլ ի տօնս: - 553. Այլ և մարգարէն մովսէս դնէր յերեսաց սեղանն *գառ* մի խորովեալ. և հաց և գինի և չորրորդ մասն դորակի հանապազորդ. և ջուր ո՛չ դնէր: - 595. Որ էր խորհուրդ անմահ *գառինն*. և հացն և գինին մարմին և արիւնն սուրբ: - 595. Չորրորդ՝ ի յօրինակն մի հաց և մի *գառն* խորովեալ լինէր. որ ընդ մասին գինւոյ դնէին յերեսաց սեղանն: - 597. Երրորդ՝ ի հին տաճարն *գառն* էր պատարագ. որ էր օրինակ գառինն աստուծոյ: - 617. Իսկ յեկեղեցի ճշմարիտ *գառն* պատարագի. վասն որոյ զօրինակն արգելումք: - 617. Եօթն եօթն *գառանցն* զենումն: - 626. Եւ երեքսրբեանն, *գառն* անմահ զենեալ վասն մեր: - 629. Չորեքկերպեան կենդանիքն է՛ խաչն.

և տեսեալն ի վերայ նորա՝ *գառն* որ բառնայ զմեղս աշխարհի: - 638. Ութերորդ, է է ածել *զգառինսն* պատարագ ի տօնսն: - 653. Որպէս *գառն* զմայրն, և նոքա զծնօղս իւրեանց: - 753. Եւ յորժամ առաքին մեղաւորքն ի հուրն յաւիտենից, գտանեն զծնօղս իւրեանց որպէս *գառինք* զմարս, և յաւիտեան խածատեն զնոսա: - 753

***ԳԱՌՆ ԱՍՏՈՒԾՈՅ*** - Քսանևմիերորդ՝ արդ՝ եթէ քրիստոս տգէտ ունէր միտս, և տկար հոգի, և ապականացու մարմին և եկն քրիստոս զի բարձցէ զտկարութիւնս մեր. և լուսաւորեսցէ որ նստէաք ի խաւարի. և նա՛ է *գառն աստուծոյ* որ բառնայ զմեղս աշխարհի և զապականութիւն: - 99. Ա՛րդ՝ *գառն աստուծոյ* է՛ որդին մարդոյ: - 99. Գառն օրինա՛կ էր քրիստոսի. զի կոչեցաւ *գառն աստուծոյ*. ա՛յլ զգալի գառն ո՛չ եղև: - 357. Երրորդ՝ ի հին տաճարն գառն էր պատարագ. որ էր օրինակ *գառինն աստուծոյ*: - 617. Դարձեալ՝ մատաղն ստուեր և օրինա՛կ է ճշմարիտ պատարագին քրիստոսի որ *գառն աստուծոյ* և եզն պարարակ կոչեցաւ...: - 657

**ԳԱՌՆԵՆԻ +** Իններորդ՝ նա՛ ի տաճարին նստի և ուսուցանէ. և սոքա ի ներքս ի յեկեղեցի. զկերպարանս բարեպաշտի ունելով արտաքոյ՝ ծածկեալ են *գառնենեաւ* զգայլենիս: - 35. Իսկ թէ յայնցանէ փախչիք իբր յայտնապէս որոշումն՝ և այլինն պատճառաւ որպէս *գառնենեաւ* ծածկէք զգայլենիս ձեր: - 89

**ԳԱՏՈՒՐ** - Ոմանք դ ասեն. և անուանս թուեն, Ատուր, Թատուր, *Գատուր*, Սատնատուր: - 495

**ԳԱՐԳԱՆԱՑԻ** - Եւ այս են **իք** լեզուքն: ...*Գարգանացիք:* - 298

**ԳԱՐԳԱՑԻ** - Եւ այս են **իք** լեզուքն: ...*Գարգացիք*: - 298

**ԳԱՐԷԴԻԻԹ +** Երրորդ, դիւական. որպէս կռոց սուտ մարգարէքն. սեդեկիայն և այլոց բազմաց. որ այժմ երևին ի պատասխանիս կախարդաց. նաև հաւկռիչք և *գարէդիւթք*. որք են բնաւ սուտք և ոչինչք: - 536

**ԳԱՐԵԶԻՆ –** Տասներորդ՝ ի *գարեզին*. որ է՛ լեառն թլփատութեան. զի ելեալ ի լեառն հաւատոց՝ զաւելորդ մեղացն ի բաց ընկեցեն, և զօրհնութիւնն աստուծոյ առցեն: - 402

**ԳԱՐԵՂԷՆ +** Այլ և ալիւր *գարեղէն* զոհ յիշատակի փորձութեան կանանց: - 359. Երրորդ, զայս ի քրիստոսէ ուսաք. զի գոհացաւ ի հօրէ և ապա՛ բաշխեաց *զգարեղէն* նկանակսն և աճեաց. – 654. զի լցցին նոքա ի բոլոր մարմնոյն որպէս *գարեղէն* նկանակ հացիցն: - 725

**ԳԱՐԻ +** Սիկղն և սատերն և երկդրամեանն մի են. ի դանկ է. և մի դանկն **բ** *գարւոյ* կշիռ է: - 343. Դիւք է՝ որ ձեռօք և նիւթո՛վ գործէ. որպէս *գարի*, և ալիւր, և աւազ, և ջուր, և քար. և այն որ թզով չափէ, և այլն ամենայն: - 388

**ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ +** Իսկ *Գարնանամուտ*՝ որ է՛ հասարակածն՝ է՛ չորրորդ օրն. յորում լուսաւորքն կազմեցան: - 191. Եւ ի ժբն՝ հասարակա՛ծ է. որ է՛ *գարնանամուտն*: - 191. Եւ ի հինգն աւելեաց՝ է՛ *գարնանամուտ* նոցա: - 191

**ԳԱՐՆԱՆԱՇԱՐԺ +** այսօր հոգևոր ջրով դարձեալ ոռոգանեմք, զի բուսցի ի *գարնանաշարժ* յարութեանն: - 680

**ԳԱՐՇ +** Ոմանք ասեն թէ՝ զանազան և *գարշ* կենդանիք են ի ծովն, և ի նոցանէ դառնանայ: - 208. Նախ ցուցանէ թէ՝ զազիր են գործօք և բորոտեալ մեղօք. վասն որոյ *գարշ* կենդանեօք ապականէր զնոսա: - 334. Նշանակէր զխաւար անմտութեան նոցա որ առաւել էր քան զամենայն երկրի. զի զամենայն *գարշ* կենդանիս ի պաշտօն առին: - 334. Իսկ որ վասն մեղաց նաշիհ իւղ և խունկ ոչ դնէին. զի տրտմութիւն և խաւար է մեղքն, և *գարշ* հոտ գայ ի խղճմտանացն մինչև ապաշխարեսցէ: - 357. Որպէս նախ քան զօրէնս, բնական քննութեամբ ընտրէին մարդիկ. կամ զանճոռնի մեծն, կամ զամենևին փոքրն, կամ *զգարշն* տեսութեամբ, կամ զվնասակարն, ուտելոյ պիղծ ասէին զսոսա: - 364. Եօթներորդ, և *գա՛րշ* է. և մեղքն զազիր: - 367

**ԳԱՐՇԱՆԱՄ +** Եւ գիշեր, զի *գարշանա՛յ* երր, որ է օդ: - 196

**ԳԱՐՇԱՊԱՐ +** Եւ զի զմարդն ընկէց յերկնից ի յերկիր, ընդ *գարշապար* ոտից նորա անկանի: - 219. Նախ ասեն եթէ ի ծննդեանն կալեալ էր *զգարշապարէն* եսաւայ, այժմ զփոխն անդրադարձէ՛ և յիշեցուցանէ նմա թէ՝ ամենայն իրի հատուցումն գոյ: - 311. Դարձեալ, յերես անկեալ արտասուալի դիմօք հողս և փոշի՝ սուրբ *գարշապարաց* ձերոց, աղերսեմ ի խորոց սրտէ զհարազատ գութ հարց և եղբարց մեր հոգևորաց: - 773

**ԳԱՐՇԵԼԻ +** Եւ թէ հետևեսցի՝ ոչ որ գործեաց զգեղեցիկս և *զգարշելիս*, այլ որ պատճառն է և հարկ՝ գովեսցի և պարսաւեսցի. այսինքն բախտն և ճակատագիրն: - 11. Փորոտին զծածուկ խորհուրդն. զոր

լուանալ հրամայէ՛ ջրով. այսինքն խոհականաւն *զգարշելի* մտածմունս սրբել: - 360. Նա՛խ՝ զի *գարշելի* իրօք տանջէր *զգարշելիսն*: - 426. Եւ զի պիղծ և *գարշելի* էր զոհք կռոցն և կերակուրք հեթանոսաց: - 443. Եւ մարմինք նոցա լինին առաւել թանձր և ծանր և *գարշելիք* որպէս աստ: - 723. Երկրորդ՝ տիւ է իմանալ զկեանս սրբոցն ի յերկինս. իսկ գիշեր զտանջանս *գարշելեացն* ի դժոխս: - 750

**ԳԱՐՇԵՑՈՒՑԱՆԵՄ +** Եւ ի ներքինն անցեալ՝ գիշեր. զի *գարշեցո՛յց* զերր. որ է օդ և երես երկրի: - 190

**ԳԱՐՇԻՄ +** Երրորդ՝ յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ ի յօգնութիւն. զոր մարդիկ յուսահատեալ էին եթէ վասն մեղաց մերոց եթող զմեզ աստուած ի ձեռաց. և նա ի յօգնութիւն կոչեաց զանուն տեառն աստուծոյ. այսինքն զի տէր է՝ ո՛չ *գարշի* ի ծառայից իւրոց. և զի աստուած է՝ էա՛ծ զմեզ աստ ոչ ի կորուսանել, այլ ի կեցուցանել: - 289. **Երրորդ՝ զի ո՛չ ինչ յորոց ստեղծ աստուած *գարշի* բնակիլ. մանաւանդ յարգանդի զարդարեալ կուսութեամբ. զի զոր ստեղծ ձեռօք, բնակէ՛ ի տան ձեռագործի իւրոյ:** - 469. Նա՛խ՝ զի որ բանն մարդ եղև՝ ո՛չ *գարշի* յեդեալ օրինացն իւրոց զի վասն մարդկան եդ: - 485. **Հինգերորդ, զի մի՛ ի զազիր հոտոցն և որդանցն *գարշեսցուք* և թողցուք զշէնս աւերակ**: - 677. Զի այնպէս ծանակեալ լիցի մարմին մեղաւորին, մինչ զի հոգին *գարշեսցի* առնուլ զնա. և որպէս ուրուկ և որդնալից այնպէս ո՛չ կամեսցի ունել զնա: - 751

**ԳԱՐՇՈՒԹԻՒՆ +** Եւ զի կաւ և տիղմ և *գարշութիւնք* բազմանան: - 197. Երկրորդ, զի մի տեսցուք *զգարշութիւն* մարմնոյս...: – 677. ...ծածկէ՛ *զգարշութիւն* մեր. որպէս մայր մանկան քան զայլ կարևորս: - 677. Որ և ա՛յն քան գերազանց է միաւորութիւնն քրիստոսի ընդ եկեղեցի քան զմարմնական հարսանեաց, որպէս լոյս քան զխաւար. և իւղ անոյշ քան *զգարշութիւնս*: - 757

**ԳԱՐՈՒՆ +** Եւ որովհետև ծանեաք զայս, արդ պատասխանեմք առարկութեանցն, եթէ որքան է՛ ի հարկաւոր պատճառ է՛, լինի բացորոշապէս բանն ճշմարիտ. որպէս բան թագաւորի. և մարդոյն մեռանիլն. և արև ծագելն. և լինիլն *գարուն* յետ ձմռան: - 10. Յատկութիւնք *գարնան* և ամարան, աշնան և ձմերան նոյն թուով: - 154. Ի խոյն և ի ցուլն և յեկաւորն առնէ *զգարուն*. որ է հասարակ տիւն և գիշերն **ժբ** ժամ: - 190. Ի չորեսին եղանակս տարոյն՝ *Գարունն* այսու ճոխանայ: - 196. Եւ *գարուն*, որ է՛ գայ ի յարումն: - 197. Իսկ *գարուն* և աշուն է՛ միջակ և ջերմ և գէջ՝ բուսուցանէ: - 197. Իսկ *գարուն* և աշուն հաւասար արդարութիւն է տուընջեան և գիշերոյ. վասն որոյ բուսանին սերմանիք: - 198. Եւ դարձեալ՝ *գարնան* եղանակն սկիզբն է ստեղծման աշխարհի և բուսուց և ամենայն ծննդոց. վասն որոյ ի սոյն ժամանակս առաւել բուսանին և նորոգին ամենեքեան: - 198. Իսկ աշուն զնմանութիւն *գարնան* ունի. վասն այն և նա՛ բուսուցանէ: - 198. Եւ դարձեալ ի *գարունն* բուսանին բոյսք. և յամառն կատարին. և յաշունն ժողովին. և ի ձմեռն վայելեն. և յիւրաքանչիւր ժամանակս՝ իւր գործն առաւելու: - 198. «Արի՛ ասէ հիւսիս, և ե՛կ հարաւ». որ է՛ *գարնան* ամիս. զի ի **ժբ**ն մտանէ: - 201. Ոմանք ի դրախտն ևս ասեն թէ տիւ և գիշեր լինի. կամ *գարուն* և աշուն. զոր մեզ չէ ընդունելի: - 222. Յեղանակս *գարնան*, և յառաւօտուն մինչև յերեք ժամս, և հիւթոյ արեան, և մանկութեան հասակն ի տղայութենէ ծննդեան և աճման՝ ունին զնմանութիւն օդոյ ջերմ և գէջ գոլով: - 266. Նա՛խ՝ զատիկն ազատութեան ելիցն ի *գարնանն*: - 340. Չորրորդ, գռեհիկ. զոր սովորութեամբ լուեալ ասեն՝ ձմեռն գայ, և զկնի այնորիկ *գարուն* ամառն և աշուն: - 536. Եւ յետ այնորիկ ի հարաւ. զի հարաւով հողմոյ սուրբ հոգւոյն՝ արար մեզ *գարուն* հոգևոր ազգի հաւատացելոցս...: - 673. Ի *գարնան* եղանակի ի զատկի կիրակէին ի մէջ գիշերի յորում ժամու յարեաւ քրիստոս և հրեշտակն թաւալեցոյց զվէմն և գոչէր զյարութիւնն քրիստոսի...: - 714. ...ի *գարունն* ո՛չ թէ դժնիկն խլեալ բուսանի, այլ տնկեալ վարդենին. եթէ արմատն ոչ մնայ դժնկին: - 714

**ԳԱՒԱԶԱՆ +** Իսկ թէ ոք ասիցէ՝ եղևն զփոփոխումն ցուցանէ. որպէս այն թէ՝ *գաւազանն* մովսէսի օձ եղև: - 72. Երրորդ՝ ի *գաւազանն* և ի մատանին. զի ի վերայ իշխանաց և իշխեցելո՛ց է հաստատեալ և յեցեալ: - 271. Եւ փոխանակ *գաւազանին*՝ անմահ երանութեամբ հաստատեաց: - 271. Յիսունեթ, Վասն կորխեանցն. և ծաղկեալ *գաւազանին*: - 284. Որպէս ասելն *գաւազան*, աւազան, սապոն, ամէն, և կամ ա՛յլ ինչ: - 297. Քսանևը, մովսէս խաչանիշ *գաւազանաւն* զծովն պատառեաց: - 329. Զի՞նչ է *գաւազանն* ի յօձ փոխարկեալ: - 332. Առաջինն է *գաւազանն* ի յօձ փոխարկիլ: - 332. Նա՛խ՝ նշանակէ զնոյն ինքն սկզբնաչարն սատանայ. որ էր յերկինս *գաւազան* ուղղութեան և ընկեցեալ եղև օ՛ձ: - 332. Երրորդ՝ թագաւորական *գաւազան* էր ադամ ի դրախտին. և յորժամ մեղաւ՝ անկաւ ի յերկիր և եղև օձ մեղաւոր: - 332. Եւ ի ձեռն մովսէսի դարձեալ եղև *գաւազան* թագաւորական և քահանայութեան: - 332. Վեցերորդ՝ նշանակէ՛ զբանն աստուած *գաւազան* ուղղութեան և թագաւորութեան առ հայր. եկն նա՛ յերկիր և էառ զօձաձև բնութիւնս մեր. և դարձեալ ըմբռնեալ մարմնովն ել յերկինս և նստաւ ընդ աջմէ հօր: - 332.

Եօթներորդ՝ *գաւազանն* նշանա՛կ է խրատու և արդարութեան: - 332. Եւ ի ձեռն խաչին ներգործին ամենայն սքանչելիք որպէս ի ձեռն *գաւազանին* մովսէսի: - 332. Իններորդ՝ խաւարն շօշափելի. կամ զի թանրացեալ ըմբռնիւր շօշափելով. կամ զի շօշափելով ձեռաց և *գաւազանաւ* կարէին շարժիլ: - 334. Է՛ որ զէութիւնն փոխէ. որպէս մովսէս զգետն յարիւն դարձոյց և *զգաւազանն* յօձ. և այս կոչի սքանչելիք: - 335. Երկրորդ՝ զի *գաւազանն* մովսէսի մի վիշապ եղեալ կլանէր զբազում վիշապս նոցա որ և հե՛տն միանգամայն ո՛չ երևէր. ընդէ՞ր ապա և նոցայն ո՛չ եկուլ զմովսէսին. քանզի սո՛ւտ էր: - 335. Եւ խաչանիշ *գաւազանաւն* ընկղմեաց զիմանալին փարաւոն յանդունդս դժոխոց: - 337. Խաչանիշ ձգեաց *զգաւազանն* ի վերայ ծովուն ընդ առաջ ասելով, Այիա՜. որ է՝ աստուած առաջի մեր: - 338. Եւ նոյն *գաւազան* յարմատոյն յեսսեայ. և բուրվառն հօր ի հոտ անուշից: - 345. Վասն է՞ր զնշան ընտրութեան ի բուրվառս և ի *գաւազանս* տայ: - 382. Նա՛խ՝ բուրվառն օրինա՛կ էր ահարօնի, և *գաւազանն*՝ մովսէսի: - 382. Երկրորդ՝ երկուքն ևս ահարօնի. զի բուրվառն ոսկի զմաքուր քահանայութիւնն ցուցանէ. և *գաւազանն* զիշխանութիւնն: - 382. Երրորդ՝ զի բուրվառովն՝ աստուծոյ ընծայէր և *գաւազանաւն* զշնորհս ի ժողովրդեանն: - 382. Չորրորդ՝ բուրվառն աղօթք մեռելոց. և *գաւազանն* խրատ կենդանեաց: - 382. Իսկ ծաղկեալ *գաւազանն* չորս ինչ յաւելու. Դալարի. Շառաւիդ. Ծաղիկ. և Պտուղն ընկուզ: - 382. Հինգերորդ, ըստ փիլոնի *գաւազանն* է իմաստութիւնն. դալարեալ մտօք և ծաղկեալ ուսմամբն. և պտուղ՝ ուսուցմամբ աշակերտաց: - 382. Եւ այն զի երկոտասան էին *գաւազանք* ցեղիցն իշխանաց. և ահարոնին երեքտասան: - 382. Եւ դարձեալ, երկոտասան արքեպիսկոպոսք. և կաթողիկոսն ի մէջն. նոյնպէս և արքեպիսկոպոսն **բժ**ան ունի *գաւազան*: - 382. Իսկ որ ի խորանէն բերին մովսէս և ահարօն *զգաւազանն* ծաղկեալ. զի ի սիօնէ՛ ելցէ օրէնք. որ է՛ յեկեղեցւոյ ամենայն իշխանութիւն: - 382. Ի յայս միտս զվարդապետաց *գաւազան* յեկեղեցւոյ ի դուրս բերեմք զարդարեալ: - 382. Որպէս սափորն կոյսն էր, և *գաւազանն* խաչն, նոյնպէս վէմն քրիստոս: - 386. Հինգերորդ՝ *գաւազանաւ* բղխէր. զի իշխանութեամբ բաշխի առ ամենայն ոք: - 386. Այլ և *գաւազանն* յուդայ գրաւական ի թամար: - 494. Այլ և *գաւազանն* հրաշագործ ի ձեռն մովսէսի: - 494. Այլ և *գաւազանն* ահարօնի որ ծաղկեցաւ: - 494. Այլ և *գաւազանն* ի ձեռն հրեշտակին. որ ընկալաւ զպատարագն գեդէովնի: - 494. Այլ և զսոյն նշանակէ *գաւազանն* եղիսէի: - 494. Յորում աւուր կիրակէի ի մէջ գիշերի ընդ առաւօտն յարեաւ տէրն ի գերեզմանէն. հանելով զհոգիսն յանապատն երկնից. և խաչանիշ *գաւազանաւն* ընկղմեցաւ փարաւօն յանդունդս դժոխոց: - 513. Եւ գո՛րծ է նոցա առաքեալ կարդալ, և մոմեղէնս կրել, և գրակալ. և զխաչագլուխ *գաւազանն* կրել: - 608. Չորրորդ յա՛յտ է յօրինակաց. զի *գաւազանն* ահարօնի որ ծաղկեցաւ՝ օրինա՛կ էր խաչին. և տախտակքն բանին. և ծառն կենաց որ ի մէջ դրախտին: - 733. ...որպէս ծաղկեալ *գաւազանն* ահարօնի նշանակէր զխրատ իմաստութեանն. որով զարդարեալ տայ զպտուղ լուսաւոր նիւթոյ կերակուր ոգւոյ: - 768

**ԳԱՒԱՌ +** Նիւթն. ձևն. այսինքն է կերպն. *Գաւառն*. Ազգայինքն. Ժամանակն. Տեղին. և յատուկ Անունն: - 87. Նոյնպէս *գաւառն*՝ միոյն երկին, և միւսոյն երկիր: - 87. Երկիր որ յաւիտեան ստացեալ լինի, է՛ *գաւառն* երկնաւոր: - 210. Չորրորդն վերնոցն *գաւառ*: - 210. Իսկ պատկեր շնորհաց և փառաց է, կատարելապէս ճանաչել և սիրել զաստուած. և այս է նմանութիւնն զոր կատարեալքն ունին աստ և ի վերին *գաւառին*: - 274. Այլ աշխարհն օսիդ՝ *գաւա՛ռ* է եսաւայ. զի օսիդն մի է յորդւոցն եսաւայ յորոյ անուն կոչեցաւ երկիրն օսիդ: - 327. Իսկ ի վերջինն *գաւառ*՝ կիսովն իմանին կուսանքն ընտրեալք. որք լնուն զթերութիւն անկեալ դասուն: - 391. Իսկ չորրորդ սրբութիւնն լիակատար շնորհաց ի վերին *գաւառն* որ է՛ հրեշտակային՝ գերազանցէ՛ զամենեքումբք: - 462. Ազգ առ ազգ բաժանեալ լինի *գաւառաւ* և լեզւաւ և կանոնական սահմանաւ որ են աւանդութիւնք և հաւատք եկեղեցւոյ: - 552. Եւ բաժանումն յաւէտ զքան *գաւառաւ* և լեզուաւ՝ կանոնական սահմանաւն ասացեալ լինի. այսպէս և առ միաբանութիւնս է իմանալ. առաւել միաբանութիւն ասել զորս կանոնական սահմանադրութեամբ է, քան որ *գաւառաւ* և լեզուաւ: - 552. Եւ յայսցանէ յայտէ, զի յետ յարութեանն ի վերինն *գաւառ* ոչ գոյ յոյս. զի է՛ անդ երանութիւն, որ է ստացումն ամենայն բարեաց. բոլորն համանգամայն և կատարեալ. և ոչ ինչ է ապառնի յոր յուսացեալ լինի: - 574. Եւ երկրորդ՝ զի մնացէ ի վերին *գաւառն* ըստ էութեանն և ըստ գործոյն. իսկ այլ առաքինութիւնքն թէպէտ մնան ըստ էութեանն, այլ ո՛չ ըստ գործոյն: - 579. Եւ նոյն զքահանայթաղէքն, որ ունի է աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրարատ *գաւառի* ի վաղարշապատ քաղաքի ի վկայարանս սրբոյն հռիփսիմի. յետ ճժա ամի սրբոյն գրիգորի. զի մինչև ցայն հնովն վարեին: - 659. և նովաւ արժանաւորիլ մեզ վերնոյն *գաւառի* ըստ անհաս իմաստութեանն իւրոյ: - 663. Իսկ Չորրորդն արքայութիւն՝ է՛ յաւիտենականն *գաւառ*. յորմէ ի ձեռն մեղաց առաջնոյ

մարդոյն՝ տարեալք պանդխտիմք յայսմ տառապանաց գբի և ի տիղմ կաւոյ. անարգաբար դեգերեալք ի հովիտս արտասուաց. յանապատի կալով և ո՛չ ի ճանապարհի. - 756. Եւ երկնաւորն այն *գաւառ*՝ լ ամօք արագընթաց աստեղն ճանապարհի շնորհէ: - 763. Նա՛խ՝ զի ի վերին *գաւառս* ուստի էին դևք՝ ո՛չ գոյ հաւատ. այլ դէմ յանդիման տեսութիւն: - 784

**ԳԱՒԱՌԱՊԵՏ +** Արդ տանուտէր աստ կոչէ զաստուած, և այգի է եկեղեցի. և *գաւառապետ* կոչէ զքրիստոս. և առաւօտ յաքելէ առաջին արդարոյն. և երեկոյ օր դատաստանին յորժամ ընտրեալքն ամենայն ժողովին...: - 692

**ԳԱՒԻԹ +** Ուր բեմն է. և մէջ եկեղեցւոյն. և արտաքին *գաւիթն*. կամ ժամատունն: - 343. Երկրորդ, որպէս նա եռայարկեան խորան, որ է՛ *գաւիթն*, և մէջն և բեմն: - 613. Երրորդ՝ զի մարմինք սրբոց ի *գաւիթս* պահին և ո՛չ յեկեղեցի. յօրինակ հոգւոց նոցա որք են ի պահեստ հոգւոյն ի տեղւոջ լուսոյ և հանգստեան: - 617

**ԳԳՈՒԵԼ +** Վեցերորդ՝ սիմէօնի *զգուելն*: - 471

**ԳԵԲԱՂՆ –** Ութերորդ՝ ի խորխորատէ՛ չարեաց ելցեն օրինօք. զի *գեբաղն* հին ծոր թարգմանի: - 402. Իններորդ՝ և զեծցին յընդունայն վաստակոց կռոցն որ ոչ օգտէին. զի ունայնութիւն լսի *գեբաղն*: - 402

**ԳԵԴԷՈՆ -** Որպէս պատմի ի դատաւորքն. յորժամ *գեդէոն* զփողսն հնչեցոյց, այլազգիքն ինքեանք զինքեանս ի սուր մաշեցին ի գիշերի: - 238. Վեցերորդ՝ Գեդմն և ցօղն և *գեդէօնի*: - 412. Հինգերորդն *Գեդէոն*. որդի յովասու ի մանասէ է՛ եփրաթացի ամս **խ**: - 420. Վեցերորդն Աբիմելէք հարճորդին *գեդէօնի* ամս **գ**: - 420. Զի՞նչ նշանակէր գեղմ և ցօղն *գեդէոնի*: - 421. Նա՛խ՝ նշանակէր զնոյն ինքն *գեդէոն*. որ երևմամբ հրեշտակին դատաւոր եղև իսրայէլի: - 421. Նա՛խ՝ որպէս *գեդէոն* ջրովն փորձեաց զհաւատս զօրացն. նոյնպէս և դաւիթ: - 434. Այլ և գաւազանն ի ձեռն հրեշտակին. որ ընկալաւ զպատարագն *գեդէովնի*: - 494. Իններորդ, *գեբէօն* այն որ զցօղն ետես ի վերայ գեղման, զհօր իւրոյ զեզն պարարակ հրամանաւ հրեշտակին ի մէջ գիշերին պատարագեալ. և զանտառն և զսեղանն բահաղու կործանեալ և զերծեալ ի ձեռաց նոցա. որ էր օրինակ փրկչին. զի նա՛ է եզն պարարակ պատարագեալ. և ի մէջ գիշերի զբագինսն դժոխոց կործանեալ և յարուցեալ և ապրեալ ի մահու: - 513

**ԳԵԷԶԻ -** Նա՛խ՝ զի անարժա՛ն էր *գեէզի*: - 445. Այլ և աղքատութեամբ. ուստի յա՛յտ է զի անէ՛ծ *զգէեզի* վասն ընչիցն նէեմանայ: - 404

**ԳԵԹԱՅ -** Քասանմի, հարին մինչև ի դրունս *գեթայ*. և հաւատացեալք մինչ ի դրունս դժոխոց. և եղեն ի տեսիլ ամենայն մսեղեաց: - 436

**ԳԵԹՍՈՆ -** Զի **գ** էին որդիք Ղևեայ. *Գեթսոն*. Կահաթ. և Մերարի: - 378. *Գեթսոնի* գունդն յարևմտից: - 378. Նա՛խ՝ **գ** որդիքն ղևեայ *գեթսոն*, կահաթ, և մերարի, յօրինակ նորոյս **դ** դասուց: - 379. Չորրորդ՝ *գեթսոնի* ազգն դռնապա՛նք էին. և մերարեայ երդմնեցուցիչք ընդ իշխանութեամբն իթամարայ քահանայի. և կահաթու գունդն աւագ պաշտօնեայք: - 379. Երրորդն ասեն եթէ՝ **բ** ազգն *գեթսոնի* և **բ** գունդն մերարեայ՝ զչորս փոքրիկ աստիճանս ունէին ի խորանն. զպահպանութիւնն մինչ ի ջահընկալն որ զաշտանակն բառնային. և որդիքն կահաթու էին բարձրագոյնք: - 609

**ԳԵՀԵԱՆ +** Նշանակէ՛ թէ՝ եթէ ի է հասակս մեղքն առաւելու, *գեհեանն* այրէ: - 367

**ԳԵՀԵՆ +** Եւ դադարք դիւաց. իսկ յետոյ լուցկի են *գեհենին* յաւիտենից: - 212. ...ընդ բառնիլ մեղացն բարձաւ և պատիժ *գեհենին*. որպէս տէր մեր եթող զմեղս անդամալուծին. և բարձան պատիժքն: - 603. Եւ ապա՛ զանտի հատուցումն իւր և զտանջանս *գեհենին*: - 669. Նմանապէս այն որ ասէ եղբօր իւրում մօրոս, պարտաւոր լիցի աստի դատաստանի և *գեհենի* խղճի մտացն: - 704

**ԳԵՂ +** Ութերորդ՝ զի ա՛նդ է ցանկական մասն աչաց զարդարեալ *գեղով*: - 234.

**ԳԵՂԱԶԱՆ +** Եւ այս են **հբ** լեզուքն: ...*Գեղազանդ* աղուանն: - 299

**ԳԵՂԱՐԴՆ +** Քսանևը, ծգեաց սաւուղ *զգեղարդն* դաւթի, եհար զորմն և ապրեցաւ դաւիթ. և որդիքն սաւուղայ հարկանել ետուն զկողս տեառն և ո՛չ վնասեցին աստուածութեան նորա: - 436. Դաւիթ ելեալ ի բարձր տեղի աղաղակեաց առ սաւուղ՝ «ո՞ւր է *գեղարդն* քո». և տէր մեր ել ի յերկինս աղաղակեաց «ո՞ւր է մահ յաղթութիւն քո»: – 437. Երակ հատեալ, յորժամ բևեռօք և *գեղարդեամբ* խոցեցաւ: - 491. Եւ ի գալն յերկիրս հայոց, ետուն նմա օգնական զհողն օծման զոր քրիստոս օրհնեալ էր. և *զգեղարդն*. և այլոց ազգաց չկա՛յ այս պարծանքս. զի մեր մեռնս հանապազ և միշտ զնոյն շնորհ ունին: - 549. Եւ ո՛չ միայն խաչն, այլ և ամենայն գործիք չարչարանացն. այսինքն բևեռքն *գեղարդն* և այլք...: - 732. Եւ ոմանք թէ՝ խաչն լուսաւորեալ ճառագայթէ որպէս բևեռք և *գեղարդն:* - 732

**ԳԵՂԵՑԻԿ +** Եւ թէ հետևեսցի՝ ոչ որ գործեաց *զգեղեցիկս* և զգարշելիս, այլ որ պատճառն է և հարկ՝

գովեսցի և պարսաւեսցի. այսինքն բախտն և ճակատագիրն: - 11. Բայց է և այլ իմն տեսութիւն խորին և *գեղեցիկ*. զի նա՛ վասն սրբութեան չարչարեցաւ. և որ ոք ևս չարչարեսցի վասն սրբութեան՝ մի և նոյն է դիտաւորութիւն երկուցն. յայնժամ օգնեսցէ նմա. այսինքն միաւորեսցի ընդ նա՛ սրբութեամբն, և եղիցի աստուած ամենայն յամենայնի. այսինքն կատարեսցէ զնա աստուածս առնելովն. և եղիցին աստուածք ամենայնքն: - 43. Երկրորդն է պատճառաբանական. որ ի պատճառելեացս՝ այսինքն յարարածոցս *զգեղեցիկն* տեսեալ, զպատճառն և զարարիչն վերակոչեմք և անուանեմք: - 122. Որպէս է՛ բարի. *գեղեցիկ*. լոյս. կեանք. իմաստութիւն. և այլն: - 122. Եւ է՛ ինքն բարի և *գեղեցիկ*, կոչի սիրելի: - 128. Իսկ Որակ կոչի, որպէս բարի, լոյս, քաղցր, և *գեղեցիկ*: - 171. Տասներորդ՝ զի *գեղեցիկ* լինի ի տեսս աչաց երփն երփն գունով և վէտս վէտս. այսինքն ծալ ծալ ծիծաղի երեսօք: - 208. Ի պատիւ մեծարեաց զմարդն. և նա՛խ՝ պատրաստեաց պէտս զանազան կերակրոց և ըմպելեաց որպէս ասացաք. և վառեաց զճրագ լուսաւորացն. և *զգեղեցիկ* ձայն երգեցողաց թռչնոց. և զզուարճութիւն զանազան ծաղկանց...: – 230. Իսկ սուրբն գրիգոր նիւսացին *գեղեցիկ* իմն կարգաւ մեկնէ՛: - 274. Երկրորդ՝ զի *գեղեցիկ* էր՝ զի մի ի պատճառս նորա սպանցեն զղովտ: - 303. Նա՛խ՝ զի *գեղեցիկ* էր տեսլեամբ յովսէփ: - 313. Եւ տէր մեր *գեղեցիկ* տեսլեամբ քան զամենայն որդիս մարդկան...: - 313. Չորրորդ՝ յովսէփ փոխանակ պոռնիկ կնոջն էառ զասանէթ կոյս *գեղեցիկ*: - 313. Որպէս լոյս, *գեղեցիկ*, քաղցր, և այլն: - 338. Եւ ապա՛ սիրտ սուրբ և *գեղեցիկ* ստանալ ի հաւատս և խորովիլ ի սէրն աստուծոյ: - 360. Տասներորդ, մանուկ խարտեաշ և տեսլեամբ *գեղեցիկ*...: – 436. Նոյնպէս և մարմինք մարդկան մերկ թաղին՝ այլ մերկ ո՛չ յառնեն. բայց *գեղեցիկ* յոյժ և պատուական զգեստով զարդարեալ: - 721. Զի յարիցեն մարդիկ ըստ գոլոյն՝ և ամբողջ գոլոյն՝ և *գեղեցիկ* գոլոյն: - 725. *Գեղեցիկ* գոլն որպէս ձևովն հերովն և այլովքն որ ասացաւ: - 725. Յաճոյ լինէր քեզ թէ լինէիր *գեղեցիկ* որպէս զաբիսողոմ. որում ո՛չ գոյր արատ ի մարմնի: - 761

**ԳԵՂԵՑԿԱԲԱՐ +** Յինգերորդ՝ թէ ո՞րպէս *գեղեցկաբար* մեկնեաց զեղանակ յղութեանն ասելով «հոգին սուրբ եկեսցէ ի քեզ»: - 465

**ԳԵՂԵՑԿԱԳՈՅՆ +** Նոյնպէս և ջուրն որ հպեցաւ ի մարմին փրկչին, և ծնաւ զմարդիկ որդիս աստուծոյ, նորոգեսցի և պայծառասցի քան զամենայն տեսիլս *գեղեցկագոյն* ականց: - 759. Զի քն *գեղեցկագոյն* ի գերեզմանէն յարութեան քո հասից. և անդատապարտ եղէց յատենի քոյ առաջի հօր և հոգւոյդ սրբոյ: - 771

**ԳԵՂԵՑԿԱԶԱՐԴ +** Տասներորդ՝ օրինա՛կ էր խորանի եկեղեցւոյ. զի նա՛ ստւե՛ր էր և սա՛ ճշմարտութիւն. վասն որոյ *գեղեցկազարդ* կազմեցաւ: - 342

**ԳԵՂԵՑԿԱԶԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ +** Երկրորդ՝ *զգեղեցկազարդութիւն* նորա: - 26

**ԳԵՂԵՑԿԱԽՕՍՈՒԹԻՒՆ +** Իսկ *գեղեցկախօսութիւն* լեզուաց, փափուկ հելլենն: Սաստիկ հռոմայեցին...: - 299

**ԳԵՂԵՑԿԱՅԱՐՄԱՐ +** Երրորդ, զի զառաջին պատիժն աստ կրէ. հողանալով *գեղեցկայարմար* շինուածն: - 679

**ԳԵՂԵՑԿԱՆԱՄ +** Եւ զի մարդկամբ և կենդանեօք *գեղեցկանայ*: - 211. Դարձեալ՝ յետ մահու հոգի մարդոյն ծաղկի և *գեղեցկանայ* առաքինութեամբն իւրով և բնական պայծառութեամբն: - 213. Նոյնպէս լեզու առ լեզու *գեղեցկանայ* ի խօսքն: - 297. Ասա՛ թէ՝ չափաւորն ընդունելի է. այլ անչափն պոռնկութիւն և ագահութիւն. իսկ կուսութիւն և աղքատութիւն որ չափ առաւելու՝ այնչափ *գեղեցկանայ*: - 404. Այլ և արդեամբք սրբոց ոռոգեցաւ, լիցի որպէս զդրախտ աստուծոյ անուշահոտ ծաղկօք և մանուշակօք և մարդօք զարդարեալ և *գեղեցկացեալ*: - 759

**ԳԵՂԵՑԿԱՑՈՒՑԱՆԵՄ +** Յինգերորդ՝ սպիտակ ճրագուն. զի հո՛վ է բնութեամբ զջերմութիւն աչացն բարեխառնէ. նա և *գեղեցկացուցանէ՛*: - 239

**ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ +** Չորրորդ՝ աչքն ի *գեղեցկութիւնն* հեշտանայ, և միտք ի *գեղեցկութիւն* բանին: - 104. Նմանապէս և հասարակն թէպէտ բազում է, այլ երկոտասան գլխով նշանակի. նախ Բնութիւն. որ նոյն է էութիւն. ապա Բարութիւն. Կամք. Աննահութիւն. Իմաստութիւն. Լուսաւորութիւն. *Գեղեցկութիւն*. Անփոփոխութիւն. Ցնծութիւն. Փառք. Իշխանութիւն. և Արարչութիւն: - 105. Եւ կոչի արուսեակ դարձեալ, զի քան զայլս՝ իւր լուսոյ *գեղեցկութիւնն* առաւել կուրացոյց զինքն: - 148. Ութերորդ՝ վասն արտաքին զգայութեանցն որ են ի գլուխն. զի այլ կենդանիք միայն հեշտանան կերակրով և ցանկութեամբ. իսկ մարդն հեշտանայ առաւել *գեղեցկութեամբ* զգալեացս. յորժամ տեսանէ աչօքն զերկին և զերկիր. և ժողովէ՛ զճշմարիտ գիտութիւն նոցա և հեշտանայ: - 233. Եւ բնականն, Նա՛խ՝ զի

նմանիմք երկրի որ յերեսն ունի *զգեղեցկութիւն* բուսոց, և ի թիկունս ոչ: - 234. Գիտելի՛ է, զի յերից է պատկերին *գեղեցկութիւն* որով նմանի ի նախատիպն: - 271. Ա՛րդ՝ աստուածային *գեղեցկութիւնն* ո՛չ այսու երանգօք զարդարի զի զմեզ ի նմանն իւր կազմեսցէ: - 271. Այլ անճառ երանութիւնն և առաքինութիւնն է աստուծոյ *գեղեցկութիւնն* զոր մեզ պարգևեաց. այսինքն մաքրութիւն, անախտութիւն, և ի չարէն օտարութիւն ասէ նիւսացին սուրբ գրիգոր: - 271. Նախ ի *գեղեցկութիւն* լեզուին. զի որպէս գոյն առ գունով պայծառանայ, և արուեստ առ արուեստ: - 297. Անուանք նախահարցն: Ադամ՝ երկիր. ...Յաբեթ՝ *գեղեցկութիւն*: - 299. Սէրն առ ճշմարտութիւնն և *գեղեցկութիւնն*: - 578. Զի եթէ մազն որ է *գեղեցկութիւն* մարմնոյն յառնէ ....քանի՞ առաւել ևս անդամք որ յէութենէ մարմնոյն են յարիցեն: - 725. Ասեմք, թէպէտ այնպիսի անդամքն ո՛չ են պիտոյ ի յարութեանն, սակայն յառնեն վասն կատարելութեան և *գեղեցկութեան*. - 725. ...որպէս ստինքն զի ո՛չ է պէտք կաթին, այլ առնէ վասն կատարելութեան և *գեղեցկութեան* մարդոյն: - 725. Քանզի՝ ունիցի մարմինն *Զգեղեցկութիւն*. Զարագութիւն. Զուժգնութիւն. Զազատութիւն. Զկամաւորութիւն. Զառողջութիւն. և Զանմահութիւն: - 761. Նա՛խ վասն մարմնոյն *գեղեցկութեան*: - 764. Ութերորդ՝ վասն վարսին *գեղեցկութեանն*. և վասն արդարոցն ասէ. «թուեցան յաչս անզգամաց թէ չարչարեցան. բայց նոքա են ի խաղաղութեան»: – 766. Հինգերորդն է *գեղեցկութիւն* առանց տգեղութեան: - 766. Եւ *գեղեցկութիւն* մարմնոյն բաղկանայ յերից. այսինքն ի մաքրութիւնն, ի չափաւորութիւնն, ի ձև անդամոցն: - 766. Եւ զանազան տեսութիւնք վարդապետաց չեն ընդ դէմ միմեանց. այլ զորօրինակ ոմն զական պատւականութիւն, և այլ ոմն զբնութեան, և կէսք զասդողութեան, և ոմանք զորակացն *գեղեցկութեանց*, պատմեն զմի և զնոյնական իր: - 781-782

**ԳԵՂՄՆ +** Վեցերորդ՝ *Գեղմն* և ցօղն և գեղէօնի: - 412. Սա՛ ետես *զգեղմն* իմանալի յորժամ ծեծէր զցորեանն ի կալն: - 420. Զի՞նչ նշանակէր *գեղմ* և ցօղն գեդէոնի: - 421. *Գեղմն* և ցօղն մի էր. բայց նշանն կրկին: - 421. Երրորդ՝ *գեղմն* մարգարէքն, և ցօղ շնորհք մարգարէութեան ի վերայ նոցա: - 421. Չորրորդ՝ դաւիթ ասէ «իջցէ՛ որպէս զանձրև ի վերայ *գեղման*». և եբրայեցիք զայս սաղմոսս ի սողոմոն ասեն...: – 421. Իններորդ, գեթէօն՝ այն որ զցօղն ետես ի վերայ *գեղման*, զհօր իւրոյ զեզն պարարակ հրամանաւ հրեշտակին ի մէջ գիշերին պատարագեալ. և զանտառն և զսեղանն բահաղու կործանեալ և զերծեալ ի ձեռաց նոցա. որ էր օրինակ փրկչին. զի նա՛ է եզն պարարակ պատարագեալ. և ի մէջ գիշերի զբագինսն դժոխոց կործանեալ և յարուցեալ և ապրեալ ի մահու: - 513

**ԳԵՂՋՈՒԿ +** Իսկ լուծումն հարցմանցս այսուցիկ, ո՛չ ամենևին օտարաձայն աւելորդս խուզեալ. և ո՛չ *գեղջուկ* իմն աշխարհական խօսից յարմարեալ: - 772

**ԳԵՄՈՆԱՑԻ** - *Գեմոնացիք*: - 298

**ԳԵՍԵՄ** - Ութերորդ՝ որպէս իջեալքն յեգիպտոս ընդ հարաւ մտին ի *գեսեմ* ի պարարտ երկիր: - 315

**ԳԵՏ +** Աւկի. այսինքն աւ անկանի ի յառնելն *գետոց* և թուլանալն ձեան: - 201. Եօթներորդ՝ ամենայն աղբերք և *գետք* ժողովին ի ծով՝ ուստի ելին: - 207. Եօթներորդ՝ զի ամենայն *գետս* ելեալ ի ծովէ, դարձեալ ծովն ի յինքն ընդունի: - 207. Եւ թէ ծարաւին *գետք* որ ի ծով մտանեն. և անձրևք հանգուցանեն զնոսա: - 208. Ջուրք ծովուն աղի են. վասն է՞ր աղբերք և *գետք* որ առ մեզ բղխեն՝ քաղցր են: - 208. Չորրորդ՝ ցոյցք է ամենահրաշ խնամոց արարչին. որ զհոսանուտ ջուրս ներքին՝ ի մէջ լերանց ի վե՛ր հանէ ի պէտս կենդանեաց որ ա՛նդ են. այլ և յոռոգումն ուր *գետք* ոչ ելանեն: - 209. Նոյնպէս և տունկք դրախտին ըմպեն զջուր *գետոյն* որ ոռոգանէ՛ զդրախտն: - 225. Իսկ ամպք և հողմունք ի յօդոյն են. որպէս քարինք և երկաթք յերկրէ. սոյնպէս աղբիւրք և *գետք* ի ծովէ՛: - 227. Երակ արեանն *գետոց* և աղբերաց: - 232. Դարձեալ՝ ամենայն իր առաւել ունի զօրութիւն ի տեսակս իւր՝ քան ի յայլս. որպէս ջուր առաւել զօրաւոր է ի *գետս*՝ քան ի յերկիր խառնեալ. և տընկականն առաւել է ի տունկս՝ քան յանասունս: - 266. Չորրորդ՝ յա՛յտ է, զի աշխարհս հայոց **բ** *գետով* և տապանաւն առաւելու քան զբազումս: - 295. Եւ **բ** *գետն* ի բանն և ի հոգին սուրբ որ բղխեն ի հօրէ. զի հրաւիրակք են մեզ՝ յակն տանելով ուստի բղխեն սոքա: - 295. Եւ այլք ասեն թէ՝ *գետն* առ որով բնակեալ էր նա՝ փայտ բերէր, անտի անուանեցաւ եբեր: - 299. Վեցերորդ, մովսէս զդառն ջուրն քաղցրացոյց և *զգետն* յարիւն դարձոյց: - 328. Առաջինն է՝ *գետն* յարիւն փոխիլ: - 333. Նախ՝ զի անմտացան նոքա, և զճանճս և զսողունս և *զգետս* և զանասունս պաշտէին. վասն այն նոքօ՛ք տանջեաց զնոսա...: – 333. Զի՞նչ է *գետն* յարիւն փոխիլ: - 333. Հինգերորդ՝ նշանակէ թէ զարիւն տղայոցն չէ մոռացեալ աստուած զոր հեղձուցին ի *գետն*. զայն ըմպել տայ նոցա: - 333. Վեցերորդ՝ *գետն* նշանակէ՛ զբանն աստուած, որ հաղորդիլով ի մեզ՝ եղև մարմին և արիւն. և ետ մեզ ըմպելի զարիւն իւր սուրբ. և կերակուր զմարմինն:

- 333. Երկրորդ հարուածն է՛ գորտն զոր բղխեաց *գետն*: - 334. Է՛ որ զէութիւնն փոխէ. որպէս մովսէս *զգետն* յարիւն դարձոյց և զզաւազանն յօձ. և այս կոչի սքանչելիք: - 335. Առաջինն, Վասն բաժանման *գետոյն*: - 412. Դարձոյց *զգետն* յօրինակ բնութեանս: - 414. Վասն է՞ր ո՛չ միայն բաժանեցաւ *գետն*, այլ և յետս դարձաւ: - 414. Նա՛խ՝ դարձաւ *գետն*, զի ա՛հ և երկիւղ լիցի քանանացւոցն. և մի՛ հակառակեսցին յեսուայ և անկցին ի սուր նորա: - 414. Հինգերորդ՝ զի մի՛ ընդ դառնալն ի վայր՝ ողողեսցէ զներքին կողմ եզերաց *գետոյն*: - 414. Եւ կէս *գետոյն* բաժանեալ և մտեալ ի ծովն աղի. նշանակ կորստեան մեղաւորաց և անհաւատից ի յատակս դժոխոց: - 414-415. Եւ բժան քարինքն դարձեալ ի *գետն* եղեալ, նշանակէ՝ զմեղս ի խորս անդնդոց ընկղմեալ: - 415. Ութերորդ՝ նա՛ տապանակաւն դարձոյց *զգետն* յետս: - 418. Իններորդ՝ հանեալ ի *գետոյն* բժան վէմս շինեաց սեղան. և նոյն թուով խորաասուզեալ ընկղմեաց: - 418. Եօթներորդ՝ եդեմաբուղխ երից *գետոց* hոսումն: - 555. ընդէ՞ր ոչ մկրտեաց զոք ի հաւատացելոցն. մինչև գնաց ի կեսարիա ծեռնադրեցաւ. և ապա եկեալ զհազարս հազարաց և զբիւրս մկրտեաց ի *գետն*: - 589. Ոռոգեալ ի բղխմանէ կենարար *գետոյն*. որ հեղու ի նոսա անսպառապէս: - 767

**ԳԵՏԱԴԱՐՁ** - Ջհանգստեանն, և զմարտիրոսացն, պետրոս *գետադարձն*: - 637

**ԳԵՏԱՅԱՐՈՅՑՔ +** Ա՛հ է ասեն մարդիկ ամենայն ուրեք. զի *գետայարո՛յցք* է: - 201

**ԳԵՏԻՆ +** Իսկ ի մէջ ծնկաց գլուխն՝ այն է, որ զծունկն ի *գետինն* եդ, և զգլուխն հանդէպ նմին. և յայսկոյս և յայնկոյս զձեռսն խաչանման ի *գետինն*: - 444. Եւ սա՛ շինէ զբեթլէհէմ քաղաք ի *գետինս* յուդայի: - 452

**ԳԵՐԱԲՆԱՊԷՍ +** *Գերաբնապէս* ապա և բանն մարմին եղեալ անփոփոխելի և անապական ներգործեալ մարմին ըստ մերոյս բնութեան անբաժ միաւորութեան: - 477

**ԳԵՐԱԳՈՅՆ +** Տասներորդ՝ բ սկիզբն՝ *գերագոյն* բարին. և ծայրագոյն չարն՝ կամ ըստ ինքեանց կայանան, կամ ո՛չ: - 21. Եւ թէ գոյր երիցագոյն, լինէր պատճառն և *գերագոյն* քան զաստուած. իսկ ստեղծանելն երևի պատճառաւ. այսինքն վասն փրկութեան մարդկան: - 41. Ասեմք եթէ՝ օրինականն որպէս զմարդո՛յ բարութիւն կարծէր ունել քրիստոսի՝ այլ ո՛չ *գերագոյն*. ...: - 47. Այլ արդ՝ յերկնաւոր փառսն այն է *գերագոյն* որ քան կատարեալ տեսանէ զաստուած: - 97. Նախ՝ զի միեղէն է և հաւասարակ՝ գերադրականքն. որպէս *գերագոյն* աստուած. և տէր տէրանց: - 106. Չորրորդ՝ բանն *գերագոյն* է յիմանալիսն. և մարդն *գերագոյն* է ի զգալիսս. վասն որոյ մարդ եղև: - 107. Երկրորդ՝ ոչէ ասի *գերագոյն* էն և գոյն. որպէս ի յէից ո՛չէ և ո՛չ գոյ. այլ *գերագոյն* է և *գերագոյն* ոչէ: - 111. Որպէս յորժամ ասեմք անբան և յիմարութիւն, *գերագոյն* ունիլ զբան և զիմաստութիւն քան զմեզ: - 118. Եւ վասն *գերագոյն* զգայութեան պատմէ՛ դաւիթ, «Որ ստեղծանէ զակն՝ ինքն ո՞չ տեսանէ. և ո՞չ լուիցէ»...:– 118. Իսկ բացբարձականն ըստ գերազանցութեան է. զի գերազա՛նց բան է՝ և գերագունա՛կ միտ. և *գերագոյն* և առաւել հայր՝ և որդի. և ո՛չ ըստ մեր կարգիս որպէս մեր բանս է և միտք: - 124. Երկրորդ՝ փառքն և պատիւն. զի ոմանք են ի *գերագոյն* փառսն քան զոմանս: - 137. Է՛ որ իմացումն մտացն առ ինքն ժողովի ի յիշողականէ՝ ի տրամախոհութեանցն՝ ի կարծեաց՝ և յայլոցն, և այնպէս ըստ ինքեան տեսութեաննն ի աստուած հպի. այս է *գերագոյն* իմացումն. և կոչի իմացական տեսութիւն: - 142. Դարձեալ՝ որպէս ասեն իմաստունք՝ թէ քան զամենայն պարգևք *գերագո՛յն* է իմաստութիւննն յաստուծոյ առ մարդիկ իջեալ. այսինքն քան զկեանս և զառողջութիւն, և քան զմեծութիւն և զայլսն: - 178. Եւ տէր մեր ճոխ ի մէջ նոցա. զի բարձր և *գերագոյն* եղև ի վերայ մեղաց: - 316. Նախ՝ ուղղութիւն ընկերաց. բ գոհութիւն և համբերութիւն. գ՝ իմանալ զչար խորհուրդն սատանայի. դ՝ աղօթք և պահք. ե՝ խոնարհութիւն և ճշմարտութիւն. որ *գերագոյն* է ամենայն զինուց և իսպառ կորուսանէ զչար որ մայրն է ստութեան և հպարտութեան: - 324. Այսպէս և օրհնութիւն մարդկան որ *գերագոյն* է քան զմեզ, շնորհակալութիւն է և գոհութիւն. որպէս սրբոց կամ թագաւորաց և այլն: - 406. Յորոց յայսցանէ յա՛յտ է, զի եթէ ապաշխարեալ լինի արգելեալն. կամ վախճանեալ է կապօղն. այլ որ որ *գերագոյն* է կամ հաւասար կապողին, կարէ՛ արձակել զնա՛: - 409. Ութերորդ՝ նա՛ ուսովք էր բարձր քան զամենայն մարդ. և տէր մեր ո՛չ միայն աստուածութեամբն որ գլուխ է, այլ և չարչարանօք իւր՝ *գերագոյն* և բարձրագոյն ցուցաւ. զի փրկեաց զամենայն: - 427. Այսպէս գերազա՛նց է քան զամենայն շնորհք հեղեալ ի ստեղծուածս. այս է *գերագոյն* շնորհք. որ պատրաստեաց զկոյսն առ մայրութիւն աստուծոյ: - 463. Տասներորդ *գերագոյն* սոցա՝ ըստ բնութեան միաւորութեան. որպէս բանին աստուծոյ ընդ մարդկութիւնս: - 474. Յուսովն ակն ունիմք *գերագոյն* բարույն: - 571. Եւ Իններորդ՝ Պապն. որ է՛ կաթողիկոս. *գերագոյն* վերոյ ասացելոցն: - 606. Այլ թէ ի սոցանէ մի մի ուրուք տուեալ լինէր,

փոխանակ թագաւորութեան համարէր. իսկ թէ սոքօք ամենեքումբք վայելեսցէ, *գերագոյն* բոլոր աշխարհի լինէր: - 761. Եւ յարամնայութիւն կնքոյն պատճառէ՛ ոմանց *գերագոյն* պատիւս. և ոմանց խստագոյն պատիժս. ըստ բազում գանից առակի ասիցն: - 783. Եւ են մի քան զմի առաւել *գերագոյն* սոքա և վարձատրելիք: - 785

**ԳԵՐԱԳՈՒՆԱԿ +** Իսկ բացբարձականն ըստ գերազանցութեան է. զի գերազա՛նց բան է՝ և *գերագունա՛կ* միտ. և գերագոյն և առաւել հայր՝ և որդի. և ո՛չ ըստ մեր կարգիս որպէս մեր բանս է և միտք: - 124

**ԳԵՐԱԴՐԱԿԱՆ +** Նախ՝ զի միեղէն է և հասարակ՝ *գերադրականքն*. որպէս գերագոյն աստուած. և տէր տէրանց: - 106

**ԳԵՐԱԶԱՆՑ +** Զի *գերազանց* է անպատճառ և անսահման գոլն աստուծոյ՝ քան այլոց: - 24. Եւ ճանաչէր զամենայն անհունս *գերազանց* տեսութեամբ: - 100. Դարձեալ՝ անճառելի է անհաղորդն և *գերազանց* որոշումն անեղին: - 103. Այլ և ի վերո՛յ և *գերազանց* է ամենայն արարածոց: - 110. Իսկ անե՛ղ է աստուած արձակապէս և *գերազանց*. զի անեղէ է՝ և միշտ գոյ՝ և ինքնակատար: - 113. Իսկ արձակապէս և *գերազանցն* զնոյն անեղութիւն Երրորդութեանն բացորոշէ: - 113. Նոյնպէս և անմիտ և անզգայ ասելն՝ *զգերազանցն* նշանակէ: - 118. Իսկ բացբարձականն ըստ գերազանցութեան է. զի *գերազա՛նց* բան է՝ և գերագունա՛կ միտ. և գերագոյն և առաւել հայր՝ և որդի. և ո՛չ ըստ մեր կարգիս որպէս մեր բանս է և միտք: - 124. Այսպէս վասն *գերազանց* սիրոյն զոր ունի աստուած առ էսս՝ զարմանալ ասի. այսինքն արտաքս ելանել՝ թափիլ և հեղուլ ի յէսս. և միաւորիլ անփոխաբուն բնութեամբ: - 127. Բարձրութիւն իմաստութիւնն է. որ *գերազա՛նց* է քան զամենայն միտս. և ամենայն ինչ մերկապարանո՛ց կայ առաջի նորա: - 129. Ասեմք եթէ՝ նոքա երեքեան դասքն՝ այսինքն աթոռք՝ քերոբէք՝ և սերոբէք՝ միակարգ միապատիւ և *գերազանց* էութիւնք են. զի անընդմիջաբար յաստուծոյ ամենայն լուսափայլութիւնք իմաստք և շնորհք ի նոսա հեղանին համակարգապէս. և ապա նոքօք յայլ ամենայն գոյս երկնաւոր և երկրաւոր: - 135. Երրորդ՝ այլ իմն *գերազանց* ընձեռէ իմաստս: - 237. Որոյ փոխանակ հայր աստուած ետ զորդին իւր վասն *գերազանց* սիրոյն ի փրկութիւն աշխարհի: - 304. Ա՛րդ՝ դաւանութեամբն *գերազա՛նց* եմք մարդկան հեթանոսաց. և մկրտութեամբն՝ հրէից. և ծննդեամբն ի հոգւոյն՝ հրեշտակաց. զի նոքա ո՛չ ունին ծնանիլ ի հոգւոյն. և ո՛չ եղբայր լինի քրիստոսի: - 309. Չորրորդ՝ տեսեալ զմովսէս առաւել փառաւորեալ, և յետ վախճանին թոյլ ետ ներողութիւնն աստուծոյ ժպրհիլ բանսարկուին ստգտանօք մեղաց. զի մի՛ տացեն նմա *զգերազանց* պատիւն աստուած կարծելով: - 410. Երրորդ՝ որպէս *գերազա՛նց* է քան զամենայն պատիւ մայր աստուծոյ լինիլ: - 463. Այսպէս *գերազա՛նց* է քան զամենայն շնորհք հեղեալ ի ստեղծուածս. այս է գերագոյն շնորհք. որ պատրաստեաց զկոյսն առ մայրութիւն աստուծոյ: - 463. Երրորդ՝ զի կոյս էր ողջոյնընկալն և *գերազանց* քան զամենայն կոյս որպէս ցուցաւ: - 464. ...զի ցուցցէ թէ աստուածային ուրախութիւնն *գերազա՛նց* է քան զմարմնաւոր տրտմութիւնս: - 520. Երկրորդ՝ վասն *գերազանց* և ծայրագոյն միաւորութեանն քրիստոսի ընդ եկեղեցի: - 534. Եւ այս նախ վասն *գերազանց* գործոյ երից մասանց հոգւոյն: - 712. Զի *գերազանց* գո՛րծ է բանին ուսուցանելն զճշմարտութիւնն. և զայս ունին վարդապետքն: - 712. Եւ *գերազանց* գործ ցասմանն է համբերել չարչարանաց . և զայս ունին մարտիրոսքն: - 712. Եւ *գերեզանց* գործ ցանկութեանն է տանել ողջախոհ կուսութեան. և զայս ունին կուսանքն: - 712. Որ և ա՛յն քան *գերազանց* է միաւորութիւնն քրիստոսի ընդ եկեղեցի քան զմարմնական հարսանեաց, որպէս լոյս քան զխաւար. և իւղ անոյշ քան զգարշութիւնս: - 757

**ԳԵՐԱԶԱՆՑԱՊԷՍ** - Վասն այնորիկ զօրութեամբ սիրոյն շարժի առ աստուած ի միջին կէտ իւր. զի *գերազանցապէս* հեշտասցի ի նա՛: - 249

**ԳԵՐԱԶԱՆՑԵՄ +** Եւ այս կամ յիմարիլ և ափշիլ. կամ արտաքս *գերազանցիլ*: - 127. Եւ այլք ասեն այսպէս հակառակիլ ընդ աստուծոյ, յորժամ ետես զինքն փառօք և վայելչութեամբ քան զամենայն դասս *գերազանցեալ*, կամեցաւ մեծ լինիլ ի վերայ ամենայնի և հաւասար աստուծոյ: - 149. Նախ կոչի երկինք ամենասուրբ Երրորդութիւնն. զի անհաս բարձրութեամբ *գերազանցեալ* է յամենայն եղելոց: - 183. Տասներորդ՝ մկտութեամբն լինիմք որդիք աստուծոյ և եղբարք քրիստոսի. և *գերազանցիմք* զ ազգաց. այսինքն հասարակ մարդկան, և իսրայէլացւոցն, և հրեշտակաց երկնից: - 309. Երկայնութիւն՝ է՛ կեանք նոցա անմահ. զի *գերազանցեալ* են քան զժամանակեայս, և պակաս քան զյաւիտենականն աստուած: - 344. Իսկ չորրորդ սրբութիւնն լիակատար շնորհաց ի վերին գաւառն որ է՛ հրեշտակային՝ *գերազանցէ՛* զամենեքումբք: - 462. Նա՛ ևս *գերազանցեալ* քան զհրեշտակս այսու, զի նոքա ի

գոյացական վարձս ո՛չ աճիլ կարեն և ո՛չ նուազիլ. իսկ երանուհի կոյսն կարէր յառաջանալ յարդիւնս և ո՛չ նուազիլ: - 463. Տասներորդ՝ այն քան *գերազանցեաց* պատիւ կուսին, զի այնմ որ մարգարէք գուշակէին զլինելոցն. ի սմա ընդ խօսից հրեշտակին եղև կատարումն: - 464. Այլ և քան զամմարմնոց միութիւնս *գերազանցեալ* է: - 757. Եւ թէպէտ *գերազանցեալ* են այսոքիկ փառք քան որք այժմ ունին յերկրի. այլ սակայն օրինակաւ սակաւ ինչ բացայայտութիւն առցուք: - 761. և ամենայն որ ինչ փափկութիւն գտանիցի՝ աշխատութիւն. մինչ զի բարութիւնն աստուծոյ յանիունս *գերազանցէ՛* քան զամենայն ստեղծեալ բարութիւնս: - 762

**ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ +** Զրացբարձականսն ի վերայ աստուծոյ՝ որպէս անճառ և անսահման՝ ո՛չ ըստ պակասութեան կոչեմք, այլ ըստ *գերազանցութեան*: - 24. Անմիտն և անզգայն զոր ասեմք աստուծոյ, ո՛չ ըստ պակասութեան, այլ ըստ *գերազանցութեան* է դնելի: - 118. Եւ այս ո՛չ ըստ պակասութեան, այլ ըստ *գերազանցութեան*: - 123. Իսկ բացբարձականն ըստ *գերազանցութեան* է. զի գերազա՛նց բան է՝ և գերագունա՛կ միտ. և գերագոյն և առաւել հայր՝ և որդի. և ո՛չ ըստ մեր կարգիս որպէս մեր բանս է և միտք: - 124. Չորրորդ՝ ըստ *գերազանցութեան*. զի յանկարծակի ծագէ՛ ի մեզ շնորհն աստուծոյ եթէ ի հաւատս՝ և եթէ յայլ ինչ գործս ի հաճոյսն աստուծոյ: - 308. Ողջոյնս այս՝ է համդերձ բերողիւն և առաքողիւն և կուսիւն ցուցանէ **զժ** *գերազանցութիւն* պատուոյ կուսին: - 463-464. Դարձեալ ողջոյնս այս՝ ունի նշանակութիւն *գերազանցութեան* կուսին. բնութեան, շնորհաց, և փառաց: - 464. Իսկ ձայնն հօր ի վերայ որդւոյն՝ ցուցանէ *զգերազանցութիւնն* քրիստոսի: - 487

**ԳԵՐԱԶԱՐԴ +** Եւ նոքա *գերազարդ* իմացմամբ աստուածային համճարովն կատարելագործին. իսկ մեք ի ձեռն հաւատոյ աստիճանաց կատարելագործիմք: - 139

**ԳԵՐԱԶՕՐ +** Յինգերորդ՝ որպէս մեղքն զամենեսին մեռոյց, և շնորհքն առաւել զամենեսին կեցոյց որ *գերազօ՛րն* է ի վերայ մեղաց: - 507

**ԳԵՐԱԿԱՏԱՐ +** Կատարեալ և *գերակատար* թիւք դոքա են առ մեզ. որ ի **դ** գլխաւորին ըստ չորից տարերց: - 141. Իսկ որ *գերակատար* իմացումն է և ըստ բնականին տեսութիւն՝ անկարօ՛տ է գրոց և սիղոբայից: - 143. Միատեսակ է՝ յորժամ ըստ ինքեան ժողովէ յամենայն զգայարանաց, և բոլոր և միեղէն սիրով հպի յաստուած. և է՛ այս *գերակատար* սէր: - 143. Այս է զանազանութիւն սիրոյ. *գերակատար*. կատարեալ, և անկատար: - 143. Երկրորդ՝ այն անկատար և աստ կատարեալ. և անդ կատարելագոյն որ է *գերակատար*: - 355. Երեք են. այսինքն անկատար և կատարեալ և *գերակատար*, այսպէս: - 576. Եւ *գերակատար* աստուծոյ: - 576. Եւ *գերակատարն* որդիական սէր վասն բնութեամբ բարւոյն: - 576. Զի առաջինն է անկատար. և միջին երկուքն կատարեալ. և վերջինն *գերակատար*: - 785

**ԳԵՐԱՄԲԱՌՆԱՄ +** Զի նախախնամութեամբ հաղորդեալ են յարարածս. և իսկական բնութեամբն մեկնեալ և որոշեալ և յանհասս *գերամբարձեալ*: - 178

**ԳԵՐԱՄԲԱՐՁ +** Աստուածատեսա՛կ է նոցա տեսութիւնն. այսինքն պարզ և միեղէն և *գերամբարձ*: - 119. Եւ *գերամբարձ*, զի ի բա՛րձր կոյս տեսանեն և ամբառնան և ոչ ի խոնարհ: - 119

**ԳԵՐԱՇԽԱՐՀԻԿ +** Տասներորդ, բ են բանականաց տեսակ. մինս տարրական. և միւսն *գերաշխարհիկ* ի վերոյ քան զհինգերորդ էութիւնս երկնից. – 654

**ԳԵՐԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ +** Որպէս ասացաք՝ վասն *գերապատուութեան* կատարումն և աւարտ ամենայն աղօթից զայն երգեմք: - 634

**ԳԵՐԳԵՍԱՑԻ** - Եւ այս են **հբ** լեզուքն: ...*Գերգեսացիք:* - 298

**ԳԵՐԵԶՄԱՆ +** Եւ զղազար կոչեաց ի *գերեզմանէն* և կենդանացոյց բանիւ: - 70. Իսկ աստ նման միմեանց՝ և բոլորին կոչի քրիստոս. ըստ որում ասի՝ քրիստոս էջ յերկնից. որ է բանն. և քրիստոս եդաւ ի *գերեզմանի*. որ միայն մարմինն է աստուածութեամբն. և քրիստոս էջ ի դժոխս. որ միայն հոգին էր աստուածութեամբն: - 88. Նոյնպէս իմանալի արեգակն քրիստոս ի հայրական ծոցոյ անհա՛ս է բնութեամբ՝ և ի սրբոյ կուսէն իբր ի յարևելից ծագեալ. և ջերմ սիրով ի մարդկային ազգս որպէս յարևմուտս խոնարհեալ. և զսառուցեալ բնութիւնս պատեալ. և ի *գերեզմանէն* ի բարձունս դարձեալ յարևելս առ հայր ամբարձեալ: - 126. Վասն զի ի մէջ գիշերի ծնաւ քրիստոս. և ի մէջ գիշերի յարեաւ ի *գերեզմանէն*: - 194. Եւ զի *գերեզման* է մեր և ընդունարան: - 211. Իններորդ՝ զի մայր մեր հողն է. և սեղան և տեղիք և *գերեզման*. թէպէտ և այլ տարերքն են մեզ ազգականք. այլ մեք ի մօրէ՛ ծնանիմք: - 229. Եւ յերեկոյ՝ ծերութիւնն. որ երեկոյացեալ կենաց և ի մահիճ *գերեզմանի* ժամանեալ: - 266. Եօթներորդ՝ զի լուծաւ և եմուտ յարգանդ երկրի. այսինքն ի *գերեզման*: - 279. Ութսուներորդ, Պատերազմ մարմնոյն մովսէսի և *գերեզմանի* նորա: - 285. Զանէծքն ո՛չ յինքենէ ասաց զի մի՛ սատակեսցի. այլ յերկիր ետ որ է՛

զէն մահու և չարչարիչ՝ և *գերեզման* յետոյ: - 287. Բնակէր ի ներքոյ գողգոթային ուր ադամայ *գերեզմանն* էր: - 300. Եւ քրիստոս մարմնով ի *գերեզման* և հոգւով ի դժոխս եմուտ և եբարձ զմահ և զապականութիւն: - 313. Եւ ի յառնել տեառն մերոյ ի *գերեզմանէն* սարսեցին ամենայն թշնամիք նորա որդիք անդնդոց: - 316. Զմահ եբարձ մահւամբն, և զապականութիւն կորոյս յարութեամբն, անապական մարմնով յարուցեալ ի *գերեզմանէն*: - 317. Է՛ և այլ իմն պայծառ տեսութիւն այսմ բանի. զի զգեստ և տաճար կոչի մարմինն ստուգապէս ո՛չ աստուածութեանն քրիստոսի՝ որ ո՛չ բաժանեցաւ ի մարմնոյն ոչ ի մահ և ո՛չ ի *գերեզմանն*: - 319. Չորրորդ՝ ի խորհուրդ յարութեան մերոյ, որ վերըստին գոյացուցանէ ի խաւարէ՛ *գերեզմանին* և ի լոյս հանէ և ուրախութեամբ զարդարէ՛ և փառաւորէ՛: - 321. Ոմանք զսիօն ասեն, և այլք զեդոմ, և այլք զարաբիա. որ և անդ ասեն և այլք *զգերեզման* նորա լինիլ: - 327. Եւ է՛ ի մէջ արաբիոյ և եդոմայ. զոր այժմ կոչի թիլգուրան. ուր *գերեզման* նորա՛ է: - 327. Նոյնպէս և տէր ի հօրէ և ի մօրէ. պայծառութեամբն ի թաբօր. մկրտութեամբն ի ջրոյ. և յարութեամբն ի *գերեզմանէ*՛: - 329. Եւ տէրն զերկիր շարժեաց և *զգերեզմանս* եբաց. և գ ժամ խաւար էած փոխանակ գ աւուր խաւարին եգիպտոսի: - 329. Յորում աւուր կիրակէին ի մէջ գիշերի ընդ առաւօտս յարեաւ տէր ի *գերեզմանէն*, ազատելով զհոգիսն ի դժոխոց: - 337. Տասներորդ՝ զմին ոտն ի *գերեզմանէ* դրեալ ծերութեամբն և պակասութեամբ: - 378. Վասն է՞ր կորխեանքն սրբեցան հոգւով. և դադանեանքն կենդանի ի *գերեզման* իջեալ տանջեցան: - 381. Եւ զայրացաւ ի *գերեզմանն* ղազարու ի վերայ մահուն: - 387. Վիուկն ա՛յն է, որ ի վհաց և յանդնդոց մեռեալս կերպարանեն. դևք ի կերպս մարդկան երևին. զոր դևակոչ ասեն և հազիմաթ. և Նշանագէտ, որ ի *գերեզմանս* ննջէ և նշանաւոր մարդ կերպարանէ. որպէս զսամուէլ սաւուղայ երևեցոյց հարցուկ կինն: - 388. Եւ հայրազեղծն որ հարկանէր զծնօղ, զանիծից փայտէ կախէին, և ի նոյն օր ի *գերեզման* իջուցանէին զի մի՛ պղծեսցին: - 400. Ուստի յա՛յտ է զի փոխեաց զփայտն անիծից և *զգերեզմանն*, և արար աղբիւր օրհնութեան փայտի և *գերեզմանի*: - 400. Վասն է՞ր ո՛չ գիտեն *զգերեզմանն* մովսէսի: - 411. Էջ ի *գերեզմանն* և յանդունդս յաւիտենից ընկղմեաց զնոսա: - 418. Եւ տէրն ի մէջ գիշերի զդրունս և զնիգս դժոխոց խորտակեալ յարեաւ ի *գերեզմանէն*. և զհոգիս մարդկան էհան յերկինս: - 423. Որ է՛ նախ քան զխաչն, և ի խաչին, և ի *գերեզմանին* հանգուցեալ: - 423. Ա՛րդ՝ յորժամ կենդանի էր դառնութեամբ և սգով իջոյց ի *գերեզման*. այժմ մեռելո՛յն երկրպագէ: - 429. Երեսուներորդ, կացոյց սաւուղ պահապան դաւթի. և կացուցին պահապան *գերեզմանին* քրիստոսի: - 436. Երեսունևմի, գիշերի ընդ պատուհանն ել, թողեալ զպատանսն յանկողնի. և տէրն ի գիշերի յարուցեալ եթող զկտաւն ի *գերեզմանին* կնքեալ: - 436-437. Երեսունևդ, դաւիթ թաքեաւ գօրեայ առ վիմին. և տէրն գօրեայ ի *գերեզմանին*: - 437. Դաւիթ երեսնամեայ թագաւորեաց. և տէր մեր լամեայ մկրտեցաւ և ի *գերեզմանէն* յարեաւ: - 437. Դաւիթ երիցս սուգ էառ մեռելոյ. և տէրն ի վերայ եէմի և ի *գերեզմանն* ղազարու և մեծ ի խաչն: - 438. Այլ և գոհացաւ ի վերջոյ ի վերայ ամենայն յաղթութեանցն. և տէր մեր ի վերայ ամենայն ներգործութեանցն. որ և ամենայն օրհնութիւնքն ի տէրն ակնարկէ. որ եղև գլուխ հեթանոսաց. յաղթեաց մահու և բարձրացաւ ի *գերեզմանէ:* - 438. Երկրորդ՝ զի իջցէ ի *գերեզման* և մի՛ տեսցէ զչարիքն որ ի ձեռն նաբուգոդոնոսորայ: գալո՛ց էր ի վերայ երուսաղէմի. որպէս յայտ է ի պատմութիւնն: - 446. Եւ թէ քանի՞ ժամս եկաց ի *գերեզմանի*: - 455. Յինգերորդ ծնունդ՝ յարութիւնն ի *գերեզմանէն*: - 471. Զի որպէս ի կուսական արգանդէ, նոյնպէս ծնաւ ի կոյս *գերեզմանէ* վիմովն կնքելով: - 471. Զգլուխն ի յորդանան ջախջախեաց, և զտուտն ի *գերեզմանն* և ի դժոխս: - 488-489. Երրորդ՝ *գերեզմանք* բացան: - 490. Եւ *գերեզմանք* բացան. զի կարօ՛տ էին ննջեցեալքն նմա. և նոքա փակեցին *զգերեզմանս* սրտից իւրեանց: - 490. Արդ զապարանքն պիղատոսի իբր զմի տեղի առեալ. թէպէտ կրկնեալ եղև. և խաչելութեանն տեղի լինի գ. և *գերեզմանն* յորում հանգեաւ է: - 493. Եւ ոմանք ասեն թէ՝ յերկնաւոր դրախտն եմուտ հոգւովն մինչ ի կիրակէ մէջ գիշերին. և ի նոյն ժամն էջ ի դժոխս և ազատեալ զհոգիսն յարեաւ ի *գերեզմանէն*: - 495. Այլ ա՛րդ՝ յառաջ քան զխաչն ո՛չ ապականացու, և ո՛չ ի խաչին, և ո՛չ ի *գերեզմանի* որպէս մեք խոստովանիմք: - 500. Ոմանք դ ասեն. և այլք՝ բազումք. զի ի *գերեզմանի* ասեն տանջիլ. և յօդս. և ի ծովս. և ի վէմս: - 504. Դարձեալ ասեմք, ներքին դժոխք է հոգւոցն. և վերին՝ *գերեզման* մարմնոցն. և նա կոչի դժոխք ի սուրբ գիրս. որպէս ասաց դաւիթ (զսիմէի արեամբ հանդերձ ի դժոխս իջո՛) որ է՛ *գերեզմանն*: - 505. Ասեմք ներքին դժոխք զհոգւոցն. և միջին *զգերեզմանս*. և վերին զմեղքն որ է՛ ի հոգիս: - 505. Չորրորդ վկայ լոյսն զգալի. որ յինն ժամուն ծագէ՛ ի *գերեզմանէն* ակներև ամենայն մարդկան: - 509. Եւ ե անգամ ի նոյն օրն յորում յարեաւ ի *գերեզմանէն*. որ լինի ժ անգամ: - 511. Վասն զի *գերեզմանն* կնքեալ էր և յարեաւ: - 512. Այլ որք ուղղաձնութեան են աշակերտք՝ ի մէջ գիշերի ասեն զժամ յարութեանն քրիստոսի ի *գերեզմանէն*. որոց հետևիմք և մեք և հաստատեմք բազում վկայութեամբ և օրինակաւ: - 512. Եւ ի նոյն ժամն ի մէջ գիշերի

ծնաւ ի կոյս *գերեզմանէն*: - 512. Յորում աւուր կիրակէի ի մէջ գիշերի ընդ առաւօտն յարեաւ տէրն ի *գերեզմանէն*. հանելով զհոգիսն յանապատն երկնից. և խաչանիշ գաւազանաւն ընկղմեցաւ փարաւօն յանդունդս դժոխոց: - 513. Այսպէս և որդիքն սաւուղայ հարեալ նախանձու բևեռեցին զտէրն և խոցեցին նիզակաւ. և պահէին *զգերեզմանն*: - 513. Յորում ի մէջ գիշերի թողեալ զկտաւսն ի *գերեզմանի* և յարեաւ եւ առ հայր ի յերկինս: - 513. Ա՛րդ` ներքին այրն նշանակէ՛ զդժոխս. և արտաքինն *զգերեզմանն*. և սաւուղն զսատանայ որ ըմբռնեալ էր զմարդիկ: - 513. Եւ տէրն ի գիշերի ելեալ ի *գերեզմանէն* բաժանեաց և էառ զհոգիս մարդկան ի նմանէ. և արար իւր հանդերձ զսուրբ ժողովուրդ իւր: - 513-514. Այսպէս և տէր մեր էջ առ ննջեցեալսն ի *գերեզմանս* և ի դժոխս: - 514. Այսպէս իմանալի արեգակն քրիստոս ի նոյն ժամն յարեաւ ի *գերեզմանէն*. և ընդ արշալոյսն երևեցաւ իւղաբերիցն և առաքելոց: - 515. Դարձեալ ասեմք` թէ կանայքն իւղաբերք **դ** անգամ եկին ի *գերեզմանն* և այլ և այլ տեսլեան դիպեցան. և զիւրաքանչիւր դասուց **դ** աւետարանիչքն գրեն: - 515. Իսկ զերրորդն մարկոս պատմէ՛ առաւօտուն և յարևագալն յետ ղուկասու. և տեսին երիտասարդ մի ի ներքս ի *գերեզմանն* ընդ աջմէ նստեալ: - 515. Այլ որ ուղղապէս հանդիպիմք` ասեմք թէ **լ** ժամ մարմինն եկաց ի *գերեզմանի*. և հոգին **լգ** ժամ և կէս յամեաց ի դժոխս: - 515. Զի յինն ժամու ուրբաթուն արձակեաց զհոգին և էջ ի դժոխս. և ապա՛ ընդ երեկոյս ի մուտն արևու մարմինն եմուտ ի *գերեզման*: - 516. իսկ մարմինն յերեսուն ժամուն ի *գերեզմանէն* յարեաւ. զի երեսնամեայ մկրտեցաւ մարմնով և ել ի ջրոյն: - 516. Եւ **լ** ժամեայ յարեաւ և ել ի *գերեզմանէն*: - 516. Զի յղացեալ էր ի *գերեզմանին* թաղէոսի. և սնաւ անդ` ուր առաքեալն սկսաւ քահանայագործել. և փոխեաց յինքն զշնորհս նորա անդր եղեալ եպիսկոպոս: - 548. Յեէմ վասն *գերեզմանին* քրիստոսի: - 549. Եւ ի կիպրոս վասն *գերեզմանին* ղազարու: - 549. Հինգերորդ վասն թաղմանն ի *գերեզմանի*: - 572. Երկրորդ, ընդ քրիստոսի յառնելն ի *գերեզմանէ* : - 627. Այլ և առընթեր յարութեան աւետարանն. զի նո՛յն է խորհուրդ ծննդեանն ի կոյս մօրէ և ի կոյս *գերեզմանէ* : - 628. Իսկ փակումն դրանն զթաղումն ի *գերեզմանի*: - 628. Թէպէտ մեռար մարմնով և եդար ի *գերեզմանի*` սուրբ և անմահ և անապական ես: - 632. Նոյնպէս և ի շաբաթի օրս հանգեաւ ի չարչարանաց ուրբաթուն և եդաւ ի *գերեզմանի*: - 647-648. ...վասն որոյ տէրն քրիստոս մարմնով ի *գերեզմանի* հանգեաւ. և սուրբքն հոգւով առ աստուած յերկինս: - 648. Հեթանոսաց սովորութիւն էր որ զինչս մեռելոյն ընդ նմա՛ դնէին ի *գերեզմանն*. - 656. Եւ դարձեալ ճաշքն ցուցանեն յերիս հասակս զբարեգործսն. և ընթրիսն զվերջին հասակին յորում ննջեմք ի *գերեզմանի*: - 656. Վեցերորդ` Վասն *գերեզմանին*. և ի հող թաղելն. և Կոչումն *գերեզմանին*: - 660. Քար *գերեզմանին* և կնքելն: - 660. Իններորդ, Վասն է օրէիցն. և մեռելոցն. և *գերեզման* օրհնելն. և տուն օրհնել: - 660. Դարձեալ` ցուցանէ` իբր թէ սիրելոյն որ մեռաւ` կցորդիմք և չարչարեմք զմարմինս. մերկանալով, ի սով և ի ծարաւ, ի մութն և ի հող որպէս նա ի *գերեզմանի* եղև: - 670. ...զի անցեալ է ժամանակն ողորմութեան, և դատաւորն առ դուրս հասեալ` դնել ի տանջանս դժոխոց. որպէս աստ զմարմինն ի *գերեզմանի*: - 671. Այլև զգրեալն ընդհանրական թողութիւն ի դիմաց նորա ի վերայ *գերեզմանին* ընթեռնուն: - 674. Իսկ դնել զմարմինն ի տան պատւականի որ է՛ *գերեզմանն*, - 674. Ապա ուրեմն ամենեցուն առ հասարակ պէտք են քահանայական կատարմունք և նուէրք. գալ ի *գերեզմանն* և այլն ամենայն: - 675. Երրորդն ի դուռն *գերեզմանին*. վասն որոյ այժմ սովորութեամբ երիցս անգամ դնեն զդագաղն ի ճանապարհի: - 675. Զի՞նչ է որ առ հասարակ ամենեքեան. այր և կին` ծեր և տղայ ընդ մեռելոյն ընթանան ի *գերեզմանն*: - 675. Երրորդ, զի ի հեռու ճանապարհ գնայ. այս է յերկրէ յերկինս. յուղարկաւորեմք մինչ ի *գերեզմանն*: - 676. ...նոյնպէս յորժամ ի *գերեզման* դնեն զմարմինն, իբր յաշխարհի ծովէ ելեալ զվառն խոնարհեցուցանեն: - 676. Եւ յորժամ դնեն ի *գերեզման*, քահանայն նախ օրհնէ՛ երիցս ափով զհողն և արկանէ ի *գերեզմանն* ասելով, - 676. Նոյնպէս ի *գերեզմանն* ուղղակի տանիմք: - 676. Իսկ զդէմքն և *զգերեզմանն* ուղղեմք յարևելս, - 677. Վտանգ ինչ է՞ արդարոյ` թէ ի յօրհնեալ *գերեզմանս* ո՛չ թաղի: - 678. Ո՛չինչ բնաւ. քանզի յորմէ հետէ քրիստոս ի *գերեզման* եդաւ ամենայն հողք օրհնեցան...: – 678. Զի՞նչ է *գերեզմանն*: - 678. Վասն է՞ր կոչի *գերեզմանն* դժոխք...: - 679. Զի՞նչ է քար *գերեզմանին*: - 679. Դարձեալ, ի տիպ պահապան հրեշտակին որ նստէր մի ի սնարից և մի յանոտից տեառն *գերեզմանին*...: - 679. ...զի հրեշտակք խաչաձև երևեցան առ *գերեզմանաւն* տեառն: - 679. Հինգերորդ, զի և նախահարցն քարեայ էր *գերեզմանն*. աբրահամու. սահակայ. և յակոբայ. նոյնպէս և *գերեզման* տն. և կափարիչ վեմն. - 679. Զի՞նչ է խաչիւ և աւետարանաւ կնքելն *զգերեզմանն* անշարժապէս: - 679. Երիցս կնքելն *զգերեզմանն*, Նախ ի խորհուրդ սուրբ Երրորդութեանն: - 679. Զի՞նչ է որ յերկրորդ օրն դարձեալ գան ի *գերեզմանն*: - 680. Եւ որպէս իւղաբեր կանայքն նախ եկին ի *գերեզմանն* և տեսին յարուցեալ զքրիստոս, և ապա առաքեալքն...: - 680. ...նոյնպէս յերկրորդ օրն պարտ է գալ կանանց նախ ի *գերեզմանն*, և ապա արանց. և հոգևոր

տեսութեամբ ուրախանալ: - 680. վասն որոյ այսօր թեթևացեալ գամք ի *գերեզմանն* և գոհանամք զաստուծոյ: - 680. Զի արեգական ծագելն զծնանիլն մեր նշանակէ. և մուտն *զգերեզմանն*. իսկ այս առաւօտ զյարութիւնն հասարակաց: - 680. ...վասն այսոցիկ պատճառի կրկին գամք ի *գերեզմանս*: - 680. Հինգերորդ՝ յետ գօրեայ թաղմանն քրիստոսի եկին առաքեալքն և կանայքն ի *գերեզմանն*. - 681. յայս միտս գամք ի *գերեզմանս* ննջեցելոցն...: - 681. ...և յորժամ բացին *զգերեզմանն*, գտին թափուր ի սուրբ մարմնոյն. - 681. վասն որոյ **գ** օր յիշատակ կատարեմք և գամք ի *գերեզմանն*: - 681. *Զգերեզմանս* յորո՞ւմ աւուր պարտ է օրհնել: - 684. Եւ այս է խորհուրդն. զի յայնմ աւուր խաչեցաւ քրիստոս, և *գերեզմանք* բացան և այլն: - 684. Եւ ի նոյն օրն ի *գերեզման* եմուտ և էջ ի դժոխս և քարոզեաց: - 684. Վասն որոյ խաչիւ և աւետարանաւ աւետեմք ննջեցելոցն զմեծ օր աւետեաց նոցա և կնքեմք *զգերեզմանն*: - 684. Այլք այլ իմն ասեն. իբր թէ իւրաքանչիւր մեղաւոր հոգի ի *գերեզմանս* իւրեանց կամ ի յերկրի տանջին...: – 686. Զի այս ո՛չ է ի կարգէ դատաստանին. այլ ի սքանչելեաց միածնին. որպէս արեգական խաւարիլն, և *գերեզմանաց* բանիլն, և այլն: - 697. Եւ հաւատարիմ վկայ ընդհանուր յարութեանն զգործս եցոյց. որ զղազար չորեքօրեայ ի *գերեզմանէն* յարոյց: - 716. ըստ որում երեքօրեայ յարեաւ ի *գերեզմանէն* անապական մարմնով. և զբազումս յարոյց ընդ իւր և մտին ի քաղաքն սուրբ. - 716. Որպէս լոյս արեգակն անցանէ ընդ երկինս առանց ապականութեան. և որպէս քրիստոս յարեաւ մարմնով ի *գերեզմանէն* վիմովն կնքելով. և եմուտ առ աշակերտսն դրօքն փակելովք: - 722. Արդ նա՛ որ զամենայն *գերեզման* կնքեալ պահէ, զեկեղեցիս օրհնէ՛ և հաստատէ՛ և ամենեցուն զօրաւիգն է ի փորձութիւնս, կարօ՞ղ է անապական լինիլ. զի աստուածային է նշան: - 733. Զի քև գեղեցկագոյն ի *գերեզմանէն* յարութեան քո հասից. և **անդատապարտ** եղէց յատենի քոյ առաջի հօր և հոգւոյդ սրբոյ: - 771. Զի կա՛թ մի արտասուաց ի կաթիլ դուլէ ծե՛րդ մաղթանաց ցօղեսցի ի *գերեզման* հոգւոյ իմ տառապանաց: - 773. Զի անապական մարմնով եդաւ ի *գերեզմանի.* բառնալով զապականութիւն նախնւոյն. և իջանելով ի դժոխս՝ եբարձ զպատիժ նորին: - 776

**ԳԵՐԵԶՄԱՆԱԿԻՑ +** Նա՛խ՝ զի ի սրբոցն որ ա՛նդ են թաղեալ՝ օգնութիւնս ընդունին *գերեզմանակիցք* նոցա: - 678

**ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ +** Երկրորդ, զի և ի տաճարն հին՝ ո՛չ թաղեցին զսուրբս. այլ ի *գերեզմանատունս*. նոյնպէս և առաւել սրբութեամբ պահելի է զնոր տաճարս: - 617. Չորրորդ, զի մի՛ լիցին փողոցք և տունք մեր *գերեզմանատուն* մեռելոց...: - 677

**ԳԵՐԵԶՄԱՆՕՐՀՆԷՔ** - Զի բշաբաթին մեռելո՛ց է և ո՛չ *գերեզմանօրհնէք*: - 684. Զի՞նչ է *գերեզմանօրհնէքն*: - 684

**ԳԵՐԵՄ +** Զի արդարութիւն արար քրիստոս բնութեանս մերոյ *գերեալ* ի սատանայէ՛: - 50. Իսկ այլն՝ սատանա՛յ է ապստամբ վիշապն որ *գերեաց* զմարդիկ:- 128. Իններորդ, *Գերեցաւ* տապանակն: - 412. *Գերիլն* նշանակէ՛ զօրէնքն և զաւետարանն ի հեթանոսս առաքեալ: - 426. Դաւիթ եհար զամաղէկ որ *գերեաց* զիրէայս և զայլազգիս. և տէր մեր եհար զգերիչն հրէից և հեթանոսաց: - 437. ...և տէրն մարտեաւ ընդ բելիարայ և յաղթեաց մահու. և քակեաց զդժխս. էառ աւար *զգերեալսն* և էհան յարքայութիւնն երկնից. տալով նոցա զանթառամ պսակն: - 438. և փակէի արքայի որդւոյ ռոմելայ. և *գերեաց* զնեփթաղիմ և զգալիլեա. և Զգաղայաթ **զ** ցեղիւքն իէլի. և տարաւ յերկիրն ասորեստանեայց: - 447. Արդ յերեքտասան ամէ՛ ովսիա մինչև ցմետասան ամն սեդեկիայ որ վերջին *գերեցաւ*՝ լինի **խ** ամ. և նաբուգոդոնոսորայն **ի** ամ. և որդւոց և թոռանց նորին **ժ** ամ. որ կատարի **հ** ամ մինչև յառաջին ամն կիւրոսի որ արձակեաց զգերիսն: - 447. Չորրորդ՝ *գերիլն* ի բաբիլօն՝ զգերութիւն բնութեանս նշանակէ. և եօթանասունն ամն զեօթն դար կենցաղոյս. և ապա դարձումն ի հայրենի բնակութիւնն մեր ի ձեռն փրկչին մերոյ և աստուծոյ: - 448. Ի տիպ խորհրդոյ օրինակի մերոյս տաճարի *գերեալ* ի մեղաց և աւերեալ տաճար սրբութեանս եօթնիւք զգայութեամբք: - 448. Արդ սկսեալ առ դարեհիւ ի կե ոլոմպիադին՝ դադարեցին ի **ճձզ** ոլոմպիադին առ հիւրկանոսիւ քահանայապետիւ, որ *գերեցաւ* ի պարթևաց: - 449. Ի **ժա** ամին աքազու *գերեցաւ* իսրայէլ ի սաղմանասարայ: - 453. Զազգս մարդկան սատանայ էր *գերեալ*. վասն է՞ր քրիստոս զգին արեանն ի հայր ետ: - 492. Զի թէպէտ սատանայ էր *գերեալ* զմարդն, սակայն ի գերութիւն նմա հա՛յր մատնեաց յորժամ պատժեաց զնա: - 492. Յիրաւի ապա տէր մեր զգին արեանն ի հայր ետ. թէպէտ սատանայ էր *գերեալ* և չարչարէր զմարդիկ: - 492. Երեքտասաներորդ՝ ամաղեկացիք *գերեցին* զկողմն հրէաստանի և զայլազգիս. և դաւիթ զհետ մտեալ յետ **գ** աւուր և հարեալ ի գիշերի և ի վաղիւն մինչ յերեկոյ. և դարձուցեալ զերկոսին կանայս իւր. և ո՛չ մնաց գերի և ո՛չ մի. և յաւարէ աստի բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց: - 514. Ամաղէկ նշանակէ

զսատանայ որ *գերեաց* զիոգիս մարդկան իրէից և հեթանոսաց...: – 514. Այլ և ի դռան Կլայիս սակաւ ինչ դանդաղեալ, մինն փրկեալ և միւսն *գերեալ*: - 789

**ԳԵՐԻ +** Նա՛խ՝ զի ծառայ և *գերի* պահէին: - 335. Չորրորդ՝ և զայնպիսի հիւրսն *գերի*՛ և ծառայ չարչարեցին: - 335. Որ և ցուցանէր յետ եօթանասուն ամի զդարձ *գերւոյն*, և զնորոգիլն իրէական կարգին: - 346-347. Քսանևք, Դարձ *գերւոյն* երեք անգամ: - 413. Այլ որ ուղիղն է՝ զվճիռ *գերոյն* **հ** ամ **եդ** երեմիա: - 447. ...և նա՛ վկայեաց վասն գերութեան ժողովրդեանն. այլ վասն բարեպաշտութեան ովսիա ո՛չ գնաց *գերի*: - 447. Արդ յերեքտասան ամէ՛ ովսիա մինչև ցմետասան ամն սեդեկիայ որ վերջին գերեցաւ՝ լինի **խ** ամ. և նաբուգոդոնոսորայն ի ամ. և որդւոց և թոռանց նորին **ժ** ամ. որ կատարի **հ** ամ մինչև յառաջին ամն կիւրոսի որ արձակեաց *զգերիսն*: - 447. Եւ այսպէս թուին **հ** ամք *գերւոյն*: - 448. Վասն է՞ր **հ** ամ եդ զվճիռ *գերւոյն* բաբիլօնի ի ձեռն երեմիայի: - 448. Կիւրոս յառաջին ամի թագաւորութեանն իւրոյ՝ արձակեաց **Ե** բիւր *զգերիսն* յերուսաղէմ, սաղմանասար իշխանաւն. զի շինեսցեն զտաճարն: - 448. Ա՛րդ՝ եթէ քրիստոս ի ներքին դժոխքն ոչ էջ, ո՛չ է կապեալ հզօրն որպէս աւետարանն ասէ. և ոչ զդրունսն խորտակեալ. և ո՛չ *զգերիսն* աւար առեալ որպէս դաւիթ ասէ: - 506. Երեքտասաներորդ՝ ամաղեկացիք գերեցին զկողմն հրէաստանի և զայլազգիս. և դաւիթ զհետ մտեալ յետ **գ** աւուր և հարեալ ի գիշերի և ի վաղիւն մինչ յերեկոյ. և դարձուցեալ զերկոսին կանայս իւր. և ո՛չ մնաց *գերի* և ո՛չ մի. և յաւարէ աստի բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց: - 514. Գիր իմոյ, կամ *գերւոյ* ամաւն, կամ գերէ՛ զամէն: - 678

***ԳԵՐԻ ԱՌՆՈՒԼ, ՎԱՐԵԼ, ՏԱՆԵԼ +*** Եւ վասն այսմ ի սուր անկան ծոյլ քահանայքն ոփնի և փենէհէզ. և լա ի դասուց անկան և տապանակն *գերի առաւ*: - 425. Վասն է՞ր աւերէ՛ աստուած զսրբութիւնս և *վարէ՛ գերի*. որպէս զտապանակն յայլազգիս և զտաճարն: - 425. Տևեցին զամս **մծ**. մինչ յովսէէ որդի ելայ. որ *գերի վարեցաւ* յասորեստան. և բարձաւ թագաւորութիւնն իէլի: - 446. ...և երեք ամ պաշարեալ էառ զնա. և *գերի վարեաց* զթագաւորն ովսէէ որդի ելայ. և **զժ** ցեղն բովանդակ տարաւ յասորեստան: - 447. Եւ զդանիէլ՝ և **զգ** մանկունքն՝ և **ժռ** այր ի մեծամեծացն *գերի տարաւ* ի բաբիլօն: - 447. Եւ յետ **գ** ամի՝ կրկին անգամ եւ յերուսաղէմ, զյեքոնիա և զեզեկիէլ *գերի վարեաց*: - 447. Զյովաքազ *գերի տարաւ* նեքաւով փարաւոն. և թագաւորեցոյց զեղիակիմ: - 453. Դարձեալ եւ նաբուգոդոնոսոր և *էառ* զյովակիմ *գերի*: - 453

**ԳԵՐԻՉ +** Նա՛խ՝ զի ի պատճառս ղովտայ փրկեսցի սոդոմ ի *գերչացն*: - 302. Դաւիթ եհար զամաղէկ որ գերեաց զիրէայս և զայլազգիս. և տէր մեր եհար *զգերիչն* իրէից և հեթանոսաց: - 437

**ԳԵՐ Ի ՎԵՐՈՅ +** Երրորդ՝ զի *գերիվերո՛յ* է ժամանակաց և ո՛չ ի ներքոյ: - 114. Զի աստուած արարիչ է յաւիտենից. և յառաջ քան զյաւիտեանս. և *գեր ի վերոյ* յաւիտենին: - 114. Չորրորդ՝ զի թէ պատւական նիւթով երևէին որպէս արեգակն՝ հուր՝ ոսկի՝ և ակն. գիտէաք թէ զնոյն բնութիւն ունին, և ո՛չ այլ ինչ *գերիվերոյ*: - 132

**ԳԵՐԾՈՒՄ, ԳԵՐԾԵՄ +** Նախ *գերծու* զհերն. և զոր ուխտիւն աճէ՝ զայն ի սեղանն հանել ի կատարումն ուխտին: - 389. Եւ ա՛յս է *գերծուլն*, զառաջին գործեալ մեղքն սրբել խոստովանութեամբ. և զապաշխարութեան գործն մատուցանել աստուծոյ: - 389. Զի սամփսոն ի ժամ *գերծելոյ* գլխոյն թմրեալ ի ծունկս թալիլայ խոնարհէր. նոյնպէս և ամենայն մեղք զոր գործէ մարդ, և առաւել գէճ ցանկութիւն, անարգէ զմարդ: - 424

**ԳԵՐԾՈՒՄՆ +** Թողում *զգերծումն* մերկութեան և զթօշումն անարգութեան և տկարութեան խաչին. զայպանելն խաչողաց. և զխաւար լուսաւորացն. և յայլ դէմս դարձուցից զբանս: - 424

**ԳԵՐՈՒԹԻՒՆ +** Եօթներորդ՝ սովն ուտել զմարմին զաւակաց. և *գերութիւն* ի թշնամեաց: - 376. Երկրորդ՝ հրէայքն ի *գերութեան* կախեցին զկտակարանքն ի յուռեաց, և ո՛չ հաւատային կենաց. որ ասէր կտակարանքն պահել զպատուիրանս աստուծոյ և կեալ: - 405. Երրորդ՝ զի առցեն մասնաւոր զառհաւատչեայ հանդերձելոյն. տանջելով աստ ի սով, ի սուր, և ի *գերութիւն*: - 408. Քսանևը, *Գերութիւնք* իսրայէլի և հրէաստանի: - 413. Եւ ապա ըստ կարգի թագաւորք. Դաւիթ. Սողոմոն. և այլք մինչ ի *գերութիւնն*: - 421. Եւ յետ *գերութեանն* քահանայք իշխեցին ժողովրդեանն: - 421. Եւ այլքն ամենայն կորեան առ *գերութեամբ* նոցա: - 443. Եւ ի *գերութենէն* իսրայէլի մինչ ի *գերութիւնն* յուդայ **ճծ** ամ: - 446. Ա՛րդ՝ սկիզբն *գերութեանն* իսրայէլի յաւուրս ոզիայ արքայի յուդայ: - 446. Եւ յետ *գերութեանն* իսրայէլի անցեալ ամք ճլե, եւ արքայն բաբիլացւոց նաբուգոդոնոսոր ի վերայ եէմի. ի **ժ** ամի թագաւորութեանն յովակիմայ. և էառ հարկ ի նմանէ. և զմեծ մասն սրբութեանց տաճարին աւերեաց: - 447. Եւ եղև *գերութիւնն* բաբիլացւոց **հ** ամ ի վերայ յուդայ և ո՛չ ի վերայ իէլի որպէս ասէր

երեմիա: - 447. Եւ զայս թիւ ոմանք առնուն ի *գերութենէն* մանասէի՝ և աւելի՛ է: - 447. Եւ ոմանք յառաջին *գերութենէն* յովակիմայ՝ և պակա՛ս է: - 447. ...և նա՛ վկայեաց վասն *գերութեան* ժողովրդեանն. այլ վասն բարեպաշտութեան ովսիա ո՛չ գնաց գերի: - 447. Դարձեալ՝ ի վերջին *գերութենէն* սեդեկիայ մինչ ի դարեհի **բ** ամն կատարի **հ** ամ. որ արձակեաց զզօրաբաբէլ: - 447. Մատնեաց զչարս ի *գերութիւն*. զի ա՛նդ վախճանեսցին, և արդար ծնունդք նոցա դարձցին ի տեղիս իւրեանց: - 448. Զի ի րոբովամէ՛ որ զերինջսն գործեաց՝ վեց եօթանասուն ամ է մինչև *զգերութիւնն* սակաւ ինչ պակաս. վասն որոյ եօթանասուն ամ շաբաթեցոյց զնոսա ի *գերութեան*: - 448. Չորրորդ՝ գերիլն ի բաբիլօն՝ *զգերութիւն* բնութեանս նշանակէ. և եօթանասուն ամն զեօթն դար կենցաղոյս. և ապա դարձումն ի հայրենի բնակութիւնն մեր ի ձեռն փրկչին մերոյ և աստուծոյ: - 448. Եւ այսպէս յետ աւերածոյն և *գերութեանն* նախ տաճարն շինեցաւ, և յետոյ պարիսպն կանգնեցաւ: - 448. Չորրորդն զյուդայ և զիէլի թագաւորութիւնն մինչև *զգերութիւնն*: - 450. Յետ ի ամի *գերութեանն* մեռաւ նաբուգոդոնոսոր: - 453. Եւ ձգեցաւ *գերութիւնն* ամս եօթանասուն: - 453. Չորրորդն ի դաւթէ՛ մինչև *զգերութիւնն* բաբիլացւոց: - 467. Հինգերորդն ի *գերութենէն* մինչ ի քրիստոս: - 467. Զի թէպէտ սատանայ էր գերեալ զմարդն, սակայն ի *գերութիւն* նմա հա՛յր մատնեաց յորժամ պատժեաց զնա: - 492

***Ի ԳԵՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԵԼ +*** Ոմանք *ի գերութիւն վարեալք* արք և կանայք. և կէսք առաթուր դիաթաւալ սրախողխող գալարեալ. առհասարակ քահանայք և աշխարհականք գէշ անկեալ դիակամբ անթաղ ընկեցեալք: - 788. Այլ ինչ ո՛չ օգնել *ի գերութիւն վարելոց.* որպէս և յայնմ աւուր ի կորուստ մատնելոց: - 789

**ԳԵՐՍԱՄ** - ...և էառ զսեփովրա կին. և ծնաւ **բ** որդիս. *զգերսամ* և զեղիազար. - 330

**ԳԶԱԹ +** Հինգերորդ՝ *զզաք* էր կոյսն մարիամ. և ցօղ բանն աստուծոյ. որ աւետեօք հրեշտակապետին էջ ի վերայ նորա առանց ոտնաձայնութեան և ծածուկ: - 421

**ԳԶԵՄ +** Իսկ գազան, կամ զի *զզօ՛ղ* են և պատառօղ. կամ զի զանազան և ահագին կերպարանք ունին: - 216. Եօթներորդ՝ համառօ՛տ է և փոյթ ի *զգելն*: - 315

**ԳԷԹ +** Դաւիթ չորս ամ բնակեցաւ ի *գէթ* մինչ մեռաւ սաւուղ. և տէր մեր յեգիպտոս՝ մինչ մեռաւ հերովդէս: - 437

**ԳԷՇ +** Եւ կամ ի *գէշք* մարմնոյ կենդանոյ ինչ: - 294. Կամ որպէս ասեն թէ՝ ներսէս անուն արուեստաւոր տապանին՝ շինեաց իւր տուն ի վերոյ կողմանէ. և զի ո՛չ էր հրամանաւն աստուծոյ՝ սատակեցաւ նա՛ անդ, և զնորա *գէշն* ուտէր ագռաւն: - 294. Ոմանք ի գերութիւն վարեալք արք և կանայք. և կէսք առաթուր դիաթաւալ սրախողխող գալարեալ. առհասարակ քահանայք և աշխարհականք *գէշ* անկեալ դիակամբ անթաղ ընկեցեալք: - 788

**ԳԷՈՐԳԷՈՍ** - Եւ պատրիարգունք էին անդ, *Գէորգէոս* կոստանդնուպօլսի. Թէոփիլոս անտիոքու. Պետրոս աղէքսանդրի: - 543. Քառասունևզ, Հարցմունքն *գէորգեայ* տասնևչորս գլուխ: - 661. ասացեալ եմք ի հարցմունքն *գէորգեայ* յառաջիկայդ տես ի բ համարքն: - 686. Եւ այլն ասացեալ է ի հարցմունսն *գէորգեայ* ի **գ** համարն: - 686. Այլ և յետոյ ի *գէորգեայ* հարցմունքն գտցես: - 705. Գրեսցի յայսմ տեղւոջ և Հարցմունքն *Գէորգեայ*: - 773. Գիր քոյոյ վսեմամիտ խոհեմութեանդ ո՛վ արփիածին հարազատ, և վերնոյն սիօնի նազելի զաւակ *Գէորգէոս* Րաբունեայ պետ: - 773

**ԳԷՈՐԳԻԷ** - Ահա զսակաւ ընծայ կարճառօտութիւն բանիս ընկալ ի քում ընդարձակութեան գանձարանի սրտի՝ երիցագոյն հարազա՛տդ *Գէորգիէ*: - 95

**ԳԷՋ +** Նախ՝ զի լպրծի՛ միտք մեր և մոռանայ զբանն. զի հով և *գէջ* է պարուտակն և ուղեղ գլխոյն: - 120. Եւ որք ի ջուրս և ի ծնունդս կանանց՝ ա՛լք կոչեցան. զի *գէջ* ախտիւն զհոգիս կորուսանեն. և ի ծնունդս՝ զմարմինս և զհոգին: - 150. Եւ ո՛չ միայն այս. այլ և դ բնութիւն է չորից տարերաց մարմնոյն. ջերմ և ցուրտ. չոր և *գէճ*: - 176. Եւ ջուր *գէճ* է և ցուրտ: -181. Օդ ջերմ է և *գէճ*: - 181. Եւ այսպէս ջերմ և ցուրտ, չոր և *գէճ*, թշնամիք են անհաշտելիք. և լինին միաւորեալք դարձեալ ծայրիւքն և մնան սիրելիք անքակտելիք այսպէս: - 181. Իսկ Եկաւորն և Կշիռն և Ջրհոսն, ունին զբնութիւն օդոյ ջերմ և *գէջ*: - 189. Իսկ Խեցգետինն և Կարիճն և Ձուկն, ունին զբնութիւն ջրոյ ցուրտ և *գէճ*: - 189. Երկրորդ՝ Լուսնթագն. զոր մուշթարի կոչեն. ջե՛րմ է և *գէճ*. մին ամ յամէ՛ ի կենդանակերպն. և ի **ժբ** ամն պատէ՛ զամենայն: - 189. Եօթներորդ Լուսինն. զոր կամր կոչեն. հո՛վ է և *գէճ*. **բ** օր և կէս յամէ՛ ի կենդանակերպն. և ի **իթ** օր և կէս պատէ՛ զամենայն: - 189. Եւ զի ջերմ է և *գէջ* ժամանակաւ: - 197. Իսկ գարուն և աշուն է՛ միջակ և ջերմ և *գէջ*՝ բուսուցանէ: - 197. Զի չորութիւն և ցրտութիւն հակառա՛կ է ծննդեան. և ջերմ և *գէջն* օգնական: - 197. Նմանապէս պնդի և լուծանի. վասն զի ցո՛ւրտ է և *գէջ*: - 202. *Գէջ* օդն գոգացեալ և դէմ

եղեալ արեգականն՝ առնու զլոյսն ի նմանէ ըստ բոլորակ ձևոյ նորա: - 203. Գոլորշիք վերացեալ յերկրէ *գէջ* և չոր խառնեալ: - 203. Իսկ *գէջն* լինի ամպ. և չորն ի մէջ ամպոյն նեղեալ պատառելով զծալմունս ամպոյն՝ լինի որոտ և փայլատակունք ևս: - 204. Եւ դարձեալ՝ զի ի գոլորշեաց է բաղկացեալ՝ արտաքին մասն հով է և *գէջ*, և ներքինն ջերմ և չոր. վասն որոյ զարտաքինսն պահէ՛, և զներքինսն ապականէ: - 204. Երկու գոլորշիք վերանան յերկրէ. մինն չոր և ծխատեսակ. և միւսն խոնաւ ի *գէճ* բնութեանց վերացեալ: - 204. Այլ Ամպն լինի, յորժամ զօրութեամբ արեգականն ի վեր քարշին գոլորշիքն ի ջուրց և ի *գէջ* տեղեաց: - 204. Այսօրիկ ի *գէջ* գոլորշոյն լինին: - 205. Եւ որ մերձ ի հարաւ հնչէ, Եւրոս կոչի. *գէ՛ճ* է. և տաղատարա՛փ բերէ: - 205. Զի արեգակն արու է զի ջերմ է. և լուսինն էգ՝ զի հով և *գէջ* է: - 213. Եւ թէ այս երակս հո՛վ է և *գէջ*, ի հեռուն աղէկ տեսնու և ի մօտն վատ. որպէս ծեր մարդն: - 239. Արևելիցն տա՛ք է և *գէջ* որպէս ասեն բժիկք: - 240. Յիւսիսայինն ընդդէմ նմին հո՛վ է և *գէջ*: - 240. Նախ՝ ի տղայութեան հասակն. յորժամ ծնանի տղայն՝ ունի զհողմն արևելից տաք և *գէջ*: - 240. Իսկ ի ծերութեանն՝ լինի հողմն հիւսիսոյ հով և *գէջ*: - 240. Երկրորդն ուղեղ գլխոյն է. հով է և *գէճ* ընդ դէմ սրտին ջերմութեանն և չորութեանն. զի բարեխառնեսցէ՛ զնոսա. և իւր տանուտէր լուսինն է: - 241. Երրորդն լեա՛րդն է, աղբիւր արեանն. տա՛ք է և *գէճ* ունելով զբնութիւն մուշթարոյն, որ տանուտէր է նմա: - 241. Չորրորդն թո՛քն է. հո՛վ և *գէճ*. և է՛ տուն պլղամի. և ունի տանուտէր զլուսինն: - 241. Վեցերորդն երիկամունքն որ է տուն սերման. ջերմ և *գէջ*. և տանուտէր ունի զզօհրայն. որ է լուսաբերն: - 241. Թէ ժամանակն ցուրտ է կամ ջերմ. և երկիրն *գէջ* կամ չոր. և սերմն հոտեալ կամ աղանձեալ. և սերմանօղ ո՛չ լինի կամ ոչ սերմանէ. վասն որոյ ո՛չ բուսանի: - 256. Այլ արդ՝ գիճութիւն ջրոյ զջերմ և զչորն վնասէ՛, և ջերմութիւն հրոյ *զգէջն*, և լինի անպտուղ: - 256. Դարձեալ՝ ջերմ և *գէջ* չափաւորեալ է ի նիւթն այն. և որ արտաքուստ մտանէ՝ անչափութեամբն վնասեսցէ՛ զսերմնական զօրութիւնն ընդ նիւթոյն: - 256. Ոմանք ըստ ազգի և տեսակի իւրեանց հով և ջերմ՝ չոր և *գէջ* գոլով, փութով կամ յապաղելով բուսանին: - 261. Յեղանակս գարնան, և յառաւօտուն մինչև յերեք ժամս, և հիւթոյ արեան, և մանկութեան հասակն ի տղայութենէ ծննդեան և աճման՝ ունին զնմանութիւն օդոյ ջերմ և *գէջ* գոլով: - 266. Իսկ ձմեռն, և յինն ժամէն մինչև յերեկոյ և բոլոր գիշերն, և սպիտակաթոյր հիւր պլղամին, և ծեր մարդ, ըստ նմանութեան ջրոյ ցուրտ և *գէջ* գոլով. վասն որոյ սպիտակի և ցրտանայ և պակասի զօրութեամբ: - 266. Իսկ մարդոյն ուղեղն *գէճ* է և հով. զի նկարեսցէ յինքն զիմացումն մտացն. և ջիլքն յառաջեալ ի նման վասն գիճութեան ո՛չ կարէ պնդել զանդամսն. վասն որոյ ո՛չ կանգնի և ոչ գնայ: - 266. Իններորդ՝ արիւնն և շունչն է սկիզբն գոյացութեան մերոյ. զի արիւնն փոխի ի սաղմն, և ջերմ օդով խառնի ի հով և ի *գէճն*, և լինի աճումն և սնունդ մարմնոյ: - 295. Զի սամփսոն ի ժամ գերծելոյ գլխոյն թմրեալ ի ծունկս թալիլայ խոնարհէր. նոյնպէս և ամենայն մեղք զոր գործէ մարդ, և առաւել *գէճ* ցանկութիւն, անարգէ զմարդ: - 424. Դարձեալ՝ վիշապն ի յորդանան էր բունեալ. որպէս ասէ յոբ «բեհմովթն ննջէ՛ ի գիճային տեղիս. և զջուրս յակնակապիճս իւր ընդունի». այսինքն ի *գէճ* ցանկութիւնն: - 489. Եւ սկզբնական մեղքն *գէճ* ցանկութեամբն տարածի: - 489. Իսկ հակառակսւն՝ որպէս ջերմ զցուրտ, և *գէճ* զչորն արտաքսէ: - 497. Ի ջրոյ պոռնկութիւն և փառասիրութիւն. որ *գէճ* է և թոյլ. և փառասէրն յայլոյ բանս մեղկի և թուլանայ: - 560

**ԳԷՏ +** Երբեմն զառաւել զօրութիւնն. ըստ այնմ որ ասէին *գէտքն* եգիպտացւոց՝ «մատն աստուծոյ է այս»: - 62. *Գէտքն* ո՞րպէս առնեն հրաշք: - 335

**ԳԷՐ +** վասն այն պա՛րտ է զընտիրն և *զգէրն* մատուցանել: - 657

**ԳԹԱԾ +** Հնգետասաներորդ՝ այլ և ողորմած և *գթա՛ծ* է տէր...: – 272. Յուսովն ակն ունիմք ինքեան ողորմութեանն որ խոստացեալ է. զի *գթած* և ճշմարիտ է: - 571

**ԳԹԱՄ +** ...և միւսն երախայ և ո՛չ ունի լեզու, միայն լայ. և մայրն *գթայ* ի յարտասուքն և տայ կերակուր: - 620. ...միայն արտասուօք խնդրեմք յաստուծոյ զողորմութիւն. ի հարկէ *գթայ* և տայ: - 620

**ԳԹԵՄ +** Մեղքն այն է՝ յորժամ ի կրօնս լինի ոք և *գթէ՛* մեղօք և դարձեալ ապաշխարէ: - 564

**ԳԹՈՒԹԻՒՆ +** Եւ բարի փոխանակ չարի, որ է անբաւ *գթութեանն* և ողորմութեանն աստուծոյ: - 18. Իսկ սոքա յաստուծոյ և *գթութեամբ* սիրոյ: - 95. Եւ վասն ողորմութեան և *գթութեան* ի **ռ** ազգս: - 284. Աստ զանազանութիւն է *գթութեան* և ողորմութեանն աստուծոյ: - 350. Նա՛խ՝ ի դէմքն. զի *գթութիւնն* անմե՛ղ կացելոցն է. և ողորմութիւնն դարձելոց ի մեղաց: - 350. Երրորդ, այն առանց *գթութեան* հատուցանէր պատիժս պարտուց...: – 354. Եւ հայր աստուած որ ո՛չ կատարի կամք նորա ի մեզ. յայնժամ ըստ բազում *գթութեան* իւրոյ առաքեաց զմիածին որդին որ փոխանակ մեր կախեցաւ զփայտէն և ազատեաց զմեզ յանծիցն օրինաց...: – 400. Այլ և ասեն վարդապետք, Վասն ամբարշտին՝

ծաղի՛ *գթութիւնն*: - 491. Երկայնութիւնն՝ աստուածային *գթութեանն*: - 493. Եւ մասունք արդարութեան են **գ**. այսինքն կրօնաւորութիւն. *գթութիւն*. շնորհ. վրէժխնդրութիւն. պահպանութիւն. և ճշմարտութիւն: - 579. *Գթութիւն* է արենակցաց և բարեկամաց սպասաւորել ստէպ: - 579. Անոխակալութիւն է զամբոխումն ատելութեան զուարթութեամբ և *գթութեամբ* արգելուլ: - 581. Վեցերորդ *գիթութիւն* որ է՛ աստուածապաշտութիւն: - 582. *Գթութիւն* է գութ ցուցանել առ ընկերն և սիրել զնա. վասն զի պատկեր աստուծոյ է: - 582. Այս սուրբ օծմամբս և իւր *գթութեամբն* աստուած թողու քեզ զոր մեղանչեցեր տեսլեամբդ. նոյնպէս ասէ և այլ զգայութեանցն: - 604. Եւ հայր *գթութեանցն*՝ կատարումն առ հայր: - 633. Իններորդ՝ առաւել ամենահնար *գթութեան* է ցոյցք. զի եղական բնութիւնս ո՛չ կարէր անմեղ մնալ. զի անեղն է անմեղ: - 663. Ի կամս Յայրենի բարեխնամ *գթութեանցն* աստուծոյ: - 771

**ԳԻԹՎՈՐՆ** - Եւ դեռևս ունին ազգն վրաց. զի *գիթվորն* մտեալ յեկեղեցի ազա՛տ են: - 392

**ԳԻԺ** - Այլ և ի վերայ այսր, հիւանդն և *գիժն*: - 371

**ԳԻԾ +** Երրորդ՝ ի միակէ, զի ամենայն բազմութիւն է ի միակէ՛. որպէս տեսակն յանիատէ. և *գիծն* ի կիտէ. և բազում թիւ է՛ ի միոյն: - 25. Եւ այն տխեղծ մատանց, տառատիպ *գծաց*. որ անհրաժեշտն է առարկողաց: - 93. Եւ որպէս *գիծն* կոչեցեալ այբ՝ ի բազում վանգս բաժանեալ. և մնացեալ մի: - 106. Եւ դարձեալ՝ որպէս ամենայն *գիծ* բոլորակին՝ ի միջին կէտն միաւորին առ միմեանս. և հեռացեալք ի միջին կէտէն բաժանին ի միմեանց. և զորօրինակ՝ միէ սեռն՝ և ի բազում տեսակս բազմանայ: - 112. Երկրորդ՝ յերից *գծից* բաղկանայ. որպէս մարդ ի հոգւոյ և ի մարմնոյ և ի մտաց: - 178. Եւ բոլորակ ձևն պա՛րզ է քան զամենայն ձև. զի եռանկիւնին յերից *գծից* բաղկանայ, և քառանկիւնին ի քառից. նոյնպէս և այլքն: - 182. Իսկ բոլորակ ձևն ի միոյ *գծոյ* բաղկանայ: - 182. Վեցերորդ՝ զի թէ երկինքն ո՛չ էր բոլորակ, յայնժամ արեգակն և այլ աստեղք յորժամ գային ի մէջ երկնից, մեծագոյն երևէին. քանզի ի միջին կիտէն երկնից առ մեզ է ուղղական *գիծ*. իսկ յարևելից առ մեզ է՛ խոտորնակի *գիծ*. և ուղղական *գիծն* կա՛րճ է քան զխոտորնակ *գիծն*: - 183. Է՛ որ ինքնաչա՛փ է. որպէս *գիծն* ի կանգունն՝ ըստ ինքեան չափէ՛ զկանգունն ի յորում է. և ըստ պատահման չափէ՛ զկտաւն ի յորում ո՛չ է: - 198. Նշանակէ՛ ըստ փիլոնի, զի անմարմինքն մինչև յերեքն հասանին. որպէս երկրաչափքն գրեն նիշ՝ *գիծ*՝ երևոյթ. ա՛յս է իմանալեացն չափ: - 344. Առաջինն ըստ դրութեան, որպէս կէտ. *գիծ*. մակերևոյթ. և մարմին: - 476

**ԳԻԾԱՍԷՐ** - Չորրորդ՝ ըստ բարուցն տեսանէ ոք. զի ա՛յլ է երազ արի մարդոյ, և այլ երկչոտին. ա՛յլ *գիծասիրին*, և այլ պարկեշտին: - 268

**ԳԻՆ +** Եւ *գինք* անձանց ուխտաւորացն: - 359. Երկրորդ՝ զի *զգին* ծերոյն պակաս հրամայեաց. զի ե ամեայ տղայոյ երկդրամեան էր. և ի ամենին ի երկդրամեան. և անտի մինչև ի **կ** ամն **ծ** երկդրամեան. և ի **կ** էն յառաջ **ժե** երկդրամեան: - 377. Զագահութիւնն՝ բազմաբաշխութիւնն. որ ետ զմարմին իւր ի կերակուր և զարիւնն իւր ըմպելի. զհոգին ի *գին*. զջուր կողին ի լուացումն. զհանդերձն՝ խաչողացն. զմարմինն՝ աշակերտացն. և զմայրն՝ յոհաննու: - 489. Երրորդն է՛ բացումն կողին. ի նշան ամէնառատ *գնոց* փրկութեան մերոյ: - 489. Զազգս մարդկան սատանայ էր գերեալ. վասն է՞ր քրիստոս *զգին* արեանն ի հայր ետ: - 492. Յիրաւի ապա տէր մեր *զգին* արեանն ի հայր ետ. թէպէտ սատանայ էր գերեալ և չարչարէր զմարդիկ: - 492. Եւ ի չորրորդ գիրքն ի ի համարն ասէ, ետ զմարմինն ի կերակուր. զարիւնն ըմպել. զհոգին ի *գին*. զջուրն կողին ի լլացումն: - 594. զի *գինք* են արեանն քրիստոսի: - 678. Ողորմութիւն է ննջեցելոցն. և ո՛չ թէ *գին* աւետարանին շնորհացն: - 684. Նոյնպէս և յայլ խորհրդոց կատարմունքն. կնքոյ, պսակի, և այլոցն, լուսացուէ և խնկոց *գին*: - 684. Դարձեալ յուշ առնէ մարդոյ զչարչարանքն քրիստոսի. և խնդրեսցի ի նոցանէ մահն քրիստոսի իբր *զգին* որ տըւեալ է նոցա, և նոքա յափշտակեցին զինքեանս ի նմանէ: - 732

**ԳԻՆԱՐԲՈՒ +** Այտքն թանձր՝ յամրեղ և *գինարբո՛ւ* է: - 246

**ԳԻՆԻ +** Երկրորդ՝ մարդկան քահանայութիւն նիւթական խորհրդով ներգործի. որպէս հացիւ *գինեաւ* և այլով. իսկ նոցայն աննիւթութեամբ կատարի: - 139. Յոռի. զի հորե՛ն երկրագործք և մշակք զցորեան և *զգինի*, յըշտեմարանս ժողովեալ. զի թ հոռի՝ մո՛ւտ է աշնան: - 200. Երրորդ՝ զսա՛ քրիստոս ի *գինի* փոխեաց: - 207. Չորրորդ՝ զի նիւթք եղեն երկնաւոր խորհրդոյն. որպէս ի տնկոց փայտ խաչին. և յայլ բուսոց հաց պատարագին և *գինի*. և ձէթ մեռոնի կազմեցաւ: - 212. Այլք ասեն թէ՝ խաղո՛ղ էր. կամ ցորեան. զի *զգինին* ետ գրաւական կենաց՝ և զհաց մարմնոյն: - 224. Յիսունք, Զի՞նչ նշանակէր նաշիհն և **դ դ** դորակ *գինին* ի նորս: - 284. Վաթսուննե, Վասն ուխտաւորաց որ միս չուտէին և ո՛չ *գինի*: - 285. Ուր եկեալ աբրահամ, և նա՛ եւ ընդ առաջ նորա ջերմ բաղարջ հացով և *գինեաւ* օրինակ տէրունեան խորհրդոյն: - 300. Իսկ քահանայ, զի հաց և *գինի* պատարագ մատոյց: - 300. Նախ՝ զի մելքիսեդեկ ունէր պատարագ հաց և

*գինի*. և աբրահամ ո՛չ ունէր: - 300. Այլ մելքիսեդեկին էր նշանակ յաւիտենական պատարագին քրիստոսի ի տեսակ հացի և *գինւոյ*: - 301. Ութերորդ՝ զի մելքիսեդեկ պատարագ հաց և *գինի* մատոյց աբրահամու: - 302. Չորրորդ՝ ի խրախութիւն *գինւոյ*՝ **ժ** մեղք գործին. այսինքն Նա՛խ՝ բազմակերութիւն. – 322. Եւ տէրն զջուրն ի *գինի* փոխեաց և *զգինին* յարիւնն իւր սուրբ: - 328. Ա՛րդ՝ գ հաց՝ և գառն խորովեալ դնէին յառաւօտուն. և չորրորդ մասն դորակի *գինւոյ*. նոյնպէս և յերեկոյն հանապազորդ: - 346. *Գինին*, արեամբ կատարեալքն: - 346. Վասն է՞ր յերեսաց սեղանն հաց և *գինի* և գառն դնէին. և մեք զգառն ո՛չ դնեմք: - 357. Այլ զգալապէս հաց և *գինի* աւանդեաց, զայն պատարագեմք: - 357. Մետասաներորդ, բոլորապտուղ. որ է հանապազորդ գառն խորովեալ յառաւօտն և յերիկոյն մին հացով և դ մասն դորակի *գինով*: - 359. Կնդրուկ անուշահոտ բուրեալ. և *Գինի* ուրախարար ի զմայլումն հոգևոր: - 361. Դարձեալ՝ իւղով զանգեալ բաղարջն և նոյն չափ իւղովն որ չափ մասն *գինւոյն*. այն է՝ զի ընդ օրհնութեան բանին աստուծոյ՝ և հոգին սուրբ իջանէ ի հացն և ի բաժակն և կատարէ՛ մարմին և արիւն քրիստոսի: - 361. Կամ զի արբեցան *գինւով*: - 364. Նաշիին, և Իւղն, և *Գինին*, զի՞նչ նշանակեն: - 374. Այլ և նաշիի մարմին սուրբ. և *գինի* արիւնն. և իւղ օծումն աստուածութեանն. որպէս ասացաւ ի վերոյ: - 374. և *Գինին* ուրախութիւնն հոգևոր: - 374. *Գինին* մարտիրոսքն սուրբք. և Իւղն՝ լուսատու վարդապետքն ուղղափառք: - 374. Զի՞նչ է որ ըստ տօնից մեծութեանն առաւելոյր նաշիին և իւղն և *գինին*: - 375. Նոյնպէս և մեք ի հանդէս տօնից նուիրեմք նաշիի և *գինի* պատարագի. ծէթ՝ մոմ՝ խունկ՝ և զենումն մատաղի: - 375. *Գինին* ուրախութեան ձայնք պաշտամանց քահանայից: - 375. Իսկ չորրորդ դորակ *գինւոյն* և իւղոյն ընդ նաշիոյ և գառինն, նշանակէ՛ զբանաւոր և զկենդանի պատարագս մեր: - 375. Դարձեալ՝ ուռն և լծակն՝ խաչն. և Ողկոյզն անապական ճմլեալ ի վերայ խաչին հնձանի. և եղև ուրախարար *գինի* տրտմեցելոցս մեզօք: - 381. Ի *գինւոյ* և ի ցքոյ պահել, զի մոռացկոտ և քնու և ծոյլ և ապուշ առնէ *գինին*: - 389. Ապա յա՛յտ է՝ զի որ ընդ ապաշխարութեամբ է և կրօնաւոր, ի *գինւոյ* ի մրգոյ և ի մսոյ պահեսցէ: - 390. Ջջուրն ի *գինի* փոխեաց: - 399. Դարձեալ՝ նոյն ինքն քրիստոսի է իշխանութիւնն որ աստ լուծանէ ի ձեռն քահանային. և իշխանութիւն նորա ո՛չ տկարանայ երբէք. որպէս զհաց և *զգինին* կատարէ և զայլ խորհուրդս. նոյնպէս և աստ: - 433. Իսկ զօծումն հիւանդաց եցոյց ինքեամբ յայլս. յորժամ զանկեալն ի ձեռս աւազակաց ձիթով և *գինւով* բժշկեաց: - 474. Եւ այնք որ էութիւն ընդ էութիւն միաւորին՝ են որք շփոթմամբ միաւորին. որպէս ջուր ընդ *գինի*. և **դ** տարերք: - 475. Երրորդ առ այսոքիւք՝ միաւորութիւն անուանեմք և զխառնուածս երկուց նայից ըստ զանազան որակութեանց. յորում ո՛չ ոք ի խառնեցելոցն զիւր ծայրագոյն որակութիւնն սեռաբար կարօղ է պահել. այլ շփոթեալ անկանի ի ծայրագոյն որակութենէն. որպէս զջուրց և *զգինեացն* խառնուած, և զմեղերաց: - 476. Երրորդ՝ ի կանայ զջուրն ի *գինի* փոխելոյ: - 484. Եւ օրհնութիւն *գինւոյն*: - 527. Եւ կարգաւ բաժանելն. և թափել *գինւոյն*. և ընթրիսն. և բարեկենդանն: - 527. Նոյնպէս և շինեալն օրհնութեամբ. զի լուանամք նախ ջրով և ապա՛ *գինւով*: - 533. Զորօրինակ, քահանայ ոք ի վաճառանոցն ի բազում հացս և ի *գինիս* ասասցէ «ա՛յս է մարմին իմ և արիւն իմ» ո՛չ կատարի. զի ոչ ունի զդիտաւորութիւնն. նոյնպէս և աստ: - 539. Յաղորդութիւնն է խորհուրդ՝ յորում պարունակի քրիստոս ի ներքոյ ձևի հացի և *գինւոյ*. և յերկոքին մասունքն է բոլոր քրիստոս: - 594. Նիւթ այսմ խորհրդոյս է՛ հաց ցորենոյ, և *գինի* որթոյ: - 594. Երկրորդ ունիմք վկայութիւն ի քրիստոսէ յորժամ ետ զարիւնն ի տեսակ *գինւոյն* ասաց, «ո՛չ արբից ի բերոյ որթոյ մինչև արբից զդա նոր արքայութեան հօր իմոյ». և ջուրն ո՛չ է բեր որթոյ: - 595. Այլ և մարգարէն մովսէս դնէր յերեսաց սեղանն գառ մի խորովեալ. և հաց և *գինի* և չորրորդ մասն դորակի հանապազորդ. և ջուր ո՛չ դնէր: - 595. Որ էր խորհուրդ անմահ գառինն. և հացն և *գինին* մարմին և արիւնն սուրբ: - 595. Դարձեալ՝ մելքիսեդեկ հաց և *գինի* մատոյց պատարագ աբրահամու և ո՛չ ջուր. որ նշանակէր զճշմարիտ պատարագն քրիստոսի. ապա ուրեմն ո՛չ է պարտ խառնել ջուր: - 595. Երկրորդ՝ զի թէ խառն բղխեաց ըստ քեզ վասն այն ի պատարագն ջուր խառնես, ապա և ի ջուրն *գինի* խառնեա և այնպէս մկրտեա՛: - 595. Եւ թէ ասիցեն հակառակքն մեր, ո՛չ ապականի *գինին* զի սակաւ է ջուրն: - 595. Ապա ուրեմն թէպէտ և սակաւ խառնի ջուրն, բնութիւնք *գինւոյն* և ջրոյն ապականեցան. զի ո՛չ անապակ *գինի* է և ո՛չ պարզ ջուր: - 595-596. Եւ թէ ոք ասիցէ, առանց ջրոյ *գինի* ո՛չ ըմպեն յերուսաղէմ: - 596. Ասեմք թէ՝ խառնումն ո՛չ զջրոյ և *գինւոյ* ասէ, այլ խառնել զայն ասէ որ արկանի *գինին* ի խառնարանն: - 596. ...զի արկանելն զխառնելն նշանակէ. և խառնելն է արկանել *գինւոյն* ի յանօթն: - 596. Այս է խառնումն *գինոյն* ի խառնարանն իմաստութեան: - 596. Իսկ թէ մարմնական խնդրես զխառնումն ջրոյ և պնդիս ի հակառակն, ասեմք քեզ թէ ո՛չ միայն ջրոյ, այլ և կաթին և մեղեր և *գինւոյ* ասէ խառնումն ի խառնարանն...: - 596. Երկրորդ՝ տեսակ հացին և *գինւոյն*: - 597. Նա՛խ՝ զի քրիստոս մի հաց էառ ի ձեռն ի սեղանոյն և օրհնեաց. նոյնպէս և զմի *գինի*: - 597. Չորրորդ՝ ի յօրինակն մի հաց և մի գառն խորովեալ

լինէր. որ ընդ մասին *գինւոյ* դնէին յերեսաց սեղանն: - 597. Այսպէս և ի ճշմարտութիւնս մի է նշխարն դնելի, և մի բաժակով *գինի*: - 597. Պատահմունք և որակն մնան ի հացն և ի *գինին*. իսկ գոյացութիւնն փոխարկի ի մարմին և արիւնն քրիստոսի վասն դ պատճառի: - 597. Երկրորդ՝ երբեմն նշանակէ հացն ցամաք զբանն ի յերկնից իջեալ. և *գինին* զմարդկութիւնն...: – 598. ...այլ ո՛չ յօրհնեալ հացէն և ի *գինւոյն*. այլ էառ ի սեղանոյն հաց և եթաց ի ջուր ինչ կամ ի սոսկ *գինի*՝ և ետ: - 599. Նա՛խ՝ եթէ ո՛չ զմարմինն տան ժողովրդեանն. այլ սոսկ հաց և *գինի*. զի մարմին քրիստոսի այն մինն է որ օրհնեցաւ որպէս ցուցաւ ի վերոյ: - 600. ...և զաման *գինւոյն* և զնշխարն տանիլ առ աւագ սարկաւագն. և զիանդերձ սեղանոյն լուանալ: - 606. Զայս կարգս կացոյց քրիստոս յորժամ ի ժամ ընթրեացն զհացն ի մարմին իւր և *զգինին* ի յարիւն իւր փոխեաց: - 606. Նոյնպէս և մեք ի ճշմարտութիւնս՝ ջրով և *գինով* և սուրբ մեռոնաւն օծանեմք: - 615. Ա՛րդ՝ ջուր և *գինին* և մեռոնն նշանակեն ի մեզ զջուր սրբութեան աւազանին. և մեռոնն որով օծաք և դրոշմեցաք. և ապա ճաշակմամբ մեղսաքաւիչ արեանն կատարեցաք: - 615. ...և թողութեան *գինեաւն* զմայլիմք...: – 615. Եւ մեսեդի ճաշոյն և երեկոյեան, չորրորդ մասն դորակի *գինւոյն*. որպէս ասացաւ ի վերոյ ի իա գլուխն ծբ համարն: - 629. Զի՞նչ է յորժամ *գինի* ըմպեմք, օրհնեմք և շնորհակալեմք միմեանց. և յայլ կերակուրս և ըմպելիս ո՛չ առնեմք նոյնպէս: - 655. Որ ի հարսանիսն զջուրն ի *գինի* փոխեաց և օրհնեաց: - 655. Այլ և զարարիչ օրհնութեան *գինւոյն* զտէր մեր յիսուս քրիստոս: - 656. Նա՛խ՝ զի բաժանիցուք յայնցանէ որք *զգինի* մեղաց ըմպեն. և վասն մեղաց արբենան և շռայլին: - 656. Երկրորդ, զի այսպէս հաղորդիցուք երկնաւոր *գինւոյն*. որ է՛ իմաստութիւնն աստուծոյ. - 656. Զի՞նչ է որ յըմպելն *զգինին* թափեն յանուն մեռելին: - 656. Նախ՝ կոչի սիրտ և անձինք մեղաւորաց, ուր ժողովին ամենայն գործք չար որ է՛ խաղող դառնութեան. և ունակացեալ պահէ յինքեան. և հեշտութեամբն ճմլէ հանապազ և արբենայ մեղացն *գինով*: - 748. Երրորդ հնձան է իւրաքանչիւր սիրտ և անձինք արդարոց. որ հաստատեալ է հաւատով յորթն ճշմարիտ և պտղաբերէ՛ զողկոյզ բարեաց. և չարչարանօք ճմլէ՛ յինքեան զուրախարարն *գինի* հրեշտակաց և մարդկան. և այսոքիկ բարեա՛ցն են հնձան: - 749. Եօթներորդ կոչի հնձան եկեղեցի սուրբ. ուր ամենայն առաքինութիւնք մեր ժողովին. ու ճմլէ ապաշխարութեամբ և բաշխէ՛ *զգինի* շնորհաց...: - 749. Իններորդ՝ կոչի հնձան և խաչն փրկական. յորում ողկոյզն անապական ճմլեցաւ և ետ մեզ ուրախարար *գինի* զանապական արիւնն իւր...: - 749. Տասներորդ, ասի հնձան և կտակարանքն սուրբ. ուր հին և նոր իմաստութիւն ժողովեցաւ ի խառնարանին *գինւոյ*. յորմէ բաժակէ՛ արբին առաքեալքն ի սուրբ վերնատունն. և արբուցին ամենայն տիեզերաց...: - 749. Մետասաներորդ, հնձան կոչի և հաւատն սուրբ. զի ի նա՛ հաւաքի ամենայն բան և գործք մեր. և ճմլեալ այսինքն քննեալ՝ լինի *գինի* ուրախարար աստուծոյ և հրեշտակաց: - 749. Ցորեան ընդ յարդի. կնճիռն ընդ *գինւոյ*. մրուր ընդ ձիթոյ. յուդա ընդ յառաքեալսն. նիկօլայոս հերեսիոտ ընդ աշակերտսն: - 756

**ԳԻՆՃ +** Եւ էր ինքն բոլոր և սպիտակ նման *գնծի*. և քաղցր որպէս զմեղր: - 338

**ԳԻՇԱՏԵՄ +** Բայց յենքեանց սատակեալն՝ և գազանաբեկն՝ և *գիշատեալն* ի հաւուց՝ մի՛ ուտիցի: - 366. Այլ և ամենայն աշխարի տաճա՛ր է աստուծոյ. թէ ի դաշտի թէ յագարակի թէ ի տղմի. կամ ի ջուր սուզի, կամ ի գազանաց *գիշատի*, կամ ի ձկանց կլցի, արդարութեան ոչ ինչ վնասէ: - 678

**ԳԻՇԵՐ +** Եւ որպէս թէ զկատարած աւուրն ոք գիտենայ, և զսկիզբն *գիշերոյն* ասէ չգիտել: - 48. Նախ՝ զի որպէս արեգակն ունի մշտնջենաւոր զլոյսն՝ և առնէ ի վերոյ երկրի տիւ և *գիշեր*: - 125. Յատկութիւնք առաւօտու և հասարակ աւուր. երեկոյի և *գիշերոյ*. տասն տասն գլխով: - 154. Մետասաներորդ՝ զտիւ և *զգիշեր* կատարէ՛: - 186. *Զգիշերս* լուսաւորէ: - 186. Իսկ զօր՝ որ է տիւ և *գիշեր*. և զդ եղանակս. և զտարի, արեգա՛կն կատարէ: - 190. Եւ ի ներքինն անցեալ՝ *գիշեր*. զի գարշեցո՛յց զերր. որ է օդ և երես երկրի: - 190. Ի խոյն և ի ցուլն և յեկաւորն առնէ զգարուն. որ է հասարակ տիւն և *գիշերն* **ժբ** ժամ: - 190. Ի խեցգետինն յառիւծն և ի կոյսն՝ առնէ զամառն. որ տիւն առաւել է քան *զգիշերն* **զ** ժամ: - 190. Ի կշիռն ի կարիճն և յաղեղնաւորն առնէ աշուն. նոյնպէս հասարակ տիւ և *գիշեր* **ժբ** ժամ: - 190. Եւ յայծեղջիւրն ի ջրհոսն և ի ձուկն՝ առնէ զձմեռն. որ առաւելու *գիշերն* քան զտիւ **զ** ժամ. զի լինի *գիշերն* **ժե** ժամ. և տիւն ինն ժամ. որպէս յամառն տիւն է **ժե** ժամ. և *գիշերն* **թ** ժամ: - 190. Զի օրն ընդ տիւ և ընդ *գիշեր* է՛ **իդ** ժամ: - 191. Նա՛խ՝ զորքանութիւն աւուրցն ցուցանէ, թէ տիւ և *գիշեր* **իդ** ժամն լինի օր մի բնական: - 193. Երրորդ՝ զի անփոխանո՛րդ է *գիշերոյ*: - 193. Նա՛խ՝ զի բնական օրն է տիւ և *գիշեր*: - 194. Իսկ ա՛յժմ քրիստոնէիցս կրկին է սկիզբն բնական աւուր. այսինքն մէջ *գիշերն*, և առաւօտն: - 194. Վասն զի ի մէջ *գիշերի* ծնաւ քրիստոս. և ի մէջ *գիշերի* յարեաւ ի գերեզմանէն: - 194. Վասն որոյ տօն առաջին աւուրն ի մէջ *գիշերի* սկսանի. և մեծամեծ տօնքն յերեկօրեայ որպէս ասեմք զշաբաթի երեկոյն կիրակմուտ: - 194. Իսկ միւսն է ընդ ծագումն լուսոյն. յորում զպահք և զուտիք բաժանեն. այսինքն լոյսն և *գիշերն*: - 194. **Եւ**

**գիտելի է, զի ի սկզբանէ աշխարհիս մինչ ի քրիստոս լո՛յսն առաջանայր *գիշերոյն*. իսկ յետ քրիստոսի մինչ ի վախճան՝ *գիշե՛րն* առաջանայ լուսոյն**: - 194. **Ուստի յա՛յտ է՝ զի երեկոյ շաբաթուն որ կոչի կիրակմուտ՝ պատուակա՛ն է քան զմիւս *գիշերն* որ զհետագայ կիրակէին**: - 194. Այս է պատճառն. զի ի սկզբանէ տիւն առաջանայր *գիշերոյն*. զի ադամ ի լուսոյ շնորհացն անկաւ ի խաւար մեղաց: - 194. Իսկ *գիշեր* յարութեանն քրիստոսի՝ փոխեաց զայս կարգ. զի յարութեամբն իւրով եհան զմեզ ի լոյս շնորհաց և արդարութեան: - 194. Վասն որոյ *գիշերն* յառաջէ՛ տունջեան մինչ ի կատարած: - 194. Նա՛խ՝ առաւօտն և երեկոյն. և է՛ առաւօտն վախճան *գիշերոյ*՝ և սկիզբն տունջեան: - 194. Եւ երեկոյն է վախճան տունջեան, և սկիզբն *գիշերոյ*: - 194. Նա՛խ՝ զի սկիզբն է տուընջեան, և վախճան *գիշերոյ*: - 196. Նա՛խ՝ զի վախճա՛ն է տուընջեան, և սկիզբն *գիշերոյ*: - 196. Եւ *գիշեր*, զի գարշանա՛յ երր, որ է օդ: - 196. Հինգերորդ՝ հաւասարակութիւն տուընջեան և *գիշերոյ*: - 196. Եւ զի հաւասարի տիւ և *գիշեր*: - 197. Եւ զի ցօղ իջանէ ի *գիշերի*: - 197. Նա՛խ՝ զի կշիռ և հաւասա՛ր են տիւ և *գիշեր*: - 197. Եւ զի *գիշերն* մեծանայ: - 197. Դարձեալ՝ յամառն և ի ձմեռն զրկո՛ւմն է տուընջեան և *գիշերոյ*. զի ամառն զրկէ *զգիշերն*, և ձմեռն զտիւ: - 198. Իսկ գարուն և աշուն հաւասար արդարութիւն է տուընջեան և *գիշերոյ*. վասն որոյ բուսանին սերմանիք: - 198. Ի տուէ ի *գիշեր*. ի *գիշերէ* ի տիւ: - 199. Տրէ. զի առնու *գիշերն* յօրէն զճամ և զմասունքն. որպէս կրելով յինքն: - 200. Իսկ Ցօ՛ղ է գիճութիւն ի պարզոյ իջեալ. զոր աստեղք ի *գիշերի* քարշեն ի վեր. և ընդ ծագել առաւօտուն՝ յետ ի յերկիր անկեալ մանրամասն շիթ: - 204. Եօթներորդ՝ երբեմն ծածկէ՛ զարեգակն. որպէս ի *գիշերի*: - 206. Եւ զի քարշեն լուսաւորք զգոլորշին յերկրէ՝ յայտ է ի ցօղ առաւօտուն և յեղեամն. որ ի *գիշերն* ի վեր քարշին. և ընդ ծագել լուսոյն հատանին և յետս յերկիր անկանին. և յաւուրս ձմերան լինի եղեամն. և յամարան ցօղ: - 208. Ո՛չ թէ քան զտարրական հուրն ի վե՛ր է անցեալ. այլ զի լուսինն և արեգակն միշտ ի հարաւոյ կողմանէ ի ստորոտէ լերինն ելանեն. և ի հիւսիսոյ կողմն լերինն միշտ *գիշեր* լինի. որպէս աղէքսանդրու պատմութիւնն ասէ. և ի գլուխն միշտ լոյս. և ի հարաւոյ կողմն տիւ և *գիշեր*: - 222. Ոմանք ի դրախտն ևս ասեն թէ տիւ և *գիշեր* լինի. կամ գարուն և աշուն. զոր մեզ չէ ընդունելի: - 222. ...յա՛յտ է զի *գիշեր* ո՛չ լինի անդ. և ո՛չ եղանակք փոփոխին: - 222. Այլ և տիւ և *գիշեր* որք ընդ լուսոյն եղեն: - 226. Նա՛խ՝ զի ի տիւ և ի *գիշեր* լսէ: - 235. Որպէս պատմի ի դատաւորքն. յորժամ գեդէոն զփողսն հնչեցոյց, այլազգիքն ինքեանք զինքեանս ի սուր մաշեցին ի *գիշերի*: - 238. Դարձեալ և տէրն բաժանէ զհասակ մարդոյ ի **դ**. յերեկոյ. ի մէջ *գիշեր*. ի հաւախօս. և ընդ առաւօտս: - 265. Մէջ *գիշեր* է երիտասարդութիւնն: - 265. Մէջ *գիշեր*՝ երիտասարդութիւնն ի խորս մեղաց ննջեալ: - 266. Իսկ ձմեռն, և յինն ժամէն մինչև յերեկոյ և բոլոր *գիշերն*, և սպիտակաթոյր հիւր պլղամին, և ծեր մարդ, ըստ նմանութեան ջրոյ ցուրտ և գէջ գոլով. վասն որոյ սպիտակի և ցրտանայ և պակասի զօրութեամբ: - 266. Եւ թէ չունիս հաւատ զփտեալ փայտն տե՛ս ի *գիշերի*: - 294. Իններորդ՝ ի ձիթենեաց լեառն *զգիշերս* ագանելով և աղօթելով օրհնեաց: - 320. Եւ որպէս նա՛ ի մէջ *գիշերի* էհան զժողովուրդն: - 330. Եւ տէրն ի մէջ *գիշերի* յարեաւ և ազատեաց զարգելեալսն ի բանտէն: - 330. Եւ ի մէջ *գիշերին* յորում ըմբռնեցաւ, էհար զանդրանիկս դիւաց: - 337. Եւ յերեկոյ շաբաթուն պատառեցաւ ծովն. և ի *գիշերի* կիրակէին անցին ընդ ծովն. և ընկղմեցաւ փարաւոն: - 337. Յորում աւուր կիրակէին ի մէջ *գիշերի* ընդ առաւօտս յարեաւ տէր ի գերեզմանէն, ազատելով զհոգիսն ի դժոխոց: - 337. Եւ ի *գիշերն* լոյս տայր նորա, և պահէր ի վնասէ՛ լուսնոյն և առաջնորդէ՛ր: - 338. Նմանապէս և հոգին սուրբ ի *գիշեր* կենցաղոյս լուսով աւետարանին առաջնորդէ՛ մինչև հասուցանէ յայգն հանդերձեալ աւուր ի ցօղաւոր ամպն որ է՛ բանն մարմնացեալ. որ է հովանի և հանգիստ ամենայն սրբոց: - 338. Երեմիա և աշակերտն՝ տարան ի *գիշերի* զտապանակն և որ առ նմայն էին՝ ի լեառն սինա. և անդ կնքեցին ի վիմին անուամբն աստուծոյ ասելով, ո՛չ ոք բացցէ զսա՞ թէ ոչ մովսէս որ եբերն. և ո՛չ ոք բացցէ՝ թէ ոչ ահարօն: - 345. Ի տուէ ամպով ծածկեալ լինէր և ի *գիշերի* լուսով: - 345. Կարկեհան՝ որ կայծ կոչի. հրագո՛յն է. գտանի յափրիկէ. ի *գիշերի* որպէս հուր վառի: - 348. Վեցերորդ՝ զի իմանալի ունի լոյս՝ ցուցանէ՛ զգալի լոյսն. զի ի *գիշերի* ելեալ ի խորանէն հալածէր զխաւարն և լուսաւորէր զանապան: - 352. Երրորդ՝ զի աւետարանիչքն յայտնապէս ասեն թէ՝ ընդ մկրտիլ տեառն՝ նոյն ժամայն հոգին հանէ՛ զնա յանապատ. և պահեաց **զխ** տիւ և **զխ** *գիշեր*: - 373. Իսկ այլք ի **դ** բաժանեն ըստ չորից տարերաց և **դ** պահու *գիշերոյն*. որպէս ասացաւ ի վերն **ժզ** գլուխն **իգ** համարն: - 378. Երկրորդ՝ զի եօթնիցս եղև արժանի տեսլեան Երրորդութեանն. կրկին անգամ զհայր ի *գիշերի*. և կրկին զորդին ի տիւն. և հոգի աստուծոյ ի վերայ նորա երկիցս անգամ. և մի անգամ զհրեշտակն ետես: - 387. Եւ երազահանն, որ ի *գիշերի* տեսանէ զդևս և մարգարէութիւն պատմէ զի պատրեսցէ: - 388. Ութերորդ՝ մովսէս ի լեառն եկաց **խ** տիւ և **խ** *գիշեր* անսուաղ. և կերակրիւր բանիւն աստուծոյ. նոյնպէս և եղիա. նաև տէր մեր ի փորձութեան լերինն: - 397. Եւ վասն աւուրն ասաց՝ տիւ. և *գիշեր* զխաւարումն. և

ընդ երեկս լոյս դարձեալ: - 405. *Գիշերի* սատակեցան զօրքն ռափսակայ. և վասն յովսիայ զի հարաւ և մեռաւ: - 413. Հնգետասաներորդ՝ յեսու ներեաց աքարայ զտիւն և *զգիշերն* մինչ լուսով առաւօտին վիճակաւ յանդիմանեցաւ: - 418. Եւ տէրն մեր ներէ՛ մեղաւորաց աստ ի կեանս և յետ մահու *գիշերի*. և ի ծագել լուսոյ յարութեանն՝ ստուգութեամբ դատապարտէ՛: - 418. Քսաներորդ, սամփսոն ի մէջ *գիշերի* զփակեալ դուռսն կորզեաց և էհան ի լեառն: - 423. Եւ տէրն ի մէջ *գիշերի* զդրունս և զնիգս դժոխոց խորտակեալ յարեաւ ի գերեզմանէն. և զհոգիս մարդկան էհան յերկինս: - 423. Երկրորդ՝ զի անարժան էր ի *գիշերին*: - 431. Երեսուններ, *գիշերի* ընդ պատուհանն եղ, թողեալ զպատանսն յանկողնի. և տէրն ի *գիշերի* յարուցեալ եթող զկտաւն ի գերեզմանին կնքեալ: - 436-437. Վասն է՞ր ի *գիշերի* սատակեցան զօրքն ռափսակայ: - 446. Եւ դարձեալ ի տիպ քրիստոսի որ ի *գիշերի* եհար զսատանայ և ազատեաց զհոգիսն ի դժոխոցն: - 446. Յորո՞ւմ ժամու յարեաւ ի մէջ *գիշերի* ի վկայութեամբ: - 455. Երեք տիւ և երեք *գիշեր*: - 455. Իններորդ՝ զի և նոքա իսկ որ զայս ասեն՝ առնեն յունվարի զ ճրագալոյց ընդ մեզ. և ճրագալոյցն ո՛չ է մկրտութեան, այլ ծննդեան ի մէջ *գիշերի*: - 484. Եւ ոմանք ասեն թէ՝ յերկնաւոր դրախտն եմուտ հոգւովն մինչ ի կիրակէ մէջ *գիշերին*. և ի նոյն ժամն էջ ի դժոխս և ազատեալ զհոգիսն յարեաւ ի գերեզմանէն: - 495. Այլ յարութիւնն քրիստոսի յաւուր միաշաբաթու ի մէջ *գիշերի* է: - 508. Եւ բնական աւուր սկիզբն է ծագումն լուսոյն. և շնորհականին ի մէջ *գիշերն*: - 508. Եւ որ ոք ո՛չ խոստովանի զքրիստոս աստուած, զտօն նորա ըստ հասարակ մարտիրոսացն առնէ ի մէջ *գիշերոյն* ի վեր: - 509. Այլ որք ուղղաձևութեան են աշակերտք՝ ի մէջ *գիշերի* ասեն զժամ յարութեանն քրիստոսի ի գերեզմանէն. որոց հետևիմք և մեք և հաստատեմք բազում վկայութեամբ և օրինակաւ: - 512. Նա՛խ՝ զի մատթէոս զերեկոյի շաբաթուն և զլուսանալ միաշաբաթին յիշէ. այսինքն զսկիզբն և զվախճան *գիշերին*. զի յերկուց մէջն որ է՛ հասարակն և մէջ *գիշերին* նշանակեսցէ զժամ յարութեանն: - 512. ...սովո՛ր էր յայլ աւուրս ընդ առաւօտն կալ յաղօթս, և կիրակէն ի մէջ *գիշերի*: - 512. Երրորդ՝ ի մէջ *գիշերի* ծնաւ ի կուսական արգանդէն որպէս յա՛յտ է ի հովւացն և հրեշտակացն: - 512. Եւ ի նոյն ժամն ի մէջ *գիշերի* ծնաւ ի կոյս գերեզմանէն: - 512. Չորրորդ՝ ի մէջ *գիշերի* ըմբռնեցաւ և կապեցաւ ի մահ. և ի մէջ *գիշերի* յարեաւ և արձակեցաւ ի մահու: - 512. Ա՛րդ՝ յարութիւնն մեր է՛ ի վերջնումն կիրակէն ի մէջ *գիշերի*...: - 512. Ապա ուրեմն յարութիւնն քրիստոսի է՛ ի մէջ *գիշերի* յաւուր կիրակէի որպէս ասացաւ: - 512. Վեցերորդ՝ ի մէջ *գիշերի* հրեշտակն եհար զեգիպտոս. և մովսէս եհան զորդիսն իսրայէլի. որ էր օրինակ աւերման դժոխոցն և ազատութեան հոգւոց: - 512. Նոյնպէս և քրիստոս ի մէջ *գիշերի* եհար զսատանայ և կապեաց: - 512. Նոյնպէս ըստ օրինակին արար տէր մեր զատիկն յերեկոյի մեծի ե շաբաթին. և ի մէջ *գիշերին* յորում ըմբռնեցաւ՝ եհար զանդրանիկսն դիւաց: - 513. Եւ յերեկոյի շաբաթուն պատառեցաւ ծովն, և ի *գիշերի* կիրակէի անցին ընդ ծովն և ընկղմեցաւ փարաւոն: - 513. Յորում աւուր կիրակէի ի մէջ *գիշերի* ընդ առաւօտն յարեաւ տէրն ի գերեզմանէն. հանելով զհոգիսն յանապատն երկնից. և խաչանիշ գաւազանաւն ընկղմեցաւ փարաւօն յանդունդս դժոխոց: - 513. Եւ ի մէջ *գիշերի* զարթեաւ և զդրունս փակեալ նգօքն և սեմօք եհան յուսն և եղ ի լեառն: - 513. Որ նշանակէ՛ զյարութիւնն քրիստոսի ի մէջ *գիշերի* զդրունս դժոխոցն խորտակեալ. և զհոգիսն հանեալ ի լեառն երկնային: - 513. Իններորդ, գեթէօն՝ այն որ զցօղն ետես ի վերայ գեղման, զհօր իւրոյ զեզն պարարակ հրամանաւ հրեշտակին ի մէջ *գիշերին* պատարագեալ. և զանտառն և զսեղանն բահաղու կործանեալ և զերծեալ ի ձեռաց նոցա. որ էր օրինակ փրկչին. զի նա՛ է եզն պարարակ պատարագեալ. և ի մէջ *գիշերի* զբագինսն դժոխոց կործանեալ և յարուցեալ և ապրեալ ի մահու: - 513. Որ և պահապանքն շրջապատեալ. որ և զհանդերձն պատատեալ յանկողնի, և լերդ այծեաց և մազ ի սնարսն. և ի *գիշերի* իջեալ ընդ պատուհանն և ելեալ առ սամուէլ զերծաւ ի ձեռաց նոցա: - 513. Յորում ի մէջ *գիշերի* թողեալ զկտաւսն ի գերեզմանի և յարեաւ ել առ հայր ի յերկինս: - 513. Եւ ի *գիշերին* էհատ դաւիթ զդրօշակն սաւուղի. և յառաւօտուն աղաղակեաց առ նա: - 513. Եւ տէրն ի *գիշերի* ելեալ ի գերեզմանէն բաժանեաց և էառ զհոգիս մարդկան ի նմանէ. և արար իւր հանդերձ զսուրբ ժողովուրդ իւր: - 513-514. Ապա ուրեմն ի *գիշերի* յարեաւ և յառաւօտուն երևեցաւ: - 514. ...և դաւիթ մտեալ և առեալ զսուրն ի սնարից նորա. և ելեալ ի *գիշերի* ի լեառն աղաղակեաց առ նա «ո՞ւր է սուր քո»: – 514. Եւ յարուցեալ ի *գիշերի* ել ի լեառն երկնային. աղաղակեաց ասելով «ո՞ւր է մա՛հ յաղթութիւն քո. ուր է դժոխք խայթոց քո»: – 514. Ապա ուրեմն ի *գիշերի* է յարութիւնն քրիստոսի: - 514. Երեքտասաներորդ՝ ամաղեկացիք գերեցին զկողմն հրէաստանի և զայլազգիս. և դաւիթ զհետ մտեալ յետ գ աւուր և հարեալ ի *գիշերի* և ի վաղիւն մինչ յերեկոյ. և դարձուցեալ զերկոսին կանայս իւր. և ո՛չ մնաց գերի և ո՛չ մի. և յաւարէ աստի բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց: - 514. ...և տէր մեր յետ յերից օրինաց՝ այսինքն բնական բանական և գրաւական՝ երևեալ ի *գիշեր* կենցաղոյս և իջեալ ի դժոխս

մարդացեալ կամ զէութիւնն տըւեալ և ի *գիտութեննէն* զրկեալ որ է սուտ: - 98. Իսկ թէ աստուծոյ բան է և անանց, ո՛չ ուրեմն է տգէտ կամ նըւազ *գիտութեամբ*: - 98. Ա՛րդ՝ տգէտն ո՛չ ունի զբոլոր զամենայն իմաստութիւն և *զգիտութիւնն* գանձեալ: - 98. Իսկ գանձն և աղբիւրն իմաստութեան երկնի և երկրի՝ ո՛րպէս լինի կարօտ *գիտութեան* կամ ստացեալ յայլմէ: - 98. Ա՛րդ՝ եթէ՝ ի յարութեանն հասարակ արդարք տեսանեն զաստուած դէմ յանդիման որպէս և է, և քրիստոս ո՛չ կարէ տեսանել, փո՛քր լինի *գիտութեամբ* քան զմարդ որ է սուտ: - 99. Առաւօտի՝ որ տեսանեն զբանն աստուած, և առնուն *գիտութիւն* ի նմանէ: - 99. Ա՛րդ՝ եթէ հրեշտակք տեսանեն զբանն աստուած՝ և առնուն *գիտութիւն* ի նմանէ, և մարդն քրիստոս ո՛չ տեսանէ որպէս ասես նեստո՛րդ, ապա քրիստոս փո՛քր է *գիտութեամբ* քան զհրեշտակս: - 99. Այլ դատաւորին պարտէ ունիլ անհուն *գիտութիւն*. զի քննել կարասցէ զամենայն բնութիւն հրեշտակաց և մարդկան. և զամենայն գործս եղեալս և զլինելոցն. զխորհուրդս և զբանս բոլորից. զառաջինն՝ զմիջինն՝ և վերջինն: - 100. Ապա ուրեմն հոգին քրիստոսի ունի անհուն *գիտութիւն*. զի ճանաչէ զանհուն գիտացեալս: - 100. Յայտ ուրեմն է, զի որ ի վեր է քան զէութիւն, ի վե՛ր է քան *զգիտութիւն*: - 103. Իսկ սուրբ *գիտութիւնն* ընդ դէմ այսմ լուսաւորէ՛ զմիտս և ուղղէ՛. և ընդարձակէ զտեսութիւնն և թեթեւացնէ առ վերինն. և ժողովէ ի մինն. և կատարէ զպատկերն: - 104. Երրորդ՝ թիւն ընդ *գիտութեամբ* մեր է. իսկ աստուած ընդ *գիտութեամբ* մեր ո՛չ պարունակի որպէս ասացաք. ապա ուրեմն ի վեր է քան զմի և զմիակ: - 110. Դարձեալ՝ անեղ է բնութեամբ աստուած. և անեղ *գիտութեամբ*: - 113. Եւ զի անեղ է *գիտութեամբ*, վասն որոյ անփոփոխ է: - 113. Այլ արդ՝ անեղն *գիտութեամբ* և անփոփոխն՝ գիտէ զեղականքս և զփոփոխելիքս: - 113. Վասն որոյ ընդ կորուստ այսպիսի մասանց՝ և *գիտութիւն* մտաց մեր կորնչի: - 117. Եւ այս ամենայն ընդդէմ է տեսութեան մեր. զի մեք մասամբ տեսանեմք. և մի զկնի միոյ. և առաւել և պակաս *գիտութեամբ*. և ըստ իրին փոփոխմամբ: - 118. Սակայն՝ զի թէ էն ըստ որում է աստուած՝ կրկին կերպիւ տեսանի. այսինքն *գիտութեամբ* և անգիտութեամբ. դնելով և բացաբառնալով այսպէս: - 119. Եւ զեղեալքս ի յաստուած տեսանելով նոր լինի *գիտութիւն* արարածոց՝ որ է՛ երեկոյի: - 119. Իսկ շնորհականն է ընդդէմ այսոցիկ. զի պարզ և միեղէն իմացմամբ բարձրանայ յաստուածային *գիտութիւնն*. և այնպէս ի զարմացման լինի տեսութեամբ նորին: - 120. Որպէս *գիտութիւնն* միաւորէ զգիտացօղն և զգիտելին: - 121. Եօթներորդ՝ սկիզբն և վախճան *գիտութեամբն* ասի. զի զսկիզբն էից և զկատարածն ի ներքոյ իւր ամենահաս *գիտութեանն* բովանդակեալ ունի: - 129-130. Որպէս յորժամ ասեմք՝ լո՛յս կեանք՝ և այլն, արտաքո՛յ մնամք *գիտութեանն*. և յորժամ անժամանակ՝ անիմանալի, առաւել մերձենամք: - 132. Եօթներորդ ի մեզ, մարդն բանն. առիւծն ցասումն. եզն ցանկութիւնն. արծըւին *գիտութիւն* բարձրաթռիչ զվերինն խորհիլ միշտ: - 133. Եւ քերօբէն որ է՛ բազում *գիտութիւն* ի դէմս որդւոյ. զի նա՛ է իմաստութիւն և գիտութիւն հօր ըստ առաքելոյն: - 135. Եւ քերօբէն որ է՛ բազում գիտութիւն՝ ի դէմս որդւոյ. զի նա՛ է իմաստութիւն և *գիտութիւն* հօր ըստ առաքելոյն: - 135. Երկրորդ՝ զի առաջինքն առանց տարակուսութեան առնուն *զգիտութիւն*. և այլքն նախ տարակուսին և ապա առնուն. զի այն որ առաջին դասն նախ էառ՝ տարակո՛յս է նոցա՝ մինչև ինքեանք ևս առցեն: - 138. Երրորդ՝ զի առաջինքն առաւել լուսաւորին *գիտութեամբ*, և այլքն ըստ չափու: - 138. Դարձեալ՝ առ հրեշտակս մի և նոյն իմացումն աստուածային՝ է՛ սրբութիւն՝ լուսաւորութիւն՝ և կատարումն նոցա. զի աստուածային *գիտութիւնն* սրբէ յառաջին տգիտութենէն և լուսաւորէ՛ զնոսա, և կատարին նոյն հանճարովն: - 139. Զորօրինակ *գիտութիւն* մարդկան ի սկիզբն և ի մէջն և յեզերն՝ նախ զտգիտութիւն փարատէ՛, և ապա՛ զմիտս լուսաւորէ՛ և կատարէ: - 139. Այլ ինքեանց վերին էութեանցն գիտելի է թիւ նոցա՝ շնորհեալ յամէնիմաստ *գիտութենէն:* - 141. Իսկ գնդակ որ է կողմնաւոր՝ շարժի հոգին, յորժամ բնականապէս լուսափայլի յաստուածային *գիտութիւնս* տեսութեամբ և մտածութեամբ. և այնպէս հոգէպէս ի յաստուած միաւորի. որպէս աշակերտաց առաքելոց և մարգարէից: - 142. Վասն որոյ գրով և բանիւ՝ այսինքն ընթերցմամբ և լսելով ժողովեմք *զգիտութիւն*: - 143. Յոգնորն այն է՝ զի անկաւ անձնիշխան կամօք ի բարւոյն ի չարն, ի լուսոյն ի խաւարն, ի *գիտութենէն* յանգիտութիւն, յանմեղութենէն ի մեղս, յերանութենէն ի թշուառութիւն, ի սիրոյն յատելութիւն: - 146. Զի՞նչ էր պտուղն ադամայ, և *գիտութիւն* բարւոյ և չարի: - 155. Վեցերորդ՝ մարդս կարօ՛տ է ուսմանց և իմաստից. իսկ աստուած անկարօ՛տ է ուսման և իմաստութեան. զի ինքն է աղբիւր *գիտութեան* և իմաստութեան: - 156. Այսպէս և գործ նախախնամութեան. զի կամի՛ զի ամենայն մարդիկ կեցցեն և ի *գիտութիւն* ճշմարտութեան եկեսցեն: - 157. Դարձեալ ասեմք թէ ո՛չ միապէս է մեղքն նախ քան զշնորհքն և յետ շնորհացն. զի առաջինն անգիտութեամբ էր, և վերջինն *գիտութեամբ*. և առաջինն հաւատովք սրբի, և վերջինս ապաշխարութեամբ և սրբութեամբ: - 166. Չորրորդ՝ զի պատահումն է՛ փոփոխական իր. իսկ աստուած անփոփոխ է էութեամբ զօրութեամբ կամօք և *գիտութեամբ*...: – 170. Այսինքն կամօք է՝ զի *գիտութիւնն* և կամքն առաջնորդէ՛

գործոյն և հնարաւոր է՛ առնել զայս՝ և առնել զայն, զոր և կամեսցի. որպէս մարդ զի տէր է գործոյ իւրոյ՝ առնելոյ և ոչ առնելոյ: - 173. Չորրորդ՝ զի ծնանիմք ի բարի կամացն աստուծոյ յառաջ *գիտութեամբ* նորին. և ապա գոյանամք արդեամբ և գոյացութեամբ ըստ իւրաքանչիւր տեսակաց: - 179. Նոյնպէս և հոգին նախ ի յինքենէ անտեսակ և անկատա՛ր է. և յետոյ կատարի յաստուծոյ շնորհօք և առաքինութեամբ և *գիտութեամբ*: - 192. Նոյնպէս և նշանակէ՛ զիրեշտակաց բնութիւնն, որ նախ ստեղծան անկատար ճանաչմամբ և *գիտութեամբ*. այլ յորժամ երանեցան և տեսին զէութիւնն աստուծոյ անընդմիջաբար, յայնժամ կատարեցան ճանաչմամբ և *գիտութեամբ*: - 192. Նշանակեն զնոսա՝ որք ունին զպտուղս բարի գործոց. և զծաղիկն հաւատոյ. և զհոտ *գիտութեան*՝ ամենայն մարդկան անոյշ: - 212. Չորրորդ՝ զի զտգիտութիւն իւր լուասցէ, և ապա՛ *զգիտութիւն* ուսցի: - 218. Եւ ծառ *գիտութեանն* զպատրւակեալ բարիս մարմնական: - 222. Զի՞նչ էր պտուղն *գիտութեան* բարւոյ և չարի: - 223. Նոյնպէս և նա *գիտութեան* էր պատճառ բարւոյ և չարի որպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին: - 223. Դարձեալ ասեն ոմանք, նախ քան զուտելն ի պտղոյն՝ գիտէր ադամ զբարին փորձիւ, և զչարն *գիտութեամբ*. իսկ յորժամ եկեր՝ գիտաց զչարն փորձիւ, և զբարին *գիտութեամբ*. այն է *գիտութիւն* բարւոյ և չարի: - 223. Եւ *գիտութեան* փայտն՝ զյատուկ կերակուրն կատարեալ արանց: - 223-224. Այլ ա՛յս է ճշմարիտն. որ մինն ծառ էր կենաց՝ և մինն *գիտութեան*. և ի դրախտին այլ ո՛չ գոյր նման նմա. թո՛ղ թէ յերկիրս. ո՞րպէս ասեմք թէ այս է՝ կամ այն: - 224. Ութերորդ՝ վասն արտաքին զգայութեանցն որ են ի գլուխն. զի այլ կենդանիք միայն հեշտանան կերակրով և ցանկութեամբ. իսկ մարդն հեշտանայ առաւել գեղեցկութեամբ զգալեացս. յորժամ տեսանէ աչօքն զերկին և զերկիր. և ժողովէ՛ զճշմարիտ *գիտութիւն* նոցա և հեշտանայ: - 233. Զի թէ կորագլուխ էր որպէս այլ կենդանիքն, խափա՛ն լինէր զգայութեանցն և պակասումն *գիտութեան*: - 233. Ասեմք թէ՝ նոյն է պատասխանին. զի պատահումն առ մե՛զ հանդիպի. այլ առ աստուած ոչ ինչ է պատահմամբ. այլ ամենայն ինչ *գիտութեամբ*. զի ո՛չ տերև մի ի ծառոյ անկանի առանց *գիտութեանն* աստուծոյ: - 237. Եւ ի նմանէ են արուեստք և *գիտութիւնք* սկզբնաւորեալք...: - 237. Զի՞նչ է հանճարն՝ իմաստութիւն՝ և *գիտութիւն*: - 270. Իսկ *գիտութիւն* է ստացականն: - 270. Դարձեալ՝ հանճարն է ի բնականականն. *գիտութիւնն* յուսումնականն. և իմաստութիւնն յաստուածաբանականն: - 270. Դարձեալ՝ հանճարն է ի յարհեստն. իմաստութիւնն ի բանն. և *գիտութիւնն* առ երկոքինն. այսինքն ի յարհեստն և ի բանն: - 270. Դարձեալ՝ հանճարն է հանդերձելոյն. իմաստն ներկային. *գիտութիւնն* անցեալ ժամանակին: - 270. Դարձեալ՝ հանճարն է տրամախոհութեանն. զի կարծիք է կապեալ ընդ ուղիղ խորհրդոյ. իմաստութիւնն իմացմանն. *գիտութիւնն* յիշողութեանն: - 270. Դարձեալ՝ հանճարն է ի գիրս արտաքին. իմաստութիւնն ի սուրբ գիրս. *գիտութիւնն* ի մեկնութիւն նոցին: - 270. Դարձեալ՝ հանճարն է ի սկիզբն. իմաստութիւնն ի մէջն. *գիտութիւնն* ի կատարումն: - 270. Դարձեալ՝ իմաստութիւնն է բանին. զի նորա՛ է իմանալն. *գիտութիւնն* ցասմանն. զի նորա է ընտրելն. և հանճարն ցանկութեանն. զի նորա է յանճարն տռփիլ: - 270. Դարձեալ ըստ այսմ կարգ ի իմաստութիւն է հաւատն. *գիտութիւն* յոյսն. հանճար սէրն: - 270. Դարձեալ՝ իմաստութիւնն պատշաճի հօր ըստ կարողութեան. և *գիտութիւնն* որդոյ իբր բան. և հանճարն հոգւոյն բղխման: - 270. Իններորդ՝ անշարժ նոյնութեամբ իւրով զամենայն քննէ և իմանայ. այսպէս և միտք առ մարդն գոլով *զգիտութիւն* էիցս քննէ: - 271. Հինգերորդ՝ *գիտութիւն*: - 279. Դարձեալ՝ *գիտութիւն* կատարածի խափանէ՛ զվարձս հաւատոյ. զի վարձքն ի հաւա՛տն է և ո՛չ ի *գիտութիւնն*. վասն այն հաւատով ակն ունիմք կատարածի և ո՛չ *գիտութեամբ*: - 292. Դարձեալ՝ բնականապէս ըմբռնէ *գիտութիւնն* զայն զոր ներգործէ բնութիւնն. իսկ գործն աստուածային՝ *գիտութեամբ* ո՛չ ըմբռնի. այլ հաւատո՛վք իմանի: - 292. Զորս հրեշտակս կոչէ ո՛չ վասն առաքինութեան, այլ զի պատգամաբերք և թարգմանք եղեն աստուծոյ իմաստութեանն առ մեզ ի ձեռն լեզուաց *գիտութեանն*: - 297. Վեցերորդ՝ խօսեցաւ աստուած՝ և զամենայն անճառելի *գիտութիւնս* վասն արարածոց ուսոյց նմա. զոր ոչ գիտէին մարդիկ զլինելութիւն երկնի և երկրի և ծովու և կենդանեաց: - 326. Նոյնպէս և բարձրացեալ են *գիտութեամբ* առաւել քան զմարդիկք, և պակաս քան զաստուծոյ: - 344. Երկոտասաներորդ, լուսաւորեցաւ՝ զի քող արկցէ երեսացն. որ օրինակէ՛ զհին կտակարանս. որ քօ՛ղ է արկեալ և առագաստ մտաց նոցա. մինչև դարձցին առ տէր հոգիքն որպէս զմովսէս. և ապա վերասցի քողն և յայտնեսցի լոյս *գիտութեան* նոցա: - 352. Եւ որք զմինն ունին, որպէս *գիտութիւն* առանց գործոց, և գործս առանց հաւատոց, անսուրբք են: - 364. Եւ պակասն ի *գիտութեանց* բանին, և կնատքն և բղջախոհքն ո՛չ կարգին զհնուորք աստուծոյ: - 377. Նա՛խ՝ որ ստոյգ չարութեամբ լինի մեղքն. այսինքն կամաւ և *գիտութեամբ* և կարողութեամբ, անթողելի՛ է: - 385. Զի ասեն եթէ՝ **խ** օր էր պայմանն ադամայ. յետ **խ** աւուր ուտէր ասեն՝ ի փայտէն *գիտութեան* և սրբութեամբ որդիս ծնանէր. և ապա՛ ուտէր ի կենաց փայտէն և վերափոխեր. և այլ բազում բանս տողե՛ն: - 391. Չորրորդ՝

ծածո՛ւկ են աստուածայինքն ամենայն. այլ յայտնի արարածոցս *գիտութիւն*: - 406. Քսանեզ, ետ զանձս և ընկալաւ զիմաստս և զաստուած *գիտութիւն:* - 441. Երրորդ՝ և նորա *գիտութիւնն* անցանելի էր. և քրիստոսին անանց: - 442. Վեցերորդ՝ *գիտութիւն* սուրբ գրոց: - 444. Իններորդ՝ զի ո՛չ մարգարէիւ յայտնեաց կուսին. որ էր աղօտ *գիտութիւն* համեմատեալ ընդ հրեշտակին: - 464. Այլ ի ձեռն հրեշտակապետին վկայեալ և աւետեալ զիաւատարիմս ի *գիտութիւն*: - 464. Երկրորդ՝ զի այն քան բազմութիւնք հաւատացելոց կորնչելո՛ց էին, որ ո՛չ վայելէր ամէնիմաստ *գիտութեանն* աստուծոյ: - 467. Զի մարդն ցանկացաւ *գիտութեանն* աստուծոյ որ է յատուկ որդւոյ՝ և անկաւ. նոյնպէս նովին *գիտութեամբն* պարտ էր և կանգնիլ: - 468. եթէ քրիստոս յարեաւ ի մէջ գիշերի. զի այց արասցէ մարդկան ազգի. և զանկեալքս ի խաւարի և ի ստուերս մահու՝ ի լոյս *գիտութեան* և շնորհաց յարուցէ: - 514. Արդ մի՛ մերձենար դու յիս անկատար գոլով. որպէս մայր քո եւա ի ծառն *գիտութեան.* յորժամ առ բնութեամբ իմ հայր՝ և ձեր ըստ շնորհի՝ և աստուած մարմնոյս իմոյ ես ելանիցեմ, որոտմամբ իջեալ հոգին զձեզ կատարէ՛. արժանաւորիք յայնժամ առ իս մերձենալ: - 518. **Վասն առաջնոյն գիտելի է, զի դիւրին է զգազանս ընտելացնել, քան զտգէտ անձն ի *գիտութիւն* ածել**: - 531. Իսկ հինգերորդ մարգարէութիւն է հոգևոր և աստուածային *գիտութեամբ*. զոր յայտնութեամբ սուրբ հոգւոյն ուսեալք խօսին առ ի զգուշութիւն մարդկան ի հոգևոր շինուածս: - 536. Դարձեալ՝ **դ** են կարգ *գիտութեան*: - 537. Հինգերորդ՝ զի մեղքն զանազանի ի կամայն և յականայն. ի *գիտութեան* և յանգիտութեան: - 556. Նա՛խ՝ զի որ կամաւ և *գիտութեամբ* մեղանչէ, առաւել է քան զակամայն և զտգիտութեան. զի թէպէտ և սոքա մեղք են, այլ պատիժն նւազ. որպէս անասնոյն քան զմարդոյն: - 563. Երկրորդ ի միտ առ, զի որ առաւել *գիտութեամբ* և կամօք մեղանչէ, առաւել պատժի քան զայն որ նուազ *գիտութիւն* ունի և կամք. – 563. Իսկ դառն մահն է՛ մահու չափն. որ *գիտութեամբ* մեղանչէ. այս է դառն մահն յաւիտենից: - 564. Ո՞րն է *գիտութեամբ* մեղանչելն: - 564. Երրորդ՝ ի յաստուած *գիտութիւնն*. որ եկեալ իցէ ի հաւատս ճշմարիտս. և գիտէ զքրիստոս աստուած ճշմարիտ. թողու և գործէ՛ զմեղս կամ զիաւատն: - 564. Ա՛րդ՝ **դ** են *գիտութեամբ* մեղանչելն...: – 564. Այլ և որա՛կ է կամաւն և ականայն. *գիտութեամբն* և անգիտութեամբ. կարողութեամբ և տկարութեամբ. և այլն: - 565. Եւ թէ հաւատն առաւել է քան *զգիտութիւն*, ցուցաւ ի վերոյ յաստուածաբանութիւնն դիոնիսեայ ի **ժէ** համարն տես: - 573. Իսկ որք ելեալք են ի մարմնոյ, յոյս նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ *գիտութեան*. զի ստուգապէս գիտեն զլինելոց հատուցումն: - 574. Եւ ասացեալ է վասն հանճարոյ և *գիտութեան* ի վերոյ. ի ե հատորն ի **իէ** համարն: - 580. Հինգերորդ *գիտութիւն*: - 582. *Գիտութիւն* է ճանաչումն այն իրացն որում հաւատայն: - 582. *Գիտութեամբն* ընտրօղք: - 583. Վեցերորդ, ընդ հրեշտակաց զնոր իմաստ և զնոր *գիտութիւն* առնուն: - 586. Կարգն է՛ ի խորհուրդ խոհեմութեան և *գիտութեան*. զի իմաստութեամբ և *գիտութեամբ* սպասաւորեսցէ խորհրդոցն և խրատեալ ուսուսցէ զժողովուրդն: - 587. Կարգն ընդ դէմ *գիտութեան*: - 588. Նախ ըստ իմացման՝ տգիտութիւն և *գիտութիւն:* - 663. Այլ ըստ իմացման առաւելուն ի *գիտութիւն*. և այն ո՛չ է նոցա փոփոխումն, այլ աճումն իմաստութեամբ: - 663. Դարձեալ՝ *գիտութեամբ* և կամօք գործեցաք զմեղս...: - 680. և յետ մահու յոյս նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ *գիտութեանն*. և կամ տեսութեանն. - 696. Առ երկրորդն ասեմք թէ՝ ի տեսիլն ո՛չ զիատուցումն ասէ, այլ զյայտնութիւն *գիտութեանն*. - 697. Ասեմք նախ՝ եթէ **գ** են մեղք. այսինքն անգիտութեամբն և *գիտութեամբն* և չարութեամբ: - 701. Եւ արդ՝ անգիտութեամբն ներելի՛ է. իսկ *գիտութեամբն* ապաշխարելի. իսկ չարութեամբ մեղքն է պատժելի. կամ աստ ժամանակեայ, կամ անդ յաւիտենական: - 701. Հինգերորդ, ըստ համարոյ իդ տառիցն որովք իմաստնացան և ի *գիտութիւն* ճշմարտութեան հասին: - 711-712. Առաջին պակասութիւն է հոգւոյն իմացականին խաւարն և տգիտութիւնն. իսկ ի յարութեանն բառնի այս ի հոգւոյն և լինի լոյս պայծառ՝ և *գիտութիւն* աստուածային տեսութեանն. - 722. Չորրորդ՝ գալարիլ երկնից զգալուստն քրիստոսի նշանակէ. զի գիրք ա՛յնր *գիտութեանն* բանին: - 729. Եւ զոր օրինակ փայտն *գիտութեան* պատճառ մահու եղև. պատասխանեալ դեղն ցաւոց: - 734. Վեցերորդ, քրիստոս է՛ իմաստութիւն և *գիտութիւն* հօր. և գիտէ զարժանաւորութիւն իւրաքանչիւր ումեք...: - 735. ...զի ի նմա՛ է ծածկեալ ամենայն գանձք իմաստութեան և *գիտութեանն* աստուծոյ. վասն որոյ իմաստութիւնն քննէ և դատէ: - 735. Իսկ ըստ որակացն, կամայի և ականայի. *գիտութեան* և անգիտութեան և այլն: - 746. ...զի որպէս ի հնձանի ամբարեալ է ի *գիտութիւնն* աստուծոյ՝ մեղաւորացն պատիժ. որ հեղու ի վերայ նոցա...: - 748. Երրորդ՝ տիւ ասի պայծառ լուսոյն *գիտութեան* հասումն. և գիշեր ծածուկ խորոցն աստուծոյ անգիտութիւն անիասիցն: - 750. Ունելով տերև *զգիտութիւն* սուրբ գրոց. և զճաղիկ հաւատոյ՝ և զպտուղ բարեաց գործոց: - 765. Եւ տերև *գիտութիւն* հոգւոյն. և ծաղիկ ծագումն բանին. և պտուղ արդեանցն հօր: - 765. Իսկ առաւօտ և երեկոյ այս է. զի տեսեալ ի բանն

աստուծոյ բարձրագոյն և աստուածային իմաստ՝ առաւօտեա՛ն է ճանաչումն. իսկ ի նոյն բանն տեսեալ *զգիտութիւն* արարածոց՝ երեկոյեան ճանաչումն է համարեալ: - 767. Որ փոխանակ մահացու փայտին *գիտութեան* զյաւիտենից կեանքն մեզ պարգևեաց. ըստ սողոմոնի «փայտ կենաց է ամենեցուն, որ պատսպարին ի նա»: – 768. Այլ և տերև է մշտասաաղարթ *գիտութիւն* հաւատոյն. ծաղկեալ դաւանութեամբ և պտղաբերեալ գործով առաքինութեան: - 769. Այլ ի հասարակ գրոյս՝ հասարակեաց և նա զկեանս առօրեայ. հասեալ ի գանձ իմաստից և յաղբիւրն *գիտութեանց*: - 772. Զի յայսմ կենցաղոյս զուգաւորին յիշելն երբեմն և մոռանալ զներքոյս և զարտաքոյս. ըստ որում փոխանցապէս ունիմք զերից ժամանակաց *գիտութիւն*: - 774. ...իսկ Պարագայիւ, զի նա ակամայ և տգիտութեամբ. ուստի ո՛չ ունելով *զգիտութիւն* բարւոյ և չարի. իսկ նոքա կամաւ և *գիտութեամբ*: - 777. ...նոյնպէս ողորմութեան և արդարութեան է միշտ բարերարելն և պատժելն ըստ նախասահման *գիտութեան* նորին նախքան զլինիլն էիցս ըստ առաքելոյ: - 779. Իններորդ, հաւատով հնազանդի ոք օրինացն աստուծոյ. այլ դևն հակառակ կայ օրինացն և աստուծոյ. թէպէտ գիտէ զայն լինիլ ինքեան չար, այլ *գիտութեամբ* մեղանչէ: - 784. Յա՛յտ ուրեմն է յասացելոցս, զի դևք ո՛չ ունին հաւատս վարձաւոր. այլ ունին *գիտութիւն* նրբահայեաց որով սարսին յառաջ քան զտանջանս: - 784. Եւ է՛ նրբահայեաց *գիտութիւն* նոցա: - 784. Երկրորդ հմտութեամբ ժամանակին. որով իմանան զներկայս և զապառնիս և յառաջեն քան զգործս. որով աղաչէին, «գիտեմք զքեզ». ո՛չ հաւատոյն *գիտութեամբ*. այլ հմտութեամբ տանջանաց. որով սարսեին և ասէին «մի՛ տանջեր զմեզ»: - 784

**ԳԻՏՈՒՆ +** Եւ *գիտո՞ւն* էր որ կարէր ճանաչել զմահու չափ մեղքն և զներելին: - 601. Եւ գիտելի է, զի մարդ որ ի մեղք անկանի և իմանայ զինքն որ մեղք գործեաց, և ունի_զխոստովանահայրն պատրաստ ուղղափառ և *գիտուն*, ի յա՛յն պահն պարտի խոստովանիլ: - 601

**ԳԻՐ +** Ասեմք առ այս թէպէտ ունին զօրութիւնս, բայց այլ և այլ կերպիւ. զի բոյսք որք յերկրի են դարմանիչք և բժշկութիւնք մարմնոց. այլ երկնային աստեղքն են արարիչք լուսոյ և ժամանակաց. և ի նշանս ապագայից. զի յամենայն ուստեք տեսեալ պատրաստեսցին մարդիկք. որպէս ասէ *գիր*, եղիցին լուսատու լինիլ երկրի. ի ժամանակս և ի նշանս: - 12. Այլ կառավարի երբեք ի կամս նախախնամութեան առաջին պատճառին. որպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի *գիրս* որ յաղագս բնութեան մարդոյն: - 13. Ասեմք առ այս եթէ կրկին ունի դէմս *գիրն* դպրութեան կենաց: - 18. Ա՛յս է *գիր* ընտրելոցն: - 18. Եթէ ոք *գիր* ո՛չ գիտէ, և ո՛չ զվակյութիւն ընդունի սուրբ գրոց, որպէս ցուցանեմք նմա թէ է՛ աստուած: - 25. Դարձեալ ի *գիրս* հետրին գրեալ է թէ եղիա և աշակերտք նորա ասացին թէ՝ «աշխարհս յամէ վեց **ռ** ամ. յորոց **բռ** ամն ունիցի տոհու». այսինքն ունայնութիւն: - 28. Այսքան առ երկաբնակս, և երկրորդ մասն *գրոցս*: - 30. Այլ սոքա ինքեանց և բազմաց. այսինքն հօտին քրիստոսի. «յափշտակելով ի նմանէ և ինքեանց առնելով» ասէ սուրբն կիւրեղ. և յետոյ *գրով* աւանդեցին զչար աղանդն այլոց չար յիշատակ և ի կորուստ անձանց իւրեանց: - 33. Իսկ սոքա և զիրեշտակս ընդ մեզ դասեն. որպէս յայտ է ի *գիրս* պարապմանցն Կիւրեղի: - 34. Պատասխանեմք թէ՝ մի՛ պատառեր *զգիրս* աստուածաշունչ. տե՛ս և զմեկնութիւն բանիդ թէ՝ «որ առաքեացն զիս հայր՝ ընդ իս է»: - 39. Եւ գիտեմք հաւաստի թէ որդի էր. զի հրեշտա՛կ անուանէ զնա *գիրն*. և զի հայր երբէք հրեշտակ ո՛չ կոչեցաւ՝ այլ որդի ըստ եսայեայ մարգարէի, որ (հրեշտակ մեծի խորհրդոյ) կոչէ զորդի. որ եղև մեծ խորհրդոյս սպասաւոր. այսինքն փրկութեան մերոյ՝ մարդանալովն իւր: - 40. Զի **բ** թագաւորութիւն լուաք ի *գրոց*. **ա** ըստ արարչութեան, և **բ** ըստ տնտեսութեան: - 42. Եւ դարձեալ՝ զի այժմ ասէ զհայր ճշմարիտ աստուած, և զոր առաքեցեր, և-ն շաղկա՛պ է. ցուցանէ՛ շաղկապ *գրովն* և զիւր աստուածութիւնն ընդ հօր: - 47. Նախ՝ զի հովիւն ի դալար վայրի բնակեցուցանէ. այսինքն ի վայրենացեալ *գրոց* սրբոց գիտութիւնն: - 49. Որք և ո՛չ *զգիրս* գիտէին, վասն ճգնութեանցն աստուածուսոյցք եղեն: - 50. Իսկ այլք արարած վասն ո՛չ յայտնելոյ ի *գիրս* աստուած զիոգին: - 51. Եթէ զաստուածային անձն և զնորին բնութիւնն ասէք մի քրիստոս, դեռևս կայք յառաջ ասացեալ տարակուսանսդ. զի զաստուածային անձն և զբնութիւնն ասէք չարչարեալ և մեռեալ. զի քրիստոս խաչեցաւ և մեռաւ ըստ *գրոց*: - 89. Եւ այսպէս բազում է ի *գիրս* հարցմանցս վասն միաւորութեան բանին և մարմնոյն ընդ դէմ նեստորի և երկաբնականց. որ բաւական լուծումն է բանիս: - 95. Եւ կատարումն երկրորդ հատորի հարցմանց *գրոցս*: - 101. Այսքան առ երրորդ Յատոր *Գրոցս*: - 102. Նոյն է և *գիր* դպրութիւն կենաց. իբր անջնջելի դարձումն ի նախասահմանութիւնն: - 112. Նախ՝ զի նիւթեղէն միտք՝ միջնորդութեամբ նիւթո՛յ հասանէ յաննիւթն. որպէս տեսեալ *զգիր*՝ իմանամք զզօրութիւն նորա. և տեսեալ զորակ և զքանակ՝ իմանամք զգոյացութիւն իրին: - 131. Վասն է՞ր մարդս կարօտացաւ *գրոյ*: - 143. Վասն որոյ *գրով* և բանիւ՝ այսինքն ընթերցմամբ և լսելով ժողովեմք զգիտութիւն: - 143. Իսկ հրեշտակք զի ո՛չ ունին զգայարանք՝ ո՛չ կարօտին *գրոց* և բանից: - 143. Ապա յա՛յտ է՝ զի *գիրն* ներգործակա՛ն է

իմացութեանցն որ ըստ ինքեանն զոր ի վերոյ ասացաք: - 143. Իսկ որ գերակատար իմացումն է և ըստ բնականին տեսութիւն՝ անկարօ՛տ է *գրոց* և սիղոբայից: - 143. Իսկ նիւսացին գրիգոր ի բնութեան *գիրս*՝ ի վերջին դասուց հրեշտակացն ասէ անկեալ: - 150. Երեքտասաներորդ) Վասն *գրոյ* և իմաստից. և մեկնութիւն այբին: - 154. Իսկ առ աստուած անջնջելի՛ է *գիր* նախատեսութեաննն: - 164. Վասն էր՞ աստուած *գրով* խօսի ընդ մեզ որպէս մովսէսի և այլոցն: - 177. Զայս և սովո՛ր են առնել մարդիկք առ մերձաւորս և սիրելիս անընդմիջաբար խօսին. և առ հեռաւորս կամ ատելիս *գրով* կամ միջնորդով: - 177. Իսկ առ յանցաւորսն *գրով* խօսի: - 177. Չորրորդ՝ զի *գրովն* որ է մարմին՝ հասանիմք յանմարմին բանն: - 177. Հինգերորդ՝ զի յետոյ լինելոցն էր բանն աստուծոյ մարմին. որպէս *գիրն* ունի յինքեան զբանն. և խօսի ընդ մեզ: - 177. Գիտելի է, զի է դրամբ փակեալ է ծածուկ իմացումն *գրոց*: - 177. Առաջին՝ է *գիրն* որ է գծեալն: - 177. Երկրորդ՝ տառն որ է կոչումն *գրոյն*. որպէս ասեմք այբ: - 177. Նախ՝ զի է *գիր*: - 177. Եւ Նախ զի է *գիր*՝ ունի գովութիւն երեքկին: - 177. Առաջին՝ զի ամենայն *գիր* գործիք է բանի. և ունի իմաստութիւն և բան ծածկեալ յինքեան: - 177. Առհասարակ զսոսա ունի այբն ըստ այնմ որ է՛ *գիր*: - 177. Ապա ուրեմն ձայնաւոր *գիրն* է ձայն, և է տեսակ, և հոգի, և արու: - 177-178. Նախ՝ զի առաջին է և հայր և ծնօղ ամենայն *գրոց* ձայնաւորաց և բաղաձայնից: - 178. Նախ զի է ծնօղ և սկիզբն ամենայն *գրոյ* և իմաստութեան. որպէս հայր աստուած բոլորից: - 178. Վասն է՞ր առաջին *գիրքն* մովսէսի՝ Ծնունդ կոչի և Արարած: - 179. Եւ զայլ յերկար քննութիւն տարերաց՝ գտցես ի *գիրս* նիւսացւոյն որ վասն բնութեան մարդոյ: - 181. Ուստի պատճառի լինելութիւն էիցս միշտ և անխափան. որպէս ասի ի *գիրս* աշխարհաց: - 181. Եւ երկիրս անշարժ է տեղեաւ, ետ սմա ապականիլ երեսօք. զի տեսեալ մարդիկ եղական և ծառայ իմասցեն զնոսա. և մի աստուածս կարծեսցեն և մոլորեսցին. որպէս ասէ նիւսացին ի *գիրս* կազմութեան: - 182. Քսաներորդ՝ է՛ ի նշանս և ի ժամանակս և յաւուրս և ի տարիս որպէս ասէ *գիրն*: - 186. Վասն է՞ր ասէ *գիրն*՝ «եղև օր մի». և ո՛չ թէ՝ առաջին. և այլն ըստ կարգի: - 193. Որ ընդ դէմ է ըստ *գրոց*. և ուղղափառ հաց: - 225. Վեցերորդ՝ զի ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի *գիրս* կազմութեան եթէ առաջին կեանք դրախտին էր կուսութիւն և անապականութիւն և հրեշտակաց նմանութիւն. և յետ յարութեանն վերըստին դառնամք յառաջին կեանս դրախտին. յանապականութիւն և ի հրեշտակաց հաւասարութիւն: - 225-226. Ութերորդ՝ ո՛չ արար նախ զմարդն, զի մի՛ արարչակից գիտասցէ զինքն ոչ գոյիցն, և անկցի հպարտութեամբ. այլ գործօղ գոյիցն, զի կացցէ պահպանութեամբն. որպէս ասէ *գիր*՝ «գործել զնա՛ և պահել»: – 231. Եւ սոյնպէս մարդն առաւելու ի չարն. ի բանականէն և ի կամացն և ի թունիցն սատանայի չարացեալ որպէս ցուցաւ ի սկիզբն *գրոցս*: - 237-238. Այլ և ի սկիզբն *գրոցս* ցուցաւ յերեք համարն: - 252. Զոր ընդ դերևս հանէ սուրբն գրիգոր նիւսացին ի *գիրս* կազմութեան այսպէս եթէ, որք զհոգին յառաջ ասեն գոյանալ քան զմարմին. և վասն մեղաց եղեալ ի մարմին մարդոյ. որ է՛ համանման բանականութեամբ. և է՛ իներքոյ երկնային կենաց՝ զի մարմնաւո՛ր է: - 252. Իսկ բնական երազն բաժանի ի չորս ըստ սրբոյն նիւսացւոյ ի *գիրս* կազմութեան: - 268. Դարձեալ՝ հանճարն է ի *գիրս* արտաքին. իմաստութիւնն ի սուրբ գիրս. գիտութիւնն ի մեկնութիւն նոցին: - 270. Եւ այս ևս ո՛չ է ընդունելի. զի սոցա պատասխանի տայ սուրբն կիւրեղ ի *գիրս* պարապմանց թէ՝ որ ասաց զպատկերն, իմանամք զնմանութիւնն ի պատկերին որպէս ցուցաւ ի վերոյ. զի ամենայն պատկեր ի հարկէ նմա՛ն է: - 273. Եւ այլ ամենայն գովութիւն մարդոյն զոր դնէ նիւսացին ի *գիրս* բնութեան, յատկութիւն է մարդոյն: - 275. Բայց սուրբն գրիգոր նիւսացին **Ժ** աստիճան դնէ անկման մարդոյն ի դրախտէն ի *գիրս* կուսութեան: - 280. Եօթանասունն, *Գիր* ապահարզանի: - 285. Եւ թէ՝ քանի՞ ամաց պատմութիւն է **Ե** *գիրքն* մովսէսի: - 285. Զի՞նչ է որ ասէ *գիր*, «Հայեցաւ աստուած ի հաբէլ և ի պատարագս նորա»: - 286. Իսկ զփոխարէն պարգևսն զոր ընկալաւ, Վասն առաջնոյն՝ զի ասէ *գիր*, «հայեցաւ», այսինքն հաճեցաւ աստուած ի հաբէլ: - 286. Ուստի և զորդիսն նորա՝ որդիս աստուծոյ անուանէ *գիր*: - 288. Զի՞նչ էր յոյսն ենովսայ որ ասէ *գիրն*՝ «յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ»: – 288. Չորրորդ՝ զի **Բ** արձան կանգնեաց պղնձի և խեցի և արար *գիր*. և զոր ինչ ադամ անունս եդ իրաց, զամենայն գրեաց ի նոսա. զի մի՛ այլայլեսցին ի գնչուտ և ի լեզուատ արանց: - 289. Իսկ ենովքայն թէպէտ *գիրք* ո՛չ յայտնեն, բայց միայն թէ «ենովք հաճոյ եղեալ աստուծոյ՝ փոխեցաւ յերկինս»: – 290. Զայս ասէ *գիրն* եթէ՝ չորեքանկիւնի էր՝ զի մի՛ շրջեսցի: - 293. Բոլոր տարի մի. զի այսպէս ասէ *գիրն* թէ՝ **ՃԾ** օր բարձրացաւ ջուրն. և յետոյ **ՃԾ** օր ցածուցաւ. որ լինի **Ժ** ամիս: - 294. Իսկ որ զդպրութիւն գիտէ և *գրով* վարի՝ **ԲԺ**ան ազգ է. այսինքն Եբրայեցիք. Քաղդէացիք. Ասորիք. Պարսիկք. Մարք. Հնդիկք: Փիւնիկեցիք: - 299. Իսկ վիրք և աղւանք ո՛չ կատարեալ *գրով*. այլ առեալ ի հայոց. որպէս ասորին և իսմայէլացին յեբրայեցւոցն: - 299. Երբ լեզուքն բաժանեցան, զառաջին *գիրն* ո՞րպէս կարէին կարդալ: - 299. Եւ մինչ *զգիրն* յառաջ կալան թէ այսո՛ւ փորձիմք, այլ ո՛չ ոք գիտաց կարդալ՝ բաց յեբրայեցւոցն. վասն այն ասի եբեր, թէ զառաջին լեզուն նա՛

եբեր: - 299. Զի՞նչ է որ եփրեմ ի *գիրս* կցորդաց ասէ, Մելքիսեդեկ՝ որ նա՛ ինքն է սեմ: - 300. Երկրորդ՝ զմելքիսեդեկ քահանայ առաջին վկայէ՛ *գիր* ըստ մովսէսի, «թէ քահանայ էր աստուծոյ բարձրելոյ»: – 301. Վասն քրիստոսի և մելքիսեդեկի, ասացեալ է և յայլ ուրեք ի վերոյ ի *գիրս* աստուածաբանութեան ե գլուխն՝ ի համարքն: - 302. Հինգերորդ՝ ի լերինն մասեայ յորժամ ել նոյ ի տապանէն՝ օրհնեաց աստուած զնա՛ և զորդիսն նորա ասէ *գիրն*. և հայր և սերմ արար մարդկան ազգի: - 319-320. Ո՞վ գրեաց *զգիրն* յոբայ: - 320. Զի ասեն թէ՝ յոբայ հէճուպն ի պարսիկս փախեաւ, և անդ զրոյց ետ որ գրեցին իւրեանց *գրովն*. և սողոմոն բերել ետ և սրբագրեաց: - 320. Այլ որ ստոյգն է ասեն թէ՝ մովսէս գրեաց որպէս պատմութիւն, և սողոմոն ստիքսեաց որպէս զիւր բանսն. յետոյ գրեաց և եզրաս հոգւովն աստուծոյ երբ ծախեցան *գրեանքն* ի հրէից: - 321. Վասն որոյ ի ծննդեան աւուրն ժողովին և օրհնեն զաստուած և մարմնով ուրախանան. որպէս յոբայ ուստերքն և դստերքն միաբանեալ գային և ուրախ լինէին *գիրն*: - 321. Եւ մեզ պա՛րտ է իմանալ զչար խորհուրդ խորամանկին ի զանազան հնարս, և պատասխանել ի սուրբ գրոց. որպէս յայտ է ի *գիրս* Լագրեայ: - 323. Որք է ամ ասեն զփորձանսն՝ սոյնպէս թուեն. զի յետ փորձանացն ասէ *գիրն* **ճի** ամ. և յառաջ քան զփորձն **h** ամ. և **ը** ամ փորձանացն և դարձին: - 326-327. Եւ այլն ամենայն բանք և գործք յոբայ ի տիպ օրինակի էր նորն ադամայ չարչարանաց թաղման և յարութեան որպէս յա՛յտ է ի *գիրս* պատմութեան նորա: - 327. ...և թուեցան ընդ ղևտացիս որպէս պատմէ մնացորդացն *գիրք:* - 330. Եւ ա՛յսպէս մեկնեն զանուանս **բժ**ան ականցն սուրբն Եպիփան և մեծն Անդրէաս ի *գիրս* տեսլեանն Յոհաննու: - 349. Ա՛յս է պատճառ խորտակելոյ տախտակին. և ո՛չ որպէս ասեն ոմանք թէ *գիրն* ջնջեալ էր: - 350. Այսքան յելից *գրոց*: - 353. Այսքան ի Ղևտացւոց *գրոց*: - 376. Որպէս ետ առաքելոցն, Նոյնպէս և նոցա ի *գիր* նզովից զկապելն. և յօրհնութիւն ժողովրդեանն զարձակելն: - 379. Զի՞նչ էր *գիրն* ապահարզանի: - 400. Մովսէս օրէնս ետ՝ զի *գիր* տացեն մեկնելոյ զայր և զկին: - 400. Երրորդ՝ երեք է իմաստ *գրոց*. անհաս և դժուարահաս և դիւրահաս: - 406. Քանի՛ ամաց պատմութիւն է ե *գիրքս* մովսէսի: - 411. Զոր յիշէ աւետարանն ղուկասու, և մնացորդացն *գիրք*. և ո՛չ յիշէ մովսէս. զի զսկիզբն կռապաշտութեան ի նմանէ՛ ասեն լինիլ: - 411. Ո՞րքան կոչին անուանք արարչին ի *գիրս* մովսէսի: - 412. Միանգամայն ի սկզբանէ գրոց արարածոցն ժողովին ե գլխոյն՝ անուանք արարչին: - 412. Կատարեցաւ Վեցերորդ Հատոր Հարցմանցս Հինգ *Գրոցն* Մովսէսի. ի Փառս Յիսուս Քրիստոսի Աստուծոյ մերոյ: - 412. Երեսունևմի, Աստուածաշունչ *գիրք* ո՞ր քան է: - 413. Կատարումն Եօթներորդ Հատորի Հարցմանց *Գրոցս*: - 413. Վասն է՞ր բուն *գիրքն* աքիմելէք ասէ, և աւետարանն աբիաթար: - 427. Սակայն հանդերձեալն և սիրտ մարդոյն՝ միայն աստուծոյ է գիտելի և ոչ այլ ումեք որպէս ասացաւ ի սկիզբն *գրոցս*: - 430. Երեսունևէ զօրավարք դաւթի. և **լէ** թիւ հնոյն օրինաց. և այլ նորոց կտակի. և կամ **իբ** գլխաւո՛ր են *գրոց* հնոց. և **ժ** բան օրինաց. և չորից աւետարանաց. և մինն առաքելական: - 438. Եւ ոմանք **գռ** *գիրք* ասեն որպէս առակն և ժողովօղն. և **եռ** օրհնութիւնս որպէս երգ երգոցն. որպէս դաւթի **ճծ** սաղմոսն: - 441. Յետոյ վասն գազանաց երկրին՝ հնազանդեցաւ *գրոյն* մովսէսի. և ծածկեցին զաստուածս իւրեանց ի լերին սոմորոն. և անդ երկիր պագին սամարացիք: - 447. Եւ յետ եօթանասուն ամի շինուածոյ տաճարին՝ ապա արձակեալ նէեմի շինէ զպարիսպն էմի ի **լբ** ամին արտաշէսի. որպէս ասէ *գիրքն* եզրի: - 448. Հին կտակարանք՝ հինգ *գիրք* մովսէսի ա՛յս են: - 450. Եւ **դ** *գիրք* թագաւորութեանց որ լինի **ժբ**: - 450. Երեք *գիրք* Մակաբայեցւոց: Սաղմոսն: Սողոմոնի **դ** *գիրք*: - 450. Այլ զերկոտասանքն մին *գիրք*, և զերեմիայն մին *գիրք* համարեալ, լինի **լգ** *գիրք* հին կտակքն բովանդակ: - 450. Եւ որպէս ասէ կղէմ և անանիա դամասկացի, թէ **գ** *գիրք* այլ ընկալաք յեկեղեցի: - 450. *Գիրք* դիոնիսեայ արիսպագացւոյ: - 450-451. Օրէնք է մովսիսի ե *գիրքն* որ ասացաւ: - 451. Նոյնպէս և **իբ** *գիրք* գումարեալ աստուածակերտ *գրոց*: - 451. Այլ ընկալեալ են ի կարգս Աստուածաշունչ *գրոց*: - 451. Քանի՞ տուն է աստուածաշունչ *գիրքն* ամենայն: - 451. Քսանևմի, *Գիր* ի ձեռն. և խաչ ի գլուխն: - 454. Երկրորդ՝ շնորհք եզական. որպէս սրբեալքն յարգանդէ երեմիաս և յովհաննէս մկրտիչ. որպէս ասէ *գիրն*...: – 462. Եւ յիսուս անունն՝ են վեց *գիր*. որ կարեն լինիլ սկիզբն այսպիսի ասութեանց. այսինքն Յարազուարճութիւն տրտմեցելոց: - 474. Հինգերորդ՝ դարձեալ այլք ասեն եթէ՝ մինչ յաբրահամ ո՛չ էր ալիք ծերութեան. զի զնմանէ՛ վկայէ՛ *գիր* թէ «եղև ալևորեալ և լի աւուրբք»: – 480. Զի՞նչ է որ ի փրկչական պատկերն *գիր* ի ձեռն և խաչ ի գլուխն նկարեն: - 481. Եւ այն զի փաթութած է՝ ըստ հրէական օրինին է. զի կոնդակ և գալարելո՛վ էր նոցա *գիրն*. իբր թէ ծածո՛ւկ է ի նոցանէ խորհուրդ մարգարէիցն և թաքուն: - 481. Դարձեալ ի ձեռն կուսին՝ կենաց *գիր* տուաւ ազգի մարդկան տէր մեր յիսուս քրիստոս: - 481. Բայց անյա՛յտ էր գրեալն. մինչ խաչիւ և չարչարանօք *զգիրն* պատրանաց նախաստեղծիցն պատառեաց, և ապա՛ զայս *գիր* ետ յայտնապէս: - 481. Կրկին է *գիր*. այսինքն կենաց և մահու. զի բարի գործովք գրիմք ի դպրութիւնն կենաց. և մեղօք գրիմք ի *գիրն* մահու և

դատապարտութեան. որպէս ասեմք թէ զձեռագիր յանցանաց քոց ջնջեսցէ աստուած: - 481. Եւ այս ևս կրկին է *գիր* և դպրութիւն. մին անջինջ և յաւիտենից որ առ աստուած. և միւսն ժամանակեայ և ջնջելի որ առ մեզ. զոր մեր գործօք և կամօք գրեմք և ջնջեմք. թէ զչար թէ զբարի: - 481. Եւ գիտելի է, զի **գ** ազգ լինի *գիր*: - 481. **Եւ ադամ ասաց կնոջն՝ և կրկնեցաւ. և կինն օձին՝ և երեքկնեցաւ *գիրն***: - 481. **Եւ թէ պահեալ էր զպատուիրանն աստուծոյ՝ լինէր *գիր* կենաց դպրութեան: - 481. Եւ երբ ոչ պահեաց, գրեցաւ *գիր* մեղաց և դատապարտութեան: - 481. Զայս որպէս ձեռին *գիր* ունէր սատանայ, և նովաւ չարչարէր զմարդիկ՝ թէ աստուած ասաց մի ուտել և դու կերեր և մեռար. իմ ի՞նչ մեղք է: - 481. Արդ *զգիրն* ադամայ պարտուց՝ տէրն որդի եղև նմա և անմեղ մահուամբն տարածեալ զձեռս ի խաչին պատառեաց ասելով, նա մեղաւ և մեռաւ. ես զինչ մեղայ. դո՛ւ ես պատճառն: - 482. Վասն այն ի փրկչական պատկերն նկարեալ է ի մին ձեռն *գիր* և ի միւսն խաչ:** - 482. **Եւ յորժամ հաւատան ի քրիստոս և մկրտին, ջնջի *գիր* նոցա և անէծքն: - 482. Իսկ *զգիր* քրիստոնէից զոր յետ աւազանին մեղանչեմք և գրեմք զյանցանս, զայն պատառէ ապաշխարութիւնն. որ է՛ զղջումն սրտի և խոստովանութիւն լեզուի և հատուցումն գործոց մարմնոյ**: - 482. Յայտնի՛ է ամենեցուն և առանց երկբայութեան՝ զի քրիստոս մեռաւ ըստ *գրոց*. և մահուամբ եբարձ զմահ և զապականութիւն: - 498. Դարձեալ՝ մահն խառնեա՛լ է ընդ բարւոյ. և ապականութիւնն ամենևին չար. որպէս ցուցաւ ի *գիրս* քառասնօրեայ գալստեանն և մահուն սիմէօնի. ապա յա՛յտ է թէ ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն: - 498. Եւ նզովիւք փակեն ասելով, «եթէ ոք յետ անճառ միաւորութեանն ապականացու ասէ զանապական մարմինն սուրբ, նզովեալ լիցի». որպէս յա՛յտ է ի *գիրս* իւրեանց. և որ ոք կամեսցի դիւրաւ գտցէ. ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն քրիստոսի: - 499. Որպէս դաւիթ ասէ յառաջագոյն. և պետրոս զնոյն ի *գիրս* գործոց երկրորդէ՛ «մարմին նորա ո՛չ ետես զապականութիւն». ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն սուրբ: - 499. Ի *գիրս* բենետիքտոսի հարցեալ եղև թէ ո՞ւր են դժոխքն. և տուաւ պատասխանի թէ՝ յանկեան և յեզր ծովուն ի ներքոյ երկրի ի խաւարչուտ վայրս: - 504. Երկրորդ՝ զի ասէ սուրբն կիւրեղ ի *գիրս* պարապմանց՝ եթէ «վասն այսորիկ յերեկոյն լուծանեմք զշաբաթն, իբր ի վաղ առաւօտու յարուցեալ քրիստոսի»: – 509. Եւ այլ ևս գտցես յաստուածաբանին ճառն յառաջքն *գրոցս* ի եօթն գլուխն՝ ի **ժգ** համարն: - 518. Եւ թէ վասն է՞ր այնչափ *գիրք* և բանք գրեցան: - 525. Քառասունևինն, *Գրոց* կարդալն. և Սաղմոս կցորդ. Որթի. և Ալէլուն. և Տէր ողորմեայն: - 527. Զոր օրինակ, ներտրամադրեալ բանն մի է՝ և յառաջ բերեալ բազմանայ ի լսելիս և ի *գիրս*: - 529. Եւ դարձեալ զոր օրինակ, *գիր* մատանւոյն մի և նոյն կատարեալն է տպացեալ յամենայն մոմս կնքեալ և ո՛չ աւելի և ո՛չ նուազ: - 530. Նմանապէս և բանն աստուծոյ մի և նոյն է անձամբ և բնութեամբ ի գոյացութեան իւրում, և ի *գիրս* աւետարանաց գրեալ: - 530. Որպէս գրեալ է ի *գիրս* պարապմանց այսպէս. եթէ մարդն պատկեր է բանին՝ և բանն է աստուած. ապա և մարդն է պատկեր աստուծոյ: - 530. Զորօրինակ, յորժամ վկայեսցէ թագաւորն ներտրամադրեալ բանիւն ի վերայ գրեալ բանին իւրոյ եթէ՝ ստուգապէս սա՛ է իմ *գիր* և բան: - 531. Վասն է՞ր այսչափ ամենայն *գիրք* և բանք և խրատք գրեալ եղեն: - 531. **Մի կոչի եկեղեցի՝ ո՛չ տեղեաւ մի. այլ միով հաւատով և յուսով կոչմանն. և միոյ մօր և մի որովայնի ծնունդ աւազանին. և մի կերակուր որ է տեսութիւն աստուածային *գրոց*. և մի մարմին և արիւն փրկական. և մի գլուխ և պսակ և զգեստ ունիմք զքրիստոս**: - 533. Եւ զայսոսիկ գտցես ի սկիզբն նախերգանի *գրոյս* սակաւուք: - 537. Եւ գրեցին *գիրս* կանոնաց գլուխս **ի**, ընդդէմ եկամուտ թուլութեանցն: - 544. ...և նորոգեցին զթուլութիւն և զերկպառակութիւն ինչ եկեղեցւոյ. և հաստատեցին *գիրս* կանոնականս **բժ**ան գլխոց: - 544-545. Այլ որ **ճճ** ամաւ յառաջ եկին ի հայք՝ ասորիք արք քաջաբանք, և կամեցան սերմանել զաղանդն նեստորի. որք նզովեալ որոշեցան. բայց ոմանք ընկալեալ էին և թարգմանեալ ի նոցանէ *գիրս* սուտս, Զգօրտոսակ. Զկիրակոսակ. Զպղի տեսիլն: - 545. Զի այսպէս սահմանեցին՝ թէ ինքնակալ թագաւոր մի և ինքնագլուխ հայրապետ մի նստցի ի հայս. և թագաւոր մի ինքնակալ՝ և ինքնագլուխ հայրապետ մի ի հռօմ. և ի վերայ միմեանց դիցեն զանձինս ի մահ. և սոսկալի *գրով* եղեն միմեանց եղբարք. թացեալ զգրիչն յահաւոր խորհուրդն: - 548. Այլ թէ *գիր* չունէր մեր ազգս, տե՛ս զի յաստուծոյ տուաւ մեզ *գիր*, որպէս մովսէսիւ իէլի. և այլ ո՞ր ազգ պարծի այսու: - 549. Այլ դաւանութիւն նոցա այս է. որպէս զի մի՛ լիցի ըստ նոցա աստուած մարդացեալ. կամ մերս բնութիւն ընդ աստուածութեանն միաւորեալ. որպէս ընդարձակապէս ցուցանէ աստուածաբանն կիւրեղ ի *գիրս* պարապմանց: - 552. Հինգերորդ՝ աստուածապարգևք *գիրն*: - 555. Եւ մեծն դիոնէսիոս ի *գիրս* աստուածային անուանց սահմանէ թէ՝ «հաւատն է հաստատ կայումն հաւատացելոց. որ զարդարս կացուցանէ ի ճշմարտութիւնն և զճշմարտութիւնն ի նոսա»: - 571. Զի ի *գիրս* հոգեաց ասի՝ «առաքինութիւն է՛ ունակութիւն մտաց բարւոք կարգաւորեալ»: – 578. Եւ թէ ո՞րպէս, ի բուն *գիրս* յայտնի է աշխատողաց անդ գտցես: - 583. ...որպէս և գրեալ է ի *գիրս* նիկիական կանոնացն եթէ զճառայս ի

ժառանգութիւն եկեղեցւոյ կարգել ո՛չ հրամայեմք: - 589. ...իսկ կանանց ազգին պատուիրէ՛ առաքեալն ի ժամ աղօթիցն շուք դնել գլխոյն վասն հրեշտակաց. այսինքն վասն քահանայից որ հրեշտակք կոչին ի *գրոց*...: – 590. Են և այլ բազում վկայութիւնք ի *գրոց* սրբոց որ զայսպիսի հերձուածս սուտ և ընդունայն երևեցուցանեն: - 590. Նա՛խ՝ է՛ վկայութիւն անդուստ իսկ թշնամեացն. քանզի ասէ ալպերտն ի յառաջին *գիրքն* **ժա** համարին, թէ հոգի ասեմ սրբութեան. արիւն փրկութեան. և ջուր լուացման: - 594. Եւ ի չորրորդ *գիրքն* ի **ի** համարն ասէ, ետ զմարմինն ի կերակուր. զարիւնն ըմպել. զհոգին ի գին. զջուրն կողին ի լւացումն: - 594. Եւ դու խառնեա զսոսա ի խորհուրդ պատարագին. զի իցես ուղղակի մեկնիչ և *գրոյն* հետևօղ: - 596. ...այսպէս և օգոստինոս վարդապետն Ֆռանկաց ի խորհրդոց *գիրս* **ծա** համարն ասէ, թէ յառաջագոյն բաշխեաց զխորհուրդ մարմնոյ և արեանն և տուեալ յուդայի: - 599. Եւ գո՛րծ է նոցա ընթեռնուլ զամենայն *գիրս*: - 608. Եւ որպէս ասէ *գիրն* թէ՝ «զկողն զոր շինեաց կին՝ էած առ ադամ»: - 610. **Եւ վկայ այսոցիկ ի մամեստիայ գտեալ քարն. յորում գրեալ էր յունարէն *գրով*, «սուրբ աստուած սուրբ և հզօր սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ»**: - 632. **Թովմաս առաքեալն ի թաղումն տիրամօրն է ասացեալ. որպէս գրեալ է ի *գիրս* որ կանոնական լրմունք կոչի:** - 633. Անփակ *գրով* հաստատեալ: - 638. Եւ ոմանք ասեն **ը** ձայն վասն ութ ձայնաւոր *գրոց*. և **ժ** ձայն ըստ **ժ** առոգանութեանցն: - 640. *Զգիրս* ո՞րպէս է ընթեռնլի յեկեղեցի: - 643. Այլ և կարդացողին պա՛րտ է նմանեցուցանել զիւր խօսքն աստղին *գրոց*: - 643. Նշնակութիւն է **գ** ազգ *գրոյն* ի վերայ խաչին. Եբրայեցի. Յունաց. և Դաղմատ: - 645. Յայս միտս այլ ազգք միշտ ի վերայ գրակալին պահեն *զգիրս*. զի արժա՛ն է միշտ ուսանիլ: - 646. Զի այն պահքն յառաջ քան *զգիրս* և քան զմարգարէս ի նախահարցն եղաւ: - 650. ...և վասն այն առաջաւոր և առաջապահք կոչի և առանց *գրոյ*: - 650. Իսկ վասն հիմնարկութեան սուրբ տաճարի և ժամահար օրհնելոյ. սկիհ և մաղզմայ. և *զգիրք*. և զկնունք առնելոյ. և խաչօրհնելոյ. և զքառասնորդաց **գ** ժամուց զքարոզքն և զաղօթսն, յոհան մանդակունին է արարեալ...: – 659. Քառասունևե, Յիշատակարան *գրոցս*: - 661. Եւ դարձեալ ասէ՝ զուգագրեալք են ի *գիրն* յաւիտենից, ի միասին և ժամանեսցին: - 669. Բուրվառ ի ձեռն և *գիր* աւետարանին, «ելի ի հօրէ և եկի յաշխարհ». կամ այլ ինչ: – 674. *Գիր* ինոյ, կամ գերւոյ աման, կամ գերէ՛ զամէն: - 678. Արդ՝ առաջին վկայութիւն, ասէ սուրբն կիւրեղ ի *գիրս* պարապմանց ի հարցմունս տիբերեայ եթէ՝ հատուցմունքն հետևին դատաստանին. և դատաստանն գալստեան դատաւորին ի կատարածի: - 691. Երկրորդ, զի զուգագրեալք են ի *գիրն* յաւիտենից: - 691. Չորրորդ, ասէ սուրբն եպիփան ի հաւատոց *գիրն*, եթէ որպէս հոգին միայն դատի ըստ բանի հերձուածողացն զի կարէ՛ ասել մարմնոյն եղեալ զյանցանքն: - 691. Պատասխանեմք առ այս որպէս ասէ սուրբն կիւրեղ ի *գիրս* պարապմանց եթէ առակ օրինակ են սոքա արդարոց և մեղաւորաց որ այսպէս լինելոց է ի կատարածի: - 695. Ընդհանուր ամենայն վարդապետք ուղղափառաց համաձայնեալ աստուածեղէն *գրոց*՝ ո՛չ ասեն քաւարան հրոյ: - 698. Իսկ իդ թիւն ո՛չ եթէ սահման և կէտ է. այլ սովորութիւն է *գրոց* փոքր թուով զբազումսն ցուցանել: - 711. Եւ դարձեալ ոմանք ասացին թէ՝ ի յարութեանն մարմինք մարդկան օդային լինին կամ հողմային. զի երբեմն ի *գրոց* հողմ և օդ հոգի կոչի: - 720. Չորրորդ՝ գալարիլ երկնից զգալուստն քրիստոսի նշանակէ. զի *գիրք* ա՛յնր գիտութեանն բանին: - 729. Երկրորդ, զի *գիր* մագաղաթին անջինջ մնայ. նոյնպէս և գործն ի հոգիս մեր գրեալ. - 729. Իսկ *գիր* և դպրութիւնքն յառաջիկայդ ասացի: - 729. Մին յաւիտենից առ աստուած. ըստ որում «ի *գիրս* քո ամենեքեան գրեցան». և *գիրս* այս անջնջելի՛ է ի տեսութիւնն աստուծոյ. թէ չարեաց և թէ բարեաց. - 741. ...որպէս ասացաւ ի սկիզբն *գրոցս* երեք համարն: - 741. Եւ միւս *գիր* է գործոց փոփոխական և ջնջելի ըստ ժամանակիս: - 741. Արդ՝ ա՛յս *գիր* գործոց մերոց գրեալ ի հոգի և ի մարմին մեր որպէս ի մագաղաթի՝ դատաւորն ընթեռնու ի տես և ի լուր հրեշտակաց և սրբոց: - 741. Յոգի և մարմինս է որպէս մագաղաթ. կամք և իմացումն դպիր և գրօղ. հաւատքն գրիչ. արտասուքն մելան. և *գիրն* գործք բարի կամ բան աղօթից: - 741. Մանաւանդ թէ՝ հոգին սուրբ գրօղ դպիր. և ուղղութիւնն գրիչ գործիք. և որք զմելանն առատ տամք և զմագաղաթն, զսուրբ գործս անկեղծաւոր և զբանս աղօթից օրինաւոր, ա՛յնքան առաւել գրիմք ի *գիրն* կենաց: - 741. Այսպէս *գիր* ընտրելոցն: - 741. Իսկ խոտելոցն *գիր*, դպիր է պիղծ հոգին դիւական. և չար կամքն իւրեանց և խորհուրդն և հեշտութիւն մարմնոյն մելան. և ըստ գործոց առաւել և նւազ գրեն ի գիրն դատապարտութեան: - 741. Իսկ խոտելոցն գիր, դպիր է պիղծ հոգին դիւական. և չար կամքն իւրեանց և խորհուրդն և հեշտութիւն մարմնոյն մելան. և ըստ գործոց առաւել և նւազ գրեն ի *գիրն* դատապարտութեան: - 741. Սոքա՛ են **բ** *գիր* չարեաց և բարեաց. մահու և կենաց: - 741. Դարձեալ *գիրք* են մարգարէքն: - 741. Որք որպէս *գիրք* յայնժամ բացեալք եղիցին. քանզի վարդապետութիւնք նոցա և օրինակք՝ ամենեցունց յայտնեսցին. ի յորս ամենեքեան իբրև ի *գիրս* տեսցեն թէ զի՞նչ պարտ էր առնել կամ խոտել ինքեանց: - 742. Իսկ *գիրք* կենաց է գիրքն քրիստոս.

ի յորում ամենեքեան իբրև ի *գիրս* ընթերցցին թէ զինչ ի պատուիրանաց նորա արարին: - 742. *Գիր* ևս կենաց է տեսութիւնն աստուածային. ի յորում ամենեքեան զխիղճս մտաց իւրեանց իբրև զգրեալս տեսցեն: - 742. *Գիրն* անփոփոխ ո՞րպէս լինի փոփոխեալ: - 742. Փոփոխումն *գրոյն* պատճառի ի չորից: - 742. Իսկ ընդ դէմ սոցա լինի անփոփոխ *գիրն*: - 742. Իններորդ, զի բնական օրինացն գ են վկայք. բանն և *գիրն* և աւետարանն. որ տուաւ նահապետացն և մարգարէիցն և առաքելոցն: - 742-743. ...որպէս ասացաւ ի վերոյ յութերորդ հատոր *գրոցս* լ համարն: - 746. Չորրորդ, կշիռն նշանակէ՛ զգործս մարդկան. ըստ կշռոյ օրինացն հաւասարել և հատուցանել. եթէ ըստ բնականին կամ ըստ *գրոյն* և աւետարանին. որում շատ տուաւ առաւել պահանջել: - 747. Արքայութիւն կոչի և աստուածային *գիրք*: - 754. Յաղագս երրորդին ասի, «բարձցի ի ձէնջ արքայութիւնն». այսինքն աւետարանն կամ այլ *գիրք* աստուածայինք: - 754. Խնծոր նոր և հին, *գիրքն* են աստուածայինք. որք հինք են յօրէնս և ի մարգարէս. և նորք յաւետարանն և յառաքելական մատեանս: - 756. Զիոյ *գիրն* ա՛ռ ի բաց, աւատ ասի. ամենայնի դէպ ասեն թէ աւատ կայ: - 769. Մեր գործքն և յաստուծոյ տուեալ բարին հաւատով կնքի. և պակասն յանդիմանի այժմ ի խղճէ մտաց որպէս ի *գրոյ*. և անդ ի դատաւորէն, որ չար ծառայ կոչէ: - 769. Որպէս բան ի ձայն՝ և բան ի *գիր*՝ և լոյս յօդ՝ և տեսութիւն յակն՝ և հուր յերկաթ՝ և մուխ ի պողուատ: - 769-770. Այլ ի հասարակ *գրոյս*՝ հասարակեաց և նա զկեանս առօրեայ. հասեալ ի գանձ իմաստից և յաղբիւրն գիտութեանց: - 772. Ա՛րդ՝ է՛ ինչ ի սմա հաւաքեալ ի լուսաւոր բանից վարդապետաց սրբոց ըստ *գրոյն* կամ իմացուածոյն: - 772. Այլ և զերջանիկ գաղափարօղսդ մաղթեմ. որք ընդօրինակէք *զգիր* հարցմանցս այսորիկ, գրել և զսակաւ յիշատակս այսցիկ: - 773. Որպէս զի և դուք լիջիք գրեալ ի *գիրն* կենդանեաց ա՛մէն: - 773. Վասն բազում վկայութեանցն որ առեալ է ի *գիրս* յայս, զի անտարակոյս լիցի: - 773. *Գիր* քոյոյ վսեմամիտ խոհեմութեանդ ո՛վ **արփիածին** հարազատ, և վերնոյն սիօնի նազելի զաւակ Գէորգէոս Րաբունեայ պետ: - 773. Զի բազում ուրէք վկայէ՛ *գիրն* աստուածաշունչ, զնախահայրն մեր ադամ ազատեալ ի դժոխոցն: - 775. Իսկ ի հանդերձելումն ապա զիա՞րդ թէ բազում անգամ զղջացին ո՛չ գտանեն թողութիւն ասէ *գիրն*: - 778. Զի թէ պակասութիւն զչարչարանքն ասէ, չարչարանքն այն ոչ ասի պակասութիւն քրիստոսի. զի «մարմին նորա ո՛չ ետես զապականութիւն» ասէ *գիրն*: - 781. Եւ զանազանեալքն ի *գիրս* անդամոց, զանազանին և ո՛չ նմանին գոյացական տեսակօք: - 786. Զլինիլ արտասուաց՝ ուսուցանեն *գիրք* կազմութեան և որ ի բժշկաց, յերիս բաժանմանէ բնաւորեալ կերակրոց: - 786. Եւ կատարեալ տեսութիւն բացերևականն բանի յայտնի՛ է աշխատասէր մտաց. որ յաղագս մեկնութեան լուծումն *գրոց.* և գո՛ն առ քեզ: - 787

***ԳԻՐ ՍՈՒՐԲ (ՍՈՒՐԲ ԳԻՐ)*** - Եթէ ոք գիր ո՛չ գիտէ, և ո՛չ զվակյութիւն ընդունի *սուրբ գրոց*, որպէս ցուցանեմք նմա թէ է՛ աստուած: - 25. Առ որս ասեմք եթէ՝ բանս այս «ամենայն» ո՛չ այնպէս նեղագոյն առեալ լինի ի *սուրբ գիրս*՝ որպէս առ փիլիսոփայսն: - 27. Ասեմք եթէ՝ *սուրբ գիր* խօսի բազում անգամ առակաւ...: - 27. Եւ քարոզչօք՝ այսինքն հրեշտակօք կամ վարդապետօք կամ *գրոց սրբոց* գիտութեամբ, փութայ զկեալն մեր: - 48. Նախ՝ զի հովիւն ի դալար վայրի բնակեցուցանէ. այսինքն ի վայրենացեալ *գրոց սրբոց* գիտութիւնն: - 49. Վասն հոգւոյն են ի *գիրս սուրբս*՝ զի ո՛չ են և ասին ի յէքս. որպէս եղջերուաքաղն, յարալէզն, յուշկապարիկն: - 55. Եւ ո՛չ ասի ի *գիրս սուրբս* ըստ այդմ բառի, բայց այլ կերպիւ ցուցանէ զայդ. այսինքն զի ասէ, «Ես եմ ալֆա և օմեգա». յայսմանէ իմանամք զանսկիզբն և զանվախճանն: - 55. Տասներորդ՝ յայտնի՛ է ի *սուրբ գրոց* թէ աստուած է որ խօսեցաւ մարգարէիւքն. քանզի ասէ ի թիւքն «ես տէր տեսլեամբ և երազօք խօսեցայց ընդ մարգարէսն»: – 58. Այլ այժմ տեսցուք ի *սուրբ գրոց* զվկայութիւնսն մակեդոնի, և յարմարեսցուք զպատասխանիս նոցա: - 59. Զի սովորութիւն է *սուրբ գրոց*՝ աստուծոյ համարել զոր ինչ գո՛րծ է ի մարդիկ: - 59. Ընթացք աստուածպաշտութեան՝ զմիջինն ուսուցանեն մեզ *գիրք սուրբք*. որպէս ասէ սողոմոն, «զճանապարհ արքունի գնասցես. մի՛ յաջ խոտորեսցիս, և մի՛ յահեակ»: – 80. Ա՛րդ՝ տեսութիւն *գրոց սրբոց* մի և նոյն ելով՝ առ բազումս բազմանայ. որպէս մի և նոյն պարզագոյն ջուր՝ իւրաքանչիւր բնութիւնս տնկոց: - 93. Չորրորդն՝ է ներքին մասն օդոյն. և կոչի օդեղէն երկին. որպէս ասեն *գիրք սուրբ*, «թռչունք երկնից զտէր օրհնեցէք»: – 183. Եւ ի *գիրս սուրբս*՝ մարգարէից այլոց ազգաց անուանք ո՛չ յիշին բաց ի հայոցս: - 201. Եւ զոր *գիրք սուրբ* ո՛չ է յայտնեալ, զիա՞րդ իշխէ մարդ խօսիլ: - 224. **Այլ մեզ զոր *գիրք սուրբք* լռեալ են՝ լռութեամբ պատուեսցի. և մի՛ մտացածին բանիւք վտարանդեալ ի գուբ կորստեան անկցուք**: - 226. Դարձեալ զանազանութիւն, զի հանճարովն ճանաչի աստուած լուսաւորութեամբ լսելոցն ի *գիրս սուրբս*. իսկ իմաստութեամբ ճանաչի աստուած ըստ ինքեան: - 270. Իններորդ՝ խորհրդակից ունել ո՛չ զթունարկու օձն. այսինքն զարկածք չարին. այլ զպատուիրանս աստուծոյ որ ի *գիրս սուրբս*:

- 281. Ո՞ր քան են և ո՞րք *գիրք սուրբք* հին և նոր կտակարանք: - 450. **Եօթներորդ՝ *գիրք սուրբք* մարդեղութիւն ասեն բանին. այլ մարդն կոչումն յատուկ արական է և ո՛չ իգական թէ և հասարակաց կոչի**: - 480. Նոյնպէս և անչափութիւն բանից և խրատուց հարց և իմաստնոց *գիրք սուրբք*՝ հին և նոր կտակարանք ցուցանեն զանչափ հիւանդութիւն հոգւոյ. զի սոքօք առողջացին: - 531. Ապա անհաւատութիւն և յուսահատութիւն և ատելութիւն է՛ ի միտս. և սոքա մեծ են քան զամենայն չարիս որպէս ուսուցանեն *գիրք սուրբք*: - 557. Եւ այս զանազան կարծիքս վասն այն է, զի *գիրք սուրբք* չե՛ն յայտնի բացայայտեալ զնոսա: - 687. Եւ զայս յայտնեն *գիրք սուրբք.* զի աւետարանն ի մէջ գիշերի ասէ զժամ յարութեանն «եղև բարբառ ահա փեսա գայ արիք»: - 747-748. Եւ վասն այն ասի արքայութիւնն աստուծոյ, զի պատուիրանօքն որ յաւետարանն կամ յայլ *գիրս սուրբս* գտանին, պահողացն արքայութեանն մուտ բացեալ լինի. և ներքին մարդս ամրացեալ հաստատի: - 754. Կամ զինչ անհնարին սաստ, եթէ ոք խոտեսցէ զսուրբ հոգւոյն խօսեցեալս ի *գիրս սուրբս.* ընտրելով զոմն յարուցեալ ի մեռելոց. կնքելով առակաւոր բանին, «զի թէ սուրբ գրոց ոչ լուիցեն, և ո՛չ թէ ի մեռելոց ոք յարիցէ և հաւատասցեն»: – 775. Իսկ եթէ բաղդատելով ոք ասիցէ, թէ ի մարմնի գոլով ապաշխարեալ սրբեցաւ նա ի ներգործականէն իւրմէ մեղաց. և այս ո՛չ ուրէք երևի ցոյցք ի *գիրս սուրբս*: - 775-776. Ասի ի *գիրս սուրբս* թէ՝ ի կատարածի յանուն յիսուս քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի. և ամենայն լեզու խոստովանեսցի զնա աստուած: - 783

**ԳԻՐԱՆԱՄ +** Չորրորդ՝ մարմին կենդանեաց որ առաւել պարարտ է քան զամենայն. վասն այն ի մսոյ հատանին պարկեշտք. զի մի՛ առաւել *գիրասցին* և գազանասցին: - 407

**ԳԻՐԿ +** Կանգունն *գիրկն* է մարդոյ. և այլք **ը** թիզ ասեն. զոր այժմ Ֆռանկք վարին: - 293. Յայս միտս ի կենդանագիր կուսին՝ ի ձախոյ *գիրկս* լինի փրկչական պատկերն. նոյնպէս և առ ի խաչին ի յաջակողմն կացեալ: - 441. Երրորդ՝ որպէս զստնդիայի մանուկն **է** ամ խրատէ՛ դայեակն. այսպէս ժողովուրդն որ ել յերկրէն իւրեանց, երկիրն բաբիլացւոց **h** ամ ի *գիրկս* իւր դայեկեաց զնոսա և սնոյց. զի յետ դարձին յերկիրն իւրեանց՝ զբարիս գործեսցեն: - 448. Իսկ զկատարեալ հասակն նկարելով՝ ի ձև չորեքկուսի հանեն զաւետարանն ի ձեռն և ի *գիրկն*: - 481. Յերկրորդ ամին աստուածածինն տրպացաւ ի սեանն, և քառասնօրեայ մանուկն յիսուս ի *գիրկն*. և խաչ ծիրանի յերկոսին ձեռինն: - 485. Ջնախանձն՝ տարածումն բազկացն. որ նշանակէ՛ *զգիրկս* արկանելն սիրով: - 489. Երկրորդն է՛ տարածումն բազկացն ի *գիրկ* արկանել. և նշան ընդունելոյ զդարձեալսն ի մեղաց: - 489. Այլ և հանգուցեալ ի *գիրկս* իւր զվաստակեալսն մեղօք. ըստ այնմ «եկայք առ իս ամենայն աշխատեալք, և ես հանգուցից զձեզ»: - 490

**ԳԻՐՈՒԹԻՒՆ +** Երկրորդ՝ *գիրութիւնն* հալի ի ջերմ ցանկութենէն և հոսի: - 368

**ԳԻՒՂ (ԳԵՕՂ) +** Հինգերորդ ըստ ուրին. թէ ուր գործեն զմեղքն. կամ ի վանք, կամ յեկեղեցի որ է տուն աստուծոյ. կամ ի *գեօղ*, կամ ի քաղաք, կամ ի պոռնկատուն: - 565. Հինգերորդ դասք՝ Քահանայք. որք ի քաղաքի լինին, և որք ի վանորայս, և ի *գեօղս* երիցունք: - 608

**ԳԻՒՂ (ԳԵՕՂ) ԱՐԿՈՒՌԻ** - Երրորդ՝ նշանն սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետին. և *գեօղն արկուռի*՝ ուր տնկեաց այգի. և քաղաքն նախիջևան, ուր ինքն նոյ հանգուցեալ է ի տապանի: - 295

**ԳԻՒՏ +** Երկրորդ՝ իմաստութիւն ասի զանազան արուեստից *գիւտք*...: – 269. Երկրորդ՝ անցեալ ընդ լերամբ և ո՛չ գտեալ. մինչև առ տեսանօղն եկեալ. և տէր մեր էանց զլերինս հրեշտակաց և եկն ի մարգարէս. և նոքա աւետեցին *զգիւտն* **գ** օրեայ կորստեան իշոյն...: – 426. Քառասունենք, Ութ ձայնից *գիւտն*: - 527. Այլ և աստ ապաշաւելն ոչ ինչ օգտեալ. որպէս և անդ ո՛չ լսողաց բերանով հաշեալք. որ և ո՛չ գոյր անդրէն դառնալ. և ո՛չ կարի յօժարացն շահավաճառ եղեալ. ո՛չ *գիւտ* և ո՛չ ողորմ. հանգոյն յիմարացն օրիորդաց: - 789

**ԳԼԽԱԿՈՐ** - Հինգերորդ՝ զի մարդն իշխան և տէր է ամենայն կենդանեաց. վասն որոյ ամենայն կենդանիք *գլխակո՛ր* են իբրև զծառայ և հնազանդ. և մարդն ուղղաձև իբրև ազատ և թագաւոր: - 233

**ԳԼԽԱՒՈՐ +** Կատարեալ և գերակատար թիւք դոքա են առ մեզ. որ ի **դ** *գլխաւորին* ըստ չորից տարերց: - 141. Վաթսուներորդ) Թիւ *գլխաւոր* արարածոց: - 155. Ջանուանս *գլխաւորացն* որպէս սեռ՝ աստուած կոչեաց. որպէս երկին. երկիր. լոյս. և այլն: - 220. Քանի՞ են *գլխաւոր* արարածք: - 226. Իսկ է *գլխաւոր* անդամքն են այսոքիկ ըստ է մոլորակացն ունելով զբնութիւնս նոցա: - 241. Եւ *գլխաւո՛ր* անդամք են սոքա. զի թէ յայլ անդամքն՝ այսինքն աչքն՝ ականջն՝ ձեռքն՝ և ոտքն՝ կամ այլն վնասի, մարդն ապրի: - 241. Եւ որպէս է են *գլխաւոր* անդամք՝ և է մոլորակք յերկինս: - 241. Ոմանք ասեն, **ժէ** *գլխաւոր* ջլօքն որ կապին սոքա՝ լինին **յկե** զօդուածք: - 243-244. Կամ զօդուածք ներքին *գլխաւոր*

անդամոցն և արտաքին մարմնոյն, որ մորթ և միս և արիւն և այլքն առ միմեանս յօդին՝ լինին նոյնքան: - 244. Եւ **ժէ** *գլխաւոր* ջիլքն, և մին բուն ջիլն. որ լինի բովանդակն **յկզ** ջիլք: - 244. Եւ սատանային յայտնի են է չար խորհուրդքն որ կոչին *գլխաւոր* մեղք: - 287. Չորրորդ՝ *գլխաւոր* թիւքն **դ** են. այսինքն **ժ**. և **ճ**. և **ռ**. և բիւր: - 291. Ի հինն **գ** տօն էր *գլխաւոր*: - 340. Այլ *գլխաւորն* երեք է: - 352. Սոքա **բժ**ան ազգ նուէրք *գլխաւոր* պատարագք կարգեալ ի մեծէն մովսիսէ՛: - 359. Այնոքիկ *գլխաւորք*: - 359. Երկրորդ՝ որպէս աստեղաց *գլխաւորքն* թւեցան. **բժ**ան ազգն՝ **բժ**ան կենդանակերպքն. և այլք նմանապէս: - 377. Այլ ե թագաւորք մադիանացիքն էին, և **բ** այսոքիկ. որ են է դնք է *գլխաւոր* մեղաց. որք ի կեանս պատերազմին, և յետ մահու ընդ հոգւոցն բազումք: - 393. Եւ տէր մեր *զգլխաւորն* սատանայի բևեռեաց ընդ խաչափայտին: - 418. Երեսունևէ զօրավարք դաւթի. և **լէ** թիւ հնոյն օրինաց. և այլ նորոց կտակի. և կամ **իբ** *գլխաւո՛ր* են գրոց հնոց. և **ժ** բան օրինաց. և չորից աւետարանաց. և մինն առաքելական: - 438. Եւ **իբ** *գլխաւոր* արարածք: - 451. Ապա ուրեմն ի վեցից *գլխաւոր* վշտաց փրկեաց զմեզ: - 474. Ուր և առաւել չարք և ամբարիշտք տանջին, և *գլխաւորն* դիւաց: - 505. Ութերորդ, զի ծնունդ էր նա նոր և *գլխաւոր*. և այն՝ զի նովաւ կորընչէին ազգք և տոհմք և դարք: - 517. Եւ յիսունն **ժժ** կատարեն **ե** *գլխաւոր* համարք: - 524. Նաև զամենայն *գլխաւոր* մեղս ընդ հզօր խորհուրդ ասէ սուրբն եւագրիոս. վասն զի նախ ի խորհուրդն տնկի ամենայն սերմն մեղաց. և ապա ի մարմինն բուսանի և աճէ: - 557. Վասն որոյ **է** են մեղք *գլխաւորք*: - 559. Ա՛րդ՝ է երանութեամբս այս՝ արտաքսին է *գլխաւոր* մոլութիւնքն: - 583. Նոյնպէս և **ը** ձայն եղանակաց. և **ը** օրեայ զտօնս *գլխաւորս*. որպէս ծննդեանն ութն օր. և յարութեանն՝ և հոգւոյն գալստեանն՝ և խաչի՝ և եկեղեցւոյ՝ և այլն: - 627

**ԳԼԽԱՒՈՐԱԳՈՅՆ +** Եւ սոքա են *գլխաւորագոյնքն*: - 227. *Գլխաւորագոյն* վեցեկի պարգևօք լցոյց զնոսա: - 524. Զի **դ** *գլխաւորագոյն* աթոռք կարգեցան ընդ բոլոր տիեզերս վասն չորից աւետարանչացն: - 549. Եւ յայսոսիկ միաբանութիւնս որ ըստ կանոնի՝ յաւէտ միաբանութիւն զայս է իմանալ՝ որ ըստ բոլորին օրինադրութեանց սահմանաց կամ ըստ *գլխաւորագունիցն* լինիցի. և ո՛չ մասամբ միով միաբանեալք և բազմօք զանազանեալք. մանաւանդ թէ հակառակեալք և ընդդիմացեալք: - 552. Եւ այն որ ի *գլխաւորագոյնս* ո՛չ ասի միաբանութիւն, և զիա՞րդ միաբանութիւն ասիցէ ոք զայս: - 552. Դարձեալ զանազանին ըստ թուոյ. զի մահացուն յեօթն բաժանի. որք են *գլխաւորագոյնք*: - 568. Իսկ *գլխաւորագոյն* սրբոցն, որպէս յաւագ տօներն և յայլս, որ առնեմք նախատօնակ որպէս ի տօնս տէրունականս: - 647. ...յորժամ ի *գլխաւորագոյն* անդամքն դիպին. այսինքն ի սիրտն, կամ ի լեարդն, կամ ի խելապատակն: - 668. Նա՛խ՝ որպէս ասացաւ ի քահանայաթաղն վասն է շնորհաց հոգւոյն, և է խորհրդոց եկեղեցւոյ, և է առաքինութեանց, և **է** *գլխաւորագոյն* մեղաց, և **է** զգայարանօք մեղանչեմք, և **է** փոփոխմամբ հասակի...: - 683. Երկրորդ՝ զի մարդկան ազգի կրկին է հատուցումն. այսինքն յայժմու կեանս և ի հանդերձեալն. իսկ դիւացն եօթնեկի է հատուցումն վասն եօթնեկի յանցանաց նոցա. և եօթն *գլխաւորագոյն* մեղացն: - 750

**ԳԼԽԱՒՈՐԵՄ +** Եւ *գլխաւորի՛* սա՛ կրկին եօթեամբք կարգաւոր հարցմամբք: - 773

**ԳԼԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ +** Այս է ի *գլխաւորութիւն* ամենայնի զռ եղելոյ ապստամբութեանն. զի որ քան աւուրբ եղև աշխարհ, այնքան ամօք յանկ ելանէ: - 707

**ԳԼԽԱՒՈՐՕՐԷՆ +** Ի վեց իրաց *գլխաւորօրէն* փրկութիւն ներգործեաց. ըստ յոբայ վեցիցս փրկեցաք նովաւ: - 473. Իսկ մահացուն մեղք է *գլխաւորօրէն* է. կամ ը որպէս ասացաւ: - 567

**ԳԼԽԻԲԱՑ +** Իսկ հոլանի և անգօտի. *գլխիբաց* և գօտէլոյծն է: - 639

**ԳԼԽՈՎԻՆ, Ի ԳԼԽՈՎԻՆ +** Ութերորդ՝ մահն *գլխովին*: - 751

**ԳԼՈՐԵՄ +** Ի գիջութիւնս ախտից հեշտացեալք, և նոյն *զգլորեալն* կանգնեն: - 34. Զի որ քան եմք ի մարմնի՝ միշտ պարտ է երկնչիլ ի պատժոյ ի *գլորելոյ* ի մահու և այլոցն: - 229. Եւ տարածումն ի խաչին՝ զոմանս կանգնէր, և զայլսն *գլորէր*: - 423. Երրորդ՝ զի արուն զօրաւո՛ր է քան զէգն. և նախաստեղծքն *գլորեալ* էին վասն հեշտութեան իւրեանց. պա՛րտ էր արու լինիլ և կանգնել զնոսա: - 480. Այլ ա՛րդ՝ հեղձուցեալն՝ սուրբ և կերակրելի է նոցա. և պոռնկութիւնն անխտիր յորժամ կանգնեն *զգլորեալն*: - 552. Իններորդ՝ կին ո՛չ առնուլ քահանայից. և զմորուսնածիլել. և *զգլորեալն* կանգնել անխտիր: - 553. Եթէ ինքեամբ՝ եթէ ի ձեռն միքայէլի. ի մէջ վրանի և յաթոռն իւր սատակեսցի. և *գլորեսցի* մարմինն ակներև ժողովրդեան իւրոյ...: - 709. Երկրորդ՝ երկինք զիրեշտակս ասէ որ ի վայր *գլորեալ* խոնարհին ամենայն դասք. աթոռք կազմեալ, և սպասաւորք շրջապատեալ: - 729

**ԳԼՈՐՈՒԹԻՒՆ, ԳԼՈՐՈՒՄՆ +** Նոյնպէս և մի տէր յիսուս քրիստոս մի բնութեամբ էր աստուած, և եղև մարդ. հաւատացելոցն ի կանգնումն, և անհաւատիցն ի *գլորումն*: - 333. Ութերորդ՝ զի լիցի պատճառ

փրկութեան որ եղև պատճառ *գլորման*: - 468. և վասն առանձին *գլորման* պարտ է առանձնակի աղօթել և ապաշխարել: - 623

**ԳԼՈՒԽ +** Այսքան առ երկրորդն՝ տա՛սն *գլխով* եղեալ հակաճառութեանց զպատասխանիսն. և **բժան** *գլխով* առհասարակ տարահաճելիս: - 13. Ութերորդ ասեն, թէ աստուած ո՛չ կամի զչար, ապա կարեմք առնել ինչ զոր ո՛չ կամի աստուած. ապա ընդէ՞ր ասէ աւետարանն...: - 17. Դարձեալ ասեմք թէ՝ ո՛չ է բարի առանց աստուծոյ կամացն. և ո՛չ չար առանց թոյլ տալոյ նորա. ա՛յն է որ ասէ՝ տերև ո՛չ անկանի, և մազ մի ի *գլխոյ*. զի ո՛չինչ կարեմք առնել առանց կամաց՝ կամ առանց գիտութեան՝ կամ առանց թոյլ տալոյն աստուծոյ: - 18. Եւ զայլ ամենայն բնախօսութիւն յաղագս բարւոյ և չարի՝ գտցես ի Դիոնէսիոսի ի չորս *գլուխն* յաստուածային անուանսն. և ի ստորոգութիւնսն ի հակակայից ճառն. և ի սահմանս դաւթի ի վերջն որ է «ամենայն չար տանջելի»: - 24. Իսկ երրորդ *գլուխն* որ է՛ տեսութեամբ զգալեաց յերկինս և յերկրի: - 26. Եօթներորդ՝ Յայր իմ մեծ քան զիս. և պատասխանիք նոցա **ը** *գլխով*: - 29. Ութերորդ՝ Տէր ստացաւ զիս, և պատասխանիք նոցա դ *գլխով*: - 29. Իններորդ՝ Անդրանիկն արարածոց. և պատասխանիք նոցա **ե** *գլխով*: - 29. Մետասաներորդ՝ Աստուած աստուած իմ ընդէ՞ր թողեր զիս. և պատասխանիք նոցա **ը** *գլխով*: - 29. Երեքտասաներորդ՝ Ո՛չ կարեմ յանձնէ. և պատասխանիք նոցա **ժ** *գլխով*: - 29. Այլ և որդի և բան անուանի՝ **ժ** *գլխով*: - 29. Յովհւ՝ **ժ** *գլխով*: - 29. Մելքիսեդեկ՝ **ժ** *գլխով*: - 29. Փչումն՝ **ժ** *գլխով*: - 29. Տասներորդ՝ Վկայութիւնք վասն համագոյ Երրորդութեանն տասն *գլխով*: - 30. Մետասաներորդ՝ Թէ հոգին սուրբ աստուած է՝ **ի** *գլխով*: - 30. Երկոտասաներորդ՝ Առարկութիւնք մակեդոնի **ե** *գլխով*: - 30. Երեքտասաներորդ՝ Որք զհոգին՝ ի հօրէ՛ և յորդւոյ ասեն ութն *գլխով*: - 30. Առաջին *գլուխն* Ընդդէմ նեստորի **ի** *գլխով*: - 30. Երկրորդ՝ Ընդդէմ երկաբնակացն **ժդ** *գլխով*: - 30. Երրորդ՝ Զի ճշմարիտ աստուած է քրիստոս **ի** *գլխով*: - 30. Չորրորդ՝ Զի մի՛ է տէր մեր և աստուած մարմնով՝ **ի** *գլխով*: - 30. Ութևտասաներորդ՝ Զի մասունքն քրիստոսի աստուած է, ոտք և ձեռք և *գլուխն*: - 30. Զպետրոս *գլուխ* եղեալ, և զդաւանումն նորին կոխեն: - 34. Դարձեալ անդրանիկ է ըստ շնորհաց հոգւոյն զոր ընկալաւ ո՛չ վասն կարօտութեան՝ զի լիապէս ունէր այլ զի *գլուխ* էր մեր՝ ընկալաւ՝ զի յանդամս իւր սփռեսցէ: - 41. Այսպէս և զանհնազանդութիւնս մեր. զոր ոմանք ուրացութեամբ և կէսք ախտիւ՝ իւրն վերագրէ *գլուխ* գոլով անհնազանդ անդամոցն: - 42. Իսկ յորժամ հնազանդին ամենայն անդամք *գլխոյն* քրիստոսի գիտութեամբ և փոփոխմամբ, յայնժամ և ինքն լնու զհնազանդութիւնն, ընծայելով զհնազանդեալքս հօր: - 42. Այլ զի մեք թողեալք և անտես եղեալք յաստուծոյ վասն յանցանացն, զդէմս մեր տպաւորէ՛ յինքեան. բնութենակից գոլով մեր և *գլուխ* անդամոցս: - 42. *Գլուխ* գոլով մեր և լեզու. զտկարութիւն բնութեան անդամոցս ցուցանելով հօր: - 42. Յայտնի մեկնութիւն բանիս եդաւ ի չորրորդ *գլուխն*: - 43. Եւ ինքն աստուած ի վերայ ամենայնին՝ միաւորութեամբ *գլխոյն* ընդ անդամոցն: - 43. Զի նա *գլուխ* է մեր՝ և մեք անդամք. յորժամ տեսանէ զմեզ ի մեղս՝ հոգա՛յ և ցաւի վասն մեր: - 48. Վեցերորդ՝ իջումն ի յորդանան. զոր քրիստոս *գլուխն* մեր էառ և ետ ի յանգամքս: - 50. Վասն որոյ հարկաւորիմ ցուցանել նոյնքան *գլխով* եթէ աստուած է քրիստոս և ըստ մարմնոյն միութեան մարմնացեալ և մարդացեալ աստուած: - 72. Եւ դու այսպէս ընկալ և հաստատեա՛ ի քեզ. և լեր միացեալ ամենայն դիմօք և խաղալեօք ի համայնից *գլուխն* միշտ պաշտաճութեամբ ի քրիստոս: - 76. Զոր նախ յեկեղեցական քահանայապետութեան երեք *գլուխն* ասէ, «Ամենակատար և անշփոթ մարդանալովն՝ ըստ մեզ մարդասիրապէս ի բնութիւնս մեր տեսակացեալ. և առ բաժանականս մեր անայլայլաբար ըստ բնութեան միոյ յառաջ եկեալ»: – 83. Դարձեալ սուրբն յոթթէոս յերկրորդ *գլուխ* աստուածային անուանցն ասէ, «զի և բնութեամբ ի չափ եկն յաղագս մարդասիրութեան. և ճշմարտապէս էացաւ և ա՛յր եղև գերագոյնն աստուած»: – 83. Իսկ անհատ ասի՝ զի ո՛չ քակտի և ո՛չ հատանի որպէս բոլորն ի մասունս. զի թէ բաժանես զնա որպէս ի հոգի և ի մարմին, կամ յոտս և ի ձեռս և ի *գլուխս*, ո՛չ մնայ բոլորն: - 86-87. Եւ ո՛չ անննմանամասնաբար. որպէս պետրոս՝ յոտս և ի ձեռս և ի *գլուխս*. զի նոքա ո՛չ միմեանց և ո՛չ բոլորին հոմանունաբար ասին: - 88. Զի՞նչ պատասխանեմք երկաբնակացն որք հարցանեն զմեզ, թէ մասունքն քրիստոսի աստուած է՝ այսինքն ոտքն և ձեռքն և *գլուխն* ապա բազմաստուածք էք: - 91. Ապա ուրեմն յայտնապէս նոքա ուրանան զայս, և ասեն թէ՝ ձեռքն քրիստոսի ոչ է աստուած. և *գլուխն* քրիստոսի ո՛չ է աստուած. և այլն. զի մի բազմաստուածք լիցին: - 91. Ապա ո՞րպէս է *գլուխ* նա ամենայն իշխանութեանց և պետութեանց և ուսուցիչ: - 99. Իսկ դամասկացին յոհան՝ *գլուխն* երկաբնակաց ասէ՝ «բոլոր աստուածութիւնն է միաւորեալ ընդ մարդկային բնութիւնն ի քրիստոս. և տեսանի ի հոգւոյն քրիստոսի»: – 100. Տե՛ս՝ զի հոգին բղխումն է հօր անձամբ. և առումն յորդւոյ իմաստութեամբ. որպէս ցուցաւ ի վեց *գլուխն* ի **ժգ** համարն: - 105. Նմանապէս և հասարակն թէպէտ բազում է, այլ երկոտասան *գլխով*

նշանակի. նախ Բնութիւն. որ նոյն է էութիւն. ապա Բարութիւն. Կամք. Անմահութիւն. Իմաստութիւն. Լուսաւորութիւն. Գեղեցկութիւն. Անփոփոխութիւն. Ցնծութիւն. Փառք. Իշխանութիւն. և Արարչութիւն: - 105. Որպէս ասէ սուրբն դիոնէսիոս յաստուածային անուանսն **բ** *գլուխն*, «զի միայն աղբիւր գերագոյ աստուածութեանն է հայր. և ո՛չ հակադարձին առ միմեանս»: – 106. Դարձեալ՝ գիտելի է, զի հին աւուրց և ծեր ետես դանիէլ. «հեր *գլխոյ* նորա սպիտակ իբրև զձիւն»: – 115. Նախ՝ զի լպրծի՛ միտք մեր և մոռանայ զբանն. զի հով և գէջ է պարուտակն և ուղեղ *գլխոյն*: - 120. Յատկութիւն արեգականն ասացեալ է յառաջիկայսդ ի *գլխով* ի **ժբ** *գլուխն* **իա** համարն: - 124. Նոյնպէս զլուսոյ և զհրոյ յատկութիւնս բաղդատել դիւրին է իմանալի լուսոյն ճշմարտի. որպէս գրեալ ի ի *գլուխն* լե համարն տե՛ս անդ: - 127. Վեցերորդ՝ սկիզբն եկեղեցւոյ որպէս հիմն. և վախճան որպէս *գլուխ* և կատարումն: - 129. Հինգերորդ՝ ոտքն են հաւատացեալք և առաքեալք նորին. և *գլուխ* է քրիստոս. զի անդամք և մարմին եմք նմա ըստ առաքելոյ: - 130. Չորրորդ՝ հրեշտակն անփոփոխ է. իսկ հոգին փոփոխական. որպէս ասացաք ի **լզ** *գլուխն*: - 141. Եւ զայլսն ասացաք ի **ը** *գլուխն*: - 141. Եւ ցուցցէ թէ իշխան և *գլուխ* էր սադայէլ իւրոյ դասուցն: - 148. Հինգերորդ՝ զի հոգևոր բնութիւնն միանգամ միայն է շրջելի. վասն զի բոլորովին շրջէ զինքն՝ զոր ո՛չ առնէ մարդն. զի մարմինն միշտ մարտնչի ընդ հոգին. որպէս յառաջիկայդ ասի **լբ** *գլուխն*: - 151. Զի՞նչ է հրեղէն վիշապն. որպէս ասէ տեսիլն **լգ** *գլուխն*: - 151. Զայսմ վիշապէ՛ ասէ՝ *զգլուխ* վիշապին փրկիչն ջախջախեաց ի յորդանան. այն է որ զամենայն ջուրս ծովուն յակնակապիճս իւր ընդունէր: - 151. Զի՞նչ է է *գլուխն* և **ժ** եղջիւրն: - 151. Եօթն *գլուխն* է է չար զօրութիւն նորին. որպէս հոգւոյ մարդոյ է բարի զօրութիւնք են և է առաքինութիւնք...: – 151. Եւ այն որ **ժ** է եղջիւրք և **է** *գլուխ*: - 151. Զի **գ** *գլխոյն* կրկին է եղջիւր. որ է հպարտութիւն՝ նախանձ՝ և բարկութիւն. զի սոքօք յաջ և յահեակ պատերազմի. և առ ընտիրս և առ խոտանս գտանին բազում ուրեք երեքին ախտքս այսոքիկ: 151-152. Զի՞նչ է **է** խոյրն ի *գլուխ* վիշապին: - 152. Զի զորս քրտամբք և աշխատութեամբ յաղթէ՝ զնոյն պսակն ի *գլուխն* իւր դնէ: - 152. Նոյնպէս և առ մեզ՝ որք մրցին և ջանան ընդ դէմ բանսարկուին և մեռուցանեն զէ *գլուխ* նորա՝ նոքա զնոյն պսակն ժուժկալութեամբ և առաքինութեամբ ընդունին ի *գլուխս* իւրեանց յիւրաքանչիւրոցն զորս կոխեն և յաղթահարեն. որպէս ասէ ի տեսիլն, «որ ոք յաղթէ՞ ընկալցի զպսակն կենաց ի *գլուխս* իւր»: – 152. Երրորդ՝ *գլուխ* վիշապին՝ է մեղքն, և տուտն մահ և դժոխք: - 152. Քսանն**թ**) Նշանակութիւնք աւուր՝ **ժե** *գլխով*: - 154. Երեսուներորդ) Յատկութիւնք առաւօտու և հասարակ աւուր. երեկոյի և գիշերոյ. տասն տասն *գլխով*: - 154. Երեսուն**ն**ե) Յատկութիւնք հրոյ քան *գլխով*. և հակառակ գործոյ նորին: - 155. Յիսուն**ն**բ) Իմաստութեան օձին նմանիլ. և թէ *զգլուխն* ջախջախեմք. և թէ թոյնքն ի *գլուխն* է: - 155. Իսկ ի նոյն ինքն՝ առաջին է նախախնամութիւնն առ աստուած, և ապա՛ ստեղծումն. զի վասն նախախնամական բարութեանն կամեցաւ ստեղծանել զեղեալքս. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս ի **դ** *գլուխն* որ յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց: - 157-158. Երրորդ՝ աչք մեր որ է՛ լոյս՝ ի վերին մասն *գլխոյս*. և լուսաւորքն յերկինս. զի մերձաւոր նմանն զնմանն տեսցէ: - 188. Ժամանակն թէ ո՞րպէս բաժանի ի մշտնջենաւորն և յաւիտեանցն՝ ասացաւ ի վերոյ ի **ը** *գլուխն* **ժբ** համարն: - 198. Այլ և մովսէս հրամայեաց յամենայն ամսամուտս տօնել և փող հարկանել. ըստ այնմ՝ «փող հարէք ի *գլուխս* ամսոց յաւուր նշանաւորի տարեկանաց մերոց»: – 200. Քանզի եբրայեցիք և մակեդոնացիք՝ Զաւելեաց աւուրքն դնեն *գլուխ* տարւոյ. և ասեն օր առաջին. և **բ**. և **գ**. և **դ**. և **ե**. և վեցն մուտ Նիսան ամսոյ. որ թարգմանի կազմութիւն: - 200. Եւ օրինակ տայ զկերակուրն որ ի ստամոքսն եփի. և գոլոշիկքն ի *գլուխն* ելանէ և պարզ ջուրն ի լեարդն. իսկ մնացեալ թանձրն լինի դառն և աղի: - 208. Վասն է՞ր ի ստորոտս լերանց առաւել շող լինի քան ի *գլուխն* որ մե՛րձ է արեգական: - 211. Զի տղայութիւնն օդո՛յ է. և միջին հասակն հրոյ և հողոյ. և վերջինն ջրոյ. վասն այն սպիտակի. որպէս ցուցանի յառաջիկայդ **ժզ** *գլուխն* **իզ** համարն: - 213. Զի մարդն ունի *զգլուխն* ի վեր որպէս երկինքն. և զոտքն ի վայր որպէս երկիրս. վասն որոյ ամենայն ծորմունք բնականապէս զառիվա՛յր հոսին. իսկ ծառն ծռեալ ունի *զգլուխն* ի վայր, և զոտսն ի վեր. կամ թէ ծռեա՛լ ունի զոտս և զստեղունս յայս կոյս և յայն կոյս: - 214. Սոքա ի *գլուխս* նոցա նստին: - 216. Զի թէ մարդն ունէր զբնութեամբ զէնս, որպէս թէ եղջիւր ի *գլուխն*. և սուր զատամունսն. ճիրանունք ի ձեռս. և սմբակ կամ կճղակ ոտիւք. և զայլսն, Նախ՝ զի գազանադէմ և դժւարատես լինէր ամենեցուն: - 217. Երրորդ՝ զգուշանայ *գլխոյն*: - 218. Երրորդ՝ զիւատն որ է *գլուխ*՝ պահեսցէ, զի մի՛ մոլորեսցի զհետ հերձուածողաց: - 218. Վասն է՞ր զօձին *գլուխն* ջախջախեն: - 218. Երկրորդ՝ զի թո՛յլ է *գլուխ* օձին: - 218. Հինգերորդ՝ զի մարդն *գլուխ* է ամենայն կենդանեաց, զնա սպանանել ջանայ: - 218. Վեցերորդ՝ զի *գլխոյն* այսինքն տեառն աստուծոյ՝ իմանալի օձն հակառակեցաւ: - 218. Եօթներորդ՝ օրինակ՝ զի քրիստոս *զգլուխ* վիշապին խորտակեաց: - 218-219. Ութերորդ՝ օրինակ՝ զի *գլուխ* օձին է չար խորհուրդն

որ մտանէ ի մեզ. պա՛րտ է սպանանել զնա: - 219. Վասն է՞ր զթոյնք մահուն ի *գլուխն* ունի: - 219. Եւ որպէս ընդ *գլխոյն* պատերազմեցաւ, *գլուխն* սատակեցաւ: - 219. Երրորդ՝ ի նոյն իսկ ի ձևոյ շինածոյ մարդոյն. զի ուղիղ գոլով՝ զիշխանականն նշանակէ. իսկ կենդանիքն կո՛ր *գլխով* զծառայականն ցուցանեն: - 220. Ո՛չ թէ քան զտարրական հուրն ի վե՛ր է անցեալ. այլ զի լուսինն և արեգակն միշտ ի հարաւոյ կողմանէ ի ստորոտէ լերինն ելանեն. և ի հիւսիսոյ կողմն լերինն միշտ գիշեր լինի. որպէս աղէքսանդրու պատմութիւնն ասէ. և ի *գլուխն* միշտ լոյս. և ի հարաւոյ կողմն տիւ և գիշեր: - 222. Ութերորդ՝ Վասն *գլխոյն* և մազին: - 227. Այսպէս մարմին մարդոյ որ քան է երկայնութեամբ ի գագաթէ՛ *գլխոյն* մինչև ի ներբանս ոտիցն, նոյն քան է լայնութիւն ի մէջ երկուց երկայն մատիցն ձեռաց: - 232. Բոլորակ *գլխոյն* երկնի: - 232. Եօթն ծակ *գլխոյն* եօթն մոլորակացն: - 232. Վասն է՞ր մարդոյս ձևն ուղիղ. *գլուխն* ի վերայ. և այլ անդամքն ի ներքոյ: - 232. Այսպէս և *գլուխն* ի մարմինն է՛ վերջին մասն. որ է՛ գործիք բանին. և սիրտն ի մէջն. և երիկամունքն վերջին: - 232. Երկրորդ՝ պատուական մասն մարդոյն *գլուխն* է. վասն որոյ զվերինն և զառաջինն ընկալաւ տեղի: - 232. Այսպէս *գլուխ* մարդոյս ունի զնմանութիւն երկնից. զի է՛ բոլոր. և աչքն որպէս լուսաւորքն. և իմացումն ի նմա՛ որպէս իմանալիքն յերկինս: - 232. Վասն որոյ *գլուխն* է՛ ի վերոյ. և խռչափողն որ ունի զտուր և զառն՝ օդո՛յդ է նման. և ի ներքոյ այլ մարմինք և հիւթ արեան և ջրոյ՝ երկրիս է օրինակ: - 232-233. Չորրորդ՝ ի *գլուխ* մարդոյն սակաւ է հողն և օդն բազում. վասն այն ի վերո՛յ է: - 233. Վեցերորդ՝ զի բաժանեսցի մարդն ի կենդանեաց և ի տնկոց. զի տունկք զհակառակն ունին զարմատն որ է՛ *գլուխ*՝ ի յերկիր, և զոտն ի յերկինս: - 233. *Գլխոյն* հերն որպէս արմատ. և ջիլք և ոտք՝ որպէս ոստք ըստ ձևոյ աշխարհի: - 233. *Գլուխն* որպէս երկինք ի վերոյ. և ոտքն որպէս երկիր ի ներքոյ. զի ծանրութիւնք և ծորմունք ամենայն ի վայր հոսեսցին: - 233. Եօթներորդ՝ վասն զգայութեանցն, որ ամենեքին յառաջ հեղուն յուղեղէն, և ազատապէս տեսանեն և իմանան. զի թէ *գլուխն* և ուղիղն ի վա՛յր էր քարշեալ և կորացեալ՝ ո՛չ կարէր ուղղակի զգալ և իմանալ. որպէս այլ կենդանիք: - 233. Ութերորդ՝ վասն արտաքին զգայութեանցն որ են ի *գլուխն*. զի այլ կենդանիք միայն հեշտանան կերակրով և ցանկութեամբ. իսկ մարդն հեշտանայ առաւել գեղեցկութեամբ զգալեացս. յորժամ տեսանէ աչօքն զերկին և զերկիր. և ժողովէ՛ զճշմարիտ գիտութիւն նոցա և հեշտանայ: - 233. Իններորդ՝ ի վեր է *գլուխն*, զի լեզուն և ձեռն սպասաւորեսցեն բանի և գործոց: - 233. Եւ ապա՝ զաւելորդ ծորումն ի *գլխոյն* ի վայր հոսեսցէ: - 235. Նոյնպէս և *գլուխն* է տապաղա՛յ է: - 239. Նա՛խ՝ *գլուխն*: - 241. Որպէս ասեն տօմարագէտք, Խոյն *գլուխն* որ է՛ պարսիկք. և այլն: - 241. Երկրորդն ուղեղ *գլխոյն* է. հով է և գէճ ընդ դէմ սրտին ջերմութեանն և չորութեանն. զի բարեխառնեսցէ՛ զնոսա. և իւր տանուտէր լուսինն է: - 241. Որ և անդ բաժանի հրատեսակն ի տեսանելիքն. և ծխատեսակն ի մազ *գլխոյն*: - 242. Նա՛խ *գլուխ* մարդոյն **դ** ոսկր է: - 243. *Գլուխն* մեծ, ցուցանէ զդէշն: - 246. Եւ *գլուխն* տափակ, նշանա՛կ է յանդգնութեան: - 246. Երկայն և կակուղ *գլուխն* զգուշաւո՛ր է: - 246. Ունկն կողմանեալ ի վերայ *գլխոյն* ծո՛յլ է: - 246. Եւ զանազանութիւն ներքին և արտաքին զգայութեանցն ասացաւ ի վերոյ յաղագս հրեշտակաց ի **ը** *գլուխն*, ի **ժգ** համարն: - 249. Մարմնոյս՝ *գլուխն*: - 250. Յոգւոյն *գլուխ*՝ միտքն: - 250. Զի լոյս Բանին և պայծառախօսութիւն՝ ի խելքն ծագէ. և Իմացականն՝ ի միջին փորուած *գլխոյն*: - 250. Եւ բնակա՛ն է, զի յանկատարէն ի կատարեալն ելանէ. որպէս աստիճանաւ ի *գլուխ* սանդղոյն. և ի սակաւուն ի բազումս. այսպէս և հոգի: - 258. Նախ ասեն ոմանք, եթէ ուղեղ *գլխոյ* անբանիցն ընդ խելապատակին ունի չորութիւն և հովութիւն. և ջիլքն ի նմանէ յառաջեալ յանդամս մարմնոյն՝ փութապէս պնդէ՛ և տայ շարժիլ: - 266. Եւ իմաստակ կոչին՝ որք միոյ արհեստի են *գլուխ*. որպէս քերականութեան. ճարտասանութեան. աստղաբաշխութեան. և այլք. որպէս պիհռոնացիք ակադիմեանքն. որք հակառակ կոչին: - 269. Նա՛խ՝ ի թագն. զի *գլուխ* և *տէր է* բոլոր հնազանդելոցն: - 271. Երկրորդ՝ զի մի՛ անփոյթ և անհնազանդ եղիցի մարդոյն. այլ ի նմանէ՛ ի կողիցն, զի որպէս մարմին հնազա՛նդ լիցի *գլխոյն*: - 276. Երրորդ՝ զի որպէս խօսիլ *գլխոյն* է. նոյնպէս լռութիւն կողին է. զի լուռ լիցի կինն ընդ իշխանութեամբ առնն: - 276. Վեցերորդ՝ ո՛չ առնու ի *գլխոյն* և ո՛չ յոտիցն. այլ ի միջացն. զի խրատէ՛ զմարդիկ ո՛չ հաւասար *գլխոյն* պատուել զկինն, և ո՛չ անարգել իբրև զոտք. այլ միջակ պատուով չափաւորել զնա: - 276. Տասնևզ՝ Բաղդատութիւն յովսէփայ և տեառն **ի** *գլխով*: - 283. Տասնէ՝ Բաղդատութիւն մահու և յարութեան **ծ** *գլխով*: - 283. Տասնը՝ Առիւծու ընդ տեառն բաղդատութիւն **ի** *գլխով*: - 283. Քսանգ, Բաղդատութիւն մովսէսի և տեառն **լ** *գլխով*. և ազգահամարն աբրահամու: - 283. Երրորդ՝ զի ո՛չ հայէր ի վեր. երկաթի կապիճս եդեալ ի *գլուխն*: - 290. Եւ **յ** կանգուն երկայն, զի ի կրնկէն ի գագաթն լար չափեալ՝ **դ** պատ առնու *զգլխովն*: - 293. Իսկ քաղելով գործելն, զի սկսեալ բնութիւնս մեր ի *գլխոյն* լայնանայ ի թիկունքն՝ և նրբի ի կրունկն, և բոլորեալ դարձեալ կատարի ի *գլուխն*: - 293. Իսկ երեսունն, մինչ ի մեծն թէոդոս. որ եբարձ զամենայն մեհեանս կռոցն և բարձրացաւ

սուրբ խաչն ի *գլուխս* գմբեթարդ սուրբ եկեղեցեաց: - 294. Վասն քրիստոսի և մելքիսեդեկի, ասացեալ է և յայլ ուրեք ի վերոյ ի գիրս աստուածաբանութեան **ե** *գլուխն* ի համարքն: - 302. Եւ տէր մեր *գլուխ* հրէից և հեթանոսաց: - 305. Իններորդ՝ ևս մեծագոյն խորհուրդ. զի անդրանիկ բանն աստուած ի հօրէ՛ ծնեալ՝ եկն ի բնութիւնս մեր և եղև *գլուխ* մեր...: – 309. Չորրորդ՝ զի մի է և միակ անդրանիկն ի մէջ բազում եղբարց. որպէս մի է *գլուխն* և բազում անդամք: - 310. Ջարծաթն է առ ի համարոց *գլխոցն* կէս երկդրամի որ է՛ **ժ** դանկ: - 344. Իբր՝ քահանայապետն *գլուխ* գոլով՝ առեալ զբոլոր արարածս նուիրէ աստուծոյ: - 348. Նոյնպէս և արդարութիւնն հաւասար է. զի ի *գլխո՛յն* է կենդանութիւն և մահ: - 358. Եւ զայլն բովանդակ մորթով և փորոտիւք և *գլխով* հանեն ի մոխրակոյտն և այրեն անդ: - 358. ...*զգլուխն* ե երորդ մասամբն ի յետ դարձուցանել որ է՛ տուգանք ե զգայարանացն որ մոռացաւ և ո՛չ զգաց զօրէնս աստուծոյ: - 358. Բաց յայսցանէ **բճծբ** *գլուխ* ոսկի տուփ խնկով: - 359. Եւ դնել զձեռն ի *գլուխ* կենդանւոյն: - 359. *Գլուխ*՝ զմիտքն նշանակէ. և Ոտք զվարքն: - 360. Նա՛ է ողջակէզ և փրկութիւն և գոհութիւն, և վասն մեղաց և յանցանաց. և յամենայն նւիրաց կատարումն և *գլուխ* նա՛ է: - 362. Եւ այսպէս ըստ բարուց մարդկան ընտրէր նոյ ի սրբոցն է. և յանսրբոցն **բ**. որպէս ասացաւ ի վերոյ **ժզ** *գլուխն* ի **զ** համարն: - 364. Հինգերորդ՝ մասն. որ է՛ *գլխոյն* հատումն ուր ամենայն զգայութիւնքն են. և թէ այլ ինչ մասն հատցի՝ կամ *գլուխն* ջախջախեսցի՝ ո՛չ է ուտելի: - 365. Հինգերորդ՝ զի ա՛յրն է *գլուխ:* - 365. Ապա պա՛րտ է զի այրն հեղցէ զարիւնն և բաժանեսցէ *զգլուխ* կենդանւոյն: - 365. Հինգերորդ՝ ընտրելի է մասն որ է հատումն *գլխոյ*. յառաջուստ ուր են շնչերակքն՝ արիւնն և այլքն: - 366. Նա՛խ՝ զի բոլոր զգայարանքն են ի *գլուխն*. պա՛րտ է բաժանել զնոսա: - 366. Եւ թէ *գլուխն* ջախջախի, ո՛չ է ուտելի. զի ո՛չ հատաւ պարանոցն. ի հեղձուցելո՛ց կարգի է: - 366. Եւ *գլուխն*, զի ե զգայութեամբ մեղանչեմք: - 367. Մարմնոյն բորն, գործոց մեղքն. և *գլխոյն*, հաւատոցն: - 367. Արիւն ուտելն՝ և հեղձուցանելն՝ և գազանաբեկն՝ մի էր մեղք՝ որպէս ասացաւ ի վերոյ **ժը** *գլուխն* ի **զ** համարն: - 371. Վասն որոյ ի միասին տօնեմք խաչի և եկեղեցւոյ. որպէս ասացաւ ի **լե** *գլուխն*, **լը** համարն: - 373. Նախ է՝ որ ո՛չ *գլուխն* խնդրի և ո՛չ շահ. որպէս ողորմութիւն: - 375. Երկրորդ՝ որ *գլուխն* խնդրի և ո՛չ շահ. որպէս փոխն: - 375. Երրորդ՝ որ *գլուխն* և շահ. որպէս ի վաճառս: - 375. Եւ նոյն այս որ շահ և *գլուխ* խնդրի, բաժանի յերեք: - 375. Իսկ այլք ի **դ** բաժանեն ըստ չորից տարերաց և դ պահու գիշերոյն. որպէս ասացաւ ի վերն ժզ *գլուխն* **իզ** համարն: - 378. Յորժամ և զձեռն դնեն ի *գլուխ* մեղուցելոյն: - 384. Հինգերորդ, զի *գլուխ* անկեան. և այս է վէմն: - 386. Իններորդ՝ *գլուխ* և տուտն ցասումն է և տրտմութիւնն զկնի. և ամենայն մեղաց յետ գործոցն տրտմութիւն հետևի: - 387. Եւ դարձեալ վասն օձին տե՛ս ի հարուածն եգիպտոսի ի **ի** *գլուխ* համարոյն: - 387. Եւ վասն առաջին օձին ի **ժզ** *գլուխ* համարոյն տես թէ պիտի: - 387. Ջոր եզեկիա խարտեաց. որպէս մովսէս *զգլուխ* որթոյն և կորոյս: - 387. Եւ վասն կախարդաց գրեալ է ի վերոյ ի **ի** *գլուխն* **իէ** համարն: - 389. Եւ ի *գլուխն* սուր ո՛չ ելցէ որպէս սամփսոնին: - 390. *Գլուխն* նշանա՛կ է մտաց. զոր չէ պարտ յաւելուլ՝ և ո՛չ պակասել. որպէս մուրճ ո՛չ գործէր ի սեղանն զի մի՛ պղծեսցի: - 390. Ղևտացւոց **իը** *գլուխն* ասէ՝ «սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո»: – 396. Երրորդ՝ օրինական. զի որպէս մին *գլխոյ* բազում անդամ կարէ՛ լինիլ. այլ ո՛չ անդրադարձեալ: - 401. Նոյնպէս *գլուխ* է այր կարէ՛ բազում կանայս առնուլ: - 401. Միանգամայն ի սկզբանէ գրոց արարածոցն ժողովին **ե** *գլխոյն* անուանք արարչին: - 412. Չորրորդ՝ Բաղդատութիւն յեսուայ և տեառն **լ** *գլխով*: - 412. Եօթներորդ՝ Բաղդատութիւն սամփսոնի և տեառն լե *գլխով*: - 412. Տասներորդ, Բաղդատութիւն սաւուղայ և տեառն **ժ** *գլխով*: - 412. Ութևժ, Բաղդատութիւն դաւթի և տեառն **ձ** *գլխով*: - 413. Քսանևմի, Բաղդատութիւն սողոմոնի և տեառն **լ** *գլխով*: - 413. Քսանբ, Դշխոյն հարաւոյ. և առաւել քան զսողոմոն. **ժժ** *գլխով*: - 413. Եւ ի մեծի ուրբաթի խաչին, լուսինն ընթացաւ և ձգեցաւ յարևն, և յետս դարձաւ. որպէս ցուցանի յառաջիկայդ առ խաչելութեամբն ի **լ** *գլուխն* ի **իզ** համարն: - 416. Եւ զաղխեալ դուռն քաղաքին եդեալ ի յուսն եհան ի *գլուխ* լերինն: - 420. Եւ թէ զի՞նչ է խորհուրդն, գտցես ի չորրորդ թագաւորութեանց վերջքն **իթ** *գլուխն* **լ** համարն: - 421. Նշանակ եօթնարփեան հոգւոյն ընկալեալ անկարօտաբար իբր ի *գլուխ* տէր մեր, և պարգևեալ անդամոց իւրոց: - 422. Եւ զօրութեամբ խաչելոյն *գլուխ* չարին ջախջախի. և սրբին անդամք մեր: - 424. Երեսունգ, սամփսոն զսրունս և զերանս թշնամեաց՝ և յետոյ *զգլուխն* ջախէր: - 424. Ջի սամփսոն ի ժամ գերծելոյ *գլխոյն* թմրեալ ի ծունկս թալիլայ խոնարհէր. նոյնպէս և ամենայն մեղք զոր գործէ մարդ, և առաւել գէճ ցանկութիւն, անարգէ զմարդ: - 424. Եւ *գլուխն* և ձեռն և ոտն հատեալ: - 425. Նա՛խ՝ զի մի՛ համարեսցեն այլազգիք թէ դիքն իւրեանց առաջի ընթացան և *գլուխ* եղեն զօրացն և հարին զպատերազմն: - 425. Երկրորդ՝ զի ժողովուրդն ոտիւք գայր, և զձեռս տարածէր, և *զգլուխսն* խոնարհեալ երկիր պագանէին. վասն որոյ հատան այնպիսի մասունքն: - 426. Չորրորդ՝ նշանակ իմանալւոյն դագոնայ, որ *զգլուխ* իւր ամբարձ ընդ դէմ աստուծոյ. և ընդ բռամբ էարկ

և կոխեաց զմարդկային ազգ. զորս խորտակեաց տէր մեր: - 426. Յինգերորդ՝ զընթացս մեղաց և զգործն որ է սկզբնական և ներգործական մեղք, և *զգլուխն* որ է՛ մահ և ապականութիւն, խորտակեաց քրիստոս...: – 426. Ութերորդ՝ նա՛ ուսովք էր բարձր քան զամենայն մարդ. և տէր մեր ո՛չ միայն աստուածութեամբն որ *գլուխ* է, այլ և չարչարանօք իւր՝ գերագոյն և բարձրագոյն ցուցաւ. զի փրկեաց զամենայն: - 427. Ապա ուրեմն յա՛յտ է սոքօք երկոտասան *գլխով* թէ փուկն ո՛չ գիտէր զառաջիկայն: - 428. Քսանգ, զօրավար կարգեցաւ դաւիթ. և տէր մեր *գլուխ* զինուորաց եկեղեցոյ: - 436. Վաթսուներորդ, մարտեաւ ընդ ադրիազարու և սպան զնա և քակեաց զկառս նորա, և զթագն եդ ի *գլուխ* իւր...: – 438. Յետիոտս փախեաւ և ծածկեալ *գլխով*. և նոյնպէս տէրն ի խաչին: - 438. Այլ և գոհացաւ ի վերջոյ ի վերայ ամենայն յաղթութեանցն. և տէր մեր ի վերայ ամենայն ներգործութեանցն. որ և ամենայն օրհնութիւնքն ի տէրն ակնարկէ. որ եղև *գլուխ* հեթանոսաց. յաղթեաց մահու և բարձրացաւ ի գերեզմանէ: - 438. Իսկ ի մէջ ծնկաց *գլուխն* այն է, որ զծունկն ի գետինն եդ, և *զգլուխն* հանդէպ նմին. և յայսկոյս և յայնկոյս զձեռսն խաչանման ի գետինն: - 444. Աւետարանն չորս *գլուխ*: - 450. Քսանեմի, Գիր ի ձեռն. և խաչ ի *գլուխն*: - 454. *Զգլուխ* վիշապին ջախջախեաց: - 454. Է՛ և այլ եղանակ ծննդեան տն բաղդատութեամբ առ մովսէս ասացեալ ի վերոյ ի ի *գլուխն*, ի **իգ** համարն: - 472. Երրորդ՝ կոչի անդրանիկ ըստ հոգւոյն շնորհաց. զոր նախ ընկալաւ իբր *գլուխ*՝ և եհեղ յանդամքս իւր: - 473. Զօծումն մարմնական ընկալաւ ի պոռնիկ կնոջէն յորժամ եբեկ զշիշ իւղոյն ի *գլուխ* նորա ի տան սիմոնի: - 474. Զի այսպէս միատեսակ բնութեամբ խոստովանի ընդ մեզ և այլ ժողովուրդ ուղղափառաց ըստ ուսուցման մեծին դիոնիսեայ յերկրորդ *գլուխն* եկեղեցական քահանայապետութեանն ասել...: - 477. Տասներորդ՝ քրիստոս փեսայ կոչի և եկեղեցի հարսն հոգևոր. և նա՛ *գլուխ* և մեք անդամք և ժառանգակիցք: - 480. Ա՛րդ՝ փեսայ և *գլուխ* և ժառանգ արուն է և ո՛չ էգն. վասն այն արու ծնաւ քրիստոս: - 480. Զի՞նչ է որ ի փրկչական պատկերն գիր ի ձեռն և խաչ ի *գլուխն* նկարեն: - 481. Իսկ որ ի *գլուխն* խաչ նկարեն: - 481. Չորրորդ՝ զի կամաւ հնազանդեցաւ խաչի և չարչարանաց. վասն այն ի *գլուխն* է նկարեալ: - 481. Յինգերորդ՝ զփշեղէն պսակն որ ի խաչին ի *գլուխն* էր՝ նշանակէ՛: - 481. Երկրորդ՝ զի խորտակեսցէ *զգլուխ* վիշապին ի ջուրն: - 486. *Զգլուխն* ի յորդանան ջախջախեաց, և զտուտն ի գերեզմանն և ի դժոխս: - 488-489. *Գլուխ* օձին մեղքն է. և խայթոց՝ կարճին մահն: - 489. Եւ այժմ մեք ջրով մկրտութեանն ջախջախեմք *զգլուխն*. այսինքն զսկզբնական մեղքն: - 489. Զամբարտաւանութիւնն՝ խոնարհումն *գլխոյն*: - 489. Առաջինն է խոնարհումն *գլխոյն*. ի համբոյր և ի նշան հաշտութեան մերոյ: - 489. Եօթներորդ՝ *գլուխն* և պատուանդանն նշանակէ՛ միաւորեալ զաստուածութիւնն և զմարդկութիւնն քրիստոսի. որ խաչեալն է ի նմա: - 493. Այլ և խաչածև՛ է մարդ, *գլուխ* տարրական կենդանեաց: - 494. Յինգերորդ՝ ապականութիւն մեր մարմնոցս է՛ ի սերմանէ հօր ի ձեռն կնոջ խառնեալ. իսկ մարմին բանին ո՛չ է ի սերմանէ հօր և մօր. այլ ի կուսական արգանդէ և յանապական արենէ բեղնաւորեալ որպէս ցուցաւ ի վերոյ ի սոյն *գլուխ* ի **ժ** համարն. ապա ուրեմն անապակա՛ն է մարմին բանին աստուծոյ: - 499. Եւ այս ցուցաւ ե *գլխով* ի վերոյ ի **իբ** *գլուխն*: - 502. Ասեմք, զի ո՛չ ունին շունչ օդոյ այլ շունչ ջրոյ. և հանեալ ի ջրոյն պակասի շունչն. որպէս ասացաւ ի վերոյ ի **ժը** *գլուխն* ի **զ** համարն: - 511. Եւ ըստ եկեղեցոյ ցուցաւ խտրութիւնն ի վերոյ ի **իա** *գլուխն* **խե** համարն: - 511. Ծալեալ վարշամակն նշանակէ զաստուածութիւնն որ *գլուխ* է. և կտաւն զմարդկութիւնն: - 517. Եւ այլ ևս գտցես յաստուածաբանին ճառն յառաջքն գրոցս ի եօթն *գլուխն*՝ ի **ժգ** համարն: - 518. Իսկ թէ **ը** օր տօնեմք, ասացեալ է ի վերոյ ի **իա** *գլուխն*, **ծա** համարն: - 525. Երրորդ, Քրիստոս *գլուխ* եկեղեցւոյ և հիմն: - 525. Իններորդ, Թէ ո՞րպէս է պետրոս *գլուխ*: - 525. Քառասունևե, Կանոն *գլուխ* և այլ կարգ. սաղմոս. և անբիծք: - 527. Եւ վասն հիւանդութեան ասասցի յառաջիկայդ ի լզ *գլուխն* ի բ համարն գիտ: - 531. Ա՛րդ՝ առաջին հիմն քրիստոս է և *գլուխ*. և հաւատացեալքն շինուածք ի նա. և հայր շինօղ: - 531. Վասն այսորիկ հիմն հաւատոյն և *գլուխ*՝ է երեք ամենայն հաւատացելոց: - 532. Իսկ վասն շինուածոց ասացեալ է յառաջիկայդ ի **լե** *գլուխն*, ի **լէ** համարն: - 532. Զ՞ինչ է որ քրիստոս *գլուխ* կոչի և եկեղեցի անդամք: - 532. *Գլխոյն* հարկաւո՛ր է կրկին իր: - 532. Այլ գիտելի է, զի քրիստոս *գլուխ* է եկեղեցւոյ, և հաւատացեալք մարմին և անդամք նմա...: – 532. Եւ այս վասն բազում յատկութեանց *գլխոյ*: - 532. Նա՛խ՝ որպէս մի է *գլուխ*, և անդամք բազում: - 532. Երկրորդ՝ միով *գլխով* բոլոր անդամք ամենայն մի են հաղորդութեամբ նմա: - 532. Երրորդ՝ ի *գլխո՛յն* իջանեն կենդանութիւնք և զօրութիւնք և առողջութիւնք և շարժութիւնք ի բոլոր անդամս ի ձեռն ջլոյն: - 532. Չորրորդ՝ ի *գլխո՛յն* է տեսողութիւն և լուր և վայելչութիւնք համոց և հոտոց: - 532. Յինգերորդ՝ ի *գլխո՛յն* են փառք և խնդութիւն. բան և իմաստութիւն: - 532. Այս քան վասն հիման և *գլխոյ* եկեղեցւոյ: - 532. Մի կոչի եկեղեցի՝ ո՛չ տեղեաւ մի. այլ միով հաւատով և յուսով կոչմանն. և միոյ մօր և մի որովայնի ծնունդ աւազանին. և մի կերակուր որ է

տեսութիւն աստուածային գրոց. և մի մարմին և արիւն փրկական. և մի *գլուխ* և պսակ և զգեստ ունիմք զքրիստոս: - 533. Երրորդն ի միոջէ և առ մի. որպէս բժշկական դեղ և գործիք. նոյնպէս մի է եկեղեցի յիւրաքանչիւր ազգս. զմի և զնոյն ունելով գործ և իր ի միոյ *գլխոյն* առ մի անդամքս. ի միոյն քրիստոսէ առ մի քրիստոնեայքս. ի միոյ հաւատոյն առ մի հաւատացեալքս...: – 533. *Գլուխ* եկեղեցւոյ է՛ տէր մեր յիսուս քրիստոս որպէս ասացաւ: - 534. Եւ դարձեալ՝ *գլուխ* է քրիստոս. և հերք՝ որպէս դասք վերին զօրացն ի նմանէ՛ առ մեզ իջուցեալ զշնորհս: - 534. Զորօրինակ՝ մեռեալ մարդ ո՛չ ասի պարզաբար մարդ, նոյնպէս և այս. որպէս ցուցաւ ի թագաւորութեանցն **իզ** *գլուխն*. **ժբ** համարն: - 536. Առաջին՝ ի բնական. որպէս երէոց, անասնոց, թռչնոց, և մրջմանց. որպէս ցուցաւ ի վերոյ ի **ժգ** *գլուխն*, **ծա** համարն: - 536. Այլ իմաստութիւն և հանճար զանազանեալ է ի վերոյ ի **ժզ** *գլուխն*, **իէ** համարն տես անդ: - 537. Եւ վասն ուխտի և սահմանի ասացաւ ի վերոյ ի **իբ** *գլուխն*, **կե** համարն: - 538. Իսկ առ ներքինս օրհնելն՝ իշխանութիւն և շնորհաց տալն թարգմանի. որ քահանայն կամ եպիսկոպոսն տայ. որպէս ցուցաւ ի վերոյ ի **իգ** *գլուխն*, **հե** համարն: - 540. Եւ *գլուխ* ժողովոյն էր սուրբն Դէոսկորոս աղէքսանդրացի: - 542. և զթէոդորիտոս եդին *գլուխ* ժողովոյն վասն մարդահաճութեան թագուհւոյն և թագաւորին. և զդէոսկորոս հայրապետն աղէքսանդրու, և զպետրոս անտիոքու, և զտիմոթէոս և զանատօլ, և զայլս բազումս խոտեցին. և վկայեցին նոքա ճշմարտութեան: - 543. Եւ սուրբն սիմէոն սիւնակեացն այրեաց զթուղթն դաւանութեանն քաղկեդոնի՝ զոր գրեալ էր թագաւորն մարկիանոս աղաչանօք առ նա՛. և նզովեաց զթղտատարն որ էր թէոդորիտոս *գլուխ* ժողովոյն: - 543. Եւ գրեցին գիրս կանոնաց *գլուխս* **ի**, ընդդէմ եկամուտ թուլութեանցն: - 544. Եւ նզովեցին զաղանդն մարկիանու և զարտեմոնի, և զտումարն լևոնի. և միաբանեցան ի մի հաւատս սուրբ առաքելոցն. և ի կանոնս սուրբ ժողովոյն ինչ պետք էին յաւելին *գլուխս* **թ** ի զգուշութիւն եկեղեցւոյ: - 544. ...և նորոգեցին զթուլութիւն և զերկպառակութիւն ինչ եկեղեցւոյ. և հաստատեցին գիրս կանոնականս **բժ**ան *գլխոց*: - 544-545. Որ կանոնական *գլխօք* պայծառացոյց զկարգ եկեղեցւոյ և զուղղափառութիւն հաւատոյ. զոր **զ** ամաւ յառաջ եղծեալ էր եզրի կաթողիկոսի...: – 545. Գրէ կարգս կանոնականս իդ *գլխօք*. և հաստատէ՛ զեկեղեցի պայծառ կարգօք և ուղղութեամբ: - 545. Ժողովեալ բազում եպիսկոպոսաց յամենայն կողմանց. և իշխանաց և մեծամեծաց հայոց. կարգեցին սահմանս կանոնականս **իբ** *գլխով*. և պայծառացուցին զեկեղեցի սուրբ: - 545. Պետրոս *գլուխ* է առաքելոցն. որպէս գրէ դիոնէսիոս ի **զ** *գլուխն* եկեղեցական քահանայապետութեան: - 546. Որ *զգլուխն* ընթերցար, զհամակարգն ընդէ՞ր մոռացար: - 546. *Գլուխ* ասէ և համակարգ նոցին: - 546. Եւ *գլուխ* կոչի վասն երից: - 546. Եւ թէ ոք ասիցէ, յորժամ համակարգ են իշխանութեամբ ամենայն երկոտասանքն, ապա ո՞րպէս է *գլուխ* առաքելոցն պետրոս: - 546. Ասեմք թէ՝ պետրոս *գլուխ* է առաքելոցն՝ ո՛չ որպէս եպիսկոպոսն քահանայից. կամ կաթողիկոսն եպիսկոպոսաց: - 546. Եւ որպէս ի կենդանակերպս խոյն *գլուխ* է և առաջին: - 546. Սոքա է սիւնք և է խարիսխք են եկեղեցւոյ *գլուխ* կարգեալք ընդ բոլոր տիեզերս որպէս ասացաւ: - 549. Եւ ա՛յս է պատճառն որ ոմանք յեօթանասնիցն ասեն. զի եօթանասուն աշակերտացն *գլուխ* և վարդապետ էր. որպէս պետրոս երկոտասանիցն. և առաջինքն ամենայն ուրեք յետնոցն անուամբ կոչեին. այս է ստոյգ պատճառն: - 549. Դարձեալ՝ յայտնապէս ասել ո՛չ է հարկ՝ է ամենայն բազում պատուական է քան զմին. զի ահա՛ գոյացութիւնն մի է և պատահումն բազում. և արեգակն մի է և աստեղք բազում. և *գլուխն* մի է և անդամք բազում: - 551. Իսկ կամաւոր մեղքն գրա՛ծ է ի հին օրէնքն իբ *գլուխն* տես: - 564. Եւ կարելի է որ ոք կամեսցի՝ զայսոսիկ *գլուխս* ի սէրն աստուծոյ ուղղել: - 576. Կարգ սիրոյն ասացաւ ի վերոյ յաստուածաբանութիւնն դիոնիսեայ ի **թ** *գլուխն*, ի **ժզ** համարն: - 576. Իսկ **ը** երրորդ երանութիւնն դառնայ յառաջին *գլուխն* կրկին կերպիւ: - 586. Յաղորդութիւնն է՛ խորհուրդ սիրոյ. զի սիրով միաւորիմք և յօդիմք ի *գլուխն* քրիստոս. մարմին ի մարմնոյ նորա և անդամ յանդամոց նորա: - 587. ...իսկ կանանց ազգին պատուիրէ՛ առաքեալն ի ժամ աղօթիցն շուք դնել *գլխոյն* վասն հրեշտակաց. այսինքն վասն քահանայից որ հրեշտակք կոչին ի գրոց...: – 590. Եւ վասն աւազանին ծննդեանն ասացեալ է առ սառայ ի **ժթ** *գլուխն*, ի **ժբ** համարն: - 591. ...զի էառ որպէս *գլուխ* մեր, և եհեղ յանդամս ի հաւատացեալս իւր...: - 593. Եւ հաղորդելն, որպէս անդամ ի *գլուխն* յօդէ. զի ամենայն կատարմանց կատարումն հաղորդութիւնն է. այսինքն կարգին՝ պսակին՝ խոստովանութեան՝ մկրտութեան՝ և այլն: - 594. Իսկ զի անխմոր բաղարջով է խորհուրդն՝ ասացաւ ի վերոյ իա *գլուխն* **լը** համարն: - 597. ...որպէս ասացաւ յառաջագոյն ի թագաւորութեանց **իէ** *գլուխն*. **ժե** համարն տես: - 603. Եւ վասն ներելեացն թողութեան ասացաւ ի թուոց **իբ** *գլուխն*, **կա** համարն: - 603. Ասեմք թէ՝ յարաժամ աջ քահանային մերձի ի *գլուխ* քրիստոնէին ուր արմատն է բոլոր զգայութեանցն: - 605. Եւ ի նազերեթացոց ժողովրդանոցին դպիր ցուցաւ ի կարդալն զեսայի մարգարէն՝ յոտն և բացաւ

*գլխով*: - 606. ...զի անխառնակ և անշփոթ երևեսցի մադանալն բանին յազգէն յուդայ. որպէս ասացաւ ի վերոյ ի **լ** *գլուխն*, **դ** համարն: - 612. ...և ապա լինի եկեղեցի և ժողովուրդ քրիստոսի. որպէս ասացաւ ի վերոյ **լա** *գլուխն*, **գ** համարն: - 614. Յայս միտս ի վերայ սեղանոյն խունկ վառեմք. որպէս ասացաւ ի վերոյ **իա** *գլուխն*, **խգ** համարն: - 615. Դարձեալ, **ը** օր եկեղեցւոյ տօնեմք. և մի *գլխոյն* եկեղեցւոյ. և անդամոց նորա: - 616. Եօթներորդ՝ զի պսակ եկեղեցւոյ և փառք է՛ սուրբ խաչն տէրունական. որպէս ի *գլուխն* է կանգնեալ: - 616. ...և ծխատեսակ հիւթն կսկծօղ վերանայ ի *գլուխն* և թափի՛ ընդ աչսն և լինի արտօսր: - 619. Եւ ի հիւթոյն յայնմանէ ելեալ ի *գլուխն* լինի արտօսր քաղցր վասն քաղցրութեան լերդին: - 619. ...և հիւթն ելեալ ի *գլուխն* լինի արտասուքն դառն վասն լեղւոյն: - 620. Զի՞նչ է խորհուրդ կանոն *գլխին* որ ծայնիւ ասեմք: - 626. Իսկ զոր կանոն *գլուխ* կոչեմք, ասելով **զ** գուբղայ հանդարտ ի թիւ. և զեօթներորդն ծայնիւ: - 627. Եւ մեսեդի ճաշոյն և երեկոյեան, չորրորդ մասն դորակի գինւոյն. որպէս ասացաւ ի վերոյ ի **իա** *գլուխն* **ծբ** համարն: - 629. Եւ փոխն որպէս *գլուխն*: - 631. Վասն է՞ր զսուրբ աստուածն բաց *գլխով* երգեմք: - 635. Ո՛չ միայն *զգլուխս* բանամք, այլ և զձեռս համբառնամք ի վեր. որպէս և յովսէփ ասաց: - 635. Այլ և յընթերցումն աւետարանին *զգլուխս* բանամք: - 635. Զի ի **դ** տեղւոջս յայս՝ պա՛րտ է ժողովրդեանն *զգլուխս* բանալ: - 635. ...և մեք բաց *գլխով* զձեռս տարածեալ զնորա նմանութիւնն բերեմք ի մեզ: - 635. Բայց կին մարդոյ ո՛չ է պարտ բանալ *զգլուխն*, այլ առաւել ծածկել յեկեղեցւոջ: - 635. Իսկ որ այժմ աբեղայք ո՛չ բանան *զգլուխս* յամենայն աղօթս, այս է պատճառն...: - 635. Այլ ի պատարագն պարտ է բանալ *զգլուխս* որ պատարագիչն է ամենայն ոք որ և իցէ. թէ քահանայ և թէ եպիսկոպոս և կամ ա՛յլ ոք: - 635. ...և մարդս *գլուխ* է արարածոց...: – 641. ...և մեզ աւետիս տայ խոնարհիմամբ *գլխոյն*: - 644. Դարձեալ՝ ցուցանէ զմարգարէս և զառաքեալս. և ի *գլուխ* նոցա երևեալ բանն աստուած և խօսեալ: - 646. Եօթներորդ հոգոյն գալստեան. որպէս ասացաւ պատճառն ի վերոյ ի իա *գլուխն*, ծա համարն: - 649. Իսկ վասն ողորմութեան ասացաւ ի վերոյ լ *գլուխն* յառաջին համարն: - 654. Եւ որպէս ասացաւ ի վերոյ լե *գլուխն*, **խդ** համարն: - 655. Յորժամ զսարսափելի *գլուխն* յովհաննու մկրտչին՝ բերին ի մէջ բազմականացն հերովդէի, - 656. ...որպէս ցուցաւ ի **իա** *գլուխն*, **խե** համարն: - 657. Քառասունևզ, Յարցմունքն գէորգեայ տասնևչորս *գլուխ*: - 661. **Ղեկ նաւին ի ջուրս բեկեալ թուի. և ցաւոտ *գլխոյ* լերինք շարժեալ**: - 662. Վեցերորդ՝ ամենայն պատուական իր՝ ի բարձր տեղւո՛ջէ. որպէս *գլուխն* զի պատուական մասն է. և լուսաւորքն և երկին քան զերկիրս: - 662. Գտցես և վասն մահու առ խաչելութեանն քրիստոսի ի **լ** *գլուխն* ի **իզ** համարն: - 668. և հող *զգլխով* արկեալ, ի խաւար բնակիմք և այլն: - 670. Իսկ հող ցանեալ ի *գլուխն, գլուխ* զմիտքն նշանակէ. որ ինքնիշխան եղև յաստուծոյ. և հնազանդեալ խրատու հողակեր օձին՝ մահացաւ...: – 670. ...վասն այն հող ի *գլուխ* արկանէ մարդ ի ժամ սըգոյ. այլ և ի վերայ մեռելոյն: - 670. ...և զբարձս ոտիցն և *զգլուխն* և զերեսս և զկուրծքն հարեալ...: – 670. ...և *գլուխն* խոնարհեցաւ...: – 670. Ա՛րդ՝ եթէ ի հասարակ ժողովրդենէ իցէ ննջեցեալն, հանեն զհին հանդերձն և պատե՛ն սուրբ կտաւովք և *զգլուխն* փակեղամբ և վարշամակօք, և օդ յոտս: - 671. Իսկ կնկուղ ի *գլուխ* կրօնաւորաց և օդ յոտս և գօտի ընդ մէջ. զսպառազինիլն և զարիութեամբ ընթանալն ի պատերազմ: - 671. Երկրորդ, զի քահանայն *գլուխ* է ...: – 672. ...*գլխոյն* օծումն խորհրդով յանդամն իջանէ...: – 672. Փակեղն և վարշամակն ի *գլուխն*, որպէս սաղաւարտ: - 674. որպէս ցուցաւ ի վերոյ **լե** *գլուխն* ի կարգ աղօթիցն ի **խա** համարն: - 676. ...վասն որոյ որպէս ի մկրտութիւնն ուղիղ մկրտիմք *գլուխ* ի վեր և ոչ ի վայր որպէս արիոսեանք: - 676. Իսկ թէ յեկեղեցիս ո՛չ թաղեմք՝ ասացաւ ի վերոյ **լե** *գլուխն* **լթ** համարն: - 678. Ո՜ հա՛յրդ ես որոց ի վեր քան զերկինս. այսինքն հոգւոց սրբոց կատարելոցն որ ի վերեն քան զդասս հրեշտակաց մերձ քրիստոսի որպէս քահանայք առ քահանայապետ, և անդամք առ *գլուխն*. և որդիք առ հայր: - 688. Երկրորդ, ասէ սուրբն դիոնէսիոս ի ննջեցելոց կատարմանց *գլուխն*՝ եթէ մաքրելոց հոգին հասեալ ի վախճան՝ յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն փառս և զպսակ զոր ընդունելո՛ց են նոքա ի յարութեան աւուրն: - 691. Քսանգ, ի նոյն *գլուխն* ասէ «յորժամ եկեսցէ որդի մարդոյ փառօք հօր իւրոյ, յայնժամ նստցի յաթոռ փառաց». զդատողական աթոռն ասէ: - 693. Դարձեալ ասէ ի նոյն *գլուխն* եթէ՝ «շինուած յաստուծոյ ունիմք տաճար. և ընդ այս տաղտկամք և զբնակութիւնս երկնից փափագիմք զգենուլ»: - 695. ...որպէս ասացաւ ի վերոյ **լգ** *գլուխն* ի **իբ** համարն: - 696. Տե՛ս **ժէ** *գլուխն*: - 696. Դարձեալ ասեն թէ, ի նոյն *գլուխն* ասէ «տեսի յամենայն ժողովրդոց որ կային առաջի աթոռոյն և առաջի գառինն արկեալ զիւրեամբք հանդերձս սպիտակս և արմաւենիս ի ձեռս իւրեանց»: - 696. Դարձեալ մեր վարդապետք ասեն, որպէս ի տեսլեան մեկնիչն **լդ** *գլուխն* ասէ այսպէս: - 703. Եւ յետ սակաւուց ի նոյն *գլուխն* ի վերայ այնմ բանի թէ՝ «կինն փախեաւ յանապատ զի կերակրեսցի անդ» ասէ, - 703. Եւ ի **խբ** *գլուխն* ի վերայ այնմ բանի թէ՝ «տանջեսցին նոքա հրով և ծծմբով»: - 703. Եւ յետ սակաւուց ի նոյն *գլուխն* ասէ, թէ ո՛չ զգայապէս լինի

տեսիլ հրեշտակի...: - 703. Եւ ի **խե** *գլուխն* ի վերայ այնմ բանի «ո՛չ ոք կարէ մտանել ի տաճարն մինչև կատարեսցին եօթն հարուածք յեօթն հրեշտակացն», ասէ մեկնիչն. ոչ արդարոցն հանգչելոյն աղաչանք, և ո՛չ մեղաւորացն ի տանջանս հառաչանք...: - 703. Զի *զգլուխ* վիշապին ի ջուրսն յորդանանու ջախջախեաց ըստ յոբայ որ է մեղքն. - 705. Այլ և վասն կապելոյն սատանայի գրեալ է ի **թ** *գլուխն* ի **իզ** համարն ի վերոյ: - 706. Եւ վասն հրեղէն վիշապին և տըտան նմին ասացաւ ի վերոյ **թ** *գլուխն* **իե** համարն: - 706. ...զի ի նմա՛ բնակէ *գլուխն* ամենայն չարեաց: - 707. ...զի նա՛ է գազանն որել ի ծովէն և ունէր *գլուխս* է. այսինքն զամենայն իշխանս: - 707. ...ասէ նոյն տեսիլն **ծէ** *գլուխն*, «տուաւ հարսինն զգենուլ բեհեզս սպիտակս սուրբս և լուսափայլս». և բեհեզն է՛ արդարութիւն սրբոցն: - 712. ...ուր ազգին բունն է և *գլուխ*՝ ա՛նդ հնչեցուցանէ որ ազգին առաջնորդն է: - 713. Եւ թէ վասն է՞ր ոչ գիտեմք զկատարած աշխարհի և զկենաց մեր, գրեալ է ի վեր անդ առ նահապետսն ի **ժը** *գլուխն* ի **դ** համարն: - 718. Որպէս ասէ պօղոս ի նոյն *գլուխն* եթէ՝ «պա՛րտ է ապականացուիս այսմիկ զգենուլ զանապականութիւն, և մահկանացուիս զանմահութիւն»: - 721. Ի յայս միտս մարմնաւոր հարսն է զգեստուք զարդարի. **գ** զարդ *գլխոյն* և **դ** բոլոր մարմնոյն: - 721. Զի եթէ մազն որ է գեղեցկութիւն մարմնոյն յառնէ ըստ նորին տեառն թէ «ի *գլխոյ* ձերմէ մազ մի ո՛չ կորիցէ» քանի՞ առաւել ևս անդամք որ յէութենէ մարմնոյն են յարիցեն: - 725. Տասներորդ, քրիստոս *գլուխ* է մեր և մեք անդամք. և զի քրիստոս է դատաւոր՝ պարտիմք մեք զմիմեանս մեծարել և սիրել. ըստ այնմ, «սիրեսցե՛ս զընկեր քո իբրև զանձն քո»: - 735. Եւ մի՛ վասն անարգանաց եղբօրն որոշիլ ի *գլխոյն* և ի դատաստան մահու մատնիլ: - 735. *Գլուխ* ի վայր: - 753. Իսկ վասն տեղեաց դժոխոցն ասացեալ է ի վեր անդր **լ** *գլուխն*, **իը** համարն: - 754. Որպէս համեմատեցաւ ի վերոյ ի **ժթ** *գլուխն*, **ժբ** համարն: - 756. Նա՛խ՝ զի առ նոսա միաւորեալ է քրիստոս իբր տէր ընդ ծառայս. իսկ միաւորի ընդ եկեղեցի իբր փեսայ ընդ հարսին. և *գլուխ* ընդ անդամոց: - 757. Որ և անբաժանելի և անքակ միութեամբ միաւորին յօդեալք ի *գլուխն* քրիստոս անզրաւ յաւիտենիւ: - 757. Դարձեալ ասեմք առաջին կեանք մասնաւոր, զոր նախ քան զյանցանելն ունէր. անկարօտութիւն. լուսաւորութիւն. անձերանելի հասակ. անմահ կեանք. և այլն որ ասացաւ ի վերոյ **ծէ** *գլուխն* **լզ** համարն: - 758. Այլ ի նոցանէ՛ անկաւ, որպէս ցուցաւ ի վերոյ **թ** *գլուխն*, **իբ** համարն: - 760. Այնքան եղիցի միութիւն *գլխոյն* և անդամոցն, զի անդամքն զպատիւ *գլխոյն* իւրեանց՝ ինքեանց համարեսցեն: - 763. Որպէս *գլուխ* մարդոյ՝ զբարիս կամ զչարիս հատուցեալս անդամոց իւրոց՝ ինքեան համարի: - 763. Երեք *գլխօք* վարէ՛ զընթացս մարդկութեանն: - 770. Եւ են ամենայն հարցմունքդ **դժ**ան *գլխով*. որպէս յա՛յտ է ի կարգիդ: - 773. Այլ ի պատճառս տալ իմաստից. որով ո՛չ յագեսցի ակն ի տեսոյ. ի *գլուխ* գոլոյ իմաստնոյ. մանաւանդ և ի չահ օգտի բանասէր մտաց միեղէն եղբարց: - 773. Եւ կատարեալն տեսութիւն խնդրեցաւ ի վերոյ ի **ժզ** *գլուխն* **իբ** համարն: - 785. Ի ստամոքս որովայնի. և ի լեարդս, և ի յուղեղս *գլխոյն*: - 786. Իսկ ի ներքուստ, ի լինիլ տրտմութեանց՝ խուճապեալ մարմնոյն հոսի մաղձ դառն ի ստամոքս որովայնի. և վերացեալ գոլորշեաց նորա զօրէն շոգոլեաց պուտկի առ խելապատակս *գլխոյ*. և ծանրացեալ անտի թորի՛ առ բիբն ասացեալ ական. չոր գոլով և աղէգոյն ի սևատեսա՛կն մաղձոյ: - 787

**ԳԾԵՄ +** Առաջին՝ է գիրն որ է *գծեալն*: - 177

**ԳՂԵՐԻԿՈՍ +** Այսինքն սարկաւագունք, դպիրք, և *գղերիկոսքն*: - 379. Երկրորդն Սարկաւագն և Դպիրն և *Գղերիկոսն*. զայսոսիկ հոմանուամբ պաշտօնեայ կոչէ: - 608

**ԳՂԹՈՐ +** Եւ են որ ո՛չ մէջն ուտի և ո՛չ կեղևն. որպէս *գղթորն*: - 213

**ԳՄԲԵԹ կմ ԳՄԲԷԹ +** Եւ *գմբէթն* զվերինն խորհիլ ուր քրիստոս նստի ընդ աջմէ աստուծոյ: - 614

**ԳՄԲԵԹԱՅԱՐԴ +** Երրորդ՝ ձևն խաչանման. յարևելս *գմբէթայարդ*: - 613

**ԳՄԲԵԹԱՐԴ +** Իսկ երեսունն, մինչ ի մեծն թէոդոս. որ եբարձ զամենայն մեհեանս կռոցն և բարձրացաւ սուրբ խաչն ի գլուխս *գմբեթարդ* սուրբ եկեղեցեաց: - 294

**ԳՆԱՄ +** Եւ թէ էր այսպէս՝ հետևէր ապա հօր զի արարեալ իցէ ա՛յլ աշխարհ. և հանդերձեալ. և շրջեալ յաշխարհի. սրբեալ զախտաժէտս. մեռեալս յարուցեալ. և ի վերայ ծովու *գնացեալ*: - 45. Իսկ ի յաստուած, բարկանալն, ննջելն, և զարթնուլն, և *գնալն* և այլն: - 55. Յերկինս են լուսաւորքն. և վասն գոյութեանց նոցա. և *գնան* հրեղէնք ընդ ջուրս: - 154. Եւ թէ մեռանի, անխիղճ *գնայ* յաշխարհէս: - 178. Զի՞նչ է որ ասէ սուրբն բարսեղ, *գնան* հրեղէնք ընդ ջուրս և ո՛չ շիջանին: - 188. Դարձեալ՝ հրեշտակք հրեղէնք գոլով՝ ընդ ջրեղէն կամարն *գնալով* ո՛չ շիջանին: - 188. Եւ է մոլորականքն ընդ սոսա *գնալով* խոնարհին և բարձրանան: - 189. Ուսաք յիմաստնոց թէ՝ ի բաժանիլ լեզուաց **իբ** տանուտերանց, և ի *գնալն* յիւրաքանչիւր տեղիս ի հեռու կամ ի մօտաւոր աշխարհս. զօրն զայն տարեմուտս կարգեցին. և ուսուցին որդւոց իւրեանց պատուեալ զօրն զայն տրօք ընչից: - 200. Սահմի. զի *գնայ* հարաւայինն, և գայ

հիւսասայինն: - 200. Եւ սողունք կոչին, կամ զի սողալով *գնան*. կամ սղացեալ են ոտիւք. կամ զի սո՛ղ են ծայնիւ: - 216. Եւ զի **զե** զգայարանս մարդոյն խաբեաց, **ե** ման առնու ի *գնալն*: - 219. Յաչաց նայիլն. ի ձեռաց շարժիլն. և յոտից *գնալն* երևի: - 250. Խնդրեմ և զայս ուսանիլ թէ ընդէ՞ր է՝ զի մարդս կատարեալ կենդանի է քան զանասունս. և յորժամ ծնանին նոքա ահա՛ ի նոյն ժամն կանգնին յոտից վերայ և *գնան*, և այլն. իսկ մարդն ոչ: - 266. Իսկ մարդոյն ուղեղն գէճ է և հով. զի նկարեսցէ յինքն զիմացումն մտացն. և ջիլքն յառաջեալ ի նման վասն գիճութեան ո՛չ կարէ պնդել զանդամսն. վասն որոյ ո՛չ կանգնի և ոչ *գնայ*: - 266. Ի ծնանիլն նախ խնդրէ միայն կերակուր և աճէ՛. յետ որոյ տեսանէ՛ կանգնի՛ և *գնայ*. յետ որոյ խօսի և իմանայ: - 267. Նա՛խ՝ զի խորհրդական միտքն կարգաւոր և առանց տարակուսանաց տեսանէ. իսկ երազն անկարգ և տարակուսանօք և զանհնարն տեսանէ որպէս ի վերայ օդոյ թռչիլ, և ի ծովու *գնալն*, և աղքատաց թագաւորել, և այլն: - 268. Զթռչունս ըմբռնել. ի վերայ ծովու *գնալ*. դիւաց սաստել. ձեռօք առ այլս խօսիլ: - 275. Հինգերորդ՝ երկիւղն յայնմ. զի լւան զձայն *գնալոյ* տեառն և երկեան: - 280. Զի յանապական կուսէ ծնաւ եցոյց զանընդդիմահարութիւնն և զանօսրութիւնն. և *գնալով* ի վերայ ծովուն, զթեթևութիւնն և զերագութիւնն. իսկ զպայծառութիւնն յայլակերպիլն: - 282. Վաքսունք, Տապանակն յառաջ *գնայր* և վէմն զհետ՝ որ էր քրիստոս: - 285. Նա՛խ զի սիրտ սուրբ և աննենգ ունէր. ուստի յա՛յտ է յանմեղութեամբ *գնալոյն* ընդ եղբօրն ի դաշտն: - 286. Նոյնպէս և քրիստոս աստ ի *գնալն* հոգւոց և ի գալստեանն աւուր՝ ընդ առաջ ելանէ սրբոցն և համբուրէ զհիրելիս իւր, որպէս հայրն երկնաւոր ի դարձ անառակին: - 315. Եւ տէր մեր էառ զաւար զմարդկային ազգս և *գնաց* յերկինս: - 315. Երրորդ՝ ի յառնելն զարարածս լերամբք և բլրօք. զի լերինք և բլուրք, հիմունք և բրգունք են աշխարհի...: – 319. ...**բդ**՝ խլից լսել տայր. **գդ**՝ համերց խօսիլ. **դդ**՝ ձեռաց շարժումն. եդ՝ կաղաց *գնալ*...: – 328. Զի՞նչ ցուցանէր **գ** օր յառաջ *գնալ* տապանակին դիտեալ զհանգիստ: - 380. Իսկ դադան ամենևին անզեղջ մնաց. թէպէտ *գնաց* մովսէս ի խորան նոցա՝ ո՛չ զղջացան: - 382. Հինգերորդ՝ յառաջ տապանակն *գնայր* և դիտէր հանգիստ. և զհետ վէմն տայր ջուր. զի այժմ զհանգիստ պատրաստէ՛, և յետոյ զվայելչութիւն տայ: - 385. Ո՛չ ասէ *գնալ* որ կամաւորն է. այլ երթալ, որ ակամայ քարշիլն է: - 389. Զի ակամայ սպանօղք զերծանիցին անդ մինչ քահանայն կենդանի իցէ. և յորժամ մեռանիցի քահանայն, ապա *գնասցեն* ի տեղիս իւրեանց: - 392. Երկրորդ՝ զի ասէ «իբրև զիս». իբրևն օրինա՛կ է. որպէս մովսէս աստուած կոչեցաւ, և տէր մեր էմմանուէլ. և զնա՛ հայր կնքեաց աստուած. և որպէս մովսէս իշխէր տարերաց, և տէր ի ծովուն *գնայր*, և ի վերայ օդոյն: - 399. Վեցերորդ՝ զի ասէ ըստ հրամանին աստուծոյ *գնալ*: - 399. Զայս նշանակէ թէ՝ յետ ելանելոյ հոգւոյ ի մարմնոյ և *գնալոյ* ի վերին շաւիղն, հակառակ կայ սատանայ և չար զօրութիւնքն ընդ նմա, տանիլ զհետ իւրեանց որ զչա՛րսն են գործեալ. և յարդարոցն յաղթին հրեշտակին օգնութեամբն. որպէս և անտօն ետես. զի իմացեալ և մեք զգուշասցուք այնմ: - 410. Քսանևդ, Վասն եղիայի զոր ագռաւն կերակրեաց. և *գնաց* ի հեղեղատն. և նուաղեցաւ ջուրն: - 413. Եւ այս ցուցանի ի սաւուղայ. որ այլակերպեալ *գնաց* առ վհուկն...: – 428. Երեսունք, յետոյ առ սամուէլ ի նաւաթ *գնացեալ* և հոգի աստուծոյ խաղացեալ. և տէր մեր առ հայր ի յերկինս ելեալ, և յառաքեալսն զհոգին առաքեալ: - 437. Եւ կամ նշան խնդրել. և կամ զաստուած հարցանել և ապա՛ *գնալ*: - 443. Վասն է՞ր *գնաց* ի հեղեղատն: - 443. Եւ վասն այն *գնաց* ի սաբեփթա յայլազգիս. զի և զնոցա նեղութիւնն տեսցէ. որք չէին անցեալ զօրինօքն մովսէսի: - 443-444. Յետ որոյ քեղկի քահանայ որ էր հայր երեմիայի՝ եգիտ զերկրորդ օրէնքն և մատոյց առ ովսիա. և *գնաց* առ ողդիկին մարգարէ հարցանել...: – 447. ...և նա՛ վկայեաց վասն գերութեան ժողովրդեանն. այլ վասն բարեպաշտութեան ովսիա ո՛չ *գնաց* գերի: - 447. Եղիակիմ որ և յովակիմ ամս **ժբ**. ի սորա **ժ** ամին նաբուգոդոնոսոր զիրէաստան հնազանդեաց. և հարկ առեալ յեղիակիմայ *գնաց*: - 453. Հինգերորդ՝ բանալ դրանն ի *գնալն* քառասնօրեայ ի տաճարն: - 471. Ուր արկեալ էր սատանայ զաթոռ իւրոյ իշխանութեանն. և անդ արգելեալ բանտէ՛ր զհոգիսն որ յադամայ. մինչ ի *գնալ* անդ անմահ թագաւորին մերոյ և աստուծոյ յիսուսի քրիստոսի: - 504. Նախ ասեն թէ ի չորրորդ դժոխքն *գնաց* որ է՛ վերին և ո՛չ ներքին: - 505-506. Հինգերորդ՝ ադամ առաջին յանցաւորն էր ի ներքին դժոխս. զի ա՛յն է մահու մեռանիլն. այլ արդ եթէ քրիստոս ո՛չ *գնաց* ի ներքին դժոխքն, ո՛չ ազատեաց զադամ: - 506. Եւ քրիստոս ա՛նդ *գնաց* և կապեաց զհզօրն և քակեաց զամուրս նորա և աւար էառ զհոգիսն: - 506. Տասներորդ՝ յաւուր միում այսահարեալ սաւուղ՝ կամէր նիզակաւն բևեռել զդաւիթ յորմն. յորմէ զերծեալ ապրեցաւ և *գնաց* ի տունն: - 513. Այս է, զի յորժամ ի մէջ գիշերին հրամայեաց հրեշտակն *գնալ* և պատմել աշակերտացն, ա՛յլ կանայքն որ ընդ նմայն էին՝ *գնացին*...: – 515. Եւ ոմանք ասեն թէ՝ երկու են մագդաղենացիքն. մինն *գնաց* և ի ճանապարհին ետես զտէրն. և միւսն եկաց և ի պարտիզին ետես: - 515. Առաջինն է՝ զի ի տեսս աշակերտացն վերացաւ. այսինքն զի յորդորեսցէ զցանկութիւն *գնալոյն* առ նա: -

520. Եւ լուսաւորչին ի կեսարիայ *գնալն* և ի հռօմ. և թաղէոսի առաքելոյն: - 525. Եւ յովսէփ փալանացի, և եզնակ կողբացի թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի կոստանդնուպօլիս. լուան զժողովոյն և *գնացին* ի քաղկեդոն. զի չէր յոյժ հեռի ի ճանապարհէն որով գային ի հայս...: – 543. Եւ ո՛չ որ *գնաց* առ պետրոս ի հռօմ. և ո՛չ պետրոս յայլ վիճակս ձեռնադրեաց զոք: - 546. Եւ թէ որ ասիցէ, կարի՛ բարկացար. ո՛չ զայս ասեմ հնազանդիլ. այլ որպէս լուսաւորիչն *գնաց* ի հռօմ և հնազանդեցաւ: - 548. Ասեմք առ այս՝ թէ լուսաւորիչն *գնաց* ի հռօմ ո՛չ վասն ձեռնադրութեան, այլ վասն սիրոյ և միաբանութեան երկուց ազգաց և ուղղափառ թագաւորացն տրդատայ և կոստանդիանոսի: - 548. Եւ փոխանորդ իւր նստոյց յաթոռ զսուրբն արիստակէս համանըման նորին առաքինութեամբ, և որդի ըստ մարմնոյ. և ապա՛ *գնաց* ի հռօմ: - 548. Եւ ա՛յս էր պատճառն հայոց անդ ի ձեռնադրութիւն *գնալոյն*: - 548. Եւ ի հռօմ *գնացեալ*՝ եղև հայրապետ և պապ: - 548. Ա՛յս էր պատճառ *գնալոյն* ի կեսարիա և ի հռօմ: - 549. Դարձեալ, զորօրինակ բազումք ընթանան ի մի ճանապարհ, և ամենեքեան թողեալ զնոյն՝ ընդ այլս *գնասցեն*, և մինն մնասցէ ի նոյնն. ո՛չ ասեմք թէ մինն բաժանեցաւ ի ճանապարհէն, այլ՝ այլքն: - 551. Դարձեալ բաժանին, զի գործ մեղացն է՛ յանցեալն և *գնացեալն*: - 568. Այլ և զձեռս ի հարկանել. յըմբռնել. և զոտս ի *գնալ*. համեստութիւնն ի նոսա ամենայնսն դնէ զեղանակն և զկարգն: - 581. ...ընդէ՞ր ոչ մկրտեաց զոք ի հաւատացելոցն. մինչև *գնաց* ի կեսարիա ձեռնադրեցաւ. և ապա եկեալ զհազարս հազարաց և զբիւրս մկրտեաց ի գետն: - 589. Ձխաչին և զեկեղեցոյ, սահակն որ *գնաց* ընդդէմ տաճկաց: - 637. Որպէս ժողովուրդն *գնաց* մերձ ի լեառնն, և մեզ պա՛րտ է յոտաց կալ և յառաջ *գնալ* և լսել: - 644. Իսկ խոսրով թարգմանիչ եբեր ի հայս. որ *գնացեալ* էր յերուսաղէմ հրամանաւ սրբոյն սահակայ: - 658. Դարձեալ, մերկ եկն և մերկ *գնայ* ի մարմնոյ զգեստու որպէս ասէ յոբ: - 671. Եւ դարձեալ, ի հոգևորն մերկ եկն և սուրբ հանդերձիւ զգեցեալ *գնաց*: - 671. Երրորդ, զի ի հեռու ճանապարհ *գնայ*. այս է յերկրէ յերկինս. յուղարկաւորեմք մինչ ի գերեզմանն: - 676. և լուսով հաւատոյն *գնաց* փառօք առ աստուած. – 677. և *գնացին* յերեքօրեայ ճանապարհ. ի տիւն ամպ հովանի, և գիշերն լոյս գայր...: - 682. Նոքա որ թողին զամենայն և *գնացին* զհետ քրիստոսի, որոց խոստացաւ զհարիւրապատիկն աստ՝ և զկեանսն յաւիտենից: - 688. Իսկ հոգիք հաւատացելոց որք ոչ *գնացին* այսպէս զհետ նորա, այլ ընկալան ի ներգործութեանցն սատանայի և ի կրից աշխարհի...: - 688. Այրն ի տարաշխարհ *գնաց* քրիստոսէ. որ մարմնով համբարձաւ յերկինս. զի յատուկ տեղի մարմնոյ երկիրս է. վասն որոյ ի տարաշխարհ *գնալ* ասէ յերկինս: - 692-693. ...իսկ մեռեալ և անդ *գնացեալ* արդարութիւնն է յայտնի և ոչ ողորմութիւնն...: - 700. ...հետևի զի և արդարքն կարեն ելանել յարքայութենէն աստուծոյ և *գնալ* ի դժոխքն: - 700. Ասեմք նախ՝ եթէ *գնալ* առ քրիստոս՝ վասն յարութեանն ասէ և զվերջին հուրն...: - 703. ...մինչ խօսիլ տայ բազնեաց, և լերանց *գնալ*, և ծառոց ծաղկիլ և չորանալ. և մեռելոց յառնել. և հրոյ իջանել յերկնից. և չար հոգւովն խօսիլ տայ այլ և այլ լեզուս: - 708. Ասեմք առ այս, եթէ մարմին մարդոյ բաժանեալ ի հոգւոյ, և հոգին *գնացեալ* ի կայանս հոգւոց առ աստուած որ ետ զնա՛. և մարմինն ի հող լուծեալ կամ յայլ տարերս...: – 718. Նոյնպէս ի միոյ վճռէն՝ եկա՛յք և *գնացէ՛ք* լսի: - 739

**ԳՆԱՑ(Ք) +** Նախ՝ զհաստատութիւն երկրի և *զգնացս* ջուրց: - 26. *Գնացքն* ի զհստքն: - 250. Տասներորդ՝ առ յատուկ բարին մերձենալ. այսինքն առ ամենևին զուտ բարին որ է՛ աստուած. խորհրդով բանիւ և *գնացիւք*: - 281. Մետասաներորդ՝ յառնելոյն կոչի առիւծ. իբր առից *գնացից* անհոգ յայլմէ: - 315. Ասեմք եթէ ժամանակն ի շարժմանէ՛ լուսաւորա՛ցն է. ըստ *գնացից* նոցա զառաջիկայն ասեն սովորապէս: - 430. Ի *գնացս* հոգւոյն զօրացեալ, զի ըստ տընօրէնութեանն խորհրդոյ միշտ հոգւով սրբով ներգործէր. ունելով տերև զաշխարհակեցոյց վարդապետութիւնն: - 768

**ԳՆԴԱԿ +** Նմանապէս և հոգին շարժի բոլոր՝ *գնդակ*՝ և ուղիղ: - 142. Իսկ *գնդակ* որ է կողմնաւոր՝ շարժի հոգին, յորժամ բնականապէս լուսափայլի յաստուածային գիտութիւնս տեսութեամբ և մտածութեամբ. և այնպէս հոգէպէս ի յաստուած միաւորի. որպէս աշակերտաց առաքելոց և մարգարէից: - 142. Եւ *գնդակն* է քարոզութիւն նոցա որ ըմբռնէ զմերձաւորսն: - 317. Եւ կապեալն ի *գնդակէն* հաւատացեալ ժողովուրդն: - 317

**ԳՆԴԱՁԵՒ +** Նախ այսպէս ասեն եթէ՝ տարերքն *գնդաձև* պատեալ են զմիմեանս և ամրացեալ. զի բոլորակ հուրն պատեալ է զօդ. և օդ զջուր. և ի մէջ ջրոյն երկիր է՛ հաստատեալ: - 181. Իսկ պարզ տարերքն *գնդաձև* դադարին ի տեղիս իւրեանց յաւիտեան: - 728

**ԳՆԴԱՆԱՄ +** Եւ կամ անհիւթ ինչ և անկերպ՝ ընդ նիւթական կերպարանաց ձևացեալ. յորում իւրաքանչիւրոցն էութիւնք անշփոթաբար երևին. որպէս պղինձ *գնդացեալ*. կամ քուէացեալ: - 476. Եւ կամ որպէս հուր ընդ *գնդացելոյն* ձևացեալ պղնձոյ: - 476.

**ԳՆԴԱՊԵՏ +** Եւ որպէս ի դասս հրեշտակաց մինն *գնդապետ* **բժ**ան գնդին: - 547

**ԳՆԴԱՊԷՍ +** Ասեմք եթէ՝ զորօրինակ սընդիկ լուծեալ և ի հող խառնեալ *գնդապէս* և փոշիացեալ. յորժամ ի մի վայր ժողովես՝ թողու զփոշիսն ի յորս խառնեալ է և պարզ միայն սնդիկն ժողովի: - 719

**ԳՆԵՄ +** Եւ այլս բազում բաղդատութիւն գոլով հերձուածողի և նեռինն. և զորս տէրն *գնեաց*՝ սոքա ուրացեալք՝ ածեն ի վերայ անձանց զերագահասն կորուստ: - 35. Որպէս վաճառեաց եսաւ և *գնեաց* յակոբ զանդրանկութիւն նորա: - 310. Զպատիժն որ է վայըն՝ միապէս *գնէ* : - 324. Եւ մինչ ընթացաւ ի կալն ուռնայի և *գնեաց* զեզինսն և ողջակիզեաց, եհաս ի զ ժամն. որ յառաջն դադարեալ էր սուրն: - 435. Զի զտեղին յեբուսացւոցն *գնեաց* դաւիթ. և ճարտարապետն քիրամ տիւրացի էր որ շինեաց. և քիրամ արքայ զփայտն առաքեաց: - 440. Չորրորդ՝ անէծք առաջին մարդոյն՝ եղև տանջանք և դատապարտութիւն մարդոյն. և քրիստոս *գնեաց* զմեզ յանիծից օրինաց եղեալ վասն մեր անէծք. ապա ուրեմն քրիստոս աւերեաց զդժոխս: - 506. ...զայս գործս արար քրիստոս յորժամ եհան *զգնօղս* և զվաճառօղս ի տաճարէն: - 606. Իսկ հինգերորդն ի նորոյս. զի խաչիւն քրիստոսի *գնեցաւ* և ազատեցաւ եկեղեցի սուրբ: - 616. Երկրորդ զքահանայս հին և նոր. որ *գնեն* զպատարագս ուխտից ի սեղանն: - 713. Զի *գնելն* լինի սակաւ մի ժամանակ. այլ ստացուածն է՛ յաւիտենական: - 744

**ԳՆՉՈՒՏ** - Չորրորդ՝ զի բ արծան կանգնեաց պղնձի և խեցի և արար գիր. և զոր ինչ ադամ անունս եդ իրաց, զամենայն գրեաց ի նոսա. զի մի՛ այլայլեսցին ի *գնչուտ* և ի լեզուատ արանց: - 289

**ԳՈԳ +** Երրորդ՝ անդ մէկին է ջերմութիւն՝ և աստ կրկին. զի հասեալ ի *գոգ* երկրի, մակադարձութեամբ ժողովին առ նա և լինի շող: - 211. Եւ ի հանդերձեալսն *գոգ* և հանգիստ արդարոց կոչեցաւ ըստ ղուկասու...: – 288. Նախ ընդ դէմ բերեն զբան մեծատանն և զղազարու. որ մինն ի *գոգն* աբրահամու և միւսն ի տանջանքն էջ: - 695. Եւ այսու նշանաւ ճանաչեաց հոգի մեծատանն զհոգին աբրահամու և զղազարու ի *գոգ* նորա հանգուցեալ: - 719. Երբեմն *գոգ* աբրահամու, վասն ընդ հօրն հաւատոյ որդւոցն հանգչելոյ: - 757

**ԳՈԳԱՆԱՄ +** Գէջ օդն *գոգացեալ* և դէմ եղեալ արեգականն՝ առնու զլոյսն ի նմանէ ըստ բոլորակ ձևոյ նորա: - 203

**ԳՈԳ ԵՎ ՄԱԳՈԳ (ԳՕԳ ԵՎ ՄԱԳՕԳ)** - Ասեմք եթէ՝ *գոգ և մագօգն* հոգևորապէս իմացեալ լինին ամենայն հալածօղք եկեղեցւոյ. զորս սատակեսցէ՛ տէր յիսուս զամենեսեան որպէս ասէ սաղմոսն՝ «որպէս զանօթ բրտի փշրեսցես զնոսա»: - 28. Եւ *գօգ և մագօգ:* - 660. Զի՞նչ է *գօգ և մագօգ:* - 708. Այլք ասեն թէ՝ *գօգաւ և մագօգաւ* իմացեալ լինին զօրք նեռինն...: - 708. Զի *գօգ* նոքա են որովք սատանայ գաղտնաբա՛ր հալածէ զհաւատացեալս: - 708. Իսկ այլք ասեն, *գօգ* ասին հեթանոսք. և *մագօգ* սատանայ: - 708

**ԳՈԴՈՂԻԱ** - *Գոդողիա* մայրն ամս է: - 452. Զչորքս զայս՝ Զոքոզիա և *Զգոդողիա* մայրն, և Զյովաս և Զամեսիա ո՛չ գրէ յազգահամարսն աւետարանիչն վասն լինելոյ դուստր և թոռունք եզաբելի: - 452. Այլ և յովսաբեթ դո՛ւստր է յովրամայ և *գոդողիայ* և քոյր ոքոզիայ: - 452

**ԳՈԴՈՆԻԷԼ** - Եւ դատաւորաց առաջինն *Գոդոնիէլ* որդի կենեզայ եղբայր քաղեբայ յազգէ յուդայ ամս **խ**. և այլազգիքն ամս **ժը**: - 420

**ԳՈԼ +** Որպէս արեգակն զի ո՛չ այրէ որ է հեռաւոր պատճառ. այլ հուրն ի նմանէ առեալ զջերմութիւն ի մերձ *գոլով* այրէ՛. որպէս յա՛յտ է ի հայելւոջն, որ առեալ զնշոյլս յարեգականէն՝ այրէ՛. ա՛յսպէս և բանս մեր ի հարկէ նոցա լինի՝ զոր ստորասեմք կամ բացասեմք: - 8. Յաւասար են ի յոչինչ *գոլն* չարն որ ներհականայ բարւոյ, և ոչինչն որ ներհականայ էի: - 23. Այլ ի հարկէ **բ** *գոլ* խոստովանին. զոմն բնութեամբ՝ և զոմն շնորհիւ: - 66. Եւ թէ զամենայն արտաքուստ և եկամուտ ունի, զիա՞րդ ասէ զինքն ճշմարիտ *գոլ*: - 67. Երեքտասաներորդ՝ զի թէ վասն բնակարան *գոլոյ*՝ մարմին նորա է կենդանարար: - 67. Եւ թէ մերկ բանին, հետևիս գոյութեան սկիզբն ի մօրէն *գոլ* և ո՛չ յաստուծոյ հօրէ: - 68. Զի թէ զաստուծոյն միայն՝ անկար ի յարիոսին. զի զբանն առանձին քրիստոս ասացեր. այսինքն օծեալ և սրբեալ ի հօրէ. յորմէ իմանի պակաս *գոլ* քան զհայր: - 68-69. Իսկ թէ զերկուսն, ահա՛ որ երկու բնութիւն ասացեր *գոլ* հօր: - 69. Եթէ զաստուծոյն ասես, ցուցանես զբանն կարօտ *գոլ* փառաց. և հա՛րկ է հետևիլ քեզ արիոսի: - 69. Իսկ թէ զերկու բնութիւնն ասիցես, ահա՛ երկու *գոլ* ասես հօր աթոռակից. մի զաստուածն, և մի զմարդն: - 70. Ասա՛ ինձ ո՛վ բաժանօղդ՝ ո՛ր դիմաց *գոլ* ասացեալ զայս: - 70. Երկոտասաներորդ՝ աստուծոյ է յաւիտենական և անփոփոխ *գոլ*. ըստ մարգարէին «ես աստուած նոյն եմ և ո՛չ փոփոխիմ»: – 71. Իսկ սուրբ Երրորդութիւնն անփոփոխելի է. զի հայր ծնաւ զորդի և բղխեաց զհոգին. և ո՛չ փոխեցաւ ի *գոլոյն* հայր: - 108. Երրորդ՝ զի նախ՝ էի և գոյացութեան հաղորդեաց

զեղեալքս, և ապա կենաց և իմաստութեան և այլն. զի նախ է *գոլն* մեր, և ապա բարի *գոլն*: - 111. Որպէս նախ քան զլինիլն մեր՝ էր սկիզբն մեր. և այժմ է՛ նոյն սկիզբն. և յետոյ ի կատարածի անփոփոխելի մնայ ի սկիզբն *գոլոյ*: - 112. Երկրորդ՝ ծերն նշանակէ զանսկիզբն *գոլն*. և մանուկն զանվախճանն. զնոյն միմեամբք՝ և ո՛չ այլ և այլ: - 115. Վեցերորդ՝ զի թէպէտ անա՛րգ են՝ ունին զբարի *գոլն* ստեղծմամբ և նախախնամութեամբ: - 132. Երկրորդ՝ զի առանձնաւորութիւն է զօրութեանց, այսինքն արիութիւն յաստուածայինսն և անշարժ *գոլն* և զօրացուցանելն. և զայս առ հասարակ ունին. վասն որոյ առ հասարակ զօրութիւնք կոչին: - 137. Նախ է հասարակ՝ *գոլն* հոգի՝ անմարմին՝ և իմացական: - 137. Ի յինքն՝ զի իւրաքանչիւր ոք սիրէ զինքն և կամի *զգոլն* իւր: - 143. Եւ **գ** է գոյացութիւն նոցա. անմարմին՝ անմահ՝ և հրեղէն *գոլն*...: – 151. Զի ի հարկէ՛ էակ է, որ *զգոլն* միայն ունի. իսկ *զչգոլն* ո՛չ ունի. ապա ուրեմն անփոփո՛խ է էութեամբ: - 162. Վասն որոյ արար զաշխարհս գործ մշտնջենաւոր. և մշտնջենաւոր հարկաւո՛ր է. և հարկաւորն ի *գոլն* կարէ, և ի *չգոլն* անկա՛ր: - 162. Ուստի յա՛յտ է զի կարելին ունի *զգոլն* և *զչգոլն*. և անկարն զմինն. կամ *զգոլն* կամ *զչգոլն*: - 165. Այլ արդ՝ կուսութիւնն է ի կարելոյն որ ունի *զգոլն* և *զչգոլն*. իսկ ապականութիւնն է յանկարելւոյն. որ ունի զմինն և ո՛չ կարէ հակադարձիլ առ միւսն: - 165. Դարձեալ այն զօրութիւնն անփոփոխ է. զի միայն ի *գոլն* կարէ, և ի *չգոլն* անկար: - 168. Իսկ միւս զօրութիւնն որ է փոփոխական՝ ի *գոլն* և ի *չգոլն* կարէ՛. և անկար առ ո՛չ ոք է: - 168. Իսկ միւս զօրութիւնն որ կարելի է՝ և ներընդունի *զգոլն* և *զչգոլն* և երբեմն՝ ասի ի վերայ փոփոխական բնութեանց. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ և ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ՛ ցրտացուցանել և ո՛չ ցրտացուցանել: - 168. Եւ զայսպիսի զօրութիւնս ո՛չ երբէք ասեմք ի վերայ աստուծոյ. զի մշտնջենաւոր էութիւն է. և ոչ ընդունի *զգոլն* և *զչգոլն*: - 168. Երրորդ՝ զի ի հարկէ՛ էակ է աստուած. և հարկն զմինն ունի ի հակադրութեանց. այսինքն կամ *զգոլն* կամ *զչգոլն*: - 168. Նախ՝ զի *զգոլն* իւրեանց ունէին ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. թէպէտ յետո՛յ ընկալան գոյացութիւնս յինքեանս. որպէս տաճար ի միտս շինողին: - 170. Այսպէս առինչք են արարածք արարչին. և առինչքն համանգամայն ունին *զգոլն*: - 170. Իսկ պատահումն ի յայլս ունի զէութիւնն, և կարօ՛տ է այլոյ ի *գոլն*. որպէս գոյն ի մարմնի: - 170. Եօթներորդ՝ զի պատահումն աւելո՛րդ է գոյացութեան. զի *գոլովն* ո՛չ գոյացուցանէ. և այլն: - 170. Երկրորդ՝ սկիզբն և պատճա՛ռ է գոյն. զի *գոլովն* գոյացուցանէ. և աստուած՝ ամենեցուն: - 171. Մին է՝ զի միշտ ոչ ինչ է. զի ոչ զօրութեամբ և ո՛չ ներգործութեամբ ունի *զգոլն*. և յայս ոչ էակէս ոչ ինչ լինի: - 173. Եւ դարձեալ է՛ ոչ էակ՝ որ թէպէտ ներգործութեամբ ո՛չ է, սակայն զօրութեամբ ունի *զգոլն*. և յայսպիսի յոչնչէ եղեն արարածք ամենայն. ապա ուրեմն յայտնի է հարցումնդ: - 173. Եւ այսպիսի էակքս կրկին ունին զօրութիւն. լինելոյ և ո՛չ լինելոյ. *գոլոյ* և ո՛չ *գոլոյ*. և այլն: - 173. Ապա ընդէ՞ր սոքա՝ գոյացութիւն, որակ, քանակ, և այլքն, եղական *գոլով* ո՛չ շփոթին ի մի բնութիւն խառնեալ: - 176. Այլ մի է պետրոսն ըստ անձին անհատ *գոլոյն*. և մի է բնութիւն պետրոսին ըստ միաւորութեան բանին. իսկ սոքա օրինակ՝ և նա՛ ճշմարտութիւն: - 176. Ապա ուրեմն հա՛րկ է մի *գոլ* աշխարհի և ո՛չ բազում: - 179. Երկրորդն՝ ներքին մասն հրոյն. որ կոչի օլօմպային երկին. վասն մերձ *գոլոյ* յօլօմպիոս լեառն: - 183. Եւ դարձեալ արեգակն միջակ *գոլով* հաղորդի ամենայն մոլորակաց. և զայն անցուցանէ ի լուսինն լուսո՛վն հանդերձ: - 187. Եւ զի ո՛չ շիջանին հրամանաւ արարչին. ի միջի *գոլով* երկուց ներհակացն օդեղէնն երկին. որպէս ստորին տարերքս հուր և ջուր միջնորդ օդիւն կապակցեալ: - 188. Դարձեալ՝ հրեշտակք հրեղէնք *գոլով* ընդ ջրեղէն կամարն գնալով ո՛չ շիջանին: - 188. Վեցերորդ՝ ըստ այլոց. զի բոլոր թանձր մարմինն է՛ հողոյ. և ամենայն հիւթք և մաղձք է՛ ջրոյ. թոքն է՛ օդոյն. և սիրտն է՛ հրոյն ջերմ *գոլով*: - 215

**ԳՈԼՈՇԻ կամ ԳՈԼՈՐՇԻ +** Ո՛չ է աստղ. այլ *գոլորշի* վառեալ ի տարրական հրոյն յորժամ մերձի ի նա՛: - 203. Եւ տևէ՛ որքան է նիւթ *գոլորշոյն*. և լուսեղէն բա՛շս արձակէ առ ի ցուցանել թէ ո՛չ է ի բնական աստեղաց: - 203. Նոյն և սա՛ *գոլորշի՛* է վերացեալ հողմոց. և մերձեցեալ ի հուռն՝ վառի՛ ի նմանէ. և բռնութեամբ հողմոյն վարեալ երևի իբրև զթռիչ աստղ և փութով շիջանի: - 203. *Գոլորշիք* վերացեալ յերկրէ գէջ և չոր խառնեալ: - 203. Շանթքն լինի ի մէջ *գոլորշեացն* որ ի մէջ ամպոյն. և ջերմութեամբն չորացեալ. քանզի հո՛ւր է քարացեալ: - 204. Եւ դարձեալ՝ զի ի *գոլորշեաց* է բաղկացեալ՝ արտաքին մասն հով է և գէջ, և ներքինն ջերմ և չոր. վասն որոյ զարտաքինսն պահէ՛, և զներքինսն ապականէ: - 204. Երկու *գոլորշիք* վերանան յերկրէ. մինն չոր և ծխատեսակ. և միւսն խոնաւ ի գէճ բնութեանց վերացեալ: - 204. Այլ Ամպն լինի, յորժամ զօրութեամբ արեգականն ի վեր քարշին *գոլորշիքն* ի ջուրց և ի գէջ տեղեաց: - 204. Իսկ Մառախուլն է մթագոյն *գոլորշի* անծննդական ջուրց. քան զօդ թա՛նձր է, և քան զամպ նօսր: - 204. Այսորիկ ի գէջ *գոլորշոյն* լինին: - 205. Իսկ շա՛րժն է թանձր *գոլորշի* արտաքս քարշեալ յերկրէ, և նեղեալ ի յելսն շարժէ՛ զերկիր: - 206. Եւ օրինակ տայ զկերակուրն որ ի ստամոքսն

եփի. և *գոլոշիկքն* ի գլուխն ելանէ և պարզ ջուրն ի լեարդն. իսկ մնացեալ թանձրն լինի դառն և աղի: - 208. Եւ զի քարշեն լուսաւորք *զգոլորշին* յերկրէ՝ յայտ է ի ցօղ առաւօտուն և յեղեամն. որ ի գիշերն ի վեր քարշին. և ընդ ծագել լուսոյն հատանին և յետս յերկիր անկանին. և յաւուրս ձմերան լինի եղեամն. և յամարան ցօղ: - 208. Եւ զի ի *գոլորշեաց* որ ի ներքս է փակեալ՝ թօթափի և շարժի: - 211. Նոյնպէս և ի ջուրն կան այլ գն. հողմն երևի ի *գոլորշիքն*. և հուրն և հողն՝ կայծն ի վայր անկեալ քար լինի: - 214. Ընդ վերին դուռն *զգոլոշին* ի խելապատա՛կն առաքէ: - 242. Եւ զխ ամ շինեցին յամառն և ձմեռն ըստ բարեխառնութեան տեղւոյն. մինչև հասին յործկուտ օդն թանձրացեալ ի *գոլորշեաց* և ջերմացեալ յարևուն: - 297. Իսկ ի ներքուստ, ի լինիլ տրտմութեանց՝ խուճապեալ մարմնոյն հոսի մաղձ դառն ի ստամոքս որովայնի. և վերացեալ *գոլորշեաց* նորա զօրէն շոգոլեաց պուտկի առ խելապատակս գլխոյ. և ծանրացեալ անտի թորի՛ առ բիբն ասացեալ ական. չոր գոլով և աղէգոյն ի սևատեսա՛կն մաղձոյ: - 787. Նոյնպէս և երբեմն յուզել ուրախութեանց. ի փեռեկեալ թոքոյ ի կոտորումն շնչոյն, ի թաղանթէ՛ որ առ լերդաւն՝ հիւթ ինչ ծաւալի առ նոյն ասացեալ տեղի. ելեալ *գոլորշեացն* նմանապէս առաջնոյն. և լինի քաղցրագոյն արտօսր. վասն ասացեալ հիւթոյն ի քաղցրորակն անօթոյ: - 787

**ԳՈՀԱՆԱՄ +** Թէ առողջ է, *գոհանայ* զաստուծոյ: - 178. Եւ նա *գոհանայր* զտեառնէ...: – 321. Երրորդ՝ ժողովին և *գոհանան* զաստուծոյ՝ որ յոչնչէ՛ գոյացոյց զմարդն, և յարգանդէ՛ խաւարին ի լոյս եբեր. և ետ մեզ ինչս մարմնական: - 321. Վասն որոյ ի յընչիցն պատարագ մատուցանելով և աղքատս կերակրելով *գոհանան* զաստուծոյ: - 321. Վասն այն յաստուծոյ օրհնեմք զնոսա և *գոհանամք*: - 406. Նախ՝ զի շնորհակալե՛մք հոգւով, և *գոհանամք* մարմնով: - 406. Այլ և *գոհացաւ* ի վերջոյ ի վերայ ամենայն յաղթութեանցն. և տէր մեր ի վերայ ամենայն ներգործութեանցն. որ և ամենայն օրհնութիւնքն ի տէրն ակնարկէ. որ եղև գլուխ հեթանոսաց. յաղթեաց մահու և բարձրացաւ ի գերեզմանէ: - 438. ...և *գոհացեալ* ելին ի լեառն ձիթենեաց...: - 599. Այլ վասն առաջնոյն՝ *գոհանամք*, զի հասոյց զմեզ ի ժամս այս աղօթից: - 624. ...այսինքն *գոհացիր* զաստուծոյ. և յայտնեա՛ զփառս նորա. - 624. վասն որոյ մեզ լեզու լինի և ի դէմս մեր *գոհանայ* զաստուծոյ ըստ իւրաքանչիւր ժամու. այսինքն յառաւօտն, ի հասարակ օրն, և յերեկոյն. զի գոհացումն է և ո՛չ աղօթք: - 626. Այլ և վասն գոհութեան զիտելի է, որպէս ասէ առաքեալն՝ «յամենայնի *գոհացօղ* լերուք զտեառնէ»: - 626. Եւ վասն բազում պատճառի պարտ է *գոհանալ*: - 626. Երրորդ՝ ի խորհուրդ **ը** երրորդին՝ ի կատարածի, յազատեալք յաստեացս՝ *գոհանամք* զաստուծոյ - 627. Իսկ ի պահս ո՛չ խունկ և ո՛չ օրհնութիւն. զի ընդ ապաշխարութեամբ եմք, ո՛չ իշխեմք *գոհանալ* և ո՛չ ունիմք անուշահոտ վարս: - 628. Երրորդ, զայս ի քրիստոսէ ուսաք. զի *գոհացաւ* ի հօրէ և ապա՛ բաշխեաց զզարեղէն նկանակսն և աճեաց...: – 654. Երրորդ, զի կրկին օրհնեմք, առաջին օրհնութիւնն խնդրելն է, և վերջինն *գոհանալն*: - 655. Որպէս աղքատք նախ խնդրեն. և յորժամ առնուն՝ *գոհանան*. նոյնպէս և մեք առնեմք: - 655. ...զի առաջին աղօթք յամենայն կարգադրութիւնս՝ *գոհանամք* պարտ է դնել. բայց առաւել ի կնքելն՝ և ի թաղել մեռելոյն: - 659. ...նա զձեռն ի վեր առեալ *գոհանայ* զաստուծոյ. նմանապէս թէ պատմի վասն վախճանի ուրուք: - 659. ...վասն որոյ այսօր թեթևացեալ զամք ի գերեզմանն և *գոհանամք* զաստուծոյ: - 680

**ԳՈՀԱՑՈՂԱԿԱՆ +** Չորրորդն զաղօթքն *գոհացողական*: - 465. Որում *Գոհացողական* Օրհնութիւն. և Բարեբանօղ Փառատրութիւն. Յամենայն գոյեղէն բնութեանց. ի վեհագունից մինչ ի հուսկ յետինս: - 771

**ԳՈՀԱՑՈՒՄՆ** - ...վասն որոյ մեզ լեզու լինի և ի դէմս մեր գոհանայ զաստուծոյ ըստ իւրաքանչիւր ժամու. այսինքն յառաւօտն, ի հասարակ օրն, և յերեկոյն. զի *գոհացումն* է և ո՛չ աղօթք: - 626

**ԳՈՀՈՒԹԻՒՆ +** Երբեմն ի տեղի *գոհութեան* է. ըստ այնմ թէ՝ «շնո՛րհ ունիմ այնմիկ որ զօրացոյցն զիս»: – 139. Դարձեալ՝ **բ** իրօք յաղթեաց յոր զսատանայ. *գոհութեամբ* բանի՝ և համբերութեամբ գործոյն: - 323. Նախ՝ ուղղութիւն ընկերաց. **բ** *գոհութիւն* և համբերութիւն. **գ**՝ իմանալ զչար խորհուրդն սատանայի. **դ**՝ աղօթք և պահք. **ե**՝ խոնարհութիւն և ճշմարտութիւն. որ գերագոյն է ամենայն զինուց և խպառ կորուսանէ զչար որ մայրն է ստութեան և հպարտութեան: - 324. Ութերորդ, վասն *գոհութեան*. հեռաւորն եկեալ կամ բարւոյ յաջողեալ: - 358. Նա՛ է ողջակէզ և փրկութիւն և *գոհութիւն*, և վասն մեղաց և յանցանաց. և յամենայն նւիրաց կատարումն և գլուխ նա՛ է: - 362. Նախ՝ շնորհակալութիւն է և *գոհութիւն* երախտեացն աստուծոյ տրիտուր. ո՛չ իբր կարօտի, այլ անկարօտի որպէս աստուծոյ: - 406. Այսպէս և օրհնութիւն մարդկան որ գերագոյն է քան զմեզ, շնորհակալութիւն է և *գոհութիւն*. որպէս սրբոց կամ թագաւորաց և այլն: - 406. Երկրորդ՝ հոգևորին շնորհակալութիւն, և մարմնաւորին *գոհութիւն*: - 406. Երրորդ՝ ի խոստմունքն շնորհակալութիւն, և ի պարգևն *գոհութիւն*: - 406. և Նմա փառք և *գոհութիւն* յաւիտեանս ամէն: - 438. Այլ աղօթքն և *գոհութիւնքն* երկար: - 466. Քառասունևդ,

Մասնաւոր Աղօթք. և Օրհնութիւնք. և Խաղաղութիւն. Քարոզ. և Մաղթանք և *Գոհութիւն*: - 527. Վերինն որ առ աստուած և առ սուրբս, երբեմն յայտնութիւն լսի. երբեմն *գոհութիւն* և բարեբանութիւն. երբեմն մաղթանք և աղաչանք: - 539. Երրորդ՝ *զգոհութեան* աղօթսն հանապազ անխափան մատուցանէ: - 584. Նախ *գոհութիւն* է և շնորհակալութիւն բազում երախտեացն առ մեզ: - 624. Զի՞նչ է որ զառաւօտու քարոզն՝ այսինքն զերկրպագեմքն, և զՊատարագին *գոհութիւնն*, և յերեկոյն զՅասեալքս ի ժամն, աղօթից ձևով ասէ սարկաւագն: - 626. Դարձեալ՝ա՛յլ է քարոզն առ մեզ, և ա՛յլ է աղօթքն առ աստուած, և ա՛յլ է մաղթանքն առ սուրբս, և ա՛յլ է *գոհութիւնն*: - 626. *Գոհութիւնն* վասն անցելոյն յաղագս առաւել պարգևացն է: - 626. Այլ և վասն *գոհութեան* գիտելի է, որպէս ասէ առաքեալն՝ (յամենայնի գոհացօղ լերուք զտեառնէ:) - 626. Նա՛խ՝ զի *գոհութիւնն* պարգև՛ է օրհնաւոր ի բարեա՛ց մասնէ...: - 626. ...որպէս յամենայն ինչ իրաց՝ մա՛սն նուիրելի է աստուծոյ. նոյնպէս և ի բարեաց գործոց *զգոհութիւնն*: - 626. Երկրորդ, զի ի *գոհութիւնն* ամենայն չարք կործանին որ հակառակ կան մեզ: - 626. Վեցերորդ, *գոհութիւնն* փոխարէ՛ն է ամենայն պարգևացն աստուծոյ: - 626. Նա՛խ՝ իբր *գոհութիւն* և շնորհակալութիւն աստուծոյ որ զօրացոյց զմեզ: - 627. Չորրորդն պարտապան *գոհութեան* վասն էից փոփոխման. և ոմանց ամօթ պատկառանաց: - 630. Զի *գոհութիւնն* կրկին զօրութիւն ունի...: – 655

**ԳՈՂ +** Երրորդ՝ զգազանս և *զգողս* փախուցանէ: - 185. Չորրորդ՝ փախչին *գողք* և գազանք: - 196. Իններորդ՝ պարիսպ լինին շուրջանակի ջուրք. ի թշնամեաց ի գազանաց՝ և ի *գողոց* պահելով: - 207-208. Կարճունչն՝ *գո՛ղ* է: - 246. Յաստ ձեռն և կարճամատն, նենգաւո՛ր է և *գող*: - 247. Ո՛չ է արդարութիւն. այլ նա՛ ընդ զրկողացն դատի, և դու ընդ *գողոցն*: - 337. Մկունք՝ *գողքն*: - 365. Եւ թէ ոչ էր զղջացեալ, միոյն դ և ե էր տուգանք *գողին*: - 384. Վեցերորդ՝ զի թէ լինի անկարօտ *գող* և զրկօղ, ընդ տեառն իւրոյ կորուսանէ և զինչսն. որպէս աքարն որ ունէր բազում ստացւածս, և գողացաւ ի նզովիցն երիքովի. տեսին ամենայն ժողովուրդն և ցասեան ի վերայ նորա և իրաւունս ետուն սատակմանն: - 416. Եւ սոքա ամենայն ստուգե՛ն զյարութիւն նորա թէ ո՛չ է գողացեալ. զի *գողն* ո՛չ ծալէր զվարշամակն և զկտաւն զըմռեալ: - 517. Ոչ ինչ ամենևին՝ թէ ընկալցին զմկրտութիւնն. որպէս և ոչ ցորենոյն է վտանգ թէ գողունի իցէ և սերմանի ի ձեռն *գողի*: - 593. Վասն որոյ տէրն *գողոյ* նմանեցուցանէ զմահն օրհասական: - 730. Եւ երիւք պատրաստի մարդ ի *գողոյ*: - 730. Եւ այսպէս հսկել և պահել զտունս մեր, զի մի՛ *գող* մահուն և կատարածի՝ գտեալ զմեզ անպատրաստ ի մեղս՝ տանիցի զիոգիս մեր ի տանջանս յաւիտենից: - 730

**ԳՈՂԱՆԱՄ +** Այլ և ըստ համարոյն՝ կնքէ՛ զինչս թագաւորաց. և չտայ *գողանալ* ծառայից. և *զգողացեալն* յայտնէ և յանդիմանէ: - 178. Յինգերորդ՝ զի թէ ոք *գողանայր* և սպանանէր, զանմեղն դատապարտէին. և լինէր ամենևին անօրէնութիւն: - 238. *Զգողացեալն* խոստովանիլ. և խոյ մի նուիրել: - 285. Երրորդ՝ ցուցանէ *զգողացեալն* ի բանից, զնոյնն կրկնել և շրջել պատասխանելով: - 323. Եթէ ոք զմեզ զրկէ արդարութի՞ւն է ապա թէ խաբեմք և *գողանամք* զինչս նորա: - 337. Յինգերորդ՝ ե միշտ է և առ միշտ. որպէս մի՛ սպանաներն. և մի՛ *գողանարն* և այլն: - 340. Այլ մեղքն հոգեկան նոյն է աստ և անդ. որպէս շնալ և *գողանալ*: - 369. Վասն է՞ր յորժամ *զգողացեալն* խոստովանի ասէ՝ և խոյ մի աստուծոյ նուիրէ՛: - 384. Զի *գողացեալ* մեղքն միայն խոստովանելով ոչ քաւի. այլ հատուցանել պարտ է զգողօնքն. կամ ի տէրն, կամ յազգականս նորա. կամ ի քահանայն. զի միջնո՛րդ է մեռելոց և կենդանեաց: - 384. Վեցերորդ՝ զի թէ լինի անկարօտ գող և զրկօղ, ընդ տեառն իւրոյ կորուսանէ և զինչսն. որպէս աքարն որ ունէր բազում ստացւածս, և *գողացաւ* ի նզովիցն երիքովի. տեսին ամենայն ժողովուրդն և ցասեան ի վերայ նորա և իրաւունս ետուն սատակմանն: - 416. Եւ սոքա ամենայն ստուգե՛ն զյարութիւն նորա թէ ո՛չ է *գողացեալ*. զի գողն ո՛չ ծալէր զվարշամակն և զկտաւն զըմռեալ: - 517. Զի ժ պատուիրանքն և է մահու չափ մեղքն են ըստ գոյացութեան մեղք. որպէս մի՛ շնարն և մի՛ *գողանարն* և մի սպանաներն և մի՛ սուտ վկայերն: - 565

**ԳՈՂԳՈԹԱՅ +** Բնակէր ի ներքոյ *գողգոթային* ուր ադամայ գերեզմանն էր: - 300. Եւ տէրն եբարձ ի յուս իւր զփայտ խաչին մինչ ի նոյն տեղի *գողգոթային* ուր զենանէր իսահակ: - 306. Եւ տէրն մեր կանգնեաց զխաչն ի *գողգոթայ* մինչև յերեկոյ և վանեաց զթշնամին մեր: - 418. Եւ բաժանեալ զսուրբ տեղիս տընօրինական, ետուն զսուրբ յակոբն պատրիարգարան, և *զգողգոթայն*, և զսուրբ կարապետն և զսնարսն. և արկեալ վիճակս ի վերայ յարութեանն՝ անկաւ հայոց. և տրտմեցան ոմանք յազգէ նոցա: - 548. և կանգնեաց զխաչն փրկական ի սուրբ *գողգոթայ* ի սեպտեմբերի **ժդն**...: - 617. Զի որպէս փայլակն ելանէ յարևելից ի վերայ լուսեղէն ամպոյ, և քառաձև լուսովն լնու զչորս կողմ աշխարհի և հաստատի ի *գողգոթայ* յորում խաչեցաւ տէրն: - 732

**ԳՈՂԻԱԹ** - Երրորդ՝ ի նախատինս զօրաց իւրոց. զի հովիւ մանուկն և որդի յեսսեայ սպան *զգողիաթ*. և նոքա իշխանք և մեծամեծք ո՛չ կարացին: - 427. Երեքտասաներորդ, եհար *զգողիաթ* զնախատիչն իսրայէլի. և տէրն զսատանայ նախատիչ մարդկան ազգի: - 436. Չորեքտասաներորդ, ցպով և պարսաքարով ել ընդ դէմ *գողիաթու*. և տէր մեր խաչիւ որ վէմ կոչեցաւ, և ի ձայն բարձր աղաղակեաց և արձակեաց զհոգին: - 436. Վեշտասաներորդ, դարձեալ **խ** օր արձանացաւ *գողիաթ* և զտէրն խ օր փորձեաց սատանայ: - 436. Իններ, սրովն *գողիաթու* սպան զնա. և տէր մեր սրով մահուան սպան զիշխանն մահու: - 436. Երեսունեւ, պահեցաւ սուրն *գողիաթու* ի խորանն. և խաչն փրկական ի յեկեղեցի: - 437. Ոմանք ասեն թէ՝ զի դիովքն իւր անէծ *գողիաթ*, ա՛յն կատարեցաւ: - 439. Այլ և ցուպն հովուական դաւթի. զոր տարաւ ընդ դէմ *գողիաթու*: - 494

**ԳՈՂՈՒԹԻՒՆ +** Ութերորդ՝ զի ամենայն տեսակք ախտիցն ի՛ր մի երևեցուցանեն մեզ. որպէս *գողութիւն* զինչս, և պոռնկութիւն զհեշտութիւն. իսկ հպարտութեանն ո՛չ գոյ ամենևին ակնկալութիւն: - 562. Եւ զի ո՛չ է որպէս մահացուն մեծ կամ փոքր. որպէս շինութիւն մեծ է քան զպոռնկութիւն. և մարդասպանութիւն քան *զգողութիւն*: - 568. Եւ տե՛ս յօրինակաց. զի չնչին *գողութիւնն*, զաքար իւր զարմիւքն քարկոծեաց. և կրկուտ քաղելն զայրին: - 745

**ԳՈՂՈՒՆԻ +** Ոչ ինչ ամենևին՝ թէ ընկալցին զմկրտութիւնն. որպէս և ոչ ցորենոյն է վտանգ թէ *գողունի* իցէ և սերմանի ի ձեռն գողի: - 593

**ԳՈՂՕՆ(Ք) +** Երրորդ, զի թէ յեգիպտոս դարձցին՝ ո՛չ իշխեսցեն. զի ի *գողօ՛նս* էր այն նոցա: - 336. Զի գողացեալ մեղքն միայն խոստովանելով ոչ քաւի. այլ հատուցանել պարտ է *զգողօնքն*. կամ ի տէրն, կամ յազգականս նորա. կամ ի քահանայն. զի միջնո՛րդ է մեռելոց և կենդանեաց: - 384. Նոյնպէս այժմ ի նորս պարտ է խոստովանիլ վասն կանոնաց եկեղեցւոյ. և *զգողօնսն* վճարել կամ ի տէրն, կամ ի քահանայս, կամ յաղքատս: - 384. Ի *գողունից* կամ յաւազակաց ո՛չ է պարտ զի պիղծ է: - 390. Նաև զընտանիսի աքարայ պատժեաց. զի և նոքա ո՛չ խոստովանեցան *զգողօնքն*: - 415

**ԳՈՃԱԶՄ +** *Գոճազմ*. կապո՛յտ է. և գտանի ի մեծն սկիւթ: - 348

**ԳՈՄ (բայ) +** Որպէս ասեն հեռձուածօղք՝ զամենայն ինչ մարդկան ի հարկէ՛ *գոլ*. այսինքն զգործ. զդիպուած. զմահ. զկեանք. և զամենայն ինչ: - 7. Եւ զի լինին և են սոքա՝ յա՛յտ է յայսցանէ, զի ո՛չ կարեն ոչ *գոլ*: - 8. Եւ զի ո՛չ կարեն ոչ *գոլ*, անկա՛ր է սոցա ոչ *գոլ*: - 8. Եւ որ անկա՛ր է ո՛չ *գոլ*, ի հարկէ՛ *գո՛լ*, և է՛: - 8. Եւ նախ առ նոսա՝ որք ասեն զբանս մեր ի հարկէ *գոլ* կամ ո՛չ *գոլ*: - 8. Ապա ուրեմն յա՛յտ է՝ զի բանն զիրն ո՛չ կարէ ճշմարտել. այլ իրն զբանն ճշմարտէ. յորժամ *գոյ* կամ ո՛չ *գոյ*. որպէս ասէ իհարկէ՛ *գոլ* զէակն յորժամ է՛. և ո՛չ *գոլ* յորժամ ո՛չ է: - 9. Զորօրինակ՝ իրն ի ներկայս որ է նիւթ ներընդունակ՝ ունի կրկին զօրութիւն. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ, և կարէ՛ ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ ջերմն *գոլ*, և կարէ՛ ո՛չ *գոլ*. և մինն ի նոցանէ՛ լինի ներգործութեամբ որն և հանդիպի: - 9. Իսկ թէ է ի պատճառն ներընդունական, յայտնի՛ է որ հաւասար ունի *զգոլն* և զո՛չ *գոլն* որպէս ասացաւ: - 10. Ասեմք առ այս, եթէ՝ ամենայն ինչ որ լինի՝ ունի պատճառ. և նախ է պատճառն քան զպատճառելին. այլ ամենայն պատճառ ո՛չ է հարկաւոր. այլ *գո՛յ* և ներընդունակ պատճառ. ապա ուրեմն ո՛չ է հարկաւոր պատճառ շարժումն աստեղաց: - 10. Նախ՝ եթէ չար հիւանդութիւնն և այլն ի հարկէ՛ է, ապա ամենեցուն նոյնպէս պարտ էր *գոլ*. ...զի հարկն նոյն է առ ամենեսեան: - 11. Մանաւանդ թէ առ առաջին պատճառն վերանայ այս անիրաւութիւն, որ ետ զօրութիւն աստեղացն այսպէս անիրաւ բաժանարար *գոլ*: - 12. Նախ՝ եթէ դու քեզէ՛ն խոստովանեցար եթէ ոչ *գոյ* հարկ. այլ՝ աստուած և բնութիւնն և արհեստն ևս ներգործեն. ապա թէ է գործ արհեստի և բնութեան, ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. Այլ ի յաստուած զօրութեամբ իր ո՛չ ինչ *գոյ*, ո՛չ բարի և ո՛չ չար: - 14. Եւ զի ի հարկէ ունի *զգոլն* բարի՝ անկար է ո՛չ *գոլ* բարի: - 15. Ա՛րդ՝ հարկ է ամենեցունց *գոլ* այնպէս որպէս աստուած ետես և գիտաց. և գիտութիւնն աստուծոյ անպատիր է. ապա ուրեմն ամենայնն լինի ի հարկէ տեսութեանն աստուծոյ: - 15. Եւ զի ոչ է այս հարկ. զի *գոլով* նոյն՝ ճանաչեմք զայլսն: - 17. Նմանապէս և աստուած *գոլով* բարի՝ ճանաչէ զչարս: - 17. Նա՛խ՝ եթէ ուշիմ և ապուշ և այլն ըստ կարգի, սոքա եթէ ի մարմնոյն խառնուածոյ պատճառին՝ և եթէ բնական որակութեամբ հոգւոյն՝ նման և աննման *գոլ*, առանց ներգործելոյ ո՛չ չար են և ո՛չ բարի. ո՛չ գով. և ո՛չ պարսաւ հետևի. որպէս և ո՛չ բնական բարուց անաւնոց: - 19. Ապա ուրեմն թէ չարն ապականիչ է այլոց, ուրև պատահի ապականէ՛ և զինքն ըստ որում չար է. ապա ուրեմն ոչ է՝ և ո՛չ կարէ *գոլ* չարն: - 22. Եւ յամենևին նըւազիլ կենաց՝ և մահն կորընչի. զի յէութեան ունի *զգոլն* ներհակապէս: - 22. Իսկ չարն կորեաւ յորժամ բարձաւ ի հոգւոյն. զի չարն ո՛չ է է՝ և ո՛չ *գոյ*: - 23. Իսկ չարն ըստ ենթակային էանայ և երևի, և ըստ ինքեան ոչնչանայ և ապականի. զի ո՛չ է է. և ո՛չ *գոյ*: - 23. Չարն ո՛չ է է, և ո՛չ *գոյ*. որո՞վ զանազանի ի պարզ ոչ է էն. որէ՛ ամենևիմբ ոչինչ: - 23. Նախ՝

զի ո՛չ էն փափագի և ցանկայի է լինիլ և *գոյ*: - 23. Իսկ չարն ի յէութեան երևեալ՝ փոխի դարձեալ յոչինչ և յոչ *գոյ*: - 23. Չինգերորդ՝ ոչ ինչն ի յենթակայս եղեալ՝ ո՛չ ներհականայ էի. թէպէտ ըստ ինքեան ներհա՛կ է. և չարն ի յենթակայն երևեալ՝ ներհականայ և կորուսանէ՛ զբարին. թէպէտ ըստ ինքեան ոչ ինչ է և ոչ *գոյ*: - 23. Զի գերազանց է անպատճառ և անսահման *գոյն* աստուծոյ՝ քան այլոց: - 24. Յեղելոց իրաց կարե՛մք ցուցանել թէ է՛ և *գո՛յ* աստուած՝ երեք եղանակաւ: - 25. Երկրորդ ի սկզբանէ, զի իր ինչ ինքն ինքեան սկիզբն և սկսեալ անկար է *գոլ*. ուստի հա՛րկ է ամենայն սկզբնաւորաց *գոլ* սկիզբն: - 25. Ա՛րդ՝ եթէ միակս այս շարադրի բազմաց, ո՛չ մնաց մին. իսկ եթէ ոչ շարադրի, ո՛չ *գոն* բազումք. այլ մի և մի. և այս որպէս այս: - 25-26. Զի ո՛չ նա այսմ և ո՛չ սա այնմ կարէ միակ գոլ. վասն որոյ հա՛րկ է *գոլ* այնպիսի միակ՝ որ և ամենայն բազմութեան և միակաց է՛ միակ. որ է աստուած: - 26. Չինգերորդ՝ Կարէ՞ և հայր ծնեալ ասիլ ի նոյն բնութենէ *գոլ*: - 29. Ուստի հեշտութիւն և աւանդութիւն յիրաւի խառնեալ ը միմեանս, և հակառակասիրութիւն և ինքնահաճութիւն յառաջ եկեալ, որով զինեալ պնդին ընդդէմ ուղղութեան. զի կարծեն զինքեանս ճշմարիտ *գոլ* քան զայլսն: - 33. Եւ որպէս ասեն վարդապետք՝ քան զամենայն մեղս ծանրագոյն *գոլ* զպաշտօն կռոցն վասն երկուց: - 33. Արդ՝ կռապաշտն և հերձուածօղն հաւասա՛ր են յամբարիշտ *գոլն*. զի որպէս շուն դառնայ ի փսխած իւր. այսինքն զի նա ո՛չ ունէր, և սա՛ ուրացաւ և դարձաւ անդրէն: - 33. Եւ այլս բազում բաղդատութիւն *գոլով* հերձուածողի և նեռինն. և զորս տէրն գնեաց՝ սոքա ուրացեալք՝ ածեն ի վերայ անձանց զերագահասն կորուստ: - 35. Վասն որոյ և մեք համաձայն *գոլով* ուղղափառաց հարցն սրբոց՝ դիցուք սուղ ինչ յառարկութեանց նոցա, և ընդ նմին զպատասխանիս: - 35. Որ է տարակուսանք այս, եթէ *գոյր* ոմն մեծ քան զհայր՝ զի բռնադատեաց զնա՛: - 36. Եւ ի սկզբանն ասելով, ո՛չ յետոյ քան զհայր *գոլ*: - 37. Զի և յոհան դամասկացին ասէ հարկ *գոլ* ամենայն սկսզման ունել դադարումն. այլ զի հրեշտակք և հոգիք ոչ դադարին, այս կամա՛ցն աստուծոյ է պահպանութիւն, և ոչ բնութեան նոցա. զի յո՛չ էից եղեալքն՝ կարեն յոչ էութիւն փոխիլ: - 37. Առարկութիւնս այս յայտնապէս զորդի կամ զհայր ի բա՛ց մերժէ յաստուածութենէն. ճարտա՛ր իմա, ո՛չ ասէ զհօրէ ոչ *գոլ* աստուած. այլ զանձնելութենէն: - 38. Ապա թէ ոչ՝ հա՛րկ է քեզ ասել ըստ բազում անուանցն և բազում բնութիւնս *գոլ* աստուծոյ: - 38. Պատասխանեմք թէ՝ կարի՛ յիմարութիւն է հարցումնդ. և զի *գոյ* հայր ըստ քում բանիդ ծնօղ որդւոյ. ապա ուրեմն ո՛չ կարէ ոչ լինիլ և ծնանիլ: - 38. Իսկ դուք զի ուրանայք զհոգին հաւասար *գոլ* հօր և որդւոյ, և կրտսե՛ր ասէք քան զորդի: - 39. Եւ թէ *գոյր* երիցագոյն, լինէր պատճառն և գերագոյն քան զաստուած. իսկ ստեղծանելն երևի պատճառաւ. այսինքն վասն փրկութեան մարդկան: - 41. Առ որս ասեմք՝ թէ որդի ո՛չ ասի անդրանիկ վասն *գոլոյն* ի կարգէ ստեղծուածոց, զի ո՛չ ոք ստեղծւած՝ էառ զբնութիւն աստուծոյ որպէս որդին: - 41. Այսպէս և զանհնազանդութիւնս մեր. զոր ոմանք ուրացութեամբ և կէսք ախտիւ՝ իւրն վերագրէ գլուխ *գոլով* անհնազանդ անդամոցն: - 42. Այլ զի մեք թողեալք և անտես եղեալք յաստուծոյ վասն յանցանացն, զդէմս մեր տպաւորէ՛ յինքեան. բնութենակից *գոլով* մեր և գլուխ անդամոցս: - 42. Գլուխ *գոլով* մեր և լեզու. զտկարութիւն բնութեան անդամոցս ցուցանելով հօր: - 42. Է՛ և անկարութիւն առ մեզ՝ ոչ էին *գոյ* լինիլ. և չորսին չորեքտասան: - 44. Եւ թէ լինէր՝ *գոյր* և ի բնութենէ օտար. հետևէր ապա ոչ *գոլ* որդի հօր. թէ ոչ էր ի նոյն բնութենէն. ապա և ոչ հայր. զի հայր որդւո՛վն է հայր: - 44. Տարակուսելի է առ այս, զի թէ հա՛րկ է որոց բնութիւնքն *մի գոլ*՝ նոցա և կամքն և ներգործութիւնն մի լինիլ. ընդէ՞ր ապա զի մարդկային բնութիւնս մի է և նոյն հօրն և որդւոյն՝ և ո՛չ է կամքն և գործքն մի: - 45. Թէ մարդկութեանն էր՝ *գո՛յր* ինչ ասել: - 46. Ոմանք որպէս սադուկեցիք ո՛չ *գոլ* իմանան: - 51. Եւ աստուածաբանքն հեթանոսաց՝ որպէս միտս ամենեցուն՝ և միտս արտաքոյ *գոլ* ասացին լցեալ զփորուածս երկնից: - 51. Այլ մեր բանս ո՛չ է ընդ այլսն ամենայն, այլ որք զօրութիւն և արարած ասեն *գոլ* զհոգին: - 51. Եւ ապա՛ զադամ, զի ունի զսէթ ծնունդ՝ և զևա ո՛չ ծնունդ. այլ հատումն ի նոյն բնութենէ. և ընդ միով սահմանաւ *գոլ* ծնողին և հատմանն և ծնիցելոյն: - 53. «Իմաստութեան նորա ո՛չ *գոյ* բաւ». այսինքն հոգւոյն սրբոյ: - 56. Իսկ եթէ բոլոր, այս լինի կամ բ հոգի որպէս ասացաք, կամ աւելորդ *գոյ* բղխումն որդւոյ որ է յոյժ հայհոյութիւն: - 63. Զի եթէ զոյգ և հաւասար, ո՛չ *գոյ* առ նոսա կատարեալ բղխօղ. զի երկոքինն ի մի բղխողի տեղի են: - 63. Այլ այնպէս ասաց առ ի ցուցանել զանչափ յաւիտենական աստուածութիւնն՝ որ ըստ ինքեան պարունակէ զամենայն ժամանակս. ըստ որում աստուածային ելմունք ի յապառնի ժամանակս իցեն. և կերպիւ ինչ ներկայաբա՛ր *գոն*: - 65. Իսկ թէ և նա արտաքուստ ունի զորդիութիւն և զայլսն, *գոյ* կասկած երբեմն ի բաց մերժել զոր էառն: - 66. Զի նոյն ինքն քրիստոսդ անուն՝ ուսուցանէ զքեզ աստուածութեամբն մարդ *գոլ*, և մարդկութեամբն աստուած: - 75. Եւ որ ուրանայ զմիութիւնն՝ ուրանայ և զքրիստոսն *գոլ*. ապա ուրեմն և զհաւատ քրիստոնէութեանն: - 76. Որև *գոն* ի յեղեալքս միաւորեալք. որպէս հուր և երկաթ. հոգի և

մարմին. որք չարչարին անչարչարապէս: - 76. Զի թէ անանձն բնութիւն ասէաք միաւորեալ որ էր հասարակ, *գո՛յր* ինչ նոցա ասել առ այս: - 76. Զնոյն *գոլ* աստուած և որդի աստուծոյ ըստ հոգւոյ. իսկ որդի մարդոյ ըստ մարմնոյ: - 83. Իսկ մի *գոլ* ներգործութիւնք և կիրք. որպէս քնարն՝ և որ շարժէ զքնարն՝ մի ներգործութիւն կատարեն և ո՛չ երկուս: - 86. Նախ՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս սեռի՝ ո՛չ *գոյ* առաջին և վերջին. որպէս բաժանի կենդանին ի բանականն և յանբանն. և ո՛չ է ասել թէ՝ բանականն յառաջ է քան զանբանն. այլ զոյգ և համայնք են: - 87. Երկրորդ՝ ի հոմանունսն ո՛չ *գոյ* առաջին և վերջին: - 88. Այլ աստ *գոյ* որպէս ցուցաւ: - 88. Եւ յայտնի եղև թէ և զքրիստոս *գոլն* ուրանան. և զաստուածն ուրանան այսպիսի առարկութեամբ: - 91. Եւ զայս եթէ բաժանմամբ, ո՛չ է առանձնապէս բանն քրիստոս. զի ո՛չ *գոյ* մեծագոյն օճանօղ նմա. որ և ո՛չ առանց մարմնոյ փրկեաց: - 94. Եւ դարձեալ՝ զի մի՛ կարծի միայն յանմարմնութեանն պատկեր հօր, ի վերայ էած և ի լինելութեանն հաւասար աստուծոյ *գոլ* նովին մարմնովն առանց յափշտակութեան: - 93. Որ ասես սոսկ մարդ *գոլ* զքրիստոս. և տգէտ և տկար. և ապականացու մարմին. և անկեալ ընդ կարեօք մարդկան: - 98. Երրորդ՝ որպէս աչք ի զգալի լոյսն հեշտանայ ազգակից *գոլով*: - 104. Եւ յատուկ է Յայր *գոլ* և անծին: - 106. Երկրորդ՝ հասարա՛կ է ի միմեանս *գոլ* անձանցն. որպէս որդի ի հայր. և հայր յորդւոջ. և հոգի ի հայր և յորդի. և անդրադարձեալ: - 106. Երրորդ՝ որդին ծնունդ նկատէ ի յէութիւնն, և հոգին ի կեանքն. և նախ է *գոլ* իրին՝ և ապա կենդանի: - 109. Զի է՛ մի՝ որ սկիզբն է թըւոյ. և այսպէս մի ո՛չ ասի աստուծոյ. զի այս քանա՛կ է. և պատահումն ո՛չ *գոյ* յաստուած: - 110. Երկրորդ՝ ոչէ ասի գերագոյն էն և *գոյն*. որպէս ի յէիցս ո՛չէ և ո՛չ գոյ. այլ գերագոյն է և գերագոյն ոչէ: - 111. Մին՝ զի նա՛խ է քան զամենայն *գոյ*. թէ սկիզբն և թէ էութիւն: - 111. Երկրորդ՝ զի նախ՝ *գո՛յ* և է է. և ապա բարի և իմաստուն և այլն: - 111. **Իսկ անե՛ղ է աստուած արձակապէս և գերազանց. զի անեղէ է՝ և միշտ *գոյ*՝ և ինքնակատար**: - 113. Զի անեղ է՛ *գոլով*՝ տարրորոշի յանեղ ոչընչէն. և միշտ *գոյ*՝ ի հրեշտակաց. և ինքնակատարն՝ յայնցանէ որ կարօ՛տ են սկզբան և կատարման: - 113. Ա՛րդ՝ որդի և հոգի անեղակից *գոլով*՝ հաւասար են հօր: - 114. Նախ՝ զի է՛ և *գո՛յ* աստուած յամենայն յաւիտեանս. և յամենայն ժամանակ. և յամենայն օր: - 115. Եւ զի յետ մահու և յարութեան ո՛չ *գոն* այսոքիկ պատճառք՝ անմոռանալի մնայ իմացումն: - 120. Այսպէս և այլք բազումք *գոն* հաւասարութիւնք: - 125. Վեշտասաներորդ՝ մէջ *գոլով* աստեղացն և լուսաւորէ. որպէս միջին ստեղն եօթնաջահեանն լուսոյ: - 126. Նախ մերձակայ և հեռաւորն *գոլ*: - 131. Երկրորդ՝ առողջ լսելեաց և տկար *գոլ*: - 131. Երկրորդ՝ զի ձայնին ընդունարան է լսելիքն մերձ *գոլով* օդոյն: - 131. Երկրորդ՝ ցուցանէ զնստեալն ի վերայ՝ տէր *գոլ* երկնի և երկրի և ծովու: - 132. Իսկ թէ ոմանք *գո՛լ* ասեն **ժ** դասք և զմինն անկեալ, ո՛չ պարզապէս, այլ կրկին է իմացումն: - 134. Նախ՝ ըստ սրբոյն դիոնէսիոսի որ ինն ասէ *գոլ* զդասս կարգապետութեան նոցա: - 134. Եւ նոքա լոյս *գոլով* լուսաւորին. իսկ մեք ի խաւարէ՛ ի լոյս գամք: - 139. Զի գիտեմք զդոսա ինն *գոլ* դասս ըստ սրբոյն դիոնիսեայ. և երիս երրեակս որոշեալ ի դէմս Երրորդութեանն: - 141. Ո՛չ են յաւերժահասունք որպէս ոմանք կարծեն թէ յերկուց տարերց այսինքն ի հրոյ և յօդոյ են բանական կենդանիք և ունին ծնունդ և մահ. սուտ է այսպիսի կարծիքս և ընդունայն և հակառակ սուրբ գրոց. զի բանական կենդանի և մահկանացու՝ մարդս միա՛յն է որոյ յարութիւն և դատաստան *գոյ*: - 150. Երկրորդ՝ զի ուր հասանէ գործ արարչութեան, անդ *գոյ* և նախախնամութեան. և անդրադարձեալ ևս՝ զի ուր գործ նախախնամութեան է, անդ և գործ արարչութեան: - 157. Իսկ չար առնել բարեացն՝ է գործ անիրաւութեան, և ո՛չ *գոյ* յաստուած: - 158. Զի յատուկ է առաջին պատճառին որ է՛ աստուած՝ ի հարկէ էակ *գոլ*՝ և միշտ ներգործութեամբ, և իսկապէս ներգործութեամբ. որովք տարրորոշի յայսցանէ՝ որ կարելի՛ են էակ *գոլ*. և երբեմն ներգործութեամբ և հանդերձ զօրութեամբ: - 162. Որպէս այսոքիկ որ փոփոխականք են. որ կարեն *գոլ* և ո՛չ *գոլ*. և երբեմն հանդերձ զօրութեամբ: - 162. Եւ միշտ ներգործութեամբ է. զի ո՛չ կարօտի սկզբան և կատարածի զօրութեամբ *գոլ*. ապա ուրեմն անսկիզբն է և անվախճան: - 162. Եւ թէ ոք ասիցէ, եթէ աստուած զոր ոչ կամի՝ ո՛չ կարէ, որպէս զչար զի ո՛չ կամի և ո՛չ կարէ. նոյնպէս զմեղս և զայլսն. ապա երևի անկարութիւն ի յաստուած *գոլ*: - 163. Իսկ առ աստուած կամքն և կարն հաւասա՛րք *գոն*. վասն որոյ հակադարձին ի միմեանս. զի զոր ինչ կամի՝ կարէ՛. և զոր կարէ՝ զնոյն և կամի՛: - 163. Իսկ նախախնամութիւնն առ աստուած գոյացական է և միշտ. զի պատահումն ո՛չ *գոյ* յաստուած: - 164. Եւ թէ ոք ասիցէ, ամենայն վերոյ ասացեալքս *գո՛ն* և յամուսնացեալ երիցունս աշխարհի, և քահանայագործե՛ն: - 167. Նախ՝ զի պարզ ներգործութիւն է աստուած. զի եթէ *գոյ* ինչ զօրութեամբ նախատեսութիւնն աստուծոյ՝ ապա բաղադրեա՛լ է և ոչ պարզ ներգործութիւն: - 168. Երկրորդ՝ զի միշտ ներգործութիւն է աստուած. ապա թէ *գոյ* ինչ զօրութեամբ, ո՛չ լինի միշտ ներգործութիւն. այլ երբեմն: - 168. Այլ արդ՝ եթէ *գոյ* զօրութեամբ ինչ ի նա՛ ո՛չ է ի հարկէ էակ. այլ կարելի՛ էակ: - 168. Չորրորդ՝ զօրութիւն և ներգործութիւն

են հակակա՛յ իրերաց. ապա թէ է զօրութեամբ և ներգործութեամբ՝ *գո՛յ* ինքն ինքեան հակակայ որ է բնաւ սուտ: - 168. Եօթներորդ՝ ներգործութեամբն պատուական է քան զօրութեամբն. և թէ *գոյր* զօրութեամբ, լինէր ինքն ինքեան պատուական և անպատիւ որ է՛ անյարմար: - 168-169. Եւ թէ *գոյր* ինչ զօրութեամբ ի նա՛, և նա՛ լինէր ընդ եղելոցս ի ժամանակի որ է սուտ: - 169. Եւ թէ *գոյր* ինչ այսպիսի զօրութիւն ի նա, լինէր վախճանաւոր և նա. և թէ էր վախճանաւոր, և էր սկզբնաւոր՝ որ է՛ անպատշաճ: - 169. Ապա ուրեմն յա՛յտ է ի բաժանման է թէ ի յաստուած ո՛չ *գոյ* իր ինչ զօրութեամբ. այլ բովանդակն ներգործութեամբ որպէս ցուցաւ: - 169. Այլ արդ՝ լինելութիւն աշխարհի առ ինքն ըստ ինքեան ասի զօրութեամբ և ներգործութեամբ. զի ի զօրութենէ եկն ի ներգործութիւն. զի թէ ոչ *գոյր* զօրութեամբ նախ՝ ո՛չ լինէր յետոյ ներգործութեամբ: - 169. Այլ ասիցէ ոք, թէ բազում ինչ *գոն* ի յայլս գոյացութիւն և ի յայլս պատահումն. որպէս ջերմութիւն ի հուրն գոյացութենէ, և ի անորակ մարմինն պատահումն. և տերևն ըստ ինքեան գոյացութիւն է, և ի ծառն պատահումն. այսպէս և մազն: - 169. Զի թէ *գոյր* պատահումն ի յաստուած, լինէր բազում և ո՛չ մի. իսկ աստուած մի է և ո՛չ բազում…: – 170. Եւ զի յաստուած ո՛չ *գոյ* առաւել և նուազ. վասն որոյ միայն գոյացութիւն է և ո՛չ ունի պատահումն: - 171. Յորժամ պատահումն ոչ *գոյ* յաստուած որպէս ասացեր, զժ ստորոգութիւնս որպէս ուղղեսցուք առ նա: - 171. Եւ դարձեալ՝ է կոչի աստուած, զի նա միա՛յն է տեսակ առանց նիւթոյ. և *գոյ* առանց պատահման: - 171. Եւ ըստ բազում բաղդատութեան կոչի աստուած *գոյ*: - 171. Նախ՝ զի ասեմք եթէ աշխարհ յառաջ քան զլինիլն իւր *գոյր* ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. ապա ուրեմն ո՛չ է յոչ ուրեքէ յոչ երբեքէ: - 173. Եւ դարձեալ՝ զի նոցա ամենեցուն ներհակ *գոյ*. որպէս մեծութեան աղքատութիւն. առողջութեան հիվանդութիւն. կենաց մահ: - 178. Եւ այլապէս ո՛չ կարէր լինիլ. զի ամենայն ինչ ի սմա՛ կատարեալ *գոյ*. և ոչինչ է պակաս ի սմանէ: - 179. Ուր և երբ այսինքն տեղի և ժամանակ *գո՞յ* աշխարհիս թէ ոչ: - 180. Զի թէ ոչ *գոյ*, ապա անուր և անե՛րբ է աշխարհս. և լինի յաւէտակից աստուծոյ: - 180. Եւ եթէ *գո՛յ*՝ ցոյց թէ յորո՞ւմ ժամանակի եղև կամ ո՞ւր: - 180. Եօթներորդ՝ զի է անդորր վայր. այսինքն հաւասար ընդարձակ և դաշտաձև *գոլով*: - 184. Դարձեալ՝ ոչ ինչ պատուական քան զժամանակ. զի զինչ և իցէ յաշխարհի՝ երկու մասունքն կարե՛ն համանգամայն *գոլ* ի միասին բաց ի ժամանակէ և ի հասակէ՛. զի ժամանակին բ մասն անհնա՛ր է համանգամայն *գոլ* ի միասին. զի և **բ** պահք ո՛չ կարեն համանգամայն *գոլ*: - 199. Եւ համառօտ ասեմ, կեանք մեր և ժամանակ որքան առաւել յերկարէ՛ և աճէ՛, այն քան առաւել պակասի և նուազէ. որպէս իմաստութիւնն ասէ, «մեք իբրև ծնանիմք՝ հանապազ պակասիմք *գոլ*»: – 199. Նոյնպէս և մարդկային կենցաղս ամենեքեան հասարակաբար հաղորդին. և ամենեքեան առ հասարակ փոփոխին և կորուսանեն. որպէս ասէ ժողովօղն՝ «ամենայն իրաց ժամանակ *գոյ*. և ժամանակաւ իւրեանց անցանեն ընդ հանուրք»: – 199. Յնգետասաներորդ՝ մի և նոյն *գոլով* մտանէ ի բուրաստանս, և զանազան գոյնս և համս և հոտս յառաջ բերէ: - 207. Որպէս ի մէջ երկրի *գոն* երակք ջրոց, նոյնպէս և հողմոց, ուստի ի վեր փչեն: - 208. Չորրորդ՝ ցուցանեն զստեղծօղն իւրեանց յերկինս *գոլ*. վասն այն ի վե՛ր ճեպին: - 214. Վասն բազում պիտոյից որ *գոյ* ի նոսա: - 217. Չորրորդ՝ զի ցուցցէ անձնիշխան *գոլ* զմարդն, վասն որոյ հրամայէ՛ նմա զի զոր ինչ և կամեսցի՝ անուն դնիցէ: - 219. Երրորդ՝ ի նոյն իսկ ի ձևոյ շինուածոյ մարդոյն. զի ուղիղ *գոլով* զիշխանականն նշանակէ. իսկ կենդանիքն կո՛ր գլխով զծառայականն ցուցանեն: - 220. Որպէս առաջին հարքն անապական *գոլ* ասացին. և մեք հետևօղք նոցին անապական ուսանիմք: - 222. Եւ թէ տկարանաս ի զօրութիւնն աստուծոյ՝ առ մե՛զ ևս *գոն* քեզ հաստատութեան նշան՝ անփուտ փայտ. և անթառամ ծաղիկ. և մշտականաչ սաղարթ. և անթափ պտուղ: - 223. Այլ ա՛յս է ճշմարիտն. որ մինն ծառ էր կենաց՝ և մինն գիտութեան. և ի դրախտին այլ ո՛չ *գոյր* նման նմա. թո՛ղ թէ յերկիրս. ո՞րպէս ասեմք թէ այս է՝ կամ այն: - 224. Ոմանք կամին ցուցանել ապականացու *գոլ* զդրախտն և շաղաշարումն արուի և իգի. և առաւել ցանկութիւն և ծնունդ զաւակաց: - 225. Զի մեծ է և անճառ և անպատում զօրութիւն և իմաստութիւն աստուծոյ. ըստ այնմ՝ «մեծ է տէր և մեծ է զօրութիւն նորա. և իմաստութեան նորա ո՛չ *գոյ* բաւ»: – 231. Ուստի միջակ *գոլով* ըստ էութեան՝ և ի միջակ վայրս դրախտին բնակեալ: - 231. Երկրորդ՝ զի իմանայ ընդ հրեշտակաց. զգայ ընդ կենդանեաց. աճէ՛ ընդ տնկոց. *գոյ* ընդ անշնչից: - 231. Նա՛խ՝ ըստ փիլիսոփայիցն ներքին մասունքն հոգւոյն պատճառե՛ն զարտաքին մասունս մարմնոյն. և ըստ պղատոնի՝ հոգին եռամասնեայ *գոլով* բան և ցասումն և ցանկութիւն: - 232. Երկրորդ՝ ցուցանէ յերկուց մասանց *գոլ* զբոլոր մարդն. և հոգոյն է զգալն և տեսանել և այլն: - 234. Եւ այն զի մերձ է բերանոյն. և զի հոտն և համն ազգակից են միմեանց. ի ջրոյ *գոլով* երկուցն. վասն այն զգայարանք նոցա առ միմեանս են մերձեցեալ: - 235. Այսպէս ի հասարակաց ի նուազուևս *գոլով* ի մարմնականն տիպ. իսկ անդրադարձեալ: - 235. Եւ ըստ ա՛յսմ է տարբերութիւնն և յատուկ և պատահումն նոյն *գոլ*: - 236. Ա՛րդ՝

վասն զի *գոն* յամենայն իրս նոյնութիւն և այլութիւն որպէս ցուցաւ, յաղագս որոյ են նմանք և աննմանք միմեանց: - 236. Եւ ևս, զի **գ** դէմք Երրորդութեանն սուրբ՝ նոյն և նման *գոն* միմեանց: - 237. Է և այլ իմն աննմանութիւն հոգւոյ ըստ իմացմանն. առաւել և նւազ. ուշիմ և ապուշ. չկամ և կամեցօղ. հեզ և յանդուգն. ցանկացօղ և ողջախոհ. ըստ բնական բարոյիցն որակացեալ. նման և աննման *գոլով* իրերաց: - 237. Հինգերորդն փայծեղն է. որ է՛ ախոռ այրեցած արեանն. ցո՛ւրտ է և չոր. և ունի տանուտէր զզոհալն որ է երևակն ցուրտ և չոր *գոլով*: - 241. Այսմ *գոյ* բնական և բարոյական պատճառ: - 243. Եւ յորժամ զանազան շրջի, չարիք *գոն* ի սիրտն: - 246. Զի տնկական հոգին յօժարի՛ *գոլ*. և զգայականն բարեպէս *գոլ*. և բանականն ևս բարեպէս *գոլ*. զի ո՛չ երբէք հանգչի, մինչև միաւորեսցի ընդ ևս բարեգունին: - 249. Կամ ի խառնւածոյ տարերացն՝ չարախառն և բարեխառն *գոլ*: - 251. Այլ այժմ տնկականն *գո՛յ* ի նմա թէպէտ ո՛չ շունչն և ոչ բանն: - 256. Նախ վասն՝ ի մէջն *գոլով* հաւասարապէս հուպ յամենայն մասանցն զօրութիւն առնլոյ: - 256. Երկրորդ՝ ի մէջն *գոլով* մի վնասեսցի յարտաքին պատահարից: - 256. Երրորդ՝ զի զօրութեամբ է նիւթն պա՛րտ է ծածուկ *գոլ*, զի ներգործութեամբ երևեսցի: - 256. Ծանիր և զայս. զի բազում զարմանագործութիւն *գոյ* ի սմա: - 256. Եօթներորդ՝ զի մի *գոլով* սկիզբն ենթակային և կենդանութեանն որպէս ասացաք: - 256. Եւ զորօրինակ՝ ի զգայականն *գոյ* տնկականն, այլ մի է հոգի զգայականին և ո՛չ **բ**: - 259. Այսպէս և սոքա *գոն* ի մարդն, այլ մի է հոգի մարդոյ և ո՛չ երեք: - 259. Ոմանք ըստ ազգի և տեսակի իւրեանց հով և ջերմ՝ չոր և գէջ *գոլով*, փութով կամ յապաղելով բուսանին: - 261. Եւ այլոց տեղին է պատճառ, բերրի և անբերրի *գոլով*: - 261. Եւ էգն հոգևորի յետ **ձ** աւուրն՝ որպէս ասացաք զպատճառն վասն տեղւոյն ցրտութեան որ է՛ ձախ կողմն արգանդին. որ ցուրտ *գոլով* վասն փայծաղանն՝ յապաղէ՛ զկազմուած նիւթոյն ի կրկնապատիկ ժամանակս **ձ** աւուրց: - 261. Որպէս լերինք ցուրտ *գոլով* զպտուղս ո՛չ հասուցանեն որպէս ի դաշտի: - 261. Այսպէս և շնչականն գոյացեալ ի հերորդ աւուր՝ կիսակատար *գոլով* բանականին զնոյն ունի խորհուրդ: - 262. Յեղանակս գարնան, և յառաւօտուն մինչև յերեք ժամս, և հիւթոյ արեան, և մանկութեան հասակն ի տղայութենէ ծննդեան և աճման՝ ունին զնմանութիւն օդոյ ջերմ և գէջ *գոլով*: - 266. Իսկ ամառն, և մինչ ի **զ** ժամս աւուրն, և խարտեաշ մաղձն, և երիտասարդն՝ ըստ նմանութեան տարրական հրոյ ջերմ և չոր *գոլով*. վասն որոյ առաւել բարկացօղ և ցանկասէր լինի: - 266. Իսկ աշունն, և մինչ ի **թ** ժամս աւուրն, և սեաւ մաղձն, և ալևորն, ըստ նմանութեան երկրի ցուրտ և չոր *գոլով* ծոյլ և պղերգ *գոլով* ամենայն ուսմանց և գործոց: - 266. Իսկ ձմեռն, և յինն ժամէն մինչև յերեկոյ և բոլոր գիշերն, և սպիտակաթոյր հիւր պլղամին, և ծեր մարդ, ըստ նմանութեան ջրոյ ցուրտ և գէջ *գոլով*. վասն որոյ սպիտակի և ցրտանայ և պակասի զօրութեամբ: - 266. Իններորդ՝ անշարժ նոյնութեամբ իւրով զամենայն քննէ և իմանայ. այսպէս և միտք առ մարդն *գոլով* զգիտութիւն էիցս քննէ: - 271. Զոր օրինակ ո՛չ ասի մարդ մարդոյ նման *գոլ* ըստ մարդկութեան. վասն զի նոյնութիւն է և ոչ նմանութիւն. բայց ասի նման մարդ մարդոյ ըստ երեսացն և գունոյն և ձևոյն նմանութեան: - 272. Եւ զի ո՛չ է ստեղծեալ, և ո՛չ է յեղեալ ի *չգոյէ* ի *գոյ*. ապա ուրեմն անեղ է: - 274. Դարձեալ՝ մարդո՛յս է լայն եղունգն և ճաղատ *գոլ*: - 275. *Ջգոլն* ունի ընդ քարանց: - 275. Ութերորդ՝ զի կողն կեռ *գոլով* ցուցանէ զկինն նենգ *գոլ* և երկմիտ. կեռ, այսինքն խեռ ընդ առն: - 276. Իններորդ՝ զի որպէս կողից երեսն որ ի փորն նայի՝ կոկ *գոլով* և մզղնա տեսակ. իսկ մէջն փուչ և մրրախառն. այսպէս սէրն զոր ցուցանէ առ այրն, նօսր առ ի ցոյցս՝ և երեսս միայն ունի. իսկ ի սիրտն զմրուր դառնութեան: - 276. Որպէս ենովս որ յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ. այսինքն յուսացաւ զհանդերձեալ կեանսն որ աներևոյթն էր. և վասն իւրաքանչիւր գործոց *գոլ* հատուցումն. և կոչեաց զանունն աստուծոյ ի յօգնականութիւն: - 288. Եւ նոյ՝ վասն կուսութեան սրբութեանն **զշ** ամն, և վասն արդար *գոլոյն*, որում վկայէ՛ մովսէս, «Նո՛յ էր այր արդար կատարեալ յազգի անդ իւրում». վասն որոյ ապրեցաւ ինքն և տունն իւր. և երկրորդ սկիզբն եղև մարդկութեանն և աշխարհի շինութեան: - 288. Երկրորդ՝ զուղղութեան գործոց բուռն էհար. և յուսացաւ թէ *գո՛յ* հատուցումն գործոց, և բարեաց փոխարէն: - 289. Ասեն թէ՝ *գոն* ա՛յլ հոմանուն մասիս և արարատ. որպէս կորդւաց լեառն և ի պաղէստին և ի գամիրս: - 294. Նոյ օրհնեաց զսեմ, և սեմայ որդի ո՛չ *գոյր* նման իւր որ օրհնէր զնա: - 300. Ութերորդ՝ զի ասացաւ աբրահամու թլփատիլ ի ծերութեան ժամուն իննսունինն ամաց *գոլով*: - 304. Այլ ազա՛տ *գոլով* յայսցանէ՝ վասն առաւել սիրոյն աստուծոյ տա՛յ զորդին իւր ի զենումն: - 304. Ութերորդ՝ զի էառ իսահակ զհարսն և ուրախացաւ ի տան մօրն իւրում սառայի. որ զվեց ամ փրկեալ *գոյր* և ո՛չ ոք մտեալ: - 305. Զայս և այլ սոյնպիսիս բազմօրինակ ստուերագրութեամբ առ ճշմարտութիւն իրին. իսկութեամբ ոչ *գոլ* անհնարին երկասիրացդ ի սոյն դեգերմամբ զոր ի պարապ ժամու քննութեան: - 306. Այսինքն մեծ *գոլ* մատուցօղն և ընդունօղն և պատարագն: - 306-307. Նախ ասեն եթէ ի ծննդեանն կալեալ էր զգարշապարէն՝ եսաւայ, այժմ զփոխն անդրադարձէ՛ և յիշեցուցանէ

նմա թէ՝ ամենայն իրի հաստուցումն *գոյ*: - 311. Ասեմք եթէ՝ է ասելն ո՛չ զբնութիւն նշանակէ, այլ զանսկիզբն և զանվախճան *գոլն*: - 312. Թէ հոգւոյ և թէ մարմնոյ՝ *գոյ* մեղք և *գոյ* պատիժ: - 318. Նա՛խ՝ զի հայր նոցա բարեպաշտութեամբ սնուցանէր զնոսա. և վկայեցաւ առ աստուած արդար *գոլ*: - 322. Արդ զոր ադամայ ո՛չ վկայեաց, խոստեցաւ ընդ յակոբ և վկայեաց արդար և անարատ *գոլ*: - 325-326. Նա՛խ՝ իբր թէ է՛ և *գո՛յ* աստուած որպէս ասացաք: - 331. Նա՛խ՝ զի կոչի «զի՞նչ սա՛». զի ամենայն հարցանելոյ լուծումն *գոյ* և պատասխանի...: - 338. Չորրորդ՝ ինքն անկարօտ *գոլով* ստեղծեաց զարարածս. և բարձեալ կրէ՛ զամենայն բանիւ. և նոյն ինքն հրամայէ՛ խորան կազմել: - 342. Եւ **ի** են ո՛չ ժամանեալ, պակաս *գոլով* մարմնոցն: - 346. Իբր՝ քահանայապետն գլուխ *գոլով* առեալ զբոլոր արարածս նուիրէ աստուծոյ: - 348. Մովսէսի ասի *գոլ* **դ** ծնունդ: - 353. Երեքտասաներորդ, նոքա փոփոխականք էին վասն մահու արգել լինելոյ. իսկ տէր մեր անփոփոխ և յաւիտեան է քահանայ. վասն յաւիտեան և անմահ *գոլոյն*: - 355. Զի պա՛րտ է անպարտ *գոլ* բոլորովին. զի քրիստոս կատարեալ անարա՛տ է աստուածութեամբ և մարդկութեամբ: - 370. Կամ ո՛չ լսել աղաղակի մերոյ. իբր երկաթի երկինք ընդ մէջ *գոլով*: - 376. Յինգերորդ՝ թիւն զընտրութիւն՝ զդաս՝ և զկարգն ցուցանէ. զի *գո՛յ* ի նմա՛ առաջին միջին և վերջին. որպէս զինուորք. իսկ անթիւն խոտան և անկա՛րգ է. որպէս ծերք և տղայք: - 377. Եւ յայսմանէ տես զժամանակ ծերութեանն անպատիւ *գոլ*: - 377. Երկրորդ, զի գիտացէ թէ առաւել զօրութիւն *գոյ* աստուծոյ քան զամենայն: - 387. Նա՛խ՝ զի բարկացեալ՝ զէշն կամէր սպանանել սրով. թէ *գոյր* ի ձեռին ընդէ՞ր բանիւ ոչ սատակէր: - 388. Եւ դարձեալ հրեշտակք և մարդիկք մշտնջենաւորք՝ պակաս ունին առ աստուածպետութիւնն յաւիտենական. և նա՛ է կատարումն **ժ**երորդ. անսկիզբն և անվախճան *գոլով*: - 391. Այլ կենդանի եղբօր, կամ փոքր եղբօր կինն, կամ *գոլով* զաւակ, անօրէնութիւն էր որպէս հերովդին, ...զի դուստր նորա էր աղջիկն որ կաքաւեաց: - 402. Եւ յերից է յայտնի *գոլն* աստուծոյ: - 406. Եօթներորդ՝ ոմանք մարմին մովսէսի զօրէնսն ասեն. զոր ի բերելն հակառակէր սատանայ, խոտան և անարժան *գոլ* ժողովրդեանն. վասն որոյ միքայէլ վերակացու ժողովրդեանն հալածէր զնա: - 410. Երկրորդ՝ զի ժողովուրդն առանց երկիւղի անցանիցէ. զի թէ դիզեալ և կուտեալ լինէր, երկիւղ *գոյր*: - 414. Չորրորդ՝ պատկեր կռոց ո՛չ ձևացաւ անգծելի *գոլով* յերկաթոյ: - 415. Կամ զնոյն մեռեալ մարմինն ի խաչին. և զնոյն կենդանի *գոլ* աստուածութեամբն: - 423. Թէ հրամայական էր և վճիռ եհատ, ապա աստուած էր և ո՛չ մարգարէ. սուտ ասաց *զգոլն* սամուէլ: - 430. Յինգերորդ՝ զի կին *գոլով* և **կարճոգի**: - 442. Երրորդ՝ ցուցանէ զպտուղ դրախտին նոյնպէս *գոլ* առանց յաւելուածոյ և առանց նուազելոյ. թէպէտ կերակրիւր: - 444. Եւ վկայքն հաստատեցին մեծ *գոլ* և ծածուկ՝ հրաշալի խորհուրդ միածնին փրկագործութեան երևումն առ մարդիկք: - 456. Եւ գիտելի է, յորժամ ասի յաղագս աստուծոյ հաւատարիմ *գոլ*...: – 457. Եւ նոյն է տէրն և աստուածն *գոլ*. ապա ուրեմն կոյսն սուրբ մայր է տեառն և աստուծոյ: - 466. Իսկ պատահումն ընդ պատահման միշտ շփոթմամբ միաւորին. որպէս *գոլն* ի սևէ և ի սպիտակէ՛: - 475. Չորրորդ՝ միաւորութիւն ասեմք *գոլ* և զզանգումն որ ի նա է՛ և ի չորո՛յ բնաւորեցաւ լինիլ. յորում ո՛չ ամբողջ պահի բան որակութեանն: - 476. Իսկ ի քրիստոս եռակի *գոյ* միաւորութիւն. այսինքն աստուծոյ ընդ հոգւոյ. հոգւոյ ընդ մարմնոյ. աստուծոյ ընդ մարմնոյ: - 478. Վեցերորդ՝ զի հոգի և մարմին մասն *գոլով* գոյանայ մի կատարեալ: - 479. Ութերորդ՝ զի աստ ի միաւորութիւն հոգւոյ ընդ մարմնոյ՝ զգայակից և ախտակից լինին միմեանց կրական *գոլով*: - 479. Իսկ բանն աստուած միաւորեալ մարմնովն կրեալ զմերս վասն մեր. անկրելի *գոլով* ըստ իւրում բնութեանն: - 479. Քանզի ո՛չ կարէին ի միում աւուր յերկոսեան ուխտսն կատարել զտօնսն հեռի *գոլով* ի միմեանց. երուսաղէմացիքն այսր աղագաւ փոխեցին. և փոքր փոքր աճմամբ ընկալան և ա՛յլ եկեղեցիք զնոյն: - 482. Չորրորդ՝ զի որ յամսեանն զերորդի հրեշտակապետն եկն առ կոյսն, ի յղութենէն եղիսաբեթի ասաց *գոլ* **զ** ամիս, և ո՛չ յաւետեացն: - 483. Անմարթ էր թողուլ զժողովուրդն ի դրան տաճարին և մերձիլ յանկողինս. և ըստ օրինացն գօրեայ սրբութիւն ստանալ. որ անհնա՛ր է ամենևին. թէպէտ ասեն՝ *գոյր* ա՛յլ քահանայապետ որ զկարգ պաշտամանն կատարէր: - 484. Երկրորդ՝ ասելն «է» նշանակէ՛ զմշտնջենաւոր *գոլն*...: - 487. Իսկ չորրորդն է՛ պատարագ տն մերոյ քրիստոսի որ ի մի դէմ անձնաւորութեան գ երես պատարագին բացայայտեցաւ. այսինքն մեծ *գոլ* մատուցողն և ընդունողն և պատարագն: - 491. Դարձեալ նշանակէ դ թև խաչին՝ փրկութիւն *գոլ* և լոյս հոգւոյ որք ի դ ծագս տիեզերաց հաւատացեալք են: - 493. Այլ զանազանութիւն *գոյ* ի մէջ մահու նախաստեղծ մարդոյն, և մահու տն մերոյ քրիստոսի, և մահու հասարակ մարդկայինս ազգի: - 495. Եւ ասին սոքա բնականք, զի նախ քան զյանցանելն ի դրախտին՝ բնաւորապէս *գոյին* առ ադամ: - 496. Ա՛րդ՝ թէ *գոյ* ներքին, *գո՛յ* և վերին և միջին դժոխք: - 505. զի վերնոյն ներքին է, և ներքնոյն վերին. ապա սո՛ւտ է ասելդ թէ *գոյ* ներքին և վերին և միջին դժոխք: - 505. Ասեմք

եթէ՝ ոչ ինչ *գոյը* նոցա արգելք հաւատոյ յորժամ լոյս ծագեաց քրիստոս ի դժոխս: - 508. Եւ դարձեալ յոյս *գոյ* ի մեռեալսն. ըստ այնմ «յոյս նոցա լի՛ է անմահութեամբ». և յոյսն է մասն հաւատոյն: - 507. Այլ պիտո՛յ է բնական գ տիւ և գ գիշեր *գոլ* ի սիրտ երկրի որպէս ասաց քրիստոս: - 516. Տասներորդ, զի ցուցէ թէ թշնամեաց նորա ո՛չ է իշխանութիւն բուռն հարկանել զնմանէ. իսկ բարեկամաց նորա *գոյ* իշխանութիւն այլով իւիք մերձենալ ի նա. այսինքն սիրով և երկիւղիւ յայնմիկ զոր ուտեն զնա: - 518. Արդ մի՛ մերձենար դու յիս անկատար *գոլով*. որպէս մայր քո եւա ի ծառն գիտութեան. յորժամ առ բնութեամբ իմ հայր՝ և ծեր ըստ շնորհի՝ և աստուած մարմնոյս իմոյ ես ելանիցեմ, որոտմամբ իջեալ հոգին զծեզ կատարէ՛. արժանաւորիք յայնժամ առ իս մերձենալ: - 518. Այլ և աթոռակիցն *գոլ* հօր և սուրբ հոգւոյն: - 521. Նա՛խ՝ զի չարչարանքն քրիստոսի պատճառ եղև պարգևաց սուրբ հոգւոյն, պարտ էր նախկին *գոլ*. որպէս ամենայն պատճառ նա՛խ է քան զպատճառելին: - 521. Չորրորդ՝ զի փայլատակեալն անբաժանելի մնայ յինքենէ. այսպէս և շնորհք հոգոյն սրբոյ անբաժանելի *գոլով* բաժանեցաւ յառաքեալսն: - 522. Եւ մի և նոյն բանն է ներտրամադրեալն ի սրտի. զի ըստ բան *գոլոյն* ո՛չ զանազանի. սակայն ըստ որպիսութեան որակին. զի էր անմարմին ի սրտի՝ և այժմ մարմնացաւ ի քարտիսի: - 529. Վասն երրորդին գիտելի է, զի *գոյ* հիւանդութիւն մարմնոյ, *գոյ* և հիւանդութիւն հոգւոյ: - 531. Երրորդ՝ վասն ծննդական *գոլոյն* բարեաց: - 534. Եւ կին վասն *գոլոյն* որում փեսայ կոչի: - 534. Եւ այսպէս բացայայտի, զի երկու իրս խնդրին առ ի ճշմարիտ մարգարէ *գոլ*: - 536. Սակայն կարգ *գոյ* ի մէջ նոցա և պատիւ և հնազանդութիւն և սէր. այլ իշխանութեամբ համահաւասարք են: - 547. Դարձեալ՝ *գոյ* առաւել ճշմարիտ, *գոյ* և նուազ ճշմարիտ, որպէս *գոյ* առաւել բարի, և նուազ բարի: - 550. Զորօրինակ՝ յորժամ ասիցէ ոք զբարին բարի *գոլ*, այս ըստ ինքեան ճշմարիտ է: - 550. Եւ յորժամ ասիցէ զբարին ոչ չար *գոլ*, ճշմարիտ է և այս. այլ ըստ պատահման է որպէս ցուցաւ: - 550. Նմանապէս և ազգս հայոց թէպէտ մի է, կարէ՛ պատւական *գոլ* բազմաց: - 551. Ասեմք առ այս թէ՝ ո՛չ է հարկաւոր այս ամենայն ուրէք. զի *գո՛յ* և տարաձայնութիւն բարի՝ քան զհամաձայնութիւն ընդ հերձուածօղս. և լաւ է բաժանումն ի չար ժողովոց՝ քան զմիաբանութիւն: - 551. Զորօրինակ **բ** ոք ի դատախազից իւրաքանչիւրն զինքն կամի և կարծէ ճշմարիտ *գոլ*. այլ մերձ եկեալ դատաւորին՝ վկայիւք յայտնի ճշմարիտն: - 551. Ո՞չ ապաքէն մովսէս ի հինն որոշեաց զսուրբս և անսուրբս. մանաւանդ թէ յաւուրս նոյի *գոյը* ընտրութիւնս. այսպէս ցուցաւ և մեզ պահելի իբր զբնական օրէնս. այլ սոցա ոչինչ է պիղծ ի կենդանեաց: - 552. Եւ այլք *գոն* յոլովք: - 553. Եւ այլք *գոն* յոլովք. զի յորժամ պարապով ոք քննիցէ գտանէ: - 553. Եւ այլք բազումք *գոն* պարապով տեսեալք: - 554. Դարձեալ ևս յայտնի. որ խորհրդովն է պղծեալ՝ ո՛չ կարծէ զինքն մեղանչական *գոլ*. այլ ի գործ մարմնոյն իմանայ զչարիս իւր զղջա՛յ և ապաշխարէ: - 558. Զորս անթուելի *գոլ* աղերսէ մարգարէն. թէ՝ «զյանցուածս իւր ո՛վ կարէ առնուլ ի միտ»: – 558. Ապա ուրեմն յա՛յտ է լուծումն տարակուսանաց ըստ կարգի. և ոչ ոքն ի նոցանէ հակառակ *գոն* միմեանց որպէս ասացաւ: - 558. Բանին *գոլ* զհպարտութիւն և զնախանձ առ ներքինս և առ վերինս: - 559. Այլ ես հաւանիմ որք ասեն **ժ** *գոլ* զմեծութիւն մեղաց. և այն համեմատի ընդ **ժ** ստորոգութիւնն: - 565. Երրորդ՝ զորդին *գոլ* աստուած. որ ասէ՝ «ի մի տէր յիսուս քրիստոս»: – 573. Իններորդ՝ խնդայ ընդ մերձ *գոլն* նորա: - 575. Իսկ ժուժկալութիւնն առ շօշափելիսն ըստ ծննդական զօրութեանն. ի յորում դնէ զեղանակն. զի առաւել յօժարի մարդն ի *գոլ* անհատութիւնն սննդականաւն, և ի *գոլ* տեսակին ծննդականաւն. և յօժարութիւնքս այս՝ զսպին զգաստութեամբ և ժուժկալութեամբ: - 581. Դարձեալ կոչին ծառայականք, զի և ի խառնուածոյ մարմնոյն գոյանան. որք ո՛չ հետևին միմեանց. զի որ ի խառնուածոյն ողջախո՛հ է, նա ո՛չ խոհեմ կամ արդար կամ արի կարէ *գոլ*: - 581. Այլ և ի յանբան կենդանիս բնաւորեցաւ *գոլ*. որպէս ուղտ խոհեմ. և առիւծ արի. տատրակ ողջախոհ. և արագիլ արդար: - 581. Դարձեալ կոչին յանձնառականք. որ ի պատուիրելոյ ունեք *գոյ* ողջախոհ. այլ զպատճառն ո՛չ գիտէ. նաև ո՛չ հետևին միմեանց: - 582. Եւ գիտեն զպատճառն թէ վասն է՞ր է ողջախոհ. այսինքն զի յանառակ կենաց ժլատութիւնք լինին. և նա ի հարկէ արի *գոյ* զախտն ստորադասելով. այնպիսին և խոհեմ *գոյ* գիտելով թէ վասն մարմնական հեշտախտութեանց լինի անիրաւութիւն: - 582. Հինգերորդ, զի թէ *գո՛յը* հնար կնոջ վասն հարկին առնել զգործ քահանայի, ընդէ՞ր ոչ կարաց նունի կոյսն մկրտել զոք ի վրաց յորժամ դարձոյց յաստուածգիտութիւն. - 589. Վտանգ *գո՞յ* ինչ զաւակաց թէ ոչ արդար ամուսնութեամբ այլ ի պոռնկութենէ ծնանին: - 593. զի բազում արգելմունք *գոն* պսակին. որպէս ազգակցութիւնն հոգևոր կամ մարմնաւոր. կամ տկարութիւն բնութեանն. կամ պոռնկութիւնն. կամ այսահարութիւնն. կամ ծառայութիւնն. կամ բռնութեամբն. կամ այլ ինչ այսպիսի պատճառ. որով բաժանին այրն և կինն: - 610. Այլ մովսէս օրինադրեաց ի թիւքն առնել կրկին փողս արծաթի. և կոչեաց զնոսա փողս ազդեցութեան. որպէս դեռևս *գոն* ի դրունս թագաւորաց կրկին փողք: - 618. նոցա փառ կամ

կցորդ *գոյ* զկնի. և որք որիշ են՝ նոցա կցորդ ո՛չ ասի: - 636. Ուստի յա՛յտ է՝ զի ուր և ալէլու ասեմք, սաղմոս տուն *գոյ* ընդ նմա: - 644. Չորրորդն, զի բազում աշխատօղք *գոն* կերակրոցն և ըմպելեացն, - 655. Դարձեալ՝ ամենայն մեղաց պատիժ *գոյ*. և ա՛յլ է մեղքն և ա՛յլ է պատիժն որ հետևի մեղացն...: - 680. Այլ և ոմանք ի մէնջ որպէս վարդապետն վարդան և այլք ասեն *գոլ* ի միում տեղւոջ զամենայն հոգիս...: – 686. Նա՛խ՝ վասն նորընծայ հաւատացելոցն. անկիրթ *գոլով* կատարեալ տեսութեանց. – 687. Սոցա համաձայնին ընդհանուր ամենայն վարդապետք *գոլ* ի յերկնային խորանս անմարմնոց ի զանազան օթևանս լուսոյ: - 688. Զնոսա ասել *գոլ* առ ը երրորդ կամարն երկնից. ամբարձեալ յիշխանութենէ սատանայի որք ի յօդս և ի տարերս միայն իշխեն: - 688. Ի մի ասացին *գոլ* խորանս ի ներքոյ երկնից զարդարս և զմեղաւորս. որք դատաստանաւն որոշին: - 689. Զի թէպէտ անդ ո՛չ է փառք, այլ և ո՛չ տանջանք և չարչարանք *գոյ*. վասն այսորիկ առ աստուած ասէ որք են ի պահեստ հոգւոցն: - 695. Այլ և պա՛րտի ապաշխարութիւնն կամաւ *գոլ*. իսկ ի քաւարանն հարկիւ տանջի: - 699. Ապա ուրեմն ո՛չ *գոյ* քաւարան հրոյ: - 699. Նոյնպէս և այժմ որ քան ի մարմնի եմք՝ *գոյ* հնար քաւութեան...: - 700. Տասնևմի, պատժոյն մեղաց չափ և ժամանակ *գոյ* ըստ իւրաքանչիւրիցն. որպէս յա՛յտ է ի կանոնս: - 700. Չորեքտասաներորդ, զի թէ մեղաւորացն *գոյ* հնար արտաքս գալ ի հրոյն և երթալ յարքայութիւնն. - 700. Հնգետասաներորդ, զի թէ *գոյ* քաւարան այժմ հոգւոյ՝ ապա ո՛չ է բոլոր դատաստան ի կատարածի...: - 700. Այլ և թէ *գոյ* քաւարան՝ ո՛չ գոյ դատաստան...: - 700. Ասեմք նախ՝ եթէ երկինք և երկիր մարմին *գոլով* նորոգին մարմնական հրով. իսկ հոգին զի է՛ անմարմին ՝ նորոգի շնորհօքն քրիստոսի և հոգւովն սրբով: - 701. Տասներորդ, ասեն՝ «մի՛ թողցի. մի յայսմ աշխարհի և մի ի հանդերձելումն». որ ցուցանէ թէ *գոյ* ի հանդերձեալն թողութիւն: - 704. Նաև խոստովանեսցի զինքն *գոլ* քրիստոս և ճշմարիտ որդի աստուծոյ: - 707. Երրորդ, որպէս **հղ**ն բազում է քան զչորսն. նոյնպէս կարծի վեհագոյնքն ի մարդկանէ բազում *գոլ* քան զվեհագոյնս երկնայնոցն: - 711. *Գո՞յ* յարութիւն մարդկան թէ ոչ: - 714. Եւ բնական քննութեամբ նախ այսպէս եթէ՝ տեսանեմք ի քաղաքական օրէնս զի *գոյ* դատաստան. այսինքն բարեացն պատիւ և չարացն պատիժ. - 715. ապա *գո՛յ* և առ աստուած արդար դատաստան: - 715. Ապա ուրեմն *գոյ* յարութիւն. և այս ըստ բնականին: - 715. Եւ բաւական է սակաւս ի բազմաց սուրբ գրոց վկայութիւն եթէ *գոյ* ճշմարտապէս յարութիւն մարդկան: - 716. Երկրորդ՝ նշան իմն *գոյ* առանձնակի ի խառնուածոյ դիմացն: - 719. Նա՛խ՝ զի ամենեցուն յայտնի՛ է ամենայն ուրեք *գոլով*: - 720. Զի յարիցեն մարդիկ ըստ *գոլոյն* և ամբողջ *գոլոյն* և գեղեցիկ *գոլոյն*: - 725. *Գոլն* է որպէս մարդն հոգի և մարմին: - 725. Ամբողջ *գոլն* որպէս բոլոր անդամօքն: - 725. Գեղեցիկ *գոլն* որպէս ծնովն հերովն և այլովքն որ ասացաւ: - 725. Ա՛րդ՝ յայտնեալ է նա և որոշեալ ի մէջ ամենայն փայտից *գոլ* արմատ արդարութեան որով փրկեցաք ի բանսարկուէն: - 734. Նախ՝ այսու զաստուածութիւնն իւր յայտնէ. զի ամենայն մարգարէք զաստուած ասացին *գոլ* դատաւոր...: - 735. *Գո՞յ* անդ աթոռ յորում նստցի: - 736. Կամ տըՆկական և զգայական և շնչաւոր *գոլն*: - 745. Նախ ի նոյն առ ինքն ի դէմս սրբոյ Երրորդութեանն. հասարակ *գոլ* ամենայնիւ. աստուածութեամբ բնութեամբ կամօք և այլն: - 746. Եւ նոյնն *գոլ* ողորմութեան և արդարութեանն գործոց ունել հաւասարութիւն: - 746. Այլ և ի նոյնս *գոյ* իմն կշիռ արդարութեան ըստ ինքեան...: - 746. և Ոմանք ըստ քաղաքական օրինացն **ը** ասեն *գոլ* պատիժ: - 751. Բարձումն յուսոյ և ամենայն փրկութեան Նաև *գոլն* իսկ որում տենչան ամենայն ստեղծուածք՝ է՛ նոցա պատիժ. վասն զի խնդրեսցեն զմահ և ո՛չ գտանիցեն: - 751. Մինչ ի յօրն դատաստանի աղօթեն արդարք վասն մեղաւորաց. այլ յետ այնորիկ վասն դատապարտելոցն ո՛չ խնդրեն ինչ. զի ընդ դէմ աստուծոյ *գոլ* իմանան վասն նոցա զխնդիրն: - 754. Ուղղակի ուրեմն փայտս այս ասի *գոլ* տըՆկեալ մերձ յընթացս ջուրց. զի ի նմանութիւն մարմնոյ մեղաց երևեցաւ. և զամենայն նուաստութիւնս մեր յինքն ընկալաւ: - 755. Եւ նոքա որք բազում համբաւեն դժոխս, մի ասեն *գոլ* արքայութիւն. պատճառելով եթէ՝ բարին մի է և չարն բազում: - 758. Նմանապէս իմասցի և վասն մի դժոխոցն՝ *գոլ* զանազան տանջանք և տանջանարանք: - 760. Շուրջ զաթոռովն ասէ իդ երիցանցն *գոլ*: - 760. Յաճոյ լինէր քեզ թէ լինէիր գեղեցիկ որպէս զաբիսողոմ. որում ո՛չ *գոյր* արատ ի մարմնի: - 761. Որպէս ասեն վարդապետք, ի վերջին ծովէն սպանիու մինչև ի հնդիկս սակաւ աւուրց բացատ *գոյ* թէ վարեսցէ հողմ զնաւն: - 763. Առաւել պարտ էր մարդկան վաստակիլ միայն՝ զի կարասցեն *գոլ* ի միում աւուր ընդ երանելի սրբուհւոյ աստուածածին կուսին. քան բազում վաստակիլ վասն յաւիտենական փառացն: - 763. Այլ ի պատճառս տալ իմաստից. որով ո՛չ յագեսցի ակն ի տեսոյ. ի գլուխ *գոլոյ* իմաստնոյ. մանաւանդ և ի շահ օգտի բանասէր մտաց միեղէն եղբարց: - 773. Կանո՛ն է իմաստասիրաց, զի իր որ բնութեամբ լինի, բոլոր տեսակին պարտի *գոլ*: - 773. Այսպէս յընդդիմակէն տե՛ս և զայս. զի թէպէտ հասարակա՛ց է մարդոյ դժկամակ *գոլ* խրատու, այլ ո՛չ է բնութեամբ իր: - 774. Ապա բնաւորապէս ընդ դէմ

*գոյ* երից որպիսութեանց սա՛ մեզ չորրորդ *գոլով*. ոչ ունել ինչ ի մտի. մոռանալով միշտ. ո՛չ գիտել և ո՛չ յիշել ինչ զանտի կենաց: - 775. Եւ այս ո՛չ միայն փութանցիկ *գոլոյ* վասն, կամ ներհակաբար հատուցման որպէս սովորութիւն է. այլ զի ո՛չ ինչ կարեն տանիլ ընդ ինքեանս. բայց միայն նշխարհս ինչ յիշատակութեան ուրուական տեսլեան: - 775. Իսկ եթէ բաղդատելով ոք ասիցէ, թէ ի մարմնի *գոլով* ապաշխարեալ սրբեցաւ նա ի ներգործականէն իւրմէ մեղաց. և այս ո՛չ ուրէք երևի ցոյցք ի գիրս սուրբս: - 775-776. Նմանապէս և բոլորս մարդկութիւն կրեցին զապականութիւն ի նոյն ադամայ. ծնունդ *գոլով* նորին ցանկութեանն: - 776. իսկ Օրինակաւ, զի նմա ո՛չ *գոյր* օրինակ յանցաւորաց. իսկ նոքա տեսին զնա պատժեալ: - 777. Մեղքն ադամայ է՛ ներգործական ինքեան. այլ ապաշխարեաց ի մարմնի *գոլով*: - 778. Եւ ո՛չ է տարադէպ ցոյցք ականն արփիաւորի, զի ի միջօրեայ ժամու փոփոխումն մարմնոյ ևական արծակէ՛ ստուեր կամ լոյս. այլ ինքն միշտ լոյս *գոլով* ո՛չ փոփոխի: - 779. Զի նկատմամբ առ անփոփոխն՝ միշտ անփոփոխ *գոն* նախ օրինակաւ. այլ առ ժամանակն՝ փոփոխական: - 779. ...զի ո՛չ միայն էառ զբնութիւնս. այլ և զնոսա որ շուրջ զբնութեամբն. զի ծանիցի կատարելութիւն առաքինութեանն, և ճշմարտապէս մարդ *գոլ:* - 781. Եւ ոմանք յորոց սրբազան առաջնորդն մեր, պակասութիւն ասաց *գոլ* զորս յետոյ կրեցին անդամք նորա. այսինքն ըզհատումն մասանց. այրումն հրոյ. և այլ իմն բազմազան տանջանս. յորմէ թուով պակասեաց ի քրիստոս և յաւելաւ անդամս իւր: - 781. Թերևս հետևելով ո՛չ ինքեան, այլ ուղղակին խորհրդոց հաւանականք *գոն*: - 782. Դարձեալ, գոյականքն ո՛չ ունին շաղկապ *գոլոյ*. այլ շնորհականքն զանմեղութիւն: - 782. Զի թէ կորուսեալ էր, այսինքն բարձեալ ամենևին յազգէն ադամայ, ուստի՞ *գոյր* որդւոց նորա. կամ ո՞րպէս առ ջրհեղեղաւն բառնիւր բարձեալն: - 782. Շնորհք որ ի հինն զինչ և իցէ փոփոխական *գոլով*՝ օրինակ նորոյս էր. որպէս քահանայութեան և այլն: - 783. Նորս խորհրդոյ շնորհք ոմանք են անիբաց դնելիք. զի են կնիք ի հոգին անփոփոխ *գոլով* ընդ նմա. որպէս է՛ շնորհք կնքոյն դրոշմին և կարգին: - 783. Նա՛խ՝ զի ի վերին գաւառս ուստի էին դևք՝ ո՛չ *գոյ* հաւատ. այլ դէմ յանդիման տեսութիւն: - 784. Իսկ թէ իցէ հաւատ դիւաց, *գո՛յ* մտածել տղայական կարծեօք՝ թէ անկումն նոցա եղև հաւատոց պատճառ է որ է՛ սուտ: - 784. Վեցերորդ, հաւատովն փրկի ոք. ըստ այնմ «հաւատք քո կեցուցին զքեզ». այլ արդ դիւաց ո՛չ *գոյ* փրկութիւն: - 784. Ասեն զայս՝ անընտել *գոլ* սնուցողականին, յապաղելով աւելի պահէ: - 785. Եւ այլք թէ՝ պատրուակ *գոն* ի խինձս արգանդի բնաւորեալ. յիւրաքանչիւր աւուրս հնգից՝ մին մին քակտին երկամբք. և ապա՛ արծակի ծնունդն: - 785. Այլ վարկանին ոմանք զթիւ կազմութեան աւուրց պակաս *գոլոյ* նախնւոյն մարդոյ. զորոյ զտիպ յինքն նկարելով և այժմ անդրանիկն ծնունդ՝ յապաղելով գայ աշխարհ: - 785. Իսկ ամենայն զգայական կենդանւոյ թէպէտ իգին ըստինք *գոն* վասն զծնունդս կերակրելոյ. սակայն և արուացն *գոյ* նոյն մասն անդամոց կազմեալ յարարչէն. և այն յի՞նչ պէտս լինի. խնդրել արժան է: - 785. Զի թէ ոչ *գոյր* ըստինք առն, ապա և ո՛չ կնոջն առեալ ի նմանէ: - 786. Յաղագս որոյ որ ինչ *գոյ* միոյն յայտնի և ներգործական մասունք, *գոն* նոքա և միւսոյն բնաւորապէս ծածուկ և զօրութեամբ: - 786. Առ այսոքիւք, թէ արտասուքն որ յաչացն հեղու, ընդէ՞ր աղի *գոլով*, Ո՛չ միայն զվասն էրն խնդրեմ. այլ և զորպէսն դառնալ նմա աղի ընդ երակս աչաց: - 786. Որպէս յա՛յտ է ի ծխոյ և ի փոշւոյ և յայլոց. ընդ դէմ *գոլոյ* պարզութեանցն լուսոյ՝ ի ներքս մտեալ զկծեցուցանէ զնա: - 786-787. Իսկ ի ներքուստ, ի լինիլ տրտմութեանց՝ խուճապեալ մարմնոյն հոսի մաղձ դառն ի ստամոքս որովայնի. և վերացեալ գոլորշեաց նորա զօրէն շոգոլեաց պուտկի առ խելապատակս գլխոյ. և ծանրացեալ անտի թորի՛ առ բիբն ասացեալ ական. չոր *գոլով* և աղէգոյն ի սևատեսա՛կն մաղձոյ: - 787. Եւ կատարեալ տեսութիւն բացերևականն բանի յայտնի՛ է աշխատասէր մտաց. որ յաղագս մեկնութեան լուծումն գրոց. և *գո՛ն* առ քեզ: - 787. Եւ երկրորդն է լուսաւոր զօրութեամբ թափանցանց. *գոլով* ջրեղէն կամ պլօրեայ ըստ ոմանց: - 787. Ոչ այլ ինչ *գոլով* սիւն աշխարհի զգալապէս, բայց միայն բազմութիւն լերանց և քարանց: - 788. Այլ և ոմանք ասեն և է *գոլ* սեանց ընդ շինեալ տունն ի սողոմոնէ. կանգնեալ սիւնս է մարմնապէս. թէպէտ ա՛յլ է իմացումն հոգէպէս: - 788. Զի առ հասարակ ամենայն տարերք ըստ իւրեանց կերպի կրեցին զայլայլութիւն սըգոյ, չարչարակիցք *գոլով* արարչին իւրեանց: - 788. Նախ՝ որպէս անդանօր ողջունեն զխաղաղութեան և շինութեան *գոլ*. յեղակարծ ժամու հասանիլ բարկութեան: - 788-789. Այլ և աստ ապաշաւելն ոչ ինչ օգտեալ. որպէս և անդ ո՛չ լսողաց բերանով հաշեալք. որ և ո՛չ *գոյր* անդրէն դառնալ. և ո՛չ կարի յօժարացն շահավաճառ եղեալ. ո՛չ գիւտ և ո՛չ ողորմ. հանգոյն յիմարացն օրհորդաց: - 789

**ԳՈՄ (գոյական) +** Եւ զի հոտք ի հովուաց առ փարախս և ի *գոմս* ածին: - 196. Հինգերորդ զգուշանամբ, զի մի՛ ոչխարանոց լիցի եկեղեցի և *գոմ*: - 617

**ԳՈՄՈՐ +** Սոդոմն համր՝ և *գոմորն* խիստ թարգմանի: - 755

**ԳՈՅ +** Եւ դարձեալ՝ հոգին որ ի հօրէ ելանէ և կայանայ յորդի. և ի ձեռն որդւոյ իբր զհայրական բարի ամենայն *գոյիցս* բաշխի երկնաւորաց և երկրաւորաց. նախ քան զմարմնանալն՝ և ի մարդեղութեանն: - 61. Եւ զիա՞րդ մարմին ի բնութենէն ադամայ՝ ներգործօղ բոլոր *գոյից* յանէին...: – 94. Որով և ընդ Որում Հօր և Հոգւոյն սրբոյ փառք և պատիւ և իշխանութիւն յամենայն *գոյից* անբաւ յաւիտենիւ ամէն: - 101. Եօթներորդ՝ միակն է կատարումն ամենայն թւոց. և ամենայն *գոյից* կատարումն է աստուած: - 109. Եւ աստուած յայտնի է ի բանականքս իմացմամբ և պատկերաւ. այլ ի կենդանիս և ի բոյսս և ի *գոյսս* սակաւ ինչ նմանութեամբ: - 109-110. Երրորդ՝ ես եմ սկիզբն արարչութեամբ, և կատարումն նախախնամութեամբ ամենայն *գոյից*: - 129. Ասեմք եթէ՝ նոքա երեքեան դասքն՝ այսինքն աթոռք՝ քերօբէք՝ և սերօբէք՝ միակարգ միապատիւ և գերազանց էութիւնք են. զի անընդմիջաբար յաստուծոյ ամենայն լուսափայլութիւնք իմաստք և շնորհք ի նոսա հեղանին համակարգապէս. և ապա նոքօք յայլ ամենայն *գոյս* երկնաւոր և երկրաւոր: - 135. Նախ՝ զի *գոյին* այնպիսի հրեշտակք որք մնացին ի բարին: - 149. Նոյնպէս թէ և իցեն հրեշտակք արբանեկեալք ի ստեղծումն *գոյից*, սակայն մինն է աստուած պատճառ ամենայն *գոյից*: - 164. Տասներորդ՝ զի *գոյք* ամենայն տարորոշին երրակի: - 169. Ի սեռս էականութեան գոյացութիւն նախապատիւ է քան զպատահումն. և զի նախապատիւ է աստուած ամենայն *գոյից*, վասն որոյ գոյացութիւն է և ո՛չ պատահումն: - 170. Ստորոգութիւնս պատշաճի եղական *գոյիցս* իսկութեամբ. որ ի նիւթոյ և ի տեսակէ՝ ի գոյացութեանց և ի պատահմանց են ժողովեալ: - 171. Նախ՝ զի *գոյն* նախկին է քան զպատահումն. և նախկին է աստուած ամենայնի: - 171. Երկրորդ՝ սկիզբն և պատճա՛ռ է *գոյն*. զի գոլովն գոյացուցանէ. և աստուած՝ ամենեցուն: - 171. Երրորդ՝ անպատճառ է ըստ ինքեան *գոյն*. և աստուած անսկիզբն է: - 171. Չորրորդ՝ ծածուկ է ի զգայութեանց *գոյն*. և աստուած ի զգալեաց: - 171. Հինգերորդ՝ մտա՛ց իմանի *գոյն*. և աստուած իմանալեացն: - 171. Վեցերորդ՝ ի պատահմանցն իմանամք *զգոյն*. և յերևելեացս զաներևոյթն աստուած: - 171. Եօթներորդ՝ մի է *գոյն* և բազում պատահմունք. և մի է աստուած՝ և բազում եղեալքս: - 171. Ութերորդ՝ ի բոլոր իրն է *գոյն* և ի մասունս. և աստուած ի բոլոր էակքս և ի մասնաւորս: - 171. Տասներորդ՝ *գոյն* բաժանի ընդդէմ պատահմանց միայն պարզ գոյացութիւն: - 171. Եւ պարզ գոյացութիւն է միայն անեղ *գոյին* ի մէջ ամենայն եղելոց: - 171. Եւ թէպէտ ի յէութիւնս իւրեանց յետոյ, սակայն ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ, *գոյին* յառաջ քան ըզլինիլն իւրեանց էութեամբ, և յետոյ եղեն ըստ նոյն նմանութեան: - 172. Եւ գոյացութիւն ասեմ, որով տարորոշի ընդդէմ ոչ *գոյին*. և որակութեամբ բացորոշի յանմարմին էութեանց. ուստի բաղկանայ մարմին գոյացութեամբ և որակութեամբ: - 175. Այլ ևս ոմանք՝ ի *գոյից* ասեն զժամանակն, և կէսք յանգոյից: - 198. Ի *գոյից* է, զի շարժումն երկնի և ընթացք լուսաւորացդ ծնանին զժամանակն: - 198. Ստե՞ղծ աստուած հոգաբարձութեամբ զճանճս և զմժեղս և զայլսն, թէ ի *գոյի՞ց* պատահեցան: - 217. Վեցերորդ՝ որք վասն որոց եղեն. զի ի *գոյիցն* ոմանք են վասն ինքեանց. իսկ այլ վասն այլոց և ոմանք ինքեանց և այլոց: - 230. Ութերորդ՝ ո՛չ արար նախ զմարդն, զի մի՛ արարչակից գիտասցէ զինքն ոչ *գոյիցն*, և անկցի հպարտութեամբ. այլ գործօղ *գոյիցն*, զի կացցէ պահպանութեամբն. որպէս ասէ գիր՝ «գործել զնա՛ և պահել»: – 231. Տասներորդ՝ մէջ և կապ ամենայն *գոյիցս* մա՛րդն է կազմեալ. զի ամենայն արարածք ի **բ** դէմս որոշին. այսինքն մինն յիմանալի և միւսն զգալի. և սոքա եղեն յառաջագոյն: - 231. Եւ յայսմանէ ցուցանի եթէ մի է արարիչ բոլոր ամենայն *գոյից*: - 231. Ա՛րդ՝ վասն այսր և այլ ևս քան զայս պատճառաց ի վերջո՛յ արարաւ մարդն ամենայն *գոյից*: - 231. Իսկ երկրորդն թէ յորմէ՞ սեռէ է օտարն և աննմանն՝ գիտելի է, զի դէմն և կերպն ի չորից սեռից գոյանայ. ի *գոյէ*՝ ի քանակէ՝ յորակէ և ի տեղւոյ: - 236. Եւ պակասեալ ի սոցանէ մարմնոյն, ցուցանի կերպարան ի *գոյէ* ի քանակէ և յորակէ և ի տեղւոյ շարակցեալ. որպէս յա՛յտ է ի հայելւոջ: - 236. Որպէս և իմաստունքն ասացին զամենայն երևելիս յարացոյց իմանալեացն. զոր *գոյ* և որակ կոչեն. և զնիւթս պատկեր *գոյին*. զի որակն և *գոյք* անմարմին են և աննիւթաբար ի մտածութիւնս երևին: - 236. Իսկ դադան քրէական մեղանչեաց որ է՛ յանցումն ի թագաւոր. զոր անհնարին պատուհասին. *գոյիւք* և ազգօք ջնջին: - 381. Զանսկիզբն սկզբան ի սկզբանէ՛ *գոյին*, և զանճառելի թաքնութեան և անհաս խորութեան յառաջ ճանապարհ ի մեզ միածին բանին: - 456. Երրորդ՝ ապականութիւնն ներգործէ՛ հակառակ արարչին. զի արարիչն յանգոյից գոյացուցանէ, իսկ ապականութիւնն *զգոյսս* ի յանգոյութիւն տարալուծէ և այլայլէ՛. վասն որոյ անապակա՛ն է մարմին արարչին: - 499. Ասեն եթէ՝ սեփհաննոս ոմն երաժիշտ զամենայն ձայնս *գոյից* բաժանեաց **իզ**...: – 640. Զի թէ *զչգոյն* կոչէ ի *գոյ* և լսեն նմա, քանի՞ առաւել *զգոյն* ի *գոյից* ժողովէ՛ և նորոգէ: - 714. Ի *գոյից* ո՞րք են մնացականք յետ յարութեանն: - 727. Վասն իններորդին, որք աստ իւրաքանչիւր մեղօք *գոյին* շաղախեալք. արդարապէս ունին զիւրաքանչիւր անդամս կապանօք կաշկանդեալս. և ցանկան մեռանիլ

և փախիցէ մահ ի նոցանէ: - 753. Զոր և ես զօրէն մշակաց բազմահաւաք պտղոց. կամ փունջ մի անուշահոտ բազմերանգ ծաղկանց. կամ չնչին թռչնոյ զխորիսխ մեղու. կամ որպէս զլոմայս այրւոյն տառապեալ _գոյիւ_: - 772

**ԳՈՅԱԿԱՆ +** Դարձեալ, _գոյականքն_ ո՛չ ունին շաղկապ գոլոյ. այլ շնորհականքն զանմեղութիւն: - 782

**ԳՈՅԱԿԻՑ +** Երկրորդ՝ զի հոգի և մարմին _գոյակիցք_ են միմեանց անընդհատ ժամանակաւ: - 478. Չորրորդ որ ասէ (իմ.) ցուցանէ զքրիստոս _գոյակից_ հօր: - 487. Երկրորդ, ընդ նոսա այլ ընդ այլո՛յ է միացեալ. իսկ ընդ եկեղեցի՝ առ բնութենակից և _գոյակից_: - 757

**ԳՈՅԱՆԱՄ +** Արդ՝ բարի և չար ո՛չ են հակակայք որպէս առինչք. զի առինչքն համանգամա՛յն են. և ի միմեանց բաղկանան. իսկ բարին և չարն ո՛չ են համանգամայն. և չարն ի բարւոյն ո՛չ _գոյանայ_. և ո՛չ բարին ի չարէն: - 21. Եւ է չար՝ որ խա՛ռն է ընդ բարւոյ. և ի յէութեան _գոյանայ_. որպէս հիւանդութիւնն ի յողջութեան. ապականութիւնն ի մարմնի: - 22. Այլ այս զանազանի. զի բարին բնական ունակութիւն է մեզ. զի ի բարին եմք _գոյացեալ_: - 23. Իսկ թէ յո՛չ ումեքէ, կարգեցեր զնա ընդ յոչ էից _գոյացելոց_: - 37. Եւ թէ յոչ ժամանակի, և զի՞նչ էր նոյն ինքն ժամանակն որ _գոյացաւ_ ի սկիզբն լինելութեանն: - 37. Նաև մարդիկ ո՛չ միայն զի ի բազմաց են _գոյացեալ_, այլ և ժամանակաւ առաւելք մի քան զմի. և կամօք բաժանեալք և ի միմեանց և իրերաց հակառակք: - 54. Իններորդ՝ թէ արարիչ է աստուած՝ և բան իւր և հոգին արարած, ապա և ինքն ո՛չ է պարզ և մէկին՝ այլ բաղադրեալ և ի բազմաց _գոյացեալ_: - 56. Ըստ որում մերձ դնէ, քանզի մարմին և հոգի. այսինքն թէ ո՛չ կարէ մարդն առանց հոգւոյն _գոյանալ_: - 80. Բաղկացական տարբերութիւն է՝ ուստի տեսակքն _գոյանան_. որպէս բանականն և մահկանացուն՝ զբնութիւն մարդոյն կատարեն: - 85. Նախ՝ զի եղականք ամենայն չափաւորեալ _գոյացան_. եթէ իմանալիք և եթէ զգալիք: - 103. Չորրորդ՝ սկիզբն է առաջնոցն. և պատճառ վերջնոցս. որք միջնորդութեամբ _գոյանան_. որպէս ի տարերաց կամ ի ծնողաց: - 110. Իսկ անեղն ի բ դէմս որոշի. որպէս անեղ էն աստուած. և անեղ՝ որ դեռևս ո՛չէ եղեալ և _գոյացեալ_: - 118. Իսկ մարդս զի յերկուց է _գոյացեալ_՝ ունի զգուք բնական՝ և զսէրն աստուածական: - 144. Յաղագս որոյ աշխարհ _գոյացեալ_. երբեմն մշտնջենաւոր գոյութեամբ, անգոյանալ երբէք ո՛չ կարէ: - 162. Բաղկացական է, որ ընդ մարմնոյ մասնկանցն _գոյանայ_ ի ներս և ի դուրս. վերոյ և ներքոյ շուրջանակի. զի իւրաքանչիւր մասունք ի տեղին ունին զդրութիւնն. և կայացեալ ի բոլորն: - 174. Չորրորդ՝ զի ծնանիմք ի բարի կամացն աստուծոյ յառաջ գիտութեամբ նորին. և ապա _գոյանամք_ արդեամբ և գոյացութեամբ ըստ իւրաքանչիւր տեսակաց: - 179. Եւ այսպէս ի նոցա խառնուածոց լինի _գոյացեալ_ մարմին և յառաջ եկեալ: - 181. Լուսաւորքն ուստի՞ _գոյացան_: - 188. Այլ վարդապետք եկեղեցւոյ ասեն ըստ պղատոնի եթէ՝ լոյսն խզումն է ի տարրական հրոյ, որ յառաջին օրն _գոյացաւ_: - 188. Ուստի՞ _գոյանան_ համն և հոտն և գոյնն: - 213. Արևն պնդէ՝ և լուսինն թուլացնէ. և յայնմանէ _գոյանայ_ համն և հոտն և այլն: - 213. Զի ի չորս տարրէ՝ է _գոյացեալ_. և ունի զաճումն հողոյն. վասն այն նախ աճէ ենթակայ մարմինն: - 213. Նմանապէս և կոչին փայտ. զի ի փտելոյ և յապականելոյ _գոյանան_ այսպէս. յորժամ բորբոսի երկիր՝ նա՛ զարմատն ի վայր արձակէ և զբոյսն ի վեր: - 214. Եւ նոյնպէս զգայական մարմինք ի փտելոյ և յապականութենէ _գոյանան_. վասն այն և դարձեալ ապականին: - 214. Ապա ուրեմն երևի թէ ի մին տարրէ _գոյացան_ ի հողոյ կամ ի ջրոյ: - 214. Ապա ուրեմն յերկրէ կամ ի ջրոյ _գոյացեալքն_ ի չորս տարերաց եղեն: - 214. Նախ՝ զի անուամբն _գոյանայ_ իրն ի միտս մեր. և անանունն իբր յանգոյս է համարեալ մեզ: - 219. Եւ թէ ասեն, հրեշտակք յանէից _գոյացան_ և ո՛չ ի միմեանց. իսկ մարդկան ազգ պա՛րտ էր ի միո՛յն ծնանիլ: - 226. Եւ այս իսկ է գործն, այսինքն վայելել հոգւով յիմանալիսն, և մարմնով ի զգալիսս. պարտ էր նախ _գոյանալ_ նոցա, և ապա՝ գործողին և վայելողին: - 231. Իններորդ՝ զի ի սկիզբն ստեղծման արարածոց՝ եղեն իմանալի բանականքն ընդ լուսոյն _գոյացեալ_: - 231. Յարցումն ա՛յսմ իրի՝ նախ գիտելի է՝ թէ ուստի՞ _գոյանայ_ պատկերն և տիպ: - 235. Այս՝ թէ ուստի՞ _գոյանայ_ պատկերն և տիպ: - 236. Իսկ երկրորդն թէ յորմէ՞ սեռէ է օտարն և աննմանն՝ գիտելի է, զի դէմն և կերպն ի չորից սեռից _գոյանայ_. ի գոյէ՝ ի քանակէ՝ յորակէ և ի տեղւոյ: - 236. Երրորդ՝ զի ամենայն իր յէից և յոչ էից են _գոյացեալ_. յէից՝ ըստ նախաձանօթ տեսչութեան գաղափարին. և յոչ էից՝ ըստ ինքեան ի ժամանակի հաստատեալք: - 236. Խնդրեմ ուսանիլ վասն բոլոր էութեան հոգւոյն թէ ո՞րպէս կամ զի՞նչ եղանակաւ _գոյանայ_: - 252. Զի ոմանք ասեն զհոգին յառաջ _գոյանալ_ քան զմարմինն: - 252. Զի որք զհոգի յառաջ ասեն _գոյանալ_՝ զայս դնեն պատճառ, եթէ յէակքս իմանալիքն յառաջ ստեղծան քան զզգալիքս. ապա և ի մարդոյն էութիւն հոգին յառաջ է քան զմարմինն: - 252. Զոր ընդ դերևս հանէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան այսպէս եթէ, որք զհոգին յառաջ ասեն _գոյանալ_ քան զմարմին. և վասն մեղաց եդեալ ի մարմին մարդոյ. որ է՛ համանման բանականութեամբ. և է՛ իներքոյ երկնային

կենաց՝ զի մարմնաւո՛ր է: - 252. Ասեմք եթէ՝ ամենայն արարածք համանգամայն *գոյացան* յարարչէն. և ո՛չ մի զկնի միոյ...: – 253. Եւ թէ ասիցէ ոք, ապա երևի թէ և բանական հոգին ի ծնողա՛ցն հատանի կամ *գոյանայ*: - 257. Նիւթ մարմնոյն է ի ծնողացն. այլ հոգին ո՛չ է ի ծնոցաղն. այլ ի հրամանէն աստուծոյ *գոյանայ* և երևի: - 257. Ապա ուրեմն հոգին ո՛չ հատանի և ո՛չ *գոյանայ* ի հոգւոյ որպէս մարմին ի մարմնոյ: - 257. Իսկ յառաջ ածեալն նոր *գոյացաւ*: - 258. Եւ ըստ անասնոցն հաւասարութեան նախ *գոյանայ* անասնականն որ է տնկականն և զգայականն. և յետոյ բանականն: - 258. Եւ թէ զտեսութիւնս զայս կարծես էութիւն հոգւոյ ըստ որում է հոգի, ապա ո՛չ միայն ետես զհոգի, այլ և զմարմին՝ և զիւրաքանչիւրոց ընտրութիւն, և զհամար հերաց և զթիւն աստեղաց. և սոքա յետո՛յ են *գոյացեալ* ըստ կամաց տեսողին: - 260. Եւ որպէս սիրտն նա՛խ *գոյանայ*, նոյնպէս և յետո՛յ մեռանի վասն ջերմութեան նորին: - 261. Արդ՝ ժ թիւն կատարեալ է. և չորսն տարրական է. այսինքն զի կատարեալ հոգին բանական ի նո՛յն ժամն խառնեալ միաւորի ընդ մարմնոյն տարրական, և կերպացեալ լինի մի մարդ մի դէմ և մի բնութիւն մարդոյ ի հոգւոյ և ի մարմնոյ. որպէս քառասունն ի տասանց և ի չորից է *գոյացեալ*: - 262. Այսպէս և շնչականն *գոյացեալ* ի իերորդ աւուր՝ կիսակատար գոլով բանականին զնոյն ունի խորհուրդ: - 262. Երկրորդ՝ անդրանիկ է բանն աստուած ի հօրէ ծնեալ. և կրտսեր ա՛յլ եղեալքս՝ ի հօրէ՛ *գոյացեալ*. զի որդի ծնո՛ւնդ է հօր և մեք արարածք. և նա՛ ի բնութենէն և մեք ի կամացն: - 309. Չորրորդ՝ անդրանիկ է հոգին քան զմարմին բնութեամբ և պատւով. թէպէտ հաւասարք են ամանակաւ *գոյացեալք*: - 309. Վեցերորդ՝ անդրանիկք են և ընտրեալքն աստուծոյ. որք նախքան զլինիլն աշխարհի ընտրեցան. թէպէտ յետոյ ի ժամանակի ըստ հասարակաց *գոյացան* և կատարեցան: - 309. Եթէ խորհրդական մարմինն քրիստոսի անապակա՛ն է, ուստի *գոյանան* կենդանիք և բորբոսք: - 339. Իսկ կէսն, զի կիսկատար և պակա՛ս են քան զաստուած այնու, զի եղակա՛նք են և յոչ գոյից *գոյացեալք* որպէս ասացաք: - 344. Եւ բաւականութիւն սոցա է այսպէս. զի եմք մարմին հոգի և միտք *գոյացեալ*. և ունիմք կարիս և ինչս և շնորհք և կրօնք: - 389. Վեցերորդ՝ զի հոգի և մարմին մասն գոլով *գոյանայ* մի կատարեալ: - 479. Զի անսերմն յղութեամբ և ի սրբեալ յարենէ կուսին *գոյացաւ* մարդ: - 485. Կամ որպէս ասեն ոմանք թէ երկու յաւազոյ և մի ի սերմանէ՛ *գոյանան* մարմինք ծկանցն: - 510. Վասն զի յերից *գոյացեալ* է մարդն. ի մտաց ի հոգւոյ և ի մարմնոյ: - 556. Դարձեալ կոչին ծառայականք, զի և ի խառնուածոյ մարմնոյն *գոյանան*. որք ո՛չ հետևին միմեանց. զի որ ի խառնուածոյն ողջախո՛հ է, նա ո՛չ խոհեմ կամ արդար կամ արի կարէ գոլ: - 581. ...վասն որոյ յանարիւն կենդանւոյ զլոյսն վառեմք. զի կենդանին այն անարիւն է յորմէ մոմն *գոյանայ*: - 617. Նա՛խ՝ զի յերի՛ց եմք *գոյացեալ* ի մարմնոյ, ի հոգւոյ, և ի մտաց, որպէս ասեն ոմանք. վասն որոյ գ առանձնական աղօթս մատուցանեմք: - 623. Զի յերից եմք *գոյացեալ* մարդ. հոգի և մարմին և միտք: - 655. Երկրորդ, զի երի՛ց եմք *գոյացեալ*. ի մարմնոյ, ի հոգւոյ, և ի մտաց...: – 675. ...զի կամ իմանալիք են որպէս հրեշտակք. կամ զգալիք որպէս տարրեղէնք. և կամ յերկուց *գոյացեալ* որպէս մարդ. այսինքն ի հոգւոյ և մարմնոյ...: - 715. Ասեն վարդապետք՝ եթէ են ինչ որ էութեամբ և պատահմամբ անցանեն. որպէս կենդանիք և տունկք և որ ինչ ի չորից տարերաց են *գոյացեալք*: - 727. Ա՛րդ՝ որպէս հրեշտակք ի յոչ գոյից *գոյացան* և են անապականք և անմահք ի կամքն աստուծոյ: - 733. Նա՛խ՝ զի յերի՛ց է մարդն. հոգի մարմին և շունչ *գոյացեալ*. ի քակտումն սոցա գ վկա՛յ է պիտոյ: - 742. Այլ որ ուղիղն է տեսութիւն, յետ յարութեան փոխի ժամանակն ի յաւիտեան. և այլ ո՛չ գտանի մասն և րոպէ և ժամ. զի երկնային մարմինք դադարին ի շարժմանէ ուստի ժամանակն *գոյանայ*: - 747. Իսկ ըստ հինք յատկապէս գործի՛ է բնութեան ի պէտս սննդեան այնոցիկ ծննդոց զօրէն սերմանեաց երկրի. յորմէ հիւթոյ արեանն *գոյացելոյ*, ընդ ագուգայս երակաց արտագունեալ որակօք կաթն փոխակերպեալ: - 786

**ԳՈՅԱՑԱԲԱՐ** + Եւ թէպէտ այսպէս ասացաւ, սակայն *գոյացաբար* է՛ աստուած յիմանալի երկինս. և կարողաբար ամենայն ուրէք: - 180

**ԳՈՅԱՑԱԿԱՆ** + Իսկ թէ ըստ ինքեան է չարն յաստուծոյ, նա ո՛չ լինէր բարին յաստուծոյ. զի ըստ ինքեան՝ հարկաւոր է և *գոյացական* և անփոփոխ: - 15. Քսաներորդ՝ զի ի հարկէ բարի է աստուած. որպէս ի հարկէ էա՛կ է. այլ արդ՝ հարկաւոր բարին է միշտ բարի և *գոյացական* բարի և զուտ բարի: - 15. Եւ զի *գոյացական* է բարի, անկա՛ր է լինիլ պատահական չար: - 15. Եւ թէպէտ անկան և եղեն դևք՝ *գոյացականքն* մնացին առ նոսա. և հրեշտակ լուսոյ կերպարանին ըստ առաքելոյն: - 151. Իսկ նախախնամութիւնն առ աստուած *գոյացական* է և միշտ. զի պատահումն ո՛չ գոյ յաստուած: - 164. Երրորդ՝ զի արարածք՝ են ի *գոյացական* սեռէ, և ո՛չ ի պատահական. զիարդ լինին պատահումն ի յարարիչն: - 169. Իսկ Առինչ կոչի, ո՛չ որպէս առ մեզ առինչք են մակագոյեղքն. այլ *գոյացական*, կամ բաղդատական. որպէս ծնօղ. ծնեալ. բղխօղ. բղխեալ. կամ արարիչ և տէր արարածոց և ծառայից: -

172. Մանաւանդ թէ իւրաքանչիւր տարերք բ ծայրք որակութեանց ունին. զմինն *գոյացական* և զմիւսն պատահական. ըստ այսմ պա՛րտ է ասել քեզ մետասան բնութիւն քրիստոսի: - 176. Եւ իւրաքանչիւր տարերք ունին կրկին որակութիւնս. այսինքն *գոյացական* և պատահական: - 181. Եւ գիտելի է, զի գ են իր *գոյացական*. Սեռ. Տեսակ. և Անհատ: - 220. Եւ այսպէս զանազանին սոքա. մարմին մեր զգեստ է *գոյացական*. և հանդերձն պատահական: - 318. Նախ՝ կոչի մարմինն զգեստ՝ *գոյացական*՝ անփոփոխ և անքակ միութեամբն. զի բաժանմամբ մարմնոյն և բանին ո՛չ է քրիստոս. որպէս ի բաժանիլ հոգւոյ և մարմնոյ ո՛չ է մարդ: - 318. Իսկ *գոյացական* մարմինն քրիստոսի կոչի զգեստ վայելչական...: – 319. Նա՛ ևս գերազանցեալ քան զիրեշտակս այսու, զի նոքա ի *գոյացական* վարձս ո՛չ աճիլ կարեն և ո՛չ նուազիլ. իսկ երանուհի կոյսն կարէր յառաջանալ յարդիւնս և ո՛չ նուազիլ: - 463. Եւ ասացեալ են *գոյացականք* մկրտութեանն ի վերոյ ի մկրտութիւն տեառն ի **իե** համարն գտցես: - 590. Քանի՞ են *գոյացականք* պատարագին: - 597. Որոյ պատճառ է, զի մարմին կերեալ մարդոյն է իւրն նիւթ *գոյացական* և սոցա եղև նիւթ պատահական: - 719. *Գոյացական* որակքն մնան և պատահականքն պակասին որպէս ասացաւ: - 728. Թօթափիլ կամ խաւարիլ լուսաւորաց ո՛չ է իմանալ թէ ի կամարէ՛ երկնից անկանին կամ *զգոյացական* տեսակն փոխեն: - 728. Ամենայն իր բնութեան՝ *գոյացակա՛ն* է նորին. և ամենայն պարգևք այսինքն շնորհք պատահական է ի զարդ նմին. յաղագս որոյ ո՛չ բառնին *գոյացականքն*. որպէս անմահութիւն դիւի և բան մարդոյ: - 782. Բաւուք ասացաւ յարարչէն. զի թէ և բնութիւն թարց երևակայութեան, և արհեստ հանդերձ երևակայութեամբ, սակայն կամք արարչական ետ նոցա բնական և բանական կարողութիւն. և ոչ ինչ վայրապար կազմեն զտեսակ *գոյացական* և զտեսակ պատահական. խնդրելով ոմն պարզ նիւթ. և ոմն տեսակացեալ: - 786. Եւ զանազանեալքն ի գիրս անդամոց, զանազանին և ո՛չ նմանին *գոյացական* տեսակօք: - 786

**ԳՈՅԱՑՈՒԹԻՒՆ +** Զի մեզ հոգին ըստ ինքեան *գոյացութիւն*, և յայլում տեսանի. այսինքն կատարեալ անձնաւորութիւն յէութիւն հօր: - 51. Ապա ասեն՝ թէ *գոյացութիւն* է և ո՛չ յայլում՝ այսինքն ի հայր, օտա՛ր է ի բնութենէն. արարա՛ծ է և ո՛չ աստուած: - 52. Զի որպէս այժմ կարեմք ասել ճշմարտապէս թէ հոգին սուրբ ելանէ ի հօրէ. և վասն ապառնւոյն կարեմք ասել թէ հոգին սուրբ ո՛չ ելանէ յորդւոյ. մինչ այլ ո՛չ ևս ելանէ. և ո՛չ այնպէս էառ *զգոյացութիւն* և զճշմարտութիւն իւր՝ զի ո՛չ ևս երբեք առցէ: - 65. Անձն այն էութիւն և *գոյացութի՞ւն* է թէ ոչ: - 86. Էութիւն է և *գոյացութիւն*, և զիա՞րդ ո՛չ: - 86. Ապա եթէ էութիւն է և *գոյացութիւն* որպէս ի սահմանն արտադրի՝ «անձն է բանական բնութեանն անբաժանելի *գոյացութիւն*»: – 86. Այլ և ո՛չ որպէս էութիւն ի պատահումն. զի մարդկութիւնն քրիստոսի է ի սեռէ *գոյացութեան*, և ո՛չ ի սեռէ պատահման: - 88. Այլ անձնաւոր *գոյացութիւն* ի ներքոյ եղեալ ենթակայաբար մարդկութեան իւրոյ: - 88. Նախ՝ որպէս սեռ ի տեսակս բոլորապէս տեսանի և ո՛չ մասամբ. այս է՝ զի *գոյացութիւնն* որ է սեռ՝ բոլոր է ի մարմինն և յանմարմինն. և կենդանին բոլոր ի բանականն և բոլոր յանբանն: - 89. Երկրորդ՝ ասեմք եթէ ամենայն մասունք է՛ ի *գոյացութենէ* բոլորին. և որ ունի զնոյն *գոյացութիւն*, ունի զնոյն կոչումն: - 92. Որպէս ձեռն ունի *զգոյացութիւն* բոլոր մարմնոյն. և կոչի մարմինն առ բոլորն քրիստոս: - 92. Այսպէս մարմին և հոգին են ի *գոյացութենէն* քրիստոսի: - 92. Իսկ թէ ասես միայնաբար աստուած է մարմինն՝ և աստուած է հոգին. այսու ո՛չ լինիս բազմաստուած. զի մի՛ է աստուածութիւնն ի սոսա միաւորեալ էութեամբ և *գոյացութեամբ*: - 93. Անձն այն *գոյացութիւն* է՝ թէ լոկ անուն: - 95. Զի թէ *գոյացութիւն* և միաւորեալ է ընդ *գոյացութիւն* բանին, զիա՞րդ ո՛չ գիտէ զաստուածութիւն իւր: - 95. Իսկ թէ միայն անուն առանց էութեան. ապա անուամբ խոստովանիս աստուած զքրիստոս և ո՛չ *գոյացութեամբ*. և հաւասարե՛ս զնա մովսէսի. որ անուամբ աստուած կոչեցաւ և ո՛չ էութեամբ: - 95. Նախ գիտելի է, զի միութիւն ի *գոյացութիւնն* առնէ զնոյնութիւն: - 104. Դարձեալ՝ եղեալ էութիւն բաժանի կրկնակի. ի *գոյացութիւն* և ի պատահումն: - 111. Եւ *գոյացութիւնն* դարձեալ կրկնակի. առաջին և երկրորդ: - 111. Ա՛րդ՝ կարգաւո՛ր է զի անեղն աստուած՝ զանեղն ըստ տեսութեան՝ յեղելութիւն ածցէ ըստ *գոյացութեան* իւրեանց: - 114. Երկրորդ՝ միտք *զգոյացութիւն* իրին տեսանէ որ է ի ներքոյ եղեալ. և զգայութիւն զպատահմունքն ի վերայ եկեալ. որպէս որա՛կ քանա՛կ և այլն: - 120. Հինգերորդ՝ զի ընդարձակի բանս մեր քան զամենայն ինչ. և բանն աստուծոյ ընդարձակեալ է առ ամենայն ինչ՝ *գոյացութեամբ* և արարչութեամբ: - 121. Ոմանք մերձ են էութեամբ արարչին. և ոմանք հեռի. որպէս իմացականքն քան զբանականս. և սա՛ քան զկենդանիս. և նոքա քան զտունկս. և հուսկ յետոյ անշունչ *գոյացութիւնքն*. ըստ մերձ և հեռաւոր բնութեանց՝ զանազանապէս առնուն: - 131. Նախ՝ զի նիւթեղէն միտք՝ միջնորդութեամբ նիւթո՛յ հասանէ յաննիւթն. որպէս տեսեալ զգիր՝ իմանամք զզօրութիւն նորա. և տեսեալ զորակ և զքանակ՝ իմանամք *զգոյացութիւն* իրին: - 131. Երրորդ՝ վասն *գոյացութեան* իւրոյ որ անկաւ ի հրեղէն դասուցն: - 151. Եւ **գ** է *գոյացութիւն*

նոցա. անմարմին՝ անմահ՝ և հրեղէն գոլն...: – 151. Այլ և ո՛չ ըստ այնմ որ է՛ սկիզբն *գոյացութեան* աշխարհի. զի անփոփոխ կամօք կամեցաւ և արար ի գոյութիւն. և անկա՛ր է փոխիլ կամացն անեղին և առնել յանգոյութիւն զեղեալս էութիւն: - 165. Երկրորդ՝ պատահմունքն բաժանեալ ի *գոյացութեանց* ո՛չ կարեն ըստ ինքեան կեալ: - 169. Եւ բաժանումն ասեմ ո՛չ ըստ նախախնամութեան, այլ ըստ *գոյացութեան*: - 169. Այլ ասիցէ ոք, թէ բազում ինչ գոն ի յայլս *գոյացութիւն* և ի յայլս պատահումն. որպէս ջերմութիւն ի հուրն *գոյացութենէ*, և ի անորակ մարմինն պատահումն. և տերևն ըստ ինքեան *գոյացութիւն* է, և ի ծառն պատահումն. այսպէս և մազն: - 169. Նախ՝ զի զգոլն իւրեանց ունէին ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. թէպէտ յետո՛յ ընկալան *գոյացութիւնս* յինքեանս. որպէս տաճար ի միտս շինողին: - 170. *Գոյացութիւն* և պատահումն անմեկնելի որոշմունք են. վասն է՞ր ի յաստուած միայն *գոյացութիւն* է և ո՛չ պատահումն: - 170. Ի սեռս էականութեան *գոյացութիւն* նախապատիւ է քան զպատահումն. և զի նախապատիւ է աստուած ամենայն գոյից, վասն որոյ *գոյացութիւն* է և ո՛չ պատահումն: - 170. Այլ արդ՝ բնականին հետևելով տեսցուք զի՞նչ է *գոյացութիւն* և զի՞նչ պատահումն: - 170. *Գոյացութիւն* է ինքն ինքեամբ էացեալ և ոչ կարօտեալ յայլս հաստողի: - 170. Եւ զի յայտ եղև այս, ծանուցի և այն, թէ վասն է՞ր աստուած միայն *գոյացութիւն* է և ո՛չ պատահումն: - 170. Երկրորդ՝ զի պատահումն յետ *գոյացութեան* է: - 170. Երրորդ՝ զի պատահումն ընդ *գոյացութիւն* խառնեալ՝ լինի բաղադրեալ. որպէս նիւթ և տեսակ: - 170. Իսկ աստուած է պարզ *գոյացութիւն* և անշարադիր. ըստ որում, ի լոյս բաղդատի: - 170. Չինգերորդ՝ *գոյացութիւն* մի է, և պատահումն բազում: - 170. Վեցերորդ՝ զի ներհականայ պատահումն *գոյացութեան*. այլ աստուած աններհա՛կէ է: - 170. Եօթներորդ՝ զի պատահումն աւելո՛րդ է *գոյացութեան*. զի գոլովն ո՛չ գոյացուցանէ. և այլն: - 170. Ութերորդ՝ զի պատահումն ժողովելով առ *գոյացութիւնն* լինի մարմին: - 170. Իններորդ՝ պատահումն ա՛յլ է ի *գոյացութենէ*. և առ եղեալ *գոյացութեան* առնէ այլ՝ և այլայլակ: - 170. Եւ զի յաստուած ո՛չ գոյ առաւել և նուազ. վասն որոյ միայն *գոյացութիւն* է և ո՛չ ունի պատահումն: - 171. Ստորոգութիւնս պատշաճի եղական գոյիցս իսկութեամբ. որ ի նիւթոյ և ի տեսակէ՝ ի *գոյացութեանց* և ի պատահմանց են ժողովեալ: - 171. Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ. զի է կոչի աստուած, ըստ այնմ «ես եմ որ էն». և ո՛չ ըստ այնմ որ բաժանի ի *գոյացութիւն* և ի պատահումն. որպէս հոմանուն կամ փաղանուն. կամ ի միոջէ և առ մի. որպէս ընդհանուր էակն է՝ բաժանի առ մեզ: - 171. Իսկ *Գոյացութիւն* կոչի աստուած, ո՛չ ըստ որում ներհակ պատահմանց է ընդունական որպէս մեք. այլ ըստ որում բաժանի ընդդէմ պատահմանց. որ է՛ միայն պարզ *գոյացութիւն* որպէս ասացուք: - 171. Տասներորդ՝ գոյն բաժանի ընդդէմ պատահմանց միայն պարզ *գոյացութիւն*: - 171. Եւ պարզ *գոյացութիւն* է միայն անեղ գոյին ի մէջ ամենայն եղելոց: - 171. Այլ *գոյացական* որպիսութիւնն է որակութիւն. որպէս ասեմք բանական. անմահ. անմարմին. և այլն: - 172. Զի՞նչ է էութիւն և բնութիւն՝ և անձն և *գոյացութիւն*: - 174. Այլ *գոյացութիւնն* է ունօղ բնութեանն, կամ ներքոյ կացեալ բնութեան որպէս մարդ: - 174. Քանակաւն և որակաւն. զի սոքօք անհատ *գոյացութիւնն* երևի: - 174. Այլ թէպէտ աննիւթ է աստուած՝ ո՛չ է անկարգ զնիւթականքս յառաջ ածել ըստ այսմ օրինակի. զի նիւթն որ է՛ *գոյացութիւն* մարմնական՝ ունի որակութիւնս իմն մարմնական. որպէս քանակ. որակ. և այլքն: - 175. Եւ *գոյացութիւն* ասեմ, որով տարորոշի ընդդէմ ոչ գոյին. և որակութեամբ բացորոշի յանմարմին էութեանց. ուստի բաղկանայ մարմին *գոյացութեամբ* և որակութեամբ: - 175. Արդ սոքա ըստ ինքեան անմարմին են. այսինքն *գոյացութիւնն*. քանակն. որակն. և այլքն: - 175. Եւ մարմնով ո՛չ բաժանին սոքա. թէպէտ և մանր փոշի լինին՝ ունին զքանակն զորակն և զայլն. զի անմեկնելի որոշմունք են *գոյացութիւն* և պատահմունք: - 175. Զի աննիւթ և պա՛րզ էութիւն է աստուած. և յառաջ էած յոչընչէ զաննիւթ էութիւնքս. այսինքն *զգոյացութիւն*, զքանակ, զորակ, և զայլսն. և իւրով զօրութեամբն ի միասին ժողովեալ կազմեաց մարմնական նիւթ: - 175. Ապա ընդէ՞ր սոքա՝ *գոյացութիւն*, որակ, քանակ, և այլքն, եղական գոլով ո՛չ շփոթին ի մի բնութիւն խառնեալ: - 176. *Գոյացութիւն* որ սկիզբն է ամենեցուն և նախասեռ. և ի նմանէ զուգաբաժանեալ մարմինն. և շնչաւորն. և զգայունն. և կենդանին. և բանաւորն. և մարդն. ո՞չ ապաքէն բնութիւն են սոքա այլևայլ. և ժողովեալ գոյացուցանեն զմի անհատն պետրոս անշփոթ միութեամբ: - 176. Եւ զի անշփո՛թ են սոքա յատկութեամբ՝ յայտ է. ուստի ասեմք, պետրոս մա՛րդ է և բանաւոր և կենդանի և զգայուն և շնչաւոր և մարմին և *գոյացութիւն*: - 176. Չորրորդ՝ զի ծնանիմք ի բարի կամացն աստուծոյ յառաջ գիտութեամբ նորին. և ապա գոյանամք արդեամբ և *գոյացութեամբ* ըստ իւրաքանչիւր տեսակաց: - 179. Եւ միւսն հոգևոր. յորում հոգևոր *գոյացութիւնք*. այսինքն հրեշտակք բնակին: - 180. Եւ վասն առաւել և ազդու զօրութեան և ջերմութեան՝ *զգոյացութիւն* կենդանեաց և մարդկան առ որս դիպի ապականէ՛. և

պատահմունքն քանակ և որակ մնան: - 204. Իսկ հուրս առ մեզ որ կապեալ է ի նիւթ՝ տկա՛րն ունի զայրելն. վասն որոյ նախ զքանակն և զորակն ապականէ, և ապա *զգոյացութիւն* իւրին: - 204. Պտուղքն դրախտին շօշափելիք են և կերակրելիք. հատանի և ծասկի և փոփոխի ըստ պատահական որակացն. և անապական մնայ ըստ *գոյացութեանն* և ներգործութեանն ի կերօղն: - 223. Որպէս հաց մարմնոյն քրիստոսի ըստ *գոյացութեան* և ներգործութեան անապական է. թէ և փոփոխի ըստ արտաքին որակացն: - 223. Դարձեալ ասեմք թէ *գոյացութիւն* դրախտին **բ** իր է. այսինքն նիւթ և ապականութիւն: - 225. Առաջին և առաւել *գոյացութիւն* է՛ անհատ անձն և դէմն. և Երկրորդ և նուազ՝ տեսակն և սեռ՝ և այլքն ըստ կարգի: - 235. Զի դէմքն ըստ որում մարդոյ և մարմին՝ *գոյացութիւն* է: - 236. Եւ են աննմանք՝ ըստ որում են *գոյացութիւնք* յատկացեալք ի միմեանց: - 236. Եւ թէ այդպէս է, ուրեմն ի հրամանն աստուծոյ ո՛չ է նոր. այլ ի *գոյացութիւն* իւր նո՛ր է: - 258. Իններորդ՝ արիւնն և շունչն է սկիզբն *գոյացութեան* մերոյ. զի արիւնն փոխի ի սաղմն, և ջերմ օդով խառնի ի հով և ի գէճն, և լինի աճումն և սնունդ մարմնոյ: - 295. Եւ միապէս է մեր և կենդանեաց. վասն որոյ ո՛չ է պարտ զսկիզբն *գոյացութեան* մերոյ ուտել: - 295. Ասեմք թէ յակոբ ո՛չ զներգործութեան անունն հարցանէր աստուծոյ, զի գիտէր որ աստուած էր և ինքն իսրայէլ կոչեցաւ որ է աստուածատես. այլ անուամբ զբնութիւնն և *զգոյացութիւնն* աստուծոյ կամէր ուսանիլ: - 311. Զի զինչ էն ի *գոյացութեան* խնդիրն է. որպէս յասելն՝ զի՞նչ է, ասեմք՝ մարդ է, կամ կենդանի: - 311. Այլ թէ վերջինքս կոչեմք նմա անուն աստուած՝ արարիչ՝ և այլն. ներգործութեանն է ցոյցք և ո՛չ թէ *գոյացութեան* կամ բնութեանն է յայտնութիւն: - 312. Զա՛յս նշանակէ է ասելն և ո՛չ բնութիւն կամ *գոյացութիւն*: - 312. էական, որպէս *գոյացութիւն* և պատահումն: - 318. *Գոյացութիւն* հացին փոխեալ է ի *գոյացութիւն* մարմնոյն քրիստոսի և է՛ անապական. իսկ քանակն և որակն մնացեալ է դեռևս փոփոխելի. և յայնմանէ փոխարկեպին այլայլմունք ինչ: - 339. Եւ զի անապակա՛ն է *գոյացութիւն* հացին՝ աստի՛ յայտ է, զի կեանք և անմահութիւն տայ ճաշակողացն: - 339. Եւ նախ **գ** օրն. **գ** *գոյացութիւն* նորին. այսինքն աստուածութիւնն՝ հոգին՝ և մարմինն միաւորեալ մի: - 380. Երկրորդ՝ ընդ երից *գոյացութեանց* մեր. աստ ընդ մարմնոյս. և ի մահն ընդ հոգւոյս. և ի յարութեանն ընդ մտաց տեսութեանն հակառակին: - 394. երիս զօրութեամբ ի վերայ խաչին. որ է՛ ձայնիւն և մարմնովն և հոգւովն որ էջ ի դժոխս. կամ **գ** *գոյացութեամբ*. այսինքն աստուածութեանն և հոգւոյն և մարմնոյն: - 427. Դարձեալ, ժամանակն ունի մասունս երիս. և մշտնջենաւորն. և դարձեալ յաւիտենական է բանն. և ժամանակեայ մարմինն. և մշտնջենաւոր հոգին. և անքակտելի միութիւնն ցուցանէ մեզ զչորս թուոյն. և ամենայնիւ կատարեալ *գոյացութեամբ*: - 437-438. Եւ *գոյացութիւն* մկրտութեանս մերոյ. և քանի՞ է եղանակ մկրտութեան: - 454. Եւ երեքեան ծնունդ քրիստոս՝ ըստ երից *գոյացութեանցն* որ ի քրիստոս. այսինքն աստուածութիւնն՝ մարմինն՝ և հոգին: - 471. Զի էութիւն ընդ պատահման միշտ անշփոթ միաւորի. որպէս որակ և քանակ ի *գոյացութեան*. զի անմեկնելի որոշմունք են: - 475. Դարձեալ՝ ի մկրտութիւնն քրիստոսի նշանակին *գոյացութիւնք* մերոյս մկրտութեան. այսինքն Մկրտօղն, Մկրտեալն, Նիւթն, Տեսակն, և Դիտաւորութիւնն: - 487. Վեցերորդ՝ զմարիամ մայր փրկչին կոյս և անապական խոստովանին հարք ուղղափառութեան. և զայս ո՛չ ըստ *գոյացութեան* բնութեան, այլ զի ծնաւ զբանն աստուած անապական մարմնով: - 499. Մի է բանն աստուծոյ անձնաւոր էութիւն և *գոյացութիւն*. որ էր ի ծոց հօր անմարմին. որով ամենայնքն ի լինելութիւն եկին: - 529. Դարձեալ զօրօրինակ, մարմինն քրիստոսի մի և նոյն էր ի խաչին բևեռեալ, և մի և նոյն մարմինն է ի բազում նշխարս միաւորեալ և ո՛չ բազմացեալ. զի նոյն է *գոյացութիւն* հացին և *գոյացութիւն* մարմնոյն քրիստոսի: - 530. Նմանապէս և բանն աստուծոյ մի և նոյն է անձամբ և բնութեամբ ի *գոյացութեան* իւրում, և ի գիրս աւետարանաց գրեալ: - 530. Զի բազմանայ և ի միութեան մնայ. բովանդակի անբովանդակապէս. և բաժանի անբաժանապէս. որ է մի և նոյն տեսակաւ և *գոյացութեամբ* որպէս ցուցաւ: - 530. Երկրորդ սահմանն *գոյացութիւն* է. իսկ կանոնն պատահումն: - 538. Սակայն ըստ արիստոտէլի սեռն և տեսակն անհատին հետևին. զի են երկրորդ *գոյացութիւն*: - 550. Իսկ անհատն է առաւել և իսկագոյն և առաջին *գոյացութիւն*. որ է առանձնական և մասնաւոր որպէս զազգս մեր: - 550. Այսպէս ասեմք, զի որ ըստ ինքեան է ճշմարիտ և ըստ ինքեան բարի՝ առաւել է. և որ ըստ պատահման է ճշմարիտ կամ բարի՝ նուա՛զ է. վասն զի ըստ ինքեանն *գոյացութեամբ* և հարկաւո՛ր է. այսինքն անփոփոխ և միշտ: - 550. Դարձեալ՝ յայտնապէս ասել ո՛չ է հարկ՝ է ամենայն բազում պատուական է քան զմին. զի ահա՛ *գոյացութիւնն* մի է և պատահումն բազում. և արեգակն մի է և աստեղք բազում. և գլուխն մի է և անդամք բազում: - 551. Նա՛խ՝ ըստ *գոյացութեան* և ըստ տեսակին. զի մարդն է տեսակ և տեսակն *գոյացութիւն.* ըստ *գոյացութեանն* այսպէս: - 565. Զի **Ժ** պատուիրանքն և է մահու չափ մեղքն են ըստ *գոյացութեան* մեղք. որպէս մի՛ շնարն և մի՛ գողանարն և մի սպանաներն և մի՛ սուտ վկայերն: - 565.

Պատահմունք և որակն մնան ի հացն և ի գինին. իսկ *գոյացութիւնն* փոխարկի ի մարմին և արիւնն քրիստոսի վասն դ պատճառի: - 597. Նախ՝ զի մեք զգայարանօք՝ միջնորդութեամբ պատահմանցն հասանիմք ի *գոյացութիւնն*. զի անմեկնելի որոշմունք են ի *գոյացութեանց* սոքա: - 597. Երրորդ՝ զի վարձատրեսցուք հաւատով. այլ հաւատն ի յաներևոյթն է որ է՛ *գոյացութիւնն*. – 597. Նա՛խ՝ որպէս հացն նոյն է ըստ ձևին, այլ այլ *գոյացութիւնն* է եղեալ մարմին քրիստոսի...: – 598. Երեք չուանքն՝ **գ** *գոյացութիւնն*: - 645. ...այլ սակաւ հիւթն այն որ ի սկզբանէ՛ *գոյացութեան* մերոյ ի ծնողացն է՛ ընկալեալ: - 718. Այն նիւթն զոր ի ծնողացն ունիմք՝ բոլոր առնէ. զի սկիզբն է *գոյացութեան* մեր...: - 718. և նիւթ կերակրոյն՝ այն մասն որ փոխեցաւ ի *գոյացութիւն* մեր՝ յառնէ՛. զի մարմին եղև մարդոյն այլ աւելորդքն ո՛չ յառնեն: - 718. Այսպէս և ի մարմին մարդոյ ոչինչ խառնի ի հասարակ տարերաց ի յորս լուծաւ. այլ ինքն միայն *գոյացութիւն* մարմնոյն խառնեսցի ընդ հոգւոյն: - 719. Եւ են ինչ որ պատահմամբ անցանեն և էութեամբ մնան. որպէս երկնային մարմինք և **դ** տարերքս և մարդոյս մարմին. սոքա պատահմամբ անցանեն և *գոյացութեամբ* մնան: - 727. Հինգերորդ հալեալ մոմ ո՛չ ունի զառաջին կերպն այլ *զգոյացութիւնն*. նոյնպէս և *գոյացութիւնն* երկրի ո՛չ կորնչի. այլ պատահմունքն այլայլին. զի ո՛չ ճանաչի թէ այս այն է: - 728. Նախ ըստ *գոյացութեան*. զի որպէս անսկիզբն է աստուածութեամբն, նոյնպէս և անվախճան է մարդկութեամբն հաւասարեալ: - 745. Որ եսդ տէր տէր հաւատարիմ յիսուս, անբաժանելի լեր ի զգայութեանցս. և յամենայն *գոյացութեանց* աստի իմոցս. ներկեալ խոստովանութեամբ և շնորհօք հոգի մարմին նիարդք իմ և աճառք: - 771

**ԳՈՅԱՑՈՒՑԱՆԵՄ +** Եօթներորդ՝ զի պատահումն աւելո՛րդ է գոյացութեան. զի գոլովն ո՛չ *գոյացուցանէ*. և այլն: - 170. Երկրորդ՝ սկիզբն և պատճա՛ռ է գոյն. զի գոլովն *գոյացուցանէ*. և աստուած՝ ամենեցուն: - 171. Գոյացութիւն որ սկիզբն է ամենեցուն և նախասեռ. և ի նմանէ զուգաբաժանեալ մարմինն. և շնչաւորն. և զգայունն. և կենդանին. և բանաւորն. և մարդն. ո՞չ ապաքէն բնութիւն են սոքա այլևայլ. և ժողովեալ *գոյացուցանեն* զմի անհատն պետրոս անշփոթ միութեամբ: - 176. Եւ զուստին մի՛ հարցանէր թէ ի կենդանւո՞յ էառ, և թէ նո՛ր *գոյացոյց*. զի ամենայն ինչ կարելի՛ է աստուծոյ: - 281. Երրորդ՝ ժողովին և գոհանան զաստուծոյ՝ որ յոչնչէ՛ *գոյացոյց* զմարդն, և յարգանդէ՛ խաւարին ի լոյս եբեր. և ետ մեզ ինչս մարմնական: - 321. Չորրորդ՝ ի խորհուրդ յարութեան մերոյ, որ վերըստին *գոյացուցանէ* ի խաւարէ՛ գերեզմանին և ի լոյս հանէ և ուրախութեամբ զարդարէ՛ և փառաւորէ՛: - 321. Երրորդ՝ ապականութիւնն ներգործէ՛ հակառակ արարչին. զի արարիչն յանգոյից *գոյացուցանէ*, իսկ ապականութիւնն զգոյսս ի յանգոյութիւն տարալուծէ և այլայլէ՛. վասն որոյ անապակա՛ն է մարմին արարչին: - 499

**ԳՈՅԵՂԷՆ +** Եւ ի միոյ աստուծոյ եղեն **ժ** դասք հրեշտակաց ընդ մարդկան. և հարիւր գունդքն ըստ ոչխարաց առակին. և ռ կենդանեաց տեսակքն որ յերկրի. և բիւր անկենդան բուսոց. և անթիւ *գոյեղէնք*: - 109. Այլ և մարդ զկենդանիս և զանկենդանս. զի համասեռ *գոյեղէնք* են. և այս սիրովս շաղկապին առ իրեարս: - 143. Որում Գոհացողական Օրհնութիւն. և Բարեբանօղ Փառատրութիւն. Յամենայն *գոյեղէն* բնութեանց. ի վեհագունից մինչ ի հուսկ յետինս: - 771

**ԳՈՅԺ +** Նա՛խ՝ *գուժ* լծոց եզանցն՝ և սպասաւորացն մահ. և գուժկան ձևանայր դև մի ի կերպարանս ծառայիցն յոբայ: - 322. Դարձեալ՝ յաղթեաց զսատանայ այնու, զի իմացաւ զչար հնարսն նորա և պատասխանէր զընդ դէմ. որպէս կնոջն և բարեկամացն և որք *զգուժն* բերէին. զի գիտէր ի բանսարկուէն լինիլ: - 323. Զորօրինակ թագաւոր ոք յորժամ լսէ՛ *զգոյժ* որդւոյ իւրոյ մեռելոյ, խորտակէ՛ զթագն, և զամենայն ինչ որ վասն նորա՛ է: - 349-350

**ԳՈՅՆ +** Եւ այնպիսիքն տրամաբանել ո՛չ կարեն վասն հոգևորին. որպէս ի ծնէ կոյրն վասն *գունոց*, քանզի ասեն վարդապետք՝ աստուած լոյս է ո՛չ մարմնոց, այլ մտաց. զոր թէ ոք ո՛չ տեսանէ՝ կո՛յր է: - 32. Ա՛րդ՝ հոտն ո՛չ է ի *գունոյն*. այլ միայն ի մարմնոյն: - 64. Որպէս մի էութիւն է խնծորն. և ունի երեք յատկութիւնս որակաց. զհամն, և զհոտն, և *զգոյնն* ընդ ձևոյն: - 74. Զի աչք զգայ *զգոյնն* ընդ ձեւոյն. և ո՛չ զհամն և զհոտն: - 75. Եւ ճաշակելիքն զհամն միայն՝ արտաքոյ մնալով հոտոյն և *գունոյն*: - 75. Վեցերորդ՝ լուսաւորէ զաչս որոշել *զգոյնսն*: - 126. Իսկ որ զգայարանօքն տեսանէ, այսինքն աչօքն *զգոյնն*, ականջօքն զձայնն, և այլն. կոչի սա զգայական տեսութիւն: - 142. Վասն զարդու գործոց իւրոց. որպէս նըկարիչ զթուխ *գոյնն* ի ներքոյ դնէ՝ զի սպիտակն և այլ պատւականքն երևեսցին: - 149. Իսկ պատահումն ի յայլս ունի զէութիւնն, և կարօ՛տ է այլոյ ի գոլն. որպէս *գոյն* ի մարմնի: - 170. Ո՛ր ըստ որում շարժօղ զգայութեանցս որ առ մեզ՝ կոչին որակք՝ *գոյն*, և համ, և սոյնպիսիք: - 171. Հինգ. այսինքն Քանակն որ է չափն. Որակն. որ է *գոյնն*. ձևն. տեղին. զատութիւնն: - 174. Գործ զգայարանացն է զարտաքինս ի ներքս

զգալ. որպէս աչօք *զգոյնս*. և ականջով զձայնս. և այլն: - 179. Արդ ամենայն ինչ որ զգալի է՝ ի ներքս ի սմա՛ է. ձա՛յն. *գո՛յն*. հո՛տ. համ. ծա՛նր և թեթև. և ո՛չ ինչ է արտաքոյ սորա. յաղագս որոյ և ո՛չ զգայարանաց կարօտի: - 179. Ոմանց որակ *գունոց* տայ. որպէս խնծորոյ. և զոմանց բառնա՛յ. որպէս զմարդոյ: - 186-187. Եւ զի ծածկութիւն է զանազան *գունոց*: - 196. Պատասխանեմք յայտնի տեսութեամբ, թէ զոր ինչ այրէ հուր, ծախէ՛ և կորուսանէ զամենայն որակսն. այսինքն *զգոյն*. զհամ. զհոտ. նոյնպէս և զծանրութիւն: - 202. Եւ զանազան *գոյնքն* է՛ չորից տարերցն որք են յօդդ: - 203. Եւ խառնուա՛ծ է ի նոցանէ ծիրանի և կարմիր *գոյնն*: - 203. Հնգետասաներորդ՝ մի և նոյն գոլով մտանէ ի բուրաստանս, և զանազան *գոյնս* և համս և հոտս յառաջ բերէ: - 207. Տասներորդ՝ զի գեղեցիկ լինի ի տեսս աչաց երփն երփն *գունով* և վէտս վէտս. այսինքն ծաղ ծաղ ծիծաղի երեսօք: - 208. Երկրորդ՝ պէտք են ի համ. ի հոտ. ի *գոյն*. և յայլս: - 212. Վասն է՞ր ամենայն բոյսք կանաչ լինին *գունով*: - 212. Այլ ես ասեմ թէ՝ բնական որակ *գունոց* դ են: - 212. Եւ ի սոցա խառնուածոցն լինի ա՛յլ զանազան *գոյնք*: - 212. Ուստի՞ գոյանան համն և հոտն և *գոյնն*: - 213. Եւ յետ ամենայնի *գոյնն* հրոյն է: - 213. Եւ ջերմութիւն արևուն և գիճութիւն լուսնին՝ առնեն *զգոյնն* կարմիր: - 213. Եւ է՛ միւս բարի խառնակն և պատրուակեալն. որպէս է աշխարհական բարին. զի *գունով* և երևելեաւ բարի է, այլ ի ներքոյ ծածկեալ չա՛ր է. յայսմանէ հրաժարէ՛ զմեզ ոչ մերձենալ: - 224. Զէ՛ զարմանք հրաշիցն աստուծոյ. որպէս ամենայն ընդունեք զհոտն զգան, և աչք *զգոյնն* կրէ յինքն, և անծորելի և անպակա՛ս են յենթակայէն: - 224. Եօթներորդ՝ ա՛նդ են ժողովեալ դ *գոյնք* տարերաց: - 234. Եւ նուազեալ յայսցանէ *գոյնն* մնայ պատկեր ի քանակէ և ի ձևոյ և ի տեղւոյ երևեալ. որպէս յա՛յտ է ի մեռեալ մարդն: - 236. Սիրտն իշխա՛ն է անձինն. յորժամ երկնչի՝ զարիւնն առ ինքն ժողովէ իբր զօրք առ թագաւորն. և մնայ մորթն բնական *գունովն* դեղին: - 245. Ի ժամ յղացմանն՝ եթէ ի ծնողացն՝ եթէ ի ժամանակէն՝ և եթէ յախտից՝ որ տարր և յաւելու ի խառնուածն, նոյն որակ *գունով* ծնանի զաւակն: - 245. Զի թէ հուրն աւելի է, լինի շէկ *գունով*. և թէ օդն՝ լինի կարմիր. իսկ ջուրն առնէ սպիտակ. և հողն սեաւ *գունով*: - 245. Այլ և լինի յաւելի ի հրոյն ներգործութեանց սեաւ *գոյն*. որպէս հնդկայինն ի ջերմոյ արևուն լինի սեաւ *գունով*: - 245. *Գոյնն* սպիտակ և դեղին՝ պակաս ուժ է: - 247. *Գոյնն* սպիտակ և կարմիր՝ ուժեղ է և սրտային: - 247. *Գոյնն* հրային լուսափայլեալ աչօք՝ առ մոլորութիւն ձկտի: - 247. *Գոյնն* միջակ ի մէջ սպիտակին և սևին՝ ցուցանէ զուշիմն և զբարեբարոյն: - 247. Եւ առ հասարակ ասեմ զայս դնել ի մտի. զի չափաւորութիւն անդամոցն ըստ ձևոյն և ըստ *գունոյն* և ըստ քանակութեան և ըստ կազուածոյն և ըստ շարժմանն, նշանակէ զբարի մտացն ընդաբոյս յարմարութիւնն: - 248. Զի տրամախոհութիւնն ա՛յնպէս է առ իմացումն որպէս *գոյնն* առ տեսանելիքն: - 249. Զոր օրինակ ո՛չ ասի մարդ մարդոյ նման գոլ ըստ մարդկութեան. վասն զի նոյնութիւն է և ոչ նմանութիւն. բայց ասի նման մարդ մարդոյ ըստ երեսացն և *գունոյն* և ձևոյն նմանութեան: - 272. Նախ ի գեղեցկութիւն լեզուին. զի որպէս *գոյն* առ *գունով* պայծառանայ, և արւեստ առ արուեստ: - 297. Չորրորդ՝ զի գիտասցեն թէ *գոյնք* և համք զանազան կերակրոց և պտղոց ո՛չ իւրովի պատրաստին, այլ ի շնորհացն աստուծոյ: - 339. Հինգերորդ՝ տղա՛յ էր ժողովուրդն, և զուարճանային ի տեսութիւնն. վասն այն զանազան *գունով* զարդարեաց: - 342. Կապոյտն օդոյն է *գոյն*. զի թէ ա՛յլ *գոյն* էր, վնասիչ և խափանիչ լինէր տեսութեանց. որպէս սպիտակ կամ սեաւ. այլ կապոյտն է ի հեշտութիւն տեսութեանց: - 342. Չորրորդ, թէ լուացեալ փոխէ *զգոյնն*, պատառէ՛ և սրբի: - 367. Որպէս ձևն բոլորակ՝ և *գոյնն* ենթակայ նիւթովն: - 476. Զի անունն զզգայութիւնն զարգացուցանէ. իսկ ապականութիւնն ընդ դէմ նմին *զգոյն* ի նուազութիւն և յոչգոյութիւն փոփոխէ: - 501. Վեցերորդ զի կրթելով առնու զսպիտակ *գոյնն*. նոյնպէս և սուրբքն ի կեանս յայս կրթելով չարչարեցան, և ապա՛ այն կենացն արժանի գտան: - 712. Ունելով մշտասաղարթ ծաղիկ որ է՛ կարմիր երանգն *գունոյ*, և երկնագոյն հիւթով զարդարեալ: - 768

**ԳՈՅՈՒԹԻՒՆ +** Զի որպէս ունի զէութիւնն ի *գոյութենէ* հօր, այսպէս և զիշխանութիւնն յիշխանութենէ հօր. ըստ այսմ և զայլն իմասցիս զառնուլն: - 46. Այլ զայսպիսի ի միում *գոյութեանն* յոյժ յիմարութիւն է կարծել կամ ասել: - 62. Եւ թէ մերկ բանին, հետևիս *գոյութեան* սկիզբն ի մօրէն գոլ և ո՛չ յաստուծոյ հօրէ: - 68. Երկրորդ՝ զի տեսութիւն մտաց հասարակի ընդ *գոյութեան* էութեան. և ուր եզերի բնութիւն՝ անդ և մտաւորութիւն: - 103. Ոմանց *գոյութիւն* միայն. և այլոց կեանք. և բան. և իմացումն. որպէս տիպ կնքեալ ի մոմի: - 106. Իսկ խօսի դևն ընդ մարդոյ՝ կամ փոփոխելով *զգոյութիւնն* որպէս հրեշտակն կամ զպատկեր նմանութեանն ցուցանէ տեսանելեացն. և կամ տպաւորէ՛ յերևակայութիւնն: - 145. Քսանեգ) Յերկինս են լուսաւորքն. և վասն *գոյութեանց* նոցա. և գնան հրեղէնք ընդ ջուրս: - 154. Յաղագս որոյ աշխարհ գոյացեալ. երբեմն մշտնջենաւոր *գոյութեամբ*, անգոյանալ երբէք ո՛չ կարէ: - 162. Դարձեալ՝ կամքն աստուծոյ անփոփոխ է. զի ո՛չ տարակուսի և ո՛չ զղջանայ. ապա թէ արար աստուած զաշխարհս

ի *գոյութիւն*՝ այժմ առնէ յանգոյութիւն, երևի փոփոխումն անփոփոխելոյն. կամ զղջումն և երկբայութիւն. որ օտա՛ր է արարչականն կամաց: - 162. Վասն որոյ կամեցաւ և արար ի *գոյութիւն*. այժմ ո՛չ կամի և ո՛չ փոխէ յանգոյութիւն: - 162-163. Այլ և ո՛չ ըստ այնմ որ է՛ սկիզբն գոյացութեան աշխարհի. զի անփոփոխ կամօք կամեցաւ և արար ի *գոյութիւն*. և անկա՛ր է փոխիլ կամացն անեղին և առնել յանգոյութիւն զեղեալս էութիւն: - 165. Եւ հոտած ջուրն ի մէջքն է վասն *գոյութեան* ծննդեանն: - 240. Երկրորդ՝ զի մի *գոյութիւն* է մարդն բաղադրեալ ի հոգւոյ և ի մարմնոյ. ոչ է պարտ **բ** լինիլ սկիզբն. այլ մի էութեանն մի է սկիզբն: - 253-254. Այլ ի միասին համանգամայն ստեղծեալ. ո՛չ ժամանակաւ յառաջ և յետոյ, և ո՛չ բնութեամբ. այլ մի է սկիզբն միոյ *գոյութեան* մարդոյն: - 254. Այսպէս և այժմ իւրաքանչիւրքն յառաջ եկեալ համանգամայն *գոյութեամբ*, լնուն զայն թիւն՝ որ նախ էր ի տեսութիւնն աստուծոյ: - 254. Եւ թէ ոք ասիցէ, զի՞նչ է այն մի սկիզբն *գոյութեան* մարդոյ: - 254. Պատասխանեմք եթէ, սերմնական զօրութիւնն որ է՛ ի մեզ, նոյն է սկիզբն *գոյութեան* մարդոյ: - 254. Ա՛րդ՝ ի նիւթոյն լինի կազմւած մարմնոյն. և յազդու հրամանէն *գոյացութիւն* հոգւոյն: - 254. Եւ այսպէս մի է սկիզբն միոյ *գոյութեան* մարդոյն: - 254. Եւ ստեղծմամբ զի ըստ *գոյութեան* իւրոյ շնորհօքն աստուծոյ նո՛ր պարգևեցաւ ընդ լինելութեան մարմնոյ: - 258. Նա՛խ՝ զի մի *գոյութիւն* է մարդն և մի կենդանի. մի հոգի է միոյ մարդոյ և մի կենդանութիւն: - 259. Իսկ աստուածայինն անեղ էութիւն ամենևին պարզ և մաքուր առաւել քան զիմացականն բնութիւն եղական իմն *գոյութեամբ*. թէ և ո՛չ են միաւորական մարմնոյ: - 479. Այլ և պահապան չորից *զգոյութեանց* ըստ չորից տարերաց: - 493. Զի մի է ըստ իւրում անձնաւոր *գոյութեանն*. և բազմանայ ի բազումս երևեալ: - 529. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ նոյն անձնաւոր բանն աստուծոյ է յաւետարանս խօսեցեալ յայնժամ բազմացեալ է անձամբ և *գոյութեամբ*: - 530. Ասեմք առ այս թէ՝ մի և նոյն անձնաւոր բանն աստուծոյ է յաւետարանս խօսեցեալ. այլ ո՛չ է բազում անձն և *գոյութիւն* բանին: - 530. Զոր օրինակ, մի՛ է արեգակն անձամբ և *գոյութեամբ*, և ի բազում լուսանցս և ի հայելւոջ երևեալ նոյն մի անձամբ և *գոյութեամբ* և ո՛չ բազում: - 530. Հինգերորդ՝ նման սատանային լինին որք ուրանան զպատճառն *գոյութեան* հոգոց իւրեանց. յիրաւի ապա որպէս սատանայ ո՛չ ունի թողութիւն ի կեանս յայս և ո՛չ ի հանդերձեալն և գործ ունէի նմին: - 566. Այսպէս և հողն ուստի շինեցաւ ադամ, ո՛չ մնայ ի տարերս. այլ յառնէ ի յադամ որ սկիզբն եղև *գոյութեան* նմա: - 719. Ապա ուրեմն քակտումն ներհակին՝ *գոյութիւն* է ընդդիմակին: - 787

**ԳՈՉԵՄ +** Այսինքն տեսութեամբն *գոչէ*՛. կամ զհոգին կոչէ արեան անուամբ: - 287. Այլք եղջիւրս ասեն ունել ի ճակատն որ իբր զփող *գոչէր* թէ՝ գա՛յ ահա կայեն եղբայրասպանն: - 287. Եւ ի *գոչել* տեառն մերոյ ի վերայ խաչին՝ սարսեցին դժոխայինքն ահաբեկեալ ի կենաց: - 316. Նոյնպէս և ի կատարածի ահագին *գոչէ* ի վերայ մեղաւորաց...: – 316. Ուստի յայտ է զի բարձր *գոչեաց* և եհան զոգի. զի ամենայն մարդկան նուազի ձայնն ի ժամ մահուանն: - 316. Դարձեալ՝ ի խորհուրդ գոչման փողոյն այն որ ի բարձունս. զի նախ յերկնից *գոչէ* փողն գաբրիէլի և ժողովէ զհոգիսն...: – 618. Երրորդ՝ զի երիցս *գոչէ* փողն. նախ զհոգիսն ի յերկնից կոչէ. և ապա՛ զմարմինս ի հողոյ. և ապա՛ յարուցեալ զհոգի և զմարմին ի դատաստան հրաւիրէ: - 618. Երրորդ, ի յարութեանն յորժամ փողն *գոչէ*՝ յառնեմք և յառաջ ընթանամք քրիստոսի: - 627. ...վասն զի չորիցս *գոչէր* փողն ազդարար ի չուել բանակին իէլի: - 713. Ո՞ւր *գոչէ* փողն: - 713. Դարձեալ՝ որ հրոյ է վերակացու, ի վերայ նորին հարկանէ. և որ օդոյ և ջրոյ և երկրի, ի վերայ իւրաքանչիւր տարերաց *գոչէ*՛: -714. Յո՞րժամ և յորում աւուր *գոչէ* փողն: - 714. Ի գարնան եղանակի ի զատկի կիրակէին ի մէջ գիշերի յորում ժամու յարեաւ քրիստոս և հրեշտակն թաւալեցոյց զվէմն և *գոչէր* զյարութիւնն քրիստոսի. - 714. Վասն է՞ր փողն ի յերկինս և յերկրի *գոչէ* ...: - 714

**ԳՈՉՈՒՄՆ +** Չորեքտասաներորդ՝ ի *գոչմանէ* առիւծուն սարսին այլ կենդանիք և արիւն միզեն: - 316. Դարձեալ՝ ի խորհուրդ *գոչման* փողոյն այն որ ի բարձունս. զի նախ յերկնից գոչէ փողն գաբրիէլի և ժողովէ զհոգիսն...: – 618. Երկրորդ՝ ամենևին ձայն առանց բանի. որպէս *գոչումն*: - 639. Իններորդ, Վասն փողոյն *գոչման*: - 660. Իններորդ, վասն գ *գոչման* փողոյն երիցս ընթեռնումք զաւետարանն: - 675. Իսկ խաչն վառել և ժամահարն յառաջ. նշանակէ՛ զվերջին *գոչումն* փողոյ հրեշտակապետին: - 676. Երկրորդ, ըստ ոմանց **գ** է *գոչումն* փողոյն. - 713. Չորրորդ, ըստ ոմանց **դ** է *գոչումն* փողոյն. - 713. Սաստկագին *գոչմամբ*. և ահագնատեսիլ սուսերամերկ կորովալից նետողաց. որ պատեալ պահեալ պաշարէին զմեզ: - 789

**ԳՈՌՈՋ +** Այլ և *գոռոզ* հպարտութեամբ: - 212

**ԳՈՎ +** Դարձեալ թէ ի հարկէ՛ է՝ ո՛չ հետևի *գով* և պարսաւ ոմանց. զի սոքա կամաւորա՛ցն են և ո՛չ ակամայիցն: - 11. Նա՛խ՝ եթէ ուշիմ և ապուշ և այլն ըստ կարգի, սոքա եթէ ի մարմնոյն խառնուածոյ

պատճառին՝ և եթէ բնական որակութեամբ հոգւոյն՝ նման և աննման գոլ, առանց ներգործելոյ ո՛չ չար են և ո՛չ բարի. ո՛չ *գով*. և ո՛չ պարսաւ հետևի. որպէս և ո՛չ բնական բարուց անաւնոց: - 19. Տասներորդ՝ գործ բութեան ո՛չ ինչ ունի մեղք. զի ըստ բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն. իսկ կամացն գործ՝ մեղանչական է. վասն որոյ կամաւորին *գով* և պարսաւ հետևի: - 156

**ԳՈՎԵԼԻ +** Վեցերորդ՝ զի ո՛չ բրգործքն լինէին *գովելի*, և ո՛չ չարքն պարսաւելի: - 20. Առաջինն է՛ *գովելի* սէր. վերջինն պարսաւելի: - 143. Իսկ միջինն որ է՛ բնականն՝ ո՛չ *գովելի* և ո՛չ պարսաւելի: - 143. Եօթներորդ՝ արեամբ և վկայութեամբ. զոր և ինքն քրիստոս մկրտեցաւ վասն մեր իբրև յոյժ *գովելի* և երանելի այս մկրտութիւնս քան զառաջինսն: - 488

**ԳՈՎԵՄ +** Եւ թէ հետևեսցի՝ ոչ որ գործեաց զգեղեցիկս և ըզգարշելիս, այլ որ պատճառն է և հարկ՝ *գովեսցի* և պարսաւեսցի. այսինքն բախտն և ճակատագիրն: - 11. Նոյնպէս թէ զարուեստն լաւ առնէ՝ *գովի*. և թէ վատթար՝ պարսաւի: - 250. Չորրորդ՝ կեղծաւորութիւն է և խաբէութիւն *գովելն* զչարն և զանիրաւն. վասն այն ո՛չ ասաց բարեկամացն բարիս՝ զի չարք էին: - 325. Եւ նա՛խ՝ զի ո՛չ ճանաչեաց վիուկն զսաւուղ աստի՛ յայտ է, զի *գովեաց* զնա՛ և պարսաւեաց ասելով՝ «սաւուղ կոտորեաց զվիուկսն, և դու կամիս սատակիլ զիս»: – 428. Իններորդ՝ զի մի՛ երևեսցի տէրն հակառակ օրինացն որ *գովէր* զպսակն: - 461. Երկրորդ՝ թէ ո՞րպէս գերազանց *գովեաց* զնա ասելով, «տէր ընդ քեզ օրհնեալդ ի կանայս»: – 464. Եւ hանապազ ի տաճարին *գովէին* և օրհնէին զաստուած նոր օրհնութեամբ համբարձելոյն ի յերկինս տեառն և աստուծոյ...: – 528-529. Քսաննմի, ի *գովելն* զնա ուրախ լինի: - 576. Իսկ ութերորդն ի նեղութեան դարուն օրհնել հոգւով. և *գովել* ի վերինն երուսաղէմ...: – 630. Դարձեալ՝ ի յեբրայեցի լեզուն «ալ», ասէ թէ՝ գայ յայտնեսցի. «էլ», աստուած. «ուիայ», օրհնեցէք և *գովեցէք* զկենդանին աստուած: - 644. Անդ եղիցի ճշմարիտ փառք, ուր ո՛չ ոք *գովեսցէ* մոլորութեամբ. և ո՛չ *գովեսցի* ոք սուտակասպասութեամբ: - 765. Որ միշտ օրհնեալ ես և *գովեալ* յաւիտեան: - 771

**ԳՈՎԵՍՏ +** Նա՛խ՝ զի եղեն ի *գովեստ* փառաց իւրոց: - 217. Որ և նովաւ զնորայս վասն նորա խօսեսցուք. և ի *գովեստ* մեծութեան փառաց նորին յանկեսցուք: - 456. Ի փառս և ի *Գովեստ* նորին Տնկագործի և Առաջնորդի: - 772

**ԳՈՎՈՒԹԻՒՆ +** Եւ Նախ զի է գիր՝ ունի *գովութիւն* երեքկին: - 177. Եւ այլ ամենայն *գովութիւն* մարդոյն զոր դնէ նիւսացին ի գիրս բնութեան, յատկութիւն է մարդոյն: - 275. Երրորդ՝ ցուցանէ թէ կրկին *գովութիւն* է և հատուցումն արդարոց. աստ և ի հանդերձեալն: - 326. Եւ ըստ միտս, զի առաքինութիւնն է ի փառս աստուծոյ. այլ և ի պատիւ և ի *գովութիւն* մարդկան. զի բազումք հաղորդին սրբութեան նորա: - 358. Իսկ *գովութիւն* ծերոյ, Նա՛խ՝ զի խափանեալ է ամենայն մեղաց շարժմունքն: - 378. Այլ զանազանին. զի հպարտն ի ներքուստ ունի զբարձրամտութիւնն. և փառասէրն յարտաքուստ յայլմէ՛ բերանոյ ընդունի զփառս *գովութեան*: - 560. Զի հաճելի՛ է բնաւորեալ *գովութիւն* մարդոյ. ըստ որում մեծարեցաւ տիրական պատուով. և է՛ այս հասարակ: - 774

**ԳՈՐԾ +** Որպէս ասեն հերձուածօղք՝ զամենայն ինչ մարդկան ի հարկէ՛ գոլ. այսինքն *զգործ*. զդիպուած. զմահ. զկեանք. և զամենայն ինչ: - 7. Երրորդ, զի թէ է՛ ամենայն ի հարկէ, ո՛չ լինի անձնիշխան կամաց *գործք*. որ հաւասար է յերկոսինն. այսինքն յառնել և յո՛չ առնել: - 8. Աստ ուրեմն ի հարկէ՛ երևեցաւ թէ գոն և են սոքա ասացեալքս, այսինքն *գործ* բնութեան և *գործ* կամաց և *գործ* պատահմանց. և ո՛չ ոք ուրաստ լինի վասն սոցա: - 8. Դարձեալ եթէ է՛ հարկ, ապա ո՛չ էր անձնիշխան կամք, այլ արդ՝ եթէ ունիմք կամք և է՛ սկիզբն *գործոյն* ի մեզ և առ մեզ, ապա ուրեմն ո՛չ է հարկ որոյ սկիզբն յայլմէ՛ է: - 11. Դարձեալ, որոյ է իր գործեացն՝ նորա՛ է և ներգործութիւնն. եթէ առնել և եթէ կրել. արդ՝ մարդո՛յ է հոգին և մարմինն և ձեռն. մարդո՛յ է ուրեմն և *գործ* նոցին, եթէ չար և եթէ բարի: - 11. Նախ՝ եթէ դու քեզէ՛ն խոստովանեցար եթէ ոչ գոյ հարկ. այլ՝ աստուած և բնութիւնն և արհեստն ևս ներգործեն. ապա թէ է *գործ* արհեստի և բնութեան, ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. Այլ թէ *գործ* և կամք կրկին յաստուած, ո՛չ է պարզ մի. այլ բաղադրեալ. որ է անտեղի: - 14. Զի եթէ բարի է և առնէ զչար, ահա ներհակ *գործ* է ինքեան: - 14. Նո՛յնպէս և տեսութիւնն աստուծոյ ո՛չ հարկէ ի վերայ մեր *գործ* զբարի կամ զչար. այլ կամք մեր: - 16. Դարձեալ ասեմք՝ թէ կամքն աստուծոյ ո՛չ է ընդունայն. զի զոր ինչ կամի առնէ. այլ կամեցաւ և արար զմեզ անձնիշխան և տէր *գործոց* մերոց. եթէ չար՝ և եթէ բարի: - 16. Նախ եթէ՝ ունիմք անձնիշխան կամք. և տէ՛ր եմք *գործոց* մերոց. առնել և ո՛չ առնել. այլ երբեմն սկիզբն ի մէնջէ, և կատարումն ի նախախնամութիւնն աստուծոյ: - 17. Իսկ սկիզբն և կատարումն ի մեզ, որպէս նախածանօթ ընտրեալքն յառաջ քան զլինիլն աշխարհի. որ այժմ բարի *գործովք* կատարեսցին ըստ նախասահմանելոյն իւրեանց: - 18. Նախ եթէ կրկին է չար. է՛ չար *գործոց*, և է՛ չար պատժոց: - 18. Այլ

արդ՝ չար *գործոցն* ո՛չ է յաստուծոյ. որպէս ցուցաւ. այլ չար պատժոցն է արդարութեանն աստուծոյ. որ հատուցանէ արդարապէս: - 18. Դարձեալ, չորեքկին են հատուցմունք. բարի՛ փոխանակ բարւոյ, և չար փոխանակ չարի. որ է՛ *գործ* արդարութեան: - 18. Իսկ մարդիկ անձնիշխան կամօք և *գործովք* հասանին այն փրկութեան և շնորհաց և փառաց: - 18. Այլ արդ՝ եդ աստուած զսոսա բնական որակութիւնս ի մասունս հոգւոյն. եդ և զանձնիշխան կամքն տէր և իշխան իներքս ի հոգին. զի կառավարէ և առաջնորդէ՛ հոգւոյն. զվատ որակն ի բարին ուղղել, և զբարին ի նոյնն պահել և առաւելուլ. զի այս է *գործ* անձնիշխանին: - 19. Եւ գիտելի է այս, եթէ նախասահմանութիւնն աստուծոյ առնէր հարկ *գործոց* մարդկան, չարի և բարւոյ, լինէր բազում անպատշաճութիւն որ վասն բախտին ասացեալ եղև. զորև աստ կարգեսցուք: - 20. Եւ ո՛չ են որպէս ստորասութիւնք և բացասութիւնք, որ միայն ի բա՛նն են հակակայք. որպէս ճշմարիտ, և սուտ. այլ չար և բարի՝ ի բանս և ի *գործս* պատահին: - 21. Զի՞նչ է *գործ* բարւոյն՝ և *գործ* չարին: - 22. Երրորդ՝ զի կամեցաւ աստուած ո՛չ միայն ողորմութեամբ՝ այլև ըստ արդարութեան, վարձս նահատակութեան տացէ ըստ *գործոցն* համբերութեան: - 25. Հնգետասաներորդ՝ Հարցումն երկաբնակացն առ մեզ **ժ** թւով. և անդ վասն մի կամաց՝ և մի *գործոց*՝ և կրից: - 30. Չորրորդ՝ է՛ հեռաւորութիւն հաւատալեացն. զի որք ո՛չ կրթին ի *գործ* իմացման, բայց միայն ի զգայութեանց՝ հեռի՛ են ի հաւատալեացն որպէս երկիր յերկնէ: - 31. Վեցերորդ՝ է՛ պատրուակ մեղացն. զի ոմանք չար *գործով* ի բաց մերժեն յինքեանց զլոյս արեգականն արդարութեան...: - 32. Նա՛խ՝ զի *գո՛րծ* է նեռինն ուրանալ զաստուած, որպէս իւր անունն յայտնէ. ա՛յսպէս և հերձւածօղն ուրանայ զաստուածութիւն որդւոյ. կամ զհոգւոյն սրբոյ. «զի որ զորդի ո՛չ ընդունի՝ և ո՛չ զհայր ընդունի ասէ»: - 34. Ոմանք սուտ մարդ ասելով բաժանեն զաստուածութիւնն **բ** բնութիւն, **բ** կամք, և բաժանեալ *գործ*, և այլն: - 35. Երրորդ՝ մոլորեցուցիչ կոչի. և հերձւածօղք մոլորեն զուղիղ հաւատս քրիստոնէին. և զբարի *գործս* նոցա: - 35. Ուսուցանեն թիւր հաւատս, և *գործս* վատթարս: - 35. Տեսցուք և *զգործն* յաղագս որոյ օծաւ. այսինքն միացաւ մարդկութիւնն աստուածութեամբն...: - 41. Եւ հայր որդւոյ՝ հաճութեամբ *գործոյն*: - 42. Երկրորդ՝ զի *գործով* կատարեսցէ զհնազանդութիւնն փորձիւ չարչարանացն: - 43. Տարակուսելի է առ այս, զի թէ հա՛րկ է որոց բնութիւնքն մի գոլ՝ նոցա և կամքն և ներգործութիւնն մի լինիլ. ընդէ՞ր ապա զի մարդկային բնութիւնս մի է և նոյն հօրն և որդւոյն՝ և ո՛չ է կամքն և *գործքն* մի: - 45. Զի՞նչ ասեմ, զի հոգւով հնազանդեցաւ ադամ, և մտօք հաւանեցաւ, և մարմնով *զգործն* ի կատարումն էած: - 50. Զի սովորութիւն է սուրբ գրոց՝ աստուծոյ համարել զոր ինչ *գո՛րծ* է ի մարդիկ: - 59. Այս ո՛չ թէ ունիլ զկիրս նշանակէ յաստուած, այլ զպատիժ վասն *գործոյ* յանցաւորացն: - 60. Երկրորդ՝ զի որպէս մատամբ գրեմք կամ գործեմք զամենայն *գործս*, այսպէս և հոգին սուրբ գրէր ի մարգարէսն...: – 62. Եւ որդի հոգւովն կատարէր զամենայն *գործս* սքանչելեաց: - 62. Եւ հետևի այսմ և *գործ* կրկնակի: - 70. Նախ այսպէս. *գործ* աստուծոյ՝ ստեղծանելն է...: – 70. Նոյնպէս և ի տնօրէնութիւնն քրիստոսի նեստոր չարաչա՛ր բաժանէ զանձինս և զբնութիւնս, զկամս և *զգործս*: - 81. Եւ այսպէս փախչելով ի թիւր ծայրիցն, զմիջինն պահելով ընթացք բարեպաշտութեան, անշթոփ և անբաժան միութիւն, խոստովանիմք զքրիստոս՝ աստուած մարդացեալ. մի անձն և մի բնութիւն. և մի կամք և *գործք* ըստ ուղղութեանն բանի: - 81. Իսկ որք յետ միաւորութեանն **բ** ասեն բնութիւնս ի քրիստոս, և բաժանեն զկամս, և *զգործս*, և զկիրս, թէպէտ և անձն մի համբաւեն: - 81. Որք **բ** անձն և **բ** բնութիւնս՝ և **բ** կամս՝ և **բ** *գործս* բաժանեն քրիստոսի. բ որդի՝ և բ քրիստոս յայտնապէս ասեն. զմինն տէր, և զմինն ծառայ, զմինն բնութեամբ որդի աստուծոյ, և զմիւսն շնորհօք. և այլն: - 82. Եւ ոմանք որպէս քաղկեդոնիկքն՝ մի անձն համբաւեն, և յերկու բնութիւնս բաժանեն զմի քրիստոսն. և **բ** կամք. և **բ** *գործք*. որպէս անիծեալն լևոն. և փլաբիանոս, և ընկերք նոցա: - 82. Ո՛չ ի դէմն. և ո՛չ ի բնութիւնն. և ո՛չ ի կամքն. և ո՛չ ի *գործս*: - 83. Ո՞րպէս ասէք մի կամք և մի *գործ* աստուծոյ և մարդոյ: - 85. Իսկ *գործն*՝ կամացն հետևի: - 85. Եւ դարձեալ՝ զորպիսութիւնն հարցեր մի *գործոյն*: - 85. Ծանիր և զայս. զի՝ մի բնութիւն ասեմք քրիստոսի՝ վասն կատարմանն և ո՛չ սկզբանն. և մի *գործ* ասեմք վասն սկզբանն և ո՛չ վասն կատարման *գործոյն*: - 85. Այն որ նըւաստացոյց զինքն ի յունայնութիւն մարդկան, եղև ի կերպ ծառայի՝ և *գործով* և կրիւք և նմանութեամբ մարդկան. և կերպարանօք գտաւ մարդ. զի ի վեր էր քան զմարդ՝ և քան զկերպարան մարդոյ: - 93. Այլ դատաւորին պարտէ ունիլ անհուն գիտութիւն. զի քննել կարասցէ զամենայն բնութիւն հրեշտակաց և մարդկան. և զամենայն *գործս* եղեալս և զլինելոցն. զխորհուրդս և զբանս բոլորից. զառաջինն՝ զմիջինն՝ և վերջինն: - 100. Զի աստուած նախ քան *զգործն*՝ և յառաջ քան զկամիլն՝ և նախ քան զէանալն տեսանէ...: – 118. Իսկ մեք զկնի *գործոյն* և կամելոյն և էութեան որպէս ասացաք: - 118. Երրորդ՝ զի ամենայն *գործսն* տեսանէ ի ներս և ի դուրս. զմտաց և զբանից և զայլն: - 119. Եօթներորդ՝

իւրաքանչիւր ոք շարժի ի *գործս*: - 126. Նախ է՛ *գործ* իմաստութեան աստուծոյ. որով զանազանեցին արարածք՝ առաւել և նըւազ ընդունելով. և մի՛ խառնափնդոր և անզանազանապէս: - 130. Երկրորդ՝ է՛ *գործ* արդարութեան. զի ըստ արժանեաց հատուցի մեծաց և փոքունց. և առաջնոց և երկրորդաց: - 130. Երրորդ՝ է՛ *գործ* նախախնամութեան. զի ըստ ընտանի կարողութեան իւրեանց՝ համեմատապէս զպարգևս ընկալցին. զի մի վնասեսցին փոքունքն մեծամեծօք. և թերի մնասցին մեծամեծքն սակաւուք: - 130. Երկրորդ՝ զի ծածկեցաւ ի յանարժանիցն մտօք և *գործովք*....: – 132. Դարձեալ՝ առաջինքն կարգաւորեն *զգործս* հրեշտակաց և տէրութեանց մարդկան: - 136. Երկրորդքն՝ զօրացուցանեն՝ ի *գործս* սքանչելեաց և հոգևոր պատերազմաց: - 136. Այս է միջին կարգ քահանայապետութեան նոցա և *գործ* նոցա: - 136. Ո՞րպէս ասեն վարդապետք՝ երեքկին է բանն. մտաց. բերանոյ, և *գործոյ*: - 144. Իսկ բանիւ *գործոյ* խօսի աստուած ընդ դիւին. նա՛և հրեշտակք ընդ սատանայի. որպէս որոտ և կայծակունք հրոյ ի վերայ նոցա...: – 145. Վասն զի ի դևն երիս իրս նկատելի է. այսինքն բնութիւնն՝ *գործն* և մեղքն: - 146. Եւ *գործոյն* որ ունին կրթել զմարդիկ՝ յարմարի օդն որ է՛ մերձ առ մեզ փորձելոյ զմեզ. այլ ո՛չ ի լոյս. զի մի ուրախասցին: - 146. Զի ի կատարածի աշխարհի յորժամ դադարի *գործ* դիւացն՝ ամենեքեան միահաղոյն փակեսցին ի դժոխս: - 147. **Վասն զարդու *գործոց* իւրոց. որպէս նկարիչ ըզքուխ գոյնն ի ներքոյ դնէ՝ զի սպիտակն և այլ պատւականքն երևեսցին**: - 149. Այլ նոքա ամենեքեան ա՛զգ են դիւաց. և ըստ զանազան *գործոյն*՝ զանազան անուան հանդիպեցան. որպէս դևն պոռնկութեան, և հպարտութեան, և բէէղզեբիւղ, բեհմովթ, և այլն: - 150. Առաջին) Զի՞նչ է *գործ* բնութեան՝ և *գործ* կամաց: - 154. Երկրորդ) Զանազանութիւն *գործոյ* աստուծոյ՝ և մարդոյ: - 154. Երեսունսն**ե**) Յատկութիւնք հրոյ քան գլխով. և հակառակ *գործոյ* նորին: - 155. Եւ նախ հարցանեմ, որո՞վ զանազանի *գործ* բնութեան և *գործ* կամաց: - 156. Նախ՝ զի *գործ* բնութեան է՛ բնական. իսկ *գործ* կամացն է պատահական: - 156. Երկրորդ՝ *գործ* բնութեան է՛ հարկաւոր. իսկ *գործ* կամացն պատշաճաւոր: - 156. Երրորդ՝ *գործ* բնութեան է՛ հասարակ. իսկ կամացն առանձնակի: - 156. Չորրորդ՝ *գործ* բնութեանն է միշտ. իսկ կամացն երբեմն: - 156. Հինգերորդ՝ *գործ* բնութեանն է մի առ բազումս. իսկ կամացն բազում առ բազումս: - 156. Վեցերորդ՝ *գործ* բնութեանն է նոյնպէս և նման. իսկ կամացն զանազանապէս և աննման: - 156. Եօթներորդ՝ *գործ* բնութեան անբաժա՛ն է. իսկ կամացն բաժանական: - 156. Ութերորդ՝ *գործ* բնութեան ո՛չ առաւելու և ո՛չ նւազէ. իսկ կամացն առաւելու և նուազէ՛: - 156. Իններորդ՝ *գործ* բնութեան առանց ուսմա՛ն է. իսկ կամացն ուսմամբ է և կրթութեամբ: - 156. Տասներորդ՝ *գործ* բութեան ո՛չ ինչ ունի մեղք. զի ըստ բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն. իսկ կամացն *գործ*՝ մեղանչական է. վասն որոյ կամաւորին գով և պարսաւ հետևի: - 156. Տասներորդ՝ գործ բութեան ո՛չ ինչ ունի մեղք. զի ըստ բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն. իսկ կամացն *գործ*՝ մեղանչական է. վասն որոյ կամաւորին գով և պարսաւ հետևի: - 156. Զի՞նչ զանազանի *գործ* մարդոյ ի *գործոյ* աստուծոյ: - 156. Նախ՝ զի *գործ* մարդոյ շօշափմամբ է. իսկ աստուծոյն առանց շօշափման: - 156. Ութերորդ՝ մարդկան *գործ* աշխատութեամբ է. իսկ աստուծոյն առանց աշխատութեան: - 156-157. Իններորդ՝ մարդս սխալակա՛ն է ի *գործն*. իսկ աստուած առանց սխալման: - 157. Տասներորդ՝ *գործ* մարդոյս նախ զօրութեամբ՝ և յետոյ ներգործութեամբ եղանի. իսկ աստուծոյն միշտ ներգործութեամբ է. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 157. Մետասաներորդ՝ մարդոյս *գործ* մասնաւոր և մի զկնի միոյ. իսկ աստուծոյն համանգամայն և բոլորովիմբ: - 157. Երկոտասաներորդ՝ կատարած *գործոյ* մարդոյ ի սկիզբն անգիտելի է. իսկ աստուծոյն ի սկիզբն կատարածն գիտելի է նմա: - 157. Զի՞նչ հասարակութիւն է *գործոյ* արարչութեան և *գործոյ* նախախնամութեան. և զի՞նչ զանազանութիւն: - 157. Հասարակութիւն է, Նախ՝ զի ի միոյ բարերար կամաց յառաջ եկին *գործ* արարչութեան...: – 157. Այսպէս և *գործ* նախախնամութեան. զի կամի՛ զի ամենայն մարդիկ կեցցեն և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն: - 157. Երկրորդ՝ զի ուր հասանէ *գործ* արարչութեան, անդ գոյ և նախախնամութեան. և անդրադարձեալ ևս՝ զի ուր *գործ* նախախնամութեան է, անդ և *գործ* արարչութեան: - 157. Չորրորդ՝ զի որպէս անգիտելի են *գործք* արարչութեան, ըստ այնմ «ո՞ գիտաց զմիտս տեառն. կամ ընդ ո՞ւմ եղև խորհրդակից». այսպէս և անգիտելի՛ են *գործք* նախախնամութեանն. ըստ այնմ «ո՜ խորք մեծութեան և իմաստութեան. զի անզննելի՛ են ճանապարհք՝ և անքննելի՛ են դատաստանք նորա»: - 157. Հինգերորդ՝ և որպէս ընդ աղօտ ինչ նմանութեամբ ծանօթանամք ի *գործն* արարչութեան. այսպէս և ստւերակերպ նմանութեամբ ի ծանօթս գամք *գործոյ* նախախնամութեանն. այսինքն առնելոյն և թոյլ տալոյն: - 157. Իսկ թէ զի՞նչ է զանազանութիւն *գործոյ* արարչութեան և նախախնամութեան: - 157. Չորրորդ՝ զի *գործ* արարչութեանն մի՛ անգամ է և ո՛չ ևս. ըստ այնմ, «հանգեաւ աստուած յամենայն *գործոց* իւրոց»: – 158. Իսկ *գործ*

խնամելոյն միշտ և հանապազ...: - 158. Հինգերորդ՝ զի *գործ* արարչութեան է մի միայն առնելն. իսկ *գործ* խնամելոյն է՛ առնել և թոյլ տալ երբեմն երբեմն ըստ պիտոյից բարեգործութեան: - 158. Զի առնելն է հաճոյական *գործ* առանց կասկածանաց. որպէս բարի առնել բարեաց, որ է՛ արդարութեանն աստուծոյ. և չար առնել չարեաց, որև այս է՛ խրատ ուղղութեան. այլ բարի առնել չարեաց, այս ողորմութեան է և գրութեան. այսորքիկ առնելոյն են տեսակք: - 158. Իսկ չար առնել բարեացն՝ է *գործ* անիրաւութեան, և ո՛չ գոյ յաստուած: - 158. Երկրորդ՝ զի ի ձեռն անտեղի *գործոց*՝ փրկութիւն լիցի այլոց. որպէս ի ձեռն խաչին քրիստոսի՝ փրկութիւն եղև աշխարհի: - 158. Երկոտասաներորդ՝ զի սուրբքն բանիւ մեզ ուսուցանեն՝ նեղութեան և փորձանաց համբերել. պատրին ինքեանք *գործով* կատարել զնոյն. զի հաւատարիմ լիցին բանք նոցա: - 159. Իսկ թէ զի՞նչ համբերութիւնն. ասէ՝ «*գործ* կատարեալ ունիցի». այսինքն թէ՝ նիւթ աստուծոյ *գործոյն*՝ փորձութիւնն և նեղութիւնն է. և յօրինօղ՝ հաւա՛տն է. և ի կատարումն ածօղ՝ համբերութիւնն է: - 161. Հինգերորդ՝ զի ասէ թէ՝ «առաւելութիւն զղջման և առաքինութեան *գործ* է՛». զի ի մէջ նեղութեանց լինելով՝ յանցեալ մեղացն զղջանամք և սրբիմք. և յապագայն զգուշութեամբ պարսպիմք. և ի ներկայն՝ արի՛ և կա՛զմ պատրաստիմք: - 162. Վասն որոյ արար զաշխարհս *գործ* մշտնջենաւոր. և մշտնջենաւոր հարկաւո՛ր է. և հարկաւորն ի գոլն կարէ, և ի չգոլն անկա՛ր: - 162. Նախ՝ զի որպէս շինօղ տաճարին զսկիզբն և զկատարումն ետես. այսպէս և արարիչն աստուած ի կրկին սկիզբն *գործոյն* զկատարումն աշխարհի ետես: - 163. Երրորդ՝ զի շինօղն որ ինչ պատահի *գործոյն* ո՛չ գիտէ: - 164. Եւ այլ բազում զանազանութիւն է *գործոց* մարդկան և աստուծոյ. զի մեք կարօտ եմք նիւթոյ. ժամանակի. տեղւոյ. օգնականի: - 164. Արդ այս չափ համեմատութիւն է ի նախկին սկիզբն. նախագաղափար տեսութեանն աստուծոյ. և ո՛չ յերկրորդ սկիզբն ի *գործ* արարչութեան: - 164. Եւ *գործ* պոռնկութեանն է ունակութեանն պակասութիւն. վասն որոյ ո՛չ հակադարձին: - 165. Իսկ *գործ* պոռնկութեանն զկնիք կուսութեանն շրջէ և զբնութիւնն ապականէ...: - 165. Ապա ուրեմն ո՛չ է նմանապէս ամենայն մեղաց թողութիւն. որպէս և ո՛չ է նման *գործն*: - 167. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ քահանայագործութիւն պոռնկին ո՛չ լինի կատարեալ. վասն այն արգիլեալ է ի *գործոյն*: - 167. Ասեմք առ այս եթէ՝ ո՛չ վասն ասացեալ պատճառիցդ արգելի քահանայն ի *գործոյն*: - 167. Նախ՝ զի *գործն* իշխանութեան է որ ո՛չ է խափանեալ: - 167. Դարձեալ առնելն է *գործ* ստեղծման. իսկ կրելն *գործ* նախախնամութեան: - 172. Այսինքն կամօք է՝ զի գիտութիւնն և կամքն առաջնորդէ՛ *գործոյն* և հնարաւոր է՛ առնել զայս՝ և առնել զայն, զոր և կամեսցի. որպէս մարդ զի տէր է *գործոյ* իւրոյ՝ առնելոյ և ոչ առնելոյ: - 173. Իսկ *գործ* բնութեամբ է՝ զի բնութիւնն առաջնորդէ՛ *գործոյն*. որպէս հուր բնութեամբ այրէ, և սարդն բնութեամբ գործէ: - 173. Ասեմք առ այս Նախ՝ եթէ ո՛չ ամենայն *գործ* բնութեան հետևի, այլ և կամաց. որպէս մարդոյ. զի մի է կամք ի քրիստոս, մի է և ներգործութիւնն: - 174. Արդ եթէ լինէր որպէս այս, աւելո՛րդ լինէր. և աւելորդ ոչինչ է ի *գործս* աստուծոյ: - 179. *Գործ* զգայարանացն է զարտաքինս ի ներքս զգալ. որպէս աչօք զգոյնս. և ականջով զձայնս. և այլն: - 179. Չորրորդ՝ զճանապարհորդս և զարուեստաւորս և զայլս ի *գործս* յորդորէ: - 185. Չորրորդ՝ զիմաստունս և զառաքինիս ի *գործս* յորդորէ: - 185. Վեցերորդ՝ կամեցաւ աստուած զի մեք բանիւ և տեսութեամբ վայելիցեմք ի *գործս* արարչին: - 192. Երկրորդ՝ զի ի նմա եղեն երկինք և երկիր. հրեշտակք և լոյսն և ա՛յլ տարերք. որ են է *գործք* արարչութեան: - 193. Հինգերորդ՝ օ՛ր է հասարակ յարութեան մարդկան. և գալստեանն քրիստոսի. և հատուցման ըստ իւրաքանչիւր *գործոց*: - 193. Եւ զի դադարին ի *գործոյ*: - 196. Իսկ ամառն նորին նման. զի հունձք է և կատարած *գործոց* բարեաց. և ո՛չ ժամանակ սերմանելոյ կամ բուսանելոյ: - 198. Եւ դարձեալ ի գարունն բուսանին բոյսք. և յամառն կատարին. և յաշունն ժողովին. և ի ձմեռն վայելեն. և յիւրաքանչիւր ժամանակս՝ իւր *գործն* առաւելու: - 198. Նշանակեն զնոսա՝ որք ունին զպտուղս բարի *գործոց*. և զծաղիկն հաւատոյ. և զհոտ գիտութեան՝ ամենայն մարդկան անոյշ: - 212. Եւ են ոմանք որ զթև հաւատոյ և զթեփ բարեաց *գործոց* ունին. և պիտանիք են աստուծոյ: - 215. Եւ են որ թև հաւատոյ ունին, և ո՛չ *գործք*. որպէս չար հաւատացեալքն: - 215. Եւ են որք *գործս* ունին և ոչ հաւատս. որպէս կեղծաւորքն. նմանապէս և սոքա անպիտանք են աստուծոյ: - 215. Եւ են որ ո՛չ ունին հաւատս և ո՛չ *գործք*. որպէս անօրէնք և չարք. և յայտնի անպիտանք են: - 215. Երրորդ՝ ստեղծան նոքա՝ զի ի նոցա՛ ջանից ընթերցմանց և բարեաց *գործոց* օրինակ առցուք. որպէս են մրջմունք և սարդք, և այլք այսպիսիք: - 217. Տասներորդ՝ անունն յարմար նշանակութիւն է կենդանեաց ըստ բարուցն և զանազան կերպիցն եդեալ. զի ամենայն անուն՝ յիրէն և ի *գործոյն* և ի ձայնէն դնի: - 220. Ի *գործոյն*, որպէս սողուն ի սողալոյն. ի շողոքորթելոյն շունն. ի հեզոյն եզն. յառնելոյն առիւծ: - 220. Ա՛րդ՝ եթէ մարդն անապական էր՝ յապականացու տեղւոջ ո՛չ բնակէր. ապա թէ ոչ ի տեղւոջէն եղև

ապականացու և ո՛չ ի *գործոյն*: - 223. Մինն պարզ և զուտ բարին ներքոյ և արտաքոյ. որպէս առաքինութիւն. և հոգևոր *գործն*. յայսպիսիքս հրամայէ՛ մեզ մերձենալ: - 224. Եւ այս իսկ է *գործն*, այսինքն վայելել հոգւով յիմանալիսն, և մարմնով ի զգալիսս. պարտ էր նախ գոյանալ նոցա, և ապա՛ գործողին և վայելողին: - 231. Իններորդ՝ ի վեր է գլուխն, զի լեզուն և ձեռն սպասաւորեսցեն բանի և *գործոց*: - 233. Եւ թէ ասեն՝ ի պատահմանէ լինին. կամ յարուեստից, կամ ի բնութեանց *գործոց*: - 237. Եօթներորդ՝ զի ո՛չ կարէին ընտրել և խոտել զչարն և զբարին, և զուրբն և զանսուրբն ի մարդկանէ, թէ *գործ* սորին է այս կամ այն. այլ անմեղութեամբ յարակցեին պղծոյն, և զխեղդ ոգւոց նորա ընդունէին: - 238. Հինգերորդ՝ զի կարէ՛ մարդ ներհակ սովորութեամբ պահօք և աղօթիւք և կրթութեամբ մարմնոյ սանձել յինքեան զայսպիսիս նշանաց *գործ*: - 246. Իսկ Բանին, Խոկումն. *Գործ*. Առաքինութիւն. Հաւատ: - 248. Տեսողութիւն ընդ *գործն*: - 248. *Գործն* ի ձեռն: - 250. Արդ յա՛յտ է թէ որ *գործ* չառնէ հոգևոր կամ մարմնաւոր՝ վա՛տ ասի: - 251. Վեցերորդ՝ զի *զգործն* կենդանւոյ տեսանեմք ի նա որ է՛ ջերմութիւն, շարժութիւն, և ներգործութիւն. որ երևի ի կազմելն զիիւթն: - 256. Ասեմք առ այս. զի թէպէտ ա՛յլ է *գործ* ստեղծման և ա՛յլ նախախնամութեան. զի սեղծանելն է առնել իր ինչ ի յոչընչէ. և նախախնամելն՝ զեղեալն փոխանորդութեամբ ի նոյն տեսակն պահել: - 257. Ապա ուրեմն *գործ* նախախնամութեան է զիւրաքանչիւր ոգի յառաջ ածել. և նախատպին պատկերակից առնել: - 258. Իսկ զերրորդ *գործն* որ է իմանալն և բանաւորիլն, ունի հոգին և յետ անջատելոյն ի մարմնոյն: - 260. Իսկ աշունն, և մինչ ի թ ժամս աւուրն, և սեաւ մաղձն, և ալևորն, ըստ նմանութեան երկրի ցուրտ և չոր գոլով՝ ծոյլ և պղերգ գոլով ամենայն ուսմանց և *գործոց*: - 266. Նա՛խ՝ զի մնացորդք *գործոց* և խորհրդոց կերպարանին ի յիշատակարանս հոգոյն զոր ինչ գործեաց ի անցելումն, կամ խորհեցաւ վասն հանդերձելոյն: - 268. Երկրորդ՝ զի բանական միտքն և զգայականն խափանեալ է ի *գործոյ* յորժամ ննջէ ոք: - 268. Իսկ տընկականն միայն *գործ* է ի կերակրիլն և աճիլն, նա նկարէ յինքեան ի զգայութեանցն և ի մտացն ըստ տկարութեան իւրոյ անկարգաբար երևեցուցեալ ի յիշատակարանս մտացն որպէս ասացաք: - 268. Դարձեալ՝ մարդո՛յն է ամաչել վասն անարժան *գործոյ*: - 274. Դարձեալ՝ մարդոյս միա՛յն է հնարագէտ *գործք* և արուեստք զանազան: - 275. Ութերորդ՝ կին, իբր թէ կցորդ և օգնական առն յամենայն *գործս*: - 276. Եօթներորդ՝ թշնամի եղև *գործն* մեր. որ նա՛ ի մեղս փոխեաց անցանելով զպատուիրանն: - 277. Հինգերորդ՝ զի մտօք յաստուածային խոկումն էին վերացեալ, և զգայարանօք ընդ *գործս* հրաշիցն. և ոչ էին պարապեալ քննութեան անձին. զի «աչք իմաստնոյն ի գլուխ իւր»: – 278. Ութերորդ՝ վասն *գործոյ*: - 281. Վեցերորդ՝ ի սոցանէ երևի և *գործ* արդարութեան. որ ընտիրսն աստուծոյ նուիրէր գիտելով զմեծութիւն նորա և զբոլորիցն տուրսն. և զխոտանն ի՛ւր թողլով: - 286. Երկրորդ այսպէս. գ մասանց աւելին և պակասն լինին **զ** չարիք. և մի *գործ* մարմնոյն որ լինի է նենգութեան խորհուրդ: - 287. Որպէս սոդոմայեցիքն վասն արտօրէն *գործոցն* արտօրէն իջմամբ հրոյ պատժեցան: - 288. Որպէս ենովս որ յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ. այսինքն յուսացաւ զհանդերձեալ կեանսն որ աներևոյթն էր. և վասն իւրաքանչիւր *գործոց* գոլ հատուցումն. և կոչեաց զանունն աստուծոյ ի յօգնականութիւն: - 288. Երկրորդ՝ զուղղութեան *գործոց* բուռն էհար. և յուսացաւ թէ գո՛յ հատուցումն *գործոց*, և բարեաց փոխարէն: - 289. Դարձեալ՝ բնականապէս ըմբռնէ գիտութիւնն զայն զոր ներգործէ բնութիւնն. իսկ *գործն* աստուածային՝ գիտութեամբ ո՛չ ըմբռնի. այլ հաւատո՛վք իմանի: - 292. Եւ ասեն՝ *զգործս* ջրհեղեղին ունիմք՝ երկնչիմք զի պատուհասէ զմեզ: - 296. Եւ իշխանք վերակացուք *գործոյն* Լամսուր ի սեմա՛յ ազգէն: - 297. Մելքիսեդեկ զնորա դէմն առեալ՝ զնորա *գործն* էլից. օրհնեաց զաբրահամ՝ և սեմ կոչեցաւ: - 300. Վեցերորդ՝ նուիրեաց մելքիսեդեկ զպատարագն և ընկալաւ զտաասանորդն. որպէս քրիստոս պարգևէ՛ հաւատացելոց զշնորհս, և առնու զտասնեակս զկատարեալ և զբարի *գործս*. կամ զտասն բանեան օրէնս **Ժ** զգայարանօք: - 301. Նոյնպէս և տէրն մեր ետ հաւատացելոցն զկենարար մարմինն և արիւնն իւր. յորոց խնդրէ *զգործս* տասնաւոր. այսինքն զկատարեալս. և զկատարումն **Ժ** բանեան օրինացն. ի յորս է՛ մաքրութիւն **Ժ** զգայարանացս որպէս ի վերոյ ասացաւ: - 302. Եւ զի ո՛չ ասաց սառայի զիրն. զի մի՛ մայրական աղետիւ խափա՛ն լիցի *գործոյն*: - 304. Երրորդ՝ սառա կոչի առաքինութիւն. և մարիամ լուսաւորութիւն. և եկեղեցի ժողովք հաւատացելոց՝ *գործով* ունի զառաքինութիւն և զլոյս հաւատոյ: - 307. Չորրորդ՝ ըստ գերազանցութեան. զի յանկարծակի ծագէ՛ ի մեզ շնորհն աստուծոյ եթէ ի հաւատս՝ և եթէ յայլ ինչ *գործս* ի հաճոյսն աստուծոյ: - 308. Վեցերորդ՝ ըստ արուեստից՝ յղացեալք հանճարով, ծնանիմք *զգործս*: - 308. Զի որք կամին՝ լինին անդրանիկ *գործովք* իւրեանց. և որք ոչ կամին՝ փոխին և լինին անարգ և վերջին: - 310. Բաղդատութիւն կրից և *գործոց* յովսեփու առ քրիստոս: - 313. Քսաներորդ, և որպէս յովսէփ եթող զքուրմն և զերկիր նոցա, զոր քրիստոս

էր բառնալոց զմեծամեծ մեղսն և զկռապաշտութիւնն. զի ըստ առն և զօրութիւն իւր. և ըստ աստուծոյ և *գործք* իւր: - 314. ...**զ**՝ այլայլէ՛ զբանն. է՝ այլ և *զգործն*...: – 322. Դարձեալ գիտելի՛ է, զի յոր կրկնելով զբանսն՝ ուղղէ՛ր զբարեկամսն և ընկրկէ՛ր զսատանայ. զի այսպէս ամենայն ոք կարէ՛ յաղթել սատանայի յորժամ զընկերն ուղղէ ի բանս կամ ի *գործս* կամ ի հաւատս և յայլսն. յայնժամ սատանայ թիւրի և հեռանայ: - 323. Դարձեալ՝ **բ** իրօք յաղթեաց յոբ զսատանայ. գոհութեամբ բանի՝ և համբերութեամբ *գործոյն*: - 323. Երրորդ՝ զբարի և զչար *գործոց* հատուցմունքն աստէն կարծէին լինիլ ի մարմնի: - 324. Վասն երրորդին ասէր յոբ զբարի և չար *գործոց* հատուցմունքն լինիլ առհասարակ յետո՛յ ի հանդերձեալն. զի աստ են մեղաւորք և հնացեալք ի մեծութեան. և ներէ՛ նոցա աստուած վասն կրկին պատճառի: - 324. Երկրորդ՝ զի յուսացին այլ կենաց և հատուցման *գործոց*: - 324. Երկրորդ՝ առաջին վկայութիւնն վասն արդար *գործոցն*. կրկինն վասն համբերութեան նորին: - 326. Եւ այլն ամենայն բանք և *գործք* յոբայ ի տիպ օրինակի էր նորն ադամայ չարչարանաց թաղման և յարութեան որպէս յա՛յտ է ի գիրս պատմութեան նորա: - 327. Եւ նոքա յայնժամ էին տկարք ի հաւատոց և անպտուղք ի բարեաց *գործոց*: - 331. Երկրորդ՝ յօրինակ ժողովրդեանն իսրայէլի. զի սրբութեամբ էջ յեգիպտոս և պղծեցաւ ի *գործոց* նոցա. մինչև սրբեցաւ յամպն և ի ծովն. և ճաշակեաց զմանանայն: - 333. Նախ ցուցանէ թէ՝ զազիր են *գործօք* և բորոտեալ մեղօք. վասն որոյ զարշ կենդանեօք ապականէր զնոսա: - 334. Նա՛խ՝ զի ո՛չ էր աշխատեալ ի կաւ *գործոյն*, ո՛չ է առ յընչիցն եգիպտոսի: - 338. Իրաւունքն է ընտրութիւն և հատուցումն դատաստանին այսպէս. զի դատաստանն է տեղիք քննութեան. և արդարութիւնն է *գործ* դատաստանին: - 340. Եւ ի **ժեն** նիսանի անցին ընդ ծովն որ է՛ ե ամիս. և է ամիս ի *գործ* խորանին: - 344. Եւ արտաքոյ ոսկեպատ, զի արտաքին *գործովք* սրբեցան: - 346. Նա՛խ եթէ՝ դո՛ւ աշխատեաց ի *գործն*, զի հաստատ պահեսցես. զի մի՛ դիւրաւ արհամարհիցի: - 350. Չորրորդ՝ յօրինակ դրախտին ադամայ՝ որ ծրի տուաւ և ո՛չ պահեաց. վասն այն որդւոց նորա *գործով* և աշխատութեամբ պարգևէ: - 350. Ճշմարիտն աստուած՝ բնութեամբ և *գործով* և անուամբ կոչի աստուած և տէր: - 350. Իսկ մովսէս ո՛չ բնութեամբ՝ այլ անուամբ և *գործով*. զի բարի առնէր և պատուհասէր: - 350. Իսկ կուռքն միայն անուամբ. ո՛չ բնութեամբ և ո՛չ *գործով*: - 350. Դարձեալ գիտելի է, որք զքրիստոս բաժանեն յերկուս բնութիւնս. և յերկուս *գործս* սոյնպէս. զմինն աստուած՝ և զմիւսն մարդ. հզօր և տկար. և *գործ* մարդոյ և *գործ* աստուծոյ. որպէս աղանդն քաղկեդոնի: - 350. Մովսէս *զգործ* աստուծոյ *գործ* էր. և նոքա մարդոյ *գործ* որիշ և կամք: - 350. Նա՛խ ցուցանէ զառատութիւն պարգևացն աստուծոյ, որ ո՛չ զուգակշիռ *գործոցն* հատուցանէ, այլ բազմապատիկ և հազարաւոր: - 351. Եւ դարձեալ՝ **դ** են սեռք մեղանչելոյ. այսինքն խորհուրդ, խօսք, *գործ*, և յամառութիւն ի մեղս: - 351. Նշանակէ՛ զամենայն զառաջին բարի *գործս* մեր եթէ ի մարմնոյ և եթէ ի հոգւոյ. և ի մտաց նւիրել աստուծոյ: - 357. Ջուարակն հզօր և արդիւնարար. զի արդիւնարարք և հզօրացեալք ի *գործս* բարիս՝ պատարագ են աստուծոյ...: – 358. Աջոյ երին. յաջողակ բարի *գործն*. և Երբունծն դօշն է. որ ունի զսիրտն: - 360. Վասն մեղա՛ց է՝ որ խոստովանութեամբ արտաքոյ ելեալ ի մեղաց և ապաշխարութեամբ քաւեմք զմեզ ներքին խորհրդով և արտաքին *գործով*: - 362. Յորժամ *զգործ* քահանայի ունիցին՝ ո՛չ է մեղք. այլ սրբութիւն: - 363. Վասն զի կրկին է *գործ* քահանային: - 363. Եւ որք անարժա՛ն են *գործոյն*, դնեն զմեղս ի վերայ մեղաց իւրեանց: - 363. Այլ ըստ *գործո՛ց* նոցա զանազանին սուրբն և անսուրբն: - 364. Եւ որք զմինն ունին, որպէս գիտութիւն առանց *գործոց*, և *գործս* առանց հաւատոց, անսուրբք են: - 364. Ջայլամն որ է՛ ըշտռտուրմուղն, կեղծաւորքն են և անպիտանքն *գործոյ*. և այլքն նմանապէս: - 365. Չորրորդ՝ զէնն. զի լիցի սուր երկաթոյ և ո՛չ այլ ինչ *գործի*. զի թէ լիցի երկաթ և ոչ սուր, և թէ սուր և ոչ երկաթ, ո՛չ է պիտոյ: - 365. Եւ անհաւատն սպանեալ է զհոգին մեղօք. և կամ ունի *զգործ* իգական՝ պիղծ է: - 366. Եւ երին աջոյ՝ իւր քահանային, ի նշան աջեա՛յ *գործոցն* նորա: - 367. Մարմնոյն բորն, *գործոց* մեղքն. և գլխոյն, հաւատոցն: - 367. Դարձեալ՝ մեք մարմին եմք քրիստոսի և անդամք նմա. նոյնպէս և զգեստ. այսպէս տուն և տաճար. մկրտութեամբ և հաւատով և բարի *գործով*: - 367. Որ նշանակէ՛ սերմն *զգործն*. որ քանի ի մեզ է՝ ո՛չ է պիղծ. և յորժամ գործի՝ պղծէ՛: - 369. Նախ ինքն *գործն* պիղծ է. և պղծէ՛ զգործօղն. և պղծէ՛ զմերձեցեալսն ի նա՛: - 369. Ոմանք ասեն՝ *գործ* մեղաց մնաց նոյն. այլ *գործ* սրբութեանն փոխեցաւ ի հոգևորն: - 369. Իններորդ՝ ծեռնբեկ. ի *գործս* բարիս: - 370. Տասներորդ՝ քոսն. զազիր *գործն*: - 370. Երկրորդ՝ բեկեալն ի *գործոց* բարեաց: - 371. Երրորդ՝ զի հանգիցէ երկիր և տարերք որ ի չար *գործն* մեր չարչարին. այլ և պահպանապետ հրեշտակք նոցա: - 372. Վեցերորդ՝ այլ և ի թողութեան ամն ուսուսցէ թողուլ զպարտիս բանից և *գործոց* մերոց պարտապանաց: - 372. Առաջին՝ շաբաթն. յորժամ դադարիմք զ շարժմամբ և ե զգայութեամբ ի մեղաց *գործոց*: - 372. Յինգերորդ՝ հանգիստն կատարեալ հոգւով և մարմնով. որ է՛

փողոց հնչմունք. ազատութիւն յապականութեանց. ամ թողութեան և իւրաքանչիւր ուրուք ի ստացուածս իւր դարձումն. որ է՛ *գործոց* հատուցումն: - 372. Առաջինն է ամենևին *գործ* արդարութեան: - 375. Միջինն *գործ* աշխատութեան: - 375. Վերջինն *գործ* ժամանակեան: - 375. Որ մինչ ի ծ ամն կատարէր *զգործն* իւր, և անդանօր դադարէ՛ր: - 379. Այլ և թիւ և համար *գործոց*. պահանջին ի մէնջ ի յերկրին աւետեաց: - 381. Եւ այս են *գործք* քահանայից: - 382. Նա՛խ` զ օրն հաւատն է յերրորդութիւնն սուրբ. և ապա՛ սրբութիւն *գործոց* է է զգայութեամբ: - 384. Երրորդ, զղջումն` խոստովանութիւն` և թողութիւնն նա՛խ է. և ապա՛ ա՛յլ *գործք* ապաշխարութեան: - 384. Իններորդ` նոքա *գործովք* արդարացան զոր նշանակէր օրէնքն. և մեք հաւատով` զոր նշանակէր վէմն յետոյ: - 385. Իններորդ` գլուխ և տուտն ցասումն է և տրտմութիւնն զկնի. և ամենայն մեղաց յետ *գործոցն* տրտմութիւն հետևի: - 387. Եւ յայտնի նշան մոլորութեան նոցա ա՛յս է, զի այնպիսեացն կատարօղք վատթարք են *գործովք* և մոլի. և առ դևս տանին զմարդիկք բռնութեամբ...: – 389. Ուխտն բանիւն է, և սահմանն *գործով*: - 389. Եւ ա՛յս է գերծուլն, զառաջին գործեալ մեղքն սրբել խոստովանութեամբ. և զապաշխարութեան *գործն* մատուցանել աստուծոյ: - 389. Այն է որ թէ ի մասանց հոգւոյն և մարմնոյն այսինքն բանիւ` ցասմամբ` և ցանկութեամբ, կամ աչօք կամ լսելեօք կամ այլ ինչ *գործով* մեղանչէ դարձեալ, ուխտն ո՛չ եղև ամբողջ. դարձեալ նո՛ր պարտ է ապաշխարել: - 390. Զի *գործ* արդարութեան է սպանանել զթշնամիս. նոյնպէս և աւարն արդարութեան մասն է: - 390. Չորրորդ` ձեռն *գործոց* է նշանակ, և բազուկն զօրութեան զի անաշխատ գործէ: - 395. Նա՛խ` հաւատով ճանաչելն է զերրորդութիւնն մի բնութիւն, և ապա *գործով* սիրել զնա. որպէս նախ ուսանիլն է և ապա առնել: - 396. Չորրորդ` նշան թէ` զոր ասէ և լինի. և տէր մեր *զգործս* աստուծոյ գործէր առ կաղս և կոյրս և հիւանդս և մեռեալս. զոր ասէր բանիւ` կատարէր *գործով*: - 399. Զի քրիստոնէութիւն որպէս մկրտութիւն և այլն` անբաժանելի՛ է ի հոգւոյն. թէպէտ ուրանայ լեզուաւ և *գործով*: - 401. Եւ ի սոցանէ ողորմութեան և արդարութեան *գործ*. որ է՛ օրհնութիւն և անէծք ի մի պատուիրանն աստուծոյ տրամակայեալ: - 403. Երկրորդ` ծածո՛ւկ է հանդերձեալն *գործ*. և յայտնի անցեալն և ներկայն: - 406. Երկրորդ` զի միայն մովսէս կոչեցաւ աստուած. և ո՛չ անուամբ միայն, այլ և *գործով* իշխէր ի վերայ տարերաց ի վեր և ի խոնարհ. վասն այն աւագ օրհնութիւն կոչի: - 407. Նա՛խ եթէ` բնութեամբ բարի է աստուած և ո՛չ ունի բարկութիւն. զի ծառ բարի պտուղ չար ո՛չ առնէ. այլ մեք *գործովք* մեր զայրացուցանեմք զնա և արկանեմք ի բարի կամս նորա բարկութիւն: - 408. Երրորդ` յա՛յտ է յայսմանէ. զի նոյն ինքն բարկութիւնն ո՛չ եկեալ ի *գործ*` չէ՛ չար...: – 408. ...ըստ որում մեզ ասաց, բարկանայք բանիւ, և մի՛ մեղանչէք *գործով*. նոյնպէս բարկութիւնն աստուծոյ` սպառնա՛լն է. և սրտմտիլն *գործն*: - 408. Չորրորդ յա՛յտ է, զի թէպէտ սրտմտի` ո՛չ յինքենէ. այլ մե՛ք հարկանե՛մք զնա ի *գործն*, անդարձ լինելով մեր: - 408. **Բարձրամեծարն *գործոյ* ներմարդութեան բանին աստուծոյ` բազում եղեն նախատիպք խորհրդոյ. որպէս մովսէս, յովսէփ, իսահակ**: - 417. Եւ որ շինէ զժոխս հոգւով և մարմնով. նա՛ և անդրանիկ խորհրդով և մարմնոյ *գործով*: - 418. Եւ տէր ծածուկ տնօրէնութեամբն *գործոց* յաղթեաց բանսարկուին: - 419. Եւ այսմ վկայէ՛ պօղոս ի *գործքն* եթէ` յետոյ յեսուայ իշխեցին դատաւորք մինչ ի սաւուղ ամս չորեք հարիւր և յիսուն` այսպէս: - 420. Եւ տէր մեր հրդեհեաց *զգործս* հեթանոսաց արուեստաւոր հնարիւք իւրոցն հետևողաց: - 423. Եւ տէր մեր զխորհրդոց և *զգործոց*` և յետոյ զպատիժն մեղաց ջնջէր: - 424. Եւ տէր մեր մահուամբ առաւել կորոյս զթշնամին, որ քան ի կեանս *գործով* հրաշից: - 424. Հինգերորդ` զընթացս մեղաց և *զգործն* որ է սկզբնական և ներգործական մեղք, և զգլուխն որ է՛ մահ և ապականութիւն, խորտակեաց քրիստոս...: – 426. Սոյնպէս և շնորհք ապաշխարութեան նորոյս առաւե՛լ է քան զհնոյն. զի առանց *գործոց* հատուցման ո՛չ կարէին արդարանալ. իսկ աստ շնորհօք թողութեանն միայն, կարէ՛ արդարանալ: - 433. Որ օրինակաւ ակնարկէ՛ ի տէր մեր ի մարդացեալ բանն. որոյ *գործք* ձեռացն արդարութիւն և իրաւունք են: - 435. Երկրորդ` կոչի դաւիթ որ է՛ սիրեցեալ և բաւական ձեռօք. և տէր մեր սիրեցեալ ի հօրէ և ի մարդկանէ իբր զորդիս մի եղջերոյ. և նա՛ է բաւական յամենայն *գործս* և ի պարգևս: - 435. Իսկ այժմ ուխտէ՛ սպանանել. զի ըստ օրինացն *զգործ* արդարութեանն գործեսցէ: - 439. Եւ հրաւիրակք են անուանեալ քրիստոնեայք. որք չունին զգործս` նոքա փութով հանին ի բաց: - 440. Դարձեալ խրատէ՛ զառաքեալս ի *գործ* ինչ` բոլոր և ամբողջ բերել առ տեարս իւրեանց. և նոքա մասնաւորեսցեն նոցա: - 443. Կամ *զգործոց* և զարդեանցն խնդրէ. որ է՛ սքանչելեաց և պատժոցն. որպէս եղիա: - 445. Երկրորդ` զի հ ամն իբրև զմի օր համարեցաւ նոցա. զի հանգիցեն ի չար *գործոց*, և երկիրն ի չար գործելոյ: - 448. Երկրորդ, Ի *գործոյ* ողորմութեան և արդարութեանն աստուծոյ: - 454. Բարերար և բնութեամբ բարի է աստուած. ուստի ի բարերարութեանց նորա յառաջե՛ն առ մեզ *գործ* ողորմութեան և *գործ* արդարութեան...: – 457. Այսպէս և նիւսացին գրիգոր`

*գործ* ստեղծման և *գործ* նախախնամութեան բաժանէ ի սեռէ՛ ողորմութեան և արդարութեանն աստուծոյ: - 457. Եւ գիտելի է, զի բազմաեղանակ տեսանի *գործ* ողորմութեան և արդարութեանն աստուծոյ: - 457. Երրորդ՝ *գործ* ողորմութեանն է ի սկիզբն ստեղծման աշխարհի...: – 458. Եւ *գործ* արդարութեան ի վախճանի. զի արդարապէս ամենայն որ սկսանի կատարի. և որ շարժի դադարի: - 458. Եւ արդարութիւն է առ *գործս* և առ սէրն: - 458. Եւ այսպէս բազումս տեսանի ըստ մասին *գործ* ողորմութեան և արդարութեանն աստուծոյ: - 458. Այլ ո՛չ յարմարի բանս. զի և յերկինս տեսանի *գործ* արդարութեան առ հրեշտակս եղեալ. որք հպարտացեալ կործանեցան: - 458. Նա՛խ՝ զի *գործ* ողորմութեանն է ի սկիզբն աշխարհի՝ և ի մէջն. և ի կատարումն յարութեամբ մարդկան որպէս ցուցաւ ի վերոյ: - 458. Եւ *գործ* արդարութեանն սկսաւ ի վախճանի աշխարհի: - 458. **Յաղագս այսորիկ նուազ և փոքր լսի *գործ* արդարութեան քան *զգործ* ողորմութեան**: - 458. Առաջին կերպիւն է՛ հատուցումն բարեաց և պատիժ չարաց՝ որ է՛ *գործ* արդարութեան: - 458. Եւ գիտելի՛ է, զի յամենայն *գործս* աստուծոյ գտանի արդարութիւն և ողորմութիւն: - 459. Քանզի առ ի կատարել *զգործ* արդարութեանն՝ պահանջէ ինչ և ի կողմանէ մարդոյն. այսինքն պահանջումն ըստ արժանւոյն...: – 459. ...իսկ ի կատարել *զգործ* ողորմութեանն՝ ո՛չ ինչ պահանջի, եթէ ոչ կամքն նորա, որպէս երևեցաւ ի մարդեղութիւն բանին աստուծոյ ի սրբոյ կուսէն մարիամայ: - 459. Երկրորդ՝ նա՛ միայն ի *գործոց* արդարացաւ. «որ երևեցաւ մարմնով. արդարացաւ հոգւով». և ամենայնքն մեղան և նուազեցան ի փառաց ըստ առաքելոյ: - 473. ...իսկ մեք ո՛չ ի *գործոց*, այլ ի հաւատոցն քրիստոսի ընկալաք զսկզբնական արդարութիւնն և զներգործութիւն մարմնոյ և զսրբութիւն մտաց: - 473. Յիսուս կոչեցաւ յիրէ՞ն թէ ի *գործոյն*: - 473. Ա՛րդ՝ ի դէմս փրկչին նայելով յիրէ՛ն է փրկիչն. իսկ ի դէմս փրկելոցն ի *գործոյն*: - 473. Կրկին է գիր. այսինքն կենաց և մահու. զի բարի *գործովք* գրիմք ի դպրութիւնն կենաց. և մեղօք գրիմք ի գիրն մահու և դատապարտութեան. որպէս ասեմք թէ զձեռագիր յանցանաց քոց ջնջեսցէ աստուած: - 481. Եւ այս ևս կրկին է գիր և դպրութիւն. մին անջինջ և յաւիտենից որ առ աստուած. և միւսն ժամանակեայ և ջնջելի որ առ մեզ. զոր մեր *գործօք* և կամօք գրեմք և ջնջեմք. թէ զչար թէ զբարի: - 481. Իսկ զգիր քրիստոնէից զոր յետ աւազանին մեղանչեմք և գրեմք զյանցանս, զայն պատառէ ապաշխարութիւնն. որ է՛ զղջումն սրտի և խոստովանութիւն լեզուի և հատուցումն *գործոց* մարմնոյ: - 482. Չորրորդ՝ զի պատճառ ամենայն սրբութեան ինքն էր, պա՛րտ էր *զգործս* սրբարար յանձն իւր կրել: - 485. Մեղքն է *գործ*. և մահն պատիժ. և ապականութիւնն հետևանք պատժոյն: - 496. Եւ զի ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն՝ յա՛յտ է նախ ի *գործոյն*. զի ինքեամբ մահ ի ներքս մտեալ որոշէ՛ զհոգի և զմարմին. և ա՛յս է *գործ* նորա: - 498. Ապա յա՛յտ է ի *գործոյն* թէ դժնդա՛կ է ապականութիւն քան զմահ: - 498. Երկրորդ՝ ապականութիւն և մեղք ո՛չ է *գործ* արարչի. այլ մեղանչականին ադամայ և արկածք բանսարկուին. վասն որոյ տէրն զարկուածս բանսարկուին ո՛չ հպեցոյց ի մարմինն իւր. ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն տեառն: - 498-499. Որպէս դաւիթ ասէ յառաջագոյն. և պետրոս զնոյն ի գիրս *գործոց* երկրորդէ՛ «մարմին նորա ո՛չ ետես զապականութիւն». ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն սուրբ: - 499. Զի որպէս յեսու աւերեաց զերիքով և անէծ զի մի՛ շինեսցի. նոյնպէս և զդժոխքն աւերեաց քրիստոս և անէծ զշինօղսն չար *գործօք*. վասն այն ասէ «երթա՛յք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից»: – 504. Եւ որպէս ի մի արքայութիւնն օթևանք և փառք բազում են ըստ *գործոցն*. այսինքն երեսնաւոր. վաթսնաւոր. և ճաւոր: - 504-505. Իսկ միջին դժոխք որ կոչի բանտ դժոխոց՝ է՛ միջակ մեղաւորաց. որք ունին հաւատ և ո՛չ *գործք*. որպէս չար հաւատացեալք. կամ *գործք* և ո՛չ հաւատ. որպէս թերահաւատք և անհաւատք: - 505. Եւ դարձեալ՝ դարձցին մեղաւորք անդրէն ի դժոխս թէ ի նոյն տեղի ըստ ոմանց, կամ յայլ տեղի տանջանաց ընդ *գործոց* հատուցման: - 508. Չորեքտասաներորդ, զի ցուցցէ թէ յայսմ հետէ արքն միա՛յն ունին իշխանութիւն մերձենալ առ ի պատարագել. և ո՛չ գոյ համարձակութիւն կանանց յայս *գործ*: - 518. Ութերորդ՝ որք առեալ զօդ դարձեալ արտաքս փչեն ներհակ իմն *գործով*. այսինքն ջերմացուցանեն և զովացուցանեն. վառեն և շիջուցանեն: - 523. **Երրորդ հիմն՝ առանձին հաւատն է. և *գործքն* շինուածք. և մեք շինօղք:** - 531. Երրորդն ի միոջէ և առ մի. որպէս բժշկական դեղ և գործիք. նոյնպէս մի է եկեղեցի յիւրաքանչիւր ազգս. զմի և զնոյն ունելով *գործ* և իր ի միոյ գլխոյն առ մի անդամքս. ի միոյն քրիստոսէ առ մի քրիստոնեայքս. ի միոյ հաւատոյն առ մի հաւատացեալքս...: – 533. Երրորդ՝ վասն արհական *գործոցն*: - 534. Ի մեծէն. ի կամացն. յիշխանութենէն ի փոքրոյն. ի հնազանդութենէն. և ի *գործոյն*: - 535. Իսկ *գործ* առաքելութեանն է ըստ բազում օրինակի: - 535. Երրորդ՝ սահմանն իրին է. իսկ կանոնն *գործոյն*: - 538. Դարձեալ զհերձուածօղս և զհեթանոսս. որք ընդ դէմ հաւատոց և *գործոց* զինին: - 539. Ասեմք, եթէ որք ի հաւատս ունին թիւրութիւն. որպէս հերձուածօղք և վնասիչք եկեղեցւոյ. և որք ի զազիր

վարս պղծեալ են *գործովք* և վնասեն զինքեանս. և անզեղջք են առ երկոսին. յետ մի անգամ և երկիցս խրատելոյ, որոշեցին յեկեղեցւոյ և պատժեցին: - 540. Նոյնպէս և որք անբիծ են հաւատովք և սուրբ *գործովք*. և կամ որք զղջացեալ յետս դառնան ի մեղաց և ի հերձւածողաց. նոցա՛ է արձակումն և օրհնութիւնն: - 540. Դարձեալ՝ երկրիւ *զգործ*, և երկնիւ զպատիժն է իմանալ: - 541. Եւ դարձեալ՝ որպէս բանն աստուած անէծ զադամ, նոյն բանն դարձեալ օրհնեաց մարմնովն. թէպէտ մի է *գործ* Երրորդութեանն: - 542. Եւ պատճառ սոցա այն էր, զի քրիստոսի մի բնութիւն ասէին. և ինքեանք սահմանեցին **բ** բնութիւն. **բ** *գործք*. և **բ** կամք: - 544. Զի առաքեալն թադէոս յորժամ ձեռնադրեաց զադդէ յուռհայ, և ապա՛ ի կեսարիայ եկն և ձեռնադրեաց առաջին եպիսկոպոս զթէոփիլոս. զայն յորոյ անունն գրեաց Ղուկաս զաւետարանն և *զգործքն* առ թէոփիլոս: - 548. Այլ արդ՝ ազգս հայոց ունի զառաւել ճշմարիտն և զառաւել բարին ի դաւանութիւնն և ի կարգս. այսինքն ի հաւատս և ի *գործս*: - 550. Այլ դատաւոր միտն կացուցեալ երկու վկայ զանբիծ հաւատս և զօրէնս որ են հաւատք և *գործք*. զի առ ո՞ր և իցէ քրիստոս նա՛ է ճշմարիտ: - 551. Եւ զի ճշմարիտ վկայք են սոքա, և տէր մեր առ կուրացեալ հրէայսն զսոյն կացոյց վկայ, ասելով «թէ և ինձ ո՛չ հաւատայք, սակայն *գործո՛ցն* հաւատացէք»: – 551-552. Որպէս զինչ ասեմ համառօտ թէ՝ թերութիւն է մեր բաժանել զբանն ի մարմնոյն յերկու բնութիւնս և յերկու դէմս. ի կրկին կամս և ի *գործս:* - 552. Եւ այն զի խափանեցաւ *գործ* մարմնոյն, ի ժամանակէն կամ ի տեղւոյն կամ ի դիմացն պատճառեցաւ: - 556. Տե՛ս զի ո՛չ բանիւ և ո՛չ *գործով* էր, այլ միայն ի միտս ունէին և յանդիմանեցան ի տնէ: - 557. Դարձեալ ասեն վարդապետք եթէ՝ խորհրդոցն մեղք՝ որ ընտրէ և կամաւ հեշտանայ, առաւել չար է քան *զգործոցն* ըստ պատահմանն: - 557. Իսկ *գործ* մարմնոյն միայն մասինն այն է որում պատահեցաւ: - 557. Իսկ *գործ* մեղացն բերէ յինքն զտրտմութիւն, զստրջանք, զապաշաւ, և զերկիւղ: - 557. Չորրորդ՝ խորհուրդ մեղացն ճշմարիտ և բարի ցուցանէ *զգործն* և սիրելի և հեշտ. վասն որոյ յօժարի և եռայ ի կատարումն: - 558. Իսկ *գործն* զհակառակն նմին սուտ երևեցնէ զխորհուրդն և չար ցուցանէ *զգործն* և զազրալի: - 558. Ապա ուրեմն յա՛յտ է թէ՝ առաւել չա՛ր է խորհուրդն արբեալ որ շարժէ՛ ի *գործն*. քան *զգործն* որ շարժէ՛ ի զղջումն: - 558. Դարձեալ ևս յայտնի. որ խորհրդովն է պղծեալ՝ ո՛չ կարծէ զինքն մեղանչական գոլ. այլ ի *գործ* մարմնոյն իմանայ զչարիս իւր զղջա՛յ և ապաշխարէ: - 558. Ապա յա՛յտ է թէ որպէս *գործ* մարմնոյն առ այլս է չար, և խորհուրդ մեղացն առաւել ինքեան է չար: - 558. Վասն է՞ր զի մարդոյս *գործ* և անասնոցն հասարա՛կ են, և մարդոյս միա՛յն է մեղք: - 563. Վասն որոյ թէպէտ *գործն* նոյն է, այլ բանն և կամքն ո՛չ է նոյն: - 563. Զի՞նչ է պատճառն որ սրտմտութիւն և ցանկութիւն և այլն ի յանբան կենդանիսդ *գործ* է. իսկ ի մեզ ախտ և մեղք: - 563. Սոքա ի յանբանսն ո՛չ միայն *գո՛րծ* են, այլ և պահպանօղ նոցա: - 563. Իսկ *գործքս* այսոքիկ որ նոցա պահպանօղք են՝ մեզ կորուստ և մեղք են: - 563. Նա՛խ՝ ի *գործն* և ի պատիժն. յորժամ գիտէ ոք թէ այն *գործն* մեղք է և գործէ՛. և գիտէ՛ զպատիժ այն մեղացն որ ծա՛նր է: - 564. Հինգերորդ՝ նման սատանային լինին որք ուրանան զպատճառն գոյութեան հոգոց իւրեանց. յիրաւի ապա որպէս սատանայ ո՛չ ունի թողութիւն ի կեանս յայս և ո՛չ ի հանդերձեալն և *գործ* ունէի նմին: - 566. Դարձեալ ըստ կատարման բաժանի մեղքն յերիս. այսինքն ի *գործ* մեղացն, և յունակութիւնն, ի պատիժն: - 568. Նա՛խ՝ զի *գործ* մեղաց է՛ ի զգայութիւնս ներքին կամ արտաքին: - 568. Դարձեալ բաժանին, զի *գործ* մեղացն է՛ յանցեալն և գնացեալն: - 568. Դարձեալ զանազանին. զի *գործ* մեղացն է յայլմէ՛ առ մեզ՝ կամ ի մէնջ առ այլս. այսինքն ի պատրանաց բանսարկուին և ի չարաց ոմանց առ մեզ. և ի մէնջ առ ընկերակիցս մեր: - 569. Դարձեալ զանազանին սոքա ըստ սեռին. զի *գործ* մեղացն է ի սեռս առնելոյն. և պատիժն ի սեռս կրելոյն. և ունակութիւն ի սեռս ունելոյն: - 569. Դարձեալ՝ մեղքն է խօսք և *գործք* և ցանկութիւն որ լինի ընդ դէմ օրինացն աստուծոյ: - 569. Զի թէպէտ անպատեհ է ասել զբարկութիւնն առ աստուած զի անփոփոխելի քաղցրութիւն է. այլ կամքն որով մեղաւորքն վասն չար *գործոցն* տանջեալ լինին՝ բարկութիւն ասի աստուծոյ: - 569. Այս ազգ *գործ*՝ խոզնիցն է յատուկ և ո՛չ մարդկան: - 570. Զի կա՛մքն հրամայէ *զգործ* հաւատոյն. զի ո՛չ ոք հաւատայ, եթէ ոչ կամեցօղն: - 572. Կամ այլ ազգ. սէրն է սկիզբն *գործոց* բարեաց, զի շարժէ՛ առ այն. որպէս ասեն վարդապետք՝ սէրն գործէ՛ մեծամեծս թէ է՛. և թէ դադարէ ի գործելոյն՝ ո՛չ է սէր: - 575. Ասի և մէջ. զի տեսակաւորէ՛ *զգործս*: - 575. Ասի և վախճան. զի ուղղէ՛ *զգործս* և ածէ՛ ի պատշաճաւոր վախճանն: - 575. Դարձեալ՝ կատարեալ սէր է, յորժամ է ունակութեամբ մեծ. ներքին շարժմամբն ուղիղ. արտաքին *գործքն* ժիր. արմատովն հաստատեալ. ջերմ եռանդութեամբն խոհեմ. և քաղցրութեամբն մխիթարական: - 576. Այս վասն համանման *գործոց* նոցա այսպէս կարգի որ են ի նոսա. այլ յոյսն և սէրն են ի կամքն: - 578. Տասներորդ՝ ի յատուկ *գործոց* իւրեանց: - 578. Քանզի ի *գործս* առաքինութեան յորդորէ՛ զմեզ բնութիւն և բանականութիւն. և շնորհն յորդորէ՛ զբնութիւնն: - 578.

Զի՞նչ է արդարութիւն և զի՞նչ *գործ* նորա կամ մասունք: - 579. Որոյ *գործն* այս է, զիւրաքանչիւր ուրուք յետ տալ զոր իւրեանն է: - 579. Եւ երկրորդ՝ զի մնասցէ ի վերին գաւառն ըստ էութեանն և ըստ *գործոյն*. իսկ այլ առաքինութիւնքն թէպէտ մնան ըստ էութեանն, այլ ո՛չ ըստ *գործոյն*: - 579. Զի՞նչ է խոհեմութիւնն և զի՞նչ *գործ* նորա և մասունք: - 579. Եւ *գո՛րծ* է սորա՝ որ ինքն նենգութիւն ո՛չ առնէ մարդոյ, և ո՛չ յայլ մարդոյ խաբի: - 579. **Խոհեմ մարդն ո՛չ պարտի վաղվաղել ի *գործ* զինչ և է՛. այլ պա՛րտ է նա՛խ խորհիլ որ ո՛չ խաբի:** - 579-580. Երրորդ խոհեմութիւն է *գործոյն*. որ կայանայ ի փախուստ չարին և յընտրութիւն բարւոյն. ըստ այնմ «խոտորեա՛ ի չարէ և արա՛ զբարի»: – 580. Զի՞նչ է արիութիւն և զի՞նչ *գործ* նորա և մասունք: - 580. Որոյ *գործն* այս է. ոչ ի նեղութիւնն խորտակիլ և ո՛չ ի հեշտութիւնն կակղանալ: - 580. Զի՞նչ է ողջախոհութիւնն և զի՞նչ *գործ* նորա և մասունք: - 581. Եւ *գործ* նորա այս է. յառաւելութեանն գիտենայ նուազիլ. և ի յաղքատութեանն գիտենայ համբերել...: – 581. Իսկ *գործ* ողորմութեան են չորեքտասան. այսինքն եօթն մարմնաւոր և եօթն հոգևոր: - 584. Իսկ *գործ* հոգևոր ողորմութեան են այսոքիկ: - 585. Եւ վերջինս այս վասն այն ասի *գործ* ողորմութեան, զի կակուղ և խոնարհ պատասխանին խորտակէ՛ զբարկութիւն ընկերին և շահի՛ զնա: - 585. զի թէպէտ ողորմութիւնն առաւել նմանեցուցանէ զմարդն աստուծոյ ըստ արտաքին *գործոյն*...: - 585. Չորրորդն ապաշխարութիւնն. որ է՛ վերստին կանգնելոցն, որք անկանին մեղօք և վերստին կանգնին ապաշխարութեան *գործովք*: - 587. Դարձեալ գիտելի է, զի աստ ասեն հերձուածօղ ազգն Ֆռանկաց թէ՝ թէպէտ մկրտութիւնն *գործ* քահանայի է, բայց ի հարկաւոր ժամանակն թէ քահանայ ո՛չ լինի ամենայն ոք որ գիտէ զձև մկրտութեան՝ կարէ մկրտել: - 588. **Հինգերորդ, զի թէ գո՛յր հնար կնոջ վասն հարկին առնել *զգործ* քահանայի, ընդէ՛ր ոչ կարաց նունի կոյսն մկրտել զոք ի վրաց յորժամ դարձոյց յաստուածգիտութիւն**...: - 589. **Եօթներորդ, զի մկրտելն է *գործ* քահանայի. և քահանայութիւնն է սպասաւորութիւն աստուծոյ. իսկ զայս սպասաւորութիւն աստուծոյ և ո՛չ կռապաշտքն ունէին սովորութիւն սնոտի կռոցն ի ձեռն կանանցն մատուցանել զպատարագն**...: - 589. **Իններորդ, զի մկրտութիւնն է *գործ* քահանայութեան. և քահանայութիւնն է ազատ և ո՛չ ընդ ումեք հարկի ներքոյ. իսկ կինն ծառայ և ոտք է առն. վասն այսր հարկի ո՛չ է պարտ ծառային առնել զգործ տեառն**...: - 589. ...քանի՞ ևս առաւել հերձուած մեծ է կանանց. որոյ ասաց աստուած թէ «առ այր քո դարձ քո և նա տիրեսցէ քեզ» հրաման տալ *զգործ* քահանայի առնել որ ազատա՛ց է և ո՛չ ծառայից: - 589. Տասներորդ, զի մկրտութիւնն է *գործ* քահանայի որ աղօթիւք կատարի...: - 589-590. ...ապա քանի՞ դատապարտութիւն է հրաման տալ նոցա և ի *գործ* քահանայութեան յանդգնիլ: - 590. Բայց գիտելի է, զի *գործ* մկրտութեանն է սրբել զհոգիս յամենայն մեղաց զոր ունիցի. թէ բնական թէ ներգործական և ի պատժոց մեղացն. զի թէ նոր մկրտեալն մեռանի, առ ժամայն թռչի ի կեանս յաւիտենականս: - 590. Եւ գիտելի է, զի ի ծնունդ սուրբ աւազանին երևի ե զարմանալի *գործ* որ ո՛չ է ի մարմնաւոր ծնունդս: - 590. Եւ *գո՛րծ* է այսմ խորհրդոյ՝ յաւելցնել զշնորհն, և դեղ հանապազորդ մեղացն: - 594. ...այլ սիրելիք են բարի *գործօք* առ հասարակ հաւատացեալքն. և նազելիք կուսութեամբ ճգնեալքն և մարտիրոսքն: - 600. Ա՛րդ՝ զբարի *գործս* ամենայնցն հրամայէ կերակրել և գործել...: - 600. Եւ ապաշխարութիւնն **գ** բաժին ունի. այսինքն զղջումն սրտի. խոստովանութիւն բերանոյ. և ապաշխարութիւն *գործով*: - 601. Զի որպէս **գ** կերպիւ մեղանչեմք. այսինքն ի խորհուրդս, ի բանս, և ի *գործս*: - 601. Իսկ թէ աշխարհական լինի. հայի քահանայն թէ խոստովանօղն իմաստուն մարդ լինի առանց բարի *գործոց*: - 601. Նովին բանիւն արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց. ի խորհրդոց ի բանից և ի *գործոց*. յանուն հօր և որդոյ և հոգւոյն սրբոյ: - 602. Եւ *գործ* ա՛յս խորհրդոյս է՛, որ զմնացեալ ներելի մեղքն թողու: - 604. Զի նորին *գործն* է որ բանայ և փակէ զդուռն եկեղեցոյ: - 606. Եւ զայս *գործս* արար քրիստոս յորժամ եհան զգնօղս և զվաճառօղս ի տաճարէն: - 606. Որոց *գործն* ա՛յն է, երդմնեցուցանել զդիւահարն՝ և զերեխայն՝ հրաժարիլ ի սատանայէ: - 606. Եւ զայս *գործս* արար քրիստոս յորժամ զդիւահարն բժշկեաց: - 606. Եւ զայս *գործս* արար քրիստոս յորժամ զինքն լոյս ի յայտնութիւն հեթանոսաց ետ. և ասաց թէ «ես եմ լոյս աշխարհի»: - 606. Հինգերորդ՝ Կիսասարկաւագն. որոյ *գործն* է զսկիհն և զմաղզմայն առ սեղանն տանիլ...: - 606. Զայս *գործս* արար քրիստոս յորժամ սփածաւ զղենջեակ և լուաց զոտս աշակերտացն: - 606. Որոյ *գործն* է սպասաւորել քահանային ի խորհուրդ եկեղեցոյն. զսկիհն պատրաստել, զաւետարանն կարդալ ի բեմն: - 606. Որոյ *գործ* է զխորհուրդ մարմնոյ և արեանն ի վերայ սեղանոյն օրհնել: - 606. Եւ ի տօն զատկին որ արար խարազան չուանեայ և եհան զվաճառականսն, ցուցաւ սարկաւագի *գործ* նորա: - 606-607. Եւ *գո՛րծ* է նոցա ձեռնադրել զարք եպիսկոպոսունս. որք են ընդ իւր վիճակաւն ի չորս բաժինս տիեզերաց: - 607. Եւ *գո՛րծ* է նոցա ձեռնադրեալ զմետրապօլիտսն. և օրհնել

զձէթ կնքոյ: - 607. Եւ *գո՛րծ* է նոցա ձեռնադրել եպիսկոպոսունս...: - 607. Եւ *գո՛րծ* է նոցա՝ ձեռնադրել զամենայն վիճակաւորս եկեղեցւոյն իւրեանց: - 607. ...և *գո՛րծ* է նոցա, հրամանաւ քահանային աւետարան կարդալ, քարոզել, և բառնալ քշոց և բուրբառ. և նստիլ ամենևին ո՛չ: - 608. Եւ *գո՛րծ* է նոցա առաքեալ կարդալ, և մոմեղէնս կրել, և գրակալ. և զխաչազլուխ գաւազանն կրել: - 608. Եւ *գո՛րծ* է նոցա ընթեռնուլ զամենայն գիրս: - 608. Եւ *գո՛րծ* է նոցա ալէլուիայ և մեսեդի ասել և սաղմոս: - 608. Եւ դարձեալ *գործս* այս լրումն է աստուածային հրամանին որ ասէ «աճեցէք և բազմացարուք»: - 613. Որով յա՛յտ է՝ զի ի կէս աւուրն որ է **ժբ** ժամն՝ աղօթելի՛ է մեզ յամենայն օր. և զկէսն այլ՝ մարմնական հոգոց պարապիլ. *գործոյ* աշխատութեան՝ ննջելոյ՝ կամ այլ ինչ իրաց: - 623. ...որպէս յամենայն ինչ իրաց՝ մա՛սն նուիրելի է աստուծոյ. նոյնպէս և ի բարեաց *գործոց* զգոհութիւնն: - 626. Համբարձումն ձեռաց սրբութեամբ աւետարանին, նշանակ *գործոց* բարեաց որով փառաւորի աստուած: - 628. ...և *զգործով* պատւականն աւարտ ի վերայ բերել. որ է սուրբ մարմին և արիւնն փրկչական: - 634. Նախ՝ զի ի շաբաթի սկսաւ հանգիստն և երանութիւն սրբոցն. յաւուր որում հանգեաւ աստուած ի *գործոց*: - 647. Երկրորդ, զի ի սմա հանգեաւ աստուած ի *գործոց* իւրոց ի բարութիւնն: - 647. Զի որպէս աստուած ի *գործոց* իւրոց հանգուցեալ է, - 647. ...նոյնպէս և սուրբքն ի *գործոց* իւրեանց հանգչին: - 647. Եւ որպէս ի բարին է հանգուցեալ աստուած, նոյնպէս և բարի *գործքն* մեր հանգիստ է աստուծոյ և մեզ: - 647. ...և օրէնս եդ որ հանգչէր մարդ ի մարմնական *գործոց* յաւուրս և ի շաբաթս, յամիսս և ի տարիս. - 647. Ասեմք թէ՝ այժմ ի հանգիստ *գործո՛ցն* են, և յայնժամ փոխին ի հանգիստ փառաց և պսակաց: - 648. Զի որպէս աստուած ի *գործոց* իւրոց հանգչի...: - 648. ...նոյնպէս և սուրբքն ամենայն ի *գործոց* իւրեանց հանգչին և փառաւորին և սպասեն գալստեանն քրիստոսի և հատուցման վարձուցն: - 648. Զի այժմ յուսով լցեալ ունին ի հոգիս իւրեանց զփառս և զպայծառութիւն *գործոցն*: - 648. ...այսինքն զպայծառութիւն *գործոցն* և զանմեղութիւն հոգւոյն զոր ընկալան ի շնորհացն քրիստոսի: - 648. Զայս սովորութեամբ առնեն զոր չէ՛ պարտ. զի յուսահատութեան է նշան և հեթանոսաց *գործ* : - 656. Իսկ մատռակն յոտն կացեալ, նշանակէ՛ զծառայն ի *գործ* սպասու: - 656. Երկոտասաներորդ, Թէ հատուցումն ըստ *գործոց*՝ է՛ ի կատարածի, **լ** վկայութեամբ: - 660. Չորրորդ, որոյ ամէն *գործքն* բարի լինի և մին մեղք է գործեալ, - 664. Որպէս մշակն յորժամ սերմանէ, ո՛չ ի *գործն*՝ այլ յաստուած ապաւինի: - 665. Իսկ վախճանեալն կատարեալ լսի. որպէս թէ ոք սկսանի երթալ ի ճանապարհ կամ ի *գործ* ինչ և ի յաւարտիլն կատարած ասի: - 666. Այսպէս և նոքա կատարեցին զճանապարհ կենցաղոյս և զբարեաց *գործոց*. վասն որոյ վախճանեալ կոչին: - 666. այս է, զի սրբոցն ամենայն աւուրքն լի՛ են բարի *գործովք*: - 666. Եւ այնպէս յարաժամ տեսանէ զցաւս մերձ ինքեան և առ ինքն ի չար *գործս* իւր անբաժանելի ի նմանէ մինչ ի յարութեանն օր...: – 669. ...զի ի մեծի ծագման առաւօտուն կրեսցեն զպատիժն ըստ *գործոց* իւրեանց: - 669. Երրորդ, զի երիւք մեղանչէ մարդ. այսինքն մտօք և բանիւ և *գործով* մարմնոյ...: – 675. Զի վասն յանցանացն ադամայ անիծաւ երկիր ի *գործս* նորա. զսուրբ մարմինն քրիստոնէի չէ՛ պարտ դնել յանսուրբ հող. - 676. Ութերորդ, զի մի՛ դատարկասցին ի մարմնական *գործոց* միշտ տեսանել զմեռեալս: - 677. Իսկ հանգիստ կոչի, Նա՛խ՝ զի հանգեաւ յաշխատանաց մարմնոյն. այլ և ի չար *գործոց:* - 679. Իսկ տապանաքարն, Նա՛խ՝ զի մի՛ գործեսցի երկիրն այն յայլ ինչ *գործ*, կամ քակտեսցի վասն այլ մեռելոյ: - 679. Երրորդ, և որպէս այն քար անպիտան է *գործոյ*, նոյնպէս և մեռեալն անպիտան է աշխարհի: - 679. Այլ և մտաց և բանից և *գործոց* մեղացն քաւութեան: - 679. Նաև երիւք լինի թողութիւն մեղաց. այսինքն զղջմամբ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ. որ լինի մտօք բանիւ և *գործով*: - 681. ...հաւատն նշան է նոցա, և բարի *գործքն* զարդ. և մահն ի հարսանիս ընթանալ. - 681. Զգեստ անմաշելի *գործք* իւրեանց: - 682. ...զի հաւատք առանց *գործոց* մեռեալ են: - 683. Իսկ ամիսն որ է՛ գժ, տասն զգայութեամբ մեր մտօք և բանիւ և *գործով* մեղանչեմք: - 683. Հոգիք արդարոցն ճանաչեն զմիմեանս անուամբ և ծննդեամբ և *գործով* վաստակոցն. որք զարդիւնսն միշտ մերձ տեսանեն: - 685. Դարձեալ աղօթքն՝ չարչարանքն և բարի *գործքն* է նոցա, զոր վասն քրիստոսի կրեցին...: - 685. Տեսութիւնն է աստուծոյ. որք ըստ բազմազան *գործոց* իւրեանց տեսանեն. և որպէս ի տան փառաւորին: - 686. Երրորդն վասն իւրաքանչիւր *գործոցն* առանձնակի: - 686. ...այլ զանազանութիւն է նոցա յիւրաքանչիւր *գործս* և ի տեսութիւնս: - 686-687. այսինքն է որ ի վեր քան զհրամայեալ օրէնսն կատարեցին *զգործս*. որպէս առաքեալքն, մարգարէքն, մարտիրոսքն, կուսանքն, և այլքն: - 687. ...այսինքն զմեղօք մեռեալ հոգիսն ի դատաստան ըստ *գործոց*: - 689. Որք աստ ունին զյաջողակ *գործս* բարեաց կամ ձախողակ. և նոյնպէս դասին յաջակողմն և ձախակողմն քրիստոսի: - 689. Եւ ո՛չ ոքն է առեալ արդեամբ *զգործոց* հատուցումն մինչ ի գալուստն դատաւորին որպէս ասէ աւետարանն: - 689. Յետ աստեացս փառք

երանելեացն կրկին է. այսինքն է փառք *գործոց* ըստ ինքեան, և փառք հատուցմանց: - 689. Եւ այժմ հոգիք սրբոց առնուն զփառս *գործոց* ըստ ինքեան. զի հանգչին և ուրախանան ի *գործս* իւրեանց: - 689. Նոյնպէս կրկին է և տանջանք չարաց. այսինքն տանջանք *գործոց* ըստ ինքեան, և տանջանք հատուցման, զի զտանջանք *գործոցն* կրեն յետ մահու. և զտանջանք հատուցման ի յարութեանն հոգւով և մարմնով: - 690. Զի *գործք* չարութեան այժմ դատէ՛ խղճիւ զմիտս. և յետ մահու զհոգիս. և յետ յարութեանն զհոգի և զմարմին որպէս ասացաւ: - 690. Դարձեալ ասեմք, թէպէտ զներկայն ետես, սպիտակ հանդերձն ո՛չ ցուցանէ զփառս հատուցման. այլ զփառս և զհանգիստ *գործոց*: - 690. Զի հոգիք սրբոցն ո՛չ են առանց մխիթարութեան. այլ հանգչին և ուրախանան ի *գործս* իւրեանց և յուսով փառացն հատուցման. - 690. Նախ ի չար *գործոց* իւրեանց տանջին նոքա...: - 690. Այլ սակայն զհատուցումն *գործոց* և զտանջանս յաւիտենական ո՛չ են առեալ այժմ...: – 691. Իբր թէ յայնժամ առնուն *զգործոց* հատուցումն: - 692. ...զի յարութիւն վասն հատուցման *գործոցն* է: - 694. Արդ ըստ կատարեալ *գործոցն* զոր ունին յինքեանս՝ եղեն անդրանիկ երանութեամբ և հանգստեամբ: - 695. Ա՛րդ՝ եկեալ հրեշտակն խնդրէ ի նմանէ զբարի *գործս* որով նա կերակրի...: - 697. Երկրորդ՝ զի տեսութիւնն հաւատոյն է փոխարէն զոր հոգին ընկալաւ. և պսակն *գործոյն* է զոր մարմնով առնու: - 697. Ութերորդ, ապաշխարութիւնն խնդրէ մարմնական տանջանք ի մարմնական *գործիս*: - 699. զի *զգործ* դատաստանին այժմ կատարէ՛ որպէս ցուցաւ ի վերոյ: - 700. Այլ թէ ոչ գոյ դատաստան, նաև ոչ յարութիւն մարմնոյ. և ոչ հատուցումն *գործոյ*. ապա և ո՛չ գալուստն քրիստոսի որպէս ասէ սուրբն կիւրեղ: - 700. Իսկ թէ այժմ հոգւոյն եղեալ է դատաստան, և հատուցումն ըստ *գործոց*, և արդարոցն փառք և մեղաւորացն տանջանք. և յայնժամ մարմնոյն որպէս ասեն նոքա. - 700. ...պատճառեն *գործոց* իւրեանց հնարս. իբր թէ ակամայ զերծանիցին ի տանջանաց: - 701. Ա՛րդ՝ նախ գիտելի է, զի հիմն հաւատն է ի մեզ. և շինուածն *գործքն*: - 702. **Պատուական ակունք՝ *գործքն* բարի**: - 702. **Ակն պատուական՝ *գործք* մարմնոյն. պահք, աղօթք, ողորմութիւն, և այլն**: - 702. Այլք եղէգն. այսինքն զդատարկաբանութիւնս և զտկար *գործս*: - 702. Նա՛խ՝ որպէս ո՛չ է անդ *գործ* մեղաց, նոյնպէս և ո՛չ թողութիւն: - 704. Զի այս կեանքս է *գործոց*, և այն հատուցմանց բարեաց և չարեաց: - 704. Այն է՝ որ յետ աստի կենացս հոգին ի քննութիւն *գործոց* ժամանէ ...: – 705. Եւ այս նախ վասն գերազանց *գործոյ* երից մասանց հոգւոյն: - 712. **Զի գերազանց *գո՛րծ* է բանին ուսուցանելն զճշմարտութիւնն. և զայս ունին վարդապետքն**: - 712. **Եւ գերազանց *գործ* ցասմանն է համբերել չարչարանաց. և զայս ունին մարտիրոսքն:** - 712. **Եւ գերեզանց *գործ* ցանկութեանն է տանել ողջախոհ կուսութեան. և զայս ունին կուսանքն**: - 712. Այնպէս եղիցի լի մարդկամբ որպէս այժմ է. և այնպէս յիւրաքանչիւր *գործս* որպէս այժմ: - 714. Ոմանք ի վարել և ի նաւել և յայլ ինչ *գործս*: - 714. Եւ որպէս զմարմինս մեր ընդունին յաւանդ, նոյնպէս և *զգործս* մեր խնդրէ ի սոցանէ և յառաջ բերեն: - 714. Եւ *զգործս* բոլոր մարմնոյ յերկրի հաստատեցաք. թէ երկնաւոր թէ երկրաւոր: - 714. Այսպէս **դ** տարերք զչորեքին *գործս* մեր ընդ էութեանս ունին յաւանդի և յառաջ բերեն: - 714. Եւ հաւատարիմ վկայ ընդհանուր յարութեանն *զգործս* եցոյց. որ զղազար չորեքօրեայ ի գերեզմանէն յարոյց: - 716. Վեցերորդ, զի յարութիւնն է *գործ* սքանչելեացն աստուծոյ և ո՛չ բնութեան. զի բութիւնն հունաւորեալ է զօրութեամբ յերկար ժամանակս գործէ: - 717. ...զի ննջեցելոցն միայն մին *գործ* է. այսինքն յարութիւնն. իսկ կենդանեացն մահն և յարութիւնն. զի նախ մեռանին ի նոյն կէտն և ապա՛ յառնեն: - 717. Նա՛խ՝ ամենակարօղ զօրութեանն աստուծոյ և արարչութեանն է *գործ* : - 719. Որ արարն յոչ էից, գիտէ անխառնապէս որոշել զիւրաքանչիւր փոշիս արդարոց և մեղաւորաց. զի հատուսցէ իւրաքանչիւր ըստ *գործոց*: - 719. Երրորդ պակասութիւն է մարմնոյն՝ զի ծա՛նր է և ծոյլ յամենայն *գործս* հոգևորս: - 722. Տասներորդ, *գործք* մարդոյ անցաւոր է որպէս ինքն. իսկ հատուցմունքն աստուծոյ մշտնջենաւոր որպէս նոյն ինքն. վասն որոյ յարուցանէ անմահ, զի հատուսցէ ոմանց զփառս և ոմանց զտանջանս անմահ մարմնով: - 724. Եւ ա՛յս է պատճառ յարութեանն. զի ամենայն մարդիկ առնուցուն զվարձ կամ զպատիժ. կամ վասն իւրեանց *գործոց*, կամ վասն սկզբնականին: - 724. Եւ սոքա ուղղին ի յարութեանն. զի *գո՛րծ* է կարօղ զօրութեանն աստուծոյ և ո՛չ տկար բնութեան: - 725. **Նա՛խ՝ զի արու և էգ անդ ո՛չ ճանաչին մասին անդամօք, այլ յատուկ դիմօք և բարի *գործովք* և փառօք և անւամբ զանազանին. որպէս դասք կուսանացն ի հայրապետացն**: - 725. Երկրորդ վասն մեծացն *գործոց*. որպէս ասէ տեսիլն՝ «տեսի անդ զմեռեալս մեծամեծք և փոքունք»: - 726. Ա՛յս է գալարիլն նոցա, զի երկինք և երկիր տիւ և գիշեր միաբանեալ վկայե՛ն *գործոց* մարդկան: - 729. Երկրորդ, զի գիր մագաղաթին անջինջ մնայ. նոյնպէս և *գործն* ի հոգիս մեր գրեալ. - 729. Այլ և գօտով պնդել զմէջս որ են բարի *գործք* : - 730. Զի արարածք ամենայն *գործք* ձեռինն աստուծոյ են...: -

733. Վեցերորդ՝ զի *գործ* աստուծոյ է ի նւաստ և ի փոքր ինչ իր զմեծամեծսն ներգործել. որպէս կաւովն զկուրին աչքն եբաց, և ի վիմէն ջուր բղխեցոյց **բժ**ան. և այլ բազումս: - 733-734. Արդ՝ որոյ *գործն* յաւիտենական է, և նոյն ինքն անապական է ասէ փիլիսոփայն. ապա ուրեմն անապական է սուրբ խաչն: - 734. վասն որոյ նմա՛ պարտ էր դատաւոր լինիլ և հատուցանել ըստ *գործոց* հաւատացելոց և անհաւատից: - 735. Երրորդ, յարմարի տեղիքն այն՝ դատաստանին աստուծոյ որ անդ լինելոց է. այսինքն *գործ* ողորմութեան և *գործ* արդարութեան: – 738. Նստի քրիստոս ի բարձրագոյն աթոռ ի վերայ օդոյդ, և սուրբքն ընդ աջմէ. այսինքն ի վեր ի փառս ընդ նմա ի վերայ օդոյդ. հաւատոյ և *գործոյ* թևօ՛քն բարձրացեալ իբր զարծուի: - 738. Ոմանք դատին և դատապարտին. որպէս միջակք որք ունին հաւատ և ո՛չ *գործք*. որպէս չար հաւատացեալք. և որք ունին *գործք* և ո՛չ հաւատ. զի ըստ հատուցաւ նոցա: - 739. Դարձեալ որպէս ի վեր անդր ի հրեշտակացն՝ բանն յերիս որոշեցաւ. այսինքն է՛ բան մտաց և բան լեզուի և բան *գործոյ*: - 739. Եւ բանիւ *գործոյ* խօսի ընդ բուն չարս և ընդ դևս որք առաքին ի տանջանս: - 739. Եւ միւս գիր է *գործոց* փոփոխական և ջնջելի ըստ ժամանակիս: - 741. Արդ՝ ա՛յս գիր *գործոց* մերոց գրեալ ի հոգի և ի մարմին մեր որպէս ի մագաղաթի՝ դատաւորն ընթեռնու ի տես և ի լուր հրեշտակաց և սրբոց: - 741. Եւ իւրաքանչիւր ոք *զգործս* իւր ընթեռնու յայտնապէս և ո՛չ կարէ ուրանալ և մոռանալ: - 741. *Գործքն* մեր ո՞րպէս գրին: - 741. Յոգի և մարմինս է որպէս մագաղաթ. կամք և իմացումն դպիր և գրօղ. հաւատքն գրիչ. արտասուքն մելան. և գիրն *գործք* բարի կամ բան աղօթից: - 741. Մանաւանդ թէ՝ հոգին սուրբ գրօղ դպիր. և ուղղութիւնն գրիչ գործիք. և որք զմելանն առատ տամք և զմագաղաթն, զսուրբ *գործս* անկեղծաւոր և զբանս աղօթից օրինաւոր, ա՛յնքան առաւել գրիմք ի գիրն կենաց: - 741. Իսկ խոտելոցն գիր, դպիր է պիղծ հոգին դիւական. և չար կամքն իւրեանց և խորհուրդն և հեշտութիւն մարմնոյն մելան. և ըստ *գործոց* առաւել և նւազ գրեն ի գիրն դատապարտութեան: - 741. Իսկ դատաւորն նստեալ յաթոռ արդարութեան արդարապէս հատուցանէ ըստ *գործոց.* ըստ որում յիմար կուսիցն փակեցաւ դուռն և ո՛չ առին զխնդիրն: - 742. Իսկ անկենդան՝ *գործքն* մեր. երկինք և երկիր. տիւ և գիշեր: - 743. Իսկ կշռորդն է՛ օրէնքն աստուածային, և *գործք* մեր նմին հաւասարեալ և միտեալ հաւատով: - 745. Երկրորդ *զգործս* մեր զուգաչափել: - 745. Չորրորդ զբարի և զչար *գործս* մեր առ միմեանս հաւասարել. կամ միտել ի չարս և ի բարիս: - 745. Եւ պա՛րտ է գիտել զի ի միոյ սեռէ բարութեանցն աստուծոյ՝ յառաջե՛ն առ մեզ ողորմութիւն և արդարութիւն. կրկին տեսակ կամ *գործք* կամ զօրութիւն. որպէս ի մեզ երկոքին ձեռք մարմնոյ. և որպէս իմացումն և կամք հոգւոյ: - 745. Նոյնպէս առ մեզ *գործս* բարի և չար: - 745. Արդ բարի *գործս* մեր հայի առ *գործ* ողորմութեանն, և չար *գործս* առ *գործ* արդարութեանն աստուծոյ: - 745. Եւ որպէս մեք յարաժամ միտեմք ի *գործ* բարութեան կամ չարութեան. և *գործ* նորա միտէ՛ յողորմութեան կամ արդարութեան հատուցումն...: - 745. ...զի մարդոյ ի բարի *գործս* հակեալ՝ հարստահարի՛ արդարութիւնն յողորմութենէն. և թէ ի չարն հետևիմք՝ ողորմութիւնն յարդարութենէն: - 745. Նմանապէս և ի բարի *գործս* փոխեալք: - 745. Երկրորդ, հայի՛ առ ի մի և նոյն բարերար կամացն յառաջ եկեալ *գործքն*. աստուածային՝ արարչական՝ և արքունական. որ է *գործ* ստեղծման և նախախնամութեան: - 746. Եւ նոյնն զօլ ողորմութեան և արդարութեանն *գործոց* ունել հաւասարութիւն: - 746. Նոյնպէս և հատուսցի առաւել և նուազ և հաւասար. ո՛չ միայն ըստ սեռի *գործոց*, այլ և ըստ տեսակի և քանակի և որակութեանց նմին: - 746. Իսկ ըստ տեսակի, որպիսութիւն հատուցմանց ըստ հաւատոց և *գործոց* վկայից և կուսից: - 746. Իսկ ըստ քանակի, չափու գործելեացն առաւել և նուազ իւրաքանչիւրոց ի խորհուրդս ի բանս և ի *գործս*: - 746. Զի հատուցանէ աստուած ըստ արդեանցն *գործոց...:* - 746. Չորրորդ, կշիռն նշանակէ՛ *զգործս* մարդկան. ըստ կշռոյ օրինացն հաւասարել և հատուցանել. եթէ ըստ բնականին կամ ըստ գրոյն և աւետարանին. որում շատ տուաւ առաւել պահանջել: - 747. Եւ թէ ունիցին ըստ օրինացն հաւասարեալ ի *գործս* կամ ի հաւատս, և եթէ միտեալ և կամ նուազեալ, ըստ նոցին օրինացն հատուցանել. և կամ արտաքոյ օրինացն կորնչիլ ի յայսմ կշռոյ է հատուցումն: - 747. Դարձեալ՝ առաջինն է ի կամքն. երկրորդն ի սէրն. երրորդն ի *գործն*: - 747. Ուստի երևի **զ** ժամս ի յարութենէն մինչ ի վճիռ հատուցման և կորստեան չարաց չորեքկին. այսինքն *գործոց* չարաց և պատժոց նոցին. պատճառաց դիւաց և հետևելոց մարդկան: - 748. Նախ՝ կոչի սիրտ և անձինք մեղաւորաց, ուր ժողովին ամենայն *գործք* չար որ է՛ խաղող դառնութեան. և ունակացեալ պահէ յինքեան. և հեշտութեամբն ճմլէ հանապազ և արբենայ մեղացն գինով: - 748. Մետասաներորդ, հնձան կոչի և հաւատն սուրբ. զի ի նա՛ հաւաքի ամենայն բան և *գործք* մեր. և ճմլեալ այսինքն քննեալ՝ լինի գինի ուրախարար աստուծոյ և հրեշտակաց: - 749. Երկոտասաներորդ, հնձան կոչի և վերջին օր դատաստանին. զի անդ հաւաքին ամենայն բարիք և չարք և *գործք* նոցին. և չարքն

ճմլեալ արտաքսին ի տանջանս, և բարիքն ի կեանս: - 749. Ունելով տերև զգիտութիւն սուրբ գրոց. և զծաղիկ հաւատոյ՝ և զպտուղ բարեաց *գործոց*: - 765. Այլ և ծաղիկ՝ զպայծառ և զանուշահոտ վարս առաքինութեան. և պտուղ՝ արդիւնքն ըստ *գործոց.* յորմէ փրկութիւն եղև ամենայն աշխարհի և վայելչութիւն արքայութեանն երկնից: - 768. Այլ և տերև է մշտասաղարթ գիտութիւն հաւատոյն. ծաղկեալ դաւանութեամբ և պտղաբերեալ *գործով* առաքինութեան: - 769. Հաւատն սկիզբն աստ. և անդ զօրութիւն *գործոյ*: - 769. Մեր *գործքն* և յաստուծոյ տուեալ բարին հաւատով կնքի. և պակասն յանդիմանի այժմ ի խղճէ մտաց որպէս ի գրոյ. և անդ ի դատաւորէն, որ չար ծառայ կոչէ: - 769. Եւ ապա ի սէր և անձնուկ ժտելոյ նորին, ապաստանեալ ի նոյն որ զօրացոյց զտկարս, ձեռն ի *գործ* արկեալ աւարտեցաւ բազում միջոցաւ. և փախստեամբ ի տեղիս. և մեծ ջանիւ փութացեալ: - 772. ...մարմնով մեռելոցն անքիւ օծիրս ստախօսութեան գործէր. զանտի կենաց զյարութեան յուսոյ և զհատուցմանց ըստ *գործոց*՝ բառնալով. զերկիւղ դժոխոց և զսէր արքայութեան. և զամենայն ինչ որ նմանէ այսմ հոգևոր բարութեան: - 775. Երկրորդ, զի դժոխքն այն պատիժ բնութեանս էր և ո՛չ առանձին *գործոց*. զի հաստատեաց օր մի յորում դատելո՛ց է զամենայն ըստ պօղոսի: - 776. Քանակաւ, զի նա՛ *գործով*, իսկ նոքա և *գործով* և հասեալ մեղօք...: – 777. Որով յա՛յտ է ի *գործոյն* և ի պատժոյն: - 777. Այսպէս և յամենայն *գործս* աստուծոյ գտանի արդարութիւն և ողորմութիւն որպէս ասեն ոմանք. այլ երբեմն արդարութիւնն ծածկեալ և ողորմութիւնն յայտնի. որպէս յարդարացուցանելն ամբարշտին՝ և յառաջին գալուստն քրիստոսի: - 779. Իսկ իւրաքանչիւրոց հատուցումն՝ այսինքն բարեացն բարիս և չարացն չարիս, է՛ այս *գործ* արդարութեան. և այսորիկ առ մե՛զ փոփոխմունք. և ո՛չ անեղ բնութեանն: - 779. Եւ զի միջնորդութիւն ժամանակի կարգաւորիչ է ամենայն *գործոց:* - 780. Այսպէս բարւոք տեսցես ինձ յամենայն ուրէք ըստ ժամանակի *զգործս* յարմարեալ: - 780. Երկրորդ՝ զի ո՛չ ունին *զգործս* զղջման: - 780. Այսպէս և ժանգ յանցանաց մկրտելոց և քահանայից՝ բառնայ *զգործ*՝ կամ զնշանակութիւն շնորհացն. իսկ յետ սրբութեան զղջմամբ՝ զիա՞րդ կրկնի ունակացեալն ի նմա՛: - 782. Կոչի և շնորհ *գործ* նորին. որպէս մարգարէանալ: - 783. Որոց սկիզբն է հաւատն առ մկրտութեամբն. և կատարումն հայի առ *գործն.* և սոքա փոփոխականք են ըստ քանքարացն յարգելոյ և պակասելոյ: - 783. Երկրորդ հմտութեամբ ժամանակին. որով իմանան զներկայս և զապառնիս և յառաջեւս քան *զգործս*. որով աղաչէին, «գիտեմք զքեզ». ո՛չ հաւատոյն գիտութեամբ. այլ հմտութեամբ տանջանաց. որով սարսեին և ասէին «մի՛ տանջեր զմեզ»: - 784. Եւ նոյն ինքն տէրն բոլորից վկայ քարոզութեան *զգործս* կատարէր. զի սովորութիւն է մարդկան քան զլուր լսելեաց տեսութեան աչաց հաւանիլ: - 785

***ԳՈՐԾՔ +*** *Գործք*: Եւ է թուղթ կաթողիկէք: - 450. Որպէս ասէ *գործքն* «ի բազում արուեստս յաւուրս խ երևեալ նոցա»: – 520. Իսկ առաքեալն պօղոս ի դէմս հոգւոյն ասէ ի *գործքն*. «բարւոք խօսեցաւ հոգին սուրբ ի ձեռն եսայեայ մարգարէի»: - 632-633. Մետասաներորդ, նոյն պօղոս ասէ ի *գործս* «հաստատեաց օր մի յորում դատելոց է զամենայն»: – 692. Եւ ի *գործս* ասէ «արար ի միոջէ արենէ զամենայն ազգս մարդկան»: - 717

***Ի ԳՈՐԾ ԱԾԵԼ +*** Այլ այժմ ի ձեռն արուեստից ստացեալ զզէնս, յորժամ պիտոյանայ՝ առնու և *ի գործ ածէ.* և յորժամ կամի՝ ի բաց դնէ և հանգչի: - 217. Եւ նա հոգին է որ զզգայականն և զտնկականն զօրութիւնն *ի գործ ածէ* միայն ի մարմինն որքան է ի մարմնի: - 260. Իսկ *ի գործ ածել* զստրմտութիւն՝ լինի վասն դ պատճառի: - 408. Ա՛րդ՝ մեծագործութիւնն է մեծ և վեհագոյն իրողութեանց ի խորհուրդ և *ի գործ ածումն* ընդարձակ մտադրութեամբ հոգւոյն: - 580. Նախ՝ զի թէ բարի է մարդն, ընտրէ՛ աստուած և տայ զմեծութիւնն որ կարօտելոց *ի գո՛րծ ածէ*...: - 664

**ԳՈՐԾԱԿԱԼ +** Վեշտասաներորդ՝ **բ**ժան *գործակալր* սողոմնի: - 441

**ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ +** Եօթներորդ՝ *գործականութիւն*: - 279

**ԳՈՐԾԱԿԻՑ +** Եւ այլք աստիճան դնեն Երրորդութեանն և անուանեն արարիչ՝ և *գործակից*՝ և պաշտօնեայ: - 51. Իսկ զնիւսն *գործակից*՝ զօրութեամբ անսահմանելի. զի իւր ասեն արար *գործակից*. իսկ բնութեամբ սահմանելի. զի արարած է: - 51. Այլ այսորիկ զմիմեանց *գործակից* լինիլն յայտնեն: - 61. Այլ և *գործակից* նմա մարդիկ՝ անուանակից եղեն նմա և չար կոչեցան: - 148. Երրորդ՝ կամեցաւ զմարդն ի պատկեր իւր՝ երկրորդ ստեղծմանն աշխարհի *գործակից* և մասնակից լինիլ. վասն որոյ հրամայեաց ի նոցանէ առնուլ զնիւթ կազմելոյն: - 342. Եւ ուխտաւորն ի տուն սգոյ ո՛չ երթայ. այն է որ ի մեղքն այլ ո՛չ դառնայ. և ո՛չ ընդ մեղսասէր *գործակիցս*: - 390. Չորրորդ՝ զի և անասունքն *գործակից* լինին մեղացն. վասն որոյ ընդ մարդոյն կորնչին. որպէս ի սողոմ: - 416. Եւ որ ո՛չ եթող զոք մերձ. զի ո՛չ ոք լինի *գործակից* յարութեան մերոյ. որպէս և ո՛չ ստեղծմանն: - 444. Նա՛խ՝ զի միայն զհեշտ

ցանկութիւնն սիրեն հանապազ. ինքն և *գործակիցն* իւր: - 613. յիրաւի է ուրեմն որում անիրաւութիւնն եղև առնել դատաստան վասն վրիժու. քեպէտ նմա հայր և հոգին սուրբ *գործակից* լինին: - 735. Նմանապէս և չարեացն վկայ՝ ոսոխն մեր սատանայ և *գործակիցքն*. և խիղճ մտացս որով տանջիմք միշտ: - 743

**ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ +** Այսպէս միաւորութեամբ բանն աստուած օծաւ և սրբեցաւ ի հօրէ, ի ձեռն հոգւոյն սրբոյ *գործակցութեամբ*: - 475

**ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆ +** Եւ թէ ասիցէ հակառակօղն, եթէ՝ վերոգրեալ *գործառնութիւնքս* համարին հոգւոյն սրբոյ ո՛չ որպէս աստուծոյ, այլ որպէս պաշտօնէի: - 59. Այլ թերևս ասիցէ ոք եթէ՝ վերոյ ասացեալ *գործնառութիւնքս* պատշաճին քրիստոսի վասն բնութեան բանին, և ո՛չ վասն մարմնոյն: - 72

**ԳՈՐԾԱՏՈՒՆ +** Եւ *գործատունն* կրկին ասի. զի ամենայն արարածք կրկին են. այսինքն իմանալի և զգալի որք օրինեն զարարիչն: - 637

**ԳՈՐԾԱՐԱՆ +** Ութերորդ՝ զի որ *գործարան* է մահու՝ նա՛ է ապականացու: - 734

**ԳՈՐԾԵԼԻ +** Նոյնպէս և *գործելին* ի հրոյ այրեալ՝ է՛ դառն և աղի: - 208. Այլ և խաղաղականն որ է ի կարդալն՝ է՛ է փոխ. ի պահպանութիւն է զգայարանցս. և ի մաքրութիւն անցեալ *գործելեացն*: - 622. Իսկ ըստ քանակի, չափու *գործելեացն* առաւել և նուազ իւրաքանչիւրոց ի խորհուրդս ի բանս և ի գործս: - 746

**ԳՈՐԾԵՄ +** Դարձեալ ասեն թէ՝ բազումք ի մարդկանէ *գործեն* ի խառնուածոյ մարմնոյն, որք հարկաւորին ի շարժմանէ աստեղացն: - 10. Ասեմք առ այս, քեպէտ խառնուածք մարմնոյն լինին ի շարժմանէ՛ աստեղացն, այլ բազումք անձնիշխան կամօք նըւաճեն զվատախառնութիւն մարմնոյն, և *գործեն* զբարիս: - 10. Եւ թէ հետևեսցի՝ ոչ որ *գործեաց* զգեղեցիկս և զգարշելիս, այլ որ պատճառն է և հարկ՝ գովեսցի և պարսաւեսցի. այսինքն բախտն և ճակատագիրն: - 11. Դարձեալ, թէ է՛ հարկ՝ ո՛չ են իրաւունք դատաստանի և քննութիւն. և ո՛չ օրէնք քաղաքական. և ո՛չ արժանապէս հատուցմունք բարեաց և չարեաց. զի հարկն բռնադատեաց *գործել* զայս. հարկին եղիցին պատիւք և պատիժք. և ո՛չ մարդոյն: - 12. Դարձեալ ասեն, ի հակառակ շարժմանց՝ լինի և հակառակ ներգործութիւն. ահա մոլորակք շարժին հակառակ. ապա ուրեմն և *գործեն* հակառակս: - 12. Չորրորդնակ՝ արուեստաւոր ոք մինչ *գործէ* զսայլ, և ի հեռուստ տեսանէ ոք զոր նա՛ *գործէ*, այլ ո՛չ տեսութիւնն հարկեաց զսայլն լինիլ այնպէս. այլ կամք արուեստաւորին: - 16. Իսկ զչար ո՛չ կամի. և ո՛չ բռնադատէ ի չարն. այլ տանջանս և պատիժս եդ *գործողացն* զչար. ապա ուրեմն չարն ո՛չ է յաստուծոյ. և ո՛չ կամի զչար ուրուք: - 17. Դարձեալ ասեմք թէ՝ ըստ ինքեան սոքա ոչ են չար. այլ բարի. որպէս տգէտն ի մեղաց. և բարկութիւնն ընդդէմ չարեաց. և ցանկացօղն բարեաց. զի ըստ բնութեան *գործելով* ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն: - 19. Չորեքտասաներորդ՝ Զի հայր *գործէ*, և որդին նմին նման: - 29. Իմա՛, որպէս բրուտն կարէ՛ *գործել* անօթ ինչ, այլ ո՛չ երկինք, և երբեմն ի բարւոջ և երբեմն ի չար և ապականեալ. այլ ըստ այսմ ո՛չ լինի աստուած: - 44. Առաջին միտք՝ զի ասաց թէ «հայր *գործէ* և ես *գործեմ*». և վասն այնր զչարացան հրէայքն, այժմ իբր թէ զնուաստագոյնս ճառէ ի զիջումն բորբոքման նոցա: - 45. Երկրորդ՝ զի որպէս մատամբ գրեմք կամ *գործեմք* զամենայն գործս, այսպէս և հոգին սուրբ գրէր ի մարգարէսն...: – 62. Եւ զի զմեզ անապական *գործեաց* վերստին ծննդեամբն: - 78. Ապա ուրեմն մի՛ է ներգործութիւնն ի միոյ կամաց միոյն քիստոսի յառաջ եկեալ և *գործեալ*: - 85. Ըստ որում, «ես ասացի թէ աստուածք իցէք». զի ո՛չ էր ի զուր գալուստ նորա. այլ զի մեծամեծ իրս *գործեսցէ* : - 107. Վասն է՞ր է զի աստուած զանգործս և զոչէսն տեսանէ. իսկ մեք զեղեալն և *զգործեալն*: - 118. Պատասխանեմ առաջնոյն, քեպէտ մի և նոյն ուրացական մասնիկն որ է ո՛չն՝ *գործէ* զուրացումն և զբառնալն, այլ ուրացումն և բառնալն ո՛չ է նոյն. զի բազում պատահի որ գործին նոյն է որպէս ձեռն. այլ *գործելն* ո՛չ է նոյն. որպէս կտրելն և կարելն: - 124. Ա՛յլ է բանն՝ և ա՛յլ է ձայնն. զի բանն անմարմին ծնունդն է մտաց. և ձայնն է՛ շարժումն օդոյ ի ձայնական *գործեաց* ի յօդս բախեալ. իսկ ի սրտի միաւորին նոքա՝ այսինքն բանն և ձայնն. և լեզուաւ յօ՛դս բախեալ՝ հասանէ մինչև ի լսելիս, և անդ ձայնն արտաքոյ մնացեալ, և բանն անմարմին ի միտս լողացն նստեալ: - 131. Որպէս ո՛չ արտաքերի ինչումն ձայնական *գործեաց* և ո՛չ փոփոխէ զօդն որ ի մէջն: -145. Եւ այնչափ կուրացեալ է՝ մինչ զի պատերազմի ընդ դէմ աստուծոյ. քեպէտ զիտէ զայն լինիլ ինքեան ի չար, զի զոր ինչ չար *գործէ* անձնիշխան կամօքն, մեղանչէ մահու չափ: - 146. Տասներորդ) Աստուած բնութեա՞մբ *գործէ* թէ կամօք: - 154. Տասներորդ՝ գործ բութեան ո՛չ ինչ ունի մեղք. զի ըստ բնութեան *գործելով* ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն. իսկ կամացն գործ՝ մեղանչական է. վասն որոյ կամաւորին գով և պարսաւ հետևի: - 156. Չինգերորդ՝ մարդ թէ բնութեամբ և թէ կամօք *գործէ* կարօ՛տ է օգնականի, իսկ աստուած անկարօ՛տ է օգնականի: - 156. Երկրորդ՝ զի բանիւ *գործէ* արուեստաւորն. այսինքն իմաստութեամբ և

կամօք. այսպէս և արարիչն աստուած զամենայն եղեալքս կամեցաւ և արար...: - 164. Իսկ գործ բնութեամբ է՝ զի բնութիւնն առաջնորդէ՛ գործոյն. որպէս հուր բնութեամբ այրէ, և սարդն բնութեամբ *գործէ* : - 173. Եւ վասն զի բնութիւնն հարկաւոր է և նո՛յն առ ամենայնսն յաղագս որոյ ամենայնքն ի հարկէ զնո՛յն *գործեն*: - 173. Երրորդ՝ առանց ոտից ընթանայ. առանց թևոց թռչի. առանց լեզուի խօսի. առանց ձեռաց *գործէ* : - 177. Եւ զի ո՛ւժ առնուն դարձեալ *գործելոյ*: - 196. Վասն է՞ր հուրն հակառակ *գործէ* : - 202. Եւ *գործեալ* լինի փրփրատեսակ և սպիտակագոյն: - 205. Ութերորդ՝ ո՛չ արար նախ զմարդն, զի մի՛ արարչակից գիտասցէ զինքն ոչ գոյիցն, և անկցի հպարտութեամբ. այլ *գործօղ* գոյիցն...: – 231. Եւ այս իսկ է գործն, այսինքն վայելել հոգւով յիմանալիսն, և մարմնով ի զգալիսս. պարտ էր նախ գոյանալ նոցա, և ապա՛ *գործողին* և վայելողին: - 231. Զի թէ կորագլուխ էր մարդն, և երկոքին ձեռքն ի յերկիր հաստատեալ, ո՛չ կարէր *գործել*: - 233. Հինգերորդ՝ զի տկարութիւն է զօրութեանն աստուծոյ՝ եթէ զմի էութիւն ըստ մասին յայլ և այլ ժամանակս *գործեաց*: - 254. Նա՛խ՝ զի մնացորդք գործոց և խորհրդոց կերպարանին ի յիշատակարանս հոգոյն զոր ինչ *գործեաց* ի անցելումն, կամ խորհեցաւ վասն հանդերձելոյն: - 268. Երրորդ՝ *գործելն* վաստակաւ: - 287. Իսկ *գործել* ասաց զերկիր, զի դրախտին չեղև արժանի: - 287. Երրորդ՝ ասէ չտայ զզօրութիւնն, զի մի՛ դադարեսցիս ի *գործելոյ*: - 287. Երրորդ՝ զի որ նոր չարիս *գործեսցէ*՝ առաւել պատժեսցի: - 288. Քաղելով *գործելն* այն է, որ **ժե** կանգուն հաւասար բարձրացոյց, զի մեծահասակ կենդանիքն հանգիցեն: - 293. Իսկ քաղելով *գործելն*, զի սկսեալ բնութիւնս մեր ի գլխոյն լայնանայ ի թիկունքն՝ և նրբի ի կրունկն, և բոլորեալ դարձեալ կատարի ի գլուխն: - 293. Եւ զի մի՛ մարդիկ ի պատճառս նորա մեղս *գործեսցեն*. վասն որոյ ո՛չ կարէին տեսանել զտապանն: - 296. Երկրորդ՝ զի մի՛ միաբանեալ ի չարն անզղջապէս *գործեսցեն*: - 298. Երկրորդ՝ օտար և ընդ դէմ բնութեան *գործեցին*, օտար և երկնատեղաց հրով այրեցան: - 303. Չորրորդ՝ նոր չարիս *գործեցին*, խիստ և առաւել պատուհասեցան. որպէս և կայեն. զի նշան լիցին աշխարհի ահի՛ և երկիւղի: - 303. Իննևժ, յովսէփ ստացաւ ոսկի և զարծաթ և զերկիրն եգիպտացւոց՝ փարաւոնի. այսինքն զզէնս սատանայի. զի փարթամութիւնն մեծ զէն է սատանայի որովք *գործէ*՛ զամենայն պղծութիւնս. որպէս երկիրն սոդոմայ պարարտութեամբ *գործէր* զմեղս: - 314. Չորրորդ՝ ի խրախութիւն գինւոյ՝ **ժ** մեղք *գործին*. այսինքն Նա՛խ՝ բազմակերութիւն...: – 322. **ժ**՝ պատուիրանացն աստուծոյ հեղգութիւն *գործէ* : - 322. Երկրորդ՝ սպիտակ. և նոյնպէս նշխարն. զի անաղտ և մաքուրս *գործեն*: - 339. Եօթներորդ՝ առաւօտին. զի առաւօտ *գործէ* կերողացն հալածելով զխաւար մեղաց: - 339. Նա՛խ՝ զի խմորն զհին չարութիւնն ցուցանէ. որ նախ հրաժարիլ պարտէ, և ապա՛ զբարիս *գործել*: - 356. Եւ ողջակէզ սրբութեան է՝ յետ ապաշխարութեան զբարիս *գործել*. և զբովանդակ զհոգի և զմարմին մեր նուիրել աստուծոյ: - 362. Այսինքն յորժամ խոստովանին և փոխին յապաշխարութեան վարս, պատառեն զմեղս և սրբին ի *գործեցեալ* մեղացն: - 367. Որ նշանակէ՛ սերմն զգործն. որ քանի ի մեզ է՝ ո՛չ է պիղծ. և յորժամ *գործի*՝ պղծէ՛: - 369. Նախ ինքն գործն պիղծ է. և պղծէ՛ *զգործօղն*. և պղծէ՛ զմերձեցեալսն ի նա՛: - 369. Որ *զգործեցեալ* մեղս ապաշխարութեամբ քաւեմք. ճնշելով զանձինս մեր պահօք: - 373. Եւ մինչ ի **կ** ա՛մն *գործեն* զքահանայութիւնն որպէս սուրբ հա՛րցն է կանոնեալ: - 379. Դարձեալ՝ զղջմամբ սատակի չար խորհուրդն. և ապա՛ խոստովանիմք լեզուաւ. և զնոսա փոխեալ *գործե՛մք* զբարիս: - 380. Երինջն ըստ իրաւանցն ունէր զմեղս ժողովրդեանն. և խորհրդովն քրիստոսի՝ սրբութիւն *գործէր*: - 384. Դիւթ է՝ որ ձեռօք և նիւթո՛վ *գործէ*. որպէս գարի, և ալիւր, և աւազ, և ջուր, և քար. և այն որ թզով չափէ, և այլն ամենայն: - 388. Եւ ա՛յս է գերծուլն, զառաջին *գործեալ* մեղքն սրբել խոստովանութեամբ. և զապաշխարութեան գործն մատուցանել աստուծոյ: - 389. Գլուխն նշանա՛կ է մտաց. զոր չէ պարտ յաւելուլ՝ և ո՛չ պակասել. որպէս մուրճ ո՛չ *գործէր* ի սեղանն զի մի՛ պղծեսցի: - 390. Երկրորդ՝ քաղց և ծարաւ մեղաւորաց. և առանց վաստակելոյ և *գործելոյ*: - 393. Չորրորդ՝ ձեռն գործոց է նշանակ, և բազուկն զօրութեան զի անաշխատ *գործէ*: - 395. Եւ աստուած անաշխատ *գործէ*՛ և ո՛չ վաստակի: - 395. Չորրորդ՝ նշան թէ՝ զոր ասէ և լինի. և տէր մեր զգործս աստուծոյ *գործէր* առ կաղս և կոյրս և հիւանդս և մեռեալս. զոր ասէր բանիւ՝ կատարէր գործով: - 399. Զայս նշանակէ թէ՝ յետ ելանելոյ հոգւոյ ի մարմնոյ և գնալոյ ի վերին շաւիղն, հակառակ կայ սատանայ և չար զօրութիւնքն ընդ նմա, տանիլ զհետ իւրեանց որ զչա՛րսն են *գործեալ*. և յարդարոցն յաղթին հրեշտակին օգնութեամբն. որպէս և անտօն ետես. զի իմացեալ և մեք զգուշասցուք այնմ: - 410. Վեցերորդ՝ և զպատկերս կռոց երկաթով *գործէին*: - 415. Քսանևէ՝ դարան *գործեաց* ի գայի և յաղթեաց նոցա: - 419. Զի սամփսոն ի ժամ գերծելոյ գլխոյն թմրեալ ի ծունկս թալիլայ խոնարհէր. նոյնպէս և ամենայն մեղք զոր *գործէ* մարդ, և առաւել գէճ ցանկութիւն, անարգէ զմարդ: - 424. Երկոտասաներորդ՝ զերկանս սպասու մարմնոյ *գործեսցէ* միշտ և ի նոյն մեռանի

որպէս սամփսոն: - 424. Երկրորդ՝ զի մի՛ ի պատճառս նորա չարիս *գործեսցեն*. որպէս ասէին «տաճար տեառն առ մեզ է»․ և զանօրէնութիւնս առնէին: - 425. Զի գա՛յ զղջումն և խոստովանութիւն՝ որ զմեղքն բառնայ և զպատիժն ընդ նմին. որպէս հատեալ տունկ՝ չորանան ճիւղքն. որ բոլորով սրտիւ զղջայ և խոստովանի և այլ ո՛չ *գործէ* : - 432. Եւ է՛ որ խոստովանի. և ոչ մեղքն միայն թողուի. որք թերի են սրտիւ. և զմեղս թերի խոստովանին. և ի միտս եդեալ են դարձեալ *գործել*. այսպիսեաց ոչ մեղքն թողուի և ոչ պատիժն. զի որպէս զշուն դառնայ ի փսխած իւր: - 432. Ասեմք թէ՝ մեզ պա՛րտ է ի մտի պահել և ի լեզուի զմեղս. և ցաւիլ և հոգալ հանապազ վասն անցեալ մեղացն և *չգործելոյ* բարեացն: - 433. Իսկ այժմ ուխտէ՛ սպանանել. զի ըստ օրինացն զգործ արդարութեանն *գործեսցէ*: - 439. Զի անդ որ *գործէր* զմեղս՝ և որ վրէժ ոչ խնդրէր՝ միապէս էր յանցանք: - 439. Դարձեալ՝ զարդարութիւն *գործէր* զի հաշտեսցի աստուած. վասն որոյ ինքնին սպան զամենայն. այս զուգծ յիսուսն, փոխանակ մարգարէիցն աստուծոյ զոր եսպան եզաբէլ: - 444. Երկրորդ՝ զի հ ամն իբրև զմի օր համարեցաւ նոցա. զի հանգիցեն ի չար գործոց, և երկիրն ի չար *գործելոյ*: - 448. Զի ի ոռբովամէ՛ որ զերինջսն *գործեաց*՝ վեց եօթանասուն ամ է մինչև զգերութիւնն սակաւ ինչ պակաս. վասն որոյ եօթանասուն ամ շաբաթեցոյց զնոսա ի գերութեան: - 448. Երրորդ՝ որպէս զստնդիայի մանուկն է ամ խրատէ՛ դայեակն. այսպէս ժողովուրդն որ ել յերկրէն իւրեանց, երկիրն բաբիլացւոց **հ** ամ ի գիրկս իւր դայեկեաց զնոսա և սնոյց. զի յետ դարձին յերկիրն իւրեանց՝ զբարիս *գործեսցեն*: - 448. Զի՞նչ *գործեաց* մահն քրիստոսի: - 454. Երրորդն երևի յորժամ աստուած արդարացուցանէ զմեղաւորն. յորժամ պատրաստէ՛ զինքն առ շնորհին *գործելով* զբարին: - 459. Իսկ բանին աստուծոյ քաջ սիրով եռացումն ընդ մարմնոյ անբաժ և անորիշ *գործեաց* միաւորութիւն: - 478. Իններորդ՝ զի ի հոգի՝ ի նմանամասունս և յաննմանամասունս այլ և ա՛յլ *գործէ*. ըստ որում ակն տեսանէ և ո՛չ լսէ. բերանն ճաշակէ՛ և ո՛չ հոտոտէ: - 479. Եւ աւուրք պաշտամանն էր երկոտասան. **ե** օր քաւութեանն վասն որթոյն յանապատին. և **է** օր տաղաւարահարացն ի յիշատակ խորանաւ բնակելոյն յանապատին ամս խ. և այլ սքանչելեացն զոր *գործեցաւ* անդ: - 483. Զի՞նչ *գործեաց* մահն քրիստոսի: - 491. Զմեղքն *գործեաց* ադամ: - 496. Վասն որոյ զնոյնս *գործեաց* ի դժոխս: - 503. Եւ պատճառե՛ն զպատճառս մեղաց *գործօղքն* անօրէնութեանց: - 510. Դարձեալ՝ որ ինչ նախ քան զօրէնս *գործեին*՝ մեղք կոչիւր. որպէս ի դարս նոյի. և այլս: - 555. Եւ այս յիրաւի իսկ. զի որ հայեցաւ ցանկական մտօք՝ ի կամս իւր *գործեաց* զմեղս: - 556. Վասն այն այլ վարդապետք կոչեն զայս ախտ՝ ծուլութիւն. զի ծուլութիւնն յերկու իրաց երևի. մին որ յետս դառնայ ի հոգևոր բարւոյն և ծանրանայ ի *գործելն*. այսինքն պահել՝ աղօթել և այլն. և ըստ այսմ կոչի տրտմութիւն: - 559. Դարձեալ, զի ամենայն մեղք նախ ի խորհուրդն սերմանի և ապա բուսանի և աճէ *գործելովն*: - 559. Ի վայր շարժումն է տրտմութիւն և ծանձրութիւն. որ է՛ ծուլութիւն. զի մինն ծանրանայ և ո՛չ *գործէ* զբարիս. և միւսն տրտմի և պակասի: - 560. Երրորդ՝ զի զայլ մեղս մեղսասէրքն *գործեն*. իսկ զհպարտութիւնն սուրբք և ընտիրք. որպէս հրեշտակք յերկինս: - 562. Իսկ ամբարտաւանն ո՛չ իմանայ զմեղսն զոր *գործէ* հպարտութեամբ. այլ գիտէ ևս թէ առաքինութիւն է: - 562. Երկրորդ պատճառ, զի այսոսիկ անասունքն *գործեն* ըստ բնական կարգին. իսկ մեք ի հակառակն փոխեմք: - 564. Նա՛խ՝ ի գործն և ի պատիժն. յորժամ գիտէ ոք թէ այն գործն մեղք է և *գործէ՛*. և գիտէ՛ զպատիժ այն մեղացն որ ծա՛նր է: - 564. Երկրորդ՝ *գործօղն* որ ունիցի զճշմարտութիւն ինչ կարգի՝ թողու զայն և *գործէ՛* զմեղս: - 564. Երրորդ՝ ի յաստուած գիտութիւնն. որ եկեալ իցէ ի հաւատս ճշմարիտս. և գիտէ զքրիստոս աստուած ճշմարիտ. թողու և *գործէ՛* զմեղս կամ զհաւատն: - 564. Եւ թէ **բ** մարդ *գործեն* զմեղս զայսոսիկ, սպանանելն մեծ է քան զսուտ վկայելն. և այլն նմանապէս: - 565. Երկրորդ ըստ որակին. որպէս թէ բ մարդ *գործեն* զորովայնամոլութիւն: - 565. Երրորդ, ըստ քանակին այսպէս. զի ոմն մի *գործեաց* զպոռնկութիւն, և ոմն **ռ**: - 565. Այն որ բազում *գործեաց*՝ մեծագոյն պատիժք զմիւսն: - 565. Չորրորդ ըստ առընչին. այսինքն թէ առ ի՞նչ իրք *գործէ* զմեղքն. զի մարդն **դ** դիմօք *գործէ* զմեղս. այսինքն դիմաց աստուծոյ, դիմաց եկեղեցւոյ, դիմաց ընկերին, դիմաց իւր անձինն: - 565. Հինգերորդ ըստ ուրին. թէ ուր *գործեն* զմեղքն. կամ ի վանք, կամ յեկեղեցի որ է տուն աստուծոյ. կամ ի գեօղ, կամ ի քաղաք, կամ ի պոռնկատուն: - 565. Որ յեկեղեցին *գործէ*՝ մեծ է քան զայլն: - 565. Վեցերորդ ըստ երբին. այսինքն թէ ե՞րբ *գործեն* զմեղքն. ի տղայութեա՞ն, թէ ի ծերութեան որ մեծ մեղք է. ի սո՞սկ աւուրս, թէ ի տէրունական տօնս. զի որ ի տօնս մեղք *գործէ*, առաւել պատժի քան զմիւսն: - 565. Նոյնպէս և Կալն և Ունելն զամենայն մահու չափ մեղս. թէ *գործեալ* է և թողեալ. զի որ հաստատեալ է մեղքն յինքն, առաւել մեղանչէ: - 565. Նաև ի յայն որում թողեալ լինի՝ **բ** ինչ պահանջի. այսինքն ցաւ վասն *գործելոցն*, և մտադիւրութիւն վասն ոչ *գործելոցն*. – 567. Զի սատանայ այլ մեղք ո՛չ *գործեաց*, քան թէ խորհեցաւ զյատուկ բարձրանալն իւր...: – 569. Կամ այլ ազգ. սէրն է սկիզբն գործոց բարեաց, զի շարժէ՛ առ այն. որպէս ասեն վարդապետք՝

սէրն *գործէ՛* մեծամեծս թէ է՛. և թէ դադարէ ի *գործելոյն* ո՛չ է սէր: - 575. Իսկ ընդ դէմ այսմ, դիւական տրտմութիւնն ի մարմինն է և վասն մարմնոյն. և զարտասուս ցամաքեցնէ. և տրտմի և ամբոխի. և հետևի նմա ոխ և ատելութիւն. այլ և մահ ևս *գործէ* որպէս ասէ առաքեալն: - 584. Տղայն իւր կամաւն ո՛չ *գործէ*. վասն է՞ր է պարտական մեղացն ադամայ: - 591. Եւ վասն այն է գրեալ՝ յերրորդ կամ ի չորրորդ ազգս մեղաց վրէժ խնդրեսցի. յորժամ հայրն և որդին և թոռունքն զնոյն մեղս *գործեսցեն*: - 593. Ա՛րդ՝ զբարի գործս ամենայնցն հրամայէ կերակրել և *գործել*. - 600. Ապաշխարութիւնն է ցաւիլ վասն մեղացն զոր *գործեաց*. - 601. այսինքն յի՞նչ տեղ կամ յի՞նչ ժամանակ *գործեաց* զմեղքն: - 601. Եւ գիտելի է, զի մարդ որ ի մեղք անկանի և իմանայ զինքն որ մեղք *գործեաց*, և ունի զխոստովանահայրն պատրաստ ուղղափառ և գիտուն, ի յա՛յն պահն պարտի խոստովանիլ: - 601. ...տայ խրատ և զգուշացուցանէ ի մեղացն որ այլ *չգործէ*. - 602. Եւ դարձեալ տամ զքեզ ի խորհուրդ սուրբ եկեղեցոյ. զոր ինչ *գործեսցես*, եղիցի քեզ ի բարեգործութիւն և ի փառս հանդերձեալ կենացն ամէն: - 602. ...այլ ապաշխարութիւնն ցանկ է և պարիսպ ապագային զի մի՛ ևս *գործեսցէ*: - 602. Այսպէս ասէ սուրբն դիոնէսիոս եթէ՝ մաքրելիք են **Ե** դասք. յորոց վերայ իշխէ սարկաւագն և *գործէ՛* զմաքրականն: - 608. Հինգերորդ՝ որք բոլորովիմբ զղջացեալք և թողեալք զմեղս՝ *գործեն* զբարիս. զնոսա հովուէ՛ դպիրն սաղմոսիւք և ալէլուիւք: - 608. Եւ սոքօք զամենայն բարի և զչար *գործէ* մարդ. վասն որոյ ի ցերեկն ե անգամ աղօթեմք: - 622. Տեսանէր ժողովուրդն ուր կայր աստուած, և ընդ ոտիւքն իբր *զգործած* աղիւս շափիւղայ. որ է՛ ակն պատւական. և աղիւսն խաչաձև է: - 639. Չորրորդ, որոյ ամէն գործքն բարի լինի և մին մեղք է *գործեալ*...: - 664. Եւ կոչի պատանք, զի պատեալ և կապեալ է զամենայն զգայարանսն. և ոչ ինչ կարէ *գործել*. ո՛չ չար և ո՛չ բարի: - 671. Եւ զի կտաւն յերկրէ է և արուեստիւ *գործեալ*. ցուցանէ թէ զոր ինչ *գործեաց* ոք ի յերկրի, զնոյն զգենու և զարդարի: - 671. ...զի նոքա ո՛չ չար են *գործեալ* և ո՛չ բարի. ո՛չ տանջին և ո՛չ պսակին. – 675. Չորրորդ, զի **գ** է ժամանակ յորում *գործեմք* զմեղս. այսինքն անցեալն ներկայն և հանդերձեալն...: – 675. Իսկ տապանաքարն, Նա՛խ՝ զի մի՛ *գործեսցի* երկիրն այն յայլ ինչ գործ, կամ քակտեսցի վասն այլ մեռելոյ: - 679. Դարձեալ՝ գիտութեամբ և կամօք *գործեցաք* զմեղս. - 680. Գիտե՞ն նոքա զոր ինչ աստ *գործեմք*, թէ ոչ: - 685. Հոգիք արդարոցն զամենայն գիտեն զոր ինչ վասն նոցա *գործեմք*. և վասն մեր բարեխօսե՛ն և կատարե՛ն զխնդիրս: - 685. Իսկ արդարքն և մեղաւորքն միջակք՝ որք առին զօրէնսն և ըստ օրինացն *գործեցին* զբարիս. կամ սխալեցին: – 687. Քսանևզ, ո՛չ է արդարութիւն աստուծոյ թէ այժմ հատուցանի. զի մարմին և հոգին ի միասին *գործեցին* զչար և զբարի: - 694. Դարձեալ ասեն՝ հոգին յառա՛ջ *գործէ* զբարին զի նախ իմանայ և կամի: - 696. այլ *զգործելն* ի միասին *գործեն* հոգին և մարմինն: - 696. Երկրորդ, զի առանց ահի և ամօթոյ զմեղս *գործեն*. - 698. Հինգերորդ, հոգի և մարմին ի միասին *գործեն* զմեղս որպէս ասացաւ ի վերոյ. – 699. Ա՛րդ՝ եթէ մարմինն ևս *գործեաց* զմեղս, պա՛րտ է և նմա կրել պատիժ: – 699. Եւ որ *գործէ* զբարիս առանց հաւատոյ, այն է որ առնէ շինուած ի վերայ աւազոյ: - 702. Եւ դարձեալ՝ հոգին և մարմինն ի միասին *գործեցին* զբարի կամ զչար. - 715. Վեցերորդ, զի յարութիւնն է գործ սքանչելեացն աստուծոյ և ո՛չ բնութեան. զի բութիւնն հունաւորեալ է զօրութեամբ յերկար ժամանակս *գործէ*: - 717. Զի ուր և *գործեցին* մարդիկ՝ գիտեն երկինք և երկիր: - 729. Եւ յորում ժամու և *գործեն* վկայե՛ն տիւ և գիշեր. - 729. Որք ի վեր քան զօրէնս *գործեցին*. որպէս առաքեալք, մարգարէք, մարտիրոսք, կուսանք, և այլք: - 739. Հաւատացեալ արդարք. որք ըստ օրինաց հնոյն կամ նորոյս *գործեցին* զարդարութիւն. կամ որք սխալեցին և ապաշխարեցին զմեղս զղջմամբ խոստովանութեամբ պահօք աղօթիւք ողորմութեամբ և այլովք: - 739. Եւ որ քան *գործեմք* զմեղս, այնքան բազմանայ ծնունդն նոցա. և ծուլութիւն և հեշտութիւն մեր սնունդ է նոցա: - 753. Եւ վասն այն կոչի եկեղեցի արքայութիւն, զի որ ի ներկայիս եկեղեցւոյ արքայութիւն առնէ և *գործէ՛*, ունի զվախճան մեծի փառաց: - 754. Երրորդ անդուստ՝ զի իբրև նոքա որ այն քան տկարքն էին՝ սակայն յա՛յնպիսի թշնամին այն քան յաղթութիւնս *գործեցին* ըստ յոբայ: - 765. մարմնով մեռելոցն անթիւ օճիրս ստախօսութեան *գործէր*. զանտի կենաց զյարութեան յուսոյ և զհատուցմանց ըստ գործոց՝ բառնալով. զերկիւղ դժոխոց և զսէր արքայութեան. և զամենայն ինչ որ նմանէ այսմ հոգևոր բարութեան: - 775. Եւ առ ընդունակ նոցին դադարիլ շնորհին *գործելոյ*, բացբարձումն է շնորհին իջելոյ: - 783. Եւ զայս ո՛չ շաբաթու և աւուրց սպառեալ. այլ ամսոց երից սորին յերկարեալ. և *գործելոց* վրէժ ո՛չ կշիռ հատուցեալ: - 789

***ԳՈՐԾԵԼ ՏԱԼ –*** Ապա թէ զկամքն երետ՝ ուրախանայ և կենայ ի մօտն մինչև զմեղքն *գործել տայ* և հանէ ի բարւոյն: - 161

**ԳՈՐԾԻ +** Դարձեալ, որոյ է իր *գործեացն*՝ նորա՛ է և ներգործութիւնն. եթէ առնել և եթէ կրել. արդ՝ մարդո՛յ է հոգին և մարմինն և ձեռն. մարդո՛յ է ուրեմն և գործ նոցին, եթէ չար և եթէ բարի: - 11. Եթէ ըստ

մեզ կարծէք զծնունդն, պիտոյանայ երկուորիս և *գործիս* հօր. լիցի և այրութիւն և իգութիւն յաստուած. և լիցին որդիք երկորեակք էրէց և կրտսեր: - 52. Պատասխանեմ առաջնոյն, թէպէտ մի և նոյն ուրացական մասնիկն որ է ո՛չն՝ գործէ՛ զուրացումն և զբառնալն, այլ ուրացումն և բառնալն ո՛չ է նոյն. զի բազում պատահի որ *գործին* նոյն է որպէս ձեռն. այլ գործելն ո՛չ է նոյն. որպէս կտրելն և կարելն: - 124. Իսկ յանցումն օրինացն՝ լինի զէն և *գործի* դիւացն որով պատերազմին ընդ մարդոյս: - 151. Առաջին՝ զի ամենայն գիր *գործիք* է բանի. և ունի իմաստութիւն և բան ծածկեալ յինքեան: - 177. Երկրորդ՝ ձայնական *գործիքն*. որ են է. որպէս Շրթունք. Ատամունք. Լեզու. Մակալեզու. Բերան. Խռչափող. Թոք: - 216. Եւ սողունք որք պակա՛ս են ի ձայնական *գործեաց*, սո՛ւղ են և ձայնից: - 216. Այսպէս և գլուխն ի մարմինն է՛ վերջին մասն. որ է՛ *գործիք* բանին. և սիրտն ի մէջն. և երիկամունքն վերջին: - 232. Որպէս օրինակաւ մասունք հոգւոյ ասացան, նոյնպէս է և մասունք մարմնոյն իւրաքանչիւրոցն *գործի*: - 250. Եւ է՛ *գործի* իմացման նոցա՝ յիշումն. և ենթակայ՝ երկնային մարմինք՝ և էութիւնք եղելոց: - 269. Եւ է՛ *գործի* իմացման նոցա՝ ձեռք և մատունք. և ենթակայ՝ նիւթք երկրաւոր: - 269. Եւ է՛ *գործի* նոցա՝ տրամախոհութիւնն. և ենթակայ՝ բանից զանազանութիւնք: - 269. Եւ է՛ *գործի* իմացմանս այս՝ լոյս հաւատոյն. և առաջադրեալ՝ աստուածայինքն և իմացականքն: - 269. Եւ որպէս է է *գործիք* ձայնին, որ է՛ թոքն. խռչափողն. մակալեզուն. բերանն. լեզուն. ատամունքն. և շրթունքն. և սոքա միաբանին ի խօսքն: - 296. Եւ այս ևս գիտելի է, զի լեզու կոչի *գործիք* խօսիցն. և լեզու կոչի որակ խօսիցն: - 297. Ութերորդ՝ խաչն փրկական նախ էր մահու *գործիք*. զոր առեալ ի ձեռն քրիստոս, և եղև կենաց պատճառ: - 332. Եւ ծնօտ՝ որ է՛ զիկն բոլորեալ. զիմանալի կերակուրն նշանակէ նոցա. զի ծնօտն *գործի* է կերակրոյ: - 344. Ապա ուրեմն յերրորդ և ի չորրորդ ազգն հաստուցանէ աստուած զմեղս՝ յորժամ վասն *գործեաց* զյամառեալն ի մեղս պատժէ՛: - 351. Հինգերորդ՝ որ զսափորն և զայլ *գործիսն* ի վերայ դնէին: - 364. Չորրորդ՝ ընտրելի է զէնն որ է՛ *գործիք*. զի լիցի սուր երկաթոյ. զի երկա՛թն է *գործի* բաժանման: - 366. Հինգերորդ՝ երկաթն սպանմա՛ն է *գործի* քանանացւոցն: - 415. Եօթներորդ՝ երկաթն շինականա՛ց է *գործի* և երկրագործաց՝ անարժան վարկաւ: - 415. Իններորդ՝ սպանմանն աքէլի *գործիք* եղև որպէս ասեն. ուստի գայլախազ կոչեցաւ. զի սրբեսցի դրոշմաւն: - 415. Եւ զի ծնօտ է՛ *գործի* կերակրոյ. և անուրբ և անբան կենդանւոյ մասն: - 423. Եւ զայս *գործի* հմայութեան առնէին. և քաւութիւն թարգմանի: - 425. Եւ ի մեզ է են ձայնական *գործիք* որով սաղմոսե՛մք: - 431. Երրորդն ի միոջէ և առ մի. որպէս բժշկական դեղ և *գործիք*. նոյնպէս մի է եկեղեցի յիւրաքանչիւր ազգս. զմի և զնոյն ունելով գործ և իր ի միոյ գլխոյն առ մի անդամքս. ի միոյն քրիստոսէ առ մի քրիստոնեայքս. ի միոյ հաւատոյն առ մի հաւատացեալքս...: – 533. Ձեռք՝ քահանայք *գործիք* սուրբ խորհրդոցն: - 534. Եւ այս է պատճառն, զի աստուած ետ մեզ միտք և բան և ձայնի *գործիք* և մարմնոյ մասունք և ինչք. վասն որոյ յամենայնէ՛ նուիրելի՛ է աստուծոյ: - 619. Եւ ստեփաննոսս այս՝ արար *գործիք* իզ որիշ որիշ. և նոքօք երգէր: - 640. Իսկ թիմգիանոս արար մի *գործի* և իզ աղի: - 640. Եւ յետ սորա թովնաս երաժիշտ՝ այլակերպ յօրինէր *գործի*...: – 640. Եւ ոմանք առանց *գործեաց* երգէին: - 641. Առանց *գործեացն* երգ ասի. և *գործեօքն* սաղմոսարան: - 641. այլ արար *գործի* տասն աղի. զի տասն մատամբն որպէս խօսս նուագեսցէ աստուծոյ: - 641. Որպէս լեզուն մտաց՝ և ձեռքն սրտին է *գործի*. նոյնպէս ունկն կամա՛ց է. հնազանդութեան և կամ ոչ: - 658. Եւ ո՛չ միայն խաչն, այլ և ամենայն *գործիք* չարչարանացն. այսինքն բևեռքն գեղարդն և այլք. որք բերին առաջի դատաւորին. և ի մարմին նորա երևին սպիք խոցուածոց նորա...: - 732. Այլ և կենդանութեանց քակտիչ է. զի *գործիք* է մահու: - 732. Մանաւանդ թէ՝ հոգին սուրբ գրօղ դպիր. և ուղղութիւնն գրիչ *գործիք*. և որք զմելանն առատ տամք և զմագաղաթն, զսուրբ գործս անկեղծաւոր և զբանս աղօթից օրինաւոր, ա՛յնքան առաւել գրիմք ի գիրն կենաց: - 741. Եօթներորդ, այլ և զ է *գործիք* բանին. խելքն որ ծնանի. սիրտն որ խորհի. լեզուն որ խօսի: - 742. Երրորդ՝ կամ *գործիք* տանջանացն նուագին. իսկ անդ հուրն է յաւիտենական որ ոչ պակասի: - 750. Սա՛ է ձորն այն յորում լսելի եղև հնչումն տապարին և ա՛յլ *գործեաց*: - 756. Իսկ ըստինք յատկապէս *գործի՛* է բնութեան ի պէտս սննդեան այնոցիկ ծննդոց զօրէն սերմանեաց երկրի. յորմէ հիւթոյ արեանն գոյացելոյ, ընդ ազուգայս երակաց արտագունեալ որակօք կաթն փոխակերպեալ: - 786

**ԳՈՐԾԻԱԿԱՆ +** Հինգերորդ՝ միտքն տեսանէ որպէս ներգործական պատճառ և արհեստաւոր. և զգայութիւնն որպէս *գործիական* պատճառ և միջնորդ: - 121. Իսկ դատապարտեալքն ծանրացեալ մասամբք և զազիր անդամօք այր և կին. զի իւրաքանչիւր ոք ի *գործիական* անդամս իւր կրեսցէ զպատիժն: - 726. Կշռիք *գործիական* առ մեզ յայտնի՛ է. որ զարդար հաւասարութիւն նշանակէ ի ձեռս մեր: - 744

**ԳՈՐԾՆԱԿԱՆ +** Որպէս *գործնականն* որ է բարոյականն՝ սկսեալ է ի բարւոյն աստուծոյ. և կատարի առ բարին: - 121. Դարձեալ՝ *գործնականին* սկիզբն կամքն է. և տեսականին իմացական զօրութիւն մտացն: - 121. Եւ տեսականն և *գործնականն* զարդարիչք են սոցա: - 248. Եւ անբանքն *գործնականաւն* զարդարի: - 248. Վասն այսորիկ կատարեալ իմաստութիւնն յերկուս բաժանի. ի տեսականն և ի *գործնականն*. այս ըստ դաւթի: - 248. Երկու հաւն՝ կրկին զօրութիւնք ի մեզ. տեսնական և *գործնական*: - 368. Զի *գործնականաւն* մեռանիմք ընդդէմ մեղացն. և տեսնականաւն մտօք թռչիմք ի դրախտն որ է՛ դաշտ երկնային: - 368. Երրորդ՝ ի կառավարել *զգործնական* և զտեսական կեանս. այսպէս աստուածային և մարդկային առաքինութիւնքն են որ ասացաւ: - 583. Ի յասացելոցս յառաջագոյն այս ինչ հաւաքի, եթէ ունակութիւնք մարդկային առաքինութեանց նախկնաբար պատրաստե՛ն ի վարժումն *գործնական* կենացն. իսկ ունակութիւնք պարգևացն պատրաստե՛ն ի վարժումն տեսական կենացն: - 586. Ութերորդ, զի ունիմք բ առաքինութիւն. այսինքն տեսական և *գործական*. - 654

**ԳՈՐԾՈՒԹԻՒՆ** - Յէից՝ որպէս դու ի քո հօր մէջքն էիր զօրութեամբ, և յետոյ ծնար նոր *գործութեամբ*: - 37

**ԳՈՐԾՈՒՆԵԱՅ +** Այլ և ո՛չ բ սկիզբն. զի *գործունեայք* չարին սկսեալք են: - 16. Յինգերորդ, ասեն թէ՝ *գործունեայք* չարին են յաստուծոյ որպէս կամքն. ապա և չարն է յաստուծոյ. զի նա՛ ստեղծ զկամքն: - 16. Երկրորդ՝ զի *գործունեայք* և հաւանօղքն այնպիսեացն պատժեսցին. որպէս ի յերկրորդ օրէնքն հրամայէ՛ սպանանել այնպիսիսն. իսկ հաստատունքն ի հաւատս՝ վարձս առցեն ի հաւատոց իւրեանց: - 388-389. ...զի *գործունեա՛յ* է նոցա և կամարար: - 669

**ԳՈՐՇ +** Կապոյտ. *Գորշ*. և այլն: - 212

**ԳՈՐՏ +** Երկրորդ՝ յայլմէ այլք. որպէս ջորիք. և յարեգակնէ և յերկրէ *գորտք* և մկունք: - 53. Երկրորդ հարուածն է՛ *գորտն* զոր բղխեաց գետն: - 334. Երրորդ՝ զի առ աքիմելէք նոյնպէս եղև. և որպէս յեգիպտոս *գորտն*. նոյնպէս և անդ մուկն: - 426

**ԳՈՒԲ +** Այլ մեզ զոր գիրք սուրբք լռեալ են՝ լռութեամբ պատուեսցի. և մի՛ մտացածին բանիւք վտարանդեալ ի *գուբ* կորըստեան անկցուք: - 226. Երրորդ՝ յովսէփ ի կրկին *գուբ* եմուտ և ապրեցաւ: - 313. Նոյնպէս և աստ հոլովմամբ ժամանակաց ընթանամք մինչև ընկերեսցի անիւն ի *գուբն*: - 314. Ութևժ, զքագաւորս նոցա կախեաց յերկնդի փայտէ. և յերիկոյն ի *գուբն* սուզեաց: - 418. Իսկ վերջին դժոխք որ կոչի անջրդի *գուբ*, նոցա՛ է որք ո՛չ ունին չար և ո՛չ բարի. որպէս մանկունք անմկրտեալք. ո՛չ տանջին զի չեն մեղանչեալ. և ո՛չ հանգչին զի չեն արդարացեալ. այլ վասն սկզբնականին մնան յանջրդի *գուբն* խաւարին: - 505. Իսկ Չորրորդն արքայութիւն՝ է՛ յաւիտենականն գաւառ. յորմէ ի ձեռն մեղաց առաջնոյ մարդոյն՝ տարեալք պանդխտիմք յայսմ տառապանաց *գբի* և ի տիղմ կաւոյ. անարգաբար դեգերեալք ի հովիտս արտասուաց. յանապատի կալով և ո՛չ ի ճանապարհի...: - 756

**ԳՈՒԲՂԱՅ +** Նոյնպէս է էր կանոնք սաղմոսին. և է է *գուբղայք* կանոնացն: - 626. Իսկ ի նորս առ մեզ, Սակաւ ինչ հոգացեալ զեօթնիցս, այլ ութերորդին փոյթ տարեալ դարուց աւանդապահք եկեղեցոյ, կարգեցին ութն կանոնս ըր *գուբղայիւ*: - 627. Իսկ զոր կանոն զլուխ կոչեմք, ասելով զ *գուբղայ* հանդարտ ի թիւ. և զեօթներորդն ձայնիւ: - 627. Ի յայս միտս զվեց *գուբղայն* ի թիւ ասեմք. և զեօթներորդն ձայնիւ փողոյ: - 627. Դարձեալ և ըստ մերոց վարդապետաց, առաջին կանոնին ըերորդ *գուբղայն* օրհնութիւն՝ ի հանդերձելումն ակնարկէ...: – 630. Վերջին և առաջին *գուբղայն* յանմեղութենէ ասացեալ. և միջինն յետ մեղանացն. այս ընդ իրեար միաւորեցաւ: - 630. Եւ ի վերջին *գուբղայսն* ո՛չ ասեմք որ ա՛յլ մարգարէից է. և ալէլուն միայն սաղմոսին է: - 630. Եւ *գուբղայն* որպէս ընթերցուածն: - 631

**ԳՈՒԹ + ժզ)** Սէրն և *գութն*: - 102. Իսկ սէր և *գութ*՝ ա՛յսպէս զանազանին: - 144. Նախ՝ զի *գութն* բնական է, և սէրն ստացական: - 144. Երկրորդ՝ *գութն* անբան է, և սէրն բանական: - 144. Երրորդ՝ *գութն* առ ընտանիս է, և սէրն առ օտարս: - 144. Եւ զի՝ *գութն* յատուկ տեսանի յանբան կենդանիսն, և սէրն յատուկ է առ աստուած: - 144. Իսկ մարդս զի յերկուց է գոյացեալ՝ ունի *զգութ* բնական՝ և զսէրն աստուածական: - 144. Եւ մի՛ աստ ընդ դէմ բերցի բանիս թէ՝ ամենայն մեծամեծք *գութ* ունին փոքունց. զի և այս նախախնամութեանն է. որ եդ ի բնութեանս խնամ տանիլ նոցա, մինչ ինքեանք ևս ի չափ հասակի եկեսցեն և զերծանիցեն ի վնասուց: - 267. Իններորդ՝ սէր և *գութ* աստուծոյ ի վերայ մարդոյն հնազանդութեամբ պատուիրանին որ գայր առ նա՛: - 279. Սիրելի ասելով՝ առաւե՛լ շարժէ *զգութ* ծնողին: - 304. Դարձեալ՝ *գութն* բնական և ներքին սէրն է. և ողորմութիւնն երկրորդ և արտաքին...: – 350-351. Դարձեալ՝ *գութն* բովանդակ և կատարեալ սէրն է. և ողորմութիւնն մասնաւոր. զի ողորմութիւն ի *գթո՛յն* յառաջի և սփռի ի մեզ: - 351. Երրորդ՝ մինչ գառն լինի ի կաթն մօր՝ մի՛ զենցես ասէ. զի *գութն*

առաւե՛լ է: - 399. Եւ կամ այն թէ՝ «ութնօրեայ թլփատեսցես զմանուկն և մի պակաս». զի մի՛ ճիչ տղային չարչարեսցէ *զգուք* մօրն: - 399. Այլ և զառաւել *գութն* հեթանոսաց տեսցէ. որպէս յօնան զնինւէացւոցն ապաշխարութիւնս: - 444. Վեցերորդ՝ զընդարձակ *գութն*: - 465. Ութերորդ, ո՛չ ասաց՝ թէ խնդրեսցէ ապաշխարութեամբ՝ արգելից *զգութ* և զողորմութիւն. այլ թէ՝ «ո՛չ թողցի». որով յա՛յտ է թէ առանց զղջման և տանջանաց ո՛չ թողցի: - 566. Գթութիւն է *գութ* ցուցանել առ ընկերն և սիրել զնա. վասն զի պատկեր աստուծոյ է: - 582. Նա՛խ՝ զի առ որդին մարմնացեալ՝ և *զգութ* մօրն բարեխօս արկանեմք: - 633-634. որ *գթով* ողորմութեամբ դիւրապէս քաւեսցին և ողորմութեան արժանասցին: - 688. Դարձեալ, յերես անկեալ արտասուալի դիմօք հողս և փոշի՝ սուրբ գարշապարաց ծերոց, աղերսեմ ի խորոց սրտէ զհարազատ *գութ* հարց և եղբարց մեր հոգևորաց: - 773. Եւ այսոքիկ որք երևին ընդ դէմ միմեանց, կամ առ այլս կամ երբեմն, ո՛չ փոփոխումն ինչ ցուցանեն անփոփոխելոյն. առ մեզ փոփոխելոց ըստ արժանոյն *գութ* կամ հատուցումն. թէ աստ՝ թէ ի հանդերձեալն: - 779

**ԳՈՒԺԿԱՆ +** Նա՛խ՝ գուժ լծոց եզանցն՝ և սպասաւորացն մահ. և *գուժկան* ձևանայր դև մի ի կերպարանս ծառայիցն յոբայ: - 322

**ԳՈՒՃ +** Եւ ի *գուճ* կալն, վասն կործանման մեղացն: - 628

**ԳՈՒՄԱՐԵՄ +** Նոյնպէս և իբ գիրք *գումարեալ* աստուածակերտ գրոց: - 451

**ԳՈՒՆԴ +** Եւ ըստ չափու թանձրութեանն պատառեալ բեկանի, և ի վայր բերմամբ *գնդի* ի ջերմութենէ օդոյն, և լինի կարկուտ: - 205. Եւ *գունդ* ի վերայ նորա, թագաւորութիւնն: - 346. *Գունդն* տէրն: - 347. Եւ *գունդն* ջահ՝ տէր մեր, որ լուսաւորէ՛ զհաւատացեալս իւր: - 347. Եւ զի բոլո՛ր է *գունդն*: - 347. *Գունդն* բանական հոգին: - 347. Դարձեալ, տասն են մասունք զգալի արարածոց. այսինքն՝ **է** մոլորական *գունդք*. և **ը**՝ անմոլարքն. և իններորդ ի լուսոյդ ի վայր. և մարդս **ժ** երորդ ի վերայ նոցա. որ է՛ բանական և բաժին աստուծոյ: - 376. Գեթսոնի *գունդն* յարևմտից: - 378. Նա՛խ՝ զի չորեքտասա՛ն էր լուսինն եկն ի ներքին կիսագնդէն ի վերին *գունդն* և ծգեցաւ առ արեգակն: - 490

**ԳՈՒՆԴ(Ք) +** Եւ ի միոյ աստուծոյ եղեն **ժ** դասք հրեշտակաց ընդ մարդկան. և հարիւր *գունդքն* ըստ ոչխարաց առակին. և **ռ** կենդանեաց տեսակքն որ յերկրի. և բիւր անկենդան բուսոց. և անթիւ գոյեղէնք: - 109. Այլ և երկոտասան *գունդս* հրեշտակաց եցոյց տէրն յաւետարանին ըստ թըւոյ երկոտասան առաքելոցն և երկոտասան կենդանատեսակացն: - 141. Երրորդ՝ ութն *գունդ* են ղևեայ **գ** որդւոցն, և մովսէս իններորդ: - 379. Չորրորդ՝ գեթսոնի ազգն դռնապա՛նք էին. և մերարեայ երդմնեցուցիչք ընդ իշխանութեամբն իթամարայ քահանայի. և կահաթու *գունդն* աւագ պաշտօնեայք: - 379. Իսկ ի միտս, մահու չափ մեղաց է իշխանք և *գունդք* դիւաց: - 404. Եւ վէմն եկեղեցւոյ և պետ պետական *գնդին* խուսափէր: - 456. Ասեմք թէ՝ տէրն երկոտասան *գունդս* ասաց հրեշտակաց իւրաքանչիւր դասուց: - 546. Եւ որպէս ի դասս հրեշտակաց մինն գնդապետ **բժ**ան *գնդին*: - 547. Երրորդն ասեն եթէ՝ **բ** ազգն գեթսոնի և **բ** *գունդն* մերարեայ՝ գչորս փոքրիկ աստիճանս ունէին ի խորանն. զպահպանութիւնն մինչ ի ջահընկալն որ զաշտանակն բառնային. և որդիքն կահաթու էին բարձրագոյնք: - 609. Այլ և զերկոտասան *գունդս* հրեշտակաց յերկինս և զ**բժ**ան առաքեալսն բարեխօս մատուցանեմք առ աստուած: - 624. Նա՛խ՝ որպէս **բժ**ան *գունդ* հրեշտակացն և չորք կենդանիքն զբոլոր երկնային զօրսն նշանակեն, նոյնպէս և **իդ** երիցունքն զբոլոր դասս սրբոցն: - 711. Եւ դատաւոր քրիստոս. և ոսոխք դիւակա՛նն *գունդք:* - 743. Եւ երկոտասան պտուղ ըստ **բժ**ան *գնդիցն* ասացեալ ի տեառնէ: - 767

**ԳՈՒՆՏ (տ. ԳՈՒՆԴ և ԳՆԴԱԿ) +** Երրորդ վանկն, ոչ են և ո՛չ ասին ի յէքս, ոչ եղեալքն ո՛չ ասին. և ո՛չ *գունտն* քառանկիւնի. կամ մարդս պարզ: - 55

**ԳՈՒՇԱԿ +** Երրորդ՝ ի *գուշակ* սուրբ հոգւոյն որ այնպէս որոտմամբ և հրեղէն լեզուօք էջ յառաքեալսն: - 341

**ԳՈՒՇԱԿԵՄ +** Այսպէս. զի թէ սևանա՛յր, մահ *գուշակէր*: - 349. Տասներորդ՝ այն քան գերազանցեաց պատիւ կուսին, զի այնմ որ մարգարէք *գուշակէին* զլինելոցն. ի սմա ընդ խօսից հրեշտակին եղև կատարումն: - 464. Դարձեալ՝ **գ** տաղաւարն՝ որպէս ասաց պետրոս, *գուշակէ՛* զերեք յիսուսս: - 653. Իսկ երրորդն արքայութիւն, *գուշակի* յաւազանն պղնձի. զոր հրամայեաց մովսէս առնել ի հայելեացն կանանց որ նստէին առաջի դրան խորանին. յորում լւանային որդիքն ահարօնի նախ քան զմտանելն ի սուրբն սրբոց: - 756. Եւ քանզի մովսէս որ ջրային կամ ի ջրոյ հանեալ թարգմանի. թէպէտ երբեմն զօրէնս և երբեմն զտէրն նշանակէ. այլ աստ ոչ զօրէնս, այլ զտէրն *գուշակէ՛*. որ ի ջուրց մարդկայինս բնութեան ընկալեալ եղև: - 756

**ԳՈՒՑԷ +** Ութերորդ՝ հողն ի յերկրէ առեալ, զի երկիւղալից է մարմինս մեր. վասն այն կոչի երկիր.

որպէս ասէ առաքեալն, «եթէ կանգուն իցես՝ երկի՛ր. *գուցէ* անկանիցիս»: – 229. Դարձեալ նշանակէ՛ զխաւարումն այնմ ժամանակի, յորում եթէ *գուցէ* հնար՝ ընտրեալքն մոլորեսցին: - 490

**ԳՌԵՀԻԿ +** Երեքն ի սոցանէ *գռեհիկք* են. որ է շօշափելիք. ճաշակելիք. հոտոտելիք. զի խառնելովն ի զգալի իրն ճանաչեն: - 235. Չորրորդ, *գռեհիկ*. զոր սովորութեամբ լուեալ ասեն՝ ձմեռն գայ, և զկնի այնորիկ գարուն ամառն և աշուն: - 536

**ԳՌՈՒՁ +** Հերն կակուղ և նօսր, ցուցանէ զբթամիտն. և *զգռուզն*. և զաներկչոտն: - 246

**Գ ՍՐԲԵԱՆ (ԵՐԵՔՍՐԲԵԱՆ) +** Չորրորդ՝ այժմ մանկունք հաւատոյ ի յեկեղեցիս նոր օրհնութիւն տալով *գ սրբեան* ձայնիւ աստուածաբանե՛ն զխաչեալն քրիստոս. և օրհնեն ի վերայ արքայութեան աթոռոյ խաչին: - 529

**ԳՏԱԿ +** Հնգետասաներորդ՝ թէ չարն է յաստուծոյ՝ և սկիզբն ամենայնի է աստուած, որև չարեաց ըստ նոցա, ապա ո՛չ է սկզբնաչար առաջին *գտակն* չարեաց սատանայ. որպէս նոքայն բարբանջեն: - 14. Նախ թէ աստուած ստեղծ զկամքն բարի. և զբարին եդ առաջի կամիլ. իսկ նա անձնիշխանութեամբ հեռացեալ ի բարւոյն՝ *գտա՛կ* եղև չարին. **զի չարն ո՛չ այլ ինչ է, բայց հեռացումն. կամ պակասութիւն բարւոյ. ապա ուրեմն թէպէտ բանն և կամքն է աստուծոյ, այլ կամիլն և ընտրելն զչարն՝ ոչ է յաստուծոյ, այլ կամացն և բանին**: - 16. Վասն որոյ ասի սատանայ՝ *գտակ* և հայր չարեաց: - 148. Զի ինքնագիւտ չարութեամբ նախ ինքն չարացաւ որ ասի *գտակ*. և ապա զայլս չարացոյց որ ասի մայր. որպէս սկիզբն և սերմանօղ չարեաց ի յայլս: - 148. Երրորդ, զի թէ սատանայ որ *գտա՛կն* է ամենայն չարեաց՝ դեռևս ո՛չ տանջի յաւիտենից. ըստ որում «մի՛ յառաջ քան զժամանակն տանջեր զմեզ». ապա և ո՛չ մարդկայինս ազգ: - 776. Այսպէս սատանայ է մեղադրելի իբր պատճառ և *գտակ* չարեաց մարդկայինս բնութեան և ո՛չ ադամ: - 777

**ԳՏԱՆԵՄ +** Եւ զայլ ամենայն բնախօսութիւն յաղագս բարւոյ և չարի՝ *գտցես* ի Դիոնէսիոսի ի չորս գլուխն յաստուածային անուանսն. և ի ստորոգութիւնսն ի հակակայից ճառն. և ի սահմանս դաւթի ի վերջն որ է «ամենայն չար տանջելի»: - 24. Նախ՝ բնական քննութեամբ. որպէս իմաստասէրքն *գտնի*: - 24. Զի ամենայն իր որ դիւրաւ *գտանի*՝ դիւրաւ արհամարհի: - 24. Ա՛րդ՝ եթէ սկիզբն այն անսկիզբն է, *գտար* զխնդրելին: - 25. Եւ այս կամ յանբաւս ելեալ, կամ *գտեալ* զանսկիզբն սկիզբն, որ է աստուած: - 25. Այլ և զամս ծննդեանն քրիստոսի՝ և վասն եօթներորդացն դանիէլի՝ *գտցես* ի չորրորդ թագաւորութեանց վերջքն ի լ համարն. զոր ընդդէմ հրէից *գտցես* բան: - 29. Աստ *գտցես*, Ո՛չ են և ասին: - 30. Վեցերորդ՝ զկորուսեալսն *գտանէ*: - 49. Յորոց թէ մի ի սոցանէ *գտցի* ումեք, որոշեսցէ՝ ի միմեանց: - 87. Այն որ նըւաստացոյց զինքն ի յունայնութիւն մարդկան, եղև ի կերպ ծառայի՝ և գործով և կրիւք և նմանութեամբ մարդկան. և կերպարանօք *գտաւ* մարդ. զի ի վեր էր քան զմարդ՝ և քան զկերպարան մարդոյ: - 93. Եւ է դարձեալ անգիտութիւն՝ յորժամ զմիտս տարածեմք յամենայն եղեալս և զնա ոչ *գտանեմք*, ժողովեմք ի մինն որ արտաքոյ է սոցա. և այնպէս անգիտութեամբ ճանաչի աստուած: - 103. Երրորդ՝ և բաժանի և զանազանի ի բազումս. և այնպէս շրջագայութեամբ *գտանէ* զճշմարիտն. և այսպէս է բնական քննութիւն իմաստասիրացն: - 120. Եւ զայլ մասնապէս զբացայայտութիւն կոչմանց ամենայն դասուց՝ *գտցես* յայլուրեք ի բանն գրեալ որ ասէ՝ «ո՞ արար զիրեշտակս յոգիս»: – 136. Եօթն գլուխն է է չար զօրութիւն նորին. որպէս հոգւոյ մարդոյ է բարի զօրութիւնք են և է առաքինութիւնք. որպէս տէրն ասէ՝ «է այս չար հոգի բնակի ի մարդն զոր *գտանէ* թափուր ի բարեաց գործոց»: – 151. Զի գ գլխոյն կրկին է եղջիւր. որ է հպարտութիւն՝ նախանձ՝ և բարկութիւն. զի սոքօք յաջ և յահեակ պատերազմի. և առ ընտիրս և առ խոտանս *գտանին* բազում ուրեք երեքին ախտքս այսորիկ: 151-152. Իսկ ծուլութիւն՝ ագահութիւն՝ որկորստութիւն՝ և բղջախոհութիւն՝ միայն առ մոլիսն *գտանին*: - 152. Եւ այսպէս աբրահամ և յոբ և այլք սուրբք փորձութեամբն երևեցան, և *գտան* արդար և սուրբ և անարատ: - 161. Իսկ թէ կամիս ուսանիլ թէ զի՞նչ է նիւթ պսակին. որ ինչ առ աստուածութեան իւրում մեծութիւն *գտանի*, զա՛յն պատրաստեաց սիրելեաց իւրոց. զոր ո՛չ կարեմ զմտաւ ածել. կամ վայրապար լսելեօք լսել: - 161. Եւ օգտութիւն փորձանաց գրեալ է ի սաղմոսն, յայն բան *գի՛տ* և կարդա՛: - 162. Եւ թէ ոք ասիցէ՝ ապա վասն է՞ր զթողութիւն *գտանէ* զղջացեալն: - 165. Նա՛խ՝ զի իմաստութեամբն զնոսա կարեմք *գտանել*. և նոքօք զիմաստութիւնն ո՛չ: - 178. Եւ զայլ յերկար քննութիւն տարերաց՝ *գտցես* ի գիրս նիւսացւոյն որ վասն բնութեան մարդոյ: - 181. Իսկ սուրբն եփրեմ ասէ, մետասան թիւ *գտանի* ի մէջ երից աւուրցն՝ ստեղծման լուսնին: - 191. Եւ կամ հո՛ղմ է արտաքս թիւրեալ ի ճանապարհէ՛ իւրմէ. և ի խոռոչս երկրի մտեալ. և վասն թանձրութեան երկրին շարժէ զնա մինչև *գտանէ* ելս և ապա՛ դադարի: - 206. Երրորդ՝ զի ամենայն տեղիս *գտցի* ջուր. ի լերինս և ի դաշտս, և արբցեն կենդանիք: - 207. Վեցերորդ՝ զի պատւական ակն և

մարգարիտ և ազնիւ ոսկի ի ծովս *գտանի*: - 207. Վասն որոյ *գտանի* յամենայն իրս նման և աննման ըստ որում յէից և յոչ էից են հաստատեալք: - 237. Զիմաստութիւնն ո՞ւր *գտանէ* մարդ: - 250. Եւ թէ ոք ասիցէ, ուստի՞ *գտանեմք* եթէ ունի զկենդանութիւն հիւթն այն: - 255. Պատասխանեմք եթէ՝ և զայս երթիցուք յառաջինսն և *գտցուք*: - 262. Եւ զայլ քննութիւն զենմանն *գտցես* յառաջիկայդ ի **խե** համարն: - 296. Եւ խնդրեցին զդրախտն թէ ա՛նդ զերծանիմք և ո՛չ *գտին*. զի ծովք և շամանդաղ պատեալ էին: - 296. Եւ խնդրեցին զտապանն և զնա ոչ *գտին*. զի ո՛չ է հրաման տալ որ մարդն զարգանդ մօր իւրոյ տեսցէ: - 296. Զայն է իմանալ, որ ի բաժանել զլեզուս, բան և բառ և անուն խա՛ռն *գտանին* բազում ազգաց: - 297. Երկոտասաներորդ՝ զի որպէս իսահակ հնազանդ *գտաւ* հօրն մահո՛ւ չափ, լաւ համարելով զմեռանիլն՝ քան առանց հնազանդութեան զկալն: - 305. Եւ թէ լան և զղջան բոլոր սրտիւ ի ձեռն ապաշխարութեան, *գտանեն* վերըստին զշնորհն անդրանկութեան, և հասանին թողութեան մեղաց: - 309. Ութերորդ՝ առ ի ցուցանել թէ մարդկային միտք ի քննութիւն աստուածային բանին կա՛դ *գտանին*: - 311. Իններորդ՝ ի յանդիմանութիւն բնութեան մերոյ. զի մի՛ կարծեսցէ թէ առաքինութեամբն և սիրովն առ աստուած՝ հաւասարիլ կարէ՛ սիրոյն աստուծոյ որ առ մեզ. այլ կաղ *գտանի*: - 311. Այսինքն մարդիկք որ անբան տրտմութեամբ և անմիտ ցանկութեամբ ի վայր *գտան* քան զանասունս: - 316. Վասն այն յոբ **ծ** պատարագաւ սրբէ՛ր զ**ծ** մասնաւոր մեղսն որ *գտանին* յարբեցութեան. և մին զուարակն ի սրբութիւն վասն ակամայ և խորհրդոյ մեղացն: - 322. Զըմրուխտ. կանա՛չ է և դեղնագոյն. *գտանի* ի փիսոն գետ. Ղևի՛ է և Յոհաննէս: - 348. Սարդիոն. շիկագոյն արիւնատեսիլ. *գտանի* ի բաբիլօն. և թափանց է և դեղ առողջութեան: - 348. Տպազիոն. կարմիր է. և *գտանի* ի տոպազէ՛ քաղաք ի հնդիկս: - 348. Կարկեհան՝ որ կայծ կոչի. հրագո՛յն է. *գտանի* յափրիկէ. ի գիշերի որպէս հուր վառի: - 348. Շափիղայ՝ ծիրանագո՛յն է. և *գտանի* ի հնդիկս: - 348. Յասպիս՝ նմա՛ն է զըմրխտի դեղնագոյն. *գտանի* յեզեր թորքոմէտոս գետոյ յեզր կասբից ծովու: - 348. Գոճազմ. կապո՛յտ է. և *գտանի* ի մեծն սկիւթ: - 348. Ակատ. զակատն *չգտար* իրք ասացեալ նմա. զոսկե՛կն է դրել. և ասէ ոսկէգոյն զնա. և *գտանի* ի քաղդէացիս: - 348. Յակինթ. կարմիր է. *գտանի* առ բաբիլոնիւ: - 348. Եղունգն, խարտեա՛շ է. և *գտանի* ի հնդիկս: - 349. Բիւրեղն, ծովագոյն յօդանման. *գտանի* ի տորոս յանցս եփրատ գետոյն: - 349. Դարձեալ՝ զհանդերձեալ կեանս՝ դառնութեամբ աստեացս *գտանեմք*: - 381. Դարձեալ, եկեղեցի սուրբ՝ է՛ քաղաք ապաստանի. և քահանայապետ ի նմա՛ պատարագն. յոր մտեալ աղօթեմք և թողութիւն *գտանեմք*: - 392. Քսաներորդ, Ո՛չ հրամայեցաւ դաւթի շինել զտաճարն. ի Յազարս *գտի* այր մի. և ի կանանց ո՛չ մի: - 413. Նուազիլ՝ ո՛չ ասեմ զամենևին պակասիլն. զի առ ջրհորաւն մեծի անյայտ եղև վէմն. և յելսն յորդանանու մանանայն ո՛չ *գտաւ*: - 415. Երրորդ՝ զի առ ձեռն պատրա՛ստ *գտանէր*: - 415. Եւ թէ զի՞նչ է խորհուրդն, *գտցես* ի չորրորդ թագաւորութեանց վերջքն **իթ** գլուխն **լ** համարն: - 421. Եւ տէր մեր ի սպանօղ մարմնոյս որ է՛ պատառօղ հոգւոյս, սպանելով զսա՛ *գտանէր* զքաղցր կեանս տալ որդւոց մարդկան ազգի: - 422. Երկրորդ՝ անցեալ ընդ լերամբ և ո՛չ *գտեալ*. մինչև առ տեսանօղն եկեալ. և տէր մեր էանց զլերինս հրեշտակաց և եկն ի մարգարէս. և նոքա աւետեցին զգիտոն **գ** օրեայ կորստեան իշոյն...: – 426. ...այսինքն բնական և բանական և գրաւոր օրինօք ո՛չ *գտեալ*. այլ ի ձեռն աւետարանին: - 426. Վեցերորդ՝ ի յոյս և յօրինակ ամենայն մեղաւորաց. որք զղջան և *գտանեն* զթողութիւն մեղաց: - 432. *Գտի* զդաւիթ այր ըստ սրտի իմում, որ արասցէ զամենայն կամս իմ: - 435. Զի՞նչ է ի հազարս *գտի* այր մի. ի կանանց և ո՛չ մի: - 440. Այլ զայն ասէ՝ թէ յամենայն ազգս արանց *գտաւ* այր մի քրիստոս, ազատ ի պարտուց սկզբնականին. և ի կանանց և ո՛չ մի: - 440. Եւ գիտելի՛ է, զի յամենայն գործս աստուծոյ *գտանի* արդարութիւն և ողորմութիւն: - 459. Երկրորդ՝ ընդ մտանելն յարգանդ բանին՝ շնչաւորիլն և *գտանիլն* որպէս քառասնօրեայ: - 471. Երրորդ՝ ի նա՛ միա՛յն *գտաւ* մտաց սրբութիւն...: – 473. Եւ նզովիւք փակեն ասելով, «եթէ ոք յետ անճառ միաւորութեանն ապականացու ասէ զանապական մարմինն սուրբ, նզովեալ լիցի». որպէս յա՛յտ է ի գիրս իւրեանց. և որ ոք կամեսցի դիւրաւ *գտցէ*. ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն քրիստոսի: - 499. Եւ այլ ևս *գտցես* յաստուածաբանին ճառն յառաջքն գրոցս ի եօթն գլուխն՝ ի **ծգ** համարն: - 518. Եւ վասն հիւանդութեան ասացի յառաջիկայդ ի **լզ** գլուխն ի **բ** համարն *գիտ*: - 531. Եւ զայսոսիկ *գտցես* ի սկիզբն նախերգանի գրոյս սակաւուք: - 537. Եւ զայլ ամենայն որպիսութիւն չար ժողովոյն քաղկեդոնի *գտցես* ի պատմագիրս միխայէլի: - 543. Եւ այլք գոն յոլովք. զի յորժամ պարապով ոք քննիցէ *գտանէ*: - 553. Այլ արդ՝ զղջանալ և խոստովանիլ պարտ է զհպարտութիւն՝ զնախանձ՝ զատելութիւն՝ և զայլն, և ապա՛ թողութիւն *գտանել*: - 556. Յինգերորդ՝ զի յամենայն մեղս *գտանի* հպարտութիւն. զի որպէս առանց սիրոյ այլ առաքինութիւնք ոչ ինչ են, նոյնպէս առ հպարտութեան ամենայն մոլութիւնք ոչ ինչ են: - 562. Եւ այս ամենայն առ աստուած *գտանի*: - 571. Եւ թէ ո՞րպէս, ի բուն գիրս յայտնի է աշխատողաց անդ *գտցես*: -

583. Նա՛խ՝ զի այսպիսի չար աղանդս ո՛չ *գտանի* յայլ եկեղեցիս քրիստոնէից: - 589. Եւ ասացեալ են գոյացականք մկրտութեանն ի վերոյ ի մկրտութիւն տեառն ի **ԻԵ** համարն *գտցես*: - 590. Ապա ուրեմն յիրաւի՝ զի բնական արդարութիւն ի տղայն ո՛չ *գտանի*, յարդարութենէն աստուծոյ արդարապէս մերժի և ընդ անիրաւսն տանջի: - 591. քան թէ բառնալ զխոստովանութիւնն որ հարկաւոր է. առանց որոյ ո՛չ գոյ ներգործական մեղացն թողութիւն *գտանել*: - 604. Եւ վկայ այսոցիկ ի մամեստիայ *գտեալ* քարն. յորում գրեալ էր յունարէն գրով, «սուրբ աստուած սուրբ և հզօր սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ»: - 632. Ո՞րք *գտին* զձայնս: - 640. Իսկ յետ սորա՝ Սինիգրէս արար զառաջին ձայնն, ի հիւսնականէ՛ *գտեալ* արուեստից: - 640. Արդ՝ ըստ կարգի՝ սերմանքն յառաջ են քան զարդիւնսն. և նախատակքն քան զպսակն. վասն որոյ որք աստ փործ *գտանին*, անդ առցեն զպսակն կենաց: - 662-663. Զի մի՛ դիւրաւ *գտեալ*՝ դիւրաւ արհամարհելի լիցի: - 663. *Գտցես* և վասն մահու առ խաչելութեանն քրիստոսի ի **Լ** գլուխն ի **ԻԶ** համարն: - 668. ...և յորժամ բացին զգերեզմանն, *գտին* թափուր ի սուրբ մարմնոյն. - 681. Եւ ամիսն **Գ** տասամբ բաղկանայ. զոր ի հաւատ սուրբ Երրորդութեանն և **Ժ** բանեան օրինացն յանցաւոր *գտար*: - 683. Քսանևմի, և յառակս տնտեսին զոր կացոյց տէր ի վերայ ծառայիցն տալ կերակուր. զոր յետոյ տէրն եկեալ *գտցէ* այնպէս՝ երանի է ծառային այնմիկ. ապա թէ ոչ՝ ընդ մէջ կտրեսցէ: - 693. Տասներորդ, որք *գտանին* կենդանի յաւուրն դատաստանին, ո՛չ երթիցեն ի քաւարանն. - 700. Այլ և յետոյ ի գէորգեայ հարցմունքն *գտցես*: - 705. ...զի ինքն նեռն *գտանիցէ* զգանձս ծածկեալս...: - 708. Վեցերորդ զի կրթելով առնու զսպիտակ գոյնն. նոյնպէս և սուրբքն ի կեանս յայս կրթելով չարչարեցան, և ապա՛ այն կենացն արժանի *գտան*: - 712. Եւ այսպէս հսկել և պահել զտունս մեր, զի մի՛ գող մահուն և կատարածի՝ *գտեալ* զմեզ անպատրաստ ի մեղս՝ տանիցի զհոգիս մեր ի տանջանս յաւիտենից: - 730. Երրորդ, հաւաստի արդարութեամբ. և այսպէս ամենայն սուրբք և հրեշտակք դատեսցեն զնոսա որք ի նոյն շաւիղն յանցաւոր *գտան*: - 738. Այլ որ ուղիղն է տեսութիւն, յետ յարութեան փոխի ժամանակն ի յաւիտեան. և այլ ո՛չ *գտանի* մասն և րոպէ և ժամ. զի երկնային մարմինք դադարին ի շարժմանէ ուստի ժամանակն գոյանայ: - 747. Բարձումն յուսոյ և ամենայն փրկութեան Նաև գոլն իսկ որում տենչան ամենայն ստեղծուածք՝ է՛ նոցա պատիժ. վասն զի խնդրեսցեն զմահ և ո՛չ *գտանիցեն*: - 751. Ո՞րպէս *գտանեն* զմարդն: - 753. Եւ յորժամ առաքին մեղաւորքն ի հուրն յաւիտենից, *գտանեն* զծնօղս իւրեանց որպէս գառինք զմարս, և յաւիտեան խածատեն զնոսա: - 753. Եւ վասն այն ասի արքայութիւնն աստուծոյ, զի պատուիրանօքն որ յաւետարանն կամ յայլ գիրս սուրբս *գտանին*, պահողացն արքայութեանն մուտ բացեալ լինի. և ներքին մարդս ամրացեալ հաստատի: - 754. Յառաջնումն ողորմութիւն *գտանեմք*: - 755. Սոքա՛ են հոսանք ջուրցն լիութեան. զորոց յերգս *գտանի* սիրելոյ. որ ի խորութիւնն հայեցեալ աղաւնւոյն, ի գալստենէ բազային զգուշանայ: - 756. Սա՛ է ջուրն յաղեալ. որ զդառնութիւն ջուրցն այնոցիկ որք *գտանին* ի մեռային՝ քաղցրացոյց: - 756. Զի ո՛չ զգալի գիշեր և ո՛չ իմանալի. մեղաց կամ անհաւատութեան կամ տգիտութեան *գտանի* անդ: - 761. Դարձեալ և այսոքիւք, թէ լինէիր իմաստուն որպէս զօղոմոն. որում ո՛չ *գտաւ* հանգոյն նման ի վերայ երկրի: - 761. Որպէս զաւուղայ ասեն՝ էշ կորուսեալ և թագաւորութիւն *գտեալ*: - 762. ...և ամենայն որ ինչ փափկութիւն *գտանիցի*՝ աշխատութիւն. մինչ զի բարութիւնն աստուծոյ յանհունս գերազանցէ՛ քան զամենայն ստեղծեալ բարութիւնս: - 762. Մինչ զի այս քան *գտանիցին* հեշտութիւնք ի մասնկան ստեղծուածոյս, որ քան *գտցին* ի ստեղծօղն յայն: - 762. Զի թերևս վասն ձեր սիրալիր մաղթանացդ՝ *գտայց* ողորմութիւն յամէնողորմ փրկչէն մերմէ: - 773. Իսկ յանցանել նորա՝ կորոյս զամենայն. ո՛չ միայն զխոստացեալն, այլ և զպարգևեալն. զի ըստ որում յանմեղութենէն մեղանչական *գտաւ*, այսպէս մահու և ապականութեան գրաւեցաւ: - 776. Իսկ ի հանդերձելումն ապա զիա՞րդ թէ բազում անգամ զղջասցին ո՛չ *գտանեն* թողութիւն ասէ գիրն: - 778. Այսպէս և յամենայն գործս աստուծոյ *գտանի* արդարութիւն և ողորմութիւն որպէս ասեն ոմանք. այլ երբեմն արդարութիւնն ծածկեալ և ողորմութիւնն յայտնի. որպէս յարդարացուցանելն ամբարշտին՝ և յառաջին գալուստն քրիստոսի: - 779. Այլ մեք հետևելով ժամանակի՝ *գտցուք* զողորմութիւն ի քաղցրութեան կամաց: - 780. Որպէս և բազում ուրէք յերգս *գտանի*. վէմք պատառեալ. երկիր շարժեալ առ խաչին քրիստոսի: - 788

**ԳՐԱԿԱԼ +** Յիսուներորդ, Բուրվառ. և *գրակալ*. և նախատօնակն: - 527. Եւ գո՛րծ է նոցա առաքեալ կարդալ, և մոմեղէնս կրել, և *գրակալ*. և զխաչագլուխ գաւազանն կրել: - 608. Եւ *գրակալք* և բեմն, լեառն սինա անմատոյց բազմաց: - 644. Զի՞նչ նշանակէ *գրակալն*: - 646. Նա՛խ՝ *գրակալն* նշանակէ՛ զմովսէս. որ ընկալեալ զպատգամն աստուծոյ՝ խօսէր առ ժողովուրդն: - 646. վասն որոյ նոքա միշտ մերձին *գրակալին* յորժամ ընթեռնուն: - 646. Յայս միտս այլ ազգք միշտ ի վերայ *գրակալին* պահեն զգիրս. զի արժա՛ն է միշտ ուսանիլ: - 646

**ԳՐԱԿԱՆ +** Տասներորդ՝ զի սուտ լինէին ամենայն օրէնք բնական՝ *գրական* և աւտրնական. զի սոքա ամենքն խրատեն զմեզ խոտորիլ ի չարէ՝ և առնել զբարի. և այլն ամէն: - 20

**ԳՐԱԿԱՐԴԱՑ +** Իսկ վասն *գրակարդացի* և նկարեալ եկեղեցւոյ. և վասն զնշխարս ի հանգիստ փոխելոյ. այս ամենայն յիշատակ է մեզ ի սրբոյն գրիգորէ՝ լուսաւորչէն մերմէ: - 659

**ԳՐԱՊԱՆ +** Իսկ *գրապան* վարդապետք և քահանայք պահապանք ժողովրդեանն. որք բոլորակի զգեստ կոչեցան քրիստոսի: - 534

**ԳՐԱՍՏ +** Եւ զորօրինակ՝ ի ստորոտ լերին հասեալ *զգրաստի* բեռինս առեալ՝ թողումք յարօտս սակաւիկ մի: - 657

**ԳՐԱՒ +** Կամ զպարտս յոչ պարտականէն խնդրէին. որպէս ա՛յժմ անիրաւք զայլ ոք այլոյ *գրաւ* առնուն: - 238

**ԳՐԱՒԱԿԱՆ +** Այլք ասեն թէ՝ խաղո՛ղ էր. կամ ցորեան. զի զգինին ետ *գրաւական* կենաց՝ և զհաց մարմնոյն: - 224. Այլ և զաւազանն յուդայ *գրաւական* ի թամար: - 494. ...և տէր մեր յետ յերից օրինաց՝ այսինքն բնական բանական և *գրաւական* երևեալ ի գիշեր կենցաղոյս և իջեալ ի դժոխս աւերելով զնա դարձոյց զերկոսին ժողովուրդս իւր...: – 514

**ԳՐԱՒԵԼ +** Տասներորդ՝ նեռն քարոզութեամբ պատրէ՝ և ուրւական սքանչելեօք. և այլն. և սոքա քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատրեն զմիտս անմեղաց. և հրեշտակ լուսոյ կերպարանին որպէս հայրն իւրեանց սատանայ. և ամենայնն ուրւական միայն և ո՛չ ճշմարտութեամբ. և բոլոր դիտումն նոցա է՛ պատրել զմարդիկ և հանել ի հաւատոց. և լնուլ զորովայնս. և զկանայս շեղջակուտեալս մեղօք յինքեանս *գրաւել*: - 35. Չինգերորդ՝ բորոտիլն զմահն եգիպտացւոց նշանակէր. և ողջանալն զկենդանանալն որդւոցն իէլի որ ի մահ *գրաւեալ* էին: - 332. Իսկ յանցանել նորա՝ կորոյս զամենայն. ո՛չ միայն զխոստացեալն, այլ և զպարգևեալն. զի ըստ որում յանմեղութենէն մեղանչական գտաւ, այսպէս մահու և ապականութեան *գրաւեցաւ*: - 776

**ԳՐԱՒՈՐ +** Եւ այլ ևս. նոքա չունէին օրէնք *գրաւոր*, պա՛րտ էր նոցա յերկար կեալ և ի բնական օրէնս կրթել զծնունդս և զազգս իւրեանց: - 291. և Դարձեալ ասեն, բնական մեղքն խտրութեան մնաց ի *գրաւորն*, նոյնպէս ի նորս. որպէս սերմնակաթն և դաշտանին. այլ պատիժն փոխեցաւ հինն ի նորս: - 369. Նա՛խ՝ նշանակէ՛ զնահապետսն. իե ազգ որ բնական օրինօք արդարացան նախ, և ապա՛ *գրաւորն* բնականաւն զօրացեալ արդարացոյց զնոսա: - 390. Իսկ անապատ՝ *գրաւոր* օրէնքն ի ձեռն մովսէսի: - 395. այսինքն բնական և բանական և *գրաւոր* օրինօք ո՛չ գտեալ. այլ ի ձեռն աւետարանին: - 426. Եւ զբնականն աբրահամու. իսկ *զգրաւորն* մովսիսի: - 467. *Գրաւորն* մովսէսի. իսկ Աւետարանն չորրորդ ի ձեռն խաչին: - 494. Երկրորդ՝ ի *գրաւոր* օրինացն որ ասէ, «սիրեսցե՛ս զընկեր քո իբրև զանձն քո»: – 577. Իսկ պոռնկութիւնն ի բնական օրէնս և ի *գրաւորն* և ի նորս խոտեալ է: - 613

**ԳՐԱՒՈՐԱԿԱՆ +** Դարձեալ՝ աստուած յառաջնումն ծննդեան յորժամ զյանցաւորս ըստ բնական մեղացն՝ ջրհեղեղաւն ջնջեաց. յերկրորդումն ծննդեան յորժամ զյանցաւորս ի կռապաշտութիւն՝ կարմիր ծովովն ընկղմեաց. յերրորդումն ծննդեան տուժեաց, յորժամ զյանցաւորս *գրաւորական* օրինացն պատերազմօք սատակեաց: - 351. Օրէնք սեռական **գ** է. բնական. *գրաւորական*. աւետարանակ: - 528. *Գրաւորականն* մովսէսիւ իսրայէլի: - 528

**ԳՐԳՌԵՄ +** Երրորդ՝ զի տէր *գրգռեաց* զնա որպէս զնաթան: - 433

**ԳՐԵՄ +** Դարձեալ, թէ է՛ հարկ՝ անիրաւք են և ինքեանք աստեղքն. զի ոմանց բարիս *գրեն*, և ոմանց չարիս. զոմանս մեծատունս և զոմանս աղքատս. հեշտ կեանս և դժւարս. երկարակեացս և սակաւակեացս. բազում անգամ անարժանիցն բարիս խոստանան, և արժանեացն չարիս: - 12. Եւ այսպէս է ընտրեալն և կոչելն և արդարացուցանելն. որպէս *գրէ* առաքեալն: - 18. Է՛ և այլ բազում միտք վասն բանին. զոր մեք զսակաւն *գրեցաք*: - 49. Երկրորդ՝ զի որպէս մատամբ *գրեմք* կամ գործեմք զամենայն գործս, այսպէս և հոգին սուրբ *գրէր* ի մարգարէսն...: – 62. Վեցերորդ վկայ ի ժողովոյն քաղկեդոնի զոր նոքա ընդունին և ո՛չ մեք. այսպէս է *գրեալ* թէ՝ որ ոք զհոգին ի հօրէ և յորդւոյ բղխումն ասիցէ՝ նզովեալ լիցի: - 64. Որպէս սուրբն աթանաս *գրէ՛* ընդ դէմ արիոսի այսպէս: - 83. Ձնոյն և սուրբն կիւրեղ *գրէ* առ սուկեսոս թղթին, «Մի ասեմք զքրիստոս աստուած մարդացեալ, և մի զբնութիւն նորա»: – 83. Այլ մի ասեմք զներգործութիւնսն վասն մի միութենէն ներգործելոյ. որպէս մի ձեռն կտրէ՛ և կարէ՛. *գրէ՛* և ջնջէ՛: - 85. Եւ տես ի հոմանունսն. որպէս ի կենդանի մարդն և *գրեալն*: - 95. Ո՞չ ապաքէն ի վեր ասեմք զմարդն անուն կենդանի մարդոյն՝ քան թէ *գրեցելոյն*: - 95. Նախ՝ անօրն ընտրութեան առաքեալն պօղոս *գրէ* հաւատացելոցս. «քրիստոս աստուծոյ զօրութիւն. և աստուծոյ իմաստութիւն»: – 96. Նոյնպէս

զլուսոյ և զիրոյ յատկութիւնս բաղդատել դիւրին է իմանալի լուսոյն ճշմարտի. որպէս *գրեալ* ի **ի** գլուխն՝ **լե** համարն տե՛ս անդ: - 127. Այլ վասն բազում պատճառի աննման նմանութեամբ *գրեցին*: - 131. Եւ զայլ մասնապէս զբացայայտութիւն կոչմանց ամենայն դասուց՝ գտցես յայլուրեք ի բանն *գրեալ*...: – 136. Եւ օգտութիւն փորձանաց *գրեալ* է ի սաղմոսն, յայն բան գի՛տ և կարդա՛: - 162. Զորօրինակ՝ ներտրամադրեալ բանն է՛ նախ ի խորհուրդն կատարեալ. և յետոյ ժամանակաւ լինի յառաջ բերեալ և *գրեալ* բան. և նո՛յն բանն էր յառաջ բերեալս և *գրեալս* որ էր նախ ի խորհուրդն: - 169. Ո՜վ մեծի աղետիս և վշտալից տարակուսի. զի այսպիսիքս զմի միաւորութիւն տեառն ուրանան. որպէս *գրէ* առաքեալն՝ «ածեն ի վերայ անձանց զարագահասն կորուստ»: – 176. Իսկ թէ վասն է՞ր մարդս ալփաբէտից կարօտացաւ, *գրեա՛լ* է ի հրեշտակաց **ժե** համարն: - 177. Վեցերորդ՝ զի ի բազում բանս մտանէ և *գրի* քան զայլ ձայնաւորս. և յա՛յտ է, զի բազում իմաստութիւնս ծնանի: - 178. Եւ նուազեալ ի սմանէ քանակին, լինի նման և աննմանն ցուցեալ. որպէս յա՛յտ է ի տառն *գրեալ*. զի նման և աննմանն ուրոյն են որակի: - 236. Իսկ դիւականն ընդդէմ այսմ՝ վասն մոլորութեան զանազան երևմունս ցուցանէ աղտեղութեան. և կամ զբարին խափանել ջանայ. որպէս ի չարչարանս տեառն վասն կնոջն պիղատոսի ընթերցեալ լինի. և որպէս *գրէ* սուրբն Եւագրիոս: - 268. Ա՛րդ՝ նոյնութեամբ պատկեր ասի միածին բանն՝ հօր. որպէս *գրէ* առաքեալն առ թեսաղոնիկեցիս. «պատկեր հօր և կերպարան էութեան է քրիստոս»: – 272. Իսկ դրամն և տախտակն ուր *գրեալ* է պատկեր թագաւորին՝ միայն նման է թագաւորին ըստ ձևոյն. այլ ո՛չ ըստ բնութեանն: - 273. Չորրորդ՝ զի **բ** արձան կանգնեաց պղնձի և խեցի և արար գիր. և զոր ինչ ադամ անունս եդ իրաց, զամենայն *գրեաց* ի նոսա. զի մի՛ այլայլեսցին ի գնչուտ և ի լեզուատ արանց: - 289. Իսկ այժմ ամենայն ոք ի *գրեալսն* ուսանի զպատուիրանս աստուծոյ և ո՛չ ի հարց իւրեանց: - 291. Եւ թուի թէ մարքն աւելո՛րդ է *գրած*: - 299. Ո՞վ *գրեաց* զգիրն յոբայ: - 320. Ոմանք ասեն թէ՝ բարեկամքն իւր որ էին յազգէն եսաւայ ելիփազ. սովփար. և բաղդատ. որք եկին մխիթարել զնա ի վշտացն, նոքա *գրեցին*...: – 320. Եւ այլք ասեն թէ մովսէս *գրեաց* ի յանդիմանութիւն որդւոցն յակոբայ. որք առին զօրէնս և ո՛չ պահեցին. և զաստուծոյ զամենայն երախտիսն մոռացան: - 320. Զի ասեն թէ՝ յոբայ հէճուպն ի պարսիկս փախեաւ, և անդ զրոյց ետ որ *գրեցին* իւրեանց գրովն. և սողոմոն բերել ետ և սրբագրեաց: - 320. Այլ որ ստոյգն է ասեն թէ՝ մովսէս *գրեաց* որպէս պատմութիւն, և սողոմոն ստիքսեաց որպէս զիւր բանսն. յետոյ *գրեաց* և եզրաս հոգւովն աստուծոյ երբ ծախեցան գրեանքն ի հրէից: - 321. Այլ սքանչելին յոբ՝ էր նախքան զօրէնս՝ և *գրեցաւ* յետ օրինացն: - 321. Եւ թէ ոք ասիցէ՝ յորժամ սոյնպէս չարք էին՝ զնոցա բանքն ընդէ՞ր *գրեաց* հոգին սուրբ: - 325. Սոյնպէս բարեկամք յոբայ թէպէտ շարժեալք էին ի բանսարկուէն, այլ աստուծոյ հոգւովն զօգտակարսն բարբառէին. վասն այն *գրեցան* բանք նոցա ի սուրբ գիրս: - 325. Մետասաներորդ, մովսէս զառաջին տախտակն խորտակեաց և ի նորն *գրեաց* զօրէնսն: - 328. Քսանէ, մովսէս ի վախճանիլն իւր՝ կտակ *գրեաց* զլինելոցն, և զեկեղեցին յանձնեաց ի կոյսն յեսու: - 329. Նա՛խ ցուցանէ՛ թէ՝ ձեռքդ այդ *գրեսցէ* օրէնս որով սրբին պահօղք, և պղծին ո՛չ պահօղք: - 332. Նա՛խ՝ հրամայեաց աստուած *գրել* զլինելութիւն աշխարհի. և ձևացոյց ի միտսն մովսէսի. զի մի՛ մոռասցին հանգամանքն. վասն որոյ զգալի խորան հրամայէ կազմել: - 342. Նշանակէ՛ ըստ փիլոնի, զի անմարմինքն մինչև յերեքն հասանին. որպէս երկրաչափքն *գրեն* նիշ՝ գիծ՝ երևոյթ. ա՛յս է իմանալեացն չափ: - 344. Ի յորում **բ** տախտակք են *գրեալ*. հոգի և մարմին միաւորեալ բանիւն: - 345. Զի եօթանսունքն եռբճ պակաս բ թիւ *գրեն*. և այլք **եռշ** ամ. որ է՛ **ե** դար և կէս: - 345. Զերկոտասան ազգն իսրայէլի, որոց անուանքն էր *գրեալ*: - 348. Եւ ա՛յս են **բժ**ան ակունք և անուանքն *գրեալ*: - 348. Չորրորդ՝ զի մի՛ ջնջեսցի ի հրոյ կամ ի ջրոյ ի քարի՛ *գրեաց*: - 349. Վեցերորդ՝ կրկին տալոց էր օրէնք հին և նոր. վասն այն կրկին *գրեաց*: - 349. Եօթներորդ՝ յօրինակ բանին մարդեղութեան *գրեցաւ* բանն ի տախտակի, և նա՛ կոչեցաւ վէմ կարծրացեալ աստուածութեամբն փոխանակ հողացելոյն ադամայ: - 349. Երրորդ, դարձեալ **խ** պահեաց և էառ զկրկին տախտակն *գրեալ* մատամբն աստուծոյ իբրև զառաջինն, և եդ ի տապանակ վկայութեանն: - 352. Վեցերորդ, թիթեղն ցուցանէր ի ճակատն *գրեալ* սրբութիւն տեառն նուիրեալ. զի նւէրք քահանային սրբութիւն է: - 363. Եւ վասն կախարդաց *գրեալ* է ի վերոյ ի **ի** գլուխն **իէ** համարն: - 389. Վասն է՞ր *գրեաց* երկրորդ օրէնք: - 393. Զոր ա՛յլ մարգարէ ո՛չ արար. որպէս *գրեալ* է ի ի համարն ի վերոյ: - 399. Վասն է՞ր հրամայեաց *գրել* զօրէնս ի յանցս յորդանանու: - 402. Վասն հեթանոսաց *գրէ* զօրէնս և ո՛չ հրէից զի առեալ էին: - 402. ...այսինքն կեանքն՝ որ ասաց մովսէս «տեսանիցէք կախեալ». զի մովսէս վասն իմ *գրեաց* զայն: - 405. Կտակ *գրեն* և օրհնեն: - 408. Ութերորդ՝ զի զկարծր սիրտ նոցա թլփատեսցէ օրինօքն ի վէմն *գրեալ*: - 415. Հինգերորդ՝ *գրեաց* յեսու զօրէնս ի քարեայ արձանս հեթանոսաց: - 417. Եւ տէր մեր զնորս հեթանոսաց անջինջ *գրեալ* օրէնս ի սրտի: - 417. Կամ զի օրէնքն *գրեալ* էր՝ կուրի և կաղի

մի՛ դնել գայթակղութիւն, ասէին նախատելով թէ՝ որպէս ո՛չ կարես կոխել զդոսա, նոյնպէս ո՛չ կարես առնուլ զամուրն յեբուսայ: - 431. Ա՛յս է՝ իբր թէ աստ ո՛չ է *գրեալ* բոլորն՝ ա՛նդ է *գրեալ* որ է մնացորդացն յուդայի թագաւորացն: - 443. Այլ և ո՛չ անդ է *գրեալ* բոլորն, այլ ի թագաւորութեանցն որ չէ թարգմանեալ ի մերս. այլ միայն բ մնացորդացն զոր եզր *գրեաց:* - 443. Տևեալ ամս **Ն.** մինչ ի սեդեկիա որ *գերեցաւ* ի բաբիլօն. և հրձիգ եղև տաճարն և երուսաղէմ: - 446. Դարձեալ՝ նշանակէ՛ զերիս օրէնս. զԲանականն. *զԳրեալն*. և զԱւետարանն: - 449. Զչորքս զայս՝ Զոքզիա և Զգոդողիա մայրն, և Զյովաս և Զամեսիա ո՛չ *գրէ* յազգահամարսն աւետարանիչն վասն լինելոյ դուստր և թոռունք եզաբելի: - 452. Չորրորդ՝ միտք և հոգին ո՛չ երևին. և բանն երևի և ի դուրս գայ. և մարդիկք տեսանեն և *գրեն*. վասն այն բանն մարմնացաւ, և ո՛չ հայր կամ հոգին: - 468. Եօթներորդ՝ բանին էր պատշաճ պատմել զհօրէ. և երևիլ մեզ. որպէս ներտրամադրեալ բանն յառաջ գայ և լինի բարբառ և *գրեալ* ի քարտիսի, երևի և շօշափի: - 468. Բայց անյա՛յտ էր *գրեալն*. մինչ խաչիւ և չարչարանօք զգիրն պատրանաց նախաստեղծիցն պատառեաց, և ապա՛ զայս գիր ետ յայտնապէս: - 481. Կրկին է գիր. այսինքն կենաց և մահու. զի բարի գործովք *գրիմք* ի դպրութիւնն կենաց. և մեղօք *գրիմք* ի գիրն մահու և դատապարտութեան. որպէս ասեմք թէ զձեռագիր յանցանաց քոց ջնջեսցէ աստուած: - 481. Եւ այս ևս կրկին է գիր և դպրութիւն. մին անջինջ և յաւիտենից որ առ աստուած. և միւսն ժամանակեայ և ջնջելի որ առ մեզ. զոր մեր գործօք և կամօք *գրեմք* և ջնջեմք. թէ զչար թէ զբարի: - 481. Այս դպրութիւնքս բանին ի կատարածի ըստ դանիէլի. որպէս *գրեալ* է աստ յայլում տեղւոջ՝ անդ տեսցես: - 481. Եւ երբ ոչ պահեաց, *գրեցաւ* գիր մեղաց և դատապարտութեան: - 481. Իսկ զգիր քրիստոնէից զոր յետ աւազանին մեղանչեմք և *գրեմք* զյանցանս, զայն պատառէ ապաշխարութիւնն. որ է՛ զղջումն սրտի և խոստովանութիւն լեզուի և հատուցումն գործոց մարմնոյ: - 482. Այլ և խա՛չն է որ *գրեալ* է «արկցուք հաց ի փայտ նորա»: – 494. Նա խթեաց զտէգն և հասոյց յաչքն իւր և լուսաւորեցաւ. որպէս և *գրեալ* է թէ «ետես և հաւատաց»: – 495. Տասներորդ՝ ամենայն սուրբ վարդապետք ուղղափառաց որպէս եփրեմ՝ ոսկէբերանն՝ կիւրեղ՝ աթանաս՝ և այլք, անապական *գրեն* և խոստովանին զմարմինն սուրբ: - 499. Դարձեալ ասեմք՝ թէ կանայքն իւղաբերք **ղ** անգամ եկին ի գերեզմանն և այլ և այլ տեսլեան դիպեցան. և զիւրաքանչիւր դասուց **ղ** աւետարանիչքն *գրեն*: - 515. Մատթէոս զառաջինն *գրէ* որ ի մէջ գիշերի եկին. և մի հրեշտակ տեսին. և զվէմն առաջի նոցա թաւալեցոյց և նստաւ ի վերայ նորա: - 515. Եւ թէ վասն է՞ր այնչափ գիրք և բանք *գրեցան*: - 525. Բանն աստուծոյ մի է թէ բազում. զի բազում երևի ի հին և ի նոր կտակս և յիւրաքանչիւր թուղթս *գրեալ* : – 529. ...իսկ թէ մի է, ո՞րպէս կարասցուք ասել մի և զնոյն բանն աստուծոյ որ նախ քան զյաւիտեանս. և այսօր *գրեալ* ի քարտիսի: - 529. Եւ մի և նոյնն է միաւորեալ ի մարմնի և երևեալ մեզ և *գրեալ* ի քարտիսի յիւրաքանչիւր աւետարանս: - 529. Եւ այս բազումս որ առ մեզ է, ի բազում թուղթս *գրեալ* մի և նոյն բանն է որ նախ քան զյաւիտեանս ի հօրէ ծնեալ: - 529. Նմանապէս և բանն աստուծոյ մի և նոյն է անձամբ և բնութեամբ ի գոյացութեան իւրում, և ի գիրս աւետարանաց *գրեալ*: - 530. Որպէս *գրեալ* է ի գիրս պարապմանց այսպէս. եթէ մարդն պատկեր է բանին՝ և բանն է աստուած. ապա և մարդն է պատկեր աստուծոյ: - 530. Դարձեալ յայտնապէս, զի բանն միացեալ ի մարմնի՝ էր անբաժանաբար ի հայր. որպէս առ մեզ ներտրամադրեալս բան և *գրեալն* ի թղթի: - 531. Զորօրինակ, յորժամ վկայեսցէ թագաւորն ներտրամադրեալ բանիւն ի վերայ *գրեալ* բանին իւրոյ եթէ՝ ստուգապէս սա՛ է իմ գիր և բան: - 531. Վասն է՞ր այսչափ ամենայն գիրք և բանք և խրատք *գրեալ* եղեն: - 531. Այլ գիտելի է, զի քրիստոս գլուխ է եկեղեցւոյ, և հաւատացեալք մարմին և անդամք նմա. որպէս *գրէ* առաքեալն. «որ է՛ պատկեր աներևութին աստուծոյ. զնա եդ գլուխ մարմնոյ եկեղեցւոյ»: – 532. Երրորդ՝ մարգարէք որպէս խորհեցեալն բան. առաքեալք որպէս խօսեցեալն. և վարդապետք որպէս *գրեալն*: - 535. Եւ *գրեցին* ապաշխարութեամբ խոստովանութիւն. և եդին ի տապանին դադայ՝ յեկեղեցւոջ սուրբ վկային դեմետրեայ: - 543. Եւ պետրոս անտիոքու պատրիարգն և սուրբն պարսամ *գրեցին* ի հայք և զգուշացուցին. և նզովեցին զհաւանեալսն մարկիանոսի: - 543. Եւ սուրբն սիմէոն սիւնակեացն այրեաց զթուղթն դաւանութեանն քաղկեդոնի՝ զոր *գրեալ* էր թագաւորն մարկիանոս աղաչանօք առ նա՛. և նզովեաց զթղտատարն որ էր թէոդորիտոս գլուխ ժողովոյն: - 543. Եւ սուրբն ղուկիոս սքանչելագործ և մարգարէաշնորհ, *գրեաց* առ մարկիանոս, թէ սուգ զգեցուցեր առաքելոց և մարգարէից. զի քակտեցեր զնոցա շինուածն. և արգելաւ հոգին սուրբ յօրհնելոյ զպատարագն և զաւազան մկրտութեան: - 543. Յորում զորոգինէի *գրեալսն* խոտեցին. և զսուրբն եւագրիոս միայնակեաց՝ և զիրաշալի այրն աստուծոյ զդիդիմոս՝ նզովեցին: - 543. Եւ *գրեցին* գիրս կանոնաց գլուխս **ի**, ընդ դէմ եկամուտ թուլութեանցն: - 544. *Գրէ* կարգս կանոնականս **իղ** գլխօք. և հաստատէ՛ զեկեղեցի պայծառ կարգօք և ուղղութեամբ: - 545.

Պետրոս գլուխ է առաքելոցն. որպէս *գրէ* դիոնէսիոս ի **զ** գլուխն եկեղեցական քահանայապետութեան: - 546. Զի առաքեալն թադէոս յորժամ ձեռնադրեաց զադդէ յուռհայ, և ապա՛ ի կեսարիայ եկն և ձեռնադրեաց առաջին եպիսկոպոս զթէոփիլոս. զայն յորոյ անունն *գրեաց* Ղուկաս զաւետարանն և զգործքն առ թէոփիլոս: - 548. Իսկ կամաւոր մեղքն *գրա՛ծ* է ի հին օրէնքն **իբ** գլուխն տես: - 564. ...որպէս և *գրեալ* է ի գիրս նիկիական կանոնացն եթէ զծառայս ի ժառանգութիւն եկեղեցւոյ կարգել ո՛չ հրամայեմք. - 589. *Գրեալ* է «որդի ո՛չ տարցի զանօրէնութիւն հօր». վասն է՞ր ի մեղս ծնողաց որդին տանջի: - 591. *Գրեալ* է «իւրաքանչիւր ոք զիւր բեռն բարձցէ. և որդի մի տարցէ զբեռն հօր. և ո՛չ զմեղս որդւոյ»: – 593. Եւ վասն այն է *գրեալ*՝ յերրորդ կամ ի չորրորդ ազգս մեղաց վրէժ խնդրեսցի. յորժամ հայրն և որդին և թոռունքն զնոյն մեղս գործեսցեն: - 593. Հինգերորդ վկայութիւն հայրապետացն որք զխորհուրդ պատարագին *գրեցին*: - 595. ...որպէս *գրէ* սուրբն դիոնէսիոս ի թուղթն տիտոսի: - 596. Եւ սուրբն բարսեղ կեսարացի այսպէս բաշխէր ժողովրդեանն. որպէս *գրեալ* է ի պատմութեան նորին յունվարի **ա**: - 599. ...զի յորժամ մեղանչեմք, *գրիմք* ի պատիժն յաւիտենից. այլ ի զղջանալն և փոխիլն մեր, փոխէ՛ աստուած և զպատիժն ի ժամանակեայս: - 602. Իսկ որ երրորդ կրկնի, ի պոռնկութեան սակի *գրի* ի կանոնս սրբոց հարց: - 613. Աստ աւետարանն. և ի մեզ *գրեալ* պատուիրանքն: - 614. Պա՛րտ է ամենայն որ աղօթէ, զայսոսիկ ի միտ պահել և ապա՛ աղօթել. վասն որոյ ի սկիզբն *գրեցի* զխրատս: - 620. Այլ և **ը** խորհրդով պատերազմն սատանայի. որպէս *գրէ* սուրբն եւագրիոս: - 627. Եւ զսուրբ աստուածն խաչեցար. և այսպէս *գրէ*՝ եսայի ետես զքրիստոս նստեալ յաթոռ որ է խաչն. և երգէին զերեքսրբեանն: - 631. Եւ վկայ այսոցիկ ի մամեստիայ գտեալ քարն. յորում *գրեալ* էր յունարէն գրով, «սուրբ աստուած սուրբ և հզօր սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ»: - 632. Թովմաս առաքեալն ի թաղումն տիրամօրն է ասացեալ. որպէս *գրեալ* է ի գիրս որ կանոնական լրմունք կոչի: - 633. Զաստուած ասեն. թէ քահանայապետի մատանւոյն աստուած անունն էր *գրած*. և հաստատեաց թէ աստուած է: - 638. Երկրորդ, սա՛ զամենայն *գրելոց* զօրութիւնս յինքն ունի...: – 643. Որպէս զանձակեցին *գրէ* ընթերցուածոց մեկնիչն: - 651. Իսկ թէ ի կրօնաւորաց իցէ, պատեսցեն իւր զգեստիւն, մազեղէն և կնկուղ և այլ որպէս *գրեալ* է...: – 671. Այլև *զգրեալն* ընդհանրական թողութիւն ի դիմաց նորա ի վերայ գերեզմանին ընթեռնուն: - 674. Այլ և վասն կապելոյն սատանայի *գրեալ* է ի **թ** գլուխն ի իզ համարն ի վերոյ: - 706. Եւ ի նորս առաքեալն պօղոս բազում ուրէք *գրէ* զյարութիւնն...: - 715. Եւ ի նոյն կէտ լրմանն որ է՛ վախճան ժամանակի և սկիզբն յաւիտենի՝ լինի վերառութիւն համայնից մարդկան որպէս *գրէ* առաքեալն կորնթացւոց...: - 716. ...այլ յորժամ բոլոր արարածք ազատեսցին յապականութենէ ծառայութեան որպէս *գրէ* հռօմ յայնժամ և մարմինք մարդկան յանապականութիւն վերափոխեսցին: - 717. Եւ թէ վասն է՞ր ոչ գիտեմք զկատարած աշխարհի և զկենաց մեր, *գրեալ* է ի վեր անդ առ նահապետսն ի **ժը** գլուխն ի **դ** համարն: - 718. Երկրորդ, զի գիր մագաղաթին անջինջ մնայ. նոյնպէս և գործն ի հոգիս մեր *գրեալ*. - 729. Երկրորդ, պա՛րտ է զի կատարեսցին *գրեալքն* ի մարգարէից...: - 735. Արդ՝ ա՛յս գիր գործոց մերոց *գրեալ* ի հոգի և ի մարմին մեր որպէս ի մագաղաթի՝ դատաւորն ընթեռնու ի տես և ի լուր հրեշտակաց և սրբոց: - 741. Գործքն մեր ո՞րպէս *գրին*: - 741. Մանաւանդ թէ՝ հոգին սուրբ գրօղ դպիր. և ուղղութիւնն գրիչ գործիք. և որք զմելանն առատ տամք և զմագաղաթն, զսուրբ գործս անկեղծաւոր և զբանս աղօթից օրինաւոր, ա՛յնքան առաւել *գրիմք* ի գիրն կենաց: - 741. Իսկ խոտելոցն գիր, դպիր է պիղծ հոգին դիւական. և չար կամքն իւրեանց և խորհուրդն և հեշտութիւն մարմնոյն մելան. և ըստ գործոց առաւել և նուազ *գրեն* ի գիրն դատապարտութեան: - 741. Գիր նս կենաց է տեսութիւնն աստուածային. ի յորում ամենեքեան զխիղճս մտաց իւրեանց իբրև *զգրեալս* տեսցեն: - 742. Այլ և զերջանիկ գաղափարօղսդ մաղթեմ. որք ընդօրինակէք զգիր հարցմանցս այսորիկ, *գրել* և զսակաւ յիշատակս այսոցիկ: - 773. Որպէս զի և դուք լիջիք *գրեալ* ի գիրն կենդանեաց ա՛մէն: - 773. *Գրեսցի* յայսմ տեղւոջ և Հարցմունքն Գէորգեայ: - 773. Եւ թէ այս ո՛չ է *գրեալ*, նա՛ և ո՛չ այն եթէ մեղանչեաց ուրէք զամենայն կեանս իւր բաց ի միոյն. և ո՛չ մեղանչելն կրկին՝ ապաշխարութիւն է առաջնոյն: - 778

**ԳՐԻԳՈՐ** - Առաջին պատճառ զայս դնէ աստուածաբանն *գրիգոր*: - 24. Այս է ասէ աստուածաբանն *գրիգոր*՝ բարեխօսելն որդւոյ: - 48. ...որպէս ասէ աստուածաբանն *Գրիգոր*, «համարձակիմ և ասեմ հաւասար աստուած՝ որպէս առօղն՝ նոյնպէս և առեալն. զի անմարմինն մարմնացաւ. բանն թանձրացաւ. և աստուածն մարդ եղև. մի անձնաւորութեամբ՝ և միաւորեալ բնութեամբ. մի տէր. մի քրիստոս. մի որդի աստուծոյ և որդի կուսին»: - 100. Եւ իւրաքանչիւր սոցա երկատի, որ լինին չորս ըստ աստուածաբանին *գրիգորի* այսպէս: - 123. Նախ՝ աստուածաբանն *գրիգոր*՝ զոտքն մարմնով տընօրէնութեանն ասէ նշանակ. զի մարմնով եկեալ զփրկութիւն մեր արար. և մարմնով համբարձաւ

առ հայր: - 130. Եւ զի անմեղ մարմինն ադաման՝ անչարչարելի և երագ և պայծառ և թեթև էր, որպէս ասէ աստուածաբանն *գրիգոր*: - 228. Չորեքտասաներորդ՝ ըստ մեծին *գրիգորի* աստուածաբանի և սրբոյն բարսղի կեսարացւոյ որպէս ասացաւ ի վերոյ: - 484. Ծանի՛ր, զի վասն չարչարանաց ասացեալ է ի վերոյ ի **ժա** պրակն աստուածաբանին *գրիգորի* ընդ դէմ արիոսի: - 489. Եւ դարձեալ՝ կարէ՛ վերջինն զառաջնոյն թիւրութիւնն ուղղել և զանիրաւ կապեալն արձակել. որպէս աստուածաբանն *գրիգոր* զարիանոսացն: - 541. *Գրիգորի* աստուածաբանի, «Աստուած խաչեալ, արեգակն խաւարեալ»: - 632. Լուսաւորիչն *գրիգոր* ի հռոմայ գահիցն պատւեցաւ: - 639. Յինգերորդ, ասէ աստուածաբանն *գրիգոր*՝ եթէ հաւանիմ իմաստնոյն բանի՝ թէ հոգի բարի և աստուածասէր յորժամ ի մարմնոյն արձակի, կայ և մնայ նմա բարին որ լինի: - 691. ...որպէս ասէ աստուածաբանն *գրիգոր* առ մաքսիմիանոս եթէ «մեք կենդանիքս քաւեմք զպարտս մեռելոյն զոր նոքա ո՛չ կարեն և հատուցանեմք»: - 701. ...և վառեսցեն զերկինս որ է՛ օդն. և զերկիր և զլերինս և զդաշտս և զբոյսս և զկենդանիս. և զծանկս մեղաց որպէս ասէ աստուածաբանն *գրիգոր*: - 731. Արդ՝ ես վերջին ծնունդս եկեղեցւոյ և տրուպս բանասիրաց, *Գրիգոր* պիտակ անուն խնդրող բանին. բացայայտեցի զբանս Յարցմանց ի լուսաւոր բանից վարդապետաց եկեղեցւոյ: - 772

**ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ** - Որպէս եղիայի. պօղի և անտոնի. և մերոյ *լուսաւորչին Գրիգորի*: - 220

**ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ** - Զզորս ըստ պատկերին, *գրիգոր մագիստրոսն*: - 637. *Գրիգոր մագիսրոսն* ի տարօն եկեղեցի է շինեալ. և ծախիւք պատկեր բերեալ և անդ եդեալ: - 639

**ԳՐԻԳՈՐ ՍԿԵՒՌԱՑԻ** - Յնգետասաներորդ՝ ի մէջ գիշերի՛ է յարութիւնն. որպէս ասէ ոսկէբերանն ի յարութեան ճառին, և սուրբն նիւսացին, և բարսեղ կեսարացին, և *գրիգոր սկևռացին*, և այլք, - 514. Իսկ զարեգականն, *գրիգոր սկիւռացին*: - 638

**ԳՐԻԳՈՐ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ** - Ծնունդն, զօրութիւնն, մահն, ընդ աջմէ հօր նստիլն, և այլն ամենայն, զաստուած ի մարդում, մանաւանդ զմարդ յաստուածում ըստ *սքանչելագործին գրիգորի* ցուցանեն: - 770

**ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԷՐ** - Իսկ զխորհուրդն անճառ, և զմեծահրաշն, *գրիգոր վկայասէրն*: - 638

**ԳՐԻԳՈՐԻՈՍ** - Իսկ վասն չարչարանաց հնազանդութեանն քրիստոսի բազում պատճառս դնէ յայսմ վայրի աստուածաբանն *գրիգորիոս*: - 42. Իսկ Յինգերորդ ժողովն եղև ի վիճակս *գրիգորիսի*. ի մայրաքաղաքն աղուանից պարտաւ: - 545

**ԳՐԻՉ +** Եւ որպէս որ շարժէ *զգրիչն* և *գրիչն* մի ներգործութիւն կատարեն և ո՛չ երկուս: - 86. **Զի այսպէս սահմանեցին՝ թէ ինքնակալ թագաւոր մի և ինքնագլուխ հայրապետ մի նստցի ի հայս. և թագաւոր մի ինքնակալ՝ և ինքնագլուխ հայրապետ մի ի հռոմ. և ի վերայ միմեանց դիցեն զանձինս ի մահ. և սոսկալի գրով եղեն միմեանց եղբարք. թացեալ *զգրիչն* յահաւոր խորհուրդն**: - 548. **Երանելին մովսէս խորհեհացի՝ որ էր *գրիչ* սրբոյն սահակայ պարթևի, յետ ճժ ամի սրբոյն գրիգորի՝ եղև սկիզբն թարգմանութեան ի հայոց լեզու:** - 658. ...յորժամ այս ամենայն հաստատեալ նորոգեցաւ հրամանաւ սրբոյն սահակայ պարթևի ի փառս քրիստոսի. ձեռամբ իմով մովսիսի *գրչի* սահակայ: - 659. **Յոգի և մարմինս է որպէս մագաղաթ. կամք և իմացումն դպիր և գրօղ. հաւատքն *գրիչ*. արտասուքն մելան. և գիրն գործք բարի կամ բան աղօթից:** - 741. Մանաւանդ թէ՝ հոգին սուրբ գրօղ դպիր. և ուղղութիւնն *գրիչ* գործիք. և որք զմելանն առատ տամք և զմագաղաթն, զսուրբ գործս անկեղծաւոր և զբանս աղօթից օրհնաւոր, ա՛յնքան առաւել գրիմք ի գիրն կենաց: - 741. Կենդանի՝ հոգի և մարմին մեր. և սուրբք և հրեշտակք և հոգին սուրբ *գրիչ*: - 743

**ԳՐԻՒ +** Յանապազորդ քահանայիցն *գրիւ* մի զանգեալ. կէս յառաւօտն և կէս յերիկոյն: - 359

**ԳՐՈՂ +** Յոգի և մարմինս է որպէս մագաղաթ. կամք և իմացումն դպիր և *գրօղ*. հաւատքն գրիչ. արտասուքն մելան. և գիրն գործք բարի կամ բան աղօթից: - 741. Մանաւանդ թէ՝ հոգին սուրբ *գրօղ* դպիր. և ուղղութիւնն գրիչ գործիք. և որք զմելանն առատ տամք և զմագաղաթն, զսուրբ գործս անկեղծաւոր և զբանս աղօթից օրհնաւոր, ա՛յնքան առաւել գրիմք ի գիրն կենաց: - 741

**ԳՐՈՒԹԻՒՆ +** Զի առնելն է հաճոյական գործ առանց կասկածանաց. որպէս բարի առնել բարեաց, որ է՛ արդարութեանն աստուծոյ. և չար առնել չարեաց, որև այս է՛ խրատ ուղղութեան. այլ բարի առնել չարեաց, այս ողորմութեան է և *գրութեան*. այսորիկ առնելոյն են տեսակք: - 158. Երկրորդ՝ զի ձեռամբ *գրչի* մտանէ ի բառ. և առանց բերանոյ բարբառի. և տեսանի աչաց. և լսի ականջաց. և ուսուցանէ զմիտս: - 177

**ԳՐՊԱՆ +** Եւ շնորիք իմաստութեան ի մեզ ծաւալեալ. ըստ այնմ «որպէս իւղ զի իջանէ ի գլուխ մեր և ի մորուսս քահանայութեան կարգի, և ի *գրպանս* զգեստու ժողովրդեանն»: – 532

**ԳՕՂԻ** - Ուստի յա՛յտ է, զի որակ ծնողացն խառնի ի բեղնաւորիլն. ի դաշտանւոյն *գօղի*. ի հիւանդութենէ, ի շիկութենէ. որպէս ադամ տրտմութեամբ ծնաւ զորդին կայէն. ցաւած ծնողացն ցաւածին որդի: - 439

**ԳՕՍԱՆԱՄ +** Եւ *գօսանալ* ձեռինն զբառնալ թագաւորութեանն: - 442. Եւ արմատ ծառոյն *գոսացեալ*՝ չորանան և յառաջ եկեալ ստեղունքն: - 776

**ԳՕՏԵԻՈՐԵՄ +** Երրորդ զի պատրաստ և *գօտևորեալ*: - 730.

**ԳՕՏԷԼՈՅԾ +** Իսկ հոլանի և անգօտի. գլխիբաց և *գօտէլոյծն* է: - 639

**ԳՕՏԵՄԱՐՏԻԼ +** Տասնեն՝ *Գօտէմարտիլն* յակոբայ. և անուանն սքանչելի. և հռաքէլ լայր զորդիս իւր: - 283. Վասն է՞ր *գօտէմարտեցաւ* ընդ յակոբայ և կաղացոյց: - 311. Եօթներորդ՝ զի մի՛ հպարտացի ի *գօտէմարտիլն* կաղ առնէ զնա: - 311. Եւ այլն ասացաւ ի *գօտէմարտիլն* յակոբայ ի ժե համարն ա՛նդ տեսցես: - 332

**ԳՕՏԻ +** Եւ է երկինք՝ է *գօտիքն* են **է** մոլորակացն. որ է Զոհա՛լն. Երևա՛կն. Հրա՛տն. Արեգա՛կն. Լուսնթա՛գն. Փայլածո՛ւն և Լուսինն: - 183. Փո՛քր է *գօտին*: - 186. Իսկ մոլորակքն ի *գօտիս* իւրեանց շարժականք են. զի բարձրանան և խոնարհին: - 189. *Գօտին* զօրութիւն նշանակէ որ էր ի մէջքն. այլ և ի յաղօքս կայր և *գօտեաւ* պնդեալ էր: - 311. Դարձեալ՝ վարժէ՛ զնա *գօտեաւն* պատերազմիլ ընդ մեղս և ընդ մեղսասէր մարդիկ որ կամին զանմեղն քարշել արտաքոյ օրինացն աստուծոյ: - 311. Երկրորդ եղանակ՝ է *գօտիք*. և **ը**՝ անմոլարքն. **թ**՝ լուսնոյդ ի վայր. և **ժ** բանն աստուծոյ որ վարէ՛ զարարածս: - 343. Չորրորդ՝ է մոլորակաց *գօտիք*. և **ը** հաստատութիւնն. և ջրեղէն և լուսեղէն երկինքն: - 343. Կամարն՝ *գօտին*: - 348. Այլ ոմանք է օր ասեն յամել ի է *գօտիս*. վասն որոյ է օրէք առնեն: - 391. Զգեստ է նոցա, պատմուճան հոլանի և առանց *գօտոյ*...: - 608. Իսկ կնկուղ ի գլուխ կրօնաւորաց և օդ յոտս և *գօտի* ընդ մէջ. զսպառազինիլն և զարիութեամբ ընթանալն ի պատերազմ: - 671. *Գօտի* ի մէջն, ի նշան արիութեան: - 674. Այլ և *գօտով* պնդել զմէջս որ են բարի գործք: - 730

**Գ ՕՐԵԱՅ (ԵՌՕՐԵԱՅ) +** Երկրորդ, խաչն՝ և մահն՝ և յարութիւնն ***գ օրեայ***: - 380. Ասա՛ թէ՝ քահանայիցն հրամայեաց ի բաց կալ յամուսնութենէ յորժամ մտանէին ի տաճարն և ի խորանն. և յորժամ լսէին զօրէնս աստուծոյ ***գօրեայ*** սրբեցան: - 404. Երկրորդ՝ անցեալ ընդ լերամբ և ո՛չ գտեալ. մինչև առ տեսանօղն եկեալ. և տէր մեր էանց զլերինս հրեշտակաց և եկն ի մարգարէս. և նոքա աւետեցին զգիւտն ***գ օրեայ*** կորստեան իշոյն. – 426. Երեսունևդ, դաւիթ քաքեաւ ***գօրեայ*** առ վիմին. և տէրն ***գօրեայ*** ի գերեզմանին: - 437. Անմարթ էր թողուլ զժողովուրդն ի դրան տաճարին և մերձիլ յանկողինս. և ըստ օրինացն ***գօրեայ*** սրբութիւն ստանալ. որ անհնա՛ր է ամենևին. թէպէտ ասեն՝ գոյր ա՛յլ քահանայապետ որ զկարգ պաշտամանն կատարէր: - 484. Հինգերորդ՝ յետ ***գօրեայ*** թաղմանն քրիստոսի եկին առաքեալքն և կանայքն ի գերեզմանն. - 681. Ա՛յս է խորհուրդ ***գօրեայ*** ննջեցելոց յիշատակին: - 683

**ԳՕՐՏՈՍԱԿ** - Այլ որ **ճծ** ամաւ յառաջ եկին ի հայք՝ ասորիք արք քաջաբանք, և կամեցան սերմանել զաղանդն նեստորի. որք նզովեալ որոշեցան. բայց ոմանք ընկալեալ էին և թարգմանեալ ի նոցանէ գիրս սուտս, *Զգօրտոսակ*. Զկիրակոսակ. Զպղի տեսիլն: - 545

# Դ

**ԴԱ +** Կատարեալ և գերակատար թիւք *դորա* են առ մեզ. որ ի **դ** գլխաւորին ըստ չորից տարերց: - 141. Զի գիտեմք *զդոսա* ինն գոլ դասս ըստ սրբոյն դիոնիսեայ. և երիս երրեակս որոշեալ ի դէմս Երրորդութեանն: - 141. Եւ այսպէս է յարմարութիւն *դոցա*: - 240. Նոյնպէս և սատանայ ատէ՛ր զմարդկային բնութիւնս զի ի պատկերն աստուծոյ արարաւ. և հրէայքն ատէին զքրիստոս. զի վկայեաց հայր թէ *դա՛* է որդի իմ սիրելի: - 313.Եւ տէրն մեր **լ** ամեայ մկրտեցաւ. զորմէ հրամայեաց հայր՝ *դմա՛* լուարուք ամենայքն: - 313. Երկրորդ՝ ցուցանէ զանմեղ մահն քրիստոսի վասն մեր մեռեալ. զոր մատամբ ցուցանէին խաչօղքն թէ խաչեսցի *դա՛*: - 359. Ասէ՝ մի՛ չարչարէք զքրիստոս օրինօքն. որպէս ասէին «մեք օրէնս ունիմք և պարտի *դա*՛ մեռանիլ»: – 399. Եւ հայր վկայեաց «*դա*՛ է որդի իմ սիրելի *դմա՛* լւարուք»: – 399-400. Եւ զյիսուս փրկիչն՝ հայր սրբեաց և առաքեաց. որ և ի յորդանան վկայեաց «*դա*՛ է որդի իմ սիրելի, *դմա՛* լուարուք»: – 417. Կամ զի օրէնքն գրեալ էր՝ կուրի և կաղի մի՛ դնել գայթակղութիւն, ասէին նախատելով թէ՝ որպէս ո՛չ կարես կոխել *զդոսա*, նոյնպէս ո՛չ կարես առնուլ զամուրն յեբուսայ: - 431. Կառքդ իսրայէլի և հեծեալք *դորա*: - 445. Իսկ մկրտութիւն նորա ո՛չ որդեգրութեան էր որպէս մերս. այլ ճշմարիտ որդիութեանն յայտնութիւն ըստ ձայնին հօր «*դա՛* է որդի իմ սիրելի»: – 474. Եւ ձայն հօր որ ասէ՝ *դա՛* է որդի իմ սիրելի: – 487. Նախ՝ որ ասէ «*դա՛*» նշանակէ զմիաւորութիւն բանին առեցեալ մարմնովն: - 487. Զի ո՛չ ասաց թէ որ ի *դմա՛* է կամ *դորա* ըստ բաժանողաց. այլ թէ *դա՛*. որ մի անձն բնութեամբ միացեալ նշանակէ: - 487. Եւ են որք զանձն և զբնութիւնն նշանակեն. որպէս *դա՛*, սա՛, նա՛: - 487. Զբերան մտացն ասէ. այսինքն է՛ յօժարութիւն հոգւոյն որ առնու զհոգին սուրբ. ըստ այնմ որ ասէր, «բա՛ց զբերան քո և լցից *զդա*»: – 523. Երկրորդ ունիմք վկայութիւն ի քրիստոսէ յորժամ ետ զարիւնն ի տեսակ գինւոյն՝ ասաց, «ո՛չ արբից ի բերոյ որթոյ մինչև արբից *զդա* նոր արքայութեան հօր իմոյ». և ջուրն ո՛չ է բեր որթոյ: - 595. Եւ պետրոս և որդիքն զեբեթեայ յորժամ լուան ի հօրէ «*դա՛* է որդի իմ սիրելի *դմա* լւարուք», ապա և նոքա վկայեցին, և խաչեցաւ քրիստոս: - 742. Վասն վեցերորդին ասէ տէր «հանէք *զդա* ի խաւարն արտաքին»: – 751. Իսկ զոր ինչ շնորհօք լինի ոք ստացեալ, կարէ՛ և մերկանալ. որպէս ադամ զեռակի շնորհն. և առ ջրհեղեղաւն «մի՛ մնասցէ հոգի իմ ի *դոսա* վասն լինելոյ *դոցա* մարմին»: - 782

**ԴԱԳԱՂ +** Երրորդն ի դուռն գերեզմանին. վասն որոյ այժմ սովորութեամբ երիցս անգամ դնեն *զդագաղն* ի ճանապարհի: - 675

**ԴԱԳՈ** - Եւ կործանեցաւ *դագոն*: - 412. Վասն է՞ր կործանեցաւ *դագովն* առաջի տապանակին: - 425. Կրկին կործանիլն *դագոնայ*, զի նախ՝ օրինօքն մովսէսի անկաւ, և քրիստոսիւ կործանեցաւ: - 425. Չորրորդ՝ նշանակ իմանալւոյն *դագոնայ*, որ զգլուխ իւր ամբարձ ընդ դէմ աստուծոյ. և ընդ բռամբ էարկ և կոխեաց զմարդկային ազգ. զորս խորտակեաց տէր մեր: - 426

**ԴԱԴԱՅ** - Եւ գրեցին ապաշխարութեամբ խոստովանութիւն. և եդին ի տապանին *դադայ*՝ յեկեղեցւոջ սուրբ վկային դեմետրեայ: - 543

**ԴԱԴԱՆ** - Եւ որպէս կորխ *դադան* և աբիրոն վասն հակառակութեանցն ընդ մովսէս և ահարոն՝ հրով և բացմամբ երկրի դատապարտեցան: - 288. Քսանևդ, նա՛ զերկիր պատառեաց *դադանեանցն*: - 329. Վասն է՞ր կորխեանքն. և *դադանեանքն* ընկղմեցան: - 381. Եւ *դադան* և աբիրօն որդիք ռուբենի՝ զիշխանութիւնն խնդրէին զի անդրանիկք էին: - 381. Իսկ իշխանութիւնն երկրաւոր, վասն որոյ բացաւ երկիր և եկուլ *զդադան*: - 381. Իսկ *դադան* քրէական մեղանչեաց որ է՛ յանցումն ի թագաւոր. զոր անհնարին պատուհասին. գոյիւք և ազգօք ջնջին: - 381. Վասն է՞ր կորխեանքն սրբեցան հոգւով. և *դադանեանքն* կենդանի ի գերեզման իջեալ տանջեցան: - 381. Ոմանք ասեն թէ՝ *դադան* քրէական մեղանչեաց. վասն այն դառն տանջեցաւ: - 381. Իսկ *դադան* կենդանի էջ ի դժոխս՝ ո՛չ սրբեցաւ. և ախտիւք իւր անսուրբ ընկղմեցաւ: - 382. Իսկ *դադան* ամենևին անզեղջ մնաց. թէպէտ գնաց մովսէս ի խորան նոցա՝ ո՛չ զղջացան: - 382. Այլք ասեն վասն *դադանեանցն* թէ՝ հոգիք նոցա մարմնով ի տանջանս կային. ուր ընկեղմեցան մինչև ցաւարումն դժոխոց. ընդ որս և զնոսա ազատեաց քրիստոս իջանելովն ի դժոխս: - 382. Երրորդ՝ կրեցին զանէծքն *դադան* և աբիրոն: - 409. Հինգերորդ՝ զի քրէական մեղքն ազգաջինջ առնէ. որպէս *զդադան* և զաբիրոն. զի ընդ մովսէսի և աստուծոյ հակառակ կացին, ազգօք և աղխիւք ընկղմեցան զի այլքն երկիցեն: - 416

**ԴԱԴԱՐ +** Հինգերորդ՝ *դադարք* թռչնոց: - 212. Եւ *դադարք* դիւաց. իսկ յետոյ լուցկի են գեհենին յաւիտենից: - 212

**ԴԱԴԱՐԻՄ +** Երրորդ՝ Ծնաւ և *դադարեցաւ*, թէ ոչ: - 29. Երրորդ հարցումն հակառակացն թէ՝ որդի ի

հօրէ ծնաւ և *դադարեցա՞ւ*, թէ դեռևս կուծնանի: - 37. Թէ *դադարեցաւ*, ամենայնն հարկիւ է և սկիզբն ունի: - 37. Զի թէ պատասխանեմք թէ ո՛չ է հարկ թէ սկսեալն ամենայն իրօք և *դադարեսցի*. որպէս հրեշտակք և հոգիք մարդկան. զի են սկսեալք և ո՛չ *դադարին*. է՛ այս պատասխանի, այլ ո՛չ բաւական: - 37. Զի և յօհան դամասկացին ասէ հարկ գոլ ամենայն սկզման ունել դադարումն. այլ զի հրեշտակք և հոգիք ոչ *դադարին*, այս կամա՛ցն աստուծոյ է պահպանութիւն, և ոչ բնութեան նոցա. զի յո՛չ էից եղեալքն՝ կարեն յոչ էութիւն փոխիլ: - 37. Իսկ յորժամ զյայլումն լսեն՝ արծակին ի վերայ մեր ասելով, եթէ յայլո՛ւմ է՝ պատահումն է ի հայր որպէս զօրութիւնս առ մեզ. իսկ եթէ զօրացեալ է՝ և ընդ զօրանալն *դադարեսցէ* ամենայնիւ. շարժումն եղիցի և ոչ շարժօղ: - 52. Եւ որպէս մշտնջենաւոր որդի ի հօրէ սկսեալ և անվախճան. որպէս ժամանակ հոգի ի հօրէ սկսեալ և յորդի *դադարեալ*: - 105. Ո՛չ ասեմ ժամանակ. զի արարիչ է ժամանակաց և յաւիտեանց. և որպէս ո՛չ ի ժամանակի սկսեալ, և ո՛չ ի ժամանակի *դադարի*: - 105. Զի ի կատարածի աշխարհի յորժամ *դադարի* գործ դիւացն՝ ամենեքեան միահաղոյն փակեսցին ի դժոխս: - 147. **Եւ որպէս երգովն դաւիթի *դադարէ՛ր* այսն չարութեան ի սաւուղայ, նոյնպէս և այժմ:** - 150. Զի յետ քրիստոսի *դադարեաց* սատանայ զհոգիսն ի դժոխս տանելոյ որպէս ասէ սուրբն եպիփան: - 153. Եւ կամ ի ներգործութենէ լինի զօրութեամբ. որպէս ի շարժմանէ *դադարեալ*: - 162. Կամ յետ ներգործութեան. որպէս ի շարժելոյն *դադարիլ*: - 168. Իններորդ՝ և է ուրեք ժամանակաւ առաջին ներգործութեամբն՝ և վերջին զօրութեամբն. որպէս շարժման *դադարիլն*: - 169. Եւ զի *դադարին* ի գործոյ: - 196. Երկրորդ՝ զի ջրհեղեղն համաշխարհական՝ անդ սկսաւ՝ և դարձեալ *դադարեաց*: - 196. Իսկ ձմեռն է կատարած և վերջք կենցաղոյս. վասն այն բոյսք և ծնունդք *դադարին* և չորանան: - 198. Եւ կամ հո՛ղմ է արտաքս թիւրեալ ի ճանապարհէ՛ իւրմէ. և ի խոռոչս երկրի մտեալ. և վասն թանձրութեան երկրին շարժէ զնա մինչև գտանէ ելս և ապա՛ *դադարի*: - 206. Իսկ պտուղք զկարգ տարերա՛ցն բերէ որպէս ցուցաւ. ի հողոյն սկսեալ և առ հուրն *դադարեալ*: - 213. Քանզի միտք շարժեալ առհմաստս՝ *դադարէ՛* ի ճշմարտութիւնն: - 248. Եւ վասն տնկական և զգայական մասին՝ կազմողական զօրութիւնն այլ ևս աճեցուցեալ զմարմինն **բ** ամ և *դադարեալ* յերեսներորդին, լինի ժամանեալ ի չափ հասակի կատարմանն քրիստոսի, յորում մկրտեցաւ տէրն մեր: - 265. Երրորդ՝ ասէ չտայ զզօրութիւնն, զի մի՛ *դադարեսցիս* ի գործելոյ: - 287. Իսկ յամենայն օր հալէր հրամանաւն աստուծոյ, զի *դադարեսցեն* ի հաւաքելոյ. և ապա զի դարձեալ խնդրեսցեն առաւօտել առ աստուած: - 339. Առաջին՝ շաբաթն. յորժամ *դադարիմք* **զ** շարժմամբ և **ե** զգայութեամբ ի մեղաց գործոց: - 372. Որ մինչ ի ծ ամն կատարէր զգործն իւր, և անդանօր *դադարէ՛ր*: - 379. Նա՛խ՝ զի ի խղճմտանք մարդոյն կախեալ է կեանքն արժանի մահու. և տեսանէ՛ միշտ և ո՛չ հաւատայ և *դադարէ* ի մեղաց: - 404. Երկրորդ՝ զփոփոխելի կեանքս սգան. և յուսով հանդերձեալ յարութեանն *դադարին* ի սըգոյ և ուրախանան: - 411. Եւ անդ *դադարեցան* առաջնորդք օծեալք. յորում երևեցաւ ճշմարիտ օծեալն քրիստոս: - 421. Եւ մինչ ընթացաւ ի կալն ուռնայի և գնեաց զեզինսն և ողջակիզեաց, եհաս ի **զ** ժամն. որ յառաջն *դադարեալ էր* սուրն: - 435. Երկրորդ՝ զի յորժամ ուխտէ մարդ, ի նոյն ժամն *դադարի* ցասումն աստուծոյ. ապա յորժամ կատարեմք՝ երևի մեզ: - 435. Արդ սկսեալ առ դարեհիւ ի կե ոլոմպիադին՝ *դադարեցին* ի ճձզ ոլոմպիադին առ հիւրկանոսիւ քահանայապետիւ, որ գերեցաւ ի պարթևաց: - 449. Եւ գործ արդարութեան ի վախճանի. զի արդարապէս ամենայն որ սկսանի կատարի. և որ շարժի *դադարի*: - 458. Եօթներորդ՝ նա՛ միա՛յն է միշտ և անդադար ծնունդ. զի ո՛չ սակաւ ի ժամանակի, և ո՛չ ի ժամանակի *դադարի*. այլ որպէս լոյս ի հրոյ միշտ և անհատապէս ծնանի: - 472. Զոր օրինակ ի բարձր ուստէք քար հոլովեսցի, և որ մօտն կացցէ ասէ ցնա՝ երթալ ունիս մինչ ի ներքին վայր տեղիս և ապա *դադարիս*: - 497. Նոյնպէս և ադամայ ասաց աստուած՝ ի հողոյ սկսար և ի հող կամիս *դադարիլ*: - 497. Ըստ սողոմոնի «որպէս թռչուն ի բունոյ թռեալ և ի բոյնն դարձեալ *դադարի*, այնպէս են և անէծք անզգամի»: – 539. Կամ այլ ազգ. սէրն է սկիզբն գործոց բարեաց, զի շարժէ՛ առ այն. որպէս ասեն վարդապետք՝ սէրն գործէ՛ մեծամեծս թէ է՛. և թէ *դադարէ* ի գործելոյն՝ ո՛չ է սէր: - 575. Եւ յաւուր կիրակէի երեք անգամ ասեմք «ո՛չ *դադարեցից* քրիստոս օրհնել զքեզ»: - 632. Եւ զայս աշխարհս արար ի **զ** օրն և *դադարեաց*: - 647. ...ընդդիմակն սոցա յաւելու. և ի մահն լնանի և *դադարի* ամենայն: - 666. Վեցերորդ, ի փոփոխումն աստուածածին կուսին յետ գ յաւուր ձայն հրեշտակացն *դադարեցաւ*. - 681. ...և ի *դադարիլ* ժամանակին՝ ի նոյն կէտն համանգամայն վերառեցեալ մտանեն ի կեանս առաջին ըստ խոստման բանին: - 716-717. Վասն զի երկին որ շարժի՝ յօր դատաստանին *դադարի* և հաստատի յայն կարգն յոր նա՛խ ստեղծան. արեգակն յարևելս և լուսինն յարևմուտս: - 727. Եւ **դ** տարերքդ իւրաքանչիւր *դադարին* ի տեղի իւրեանց և բնաւ ո՛չ փոփոխին: - 727. Զի երկինք ի շարժմանէ *դադարէ* և և՛ս պայծառանայ: - 728. Իսկ պարզ տարերքն գնդաձև *դադարին* ի

տեղիս իւրեանց յաւիտեան: - 728. Եւ այլ ևս ի շարժմանէ *դադարին* որպէս ասացաւ. զի ո՛չ առնեն ամառն և ձմեռն: - 728. ...այսինքն բոլոր ամենայն անդամօք մարմնոյն յաստուածութիւնն հանգիցէ. զի *դադարեսցի* եկեղեցի յամենայն աշխատութեանց: - 736. Այլ որ ուղիղն է տեսութիւն, յետ յարութեան փոխի ժամանակն ի յաւիտեան. և այլ ո՛չ գտանի մասն և րոպէ և ժամ. զի երկնային մարմինք *դադարին* ի շարժմանէ ուստի ժամանակն գոյանայ: - 747. Չորրորդ՝ կամ տանջօղն *դադարի*. իսկ անդ հրամանն աստուծոյ է տանջօղ որ ո՛չ երբէք *դադարի*: - 750. Եւ առ ընդունակ նոցին *դադարիլ* շնորհին գործելոյ, բացբարձումն է շնորհին իջելոյ: - 783

**ԴԱԴԱՐՈՒՄՆ +** Զի և յօհան դամասկացին ասէ հարկ գոլ ամենայն սկսզման ունել *դադարումն*. այլ զի հրեշտակք և հոգիք ոչ դադարին, այս կամա՛ցն աստուծոյ է պահպանութիւն, և ոչ բնութեան նոցա. զի յո՛չ էից եղեալքն՝ կարեն յոչ էութիւն փոխիլ: - 37

**ԴԱԼԱՐ +** Նախ՝ զի հովիւն ի *դալար* վայրի բնակեցուցանէ. այսինքն ի վայրենացեալ գրոց սրբոց գիտութիւնն: - 49. Չորրորդ՝ զի տունկք և բոյսք ի ներքին հիւթոյ և ի վերին անձրևոյ միշտ *դալար* մնասցեն: - 207. Երրորդ, սուրբ խաչն աստուածընկալ *դալար* զօրութեամբ. շառաւիղ թևն. պտուղ քրիստոս ծաղկեալ արեամբ և ջրով: - 382. Եւ որպէս մի հուրն զանազանապէս այրէ *զդալար* փայտ՝ և զչոր խոտ՝ և զեղէգն: - 505. Չորրորդ՝ ծառ կենաց կոչի տէր մեր յիսուս քրիստոս. ըստ որում փայտ *դալար* էր աստուածութեամբն. և մեզ կեանք և կենդանարար եղև յարութեամբն իւրով: - 768

**ԴԱԼԱՐԻՄ +** Եւ զի ծառք չորացեալք՝ *դալարին* և կանաչին: - 197. Վասն է՛ր բոյսք փութով աճին և *դալարին* քան զտունկ և զծառ: - 214. Եւ զոր օրինակ՝ տունկ ի յերկրի տնկեալ՝ նախ *դալարի*. և յորժամ հաստատի ծաղկի. և յորժամ ևս հաստատի՝ ապա պտղաբերի: - 255. այլ չոր ձաղկն *դալարիւր*. այսինքն թէ ի զանգուածոյն ադամայ ունէր ինչ փոշետեսակ՝ սրբեցաւ հրով հոգւոյն սրբոյ: - 331. Չորրորդ, քրիստոնէական ժողովուրդն *դալարացեալ* ի մեղաց. շառաւիղեալ ծննդօք. ծաղկեալ հաւատով և պտղաբերեալ: - 382. Հինգերորդ, ըստ փիլոնի գաւազանն է իմաստութիւնն. *դալարեալ* մտօք և ծաղկեալ ուսմամբն. և պտուղ՝ ուսուցմամբ աշակերտաց: - 382. Իսկ երկիրն նոր օրինացս ո՛չ բնական իմաստութեամբ հեթանոսաց ոռոգի, այլ շնորհօքն աստուծոյ և հաւատով *դալարի*: - 398. Եօթներորդ, որ ի տղայութեանն հասակէ՛ կան յաստուածպաշտութիւն, իբր զխոտս *դալարի* պտղաբերեն զհարիւրաւորն: - 757. Եւ որք ի ծերութեանն գան յուղղութիւն, որպէս զսէզ *դալարին*, և տան պտուղ զերեսնաւորն: - 757-758. Եւ որպէս զկենդանարար ջուր զընդունակս իւր *դալարացուցեալ*. ծաղկեալ յաստիս և պտղաբերեալ ի հանդերձեալն...: - 768

**ԴԱԼԱՐԻ** (գոյական) **+** Եւ վասն չորրորդին ասէ դաւիթ, «դնէ՛ զձիւն որպէս զասր». և թէ՝ «առաքէ զբան իւր և հալէ՛ զնոսա». և թէ «բուսուցեր զխոտ ի լերինս, *զդալարի* ի ծառայութիւն մարդկան»: - 26. Իսկ ծաղկեալ գաւազանն չորս ինչ յաւելու. *Դալարի*. Շառաւիղ. Ծաղիկ. և Պտուղն ընկուզ: - 382

**ԴԱԼԻԼԱ (ԹԱԼԻԼԱ)** - Մետասաներորդ՝ առաջինն կին մերժեցաւ և երկրորդն մերձեցաւ որ կոչիւր *դալիլա*: - 422. Զի սամփսոն ի ժամ գերծելոյ գլխոյն թմրեալ ի ծունկս *թալիլայ* խոնարհէր. նոյնպէս և ամենայն մեղք զոր գործէ մարդ, և առաւել գէճ ցանկութիւն, անարգէ զմարդ: - 424

**ԴԱԿՈՒԷԼ** - Վեցերորդ՝ *դակուէլ*. ինքն աստուածային: - 144

**ԴԱՀԵԿԱՆ +** Մետասաներորդ՝ յովսէփ **Ճ** ամաց վաճառեցաւ **Լ** *դահեկանի* որպէս ասէ ի կտակն: - 313. ...ապա յայնժամ առնուն *զդահեկան* երանութեանն: - 692

**ԴԱՀԻՃ +** Զոր օրինակ՝ զմահապարտ ոմն թագաւորն հրամայէ՛ *դահճին* ի բանտ դնել. դարձեալ զնոյն թագաւորն աղերսեն և նա հրամայէ՛ արձակել ի բանտէն: - 492. Եւ եփրեմի ներբողեա՛նն այլ՝ ցոյց զա՛յս տայ. թէ *դահիճն* ետես ի բանտին որ այսպէս աղօթէր: - 659. Ճանապարհ կեանս այս. և ոսոխ մարմինն. և դատաւոր միտքն. *դահիճ* խիղճ մտացն որ չարչարէ՛ զհոգին և ոչ ազատէ մինչև զամենայն պարտսն վճարեսցէ ապաշխարութեամբ: - 704. Դատաւոր աստուած. և *դահիճ* հրեշտակք. և բանտ դժոխքն: - 704

**ԴԱՀՃԱՊԵՏ +** Եւ յետ **Ե** ամսոյ՝ նաբուզարդան *դահճապետն* հրձիգ արար զէմ և զտաճարն և զտուն թագաւորացն. և զպարիսպն կործանեաց. և զսիւնսն պղնձի և զաւազանն և զամենայն կահ պղնձի և արծաթի տարաւ ի բաբիլօն: - 447

**ԴԱՂՄԱՏ +** Եւ այս են **իբ** Լեզուքքն. ...*Դաղմատք:* - 298. Նշնակութիւն է **գ** ազգ գրոյն ի վերայ խաչին. Եբրայեցի. Յունաց. և *Դաղմատ:* - 645. Եւ փոխանակ *դաղմատին* է՛ իւրաքանչիւր լեզու որ պատարագէ՛: - 645

**ԴԱՂՄԱՏԵՐԷՆ +** Եւ *դաղմատերէն* տիտան. այսինքն արեգակն կամ հսկայ: - 707

**ԴԱՄԱՍԿԱՑԻ** - Եօթներորդ՝ վկայ *դամասկացին* որ ասէ. որ և նա ևս քաղկեդոնիկ է. եթէ յայտնապէս զհոգին սուրբ ի հօրէ՛ ասեմք. և զնա հոգի հօր անւանեմք: - 64-65. Երրորդ՝ ըստ *դամասկացւոյն* հրեշտակն ո՛չ է ընդունակ ապաշխարութեան. նմին իրի և ո՛չ թողութեան: - 151. Եւ թէ ոք ասիցէ, որովհետև ներգործութիւնքն բնութեանց հետևին, որպէս հուրն միշտ այրէ, և ջուրն ցրտանայ և ջերմանայ. ապա ճշմարիտ երևի բանն *դամասկացւոյն* եթէ է՛ ի քրիստոս կրկին ներգործութիւն. որպէս և կրկին բնութիւն: - 174. Եւ որպէս ասէ կղէմ և անանիա *դամասկացի*, թէ **զ** գիրք այլ ընկալաք յեկեղեցի: - 450. Եւ *դամասկացին* ասէ՝ «ի փօստազիս իրացն որ ո՛չ երևի յանդիմանութիւն»: – 571

**ԴԱՄԱՍԿԱՑԻ ՅՕՀԱՆ** - Իսկ *դամասկացին յօհան* գլուխն երկաբնակաց ասէ՝ «բոլոր աստուածութիւնն է միաւորեալ ընդ մարդկային բնութիւնն ի քրիստոս. և տեսանի ի հոգւոյն քրիստոսի»: – 100. Որպէս *դամասկացին յօհան* և օգոստինոս՝ իմանալի և զգալի ասացին: - 221

**ԴԱՄԱՍՈՍ** - Եւ Պատրիարգունք էին անդ, Ներսէս հայոց. Կիւրեղ Երուսաղէմի. *Դամասոս* հռօմայ. Նեքտառիոս կոստանդնուպօլսի: - 542

**ԴԱՄԱՏՐԱՆ** - *Դամատրանք*, որ են բերդացիք: - 299

**ԴԱՄԲԱՐԱՆ +** Իսկ *դամբարան*, որ է պահարան. զի անտի դարձեալ առցի որպէս և եդաւ: - 678

**ԴԱՅԵԱԿ +** Եւ զի *դայեա՛կ* է կենդանեաց: - 211. Դարձեալ՝ նախախնամութեանն է այսպէս կարգեալ. զի մարդս ունի *դայեակ* և սնուցօղ, պէտս ունի խնամարկութեան զի հասցէ ի չափ հասակի: - 267. Երրորդ՝ որպէս զստնդիայի մանուկն է ամ խրատէ՛ *դայեակն*. այսպէս ժողովուրդն որ ել յերկրէն իւրեանց, երկիրն բաբիլացւոց հ ամ ի գիրկս իւր *դայեկեաց* զնոսա և սնոյց. զի յետ դարձին յերկիրն իւրեանց՝ զքարիս գործեսցեն: - 448

**ԴԱՅԵԿԵՄ +** Օրէնք *դայեկեցին*: - 456

**ԴԱՆ** - *Դա՛ն* է և Պօղոս: - 348. *Դան*. Ասեր. և Նեփթաղիմ. **ժե** բիւր և **ռռ** զօրք նոցա: - 378

**ԴԱՆԱ** - Երեքտասաներորդն ի *դանա* որդի մանովէի Սամփսոն. որ կալաւ յ աղուէսս, և կապեաց ի նոսա ջահս. և այրեաց զանդաստանս այլազգեաց: - 420. Ա՛ըդ՝ ծնանի ի բաբելօն ի ցեղէն *դանայ*. և եկեսցէ յԵրուսաղէմ և թլփատեսցէ զինքն: - 707. Երեմիա՝ երիվար արշաւեալ յազգէն *դանայ*: - 707. Զի նա՛ է օձ դարանակալ ի ճանապարհի որպէս ասաց յակոբ յազգէն *դանայ*: - 708

**ԴԱՆԿ +** Սիկղն և սատերն և երկդրամեանն մի են. **ի** *դանկ* է. և մի *դանկն* **բ** գարւոյ կշիռ է: - 343. Զարծաթն է առ ի համարոց գլխոցն կէս երկդրամի որ է՛ **ժ** *դանկ*: - 344

**ԴԱՆԴԱՂԻՄ +** Այլ և ի դռան Կլայիս սակաւ ինչ *դանդաղեալ*, մինն փրկեալ և միւսն գերեալ: - 789

**ԴԱՆԴԱՂԿՈՏ +** Եւ պիտանեացն՝ փառս վերընծայել այնմ, որ փառաւորեալն է ի պարգևս իւր. իսկ զանպիտանսն ներել մերոյ փոքր ընկալ անօթոյ և *դանդաղկոտ* փութոյ: - 772-773

**ԴԱՆԴԱՉԵՄ +** Այլ և ո՛չ որպէս պատահումն ի յէութիւն. զի բանն աստուած ո՛չ է անանձն և ազդումն ինչ որպէս մեր բանս ըստ ոմանց. որպէս մարկեղոս և փոտինոս *դանդաչեն*: - 88

**ԴԱՆԻԷԼ** - Այլ և զամս ծննդեանն քրիստոսի՝ և վասն եօթներորդացն *դանիէլի*՝ գտցես ի չորրորդ թագաւորութեանց վերջքն ի լ համարն. զոր ընդդէմ հրէից գտցես բան: - 29. Եօթներորդ՝ զնա փոքր եղջիւր կոչէ *դանիէլ*. խեթկի և մեծամեծս բարբառելով. և սոքա խեթկեն զեկեղեցի. և բանան զհայհոյիչ բերանս իւրեանց յերկինս, և զլեզուս ածէին զերկրաւ: - 35. Մետասաներորդ՝ աստուծոյ միա՛յն է յայտնել զգաղտնիս. որպէս ասէ *դանիէլ*, «աստուած յերկնից ինքն յայտնէ զխորհինս և զգաղտնիս»: – 58. Վասն է՞ր կոչի աստուած հին աւուրց ըստ *դանիէլի*: - 114. Դարձեալ՝ գիտելի է, զի հին աւուրց և ծեր ետես *դանիէլ*. «հեր գլխոյ նորա սպիտակ իբրև զձիւն»: – 115. Զի՞նչ է **ռք** հազարաց և բիւրք բիւրուցն զոր ետես *դանիէլ*: - 141. Այսպիսի ժամանակ է յայտնապէս կեանք մեր. զի զոր ինչ ժամանակ կենցաղոյս չափէ բնութեամբ՝ ապականէ և փոփոխէ. որպէս ասէ *դանիէլ*՝ «փոխէ՛ զժամանակս և զդարս. փոխէ՛ զթագաւորութիւն և կացուցանէ»: – 199. Նոյնպէս և կեանք մեր. այլայլի ի մանկութենէ ի ծերութիւն. յառողջութենէ ի հիւանդութիւն. և այլն՝ ըստ *դանիէլի*՝ «**է** ժամանակ փոփոխեսցին ի վերայ քո»: – 199. Որպէս *դանիէլ* առիւծուցն յաղթեաց. և պօղոս իժին. և բազում ճգնաւորաց որք անապատս էին՝ գազանք և անասունք սպասաւորէին նոցա: - 220. Այն որ աստուածայինն է տեսիլ կոչի. որպէս Աբրահամուն. Յակոբայն. Յովսեփայն. և *Դանիէլին*: - 268. Երեսուներորդ, Եօթներորդքն *դանիէլի*: - 413. Եւ *զդանիէլ*՝ և **զգ** մանկունքն՝ և **ժռ** այր ի մեծամեծացն գերի տարաւ ի բաբիլօն: - 447. Իսկ է երրորդքն *դանիէլի* որ ասէ՝ «**է** երրորդ է՝ և եօթներորդ **կբ** համառօտեսցի ժողովրդեանն»: - 449. Իսկ այլ ոմանք թուեն զեօթներորդն *դանիէլի* ի դարեհի որդւոյ արշուրեայ առաջին ամէն. յորում զտեսիլն ետես մարգարէն. մինչև ի ծնունդն քրիստոսի ամք **նձգ**: - 449. Անգէ: Զաքարիա: Մաղաքիա: Երեմիա:

Բարուք: Ողբք: *Դանիէլ*: Եզեկիէլ: - 450. Վեց՝ *դանիէլն*: - 451. Երկրորդ՝ զի վէմն առանց ձեռին հատաւ ի կուսական լեռնէն ըստ *դանիէլի*: - 470. Նա՛խ՝ զի ծեր և հին աւուրց նշանակեցաւ հայր աստուած ի *դանիէլէ՛*. իսկ որդին նորածին և երիտասարդ հասակաւ: - 479. Այս դպրութիւնքս բանին ի կատարածի ըստ *դանիէլի*. որպէս գրեալ է աստ յայլում տեղւոջ՝ անդ տեսցես: - 481. Տասներորդ վասն տեսութեան մեկնութեանն. որպէս առ *դանիէլին*: - 536. Զսիրտ իւր հպարտացուսցէ որպէս ասէ *դանիէլ*. «յարիցէ ընդ դէմ իշխանաց իշխանին». այսինքն ընդ դէմ աստուծոյ. և ջանայ փոխել զօրէնս և զկրօնս: - 707. Եւ *դանիէլ*՝ փոքր եղջիւր: - 707. Թագաւորէ՛ նեռն զաւուրս **ռ** երկերիւր **հևը**, ըստ *դանիէլի*: - 709. ...և *դանիէլ* զհին աւուրցն ետես, և զի որդւոյ տուաւ իշխանութիւն դատաստան առնել: - 735. Երրորդ, բազմութիւնք երկնաւոր զօրացն ընդ նմա իջցեն. զի «զօրութիւնք երկնից շարժեսցին» հազարք հազարաց և բիւրք բիւրուց ըստ *դանիէլի*: - 737. Իններորդ, փա՛ռք է զդատաստանն առնել. զի նմա տըւաւ իշխանութիւն ասէ *դանիէլ*. և հայր ո՛չ զոք դատէ. այլ զամենայն ետ որդւոյ որպէս ցուցաւ: - 737. Զի՞նչ է որ ասէ *դանիէլ* «դպրութիւնք բանին»: - 741. Իսկ ի հանդերձեալն Առաջին ոստխ է սոյն խիղճ մտացն. զորմէ ասէ *դանիէլ*, «դպրութիւնք բացան»: - 743. Երեք կարգս այսորիկ գուշակեին երեքումբք արամբքն զորս եզեկիէլ մարգարէացաւ. փրկելոցն Նոյիւ Յոբաւ և *Դանիէլիւ:* - 755. *Դանիէլիւ*՝ կուսիցն դասք ծնուցեալ լինին: - 755

**ԴԱՇՆ +** Նմանապէս և միջակ կապիւն, զի ուսանիմք յաստուծոյ ընկալեալք զկարգ կրօնիցն. և ունիմք ուխտ և *դաշին* և հնազանդութեան նմա...: - 318. Որով լինի պսակս այս *դաշն* և կապ ի մէջ առն և կնոջն. որով լինի անքակ միութիւն: - 609

**ԴԱՇՏ +** Մարգաց. որ է՛ ժամանակ ածելոյ զմարդ. որ ի *դաշտս* և ի հովիտս իցեն. յայգեստանս և ի բուրաստանս. յորժամ արեգակն առ շամբն և յետ շանն իցէ. զի ի **ձգն**՝ մո՛տ է ամռան: - 201. Երրորդ՝ զի ամենայն տեղիս գտցի ջուր. ի լերինս և ի *դաշտս*, և արբցեն կենդանիք: - 207. Վասն է՞ր ի լերինս բղխեն աղբերք առաւել քան ի *դաշտս*: - 209. Իսկ ի *դաշտս* ո՛չ է հողմ. վասն որոյ առաւել շողէ: - 211. Որպէս լերինք ցուրտ գոլով՝ զպտուղս ո՛չ հասուցանեն որպէս ի *դաշտի*: - 261. Նա՛խ զի սիրտ սուրբ և աննենգ ունէր. ուստի յա՛յտ է յանմեղութեամբ գնալոյն ընդ եղբօրն ի *դաշտն*: - 286. Եւ յետ **եճ** և **իե** ամաց ջրհեղեղին էր սկիզբն շինուածոյ ամբարտակին ի աշխարհին բաբելօնի ի *դաշտին* քաղանէ: - 297. Եւ միւս հաւն թաքաւեալ յարիւն, հոգին կենդանի. որ կարեկից լինի մարմնոյն և զսրբութիւն նորա հանէ՛ յուսով ի *դաշտն* որ է՛ յերկինս: - 368. Զի գործնականաւն մեռանիմք ընդդէմ մեղացն. և տեսնականաւն մտօք թռչիմք ի դրախտն որ է՛ *դաշտ* երկնային: - 368. Եւ արիւնն, զմեղս մեր բարձեալ յինքեան և տարեալ ի *դաշտն* առ հայր յերկինս. զի որպէս մեռեալ մարմնովն քաւեաց զմեղս. նոյնպէս և անմահ աստուածութեամբն կենդանացոյց և յերկինս եհան: - 369. Ըստ մարմնոյ յա՛յտ է զի երկիրն եգիպտացւոց *դա՛շտ* է. վասն այն նեղոս գետն արբուցանէ զնա՛: - 398. Այլ եւմ լեառն է և *դաշտ*, յանձրևոյ ոռոգի. իբր թէ խնամօքն աստուծոյ լինի անձրև աւելի և նուազ, ի ժամու և տարաժամու ըստ արժանեացն ձերոց: - 398. Երկոտասաներորդ՝ դարձեալ սաւուղ կամէր պաշարել զդաւիթ. և եկն զօրօքն իւր և ննջեաց ի *դաշտի*. – 514. Այլ և ամենայն աշխարհ տաճա՛ր է աստուծոյ. թէ ի *դաշտի* թէ յագարակի թէ ի տղմի. կամ ի ջուր սուզի, կամ ի գազանաց գիշատի, կամ ի ձկանց կլցի, արդարութեան ոչ ինչ վնասէ: - 678. ...և վառեսցեն զերկինս որ է՛ օդն. և զերկիր և զլերինս և *զդաշտս* և զբոյսս և զկենդանիս. և զժանկս մեղաց որպէս ասէ աստուածաբանն գիգոր: - 731

**ԴԱՇՏԱՁԵՒ +** Եօթներորդ՝ զի է անդորր վայր. այսինքն հաւասար ընդարձակ և *դաշտաձև* գոլով: - 184

**ԴԱՇՏԱՆ +** Քառասունենէ, Սերմնակաթին և *դաշտանէնոյն*: - 284. Նոյնպէս և արիւն *դաշտանէնոյն* պղծէ՛ զչորս դէմս. որպէս հոսումն արուին և բղխումն իգին: - 369. Նոյնպէս և ի նորս պահեսցի էօրեայ սրբութիւն *դաշտանի*: - 369. և Դարձեալ ասեն, բնական մեղքն խտրութեան մնաց ի գրաւորն, նոյնպէս ի նորս. որպէս սերմնակաթն և *դաշտանին*. այլ պատիժն փոխեցաւ հինն ի նորս: - 369. Ուստի յա՛յտ է, զի որակ ծնողացն խառնի ի բեղնաւորիլն. ի *դաշտանէնոյն* գօղի. ի հիւանդութենէ, ի շիկութենէ. որպէս ադամ տրտմութեամբ ծնաւ զորդին կայէն. ցաւած ծնողացն ցաւածին որդի: - 439

**ԴԱՇՏԱՆԱՄ +** Որք առաքինութեամբն են լեառնացեալ և *դաշտացեալ* աւելի և նուազ: - 398

**ԴԱՌՆ +** Յատկութիւնք ջուրց ուքն թուով. և զի բազում են ջուրք. և *դառն* է ծով և աղի: - 155. Երկրորդ՝ որ ինքն ո՛չ է բարի, այլ պատճառէ՛ զա՛յլ բարի. որպէս *դառն* դեղն զառողջութիւնն: - 160. Իններորդ՝ *դառն* ջուրն ի մէջ ամպոյն փոխի քաղցր և ախորժելի: - 206. Վասն է՞ր ծովք աղի և *դա՛ռն* են: - 208. Եւ այլք ասեն թէ՝ բազում աղբիւրք բղխեն ի ծովն. որպէս մեռայի ջուրն, և փոխեն զծովն ի *դառն*: - 208. Նա՛խ՝ զի արարիչն աստուած բնական զծովս աղի և *դա՛ռն* արար. զի մի՛ հոտեսցին կենդանիքն

ի նմա: - 208. Երկրորդ՝ ասէ արիստոտէլ՝ թէ ջերմութիւն լուսաւորացդ և տարրական հրոյն և օդոյն մտանեն ի ծովն և քարշեն ի նմանէ զքաղցր և զպարզ հիւթն. և մնացեալն լինի *դառն* և աղի: - 208. Եւ օրինակ տայ զկերակուրն որ ի ստամոքսն եփի. և գոլոշիկքն ի գլուխն ելանէ և պարզ ջուրն ի լեարդն. իսկ մնացեալ թանձրն լինի *դառն* և աղի: - 208. Նոյնպէս և գործելին ի հրոյ այրեալ՝ է՛ *դառն* և աղի: - 208. Մետասաներորդ՝ Վասն ստամոքսին. բերանն *դառն* և աղի՛ փոխի. և աջ կողմն ուժո՛վ է: - 227. Աղի, և *դառն*՝ քաղցր, և հոտած: - 240. Եւ *դառն* ջուրն է ի յականջն առ ի պահապան դրանն: - 240. Աղին և *դառն*՝ յաչքն և յականջն որպէս ասացաւ: - 242. Վասն է՞ր բերանն մարդոյն երբեմն քաղցր լինի. երբեմն *դառն*. և թթու. և այլ ինչ: - 242. Վասն է՞ր մի ջուրն ի բերանն քաղցր լինի, և յաչքն աղի. յունչն հոտեալ. և յականջն *դառն*: - 243. Եւ ի լեղւոյն ականջին *դառն*. պահապան սողնոց: - 243. Յականջն *դառն*. որ զչար բանս մի՛ լուիցէ: - 243. Եւ եերորդ՝ ո՛չ ևս թզենեաւ՝ այսինքն *դառն* վարուք ստուերանալ. զի տերև թզենւոյն *դա՛ռն* է և փշոտ ըստ մեղացն առակի: - 281. Իսկ թէ վասն է՞ր այսպիսի *դառն* պատժեցաւ: - 288. Դարձեալ՝ զբանջարն ընտրելով ուտեմք. այս է զի զվնասակարն և *զդառն* և զժահահոտն ի բաց ձգեմք և զչորրորդ մասն ուտեմք: - 295. Վեցերորդ, մովսէս *զդառն* ջուրն քաղցրացոյց և զգետն յարիւն դարձոյց: - 328. Իսկ Նուռն բժշկական է և *դառն* կեղևն: - 381. Ոմանք ասեն թէ՝ դաղան քրէական մեղանչեաց. վասն այն *դառն* տանջեցաւ: - 381. Զի՞նչ է մեղքն և մահ և *դառն* մահ: - 564. Իսկ *դառն* մահն է՛ մահու չափն. որ գիտութեամբ մեղանչէ. այս է *դառն* մահն յաւիտենից: - 564. Նա՛խ՝ զի ի *դառն* մաղձոյն հոսի յորովայնն ի ներքոյ սրտին և կսկծեցուցանէ զսրտակրանքն - 619. Այլ և տարակո՛յս է թէ՝ վասն է՞ր տրտմութեան արտասուքն *դառն* է, և ուրախութեան քաղցր: - 619. Իսկ ի լուր տրտմութեան՝ խուճապի մարմինն. և ի *դառն* մաղձոյն որ է՛ լեղին՝ հոսի ի բերան քաղրդին. - 619-620. և հիւթն ելեալ ի գլուխն լինի արտասուքն *դառն* վասն լեղւոյն: - 620. Նաև բերանն դառնանայ և չորանայ տրտմեցելոյն. զի չո՛ր է և *դառն*: – 620. Խորան ասեն աջակողմ և ձախակողմ. այսինքն ի քաղցր հայեցողութիւնն քրիստոսի որ է աջ. և ի *դառն* և ահաւոր որ է՛ ձախ: - 686. Իսկ ի ներքուստ, ի լինիլ տրտմութեանց՝ խուճապեալ մարմնոյն հոսի մաղձ *դառն* ի ստամոքս որովայնի. և վերացեալ գոլորշեաց նորա զօրէն շոգոլեաց պուտկի առ խելապատակս գլխոյ. և ծանրացեալ անտի թորի՛ առ բիբն ասացեալական. չոր գոլով և աղէգոյն ի սևատեսա՛կն մաղձոյ: - 787

**ԴԱՌՆԱԼԻ +** Ութերորդ, ահագին է անդ *դառնալի* վճռովն. ըստ յոբայ «մի անգամ խօսեսցի աստուած, և զնոյն ո՛չ երկրորդէ». այսինքն «երթա՛յք անիծեալ ի հուրն յաւիտենից»: - 737

**ԴԱՌՆԱԿԵՐՊ** - Ապա յա՛յտ է յասացելոցս թէ՝ քրիստոս երևեսցի արդարոցն քաղցրատես, և մեղաւորացն *դառնակերպ.* որ նշանակեցաւ ի սիւն ամպոյն ի տուէ և ի հուրն ի գիշերի: - 741

**ԴԱՌՆԱՄ +** Որպէս յորժամ արեգակն և լուսին զտեղի առին առ յեւսաւ. և յետս *դարձաւ* արեգակն առ եզեկիայիւ: - 11. Չորրորդ՝ զայլայլումն լուսաւորացդ. այսինքն զի երբեմն խաւարին, որպէս առ խաչելութեամբն. և երբեմն յետս *դառնան* և կանգնին, որպէս յեսու և առ եզեկիա: - 26. Վասն այն հերձւածօղքն ո՛չ *դառնան*, զի ո՛չ կարեն ճանաչել զստութիւնն իւրեանց: - 32. Արդ՝ կռապաշտն և հերձուածօղն հաւասա՛ր են յամբարիշտ գոլն. զի որպէս շուն *դառնայ* ի փսխած իւր. այսինքն զի նա ո՛չ ունէր, և սա՛ ուրացաւ և *դարձաւ* անդրէն: - 33. Տեսցուք և զգործն յաղագս որոյ օծաւ. այսինքն միացաւ մարդկութիւնն աստուածութեամբն ...զի ճշմարիտ և անաչա՛ռ արար դատաստան. և իրաւա՛մբք զգերեալ բնութիւն մարդկան յազատութիւն *դարձելոյց*: - 41. Իսկ յորժամ *դառնամք* ի մեղաց՝ յորդորէ՛ զմեզ ի ծածուկ իմաստիւքն իւրովք, ժուժկալ լինել ի փորձութիւնս և համբերել տանջանաց որով ինքն զփորձ էառ: - 48. Զամենայն հրեշտակս բարի արար աստուած, այլ ո՛չ ծայրագոյն բարիս. այլ միջակս. որ է ի մէջ անփոփոխ և փոփոխական բարւոյն. այնպէս՝ զի թէ *դառնային* և սիրէին զայն՝ որ ի վեր քան զինքեանս, ելանէին յորպիսութիւն շնորհաց և փառաց. որպէս այժմ են հրեշտակք բարիք: - 146. Իսկ թէ *դառնային* ի ներքոյ ինքեանց առ փոփոխական բարին, անկանէին ի չար մեղացն և ի չար պատժոցն. որպէս այժմ դևք և ի կատարածի: - 146. Նաև անբարիշտ կամք նորա *դարձել* է յատելութիւն և ի նախանձ մարդոյն. զի ամենայն ջանիւ նկրտի ի կործանումն նորա բազմադիմի փորձութեամբ: - 146. Դարձեալ և ի յառակս անառակին որ *դարձաւ* առ հայրն՝ և ողջմամբ ընկալաւ և զգեցոյց զնա և զարդարեաց մատանի ի ձեռս՝ և կօշիկ յոտս. այլ ո՛չ ետ թոյլ նմա պատարագել...: – 167. Երրորդ՝ զի յորժամ կատարին է աւուրքն՝ *դառնամք* ի յառաջին օրն որ է՛ մի և նոյն: - 193. Եւ զի *դառնան* ամենայնքն ի բնակութիւնս իւրեանց: - 196. Ասի և բօթ. այսինքն սուգ և տրտմութիւն վասն ելիցն ի դրախտէն, և լսելոյն՝ «հող էիր և ի հող *դարձիցս»*: - 200. Սա՛ ոչ *դառնայ* ի ամպ կամ ի անձրև. այլ մղի ի վայր կոյս և մնայ մերձ երկրի: - 204. Վեցերորդ՝ զի ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան եթէ առաջին կեանք դրախտին էր

կուսութիւն և անապականութիւն և հրեշտակաց նմանութիւն. և յետ յարութեանն վերըստին *դառնամբ* յառաջին կեանս դրախտին. յանապականութիւն և ի հրեշտակաց հաւասարութիւն: - 225-226. Երրորդ՝ զի զդէմս ունիցիմք միշտ ի յերկինս. և զթիկունս յերկիր. և հանապազ ի բարին յառաջեմք ոտիւք և ձեռօք և ո՛չ *դառնամբ* ի չարն: - 234. Արդ եթէ ի խարտեաշ մաղձէն ի լեարդն է մնացեալ, լերդին համն ի լեղւոյն առնու և բերանն լեղի *դառնայ*. իսկ եթէ ի սեաւ մաղձէն է մնացեալ ի լեարդն. բերանն թթո՛ւ *դառնայ*. իսկ թէ պալղամն մնայ ի լեարդն, բերանն աղի փոխի. իսկ թէ յըստակ արիւնն մնայ ի լեարդն, լերդին համն անոյշ լինի, և բերանոյն համն անուշ տայ և քաղցր: - 242-243. Զի բարկացօղ են *դառնայ* մաղձ ոտքն: - 245. Եւ կամ որպէս ճանապարհորդք հեռացեալք ի տանէ՛ յորժամ *դարձցին* վերստին ի տունս իւրեանց, նախ թողուն զվերջին բնակետղն ուստի դիմեցինն երթալ: - 280. Երկրորդ՝ զի մարդիկք բազում ամս յաճախէին ի մեղս յուսով վերջին ապաշխարութեանն. և յետոյ սովորեալ ի մեղս ո՛չ կարէին *դառնալ*, *ամենքին* կորնչէին: - 292. Երրորդ՝ զի թէ և *դառնային* մերձ ի մահ, ամենայնքն ընդ ապաշխարութեամբ մեռանէին. և ո՛չ ոք արդարութեան պսակին արժանաւորէր: - 292. Նա՛խ՝ զի վատթա՛ր է *դառնալ* և ծուլութիւն: - 303. Եօթնևժ, և որպէս յարծաթն յեղբարսն *դարձաւ*: - 314. Նա՛խ՝ զի աղբիւսէ մարմինս. և վաղվաղակի յաղբիւսն երթայ. ըստ այնմ, «հող էիր և ի հող *դարձցիս»:* – 323. Նա՛խ՝ զի *դարձցին* և ապաշխարեսցեն: - 324. Չորրորդ՝ յօրինակ նոցա որք ի սրբութեանց ի մեղս *դառնան* և լինին մարմին և արիւն. – 333. Իսկ աստուած փոխէ՛ և զկամս ազդելով ի նոսա զբարին. և դարձուցանէ՛ ի չարէ՛. և երբեմն թոյլ տալով անձնիշխան կամացն *դառնալ* ի չարիս: - 336. Երրորդ, զի թէ յեգիպտոս *դարձցին* ո՛չ իշխեսցեն. զի ի գողօ՛նս էր այն նոցա: - 336. Եւ որպէս *դարձաւ* ժողովուրդն ի հանգրուանն առաջին. և տեառն մարմինն եդաւ ի հող երկրի: - 337. Երրորդ՝ զի հաւատ մեռելոյն յանդիմանէր զթերեհաւատ կենդանիսն որք սրտիւք յեգիպտոս *դառնային*: - 338. Նա՛խ՝ ի դէմքն. զի գթութիւնն անմե՛ղ կացելոցն է. և ողորմութիւնն *դարձելոց* ի մեղաց: - 350. Բազում ողորմ առ բազմապարտ *դարձեալսն* ի մեղաց. որպէս պարտապանն բիւր քանքարոյ: - 351. Այսինքն մինչև **գ** ազգն ներեմ. կամ **գ** դարս. և ի չորրորդն ո՛չ *դառնամ* ի վրէժ խնդրելոյ. այլ հատուցանեմ զմեղս հարց յորդիս: - 351. Ո՛չ թէ զմեղս հարց յորդւոցն խնդրէ. այլ մեղաց հարցն ներէ երկայնամիտ լինելով մինչև յորդոց յորդիս զի *դարձցին* ի մեղաց: - 351. Երկոտասաներորդ, լուսաւորեցաւ՝ զի քօղ արկցէ երեսացն. որ օրինակէ՛ զհին կտակարանս. որ քօ՛ղ է արկեալ և առագաստ մտաց նոցա. մինչև *դարձցին* առ տէր հոգիքն որպէս զմովսէս. և ապա վերասցի քօղն և յայտնեսցի լոյս գիտութեան նոցա: - 352. Այծն՝ մեղաւորա՛ցն է նշանակ. որք *դառնան* ի մեղաց և նւիրին աստուծոյ: - 358. Որ յետ խոստովանութեան *դառնայ* ի նոյն մեղս, իբր շուն *դառնայ* ի փըսխած իւր. և սա՛ ևս այրի հրով. զի զառաջինն ևս խնդրեսցեն ասէ առաքեալն: - 367. Նոխազն *դարձելոցն* ի մեղաց: - 374. **Զի ծ ամն յոբելեան է և ազատութեան. որ ազատի մարդ յախտից և յախտաւոր սիրոյ աշխարհի՝ և առ աստուած *դառնայ*:** - 378. Եւ դարձեալ՝ ոչ ինչ շնորհ ունէր բան նորա. զի այնքան օրհնեաց զժողովուրդն, ընդէ՞ր ոչ *դարձաւ* մահն և սատակումն: - 388. Եւ ուխտաւորն ի տուն սգոյ ո՛չ երթայ. այն է որ ի մեղքն այլ ո՛չ *դառնայ*. և ո՛չ ընդ մեղսասէր գործակիցս: - 390. Եօթներորդ՝ արևմուտք մեղք և տգիտութիւնն է. զոր թողեալ *դառնամբ* առ աստուած ապաշխարութեամբ: - 395. Երկրորդ՝ ի հոգևոր կենաց դրախտէն անկաք ի մարմնաւորս. և յայսմանէ *դառնամբ* ի հոգևորսն: - 395. Երրորդ՝ զայն ցուցանէ որ կեանք դրախտին *դարձաւ* առ նոսա յանապատին անկարօտ ամենայնի. զի զգեստն ո՛չ մաշէր. այլ աճէ՛ր ընդ տղայոցն. և ոտն բոկ՝ և ոչ՛ կոշկոճէր...: – 397. Այլ՝ արձակեալ կինն ո՛չ *դառնայր* յառաջին այրն վերստին. թէպէտ մեռանէր վերջին մարդն: - 400. Իսկ խորհուրդն, ի յօրէնքն նոցա է զի փոփոխական էր օրէնքն նոցա. և որ փոխիւր, այլ ո՛չ *դառնայր* յօրէնս նոցա: - 401. Եւ որ յառաջինն *դառնայ*. զի ներումն և թողութիւն շնորհէ: - 401. Զորօրինակ՝ ճրագ ըզտեսօղս լուսաւորէ՛, և զտկարս խաւարէ՛. կամ որք ի ճրագ նային տեսանեն լոյս. և որք յետս *դառնան* խաւարին: - 403. Ուստի յա՛յտ է, զի յորժամ ի սպառնալն *դառնամբ* ի մեղաց, ո՛չ սրտմտի նա: - 408. Եւ յետ է ամսոյն *դարձաւ*: - 412. Երեքտասաներորդ, Կոյրք և կաղք ընդ դէմ *դարձան* դաւթի: - 412. Վասն է՞ր ո՛չ միայն բաժանեցաւ գետն, այլ և յետս *դարձաւ*: - 414. Նա՛խ՝ *դարձաւ* գետն, զի ա՛հ և երկիւղ լիցի քանանացւոցն. և մի՛ հակառակեսցին յեսուայ և անկցին ի սուր նորա: - 414. Հինգերորդ՝ զի մի՛ ընդ *դառնալն* ի վայր՝ ողողեսցէ զներքին կողմ եզերաց գետոյն: - 414. Վեցերորդ՝ մեծ սքանչելիք էր որ յետ *դարձաւ*, քան զցամաքիլն: - 414. Նոյն և եղիսէոս. այլ ո՛չ յետս *դարձաւ*: - 414. Եօթներորդ՝ ի յօրինակ բնութեանս *դառնալոյ* անդրէն ի տեղիքն մեր ուստի ելաք որք են հաւատացեալք: - 414. Եւ առ եզեկիա՝ արեգակն յետս *դարձաւ*. տիւն եղև ժամս **լբ**: - 416. Եւ ի մեծի ուրբաթի խաչին, լուսինն ընթացաւ և ձգեցաւ յարևն, և յետս *դարձաւ*. որպէս ցուցանի յառաջիկայդ առ խաչելութեամբն ի **լ** գլուխն ի **իզ** համարն: - 416. Չորրորդ՝ ցուցանէ թէ

որ ի սրբութիւնն իւր ո՛չ խնայէ, և ո՛չ ի ծեզ յանցաւորքդ թէ ոչ *դառնայք*: - 425. Զի՞նչ է որ յետ եօթն ամսոյ *դարձաւ* տապանակն: - 426. Ա՛յն է որ կաղք և կոյրք ընդ դէմ *դարձան* դաւթի և անարգանօք ասէին` մի՛ մտցէ դաւիթ ի քաղաքս. որ նա՛ ինքն է երեսուղէմ. որ եղև տուն տեառն: - 431. Եւ է՛ որ խոստովանի. և ոչ մեղքն միայն թողուի. որք թէրի են սրտիւ. և զմեղս թէրի խոստովանին. և ի միտս եղեալ են դարձեալ գործել. այսպիսեաց ոչ մեղքն թողուի և ոչ պատիժն. զի որպէս զշունն *դառնայ* ի փսխած իւր: - 432. Եւ տես, զի պաշտմամբ և պատարագաւ յետս *դառնայ* բարկութեան սուրն: - 435. Եւ ընդ նոյն ճանապարհն ոչ *դառնալ*, զանդառնալի պատուհասն: - 442. Եւ մանայէն թագաւորն խարդէլի ետ նմա դ տաղանդ արծաթոյ և *դարձաւ* ի նմանէ: - 446. Մատնեաց զչարս ի գերութիւն. զի ա՛նդ վախճանեսցին, և արդար ծնունդք նոցա *դարձցին* ի տեղիս իւրեանց: - 448. Երրորդ` որպէս զստնդիայի մանուկն է ամ խրատէ՛ դայեակն. այսպէս ժողովուրդն որ եւ յերկրէն իւրեանց, երկիրն բաբիլացւոց հ ամ ի գիրկս իւր դայեկեաց զնոսա և սնոյց. զի յետ *դարձին* յերկիրն իւրեանց` զբարիս գործեսցեն: - 448. Եւ առաջնորդեն օծեալ քահանայքն յետ *դարձին* նծզ ամ. մինչև բարձան օծեալքն հրէից և ծնաւ ճշմարիտ օծեալն քրիստոս: - 449. **Զոր ի ժողովն քաղկեդոնի հաստատեցին զսոյն տօն ի ինն դեկտեմբերի. պատճառելով թէ` ի հռօմ *դարձի* արեգական տօն կատարէին. և փոխեաց զայն պետրոս տօնել արեգականն արդարութեան: - 482. Չորրորդ` զի յինն ժամէն մինչև յերեկոյ ի տեղի իւր *դարձաւ*:** - 490. **Եւ զի աջ էաք և ահեակ *դարձաք***: - 493. Եւ թէ ոք ասիցէ ապաքէն և զապականութիւնն աստուած եդ պատիժ ադամայ. ըստ որում ասաց «հող էիր և ի հող *դարձցիս»:* – 496. Ուստի յա՛յտ է զի ո՛չ ասաց ի հող *դարձիր.* այլ թէ՝ «*դարձցիս»:* – 496-497. Եւ դարձեալ` *դարձցին* մեղաւորք անդրէն ի դժոխս թէ ի նոյն տեղի ըստ ոմանց, կամ յայլ տեղի տանջանաց ընդ գործոց հատուցման: - 508. Եւ որպէս *դարձաւ* ժողովուրդն ի հանգրուանն առաջին, և տն մարմինն եղաւ ի հող երկրի: - 513. Յայսմիկ յայտ արար թէ ի յարութեան անդ ո՛չ *դառնայ* ոք յոք. ո՛չ հայր յորդիս` և ո՛չ որդիք առ հարս իւրեանց. այլ *դառնան* ամենեքեան յայս. զի արժանի լիցին ողորմութեամբ եւանել առ հայր: - 517. Ասեմք առ այս թէ` անկատար մնայ ըստ այնմ որ ի յանիծելն ո՛չ կատարի. այլ ըստ որում *դառնայ* ի յանիծօղն կատարի: - 539. Նոյնպէս և որք անբիծ են հաւատովք և սուրբ գործովք. և կամ որք զղջացեալ յետս *դառնան* ի մեղաց և ի հերձւածողաց. նոցա՛ է արձակումն և օրհնութիւնն: - 540. Վասն որոյ յետոյ տրտմի և նեղի. ատէ՛ զպատճառ մեղացն և *դառնայ* ինքեան. որպէս ամնոնի եղև: - 558. **Վասն այն այլ վարդապետք կոչեն զայս ախտ` ծուլութիւն. զի ծուլութիւնն յերկու իրաց երևի. մին որ յետս *դառնայ* ի հոգևոր բարւոյն և ծանրանայ ի գործելն. այսինքն պահել` աղօթել և այլն. և ըստ այսմ կոչի տրտմութիւն: - 559. Եւ միւս` որ *դառնայ* ի հեշտալին որ է՛ հանգիստ մարմնոյ. ըստ որում կոչի ծուլութիւն**: - 559. ...և յորժամ *դառնայ* ի մեղաց, վաղվաղակի շնորհաց լուսոյն արժանի լինի: - 563. Մեղք է դարձուցանել զերեսս յանփոփոխելի բարւոյն որ է՛ առ աստուած. և *դառնալ* առ փոփոխելի բարին որ է արարածքս: - 569. Իսկ ը երրորդ երանութիւնն *դառնայ* յառաջին գլուխն կրկին կերպիւ: - 586. Ութերորդ, նշանակէ՛ *զդառնալն* մեր յերկինս և առնուլ: - 586. Որպէս թէ ոք ի պատուհան ինչ ցուցանէ զինքն յաշխարհի, և վաղվաղակի ի մահ *դառնայ*: - 592. Եւ որ նա՛խ է վերջին տունն ի մեսեդի կամ կցորդ. այն է զի քրիստոսիւ *դարձաք* յառաջինն և ի բարձրագոյնսն. ուստի ադամաւ խոնարհեցաք...: – 629. Զի առաջին կանոն երանելեացն, որք *դառնան* ի չարէ և զճանապարհս օրհնացն ընթանան...: - 629. Թէպէտ մեռար մարմնով և *եղար* ի գերեզմանի՝ սուրբ և անմահ և անապական ես: - 632. ...և ապա՛ *դառնայ* առ ժողովուրդն: - 644. ...լինի թէ այն իրօքն ի յաստուած *դառնայ*...: - 664. Է և ա՛յլ իմն տեսութիւն վերագոյն. զի արարողութիւն սրգոյս ցուցանէ զառաջին անկումն մեր ի լուսեղէն կենացն ի խաւար աշխարհի տրտմութեամբ և ցաւօք մահու մեռեալք և ի հող *դարձեալք*. և այս ի ճաշակմանէ պտղոյն: - 670. Նա՛խ` արտաաւեմք զբնութիւնս մեր թէ վասն մեղաց յո՞րպիսի կենաց դրախտին ի մահ անկաւ և ի հող *դարձաւ*: - 676. Նա՛խ` զի յետս *դառնամք* մահուամբ, այսինքն ի դրախտն և ի մայր մեր, պա՛րտ է զի նախ ոտքն ընթասցի: - 676. Եւ սկիզբն անդ ժողովելոյ` ի յարծակելն քրիստոսի առ ժամանակեայ զհոգիսն անարժանից` անդ մնացին և անտի *դարձցին* մեղաւորք անրդէն ի դժոխս ըստ մարգարէին: - 688. ...այսինքն ո՛չ *դառնայ* յայժմու վարս աշխարհի և ո՛չ ապաշխարել կարէ ասէ մեկնիչն: - 699. Այլ հրէայքն յայնժամ *դարձցին* ի հաւատս քրիստոսի. և եկեղեցի սուրբ խաղաղութեամբ հանգիցէ մինչ ի կատարած աշխարհի...: - 709. ...այս զմարմնոյն ասէ որ ի հող *դարձաւ*: - 715. ...և ի *դառնալն* այսու նշանաւս ճանաչէ զքեզ և զտունն. և դու ճանաչես քո դրոշմին զնա: - 719. Պոռնիկն սակաւ մի արտաասուօք *դարձաւ* խաղաղութեամբ: - 745. Երկրորդ` անտանելի ցուրտ. յոր եթէ հրեղէն լեառն անկանէր` սառն *դառնայր*. վասն այս երկուցս ասի` լալ աչաց և կրճել ատամանց. - 752. Ուստի յա՛յտ է զի ելեալ էին երբեմն և վերըստին *դառնան* ի նոյն: - 777. Յիրաւի դարձեալ` *դարձցին* յետոյ ի պատիժս անձնիշխան կամաց

ներգործական մեղաց: - 778. Առ այսոքիւք, թէ արտասուքն որ յաչացն հեղու, ընդէ՞ր աղի գոլով, Ո՛չ միայն զվասն էրն խնդրեմ. այլ և զորպէսն *դառնալ* նմա աղի ընդ երակս աչաց: - 786. Այլ և աստ ապաշաւելն ոչ ինչ օգտեալ. որպէս և անդ ո՛չ լսողաց բերանով հաշեալք. որ և ո՛չ գոյր անդրէն *դառնալ.* և ո՛չ կարի յօժարացն շահավաճառ եղեալ. ո՛չ գիտ և ո՛չ ողորմ. հանգոյն յիմարացն օրիորդաց: - 789

**ԴԱՌՆԱՆԱՄ +** Ոմանք ասեն թէ՝ զանազան և գարշ կենդանիք են ի ծովն, և ի նոցանէ *դառնանայ*: - 208. Նաև բերանն *դառնանայ* և չորանայ տրտմեցելոյն. զի չո՛ր է և դառն...: – 620. Եւ *դառնացեալ* յոգոց հանէ, և այսր և անդր զերեսն շրջէ և թաքչիլ ո՛չ կարէ: - 669. և այնպէս *դառնացեալ* տրտմութեամբ և սարսռելի երկիւղիւ յուսահատեալ մնան...: – 669

**ԴԱՌՆԱՇՈՒՆՉ +** Հինգերորդ՝ նշանակէ՛ զփարաւոն զվիշապն *դառնաշունչ* ըստ այնմ «դու փշրեցեր զգլուխ վիշապին ի վերայ ջուրց»: – 332

**ԴԱՌՆԱՊԷՍ +** Վասն չորրորդին, որք աստ ժահահոտ նեխութեամբ պոռնկութեանն քաղցրապէս փափկանային. արդարապէս անդ *դառնապէս* տանջին: - 752

**ԴԱՌՆԱՑՈՂ +** Քանան *դառնացօղ*: - 299. Ըստ այնմ, (հանէ զկապեալսն քաջութեամբ. սոյնպէս և *զդառնացօղսն* որք բնակեալ են ի գերեզմանս:) – 382. Երրորդ՝ զառաջինն հարցն ետ որ սատակեցան. զերկրորդն որդւոցն տայ, զի մի՛ լիցին չար և *դառնացօղ* որպէս հարքն իւրեանց: - 393. Ութերորդ՝ նա՛ ի *դառնացողէն* քաղցր կերակուր առեալ. ըստ որում ասէր՝ «ի կերչէ՛ ել կերակուր, և ի հզօրէ՛ քաղցր»: – 422

**ԴԱՌՆՈՒԹԻՒՆ +** Իններորդ՝ ի *դառնութենէ* ի քաղցրութիւն փոխի ընդ երակս երկրի: - 207. Ջուրք ծո՛վուց ընդ մէջ երկրի անցանեն և պարզին ի ժանկոյն և ի *դառնութեանցն*. զի երկիր և աւազք *զդառնութիւնն* յինքեանս քարշեն, և մնայ քաղցր ջուրն: - 208. Ոմանք *զդառնութիւնն*. այլք զհոտն վատ. և կէսք զվնասս մահու. և այլք այլ ինչ: - 217. *Զդառնութիւնն* ի լեղին. և զհոտածն յերիկամունսն. և զմրուրն և զթթուն ի փայծեղն. և զքաղցր արիւնն ի սիրտն. և սիրտն երակովն և շնչովն բաժանէ ի բոլոր մարմինն: - 242. Իններորդ՝ զի որպէս կողից երեսն որ ի փորն նայի՝ կոկ գոլով և մզղնատեսակ. իսկ մէջն փուչ և մրրախառն. այսպէս սէրն զոր ցուցանէ առ այրն, նօսր առ ի ցոյցս՝ և երեսս միայն ունի. իսկ ի սիրտն զմրուր *դառնութեան*: - 276. Չորրորդ՝ քաղցր համն. զի քաղցրանայ ի մեզ *դառնութիւն* մեղաց: - 339. Աղաւնի, առանց *դառնութեան* և միամիտ և հեզ. «ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ»: – 361. **Զի բժշկութիւն հոգւոյս՝ *դառնութիւն* մարմնոյս լինի**: - 381. Դարձեալ՝ զհանդերձեալ կեանս՝ *դառնութեամբ* աստեացս գտանեմք: - 381. Վեցերորդ՝ առանց *դառնութեան* և թունից էր օձն. և տէր մեր առանց *դառնութեան* մեղաց: - 386-387. Ա՛րդ՝ յորժամ կենդանի էր *դառնութեամբ* և սգով իջոյց ի գերեզման. այժմ մեռելո՛յն երկրպագէ: - 429. Քաղցր *դառնութիւն*: - 570. Իսկ հեզութիւնն նոյն է ընդ իմաստութիւնն. զի ասեն թէ՝ իմաստութիւն է որ ո՛չ զգայ *զդառնութիւն* ինչ ոգոյ: - 584. Հինգերորդ՝ զի *դառնութիւն* արտասուացն զցանկութիւն աչացն դարձուցանէ: - 619. Ոմն լի՛ է աննահութեամբ և խնդրութեամբ. և ոմն լի *դառնութեամբ* և յուսահատութեամբ. որպէս ասացաւ ի վերոյ: - 687. Եւ տէրն վասն կերակրոյն ո՛չ ասաց թէ ի մարմին մարդոյն ո՛չ հաւասարի. այլ զայն թէ՝ *դառնութիւն* և ծանրութիւնն արտաքս ելանէ, - 718. Չորրորդ՝ *զդառնութիւն* տանջանացն որ ասէ «հուրն»: - 740. Այգի և հնձան երբեմն զչարս օրինակէ՛ և երբեմն զբարիս. որպէս այն «այգւոյն սոդոմա՛յ էր տունկ նոցա. և խաղող *դառնութեան».* այս չարացն է: - 748. **Նախ՝ կոչի սիրտ և անձինք մեղաւորաց, ուր ժողովին ամենայն գործք չար որ է՛ խաղող *դառնութեան*. և ունակացեալ պահէ յինքեան. և հեշտութեամբն ճմլէ հանապազ և արբենայ մեղացն գինով:** - 748. Սա՛ է ջուրն յաղեալ. որ *զդառնութիւն* ջուրցն այնոցիկ որք գտանին ի մեռայն՝ քաղցրացոյց: - 756. ...ամենայն քաղցրութիւն *դառնութիւն*...: – 762

**ԴԱՍ +** Այլ մեք *դասք* ուղղափառաց, հետևօղք ճշմարտասիրութեան, ընդդիմանամք այսմ ասելով թէ աստուած ո՛չ է պատճառ չարեաց. այլ միա՛յն բարեաց: - 13. Իսկ մեք *դասք* ուղղափառաց կրկին կերպիւ իմանամք զբանս զայս: - 80. Իսկ որք յետ միաւորութեանն՝ **բ** բնութիւնս խոստովանին, և սոքա են **բ** *դասք*: - 82. Իսկ երրորդ *դասքն*, որք յերկուց ասեն եղալ մի բնութիւն, ո՛չ աստուծոյ և ոչ մարդոյ: - 82. Իսկ մեք *դասք* ուղղափառաց՝ գիտեմք զբնութեանն բան: - 82. Հարցից և ես զձեզ *դասք* երկաբնակաց: - 86. Իսկ տէր մեր անուամբ և բնութեամբ է աստուած որպէս խոստովանիմք *դասք* ուղղափառաց: - 88. **զ**) Ինն *դասք* են հրեշտակաց. և յերիս երեակս որոշեալ. և այլք եօթն ասեն: - 102. **է**) Կարգ *դասուցն*: - 102. **գ**) Յո՞ր *դասէ* անկան. և իշխանք օդոյ կոչին: - 102. Եւ ի միոյ աստուծոյ եղեն **ժ** *դասք* հրեշտակաց ընդ մարդկան. և հարիւր գունդքն ըստ ոչխարաց առակին. և ռ կենդանեաց տեսակքն որ յերկրի. և բիւր անկենդան բուսոց. և անթիւ գոյեղէնք: - 109. Ա՛րդ՝ ո՛չէ ի յաստուած անձնաւոր էութիւն. որպէս Երրորդական անձինքն. և ո՛չ բաժանեալ ի նմանէ. որպէս հրեշտակաց *դասքն*. և ո՛չ որպէս սոսկ մտածութիւն ի տեսութիւնն աստուծոյ:

- 112. Որպէս ի *դասս* հրեշտակաց՝ առաջին երրեակ *դասքն* առաւել են փառօք քան զմիջինսն և զվերջինսն: - 131. Եւ ի *դասս* մարդկան՝ որպէս մարգարէք և առաքեալք: - 131. Ո՞րքան է թիւ *դասուց* հրեշտակաց: - 134. Ասեմք եթէ՝ ինն *դասք* յերիս երրեակս որոշեալ թւուց. որոց Առաջինն է Աթոռք. Քերոբէք. և Սերոբէք: - 134. Եւ են առաջին *դասք* քահայանապետութեան: - 134. Որ են միջին *դասք*: - 134. Իսկ թէ ոմանք գո՛ւ ասեն Ժ *դասք* և զմինն անկեալ, ո՛չ պարզապէս, այլ կրկին է իմացումն: - 134. Նախ՝ թէ անկեալքն ի նոցանէ են չափով միոյ *դասի*: - 134. Երկրորդ՝ թէ մինն ի տասն *դասուցն* անկաւ և մնաց ինն: - 134. Նախ՝ ըստ սրբոյն դիոնէսիոսի որ ինն ասէ գոլ *զդասս* կարգապետութեան նոցա: - 134. Իններորդ՝ յերիս որոշեալ *դասս*. որպէս սերոբէք՝ քերոբէք՝ և աթոռք: - 134. Տասներորդ՝ յիւրաքանչիւր *դասս* դասապետն՝ և միջինն՝ և վերջինն: - 134. Համաձայնին միմեանց սուրբ վարդապետք. զի դիոնէսիոս ինն *դասս* ասէ հրեշտակաց. այլ առաջին *դասքն* անընդմիջաբա՛ր են յաստուածային իմացումն, համապատիւք և համափառք: - 134. Իսկ է երկինք զհրեշտակաց *դասուցն* ասէ, մի քան զմի բարձրագոյն յիրաքանչիւր երկինս: - 134. Ի յառաջին կարգ քահանայապետութեանն՝ սերոբէ՞ն է առաջին *դաս*՝ թէ աթոռքն: - 135. Ասեմք եթէ՝ նոքա երեքեան *դասքն* այսինքն աթոռք՝ քերոբէք՝ և սերոբէք՝ միակարգ միապատիւ և գերազանց էութիւնք են. զի անընդմիջաբար յաստուծոյ ամենայն լուսափայլութիւնք իմաստք և շնորհք ի նոսա հեղանին համակարգապէս. և ապա նոքօք յայլ ամենայն գոյս երկնաւոր և երկրաւոր: - 135. Այլ վասն առանձնութեան *դասուցն* է՛ կարգ ի նոսա, որպէս դիոնէսիոս կարգէ՛: - 135. Վասն որոյ այսպէս ասեն զկարգ *դասուցն*. և սոցա տարածայնութիւն զհամահաւասարութիւն *դասուցն* նշանակեն: - 135. Եւ զայլ մասնապէս զբացայայտութիւն կոչմանց ամենայն *դասուց*՝ գտցես յայլուրեք ի բանն գրեալ...: – 136. Վասն է՞ր ապա ամենայն *դասք* հաւասար հրեշտակք կոչին...: – 136. Նախ՝ զի ընդհանուր *դասք* և իւրաքանչիւր անհատք ունին էութիւն՝ զօրութիւն՝ և ներգործութիւն. այսինքն ըստ որում էացեալքեն, և կարողութիւն ունին, և ներգործեն: - 137. Երրորդ պատճառ. զի զօրութիւնք միջին են դասակարգեալ բոլորից. ի նոցունց *դասուց* և երիցն: - 137. Նախ՝ զի առաջին *դասքն* անընդմիջաբար առնուն յաստուծոյ. իսկ միջինքն և վերջինքն միջնորդութեամբ: - 138. Երկրորդ՝ զի առաջինքն առանց տարակուսութեան առնուն զգիտութիւն. և այլքն նախ տարակուսին և ապա առնուն. զի այն որ առաջին *դասն* նախ էառ՝ տարակո՛յս է նոցա՝ մինչև ինքեանք ևս առցեն: - 138. Զի գիտեմք զդոսա ինն գոլ *դասս* ըստ սրբոյն դիոնիսեայ. և երիս երրեակս որոշեալ ի դէմս Երրորդութեանն: - 141. **Մ՛րդ՝ ներքնագոյն սիրովն խնամէ աստուած զարարածս. և առաջին *դասք* հրեշտակաց զվերջինսն. և հարք զորդիս. և վարդապետք զաշակերտս. և իշխանք զիշխեցեալս. տեարք զծառայս. և այս սիրովս շարունակին ընդ նոսա:** - 143. Զի՞նչ է փառաբանութիւն ինն *դասուց* հրեշտակաց: - 144. Ներքին՝ *դասք* հրեշտակացն. որ են պատգամաւորք և հրամանատարք: - 144. Երկրորդ՝ *դասք* հրեշտակապետացն: - 144. Իսկ յօհաննու տեսիլն և մեդոթ ասէ թէ՝ «կամեցաւ զերրորդ մասն աստեղաց ընդ իւր քարշել». այսինքն ի *դասէն* ի չորիցն երեք բաժինն ի վայր անկաւ. և մինն անդ մնաց և յիշխանութեանց *դասն* խառնեցաւ: - 148. Որև կործանմամբն իւրով չարչարեաց զվերին *դասքն* սրտմտութեամբ, և զներքին *դասքն* սասանմամբ, և զհամակամսն ընդ ինքեան քարշեաց: - 148. Եւ ցուցցէ թէ իշխան և գլուխ էր սադայէլ իւրոյ *դասուցն*: - 148. Եւ այլք ասեն այսպէս հակառակիլ ընդ աստուծոյ, յորժամ ետես զինքն փառօք և վայելչութեամբ քան զամենայն *դասս* գերազանցեալ, կամեցաւ մեծ լինիլ ի վերայ ամենայնի և հաւասար աստուծոյ: - 149. Յո՞ր *դասէ* անկան: - 150. Հասարակ կարծիք է թէ՝ Ժերորդ *դաս* հրեշտակացն անկաւ, և մարդս զանկելոց տեղին լնու: - 150. Այլ այս ո՛չ է հասարակ թէ Ժ *դաս* էր հրեշտակաց և մինն անկաւ: - 150. Զի ոմանք ասեն թէ ի միջին *դասուցն* անկան գ մասն, և մինն մնացեալ յիշխանութեանցն խառնեցաւ: - 150. Եւ այլք ասեն թէ՝ ի տէրութեանց *դասուն* ի վայր ի ներքոյ քերոբէիցն յամենայն *դասուցն* անկան *դասու* միոյ չափ: - 150. Իսկ նիւսացին գրիգոր ի բնութեան գիրս՝ ի վերջին *դասուց* հրեշտակացն ասէ անկեալ: - 150. Իսկ ոմանք ասեն զտեղի նորա ի հաստատութեան երկնից. և զի ո՛չ ետուն զփառս աստուծոյ անկան. վկայէ՛ և դաւիթ՝ «Երկինք պատմեն զփառս աստուծոյ». որք են վերնագոյն *դասքն*. և հաստատութիւն զարարածս պատմէ և ո՛չ զփառս որպէս ցուցաւ: - 150. Երրորդ՝ վասն գոյացութեան իւրոյ որ անկաւ ի հրեղէն *դասուցն*: - 151. Իսկ «երրորդ մասն», ասէ սուրբն մեթոդէոս եթէ՝ զապստամբ հրեշտակս ասէ որք զթիւ երկնաւոր *դասուցն* սխալեցին. զի մինչ ո՛չ էին կործանեալ՝ դ կարգ էին իւրաքանչիւր *դասուցն*. որպէս յա՛յտ է ի չորեքկերպեան կենդանեացն: - 152. Տեղական անկումն եղև դիւաց ի սկիզբն ստեղծման իւրեանց վասն ամբարտաւանութեան և մախանաց ընդդէմ արարչին փառաց. ուստի անկաւ յերկնից ի *դասուց* հրեշտակաց և ի փառաց իւրեանց որպէս ասացաւ յառաջագոյն: - 153. Եւ զի յայնժամ էր ի *դասս* հրեշտակաց յերկինս: - 184. Հինգերորդ՝ զի տեսցուք և իմասցուք թէ արտաքին սրահն երկնից այսպէս է

զարդարուն. քանի՞ առաւել ներքին կողմն սրբութեան իմանալեացն *դասուց*: - 188. Չորրորդ՝ պատուեցաւ յարութեամբն քրիստոսի. և իջմամբ հոգւոյն սրբոյ ի *դասս* առաքելոցն: - 193. Նշանակեն սոքա զչորս *դասս* մարդկան: - 215. Եւ որք զայս ասեն՝ հետևին մոլորութեանցն պղատոնի մարմնափոփոխութեանցն. որ ասէ քաղաք ի յերկինս. և հոգիքն անդ ժողովեալ իբրև զզօր և *զդասս*: - 252. Իսկ որ ի **զ** օրն ասեմք ստեղծեալ զարարածս, այս զկարգ և *զդասն* նշանակէ մի քան զմի յետոյ. այլ ստեղծումն համանգամայն եղև: - 253. Պատասխանեմք և ասեմք թէ, ո՛չ է հոգին յետոյ. ո՛չ ժամանակաւ և ո՛չ բնութեամբ. այլ *դասիւ* և կարգաւ: - 254. Եւ դարձեալ՝ որպէս հատն ցորենոյ ունի առ ինքն զօրութեամբ զխոտն և զծաղիկն և զհասկն. և սոքա համանգամա՛յն են ի հատն այն զօրութեամբ. որ յետ ժամանակաւ ըստ *դասի* երևին: - 255. Այլ հակադարձեալ սոքա ըստ կարգի և ըստ *դասու*՝ յառա՛ջ է տնկականն քան զզգայականն, և նա՛ քան զբանականն ի յերևումն. այլ էութեամբ համանգամայն են. որպէս անդ ուրեմն ասացաք վասն հոգւոյ և մարմնոյ: - 260. Դարձեալ **թ** թիւն է երիցս երրեակ. և երեք թիւն է կատարեալ. ունելով առաջին միջին և վերջին. ի նմանութիւն թ *դասուց* հրեշտակաց: - 264. Դարձեալ թ թիւն պակա՛ս է ի **ժ**երորդէն. և մեք պակասեցաք յինն *դասուց* հրեշտակաց, որ նախ հաւասար էաք ի դրախտին. և կարօտացաք մարմնաւոր ծննդեան, նմանելով անասնոց...: – 264. Երրորդ՝ **թ** *դաս* հրեշտակաց է յերկինս. և ժերորդն մարդն կատարումն թուոյ նոցա. վասն այն ի կեանս այս ո՛չ հասանեն ի **ռ** թիւն կատարեալ. զի աստ ո՛չ լինի կատարումն *դասուցն* այլ ի հանդերձեալն: - 291. Անդրանիկ և մեք ի մէջ եղբարց ի *դասս* անդրանկաց յերկինս: - 308. Յորոց փրկեսցէ զմեզ և զամենայն հաւատացեալս անուան իւրոյ ի յաւիտենական և յանել տանջանաց հրոյն. և մասնաւոր աջակողմեան *դասուն* և ժառանգ արքայութեանն երկնից կացուսցէ յիսուս քրիստոս տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս Ամէն: - 317. Նա՛խ՝ լերինք և բլուրք մշտնջենաւորք կոչին հրեշտակացն *դասք* բարձրացեալք յերկինս և անշարժութեամբ սերտեալք... և նոքա ի կամս աստուծոյ անմահապէս օրհնեցան: - 319. Վասն երկրորդին հակառակէր ընդ նոսա, զի մի՛ սուտ լիցի վկայութիւն աստուծոյ ի վերայ նորա. զի և մեք ուսցուք՝ վասն վկայութեանն աստուծոյ այնչափ նախատինս յանձն առնուլ և ո՛չ ուրանալ. որպէս վկայից *դասքն* նահատակեցան: - 324. Հինգերորդ, **թ** *դասք* հրեշտակաց. և մի *դաս* մարդկան ընտրելոց լինի **ժ**: - 343. Եւ վերջինն հրեշտակաց *դասուն*: - 343. Այլ իմանալեացն *դասք* վկայք են Նա՛խ՝ զի ի դրունս են սուրբ Երրորդութեանն և տեսօ՛ղք են անճառելի փառացն: - 345. Եւ եօթն ճրագ շուրջ զնովաւ, եօթնեքին *դասք* ընտրելոց նորա: - 347. ...և Ամոլք հաւատոյ առաքեալքն սուրբք. և Խոյք հայրապետացն *դասք*: - 374. Նա՛խ՝ զայս նշանակէ թէ ի **ժ** *դասուց* հրեշտակաց մինն անկաւ, և մարդիկ զտեղի և զթիւ անկելոցն լնուն: - 376. Այլ ա՛յս է ուղիղն. զի բովանդակն ամենայն **թ** *դասք* են հրեշտակաց. այլ անկեալքն ի նոցանէ՝ են ի չափ միոյ *դասու*. և մարդիկ զնոցա տեղին լնուն: - 376. Հինգերորդ՝ թիւն զընտրութիւն՝ *զդաս*՝ և զկարգն ցուցանէ. զի գո՛յ ի նմա՛ առաջին միջին և վերջին. որպէս զինւորք. իսկ անթիւն խոտան և անկա՛րգ է. որպէս ծերք և տղայք: - 377. Նա՛խ՝ **գ** որդիքն ղևեայ գեթսոն, կահաթ, և մերարի, յօրինակ նորոյս **դ** *դասուց*: - 379. Երկրորդ՝ **գ** իշխանք նոցա ընդ իշխանութեամբ եղիազարու, **գ** *դասքն* են պաշտօնէից ընդ իշխանութեամբ քահանայիցն: - 379. Անդրանկաց սատակումն եգիպտոսի, նշանակէ՛ զանկումն սատանայի յերկնից. և փոխանակ նոցա ընտրեալ և կոչեալ որդի անդրանիկ զիսրայէլ. և զնոսա փոխարկեալ առնու զօծելոց *դասս* քրիստոնէից ի տեղի նոցա: - 380. Զի յեկեղեցի է *դասք* են քահանայութեան: - 380. Դարձեալ, է *դաս* թուէ առաքեալն զհրեշտակսն յէփեսացւոց թղթին: - 380. Զի աթոռք՝ քերովբէք՝ սերովբէք՝ հաւասարապատիւք են՝ մի համարի *դասս*. և վեցն զկնի նոցա: - 380. Եւ երեք *դաս* է տրտունջն. այսինքն Կարօտանաց. և Փորձանաց. և Չարաչար: - 381. Իսկ ի վերջինն գաւառ՝ կիսովն իմանին կուսանքն ընտրեալք. որք լնուն զթերութիւն անկեալ *դասուն*: - 391. Եւ **թ** միւս որմունք ըստ *դասուցն* իմանալեացն փառաբանիչք: - 391. Նոյն և երկիրն վերինն երուսաղէմի յանեզրական ծովէ՝ յամպոյ հոգւոյն և շնորհացն իմաստութեան ոռոգի. վերին և ներքին *դասք* հրեշտակաց՝ և մարդկան: - 398-399. Չորեքտասաներորդ, Դարձ տապանակին է *դաս* պարուք: - 412. Եւ վասն այսմ ի սուր անկան ծոյլ քահանայքն ոփնի և փենէհէզ. և լա ի *դասուց* անկան և տապանակն գերի առաւ: - 425. Եօթն *դաս* պարուց էին. որոց երեքն բերանով երգէին. այսինքն նուագն և սրինգն և փողքն: - 431. Յայս միտս ի բերել ընծային ի սեղանն՝ է *դասք* քահանայից կան ի սպասու. և երգեն եղանակաւ. և քշոց և բուրվառ և զանգակ հնչէ: - 431. Նա՛խ՝ թուել հրամայեաց, որպէս այն որ թոյլ ետ իսրայէլի մարտնչիլ ընդ բենիամենի, և անկան **լռ** ի *դասուց* նոցա: - 434. Դաւիթ դարձոյց զերկու կանայս և զամենայն աւարն. և որդի նորա **զբ** *դասս* հաւատացելոց և զամենայն հոգիսն ազատեաց: - 437. Այլ հերձուածօղք ոմանք որք են *դասք* երկաբնակաց՝ ապականացո՛ւ ասեն զանապական մարմինն կենարարին: - 498. Դարձեալ ասեմք՝ թէ կանայքն իւղաբերք **դ** անգամ եկին ի գերեզմանն և այլ և այլ

տեսլեան դիպեցան. և զիւրաքանչիւր *դասուց* **դ** աւետարանիչքն գրեն: - 515. Զի թռչիլն նշանակէ՛ զզանազան *դասս* ընտրելոցն: - 519. Այլ տեղի փոխման կուսին ի վե՛ր է քան զամենայն *դասս* հրեշտակաց: - 519. Այլ համբարձումն նշանակէ՛ ի միտս համայն բարձր քան զամենայն *դասս* իմանալեացն. զի նմա՛ երկրպագեն ամենայն երկնայինքն. և անդր քան զտեղի տիրամօրն. զի ի միածին որդւոյ իւրմէ խնդրէ զփրկութիւն մարդկան: - 519. Քառասունն է, Երկուս *դասս* պաշտմանց: - 527. Երկրորդ՝ ի վերնատանն *դասք* առաքելոցն ի վերայ նոր հաղորդութեանն մարմնոյ և արեանն՝ նոր օրհնեցին զքրիստոս և ելին ի լեառն ձիթենեաց որպէս ասէ աւետարանն: - 528. Եւ շինուածք են *դասք* ամենայն արդարոց. նոքին դարձեալ մարմնով բնակիչք և հաւատով շինուածք: - 532. Եւ դարձեալ՝ գլուխ է քրիստոս. և հերք՝ որպէս *դասք* վերին զօրացն ի նմանէ՛ առ մեզ իջուցեալ զշնորհս: - 534. Ասեմք թէ՝ տէրն երկոտասան գունդս ասաց հրեշտակաց իւրաքանչիւր *դասուց*: - 546. Եւ որպէս ի *դասս* հրեշտակաց մինն գնդապետ **բժ**ան գնդին: - 547. Եւ լզ բիւրս սպանին յուղղափառաց *դասուց*. որպէս յա՛յտ է ի պատմութիւնս սրբոյն միխայէլի: - 547. Վասն զի արեգակն արդարության քրիստոս հայրական փառօք և աստուածագումար *դասուք* և կարապետեալ աստուածային նշանն անտի գալոց է...: – 555. Անպ մարգարէքն են կամ հրեշտակք. և աստեղք վերին *դասքն*: - 563. Երկրորդ զօրացուցանէ. որպէս յա՛յտ է ի մակաբայեցւոցն զկնոջէն որ ունէր է որդիս՝ ածեալ ի սպանումն ի միումն աւուր տեսեալ. և տանէր այնմ՝ յուսովն որ առ աստուած. նոյնպէս և ամենայն *դասք* մարտիրոսացն յուսով զօրացան: - 574. Իսկ մեք *դասք* ուղղափառաց խոստովանիմք զկուսածին մարմինն քրիստոսի առանց ապականութեան. - 597. Իսկ ըստ եկեղեցւոյն յունաց, Առաջին *դասք* են Պատրիարգունքն. որ թարգմանին հայրապետ...: – 607. Յինգերորդ *դասք*՝ Քահանայք. որք ի քաղաքի լինին, և որք ի վանորայս, և ի գեօղս երիցունք: - 608. Այս են **թ** *դասք* եկեղեցւոյ: - 608. Եպիսկոպոսն և քահանայն, զոսա ի մի կարգ թուէ ի դէմս վերնագոյն *դասուց* երկնաւորաց. որք են Աթոռք. Քերովբէք. և Սերովբէք: - 608. Ապա թէ և զապաշխարօղքն ի թիւ կալցես, Կաթողիկոսն լինի **ժ**երորդ. որպէս աստուած **ժ**երորդ է ի վերայ թ *դասուց* հրեշտակաց: - 608. Այսպէս ասէ սուրբն դիոնէսիոս եթէ՝ մաքրելիք են **ե** *դասք*. յորոց վերայ իշխէ սարկաւագն և գործէ՛ զմաքրականն: - 608. ...և իշխէ ժողովրդեանն ներքին *դասուց* որպէս ասացաք: - 608. Ներքին *դասք*՝ այն դատաւորքն են: - 609. Երկրորդ ասեն, **դ** *դասք* էին իշխեցօղք ժողովրդեանն. այսինքն իշխանք ցեղիցն՝ և ծերքն՝ և դատաւորքն՝ և ատենադպիրքն: - 609. Վասն այն մինչ յայս ամուսնանալ կարեն. և ի հինգն ելեալ վերագոյն *դասուց*՝ ո՛չ ամուսնանան: - 609. Աստ **գ** *դասք* պաշտօնէից: - 614. ...որ լինի **թ** անգամ աղօթք ըստ **թ** *դասուց* հրեշտակաց: - 621. Որ էր յերկինս երկնից բանն աստուած, ի պայծառ և լուսաւոր *դասուց* հրեշտակաց օրհնաբանեալ...: - 621. Երրորդ, որպէս յերկինս յերիս երրեակս որոշին *դասքն.* այսինքն առաջին՝ աթոռոցն. միջին՝ տէրութեանցն. և վերջին՝ հրեշտակացն: - 624. Նոյնպէս և յեկեղեցիս **գ** են *դասք* պաշտօնէից: - 624. Արդ սաղմոս երգօղքն տան ի սարկաւագն. և սարկաւագն ի քահանայն. և նա՛ մատուցանէ աստուծոյ զօրհնութիւնն. որպէս առաջին *դասք* քերօբէիցն: - 624. Եւ թ տունքն՝ ինն *դասուց* զուարթնոց: - 628. Եբրայեցիքն առաջին *դասքն* չասէին ալէլու. այլ զոր միայն քահանայքն երգէին ալէլուով էր...: – 630. Եւ **գ** կրկնելով լինի **թ**. ըստ **թ** *դասուց* հրեշտակաց: - 632. Եւ ըստ **թ** *դասուց* եկեղեցւոյ որ աստուածաբանեն միշտ, զխաչեալն պաշտելով: - 632. Զի՞նչ է որ երկու *դասք* պաշտեն յեկեղեցիս: - 636. Երկու *դասք* էին երգիչք ի տաճարին զոր կարգեաց դաւիթ ընդ տիւ և ընդ գիշեր հանապազորդ պաշտօն **իդ** ժամուց. - 636. ...որք *դաս* առ *դաս* երգէին զսաղմոսն դաւթի. նոյնպէս և յեկեղեցի կարգեցաւ: - 636. Իսկ երբեմն համաձայնին երկու *դասքն*. որպէս ի փառք ի բարձունս և յայլ երգսն: - 636. Կարգաւոր է զի ո՛ր *դաս* որ սկսանի զերգն, նոյնն աւարտէ փառօք. թէ այս՝ թէ այն: - 636. Եւ ա՛յս է պատճառն, զի մի տան շարականի **դ** տուն սաղմոսի պիտոյ է յերկու *դասս*. և մին շարականն **ժբ** տամբ աւարտի: - 636. *Դասք* անմարմինք առէիցն: - 639. Դարձեալ՝ զմնացորդ *դասուն* որ անկաւ յերկիւղէն կնքեաց և հաստատեաց: - 639. Եւ **ժ**, զի յաւելումք յինն *դասս* հրեշտակաց: - 640. Զձայնն ո՞րպէս գիտենամք թէ ո՞ր *դասուն* է: - 641. ...առաջին ձայնն ա՛ջ *դասուն* է, և կողմն ահեակ: - 641. ...առաջին ձայնն ահեակ *դասուն* է, և կողմն աջ: - 641. Եւ է՛ աջ *դասն* աւազանին կողմն և խորհրդանոցին: - 641. Այլ և թ տէր ողորմեայն ի պատարագն. և **թ** երեքսրբեանն, ի խորհուրդ **թ** *դասուց* վերնական յերիս երրեակս որոշեալ: - 645. Այն է՝ յորժամ դաւիթ զտապանակ ուխտին հանէր յերուսաղէմ, է *դաս* պարուց որք են քահանայից *դասք*. և սրինկ. և փողք. և քնար. և այլն: - 645. Զքահանայս ընդ սերովբէից և քերովբէից յառաջին *դասս* վերինն զուարթնոցն: - 672. Եւ զկրօնաւորս ի վերջին *դասս* տէրութեանցն: - 672. Եւ զհասարակ ժողովուրդն ի *դասս* հրեշտակաց ըստ սրբոյն դիոնիսեայ: - 672. Եւ այլք ոմանք վեցերորդ կարծիս ստացեալ ասեն զբուն կատարեալ բարեաց հոգիսն ժողովեալ ի հրեշտակացն *դասս*...: – 687. Իսկ թէ ո՞ւր իցեն սոքա երկոքեանս, տեսիլն յօհաննու

յայտնապէս ցուցանէ. սրբոց խորանս ասէ զվերինն սիօն և զիրեշտակացն *դասս*: - 688. Ո՜ հա՛յրդ ես որոց ի վեր քան զերկինս. այսինքն հօգւոց սրբոց կատարելոցն որ ի վերեն քան *զդասս* հրեշտակաց մեծ քրիստոսի որպէս քահանայք առ քահանայապետ, և անդամք առ գլուխն. և որդիք առ հայր: - 688. Որք աստ ունին զյաջողակ գործս բարեաց կամ ձախողակ. և նոյնպէս *դասին* յաջակողմն և ձախակողմն քրիստոսի: - 689. Այսինքն զի աստուածք և տեարք կոչին յերկինս հրեշտակացն *դասք*, և թագաւորք յերկրի...: - 711. Նա՛խ՝ որպէս **բժան** գունդ հրեշտակացն և չորք կենդանիքն զբոլոր երկնային զօրսն նշանակեն, նոյնպէս և իդ երիցունքն զբոլոր *դասս* սրբոցն: - 711. ...վասն զի զաբրիէլ հրեշտակապետաց *դասուն* է պետ, - 713. Ասեմք եթէ՝ սխա՛լ են և երկոքին *դասքն*: - 725. Նա՛խ՝ զի արու և էգ անդ ո՛չ ճանաչին մասին անդամօք, այլ յատուկ դիմօք և բարի գործովք և փառօք և անւամբ զանազանին. որպէս *դասք* կուսանացն ի հայրապետացն: - 725. ...այլ ա՛յս է՝ զի իւրաքանչիւր մարմինք սրբոց պայծառասցին էպատիկ քան զարեգակն. որպէս տեառն մերոյ ի թաբօր լերինն. և **թ** *դասուց* հրեշտակաց լոյսն յերկիր ծաւալին. զի զօրութիւնք երկնից շարժեսցին: - 728. Երկրորդ՝ երկինք զիրեշտակս ասէ որ ի վայր գլորեալ խոնարհին ամենայն *դասք*. աթոռք կազմեալ, և սպասաւորք շրջապատեալ: - 729. Այսպէս քրիստոս այնու կերպարանաւ որով համբարձաւ՝ հանդերձ ամենայն *դասուք* հրեշտակաց ի դատաստան եկեսցէ: - 734. Միո՞վ բանիւ խօսի ընդ **թ** *դասքն* թէ կրկին: - 739. Վասն զի զընկերակցութիւն **թ** *դասուց* հրեշտակաց ապախտ արարին, արդարապէս **թ** տանջանս կրել արժանանան: - 752. Դանիէլիւ՝ կուսիցն *դասք* ծնուցեալ լինին: - 755. Ո՛չ թէ որիշ *դաս* անկաւ այլ իմն թուով՝ արտաքոյ քան զինն *դասս*: - 760. Ա՛րդ՝ ի տեղի անկելոց հրեշտակացն՝ ըստ թուոյ նոցա խառնելո՛ց են *դասք* կուսանաց սրբոց: - 760. Մին ամենայն *դասք* հրեշտակաց: - 760. Ի յայս միտս ի ստորինս եկեղեցի այժմ կրկին են *դասք* պաշտամանց. որ և նոյնպէս է լինելոց ի վերնումն սիօնի յեկեղեցիս անդրանկաց: - 760

**ԴԱՍԱԿԻՑ +** Երրորդ թէ *դասակից* հրեշտակաց լինին: - 586

**ԴԱՍԱԿԱՐԳԵՄ +** Երրորդ պատճառ. զի զօրութիւնք միջին են *դասակարգեալ* բոլորից. ի նոցունց դասուց և երիցն: - 137

**ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ +** Վասն այն իրինոս զնոսա ի մին *դասակարգութիւն* ասէ: - 134. *Դասակարգութիւն* հրեշտակաց – 796

**ԴԱՍԱՊԵՏ +** Տասներորդ՝ յիւրաքանչիւր դասս *դասապետն* և միջինն՝ և վերջինն: - 134

**ԴԱՍԵՄ +** Իսկ սոքա և զիրեշտակս ընդ մեզ *դասեն*. որպէս յայտ է ի գիրս պարապմանցն Կիւրեղի: - 34. Եւ յոհաննէս զսա օդո՛յ *դասէ*. վասն այն նոյն անուամբն՝ պօղոս իշխան օդոյս կոչէ. կամ զի յօդս են բնակեալ և իշխեն մարդկան: - 150

**ԴԱՍ** - Այլ և այսպիսի **է** ասեն զեղանակ նախկնից. այսինքն՝ ժամանակաւ. և բնութեամբ. և *դասիւ*. և պատւով. և պատճառաւ: - 109

**ԴԱՍՏԻԱՐԱԿ +** Եւ զի *դաստիարակ* և սնուցանօղ է մեր: - 211. Իսկ անասնոցն ո՛չ է *դաստիարակ* արտաքուստ. վասն որոյ բնութիւնն խնամէ զնոսա ի ներքուստ: - 267

**ԴԱՍՏԻԱՐԱԿԵՄ +** Նա՛խ խոստացաւ հրեշտակօք. աւետեաց մարգարէիւք. *դաստիարակեաց* օրինօք. և յետոյ երևեցաւ ի լրումն նոցին: - 776

**ԴԱՏ +** Վկայ անիրաւ զտնէ՛ հայհոյեն. և *դա՛տ* խռովութեան ի ժողովս մուծանեն: - 34

**ԴԱՏԱԽԱԶ +** Եօթներորդ՝ աստ չարախօսէ՛ ի ծածուկ. և յետ մահու յայտնի. և յարութեանն ևս յայտնի առաջի դատաւորին և *դատախազաց*: - 394. Զորօրինակ **բ** որ ի *դատախազից* իւրաքանչիւրն զինքն կամի և կարծէ ճշմարիտ զոլ. այլ մեծ եկեալ դատաւորին՝ վկայիւք յայտնի ճշմարիտն: - 551. Չորրորդ, զի երեք են դատելիքն. մին դատաւորն, և **բ** *դատախազքն*. պիտո՛յ է այսինքն **գ** վկայք: - 742. Դիտելի՛ է, զի ի ճանապարհի աստի կենաց երկու են ոսոխք. այսինքն *դատախազք*: - 743

**ԴԱՏԱԿՇՌԵԼ** - Երրորդ զմեզ առ այլս *դատակշռել*. այսինքն առ վերինս և ներքինս և հաւասարս: - 745

**ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ** - Երկիր որ փոխիլ հրամայի, է՛ յանցանք *դատապարտելի*: - 210. Վեցերորդն *դատապարտելոցն* արգելարան: - 210

**ԴԱՏԱՊԱՐՏԵՄ +** Ապա յիմա՛ր են այնոքիկ որք ասեն՝ կամիմ առնել զիաճոյսն իմ. զի թէ յընտրելո՛ցն եմ՝ փրկցայց. և եթէ ո՛չ՝ *դատապարտեցայց*: - 18. Իսկ խորութիւն է արդարութիւնն. որով *դատապարտէ՛* զչարսն...: – 129. Զոր եկեալ տէրն անմեղ և անապական մարմնովն նախանջեաց զմեղս, և զարդարութիւն սփռեաց ի վերայ մարդկան. և *դատապարտեաց* զսատանայ իբր զդաւաճանօղ մարդկան և կոխան արար ի ներքոյ մարդկան: - 153. Արդ եթէ ոչ է կատարեալ պատարագն, վասն է՞ր *դատապարտէ* զոչ արժանիսն: - 167. Յինգերորդ՝ զի թէ ոք գողանայր և սպանանէր, զանմեղն

**ԴԱՐՁՈՒՄՆ +** Նոյն է և գիր դպրութիւն կենաց. իբր անջնջելի *դարձումն* ի նախասահմանութիւնն: - 112. Երկրորդ՝ զի մի և նոյն օր կատարի *դարձմամբ* արեգականն ի կիտէ՛ ի նոյն կէտ արևելից: - 193. Նա՛խ՝ *զդարձումն* յետս աստուածային փառացն. և վասն այն շրջեցաւ ի զբօսանս դրախտին: - 280. Հինգերորդ՝ հանգիստն կատարեալ հոգւով և մարմնով. որ է՛ փողոց հնչմունք. ազատութիւն յապականութեանց. ամ թողութեան և իւրաքանչիւր ուրուք ի ստացուածս իւր *դարձումն*. որ է՛ գործոց հատուցումն: - 372. Իսկ *դարձումն* ի յետ, յեօթն դարուց կենցաղոյս դարձեալ ուստի ելին ժողովին ամենայն սրբութիւնք: - 426. Չորրորդ՝ գերիլն ի բաբիլօն՝ զգերութիւն բնութեանս նշանակէ. և եօթանասուն ամն զեօթն դար կենցաղոյս. և ապա *դարձումն* ի հայրենի բնակութիւնն մեր ի ձեռն փրկչին մերոյ և աստուծոյ: - 448. Երրորդ՝ համակ հանապազորդ ներգործական *դարձումն* բոլոր մարդոյն առ աստուած. որով մարդն աստուածային քաղցրութեամբն զմայլի. որպէս հրեշտակք ի

բոլոր սրտէ՝ յամենայն անձնէ և յամենայն զօրութենէ միշտ ներգործաբար դիմեն առ աստուած. և յիւրաքանչիւրսն ճառագայթի՛ ի նմա՛ աստուած: - 462. Երկրորդ՝ զի ծերն ո՛չ է կատարեալ հասակ, այլ *դարձումն* ի նուազութիւն: - 479. Իսկ յետ և յահեակ որկորստութիւն և պոռնկութիւն. զի յետս *դարձումն* է ի ճշմարիտ բարւոյն, և զհետ ընթերցումն է առ ահեակ և սուտ բարիս: - 560

**ԴԱՐՁՈՒՑԱՆԵՄ +** Առաջին պատճառն աստուած՝ եդ զզօրութիւն իւր յաստեղս. և նոքա ազդե՛ն ի մեզ, և դարձուցանեն զմեզ ըստ իւրեանց շարժութեանն ի չար կամ ի բարի: - 7. Եւ այժմ *դարձցուք* առ իւրաքնաչիւրսն: - 8. Դարձեալ, թէ է հարկ, վասն է՞ր աղօթք և պատարագք և ողորմութիւնք և այլն՝ *դարձուցանեն* զմերձեալ չարիսն, և փոխեն ի բարիս: - 11. Որպէս տուրքն նաբուգոդոնոսորայ. և աղօթքն եզեկիայ. որ յետս *դարձոյց* զմահ. և այլք բազումք. ապա ուրեմն ո՛չ է հարկ: - 11. Երկրորդ՝ է՛ *դարձուցանել* զիմացումն ի հաւատալեացն, և յայնցանէ որ ածեն զմարդն առ հաւատալն. այնպիսին խաբեալ է. զի բնութեամբ է մարդոյ ո՛չ տեսանել զյետոյս իւր. և ո՛չ առանց աչաց հայելոյ: - 31. Նոյնպէս ո՛չ կարէ իմանալ յորժամ ի սուրբ գրոց և ի սքանչելեաց և ի բանից սուրբ վարդապետաց՝ *դարձուցանէ* զմիտքն. որպէս ասէ առակն՝ պակասամիտն ոչ ընդունի զբանս խոհեմութեանց. բայց միայն զայն՝ որ շրջին ի միտս նորա: - 31. Այլ և ատելութիւնն *դարձուցանէ* զմիտս բազմաց ի հաւատոցն. որպէս ատելութիւն և նախանձ փարիսեցւոցն՝ ո՛չ տային թոյլ հաւատալ ի քրիստոս. թէպէտ տեսանէին զամենայն նշանսն զորս առնէր. որպէս ասէ սաղմոսն, «ատեցին զիս ի տարապարտուց»: - 32. Հինգերորդ՝ զի զմոլորեալն *դարձուցանէ* : - 49. Այլք ասեն թէ՝ է՛ ի յաստուած լայնութիւն սիրոյ, որով յետս *դարձուցանէ* զմեզ ի մոլորութեանց վասն առաւել սիրոյն: - 129. Այլ առ ժամայն հպարտութեամբն ուռուցաւ և ի ճշմարտութենէ լուսոյն *դարձոյց* զանձն իւր և խաւարեցաւ: - 147. Ութևժ, չո՛րս են որք հզօրք են և պերճ շրջին ասէ սողոմոն. այսինքն աքաղաղ, և նոխազ, և թագաւոր հրապարակախօս, և առիւծ՝ որ ո՛չ *դարձուցանէ* թիկունս յանասնոց: - 316. Դարձեալ՝ առիւծաբար ել ի յորդանանէ. որպէս ասէ երեմիա «իբր ախոյեան ել ընդդէմ փորձողին ի յանապատ և յաղթեաց նմա». ա՛յս է ոչ *դարձուցանել* թիկունս յանասնոց: - 316. Վեցերորդ՝ զի լիցի և պատկեր քրիստոսի որ անմեղութեամբ դատապարտեցաւ, և յառաջին փառսն *դարձոյց* զնախաստեղծն ծննդօք իւրովք: - 325. Վեցերորդ, մովսէս զդառն ջուրն քաղցրացոյց և զգետն յարիւն *դարձոյց*: - 328. Է՛ որ զէութիւնն փոխէ. որպէս մովսէս զգետն յարիւն *դարձոյց* և զգաւազանն յօձ. և այս կոչի սքանչելիք: - 335. Երրորդ՝ կեղն և խաղաւարտն եղև և ի կախարդսն և զայլ հարւածսն կրեցին. և ո՛չ կարէին ի մովսէս և յահարոն *դարձուցանել* զնոյնս: - 335. Իսկ աստուած փոխէ՛ և զկամս ազդելով ի նոսա զբարին. և *դարձուցանէ՛* ի չարէ՛. և երբեմն թոյլ տալով անձնիշխան կամացն դառնալ ի չարիս: - 336. զգլուխն ե երորդ մասամբն ի յետ *դարձուցանել* որ է՛ տուգանք ե զգայարանացն որ մոռացաւ և ո՛չ զգաց զօրէնս աստուծոյ: - 358. Ութերորդ՝ զի *դարձուցեալ* է զերեսն առ աստուած՝ և զթիկունսն յաշխարհս: - 378. Չորրորդ՝ ադամայ նախ զօրհնութիւն և ապա անէծք ետ. իսկ այժմ *դարձուցեալ* ի յօրհնութիւնն աւարտէ՛: - 403. իսկ աստուած անա՛խտ է՝ ձևանայ բարկացեալ և սրտմտեալ. զի զմեզ *դարձուսցէ* յառաջին բարին: - 408. Չորրորդ յայտ է յայսցանէ, զի բարկութիւն սպառնալեացն բարի՛ է և *դարձուցանող*: - 408. Ծեր մարգարէն որ *դարձոյց*: - 413. *Դարձոյց* զգետն յօրինակ բնութեանս: - 414. Ութերորդ՝ նա՛ տապանակաւն *դարձոյց* զգետն յետս: - 418. Թողում զգերծումն մերկութեան և զթօշումն անարգութեան և տկարութեան խաչին. զայպանելն խաչողաց. և զխաւար լուսաւորացն. և յայլ դէմս *դարձուցից* զբանս: - 424. Դաւիթ *դարձոյց* զերկու կանայս և զամենայն աւարն. և որդի նորա **զք** դասս հաւատացելոց և զամենայն հոգիսն ազատեաց: - 437. *Դարձոյց* ի յորդանանու զբերզելի որ տասամբն կերակրեաց զդաւիթ. ի տիպ հին օրինացն **ժ** բանեան զոր կատարեց քրիստոս: - 438. Դաւիթ կանգնեաց սեղան և *դարձոյց* զսուր հրեշտակին. և տէր մեր զսեղան խաչին զենմամբ պատարագին ի փրկանս և ի կեանս աշխարհի: - 438. Ծեր մարգարէն որ *դարձոյց* զնա, արեան տէ՞ր է թէ ոչ: - 443. Վեցերորդ՝ *դարձուցանել* զմարդն յորդէգրութիւն աստուծոյ՝ բնական որդւոյն էր պատշաճ. վասն որոյ որդին աստուծոյ որդի մարդոյ եղև զի զմեզ արասցէ որդիս աստուծոյ: - 468. Երեքտասաներորդ՝ ամաղեկացիք գերեցին զկողմն հրէաստանի և զայլազգիս. և դաւիթ զհետ մտեալ յետ **գ** աւուր և հարեալ ի գիշերի և ի վաղիւն մինչ յերեկոյ. և *դարձուցեալ* զերկոսին կանայս իւր. և ո՛չ մնաց գերի և ո՛չ մի. և յաւարէ աստի բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց: - 514. ...և տէր մեր յետ յերից օրինաց՝ այսինքն բնական բանական և գրաւական՝ երևեալ ի գիշեր կենցաղոյս և իջեալ ի դժոխս աւերելով զնա *դարձոյց* զերկոսին ժողովուրդս իւր...: – 514. Մեղք է *դարձուցանել* զերեսս յանփոփոխելի բարւոյն որ է՛ առ աստուած. և դառնալ առ փոփոխելի բարին որ է արարածքս: - 569. Զգուշանալ պա՛րտ է յամբարտաւանութենէ, զի զհրեշտակս կարաց խաբել. և զհրեշտակն սատանայ *դարձոյց*: - 569. Ըստ

այնմ որ յետս *դարձուցանէ* ի սիրեցելոյն է՛ միայն սիրոյն: - 583. Հինգերորդ, զի թէ գո՛յր հնար կնոջ վասն հարկին առնել զգործ քահանայի, ընդէ՛ր ոչ կարաց նունի կոյսն մկրտել զոք ի վրաց յորժամ *դարձոյց* յաստուածգիտութիւն. - 589. Այսպէս շնորհք հոգւոյն սրբոյ ի մկրտութեանն զաղտս մեղաց լուանայ. զծարաւ հոգւոյն բանիւն աստուծոյ շիջուցանէ. և զկորուսեալ պատկերն աստուծոյ *դարձուցանէ* : - 591. Հինգերորդ՝ զի դառնութիւն արտասուացն զցանկութիւն աչացն *դարձուցանէ* : - 619. և խոնարհեսցուք ընդ ձեռամբ նորա. զի *դարձուսցէ* ի մահու ի կեանս: - 629. Ընդ երևիլ նեռինն և թագաւորելն յերուսաղէմ, եկեսցեն ենովք և եղիա որպէս ասէ մաղաքիա և *դարձուսցեն* զսիրտս հարց յորդիս. - 709. Թիկունս առ միմեանս *դարձուցեալս:* - 753. Որք *դարձուսցեն* զսիրտ հարց յորդիս ըստ մաղաքիայի. այսինքն ուսուցանեն զհաւատն փրկչին զոր հարքն ունէին. և է՛ վարձաւորելի և կարի քաջ. և թէ այսպէս և թէ այն՝ քրիստոս քարոզի: - 785

**ԴԱՐՄԱՆԵՄ +** Երրորդ, ի խնամելոյ զմարդ և զանասուն՝ ցուցանի թէ նա՛ է արարիչ որ խնամէ՛ և *դարմանէ՛* զսոսա՛: - 406

**ԴԱՐՄԱՆԻՉ +** Ասեմք առ այս թէպէտ ունին զօրութիւնս, բայց այլ և այլ կերպիւ. զի բոյսք որք յերկրի են *դարմանիչք* և բժշկութիւնք մարմնոց. այլ երկնային աստեղքն են արարիչք լուսոյ և ժամանակաց. և ի նշանս ապագայից. զի յամենայն ուստեք տեսեալ պատրաստեսցին մարդիկք. որպէս ասէ գիր, եղիցին լուսատու լինիլ երկրի. ի ժամանակս և ի նշանս: - 12

**ԴԱՒ +** Զսէր քարոզեն, և *զդաւ* նենգութեամբ կայենի նիւթեն: - 34

**ԴԱՒԱՃԱՆԵՄ +** Ի շրթունս խօսին, և ի լեզուս *դաւաճանեն*: - 34

**ԴԱՒԱՃԱՆՈՂ +** Զոր եկեալ տէրն անմեղ և անապական մարմնովն նահանջեաց զմեղս, և զարդարութիւն սփռեաց ի վերայ մարդկան. և դատապարտեաց զսատանայ իբր *զդաւաճանող* մարդկան և կոխան արար ի ներքոյ մարդկան: - 153

**ԴԱՒԱՆԱԿԻՑ +** Այլ մեք եղբարք ուղեկիցք իմ և *դաւանակիցք* եղիցուք. շինեալք և հաստատեալք ի վերայ հաւատոյ հիման. անշարժ խարսխեալք ի վերայ յուսոյն քրիստոսի, սեռն և յստակ կատարեալ սիրով սուրբ հոգւոյն: - 503

**ԴԱՒԱՆԻՄ +** Եւ սոքա սոսկ մարդ *դաւանին*, և աստուած ասեն միայն կոչմամբ և անձամբ: - 34. Չորրորդ՝ հրէայքն *դաւանին* զմովսէս՝ և ուրանան զքրիստոս, զխաչն և զօրէնս նորա: - 34. Եւ մեք համաձայնեալ սուրբ և ուղղափառ վարդապետութեանցս, այսպէս *դաւանիմք* և խոստովանիմք զՀոգին սուրբ աստուած բղխումն ի հօրէ աստուծոյ...: – 65. Նաև աշակերտքն. որպէս պետրոս որ *դաւանեաց* զքրիստոս որդի աստուծոյ: - 68. Դարձեալ հարցումն առ երկաբնակ *դաւանողացդ* զքրիստոս: - 90. Զի ամենայն ճշմարիտ *դաւանօղքն* զքրիստոս աստուած խոստովանեցան. և ի նոյնն նահատակեցան. և առ ճշմարտութիւնն քրիստոս յերկրէ յերկինս վերափոխեցան: - 101. Նոյնպէս ի մահ խոնարհեալ *դաւանիմք* զհաւատն, և հաղորդիմք: - 314. Երկրորդ, մկրտութիւնն է գ օրն. զի ունի հրաժարիլն և *զդաւանելն* և զմաքրիլն. և ապա՛ եօթն խորհուրդ եկեղեցւոյ: - 384. Եւ նեստոր կամէր զմարմինն որոշել և սոսկ մարդ *դաւանել*: - 475. Այսպէս և ծնեալ փրկիչն աստուած մարդացեալ՝ և զծնօղն աստուածածին *դաւանիմք*: - 478. Երրորդ ձեռագիր քրիստոնէիցս առ աւազանաւն. որ հրաժարիմք ի սատանայէ՛ և *դաւանիմք* զքրիստոս: - 482. Երկրորդ հիմն՝ դաւանութիւնն պետրոսի է. և *դաւանօղքն* շինածք. և քրիստոս շինօղ: - 531. Այսպէս հաւատալին է քրիստոս. և հաւատալն *դաւանելն*. և հաւատն որ առ մեզ է: - 532. Ես խոստովանիմ զքրիստոս ճշմարիտ աստուած և բնութեամբ որդի աստուծոյ. և դու բաժանմամբ մա՛րդ *դաւանիս* և շնորհօ՛ք որդի աստուծոյ: - 548. Հայր ի յորդանան բնութեամբ որդի իւր *դաւանեաց*. և մանկունքն ի քառասնօրէին և յողոգոմին: - 638. Իսկ երկոտասան պտուղն իցէ երկոտասան աստիճանք հաւատոյն. որ ի սրտի և ի լեզուս առանց խափանման հանապազ *դաւանի* և արտաբերի: - 768

**ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ +** Եւ այլք աստուած խոստովանին. որպէս և մերս *դաւանութիւն*՝ ընդ հօր և ընդ որդւոյ: - 51. Հինգերորդ՝ զի կանոն ընդհանուր ժողովոցն որ եղեն առ նոսա՝ բաւականաբար *դաւանութիւն* հաւատոյ տըւեալ է: - 64. Եւ պետրոս ասէ ի *դաւանութիւնն*՝ «դու ես քրիստոս որդի աստուծոյ»: – 73. Զի այս է ուղղակի *դաւանութիւն* միաւորութեանն քրիստոսի: - 75. Եւ որպէս զայդ ուսար ուղղափառ *դաւանութեամբ*՝ ի միտ առ զոր ասեմս: - 79. Այլ հաստատեալ կամք ի վերայ սրբոցն *դաւանութեանց*: - 84. Եւ մեք զնոյն *դաւանութիւնն* պինդ կալցուք անշարժ յուսով ի կեանս և ի մահ և յետ մահու. և նորին խոստացեալ բարեացն արժանի լիցուք ի քրիստոս յիսուս ի տէր մեր: - 101. Նա՛խ՝ *դաւանութիւն* հաւատոյն: - 309. Ա՛րդ՝ *դաւանութեամբն* գերազա՛նց եմք մարդկան հեթանոսաց. և

մկրտութեամբն՝ հրէից. և ծննդեամբն ի հոգւոյն՝ հրեշտակաց. զի նոքա ո՛չ ունին ծնանիլ ի հոգւոյն. և ո՛չ եղբայր լինի քրիստոսի: - 309. Ա՛յս է երկաբնակաց *դաւանութիւնն*: - 350. Նա՛խ՝ հաւանական ըստ կերպի *դաւանութեանն* հաւատոյ, ըստ այնմ, «հաւատալ պա՛րտ է թէ է՛ աստուած»: – 457. Իսկ զի անապական է մարմին կենարարին՝ է՛ ի *դաւանութենէ* հաւատոյ. զոր ունիմք և եմք անփոփոխ: - 498. Տե՛ս զի ի ժողովն եփեսոսի հասարակ ամենայն ազգ այսօր նաւակատիս առնէին մինչ ի ժողովն քաղկեդոնի ուր փոխեցան տօնք և պահք և *դաւանութիւնք*: - 509. Երկրորդ հիմն՝ *դաւանութիւնն* պետրոսի է. և դաւանօղքն շինուածք. և քրիստոս շինօղ: - 531. Նոյնպէս ասա *զդաւանութիւնն*: - 531. Վասն որոյ զայս գ ժողովքս տիեզերական և միմեանց համաձայն ընդունիմք. այլ զքաղկեդոնին ո՛չ ընդունիմք. զի ընդ դէմ է առաջնոցն և կաքտումն *դաւանութեան* տօնից կարգաց և կանոնաց ամենայնիւ: - 541. **Եւ սուրբն սիմէոն սիւնակեցն այրեաց զթուղթն *դաւանութեանն* քաղկեդոնի՝ զոր գրեալ էր թագաւորն մարկիանոս աղաչանօք առ նա՛. և նզովեաց զթղտատարն որ էր թէոդորիտոս գլուխ ժողովոյն:** - 543. Նա՛խ՝ վասն *դաւանութեանն* նախկին: - 546. Եւ վէմ *դաւանութիւնն* էր որ խոստովանեցաւ զքրիստոս որդի աստուծոյ կենդանւոյ. և ի վերայ այնմ *դաւանութեան* շինեցաւ եկեղեցի քրիստոնէից: - 547. Այսուհետև սուրբ հարց և սիւնհոդոսաց հնազա՛նդ եմք. և զնոցա կանոնքն ունիմք և *զդաւանութիւն*, և պահեմք մինչև յելս շնչոյ մերոյ: - 547. Ա՛րդ՝ ե՛կ ես և դու փորձեսցուք թէ ով *զդաւանութիւն* առաքելոյն ունի և զկանոնքն՝ նա՛ է հնազանդ նմա: - 548. Այլ արդ՝ ազգս հայոց ունի զառաւել ճշմարիտն և զառաւել բարին ի *դաւանութիւնն* և ի կարգս. այսինքն ի հաւատս և ի գործս: - 550. Այսպէս և ամենայն ազգք քրիստոնէից զնոյն ունէին ճանապարհ *դաւանութեան* և աւանդութեան յառաքելոց անտի մինչ ի ժողովն քաղկեդոնի. և յետ անտի բաժանեցան ամենայն ազգք յամենայն իրս, որպէս յա՛յտ է յիւրաքանչիւր եկեղեցիս: - 551. Իսկ մերս *դաւանութիւն* ամենայնիւ նոյնն եկաց մնաց զոր ունէր նախ ի սրբոյն գրիգորէ՛ լուսաւորչէ և ի նմանեաց նորա: - 551. Զա՛յս ասեմ, զի որ ինչ անօրէնութիւն է ազգիս հայոց, նո՛յն է օրէնք այլազգ քրիստոնէից. և որ մեզ երկբայութիւն է՝ նոյն *դաւանութիւն* է նոցա: - 552. Այլ *դաւանութիւն* նոցա այս է. որպէս զի մի՛ լիցի ըստ նոցա աստուած մարդացեալ. կամ մերս բնութիւն ընդ աստուածութեանն միաւորեալ. որպէս ընդարձակապէս ցուցանէ աստուածաբանն կիւրեղ ի գիրս պարապմանց: - 552. Եւ զայս ցուցանէ նոյն ձև բանին որ է կոչմունք Երրորդութեանն. և նոյն *դաւանութիւն* հաւատոյն և այլն: - 590-591. Թէպէտ բազում ուրէք զսոյն բանս ի *դաւանութիւն* երից անձանց և միոյ բնութեանն խոստովանիմք: - 633. Եւ մկրտութեանն շնորհք և *դաւանութիւնն* սուրբ՝ հովանի և լուսատու լինի հոգւոյն: - 682. Դարձեալ՝ ոսկի է հաւատն և *դաւանութիւնն* անապական. և Արծաթ՝ անաղտ մաքրութիւնն ի մեղաց. և Պատւական ակունք՝ զանազան առաքինութիւնք: - 702. Այլ և տերև է մշտասաղարթ գիտութիւն հաւատոյն. ծաղկեալ *դաւանութեամբ* և պտղաբերեալ գործով առաքինութեան: - 769

**ԴԱՒԱՆՈՒՄՆ +** Զպետրոս գլուխ եդեալ, և *զդաւանումն* նորին կոխեն: - 34

**ԴԱՒԵՄ +** Վեցերորդ, զի **գ** է բանին տեղիք. մին՝ միտք դատաւորին. և **բ**՝ լսելիք *դաւողացն*: - 742

**ԴԱՒԻԹ** - Եւ զայլ ամենայն բնախօսութիւն յաղագս բարւոյ և չարի՝ գտցես ի Դիոնէսիոսի ի չորս գլուխն յաստուածային անուանսն. և ի ստորոգութիւնսն ի հակակայից ճառն. և ի սահմանս *դաւթի* ի վերջն...: - 24. Որպէս յովաբ ո՛չ ընդ *դաւթի*՝ այլ ընդ աբիսողո՛մ մարտեաւ: - 44. Մովսէս ասէ, «հոգի աստուծոյ». և *դաւիթ*՝ «բան տեառն». և յոբ, «հոգի աստուածեղէն»: - 55. Երրորդ վկայ մարգարէքն. որպէս ասէ *դաւիթ* վասն հոգւոյն՝ «ի քէն է տէր աղբիւր կենդանութեան». և ո՛չ թէ ի ձէնջ: - 64. Իսկ թէ զոր ի զաւակէն *դաւթի* առանձին, զիա՞րդ եթէ ինքն շնորհօք է սրբեալ՝ սրբեսցէ տիրաբար զառ ի նա՛յն հաւատացեալս: - 69. Ստեաց ուրեմն և հայր՝ կոչելով իւր որդի զոր ի զաւակէն *Դաւթի*: - 69. Չորրորդ՝ աստուած ծածկագէտ է. որպէս ասէ *դաւիթ*, «ո՛ ստեղծ առանձին զսիրտս նոցա ի միտ առնուլ զամենայն գործս նոցա»: – 71. Մետասաներորդ՝ աստուծոյ է նորոգելն. որպէս ասէ *դաւիթ*՝ առաքես զոգի քո և նորոգե՛ս զերեսս երկրի: – 71. Եւ վասն գերագոյն զգայութեան պատմէ՛ *դաւիթ*, «Որ ստեղծանէ զականջ ինքն ո՞չ տեսանէ. և ո՞չ լըւիցէ». «և ի ձեռն նորա են ամենայն տիեզերք երկրի»: – 118. Զորօրինակ՝ թափումն ի զգայութեանց թմրիլ՝ կամ ընդարմանալ ասի. այսպէս թափումն ի մտաց՝ զարմանալ ասի. ըստ պօղոսի որ յափշտակեցաւ. և ըստ *դաւթի* որ զարմացաւ. կամ ըստ ադամայ որ թմրեցաւ: - 127. Եւ որպէս երգովն *դաւիթի* դադարէ՛ր այսն չարութեան ի սաւուղայ, նոյնպէս և այժմ: - 150. Եւ *դաւիթ* ասէ՝ «վիշապն զոր ստեղծեր խաղալ նովաւ»: - 151. Եւ պատասխանէ՛ *դաւիթ* և եսայի՝ «ի ձեռն նորա են ամենայն տիեզերք». որ ունի զշրջանակ երկրի ըստ օրինակի պատկերին երկաթեայ: - 180. Երրորդ երկին՝ կատարեալ տեսութիւն իմացականին. որ դէմ յանդիման տեսանէին զաստուած. որպէս մովսէս և

*դաւիթ*: - 183. Նոյնպէս և այլքն ըստ կարգի. Աբրաբամ. Մովսէս. *Դաւիթ*. և Քրիստոս: - 193. Վասն այսորիկ կատարեալ իմաստութիւնն յերկուս բաժանի. ի տեսականն և ի գործնականն. այս ըստ *դաւթի*: - 248. Եւ այսպէս միջին հասակս կատարեալ, ձգի մինչև ի խզ ամն. որ է **դ ժզ.** և վեցն կատարեալ թիւ է. և աստ տիրէ ալիք և սկիզբն լինի ծերութեան մինչև ի **հբ** ամն. յորում է ծայրք կենաց ըստ *դաւթի*, և թիւ երկոտասան վեցից խորհրդաւոր: - 265. Բերսաբէ՝ որ ծնաւ զսողոմոն ի *դաւթայ*: - 300. Նոյնպէս և յակոբ, եփրեմ, *դաւիթ*, կրտսեր ի մէջ եղբարցն և թագաւորացն. խնդրե՛մ ուսանիլ: - 309. ...որպէս *դաւիթ* կրտսեր էր և հաճեցաւ տէր. այլ եղբարքն մեծամեծք խոտանք եղեն: - 310. Նոյնպէս և քրիստոս եկն առ եղբարս իւր որ էին որդիք *դաւթի* և աբրահամու և առաջնորդք ժողովրդեանն. և յուդա վաճառեց զնա. և տէր եղև կենդանենաց և մեռելոց և կերակրիչ. զի ազատեաց զհոգիսն ի սովոյ դժոխոցն: - 313. Եւ քրիստոս զյարկն *դաւթի* որ է՛ եկեղեցի՝ չորիցս առաքինութեամբ եռաբնակ օթևան աստուծոյ կազմեաց: - 328. Եւ ապա *դաւթի* յազգէն յուդայ: - 338. Այլ և զմանանայն հաց հրեշտակաց կոչէ մարգարէն *դաւիթ*: - 338. Նա՛խ ի սեղանն աբրահամու. և ապա՛ մովսիսին և ապա՛ *դաւթին* ի կալն ուռնայի. և ապա՛ ի տաճարին սողոմոնի. յետոյ ի սեղանն եղիայի: - 363. Եւ մարգարէն *դաւիթ* ի ձախ կողմն **ռբ**, և ի յաջն բիւրք ասէ անկանիլ: - 404. Եւ զի պատառեաց զկրկնոցն. և եհարց՝ ո՞յր որդի է *դաւիթ*: - 412. Մետասաներորդ՝ Զսուրբ հացն եկեր *դաւիթ*: - 412. Երեքտասաներորդ, Կոյրք և կաղք ընդ դէմ դարձան *դաւթի*: - 412. Հնգետասաներորդ՝ Վասն մեղացն *դաւթի* և թողութեան: - 412. Եւ *դաւիթ* փախեաւ: - 413. Ութևժ, Բաղդատութիւն *դաւթի* և տեառն **ծ** գլխով: - 413. Իննևժ, Ցրտացաւ *դաւիթ*: - 413. Քսաներորդ, Ո՛չ հրամայեցաւ *դաւթի* շինել զտաճարն. ի Հազարս գտի այր մի. և ի կանանց ո՛չ մի: - 413. Եւ ապա ըստ կարգի թագաւորք. *Դաւիթ*. Սողոմոն. և այլք մինչ ի գերութիւնն: - 421. Երկրորդ՝ զի *դաւիթ* որ հատանէր զլօդկին սաւուղի, նա՛ թագաւորէ՛: - 427. Վասն է՞ր եհարց թէ՝ ո՞յր որդի է *դաւիթ*. զի կապարճակիր և ծանօ՛թ էր սաւուղի: - 427. Վասն է՞ր ի սրբութեան հացն համարձակեցաւ *դաւիթ*: - 427. Կամ զի աքիմելէք **զճ** քահանայիւք սպանաւ ի սաւուղայ. և աբիաթար փախեաւ առ *դաւիթ* և ընդ նմա՛ էր զամենայն աւուրս թագաւորութեան նորա. և յանուանէ զնա՛ յիշէ: - 427. Ա՛յն է որ կաղք և կոյրք ընդ դէմ դարձան *դաւթի* և անարգանօք ասէին՝ մի՛ մտցէ *դաւիթ* ի քաղաքս. որ նա՛ ինքն է երեսուղէմ. որ եղև տուն տեառն: - 431. Կամ զի աղքատասէ՛ր էր *դաւիթ* և բազումք շրջէին ընդ նմա, վասն այն յեփուսացիքն նախանձեցան: - 431. Վասն որոյ ասաց *դաւիթ*, ամենայն որ մարտնչի սրով ընդ կաղս և ընդ կոյրս որպէս ասացին յեբուսացիքն, նա՛ ատելի՛ է անձին *դաւթի*. և խնայեաց ի նոսա և փրկեաց: - 431. Եւ զայս յիշեցուցանէին, Երրորդ՝ զի ո՛չ էր քահանայ. վասն որոյ յետոյ ասէր *դաւիթ* ցքահանայսն, դո՛ւք ղևտացիքդ սրբեցէք և բարձէք զտապանակն. զի մի՛ լիցուք որպէս զոզիա: - 431. Եւ սարկաւագն սպիտակ զգեստուք հովանի որպէս *դաւիթ*: - 431. Եւ յետոյ բաշխումն նշխարաց. որպէս *դաւիթ* բաշխեաց ամենայն իսրայէլի բլիթ մի հաց, և պատառ մի ի տապակէ՛ և ի կասկարայիցն: - 431. Վասն է՞ր յանդիմանեաց աստուած *զդաւիթ* ի ձեռն նաթան մարգարէի: - 432. Երկրորդ՝ զի գիտէր աստուած զզղջումն *դաւթի*: - 432. Երրորդ՝ զի որք լսեցին զմեղսն *դաւթի*, տեսցեն և զզղջումն: - 432. Հինգերորդ՝ զի ցուցանէ թէ՝ որ ի սիրելին իւր *դաւիթ* ոչ խնայեաց, նոյնպէս և զամենայն մեղաւորս յանդիմանէ՛: - 432. Նա՛խ՝ զի մեղայն *դաւթի*՝ զպատիժն յաւիտենից՝ արար ժամանակեայ խրատ: - 432. Որպէս *դաւթին* յետ զղջմանն յիշատակութիւն մեղացն մնաց, ապա նո՛յնպէս և ամենայն մարդոյ մնասցէ՞ թէպէտ և խոստովանի: - 432. Իսկ մեղքն *դաւթի* յիշատակեցաւ վասն երկու պատճառի: - 433. *Դաւիթ* ընդէ՞ր ոչ ետ պատասխանի անարգանացն սիմէի: - 433. Այլ աստ ասէ սուրբն եփրեմ եթէ՝ խրատն *դաւթի* եղև հատուցումն մեղացն. այլ և պարտք բարեաց առ աստուած ի ցոյց օրինի ամենայն ապաշխարողաց: - 434. *Դաւիթ* աչօք: - 434. Զի՞նչ էր կարօտիլն *դաւթի* ջրոյն բեթլէհէմի: - 434. Նա՛խ՝ որպէս գեդէոն ջրովն փորձեաց զհաւատս զօրացն. նոյնպէս և *դաւիթ*: - 434. Որ և *դաւիթ* տեառն նուիրեաց զջուրն զայն: - 434. Երրորդ՝ որք թուեցան ընդ աբիսողոմայ և սպանանէին *զդաւիթ*, այս նոցա վրէժն է: - 434. Երկրորդ՝ զի սովն և սուրն զբարի և զչար ի միասին պատժէ. այլ մահն ընտրութեամբն աստուծոյ է. և ժողովի ի վերայ յանցաւորացն. ուստի յա՛յտ է զի *դաւիթ* ո՛չ էր յանցաւոր ո՛չ պատժեցաւ: - 435. Եւ այն զի *դաւիթ* միայն ետես զկոտորօղ հրեշտակն, զի միջնորդեսցէ: - 435. Գտի *զդաւիթ* այր ըստ սրտի իմում, որ արասցէ զամենայն կամս իմ: - 435. Երկրորդ՝ կոչի *դաւիթ* որ է՛ սիրեցեալ և բաւական ձեռօք. և տէր մեր սիրեցեալ ի հօրէ և ի մարդկանէ իբր զորդիս մի եղջերոյ. և նա՛ է բաւական յամենայն գործս և ի պարգևս: - 435. Վեցերորդ, խոտեցաւ սաւուղ և ընտրեցաւ *դաւիթ*. խոտեցաւ հին օրէնքն, և ընտրեցաւ նորս: - 435. Իններորդ, խաղաց հոգին ի վերայ *դաւթի*. և աղաւնակերպ հոգին ի վերայ քրիստոսի: -436. Ութևժ, զօրացաւ *դաւիթ* անուամբն աստուծոյ. և տէր մեր զօրութիւն է հօր աստուծոյ: - 436. Քսանբ, երկոքին դուստրն խօսեցաւ *դաւթի*, և կրտսերն տւաւ. և փեսային քրիստոսի կրկին

խօսեցաւ եկեղեցի և նո՛րս տուաւ: - 436. Քսանգ, զօրավար կարգեցաւ *դաւիք*. և տէր մեր գլուխ զինուորաց եկեղեցոյ: - 436. Քսանևդ, *դաւիք* հալածեցաւ ի սաւուղայ. և որդի նորա յորդւոց նորա: - 436. Քսանևզ, *դաւիք* դիւրէ՛ր սաւուղայ. և որդի նորա որդւոց նորա: - 436. Քսանևէ, սաւուղ փոխանակ պատուելոյ խորհէր *դաւթի* չարիս. և որդիքն սաւուղայ որդւոյն *դաւթի* փոխանակ երկրպագելոյ...: – 436. Քսանևը, ծգեաց սաւուղ զգեղարդն *դաւթի*, եհար զորմն և ապրեցաւ *դաւիք*. և որդիքն սաւուղայ հարկանել ետուն ըզկողս տեառն և ո՛չ վնասեցին աստուածութեան նորա: - 436. Քսանևթ, հարեալ որմն վկայեաց թէ սպանօ՛ղ է *դաւթի* սաւուղ. և չարչարեալ և մեռեալ մարմինն վկայէ՛ թէ աստուածասպա՛նք են հրէայքն: - 436. Երեսուներորդ, կացոյց սաւուղ պահապան *դաւթի*. և կացուցին պահապան գերեզմանին քրիստոսի: - 436. Երեսունգ, *դաւիք* մարգարէ՛ է մարգարէանային. և որդի *դաւթի* յողոգոմեանն աղաղակէին: - 437. Երեսունևդ, *դաւիք* թաքեաւ գօրեայ առ վիմին. և տէրն գօրեայ ի գերեզմանին: - 437. Երեսունևթ, *դաւիք* այլակերպեցաւ ի մէջ այլազգեաց. և տէրն անարգեցաւ ի խաչին: - 437. Քառասուներորդ, սաւուղ բազում անգամ խնդրէր *զդաւիք* և ո՛չ կարէր ըմբռնել. և որդիքն սաւուղայ զտէրն. զի ո՛չ էր հասեալ ժամ նորա: - 437. Այլ և *դաւիք* եգիտ զսաւուղ և զզօրսն նորա ի քուն և ո՛չ վնասեաց. այլ զզէնն էառ. և տէրն ո՛չ կամի զմահ որք ննջեն ի մեղս. այլ զպատճառ մեղացն հանէ: - 437. *Դաւիք* բարի արար չարին սաւււողայ. և որդի *դաւթի* չարչարողացն զնա: - 437. *Դաւիք* պաշարեցաւ յայրին. և տէրն մեր ի դժոխս և քակեաց զնա՛: - 437. *Դաւիք* ելեալ ի բարձր տեղի աղաղակեաց առ սաւուղ...: – 437. *Դաւիք* եթող զիրէաստան և բնակեցաւ յայլազգիս. և որդի նորա եթող զիրէայս և հանգեաւ ի հեթանոս: - 437. *Դաւիք* չորս ամ բնակեցաւ ի գէթ մինչ մեռաւ սաւուղ. և տէր մեր յեգիպտոս՝ մինչ մեռաւ հերովդէս: - 437. Կոտորեաց սաւուղ զքահանայս վասն *դաւթի*. և հերովդէս զմանկունսն բեթլէհէմի: - 437. *Դաւիք* եհար զամաղէկ որ գերեաց զիրէայս և զայլազգիս. և տէր մեր եհար զգերիչն հրէից և հեթանոսաց: - 437. *Դաւիք* դարձոյց զերկու կանայս և զամենայն աւարն. և որդի նորա զբ դասս հաւատացելոց և զամենայն հոգիսն ազատեաց: - 437. Յիսուներորդ, կոչեաց զանունն աւար *դաւթի*. և այս ազատութիւն քրիստոսի: - 437. *Դաւիք* երեսնամեայ թագաւորեաց. և տէր մեր լամեայ մկրտեցաւ և ի գերեզմանէն յարեաւ: - 437. Երիցս օծաւ *դաւիք*. և որդի նորա ի յարգանդի, և ի յորդանան, և ի վերայ խաչին արեամբ: - 437. *Դաւիք* **լգ** ամ թագաւորեաց. և տէր մեր մարմնով ի վերայ երկրի: - 437. Քառասուն ամ թագաւորեաց *դաւիք*, որ է չորիցս ժ. և սկիզբն և կատարումն ամենայնի է՛ տէր մեր: - 437. *Դաւիք* արար զողորմութիւն կաղացն և կուրացն յեբեսացոց. և տէր մեր բժշկեաց զկաղս և զկոյրս որ «որդի *դաւթի*» աղաղակէին: - 438. *Դաւիք* էառ զերուսաղէմ և շինեաց իւր տուն. և տէրն զվերինն երուսաղէմ, և ետ իւրայնոցն զխաղաղութիւն: - 438. *Դաւիք* յետ յերկուց ամաց ետես զաբիսողոմ. և տէրն զմեղաւորս յետ ապաշխարութեան հոգւոյ և մարմնոյ. այլ և յետ աստեացս և մահու տեսանէ ի դատաստանին: - 438. Խորհի ակիտոփէլ չար վասն *դաւթի* և խեղդի. և յուդա վասն տեառն խորհեցաւ և խեղդեցաւ: - 438. Անարգէ՛ սիմէի *զդաւիք*. և զտէրն «վա՜հ որ քակէիր զտաճարն»: – 438. *Դաւիք* երիցս սուգ էառ մեռելոյ. և տէրն ի վերայ երուսաղէմի և ի գերեզմանն ղազարու և մերձ ի խաչն: - 438. *Դաւիք* հալածեալ ի սաւուղայ և յաբիսողոմայ. և տէր մեր յանհաւատից և հերձւածողաց: - 438. Այլ և *դաւիք* անյիշաչար եղև սիմէի նախատչի. և տէրն խաչողաց իւրոց աղօթէր: - 438. Դարձոյց ի յորդանանու զբերզելի որ տասամբն կերակրեաց *զդաւիք*. ի տիպ հին օրինացն ժ բանեան զոր կատարեց քրիստոս: - 438. Յաղթեաց *դաւիք* հնգից հսկայիցն. և տէրն մեր իշխանացն զգայութեանց: - 438. *Դաւիք* ծարաւեալ ջրոյն բեթլէհէմի ծնիցելոյն ի կուսէ. և ծարաւեալ տէրն ի խաչին փրկութեան մարդկան ազգի: - 438. *Դաւթի* **գ** արք անւանիք, և աբեսեա չորրորդ ընդ նոսա. **գ** աւետարանիչքն, և յոհաննէս որդի սողոմեայ: - 438. Երեսունևէ զօրավարք *դաւթի*. և **լէ** թիւ հնոյն օրինաց. և այլ նորոց կտակի. և կամ **իբ** գլխաւո՛ր են գրոց հնոց. և **ժ** բան օրինաց. և չորից աւետարանաց. և մինն առաքելական: - 438. *Դաւիք* կանգնեաց սեղան և դարձոյց զսուր հրեշտակին. և տէր մեր զսեղան խաչին զենմամբ պատարագին ի փրկանս և ի կեանս աշխարհի: - 438. Վասն է՞ր ցրտացաւ ի ծերութեանն *դաւիք*: - 439. Եւ այսպէս աստուածահայր կոչի *դաւիք* օրինակ յովսեփու: - 439. Վասն է՞ր հրամայեցաւ *դաւթի* ո՛չ շինել զտաճարն: - 439. Ոմանք ասեն եթէ արիւն բազում եհեղ *դաւիք*: - 439. Այլ ա՛յս է ճշմարիտն. զի պատերազմ և խռովութիւն էր յաւուրս *դաւթի* մինչ սատակեաց զնոսա. և որդի նորա ի խաղաղութեան ժամու շինեաց զտաճարն: - 439-440. Դարձեալ, կամեցաւ աստուած այլով իւիք յարգել *զդաւիք*, և այլով զորդին իւր յետ նորա: - 440. Զի զտեղին յեբուսացւոցն գնեաց *դաւիք*. և ճարտարապետն քիրամ տիւրացի էր որ շինեաց. և քիրամ արքայ զփայտն առաքեաց: - 440. Երկրորդ՝ աւետեաց *դաւթի* զսողոմոն որդի: - 440. Եւ աւետեաց աբրահամու և *դաւթի*...: – 440. Չինգերորդ՝ նա՛ զաթոռն *դաւթի*: - 440. Երկոտասաներորդ՝ ծերացեալ *դաւիք* նստոյց զնա յաթոռ: - 441. Եւ ոմանք գռ գիրք

ասեն որպէս առակն և ժողովօղն. և եռ օրհնութիւնս որպէս երգ երգոցն. որպէս *դաւթի* **ծծ** սաղմոսն: - 441. Իններորդ՝ և մարմնական որդի էր *դաւթի* ըստ կարգի հասարակ մարդկան. իսկ քրիստոս ակնկալութեան և աւետեաց և ի վեր քան զկարգ բնութեան աստուած մարդացեալ: - 442. Նա՛խ՝ զի հ ա՛մ է վճիռ կենաց մարդոյս ըստ *դաւթի*: - 448. Երկրորդն *զդաւթայ*: - 450. Երկրորդ՝ *դաւթին*: - 451. Յեսսէ ամաց **ճլ**՝ ծնաւ *զդաւիթ*: - 452. *Դաւիթ* ամաց **ծը**՝ ծնաւ զսողոմոն: - 452. Այսինքն երդումն աբրահամու և *դաւթի*՝ մարդ լինիլ բանին ի վերայ երկրի ի պտղոյ յորովայնէ նորա. և նստել յաթոռ հօր նորա. և ի նմանէ օրհնիլ ամենայն ազգաց: - 457. Փառաւորեալ և միշտ կոյսն Աստուածածին մարիամ՝ էր ի թագաւորական ցեղէն *դաւթի*...: – 459. Եւ յովսէփ որդի *դաւթի* որպէս ցուցաւ: - 460. Զի ի ցեղէն նաթանայ որդւոյ *դաւթի* այրն ոմն անուն ղևի՝ ծնաւ երկուս որդիս. զմելքի և զպանթեր: - 460. Դարձեալ վասն յովսեփայ գիտելի է. զի ի ցեղէն սողոմոնի որդւոյն *դաւթի*՝ մատթան առեալ կին, ծնաւ զյակոբ: - 460. Իսկ յովակիմ արդարն էր ի թագաւորական ցեղէն յուդայի լը երորդ ի թոռանց նաթանայ որդւոյն *դաւթի* փառաւոր և մեծատուն յոյժ: - 460-461. Երրորդն յաբրահամէ՛ մինչև ի *դաւիթ*: - 467. Չորրորդն ի *դաւթէ*՛ մինչև ցգերութիւնն բաբիլացւոց: - 467. Այլ և ցուպն հովուական *դաւթի*. զոր տարաւ ընդ դէմ գողիաթու: - 494. Որպէս *դաւիթ* ասէ յառաջագոյն. և պետրոս զնոյն ի գիրս գործոց երկրորդէ՛ (մարմին նորա ո՛չ ետես զապականութիւն.) ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն սուրբ: - 499. Նախ՝ վասն վճարման պարտուցն լուծան կապանք դժոխոցն. որպէս ասէ *դաւիթ*...: – 503-504. Դարձեալ ասեմք, ներքին դժոխք է հոգւոցն. և վերին՝ գերեզման մարմնոցն. և նա կոչի դժոխք ի սուրբ գիրս. որպէս ասաց *դաւիթ* «զսիմէի արեամբ հանդերձ ի դժոխս իջո՛» որ է՛ գերեզմանն: - 505. Զայս *դաւիթ* ներքին դժոխք անուանէ: - 505. Նախ՝ զի ասէ մարգարէն *դաւիթ* ընդ դէմ նոցա «փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքնոց» և ո՛չ ի վերնոց: - 506. Չորրորդ՝ զի ասէ *դաւիթ* «արձակել զորդիս մահապարտաց». այլ մահապարտք մեղաւո՛րքն են և ո՛չ արդարքն: - 506. Ա՛րդ՝ եթէ քրիստոս ի ներքին դժոխքն ոչ էջ, ո՛չ է կապեալ հզօրն որպէս աւետարանն ասէ. և ոչ զդրունսն խորտակեալ. և ո՛չ զգերիսն աւար առեալ որպէս *դաւիթ* ասէ: - 506. Երկրորդ՝ ի դիմաց տեառն ասէ *դաւիթ*. «ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինիլ առ տէր». որում սովո՛ր էր յայլ աւուրս ընդ առաւօտն կալ յաղօթս, և կիրակէն ի մէջ գիշերի: - 512. Տասներորդ՝ յաւուր միում այսահարեալ սաւուղ՝ կամէր նիզակաւն բևեռել *զդաւիթ* յորմն. յորմէ զերծեալ ապրեցաւ և գնաց ի տունն: - 513. Մետասաներորդ՝ փախստեայ *դաւիթ* բնակէր ի ներքնումն այրի. և սաւուղ ննջեաց յարտաքին այրին: - 513. Եւ ի գիշերին էհատ *դաւիթ* զդրօշակն սաւուղի. և յառաւօտուն աղաղակեաց առ նա: - 513. Երկոտասաներորդ՝ դարձեալ սաւուղ կամէր պաշարել *զդաւիթ*. և եկն զօրօքն իւր և ննջեաց ի դաշտի...: – 514. և *դաւիթ* մտեալ և առեալ զսուրն ի սնարից նորա. և ելեալ ի գիշերի ի լեառն աղաղակեաց առ նա «ո՞ւր է սուր քո»: – 514. Երեքտասաներորդ՝ ամաղեկացիք գերեցին զկողմն հրէաստանի և զայլազգիս. և *դաւիթ* զհետ մտեալ յետ **գ** աւուր և հարեալ ի գիշերի և ի վաղիւն մինչ յերեկոյ. և դարձուցեալ զերկոսին կանայս իւր. և ո՛չ մնաց գերի և ո՛չ մի. և յաւարէ աստի բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց: - 514. Վեցերորդ՝ համբարձաւ ձայնիւ փողով ըստ *դաւթի*. և այս վերաբերի յառաքեալսն. որ յանձնեցաւ նոցա երթալ քարոզել ամենայն հեթանոսաց. և փողք եղեն տիեզերաց...: – 520. Սոյնպէս և *դաւթին* մարգարէութիւն՝ մտաց լուսաւորութեամբն երգէր զամենայն սաղմոսն ի հոգւոյն սրբոյ: - 537. **Նախ բնական խելքն. որ ի բարեխառն կազմուածոյ հանդիպի**. որպէս էր՝ ակիտոփէլին և քուսեայ բարեկամին *դաւթի*: - 537. Երրորդ վկայ ունիմք զմարգարէս և զառաքեալս. որպէս ասէ մարգարէն *դաւիթ* «բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս»: – 595. որպէս յորժամ *դաւթի* ասացաւ թէ՝ «մի՛ պակասեսցէ սուր ի տանէ քումմէ յաւիտեան» վասն սպանման և շնութեանն: - 602. ...որպէս *դաւիթ* ասէր, «լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի»: – 619. ...որպէս ասէ *դաւիթ*՝ «**է** անգամ յաւուր օրհնեցից զքեզ»: – 621. ...որպէս ասէ *դաւիթ*՝ «ես առ աստուած կարդացի և տէր լուաւ ինձ յերեկոյս»: – 621. Եւ առ *դաւիթ* խորհուրդ հեթանոսաց եմուտ: - 629. Երկու դասք էին երգիչք ի տաճարին զոր կարգեաց *դաւիթ* ընդ տիւ և ընդ գիշեր հանապազորդ պաշտօն **իդ** ժամուց. - 636. ...որք դաս առ դաս երգէին զսաղմոսն *դաւթի*. նոյնպէս և յեկեղեցի կարգեցաւ: - 636. Ծագեաց մեզ տէր եղջիւր ի *դաւիթ*: - 638. Վասն քրիստոսի ասէ որ եղև մեզ զօրութիւն յազգէ *դաւթի*: - 638. Եւ զայսոսիկ հոգէխառնեաց *դաւիթ* և ուսոյց երգեցողացն: - 640. Վասն է՞ր ձայն և քնար խառնէր *դաւիթ* ի յերգս հոգւոյն: - 641. Յետ մովսիսի *դաւիթ* է առաջին մարգարէ ...: – 643. Դարձեալ՝ *դաւիթ* աստուածահայր կոչի...: – 643. Այն է՝ յորժամ *դաւիթ* զտապանակ ուխտին հանէր յերուսաղէմ, **է** դաս պարուց որք են քահանայից դասք. և սրինգ. և փողք. և քնար. և այլն: - 645. Եւ ինքն *դաւիթ* հանդերձեալ և հոլանեալ երգէր զտաւիղն որպէս սարկաւագունք. - 645. ...որպէս և *դաւիթ* օծաւ **գ** անգամ: - 673. Ասեմք նախ՝ եթէ մարգարէն *դաւիթ* վասն

բոլոր աշխարհի ասէ որ ջրով և հրով անցանի. և ապա հանգիստ յաւիտենական լինի...: – 701. Եւ աստուածահայրն *դաւիթ* ասէ, «հանես զոգի ի նոցանէ պակասին և ի հող դառնան»: - 715. Հինգերորդ, ստեղծաւ մարդն հաւասար հրեշտակաց. և յորժամ մեղանչեաց՝ անասնոց հաւասարեցաւ ըստ *դաւթի* և ընդ նոսա ապականեցաւ և պատժեցաւ...: - 724. Եւ վասն պարզութեան երկրի վկայէ՛ *դաւիթ*, «լերինք որպէս մոմ հալին»: - 728. Դարձեալ, ծորն յովսափաթու կոչի ծոր դատաստանի. այսինքն է կալն ուռնայի, ուր *դաւթի* խոստացաւ անդ առնել դատաստան. յորժամ սեղան շինեաց և պատարագեաց զեզինսն և բարձաւ մահն: - 737. Մարգարէն եսայի կրկին ասէ զհատուցումն մեղաց. նոյնպէս և ի տեսիլն. և վասն էր *դաւիթ* եօթնպատիկ ասէ հատուցանել ի ծոց նոցա: - 750. Կամ սիրելութիւն որպէս *դաւթի* և յովնաթանու. զոր սիրեաց որպէս զհոգի իւր: - 761. Կենցաղս այս երա՛զ է համարեալ հանդերձելոյն ըստ *դաւթայ*. «որպէս երազք զարթուցելոց»: – 775. Յորոյ ի դէմս ասաց *դաւիթ* «յիշել զբան ծառայի յուսադրութեանց նորա»: – 778

**ԴԴՈՒՄ +** Եւ յետ այնորիկ յեօթներորդէ՛ աւուրն սկսանի արիւնածուծ լինիլ յարգանդէ մօրն ընդ պորտն. որպէս *դըդում* և ծմերուկ ընդ կոթն: - 261

**ԴԵԲՈՎՐԱ** - Երրորդն Սամէգար. որդի անաթայ. որ մածիւն ո այր եսպան՝ ամս **դ**. և *Դեբովրա* ամս **ե** ընդ այլազգեացն: - 420

**ԴԵԳԵՐԻՄ +** Իսկ Չորրորդն արքայութիւն՝ է՛ յաւիտենականն գաւառ. յորմէ ի ձեռն մեղաց առաջնոյ մարդոյն՝ տարեալք պանդխտիմք յայսմ տառապանաց գբի և ի տիղմ կաւոյ. անարգաբար *դեգերեալք* ի հովիտս արտասուաց. յանապատի կալով և ո՛չ ի ճանապարհի. - 756

**ԴԵԳԵՐՈՒՄՆ +** Զայս և այլ սոյնպիսիս բազմօրինակ ստուերագրութեամբ առ ճշմարտութիւն իրին. իսկութեամբ ոչ գոլ անհնարին երկասիրացդ ի սոյն *դեգերմամբ* զոր ի պարապ ժամու քննութեան: - 306

**ԴԵՉԵԿ ԱԼԻՓԱԹԱ** - Սեմայն *դեզեկ ալիփաթա՛:* - 299

**ԴԵԿՏԵՄԲԵՐ** - Եւ այլք վասն արտեմոնի. զի նա՛ փոխեաց զծնունդն ի *դեկտեմբերի* **իե**: - 482. Զոր ի ժողովն քաղկեդոնի հաստատեցին զսոյն տօն ի **իե**ն *դեկտեմբերի*. պատճառելով թէ՝ ի հռոմ դարձի արեգական տօն կատարէին. և փոխեաց զայն պետրոս տօնել արեգականն արդարութեան: - 482. Եւ ի մարտի **իե** էն մինչ ի *դեկտեմբերի* **իե**ն համարեն **թ** ամիս և **ե** օր, և ա՛նդ ասեն զծնունդն: - 483. Ութերորդ՝ զի թէ հաւատան աւետարանին և ոչ ստեն **լ** ամաց գալ քրիստոսի ի մկրտութիւն, ի հարկէ՛ պա՛րտին կատարել և զմկրտութիւնն ի նոյն ի տօնի ծննդեանն իւրեանց ի *դեկտեմբերի* **իե** որ իցեն ամենևիմբ սուտ: - 484

**ԴԵՂ +** Երկրորդ՝ որ ինքն ո՛չ է բարի, այլ պատճառէ՛ զա՛յլ բարի. որպէս դառն *դեղն* զառողջութիւնն: - 160. Երրորդ՝ որ է՛ ինքն բարի, և պատճառէ՛ զայլ բարի. զորօրինակ՝ որպէս քաղցր *դեղն* պատճառէ՛ զառողջութիւն: - 160. Որպէս թոյնք իժից, զի են ինքեանք բնութեամբ չար- և պատճառե՛ն զչար. բայց պատահեցաւ ոմանց՝ *դեղ* լինիլ: - 160. Նա՛խ՝ պէտք են բժշկութեան *դեղոց* և առողջարա՛րք են: - 212. Հինգերորդ՝ զի ի նոցանէ ըստանամք *զդեղս* բժշկութեան մարմնոց: - 217. Որպէս բժիշկք յորժամ հիւանդաց *դեղ* տան, նախ ինքեա՛նք զճաշակն առնուն զի հաւատարիմ լիցի: - 316. Սարդիոն. շիկագոյն արիւնատեսիլ. գտանի ի բաբիլօն. և թափանց է և *դեղ* առողջութեան: - 348. Տասներորդ, սրբի բորն *դեղով*. ջնջի և մեղքն ապաշխարութեամբ: - 367. Երրորդ՝ զանթառամ *դեղն* կուսական: - 383. Հինգերորդ՝ զի *դեղն* պատասխանէր հիւանդութեանն: - 463. եթէ զոր օրինակ բժիշկք՝ ո՛չ ի սկիզբն ցաւոց և ո՛չ ամենևին անագան տան *ըզդեղ* հիւանդին. զի անօգուտ է և վնասիչ. այլ ի դիպօղ ժամու յորում առողջացի: - 467. Որպէս եսաւ անդրանիկն խսահակայ՝ կցողական *դեղօք* ողջացոյց զմարմին իւր և արար անթլփատ. զի ցրեսցէ զուխտն աստուծոյ: - 486. Եւ վասն մերոյ հիւանդութեան՝ քրիստոս էառ *զդեղն* և բժշկեաց զմեզ: - 491. Զոր օրինակ՝ բժիշկն յորժամ հիւանդին *զդեղն* տայ, նախ ինքն ճաշակէ զի հաւատալի լիցի: - 497. Նոյնպէս և զկամաւոր մահն որ է՛ *դեղ* և առիթ յաւիտենական կենացն, նախ ինքն ճաշակեաց և ուսոյց հետևողաց իւրոց: - 497. Եւ որպէս անչափ են սպեղանիք և *դեղք* բժշկականք մարմնոյ ի բազում և զանազան ծաղիկս խոտոյ և յարմատս, ի տերևս ի պտուղս. և յայլսն. զի սոքա յայտնեն զբազմութիւն հիւանդութեանց մարմնոյ: - 531. Երրորդն ի միոջէ և առ մի. որպէս բժշկական *դեղ* և գործիք. նոյնպէս մի է եկեղեցի յիւրաքանչիւր ազգս. զմի և զնոյն ունելով գործ և իր ի միոյ գլխոյն առ մի անդամքս. ի միոյն քրիստոսէ առ մի քրիստոնեայքս. ի միոյ հաւատոյն առ մի հաւատացեալքս...: – 533. Առ երրորդն ասեմք թէ՝ երիցս հարցումն սիրոյն և արածելն զոչխարսն՝ վասն երից ուրացութեանցն էր բժշկութիւն. զի ո՛ր մասն որ խոցի՝ նորին է բժշկական *դեղն* դնելի՝ և ո՛չ առողջից: - 547. Եւ գո՛րծ է այսմ խորհրդոյ՝ յաւելցնել զշնորհն, և *դեղ* հանապազորդ մեղացն: - 594. և

ո՛չ է աստուածային հրաման, այլ առաքելական ներումն ի *դեղ* անժուժկալութեան. զի մի՛ ի պոռնկութեան անդունդս կործանեսցին: - 613. որպէս նոքա որ *զդեղ* մահու խառնեն. վասն որոյ նշանաւ խաչին կնքեմք զնոսա, զի փախիցեն դևքն: - 654. Պա՞րտ է բժշկական *դեղով* վարիլ հիւանդաց, թէ ոչ: - 665. Աստ զանազան ցաւոց` և զանազան *դեղս* կազմեաց արարիչն աստուած. որպէս յարմատս ի ծաղիկս ի պտուղս և յայլսն: - 665. Եւ բժշկութիւնն` ո՛չ ի *դեղն*, այլ յաստուած յուսալ պարտ է. որ *դեղով* և առանց *դեղոյ* կարօ՛ղ է բժշկել: - 665. Ա՛րդ` եթէ ըստ բնականին է հիւանդութիւնն, պա՛րտ է բժշկական *դեղով* առողջանալ...: - 665. յայնժամ լինի բժշկութիւն հոգւոյ և մարմնոյ յաստուծոյ և ո՛չ ի *դեղոց*: - 665. Դարձեալ` որպէս բժիշկք *դեղ* տան հիւանդաց` և ի միւս օրն դարձեալ հարցանեն : - 680. ...նոյնպէս և մեք ըզհոգևոր *դեղն* կենաց յերեկեան աւուրն մատուցաք մեռելոյն...: - 680. Եւ զոր օրինակ փայտն գիտութեան պատճառ մահու եղև. պատասխանեալ *դեղն* ցաւոց: - 734

**ԴԵՂԻՆ +** Որպէս մի է արեգակն և սպիտակ և *դեղին* լոյս իւր: - 107. Զի` մի արեգակն սկիզբն է **բ** լուսոյն. այսինքն *դեղնին* և սպիտակին: - 124. Եւ որդւոյ պատկեր` լոյսն *դեղին*: - 124. Նախ` զի *դեղին* լոյսն ծնանայ ընդ երբս կամ ընդ լուսանցս մտեալ, իսկ սպիտակն ոչ: - 125. Երրորդ` *դեղին* լոյսն ստուեր ունի` և սպիտակն ո՛չ: - 125. Վեցերորդ` *դեղինն* զառաքինութիւն մարմնոյն. և սպիտակն զանմեղութիւն հոգւոյն: - 125. Եօթներորդ` ջերմութիւնն ընդ *դեղին* լուսո՛յն է: - 125. Իններորդ` ի *դեղին* լուսոյն տեսանեմք զսպիտակ լոյսն: - 125. *Դեղինն* հրոյն: - 203. Հրոյն` *դեղինն*: - 212. *Դեղինն* հրոյ: - 234. Սիրտն իշխա՛ն է անձինն. յորժամ երկնչի` զարիւնն առ ինքն ժողովէ իբր զօրք առ թագաւորն. և մնայ մորթն բնական գունովն *դեղին*: - 245. Գոյնն սպիտակ և *դեղին* պակաս ուժ է: - 247. Բնական որակ տարերացն Սևն է՛ երկրի. և Սպիտակն ջրոյ. Կարմիրն օդոյ. և *Դեղինն* հրոյ: - 342

**ԴԵՂՁԱՆ +** Չորրորդ` *զդեղձան* հերն և անարատ մարմնով և անբիծ հոգով, որ ո՛չ ունէր զլուծ մեղաց: - 383

**ԴԵՂՆԱԳՈՅՆ +** Զըմրուխտ. կանա՛չ է և *դեղնագոյն*. գտանի ի փիսոն գետ. Դևի՛ է և Յոհաննէս: - 348. Յասպիս` նմա՛ն է զըմրխտի *դեղնագոյն*. գտանի յեզեր թորքոմէտոս գետոյ յեզր կասբից ծովու: - 348

**ԴԵՂՆԻՄ +** Եւ զի ցրտութեամբ և չորութեամբ տերևք *դեղնին* և թափին: - 197. Վասն որոյ ի հրոյն ոմն սևանայ. որպէս խաղող. և կէսք կարմրին և *դեղնին*. որպէս բոյսք` և տերևք չորացեալ ի հրոյ: - 213. *Դեղնի* երեսն և կարմրի. և մին մարդն սև, և մին սպիտակ լինի. և շէկ և ծիծաղկոտ և այլն: - 227. Վասն է՞ր մարդ յորժամ երկնչի *դեղնի*, և յամաչելն շառագունի: - 245

**ԴԵՂՆՈՒԹԻՒՆ +** Այսպէս և սևութիւն երկրին և *դեղնութիւն* հրոյն խառնի և առնէ զկանանչն: - 212. և երեսն լըսնանայ վասն *դեղնութեանն*. և կապուտի ընդ կարմիրն խառնելով: - 620

**ԴԵՂՆՈՒՑ +** Որպէս զձու հաւի. *դեղնուցն* ի մէջ ջրոյն. և մզղնա տեսակն ի խեճեպոյն է ամրացեալ: - 181

**ԴԵՄԵՏՐԵԱՅ -** Եւ գրեցին ապաշխարութեամբ խոստովանութիւն. և եդին ի տապանին դադայ` յեկեղեցւոջ սուրբ վկային *դեմետրեայ*: - 543

**ԴԵՌ +** Նախ ասի անեղ` որ *դեռ* չէ՛ եղեալ. որպէս այն որ ի հանդերձեալն լինի. որ կարօտ է սկզբան: - 113. Եբրայական լեզուաւն կարդային որ ունէր *դեռ* զառաջինն. որպէս ասէ մեր լուսաւորիչն: - 299. Չորրորդ ասեն ոմանք թէ` *դեռ* չէր մկրտեալ մարիամ. և ոչ մկրտելոցն անհպելի՛ է. քէպէտ և իւրք իցեն: - 517. Ապա հե՞զն յամենայնի սուրբն գրիգոր ետ նոցա` զի նոքա շինեսցեն ընդարձակ. զի *դեռ* չէր շինեալ: - 549. Ասեմք եթէ` անդրանիկ և կատարեալ ո՛չ վասն պսակացն ասէ որ *դեռ* առնելո՛յ են: - 695

**ԴԵՌԱԾԻՆ +** Որ է՛ Տղայ. Մանուկ. Պատանեակ. Երիտասարդ. Ալևոր. Ծեր. իսկ երեխայն *դեռածինն* է: - 378

**ԴԵՌ ԵՒՍ (ԴԵՌԵՒՍ) +** Նոյնպէս և բարին միշտ բարի է. քէպէտ ի հոգւոյն պակասեցաւ, *դեռևս* ի յէութեան է. զի է է բարին. և էութիւն ո՛չ կորնչի: - 23. Կուրացեալ հրէայքն առարկեն ընդդէմ մեր թէ` *դեռևս* ոչ է եկեալ մեսիայն: - 27. Երրորդ հարցումն հակառակացն թէ` որդի ի հօրէ ծնաւ և դադարեցա՞ւ, թէ *դեռևս* կածնանի: - 37. Եւ թէ *դեռևս* ծնանի` անկատա՛ր է ծնելութիւնն: - 37. Իսկ յորժամ քակես` լինի մի և մի. քակեցաւ այժմ ի յառաջին բնութենէն ըստ քեզ` և ունի *դեռևս* զնոյն համարն: - 55. Եթէ զաստուածային անձն և զնորին բնութիւնն ասէք մի քրիստոս, *դեռևս* կայր յառաջ ասացեալ տարակուսանսդ. զի զաստուածային անձն և զբնութիւնն ասէք չարչարեալ և մեռեալ. զի քրիստոս խաչեցաւ և մեռաւ ըստ գրոց: - 89. Վեցերորդ` ոչէ ասին և բացարձակքն որ ի հանդերձեալն. զի *դեռևս* ո՛չ են. այլ` լինելոց են միշտ: - 111. Իսկ անեղն ի **բ** դէմս որոշի. որպէս անեղ էն աստուած. և անեղ` որ *դեռևս* ո՛չէ եղեալ և գոյացեալ: - 118. Գոյացութիւն հացին փոխեալ է ի գոյացութիւն մարմնոյն քրիստոսի և է՛ անապական. իսկ քանակն և որակն մնացեալ է *դեռևս* փոփոխելի. և յայնմանէ փոխարկեպին

այլայլմունք ինչ: - 339. Երկրորդ՝ զի անընտիր է *դեռևս*: - 365. Եւ *դեռևս* ունին ազգն վրաց. զի գիթվորն մտեալ յեկեղեցի ազա՛տ են: - 392. *Դեռևս* ապա զմարմին կենարարին ապականացու խոստովանիս: - 503. Ա՛րդ՝ մեղանչելն մարդոյ այնպէս է որ զակն խփեաց ի լուսոյն և խաւարեցաւ. սակայն լոյսն ծագէ՛ *դեռևս* ի վերայ աչացն և սակաւ փայլէ ի ներքս. և յորժամ բանայ վաղվաղակի լոյս տեսանէ: - 562. Նոյնպէս և այժմ սրբոց և երանելեաց յոյսն է հանդերձ ստուգութեամբ տեսութեանն. զի *դեռևս* հանդերձեալ է նոցա մարմնոցն յարութիւն. և փառք և պսակքն ըստ իրին: - 574. Եւ սուրբ ժողովուրդն՝ և երեխայն որ *դեռևս* մկրտի, զայսոսիկ նւիրեալք կոչէ: - 608. Այլ մովսէս օրինադրեաց ի թիւքն առնել կրկին փողս արծաթի. և կոչեաց զնոսա փողս ազդեցութեան. որպէս *դեռևս* գոն ի դրունս թագաւորաց կրկին փողք: - 618. ...որպէս յառաջն ունէին ամենայն ազգք քրիստոնէից. և *դեռևս* պահէ՛ ազգն դպտի և հապաշի: - 650. Եւ որպէս արդարքն *դեռևս* ոչ են ընկալեալ զկատարեալ փառս իւրեանց...: – 669. Երրորդ, զի թէ սատանայ որ գտա՛կն է ամենայն չարեաց՝ *դեռևս* ո՛չ տանջի յաւիտենից. ըստ որում «մի՛ յառաջ քան զժամանակն տանջեր զմեզ». ապա և ո՛չ մարդկայինս ազգ: - 776

**ԴԵՐԱՆՈՒՆ +** Տասներորդ՝ *դերանուանքն* որպէս ես. դու. նա՛. յատկապէս զմի անձն նշանակեն: - 73

**ԴԵՐԱՔՐԻՍՏՈՍ +** Այլ տե՛ս յայտնապէս, զի զայսպիսի նշան վկայութեան ո՛չ ունէին յուդաս և դնդաս. և ո՛չ նեռն ունելոց է *դերաքրիստոսն*. վասն որոյ ո՛չ են մարգարէ, այլ մոլորեցուցիչք և չարք: - 400

**ԴԵՐԵՒ +** Զոր ընդ *դերևս* հանէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան այսպէս եթէ, որք զհոգին յառաջ ասեն գոյանալ քան զմարմին. և վասն մեղաց եդեալ ի մարմին մարդոյ. որ է՛ համանման բանականութեամբ. և է՛ իներքոյ երկնային կենաց՝ զի մարմնաւո՛ր է: - 252

**ԴԵՒ +** Վասն անկման *դիւացն*. և հակառակութեան նոցա. և լոյս կերպարանին: - 102. Նոյնպէս հրեշտակաց և *դիւաց*՝ չարաց ի մարդկանէ և բարեաց ընտրութեան հոգի ընկալաք: - 126. Իսկ *դևք* փոխեն զերևակայութիւնն. որպէս տապ ջերմութեանն: - 133. Իսկ հրեշտակք փոխեն զսոսա և զիմացականն վասն բարւոյ. զոր *դևք* ո՛չ կարեն փոխել: - 133. Երրորդքն՝ յետս ընկրկեն զիշխանութիւնս *դիւաց* և չարաց: - 136. Դարձեալ՝ *դևք* ընդ աստուծոյ. զի դիտաւորութիւն ո՛չ կարէ թագչիլ յաստուծոյ: - 144-145. Իսկ խօսի *դևն* ընդ մարդոյ՝ կամ փոփոխելով զգոյութիւնն որպէս հրեշտակն կամ զպատկեր նմանութեանն ցուցանէ տեսանելեացն. և կամ տպաւորէ՛ յերևակայութիւնն: - 145. Եւ անդ ընթեռնու *դևն* որպէս ի քարտիսի և իմանայ յայնմանէ: - 145. Իսկ բանիւ գործոյ խօսի աստուած ընդ *դիւին*. նա՛և հրեշտակք ընդ սատանայի. որպէս որոտ և կայծակունք հրոյ ի վերայ նոցա...: – 145. Իսկ բանիւ գործոյ խօսի աստուած ընդ *դիւին*. նա՛և հրեշտակք ընդ սատանայի. որպէս որոտ և կայծակունք հրոյ ի վերայ նոցա...: – 145. Իսկ խօսի հրեշտակն ընդ *դիւին*՝ ցուցանելով նմա զտեսակս իմացման իւրոյ առանց լուսաւորութեան իմն: - 145. Դարձեալ՝ հոգին խօսի ընդ *դիւին*, զի զբաղձանք սրտին տպաւորէ ի զգայութիւնսն: - 145. Ա՛րդ՝ տեղական անկումն *դիւին* եղև կամ ի դժոխս՝ կամ ի յօդս աղջամղջին որ է՛ միջին կայարան օդոյն: - 146. Իսկ թէ դառնային ի ներքոյ ինքեանց առ փոփոխական բարին, անկանէին ի չար մեղացն և ի չար պատժոցն. որպէս այժմ *դևք* և ի կատարածի: - 146. Ո՞րպէս անկան *դևքն*: - 146. Անկումն *դիւաց* կրկին էր. այսինքն հոգեւոր և տեղական: - 146. Քանզի *դևք* ո՛չ են ի վերին մասն օդոյն, զի մի խնդասցեն լուսովն. և ո՛չ ի ստորին մասն, զի մի՛ առաւել վնասեսցեն զմարդիկ: - 146. Վասն զի ի *դևն* երիս իրս նկատելի է. այսինքն բնութիւնն՝ գործն՝ և մեղքն: - 146. Զի ի կատարածի աշխարհի յորժամ դադարի գործ *դիւացն*՝ ամենեքեան միահաղոյն փակեսցին ի դժոխս: - 147. Զի զոր ինչ բնութեամբ ունէին *դևք*՝ եթող ի նոսա աստուած յետ յանցմանն. և զոր ինչ երանութեամբ ստանալոց էին՝ զրկեցան: - 147. Այլ նոքա ամենեքեան ա՛զգ են *դիւաց*. և ըստ զանազան գործոյն՝ զանազան անուան հանդիպեցան. որպէս *դևն* պոռնկութեան, և հպարտութեան, և բէէլզեբիւղ, բեհմովթ, և այլն: - 150. Չորրորդ՝ զի ի *դևն* շրջեալ է տրտնջականն ըստ յառաջանալոյ ի բարին: - 151. Եւ ոմանք են յերկնից բայց ո՛չ յերկինս. որպէս *դևք*: - 151. Եւ թէպէտ անկան և եղեն *դևք*՝ գոյացականքն մնացին առ նոսա. և հրեշտակ լուսոյ կերպարանին ըստ առաքելոյն: - 151. Իսկ յանցումն օրինացն՝ լինի զէն և գործի *դիւացն* որով պատերազմին ընդ մարդոյս: - 151. Իսկ *դևք* զանհաստատսն մտօք՝ ի ստորև քարշեն և յերկիր կործանեն զերկրաւորս խորհելով. և ընդ ինքեան ի յատակս դժոխոց մերժեն: - 152. Տեղական անկումն եղև *դիւաց* ի սկիզբն ստեղծման իւրեանց վասն ամբարտաւանութեան և մախանաց ընդդէմ արարչին փառաց. ուստի անկաւ յերկնից ի դասուց հրեշտակաց և ի փառաց իւրեանց որպէս ասացաւ յառաջագոյն: - 153. Իսկ յանդիմանութեան անկումն *դիւաց* եղև գալստեամբն քրիստոսի ի ձեռն խաչին. և այս չորեքկին: - 153. Եւ դարձեալ այս երկրորդ անկումն *դիւաց* չորեքկին: - 153. Այսքան վասն *դիւաց*: - 153. Հինգերորդն *դիւաց* կերակուր: - 210. Եւ դադարք *դիւաց*. իսկ յետոյ լուցկի են գեհենին յաւիտենից: - 212. Զթռչունս ըմբռնել. ի վերայ ծովու գնալ. *դիւաց* սաստել. ձեռօք առ այլս

խօսիլ: - 275. Քսանեւ, Վասն կախարդացն. և խօսից *դիւացն*. և խստութեան սրտին. և կողոպտելն զեգիպտացիսն: - 283. Եւ զի յերիս տեղիս պատերազմին *դևք*: - 285. Երկրորդ՝ հրեշտակք անդրանիկք են քան զմարդ ստեղծմամբ. և յորժամ մեղան *դևքն* խոտեցան և եղեն կրտսերք. և մարդն ել ի տեղի նոցա և եղև անդրանիկ: - 310. Եւ ի սակաւ զօրութենէն նախքան զյարութիւնն չարչարէին *դևքն*, և աղաչէին թէ «մի՛ յառաջ քան զժամանակն տանջեր զմեզ»: – 316. Կարե՞ն *դևք* հուր իջուցանել և փոփոխել զտարերքս: - 321. Ո՛չ կարեն *դևք* զտարերքս փոփոխել. և ո՛չ հուր և ո՛չ շանթս և ո՛չ այլ ինչ ի տարերացս առնել որպէս կարծեն ոմանք: - 321. Նա՛խ՝ գուժ լծոց եզանցն՝ և սպասաւորացն մահ. և գուժկան ծևանայր *դև* մի ի կերպարանս ծառայիցն յոբայ: - 322. Իսկ ի հոգւոյ մարդոյն բ իր հեռացուցանեն *զդևսն*. այսինքն խոնարհութեամբ և ճշմարտութեամբ. վասն զի զերկուքս զայս ո՛չ ունի սատանայ. և ամենևին փախչի և ատէ՛ զխոնարհութիւն և զճշմարտութիւն: - 324. Այլ ոմանք ասեն ի ձեռն հրեշտակաց ի միում աւուր ժողովեցան. որպէս ի ձեռն *դիւաց* ցրուեցան: - 326. զդ՝ անդամալոյծ միակողմանց բժշկութիւն. էդ՝ բորոտից սրբութիւն. ըդ՝ բոլոր մարմնոյն հիւանդաց և ջերմացելոց առողջութիւն. թդ՝ *զդևսն* հանէր. **ժդ**՝ զմեռեալսն յարուցանէր: - 328. Եւ տէր ինքն բարձրացաւ ի խաչ և զհարեալսն ի թունիցն *դիւաց* բժշկէր: - 329. Իսկ *դևքն* փոխեն զերևակայութիւնն և զզգայարանս, այլ ո՛չ զմիտս: - 336. *Դևք* ո՞րպէս խօսին զառաջիկայն: - 336. Զառաջիկայն և զմիտս մարդկան ո՛չ ոք գիտէ. ո՛չ հրեշտակք և ո՛չ *դևք* և ո՛չ մարդիկք. բայց միայն աստուած որ քննէ զսիրտս և զերիկամունս: - 336. Իսկ *դևք* խօսին զմերձաւոր հանդերձեալն: - 336. Եւ թոյլ տայ աստուած *դիւաց* և կախարդացն հրաշից: - 336. Այսպէս և քրիստոնեայք յորժամ ելանեն ի կենաց աստի, կողոպտեսցեն *զդևս* և ապա՛ ելցեն: - 336. Եւ ի մէջ գիշերին յորում ըմբռնեցաւ, էհար զանդրանիկս *դիւաց*: - 337. Եւ այն որ շուրջ զսեղանովն, նշանակէ՛ զքահանայս. որ մերձ սեղանոյն որ է՛ քրիստոս՝ միշտ սպասաւորե՛ն և պատերազմին արեամբ չափ ընդ ախտս և ընդ *դևս*: - 341. Եւ զոր ուտէին և *դիւաց* զոհէին՝ պիղծ ասաց. որպէս զխո՛զ, զճագա՛ր, և զնապաստակ: - 364. Բաղաամ մո՛գ էր և կախարդ. և սովո՛ր էր ընդ *դևս* խօսիլ. վասն որոյ յառաջեաց աստուած և խօսեցաւ: - 387. Նա՛խ՝ զի մի՛ խօսեսցի *դևն* և չարիս ուսուսցէ: - 387. **Վհուկն ա՛յն է, որ ի վիհաց և յանդնդոց մեռեալս կերպարանեն. *դևք* ի կերպս մարդկան երևին. զոր դևակոչ ասեն և հազիմաթ. և Նշանագէտ, որ ի գերեզմանս ննջէ և նշանաւոր մարդ կերպարանէ. որպէս զսամուէլ սաւուղայ երևեցոյց հարցուկ կինն**: - 388. Եւ երազահանն, որ ի գիշերի տեսանէ *զդևս* և մարգարէութիւն պատմէ զի պատրեսցէ: - 388. Եւ յայտնի նշան մոլորութեան նոցա ա՛յս է, զի այնպիսեացն կատարօղք վատթարք են գործովք և մոլի. և առ *դևս* տանին զմարդիկք բռնութեամբ...: – 389. Նա՛խ՝ շուրջ թշնամիք *դևք*. և գազանք խիղճ մտաց. և ծով մեղաց. և ամայութիւն բարեաց: - 393. Այլ ընդ *դևս* պատերազմիլ միշտ. զի որոց *դիւաց* թէ յաղթէ մարդ, թէ հպարտութեան և թէ պոռնկութեան, զնոցա տեղիքն ժառանգէ յերկինս: - 393. Նշանակէ՛ զկրկին *դևսն* որ ի խորհուրդս և ի զգայութիւնս պատերազմին: - 393. Այլ ե թագաւորք մադիանացիքն էին, և բ այսոքիկ. որ են է *դևք* է գլխաւոր մեղաց. որք ի կեանս պատերազմին, և յետ մահու ընդ հոգւոցն բազումք: - 393. Երրորդ՝ ի քանանացիս. յետ յարութեանն ընդ ոսոխացն *դիւաց*: - 394. Վասն է՞ր յայս գ տեղիս պատերազմին *դևք*: - 394. Իսկ ի միտս, մահու չափ մեղաց է իշխանք և գունդք *դիւաց*: - 404. Փեգովրայ տեղի՛ էր կռոց. և *դևքն* չտային թոյլ թաղել զմարմինն, մինչև սաստեաց միքայէլ հրեշտակապետն ասելով, «սաստեսցէ՛ ի քեզ տէր». որպէս յա՛յտ է ի կաթուղիկէից վերջին թուղթն: - 409. Եւ *դևք* ո՛չ գիտեն զառաջիկայն: - 412. Եւ տէր մեր փրկէ զյուսացեալս իւր, որք պաշարին հնգիւք զգայութեամբք յիշխանացն *դիւաց*: - 419. Եւ տէր մեր յաղթեաց իշխանին *դիւաց.* և եհատ զնորայն բռնութիւն աջոյ. և զոմանս եթող ձախիւ թիւրելոյ և զընտիրս որոշելոյ: - 419. Իսկ տէրն մեր զմարմին և զհաւատացեալս իւր ապրեցոյց յիշխանէն այլազգեացն դիւաց: - 423. Վհուկք և *դևք* ո՛չ զառաջիկայն գիտեն և ո՛չ մեռեալս յարուցանեն: - 428. Եւ *դևք* ո՛չ միայն զապագայն ոչ գիտեն, այլ և զներկայ խորհուրդն ո՛չ ճանաչեն. նաև զանցեալ ճշմարիտն և զբարին ի միտ ո՛չ ունին: - 428. Բե՛ր տեսցուք և զորպիսութիւն խօսիցն, որ թուի թէ ճշմարիտ զապագայն պատմեն *դևք*: - 430. Երկրորդ՝ զի սուտ խօսեցաւ աստ. զի թէ սամուէլ էր՝ ո՛չ ուսանէր ի սաւուղայ. և *դևն* յերկրէ ո՛չ ելանէ: - 430. Չորրորդ՝ զի թէ սամուէլ էր որ ասաց թէ՝ տէր հեռացաւ ի քէն, և այս ո՛չ է մարգարէութիւն. զի կրկնեաց զիւր բանն. և թէ ո՛չ էր սամուէլ, այլ զանունն ընկալաւ և ինքն *դև* էր, սուտ խօսեցաւ ապա: - 430. Ապա յայսմ ամենայն է յա՛յտ է՝ զի ոչ ինչ գիտեն զառաջիկայն *դևք*. և ո՛չ իմանան զներկայական խորհուրդս. և ո՛չ յառնեն մեռեալք. այլ սուտ կերպարանին: - 430. Նոյնպէս և *դևք* ի նրբութենէ տեսութեան իւրեանց՝ կամ ի լսելոյ՝ խաբեն, զառաջիկայն պատմելով: - 430. Քսաներորդ, կոխեցին զայլազգիսն իէլ և յուդայ. և խոստովանօղք քրիստոսի *զդևս* այլազգիս: - 436. Եւ շուրջ զնովաւ հրեշտակք ամենայն ոչ հաւանեցան. զի նոքա զամենայնն ճշմարիտ խօսին. և բարի առնեն մարդկան. և յապաշխարութիւնն խնդան. իսկ սուտ

խօսիլն և չար առնելն և ի վիշտս ուրախանալ՝ *դիւա՛ցն* է որ են չար հոգիքն: - 444. Վեցերորդ՝ փրկեաց ի կռամոլ *դիւաց*, և էած յաստուածպաշտութիւն հաւատոց. որպէս ասէր յետ յարութեանն...: – 473. Եւ դարձեալ՝ աջն զփրկութիւն մարդկան. ահեակն զսաստ *դիւացն*: - 493. Որպէս մարմնական հուր զանմարմին հոգիսն և *զդևսն* տանջէ, նոյնպէս և տեղին ըմբռնէ: - 504. Նոյնպէս և զհոգիքն թողեալք ի յաստուծոյ արգելուն *դևքն*: - 504. Ապա վասն է՞ր յերուսաղէմ ասեն զդժոխքն՝ թէ է՛ այր դիւահոտ և ձայն աղաղակի և չարչարանք և այրեցումն չարաչար *դիւաց* լսելի լինի: - 504. Ուր և առաւել չարք և ամբարիշտք տանջին, և գլխաւորն *դիւաց*: - 505. Եւ որպէս *դևք* զկնի անկման իւրեանց ոչ կարեն արդարանալ ըստ ինքեան. զի անկումն նոցա մա՛հ է նոցա: - 508. Նոյնպէս ըստ օրինակին արար տէր մեր զատիկն յերեկոյի մեծի ե շաբաթին. և ի մէջ գիշերին յորում ըմբռնեցաւ՝ եհար զանդրանիկսն *դիւաց*: - 513. Երկրորդ՝ մագդաղենացին մարիամ յորմէ է *դևքն* ելին: - 516-517. Իսկ խորհուրդ ասէ վասն *դիւաց*. զի անմարմին է *դևն*: - 559. Նա՛խ՝ զի զտրտմութեան *դևն* զձանձրութեան զկարճմտութեան զսրտմտութիւն և զոխն հանէ՛ ի հոգւոյն: - 584. Վեցերորդ, ընդ կերակուր և ըմպելիս մեր՝ *դևն* որ թշնամի է մեր բազում վնասս խառնէ...: – 654. ...որպէս նոքա որ զդեղ մահու խառնեն. վասն որոյ նշանաւ խաչին կնքեմք զնոսա, զի փախիցեն *դևքն*: - 654. Ա՛րդ՝ թէ յերկինս էաք մեղանչեալ՝ ո՛չ կարէաք բշժկիլ որպէս *դևքն*: - 663. ...այլ դատապարտի՛լ հարկաւոր է. որպէս *դիւաց* մեղանչումն և անկումն. որ է մահն և դատապարտումն որ է՛ պատիժն: - 667. Ասեմք թէ ո՛չ. այլ առաւել վտա՛նգ է նոցա. զի ի բազում անգամ ի ձեռս *դիւաց* արտաքս ընկեցեալ լինին մարմինք նոցա: - 678. ...իսկ *դևք* զերկուքն ունին. զի յոչ էից եղէն. և փոխեցան ի բարւոյն ի չար. այլ զմինն չունին...: - 681. Եւ փարաւոն ընկղմեալ զօրօքն. զի ոչ ինչ կարեն վնասել չար *դևքն* քրիստոնէից հոգւոց: - 682. Իսկ չարացն ոչ ինչ գիտեն. այլ զոր հրեշտակք կամ *դևք* նոցա պատմեն: - 685. Իսկ մեղաւոր հոգին դարձեալ ի ձեռն հրաշտակաց. զի աղաչէր զնա երևիլ. կամ ի ձեռն *դիւաց* կերպարանին նոքա: - 686. «Եւ երկինք և երկիր վառեսցին հրով». այսինքն տարերք սրբեսցին ի մեղաց *դիւաց* և մարդկան: - 702. Դարձեալ՝ թէպէտ վասն հոգւոյն ասեմք որպէս այս, և տեսիլ անտօնին, և այլոց, այն ո՛չ է բերքաթուր. այլ պատերազմ *դիւաց*. որպէս աստ մարմնով, նոյնպէս և յետ մահու առ հոգիսն...: - 703. ...և ապա կորնչին *դևք*. և այս ո՛չ է բերքաթուր: - 704. ...որպէս ցուցաւ ի վերոյ ուր յաղագս անկման *դիւաց* ասացաւ: - 708. Երկրորդ՝ մարմնովն տիրեաց ցանկութեանցն երկրաւոր՝ և իշխանացն *դիւաց*...: – 711. Նոյնպէս և սուրբքն այժմ թագաւորե՛ն և տիրեն ի վերայ ախտից, և յետոյ ի վերայ *դիւաց*, և ապա ի վերայ մահու: - 711. Յանմարմնոցն հրեշտակք և *դևք*. և հոգիք մարդկան. իսկ ի մարմնոց երկնային մարմինք և դ տարերք և մարմինք մարդկան. և այլք ամենայնքն ապականին և յիւրաքանչիւր տարերս ժողովին: - 727. Զի զօդս սրբէ ի մեղաց *դիւաց* և ճենճերաց. և զերկիր ի մարդկային մեղաց: - 731. Իններորդ՝ զի *դևք* հալածական լինին ի զօրութենէ աստուածեան նշանին. և հրեշտակք սպասաւորեն նմա...: - 734. Արդ՝ եթէ ապականացո՛ւ էր սա, ո՛չ երկնչէին ի սմանէ *դևք*. որպէս և ո՛չ յանասնոց և յանշնչից. ապա ուրեմն անապական է խաչն: - 734. Ի յաջմէ մեղքն մատնիչ, ի ձախմէ *դևքն* ահագին: - 738. Եւ բանիւ գործոյ խօսի ընդ բուն չարս և ընդ *դևս* որք առաքին ի տանջանս: - 739. Երրորդ՝ կենդանի են *դևք*. և մեռեալ՝ մարդիկ. որս դատէ՛ աստուած և սուրբք ամենայն: - 740. Յինգերորդ, *դևք*. որպէս ասէ սիրաք՝ «են հոգիք ստեղծեալք ի վրէժ խնդրութիւն. և ի ժամ կատարածի հեղցեն զսրտմտութիւն»: - 743. Ուստի երևի զ ժամս ի յարութենէն մինչ ի վճիռ հատուցման և կորստեան չարաց չորեքկին. այսինքն գործոց չարաց և պատժոց նոցին. պատճառաց *դիւաց* և հետևելոց մարդկան: - 748. ...և Երկրորդ՝ զի մարդկան ազգի կրկին է հատուցումն. այսինքն յայժմու կեանս և ի հանդերձեալն. իսկ *դիւացն* եօթնեկի է հատուցումն վասն եօթնեկի յանցանաց նոցա. և եօթն գլխաւորագոյն մեղացն: 750. Տեսիլ *դիւաց*: Աղաղակ: Նախատինք: Պապակումն ծարաւոյ: - 751. Ութերորդ՝ ահագին տեսիլն *դիւաց* և վիշապաց. զոր ի կայծի կայծել հրոյն տեսանեն. և ողորմելի աղաղակ լալ ականացն և ոտնիար լինողացն: - 752. Եւ դժոխքն տեղիք *դիւաց* և մարդկան չարաց: - 760. Այլ թէ յետ մահու ո՛չ հանդիպի թողութեան, որպէս և ո՛չ *դևք*: - 780. Այլ զանազանի. զի *դևք* ամենևին ո՛չ ունին զղջումն և ոչ կարեն. վասն որոյ ո՛չ հանդիպին թողութեան. իսկ մեղաւորն ունի զղջումն այլ ո՛չ կարէ վարձաւորիլ: - 780. Եւ յայտ ի *դիւա՛ցն* է. որ ո՛չ կորուսին զանմահութիւն և զանձնիշխանութիւն և զայլս: - 782. Ամենայն իր բնութեան՝ գոյացակա՛ն է նորին. և ամենայն պարգևք այսինքն շնորհք պատահական է ի զարդ նմին. յաղագս որոյ ո՛չ բառնին գոյացականքն. որպէս անմահութիւն *դիւի* և բան մարդոյ: - 782. Եւ բառնին շնորհականքն. որպէս եռակին ասացեալ ադամայ. և լոյս մտաց. և երանութիւն *դիւաց*: - 782. Եթէ վարձատրելի է ասիցէ ոք, ապա զիա՞րդ որք ի հարկէ հաւատացին ո՛չ վարձատրեցան. որպէս *դևքն* ի հալածիլ. և որդիքն սկեւեայ. և սիմոն կախարդն. և այլք նման սոցին: - 783. Գիտելի՛ է, զի *դևք* ո՛չ ունին հաւատս իսկապէս. և յա՛յտ է ի բազմաց: - 784. Նա՛խ՝ զի ի

վերին գաւառս ուստի էին *դևք*՝ ո՛չ գոյ հաւատ. այլ դէմ յանդիման տեսութիւն: - 784. Իսկ թէ իցէ հաւատ *դիւաց*, գո՛յ մտածել տղայական կարծեօք՝ թէ անկումն նոցա եղև հաւատոց պատճառ է որ է՛ սուտ: - 784. Երկրորդ, զի անկումն *դիւաց* մահ է նոցա. և յետ մահու ո՛չ է հաւատ. ուրեմն և ո՛չ ի *դևս*: - 784. Երրորդ, զի հաւատն է լուսաւորութիւն մտաց հեղեալ յաստուծոյ ի ճանաչել զհոգևոր բարիսն. իսկ *դևք* ո՛չ ունին զլոյս մտաց և ո՛չ զհեղումն շնորհաց. վասն որոյ ո՛չ ճանաչեն զհոգևոր բարիս: - 784. Չորրորդ, հաւատն է՛ աստուածային առաքինութիւն. իսկ *դևք* զի են խստացեալ ի չար՝ ո՛չ ունին զզջումն որ է բարոյական. ապա և ոչ հաւատ որ է վերնագոյն և բարի կամաց խոկումն առ աստուած: - 784. Իսկ *դևք* ո՛չ տեսանեն զաստուած և են թշուառելիք: - 784. Վեցերորդ, հաւատովն փրկի ոք. ըստ այնմ «հաւատք քո կեցուցին զքեզ». այլ արդ *դիւաց* ո՛չ գոյ փրկութիւն: - 784. Եօթներորդ, հաւատովք արդարանայ ոք. ըստ այնմ «հաւատաց աբրահամ յաստուած և համարեցաւ նմա յարդարութիւն». այլ *դևն* ո՛չ կարէ արդարանալ: - 784. Այլ ամբարշտեալ կամք *դիւին* մնայ անկատար: - 784. Իններորդ, հաւատով հնազանդի ոք օրինացն աստուծոյ. այլ *դևն* հակառակ կայ օրինացն և աստուծոյ. թէպէտ գիտէ զայն լինիլ ինքեան չար, այլ գիտութեամբ մեղանչէ: - 784. Տասներորդ, հաւատն է աստիճանք հաւատոյն. այլ *դևն* ո՛չ հաւատայ նոցա: - 784. Յա՛յտ ուրեմն է յասացելոցս, զի *դևք* ո՛չ ունին հաւատս վարձաւոր. այլ ունին գիտութիւն նորահայեաց որով սարսին յառաջ քան զտանջանս: - 784

**ԴԵՒԱԿՈՉ** - Վհուկն ա՛յն է, որ ի վհաց և յանդնդոց մեռեալս կերպարանեն. դևք ի կերպս մարդկան երևին. զոր *դևակոչ* ասեն և հազիմաք. և Նշանագէտ, որ ի գերեզմանս ննջէ և նշանաւոր մարդ կերպարանէ. որպէս զսամուէլ սաւուղայ երևեցոյց հարցուկ կինն: - 388

**ԴԵՒԴԱՍ –** Այլ տե՛ս յայտնապէս, զի զայսպիսի նշան վկայութեան ո՛չ ունէին յուդաս և *դևդաս*. և ո՛չ նեռն ունելոց է դերաքրիստոսն. վասն որոյ ո՛չ են մարգարէ, այլ մոլորեցուցիչք և չարք: - 400

**ԴԷԶ +** Զի որպէս հուրն *դիզին* վնասակա՛ր է, նոյնպէս մեղքն հոգւոյն: - 601

**ԴԷԶՕՐՅՆԷՔ** - Այլ և ունիմք զմարմնաւոր պատարագս զօրինակին. զենմունք վասն կենդանեաց և մեռելոց: Որպէս տէրունականն զատկի և տէրունականն տօնից: Անդ և *դէզօրինէից*: Ագապս մատաղաց. և ոգէհանգիստ: - 362

**ԴԷՄ(Ք) +** Ասեմք առ այս եթէ կրկին ունի *դէմս* գիրն դպրութեան կենաց: - 18. Զի լուծումն է բանիդ յերկրուց *դիմաց* և հաստատօղ էութեանն հօր: - 37. Այլ զի մեք թողեալք և անտես եղեալք յաստուծոյ վասն յանցանացն, *զդէմս* մեր տպաւորէ՛ յինքեան. բնութենակից գոլով մեր և զլուխ անդամոցս: - 42. Պատասխանեմք թէ ո՛չ է նըւազ հոգին. զի ո՛չ է անկատար աստուածութիւնն. և ո՛չ նըւազութիւնն առնէ հոգւոյն ո՛չ լինիլ որդի, այլ *դէմքն* և առանձնաւորութիւնքն: - 53. Խաղաղութիւն է հայր. որ *դէմ* ասէ. «իբրև զգետ զխաղաղութիւն իմ»: - 56. Յնգետասաներորդ՝ յառաջին կորնթացւոցն ասէ ի *դիմաց* աստուծոյ...: – 58. Եւ զայս դու բաժանօղդ՝ յո՞ր *դէմս* ասես այսպէս ընկալեալ: - 70. Եւ դու այսպէս ընկալ և հաստատեա՛ ի քեզ. և լեր միացեալ ամենայն *դիմօք* և խաղալեօք ի համայնից զլուխն միշտ պաշտաճութեամբ ի քրիստոս: - 76. Եւ ո՛չ է և ո՛չ ասի **բ** որդի կամ **բ** *դէմ* և այլն. այլ մի որդի և մի անհատ յատկութեամբ իւրով. և մի *դէմ*. և մի անձն. և մի կերպ. և այլն: - 77-78. Զի՞նչ է ասելն աստուածաբանին, այլ և այլ ընդ նմին Երրորդութեանն ունի. քանզի՝ անդ այլ ոմն է և այլ. զի մի՛ *զդէմսն* խառնակիցեմք: - 80. Եւ հաստատեալ այսու եթէ՝ հոգին և մարմինն է միաւորեալ ընդ բանին աստուծոյ, կարգէ՛ և զայն. բայց որդիք ասէ ո՛չ **բ**. և ո՛չ աստուածք. զայս վասն *դիմաց* միաւորութեանն ասէ: - 80. Զի մի՛ *զդէմսն*, այսինքն զանձինսն շփոթիցեմք: - 80. Ո՛չ ի *դէմն*. և ո՛չ ի բնութիւնն. և ո՛չ ի կամքն. և ո՛չ ի գործս: - 83. Եւ զայս միաւորութիւնս խոստովանիմք մեք մի անձն. և մի *դէմ*. և մի կերպ. և մի բնութիւն. և մի կամք, և մի ներգործութիւն: - 83. Բանն աստուած իւրով կատարելութեամբն էառ զմարդկայինս բնութիւն. զհոգի և զմարմին և զմիտս. և միաւորեալ ընդ իւրում աստուածութեանն՝ եղև մի անձն կատարեալ և մի *դէմ*: - 84. Իսկ յատկութիւն և որոշումն *դիմաց*՝ սակաւ ինչ է. վասն այն թըւով տեսանի: - 104. Զի աստուածայինքն առհասարա՛կ են բաց ի յառանձնաւոր *դիմացն*: - 106. Զի ո՛չ է որպէս պետրոս՝ և պօղոս՝ և յօհաննէս՝ երեք մարդ և մի բնութիւն. այլ մի է անհատութեամբ. ունելով երիս յատկութիւնս *դիմաց*: - 107. Առաջինն որ է տըպաւորական աստուածաբանութիւն՝ է՛ ի *դէմս* սուրբ Երրորդութեանն և մի աստուածութեանն. թէ ո՞րպէս է մի. ո՞րպէս երրեակ. և ծնօղ. և ծնունդ. և բղխումն. և վասն մարդեղութեանն քրիստոսի: - 122. Եւ որոշի *դէմք* սիրելութեանն յերկուս. ի յինքն և ի յայլս: - 143. Եւ այսպէս կարծեն յերկուց *դիմաց* ընբռնել զմեզ: - 173. Որպէս հոգի և մարմին բնութեամբ միաւորին ի մի բնութիւն և ի մի *դէմ* և ո՛չ շփոթին: - 176. Գէջ օդն զգացեալ և *դէմ* եղեալ արեգականն՝ առնու զլոյսն ի նմանէ ըստ բոլորակ ձևոյ նորա: - 203. Եւ նախ ի չորս *դէմս* բաժանին ամենայն հողմունք. և իւրաքանչիւրքն դարձեալ յերիս բաժանին. որ լինի բովանդակն **ժբ**ան: - 205. Նախ՝ զի *զդէմքն* ընտրեաց՝ և

ընդ եւայի՛ խօսեցաւ: - 218. Նա՛խ՝ զի *զդէմսն* ընտրեսցէ, այլ և զտեղի և զժամանակն, և ապա խօսեսցի: - 218. Յինգերորդ՝ Միակողմանի՛ է *դէմքն*: - 227. Տասներորդ՝ մէջ և կապ ամենայն գոյիցս մա՛րդն է կազմեալ. զի ամենայն արարածք ի **բ** *դէմս* որոշին. այսինքն մինն յիմանալի և միւսն զգալի. և սոքա եղեն յառաջագոյն: - 231. Վասն է՞ր *դէմք* մեր ի մի կողմանէ է. և միւսն թիկունք: - 234. Երրորդ՝ զի *զդէմս* ունիցիմք միշտ ի յերկինս. և զթիկունս յերկիր. և հանապազ ի բարին յառաջեմք ոտիւք և ձեռօք և ո՛չ դառնամք ի չարն: - 234. Զայս ցուցանէ *դէմք* ի նմին կողմն, և զոտս յառաջ փոխել և զձեռս: - 234. Վասն է՞ր *դէմք* երեսացն առաւել ցանկալի է: - 234. Եւ այն զի աչքն ի *դէմքն* է, և ականջն ի կողմանէ. զի աչքն ուղղակշիռ ի *դէմն* տեսանէ. և ականջն շուրջանակի յամենայն կողմանէ լսէ. ի վերոյ ի ներքոյ և այլն: - 235. Զորօրինակ՝ բնութեան յատուկն և անձին. զի բնութեան տարբերն հեռագոյն է և մեծ. որպէս կենդանին և բանականն. և *դիմաց* յատուկն մերձ և նուազ. որպէս յատուկն մերձ և նուազ. որպէս պատկեր և տիպ: - 235. Ըստ այսմ ապացուցի. զի բնութիւնն ի սեռո՛ւմն է և ի տարբերութեան ուստի բաղկանայ. և անձն ի բնութիւնն է յորմէ կայանայ. և *դէմքն* ի յանձնէ՛. և կերպարանն ի դիմաց. և պատկերն ի կերպարանաց. և տիպն ի պատկերաց. և որակ տպաւորեալ ի պատահմանց: - 235. Առաջին և առաւել գոյացութիւն՝ է՛ անհատ անձն և *դէմն*. և Երկրորդ և նուազ՝ տեսակն և սեռ՝ և այլքն ըստ կարգի: - 235. Իսկ երկրորդն թէ յորմէ՞ սեռէ է օտարն և աննմանն՝ գիտելի է, զի *դէմն* և կերպն ի չորից սեռից գոյանայ. ի գոյէ՝ ի քանակէ՝ յորակէ և ի տեղւոյ: - 236. Զի *դէմքն* ըստ որում մարդոյ և մարմին՝ գոյացութիւն է: - 236. Անհատիւ, որպէս *դէմն*: - 236. Եւ ևս, զի **գ** *դէմք* Երրորդութեանն սուրբ՝ նոյն և նման գոն միմեանց: - 237. Նա՛խ՝ զի անմարմին *դիմօք* առանձնանան ի միմեանց. և այս յատուկ *դիմօքս* ճանաչեն հոգիքն զմիմեանս. որպէս մեծատունն զղազարու և զաբրահամու հոգին: - 237. Եւ այս *դէմքս* անփոփո՛խ է ի հոգւոյն ի կեանս և ի մահ. ո՛չ աճէ և ո՛չ նուազի: - 237. Այժմ տեսցուք թէ զի՞նչ է շահն աննման պատկերաց. զի բազում վնաս էր լինելոց թէ անհատք ո՛չ էին որոշեալ *դիմօք*: - 238. Այլ այս է ուղիղ. զի որպէս նախախնամութիւնն աստուծոյ *զդէմքն* մարմնոյն ի հաւասարութիւնն անհաւասար պահեաց, և ի նմանութիւնն աննման: - 252. Եւ յորժամ ծնանայ *դէմքն*, ի նոյն ժամն երևի յինքեան պատկերն մարդոյ: - 255. Արդ՝ **ժ** թիւն կատարեալ է. և չորսն տարրական է. այսինքն զի կատարեալ հոգին բանական ի նո՛յն ժամն խառնեալ միաւորի ընդ մարմնոյն տարրական, և կերպացեալ լինի մի մարդ մի *դէմ* և մի բնութիւն մարդոյ ի հոգւոյ և ի մարմնոյ. որպէս քառասունն ի տասանց և ի չորից է գոյացեալ: - 262. Զանազա՛ն են *դէմք* երազոց: - 268. Եւ այսպէս **ը** *դիմօ՛ք* է թշնամութիւն մեր ընդ միմեանս. և ամենայնին պատճառ սատանայ եղև, որ բնութեանս է թշնամի: - 278. Վեցերորդ՝ վասն որոշելոյ *զդէմսն*: - 281. Վասն երրորդին՝ զբերկրումն սրտին և զզուարթութիւն *դիմացն* ըստ սողոմոնի. «սրտի բերկրեցելոյ երեսք զուարթք»: – 286. Մելքիսեդեկ զնորա *դէմն* առեալ՝ զնորա գործն էլից. օրհնեաց զաբրահամ՝ և սեմ կոչեցաւ: - 300. Իսկ հօրն ամենևին ո՛չ պղտորեցան խորհուրդք. և ո՛չ տրտմեցան սիրտք. և ո՛չ տխրեցան *դէմք*: - 304. Գիտելի է, զի ամենայն պատարագ յերեք *դէմս* որոշի. այսինքն մատուցօղն, և ընդունօղն և պատարագն: - 306. Իսկ չորրորդն է՛ պատարագ տեառն մերոյ քրիստոսի որ ի մի *դէմ* անձնաւորութեան **գ** երես պատարագին բացայայտեցաւ: - 306. Եւ զի ցուցանէ՛ *զդէմս* առանձնական: - 319. Նախ գիտելի է, զի **գ** նշան տայ մովսէս ի *դէմս* սրբոյ Երրորդութեանն: - 332. Վասն է՞ր եզական դնէ զօրէնս իբր առ մի *դէմս* ասելով՝ «մի՛ սպանաներ և այլն»: – 340. Նա՛խ՝ ի *դէմքն*. զի գթութիւնն անմե՛ղ կացելոցն է. և ողորմութիւնն դարձելոց ի մեղաց: - 350. Եւ տե՛ս, զի սերմն ի մեզ ո՛չ պղծէ զմեզ, այլ ի հոսիլն պղծէ **զդ** *դէմս*: - 369. Յինգերորդ՝ ծածո՛ւկ է աստուածային բնութեանն բան. և յայտնի *դիմացն* և անձանց: - 406. Եւ թէ *զդէմքն* ո՛չ ծանեաւ, զիա՞րդ զխորհուրդն ճանաչէր: - 428. Երդուաւ սիմէի **դ** *դիմօք*: - 439. Այլ որդին որդի եղև և անշփոթ մնացին երրորդութեանն *դէմք*: - 468. Ա՛րդ՝ ի *դէմս* փրկչին նայելով յիրէ՛ն է փրկիչն. իսկ ի *դէմս* փրկելոցն ի գործոյն: - 473. Դարձեալ գիտելի է, զի օծեալն նշանակէ երիս *դէմս*. այսինքն զօծեալն և զօծումն և զօծօղն: - 475. Նա՛խ՝ որպէս մարդն յայլ և այլ բնութեանց միաւորեալ՝ մի անձն և մի *դէմ* և մի բնութիւն կատարի. զի մի ասեմք զմարդն և մի զբնութիւն նորա: - 477. Այսպէս յայլ և այլ բնութեանց բանն մարմին եղեալ՝ մի անձն է և մի *դէմ*: - 477. Վեցերորդ՝ ի յանմարմին բնութիւնն ո՛չ կոչէր իգական. այլ արական որդի. իսկ թէ ի մարդեղութիւնն լինէր իգական, փոփոխումն էր *դիմացն* և սերիցն: - 480. Այլ և գիտելի է, զի ամենայն պատարագ յերեք *դէմս* որոշի. որ է՛ մատուցօղն, և ընդունօղն, և պատարագն: - 491. Իսկ չորրորդն է՛ պատարագ տն մերոյ քրիստոսի որ ի մի *դէմ* անձնաւորութեան **գ** երես պատարագին բացայայտեցաւ. այսինքն մեծ գոլ մատուցօղն և ընդունօղն և պատարագն: - 491. Այլ այժմ ասասցուք թէ ամենայն կիրք բաժանին ի չորս *դէմս*. կամաւոր և ակամայ. անգոսնելի և անանգոսնելի: - 502. Եւ զի պարգև խաչին է հոգին սուրբ, նմին իրի յիշատակեալ զհոգին սուրբ՝ խաչիւ դրոշմեմք *զդէմս* մեր: - 522. Որպէս զինչ ասեմ համառօտ թէ՝ թերութիւն է մեր բաժանել զբանն ի մարմնոյն յերկու բնութիւնս և յերկու

*դէմս*. ի կրկին կամս և ի գործս: - 552. Այլ յատկապէս ըստ երից *դիմացն*, որ տկարութեամբ մեղանչէ՝ է՛ ընդ դէմ հօր. և տգիտութեամբն ընդ դէմ որդւոյ. և չարութեամբն ընդ դէմ հոգւոյն սրբոյ...: – 566. Այլ թացեալ պատառն այսպէս էր. զի ի սկաւառակն ընդ վարդապետին փութացաւ մատնիչն տանիլ զձեռն լիրբ *դիմօք* և արիամարիեալ մտօք: - 599. Արդ մարմնոյ ազգն բաժանի յերեք *դէմս*. ի վեր, ի վայր, և ի կողմն: - 611. Երրորդ՝ զի ունիմք զբնութիւնս հասարակ՝ պա՛րտ է հասարակ աղօթել. և զի ունիմք անձն և *դէմք* յատուկ՝ պա՛րտ է առանձնակի աղօթել: - 623. Օրհնելն զաստուած երիւք *դիմօ՛ք* է: - 624. Ապա ուրեմն պա՛րտ է յորժամ յիշատակեմք զհոգին սուրբ ամենայն ուրեք՝ խաչակնքել *զդէմս* և երկրպագել: - 625. Այլ զոր ինչ հասարա՛կ է երից անձնացն, աստուած, և հզօր, և անմահ և այլն ամենայն, կարելի՛ է ասել միոյ անձինն և միոյ *դիմաց*. աստուած հզօր և այլն: - 633. Վասն որոյ զոր սերովբէքն երից *դիմացն* երգէին, աստ աւետարանիչն ի դէմս բանին ասաց: - 633. ...և մի *դէմ* զքրիստոսն որ խաչեցաւ. որ լինի չորրորդ *դէմ* և անձն ըստ նոցա: - 633. Իսկ *զդէմքն* և զգերեզմանն ուղղեմք յարևելս...: - 677. Երկրորդ՝ նշան իմն գոյ առանձնակի ի խառնուածոյ *դիմացն*: - 719. Նա՛խ՝ զի արու և էգ անդ ո՛չ ճանաչին մասին անդամօք, այլ յատուկ *դիմօք* և բարի գործովք և փառօք և անւամբ զանազանին. որպէս դասք կուսանացն ի հայրապետացն: - 725. Իսկ միտումն է՛ առանձնութիւն *դիմացն*. որ է՛ անծին և ծնեալ և բղխեալ: - 746. Մի *դէմն* յԵրրորդութենէն որդի լինի. մի *դէմ* ի մարդկութենէս ի կուսէ առեալ բնութիւն մարդկութեան, աստուածութիւնն բոլորովին յաղագս անհաս միաւորութեանն ըստ ոսկէբերանին յոհաննու: - 770. Դարձեալ, յերես անկեալ արտասուալի *դիմօք* հողս և փոշի՝ սուրբ գարշապարաց ձերոց, աղերսեմ ի խորոց սրտէ զհարազատ գութ հարց և եղբարց մեր հոգևորաց: - 773. Էր և տեսանել աստ աղիողորմ տեսիլ. միայն արտասուալի *դիմօք* և կականաբարձ հառաչմամբ. ազգք և սիրելիք. ծնօղք և եղբարք: - 789

***ԴԷՄ (կերպ, տեսակ) +*** Իսկ անեղն ի **բ** *դէմս* որոշի. որպէս անեղ էն աստուած. և անեղ՝ որ դեռևս ո՛չէ եղեալ և գոյացեալ: - 118. Նոյնպէս և արիւն դաշտանւոյն պղծէ՛ զջորս *դէմս*. որպէս հոսումն արուին և բղխումն իգին: - 369. Չորրորդ ըստ առընչին. այսինքն թէ առ ի՞նչ իրք գործէ զմեղքն. զի մարդն **դ** *դիմօք* գործէ զմեղս...: - 565. Այն է որ գիտէ ճշմարիտն և առնէ զսուտն. և այս յերեք *դէմս* որոշի: - 564. Կամ ի զանազան *դիմաց* և ազգաց. որպէս այր, կին, ծեր, տղայ, ժողովեալ կոչի մի եկեղեցի: - 613. Իսկ ամսագլուխն և տարեբոլորն նոյնպէս յերեք *դէմս* է: - 683

***Ի ԴԷՄՍ, (Ի ԴԻՄԱՑ, ԴԻՄԱՑ) +*** Նոյնպէս և զաղաղակն և զարտասուսն՝ զերկիւղն՝ զտրտմութիւնն՝ զաղօթելն՝ և զայլ սոյնպիսին *ի դիմաց* մերոց իմացիս: - 42. Եւ եսայի ասէ *ի դիմաց* հօր, «հոգի յինէն ելցէ»: – 64. Քսաներորդ՝ այսպէս Երրորդութիւնն լինի չորրորդութիւն. և թիւ և աւելւած եղեալ ի բնութիւնն և *ի դէմքն*. եթէ ա՛յլ է առանձնապէս մարդ և ա՛յլ աստուած: - 68. Ասա՛ ինձ ո՛վ բաժանօղդ՝ ո՛ր *դիմաց* գոլ ասացեալ զայս: - 70. Զիա՞րդ միայն *ի դէմս* բանին իցէ այն՝ որ ի կերպարանս հօր է և հաւասար աստուծոյ: - 94. Իսկ եթէ *ի դէմս* մարդոյն, ո՞րպէս ունէր զփառս յաւիտենից այն որ այսօր ի կուսէն ծնաւ: - 94. Այլ *ի դէմս* պատճառաւորացն ունի զանազանութիւն: - 110. *Ի դէմս* պատճառին՝ նոյն է սկիզբն և պատճառ: - 110. Նախ՝ *ի դէմս* Երրորդութեանն և համաբուն իսկութեանն: - 134. Երկրորդ՝ զի աթոռքն վերաբերին *ի դէմս* հօր...: - 135. Եւ քերօբէն որ է՛ բազում գիտութիւն՝ *ի դէմս* որդւոյ. զի նա՛ է իմաստութիւն և գիտութիւն հօր ըստ առաքելոյն: - 135. Եւ սերօբէն որ է՛ ջեռուցիչ՝ *ի դէմս* հոգւոյն սրբոյ. զի նա՛ է հուր սիրոյ զոր էարկ տէր մեր յերկիր: - 135. Նախ՝ զի պետութիւնք պատշաճին առ հայր. և հրեշտակապետքն առ որդի իբր յերկուց միացեալ. և հրեշտակքն *ի դէմս* հոգւոյն իբր նախ եկաւորեալք յամենայն ուրեք, և ապա յորդի և ի հայր բնակեալ: - 136. Զի գիտեմք զդոսա ինն գոլ դասս ըստ սրբոյն դիոնիսեայ. և երիս երրեակս որոշեալ *ի դէմս* Երրորդութեանն: - 141. Եւ յա՛յտ է զի *ի դիմաց* կուսէ առաւել հեշտանայ ամենայն կենդանի: - 234. Նա՛խ՝ զի թէպէտ *ի դէմս* յոբայ սուտ էր խօսք նոցա, այլ *ի դէմս* ամենայն մեղաւորաց ճշմարի՛տ է: - 325. Եւ նա՛ ծնաւ զեզն պարարակ. որ ողջակէզ եղև արտաքոյ քաղաքին *ի դէմս* տաճարին: - 383. Առաջինն *ի դէմս* նշանացն մովսէսի: - 395. Երկրորդն *ի դէմս* ժողովրդոցն: - 395. Երրորդն՝ *ի դէմս* եգիպտացւոցն: - 395. Չորրորդն՝ *ի դէմս* նշանացն աստուծոյ: - 395. Երկրորդ՝ *ի դէմս* անդրանկանն քրիստոսի. ըստ որում ասէր՝ «ո՛չ մեռայց՝ այլ կեցից»: – 409. Ապրեցոյց զռահաբ պոռնիկն *ի դէմս* հեթանոսաց եկեղեցւոյ: - 414. Թողում զգերծումն մերկութեան և զթօշումն անարգութեան և տկարութեան խաչին. զայպանելն խաչողաց. և զխաւար լուսաւորացն. և յայլ *դէմս* դարձուցից զբանս: - 424. Առաջինն *ի դէմս* իւր: - 490. Չորրորդն *ի դէմս* տեսողացն: - 490. Երկրորդ՝ *ի դիմաց* տեառն ասէ դաւիթ. «ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինիլ առ տէր». որում սովո՛ր էր յայլ աւուրս ընդ առաւօտն կալ յաղօթս, և կիրակէն ի մէջ գիշերի: - 512. *Ի դէմս* հօր՝ մարգարէքն. *ի դէմս* որդւոյ՝ առաքեալքն. *ի դէմս* հոգւոյն՝ քննիչ վարդապետք. զի «հոգին քննէ զամենայն և զխորս աստուծոյ»: – 535. Իսկ կապելն *ի դէմս*

մեղացն է և մեղսասիրաց. որպէս տէր մեր բևեռեաց զմեղս և զսատանայ ընդ խաչափայտին: - 540. Եւ արծակելն *ի դէմս* շնորհացն է և սրբոց: - 540. Չորրորդ ըստ առընչին. այսինքն թէ առ ի՞նչ իրք գործէ զմեղքն. զի մարդն դ դիմօք գործէ զմեղս. այսինքն *դիմաց* աստուծոյ, *դիմաց* եկեղեցւոյ, *դիմաց* ընկերին, *դիմաց* իւր անձինն: - 565. Եւ այն զի խափանեցաւ գործ մարմնոյն, ի ժամանակէն կամ ի տեղւոյն կամ ի *դիմացն* պատճառեցաւ: - 556. Որպէս բարկութիւնն բարի է *ի դէմս* չարեացն. փոխեմք զայն ընդ դէմ բարւոյն: - 564. Որ *ի դիմաց* աստուծոյ լինի՝ ասէ աւետարանն «ամենայն մեղք թողցի մարդկան, բայց հոգւոյն սրբոյ հայհոյութիւն մի՛ թողցի»: – 565. Եւ յակոբ ի յօրհնելն զյուդա *ի դէմս* քրիստոսի ասէ՝ «կապեսցէ զորթոյ զյաւանակն. և լուասցէ գինեաւ զպատմուճանն իւր». և ջուր ո՛չ յիշէ: - 595. Վասն այն *ի դիմաց* եկեղեցւոյ աղօթքն է, և *ի դիմաց* աստուծոյ իշխանութեամբ արձակումն: - 602. Եպիսկոպոսն և քահանայն, զոսա ի մի կարգ թուէ *ի դէմս* վերնագոյն դասուց երկնաւորաց. որք են Աթոռք. Քերովբէք. և Սերովբէք: - 608. ...վասն որոյ յայսմ ժամու սկիզբն է աղօթից բոլոր աւուրն. յորում ասեմք զտէր եթէ շրթունքն և զայլ սաղմոսսն *ի դէմս* հօր աստուծոյ: - 621. Երկրորդ ժամն է՛ օրհնութիւն երից մանկանցն *ի դէմս* որդւոյ. որ նա՛ էջ ի մէջ հնոցի աշխարհիս. և փրկեաց զմեզ: - 621. Իսկ չորրորդ ժամն՝ ցերեկին երրորդ ժամուն առաջին ողորմեայն է *ի դէմ* հոգւոյն սրբոյ. որ յերրորդ ժամու էջ յառաքեալսն: - 622. Ողորմեայն *ի դէմս* հօր որ առաքեաց զորդին ի խաչ. և պատարագն *ի դէմս* որդւոյ որ խաչեցաւ վասն մեր: - 622. Իններորդն է հանգստեան ժամն *ի դէմս* հօր. որ ասեմք եկեսցէ և ննջեմք. - 622. վասն որոյ դ անգամ աղօթեմք ի գիշերի *ի դէմս* մարմնոյ մերոյ: - 622. Իսկ ի ցերեկին աղօթեմք ե անգամ *ի դէմս* հոգւոյս մերոյ: - 622. Եւ ա՛յս է պատճառն, զի քահանայն է՛ *ի դէմս* քրիստոսի, և եպիսկոպոսն հօր աստուծոյ. և խաղաղութիւնն է՛ հոգին սուրբ որ ի հօրէ առաքեցաւ. - 625. Սարկաւագն է՛ քարոզ և ուսուցիչ մեր *ի դէմս* հոգւոյն և *ի դէմս* առաքելոցն. - 626. ...վասն որոյ մեզ լեզու լինի և *ի դէմս* մեր գոհանայ զաստուծոյ ըստ իւրաքանչիւր ժամու. այսինքն յառաւօտն, ի հասարակ օրն, և յերեկոյն. զի գոհացումն է և ո՛չ աղօթք: - 626. Այլ գ թագաւորքն պահոց, և գ տուն յուտիքն, *ի դէմս* սուրբ Երրորդութեանն: - 628. Նոյնպէս և ողորմեայն *ի դէմս* եւայի: - 628. զի առաջին փոխն է *ի դէմս* հօր. և միջինն առ որդի. և վերջինն առ հոգին սուրբ: - 628. Իսկ առաւօտու երգն, *ի դէմս* խաչին: - 629. Վասն որոյ ի սրբոյն կիւրղէ կարգեալ ասեմք զսուրբ աստուածն *ի դէմս* որդւոյ: - 631. Զի՞նչ է որ ա՛յլ ազգք *ի դէմս* Երրորդութեանն ասեն. և վկայ ածեն զսերովբէսն գ սուրբ և մի տէր ասելովն: - 632. Զբանս զայս՝ մարգարէն *ի դէմս* հօր ասէ. զի յայնժամ միայն զհայր պատմէին: - 632. Իսկ առաքեալն պօղոս *ի դէմս* հոգւոյն ասէ ի գործքն. «բարւոք խօսեցաւ հոգին սուրբ ի ձեռն եսայեայ մարգարէի»: - 632-633. Իսկ աւետարանիչն յօհաննէս *ի դէմս* որդոյն ասէ: - 633. Վասն որոյ զոր սերովբէքն երից դիմացն երգէին, աստ աւետարանիչն *ի դէմս* բանին ասաց: - 633. Յաղագս որոյ եկեղեցի սուրբ ուսեալ յաւետարանչէն և ի սրբոց հայրապետացն, երգեմք զերեքսրբեանն *ի դէմս* որդւոյ: - 633. Իսկ յատուկ, Նա՛խ՝ զերեքսրբեանն *ի դէմս* որդւոյ. զի նա՛ է առաջնորդ որով զհայր տեսանեմք: - 633. Տա՛սն է. ինն *ի դէմս* քրիստոսի. և մինն ի հոգին սուրբ ի հոգէգալուստն: - 634. Իսկ երեքկինն *ի դէմս* Երրորդութեանն է: - 636. Եւ *ի դէմս* Երրորդութեանն որպէս ասացաք: - 637. Եօթներորդ, *ի դէմս* հոգւոյ և մարմնոյ մերոյ սրբութեամբ պահեմք երկու ի շաբաթուն: - 653. Նախ *ի դէմս* մեր. զի պակասիմք ի մարմնոց և յաւելումք ի հոգիսն: - 666. Իսկ *ի դիմաց* նորա օրհնել զուղարկաւորսն...: - 673. Այլև զգրեալն ընդհանրական թողութիւն *ի դիմաց* նորա ի վերայ գերեզմանին ընթեռնուն: - 674. Նախ *ի դէմս* դրախտին ուստի արտաքսեցաւ մարդն: - 677. Իսկ երրորդն *ի դէմս* Երրորդութեանն և է շնորհաց հոգւոյն զոր ընկալաք յաւազանին: - 683. Առասանքն երեքկղի՝ յԵրրորդութեանն *դիմաց* արդարութեան և ողորմութեան զօրութիւնք առ մեզ խոնարհեալ. ունելով զյիշատակ բարեացն և չարեացն մերոց: - 745. Նախ ի նոյն առ ինքն *ի դէմս* սրբոյ Երրորդութեանն. հասարակ գոլ ամենայնիւ. աստուածութեամբ բնութեամբ կամօք և այլն: - 746. Իսկ մարգարէն *ի դէմս* քրիստոսի ասէ «ընդ առաւօտս սպանանէի զամենայն մեղաւորս»: - 748. Յորոյ *ի դէմս* ասաց դաւիթ «յիշել զբան ծառայի յուսադրութեանց նորա»: – 778

***ԴԷՄ ՅԱՆԴԻՄԱՆ +*** Իսկ հինգերորդն ի հանդերձեալն *դէմ՝ յանդիման* տեսութիւն ըստ առաքելոյ: - 24. Ա՛րդ՝ եթէ՝ ի յարութեանն հասարակ արդարք տեսանեն զաստուած *դէմ յանդիման* որպէս և է, և քրիստոս ո՛չ կարէ տեսանել, փո՛քր լինի գիտութեամբ քան զմարդ որ է սուտ: - 99. Նոյնպէս և աստուած ընդ արժանիսն *դէմ յանդիման* խօսեցաւ. որպէս առ ադամ. և առ նոյ. և առ աբրահամ. և առ մովսէս: - 177. Երրորդն իմանալի. յորում Երրորդութիւնն սուրբ ի նոցանէ *դեմ յանդիման* նկատի: - 180. Երրորդ երկին՝ կատարեալ տեսութիւն իմացականին. որ *դէմ յանդիման* տեսանէին զաստուած. որպէս մովսէս և դաւիթ: - 183. Նոյնպէս և սեղան խնկոց և երեսացն ցուցանէ զհոգիս սրբոց ելեալ ի մարմնոց և մտեալ *դէմ յանդիման* երեսացն աստուծոյ: - 346. Երկրորդ՝ զի *դէմ յանդիման* ետես զտէր և նշան լուսոյն մնաց

ի տեսութիւնն: - 352. Եւ ապա՛ պայծառանայ տեսութիւն մեր *դէմ յանդիման* տեսութեանն աստուծոյ: - 353. Այլ և միշտ և անփոփոխ. և անմիջաբար *դեմ յանդիման* քահանայագործութիւն է անդ ըստ իմանալեացն օրինի: - 355. Եւ օրհնութիւն, զի յօրհնել բերանոյ նորա՝ յառաջ եկն առ որ բերան ի բերան խօսեցաւ աստուած *դէմ յանդիման* և ո՛չ առակօք: - 407. Ասեմք եթէ՝ խափանի հաւատն ի հանդերձեալն վասն *դէմ յանդիման* տեսութեանն: - 507. Այլ արդ՝ մեռեալքն ո՛չ են ի *դէմ յանդիման* տեսութեան. վասն որոյ պիտո՛յ էր նոցա հաւատ: - 507. Եւ արդարութիւնն *դէմ յանդիման* որ ուղղութեամբ դատէ՝ դուռն է արևմտեան: - 614. Երկրորդ՝ զի պատարագն է *դէմ յանդիման* լինի քրիստոսի. և ո՛չ եմք կարօտ բարեխօսի: - 634. Նշանակէ՛ զհանդերձեալն որ *դէմ յանդիման* տեսանելոց եմք զնա: - 646. Տասներորդ՝ յապաղեաց զայն, զի փափագն առաւելասցի. աստ հաւատով և յուսով ակն ունել. և ապա՛ *դէմ յանդիման* երևիլ: - 663. իսկ միջակ արդարքն որ են ի կայանս հոգւոցն՝ և զտեսանելն պայծառապէս ընկալցին ի յարութեանն *դէմ յանդիման* որպէս և էն. - 697-698. ...զի զաստուած *դէմ յանդիման* տեսանէ և զաստուածայինսն իմանայ: - 722. Նա՛խ՝ զի ի վերին գաւառս ուստի էին դևք՝ ո՛չ գոյ հաւատ. այլ *դէմ յանդիման* տեսութիւն: - 784

**ԴԷՄԱՍ** - Աւազակն որ յաջմէն խաչեցաւ՝ *դեմաս* էր անունն. և որ յահեկէն՝ կոստաս: - 495

**ԴԷՇ** - Գլուխն մեծ, ցուցանէ *զդէշն*: - 246. Մեծ ականջն *դէ՛շ* է և շատախօս: - 246

**ԴԷՈՍԿՈՐՈՍ** - ...և զքէողորիտոս եղին գլուխ ժողովոյն վասն մարդահաճութեան թագուհւոյն և թագաւորին. և *զդէոսկորոս* հայրապետն աղէքսանդրու, և զպետրոս անտիոքու, և զտիմոթէոս և զանատօլ, և զայլս բազումս խոտեցին. և վկայեցին նոքա ճշմարտութեան: - 543

**ԴԷՊ +** Երրորդ՝ պէտք են իմաստութեանց. զի առակ օրինակի առնումք զնոսա ի *դէպ* ժամու: - 212. Թէ կամարածևն *դէպ* ի քունն է, նշանակէ զհեզն: - 246. Այլ ի *դէ՛պ* է զի նախանձախնդի՛ր է աստուծոյ ընդդէմ տանն կայենի: - 290. Երկրորդ, *դէպ* յարևելս, յանուն սրբոյ Երրորդութեանն զի ցուցցի թէ վասն որո՞յ է: - 366. Եւ ո՛չ է ի *դէպ* թէ հոգին ըստ ինքեան վճարէ զպարտս մարմնոյն. ապա ո՛չ է անդ քաւարան: - 699. Զհոյ գիրն ա՛ռ ի բաց, աւատ ասի. ամենայնի *դէպ* ասեն թէ աւատ կայ: - 769

**ԴԷՏ +** Երկրորդ՝ զի *դէտ* եղև յոր համբերութեան և տէր մեր կատարման...: – 327. Այլ և եպիսկոպոսն վերատեսուչ և *դէտ* կոչի: - 534

**ԴԷՏՈՒՂԱՑԻ** - Եւ այս են ** hբ** Լեզուքքն. ...*Դէտուղացիք*: - 298

**ԴԺԳՈՅԱՆՔ** - Տրտունջն *դժգոհանքն* է. և բամբասանքն բասիր բանք զայլմէ՛: - 381

**ԴԺԿԱՄԱԿ +** Զի հասարակա՛ց է ամենայն մարդոյ կատարելոց և անկատարից, զի ի յանդիմանութիւն յանդիմանելեացն առհասարակ *դժկամա՛կ* երևի ի սկիզբն. թէպէտ ընտրողութեամբ լաւին ընդունին զխրատն: - 774. Այսպէս յընդդիմակէն տե՛ս և զայս. զի թէպէտ հասարակա՛ց է մարդոյ *դժկամակ* գոլ խրատու, այլ ո՛չ է բնութեամբ իր: - 774. Եւ այսպէս ապա չեն առհասարակ *դժկամակք:* - 774. Վասն որոյ առհասարակ *դժկամակ* թուի. մինչ ընտրեսցեն ի միմեանց. զի ինքեանց գիտակքն իմաստունք են: - 774. Յասարա՛կ է և բնութեան իր, զի ամենայն ինչ նախնի մարդոյն բնութեամբ է ի մեզ և հասարակ իր. և առ յանդիմանութիւն *դժկամակ* երևեցան նախնիքն մեր. ուստի պատճառեցին զմիմեանս: - 774. Դարձեալ՝ ծածկութիւն յանցանաց՝ է՛ բնականապէս մեզ ի տերևոյ անտի. իսկ յանդիմանութիւն է ծածկելոց յայտ արարողութիւն. վասն որոյ ամենքեան *դժկամակ* երևին: - 774

**ԴԺԿԱՄԱԿ ԼԻՆԻՄ +** Վասն որոյ յանդիմանեալք առհասարակ *դժկամակ լինին*: - 774

**ԴԺՆԴԱԿ +** Ապա յա՛յտ է ի գործոյն՝ թէ *դժնդա՛կ* է ապականութիւն քան զմահ: - 498

**ԴԺՆԴԱԿՈՒԹԻՒՆ +** զի նուազեսցին *դժնդակութիւնք* և պատրանք մարդկան և սատանայի: - 709

**ԴԺՆԻԿ +** Եւ զորօրինակ յաշնայնոյ *զդժնիկն* խլեմք և զվարդենին տնկեմք, - 714. ի գարունն ո՛չ թէ *դժնիկն* խլեալ բուսանի, այլ տնկեալ վարդենին. եթէ արմատն ոչ մնայ *դժնկին*: - 714

**ԴԺՈԽԱՅԻՆ +** Եւ ի գոչել տեառն մերոյ ի վերայ խաչին՝ սարսեցին *դժոխայինքն* ահաբեկեալ ի կենաց: - 316. Երրորդ, հոգւովն տիրեաց *դժոխայնոցն*. կապեաց զհզօրն. և արձակեաց զկապեալ հոգիսն: - 711. Իսկ *դժոխայինքն* թէ և զղջան կամ խոստովանին, արտաքոյ սոցա՛ է. վասն որոյ ո՛չ հանդիպին թողութեան...: - 780

**ԴԺՈԽՔ +** Իններորդ՝ աւելորդք էին *դժոխք* և արքայութիւն. որք տեղիք են բարեաց և չարաց: - 20. Ներգործութիւն՝ աւերելն *զդժոխս*: - 86. Իսկ աստ նման միմեանց՝ և բոլորին կոչի քրիստոս. ըստ որում ասի՝ քրիստոս էջ յերկնից. որ է բանն. և քրիստոս եղաւ ի գերեզմանի. որ միայն մարմինն է աստուածութեամբն. և քրիստոս էջ ի *դժոխս*. որ միայն հոգին էր աստուածութեամբն: - 88. Վասն որոյ էջ ի *դժոխս*՝ և կորզեաց զհոգիսն ի բերանոյ գազանին: - 128. Խորութիւն որ մինչև յերկիր և *դժոխս* էջ: - 129.

Ա՛րդ՝ տեղական անկումն դիւին եղև կամ ի *դժոխս*՝ կամ ի յօդս աղջամղջին որ է՛ միջին կայարան օդոյն: - 146. Այլ մեղացն պատշաճի ստորին տեղիք որ է *դժոխքն*: - 147. Զի ի կատարածի աշխարհի յորժամ դադարի գործ դիւացն՝ ամենեքեան միահաղոյն փակեսցին ի *դժոխս*: - 147. Իսկ դևք զանհաստատսն մտօք՝ ի ստորևս քարշեն և յերկիր կործանեն զերկրաւորս խորհելով. և ընդ ինքեան ի յատակս *դժոխոց* մերժեն: - 152. Երրորդ՝ գլուխ վիշապին՝ է մեղքն, և տուտն մահ և *դժոխք*: - 152. Նշանակէ զհետևեալսն ի մահ և ի *դժոխս* քարշել և արկանել: - 152. Եւ վասն երկրորդին ինքն տէրն ասէ՝ կապեալ զհզօրն և զտուն նորա աւար հարեալ որ է՛ *դժոխք*...: - 153. Զի յետ քրիստոսի դադարեաց սատանայ զհոգիսն ի *դժոխս* տանելոյ որպէս ասէ սուրբն եպիփան: - 153. Երկիր որով մարդ սատանայ եղանի, է՛ տանջանք *դժոխոցն*: - 210. Եւ զի պարունակէ՛ յինքն *զդժոխս*: - 211. Դարձեալ սիրեցաւ յաստուծոյ, զի առաջին մարտիրոս սա՛ եղև. թէպէտ թոյլ ետ իջանել ի *դժոխս*, զի ի պատճառս նորա խնդրեսցին այլքն. որպէս ի պատճառս ղովտայ զերծան սոդոմայեցիքն աբրահամաւ: - 287. Եւ դարձեալ՝ որքան մերձիմք կատարածի, այնքան մերձենամք ի ցաւս *դժոխոցն*. որպէս յերիկունն սակաւ սակաւ առաւելու խաւարն և ցուրտ: - 293. Եւ քրիստոս մարմնով ի գերեզման և հոգւով ի *դժոխս* եմուտ և եբարձ զմահ և զապականութիւն: - 313. Եւ *դժոխք* ո՛չ յաղթեաց տեառն մերոյ. այլ զերծաւ ի նմանէ բոլոր հաւատացելովքն: - 313. Եւ տէր մեր լոյս ծագեաց ի բանտ *դժոխոցն*: - 313. Նոյնպէս և քրիստոս եկն առ եղբարս իւր որ էին որդիք դաւթի և աբրահամու և առաջնորդք ժողովրդեանն. և յուդա վաճառեց զնա. և տէր եղև կենդանեաց և մեռելոց և կերակրիչ. զի ազատեաց զհոգիսն ի սովոյ *դժոխոցն*: - 313. Նոյնպէս և քրիստոս զզէն և զզօրութիւն սատանայի եբարձ որ էր մեղքն և մահ *դժոխոցն*: - 314. Նախ՝ սատանայ և անհաւատք աստուածութեան նորա. և մեղք և *դժոխք* հոգւոյ են թշնամիք. մահ և ապականութիւն մարմնոյն: - 316. Ո՛չ արար մեղս, և *զդժոխս* աւերեաց: - 317. Եւ փրկիչն միա՛յն էջ ի *դժոխս*, և ազատեաց զամենայն հոգիսն ի հրահալոց տանջանացն սատանայի: - 329. Յորում աւուր կիրակէին ի մէջ գիշերի ընդ առաւօտս յարեաւ տէր ի գերեզմանէն, ազատելով զհոգիսն ի *դժոխոց*: - 337. Եւ խաչանիշ գաւազանաւն ընկղմեաց զիմանալին փարաւոն յանդունդս *դժոխոց*: - 337. Եւ ծիթենիքն՝ կրկին բարութիւնք խաչին. որ զարքայութիւնն եբաց և *զդժոխս* աւերեաց: - 347. Որ իսկապէս մեզ վայել է քրիստոս եկեալ և *դժոխք* աւերեալ և արքայութիւնն բացեալ: - 358-359. ...յայնժամ քակէ՛ զտունն մեր որ է՛ հոգի և մարմին. և արտաքոյ քաղաքին յանսուրբ տեղիս ընկենու որ է՛ *դժոխքն* արտաքոյ արքայութեանն, և անսուրբ տեղի մեղաց և մեղաւորաց. և անդ արտաքսէ զմեղաւորսն: - 368. Յոգին էջ ի *դժոխս* և ազատեաց զորս անդ: - 368. Երրորդ՝ զի հոգիքն ի *դժոխքն* չէ՛ մոռացեալ ի նմանէ: - 371. Իսկ դադան կենդանի էջ ի *դժոխս*՝ ո՛չ սրբեցաւ. և ախտիւք իւր անսուրբ ընկղմեցաւ: - 382. Այլք ասեն վասն դադանեանցն թէ՝ հոգիք նոցա մարմնով ի տանջանս կային. ուր ընկեղմեցան մինչև ցաւարումն *դժոխոց*. ընդ որս և զնոսա ազատեաց քրիստոս իջանելովն ի *դժոխս*: - 382. Այլ այնո՛ւ էր առաւել, զի քրիստոս զհոգիս ազատեաց ի *դժոխոց*. և աստուած էր և մարդ եղև և խաչեցաւ. որ մեծ է քան զամենայնին: - 411. Կործանեաց զերիքով ի նշանակ *դժոխոցն*: - 414. Եւ կէս գետոյն բաժանեալ և մտեալ ի ծովն աղի. նշանակ կորստեան մեղաւորաց և անհաւատից ի յատակս *դժոխոց*: - 414-415. Եւ տէր մեր զառաքեալս ընդ ծագս. որք համբաւեցին մեզ զյաղթութիւնն սատանայի և *դժոխոց*: - 417. Եւ տէր մեր աւերեաց զամուրս *դժոխոց* զմահ և զմեղք, և ապա՛ յերկինս հանեալ և անմահացոյց: - 418. Եւ որ շինէ *զդժոխս* հոգւով և մարմնով. նա՛ և անդրանիկ խորհրդով և մարմնոյ գործով: - 418. Զի սկիզբն մեղաց՝ հիմն է *դժոխոց*. և կատարումն՝ դուռն. և յամելն՝ փակ: - 418. Եւ ի ժամ խաչին վէմք պատառեալ. և «ետ զձայնն ի կարկուտ և ի կայծակունս հրոյ» իջանելով ի *դժոխս*: - 419. Եւ տէր մեր նախ կապեաց զհզօրն ի խաչին և զտուն նորա աւերեաց որ էր ամրոց *դժոխոցն*: - 419. Եւ տէր մեր յաշխարհ էջ և ի *դժոխս*: - 423. Եւ տէրն ի մէջ գիշերի զդրունս և զնիգս *դժոխոց* խորտակեալ յարեաւ ի գերեզմանէն. և զհոգիս մարդկան էհան յերկինս: - 423. Այլ և զապականութիւն և *զդժոխս*. մարմնով և հոգւով կործանէր զամուրն սատանայի: - 424. երիս զօրութեամբ ի վերայ խաչին. որ է՛ ծայնիւն և մարմնովն և հոգւովն որ էջ ի *դժոխս*. կամ գ գոյացութեամբ. այսինքն աստուածութեանն և հոգւոյն և մարմնոյն: - 427. Քսանևմի, հարին մինչև ի դրունս գեթայ. և հաւատացեալք մինչ ի դրունս *դժոխոց*. և եղեն ի տեսիլ ամենայն մսեղեաց: - 436. Դաւիթ պաշարեցաւ յայրին. և տէրն մեր ի *դժոխս* և քակեաց զնա՛: - 437. ...և տէրն մարտեաւ ընդ բելիարայ և յաղթեաց մահու. և քակեաց *զդոժխս*. էառ աւար զգերեալսն և էհան յարքայութիւնն երկնից. տալով նոցա զանթառամ պսակն: - 438. Եւ դարձեալ ի տիպ քրիստոսի որ ի գիշերի եհար զսատանայ և ազատեաց զհոգիսն ի *դժոխոցն*: - 446. Քսանևը, Վասն *դժոխոցն*: - 455. Եւ ո՞ւր է *դժոխքն*: - 455. Քանի՞ են *դժոխք* զոր աւերեաց առհասարակ և ազատեաց զհոգիսն: - 455. Եւ այսպիսի ողորմութիւնս է ի յերկինս և ի

*դժոխս*: - 459. Զգլուխն ի յորդանան ջախջախեաց, և զտուտն ի գերեզմանն և ի *դժոխս*: - 488-489. Եւ ա՛յլ առաքինութեամբք կոխեալ հատանեմք զխայթոցն որ է՛ ներգործական մեղքն և մահ հոգւոց և *դժոխք*: - 489. Չորրորդ դարձեալ` դ թև խաչին նշանակէ զչորս բարերարութիւնս քրիստոսի. զի վերին մասն ցուցանէ զբացումն արքայութեանն երկնից. ներքինն զաւերումն *դժոխոց*. աջն զբաշխումն շնորհաց. ահեակն զթողութիւն մեղաց: - 493. Եւ ոմանք ասեն թէ` յերկնաւոր դրախտն եմուտ հոգւովն մինչ ի կիրակէ մէջ գիշերին. և ի նոյն ժամն էջ ի *դժոխս* և ազատեալ զհոգիսն յարեաւ ի գերեզմանէն: - 495. Զի որ քան ամ ի յերկրի քարոզեաց, նոյն քան ժամ ի *դժոխս* առ հոգիսն: - 495. Վասն է՞ր հոգւովն էջ ի *դժոխս* տէրն մեր քրիստոս: - 503. ...և մեղօք ծանրացեալ էջ ի ներքին կէտս *դժոխոցն*, և այլ ո՛չ կարէր բարձրանալ. մինչ ի վերին կիտէն բանն աստուած էջ ի ներքին կէտն. և ապա ել ադամ ի վերին կէտն երկնից: - 503. Նոյնպէս և հոգւոցն որ ի *դժոխս* լոյս ծագեաց հոգւով և քարոզեաց զփրկութիւն: - 503. Յայնժամ փախուցեալ սատանայ իբր զապստամբ ծառայ. և մտեալ յորջն *դժոխոց* կարծէր ամրանալ անդ և ունել զհոգիսն: - 503. Վասն որոյ զնոյնս գործեաց ի *դժոխս*: - 503. Ո՞ւր էր *դժոխքն* որ աւերեցաւ: - 504. Ի գիրս բենետիքտոսի հարցեալ եղև թէ ո՞ւր են *դժոխքն*. և տուաւ պատասխանի թէ` յանկեան և յեզր ծովուն ի ներքոյ երկրի ի խաւարչուտ վայրս: - 504. Եւ դարձեալ` մե՛ղքն ծանրացուցանէր և փակէր ի *դժոխս*: - 504. Ապա վասն է՞ր յէմ ասեն *զդժոխքն* թէ է՛ այր դիւահոտ և ծայն աղաղակի և չարչարանք և այրեցումն չարաչար դիւաց լսելի լինի: - 504. Դուռն ասեն զայն *դժոխոց*. և ամենայն ինչ հնարաւո՛ր է աստուծոյ: - 504. Ասացեր թէ *դժոխքն* աւերեալ է յաւիտեան. այժմ այլ *դժոխք* ո՞չ է: - 504. *Դժոխքն* այն յորում նախ քան զքրիստոս հոգիսն արգելոյր սատանայ` աւերեցաւ յաւիտեան: - 504. Այլ հուրն յաւիտենից` է՛ այժմ *դժոխք* սատանայի և մեղաւորաց: - 504. Զի որպէս յեսու աւերեաց զերիքով և անէծ զի մի՛ շինեսցի. նոյնպէս և *զդժոխքն* աւերեաց քրիստոս և անէծ զշինօղսն չար գործօք...: – 504. Քանի՞ են *դժոխք*: - 504. Եւ որք **դ** ասեն` զներքին *դժոխքն* մահու չափ մեղաւորացն ասեն. և զքաւարանն ներելի մեղաւորաց. և զլիմպոսն արդարոց. և *զդժոխս* ոչ մկրտելոցն: - 504. Այլ մի՛ է *դժոխքն*. որպէս մի է արքայութիւնն: - 504. Նոյնպէս ի մի *դժոխքն* տեղիք բազումք են և տանջանք: - 505. Նոյնպէս մի հուր *դժոխոցն* զանազանապէս տանջէ զմեղաւորսն: - 505. Վասն է՞ր ասի *դժոխք* բազմաւորական. և ոչ *դժոխ* միաւորական: - 505. *Դժոխ*` զդժուար զնեղ և զանձուկն նշանակէ. և կոչի բազմաւոր, Նախ վասն բազում կրիցն. ուր լալ աչացն է և կրճել ատամանց և խաւար ներքին և արտաքին և այլն: - 505. Ա՛րդ` թէ զոյ ներքին, գո՛յ և վերին և միջին *դժոխք*: - 505. ...զի վերնոյն ներքին է, և ներքնոյն վերին. ապա սո՛ւտ է ասելդ թէ գոյ ներքին և վերին և միջին *դժոխք*: - 505. Դարձեալ ասեմք, ներքին *դժոխք* է հոգւոցն. և վերին` գերեզման մարմնոցն. և նա կոչի *դժոխք* ի սուրբ գիրս. որպէս ասաց դաւիթ «զսիմէի արեամբ հանդերձ ի *դժոխս* իջո՛» որ է՛ գերեզմանն: - 505. Ուստի յա՛յտ է թէ մի է *դժոխք* հոգւոցն: - 505. Դարձեալ` եթէ հարկիւ պահանջես ըստ մտաց քոց գ *դժոխք*: - 505. Ասեմք ներքին *դժոխք* զհոգւոցն. և միջին զգերեզմանս. և վերին զմեղքն որ է՛ ի հոգիս: - 505. Զի և նա՛ չարչարէ՛ զհոգիս և է կենդանւոյն ի *դժոխս* ընդ մեզ շրջեալ: - 505. Դարձեալ` առ հասարակ կարծիք, կոչի ներքին *դժոխք* յատակ *դժոխոցն*. որպէս ասէ սողոմոն «մեղր կաթի ի շրթանց պոռնկի. և կատարածն հայի յատակս *դժոխոց»:* – 505. Զայս դաւիթ ներքին *դժոխք* անուանէ: - 505. Իսկ միջին *դժոխք* որ կոչի բանտ *դժոխոց*` է՛ միջակ մեղաւորաց. որք ունին հաւատ և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալք. կամ գործք և ո՛չ հաւատ. որպէս թերահաւատք և անհաւատք: - 505. Իսկ վերջին *դժոխք* որ կոչի անջրդի գուբ, նոցա՛ է որք ո՛չ ունին չար և ո՛չ բարի. որպէս մանկունք անմկրտեալք. ո՛չ տանջին զի չեն մեղանչեալ. և ո՛չ հանգչին զի չեն արդարացեալ. այլ վասն սկզբնականին մնան յանջրդի գուբն խաւարին: - 505. Քրիստոս ի յո՞ր *դժոխք* էջ: - 505. Ոմանք ասեն թէ ի չորրորդ *դժոխքն* էջ ուր էին արդարոց հոգիքն արտաքոյ ասացեալ երիցս, և զնա միայն աւերեաց. և զարդարսն միայն եհան. և զայլսն եթող անդ: - 505. Նախ ասեն թէ ի չորրորդ *դժոխքն* գնաց որ է՛ վերին և ո՛չ ներքին: - 505-506. Առ առաջինն ասեմք, թէ քրիստոս ո՛չ ի վերին` այլ ի ներքին *դժոխքն* էջ: - 506. Յինգերորդ` ադամ առաջին յանցաւորն էր ի ներքին *դժոխս*. զի ա՛յն է մահու մեռանիլն. այլ արդ եթէ քրիստոս ո՛չ գնաց ի ներքին *դժոխքն*, ո՛չ ազատեաց զադամ: - 506. Վեցերորդ` ամուրն սատանայի է ներքին *դժոխքն*. ուր են դրունք պղնձիք և նիգք երկաթիք. որ է՛ մեղքն մեծամեծք և յուսահատութիւնք. և ա՛յն էր ամրոց նորա: - 506. Ա՛րդ` եթէ քրիստոս ի ներքին *դժոխքն* ոչ էջ, ո՛չ է կապեալ հզօրն որպէս աւետարանն ասէ. և ոչ զդրունսն խորտակեալ. և ո՛չ զգերիսն աւար առեալ որպէս դաւիթ ասէ: - 506. Նախ ասեմք եթէ` առաջին *դժոխք* հոգւոցն ո՛չ էր վասն ներգործական մեղացն հասարակ. այլ վասն պարտուցն ադամայ: - 506. Ուստի յա՛յտ է զի արդարք և մեղաւորք ի *դժոխս* էին: - 506. Այլ ա՛րդ` եթէ *դժոխքն* այն ոչ է աւերեալ. ապա քրիստոս ի յառաջին պարտուցն ո՛չ է ազատեալ զմեզ: - 506. Երկրորդ` զի *դժոխքն* այն

էր բուռն զօրութիւնն սատանայի. և քրիստոս կապեաց զիզօրն ըստ աւետարանին. ապա ուրեմն քրիստոս աւերեաց *գդժոխս*: - 506. Երրորդ՝ մեղքն էր *դժոխք* և տանջանք մեղաւորաց. և քրիստոս եբարձ զմեղս. ապա աւերեա՛ց *գդժոխս*: - 506. Հինգերորդ՝ մահու մահն էր *դժոխքն*. զի մահ մարմնոյն՝ ապականութիւնն է, և մահ հոգւոյն՝ *դժոխքն*. ըստ որում վճիռ հատաւ ադամայ մահու մեռանիլ: - 506. Այլ ա՛րդ՝ տէրն մահուամբ զմահ մեռոյց որ է՛ *դժոխքն* այժմ. և յարութեամբն եբարձ զապականութիւն մարմնոյ ի հանդերձեալն. ապա ուրեմն աւերեաց *գդժոխս*: - 506. Վեցերորդ՝ թէ զմասն *դժոխոց* աւերեաց, և զմասն մահու եբարձ, և զմասն անիծից, և զմասն պարտուց և զայլսն: - 506. Նախ ասեմք, եթէ *դժոխքն* է պատիժ մեղաց. և կրկին է մեղք. այսինքն սկզբնական և ներգործական: - 507. Եւ պատիժ սկզբնականին էր *դժոխքն* առաջին. և ներգործելոց՝ վերջինն. «որում հաստատեաց օր մի՝ յորում դատելո՛ց է զամենայն». որպէս ասէ պօղոս ի պրակս առաքելոցն: - 507. Ապա ուրեմն առ հասարակ ազատեցան որք էին ի *դժոխս* առաջին: - 507. Իններորդ՝ յա՛յտ է յօրինակէն. զի եգիպտոս հալոց երկաթի կոչի. նշանակէ՛ *գդժոխքն* որ տանջէր զհոգիսն: - 507. Եւ թէ ոք ասիցէ՝ ի յերկրի որք հաւատացին փրկեցան, և անհաւատքն ո՛չ նոյնպէս և ի *դժոխս*: - 507. Ասեմք եթէ՝ ոչ ինչ գոյր նոցա արգելք հաւատոյ յորժամ լոյս ծագեաց քրիստոս ի *դժոխս*: - 508. Եւ դարձեալ որ ուղիղն է, որպէս մարմնով տեսին ի յերկրի, նոյնպէս և հոգւով ի *դժոխս* պարտ էր հոգւոցն հաւատալ ի հոգին քրիստոսի և ազատիլ: - 507-508. Իսկ հոգիքն ի *դժոխս* յորժամ տեսին զքրիստոս, այն էր ժամանակ փրկութեան նոցա և ընդունելոյ զողորմութիւն. յաղագս որոյ հաւատովք արդարացան նոքա միայն ի նոյն ժամն: - 508. Որք հաւատացին՝ յաւիտենից փրկեցան. և որք ոչ՝ ժամանակեայ. վասն իջման որդւոյն աստուծոյ ի *դժոխս*: - 508. Եւ դարձեալ՝ դարձցին մեղաւորք անդրէն ի *դժոխս* թէ ի նոյն տեղի ըստ ոմանց, կամ յայլ տեղի տանջանաց ըռ գործոց հատուցման: - 508. Այսքան վասն *դժոխոց*: - 508. **Եւ որպէս յինն ժամու ուրբաթուն լոյս ծագեաց հոգւոցն ի *դժոխս*, նոյնպէս և յինն ժամու շաբաթուն լոյս ծագէ զճառագայթս իւր արեգակն արդարութեան քրիստոս. մինչ յառաւօտուն բոլորապէս տեսանի ինքն յարուցեալ ի մեռելոց:** - 509. Վեցերորդ՝ ի մէջ գիշերի հրեշտակն եհար զեգիպտոս. և մովսէս եհան զորդիսն իէլի. որ էր օրինակ աւերման *դժոխոցն* և ազատութեան հոգւոց: - 512. Եւ յորում ժամու ել մովսէս յեգիպտոսէ և եհան զժողովուրդն, ի նոյն ժամն յարեաւ քրիստոս ի մեռելոց և եհան ազատեաց զհոգիսն ի հրահալոց չարութենէ *դժոխոցն* և ի բռնութեանց իմանալի փարաւոնին: - 512. Յորում աւուր կիրակէի ի մէջ գիշերի ընդ առաւօտն յարեաւ տէրն ի գերեզմանէն. հանելով զհոգիսն յանապատն երկնից. և խաչանիշ գաւազանաւն ընկղմեցաւ փարաւօն յանդունդս *դժոխոց*: - 513. Ութերորդ՝ արին սամփսոն որ օրինա՛կ էր ամենազօր տեառն մերոյ, էջ ի գազա ի տիպ աշխարհի. և օթեցաւ ի պոռնկատունն յօրինակ *դժոխոցն*. յորում պաշարեցին զքաղաքն այլազգիքն: - 513. Որ նշանակէ՛ զյարութիւնն քրիստոսի ի մէջ գիշերի զդրունս *դժոխոցն* խորտակեալ. և զհոգիսն հանեալ ի լեառն երկնային: - 513. Իններորդ, գեթէօն՝ այն որ զցօղն ետես ի վերայ գեղման, զհօր իւրոյ զեզն պարարակ հրամանաւ հրեշտակին ի մէջ գիշերին պատարագեալ. և զանտառն և զսեղանն բահաղու կործանեալ և զերծեալ ի ձեռաց նոցա. որ էր օրինակ փրկչին. զի նա՛ է եզն պարարակ պատարագեալ. և ի մէջ գիշերի զբագինսն *դժոխոց* կործանեալ և յարուցեալ և ապրեալ ի մահու: - 513. Ա՛րդ՝ ներքին այրն նշանակէ՛ *գդժոխս*. և արտաքինն զգերեզմանն. և սաւուղն զսատանայ որ ըմբռնեալ էր զմարդիկ: - 513. Այսպէս և տէր մեր էջ առ ննջեցեալսն ի գերեզմանս և ի *դժոխս*: - 514. ...և տէր մեր յետ յերից օրինաց՝ այսինքն բնական բանական և գրաւական՝ երևեալ ի գիշեր կենցաղոյս և իջեալ ի *դժոխս* աւերելով զնա դարձոյց զերկոսին ժողովուրդս իւր...: – 514. ...և ո՛չ մի հոգի եթող ի *դժոխս*. այլ զամենայն ազատեաց յարուցեալ ի մեռելոց. և բաշխեաց պարգևս որդւոց մարդկան: - 514. Այլ որ ուղղապէս հանդիպիմք՝ ասեմք թէ **լ** ժամ մարմինն եկաց ի գերեզմանի. և հոգին **լգ** ժամ և կէս յամեաց ի *դժոխս*: - 515. Զի յինն ժամու ուրբաթուն արձակեաց զհոգին և էջ ի *դժոխս*. և ապա՛ ընդ երեկոյս ի մուտն արևու մարմինն եմուտ ի գերեզման: - 516. Ա՛րդ՝ շաբաթի գիշերն և տիւն **իդ** ժամ. և **զ** ժամ ի կիրակէէն մինչ ի մէջ գիշերն. որ լինի **լ** ժամ. իսկ հոգին **դ** ժամ և կէս նախ իջեալ ի *դժոխս* որ լինի **լգ** ժամ և կէս: - 516. Եւ ա՛յն է խորհուրդն, զի որ քան ամ մարմնով մարմնաւորացն քարոզեաց. նոյնքան ժամս հոգւով հոգւոցն քարոզեաց. այսինքն **լգ** ամ և կէս ի յերկրի. **լգ** ժամ և կէս ի *դժոխս*...: – 516. Նա՛խ՝ ոմանք ասեն թէ մարդկօրէն կամէր իմանալ զնա և հարցանել վասն խաչին և *դժոխոց* և յարութեանն. իսկ այս կատարեալ մտաց պէտք էին և շա՛տ ժամու: - 517. Իններորդ, ասէ «մի՛ մերձենար», զի մարմինն այն պտուղ էր կանուխ *դժոխոցն*. և ինքն տէր մեր իբրև քահանայ նոր յամենայն ձեռաց պահէր զգուշութեամբ, զի պահեսցէ զնա ի ձեռինն որ կարօ՛ղ է ընդունել զայնպիսի պատարագն: - 517-518. Հինգերորդ՝ համբարձաւ զուարճութեամբ. որ վերաբերի առ նոսա որք փրկեցան ի *դժոխոցն* և ընդ նմա ելին յերկինս.

զի **բ** բանակօք ել յերկինս այսինքն սպասաւոր հրեշտակք և մարդկան փրկելովք: - 520. ...զհոգիս մարդկան ամենակարող զօրութեամբն ազատեալ ի *դժոխոց* եհան յերկինս: - 520. Եւ **լգ** ժամ ի *դժոխս,* զի փրկեսցէ զհոգիսն: - 520. Չորրորդն՝ որդին աստուծոյ իջեալ ի *դժոխս* ըստ հոգւոյն: - 573. Զզաւակս այլազգեաց մկրտել պարտ է. զի թէ մեռանի ազատեալ է ի սկզբնական մեղաց և ի պատժոց *դժոխոց*: - 591. Կրկին է պատիժ մեղաց. այսինքն մահ մարմնոյն, և *դժոխք* հոգւոյն: - 592. Ութերորդ՝ խաղաղականն է յետ երեկոյին ժամուն առ հոգին սուրբ. յորում ժամու հոգին քրիստոսի էջ ի *դժոխս* և խաղաղացոյց զնոսա: - 622. Երեսունևը, Վասն հնձանաց. և *դժոխոց*. և ծխոյ. և անվախճան է հուրն. և անհանգիստ տանջանքն: - 661. ...զի անցեալ է ժամանակն ողորմութեան, և դատաւորն առ դուրս հասեալ՝ դնել ի տանջանս *դժոխոց*. որպէս աստ զմարմինն ի գերեզմանի: - 671. Տասներորդ, զի **գ** են տեղիք. այսինքն կայանք հոգւոցն և *դժոխք* և արքայութիւն. - 675. Եւ յետոյ զերծուցէ ի *դժոխոց* և պարգևեսցէ զարքայութիւնն երկնից ա՛մէն: - 675. Վասն է՞ր կոչի գերեզմանն *դժոխք*. - 679. ...զի *դժոխք* զդժուարն և զնեղն նշանակէ: - 679. Իսկ ներքին *դժոխք* զտանջանաց տեղիքն ասէ մարգարէն. - 679. զի մեղօք մեռանի հոգին ի *դժոխս*. որպէս և մարմինն. - 680. Եւ ի նոյն օրն ի գերեզման եմուտ և էջ ի *դժոխս* և քարոզեաց: - 684. Նախ քան զքրիստոս, առ հասարակ ի *դժոխս*. բայց յետ քրիստոսի, առհասարակ ի կայանս հոգւոց. և երրորդն ի կատարածի...: - 686. ...յորժամ բաժանին օդիքն և այծիք. որ է արքայութիւնն երկնից և *դժոխքն* յաւիտենից: - 686. Իսկ ազգն Ֆռանկաց ասեն զչարաց հոգիսն ի *դժոխս* իջեալ. և զբարեացն յերկինս ելեալ...: – 686. Եւ զբուն չարսն ի *դժոխս*. որք են անհաւատք, և չարք, և կռապաշտք...: – 687. Եւ սկիզբն անդ ժողովելոյ՝ ի յարձակելն քրիստոսի առ ժամանակեայ զհոգիսն անարժանից՝ անդ մնացին և անտի դարձցին մեղաւորք անրդէն ի *դժոխս* ըստ մարգարէին: - 688. Ապա ո՞րպէս են ի *դժոխս* հոգիք մեղաւորաց որպէս ասէ տեսիլն եթէ *«դժոխք* ետ զմեռեալս իւր»: - 690. *Դժոխքն* նշանակէ զդժուարին և զնեղ տեղիս որ է՛ խորանն ծախակողմեան. ուր մեղաւորքն կրկին ունին զտանջանս: - 690. Ուստի յա՛յտ է զի նախ քան զքրիստոս արդարք և մեղաւորք ի *դժոխս* էին: - 695. Ասեմք առ այս նախ՝ ապա դու զիա՞րդ ասես թէ երթայ ի *դժոխս*: - 695. ...զի վասն անտի քաւարանին աստ ո՛չ պահեն և ո՛չ աղօթեն. և անդ ի *դժոխս* մատնին: - 698. ...ապա ուրեմն *դժոխքն* է անտի պատիժ որ է յաւիտենական և անզերծանելի. և ո՛չ գոյ քաւարան: - 700. ...հետևի զի և արդարքն կարեն ելանել յարքայութենէն աստուծոյ և գնալ ի *դժոխքն*: - 700. Դատաւոր աստուած. և դահիճ հրեշտակք. և բանտ *դժոխքն*: - 704. Այլ և վասն *դժոխոց* ասացաւ ի վերոյ ի մարդեղութեան ճառն. ասի և յառաջիկայդ ի կատարածի: - 705. ...և յետ մահու զհոգիսն ի *դժոխս* տանջէր: - 705. ...և պատարագաւ խաչին հաշտեցոյց զհայր. և իջմամբ ի *դժոխս* կապեաց զհզօրն սատանայ և արձակեաց զկապեալ հոգիսն. - 705. Եւ իջմամբ ի *դժոխս* կապեաց զնա և արգելեաց յանդունդս: - 705. Երրորդ զի պարզի հալեալ մոմ. այսպէս սևութիւն և թանձրութիւն երկրի ի *դժոխս* ժողովին և մարմինք մարդկան յերեսս երկրի: - 728. Ի մէջ գիշերի. յորում ժամու հրեշտակն զեգիպտոս եհար, և տէրն *զդժոխս* աւերեաց. յայն ժամու զընտրեալս իւր յաշխարհէ ազատեսցէ: - 734. Եւ ոչ ի *դժոխս* ուր արդարք ոչ իջանեն: - 737. Զի ի վերոյ կացցէ դատաւորն, և ի ներքոյ *դժոխքն* բացեալ: - 738. Եւ շուրջ զինքեամբ բարի հրեշտակքն որ մղեն ի *դժոխս*: - 738. Երրորդ՝ կոչի հնձան *դժոխքն*. ուր ամբարիշտքն ժողովին և ճմլին...: - 748. Երկրորդ՝ տիւ է իմանալ զկեանս սրբոցն ի յերկինս. իսկ գիշեր զտանջանս գարշելեացն ի *դժոխս*: - 750. Ո՞ր քան են տանջանք *դժոխոցն*: - 751. Եւ սոքա համեմատին պատժոց *դժոխոցն*: - 751. Իսկ այլք ոմանք յատկապէս **թ** ասեն զտանջանք *դժոխոցն*: - 752. Իսկ վասն տեղեաց *դժոխոցն* ասացեալ է ի վեր անդր լ գլուխն, իր համարն: - 754. Կամ թէ ոստք փայտիս այսորիկ ասին եօթանքս այսոքիկ. այսինքն՝ քրիստոսի ծնունդն, մկրտութիւնն, չարչարանքն, ի *դժոխս* իջումն, յարութիւն, յերկինս համբարձումն, և հոգւոյն սրբոյ պարգևումն: - 755. Մի՛ է արքայութիւն, և մի ընդ դիմակ նորա *դժոխք*: - 758. Արդ՝ եթէ արքայութիւնն երկնից մի է, այլ փառքն **գ**. պա՛րտ է ապա զի լիցի և *դժոխքն* **գ**, որ է՛ սուտ: - 758. Ապա ուրեմն մի է արքայութիւն և մի *դժոխք*: - 758. Եւ նոքա որք բազում համբաւեն *դժոխս*, մի ասեն գոլ արքայութիւն. պատճառելով եթէ՝ բարին մի է և չարն բազում: - 758. Ապա ուրեմն մի է բարի արքայութիւնն. և մի *դժոխք* պակասութիւն նմին: - 758. Նմին նման և մեք յուսասցուք արժանաւորիլ տեսութեանն քրիստոսի. զի թէ և ի *դժոխս* իցեմք՝ ա՛յն է արքայութիւն մեր. և ո՛չ թէ յերկրի կամ յայլում տեղւոջ ըստ սրբոյն ոսկէբերանի: - 759. Եւ *դժոխքն* տեղիք դիւաց և մարդկան չարաց: - 760. Նմանապէս իմասցի և վասն մի *դժոխոցն* գոլ զանազան տանջանք և տանջանարանք: - 760. Հինգերորդ ի *դժոխոցն*: - 762. Եւ այնպիսի քաղցր է տեսութիւնն աստուծոյ, մինչ զի չարքն թէ կարէին՝ յօժարէին ի *դժոխս* կալ և զաստուած տեսանել. քան արտաքոյ տանջանաց լինիլ և զաստուած ո՛չ տեսանել: - 763. Հինգերորդ վասն *դժոխոցն* եռակի

հանդիպեսցի ընտրելոց ուրախութիւն: - 764. Նախ վասն այնորիկ՝ զի ի *դժոխոցն* զերծան: - 764. Երրորդ այնու՝ զի մեղքն որ յոյժ վտանգեաց զմարդիկ, եղիցի փակեալ ի *դժոխս* զկնի աւուրն դատաստանի. զի եղիցի ի *դժոխս* իբր ի տեղւոջ իւրում. զի ո՛չ կարասցէ մնալ. ո՛չ յերկինս և ո՛չ յերկրի. այլ իջանէ ի *դժոխս* ներքինս: - 764. ...մարմնով մեռելոցն անթիւ օճիրս ստախօսութեան գործէր. զանտի կենաց զյարութեան յուսոյ և զհատուցմանց ըստ գործոց՝ բառնալով. զերկիւղ *դժոխոց* և զսէր արքայութեան. և զամենայն ինչ որ նմանէ այսմ հոգևոր բարութեան: - 775. Զի բազում ուրէք վկայէ՛ գիրն աստուածաշունչ, զնախահայրն մեր ադամ ազատեալ ի *դժոխոցն*: - 775. Զի անապական մարմնով եղաւ ի գերեզմանի. բառնալով զապականութիւն նախնւոյն. և իջանելով ի *դժոխս*՝ եբարձ զպատիժ նորին: - 776. Երկրորդ, զի *դժոխքն* այն պատիժ բնութեանս էր և ո՛չ առանձին գործոց. զի հաստատեաց օր մի յորում դատելո՛ց է զամենայն ըստ պօղոսի: - 776. Իններորդ, զի բռնութիւն սատանայի էր կապեալ զնոսա. և տէր մեր կապեաց զնա ընդ խաչափայտին. որ նա ինքն էր դրունք *դժոխոց.* ապա ուրեմն արձակեցան անտի: - 777

**ԴԺՈՒԱՐ +** Դարձեալ, թէ է՛ հարկ՝ անիրաւք են և ինքեանք աստեղքն. զի ոմանց բարիս գրեն, և ոմանց չարիս. զոմանս մեծատունս և զոմանս աղքատս. հեշտ կեանս և *դժւարս*. երկարակեացս և սակաւակեացս. բազում անգամ անարժանիցն բարիս խոստանան, և արժանեացն չարիս: - 12. Ո՛չ երկանունն է և ո՛չ այլ ինչ. այլ իրինոս ասէ՛ զպատճառն և *դժուա՛ր* է հասկանալոյ: - 300. Դարձեալ՝ ի սուրբ գիրս *զդժուարն* և զծածուկն մի՛ քննէք: - 405. Եւ *դժուարն* որքան յայտնէ մեզ: - 406. Դժոխ՝ *զդժուար* զնեղ և զանձուկն նշանակէ. և կոչի բազմաւոր, Նախ վասն բազում կրիցն. ուր լալ աչացն է և կրճել ատամանց և խաւար ներքին և արտաքին և այլն: - 505. ...զի դժոխք *զդժուարն* և զնեղն նշանակէ: - 679. Եւ զի *դժւարաւ* խլին չարքն առանց վնասելոյ բարեաց, վասն որոյ թոյլ ետ մինչ ի ժամանակի հնձոցն: - 693

**ԴԺՈՒԱՐԱԹՈՂՈՒԹԻՒՆ -** *Դժուարաթողութեամբ*, որպէս մեղքն որ ընդ դէմ հոգւոյն սրբոյ: - 565

**ԴԺՈՒԱՐԱՀԱՅԵԱՑ +** Աչք *դժուարահայեաց*՝ ճշմարտախօ՛ս է: - 246

**ԴԺՈՒԱՐԱՀԱՍ +** Երրորդ՝ երեք է իմաստ գրոց. անհաս և *դժուարահաս* և դիւրահաս: - 406

**ԴԺՈՒԱՐԱՁԵՌՆ +** Վեցերորդ՝ եթէ է ամբոխումն ինչ ի մէջ նոցա, ոչինչ էին մեկուսի ի մէնջ. այլ *դժուարաձեռն* որպէս զմեզ և հակառակ: - 21

**ԴԺՈՒԱՐԱՅԱՂԹՈՒԹԻՒՆ -** *Դժուարայաղթութեամբ*. որպէս հպարտութիւնն: - 565

**ԴԺՈՒԱՐԱՇԱՐԺ +** Ութերորդ՝ զի ազատ և անձնիշխան կամօք ընտրեն զբարին և խոտեն զչարն. և դիւրասերտեալք ի բարին, և *դժուարաշարժք* ի չարն: - 137

**ԴԺՈՒԱՐԱՏԵՍ +** Զի թէ մարդն ունէր զբնութեամբ զէնս, որպէս թէ եղջիւր ի գլուխն. և սուր զատամունսն. ճիրանունք ի ձեռս. և սմբակ կամ կճղակ ոտիւք. և զայլսն, Նախ՝ զի գազանադէմ և *դժւարատես* լինէր ամենեցուն: - 217

**ԴԺՈՒԱՐԱՒ +** Դարձեալ՝ դիւրաւ անկանի, և *դժւարաւ* վերստին յառնէ: - 275. Նա՛խ՝ ի պընդակազմ մարմնոյն *դժուարաւ* լուծանին տարերքն: - 668

**ԴԺՈՒԱՐԻՄ +** Զինչ է յորժամ մարդ ի վեր նայի հեշտանայ աչքն. և յորժամ ի վայր՝ *դժուարի*: - 239. Զի աչաց լոյսն հուր է. և հուրն վերընթա՛ց է. վասն այն ի բնականսն նայելով հեշտանայ, և ի բռնութեամբն *դժուարի* և զարհուրի: - 239

*դու* հիւանդութեան *թոյ*. և յորժամ մանուկ լինիս՝ մերձ ես մանկութեանն. ի յալևորութեանն՝ ծերութեանն ես մերձ: - 37. Իսկ այսոքիկ պատահմունք են *բեզ*: - 37. Թէ ոչ՝ Զի թէ մերձ էիր *դու բեզ* որպէս ոք առ ոք, բաժանեցար ընդ երկու. և զիա՞րդ մի իցես: - 37. Իսկ թէ ոչ յայնժամն մերձ՝ և ո՛չ այժմ հուպ *բեզ*, ոչ ես իսկ և ո՛չ կաս: - 37. Ապա թէ ոչ՝ հա՛րկ է *բեզ* ասել ըստ բազում անուանցն և բազում բնութիւնս գոլ աստուծոյ: - 38. Երկրորդ՝ զի անծնելութիւն և ծնելութիւն ըստ *բո* ասելոյդ եթէ բնութիւն իցէ՝ հակառակութիւն եդեր յաստուածութիւնն: - 38. Պատասխանեմք թէ՝ կարի՛ յիմարութիւն է հարցումնդ. և զի գոյ հայր ըստ *բում* բանիդ ծնօղ որդւոյ. ապա ուրեմն ո՛չ կարէ ոչ լինիլ և ծնանիլ: - 38. Դարձեալ՝ ո՛չ կարէ ծնանիլ որդի զհայր՝ թէպէտ ունի զհօր բնութիւնն. որպէս *դու* ծնեալ ի հօրէն *բո*՝ ո՛չ կարես ծնանիլ զհայր *բո* և լինիլ հայր հօրն *բում*. թէպէտ ունիս յամենայնի զբնութիւն հօր *բոյ*: - 38. Իսկ *դուք* զի ուրանայք զհոգին հաւասար գոլ հօր և որդւոյ, և կրտսե՛ր ասէք քան զորդի: - 39. Եւ դարձեալ՝ ըստ *ձեզ* պարտ էր ասել. թէ՝ ես ի միասին հօր, և մասն հօր ի յիս: - 39. Որպէս ասեմք բարառնաբար, «ծով ետես և փախեաւ». զի՞ է *բեզ* ծով: - 41. Պատասխանեմք, ո՛վ յանդուգն մեկնիչ *դու*. ...զինչ վաղճան իցէ թագաւորութեանն նորա. ո՛վ ընկեցէ և յի՛նչ պատճառս. և ո՞չ լուար ի հրեշտակէն, «թագաւորութեան նորա վախճան մի՛ լիցի»: - 41-42. Այլ զայս երկբայիս յաղագս ոչ գիտելոյ *բոյ* թէ «մինչդ» ամենուրէք ո՛չ որոշէ ընդդէմ հանդերձելոյն. զի թէպէտ նշանակէ՛ զկէտն ուր մինչն է եղեալ, այլ զոր ա՛նդր է քան զնա՝ ո՛չ ուրանայ: - 42. Ըստ *բում* բանիդ աստ հօ՛ր տաս զաստուածութիւնն և բառնաս յորդւոյ. և ի մարգարէն՝ որդւոյ ասես զաստուածութիւնն և բառնաս ի հօրէ, ապա հա՛րկ է *բեզ* լինիլ անաստուած. զի միովն միւսոյն յաղթութիւն տաս: - 47. Եւ *դու* ընդէ՛ր ասես լինել ինձ ըստ մարդկան երկրորդաբար բարի. զի աստուածութեամբս եմ ընդ հօր ծայրագոյն բարի: - 47. Բե՛ր նախ տեսցուք ըստ *բո* կարծեացդ թէ արարա՞ծ է հոգին: - 52. Եւ աղճատանք լիցի *բեզ* ծնունդն ըստ մարկիոնի ութ աստուծոյն և ութ յաւիտենին: - 52. Ապա թէ ո՛չ՝ ստեցար *դու* ինքնին ի բանից *բոց*. զի հոգին անեղ է: - 53. Պատասխանեմք՝ Նախ՝ առ մակեդոնացիս որք զորդի խոստովանին աստուած՝ թէ ասացէ՛ք զպատճառ **բ** աստւածոց *ձեր*: - 54. Զի լիցի *բո* պատճառն ի կողմանէս մեր՝ պատասխանի *բեզ*: - 54. Ասեն դարձեալ թէ՝ և հեթանոսք մի աստուածս անուանեն զամենայն կուռս, այլ բազումք են. որպէս և մարդկութեանս մի ասի բնութիւն, այլ բազումք են մարդիկք. ապա և *դուք* բազմաստուածք էք: - 54. Ապա ուրեմն զի *դուք* **գ** ասէք՝ հայր և որդի և հոգի, ըստ թըւոյն և երեք բնութեան հաղորդին և ո՛չ միոյն: - 54. Իսկ յորժամ քակես՝ լինի մի և մի. քակեցաւ այժմ ի յառաջին բնութենէն ըստ *բեզ*՝ և ունի դեռևս զնոյն համարն: - 55. Որպէս ասէր առ աբրահամ, «այժմ ծանեայ թէ երկիւղա՛ծ ես *դու* յաստուծոյ». այսինքն այժմ ծանուցի մարդկան զերկիւղ *բո*: - 59. Առ չորրորդն եթէ՝ «յիմնէ անտի առնուցու». այսինքն յիմ սկզբնէն առնու և պատմէ *ձեզ*: - 61. Իսկ թէ՝ «իմս» այս՝ զբղխումն յորդւոյ ասէ, ապա և այլուր ըստ *բեզ* զհայր մարմնացեալ կարծես: - 61. Վեցերորդին պատասխանեմք, թէ ասիցես որդին անկենդան է յորմէ հոգին ո՛չ բղխէ. ապա՛ և ըստ *բեզ* հոգին անբան է զի ըզբանն ո՛չ ծնանի: - 61-62. Ո՛վ երկաբնակ՝ *դու* զո՞ր բնութիւն ի քրիստոս ասես մի տէր. զաստուծոյն՝ թէ զմարդոյն: - 68. Եթէ զաստուծոյն ասես, ցուցանես զբանն կարօտ գոլ փառաց. և հա՛րկ է հետևիլ *բեզ* արիոսի: - 69. Եւ զայս *դու* բաժանօղդ՝ յո՞ր դէմս ասես այսպէս ընկալեալ: - 70. Նմանապէս ասա՛ և զայս. զբնութեա՞մբն որդի ասես ընդ աջմէ մեծութեանն նստեալ, թէ որ շնորհօքն որդիացեալ ըստ *բեզ*: - 70. Տասներորդ՝ դերանուանքն որպէս ես. *դու*. նա՛. յատկապէս զմի անձն նշանակեն: - 73. Ա՛րդ՝ ընդդէմ *բումդ* խոհեմութեան ո՛րպէս իմանաս ի միում հասարակ բնութեան զբանն ծնեալ և զհոգին բղխեալ. իսկ հայր ոչ ծնեալ կամ բղխեալ. և անդրադարձեալ ևս: - 74. Եւ *դու* պետրոս՝ մարդ կենդանի բանաւոր մահկանացու մտաց և հանճարոյ ընդունակ: - 74. Ա՛րդ՝ *դու* առանձնութեամբ *բո* որ ունիս զհասարակ բնութիւնդ՝ ծնար այսօր ի մօրէ՛ կամ մեռար յաշխարհէ՛ և ո՛չ հասարակ մարդկութիւնս: - 74. Զի նոյն ինքն քրիստոսդ անուն՝ ուսուցանէ *զբեզ* աստուածութեամբն մարդ գոլ, և մարդկութեամբն աստուած: - 75. Եւ *դու* այսպէս ընկալ և հաստատեա՛ ի *բեզ*. և լեր միացեալ ամենայն դիմօք և խաղալեօք ի համայնից գլուխն միշտ պաշտաճութեամբ ի քրիստոս: - 76. Ա՛րդ՝ *դուք* որ **բ** բնութիւնս ասէք քրիստոսի, զբաժանական տարբերութիւնս ասէք. և մեք մի խոստովանիմք զբաղկացականս միաւորութիւն: - 85. Յարցից և ես *զձեզ* դասք երկաբնակաց: - 86. Զի թէ իր, ապա հա՛րկ է ասել *բեզ* զքրիստոս կամ մի իր և **բ**. կամ մասամբ ինչ մի և մասամբ ինչ երկու. կամ բոլոր մի և բոլոր **բ**: - 86. Զի թէ ասես միաւորական, ահա՛ արարեր *դու* զանձն բնութիւն. զի բնութիւն է միարար ըստ պորփիւրի, տեսակին կցորդութեամբ բազում մարդիկ մու: - 86. Ապա և Երրորդութիւնն է միաւորեալ ըստ *բեզ*: - 86. Եւ մեռեալ ի խաչին զանձն միայն ասէք. որպէս երգէք յերեք սրբեանն *ձեր*, քրիստոս որ խաչեցար ողորմե՛ա մեզ: - 89. Այլ և ի լիթանիայս *ձեր* ասի՝ քրիստոս անօթդ աստուածութեան՝ ողորմեա՛: - 89. Իսկ թէ յայնցանէ փախչիք իբր

յայտնապէս որոշումն՝ և այլինն պատճառաւ որպէս գառնենեաւ ծածկէք զգայլենիս *ծեր*: - 89. Եւ զոր *դուք* զայլս զրպարտէիք՝ ի նոյն բանս *ծեր* ընկղմեցայք: - 90. Եթէ երկուքն, հարկ է ասել *ծեզ*՝ փառք հօր՝ և որդւոյ երկու բնութեանցն՝ և հոգւոյն սրբոյ: - 90. Իսկ թէ զմինն, հարցանեմ *ծեզ*՝ զո՞րն պատւէք. և կամ զո՞րն անարգէք: - 90. Եւ ես ասեմ *քեզ*. զի թէ մասունքն քրիստոսի քրիստոս է, ապա բազմաքրիստոս էք և *դուք*: - 92. Եւ այժմ զինեսցուք առ *քեզ*՝ *քոյին* բանիւ. որպէս *դուղ* ասես՝ շնորհօք տըւաւ մարդոյն այն անուն օծութեան և որդիութեան և տէրութեան և իշխանութեան: - 94. Ահա զսակաւ ընծայ կարճառօտութիւն բանիս ընկալ ի *քում* ընդարձակութեան գանձարանի սրտի՝ երիցագոյն հարազա՛տդ Գէորգի է: - 95. Ջպակասն ուղղեա՛ և զաւելիսն կշռեա՛ աղաչեմ ի ներգոյէ՛ *քոյինդ* մեծանձնութեան: - 95. Ա՛րդ՝ ի մարդկանէ ո՛չ ոք ետես զաստուած, և որդի կուսին ո՛չ ետես որպէս *դուղ* ասես. սո՛ւտ է ապա և պատմութիւնն զոր ինչ ուսոյց մեզ. զի ո՛չ է տեսեալ և պատմէ. ահա անդունդք հայհոյութեան. զոր ի կարգիս լռե՛մ: - 96. Եւ դարձեալ՝ որպէս *դուղ* կարծես և ինքն որդին մարդոյ զինքն ո՛չ ճանաչէ. և հրէայքն զորդի ո՛չ ճանաչէին ասելով, «ո՛վ է այն որդին մարդոյ»: – 96. Արդ կամ ստեաց զաւետարանն, կամ սուտ լեր ի բանս *քո* ըստ նմանութեան հօր *քոյ* սատանայի: - 97. Մետասաներորդ՝ ասէ ի յօհաննէս, «ե՛ս եմ ճանապարհ և ճշմարտութիւն». այսինքն՝ որ տանիմ առ հայր և ճշմարտութեամբ ցուցանեմ *ծեզ*: - 97. Ահա աւետարանն լի՛ ասէ իմաստութեամբ. և *դու* պակաս: - 97. Ո՞րպէս զամենայն գիտէ՝ որ զինքն ո՛չ գիտէ ըստ *քեզ*: - 98. Իսկ թէ ա՛յլ է բանին և այլ է մարմնոյն, ապա բաժանե՛ս զմարդկութիւնն ի յանձնէն. և ասես բ անձն. և երկու բնութիւն. ըստ նեստորի առաջնորդին *քոյ*. և պօղոսի սամոստացւոյ. որ մինչև ցայժմ ծածուկ է իր նեստորեան, և այժմ յայտնեցեր *զքեզ*: - 98. Եւ այժմ առ *քեզ* խօսեսցուք ըստ վկայութեան կարգիս ո՛վ նեստորական երկաբնակ և մարդադաւան որոշօղ քրիստոսի, և որոշեալ ի շնորհաց նորին: - 98. Ա՛րդ՝ եթէ ճանաչելն զաստուած հայր և զյիսուս քրիստոս կեանք է յաւիտենից, և մարդն քրիստոս ճշմարտութեամբ ո՛չ կարէ ճանաչել որպէս *դուղ* ասես: - 99. Եւ զի որդին աստուծոյ բնութեամբ որդի մարդոյ եղև, մի՛ յերկուանալ թէ լինիցիս և *դու* շնորհօք որդի աստուծոյ: - 107. Եօթներորդ՝ աստուածն մարդ եղև և յերկիր էջ. զի *դու* լիցիս աստուած և յերկինս ելցես: - 107. Ութերորդ՝ նա ծնաւ ըստ մարմնոյ, զի *դու* ծնցիս ըստ հոգւոյ: - 107. Եւ ի կուսէ, զի *դու* ծնցիս ի կոյս աւազանէ: - 107. Եւ զի նա հոգևոր ծնեալ՝ ծնաւ ըստ մարմնոյ. զի *դու* մարմնաւոր ծնեալ՝ ծնցիս վերստին ըստ հոգւոյ: - 107. Նախ՝ եթէ անեղ է աստուած՝ ըստ որում անսկիզբն և անեղ էին արարածք ըստ անգոյին՝ կարգաւո՛ր է և յոյժ որպէս *դու* ասացեր. զի անեղ էն աստուած յառաջ էած զանեղն ի յէութիւն: - 113. Երբեմն զօգնականութիւնն ասէ. ըստ այնմ, (զի ի բազմադէմ շնորհացն որ ի մեզ՝ բազմօք յաճախեսցին գոհութիւնքն վասն *ծեր*: - 139. Եւ փառաբանութիւն է նոցա, ողորմեա՛ տէր *քո* արարածոց: - 144. Եւ ասեն *դո՛ւ* ես քահանայ յաւիտեան ըստ կարգին մելքիսեդեկի: - 144. Եւ ասեն, տըւան *քեզ* հեթանոսք ի ժառանգութիւն և յիշխանութիւն: - 144. Եւ ասեն՝ արքայութիւն *քո* արքայութիւն յաւիտենից՝ և տէրութիւն *քո* յազգէ մինչև յազգ: - 144. Եւ ասեն՝ աթոռ *քո* աստուած յաւիտեանս յաւնտենից: - 144. ...այսինքն թէ՝ որպէս ես աստուածային մարմնոյս զօրութեամբն յաղթեցի փորձողին, նոյնպէս և *դու* շնորհօք իմովք՝ տկար մարմնով *քո*՝ յաղթես և նկուն առնես զնա: - 159. Երրորդ՝ զի հրամայէ՛ տէրն, «յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք». որով անդորրութիւն պարգևի *ծեզ*: - 161. Մանաւանդ թէ իւրաքանչիւր տարերք **բ** ծայրք որակութեանց ունին. զմինն գոյացական և զմիւսն պատահական. ըստ այսմ պա՛րտ է ասել *քեզ* մետասան բնութիւն քրիստոսի: - 176. Կարծեմ թէ և *քեզ* ծանր թուի հարցումնս այս. սակայն մտաւորաբար լո՛ւր: - 180. Եւ թէ տկարանաս ի զօրութիւնն աստուծոյ՝ առ մե՛զ ևս գոն *քեզ* հաստատութեան նշան՝ անփուտ փայտ. և անթառամ ծաղիկ. և մշտականաչ սաղարթ. և անթափ պտուղ: - 223. Ջի այսպէս ի կազմուածոյ *քո* ուսցիս զբարեկարգութիւն և զպատիւ առ վերինս և առ ներքինս և առ հաւասարս: - 232. Նախ՝ զի ոչ ոք ճանաչէր զհայր կամ զեղբայր իւր. այլ ես *զքեզ* հայր գիտէի, և *դու* զայլ ոմն եղբայր. և լինէր մեծ շփոթումն: - 238. Ասեմք առ այս եթէ որպէս *դու* օրէնս եդեր փոխանցիլ ի բարձրագունէն ի նւաստագոյն կեանս վասն մեղաց: - 252-253. Եւ եթէ այս սուտ է հա՛րկ է ասել *քեզ* կամ մնալ ի թուփն, կամ փոխիլ յանէն և անգոյանալ որպէս ցուցաւ: - 253. Ասեմք առ այս թէ, օն ի բա՛ց տար ի մտաց *քոց* զհեթանոսական կարծիս. զի ո՛չ է հոգի յառաջ քան զմարմին. և ո՛չ մարմին նախ քան զհոգի որպէս ի սկիզբն ասացաք: - 260. Եւ թէ՝ հայեա՛ց ի *քեզ*: - 285. Եւ երկիրն յոր *դուք* մտանէք: - 285. Երկրորդ՝ զի զօրութիւնն որ *քեզ* տւաւ յաստուծոյ՝ չարաչար արկեր ի կիր: - 287. Եւ չորրորդ՝ զի յաւելեր անէծս երկրի զկնի հօրն *քոյ* Ադամայ: - 287. Փորձեաց աստուած զաբրահամ ասելով, ա՛ռ զորդիդ *քո* սիրելի և բե՛ր մատո՛ ինձ ողջակէզ: - 304. Իսկ հրեշտակն աւետէր կուսին, (ուրա՛խ լեր բե՛րկրեալ՝ տէր ընդ *քեզ*. և ի *քէն* ծնանելո՛ց է որդի: - 304. Երկրորդ՝ որպէս նմա ասաց աստուած, ես իջից ընդ *քեզ* և ես հանից անտի:

- 314. Ա՛րդ՝ ո՛չ ասէ թէ ի ներքոյ *քոյ*. զի զսսա կոխեալ էր քրիստոս: - 316. Նա՛խ թէ՝ զմեռելոտի խորհուրդն հա՛ն ի մտաց *քոց*: - 331. Երկրորդ՝ զի մի ինչ ի մէջ *քո* և աստուծոյ անասնական լիցի. բարկութիւն կամ ցանկութիւն կամ ա՛յլ ինչ: - 331. Որպէս սովորութիւն է մարդոյ որ վատացն ասէ, ե՛ս արարի զայդ բանդ որ *զքեզ* ի *քո* կամդ թողի և ո՛չ խրատեցի: - 336. Ո՛չ է արդարութիւն. այլ նա՛ ընդ զրկողացն դատի, և *դու* ընդ գողոցն: - 337. Եւ յաջակողմն, Շրայիա՞. *դո՛ւ* հաներ զմեզ աստուած: - 338. Եւ յետոյ ասելն *դու* կոփեա՛ *քեզ* տախտակ: - 350. Նա՛խ եթէ՝ *դո՛ւ* աշխատեաց ի գործն, զի հաստատ պահեսցես. զի մի՛ դիւրաւ արհամարհիցի: - 350. Երկրորդ թէ՝ *զքո* ձեռագործն ցո՛յց անարժան ժողովրդեանն: - 350 Զի՞նչ է ասելն հայեաց ի *քեզ*: - 397. Դարձեալ՝ հայեա՛ց յանձն *քո*. և նախ *զքեզ* քններ և տե՛ս, և ապա՛ զայլս: - 398. Եւ դարձեալ՝ հայեաց ի *քեզ*. և մի՛ մոռանար զտկարութիւն և զպակասութիւն *քո*: - 398. Այլ երուսաղէմ լեառն է և դաշտ, յանձրևոյ ոռոգի. իբր թէ խնամօքն աստուծոյ լինի անձրև աւելի և նուազ, ի ժամու և տարաժամու ըստ արժանեացն *ձերոց*: - 398. Եւ թէ մովսէսի ոչ հաւատայք որ փառաւո՛րն է ի մէջ *ձեր*, ինձ զիա՞րդ հաւատայք որ թշնամի կարծէք: - 405. Դարձեալ՝ զաստուածայինս ամենայն՝ ո՛չ կարեմ քննել. այլ զոր ինչ յայտնէ՝ պատմեմ *ձեզ*: - 405. Դարձեալ՝ և *դուք* զծածուկն աստուծոյ մի՛ համարձակիք քննել. այլ զոր ինչ յայտնէ *ձեզ*՝ ուսուցէք որդւոց *ձերոց*: - 405. Չորրորդ՝ ցուցանէ թէ որ ի սրբութիւնն իւր ո՛չ խնայէ, և ո՛չ ի *ձեզ* յանցաւորքդ թէ ոչ դառնայք: - 425. Հինգերորդ՝ զի որպէս զկանխագէտ ոչ ասաց սաւուղայ թէ *դու* ո՞վ ես որ զիս փրկես ի սաւուղայ: - 428. Ութերորդ՝ զի ճչեաց թէ ընդէ՞ր խաբեցեր զիս, *դու* սաւո՛ւղ ես: - 428. Վեցերորդ՝ ընդէ՞ր ոչ քաջալերեաց զնա ասելով, եթէ մեռանիս՝ վիուկդ յարուցանէ՛ *զքեզ* որպէս զիս: - 429. Չորրորդ՝ զի թէ սամուէլ էր որ ասաց թէ՝ տէր հեռացաւ ի *քէն*, և այս ո՛չ է մարգարէութիւն. զի կրկնեաց զիւր բանն. և թէ ո՛չ էր սամուէլ, այլ զանունն ընկալաւ և ինքն դև էր, սուտ խօսեցաւ ապա: - 430. Երրորդ՝ զի ո՛չ էր քահանայ. վասն որոյ յետոյ ասէր դաւիթ ցքահանայսն, *դո՛ւք* ղևտացիքդ սրբեցէք և բարձէք զտապանակն. զի մի՛ լիցուք որպէս զոզիա: - 431. Կրկին ոգի *քո* եղիցի: - 445. Երկրորդ՝ եցոյց թէ նոյնպէս ընդ *քե՛զ* է լինելոց զօրք հրեղինացն նովին հոգւովն: - 445. Եւ աստուած իմ և աստուած *ձեր*: - 455. Զբառս զայս ընդունելութեան դնէ՝ ընդ *քեզ*. այսինքն տէրն յետ ծննդեանն ընդ *քեզ* յաւիտեանս յաւիտենից. որպէս ասէր ընդ աշակերտսն «ես ընդ *ձեզ* եմ զամենայն աւուրս»: – 464. Երկրորդ՝ ողջական շնորհաց. ըստ առաքելոյ «շնորհք ընդ *ձեզ*»: – 464. Երրորդ՝ ողջական խնդրութեան. որպէս ի տուբիթն «խնդրութիւն *քեզ*»: – 464. Չորրորդ՝ ողջական օրհութեան. որպէս ի հռութն ասէ «օրհնեսցէ՛ *զքեզ* տէր»: – 464. Հինգերորդ՝ տըլչական խաղաղութեան. ըստ այնմ «խաղաղութիւն ընդ *ձեզ*. ե՛ս եմ մի՛ երկնչիք»: – 464. Եւ զխաղաղութիւն «տէր ընդ *քեզ*»: – 464. Իսկ զօրհնելն ասաց եղիսաբեթ. «օրհնեա՛լ ես *դու* ի կանայս»: – 464. Փառաց՝ ասելն «օրհնեալ ես *դու* ի կանայս»: – 464. Իններորդ՝ վասն հաստատ ժառանգութեան խոստացելոյն. զի մի՛ ասիցէ ոք ցհայր, տէր *դու* ունիս որդի և ժառանգ: - 468. Կրկին է գիր. այսինքն կենաց և մահու. զի բարի գործովք գրիմք ի դպրութիւնն կենաց. և մեղօք գրիմք ի գիրն մահու և դատապարտութեան. որպէս ասեմք թէ զձեռագիր յանցանաց *քոց* ջնջեսցէ աստուած: - 481. Զայս որպէս ձեռին գիր ունէր սատանայ, և նովաւ չարչարէր զմարդիկ՝ թէ աստուած ասաց մի ուտել և *դու* կերեր և մեռար. իմ ի՞նչ մեղք է: - 481. Արդ զգիրն ադամայ պարտուց՝ տէրն որդի եղև նմա և անմեղ մահուամբն տարածեալ զձեռս ի խաչին պատառեաց ասելով, նա մեղաւ և մեռաւ. ես զինչ մեղայ. *դո՛ւ* ես պատճառն: - 482. Երրորդ՝ զի ո՛չ ասաց հրեշտակապետն զաքարիայի թէ ահա՛ եղիսաբեթ յղասցի և ծնեցի *քեզ* որդի զներկայն ցուցանելով. որպէս ասաց թէ «ահա՛ եղիցիս համր». և առ կոյսն թէ՝ «յղասջիր»: – 483. Ըստ *ձեզ* ապա և ո՛չ ժողովրդեանն նմանեցաւ: - 484. Ասեմք եթէ՝ կարի՛ արժանապէս *քումդ* անմտութեան հերձասիրութեանդ դատեցար: - 497. Զի որպէս մահուամբ զմահ եբարձ, և ապականութեամբ զապականութիւն, և անիծիւք զանէծք, և մեղօք զմեղս որպէս *դու* ժայթքե՛ս: - 497. *Դու* զիա՛րդ երկբայիս թէ ի յապականացու բնութենէս ադամայ անապական բանն աստուած միաւորեաց ընդ իւր և ծնաւ անապական մարմնով: - 499. Եւ յետ յարութեանն *դուք* ասէք թէ յանապականութիւն փոխեցաւ: - 500. Ապա ուրեմն սուտ երևի ապականացու ասելդ *ձեր*: - 500. Դարձեալ ասեմք ըստ *ձեզ*, թէ յետ խաչին յապականութիւն փոխեցաւ մարմինն տն, ապա յառաջ քան զխաչն կատարեալ էր զի ապականացո՛ւ էր. և յետ խաչին անկատար զի անապական եղև որպէս *դուքդ* ասէք: - 500. Դարձեալ՝ եթէ առհասարակ սոքա՝ կերակուր՝ արիւն և խոցուածք և մահ՝ ապականութիւնք են որպէս *դու* ասես, և փրկութիւն աշխարհի սոքօք ներգործեցաւ. այսինքն չարչարանօք՝ մահուամբ և խոցւածովքն: - 503. Դարձեալ՝ եթէ հարկիւ պահանջես ըստ մտաց *քոց* գ դժոխք: - 505. Ապա թէ ոչ՝ և գառն կերաւ ի վերնատանն, կե՛ր և *դու* ի պահոցն: - 510. Եւ դարձեալ՝ զձու և զկաթն վասն այն ո՛չ ուտես զի արիւն ունին. և դարձեալ *դու* ասես թէ արիւն ո՛չ ունին: - 511. Ասեմք թէ՝ պօղոս մարմին ասէ և *դու* ջուր ասես...: – 511.

Երկրորդ՝ ասելն «չև ևս ելեալ եմ առ հայր իմ», ցուցանէ թէ՝ զոր այժմ խնդրես, հոգին գայ և զայդ ամենայն ծանուցանէ *ծեզ*: - 517. Վեցերորդ, ոմանք ասեն թէ պարգևս խնդրէր հոգևորական. վասն այն ասէ ելանեմ առ հայր իմ և իջանէ հոգին և լնու *զծեզ* ծրի պարգևօք. այժմ յաղագս այդորիկ մի՛ մերձենար: - 517. Արդ մի՛ մերձենար *դու* յիս անկատար գուլով. որպէս մայր *քո* եւա ի ծառն գիտութեան. յորժամ առ բնութեամբ իմ հայր՝ և ծեր ըստ շնորհի՝ և աստուած մարմնոյս իմոյ ես ելանիցեմ, որոտմամբ իջեալ հոգին *զծեզ* կատարէ՛. արժանաւորիք յայնժամ առ իս մերձենալ: - 518. Ա՛րդ՝ ե՛կ ես և *դու* փորձեսցուք թէ ով զդաւանութիւն առաքելոյն ունի և զկանոնքն՝ նա՛ է հնազանդ նմա: - 548. Ես խոստովանիմ զքրիստոս ճշմարիտ աստուած և բնութեամբ որդի աստուծոյ. և *դու* բաժանմամբ մա՛րդ դաւանիս և շնորհօ՛ք որդի աստուծոյ: - 548. Եւ անապական պատարագեմ զքրիստոս որպէս կանոնքն է առաքելոցն և կղեմայ. և *դու* ապականես ջրով և զայլն որպէս յառաջիկայդ ասացի: - 548. ...թէ զերկու քորս **բ** եղբարցն տալ. կամ զսանին քոյրն միւս եղբօրն. որպէս *քո* սուտ պետրոսին կանոն է, և ո՛չ ճշմարիտ պետրոսին. և զայլն լռեմ իբրև զամօթալի: - 548. Այլ *դու* ո՛վ այրդ աստուծոյ մաքրամիտ և ճգնազգեաց միայնաւոր սուրբ հայրդ սաhակ, թէ և զիջանես եղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ. սակայն կարօղ ես և զթերին լնուլ և զյաւելորդն կշռել. և զմեզ օգտեցուցանել ի ներգոյէ՛ *քոյին* պայծառամիտ սրբութեան սրտի: - 558. Զոր և ազգն Ֆռանկաց այլայլելով ասեն, ես կու մկրտեմ *զքեզ* յանուն Յօր և Որդւոյ և Յոգւոյն սրբոյ: - 588. ...որպէս ասէ առաքեալն, «չիք խտիր ո՛չ հրէի և ո՛չ հեթանոսի. ո՛չ ծառայի և ո՛չ ազատի». զի *դուք* միապատիւ էք ի քրիստոս յիսուս և համաժառանգք արքայութեանն: - 590. Եւ դնէ զայս քահանայն սուրբ մեռոնաւն ի ճակատ նուիրելոյն ասելով այսպէս. ըստ այլազգաց եկեղեցեաց. թէ ի ներքոյ ձևիս այս ես կու նշանեմ *զքեզ* նշանաւ խաչի...: – 593. ...և խառնեմ *զքեզ* այսօր ի հաւատն քրիստոսի: - 593. Իւղ անոյշ յանուն յիսուսի հեղեալ ի վերայ *քոյ* կնիք երկնաւոր պարգևաց: - 593. Երկրորդ՝ զի թէ խառն բղխեաց ըստ *քեզ* վասն այն ի պատարագն ջուր խառնես, ապա և ի ջուրն գինի խառնեա և այնպէս մկրտեա՛: - 595. Իսկ թէ մարմնական խնդրես զխառնումն ջրոյ և պնդիս ի հակառակն, ասեմք *քեզ* թէ ո՛չ միայն ջրոյ, այլ և կաթին և մեղեր և գինւոյ ասէ խառնումն ի խառնարանն. - 596. Եւ *դու* խառնեա զսոսա ի խորհուրդ պատարագին. զի իցես ուղղակի մեկնիչ և գրոյն հետևօղ: - 596. Այլ և առաքեալքն և հետևօղք նոցա հարքն սուրբք՝ ո՛չ գիտէին զխառնարանն. և *դու* ուսար և խառնես ջուր և ընդ անիծիւք նոցա մնաս որպէս ցուցաւ ի վերոյ: - 596. Այլ և զայս հարցանեմք *ծեզ*. ո՞ր բան է որ զջուրն ի խորհուրդ կատարէ: - 596. Ապա *դուք* բարւոք առնէք չտալ հաղորդ ժողովրդեանն զի մի՛ յուդա լիցին: - 598. Իսկ յորժամ *դուք* անօրէն քահանայքդ առնուք զարիւնն ընդ մարմնոյն՝ ամենայնքն յուդա էք: - 598. Այժմ հարցանեմ *զծեզ* անօրէն ազգք Ֆռանկաց, - 599. Դարձեալ ասեմք, ընդէ՞ր ժողովրդեանն հաւատ քարոզես, և *դու* անհաւատանաս ի ճաշակումն արեանն...: - 600. ...նոյնպէս և *դու* մի՛ ճաշակեր. այլ հաւատա՛ ի մարմինն զարիւնն կապեալ: - 600. Դարձեալ՝ թէ *դու* հաւատաս զարիւնն ի մարմինն կապեալ, մի՛ հաներ զտեսակ արեանն ի բեմն. այլ նշխար միայն օրհնեա և լիցի մարմին և արիւն քրիստոսի: - 600. Ողորմեսցի *քեզ* մարդասէրն աստուած...: - 602. ...և թողութիւն շնորհեսցէ յամենայն յանցանաց *քոց*. խոստովանելոցն և մոռացելոցն: - 602. Նովին բանիւն արձակեմ *զքեզ* յամենայն մասնակցութենէ մեղաց. ի խորհրդոց ի բանից և ի գործոց. յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ: - 602. Եւ դարձեալ տամ *զքեզ* ի խորհուրդ սուրբ եկեղեցոյ. զոր ինչ գործեսցես, եղիցի *քեզ* ի բարեգործութիւն և ի փառս հանդերձեալ կենացն ամէն: - 602. Այս սուրբ օծմամբս և իւր գթութեամբն աստուած թողու *քեզ* զոր մեղանչեցեր տեսլեամբդ. նոյնպէս ասէ և այլ զգայութեանցն: - 604. Կնիքս այս որ յանուն յիսուսի լուսաւորեսցէ զաչս *քո*: - 604. Ապա թէ ոչ՝ ժա՛մ է *քեզ* ասել թէ ամենայն կարգ թաղման մարմնոյն՝ ո՛չ է օգուտ հոգւոյ ննջեցելոցն: - 605. Ապա և ո՛չ աղօթք և պաշտօն քահանայից կամ տուրք կամ պատարագք է օգուտ հոգւոյն ըստ *քեզ* որ է բնաւ սուտ և չար հերձուած: - 605. Իսկ վերջին սաղմոս, բարձր առնեմ *զքեզ* աստուած իմ և թագաւոր իմ: - 630. Իսկ փառքն, և ալէլուն, և օրհնութիւն և փառքն, և ամէնն, և ընդ հոգւոյդ *քումն*, և խաղաղութիւնն, այս ամէն Առաքելադի՛ր է: - 631. Եւ ի նոյն ժողովն ի փառք ի բարձունս, օրհնեալ տէր ուսո՛ ինձ զարդարութիւնս *քո*. **գ** անգամ: - 632. Թէպէտ կամաւ տկարացար և ետուր *զքեզ* ի ձեռս խաչողացն՝ հզօ՛ր ես յամենայնի: - 632. Եւ որ՝ քան զայս աւելի ասեն, որպէս տնօրինեցար. կամ ընծայեցար. կամ *քո* տէրութեամբդ. կամ որ եկիր ի բեթանիա. կամ ի վերնատունն: - 634. Եւ անդ յաւուր կիրակէի յառաւօտին միաբան ի մի բարբառ յաւելին յերգս հրեշտակացն և զայս. «օրհնութիւն *քեզ* ի բարձունս»: - 635. ...զ'ի *քէն* հայցեմքն զարևագալին շարականերն, զօրհնեմք *զքեզն*, զայսօր անճառն, զարարչակներն, զաստուած անեղն, - 637. Զորս ըստ պատկերի *քում*: - 639. Եւ դարձեալ՝ զի այն անհաստա՛տ էր որպէս ստուեր. և *դու* իսկապէս: - 639. Իսկ *քեզ* վայելէն, զարարչութեանն ունի խորհուրդ.

այլ և զտնօրէնութեանն և զկատարածին...: – 644. Եւ ի վճարմանն ասեմք, փա՜ռք *քեզ* աստուած: - 644. կամ միացաք ընդ *քեզ* հոգւով: - 644. Ապա պա՛րտ է *քեզ* ի փոքր կարգն ունել զամենայն աւուրս և զմեծն պահել: - 651. ...այսինքն ի *քէն* խնդրեն. նոյնպէս և մեք խնդրեմք աղօթիւք: - 654. Հայր սուրբ՝ ուսո՛ մեզ զբան *քո*: - 659. Որդի սուրբ՝ ցո՛յց մեզ զերեսս *քո*: - 659. Հոգի սուրբ՝ սրբութեամբ *քո* սրբեա՛ զմեզ: - 659. Այս փոքրիշատէ պատճառ իմաստից *ձեր* լիցի. - 663. ...որ ի դատաստանին պատասխանի չունենայ թէ ինձ զի՞նչ տուեր որ *զքեզ* սիրէի: - 664. Ասեմք առ այս նախ՝ ապա *դու* զիա՞րդ ասես թէ երթայ ի դժոխս: - 695. Անդ ի քունն ձայն լսէ թէ՝ կին *դու* յղասցիս մեծ ոմն: - 706. Եւ ասէ հրէիցն թէ ե՛ս եմ քրիստոս խոստացեալն *ձեզ*. – 707. Եւ որպէս կարելի է *քեզ* ի *քում* ափիդ զսերմանս զանազանել, և զեդեալն ի շտեմարանս *քո* յիւրաքանչիւր անկեան յառաջ բերել...: - 718. Զոր օրինակ նշան դրոշմի կայ ի մէջ *քո*՝ և անասնոյն՝ և տանն. զի ելեալ ի տանէ երթայ խառնի ի հասարակ նախիրն. - 719. ...և ի դառնալն այսու նշանաւս ճանաչէ *զքեզ* և զտունն. և *դու* ճանաչես *քո* դրոշմիւն զնա: - 719. Հաճոյ լինէր *քեզ* թէ լինէիր գեղեցիկ որպէս զաբիսողոմ. որում ո՛չ գոյր արատ ի մարմնի: - 761. Նախ ի տեսանելն զերեսս աստուածային որ է անճառելի ցնծութիւն. որպէս ասեն վարդապետք, այն է ճշմարիտ և միայն ուրախութիւն, և ո՛չ յաղագս ստեղծուածոյ, այլ ի ստեղծողին լինի. զոր իբրև ստանայցես, ո՛չ ոք բարձցէ ի *քէն*: - 762. Ո՞րպիսի լիցի օրն այն, մինչ *քեզ* մարիամ մայր տն ընդ առաջ ելանէ հանդերձ պարուք կուսանաց: - 764. Եւ արդ, Ո՜ հաւատ մեծ պաշտելի լոյս իմ և տիպ. և գանձ անկողոպուտ. կացցես առ իս. յարգանդէ մօր իմոյ խուսափեալս ի ծոց *քո:* - 771. Մակա՛ն հաստատուն իմոյ տկարութեան ես *դու*: - 771. Եւ *քև* ամենայն բարիք իմ անբաւք և անճառք: - 771. Եւ այժմ աղաչեմ *զքեզ*, մի՛ մեկնիր յինէն մերձաւորիչդ իմ: - 771. Եւ ի լսելեացս հեշտութիւն՝ լուո՛ զձայն *քո*: - 771. Զի *քև* գեղեցկագոյն ի գերեզմանէն յարութեան *քո* հասից. և անդատապարտ եղէց յատենի *քոյ* առաջի հօր և հոգւոյդ սրբոյ: - 771. Եւ թէ այս և թէ այն, *դու* ընկա՛լ զխնդիր մտաց *քոց* առանց ամենայն երկբայութեանց. իբր ի միոյ կենեղուտ աղբերէ կենաց ուռճալրացեալ և պտղաւէտեալ: - 772. Աղերս ընծայեցի ի գանձանակ ճոխութեան *ձերդ* մեծութեան. իմաստասէր և ճշմարտասէր եկեղեցոյդ հայաստանեայց և ընթերցասէրդ մտաց: - 772. Դարձեալ, յերես անկեալ արտասուալի դիմօք հողս և փոշի՝ սուրբ գարշապարաց *ձերոց*, աղերսեմ ի խորոց սրտէ զիարազատ գութ հարց և եղբարց մեր հոգևորաց: - 773. Զի կա՛թ մի արտասուաց ի կաթիլ դուլէ *ձե՛րդ* մաղթանաց ցօղեսցի ի գերեզման հոգւոյ իմ տառապանաց: - 773. Զի թերևս վասն *ձեր* սիրալիր մաղթանացդ՝ գտայց ողորմութիւն յամէնողորմ փրկչէն մերմէ: - 773. Որ և *ձեզ* յիշողացդ և մեզ յուսողացս առհասարակ ողորմեսցի բարերար և բազում ողորմ մարդասէրն աստուած և տէրն մեր յիսուս քրիստոս ամէն: - 773. Որպէս զի և *դուք* լիջիք գրեալ ի գիրն կենդանեաց ա՛մէն: - 773. Գիր *քոյոյ* վսեմամիտ խոհեմութեանդ ո՛վ արփիածին հարազատ, և վերնոյն սիօնի նազելի զաւակ Գէորգէոս Րաբունեայ պետ: - 773. Ընդ այսմ և որ ի *ձէնջ* արկեալ եղև. թէ վասն է՞ր է զի երկու բացասութիւն լինի մի ստորասութիւն. իսկ բ ստորասութիւն ո՛չ կազմէ մի բացասութիւն: - 787. Յորժամ պարուկաւ այսինքն հացմամբ ասի. որպէս ասելն, ո՞չ *քեզ* ասացի զայդ. ահա՛ եղև ստորասութիւն. իբր թէ՝ ասացի՛: - 787. Եւ դարձեալ, ո՞վ *քեզ* ասաց զայդ. իբր թէ՝ ո՛չ ոք: - 787. Եւ կատարեալ տեսութիւն բացերևականն բանի յայտնի՛ է աշխատասէր մտաց. որ յաղագս մեկնութեան լուծումն գրոց. և զո՛ն առ *քեզ*: - 787. Ո՛չ ըստ բաւական բանի առեալ զլուծումն. այլ ըստ կարի տկարութեան արտայայտումն. մանաւանդ հարկեալ ի սիրոյ *քումդ* եղբայրական խնդրոյ: - 788. Եւ այսպէս տրտմեալ սրգով և թախծեալ մտօք ընծայեցի տըխեղծ մատամբ զխունախոյ նուէրս բանի, իբր զլռմայս այրւոյն՝ *քումդ* գանձարանի: - 789. Միայն բարեսէր կամօք յիշատակ բարի առ *քոյդ* արձանագրեսցի ի տէր: - 789

**ԴՈՒԼ +** Զի կա՛թ մի արտասուաց ի կաթիլ *դուլէ* ձե՛րդ մաղթանաց ցօղեսցի ի գերեզման հոգւոյ իմ տառապանաց: - 773

**ԴՈՒՌՆ +** Ութներորդ՝ զոր *դրօքն* փակելօք եմուտ: - 50. Գիտելի է, զի է *դրամբ* փակեալ է ծածուկ իմացումն գրոց: - 177. Եւ զի փակեն *զդրունս* տանց: - 196. Եւ առաջին է *դուռն* քան զտաճարն: - 230. Եւ դառն ջուրն է ի յականջն առ ի պահապան *դրանն*: - 240. Դարձեալ **բԺ**ան *դրունք* է ի մարդն որ են այսոքիկ. երկու աչք. **բ** ականջք. **բ** պինչք, բերանն. և պորտն. **բ** ստինք. ջրհեղն. և արտաքնոցն: - 241. Ունականն է՝ յորժամ ժողովէ զկերակուրն՝ ձկտի և լայնանայ և փակէ՛ զամենայն *դրունսն* որ ի ներքոյ և ի վերոյ և ի կողմանէ, զի մի՛ թափեսցի կերակուրն: - 242. Վտարականն է՝ յորժամ եփի և հալի կերակուրն, բանա՛յ *զդրունսն* և բաժանէ զնոսա: - 242. Ընդ վերին *դուռն* զգոլոշին ի խելապատա՛կն առաքէ: - 242. Նմանապէս և զմիջին *դուռն* բանայ, և զպարզ կերակուրն ի լեարդն յուղարկէ. և նա ներկէ յարիւն և բաժանէ: - 242. Նոյնպէս ընդ ներքին *դուռն* զաւելորդն արտաքս վտարէ ընդ աղիսն. և յայսմանէ

ջրատեսակն ընդ ցնցուղ քաղրթին ի փալաբուշտն իջանէ և լինի մէզ: - 242. Եւ *դուռն* յետուստ կողմանէ, զի դիւրա՛ւ մտցեն կենդանիքն: - 293. Եւ *դուռն* ի կողմանէ, աղբոց աւելորդացն: - 293. Սա՛ ունի զձև նմանութեան տապանին վեցակողմ և կաթողիկէ, և *դուռն* ի կողմանէ: - 294. Այլ իմանալեացն դասք վկայք են Նա՛խ՝ զի ի *դրունս* են սուրբ Երրորդութեանն և տեսօ՛ղք են անճառելի փառացն: - 345. Որ նշանակէ զքրիստոս արտաքոյ *դրանն* չարչարեալ: - 358. Նա՛խ՝ բերել ի *դուռն* խորանին և տաճարին. և ո՛չ ի բազում մեհեանս. զի ցուցցէ զմինն աստուած՝ և յանուն նորա ընծայել: - 359. Երկոտասաներորդ՝ փօշտանկն. որ հատեա՛լ է աղիքն և ի *դուր* թափեալ. նշանակ հոգեկան ցաւոց ի մարմինն երևեալ: - 371. Այլ որ զուղիղն ասեն ա՛յս է, կորխ՝ եցոյց զօրինակ զղջման. զի լուաւ խրատուն մովսէսի և մնաց ընտրութեանն աստուծոյ ի *դուռն* խորանին: - 382. Իսկ մովսէս հրամանաւն աստուծոյ արար պղնձի օձ. և բարձրացոյց ի *դուռն* խորանին. և որ հայէր ի նա՝ ապրէր ի թունից օձիցն: - 386. Յմայն է՝ որ զտեսս աչաց կամ զձայն հմայէ՛. և զթռիչս և զկըռիչս հաւուց. և զձայն կրակի և զաճառաց. և *զդրան*, կամ աքիս տեսեալ. կամ բէճ. կամ մուճակ. կամ այլ ինչ այսպիսի...: – 388. Առաջինն՝ զի նախ արտաքին մարմնոյ հանդիպիմք որպէս *դրան*. և ապա հոգւոյն ի ներս: - 395. ...և ապա ստեամբք կերակրէ զնա մայր իւր բանիւն աստուծոյ. զոր ասեն յաշխարհի, եթէ զմին *դուռն* փակէ աստուած, նա զերկուքն բանայ. զի յորժամ զմին *դուռն* պորտին փակեցաւ, **բ** ստինքն բացան: - 397. Որ և մովսէս եկեալ ի թաբօր վկայէր նմա, և աղերսէր ելանել ի խաչ և բանալ *զդուռն* արքայութեան. որում մարգարէքն սպասէին: - 411. Զի սկիզբն մեղաց՝ հիմն է դժոխոց. և կատարումն՝ *դուռն*. և յամելն՝ փակ: - 418. Եւ զաղխեալ *դուռն* քաղաքին եդեալ ի յուսն եհան ի գլուխ լերինն: - 420. Քսաներորդ, սամփսոն ի մէջ գիշերի զփակեալ *դուռսն* կորզեաց և էհան ի լեառն: - 423. Եւ տէրն ի մէջ գիշերի *զդրունս* և զնիգս դժոխոց խորտակեալ յարեաւ ի գերեզմանէն. և զհոգիս մարդկան էհան յերկինս: - 423. Քսանևմի, հարին մինչև ի *դրունս* գեթայ. և հաւատացեալք մինչ ի *դրունս* դժոխոց. և եղեն ի տեսիլ ամենայն մսեղեաց: - 436. ...իսկ երրորդն նէեմի և եզր դպիր՝ կանգնեցին զպարիսպն և *զդրունսն*. նշանակեն զառաքեալսն զհայրապետսն և զվարդապետսն. որք օրինօք պարսպեն զեկեղեցի, և հանապազ ուսուցանեն զդպրութիւն: - 449. Սակայն ըստ ներգործութեան մեծագոյն է սրբութիւն մկրտութեանն. զի տպաւորէ զկնիքն. այլ և բանայ *զդուռն* արքայութեան. այլ և պատրաստէ՛ զմարդն առ ի խորհուրդս ամենայն. զոր ո՛չ ներգործեն ա՛յլ երկոքին եզական շնորհքն: - 462. Յինգերորդ՝ բանալ *դրանն* ի գնալն քառասնօրեայ ի տաճարն: - 471. Յինգերորդ՝ ի նմին իրացն յայտնի է՝ զի ռամիկ ժողովուրդն ի տօնի քաւութեանն երեքօրեայ սրբութեամբ մերձենային առ *դուռն* տաճարին: - 483. Անմարթ էր թողուլ զժողովուրդն ի *դրան* տաճարին և մերձիլ յանկողինս. և ըստ օրինացն զօրեայ սրբութիւն ստանալ. որ անհնա՛ր է ամենևին. թէպէտ ասեն՝ գոյր ա՛յլ քահանայապետ որ զկարգ պաշտամանն կատարէր: - 484. Երկրորդն որ ասէ «բացաւ երկինս» որ ցուցանէ թէ մկրտելոյն առ ժամայն բացեալ է *դուռն* արքայութեանն: - 487. Երկրորդ՝ ի ներգործութիւնն. զի մկրտութիւնն քրիստոսի արդարացուցանէ և *զդուռն* երկնից բանայ. և յովհաննուն ո՛չ: - 488. Եւ չարչարանքն քրիստոսի երկու իրս ներգործեաց. նախ զպարտիս մեղաց վճարեաց. երկրորդ *զդրունս* երկնից եբաց: - 503. *Դրունք* և նիգք յետուստ են. այսինքն կամ սկզբնական և ներգործական մեղօք կապեաց յետոյ, կամ մեղօք և յուսահատութեամբ: - 504. Երկրորդ՝ զի վասն բացման *դրանց* երկնից՝ լոյս ծագեաց ի բանտին ըստ եսայեայ. «որք ի կապանս էք ելէք. և որք ի խաւարի յայտնեցարուք»: – 504. *Դուռն* ասեն զայն դժոխոց. և ամենայն ինչ հնարաւո՛ր է աստուծոյ: - 504. Վեցերորդ՝ ամուրն սատանայի է ներքին դժոխքն. ուր են *դրունք* պղնձիք և նիգք երկաթիք. որ է՛ մեղքն մեծամեծք և յուսահատութիւնք. և ա՛յն էր ամրոց նորա: - 506. Ա՛րդ՝ եթէ քրիստոս ի ներքին դժոխքն ոչ էջ, ո՛չ է կապեալ հզօրն որպէս աւետարանն ասէ. և ոչ *զդրունսն* խորտակեալ. և ո՛չ զգերիսն աւար առեալ որպէս դաւիթ ասէ: - 506. Եւ ի մէջ գիշերի զարթեաւ և *զդրունս* փակեալ նգօքն և սեմօք եհան յուսն և ել ի լեառն: - 513. Որ նշանակէ՛ զյարութիւնն քրիստոսի ի մէջ գիշերի *զդրունս* դժոխոցն խորտակեալ. և զհոգիսն հանեալ ի լեառն երկնային: - 513. Նախ՝ խորհրդաբար. ի ե շաբաթոջ աւուրն յերեկոյն թաղեցաւ ի սիրտ առաքելոցն ճաշակմամբ մարմնոյն. և յերեկոյի կիրակէին տեսին զտէրն յորժամ *դրօքն* փակելովք եմուտ առ նոսա: - 516. Երրորդ կրկին զատիկն երևեալ *դրօքն* փակելովք: - 524. Երկոտասան անդամք մարմնոյ և *դրունք*: - 546. Զի նորին գործն է որ բանայ և փակէ *զդուռն* եկեղեցոյ: - 606. Եւ *զդրունքն* նոքա պահեն. և զեկեղեցին նոքա զարդարեն: - 608. Եւ ի մեզ **բժ**ան անդամք մարմնոյ. և **բժ**ան *դրունք* զգայութեանց. որպէս բ աչք. ականջք. պինչք. բերան. և այլն: - 614. Վեցերորդ, ի սմա՛ կրկին *դրունք* ի հարաւ և յարևմուտս. որ նշանակէ՛ *զդուռն* ողորմութեան և *զդուռն* արդարութեան աստուծոյ, հարաւոյն և արևմտիցն: - 614. Զի ողորմութիւնն ի կողմանէ յորժամ անտես առնէ զմեղս՝ *դուռն* է հարաւոյն: - 614. Եւ

արդարութիւնն դէմ յանդիման որ ուղղութեամբ դատէ՝ *դուռն* է արևմտեան: - 614. Իսկ ի մեզ *դուռն* մարմնոյս որ յերկիր և ի խաւար հայի, արևմտեանն է: - 614. Եւ *դուռն* մտացն որ յերկինս և ի լոյս հայի, հարաւայինն է: - 614. Այլ մովսէս օրինադրեաց ի թիւքն առնել կրկին փողս արծաթի. և կոչեաց զնոսա փողս ազդեցութեան. որպէս դեռևս գոն ի *դրունս* թագաւորաց կրկին փողք: - 618. Նա՛խ որպէս սովորութիւն է մարդկան որք զաղերսն ընծայեն ի *դրունս* մեծամեծացն, և նոքա՛ մատուցանեն թագաւորին: - 624. Իսկ փակումն *դրանն* զքաղումն ի գերեզմանի: - 628. Այս է՝ զի ի բանալ *դրանն* դղրդեցաւ քաղաքն երուսաղէմ. - 638. *Դուռն* երկնից և ճանապարհ արքայութեան: - 639. Զառաջաւոր պահքն ասէ *դուռն* երկնից և ճանապարհ արքայութեան: - 639. ...որ և յա՛յտ է ի փակելոյ *դրանց* եկեղեցւոյ: - 650. Երրորդ, եօթնօրեայ ժողովիլ կենդանեացն առ *դուռն* տապանին անսուաղ մինչև տեղեաց անձրևն. և **է է** կենդանիք սուրբք: - 653. սրբոյն կիւրղի է արարեալ ի *դուռն* սրբոյն սիօնի. ի իա ամի հայրապետութեան իւրոյ: - 658. Այլ և *դուռն* որով մտանեմք յերկինս. ըստ որում, «ե՛ս եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք»: - 666. ...և նա դնէ յեկեղեցին մերձ ի *դուռն* և աղօթէ՛: - 671. ...և նա դնէ յեկեղեցին մերձ առ *դուռն* որ նշանակէ զկայանք հոգւոցն յերկինս ի վերջին տեղւոջ մինչ ի յարութեանն օր: - 672. Դարձեալ՝ դնեն զքահանայս առաջի սեղանոյն ի վերայ բեմին, և զկրօնաւորս ի մէջ եկեղեցւոյն, և զաշխարհականս առ *դուռն*, նշանակէ զզանազան տեղիս: - 672. Երրորդն ի *դուռն* գերեզմանին. վասն որոյ այժմ սովորութեամբ երիցս անգամ դնեն զդագաղն ի ճանապարհի: - 675. ...իսկ միտքն տայ պատասխանի՝ *դրունքս* փակեալ են. այսինքն զգայարանքս խցեալ են և մեղաց մանկունքս ընդ ինև ո՛չ տան թոյլ...: - 697. Որպէս լոյս արեգակն անցանէ ընդ երկինս առանց ապականութեան. և որպէս քրիստոս յարեաւ մարմնով ի գերեզմանէն վիմովն կնքելով. և եմուտ առ աշակերտսն *դրօքն* փակելովք: - 722. Իսկ դատաւորն նստեալ յաթոռ արդարութեան արդարապէս հատուցանէ ըստ գործոց. ըստ որում յիմար կուսիցն փակեցաւ *դուռն* և ո՛չ առին զխնդիրն: - 742. Իսկ Երրորդն արքայութիւն, գուշակի յաւազանն պղնձի. զոր հրամայեաց մովսէս առնել ի հայելեացն կանանց որ նստէին առաջի *դրան* խորանին. յորում լւանային որդիքն ահարօնի նախ քան զմտանելն ի սուրբն սրբոց: - 756. Կանայք առաջի *դրան* խորանին նստեալք՝ են հաւատացեալքն. որք *դրան* երկնաւոր պալատին բանիլ ինքեանց ակն կալեալ մնան: - 756. Իններորդ, զի բռնութիւն սատանայի էր կապեալ զնոսա. և տէր մեր կապեաց զնա ընդ խաչափայտին. որ նա ինքն էր *դրունք* դժոխոց. ապա ուրեմն արձակեցան անտի: - 777. Իսկ զի և արուի թէպէտ ո՛չ նոյն պիտոյիւք. սակայն ո՛չ ընդ վայր կազմեցաւ. ի լրումն **բժ**ան *դրանց* անդամոց. ի ներքս մուծանելոյ և արտաքս հոսելոյ զպակաս և զաւելորդս ինչ. անվնաս կելով կենդանւոյն: - 786. Այլ և ի *դռան* Կլայիս սակաւ ինչ դանդաղեալ, մինն փրկեալ և միւսն գերեալ: - 789

***Ի ԴՈՒՐՍ (ԴՈՒՐՔ) +*** Երրորդ՝ զի ամենայն գործսն տեսանէ ի ներս և *ի դուրս*. զմտաց և զբանից և զայլն: - 119. Բաղկացական է, որ ընդ մարմնոյ մասնկանցն գոյանայ ի ներս և *ի դուրս*. վերոյ և ներքոյ շուրջանակի. զի իւրաքանչիւր մասունք ի տեղին ունին զդրութիւնն. և կայացեալ ի բոլորն: - 174. Եօթներորդ՝ ներքին իմաստքն ամենևին խոր և բարձրագոյն տեսութիւն. զոր ըստ ինքեան միայն իմացումն տեսանէ և *ի դուրս* արտաբերէ՛: - 177. Եւ վասն առաւել և նըւազ ջերմութեանն, է՛ որ *ի դուրս* պատառիլն շիջանի: - 204. Իսկ մազն է այրեցած արիւնն. որ օդովն *ի դուրս* փչի. որպէս տունկք յերկրէ: - 240. Յորժամ ծերանայ մարդն, և սպիտակ ջուրն որ է պալղամն առաւելու, յայնժամ մազն ընդ սպիտակ ջուրն *ի դուրս* անցանէ և սպիտակի՛: - 240. Բաց ի քաւութենէն որ ի սուրբն սրբոց՝ ի ներս և *ի դուրս* **ծ** էր բովանդակն: - 364. Ի յայս միտս զվարդապետաց գաւազան յեկեղեցւոյ *ի դուրս* բերեմք զարդարեալ: - 382. Չորրորդ՝ միտք և հոգին ո՛չ երևին. և բանն երևի և *ի դուրս* գայ. և մարդիկք տեսանեն և գրեն. վասն այն բանն մարմնացաւ, և ո՛չ հայր կամ հոգին: - 468. Վասն որոյ զսրբութիւնն զխաչն և զաւետարանս *ի դուրս* բերեմք. - 646. և յետոյ զբաժին նոցա ի վերայ լնուին. նոյնպէս ի տունս և *ի դուրս* յորժամ յիշէին: - 656

***ԱՌ ԴՈՒՐՍ +*** զի անցեալ է ժամանակն ողորմութեան, և դատաւորն *առ դուրս* հասեալ՝ դնել ի տանջանս դժոխոց. որպէս աստ զմարմինն ի գերեզմանի: - 671

**ԴՈՒՍՏՐ +** Ընդէ՞ր *դուստր* ո՛չ անւանի: - 109. Քանզի՝ որդի նմանագո՛յն է հօր քան *զդուստր*: - 109. Եւ **գ** *դուստր*. Արեգի. Աիկի. Մարերի: - 200. Իսկ աղուանից ամիս Նաւասարդուլ. որ է՛ նաւասարդացի. այսինքն ի թոռանց է. յուստերաց կամ ի *դստերաց*: - 201. Չորրորդ՝ զի ո՛չ ճանաչէր այր զկին իւր, և ոչ կին զայր իւր. և լինէր անօրէն խառնակումն. որպէս յուդայ զնու իւր զթամար ո՛չ ճանաչեաց. և ո՛չ ղովտ *զդստերսն* իւր: - 238. Նոյնպէս և զփոխումն ենովքայ տեսին եղբարքն ուստերքն և *դստերք* նորա. զի մի՛ ասիցեն թէ սպա՛ն զնա՛ կուրացեալն ղամեք թոռն կայենի: - 290. Եւ էր յազգէն եսաւայ ի կնոջէն բասեմաթայ՝ *դստեր* իսմայէլի. և **ե**երորդ ծնունդ էր յաբրահամէ: - 320. Եւ ունէր **է** որդիս և **գ** *դստերս* նման բարեպաշտութեան ինքեան: -

321. Վասն որոյ ի ծննդեան աւուրն ժողովին և օրհնեն զաստուած և մարմնով ուրախանան. որպէս յոբայ ուստերքն և *դստերքն* միաբանեալ գային և ուրախ լինէին գիրն: - 321. Նա՛խ` զի **ժ** էին թուով. է ուստերք և **գ** *դստերք*. ըստ թըւոյ նոցա մատուցանէր: - 322. Նոյնպէս է ուստերք և **գ** *դստերք*: - 326. Քսանեգ, մովսէս որդի կոչեցաւ *դստերն* փարաւոնի և փրկեաց զնա: - 329. Փարաւոնի *դստերն* մառի կոչէին. որ արար զմովսէս իւրն որդէգիր: - 330. Եւ սեփովրա *դուստր* էր ռագուէլի, և քոյր յոթորայ. յազգէ աբրահամու **ե** երորդ այսպէս: - 330. Սեփովրա էր *դուստր* ռագուէլի քրմի` որդոյ դեդանայ. որդւոյ յեկտանայ. որդւոյ աբրահամու ի քետուրայ կնոջէ: - 330. Է՛ և ա՛յլ իմն տեսութիւն բանիս. զի կամի՛ զպաշտօնս մեր որոշել ի կռոց զոհիցն. զի սուտանուն դիքն խնդրէին ուստերս և *դստերս* և արջառս և ոչխարս զոհել և սպանումն օտարաց: - 396. Այլ կենդանի եղբօր, կամ փոքր եղբօր կինն, կամ գոլով զաւակ, անօրէնութիւն էր որպէս հերովդին. առ որ ասէր յովհաննէս, «չէ արժան քեզ ունել զկին եղբօր քոյ». զի *դուստր* նորա էր աղջիկն որ կաքաւեաց: - 402. Սա՛ է որ *զդուստր* իւր աստուծոյ զոհեաց: - 420. Սորա որդիք **լ** և *դստերք* **լ**: - 420. Քսանբ, երկոքին *դուստրն* խօսեցաւ դաւթի, և կրտսերն տւաւ. և փեսային քրիստոսի կրկին խօսեցաւ եկեղեցի և նո՛րս տուաւ: - 436. Չչորքս զայս` Զոքոզիա և Զգոդողիա մայրն, և Զյովաս և Զամեսիա ո՛չ գրէ յազգահամարսն աւետարանիչն վասն լինելոյ *դուստր* և թոռունք եզաբելի: - 452. Այլ և յովսաբեթ *դո՛ւստր* է յովրամայ և գոդողիայ և քոյր ոքոզիայ: - 452. Իսկ ի մօր կողմանէ` մարիամ էր ի քահանայից ցեղէն, զի մատթան քահանայն բնակէր ի բեթլէհէմ, և ունէր երիս *դստերս*: - 460. Մարիամ ամուսնացաւ ի բեթլէհէմ և ծնաւ զսողոմի զմանկաբարձն յիսուսի. ո՛չ որ մայր եղև որդւոցն զեբեթեայ. զի այն. սողովմէ *դուստր* է յովսեփայ աստուածահօրն...: – 460. Եւ այսպէս սողոմի և եղիսաբեթ և մարիամ աստուածածինն **գ** քերց *դստերք* էին: - 460. Որպէս ահարօն ունէր *զդուստրն* ամինադաբայ` զքոյրն նայասոնի իշխանին յուդայ: - 461. Այլ և յովիդա քահանայապետ *զդուստր* յովրամայ արքայի զքոյր ոքողիայ: - 461. Այսպէս և յովակիմ ի յուդայէ՛ էր և ունէր զաննա *զդուստր* մատթանայ ի ցեղէն ղևեայ. վասն այն ազգական մարիամու զեղիսաբեթ ասէր գաբրիէլ: - 461. *Դուստրն* զհայրն: - 469. Զի նա՛ եղև մայր հօր. և *դուստր* զաւակին: - 469. Կղէոպս եղբա՛յր է յովսեփայ. և մարիամս այս *դո՛ւստր* է նորա: - 517. Եւ դարձեալ նա՛ կոչի *դուստր*. և մեք հարսն երկնաւոր փեսային: - 533. Վասն է՞ր երբեմն իգական հարսն և *դուստր* կոչի եկեղեցի. և երբեմն արական որդի: - 534. Ո՞րպէս կոչի հարսն և *դուստր*: - 534. Ընդ քրիստոսի միաւորեալ. որպէս փեսայն որդի է, և հարսն *դուստր* կոչի աստուծոյ հօր: - 534. Որպէս և առ մեզ է. զի կին որդւոյն *դուստր* կոչի հօրն վասն մի մարմնոյն: - 534. ...զի վասն բոլոր ժողովրդեանն մին էր զուարակ. և վասն միայն քահանայապետին մին. և զշնացեալ *դուստր* քահանային այրէին. և զժողովրդեանն քարկոծէին. և վա՜յ ինձ զի անձամբ զանձն իմ դատապարտեմ: - 563. Չորրորդ` զի միշտ որդի ծնանիմք աստուծոյ և ո՛չ *դուստր* և էգ. զի ի քրիստոս յիսուս արու և էգ ո՛չ է ասէ առաքեալն. և զայս ցուցանէ աւազանն ի յաջ կողմն եկեղեցւոյն: - 590. Զի **բ** են հայր և մայր մեր. և **բ** ծնունդ որդին և *դուստրն*. և **բ** եղբայրն և քոյրն. և մեք ի մէջն **է** երորդ: - 611. ...որպէս մովսէս եղև որդէգիր *դստերն* փարաւօնի: - 611. Ութերորդ, սմա անուն կոչի եկեղեցի. այսինքն զոր կամիս լիցի. և *դուստր* սիօնի: - 614. Սիրելին ի մէջ *դստերաց*: - 756

**ԴՊԻՐ +** Եւ միջինն սարկաւագաց և *դպրաց*: - 294. Այսինքն սարկաւագունք, *դպիրք*, և գղերիկոսքն: - 379. Եւ որք զխնկոցն` *դպիրք* են և ընթերցօղք: - 379. *Դպրին* նիկոմիկոս: - 495. Եւ ի նազերեթացոց ժողովրդանոցին *դպիր* ցուցաւ ի կարդալն զեսայի մարգարէն` յոտն և բացաւ գլխով: - 606. *Դպիրք* եղեն առաքեալքն սպասաւորելով ժողովրդեանն հրամանաւ. և Սարկաւագունք` օծանելով զհիւանդս. հրաման տալով նոցա իւղ օրհնել յիւրմէ: - 607. Երկրորդն Սարկաւագն և *Դպիրն* և Գղերիկոսն. զայսոսիկ հոմանուամբ պաշտօնեայ կոչէ: - 608. Հինգերորդ` որք բոլորովիմբ զղջացեալք և թողեալք զմեղս` գործեն զբարիս. զնոսա հովուէ՛ *դպիրն* սաղմոսիւք և ալէլուիւք: - 608. Հոգի և մարմինս է որպէս մագաղաթ. կամք և իմացումն *դպիր* և գրօղ. հաւատքն գրիչ. արտասուքն մելան. և գիրն գործք բարի կամ բան աղօթից: - 741. Մանաւանդ թէ` հոգին սուրբ գրօղ *դպիր*. և ուղղութիւնն գրիչ գործիք. և որք զմելանն առատ տամք և զմագաղաթն, զսուրբ գործս անկեղծաւոր և զբանս աղօթից օրինաւոր, ա՛յնքան առաւել գրիմք ի գիրն կենաց: - 741. Իսկ խոտելոցն գիր, *դպիր* է պիղծ հոգին դիւական. և չար կամքն իւրեանց և խորհուրդն և հեշտութիւն մարմնոյն մելան. և ըստ գործոց առաւել և նւազ գրեն ի գիրն դատապարտութեան: - 741

**ԴՊՐՈՒԹԻՒՆ +** Ասեմք առ այս եթէ կրկին ունի դէմս գիրն *դպրութեան* կենաց: - 18. Նոյն է և գիր *դպրութիւն* կենաց. իբր անջնջելի դարձումն ի նախասահմանութիւնն: - 112. Իսկ որ *զդպրութիւն* գիտէ և գրով վարի` **բժ**ան ազգ է. այսինքն Եբրայացիք. Քաղդէացիք. Ասորիք. Պարսիկք. Մարք. Հնդիկք.: Փիւնիկեցիք: - 299. Յորում և զմեզ թուեսցէ ի թիւ սրբոց իւրոց անջինջ *դպրութեամբ*. և Նմա փառք

յաւիտեանս ամէն: - 392. Վեցերորդ՝ զի փութասցին ուսման և *դպրութեան*: - 402. իսկ երրորդն նէեմի և եզր դպիր՝ կանգնեցին զպարիսպն և զդրունսն. նշանակեն զառաքեալսն զհայրապետսն և զվարդապետսն. որք օրինօք պարսպեն զեկեղեցի, և հանապազ ուսուցանեն *զդպրութիւն*: - 449. Կրկին է գիր. այսինքն կենաց և մահու. զի բարի գործովք գրիմք ի *դպրութիւնն* կենաց. և մեղօք գրիմք ի գիրն մահու և դատապարտութեան. որպէս ասեմք թէ զձեռագիր յանցանաց քոց ջնջեսցէ աստուած: - 481. Եւ այս ևս կրկին է գիր և *դպրութիւն*. մին անջինջ և յաւիտենից որ առ աստուած. և միւսն ժամանակեայ և ջնջելի որ առ մեզ. զոր մեր գործօք և կամօք գրեմք և ջնջեմք. թէ զչար թէ զբարի: - 481. Այս *դպրութիւնքս* բանին ի կատարածի ըստ դանիէլի. որպէս գրեալ է աստ յայլում տեղւոջ՝ անդ տեսցես: - 481. Եւ թէ պահեալ էր զպատուիրանն աստուծոյ՝ լինէր գիր կենաց *դպրութեան*: - 481. Չորրորդ կարգ է Ջահավառքն. այսինքն *դպրութիւն* առնել և մոմեղէնս վառել ի սեղանն: - 606. Դարձեալ՝ ի դատաստանի յորժամ *դպրութիւնք* բանին, որք աստ ի ձախմէ մարմնոյ՝ փոխեսցին յաջմէ. և որք յաջմէ՝ յահեկէ՛: - 646. Երեսունևե, *Դպրութեան* կենաց: - 661. Իսկ գիր և *դպրութիւնքն* յառաջիկայդ ասացի: - 729. Երկո՛ւ են *դպրութիւնք*: - 741

**ԴՌՆԱՊԱՆ +** Իսկ եզր աստ ցուցանէ զնոսա սուտս և ապաշնորհս. որպէս ասէ յառաջին եզր, (նստան քահանայքն և երգեցիկք, և *դռնապանքն* նաթանացիք ի քաղաքն իւրեանց. և ամենայն իսրայէլ յիւրաքանչիւր քաղաքս: - 28. Չորրորդ՝ գեթսոնի ազգն *դռնապա՛նք* էին. և մերարեայ երդմնեցուցիչք ընդ իշխանութեամբն իթամարայ քահանայի. և կահաթու գունդն աւագ պաշտօնեայք: - 379. Առաջինն է արտաքս հանել յեկեղեցւոյ զոչ մկրտեալն և զախտացեալս մեղօք. և զայս առնէ *դռնապանն*: - 608. *Դռնապանն* երկրի: - 609

**ԴՌՆԱՊԱՆՈՒԹԻՒՆ** - Առաջինն է *Դռնապանութիւնն*: - 606

**ԴՎԻՆ** - Երրորդ ժողովն է *դվնայ*, ի չորրորդ ամի թագաւորութեանն կոստանդեայ հռոմոց. հրամանաւ մեծի կաթողիկոսին հայոց ներսէսի շինողի. և այլ է և ժ եպիսկոպոսաց՝ և վարդապետաց բազմաց և իշխանաց...: – 544. Նաև ի հայք ի ժողովն *դվնայ* հաստատեցին ի սուրբն աստուածն խաչեցար ասել ստուգապէս: - 631

**ԴՐԱԽՏ +** Ութերորդ՝ զնա օ՛ձ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն զբազումս. և արտաքսեն ի *դրախտէ* եկեղեցւոյ. և թոյնք իժից ի ներքոյ շրթանց ունելով և խայթոց՝ զի առորս մերձենան, ի յսկիզբն բանից կամ ի վերջն՝ մահացուցանեն զհոգիս. երկճղի ունելով լեզու նենգաւոր՝ չար և բարի, ծածուկ և յայտնի: - 35. Յիսունևե) Վասն *դրախտին* զի երկին կոչի և իմանալի տունկ: - 155. Յիսունև**զ**) Վասն լուսոյ *դրախտին*. և զի անպական է *դրախտն* և պտուղ նորին: - 155. Յիսունև**թ**) Թէ ծնունդ ո՛չ լինի ի *դրախտին*: - 155. Հինգերորդ՝ երկինք կոչի և *դրախտն*. զի բա՛րձր է և լուսաւոր և անմահութեան է վայր. որպէս ասէ անառակ որդին. «հա՜յր մեղայ յերկինս». այսինքն ի *դրախտն*: - 183. Ասի և բօթ. այսինքն սուգ և տրտմութիւն վասն ելիցն ի *դրախտէն*, և լսելոյն՝ (հող էիր և ի հող դարձիցս: - 200. Վասն է՞ր պօղոս *զդրախտն* երրորդ երկին կոչէ: - 221. Ա՛րդ՝ *դրախտն* ո՛չ զգայութեամբ և ո՛չ երևակայութեամբ՝ այլ իմացմամբ տեսանի. վասն որոյ երրորդ երկին կոչի: - 221. Եւ *դրախտն* է բարձր տեղեաւ. և լուսաւոր. և անապական վայր: - 221. Երրորդ *դրախտն*: - 221. Յերրորդ օրն եղև *դրախտն* երկին: - 221. Յաղագս որոյ երրորդ երկին կոչէ պօղոս *զդրախտն*: - 221. Այլ և աւետարանն ի յառակս անառակին՝ երկին կոչէ *զդրախտն*. ուր մեղանչեաց և ելաւ...: – 221. Նա՛խ՝ պարտ է գիտել թէ վասն *դրախտին* **գ** է կարծիք վարդապետաց: - 221. Չորրորդ՝ զի նոյն ինքն *դրախտն* և տունկն է իմանալի և զգալի. որպէս վայելօղ մարդն էր իմանալի և զգալի: - 222. Ո՞րպէս ասեն թէ *դրախտն* լուսոյ արեգական չէ կարօտ: - 222. Վասն զի բնական լուսաւո՛ր է օդս որ ի մէջ *դրախտին*: - 222. Ոմանք ի *դրախտն* ևս ասեն թէ տիւ և գիշեր լինի. կամ գարուն և աշուն. զոր մեզ չէ ընդունելի: - 222. Զի ի վերին մասն օդոյն է մերձեցեալ՝ որ է առաւել բարեսուն. և ամպոց և հողմոց շարժմունք ի միջին մասն օդոյս ծնանին. և ի *դրախտն* ո՛չ հասանեն: - 222. Արդ զի՞նչ ասեմք, անապակա՞ն՝ թէ ապականացու է *դրախտն*: - 222. Նա՛խ՝ զի թէ ապականացու էր որպէս երկիրս այս, վասն է՞ր զմարդն պատուելով ի *դրախտն* եդ աստուած: - 222. Երկրորդ՝ և յորժամ մարդն ապականեցաւ մեղօք, վասն է՛ր ի *դրախտէն* հանէր զնա: - 222. Զի ապականեալ մարդն ապականեցաւ *դրախտին* էր վայելչական: - 222. Յայն՝ զի փայտ *դրախտին* անփուտ է. և տերևն անփտելի. և պտուղն անծորելի. և ծաղիկն անթառամելի. և աստուծոյ տնկեալ ձեռօք իւր. տեղի անապական ձեռագործին ադամայ: - 223. Պտուղքն *դրախտին* շօշափելիք են և կերակրելիք. հատանի և ծասկի և փոփոխի ըստ պատահական որակացն. և անապական մնայ ըստ գոյացութեանն և ներգործութեանն ի կերօղն: - 223. Այլ ա՛յս է ճշմարիտն. որ մինն ծառ էր կենաց՝ և մինն գիտութեան. և ի *դրախտին* այլ ո՛չ գոյր նման նմա. թո՛ղ թէ յերկիրս. ո՞րպէս ասեմք թէ այս է՝ կամ այն: - 224. Այսպէս երևի թէ և *դրախտին* պտուղն նորն զհինն փոխէ՛:

- 224. ...իսկ թէ թափի հինն. այս լինի կամ յատակս ծառոցն ծորեալ և ապականեալ. և կամ ամենայն ամբարեալ և ժողովեալ և բարձրացեալ քան զծառս *դրախտին* որ է անպատշաճ: - 224. Ծառք *դրախտին* ո՞րպէս ըմպեն ջուր, թէ անապականք են: - 224. Նոյնպէս և տունկք *դրախտին* ըմպեն զջուր գետոյն որ ոռոգանէ՛ *զդրախտն*: - 225. Տկարանայ միտքս թէ յապականացու երկրէ՛ է *դրախտն* և մասն է երկրի, ո՞րպէս է անապական: - 225. Նոյնպէս և *դրախտն* մասն է յապականացու երկրէ. և զանապականութիւն վիճակեալ: - 225. Վերջին հուրն ի կատարածի *զդրախտն* փոփոխէ՞ թէ ոչ: - 225. Զի որպէս ջրհեղեղն ո՛չ եմուտ ի *դրախտն* զի ո՛չ էր ապականեալ մեղօք: - 225. Եւ զի ո՛չ է ապականացու *դրախտն* և ոչ փոփոխի: - 225. Զի երկի՛ր անիծաւ և ապականեցաւ, և ո՛չ *դրախտն*: - 225. Դարձեալ ասեմք թէ գոյացութիւն *դրախտին* **բ** իր է. այսինքն նիւթ և ապականութիւն: - 225. Ի *դրախտին* լինէ՞ր մարմնական ծնունդ որպէս այժմ ի յերկրի, թէ ոչ: - 225. Ոմանք կամին ցուցանել ապականացու գոլ *զդրախտն* և շաղաշարումն արուի և իգի. և առաւել ցանկութիւն և ծնունդ զաւակաց: - 225. յերկի՛ր եւտ հրաման աճելոյ և ոչ ի *դրախտին*: - 225. Երկրորդ՝ զի *դրախտն* է տեղիք անապական. և ո՛չ լինէր ի մարդոյն ծորումն ինչ աղտեղութեան. և ոչ որպէս տնկոցն: - 225. Երրորդ՝ եկեղեցի սուրբ օրինա՛կ է *դրախտին*: - 225. Նոյնպէս և ի *դրախտն* եղև պսակ օրհնութեան, և մանկարարութիւն ո՛չ: - 225. Սննդեան. աճելոյ. խնամելոյ. և այլոցն. և այսոքիկ ո՛չ են ի *դրախտին*. և ոչ զգեստ մարմնական: - 225. Վեցերորդ՝ զի աստ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան եթէ առաջին կեանք *դրախտին* էր կուսութիւն և անապականութիւն և հրեշտակաց նմանութիւն. և յետ յարութեանն վերըստին դառնամք յառաջին կեանս *դրախտին*. յանապականութիւն և ի հրեշտակաց հաւասարութիւն: - 225-226. Իսկ եթէ ոք հարցանէ, ապա վասն է՞ր ստեղծան ծննդական անդամքն յորժամ ո՛չ ծնանէին ի *դրախտին*: - 226. Ասեմք թէ՝ կանխագէ՛տ է աստուած. և նախ ծանեաւ զի ո՛չ կարէին աճիլ անմեղութեամբ ի *դրախտին* որպէս զհրեշտակս. վասն որոյ կազմեաց նոցա մարմին, զի յերկրի անասնապէս աճեսցին: - 226. Զայս այսեն սուրբ վարդապետք եթէ՝ որպէս հրեշտակք աճեցին յերկինս, նոյնպէս և մարդկան ազգ ի *դրախտին*: - 226. Նոյնպէս և ի *դրախտին* կարէին ծնանիլ կուսութեամբ և առանց սերման. կատարեալ մարդ ի բնութենէն ադամայ: - 226. յերրորդ օրն, բոյսք և տունկք և *դրախտն*: - 226. Երեսունևըն՝ Տասն աստիճան անկմանն ի *դրախտէն*: - 228. Կարգաւոր էր նախ պատրաստել զարքունիս որ է երկինք և երկիր. և զգահոյս որ է՛ *դրախտն*. և զսպասաւորքն որ են կենդանիքն. և զմեծութիւնս տնկոց և բուսոց. մանաւանդ ոսկւոյ և արծաթոյ և ականց ի սիրտ երկրի գանձել. և ապա՛ թագաւորին բնակիլ: - 230. Ուստի միջակ գոլով ըստ էութեան՝ և ի միջակ վայրս *դրախտին* բնակեալ: - 231. Իսկ բարոյականն այս ինչ է. զի զպատկերն արարչական և զառաջին կեանս *դրախտին* կորուսաք, և զանասնեղէն պատկերն և զերկրորդ և զախտաւոր կեանս ընտրեցաք. յիրաւի շրջեցաւ ի մեզ և լինելութիւն հոգւոյն: - 258. Դարձեալ թ թիւն պակա՛ս է ի ժերրորդէն. և մեք պակասեցաք յինն դասուց հրեշտակաց, որ նախ հաւասար էաք ի *դրախտին*. և կարօտացաք մարմնաւոր ծննդեան, նմանելով անասնոց...: – 264. Չորրորդ՝ ի ցուցանել զարդար վճիռ հատուցմանն. պահողացն՝ ըզվայելս *դրախտին* և զանմահ կեանս. և ոչ պահողացն՝ զարտաքսիլն և զմահու մեռանիլն: - 277. Յիսներորդ՝ թշնամի եղև աստուած, յորում արտաքսեաց ի *դրախտէն*: - 277. Նաև ըստ երից դրութեանց տեղեացն. որ է՛ *դրախտն*. և աշխարհս այս. և հանդերձեալն: - 278. Չորրորդ՝ զի ընդ ծառս *դրախտին* և յանթառամ ծաղիկս և ի բազմապատիկ պտուղսն պչուցեալ էին, ո՛չ զերկնչիլն գիտէին և ո՛չ զամաչելն: - 278. Երկոտասան պարգևք էին ի *դրախտին* զոր կորոյս ադամ: - 278. Եօթներորդ՝ վայելչութիւն անաշխատ փափկութեան *դրախտին*: - 278. Երկրորդ՝ զի զրկեցաւ ի կենացն փայտէն և ի *դրախտէն* արտաքսեցաւ: - 279. Երրորդ՝ զի ընդդէմ *դրախտին* բնակեցաւ և ի միշտ նախանձէն մաշեցաւ: - 279. Բայց սուրբն գրիգոր նիւսացին **ժ** աստիճան դնէ անկման մարդոյն ի *դրախտէն* ի գիրս կուսութեան: - 280. Նա՛խ՝ զդարձումն յետս աստուածային փառացն. և վասն այն շրջեցաւ ի զբօսանս *դրախտին*: - 280. Տե՛ս, զի յայտնապէս ցուցանէ սուրբն, զի թէ պահպանութեամբ կացեալ էին ի *դրախտին*, ո՛չ ևս ամուսնութեամբ լինէր աճումն: - 280. Եւ ա՛րդ՝ հեռանալոյ մեզ ի *դրախտէն* կենաց վերջին ամուսնութիւնն եղև. զա՛յն նախ պա՛րտ է թողուլ, և ապա՛ յերկրաւոր հոգւոց և տառապանաց հեռանալ: - 281. Ասեմք եթէ՝ էառ քրիստոս մարմին ի կուսէն մարիամայ զմերս թանձր և մեղանչական. և միաւորելով ընդ ինքեան՝ եղև առաջին կերպ անմեղութեանն ադամայ որ էր ի *դրախտին*:- 282. Յետ ելիցն ադամայ ի *դրախտէն* կենաց, հարցանելի է վասն նախահարցն ըստ կարգի: - 286. Իսկ գործել ասաց զերկիր, զի *դրախտին* չեղև արժանի: - 287. Ի *դրախտն*, զի թանձր մարմնով ո՛չ բնակին յիմանալեացն կայանս. և յօդս կախիլ անպատշա՛ճ էր: - 289. Ապա ուրեմն ի *դրախտն* մտնի. զի *դրախտն* երկին կոչի: - 289. Եթէ ադամ ի *դրախտին* ո՛չ կարէր մնալ անմահ: - 289. Չորրորդ՝ բ ելին ի *դրախտէն* մեղօք. նոյնպէս և **բ** մտին ի *դրախտն* անմեղութեամբ: - 289. Որպէս կայեն յորժամ սպան զաբէլ, պատճառեաց ծնողացն եթէ զնորա պատարագն

ընկալաւ աստուած և վերացոյց ի *դրախտն*: - 290. Ոմանք ասեն թէ՝ ռ ամ եկաց ադամ ի *դրախտին*: - 290. Եւ յորժամ կորոյս *զդրախտին* կեանքն, այլ ոչ հասին ի նոյն: - 290. Եւ այլք ասեն ընդդէմ այսմ, եթէ յետ ռ ամին ի *դրախտէն* փոխիլոց էին յարքայութիւնն թէ պահէին զպատուիրանն. և յորժամ ելին ի *դրախտէն* ի նոյն թիւն ո՛չ հասին: - 290. Զի վասն առաջնոյն ասեն վարդապետք, եթէ ադամ ո՛չ եկաց ի *դրախտին* ռ ամ, կամ աւելի և կամ պակաս, այլ մի օր. մանաւանդ է ժամ: - 290. Այլ ադամ յերեկո՛յն ել ի *դրախտէն*. և ո՛չ կատարեաց զօրն բոլոր. վասն այն նախնիքն ո՛չ կատարեն զհազար ամն բոլոր: - 290. Եւ խնդրեցին *զդրախտն* թէ ա՛նդ զերծանիմք և ո՛չ գտին. զի ծովք և շամանդաղ պատեալ էին: - 296. Եւ ի հողմոյն յայնմանէ հոտ անուշութեան *դրախտին* բուրեաց ի նոսա. և տեսիլ իմանալի տեսին, և լուր իմանալի լուան. և յայնմանէ մոռացան զառաջինն. և որպէս ի քնոյ զարթուցեալք ո՛չ լսէին զլեզուս միմեանց: - 298. Եւ տէրն զհարսնացեալ եկեղեցի եմոյծ վերըստին ի *դրախտն* որ զվեց դարիւ արգելեալ էր և փակեալ: - 305. Երրորդ՝ զանդրանիկ կեանս ի *դրախտին* անարգեաց ադամ և զերկրորդն ընտրեաց. և իւր անդրանիկն խոտեցաւ և կրտսերն ընտրեցաւ: - 310. Չորրորդ՝ զի յաղբիւսն անկաւ որպէս ադամ ի *դրախտէն* յերկիր: - 327. Երրորդ՝ թագաւորական գաւազան էր ադամ ի *դրախտին*. և յորժամ մեղաւ՝ անկաւ ի յերկիր և եղև օձ մեղաւոր: - 332. Երկրորդ՝ բնութիւնս ադամայ ել ի *դրախտէն* և բորոտացաւ զանազան մեղօք. մինչև բանն էարկ ի ծոց աստուածութեան իւրոյ և հաստատեցաւ յառաջինն: - 332. Չորրորդ՝ յօրինակ *դրախտին* ադամայ՝ որ ծրի տուաւ և ո՛չ պահեաց. վասն այն որդւոց նորա գործով և աշխատութեամբ պարգևէ: - 350. Նա՛խ՝ զկերպն ադամայ որ ի *դրախտին* երևեցոյց յինքեան. զոր ետես մահ և ընկէց զթագն իւր: - 352. Ա՛յս է՝ եթէ ի *դրախտին*, եթէ այժմ յեկեղեցի, և թէ ի վերինն երուսաղէմ: - 360. Զի գործնականաւն մեռանիմք ընդդէմ մեղացն. և տեսնականաւն մտօք թռչիմք ի *դրախտն* որ է՛ դաշտ երկնային: - 368. Եւ ի յանապատն միս ուտելոյ հրաման ո՛չ ունէին. որպէս և ո՛չ ի *դրախտին*: - 390. Այլ ոմանք՝ ճաւոր զերկին, և վաթսնաւոր *զդրախտն*, և երեսնաւոր զերկիրս ասեն նշանակեալ բ ցեղիցն յայնկոյս յորդանանու, և թ ցեղիցն յերկիրն քանանացւոց: - 391. Այլ և փիլիպպոս խ օր արտաքոյ եկաց *դրախտին*: - 391. Երկրորդ՝ ի հոգևոր կենաց *դրախտէն* անկաք ի մարմնաւորս. և յայսմանէ դառնամք ի հոգևորսն: - 395. Երրորդ՝ զայն ցուցանէ որ կեանք *դրախտին* դարձաւ առ նոսա յանապատին անկարօտ ամենայնի. զի զգեստն ո՛չ մաշէր. այլ աճէ՛ր ընդ տղայոցն. և ոտն բոկ՝ և ոչ՛ կոշկոճէր...: – 397. ...վասն որոյ յայսմանէ ասեն ոմանք թէ՝ գ ամ կամ խ օր յամեաց ադամ ի *դրախտին*. որպէս ժողովուրդն ի յանապատին. կամ որպէս մովսէս ի լեառն: - 397. Եւ թէ ասեն, ամուսնութիւնն ի *դրախտն* օրհնեցաւ: - 404. Երկրորդ՝ յորժամ երեսքն լուսաւորեցան որպէս ադամայն ի *դրախտին* և ի յարութեանն: - 409. Երրորդ՝ ցուցանէ զպտուղ *դրախտին* նոյնպէս զոլ առանց յաւելուածոյ և առանց նուազելոյ. թէպէտ կերակրիւր: - 444. Տասներորդ՝ որպէս ի *դրախտին* մերկ էին ադամ և եւա և ո՛չ ամաչէին զի անմեղք էին: - 461. Վեցերորդ՝ նշանակէ՛ զանկանիլն մեր ի *դրախտէն*: - 493. Դարձեալ վայելո՛ւչ էր փրկութեան մեր լինիլ ի ծեռն փայտի. որ ցուցանէ զփայտն կենաց ի մէջ *դրախտին*: - 494. Ո՞ր է *դրախտն* զոր խոստացաւ աւազակին: - 495. Ոմանք ասեն թէ աւանդիլ հոգւոյն քրիստոսի, աւազակն եմուտ յերկրաւոր *դրախտն* ուստի ել ադամ. և չէ՛ հաւանելի. զի անդ մարմնովն եմուտ յետ յարութեանն: - 495. Եւ ոմանք ասեն թէ՝ յերկնաւոր *դրախտն* եմուտ հոգւովն մինչ ի կիրակէ մէջ գիշերին. և ի նոյն ժամն էջ ի դժոխս և ազատեալ զհոգիսն յարեաւ ի գերեզմանէն: - 495. Եւ այլք ասեն՝ *դրախտ* զտեսութիւն աստուածութեանն կոչէ. զոր յետ աւանդելոյ հոգւոյն ետես աւազակն. և այս ուղիղ է. զի ո՛չ ասաց թէ՝ իցեմք, այլ թէ՝ իցես: - 495. Եւ ասին սոքա բնականք, զի նախ քան զյանցանելն ի *դրախտին*՝ բնաւորապէս գոյին առ ադամ: - 496. Եօթներորդ՝ ի տարրական հողոյ ստեղծեաց աստուած ադամայ անապական մարմին և եդ ի *դրախտին*. որ մեղօք յանցեալ՝ եղև ապականացու: - 499. Դարձեալ ասեն նոքա, մեր մարմինս ապականացո՛ւ է. իսկ թէ անապական մարմին էառ քրիստոս, ո՛չ արար փրկութիւն մեզ. այլ առաջին բնութեանն ադամայ որ էր անապական ի *դրախտին*: - 500. Ասեմք եթէ, կերակրիլն ո՛չ է մասն ապականութեան. ուստի յա՛յտ է զի ադամ նախ քան զյանցանելն ի *դրախտին* կերակրիւր և ո՛չ էր ապականացու. այլ անապական: - 501. Եւ թէ ոք ասիցէ թէ՝ ադամ ևս ապականացո՛ւ էր և *դրախտն*: - 501. Ասեմք մեք, թէ արտածորումն մարմնոյ ո՛չ ունէր մարդն ադամ նախ քան զմեղանչելն ի *դրախտին*. որպէս նոյ ի տապանին. և մանուկն իննամսեայ յարգանդին: - 502. Եւ խորհուրդ նաւատակեաց ի *դրախտին* աւանդեցաւ յամենայն պտղոյ ուտել և ի միոյն ոչ: - 510. Եւ այլք ասեն թէ՝ խ օր յերկրաւոր *դրախտին* եկաց ինքն և յարուցեալքն ընդ նմա. և մխիթարեաց զեղիա և զենովք: - 521. Իններորդ՝ և յայսմ կողմա՛ն է և աստուածատունկ *դրախտն*: - 555. Նա՛խ՝ զի առաջին մարդն ի *դրախտին* որկորստութեամբ մեղաւ. և այն առաջին մեղք եղև մարդկայինս բնութեան: - 561. Նոյնպէս և ի *դրախտին* նախ օրհնեաց աստուած և ասէ «աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր»: - 610. Նա՛խ՝ զի եկեղեցին է ի խորհուրդ *դրախտին*. ուր անասուն

ո՛չ մտանէր. նոյնպէս և յեկեղեցի ո՛չ մտանէ: - 617. Երկրորդ՝ եկեղեցի՝ *դրախտին* է օրինակ. որ զմեռեալսն մեղօք արտաքսեաց: - 617. Դարձեալ՝ ունի զխորհուրդ անկմանն ադամայ որ վերջին խօսեցաւ աստուած և եհան ի *դրախտէն*: - 641. Զի յորժամ ելին ի *դրախտէն* **Ե** օր անսւաղ պահեցին: - 650. Զի արտա՛քս եմք որպէս ադամ ի *դրախտէն* և ի սուգ մտեալ: - 650-651. Խորհուրդ պահոց նախ ի *դրախտին* եդաւ մարդոյն. յամենայնէ ուտել և ի միոյն չուտել: - 652. Երկրորդ, յետ ելիցն ի *դրախտին* **Ե** օր սուգ պահեաց անսուաղ. - 653. Դարձեալ, նշանակէ՛ բարեկենդանն *զդրախտին* կեանքն. ամենայնիւ առանց կարօտութեան: - 657. Ա՛րդ՝ զգեստին հանելն նախ նշանակէ թէ՝ զկենցաղ աշխարհի մերկացաւ և զգեցաւ զգեստ լուսեղէն որ ի *դրախտին*: - 671. Նա՛խ՝ արտասւեմք զբնութիւնս մեր թէ վասն մեղաց յո՞րպիսի կենաց *դրախտին* ի մահ անկաւ և ի հող դարձաւ: - 676. Նա՛խ՝ զի յետս դառնամք մահուամբ, այսինքն ի *դրախտն* և ի մայր մեր, պա՛րտ է զի նախ ոտքն ընթասցի: - 676. Նախ ի դէմս *դրախտին* ուստի արտաքսեցաւ մարդն: - 677. և դարձեալ ի *դրախտն* ամփոփէր զգիշերն: - 681. Եւ այլք ասեն ի *դրախտին* լինիլ զկայանս հոգւոց արդարոց և մեղաւորաց մինչ ի կատարած աշխարհի: - 686. Ապա թէ ոչ՝ ո՛չ կարէ մեղաւոր հոգին ելանել յերկինս. ուստի և հրեշտակք վասն մեղաց անկան. և մարդն ի *դրախտէն*: - 689. Այլ և որպէս նախաստեղծքն ի *դրախտին* ո՛չ ամաչէին. նոյնպէս և սուրբք ի յարութեանն. զի ծածկեալ են ի ներքուստ հոգւոյն լուսաւորութեամբն, և արտաքուստ պսակաւն և փառօք: - 726. Չորրորդ յա՛յտ է յօրինակաց. զի գաւազանն ահարօնի որ ծաղկեցաւ՝ օրինա՛կ էր խաչին. և տախտակքն բանին. և ծառն կենաց որ ի մէջ *դրախտին*: - 733. Եւ աւազակն միով խոստովանութեամբ եմուտ ի *դրախտն*: - 745. Եւ ասի սա նման փայտին կենաց որ է՛ ի մէջ *դրախտին*. այսինքն քրիստոս՝ որ է՛ ի մէջ եկեղեցոյս կարգեալ: - 755. Քանզի որպէս փայտն այն ասի քան զայլ փայտս *դրախտին* կանաչագոյն: - 755. Երբեմն *դրախտ*՝ վասն պէս պէս և զանազան բարեացն: - 757. Զի թէ և սակաւ ժամ լինի մնացեալ ի կենացն որ քան աւազակին ի յելս շնչոյն. և նա՛ յառաջ քան զամենայն արդարս եմուտ ի *դրախտն* աստուծոյ ընդ տեառն: - 758. Այլ և են ոմանք որ ասեն զերկիրս մաքրեալ երեսնաւոր. և *զդրախտն* վաթսուննաւոր. և զվերինն երուսաղէմ հարիւրաւոր: - 758. Ո՞րպէս ասեն վարդապետք թէ յառաջին կեանս *դրախտին* ելանելոց եմք: - 758. Ասեմք առ այս, եթէ առաջին կեանքն *դրախտին* ո՛չ զայն իմանան վարդապետք զոր ունէրն ադամ. այլ զոր խոստացաւն ադամայ եթէ պահեալ էր զպատուիրանն. որ նոյն ինքն է արքայութիւնն երկնից ի տեղի անկելոց հրեշտակացն: - 758. Այլ պարզաբար զնոյն ինքն կեանք *դրախտին* ի յարութեանն ո՛չ է իմանալ: - 758. Եւ արդ՝ ի յաւարտիլ դատաստանին յորժամ ասէ եկա՛յք, վասն է՞ր իջանեն յերկիր, կամ ի *դրախտն* բնակին: - 759. Այլ և արդեամբք սրբոց ոռոգեցաւ, լիցի որպէս *զդրախտ* աստուծոյ անուշահոտ ծաղկօք և մանուշակօք և մարդօք զարդարեալ և գեղեցկացեալ: - 759. Դարձեալ ի վեր յառաջին բանն մեր երթիցուք որ էր ծառ կենաց ի մէջ *դրախտին*: - 767. Երրորդ՝ ծառ կենաց իմանին տունկք իմանալի *դրախտին*. այսինքն բանակք երկնաւոր զօրացն. միշտ յարազուարճ բերկրանօք բարձրացեալ ի փառս: - 767. Դարձեալ, ծառ կենաց է աւետարանն սուրբ տնկեալ ի մէջ եկեղեցւոյ *դրախտին*. բերելով պտուղ կենաց զիմաստութիւնն երկնաւոր. որ կեանս տայ ճաշակողացն զնա. և միշտ շնորհս բժշկութեան և թողութեան մեղաց: - 768. Արդ ահա ա՛յսոքիկ են ծառ կենաց ի յերկինս և յերկրի տնկեալ. փոխանակ ծառոյն կենաց ի *դրախտին* եդեմայ. յորմէ հրաժարեցոյց և պարսպեաց բոցեղէն սրովն զճանապարհ նորին: - 771

**ԴՐԱՄ +** Երկրորդ՝ զի **Ժ**երորդ է մարդս կարգեալ ի թիւ նոցա ըստ հարիւրերորդ մոլորեալ ոչխարին, և կորուսեալ **Ժ**երորդ *դրամին*: - 134. Իսկ *դրամն* և տախտակն ուր գրեալ է պատկեր թագաւորին՝ միայն նման է թագաւորին ըստ ձևոյն. այլ ո՛չ ըստ բնութեանն: - 273. Այլ ա՛յս է ճշմարիտն, զի ամենայն բարեկամքն որ ժողովեցան յետոյ և մխիթարեցին զնա՛, իւրաքանչիւրքն բերին մէն մի որոջ ոչխարի և **Ղ** *դրամ* ոսկի անգիր ընծայեցին նմա ի սատար խրախութեանն...: – 326. Դարձեալ ցուցանէ՝ ի լրման ժամանակի տասանց միոյ կորուսեալ *դրամին* ի խնդիր ելեալ: - 376. ...և **Լ** *դրամ* տուգանս տացեն յեկեղեցին: - 652. **Ծ** *դրամ* յեկեղեցին տացէ. և **Լ** *դրամ* յաղքատս. և ապա՛ հաղորդեսցի: - 652. Եւ դարձեալ ի ճառս անառակին և կորուսեալ *դրամին* և մոլորեալ միոյ ոչխարին և անկելոյն ի ձեռս աւազակին, զնոյնս ուսուցանեն մեզ հարքն հոգելիցք արտայայտել: - 775

**ԴՐՈՇՄ +** Իններորդ՝ սպանմանն աբէլի գործիք եղև որպէս ասեն. ուստի գայլախազ կոչեցաւ. զի սրբեսցի *դրոշմաւն*: - 415. Զի թլփատութիւնն *դրո՛շմ* էր նոցա և որոշօղ: - 418. Երեսուներորդ, Վասն *դրոշմին* և ա՛յլ կատարմանցն: - 526. Առ աստիճանս այս պարունակի է խորհուրդ եկեղեցւոյ. որ է՛ Մկրտութիւնն. *Դրոշմն*. Պատարագն. Ապաշխարութիւնն. Կարգ քահանայութեանն. Պսակն. և Օծումն: - 573. Երկրորդ *դրոշմն*: - 587. Երկրորդն *դրոշմն*. որ է՛ պատերազմողացն ընդ դէմ թշնամոյն սատանայի: - 587. *Դրոշմն* է՛ խորհուրդ յուսոյ. զի յուսալով ի զօրութիւն սուրբ հոգւոյն կարողանամք ընդ_դէմ թշնամւոյն: - 587. *Դրոշմն*

ընդ դէմ անկարութեան: - 588. Չորրորդ՝ զի մկրտութիւնն է անքակտելի կնիք ի հոգին. որպէս կարգն և *դրոշմն*. վասն որոյ ո՛չ կրկնին որք յանուն սուրբ Երրորդութեանն մկրտեցան: - 590. Զի՞նչ է *դրոշմն*: - 593. *Դրոշմն* է հաստատութեան խորհուրդ. որ տուեալ լինի առ ի զօրացնել և քաջացնել զմարդն: - 593. Եւ գիտելի է, զի որ ի ճակատն և ի սիրտն և ի թիկնամէջն օծանէ, այն *դրոշմ* է. և որ զհինգ զգայութիւնսն օծանէ՝ այն ի խորհուրդ օծմանն է ծածկապէս: - 593. Եւ թէ ոք ասիցէ, *զդրոշմն* ո՛չ ունիք. զի եպիսկոպոսն տայ որպէս ազգն Ֆռանկաց: - 594. զոր ասացաք ի վերոյ թէ՝ *զդրոշմն* և զառաջին օծումն և զվերջին օծումն կատարեմք ի մկրտելն: - 604. Զի մե՛ք կատարեմք զխորհուրդս. և ի մեզ կրեմք դարձեալ. որպէս մկրտութիւնն. *դրոշմն*. պատարագն. և այլն: - 614. Ութերորդ՝ զի ամենայն խորհուրդ եկեղեցւոյ՝ խաչիւն կատարի. Մկրտութիւն. *Դրոշմն*. Պատարագն. և այլն: - 616. Զոր օրինակ նշան *դրոշմի* կայ ի մէջ քո՝ և անասնոյն՝ և տանն. զի եկեալ ի տանէ երթայ խառնի ի հասարակ նախիրն. - 719. ...և ի դառնալն այսու նշանաւս ճանաչէ զքեզ և զտունն. և դու ճանաչես քո *դրոշմիւն* զնա: - 719. Նոյնպէս հոգին բաժանեալ և մարմին լուծեալ ի հասարակ տարրն, այսու խառնեալ *դրոշմիւս* ճանաչեն զմիմեանս անսխալապէս: - 719. Զոր օրինակ մի պատկերն դրոշմի ի զանազան մոմս. և ի հալիլ մոմոյն *դրոշմ* պատկերին ժողովի և մնայ ի մատանւոջն: - 732. Նորս խորհրդոյ շնորհք ոմանք են անիբաց ղնելիք. զի են կնիք ի հոգին անփոփոխ գոլով ընդ նմա. որպէս է՛ շնորհք կնքոյն *դրոշմին* և կարգին: - 783

**ԴՐՈՇՄԵՄ +** Զորօրինակ՝ արուեստաւոր ոք կամիցի դրօշել ի քարեայ պատկեր, նախ նկարէ՛ ի միտս իւր զձև պատկերին. և ապա հատանէ զքարն և տաշէ՛ և *դրօշմէ՛* զկերպն ըստ այնմ նմանութեանն որ էր ի միտս ծնացեալ: - 258. Եւ զի պարզև խաչին է հոգին սուրբ, նմին իրի յիշատակեալ զհոգին սուրբ՝ խաչիւ *դրոշմեմք* զդէմս մեր: - 522. Երրորդ՝ միով մատամբ զնշանն *դրոշմել*: - 553. Ասեմք թէ՝ առնեմք ըստ ազգին յունաց. որ որպէս քահանայն պատարագէ և մկրտէ, նոյնպէս և *դրոշմէ* ըստ սրբոյն դիոնիսեայ: - 594. Եւ քահանայապետ ասէ զնա՝ որ պատարագէ և մկրտէ և *դրոշմէ*. զի նա՛ է պետ և աւագ ի կատարմունս խորհրդոյն: - 594. Դարձեալ ասեմք թէ՝ քահանայքն մեր ունին իշխանութիւն *դրոշմելոյ* զոր նոցա եպիսկոպոսն դնէ. ապա ուրեմն իշխանակիցք են քահանայք մեր և եպիսկոպոսք նոցա: - 594. Իսկ մարդս եկեղեցի, մկրտի ջրով և *դրոշմի* սուրբ մեռոնաւ, - 614. Ա՛րդ ջուր և գինին և մեռոնն նշանակեն ի մեզ զջուր սրբութեան աւազանին. և մեռոնն որով օծաք և *դրոշմեցաք*. և ապա ճաշակմամբ մեղսաքաւիչ արեանն կատարեցաք: - 615. ...որով *դրոշմեալքն* յետ արտաքս ելանելոյ ի մարմնոյս, թռչին յանապատն ի մեղաց յերկինս կերակրիլ անդ յուսով մինչև լնու թիւ կատարման աշխարհի: - 703. Եւ զամենայնսն *դրոշմէ՛* ի ճակատն և յաջոյ ձեռն. որպէս ասէ տեսիլն յօհաննու: - 707. Եւ զայս ի ճակատն և յաջոյ ձեռինն տայ *դրոշմել*: - 707. որպէս ասէ սուրբ առաքեալն թաղէոս, թէ (որպէս տախտակ գրեալ կամ մագաղաթ *դրոշմեալ*՝ ի բոլոր էութիւնս մեր գրեալ լինին գործք մեր ներքոյ և արտաքոյ. նոյնպէս և առ հրեշտակս լինին գրեալ:) - 729. Զոր օրինակ մի պատկերն *դրոշմի* ի զանազան մոմս. և ի հալիլ մոմոյն դրոշմ պատկերին ժողովի և մնայ ի մատանւոջն: - 732. Տէրն զգանձն մատանեաւ *դրոշմեալ* տայ ի ծառայս. և մատանին ի ձեռին է. երբ խնդրէ՝ թերին յանդիմանի: - 769. Ոչ ունիմք վեհագոյն քան զհաւատն. տիպ աստուծոյ ճշմարտի *դրոշմեալ* ի մեզ ի բնէ. մեր հրահանգ և զարդ: - 769

**ԴՐՈՒԱՏԻՔ +** Որպէս և ոմն ի Պետաց մերային ազգաց՝ զհաւատն *դրուատեաց* ասելով, Հաւատ ի հօրէ սկսեալ յորդի և ի հոգի վերաբերի: - 769

**ԴՐՈՒԹԻՒՆ +** Ծանիր և զայս ուշիմ մտօք, զի ամենայն աստուածաբանութիւն նախ յերկուս բաժանի. այսինքն *դրութեամբ* և բացբարձմամբ: - 123. Ա՛յս է աստուածաբանութիւնն *դրութեամբ* և բացբարձմամբ. որ է՛ ըստորասութեամբ և բացասութեամբ. և ճառելի և անճառելի: - 123. Երկրորդ՝ զի ընդդիմակ բառնալոյն՝ *դրութիւնն* է. և ընդդիմակ ուրացութեան՝ խոստովանութիւնն: - 124. Ա՛րդ՝ մի և նոյն է *դրութիւն* և խոստովանութիւն. ապա մի և նոյն է բառնալն և ուրանալն: - 124. Երկրորդին պատասխանեմք եթէ՝ ո՛չէ նոյն *դրութիւն* և խոստովանութիւն. որպէս յորժամ ասեմք դնելով թէ՝ չա՛ր է. խաւա՛ր է. և մե՛ղք է. ահա այս ուրացութիւն է և պակասութիւն: - 124. Եւ յորժամ ասեմք ո՛չէ չար. ո՛չէ խաւար. ո՛չէ մեղք. ահա այս խոստովանութիւն է և ո՛չ *դրութիւն*: - 124. Բաղկացական է, որ ընդ մարմնոյ մասնկանցն գոյանայ ի ներս և ի դուրս. վերոյ և ներքոյ շուրջանակի. զի իւրաքանչիւր մասունք ի տեղին ունին *զդրութիւնն*. և կայացեալ ի բոլորն: - 174. և Հրոտից, ըստ *դրութեան* է. զի հո՛ւր է ոտիցն որ այրէ՛ ներքուստ ի վեր ջերմութիւն արեգականն: - 201. Երրորդ՝ ըստ կարգի *դրութեանցն*: - 221. Նաև ըստ երից *դրութեանց* տեղեացն. որ է՛ դրախտն. և աշխարհս այս. և հանդերձեալն: - 278. Իսկ շաղադրեալն միաւորութիւն՝ և սա՛ բաժանի յերիս. այսինքն ըստ *դրութեան*. ըստ ժողովման. ըստ կոչման: - 476. Առաջինն ըստ *դրութեան*, որպէս կէտ. գիծ. մակերևոյթ. և մարմին: - 476. Նախ՝ ըստ *դրութեան* կարգի աղօթիցն որ յեկեղեցիս նոցա: - 554

**ԴՐՕՇԱԾ +** Երկրորդ՝ զի թէ այլ և այլ էր հոգի, ի յայլ հոգւոյ տեղիս ո՛չ բնակէր այլ հոգի որպէս յայլո՛յ կաղապար. և ա՛յլ *դրօշած* ի յա՛յլ կնիք. այլ մի է. վասն այն որ յետոյ երևի, յառաջնոյն խառնուածն կարէ՛ բնակիլ: - 259

**ԴՐՕՇԱԿ +** Եւ ի գիշերին էհատ դաւիթ *զդրօշակն* սաւուղի. և յառաւօտուն աղաղակեաց առ նա: - 513

**ԴՐՕՇԵՄ +** Ջորօրինակ՝ արուեստաւոր ոք կամիցի *դրօշել* ի քարեայ պատկեր, նախ նկարէ՛ ի միտս իւր զձև պատկերին. և ապա հատանէ զքարն և տաշէ՛ և դրօշմէ՛ զկերպն ըստ այնմ նմանութեանն որ էր ի միտս ծնացեալ: - 258

**ԴՕՇ -** Աջոյ երին. յաջողակ բարի գործն. և Երբուծն *դօշն* է. որ ունի զսիրտն: - 360

# Ե

**ԵԲԵԹԵԱՅ** - Մարիամ ամուսնացաւ ի բեթլէհէմ և ծնաւ զսողոմի զմանկաբարձն յիսուսի. ո՛չ որ մայր եղև որդւոցն *զեբեթեայ*. զի այն. սողովմէ դուստր է յովսեփայ աստուածահօրն...: - 460. Ասաց զերկոսինս զայս յակոբոս *զեբեթեայ*: - 573. Որ և հարցանէր որդւոցն *զեբեթեայ* թէ՝ կարօ՞ղ էք ըմպել զբաժակն. այլ ո՛չ թէ միայն նոցա ետ և յայլ առաքելոցն արգել: - 600. Եւ պետրոս և որդիքն *զեբեթեայ* յորժամ լուան ի հօրէ «դա՛ է որդի իմ սիրելի դմա լւարուք», ապա և նոքա վկայեցին, և խաչեցաւ քրիստոս: - 742

**ԵԲԵՐ** - Ասեմք եթէ՝ քաղդէացին որ է՛ արապն. զի մնաց առ *եբեր* և ո՛չ խառնակեցաւ: - 298. Եւ մինչ զգիրն յառաջ կալան թէ այսո՛ւ փորձիմք, այլ ո՛չ ոք գիտաց կարդալ՝ բաց յեբրայեցւոցն. վասն այն ասի *եբեր*, թէ զառաջին լեզուն նա՛ *եբեր*: - 299. Եւ այլք ասեն թէ՝ գետն առ որով բնակեալ էր նա՝ փայտ բերէր, անտի անուանեցաւ *եբեր*: - 299. Անունք Կանանց Նահապետացն ...*եբերայն* զուրա՛: - 299

**ԵԲՈՒՍԱՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն ...*եբուսացիք*: - 298

**ԵԲՐԱՅԱԿԱՆ +** *Եբրայական* լեզուաւն կարդային որ ունէր դեռ զառաջինն. որպէս ասէ մեր լուսաւորիչն: - 299

**ԵԲՐԱՅԵՑԵՐԷՆ +** *Եբրայեցերէն* կոչի արնաւիմէ. այսինքն ուրանամ: - 707

**ԵԲՐԱՅԵՑԻ** (ազգ) **+** Իսկ *եբրայեցիքն* ո՛չ այսպէս, այլ՝ առաջին օր արարչութեան է՛ նոցա աւելեացն **ա**: - 191. Վեցերորդ՝ մուտն նիսանայ. որ է սկիզբն տարւոյ *եբրայեցւոցն*. և կազմութիւն մարդոյ ի սկզբանն: - 196. Քանզի *եբրայեցիք* և մակեդոնացիք՝ Զաւելեաց աւուրքն դնեն գլուխ տարւոյ. և ասեն օր առաջին. և **բ**. և **գ**. և **դ**. և **ե**. և վեցն մուտ Նիսան ամսոյ. որ թարգմանի կազմութիւն: - 200. Ոմանք **իբ** ասեն ըստ նշանագրացն *եբրայեցւոց*. և այլք **իդ** ըստ ժամուց աւուրցն: - 226. Եւ երկրորդ ամիս ասէ *զեբրայեցւոցն* որ է իար: - 294. Եբրայեցիք: - 298. Իսկ ոմանք զարաբացիս և զմակեդոնացիս՝ *յեբրայեցիս համարին* և կէսք ոչ: - 299. **Իսկ վիրք և աղւանք ո՛չ կատարեալ գրով. այլ առեալ ի հայոց. որպէս ասորին և խուժայէլացին *յեբրայեցւոցն*:** - 299. Եւ մինչ զգիրն յառաջ կալան թէ այսո՛ւ փորձիմք, այլ ո՛չ ոք գիտաց կարդալ՝ բաց *յեբրայեցւոցն*. վասն այն ասի եբեր, թէ զառաջին լեզուն նա՛ եբեր: - 299. Չորրորդ՝ դաւիթ ասէ «իջցէ՛ որպէս զանձրև ի վերայ գեղման». և *եբրայեցիք* զայս սաղմոսս ի սողոմոն ասեն...: – 421. Զի ի երկու տառք են Ալֆա փետացն *եբրայեցւոց*: - 451. ...իսկ *եբրայեցիք* զամենայն շաբաթսն ո՛չ թուէին ի համարն. վասն որոյ նուազի՛ նոցայն: - 451. Ըստ լեզուիս մեր՝ օծեալ. ի հոռոմն քրիստոս. և *յեբրայեցին* մեսիա թարգմանի: - 474. Եւ *եբեր* միայն պահեաց անխառնակ զնախնական լեզուն: - 551. *Եբրայեցիքն* առաջին դասքն չասէին ալէլու. այլ զոր միայն քահանայքն երգէին ալէլուով էր...: – 630. Դարձեալ՝ ի *յեբրայեցի* լեզուն «ալ», ասէ թէ՝ գայ յայտնեսցի. «էլ», աստուած. «ուիայ», օրհնեցէք և գովեցէք զկենդանին աստուած: - 644. Ովսաննայ՝ ի *յեբրայեցւոցն* ի մերս՝ փրկութիւն լսի. - 644. Նշնակութիւն է **գ** ազգ գրոյն ի վերայ խաչին. *Եբրայեցի*. Յունաց. և Դաղմատ: - 645. Վասն որոյ ի պատարագն յիշատակի *եբրայեցին* և յունացն: - 645

**ԵԲՐԱՅԵՑԻ** (Նոր կտակարանյան գիրք) **+** Երեքտասաներորդ՝ պօղոս *յեբրայեցւոցն* ասէ, «ի մտանելն իմում յաշխարհս՝ մարմին հաստատեցեր ինձ»: – 73. Ո՞ր քան են և ո՞րք գիրք սուրբք հին և նոր կտակարանք ...*եբրայեցւոց*: - 450. Ապա ուրեմն հաւատարիմ և ճշմարիտ անսուտ խոստումն է աստուծոյ, զորմէ ասէ առաքեալն *յեբրայցւոցն*. «**բ** անփոփոխելի իրօք որով անհնա՛ր է ստել աստուծոյ»: – 457. Ութերորդ, ասէ առաքեալն *յեբրայեցիսն*, «սոքա ամենեքեան վկայեալք ի հաւատոց՝ չև ևս ընկալան զաւետիսն աստուծոյ. վասն մեր լաւագոյն համարեալ. զի մի՛ առանց մեր կատարեսցին»: – 692. Չորրորդ ի դատաւորէն զի նստեալ է ի յաթոռ շնորհաց. ըստ առաքելոյ *յեբրայեցւոցն* «անկցուք առաջի աթոռոյ շնորհաց նորա և գտցուք զողորմութիւն ի դէպ ժամանակի»: - 742

**ԵԳԻՊՏԱՑԻ +** Երբեմն զառաւել զօրութիւնն. ըստ այնմ որ ասէին գէտքն *եգիպտացւոց*՝ «մատն աստուծոյ է այս»: – 62. Քանանէ, Վասն կախարդացն. և խօսից դիւացն. և խստութեան սրտին. և կողոպտելն *զեգիպտացիսն*: - 283. Եւ այս են **իբ** լեզուքն ...*եգիպտացիք*: - 299. Իսկ զեղեցկախօսութիւն լեզուաց ...Խափարածայն *եգիպտացին*: - 299. Չորեքտասաներորդ՝ *եգիպտացիքն* էին թշնամիք, և երկիր պագին յովսեփայ: - 314. Ինննժ, յովսէփ ստացաւ ոսկի և զարծաթ և զերկիրն *եգիպտացւոց*՝ փարաւոնի. այսինքն զզէնս սատանայի. զի փարթամութիւնն մեծ զէն է սատանայի որովք գործէ՛ զամենայն պղծութիւնս. որպէս երկիրն սոդոմայ պարարտութեամբ գործէր զմեղս: - 314. Երրորդ, մովսէս **ժ** հարուածովք տանջէր *զեգիպտացիսն*: - 328. Հինգերորդ՝ բորոտիլն զմահն *եգիպտացւոց* նշանակէր. և ողջանալն զկենդանանալն որդւոցն իսրայէլի որ ի մահ գրաւեալ էին: - 332. Երկրորդ՝ ցոյցք է տկարութեան *եգիպտացւոցն*. որ ո՛չ կարացին ընդ դէմ կալ տկար զեռնոցն: - 333. Զի արժանաւորացն ջուր էր

իսրայէլացւոցն. և անարժանիցն արիւն *եգիպտացւոցն*: - 333. Վասն է՞ր հրամայեաց խաբել և կողոպտել *զեգիպտացիսն*: - 336. Զի՞նչ էր որ եհար զանդրանիկս *եգիպտացւոց*. և էառ զանդրանիկս իսրայէլի. և զայն ևս փոխեաց և էառ զղևտացիս: - 380. Երրորդն՝ ի դէմս *եգիպտացւոցն*: - 395. Զի *եգիպտացիքն* են հեթանոսք երկրի: - 395. Ըստ մարմնոյ յա՛յտ է զի երկիրն *եգիպտացւոց* դա՛շտ է. վասն այն նեղոս գետն արբուցանէ զնա՛: - 398. Երրորդ՝ վախճանեալ մովսէս ի լերինն, և միքայէլ փոխադրէր զմարմինն. սկսաւ սատանայ հայհոյել զուրբն և սպանօղ անւանել վասն հարկանելոյն *զեգիպտացին*. վասն որոյ սաստեաց նմա հրեշտակապետն: - 410. Յովսէփ միայն, և *եգիպտացիք* բազում: - 551. Կամ լինէիր պատւեալ որպէս զյովսէփ. որում երկրպագէին *եգիպտացիքն* որպէս աստուծոյ: - 761

**ԵԳԻՊՏՈՍ** - Երրորդ՝ ելք ժողովրդեանն իսրայէլի *յեգիպտոսէ*: - 196. Այսպէս *յեգիպտոս* հուրն որ ընդ կարկտին իջանէր, վասն ազդու զօրութեանն՝ զկենդանիսն սպանանէր, և մարմինքն ամբո՛ղջ մնային: - 204. Նաև *յեգիտպս* **ղճ** ամ խոստացաւ ծառայութեան. և զերեսուն ամն յաւել վասն մեղաց ժողովրդեանն: - 292. Հինգերորդ՝ յովսէփ ի տան հօրն ազա՛տ էր, և *յեգիպտոս* եղև ծառայ: - 313. Այլ և բազում բաղդատութիւն է մուտն իսրայէլի *յեգիպտոս* և ելն անտի: - 314. Եւ *եգիպտոս* յետ մահու: - 314. Երրորդ՝ ի քանան ո՛չ մնաց ոք ի նոցանէ, և ո՛չ ոք ի յելսն *յեգիպտոսէ* : - 314. Ութերորդ՝ որպէս իջեալքն *յեգիպտոս* ընդ հարաւ մտին ի գեսեմ ի պարարտ երկիր: - 315. Եւ բազմակեցութեամբ էհաս մինչև յելսն *յեգիպտոսէ*: - 320. Եւ տէրն զերկիր շարժեաց և զգերեզմանս եբաց. և **գ** ժամ խաւար էած փոխանակ **գ** աւուր խաւարին *եգիպտոսի*: - 329. Քանևթ, մովսէս միայն եմուտ *յեգիպտոս* և բազմօք ել: - 329. *Եգիպտոսի* իշխանին քանթիս կոչէին որ չարչարիչն էր իսրայէլի: – 330. Նա՛խ՝ մորենին է՛ նշանակ ժողովրդեանն իսրայէլի *յեգիպտոս*, որ վառեալ տանջիւր և ո՛չ սպառիւր. այլ առաւելոյր օրհնութեամբն աստուծոյ: - 331. Չորրորդ՝ ի ձեռն յովսեփայ ժողովուրդն էջ ի *յեգիպտոս* և եղև չարութիւն: - 332. Երրորդ՝ ժողովուրդն չարախայտ եղև *յեգիպտոս*. մինչև արկաւ ի ծոց խնամոցն աստուծոյ և ողջացաւ: - 332. Վասն է՞ր տկար զեռնօք տանջեաց *զեգիպտոս*, և ո՛չ առիւծ կամ արջ կամ այլ ինչ հրաշունչ կենդանեօք: - 333. Երկրորդ՝ յօրինակ ժողովրդեանն իսրայէլի. զի սրբութեամբ էջ *յեգիպտոս* և պղծեցաւ ի գործոց նոցա. մինչև սրբեցաւ յամպն և ի ծովն. և ճաշակեաց զմանանայն: - 333. Երկրորդ, զի ագա՛հք էին, և վասն զարդուն ելցեն *յեգիպտոսէ՛*: - 336. Երրորդ, զի թէ *յեգիպտոս* դարձցին՝ ո՛չ իշխեսցեն. զի ի գողօ՛նս էր այն նոցա: - 336. Բոլորն ամենայն **ղճլ** ա՛մ է յաւետեացն աբրահամու մինչև յելսն *յեգիպտոսէ՛*. այլ զերկու **ճե** ամն հարքն յերկրին քանանու բնակեցան. և զբ ճիե ամն որդիքն *յեգիպտոս* կացին...: – 337. Յորո՞ւմ աւուր ել ժողովուրդն *յեգիպտոսէ*, և քանի՞ ամ էր յադամայ: - 337. Յադամայ մինչև յելսն *յեգիպտոսէ* են ամք **դռպթ**: - 337. Եւ անտի ի յելսն *յեգիպտոսէ՛* **շե** ամ: - 337. Որ լինի բովանդակն մինչև յելսն *եգիպտոսի*, **գռոձթ** ամ ըստ եօթանասնիցն: - 337. Նա՛խ՝ զի ո՛չ էր աշխատեալ ի կաւ գործոյն, ո՛չ է առ յընչիցն *եգիպտոսի*: - 338. Երրորդ՝ զի հաւատ մեռելոյն յանդիմանէր զթերեհաւատ կենդանիսն որք սրտիւք *յեգիպտոս* դառնային: - 338. Առաջին, երեքօրեայ սրբութեամբ յիսներեկի աւուրն ելից *յեգիպտոսէ*. որ ընկալաւ զտասնբանեան օրէնս և պատմեաց ժողովրդեանն: - 352. Նա՛խ՝ զի սովոր էին *յեգիպտոս* կռո՛ց զոհել, զայն նուէրքն ի յինքն ընկալաւ: - 355. Է՛ և երրորդ պատճառ. զխոզն ուտէին *յեգիպտոս*, և զարջառ և զոչխար պաշտէին. վասն որոյ հրամայեաց զաստուածս նոցա զենուլ զի չեն աստուածք. և ի խոզենւոյն հրաժարիլ ամենևին: - 355. Երկոտասաներորդ, ոչխար տարևոր մեծի զատկին յելսն *եգիպտոսի*, խորովեալ հրով. և բաղարջ ընդ եղեգի կերեալ: - 359. Դարձեալ՝ զոր ինչ *յեգիպտոս* աստուած պաշտէին՝ սուրբ հրամայեաց. որպէս զանասունս: - 364. Զի յերկրորդ ամն էր առաջին տօնն ելից *եգիպտոսէ*: - 371. Չորրորդ՝ զի յայտնեսցի թէ՝ ի մէջ ծառայութեանն *յեգիպտոս* այնքան բազմացոյց զնոսա խնամքն աստուծոյ. այսքան բազմութիւնս ի տեղիս իւրեանց խաղաղութեամբ բնակեալ՝ ո՞րքան անթիւ բազմասցին: - 377. Անդրանկաց սատակումն *եգիպտոսի*, նշանակէ՛ զանկումն սատանայի յերկնից. և փոխանակ նոցա ընտրեալ և կոչեալ որդի անդրանիկ զիսրայէլ. և զնոսա փոխարկեալ առնու զօծելոց դասս քրիստոնէից ի տեղի նոցա: - 380. Տասն հարւածք էր *եգիպտոսի*, վասն է՞ր միայն զանդրանկաց փոխարէնն խնդրէ: - 380. Նա՛խ՝ զի զա՛յլ հարուածոց փոխն կրեցին զչարչարանքն *յեգիպտոս*. իսկ անդրանկացն մնաց: - 380. Եւ դարձեալ վասն օձին տե՛ս ի հարուածն *եգիպտոսի* ի **ի** գլուխ համարոյն: - 387. Ա՛րդ՝ *եգիպտոս* է՛ նշանակ երկրիս այս. և ծովն կենցաղոյս. և անապատն կայանք հոգւոցն: - 393. Նա՛խ՝ *յեգիպտոս* ընդ փարաւոնի. յորժամ եմք աստ: - 393. Նա՛խ՝ զօրաւոր նշանք և արուեստքն *յեգիպտոս*: - 395. Երրորդ՝ զօրաւոր հարւածքն *եգիպտոսի*, որ ո՛չ ոք կարէր հասանիլ և բռնել զպատիժն. որպէս ոք հարկանէ և դարձեալ բարձրացուցանէ զձեռն: - 395. Ութերորդ՝ և ոմանք զմարմինն մովսէսի զժողովուրդն կոչեն յելսն *եգիպտոսի*. որ հակառակէր ազատելոյ զնոսա *յեգիպտոսէ՛*: - 410. Երրորդ՝ զի առ աբիմելէք նոյնպէս եղև. և որպէս *յեգիպտոս* գորտն. նոյնպէս և անդ մուկն: - 426. Դաւիթ չորս ամ բնակեցաւ ի գէթ մինչ մեռաւ սաւուղ.

և տէր մեր *յեգիպտոս*՝ մինչ մեռաւ հերովդէս: - 437. Ամինադաբ ամաց **խե**՝ ծնանի զնայասոն. և էր սա ամինադաբ սպարապետ զօրուն յուդայի ի հանել մովսէսի զորդիսն իսրայէլի *յեգիպտոսէ*: - 452. Ժողովին ի մովսիսէ՝ և յելիցն *յեգիպտոսէ* մինչև ցշինուած տաճարին ամք **ղճծ**: - 452. Եօթներորդ՝ *եգիպտոսի* կռոց խորտակիլն: - 471. Երկրորդ ձեռագիր հրէիցն. որ յելսն *եգիպտոսի* ասացին մովսէսի. «զոր ինչ հրամայէ աստուած՝ լուիցուք և արասցուք»: – 481. Իններորդ՝ յա՛յտ է յօրինակէն. զի *եգիպտոս* հալոց երկաթի կոչի. նշանակէ՛ զդժոխքն որ տանջէր զհոգիսն: - 507. Որպէս յօրինակէն տեսանի. որ թէպէտ առ հասարակ ելին *յեգիպտոսէ* յանապատն, այլ ոմանք մտին յերկիրն պարգևաց: - 508. Վեցերորդ՝ ի մէջ գիշերի հրեշտակն եհար *զեգիպտոս*. և մովսէս եհան զորդիսն իսրայէլի. որ էր օրինակ աւերման դժոխոցն և ազատութեան հոգւոց: - 512. Եւ յորում ժամու ել մովսէս *յեգիպտոսէ* և եհան զժողովուրդն, ի նոյն ժամն յարեաւ քրիստոս ի մեռելոց և եհան ազատեաց զհոգիսն ի հրահալոց չարութենէ դժոխոցն և ի բռնութեանց իմանալի փարաւոնին: - 512. ...զի օրն այն ուրախութիւն է արդարոց. և կործանումն ամբարշտաց. որպէս երգն այն ուրախութիւն է, և սուգ՝ *եգիպտոսի*: - 630. Չորրորդ, է աւուր բաղարջակերքն ի յելսն *եգիպտոսի*: - 653. Արդ *եգիպտոս* նշանակէ՛ զաշխարհս որ է՛ հալոց չարութեան և տեղի ծառայութեան մեղաց և սատանայի որ է՛ փարաւոն: - 682. Իսկ անարժանքն որ ունէին զսիրտն *յեգիպտոս*, սատակեցան յանապատին և ո՛չ մտին յերկիրն պարգևաց: - 682. Թովմաս ասէ, կին *յեգիպտոսէ* ի գալ լինի. և անդ ուր կինն դովտայ էր ննջէ: - 706. Ի մէջ գիշերի. յորում ժամու հրեշտակն *զեգիպտոս* եհար, և տէրն զդժոխս աւերեաց. յայն ժամու զընտրեալս իւր յաշխարհէ ազատեսցէ: - 734. Եւ լո՛յս էր իսրայէլի, և խաւար *եգիպտոսի*: - 741. Իսկ կշռողականն է զոյգ արդարութեամբ կշռել. որպէս յորժամ ողորմելով միոյն՝ պատժէ՛ զընդդիմակն նորին. որպէս փրկեցաւ իէլ և պատժեցաւ *եգիպտոս*. և յազատիլ բնութեան մարդոյ՝ պատժեցաւ սատանայ: - 747. Այլ ըստ զանազանութեան չափոյն, ոմանք **ժ** են ասացեալ թուով ըստ հարուածոցն *եգիպտոսի*: - 751

**ԵԴԵՄ +** Արդ ահա ա՛յսօրիկ են ծառ կենաց ի յերկինս և յերկրի տնկեալ. փոխանակ ծառոյն կենաց ի դրախտին *եդեմայ*. յորմէ հրաժարեցոյց և պարսպեաց բոցեղէն սրովն զճանապարհ նորին: - 771

**ԵԴԵՄԱԲՈՒՂԽ +** Եօթներորդ՝ *եդեմաբուղխ* երից գետոց հոսումն: - 555

**ԵԴՈՄ** - Ոմանք զսիօն ասեն, և այլք *զեդոմ*, և այլք զարաբիա. որ և անդ ասեն և այլք զգերեզման նորա լինիլ: - 327. Եւ է՛ ի մէջ արաբիոյ և *եդոմայ*. զոր այժմ կոչի թիլգուրան. ուր գերեզման նորա՛ է: - 327

**ԵԶ +** Եւ *եզով* միաբանութիւն. մասամբ և ո՛չ յոգնագոյնս: - 554. Եւ ըստ այսմ միաբանութեան և զմերս տեսանեմք եկեղեցի ունել *եզով* միաբանութիւն առ այլ քրիստոնեայս: - 554

**ԵԶԱԲԷԼ** - Դարձեալ՝ զարդարութիւն գործէր զի հաշտեսցի աստուած. վասն որոյ ինքնին սպան զամենայն. այս զուքծ յիսունսն, փոխանակ մարգարէիցն աստուծոյ զոր եսպան *եզաբէլ*: - 444. Չչորքս զայս՝ Զոքոզիա և Զգոդողիա մայրն, և Զյովաս և Զամեսիա ո՛չ գրէ յազգահամարսն աւետարանիչն վասն լինելոյ դուստր և թոռունք *եզաբելի*: - 452

**ԵԶԱԿԱՆ +** Եւ յա՛յտ է զի *եզական* և անհատն մարդ՝ է զանազանեալ իւր յատուկ որակութեամբն: - 174. Վասն է՞ր *եզական* դնէ զօրէնս իբր առ մի դէմս ասելով՝ «մի՛ սպանաներ և այլն»: – 340. Երկրորդ՝ շնորհք *եզական*. որպէս սրբեալքն յարգանդէ երեմիաս և յովհաննէս մկրտիչ. որպէս ասէ գիրն՝ «յարգանդէ՛ սրբեցի զքեզ»: - 462. Սակայն ըստ ներգործութեան մեծագոյն է սրբութիւն մկրտութեանն. զի տպաւորէ զկնիքն. այլ և բանայ զդուռն արքայութեան. այլ և պատրաստէ՛ զմարդն առ ի խորհուրդս ամենայն. զոր ո՛չ ներգործեն ա՛յլ երկոքին *եզական* շնորհքն: - 462. Երկրորդ՝ զի հրամայեաց *եզական* բանիւ «ա՛յս է մարմին իմ. և ա՛յս է արիւն իմ». որ զմին հացն նշանակէ՛: - 597

**ԵԶԵԿԻԱ, ԵԶԵԿԻԷԼ** - Որպէս տուրքն նաբուգոդոնոսորայ. և աղօթքն *եզեկիայ*. որ յետս դարձոյց զմահ. և այլք բազումք. ապա ուրեմն ո՛չ է հարկ: - 11. Որպէս յորժամ արեգակն և լուսին զտեղի առին առ յեսուաւ. և յետս դարձաւ արեգակն առ *եզեկիայիւ*: - 11. Չորրորդ՝ զայլայլումն լուսաւորացդ. այսինքն զի երբեմն խաւարին, որպէս առ խաչելութեամբն. և երբեմն յետս դառնան և կանգնին, որպէս յեսու և առ *եզեկիա*: - 26. Զնոյն ասէ *եզեկիէլ*. **լբ**: - 28. Եօթներորդ՝ ասէ *եզեկիէլ* թէ՝ «մեսիայն պատերազմի ընդ գօգայ և մագօգայ» զոր ո՛չ արար մեսիայն ձեր: - 28. Զի՞նչ է չորեքկերպեան կենդանիքն զոր ետես *եզէկիէլ*: - 132. Նախ՝ զի զաթոռն մեծ նստողին տեսին *եզէկիէլ* և եսայի, և շուրջ զքերօբէքն և զսերօբէսն: - 135. Իսկ առ հրեշտակս բոլոր շարժումն է ի նոյնէ ի նոյն. որպէս անիւն զոր ետես *եզեկիէլ*. այսինքն ի նոյն աստուծոյ են սկսեալք, և ի նոյն անվախճանապէս մնան: - 142. Նոյնպէս և արդարութիւնն երբեմն յերկարէ՛ զկեանս որպէս առ *եզեկիա*. և երբեմն կարճէ՛ որպէս առ ովսիայ: - 292. Նմանապէս *եզեկիա* և ովսիա և զօրաբաբէլ: - 337. Զոր *եզեկիա* խարտեաց. որպէս մովսէս զգլուխ որբոյն և կորոյս: - 387. Եւ առ *եզեկիա*՝ արեգակն յետս դարձաւ. տիւն եղև ժամս լբ: - 416. Եւ դարձեալ՝ յետ աւելի քան զերեսուն ամ ի զերորդ ամին *եզեկիայ* արքայի յուդայ՝

եւ սաղմանաասար արքայ ասորեստանեայց ի վերայ սամարիայ...: – 447. Եւ յետ **գ** ամի՝ կրկին անգամ եւ յեմ, զյեքոնիա և *զեզեկիել* գերի վարեաց: - 447. Ո՞ր քան են և ո՞րք գիրք սուրբք հին և նոր կտակարանք ...Անգէ: Զաքարիա: Մաղաքիա: Երեմիա: Բարուք: Ողբք: Դանիէլ: *Եզեկիէլ*: - 450. *Եզեկիայ* ամս **իթ**: - 453. Նախ՝ քառադէմ կառքն *եզեկիէլի*, և տէր բազմեալ ի վերայ: - 494. Նաև պաղատիտս թզոյ եդաւ ի վերայ վիրացն *եզեկիայի* և ողջացաւ: - 665. Ապա վասն է՞ր *եզեկիէլ* յերկար ժամանակս նշանակէ զյարութիւնն. - 717. Նոյնպէս և *եզեկիէլ* թանձրամիտ ժողովրդեանն զյարութիւնն ննջեցելոցն ի բազումս բաժանեաց. - 717. Եւ *եզեկիէլ* զչորեքկերպեանն աթոռ ի հրեշտակաց: - 736. Երեք կարգս այսորիկ գուշակեին երեքումբք արամբքն զորս *եզեկիէլ* մարգարէացաւ. փրկելոցն Նոյիւ Յոբաւ և Դանիէլիւ: - 755. Զորօրինակ, քառօզեցաւ նինուէի կործանումն. և նախազուշակ եղև *եզեկիայի* մահ. և ո՛չ մի ի սոցանէ կատարեցաւ: - 779

**ԵԶԵՐԵՄ +** Երկրորդ՝ զի տեսութիւն մտաց հասարակի ընդ գոյութեան էութեան. և ուր *եզերի* բնութիւն՝ անդ և մտաւորութիւն: - 103. Ութերորդ, կեանքն բարի է և անեզր. և մահն չար և *եզերեալ*: - 724

**ԵԶՆ +** Վասն է՞ր աստուածաբան մարգարէքն զտեսիլ երկնայնոցն սոյնպէս անարգ կերպիւ տպաւորեցին. որպէս առիւծ. և *եզն*. աթոռք. և կառք. և այլն: - 131. Երկրորդ՝ անմման նմանութեամբ. որպէս առիւծ. *եզն*. և այլն: - 131. Առիւծն զցասումն. *եզն* զցանկութիւնն. Արծուին զարդարութիւնն բարձրագոյն սոցա թռուցելոյ: - 132. *եզն* անասնոց: - 132. Առիւծն՝ զի թագաւոր է. և *եզն* զի քահանայ է և պատարագ: - 132. Չինգերորդ՝ նշանակէ զչորեսին աւետարանիչքն. մարդն զՄատթէոս՝ զմարդեղութիւն բանին ցուցեալ առիւծն զՄարկոս՝ արիաբա՛ր աւետարանեալ. «և էր ընդ գազանսն» ասէ. *եզն* զՂուկաս՝ յերկարաձիգ պատմութեամբ. և *եզն* պարարակ կոչեցեալ. արծուին ըզՅօհաննէս՝ ի վերուստ զբանն աւետարանեալ: - 132-133. *Եզն* վաստակաւէր. որպէս ղուկաս ընդարձակ զցեղ ազգատոհմին տեառն ցուցեալ: - 133. Եօթներորդ ի մեզ, մարդն բանն. առիւծն ցասումն. *եզն* ցանկութիւնն. արծուին գիտութիւն բարձրաթռիչ զվերինն խորհիլ միշտ: - 133. Եւ անասնոց *եզն*: - 216. Եօթներորդ՝ կաշի. որպէս *եզին*: - 216. **Այլ այժմ վասն զգեստուց պահեմք զոչխարս. և վասն կերակրոյ *զեզինս*. և վասն բեռին զէշս. և վասն բառնալոյ զնեզ զձիս. և վասն զթշնամիս հալածելոյ զշունս. և վասն զթռչունս ըմբռնելոյ զբազէս. և զայլսն նմանապէս:** - 217. Ի գործոյն, որպէս սողուն ի սողալոյն. ի շողոքորթելոյն շունն. ի հեզոյն *եզն*. յառնելոյն առիւծ: - 220. Իսկ զընդհանուր տեսակացն՝ ադամ. որպէս *եզն*. ձի. և այլն: - 220. Սեռիւ նոյն, որպէս *եզն* և ձի: - 236. Լուծք *եզանց* **եճ**: - 321. Եւ յաւուր փորձութեանցն հուր անկեալ յերկնից այրեաց զհօտսն. և ասպատակք աւար առին զուղտն և զէշսն և *զեզինսն*: - 321. Նախ՝ գուժ լծոց *եզանցն* և սպասաւորացն մահ. և գուժկան ձևանայր դև մի ի կերպարանս ծառայիցն յոբայ: - 322. Եւ այսպէս է էին հարուածքն. այսինքն ա՝ *եզինքն*. **բ**՝ էշքն. **գ**՝ ուղտքն. **դ**՝ անասնոց մահն. **ե**՝ սպասաւորաց նոցին. **զ**՝ զաւակաց մահն. **է**՝ մարմնոյն հարուածքն: - 322. Լուծք *եզանցն* **ռ**: - 326. Այլ և նէրք **բժան** իշխանացն սայլս և *եզինս*: - 359. Եւ քրիստոս կոչեցաւ *եզն* պարարակ զօրաւոր և արդիւնարար: - 361. *Եզինքն* արդիւնարարք և բազմաստակ: - 374. Եւ նա՛ ծնաւ *զեզն* պարարակ. որ ողջակէզ եղև արտաքոյ քաղաքին ի դէմս տաճարին: - 383. Եւ մինչ ընթացաւ ի կալն ոռնայի և գնեաց *զեզինսն* և ողջակիզեաց, եհաս ի զ ժամն. որ յառաջն դադարեալ էր սուրն: - 435. Քսաներորդ, **բժան** *եզինք* բարձեալ զծովն: - 441. Իններորդ, զեթէօն՝ այն որ զզօղն ետես ի վերայ զեղման, զհօր իւրոյ *զեզն* պարարակ հրամանաւ հրեշտակին ի մէջ գիշերին պատարագեալ. և զանտառն և զսեղանն բահաղու կործանեալ և զերծեալ ի ձեռաց նոցա. որ էր օրինակ փրկչին. զի նա՛ է *եզն* պարարակ պատարագեալ. և ի մէջ գիշերի զբագինսն դժոխոց կործանեալ և յարուցեալ և ապրեալ ի մահու: - 513. Դարձեալ՝ մատաղն ստեւր և օրինա՛կ է ճշմարիտ պատարագին քրիստոսի որ գառն աստուծոյ և *եզն* պարարակ կոչեցաւ...: – 657. Դարձեալ, ձորն յովսափաթու կոչի ձոր դատաստանի. այսինքն է կալն ոռնայի, ուր դաւթի խոստացաւ անդ առնել դատաստան. յորժամ սեղան շինեաց և պատարագեաց *զեզինսն* և բարձաւ մահն: - 737

**ԵԶՆԱԿ +** Իսկ յովսէփ և *եզնակ* եկեալք ի հայս պատմեցին զամենայն ստուգութեամբ: - 543

**ԵԶՆԱԿ ԿՈՂԲԱՑԻ** - Եւ յովսէփ փաղանացի, և *եզնակ կողբացի* թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի կոստանդնուպօլիս. լուան զժողովոյն և գնացին ի քաղկեդոն. զի չէր յոյժ հեռի ի ճանապարհէն որով գային ի հայս...: - 543

**ԵԶՆԿԱՑԻ ՊԼՈՒԶ ՎԱՐԴԱՊԵՏ** - Հայր և Որդի և Հոգին սուրբ. այսպէս ի մարդն միտքն բանն հոգին. ըստ *եզնկացւոյ պլուզ վարդապետին:* - 271

**ԵԶՐ +** Դարձեալ՝ չափ և սահման ի վերջին *եզր* էութեան նկատէ, և սկիզբն և պատճառ ի յառաջինն: - 23. Դարձեալ՝ հոգին ելանէ իբրև զշաղկապ և միաւորիչ. մի իբրև զմէջ որ շաղկապէ՛ զերկու *եզերն*. և միւս իբրև երեք՝ և *եզր*: - 64. Ո՛րդ՝ եթէ ելանէ ի հօրէ և յորդւոյ, լինի իբրև *եզր* և գ. և ո՛չ իբրև զմիջին: - 64. Սկիզբն

յերկուց բնութեանց. և մէջ` որ է՛ միաւորութիւնն մի բնութիւն. և *եզր* և կատարումն` մի անձն: - 84. Զորօրինակ գիտութիւն մարդկան ի սկիզբն և ի մէջն և *յեզերն* նախ զտգիտութիւն փարատէ՛, և ապա՛ զմիտս լուսաւորէ՛ և կատարէ: - 139. Եւ յորժամ առնու զլոյսն յարևոյն, ի *յեզրն* երկրիս ձևն բոլորակ է` խաւար մնա մէջն: - 187. Վերին *եզրն* կենդանակերպիցն է խեցգետինն. և ներքին` այծեղջիւրն: - 189. Եւ կէսք ասեն թէ` երկրի բնութիւնն աղտաղտուկ է և շօր` որ ծովն ի վերայէ. և որ առ *եզերսն* են` զնոսա լուանան անձրևք և խառնեն ի ծովն: - 208. Եւ ի բաքու *յեզրն* կազբիական ծովուն. ուստի ծծումբն զօրութեամբ ունի զհուրն: - 208. Երրորդ` զի կրէ՛ զջուր ի մէջ իւր, և *յեզերս*, և ի վերայ երեսացն: - 210. Դարձեալ` մէջ և *ե՛զր* է ամենայն ստեղծւածոց որպէս ասացաւ ի վերոյ: - 275. Որ յերուսաղէմէ՛ մինչ ի լիւրիկէ որ է՛ *եզր* աշխարհի` էլից զաւետարանն. և ստացաւ ժառանգութիւն նմին: - 312-313. Յասպիս` նմա՛ն է զըմրխտի դեղնագոյն. գտանի *յեզեր* թորքոմէտոս գետոյ *յեզր* կասբից ծովու: - 348. Վեցերորդ, այն սկիզբն. և աստ մէջ. և անդ *եզր* և կատարումն: - 355. Հինգերորդ` զի մի՛ ընդ դառնալն ի վայր` ողողեսցէ զներքին կողմ *եզերաց* գետոյն: - 414. Ի գիրս բենետիքտոսի հարցեալ եղև թէ ո՞ւր են դժոխքն. և տուաւ պատասխանի թէ` յանկեան և *յեզր* ծովուն ի ներքոյ երկրի ի խաւարչուտ վայրս: - 504. Եւ կրկին սուտ. զի ուր զձուկն կերին` ի գալիլեայ *յեզր* տիբերիայ ծովուն էր դ աւուր ճանապարհ հեռի յէէմէ՛ և ի լեռնէն ձիթենեաց ուստի համբարձաւ քրիստոս: - 511. Չորրորդ` զի շինօղ և հաստատօղ եկեղեցւոյ առաքեալքն են. և ձեռնտու նիւթոց մարգարէքն. *եզր* և պարիսպ վարդապետք: - 535. Զի հայրն և որդին և թոռն որ է՛ գ. և թոռին թոռն որ է՛ դ. որ լինի է, և *եզր* արենակցութեան: - 611. Դարձեալ` մահն *ե՛զր* է հանդիսից որք են ի պատերազմ կենցաղոյս որ քան են: - 667. Եւ դարձեալ որպէս որք *յեզր* ծովուն հասեալ զառագաստ նաւին իջուցանեն. - 676

**ԵԶՐ** (հատուկ անուն) - Ասեմք եթէ` խոստումն աստուծոյ կատարեցաւ ի ժամանակս զօրաբաբէլի և *եզրայ*...: - 28. Իսկ *եզր* աստ ցուցանէ զնոսա սուտս և ապաշնորհս. որպէս ասէ յառաջին *եզր*, «նստան քահանայքն և երգեցիկք, և դռնապանքն նաթանացիք ի քաղաքն իւրեանց. և ամենայն իսրայէլ յիւրաքանչիւր քաղաքս»: - 28. Եւ ոմանք *եզրի*, և կէսք երեմիայի ասեն: - 320. Այլ և ո՛չ անդ է գրեալ բոլորն, այլ ի թագաւորութեանցն որ չէ թարգմանեալ ի մերս. այլ միայն **բ** մնացորդացն զոր *եզր* գրեաց: - 443. Եւ յետ եօթանասուն ամի շինւածոյ տաճարին` ապա արձակեալ նէեմի շինէ զպարիսպն էմի ի **լբ** ամին արտաշէսի. որպէս ասէ գիրքն *եզրի*: - 448. Ուք` *եզրին*: - 451. Եւ սուրբն յոհան օձնեցին *զեզր* կաթողիկոսին և զայլոցն որք թիւրեալք էին զկնի քաղկեդոնի: - 541. Երկրորդն է ժողովն թէոդուպօլսի, որ այժմ կոչի կարնոյ քաղաք. ո՛չ այն զոր յետոյ հերակլ քաղկեդոնիկ ժողովեաց և խաբեաց *զեզր* կաթուղիկոսն հայոց: - 544. Որ կանոնական գլխօք պայծառացոյց զկարգ եկեղեցւոյ և զուղղափառութիւն հաւատոյ. զոր **զ** ամաւ յառաջ եղծեալ էր *եզրի* կաթողիկոսի...: – 545. ...որ *եզր* եղև հաւատոյ ուղղութեան. և հրամանաւ հերակլի հաւանեցաւ ժողովոյն քաղկեդոնի. կացեալ **զ** կաթողիկոսք նոյն աղանդովն որ են այսոքիկ. *Եզր*. Մովսէս. Անաստաս. Իսրայէլ. Սահակ. Եղիա: - 545

**ԵԶՐ ԴՊԻՐ** - Եւ է ճրագարան և է բերան ճրագացն, է արքն մեծապատիւք զօրավիգք թագաւորին. այսինքն յեսու, զաքարիա, խոդէստուբիա, յեդոյիա, յեշոյիա, և *եզր դպիր*: - 346. Եւ յետ նոյն քան ամաց շինութեան տաճարին աւելի կամ պակաս, նա՛խ արձակեցաւ *եզր դպիր*. և յետ նորա նէեմի: - 447-448. Դարձեալ` յերիս ժամանակս ազատեցան ի բաբիլօնէ՛. այսինքն կիւրոսիւ սաղմանասարաւ. դարեհիւ զօրաբաբէլ. արտաշէսիւ *եզր դպիր* և նէեմի: - 448. իսկ երրորդն նէեմի և *եզր դպիր*` կանգնեցին զպարիսպն և զդրունսն. նշանակեն զառաքեալսն զհայրապետսն և զվարդապետսն. որք օրինօք պարսպեն զեկեղեցի, և հանապազ ուսուցանեն զդպրութիւն: - 449

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ +** Եւ առ գիտութիւնն ճանաչումն *եզրակացութեանց*: - 97. Զի մեծ է յառաջարկութեան *եզրակացութիւն*. և ո՛չ բայիւք, այլ` մակբայիւք է փրկութիւն: - 785

**ԵԶՐԱՍ** - Այլ որ ստոյգն է ասեն թէ` մովսէս գրեաց որպէս պատմութիւն, և սողոմոն ստիքսեաց որպէս զիւր բանսն. յետոյ գրեաց և *եզրաս* հոգւովն աստուծոյ երբ ծախեցան գրեանքն ի հրէից: - 321. Ո՞ր քան են և ո՞րք գիրք սուրբք հին և նոր կտակարանք ...Երկու մնացորդացն: Երկու *եզրաս*: Նէեմի: Եսթեր: Յուդիդ: Տուբիդ և տուբիա. որ լինի **ի** երորդ: - 450

**ԵԶՐՕՆ** - Փարէս ամաց **ծթ**` ծնանի *զեզրօն*: - 452. *Եզրօն* ամաց **ծը**` ծնանի զարամ: - 452

**ԵԹԵՐ +** Վասն յատկութեան երկնից. և զի հոմանուն է արփին` և *եթերն* և այլն: - 154. Եւ զայս գիտել պարտ է. զի մեծն ներսէս զհաստատութիւնն` արփի ասէ և *եթեր* կոչէ. զոր արտաքինքն եերորդ տարր ասացին որ ո՛չ երևի մեզ: - 184. Այսպէս և հոմանուն է *եթերն*. այսինքն եերորդ էութիւնն, և տարրական հուրն: - 184. Եւ այլք թէ` իմանալի՛ է լոյս նոցա. և կամ *յեթերէն*: - 222. Եւ օդք այնպէս պայծառանան որպէս *զեթերն*: - 728. Նա՛խ` այն է գալարիլն երկնի, զի *եթերն* որպէս մագաղաթ ծալեալ նուազի և նսեմանայ վասն առաւել

ճառագայթից լուսաւորացն հրեշտակաց և սրբոցն յերկնէ երևեալ: - 729. Այսպէս և օդն յորս եկաց փրկիչն յետ յարութեանն, փոփոխեսցէ զբնական նսեմութիւնն իւր և պայծառասցի որպէս *զեթերն*: - 759

**ԵԹԵՐԱՅԻՆ +** Երրորդն` է վերին մասն օդոյն. և կոչի *եթերային* երկին. զի մերձ ի տարրեղէն հուրն է. և վառի ի նմանէ. զոր թռիչ աստեղաց կոչեմք: - 183. Այլ մեր վարդապետք յերկինս և ի ներքոյ երկնից ասեն. որպէս և կալիստրատոս վկայն առ **ը** երորդ կամարաւն ուր են լուսաւորք և *եթերային* լոյսն: - 686

**ԵԹԷ +** Եւ որովհետև ծանեաք զայս, արդ պատասխանեմք առարկութեանցն, *եթէ* որքան է՛ ի հարկաւոր պատճառ է՛, լինի բացորոշապէս բանն ճշմարիտ. որպէս բան թագաւորի. և մարդոյն մեռանիլն. և արև ծագելն. և լինիլն գարուն յետ ձմռան: - 10. Նախ` *եթէ* չար հիւանդութիւնն և այլն ի հարկէ՛ է, ապա ամենեցուն նոյնպէս պարտ էր գոլ. զի հարկն նոյն է առ ամենեսեան: - 11. Դարձեալ *եթէ* է՛ հարկ, ապա ո՛չ էր անձնիշխան կամք, այլ արդ` *եթէ* ունիմք կամք և է՛ սկիզբն գործոյն ի մեզ և առ մեզ, ապա ուրեմն ո՛չ է հարկ որոյ սկիզբն յայլմէ՛ է: - 11. Դարձեալ, որոյ է իր գործեացն` նորա՛ է և ներգործութիւնն. *եթէ* առնել և *եթէ* կրել. արդ` մարդո՛յ է հոգին և մարմինն և ձեռն. մարդո՛յ է ուրեմն և գործ նոցին, *եթէ* չար և *եթէ* բարի: - 11. Եւ որպէս կիրք ցաւոցն մարդոյն են, զի ըզգա՛յ զկսկիծն. նոյնպէս և կիրք հեշտութեանն նորա՛ են, *եթէ* չարեաց և *եթէ* բարեաց, ապա ուրեմն մեր է ներգործութիւնն և ո՛չ հարկին: - 11. Երկրորդ և թէպէտ իցեն տարրականք և ներհակ որակք` յիմիասին դիպիլն` ո՛չ միշտ հակակային իրերաց. այլ *եթէ* կամք խնամողին հրաման տացէ: - 12. Ասեմք առ այս, մոլորականքն ո՛չ *եթէ* զի ունին ներհակ շարժումն վասն այն կոչին մոլորականք, կամ պատճառք են չարեաց, այլ զի մեք մոլորիմք ի շարժումն նոցա. զի ունին հասարակ շարժումն, և ունին յատուկ շարժումն: - 12. Դարձեալ ասեն, *եթէ* ոչ է հարկ` ընդէ՛ր ոմն քաղաք կործանի և ոմանք ո՛չ. և ոմն նաւ հեղձանի, և ոմանք ի կռիւս անկանին: - 12-13. Ասեմք առ այս, *եթէ* այսու վկայե՛ս և դու մեզ` թէ ո՛չ է հարկ. զի ի բոլոր քաղաքն այնքան բիւր մարդիկ` ծեր և տղայ` ե՛րբ և ո՛ւր ի մի շարժումն աստեղաց ծնան, որք ի միասին կործանեցան. կամ բազմութիւն զօրացն. կամ որք ի նաւին կային. զի սոքա ամենեքեան յայլևայլ ժամանակս և այլևայլ շարժումն աստեղաց էին ծնեալք. ապա ուրեմն ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. Նախ` *եթէ* դու քեզէ՛ն խոստովանեցար *եթէ* ոչ գոյ հարկ. այլ` աստուած և բնութիւնն և արհեստն ևս ներգործեն. ապա թէ է գործ արհեստի և բնութեան, ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. Այլ արդ` *եթէ* չարն յաստուծոյ է` լինի անկարգութիւն աստուծոյ որ է՛ անյարմար: - 13. Այլ արդ` ամենայն պատճառ առաւել է քան զպատճառելին. *եթէ* բարեաց և *եթէ* չարեաց. ապա անհնարին հերձուած է ասել զչարն յաստուծոյ: - 14. Եօթներորդ` *եթէ* չարն է յաստուծոյ, ապա սիրէ զչարն. և *եթէ* սիրէ զչարն, սիրէ և զչարագործս որք սիրեցին զչար: - 14. Ութերորդ` *եթէ* չարն է յաստուծոյ, ո՛չ պատժէ զսատանայ որ չարացաւ. և ո՛չ զչարս ի մարդկանէ, այլ ահա՛ պատժէ՛. չար ուրեմն ո՛չ է յաստուծոյ: - 14. Իններորդ` *եթէ* չարն է յաստուծոյ, ապա և կամի՛ զչարն. յայնժամ լինի կրկին կամք աստուծոյ. չար և բարի. զի կրկին գործ` ի կրկին կամաց առաջագայի: - 14. Տասներորդ` *եթէ* չարն է յաստուծոյ և կամի զչարն, ապա զբարին ո՛չ կամի. ապա թէ զբարին ո՛չ կամի, բարին ուրեմն ո՛չ է յաստուծոյ: - 14. Մետասաներորդ` *եթէ* զբարին ոչ կամի, ապա բարի ո՛չ ոք կարէ լինիլ յեղելոցս. ո՛չ մարդ և ո՛չ հրեշտակք. զի կամացն աստուծոյ ո՛չ ոք հակառակի: - 14. Երկոտասաներորդ` *եթէ* չարն է յաստուծոյ, կամ գիտէ զչարն չար` կամ ո՛չ գիտէ. թէ ո՛չ գիտէ` անգիտութիւն ունի. և թէ գիտէ` գիտութեամբ առնէ զչարն: - 14. Զի *եթէ* բարի է և առնէ զչար, ահա ներհակ գործ է ինքեան: - 14. Վեշտասաներորդ` զի թէ չարն է յաստուծոյ որպէս բարին, և երկուցն սկիզբն է աստուած, և արդ` *եթէ* միևնոյն է սկիզբն երկուցն, անկարելի է ներհակացն ի միասին ունիլ մի սկիզբն. զի լինէր սկիզբն այն ո՛չ պարզ. այլ երկատեսակ. և ո՛չ միեղէն` այլ բաժանեալ և այլայլեալ. նաև լինէր ինքն ինքեան հակառակ, և յառաջ եկելոցն ի նմանէ: - 14. Եւ *եթէ* երկուցն **բ** է սկիզբն, և այսպէս ի յաստուած երևի երկու սկիզբն, կամ երկու անսկիզբն ըստ մանիքոսի: - 14. Ասեմք առ այս նախ` *եթէ* կրկին է պատճառ. հուպ և հեռի: - 15. Նախ *եթէ* կամացն աստուծոյ ոչ ոք է ընդդէմ. և որպէս կամի այնպէս առնէ. այլ չար ո՛չ կամի և ո՛չ առնէ: - 16. Դարձեալ ասեմք` թէ կամքն աստուծոյ ո՛չ է ընդունայն. զի զոր ինչ կամի առնէ. այլ կամեցաւ և արար զմեզ անձնիշխան և տէր գործոց մերոց. *եթէ* չար` և *եթէ* բարի: - 16. Նախ` *եթէ* չարն ո՛չ է յաստուծոյ և ո՛չ ի բնութենէ և ո՛չ ի բնութեան և ո՛չ է բնութիւն: - 16. Ասեմ զառաջինն *եթէ*` չար ո՛չ է յաստուծոյ. զի աստուած բարի՛ է բնութեամբ. և ի բարւոյն չար ո՛չ գայ յառաջ. որպէս ո՛չ ի լուսոյն խաւար: - 16. Ասեմք նախ *եթէ*` չարն ո՛չ է յաստուծոյ որպէս բարին. զի բարին ըստ կամա՛ց է. իսկ չարն թոյլ տալով է. և ա՛յլ է կամացն որ յօժարութեամբ է, և այլ է թոյլ տալովն որ իբր ի յո՛չ կամացէ: - 17. Նախ *եթէ*` ունիմք անձնիշխան կամք. և տէ՛ր եմք գործոց մերոց. առնել և ո՛չ առնել. այլ երբեմն սկիզբն ի մէնջէ, և կատարումն ի նախախնամութիւնն աստուծոյ: - 17. Նախ *եթէ* կրկին է չար. է՛ չար գործոց, և է՛ չար պատժոց: - 18. Եւ աւետարանն ասէ` «որդի մարդոյ երթայ որպէս և գրեալ է վասն նորա». ապա ուրեմն ամենայն ոք ի հարկէ գրոյն այնորիկ լինի. *եթէ* չար և *եթե* բարի: - 18. Ասեմք առ այս *եթէ* կրկին ունի դէմս

գիրն դպրութեան կենաց: - 18. Որպէս յիմար հիւանդն ասիցէ, կամիմ ուտել և ըմպել զհաճոյսն իմ. *եթէ* առողջանալո՛յ եմ՝ առողջացայց. և *եթէ* մեռանելո՛յ՝ մեռայց: - 18-19. Նա՛խ՝ *եթէ* ուշիմ և ապուշ և այլն ըստ կարգի, սոքա *եթէ* ի մարմնոյն խառնուածոյ պատճառին՝ և *եթէ* բնական որակութեամբ հոգւոյն՝ նման և աննման գոլ, առանց ներգործելոյ ո՛չ չար են և ո՛չ բարի. ո՛չ գով. և ո՛չ պարսաւ հետևի. որպէս և ո՛չ բնական բարուց անաւնոց: - 19. Դարձեալ, ասեմք *եթէ*՝ առնէ՛ աստուած զոմն խոհեմ և զոմն տգէտ, զի նա՛ ի նմանէ՛ ուսցի: - 19. Նախ՝ *եթէ* աղքատութիւն և մեծութիւն տիրելն և ծառայելն, է՛ յաստուծոյ. սակայն ոմանց կամելով՝ և ոմանց ներելով և թոյլ տալով. այսինքն զբարի մեծատունս և զաղքատս կամելով առնէ. և զչարսն ներելով և թոյլ տալով առնէ: - 19. Դարձեալ ասեմք, *եթէ* առնէ աստուած մեծատուն և աղքատ, տէր և ծառայ և այլն, զի ի միմեանց օգտեսցին: - 19. Եւ գիտելի է այս, *եթէ* նախասահմանութիւնն աստուծոյ առնէր հարկ գործոց մարդկան, չարի և բարւոյ, լինէր բազում անպատշաճութիւն որ վասն բախտին ասացեալ եղև. զորև աստ կարգեսցուք: - 20. Վեցերորդ՝ *եթէ* է ամբոխումն ինչ ի մէջ նոցա, ոչինչ էին մեկուսի ի մէնջ. այլ դժուարածեռն որպէս զմեզ և հակառակ: - 21. Եւ *եթէ* է մի զկնի միոյն, յայտ ուրեմն է թէ նախկինն է սկիզբն: - 21. *Եթէ* ո՛չ իշխեն, ո՛չ ոք ի նոցանէ է աստուած. և *եթէ* իշխեն, որ ոք և իշխէ միայն՝ նա՛ է աստուած: - 21. *Եթէ* ո՛չ կայանան, ո՛չ են սկիզբն: - 21. Եւ *եթէ* կայանան ըստ ինքեանց, ո՛չ ոքն է չար. զի կայանալն ըստ ինքեան բարի՛ է: - 21. Ասեմք առ այս *եթէ*՝ բարի և չար ըստ ենթակային ներհակք են միմեանց. իսկ ըստ ինքեանց՝ ունակութիւն և պակասութիւն որպէս ասացաք: - 21. Ասեմք առ այս *եթէ*՝ ջերմն ապականէ զցուրտ՝ և ինքն մնայ ի յենթակայն. զի էութիւն է և որակ: - 22. Նախ՝ *եթէ* չարն ո՛չ է էութիւն, և ո՛չ ի յէս. և ո՛չ ի յէից. և ո՛չ սկիզբն էից: - 22. Երկրորդ, ասեմք *եթէ*՝ չարն կրկին իմանի. է՛ որ ինքնաչա՛ր է. որ պարզ և ամենևիմբ չարն է. և արտաքոյ բարւոյ և էութեան է. որ ո՛չ ուրեք է. և ո՛չ երբեք. և ո՛չ էր. և ո՛չ է. և ո՛չ լինիլ կարող է. որ է ո՛չ ինչ: - 22. Այժմ պատասխանեսցուք հարցմանն *եթէ* առաքինութեանն չարութիւն, և արդարութեանն անիրաւութիւն ներհական. որպէս խաւարն լուսոյ. և էութիւն է լոյսն. և ո՛չ էութիւն խաւարն. և օդն ընդունակ լուսոյ և խաւարի: - 23. *Եթէ* ոք գիր ո՛չ գիտէ, և ո՛չ ըզվկայութիւն ընդունի սուրբ գրոց, որպէս ցուցանեմք նմա թէ է՛ աստուած: - 25. Ա՛րդ՝ *եթէ* սկիզբն այն անսկիզբն է, գտաք զխնդրելին: - 25. Ա՛րդ՝ *եթէ* միակս այս շարադրի բազմաց, ո՛չ մնաց մին. իսկ *եթէ* ոչ շարադրի, ո՛չ գոն բազումք. այլ մի և մի. և այս որպէս այս: - 25-26. Ասեմք *եթէ*՝ սուրբ գիր խօսի բազում անգամ առակաւ...: - 27. Ասեմք *եթէ*՝ խոստումն աստուծոյ կատարեցաւ ի ժամանակս զօրաբաբէլի և եզրայ. որպէս ասէ Նէեմի յաղօթս իւր, «յիշեա՛ տէր զբանն՝ զոր պատուիրեցեր ծառային քոյ մովսէսի», որ ասէր, «թէ իցեն ցրւեալք մինչև ի ծագս երկրի, անտի ժողովեցից և ածից ի տեղի զոր ընտրեցի»: - 28. Ասեմք *եթէ*՝ գոգ և մագօգն՝ հոգևորապէս իմացեալ լինին ամենայն հալածօղք եկեղեցւոյ. զորս սատակեսցէ՛ տէր յիսուս զամենեսեան որպէս ասէ սաղմոսն՝ «որպէս զանօթ բրտի փշրեսցես զնոսա»: - 28. Որ է տարակուսանք այս, *եթէ* գոյր ոմն մեծ քան զհայր՝ զի բռնադատեաց զնա՛: - 36. Երկրորդ՝ զի անծնելութիւն և ծնելութիւն ըստ քո ասելոյդ *եթէ* բնութիւն իցէ՝ հակառակութիւն եղեր յաստուածութիւնն: - 38. *Եթէ* որպէս հօր, է՛ հայրութիւն միայն. իւր լինի և բնութիւնն: - 39. Եւ առաքեալն ասէ զորդոյ՝ *եթէ* «որ միայն ունի զանմահութիւն՝ բնակեալ ի լոյս անմատոյց» և այլն: - 47. Ասեմք *եթէ*՝ օրինականն որպէս զմարդո՛յ բարութիւն կարծէր ունել քրիստոսի՝ այլ ո՛չ գերագոյն. զի և մարդիկք բարի անուանին...: - 47. Իսկ յորժամ զյայլումն լսեն՝ արձակին ի վերայ մեր ասելով, *եթէ* յայլո՛ւմ է՝ պատահումն է ի հայր որպէս զօրութիւնս առ մեզ. իսկ *եթէ* զօրացեալ է՝ և ընդ զօրանալն դադարեսցէ ամենայնիւ. շարժումն եղիցի և ոչ շարժօղ: - 52. Ասեմք մարմնասիրեացն *եթէ*՝ մարմնակա՛ն կարծէք զծնունդն ըստ մեզ ո՛վ ծիծաղելիք: - 52. *Եթէ* ըստ մեզ կարծէք զծնունդն, պիտոյանայ երկուորիս և գործիս հօր. լիցի և այրութիւն և իգութիւն յաստուած. և լիցին որդիք երկորեակք էրէց և կրտսեր: - 52. Եւ թէ ասիցէ հակառակօղն, *եթէ*՝ վերոգրեալ գործառնութիւնքս համարին հոգւոյն սրբոյ ո՛չ որպէս աստուծոյ, այլ որպէս պաշտօնէի: - 59. Նախ՝ ասէ մակեդոն *եթէ* աղօթել և բարեխօսել ո՛չ յարմարի աստուծոյ. զի *եթէ* *զքրիստոսէ՛* ասի՝ վասն մարդկութեանն է: - 59. Պատասխանեմք *եթէ*՝ որպէս ասի որդի առաքեալ ի հօրէ և ի հոգւոյն...: - 60. Պատասխանեմք *եթէ*՝ հոգի աստուծոյ ոմանք զօդս ասեն. որոյ բնական տեղի իւր է՛ ի վերայ ջուրց: - 60. Հինգերորդ ասեն, *եթէ* հոգին սուրբ առնու զբնութիւնն ի հօրէ՝ լինի որդի նորին. զի այն կոչի որդի որ ունի զբնութիւնն ի հօրէ ի նոյն տեսակէ: - 60. Պատասխանեմք *եթէ*՝ թէպէտ հոգին ունի զբնութիւնն ի հօրէ՝ սակայն ո՛չ ծննդեամբ որպէս որդի, այլ բղխմամբ. որպէս շունչն և բանն ունին զէութիւնն հոգւոյն այլ և այլ կերպիւ. և որպէս ադամ յառաջ էած յինքենէ զսէթ և զևա. զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ. և ունին երեքեանն զմի և զնոյն բնութիւն մարդոյ: - 60. Եօթներորդ՝ *եթէ* մասն աստուծոյ կոչի հոգին սուրբ. և աջ և բազուկ է որդին. ապա ուրեմն և ի նմանէ՛ է: - 61. Առ երրորդն ասեմք, *եթէ*՝ «հոգին առաքեցաւ ի յորդւոյ», ի նմանէ՛ ասի սկսեալ, Ապա առաքեցաւ որդի ի հօրէ և ի հոգւոյն, ի նոցանէ ասի սկսեալ: - 61. Առ չորրորդն

յառաջագոյն և փափկանան մարմնով ռ ամ. և ապա հասարակ յարութիւնն ամենայն մարդկան: - 710. Զոր վարդապետք եկեղեցւոյ այսպէս իմանան *եթէ*` կրկին է յարութիւն. այսինքն կեանք: - 710. Իսկ **իդ** թիւն ո՛չ *եթէ* սահման և կէտ է. այլ սովորութիւն է գրոց փոքր թուով զբազումսն ցուցանել: - 711. Պատասխանեն վարդապետք *եթէ* երից ոմանց. այսինքն կուսանաց. և մարտիրոսաց. և վարդապետաց: - 712. Եւ զբանս օդն ունի. *եթէ* հոգևոր *եթէ* մարմնաւոր. զի օդով խօսեցաք: - 714. Եւ զպտուղս զգայութեանց ջրով հասուցաք. *եթէ* բարի և *եթէ* չար: - 714. ...ի գարունն ո՛չ թէ դժնիկն խլեալ բուսանի, այլ տնկեալ վարդենին. *եթէ* արմատն ոչ մնայ դժնկին: - 714. Եւ բնական քննութեամբ նախ այսպէս *եթէ*` տեսանեմք ի քաղաքական օրէնս զի գոյ դատաստան. այսինքն բարեացն պատիւ և չարացն պատիժ. - 715. ...այլ արդ *եթէ* հոգին առանց մարմնոյ պսակի կամ պատժի` ո՛չ է արդար դատաստան. - 715. ...և այս ո՛չ լինի *եթէ* ոչ է յարութիւն մարմնոյ: - 715. Եւ բաւական է սակաւս ի բազմաց սուրբ գրոց վկայութիւն *եթէ* գոյ ճշմարտապէս յարութիւն մարդկան: - 716. Եւ այսպէս սահմանի *եթէ* յարութիւն է այնմ որ անկաւ մարմնաւոր մահուամբ` վերստին յառնել անմահութեամբ ի կեանս յաւիտենականս: - 716. Նա՛խ` *եթէ* համանգամա՛յն է յարութիւնն ի նոյն կէտն, այլ ննջեցեալքն նա՛խ յառնեն և ապա՛ կենդանիքն ընդ նոսա. - 717. Ասեմք առ այս, *եթէ* մարմին մարդոյ բաժանեալ ի հոգւոյ, և հոգին գնացեալ ի կայանս հոգւոց առ աստուած որ ետ զնա՛. և մարմինն ի հող լուծեալ կամ յայլ տարերս...: – 718. Ասեմք *եթէ*` զորօրինակ սընդիկ լուծեալ և ի հող խառնեալ գնդապէս և փոշիացեալ. յորժամ ի մի վայր ժողովես` թողու զփոշիսն ի յորս խառնեալ է և պարզ միայն սնդիկն ժողովի: - 719. *Եթէ* փայտ խոտ եղէգն որ են մեղաւորքն, զի անդէն մնան: - 721. Եւ որպէս աստ հոգին ի մարմնոյն կրեաց. նոյնպէս և անդ մարմինն ի հոգւոյն կրեսցէ *եթէ* զբարիս և *եթէ* զչարիս: - 724. Ասեմք առ այս, *եթէ* բան սաղմոսին այսպէս մեկնի: - 724. Ասեմք *եթէ*` անդամքն այնք որ աստ լցեալ են ապաւառով, անդ լցցին **դ** հիւթովքն լուսաւորեալ լուսով: - 725. Ասեմք *եթէ*` սխա՛լ են և երկոքին դասքն: - 725. Ասեն վարդապետք` *եթէ* են ինչ որ էութեամբ և պատահմամբ անցանեն. որպէս կենդանիք և տունկք և որ ինչ ի չորից տարերաց են գոյացեալք: - 727. Նախ դիմակայութեամբ *եթէ*` ո՛չ է ըստ օրինի բնութեան անապական մնալ նմա, այլ սքանչելիք աստուածային: - 733. Արդ *եթէ* խաչն ապականի, ապա և արիւնն որ ի նմա: - 733. Արդ` *եթէ* ապականեսցո՛ւ էր սա, ո՛չ երկնչէին ի սմանէ դևք. որպէս և ո՛չ յանասնոց և յանշնչից. ապա ուրեմն անապական է խաչն: - 734. Այսպէս բաղդատի կոչումն կշռոյ *եթէ* ումէք հաճոյ մարթասցի: - 745. Չորրորդ, կշիռն նշանակէ՛ զգործս մարդկան. ըստ կշռոյ օրինացն հաւասարել և հաստուցանել. *եթէ* ըստ բնականին կամ ըստ գրոյն և աւետարանին. որում շատ տուաւ առաւել պահանջել: - 747. Եւ թէ ունիցին ըստ օրինացն հաւասարեալ ի գործս կամ ի հաւատս, և *եթէ* միտեալ և կամ նուազեալ, ըստ նոցին օրինացն հատուցանել. և կամ արտաքոյ օրինացն կորնչիլ ի յայսմ կշռոյ է հատուցումն: - 747. *Եթէ* ումեք տւեալ իցէ շնորհ հասարակ կամ յատուկ, որպէս մկրտութիւնն և հաւատքն. քանքար և տաղանդ. իշխան և առաջնորդ. մեծութիւն և ինչք. կեանք լոյս ամանակ և այլն ամենայն. այսու եղանակաւ կշռոյ հատուսցի: - 747. Երկրորդ` անտանելի ցուրտ. յոր *եթէ* հրեղէն լեառն անկանէր` սառն դառնայր. վասն այս երկուցս ասի` լալ աչաց և կրճել ատամանց. - 752. Արդ` *եթէ* արքայութիւնն երկնից մի է, այլ փառքն **գ**. պա՛րտ է ապա զի լիցի և դժոխքն **գ**, որ է՛ սուտ: - 758. Եւ նոքա որք բազում համբաւեն դժոխս, մի ասեն գոլ արքայութիւն. պատճառելով *եթէ*` բարին մի է և չարն բազում: - 758. Ասեմք *եթէ*` բնութեամբ բարին մի է. որպէս ասէ մեծն դիոնէսիոս. այլ ներգործութեամբ բազում է ի զանազան կամաց յառաջ եկեալ: - 758. Ասեմք առ այս, *եթէ* առաջին կեանքն դրախտին ո՛չ զայն իմանան վարդապետք զոր ունէրն ադամ. այլ զոր խոստացաւն ադամայ *եթէ* պահեալ էր զպատուիրանն. որ նոյն ինքն է արքայութիւնն երկնից ի տեղի անկելոց հրեշտակացն: - 758. Ա՛րդ` *եթէ* ա՛յժմ են յերկինս և յայնժամն ի սրբեալ երկիր, զի՞նչ է փառաց փառքն: - 759. Եւ այլ բազում վկայութեամբ կարէ՛ հաստատիլ *եթէ* մի է արքայութիւնն երկնից որ է կեանքն յաւիտենից: - 759. Եթէ ի խելս և ի խորհուրդ ցնորութիւնք և զայրուք ուռուցանիցեն խխայթեալք. բժշկեսցիս հաւատով. ըստ մարգարէին հիացեալ` ստուերս և ունայնս դնելով զամենայն անցաւորս: - 770. Կամ զինչ անհնարին սաստ, *եթէ* ոք խոտեսցէ զսուրբ հոգւոյն խօսեցեալս ի գիրս սուրբս. ընտրելով զոմն յարուցեալ ի մեռելոց. կնքելով առակաւոր բանին, «զի թէ սուրբ գրոց ոչ լուիցեն, և ո՛չ թէ ի մեռելոց ոք յարիցէ և հաւատասցեն»: – 775. Զորօրինակ *եթէ* արմատ փայտի եղեալ ի հուր` նախ ինքն այրի և ապա ճիւղքն: - 777. Եւ որպէս թէ բազումք զմիմեանց զմիոջէ կախեալք զվախէ՛. և *եթէ* ոք խզեսցէ զառաջնոյն զկապ, միապէս անկանին. թէպէտ մինն առաջին: - 777. Եւ թէ այս ո՛չ է գրեալ, նա՛ և ո՛չ այն *եթէ* մեղանչեաց ուրէք զամենայն կեանս իւր բաց ի միոյն. և ո՛չ մեղանչելն կրկին` ապաշխարութիւն է առաջնոյն: - 778. *Եթէ* յարդեան ժամանակիս հաւատարիմ է, զի որ ոք և իցէ յանցաւոր, *եթէ* զղջասցի և ատեսցէ զմեղս ըստ մարգարէին` խոստովանութեամբն առնու զմաքրութիւն և զվարձս ապաշխարութեան: - 778. Ասեմք նա՛խ` *եթէ* ամենայն

շնորհ զինչ և իցէ տուեալ բնութեան, ո՛չ քակտի ի նմանէ. թէպէտ ծածկի երբեմն վասն մեղաց: - 782. Ա՛րդ` *եթէ* ի կատարածի ի հարկէ սքանչելեացն հաւատալ վարձատրելի՞ է թէ ոչ: - 783. *Եթէ* վարձատրելի է ասիցէ ոք, ապա զիա՞րդ որք ի հարկէ հաւատացին ո՛չ վարձատրեցան. որպէս դևքն ի հալածիլ. և որդիքն սկեւեայ. և սիմոն կախարդն. և այլք նման սոցին: - 783

***ԵԹԷ ՈՉ +*** Ապա յիմա՛ր են այնոքիկ որք ասեն` կամիմ առնել զիաճոյսն իմ. զի թէ յընտրելո՛ցն եմ` փրկցյց. և *եթէ ո՛չ*` դատապարտեցայց: - 18. *Եթէ ոչ* հաղորդին, մինն է ի նոցանէ էակ. և այնպէս ո՛չ երկու սկիզբն: - 21. Քանզի որպէս արեգակն ո՛չ տեսանի` *եթէ ո՛չ* լուսովն իւրով. այսպէս իմանալին աստուած ո՛չ տեսանի, *եթէ ո՛չ* լուսով շնորհաց հաւատոյն իւրոյ: - 32. Իսկ *եթէ զոչ* բղխեալն բղխէ, ահա ի հօրէ ո՛չ ասէք զբղխումն, այլ միայն յորդոյ. որ է սուտ: - 63. Եւ ապա ի բարձր հանէ վարդապետութիւն զբնութեանցն միաւորութիւն. ասէ` այլ և այլ յորոց փրկիչն. *եթէ ոչ*` նո՛յն է երևելին և աներևոյթն. անժամանակն և ընդ ժամանակաւն: - 80. Ապա ո՞րպէս է Երրորդութիւնն յատկացեալ` *եթէ ոչ* անձամբ: - 86. ...իսկ ի կատարել զգործ ողորմութեանն` ո՛չ ինչ պահանջի, *եթէ ոչ* կամքն նորա, որպէս երևեցաւ ի մարդեղութիւն բանին աստուծոյ ի սրբոյ կուսէն մարիամայ: - 459. **Երկրորդ` զի ո՛չ ինչ անդամ զազրելի է ի մարդն. այլ ամենայնն հաւասար են յարդարութիւն. *եթէ ոչ* եկամուտ ինչ խառնեսցի ի նմա**: - 469. Այլ և ո՛չ յառաջ քան զյղանալն օծաւ. զի սրբիլ և առաքիլ և իջանել յերկնից ո՛չ այլ ինչ է, *եթէ ոչ* մարմին լինիլ և մարմնով երևիլ բանին: - 475. Դարձեալ կարէ ասիլ Ութերորդ պատճառս, առ ի ցուցանել թէ հոգին ո՛չ ումեք առատապէս պարգևի, *եթէ ոչ* յիսուս ի սիրտ նորա յատկապէս փառաւորեսցի: - 522. Զի կա՛մքն հրամայէ զգործ հաւատոյն. զի ո՛չ ոք հաւատայ, *եթէ ոչ* կամեցողն: - 572. Չորրորդ դիմամարտ լինիլ փորձութեանց. ըստ առաքելոյ «ո՛չ ոք պսակի` *եթէ ոչ* ըստ օրինին մարտիցի»: – 581. Զի ջուր հակառակ է հրոյ. և զի՞նչ է մեղք, *եթէ ոչ* հուր. որպէս յոգւոջ բարկութիւն. և ի մարմնի ցանկութիւն. ուստի յայտ է զի հրով տանջանաց պատժի. և աստ զի հուրն շիջցի ի ջուր մկրտիմք: - 591. Մեղքն ադամայ այն է որ զարդարութիւն կորոյս. և մեղօք և ցանկութեամբ ծնաւ զորդին. և այն մեղքն սկզբնական կոչի. և ո՛չ թողցի *եթէ ոչ* ի մահն քրիստոսի մկրտեսցի: - 591. Ասեն վարդապետք թէ` զմի անգամ խոստովանեալն բարի հաւատով և կատարեալ զղջմամբ` ո՛չ է պարտ կրկնել. *եթէ ոչ* վասն չորից պատճառաց: - 603. Զի ո՛չ վայելէ անկատարից զվախճանական կատարումն առնուլ. *եթէ ոչ* նախ իւր յատուկ կատարելութեամբն կատարեսցի. - 693-694. Զի ո՛չ կարեմք հոգւով երանի լինիլ *եթէ ոչ* մարմնով երանելի լիցուք: - 695. Դարձեալ ասեն, զի՞նչ է փառքն և պսակ արդարոցն, *եթէ ոչ* տեսութիւնն աստուծոյ զոր ունին հոգիքն: - 697. ապա պիտոյ է և ա՛յլ կեանս զի հատուսցի բարեացն բարի և չարացն չար. և այս ո՛չ լինի *եթէ ոչ* իցէ յարութիւն: - 715. Է՛ ուրեմն ասել, *եթէ ոչ* տեառն սաբաւովթ, այսինքն զօրութեանց, թողեալ էր մեզ սերմն առաքելօք և մարգարէիւք և այլովք սրբովք և վարդապետութեամբ աւետարանին, համերք և ի մեղս լինէաք խստացեալք: - 755

**ԵԼ +** Ա՛րդ` տեսութիւն գրոց սրբոց մի և նոյն *ելով*` առ բազումս բազմանայ. որպէս մի և նոյն պարզագոյն ջուր` իւրաքանչիւր բնութիւնս տնկոց: - 93. Զի որ խոնարհեցաւ բանն ի մարմին` նո՛յն բարձրացաւ մարմնով. և որ էջն ի ստորինս երկիր, նո՛յն է որ *ելն* ի վերոյ քան զամենայն երկինս. և որ ունայնացաւ` նո՛յն ելից զամենայն: - 94. Երրորդ` աստուած փորձէ՛ և տայ *զելն* զի մի՛ յուսահատեսցի. և սատանայ փորձէ և ձանձրացուցանէ զի ընկեղմեսցին: - 161. Երրորդ` *ելք* ժողովրդեանն իսրայէլի յեգիպտոսէ: - 196. Ասի և բօթ. այսինքն սուգ և տրտմութիւն վասն *ելիցն* ի դրախտէն, և լսելոյն` «հող էիր և ի հող դարձիցս»: - 200. Իսկ շա՛րժն է թանձր գոլորշի արտաքս քարշեալ յերկրէ, և նեղեալ ի *յելսն* շարժէ՛ զերկիր: - 206. Եւ կամ հո՛ղմ է արտաքս թիւրեալ ի ճանապարհէ՛ իւրմէ. և ի խոռոչս երկրի մտեալ. և վասն թանձրութեան երկրին շարժէ զնա մինչև գտանէ *ելս* և ապա՛ դադարի: - 206. Յետ *ելիցն* ադամայ ի դրախտէն կենաց, հարցանելի է վասն նախահարցն ըստ կարգի: - 286. Նոյնպէս և անդրանիկ ծնունդքն աշխարհի էին նահապետքն որ նախ քան զջուրն, տևէին ի կեանս այս **թճ** կամ աւելի ամ, և ապա ծնանէին ի հանդերձեալ կեանսն մահւամբ *ելիւք*: - 290. Եւ սկսան շինել հաստահիմն լայնամիջոց. աստիճանաձև *ելիւք* և իջիւք: - 296. Եւ բարձրացուցին **զժ** ամսոյ ճանապարհի ընդ *ելն* և ընդ էջն. որչափ բարձրացաւ ջուրն **ճծ** օր, և **ճծ** օր դարձեալ իջաւ: - 296-297. Այլ և բազում բաղդատութիւն է մուտն իսրայէլի յեգիպտոս և *ելն* անտի: - 314. Երրորդ` ի քանան ո՛չ մնաց ոք ի նոցանէ, և ո՛չ ոք ի *յելսն* յեգիպտոսէ: - 314. Եօթներորդ` ո՛չ ի մուտն և ոչ ի *յելն*` զկանայս նոցա ո՛չ թուէ. այլ զծնունդքն և զարսն: - 315. Եւ բազմակեցութեամբ էհաս մինչև *յելսն* յեգիպտոսէ: - 320. Բոլորն ամենայն **ղճլ** ա՛մ է յաւետեացն աբրահամու մինչև *յելսն* յեգիպտոսէ՛. այլ զերկու **ճե** ամն հարքն յերկրին քանանու բնակեցան. և **զբ ճիե** ամն որդիքն յեգիպտոս կացին...: – 337. Յադամայ մինչև *յելսն* յեգիպտոսէ են ամք **դռպթ**: - 337. Եւ անտի ի *յելսն* յեգիպտոսէ՛ **շե** ամ: - 337. Որ լինի բովանդակն մինչև *յելսն* եգիպտոսի, **գռոձթ** ամ ըստ եօթանասնիցն: - 337. Յրեշտա՛կ էր. որ ի տիւն հովանի լինէր ի տապոյ արևուն և ցուցանէր

ամենայն աշխարհի *զելս* ժողովրդեանն: - 338. Նա՛խ՝ զատիկն ազատութեան *ելիցն* ի գարնանն: - 340. Առաջին, երեքօրեայ սրբութեամբ յիսներեկի աւուրն *ելից* յեգիպտոսէ. որ ընկալաւ զտասնբանեան օրէնս և պատմեաց ժողովրդեանն: - 352. Երկոտասաներորդ, ոչխար տարևոր մեծի զատկին *յելսն* եգիպտոսի, խորովեալ հրով. և բաղարջ ընդ եղեգի կերեալ: - 359. Զի յերկրորդ ամն էր առաջին տօնն *ելից* եգիպտոսէ՛: - 371. Չորրորդ՝ յետ *ելիցն* ի մարմնոյ. վասն որոյ ասէ՝ «ո՛չ հնծեսցեն զհննեակն այլ կերակրեսցին». զի արդիւնք և հունձք ի կատարածին է. այլ հանգիստն ի հոգին է: - 372. Երրորդ՝ զի առաջնո՛րդ է ի մուտն մեր և *յելս* յաշխարհէ...: – 385. Իսկ **զխ** իջևանքն ոմանք խորհուրդ առնուն յետ *ելիցն* ի մարմնոյ հոգւոյն՝ ի խ աւուրբ հասեալ յօթևանս: - 391. Ութերորդ՝ և ոմանք զմարմինն մովսէսի զժողովուրդն կոչեն *յելսն* եգիպտոսի. որ հակառակէր ազատելոյ զնոսա յեգիպտոսէ՛: - 410. Նուազիլ՝ ո՛չ ասեմ զամենևին պակասիլն. զի առ ջրհորաւն մեծի անյայտ եղև վէմն. և *յելսն* յորդանանու մանանայն ո՛չ գտաւ: - 415. Չորրորդ՝ զոր ծածկեաց նաթան՝ յայտնեաց սիմէի և *ելից*: - 433. Եւ այս՝ և պատերազմն վասն մովսիսեան մարմնոյն՝ ցուցանեն զպատերազմ հոգւոց յետ *ելից* մարմնոյն: - 445. Ժողովին ի մովսիսէ՛ և *յելիցն* յեգիպտոսէ մինչև ցշինուած տաճարին ամք **ղճծ**: - 452. Եւ *յելիցն* ի սողոմոն՝ **նծ**: - 453. Եւ յաբրահամէ *յելքն*, ամք **շե**: - 453. Երկրորդ ծեռագիր հրէիցն. որ *յելսն* եգիպտոսի ասացին մովսէսի....: – 481. Ներքինն զկատարած *ելից* կենցաղոյս: - 493. Այսոցիկ սուրբ հարց և սիւնհոդոսաց հնազա՛նդ եմք. և զնոցա կանոնքն ունիմք և զդաւանութիւն, և պահեմք մինչև *յելս* շնչոյ մերոյ: - 547. Յայս միտս մեք ազգս քրիստոնէից *յելս* արևու և ի մուտս համաձայն վերին զուարթնոցն աղօթեմք առ աստուած: - 621. Եւ դարձեալ՝ վասն *ելից* մեր և մտից. որ է՛ մահ և կեանք: - 623. Եւ զվերջին կանոնն *ելք* աստիճանաց. որ է՛ յաստեացս ի հանդերձեալն: - 627. Նոյնպէս և յերեկոյին զ'ի նեղութեանն առաքեալքն կարգեցին յաւուրն *ելն*. զի *ելք* աստիճանաց ասի...: – 631. ...աւուրք՝ աստիճանք են *ելից* կենաց մերոց: - 631. ...վասն որոյ յերեկոյս տօնեմք զտօն կատարման *ելից* նոցա ի յերկրէ. - 647. Երկրորդ, յետ *ելիցն* ի դրախտին **ե** օր սուգ պահեաց անսուաղ. - 653. Չորրորդ, է աւուր բաղարջակերքն ի *յելսն* եգիպտոսի: - 653. Եւ ըստ աստիճանի՝ նախ ի ներքինն, և ապա ի վերինն *ելք*: - 662. ...զի տեսցուք և ի միտ ածցուք զօր *ելիցն* մեր ի մարմնոյ: - 668. ...իսկ հոգին թախանձէ՛ թերևս զի *ելս* իրացն իմասցէ. - 697. Զի թէ և սակաւ ժամ լինի մնացեալ ի կենացն որ քան աւազակին ի *յելս* շնչոյն. և նա՛ յառաջ քան զամենայն արդարս եմուտ ի դրախտն աստուծոյ ընդ տեառն: - 758. *Ելս* ի սրտի դնելով ի սուրբն սրբոց մտանել այսու լուսով առաջնորդեալք: - 769. Թէ ի բերան պատերազմի *յել* անմահին և ի մուտ մահկանացուին. դիցես պահապան բերանոյդ. լար կարմիր շրթանցդ. այսինքն հաւատով սիրով զօրացեալ. և ո՛չ բաժանիլ ի քնասիրութիւն և յարծաթսիրութիւն. յառաքինասիրութիւն. և յախտասիրութիւն. յընկերսիրութիւն և յարատսիրութիւն: - 770-771. Զի մասն որ առ կէտն արևելից՝ է՛ ներգործութեամբ ի *յելս*, և զօրութեամբ ի մուտս: - 788. Եւ կէտն արևմտից առ *ելս*. այնպէս ներքին և վերին կիսագունդն: - 788

***ԵԼՔ +*** (Հին կտակարանյան գիրք) - Այսքան *յելից* գրոց: - 353. Առաջին՝ Արարածք. *Ելք*. Ղևտականք. Թիւք: - 450

**ԵԼ** (հատուկ անուն) - Տևեցին զամս **մծ**. մինչ յովսէէ որդի *ելայ*. որ գերի վարեցաւ յասորեստան. և բարձաւ թագաւորութիւնն իսրայէլի: - 446. ...և երեք ամ պաշարեալ էառ զնա. և գերի վարեաց զթագաւորն ովսէէ որդի *ելայ*. և **զժ** ցեղն բովանդակ տարաւ յասորեստան: - 447

**ԵԼԱՆԵՄ +** Կամ է՛ ի ներընդունակ պատճառն իւր. որ հաւասար է ի լինիլն և յոչ լինիլն. որպէս *ելանել* ի զբօսանս, կամ ո՛չ. լինիլ անձրև, կամ ո՛չ: - 10. Եւ այս կամ յանբաւս *ելեալ*, կամ գտեալ զանսկիզբն սկիզբն, որ է աստուած: - 25. Որպէս ասէ յառաջին թագաւորութեանցն, «և ո՛չ ևս յաւելին այլազգիքն ի վերայ սահմանացն իսրայէլի». այսինքն յաւուրս սամուէլի. քանզի յետ մահուան նորա *ելին* ի վերայ իսրայէլի: - 27. Երրորդ՝ յայլոց նոյնք. որպէս զձու կաքաւի և սագի թխէ՛ հաւ. և նոյն կաքաւ, և սագ *ելանէ*: - 53. Եւ դարձեալ՝ հոգին որ ի հօրէ *ելանէ* և կայանայ յորդի. և ի ձեռն որդւոյ իբր զհայրական բարի ամենայն գոյիցս բաշխի երկնաւորաց և երկրաւորաց. նախ քան զմարմնանալն՝ և ի մարդեղութեանն: - 61. Ա՛րդ՝ եթէ հոգին *ելանէ* յորդւոյ, պարտ է զի *ելցէ* յորդւոյ ի հայր. կամ ի միւս անձն: - 63. Ա՛րդ՝ ո՛չ *ելանէ* ի հայր. զի ո՛չ ունի հայր իր ինչ ի յորդոյ: - 63. Ապա ուրեմն ո՛չ *ելանէ* յորդւոյ: - 63. Դարձեալ՝ հոգին սուրբ *ելանէ* իբրև զարտաշնչեալ և բղխեալ: - 63. Ա՛րդ՝ որպէս արտաշնչումն ո՛չ *ելանէ* ի բանէ, և ո՛չ հոգի ի յորդւոյ: - 63. Դարձեալ՝ հոգին *ելանէ* իբրև զշաղկապ և միաւորիչ. մի իբրև զմէջ որ շաղկապէ՛ զերկու եզերն. և միւս իբրև երեք՝ և եզր: - 64. Ա՛րդ՝ եթէ *ելանէ* ի հօրէ և յորդւոյ, լինի իբրև եզր և **գ**. և ո՛չ իբրև զմիջին: - 64. Ապա ուրեմն ո՛չ *ելանէ* ի հօրէ և յորդւոյ. այլ ի հօրէ յորդի: - 64. Ա՛րդ՝ **բ** լոյսն ի միոյ *ելանեն* և ո՛չ մի ի միւսոյն: - 64. Զի որպէս այժմ կարեմք ասել ճշմարտապէս թէ հոգին սուրբ *ելանէ* ի հօրէ. և վասն ապառնւոյն կարեմք ասել

թէ հոգին սուրբ ո՛չ ելանէ յորդւոյ. մինչ այլ ո՛չ ևս *ելանէ*. և ո՛չ այնպէս էառ զգոյացութիւն և զճշմարտութիւն իւր՝ զի ո՛չ ևս երբեք առցէ: - 65. **Ապա ուրեմն որդի և հոգին սուրբ ի հօրէ *ելանեն* իբր բ շառաւիղ. և ըստ այսմ ո՛չ *ելանէ* մի ի միւսոյն:** - 65. Եւ մեք համաձայնեալ սուրբ և ուղղափառ վարդապետութեանցս, այսպէս դաւանիմք և խոստովանիմք զՅոգին սուրբ աստուած բղխումն ի հօրէ աստուծոյ. ըստ այնմ՝ «հոգին որ ի հօրէ *ելանէ*»: – 65. Դարձեալ՝ հոգին սուրբ *ելանէ* ի հօրէ և առաքի յորդւոյ. և ինքնիշխան կամօք շնչէ զշնորհս իւր յորս կամի և որքան: - 66. Որք ուրանան զբնութեամբ միաւորութիւն աստուծոյ մարդացելոյն, այլ միայն բնակութեամբ և շնորհիւ որդէգրութեան *ելեալ* յաստուածութեանն փառս. որպէս ասեն նեստորականքն: - 66. Իսկ թէ մարդ աստուածացեալ, ստէ՛ ուրեմն առաքեալն՝ ի լրութենէն ունայնութիւն ասացեալ. զի այս ընդդէմ նորին ի նըւաստութենէ ի բարձրութիւնս *ելանէ*: - 68. Ութերորդ՝ *ելանելն* յերկինս պատշաճի մարմնոյն քրիստոսի. որպէս ի տեսս առաքելոցն վերացաւ յերկինս. և իջանելն՝ բանին որպէս ասացաւ: - 73. *Ելէ՛ր* ի բանէդ և դժուարինս խօսիս. և զոր հարցի՝ ո՛չ ընկալայ զպատասխանին: - 92. Եօթներորդ՝ աստուածն մարդ եղև և յերկիր էջ. զի դու լիցիս աստուած և յերկինս *ելցես*: - 107. Քանզի ծնունդ սկզբնաբար ի հօրէ՛ *ելանէ* : - 109. Նախ՝ հայելով ի կերպարանս և ի նմանութիւնս որ է՛ կարգաւորութիւն արարածոց. և սոքօք ի յարացոյցն սոցա *ելանել*, և ի նմանէ դարձեալ ի նախատիպ յարացուցին *ելանել*. և այնպէս տեսանել թէ է՛ աստուած պատճառ ամենայնի: - 119. Հինգերորդ՝ զի յարևելից ընդ հարաւ խոնարհի յարևմուտս՝ և պատէ՛ հիւսիս, և դարձեալ *ելանէ* յարևելս: - 126. Այսպէս վասն գերազանց սիրոյն զոր ունի աստուած առ էսս՝ զարմանալ ասի. այսինքն արտաքս *ելանել*՝ թափիլ և հեղուլ ի յէսս. և միաւորիլ անփոխաբուն բնութեամբ: - 127. Եւ ա՛յսպէս բազմապատկելով զհազարն և զբիւրն՝ յանբաւս *ելանէ*: - 141. Զամենայն հրեշտակս բարի արար աստուած, այլ ո՛չ ծայրագոյն բարիս. այլ միջակս. որ է ի մէջ անփոփոխ և փոփոխական բարւոյն. այնպէս՝ զի թէ դառնային և սիրէին զայն՝ որ ի վեր քան զինքեանս, *ելանէին* յորպիսութիւն շնորհաց և փառաց. որպէս այժմ են հրեշտակք բարիք: - 146. Որպէս եղև առ մարիամ բորոտութիւն վասն բանբասելոյն զմովսէս. որ աստ սակաւ ինչ տանջեցաւ, զի մի՛ *ելցէ* յերկնից ժառանգութենէն: - 159. Այլ վասն հրեղէն երկնիցն ասէր *ելանել* և հաւասարիլ նմա: - 184. Վարդապետք ասեն. որպէս սուրբն բարսեղ՝ թէ որպէս երկբերանի քսա՛կ է լուսինն. ընդ մինն *ելանէ* և ի վերի թիկունքն ժողովի և պակասի ի մէնջ լոյսն. և ի միւսն ի ներքս մտանէ և լուսաւորէ՛ զմեզ: - 187. Երկրորդ՝ ասեն թէ՝ ի սկիզբն աշխարհիս արար զբնութիւնն յանկարծակի. այլ բնութիւնն յամելով և ըստ կարգի յանկատարութենէ *ելանէ* ի կատարումն: - 192. Երրորդ՝ բազում աստուածախօսութիւնք ի նմա եղեն. *յելանելն* նոյի ի տապանէն. և առ աբրահամ. և առ մովսէս ի սինա լեառն. և տուչութիւն օրինացն ի կիրակէ եղև: - 193. Իսկ մրրիկ հո՛ղմ է ի յամպոյն *ելեալ* և առ ինքն ի յամպն ներման առեալ և շրջեալ: - 206. Նա՛խ՝ զի ամպն յերկրէ *ելեալ* խափանէ՛ զլոյս և զջերմութիւն արեգական: - 206. Եօթներորդ՝ ամենայն աղբերք և գետք ժողովին ի ծով՝ ուստի *ելին*: - 207. Եօթներորդ՝ զի ամենայն գետս *ելեալ* ի ծովէ, դարձեալ ծովն ի յինքն ընդունի: - 207. Եւ օրինակ տայ զկերակուրն որ ի ստամոքսն եփի. և գոլոշիկքն ի գլուխն *ելանէ* և պարզ ջուրն ի լեարդն. իսկ մնացեալ թանձրն լինի դառն և աղի: - 208. Նախ՝ ասեն ոմանք թէ՝ որքան բարձր է ի վերայ երկրի հողն, նոյնքան ծոծո՛ր է ի ներքին կողմն. վասն որոյ ջուրք ծովուն դիւրաւ *ելանեն*: - 209. Չորրորդ՝ ցոյցք է ամենահրաշ խնամոց արարչին. որ զհոսանուտ ջուրս ներքին՝ ի մէջ լերանց ի վե՛ր հանէ ի պէտս կենդանեաց որ ա՛նդ են. այլ և յոռոգումն ուր գետք ոչ *ելանեն*: - 209. Այլ և աւետարանն ի յառակս անառակին՝ երկին կոչէ զդրախտն. ուր մեղանչեաց և *ելաւ*...: – 221. Ո՛չ թէ քան զտարրական հուրն ի վե՛ր է անցեալ. այլ զի լուսինն և արեգակն միշտ ի հարաւոյ կողմանէ ի ստորոտէ լերինն *ելանեն*. և ի հիւսիսոյ կողմն լերինն միշտ գիշեր լինի. որպէս աղէքսանդրու պատմութիւնն ասէ. և ի գլուխն միշտ լոյս. և ի հարաւոյ կողմն տիւ և գիշեր: - 222. Եւ յառաջ գամք յերկիր. և ապա՛ *ելանեմք* յերկինս: - 230. Այսինքն տնկական. և զգայական. և բանական. և զի յանկատարէն *ելանեմք* ի կատարեալն. վասն որոյ նախ ստեղծաւ տնկականն ոգի, և ապա՛ զգայականն, և ապա՛ բանականն որ է կատարեալ մարդն: - 231. Իսկ լեարդն է սկիզբն արեան երակացն. որ *ելանէ* ի լերդէն է երակ լի արեամբ: - 244. Եւ մանաւանդ զի բնութիւնն յանկարծակի ո՛չ կարէ ներգործել. այլ սակաւ սակաւ հետևելով յանկատարէն *ելանէ* ի կատարեալն: - 255. Եւ բնակա՛ն է, զի յանկատարէն ի կատարեալն *ելանէ*. որպէս աստիճանաւ ի գլուխ սանդղոյն. և ի սակաւուն ի բազումս. այսպէս և հոգի: - 258. Նմանապէս ծառք և տունկք՝ որ յետ երից ամաց կամ չորից ցուցանեն զպտուղս՝ յայսմ թըւոյ ո՛չ *ելանեն* արտաքս: - 263. Եւ թէպէտ զնանիր խոտոյ ասեն ի նոյն ժամն բուսանիլ և կատարիլ և խամրիլ, ի նոյն թուոյս ոչ *ելանէ* ժամուք կամ մասամբք: - 263. Եւ ունեալք զտնկականն՝ կարգաւ *ելցուք* ի զգայականն: - 263. Ըստ բնականին այս է. զի ամենայն իր որ լինի՝ յանկատարութենէ ի կատարումն *ելանէ*, և ի զօրութենէ ի ներգործութիւն որպէս ի վերոյ ասացաւ: - 267. **Եւ**

**դարձեալ՝ որպէս ձու հաւի և ձու քարեայ՝ նման ասին միմեանց, այլ ո՛չ պատկեր. զի ո՛չ են ի միմեանց** ***ելեալ*****. և ո՛չ զնոյն էութիւն ունին:** - 273. Եւ որ ոք կամեսցի զդարձն, անդրէն ի ձեռն նորին յարմարութեան այսինքն նորին կարգին կարողանայ *ելանել* ի նոյն: - 280. Ա՛րդ՝ որ ոք կամեսցի ի նոյնն *ելանել* և առ քրիստոս լինիլ, պատշա՛ճ է ի վերջնագունէն սկիզբն առնել որպէս սանդղօք: - 280. Քսանևը՝ քանի՞ ամ ծառայեցին. և յորո՞ւմ աւուր *ելին*: - 283. Եւ քանի՞ անգամ *ել* ի լեառն. և գ քառասուն պահեաց. և **դ** ծնունդն մովսէսի: - 284. Չորրորդ՝ **բ** *ելին* ի դրախտէն մեղօք. նոյնպէս և **բ** մտին ի դրախտն անմեղութեամբ: - 289. Եւ այլք ասեն ընդդէմ այսմ, եթէ յետ **ռ** ամին ի դրախտէն փոխիլոց էին յարքայութիւնն թէ պահէին զպատուիրանն. և յորժամ *ելին* ի դրախտէն՝ ի նոյն թիւն ո՛չ հասին: - 290. Այլ ադամ յերեկո՛յն *ել* ի դրախտէն. և ո՛չ կատարեաց զօրն բոլոր. վասն այն նախնիքն ո՛չ կատարեն զիազար ամն բոլոր: - 290. Եւ ի միւս տարին ի նոյն քանիս ամսոյն որ մտին ի նոյնն *ելին* ի տապանէն: - 294. Երկրորդ՝ զի ո՛չ ոք կարէ *ելանել* և տեսանել: - 294-295. Ուր եկեալ աբրահամ, և նա՛ *ել* ընդ առաջ նորա ջերմ բաղարջ հացով և գինեաւ օրինակ տէրունեան խորհրդոյն: - 300. Իններորդ՝ զի զայս ո՛չ ի ձեռս ծառայից, այլ ինքնին ընդ առաջ *ել* աբրահամու և ետ: - 302. Ութերորդ՝ անդրանիկք են ըստ մարմնոյ վերակացուք և տեարք. որպէս թագաւորք, և իշխանք. նոյն և առաջին ծնունդք *ելեալ* յարգանդէ՛: - 309. Երկրորդ՝ հրեշտակք անդրանիկք են քան զմարդ ստեղծմամբ. և յորժամ մեղան դևքն՝ խոտեցան և եղեն կրտսերք. և մարդն *ել* ի տեղի նոցա և եղև անդրանիկ: - 310. Նա՛խ՝ որպէս յակոբ պատարագ մատոյց ի ջրհորն երդման զվերջինն և ապա *ել* յերկրէն: - 314. Չորրորդ՝ սայլիւք իջին, և նշանօք և արուեստիւք *ելին*: - 314. Վեցերորդ՝ **հե** մտին, և **զճռք** *ելին*: - 315. Իններորդ՝ յովսէփ *ել* ընդառաջ նոցա և համբուրեաց: - 315. Նոյնպէս և քրիստոս աստ ի գնալն հոգւոց և ի գալստեանն աւուր՝ ընդ առաջ *ելանէ* սրբոցն և համբուրէ զսիրելիս իւր, որպէս հայրն երկնաւոր ի դարձ անառակին: - 315. Դարձեալ՝ առիւծաբար *ել* ի յորդանանէ. որպէս ասէ երեմիա «իբր ախոյեան *ել* ընդդէմ փործողին ի յանապատ և յաղթեաց նմա». ա՛յս է ոչ դարձուցանել թիկունս յանասնոց: - 316. Հինգերորդ՝ ի լերինն մասեայ յորժամ *ել* նոյ ի տապանէն՝ օրհնեաց աստուած զնա՛ և զորդիսն նորա ասէ գիրն. և հայր և սերմ արար մարդկան ազգի: - 319-320. Հինգերորդ՝ ընդ դէմ հպարտացելոյն որ խորհէր զաթոռ իւր դնել յամպս և անկաւ յերկիր. նա՛ խոնարհեցաւ յերկիր և *ել* յերկինս: - 323. Երրորդ՝ զի աստուծոյ վկայութիւնն ի սուտ *ելցէ* վասն նորա: - 325. Տասներորդ՝ կրկին եղև կեանքն և պատիւն յոբայ. և տէր մեր *ել* ի փառս առաջին և նստաւ մարմնով ընդ աջմէ հօր: - 327. Քսանևք, մովսէս միայն եմուտ յեգիպտոս և բազմօք *ել*: - 329. Վեցերորդ՝ նշանակէ՛ զբանն աստուած գաւազան ուղղութեան և թագաւորութեան առ հայր. եկն նա՛ յերկիր և էառ զօձաձև բնութիւնս մեր. և դարձեալ ըմբռնեալ մարմնովն *ել* յերկինս և նստաւ ընդ աջմէ հօր: - 332. Երկրորդ՝ բնութիւնս ադամայ *ել* ի դրախտէն և բորոտացաւ զանազան մեղօք. մինչև բանն էարկ ի ծոց աստուածութեան իւրոյ և հաստատեցաւ յառաջինն: - 332. Վեցերորդ՝ ձեռն հօր է՛ միածին որդին որ *ել* ի ծոցոյ հօր և էառ զօձաձև բնութիւնս մեր. և դարձեալ *ել* առ հայր, ի նոյն բնութենէն ո՛չ կացեալ ի բաց: - 333. Տասներորդ՝ մահ անդրանկացն. իբր ի փոքունցն կարգաւ ի խստագոյնն *ելեալ*: - 333. Չորրորդ՝ շանաճանճն. զի շնաբարոյք էին և մոլէին յառնականայս շնութեամբ. զի շանց է ոչ զուգակցիլ որպէս զայլ կենդանիս. վասն որոյ ի շանց *ելեալ* թունալից ճանճք խայթէին զնոսա: - 334. Երկրորդ, զի ագա՛հք էին, և վասն զարդուն *ելցեն* յեգիպտոսէ՛: - 336. Այսպէս և քրիստոնեայք յորժամ *ելանեն* ի կենաց աստի, կողոպտեսցեն զդևս և ապա՛ ելցեն: - 336. Այսպէս և քրիստոնեայք յորժամ ելանեն ի կենաց աստի, կողոպտեսցեն զդևս և ապա՛ *ելցեն*: - 336. Յորո՞ւմ աւուր *ել* ժողովուրդն յեգիպտոսէ, և քանի՞ ամ էր յադամայ: - 337. Իսկ յաւուր **ե** շաբաթոջ երեկունն զգառն զենին և *ելին* յայգ ուրբաթի. նիսանի **ժե**. որ էր առաջին ամիս նոցա. և ի կիրակէ անցին ընդ ծովն որ էր նիսանի **ժէ**: - 337. Նոյնպէս և սեղան խնկոց և երեսացն ցուցանէ զհոգիս սրբոց *ելեալ* ի մարմնոց և մտեալ դէմ յանդիման երեսացն աստուծոյ: - 346. Չորս կանգուն և կէս, *ելեալ* ի տարրական կենցաղոյս: - 346. Երրորդ՝ զի յերկնից էջ՝ և *ել* յերկինս կատարեալ զտնօրէնութիւնն: - 347. Վասն որոյ և յաւուրս զաքարիայի հօրն յովհաննու յորժամ յամեաց ի տաճարին և *ել*, ակնունէր ժողովուրդն տեսանել զա՛կնն և տե՛սին լուսափայլ սպիտակացեալ իբրև զձիւն. և լի՛ եղեն խնդութեամբ. զի երկնաւոր արքայութեան նշոյլքն պայծառացուցին զակն: - 349. Վեցերորդ՝ զի իմանալի ունի լոյս՝ ցուցանէ՛ զգալի լոյսն. զի ի գիշերի *ելեալ* ի խորանէն հալածէր զխաւարն և լուսաւորէր զանապան: - 352. Քանի՞ անգամ *ել* ի լեառն մովսէս: - 352. Եւ մին վասն ահարօնի հաշտութեանն *ելանել* կրկին ի լեառնն: - 352-353. Վասն է՞ր մեղր ո՛չ *ելանէր* ի սեղանն: - 355. Նաշիհ և իւղ զանգեալ և ո՛չ եփեալ, նշանա՛կ է նոցա՝ որ ի փործութիւնս մտեալ և փութով *ելեալ* ի ձեռն աղօթից...: – 357. Վասն մեղա՛ց է՝ որ խոստովանութեամբ արտաքոյ *ելեալ* ի մեղաց և ապաշխարութեամբ քաւեմք զմեզ ներքին խորհրդով և արտաքին գործով: - 362. Նա՛խ՝ զի իցէ կենդանի յորմէ *ելցէ* արիւն. իսկ մեռեալն կամ անշունչ քար ո՛չ ունի

արիւն: - 366. Իսկ թէ արիւնն *ելցէ* և շունչն և կենդանութիւնն ընդ նմա, ա՛յն է հրամայական մահ: - 366. Չորրորդ՝ զի երկնչիմք և անմեղ պահեմք զհոգիս մեր որ *ելանելոց* է յերկինս: - 371. Դարձեալ ցուցանէ՝ ի լրման ժամանակի տասանց միոյ կորուսեալ դրամին ի խնդիր *ելեալ*: - 376. Իսկ որ ի խորանէն բերին մովսէս և ահարօն զգաւազանն ծաղկեալ. զի ի սիօնէ՛ *ելցէ* օրէնք. որ է՛ յեկեղեցւոյ ամենայն իշխանութիւն: - 382. Եւ որպէս կնոջ ընդ հրամանս առնն իւրոյ յանցանել պոռնկութենէ, նոյնպէս և զաւակաց, և ծառայից, և աշակերտաց, և հնազանդելոց, և ժողովրդոց. նոյնպէս և հոգիս մեր *ելեալ* ի հրամանացն աստուծոյ՝ պոռնկութիւն է նմա. եթէ ըստ գործոց. եթէ ըստ հաւատոց: - 389. Եւ ի գլուխն սուր ո՛չ *ելցէ* որպէս սամփսոնին: - 390. Հինգերորդ՝ նախ յերկիր գամք. և ապա յերկինս *ելանեմք*: - 395. Եւ մտօքն յօժարութեամբ սիրել և յորդիութիւն նորա *ելանել*: - 396. **Իններորդ՝ մանուկն յարգանդի ո՛չ հացիւ կեայ. այլ հրամանաւն աստուծոյ կերակրի ընդ պորտն զինն ամիս. որպէս տնկականք, և որպէս նոյ ի տապանն. մինչ *ելանէ* յարգանդէ**...: – 397. Ութերորդ՝ ի խորխորատէ՛ չարեաց *ելցեն* օրհնօք. զի գեբաղն՝ հին ծոր թարգմանի: - 402. Տասներորդ՝ ի գարեզին. որ է՛ լեառն թլփատութեան. զի *ելեալ* ի լեառն հաւատոց՝ զաւելորդ մեղացն ի բաց ընկեսցեն, և զօրհնութիւնն աստուծոյ առցեն: - 402. Զայս նշանակէ թէ՝ յետ *ելանելոյ* հոգւոյ ի մարմնոյ և գնալոյ ի վերին շաւիղն, հակառակ կայ սատանայ և չար զօրութիւնքն ընդ նմա, տանիլ զհետ իւրեանց որ զչա՛րսն են գործեալ. և յարդարոցն յաղթին հրեշտակին օգնութեամբն. որպէս և անտօն ետես. զի իմացեալ և մեք զգուշասցուք այնմ: - 410. Որ և մովսէս եկեալ ի թաբօր վկայէր նմա, և աղերսէր *ելանել* ի խաչ և բանալ զդուռն արքայութեան. որում մարգարէքն սպասէին: - 411. Եօթներորդ՝ ի յօրինակ բնութեանս դառնալոյ անդրէն ի տեղիքն մեր ուստի *ելաք* որք են հաւատացեալք: - 414. Նմանապէս և **բժ**ան քարինքն հանեալ ի ցամաք և կանգնեալ սեղան՝ հաւատացեալքն են. որք ի ձեռն **բժ**ան առաքելոցն հաւատացին և *ելին* ի մեղաց. և եղեն սրբութեան սեղան աստուծոյ **բժ**ան անդամօք և **բժ**ան առաքելովք: - 415. Եւ որք գիտեն զտնօրէնութիւն փրկչին, զգեցցին զփրկութիւն նորին. զի նա՛ է հզօրն յորմէ *ել* կերակուր քաղցր: - 422. Ութևժ, *ել* կինն ի սամփսոնէ և եղև հացերիցուն. վասն որոյ և տուժեցան հրով: - 422-423. Երեսունևմի, ջուրն կակուղ *ել* ի կարծր ծնօտէն յորժամ խնդրեցաւ: - 424. Իսկ դարձումն ի յետ, յեօթն դարուց կենցաղոյս դարձեալ ուստի *ելին* ժողովին ամենայն սրբութիւնք: - 426. Նա՛խ՝ որպէս սաւուղ ի խնդիր իշոյ *ել* և թագաւորութիւն եգիտ. և տէր մեր մարդկան ազգի որ հաւասարեաց անբանից, և թագաւորեաց մեզ: - 426. Երկրորդ՝ զի սուտ խօսեցաւ աստ. զի թէ սամուէլ էր՝ ո՛չ ուսանէր ի սաւուղայ. և դնն յերկրէ ո՛չ *ելանէ*: - 430. Ութերորդ՝ զի առանց մեղաց *ել* յաշխարհէ: - 433. Չորեքտասաներորդ, ցպով և պարսաքարով *ել* ընդ դէմ գողիաթու. և տէր մեր խաչիւ որ վէմ կոչեցաւ, և ի ձայն բարձր աղաղակեաց և արձակեաց զհոգին: - 436. Երեսունևմի, գիշերի ընդ պատուհանն *ել*, թողեալ զպատանսն յանկողնի. և տէրն ի գիշերի յարուցեալ եթող զկտաւն ի գերեզմանին կնքեալ: - 436-437. Երեսունբ, յետոյ առ սամուէլ ի նաւաթ գնացեալ և հոգի աստուծոյ խաղացեալ. և տէր մեր առ հայր ի յերկինս *ելեալ*, և յառաքեալսն զհոգին առաքեալ: - 437. Դաւիթ *ելեալ* ի բարձր տեղի աղաղակեաց առ սաւուղ՝ «ո՞ւր է գեղարդն քո». և տէր մեր *ել* ի յերկինս աղաղակեաց «ո՞ւր է մահ յաղթութիւն քո»: – 437. Այլ որ հրամայեցաւ սիմէի ոչ *ելանել* յերուսաղէմէ. և յորժամ *ել* մեռաւ: - 439. Մետասաներորդ՝ փողով և ցնծութեամբ *ել* յերուսաղէմ: - 441. Որ է՛ խաչն և խաչ *ելեալն*: - 441. Նախ փուա արքայ ասորեստանեայց *ել* ի վերայ իսրայէլի: - 446. Եւ յետ հնգետասան ամի յաւուրս աքազու՝ *ել* թագ ղաթփաղսար արքայ ասորեստանի ի վերայ իսրայէլի...: - 446-447. Եւ դարձեալ՝ յետ աւելի քան զերեսուն ամ ի զերորդ ամին եզեկիայ արքայի յուդայ՝ *ել* սաղմանասար արքայ ասորեստանեայց ի վերայ սամարիայ...: – 447. Եւ յետ գերութեանն իսրայէլի անցեալ ամք **ճլե**, *ել* արքայն բաբիլացւոց նաբուգոդոնոսոր ի վերայ երուսաղէմի. ի **ժ** ամի թագաւորութեանն յովակիմայ. և էառ հարկ ի նմանէ. և զմեծ մասն սրբութեանց տաճարին աւերեաց: - 447. Եւ յետ **գ** ամի՝ կրկին անգամ *ել* յերուսաղէմ, զյեքոնիա և զեզեկիէլ գերի վարեաց: - 447. Եւ յետ **բ** ամի՝ դարձեալ *ել* յերուսաղէմ, և **թ** ամ պաշարեաց զքաղաքն ի սով սաստիկ: - 447. Երրորդ՝ որպէս զստնդիայի մանուկն է ամ խրատէ՛ դայեակն. այսպէս ժողովուրդն որ *ել* յերկրէն իւրեանց, երկիրն բաբիլացւոց հ ամ ի գիրկս իւր դայեկեաց զնոսա և սնոյց. զի յետ դարձին յերկիրն իւրեանց՝ զբարիս գործեցեն: - 448. Դարձեալ *ել* նաբուգոդոնոսոր և էառ զյովակիմ գերի: - 453. Պարտ ուրեմն էր բանին կենաց *ելանել* յայնմ անդամոց, որ պատերազմի՛ ընդ մահու: - 469. Առաջինն որ ասէ «*ել* վաղվաղակի ի ջրոյն». զի ամենայն ոք որ մկրտէր ի յովհաննէ ի ջուրն՝ խոստովանէր զմեղս իւր և ապա՛ *ելանէր* : – 487. ...իսկ քրիստոս ո՛չ ունէր զմեղս. վայն այն վաղվաղակի *ել* ի ջրոյն. և նշանակէ ի մեզ զշնորհաց հեղումն. որ մկրտեալն ազատի ի մեղաց և իսկոյն *ելանէ* յառաքինութիւնս: - 487. Ոմանք ասեն թէ աւանդիլ հոգւոյն քրիստոսի, աւազակն եմուտ յերկրաւոր դրախտն ուստի *ել* ադամ. և չէ՛ հաւանելի. զի անդ մարմնովն եմուտ յետ յարութեանն: -

495. *ել* ջուր և արիւն: - 495. ...և մեղօք ծանրացեալ էջ ի ներքին կէտս դժոխոցն, և այլ ո՛չ կարէր բարձրանալ. մինչ ի վերին կիտէն բանն աստուած էջ ի ներքին կէտն. և ապա *ել* ադամ ի վերին կէտն երկնից: - 503. Որպէս յօրինակէն տեսանի. որ թէպէտ առ հասարակ *ելին* յեգիպտոսէ յանապատն, այլ ոմանք մտին յերկիրն պարգևաց: - 508. Եւ յորում ժամու *ել* մովսէս յեգիպտոսէ և եհան զժողովուրդն, ի նոյն ժամն յարեաւ քրիստոս ի մեռելոց և եհան ազատեաց զհոգիսն ի հրահալոց չարութենէ դժոխոցն և ի բռնութեանց իմանալի փարաւոնին: - 512. Որ այսպիսի էր պատկեր աւուրն. յաւուր **ե** շաբաթոջ երեկոյին ի չորեքտասան լուսնին զգառն զենին և *ելին* յայգ ուրբաթի **ժե** ամսեանն. և ի կիրակէ անցին ընդ ծովն որ էր նիսանի **ժէ**: - 513. Եւ ի մէջ գիշերի զարթեաւ և զդրունս փակեալ նգօքն և սեմօք եհան յուսն և *ել* ի լեառն: - 513. Որ և պահապանքն շրջապատեալ. որ և զհանդերձն պատատեալ յանկողնի, և լերդ այծեաց և մազ ի սնարսն. և ի գիշերի իջեալ ընդ պատուհանն և *ելեալ* առ սամուէլ զերծաւ ի ձեռաց նոցա: - 513. Յորում ի մէջ գիշերի թողեալ զկտաւսն ի գերեզմանի և յարեաւ *ել* առ հայր ի յերկինս: - 513. Եւ տէրն ի գիշերի *ելեալ* ի գերեզմանէն բաժանեաց և էառ զհոգիս մարդկան ի նմանէ. և արար իւր հանդերձ զսուրբ ժողովուրդ իւր: - 513-514. ...և դաւիթ մտեալ և առեալ զսուրն ի սնարից նորա. և *ելեալ* ի գիշերի ի լեառն աղաղակեաց առ նա «ո՞ւր է սուր քո»: – 514. Եւ յարուցեալ ի գիշերի *ել* ի լեառն երկնային. աղաղակեաց ասելով «ո՞ւր է մա՛հ յաղթութիւն քո. ուր է դժոխք խայթոց քո»: – 514. ...իսկ մարմինն յերեսուն ժամուն ի գերեզմանէն յարեաւ. զի երեսնամեայ մկրտեցաւ մարմնով և *ել* ի ջրոյն: - 516. Եւ **լ** ժամեայ յարեաւ և *ել* ի գերեզմանէն: - 516. Եւ այսպէս սովորաբար խօսիմք, թէ յուրբաթի կէս օրն *ելեալ* ոք ի տեղւոջէ՛ մինչև գայ առ մեզ ի լոյս կիրակէին կամ ընդ առաւօտն, ասեմք թէ **գ** օր է ճանապարհին. նոյնպէս և յարութիւնն քրիստոսի: - 516. Երկրորդ՝ մագդաղենացին մարիամ յորմէ է դևքն *ելին*: - 516-517. Վեցերորդ, ոմանք ասեն թէ պարգևս խնդրէր հոգևորական. վասն այն ասէ *ելանեմ* առ հայր իմ և իջանէ հոգին և լնու զձեզ ձրի պարգևօք. այժմ յաղագս այդորիկ մի՛ մերձենար: - 517. Յայսմիկ յայտ արար թէ ի յարութեան անդ ո՛չ դառնայ ոք յոք. ո՛չ հայր յորդիս՝ և ո՛չ որդիք առ հարս իւրեանց. այլ դառնան ամենեքեան յայս. զի արժանի լիցին ողորմութեամբ *ելանել* առ հայր: - 517. Հնգետասաներորդ, զի բաւական համարեցաւ ի պատիւ կանանց զայն՝ զի յառաջագոյն մերձեցաւ ի նոսա ծննդեամբ. իսկ յետ յարութեանն կամի՛ զի ա՛րք նախ մերձեսցին ի նա մինչ դեռ ո՛չ է *ելեալ* նա առ հայր: - 518. Արդ մի՛ մերձենար դու յիս անկատար գոլով. որպէս մայր քո եւս ի ծառն գիտութեան. յորժամ առ բնութեամբ իմ հայր՝ և ձեր ըստ շնորհի՝ և աստուած մարմնոյս իմոյ ես *ելանիցեմ*, որոտմամբ իջեալ հոգին զձեզ կատարէ՛. արժանաւորիք յայնժամ առ իս մերձենալ: - 518. Հինգերորդ՝ համբարձաւ զուարճութեամբ. որ վերաբերի առ նոսա որք փրկեցան ի դժոխոցն և ընդ նմա *ելին* յերկինս. զի բ բանակօք *ել* յերկինս այսինքն սպասաւոր հրեշտակք և մարդկան փրկելովք: - 520. Հինգերորդ՝ յետ **խ** աւուր համբարձաւ, զի ցուցցէ թէ որք **զժ** բանեան օրէնսն չորիւք աւետարանաւն լնուն, կարեն յերկինս *ելանել*: - 521. Եւ դարձեալ ի բարութիւն և ի հանգիստ *ելեալ* ի ձախողակի՛ կենցաղոյս: - 521. Իսկ հոգին սուրբ երագ էջ յառաքեալսն. զոր արեգակն քրիստոս բազում ամօք յերկարեալ մարմնով *ել* յերկինս: - 522. Երկրորդ՝ ի վերնատանն դասք առաքելոցն ի վերայ նոր հաղորդութեանն մարմնոյ և արեանն՝ նոր օրհնեցին զքրիստոս և *ելին* ի լեառն ձիթենեաց որպէս ասէ աւետարանն: - 528. Երրորդ՝ ի լեառն ձիթենեաց տեսին զտէրն *ելեալ* յերկինս՝ երկրպագեցին նմա: - 528. Երրորդ՝ որպէս որք *ելեալ* ի սահմանէն՝ ո՛չ են ի նոյն տեսակն: - 538. Այսպէս. որք *ելեալ* ի կանոնէն՝ չեն ի նոյն կարգ քրիստոնէից: - 538. Եւ յորժամ *ել* արտաքոյ քաղաքին թողեալ զկապանս սողոմոնի՝ սպանաւ: - 540. Այլ ա՛րդ՝ յամենայն ազգաց *ելին* հերձուածօղք որ է սուտ. և խառնեցան ընդ ճշմարտութեանն: - 550-551. Զի ամենայնն ի բերան մտանէ և ընդ արտաքս *ելանէ* ասեն: - 552. Այսպէս և հանդիպեալ հպարտութեանն՝ *ելանեն* ամենայն բարութիւնք մեր: - 562. Ա՛րդ՝ մեղքն որ ընդ դէմ հոգւոյն սրբոյ՝ մանաւանդ *ելանէ* ի չար կամաց անձնիշխանականին. և ուղղակի մարտնչի ընդ դէմ շնորհաց հոգւոյն սրբոյ. և յիրաւի անթողլի՛ է: - 566. Նա՛խ առ հրէայսն. որ գիտէին զհոգին սուրբ՝ շնորհաց բաշխօղ. ուստի *ելից* հոգին զբէսէլիէլ ճարտարապետ. և զեօթնարփեան շնորհս թուէ եսայի...: – 566. Իսկ ներելին թէպէտ որոշի յերիս տեսակս ըստ մեծութեան և նւազութեան. այլ մանրամասնաբար յանթիւ *ելանէ*. որպէս ծիծաղիլ. վայրաբանել. և այլն: - 568. Իսկ յորժամ սուրբ հոգին *ելանէ*, պիղծ հոգին այսինքն սատանայ բանկէ՛ ի նա: - 570. Վեցերորդն՝ *ելեալ* ի յերկինս նստաւ ընդ աջմէ հօր. որ է հաւասարութիւն հօր: - 573. Իսկ որք *ելեալք* են ի մարմնոյ, յոյս նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ գիտութեան. զի ստուգապէս գիտեն զլինելոց հատուցումն: - 574. Հինգերորդ վերջին օծումն. որ է՛ *ելելոցն* ի կենցաղոյս և զերծելոցն ի պատերազմէ՛: - 587. Օծումն է՛ խորհուրդ ի լրումն արդարութեան. զի *ելեար* ի պատերազմէ՛ զփոշին և զքիրտն սրբեմք. որպէս *ելեալքն* ի մարմնական պատերազմէ՛: - 587. Իսկ *ելանելն* ի բեմն, զի յետ բոլոր անօրէնութեանցն քրիստոս *ել* յերկինս և նստաւ ընդ աջմէ հօր աստուծոյ: - 594. Եւ թէ

ասեն՝ հաղորդութիւնն նշանա՛կ է մահուն քրիստոսի յորմէ *ել* արիւն և ջուր: - 596. ...և գոհացեալ *ելին* ի լեառն ձիթենեաց...: - 599. Վասն այն մինչ յայս ամուսնանալ կարեն. և ի հինգն *ելեալ* վերագոյն դասուց՝ ո՛չ ամուսնանան: - 609. ...և զխաչն հանապազ կրեն ընդ ինքեանս. և լուսով խաչին *ելանեն* ընդ առաջ քրիստոսի: - 616. Եօթներորդ՝ զի լի՛րբ է ոչխարն. և լիրբն արտաքսելի՛ է յեկեղեցւոյ. որպէս յուդա լրբութեամբ *ել* արտաքս: - 617. Նոյնպէս ի սրտէն *ելանէ* կսկիծ արտասուաց. և զհեշտութիւն նորա քաւէ՛: - 619. Երկրորդ՝ մեղքն ի հոգւոյն և ի մարմնոյն ի վեր *ելանէ*. իսկ արտասուքն վերուստ ի վայր հոսի և կորուսանէ՛ զնա: - 619. Ասեն վարդապետք թէ՝ ի լուր ուրախութեան հեշտանայ լեարդն և տարածեալ լայնանայ. և այնպէս շունչն *ելեալ* յորդ ընդ շնչերակսն և առնէ զծաղրն: - 619. Եւ ի հիւթոյն յայնմանէ *ելեալ* ի գլուխն լինի արտօսր քաղցր վասն քաղցրութեան լերդին: - 619. ...և հիւթն *ելեալ* ի գլուխն լինի արտասուքն դառն վասն լեղւոյն: - 620. Եւ յաչացն ի յերեսն սակաւ. որ արտասուքն *ելանէ*. բայց սակաւ ճանապարհս այս յաղթէ՛ զայն բազում տարւոյ ճանապարհն: - 620. ...և Դարձեալ՝ որպէս յետ ամենայն տնօրէնութեանցն *ել* առ հայր և պարգևեաց զհոգին սուրբ: - 634. ...այն է, որ հրամայեաց աստուած ահարօնի զգենուլ զպճղնաւորն և զվակասն և զխոյրն և զայլն, և *ելանել* առ ժողովուրդն: - 636. Ի հինգերորդ օր արարչութեանն ի խորհուրդ մկրտութեան ջրային կենդանիք և թռչունք յօդս *ելին*: - 638. ...որոց ցանկացան և *ելին* յաշխարհէս և ի լոյս են բնակեալ: - 647. Նոյնպէս և հոգւոցն *ելեալ* ի մարմնոց՝ այլ միջոց և արգելումն կամ խափան պսակացն չկայ: - 648. Զի յորժամ *ելին* ի դրախտէն՝ **Ե** օր անսւաղ պահեցին: - 650. Եւ յորժամ մերն լուսաւորիչ *ել* ի վիրապէն, **Ե** օր պահք կարգեաց և ապա՛ բժշկեաց ի հարուածոյն...: - 650. Եւ զայս ուսաք ի քրիստոսէ. որ ի վերնատունն յետ ընթրեացն օրհնեցին և *ելին* ի լեառն ձիթենեաց: - 655. Նոյնպէս և բարեկենդանս. զի ի լեառն պահո՛ց *ելանեմք*: - 657. Եւ բնակա՛ն է զի նախ ի յանկատարն և ապա՛ ի կատարեալն *ելցեն*: - 662. ...չար հոգիքն ընդ առաջ *ելեալ* արգելուն զնա ի ճանապարհն...: – 669. ...նոյնպէս յորժամ ի գերեզման դնեն զմարմինն, իբր յաշխարհի ծովէ *ելեալ* զվառն խոնարհեցուցանեն: - 676. Նա՛խ՝ զի ի սմանէ *ելանեմք*, և ի նմանէ ո՛չ: - 679. ...մին օրն մտանեմք յաշխարհ, և ի մին օրն *ելանեմք* աշխարհէ: - 680. Զի կենցաղս այս որպէս երկդռնի քաղաք է. ի մինն մտանեմք և ի միւսն *ելանեմք*. - 680. ...և *ելեալ* ի մարմնոյն ընթանայ յօդս: - 682. Եւ ո՛չ որպէս շաղակրատեն ոմանք մտացածին բանիւ. թէ երեք օրն՝ կամ յեօթն՝ կամ յամիսն՝ և կամ ի տարին *ելանեն* ի քաւարանէն: - 683-684. Յոգիք *ելեալ* ի մարմնոց՝ ի զգայութեա՞ն են և ի միտս, թէ ոչ: - 685. Իսկ ազգն Ֆռանկաց ասեն զչարաց հոգիսն ի դժոխս իջեալ. և զբարեացն յերկինս *ելեալ*...: – 686. ...և որք միջակք են, և նոքա ի քաւարանին մաքրին և յերկինս *ելանեն*: - 686. Իսկ երկրորդն՝ որ ի բուրգաթուրն ասեն քաւեալ և *ելեալ* յերկինս...: – 687. ...ոչ թողու արդար իրաւունքն աստուծոյ *ելանել* յերկինս. այլ կան և մնան իներքոյ. ակնունելով հանդերձեալ դատաստանին...: - 688. Ապա թէ ոչ՝ ո՛չ կարէ մեղաւոր հոգին *ելանել* յերկինս. ուստի և հրեշտակք վասն մեղաց անկան. և մարդն ի դրախտէն: - 689. Այլ հոգիք սրբոցն *ելանեն* յերկինս որ անապա՛տն է չարաց...: - 689. Երրորդ, ասէ առաքեալն թադէոս, եթէ հոգի ամենայն մարդոյ որ *ելանէ* ի մարմնոյ, են նոցա օթևանք և բնակութիւն ի հանգստեան...: – 691. ...հետևի զի և արդարքն կարեն *ելանել* յարքայութենէն աստուծոյ և գնալ ի դժոխքն: - 700. Նա՛խ՝ վասն հեշտ ցանկութեան իւրեանց զոր ոչ կամին *ելանել* անտի...: - 701. որով դրոշմեալքն յետ արտաքս *ելանելոյ* ի մարմնոյս, թռչին յանապատն ի մեղաց յերկինս կերակրիլ անդ յուսով մինչև լնու թիւ կատարման աշխարհի: - 703. ...և սուրբքն *ելեալք* ի մարմնոյ և յաղթեալք թշնամոյն՝ թագաւորեն ընդ քրիստոսի որպէս ցուցանի յառաջիկայդ: - 706. ...զի նա՛ է գազանն որ *ել* ի ծովէն և ունէր գլուխս է. այսինքն զամենայն իշխանս: - 707. Այս է ի գլխաւորութիւն ամենայնի զռ եղելոյ ապստամբութեանն. զի որ քան աւուրբ եղև աշխարհ, այն քան ամօք յանկ *ելանէ*: - 707. Եւ վեցն՝ ի կատարումն վեցեակ դարին նոր ապստամբն *ելցէ* և կորուսցէ զբազումս: - 708. զսոսա ասեն հրէայքն *ելանել* ի կատարածի և գալ յերուսաղէմ: - 708. Եւ յարիցեն և *ելանիցեն* յերկինս ամպօք: - 709. Եւ դարձեալ յարութիւն է հոգւոյ *ելեալ* և ազատեալ ի մարմնոյ և մտեալ առ աստուած, որ է յոգիս արդարոց կատարելոց: - 710. Եւ ունի բեհեզն վեց յատկութիւնս որ նշանակէ զվայելչութիւն հոգւոց սրբոցն *ելեալք* ի մարմնոյ: - 712. Եւ տէրն վասն կերակրոյն ո՛չ ասաց թէ ի մարմին մարդոյն ո՛չ հաւասարի. այլ զայն թէ՝ դառնութիւն և ծանրութիւնն արտաքս *ելանէ*, - 718. Զոր օրինակ նշան դրոշմի կայ ի մէջ քո՝ և անասնոյն՝ և տանն. զի *ելեալ* ի տանէ երթայ խառնի ի հասարակ նախիրն...: - 719. Եւ որպէս *ելաք* ի բարի կենաց և մտաք ի չար մահն, այսպէս և *ելեալք* ի մահուանէ մտաք յանեզր և անվախճան կեանքն և բարութիւն: - 724. Թէպէտ ո՛չ ունին բանք և ոչ խօսք, այլ ընդ ամենայն երկիր *ել* բարբառ վկայութեան նոցա. զի ամենայն տեղիք և ամենայն ժամանակք մարդկան առ նոսա է՛ յայտնի: - 729. Զի որպէս փայլակն *ելանէ* յարևելից ի վերայ լուսեղէն ամպոյ, և քառաձև լուսովն լնու զչորս կողմ աշխարհի և հաստատի ի գողգոթայ յորում խաչեցաւ տէրն: -

732. Նախ՝ զի տեղիք դատաստանին ո՛չ է յերկինս ուր մեղաւորք ո՛չ կարեն *ելանել*: - 737. Ո՞րպէս ասեն վարդապետք թէ յառաջին կեանս դրախտին *ելանելոց* եմք: - 758. Ո՞րպիսի լիցի օրն այն, մինչ քեզ մարիամ մայր տն ընդ առաջ *ելանէ* հանդերձ պարուք կուսանաց: - 764. Երկրորդ այնու՝ զի ի նաւաբեկութենէ փրկեալք եղիցին. թէ նաւաբեկեալքն որ ի ծովէն *ելանեն* այնքան ուրախանան, ո՞րչափ ևս առաւել ուրախասցին որք զայս քան նաւաբեկութիւնս կրեալք ի վշտագին ծովէ այսմ աշխարհի զերծան: - 764. Ուստի յա՛յտ է զի *ելեալ* էին երբեմն և վերըստին դառնան ի նոյն: - 777. Նոյնպէս և երբեմն յուզել ուրախութեանց. ի փեռեկեալ թոքոյ ի կոտորումն շնչոյն, ի քաղանթէ՛ որ առ լերդաւն՝ հիւթ ինչ ծաւալի առ նոյն ասացեալ տեղի. *ելեալ* գոլորշեացն նմանապէս առաջնոյն. և լինի քաղցրագոյն արտօսր. վասն ասացեալ հիւթոյն ի քաղցրորակն անօթոյ: - 787

**ԵԼԵՔ** - Երկոտասաներորդն Աբդոն որդի *ելեքայ* փարաթոնացի ամս **ը**: - 420

**ԵԼԻ** - Եւ յետ մահուանն մատթանայ՝ մելքի ի ցեղէն նաթանայ որ որդի էր ղեւայ և եղբայր պանթերայ, առեալ զնոյն կին մատթանայ և ծնաւ *զելի*: - 460. Եւ յակոբ և *ելի* եղբարք էին ի միոյ մօրէ: - 460. Յակոբ ի ցեղէն սողոմոնի որդի մատթանայ. և *ելի* ի ցեղէն նաթանայ որդի մելքեայ: - 460. Եւ *ելի* մեռաւ անորդի որ էր յազգէն նաթանայ: - 460. Եւ այսպէս յովսէփ բնութեամբ որդի էր յակոբայ և ի ցեղէն սողոմոնի. և օրինօք որդի էր *ելեայ* որ ի նաթանայ: - 460

**ԵԼԻԱ** - Զաքարիա Սիմա *Ելիա* Մովսէս տաւղօք երգէին: - 641

**ԵԼԻՄԱՍ** - Զառուցեալսն ի հաւատս բորբոքեն. և զվառեալսն չարութեամբ՝ շիջուցանեն. որպէս *զելիմաս* և զսիմոն: - 523

**ԵԼԻՓԱԶ** - Ոմանք ասեն թէ՝ բարեկամքն իւր որ էին յազգէն եսաւայ *ելիփազ*. սովփար. և բաղդատ. որք եկին մխիթարել զնա ի վշտացն...: – 320

**ԵԼԼԱԴԱՑԻ** - Եւ այս են հք լեզուքն ...*ելլադացիք*: - 299

**ԵԼՈՂՈՒԹԻՒՆ +** Սանդուխք *ելողութեան* ի յերկինս: - 474

**ԵԼՈՆ** - Մետասաներորդն *Ելոն* զաբողոնացի ամս **ժ**: - 420

**ԵԼՈՒՄՆ +** Վեցերորդ՝ որ փոխին այլք յայլոց բնութենէ վասն առատութեան բնութեանն. որպէս կարպասածին ճըճին ունի սա ծնունդ սերմամբ իւր զնմանն. և ունի *ելումն* զկերպասն: - 53. Զի ունին ծնունդ զնմանն իւրեանց, և ունին *զելումն* բաց ի ծննդենէն. որպէս ի ձիոյն ձիակապիկն. և յարջառոյն մեղու. և յայլոցն որդն: - 53. Նախ՝ զի բղխումն հոգոյն՝ է՛ *ելումն*. իսկ *ելումն* շարժումն միոյն ի միւսոյն: - 63. Այլ այնպէս ասաց առ ի ցուցանել զանչափ յաւիտենական աստուածութիւնն՝ որ ըստ ինքեան պարունակէ զամենայն ժամանակս. ըստ որում աստուածային *ելմունք* ի յապառնի ժամանակս իցեն. և կերպիւ ինչ ներկայաբա՛ր գոն: - 65. Երկրորդ՝ առաջին ստեղն է հայր. ոչ յումեքէ. միջինն որդի ծնունդ ի հօրէ. վերջինն հոգի բղխումն ի հօրէ և *ելումն* յորդւոյ. զի որդւովն երևի. և հարք հաւասար աստուածութեամբ և արարչութեամբ: - 178. Չորրորդն է՛ *ելումն* արեան և ջրոյն ի լուացումն և յարբումն մեր: - 489. Եւ ի նոյն ճառն ուր թուէ ը քաղցրութիւնս չարչարանացն քրիստոսի, զչորրորդն ասէ՝ *ելումն* արեան և ջրոյն ի լուացումն մեր: - 594-595

**ԵԼՈՒՍՏ +** Երրորդ՝ պտղակն *ելուստ* ի պտղոյն. որ բիծ ունի ի միտքն: - 370. Եօթներորդ՝ սապատողն. կուզն. կամ *ելուստ* ի թիկունքն. որ ո՛չ կրէ զբեռն քահանայութեան հպարտութեամբ: - 370

**ԵԿ +** Իսկ «աստուած աստուած իմ ընդէ՞ր թողեր զիս», ո՛չ թէ յինքենէ՛ թողաւ և կամ ի հօրէ. որպէս թէ երկեաւ ի չարչարանացն. վասն զի կամաւ *եկն* և ո՛չ հարկիւ: - 42. Քսանևմիերորդ՝ արդ՝ եթէ քրիստոս տգէտ ունէր միտս, և տկար հոգի, և ապականացու մարմին և *եկն* քրիստոս զի բարձցէ զտկարութիւնս մեր. և լուսաւորեսցէ որ նստէաք ի խաւարի. և նա՛ է գառն աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի և զապականութիւն: - 99. Այլ արդ՝ լինելութիւն աշխարհի առ ինքն ըստ ինքեան ասի զօրութեամբ և ներգործութեամբ. զի ի զօրութենէ *եկն* ի ներգործութիւն. զի թէ ոչ գոյր զօրութեամբ նախ՝ ո՛չ լինէր յետոյ ներգործութեամբ: - 169. Նոյնպէս և քրիստոս *եկն* առ եղբարս իւր որ էին որդիք դաւթի և աբրահամու և առաջնորդք ժողովրդեանն. և յուղա վաճառեց զնա. և տէր եղև կենդանեաց և մեռելոց և կերակրիչ. զի ազատեաց զհոգիսն ի սովոյ դժոխոցն: - 313. ...*եկն* երևեցաւ. այսինքն մարդացաւ մարդասէր բժիշկն. և առողջացոյց զկարեվէր խոցեալքս. ըստ որում բժիշկ անուանէր զինքն անկեալ ի ձեռս աւազակաց հիւանդին: - 467. Այլ յորժամ նկուն եղեն օրէնք ամենայն, և ո՛չ կարեցին փրկել. յետոյ *եկն* և երևեցաւ նոյն ինքն օրէնսդիրն և փրկեաց զմեզ: - 467. Վասն այն *եկն* որդի և հաստատեաց մեզ զժառանգութիւն իւր ասելովն «ես ուխտեմ ձեզ որպէս հայր ուխտեաց ինձ զարքայութիւն»: – 468. Եւ դարձեալ ասեմք. տէրն մեր՝ մարդեղութեամբն *եկն* զապականութիւն մեր յանապականութիւն փոխարկել. և զիա՞րդ ինքն կրէր

զապականութիւն: - 502. Զի առաքեալն թադէոս յորժամ ձեռնադրեաց զադդէ յուռհայ, և ապա՛ ի կեսարիայ *եկն* և ձեռնադրեաց առաջին եպիսկոպոս զքէոփիլոս. զայն յորոյ անունն գրեաց Ղուկաս զաւետարանն և զգործքն առ թէոփիլոս: - 548. ...*եկն* ի յերկիր որ է՛ արևմուտք և խաւար. եղև որդի մարդոյ: - 621. ...որով տէրն մեր *եկն* առ մեզ կուսութեամբն մարիամու: - 665

**ԵԿԱՄՏԱԿԱՆ +** Եւ այս գիտելի է, զի կրկին են կիրք. նախ բնական. և ապա *եկամտական*: - 496

**ԵԿԱՄՈՒՏ +** Չորրորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ, այլ արդ չարն *եկամուտ* է և պատահեալ. լինէր ապա ի յաստուած օտա՛ր ինչ և պատահական. որ է անտեղի: - 13. Այլ և ո՛չ ի բնութենէ. զի բնութիւնք ամենայն հրեշտակաց կամ մարդկան բարի՛ են ի բարւոյն յառաջ եկեալ. այլ չարն է՛ յանձնիշխան կամաց *եկամուտ* ի բնութիւնս: - 16. **Իսկ չարն է *եկամուտ* և պակասութիւն բարւոյն:** - 23. Էառ փրկիչն զամենայն, զի փրկեսցէ զամենայն. բաց ի մեղաց. զի մեղքն *եկամուտ* է և ո՛չ է ի բնութենէս. զի բնութիւնս անմեղ ստեղծաւ յաստուծոյ: - 50. Վեցերորդ՝ թէ արարա՛ծ է բանն և հոգին աստուծոյ՝ ապա օտա՛ր է յէութենէ աստուծոյ և *եկամուտ* և աւելոր՛դ նմա: - 56. Եւ թէ զամենայն արտաքուստ և *եկամուտ* ունի, զիա՞րդ ասէ զինքն ճշմարիտ գոլ: - 67. Զի ո՛չ էապէս՝ այլ արտաքո՛ւստ և *եկամուտ* ունի զաստուածն անուն: - 70. Նոյնպէս ծանրութիւն փայտին պատահակա՛ն է և *եկամուտ*. զորս կորուսանէ հուրն: - 202. Հինգերորդ՝ ի յուսումն խոնարհութեան մերոյ. զի տեսանելով զմեզ տկար քան զնասունս, մերկ և աղքատ ի մօրէ ծնեալ, խոնարհեալ զիջանիմք ի հնազանդութիւն արարչին. և զի մի՛ *եկամուտ* հպարտութեամբ կրեսցուք զանկումն արուսեկին: - 267. Եւ քարահատք և բեռնակիրքն **ծծռ**՝ յայլազգեացն *եկամուտք* էին: - 440. Երկրորդ՝ զի ո՛չ ինչ անդամ զազրելի է ի մարդն. այլ ամենայնն հաւասար են յարդարութիւն. եթէ ոչ *եկամուտ* ինչ խառնեսցի ի նմա: - 469. Իսկ *եկամուտ* կիրքն բաժանի յերիս տեսակս: - 496. Իսկ տէր մեր ի մարդեղութեան իւրում յայսցանէ *եկամուտ* կրից միայն զնահն կրեաց. իսկ զմեղս և զապականութիւնս ո՛չ կրեաց: - 496. Եւ տէրն ի մարդեղութեան իւրում ընկալաւ զոր ինչ բնականն էր մարդոյս բնութեան. և ոչ *զեկամուտ* անասնականն: - 502. Եւ գրեցին գիրս կանոնաց գլուխս ի, ընդ դէմ *եկամուտ* թուլութեանցն: - 544. Մ՛րդ՝ միաւորել զուրբ խորհուրդն ո՛չ է նորագիւտ ինչ *եկամուտ* մեզ ինքեանց: - 598

**ԵԿԱՒՈՐ** - Իսկ *եկաւորն* և Կշիռն և Ջրհոսն, ունին զբնութիւն օդոյ ջերմ և գէջ: - 189. Ի խոյն և ի ցուլն և *յեկաւորն* առնէ զգարուն. որ է հասարակ տիւն և գիշերն **ժբ** ժամ: - 190

**ԵԿԱՒՈՐԻՄ +** Եւ նա՛խ *եկաւորի* հոգին ամենայն ուրեք. որպէս ի մարգարէսն և ի կոյսն սուրբ, և ապա՛ բանն մարմնացաւ. և յետոյ հոգին սուրբ էջ յառաքեալսն և յեկեղեցի մնաց: - 125. Նախ՝ զի պետութիւնք պատշաճին առ հայր. և հրեշտակապետքն առ որդի իբր յերկուց միացեալ. և հրեշտակքն ի դէմս հոգւոյն իբր նախ *եկաւորեալք* յամենայն ուրեք, և ապա յորդի և ի հայր բնակեալ: - 136

**ԵԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ +** Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ. երկնուղէշ զարգացմամբ մշտասաղարթ կուսութեամբ ծաղկեալ և պայծառացեալ հոգւոյն սրբոյ *եկաւորութեամբն*. և պտղաբերեալ մեզ անմահ պտուղ զբանն մարմնացեալ. յորմէ վայելեալք երկնաւորք և երկրաւորք ի շնորհաց նորին զյաւիտենից կեանսն ժառանգեցաք: - 768

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ +** Զոր նախ *յեկեղեցական* քահանայապետութեան երեք գլուխն ասէ...: – 83. Զի այսպէս միատեսակ բնութեամբ խոստովանի ընդ մեզ և այլ ժողովուրդ ուղղափառաց ըստ ուսուցման մեծին դիոնիսեայ յերկրորդ գլուխն *եկեղեցական* քահանայապետութեանն ասել, - 477. Պետրոս գլուխ է առաքելոցն. որպէս գրէ դիոնէսիոս ի **գ** գլուխն *եկեղեցական* քահանայապետութեան: - 546. Յետ այսորիկ հարցանելի՛ է *զեկեղեցական* կատարմունքս մեր: - 613. Նախ՝ պատրեսցէ *զեկեղեցականս* խորամանկ քարոզութեամբ. - 708

**ԵԿԵՂԵՑԻ +** Արդ՝ ըստ ուղղափառ վարդապետաց *եկեղեցւոյ*: - 24. Որոց պատասխանեն վարդապետք *եկեղեցւոյ*. և ես զնոցայն առեալ ասացից՝ թէ յաւուրս յետինս՝ ոչ զկատարած աշխարհի կոչէ, այլ կոչէ աւուրս յետինս՝ զպակասութիւն օրինացն և արդարութեան նորա. քանզի օրէնք նոցա պակասեցաւ ի գալստեանն քրիստոսի: - 27. Ասեմք եթէ՝ զոգ և մազոգն՝ հոգևորապէս իմացեալ լինին ամենայն հալածողք *եկեղեցւոյ*. զորս սատակեսցէ՛ տէր յիսուս զամենեսեան որպէս ասէ սաղմոսն՝ «որպէս զանօթ բրտի փշրեսցես զնոսա»: - 28. Հերձեալք ի հաւատոց՝ բաժանեն զքրիստոս. և զայլ *եկեղեցիս* հերձուածօղս կոչեն: - 34. Եօթներորդ՝ զնա փոքր եղջիւր կոչէ դանիէլ. խեթկի և մեծամեծս բարբառելով. և սոքա խեթկեն *զեկեղեցի*. և բանան զհայհոյիչ բերանս իւրեանց յերկինս, և զլեզուս ածէին զերկրաւ: - 35. Ութերորդ՝ զնա օ՛ձ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն զբազումս. և արտաքսեն ի դրախտէ *եկեղեցւոյ*. և թոյնք իժից ի ներքոյ շրթանց ունելով և խայթոց՝ զի առորս մերձենան, ի յսկիզբն բանից կամ ի վերջն՝ մահացուցանեն զհոգիս. երկճղի ունելով լեզու նենգաւոր՝ չար և բարի, ծածուկ և

**Ե ՇԱԲԱԹ (ՅԻՆԳՇԱԲԱԹ կմ ՅԻՆԳՇԱԲԱԹԻ) +** Իսկ յաւուր ***ե** շաբաթոջ* երեկունն զգառն զենին և ելին յայգ ուրբաթի. նիսանի ժե. որ էր առաջին ամիս նոցա. և ի կիրակէ անցին ընդ ծովն որ էր նիսանի **ժէ**: - 337. Եւ տէր մեր արար զզատիկն յերիկունն մեծի ***ե** շաբաթին*: - 337. Եւ աստ ծնեալ լինի բանն աստուած յաւուր ***ե** շաբաթու*: - 483. Դարձեալ պատճառե՛ն թէ՝ յետ յարութեանն եկեր ձուկն ընդ աշակերտսն. յորում կրակեաղ կայծականց տեսին և ձուկն խորովեալ և հաց. և օրն էր չորեքշաբաթի. և ի ***ե** շաբաթի* համբարձաւ: - 511. Որ այսպիսի էր պատկեր աւուրն. յաւուր ***ե** շաբաթոջ* երեկոյին ի չորեքտասան լուսնին զգառն զենին և ելին յայգ ուրբաթի **ժե** ամսեանն. և ի կիրակէ անցին ընդ ծովն որ էր նիսանի **ժէ**: - 513. Նոյնպէս ըստ օրինակին արար տէր մեր զատիկն յերեկոյի մեծի ***ե** շաբաթին*. և ի մէջ գիշերին յորում ըմբռնեցաւ՝ եհար զանդրանիկսն դիւաց: - 513. Նախ՝ խորհրդաբար. ի ***ե** շաբաթոջ* աւուրն յերեկոյն թաղեցաւ ի սիրտ առաքելոցն ճաշակմամբ մարմնոյն. և յերեկոյի կիրակէին տեսին զտէրն յորժամ դրօքն փակելովք եմուտ առ նոսա: - 516. Առաջին զատիկ բաղարջակերքն. որ է ***ե** շաբաթին*: - 524. Այլ ի մեծի *ե շաբաթին* օրհնեմք իւղ, զի մի՛ մեռոնն սուրբ ի հասարակաց ոտս մերժեսցի: - 605. Այլ և կուսին փոխումն ի

***ե** շաբաթի*: - 638. Եւ ի ***ե** շաբաթին* որ վկայք են քրիստոսի: - 642. Եւ զփոքր կարգն մեծն կիւրեղ երուսաղէմի հայրապետեն. է՛ սկիզբն **բ** շաբաթի, և աւարտն ի ***ե** շաբաթի*: - 651. ...որ էր նոցա **բ** շաբաթին և ***ե** շաբաթին*. և մեզ **դ** շաբաթին և ուրբաթին: - 653. Իսկ ապաշխարօղսն կարգել. և դարձեալ ի մեծի ***ե** շաբաթի* աւուրն արձակել...: - 658

**ԵՊԵՐԵՄ +** Երկրորդ և ոչ վասն յետին յանցանացն կռապաշտութեան *եպերեմք* զիմաստութիւն նորա և ո՛չ ընդունիմք. քէպէտ և հնա՛ր է պատճառել թէ այնքան իմաստութիւնն, զնա ո՛չ պահեաց հաճոյ մնալ աստուծոյ: - 40. Եւ այսպէս բազում ունելով իւրաքանչիւր ոք սահմանս առանձին, միայն հայք նախատեալ լինին որպէս ո՛չ ունել միաբանութիւն ընդ այլս ի քրիստոնէից. այլ առանձին միայնաբար ընթանալ. և այսու որպէս հակառակ *եպերեալ*: - 553

**ԵՊԻՍԿՈՊՈՍ +** Եւ թէ ոք ասիցէ, ապա զիա՞րդ նոր եկեալքն ի հաւատս՝ թողեալք զկուռս և զամենայն չար՝ լինէին քահանայք և *եպիսկոպոսունք*. որպէս սուրբն կիպրիանոս: - 166. Այլ և *եպիսկոպոսն* վերատեսուչ և դէտ կոչի: - 534. Նա՛խ՝ թէ անկարգաբար կապէ. որպէս քահանայ *զեպիսկոպոս* կամ զկաթողիկոսս. կամ սարկաւագ զքահանայ. այս ո՛չ կատարի: - 539. Իսկ առ ներքինս օրհնելն՝ իշխանութիւն և շնորհաց տալն թարգմանի. որ քահանայն կամ *եպիսկոպոսն* տայ. որպէս ցուցաւ ի վերոյ ի **իզ** գլուխն, **իե** համարն: - 540. Եւ թէ *եպիսկոպոս* զիւր քահանայն կապէ, ա՛յլ *եպիսկոպոս* ո՛չ կարէ արձակել: - 541. Իսկ համակարգ քահանայք կամ *եպիսկոպոսք* զնոյն ոմն ընդէ՞ր ոչ կապեն կամ արձակեն: - 541. Ասեմք առ այս, եթէ համակա՛րգ են քահանայք կամ *եպիսկոպոսք* որպէս առաքեալքն. այլ ունին զվիճակ և ժողովուրդ այլ և այլ: - 541. **Զի *եպիսկոպոսն* փեսա՛յ է և վիճակն հարսն. նա՛ միա՛յն իշխէ**: - 541. Եւ էր սիրելի փլաքիանոսի. և լևոնի. և թէոդորիտոսի զորս նզովեցին յեփեսոս. և վասն նոցա վրէժխնդրութեանն արարին ժողով **ողզ** *եպիսկոպոսաց*. և ընկալան զթուղթն լևոնի. և զնզովեալն յեփեսոս զփլաքիանոս ընկալան...: – 542-543. Եւ աքսորեցին զթէոդորոս զփարանու *եպիսկոպոսն*: - 543. Թէոդորոս անտիոքայ. **զճկե** *եպիսկոպոսունք*: - 544. Ժողովեալ **խ** *եպիսկոպոսաց* և բազում վարդապետաց և ժողովրդոց. կողմնակալք և մարզպանք, մեծամեծօքն հայոց, և սպարապետն վարդան ազգայնօքն իւր: - 544. Այլ հրամանաւ մեծի թագաւորին ուստիանեայ ժողովեցան յունաց և հռոմոց և հայոց և վրաց և աղուանից *եպիսկոպոսունք*. և կաթողիկոսն հայոց սահակ...: – 544. Երրորդ ժողովն է դվնայ, ի չորրորդ ամի թագաւորութեանն կոստանդեայ հռոմոց. հրամանաւ մեծի կաթողիկոսին հայոց ներսէսի շինողի. և այլ է և **ժ** *եպիսկոպոսաց*՝ և վարդապետաց բազմաց և իշխանաց...: – 544. Եւ տէր սիոն հայոց կաթողիկոսն անդր հասեալ բազում *եպիսկոպոսօք* և մեծամեծ ազատօք հայոց և իշխանօք նոցին. ընդ դէմ աղանդոց ա՛յնր ժամանակի, և թուլութեան կարգաւորաց եկեղեցւոյ, և բռնութեան իշխանաց: - 545. Ժողովեալ բազում *եպիսկոպոսաց* յամենայն կողմանց. և իշխանաց և մեծամեծաց հայոց. կարգեցին սահմանս կանոնականս **իբ** գլխով. և պայծառացուցին զեկեղեցի սուրբ: - 545. Յորժամ անիծիւք աքսորեցին զներսէս *եպիսկոպոս* որ եղև աղանդովն ներսէսի, և այլայլեաց զկարգ և զուղղափառութիւն հաւատոյ: - 545. Երկրորդ՝ զի մերձ ի համբարձումն ծեռն եդ ի վերայ նոցա և օրհնեաց զնոսա և արար զնոսա առ հասարակ *եպիսկոպոսունս*: - 546. Եւ յա՛յտ է յայսմանէ, որ կաթողիկոսն ո՛չ կարէ կաթողիկոս ձեռնադրել. այլ *եպիսկոպոս* առնէ: - 546. Որպէս և քրիստոս արար. որ քան մարմնով ընդ առաքեալսն էր՝ *եպիսկոպոսունս* արար զնոսա. և յետ համբառնալոյն՝ հոգւովն սրբով արար զնոսա կաթողիկոսունս: - 546. Չորրորդ՝ յա՛յտ է, զի իւրաքանչիւր առաքեալ յիւր վիճակն ընթացեալ ձեռնադրեցին *եպիսկոպոսունս*: - 546. Ասեմք թէ՝ պետրոս գլուխ է առաքելոցն՝ ո՛չ որպէս *եպիսկոպոսն* քահանայից. կամ կաթողիկոսն *եպիսկոպոսաց*: - 546. Զի առաքեալն թաղէոս յորժամ ձեռնադրեաց զադդէ յուռհայ, և ապա՛ ի կեսարիայ եկն և ձեռնադրեաց առաջին *եպիսկոպոս* զթէոփիլոս. զայն յորոյ անունն գրեաց Ղուկաս զաւետարանն և զգործքն առ թէոփիլոս: - 548. Զի յղացեալ էր ի գերեզմանին թաղէոսի. և սնաւ անդ՝ ուր առաքեալն սկսաւ քահանայագործել. և փոխեաց յինքն զշնորհս նորա անդր եղեալ *եպիսկոպոս*: - 548. Եւ թէ ոք ասիցէ, զդրոշմն ո՛չ ունիք. զի *եպիսկոպոսն* տայ որպէս ազգն Ֆռանկաց: - 594. Դարձեալ ասեմք թէ՝ քահանայքն մեր ունին իշխանութիւն դրոշմելոյ զոր նոցա *եպիսկոպոսն* դնէ. ապա ուրեմն իշխանակիցք են քահանայք մեր և *եպիսկոպոսք* նոցա: - 594. Այս ըստ հակառակասիրութեան նոցա ասի. այլ ըստ ուղղութեան՝ քահանայն ունի իշխանութիւն զեօթն խորհուրդ եկեղեցւոյ կատարել. և *եպիսկոպոսն* առաւել ունի. զի միայն տայ զկարգն, եկեղեցի օրհնէ և սեղան: - 594. Կարգն է կարողութիւն զորետ *եպիսկոպոսն* այնմ զոր ի կարգն ընկալաւ և ի սպասաւորութիւն խորհրդոյ եկեղեցւոյ: - 606. Եւ խաչիւ չարչարեալ և յարուցեալ ի մեռելոց. և առ աշակերտսն մտեալ *եպիսկոպոս* եցոյց զինքն: - 607. Զի *եպիսկոպոսունք* տան հոգի քահանայից և զկապելոյ և զարձակելոյ իշխանութիւն: - 607. Վասն այնորիկ **ե** կրկին պատմուճան զգենու *եպիսկոպոսն*:

- 607. Եւ յետ յարութեանն փչելովն զհոգին՝ արար զնոսա *եպիսկոպոսունս*: - 607. Եւ զո՛րծ է նոցա ձեռնադրել *եպիսկոպոսունս*, - 607. Չորրորդ՝ *եպիսկոպոսունք.* որք ասին այցելուք: - 607. Եւ ուր չիցէ *եպիսկոպոս*՝ եկեղեցի օրհնեն և խաչի կնիք տան: - 608. *Եպիսկոպոսն* և քահանայն, զսոսա ի մի կարգ թուէ ի դէմս վերնագոյն դասուց երկնաւորաց. որք են Աթոռք. Քերովբէք. և Սերովբէք: - 608. Զի՞նչ է որ քահանայն աղօթէ՛ և *եպիսկոպոս* զխաղաղութիւնն տայ: - 625. Ո՛չ զամենայն, այլ զիւրաքանչիւր ժամու առաջին աղօթիցն *եպիսկոպոսն* ասէ զխաղաղութիւնն, և զայլն քահանայն որ աղօթէ՛: - 625. **Եւ ա՛յս է պատճառն, զի քահանայն է՛ ի դէմս քրիստոսի, և *եպիսկոպոսն* հօր աստուծոյ. և խաղաղութիւնն է՛ հոգին սուրբ որ ի հօրէ առաքեցաւ...**: - 625. **Վասն որոյ քահանայն աղերսէ՛ *զեպիսկոպոսն*, և նա՛ տայ զխաղաղութիւնն**: - 625. Այլ ի պատարագն պարտ է բանալ զգլուխս որ պատարագիչն է ամենայն ոք որ և իցէ. թէ քահանայ և թէ *եպիսկոպոս* և կամ ա՛յլ ոք: - 635. Եւ որ *եպիսկոպոսն* զմիրոն և զեմիփորոնն և զմատանին զոր զգեցեալն էր ի ձեռնադրութեանն՝ հանէ՛ յորժամ պատարագէ, - 635-636. ...և ապա՛ հրամանաւ *եպիսկոպոսին* պաշտեսցէ զքահանայութիւնն: - 652. **Իսկ վասն տեառնականին և աղօրհնէիցն, սուրբն յուստո՛ս է արարեալ. որ չորրորդ *եպիսկոպոս* էր յեմ յառաքելոյն յակոբայ**: - 659. Իսկ զսքեմայ կարգն՝ սուրբն դիոդորոս *եպիսկոպոս* պամփիւլացոց քաղաքի. յառաջին ամի իւրոյ. հրամանաւ մեծին անտօնի և **բ** թեբայեցոցն. և **բ** սկիւթացւոց լերինն: - 659. թէ ասեն *եպիսկոպոսին* թէ ոք եկեալ է կնունք խնդրել...: - 659. ...այսինքն թէ *եպիսկոպոս* իցէ՝ *եպիսկոպոսք*. և թէ քահանայ՝ և թէ սարկաւագ. նմանապէս և աշխարհականք զաշխարհականս: - 674. Այսպէս և հանգստարանք *եպիսկոպոսաց* ի կարգս իւրեանց, և քահանայից, և կրօնաւորաց, և թագաւորաց, և աշխարհականաց: - 674. Մեծութիւն այսմ ուրախութեան կարէ՛ զմտաւ ածիլ յայնմանէ, զոր սովո՛ր են ծնօղք յորժամ որդիք նոցա լինին *եպիսկոպոսունք* կամ թագաւորք: - 763

**ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ +** Երկրորդ՝ Արքեպիսկոպոսք. որ թարգմանին *եպիսկոպոսապետք*. և սքեմ նոցա քականօթ և պճղնաւոր. և փիլոն. և ի վերայ նորա եմիփորոն **դ** կրկին խաչիւ շուրջ զիւրև: - 607. Առաջինն է կաթողիկոսն. զոր *եպիսկոպոսապետ* կոչէ: - 608

**ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆ +** Իսկ վասն քահանայօրհնէիցն, սուրբն սահա՛կ է արարեալ. յառաջին ամի *եպիսկոպոսութեան* իւրոյ. ի նաւասարդի ամսեանն որ օր մի էր. և յիշատակ սուրբ կարապետին արար զքահանայօրհնէքն: - 659

**ԵՊԻՓԱՆ** - Ի յադամայ մինչ ի ծնունդն քրիստոսի՝ է՛ ըստ *եպիփանու* **բչ** ամ: - 451. Այլ որք ուղիղ դատեցան վարդապետք եկեղեցւոյ ըստ տեսլեանն յոհաննու. որպէս մեծն անդրէաս և համախոհք նմին սուրբն իրինոս, *եպիփան*, և բասիլիոս: - 687. Այսպէս և *եպիփանն* մեծ: - 777

**ԵՌԱԲԱՐ** - Իսկ Ուր ոչ ասեմք տեղի աստուծոյ. զի տեղի որ է՛ բովանդակութիւն, *եռաբա՛ր* ասի: - 172

**ԵՌԱԲՆԱԿ** - Եւ քրիստոս զյարկն դաւթի որ է՛ եկեղեցի՝ չորիցս առաքինութեամբ *եռաբնակ* օթևան աստուծոյ կազմեաց: - 328

**ԵՌԱԿԱԲԱՐ +** Նմանապէս և մարմնականն շարժի *եռակաբար*: - 142

**ԵՌԱԿԻ +** Սուրբն դիոնէսիոս ասէ, «*եռակի* է ձև ամենայն մարմնոց». այսինքն լայնութիւն. երկայնութիւն. խորութիւն: - 129. Իսկ թէ աստուած ո՞րպէս գիտէ զթիւ ամենայնի ըստ այնմ, «ո՛ թուէ՛ զբազմութիւն աստեղաց». զայս ասեմք ըստ *եռակի*: - 141. Իսկ շարժումն է *եռակի* ըստ սրբոյն դիոնիսեայ. այսինքն բոլոր՝ ուղղակի՝ և կողմնաւոր: - 142. Զանկումն սատանայի *եռակի՛* է իմանալ. առաջին՝ և միջին և վերջին: - 152. Եւ վեցակողմն, զի մարմինն *եռակի* տարրո՛շ է. ունի վեր և վայր. յետ և առաջք. աջ և ահեակ: - 293. Իսկ հոգևոր ծորումն է՛ *եռակի*: - 368. Ոմանք *եռակի* ասեն. այսինքն աստուածային և մարդկային և շնորհօք: - 471. Իսկ ի քրիստոս *եռակի* գոյ միաւորութիւն. այսինքն աստուծոյ ընդ հոգւոյ. հոգւոյ ընդ մարմնոյ. աստուծոյ ընդ մարմնոյ: - 478. Ա՛րդ՝ *եռակի՛* է համբարձումն քրիստոսի. որ է յերկրի, ի վերայ երկրի, ի վերոյ երկնից: - 520. Եւ գիտելի է, զի *եռակի՛* է սէրն. բնական. բարոյական. և շնորհական: - 575. Դարձեալ՝ *եռակի՛* է խոհեմութիւնն: - 580. Ա՛րդ՝ բարի պսակն *եռակի* է. այսինքն հաւատն. զաւակն. և խորհուրդն: - 610. Երեք չուանն՝ *եռակի* պատիւն նորա: - 645. Աներևոյթն *եռակի՛* է նոցա: - 690. Եւ առաջինն է *եռակի*: - 710. Եւ մեծ և փոքր ի յարութեանն *եռակի* ասի: - 726. Ողորմութիւն տն է *եռակի*: - 747. Եւ չարաց հնծան իմանի *եռակի*: - 748. Նմանապէս և բարեացն հնծան ասի *եռակի*: - 748. Ի տեսութենէ արքային *եռակի* լիցի ուրախութիւն նոցա: - 762. Երկրորդ՝ ի տեղւոյն բարձրութեան *եռակի* ուրախութիւն ընտրելոցն հանդիպեսցի: - 763. Դարձեալ վասն ընկերութեանն լիցի *եռակի* ուրախութիւն: - 763. Հինգերորդ վասն դժոխոցն *եռակի* հանդիպեսցի ընտրելոց ուրախութիւն: - 764. Վեցերորդ և վերջին՝ վասն աշխարհի՝ ընտրելոցն հանդիպի *եռակի* ուրախութիւն: - 764. Իսկ զոր ինչ շնորհօք լինի ոք ստացեալ, կարէ՛ և մերկանալ. որպէս ադամ *զեռակի* շնորհն...: - 782. Եւ բառնին շնորհականքն. որպէս *եռակին* ասացեալ

աղամայ. և լոյս մտաց. և երանութիւն դիւաց: - 782. Զի որպէս բան պատկերին, այսպէս և բան շնորհացն *եռակի*. զի միապէս սոքա եղծանին մեղօք, և նմանապէս արծարծին մաքրութեամբ առ որ ոք և իցէ: - 782

**ԵՌԱՄ +** Վեցերորդ հարուածն է՛ կեղն և խաղաւարտն. զի քերքեշէ՛ր զմորթն, և ի վեր *եռացեալ* լինէր խաղաւարտն. և մորմոքէր զմարմինս նոցա: - 334. Չորրորդ՝ խորհուրդ մեղացն ճշմարիտ և բարի ցուցանէ զգործն և սիրելի և հեշտ. վասն որոյ յօժարի և *եռայ* ի կատարումն: - 558

**ԵՌԱՄԱՍՆԵԱՅ +** Նա՛խ՝ ըստ փիլիսոփայիցն ներքին մասունքն հոգւոյն պատճառե՛ն զարտաքին մասունս մարմնոյն. և ըստ պղատոնի՝ հոգին *եռամասնեայ* գոլով՝ բան և ցասումն և ցանկութիւն: - 232. Քանզի, զի *եռամասնեայ* է: - 272. Մին՝ զի հոգին *եռամասնեա՛յ* է: - 396. Եւ երեքն հոգեկան. զի հոգին *եռամասնեա՛յ* է: - 611. Որոյ պատճառէ. զի հոգին *եռամասնեա՛յ* է. այսինքն բան՝ ցասումն՝ և ցանկութիւն. - 611. Նա՛խ՝ վասն զի հոգին *եռամասնեայ* է. բան, ցասումն, և ցանկութիւն. և ունի իմացումն և կամք: - 622. Երեքթելեան լարըն, հոգին *եռամասնեայ* և մարմինն ի չորս տարերաց: - 744-745

**ԵՌԱՅԱՐԿ +** Տասներորդ, մովսէս *զեռայարկ* խորանն կանգնէր ի չորից նիւթոց: - 328. Ա՛րդ՝ *եռայա՛րկ* էր խորանն: - 343. Իններորդ, գ տեղիք մարդկան նշանակեցաւ *յեռայարկ* խորանն մովսէսի. առաջին միջին և վերջինն: - 682

**ԵՌԱՅԱՐԿԵԱՆ +** Երկրորդ՝ զորպիսութիւն և զձև աշխարհիս ցուցանէր ի խորանն *եռայարկեան* ի չորից նիւթոց փոխանակ դ տարերաց յանապական և յապականացու բնակչաց: - 342. Երկրորդ, որպէս նա *եռայարկեան* խորան, որ է՛ գաւիթն, և մէջն և բեմն: - 613. Եւ մարդս է *եռայարկեան*. մարմինն արտաքին. և հոգին ի միջին. և իմացումն առաջին: - 613

**ԵՌԱՆԴ +** Փոխանակ խրախութեանց ճիչ աղաղակի ընդդէմ հեշտալեաց. անհանգիստ ի խշտի՝ յերեկօրեայ զառաւօտ խնդրէաք. և ի նմա *զեռանդ* երանեալք: - 789

**ԵՌԱՆԴԱՊԷՍ -** Սրբութիւն սրտին է որով պայծառանայ և մաքրի սիրտն առ ի տեսանել զաստուած. և առ ի սիրել յոյժ ջերմ *եռանդապէս*: - 585

**ԵՌԱՆԴԵԱՆ +** Երբեմն առեալ լինի վասն *եռանդեան* սիրոյն. ըստ այնմ «թողեալ լիցին նմա մեղք իւր բազում, զի յոյժ սիրեաց»: – 575

**ԵՌԱՆԴՈՒԹԻՒՆ -** Դարձեալ՝ կատարեալ սէր է, յորժամ է ունակութեամբ մեծ. ներքին շարժմամբն ուղիղ. արտաքին գործքն ժիր. արմատովն հաստատեալ. ջերմ *եռանդութեամբն* խոհեմ. և քաղցրութեամբն մխիթարական: - 576

**ԵՌԱՆԿԻՒՆԻ +** Եւ բոլորակ ձևն պա՛րզ է քան զամենայն ձև. զի *եռանկիւնին* յերից գծից բաղկանայ, և քառանկիւնին ի քառից. նոյնպէս և այլքն: - 182. Հինգերորդ՝ թէ երկինքն ո՛չ էր բոլորակ՝ այլ քառանկիւնի կամ *եռանկիւնի*, յորժամ շարժէին անկիւնքն՝ յորմէ տեղւոջէ վերանային՝ մնային առանց տեղւոյ. և տեղի անկեանցն առանց մարմնոյ: - 183

**ԵՌԱՑՈՒՄՆ +** Իսկ բանին աստուծոյ քաջ սիրով *եռացումն* ընդ մարմնոյ անբաժ և անորիշ գործեաց միաւորութիւն: - 478

**ԵՌԱՑՈՒՑԱՆԵՄ +** Զի՞նչ է որ զերաստանս ուռոյց, և զմուկն *եռացոյց*: - 426

**ԵՍ +** Նոքա որք զբախտ և զճակատագիր և զհրամանն համբաւեն, ո՛չ ինչ ասեն ի կամաց *մեր* գործիլ. այլ զամենայն ի հարկէ՛ ասեն. զի զեղխաբար զկենցաղս վճարեսցեն: - 7. Առաջին պատճառն աստուած՝ եդ զզօրութիւն իւր յաստեղս. և նոքա ազդե՛ն ի *մեզ*, և դարձուցանեն *զմեզ* ըստ իւրեանց շարժութեանն ի չար կամ ի բարի: - 7. Զի ո՛չ այլ ինչ է բախտն, եթէ ոչ զօրութիւն աստեղաց. զոր առեալ յառաջին պատճառէն՝ հա՛րկ առնեն ի վերայ *մեր*: - 7-8. Եւ նախ առ նոսա՝ որք ասեն զբանս *մեր* ի հարկէ գոլ կամ ո՛չ գոլ: - 8. Նա՛խ՝ եթէ լինէր բանս *մեր* ի հարկէ ճշմարիտ, նա ո՛չ մինն միայն, այլև ամենայն բան զինչ ասէաք՝ ճշմարիտ լինէր. որպէս շինել քաղաք, կամ ո՛չ շինել. տընկել այգի, կամ ո՛չ տնկել: - 8. Երկրորդ՝ զի թէ ի ներկայս ասեմք ի վերայ քարի թէ լինիցի փայտ. ո՛չ լինի այնպէս. արդ՝ թէ ասելն *մեր* զներկայն ո՛չ փոփոխէ, նա և ո՛չ զհանդերձեալ. կարէ փոխել. ո՛չ ըզմերձաւոր հանդերձեալն՝ և ո՛չ զհեռաւորն: - 8. Երրորդ՝ եթէ զոր ինչ ասէաք և ճշմարիտ էր, յայնժամ բանս *մեր* ո՛չ հետևէր իրացն. այլ իրն բանիցն հետևէր. որ է՛ յայտնապէս սուտ. զի մնացականն՝ ոչ մնացականին ո՛չ հետևի. այլ անդրադարձեալ. զի հետքն՝ ընթացից ոտիցն հետևին. և ո՛չ ոտքն հետոցն: - 8-9. Չորրորդ՝ զի թէ զոր ինչ ասեմք՝ ի հարկէ ճշմարիտ էր, յայնժամ աւելորդ էր խորհիլն *մեր*. զի խորհուրդն ո՛չ է ի հարկաւորացն. այլ ի ներընդունականացն. զի կարէ՛ լինիլ, և ո՛չ լինիլ. զի թէ առնեմք զայս՝ եղիցի՛ այն. և թէ ո՛չ առնեմք զայս՝ ո՛չ եղիցի այն: - 9. Ապա յա՛յտ է՝ թէ զոր ինչ խորհիմք՝ ի հանդերձեալն զնոյն առնեմք. և ո՛չ ի հարկէ բանն *մեր* որպէս ցուցաւ: - 9. Ապա և բանս *մեր* ո՛չ է հարկիւ. այլ հանդիպելով: - 9. Եւ թէ ոք ասիցէ, բազում բանք *մեր* բացորոշակի լինին ի հանդերձեալն. որպէս

թագաւորն յորժամ ասէ շինեսցի քաղաք, և շինի. և ասեմք թէ այսանուն մարդ մեռանելոց է, և մեռանի. և աղօթեմք և լինի. և այլն նմանապէս անէծք կամ օրհնութիւնք: - 9. Իսկ որք զբախտ և զճակատագիր վերագրեն մարդկան, և զամենայն ինչ *մեր* ի հարկէ ասեն, այսինքն ի զօրութ աստեղացն...: – 10. Ամենայն ինչ որ լինի՝ ունի պատճառ. և ամենայն պատճառ ի հարկէ է՛ նախքան զպատճառելին. ապա թէ հարկաւոր պատճառս այս ո՛չ է բանն *մեր* որպէս ցուցաւ, է՛ ուրեմն զօրութիւնն աստեղաց ի շարժմանէ նոցա ազդեցեալ: - 10. Դարձեալ ասեն, թէ բազում ինչ հանդիպի արտաքոյ կամաց *մերոց*. որպէս չար հիւանդութիւն. վատաբախտութիւն. մահ. և այլն, ապա ուրեմն նոքա ի հարկէ բախտի և ճակատագրի: - 11. Դարձեալ եթէ է՛ հարկ, ապա ո՛չ էր անձնիշխան կամք, այլ արդ՝ եթէ ունիմք կամք և է՛ սկիզբն գործոյն ի *մեզ* և առ *մեզ*, ապա ուրեմն ո՛չ է հարկ որոյ սկիզբն յայլմէ՛ է: - 11. Եւ որպէս կիրք ցաւոցն մարդոյն են, զի ըզգա՛յ զկսկիծն. նոյնպէս և կիրք հեշտութեանն նորա՛ են, եթէ չարեաց և եթէ բարեաց, ապա ուրեմն *մեր* է ներգործութիւնն և ո՛չ հարկին: - 11. Ասեմք առ այս, մոլորականքն ո՛չ եթէ զի ունին ներհակ շարժումն վասն այն կոչին մոլորականք, կամ պատճառք են չարեաց, այլ զի *մեք* մոլորիմք ի շարժումն նոցա. զի ունին հաւասարակ շարժումն, և ունին յատուկ շարժումն: - 12. Ասեմք առ այս, եթէ այսու վկայէ՛ս և դու *մեզ*՝ թէ ո՛չ է հարկ. զի ի բոլոր քաղաքն այնքան բիւր մարդիկ՝ ծեր և տղայ՝ ե՛րբ և ո՛ւր ի մի շարժումն աստեղաց ծնան, որք ի միասին կործանեցան. կամ բազմութիւն զօրացն. կամ որք ի նաւին կային. զի սոքա ամենեքեան յայլևայլ ժամանակս և այլևայլ շարժումն աստեղաց էին ծնեալք. ապա ուրեմն ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. Ասելով թէ պատճառ ամենայնի՝ բարեաց և չարեաց *մերոց* ո՛չ *մեք* եմք, այլ է՛ առաջին պատճառն աստուած. որք փախչելով յառաջ ասացեալ բախտէ՛ և ճակատագրէ՛ աստեղացն, փոխանակ նոցա յառաջին պատճառն վերագրեն զհարկն. որպէս զի մի՛ ասիցեն երկու սկիզբն ըստ մանիքոսի: - 13. Երկրորդ՝ ասեն թէ աստուած նախքան զլինիլն *մեր*՝ ի նախատեսութիւնն իւր ետես զամենայն լինելոցն այնպէս. զչարն չար, և զբարին բարի: - 15. Նո՛յնպէս և տեսութիւնն աստուծոյ ո՛չ հարկէ ի վերայ *մեր* գործ զբարի կամ զչար. այլ կամք *մեր*: - 16. Դարձեալ ասեմք՝ թէ կամքն աստուծոյ ո՛չ է ընդունայն. զի զոր ինչ կամի առնէ. այլ կամեցաւ և արար *զմեզ* անձնիշխան և տէր գործոց *մերոց*. եթէ չար՝ և եթէ բարի: - 16. Նոյնպէս և աստուած է արարողական պատճառ կամացն. այլ ներգործական պատճառ է չար՝ կամքս *մեր*: - 16. Վեցերորդ՝ ասեն հակառակքն, թէ՝ չարն ոչ է յաստուծոյ, ապա աստուած ո՛չ ճանաչէ զչարն. որպէս *մեք* նմանեաւ զնմանն ճանաչեմք. այսինքն հոգւով զհոգևորս, և մարմնով զմարմնաւորս: - 17. Դարձեալ ասեմք թէ՝ որպէս *մեք* ունիմք կրկին ճանաչումն իրաց, այսինքն զի զոմն ճանաչեմք ի յատուկ տեսակն իւր. և զոմն այլով տեսակաւ: - 17. Նախ եթէ՝ ունիմք անձնիշխան կամք. և տէ՛ր եմք գործոց *մերոց*. առնել և ո՛չ առնել. այլ երբեմն սկիզբն ի *մէնջէ*, և կատարումն ի նախախնամութիւնն աստուծոյ: - 17. Երբեմն սկիզբն յաստուծոյ, և կատարումն առ *մեզ*: - 17. Իսկ սկիզբն և կատարումն ի *մեզ*, որպէս նախածանօթ ընտրեալքն յառաջ քան զլինիլն աշխարհի. որ այժմ բարի գործովք կատարեսցին ըստ նախասահմանելոյն իւրեանց: - 18. Իսկ որ սկիզբն ի *մէնջ*՝ և կատարումն ի խնամոցն աստուծոյ, այսինքն յորժամ սկսանիմք զբարին՝ և նա՛ աւարտէ՛ ի բարին: - 18. Իսկ չար փոխանակ բարւոյ ո՛չ առնէ ըստ որում անիրաւութիւնէ. այլ առնէ երբեք ըստ որում նախախնամութիւնէ. զի ի չարէն լինիցի բարի. թէպէտ *մեզ* չար երևի, այլ այս ևս բարի է. որպէս հիւանդութիւն. փորձութիւն. և այլն: - 18. Որպէս յիմար հիւանդն ասիցէ, կամիմ ուտել և ըմպել զհաճոյսն *իմ*. եթէ առողջանալո՛յ եմ՝ առողջացայց. և եթէ մեռանելո՛յ՝ մեռայց: - 18-19. Ապա ուրեմն չարն ո՛չ է յաստուծոյ այլ ի *մէնջ*՝ կամ ի նենգութիւնէ թշնամւոյն որ պատրէ՛ *զմեզ*: - 19. Երրորդ՝ զի աստուած լինէր պատճառ չարեաց *մերոց*: - 20. Հինգերորդ՝ զի խափանեալ լինէր անձնիշխանութիւնն *մեր*. որ ունի զինքն առ երկոսեան կողմն: - 20. Տասներորդ՝ զի սուտ լինէին ամենայն օրէնք բնական՝ գրական և աւտրնական. զի սոքա ամենքն խրատեն *զմեզ* խոտորիլ ի չարէ՝ և առնել զբարի. և այլն ամենայն: - 20. Վեցերորդ՝ եթէ է ամբոխումն ինչ ի մէջ նոցա, ոչինչ էին մեկուսի ի *մէնջ*. այլ դժուարաձեռն որպէս *զմեզ* և հակառակ: - 21. Եւ է՛ որ խառն բարի է. որպէս առ *մեզ* պատահեալ բարիս որ ունակութիւն է. զի ա՛յլ է էութիւն *մեր*, և ա՛յլ է բարի յէութեան *մերում*: - 22-23. Այս բարիս ի հրեշտակս անփոփոխ և սերտ է. իսկ ի *մեզ* փոփոխական է: - 23. Զի փոփոխական է հոգիս *մեր*. երբեմն բարի և երբեմն չար: - 23. Այլ այս զանազանի. զի բարին բնական ունակութիւն է *մեզ*. զի ի բարին եմք գոյացեալ: - 23. Եւ բարին մի է և ի միո՛յ պատճառ է որէ աստուած. թէպէտ առ *մեզ* ի բազումս բազմանայ: - 23. Երկրորդ՝ զի աստուած անսահման է՝ և սահմանէ՛ *զմեզ*. անսկիզբն է՞ և սկզբնաւորէ *զմեզ*. և պատճառ և այլն ամենայն: - 24. Երկրորդ՝ հաւատով. որպէս *մեզ* հաւատացելոցս: - 24. Կուրացեալ հրէայքն առարկեն ընդդէմ *մեր* թէ՝ դեռևս ոչ է եկեալ մէսիայն: - 27. Որոց պատասխանեն վարդապետք եկեղեցւոյ. և *ես* զնոցայն առեալ ասացից՝ թէ յաւուրս յետինս՝ ոչ զկատարած աշխարհի կոչէ, այլ կոչէ աւուրս յետինս՝ զպակասութիւն օրինացն և արդարութեան նորա. քանզի օրէնք

նոցա պակասեցաւ ի գալստեանն քրիստոսի: - 27. Վասն առաջնոյն ասէ՝ «զարթի՛ր փառք *իմ*». ի բաբիլօն տալով *մեզ* զմիսայէլ, զանանիա, և զազարիա: - 28. Զարթիր, ի սուգ տալով *մեզ* զմուրթքէ, և զեսթեր: - 28. Զարթիր ի յոյնս, տալով *մեզ* զմակաբայեցիսն: - 28. Զարթիր ի հռօմ, տալով *մեզ* զմեսիայն: - 28. Եօթներորդ՝ Հայր *իմ* մեծ քան *զիս*. և պատասխանիք նոցա **ը** գլխով: - 29. Ութերորդ՝ Տէր ստացաւ *զիս*, և պատասխանիք նոցա **դ** գլխով: - 29. Մետասաներորդ՝ Աստուած աստուած *իմ* ընդէ՞ր թողեր *զիս*. և պատասխանիք նոցա **ը** գլխով: - 29. Երկոտասաներորդ՝ Աստուած *իմ* և աստուած ձեր: - 29. Վեշտասաներորդ՝ Ո՛չ զկամս *իմ*, այլ զառաքչին: - 29. Չորրորդ՝ Զի մի՛ է տէր *մեր* և աստուած մարմնով՝ **ի** գլխով: - 30. Հնգետասաներորդ՝ Հարցումն երկաբնակացն առ *մեզ* **ծ** թւով. և անդ վասն մի կամաց՝ և մի գործոց՝ և կրից: - 30. Արդ՝ զորօրինակ զգալի աչք *մեր* ո՛չ կարէ ըմբռնել զքանակութիւն արեգականն և այլ լուսաւորացն. այլ մտօք իմանամք զմեծութիւն նոցա: - 31. Իսկ սոքա և զհրեշտակս ընդ *մեզ* դասեն. որպէս յայտ է ի գիրս պարապմանցն Կիւրեղի: - 34. Եւ զորս *ես* աստ պարկեշտութեամբ լռեմ, յընթանրական թղթին յօհաննէս ի նեռն առակէ ասելով. «արդէն իսկ նեռինք եկեալք են. զի ամենայն որ ուրանայ թէ յիսուս չէ՛ Քրիստոսն՝ նա իսկ է նեռն»: - 34. Նոյնպէս և հերձւածօղք պղծեն զտաճարն աստուծոյ և զհաւատն սուրբ՝ որով քրիստոս ի *մեզ* բնակի, և *մեք* ի նա՛: - 35. Վասն որոյ և *մեք* համաձայն գոլով ուղղափառաց հարցն սրբոց՝ դիցուք սուղ ինչ յառարկութեանց նոցա, և ընդ նմին զպատասխանիս: - 35. **Այլ *մեզ* մի է որ շարժիցին և շարժումն. որպէս մի է ասումն և բան**...: - 36. Այլ ա՛յս է *մեր* պատասխանի: - 37. Բայց հարցմունքս այս կարէ՛ ասիլ ի վերայ *մեր*. զի ասիմք՝ յէից եղեալ և յոչ էից: - 37. Դարձեալ՝ յէից, զի *մեք* ի տարերցս եմք: - 37. **Ով արիանոսք՝ զի թէ որպէս *զմեզ* զորդի շնորհօք ասէք և արարած, *մեք* զի եմք շնորհօք որդիք՝ ունիմք ընդ *մեզ* և ընդ հայր շաղկապ. իբր թէ զլար զհոգին սուրբ**: - 39. Որ ետես *զիս*՝ ետես զհայր *իմ*: - 39. Որպէս գիտէ *զիս* հայր՝ գիտեմ և *ես* զհայր: - 39. Որ ինչ *իմ* է՝ հօ՛ր է. և որ ինչ հօր է՝ *իմ* է: - 39. Եւ դարձեալ՝ ըստ ձեզ պարտ էր ասել. թէ՝ *ես* ի միասին հօր, և մասն հօր ի *յիս*: - 39. Զոր հայր *մեր* է ըստ ստեղծմանն և հանդերձելոյ աշխարհին: - 39. Դարձեալ քննեսցուք ըստ *մեզ*. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ հայր մեծ է քան զորդի. զի երկոքին նոյն ինքն աստուածութեանն իմանին. ըստ այնմ որ *զմեր* նուաստ և տկար բնութիւնս միացոյց ընդ իւրում աստուածութեանն, և անտեսանելին տեսանիւր՝ և ծառայի կերպիւ շրջէր վասն տնօրէնութեան՝ ասի փոքր յայս միաւորութեանս քան զհայր. իսկ ըստ այնմ որ է՛ անճառ և նախքան զյաւիտեանս ծնունդ ի հօրէ՛, հաւասա՛ր է հօր և ոչ փոքր: - 40. Եւ գիտեմք հաւաստի թէ որդի էր. զի հրեշտա՛կ անուանէ զնա գիրն. և զի հայր երբէք հրեշտակ ո՛չ կոչեցաւ՝ այլ որդի ըստ եսայեայ մարգարէի, որ (հրեշտակ մեծի խորհրդոյ) կոչէ զորդի. որ եղև մեծ խորհրդոյս սպասաւոր. այսինքն փրկութեան *մերոյ*՝ մարդանալովն իւր: - 40. Իսկ զի ասէ՝ «առաքեցայ» ո՛չ թէ տեղւոջէ ի տեղի. որպէս *մեք* բովանդակեալքս ի մի տեղի. զի առաքիմք շարժմամբ ի միւսն: - 40. Այլ զի խոնարհեցաւ ի բարձրութենէ փառացն և ընդ նուաստ բնութեան *մերում* միաւորեցաւ. ա՛յս է որ առաքեալ ասի: - 40. Իսկ անտօն և ո՛չ գիր գիտէր՝ ո՛չ թէ այնքան իմաստութիւն, որպէս հաճոյ եղև աստուծոյ. *մեք* յի՞նչ հաւատամք և ընդունիմք զայն իմաստութիւն: - 40. Այլ ի ծնունդս որ առ *մեզ*՝ այլայլի՛ ծնօղն: - 41. Զի որպէս առաջին նա՛ ծնաւ անսերմն ի կուսէ և ի հոգւոյն սրբոյ, այսպէս և *մեք* յետ նորա ի ձեռն հոգւոյն սրբոյ ծնանիմք ի կոյս աւազանէն: - 41. Դարձեալ անդրանիկ է ըստ շնորհաց հոգւոյն զոր ընկալաւ ո՛չ վասն կարօտութեան՝ զի լիապէս ունէր այլ զի գլուխ էր *մեր*՝ ընկալաւ՝ զի յանդամս իւր սփռեսցէ: - 41. Իսկ բանս *մեզ* այսպէս լուծցի: - 42. Այլ որ եղև փոխանակ հնոյն նոր անդամ. և նզովք կոչեցաւ վասն *իմ* և մեղք այն որ ո՛չ արար զմեղս, և ելոյծ զանէծս և եբարձ զմեղս: - 42. Այսպէս և զանհնազանդութիւնս *մեր*. զոր ոմանք ուրացութեամբ և կէսք ախտիւ՝ իւրն վերագրէ գլուխ գոլով անհնազանդ անդամոցն: - 42. Այլ զի *մեք* թողեալք և անտես եղեալք յաստուծոյ վասն յանցանացն, զդէմս *մեր* տպաւորէ՛ յինքեան. բնութենակից գոլով *մեր* և գլուխ անդամոցս: - 42. Նոյնպէս և զաղաղակն և զարտասուսն՝ զերկիւղն՝ զտրտմութիւնն՝ զաղօթելն՝ և զայլ սոյնպիսին ի դիմաց *մերոց* իմասցիս: - 42. Գլուխ գոլով *մեր* և լեզու. զտկարութիւն բնութեան անդամոցս ցուցանելով հօր: - 42. Առաջին պատճառն, զի յինչիրս և մերձենայր չարչարանօքն՝ ծախէ՛ր զչարչարանքն *իմ*: - 42. Այսինքն երկնչելովն՝ զերկիւղն *իմ*. քաղցիւն՝ զքաղցն. վաստակելովն՝ զքիրտն. նմանապէս և զայլսն իմասցիս: - 42. Որով ցուցանի կատարեալ սէրն նորա առ *մեզ* արդեամբք և ճշմարտութեամբ....: - 43. Երրորդ՝ ի խրատ *մեզ*. զի որպէս չարչարանօքն ազատութիւն արար մարդկային բնութեանս, այսպէս ամէն ոք չարչարանօք իւրովք ազատեսցի ի պատժոց ներգործական մեղացն: - 43. Չորրորդ՝ զի չարչարանօքն իւրովք փորձեսցէ՛ զհնազանդութիւնս *մեր*. այսինքն զկսկիծ և զծանրութիւն չարչարանաց *մերոց*. որպէս թէ ունիցի գիտել իւրովք զմերս և ողորմիլ *մեզ*: - 43. Վեցերրորդ՝ զի պահանջէ՛ ի սիրողաց իւրոց միշտ զայն խորհիլ. զի որպէս ինքն վասն սիրոյ զանձն իւր եդ ի վերայ *մեր*, և *մեք* վասն սիրոյ նորա փոխարէն դիցուք ի վերայ նորա: -

43. Եօթներորդ՝ զի չարչարանօքն իւրովք յուսադրեաց *զմեզ*, զի մի՛ յետ տկարութեանս և սակաւ չարչարանաց ի փորձողէն՝ կասեսցուք ի նախատակութեանց. այլ օրինակ դիցուք զչարչարիլն նորա *մեզ* և համբերեսցուք որպէս աւէ: - 43. Մինն որ է աստուած՝ իսկապէս *մեզ*, և նմա ըստ մարմնոյն: - 43. Եւ միւսն որ է՛ հայր՝ նմա իսկապէս, և *մեզ* պիտակապէս: - 43. Զի նմա՛ բնութեամբ է հայր, և *մեզ* ըստ շնորհաց: - 43. *Մեզ* ճշմարտապէս ստեղծօղ՝ որպէս և նմա ո՛չ բանին՝ այլ երևելոյն: - 43-44. Այսոքիկ *մեզ* անկա՛ր են և անհնարինք. բայց ոչ յաստուծոյ. այլ հնարաւորք և կարելիք են նմա: - 44. Եւ այս ոչ էութիւն և չարութիւն՝ առ *մեզ* կարէ՛ երևիլ, զի մասա՛մբ ունիմք զկարողութիւն և ո՛չ կատարեալ: - 44. Է՛ և անկարութիւն առ *մեզ*՝ ոչ էին գոյ լինիլ. և չորսին չորեքտասան: - 44. Ասեմք զայս ըստ մարդկութեանն. զի ո՛չ ունէր բնութիւնս *մեր*. այլ յորժամ միացաւ ընդ բանին և եղև որպէս առօղն և առեալն իշխան և տէր ամենեցուն: - 46. Դարձեալ ասէ թէ՝ ետ *ինձ* հայր, զի մի՛ հակառակ հօր կարծիցեն զորդի. որպէս կարծէին հրէայքն լուծանելով զշաբաթսն: - 46. Այլ այս առաւել զմիակամութիւնն ընդ հօր և որդւոյ ցուցանէ. զի ասէ՝ ո՛չ *իմ* կամք այլ որիշ զի առնեմ, այլ զա՛յդ կամքդ առնեմ զի հասարա՛կ է: - 46. Եւ դու ընդ է՛ր ասես լինել *ինձ* ըստ մարդկան երկրորդաբար բարի. զի աստուածութեամբս եմ ընդ հօր ծայրագոյն բարի: - 47. Այլ ա՛յս է հոգւոյն բարեխօսելն, զի յորժամ կամք յաղօթս՝ ո՛չ գիտեմք զպատշաճն խնդրել. ապա հոգին անմռունչ տայ *մեզ* իմաստ զպատշաճն աղօթել: - 48. Զի նա գլուխ է *մեր*՝ և *մեր* անդամք. յորժամ տեսանէ զմեզ ի մեղս՝ հոգա՛յ և ցաւի վասն մեր: - 48. Եւ քարոզչօք՝ այսինքն հրեշտակօք կամ վարդապետօք կամ գրոց սրբոց գիտութեամբ, փութայ զկեալն *մեր*: - 48. Իսկ յորժամ դառնամք ի մեղաց՝ յորդորէ՛ *զմեզ* ի ծածուկ իմաստիւքն իւրովք, ժուժկալ լինել ի փորձութիւնս և համբերել տանջանաց որով ինքն զփորձ էառ: - 48. Զի *մեք* որ ի նեղութիւնս և ի փորձութիւնս ժուժկալեմք աղաչանօք. իսկ *մեր* մաղթանքն նմա՛ վերաբերի: - 48. Իսկ զանգիտութիւնն որդւոյ վասն ժամուն և աւուրն թէ բերցեն ընդդէմ *մեր* հակառակօղքն՝ և այնպէս նւազ ասիցեն զորդի: - 48. Եւ յայտնեաց էն առաւել է. զի Աստուածն յաստ էած *զմեզ*, և կամ ստեղծօղ, և կամ ճանաչօղ լսի: - 49. Իսկ այլ ամենայն անուանքն՝ ներգործութեանցն են առ *մեզ* արարեալ՝ և հովանւոյն. բայց բաժանին ամենայն անւանք յերկուս: - 49. Իններորդ՝ զի գալստեամբն իւրով եբարձ զանբանութիւնս *մեր* և զանգիտութիւն. էած *զմեզ* ի ճշմարիտ գիտութիւն աստուածութեան իւրոյ: - 49. Է՛ և այլ բազում միտք վասն բանին. զոր *մեք* զսակաւն գրեցաք: - 49. Զի արդարութիւն արար քրիստոս բնութեանս *մերոյ* գերեալ ի սատանայէ՛: - 50. Եւ քրիստոս խաղաղութիւն արար յերկինս և յերկրի. և զխաղաղութիւն իւր ետ *մեզ*: - 50. Այսպէս և քահանայապետն *մեր* միայն եմուտ ի ներքին կողմն վարագուրին: - 50. Իսկ մարդ, զի սրբեսցէ ինքեամբ *զմեզ*՝ եղև ամենայն յաղագս ամենայնի. այսինքն հոգի և միտք և մարմին. զի յորոց հասարակաց եղև մահ, լիցի և կեանք: - 50. Վեցերորդ՝ իջումն ի յորդանան. զոր քրիստոս գլուխն *մեր* էառ և ետ ի յանգամքս: - 50. Տասներորդ՝ ըստ *մեզ* ի ջուրս աւազանին իջումն հոգւոյն: - 50. Երրորդ՝ թէ արարած՝ զիա՛րդ կատարէ *զմեզ* լինիլ աստուածս յորդեգրութիւն հօր՝ աւազանաւն: - 51. Եւ միտն արտաքոյ ամենեցուն՝ *մեզ* շնորհէ զտեսութիւն և զկարողութիւն յիւրաքնաչիւր արհեստ: - 51. Այս նմանէ *մեզ* և անկ: - 51. Եւ այլք աստուած խոստովանին. որպէս և *մերս* դաւանութիւն՝ ընդ հօր և ընդ որդւոյ: - 51. Այլ *մեր* բանս ո՛չ է ընդ այլսն ամենայն, այլ որք զօրութիւն և արարած ասեն գոլ զհոգին: - 51. Զի *մեզ* հոգին ըստ ինքեան գոյացութիւն, և յայլում տեսանի. այսինքն կատարեալ անձնաւորութիւն յէութիւն հօր: - 51. Իսկ յորժամ զյայլումն լսեն՝ արձակին ի վերայ *մեր* ասելով, եթէ յայլո՛ւմ է՝ պատահումն է ի հայր որպէս զօրութիւնս առ *մեզ*. իսկ եթէ զօրացեալ է՝ և ընդ զօրանալն դադարեսցէ ամենայնիւ. շարժումն եղիցի և ոչ շարժօղ: - 52. Եւ թէ արարած է՝ զիա՞րդ հաւատամք և կատարիմք. այսինքն յորժամ խնդրեմք և առնումք. զի ո՛չ տան *մեզ* զհայցւածքն որք են արարածք. որպէս անւամբ միայն աստւածք հեթանոսացն: - 52. Եւ թէ յորդւոյ՝ երևեցաւ ասեն և թոռն ոմն *մեզ* աստուած: - 52. Եւ այսպէս կարծեն յամենայն կողմանց կապել *զմեզ*: - 52. Ասեմք մարմնասիրեացն եթէ՝ մարմնակա՛ն կարծէք զծնունդն ըստ *մեզ* ո՛վ ծիծաղելիք: - 52. Եթէ ըստ *մեզ* կարծէք զծնունդն, պիտոյանայ երկուորիս և գործիս հօր. լիցի և այրութիւն և իգութիւն յաստուած. և լիցին որդիք երկորեակք էրէց և կրտսեր: - 52. Պատասխանեմք թէ ցո՛յց *մեզ* սոյնպէս աստուած երեք անձինք ի մի բնութիւն. և *ես* ցուցանեմ զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ: - 53. Պատասխանեմք թէ՝ ո՛չ ասէ պարզաբար ամենայն, այլ կարգէ՛ զհետն թէ՝ ամենայն որ ինչ եղևն. թէ եղեալ ցուցանես զհոգին, և *ես* հաւատամ թէ ի ձեռն որդւո՛յ է եղեալ: - 53. Ասեն դարձեալ, զիա՞րդ եղանակէք *մեզ* անգիր աստուած զհոգին: - 54. Զի լիցի քո պատճառն ի կողմանէս *մեր*՝ պատասխանի քեզ: - 54. Իսկ արիոսի՝ զի նա միայն զիա՛յր ասէր աստուած. զայս ասեմք թէ, ո՛չ են *մեզ* երեք աստուածք՝ այլ մի աստուած և երեք անձինք. և երկուքն ի մի և ի նոյն էութենէն յառաջ եկեալ. կամօք մի և զօրութեամբ մի: - 54. Զոր և այժմ օրինա՛կ է առ *մեզ* սարկաւագն. զոր հոգի կոչէին վասն հոգևորապէս խօսելոյն: - 59. Իսկ այլք՝ հոգի զիրեշտակական հոգին ասեն. որ տըւեալ

է առ ի պահպանութիւն *մեզ*. զի նա ուղղէ *զմեզ* ի բարիս, և զաղօթս *մեր* մատուցանէ աստուծոյ: - 59. Այսպէս և հոգւոյն բարեխօսելն է. զի ինքն ծագէ ի սիրտս *մեր* զբարեխօսն լինիլ յաղօթս. այսինքն զայն խնդրել որ ինչ ի փառս աստուծոյ է: - 59. Առ չորրորդն եթէ՝ «*յիմմէ* անտի առնուցու». այսինքն *յիմ* սկզբնէն առնու և պատմէ ձեզ: - 61. Այլ այսրքիկ զմիութիւնն *մեզ* ցուցանեն: - 61. Վեցերորդ վկայ ի ժողովոյն քաղկեդոնի զոր նոքա ընդունին և ո՛չ *մեք*. այսպէս է գրեալ թէ՝ որ ոք զհոգին ի հօրէ և յորդւոյ բղխումն ասիցէ՝ նզովեալ լիցի: - 64. Եւ այս է *մեզ* հայր և որդի և հոգի սուրբ: - 65. Եւ *մեք* համաձայնեալ սուրբ և ուղղափառ վարդապետութեանցս, այսպէս դաւանիմք և խոստովանիմք զՅոգին սուրբ աստուած բղխումն ի հօրէ աստուծոյ...: – 65. Զոր օրինակ՝ Աղբիւր բղխեալ առ *մեզ* հոգին սուրբ ա՛րդ սկիզբն աղբերն շարժի ի ծովէ՛. և հասանէ յակն. և յակնէն առ *մեզ* բղխէ: - 65. Եւ հասանէ իբր յակն առ որդի. և յորդւոյ առ *մեզ* հեղու: - 65. Եւ թէ և նա՛ է բնակարան, ապա ո՛չ ինչ ունի քան *զմեզ* առաւել: - 66. Վեցերորդ՝ զի թէ *մեք* շնորհիւ՝ որդեգրեալքս կերպանամք առ ճշմարիտ և բնութեամբ որդին, և թէ և նա՛ է ըստ *մեզ* շնորհիւ, պիտո՛յ է նմա վերնագոյն բնութեամբ որդի մարմնացեալ ի յոր կերպասցի և սա՛ ի նմանութիւն նորա շնորհօք որդի: - 67. Եօթներորդ՝ զի թէ *մեք* որպէս և եմք ըստ լծով ծառայութեան՝ այսպէս և նա՛...: – 67. Մետասաներորդ՝ զի թէ է՛ ինքն բնակարան և տաճար, կազմէ և *զմեզ* բնակարան և տաճար իւր: - 67. Չորեքտասաներորդ՝ զի թէ մահւամբ չարչարանօք նորա փրկեցաք *մեք* ամենեքեան՝ և այն է սոսկ մարդոյ փրկութիւն *մեր*: - 67. Իսկ թէ և զերկու բնութիւնն ասես տէր, ընդդէմ խօսիս առաքելոյն որ մի ասաց զտէր *մեր* յիսուս քրիստոս՝ որպէս և զհայր: - 69. Ասա՛ *ինձ* ո՛վ բաժանօղ՝ ո՛ր դիմաց գոլ ասացեալ զայս: - 70. Ապա ուրեմն աստուած է տէր *մեր* յիսուս քրիստոս: - 70. ...և ինքն քրիստոս դնելով զօրէնսն ասէր, ասացաւ առաջնոցն այս ինչ, բայց *ես* ասեմ զայս ինչ և զայս: - 71. Եւ տէր *մեր* քրիստոս առնէր սքանչելիս...: – 71. Արդ բանն առանց մարմնոյն քրիստոս ո՛չ է. ապա ուրեմն յա՛յտ է զի միացեալ մարմնովն է՛ հաւասար և ի կերպարանս աստուծոյ տէր *մեր* յիսուս քրիստոս: - 72. Տասներորդ՝ դերանուանքն որպէս *ես*. դու. նա՛. յատկապէս զմի անձն նշանակեն: - 73. Յորոյ փախչելով *մեր* և յերկուց ծայրիցն, զառ ի մէջն ունելով ուղղապէս ընթացք, ասեմք եթէ քրիստոս ըստ անշփոթ միաւորութեանն՝ աստուածային բնութեամբն մարդ է, և մարդկային բնութեամբն աստուած է: - 75. Եւ այսպէս ուսաք ի սրբազան առաջնորդէն *մերմէ*: - 75. Իսկ *մեք* ի կարճոյ պատասխանեսցուք: - 76. Ո՛չ յեղմամբ կամ շփոթմամբ. այլ անշփոթ միաւորութեամբ զբանն մարմին եղեալ և միաւորեալ զբնութիւնս *մեր* կատարելապէս ընդ իւրում աստուածութեանն: - 76. Եւ թէ՝ մի ասեմք զտէր *մեր* յիսուս քրիստոս. և մի զբնութիւն նորա. զի մի՛ է բնութիւն բանին մարմնացելոյ: - 76 - 77. Այլ *մեք* զբոլորն և անբաժան ասեմք աստուած և մարդ. այսինքն մարդկութեամբն մարդ, և աստուածութեամբն աստուած: - 77. Եւ զի *զմեզ* անապական գործեաց վերստին ծննդեամբն: - 78. Իսկ թէ ո՛չ, այլ պարզաբար աստուածածին խոստովանիս ընդ *մեզ*, ապա՛ և զծնեալն ի նմանէ խոստովանեա՛ աստուած մարմնացեալ և մարդացեալ: - 79. Յորոց երկուց աստուածաբանիցս իմանի *մեզ* սոյնպէս: - 79. Իսկ *մեք* դասք ուղղափառաց կրկին կերպիւ իմանամք զբանս զայս: - 80. Զի *իմ* զդէմսն, այսինքն զանձինսն շփոթիցեմք: - 80. Ընթացք աստուածպաշտութեան՝ զմիջինն ուսուցանեն *մեզ* գիրք սուրբք...: – 80. Այլ և նոքա որք անանձն և անգո՛յ ասեն զբանն մարմնացեալ. որպէս *մեր* բանս: - 82. Իսկ *մեք* դասք ուղղափառաց՝ գիտեմք զբնութեանն բան: - 82. Ո՛չ զմասն ինչ առեալ զմարդոյ. այլ զբոլոր բնութիւնն ժողովեալ անհատ մարդկութեամբն. զհոգի բանական՝ և զմիտս՝ և զմարմինս *մեր*՝ միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն անշփոթ և անորոշ միութեամբ: - 83. Եւ զայս միաւորութիւնս խոստովանիմք *մեք* մի անձն. և մի դէմ. և մի կերպ. և մի բնութիւն. և մի կամք, և մի ներգործութիւն: - 83. Եւ թէպէտ համաձայն *մեզ* այլք ասացին մի անձն՝ բայց թիւրապէս: - 83. *Մեք* ո՛չ պատրիմք. և ո՛չ հաւանիմք նոցա: - 83. Եւ թէպէտ և ոմանք նմանապէս *մեզ* ասեն մի բնութիւն՝ բայց շփոթեալ: - 83. Ոչ մոլորիմք *մեք* ի հոմանուն ձայնս նոցա: - 83. Արդ՝ *մեք* ո՛չ մտացածին բանիւ ինչ իշխեմք յաւելո՛ւլ կամ պակասեցուցանել: - 84. Որք ուսուցին *մեզ* զխորհուրդ աստուածպաշտութեան որպէս ցուցաւ: - 84. Ա՛րդ՝ դուք որ **բ** բնութիւնս ասէք քրիստոսի, զբաժանական տարբերութիւնս ասէք. և *մեք* մի խոստովանիմք զբաղկացականս միաւորութիւն: - 85. Յարցից և *ես* զձեզ դասք երկաբնակաց: - 86. Իսկ տէր *մեր* անուամբ և բնութեամբ է աստուած որպէս խոստովանիմք դասք ուղղափառաց: - 88. Այլ և ո՛չ որպէս պատահումն ի յէութիւն. զի բանն աստուած ո՛չ է անանձն և ազդումն ինչ որպէս *մեր* բանս ըստ ոմանց. որպէս մարկեղոս և փոտինոս դանդաչեն: - 88. Եւ մեռեալ ի խաչին զանձն միայն ասէք. որպէս երգէք յերեք սրբեանն ձեր, քրիստոս որ խաչեցար ողորմե՛ա *մեզ*: - 89. Ահա՛ այս ի կարճոյ բացայայտութիւն ծածկեալ ամբարշտութեանց, որք բ բնութիւնս սահմանեն ի վերայ միոյն քրիստոսի. թէպէտ անձն մի համբաւեն համաձայն *մեզ*, սակայն որոշմամբ բնութեանց լինին տարաձայն *մեզ* և եկեղեցեացն աստուծոյ: - 90. Զի՞նչ պատասխանեմք երկաբնակացն որք հարցանեն *զմեզ*, թէ մասունքն քրիստոսի աստուած է՝ այսինքն ոտքն

և ձեռքն և գլուխն ապա բազմաստուածք էք: - 91. Եւ *ես* ասեմ քեզ. զի թէ մասունքն քրիստոսի քրիստոս է, ապա բազմաքրիստոս էք և դուք: - 92. Երրորդ՝ զի ո՛չ է նման առ *մեզ* և առ նա մասն և բոլորն. զի թէպէտ մասունք մարդոյ՝ ո՛չ ունին զկոչմունս բոլորին, սակայն մասունք մարմնոյն քրիստոսի՝ կոչին և ունին զբոլորին էութիւն: - 92. Ասաց թէ՝ որ ի կերպարանս աստուծոյ էր բանն, այսինքն էակից հօր, ո՛չ ինչ զրկումն համարեցաւ ի ներգոյական փառաց զլինիլն հաւասար *մեզ*: - 93. Եւ դարձեալ՝ եթէ շնորհօք որդի և օծեալ, և ո՛չ աւելի նա քան *զմեզ*. զի և *մեք* չեմք ծառայ, այլ՝ որդի: - 94. Իսկ հիմն հաւատոյս *մերոյ* քրիստոս է եղեալ ի հօրէ՛: - 96. Ա՛րդ՝ ի մարդկանէ ո՛չ ոք ետես զաստուած, և որդի կուսին ո՛չ ետես որպէս դուդ ասես. սո՛ւտ է ապա և պատմութիւնն զոր ինչ ուսոյց *մեզ*. զի ո՛չ է տեսեալ և պատմէ. ահա անդունդք հայհոյութեան. զոր ի կարգիս լռե՛մ: - 96. Ա՛րդ՝ եթէ տգէ՛տ է որդին աստուծոյ հօր, և տգէտ որդւով խօսեցաւ ընդ *մեզ*. տգիտութեան եղիցի և օրէնքս նոր քան զհինն: - 96. Ա՛րդ՝ եթէ զհայր ո՛չ ոք ի յօտարաց ճանաչէ՝ և ո՛չ որդի ճանաչէ ըստ *քեզ*, եղիցի և որդին օտար ի հօրէ: - 96. Արդ՝ եթէ ինքն ճշմարտութեամբ ո՛չ գիտէ, *մեզ* որպէս ցուցանէ. և թէ ինքն մոլորեալ է՝ *զմեզ* ո՞րպէս տանի առ հայր: - 97. Ա՛րդ՝ եթէ պակա՛ս է շնորհք և իմաստութիւն նորա, *մեք* զիա՞րդ լիութեամբ առաք: - 97. Քսանևմիերորդ՝ արդ՝ եթէ քրիստոս տգէտ ունէր միտս, և տկար հոգի, և ապականացու մարմին և եկն քրիստոս զի բարձցէ զտկարութիւնս *մեր*. և լուսաւորեսցէ որ նստէաք ի խաւարի. և նա՛ է գառն աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի և զապականութիւն: - 99. Եւ *մեք* զնոյն դաւանութիւնն պինդ կալցուք անշարժ յուսով ի կեանս և ի մահ և յետ մահու. և նորին խոստացեալ բարեացն արժանի լիցուք ի քրիստոս յիսուս ի տէր *մեր*: - 101. Եւ թէ՝ բանս *մեր* միաւորեալ է ընդ ձայնի: - 102. Դարձեալ՝ զգայութեամբ ծանօթանամք որ արտաքոյ քան *զմեզ*: - 103. Եւ խոհեմութեամբ՝ որ ի ներքս ի *մեզ*: - 103. Եւ վերին խոկմամբ՝ որ ի վե՛ր է քան *զմեզ*՝ ըստ կարողութեան լուսաւորիմք ճառել զանճառէն: - 103. Վեցերորդ՝ որդին աստուծոյ եղև որդի մարդոյ. զի *զմեզ* արասցէ որդիս աստուծոյ: - 107. Նախ՝ զի թիւն քանակ է պատահական՝ և գիտելի *մեզ*: - 108. Զի յաւիտենական բղխէ ի հօրէ առ որդի. և նովաւ առ *մեզ* գայ. որպէս ջերմութիւն ճառագայթիւ արեգականն: - 108. Քանզի ո՛չ է ծնունդ, այլ բղխումն. որպէս շունչ և կեանք ի հոգւոյս *մեր*: - 109. Նոյնպէս և ի միոյն աստուծոյ իջեալ յարարածս ընդարձակի տեսութիւն *մեր*. և ի սոցանէ ի նա դարձեալ նեղի: - 110. Երրորդ՝ թիւն ընդ գիտութեամբ *մեր* է. իսկ աստուած ընդ գիտութեամբ *մեր* ո՛չ պարունակի որպէս ասացաք. ապա ուրեմն ի վեր է քան զմի և զմիակ: - 110. Երրորդ՝ զի նախ՝ էի և գոյացութեան հաղորդեաց զեղեալքս, և ապա կենաց և իմաստութեան և այլն. զի նախ է գոլն *մեր*, և ապա բարի գոլն: - 111. Վասն է՞ր կոչեմք զնա էր. և է՛. և եղիցի. ըստ այսմ. «*ես* եմ որ էն». և «ի սկզբանէ էր բանն». և եղիցի աստուած ամենայն յամենայնի: - 111. Դարձեալ՝ յարացոյցն ո՛չ թանձրանայ որպէս տարերք. և ո՛չ որպէս նիւթ և տեսակ կերպանայ. և ո՛չ թէ յարացոյցն արար *զմեզ*: - 112. Զի առ աստուած՝ ո՛չէ սոսկ տեսութիւն արտաքոյ. այլ յինքն տեսանելով զյարացոյցն. և *զմեզ* ի յարացոյցն *մեր* իբր լինիլ *մեզ* նախ ի յաստուած, և ապա ի յէութեան *մերում*. և ո՛չ որպէս փոփոխումն ինչ ի բարի կամացն: - 112. Որպէս նախ քան զլինիլն *մեր*՝ էր սկիզբն *մեր*. և այժմ է՛ նոյն սկիզբն. և յետոյ ի կատարածի անփոփոխելի մնայ ի սկիզբն գոլոյ: - 112. Վասն որոյ երբեմն կոչի սկիզբն. և *մեք* սկսեալք ի նմանէ: - 112. Երբեմն նախագաղափար. իբր նախօրինակ. և *մեք* պատկեր և նմանութիւն նորին: - 112. ...և թէ՝ նախ սահմանեաց *զմեզ* աստուած ի կամս իւր իբր անփոփոխելի սահմանադրութիւն: - 112. Իսկ հոգի *մեր*՝ և հրեշտակք՝ ասին յաւիտենականք. զի ո՛չ են ընդ ժամանակաւ. այլ ընդ յաւիտենիւ: - 114. Թէպէտ առ *մեզ* տեսանի անսկիզբն յառաջին կողմն, և անվախճանն ի վերջինն. այլ ի նա ո՛չէ առաջին և վերջին. զի պա՛րզ և միեղէ՛ն է: - 115. Ո՞րպէս աստուած զանցեալն և զապագայն համանգամայն տեսանէ ներկայաբար. իսկ *մեք* ո՛չ: - 117. Միտք *մեր* **բ** պակասութիւն ունի. այսինքն զմոռացումն և զտգիտութիւն. զի զանցեալն մոռանայ. և զապագայն ո՛չ գիտէ: - 117. Դարձեալ՝ միտք *մեր* այժմ ի ներքոյ ժամանակի՛ է. և բ մասն ժամանակին ո՛չէ. այսինքն անցեալն կորուսեալ է, և ապագայն ո՛չէ է: - 117. Վասն որոյ ընդ կորուստ այսպիսի մասանց՝ և գիտութիւն մտաց *մեր* կորնչի: - 117. Վասն է՞ր է զի աստուած զանգործս և զոչէսն տեսանէ. իսկ *մեք* զեղեալն և զգործեալն: - 118. Իսկ *մերս* եղական է. վասն որոյ զեղեալսն չափէ: - 118. Զի ուր բնութիւն ո՛չ հասանի, անդ և միտք *մեր* ո՛չ կարեն հասանիլ: - 118. Իսկ *մեք* երկոցունցն անգիտանամք: - 118. Ո՞րպէս տեսանէ աստուած զէքս. զի զգայութիւն ո՛չ ունի. որպէս *մեք* ներքին զգայութեամբ զիմանալիս՝ և արտաքին զգայութեամբ զերևելիս տեսանեմք: - 118. Որպէս յորժամ ասեմք անբան և յիմարութիւն, գերագոյն ունիլ զբան և զիմաստութիւն քան *զմերս*: - 118. Եւ այս ամենայն ընդդէմ է տեսութեան *մեր*. զի *մեք* մասամբ տեսանեմք. և մի զկնի միոյ. և առաւել և պակաս գիտութեամբ. և ըստ իրին փոփոխմամբ: - 118. Իսկ *մեր* տեսութիւնս էութեանն հետևի. զի նախ իրն լինի, և ապա՛ *մեք* տեսանեմք: - 118. Իսկ *մեք* զկնի գործոյն և կամելոյն և էութեան որպէս ասացաք: - 118. Իսկ *մեք* սոցա ամենայնի

զընդդէմսն տեսանեմք. և ա՛յս է պատճառն: - 118. Ամենահայեցն զբոլոր տեսութիւնն ասէ որ ընդդէմ է մասնաւոր տեսութեանս *մերոյ* չորեքկին: - 119. Իսկ *մերս* մասնաւոր: - 119. Իսկ *մեք* զմիսն: - 119. Իսկ *մեք* զմինն: - 119. Իսկ *մեք* զներկայն միայն: - 119. *Մեք* ո՞րպէս տեսանեմք զաստուած. իմացմա՞մբ՝ թէ զգայութեամբ: - 119. Աստուածային էութիւնն ըստ որում բնութիւն է՝ թէ զինչ է կամ որպիսի ինչ է անգիտելի՛ է *մեզ* յայսմ աշխարհի և ի հանդերձելումն: - 119. Երրորդ՝ պա՛րզ է նոցա տեսութիւնն. և *մերս* բաղադրեալ և նիւթական: - 120. Չորրորդ՝ միեղէն է նոցա տեսութիւնն և ի միոյ. իսկ *մերս* բազում և ի բազմաց. զի բաժանեալ զգայարանօք զբաժանեալ իրս տեսանեմք: - 120. Հինգերորդ՝ նոցա անմոռանալի՛ է տեսութիւնն. իսկ *մերս* հանդերձ մոռացմամբ. որքան զգայութեամբս տեսանէ միտքն: - 120. Նախ՝ զի լպրծի՛ միտք *մեր* և մոռանայ զբանն. զի հով և գէջ է պարուտակն և ուղեղ գլխոյն: - 120. Երրորդ՝ զի բանս *մեր* ձայնիւ յամենայն լսելիս անցանէ և թղթով յամենայն տեղիս ընթանայ. և բանն աստուծոյ սո՛ւր է և հատու և ընդ ամենայն է քրիստոս անցանէ թափանցաբար: - 121. Չորրորդ՝ զի պարզի բանս *մեր* երիւրմամբ խռչափողիցն...: – 121. Հինգերորդ՝ զի ընդարձակի բանս *մեր* քան զամենայն ինչ. և բանն աստուծոյ ընդարձակեալ է առ ամենայն ինչ՝ գոյացութեամբ և արարչութեամբ: - 121. Զի ո՛չ մարմին է. և ո՛չ հոգի. և ո՛չ միտ. և ո՛չ այլ ինչ զոր *մեք* գիտեմք կամ իմանամք: - 122. Եւ ապա ասեմք անհասանելի անքննելի անճառելի. ո՛չ միայն *մեզ*, այլ և ամենայն եղական իմացմանց անիմանալի է և անյայտ: - 122. Իսկ բացբարձականն ըստ գերազանցութեան է. զի գերազա՛նց բան է՝ և գերագունա՛կ միտ. և գերագոյն և առաւել հայր՝ և որդի. և ո՛չ ըստ *մեր* կարգիս որպէս *մեր* բանս է և միտք: - 124. Եւ ըստ չափոյ ընդունողաց ծնանի քրիստոս ի սիրտս *մեր*: - 125. Երրորդ՝ արեգակն յարևելից առ *մեզ* ծագեալ լուսաւորէ: - 125. Եւ տէր *մեր* յարևելից ի հօրէ, և առ *մեզ* երևեալ ի մօրէ՞ լուսաւորեաց *զմեզ*: 125-126. Եւ տէր *մեր* չորիւք կատարեաց զտարի տնօրէնութեան իւրոյ: - 126. Այս է յղացմամբ յարգանդի և ծննդեամբ. և քարոզութեամբ. և մահուամբ. և յարութեամբն և համբարձմամբն առ հայր՝ իբր զպսակ տարւոյ կատարեալ բնութեամբ *մեր*՝ ի ներքին կողմն վարագուրին մտեալ: - 126. Եւ տէր *մեր* հաւասար ողորմութեամբ և արդարութեամբ. զի որքան տեսանեն ողորմութեամբ՝ ձգտին առ շնորհին արդարութեան: - 127. Մեծ է տէր *մեր* և մեծ է զօրութեամբ. այլ քանակեալ մարմնով ի չափս *մեր* տեսանի: - 127. Սմին նման և տէր *մեր* ընտրեաց զառաքեալս և նոքօք կոչեաց զհաւատացեալս: - 127. Զարմանալ և հիանալ ասի *մեզ*՝ թափումն և արտաքսելումն ի մտացն: - 127. ...նախանձն ա՛խտ է առ *մեզ*: - 127. Դարձեալ՝ նախանձո՛տ է և նախանձելի. այսինքն նախանձո՛տ է իբր զսիրեցող. և նախանձելի իբր զսիրելի. զի շարժէ՛ *զմեզ* ի սէր իւր: - 128. Դարձեալ՝ ինքնանախա՛նձ է. զի ո՛չ յայլմէ շարժի ի սէր որպէս *մեք*. այլ յինքենէ՛ շարժի ի սիրել և ի սիրիլ: - 128. Երկրորդ՝ զի էութիւնն աստուծոյ սէ՛ր է. և շարժի՛ սիրել *զմեզ*. և շարժէ՛ *զմեզ* սիրել զինքն: - 128. **Եւ կոչի սէր, զի շարժէ՛ *զմեզ*. և յառաջածու զօրութիւն է. և երևեցուցիչ. և միաւորիչ. զի այսոքիկ սիրոյ ներգործութիւնք են. վասն այն կոչի սէր:** - 128. **Չորրորդ՝ սիրօղ՝ որպէս սկիզբն *մեր*. և սէր՝ որպէս հաստատութիւն. և սիրելի՝ որպէս կատարումն**: - 128. Այսպէս բարին է սկիզբն *մեր*. և մէջ. և վախճան: - 128. Ապա ուրեմն բարին սկիզբն է *մեր* և վախճան: - 128. Սակայն ըստ *մեր* իմացմանս հասարակ է բարին քան զսէրն. զի ասեմք՝ սէրն բարի է. ազնիւն բարի է. և այլն. որպէս ասեմք՝ մարդն կենդանի է. ձին կենդանի է. և այլն: - 128-129. Այլք ասեն թէ՝ է՛ ի յաստուած լայնութիւն սիրոյ, որով յետս դարձուցանէ *զմեզ* ի մոլորութեանց վասն առաւել սիրոյն: - 129. Նախ ա՛յս է միտքն՝ որ այբն առաջին է և քէն վերջին. այսինքն *ես* եմ առաջին աստուածութեամբս. և *ես* եմ վերջին մարդկութեամբս. զի մարդն վերջին է արարածոց: - 129. Երկրորդ՝ *ես* եմ սկիզբն և կատարած ամենայնի. զի ի բանէն աստուծոյ եղեն ամենեքեան և ի նոյն բանն վախճանին: - 129. Երրորդ՝ *ես* եմ սկիզբն արարչութեամբ, և կատարումն նախախնամութեամբ ամենայն գոյից: - 129. Նախ՝ աստուածաբանն գրիգոր՝ զոտքն մարմնով տնօրէնութեանն ասէ նշանակ. զի մարմնով եկեալ զփրկութիւն *մեր* արար. և մարմնով համբարձաւ առ հայր: - 130. Զի՞նչ է պատճառ՝ որ արտաբերեալ բանս *մեր* միաւորեալ է ընդ ձայնի. և բացակայքն զձայնն լսեն՝ և զբանն ո՛չ: - 131. Երրորդ՝ զի *մեզ* յայտնեսցի ծածուկ խորհրդով...: – 131. Ութերորդ՝ զի խորանն առաջին և երկրորդ և երրորդ՝ վարագո՛յր էր. և ծածկէին զմիմեանս և յայտնէին. այսպէս առաջին խորանն է աստուածայինքն. և երկրորդն հրեշտակացն. և երրորդն *մերս*՝ վարագուրիւք ծածկեալ՝ որ յայտնեն զմիմեանս: - 132. Եօթներորդ ի *մեզ*, մարդն բանն. առիւծն ցասումն. եզն ցանկութիւնն. արծըւին գիտութիւն բարձրաթռիչ զվերինն խորհիլ միշտ: - 133. Եւ սերօբէն որ է՛ ջեռուցիչ՝ ի դէմս հոգւոյն սրբոյ. զի նա՛ է հուր սիրոյ զոր էարկ տէր *մեր* յերկիր: - 135. Թէպէտ և զայս կարգ փոխեն ոմանք և զզօրութիւնն և զպետութիւնն աւանդեն որ *մեզ* ո՛չ է հետևելի. այլ սրբոյն դիոնիսեայ որպէս ասացաք: - 135. Քահանայապետութիւնն ո՞րպէս է ի հրեշտակս, և ո՞րպէս ի *մեզ*: - 138. Եւ նոքա լոյս գոլով լուսաւորին. իսկ *մեք* ի խաւարէ՛ ի լոյս գամք: - 139. Եւ նոքա գերազարդ իմացմամբ աստուածային հանճարովն

կատարելագործին. իսկ *մեր* ի ձեռն հաւատոյ աստիճանաց կատարելագործիմք: - 139. Կատարեալ և գերակատար թիւք դոքա են առ *մեզ*. որ ի դ գլխաւորին ըստ չորից տարերց: - 141. Այլ թիւ իւրաքանչիւր առանձնութեանցն անգիտելի է *մեզ* որպէս զաստեղս երկնից: - 141. Զի թիւ *մեր* նիւթեղէն և տկա՛ր և չափաւո՛ր է. վասն որոյ զանբաւութիւն նոցա ո՛չ կարէ չափել. ուստի յայտ է՝ զի և ո՛չ զթիւ *մեր* կարեմք գիտել: - 141. Եւ ըստ որում մի է սկիզբն և կատարումն և թափանցումն. վասն որոյ միով և ինքեամբ գիտէ զբազումս. և ո՛չ որպէս *մեք* բազմօք զբազումս: - 142. Երրորդ՝ զի ի սիրոյն աստուծոյ զրկեսցէ *զմեզ*. զի կարասցէ յաղթել: - 146. Եւ գործոյն որ ունին կրթել զմարդիկ՝ յարմարի օղն որ է՛ մեծ առ *մեզ* փորձելոյ *զմեզ*. այլ ո՛չ ի լոյս. զի մի ուրախասցին: - 146. Եւ թէպէտ լոյս կերպարանի այժմ, բայց չտեսնու զլոյս իւր. որպէս և ո՛չ *մեք զմեր* հոգւոյս: - 147. Եւ լուսաւորիչն *մեր* զնոյնս երկրորդէ: - 147. Այլ և զնախնիքն *մեր* պատրեաց և չարացոյց: - 148. Եւ ժ կատարեալ թիւ է. նշանակէ՛ զկատարեալ զօրութիւնս թշնամւոյն որով կռուի ընդ *մեզ*. զոր նշանակեն եղջիւրքն: - 151. Նոյնպէս և առ *մեզ*՝ որք մրցին և ջանան ընդ դէմ բանսարկուին և մեռուցանեն զէ գլուխ նորա՝ նոքա զնոյն պսակն ժուժկալութեամբ և առաքինութեամբ ընդունին ի գլուխս իւրեանց յիւրաքանչիւրոցն զորս կոխեն և յաղթահարեն...: – 152. Յետ ընդդէմ արտաքս աքսորելոյ զարտաքինսն. և ընդ մէջ հերձելոյ զհերձուածօղսն, և զճշմարիտն աստուածաբանութիւն հաստատելոյ ի *մեզ*, բե՛ր սկսցուք զսկիզբն արարչութեան եղելոց մինչ ի վախճան կատարման այժմոյս՝ ըստ կարգի հին և նոր կտակարանաց հետևեալ: - 156. Բայց թէ թոյլ տըւութեամբ՝ որ *մեզ* երևի չար. և է՛ ծածուկ բարութիւն ի նմա: - 158. Երկոտասաներորդ՝ զի սուրբքն բանիւ *մեզ* ուսուցանեն՝ նեղութեան և փորձանաց համբերել. պատրին ինքեանք գործով կատարել զնոյն. զի հաւատարիմ լիցին բանք նոցա: - 159. Երեքտասաներորդ՝ զի տկար մարմնով անմարմին և զօրաւոր թշնամոյն յաղթեսցեն. որով աստուած իսկապէս փառաւորի. տեսանելով զտկարն յաղթել զօրաւորին ըստ այնմ որ զախորժակս իւր յայտնէ՛ր սիրելոյն՝ «շա՛տ է քեզ շնորհ *իմ*. զի զօրութիւն *իմ* ի տկարութեան քում կատարի». այսինքն թէ՝ որպէս *ես* աստուածային մարմնոյս զօրութեամբն յաղթեցի փորձողին, նոյնպէս և դու շնորհօք իմովք՝ տկար մարմնով քո՝ յաղթես և նկուն առնես զնա: - 159. Զի՞նչ է զոր տէրն հրամայէ աղօթել՝ «մի՛ տար *զմեզ* ի փորձութիւն»...: – 160. Արդ ներքին է՝ որ ի փափկութեանց և ի հեշտութեանց փորձի բնութիւնս *մեր* և այլայլի ի զանազան տեսակս մեղաց. զոր պա՛րտ է հանապազ աստուածային խնամոյն՝ զի մի՛ թողցէ յայսպիսի փորձութիւնս *զմեզ* ընկղմիլ: - 160. Իսկ առաքեալն վասն արտաքին փորձութեանցն ասէ. որ ի հալածչաց հասանէ ի վերայ *մեր*. յորում ուրախանալ պարտիմք. զի որքան յաճախէ փորձութիւնն, ա՛յնքան առաւելու և պսակն: - 160. Նախ՝ զի մի՛ անձնիշխանութիւնն բարձցի ի *մէնջ*: - 161. Երկրորդ՝ զի համբերութիւն ուսուցանէ *մեզ*. որպէս ասէ յակոբոս՝ «ուրախ լերուք յորժամ ի մէջ փորձութեան անկանիցիք. զի հանդէս ձերոց հաւատոցն՝ յօրինեալ գործէ՛ զհամբերութիւն»: – 161. Ասեմք առ այս Նախ՝ եթէ կամքն և կարն ի *մեզ* անհաւասա՛րք են. վասն այն զոր ինչ կամիմք՝ ո՛չ կարեմք. և զոր կարեմք՝ զա՛յն կամիմք: - 163. Եւ *մեք* ի տեսանել զարարածս՝ իմանամք զարարիչն...: – 164. Եօթներորդ՝ զի ուսմամբ է նախատեսութիւնն որ առ *մեզ*: - 164. Իններորդ՝ զի նախատեսութիւն *մեր* ի ներքուստ զարտաքսոյն՝ և արտաքուստ զներքսոյն ճանաչէ: - 164. Տասներորդ՝ զի տեսութիւն *մեր* զէ՛սն տեսանէ. և զոչ էսն ո՛չ տեսանէ: - 164. Եւ այլ բազում զանազանութիւն է գործոց մարդկան և աստուծոյ. զի *մեք* կարօտ եմք նիւթոյ. ժամանակի. տեղւոյ. օգնականի: - 164. Նախ՝ զի աստուած միա՛յն է ինքն ինքեամբ. և ո՛չ յայլմէ հաստատեալ. ըստ որում ասէր առ մովսէս՝ «*ե՛ս* եմ որ էն»: – 170. Չորրորդ՝ զի պատահումն է՛ փոփոխական իր. իսկ աստուած անփոփոխ է էութեամբ զօրութեամբ կամօք և գիտութեամբ. ըստ այնմ՝ «*ես* նո՛յն եմ և ո՛չ փոփոխիմ»: – 170. Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ. զի է կոչի աստուած, ըստ այնմ «*ես* եմ որ էն». և ո՛չ ըստ այնմ որ բաժանի ի գոյացութիւն և ի պատահումն. որպէս հոմանուն կամ փաղանուն. կամ ի միոջէ և առ մի. որպէս ընդհանուր էակն է՝ բաժանի առ *մեզ*: - 171. Իսկ Գոյացութիւն կոչի աստուած, ո՛չ ըստ որում ներհակ պատահմանց է ընդունական որպէս *մեք*. այլ ըստ որում բաժանի ընդդէմ պատահմանց. որ է՛ միայն պարզ գոյացութիւն որպէս ասացուք: - 171. Ո՛ր ըստ որում շարժօղ զգայութեանցս որ առ *մեզ*՝ կոչին որակք՝ գոյն, և համ, և սոյնպիսիք: - 171. Իսկ Առինչ կոչի, ո՛չ որպէս առ *մեզ* առինչք են մակագոյեղքն. այլ գոյացական, կամ բաղդատական. որպէս ծնօղ. ծնեալ. բղխօղ. բղխեալ. կամ արարիչ և տէր արարածոց և ծառայից: - 172. Իսկ *մեք* ասեմք յոչնչէ ստեղծեալ աստուծոյ զարարածս: - 173. Եւ այս ինչ է հարցումնդ զի թէ ասեմք կամաւ ներգործէ, ասեն՝ ապա փոփոխական ներգործէ որպէս մարդ. իսկ թէ ասեմք բնութեամբ, ասեն *զմեզ* եթէ անբանապէս և ի հարկէ ներգործէ: - 173. Եւ այսպէս կարծեն յերկուց *դիմաց* ըմբռնել *զմեզ*: - 173. Այսպէս իմա՛ *ինձ* և զբանին մարդեղութիւն յայլևայլ բնութեանց միաւորեալ ի մի էութիւն և ի մի դէմ անձնաւորեալ և ո՛չ շփոթեալ բնութեանցն յատկութիւն: - 176. Իմա՛ *ինձ* և ա՛յլ ևս՝ սո՛ւր ես մտօք և բաժանասէր: - 176. Վասն

օրինակ ո՛չ ասի մարդ մարդոյ նման գոլ ըստ մարդկութեան. վասն զի նոյնութիւն է և ոչ նմանութիւն. բայց ասի նման մարդ մարդոյ ըստ *երեսացն* և գունոյն և ձևոյն նմանութեան: - 272. Իններորդ՝ զի որպէս կողից *երեսն* որ ի փորն նայի՝ կոկ գոլով և մզղնա տեսակ. իսկ մէջն փուչ և մրրախառն. այսպէս սէրն զոր ցուցանէ առ այրն, նօսր առ ի ցոյցս՝ և *երեսս* միայն ունի. իսկ ի սիրտն զմրուր դառնութեան: - 276. Նա՛խ՝ ի տեսութենէն, զի ո՛չ ևս յաւել տեսանել *զերեսս* աստուծոյ: - 279. Եւ ըստ այնմ որ նշանակութիւն է, ցուցանէ զմարմինս մեր փոփոխական. որպէս այն որ փչեաց *յերեսս* մարդոյն շունչ կենդանի: - 282. Երեսունգ, *Երեսաց* հացն. և գառն. և աշտանակն. և քահանայական զգեստն: - 284. Երեսունեգ, Լուսաւորեալ *երեսացն*: - 284. Զի ո՛չ հաճեցաւ ի նա և ո՛չ ի զոհս նորա. և տրտմեցան *երեսք* նորա և այլն: - 287. Նմանապէս և մեծն ի մարգարէս աստուածախօսն մովսէս որ աստուած կոչեցաւ փարաւոնի. իշխելով տարերցս փոփոխման, որ ջրածինն էր՝ եղև վիմածին և կայծակնածին. որում լուսաւորեցան *երեսք*: - 288. Եւ **բ** *երեսին* մէջն **ծ** կանգնոյ լայնութիւն: - 297. Իսկ չորրորդն է՛ պատարագ տեառն մերոյ քրիստոսի որ ի մի դէմ անձնաւորութեան **գ** *երես* պատարագին բացայայտեցաւ: - 306. Իններորդ, նորա լուսաւորեցան *երեսքն* ի սինա: - 328. Նա՛խ՝ սեղան *երեսաց* հացին և գառին ի հիւսիսոյ կողմն: - 346. Նոյնպէս և սեղան խնկոց և *երեսացն* ցուցանէ զհոգիս սրբոց ելեալ ի մարմնոց և մտեալ դէմ յանդիման *երեսացն* աստուծոյ: - 346. *Երես* զիսկութիւն աստուածութեանն նշանակէ. զոր աստի կենօքս ո՛չ ոք կարէ տեսանել. որպէս զբոլորակ արեգականն. այլ ի հանդերձեալն տեսանեն ընտրեալք ըստ չափու: - 350. Վասն է՞ր լուսաւորեցան *երեսքն* մովսէսի: - 352. Երրորդ՝ զի փառք տախտակացն մեծացի ի լոյս *երեսացն*: - 352. Հինգերորդ՝ խնայեաց ի նա՛ տէր ո՛չ ցուցանել *զերեսս* իւր. այն կոչեաց զնա՛ տէր և արար զաչս նորա տէր և պատժօղ: - 352. Երկոտասաներորդ, լուսաւորեցաւ՝ զի քօղ արկցէ *երեսացն*. որ օրինակէ՛ զհին կտակարանս. որ քօ՛ղ է արկեալ և առագաստ մտաց նոցա. մինչև դարձցին առ տէր հոգիքն որպէս զմովսէս. և ապա վերասցի քօղն և յայտնեսցի լոյս գիտութեան նոցա: - 352. Վասն է՞ր *յերեսաց* սեղանն հաց և գինի և գառն դնէին. և մեք զգառն ո՛չ դնեմք: - 357. Այս ի վերայ *երեսաց* սեղանոյն ի սրբութիւնն: - 359. Իսկ ի ներսն, **ա**՝ հացին *երեսաց* և գառին. **բ**՝ խնկոցն. **գ**՝ շօթին և զիացին. **դ**՝ մին ա՛յլ **զ** հացին. զի **ժբ** հաց էր. և **բ** սեղան: - 364. Նա՛խ՝ գառն հանապազորդ. և նուէրք *յերեսաց* սեղանն և յողջակիզաց: - 372. Զի վարդավառին ա՛յն է, յորժամ կրկին խ պահեաց մովսէս ի լեառն և լուսաւորեցան *երեսքն*. վասն այն զկնի երկու յիսնակացն տօնեմք: - 373-374. Ութերորդ՝ զի դարձուցեալ է *զերեսն* առ աստուած՝ և զթիկունսն յաշխարհս: - 378. Զի որք *զերեսաց* հացն ի սեղանն բառնային՝ սարկաւագունք են: - 379. Զի հանապազ քօղ *երեսացն* մովսէսի առագա՛ստ է ի վերայ սրտից նոցա. և ոչ իմանան զտեսութիւն բանին. վասն որոյ ո՛չ հաւատան: - 405. Երկրորդ՝ յորժամ *երեսքն* լուսաւորեցան որպէս ադամայն ի դրախտին՝ և ի յարութեանն: - 409. Երկրորդ՝ և մի՛ փոքր կասցի օրէնքն, տեսանելով զլոյս *երեսացն* նուաղեալ: - 411. Իններորդ՝ զիա՞րդ զարհուրեցաւ կինն յետ երդմանն, և անկաւ *յերեսս* մինչ քաջալերեաց սաւուղ և եհարց: - 428. Հինգերորդ՝ զի անկաւ ի վերայ *երեսաց*: - 429. Ոմանք ասեն թէ ի տաճարէն *յերեսաց* սեղանոյն ընդ առաւօտն և յերեկոյն բերէին ագռաւքն: - 443. Ուստի և վեհագոյն իմացութեանց էից սերովբէն զքօղեալ *զերեսս* և զոտս մարդեղութեան խորհրդոյն պարուրեալ: - 456. Դարձեալ՝ օձն ի *յերեսս* երկրի, և վիշապն ի խորս և յանդունդս: - 488. Սպեղանեաւ, յորժամ *երեսք* նորա թքով մածեցան: - 491. Իսկ չորրորդն է՛ պատարագ տն մերոյ քրիստոսի որ ի մի դէմ անձնաւորութեան **գ** *երես* պատարագին բացայայտեցաւ. այսինքն մեծ գոլ մատուցօղն և ընդունօղն և պատարագն: - 491. Երրորդ՝ կապեալ ածաւ ի տունն կայիափայ. և անդ զթուքն կալաւ *յերեսն*. և մինչ ի վաղիւն հսկեաց: - 492. Երեքտասաներորդ, զի մարիամ ո՛չ խոնարհութեամբ կամէր մերձենալ յոտս նորա որպէս այլ կանայքն. այլ *յերե՛սն* դիմեաց նա հպարտութեամբ առ ի համբուրել զնա. իսկ տէրն կամեցաւ ուսուցանել նմա զխոնարհութիւն՝ արգել զնա: - 518. Մեղք է դարձուցանել *զերեսս* յանփոփոխելի բարւոյն որ է՛ առ աստուած. և դառնալ առ փոփոխելի բարին որ է արարածքս: - 569. Իսկ թէ հարկաւոր ժամանակ հանդիպի զպատւական մասունքն միայն. և կամ *զերեսս* միայն բաւական է լուանալ: - 588. Այլ և մարգարէն մովսէս դնէր *յերեսաց* սեղանն գառ մի խորովեալ. և հաց և գինի և չորրորդ մասն դորակի հանապազորդ. և ջուր ո՛չ դնէր: - 595. Չորրորդ՝ ի յօրինակն մի հաց և մի գառն խորովեալ լինէր. որ ընդ մասին գինւոյ դնէին *յերեսաց* սեղանն: - 597. ...և *երեսն* լըսնանայ վասն դեղնութեանն. և կապուտի ընդ կարմիրն խառնելով: - 620. Եւ յաչացն ի *յերեսն* սակաւ. որ արտասուքն ելանէ. բայց սակաւ ճանապարհս այս յաղթէ՛ զայն բազում տարւոյ ճանապարհն: - 620. Եւ դարձեալ՝ ի հնումն վեց դնէին զհաց *երեսացն*. և յաւուր շաբաթի կրկին զ: - 629. Որդի սուրբ՝ ցո՛յց մեզ *զերեսս* քո: - 659. Եւ դառնացեալ յոգոց հանէ, և այսր և անդր *զերեսն* շրջէ և թաքչիլ ո՛չ կարէ: - 669. ...և զբարձս ոտիցն և զգլուխն և *զերեսս* և զկուրծքն հարեալ. – 670. և *երեսքն* ամաչեաց: - 670. Եւ բամպակ *երեսացն* զպայծառ հաւատն: - 671. Իսկ ի վեր կոյս ունել

*<u>զերեսս</u>* մեռելոյն...: - 676. Եւ միջին սրբութին է կայանք հոգւոցն. ուր աշտանակն լուսոյ և խունկն և հաց *<u>երեսացն</u>*: - 682. Որք են անուշահոտ հոգիք սրբոցն հանդէպ *<u>երեսացն</u>* քրիստոսի ի տեղւոջ մշտնջենաւոր լուսոյն: - 682. Նոյնպէս սրբին ամենայն տիեզերք. զի *<u>երեսք</u>* երկրի այնպէս պայծառանայ որպէս զհայելի: - 728. Նախ զի դիւրաւ հալի մոմ ի հրոյ. այսպէս և լերինք *<u>յերեսաց</u>* բարկութեան հրոյն: - 728. Երրորդ զի պարզի հալեալ մոմ. այսպէս սևութիւն և թանձրութիւն երկրի ի դժոխս ժողովին և մարմինք մարդկան *<u>յերեսս</u>* երկրի: - 728. Եօթներորդ, զի ահագնակերպ երևի ի վերայ մեղաւորաց. մինչ ասիցեն լերանց թէ անկերուք ի վերայ մեր. և բլրոց թէ ծածկեցէք զմեզ *<u>յերեսաց</u>* բարկութեանն աստուծոյ որ նստի յաթոռ. որպէս ասէ տեսիլն: - 737. Իսկ ծուխն *<u>յերեսացն</u>* աստուծոյ, Նախ նշանակէ զահագին սպառնալիք բարկութեան տանջանացն. որպէս նա՛խ է ծուխն քան զհուր, և սպառնալիքն քան զտանջանս: - 749. Այլ նախ ասի միշտ տիւ ի վերին *<u>երես</u>* երկրի. ուր արեգակն և լուսին զկա՛յէ առեալ. իսկ ներքինն միշտ գիշեր և խաւար անփոփոխելի: - 750. Նախ ի տեսանելն *<u>զերեսս</u>* աստուածային որ է անճառելի ցնծութիւն. որպէս ասեն վարդապետք, այն է ճշմարիտ և միայն ուրախութիւն, և ո՛չ յաղագս ստեղծուածոյ, այլ ի ստեղծողին լինի. զոր իբրև ստանայցես, ո՛չ ոք բարձցէ ի քէն: - 762. Դիոնէսիոս զհաւատն տիպ ասէ. և Աղէքսանդրոս կնիք. և Պօղոս աներևոյթ իրաց *<u>երես</u>*. և Յօհան ոսկէբերանն՝ լոյս անյայտ իրաց: - 769

***ՅԵՐԵՍՍ ԱՆԿԱՆԻԼ +*** Դարձեալ, *<u>յերես անկեալ</u>* արտասուալի դիմօք հողս և փոշի՝ սուրբ գարշապարաց ձերոց, աղերսեմ ի խորոց սրտէ զհարազատ գութ հարց և եղբարց մեր հոգևորաց: - 773

**ԵՐԵՍՆԱՄԵԱՅ, ԵՐԵՍՆԱՄԵՆԻ +** Եւ լ կանգուն բարձրութիւնն, զի բարձր հասա՛կ է մարդոյն. և պապ լինի *<u>երեսնամենի</u>*: - 293. Իսկ ի նորս՝ ի կատարեալ հասակն *<u>երեսնամեայ</u>* լինին քահանայք. ի հասակ մկրտութեանն քրիստոսի: - 379. Զի *<u>երեսնամեայ</u>* յառնեմք. զոր և լուսինն նուազի և դարձեալ լուսաւորի: - 399. Դաւիթ *<u>երեսնամեայ</u>* թագաւորեաց. և տէր մեր լամեայ մկրտեցաւ և ի գերեզմանէն յարեաւ: - 437. Սա *<u>երեսնամեայ</u>* թագաւորեաց ամս **խ**. կեցեալ ամս **հ**: - 452. Նա՛խ՝ զի մի՛ անընտել թուիցի մարդկան. զի թէ առ ժամայն ի ծնունդն եղեալ էր *<u>երեսնամեայ</u>* հասակաւ, առ աչօք համարէին զիրն. և կամ այլ ինչ: - 479. Ապա թէ ոչ՝ նա՛ որ զադամ *<u>երեսնամեայ</u>* ստեղծ, կարէ՛ր և նոյն հասակաւն ծնանիլ. այլ այն ո՛չ լինէր ըստ սովորութեան մեր որպէս ցուցաւ ի վերոյ: - 501. իսկ մարմինն յերեսուն ժամուն ի գերեզմանէն յարեաւ. զի *<u>երեսնամեայ</u>* մկրտեցաւ մարմնով և ել ի ջրոյն: - 516. Եւ ադամ *<u>երեսնամեայ</u>* ստեղծաւ: - 516. Եւ մեք ի հասարակ յարութեանն *<u>երեսնամեայ</u>* յառնելոց եմք: - 516. Տասներորդ՝ յա՛յտ է ի համազօրութենէ. զի երբեմն շարժէ՛ ախտ զմիտս. և երբեմն շարժի ի մտացն ախտ. որպէս ասէ երանելին եւագրիոս. եթէ մինչ *<u>յերեսնամեայ</u>* հասակս ախտն շարժէ զմիտս ի ցանկութիւն. և անտի յառաջ միտքն շարժէ զախտն: - 557. այսպէս և ննջեցեալք ամենայն ծեր և տղայ՝ յառնեն ի մի չափ հասակի *<u>երեսնամեայ</u>* որ է կատարեալ հասակ որպէս ցուցանի յառաջիկայդ: - 721. Վարդապետք ասեն թէ՝ ամենեքեան կատարեալ հասակաւ յառնեն և մի թուով *<u>երեսնամեայ</u>*: - 726. և յայս թիւս ստեղծաւ ադամ որ է *<u>երեսնամեայ</u>*: - 726. Այլ որ առաւել մեծն է և հսկայանդամ, և կարի փոքր և փանաքի, *<u>յերեսնամեայ</u>* հասակն իւրեանց չափաւորին: - 726. Երրորդ՝ քանակաւ հասակին. զի իւրաքանչիւր ոք յիւրն *<u>երեսնամեայ</u>* յարիցէ. որպէս հարիւրամեան անցեալ և քառասնօրեայ մեռեալ. որ լինելոց էր *<u>երեսնամեայ</u>*, ի նոյն հասակն յառնեն: - 726

**ԵՐԵՍՆԱՒՈՐ +** Այլ ոմանք՝ **ճ**աւոր զերկին, և վաթսնաւոր զդրախտն, և *<u>երեսնաւոր</u>* զերկիրս ասեն նշանակեալ **բ** ցեղիցն յայնկոյս յորդանանու, և **թ** ցեղիցն յերկիրն քանանացւոց: - 391. Եւ որպէս ի մի արքայութիւնն օթևանք և փառք բազում են ըստ գործոցն. այսինքն *<u>երեսնաւոր</u>*. վաթսնաւոր. և **ճ**աւոր: - 504-505. Քառասունևմի, *<u>Երեսնաւոր</u>*, Վաթսնաւոր, և այլն: - 661. Եւ ըստ ոմանց կարծեաց զի տեղիք լիցին *<u>երեսնաւոր</u>* արդարոցն. որպէս ցուցանելոց եմք յառաջիկայդ: - 727. Զի՞նչ է *<u>երեսնաւոր</u>* վաթսունաւոր և հարիւրաւորն առակ աւետարանին: - 757. Երկրորդ, հաւատն *<u>երեսնաւոր</u>*. և յոյսն վաթսունաւոր. և սէրն կատարեալ հարիւրաւոր: - 757. Երրորդ, կուսութիւնն ճաւո՛ր է. և ամուսնութիւնն վաթսունաւոր. և դարձեալքն ի մեղաց *<u>երեսնաւոր</u>*: - 757. Չորրորդ, այլ և մարտիրոսք և ճգնեալքն ճաւոր. և ուսուցիչքն կաւոր. և ուսեալքն *<u>երեսնաւոր</u>*: - 757. Հինգերորդ, քահանայապետք հարիւրաւոր. և քահանայք վաթսունաւոր. և պաշտօնեայք *<u>երեսնաւոր</u>*: - 757. Եւ որք ի ծերութեանն գան յուղղութիւն, որպէս զսէզ դալարին, և տան պտուղ *<u>զերեսնաւորն</u>*: - 757-758. Ութերորդ, այլ և զղջացեալքն *<u>զերեսնաւորն</u>*. և խոստովանեալքն ըզկաւորն. և ապաշխարեալքն հատուցմամբ՝ զհարիւրաւորն: - 758. Իններորդ, և որք նախ քան զօրէնս՝ *<u>զերեսնաւորն</u>*. և որք ընդ օրինօքն՝ զկաւորն. և որք ընդ շնորհօքս, զհարիւրաւորն տացեն պտուղ: - 758. Տասներորդ, այլ և ի ժամանակս յայս առցեն սուրբք *<u>զերեսնաւորն</u>*. այսինքն զխնդութիւնն ի միտս: - 758. Այլ և են ոմանք որ ասեն զերկիրս մաքրեալ *<u>երեսնաւոր</u>*. և զդրախտն վաթսունաւոր. և զվերինն երուսաղէմ հարիւրաւոր: - 758. Ընդէ՞ր ոչ ասեմք *<u>երեսնաւոր</u>* արքայութիւն զերկիր՝ և այլն: - 758

**ԵՐԵՐԻՄ +** Յինգերորդ՝ *երերիլն*: - 287. Իսկ զի ասէ «*երերեալ*՝» յա՛յտ է իբրև զծառ մարմնովն: - 287

**ԵՐԵՐՈՒՄՆ +** Չորրորդ՝ երկիր. այսինքն զի *յերերման* և ի տատանմա՛ն է ի մէջ փորձանաց: - 210

**ԵՐԵՒԱԿ +** Եւ է երկինք՝ է գօտիքն են է մոլորակացն. որ է Զոհա՛լն. *Երևա՛կն*. Յրա՛տն. Արեգա՛կն. Լուսնթա՛գն. Փայլածո՛ւն և Լուսինն: - 183. Եւ է՛ առաջին և վերջին մոլորակացն *Երևակն*. զոր պարսիկք զօհալ կոչեն. ցուրտ է և չոր. **ք** ամ և կէս յամէ ի կենդանակերպն. և յերեսուն ամն վճարէ՛ զամենայն: - 189. Յինգերորդն փայծեղն է. որ է՛ ախոռ այրեցած արեանն. ցո՛ւրտ է և չոր. և ունի տանուտէր զզոհալն որ է *երևակն* ցուրտ և չոր գոլով: - 241. Եւ ութն ամիսն *երևակին* է ո՛չ ապրի: - 264. Ա՛րդ՝ առաջին դարն որ էր *երևակին* ընդ երկա՛ր ապրէին մարդիկքն. զի ունի *երևակն* յերկար ընթանալ զճանապարհն իւր. որ ի **լ** ամն վճարէ զկենդանակերպսն: - 291

**ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆ +** Երրորդ՝ պարզևականն. որպէս մարգարէիցն *երևակայութեամբ*, կամ ի ձեռն մարմնոյ զգայութեանց: - 24. Իսկ դևք փոխեն *զերևակայութիւնն*. որպէս տապ ջերմութեանն: - 133. Իսկ այլք ասեն թէ՝ հրեշտակն ո՛չ երևի ձևացեալ մարմնովն և ո՛չ խօսի ընդ մարդոյն. այլ՝ դնէ զնմանութիւն դիտաւորութեան ի յաչքն կամ ի յականջն մարդոյն. և անդ ընդունի հասարակ զգայութիւնն զտեսակս այնմիկ, և տայ *յերևակայութիւնն* և յիմացականն. այսպէս երևին հրեշտակք և խօսին ընդ մարդոյ: - 145. Երկրորդ՝ կերպիւ խօսի հրեշտակն ընդ մարդոյ տպաւորութեամբ *երեւակայութեան*: - 145. Իսկ խօսի դևն ընդ մարդոյ՝ կամ փոփոխելով զգոյութիւնն որպէս հրեշտակն կամ զպատկեր նմանութեանն ցուցանէ տեսանելեացն. և կամ տպաւորէ՛ *յերևակայութիւնն*: - 145. Երկրորդ երկին՝ *երևակայութեան* տեսիլն դարձեալ նոցա: - 183. Նախ՝ որպէս ասացաւ ի վերոյ՝ երեք տեսութիւն սրբոցն է **գ** իրին. այսինքն զգայութեան. *երևակայութեան.* և իմացման: - 221. Ա՛րդ՝ դրախտն ո՛չ զգայութեամբ և ո՛չ *երևակայութեամբ*՝ այլ իմացմամբ տեսանի. վասն որոյ երրորդ երկին կոչի: - 221. Գիտնականին են՝ Միտք. Տրամախոհութիւն. Կարծիք. *Երևակայութիւն*. և Յասարակ զգայութիւն: - 248. Իսկ անբանք՝ *Երևակայութիւն*. Զգայութիւն. Յօժարութիւն. Բարութիւն. Ցանկութիւն: - 248. *Երևակայութիւնն:* Կարծիքն: Տրամախոհութիւնն. և Յիշողականն: - 249. Իսկ ներքինն՝ որ է հասարակ զգայութիւնն. *երևակայութիւնն*. կարծիքն. տրամախոհութիւնն. յիշողութիւնն որ է միտք. զի ամենայն ինչ ի յիշողականն մտանէ: - 249. Իսկ դևքն փոխեն *զերևակայութիւնն* և զզգայարանս, այլ ո՛չ զմիտս: - 336. Իսկ հրեշտակք կարե՛ն փոխել զմիտս և շրջել ի բարին. նաև *զերևակայութիւնս* և զզգայարանս, այլ ո՛չ զկամս: - 336. Երրորդ՝ *երևակայութեամբ*. որպէս եղիսէին ի տեսանել զզօրս հրեշտակացն, և մանկանն ո՛չ տեսանել: - 536. Չորրորդ՝ զմիտս լուսաւորելով յայտնապէս առանց *երևակայութեան* միայն միտքն լուսաւորեալ ի շնորհաց հոգւոյն. որպէս մովսէսին որ ասէր (ո՛չ տեսլեամբ և երազօք խօսեցայց և երևեցայց քեզ. այլ բերան ի բերան դէմ յանդիման տեսլեամբ:) – 536. որ է՛ հասարակ զգայութիւն. *երևակայութիւն*. կարծիք. տրամախոհութիւն. և միտք որ է՛ յիշողութիւն: - 622. Եղիցի անդ *երևակայութիւնն* չարակարծիք: - 751-752. Բարւոք ասացաւ յարարչէն. զի թէ և բնութիւն թարց *երևակայութեան*, և արհեստ հանդերձ *երևակայութեամբ*, սակայն կամք արարչական ետ նոցա բնական և բանական կարողութիւն. և ոչ ինչ վայրապար կազմեն զտեսակ գոյացական և զտեսակ պատահական. խնդրելով ոմն պարզ նիւթ. և ոմն տեսակացեալ: - 786

**ԵՐԵՒԵԼԻ +** Եւ ապա ի բարձր հանէ վարդապետութիւն զբնութեանցն միաւորութիւն. ասէ՝ այլ և այլ յորոց փրկիչն. եթէ ոչ՝ նո՛յն է *երևելին* և աներևոյթն. անժամանակն և ընդ ժամանակաւն: - 80. Զբանն աներևոյթ և անժամանակ ասաց. և զմարմինն *երևելի* և ժամանակեայ: - 80. Քանզի ներքին մասամբ ի ձեռն զգայութեանց ճանաչէ *զերևելիս*. որպէս քար: - 103. Ո՞րպէս տեսանէ աստուած զէքս. զի զգայութիւն ո՛չ ունի. որպէս մեք ներքին զգայութեամբ զիմանալիս՝ և արտաքին զգայութեամբ *զերևելիս* տեսանեմք: - 118. Երրորդն է նշանական աստուածաբանութիւն. որ ի զգալի կերպարանաց փոխակցիմք յիմանալի տեսութիւնն. թէ զի՞նչ նշանակէ մարդ *երևելին*. կամ առիւծ. գառն. հուր. լոյս. և այլն: - 122. Եւ է սա՛ երրորդ ըստ կարգի. զի *յերևելեաց* և ի մարմնականաց աստուածաբանութիւնս այս յառաջագայի: - 122. Իններորդ՝ զի նշանակեալքն՝ վայրիք գազանք՝ հրեղէնք՝ և թևաւորք երևէին. ցուցանելով թէ արտաքոյ և հեռի՛ են *յերևելեացս* բնութեանց. և անըմտելք և վայրենիք: - 132. Վեցերորդ՝ ի պատահմանցն իմանամք զգոյն. և *յերևելեացս* զաներևոյթն աստուած: - 171. Եւ է՛ միւս բարի խառնակն և պատրուակեալն. որպէս է աշխարհական բարին. զի գունով և *երևելեաւ* բարի է, այլ ի ներքոյ ծածկեալ չա՛ր է. յայսմանէ հրաժարէ՛ զմեզ ոչ մերձենալ: - 224. Այսպէս և մարդն թէպէտ յետոյ ստեղծաւ, մեծ և պատուակա՛ն է քան զամենայն *երևելի* արարածս: - 230. Որպէս և իմաստունքն ասացին զամենայն *երևելիս* յարացոյց իմանալեացն. զոր գոյ և որակ կոչեն. և զնիւթս պատկեր գոյին. զի որակն և գոյք անմարմին են և աննիւթաբար ի մտածութիւնս երևին: - 236. Երկրորդ՝ աստուած տէ՛ր է և իշխան և ինքնակալ արարածոց. և զամենայն *երևելիս* հնազանդ

և ծառայ արար մարդոյն: - 271. Երրորդ՝ զի *երևելի* սրբութիւն մարմնոյն՝ զաներևոյթ սրբութիւն հոգւոյն նշանակէր: - 347. Այլ և քահանայապետն դատապարտեաց *զերևելին* մարդ խաչիլ: - 369. Երկրորդ՝ ի յարարածոցս տեսանի արարիչն. զի *երևելի* արարածքս թարգմա՛ն են նորա: - 406. Նա՛խ՝ զի *երևելի* էր և ո՛չ անարգ ոք. որ և սակաւ ինչ յառաջ փառօք եմուտ ի քաղաքն: - 490. Վասն է՞ր նախ քան զխաչն և զհամբարձումն ոչ պարզևեցաւ հոգին սուրբ *երևելի* նշանօք: - 521. Այլ համաձայնին. զի երկոքեանն հաւատն և յոյսն՝ են յոչ *երևելիսն*: - 574. Զի *երևելիքս* տիպ և գաղափա՛ր են աներևութիցն: - 671. Երկրորդ *երևելի* ձայնն հրեշտակապետին. որպէս ձայնն փողոյ ի սինա լերինն. և ազդումն զօրութեանն քրիստոսի: - 713. Այլ արդ՝ թէ օրըստօրէ յառնէր իւրաքանչիւր ոք, հաւատ յարութեանն խափանէր. զի հաւատն ոչ *երևելեացն* է: - 717. Սակայն *երևելի* աթոռ ի յօդոյդ կազմեալ հաւատացեալ լինի. զի ամենայն ոք տեսցէ նստեալ: - 736. Եւ չորք է յատկութիւն որդանցն. զի *երևելեօքս* աներևոյթն իմանի: - 753

**ԵՐԵՒԵՑՈՒՑԱՆԵՄ +** Եւ զբոյսս զանազան առաքինութեանց ընծիւղեալ *երևեցուցանեն*: - 126. Եօթներորդ՝ զի փչեաց ի նա զշնորհաց հոգին զանազան պարգևաց, այժմ զքահանայութեան շնորհն *երևեցոյց* ի նա՛: - 219. Ութերորդ՝ զխոհեմութեան և խօսից և ձայնից և տէրութեան շնորհն այժմ *երևեցո՛յց* ի յադամ: - 219. Զի ի կոչումն անուան՝ չորքս այսոքիկ երևին միանգամայն. բանն և խօսքն և ձայնն և տեսութիւնն. այսոքիւք զմարդն կատարեալ *երևեցոյց* աստուած: - 219. Իսկ տըննկականն միայն գործ է ի կերակրիլն և աճիլն, նա նկարէ յինքեան ի զգայութեանցն և ի մտացն ըստ տկարութեան իւրոյ անկարգաբար *երևեցուցեալ* ի յիշատակարանս մտացն որպէս ասացաք: - 268. Եւ զչորեքկին որպիսութիւնս զայսոսիկ *երևեցոյց* ի մարմինն ի՛ւր նախ քան զխաչն: - 282. Նա՛խ՝ զկերպն ադամայ որ ի դրախտին՝ *երևեցոյց* յինքեան. զոր ետես մահ և ընկէց զթագն իւր: - 352. Վհուկն ա՛յն է, որ ի վհաց և յանդնդոց մեռեալս կերպարանեն. դևք ի կերպս մարդկան երևին. զոր դևակոչ ասեն և հազիմաթ. և Նշանագէտ, որ ի գերեզմանս ննջէ և նշանաւոր մարդ կերպարանէ. որպէս զսամուէլ սաւուղայ *երևեցոյց* հարցուկ կինն: - 388. Երկրորդ՝ ուստի՞ ճանաչեաց թէ սամուէլ է. զի ահա՛ կինն ասաց. այլ որպէս կինն *երևեցոյց* զձևն, նոյնպէս կարծեաց և սաւուղ: - 429. Նախ նշանակէ զպէս պէս զօրութիւնս քրիստոսի. որ երբեմն զբարձրագոյնս ներգործէր և երբեմն զնուաստագոյնս *երևեցուցանէր* յինքեան: - 493. Ութերորդ՝ զի ամենայն տեսակք ախտիցն ի՛ր մի *երևեցուցանեն* մեզ. որպէս գողութիւն զինչս, և պոռնկութիւն զհեշտութիւն. իսկ հպարտութեանն ո՛չ գոյ ամենևին ակնկալութիւն: - 562. Են և այլ բազում վկայութիւնք ի գրոց սրբոց որ զայսպիսի հերձուածս սուտ և ընդունայն *երևեցուցանեն*: - 590. Այլ արկանելիք սպիտակ՝ զծաղկեալ նոցա առաքինութեանն *երևեցուցանէ* զպայծառութիւն յետ ի թանձրութենէ մարմնոյս փոխելոյն. զոր զգեցեալ են նախ քան զխոստացեալ զփառսն. - 696. Եւ կախարդութեամբ *երևեցուցէ* զինքն մեռեալ և երեքօրեայ յարուցեալ. և զայս ամենայն արասցէ դիւական երևմամբ և կախարդական արուեստիւք: - 708. Եւ զորպիսութիւն յարութեան մեր ի յաստուածացեալ մարմինն իւր *երևեցոյց.* - 716. Եւ այս՝ փոփոխումն յանեղ բնութիւնն *երևեցուցանէ* որ է՛ անդունդ հերձուած: - 778. Այսպէս և ադամ զղջմամբ իւրով ընկալաւ. այսինքն *երևեցոյց* յինքեան զկորուսեալ շնորհն: - 783

**ԵՐԵՒԵՑՈՒՑԻՉ +** Եւ կոչի սէր, զի շարժէ՛ զմեզ. և յառաջածու զօրութիւն է. և *երևեցուցիչ*. և միաւորիչ. զի այսոքիկ սիրոյ ներգործութիւնք են. վասն այն կոչի սէր: - 128

**ԵՐԵՒԻՄ +** Վեցերորդ՝ թէ չարն է յաստուծոյ, *երևի* թէ աստուած պատճառ է չարեաց: - 14. Եւ եթէ երկուցն **բ** է սկիզբն, և այսպէս ի յաստուած *երևի* երկու սկիզբն, կամ երկու անսկիզբն ըստ մանիքոսի: - 14. Չորրորդ ասեն՝ թէ չարն ո՛չ է յաստուծոյ, ապա *երևի* թէ այլ ոմն է չարի սկիզբն, և այլ ոմն բարւոյ. և լինի բ սկիզբն բարի և չար ըստ մանիքոսի: - 16. Իսկ չար փոխանակ բարւոյ ո՛չ առնէ ըստ որում անիրաւութիւնէ. այլ առնէ երբեք ըստ որում նախախնամութիւնէ. զի ի չարէն լինիցի բարի. թէպէտ մեզ չար *երևի*, այլ այս ևս բարի է. որպէս հիւանդութիւն. փորձութիւն. և այլն: - 18. Զի ի նըւազիլ ողջութեան՝ հիւանդութիւնն *երևի*. և ի նըւազիլ մարմնոյ՝ ապականութիւնն պատահի: - 22. Իսկ չարն ըստ ենթակային էանայ և *երևի*, և ըստ ինքեան ոչընչանայ և ապականի. զի ո՛չ է է. և ո՛չ գոյ: - 23. Իսկ չարն ի յէութեան *երևեալ*՝ փոխի դարձեալ յոչինչ և յոչ գոյ: - 23. Վասն այնորիկ ո՛չ *երևի* ճշմարիտ նոցա, զոր ո՛չ ըմբռնէ միտք. և ո՛չ այլ իրիք հաւատան, բայց միայն զայն՝ զոր իմանան: - 31. Հինգերորդ՝ զի նոցա պատճառ *երևի* սատանայ մոլորութեամբն: - 33. Եւ թէ գոյր երիցագոյն, լինէր պատճառն և գերագոյն քան զաստուած. իսկ ստեղծանելն *երևի* պատճառաւ. այսինքն վասն փրկութեան մարդկան: - 41. Երկրորդ՝ զի որպէս ամէն ոք իւր զգեստիւն ճանաչի, այսպէս և քրիստոս մարմնով *երևեալ* յայտնեցաւ աշխարհի: - 43. Մեզ ճշմարտապէս ստեղծօղ՝ որպէս և նմա ո՛չ բանին՝ այլ *երևելոյն*: - 43-44. Եւ այս ոչ էութիւն և չարութիւն՝ առ մեզ կարէ՛ *երևիլ*, զի մասա՛մբ ունիմք զկարողութիւն և ո՛չ կատարեալ: - 44. Դարձեալ՝ փորձիչս այս փառասիրութեամբ յառաջեաց առ քրիստոս.

ուստի և ի բանից իւրոց *երևի* թէ ամենայն պատուիրանացն պահպանօղ եմ. զոր տէրն պակաս լինել յանդիմանեաց: - 47. Եւ թէ յորդւոյ` *երևեցաւ* ասեն և թոռն ոմն մեզ աստուած: - 52. *Երևի* յայտնապէս սուտ. քանզի ասէ յառաջին կորնթացւոցն, «թէպէտ բաժինք շնորհաց են, այլ հոգի նոյն է. թէպէտ բաժինք պաշտամանց են այլ տէր նոյն է. և թէպէտ բաժինք յաջողութեանց են, այլ աստուած նոյն է. որ յաջողէ զամենայն յամենայնի»: – 59. Ապա ուրեմն *երևեալն* մարմնով և խօսեցեալն է որդի աստուծոյ և մի ընդ հօր: - 73. Երրորդ` զի մի՛ Երրորդութիւնն մարմնացեալ *երևեսցի*: - 76. Եւ *երևեալ* մարմնովն մի բնութիւն տեսակացեալ և մի անձնաւորութիւն. մի տէր. մի որդի. ըստ սուրբ հարցն ուղղափառութեան: - 76. Զոր յայսմանէ *երևի* երեք եղանակ միաւորութեանն զանազանապէս: - 77. Ասի դարձեալ` մարմնով ծնեալ. և մարմնով *երևեալ*. և մարմնով շրջեալ. և այլն: - 79. Եւ ո՛չ ասի մարդով ծնեալ. և մարդով *երևեալ*. կամ մարդով շրջեալ. և այլն: - 79. *Երևի* ապա զի աստուծոյ ո՛չ ասեն զմասունքն, այսինքն զձեռն և զոտն. ապա ըստ նոցա և մարմինն չէ աստուծոյ մարմին. և արիւնն չէ աստուծոյ. և հոգին չէ աստուծոյ. այլ ամենեքեան սոքա մարդո՛յ են: - 91. Ապա ուրեմն *երևեցաւ*` զի թէ մասունքն քրիստոսի ասին և աստուծոյ ո՛չ ասին, յա՛յտ է թէ զքրիստոս ո՛չ խոստովանին աստուած: - 91. Երանելին պօղոս` զխորհուրդն աստուածպաշտութեան յայտնի և մեծ ասէ. ըստ որում *երևեցաւ* բանն մարմնով. բնաւին ապա բաժանելն ի մարմնոյն ամբարշտութիւն է և իմացմամբ և բանիւ: - 93. *Երևի* թէ բաժանե՛ս զմարդկութիւնն և ուրիշ իմանաս զմարդն և զաստուածն: - 95. Բայց կամեցաւ և յայտնեաց զինքն որդի և զհայր` ի ձեռն նշանաց աշակերտաց իւրոց. որպէս ի պտղոյն ծառն *երևի*: - 96. Ո՞րպէս *երևի* անմարմինքն. մարմնո՞վ, առ աչօ՞ք, թէ իսկութեամբ: - 102. Եւ աստ *երևի* կրկին յատկութիւն` և կրկին հասարակութիւն: - 106. Ապա *երևի* **բ** անսկիզբն և անվախճան: - 116. Որո՞վ զանազանին և հաւասարին բացբարձականքն և ուրացականքն. զի մի և նոյն *երևին*: - 124. Չորրորդ` մանր փոշին ի շո՛ղն *երևի*: - 125. Եւ տէր մեր յարևելից ի հօրէ, և առ մեզ *երևեալ* ի մօրէ՝ լուսաւորեաց զմեզ: 125-126. Այլ և մեծ առ հաւատացեալս, և չափաւոր անհաւատիցն *երևի*: - 127. Երկրորդ` զի ոտք վերջին է մասն. և ի վերջին ժամանակս *երևեցաւ* մարմնով քրիստոս: - 130. Չորրորդ` զի թէ պատւական նիւթով *երևէին* որպէս արեգակն` հուր` ոսկի` և ակն. գիտէաք թէ զնոյն բնութիւն ունին, և ո՛չ այլ ինչ գերիվերոյ: - 132. Իններորդ` զի նշանակեալքն` վայրիք գազանք` հրեղէնք` և թևաւորք *երևէին*. ցուցանելով թէ արտաքոյ և հեռի՛ են յերևելեացս բնութեանց. և անըմռնելք և վայրենիք: - 132. Ո՞րպէս *երևին* անմարմինքն. մարմնո՞վ, առ աչօ՞ք, թէ իսկութեամբ: - 133. Իսկ ասա աչքն զօրանայ ի տեսանել *զերևեալ* պատկերն կազմեալ ի յօդոյ: - 133. Եօթներորդ` այն *երևեալ* և ո՛չ կայացեալ. և աստ *երևեալ* և կայացեալ, որպէս ասեմք զեղջերուաքաղն անուանեալ և ո՛չ ենթակայացեալ. իսկ զեղջիւրն անւանեալ և էացեալ: - 133. Իսկ այլք ասեն թէ` հրեշտակն ո՛չ *երևի* ձևացեալ մարմնովն և ո՛չ խօսի ընդ մարդոյն. այլ` դնէ զնմանութիւն դիտաւորութեան ի յաչքն կամ ի յականջն մարդոյն. և անդ ընդունի հասարակ զգայութիւնն զտեսակս այնմիկ, և տայ յերևակայութիւնն և յիմացականն. այսպէս *երևին* հրեշտակք և խօսին ընդ մարդոյ: - 145. Վասն զարդու գործոց իւրոց. որպէս նըկարիչ զթուխ գոյնն ի ներքոյ դնէ` զի սպիտակն և այլ պատւականքն *երևեսցին*: - 149. Նոյնպէս երևմամբ չարեացն` արդարքն պայծառագոյն *երևեսցին*: - 149. Բայց թէ թոյլ տըւութեամբ` որ մեզ *երևի* չար. և է՛ ծածուկ բարութիւն ի նմա: - 158. Եւ ըստ ա՛յսմ կերպի է փորձութիւնն բարի. զի բնութեամբ չար է. և պատճառէ՛ զչար մեղքն. բայց պատահեցաւ ոմանց զի յաղթեցին փորձութեանց և ընտրիք *երևեցան*: - 160. Եւ այսպէս աբրահամ և յոբ և այլք սուրբք փորձութեամբն *երևեցան*, և գտան արդար և սուրբ և անարատ: - 161. ...կեղծաւոր և անկեղծ սէրն առ աստուած փորձութեամբն *երևի*: - 162. Առ այնոսիկ որք ասեն` անկա՛ր է աստուծոյ առնել զաշխարհս ոչ ինչ. մինչ զի ո՛չ *երևիլ* սկիզբն լինելութեան սորա: - 162. Դարձեալ` կամքն աստուծոյ անփոփոխ է. զի ո՛չ տարակուսի և ո՛չ զղջանայ. ապա թէ արար աստուած զաշխարհս ի գոյութիւն` այժմ առնէ յանգոյութիւն, *երևի* փոփոխումն անփոփոխելոյն. կամ զղջումն և երկբայութիւն. որ օտա՛ր է արարչականն կամաց: - 162. Եւ թէ ոք ասիցէ, եթէ աստուած զոր ոչ կամի` ո՛չ կարէ, որպէս զչար զի ո՛չ կամի և ո՛չ կարէ. նոյնպէս զմեղս և զայլսն. ապա *երևի* անկարութիւն ի յաստուած գոլ: - 163. Իսկ որ ասէ, մինչ զի ո՛չ *երևիլ* սկիզբն լինելութեան սորա: - 163. Եւ որովհետև գիտացեալ եղև այս, ապա յա՛յտ է թէ անկա՛ր է ոչ *երևիլ* սկիզբն լինելութեան աշխարհի. ըստ այնմ որ էր ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ: - 164-165. Եւ թէ ոք ասիցէ, *երևի* ապա թէ քահանայագործութիւն պոռնկին ո՛չ լինի կատարեալ. վասն այն արգիլեալ է ի գործոյն: - 167. Այլ արդ` *երևի* թէ արարածք պատահումն են ի յարարիչն զի յետո՛յ եղեն: - 169. Նախ` զի պատահմունքն են յէութենէ իրին *երևեալ*. այլ արարածք ոչ յէութենէ, այլ ի կամաց արարչին յոչնչէ ներգործեալ են: - 169. Եւ թէ ոք ասիցէ, որովհետև ներգործութիւնքն բնութեանց հետևին, որպէս հուրն միշտ այրէ, և ջուրն ցրտանայ և ջերմանայ. ապա ճշմարիտ *երևի* բանն դամասկացւոյն` եթէ է՛ ի քրիստոս կրկին ներգործութիւն. որպէս և կրկին

բնութիւն: - 174. Քանակաւն և որակաւն. զի սոքօք անհատ գոյացութիւնն *երևի*: - 174. Երկրորդ՝ առաջին ստեղն է հայր. ոչ յումեքէ. միջինն որդի ծնունդ ի հօրէ. վերջինն հոգի բղխումն ի հօրէ և ելումն յորդւոյ. զի որդւովն *երևի*. և հարթ հաւասար աստուածութեամբ և արարչութեամբ: - 178. Եւ զի ո՛չ է ի տեղւոջ աստի յայտ է, զի տեղին է վերին և ներքին և միջին. և արտաքոյ աշխարհիս ո՛չ *երևին* սոքա: - 180. Երկրորդ՝ զի ո՛չ *երևի* ի նմա սկիզբն և ո՛չ կատարած: - 182. Վեցերորդ՝ զի թէ երկինքն ո՛չ էր բոլորակ, յայնժամ արեգակն և այլ աստեղք յորժամ գային ի մէջ երկնից, մեծագոյն *երևէին*. քանզի ի միջին կիտէն երկնից առ մեզ է ուղղական գիծ. իսկ յարևելից առ մեզ է՛ խոտորնակի գիծ. և ուղղական գիծն կա՛րճ է քան զխոտորնակ գիծն: - 183. Ապա ուրեմն ո՛չ երբէք մեծագոյն *երևի* աստղ՝ յորժամ է ի միջին կէտն՝ քան յորժամ է յարևելս կամ յարևմուտս: - 183. Եւ զայս գիտել պարտ է. զի մեծն ներսէս զհաստատութիւնն՝ արփի ասէ և եթեր կոչէ. զոր արտաքինքն եերորդ տարր ասացին որ ո՛չ *երևի* մեզ: - 184. Յայտնի՛ է աշխարհի. ըստ որում աղտ յերեսն *երևի*: - 187. Մերձ եկեալ ի նոյն կենդանակերպն՝ սակաւ լոյսն առնու ի նմանէ յարևելից կողմանէ. թէպէտ մեզ ի յարևմտիցն *երևի*. այլ նմա՛ արևելից մասն է որ զլոյսն առնու: - 187. Եւ այլք ասեն թէ՝ կերպն է ցամաք երկրիս. որպէս հայելին զմարդոյ կերպն յինքն *երևեցնէ*: - 187. Զի՞նչ է որ ի նորիլն եղջերակերպ *երևի*: - 187. Եւ այս հաւանելի՛ *երևի* վասն կրկին պատճառի: - 188. Զի լուսինն ընդ երեկս *երևացաւ* և մետասանօրեայ ստեղծաւ: - 191. Եւ զի նըւազ լոյսքն *երևին*: - 196. Զի և ներկայ ժամանակս որ յայտնի *երևի*, այսպէս անյայտ և անկայուն է. զի ո՛չ ոք կարէ զվայրկեան ժամանակի մի ստուգել որպէս ասէ ժողովօղն՝ «յառաւօտէ՛ մինչև ցերեկոյ փոփոխի ժամանակն»: – 199. Նոյն և սա՛ գոլորշի՛ է վերացեալ հողմոց. և մերձեցեալ ի հուռն՝ վառի՛ ի նմանէ. և բռնութեամբ հողմոյն վարեալ *երևի* իբրև զթռիչ աստղ և փութով շիջանի: - 203. Վասն է՞ր նա՛խ ծաղիկն և ապա պտուղն *երևի*: - 212. Որպէս ի մեզ նախ զգայականն *երևի*, և ապա՛ բանականն: - 212. Դարձեալ՝ ծաղիկն է հրոյն՝ որ նախ շարժի և *երևի*: - 212. Ապա ուրեմն *երևի* թէ ի մին տարրէ գոյացան ի հողոյ կամ ի ջրոյ: - 214. Երկրորդ՝ զի ի հողն կան **դ** տարերքն ամբարեալք. որպէս *երևին* ուր ուրէք երակ հրոյ և երակ հողմոյ և երակ ջրոյ: - 214. Նոյնպէս և ի ջուրն կան այլ գն. հողմն *երևի* ի գոլորշիքն. և հուրն և հողն՝ կայծն ի վայր անկեալ քար լինի: - 214. Երրորդ՝ զի ինքն երկիրն ունի զթանձրութիւն որ հողոյն է. և զմածումն որ է՛ ջրոյն. և զշարժումն որ է հողմոյն. և *զերևիլն* որ է հրոյն: - 214-215. Նոյնպէս և ջուրն ունի զսոսա. զի շօշափելի՛ է՝ և մածեալ՝ և շարժի՝ և *երևի*: - 215. Եւ սոքա հաւասարապէս *երևին* յամենայն կենդանիս: - 215. Ութերորդ՝ ի նոյն ինքն ի շօշափականն *երևին* **դ** տարերքն: - 215. Իններորդ՝ նոյն ինքն մարմին կենդանւոյն է՛ շօշափելի և է՛ կալեալ և մածեալ. և շարժի և *երևի*. որպէս ասացաք վասն հողոյն: - 215. Զի ի կոչումն անուան՝ չորքս այսոքիկ *երևին* միանգամայն. բանն և խօսքն և ձայնն և տեսութիւնն. այսոքիւք զմարդն կատարեալ երևեցոյց աստուած: - 219. Ո՞ւր *երևի* անապականութիւն նորա: - 223. Այսպէս *երևի* թէ և դրախտին պտուղն նորն զհինն փոխէ՛: - 224. Վասն որոյ պա՛րտ էր լինիլ նոցա նախ որ փոքունք և անպատիւք են, զի *երևեսցի* մեծն և պատուաւորն այսինքն մարդն: - 230. Եւ նւազեալ յայսցանէ գոյնն՝ մնայ պատկեր ի քանակէ և ի ձևոյ և ի տեղւոյ *երևեալ*. որպէս յա՛յտ է ի մեռեալ մարդն: - 236. Իսկ միայնացեալ որակ ի ձևոյն, *երևի* աննման. զի նմանն ի վերայ որակութեան ասի. որպէս ծանրութիւն: - 236. Իսկ երրորդն թէ վասն է՞ր յամենայն իրս *երևի* նման և աննման. որպէս ի շնչաւորս և յանշունչս. ի կենդանիս և յանկենդանս և յայլսն ամենայն: - 236. Որպէս և իմաստունքն ասացին զամենայն երևելիս յարացոյց իմանալեացն. զոր գոյ և որակ կոչեն. և զնիւթս պատկեր գոյին. զի որակն և գոյք անմարմին են և աննիւթաբար ի մտածութիւնս *երևին*: - 236. Եւ թէ ոք ասիցէ՝ աստուած զամենայն ինչ բարի՛ է ստեղծեալ, և սոքա չար *երևին*: - 237. Ութերորդ՝ զի ո՛չ *երևէր* բարեկամն և թշնամին. սիրելին և ատելին. և լինէին բազում սպանութիւնք և աւերք. զի ոչ զգուշանային միմեանց: - 238. *Երևի* ապա թէ ճշմարիտ են պատկերացոյցքն, որ զբարս մարդոյն յայտնեն: - 246. Յաչաց նայիլն. ի ձեռաց շարժիլն. և յոտից գնալն *երևի*: - 250. Ընդ դէմ այսմ *երևի* մեծին: - 251. Երկրորդ՝ զի զօրութեամբ ունի զհոգին յինքեան ծածկեալ. որ յետոյ ներգործութեամբ *երևի*: - 254. Երրորդ՝ ևս յայտնի. զի ընդ նիւթոյ կազմութեանն համանգամա՛յն է և երևումն ոգւոյ. զի յորժամ անկատա՛ր է նիւթն, միայն կերակրիլն *երևի* ի նմա: - 255. Եւ յորժամ կազմի զգայութիւնն, շունչն *երևի* ի նմա: - 255. Եւ յորժամ ձևանայ ի կերպ մարդոյ, յայնժամ բանական հոգին *երևի* ի նմա ի խնամոցն աստուծոյ: - 255. Եւ օրինակ այսմ, որպէս ի ծագել արևուն՝ նախ նշոյլքն *երևին* և ապա յետոյ արեգակն: - 255. Եւ դարձեալ՝ որպէս հատն ցորենոյ ունի առ ինքն զօրութեամբ զխոտն և զծաղիկն և զհասկն. և սոքա համանգամա՛յն են ի հատն այն զօրութեամբ. որ յետ ժամանակաւ ըստ դասի *երևին*: - 255. Եւ կամ որպէս պատկերագործք մինչ զոտն և զձեռն նկարեն՝ ո՛չ *երևի* պատկեր մարդոյ. այլ ոտից և ձեռաց: - 255. Եւ յորժամ ձևանայ դէմքն, ի նոյն ժամն *երևի* յինքեան պատկերն մարդոյ: - 255. Այսպէս և բանական հոգին համանգամայն *երևի* ընդ ձևանալ մարմնոյն: - 255. Եւ համանգամայն

*երևի* ասեմ. զոր օրինակ նիւթն այն ունի առ ինքն ծածկեալ զմասունս մարմնոյ. զծեռս և զոտս, զմիս և զմազ, որ յետոյ *երևին* ի նմանէ: - 255. Նախ տնկականն. և ապա զգայականն. և ուր սոքա *երևին* ի հրամանէն աստուծոյ, *երևի* և անդ բանականն: - 255. Վեցերորդ՝ զի զգործն կենդանւոյ տեսանեմք ի նա որ է՛ ջերմութիւն, շարժութիւն, և ներգործութիւն. որ *երևի* ի կազմելն զիւրն: - 256. Երրորդ՝ զի զօրութեամբ է նիւթն պա՛րտ է ծածուկ գոլ, զի ներգործութեամբ *երևեսցի*: - 256. Երրորդ՝ զի զկենդանութիւն ունի և ո՛չ *երևի*: - 256. Եւ թէ ասիցէ ոք, ապա *երևի* թէ և բանական հոգին ի ծնողա՛ցն հատանի կամ գոյանայ: - 257. Նիւթ մարմնոյն է ի ծնողացն. այլ հոգին ո՛չ է ի ծնողացն. այլ ի հրամանէն աստուծոյ գոյանայ և *երևի*: - 257. Եւ թէ ոք ասցէ, *երևի* ապա թէ զ հոգի է ի մարդն զանազանութեամբ էացեալ: - 258. Թէպէտ յայլ և այլ ժամանակս *երևին* սոքա. այլ մի են էութեամբ: - 259. Երկրորդ՝ զի թէ այլ և այլ էր հոգի, ի յայլ հոգւոյ տեղիս ո՛չ բնակէր այլ հոգի որպէս յայլո՛յ կաղապար. և ա՛յլ դրօշած ի յա՛յլ կնիք. այլ մի է. վասն այն որ յետոյ *երևի*, յառաջնոյն խառնուածն կարէ՛ բնակիլ: - 259. Այլ զանազան զօրութիւն ի զանազան ներգործութեանցն *երևի*. որ է՛ աճիլն. զգալն. և խորհիլն: - 259. Եւ օրինակ այսմ դարձեալ տե՛ս զնշոյլս արեգականն. որ նախ *երևի*՝ և ապա արեգակն: - 260. Եւ թէ ասիցէ ոք, *երևի* ապա թէ հոգին ինքն առ ինքն նախկին է և յետոյ եթէ մի է հոգի: - 260. Եւ թէ ասիցէ ոք, *երևի* ապա թէ առաջին զօրութիւն հոգւոյն տնկականն է՝ և վերջին բանականն որ է՛ յոյժ անպատշաճ: - 260. Եւ թէ ոք ասիցէ, *երևի* ապա թէ յառաջագո՛յն է հոգի քան զմարմին, և յետոյ մասամբ *երևի*: - 260. Այլ է՛ նա՛խ էացեալ ի բանն աստուծոյ, և համանգամայն ընդ մարմնոյն *երևեալ* ի պարգևաց այնմ նախատես բանի: - 260. Եւ ի հա աւուրցն ի վեր՝ *երևեալ* շնչոյն ծնակերպէ՛ զկերպ մարդոյ մինչ ի խ օր արու մանկան. և իսկոյն հեղի ի նա՛ հոգին բանական ի շնորհացն աստուծոյ ծագեալ ի նա: - 261. Նոյնպէս և յղանալն հանդերձեալ է, և վախճանեալ անցեալն, որ ո՛չ *երևին*. այլ միայն ծնեալն *երևի* որ է՛ ներկայ: - 267-268. Եւ արդ՝ ի դ իրս *երևի* իշխանութիւն թագաւորին: - 271. Քաննե, ասէ լուսաւորիչն մեր, թէ ծն մարդոյ *երևեցաւ* ի ստեղծանելն, զոր առնելոց էր զնոյն մարմին յետոյ ժամանակի. և ի նոյն պատկերն արար զմարդն: - 272. Իսկ մարգարէութիւնն լռեաց, զի ո՛չ ևս *երևի* բան մի յիշատակ շնորհաց նորա: - 279. Երիցս *երևիլ* ի տաճարին: - 283. Եօթն ազգ բարեգործութեան տեսակ *երևի* աստ ի հաբէլ. վասն որոյ և է պարգևաց արժանացաւ: - 286. Երրորդ՝ զի էր յօժար կամօք և զուարթ սրտիւ. ուստի *երևի* այս ի նուէրքն...: – 286. Վեցերորդ՝ ի սոցանէ *երևի* և գործ արդարութեան. որ ընտիրսն աստուծոյ նուիրէր գիտելով զմեծութիւն նորա և զբոլորիցն տուրսն. և զխոտանն ի՛ւր թողլով: - 286. Դարձեալ՝ խառնակիլ լեզուին ա՛յն է որ ընդ պատուհասն զբարութիւնն խառնեաց. զի թէպէտ բաժանումն լեզուաց պատուհաս *երևի*, այլ պիտանի՛ է: - 297. Եւ յայսմանէ *երևի* բազում բարութիւն: - 298. Երրորդ՝ զի առաքինութիւնն դովտայ առաւել *երևեսցի* ի մէջ չարացն: - 302. Չորրորդ՝ զի բարիքն ամբողջ մնալով ի մէջ չարացն, զօրութիւնն և արդարութիւնն աստուծոյ *երևեսցի*: - 302. Ուստի յա՛յտ է յերից արանցն *երևելոյն* առ կաղնեաւն մամբրէի: - 305. Եւ սոքա որ *երևինս* մեզ կրտսեր և վերջին, փոխեսին և լինէին նախկին և առաջին ըստ նախընտրութեանն աստուծոյ: - 310. Որ ի փորձութիւնն սատանայի յաղթօղ *երևեալ*: - 321. *Երևի* թէ ո՛չ. զի յուտել և ըմպել մեռան որ է մեղք: - 322. Ապա ուրեմն բովանդակ *երևեցաւ* Ե զէն որով յաղթեմք թշնամոյն: - 324. Եւ զի ո՛չ նկարեցաւ ի պատկեր կռոց և ո՛չ պաշտեցաւ մորենին. վասն այն տէր *երևեցաւ* ի նմա: - 330. Վասն է՞ր հրով *երևէր*: - 330. Ոմանք ասեն թէ՝ միշտ միջնորդութեամբ հրեշտակաց *երևի* աստուած. որպէս սուրբն ստեփաննոս ասէր «ոյք առիք զօրէնս ի հրամանս հրեշտակաց»: – 330. Երկրորդ՝ զի գաւազանն մովսէսի մի վիշապ եղեալ կլանէր զբազում վիշապս նոցա որ և հե՛տն միանգամայն ո՛չ *երևէր*. ընդէ՞ր ապա և նոցայն ո՛չ եկուլ զմովսէսին. քանզի սո՛ւտ էր: - 335. Նա՛խ՝ զի *երևեսցի* քաղցրութիւնն աստուծոյ ի վերայ իսրրայէլի: - 339. Զի՞նչ է երիցս *երևիլ* ի տարին: - 340. Դարձեալ երիցս *երևիլն* է, զի աստ ի մարմնի հաւատով տեսանեմք զքրիստոս. և յետ մահու յուսով ի հոգիս մեր. և յետ յարութեանն սիրով միաւորիմք ի նա՛: - 341. Վասն է՞ր այնպէս ահագին երևմամբ և որոտմամբ *երևեցաւ* աստուած ի սինա: - 341. Եւ ժե կանգուն բարձր. զի մի՛ *երևեսցի* խորանն: - 343. Երկրորդ՝ յորժամ յերկրի *երևին*, և պակնուն տեսօղքն երևմամբ նոցա, վկայք լինին փառաց ամենազօրին: - 345. Իսկ Ե կանգուն և կէսն. զի գալուստն քրիստոսի և փրկական խաչն և եկեղեցի՝ է՛ ի Եերրորդ դարն և կէսն *երևեալ* ի մուտ զռ ամին: - 345. Եւ ի դարձեալ *երևիլն* դարձեալ լուանալ, այն է՝ որ դարձեալ խոստովանիմք և կրկնեմք զերկն ապաշխարութեան մինչև նկարեսցի ի մեզ քրիստոս: - 367. Այն է որ յետ տարրոյն *երևեցաւ* պօղոսի: - 369. Նա՛խ՝ զի մի պակաս *երևեսցի* քան զհեթանոսս, խտրէին զմարմնոյ արատն: - 370. Երկոտասաներորդ՝ փօշտանկն. որ հատեա՛լ է աղիքն և ի դուր թափեալ. նշանակ հոգեկան ցաւոց ի մարմինն *երևեալ*: - 371. Որ և այս *երևի* ի հինն ստուերագրեալ թէ ոք խնդրեսցէ: - 373. Իններորդ, զի ցուցցի թէ բարկացողաց ո՛չ *երևի* աստուած. որպէս և ո՛չ եղիայի: - 386. Զայն ցուցանէ թէ յուղղութիւնս մեր *երևի* աստուած. այլ ի խոտորիլն ո՛չ: - 387. Վիուկն ա՛յն

է, որ ի վիաց և յանդնդոց մեռեալս կերպարանեն. դևք ի կերպս մարդկան *երևին*. զոր դևակոչ ասեն և հազիմաթ. և Նշանագէտ, որ ի գերեզմանս ննջէ և նշանաւոր մարդ կերպարանէ. որպէս զսամուէլ սաւուղայ երևեցոյց հարցուկ կինն: - 388. Հինգերորդ՝ զի նոքա խնդրէին *երևիլ* մարմնով. զի ո՛չ կարէին տանել աստուածային հրոյն ի լերինն: - 399. Երկրորդ՝ բարոյական. զի մին կնոջ ի բազում արանց ո՛չ *երևի* հարազատ զաւակն. իսկ մի այր ի բազում կանանց կարէ՛ ծնանիլ հարազատ մանկունս և սիրել զնոսա: - 401. Երկրորդ՝ զի մի՛ անբանքն՝ աստուծոյ պատւականք *երևեսցին* քան զբանականքս: - 416. Եւ անդ դադարեցան առաջնորդք օծեալք. յորում *երևեցաւ* ճշմարիտ օծեալն քրիստոս: - 421. Երրորդ՝ հրեշտակն կրկին *երևեալ* կնոջն, և ապա՛ մանովէի: - 422. Երկրորդ՝ ընդէ՞ր ոչ *երևեցաւ* սաւուղայ. այլ միայն կնոջն որպէս ասացաւ ի վերոյ: - 429. Ասեմ թէ ոչ, զի կատարեալ խոստովանութիւնն թողու զմեղս, բառնայ զպատիժն, և ջնջէ՛ զյիշատակ մեղացն. մինչ զի ո՛չ *երևի* ի դատաստանին աստուծոյ: - 432. Երկրորդ՝ զի յորժամ ուխտէ մարդ, ի նոյն ժամն դադարի ցասումն աստուծոյ. ապա յորժամ կատարեմք՝ *երևի* մեզ: - 435. Հրեղէն կառք և հեծեալք *երևեցան*: - 445. Հինգերորդ՝ ողորմութիւնն *երևի* ի մարդեղութիւն բանին. և արդարութիւնն ի մահ նորին: - 458. Երրորդն *երևի* յորժամ աստուած արդարացուցանէ զմեղաւորն. յորժամ պատրաստէ՛ զինքն առ շնորհին գործելով զբարին: - 459. ...իսկ ի կատարել զգործ ողորմութեանն՝ ո՛չ ինչ պահանջի, եթէ ոչ կամքն նորա, որպէս *երևեցաւ* ի մարդեղութիւն բանին աստուծոյ ի սրբոյ կուսէն մարիամայ: - 459. Ութերորդ՝ զի մի՛ հրէայքն համարելով զքրիստոս ո՛չ ունելով օրինաւոր ծնունդ՝ *երևեսցին* յիրաւի ի հալածելն զնա: - 461. Իններորդ՝ զի մի՛ *երևեսցի* տէրն հակառակ օրինացն որ գովէր զպսակն: - 461. Երկու *երևի* ի սուրբ գիրս երկխօսութիւն: - 465. եկն *երևեցաւ*. այսինքն մարդացաւ մարդասէր բժիշկն. և առողջացոյց զկարեվէր խոցեալքս. ըստ որում բժիշկ անուանէր զինքն անկեալ ի ձեռս աւազակաց հիւանդին: - 467. Այլ յորժամ նկուն եղեն օրէնք ամենայն, և ո՛չ կարեցին փրկել. յետոյ եկն և *երևեցաւ* նոյն ինքն օրէնսդիրն և փրկեաց զմեզ: - 467. Չորրորդ՝ միտք և հոգին ո՛չ *երևին*. և բանն *երևի* և ի դուրս գայ. և մարդիկք տեսանեն և գրեն. վասն այն բանն մարմնացաւ, և ո՛չ հայր կամ հոգին: - 468. Եօթներորդ՝ բանին էր պատշաճ պատմել զհօրէ. և *երևիլ* մեզ. որպէս ներտրամադրեալ բանն յառաջ գայ և լինի բարբառ և գրեալ ի քարտիսի, *երևի* և շօշափի: - 468. Տասներորդ՝ զի սէր հօր *երևեսցի* առ մեզ. որպէս ասէ յօհաննէս, «այնպէս սիրեաց աստուած զաշխարհս, մինչև զորդին իւր միածին ետ»: – 468. Երրորդ ծնունդն ի մօրէ. ըստ որում ծնաւ մարմնով և *երևեցաւ* մեզ. ըստ հրեշտակին «ծնաւ ձեզ այսօր փրկիչ օծեալ տէր»: – 471. Այլ և ո՛չ յառաջ քան զյղանալն օծաւ. զի սրբիլ և առաքիլ և իջանել յերկնից ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ մարմին լինիլ և մարմնով *երևիլ* բանին: - 475. Առաջին միաւորութիւն ստոյգ և ճշմարիտ՝ հոմանիւթ մասնաւորաբար որոշեցելոց. որոց ոչ ինչ տարանիւթ ընդ մէջ *երևի*. որպէս երկուց ջահից լուցելոց միաւորութիւն լուսոյն: - 476. Եւ կամ աննիւթ ինչ և անկերպ՝ ընդ նիւթական կերպարանաց ձևացեալ. յորում իւրաքանչիւրոցն էութիւնք անշփոթաբար *երևին*. որպէս պղինձ գնդացեալ. կամ քուէացեալ: - 476. Այսպէս և բոլոր տնօրէնութիւն մարդացելոյն բանի՝ միով զօրութեամբ և կարողութեամբ ըստ միութեանն կամաց մի ներգործութիւն *երևի*: - 478. Երկրորդ՝ զի երկրորդ ադամ եղև զպարտիս նորին վճարելով, պարտ էր ի կերպս ադամայ *երևիլ*: - 480. Ա՛րդ՝ **գ** իր *երևի* ի մահն քրիստոսի: - 492. Ապա ուրեմն սուտ *երևի* ապականացու ասելդ ձեր: - 500. ...և յետ մեղացն եղև ապականացու և կատարեալ. և *երևի* թէ ապականութիւնն առնէ կատարեալ զմարդն որ այլայլօ՛ղ է և ապականագործ: - 500. Զի **ե** անգամ ի ե կիրակէն *երևեցաւ* քրիստոս աշակերտացն մինչ ի համբարձումն: - 511. Ապա ուրեմն ի գիշերի յարեաւ և յառաւօտուն *երևեցաւ*: - 514. ...և տէր մեր յետ յերից օրինաց՝ այսինքն բնական բանական և գրաւական՝ *երևեալ* ի գիշեր կենցաղոյս և իջեալ ի դժոխս աւերելով զնա դարձոյց զերկոսին ժողովուրդս իւր...: – 514. Այսպէս իմանալի արեգակն քրիստոս ի նոյն ժամն յարեաւ ի գերեզմանէն. և ընդ արշալոյսն *երևեցաւ* իւղաբերիցն և առաքելոց: - 515. Ասեմք նախ՝ թէ յարութիւնն ի մէջ գիշերի է որպէս ցուցաւ. այլ *երևիլն* ընդ արշալո՛յսն է: - 515. Եւ սոյնպէս շաղփաղփ *երևէին* բանք նոցա. և տեսիլքն սակայն ամենայնք՝ զմի և զնոյն յարութիւնն պատմէին: - 515. Դարձեալ՝ որպէս ծալեալն ծածո՛ւկ է և մի կողմն *երևի*: - 517. Նոյնպէս և ծածուկ է աստուածային էութիւնն և անհաս յամենայն եղանակաց. միայն խնամօք *երևի* որոց կամի: - 517. Երրորդ՝ վասն մխիթարութեան աշակերտացն. զի խ օր մխիթարեսցէ զնոսա փոխանակ խ ժամուն որ տրտմեցան ի մահն քրիստոսի. որպէս ասացաւ թէ յարութիւնն ի մէջ գիշերի, այլ *երևեցաւ* ընդ արշալոյսն առաքելոցն...: – 520. Նա՛խ՝ զի յայսմ աւուր *երևեցաւ* աստուած մովսէսի ի սինա լեռինն: - 523-524. Երրորդ կրկին զատիկն *երևեալ* դրօքն փակելովք: - 524. Նախ՝ զի ցուցանէ թէ որ ետ զօրէնսն՝ նոյն առաքեաց և զհոգին և ի նոյն տիպն որոտ և փայլատակումն հողմ և հուր *երևեալ* որպէս անդ ի լերինն: - 524. Դարձեալ՝ զի հայր մարմնով ո՛չ *երևեցաւ* որպէս բանն մարմնացեալ. կամ որպէս հոգին սուրբ աղաւնակերպ և հրաձև: - 525. Բանն

աստուծոյ մի է թէ բազում. զի բազում *երևի* ի հին և ի նոր կտակս և յիւրաքանչիւր թուղթս գրեալ...: – 529. Եւ մի և նոյնն է միաւորեալ ի մարմնի և *երևեալ* մեզ և գրեալ ի քարտիսի յիւրաքանչիւր աւետարանս: - 529. Եւ թէ ոք ասիցէ, *երևի* այպէս ասելդ թէ՝ մի է և բազում. և այս ո՞րպէս լինի: - 529. Զի մի է ըստ իւրում անձնաւոր գոյութեանն. և բազմանայ ի բազումս *երևեալ*: - 529. Եւ թէ ոք ասիցէ, *երևի* ապա թէ նոյն անձնաւոր բանն աստուծոյ է յաւետարանս խօսեցեալ յայնժամ բազմացեալ է անձամբ և գոյութեամբ: - 530. Զոր օրինակ, մի՛ է արեգակն անձամբ և գոյութեամբ, և ի բազում լուսանցս և ի հայելւոջ *երևեալ* նոյն մի անձամբ և գոյութեամբ և ո՛չ բազում: - 530. Դարձեալ և այլապէս *երևի* միութիւն ի բաժանմանէ **գ** եղանակաց: - 533. Երրորդ, դիւական. որպէս կռոց սուտ մարգարէքն. սեդեկիայն և այլոց բազմաց. որ այժմ *երևին* ի պատասխանիս կախարդաց. նաև հաւկռիչք և գարէդիւքք. որք են բնաւ սուտք և ոչինչք: - 536. Եւ թէ ոք ասիցէ, այլավիճակք այլ և այլ աթոռոց ճշմարիտ *երևի* զի ինքնագլուխք են: - 541. Եւ թէ ոք ասիցէ, *երևի* թէ առանձին իշխանութիւն ունի քան զայլսն: - 547. Եւ թէ ոք ասիցէ, *երևի* ապա թէ ո՛չ է պարտ հնազանդիլ առաքելոյն պետրոսի և աթոռոյ նորա: - 547. Իսկ գործն զիակառակն նմին սուտ *երևեցնէ* զխորհուրդն և չար ցուցանէ զգործն և զազրալի: - 558. Նախ ասեմք թէ՝ համաձա՛յն են միմեանց. զի և սա Նազրիոս է ասէ. զի տրտմութիւն և ձանձրութիւն մի *երևին*. զի տրտմութիւն ի պակասութենէ բարւոյն լինի, իսկ ձանձրութիւն յաւելուածոյ բարւոյն: - 559. Վասն այն այլ վարդապետք կոչեն զայս ախտ՝ ծուլութիւն. զի ծուլութիւնն յերկու իրաց *երևի*. մին որ յետս դառնայ ի հոգևոր բարւոյն և ծանրանայ ի գործելն. այսինքն պահել՝ աղօթել և այլն. և ըստ այսմ կոչի տրտմութիւն: - 559. Զի յամենայն մեղս *երևի* հպարտութիւն այսպէս. զի ամենայն մեղք խոտումն է պատուիրանացն աստուծոյ, և խոտորումն զհետ հեշտութեան մարմնոյ...: - 562. ...այն է հպարտութիւն որ խոտե՛մք և անարգեմք զճշմարիտ բարին. և ապա խոտորիմք և հետևիմք զհետ փոփոխելոյ բարւոյս. և այսպէս *երևի* հպարտութիւնն յամենայն մեղս: - 562. Եւ երկրորդ անպատշաճութիւն, զի յասելն թէ՝ ես կու մկրտեմ. *երևի* թէ նուիրեալն ո՛չ իւր կամաւն է եկեալ ի մկրտութիւն, այլ բռնութեամբ և ի հարկէ՛ կու մկրտեմ: - 588. Եւ գիտելի է, զի ի ծնունդ սուրբ աւազանին *երևի* ե զարմանալի գործ որ ո՛չ է ի մարմնաւոր ծնունդս: - 590. ...զի անխառնակ և անշփոթ *երևեսցի* մադանալն բանին յազգէն յուդայ. որպէս ասացաւ ի վերոյ ի **լ** գլուխն, **դ** համարն: - 612. Այլ և յետ յարութեանն *երևեցաւ* մեզ: - 628. Դարձեալ՝ ցուցանէ զմարգարէս և զառաքեալս. և ի գլուխ նոցա *երևեալ* բանն աստուած և խօսեալ: - 646. Եւ նոյն ինքն քրիստոս *երևի* մեզ ի խաչն և յաւետարանն: - 646. Այժմ ի յեկեղեցիս մեր **ծ** *երևին* մեզ: - 649. Եւ թէ ո՞րպէս *երևին* մեզ: - 660. Երեսուներորդ, Խաչն *երևի*. և անապական է: - 661. Եւ թէ ո՞րպէս *երևի* քրիստոս: - 661. Տասներորդ՝ յապաղեաց զայն, զի փափագն առաւելասցի. աստ հաւատով և յուսով ակն ունել. և ապա՛ դէմ յանդիման *երևիլ*: - 663. Երրորդ հիւանդութիւն է ընտրելոց, զի փո՛րձ *երևեսցին* ի յամօթ չարին. որպէս յոբայն: - 665. Կամ ի պատահման է *երևելոյ* ինչ տեսլեան: - 668. ...զի հրեշտակք խաչածև *երևեցան* առ գերեզմանաւն տեառն: - 679. Եւ ի ծննդեանն յայրին *երևեցաւ* բանն աստուած. - 684. Յոգիքն ո՞րպէս *երևին* մարդկան: - 685. Ասեն ոմանք թէ՝ սրբոց հոգիքն յարաժամ *երևին* յորժամ կամին և որոց կամին: - 685. Այլ մեղաւորքն ո՛չ *երևին* ամենևիմբ: - 685. Այլ մեծն ներսէս ասէ թէ՝ սուրբքն ի ձեռն պահապան՝ հրեշտակացն *երևին*. թէ յերազս թէ յարթնութեան. և օգնեն մեզ. և խօսին. և լսեն զաղօթս մեր: - 685. Իսկ մեղաւոր հոգին դարձեալ ի ձեռն հրաշտակաց. զի աղաչէր զնա *երևիլ*. կամ ի ձեռն դիւաց կերպարանին նոքա: - 686. Իսկ թէ զի՞նչ է պատճառ ոչ *երևելոյն*...: - 686. Ընդ *երևիլ* ներհինն և թագաւորելն յերուսաղէմ, եկեսցեն ենովք և եղիա որպէս ասէ մաղաքիա և դարձուսցեն զսիրտս հարց յորդիս...: - 709. Եւ զորօրինակ զկնի մկրտութեանն սկզբնական մեղքն ոչ *երևի*. նոյնպէս զկնի ապաշխարութեան ներգործական մեղքն ծածկի և կորնչի. - 714. Եւ *երևի* որպէս բլուր մեծամարմինք նոցա յաչս իւրեանց. սև և աղտեղի և չարչարելի. զի կրեն անչափ չարչարանս և ցանկան մահու և ո՛չ մեռանին. - 723. Երկրորդ՝ զի թէ արական մասն *երևի*՝ ոչ ինչ նախապատուի կամ էգն անարգի. զի մասունք անդամոց անդ ո՛չ է զազրալի: - 726. Սակայն իւրաքանչիւր ոք անսխալ անդամօք իւրովք յառնէ. այլ ո՛չ *երևի* թէ սա այր է և նա կին. այն ծեր և այն տղայ. զի որպէս հրեշտակք են յերկինս: - 726. Ոմանք այսպէս կարծեն թէ՝ հաստատութիւնդ բարձցի ի միջոյ մինչ վերին երկինքն *երևի*: - 729. Նա՛խ՝ այն է գալարիլն երկնի, զի եթերն որպէս մագաղաթ ծալեալ նուազի և նսեմանայ վասն առաւել ճառագայթից լուսաւորացն հրեշտակաց և սրբոցն յերկնէ *երևեալ*: - 729. Արդ ի պարզիլ օդոյդ որպէս ցուցաւ *երևի* լոյս արփւոյն անարգել: - 729. Երրորդ, զի «*երևեսցի* նշան որդւոյ մարդոյ» այսինքն խաչն: - 730. *Երևեսցի*՞ Խաչն ի կատարածի: - 732. Եւ ո՛չ միայն խաչն, այլ և ամենայն գործիք չարչարանացն. այսինքն բևեռքն գեղարդն և այլք. որք բերին առաջի դատաւորին. և ի մարմին նորա *երևին* սպիք խոցուածոց նորա...: - 732. Յորո՞ւմ աւուր *երևի* խաչն: - 732. *Երևի*՞ անդ փայտ խաչին յորում խաչեցաւ տէրն: - 732. Ոմանք ասեն թէ լոյս *երևի* ի ձև խաչին: - 732.

Իսկ լոյսն ի փառս խաչին այնորիկ *երևի*: - 734. Զի որպէս խաչեալն ի ժամ խաչելութեանն տգեղ *երևէր*, և ի միւսանգամ գալստեանն փառօք հօր և ընդ ամպս: - 734. Այսպէս և խաչն իւր աստ տգեղ *երևի*, և ի կարապետութեանն իւրոյ արեգակնափայլ ճառագայթիւք: - 734. ...ընդ որում անպատշա՛ճ էր լինիլ խօսակից և զուստն ո՛չ գիտել. այլ պատշա՛ճ էր որդւոյ վասն մարմնով *երևելոյն*: - 735. Բայց զոր ինչ մեզ փառաւոր *երևի*՝ զնոյն և աստուծոյ փառս կոչեմք: - 736. Այլ ի գալուստն քրիստոսի Առաջին փառք է՝ զի փառաւոր *երևեսցի* սիրելեաց իւրոց, յայտնեալ զաստուածութեան փառս միաւորեալ ի մարմնի. որպէս *երևեցաւ* ի թաբօր: - 736. Եօթներորդ, զի ահագնակերպ *երևի* ի վերայ մեղաւորաց. մինչ ասիցեն լերանց թէ անկերուք ի վերայ մեր. և բլրոց թէ ծածկեցէք զմեզ յերեսաց բարկութեանն աստուծոյ որ նստի յաթոռ. որպէս ասէ տեսիլն: - 737. Ո՞րպիսի կերպարանօք *երևի* տէրն: - 740. Ընտրելոցն *երևի* այնու կերպիւ որ ի թափօր *երևեցաւ:* - 740. Ապա յա՛յտ է յասացելոցս թէ՝ քրիստոս *երևեսցի* արդարոցն քաղցրատես, և մեղաւորացն դառնակերպ. որ նշանակեցաւ ի սիւն ամպոյն ի տուէ և ի հուրն ի գիշերի: - 741. Հինգերորդ, զի ճշմարիտն և սուտն ի մէջ երկուցն *երևին*. այսինքն դատաւորին և ոսոխացն: - 742. Ուստի *երևի* **զ** ժամս ի յարութենէն մինչ ի վճիռ հատուցման և կորստեան չարաց չորեքկին. այսինքն գործոց չարաց և պատժոց նոցին. պատճառաց դիւաց և հետևելոց մարդկան: - 748. Ուղղակի ուրեմն փայտս այս ասի գոլ տնկեալ մերձ յընթացս ջուրց. զի ի նմանութիւն մարմնոյ մեղաց *երևեցաւ*. և զամենայն նուաստութիւնս մեր յինքն ընկալաւ: - 755. Իբր ո՛չ այսպէս զոր *երևի* տեսանելոց եմք ասէ: - 759. Նմանապէս և հուրն որով հրեղէն լեզուօք *երևեցաւ* սրբութեան հոգին, բաժանեսցի այրեցումն և մշտափայլ լուսով փայլեսցի որպէս զարփին և որպէս զարեգակն: - 759-760. Իսկ հաւատ ի մարդկութիւն որդւոյ, 'Ի կուսէն *երևեալ* անհայր ի մօրէ. որպէս անմայր ի հօրէ: - 769. Զի հասարակա՛ց է ամենայն մարդոյ կատարելոց և անկատարից, զի ի յանդիմանութիւն յանդիմանելեացն առհասարակ դժկամա՛կ *երևի* ի սկիզբն. թէպէտ ընտրողութեամբ լաւին ընդունին զխրատն: - 774. Հասարա՛կ է և բնութեան իր, զի ամենայն ինչ նախնի մարդոյն բնութեամբ է ի մեզ և հասարակ իր. և առ յանդիմանութիւն դժկամակ *երևեցան* նախնիքն մեր. ուստի պատճառեցին զմիմեանս: - 774. Դարձեալ՝ ծածկութիւն յանցանաց՝ է՛ բնականապէս մեզ ի տերևոյ անտի. իսկ յանդիմանութիւն է ծածկելոց յայտ արարողութիւն. վասն որոյ ամենքեան դժկամակ *երևին*: - 774. Իսկ եթէ բաղդատելով ոք ասիցէ, թէ ի մարմնի գոլով ապաշխարեալ սրբեցաւ նա ի ներգործականէն իւրմէ մեղաց. և այս ո՛չ ուրէք *երևի* ցոյցք ի գիրս սուրբս: - 775-776. Նա՛խ խոստացաւ հրեշտակօք. աւետեաց մարգարէիւք. դաստիարակեաց օրինօք. և յետոյ *երևեցաւ* ի լրումն նոցին: - 776. Ասեմք թէ՝ յիրաւի, որովհետև *երևեցաւ* տէր մեր ի փրկութիւն ընտրելոց ըստ ամբակումայ, նախահայրն յաւիտեան. իսկ այլք ազատեցան ժամանակեայ: - 777. Զի որպէս կարողութիւնն աստուծոյ *երևի* ի ստեղծանելն և ողորմութիւնն ի բարերարելն, այսպէս և արդարութիւնն ի հատուցանելն: - 778. Եւ այսոքիկ որք *երևին* ընդ դէմ միմեանց, կամ առ այլս կամ երբեմն, ո՛չ փոփոխումն ինչ ցուցանեն անփոփոխելոյն. առ մեզ փոփոխելոց ըստ արժանոյն գութ կամ հատուցումն. թէ աստ՝ թէ ի հանդերձեալն: - 779. Եւ յայսցանէ *երևի* չորս ինչ հարկաւոր զղջման. այսինքն է որպիսութիւնն, ժամանակն, յորմէ, վասն որոյ: - 780. Զորօրինակ, ժանգ հայելւոյ ո՛չ զընդունակութիւնն բառնայ, այլ զտեսութիւնն. և յետ սրբելոյն, նոյն ծածկեալն *երևի* ի նմա: - 782

**ԵՐԵՒՈՅԹ +** Երրորդ այսպէս. ի լուսնոյդ ի վայր տարրական հուրն և որ ի նմա *երեւոյթք* լուսոյ. օդն և թռչունք. ջուր և լօղականք. երկիր և բոյսք. մարդ և անասունք: - 343. Նշանակէ՛ ըստ փիլոնի, զի անմարմինքն մինչև յերեքն հասանին. որպէս երկրաչափքն գրեն նիշ՝ գիծ՝ *երևոյթ*. ա՛յս է իմանալեացն չափ: - 344. Խնամք մարդասիրութեանն աստուծոյ որ զամենայն յամենայնի տընօրինէ՛, արգել զայս. զի մի՛ ունիցին ինչ ի մտի յարուցեալքն ի մեռելոց. ապա թէ ոչ, որ ի սկզբանէ **բարէատեացն էր և մարդասպան**, բազում և զանազան *երևոյթս*...: - 775

**ԵՐԵՒՈՒԹԱՊԷՍ +** Եւ քրիստոսն օծեալ ո՛չ ըստ իւղոյ ինչ *երևութապէս* օծման, այլ միանալով ընդ բանին աստուծոյ՝ ասի օծեալ: - 301

**ԵՐԵՒՈՒՄՆ +** Ասեմք թէ՝ *երևմունք* նոցա ո՛չ են առ աչօք. որպէս նմանագործք ի յաչս ցուցանեն: - 133. Ութերորդ՝ անդ *երևումն* և ո՛չ ինչ նշանակ: - 133. Իսկ աստ *երեւումն*, և նշանակ հանդերձելոյ իրողութեանց: - 133. Իններորդ՝ անդ *երևումն*, և ո՛չ ինչ յաւելումն: - 133. Եւ աստ *երևումն* և խրատ ուղղութեան. պատիժ կամ պարգևք բարութեան: - 133. Տասներորդ՝ դարձեալ զանազանի, զի *երևմունքն* միայն փոխեն զհասարակ զգայութիւնն: - 133. Նոյնպէս *յերեւումն* հրեշտակաց զոր մինն տեսանէ՝ այլ մերձակայքն ո՛չ տեսանեն. որպէս յա՛յտ է ի պատանեակն եղիսէի: - 145. Նոյնպէս *երևմամբ* չարեացն՝ արդարքն պայծառագոյն երևեսցին: - 149. Զի առանց հողոյ շօշափումն ո՛չ լինի. և ո՛չ առանց ջրոյ կալումն և մածումն. և ո՛չ առանց օդոյ շարժումն. և ո՛չ առանց հրոյ *երևումն*: - 180. Այլ և նախ կոչի երկինք՝ զգալի *երևումն*

աստուծոյ՝ և հրեշտակաց՝ և մարգարէից սրբոց: - 183. Իսկ որ զերկրաւորքս ըստ կարգի, ամենագութ մարդասիրութեանն է *երևումն*. ո՞րպէս խնամով զպէտս մարդկան յայնքան աւուրս կատարեաց: - 192. Վասն որոյ ո՛չ է պարտ ենթադատել զմարդ վատն այսպիսի նշանաց *երևման*: - 246. Երրորդ՝ ևս յայտնի. զի ընդ նիւթոյ կազմութեանն համանգամա՛յն է և *երևումն* ոգւոյ. զի յորժամ անկատա՛ր է նիւթն, միայն կերակրիլն երևի ի նմա: - 255. Այլ հակադարձեալ սոքա ըստ կարգի և ըստ դասու՝ յառա՛ջ է տնկականն քան զզգայականն, և նա՛ քան զբանականն ի *յերևումն*. այլ էութեամբ համանգամայն են. որպէս անդ ուրեմն ասացաք վասն հոգւոյ և մարմնոյ: - 260. Իսկ դիւականն ընդդէմ այսմ՝ վասն մոլորութեան զանազան *երևմունս* ցուցանէ աղտեղութեան. և կամ զբարին խափանել ջանայ. որպէս ի չարչարանս տեառն վասն կնոջն պիղատոսի ընթերցեալ լինի. և որպէս գրէ սուրբն նազրիոս: - 268. Եւ ահագին *երևումն*: - 283. Եւ այս գիտելի է. զի կախարդքն փոխեն զզգայարանս և ցուցանեն առ աչօք *երևումն* ինչ: - 335-336. Վասն է՞ր այնպէս ահագին *երևմամբ* և որոտմամբ երևեցաւ աստուած ի սինա: - 341. Իններորդ՝ ի ի նմանէ՛ լինէր *երևումն* և աստուածախօսութիւն որպէս նախ ի յերկնէ. պա՛րտ էր երկնազարդ լինիլ: - 342. Երկրորդ՝ յորժամ յերկրի երևին, և պակնուն տեսօղքն *երևմամբ* նոցա, վկայք լինին փառաց ամենազօրին: - 345. *Երևումն* քրիստոնէիցս ի նորս: - 379. Երրորդ՝ ահագին *երևումն*, որոտ, և փայլակն: - 393. Երրորդ՝ ահագին *երևումն* դատաւորին. և ձայն փողոյն, և հուր նախընթաց: - 393. իսկ յորժամ սպասաւորեաց հրեշտակապետն՝ զտիրական անունն ի սաստ կոչելով. յայնժամ ամպ ինչ լուսաւոր ծագեալ ի տեղւոջն, շիջոյց *զերևումն* չարին: - 410. Նա՛խ՝ նշանակէր զնոյն ինքն գեղէոն. որ *երևմամբ* հրեշտակին դատաւոր եղև խրայէլի: - 421. Ապա յայտ ուրեմն է զի սուտ *երևումն* էր սամուէլի ձևացեալ: - 429. Եւ վկայքն հաստատեցին մեծ գոլ և ծածուկ՝ հրաշալի խորհուրդ միածնին փրկագործութեան *երևումն* առ մարդիկք: - 456. Տասներորդ խաչի դ տօնն. զոր ի սուրբ խաչին է. և *երևմանն*. և վարազայ խաչին. և խաչգիւտն: - 649. Եւ երթայ առ իւր տէրն հեշտութեամբ. և անդէն վաղվաղակի իբրև *երևմամբ* և տեսութեամբ իմն շահի զպտուղն առաջիկայ երանութեանց: - 691. Եւ կախարդութեամբ երևեցուցէ զինքն մեռեալ և երեքօրեայ յարուցեալ. և զայս ամենայն արասցէ դիւական *երևմամբ* և կախարդական արուեստիւք: - 708

**ԵՐԵՔԵԱՆ +** Պատասխանեմք եթէ՝ թէպէտ հոգին ունի զբնութիւնն ի հօրէ՝ սակայն ո՛չ ծննդեամբ որպէս որդի, այլ բղխմամբ. որպէս շունչն և բանն ունին զէութիւնն հոգւոյն այլ և այլ կերպիւ. և որպէս ադամ յառաջ էած յինքենէ զսէթ և զեւա. զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ. և ունին *երեքեանն* զմի և զնոյն բնութիւն մարդոյ: - 60. Ասեմք եթէ՝ նոքա *երեքեան* դասքն՝ այսինքն աթոռք՝ քերօբէք՝ և սերօբէք՝ միակարգ միապատիւ և գերազանց էութիւնք են. զի անընդմիջաբար յաստուծոյ ամենայն լուսափայլութիւնք իմաստք և շնորհք ի նոսա հեղանին համակարգապէս. և ապա նոքօք յայլ ամենայն գոյս երկնաւոր և երկրաւոր: - 135. Եւ դարձեալ այսպէս զանազանին սոքա *երեքեան* աւուրք. այսինքն առաջին օր ստեղծման. և միջին մինչ ի կատարած. և վերջին օր յարութեան: - 193. Եւ գիտելի է, զի հետևին միմեանց *երեքեան* սոքա. այսինքն ջիլն. և շնչերակն. և արեան երակն: - 244. Ա՛րդ՝ *երեքեան* սոքա: - 362. Վասն է՞ր *զերեքեան* պատարագս ունիմք մեք: - 362. Եւ տես, զի սոքա *երեքեան* տօնքս, այսինքն ամսամուտն, և պասքայն, և յիսներեակն, հաւասար ունին զմատուցմունքն տօնից: - 373. Եւ *երեքեան* ծնունդ քրիստոսի՝ ըստ երից գոյացութեանցն որ ի քրիստոս. այսինքն աստուածութիւնն՝ մարմինն՝ և հոգին: - 471. **Իններորդ՝ զի թէ հաւատն և յոյսն և սէրն՝ աստուածային առաքինութիւնք են և լաւագոյն քան զամենայն առաքինութիւնս**. ըստ որում ասէ պօղոս «սոքա *երեքեան* և մեծ քան զսոսա սէրն է»: – 557. Եւ սոքա *երեքեան* կոչին աստուածային առաքինութիւնք: - 571. **Որ է՛ հաւատ՝ յոյս՝ սէր. և սոքա *երեքեան* հեղո՛ւմն են յաստուածային շնորհացն ի բանական ոգիս. որով ուղղիմք յերկնային կեանս:** - 577. Յհնգերորդ՝ ըստ որպիսութեան մեր **հաւատն է այժմ. յոյսն յետ մահու**. ըստ այնմ «յոյս նոցա լի՛ է անմահութեամբ». և **սէրն յետ յարութեանն** ըստ առաքելոյ. «սոքա *երեքեան* հաւատ, յոյս, սէր. և մեծ քան զսոսա սէր է»: – 578. ...իսկ մարդ *զերեքեանն* ունի. վասն որոյ երեքօրեայ յիշատակ կատարեմք: - 681

**ԵՐԵՔԹԵԼԵԱՆ** - *Երեքթելեան* լարքն, հոգին եռամասնեայ և մարմինն ի չորս տարերաց: - 744-745

**ԵՐԵՔԺԱՆԻ +** Նա՛խ՝ *երեքժանի* մսահանաւ հանել զմիսն որ չէր օրէն: - 425

**ԵՐԵՔԿԻՆ +** Տասներորդ՝ զի մշտաշարժ են *երեքկին*. այսինքն բոլոր՝ ուղիղ՝ և կողմնաւոր. որպէս ցուցցի յառաջիկայսդ: - 137. Ո՞րպէս ասեն վարդապետք՝ *երեքկին* է բանն. մտաց. բերանոյ, և գործոյ: - 144. Եւ յայսմանէ յայտ է թէ *երեքկին* է որպիսութիւն հրեշտակաց: - 151. Եւ նախ զի է գիր՝ ունի գովութիւն *երեքկին*: - 177. Եւ ըստ այսմ զանազանին *երեքկին* զօրութիւնք հոգւոյն. այսինքն տնկական. զգայական. և բանական: - 249. Զի մանունքն յամսօրէից և ի վայր, ի շաբաթս և յաւուրս և ի ժամս ըստ նոյն թուոյ կարեն զնմանն ծնանիլ. և առաւելքն առաւելեալ ամօք կրկին կամ *երեքկին* որպէս ասացաք: - 264. Եւ այս է

_երեքկին_. այսինքն թողութեան. ըստ սաղմոսին «ի քեզ տէր յուսացայ մի՛ ամաչեցից յաւիտեան»: – 574. Իսկ _երեքկինն_ ի դէմս Երրորդութեանն է: - 636. Զամէն շարական կրկին ասեմք, վասն է՞ր զիարցն _երեքկին_ ասեմք: - 637. եւ ոմանք _երեքկին_ օրհնեն. ի սկիզբն. ի մէջն, և յետ կերակրոյն: - 655

**ԵՐԵՔԿԴԻ +** Առաասանքն _երեքկղի_՝ յերրորդութեանն դիմաց արդարութեան և ողորմութեան զօրութիւնք առ մեզ խոնարհեալ. ունելով զյիշատակ բարեացն և չարեացն մերոց: - 745

**ԵՐԵՔԿՆԵՄ +** եւ աղամ ասաց կնոջն՝ և կրկնեցաւ. և կինն օձին՝ և _երեքկնեցաւ_ գիրն: - 481

**ԵՐԵՔՄԱՍՆԵԱՆ +** Այլ և ո՛չ ունի տեղի մարմնական. և ոչ ի ժամանակի _երեքմասնեան_. այսինքն յանցեալն՝ ի ներկայս՝ կամ յապառնին: - 180

**ԵՐԵՔՇԱԲԱԹԻ +** եւ զարէսին՝ _երեքշաբթի_: - 190. _Երեքշաբաթի_ օրն մարգարէից: - 642. եւ _յերեքշաբաթին_ ըստ կարգի՝ մարգարէիցն և յովհաննու. որ միջնո՛րդ է օրհնաց և շնորհաց: - 642

**ԵՐԵՔՍՐԲԵԱՆ +** եւ մեռեալ ի խաչին զանձն միայն ասէք. որպէս երգէք _յերեք սրբեանն_ ձեր, քրիստոս որ խաչեցար ողորմե՛ա մեզ: - 89. Քառասունևզ, _Երեքսրբեանն_ բազում հարցմամբ: - 527. Երրորդ՝ _յերեքսրբեանն_ զխաչեցարն յաւելուլ: - 554. եւ նոյնպէս դ անգամ յերեկոյն. ի լոյս զըւարթն, և յուղղեցին, և _յերեքսրբեանն_. կամ յարձակմանն խնկարկեն ոմանք: - 618. եւ _երեքսրբեանն_, զառն անմահ զենեալ վասն մեր: - 629. եւ զսուրբ աստուածն խաչեցար. և այսպէս գոէ՝ եսայի ետես զքրիստոս նստեալ յաթոռ որ է խաչն. և երգէին _զերեքսրբեանն_: - 631. Յաղագս որոյ եկեղեցի սուրբ ուսեալ յաւետարանչէն և ի սրբոց հայրապետացն, երգեմք _զերեքսրբեանն_ ի դէմս որդւոյ: - 633. Իսկ յատուկ, Նա՛խ՝ _զերեքսրբեանն_ ի դէմս որդւոյ. զի նա՛ է առաջնորդ որով զհայր տեսանեմք: - 633. Վասն է՞ր _զերեքսրբեանն_ որ է սուրբ աստուածն՝ յառաւօտուն և յերեկոյին ժամն ի վերջքն երգեմք. և ի պատարագին ի սկիզբն: - 634. պարտ է զբանիւ պատուականն հիմն դնել. որ է՛ _երեքսրբեանն_. - 634. Այլ և **թ** տէր ողորմեայն ի պատարագն. և **թ** _երեքսրբեանն_, ի խորհուրդ **թ** դասուց վերնական յերիս երրեակս որոշեալ: - 645. ...որպէս յա՛յտ է ի սերովբէսն որ ի ներքոյ փառաց աթոռոյն, այսինքն է խաչին. թևասքօղեալ _զերեքսրբեանն_ վերածայնէին: - 734. Որպէս ասեն երբեմն ժամանակի ի կոստանդնուպօլիս հռչակեալ քաղաքի, մոլորեալ յոյնք ի մոլորեալ երիտասարդէ՛ միոջէ՛, բարձին յեկեղեցւոյ զերգ _երեքսրբենին_: - 775

**ԵՐԵՔՕՐԵԱՅ +** Այսպէս յետ **ծ** աւուրց տաւ օրէնքն. և **ծ** օր պահքն _երեքօրեայ_ սրբութիւն: - 344. Առաջին, _երեքօրեայ_ սրբութեամբ յիսներեկի աւուրն ելից յեգիպտոսէ. որ ընկալաւ զտասնաբանեան օրէնս և պատմեաց ժողովրդեանն: - 352. Հինգերորդ՝ ի նմին իրացն յայտնի է՝ զի ռամիկ ժողովուրդն ի տօնի քաւութեանն _երեքօրեայ_ սրբութեամբ մերձենային առ դուռն տաճարին: - 483. ...իսկ մարդ զերեքեանն ունի. վասն որոյ _երեքօրեայ_ յիշատակ կատարեմք: - 681. ...զի _յերեքօրեայ_ ճանապարհ երթիցեն և երկիր պագցեն աստուծոյն իւրեանց: - 682. ...և գնացին _յերեքօրեայ_ ճանապարհ. ի տիւն ամպ հովանի, և գիշերն լոյս գայր...: - 682. եւ կախարդութեամբ երևեցուցէ զինքն մեռեալ և _երեքօրեայ_ յարուցեալ. և զայս ամենայն արասցէ դիւական երևմամբ և կախարդական արուեստիւք: - 708. ...ըստ որում _երեքօրեայ_ յարեաւ ի գերեզմանէն անապական մարմնով. և զբազումս յարոյց ընդ իւր և մտին ի քաղաքն սուրբ...: - 716

**ԵՐԷ +** Առաջին՝ ի բնական. որպէս _երէոց_, անասնոց, թռչնոց, և մրջմանց. որպէս ցուցաւ ի վերոյ ի **ժզ** գլուխն, **ծա** համարն: - 536

**ԵՐԷԿ +** Իսկ ի վերայ փոփոխականացս ո՛չ նմանապէս. զի յանցեալ ժամանակս և ի ներկայս բացորոշակի մինն ճշմարիտ է և մինն ստէ՛. որպէս ասեմք՝ _երէկ_ անձրև էր, կամ ո՛չ էր. այսօր անձրև է, կամ ո՛չ է: - 9. Իսկ թէ զանազանապէս իմանաս զժամանակն, նախ է՛ անցեալն որպէս _երէկ_. և ապա ներկայն որպէս այսօր. և յետոյ ապառնին որպէս վաղիւ: - 198. Զի յիսուս քրիստոս _երէկ_ և այսօր՝ նոյն և յաւիտեան: - 478. Երկրորդ՝ ասելն «է» նշանակէ՛ ըզմշտնջենաւոր գոլն. ըստ այնմ (յիսուս քրիստոս _երէկ_ և այսօր նոյն և յաւիտեան: - 487. Դարձեալ՝ _երէկ_ վասն մեռելոյն կսկծոյ կոծ մեծ արարաք. և այն դժուարութիւն էր աստուծոյ. - 680. նոյնպէս զբանական սերմս զայս _երէկ_ թաղեցաք ի հող...: - 680

**ԵՐԷՑ** (տեքստում նաև՝ էրէց, երեց) **+** Եթէ ըստ մեզ կարծէք զծնունդն, պիտոյանայ երկուորիս և գործիս հօր. լիցի և այրութիւն և իգութիւն յաստուած. և լիցին որդիք երկորեակք _էրէց_ և կրտսեր: - 52. Համագոյ և միասնական սուրբ Երրորդութեանն ո՛չ է առաջին և վերջին. ո՛չ մեծ և փոքր. և ո՛չ _երէց_ և կրտսեր: - 109. Ուստի յա՛յտ է զի _էրէցն_ երկրորդ ամուսնութեամբն ո՛չ կարէ քահանայագործել. յիրաւի և ապա պոռնկեալն _էրէց_ կամ աբեղայ՝ ո՛չ կարէ քահանայագործել. զի ուխտազա՛նց է: - 167. Չորրորդ՝ զի լինի առ ինքն հակառակութիւն, թէ ո՞ է _երէց_ և կրտսեր առ ինքն: - 254. Նա՛խ՝ զի անդրանիկն _երէց_ ասի: - 308. եւ _երէց_ է աստուած քան զաշխարհս. և անդրանիկն զաստուծոյ պատկերն ունի. զի հայր և խնամածո՛ւ է այլ հարազատ եղբարցն: - 308. Վեցերորդ՝ մարմինն _երէց_ է ըստ կարգի քան զհոգին. և յա՛յտ է, զի որ քան

կենդանի եմք՝ զերիցագոյն պատիւն մարմնոյն տամք...: - 310. Նա՛խ՝ կոչի աւագ, զի մովսէս *երէ՛ց* է և առաջին քան զամենայն մարգարէսն: - 407. Նա՛խ՝ ի բազում եղբարս. և երկրորդ՝ *երէց* և առաջին: - 472. Իսկ անդրանիկ ըստ որում *երէց* և առաջին՝ ասի ըստ չորից: - 472. Այլ սոցա *երեցունց* հաւասար է հոգւոյն և մարմնոյն բարկութիւն. և առաւել մարմնոյն ծուլութիւն. և առաւել հոգւոյն ագահութիւն: - 559. Եւ տանին առ աւագ *երէցն* զոր քահանայապետ կոչէ սուրբն դիոնէսիոս...: - 671

**ԵՐԻՑՈՒՆՔ +** Եւ թէ ոք ասիցէ, ամենայն վերոյ ասացեալքս գո՛ն և յամուսնացեալ *երիցունս* աշխարհի, և քահանայագործե՛ն: - 167. Ասելի՛ է թէ՝ *երիցունք* աշխարհի՝ հալալ ամուսնութեամբ և ողջախոհութեամբ են ուխտեալ քահանայագործել: - 167. Եօթներորդ՝ անդրանիկք են իշխանք հոգևորք, վերակացուք և խնամողք այլ հոգւոցն. որպէս քահանայք, ուսուցիչք, և այլք. վասն որոյ *երիցունք* կոչին: - 309. Տասներորդ՝ հայրն առաքեաց զյովսէփ առ եղբարսն որ էին հովիւք և *երիցունք* տեսանել զնոսա. և բանիւն յուդայի վաճառեցաւ և եղև տէր երկրին և կերակրիչ: - 313. Նոյնպէս և քրիստոս իմաստութեամբն իւրով կերակրէ՛ զնոսա և զգեցուցանէ որպէս **իդ** *երիցանցն*, որ տուաւ նոցա արկանելիս սպիտակս. այս է շնորհն մաքրութեան զոր ընկալան ի քրիստոսէ: - 315. Հինգերորդ դասք՝ Քահանայք. որք ի քաղաքի լինին, և որք ի վանորայս, և ի գեօղս *երիցունք*: - 608. Ութևժ, **իդ** *Երիցունքն*. և սպիտակ զգեստն. պսակն և քնարն: - 660. Այլ թէ ասեն՝ հաղորդադրամ, կամ խոստովանադրամ, խո՛րթ է. յագահութեանց *երիցանց* սահմանեալ և ո՛չ ըստ կանոնաց որպէս այլքն: - 684. Ուր ետես զիդ *երիցունսն* շուրջ զաթոռովն աստուծոյ. և զբազմութիւն հոգւոց սրբոց յամենայն ազգաց ժողովեալ անդ: - 688. Զի՞նչ է իդ *երիցունքն* զոր ասէ տեսիլն: - 711. *Երիցունք* նախ նշանակէ՛ զքահանայս որք զանձինս իւրեանց մատուցանեն պատարագ աստուծոյ: - 711. Երկրորդ *երիցունք* են ծերքն. որք ծայրացեալք են կատարելութեամբ: - 711. Երրորդ *երիցունք* են անդրանիկքն և նախնիքն երանութեամբ: - 711. Եւ որպէս **բժ**ան բիւր հրեշտակացն, և եօթանասնից եօթն թողուլն, և ամլոյն եօթն ծնանիլն ո՛չ է վճիռ, նոյնպէս և իդ *երիցանցն*: - 711. Նա՛խ՝ որպէս **բժ**ան գունդ հրեշտակացն և չորք կենդանիքն զբոլոր երկնային զօրսն նշանակեն, նոյնպէս և իդ *երիցունքն* զբոլոր դասս սրբոցն: - 711. Երկրորդ, որպէս չորք կենդանիքն զվեհագոյնս և զնախամեծարս երկնայնոցն ցուցանեն. նոյնպէս և **իդ** *երիցունքն* զնախամեծարս ընտրելոցն մարդկան...: - 711

**ԵՐԹ +** Նախ՝ զի դեղին լոյսն ձևանայ ընդ *երթս* կամ ընդ լուսանցս մտեալ, իսկ սպիտակն ոչ: - 125

**ԵՐԹԱՄ +** Երրորդ՝ զի առաջի ոչխարացն *երթայ*: - 49. Զորօրինակ՝ որպէս տղայ որ տեսանիցէ ցից ի յորմում, *երթայ* ի մօտ. թէ ամո՛ւր է՝ թողու. վասն զի ո՛չ կարէ հանել. և *երթայ* առ միւսն. թէ շարժի՝ ի մօտ կենայ մինչև հանէ՛: - 160-161. Նոյնպէս և սատանայ աներևոյթ մօտ՝ ի մարդն *երթայ*. թէ ամուր է հաւատն և կամքն՝ ո՛չ կենայ անդ, յուսահատի և թողու: - 161. Բայց սոքա և յոյնք իւրեանց ամսամտօք ո՛չ վարին. այլ ծառայաբար զհետ *երթան* այլոց: - 201. Պատասխանեմք եթէ՝ և զայս *երթիցուք* յառաջինսն և գտցուք: - 262. Նա՛խ՝ զի մարդո՛յն է զանազանել զբարի և զչար. և փախչիլ ի չարէ՛, և *երթալ* զհետ բարւոյն՝ կատարելոցն է ըստ մարգարէին, «խոտորեաց ի չարէ՛ և արա՛ զբարի»: – 274. Եւ կամ որպէս ճանապարհորդք հեռացեալք ի տանէ՝ յորժամ դարձցին վերստին ի տունս իւրեանց, նախ թողուն զվերջին բնակետղն ուստի դիմեցինն *երթալ*: - 280. Երրորդ՝ խաբելն ի զբօսանս *երթալ*: - 287. Դարձեալ՝ որ քան յերկարի ժամանակս, մաշի՛ երկիր և ի ծերութիւն *երթայ* և տկարանայ. որպէս ծեր մարդոյն զօրութիւնն պակասի և ցաւքն առաւելու: - 292-293. Զի տղայ մանուկ *երթեալ* ո՛չ ոք գիտէր զնա. և ո՛չ նա զոք ճանաչէր զի քանանացի՛ էր և աննման վարուց նոցա: - 300. Նոյնպէս և մեք աստէն քաղցեալ եմք բանիւ մինչ ա՛նդր *երթիցուք*, և ապա անդ զկրկին զգեստն զգեցցուք. այսինքն զփառս հոգւոյ և մարմնոյ: - 314. Սիրտ զանմահ աստուածութիւնն ասէ որ ո՛չ ննջէ և ոչ ի քուն *երթայ* պահապանն իսրայէլի: - 316. Նա՛խ՝ զի աղբիւսէ մարմինս. և վաղվաղակի յաղբիւսն *երթայ*...: – 323. Հինգերորդ՝ որպէս արիւն անասնոց ի հողոյ է և ի հող լուծանի. և բանական հոգիս մեր յաստուծոյ է և առ աստուած *երթայ*: - 371. Տապանակն է՛ տէր մեր յիսուս քրիստոս. և նախընթա՛ց եղև մեզ ասելով՝ «*երթամ* և պատրաստեմ ձեզ տեղի»: – 380. Վասն է՞ր ասէ մի *եթար*, և յետոյ ասէ *ե՛րթ* և մի՛ անիծաներ: - 388. Ո՛չ ասէ գնալ որ կամաւորն է. այլ *երթալ*, որ ակամայ քարշիլն է: - 389. Եւ ուխտաւորն ի տուն սգոյ ո՛չ *երթայ*. այն է որ ի մեղքն այլ ո՛չ դառնայ. և ո՛չ ընդ մեղսասէր գործակիցս: - 390. Վեցերորդ՝ զի թէ հաւատացեալ էր սաւուղ ո՛չ *երթայր* ի պատերազմ. այլ խոյս տայր և փախչէր: - 429. Ապա յա՛յտ է զի ի մէջ կարծեաց էր նա. զի թէ սուտ համարէր զվիուկն, ո՛չ երկնչէր ի մահու. և թէ ճշմարիտ՝ ո՛չ *երթայր* ի պատերազմ: - 429. Զոր օրինակ ի բարձր ուստէք քար հոլովեսցի, և որ մօտն կացցէ ասէ ցնա՝ *երթալ* ունիս մինչ ի ներքին վայր տեղիս և ապա դադարիս: - 497. Վեցերորդ՝ համբարձաւ ձայնիւ փողով ըստ դաւթի. և այս վերաբերի յառաքեալսն. որ յանձնեցաւ նոցա *երթալ* քարոզել ամենայն հեթանոսաց. և փողք եղեն տիեզերաց...: – 520. Իններորդ՝ զի ամենայն ոք որ առ պոռնիկն *երթայ*՝ գիտէ ճշմարտութեամբ թէ վրիպեցաւ

ի ճշմարիտ արդարութենէն: - 562. ...ոմն *երթայ* ի սապատն և հաց առնու...: – 620. Եւ յորժամ միտքն *երթայ* յաշխարհական հոգս թէ զինչ կերիցուք և արբցուք, է՛ ներելի: - 620. Բայց յորժամ *երթայ* միտքն ի մեղք՝ է՛ մահու չափ: - 620. Իսկ վախճանեալն կատարեալ լսի. որպէս թէ ոք սկսանի *երթալ* ի ճանապարհ կամ ի գործ ինչ և ի յաւարտիլն կատարած ասի: - 666. և հոգին *երթայ* առ աստուած որ ետ զնա ասէ սողոմոն: - 667. Չորրորդ ի դատաստան *երթալն*: - 668. զի յերեքօրեայ ճանապարհ *երթիցեն* և երկիր պագցեն աստուծոյն իւրեանց: - 682. Եւ *երթայ* առ իւր տէրն հեշտութեամբ. և անդէն վաղվաղակի իբրև երևմամբ և տեսութեամբ ինն շահի զպտուղն առաջիկայ երանութեանց: - 691. ...իսկ հոգի մարդոյն յանհնարինս մտեալ *երթայ* առ միտս որ է՛ երրորդ բարեկամ և խնդրէ բարիս. - 697. Ասեմք, թէ ո՛չ գիտես զի՞նչ է, *ե՛րթ* առ առաքեալն և ուսուցէ քեզ...: - 697. Տասներորդ, որք գտանին կենդանի յաւուրն դատաստանին, ո՛չ *երթիցեն* ի քաւարանն. - 700. Չորեքտասաներորդ, զի թէ մեղաւորացն գոյ հնար արտաքս գալ ի հրոյն և *երթալ* յարքայութիւնն...: - 700. Եւ զիւր ժողովուրդն առեալ ընդ առաջ *երթայ* ասելով՝ «ահաւասիկ ես և մանկունք իմ»: - 713. Զոր օրինակ նշան դրոշմի կայ ի մէջ քո՝ և անասնոյն՝ և տանն. զի ելեալ ի տանէ *երթայ* խառնի ի հասարակ նախիրն...: - 719. Եւ հրեշտակք զխաչն բարձեալ առաջի *երթիցեն*. և զմեռեալս՝ փողով և ձայնիւ ընդ առաջ նորա զարթուսցեն: - 734. *Երթիցեն* արդարքն ի կեանսն յաւիտենից. և մեղաւորքն ի տանջանս յաւիտենից: - 760. Դարձեալ ի վեր յառաջին բանն մեր *երթիցուք* որ էր ծառ կենաց ի մէջ դրախտին: - 767

**ԵՐԹԵՒԵԿ +** Նախ՝ զի բազումք են *երթևեկքն*: - 44

**ԵՐԻ +** Եւ ա՛ջ *երին* քահանային, և երբուծն քահանայապետին. և զայլն կերիցեն քահանայքն: - 358. Աջոյ *երին*. յաջողակ բարի գործն. և Երբուծն դօշն է. որ ունի զսիրտն: - 360. Եւ *երին* աջոյ՝ իւր քահանային, ի նշան աջեա՛յ գործոցն նորա: - 367

**ԵՐԻԿԱՄՈՒՆՔ +** Սպիտակն որ է մաղասն ի բոլոր մարմին և կամ *յերիկամունքն* է՛ ջրոյն: - 215. Տասներորդ՝ Երկոժն անդամքն. և է անդամքն. և *երիկամն* ճարպո՛վ է: - 227. Այսպէս և գլուխն ի մարմինն է՛ վերջին մասն. որ է՛ գործիք բանին. և սիրտն ի մէջն. և *երիկամունքն* վերջին: - 232. Վեցերորդն *երիկամունքն* որ է տուն սերման. ջերմ և գէջ. և տանուտէր ունի զզօհրայն. որ է լուսաբերն: - 241. Վասն է՞ր *երիկամունքն* ճարպով պատեալ է, և սիրտն և լեարդն ոչ: - 241. Ճարպ *երիկամանցն* նախ՝ ամրէ՛ զցանկականն. և երկրորդ անվնաս պահէ: - 241. Զդառնութիւնն ի լեղին. և զհոտածն *յերիկամունքն*. և զմրուրն և զթթուն ի փայծեղն. և զքաղցր արիւնն ի սիրտն. և սիրտն երակովն և շնչովն բաժանէ ի բոլոր մարմինն: - 242. *Յերիկամանցն* քթին հոտեալ: - 243. Եւ բ երակ *երիկամանցն* լի սերմամբ: - 244. Յանճարն *երիկամն*: - 250. Յանճարն և ցանկութիւն՝ *յերիկամունքն*: - 250. Յինգերորդ՝ զի կողնէ աման և տեղի *երիկամանց*. յորմէ շարժի ցանկութիւնն. զի թէպէտ ո՛չ շարժէ զնա. այլ ազդումն ինչ ունի զնմանէ: - 276. Զառաջիկայն և զմիտս մարդկան ո՛չ ոք գիտէ. ո՛չ հրեշտակք և ո՛չ դևք և ո՛չ մարդիկք. բայց միայն աստուած որ քննէ զսիրտս և *զերիկամունս*: - 336. Եւ յայսմանէ՝ հանեն մասն *զերիկամունս* և զլերդափոյթն և զբովանդակ ճարպն ի հոտ անուշից տեառն: - 358. *Երիկամունքն*, զկրկին ցանկութիւնն հոգւոյ և մարմնոյ: - 360. 'Ի ներքուստ՝ սիրտն և *երիկամունքն* և լերդաբոյթն ընդ ճարպին ճենճերեալ ի հոտ անուշից. որպէս հրամայեաց մովսէս: - 367

**ԵՐԻԿՈՒՆ +** Եւ դարձեալ՝ որ քան մերձիմք կատարածի, այնքան մերձենամք ի ցաւս դժոխոցն. որպէս *յերիկունն* սակաւ սակաւ առաւելու խաւարն և ցուրտ: - 293. Եւ տէր մեր արար զզատիկն *յերիկունն* մեծի **ե** շաբաթին: - 337

**ԵՐԻՆՋ +** Վաթսուն, Մոխիր *երնջոցն*. և սրբութեան ջուրն: - 285. Զի՞նչ նշանակէր կարմիր *երինջն* անարատ և անլուծ: - 383. Կարմիր *երինջն* նշանակէ՛ զկոյսն սուրբ: - 383. Յորժամ սուրբ էր մոխիր *երնջոցն*, վասն է՞ր զմերձեցեալն պղծէր: - 384. *Երինջն* ըստ իրաւանցն ունէր զմեղս ժողովրդեանն. և խորհրդովն քրիստոսի՝ սրբութիւն գործէր: - 384. Իսկ անդրանկածին *երինջքն* են մարգարէք և առաքեալք. որ զհաւատացեալս անդրանիկ ծնան. նոքա են ամոլք և պատարագք աստուծոյ: - 426. Զի ի րոբովամէ՛ որ *զերինջսն* գործեաց՝ վեց եօթանասուն ամ է մինչև զգերութիւնն սակաւ ինչ պակաս. վասն որոյ եօթանասուն ամ շաբաթեցոյց զնոսա ի գերութեան: - 448

**ԵՐԻՎԱՐ +** Երեմիա՝ *երիվար* արշաւեալ յազգէն դանայ: - 707

**ԵՐԻՏԱՍԱՐԴ +** Եւ չորիցս կրկնեալ **է**-ից մինչև ի **իը** ամն, լինի *երիտասարդ*. և կատարի բանական մասն: - 265. Մանուկ. Պատանեակ. *Երիտասարդ*. Ծեր. և Զառամացեալ: - 265. Իսկ ամառն, և մինչ ի **զ** ժամս աւուրն, և խարտեաշ մաղձն, և *երիտասարդն* ըստ նմանութեան տարրական հրոյ ջերմ և չոր գոլով. վասն որոյ առաւել բարկացօղ և ցանկասէր լինի: - 266. Զի ասեն թէ՝ այր և *երիտասարդն* զոր սպան ղամեք և էառ զկանայս նոցա. ադդա և սելլա, նոքա եղբա՛րք էին ենովքայ արդարոյ: - 290. Դարձեալ՝ **դ** հասակ փոխի

մարդոյս. մանուկ. *երիտասարդ*. կատարեալ հասակ. և ծեր: - 351. Չորրորդ՝ այն տղայ հասակի. և աստ *երիտասարդ*. և անդ ծեր: - 355. Որ է՛ Տղայ. Մանուկ. Պատանեակ. *Երիտասարդ*. Այևոր. Ծեր. իսկ երեխայն դեռածինն է: - 378. *Երիտասարդն* **գ ժ** է հասակն. իբր թէ հասա՛ք ի չափ լրման և աճման: - 378. Եւ *երիտասարդ* հասակով յաւուր յարութեանն պսակեսցին: - 422. Երրորդ՝ զի իւրաքանչիւր հասակի զմեղս բարձցէ. որպէս ծննդեամբն զերկունս ելոյծ. և մահուամբն զմահ. նոյնպէս և տղայ և մանուկ և *երիտասարդ* հասակաւ զնոսա արդարացոյց: - 479. Նա՛խ՝ զի ծեր և հին աւուրց նշանակեցաւ հայր աստուած ի դանիէլէ՛. իսկ որդին նորածին և *երիտասարդ* հասակաւ: - 479. Իսկ զերրորդն մարկոս պատմէ՛ առաւօտուն և յարևագալն յետ ղուկասու. և տեսին *երիտասարդ* մի ի ներքս ի գերեզմանն ընդ աջմէ նստեալ: - 515. Որպէս ասեն երբեմն ժամանակի ի կոստանդնուպօլիս հռչակեալ քաղաքի, մոլորեալ յոյնք ի մոլորեալ *երիտասարդէ* միոջէ՛, բարձին յեկեղեցւոյ զերգ երեքսրբենին: - 775

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ +** Եւ կրկնեալ ի հնգետասանէն մինչև ի լ, կատարի *երիտասարդական* հասակն. որ է **գ** տասամբ կատարեալ. ունելով զցանկականն և զցասմնականն և զբանականն լիով առ ինքեան: - 265

**ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ +** Եւ *յերիտասարդութեանն*՝ լինի հողմն հարաւային տաք և չոր: - 240. Եւ դարձեալ՝ հասակ մարդոյ չորիցս ունի զփոփոխումն. այսինքն, Ի մանկութիւն. *Յերիտասարդութիւն*. Յալևորութիւն. և Ծերութիւն: - 265. Մէջ գիշեր է *երիտասարդութիւնն*: - 265. Մէջ գիշեր՝ *երիտասարդութիւնն* ի խորս մեղաց ննջեալ: - 266. Տասն ամն մանկութեան է. և ի՝ պատանեակ զինուորութեան. և **իը**՝ *երիտասարդութեան* որ է՛ **ղէ**: - 343. Մանկութեան, *երիտասարդութեան*, և ծերութեան: - 360. Իններորդ՝ զի թե՛փն է ամաց մերոց իսկ նաշիհ ալիւրն *երիտասարդութիւնն* է: - 377. Այլ և երկիւղի զգայութեան չորս հասակի մարդոյն. ի մանկութեան, *յերիտասարդութեան*, յալիս և ի ծերութեան: - 493. Երկրորդ՝ զի մանկունս հասակաւ նախ որկորստութիւնն տիրէ, և ապա՛ *յերիտասարդութեանն* պոռնկութիւնն զօրանայ: - 561. Մէջ գիշերին է՛ *երիտասարդութիւնն*. յորում առաւել քնիմք ի մեղս: - 622. Հինգերորդ, զի **գ** է հասակ մարդոյս. մանկութեան *երիտասարդութեան* և ծերութեան յորում փոփոխիմք վարուք. վասն սոցա **գ** հանգիստ դնեմք: - 675. Սակայն ի յղութեանն իջանէ չար հոգին ի յորովայն մօրն. և նմա զօրութեամբն և ներգործութեամբն ծնանի մանուկն և սնանի և հասանէ *յերիտասարդութիւն*. - 706. Եւ ի մէջ մանկութեան և ծերութեան *երիտասարդութիւնն* է թիւ կատարեալ...: - 726

**ԵՐԻՑԱԳՈՅՆ +** Եւ թէ գոյր *երիցագոյն*, լինէր պատճառն և գերագոյն քան զաստուած. իսկ ստեղծանելն երևի պատճառաւ. այսինքն վասն փրկութեան մարդկան: - 41. Ահա զսակաւ ընծայ կարճառօտութիւն բանիս ընկալ ի քում ընդարձակութեան գանձարանի սրտի՝ *երիցագոյն* հարազա՛տդ Գէորգի է: - 95. Վեցերորդ՝ մարմինն երէց է ըստ կարգի քան զհոգին. և յա՛յտ է, զի որ քան կենդանի եմք՝ *զերիցագոյն* պատիւն մարմնոյն տամք. - 310

**ԵՐԻՑՍ (ԵՐԻՑՍ ԱՆԳԱՄ) +** Սակայն և նա՛ է ի թիւս յայս. այսինքն զի *երիցս* պատկելով երեքտասանն՝ լինի **լթ**. և ի քառասներորդումն պտղաբերի: - 263. Դարձեալ **թ** թիւն է *երիցս* երրեակ. և երեք թիւն է կատարեալ. ունելով առաջին միջին և վերջին. ի նմանութիւն **թ** դասուց հրեշտակաց: - 264. Եւ *երիցս* կրկնեալ **է**-ից մինչև ի **իա**, լինի կատարեալ արիական մասն ցասմնականին. և կոչի պատանեակ մինչև ի **իը** ամն: - 265. *Երիցս* երևիլ ի տաճարին: - 283. Զի՞նչ է *երիցս* երևիլ ի տարին: - 340. Դարձեալ *երիցս* երևիլն է, զի աստ ի մարմնի հաւատով տեսանեմք զքրիստոս. և յետ մահու յուսով ի հոգիս մեր. և յետ յարութեանն սիրով միաւորիմք ի նա՛: - 341. Եւ բաց յայսցանէ **բ** ակն յանդիմանութեան զոր անդամանդեայ կոչէին, և էր ի պճղնաւոր զգեստին ի վերայ ուսոց քահանայապետին յորժամ մտանէր ի սուրբն սրբոց *երիցս* ի տարւոջն, ի տօնի զատկին և յիսներորդացն և ի քաւութեանն: - 349. Քսանևդ, սամփսոն *երիցս* **է** կապօք փորձեցաւ ի կնոջէն: - 423. Եւ տէր մեր յեօթն տեղւոջ է ծաղանօք *երիցս* կապեալ: - 423. *Երիցս* օծաւ դաւիթ. և որդի նորա ի յարգանդի, և ի յորդանան, և ի վերայ խաչին արեամբ: - 437. Դաւիթ *երիցս* սուգ էառ մեռելոյ. և տէրն ի վերայ երուսաղէմի և ի գերեզմանն ղազարու և մեծ ի խաչն: - 438. Իններորդ՝ *երիցս* ուխտ երդմանն սողոմոնի: - 441. Եւ *երիցս* հայր վկայեաց որդւոյ: - 441. *Երիցս* փչելն՝ ի խորհուրդ Երրորդութեանն: - 444. Հնգետասաներորդ՝ յա՛յտ է յայսմանէ. զի վասն տօնի տեառնընդառաջին առաքեաց յուստիանոս կայսրն յեմ զօրս բազում *երիցս անգամ*...: - 484-485. Ոմանք ասեն թէ ի չորրորդ դժոխքն էջ ուր էին արդարոց հոգիքն արտաքոյ ասացեալ *երիցս*, և զնա միայն աւերեաց. և զարդարսն միայն եհան. և զայլսն եթող անդ: - 505. Առ երրորդն ասեմք թէ՝ *երիցս* հարցումն սիրոյն և արածելն զոչխարսն՝ վասն երից ուրացութեանցն էր բժշկութիւն. զի ո՛ր մասն որ խոցի՝ նորին է բժշկական դեղն դնելի՝ և ո՛չ առողջից: - 547. Երկրորդ՝ մի քահանայ *երիցս անգամ* ի միում աւուր պատարագս մատուցեալ: - 553. Երրորդ՝ զի *երիցս* գոչէ փողն. նախ զհոգիսն ի յերկնից կոչէ. և ապա՛ զմարմինս ի հողոյ. և ապա՛ յարուցեալ զհոգի և զմարմին ի

դատաստան հրաւիրէ: - 618. ...վասն որոյ *երիցս* աղօթեմք առանձնակի: - 623. Եւ զայս *երիցս* ասացեալ` էջ մարմինն սուրբ ի վերայ բազկացն յովսեփայ: - 631. Եւ յօհան ոսկէբերանն կարգեաց յաւուրն *երիցս անգամ* սուրբ աստուած ասել: - 631. Դնել *երիցս* ի ճանապարհին: - 660. Իններորդ, *երիցս* օծանի. այսինքն ի մկրտութիւնն, ի կարգն, և ի թաղումն...: – 673. Երրորդն ի դուռն գերեզմանին. վասն որոյ այժմ սովորութեամբ *երիցս անգամ* դնեն զդագաղն ի ճանապարհի: - 675. ...վասն որոյ *երիցս* հանգիստ դնեմք: - 675. ...վասն որոյ *երիցս* հանգիստ դնեմք...: - 675. ...վասն որոյ *երիցս* աղաչեմք. զի պսակացս այսոցիկ արժանաւորեսցէ: - 675. Իններորդ, վասն գ գոչման փողոյն *երիցս* ընթեռնումք զաւետարանն: - 675. ...վասն որոյ *երիցս* խնդրեմք զի այժմ բաժանեալ հոգին խաղաղութեամբ ժամանեսցէ յօթևանս լուսոյ. - 675. Եւ յորժամ դնեն ի գերեզման, քահանայն նախ օրհնէ՛ *երիցս* ափով զհողն և արկանէ ի գերեզմանն ասելով...: - 676. *Երիցս* կնքելն զգերեզմանն, Նախ ի խորհուրդ սուրբ Երրորդութեանն: - 679

**ԵՐԻՒՐՈՒՄՆ +** Չորրորդ` զի պարզի բանս մեր *երիւրմամբ* խռչափողիցն. և (բանք տեառն պարզեալ են ասէ եօթնպատիկ իբր զարծաթ ի հողոյ:) – 121

**ԵՐԻՔՈՎ** - Կործանեաց *զերիքով* ի նշանակ դժոխոցն: - 414. Վեցերորդ` զի թէ լինի անկարօտ գող և զրկօղ, ընդ տեառն իւրոյ կորուսանէ և զինչսն. որպէս աքարն որ ունէր բազում ստացւածս, և գողացաւ ի նզովիցն *երիքովի*. տեսին ամենայն ժողովուրդն և ցասեան ի վերայ նորա և իրաւունս ետուն սատակմանն: - 416. Մետասաներորդ` նախ կործանեաց *զերիքով*, և ապա՛ յերկիրն եմուտ: - 418. Երեքտասաներորդ` անէ՛ծ յեսու որ շինէ *զերիքով* անդ անդրանիկ և կրտսեր որդւով: - 418

**ԵՐԿ +** Եւ ի դարձեալ երևիլն դարձեալ լուանալ, այն է` որ դարձեալ խոստովանիմք և կրկնեմք *զերկն* ապաշխարութեան մինչև նկարեսցի ի մեզ քրիստոս: - 367

**ԵՐԿԱԲՆԱԿ +** Երկրորդ` Ընդդէմ *երկաբնակացն* **ժդ** գլխով: - 30. Հնգետասաներորդ` Հարցումն *երկաբնակացն* առ մեզ **ժ** թւով. և անդ վասն մի կամաց` և մի գործոց` և կրից: - 30. Քսաներորդ` Հարցմունք *երկաբնակացն* ի վերայ մարդեղութեան բանին: - 30. Այսքան առ *երկաբնակս*, և երկրորդ մասն գրոցս: - 30. Ո՛վ *երկաբնակք*, զքրիստոս աստուած մարդացեա՞լ խոստովանիք, թէ մարդ աստուածացեալ: - 68. Ո՛վ *երկաբնակ*` դու զո՞ր բնութիւն ի քրիստոս ասես մի տէր. զաստուծոյն` թէ զմարդոյն: - 68. Այսքան հարցուածս է ընդդէմ *երկաբնակացն* որք ուրանան զմիաւորութիւն բնութեանցն քրիստոսի: - 70. Ասա՛ ո՛վ *երկաբնակ*, որո՞յ իմանաս զասելս: - 70. Եւ ահա՛ չորեքտասան հարցմունքս այս` է ընդ դէմ *երկաբնակ* աղանդոցն. որք զմի քրիստոսն յերկուս բաժանեն բնութիւնս: - 70. Հարցումնս այս է՛ *երկաբնակացն*. և նմանի այնմ թէ` մարդ ըստ հոգւոյն բնութեանն մարմին է, թէ ըստ մարմնոյն բնութեանն հոգի: - 75. Հարցից և ես զձեզ դասք *երկաբնակաց*: - 86. Ա՛րդ` ցուցցուք` զի զվեցեքինն սոցա բաժանեն *երկաբնակքն*: - 87. Եւ է՛ ուրեք զի միաւորեն զանունն` մի քրիստոս` մի տէր` մի որդի` և մի անձն ասելով որպէս քաղկեդոնի թըւի *երկաբնակ* ժողովոյն: - 87. Իսկ զմիաւորութիւն երկուց բնութեանցն ուրանան *երկաբնակքն*: - 88. Դարձեալ հարցումն առ *երկաբնակ* դաւանողացդ զքրիստոս: - 90. Բոլորովիմբն է ընդ դէմ *երկաբնակացն*. որք մասամբ ասեն աստուած և մարդ զքրիստոս. այսինքն յաստուածութենէ և ի մարդկութենէ ժողովեալ աստուած և մարդ: - 90. Զի՞նչ պատասխանեմք *երկաբնակացն* որք հարցանեն զմեզ, թէ մասունքն քրիստոսի աստուած է՛ այսինքն ոտքն և ձեռքն և գլուխն ապա բազմաստուածք էք: - 91. Եւ այսպէս բազում է ի գիրս հարցմանցս վասն միաւորութեան բանին և մարմնոյն ընդ դէմ նեստորի և *երկաբնականց*. որ բաւական լուծումն է բանիս: - 95. Եւ թերևս ասիցէ *երկաբնակն* թէ` սոքա ամենեքեան անձինն վերաբերին քրիստոսի և ո՛չ մարդկութեանն: - 98. Եւ այժմ առ քեզ խօսեսցուք ըստ վկայութեան կարգիս ո՛վ նեստորական *երկաբնակ* և մարդադաւան որոշօղ քրիստոսի, և որոշեալ ի շնորհաց նորին: - 98. Իսկ դամասկացին յօհան` գլուխն *երկաբնակաց* ասէ` «բոլոր աստուածութիւնն է միաւորեալ ընդ մարդկային բնութիւնն ի քրիստոս. և տեսանի ի հոգւոյն քրիստոսի»: – 100. Ապա թէ կամիս զորոշումն բնութեանց ի ներքս բերել ո՛վ *երկաբնակ*, մի՛ ասեր բ բնութիւն. այլ գ. այսինքն զմարմնոյ և զհոգւոյ և զբանին բնութիւն: - 176. Ա՛յս է *երկաբնակաց* դաւանութիւնն: - 350. Այլ հերձուածօղք ոմանք որք են դասք *երկաբնակաց*` ապականացո՛ւ ասեն զանապական մարմինն կենարարին: - 498. Եւ ընդ դէմ *երկաբնակաց* որոց կանայքն մկրտութիւն առնեն: - 526. Իսկ որք ոչ միաւորեն, բաժան և որիշ նշանակեն զբանն ի մարմնոյ իւրմէ. որպէս *երկաբնակքն* քաղկեդոնիկք: - 598

**ԵՐԿԱԲՈՒՆ +** Այսպէս էր ի հօրէ բնութեամբ` և եղև ի մօրէ բնութեամբ. և ո՛չ ասի երկաւոր բնութիւն և *երկաբուն*. այլ միաւոր և միաբուն. մի որդի. և մի բնութիւն. միատեսակ աստուած մարդացեալ: - 78

**ԵՐԿԱԹ +** Իններորդ` օգոստոս կայսր. որ իբրև *զերկաթ* մանրեսցէ զամենեսին: - 29. Որև զոն ի յեղեալքս միաւորեալք. որպէս հուր և *երկաթ*. հոգի և մարմին. որք չարչարին անչարչարապէս: - 76. Եւ չորրորդ` զի

ամենայն իր բնութեամբ իւրով միանայ և ո՛չ արտաքոյ բնութեան. որպէս հուր ընդ *երկաթ*՝ և հոգի ընդ մարմին միաւորի: - 85. Երեսներորդ՝ զի վարդապետք սուրբք օրինակ տան մարդեղութեանն քրիստոսի, որպէս լոյս ընդ օդ՝ և հուր ընդ *երկաթ* միաւորեալ: - 100. Եւ որպէս հուր *յերկաթ* միաւորեալ բառնայ ի նմանէ զցրտութիւնն և զսևութիւնն և մնայ ծանրութիւնն, - 100. Զի որպէս հուր զժանգ արծաթոյ՝ և խարտոց զժանգ *երկաթոյ*, նոյնպէս և նեղութիւն սրբէ զմեղս մարդոյ: - 162. Այսինքն զքոյլն պնդէ՛. որպէս զծու. և զպինդն հալէ՛. որպէս *զերկաթ*: - 202. Վասն որոյ ջերմութեամբ զցրտութիւն լուծանէ որ *յերկաթն* և ի սառն. և չորութեամբ զհիւթն մերժէ որ ի ծու հաւի և յայլսն: - 202. Իսկ ծանրութիւն *երկաթոյն* բնական է. վասն որոյ ո՛չ կորնչի: - 202. Զոր մարդիկ բանականութեամբ և արւեստիւր ստացան զզէնս զանազանս ի *յերկաթոյ* ի պատսպարանս ինքեանց: - 216-217. Իսկ ամպք և հողմունք ի յօդոյն են. որպէս քարինք և *երկաթք* յերկրէ. սոյնպէս աղբիւրք և գետք ի ծովէ՛: - 227. Երրորդ՝ զի ո՛չ հայէր ի վեր. *երկաթի* կապիճս եդեալ ի գլուխն: - 290. Չորրորդ՝ զէնն. զի լիցի սուր *երկաթոյ* և ո՛չ այլ ինչ գործի. զի թէ լիցի *երկաթ* և ոչ սուր, և թէ սուր և ոչ *երկաթ*, ո՛չ է պիտոյ: - 365. Չորրորդ՝ ընտրելի է զէնն որ է՛ գործիք. զի լիցի սուր *երկաթոյ*. զի *երկա՛թն* է գործի բաժանման: - 366. Եւ թէ լիցի *երկաթ* և ո՛չ սուր, և ո՛չ է պիտանի. որպէս բոլոր *երկաթն* թէ հարցէ զկենդանին և սպանցէ, ո՛չ է ուտելի, զի թէպէտ զարիւնն հանէ, այլ ո՛չ համանգամայն զշունչն և զջերմութիւնն: - 366. Եօթներորդ՝ երկին *երկաթի* և երկիր պղնձի. իբր չորացեալ երաշտութեամբ որպէս եղիայիւ: - 376. Կամ ո՛չ լսել աղաղակի մերոյ. իբր *երկաթի* երկինք ընդ մէջ գոլով: - 376. իսկ Կախարդն՝ որ անօթ ինչ թաղէ ի հող. կապս, կամ մոմ, կամ *երկաթ*, և պէս պէս ժժանօք յարմարե՛ն զարուեստն: - 388. Վասն է՞ր զայլախազիւ թլփատեաց և ո՛չ *երկաթով*: - 415. Չորրորդ՝ պատկեր կռոց ո՛չ ձևացաւ անգծելի գոլով *յերկաթոյ*: - 415. Հինգերորդ՝ *երկաթն* սպանմա՛ն է գործի քանանացւոցն: - 415. Վեցերորդ՝ և զպատկերս կռոց *երկաթով* գործէին: - 415. Եօթներորդ՝ *երկաթն* շինականա՛ց է գործի և երկրագործաց՝ անարժան վարկաւ: - 415. Եւ նիւթն ոսկի և արծաթ և պղինձ և *երկաթ*. այլ և խունկն և պատուական ակունքն ի հեթանոսա՛ց էր: - 440. Եւ են որք անշփոթ միաւորին. որպէս հուր և *երկաթ*. հոգի և մարմին. սեռ ի տեսակս. և տեսակ յանհատս: - 475. Եւ են որ էութիւնք են և էութեամբ շաղկապին. որպէս երկոքին նիւթք սոսընձով կամ *երկաթով*: - 476. Նաև փայտն որով *զերկաթն* ի յորդանանէ՛ վերածեաց: - 494. Վեցերորդ՝ ամուրն սատանայի է ներքին դժոխքն. ուր են դրունք պղնձիք և նիգք *երկաթիք*. որ է՛ մեղքն մեծամեծք և յուսահատութիւնք. և ա՛յն էր ամրոց նորա: - 506. Իններորդ՝ յա՛յտ է յօրինակէն. զի եգիպտոս հալոց *երկաթի* կոչի. նշանակէ՛ զդժոխքն որ տանջէր զհոգիսն: - 507. Եւ նշանակէ՛ր կրկին փողն զերկու զանկակս, կամ զզանկակն և զժամահարն. կամ զփայտէն և *զերկաթին*: - 618. Եւ *երկաթ*՝ բանն որ կոտորէ՛ զախտ ստորադասեալ: - 645. Հինգերորդ՝ ծեծ հարկանողացն. որպէս ուռունք *զերկաթս* ծեծողաց: - 752. Որպէս բան ի ձայն՝ և բան ի գիր՝ և լոյս յօդ՝ և տեսութիւն յակն՝ և հուր *յերկաթ*՝ և մուխ ի պողուատ: - 769-770

**ԵՐԿԱԹԵԱՅ** - Եւ պատասխանէ՛ դաւիթ և եսայի՝ «ի ձեռն նորա են ամենայն տիեզերք». որ ունի զշրջանակ երկրի ըստ օրինակի պատկերին *երկաթեայ*: - 180

**ԵՐԿԱԾԻՆ +** Դարձեալ՝ ըստ նոյն սարասի՝ բանն աստուած ունի ծնունդ ի հօրէ նախ քան զյաւիտեանս. և ունի ծնունդ ի մօրէ ի յետին ժամանակիս. և ո՛չ ասի *երկածին*. այլ՝ միշտ միածին. այսպէս նոյն բանն ունի զբնութիւն աստուծոյ ի հօրէ. ունի և զբնութիւն մարդոյ ի մօրէ՛. և ո՛չ ասի բ բնութիւն. այլ մի բնութիւն վասն միաւորութեանն: - 77

**ԵՐԿԱԿԻ +** Բոլոր ի մասունս. և այս *երկակի*. ի նմանամասնեայս՝ և յաննմանամասնեայս: - 87. Եւ դ օդք և բ լծակքն, զի չորեքնիւթեայ աշխարհի են խնամածուք *երկակի* զօրութեամբ խնամողն աստուծոյ. այսինքն արարչական և արքունական: - 344-345. Առաջին յարութիւնն եղև առաջին գալստեամբ քրիստոսի. և այս *երկակի*: - 710. Եւ պատուեալ *երկակի* զարդու. և պարգևեալ և խոստացեալ պատուիրանօք: - 776

**ԵՐԿԱՅՆ +** Լայն. *երկայն*. խոր. և բարձր ասի աստուած: - 102. Երկայնութիւն՝ որ ո՛չէ լայն և ընդարձակ. այլ միայն *երկայն*. զի երկարագծի զօրութեամբ ի բոլորս: - 129. Երկրորդ՝ զի ունի երկիցս բ ծայրք. *երկայնք* և լայնքն. որ է յարնելից յարնմուտս. և ի հիւսիսոյ ի հարաւ: - 210. Այսպէս մարմին մարդոյ որ քան է երկայնութեամբ ի գագաթէ՛ գլխոյն մինչև ի ներբանս ոտիցն, նոյն քան է լայնութիւն ի մէջ երկուց *երկայն* մատիցն ձեռաց: - 232. Եւ պիտոյանայր լեզու *երկայն* և շրթունք ստուար, զի ժողովեսցէ զկերակուր. և յայնժամ ո՛չ կարէր սպասաւորել բանի որպէս ա՛յժմ: - 233. Եւ *երկայն* և կարճ՝ քանա՛կ է շարունակ. և բ ակն և ունկն տարրո՛շ է: - 236. *Երկայն* և կակուղ գլուխն զգուշաւո՛ր է: - 246. *Երկայն* և բարակ՝ նախանձո՛տ է: - 246. *Երկայն* ռունգն՝ թեթևամիտ է: - 246. Կլափն *երկայն* բարկացօղ է և նենգժոտ: - 247. Վիզն *երկայն* և բարակ՝ չարախորհուրդ է: - 247. Լանջքն որ *երկայն* է քան զփորն՝ խոհեմ է: - 247. Բազուկն *երկայն* որ միջին

մատն հասանէ ի ծունկն՝ ուժե՛ղ է: - 247. Ոտք կարի իմն *երկայն* նենգաւո՛ր է: - 247. Լոյս՝ *երկայնքն*: - 250. *Երկայն* **գճ** կանգուն. և լայն՝ **ծ**. և բարձր՝ **լ**: - 293. Եւ **յ** կանգուն *երկայն*, զի ի կրնկէն ի գագաթն լար չափեալ՝ **դ** պատ առնու զգլխովն: - 293. *Երկայն* **իը** կանգուն. և բարձր **ժ**. և լայն **ի**. բոլորն հասարակ: - 343. Եւ արտաքին սրահին պատուարն ի մէջ ունելով զխորանն յամենայն կողմանց **ճ** կանգուն *երկայն* ի հիւսիսոյ և ի հարաւոյ կողմն: - 343. Զի՞նչ է տապանակին չափն **բ** կանգուն և կէս *երկայն*: - 344. Հինգերորդ, որ ասաց զերեք ձևն, *երկայն* և լայն և բարձր. և ո՛չ զխորն որ է՛ թանձրութիւն: - 344. Զի՞նչ նշանակէ քառաթև խաչն. *երկայն*, և լայն, խոր, և բարձր: - 493. Նշանակէ՛ զպատկերն ոսկի կ կանգուն *երկայն* և **զ** լայն: - 637. Ասեմք ըստ սրբոյն անդրէի մեկնչի՝ եթէ սուրբքն զաշխարհի վախճան խնդրեցին. որոց ցուցանէ զպատճառս *երկայն* մտելոյն...: - 696. Յօր անունն ռոմելոս ասեն. զմին ձեռն և զոտն *երկայն* և միւսն կարճ. զմի ակն խաժ, և զմիւսն սև: - 706. Իսկ վաթսունն զբաբելօնի պատկերն **կ** կանգուն *երկայն*, և **զ** լայն. յորում ընդարձակեցաւ կռամոլութիւն: - 708

**ԵՐԿԱՅՆԱԿԵԱՑ +** Կամ *երկայնակեաց* որպէս զմաթուսաղայ. որ մերձ ի ռ ամն ժամանեաց: - 761

**ԵՐԿԱՅՆԱՄԱԶ -** *Երկայնամազ* և թանձրն՝ գազանաբարո՛յ է և մեծախորհուրդ: - 248

**ԵՐԿԱՅՆԱՄԻՏ +** *Երկայնամիտ* առ անզեղջս: - 351. Ո՛չ թէ զմեղս հարց յորդւոցն խնդրէ. այլ մեղաց հարցն ներէ *երկայնամիտ* լինելով մինչև յորդոց յորդիս զի դարձցին ի մեղաց: - 351. Երկոտասաներորդ, զի ուսուցէ մեզ զմարդասիրութիւնն և զներելն միմեանց. որպէս աստուած *երկայնամիտ* եղև առ քանանացիսն որ պատժապա՛րտք էին: - 417

**ԵՐԿԱՅՆԱՆԱՄ +** Վասն այն յորժամ մարդն տկարանայ՝ և այրեցած արիւնն աւելնայ, մազն ծորի՛ և *երկայնանայ*: - 240

**ԵՐԿԱՅՆՄՏՈՒԹԻՒՆ +** Երկրորդ՝ *զերկայնմտութիւն* զհամբերութիւն զյոյս և զարիութիւն հաստատէ՛ ի մարդն: - 584

**ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆ +** Լայնութիւն՝ իմաստութիւնն է. *երկայնութիւն*՝ զօրութիւնն. խորութիւն՝ անյայտութիւնն. բարձրութիւն՝ անհասութիւնն: - 129. Սուրբն դիոնէսիոս ասէ, «եռակի է ձև ամենայն մարմնոց». այսինքն լայնութիւն. *երկայնութիւն*. խորութիւն: - 129. *Երկայնութիւն*՝ որ ո՛չէ լայն և ընդարձակ. այլ միայն երկայն. զի երկարագծի զօրութեամբ ի բոլորս: - 129. *Երկայնութիւն* է համբերութիւնն. որով տանի զչարսն. և վասն ապաշխարութեան անտես առնէ զմեղս: - 129. Այսինքն *երկայնութիւն* սիրոյն մինչ ի կատարած անվախճան: - 129. Այսպէս մարմին մարդոյ որ քան է *երկայնութեամբ* ի գագաթէ՛ գլխոյն մինչև ի ներբանս ոտիցն, նոյն քան է լայնութիւն ի մէջ երկուց երկայն մատիցն ձեռաց: - 232. *Երկայնութիւն*՝ է՛ կեանք նոցա անմահ. զի գերազանցեալ են քան զժամանակեայս, և պակաս քան զյաւիտենականն աստուած: - 344. *Երկայնութիւնն* աստուածային գթութեանն: - 493. Եւ *երկայնութիւն* աստուածային շնորհին: - 493. Եւ զորպիսութիւն բարեաց և չարեաց. և *զերկայնութիւն* ժամանակին որով թիւ մարդկան զլրումն առցէ: - 716

**ԵՐԿԱՆ +** Իններորդ՝ աղալն *յերկանս*. յաղորիս հոգւոյ և մարմնոյ ծասկել: - 339. Աղալ *յերկանս*՝ մաղիլ և զանգիլ՝ և ի հուր և յիւղս եփիլ...: – 357. Իսկ նաշիհն՝ ճգնաւորք և կուսանք. որք ի *յերկանս* ճգնութեան ճընշեն զմարմինս իւրեանց: - 374. Երկոտասաներորդ՝ *զերկանս* սպասու մարմնոյ գործեսցէ միշտ և ի նոյն մեռանի որպէս սամփսոն: - 424. Ասացեալն նմանապէս և աստ կատարեալ. ո՛չ միայն յանդի հեռաստան, կամ աղալ *յերկան*: - 789

**ԵՐԿԱՆՈՒՆ +** Ո՛չ *երկանուն* է և ո՛չ այլ ինչ. այլ իրինոս ասէ՛ զպատճառն և դժուա՛ր է հասկանալոյ: - 300

**ԵՐԿԱՍԷՐ +** Զայս և այլ սոյնպիսիս բազմօրինակ ստուերագրութեամբ առ ճշմարտութիւն իրին. իսկութեամբ ոչ գոլ անհնարին *երկասիրացդ* ի սոյն դեգերմամբ զոր ի պարապ ժամու քննութեան: - 306

**ԵՐԿԱՏԵՄ +** Եւ որպէս այս ո՛չ ասի, նոյնպէս և ո՛չ է հնար *երկատելով* ասել զքրիստոս անեղ և եղական: - 78. Զի միաւորեալն ո՛չ *երկատի*. զի **բ** բնութիւն ասել կամ իմանալ՝ երկատութիւն և բաժանումն է քրիստոսի: - 84. Եւ իւրաքանչիւր սոցա *երկատի*, որ լինին չորս ըստ աստուածաբանին գրիգորի այսպէս: - 123

**ԵՐԿԱՏԵՍԱԿ +** Վեշտասաներորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ որպէս բարին, և երկուցն սկիզբն է աստուած, և արդ՝ եթէ միևնոյն է սկիզբն երկուցն, անկարելի է ներհակացն ի միասին ունիլ մի սկիզբն. զի լինէր սկիզբն այն ո՛չ պարզ. այլ *երկատեսակ*. և ո՛չ միեղէն՝ այլ բաժանեալ և այլայլեալ. նաև լինէր ինքն ինքեան հակառակ, և յառաջ եկելոցն ի նմանէ: - 14. Եւ զի *երկատեսա՛կ* էր բանն՝ այսինքն սուտ և ճշմարիտ, լեզուն երկճղի եղև: - 219

**ԵՐԿԱՏՈՒԹԻՒՆ +** Զի միաւորեալն ո՛չ երկատի. զի **բ** բնութիւն ասել կամ իմանալ՝ *երկատութիւն* և բաժանումն է քրիստոսի: - 84

**ԵՐԿԱՐ +** Կամ է՛ ի ներգործական պատճառն. որ ունիցի խափան ինչ և արգելումն. որպէս մանուկս այս *երկար* ապրեսցի. կամ թէ մանուկս այս լինի երաժիշտ, թէ ո՛չ լինի խափանումն իմն: - 9-10. Ա՛րդ՝ առաջին դարն որ էր երևակին՝ ընդ *երկա՛ր* ապրէին մարդիկքն. զի ունի երևակն յերկար ընթանալ զճանապարհն իւր. որ ի լ ամն վճարէ զկենդանակերպսն: - 291. Այլ աղօթքն և գոհութիւնքն *երկար*: - 466

**ԵՐԿԱՐԱԿԵԱՑ +** Դարձեալ, թէ է՛ հարկ՝ անիրաւք են և ինքեանք աստեղքն. զի ոմանց բարիս գրեն, և ոմանց չարիս. զոմանս մեծատունս և զոմանս աղքատս. հեշտ կեանս և դժւարս. *երկարակեացս* և սակաւակեացս. բազում անգամ անարժանիցն բարիս խոստանան, և արժանեացն չարիս: - 12. Երկրորդ՝ որք *երկարակեացք* են՝ որպէս տունկք, յապաղելով աճին և յա՛մր ծնանին: - 214. Ընդէ՞ր է զի նախահարքն *յերկարակեացք* էին, և մեք սակաւակեացք: - 291

**ԵՐԿԱՐԱՁԳԵԼ +** Երկայնութիւն՝ որ ո՛չէ լայն և ընդարձակ. այլ միայն երկայն. զի *երկարաձգի* զօրութեամբ ի բոլորս: - 129

**ԵՐԿԱՒՈՐ +** Այսպէս էր ի հօրէ բնութեամբ՝ և եղև ի մօրէ բնութեամբ. և ո՛չ ասի *երկաւոր* բնութիւն և երկաբուն. այլ միաւոր և միաբուն. մի որդի. և մի բնութիւն. միատեսակ աստուած մարդացեալ: - 78

**ԵՐԿԲԱՅ +** Այլ զայս *երկբայիս* յաղագս ոչ գիտելոյ քոյ թէ «մինչդ» ամենուրէք ո՛չ որոշէ ընդդէմ հանդերձելոյն. զի թէպէտ նշանակէ՛ զկէտն ուր մինչն է եղեալ, այլ զոր ա՛նդր է քան զնա՝ ո՛չ ուրանայ: - 42. Եւ ի հարցանելն ո՛չ էր *երկբայ* որպէս զաքարիա: - 465

**ԵՐԿԲԱՅԻՄ +** Դու զիա՛րդ *երկբայիս* թէ ի յապականացու բութենէս ադամայ անապական բանն աստուած միաւորեաց ընդ իւր և ծնաւ անապական մարմնով: - 499

**ԵՐԿԲԱՅՈՒԹԻՒՆ +** Դարձեալ՝ կամքն աստուծոյ անփոփոխ է. զի ո՛չ տարակուսի և ո՛չ զղջանայ. ապա թէ արար աստուած զաշխարհս ի գոյութիւն՝ այժմ առնէ յանգոյութիւն, երևի փոփոխումն անփոփոխելոյն. կամ զղջումն և *երկբայութիւն*. որ օտա՛ր է արարչականն կամաց: - 162. Յայտնի՛ է ամենեցուն և առանց *երկբայութեան* զի քրիստոս մեռաւ ըստ գրոց. և մահուամբ եբարձ զմահ և զապականութիւն: - 498. Զա՛յս ասեմ, զի որ ինչ անօրէնութիւն է ազգիս հայոց, նո՛յն է օրէնք այլազգ քրիստոնէից. և որ մեզ *երկբայութիւն* է՝ նոյն դաւանութիւն է նոցա: - 552. Եւ թէ այս և թէ այն, դու ընկա՛լ զխնդիր մտաց քոց առանց ամենայն *երկբայութեանց*. իբր ի միոյ կենեղուտ աղբերէ կենաց ուռճալրացեալ և պտղաւէտեալ: - 772. Իսկ թէ որ ի կեանս յայս զղջասցին ատելով զմեղս և խոստովանին, առցեն զվարձս ապաշխարութեան որ է՛ թողութիւն մեղաց. առանց *երկբայութեան* է այս: - 780

**ԵՐԿԲԵՐԱՆԻ +** Վարդապետք ասեն. որպէս սուրբն բարսեղ՝ թէ որպէս *երկբերանի* քսա՛կ է լուսինն. ընդ մինն ելանէ և ի վերի թիկունքն ժողովի և պակասի ի մէնջ լոյսն. և ի միւսն ի ներքս մտանէ և լուսաւորէ՛ զմեզ: - 187

**ԵՐԿԴՌՆԻ** - Զի կենցաղս այս որպէս *երկդռնի* քաղաք է. ի մինն մտանեմք և ի միւսն ելանեմք. - 680

**ԵՐԿԴՐԱՄ** - Զարծաթն է առ ի համարոց գլխոցն կէս *երկդրամի* որ է՛ **ժ** դանկ: - 344

**ԵՐԿԴՐԱՄԵԱՆ +** Սիկղն և սատերն և *երկդրամեանն* մի են. ի դանկ է. և մի դանկն **բ** գարւոյ կշիռ է: - 343. Այլ և *երկդրամեանն* անդրանկաց **ե** սիկղ: - 359. Արանց **ծ** և կանանց **լ** *երկդրամեան*: - 359. Երկրորդ՝ զի զգին ծերոյն պակաս հրամայեաց. զի **ե** ամեայ տղայոյ *երկդրամեան* էր. և ի ամենին ի *երկդրամեան*. և անտի մինչև ի **կ** ամն **ծ** *երկդրամեան*. և ի **կ** էն յառաջ **ժե** *երկդրամեան*: - 377

**ԵՐԿԵԱԿ +** Նախ՝ *երկեակն* ո՛չ կարէ սկիզբն լինիլ. զի ի թիւ՝ *երկեակն* ի միակէն բաղկանայ: - 20. Երկրորդ՝ *երկեակն* բաղադրեալ է, իսկ միակն պարզ. այլ ամենայն բաղադրեալ ի պարզէ՛ է: - 20. Ապա ուրեմն ո՛չ է *երկեակն* սկիզբն որ է՛ բաղադրեալ. այլ միակն որ է՛ պարզ: - 20. Հինգերորդ՝ որպէս միա՛կ է հայր. զի սկիզբն է ամենայն թւոց. և *երկեակ* որդի. և երրեակ հոգի ըստ աստուածաբանին: - 105

**ԵՐԿԵՐԻՒՐ +** Թագաւորէ՛ նեռն զաւուրս **ռ** *երկերիւր* **հկը**, ըստ դանիէլի: - 709. Որ քարոզեսցեն զաւուրս **ռ** *երկերիւր* **կ** և **զ**: - 785

**ԵՐԿԵՒԱՆ +** Եօթներորդ, կամ թէ եգիտ ի նա *երկեւան* ինչ թերութեան վասն յարութեանն. իբր զի ասէ յայսմ գիշերի մերձեցայք յոտս իմ և ո՛չ հաւատացեր. վասն այն կրկին անգամ ո՛չ հրամայէ մերձենալ: - 517

**ԵՐԿԻՆ(Ք) +** Նա՛խ, զի ըստ սոցա ոչինչ է զանազանութիւն մշտնջենաւորացն և փոփոխականացն. որք են երկնայինք և երկրաւորք. զի նոքա միա՛յն են ի հարկէ, որք միշտ նոյնպէս ունին. որպէս հրեշտակք անմահք. և լուսաւորք *երկնից*. և ջերմութիւն հիոյ: - 8. Դարձեալ ասեն հակառակօղքն, թէ բոյսք և ծաղիկք և պտուղք երկրի ունին զօրութիւն ազդողական. իսկ աստեղք *երկնից* ո՞չ ունիցին: - 12. Զի կամ լսիցեն ի նախնեացն թէ ի սկզբանէ՛ արար աստուած *զերկինս* և զերկիր: - 25. Եւ թէ ոչ՝ տեսցեն աչօք *յերկինս* և յերկիր: - 25. Իսկ երրորդ գլուխն որ է՛ տեսութեամբ զգալեաց *յերկինս* և յերկրի: - 26. Նոյնպէս և *յերկինս*

տեսանելի՛ է չորս ինչ: - 26. Նախ՝ զլայնատարած մեծութիւնն՝ և զհաստատ կամարաձգութիւնն *երկնից*: - 26. Որք զաչս իմաստից յիմանալի ճառագայթիցն խուսափեցին թիւր կամօք, և խոտոր մտօք. զանուղղայս խորհելով, և զանպատշաճս բարբառելով. յարձակեալ անկապ լեզւաւ և անդուռն շրթամբք բացեալ *յերկինս*. ցոպ բերանով ի բարձունս բարբանջելով. և յածեալ ընդ երկրաւ լեզուագարելով. որոց դատաստանն ի բնէ ո՛չ դատարկանայ. և կորուստն ո՛չ նիրհեսցէ: - 31. Չորրորդ՝ է՛ հեռաւորութիւն հաւատալեացն. զի որք ո՛չ կրթին ի գործ իմացման, բայց միայն ի զգայութեանց՝ հեռի՛ են ի հաւատալեացն որպէս երկիր *յերկնէ*: - 31. Եօթներորդ՝ զնա փոքր եղջիւր կոչէ դանիէլ. խեթկի և մեծամեծս բարբառելով. և սոքա խեթկեն զեկեղեցի. և բանան զհայհոյիչ բերանս իւրեանց *յերկինս*, և զլեզուս ածէին զերկրաւ: - 35. Իմա՛, որպէս բրուտն կարէ՛ գործել անօթ ինչ, այլ ո՛չ *երկինք*, և երբեմն ի բարւոք և երբեմն ի չար և ապականեալ. այլ ըստ այսմ ո՛չ լինի աստուած: - 44. Եւ քրիստոս խաղաղութիւն արար *յերկինս* և յերկրի. և զխաղաղութիւն իւր ետ մեզ: - 50. Եւ աստուածաբանքն հեթանոսաց՝ որպէս միտս ամենեցուն՝ և միտս արտաքոյ գոլ ասացին լցեալ ըզփոռւածս *երկնից*: - 51. Են և ասին ի յէքս, մարդ, հրեշտակ, *երկինք*, երկիր. և որ ի մէջ սոցա է՛ և ասի: - 55. Արարիչ է հայր. արարիչ է և որդի. արարիչ է և հոգին սուրբ. որպէս և գրեալ է «Ողորմութեամբ տեառն լի եղև երկիր. և բանիւ տեառն *երկինք* հաստատեցան. և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա»: - 56. Զի թէ առանձին մարդկութեանն, ո՞րպէս է *յերկնից* իջեալ. զի ի կուսէն ծնաւ մարմինն: - 70. Եւ թէ միայն բանին որ ի *յերկնից* իջեալ, ահա՛ որ երկու կամք ընդ դէմ միմեանց խոստովանիս. ծնողին և բանին: - 70. Եօթներորդ՝ իջանելն *յերկնից*՝ բանին յարմարի. զի միաւորեցաւ ի մարմնի այն է իջանելն: - 73. Այլ վասն մարմնոյն ասէ յոհաննէս՝ «ես եմ հացն կենաց որ *յերկնից* իջի»: – 73. Ապա ուրեմն աստուած է մարմինն և *յերկնից* իջեալ: - 73. Ութերորդ՝ ելանելն *յերկինս* պատշաճի մարմնոյն քրիստոսի. որպէս ի տեսս առաքելոցն վերացաւ *յերկինս*. և իջանելն՝ բանին որպէս ասացաւ: - 73. Ապա ուրեմն որդին մարդոյ որ էն է և *յերկինս*: - 73. Ո՛չ ասի հողեղէն և երկրեղէն վասն հողեղէն մարմնոյն. այլ միշտ *յերկնից* մարմնով իւրով. և ստեղծիչ հողեղինաց և երկրաւորաց: - 78. Այլ և մի բնութիւն ասեն՝ որք ի *յերկնից* բերեալ զմարմինն խոստովանին: - 82. Նոյնպէս գաւառն՝ միոյն *երկին*, և միւսոյն երկիր: - 87. Իսկ աստ նման միմեանց՝ և բոլորին կոչի քրիստոս. ըստ որում ասի՝ քրիստոս էջ *յերկնից*. որ է բանն. և քրիստոս եդաւ ի գերեզմանի. որ միայն մարմինն է աստուածութեամբն. և քրիստոս էջ ի դժոխս. որ միայն հոգին էր աստուածութեամբն: - 88. Զի որ խոնարհեցաւ բանն ի մարմին՝ նո՛յն բարձրացաւ մարմնով. և որ էջն ի ստորինս երկիր, նո՛յն է որ ելն ի վերոյ քան զամենայն *երկինս*. և որ ունայնացաւ՝ նո՛յն ելից զամենայն: - 94. Իսկ գանձն և աղբիւրն իմաստութեան *երկնի* և երկրի՝ ո՛րպէս լինի կարօտ գիտութեան կամ ստացեալ յայլմէ: - 98. Զի ամենայն ճշմարիտ դաւանօղքն զքրիստոս աստուած խոստովանեցան. և ի նոյնն նախատակեցան. և առ ճշմարտութիւնն քրիստոս յերկրէ *յերկինս* վերափոխեցան: - 101. Եօթներորդ՝ աստուածն մարդ եղև և յերկիր էջ. զի դու լիցիս աստուած և *յերկինս* ելցես: - 107. Վեցերորդ՝ ժամանակն է ի ներքոյ *երկնից*. և միշտն ի վերոյ *երկնից*. և յաւիտեանն ի վերոյ քան զամենայն *երկինս*: - 116. Այս է զի հոգին սուրբ որդւով պարգևի ամենայն արարածոց *յերկինս* և երկրի: - 125. Եւ բարձրութիւն որ ի *յերկինս* էհան: - 129. Երկրորդ՝ ցուցանէ զնստեալն ի վերայ՝ տէր գոլ *երկնի* և երկրի և ծովու: - 132. Վասն է՛ր դիոնէսիոս ինն դասս հրեշտակաց ասէ. և իրինոս և սուրբն եպիփան է *երկինք* և է դասք ասեն: - 134. Իսկ է *երկինք* զհրեշտակաց դասուցն ասէ, մի քան զմի բարձրագոյն յիրաքանչիւր *երկինս*: - 134. Այլ թէ ըստ կարգին իմասցիս՝ հետևիմք առաջասացեալ սրբոյն դիոնիսեայ. որպէս աւանդեցաւ նմա յառաքելոյն պօղոսէ յափշտակելոյն յերրորդ *երկինս*: - 135. Այլ թիւ իւրաքանչիւր առանձնութեանցն անգիտելի է մեզ որպէս զաստեղս *երկնից*: - 141. Որև տէրն՝ փայլակն ասէ անկանել *յերկնից*: - 148. Իսկ «առաւօտի», զի ի սկիզբն ստեղծման աշխարհի ընդ բաժանիլ ի մէջ լուսոյն և խաւարին՝ յայնժամ միայն ծագեցին յառաջին օրն յանկարծակի և անկան *յերկնից*. թէպէտ ոմանք յերկրորդ օրն ասեն: - 148. Եւ դարձեալ, ամպ *զերկինս* նշանակէ. զի ոմանք օդեղէն ասեն զերկինս: - 148. Եւ դարձեալ, ամպ զերկինս նշանակէ. զի ոմանք օդեղէն ասեն *զերկինս*: - 148. Դարձեալ՝ ոմանք են *յերկնից* և *յերկինս*. որպէս հրեշտակէ սուրբք: - 151. Եւ ոմանք ո՛չ *յերկնից* բայց *յերկինս*. որպէս ի մարդկանք սուրբք: - 151. Եւ ոմանք են *յերկնից* բայց ո՛չ *յերկինս*. որպէս դևք: - 151. «Աստեղս» զհրեշտակս կոչէ վասն բարձրութեան և պայծառ լուսոյն որպէս հրեշտակք ի *յերկինս*: - 152. Դարձեալ զպայծառացեալսն մկրտութեամբ որպէս զաստեղս և *յերկինս* եդեալ զխորհուրդս իւրեանց: - 152. Տեղական անկումն եղև դիւաց ի սկիզբն ստեղծման իւրեանց վասն ամբարտաւանութեան և մախանաց ընդդէմ արարչին փառաց. ուստի անկաւ *յերկնից* ի դասուց հրեշտակաց և ի փառաց իւրեանց որպէս ասացաւ յառաջագոյն: - 153. Թէ ո՞րպէս երկիր անշարժ է՝ և *երկինք* շարժի: - 154. Զո՞ր ձև ունի *երկինք*. և քանի՞ է: - 154. Վասն յատկութեան *երկնից*. և զի հոմանուն է արփին՝ և եթերն՝ և այլն: - 154.

*Յերկինս* են լուսաւորքն. և վասն գոյութեանց նոցա. և գնան հրեղէնք ընդ ջուրս: - 154. Վասն դրախտին զի *երկին* կոչի և իմանալի տունն: - 155. Որպէս եղև առ մարիամ բորոտութիւն վասն բանբասելոյն զմովսէս. որ աստ սակաւ ինչ տանջեցաւ, զի մի՛ ելցէ *յերկնից* ժառանգութենէն: - 159. Այլ և ո՛չ տեղի պատահական. թէպէտ ի նշան պատւոյ ասին *յերկինս*. այլ ոչ իբր ի մարմնական տեղւոջ: - 174. Եւ թէպէտ այսպէս ասացաւ, սակայն գոյացաբար է՛ աստուած յիմանալի *երկինս*. և կարողաբար ամենայն ուրէք: - 180. Զի **գ** են *երկինք*: - 180. Ո՞րպէս է երկիրս ի մէջ *երկնից* հաստատեալ և անշարժ մնայ: - 181. Հինգերորդ՝ *երկինքն* թեթև է ի վեր քարշէ. և երկիրս ծանր ի վայր հակէ. և այսպէս մի զմի հաստատուն պահեն: - 182. Զի՞նչ է պատճառ շարժութեան *երկնից*: - 182. Եւ բնականն Նախ այսպէս. զի օդն որ ի մէջէ մտեալ և փեռեկեալ զներքին և զվերին կիսագունդն, նա՛ է պատճառ շարժութեան *երկնից*: - 182. Դարձեալ՝ կէտ երկրիս անշարժ է ի մէջն. և պատճառէ՛ զշարժութիւնն *երկնի*: - 182. Իսկ արիստոտէլ ի վերայ երկուց բևեռացն ասէ շարժիլ *երկնի* որպէս անիւ սայլին ի վերայ սռնոյ: - 182. *Երկինքն* անապական է բնութեամբ, աստուած ետ նմա շարժիլ: - 182. *Երկինք* զո՞ր ձև ունի: - 182. Վարդապետք ասեն թէ ամենայն *երկինք* ի հարկէ պարտին ունել զբոլորակ ձև: - 182. Առաջին պատճառ, զի *երկինքն* է պարզ մարմին. զի ո՛չ է ի չորից տարերց. այլ եերորդ էութիւն է: - 182. Ապա ուրեմն պարզ էութեան *երկնից* պարտ է ունել զպարզ ձև որ է բոլորակն: - 182. Երկրորդ՝ զի բոլորակ ձևն պարունակօ՛ղ է. և *երկինքն* զամենայն պարունակեալ ունի ի ծոց իւր: - 182. Երրորդ՝ զի բոլորակն սո՛ւր է ի շարժումն. և *երկինքն* սրագո՛յն է ի շարժումն, որ ի շրջիլն իւրում շօշափէ՛ զերկիր ի մի կէտ: - 182. Ապա ուրեմն բոլորակ ձևն պատշա՛ճէ *երկնից*: - 182. Չորրորդ՝ զի *երկինքն* է կատարեալ մարմին. զի ազդէ՛ յամենայն ստորնային մարմինս խնամելով զնոսա: - 182. Ապա ուրեմն բոլորակ ձևն որ կատարեալ է՝ պատշաճի կատարեալ մամնոյ *երկնից*: - 183. Հինգերորդ՝ թէ *երկինքն* ո՛չ էր բոլորակ՝ այլ քառանկիւնի կամ եռանկիւնի, յորժամ շարժէին անկիւնքն՝ յորմէ տեղւոջէ վերանային՝ մնային առանց տեղւոյ. և տեղի անկեանցն առանց մարմնոյ: - 183. Վեցերորդ՝ զի թէ *երկինքն* ո՛չ էր բոլորակ, յայնժամ արեգակն և այլ աստեղք յորժամ գային ի մէջ *երկնից*, մեծագոյն երևէին. քանզի ի միջին կիտէն *երկնից* առ մեզ է ուղղական գիծ. իսկ յարևելից առ մեզ է՛ խոտորնակի գիծ. և ուղղական գիծն կա՛րճ է քան զխոտորնակ գիծն: - 183. Քանի՞ են *երկինք*: - 183. Ա՛րդ՝ բաժանի *երկինքն* յերիս. այսինքն ի բնականն. յատկականն և ի նմանականն: - 183. Եւ է՛ Բնական *երկինք* **ժ**: - 183. Նա՛խ՝ հրեղէն *երկինք*: - 183. Եւ է *երկինք*՝ է գօտիքն են է մոլորակացն. որ է Զոհա՛լն. Երևա՛կն. Հրա՛տն. Արեգա՛կն. Լուսնթա՛գն. Փայլածո՛ւն և Լուսինն: - 183. Իսկ Յատկական *երկինքն* է **ե**: - 183. Առաջինն է տարրական հրոյն վերին մասն. որ կոչի հրեղէն *երկինք*. հոմանուն առաջին *երկնից*: - 183. Երկրորդն՝ ներքին մասն հրոյն. որ կոչի օլոմպային *երկին*. վասն մերձ գոլոյ յօլոմպիոս լեառն: - 183. Երրորդն՝ է վերին մասն օդոյն. և կոչի եթերային *երկին*. զի մերձ ի տարրեղէն հուրն է. և վառի ի նմանէ. զոր թռիչ աստեղաց կոչեմք: - 183. Չորրորդն՝ է ներքին մասն օդոյն. և կոչի օդեղէն *երկին*. որպէս ասեն գիրք սուրբ, «թռչունք *երկնից* զտէր օրհնեցէք»: – 183. Հինգերորդ՝ *երկինք* կոչի և դրախտն. զի բա՛րձր է և լուսաւոր և անմահութեան է վայր. որպէս ասէ անառակ որդին. «հա՜յր մեղայ *յերկինս*». այսինքն ի դրախտն: - 183. Սոքա հնգեքին կոչին *երկինք*. զի զյատկութիւնս *երկնից* ունին. և սոքօք լինին հնգետասան *երկինք*: - 183. Իսկ Նմանական *երկինք* է **ե**: - 183. Նախ կոչի *երկինք* ամենասուրբ Երրորդութիւնն. զի անհաս բարձրութեամբ գերազանցեալ է յամենայն եղելոց: - 183. Այլ և նախ կոչի *երկինք*՝ զգալի երևումն աստուծոյ՝ և հրեշտակաց՝ և մարգարէից սրբոց: - 183. Երկրորդ *երկին* երևակայութեան տեսիլն դարձեալ նոցա: - 183. Երրորդ *երկին* կատարեալ տեսութիւն իմացականին. որ դէմ յանդիման տեսանէին զաստուած. որպէս մովսէս և դաւիթ: - 183. Եւ պօղոս յափշտակեցաւ յայս երրորդ *երկինս*: - 183. Չորրորդ՝ հոգևոր բարութիւնքն և վարձք սրբոցն կոչին *երկինք*. ըստ այսմ «վարձք ձեր բազում են *յերկինս*»: – 183. Հինգերորդ՝ *երկին* կոչի ամենասուրբ Երրորդութիւնն վասն լուսաւորութեան և անհաս բարձրութեանն յամենայն եղելոց որպէս ասացաւ: - 184. Եւ զի յայնժամ էր ի դասս հրեշտակաց *յերկինս*: - 184. Այլ վասն հրեղէն *երկնիցն* ասէր ելանել և հաւասարիլ նմա: - 184. Այս քան է թիւ *երկնիցն*: - 184. Տասն բնական *երկինքն*. և **ե** յատկական. և **ե** ըստ նմանութեան. որ լինին ի *երկինք*: - 184. Զի՞նչ է յատկութիւն *երկնից*: - 184. Դարձեալ և ա՛յլ յատկութիւն *երկնից* որպէս ասացաւ՝ բարձր: - 184. Այլ զաստղալից *երկինս* ի յօդոյ ասէ խտացեալ և թանձրացեալ. և ի նմա՛ են կառուցեալ աստեղք և ընթանան: - 184. Եւ այս ևս գիտելի է, զի որպէս հրեղէն *երկինն* հոմանուն է, այսինքն լուսեղէնն որ ի սկզբանէ ստեղծաւ. և բոլորակ հրոյն: - 184. Այսքան յաղագս *երկնից*: - 184. Իններորդ՝ զփորուածս *երկնից* բովանդակ լնու: - 185. Եօթներորդ՝ զի զարդ *երկնից* է: - 186. Ընդդէմ *երկնիցն* շարժի: - 186. Վասն է՞ր զլուսաւորս ի *յերկինս* եդ աստուած: - 188. Նա՛խ՝ զի *երկինքն* բարձր է, և յայնմանէ առաւել զլոյսն ծագէ յերկիր: - 188. Երրորդ՝ աչք մեր որ է՛ լոյս՝ ի վերին մասն գլխոյս. և լուսաւորքն *յերկինս*. զի մերձաւոր նմանն զնմանն տեսցէ: - 188.

հաստատութիւնն և ջրեղէն կամարն. և ծովք. և ցամաք *երկիր*: - 226. Իսկ ամպք և հողմունք ի յօդոյն են. որպէս քարինք և երկաթք *յերկրէ*. սոյնպէս աղբիւրք և գետք ի ծովէ՛: - 227. Յերրորդն՝ զծով և *զերկիր*: - 227. Ութերորդ՝ հողն ի *յերկրէ* առեալ, զի երկիւղալից է մարմինս մեր. վասն այն կոչի *երկիր*...: – 229. Եւ յառաջ զամք *յերկիր*. և ապա՛ ելանեմք յերկինս: - 230. Կարգաւոր էր նախ պատրաստել զարքունիս որ է երկինք և *երկիր*. և զգահոյս որ է՛ դրախտն. և զսպասաւորքն որ են կենդանիքն. և զմեծութիւնս տնկոց և բուսոց. մանաւանդ ոսկւոյ և արծաթոյ և ականց ի սիրտ *երկրի* գանձել. և ապա՛ թագաւորին բնակիլ: - 230. Երկոտասան անդամքն՝ կենդանակերպիցն և **բժ**ան մասին *երկրին*: - 232. Վասն որոյ գլուխն է՛ ի վերոյ. և խռչափողն որ ունի զտուր և զառն՝ օդո՛յդ է նման. և ի ներքոյ այլ մարմինք և հիւթ արեան և ջրոյ՝ *երկրիս* է օրինակ: - 232-233. Վեցերորդ՝ զի բաժանեսցի մարդն ի կենդանեաց և ի տնկոց. զի տունկք զիակառակն ունին զարմատն որ է՛ գլուխ՝ ի *յերկիր*, և զոտն ի յերկինս: - 233. Գլուխն որպէս երկինք ի վերոյ. և ոտքն որպէս *երկիր* ի ներքոյ. զի ծանրութիւնք և ծորմունք ամենայն ի վայր հոսեսցին: - 233. Ութերորդ՝ վասն արտաքին զգայութեանցն որ են ի գլուխն. զի այլ կենդանիք միայն հեշտանան կերակրով և ցանկութեամբ. իսկ մարդն հեշտանայ առաւել գեղեցկութեամբ զգալեացս. յորժամ տեսանէ աչօքն զերկին և *զերկիր*. և ժողովէ՛ զճշմարիտ գիտութիւն նոցա և հեշտանայ: - 233. Զի թէ կորագլուխ էր մարդն, և երկոքին ձեռքն ի *յերկիր* հաստատեալ, ո՛չ կարէր գործել: - 233. Եւ որպէս սակաւ մասն ոտիցն ի *յերկի՛ր* է հպեալ և կոխէ, նոյնպէս և մեզ սակաւ պէտս մարմնոյ. այսինքն զգեստուց և կերակրոց ի *յերկրէ* ստանամք. և զանչափն և զաւելորդն կոխեմք և անցանեմք...: – 233. Եւ բնականն, Նա՛խ՝ զի նմանիմք *երկրի* որ յերեսն ունի զգեղեցկութիւն բուսոց, և ի թիկունս ոչ: - 234. Երկրորդ՝ ըստ կարգի տարերց. թիկունքն թանձր և պինդ՝ է՛ *երկիր*: - 234. Երրորդ՝ զի զդէմս ունիցիմք միշտ ի յերկինս. և զթիկունս *յերկիր*. և հանապազ ի բարին յառաջեմք ոտիւք և ձեռօք և ո՛չ դառնամք ի չարն: - 234. Զի շօշափելիքն ի ներքո՛յ է որպէս *երկիր*. և ճաշակելիքն ի վերոյ որպէս ջուր. լսելիքն յօդն է. և տեսանելիքն հուրն ի վերոյ: - 235. Իսկ մազն է այրեցած արիւնն. որ օդովն ի դուրս փչի. որպէս տունկք *յերկրէ*: - 240. Չորս հողմ է ի դ կողմ *երկրի*: - 240. Եւ բաժանին **բժ**ան անդամքն ըստ երկոտասան կենդանակերպիցն. և **բժ**ան մասին *երկրի*: - 241. Նոյնպէս և *երկրի* է՛ է մասն տիեզերաց. զոր է կլեմ կոչեն: - 241. Եւ որք ծուլանան, սողոսկեալ անկանին *յերկիր* ընդ մարմին մարդոյ շաղապատեալ: - 252. Եւ զոր օրինակ՝ տունկ ի *յերկրի* տնկեալ՝ նախ դալարի. և յորժամ հաստատի ծաղկի. և յորժամ նս հաստատի՝ ապա պտղաբերի: - 255. Երրորդ՝ զի ի կենդանի *երկիր* անկանի: - 256. Թէ ժամանակն ցուրտ է կամ ջերմ. և *երկիրն* գէջ կամ չոր. և սերմն հոտեալ կամ աղանձեալ. և սերմանօղ ո՛չ լինի կամ ոչ սերմանէ. վասն որոյ ո՛չ բուսանի: - 256. Որպէս ճիւղ հատեալ ի ծառէ և տընկեալ *յերկրի*, ճիւղն է հատեալ ի ծառէն, այլ կենդանութիւնն ո՛չ. ուստի յա՛յտ է զի տընկեալ ճիւղն նոյն կենդանութեամբն բուսանի զոր ունի առ ինքն: - 257. Զի քարշեն *յերկրէ* զհիւթ, և ունակացեալ պահեն, և հալեալ փոխեն յինքեանս. և վտարեն զաւելորդսն ի կեղև՝ ի տերև՝ և յայլսն: - 262. Իսկ աշունն, և մինչ ի թ ժամս աւուրն, և սեաւ մաղձն, և ալևորն, ըստ նմանութեան *երկրի* ցուրտ և չոր գոլով՝ ծոյլ և պղերգ գոլով ամենայն ուսմանց և գործոց: - 266. Դարձեալ՝ ամենայն իր առաւել ունի զօրութիւն ի տեսակս իւր՝ քան ի յայլս. որպէս ջուր առաւել զօրաւոր է ի գետս՝ քան ի *յերկիր* խառնեալ. և տընկականն առաւել է ի տունկս՝ քան յանասունս: - 266. Դարձեալ՝ մարդոյս միա՛յն է լինիլ *յերկրէ*՝ և յերկինս. և առաքինութեամբ վարձս ըստանալ: - 275. Եօթներորդ՝ զի լուծաւ և եմուտ յարգանդ *երկրի*. այսինքն ի գերեզման: - 279. Եւ ապա Իններորդ ի ցաւալից *երկրիս* այս պանդխտանալ: - 280. Զի պահելով զպատուիրանն ի կատարեալ անմահութիւնն ժամանէր յերկինս. իսկ անցանելովն փոխեցաւ ի մահ և անկաւ *յերկիր*: - 282. Վաթսուննք, Մովսէս ետես *զերկիրն* և ո՛չ եմուտ: - 285. Եւ զի՞նչ նշանակէր *երկիրն* աւետեաց: - 285. Եւ *երկիրն* յոր դուք մտանէք: - 285. Երկրորդ՝ զի խոնարհ և հնազանդ էր յամենայնի. ուստի մնաց եղբօրն պատարագի. որ իւրն **գ** ամսով յառա՛ջ էր հասեալ քան զեղբօրն. այսինքն ծնունդ ոչխարացն քան զպտուղ *երկրին*...: – 286. Երկրորդ՝ *յերկրէ՛*. զոր արեամբ ոռոգեաց: - 287. Զանէծքն ո՛չ յինքենէ ասաց զի մի՛ սատակեսցի. այլ *յերկիր* ետ որ է՛ զէն մահու և չարչարիչ՝ և գերեզման յետոյ: - 287. Իսկ գործել ասաց *զերկիր*, զի դրախտին չեղև արժանի: - 287. Եւ չորրորդ՝ զի յաւելեր անէծս *երկրի* զկնի հօրն քոյ Ադամայ: - 287. Դարձեալ՝ հոգի որ յաստուծոյ հեռանայ՝ ինքն յինքենէ շարժի. անհաստատ *յերկրի*, անպատսպարան յերկինս: - 287. Եւ որպէս կորխ դադան և աբիրոն վասն հակառակութեանցն ընդ մովսէս և ահարոն՝ հրով և բացմամբ *երկրի* դատապարտեցան: - 288. Եւ մարգարէացաւ եթէ վասն մեղաց մարդկան *երկիր* կրկին ապականի ջրով և հրով: - 289. Դարձեալ՝ որ քան յերկարի ժամանակս, մաշի՛ *երկիր* և ի ծերութիւն երթայ և տկարանայ. որպէս ծեր մարդոյն զօրութիւնն պակասի և ցաւքն առաւելու: - 292-293. Վասն որոյ օրհնութեամբ ցրուեաց զնոսա ի վերայ *երկրի*, զի աճեսցին և բազմասցին և լցցեն *զերկիր* ծննդօք և շինութեամբ և բարեգործութեամբ ի փառս

ամենասուրբ Երրորդութեանն ամէն: - 298. Եւ մելքիսեդեկին *յերկրէ* ծնեալ և յերկինս սնեալ, որ առաւել յարմարի ճշմարտութեանն ի յերկնից իջեալ և ի կուսէ ծնեալ: - 301. Ութևժ, որպէս վասն իսահակայ եղև ձայն յերկնից. այսինքն «օրհնելով օրհնեցից». որ է՛ յայտնեցից երկնի և *երկրի*: - 306. ...և եղև նոցա մարմնաւորապէս ժառանգել *զերկիր* ամոնացւոց, մովաբացւոց, և քանանացւոց: - 306. Ութերորդ՝ յուսով ժառանգ *երկրին* ծնաւ իսահակ. նոյնպէս և ժառանգ բոլորիցս տէր մեր. և ժառանգ արքայութեան ծնունդք աւազանին...: - 307. Նոր ծնաւ և կոյսն զաստուած մարդացեալ *յերկրի*: - 307. Եւ տէր մեր ազատ յերկինս առ հայր, և *յերկրի* եղև ծառայ զկերպարանս ծառայի առեալ: - 313. Տասներորդ՝ հայրն առաքեաց զյովսէփ առ եղբարսն որ էին հովիւք և երիցունք տեսանել զնոսա. և բանիւն յուդայի վաճառեցաւ և եղև տէր *երկրին* և կերակրիչ: - 313. Երկոտասաներորդ՝ յովսէփ լ ամեայ իշխանացաւ *երկրին*: - 313. Ինննժ, յովսէփ ստացաւ ոսկի և զարծաթ և *զերկիրն* եգիպտացւոց՝ փարաւոնի. այսինքն զզէնս սատանայի. զի փարթամութիւնն մեծ զէն է սատանայի որովք գործէ՛ զամենայն պղծութիւնս. որպէս *երկիրն* սոդոմայ պարարտութեամբ գործէր զմեղս: - 314. Քսաներորդ, և որպէս յովսէփ եթող զքուրմն և *զերկիր* նոցա, զոր քրիստոս էր բառնալոց զմեծամեծ մեղսն և զկռապաշտութիւնն. զի ըստ առն և զօրութիւն իւր. և ըստ աստուծոյ և գործք իւր: - 314. Զի քանանացիքն խորհրդածի այսմ *երկրի* և կենաց: - 314. Եւ պարգևացն *երկիր*՝ վերինն եէմի. այսպէս: - 314. Նա՛խ՝ որպէս յակոբ պատարագ մատոյց ի ջրհորն երդման զվերջինն և ապա ել *յերկրէն*: - 314. Ութերորդ՝ որպէս իջեալքն յեգիպտոս ընդ հարաւ մտին ի գեսեմ ի պարարտ *երկիր*: - 315. Նոյնպէս և տէր մեր յարուցեալ ի հայրական աթոռոյն՝ գայ ի դատել *զերկիր*...: – 317. Չորրորդ՝ զի վայելէ՛ր իսկ նմա որպէս զհատ ցորենոյ թաղեալ յաղբիւսն՝ այսինքն *յերկիր*. և պարարտացեալ հասցէ ի հունձս պտղաբերութեան: - 323. Հինգերորդ՝ ընդ դէմ հպարտացելոյն որ խորհէր զաթոռ իւր դնել յամպս և անկաւ *յերկիր*. նա՛ խոնարհեցաւ *յերկիր* և ել յերկինս: - 323. Վեցերորդ՝ ի խորհուրդն ադամայ որ անկաւ *յերկիր* փշաբեր, անկաւ յոբ *յերկիր* և յաղբիւս: - 323. Վեցերորդ՝ խօսեցաւ աստուած՝ և զամենայն անճառելի գիտութիւնս վասն արարածոց ուսոյց նմա. զոր ոչ գիտէին մարդիկ զլինելութիւն երկնի և *երկրի* և ծովու և կենդանեաց: - 326. Չորրորդ՝ զի յաղբիւսն անկաւ որպէս ադամ ի դրախտէն *յերկիր*: - 327. Երրորդ՝ խոնարհեցաւ յոբ ի պատւոյն. և տէր մեր էջ ի *յերկիր* և վասն մեր աղքատացաւ: - 327. Այլ աշխարհն օսիդ՝ գաւա՛ռ է եսաւայ. զի օսիդն մի է յորդւոցն եսաւայ յորոյ անուն կոչեցաւ *երկիրն* օսիդ: - 327. Քսանևդ, նա՛ *զերկիր* պատառեաց դադանեանցն: - 329. Եւ տէրն *զերկիր* շարժեաց և զգերեզմանս եբաց. և **գ** ժամ խաւար էած փոխանակ **գ** աւուր խաւարին եգիպտոսի: - 329. Երրորդ՝ թագաւորական գաւազան էր ադամ ի դրախտին. և յորժամ մեղաւ՝ անկաւ ի *յերկիր* և եղև օձ մեղաւոր: - 332. Վեցերորդ՝ նշանակէ՛ զբանն աստուած գաւազան ուղղութեան և թագաւորութեան առ հայր. եկն նա՛ *յերկիր* և էառ զօձաձև բնութիւնս մեր. և դարձեալ ըմբռնեալ մարմնովն ել յերկինս և նստաւ ընդ աջմէ հօր: - 332. Նշանակէր զխաւար անմտութեան նոցա որ առաւել էր քան զամենայն *երկրի*. զի զամենայն զարշ կենդանիս ի պաշտօն առին: - 334. Բոլորն ամենայն դճլ ա՛մ է յաւետեացն աբրահամու մինչև յելսն յեգիպտոսէ՛. այլ զերկու **ճե** ամն հարքն *յերկրին* քանանու բնակեցան. և **զբ ճիե** ամն որդիքն յեգիպտոս կացին...: – 337. Եւ յաւուր ուրբաթու խաւարեցաւ *երկիր* որպէս ամպն ի վերայ ժողովրդեանն: - 337. Եւ որպէս դարձաւ ժողովուրդն ի հանգրուանն առաջին. և տեառն մարմինն եդաւ ի հող *երկրի*: - 337. Բնական որակ տարերացն Սևն է՛ *երկրի*. և Սպիտակն ջրոյ. Կարմիրն օդոյ. և Դեղինն հրոյ: - 342. Ծիրանին ջրոյ. զի կոնքիլոսն որ ներկէ՛ զծիրանին՝ ի ջրո՛յ է. և Բեհեզն սպիտակ՝ *երկրի*. զի վուշն *յերկրէ* լինի: - 342. *Երկիր* և երկրեղէնքն: - 342. Երրորդ այսպէս. ի լուսնոյդ ի վայր տարրական հուրն և որ ի նմա երեւոյթք լուսոյ. օդն և թռչունք. ջուր և լօղականք. *երկիր* և բոյսք. մարդ և անասունք: - 343. Եւ արտաքին սրահն՝ *երկիրս* մարմնաւոր տեղի: - 343. Երկրորդ՝ յորժամ *յերկրի* երևին, և պակնուն տեսօղքն երևմամբ նոցա, վկայք լինին փառաց ամենազօրին: - 345. Չորրորդ՝ զանազան նկարք աշտանակին, զանազան ներգործութիւնք ընթացից նոցա առ *երկիրս*, կենդանեաց՝ տնկոց՝ և անշնչից: - 346. Հինգերորդ՝ աշտանակն ի մէջ սրբութեանն տայր լոյս. և լուսաւորքն ի *յերկրի*: - 346. Զի յորմէ հետէ խոստացաւ աստուած *զերկիրն*՝ աբրահամու, յետ **ղճ** ամի ժառանգեցին զնա՛: - 351. Չորեքտասաներորդ, նոքա *յերկրէ* և *յերկրի* մատուցանէին պատարագ. իսկ տէրն մեր յերկնից և յերկինս մատոյց: - 355. Հնգետասաներորդ, նոցայն քահանայապետ մովսէս և ահարօն ո՛չ կարացին մտանել *յերկիրն* պարգևաց. իսկ քահանայապետն մեր էանց ընդ երկինս երկնից...: – 355. Երրորդ՝ զի հանգիցէ *երկիր* և տարերք որ ի չար գործն մեր չարչարին. այլ և պահպանապետ հրեշտակք նոցա: - 372. Հինգերորդ՝ զի և վայրի անասնոց և գազանաց բաժին լիցի ի վաստակն մեր. զի նոցա է *երկիրս* այս և տեղիք ուր մեք բնակեցաք: - 372. Այլ և թագաւորք և իշխանք *երկրի*: - 374. Եօթներորդ՝ երկին երկաթի և *երկիր* պղնձի. իբր չորացեալ երաշտութեամբ որպէս եղիայիւ: - 376. Երրորդ՝ չտալ *երկրի* զբոյս. և ո՛չ ծառոց պտուղ: - 376. Զի

շաբաթացեալ հանգչիցի *երկիր* ի չար բնակչաց: - 376. Եւ **ժ** թիւ կատարեալ նուէր և սուրբ է աստուծոյ. յաղագս որոյ թագաւորք *երկրի* զընծայս ի մարդկանէ՛ հնազանդելոց **թ թ** խնդրեն...: – 376. Երկոտասան լրտեսաց տասունքն չա՛ր համբաւէին. և երկուքն զբարութիւն *երկրին*: - 380. Այլ և թիւ և համար գործոց. պահանջին ի մէնջ ի *յերկրին* աւետեաց: - 381. Իսկ իշխանութիւնն երկրաւոր, վասն որոյ բացաւ *երկիր* և եկուլ զդադան: - 381. Եւ երկրաւոր իշխանաց՝ *զերկիր*: - 381. Տասներորդ, բարկութեամբն արգելաւ *յերկրէն* աւետեաց. զի ցուցցի թէ արդա՛ր է աստուած. և ա՛կն ումեք ո՛չ առնու: - 386. Այլ ի յաւարէ՛ թագաւորաց որ ի *յերկրէն* թշնամեաց բերեն՝ հալա՛լ է մատուցի՛ նուէրք յեկեղեցին: - 390. Այլ ոմանք՝ **ճ**աւոր զերկին, և վաթսնաւոր զդրախտն, և երեսնաւոր *զերկիրս* ասեն նշանակեալ բ ցեղիցն յայնկոյս յորդանանու, և **թ** ցեղիցն *յերկիրն* քանանացւոց: - 391. Զի՞նչ նշանակէ եղիազար քահանայ, և յեսու, և իշխանքն որք բաժանեցին *զերկիրն*: - 391. Եւ սոքա բաժանեալ մեզ *զերկիրն* պարգևաց. այսինքն աստ զնոր օրէնքն, և անդ զվերինն երուսաղէմ: - 391. Վեց քաղաքաց հրամայեաց որոշել ապաստանի և տալ քահանայից. **գ** *յերկիրն* քանանու և **գ** յայնկոյս յորդանանու: - 392. Եւ **խբ** այլ ի շրջակայ *երկիրն* որ լինի խը: - 392. Նա՛խ՝ անդ զհարքն թուեաց որք կոտորեցան. և աստ զորդիսն որք ժառանգէին *զերկիրն*: - 392. Եւ դարձեալ՝ զի բազմացն շատ տացէ զբաժին *երկրին*, և սակաւուցն փոքր: - 392. Մ՛րդ՝ եգիպտոս է՛ նշանակ *երկրիս* այս. և ծովն կենցաղոյս. և անապատն կայանք հոգւոցն: - 393. Նոյնպէս յերեք տեղւոջ ոգորի. *յերկրի*՝ զի հանցէ յերկնից. և յօդդ՝ զի արգելցէ. և ի յարութեանն՝ զի ընկեսցէ ի հուրն: - 394. Զի՞նչ է որ մովսէս ետես *զերկիրն* և ո՛չ եմուտ: - 394. Չորրորդ՝ մարմնով զօրինակն ետես, և ապա՛ հոգւով զճշմարիտ *երկիրն* պարգևաց: - 395. Զի՞նչ նշանակէ *երկիրն* աւետեաց: - 395. Զի եգիպտացիքն են հեթանոսք *երկրի*: - 395. Իսկ խոստման *երկիրն* նոր օրինօքս ի ձեռն փրկչին յիսուսի: - 395. Յինգերորդ՝ նախ *յերկիր* գամք. և ապա յերկինս ելանեմք: - 395. Ըստ մարմնոյ յա՛յտ է զի *երկիրն* եգիպտացւոց դա՛շտ է. վասն այն նեղոս գետն արբուցանէ զնա՛: - 398. Իսկ *երկիրն* նոր օրինացս ո՛չ բնական իմաստութեամբ հեթանոսաց ոռոգի, այլ շնորհօքն աստուծոյ և հաւատով դալարի: - 398. Նոյն և *երկիրն* վերինն եէմի յանեզրական ծովէ՝ յամպոյ հոգւոյն և շնորհացն իմաստութեան ոռոգի. վերին և ներքին դասք հրեշտակաց՝ և մարդկան: - 398-399. Զի փայտն և հողն անիծաւ ադամաւ. ըստ այնմ, «անիծեալ լիցի *երկիր* ի գործս քո. և փուշք բուսցին ի քեզ»: – 400. Երկրորդ՝ նշանակէր կրտսեր եղբայրն զքրիստոս զերկրորդն ադամ. որով յառնեն մարդիկ *յերկրէ*: - 402. Այլ ի կուսանս հանգչի. որք հրեշտակաց նմանք եղեն կուսութեամբ. վասն այն ասեն աստուած բնակեալ է յերկինս ուր կուսանք են հրեշտակք. և ո՛չ *յերկրի* ուր ամուսնացեալք են: - 404. Նա՛խ՝ անընդմիջաբար *յերկրէ*. որպէս նաւթ: - 407. Իններորդ՝ ի ժամ այլակերպութեան տեառն ի բերել հրեշտակապետին զմովսէս, ասէ սատանայ ցհրեշտակն, ստեաց աստուած զմովսէս մուծանել *յերկիրն* ուր երդուաւ ո՛չ մտանել նմա: - 410. Երրորդ՝ զի մի՛ ժողովուրդն կանգնեսցէ արձան ի վերայ նորա ըստ սովորութեան *երկրին*: - 411. Էառ և *զերկիրն* պարգևաց. զոր խոստացաւ աստուած աբրահամու իսահակայ և յակոբայ: - 414. Եւ առաջնորդեալ *երկրին* աւետեաց ամս **իէ**: - 414. Չորրորդ՝ զի մի՛ ծովացի վերին կողմ *երկրին* և վնասեսցին: - 414. Տասներորդ՝ և նորս թլփատութիւն սրտի՝ վէմն քրիստոս լինելոց էր. որ կարծրացաւ աստուածութեամբն. և էարկ սուր *յերկիր* և բաժին: - 415. Երրորդ՝ ի յեղծանիլ պատկերին աստուծոյ որ վասն փառացն աստուծոյ ստեղծաւ, ընդ նմին եղծան և ապականեցան այլ արարածք որ վասն փառաց մարդոյն ստեղծան. որ ո՛չ միայն անասունք, այլ և հող և ջուր և օդ *երկրին* կորուսանեն զպտղածնութիւն. որպէս սոդոմայեցոցն: - 416. Երկրորդ՝ զի ո՛չ էին բաւական բնակութեան *երկրին*: - 416. Տասներորդ՝ զի ուսցին նոքա ի նոցանէ զբարիսն, և մնասցեն ժառանգ *երկրին*. որպէս գաբաւոնացիքն: - 417. Մետասաներորդ՝ նախ կործանեաց զերիքով, և ապա՛ *յերկիրն* եմուտ: - 418. և Երեսուներորդ, յեսու բաժանեաց *զերկիրն* ամենայն ցեղիցն. և եղիազար քահանայ և իշխանքն ընդ նմա: - 419. Եւ գիտելի՛ է, զի անցեալ ընդ յորդանան՝ սատակեցին զորդիսն ենակիմայ. և ապա՛ ժառանգեցին *զերկիրն*: - 419. Եւ այն զի քամեալ լցաւ կուրն և ո՛չ *երկիր*. զի մնացին և կատարեցան բանք մարգարէիցն ամենայն և ո՛չ եղծան. իսկ յետոյ հոգի տեառն ելից զտիեզերս մարգարէութեամբ և շնորհօքն քրիստոսի: - 421. Եւ տէր մեր զհայր ի յերկինս և զմայր ի *յերկրի* քաղցրացոյց փրկութեամբ մարդկան: - 422. Երկրորդ՝ զի սուտ խօսեցաւ աստ. զի թէ սամուէլ էր՝ ո՛չ ուսանէր ի սաւուղայ. և դնն *յերկրէ* ո՛չ ելանէ: - 430. Չորրորդ, ի հովուութենէ օծաւ թագաւոր և տէր մեր նա՛խ քարոզեաց, և ապա՛ ժողովեաց. և տիրեաց յերկինս և *յերկրի*: - 435. Դաւիթ **լգ** ամ թագաւորեաց. և տէր մեր մարմնով ի վերայ *երկրի*: - 437. Եւ տէր մեր արար խաղաղութիւն յերկինս և *երկրի*: - 440. Եւ տէր մեր *յերկրի* մարդացաւ, և յերկինս թագաւորեաց. իսկ նստիլն ի վերայ ջորոջ, որ է խաչն. զի վիրք զխաչն ջուարի կոչեն: - 441. Եւ տեառն մերոյ տուաւ ամենայն իշխանութիւն յերկինս և *յերկրի*: - 442. Եւ տն մերոյ կրկնի ամենայն ծունր յերկինս և *յերկրի*: - 442. Չորրորդ՝ վասն իմաստութեան *երկրին*: - 442.

Շարժումն ոմանք զյափշտակելն ասեն. և այլք հողմոյ և *երկրի*. և կէսք զինչումն հրեշտակաց: - 445. ...և փակէի արքայի որդւոյ ռոմելայ. և գերեաց զնեփթաղիմ և ըզգալիլեա. և Զգաղայաթ **գ** ցեղիւքն իսրայէլի. և տարաւ *յերկիրն* ասորեստանեայց: - 447. Եւ ի պահպանութիւն աշխարհին հրէից՝ առաքեաց սաղմանասար *յերկրէն* ասորւոց պանդուխտս որ բնակեցան ի սամարիայ և սամարացիք կոչեցան: - 447. Յետոյ վասն գազանաց *երկրին*՝ հնազանդեցաւ գրոյն մովսէսի. և ծածկեցին զաստուածս իւրեանց ի լերին սոմորոն. և անդ երկիր պագին սամարացիք: - 447. Երկրորդ՝ զի ի ամն իբրև զմի օր համարեցաւ նոցա. զի հանգիցեն ի չար գործոց, և *երկիրն* ի չար գործելոյ: - 448. Երրորդ՝ որպէս զստնդիայի մանուկն է ամ խրատէ՛ դայեակն. այսպէս ժողովուրդն որ եւ *յերկրէն* իւրեանց, *երկիրն* բաբիլացւոց հ ամ ի գիրկս իւր դայեկեաց զնոսա և սնոյց. զի յետ դարձին *յերկիրն* իւրեանց՝ զբարիս գործեսցեն: - 448. «Ո՜ խորք մեծութեան և իմաստութեան» անօթն ընտրութեան նորին քարոզէր. առանց քննութեան դատաստանի և ճանապարհի եկաւորութեան մարմնով ի վերայ *երկրի*: - 456. Այսինքն երդումն աբրահամու և դաւթի՝ մարդ լինիլ բանին ի վերայ *երկրի* ի պտղոյ յորովայնէ նորա. և նստել յաթոռ հօր նորա. և ի նմանէ օրհնիլ ամենայն ազգաց: - 457. Ոմանք ասեն թէ՝ ողորմութիւնն աստուծոյ է՛ յերկինս առ հրեշտակս. և արդարութիւնն *յերկրի* առ մարդիկս: - 458. Այլ և ունէր հայր ի յերկինս, և մայր ի *յերկրի*. իսկ անդ հայր առանց մօր. և աստ մայր առանց հօր: - 470. Դարձեալ՝ օձն ի յերեսս *երկրի*, և վիշապն ի խորս և յանդունդս: - 488. Նախ՝ *երկիր* շարժեցաւ: - 490. Նա՛խ՝ զի ծանիցի թէ սոցա արարիչ է անարգեալն. վասն այն լուսեղէնք և օդեղէնք և օդն խաւարեցան. ջուր ի կողիցն բղխեաց. և *երկիր* շարժեցաւ: - 490. Եւ ի ձայնէն վէմք պատառեալ և *երկիր* շարժեալ, տեղի ետուն իջանել ի նոսա՛. և քարացեալ սիրտ նոցա ո՛չ շարժեցաւ: - 490. Եւ քրտամբ յորժամ քիրտն հոսէր *յերկիր*: - 491. Զի որ քան ամ ի *յերկրի* քարոզեաց, նոյն քան ժամ ի դժոխս առ հոգիսն: - 495. Զի ափիբերան կարկեսցին դնօղքն զբերանս յերկինս և զլեզուս ածելով *զերկրաւ*: - 502. Ի գիրս բենետիքտոսի հարցեալ եղև թէ ո՞ւր են դժոխքն. և տուաւ պատասխանի թէ՝ յանկեան և յեզր ծովուն ի ներքոյ *երկրի* ի խաւարչուտ վայրս: - 504. Եւ թէ ոք ասիցէ՝ ի *յերկրի* որք հաւատացին փրկեցան, և անհաւատքն ո՛չ նոյնպէս և ի դժոխս: - 507. Եւ դարձեալ որ ուղիղն է, որպէս մարմնով տեսին ի *յերկրի*, նոյնպէս և հոգւով ի դժոխս պարտ էր հոգւոցն հաւատալ ի հոգին քրիստոսի և ազատիլ: - 507-508. Որպէս յօրինակէն տեսանի. որ թէպէտ առ հասարակ ելին յեգիպտոսէ յանապատն, այլ ոմանք մտին *յերկիրն* պարգևաց: - 508. **Ասեմք եթէ՝ մողեզն և կոկորդիլոսն որ քարթոշ ասեն,** և *յերկրի* ազգի ազգի զեռունք արիւն ո՛չ ունին: - 511. Եւ յաւուր ուրբաթու խաւարեցաւ *երկիր*. որպէս ամպն ի վերայ ժողովրդեանն: - 513. Եւ որպէս դարձաւ ժողովուրդն ի հանգրուանն առաջին, և տն մարմինն եդաւ ի հող *երկրի*: - 513. Եւ ա՛յն է խորհուրդն, զի որքան ամ մարմնով մարմնաւորացն քարոզեաց. նոյնքան ժամս հոգւով հոգւոցն քարոզեաց. այսինքն **լգ** ամ և կէս ի *յերկրի*. **լգ** ժամ և կէս ի դժոխս...: – 516. Այլ պիտո՛յ է բնական **գ** տիւ և **գ** գիշեր գոլ ի սիրտ *երկրի* որպէս ասաց քրիստոս: - 516. Նա՛խ՝ զի հանգիցէ ի վաստակոցն զոր **լգ** ամ վաստակեցաւ ի վերայ *երկրի*: - 519. Ա՛րդ՝ եռակի՛ է համբարձումն քրիստոսի. որ է *յերկրի*, ի վերայ *երկրի*, ի վերոյ երկնից: - 520. Նախ *յերկրի*՝ արդեամբք բարի վարուց: - 520. Ի վերայ *երկրի*՝ ի խաչ բարձրացեալ: - 520. Չորրորդ՝ **լգ** ամ *յերկրի* եկաց, զի ուսուսցէ զկենդանիս: - 520. Երրորդ՝ վասն զի օրինա՛կ է է աւուրցն ի յորս *երկիր* հիմնեցաւ. նաև է դարու կենցաղոյս: - 524. Այժմ հաւատացեալք, և յետոյ առ հասարակ երկինք և *երկիր* և ամենայն ազգ: - 529. Երկրորդ, մի անուն՝ և նշանակեալքն բազումք. որպէս խոյ է յերկինս և *յերկրի* և ի ծովս. նոյնպէս մի կոչի եկեղեցի կենդանի մարդն և շինեալն ի քարանց և եկեղեցին անդրանկացն յերկինս. սակայն զանազա՛ն են որպիսութեամբ: - 533. ...և այլ նմանապէս առ այսոքիւք երրորդ եկեղեցի որով կարօ՛ղ են հաւաքել ամենայն տիեզերք *երկրի* և լինիլ միով հաւատովն մի հաւատացեալք որպէս ասացաւ: - 533. Եւ փոխանորդ նորա ի *յերկրի* ի հինն քահանայապետն որպէս ահարոն. և ի նորս կաթողիկոսն իւրաքանչիւր ազգի: - 534. Իսկ *յերկրի* և յերկինս, այսինքն ի կեանս և յետ մահու: - 541. Դարձեալ՝ *երկրիւ* զգործ, և երկնիւ զպատիժն է իմանալ: - 541. Դարձեալ՝ *յերկրի* ի կատարմանէ, և յերկինս ի սկզբանէ իշխանութեանն. եթէ կապելն և եթէ արձակելն: - 541. Եւ ի գալն *յերկիրս* հայոց, ետուն նմա օգնական զիւղն օծման զոր քրիստոս օրհնեալ էր. և զգեղարդն. և այլոց ազգաց չկա՛յ այս պարծանքս. զի մեր մեռոնս հանապազ և միշտ զնոյն շնորհ ունի: - 549. Որպէս անպտուղ *երկիր* կորուսանէ զբարի սերմանս և փուշ բուսուցանէ. նոյնպէս և մեք զբարի սերմանս որ եդ ի մեզ աստուած ի չարն փոխարկեմք: - 564. Այս է՝ զմեղքն՝ զկամքն չար՝ և զսատանայ՝ որ խռովարարք էին եբարձ ի միջոյ. և արար խաղաղութիւն յերկինս և *յերկրի*: - 585. Դռնապանն *երկրի*: - 609. Իսկ ի մեզ դուռն մարմնոյս որ *յերկիր* և ի խաւար հայի, արևմտեանն է: - 614. ...և ապա՛ ի *յերկրէ* յարուցանէ զմարմինս. որպէս այն որ հրեշտակապետն նստեալ ի վերայ վիմին փողէր զյարութիւնն քրիստոսի: - 618. Դարձեալ ասեն իմաստունք թէ՝ յերկնից *յերկիր* բազում տարեն ճանապարհ է: - 620. ...եկն ի *յերկիր* որ է՛

արևմուտք և խաւար. եղև որդի մարդոյ: - 621. որք լրտեսք եղեն *երկրին* աւետեաց: - 628. Զոր նայեսցեն երկինք և *երկիր* զանչափ ողորմութիւնն և արդարութիւնն առ մեզ: - 629. *Երկրի* ձայն՝ տարերց: - 640. Ադամայ ասաց *յերկրէ*: - 640. Դարձեալ՝ առաջին ձայնն ի *յերկրէ* ի ծնունդն մարմնով: - 640. Զերկինս և *զերկիր*. և այլն որպէս ասացաւ: - 645. ...և միաւորեաց զերկինս և *զերկիր*, զիրէայս և զիեթանոսս...: - 646. Եւ ա՛յս է խորհուրդն. զի որ քան են սուրբք ի *յերկրի* կենդանի, ո՛չ տօնեմք նոցա մինչ ի հանդէս նահատակութեան են...: - 647. ...վասն որոյ յերեկոյս տօնեմք զտօն կատարման ելից նոցա ի *յերկրէ*...: - 647. Դարձեալ, **գ** յիսնեակն՝ **գ** քաղաք ապաստանաց ի քանանացւոց *երկրին*: - 653. Երրորդ՝ կրկին է մարդս. որ է՛ հոգի և մարմին. և **բ** աշխարհս. այսինքն երկին և *երկիր*: - 662. Արդ՝ նա՛խ մարմնոյս ետ *զերկիր*, և ապա հոգւոյն տայ զերկին: - 662. Արդ՝ եթէ նախ զայն էր տուեալ, այսպիսի իմն հանդիպէր. կամ մնալով անփոփոխ՝ զրկէր *զերկիր*: - 662. Եւ թէ անտի փոխէր *յերկիր*, լինէր երկին փոփոխական, և *երկիր* անփոփոխ: - 662. Վասն որոյ *յերկրի* աստ բազմանան թուով. և ապա՛ միահաղոյն մտցեն անդ որպէս բազմութիւնք հրեշակաց: - 662. Վեցերորդ՝ ամենայն պատուական իր՝ ի բարձր տեղւո՛ջէ. որպէս գլուխն զի պատուական մասն է. և լուսաւորքն և երկին քան *զերկիրս*: - 662. Ա՛րդ՝ ի *յերկրի* մեղանչեալք՝ դարձեալ ապաշխարութեամբ անդ ժամանեմք: - 663. Անցանեմք *զերկիրս* և լնումք զերկինս: - 666. Եւ զի կտաւն *յերկրէ* է և արուեստիւ գործեալ. ցուցանէ թէ զոր ինչ գործեաց ոք ի *յերկրի*, զնոյն զգենու և զարդարի: - 671. ...և **բ** հրեշտակք դարձեալ բերեն ի *յերկիր* ի յարութեան աւուրն: - 671-672. Երրորդ, զի ի հեռու ճանապարհ գնայ. այս է *յերկրէ* յերկինս. յուղարկաւորեմք մինչ ի գերեզմանն: - 676. Զի վասն յանցանացն ադամայ անիծաւ *երկիր* ի գործս նորա. զսուրբ մարմինն քրիստոնէի չէ՛ պարտ դնել յանսուրբ հող. - 676. ...զի կենդանիք բնակին ի վերայ *յերկրի*, և մեռեալք ի ներքոյ *երկրի*: - 677. Ութերորդ, զի որակ *եկրի* խաւար է և սեաւ. և ո՛չ է պայծառ որպէս այլքն...: – 678. Իններորդ, զի անշա՛րժ է *երկիր* տեղեաւ. զի կիբրկոն ասեն...: - 678. Իսկ տապանաքարն, Նա՛խ՝ զի մի՛ գործեսցի *երկիրն* այն յայլ ինչ գործ, կամ քակտեսցի վասն այլ մեռելոյ: - 679. Դարձեալ՝ որպէս զսերմանիս թաղեալ *յերկրի*՝ դարձեալ ջրով ոռոգանեմք. - 680. ...այլ և մեղօքն կապի մարդ յերկինս և *յերկրի*. - 680. Իսկ անարժանքն որ ունէին զսիրտն յեգիպտոս, սատակեցան յանապատին և ո՛չ մտին *յերկիրն* պարգևաց: - 682. ...յորժամ բաժանին օդիքն և այծիք. որ է արքայութիւնն *երկնից* և դժոխքն յաւիտենից: - 686. Այլք այլ իմն ասեն. իբր թէ իւրաքանչիւր մեղաւոր հոգի ի գերեզմանս իւրեանց կամ ի *յերկրի* տանջին...: - 686. Այրն ի տարաշխարհ գնաց քրիստոսէ. որ մարմնով համբարձաւ յերկինս. զի յատուկ տեղի մարմնոյ *երկիրս* է. վասն որոյ ի տարաշխարհ գնալ ասէ յերկինս: - 692-693. ...զոր միանգամ կապիցէք *յերկրի*՝ եղիցի կապեալ յերկինս...: - 698. ...և զոր արձակիցէք *յերկրի*՝ եղիցի արձակեալ յերկինս...: - 698. ...և եղիցի երկին նոր և *երկիր* նոր...: – 701. Ասեմք նախ՝ եթէ երկինք և *երկիր* մարմին գոլով նորոգին մարմնական հրով. իսկ հոգին զի է՛ անմարմին ՝ նորոգի շնորհօքն քրիստոսի և հոգւովն սրբով: - 701. ...մինչև կատարեսցին հարուածք բարկութեանն աստուծոյ ի վերայ *երկրի*. որով փորձին և արդարք և մեղաւորք. - 703. ...և զոր արձակիցէք *յերկրի*, եղիցի արձակեալ յերկինս: - 704. Որ է՝ ուրանամ կամաւ զարարիչն երկնի և *երկրի*: - 707. Այսինքն զի աստուածք և տեարք կոչին յերկինս հրեշտակացն դասք, և թագաւորք *յերկրի*...: - 711. Նախ կոչելով զերկինս ի վերուստ որ են հոգիքն. և *զերկիր* որ են մարմինք: - 713. Դարձեալ՝ որ հրոյ է վերակացու, ի վերայ նորին հարկանէ. և որ օդոյ և ջրոյ և *երկրի*, ի վերայ իւրաքանչիւր տարերաց գոչէ՛: -714. Վասն է՞ր փողն ի յերկինս և *յերկրի* գոչէ. - 714. Նա՛խ՝ զի կոչեսցէ յերկնէ զհոգիս սրբոց և *յերկրէ* զմարմինս. - 714. Երկրորդ, զի չո՛րք են սկզբունք աշխարհի. երկինք որ է՛ երկուք. հուր և օդ. և *երկիր* որ է՛ **բ** իր. հող և ջուր: - 714. Եւ զգործս բոլոր մարմնոյ *յերկրի* հաստատեցաք. թէ երկնաւոր թէ երկրաւոր: - 714. ...զի կարիցեն հասկանալ. այն որ համանգամայն եղեն երկինք և *երկիր*: - 717. այլ մեռանին և իսկոյն լինի յարութիւն նոցա. յորում ո՛չ մարմինքն ի *յերկիր* անկանին և ո՛չ լուծանին: - 717. ...նմանապէս և մարմինք մեռեալք *յերկրի* և հոգիք ի կայանս իւրեանց ի միասին կան առհասարակ արդարոց և մեղաւորաց մինչ դատաստանաւն բաժանեսցին օդիքն և այծիք: - 721. Զի հուր մեծ ընթանայ ի գալստեանն քրիստոսի. և վառեսցին երկինք և *երկիր* հրովն այն, որպէս ասէ պետրոս: - 727-728. Նոյնպէս սրբին ամենայն տիեզերք. զի երեսք *երկրի* այնպէս պայծառանայ որպէս զհայելի: - 728. Դարձեալ՝ էութիւնն մնայ, այլ ներգործութիւնն պակասի՝ այսպէս. զի ջերմութիւն հրոյն և ցրտութիւն ջրոյն և փոփոխմունք օդոյդ որպէս ամպք և այլն, և սևութիւն *երկրի*...: - 728. ...պակասին սոքա և ժողովին ի ներքոյ *երկրի* և լինին տանջանարանք մեղաւորաց որպէս ասէ սուրբն բասիլիոս: - 728. Եւ վասն պարզութեան *երկրի* վկայէ՛ դաւիթ, «լերինք որպէս մոմ հալին»: - 728. Երրորդ զի պարզի հալեալ մոմ. այսպէս սևութիւն և թանձրութիւն *երկրի* ի դժոխս ժողովին և մարմինք մարդկան յերեսս *երկրի*: - 728. Չորրորդ ի պնդութենէն թափանցիկ լինի. այսպէս և *երկիր* իբրև զապակի: - 728. Հինգերորդ հալեալ մոմ ո՛չ ունի զառաջին կերպն այլ

զգոյացութիւնն. նոյնպէս և գոյացութիւնն *երկրի* ո՛չ կորնչի. այլ պատահմունքն այլայլին. զի ո՛չ ճանաչի թէ այս այն է: - 728. Զի թէ նսեմ *երկիրս* լուսաւորի, լուսաւորքն վասն է՛ր խաւարին: - 728. ...այլ ա՛յս է` զի իւրաքանչիւր մարմինք սրբոց պայծառասցին էպատիկ քան զարեգակն. որպէս տեառն մերոյ ի թաբօր լերինն. և **թ** դասուց հրեշտակաց լոյսն *յերկիր* ծաւալին. զի զօրութիւնք երկնից շարժեսցին: - 728. Եօթներորդ` երկինք զտիւն ասէ` և *երկիր* հաստատ զգիշերն: - 729. Ա՛յս է գալարիլն նոցա, զի երկինք և *երկիր* տիւ և գիշեր միաբանեալ վկայե՛ն գործոց մարդկան: - 729. Զի ուր և գործեցին մարդիկ` գիտեն երկինք և *երկիր*: - 729. Թէպէտ ո՛չ ունին բանք և ոչ խօսք, այլ ընդ ամենայն *երկիր* ել բարբառ վկայութեան նոցա. զի ամենայն տեղիք և ամենայն ժամանակք մարդկան առ նոսա է՛ յայտնի: - 729. Նա՛խ` զի մագաղաթն ի հուր մերձեալ գալարի. նոյնպէս և երկնայինքն յայնժամ խոնարհին յորժամ երկին և *երկիր* վառեսցին հրով: - 729. Հինգերորդ, զի եղիցին նշանք մեծամեծք և արհաւիրք յերկինս և *յերկիր* և ի ծովս: - 730. Եւ ի կատարածի` տարրական հուրն և հրեղէն ծովն և ամենայն հուրք որ են *յերկրի*` ժողովեսցին ի միասին - 731. ...և վառեսցեն զերկինս որ է՛ օդն. և *զերկիր* և զլերինս և զդաշտս և զբոյսս և զկենդանիս. և զժանկս մեղաց որպէս ասէ աստուածաբանն գրիգոր: - 731. Զի նախընթաց հուրն գայ յարևելից և վառէ՛ *զերկիր* և զտարերքս, և կանգնի յարևմուտս: - 731. Դարձեալ, զի յարևելս բազմեալ դատաւորն. և աջակողմեանքն լինին ի վերայ օդոյ ի կողմն հիւսիսոյ. և ձախակողմեանքն վայր ի *յերկրի* ի կողմն հարաւոյ. - 731. Հինգերորդ, զի որդին ծնաւ ի կուսէն և *յերկրի* շրջեցաւ և քարոզեաց և չարչարանօք փրկեաց և պատճառ եղև ընդհանուր յարութեան բնութեանս մերոյ. - 735. Ա՛րդ` ի վերայ երից սոցա բազմեալ է տէր մեր յիսուս քրիստոս ո՛չ միայն *յերկրի*, այլ և յերկինս. - 736. Այլ ի միջասահման տեղւոջ աշխարհի որ է՛ *երկիրս*: - 737. Իսկ մեղաւորքն ի ձախմէ. այսինքն վայր ի *յերկիր* ծանրացեալ մեղօքն. որպէս կապար ի *յերկիր* հակեալ. ուր բոլորով սրտիւ սիրեցին զնա: - 738. Որով հետև ի վերայ *երկրի* և օդոյ է դատաստանն, հաւատալի՛ է և ձայնական խօսից: - 739. Տասներորդ, զի և յօրն դատաստանին լինին վկայք բ` երկինք և *երկիր*, և զօրք երկնից: - 743. Իսկ անկենդան` գործքն մեր. երկինք և *երկիր*. տիւ և գիշեր: - 743. Զի դատաւորք *երկրի* վասն չորից թիւրեն զդատաստանս: - 744. Այլ նախ ասի միշտ տիւ ի վերին երես *երկրի*. ուր արեգակն և լուսին զկա՛յէ առեալ. իսկ ներքինն միշտ գիշեր և խաւար անփոփոխելի: - 750. Սա է հատն ցորենոյ որ անկեալ *յերկիր*` բազում պտուղս աշխարհի պտղաբերեաց...: - 755. Իսկ արգաւանդ և պարարտ *երկիր*` սիրտ հաւատացելոց: - 757. Այլ և են ոմանք որ ասեն *զերկիրս* մաքրեալ երեսնաւոր. և զդրախտն վաթսունաւոր. և զվերինն եէմ հարիւրաւոր: - 758. Ընդէ՞ր ոչ ասեմք երեսնաւոր արքայութիւն *զերկիր*` և այլն: - 758. Ա՛րդ` եթէ ա՛յժմ են յերկինս և յայնժամն ի սրբեալ *երկիր*, զի՞նչ է փառաց փառքն: - 759. և Դարձեալ, դատաստանն վերջին լինելոց է ի վերայ *երկրի* ի յօդս: - 759. Եւ արդ` ի յաւարտիլ դատաստանին յորժամ ասէ եկա՛յք, վասն է՞ր իջանեն *յերկիր*, կամ ի դրախտն բնակին: - 759. Նմին նման և մեք յուսացուք արժանաւորիլ տեսութեանն քրիստոսի. զի թէ և ի դժոխս իցեմք` ա՛յն է արքայութիւն մեր. և ո՛չ թէ *յերկրի* կամ յայլում տեղւոջ ըստ սրբոյն ոսկէբերանի: - 759. Ա՛րդ` նորոգեսցի *երկիր* որ ընկալաւ ի ծոց իւր զտէրունական մարմինն: - 759. Եւ թէպէտ գերազանցեալ են այսոքիկ փառք քան որք այժմ ունին *յերկրի*. այլ սակայն օրինակաւ սակաւ ինչ բացայայտութիւն առցուք: - 761. Դարձեալ և այսոքիւք, թէ լինէիր իմաստուն որպէս զսողոմոն. որում ո՛չ գտաւ հանգոյն նման ի վերայ *երկրի*: - 761. Եւ վա՛յ է թշնամեացն աստուծոյ. որք զշիթսն զայնս *յերկրի* լիզեն և զաղբիւրն քաղցրութեան արհամարհեն: - 762. Երրորդ այնու` զի մեղքն որ յոյժ վտանգեաց զմարդիկ, եղիցի փակեալ ի դժոխս զկնի աւուրն դատաստանի. զի եղիցի ի դժոխս իբր ի տեղւոջ իւրում. զի ո՛չ կարասցէ մնալ. ո՛չ յերկինս և ո՛չ *յերկրի*. այլ իջանէ ի դժոխս ներքինս: - 764. Ո՛չ է իշխանութիւն ի վերայ *երկրի* որ համեմատեսցի նմա որ եղև. զի ո՛չ յումեքէ երկնչիցի: - 765. Եօթներորդ` վասն բարձրութեանն ի ջանուց մշակաց. զի որ քան առաւել բրի ի ներքոյ *երկիրն* և քարինս դնի, այն քան առաւել բարձրանայ: - 766. Արդ ահա ա՛յսոքիկ են ծառ կենաց ի յերկինս և *յերկրի* տնկեալ. փոխանակ ծառոյն կենաց ի դրախտին եդեմայ. յորմէ հրաժարեցոյց և պարսպեաց բոցեղէն սրովն զճանապարհ նորին: - 771. Իսկ ստինք յատկապէս գործի՛ է բնութեան ի պէտս սննդեան այնոցիկ ծննդոց զօրէն սերմանեաց *երկրի*. յորմէ հիւթոյ արեանն գոյացելոյ, ընդ ագուգայս երակաց արտագունեալ որակօք կաթն փոխակերպեալ: - 786. Նոյնպէս և քարինք արձանացեալք հաստատութիւն է *երկրի*. զոր աշխարհ կոչեմք ի մասնէ՛: - 788. Որպէս և բազում ուրէք յերգս գտանի. վէմք պատառեալ. *երկիր* շարժեալ առ խաչին քրիստոսի: - 788. Դարձեալ, հիմունք *երկրի* ասին ջուրք ի ներքոյ...: - 788. Փեռեկելով զերկոսին կիսագունդս ներքոյ և վերոյ և ի միջի հաստատ կացելոյ *երկրի*: - 788. Ա՛րդ` որպէս *երկիր* շարժեցաւ, վէմք պատառեցան: - 788. Նմանապէս և հիմունք *երկրի* ջուրք տատանեցան. այսպէս և սիւնք ասացեալն օդոյ դողային. և լուսաճենքն խաւարեհին: - 788

**ԵՐԿԻՐ ՊԱԳԱՆԵՄ +** Եւ ո՞րպէս *երկիր պագանեն* նմա երկնաւորք և երկրաւորք և սանդարամետականք. և ամենայն լեզու խոստովան լիցի թէ տէր է յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր: - 99. Չորեքտասաներորդ՝ եգիպտացիքն էին թշնամիք, և *երկիր պագին* յովսեփայ: - 314. Հինգևժերորդ՝ որք աստ *երկիր պագանեն* քրիստոսի, կենաց հացիւն կերակրին որպէս եղբարքն յովսեփայ: - 314. Երրորդ, զի մարգարէութեամբ նորա բազում ազգաց հեթանոսաց օգուտ եղև. զի յայնմանէ եկին մոգք և *երկիր պագին* քրիստոսի: - 387. Երկրորդ՝ զի ժողովուրդն ոտիւք գայր, և զձեռս տարածէր, և զգլուխսն խոնարհեալ *երկիր պագանէին*. վասն որոյ հատան այնպիսի մասունքն: - 426. Երրորդ՝ զի *երկիր եպագ* նմա զոր ո՛չ տեսանէր: - 429. Յետոյ վասն գազանաց երկրին՝ հնազանդեցաւ գրոյն մովսէսի. և ծածկեցին զաստուածս իւրեանց ի լերին սոմորոն. և անդ *երկիր պագին* սամարացիք: - 447. Իսկ չորրորդն, ողորմելիքս չորեքնիւթեայ բնութեամբ յուսասցուք ի տէր և *երկիր պագցուք* նմա. և այնու հաստատեսցին սիրտք մեր ի տէր: - 629. Երրորդ, և նոյն ինքն տիրամայրն՝ խաչին *երկիր պագանէր* միշտ: - 642. Որպէս ժողովուրդն ասաց և *երկիրպագին*, նոյնպէս և մեք *երկիրպագանեմք* և համբուրեմք զաւետարանն...: - 644. ...զի յերեքօրեայ ճանապարհ երթիցեն և *երկիր պագցեն* աստուծոյն իւրեանց: - 682. Եւ տացէ *երկիր պագանել* պատկերի իւրոյն: - 707. Այլ քրիստոսի *երկիր պագանեն* ամենայն երկնաւորք և երկրաւորք և ամենայն հոգիք սրբոց: - 711. Նոյնպէս և զօրք հրեշտակաց և մարդիկ *երկիր պագանեն* սրբոց. վասն որոյ թագաւոր թագաւորաց են և տէր տէրանց. - 711

**ԵՐԿԻՑՍ, ԵՐԿԻՑՍ ԱՆԳԱՄ +** Երկրորդ՝ զի ունի *երկիցս* **բ** ծայրք. երկայնք և լայնքն. որ է յարևելից յարևմուտս. և ի հիւսիսոյ ի հարաւ: - 210. Չորրորդ՝ յոբ կրկին վկայեալ յաստուծոյ արդար և անարատ. և տէր մեր *երկիցս* վկայեալ ի հօրէ «դա՛ է որդի իմ ընտրեալ»: – 327. Երկրորդ՝ զի եօթնիցս եղև արժանի տեսլեան Երրորդութեանն. կրկին անգամ զհայր ի գիշերի. և կրկին զորդին ի տիւն. և հոգի աստուծոյ ի վերայ նորա *երկիցս անգամ*. և մի անգամ զհրեշտակն ետես: - 387

**ԵՐԿԻՒՂ +** Ութերորդ՝ է՛ անկարգ ախորժակն. որ քարշէ՛ զմիտսն առ ներհակս հաւատոյն. այսինքն է *երկիւղն* սէրն՝ և ատելութիւնն: - 32. Զի որպէս գիջակնութիւնն չտայ թոյլ տեսանել յստակ, այսպէս *երկիւղն* յետս քարշէ զբազումս ո՛չ հաւատալ ի քրիստոս որպէս ասէ յոհաննէս. «զայս ասացին ծնօղքն կուրին՝ զի երկնչէին ի հրէիցն խոստովան լինիլ զքրիստոս»: - 32. Երկրորդ՝ զի ամենայն մեղք *զերկիւղն* աստուծոյ սանձ ունի. որով և զղջանայ: - 33. Իսկ պաշտօն կռոցն ո՛չ ունի *զերկիւղն* աստուծոյ: - 33. Նոյնպէս և զաղաղակն և զարտասուսն՝ *զերկիւղն* զտրտմութիւնն՝ զաղօթելն՝ և զայլ սոյնպիսին ի դիմաց մերոց իմասցիս: - 42. Այսինքն երկնչելովն՝ *զերկիւղն* իմ. քաղցիւն՝ զքաղցն. վաստակելովն՝ զքիրտն. նմանապէս և զայլսն իմասցիս: - 42. Եւ զի ժամանա՛կ է *երկիւղի*, և երազոց և ցնորից ածօղ: - 196. Տասներորդ՝ ահ և *երկիւղ* է անզգուշից: - 207. Ասէ՝ երկի՛ր և կա՛ց ի կասկածանս. զի *երկիւղ* կայ անկանելոյ ի բարւոյն: - 210. Չորրորդ՝ զի ահ և *երկիւղ* են մեղաւորաց: - 217. Երրորդ՝ զի չէին առեալ զպատւէրս որ ծնանէր *զերկիւղ* և զգուշութիւն. որ ի պակասումն զգուշութեան ամօ՛թն է: - 278. Հինգերորդ՝ *երկիւղն* յայնմ. զի լսան զձայն գնալոյ տեառն և երկեան: - 280. Վեցերորդ՝ զի անկասկած լիցուք ի վատթար *երկիւղէ*. յորում երկիւղազգածք չարչարին ըմբռնեալք ի մեղս: - 281. Չորրորդ՝ նոր չարիս գործեցին, խիստ և առաւել պատուհասեցան. որպէս և կայեն. զի նշան լիցին աշխարհի ահի՛ և *երկիւղի*: - 303. Եւ կապ *երկիւղի*: - 317. Որպէս հաւատով և սիրով և *երկիւղիւ* և օրինօք նորա: - 318. Նախ՝ թոյլ տա՛լն է աստուծոյ. որ անձնիշխան կամօք ամրանայ մարդ ի չարն, և աստուած ներէ՛ և ո՛չ *երկիւղիւ* խրատէ զնա: - 336. Զի տղայո՛ց է *երկիւղիւ* խօսիլ: - 341. Երրորդ՝ հեթանոսաց ազգ. որ նախ քան զմկրտիլն բնական բարութեամբ և *երկիւղիւ* գան յաստուածապաշտութիւն և մկրտին: - 390-391. Իսկ ճշմարիտն աստուած զայս ո՛չ խնդրէ. այլ *երկիւղ* խնդրէ ի տըղայոց որով խորշին ի չարէ. և սէր ի սրտէ փոխանակ անասնոց. և խաղաղութիւն առ ընկերս և օտարս. – 396. Իսկ որ զարձակեալն առնուին, և յառաջին բաժանեալն ո՛չ տային, վասն *երկիւղի* առն և կնոջ էր, զի մի՛ լիցին պատճառ բաժանման: - 401. Նա՛խ՝ զի *երկիւղ* ծառայիցն է, և վարձ մշակաց: - 403. Նա՛խ՝ դարձաւ գետն, զի ա՛հ և *երկիւղ* լիցի քանանացւոցն. և մի՛ հակառակեսցին յեսուայ և անկցին ի սուր նորա: - 414. Երկրորդ՝ զի ժողովուրդն առանց *երկիւղի* անցանիցէ. զի թէ դիզեալ և կուտեալ լինէր, *երկիւղ* գոյր: - 414. Այլ և *երկիւղի* զգայութեան չորս հասակի մարդոյն. ի մանկութեան, յերիտասարդութեան, յալիս և ի ծերութեան: - 493. Տասներորդ, զի ցուցցէ թէ թշնամեաց նորա ո՛չ է իշխանութիւն բուռն հարկանել զնմանէ. իսկ բարեկամաց նորա գոյ իշխանութիւն այլով իւիք մերձենալ ի նա. այսինքն սիրով և *երկիւղիւ* յայնմիկ զոր ուտեն զնա: - 518. Տասներորդ՝ ա՛հ և *երկիւղ* է անզգուշից: - 523. Երրորդ՝ համարձակութիւն քարոզութեան առանց *երկիւղի* խօսիլ զբանն առաջի ազգաց և ազանց և թագաւորաց. որպէս պետրոս ի միում ժամու զերեք հազարսն հաւատացոյց: - 524. Իսկ գործ մեղացն բերէ յինքն զտրտմութիւն,

զատրջանք, զապաշաւ, և *զերկիւղ*: - 557. Դարձեալ՝ անկատար սէր է ծառայական *երկիւղն* վասն պատժոյն: - 576. Աստուծոյ պարտիմք *զերկիւղն* և զպատկառանքն: - 579. Եւ այս տուեալ լինի յաստուծոյ ընդ դէմ *երկիւղին* որով նմանին քրիստոսի. զի ո՛չ երկնչէր ի բնական մահուանէն...: - 582. *Երկիւղ* է հոգևորապէս փախուստ ի չարէն. զի մի՛ կորուսանիցէ զայն զոր սիրէ: - 582. *Երկիւղին* խոնարհք: - 583. Դարձեալ՝ զգուշասցի զի մի՛ յամօթէ՛ կամ *երկիւղէ*՛ քահանային յուսահատութեամբ ծածկէ զմեղքն. - 601. Զի թէ մանկութիւնն է և թէ մեռանիլն, *երկիւղի* ժամանակ է. որպէս ծառայ ի տեառնէ: - 631. Դարձեալ՝ զմնացորդ դասուն որ անկաւ *յերկիւղէն* կնքեաց և հաստատեաց: - 639. ...և այնպէս դառնացեալ տրտմութեամբ և սարսռելի *երկիւղիւ* յուսահատեալ մնան...: – 669. ...զի նովին *երկիւղին* կան և սպասեն սոսկալի աւուրն այն...: - 673. ...այլ խաւար մեղացն արգելու զտեսութիւնն. և չա՛ր է կարծիք նոցա, և *երկիւղ* տանջանաց: - 685. ...նոքա քաւարան ասելով բառնան *զերկիւղ* դատաստանին: - 698. Երրորդ մահ է *երկիւղ* դատաստանին: - 710. Երկրորդ վասն *երկիւղի*: - 744. Ա՛րդ՝ ի նախասացելոցս հաւաքեա՛. զի լինիցի անդ Ջերմութիւն հրոյ: Կրճել ատամանց ի ցրտոյ... Կապանք: *Երկիւղ*: Ցաւ: Ամօթ: Նախանձ: Չեռ: Տրտմութիւն: - 751. Իններորդն է անհոգութիւն առանց *երկիւղի*: - 767. ...մարմնով մեռելոցն անթիւ օճիրս ստախօսութեան գործէր. զանտի կենաց զյարութեան յուսոյ և զհատուցմանց ըստ գործոց՝ բառնալով. *զերկիւղ* դժոխոց և զսէր արքայութեան. և զամենայն ինչ որ նմանէ այսմ հոգևոր բարութեան: - 775. Ոմանք ասեն պակասութիւն զքաղց և զծարաւ՝ *զերկիւղ* և զայլն. որք են պակասականք բնութեան զորս կրեաց քրիստոս. - 781. Կէսք խստամբէր կրիւք չարչարեալք. և այլ *երկիւղիւ* պակուցեալք: - 788

**ԵՐԿԻՒՂԱԶԳԱԾ(Ք)** - Վեցերորդ՝ զի անկասկած լիցուք ի վատթար երկիւղէ. յորում *երկիւղազգածք* չարչարին ըմբռնեալք ի մեղս: - 281

**ԵՐԿԻՒՂԱԼԻՑ +** Ութերորդ՝ հողն ի յերկրէ առեալ, զի *երկիւղալից* է մարմինս մեր. վասն այն կոչի երկիր...: - 229

**ԵՐԿԻՒՂԱԾ +** Եւ տէրն մեր արեգակն արդարութեան ծագեաց *երկիւղածաց* իւրոց և փրկութիւն ժողովրդեանն իւրոյ: - 421. Աղօթք նոցա ցանկութիւնն է նոցա. զի կամս *երկիւղածաց* իւրոց կատարէ՛ տէր: - 685

**ԵՐԿԻՒՂԱԿԱՆ +** Զի մարմնովն է *երկիւղական* սէրն. ըստ այնմ «բևեռեա՛ յերկիւղ քո զմարմին իմ»: – 396

**ԵՐԿԻՒՂԵՄ** - Տասներորդ՝ ծայնն *երկիւղէ* տղայոց. և բանն *երկիւղէ* կատարելոց: - 354. Զի այս որդիական *երկիւղէ*, և այն ծառայական: - 538

**ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ** - Երկու երևի ի սուրբ գիրս *երկխօսութիւն*: - 465

**ԵՐԿՃՂԻ +** Ութերորդ՝ զնա օ՛ձ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն զբազումս. և արտաքսեն ի դրախտէ եկեղեցւոյ. և թոյնք իժից ի ներքոյ շրթանց ունելով և խայթոց՝ զի առորս մերձենան, ի յսկիզբն բանից կամ ի վերջն՝ մահացուցանեն զհոգիս. *երկճղի* ունելով լեզու նենգաւոր՝ չար և բարի, ծածուկ և յայտնի: - 35. Եւ զի երկատեսա՛կ էր բանն՝ այսինքն սուտ և ճշմարիտ, լեզուն *երկճղի* եղև: - 219. Ուբևժ, զթագաւորս նոցա կախեաց *յերկճղի* փայտէ. և յերիկոյն ի գուբն սուզեաց: - 418

**ԵՐԿՄԻՏ +** Ութերորդ՝ զի կողն կեռ գոլով՝ ցուցանէ զկինն նենգ գոլ և *երկմիտ*. կեռ, այսինքն խեռ ընդ առն: - 276. դ՝ խրատել *զերկմիտսն*. - 585

**ԵՐԿՄՏԵՄ +** Չինգերորդ՝ որ ասացաւ լինիլ զաւակաց նորա իբրև զաստեղս՝ և ոչ *երկմտեաց*: - 304

**ԵՐԿՆ, ԵՐԿՈՒՆՔ +** Իններորդ՝ ըստ փոփոխման ասի. զի յղացեալ ունիմք զմահ անդըստին. և ի վախճան մերձեալ հասանէ *երկն* ցաւոց. և բաժանեալ հոգին ծնանի ի մահ: - 308. Զառաջինն մխիթարեցաւ աստուածածին կուսիւն մարիամաւ. որ առանց *երկանց* և ցաւոց ծնաւ զմիածինն որդի, որ եբարձ զարտասուս վշտաց մօրն հռաքէլի: - 312. Ծնեալ առանց *երկանց*: - 469. Տասներորդ՝ ասի ոմանց թէ ի ժամ ծննդեանն քրիստոսի արգելման ամենայն ծնունդք մինչև ծնաւ բարձողն *երկանց* ամենայն ծննդոց. զի նա՛ լինէր անդրանիկ ամենայն ծննդոց: - 472. Երրորդ՝ զի իւրաքանչիւր հասակի զմեղս բարձցէ. որպէս ծննդեամբն *զերկունս* ելոյծ. և մահուամբն զմահ. նոյնպէս և տղայ և մանուկ և երիտասարդ հասակաւ զնոսա արդարացոյց: - 479. և ապա կանայք զծանրութիւն *երկանցն* կրեսցեն: - 613. Զի նա՛ ծնաւ զմեզ ըստ բանի՝ բազմաջան *երկօք*. կրթեալ ի մամուլս վարժարանի և ի յոյսն կենդանի: - 773. Եւ այլք թէ՝ պատրուակ գոն ի խինծս արգանդի բնաւորեալ. յիւրաքանչիւր աւուրս հնգից՝ մին մին քակտին *երկամբք*. և ապա՛ արծակի ծնունդն: - 785

**ԵՐԿՆԱԳՈՅՆ +** Ունելով մշտասաղարթ ծաղիկ որ է՛ կարմիր երանգն գունոյ, և *երկնագոյն* հիւթով զարդարեալ: - 768

**ԵՐԿՆԱՁԱՐԴ +** Իններորդ՝ ի ի նմանէ՛ լինէր երևումն և աստուածախօսութիւն որպէս նախ ի յերկնէ. պա՛րտ էր *երկնազարդ* լինիլ: - 342

**ԵՐԿՆԱՅԱՆԳԷՏ +** Ընդ հովանեաւ *երկնահանգէտ* մեծարագոյ ուխտի Սիւնեաց նահանգի: - 772

**ԵՐԿՆԱՅԻՆ +** Նա՛խ, զի ըստ սոցա ոչինչ է զանազանութիւն մշտնջենաւորացն և փոփոխականացն. որք են *երկնայինք* և երկրաւորք. զի նոքա միա՛յն են ի հարկէ, որք միշտ նոյնպէս ունին. որպէս հրեշտակք անմահք. և լուսաւորք երկնից. և ջերմութիւն հիոյ: - 8. Առ այս ասեմք, թէպէտ ստորնային մարմինք կառավարին վերնային մարմնովք, այլ մարդկային ներգործութիւնք կառավարին անձնիշխան կամօք. և անձնիշխան կամքն ո՛չ նըւաճի ի ներքոյ *երկնային* մարմնոց: - 10. Ասեմք առ այս թէպէտ ունին զօրութիւնս, բայց այլ և այլ կերպիւ. զի բոյսք որք յերկրի են դարմանիչք և բժշկութիւնք մարմնոց. այլ *երկնային* աստեղքն են արարիչք լուսոյ և ժամանակաց. և ի նշանս ապագայից. զի յամենայն ուստեք տեսեալ պատրաստեցին մարդիկք. որպէս ասէ գիր, եղիցին լուսատու լինիլ երկրի. ի ժամանակս և ի նշանս: - 12. Նախ թէ՝ *երկնային* մարմինքն ո՛չ են ի չորից տարրաց. այլ են հինգերորդ տարր կամ էութիւն ըստ արիստոտէլի. և որք են ի պարզ տարրէ միայն ո՛չ հակակային միմեանց: - 12. Ըստ որում ոմն ի բնախօս արանց նկատմամբ առաջնորդականին՝ վարաթևեաց ի սկիզբն առաջին՝ թէ է՛ ոմն որ շարժէ՛ *զերկնային* մարմին: - 26. Եւ զաստեղսն և զշունն ջրային. և երկրային և *երկնային*: - 54. Պարտաւորեցան ըստ մարդապաշտութեամբ ո՛չ միայն երկրաւորքս՝ այլ և *երկնայինքն*: - 67. Իսկ որպէս հոմանուն ձայն, զի հաւասարապէս հաղորդի որոց կոչինն. որպէս խոյ *երկնային* և երկրային և ջրային. զի ո՛չ առաւել և ո՛չ նըւազ կոչին. այլ հաւասարապէս: - 89. Վասն է՞ր աստուածաբան մարգարէքն զտեսիլ *երկնայնոցն* սոյնպէս անարգ կերպիւ տպաւորեցին. որպէս առիւծ. և եզն. աթոռք. և կառք. և այլն: - 131. Նախ՝ զբնական որակութիւն *երկնայնոցն* նշանակէ. այսինքն Մարդն զբանն: - 132. Զի *երկնային* է արծըւին. և մարդն յերկրէ. և կենդանիքն ի ծովու: - 132. Զիա՞րդ առ հասարակ զօրութիւնք կոչին *երկնայինքն*...: – 137. Զի՞նչ է *երկնայնոցն* հասարակ՝ և զի՛նչ յատուկ: - 137. Այս զանազանութիւն է *երկնայնոց* քահանայապետութեանց: - 138. Իսկ ի նոյն ինքն՝ առաջին է նախախնամութիւնն առ աստուած, և ապա՛ ստեղծումն. զի վասն նախախնամական բարութեանն կամեցաւ ստեղծանել զեղեալքս. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս ի դ գլուխն որ յաղագս *երկնայնոցն* քահանայապետութեանց: - 157-158. Իսկ գործ պոռնկութեանն զկնիք կուսութեանն շրջէ և զբնութիւնն ապականէ. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս յերկրորդ ճառն որ յաղագս *երկնայնոց* քահանայեապետութեանց...: - 165. Նախ՝ ի շարժմանէ՛ *երկնային* մարմնոց. զի միշտ նոյնպէս և անդադար շարժին. առնելով զօր և զամիս՝ և զեղանակս՝ և զտարի՝ ստուգագոյն չափով առանց յաւելուածոյ և պակասութեան: - 181. Իսկ զգալի լոյս դարձեալ բաժանի *յերկնայինս* և յերկրայինս: - 185. Եւ է՛ *երկնային* լոյս՝ որպէս արեգակն և լուսին և աստեղք: - 185. Իններորդ՝ *զերկնային* և զերկրաւոր միտս մարդկան առ հասարակ լուսաւորէ՛: - 185. Վասն է՞ր *զերկնայինսն* կատարեալ ստեղծ աստուած, և զերկրաւորքս ըստ կարգի յաւուրս վեց: - 192. Երրորդ՝ որ *զերկնայինսն* կատարեալ ստեղծ, ամենակարօղ զօրութեանն է ցոյցք: - 192. Յարփոյն *երկնային* իջանէ առ մեզ. ի ցոյցս ակներև *երկնային* փառացն: - 203. Երրորդ՝ զի կարօ՛տ է *երկնային* մարմնոցն. վասն այն ի վե՛ր ընթանայ: - 214. Այլ և ի միտածցուք զփառս *երկնային* կենաց ուստի անկաք, և անդ դիմելոց եմք. զի տեսութիւն մտացն զհոգին ընդ ինքեան ի վեր տանի. և նա զշունչն. և շունչն ընդ արեանն է կապեալ. և արիւնն ընդ մարմնոյն. զգայարանքն ընդ մարմնոյն. և լինի մարդն բոլորովին *երկնային*: - 233. Զոր ընդ դերևս հանէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան այսպէս եթէ, որք զհոգին յառաջ ասեն գոյանալ քան զմարմին. և վասն մեղաց եդեալ ի մարմին մարդոյ. որ է՛ համանման բանականութեամբ. և է՛ իներքոյ *երկնային* կենաց՝ զի մարմնաւո՛ր է: - 252. Այլ արդ ի մարմնի առաւել մեղանչէ քան *յերկնային* կեանս. վասն որոյ անկանի ի զգայական մարմին որպէս ասեն՝ որ ներքո՛յ է մարդոյն՝ և համանման ախտիւք զի զգայակա՛ն է: - 252. Եւ է՛ գործի իմացման նոցա՝ յիշումն. և ենթակայ՝ *երկնային* մարմինք՝ և էութիւնք եղելոց: - 269. Երկրորդ՝ ըստ պատույն. զի այս *երկնային* և վերուստ իջեալ. իսկ այնոքիկ երկրաւոր և շնչաւոր որպէս ասէ առաքեալն: - 269. Երրորդ՝ զի կուսութեամբ եկաց. և այսոքիկ *երկնայինք* են և հանեն զմարդն առ աստուած: - 289. Երկրորդ, ունի զձև *երկնայնոցն*: - 343. Վեցերորդ՝ անդ երկրաւոր խոստմունք. և աստ *երկնային*: - 353. Զի գործնականաւն մեռանիմք ընդդէմ մեղացն. և տեսնականաւն մտօք թռչիմք ի դրախտն որ է՛ դաշտ *երկնային*: - 368. Արդ քահանայութիւնն *երկնային* է. վասն այն կորխ յերկնից հրովն այրեցաւ: - 381. Երեսունևէ, զհաց սրբութեանն բաշխեաց մանկանցն. և տէրն զհացն սուրբ և *երկնային* հաւատացելոց: - 437. Վեցերորդ՝ զի նա՛ զպարգևս երկրային խոստանայր առնողացն զպատուէրս. և քրիստոս *զերկնայինն*: - 442. Չորրորդ՝ հրեշտակական սրբութիւնն. որ է *երկնային* և հաստատագոյն և անդրդուելի սրբութիւն: - 462. Որ նշանակէ՛

զյարութիւնն քրիստոսի ի մէջ գիշերի զդրունս դժոխոցն խորտակեալ. և զհոգիսն հանեալ ի լեառն *երկնային*: - 513. Եւ յարուցեալ ի գիշերի ել ի լեառն *երկնային*. աղաղակեաց ասելով «ո՞ւր է մա՛հ յաղթութիւն քո. ուր է դժոխք խայթոց քո»: – 514. Այլ համբարձումն նշանակէ՛ ի միտս համայն բարձր քան զամենայն դասս իմանալեացն. զի նմա՛ երկրպագեն ամենայն *երկնայինքն*. և անդր քան զտեղի տիրամօրն. զի ի միածին որդւոյ իւրմէ խնդրէ զփրկութիւն մարդկան: - 519. Չորրորդ՝ օրհնեաց զնոսա զինիլ ընդ դէմ թշնամեացն և աճիլ *երկնային* բարեաւն: - 520. Որ է՛ հաւատ՝ յոյս՝ սէր. և սոքա երեքեան հեղո՛ւմն են յաստուածային շնորհացն ի բանական ոգիս. որով ուղղիմք *յերկնային* կեանս: - 577. Եւ սոկրատ պատմագիրն ասէ թէ՝ մեծն իգնատիոս աստուածազգեացն ետես *երկնային* զօրս. և լուաւ ի նոցանէ...: – 631. Սոցա համաձայնին ընդհանուր ամենայն վարդապետք գոլ ի *յերկնային* խորանս անմարմնոց ի զանազան օթևանս լուսոյ: - 688. Դարձեալ ընդ դէմ բերեն զձայնն *երկնային* եթէ՝ «ծառայք իմ եկա՛յք և հանգերուք»: - 697. Նա՛խ՝ որպէս **բժ**ան գունդ հրեշտակացն և չորք կենդանիքն զբոլոր *երկնային* զօրսն նշանակեն, նոյնպէս և **իդ** երիցունքն զբոլոր դասս սրբոցն: - 711. Երկրորդ, որպէս չորք կենդանիքն զվեհագոյնս և զնախամեծարս *երկնայնոցն* ցուցանեն. նոյնպէս և **իդ** երիցունքն զնախամեծարս ընտրելոցն մարդկան...: - 711. Երրորդ, որպէս **իդ**ն բազում է քան զչորսն. նոյնպէս կարծի վեհագոյնքն ի մարդկանէ բազում գոլ քան զվեհագոյնս *երկնայնոցն*: - 711. Եւ այլք ոմանք ասացին թէ՝ մարմինք մարդկան ո՛չ լինին երկրային, այլ *երկնային*...: – 720. Յանմարմնոցն հրեշտակք և դևք. և հոգիք մարդկան. իսկ ի մարմնոց *երկնային* մարմինք և դ տարերք և մարմինք մարդկան. և այլք ամենայնքն ապականին և յիւրաքանչիւր տարերս ժողովին: - 727. Երրորդ պատճառ, ասեն իմաստունքն թէ ծնունդք կենդանեաց և բուսոց լինին ի շարժմանէ *երկնային* մարմնոց. իսկ ի կատարածի խափանի շարժումն նոցա. վասն այն անբան կենդանիք և տունկք խափանին: - 727. Եւ են ինչ որ պատահմամբ անցանեն և էութեամբ մնան. որպէս *երկնային* մարմինք և դ տարերքս և մարդոյս մարմին. սոքա պատահմամբ անցանեն և գոյացութեամբ մնան: - 727. Երրորդ՝ դարձեալ *զերկնային* զօրութեանց վշտանալն ցուցանէ ի վերայ կործանելոցն. զի վասն իմ գալարին և ընդ իմ կործանումն՝ տրտմութիւն զգենուն: - 729. Նա՛խ՝ զի մազաղաթն ի հուր մերձեալ գալարի. նոյնպէս և *երկնայինքն* յայնժամ խոնարհին յորժամ երկին և երկիր վառեսցին հրով: - 729. Այլ որ ուղիղն է տեսութիւն, յետ յարութեան փոխի ժամանակն ի յաւիտեան. և այլ ո՛չ գտանի մասն և րոպէ և ժամ. զի *երկնային* մարմինք դադարին ի շարժմանէ ուստի ժամանակն գոյանայ: - 747. Զի արտաքոյ *երկնային* քաղաքին եէմի է՛ տանջանաց տեղի, ուր մեղաւորքն ժողովին: - 748. Այսպէս վասն *երկնային* և իմանալի տնկոցն որ կոչին ծառ կենաց. ունելով յինքեան զկեանս և բաշխելով այլոց ամենեցուն զխնամս: - 767. Դարձեալ՝ ծառ կենաց և տունկ *երկնային* է՛ հաւատն կենդանարար. որոյ արմատն է հայր, և ստեղունք որդի. ծաղիկ և պտուղ հոգին սուրբ: - 768-769

**ԵՐԿՆԱՏԵՂԱԾ** (տեքստում՝ **ԵՐԿՆԱՏԵՂԵԱՑ**) **+** Երկրորդ՝ օտար և ընդ դէմ բնութեան գործեցին, օտար և *երկնատեղաց* հրով այրեցան: - 303

**ԵՐԿՆԱՒՈՐ +** Եւ դարձեալ՝ հոգին որ ի հօրէ ելանէ և կայանայ յորդի. և ի ձեռն որդւոյ իբր զհայրական բարի ամենայն գոյիցս բաշխի *երկնաւորաց* և երկրաւորաց. նախ քան զմարմնանալն՝ և ի մարդեղութեանն: - 61. Տասներորդ՝ զի թէ նա վասն բնակութեանն երկրպագելի է և աստուած, ո՛չ միայն եղիցի նա՛ աստուած, այլև ամենայն *երկնաւորք* և երկրաւորքս. որք բնակեալ ունին զաստուած և կոչին անուամբ աստուածք: - 67. Ընդէ՞ր ապա նա միա՛յն երկրպագի *յերկնաւորաց* և երկրաւորաց: - 95. Չորեքտասաներորդ՝ ասէ պօղոս յեփեսացւոցն թէ՝ հայր կացոյց զքրիստոս *յերկնաւորս* ի վերայ ամենայն իշխանութեանց. և պետութեանց. և զօրութեանց. և ամենայն անուանելոց. ո՛չ միայն յաշխարհիս այլ և ի հանդերձելումն: - 97. Այլ արդ՝ *յերկնաւոր* փառսն այն է գերագոյն՝ որ քան կատարեալ տեսանէ զաստուած: - 97. Եւ ո՞րպէս երկիր պագանեն նմա *երկնաւորք* և երկրաւորք և սանդարամետականք. և ամենայն լեզու խոստովան լիցի թէ տէր է յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր: - 99. Խոստովանեալ *յերկնաւորաց* և յերկրաւորաց. և հաստատեալ սուրբ գրոց վկայութեամբ որպէս ցուցաւ: - 101. Ասեմք եթէ՝ նոքա երեքեան դասքն՝ այսինքն աթոռք՝ քերօբէք՝ և սերօբէք՝ միակարգ միապատիւ և գերազանց էութիւնք են. զի անընդմիջաբար յաստուծոյ ամենայն լուսափայլութիւնք իմաստք և շնորհք ի նոսա հեղանին համակարգապէս. և ապա նոքօք յայլ ամենայն գոյս *երկնաւոր* և երկրաւոր: - 135. Այլ զանազանութիւն է ի մէջ *երկնաւորացն*: - 138. Իսկ «երրորդ մասն», ասէ սուրբն մեթոդէոս եթէ՝ զապստամբ հրեշտակս ասէ որք զթիւ *երկնաւոր* դասուցն սխալեցին. զի մինչ ո՛չ էին կործանեալ՝ դ կարգ էին իւրաքանչիւր դասուցն. որպէս յա՛յտ է ի չորեքկերպեան կենդանեացն: - 152. Երկիր որ յաւիտեան ստացեալ լինի, է՛ գաւառն *երկնաւոր*: - 210. Ի չորրորդումն *երկնաւորք*: - 210. Չորրորդ՝ զի նիւթք եղեն *երկնաւոր* խորհրդոյն. որպէս ի տնկոց փայտ խաչին. և յայլ

բուսոց հաց պատարագին և գինի. և ծէթ մեռոնի կազմեցաւ: - 212. Իններորդ՝ քահանայութիւն և պատարագն մելքիսեդեկի առաջին էր և *երկնաւոր*: - 301. ...և մեք խնդութեամբ ծնանիմք յաւազանէն յուրախութիւն *երկնաւորացն*...: – 307. Հայրն *երկնաւոր* կոչեաց զիւր որդին անդրանիկ: - 307. և մեք անդամք ի նա՛ յարեցաք և եղաք անդրանիկք հրեշտակաց որ էաք կրսեր նոցա. զի ամենայն *երկնաւորքն* ծունր կրկնեն քրիստոսի և խոստովանին զնա՛ տէր: - 309. Նոյնպէս և ծնունդք սուրբ աւազանին որք են անդրանիկք և անդամք քրիստոսի եղեալք, ազահութեամբ և պոռնկութեամբ կորուսանեն զշնորհն *երկնաւոր*. և ո՛չ լան և ո՛չ զղջան որպէս եսաւ: - 309. Նոյնպէս և քրիստոս աստ ի գնալն հոգւոց և ի գալստեանն աւուր՝ ընդ առաջ ելանէ սրբոցն և համբուրէ զսիրելիս իւր, որպէս հայրն *երկնաւոր* ի դարձ անառակին: - 315. Երկրորդ՝ լա՛ւ համարեցաւ *զերկնաւոր* գանձն՝ քան զոսկի և քան զարծաթ կորստական: - 338. Վասն որոյ և յաւուրս զաքարիայի հօրն յովհաննու յորժամ յամեաց ի տաճարին և ել, ակնունէր ժողովուրդն տեսանել զա՛կնն և տե՛սին լուսափայլ սպիտակացեալ իբրև զձիւն. և լի՛ եղեն խնդութեամբ. զի *երկնաւոր* արքայութեան նշոյլքն պայծառացուցին զակն: - 349. Օրհնութիւնն աստուծոյ բաժանի յերկուս. որ է՛ *երկնաւորաց* և երկրաւորաց. որ է՛ հոգևոր և մարմնաւոր. անցաւոր և անանց: - 403. Խօսեցաւ օրհնօք նախ և նշանեաց զեկեղեցի սուրբ հարսն *երկնաւորին*: - 422. Երրորդ՝ ի տիպ *երկնաւոր* հացին որ բաշխելոց էր քրիստոնէից: - 427. Երկրորդ՝ նա երկրաւոր թագաւոր. և քրիստոս *երկնաւոր*: - 442. Ութերորդ՝ նշանակէ՛ զչորս տարբերութիւն փրկելոցս նովաւ. այսինքն *երկնաւորք* և երկրաւորք, կենդանիք և մեռեալք: - 493. Եւ ոմանք ասեն թէ՝ *յերկնաւոր* դրախտն եմուտ հոգւովն մինչ ի կիրակէ մէջ գիշերին. և ի նոյն ժամն էջ ի դժոխս և ազատեալ զհոգիսն յարեաւ ի գերեզմանէն: - 495. Եւ դարձեալ նա՛ կոչի դուստր. և մեք հարսն *երկնաւոր* փեսային: - 533. Ողորմութիւն է որով երկրաւորքս շահին *երկնաւորօքն*: - 584. Իւղ անոյշ յանուն յիսուսի հեղեալ ի վերայ քոյ կնիք *երկնաւոր* պարգևաց: - 593. Եպիսկոպոսն և քահանայն, զոսա ի մի կարգ թուէ ի դէմս վերնագոյն դասուց *երկնաւորաց*. որք են Աթոռք. Քերովբէք. և Սերովբէք: - 608. Իսկ սաղմոսն՝ մանկացելոցն մկրտութեամբ հրամայէ որդիացելոցն օրհնել զհայրն *երկնաւոր*. որում փառք յաւիտեանս ամէն: - 629. Երկրորդ, զի այսպէս հաղորդիցուք *երկնաւոր* գինւոյն. որ է՛ իմաստութիւնն աստուծոյ. - 656. Այլ քրիստոսի երկիր պագանեն ամենայն *երկնաւորք* և երկրաւորք և ամենայն հոգիք սրբոց: - 711. Եւ զգործս բոլոր մարմնոյ յերկրի հաստատեցաք. թէ *երկնաւոր* թէ երկրաւոր: - 714. Կամ ոսկի՝ արծաթ՝ ականս. զի արդարքն առաւել պայծառանան և ապա՛ բազմին ի սեղան հօրն *երկնաւորի* պաշտելովն ի քրիստոսէ: - 721. Եւ սոքա արտաքո՛յ են ամենևիմբ *երկնաւոր* դատաւորին: - 744. Եւ վասն այն ասի արքայութիւն, զի նովաւ *յերկնաւորսն* հանդերձեալ եմք թագաւորել: - 754. Կանայք առաջի դրան խորանին նստեալք՝ են հաւատացեալքն. որք դրան *երկնաւոր* պալատին բանիլ ինքեանց ակն կալեալ մնան: - 756. Եւ *երկնաւորն* այն գաւառ՝ լ ամօք արագընթաց աստեղն ճանապարհ շնորհէ: - 763. Երրորդ՝ ծառ կենաց իմանին տունկք իմանալի դրախտին. այսինքն բանակք *երկնաւոր* զօրացն. միշտ յարազուարճ բերկրանօք բարձրացեալ ի փառս: - 767. Դարձեալ, ծառ կենաց է աւետարանն սուրբ տնկեալ ի մէջ եկեղեցւոյ դրախտին. բերելով պտուղ կենաց զիմաստութիւնն *երկնաւոր*. որ կեանս տայ ճաշակողացն զնա. և միշտ շնորհս բժշկութեան և թողութեան մեղաց: - 768. Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ. երկնուղէշ զարգացմամբ մշտասաղարթ կուսութեամբ ծաղկեալ և պայծառացեալ հոգւոյն սրբոյ եկաւորութեամբն. և պտղաբերեալ մեզ անմահ պտուղ զբանն մարմնացեալ. յորմէ վայելեալք *երկնաւորք* և երկրաւորք ի շնորհաց նորին զյաւիտենից կեանսն ժառանգեցաք: - 768

**ԵՐԿՆԸՆԹԱՑ +** Իսկ աստեղք՝ ծնունդքն իսահակայ պայծառ վարուք և *երկնընթացք* որպէս մարգարէքն՝ քահանայքն՝ և ընտրեալ թագաւորք՝ և այլքն: - 303

**ԵՐԿՆՈՒՂԷՇ +** Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ. *երկնուղէշ* զարգացմամբ մշտասաղարթ կուսութեամբ ծաղկեալ և պայծառացեալ հոգւոյն սրբոյ եկաւորութեամբն. և պտղաբերեալ մեզ անմահ պտուղ զբանն մարմնացեալ. յորմէ վայելեալք երկնաւորք և երկրաւորք ի շնորհաց նորին զյաւիտենից կեանսն ժառանգեցաք: - 768

**ԵՐԿՆՉԻՄ +** Այսինքն *երկնչելովն* զերկիւղն իմ. քաղցիւն՝ զքաղցն. վաստակելովն՝ զքիրտն. նմանապէս և զայլսն իմասցիս: - 42. Իսկ «աստուած աստուած իմ ընդէ՞ր թողեր զիս», ո՛չ թէ յինքենէ՛ թողաւ և կամ ի հօրէ. որպէս թէ *երկեաւ* ի չարչարանացն. վասն զի կամաւ եկն և ո՛չ հարկիւ: - 42. Եւ նովաւ ճանաչեմք զաստուած. և յուսամք արքայութեանն. և *երկնչիմք* ի դատաստանէ՛: - 178. Հինգերորդ՝ յա՛յտ է ի փախուցելոցն որ *երկնչին* ի մարդկանէ որպէս զապստամբեալ ծառայս: - 220. Զի որ քան եմք ի մարմնի՝ միշտ պարտ է *երկնչիլ* ի պատժոյ ի գլորելոյ ի մահու և այլոցն: - 229. Վասն է՞ր մարդ յորժամ *երկնչի* դեղնի, և յամաչելն շառագունի: - 245. Սիրտն իշխա՛ն է անձինն. յորժամ *երկնչի*՝ զարիւնն առ ինքն ժողովէ իբր

զօրք առ թագաւորն. և մնայ մորթն բնական գունովն դեղին: - 245. Չորրորդ՝ զի ընդ ծառս դրախտին և յանթառամ ծաղիկս և ի բազմապատիկ պտուղսն պշուցեալ էին, ո՛չ *զերկնչիլն* գիտէին և ո՛չ զամաչելն: - 278. Նախ՝ զի ատէին զաստուած, և *երկնչէին* ի պատժոցն, և հակառակէին աստուծոյ: - 296. Եւ ասեն՝ զգործս ջրհեղեղին ունիմք՝ *երկնչիմք* զի պատուհասէ զմեզ: - 296. Եւ մարտեաւ ընդ նմա այր, զչափ ուժոյ և զկերպարանքն եսաւայ զգեցեալ. զի կրթեսցի և մի *երկիցէ* ի նմանէ: - 311. Եւ տէր մեր ո՛չ *երկնչի* յումեքէ: - 315. Եւ ի խրատ նոցա՝ պատժէ՛ զանասունս նոցա. զի զգաստացեալ *երկիցեն* յանձինս իւրեանց: - 334. Չորրորդ՝ զի *երկնչիմք* և անմեղ պահեմք զհոգիս մեր որ ելանելոց է յերկինս: - 371. Իսկ ի միասին կարգէ՛, զի կամ *երկիցեն* յանիծիցն, և կամ ցանկասցին օրհնութեանն և պահեսցեն զօրէնսն աստուծոյ: - 403. Երկրորդ՝ առաւել ի սպառնալեա՛ց *երկնչի* ոք, քան ի խոստմանց: - 403. Յինգերորդ՝ զի քրէական մեղքն ազգաջինջ առնէ. որպէս զղադան և զաբիրոն. զի ընդ մովսէսի և աստուծոյ հակառակ կացին, ազգօք և աղխիւք ընկղմեցան զի այլքն *երկիցեն*: - 416. Երրորդ՝ զի զաստուած ունէր օգնական՝ *երկեաւ* ի մարդոյ: - 311. Ինննժ, ապրեցոյց զգաբաւոնացիսն որք *երկեան* և ապաւինեցան ի նա: - 418. Երկրորդ՝ զի այն քան *երկեա՛ւ* ի մահու վիուկն այն, որ այլոց կեանս խոստանայր: - 428. Ա՛րդ՝ թէ ճշմարիտ յարոյց կինն զսամուէլ. սաւուղ ո՛չ երկնչէր ի մահու. զի և զնա՛ յարուցանէր. և թէ *երկեաւ*, ապա սուտ էր կենդանութիւն մեռելոյն: - 429. Ա՛րդ՝ թէ ճշմարիտ յարոյց կինն զսամուէլ. սաւուղ ո՛չ *երկնչէր* ի մահու. զի և զնա՛ յարուցանէր. և թէ երկեաւ, ապա սուտ էր կենդանութիւն մեռելոյն: - 429. Ապա յա՛յտ է զի ի մէջ կարծեաց էր նա. զի թէ սուտ համարէր զվիուկն, ո՛չ *երկնչէր* ի մահու. և թէ ճշմարիտ՝ ո՛չ երթայր ի պատերազմ: - 429. Չորեքտասաներորդ՝ *երկնչի* անհաճոյ լինիլ: - 575. Եւ այս տուեալ լինի յաստուծոյ ընդ դէմ երկիւղին որով նմանին քրիստոսի. զի ո՛չ *երկնչէր* ի բնական մահուանէն...: - 582. Եւ աղքատք հոգւով են խոնարհքն որք *երկնչին*: - 583. ...զի որք զպատիժ այսմ կենացս ակն ունին առնուլ՝ *երկնչին* ի չարեաց կամ սակաւ առնեն...: - 698. ...իսկ որ յանմերձ ունիցին ակն, յումեքէ ոչ *երկնչին*: - 698. Երրորդ, զաի դատաստանին որ ամենեցուն *երկնչիլ* տայ ի մեղաց...: - 698. Արդ՝ եթէ ապականացո՛ւ էր սա, ո՛չ *երկնչէին* ի սմանէ դևք. որպէս և ո՛չ յանասնոց և յանշնչից. ապա ուրեմն անապական է խաչն: - 734. Նա՛խ՝ տեսանեն զմարդկութիւնն զի *երկիցեն*. և մի՛ զաստուածութիւնն զի մի՛ խնդասցեն. զի սրտմտութեամբ հայի ի մեղաւորս. - 741. Կամ լինէիր անհոգ որպէս ենովք և եղիա որ այնպէս անհո՛գ են, որք ոչ ի մահու և ո՛չ յայլ ինչ պատահմանէ *երկնչին*: - 762. Ո՛չ է իշխանութիւն ի վերայ երկրի որ համեմատեսցի նմա որ եղև. զի ո՛չ յումեքէ *երկնչիցի*: - 765. Այսպէս և ի նաւորդսն զկնի վշտաց նաւաբեկութեանն ցնծան յոյժ. վասն զի *երկեա՛ն* յոյժ: - 765

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ +** Եթէ ըստ մեզ կարծէք զծնունդն, պիտոյանայ երկուորիս և գործիս հօր. լիցի և այրութիւն և իգութիւն յաստուած. և լիցին որդիք *երկորեակք* էրեց և կրտսեր: - 52

**ԵՐԿՈՒՈՐԻ +** Եթէ ըստ մեզ կարծէք զծնունդն, պիտոյանայ *երկուորիս* և գործիս հօր. լիցի և այրութիւն և իգութիւն յաստուած. և լիցին որդիք երկորեակք էրեց և կրտսեր: - 52

**ԵՐԿՈՒՈՒԹԻՒՆ +** Զի միաւորեալն ո՛չ բաժանի. վասն զի միութիւնն եբա՛րձ *զերկուութիւնն*: - 83

**ԵՐԿՉՈՏ** (տեքստում նաև՝ **ԵՐԿՆՉՈՏ**) **+** Զի ասեն եթէ՝ ոգի արուին է՛ փոյթ և քաչասիրտ. իսկ կին՝ ողորմած և *երկչոտ*: - 246. Որ բազում անգամ բանայ և խփէ՝ *երկչոտ* է և թոյլ: - 246. Որ արագ ընթանայ և զսպէ զինքն՝ և զերեսն կորակնէ՛ և զբոլոր մարմինն կծկէ՛, *երկնչո՛տ* է և ըռիշտ և աղուեսաբարոյ: - 247. Չորրորդ՝ ըստ բարուցն տեսանէ ոք. զի ա՛յլ է երազ արի մարդոյ, և այլ *երկչոտին*. ա՛յլ գիճասիրին, և այլ պարկեշտին: - 268

**ԵՐԿՉՈՏՈՒԹԻՒՆ +** Զի սրտիւն ապրին մարմնակեր գազանք. և հեշտ ցանկութեամբ բազմածին կենդանիք աճեն. և *երկչոտութեամբ* ապրին նապաստակք և տկարք ի հզօրից...: - 563

**ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԻՒՆ +** ...և նորոգեցին զթուլութիւն և *զերկպառակութիւն* ինչ եկեղեցւոյ. և հաստատեցին զիրս կանոնականս **բժան** գլխոց: - 544-545

**ԵՐԿՍԱՅՐԻ +** Եւ սոքա են սուր *երկսայրիք* տուեալ ի ձեռս քահանայից զինուորաց քրիստոսի. զի յաջ և յահեակ հարցեն. այսինքն զսատանայ և զչարսն ի մարդկանէ որք հակառակին բարեաց: - 538-539

**ԵՐԿՐԱԳՈՐԾ +** Յոռի. զի հօրե՛ն *երկրագործք* և մշակք զցորեան և զգինի, յըշտեմարանս ժողովեալ. զի թ հոռի՝ մո՛ւտ է աշնան: - 200. Ութերորդ՝ մշակութիւն աստուծոյ. այսինքն անմահ տնկոցն *երկրագործ* և պահապան: - 279. Նա՛խ՝ *երկրագործք*, այգէգործք, հովիւք, և սոյնպիսիք: - 375. Եօթներորդ՝ երկաթն շինականա՛ց է գործի և *երկրագործա՛ց* անարժան վարկաւ: - 415

**ԵՐԿՐԱՅԻՆ +** Եւ զաստեղսն և զշունն ջրային. և *երկրային* և երկնային: - 54. Իսկ որպէս հոմանուն ձայն, զի հաւասարապէս հաղորդի որոց կոչինն. որպէս խոյ երկնային և *երկրային* և ջրային. զի ո՛չ առաւել և ո՛չ նըւազ կոչին. այլ հաւասարապէս: - 89. Ա՛յս է՝ մեղք հպարտութեանն որ է *երկրային* ախտ, ծանրացոյց և

ընկէց յերկիր: - 148. Իսկ զգալի լոյս դարձեալ բաժանի յերկնայինս և *յերկրայինս*: - 185. Իսկ *երկրային* լոյս՝ է ճրագն և պայծառ օդն և լոյս աչաց: - 185. Վեցերորդ՝ զի նա՛ զպարգևս *երկրային* խոստանայր առնողացն զպատուէրս. և քրիստոս զերկնայինն: - 442. Խրա՛տ է լոյս հոգւոյ առ ի յունել զհոգին. որ *յերկրայինս* և ի մարդկայինս ո՛չ շաղախի: - 582. Եւ այլք ոմանք ասացին թէ՝ մարմինք մարդկան ո՛չ լինին *երկրային*, այլ երկնային. - 720

**ԵՐԿՐԱՉԱՓ +** Նշանակէ՛ ըստ փիլոնի, զի անմարմինքն մինչև յերեքն հասանին. որպէս *երկրաչափքն* գրեն նիշ՝ գիծ՝ երևոյթ. ա՛յս է իմանալեացն չափ: - 344

**ԵՐԿՐԱՍԷՐ** Տասն զօրութիւնք հոգւոյ և մարմնոյ զանգիտօղք և *երկրասէրք*: - 380

**ԵՐԿՐԱՒՈՐ +** Նա՛խ, զի ըստ սոցա ոչինչ է զանազանութիւն մշտնջենաւորացն և փոփոխականացն. որք են երկնայինք և *երկրաւորք*. զի նոքա միա՛յն են ի հարկէ, որք միշտ նոյնպէս ունին. որպէս հրեշտակք անմահք. և լուսաւորք երկնից. և ջերմութիւն հիոյ: - 8. Իսկ *երկրաւորք* մերթ այսպէս և մերթ այնպէս. լինին և ո՛չ լինին. որպէս մարդ, ձի, ծառ, և այլն: - 8. Եւ դարձեալ՝ հոգին որ ի հօրէ ելանէ և կայանայ յորդի. և ի ձեռն որդւոյ իբր զհայրական բարի ամենայն գոյիցս բաշխի երկնաւորաց և *երկրաւորաց*. նախ քան զմարմնանալն՝ և ի մարդեղութեանն: - 61. Պարտաւորեցան ըստ մարդապաշտութեամբ ո՛չ միայն *երկրաւորքս*՝ այլ և երկնայինքն: - 67. Տասներորդ՝ զի թէ նա վասն բնակութեանն երկրպագելի է և աստուած, ո՛չ միայն եղիցի նա՛ աստուած, այլև ամենայն երկնաւորք և *երկրաւորքս*. որք բնակեալ ունին զաստուած և կոչին անուամբ աստուածք: - 67. Ո՛չ ասի հողեղէն և երկրեղէն վասն հողեղէն մարմնոյն. այլ միշտ յերկնից մարմնով իւրով. և ստեղծիչ հողեղինաց և *երկրաւորաց*: - 78. Ընդէ՞ր ապա նա միա՛յն երկրպագի յերկնաւորաց և *երկրաւորաց*: - 95. Եւ ո՞րպէս երկիր պագանեն նմա երկնաւորք և *երկրաւորք* և սանդարամետականք. և ամենայն լեզու խոստովան լիցի թէ տէր է յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր: - 99. Խոստովանեալ յերկնաւորաց և *յերկրաւորաց*. և հաստատեալ սուրբ գրոց վկայութեամբ որպէս ցուցաւ: - 101. Նախ՝ զի բանականն առ *երկրաւորս* և բազում ճշմարտութեամբ կատարի: - 122. Ասեմք եթէ՝ նոքա երեքեան դասքն՝ այսինքն աթոռք՝ քերօբէք՝ և սերօբէք՝ միակարգ միապատիւ և գերազանց էութիւնք են. զի անընդմիջաբար յաստուծոյ ամենայն լուսափայլութիւնք իմաստք և շնորհք ի նոսա հեղանին համակարգապէս. և ապա նոքօք յայլ ամենայն գոյս երկնաւոր և *երկրաւոր*: - 135. Իսկ դևք զանհաստատսն մտօք՝ ի ստորևս քարշեն և յերկիր կործանեն *զերկրաւորս* խորհելով. և ընդ ինքեան ի յատակս դժոխոց մերժեն: - 152. Իններորդ՝ զերկնային և *զերկրաւոր* միտս մարդկան առ հասարակ լուսաւորէ՛: - 185. Վասն է՞ր զերկնայինսն կատարեալ ստեղծ աստուած, և *զերկրաւորքս* ըստ կարգի յաւուրս վեց: - 192. Իսկ *երկրաւորքս* ժամանակեայ. և ժամանակն կարգ ունի, առաջին՝ միջին՝ և վերջին: - 192. Իսկ որ *զերկրաւորքս* ըստ կարգի, ամենագութ մարդասիրութեանն է երևումն. ո՞րպէս խնամով զպէտս մարդկան յայնքան աւուրս կատարեաց: - 192. Հինգերորդ՝ զի մարդն տէր և իշխա՛ն է *երկրաւորացս*, գիտասցէ ըստ կարգի զիշխանութիւնն իւր ուղղել. և մի՛ անկարգ և անիրաւ: - 192. Եւ է՛ գործի իմացման նոցա՝ ձեռք և մատունք. և ենթակայ՝ նիւթք *երկրաւոր*: - 269. Երկրորդ՝ ըստ պատւոյն. զի այս երկնային և վերուստ իջեալ. իսկ այնոքիկ *երկրաւոր* և շնչաւոր որպէս ասէ առաքեալն: - 269. Որպէս յարելով զինքն *յերկրաւորս*՝ լինի ստորև քան զաշխարհս: - 274. Եւ ա՛րդ՝ հեռանալոյ մեզ ի դրախտէն կենաց վերջին ամուսնութիւնն եղև. զա՛յն նախ պա՛րտ է թողուլ, և ապա՛ *յերկրաւոր* հոգւոց և տառապանաց հեռանալ: - 281. Նա՛խ՝ զի յաներևոյթ կեանսն և ի հանդերձեալն յուսացաւ. և արհամարհեաց *զերկրաւորս* որ տեսանի...: – 288-289. Իսկ աբրահամուն յետ նորա և *երկրաւոր*: - 301. Եւ հանել զկօշիկս յոտից, այսինքն ի վերջին խորհրդոց *յերկրաւորս* մերժեցեալ: - 331. Իսկ վերջին խորհուրդ է, յորժամ վասն հարկաւոր պիտոյից կերակրոյ և հանդերձի՝ *յերկրաւորս* հպիմք: - 331. Վեցերորդ՝ անդ *երկրաւոր* խոստմունք. և աստ երկնային: - 353. Իսկ իշխանութիւնն *երկրաւոր*, վասն որոյ բացաւ երկիր և եկուլ զդադան: - 381. Եւ *երկրաւոր* իշխանաց՝ զերկիր: - 381. Օրհնութիւնն աստուծոյ բաժանի յերկուս. որ է՛ երկնաւորաց և *երկրաւորաց*. որ է՛ հոգևոր և մարմնաւոր. անցաւոր և անանց: - 403. Երկրորդ՝ նա *երկրաւոր* թագաւոր. և քրիստոս երկնաւոր: - 442. Ութերորդ՝ նշանակէ՛ զչորս տարբերութիւն փրկելոցս նովաւ. այսինքն երկնաւորք և *երկրաւորք*, կենդանիք և մեռեալք: - 493. Ոմանք ասեն թէ աւանդիլ հոգւոյն քրիստոսի, աւազակն եմուտ *յերկրաւոր* դրախտն ուստի ել ադամ. և չէ՛ հաւանելի. զի անդ մարմնովն եմուտ յետ յարութեանն: - 495. Եւ այլք ասեն թէ՝ խ օր *յերկրաւոր* դրախտին եկաց ինքն և յարուցեալքն ընդ նմա. և մխիթարեաց զեղիա և զենովք: - 521. Զսէրն որ առ աստուած պարտ էաք, փոխե՞մք առ *երկրաւորս* և ի մեղս: - 564. Երկրորդ ի խոտորումն *երկրաւորաց.* որպէս ասէ պօղոս «մովսէս ուրացաւ կոչիլ որդի դստերն փարաւոնի. լաւ համարեցաւ զչարչարիլն», և այլն: - 580-581. Ողորմութիւն է որով *երկրաւորքս* շահին երկնաւորօքն: - 584. Եւ յերկինս ասելովն, Նախ

ցուցանէ թէ՝ ո՛չ են *երկրաւոր* ինչ: - 586. Երկրորդ՝ մարմնովն տիրեաց ցանկութեանցն *երկրաւոր*՝ և իշխանացն դիւաց. և մարմնովն իւր կոխեաց և հալածեաց զայն որ ասէր «ինձ տուեալ է այս ամենայն»: – 711. Այլ քրիստոսի երկիր պագանեն ամենայն երկնաւորք և *երկրաւորք* և ամենայն հոգիք սրբոց: - 711. Բուրվառն ոսկի և խունկն՝ այսինքն զի զաղօթս *երկրաւորաց* սուրբքն և հրեշտակք մատուցանեն քրիստոսի: - 713. Եւ զգործս բոլոր մարմնոյ յերկրի հաստատեցաք. թէ երկնաւոր թէ *երկրաւոր*: - 714. Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ. երկնուղէշ զարգացմամբ մշտասաղարթ կուսութեամբ ծաղկեալ և պայծառացեալ հոգւոյն սրբոյ եկաւորութեամբն. և պտղաբերեալ մեզ անմահ պտուղ զբանն մարմնացեալ. յորմէ վայելեալք երկնաւորք և *երկրաւորք* ի շնորհաց նորին զյաւիտենից կեանսն ժառանգեցաք: - 768

**ԵՐԿՐԱՔԱՐՇ +** Զոր թէ ընկենու ոք, լինի *երկրաքարշ* մարդ և մեղաւոր. և մինչ զղջացեալ դարձեալ ըմբռնէ յետոյ, լինի պատճառ կանգնելոյ և փրկութեան: - 332

**ԵՐԿՐԵՂԷՆ +** Ո՛չ ասի հողեղէն և *երկրեղէն* վասն հողեղէն մարմնոյն. այլ միշտ յերկնից մարմնով իւրով. և ստեղծիչ հողեղինաց և երկրաւորաց: - 78. Երկիր և *երկրեղէնքն*: - 342

**ԵՐԿՐՈՐԴԱԲԱՐ +** Այլ այս *երկրորդաբար* հոսումն է յառաջին բարւոյն. այսինքն յաստուծոյ: - 47. Եւ դու ընդ է՛ր ասես լինել ինձ ըստ մարդկան *երկրորդաբար* բարի. զի աստուածութեամբս եմ ընդ հօր ծայրագոյն բարի: - 47. Իսկ ի հրեշտակս և ի մարդն՝ այլակատար և *երկրորդաբար*: - 138

**ԵՐԿՐՈՐԴԵՄ +** Եւ լուսաւորիչն մեր զնոյնս *երկրորդէ*: - 147. Նախ՝ յորժամ սերօբէն ասէր սուրբ, և միւսն *երկրորդէր* զնոյն. և սա՛ լռեաց զփառաբանութիւն ընկերին *երկրորդել* աստուծոյ, թէ փառքն ի վերայ իւր անկանի և աստուածանայ որպէս ասաց պօղոս: - 147. Չորրորդ՝ զի օր զնա ո՛չ *երկրորդէ*: - 193. Երրորդ՝ զի նոր բան ինչ ո՛չ պատմեաց. այլ զոր ինչ ուսաւ ի սաւուղայ՝ *երկրորդեաց* նմա: - 430. Որպէս դաւիթ ասէ յառաջագոյն. և պետրոս զնոյն ի գիրս գործոց *երկրորդէ*՛ «մարմին նորա ո՛չ ետես զապականութիւն». ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն սուրբ: - 499. Նախ՝ մարգարէն եսայի ասէ, և առաքեալն զնոյն *երկրորդէ*՛: - 698. Եւ դաւիթ զնոյն *երկրորդէ*...: - 699

**ԵՐԿՐՊԱԳԵԼԻ** - Ա՛րդ եթէ *երկրպագելի* և աստուած՝ և այս վասն բնակութեան աստուծոյ, ապա ուրեմն եղեալ առ ժամայն աստուած և օտար ըստ բնութեան: - 67. Տասներորդ՝ զի թէ նա վասն բնակութեանն *երկրպագելի* է և աստուած, ո՛չ միայն եղիցի նա՛ աստուած, այլև ամենայն երկնաւորք և երկրաւորքս. որք բնակեալ ունին զաստուած և կոչին անուամբ աստուածք: - 67. Ա՛րդ՝ ո՛վ բաժանօղք, ո՞ր բնութիւն է ի քրիստոս *երկրպագելի*: - 68. Իսկ թէ առանձնապէս մարդոյն, ահա նո՛ր իմն և առժամայն մուծանես աստուած՝ հրեշտակաց և մարդկան *երկրպագելի*: - 70. Նախ՝ զի յարացոյցն պարզ է՝ և *երկրպագելի*՝ և անապական՝ և անփոփոխ: - 112. Իսկ տարերքն ո՛չեն պարզ. և ո՛չ *երկրպագելի*. և ո՛չ անապական. և ո՛չ անփոփոխ: - 112. Դարձեալ խաչն *երկրպագելի*, և խաչ չարչարանաց մարդկան: - 441

**ԵՐԿՐՊԱԳԵՄ +** Զի թէ աստուածութեանն, հրէաբա՛ր *երկրպագես*: - 68. Իսկ թէ մարդկութեանն միայն, անկա՛ր ընդ մարդապաշտ հայհոյութեամբ. և փոխանակ արարչի՝ արարածո՛յ *երկրպագեցեր* ընդդէմ աստուածային օրինացն: - 68. Ընդէ՞ր ապա նա միա՛յն *երկրպագի* յերկնաւորաց և երկրաւորաց: - 95. Երրորդ՝ զի ամենայն ազգ ի մի կողմ *երկրպագէին*. և յետոյ քրիստոնեայք յարևելս: - 395. Երկրորդ՝ նշանակէ զերկրպագութիւնն հրէից. որ յամենայն կողմանց շուրջ յէեմ *երկրպագէին*: - 395. Ա՛րդ՝ յորժամ կենդանի էր դառնութեամբ և սգով իջոյց ի գերեզման. այժմ մեռելո՛յն *երկրպագէ*: - 429. Չորրորդ՝ ընդէ՞ր հաւանեցաւ աստուածս կոչել զինքն և *երկրպագել* նմա. զի նա մա՛րդ էր: - 429. Քանզի, սաւուղ փոխանակ պատուելոյ խորհէր դաւթի չարիս. և որդիքն սաւուղայ որդւոյն դաւթի փոխանակ *երկրպագելոյ*, ասէին (եկա՛յք արկցուք փայտ ի հաց մարմնոյ նորա, և ջնջեսցուք զյիշատակս նորա:) – 436. Այլ համբարձումն նշանակէ՛ ի միտս համայն բարձր քան զամենայն դասս իմանալեացն. զի նմա՛ *երկրպագեն* ամենայն երկնայինքն. և անդր քան զտեղի տիրամօրն. զի ի միածին որդւոյ իւրմէ խնդրէ զփրկութիւն մարդկան: - 519. Երրորդ՝ ի լեառն ծիթենեաց տեսին զտէրն ելեալ յերկինս՝ *երկրպագեցին* նմա: - 528. և յարևելս *երկրպագեմք* ուստի ակն ունիմք գալստեան փրկչին. որպէս լուսանցն յարևելից: - 613-614. Ապա ուրեմն պա՛րտ է յորժամ յիշատակեմք զհոգին սուրբ ամենայն ուրեք՝ խաչակնքել զդէմս և *երկրպագել*: - 625. Զի՞նչ է որ զառաւօտու քարոզն՝ այսինքն *զերկրպագեմքն*, և զՊատարագին գոհութիւնն, և յերեկոյն զՅասեալքս ի ժամն, աղօթից ձևով ասէ սարկաւագն: - 626. Կամ լինէիր պատուեալ որպէս զյովսէփ. որում *երկրպագէին* եգիպտացիքն որպէս աստուծոյ: - 761

**ԵՐԿՐՊԱԳՈՒ +** Նախ ի պարծանս հաւատացելոց զի բերկրեսցին *երկրպագուք* խաչին: - 732

**ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ +** Դարձեալ՝ տապանն չորեքկուսի՝ է՛ սուրբ խաչն քառակուսի. որ ժողովէ՛

*յերկրպագութիւն* իւր յամենայն ազգաց և լեզուաց: - 294. Երկրորդ՝ մովսէս քարոզէր ժողովրդեանն թէ՝ աստուած հարցն ձերոց առաքեաց զիս. և *յերկրպագութիւն* նմա հրաւիրէր: - 328. Երկրորդ՝ նշանակէ *զերկրպագութիւնն* հրէից. որ յամենայն կողմանց շուրջ յեէմ երկրպագէին: - 395. Ըստ այնմ, «զամենայն ազգս զոր արարեր» այսինքն հրեշտակք և մարդիկք, կամ մարդկան ամենայն ազգ և ամենայն լեզուք, գայցեն ի կատարածի *յերկրպագութիւն* քրիստոսի. և անեզր յաւիտենիւ փառաւորեալ օրհնեն զնա: - 529

**ԵՐՄԷՍ (տ. ՀԵՐՄԷՍ) +** Իսկ շաբաթն որ է՛ **է** օր՝ կոչեցաւ յեօթն մոլորակաց: Զի հինքն զեօթն մոլորակսն՝ է տուն աստուածոց կոչէին... Զզօհալն Կռօնոսի. Զմուշթարին Դիոսի. Զմառեխն Արէսի. Զարեգակն Իլիոսի. կամ Զևսիլոսի. Զօհրայն. Ափրոդիտեայ. Զօտարիտն *Երմեսի*. Զլուսինն Սելինի: - 190. Եւ *զերմեսին* չորեքշաբթի: - 190

**ԵՐՈՒՍԱՂԷՄ** - Վեցերորդ՝ զի սաղիմայ ասէ՝ որ է՛ *երուսաղէմ*. և թարգմանի խաղաղութիւն: - 302. Եւ սրբութիւն սրբոցն ի յարևելք. զի *երուսաղէմ* ՝ կողմ արևելից է նոցա. և սրբութիւնն ի մէջն. և սրահն յարևմուտս. որպէս մերս եկեղեցի: - 343. Զի տէր մեր ի հիւսիսո՛յ կողմ *երուսաղէմ* խաչեցաւ: - 360. Եւ որպէս ի տաղաւարքն կողերս՝ տերև՝ և ոստ մատուցանէին. զնոյն և քրիստոսի մատուցին յաւուրն ողոգոմեան ի գալուստ նորին *յերուսաղէմ*: - 374. Որ նշանակէր՝ «աստուած ի հարաւոյ եկեսցէ» ի թագաւորի և քահանայի ցեղէն. զի բեթլէհէմ հարաւ է *երուսաղէմի*: - 379. Երկրորդ՝ նշանակէ զերկրպագութիւնն հրէից. որ յամենայն կողմանց շուրջ *յերուսաղէմ* երկրպագէին: - 395. Այլ *երուսաղէմ* լեառն է և դաշտ, յանձրևոյ ոռոգի. իբր թէ խնամօքն աստուծոյ լինի անձրև աւելի և նուազ, ի ժամու և տարաժամու ըստ արժանեացն ձերոց: - 398. Երկրորդ՝ նշանակէր զքաղաքն *երուսաղէմ*. զի միայն ա՛նդ եղև մարգարէութիւն և օրէնքն. և սեղան աստուծոյ ի սիօն: - 421. Եւ յետոյ յամենայն աշխարհ եկեղեցի աստուծոյ և օրէնք և սեղան աստուծոյ կանգնեցան, և *երուսաղէմ* ցամաքեցաւ: - 421. Ա՛յն է որ կաղք և կոյրք ընդ դէմ դարձան դաւթի և անարգանօք ասէին՝ մի՛ մտցէ դաւիթ ի քաղաքս. որ նա՛ ինքն է *երեսուղէմ*. որ եղև տուն տեառն: - 431. Դաւիթ էառ *զերուսաղէմ* և շինեաց իւր տուն. և տէրն զվերինն *երուսաղէմ*, և ետ իւրայնոցն զխաղաղութիւն: - 438. Դաւիթ երիցս սուգ էառ մեռելոյ. և տէրն ի վերայ *երուսաղէմի* և ի գերեզմանն ղազարու և մեծ ի խաչն: - 438. Այլ որ հրամայեցաւ սիմէի ոչ ելանել *յերուսաղէմէ*. և յորժամ ել մեռաւ: - 439. Տասներորդ՝ ի սելով օծաւ և *յերուսաղէմ* թագաւորեաց: - 441. Մետասաներորդ՝ փողով և ցնծութեամբ ել *յերուսաղէմ* : - 441. Նա՛խ՝ զի մի՛ զարհուրեսցի *երուսաղէմ* տեսեալ զսուրն որ կոտորեաց զնոսա: - 446. Երկրորդ՝ զի իջցէ ի գերեզման և մի՛ տեսցէ զչարիքն որ ի ձեռն նաբուգոդոնոսորայ գալո՛ց էր ի վերայ *երուսաղէմի*. որպէս յայտ է ի պատմութիւնն: - 446. Թագաւորք յուդայ նստան *յերուսաղէմ*. Ռոբովամ. Աբիա. Ասափ. և այլ թագաւորք **իբ**: - 446. Տևեալ ամս ն. մինչ ի սեդեկիա որ գերեցաւ ի բաբիլօն. և հրձիգ եղև տաճարն և *երուսաղէմ*: - 446. Եւ յետ գերութեանն իսրայէլի անցեալ ամք ճլե, ել արքայն բաբիլացւոց նաբուգոդոնոսոր ի վերայ *երուսաղէմի*. ի **ժ** ամի թագաւորութեանն յովակիմայ. և էառ հարկ ի նմանէ. և զմեծ մասն սրբութեանց տաճարին աւերեաց: - 447. Եւ յետ գ ամի՝ կրկին անգամ ել *յերուսաղէմ*, զյեքոնիա և զեզեկիէլ գերի վարեաց: - 447. Եւ յետ **թ** ամի՝ դարձեալ ել *յերուսաղէմ*, և թ ամ պաշարեաց զքաղաքն ի սով սաստիկ: - 447. Եւ յետ **ե** ամսոյ՝ նաբուզարդան դահճապետն հրձիգ արար *զերուսաղէմ* և զտաճարն և զտուն թագաւորացն. և զպարիսպն կործանեաց. և զսիւնսն պղնձի և զաւազանն և զամենայն կահ պղնձի և արծաթի տարաւ ի բաբիլօն: - 447. Կիւրոս յառաջին ամի թագաւորութեանն իւրոյ՝ արձակեաց ե բիւր զգերիսն *յերուսաղէմ*, սաղմանասար իշխանաւն. զի շինեսցեն զտաճարն: - 448. Եւ յետ եօթանասուն ամի շինւածոյ տաճարին՝ ապա արձակեալ նէեմի շինէ զպարիսպն *երուսաղէմի* ի **լբ** ամին արտաշէսի. որպէս ասէ գիրքն եզրի: - 448. Իսկ *յեմ* թագաւորէ՛ ռոբովամ որդի Սողոմոնի: - 452. Ռոբովամ թագաւորէ՛ *յերուսաղէմ* ամս **ժէ**: - 452. Յերկոտասան ամին սեդեկիայ՝ նաբուգոդոնոսոր քաղդէացի էառ *զերուսաղէմ* և զտաճարն հրձիգ առնէ: - 453. Այսպէս և կիւրեղ *երուսաղէմի*՝ համախոհ նմին: - 484. Հնգետասաներորդ՝ յա՛յտ է յայսմանէ. զի վասն տօնի տեառնընդառաջին առաքեաց յուստիանոս կայսրն *յերուսաղէմ* զօրս բազում երիցս անգամ, - 484-485. Եւ յառաջին ամին յօստոս էր հայրապետ *յերուսաղէմ*. իսկ յերկրորդն սուրբն մակար: - 485. Ապա վասն է՞ր *յերուսաղէմ* ասեն զդժոխքն՝ թէ է՛ այր դիւահոտ և ձայն աղաղակի և չարչարանք և այրեցումն չարաչար դիւաց լսելի լինի: - 504. Եւ կրկին սուտ. զի ուր զձուկն կերին՝ ի գալիլեայ յեզր տիբերիայ ծովուն էր դ աւուր ճանապարհ հեռի *երուսաղէմէ՛* և ի լեռնէն ձիթենեաց ուստի համբարձաւ քրիստոս: - 511. Չորեքտասաներորդ՝ այլ և ի գիշերի հրեշտակն տեառն էհան զզօրսն ռափսակայ. որ պաշարեալ էին *զերուսաղէմ* և փրկեաց զնոսա...: – 514. Առաջին ժողովն եղև ի նիկիայ սրբոց հարց. զկնի **յժը**՝ կամ **յլ** ամի ծննդեանն քրիստոսի. և ի **h** ամի թագաւորութեանն կոստանդիանոսի: Եւ Պատրիարգունք էին անդ, Արիստակէս հայոց... Մակար *երուսաղէմի*: - 542. Եւ Պատրիարգունք էին անդ,

Ներսէս հայոց. Կիւրեղ *երուսաղէմի*. Դամասոս հռոմայ. Նեքտառիոս կոստանդնուպօլսի: - 542. Յոբնաղ *երուսաղէմի*: - 542. Եւ հայրապետք էին անդ, Եւտիգէս *երուսաղէմի*: - 543. Եւ պատրիարգունք էին անդ, Եղիա *երուսաղէմի*: - 544. **Այլ և յառաջին ժողովն գ աթոռք ինքնագլուխք հաստատեցան: *Յերուսաղէմ* վասն գերեզմանին քրիստոսի: Եւ ի կիպրոս վասն գերեզմանին ղազարու: Եւ ի հայք վասն սուրբ լուսաւորչին գրիգորի**:- 549. Եւ այս է սրբոյն կիւրղի որ *յերուսաղէմ*: - 572. Եւ թէ ոք ասիցէ, առանց ջրոյ գինի ո՛չ ըմպեն *յերուսաղէմ*: - 596. Եւ *յերուսաղէմ* եկեալ պատարագ մատոյց զիւրակա՛նն մարմին: - 607. Տասներորդ՝ զի դշխոյն հեղինէ որ շինեաց զսուրբ յարութիւնն *յերուսաղէմ*...: – 617. Այն է՝ յորժամ դաւիթ զտապանակ ուխտին հանէր *յերուսաղէմ*, **է** դաս պարուց որք են քահանայից դասք. և սրինկ. և փողք. և քնար. և այլն: - 645. Եւ զփոքր կարգն մեծն կիւրեղ *երուսաղէմի* հայրապետն. է՛ սկիզբն **բ** շաբաթի, և աւարտն ի **ե** շաբաթի: - 651. Իսկ զկանոն ջրօրհնէից՝ սրբոյն բարսղի է արարեալ յեօթն ամի հայրապետութեան իւրոյ *յերուսաղէմ*. զի անդ հանդիպեցաւ: - 658. Իսկ խոսրով թարգմանիչ եբեր ի հայս. որ գնացեալ էր *յերուսաղէմ* հրամանաւ սրբոյն սահակայ: - 658. Իսկ վասն տեառնականին և աղօրհնէիցն, սուրբն յոստո՛ս է արարեալ. որ չորրորդ եպիսկոպոս էր *յերուսաղէմ* յառաքելոյն յակոբայ: - 659. Ա՛րդ՝ ծնանի ի բաբելօն ի ցեղէն դանայ. և եկեսցէ *յերուսաղէմ* և թլփատեսցէ զինքն: - 707. զոսա ասեն հրէայքն ելանել ի կատարածի և գալ *յերուսաղէմ*: - 708. Ընդ երևիլ նեռինն և թագաւորելն *յերուսաղէմ*, եկեսցեն ենովք և եղիա որպէս ասէ մաղաքիա և դարձուսցեն զսիրտս հարց յորդիս. - 709. Որ և յետ այնորիկ սպանցին ի նեռնէն *յերուսաղէմ*. և անկեալ լիցին մարմինք նոցա ի հրապարակս զերիս տիւս և զերիս գիշերս: - 709. Ուր ինքն տէրն խաչեցաւ և յարեաւ. և սոքա ամենեքեան ծոր յովսափաթու կոչին, որ յերկու ծորի մէջն է *յերուսաղէմ*: - 737. Նա՛խ՝ զի տեղիք դատաստանին պա՛րտ է զի ի հասարակ վայրի լիցի և *երուսաղէմ* է՛ մէջ աշխարհի: - 738. Երկրորդ, զի դատաստանն պա՛րտի յայտնի լինի. այլ՝ արդ՝ *երուսաղէմ* է՛ առաւել յայտնի վասն փրկութեանն որ անդ կատարեցաւ: - 738

**ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑԻ** - Քանզի ո՛չ կարէին ի միում աւուր յերկոսեան ուխտսն կատարել զտօնսն հեռի գոլով ի միմեանց. *երուսաղէմացիքն* այսր աղագաւ փոխեցին. և փոքր փոքր աճմամբ ընկալան և ա՛յլ եկեղեցիք զնոյն: - 482

**ԵՐՋԱՆԻԿ +** Երկրորդ՝ խոստովանութիւն է և վկայութիւն. իբր թէ բարի ես բնութեամբ. *երջանիկ*. և այլն: - 406. Երրորդ խոստովանութիւն և վկայութիւն է. իբր բարի՛ է. *երջանի՛կ* է. անմա՛հ է բնութեամբ և այլն. որպէս ասացաւ ի վերոյ: - 624. Այլ և *զերջանիկ* գաղափարօղսդ մաղթեմ. որք ընդօրինակէք զգիր հարցմանցս այսորիկ, գրել և զսակաւ յիշատակս այսոցիկ: - 773

**ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ +** Վասն թշուառականին ի բաց մերժի *երջանկութիւնն*: - 491. Որպէս ասեն վարդապետք, այնքան եղիցի *երջանկութիւն*, ուր ոչ ինչ եղիցի չար, և ոչ ինչ ծածկեսցի բարի: - 765

**ԵՐՐ +** Եւ ի ներքինն անցեալ՝ գիշեր. զի գարշեցո՛յց *զերր*. որ է օդ և երես երկրի: - 190. Եւ գիշեր, զի գարշանա՛յ *երր*, որ է օդ: - 196

**ԵՐՐԱԿԻ +** Տասներորդ՝ զի գոյք ամենայն տարրորշին *երրակի*: - 169. Դարձեալ զօրութիւնք հոգւոյն բաժանին *երրակի* ըստ երից ներգործութեանցն. որ է՛ կենդանանալն. զգալն. և բանաւորիլն: - 249. Եւ այս լինի *երրակի* ըստ երից մասանց հոգւոյն: - 561

**ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ +** Նախ՝ որք աստիճան դնեն *Երրորդութեանն*. և ի յայլումն ասեն զհոգին. որպէս պատահումն: - 29. Տասներորդ՝ Վկայութիւնք վասն համագոյ *Երրորդութեանն* տասն գլխով: - 30. Հինգերորդ՝ Հայր և Հոգի ո՛չ մարմնացեալ. թէպէտ մի բնութիւն է *երրորդութեանն*: - 30. Երկոտասաներորդ՝ Ընդդէմ նմին *երրորդութեանն* ունի: - 30. Եւ սոքա ուրանան *զերրորդութիւն* անձանցն ի միում բնութեան: - 34. Պատասխանեմք թէ՝ անծնելութիւնն և կամ ծնելութիւնն ո՛չ ասի միայն աստուածութիւն. զի աստուածութիւնն հաւասա՛ր է *Երրորդութեանն*: - 38. Այլ ա՛յս է լուծումն, զի յորժամ լսես թէ մի է աստուած, զընդ աստուած ասելոյն՝ *զԵրրորդութիւնն* իմացիր. զի ո՛չ է առանձին, այլ հասարա՛կ է աստուածութիւնն: - 47. Եւ դարձեալ՝ *զԵրրորդութիւնն* աստ յայտ առնէ: - 47. Եւ ի տնտեսականն. որպէս Աստուած փրկիչ. կամ արդարութեան. կամ խաղաղութեան. կամ աբրահամու. կամ իսահակայ և այլն. և այս հասարա՛կ է *Երրորդութեանն*: - 49. Չորրորդ՝ զիա՞րդ ինքն կարգի ի թիւ *Երրորդութեանն*. ըստ այնմ՝ «մկրտեցէք յանուն հօր և որդոյ և հոգւոյն սրբոյ»: - 51. Եւ այլք աստիճան դնեն *Երրորդութեանն* և անւանեն արարիչ՝ և գործակից՝ և պաշտօնեայ: - 51. Իսկ այլ բազում օրինակ *երրորդութեանն* ասացաւ ի վերոյ յերեք համարն: - 53. Առ եօթներորդն ասեմք, եթէ՝ մատն աստուծոյ երբեմն նշանակէ *զերրորդութիւն* անձանցն...: - 62. Իսկ եթէ զանձն ասացիք բղխեալ, ահա **բ** անձն ասացիք հոգւոյն. մինն ի հօրէ բղխեալ, և մինն ի յորդւոյ. և այսպէս լինի *երրորդութիւնն* չորրորդութիւն: - 62. Երկրորդ հարցանեմ եթէ, *յԵրրորդութիւնն* մի է սկիզբն՝ թէ

**բ**: - 62. Քսաներորդ՝ այսպէս *Երրորդութիւնն* լինի չորրորդութիւն. և թիւ և աւելած եղեալ ի բնութիւնն և ի դէմքն. եթէ ա՛յլ է առանձնապէս մարդ և ա՛յլ աստուած: - 68. Զի թէ ի վերայ բնութեանն, **բ** կատարելութիւն մուծիք *յԵրրորդութիւնն*. զի *Երրորդութիւնն* մի բնութիւն է կատարեալ. և մի բնութիւն մարդոյ: - 68. Իսկ թէ ի վերայ անձինն, ահա *զԵրրորդութիւնն* չորրորդութիւն արարիք որպէս ասացաւ: - 68. Եւ դարձեալ՝ զի հաներ զբանն ի կազէ *Երրորդութեանն*. շարադասելով զմարդն ի տեղի նորին: - 69. Յորմէ և մարտ ի մէջ *Երրորդութեանն*: - 70. Եթէ մի է առհասարակ բնութիւն *Երրորդութեանն* և ո՛չ բաժանեալ, ո՞րպէս իմանամք զբանն միայն մարմնացեալ. և ո՛չ զհայր և զհոգի: - 74. Երրորդ՝ զի մի՛ *Երրորդութիւնն* մարմնացեալ երևեսցի: - 76. Զի բնութիւնն հասարա՛կ է. և մայր նորին՝ *Երրորդութեանն* լիցի մայր: - 76. Զի՞նչ է ասելն աստուածաբանին, այլ և այլ ընդ նմին *Երրորդութեանն* ունի. քանզի՝ անդ այլ ոմն է և այլ. զի մի՛ զդէմսն խառնակիցեմք: - 80. Զբանս զայս չարափառքն այսպէս մեկնեն, թէ միութիւն բանին ընդ դէմ է միութեան *Երրորդութեանն*. զի անդ բնութիւնն մի՝ և գ անձինք. իսկ աստ **բ** բնութիւն և մի անձն: - 80. Զի սա ընդ դէմ վասն մի բնութեանն ասէ որ *յԵրրորդութիւնն* է և ի անօրէնութիւնն բանին. սոքա զընդդէմն վասն բաժանմանն իմանան: - 80. Նախ այսպէս, ասէ թէ բաժանմունք որ *յԵրրորդութիւնն* է, ո՛չ է հնար միաւորութեան. զի ա՛յլ ոմն է և ա՛յլ: - 80. Դարձեալ՝ զի ասէ թէ, ա՛յս միաւորութիւնս որ ի քրիստոս է, ո՛չ է իբրև զայն որ *յԵրրորդութիւնն* է. զի անդ միութիւն է, բայց բաժանումն անձանց: - 80. Ապա և *Երրորդութիւնն* է միաւորեալ ըստ քեզ: - 86. Ապա ո՞րպէս է *Երրորդութիւնն* յատկացեալ՝ եթէ ոչ անձամբ: - 86. Իսկ թէ զաստուածայինն բնութիւն, ահա՛ *զԵրրորդութիւնն* ասէք մարմնացեալ. զի բնութիւնն հաւասար է երից անձանցն: - 89. Իսկ թէ զմարդկային բնութիւնն պաշտէք, եղէք կռապարիշտք. և նո՛ր և եղական ոմն աստուած մուծանէք *յԵրրորդութեանն* կարգ: - 90. Վասն սէ՞ր կոչեմք *Երրորդութիւն*. և Հայր. և Որդի. և Հոգի սուրբ: - 101. Նոյնպէս և ասելն՝ *Երրորդութիւն*. սովին թըւով բացայայտի: - 105. Երրորդ՝ հասարա՛կ է ի *յԵրրորդութիւնն* միութիւնն սուրբ. զի մի է հայր. մի որդի. մի հոգի: - 106. Վասն է՞ր ասեմք *Երրորդութիւն*: - 107. Նոյնպէս և *Երրորդութիւնն* կատարեալ է. Հայր և Որդի և Հոգի սուրբ: - 107. Իսկ *Երրորդութիւն* կոչեմք՝ բաժանելով յերեք թըւոյն: - 107. Իսկ *Երրորդութիւն*, որ է՛ **գ** միութիւն. և մի *Երրորդութիւն*. այսինքն մի **գ**. և **գ** մի: - 107. Ուստի յա՛յտ է յորժամ ասեմք *Երրորդութիւն* աստուած. *Երրորդութիւն* անեղ. այլ ո՛չ ասեմք գ աստուած. կամ **գ** անեղ. այլ մի աստուած և մի անեղ: - 107. Երկրորդ՝ *Երրորդութիւնն* ցուցանէ զհամագոյութիւն երիցն. զի ո՛չ է առաջին և վերջին ի նոսա. այլ՝ զո՛յգ և համանգամայն: - 107-108. Երրորդ՝ *Երրորդութիւնն* ցուցանէ երիցն զմի հասարակ բնութիւն. որպէս ասեմք մարդ և մարդկութիւն. ծի և ծիութիւն. ընդդէմ արիոսի որ ասէ՝ երեք թիւն ունի երեք բնութիւն, ասեմք երից անձանցն մի բնութիւն: - 108. Իսկ ի *յԵրրորդութիւնն* ո՛չ է քանակ և չափ, և ո՛չ պատահումն, և ո՛չ գիտելի եղական մտաց: - 108. *Երրորդութիւն* հասարակ է. և աստուածութիւնն հասարակ: - 108. Ա՛րդ՝ ասեմք զհայր աստուած. և զորդի աստուած. և զհոգի աստուած. ապա կարե՞մք ասել զհայր *երրորդութիւն*. և զորդի *երրորդութիւն*. և զհոգին սուրբ: - 108. Ո՛չ ասեմք. զի աստուածութիւնն հասարակ է բնութեանն. իսկ *Երրորդութիւնն* հասարակ է անձանցն: - 108. Եւ զի անձամբ յատկացեալք են և բնութեամբ մի. վասն այն *Երրորդութիւն* ո՛չ ասի միոյ անձին. այլ աստուած կամ աստուածութիւն ըստ միութեան բնութեանն: - 108. Իսկ արձակապէս և գերազանցն՝ զնոյն անեղութիւն *Երրորդութեանն* բացորոշէ: - 113. Նախ՝ ի դէմս *Երրորդութեանն* և համաբուն իսկութեանն: - 134. Զի գիտեմք զդոսա ինն գոլ դասս ըստ սրբոյն դիոնիսեայ. և երիս երրեակս որոշեալ ի դէմս *Երրորդութեանն*: - 141. Նախ կոչի երկինք ամենասուրբ *Երրորդութիւնն*. զի անհաս բարձրութեամբ գերազանցեալ է յամենայն եղելոց: - 183. Հինգերորդ՝ երկին կոչի ամենասուրբ *Երրորդութիւնն* վասն լուսաւորութեան և անհաս բարձրութեանն յամենայն եղելոց որպէս ասացաւ: - 184. Եօթներորդ՝ *Երրորդութիւն* է աստուած: - 271. Ութերորդ՝ **գ** անձինք կատարեալք. և թէ մինն պակասիցէ՝ ո՛չ է կատարեալ աստուած. և մարդս *երրորդութեամբ* է կատարեալ. հոգւով և մարմնով և բանիւ. և թէ մինն պակասիցէ՝ անկատա՛ր է մարդն ասէ վարդապետն վարդան: - 271. Եւ այս չէ՛ ընդունելի. զի մարդն *երրորդութեանն* է պատկեր եղեալ որպէս ցուցաւ. և ո՛չ միայն որդւոյ և հոգւոյն սրբոյ: - 273. Վասն որոյ օրհնութեամբ ցրուեաց զնոսա ի վերայ երկրի, զի աճեսցին և բազմասցին և լցցեն զերկիր ծննդօք և շինութեամբ և բարեգործութեամբ ի փառս ամենասուրբ *Երրորդութեանն* ամէն: - 298. Տասներորդ՝ **գ** ափկիցն. *երրորդութեանն* հաւատով սրբել **զժ** զգայարանս հոգւոյ և մարմնոյ: - 339. Եւ **ժ** բան է՛ օրինացն. և **խգ** իրաւանցն. բովանդակն **ծգ**. խորհուրդ ազատութեան մերոյ հաւատով *Երրորդութեանն*: - 340. Երկրորդ՝ զի եօթնիցս եղև արժանի տեսլեան *Երրորդութեանն*. կրկին անգամ զհայր ի գիշերի. և կրկին զորդին ի տիւն. և հոգի աստուծոյ ի վերայ նորա երկիցս անգամ. և մի անգամ զիրեշտակն ետես: - 387. Նա՛խ՝ հաւատով ճանաչելն է *զԵրրորդութիւնն* մի բնութիւն, և ապա գործով սիրել զնա. որպէս նախ

ուսանիլն է և ապա առնել: - 396. Երիցս փչելն՝ ի խորհուրդ *Երրորդութեանն*: - 444. Իսկ թէ մինն համագոյ *երրորդութեան* բանն մարմին եղև՝ ցուցցի այժմ: - 468. Այլ որդին որդի եղև և անշփոթ մնացին *երրորդութեանն* դէմք: - 468. Ութերորդ՝ զի յայտնեսցէ անդ զխորհուրդ *Երրորդութեանն*: - 486. Այլ զանազանին Նախ ի ծնն. զի մկրտութիւնն յոհաննու տուեալ լինէր յանուն այնմ որ գալոցն էր. իսկ քրիստոսին յանուն *Երրորդութեանն*: - 488. Տասներորդ՝ թէ և հասարա՛կ է ամենայն ինչ *երրորդութեանն*, տէրութիւն իշխանութիւն աստուածութիւն և այլն: - 522. Երկրորդ՝ զի որ անդ ի ծածուկ ծանոյց զինքն յանձինս մարգարէից նոյն ինքն աստ *զԵրրորդութիւնն* յայտնեաց առաքելոցն: - 524. Եւ դարձեալ՝ որպէս բանն աստուած անէծ զադամ, նոյն բանն դարձեալ օրհնեաց մարմնովն. թէպէտ մի է գործ *Երրորդութեանն*: - 542. Չորրորդ՝ որք միայն զորդւոյ ասեն բան՝ սակաւ պատիժն, զի մի է *յԵրրորդութենէն*. իսկ որ զփառակիցն նա՝ կրկնապատիկ հատուցանի նմա: - 566. Եւ այնք որ ո՛չ խոստովանին զմիասնական սուրբ Երրորդութիւնն, մկրտելի է զմկրտեալն ի նոցանէ ի փառս ամենասուրբ *Երրորդութեանն*: - 590. Եւ զայս ցուցանէ նոյն ձև բանին որ է կոչմունք *Երրորդութեանն*. և նոյն դաւանութիւն հաւատոյն և այլն: - 590-591. Զի՞նչ է որ ա՛յլ ազգք ի դէմս *Երրորդութեանն* ասեն. և վկայ ածեն զսերովբէսն գ սուրբ և մի տէր ասելովն: - 632. Իսկ որք ի վերայ *Երրորդութեանն* ասեն՝ երեք վնաս կայ ի բանս նոցա: - 633. Իսկ երեքկինն ի դէմս *Երրորդութեանն* է: - 636. Եւ ի դէմս *Երրորդութեանն* որպէս ասացաք: - 637. Իսկ երրորդն ի դէմս *Երրորդութեանն* և է շնորհաց հոգւոյն զոր ընկալաք յաւազանին: - 683. Նաև համապայծառ լոյս *Երրորդութեանն* ծածկէ՛ զամենայն լոյս լուսաւորացդ. զա՛յն ասէ խաւարումն արեգական և լուսնի և աստեղաց. զոր օրինակ՝ լոյս ճրագի ծածկի մերձ եկեալ լուսոյ արևու: - 728. Զի բոլոր *Երրորդութիւնն* դատէ՛ զմեղաւորս, և մարդկութեամբն խօսի ընդ նոսա քրիստոս: - 738. Առասանքն երեքկի՝ *յԵրրորդութեանն* դիմաց արդարութեան և ողորմութեան զօրութիւնք առ մեզ խոնարհեալ. ունելով զյիշատակ բարեացն և չարեացն մերոց: - 745. Մի դէմն *յԵրրորդութենէն* որդի լինի. մի դէմ ի մարդկութենէս ի կուսէ առեալ բնութիւն մարդկութեան, աստուածութիւնն բոլորովին յաղագս անհաս միաւորութեանն ըստ ոսկէբերանին յոհաննու: - 770. Այլ բոլորովին զհամագոյ և ըզհամառօտ և զանաւելորդ *Երրորդութիւնն* փառաւորեա միշտ և հանապազ: - 771

***ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ, ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ*** - Արդ՝ յաջ և յահեակ խոտորին հերձուածօղք. որպէս սաբէլ յաջ խոտորեալ՝ ի մի բնութիւն և ի մի անձն ժողովեաց *զԵրրորդութիւնն սուրբ:* - 80. Ա՛րդ՝ միութիւն *սուրբ Երրորդութեանն* բազում է և յայտնի: - 104. Այսպէս է միութիւնք և որոշմունք որ է հասարակ և յատուկ ի *սուրբ Երրորդութիւնն*: - 106. Ըստ որում մինն ի *սուրբ Երրորդութենէն* բանն աստուած հաղորդեցաւ բնութեան մերում անքակ միութեամբ. և եղև աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ: - 106. Նախ՝ զի մինն ի *սուրբ Երրորդութենէն* մարդացաւ: - 106. Չորրորդ՝ զի երեքն զնոյն բնութիւն ունի զերիցն. նոյնպէս *Երրորդութիւնն սուրբ* նո՛յն է բնութեամբ: - 107. Իսկ ի *սուրբ Երրորդութիւնն* մինն պակաս չունի քան զերկուքն. և ո՛չ երկուքն աւելի քան զմինն. զի հայր ունի զամենայն լիութիւն որդւոյ և հոգւոյ: - 108. Իսկ ի *սուրբ Երրորդութիւնն* հայր կատարեալ. որդի կատարեալ. հոգի կատարեալ. և կատարեալն ո՛չ յաւելու և ո՛չ նըւազի: - 108. Իսկ *սուրբ Երրորդութիւնն* անփոփոխելի է. զի հայր ծնաւ զորդի և բղխեաց զհոգին. և ո՛չ փոխեցաւ ի գոլոյն հայր: - 108. Իսկ ի *սուրբ Երրորդութիւնն* անբաժանելի՛ է հայր ի յորդւոյ և ի հոգւոյ. որդի ի հօրէ և ի հոգւոյ. և հոգի ի հօրէ և յորդւոյ: - 108. Համագոյ և միասնական *սուրբ Երրորդութեանն* ո՛չ է առաջին և վերջին. ո՛չ մեծ և փոքր. և ո՛չ երէց և կրտսեր: - 109. Առաջինն որ է տըպաւորական աստուածաբանութիւն՝ է՛ ի դէմս *սուրբ Երրորդութեանն* և մի աստուածութեանն. թէ ո՞րպէս է մի. ո՞րպէս երրեակ. և ծնօղ. և ծնունդ. և բղխումն. և վասն մարդեղութեանն քրիստոսի: - 122. Իսկ աստ այլապէս բաղդատի արեգակն *սրբոյ Երրորդութեանն* ըստ այսմ օրինակի: - 124. Զայս ոմանք ի վերայ *սուրբ Երրորդութեանն* մեկնեն այսպէս. սիրօղ է հայր. սիրելի որդի. և սէր հոգին սուրբ: - 128. Երրորդն իմանալի. յորում *Երրորդութիւնն սուրբ* ի նոցանէ դեմ յանդիման նկատի: - 180. Եւ է՛ անեղական լոյս՝ *Երրորդութիւնն սուրբ:* - 185. Եւ ևս, զի գ դէմք *Երրորդութեանն սուրբ*՝ նոյն և նման գոն միմեանց: - 237. Եւ երկրորդ՝ զի գ բարեխօս ունիմք առ *Երրորդութիւնն սուրբ:* - 295. Նա՛խ՝ գ օրն հաւատն է *յԵրրորդութիւնն սուրբ*. և ապա՛ սրբութիւն գործոց է է զգայութեամբ: - 384. Նախ զայս ասեմք թէ՝ համաբուն և համապատիւ է *Երրորդութիւնն սուրբ.* զի միոյն փառքն երիցն է և երիցն միոյն: - 525. Ասեմք առ այս, թէ *յԵրրորդութիւնն սուրբ* մի է բանն և իմաստութիւնն և բնութիւն և կեանք և ներգործութիւն և այլն ամենայն. բաց յառանձնութենէն որ է ծնօղ ծնեալ և բղխեալ: - 530. Եւ այնք որ ո՛չ խոստովանին զմիասնական *սուրբ Երրորդութիւնն,* մկրտելի է զմկրտեալն ի նոցանէ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն: - 590. Երրորդ՝ զի չորրորդութիւն մուծանեն *յԵրրորդութիւնն սուրբ.* - 633. Հասարակ, որպէս ի սկզբանէ մինչև ցաւարտումն առ *Երրորդութիւնն սուրբ* աղերսեմք: - 633.

**ԵՐՓՆ + (*ԵՐՓՆ ԵՐՓՆ*)** - Տասներորդ՝ զի գեղեցիկ լինի ի տեսս աչաց *երփն երփն* գունով և վէտս վէտս. այսինքն ծալ ծալ ծիծաղի երեսօք: - 208

**ԵՐՔՈՅՆՈՏ (տ. ՈՐՔԻՆՈՏ) +** Վեցերորդ՝ *երքունոտն*. սնքնոտն. անբո՛ւժն է: - 371

**ԵՒԱ** - Երկրորդ՝ ի հօրէ՛ և ո՛չ ի մօրէ. որպէս *եւա*: - 29. Եւ ապա՛ զադամ, զի ունի զսէթ ծնունդ՝ և *զեւա* ո՛չ ծնունդ. այլ հատումն ի նոյն բնութենէ. և ընդ միով սահմանաւ գոլ ծնողին և հատմանն և ծնիցելոյն: - 53. Պատասխանեմք եթէ՝ թէպէտ հոգին ունի զբնութիւնն ի հօրէ՝ սակայն ո՛չ ծննդեամբ որպէս որդի, այլ բղխմամբ. որպէս շունչն և բանն ունին զէութիւնն հոգւոյն այլ և այլ կերպիւ. և որպէս ադամ յառաջ էած յինքենէ զսէթ և *զեւա*. զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ. և ունին երեքեանն զմի և զնոյն բնութիւն մարդոյ: - 60. Նա՛խ՝ զի զդէմքն ընտրեաց՝ և ընդ *եւայի՛* խօսեցաւ: - 218. Եւ կամ որպէս *եւա* ի կողիցն ադամայ: - 226. ի Վեցերորդն, ցամաքային կենդանիքն. այլ և Ադամ և *Եւա*: - 226. Զայս **բժ**ան պարգևս էհան ի մէնջ *եւա*: - 279. Մաշկն է կենդանական մորթ. զոր ստեղծեաց աստուած և զգեցոյց զադամ և *զեւա*: - 281. Չորրորդ՝ զի պտուղ ո՛չ եկեր. որով *եւա* ուտելովն զրկեցաւ կենաց. և այսպիսիքս յերկինս հանեն զմարդն: - 290. Որպէս ասաց նախամօրն *եւայի*, «բազմացուցանելով բազմացուցից զտրտմութիւնս քո և զհեծութիւնս»: – 292. Ադամայն *եւա*՛: - 299. Երկու զուարակ, որ քրիստոս զենաւ վասն ադամայ և *եւայի* պարտուցն: - 373. Ընդ ադամայ և ընդ *եւայի* **ե**: - 412. Տասներորդ՝ որպէս ի դրախտին մերկ էին ադամ և *եւա* և ո՛չ ամաչէին զի անմեղք էին: - 461. Զի որպէս սատանայ օձիւն խօսեցաւ առ կոյսն *եւա*, այսպէս տէր մեր հրեշտակիւն առ կոյսն մարիամ: - 463. Եօթներորդ՝ «ուրախ լեր» ընդդէմ տրտմութեանն. որ ասացաւ *եւայի* «տրտմութեամբ ծնցիս որդի»: – 464. Մին ի մէջ *եւայի* և բանսարկուին. որով մուծաւ մահ ի ներս: - 465. Այլ և ծանիր, զի յընտրողութիւնն ոչ էր վաղվաղուկ որպէս *եւա*: - 465. Ապա թէ առանց ընտրողութեան ամենայն բանի հաւանին՝ կորիցեն որպէս *եւա*: - 465. Նա՛խ՝ զի ո՛չ լինէր այն որդի ըստ բնութեան ծնողին. որպէս և ո՛չ *եւա* ադամայ. վասն որոյ յարգանդէ ծննդեամբ եղև որդի կուսին: - 469. Այլ և ո՛չ ի մսոյ կամ յոսկերաց որպէս *եւա* ի կողէն: - 470. Երկրորդն յառնէ առանց կնոջ. որպէս *եւա*: - 471. Մետասաներորդ, զի ձգեալ զձեռն *եւայի* հնազանդեցոյց զմարմինն զայն ի ներքոյ մահու: - 518. Արդ մի՛ մերձենար դու յիս անկատար գոլով. որպէս մայր քո *եւա* ի ծառն գիտութեան. յորժամ առ բնութեամբ իմ հայր՝ և ձեր ըստ շնորհի՝ և աստուած մարմնոյս իմոյ ես ելանիցեմ, որոտմամբ իջեալ հոգին զձեզ կատարէ՛. արժանաւորիք յայնժամ առ իս մերձենալ: - 518. Իսկ ի նորս փոխեցաւ ի հոգևոր օրհնութիւն և ծնունդ. և զմարմնաւորն ի սկզբան չափաւորն կապեաց. որպէս ադամ և *եւա*: - 613. Նոյնպէս և ողորմեայն ի դէմս *եւայի*: - 628. ...որպէս չորեքշաբաթն վասն *եւայի*, և ուրբաթն վասն ադամայ...: - 650. Երրորդ, չորեքշաբաթն ի խորհուրդ խաբէութեան *եւայի*. յորում ասաց օձն ուտել ի պտղոյն. - 653. Նմանապէս և կողն որ առաւ յադամայ և շինեցաւ կին, ո՛չ յառնէ ի յադամ, այլ ի *յեւա*. որոյ հիմն կազմութեան եղև փոխանակ սերման: - 719

**ԵՒԱԳՐԵԱՅ** - Եւ մեզ պա՛րտ է իմանալ զչար խորհուրդ խորամանկին ի զանազան հնարս, և պատասխանել ի սուրբ գրոց. որպէս յայտ է ի գիրս *եւագրեայ*: - 323. Երեքտասաներորդ, *Եւագր* **ը** ասէ զխորհուրդս մեղաց, և այլք է: - 525. Տասներորդ՝ յա՛յտ է ի համազօրութենէ. զի երբեմն շարժէ՛ ախտ զմիտս. և երբեմն շարժի ի մտացն ախտ. որպէս ասէ երանելին *եւագրիոս*. եթէ մինչ յերեսնամեայ հասակս ախտն շարժէ զմիտս ի ցանկութիւն. և անտի յառաջ միտքն շարժէ զախտն: - 557. Վասն է՞ր *եւագրիոս* ընդ խորհուրդ ասէ մեղաց, և այլ վարդապետք է ասեն զմահու չափ մեղսն: - 559. Նախ ասեմք թէ՝ համաձա՛յն են միմեանց. զի և սա *եւագրիոս* է ասէ. զի տրտմութիւն և ձանձրութիւն մի երևին. զի տրտմութիւն ի պակասութենէ բարւոյն լինի, իսկ ձանձրութիւն յաւելուածոյ բարւոյն: - 559. Վասն է՞ր ա՛յլ վարդապետք առաջին մեղք ասեն զհպարտութիւնն. իսկ *եւագրիոս* զորկորստութիւնն: - 561. Իսկ *եւագրիոս* առաջին դնէ զորկորստութիւն վասն երից: - 561. Եօթներորդ՝ հաւատովն համբերեմք. յուսովն հաստատիմք. սիրովն զօրանամք. և զայս ասէ *եւագրիոս*: - 578

**ԵՒՍ +** Նախ՝ եթէ դու քեզէ՛ն խոստովանեցար եթէ ոչ գոյ հարկ. այլ՝ աստուած և բնութիւնն և արհեստն *եւս* ներգործեն. ապա թէ է գործ արհեստի և բնութեան, ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. Իսկ ոմանք յաւելուն *յեւս* ամբարշտութիւն. իբր փախչելով ի ձախոյն՝ խոտորին յաջ կողմն: - 13. Իսկ չար փոխանակ բարւոյ ո՛չ առնէ ըստ որում անիրաւութիւնէ. այլ առնէ երբեք ըստ որում նախախնամութիւնէ. զի ի չարէն լինիցի բարի. թէպէտ մեզ չար երևի, այլ այս *եւս* բարի է. որպէս հիւանդութիւն. փորձութիւն. և այլն: - 18. Այլ առաւել վատթար *եւ՛ս* է վասն վեցից: - 33. Երկուց կողմանցն *եւս* պարտ է փախչիլ: - 37. Բայց է և այլ իմն տեսութիւն խորին և գեղեցիկ. զի նա՛ վասն սրբութեան չարչարեցաւ. և որ ոք *եւս* չարչարեսցի վասն սրբութեան՝ մի և նոյն է դիտաւորութիւն երկուցն. յայնժամ օգնեսցէ նմա. այսինքն միաւորեսցի ընդ նա՛ սրբութեամբն, և եղիցի աստուած ամէն յամէնի. այսինքն կատարեսցէ զնա աստուածս առնելովն. և եղիցին

աստուածք ամենքն: - 43. Կամ *ևս*՝ զի և հայր է ամենակատար՝ ընդէ՞ր ո՛չ լինիցի որդի, զի է՛ ի նոյն բնութենէն: - 53. Եօթներորդ՝ վկայ դամասկացին որ ասէ. որ և նա *ևս* քաղկեդոնիկ է. եթէ յայտնապէս զհոգին սուրբ ի հօրէ՛ ասեմք. և զնա հոգի հօր անւանեմք: - 64-65. Ա՛րդ՝ ըննդէմ քումդ խոհեմութեան ո՛րպէս իմանաս ի միում հասարակ բնութեան զբանն ծնեալ և զհոգին բղխեալ. իսկ հայր ոչ ծնեալ կամ բղխեալ. և անդրադարձեալ *ևս*: - 74. Ընդէ՞ր ապա զնորա մարմինն ճաշակեմք. և ի նա մկրտիմք և նովաւ յառնեմք և այլն *ևս*: - 95. Ասեմք առ այս. թէ մինչև ցայժմ զբնութիւնն բաժանէիր, և այժմ զանձն *ևս*: - 98. Երկրորդ՝ զի առաջինքն առանց տարակուսութեան առնուն զգիտութիւն. և այլքն նախ տարակուսին և ապա առնուն. զի այն որ առաջին դասն նախ էառ՝ տարակո՛յս է նոցա՝ մինչև ինքեանք *ևս* առցեն: - 138. Եւ է՞ յորժամ իմացումն ի յիշողութիւնն ի տրամախոհութիւնն և յայլս բաժանի, և նոքօք իմանայ և տեսանէ զաստուած. և այս *ևս* է կատարեալ տեսութիւն. և կոչի սա բնական տեսութիւն: - 142. Չաճոյ թուեցաւ նոցա բարձրութիւն նորա. խորհելով՝ զի թէ նա աստուծոյ յաղթեալ էր, նոքա *ևս* այլոցն իշխէին կարողութեամբ: - 149. Երկրորդ՝ զի ուր հասանէ գործ արարչութեան, անդ գոյ և նախախնամութեան. և անդրադարձեալ *ևս*՝ զի ուր գործ նախախնամութեան է, անդ և գործ արարչութեան: - 157. Երկրորդ՝ հասարակութիւն է, զի որպէս է նկարեալ ձևն, նոյնպէս և շինեալ տաճարն քանակութեամբ և որպիսութեամբ. և անդրադարձեալ *ևս*: - 163. Իսկ աննմանութիւն բազում *ևս*: - 164. Չարցանեմ և զայս *ևս*: - 180. Եւ այս *ևս* գիտելի է, զի որպէս հրեղէն երկինն հոմանուն է, այսինքն լուսեղէնն որ ի սկզբանէ ստեղծաւ. և բոլորակ հրոյն: - 184. Եւ ե օր *ևս* աւել աւուրքն, որ լինի ժա օր: - 191. Իսկ գէջն լինի ամպ. և չորն ի մէջ ամպոյն նեղեալ պատառելով զճալմունս ամպոյն՝ լինի որոտ և փայլատակունք *ևս*: - 204. Արևմտականք որք կոչին Զեփիւռք, են *ևս* **գ**: - 205. Եւ են որ զերկունքն *ևս* ուտեն. որպէս խաղողն: - 213. Ոմանք ի դրախտն *ևս* ասեն թէ տիւ և գիշեր լինի. կամ գարուն և աշուն. զոր մեզ չէ ընդունելի: - 222. Եւ թէ տկարանաս ի զօրութիւնն աստուծոյ՝ առ մե՛զ *ևս* գոն քեզ հաստատութեան նշան՝ անփուտ փայտ. և անթառամ ծաղիկ. և մշտականաչ սաղարթ. և անթափ պտուղ: - 223. Եւ **գ** *ևս* **բ** ոտիցն՝ լինին **բժ**ան անդամք: - 241. Զի տնկական հոգին յօժարի՛ գոլ. և զգայականն բարեպէս գոլ. և բանականն *ևս* բարեպէս գոլ. զի ո՛չ երբէք հանգչի, մինչև միաւորեսցի ընդ *ևս* բարեգունին: - 249. Երրորդ՝ *ևս* յայտնի. զի ընդ նիւթոյ կազմութեանն համանգամա՛յն է և երևումն ոգւոյ. զի յորժամ անկատա՛ր է նիւթն, միայն կերակրիլն երևի ի նմա: - 255. Եւ զոր օրինակ՝ տունկ ի յերկրի տնկեալ՝ նախ դալարի. և յորժամ հաստատի ծաղկի. և յորժամ *ևս* հաստատի՝ ապա պտղաբերի: - 255. Այսպէս և հոգին ընդ անկատար նիւթոյն ունի զկերակրիլն. և յորժամ հաստատի զգայութեամբն ծաղկի. և *յևս* հաստատիլն՝ բանականութեամբ պտղաբերի ի վերին խնամոցն որպէս պտուղն այն յարեգակնէ՛: - 255. Եւ բազում *ևս* այսպիսիս: - 256. Եւ *յև՛ս* աճիլն՝ տայ զշնչականն: - 258. Եւ այլք *ևս* յաւելեալ. զի են ի չորից տարերց՝ **է** և **ը** ամիսս կատարին: - 262. Եւ մի՛ աստ ընդ դէմ բերցի բանիս թէ՝ ամենայն մեծամեծք գութ ունին փոքունց. զի և այս նախախնամութեանն է. որ եդ ի բնութեանս խնամ տանիլ նոցա, մինչ ինքեանք *ևս* ի չափ հասակի եկեսցեն և զերծանիցեն ի վնասուց: - 267. Եւ այս *ևս* չէ՛ ընդունելի. զի ցուցաւ ի վերոյ եթէ յարացոյցն նոյն ինքն աստուած է ամենեցուն: - 273. Եւ այս *ևս* ո՛չ է ընդունելի. զի սոցա պատասխանի տայ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց թէ՝ որ ասաց զպատկերն, իմանամք զնմանութիւնն ի պատկերին որպէս ցուցաւ ի վերոյ. զի ամենայն պատկեր ի հարկէ նմա՛ն է: - 273. Եւ այս *ևս* գիտելի է, զի զվերանալն եղիայի ետես եղիսէ, զի մի՛ ասիցեն թէ սպանաւ յեզաբէլէ՛: - 290. Չինգերորդ *ևս* յայտնի. աստ կեան նահապետքն ժամանակաւ ընդ ամենայն մարդոյ. և յետ մահու ի մշտնջենաւորն ընդ հրեշտակաց. և յետ յարութեանն յանվախճան յաւիտենին թագաւորեալք ընդ աստուծոյ: - 291. Առաջին պատճառ, զի ընդ ինքեան մարդկայինս բնութիւն այլայլո՛տ է և ցաւօք. և յորժամ աստուած *ևս* բազմացուցանէ, ո՞վ կարէ զաղէտն պատմել: - 292. Եւ այս *ևս* գիտելի է, զի լեզու կոչի գործիք խօսիցն. և լեզու կոչի որակ խօսիցն: - 297. Տասներորդ՝ զի մելքիսեդեկ ո՛չ միայն պատարագաւն, այլ և անուամբ և տեղեաւ *ևս* օրինակ էր քրիստոսի: - 301. Իններորդ՝ *ևս* մեծագոյն խորհուրդ. զի անդրանիկ բանն աստուած ի հօրէ՛ ծնեալ՝ եկն ի բնութիւնս մեր և եղև գլուխ մեր...: – 309. Տասներորդ՝ *ևս* մեծագոյն խորհուրդ. զի բանն աստուած որ անդրանիկ էր հօր, եղև կրտսեր մարդ ի ժամանակի և փոքր. ըստ որում կոչեաց զինքն «փոքրիկ». զի բնութիւն մարդոյս ընդ ինքեան խառնելով արասցէ մեծ և անդրանիկ: - 311. Եւ այս *ևս* գիտելի է, զի տէրն մեզ կոչի զգեստ փրկութեան և պատմուճան ուրախութեան ի ձեռն մկրտութեան...: – 318. Այլ և լւաց *ևս* զոտս նոցա յամենայն փոշետեսակ աղտեղութեանց: - 331. Իններորդ, պատարագ ուխտի. որ ո՛չ վասն երախտեաց ինչ, այլ իւր կամաւ ուխտեալ. որ յերկրորդ օրն *ևս* ուտէին զմիսն: - 359. Այլ և յիսներեկին է է գառինս. և ի նոր մտիցն կրկին հաց *ևս*: - 359. Որ յետ խոստովանութեան դառնայ ի նոյն մեղս, իբր շուն դառնայ ի փըսխած իւր. և սա՛ *ևս* այրի հրով. զի զառաջինն *ևս* խնդրեսցեն ասէ առաքեալն: - 367. Զի՞նչ էր որ եհար զանդրանիկս եգիպտացւոց.

**ԶԱՏԻԿ +** Եւ որպէս լրումն *զատկի* ունի աւուրս **ժզ**. և այլքն **ժե**. և այս ի տումարս մեր է. և իրն որ է՛ լուսինն մի և նոյն: - 192. Չորրորդ, նա՛ զգառն *զատկին* եղեն որով ազատեցան ի փարաւոնէ: - 327. Եւ տէր մեր արար *զզատիկն* յերիկունն մեծի **ե** շաբաթին: - 337. Նա՛խ՝ *զատիկն* ազատութեան ելիցն ի գարնանն: - 340. Իսկ ի նորս *զատիկ* մեր զենաւ քրիստոս և ազատեաց զմեզ: - 341. Եւ բաց յայսցանէ **բ** ակն յանդիմանութեան զոր անդամանդեայ կոչէին, և էր ի պճղնաւոր զգեստին ի վերայ ուսոց քահանայապետին յորժամ մտանէր ի սուրբն սրբոց երիցս ի տարւոջն, ի տօնի *զատկին* և յիսներորդացն և ի քաւութեանն: - 349. Երկոտասաներորդ, ոչխար տարևոր մեծի *զատկին* յելսն եգիպտոսի, խորովեալ հրով. և բաղարջ ընդ եղեգի կերեալ: - 359. Որպէս տօնականն *զատկի* և տէրունական տօնից: - 362. Եւ ի մեզ տօն *զատկին*: - 373. Եւ քանի՞ են *զատիկք*: - 455. Չորրորդ՝ զի ի տօնի *զատկին* ի մէջ բազում ժողովրդոց: - 490. Զմիս կենդանւոյ, որ կատարեալ կենդանի է և ի կենդանւոյ յառաջ եկեալ. այն է կատարեալն որ **ե** զգայարանս ունի և շարժի և շունչ ունի. և է՛ այս կերակուր ուտեաց և *զատկի*: - 510. Դարձեալ պատճառեն թէ՝ յորժամ զնկանակն և զձուկն աճեցոյց քրիստոս՝ մե՛րձ էր *զատիկն*: - 510. Ասեմք թէ և այդ ևս է սուտ պատճառ. զի հրէից նախ *զատիկն* էր և ապա բաղարջակերքն պահք: - 510. Նա՛խ՝ զի յետ յարութեանն ո՛չ էր պահք. այլ *զատիկ* մինչ փեսայն ընդ նոսա էր որպէս ինքն հրամայեաց: - 511. Նոյնպէս ըստ օրինակին արար տէր մեր *զատիկն* յերեկոյի մեծի **ե** շաբաթին. և ի մէջ գիշերին յորում ըմբռնեցաւ՝ եհար զանդրանիկսն դիւաց: - 513. Քանի՞ են *զատիկք*: - 524. Առաջին *զատիկ* բաղարջակերքն. որ է **ե** շաբաթին: - 524. Երկրորդ *զատիկ* յարութիւնն: - 524. Երրորդ կրկին *զատիկն* երևեալ դրօքն փակելովք: - 524. Չորրորդ *զատիկ* համբարձումն առ հայր ցնծութեամբ և փողով: - 524. Հինգերորդ *զատիկ* սա ինքն է հոգւոյն իջումն ի վերնատունն: - 524. Եւ այս է ե *զատիկն* ի նախնումն: - 524. ...և այսպիսիքս, որպէս նոքա որք մերձ ի *զատիկն* խոստովանին և սրբութեանց արժանաւորին: - 603. Եւ ի տօն *զատկին* որ արար խարազան չուանեայ և եհան զվաճառականսն, ցուցաւ սարկաւագի գործ նորա: - 606-607. Նա՛խ՝

երեխայքն ուխտեցին հրաժարիլ ի սատանայէ՛. և ի մեծի *զատկին* մկրտելովն իսրայէլ. և ապա ուխտ ապաշխարութեան պահոցն. և յարութեանն տեսանել զքրիստոս. աստ և անդ: - 629. Զի մեծ *զատկի* կիրակէն առաջի ծայն լիցի. որ զյարութեանն ունի խորհուրդ: - 641. ...և աստի մինչ ի *զատիկն* **հ** օր է...: - 650. Զի՞նչ է *զատկի* երկուշաբաթի օրն մեռելոց առնելն: - 684. Զի՞նչ է տուն օրհնելն ի *զատկի* և յայտնութեանն: - 684. Ի գարնան եղանակի ի *զատկի* կիրակէին ի մէջ գիշերի յորում ժամու յարեաւ քրիստոս և հրեշտակն թաւալեցոյց զվէմն և գոչէր զյարութիւնն քրիստոսի...: - 714. Նմանապէս և աստ յաւուր նոր կիրակէի ասացեալն կրկնո՛յ *զատկի*, յանկարծահաս ժամու շարժեալ հեղեղաց ուղխից խռովութեանց: - 789. Յորում ամի եղև ծռատօն *զատկաց* ազգի կոչեցեալ յունաց. ի վերոյ ասացեալն աւուր նորոյս տէրունեաց: - 789

**ԶԱՏՈՒԹԻՒՆ +** Չինգ. այսինքն Քանակն որ է չափն. Որակն. որ է գոյնն. ձևն. տեղին. *զատութիւնն*: - 174

**ԶԱՏՈՒՑԱՆԵՄ +** Եւ ապա՛ քինոսփէնէս հմուտ ծայնից գազանաց և թռչնոց, *զատուցանէ՛* զկողմն առաջին ծայնին: - 640. Ապա՛ աքիլեւս, *զատուցանէ՛* զկողմն երկրորդ ծայնին որ կոչի աւագ կողմն: - 640. Ապա՛ նոմինոս, *զատոյց* զկողմն չորրորդ ծայնին. որ է՛ վերջին: - 640

**ԶԱՏՈՒՑԵԱԼ +** Չորրորդ՝ զի անկասկած լիցի ամենևին և անկարծ ի չարեաց *զատուցեալ* սուրբ կոյսն. ի ծեռն հրեշտակին աւետարանել զյղութիւնն. և ո՛չ ի ծեռն մարդոյ: - 463.

**ԶԱՐԱ** - Անունք Կանանց Նահապետացն... Նոյին *զարա՛*: - 299

**ԶԱՐԳԱՆԱՄ +** Չորրորդ՝ *զարգացաւ* հասակաւ, ի նշանակել թէ զքնութիւնս մեր ի նուազութենէ ի մեծութիւն և ի փառս է՛ հանելոց: - 479. Դարձեալ ասեմք, փոփոխումն և աճումն հասակին ո՛չ եթէ ապականութեան էր ցոյցք. այլ զի զճշմարիտ մարդեղութիւնն հաստատեսցէ ընտել սովորութեամբ մեր որ ի տղայութենէ *զարգանամք*: - 501

**ԶԱՐԳԱՑՈՒՄՆ +** Զայս կարգ պահէ՛ և ի *զարգացման* հասակին. զի մինչև ցեօթն ամն ատամն բուսանելով և փոփոխելով՝ նշանակէ՛ զկերակրականն: - 267. Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ. երկնուղէշ *զարգացմամբ* մշտասաղարթ կուսութեամբ ծաղկեալ և պայծառացեալ հոգւոյն սրբոյ եկաւորութեամբն. և պտղաբերեալ մեզ անմահ պտուղ զբանն մարմնացեալ. յորմէ վայելեալք երկնաւորք և երկրաւորք ի շնորհաց նորին զյաւիտենից կեանսն ժառանգեցաք: - 768

**ԶԱՐԳԱՑՈՒՑԱՆԵՄ +** Զի աճումն զգայութիւնն *զարգացուցանէ*. իսկ ապականութիւնն ընդ դէմ նմին զգոյն ի նուազութիւն և յոչգոյութիւն փոփոխէ: - 501

**ԶԱՐԴ +** Վասն *զարդու* գործոց իւրոց. որպէս նըկարիչ ըզքուխ գոյնն ի ներքոյ դնէ՝ զի սպիտակն և այլ պատւականքն երևեսցին: - 149. Պատասխանեմք առ այս եթէ՝ առանց ջերմութեան անձև և անկերպ է անորակ մարմինն. իսկ տերևն *զա՛րդ* է ծառոյն. և մազն մարմնոյն: - 170. Եօթներորդ՝ զի *զարդ* երկնից է: - 186. Վեցերորդ՝ զի և օդոյն զթռչունսն ետ ի *զարդ*: - 207. Այլ հոգէպէս որպէս ծաղիկք երկրի, նոյնպէս աստեղք երկնից են *զարդ*: - 213. Այլ մորթ մաշկեղէն ստեղծեաց և զգեցոյց նմա փոխանակ լուսեղէն *զարդուն*. զմեռելութիւն նորա նշանակելով: - 280. Իններորդ՝ վասն *զարդու*: - 281. Շնորհքն է *զարդ* հոգւոյն և կրօնքն մտաց. և կամքն իշխան և կառավար սոցա: - 389. Եւ տէր մեր *զզարդ* և զպսակ անկելոցն խոստացաւ մեզ և ետ: - 422. Քսանգ, Օրինակ սերմանց. և *զարդ* հարսինն: - 660. ...հաւատն նշան է նոցա, և բարի գործքն *զարդ*. և մահն ի հարսանիս ընթանալ. - 681. Եւ զարդարեալ լինի է *զարդուք*. այսինքն **գ** հոգւոյն և **դ** մարմնոյն որպէս ասեն վարդապետք: - 721. Ի յայս միտս մարմնաւոր հարսն է զգեստուք զարդարի. *գ* զարդ գլխոյն և դ բոլոր մարմնոյն: - 721. Եւ բաւականութիւն է *զարդուցն* պատճառի յերից մասանց հոգւոյն և ի չորս տարերաց մարմնոյն: - 721-722. այս է պակասութիւնս ի յարութեանն բառնի և եօթն *զարդ* ընդունին: - 722. Մեղաւորաց մարմինքն ո՞չ ունին *զզարդս* զայսոսիկ: - 723. Բայց եօթն *զարդքն* զոր ունին սուրբքն որք են հարսունք քրիստոսի՝ ո՛չ ունին անսուրբքն որք են հարսունք սատանայի: - 723. Եօթն *զարդ* հարսին որպէս ցուցաւ. և օժիտք յաւիտենիցն կենացն. պսակք և արկանելիք, ասացան մեզ փոքրիշատէ յառաջագոյն ի բանից սրբոց: - 761. Ոչ ունիմք վեհագոյն քան զիւատն. տիպ աստուծոյ ճշմարտի դրոշմեալ ի մեզ ի բնէ. մեր հրահանգ և *զարդ*: - 769. Եւ պատուեալ երկակի *զարդու.* և պարգևեալ և խոստացեալ պատուիրանօք: - 776. Ամենայն իր բնութեան՝ գոյացակա՛ն է նորին. և ամենայն պարգևք այսինքն շնորհք պատահական է ի *զարդ* նմին. յաղագս որոյ ո՛չ բառնին գոյացականքն. որպէս անմահութիւն դիւի և բան մարդոյ: - 782. Եւ այլքն ո՛չ են կնիք. այլ *զարդ* պակասութեանց նորին. վասն որոյ և փոփոխականք են: - 783

**ԶԱՐԴԱՐԵՄ +** Այսպէս ստեղծանել՝ և որոշել՝ և *զարդարել*: - 105. Դարձեալ՝ որ զամենայն ստեղծ՝ հայր կոչի. և որ զամենայն պարունակէ՛ զի մի՛ լուծցին՝ որդի. և որ շնչելով կենագործէ և *զարդարէ* զամենայն՝

հոգի սուրբ յորջորջի: - 108. Մետասաներորդ՝ զտարին **դ** եղանակօք *զարդարէ*: - 126. Նոյնպէս չորիւք առաքինութեամբք *զարդարեցին*: - 126. Վասն առաջնոյն գիտելի՛ է, զի ամենայն շնորհ բղխո՛ւմն է և ճառագայթ, յանեղական լուսոյն իջեալ առ էակս ամենայն իմանալի և զգալի. և *զարդարէ՛* զսոսա ըստ նմանութեան այնմ պարգևեալ շնորհի. եթէ ըստ բնութեան՝ և եթէ անձնական. ի հրեշտակս և ի մարդիկս: - 140. Դարձեալ և ի յառակս անառակին որ դարձաւ առ հայրն՝ և ողջմամբ ընկալաւ և զգեցոյց զնա և *զարդարեաց* մատանի ի ձեռս՝ և կօշիկ յոտս. այլ ո՛չ ետ թոյլ նմա պատարագել. այլ հրամայէ՛ այլոցն...: - 167. *Զարդարի* թռչնօք: - 203. Հինգերորդ՝ զի ձկամբք *զարդարի*: - 207. Եւ զի բուսօք և ծաղկօք և ծառօք *զարդարի*: - 211. Ութերորդ՝ զի ա՛նդ է ցանկական մասն աչաց *զարդարեալ* գեղով: - 234. Զի բանական մասունքն տեսականաւն *զարդարի*: - 248. Եւ անբանքն գործնականաւն *զարդարի*: - 248. Ա՛րդ՝ աստուածային գեղեցկութիւնն ո՛չ այսու երանգօք *զարդարի* զի զմեզ ի նմանն իւր կազմեսցէ: - 271. Եւ փոխանակ թագին՝ ինքնիշխան կամօք *զարդարեաց*: - 271. Վեցերորդ՝ զի թէպէտ ի ձեռագործ հանդերձից մե՛րկ էին, սակայն ի լուսոյ շնորհաց *զարդարեա՛լ* էին: - 278. Չորրորդ՝ ի խորհուրդ յարութեան մերոյ, որ վերըստին գոյացուցանէ ի խաւարէ՛ գերեզմանին և ի լոյս հանէ և ուրախութեամբ *զարդարէ՛* և փառաւորէ՛: - 321. Հինգերորդ՝ տղա՛յ էր ժողովուրդն, և զուարճանային ի տեսութիւնն. վասն այն զանազան գունով *զարդարեաց*: - 342. Վեցերորդ՝ սովո՛ր էին զտաճարս կռոցն *զարդարել*. վասն որոյ առաւել քան զնոսա *զարդարէ՛* զխորանն: - 342. Ի յայս միտս զվարդապետաց գաւազան յեկեղեցւոյ ի դուրս բերեմք *զարդարեալ*: - 382. Դարձեալ՝ որպէս աչօք տեսանեմք զմարմնոյս մասունքն և զտգեղութիւնն *զարդարեմք*: - 397. Նոյնպէս և մտօք զմասունսն հոգւոյս զբան՝ զցասումն՝ և զցանկութիւնն տեսանել և *զարդարել*: - 397. Եօթնեւ, երեսունքն թուով յետ է աւուրցն *զարդարեցան*: - 422. Երրորդ՝ զի ո՛չ ինչ յորոց ստեղծ աստուած գարշի բնակիլ. մանաւանդ յարգանդի *զարդարեալ* կուսութեամբ. զի զոր ստեղծ ձեռօք, բնակէ՛ ի տան ձեռագործի իւրոյ: - 469. Սակայն վարդապետք եկեղեցւոյ պատշաճե՛ն զստեղծանելն հօր. իսկ զտրոհելն որդոյ. և *զզարդարելն* հոգւոյն սրբոյ: - 522. Եւ ունին զգեստ՝ նափորտ բազմախաչ. և ի վերայ եմիփորոն ե կրկին խաչիւ *զարդարեալ*: - 607. Եւ զդրունքն նոքա պահեն. և զեկեղեցին նոքա *զարդարեն*: - 608. ...**և քաղաքացիքն նախ *զարդարեն* զինքեանս և զփողոցն և կան պատրաստ:** - 646. Եւ զի կտաւն յերկրէ է և արուեստիւ գործեալ. ցուցանէ թէ զոր ինչ գործեաց ոք ի յերկրի, զնոյն զգենու և *զարդարի*: - 671. Չորրորդ, նշանակէ՛ զթիւ աւուրցն ժամուց յորում նոքա վաստակեցին և *զարդարեցան*: - 711. Երկրորդ, որպէս հատ մերկ անկանի և բուսանի ծաղկեալ և *զարդարեալ* տերևով...: - 720. Դարձեալ որպէս հատն մերկ սերմանի և մերկ ո՛չ բուսանի. այլ *զարդարեալ* խոտով և տերևով եօթն թուով: - 721. Նոյնպէս և մարմինք մարդկան մերկ թաղին՝ այլ մերկ ո՛չ յառնեն. բայց գեղեցիկ յոյժ և պատուական զգեստով *զարդարեալ:* - 721. Եւ *զարդարեալ* լինի է զարդուք. այսինքն **գ** հոգւոյն և **դ** մարմնոյն որպէս ասեն վարդապետք: - 721. Ի յայս միտս մարմնաւոր հարսն է զգեստուք *զարդարի*. **գ** զարդ գլխոյն և **դ** բոլոր մարմնոյն: - 721. Եւ սեղանն սուրբ է զգեստուք *զարդարեալ* ծածկի: - 721. Երկրորդ պակասութիւն է մարմնոյն՝ սևութիւն և աղտեղութիւն. և բաժանի այս ի մարմնոյն և *զարդարի* լուսով որպէս զարեգակն: - 722. «Իբրև զտերև յորթոյ» ասէ մարգարէն. այսինքն զի որպէս տերևն յիւրում ժամանակին թափի և դարձեալ *զարդարի* տերևով և մրգով: - 728. Ութերորդ՝ հնձան կոչի և աւազանն սուրբ. զի ի նմա ճմլին և կորնչին ամենայն մեղք մեր. «լուացեալ արեամբ խաղողոյ զհանդերձս մեր» և *զարդարեալ* պէս պէս պարգևօք շնորհաց հոգւոյն: - 749. Այլ և արդեամբք սրբոց ոռոգեցաւ, լիցի որպէս զդրախտ աստուծոյ անուշահոտ ծաղկօք և մանուշակօք և մարդօք *զարդարեալ* և գեղեցկացեալ: - 759. Ունելով մշտասաղարթ ծաղիկ որ է՛ կարմիր երանգն գունոյ, և երկնագոյն հիւթով *զարդարեալ*: - 768. ...որպէս ծաղկեալ գաւազանն ահարօնի նշանակէր զխրատ իմաստութեանն. որով *զարդարեալ* տայ զպտուղ լուսաւոր նիւթոյ կերակուր ոգւոյ: - 768

**ԶԱՐԴԱՐԻՉ +** Եւ տեսականն և գործնականն *զարդարիչք* են սոցա: - 248

**ԶԱՐԴԱՐՈՒՆ +** Հինգերորդ՝ զի տեսցուք և իմասցուք թէ արտաքին սրահն երկնից այսպէս է *զարդարուն*. քանի՞ առաւել ներքին կողմն սրբութեան իմանալեացն դասուց: - 188. Վասն է՞ր այնպէս *զարդարուն* զգեստ հրամայեաց: - 347

**ԶԱՐԴՈՒՆ +** Երկրորդ, զի ագա՛հք էին, և վասն *զարդուն* ելցեն յեգիպտոսէ՛: - 336

**ԶԱՐԵՀ** - Եւ բազմակեցութեամբ էհաս մինչև յելսն յեգիպտոսէ: Եւ էր յազգէն եսաւայ ի կնոջէն բասեմաթայ՝ դստեր իսմայէլի. և **ե**երորդ ծնունդ էր յաբրահամէ: Այսպէս. աբրահամ. իսահակ. եսաւ. ռագուէլ. *զարեհ*. Յոբ: - 320

**ԶԱՐԹՆՈՒՄ +** *Զարթիր*, ի սուգ տալով մեզ զմուրբքէ, և զեսթեր: - 28. *Զարթիր* ի յոյնս, տալով մեզ զմակաբայեցիսն: - 28. *Զարթիր* ի հռոմ, տալով մեզ զմեսիայն: - 28. Իսկ ի յաստուած, բարկանալն, ննջելն,

և *զարթնուլն*, և գնալն և այլն: - 55. Եւ թէ ո՞րպէս ասեմք ննջել *զարթնուլ* սրտմտիլ կամ տրտմիլ աստուծոյ: - 122. Կամ ննջել և *զարթնուլ*. որ ո՛չէ ի յաստուած. այլ դնելով ի վերոյ ըստ ներգործութեանն տարացուցի: - 123. Որպէս ասի զաստուծոյ *զարթնուլ* բարկանալ զարմանալ: - 128. Եւ ի մէջ գիշերի *զարթեաւ* և զդրունս փակեալ նզօրն և սեմօք եհան յունն և ել ի լեառն: - 513. Սա յիմա՛ր է ո՛չ գիտէ զտկարութիւն իւր որպէս չար հիւանդ. *զարթո՛* զսա: - 537

**ԶԱՐԹՈՒՑԱՆԵՄ +** Իսկ աստուած կարէ՛ փոխել և զկամքն` որ է՛ ախորժակ ի չարէն առ բարին. զոր հրեշտակք ո՛չ կարեն փոխել. այլ միայն *զարթուցանեն* զախորժակն և օգնեն: - 133. Իսկ հրեշտակն *զարթուցանէ* զախորժակն` որպէս այն որ դնէ զփայտ ի հուրն: - 134. Եւ ի հողմոյն յայնմանէ հոտ անուշութեան դրախտին բուրեաց ի նոսա. և տեսիլ իմանալի տեսին, և լուր իմանալի լուան. և յայնմանէ մոռացան զառաջինն. և որպէս ի քնոյ *զարթուցեալք* ո՛չ լսէին զլեզուս միմեանց: - 298. Վեշտասաներորդ` զառիւծ ննջեալ ոչ ոք իշխէ *զարթուցանել*. զի իւր կամաւ ննջէ և յառնէ: - 316. Երրորդ, ասեն թէ միովն *զարթուցանէ* որպէս ի քնոյ. և միովն յառնեն. - 713. Եւ հրեշտակք զխաչն բարձեալ առաջի երթիցեն. և զմեռեալս` փողով և ձայնիւ ընդ առաջ նորա *զարթուցեն*: - 734

**ԶԱՐԿԱԾ (ԶԱՐԿ) +** Իններորդ` խորհրդակից ունել ո՛չ զթուանարկու օձն. այսինքն *զարկածք* չարին. այլ զպատուիրանս աստուծոյ որ ի գիրս սուրբս: - 281

**ԶԱՐԿՈՒԱԾ +** Երկրորդ` ապականութիւն և մեղք ո՛չ է գործ արարչի. այլ մեղանչականին ադամայ և արկածք բանսարկուին. վասն որոյ տէրն *զարկուածս* բանսարկուին ո՛չ հպեցոյց ի մարմինն իւր. ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն տեառն: - 498-499

**ԶԱՐՀՈՒՐԱԿԱՆ +** Եւ սպառնալիքն աստուծոյ և մարդկան ո՛չ են նման. զի մարդոյս դատարկ բան է. իսկ սպառնալիքն աստուծոյ` է՛ բան *զարհուրական*. յորմէ լսօղքն զերծանին, և անլուրքն ըմբռնին ի նոյն: - 408

**ԶԱՐՀՈՒՐԵԼԻ +** Եւ թէպէտ *զարհուրելի* բանս յերկարեաց ի խրատս, ո՛չ լուան. վասն որոյ ո՛չ սրբեցան: - 382. Եւ արիութիւնն ո՛չ լինի ծեռնամուխ ի *զարհուրելիս*: - 579

**ԶԱՐՀՈՒՐԵՑՈՒՑԱՆԵՄ +** Նա՛խ` զի անհաւա՛ն էր ժողովուրդն և անկատար, զգալի տեսլեամբ և ձայնիւ *զարհուրեցոյց*. զի մի՛ մոռասցին. այլ հաւանեսցին և ի միտ պահեսցեն: - 341

**ԶԱՐՀՈՒՐԻՄ +** Չորրորդ` թոյլ տայ փորձութեան արդարոց ի յուղղութիւն այլոց. որպէս ղազարոյն և մեծատանն. զի տեսանելով զղազարոս` և լսելով վասն մեծատանն` *զարհուրիմք* և գամք յուղղութիւն: - 158. Զի աչաց լոյսն հուր է. և հուրն վերընթա՛ց է. վասն այն ի բնականսն նայելով հեշտանայ, և ի բռնութեամբն դժուարի և *զարհուրի*: - 239. Այլ զի տեսանօղքն *զարհուրեալք* ի ճշմարիտ նշանիցն մովսէսի` առ աչօք թուէր թէ և կախարդքն այնպէս առնէին: - 335. Չորրորդ` զի *զարհուրեսցի* ժողովուրդն և հնազանդեսցի մովսէսի: - 352. Իններորդ` զիա՞րդ *զարհուրեցաւ* կինն յետ երդմանն, և անկաւ յերեսս մինչ քաջալերեաց սաւուղ և եհարց: - 428. Նա՛խ` զի մի՛ *զարհուրեսցի* եւմ տեսեալ զսուրն որ կոտորեաց զնոսա: - 446. և նոքա զամենայն ինչ ծածկապէս տեղեկացան. զի ժողովեալքն ի քաղկեդոն ակն առին թագաւորին և կնոջ իւրոյ. և *զարհուրեցան* ի սպառնալեացն. և զնեստորի կարծիսն հաստատեցին. զերկու բնութիւնսն. և զբ կամսն. և զբ ներգործութիւնսն: - 543. յորժամ *զարհուրեալ* տագնապին ամենայն մեղաւորք յահաւոր ատենին. և յանաչառ դատաստանին: - 630. Վասն ութերորդին, որք աստ ի տեսանելոյ զբարիս և ի լսելոյ խոյս տային. արդարապէս ահագին տեսլեամբ և լսելեօք թշւառապէս *զարհուրին* ընդ իւրաքանչիւրոցն: - 753

**ԶԱՐՄ +** Եւ սոյնպէս և քրիստոս եղև երկուց *զարմիցն* մի քահանայ և թագաւոր ճշմարիտ և մշտնջենաւոր քահանայ և թագաւոր յաւիտեան: - 461. Եւ տե՛ս յօրինակաց. զի չնչին գողութիւնն, զաքար իւր *զարմիւքն* քարկոծեաց. և կրկուտ քաղեւն զայրին: - 745

**ԶԱՐՄԱՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ +** Ծանիր և զայս. զի բազում *զարմանագործութիւն* գոյ ի սմա: - 256

**ԶԱՐՄԱՆԱԼԻ +** Այլ ունին սոքա բազում *զարմանալի* տեսութիւնս: - 175. Եւ եղիա և եղիսէոս կուսութեամբ եղեն *զարմանալիք*: - 404. Քսաներորդ, *զարմանալեօրն* զոր արար` զանձն իւր ապրեցոյց սամփսոն: - 423. Երեսուներորդ, նաւք թարսսեաց բերէին զմեծութիւն. և աթոռ կազմեաց *զարմանալի*: - 442. Երրորդ ասի ողորմութիւն, իբր թէ *զարմանալի* իմն քաղցրութեամբ ոռոգել զսիրտս: - 459. Այլ և ի կողմանէ կերպին եղեն *զարմանալիք*: - 470. Եւ գիտելի է, զի ի ծնունդ սուրբ աւազանին երկի **Ե** *զարմանալի* գործ որ ո՛չ է ի մարմնաւոր ծնունդս: - 590

**ԶԱՐՄԱՆԱՄ +** *Զարմանալ* ո՞րպէս ասի աստուծոյ: - 127. *Զարմանալ* և հիանալ ասի մեզ` թափումն և արտաքսելումն ի մտացն: - 127. Զորօրինակ` թափումն ի զգայութեանց թմրիլ` կամ ընդարմանալ ասի. այսպէս թափումն ի մտաց` *զարմանալ* ասի. ըստ պօղոսի որ յափշտակեցաւ. և ըստ դաւթի որ *զարմացաւ*. կամ ըստ ադամայ որ թմրեցաւ: - 127. Այսպէս վասն գերազանց սիրոյն զոր ունի աստուած առ էսս`

*զարմանալ* ասի. այսինքն արտաքս ելանել՝ թափիլ և հեղուլ ի յէսս. և միաւորիլ անփոխաբուն բնութեամբ: - 127. Որպէս ասի զաստուծոյ զարբնուլ բարկանալ *զարմանալ*: - 128

**ԶԱՐՄԱՆՔ +** Եւ արդ զինչ *զարմանք* էր թէ յայնպիսի խաղաղութեան ծուլէին զուսերս իւրեանց ի խոփս: - 27. Չէ՛ *զարմանք* հրաշիցն աստուծոյ. որպէս ամենայն ըռնգունք զհոտն զգան, և աչք զգոյնն կրէ յինքն, և անծորելի և անպակա՛ս են յենթակայէն: - 224

**ԶԱՐՄԱՑՈՒՄՆ +** ...իա) Վասն *զարմացմանն* աստուծոյ. և նախանձուն: - 102. Իսկ շնորհականն է ընդդէմ այսոցիկ. զի պարզ և միեղէն իմացմամբ բարձրանայ յաստուածային գիտութիւնն. և այնպէս ի *զարմացման* լինի տեսութեամբ նորին: - 120. Իսկ *զարմացումն* լինի ի սիրոյ առ սիրելին. զի զմիտս զկեանս և զամենայն ինչ թողու սիրողն՝ և սիրելւոյն համարի: - 127. Եւ որպէս *զարմացումն* առաւելութիւն է իմացմանն, նոյնպէս և նախանձն առաւելութիւն է կամացն: - 128

**ԶԱՐՄԵԱՆ** - Աքար *զարմեան* և սաւուղ կիսեան և յուդա սիմոնեան մեղայ ասելով ո՛չ արդարացան: - 415

**ԶԱՐՄԻՌՆ** - Այլ և խաչածև ընթանայ նաւ ի վերայ ջուրց յորժամ լարէ հողմ *զարմիռնն*. կամ տարածեալ թևօք հասանին ի նաւահանգիստն: - 494

**ԶԱՐՏՈՒՂԻ +** Իսկ թէ և որոշակի ասես ուղղափառ մտօք, և ո՛չ այն է *զարտուղի*. յորժամ ասես աստուծոյ մարմին և աստուծոյ արիւն. զի որ ինչ է՛ ի յաստուած՝ աստուած է և ո՛չ օտար յաստուծոյ: - 92-93

**ԶԱՒԱԿ +** Եւ վասն նորա ասաց աստուած աբրահամու՝ թէ ի չորրորդ ծնունդն ազատեսցին ամենայն *զաւակք* քո: - 29. Իսկ թէ զոր ի *զաւակէն* դաւթի առանձին, զիա՞րդ եթէ ինքն շնորհօք է սրբեալ՝ սրբեսցէ տիրաբար զառ ի նա՛յն հաւատացեալս: - 69. Ստեաց ուրեմն և հայր՝ կոչելով իւր որդի զոր ի *զաւակէն* Դաւթի: - 69. Իսկ պօղոս *զզաւակն* զայն զքրիստոս ասէ ի հռօմայեցւոցն թէ՝ «քրիստոս է ի հարցն ըստ մարմնոյն աստուած օրհնեալ յաւիտեան»: - 73. Ոմանք կամին ցուցանել ապականացու զոլ զդրախտն և շաղաշարումն արուի և իգի. և առաւել ցանկութիւն և ծնունդ *զաւակաց*: - 225. Չորրորդ՝ զի թէ լինէր անդ ախտական ծնունդ որպէս ի յերկրի, կարօտանայր մարդն ամենայն պիտոյից *զաւակին*: - 225. Ի ժամ յղացմանն՝ եթէ ի ծնողացն՝ եթէ ի ժամանակէն՝ և եթէ յախտից՝ որ տարր և յաւելու ի խառնուածն, նոյն որակ գունով ծնանի *զաւակն*: - 245. Երրորդ՝ զի հատեալն մասնաւորի. այլ ընդ ծնանիլ *զաւակին* ոչ ինչ պակասի ի ծնօղն. բան, կամ շունչ, կամ կենդանութիւն. այլ բոլորն է ի ծնօղն և բոլորն ի ծնեալն: - 257. Եւ ա՛յս է ըստ մարգարէութեանն որ ասէ, «եղիցին երկոքեան ի մարմին մի». այսինքն յերկու սերմանց ծնողացն լինի մին մարմին *զաւակի*: - 261. Նա՛խ՝ եթէ գիտէ՞ր մարդ զօր մահուն, ո՛չ շինէր և ո՛չ տնկէր և ոչ ծնանէր *զաւակ*. և լինէր պատճառ աւերման: - 292. Եւ դարձեալ՝ աբրահամ ունի մարմին և հոգի. և ունի բ *զաւակ*, այսինքն մարմնոյ և հոգւոյ: - 303. Որք հաղորդեցան մարմնոյ նորա, եղեն *զաւակք* ըստ մարմնոյ՝ ըստ թլփատութեան և այլոց օրինաց նորա: - 303. Հինգերորդ՝ որ ասացաւ լինիլ *զաւակաց* նորա իբրև զաստեղս՝ և ոչ երկմտեաց: - 304. Երկրորդ՝ զի իսահակ աւետեաց է որդի և խնդութեան *զաւակ* որպէս անունն յայտնէ իսահակ, որ է՛ ծաղր: - 304. Չորրորդ՝ սառա օրինակ և ծնունդ իւր. մարիամ ճշմարտութիւն և ծնեալն իւր. և եկեղեցի համանմանութիւն և *զաւակք* իւր: - 307. Երրորդ՝ կոտորեալ մանկունքն բեթլէհէմի ո՛չ էին ի *զաւակացն* հռաքէլի որպէս ցուցաւ ի վերոյ: - 312. Նա՛խ՝ որպէս հասարակ շինականք ի ծննդեան *զաւակաց* զմին օրն պատուեն աղարուք կոչելով: - 321. Եւ այսպէս **է** էին հարուածքն. այսինքն **ա**՝ եզինքն. **բ**՝ էշքն. **գ**՝ ուղտքն. **դ**՝ անասնոց մահն. **ե**՝ սպասաւորաց նոցին. **զ**՝ *զաւակաց* մահն. **է**՝ մարմնոյն հարուածքն: - 322. Եւ ոմանք **ե** ասեն. **ա**, արտաքին ինչքն. **բ**, *զաւակաց* մահն. **գ**, մարմնոյն հարւածքն. **դ**, կնոջն կագն. **ե**, բարեկամաց հակառակիլն: - 322. Եւ այսպէս *զաւակքն* լինին կրկին: - 326. Եւ դարձեալ բանն աստուած բուռն էհար *զզաւակէն* աբրահամու և եղև անօթ թագաւորական: - 332. Հինգերորդ՝ ևս առաւել *զզաւակս* նոցա ի ջուրսն հեղձուցին: - 335. Երկրորդ, «ի **ռ** ազգս». վասն առաքինի հարց՝ բարի առնէ *զաւակաց* բարեաց: - 351. Այլ զներգործական մեղս անձին հօր՝ ո՛չ հատուցանէ անձն որդւոյ. ապա թէ ոչ՝ չար ծնողաց ո՛չ լինէր բարի *զաւակ*: - 351. Եօթներորդ՝ սովն ուտել զմարմին *զաւակաց*. և գերութիւն ի թշնամեաց: - 376. Ի խոստման աւետիսն ծե՛ր էր աբրահամ, և կինն ամուլ. զի մի՛ անյուսացին ի բնութիւնն նայելով. այլ ի բանն աստուծոյ որ ամենազօ՛ր է. վասն այն ասացաւ անթիւ լինիլ *զաւակացն*. և եղև այնպէս: - 377. Նա՛խ՝ *զաւակաց* որք ընդ հրամանաւ են ծնողաց: - 389. Եւ որպէս կնոջ ընդ հրամանս առնն իւրոյ յանցանել պոռնկութենէ, նոյնպէս և *զաւակաց*, և ծառայից, և աշակերտաց, և հնազանդելոց, և ժողովրդոց. նոյնպէս և հոգիս մեր ելեալ ի հրամանացն աստուծոյ՝ պոռնկութիւն է նմա. եթէ ըստ գործոց. եթէ ըստ հաւատոց: - 389. **Ակնառութիւն ո՛չ է աստուծոյ. զնախնիքն սիրեաց աստուած, զի արժանիք էին. և եցոյց նոցա զինքն. և զխոստումն աւետեաց ուխտեաց նոցա մարդ լինիլ ի** ***զաւակէ*** **նոցա յետոյ**: - 398. **Ա՛րդ՝ նախ վասն հարցն**

**սիրոյ *զզաւակսն* նոցա ընտրեաց աստուած: - 398. Երկրորդ՝ վասն մեծ բարութեանցն ի հեռաստանէ էարկ հիմն մարդեղութեան իւրոյ ի *զաւակէ՛* նոցա լինիլ:** - 398. Չորրորդ, նշանակէ՛ թէ՝ մի՛ ընդ յանցանաց ծնողին չարչարեսցես *զզաւակն*: - 399. Եւ մին այր կարէ՛ ի բազում կանանց ծնանիլ *զաւակ*. այլ մին կնոջ ի բազում արանց ո՛չ բազմանայ ծնունդ: - 401. Երկրորդ՝ բարոյական. զի մին կնոջ ի բազում արանց ո՛չ երևի հարազատ *զաւակն*. իսկ մի այր ի բազում կանանց կարէ՛ ծնանիլ հարազատ մանկունս և սիրել զնոսա: - 401. Այլ կենդանի եղբօր, կամ փոքր եղբօր կինն, կամ գոլով *զաւակ*, անօրէնութիւն էր որպէս հերովդին. առ որ ասէր յովհաննէս, «չէ արժան քեզ ունել զկին եղբօր քոյ». զի դուստր նորա էր աղջիկն որ կաքաւեաց: - 402. Զի՞նչ էր խորհուրդն որ յանուն եղբօրն *զաւակ* յարուցանէին: - 402. Վեցտասաներորդ՝ *Զաւակն* բերսաբէի մեռաւ: - 413. Եւ խոստումն օրհնութեանց *զաւակին* և օրինաց կատարումն՝ փրկիչն եղև: - 419. Երրորդ՝ զի ոտք և ձեռք կապեալ բազումք *զզաւակս* զոհէին նմա. նոյնպէս և նորայն հատան: - 426. Առաջին *զաւակն* բերսաբէի վասն է՞ր մեռաւ: - 433. Իսկ յակոբ որ էր յազգէն սողոմոնի՝ առեալ զկին եղբօրն ըստ օրինացն զի յարուսցէ *զաւակ* եղբօրն. և ծնաւ զյովսէփ: - 460. Զի գալ հոգւոյն սրբոյ պատճա՛ռ էր կրկին ներգործութեան. այսինքն սրբութեան արմատոյ մեղաց. և պտղաբերութեան կուսածին *զաւակին*. ծնանիլ և կոյս մնալ յետ ծննդեանն: - 463. Եւ առաքեալն ցուցանէ թէ քրիստոս է *զաւակն* այն. որպէս ի հռոմայեցոցն ասէ, թէ «քրիստոս է ի հարցն ըստ մարմնոյ. որ է ի վերայ ամենեցուն աստուած»: - 466. Բազում ինչ անդ բնութիւն կորոյս զօրէնս իւր. այսինքն ի կողմանէ մօրն, ի կողմանէ *զաւակին*, և ի կողմանէ կերպին: - 469. Զի նա՛ եղև մայր հօր. և դուստր *զաւակին*: - 469. Եւ էր ի վերջոյ քան *զզաւակն*. փոքրագոյն քան զպարունակեալն յինքեան: - 469. Այլ և ի *զաւակն* էին բազում սքանչելիք: - 469. Վեցերորդ՝ զի ցուցցէ զինքն որդի աբրահամու. առ որ հրաման թլփատութեանն եղև և խոստումն օրհնեալ *զաւակին*. և այսպէս խոստմանն աստուծոյ կատարումն քրիստոս զինքն ցուցանէր: - 485. *Զաւակս* այլազգեաց մկրտելի՞ է թէ ոչ: - 591. *Զզաւակս* այլազգեաց մկրտել պարտ է. զի թէ մեռանի ազատեալ է ի սկզբնական մեղաց և ի պատժոց դժոխոց: - 591. Վասն զի յանմաքուր սերմանէ յղացեալ լինի *զաւակն*. զի «ո՞վ կարէ առնել սուրբ զյղացեալն յանսուրբ սերմանէ» ասէ: - 592. Վտանգ գո՞յ ինչ *զաւակաց* թէ ոչ արդար ամուսնութեամբ այլ ի պոռնկութենէ ծնանին: - 593. Ա՛րդ՝ բարի պսակն եռակի է. այսինքն հաւատն. *զաւակն*. և խորհուրդն: - 610. Իսկ *զաւակն*, զի ծնցի և սնուցանի ի պաշտօնն աստուծոյ. զի վասն ծննդեան *զաւակին* է հրաման պսակին: - 610. Զի կնքահայրն և սանամայրն ծնունդ մի. և նոցա *զաւակն* բ. և նոցա թոռն գ. և չորսն որ է՛ թոռին թոռն՝ լինին խնամիք: - 611. վասն զի բանից և կամա՛ց են *զաւակք*: - 612. Վեցերորդ, զի և առաջին ծնօղքն և հարք թէպէտ աւելի կին առնուին վասն *զաւակաց*, այլ հարսանիսն կրկնեալ ո՛չ ընթերցեալ լինի: - 612. Այլ և սա՛ մայր կոչի հոգևոր ծննդոցս. և մեք մայր և ծնօղ հոգևոր *զաւակացս* բարեաց: - 614. որ այս եղև սկիզբն պարկեշտութեան յորժամ զսիրելի *զաւակաց* պատկերս արարին և պաշտեցին: - 677. Գիր քոյոյ վսեմամիտ խոհեմութեանդ ո՛վ արփիածին հարազատ, և վերնոյն սիօնի նազելի *զաւակ* Գէորգէոս Ռաբունեայ պետ: - 773

**ԶԱՔԱՅԱԲ** - Եւ նստելն յաթոռ՝ պատրեաց *զաքայաբ*: - 413. Իսկ նստիլն ի յաթոռ՝ ասէր պատրել *զաքայաբ*, թոյլ տալն է աստուծոյ որ մարդ իւր կամօքն հաւանի չարին և պատժի: - 444

**ԶԱՔԱՐ** - Եւ տե՛ս յօրինակաց. զի չնչին գողութիւնն, *զաքար* իւր զարմիւքն քարկոծեաց. և կրկուտ քաղելն զայրին: - 745

**ԶԱՔԱՐԻԱ** - Դարձեալ՝ զայս օրինակ ետես մարգարէն *զաքարիա* և պատասխանեաց հրեշտակին՝ «տեսանեմ աշտանակ ոսկի ձոյլ. և գունդ մի ի վերայ նորա. և է ճրագարան, և է բերան ճրագացն»: - 346. Եւ **է** ճրագարան և **է** բերան ճրագացն, **է** արքն մեծապատիւք զօրավիգք թագաւորին. այսինքն յեսու, *զաքարիա*, խոդէստուբիա, յեդոյիա, յեշոյիա, և եզր դպիր: - 346. Վասն որոյ և յաւուրս *զաքարիայի* հօրն յովհաննու յորժամ յամեաց ի տաճարին և ել, ակնունէր ժողովուրդն տեսանել զա՛կնն և տե՛սին լուսափայլ սպիտակացեալ իբրև զձիւն. և լի՛ եղեն խնդութեամբ. զի երկնաւոր արքայութեան նշոյլքն պայծառացուցին զակն: - 349. ...զոր կախեցին զցայգ և զցերեկ յաւուրն ուրբաթու, և ո՛չ հաւատացին մովսէսի և *զաքարիայ* որ ասէ՝ «հայեսցին ի նա զոր խոցեցինն»: - 405. Ո՞ր քան են և ո՞րք գիրք սուրբք հին և նոր կտակարանք... Անգէ: *Զաքարիա:* Մաղաքիա: Երեմիա: Բարուք: Ողբք: Դանիէլ: Եզեկիէլ: - 450. Եւ ի հարցանելն ո՛չ էր երկբայ որպէս *զաքարիա*: - 465. Եւ թէ ամենևին անհաւան և յամր լինին՝ պատժին որպէս *զաքարիա*: - 465. Առնեն ի սեպտեմբերի **իէ** զպապանձումն *զաքարիային*. և ի նմին աւուր զյղութիւնն եղիսաբեթի: - 483. Ուստի եղև պապանձեալ *զաքարիա* ի նմին աւուր: - 483. Երրորդ՝ զի ո՛չ ասաց հրեշտակապետն *զաքա-րիայի* թէ ահա՛ եղիսաբեթ յղասցի և ծնեցի քեզ որդի զներկայն ցուցանելով...: - 483. Եւ այլք թէ՝ *զաքարիա* հայրն յովհաննու: - 486. Եւ այն էր զի *զաքարիա* ի վերայ բազկացն յովսեփու թլփատեաց զնա: - 486.

***Զարարիա*** **Սիմա Եղիա Մովսէս տաւղոք երգէին:** - 641. Եւ ո՛չ միայն խաչն, այլ և ամենայն գործիք չարչարանացն. այսինքն բևեռքն գեղարդն և այլք. որք բերին առաջի դատաւորին. և ի մարմին նորա երևին սպիք խոցուածոց նորա ըստ *զարարիայ*, «հայեցին ի նա յոր խոցեցինն»: - 732

**ԶԲԱՂԻՄ +** Զի մարդս բազում իրօք *զբաղեալ* է ի միտս. իսկ նոքա միայն ի բնութիւնս իւրեանց փութով ճանաչեն: - 218. Զի հոգի է աստուած. և յիմացական միտս և ի հոգիս բնակէ. և չէ՛ օգուտ մարմնոյն սրբութիւն յորժամ միտքն *զբաղեալ* է ի չարիս. զի հեռանայ ի սիրոյն աստուծոյ և ի բնակութեանն նորա....: - 558

**ԶԲՕՍԱՆՔ +** Կամ է՛ ի ներընդունակ պատճառն իւր. որ հաւասար է ի լինիլն և յոչ լինիլն. որպէս ելանել ի *զբօսանս*, կամ ո՛չ. լինիլ անձրև, կամ ո՛չ: - 10. Նա՛խ՝ զդարձումն յետս աստուածային փառացն. և վասն այն շրջեցաւ ի *զբօսանս* դրախտին: - 280. Երրորդ՝ խաբելն ի *զբօսանս* երթալ: - 287. Այլ զգալապէս զխաղող, զի *զբօսա՛նք* է: - 389

**ԶԳԱԼԱՊԷՍ +** Եւ ո՛չ կարեմք այժմ *զգալապէս* տեսանել: - 222. Վասն որոյ ի սոյն ժամանակի առաւելու որոտ կայծակ և կարկուտ *զգալապէս*՝ յիշատակ սքանչելեացն աստուծոյ: - 341. Այլ *զգալապէս* հաց և գինի աւանդեաց, զայն պատարագեմք: - 357. Այլ *զգալապէս* զխաղող, զի զբօսա՛նք է: - 389. Ոչ այլ ինչ գոլով սիւն աշխարհի *զգալապէս*, բայց միայն բազմութիւն լերանց և քարանց: - 788

**ԶԳԱԼԻ +** Վասն ճանաչման իւրոյ աստուած կազմեաց կրկին կերպիւ օրինակս. այսինքն իմանալի և *զգալի*. որպէս հոգին, միտքն, և նմանք սոցա. կամ արեգակն, լոյս, և նմանք նոցա: - 24. Այս է զի ի լուր պատմութեանց նախնեացն՝ կամ ի կարգէ՛ իրաց՝ կամ ի տեսս *զգալեաց*՝ ի ծանօթս գամք աստուծոյն ճշմարտի. յորմէ հաւատն լուսափայլեսցի: - 25. Իսկ երրորդ գլուխն որ է՛ տեսութեամբ *զգալեաց* յերկինս և յերկրի: - 26. Արդ՝ զորօրինակ *զգալի* աչք մեր ո՛չ կարէ ըմբռնել զքանակութիւն արեգականն և այլ լուսաւորացն. այլ մտօք իմանամք զմեծութիւն նոցա: - 31. Պարտ է գիտել, զի ի ներքոյ բանին է *զգալեացս* տեսութիւն: - 103. Նախ՝ զի եղականք ամենայն չափաւորեալ գոյացան. եթէ իմանալիք և եթէ *զգալիք*: - 103. Զոր օրինակ, *զգալի* խաւարս մարմնոյ աչացն է: - 103. Զոր ցուցցուք օրինակաւ *զգալի* տեսութեամբ: - 104. Երրորդ՝ որպէս աչք ի *զգալի* լոյսն հեշտանայ ազգակից գոլով: - 104. Չորրորդ՝ բանն գերագոյն է յիմանալիսն. և մարդն գերագոյն է ի *զգալիսս*. վասն որոյ մարդ եղև: - 107. Հինգերորդ՝ ի բանէն կրկին էութիւնք յառաջեցան. այսինքն իմանալի և *զգալի*. զի թէ միայն ի հրեշտակաց էր առեալ՝ պակասէ՛ր *զգալին*. և թէ ի կենդանեաց՝ պակասէ՛ր իմանալին: - 107. Երրորդ՝ սկիզբն իմանալեաց. և պատճառ *զգալեաց*. որ են յաւիտենականք և ժամանակեայք: - 110. Հինգերորդ՝ ժամանակն է *զգալեաց*. և միշտն իմանալեաց. և յաւիտեանն անիմանալեաց: - 116. Որո՞վ զանազանի և հաւասարի իմանալի և *զգալի* կեանք: -117. Այլ զանազանին, Նախ՝ զի իմանալին անմա՛հ կեանք է. և *զգալին* մահկանացու: - 117. Երկրորդ՝ իմանալին անընդմիջաբա՛ր է ի պատճառէն. իսկ *զգալին* միջնորդիւ տարերց: - 117. Երրորդն է նշանական աստուածաբանութիւն. որ ի *զգալի* կերպարանաց փոխակցիմք յիմանալի տեսութիւնն. թէ զի՞նչ նշանակէ մարդ երևելին. կամ առիւծ. գառն. հուր. լոյս. և այլն: - 122. Իսկ չորրորդն է խորհրդական աստուածաբանութիւն. յորժամ զամենայն *զգալի* և զիմանալի էութիւն արտաքոյ թողեալ, ի խորս ընթանամք մտօք և մտանեմք յամպն և ի մէգն ըստ մովսէսի. և ապա տեսանեմք զնա արտաքս որոշեալ յամենայն էից: - 122. Եւ երրորդն որ է նշանակաւ, ա՛յլ առաւել և ընդարձակ և բազմաբա՛ն է. վասն զի խառնի ի *զգալիսս*. որ բազո՛ւմ է և բաժանեալ: - 123. Վասն առաջնոյն գիտելի՛ է, զի ամենայն շնորհ բղխո՛ւմն է և ճառագայթ, յանեղական լուսոյն իջեալ առ էակս ամենայն իմանալի և *զգալի*. և զարդարէ՛ զսոսա ըստ նմանութեան այնմ պարգևեալ շնորհի. եթէ ըստ բնութեան՝ և եթէ անձնական. ի հրեշտակս և ի մարդիկս: - 140. Եւ կարօտի սա բ իրաց. այսինքն զի զգայութիւնն առո՛ղջ իցէ, և *զգալի* առաջի եդեալ իրն յստա՛կ. ապա թափանցէ՛ յինքն ի սոցանէ՛ պա՛րզ տեսութիւն. ապա թե ո՛չ՝ ո՛չ կարէ միտքն յստակապէս տեսանել սոքօք: - 143. Նոյնպէս և խօսի հոգին ընդ հրեշտակն մարմնական կերպիւ զոր իմանայ հրեշտակն որպէս զայլ *զգալիս* որքան է ի մարմնի: - 145. Չորրորդ՝ ծածուկ է ի զգայութեանց գոյն. և աստուած ի *զգալեաց*: - 171. Աստուած՝ իմանալի աշխարհ. և աշխարհ՝ *զգալի*. որ և մարդս իմանալի և *զգալի* աշխարհ: - 179. Արդ ամենայն ինչ որ *զգալի* է՝ ի ներքս ի սմա՛ է. ձա՛յն. գո՛յն. հո՛տ. հա՛մ. ծա՛նր և թեթև. և ո՛չ ինչ է արտաքոյ սորա. յաղագս որոյ և ո՛չ զգայարանաց կարօտի: - 179. Այլ և նախ կոչի երկինք՝ *զգալի* երևումն աստուծոյ՝ և հրեշտակաց՝ և մարգարէից սրբոց: - 183. Իսկ եղական լոյսն դարձեալ բաժանի յիմանալին և ի *զգալին*: - 185. Իսկ *զգալի* լոյս դարձեալ բաժանի յերկնայինս և յերկրայինս: - 185. Երկրորդն *զգալի*: - 221. Երրորդն *զգալի* և իմանալի: - 221. Ո՞րպէս ասէ մեծն Ներսէս շնորհալին. ընդ ծառոց երկրի *զգալեաց*. տնկեաց և զտունկս իմանալեաց: - 221. Եւ ոմանք միայն *զգալի* և ապականացու և ծորելի որպէս երկիրս այս. և

զայսոսիկ ո՛չ ընդունիմք մեք ճշմարտութեան հետևօղքս: - 221. Այլ ոմանք իմանալի և *զգալի*. և մարմին նիւթական: - 221. Որպէս դամասկացին յօհան՝ և օգոստինոս՝ իմանալի և *զգալի* ասացին: - 221. Երրորդ՝ զի իմանալեա՛ցն է տունկ. այսինքն բանականաց. հրեշտակաց կամ մարդկան. և ո՛չ *զգալի* կենդանեաց: - 222. Չորրորդ՝ զի նոյն ինքն դրախտն և տունկն է իմանալի և *զգալի*. որպէս վայելօղ մարդն էր իմանալի և *զգալի*: - 222. Պտո՛ւղ էր *զգալի* և կերակրելի. որպէս կենաց պտուղն անմահութեան էր պատճառ. և այլ ամենայն պտուղքն լիութեան: - 223. Եւ այս իսկ է գործն, այսինքն վայելել հոգւով յիմանալիսն, և մարմնով ի *զգալիսս*. պարտ էր նախ գոյանալ նոցա, և ապա՛ գործողին և վայելողին: - 231. Եւ ի վախճանի եղև *զգալի* բանականն իբրև մատնահար և կնիք արարածոց. ունելով զիմացումն և զգգացումն. զի իմաստութեամբն ծանիցէ զիմաստութիւն արարչին. և զգալովն զամենակարօղ զօրութիւն նորա՛: - 231. Տասներորդ՝ մէջ և կապ ամենայն գոյիցս մա՛րդն է կազմեալ. զի ամենայն արարածք ի **բ** դէմս որոշին. այսինքն մինն յիմանալի և միւսն *զգալի*. և սոքա եղեն յառաջագոյն: - 231. Նա՛խ՝ զի աշխարհ է կամ իմանալի, որպէս հրեշտակք. կամ *զգալի*, որպէս մարմնականք: - 231. Եւ մարդն ունի իմանալի հոգի և *զգալի* մարմին: - 231. Ութերորդ՝ վասն արտաքին զգայութեանցն որ են ի գլուխն. զի այլ կենդանիք միայն հեշտանան կերակրով և ցանկութեամբ. իսկ մարդն հեշտանայ առաւել գեղեցկութեամբ *զգալեացս*. յորժամ տեսանէ աչօքն զերկին և զերկիր. և ժողովէ՛ զճշմարիտ գիտութիւն նոցա և հեշտանայ: - 233. Երեքն ի սոցանէ գռեհիկք են. որ է շօշափելիք. ճաշակելիք. հոտոտելիք. զի խառնելովն ի *զգալի* իրն ճանաչեն: - 235. Զի որք զհոգի յառաջ ասեն գոյանալ՝ զայս դնեն պատճառ, եթէ յէակքս իմանալիքն յառաջ ստեղծան քան *զզգալիքս*. ապա և ի մարդոյն էութիւն հոգին յառաջ է քան զմարմինն: - 252. Եւ այժմ պատասխանեսցուք այնմ որ ասեն՝ յարարածքս զիմանալիս յառաջ ստեղծեալ քան *զզգալիս*: - 253. Նա՛խ՝ ըստ առաջ եդելոյն. զի առաջ եդեալք սորա են աստուածայինքն և իմանալիք. իսկ նոցայն՝ մարմնականք և *զգալիք*: - 269. Երեքտասաներորդ՝ ճշմարտի գիտօղ և սիրօղ է աստուած. և միայն մարդս է ի *զգալիս* որ ճշմարիտն գիտէ և սիրէ: - 272. Նա՛խ՝ զի անհաւա՛ն էր ժողովուրդն և անկատար, *զգալի* տեսլեամբ և ձայնիւ զարհուրեցոյց. զի մի՛ մոռասցին. այլ հաւանեսցին և ի միտ պահեսցեն: - 341. Նա՛խ՝ հրամայեաց աստուած գրել զլինելութիւն աշխարհի. և ձևացոյց ի միտսն մովսէսի. զի մի՛ մոռասցին հանգամանքն. վասն որոյ *զգալի* խորան հրամայէ կազմել: - 342. Եօթներորդ՝ զի նոր իմն չնաշխարհիկ կազմեաց. նոր ժողովրդեանն և նոր օրինացն, իցէ և նո՛ր տաճար հռչակեալ ընդ ծով և ընդ ցամաք. որպէս պսակ և փառք արդարոցն է՛ զոր ակն ո՛չ ետես և ունկն ո՛չ լուաւ. նոյնպէս և սա՛ ի *զգալիսս* անհաս ի մտաց մարդկան: - 342. Իսկ չորրորդն որ է՛ մարմին, *զգալիքս* են թանձրացեալ: - 344. Վեցերորդ՝ զի իմանալի ունի լոյս՝ ցուցանէ՛ *զգալի* լոյսն. զի ի գիշերի ելեալ ի խորանէն հալածէր զխաւարն և լուսաւորէր զանապան: - 352. Գառն օրինա՛կ էր քրիստոսի. զի կոչեցաւ գառն աստուծոյ. ա՛յլ *զգալի* գառն ո՛չ եղև: - 357. Դարձեալ, տասն են մասունք *զգալի* արարածոց. այսինքն՝ **է** մոլորական գունդք. և **ը**՝ անմոլարքն. և իններորդ ի լուսոյդ ի վայր. և մարդս **ժ** երրորդ ի վերայ նոցա. որ է՛ բանական և բաժին աստուծոյ: - 376. Երրորդ՝ որպէս ինքն *զզգալի* աստեղս թըւէ՛ և յանուանէ՛ կոչէ, նոյնպէս և զիմանալի՛սն ետ թուել: - 377. Նոցա *զգալի* թշնամիքն ետ կոխան. և մեզ զիմանալին...: - 398. Չորրորդ վկայ լոյսն *զգալի*. որ յինն ժամուն ծագէ՛ ի գերեզմանէն ակներև ամենայն մարդկան: - 509. Եւ որպէս ասեմք, զգայութիւն. զգալ. և *զգալի*: - 531-532. Որպէս ոք *զզգալի* ակն խփէ և զրկի ի լուսոյն և առնէ խաւար. նոյնպէս և նոքա: - 562. ...վասն որոյ պա՛րտ է աչօք տեսանել *զզգալիսն*, և մտօք հայիլ յիմանալին և երանիլ: - 597. Եւ գործատունն կրկին ասի. զի ամենայն արարածք կրկին են. այսինքն իմանալի և *զգալի* որք օրինեն զարարիչն: - 637. Մահն բաժանի յերկուս. այսինքն յիմանալի և ի *զգալի*. որպէս և կեանքն է իմանալի և *զգալի*: - 668. Զի *զգալի* լոյս ո՛չ լուսաւորէ զնոսա...: - 669. ...զի կամ իմանալիք են որպէս հրեշտակք. կամ *զգալիք* որպէս տարրեղէնք. և կամ յերկուց գոյացեալ որպէս մարդ. այսինքն ի հոգւոյ և մարմնոյ...: - 715. Նախ վասն անկարօտութեան. զի սուրբքն իմանալի լոյս ունին զքրիստոս. և ո՛չ են կարօտ *զգալի* լուսոյ: - 760. Զի ո՛չ *զգալի* գիշեր և ո՛չ իմանալի. մեղաց կամ անհաւատութեան կամ տգիտութեան գտանի անդ: - 761. Յիմանալեացն սեռից և ի *զգալեացս* տոհմից: - 771

**ԶԳԱՄ +** Եւ որպէս կիրք ցաւոցն մարդոյն են, զի *զգա՛յ* զկսկիծն. նոյնպէս և կիրք հեշտութեանն նորա՛ են, եթէ չարեաց և եթէ բարեաց, ապա ուրեմն մեր է ներգործութիւնն և ո՛չ հարկին: - 11. Ա՛րդ՝ զանազան զգայութեամբ զանազանապէս *զգամբ*, և ո՛չ ամենայնիւ զմինն՝ կամ միովն զամենայն: - 75. Զի աչք *զգայ* զգոյնն ընդ ձեւոյն. և ո՛չ զհամն և զհոտն: - 75. Իսկ շօշափելիքն *զգայ* զջերմութիւնն՝ և տեսանելիքն զլոյսն միայն ի միում էութեան: - 75. Իսկ զգայականն ունելով զայսորիկ առաւելու *զզգալն* և զշարժիլն: - 117. Երկրորդ՝ զի ի զատ ճողոպրի ի զգայութեանց. այսինքն ի տեսանելեաց, ի շօշափելեաց, և յայլոց, որ զնիւթականս *զգան*: - 175. Գործ զգայարանացն է զարտաքինս ի ներքս *զգալ*. որպէս աչօք զգոյնս. և

ականջով զձայնս. և այլն: - 179. Զի *զգայ* զջերմութիւն հրոյն. և զցրտութիւն՝ որ է ջրոյն. և զխոնաւութիւն որ է օդոյն. և չորութիւն հողոյն: - 215. Յաղագս այսորիկ անբան կենդանիք փութապէս *զգան* զառաջին շարժումն և զփոփոխումն օդոյդ քան զմարդ. և յառաջագէտ լինին: - 218. Չէ՛ զարմանք հրաշիցն աստուծոյ. որպէս ամենայն ըռնգունք զհոտն *զգան*, և աչք զգոյնն կրէ յինքն, և անծորելի և անպակա՛ս են յենթակայէն: - 224. Եւ ի վախճանի եղև զգալի բանականն իբրև մատնահար և կնիք արարածոց. ունելով զիմացումն և զզգացումն. զի իմաստութեամբն ծանիցէ զիմաստութիւն արարչին. և *զգալովն* զամենակարօղ զօրութիւն նորա՛: - 231. Վասն որոյ յետոյ մարդն ստեղծաւ յերկուցն խառնեալ յիմանալւոյն և ի *զգալոյն* ի մի էութիւն: - 231. Երկրորդ՝ զի իմանայ ընդ հրեշտակաց. *զգայ* ընդ կենդանեաց. աճէ՛ ընդ տնկոց. գոյ ընդ անշնչից: - 231. Եօթներորդ՝ վասն զգայութեանցն, որ ամենեքին յառաջ հեղուն յուղեղէն, և ազատապէս տեսանեն և իմանան. զի թէ գլուխն և ուղիղն ի վա՛յր էր քարշեալ և կորացեալ՝ ո՛չ կարէր ուղղակի *զգալ* և իմանալ. որպէս այլ կենդանիք: - 233. Երկրորդ՝ ցուցանէ յերկուց մասանց գոլ զբոլոր մարդն. և հոգոյն է *զգալն* և տեսանել և այլն: - 234. Իսկ երկուքն իշխանականք. որ է՛ տեսանելիքն և լսելիքն. ի հեռաստանէ՛ *զգան*: - 235. Դարձեալ զօրութիւնք հոգւոյն բաժանին երրակի ըստ երից ներգործութեանցն. որ է՛ կենդանանալն. *զգալն*. և բանաւորիլն: - 249. Եւ կամ որպէս ծնեալ մանուկն ունի առ ինքն ծածկեալ զհոգին. այլ նա կերակրի և ապա *զգայ*. և յետոյ խօսի: - 255. Այլ զանազան զօրութիւն ի զանազան ներգործութեանցն երևի. որ է՛ աճիլն. *զգալն*. և խորհիլն: - 259. *Զգայ* ընդ կենդանեաց: - 275. Որպէս այն՝ որ կոչեմք զգայութիւն *զզգալն* և զզգայարանս: - 297. զգլուխն և երորդ մասամբն ի յետ դարձուցանել որ է՛ տուգանք և զգայարանացն որ մոռացաւ և ո՛չ *զգաց* զօրէնս աստուծոյ: - 358. Զի կուսութեամբ ծնաւ և զցաւս ո՛չ *զգաց*: - 469. Իսկ թէ ոք ասիցէ, աւետարանն ընդ արշալոյսն ասէ *զգալ* կանանցն և տեսանել զքրիստոս: - 515. Եւ որպէս ասեմք, զգայութիւն. *զգալ*. և զգալի: - 531-532. Իսկ հեզութիւնն նոյն է ընդ մաստութիւնն. զի ասեն թէ՝ մաստութիւն է որ ո՛չ *զգայ* զդառնութիւն ինչ ոգոյ: - 584

**ԶԳԱՅԱԿԱՆ +** Որպէս զխեցգետինն՝ կենդանի ներշնչական *զգայական*: - 54. Եւ ժամանակեայ՝ որ ունի սկիզբն և կատարած. որպէս *զգայականք*. և տնկականք: - 116-117. Որո՞վ զանազանին և հաւասարին *զգայական* և տնկական կեանք: - 117. Իսկ *զգայականն* ի ջերմութենէ և ի շնչոյ օդոյ: - 117. Իսկ *զգայականն* ունելով զայսորիկ առաւելու զզգալն և զշարժիլն: - 117. Եւ յետ սորա անմիտ *զգայականն* է. վասն որոյ ո՛չ է իմացական այլոյ: - 130. Իսկ որ զգայարանօքն տեսանէ, այսինքն աչօքն զգոյնն, ականջօքն զձայնն, և այլն. կոչի սա *զգայական* տեսութիւն: - 142. Երրորդ՝ ի ձայնաւորէ՛, կիսաձայնէ՛, և բաղաձայնէ՛. որպէս բանական *զգայական* և տնկական: - 178. Որպէս ի մեզ նախ *զգայականն* երևի, և ապա՛ բանականն: - 212. Եւ նոյնպէս *զգայական* մարմինք ի փտելոյ և յապականութենէ գոյանան. վասն այն և դարձեալ ապականին: - 214. Քսանևս՝ ե՞րբ ներգործէ տնկականն և *զգայականն* և բանականն: - 228. Այսինքն տնկական. և *զգայական*. և բանական. և զի յանկատարէն ելանեմք ի կատարեալն. վասն որոյ նախ ստեղծաւ տնկականն ոգի, և ապա՛ *զգայականն*, և ապա՛ բանականն որ է կատարեալ մարդն: - 231. Եւ նա՛ է *զգայական*. և յոր մասն և խառնի՝ առնէ զգացումն: - 244. Դարձեալ են և ա՛յլ զօրութիւնք անբաժանելիք ի հոգւոյն. որպէս տնկականք, և *զգայականք*: - 249. Եւ հնազանդ են բանին՝ *զգայականն*. որպէս ցասումն և ցանկութիւնն: - 249. Եւ ըստ այսմ զանազանին երեքկին զօրութիւնք հոգւոյն. այսինքն տնկական. *զգայական*. և բանական: - 249. Զի տնկական հոգին յօժարի՛ գոլ. և *զգայականն* բարեպէս գոլ. և բանականն ևս բարեպէս գոլ. զի ո՛չ երբէք հանգչի, մինչև միաւորեսցի ընդ ևս բարեգունին: - 249. Այլ արդ ի մարմնի առաւել մեղանչէ քան յերկնային կեանս. վասն որոյ անկանի ի *զգայական* մարմին որպէս ասեն՝ որ ներքո՛յ է մարդոյն՝ և համանման ախտիւք զի *զգայակա՛ն* է: - 252. Զի կազմողական զօրութիւնն որ է՛ ի նիւթն՝ ազդումն առեալ յարարչադիր հրամանէն, նախ կազմէ՛ և պատրաստէ՛ զնիւթն առ ի յընդունելոյ զտնկականն. և ապա *զզգայականն*. յետ որոյ զբանականն ի ծագմանէն աստուծոյ: - 254. Նախ՝ զի նիւթն այն ունի առ ինքն բնական զկենդանութիւն տնկականին. և տնկականն մա՛սն է *զգայականին*. և *զգայականն* բանականին. և սոքա ո՛չ որոշին ի բոլորէն. զի մի են էութեամբ ի մարդն թէպէտ ա՛յլ են ներգործութեամբ: - 254. Այլ ի կողմանէ հոգւոյն՝ զօրութեամբ ո՛չ է ի սերմն այն ըստ ինքնութեան բոլորին. այլ ըստ ինքնութեան մասին. որ է տնկականն և *զգայականն:* - 255. Այսպէս և բանական հոգւոյն նշոյլք է *զգայականն* և տնկականն: - 255. Այսպէս և հնազանդեալ զօրք հոգոյն՝ *զգայականն* և տնկականն է. և նոքօ՛ք է հոգին ի մարմինն: - 255. Նախ տնկականն. և ապա *զգայականն*. և ուր սոքա երևին ի հրամանէն աստուծոյ, երևի և անդ բանականն: - 255. Եթէ տընկական. եթէ *զգայական*. և եթէ բանական: - 257. Այլ և հատումն ամենևին ո՛չ ասի հոգւոյն. ո՛չ տնկականի և ո՛չ *զգայականի* և ո՛չ բանականի: - 257. Նա՛խ՝ զի անմարմին է հոգին. վասն որոյ ո՛չ հատանի. ո՛չ տընկականն. ո՛չ *զգայականն*. և ո՛չ բանականն: - 257. Այլ

արդ՝ նախախնամութեամբ է տնկականն և *զգայականն*. որք փտելով և զնմանս ծնանելով պահեն զնոյն տեսակն: - 257. Զի նախախնամութեամբ ունի զտնկականն և *զզգայականն*. և ստեղծմամբ զբանական հոգին զպատկերն աստուծոյ: - 257. Եւ ըստ անասնոցն հաւասարութեան նախ գոյանայ անասնականն որ է տնկականն և *զգայականն*. և յետոյ բանականն: - 258. Ոմն նախախնամութեամբ. որպէս տնկականն և *զգայականն*. և ոմն ստեղծմամբ. որպէս բանականն: - 258. Իսկ հոգի մի է մարդոյ ի միոյ նախախնամութենէ յառաջ բերեալ. յանկատար նիւթն եղեալ զտնկականն և *զզգայականն*. և ի կատարեալն զհոգի բանական ծագեալ: - 259. Այսինքն բանականն ի մարդն. և *զգայականն* յանասունս. և տընկականն ի բոյսս: - 259. Նոյնպէս և ի *զգայականս* ո՛չ է պարտ ասել **բ** հոգի. այլ **բ** զօրութիւն: - 259. Եւ ըստ այնմ որ ներգործէ՛ ի զգայարանս, կոչի *զգայական*: - 259. Եւ զորօրինակ՝ ի *զգայականն* գոյ տընկականն, այլ մի է հոգի *զգայականին* և ո՛չ **բ**: - 259. Այսպէս և *զգայականն* և տնկականն մասունք են բանականին՝ նախ եղեալ ի մարմինն. և յորժամ բանականն հեղի ի մարմինն, յայնժամ և սոքա հեղին ընդ նմա. զի զօրութիւնք և մասունք են նորա ըստ օրինակի նախասացեալ երրորդ թույն: - 259-260. Եւ յայնժամ *զգայականն* և տնկականն ո՛չ ունին զներգործութիւն իւրեանց ի կազմողական զօրութենէն. այլ ի նոյն ինքն ի հոգույն: - 260. Եւ նա հոգին է որ *զզգայական* և զտնկական զօրութիւնն ի գործ ածէ միայն ի մարմինն որքան է ի մարմնի: - 260. Ասեմք առ այս, եթէ բանականն առաջին է ըստ պատւոյ քան *զզգայականն*. և *զգայականն* քան զտնկականն: - 260. Այլ հակադարձեալ սոքա ըստ կարգի և ըստ դասու՝ յառա՛ջ է տնկականն քան *զզգայականն*, և նա՛ քան զբանականն ի յերևումն. այլ էութեամբ համանգամայն են. որպէս անդ ուրեմն ասացաք վասն հոգւոյ և մարմնոյ: - 260. Դարձեալ ըստ կարգիս հարցանեմ թէ յո՞րժամ, և ի քանի՞ս սկսանի ներգործել տնկականն և *զգայականն* և բանականն: - 261. Ապա կազմէ՛ զծն *զգայականին* մինչև ի **ի** օրն...: - 261. Եւ ուսեալք զտնկականն՝ կարգաւ ելցուք ի *զգայականն*: - 263. Արդ՝ *զգայականն* է ի չորից տարերց. և ունի զտնկականն: - 263. Որև յաւելեալ իր ինչ *զգայական* լինի **գ**. վասն որոյ առ հասարակ ի **գ** ամիսս ծնանին. և ա՛յլք ի **գ** շաբաթս. և կէսք ի **գ** օրս: - 263. Այլ և *զգայականին* յաւելեալ շնչականն և շարժականն և ցասմնականն ընդ ցանկականին՝ լինի **թ**. վասն որոյ ոմանք յինն ամիսս ծնանին կամ ի **ծ**: - 263. Տնկական. *զգայական*. և բանական. վասն որոյ է ամսեայ ծնեալն ապրի և շնորհալի լինի վասն շնորհալի թուոյ եօթներորդին: - 263. Դարձել **դ** տարր, և տնկականն և *զգայականն*, և երեք մասունք հոգւոյն բան ցասումն և ցանկութիւն, որ լինի **թ**: - 264. Դարձեալ **գ** ամիս տնկականին որպէս ասացաք. և **գ** *զգայականին*. և **գ** բանականին: - 264. Եւ վասն տնկական և *զգայական* մասին՝ կազմողական զօրութիւնն այլ ևս աճեցուցեալ զմարմինն **բ** ամ և դադարեալ յերեսներորդին, լինի ժամանեալ ի չափ հասակի կատարմանն քրիստոսի, յորում մկրտեցաւ տէրն մեր: - 265. Այսպէս և զգայութիւնն առաւել է ի *զգայականս* քան ի մարդն: - 266. Երկրորդ՝ զի բանական միտքն և *զգայականն* խափանեալ է ի գործոյ յորժամ ննջէ ոք: - 268. Հինգերորդ, այն *զգայական*. և աստ բանական. և անդ իմացական: - 355. Հինգերորդ՝ որպէս մարմինն *զգայական* միաւորեալ ընդ բանական հոգոյ՝ ո՛չ է և ոչ ասի *զգայական*. այլ բանական մարդ: - 477. Եւ որպէս նախ *զգայականն* և ապա բանականն: - 541. Այլ սոքա ամենայնքն նախկին և պատւականք են. այսինքն քահանայ քան զսարկաւագ. և բանական քան *զգայական*. և ներգործութեամբ քան զօրութեամբ. այսպէս արծակելն քան զկապելն: - 541. Ողջախոհութիւն է հաստատութիւն հոգւոյ. որով արգելու զցանկութիւն *զգայական* և զհեշտութիւն մարմնական: - 581. Երրորդ՝ *զգայական*: - 640. Երրորդ՝ զի **գ** են տեսակք հոգւոց. տնկական, *զգայական*, բանական. և սոքօք մեղանչեմք: - 681. ...նման է պղատոնի մարմնափոխութեանցն. որ ի բանական մարդոյն ի *զգայականն*, և անտի ի տունկն ասեն, - 687. Կամ տնկական և *զգայական* և շնչաւոր գոլն: - 745. Ի յարութեանն ապա *զգայական* կենդանի լինի՞: - 753. Ո՛չ լինի. զի որդունքն այնք ո՛չ են *զգայական* կենդանիք. այլ հրեղէն տանջանք են *զգայական* մասինն: - 753. Իսկ ամենայն *զգայական* կենդանւոյ թէպէտ իգին ստինք գոն վասն զծնունդս կերակրելոյ. սակայն և արուացն գոյ նոյն մասն անդամոց կազմեալ յարարչէն. և այն յի՞նչ պէտս լինի. խնդրել արժան է: - 785

**ԶԳԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ** - Դարձեալ հոգին ունի զօրութիւնս ոմանս հասարակ ընդ անասնոց. որպէս *զգայականութիւնն*: - 249

**ԶԳԱՅԱԿԻՑ +** Ութերորդ՝ զի աստ ի միաւորութիւն հոգւոյ ընդ մարմնոյ՝ *զգայակից* և ախտակից լինին միմեանց կրական գոլով: - 479

**ԶԳԱՅԱՊԷՍ +** Եւ յետ սակաւուց ի նոյն գլուխն ասէ, թէ ո՛չ *զգայապէս* լինի տեսիլ հրեշտակի...: - 703

**ԶԳԱՅԱՐԱՆ +** Վասն այն ո՛չ կարեն իմանալ՝ զի ասէ տէրն, «կոյր կուրի առաջնորդէ՛, երկոքին ի խորխորատ անկանին». այսպէս որ առնէ *զգայարանս* առաջնորդ իմացման՝ անկանի ի մոլորութիւն: - 31. «Լերինք և բլուրք. խոյք և գառինք». և թէ՝ «երկինք պատմեն զփառս աստուծոյ». թէպէտ ո՛չ ունին

*զգայարանս*: - 41. **ժե**) *Զգայարանք* մարդոյս: - 102. Չորրորդ՝ միեղէն է նոցա տեսութիւնն և ի միոյ. իսկ մերս բազում և ի բազմաց. զի բաժանեալ *զգայարանօք* զբաժանեալ իրս տեսանեմք: - 120. Երկրորդ՝ որ ի ձեռն *զգայարանաց*: - 142. Իսկ որ *զգայարանօքն* տեսանէ, այսինքն աչօքն զգոյնն, ականջօքն զձայնն, և այլն. կոչի սա զգայական տեսութիւն: - 142. Զի ունի *զգայարանք*. այսինքն տեսանելի՛ք՝ լսելիք՝ և այլն: - 143. Իսկ հրեշտակք զի ո՛չ ունին *զգայարանք*՝ ո՛չ կարօտին գրոց և բանից: - 143. Միատեսակ է՝ յորժամ ըստ ինքեան ժողովէ յամենայն *զգայարանաց*, և բոլոր և միեղէն սիրով հպի յաստուած. և է՛ այս գերակատար սէր: - 143. Մի է աշխարհ. և չունի *զգայարանք*. և թէ ուր էր աստուած. և ուր էր աշխարհ. և յի՞նչ պատճառի ստեղծաւ: - 154. Աշխարհս ընդէ՞ր ոչ ունի *զգայարանք*. այսինքն տեսանելիք. լսելիք. և այլն: - 179. Գործ *զգայարանացն* է զարտաքինս ի ներքս զգալ. որպէս աչօք զգոյնս. և ականջով զձայնս. և այլն: - 179. Արդ ամենայն ինչ որ զգալի է՝ ի ներքս ի սմա՛ է. ձա՛յն. գո՛յն. հո՛տ. հա՛մ. ծա՛նր և թեթև. և ո՛չ ինչ է արտաքոյ սորա. յաղագս որոյ և ո՛չ *զգայարանաց* կարօտի: - 179. Չորրորդ՝ զի կենդանիքդ ունին **զե** *զգայարանք*: - 215. Եւ զի **զե** *զգայարանս* մարդոյն խաբեաց, **ե** մասն առնու ի գնալն: - 219. Վեցերորդ՝ Դիրք *զգայարանացն*: - 227. Այլ և ի միտ ածցուք զփառս երկնային կենաց ուստի անկաք, և անդ դիմելոց եմք. զի տեսութիւն մտացն զհոգին ընդ ինքեան ի վեր տանի. և նա զշունչն. և շունչն ընդ արեանն է կապեալ. և արիւնն ընդ մարմնոյն. *զգայարանքն* ընդ մարմնոյն. և լինի մարդն բոլորովին երկնային: - 233. Երրորդ՝ զի փափուկ ջիլք և նեարք՝ յերեսացն գան և առնեն *զգայարանս*. և հաստն ի թիկունքն սփռի վասն ուժոյ և պնդութեան և շարժութեան: - 234. Իսկ բարոյականն, Նա՛խ՝ զի յերեսն փչեաց զշունչ կենդանի. վասն որոյ յերեսն ունի *զգայարանս* մարմնոյ: - 234. Եւ այն զի մերձ է բերանոյն. և զի հոտն և համն ազգակից են միմեանց. ի ջրոյ գոլով երկուցն. վասն այն *զգայարանք* նոցա առ միմեանս են մերձեցեալ: - 235. Եւ դարձեալ թիւ ոսկերացն **մխը**. և **բժ**ան անդամքն, և **ե** *զգայարանքն* յօդեալ առ միմեանս, լինին **յկե** զօդուածք: - 244. Եւ բաց յայսցանէ՝ ի յուղեղէն **բ բ** երակ գայ յիւրաքանչիւր *զգայարանս*. **բ** յաչքն. **բ** յականջն. **բ** ի քիթն. **ա** ի բերանն. մին ի լեզուն. **բ** ի ձեռքն. **բ** ի յոտքն. որ լինի **ժբ**: - 244. Նա՛խ՝ զի *զգայարանքն* նորա որպէս զկակուղ մոմ առաւել ընդունի զտիպն: - 251. Նախ՝ զի *զգայարանքն* պինտ է: - 251. Եւ ըստ այնմ որ ներգործէ՛ ի *զգայարանս*, կոչի զգայական: - 259. Հինգերորդ՝ զի ամենայն տեսանէ և քննէ աստուած. այսպէս և մարդն ներքին և արտաքին *զգայարանօք*: - 271. Տասներորդ՝ մի և նոյն միտք է յաստուած որով զամենայն տեսանէ և զամենայն բարբառ լսէ. նոյնպէս և ի մարդս մի իմացումն է որ զանազան *զգայարանօք* իմանայ: - 271-272. Հինգերորդ՝ զի մտօք յաստուածային խոկումն էին վերացեալ, և *զգայարանօք* ընդ գործս հրաշիցն. և ոչ էին պարապեալ քննութեան անձին. զի «աչք իմաստնոյն ի գլուխ իւր»: - 278. Եւ եՆովք վասն անպտուղ կալոյն և *զգայարանացն* ծածկութեան, վերափոխեալ եղև: - 288. Որպէս այն՝ որ կոչեմք զգայութիւն զգգալն և *զգգայարանս*: - 297. Վեցերորդ՝ նուիրեաց մելքիսեդեկ զպատարագն և ընկալաւ զտասանորդն. որպէս քրիստոս պարգևէ՛ հաւատացելոց զշնորհս, և առնու զտասնեակս զկատարեալ և զբարի գործս. կամ զտասն բանեան օրէնս **ժ** *զգայարանօք*: - 301. Նոյնպէս և տէրն մեր ետ հաւատացելոցն զկենարար մարմինն և արիւնն իւր. յորոց խնդրէ զգործս տասնաւոր. այսինքն զկատարեալս. և զկատարումն **ժ** բանեան օրինացն. ի յորս է՛ մաքրութիւն **ժ** *զգայարանացս* որպէս ի վերոյ ասացաւ: - 302. Այս է՝ է զօրութեամբ հոգւոյն և **ե** *զգայարանօք* մարմնոյ մեռանիմք և յառնեմք **գ** կատարելութեամբ: - 315. Հինգերորդ, մա՛հ անասնոց. քանզի **ե** *զգայարանօք* իբրև զանասունս եղեն և կորուսին յինքեանց զբանն: - 334. Եւ այս գիտելի է. զի կախարդքն փոխեն *զգգայարանս* և ցուցանեն առ աչօք երևումն ինչ: - 335-336. Իսկ դևքն փոխեն զերևակայութիւնն և *զգգայարանս*, այլ ո՛չ զմիտս: - 336. Իսկ հրեշտակք կարե՛ն փոխել զմիտս և շրջել ի բարին. նաև զերևակայութիւնս և *զգգայարանս*, այլ ո՛չ զկամս: - 336. Տասներորդ՝ **գ** ափկիցն. երրորդութեանն հաւատով սրբել **զժ** *զգայարանս* հոգւոյ և մարմնոյ: - 339. Եւ **ժ** *զգայարանք* մեր. հինգ հոգւոյ և հինգ մարմնոյ: - 342. Եւ ճրագն՝ է *զգայարանքն*: - 347. Եօթներորդ, նոցա ձայն *զգայարանաց.* և մեզ բանն իմաստութեան: - 354. Եւ յանկենդանս, որպէս նաշիհ՝ իւղ և այլն յաղագս *զգայարանաց* սրբութեան: - 357. ...զգլուխն **ե** երորդ մասամբն ի յետ դարձուցանել որ է՛ տուգանք **ե** *զգայարանացն* որ մոռացաւ և ո՛չ զգաց զօրէնս աստուծոյ: - 358. Եւ ցանեալ է անգամ ի վարագոյրն. որ է՛ քաւութիւն է *զգայարանցս* ի է զօրութեանց հոգւոյն. է խորհրդով եկեղեցւոյ. առ է դար կենցաղոյս: - 360. Նա՛խ՝ զի բոլոր *զգայարանքն* են ի գլուխն. պա՛րտ է բաժանել զնոսա: - 366. Որ նշանակէ ի մեզ զերեք մասանց թիւրիլն. այսինքն բանից, ցասման, և ցանկութեան հինգ *զգայարանօք*: - 367. Իսկ է գառն անարատ, է *զգայարանքն* սուրբ: - 373. Երկրորդ՝ մեղք եօթնից *զգայարանացն* պակասի. և արդարութիւն որ մինն է հաստատի առ զղջացեալս: - 374. Նոյնպէս և առաւօտու երգն, և մեսեդի ճաշոյն, և տասանորդ նաշիոյն **ժ** *զգայարանաց* մարմնոյն ճընշելն: - 375. Դարձեալ զէ ժամանակն ասէ. կամ զէ հասակս. կամ **է** *զգայարանօք* մարմնոյս.

անասնոյ, ապա ոչինչ զանազանի բանականն և անբանն. *զի* բանականն իմացմամբ և կամօք վարի. և անբանն ի բնութենէ՛ հարկի որպէս ասացաք: - 11. Եւ որպէս կիրք ցաւոցն մարդոյն են, *զի* զգա՛յ զկսկիծն. նոյնպէս և կիրք հեշտութեանն նորա՛ են, եթէ չարեաց և եթէ բարեաց, ապա ուրեմն մեր է ներգործութիւնն և ո՛չ հարկին: - 11. Դարձեալ թէ ի հարկէ՛ է՝ ո՛չ հետևի գով և պարսաւ ոմանց. *զի* սոքա կամաւորա՛ցն են և ո՛չ ականմայիցն: - 11. Ասեմք առ այս թէպէտ ունին զօրութիւնս, բայց այլ և այլ կերպիւ. *զի* բոյսք որք յերկրի են դարմանիչք և բժշկութիւնք մարմնոց. այլ երկնային աստեղքն են արարիչք լուսոյ և ժամանակաց. և ի նշանս ապագայից. *զի* յամենայն ուստեք տեսեալ պատրաստեցին մարդիկք. որպէս ասէ գիր, եղիցին լուսատու լինիլ երկրի. ի ժամանակս և ի նշանս: - 12. Ասեմք առ այս, մոլորականքն ո՛չ եթէ *զի* ունին ներհակ շարժումն վասն այն կոչին մոլորականք, կամ պատճառք են չարեաց, այլ *զի* մեք մոլորիմք ի շարժումն նոցա. *զի* ունին հասարակ շարժումն, և ունին յատուկ շարժումն: - 12. Ասեմք առ այս, եթէ այսու վկայե՛ս և դու մեզ՝ թէ ո՛չ է հարկ. *զի* ի բոլոր քաղաքն այնքան բիւր մարդիկ՝ ծեր և տղայ՝ ե՛րբ և ո՛ւր ի մի շարժումն աստեղաց ծնան, որք ի միասին կործանեցան. կամ բազմութիւն զօրացն. կամ որք ի նաւին կային. *զի* սոքա ամենեքեան յայլևայլ ժամանակս և այլևայլ շարժումն աստեղաց էին ծնեալք. ապա ուրեմն ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. Նախ՝ զի բարին էութիւն է. ուստի յա՛յտ է՝ *զի* հակադարձին առ միմեանս. *զի* ամենայն որ բարի՛ է՝ է է. և ամենայն որ է է՝ բարի՛ է: - 13. Չորրորդ՝ *զի* թէ չարն է յաստուծոյ, այլ արդ չարն եկամուտ է և պատահեալ. լինէր ապա ի յաստուած օտա՛ր ինչ և պատահական. որ է անտեղի: - 13. Իններորդ՝ եթէ չարն է յաստուծոյ, ապա և կամի՛ զչարն. յայնժամ լինի կրկին կամք աստուծոյ. չար և բարի. *զի* կրկին գործ՝ ի կրկին կամաց առաջագայի: - 14. *Զի* եթէ բարի է և առնէ զչար, ահա ներհակ գործ է իւրեան: - 14. Վեշտասաներորդ՝ *զի* թէ չարն է յաստուծոյ որպէս բարին, և երկուցն սկիզբն է աստուած, և արդ՝ եթէ միևնոյն է սկիզբն երկուցն, անկարելի է ներհակացն ի միասին ունիլ մի սկիզբն. *զի* լինէր սկիզբն այն ո՛չ պարզ. այլ երկատեսակ. և ո՛չ միեղէն՝ այլ բաժանեալ և այլայլեալ. նաև լինէր ինքն իւրեան հակառակ, և յառաջ եկելոցն ի նմանէ: - 14. Եօթնևտասներորդ՝ *զի* թէ չարն և բարին ունին մի սկիզբն, որպէս ընդդիմաբաժանեալ տեսակքն զսեռն: - 14. Ութևտասներորդ՝ *զի* թէ չարնէ յաստուծոյ, այս լինի կամ հակակայութեամբ յառաջ եկեալ. որպէս սպիտակն յո՛չ սպիտակէն. կամ բաղդատութեամբ. որպէս կենդանին ի կենդանւոյ: - 14. Իննևտասներորդ՝ *զի* թէ չարն է յաստուծոյ, այլ արդ է՝ ըստ իւրեան չար, և է ըստ պատահման: - 15. Եւ ա՛րդ՝ ցուցաւ *զի* պատահումն ո՛չ է ի յաստուած: - 15. Իսկ թէ ըստ իւրեան է չարն յաստուծոյ, նա ո՛չ լինէր բարին յաստուծոյ. *զի* ըստ իւրեան՝ հարկաւոր է և գոյացական և անփոփոխ: - 15. Քսաներորդ՝ *զի* ի հարկէ բարի է աստուած. որպէս ի հարկէ էա՛կ է. այլ արդ՝ հարկաւոր բարին է միշտ բարի և գոյացական բարի և զուտ բարի: - 15. Եւ *զի* ի հարկէ ունի զգոլն բարի՝ անկար է ո՛չ գոլ բարի: - 15. Եւ *զի* միշտ է բարի՝ անկա՛ր է լինիլ ո՛չ բարի: - 15. Եւ *զի* գոյացական է բարի, անկա՛ր է լինիլ պատահական չար: - 15. Եւ *զի* զո՛ւտ և իսկապէս է բարի՝ անկար է խառնիլ չար: - 15. Դարձեալ ասեմք թէ՝ աստուած ո՛չ է պատճառ. ստեղծուածոցս ի հարկէ. այլ ըստ կամաց որով առնէ. *զի* ոմանք դիպին ի հարկէ, և ոմանք ո՛չ ի հարկէ: - 15. Ասեմք առ այս թէ գիտելի է՝ *զի* ա՛յլ է տեսութիւնն աստուծոյ՝ և այլ է տեսութիւն մարդոյ: - 15. *Զի* ի տեսութիւնն աստուծոյ ո՛չ է առաջին և վերջին. այլ բոլորն համանգամայն և կատարեալ: - 15. Իսկ ի տեսութիւն մարդոյ է՛ առաջին և վերջին. *զի* զանցեալսն տեսանէ յիշմամբ, և զներկայն իմացմամբ. և զհանդերձեալսն ի պատճառն իւր ըստ ժամանակին փոփոխման որպէս ասացաք: - 15. Դարձեալ ասեմք՝ թէ կամքն աստուծոյ ո՛չ է ընդունայն. *զի* զոր ինչ կա մի առնէ. այլ կամեցաւ և արար զմեզ անձնիշխան և տէր գործոց մերոց. եթէ չար՝ և եթէ բարի: - 16. Ասեմ զառաջինն եթէ՝ չար ո՛չ է յաստուծոյ. *զի* աստուած բարի՛ է բնութեամբ. և ի բարւոյն չար ո՛չ գայ յառաջ. որպէս ո՛չ ի լուսոյն խաւար: - 16. Այլ և ո՛չ ի բնութենէ. *զի* բնութիւնք ամենայն հրեշտակաց կամ մարդկան բարի՛ են ի բարւոյն յառաջ եկեալ. այլ չարն է՛ յանձնիշխան կամաց եկամուտ ի բնութիւնս: - 16. Այլ և ո՛չ ի բնութեան. *զի* ո՛չ է չարն ի բնութեան ուրուք. այլ արտաքոյ բնութեան պատահեալ: - 16. Հինգերորդ, ասեն թէ՝ գործունեայք չարին են յաստուծոյ որպէս կամքն. ապա և չարն է յաստուծոյ. *զի* նա՛ ստեղծ զկամքն: - 16. Եւ զի ոչ է այս հարկ. *զի* գոլով նոյն՝ ճանաչեմք զայլսն: - 17. Դարձեալ ասեմք թէ՝ որպէս մեք ունիմք կրկին ճանաչումն իրաց, այսինքն *զի* զոմն ճանաչեմք ի յատուկ տեսակն իւր. և զոմն այլով տեսակաւ: - 17. Նմանապէս և աստուած միակ միջնորդութեամբ ճանաչէ զբարին ըստ իւրեան ի յատուկ տեսակն իւր. և ճանաչէ զչարն կրկին միջոցաւ. այսինքն *զի* է՛ հակակայ բարւոյն. և է՛ պակասութիւն նմին որպէս ասացաւ: - 17. *Զի* նախախնամութեամբ բազում բարիս յառաջած է ի չարէ. որպէս սատանայի թոյլ տայ, *զի* փորձեսցին բարիքն և յաւելցին պսկքն: - 17. Նաև մարդկան չարեաց թոյլ տալ. *զի* կամ ընտրեսցեն զբարիս՝ կամ յետոյ զղջասցին. և այլ պէսպէս նախախնամութեամբ որպէս ինքն գիտէ աստուած՝ ներէ՛ չարեաց. որպէս տեսանելոց եմք յառաջիկայսդ: -17. Դարձեալ ասեմք թէ՝

ո՛չ է բարի առանց աստուծոյ կամացն. և ո՛չ չար առանց թոյլ տալոյ նորա. ա՛յն է որ ասէ՝ տերև ո՛չ անկանի, և մազ մի ի գլխոյ. *զի* ո՛չինչ կարեմք առնել առանց կամաց՝ կամ առանց գիտութեան՝ կամ առանց թոյլ տալոյն աստուծոյ: - 18. Իսկ չար փոխանակ բարւոյ ո՛չ առնէ ըստ որում անիրաւութիւնէ. այլ առնէ երբեք ըստ որում նախախնամութիւնէ. *զի* ի չարէն լինիցի բարի. թէպէտ մեզ չար երևի, այլ այս ևս բարի է. որպէս հիւանդութիւն. փորձութիւն. և այլն: - 18. Ապա յիմա՛ր են այնոքիկ որք ասեն՝ կամիմ առնել զիաճոյսն իմ. *զի* թէ յընտրելո՛ցն եմ՝ փրկցյց. և եթէ ո՛չ՝ դատապարտեցայց: - 18. Դարձեալ, ասեմք եթէ՝ առնէ՛ աստուած զոմն խոհեմ և զոմն տգէտ, *զի* նա՛ ի նմանէ՛ ուսցի: - 19. Դարձեալ ասեմք թէ՝ ըստ ինքեան սոքա ոչ են չար. այլ բարի. որպէս տգէտն ի մեղաց. և բարկութիւնն ընդդէմ չարեաց. և ցանկացողն բարեաց. *զի* ըստ բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն: - 19. Այլ արդ՝ եդ աստուած զսոսա բնական որակութիւնս ի մասունս հոգւոյն. եդ և զանձնիշխան կամքն տէր և իշխան իներքս ի հոգին. *զի* կառավարէ և առաջնորդէ՛ հոգւոյն. զվատ որակն ի բարին ուղղել, և զբարին ի նոյնն պահել և առաւելուլ. *զի* այս է գործ անձնիշխանին: - 19. Ա՛յսպէս առնէ զչարս և զմեղաւորս, *զի* ի ձեռն բարեաց օգտեսցին և ի լաւութիւն գայցեն: - 19-20. Իսկ «զեսաւն ատել և զյակոբ սիրելն» է՛ որպէս ցուցաւ ի վերոյ. *զի* զընտիրսն սիրէ և զխոտանսն անարգէ՛ նախատես ճանաչմամբն: - 20. Այլ *զի* արեգակն անբանապէս տայ զլոյսն. իսկ աստուած բանիւ և իմացմամբ ընտրէ զարժանիսն և փրկէ. որպէս մարդիկ զընտրելիս ընտրեն, և ոչ զխոտելիս: - 20. Նախ՝ *զի* ընդունայն լինէին խոստմունքն. բարեացն վարձս և չարեացն պատիժս: - 20. Երրորդ՝ *զի* աստուած լինէր պատճառ չարեաց մերոց: - 20. Հինգերորդ՝ *զի* խափանեալ լինէր անձնիշխանութիւնն մեր. որ ունի զինքն առ երկոսեան կողմն: - 20. Վեցերորդ՝ *զի* ո՛չ բարէգործքն լինէին գովելի, և ո՛չ չարքն պարսաւելի: - 20. Տասներորդ՝ *զի* սուտ լինէին ամենայն օրէնք բնական՝ գրական և աւետարանական. *զի* սոքա ամենքն խրատեն զմեզ խոտորիլ ի չարէ՝ և առնել զբարի. և այլն ամենայն: - 20. Նախ՝ երկեակն ո՛չ կարէ սկիզբն լինիլ. *զի* ի թիւս՝ երկեակն ի միակէն բաղկանայ: - 20. Այլ համանգամայն ո՛չ կարեն լինիլ. *զի* բ հակառակք ի միասին ոչ կարեն լինիլ: - 21. Իսկ թէ հաղորդին, ո՛չ կարէ լինիլ չար. *զի* չարն բարւոյն պակասութիւնէ. և սոյնպէս մի է սկիզբն: - 21. Եւ եթէ կայանան ըստ ինքեանց, ո՛չ ոքն է չար. *զի* կայանալն ըստ ինքեան բարի՛ է: - 21. Արդ՝ բարի և չար ո՛չ են հակակայք որպէս առինչք. *զի* առինչքն համանգամա՛յն են. և ի միմեանց բաղկանան. իսկ բարին և չարն ո՛չ են համանգամայն. և չարն ի բարւոյն ո՛չ գոյանայ. և ո՛չ բարին ի չարէն: - 21. Եւ ո՛չ որպէս ներհականք. որպէս ջերմ և ցուրտ. սպիտակ և սեաւ. *զի* սոքա որակութիւնք են. իսկ բարին էութիւն է, և չարն ո՛չ է էութիւն: - 21. Այլ թըւի որպէս ունակութիւն և պակասութիւն. *զի* բարին ունակութիւն է, և չարն պակասութիւն նմին. որպէս կուրութիւն երեսաց՝ և խաւար լուսո՛յ է պակասութիւն: - 21. Այլ և այսու որոշեսցին. *զի* յունակութենէ պակասութիւն լինի. այլ ի պակասութենէ ունակութիւն ո՛չ երբեք: - 21. Ասեմք առ այս եթէ՝ ջերմն ապականէ զցուրտ՝ և ինքն մնայ ի յենթակայն. *զի* էութիւն է և որակ: - 22. Իսկ չարն ոչ մնայ. *զի* չարն ոչ է էութիւն. այլ պակասութիւն: - 22. Չարն ո՞րպէս է ոչ է. *զի* ահա՛ ներհականա՛յ բարւոյն. որպէս առաքինութիւն և չարութիւն: - 22. Ասեմք զառաջինն թէ ո՛չէ է չար. *զի* ապականիչ և կորուսիչ է որպէս ցուցաւ. ա՛րդ՝ ընդ ապականել զայլսն՝ ապականէ և զինքն. և ո՛չ մնայ ի յէութեան: - 22. *Զի* է՛ ինչ որէ է՛ և բարի. որպէս ամենայն էութիւնք: - 22. Այլ և ո՛չ յէից է չարն. *զի* ամենայն որ է է՝ բարի՛ է և անդրադարձեալ ևս...: - 22. Այլ և ո՛չ սկիզբն է էից. *զի* ի չարէն բարի ո՛չ լիցի: - 22. *Զի* ի նըւազիլ ողջութեան՝ հիւանդութիւնն երևի. և ի նըւազիլ մարմնոյ՝ ապականութիւնն պատահի: - 22. Եւ ծանիր զայս, *զի* որքան նըւազի ողջութիւնն՝ առաւելու հիւանդութիւնն. և որչափ նըւազի մարմին՝ առաւելու ապականութիւն. այլ յամենևին նըւազիլ ողջութեան՝ և հիւանդութիւնն կորընչի: - 22. Եւ յամենևին նըւազիլ կենաց՝ և մահն կորընչի. *զի* յէութեան ունի զգոյլն ներհակապէս: - 22. Այսպէս և բարին՝ է՛ որ պարզ և միեղէն բարի է. որպէս աստուած. *զի* անփոփոխ և միշտ բարի է. *զի* էութեամբ բարի է. և բարին էութիւն է աստուծոյ: - 22. Եւ է՛ որ խառն բարի է. որպէս առ մեզ պատահեալ բարիս որ ունակութիւն է. *զի* ա՛յլ է էութիւն մեր, և ա՛յլ է բարի յէութեան մերում: - 22-23. *Զի* փոփոխական է հոգիս մեր. երբեմն բարի և երբեմն չար: - 23. Այլ այս զանազանի. *զի* բարին բնական ունակութիւն է մեզ. *զի* ի բարին եմք գոյացեալ: - 23. Եւ որպէս լոյսն միշտ լոյս է, թէպէտ պակասեցաւ ի յօդոյն. ուստի յայտ է՝ *զի* դարձեալ լուսաւորէ: - 23. Նոյնպէս և բարին միշտ բարի է. թէպէտ ի հոգւոյն պակասեցաւ, դեռևս ի յէութեան է. *զի* է է բարին. և էութիւն ո՛չ կորնչի: - 23. Իսկ չարն կորեաւ յորժամ բարձաւ ի հոգւոյն. *զի* չարն ո՛չ է է՝ և ո՛չ գոյ: - 23. Ապա ուրեմն յա՛յտ է *զի* բարին ըստ ենթակային և ըստ ինքեան՝ էութիւն է: - 23. Իսկ չարն ըստ ենթակային էանայ և երևի, և ըստ ինքեան ոչընչանայ և ապականի. *զի* ո՛չ է է. և ո՛չ գոյ: - 23. Նախ՝ *զի* ո՛չ էն փափագի և ցանկայի է լինիլ և գոյ: - 23. *Զի* գերազանց է անպատճառ և անսահման գոյլն աստուծոյ՝ քան այլոց: - 24. Երկրորդ՝ *զի* աստուած անսահման է՝ և սահմանէ՛ զմեզ. անսկիզբն է՞ և սկզբնաւորէ զմեզ. և պատճառ և այլն ամենայն:

- 24. Որ զամենայն մարդիկ կամի *զի* կեցցեն: - 24. *Զի* ամենայն իր որ դիւրաւ գտանի՝ դիւրաւ արհամարհի: - 24. Վասն այն կամեցաւ աստուած *զի* ի տեսանելն զնա՝ անի բաց դնելի սիրով միացուք ընդ նմա: - 24. Զորօրինակ ո՛չ է անզգուշագոյն յառել ի բոլորակս արեգական՝ *զի* շտնու և ի սակաւուն զոր ունի. ըստ այսմ խընայեաց աստուած ի յազինս մարդկային, զի մի՛ կրիցեմք զկիրս զանկելոյ արուսեկին. որ ո՛չ կարացեալ տանիլ մեծութեան փառացն՝ զրկեցաւ և ի չափաւորէն: - 24. Երրորդ՝ *զի* կամեցաւ աստուած ո՛չ միայն ողորմութեամբ՝ այլև ըստ արդարութեան, վարձս նահատակութեան տացէ ըստ գործոցն համբերութեան: - 25. Չորրորդ՝ *զի* որք կապեալ եմք ի մարմնի՝ անհնա՛ր է անմարմնապէս տեսանել զնա: - 25. *Զի* կամ լսիցեն ի նախնեացն թէ ի սկզբանէ՛ արար աստուած զերկինս և զերկիր: - 25. Այս է *զի* ի լուր պատմութեանց նախնեացն՝ կամ ի կարգէ՛ իրաց՝ կամ ի տեսս զգալեաց՝ ի ծանօթս գամք աստուծոյն ճշմարտի. յորմէ հաւատն լուսափայլեսցի: - 25. Նախ ի պատճառէ, *զի* ամենայն պատճառելեաց խնդրի պատճառս. և այնպէս պատճառի միւս պատճառ. և այսպէս բացաքայլութեամբ յանհունս ո՛չ է գիտութիւն: - 25. Երկրորդ ի սկզբանէ, *զի* իր ինչ ինքն ինքեան սկիզբն և սկսեալ անկար է գոլ. ուստի հա՛րկ է ամենայն սկզբնաւորաց գոլ սկիզբն: - 25. Երրորդ՝ ի միակէ, *զի* ամենայն բազմութիւն է ի միակէ՛. որպէս տեսակն յանհատէ. և գիծն ի կիտէ. և բազում թիւ է՛ ի միոյն: - 25. *Զի* ո՛չ նա այսմ և ո՛չ սա այնմ կարէ միակ գոլ. վասն որոյ հա՛րկ է գոլ այնպիսի միակ՝ որ և ամենայն բազմութեան և միակաց է՛ միակ. որ է աստուած: - 26. Երրորդ՝ զփոփոխումն ի խորհրդոց և կամաց մարդկան. *զի* բազում ինչ խորհիմք և կամիմք և ո՛չ կատարի: - 26. Չորրորդ՝ զայլայլումն լուսաւորացդ. այսինքն *զի* երբեմն խաւարին, որպէս առ խաչելութեամբն. և երբեմն յետս դառնան և կանգնին, որպէս յեսու և առ եզեկիա: - 26. Եւ *զի* ո՛չ ընկալան զարեգակն արդարութեան զքրիստոս, անկան ի լուսոյ ի խաւարն: - 27. Դարձեալ գիտելի է, *զի* **դ** է ծնունդ: - 29. *Զի* հայր գործէ՛, և որդին նմին նման: - 29. Հինգերորդ՝ օրինակ ծննդեան և բղխման. և *զի* **զ** եղանակաւ է ծնունդ երկրի: - 30. Երրորդ՝ *Զի* ճշմարիտ աստուած է քրիստոս ի գլխով: - 30. Ութևտասներորդ՝ *Զի* մասունքն քրիստոսի աստուած է, ոտք և ձեռք և գլուխն: - 30. Երկրորդ՝ է՛ դարձուցանել զիմացումն ի հաւատալեացն, և յայնցանէ որ ածեն զմարդն առ հաւատալն. այնպիսին խաբեալ է. *զի* բնութեամբ է մարդոյ ո՛չ տեսանել զյետոյս իւր. և ո՛չ առանց աչաց հայելոյ: - 31. Չորրորդ՝ է՛ հեռաւորութիւն հաւատալեացն. *զի* որք ո՛չ կրթին ի գործ իմացման, բայց միայն ի զգայութեանց՝ հեռի՛ են ի հաւատալեացն որպէս երկիր յերկնէ: - 31. Հինգերորդ՝ է՛ ո՛չ խնդրել զօգնութիւնն աստուծոյ ի հաւատալն. զի հաւատն ո՛չ է բնական. *զի* ըստ այսմ միապէս լինէր ամենեցուն. այլ ի բարութէն աստուծոյ ծրի պարգևէ: - 32. Վեցերորդ՝ է՛ պատրուակ մեղացն. *զի* ոմանք չար գործով ի բաց մերժեն յինքեանց զլոյս արեգականն արդարութեան. զորոց ասէ յոբ...: - 32. Եօթներորդ՝ է՛ հպարտութիւնն. որ փքացումն է երեսաց մտացն և որոշէ՛ յաստուծոյ. *զի* «տէր ամբարտաւանից հակառակ կայ. տայ շնորհս խոնարհաց»: - 32. *Զի* որպէս սատանայ ամբարտաւանութեամբն ընդդէմ աստուծոյ՝ զրկեցաւ ի լուսոյն, նոյնպէս և հպարտն զրկեցաւ ի շնորհացն ըստ երեմիայ: - 32. *Զի* որպէս գիջակնութիւնն չտայ թոյլ տեսանել յստակ, այսպէս երկիւղն յետս քարշէ զբազումս ո՛չ հաւատալ ի քրիստոս որպէս ասէ յօհաննէս. «զայս ասացին ծնօղքն կուրին՝ *զի* երկնչէին ի հրէիցն խոստովան լինիլ զքրիստոս»: - 32. ***Զի*** **սէր ընչիցն է աչք ագահացն. և սէր հեշտութեանցն է՛ աչք հեշտասիրացն:** - 32. Իններորդ՝ *զի* նոցա բանականն է մոլորեալ. և ո՛չ ցասումն և ցանկութիւնն. յորոց վերայ բանն բռնադատէ խղճիւն, և ստիպէ զնոսա յուղղութիւն. այլ ինքն կառավարն խոհեմութիւնն մոլորեալ ո՛չ ուղղի: - 32. Վասն այն հերձուածօղքն ո՛չ դառնան, *զի* ո՛չ կարեն ճանաչել զստութիւնն իւրեանց: - 32. Տասներորդ՝ *զի* կամակո՛ր են ի չար շաւիղն. որոց բժշկութիւնն դժարին է ...: - 32-33. Մետասաներորդ՝ *զի* հայրենի՛ է եղեալ աւանդութիւնն, և սովորութիւնն ստացական բնութիւնն: - 33. Ուստի հեշտութիւն և աւանդութիւն յիրաւի խառնեալ ընդ միմեանս, և հակառակասիրութիւն և ինքնահաճութիւն յառաջ եկեալ, որով զինեալ պնդին ընդդէմ ուղղութեան. *զի* կարծեն զինքեանս ճշմարիտ գոլ քան զայլսն: - 33. *Զի* տրտմութեամբ մեղանչումն հիւանդութիւն է և գայթակղութիւն. և հիւանդն յառողջութիւն փութայ. և գայթակղեալն՝ ի ճանապարհ: - 33. Նա՛խ՝ *զի* ամենայն մեղք յանցումն է պատուիրանացն աստուծոյ: - 33. Երկրորդ՝ *զի* ամենայն մեղք զերկիւղն աստուծոյ սանձ ունի. որով և զղջանայ: - 33. Արդ՝ կռապաշտն և հերձուածօղն հաւասա՛ր են յամբարիշտ գոլն. *զի* որպէս շուն դառնայ ի փսխած իւր. այսինքն *զի* նա ո՛չ ունէր, և սա՛ ուրացաւ և դարձաւ անդրէն: - 33. Նախ՝ *զի* հեթանոսք անգիտութեամբ կուռս պաշտեցին: - 33. Երկրորդ՝ *զի* նոքա զղջումն ունին. և յա՛յտ է ի հեթանոսաց հաւատացելոց: - 33. Երրորդ՝ *զի* նոքա զաստուծոյ փառսն առաւելուին թէպէտ զճշմարիտն անգիտանային: - 33. Չորրորդ՝ *զի* նոքա իւրաքանչիւր անձանց էին կորուստ, և ի ժամանակս իւրեանց: - 33. Հինգերորդ՝ *զի* նոցա պատճառ երևի սատանայ մոլորութեամբն: - 33. Վեցերորդ՝ *զի* նոքա հեթանոսք միա՛յն էին մոլորեալ: - 34. Նա՛խ՝ *զի* գո՛րծ է նեռինն

ուրանալ զաստուած, որպէս իւր անունն յայտնէ. ա՛յսպէս և հերձուածողն ուրանայ զաստուածութիւն որդւոյ. կամ զհոգւոյն սրբոյ...: - 34. Մանաւանդ թէ՝ որպէս վասն նեռինն յառաջագոյն պատմեցաւ եկեղեցոյ՝ *զի* զգուշասցին: - 35. Որ է տարակուսանք այս, եթէ գոյր ումն մեծ քան զհայր՝ *զի* բռնադատեաց զնա՛: - 36. Առ որս ասելի է թէ՝ ո՛չ կամաւ, և ո՛չ յոչ կամայ. *զի* պատկեր և նկարագիր էութեանն հօր է որդի, ըստ առաքելոյ: - 36. *Զի* թէ կամաւ, կամա՛ցն ես որդի և ոչ հօր. թէ այդպէս է, բարձեր զպատճառն քո զհայր. բարձար և դու ի տեսակաց մարդկան: - 36. Իսկ թէ ոչ կամաւ. ո՛ է որ զնա բռնադատեաց. *զի* բնութիւնն ողջախո՛հ է. և յայտնէ զայս կուսութեամբ կեալն բազմաց: - 36. *Զի* թէ ոչ կամաւ, բռնադատեցաւ յայլ իմն հզօրէ՛. և հաներ յաստուածութենէն: - 36. *Զի* բռնադատեալն ոչ լինի աստուած. իսկ թէ կամաւ, կամացն եղեր արարած և ո՛չ աստուծոյ: - 36. ...*զի* եղեր ա՛յլ իմն զկամիլն և զկամքն: - 36. *Զի* թէ կամաւ, կամքն էր ապա յառաջ քան զէութիւնն. որ անհնար է և յեղեալքս: - 36. *Զի* թէ ասեն էր յառաջ քան զծնունդն որդի. իսկ էութիւնն հօր հայրութիւն է. և թէ ոչ էր որդւոյ հայր՝ բառնի յէութենէն իւրմէ, իսկ թէ ոչ էր և յետոյ ծնաւ՝ ո՞ւմ արդեօք իցէր հայր. *զի* ո՛չ էր որդի: - 36-37. *Զի* ասեմք թէ՝ որդի է ծնունդ հօր ի սկզբանն: - 37. *Զի* լուծումն է բանիդ յերկրուց դիմաց և հաստատող էութեանն հօր: - 37. Բայց հարցմունքս այս կարէ՛ ասիլ ի վերայ մեր. *զի* ասիմք՝ յէից եղեալ և յոչ էից: - 37. Եւ յոչ էից՝ *զի* սակաւ հիւթն այն՝ ո՛չ կայր միս և ոսկր և ջիլ. կամ մորթ: - 37. Դարձեալ՝ յէից, *զի* մեք ի տարերցս եմք: - 37. Եւ յոչ էից, *զի* տարերքն այնք յոչ էից եղեն: - 37. *Զի* թէ յումեքէ է, բարձեր զանսկզբնութիւն և զանծնելութիւն հօր: - 37. *Զի* թէ ի ժամանակի, ո՞ էր այն որ պարունակէր զժամանակս: - 37. Այլ այս չէ բաւական. *զի* զմի իրն ինքեան մերձ ասէ որ անհնա՛ր է: - 37. Թէ ոչ՝ *Զի* թէ մերձ էիր դու քեզ որպէս ոք առ ոք, բաժանեցար ընդ երկու. և զիա՞րդ մի իցես: - 37. *Զի* թէ պատասխանեմք թէ ո՛չ է հարկ թէ սկսեալն ամենայն իրօք և դադարեսցի. որպէս հրեշտակք և հոգիք մարդկան. *զի* են սկսեալք և ո՛չ դադարին. է՛ այս պատասխանի, այլ ո՛չ բաւական: - 37. ...այլ *զի* հրեշտակք և հոգիք ոչ դադարին, այս կամա՛ցն աստուծոյ է պահպանութիւն, և ոչ բնութեան նոցա. *զի* յո՛չ էից եղեալքն՝ կարեն յոչ էութիւն փոխիլ: - 37. Եւ նոյն ինքն հուրն է՛ օրինակ հօր. *զի* անհնա՛ր է լինել առանց լուսոյ և ջերմութեան. *զի* էութիւն են հրոյն: - 38. Դարձեալ առարկեն, եթէ աստուած է հայր՝ և անծին է բնութեամբ, և որդի ծնեալ է, ապա ուրեմն ո՛չ է որդի աստուած. *զի* ծնելութիւն և անծնելութիւն հակառա՛կ են միմեանց. որպէս սեաւ սպիտակի կամ լոյս խաւարի: - 38. Պատասխանեմք թէ՝ անծնելութիւնն և կամ ծնելութիւնն ո՛չ ասի միայն աստուածութիւն. *զի* աստուածութիւնն հաւասա՛ր է Երրորդութեանն: - 38. Եւ *զի* ո՛չ է անծնելութիւնն բնութիւն աստուծոյ՝ որպէս ասել թէ աստուած: - 38. Առաջին՝ *զի* թէ աստուած էր անծնելութիւնն, պա՛րտ էր ունել և անծնելութեանն ստեղծուած ինչ. - 38. Երկրորդ՝ *զի* անծնելութիւն և ծնելութիւն ըստ քո ասելոյդ եթէ բնութիւն իցէ՝ հակառակութիւն եդեր յաստուածութիւնն: - 38. Երրորդ՝ *զի* ունակութիւն և պակասութիւն եդեր ի մէջ աստուածութեանն: - 38. Չորրորդ՝ *զի* առաջին դրեր զպակասութիւնն, և ապա՛ զունակութիւնն. որ է՛ հակառակ ասացելոցն: - 38. Հինգերորդ՝ *զի* որ եդեր նախկին զպակասութիւնն, բարձեր զէութիւնն հօր և որդւոյ: - 38. Վեցերորդ՝ *զի* լինի զօրանալ պակասութեանն՝ և յաղթահարել զունակութիւնն: - 38. **Դարձեալ՝ *զի* յիմարութիւն և իմաստութիւն են ի նոյն և ի մի բնութիւն մարդոյն, և ո՛չ ասին հակառակ միմեանց. այլ միապէս ունի յիմարն զիմաստնոյն բնութիւն և զսահման:** - 38. Հինգերորդ առարկեն, թէ իցէ մի և նոյն բնութիւն հօր և որդւոյ, և որդի ծնեալ ի նոյն բնութենէ, կարէ՛ ասիլ և հօր ծնանիլ ի յորդւոյ ի նոյն բնութենէն. *զի* բնութիւնն մի է: - 38. Թէ բնութեանն է, ապա ասեն որդի ո՛չ ունի զնոյն բնութիւնն. *զի* բնութիւնն մի է աստուծոյ: - 39. Պատասխանեմք՝ թէ հայր ո՛չ բնութեանն է անուն՝ և ո՛չ արարչութեանն. այլ առանձնաւորութեանն. *զի* այնու յատկանայ յորդւոյ և ի հոգւոյ: - 39. Ով արիանոսք՝ *զի* թէ որպէս զմեզ զորդի շնորհօք ասէք և արարած, մեք *զի* եմք շնորհօք որդիք՝ ունիմք ընդ մեզ և ընդ հայր շաղկապ. իբր թէ զլար զհոգին սուրբ: - 39. Իսկ դուք *զի* ուրանայք զհոգին հաւասար գոլ հօր և որդւոյ, և կրտսե՛ր ասէք քան զորդի: - 39. Ո՞ ոք է ընդ մէջ որդւոյ և հօր շաղկապ՝ *զի* հրաւիրեսցէ զնա յորդէգրութիւն հօր. և զի ո՛չ ոք: - 39. *զի* ի միմեանց տանին, և ի միմեանց լնուն: - 39. Այս է մեկնութիւնն թէ՝ հաւասարն աստուծոյ՝ յափշտակութիւն և զրկումն չհամարէր իւր զծառայի կերպարանս առնուլ. *զի* ո՛չ ունէր յայլմէ կասկած խլելոյ զփառսն. *զի* ի՛ւրն է սեպհական: - 39. Թէպէտ մեկնեն և այլ ազգ, թէ որ զմարդկայինս բնութիւն հաւասարեցոյց փառաց իւրոց և հաղորդ արար աստուածութեանն, ոչ ինչ զրկումն համարեցաւ. *զի* բնութիւնն մի է: - 39-40. Դարձեալ քննեսցուք ըստ մեզ. *զի* ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ հայր մեծ է քան զորդի. *զի* երկոքին նոյն ինքն աստուածութեանն իմանին. ըստ այնմ որ զմեր նուաստ և տկար բնութիւնս միացոյց ընդ իւրում աստուածութեանն, և անտեսանելին տեսանիւր՝ և ծառայի կերպիւ շրջէր վասն տնօրէնութեան՝ ասի փոքր յայս միաւորութեանս քան զհայր. իսկ ըստ այնմ որ է՛ անճառ և նախքան զյաւիտեանս ծնունդ ի հօրէ՛, հաւասա՛ր է հօր և ոչ փոքր: - 40. *Զի* ո՛չ էր հայր մեծ քան զնա՝ ի յոր եղդնոյր. *զի* որք եղդնուն՝ ի մեծագոյնսն

քան զինքեանս երդնուն. ապա ուրեմն հաւասա՛րէ որդի հօր և ո՛չ փոքր որպէս ասէ առաքեալն: - 40. Եւ գիտեմք հաւաստի թէ որդի էր. *զի* հրեշտա՛կ անուանէ զնա գիրն. - 40. Իսկ *զի* ասէ՝ «առաքեցայ» ո՛չ թէ տեղւոջէ ի տեղի. որպէս մեք բովանդակեալքս ի մի տեղի. *զի* առաքիմք շարժմամբ ի միւսն: - 40. Այլ *զի* խոնարհեցաւ ի բարձրութենէ փառացն և ընդ նուաստ բնութեան մերում միաւորեցաւ. ա՛յս է որ առաքեալ ասի: - 40. Երրորդ՝ *զի* է՛ հնար առնուլ ի վերայ մարմնական իմաստութեանց՝ և արհեստից հանճարաց՝ և բնականին ներգործութեանց ի բնութիւն իրին յառաջ ածելով զէութիւնն. թէ ասեմք զիմաստութիւնս զայս ստեղծեալ նախկին. որ ասացաւ «ամենայն գործոց»: - 40. Ապա ուրեմն ծնունդն նախքան զամենայն բլուրս՝ էր ի սկզբանն ի բնութենէ հօր. իսկ ստեղծումն վասն մարմնալոյն. *զի* իւր է մարմինն: - 41. Տեսցուք և զգործն յաղագս որոյ օծաւ. այսինքն միացաւ մարդկութիւնն աստուածութեամբն. *զի* «գործք ձեռաց նորա արդարութիւնք և իրաւունք են» ասէ. այս՞ *զի* ճշմարիտ և անաչա՛ռ արար դատաստան. և իրաւա՛մբք զգերեալ բնութիւն մարդկան յազատութիւն դարձելոյց: - 41. Արդ ասի որդին ծնեալ և ստեղծեալ. *զի* ի ստեղծմանէն իմանի անփոփոխութիւն հորն. և ի ծննդենէն միութիւն բնութեանն հօր և որդւոյ: - 41. Առ որս ասեմք՝ թէ որդի ո՛չ ասի անդրանիկ վասն գոլոյն ի կարգէ ստեղծուածոց, *զի* ո՛չ ոք ստեղծուած՝ էառ զբնութիւն աստուծոյ որպէս որդին: - 41. Այլ ասի անդրանիկ՝ *զի* նա՛ էառ ի հօրէ զայն՝ որով ստեղծան ամենայնքն: - 41. *Զի* «ամենայն ինչ նովաւ եղև»: - 41. *Զի* որպէս առաջին նա՛ ծնաւ անսերմն ի կուսէ և ի հոգւոյն սրբոյ, այսպէս և մեք յետ նորա ի ձեռն հոգւոյն սրբոյ ծնանիմք ի կոյս աւազանէն: - 41. Դարձեալ անդրանիկ է ըստ շնորհաց հոգւոյն զոր ընկալաւ ո՛չ վասն կարօտութեան՝ *զի* լիապէս ունէր այլ *զի* գլուխ էր մեր՝ ընկալաւ՝ *զի* յանդամս իւր սփռեսցէ: - 41. Այլ զայս երկբայիս յաղագս ոչ գիտելոյ քոյ թէ «մինչդ» ամենուրէք ո՛չ որոշէ ընդդէմ հանդերձելոյն. *զի* թէպէտ նշանակէ՛ զկէտն ուր մինչն է եղեալ, այլ զոր ա՛նդր է քան զնա՝ ո՛չ ուրանայ: - 42. *Զի* **բ** թագաւորութիւն լուաք ի գրոց. **ա** ըստ արարչութեան, և **բ** ըստ տնտեսութեան: - 42. Այժմ արարչութեամբ ամէնի տիրէ՛ կամողաց և ոչ կամողաց. *զի* աստուած է: - 42. Իսկ հնազանդիլն որդւոյ հօր, ո՛չ թէ այժմ անհնազանդ է վասն հակառակութեան. *զի* այս աւազակա՛ցն է. և անհնա՛ր է ասել զմի և զնոյն էութիւնն ինքն ինքեան հնազանդ և անհնազանդ ըստ այնմ որ բան է. այսինքն զպարզ աստուածութիւնն: - 42. Այլ *զի* մեք թողեալք և անտես եղեալք յաստուծոյ վասն յանցանացն, զդէմս մեր տպաւորէ՛ յինքեան. բնութենակից գոլով մեր և գլուխ անդամոցս: - 42. Առաջին պատճառն, *զի* յինչիրս և մերձենայր չարչարանօքն՝ ծախէ՛ր զչարչարանքն իմ: - 42. *Զի* չարչարանքն այսպէս ստուգաբանի, նախագործեցեալ չարին չար հատուցմունք: - 42. Երկրորդ՝ *զի* գործով կատարեսցէ զհնազանդութիւնն փորձիւ չարչարանացն: - 43. Երրորդ՝ ի խրատ մեզ. *զի* որպէս չարչարանօքն ազատութիւն արար մարդկային բնութեանս, այսպէս ամէն ոք չարչարանօք իւրովք ազատեսցի ի պատժոց ներգործական մեղացն: - 43. Չորրորդ՝ *զի* չարչարանօքն իւրովք փորձեսցէ՛ զհնազանդութիւնս մեր. այսինքն զկսկիծ և զծանրութիւն չարչարանաց մերոց. որպէս թէ ունիցի գիտել իւրովք զմերս և ողորմիլ մեզ: - 43. Հինգերորդ՝ *զի* չա՛փ եդ զորքանութիւն չարչարանացն իւրոց հետևողացն...: - 43. Վեցերորդ՝ *զի* պահանջէ՛ ի սիրողաց իւրոց միշտ զայն խորհիլ. *զի* որպէս ինքն վասն սիրոյ զանձն իւր եդ ի վերայ մեր, և մեք վասն սիրոյ նորա փոխարէն դիցուք ի վերայ նորա: - 43. Եօթներորդ՝ *զի* չարչարանօքն իւրովք յուսադրեաց զմեզ, զի մի՛ յետ տկարութեանս և սակաւ չարչարանաց ի փորձողէն՝ կասեսցուք ի նահատակութեանց. այլ օրինակ դիցուք զչարչարիլն նորա մեզ և համբերեսցուք որպէս ասէ: - 43. «*Զի* թէ լոյսն վասն զգեստուն հալածեցաւ ի խաւարէն, խաւարն ո՞րչափ ևս». *զի* մեծ է նմա հալածիլն՝ քան թէ մեր վերջանալն թշուառութեամբ: - 43. Իսկ ուր ուրէք *զի* զգեստ անուանի մարմինն յաղագս **բ** իմն պատճառաց: - 43. Նախ՝ *զի* որպէս զգեստիւն ծածկի մարմինն, այսպէս տէրն զաստուածութիւնն իւր ամփոփեաց մարմնովն անհաս լինիլ ի փորձողէն...: - 43. Երկրորդ՝ *զի* որպէս ամէն ոք իւր զգեստիւն ճանաչի, այսպէս և քրիստոս մարմնով երևեալ յայտնեցաւ աշխարհի: - 43. Ութերորդ՝ *զի* որ զփորձ էառ չարչարանացն՝ օգնեսցէ որք ի չարչարանս իցեն: - 43. Բայց է և այլ իմն տեսութիւն խորին և գեղեցիկ. *զի* նա՛ վասն սրբութեան չարչարեցաւ. և որ ոք ևս չարչարեսցի վասն սրբութեան՝ մի և նոյն է դիտաւորութիւն երկուցն. յայնժամ օգնեսցէ նմա. այսինքն միաւորեսցի ընդ նա՛ սրբութեամբն, և եղիցի աստուած ամենայն յամենայնի. այսինքն կատարեսցէ զնա աստուածս առնելովն. և եղիցին աստուածք ամենքն: - 43. Իսկ *զի* ասէ «հայր իմ և հայր ձեր, աստուած իմ և աստուած ձեր»: - 43. *Զի* նմա՛ բնութեամբ է հայր, և մեզ ըստ շնորհաց: - 43. Նախ՝ *զի* բազումք են երթևեկքն: - 44. Երկրորդ՝ *զի* բարձրաբերձ է տեղեօք: - 44. *Զի* թէ մարմնապէս տեսանես. ուրախութեան էր ժամանակն գալստեան և ո՛չ սգոյ որ է պահք և ապաշխարանքն: - 44. Եւ թէ բան իմանաս՝ և ոչ պահքն պատշաճ էր սրբեցելոցն բանիւն. ըստ այնմ՝ «դուք սուրբ էք վասն բանին զոր խօսեցայ ընդ ձեզ». *զի* պահքն զոչ սուրբն սրբէ. իսկ նոքա *զի* սուրբք էին ոչ պատշաճ պահքն. վասն այն ո՛չ կարէին: - 44. ***Զի* երկուս այս հարկաւոր**

**է, բժշկելոցն հաւատ, և բժշկին զորութիւն**: - 44. Եւ ո՛չ կարողանայ մինն առանց միւսոյն *զի* լծակիցք են: - 44. Թուի թէ և այս յոչ պատշաճէն ասի *զի* վնասեալք էին հաւատովք՝ ո՛չ էր պատշաճ անել նոցա նշանս: - 44. *Զի* միշտ է է, ո՛չ ոչ էանայ. և միշտ բարի և լոյս է, ո՛չ չարանայ և խաւարի: - 44. Եւ այս ոչ էութիւն և չարութիւն՝ առ մեզ կարէ՛ երևիլ, *զի* մասա՛մբ ունիմք զկարողութիւն և ո՛չ կատարեալ: - 44. Եւ թէ լինէր՝ գոյր և ի բնութենէ օտար. հետևէր ապա ոչ գոլ որդի հօր. թէ ոչ էր ի նոյն բնութենէն. ապա և ոչ հայր. *զի* հայր որդւո՛վն է հայր: - 44. Նմին իրի թէ ոչ հայր և ոչ որդի *զի* որդի հօրն է որդի՝ ըստ այսմ ապա ո՛չ էանայ աստուածութիւնն որ անկար է, որպէս ասացաք: - 45. Ապա ուրեմն ոչ առնէ յանձնէ և որդի, *զի* անհնար է բառնիլ աստուածութեանն: - 45. Առաջին միտք՝ *զի* ասաց թէ «հայր գործէ՛ և ես գործեմ». և վասն այնր զչարացան հրէայքն, այժմ իբր թէ զնուաստագոյնս ճառէ ի զիջումն բորբոքման նոցա: - 45. Եւ ոչինչ են՝ *զի* պակասութիւնք են բարւոյն. «առանց նորա եղև և ոչ ինչ»: - 45. Չորրորդ՝ այսու առաւել զմիականութիւն ցուցանէ. զի մի՛ է կամք իւր և հօրն. վասն այն ո՛չ կարէ առանց հօր. *զի* ո՛չ է որդւոյ այլ կամք *զի* զոր ինչ կամեսցի բաց ի հօրէ արասցէ: - 45. Հինգերորդ՝ *զի* զօրութիւն՝ կարողութիւն՝ ուստի առնելն է՝ և աստուածութիւն՝ տէրութիւն՝ իշխանութիւն և այլք այսպիսիք՝ ո՛չ են առանձին անձնաւորութեանց. այլ հասարա՛կ են. և ո՛չ մին առաւել քան զմի. վասն այն ո՛չ կարէ որդի առնել ինչ յանձնէ իւրմէ թարց հօր որպէս ասացաք: - 45. Տե՛ս՝ *զի* ի մի բնութիւն օտարութիւն ո՛չ ասի. վասն այն է աստուծոյ կամքն մի և ներգործութիւնքն մի. *զի* բնութիւնն մի է: - 45. Տարակուսելի է առ այս, *զի* թէ հա՛րկ է որոց բնութիւնքն մի գոլ՝ նոցա և կամքն և ներգործութիւնն մի լինիլ. ընդէ՞ր ապա *զի* մարդկային բնութիւնս մի է և նոյն հօրն և որդւոյն՝ և ո՛չ է կամքն և գործքն մի: - 45. Եւ պատաճառն է այս. *զի* թէպէտ մի է բնութիւն ծնողաց և ծնիցելոց, բայց ոչ ունին զմի կամս. *զի* հատեալ բաժանեցաւ որդին ի հօրէն: - 45. Եւ թէ էր այսպէս՝ հետևէր ապա հօր *զի* արարեալ իցէ ա՛յլ աշխարհ. և հանդերձեալ. և շրջեալ յաշխարհի. սրբեալ զախտաժէտս. մեռեալս յարուցեալ. և ի վերայ ծովու գնացեալ: - 45. *Զի* հաստատեալ եմք «եղեալ զյաւիտեանս բանիւն աստուծոյ»: - 45. Եւ զնոյն բանն աստուած մարմնացեալ. և շրջեալ ի վերայ երկրի. *զի* յայնմ օրինակին արար և որդի պիտոյ էր լինիլ և չորս աշխարհք: - 45-46. Եւ թէ արար հայր առանց որդւոյ, անիմա՛ստ արար. *զի* որդի է իմաստութիւն հօր ըստ առաքելոյ. և կամ այլ իմն իմաստութեամբ որ է՛ սուտ ամենևին: - 46. *Զի* մի՛ է կամք որդւոյ և հօր: - 46. Թուի թէ նուազ է քան զհայր. *զի* ոչ ունէր և տւաւ: - 46. Ասեմք զայս ըստ մարդկութեանն. *զի* ո՛չ ունէր բնութիւնս մեր. այլ յորժամ միացաւ ընդ բանին և եղև որպէս առօղն և առեալն իշխան և տէր ամենեցուն: - 46. *Զի* որպէս ունի զէութիւնն ի գոյութենէ հօր, այսպէս և զիշխանութիւնն յիշխանութենէ հօր. ըստ այսմ և զայլն իմասցիս զառնուլն: - 46. Եւ թէ ըստ մարդկութեանն իմանաս, մի՛ կարծիցես պարգև և շնորհ զտալս զայս. *զի* այն նեստորին է: - 46. Այլ որպէս բանին սեպհական է և բնութեամբ և ո՛չ ստացմամբ, այսպէս իմացիր և մարմնոյն վասն անճառ միաւորութեան բանին *զի* իւր է մարմինն. վասն այն ոչ ինչ բանին է՝ ասի մարմնոյն: - 46. Ո՛չ ցուցանէ այս **բ** կամք հակառակ միմեանց. *զի* առողին է բանս և ո՛չ առեցելոյն. այսինքն բանին՝ և ո՛չ մարդկութեանն: - 46. Այլ այս առաւել զմիականութիւնն ընդ հօր և որդւոյ ցուցանէ. *զի* ասէ՝ ո՛չ իմ կամք այլ որիշ *զի* առնեմ, այլ զա՛յդ կամքդ առնեմ *զի* հասարա՛կ է: - 46. *Զի* ոչս այս բացբարձակա՛ն է. որպէս թէ ո՛չ չափով տայ աստուած զհոգին որդւոյ. այսինքն է՝ *զի* ոչ տայ և ո՛չ չափէ: - 46. Այսպէս և այժմ ասէ՝ «ո՛չ զկամս իմ արարից». որպէս թէ ո՛չ է իմ այլ կամք *զի* արարից. այլ նոյն հօր կամքն է և իմ կամք: - 46. Եւ *զի* է՛ որդի, ապա ուրեմն և է՛ ճշմարիտ աստուած և թագաւոր թագաւորաց և այլն ըստ առաքելոյն: - 47. Այս յայտնի է *զի* որդի էր որ յերկրի մարմին զգեցաւ: - 47. Ըստ քում բանիդ աստ հօ՛ր տաս զաստուածութիւնն և բառնաս յորդւոյ. և ի մարգարէն՝ որդւոյ ասես զաստուածութիւնն և բառնաս ի հօրէ, ապա հա՛րկ է քեզ լինիլ անաստուած. *զի* միովն միւսոյն յաղթութիւն տաս: - 47. Այլ ա՛յս է լուծումն, *զի* յորժամ լսես թէ մի է աստուած, զընդ աստուած ասելոյն՝ զերրորդութիւնն իմացիր. *զի* ո՛չ է առանձին, այլ հասարա՛կ է աստուածութիւնն: - 47. Եւ դարձեալ՝ *զի* այժմ ասէ զհայր ճշմարիտ աստուած, և զոր առաքեցեր, ևն շաղկա՛պ է. ցուցանէ՛ շաղկապ գրովն և զիւր աստուածութիւնն ընդ հօր: - 47. Զհայրն՝ *զի* ասէ՝ «ճշմարիտ աստուած»: - 47. Զհոգին *զի* ասէ՝ «և զոր առաքեցեր»: - 47. Եւ դու ընդ է՛ր ասես լինել ինձ ըստ մարդկան երկրորդաբար բարի. *զի* աստուածութեամբս եմ ընդ հօր ծայրագոյն բարի: - 47. Եկն առ յիսուս ասելով՝ «վարդապետ բարի». *զի* լսիցէ՝ աշակերտ բարի: - 47. Իսկ *զի* բարեխօսել լսեմք հոգւոյ և որդւոյ: - 48. Այլ ա՛յս է հոգւոյն բարեխօսելն, *զի* յորժամ կամք յաղօթս՝ ո՛չ գիտեմք զպատշաճն խնդրել. ապա հոգին անմռունչ տայ մեզ իմաստ զպատշաճն աղօթել: - 48. *Զի* նա գլուխ է մեր՝ և մեք անդամք. յորժամ տեսանէ զմեզ ի մեղս՝ հոգա՛յ և ցաւի վասն մեր: - 48. *Զի* մեք որ ի նեղութիւնս և ի փորձութիւնս ժուժկալեմք աղաչանօք. իսկ մեր մաղթանքն նմա՛ վերաբերի: - 48. *Զի* յորդորելն նորա՛ է, որպէս հոգւոյն ասացաք: - 48. Ոչ թէ անգիտանայ՝ քաւ լիցի. *զի* զամենայն որ լինելոցն էր ի կատարածին՝ ասաց. զիա՞րդ

զժամն անգիտանայ: - 48. Այլ ա՛յս է, *Զի* ճանաչէ՛ իբրև զաստուած. այլ իբրև զմարդ անգիտնայ. *զի* բացարձա՛կ է որդւոյն անունն. այսինքն անորոշակի. *զի* որոյ և տացես թէ բանին և թէ մարմնոյն՝ կարէ՛ ասիլ: - 48. Անանուն անուանելի է աստուած. *զի* անունն սահմա՛ն է. և սահմանն յայտնիչ բնութեանն: - 49. Իսկ *զի* Որդի ասեմք: - 49. Նախ՝ *զի* է ի բնութենէ հօր: - 49. Երկրորդ՝ *զի* ի նմանէ է՛ անմայր: - 49. Երրորդ՝ *զի* միածին է. *զի* զայլ ոք ո՛չ ծնանի: - 49. Չորրորդ՝ *զի* անորոշելի է ի հօրէ որպէս բան ի մտաց: - 49. Իսկ *զի* Բան անուանի: - 49. Նախ՝ *զի* բանն մտա՛ցն է ծնունդ: - 49. Երկրորդ՝ *զի* անախտ ծնանի: - 49. Երրորդ՝ *զի* միաւորեալ է ի միտն: - 49. Չորրորդ՝ *զի* պատմօղ է մտացն: - 49. Հինգերորդ՝ *զի* բանն է սահման. և որպէս յայտնիչ է սահմանն սահմանելոյն, այսպէս և որդի սահմանէ՛ զէութիւն հօր...: - 49. Վեցերորդ՝ *զի* սահմանէ՛ զորքանութիւն հօր: - 49. Եօթներորդ՝ *զի* թէ և լռեալ է բանն և ոչ արտաբերեալ, բա՛ն է մտացն: - 49. Տասներորդ՝ *զի* որպէս բանն թարգման և պատմօղ է մտացն, այսպէս և որդի հօր: - 49. Իսկ *զի* Հովիւ անուանի: - 49. Նախ՝ *զի* հովիւն ի դալար վայրի բնակեցուցանէ. այսինքն ի վայրենացեալ գրոց սրբոց գիտութիւնն: - 49. Երկրորդ՝ *զի* ի ջուրն հանգստեան սնուցանէ. այսինքն է աւազանին մկրտութեամբն ի հոգի սուրբ: - 49. Երրորդ՝ *զի* առաջի ոչխարացն երթայ: - 49. Չորրորդ՝ *զի* ընդ գազանսն պատերազմի: - 49. Հինգերորդ՝ *զի* զմոլորեալն դարձուցանէ: - 49. *Զի* քրիստոս Քահանա՛յ է ըստ կարգին մելքիսեդեկի ժ կերպիւ: - 50. Նախ՝ *զի* մելքի թագաւոր լսի: - 50. *Զի* արդարութիւն արար քրիստոս բնութեանս մերոյ գերեալ ի սատանայէ՛: - 50. Երրորդ՝ *զի* թագաւոր էր սաղիմայ. որ է՛ խաղաղութեան: - 50. Չորրորդ՝ *զի* անհայր: - 50. Ութերորդ՝ *զի* հաց և բաժակ պատարագէր: - 50. Իններորդ՝ *զի* անփոխանո՛րդ էր քահանայութիւն նորա: - 50. Տասներորդ՝ *զի* յաստուծոյ էր կոչեցեալ նա ի քահանայութիւն: - 50. Իսկ որդի մարդոյ կոչի, *զի* էր ի յարենէն ի զանգւածոյն ադամայ իբր ի նախահօրէ՛. և ի կուսէն՝ իբր ի մօրէ՛: - 50. Իսկ մարդ, *զի* սրբեսցէ ինքեամբ զմեզ՝ եղև ամենայն յաղագս ամենայնի. այսինքն հոգի և միտք և մարմին. *զի* յորոց հասարակաց եղև մահ, լիցի և կեանք: - 50. Զի՞նչ ասեմ, *զի* հոգւով հնազանդեցաւ ադամ, և մտօք հաւանեցաւ, և մարմնով զգործն ի կատարումն էած: - 50. Էառ փրկիչն զամենայն, *զի* փրկեսցէ զամենայն. բաց ի մեղաց. *զի* մեղքն եկամուտ է և ո՛չ է ի բնութենէս. *զի* բնութիւնս անմեղ ստեղծաւ յաստուծոյ: - 50. Տե՛ս՝ *զի* առանց որդւոյ անբան և տկա՛ր է հայր. ո՛չ կարէ լինիլ աստուած. ապա և ո՛չ հոգի: - 51. Տե՛ս՝ *զի* միովն բառնի երկուքն. և ասեմք թէ երեքն: - 51. Դարձեալ՝ որք ո՛չ ասեն աստուած զհոգին, առաջին հերձուած՝ *զի* զհայր բառնան: - 51. Երկրորդ՝ *զի* ըստ մեզ արարած ասեն զհոգին: - 51. Եւ այլք ո՛չ հաշտեն և ո՛չ անպատւեն. *զի* զկարգն յաւիտենին ո՛չ ստեն որպէս ասացաք: - 51. *Զի* ասեն զմինն արարիչ՝ զօրութեամբ և բնութեամբ անսահմանելի: - 51. Իսկ զմիւսն գործակից՝ զօրութեամբ անսահմանելի. *զի* իւր ասեն արար գործակից. իսկ բնութեամբ սահմանելի. *զի* արարած է: - 51. Իսկ զմիւսն զօրութեամբ և բնութեամբ սահմանելի. *զի* արարած և պաշտօնեայ և ծառա՛յ է ասեն: - 51. *Զի* մեզ հոգին ըստ ինքեան գոյացութիւն, և յայլում տեսանի. այսինքն կատարեալ անձնաւորութիւն յէութիւն հօր: - 51. Առորս ասելի է թէ՝ ո՛չ է այլ էութիւն ի մէջ արարչին և արարածոյն. այլ հա՛րկ է *զի* լիցի աստուած՝ կամ արարած: - 52. Եւ ո՛չ այս կարէ լինիլ ի յերկուցն հատումն. այսինքն *զի* լիցի յաստուծոյ և արարածէն՝ և լինիլ մի էութիւն. որպէս ո՛չ է էութիւն եղջերուաքաղն որ յեղջերէ՛ և ի քաղէ ստեղծանի. ապա ուրեմն ո՛չ լինի էութիւն յարարչէն և յարարածէն: - 52. Եւ *զի* ստուգեցաք թէ ի հարկէ պիտոյ է էութեան՝ *զի* լիցի կամ արարիչ կամ արարած: - 52. Եւ թէ արարած է՝ զիա՞րդ հաւատամք և կատարիմք. այսինքն յորժամ խնդրեմք և առնումք. *զի* ո՛չ տան մեզ ըզհայցւածքն որք են արարածք. որպէս անւամբ միայն աստւածք հեթանոսացն: - 52. Եւ *զի* ո՛չ է արարած՝ ո՛չ այլ ինչ է՝ քան թէ աստուած որպէս ասացաք: - 52. Եւ *զի* աստուած է՝ ո՛չ կարէ ասիլ ստեղծւած կամ արարած կամ պաշտօնեայ կամ ծառայ: - 52. *Զի* թէ անծին, ասեն երկու անսկզբունք են և հակառակ միմեանց: - 52. Եւ թէ ծնեալ՝ ասեն հա՛րկ է *զի* լիցի ի հօրէ կամ յորդւոյ. թէ ի հօրէ է՝ լինին բ որդիք և եղբարք: - 52. Պատասխանեմք թէ ո՛չ է նըւազ հոգին. *զի* ո՛չ է անկատար աստուածութիւնն. և ո՛չ նըւազութիւնն առնէ հոգւոյն ո՛չ լինիլ որդի, այլ դէմքն և առանձնաւորութիւնքն: - 53. Կամ նս՝ զի և հայր է ամենակատար՝ ընդէ՞ր ո՛չ լինիցի որդի, *զի* է՛ ի նոյն բնութենէն: - 53. Ասեն դարձեալ, օրինակ տուք *զի* լիցի ի նոյն բնութենէն մինն ծնունդ՝ և միւսն ո՛չ ծնունդ. և ապա՛ հաւատամք աստուած զհոգին: - 53. Ապա՛ տամք զհուրն օրինակ. *զի* ունի զլոյսն ծնունդ՝ և զջերմութիւնն բղխումն: - 53. Եւ ապա՛ զադամ, *զի* ունի զսէթ ծնունդ՝ և զեւա ո՛չ ծնունդ. այլ հատումն ի նոյն բնութենէ. և ընդ միով սահմանաւ գոլ ծնողին և հատմանն և ծնիցելոյն: - 53. *Զի* ունին ծնունդ ըզնմանն իւրեանց, և ունին զելումն բաց ի ծննդենէն. որպէս ի ձիոյն ձիակապիկն. և յարջառոյն մեղու. և յայլոցն որդն: - 53. Ապա թէ ո՛չ՝ ստեցար դու ինքնին ի բանից քոց. *զի* հոգին անեղ է: - 53. *Զի* թէ ասէք հայր աստուած՝ և որդի աստուած՝ և հոգի աստուած, բազմաստուած էք որպէս հեթանոսքն: - 54. *Զի* լիցի քո պատճառն ի կողմանէս մեր՝ պատասխանի քեզ: - 54. Իսկ արիոսի՝ *զի* նա միայն զհա՛յր ասէր աստուած. զայս ասեմք թէ,

ո՛չ են մեզ երեք աստուածք՝ այլ մի աստուած և երեք անձինք. և երկուքն ի մի և ի նոյն էութենէն յառաջ եկեալ. կամօք մի և զօրութեամբ մի: - 54. Նաև մարդիկ ո՛չ միայն *զի* ի բազմաց են գոյացեալ, այլ և ժամանակաւ առաւելք մի քան զմի. և կամօք բաժանեալք և ի միմեանց և իրերաց հակառակք: - 54. Եւ այսքան է միաւորթիւնն, *զի* որքան մին ինքն առ ինքն ունի զբնութիւնն և զզօրութիւնն և զկամքն, նոյնքան և ունի առ երկուսն. թէ զհայր իմանաս՝ թէ զորդի՝ թէ զհոգին: - 54. Դարձեալ հարցանեն թէ՝ զիա՞րդ ասէք երեք և մի բնութիւն. *զի* գ միոյ բնութեանն ո՛չ հաղորդի. այլ մինն հաղորդի միոյ բնութեանն, և երկուքն երկուքին. և երեքն երեքին. *զի* որքան է թիւն, այնքան բնութեան թըւակից լինի: - 54. Ապա ուրեմն *զի* դուք գ ասէք՝ հայր և որդի և հոգի, ըստ թըւոյն և երեք բնութեան հաղորդին և ո՛չ միոյն: - 54. Տե՛ս՝ *զի* այլ և այլեն բնութեամբ, և անւամբ թըւակից առնէ: - 54. Նաև բնական քննութեամբ. *զի* յորժամ ասես՝ մի և մի՝ եղև երկու. և այժմ ունի զերկուին բնութիւն: - 55. Վասն հոգւոյն են ի գիրս սուրբս՝ *զի* ո՛չ են և ասին ի յէքս. որպէս եղջերուաքաղն, յարալէզն, յուշկապարիկն: - 55. Իսկ ի յաստուած, *զի* է՛ անսկիզբն և անձին. անմահ և անապական: - 55. Եւ ո՛չ ասի ի գիրս սուրբս ըստ այդմ բառի, բայց այլ կերպիւ ցուցանէ զայդ. այսինքն *զի* ասէ, «Ես եմ ալֆա և օմեգա». յայսմանէ իմանամք զանսկիզբն և զանվախճանն: - 55. Իսկ ի յաստուած՝ *զի* ո՛չ է չար. և ո՛չ տգէտ. և ո՛չ անկար, և ո՛չ ասի: - 55. *Զի* որպէս էր հօր ծանօթութիւնն ի նախահարսն, և որդոյն ընդ աղօտ, այլ ի մարմնանալն իւր յայտնեցաւ: - 55. Ութերորդ՝ թէ արարա՛ծ է բանն աստուծոյ և հոգին, ապա կրկին է և ո՛չ մէկին. *զի* բանն արարած՝ և արարչի բան. և հոգին արարած՝ և արարչի հոգի: - 56. Տասներորդ՝ թէ բանն աստուծոյ և հոգին արարա՛ծ են և այլ բնութիւն, յայնժամ ո՛չ լինի մի աստուած. այլ բազում և զանազան աստուած. *զի* յոլովութիւնն յոլովութիւն է աստուծոյ. որպէս թէ երեք բնութիւնն երեք աստուած, և երկու բնութիւնն երկու աստուած: - 56. Աղբիւր է հայր. *զի* ի նմանէ է՛ աղբիւր կենաց: - 56. Նախ՝ ասէ մակեդոն եթէ աղօթել և բարեխօսել ո՛չ յարմարի աստուծոյ. *զի* եթէ զքրիստոսէ՛ ասի՝ վասն մարդկութեանն է: - 59. Պատասխանեմք նախ, որպէս ասէ ոսկէբերանն թէ՝ նորածնեալքն աւազանաւն՝ ըստ չափու շնորհացն արժանաւորեին իմաստութեան, թարգմանութեան, և այլն. այսպէս և ոմն շնորհս ընդունէր աղօթելոյ կարգաւորապէս. *զի* ի նմանէ ուսանէին և այլքն աղօթել: - 59. Իսկ այլք՝ հոգի զիրեշտակական հոգին ասեն. որ տըւեալ է առ ի պահպանութիւն մեզ. *զի* նա ուղղէ զմեզ ի բարիս, և զաղօթս մեր մատուցանէ աստուծոյ: - 59. *Զի* սովորութիւն է սուրբ գրոց՝ աստուծոյ համարել զոր ինչ գո՛րծ է ի մարդիկ: - 59. Այսպէս և հոգւոյն բարեխօսելն է. *զի* ինքն ծագէ ի սիրտս մեր զբարեխօսն լինիլ յաղօթս. այսինքն զայն խնդրել որ ինչ ի փառս աստուծոյ է: - 59. Նոյնպէս՝ թէ ասի տրտմութիւն հոգւոյն. *զի* որպէս տրտմեալն հեռանա՛յ ի տրտմեցուցողէն, այսպէս և հոգին սուրբ հեռանայ ի մեղաւորէն: - 60. Հինգերորդ ասեն, եթէ հոգին սուրբ առնու զբնութիւնն ի հօրէ՝ լինի որդի նորին. *զի* այն կոչի որդի որ ունի զբնութիւնն ի հօրէ ի նոյն տեսակէ: - 60. Նախ պատճառեն՝ *զի* ասի հոգի քրիստոսի: - 61. Երկրորդ՝ *զի* փչեաց յառաքեալսն և ասէ «առէք հոգի սուրբ»: - 61. Պատասխանեմք, այն որ ասի հոգի քրիստոսի, և թէ՝ փչեաց, և թէ՝ առաքեաց, յայն սակս ասացան, *զի* ծաւալումն հոգւոյն սրբոյ յաղագս մարդկան՝ գալստեամբն քրիստոսի եղև: - 61. Եւ դարձեալ, *զի* ամենայն ինչ որ հօր է՝ այն որդւոյ է որպէս ասէ տէր. ապա ուրեմն հոգի հօր՝ հոգի է որդւոյ վասն միոյ էութեանն: - 61. *Զի*՝ զինչն ետ հայր որդւոյ, և ո՛չ զառինչն: - 61. Վեցերորդին պատասխանեմք, թէ ասիցես որդին անկենդան է յորմէ հոգին ո՛չ բղխէ. ապա՛ և ըստ քեզ հոգին անբան է *զի* զբանն ո՛չ ծնանի: - 61-62. Երկրորդ՝ *զի* որպէս մատամբ գրեմք կամ գործեմք զամենայն գործս, այսպէս և հոգին սուրբ գրէր ի մարգարէսն...: - 62. Ուղիղ է, *զի* որպէս խօսքն թարգման է մտաց և բանի, այսպէս և հոգին սուրբ՝ հօր և որդւոյ...: - 62. Նախ՝ *զի* խօսքն որ է արտաբերեալ բանն, նոյն սա՛ է ներտրամադրեալն բան: - 62. Երկրորդ՝ *զի* խօսքն միայն ի բանէն ծնանայ և ո՛չ ի մտացն: - 62. Եւ *զի* հոգին սուրբ է միայն ի հօրէ բղխումն, տեսցուք զայս Նախ՝ ի հարցմանէ: - 62. *Զի* եթէ զբնութիւնն, ահա բաժանեցիք զբնութիւնն ի բղխօղ և ի բղխեալ. որպէս ի ծնօղ և ի ծնեալ. որ է մակեդոնի և արիոսի: - 62. *Զի* թէ մի է սկիզբն, սո՛ւտ է նոցա ասելն զհոգին ի հօրէ և յորդւոյ բղխեալ: - 62. *Զի* թէ կարօղ, ապա ո՛չ է կցորդ որդի: - 62. *Զի* եթէ մասամբ- անկատա՛ր է բղխումն հոգւոյն: - 63. *Զի* եթէ զոյգ և հաւասար, ո՛չ գոյ առ նոսա կատարեալ բղխօղ. զի երկոքինն ի մի բղխողի տեղի են: - 63. *Զի* եթէ զոյգ և հաւասար, ո՛չ գոյ առ նոսա կատարեալ բղխօղ. *զի* երկոքինն ի մի բղխողի տեղի են: - 63. *Զի* թէ կարգաւոր, երբեմն մինն՝ և յետոյ միւսն. որ յառաջին բղխօղ է՝ նա՛ է բղխօղ. և ո՛չ վերջինն: - 63. Դարձեալ հարցանեմ, յանսկզբնէ՞ն բղխէ հոգին, թէ ի սկզբնաւորէն. *զի* որ յանսկզբնէն յառաջ գայ, է՛ անեղ և անվախճան. որպէս որդի և հոգի յանսկիզբն հօրէ: - 63. *Զի* թէ զբղխեալն բղխէ, աւելո՛րդ է որդւոյ բղխումն. *զի* հայր բղխէ զհոգին: - 63. Դարձեալ՝ հարցանեմ, *զի* թէ մինն բոլոր բղխումն է հոգւոյն և ո՛չ մասն. *զի* թէ զմինն զայն հայր բղխէ, ապա ուրեմն ո՛չ բղխէ որդի. իսկ թէ զմինն զայն որդի բղխէ, բղխեալն հոգի թո՛ռն լինի հօր, և ո՛չ բըղխումն նմին: - 63. Նախ՝ *զի* բղխումն հոգոյն՝ է՛ ելումն. իսկ ելումն

շարժումն միոյն ի միւսոյն: - 63. Ա՛րդ՝ եթէ հոգին ելանէ յորդւոյ, պարտ է *զի* ելցէ յորդւոյ ի հայր. կամ ի միւս անձն: - 63. Ա՛րդ՝ ո՛չ ելանէ ի հայր. *զի* ո՛չ ունի հայր իր ինչ ի յորդոյ: - 63. Եւ ո՛չ ի միւս անձն. *զի* չկա՛յ միւս անձն: - 63. Ա՛րդ՝ տեսանեմք զջերմութիւնն *զի* ո՛չ բղխէ ի լուսոյ, այլ միայն ի հրոյ: - 64. Նախ՝ *զի* ասէ փրկիչն յաւետարանն յոհաննու յաղագս հոգոյն թէ՝ «հոգին ճշմարտութեան որ ի հօրէ՛ ելանէ. նա՛ ուսուցէ ձեզ զամենայն»: - 64. Հինգերորդ՝ *զի* կանոն ընդհանուր ժողովոցն որ եղեն առ նոսա՝ բաւականաբար դաւանութիւն հաւատոյ տըւեալ է: - 64. Դարձեալ՝ յորժամ ասի, թէ լսիցէ «ի հօրէ», և կամ «առնուցու», մի՛ իմասցի այնու թէ բղխումն հոգւոյն սրբոյ տակաւին ապառնի էր. *զի* յաւիտենակա՛ն էր: - 64. *Զի* որպէս այժմ կարեմք ասել ճշմարտապէս թէ հոգին սուրբ ելանէ ի հօրէ. և վասն ապառնւոյն կարեմք ասել թէ հոգին սուրբ ո՛չ ելանէ յորդւոյ. մինչ այլ ո՛չ ևս ելանէ. և ո՛չ այնպէս էառ զգոյացութիւն և զճշմարտութիւն իւր՝ *զի* ո՛չ ևս երբեք առցէ: - 65. *Զի* ա՛յլ է բղխումն, և ա՛յլ է առումն. այսպէս՝ զի հոգին բղխումն է ի հօրէ, որպէս որդին ծնունդ է ի հօրէ: - 65. Զի ա՛յլ է բղխումն, և ա՛յլ է առումն. այսպէս՝ *զի* հոգին բղխումն է ի հօրէ, որպէս որդին ծնունդ է ի հօրէ: - 65. Այլ *զի* ամենայն ինչ զոր ունի հայր՝ որդւոյ է. և քրիստոս աստուծոյ զօրութիւն և իմաստութիւն: - 65. Նախ՝ *զի* խօսքն է ի մտացն յառաջ եկեալ, որպէս ներտրամադրեալ բանն ծնեալ. և հոգին սուրբ ի հօրէ բղխեալ. որպէս բանն ծնեալ: - 66. Երկրորդ՝ *զի* թէ նա՛ շնորհիւ ունի զորդիութիւնն և ո՛չ էապէս, ապա ուրեմն մասամբ և ըստ կարգի ունի՝ և ո՛չ զլրումն աստուածութեանն. *զի* շնորհն է մասնաւո՛ր պարգև: - 66. Երրորդ՝ *զի* ո՛չ մի որդի և տէր յիսուս քրիստոս խոստովանին որպէս ասեն առաքեալքն և հարքն սուրբք: - 66. Չորրորդ՝ *զի* ամենայն իր յայլմէ ընկալեալն՝ լինի և ի բաց ընկենլի: - 66. Վեցերորդ՝ *զի* թէ մեք շնորհիւ՝ որդեգրեալքս կերպանամք առ ճշմարիտ և բնութեամբ որդին, և թէ և նա՛ է ըստ մեզ շնորհիւ, պիտո՛յ է նմա վերնագոյն բնութեամբ որդի մարմնացեալ ի յոր կերպասցի և սա՛ ի նմանութիւն նորա շնորհօք որդի: - 67. Եօթներորդ՝ *զի* թէ մեք որպէս և եմք ընդ լծով ծառայութեան՝ այսպէս և նա՛, զիա՞րդ յառակսն որ յաւետարանն՝ յետ ծառայիցն՝ որդի առաքի. զոր տեսեալ բաժանօղք այգւոյն ասեն՝ «սա՛ է ժառանգն և սպանին զնա»: - 67. Տասներորդ՝ *զի* թէ նա վասն բնակութեանն երկրպագելի է և աստուած, ո՛չ միայն եղիցի նա՛ աստուած, այլև ամենայն երկնաւորք և երկրաւորքս. որք բնակեալ ունին զաստուած և կոչին անւամբ աստուածք: - 67. Մետասաներորդ՝ *զի* թէ է՛ ինքն բնակարան և տաճար, կազմէ և զմեզ բնակարան և տաճար իւր: - 67. Երկոտասաներորդ՝ *զի* թէ վասն բնակութեան նորա՝ է մարմին նորա ուտելի որպէս ինքն ասաց՝ «մարմին իմ ճշմարիտ կերակուր է». կերօղքն եղիցին գազանք մարդակերք. և ո՛չ մարմնոյ և արեան որդւոյն աստուծոյ: - 67. Երեքտասաներորդ՝ *զի* թէ վասն բնակարան գոլոյ՝ մարմին նորա է կենդանարար: - 67. Չորեքտասաներորդ՝ *զի* թէ մահւամբ չարչարանօք նորա փրկեցաք մեք ամենեքեան՝ և այն է սոսկ մարդոյ փրկութիւն մեր: - 67. Եօթնևժերորդ՝ *զի* թէ ծնեալն ըստ մարմնոյ՝ է առանձնապէս մարդ ապա ուրեմն ծնօղ նորին ո՛չ է աստուածածին, այլ՝ մարդածին: - 68. Իննևժերորդ՝ *զի* թէ առանձնապէս մարդ է, ապա հետևի բաժանեալ բնութիւն և **բ** կամք և կրկին ներգործութիւն. յայնժամ ո՛չ լինի բանն մարդ եղեալ. այլ մարդն բնակութեամբ ի փառս բանին բարձրացեալ: - 68. *Զի* թէ ի վերայ բնութեանն, **բ** կատարելութիւն մուծիք յԵրրորդութիւնն. *զի* Երրորդութիւնն մի բնութիւն է կատարեալ. և մի բնութիւն մարդոյ: - 68. *Զի* թէ զերկուսն, ահա՛ երկու որդւոյ մայր ասացիք: - 68. *Զի* թէ աստուած մարդացեալ, ապա զիա՞րդ ուրանայք և բաժանէք յերկուս բնութիւնս զաստուածն և մարդն: - 68. Իսկ թէ մարդ աստուածացեալ, ստէ՛ ուրեմն առաքեալն՝ ի լրութենէն ունայնութիւն ասացեալ. *զի* այս ընդդէմ նորին ի նըւաստութենէ ի բարձրութիւնս ելանէ: - 68. *Զի* թէ աստուածութեանն, հրէաբա՛ր երկրպագես: - 68. *Զի* թէ զաստուծոյն միայն՝ անկար ի յարիոսին. *զի* զբանն առանձին քրիստոս ասացեր. այսինքն օծեալ և սրբեալ ի հօրէ. յորմէ իմանի պակաս գոլ քան զհայր: - 68-69. *Զի* թէ զաստուածութիւնն բնութեամբ ասես, ապա զմարդկութիւնն շնորհօ՛ք ասես: - 69. *Զի* թէ ասես զառ ի յաստուծոյ հօրէ բանն, ահա կարգեցեր զնա ընդ եղեալքս կարօտ սրբութեան և շնորհօք որդիութեան: - 69. *Զի* թէ միայն յաստուծոյն, արկանես զանմահ բնութիւնն ընդ մահուամբ. *զի* ասէ առաքեալն, «որք ի քրիստոս մկրտեցայք՝ ի մահ անդր նորա մկրտեցայք. թաղեալք ընդ նմին»: - 69. Իսկ թէ միայն ի մարդոյն բնութիւնն, ահա տակաւին ևս անկատա՛ր ես. *զի* ի սոսկ մարդոյն մահ մկրտեցար: - 69. Եւ դարձեալ՝ *զի* հաներ զբանն ի կազէ Երրորդութեանն. շարադասելով զմարդն ի տեղի նորին: - 69. *Զի* թէ զաստուծոյն ըստ ինքեան, ահա և անուտելի՛ է բանին բնութիւնն: - 69. Իսկ թէ ըստ ինքեան զմարդկայինն, զիա՞րդ ունէր զփառս յառաջ քան զլինիլն աշխարհի. *զի* ինքն ի ժամանակի եղև: - 69. *Զի* թէ բանին, աննման ինչ խորհիս. *զի* նա՛ բնութեամբ ունի. մանաւանդ եղեր արիոսեան: - 70. *Զի* ո՛չ էապէս՝ այլ արտաքո՛ւստ և եկամուտ ունի զաստուածն անուն: - 70. *Զի* թէ զբնութեամբն ասես, ստեա՛ց ուրեմն առաքեալն և աւետարանն. որք զքրիստոս ասեն յարուցեալ և համբարձեալ և նեստեալ ընդ աջմէ հօր: - 70. *Զի* թէ առանձին մարդկութեանն, ո՞րպէս է յերկնից իջեալ. *զի* ի կուսէն ծնաւ մարմինն: - 70. *Զի* եթէ ըստ

ինքեան բանին, ահա՛ կարգեցեր զանմահն ընդ մահուան: - 70. Եւ տէրն *զի* գիտէր զխորհուրդս նոցա, ասէ «*զի*՛ խորհիք ի սիրտս ձեր»: - 71. Եւ *զի* բանն մարմին եղև միաւորութեամբն. ուրեմն յայտ է՝ *զի* մարմին բանին բան եղև նոյն միաւորութեամբն: - 72. Արդ բանն առանց մարմնոյն քրիստոս ո՛չ է. ապա ուրեմն յա՛յտ է *զի* միացեալ մարմնովն է՛ հաւասար և ի կերպարանս աստուծոյ տէր մեր յիսուս քրիստոս: - 72. Եօթներորդ՝ իջանելն յերկնից՝ բանին յարմարի. *զի* միաւորեցաւ ի մարմնի այն է իջանելն: - 73. Եւ այն *զի* ո՛չ ինչ ունի մինն նըւազ քան զերկուքն, և ո՛չ երկուքն առաւել քան զմին, բաց յառանձնութեանցն: - 74. *Զի* աչք զգայ զգոյնն ընդ ձեւոյն. և ո՛չ զհամն և զհոտն: - 75. *Զի* նոյն ինքն քրիստոսդ անուն՝ ուսուցանէ զքեզ աստուածութեամբն մարդ գոլ, և մարդկութեամբն աստուած: - 75. **Ո՛չ փոխարկապէս, այլ փոխատրապէս. այսինքն *զի* ի միաւորութեանն եկաց մնաց որ ինչ էրն, և եղև որ ինչ ո՛չն էր:** - 75. *Զի* աստուած է իւրում բնութեանն. և նոյն մարդ ըստ նորին բնութեամբ միաւորութեանն: - 75. *Զի* այս է ուղղակի դաւանութիւն միաւորութեանն քրիստոսի: - 75. *Զի* բնութիւնն հասարա՛կ է. և մայր նորին՝ Երրորդութեանն լիցի մայր: - 76. *Զի* անմարմին է՝ և միաւորի ընդ մարմնոյ. որպէս հոգի և մարմին բնութեամբ միաւորին և ո՛չ շփոթին: - 76. *Զի* անե՛ղ է՝ յաղագս որոյ ո՛չ կրէ յեղումն ինչ և փոփոխումն կրից: - 76. *Զի* թէ անանձն բնութիւն ասէաք միաւորեալ որ էր հասարակ, գո՛յր ինչ նոցա ասել առ այս: - 76. Այլ *զի* զանձնաւոր բնութիւն և զանհատն ասեմք մարմնացեալ. *զի* սկիզբն միաւորութեանն է ի բնութիւնն, և կատարումն կայացեալ ի յանձն, յիմարա՛ց ուրեմն և ափշելոց է խնդիր նոցա: - 76. Նախ՝ *զի* սքանչելեօք է. որոյ սահմանն անգիտելի է, և ի վեր քան զբնութիւն: - 77. Երկրորդ՝ *զի* անեղի ընդ եղելոյ է միաւորութիւնն: - 77. Երրորդ՝ *զի* անփոփոխ է միաւորութիւնն: - 77. Չորրորդ՝ *զի* անբաժանելի է: - 77. Եւ զնոյն բանն աստուած՝ աստուածութեամբն աստուած, և մարդկութեամբն աստուած. *զի* անբաժանելի՛ է. թէպէտ և էր նախ քան զմարդեղութիւնն աստուած, այլ յետ անճառ միաւորութեանն մարմնովն է աստուած: - 77. Եւ *զի* զմեզ անապական գործեաց վերստին ծննդեամբն: - 78. Դարձեալ՝ ծանի՛ր ուղղապէս. *զի* ասի աստուած մարմնացեալ և մարդացեալ. *զի* այս միաւորութեան է: - 79. Այլ ո՛չ ասի մարդ աստուածացեալ և անմարմնացեալ. *զի* այս փոխարկութեան է: - 79. Ասի դարձեալ՝ աստուած մարմնազգեաց. այլ ո՛չ ասի աստուած մարդազգեաց. կամ մարդ աստուածազգեաց. *զի* այս որոշմա՛ն է: - 79. *Զի* մեծն աստուածաբան ընդ դէմ արիոսի պատերազմի. որ արարած ասէր զբանն՝ աստուածացեալ յետոյ: - 79. Զբանս զայս չարափառքն այսպէս մեկնեն, թէ միութիւն բանին ընդ դէմ է միութեան Երրորդութեանն. *զի* անդ բնութիւնն մի՝ և **գ** անձինք. իսկ աստ **բ** բնութիւն և մի անձն: - 80. *Զի* սա ընդ դէմ վասն մի բնութեանն ասէ որ յԵրրորդութիւնն է և ի անօրէնութիւնն բանին. սոքա զընդդէմն վասն բաժանմանն իմանան: - 80. Նախ այսպէս, ասէ թէ բաժանմունք որ յԵրրորդութիւնն է, ո՛չ է հնար միաւորութեան. *զի* ա՛յլ ոմն է և ա՛յլ: - 80. Իսկ բաժանմունքն յորոց փրկիչն՝ ընդդէմ է այնմ. *զի* բնութեամբ է միաւորեալ. որ ո՛չ է հնար շփոթելոյ: - 80. Դարձեալ՝ *զի* ասէ թէ, ա՛յս միաւորութիւնս որ ի քրիստոս է, ո՛չ է իբրև զայն որ յԵրրորդութիւնն է. *զի* անդ միութիւն է, բայց բաժանումն անձանց: - 80. *Զի* մարմինն է՛ ի կուսէն. և կոյսն յազգէն ադամայ. և ադամ ի հողո՛յ արարած: - 81. *Զի* բանն որդի կոչի, և մարդն որդի կոչի: - 82. *Զի* ո՛չ երբեք՝ ոչ բանիւ՝ ո՛չ իմացմամբ՝ և ո՛չ իրօք բաժանումն ունելով: - 83. *Զի* միաւորեալն ո՛չ բաժանի. վասն զի միութիւնն եբա՛րձ զերկուութիւնն: - 83. *Զի* միաւորեալն ո՛չ երկատի. *զի* **բ** բնութիւն ասել կամ իմանալ՝ երկատութիւն և բաժանումն է քրիստոսի: - 84. *Զի* անձն առանց բնութեան՝ կոչումն միա՛յն է ո՛չ էութիւն: - 84. Երրորդ՝ *զի* թէ միայն անձամբ միանայ և ո՛չ բնութեամբ, ապա քրիստոս անձամբ և կոչմամբ միա՛յն է որդի աստուծոյ և ո՛չ բնութեամբ: - 84-85. Եւ չորրորդ՝ *զի* ամենայն իր բնութեամբ իւրով միանայ և ո՛չ արտաքոյ բնութեան. որպէս հուր ընդ երկաթ՝ և հոգի ընդ մարմին միաւորի: - 85. Թէպէտ բնութեամբ միաւորին՝ տարբերութիւնն ո՛չ բառնի. զի տարբերութեանցն մնալ՝ խափանումն ո՛չ առնէ միաւորութեանն. որպէս հոգւոյ և մարմնոյ. ոսկւոյ և հրոյ. և ծանի՛ր՝ *զի* կրկին է տարբերութիւն. բաղկացական և բաժանական: - 85. Ծանիր և զայս. *զի*՝ մի բնութիւն ասեմք քրիստոսի՝ վասն կատարմանն և ո՛չ սկզբանն. և մի գործ ասեմք վասն սկզբանն և ո՛չ վասն կատարման գործոյն: - 85. Այսպէս և բանն աստուած կատարէր մի ներգործութիւն մարմնով իւրով. *զի* միաւորութիւն բնութեանցն առանց փոփոխման և բաժանման է: - 86. *Զի* թէ իր, ապա հա՛րկ է ասել քեզ զքրիստոս կամ մի իր և **բ**. կամ մասամբ ինչ մի և մասամբ ինչ երկու. կամ բոլոր մի և բոլոր **բ**: - 86. Արդ եթէ էութիւն է անձն, և ընդ անձինն մի ասեն զմարդկային բնութիւնն, մի է և ընդ էութեանն. և թէ մի է ընդ էութեանն. որպէս ճշմարիտ միութիւն, մի ասա և բնութիւն. *զի* էութիւն և բնութիւն մի են: - 86. *Զի* թէ ասես միաւորական, ահա՛ արարեր դու զանձն բնութիւն. *զի* բնութիւն է միարար ըստ պորփիւրի, տեսակին կցորդութեամբ բազում մարդիկ մու: - 86. Իսկ անհատ ասի՝ *զի* ո՛չ քակտի և ո՛չ հատանի որպէս բոլորն ի մասունս. *զի* թէ բաժանես զնա որպէս ի հոգի և ի մարմին, կամ յոտս և ի ձեռս և ի գլուխս, ո՛չ մնայ բոլորն:

- 86-87. Այսպէս և մի անձն է քրիստոս և մի անհատ. *զի* թէ բաժանես զնա՛ յաստուած և ի մարդ, ո՛չ մնայ բոլորն ի նոյն. այլ մասն ինչ և մասն. կամ ոմն և ոմն: - 87. Ա՛րդ՝ ցուցցուք՝ *զի* զվեցեքինն սոցա բաժանեն երկաբնակքն: - 87. Եւ է՛ ուրեք *զի* միաւորեն զանունն՝ մի քրիստոս՝ մի տէր՝ մի որդի՝ և մի անձն ասելով որպէս քաղկեդոնի թըլի երկաբնակ ժողովոյն: - 87. Եւ պարտէ գիտել, *զի* որպէս սեռ ի տեսակս ո՛չ կարէ բաժանիլ: - 87. Նախ՝ *զի* յընդդիմաբաժանեալ տեսակս սեռի՝ ո՛չ գոյ առաջին և վերջին. որպէս բաժանի կենդանին ի բանականն և յանբանն. և ո՛չ է ասել թէ՝ բանականն յառաջ է քան զանբանն. այլ զոյգ և համայնք են: - 87. Երկրորդ՝ *զի* յընդդիմաբաժանեալ տեսակս՝ ո՛չ ունի պէտս մինն միւսոյն առ ի բաղկանալ: - 87. Երրորդ՝ *զի* յընդդիմաբաժանեալ տեսակս՝ ո՛չ ուրեք մինն ի միւսումն տեսանի. և ո՛չ անբանն ի բանականումն: - 87. Այլ արդ՝ մարդկային բնութիւնն յաստուածութեանն տեսանի, և աստուածային ի մարդկութեանն, եթէ ի միութիւն բնութեանն, և եթէ ի միութիւն անձինն. *զի* ո՛չ սոսկ մարդ է քրիստոս և ո՛չ մերկ աստուած. այլ աստուած մարդացեալ: - 87-88. Նախ՝ *զի* անհատքն անհունք և անբաւք են: - 88. Երկրորդ՝ *զի* անհատքն առանձնացեալ են թըւով: - 88. Երրորդ՝ *զի* բաժանեալ անհատքն ունին զնոյն բնութիւն տեսակին: - 88. Ոչ նմանամասնաբար. *զի* նոքա բոլորին՝ և միմեանց հոմանունաբար ասին. որպէս փայտ ի բազում փայտս: - 88. Եւ ո՛չ աննմանամասնաբար. որպէս պետրոս՝ յոտս և ի ձեռս և ի գլուխս. *զի* նոքա ո՛չ միմեանց և ո՛չ բոլորին հոմանունաբար ասին: - 88. Երկրորդ՝ *զի* ո՛չ մասամբ ինչ ըստ ոմանց ապօղինարի և այլոց. այլ յերկուց կատարեալ բնութեանց է միաւորութիւն փրկչին: - 88. Նախ՝ *զի* հոմանուն ձայնն միայն անւանն և ո՛չ իրի հաղորդի: - 88. Այլ և ո՛չ որպէս էութիւն ի պատահումն. *զի* մարդկութիւնն քրիստոսի է ի սեռէ գոյացութեան, և ո՛չ ի սեռէ պատահման: - 88. Այլ և ո՛չ որպէս պատահումն ի յէութիւն. *զի* բանն աստուած ո՛չ է անանձն և ազդումն ինչ որպէս մեր բանս ըստ ոմանց. որպէս մարկեղոս և փոտինոս դանդաչեն: - 88. Աhա տե՛ս յայտնապէս. *զի* որք բաժանեն զմի քրիստոսն յերկուս բնութիւնս, ո՛չ պահեն զմիաւորութիւնն անբաժանելի: - 88. *Զի* զոչ առեալն ասեն մի ի քրիստոս՝ և ո՛չ զառեալն. այսինքն զանձն՝ որ ո՛չ է առեալ՝ մի ասեն. իսկ զառեալ բնութիւնն որոշեալ պահեն և յերկուս քակտեն: - 88. Նախ՝ որպէս սեռ ի տեսակս բոլորապէս տեսանի և ո՛չ մասամբ. այս է՝ *զի* գոյացութիւնն որ է սեռ՝ բոլոր է ի մարմինն և յանմարմինն. և կենդանին բոլոր ի բանականն և բոլոր յանբանն: - 89. Իսկ որպէս բոլոր ի մասունս, *զի* որպէս միոյ մասին պակասելոյ՝ բոլորն անկատար մնայ: - 89. Իսկ որպէս հոմանուն ձայն, *զի* հաւասարապէս հաղորդի որոց կոչինն. որպէս խոյ երկնային և երկրային և ջրային. *զի* ո՛չ առաւել և ո՛չ նըւազ կոչին. այլ հաւասարապէս: - 89. *Զի* եթէ զմարդկայինն ասէք քրիստոս, ահա՛ առանձնապէս որոշեցիք զնա ըստ նեստորի. և սոսկ մարդ ասէք զքրիստոս: - 89. Իսկ թէ զաստուածայինն բնութիւն, ահա՛ զերրորդութիւնն ասէք մարմնացեալ. *զի* բնութիւնն հաւասար է երից անձանցն: - 89. Եթէ զաստուածային անձն և զնորին բնութիւնն ասէք մի քրիստոս, դեռևս կայք յառաջ ասացեալ տարակուսանսդ. *զի* զաստուածային անձն և զբնութիւնն ասէք չարչարեալ և մեռեալ. *զի* քրիստոս խաչեցաւ և մեռաւ ըստ գրոց: - 89. Իսկ թէ զաստուածային անձն և զմարդկային բնութիւնն ասէք մի քրիստոս, ահա յա՛յտ է *զի* բաժանեցիք յաստուածային բնութենէն զքրիստոս. *զի* անձն աստուծոյ և զբնութիւն մարդոյ ասէք մի քրիստոս. և զաստուածային բնութիւնն որոշէք: - 89. *Զի* եթէ միաւորութեամբ, ահա՛ շփոթումն եղև. *զի* զանձն և զբնութիւնսն մի ասացիք: - 90. *Զի* եթէ զաստուածային բնութիւնն պատւէք, հա՛րկ է ձեզ զմարդկայինն անարգել՝ և հրէական խտրութեամբ մոլիլ, որք ասէին՝ «դու մարդ ես՝ և զանձն քո աստուած առնես»: - 90. Յորժամ ձեռն քրիստոսի ոչ է աստուած, ապա ուրեմն և բոլոր մարմինն ո՛չ է աստուած. *զի* բոլորն ի մասանցն բաղկանայ: - 91. Եւ թէ մարմինն քրիստոսի չէ աստուած, և հոգին քրիստոսի չէ աստուած, որպէս նոքա բարբանջեն. ապա և բոլորն քրիստոս չէ աստուած. *զի* բոլորն քրիստոս յաստուածութենէն միաւորեալ լինի մի քրիստոս. և բաժանեալ ո՛չ է քրիստոս: - 91. Ասեն այսպէս՝ եթէ ձեռն մարդոյ է՝ զի և ոտն մարդոյ՝ և այլ մասունքն մարդոյ է. *զի* աստուծոյ մասն ո՛չ ասի: - 91. Երևի ապա *զի* աստուծոյ ո՛չ ասեն զմասունքն, այսինքն զձեռն և զոտն. ապա ըստ նոցա և մարմինն չէ աստուծոյ մարմին. և արիւնն չէ աստուծոյ. և հոգին չէ աստուծոյ. այլ ամենեքեան սոքա մարդո՛յ են: - 91. Ապա ուրեմն երևեցաւ՝ *զի* թէ մասունքն քրիստոսի ասին և աստուծոյ ո՛չ ասին, յա՛յտ է թէ զքրիստոս ո՛չ խոստովանին աստուած: - 91. Ապա ըստ այսմ հետևի՝ *զի* մարիամ մայր քրիստոսի լինի և ո՛չ աստուծոյ. *զի* լաւ է քրիստոսածին և մարդածին կոչիլ՝ քան թէ աստուածածին: - 91. Զա՛յս հարցեր, եթէ մասունքն քրիստոսի աստուած են, նաև բազմաստուած էք. *զի* բազում են մասունքն: - 92. Եւ ես ասեմ քեզ. *զի* թէ մասունքն քրիստոսի քրիստոս է, ապա բազմաքրիստոս էք և դուք: - 92. *Զի* ասեմք զմարմինն քրիստոսի վասն միաւորութեանն աստուած՝ և աստուծոյ մարմին: - 92. *Զի* թէ ասեմք եթէ ոչ է աստուած, յայնժամ բաժանեալ յաստուածութենէն՝ ո՛չ լինի աստուծոյ ձեռն. և ո՛չ աստուծոյ մարմին. կամ արիւն. *զի* մասն բաժանեալ ի բոլորէն ո՛չ է բոլորին մասն. և

ո՛չ կոչի. որպէս ձեռն հատեալ յանդամոցն՝ ո՛չ կոչի մասն բոլորին: - 92. Ապա ուրեմն համանգամայն ի միասին լինին երկու հակակայք. այսինքն ուղղական և հոլովական. *զի* ասելն աստուած ուղղական է. և աստուծոյ՝ սեռական հոլով: - 92. Ո՞չ ապաքէն ասեմք զքրիստոս՝ աստուած և որդի աստուծոյ. *զի* աստուածն ուղղական է՝ և որդի աստուծոյ հոլովական: - 92. Որպէս յորժամ ասեմք զձեռն բոլոր և մասն. *զի* մասն է բոլոր մարմնոյն, և բոլոր առ մատունս ձեռացն: - 92. Երրորդ՝ *զի* ո՛չ է նման առ մեզ և առ նա մասն և բոլորն. *զի* թէպէտ մասունք մարդոյ՝ ո՛չ ունին զկոչմունս բոլորին, սակայն մասունք մարմնոյն քրիստոսի՝ կոչին և ունին զբոլորին էութիւն: - 92. Որպէս ի նշխարս մարմնոյն է տեսանել. *զի* ի բոլորն է բոլոր քրիստոսն. և յիւրաքանչիւր մասունս է բոլոր քրիստոսն: - 92. Իսկ թէ և որոշակի ասես ուղղափառ մտօք, և ո՛չ այն է զարտուղի. յորժամ ասես աստուծոյ մարմին և աստուծոյ արիւն. *զի* որ ինչ է՛ ի յաստուած՝ աստուած է և ո՛չ օտար յաստուծոյ: - 92-93. Իսկ թէ ասես միայնաբար աստուած է մարմինն՝ և աստուած է հոգին. այսու ո՛չ լինիս բազմաստուած. *զի* մի՛ է աստուածութիւնն ի սոսա միաւորեալ էութեամբ և գոյացութեամբ: - 93. Այն որ նըւաստացոյց զինքն ի յունայնութիւն մարդկան, եղև ի կերպ ծառայի՝ և գործով և կրիւք և նմանութեամբ մարդկան. և կերպարանօք գտաւ մարդ. *զի* ի վեր էր քան զմարդ՝ և քան զկերպարան մարդոյ: - 93. *Զի* եթէ բաժանմամբ, այս կամ բանին իմասցի, և կամ մարմնոյն: - 94. *Զի* մինն ախորժելի է արիոսի. և միւսն նեստորի: - 94. Իսկ առաւել բարձրութիւնն. *զի* որպէս անհամեմա՛տ է խոնարհութիւն՝ աստուծոյ մարդանալ և չարչարիլ. և անզուգական բարձրութիւն է մարդոյս բնութեան ընդ աջմէ աստուծոյ նստիլ և հաւասարիլ: - 94. *Զի* որ խոնարհեցաւ բանն ի մարմին՝ նո՛յն բարձրացաւ մարմնով. և որ էջն ի ստորինս երկիր, նո՛յն է որ ելն ի վերոյ քան զամենայն երկինս. և որ ունայնացաւ՝ նո՛յն ելից զամենայն: - 94. *Զի* ո՛չ ասեմք մարմին զմարմնացեալն, այլ զբանն մարմին եղեալ: - 94. Եւ զայս եթէ բաժանմամբ, ո՛չ է առանձնապէս բանն քրիստոս. *զի* ո՛չ գոյ մեծագոյն օծանօղ նմա. որ և ո՛չ առանց մարմնոյ փրկեաց: - 94. *Զի* որպէս նըւաստացաւ և եղև մարդ, նոյնպէս և շնորհք տըւաւ նմա յաստուծոյ և ի մարդկանէ: - 94. *Զի* եթէ վարձ նախատակութեան են այդոքիկ, ո՞ւր իցեն շնորհք: - 94. Ահա և այսու ի վեր է նա. *զի* յէակցէ հոգւոյ իւրմէ՝ և ի բնութեամբ հօրէ: - 95. *Զի* թէ գոյացութիւն՝ և միաւորեալ է ընդ գոյացութիւն բանին, զիա՞րդ ո՛չ գիտէ զաստուածութիւն իւր: - 95. Ա՛րդ՝ ի մարդկանէ ո՛չ ոք ետես զաստուած, և որդի կուսին ո՛չ ետես որպէս դուդ ասես. սո՛ւտ է ապա և պատմութիւնն զոր ինչ ուսոյց մեզ. *զի* ո՛չ է տեսեալ և պատմէ. ահա անդունդք հայհոյութեան. զոր ի կարգիս լռե՛մ: - 96. Եօթներորդ՝ *զի* ի վերայ բերէ, «և ում որդին կամիցի յայտնել»: - 96. *Զի* լիութեամբ շնորհաց նորա մեք արդարացաք. և իմաստութեամբ նորա իմացաք զաստուած...: - 97. Քսանևմիերորդ՝ արդ՝ եթէ քրիստոս տգէտ ունէր միտս, և տկար հոգի, և ապականացու մարմին և եկն քրիստոս *զի* բարձցէ զտկարութիւնս մեր. և լուսաւորեսցէ որ նստէաք ի խաւարի. և նա՛ է գառն աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի և զապականութիւն: - 99. Եւ արդ՝ տգէտն զտգիտութիւն ո՛չ կարէ բառնալ. և ո՛չ մեղաւորն զմեղս. և ո՛չ ապականացուն զապականութիւն. և ո՛չ սոսկ մարդ զմարդ կարէ փրկել. *զի* սո՛ւտ է փրկութիւն մարդոյ: - 99. Այլ դատաւորին պարտէ ունիլ անհուն գիտութիւն. *զի* քննել կարասցէ զամենայն բնութիւն հրեշտակաց և մարդկան. և զամենայն գործս եղեալս և զլինելոցն. զխորհուրդս և զբանս բոլորից. զառաջինն՝ զմիջինն՝ և վերջինն: - 100. Ապա ուրեմն հոգին քրիստոսի ունի անհուն գիտութիւն. *զի* ճանաչէ զանհուն գիտացեալս: - 100. Եւ ըմբռնօղ՝ *զի* բանական իմացմամբ մտաց զմայլեալ էր միաւորութեամբ աստուածային փառացն: - 100. Այսպէս *զի* հոգին քրիստոսի ճանաչէ զամենայն բովանդակ կարողութիւնն իւր. և զամենայն յորս կարէ: - 100. Երեսներորդ՝ *զի* վարդապետք սուրբք օրինակ տան մարդեղութեանն քրիստոսի, որպէս լոյս ընդ օդ՝ և հուր ընդ երկաթ միաւորեալ: - 100. Ա՛րդ՝ քննել մտօք յանդգնութիւն է. և հաւատալն կեանք. *զի* ի հաւատո՛ցն է փրկութիւն: - 101. *Զի* ամենայն ճշմարիտ դաւանօղքն զքրիստոս աստուած խոստովանեցան. և ի նոյնն նախատակեցան. և առ ճշմարտութիւնն քրիստոս յերկրէ յերկինս վերափոխեցան: - 101. Պարտ է գիտել, *զի* ի ներքոյ բանին է զգալեացս տեսութիւն: - 103. Նախ՝ *զի* եղականք ամենայն չափաւորեալ գոյացան. եթէ իմանալիք և եթէ զգալիք: - 103. Երկրորդ՝ *զի* տեսութիւն մտաց հասարակի ընդ գոյութեան էութեան. և ուր եզերի բնութիւն՝ անդ և մտաւորութիւն: - 103. Յայտ ուրեմն է, *զի* որ ի վեր է քան զէութիւն, ի վե՛ր է քան զգիտութիւն: - 103. Յաղագս որոյ և անանուն է աստուած. *զի* անունն զբնութիւնն յայտնէ. որպէս մարդ: - 103. *Զի* խաւարի միտքն. և մոլորի՛ իմացումն. և կապի ընդարձակ տեսութիւնն. և ծանրանայ թեթևութիւնն. և անջատի ի բազումս. և տգեղանայ պատկերն: - 104. Գիտելի է, *զի* չարչարանք մտացն է սուտն՝ և տարակոյսն՝ և աննմանն: - 104. Երկրորդ՝ որպէս աչք հայելով ի վեր՝ հեշտանայ *զի* վերընթա՛ց է լոյսն: - 104. Նախ գիտելի է, *զի* միութիւն ի գոյացութիւնն՝ առնէ զնոյնութիւն: - 104. Նա՛խ՝ *զի* ասեմք հայր և որդի և հոգի: - 105. *Զի* հայր ո՛չ է որդի և ո՛չ հոգի: - 105. Տե՛ս՝ *զի* հոգին բղխումն է հօր անձամբ. և առումն յորդւոյ իմաստութեամբ.

որպէս ցուցաւ ի վեց գլուխն ի **ժգ** համարն: - 105. Որդի ո՛չ ունի որդի. այլ ունի հայր և հոգի. *զի* հոգի քրիստոսի ասեմք: - 105. Եւ դարձեալ՝ *զի* կարողութիւնն նախ է քան զիմաստութիւնն. և իմաստութիւնն նա՛խ է քան զբարութիւնն: - 105. Հինգերորդ՝ որպէս միա՛կ է հայր. *զի* սկիզբն է ամենայն թւոց. և երկեակ որդի. և երրեակ հոգի ըստ աստուածաբանին: - 105. Վեցերորդ՝ որպէս յաւիտեան է հայր. *զի* անսկիզբն է և անվախճան: - 105. Ո՛չ ասեմ ժամանակ. *զի* արարիչ է ժամանակաց և յաւիտեանց. և որպէս ո՛չ ի ժամանակի սկսեալ, և ո՛չ ի ժամանակի դադարի: - 105. Նախ՝ *զի* միեղէն է և հասարակ՝ գերադրականքն. որպէս գերագոյն աստուած. և տէր տէրանց: - 106. *Զի* աստուածայինքն առհասարա՛կ են բաց ի յառանձնաւոր դիմացն: - 106. Երրորդ՝ հասարա՛կ է ի յԵրրորդութիւնն միութիւնն սուրբ. *զի* մի է հայր. մի որդի. մի հոգի: - 106. Եւ յատուկ՝ *զի* մինն ծնօղ է և բղխօղ. և մինն ծնեալ և ո՛չ բղխեալ. և մինն բղխեալ և ո՛չ ծնեալ: - 106. Եւ յատուկ՝ *զի* որոշեալ և բաժանեալ է յարարածոց. և ո՛չ մի է ըստ սոսա. ո՛չ մասն է արարածոց և ո՛չ բոլոր: - 106. Նախ՝ *զի* մինն ի սուրբ Երրորդութենէն մարդացաւ: - 106. Երկրորդ՝ *զի* միայն ի մարդկայինս ազգ է: - 106. Իսկ հասարակն՝ *զի* բոլոր բանն աստուած իւրով կատարելութեամբն էառ զբոլոր և կատարեալ մարդկային բնութիւնս. և եղև աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ: - 106. Նախ՝ *զի* բանն աստուած էառ զմարդկայինս բնութիւն և միաւորեաց ընդ աստուածութեան իւրում. ո՛չ մասն առեալ՝ կամ ըստ մասին միաւորեալ. այլ բոլորն ընդ բոլորին...: - 106-107. Երկրորդ՝ բանն աստուած նախկին է և սկիզբն արարածոց. *զի* նովաւ եղեն ամենայնքն: - 107. Հինգերորդ՝ ի բանէն կրկին էութիւնք յառաջեցան. այսինքն իմանալի և զգալի. *զի* թէ միայն ի հրեշտակաց էր առեալ՝ պակասէ՛ր զգալին. և թէ ի կենդանեաց՝ պակասէ՛ր իմանալին: - 107. Վասն որոյ մարդ եղև, *զի* զբոլորն յինքենէ զյառաջ եկեալն յինքն միաւորեսցէ: - 107. Վեցերորդ՝ որդին աստուծոյ եղև որդի մարդոյ. *զի* զմեզ արասցէ որդիս աստուծոյ: - 107. Եւ *զի* որդին աստուծոյ բնութեամբ որդի մարդոյ եղև, մի՛ յերկուանալ թէ լինիցիս և դու շնորհօք որդի աստուծոյ: - 107. Եօթներորդ՝ աստուածն մարդ եղև և յերկիր էջ. *զի* դու լիցիս աստուած և յերկինս ելցես: - 107. Եւ ի կուսէ, *զի* դու ծնցիս ի կոյս աւազանէ: - 107. Եւ *զի* նա հոգևոր ծնեալ՝ ծնաւ ըստ մարմնոյ. *զի* դու մարմնաւոր ծնեալ՝ ծնցիս վերստին ըստ հոգւոյ: - 107. Նախ՝ *զի* գ թիւն կատարեալ է. *զի* ունի սկիզբն. և մէջ և կատարումն: - 107. Երրորդ՝ *զի* **գ** մի է. այսինքն մի. մի. և մի. նոյնպէս մի հայր. մի որդի. մի հոգի: - 107. Չորրորդ՝ *զի* երեքն զնոյն բնութիւն ունի զերիցն. նոյնպէս Երրորդութիւնն սուրբ նո՛յն է բնութեամբ: - 107. Նախ՝ *զի* **գ** թիւն **գ** է և ո՛չ մի: - 107. *Զի* ո՛չ է որպէս պետրոս՝ և պօղոս՝ և յօհաննէս՝ երեք մարդ և մի բնութիւն. այլ մի է անհատութեամբ. ունելով երիս յատկութիւնս դիմաց: - 107. Երկրորդ՝ Երրորդութիւնն ցուցանէ զհամագոյութիւն երիցն. *զի* ո՛չ է առաջին և վերջին ի նոսա. այլ՝ զո՛յգ և համանգամայն: - 107-108. Նախ՝ *զի* թիւն քանակ է պատահական՝ և գիտելի մեզ: - 108. Իսկ ի սուրբ Երրորդութիւնն՝ մինն պակաս չունի քան զերկուքն. և ո՛չ երկուքն աւելի քան զմինն. *զի* հայր ունի զամենայն լիութիւն որդւոյ և հոգւոյ: - 108. Երրորդ՝ *զի* մին թիւն անկատա՛ր է քան զերկուքն. և երկուքն քան զերեքն: - 108. Իսկ սուրբ Երրորդութիւնն անփոփոխելի է. *զի* հայր ծնաւ զորդի և բղխեաց զհոգին. և ո՛չ փոխեցաւ ի գոլոյն հայր: - 108. Հինգերորդ՝ *զի* **գ** թիւն բաժանին ի միմեանց. *զի* յորժամ բաժանես զմի թիւն՝ ո՛չ է երկուքն ընդ նմա: - 108. Ո՛չ ասեմք. *զի* աստուածութիւնն հասարակ է բնութեանն. իսկ Երրորդութիւնն հասարակ է անձանցն: - 108. Եւ *զի* անձամբ յատկացեալք են և բնութեամբ մի. վասն այն Երրորդութիւն ո՛չ ասի միոյ անձին. այլ աստուած կամ աստուածութիւն ըստ միութեան բնութեանն: - 108. *Զի* նա՛ է աղբիւր և սկիզբն յորմէ բղխեն ամենայն: - 108. *Զի* որպէս ճառագայթ յարեգակն է՛, և որդի ծնեալ ի հօրէ: - 108. *Զի* յաւիտենական բղխէ ի հօրէ առ որդի. և նովաւ առ մեզ գայ. որպէս ջերմութիւն ճառագայթիւ արեգականն: - 108. Ա՛րդ՝ *զի* հայր պատճա՛ռ է որդւոյ ծննդեան՝ և հոգւոյ բղխման, վասն որոյ հայր նախադասի. իսկ ընդ նմա որդի. ո՛չ որպէս ոմանք կարծեն որդի պատճառ է հոգւոյ բղխման, այլ **գ** է ուղիղ տեսութիւնն: - 109. Նախ՝ *զի* հայր պատճառ է հոգւոյ բղխման՝ և որդւոյ առման. *զի* հոգին սուրբ բղխէ՝ ի հօրէ՝ և առնու յորդւոյ: - 109. Երկրորդ՝ *զի* որդին առինչ է ի հայրն. և համանգամայն բնութեամբ: - 109. Գիտելի է՝ *զի* ա՛յլ է մինն, և ա՛յլ է միակն: - 109. *Զի* մինն հասարակ է. և միակն մասնաւոր և առանձնակի. *զի* ամենայն միակ՝ մի է. այլ ամենայն մի միակ ո՛չ է. որպէս յորժամ ասեմք՝ մի հօտ. մի շեղջ. մի լիտր. այսպիսիքս մի են. այլ միակ ո՛չ են: - 109. Նախ՝ *զի* ո՛չ է բազում, այլ մի: - 109. Երկրորդ՝ *զի* պա՛րզ է և ո՛չ բաղադրեալ: - 109. Չորրորդ՝ մի է և միակ. *զի* ո՛չ բաժանի. և ո՛չ քակտի: - 109. Երկոտասաներորդ՝ *զի* ընդ բազումս բազմանայ, և ի միութեան իւրում կայ և մնայ ըստ միոյն օրինակի: - 110. Նախ՝ *զի* թիւն պատահումն է. որ ի աստուած ո՛չ է: - 110. Դարձեալ՝ գիտելի է՝ *զի* կրկին կերպիւ առեալ լինի մինն: - 110. *Զի* է՛ մի՝ որ սկիզբն է թըւոյ. և այսպէս մի ո՛չ ասի աստուծոյ. *զի* այս քանա՛կ է. և պատահումն ո՛չ գոյ յաստուած: - 110. Եւ է մի՝ որ անդրադարձի էի. և այսպէս ասի մի աստուած իբր թէ է՛. *զի* պատահումն ո՛չ ցուցանէ: - 110. Նախ՝ *զի* մի անձն հօր բազմացաւ ի յանձն որդւոյ. և բազմապատկի

ի յանձն հոգւոյն սրբոյ: - 110. Վեցերորդ՝ սկիզբն է ներգործութեան. և պատճառ կատարման. *զի* ի նմանէ սկսեալք՝ ի նա՛ կատարիմք: - 111. Գիտելի՛ է, *զի* ոչ էն բազմաեղանա՛կ ասի: - 111. Այլ ո՛չ ուղղակի. *զի* նիւթն ամենևին անտեսա՛կ է: - 111. Հինգերորդ՝ ոչէ ասին նիւթականքն որ ի լինելութեան և յապականութեան են. *զի* երբեմն ո՛չ էին, և յետոյ ո՛չ լինելոց են: - 111. Վեցերորդ՝ ոչէ ասին և բացարձակքն որ ի հանդերձեալն. *զի* դեռևս ո՛չ են. այլ՝ լինելոց են միշտ: - 111. Եօթներորդ՝ ոչէ ասի չարն. *զի* պակասութիւն է բարւոյ և արտաքոյ բնութեան: - 111. Եւ գիտելի է, *զի* որքան եղանակաւ ասի ոչ էն, նոյնքանաբար և էն. *զի* ընդ դէմ միմեա՛նց են: - 111. Մին՝ *զի* նա՛խ է քան զամենայն գոյ. թէ սկիզբն և թէ էութիւն: - 111. Երկրորդ՝ *զի* նախ՝ գո՛յ և է է. և ապա բարի և իմաստուն և այլն: - 111. *Զի* անդրանիկ է էն անուն՝ քան զամենայն բարի և ազնիւ և այլն. վասն որոյ ասաց մովսէսի...: - 111. Երրորդ՝ *զի* նախ՝ էի և գոյացութեան հաղորդեաց զեղեալքս, և ապա կենաց և իմաստութեան և այլն. զի նախ է գոլն մեր, և ապա բարի գոլն: - 111. Նախ՝ *զի* միշտ է. և ո՛չ երբեմն է և երբեմն ոչ է: - 111. Երկրորդ՝ *զի* նա՛ է սկիզբն՝ և մէջ՝ և վախճան: - 111. Երրորդ՝ *զի* ի նմա՛ է անցեալն՝ ներկայն և հանդերձեալն: - 111. Նախ՝ *զի* յարացոյցն պարզ է՝ և երկրպագելի՝ և անապական՝ և անփոփոխ: - 112. *Զի* առ աստուած՝ ո՛չէ սոսկ տեսութիւն արտաքոյ. այլ յինքն տեսանելով զյարացոյցն. և զմեզ ի յարացոյցն մեր իբր լինիլ մեզ նախ ի յաստուած, և ապա ի յէութեան մերում. և ո՛չ որպէս փոփոխումն ինչ ի բարի կամացն: - 112. Եւ գիտելի է, *զի* յարացուցիս և նախասահմանութեանս՝ արարողական պատճառ է աստուած. և նիւթական պատճառ իրն այն որ է նախասահմանի. և տեսական պատճառ է՛ կարգն. *զի* նախ տըւեալ լինի շնորհքն աստ. եւ ապա փառքն ի հանդերձեալն. և կատարողական պատճառ՝ *զի* լինիցիմք սուրբք և անբիծք: - 112. Այլ բազո՛ւմ է և զանազան ըստ պատկերի և նմանութեան յարացուցելոցս որք են բազումք. *զի* աստուած միով յարացուցիւ զբազումս տեսանէ. որպէս անմարմնութեամբն զմարմնաւորս տեսանէ. և յաւիտենիւ զժամանակեայս: - 112. Գիտելի՛ է, *զի* քառակաբա՛ր ասի անեղ: - 113. Երկրորդ՝ ասի անեղ այն՝ որ ո՛չէ եղեալ ի կատարումն. *զի* ունի սկիզբն՝ և կարօ՛տ է կատարման: - 113. Իսկ անե՛ղ է աստուած արծակապէս և գերազանց. *զի* անեղէ է՝ և միշտ գոյ՝ և ինքնակատար: - 113. *Զի* անեղ է՛ գոլով՝ տարորոշի յանեղ ոչընչէն. և միշտ գոյ՝ ի հրեշտակաց. և ինքնակատարն՝ յայնցանէ որ կարօ՛տ են սկզբման և կատարման: - 113. Ո՛ր անեղն զեղականքս յառաջ էած. *զի* եղականն յեղականէ՛ և անեղն յանեղէ՛ կարգաւորի: - 113. Նախ՝ եթէ անեղ է աստուած՝ ըստ որում անսկիզբն և անեղ էին արարածք ըստ անգոյին՝ կարգաւո՛ր է և յոյժ որպէս դու ասացեր. *զի* անեղ էն աստուած յառաջ էած զանեղն ի յէութիւն: - 113. **Դարձեալ՝ *զի* անեղ է բնութեամբն աստուած. ապա և անհո՛ւն է զօրութեամբ. *զի* եղական բնութեան զօրութիւն հունաւո՛ր է**: - 113. Այլ արդ՝ ըստ անեղ էութեանն յառաջ էած զանեղ էութիւնն որդւոյ և հոգւոյ. և ըստ անհուն զօրութեանն յառաջ էած զեղականն էութիւն. *զի* անհուն զօրութիւնն կարօ՛ղ է ամենայն ընդդիմակաց. ըստ որում ամենազօ՛ր է: - 113. Եւ *զի* անեղ է գիտութեամբ, վասն որոյ անփոփոխ է: - 113. Ա՛րդ՝ կարգաւո՛ր է *զի* անեղն աստուած՝ զանեղն ըստ տեսութեան՝ յեղելութիւն ածցէ ըստ գոյացութեան իւրեանց: - 114. Իսկ *զի* ի պատճառէ՛ են՝ այսու յատկացեալ են ի հօրէ. *զի* հայր անպատճառ և անսկիզբն է: - 114. *Զի* հայր անսկիզբն՝ յինքենէ՛ սկսեալ որդւով և հոգւով՝ արար սկիզբն սկզբնաւորացս...: - 114. Երկրորդ՝ *զի* յառաջ է քան զժամանակս: - 114. Երրորդ՝ *զի* գերիվերո՛յ է ժամանակաց և ո՛չ ի ներքոյ: - 114. Իսկ հոգի ո՛չ է արարիչ ժամանակաց. և ո՛չ յառաջ քան զժամանակս. *զի* ի մէջ ժամանակի՛ է: - 114. Այլ՝ անժամանակ է. *զի* ո՛չ է ընդ ժամանակաւ. այլ՝ ընդ յաւիտենիւ. և ժամանակն ի յաւիտեանն պարագրի: - 114. *Զի* աստուած արարիչ է յաւիտենից. և յառաջ քան զյաւիտեանս. և գեր ի վերոյ յաւիտենին: - 114. *Զի* աստուած պարագրէ զյաւիտեանն. որպէս յաւիտեանն զժամանակն. և ասի աստուած մշտնջենաւոր. *զի* ո՛չ ունի վախճան: - 114. Նմանապէս և յաւիտենական. *զի* ո՛չ ունի սկիզբն և ո՛չ վախճան: - 114. Իսկ հոգի մեր՝ և հրեշտակք՝ ասին յաւիտենականք. *զի* ո՛չ են ընդ ժամանակաւ. այլ ընդ յաւիտենիւ: - 114. Ասին և մշտնջենաւորք. *զի* ունին սկիզբն, այլ ո՛չ վախճան: - 114. Նախ՝ *զի* բազմաժամանակեա՛յ է: - 114. Երկրորդ՝ *զի* հնացեա՛լ է: - 114. Երրորդ՝ *զի* աւուրքն պակասեա՛լ են: - 114. Չորրորդ՝ *զի* փոփոխեա՛լ է: - 114. Ա՛րդ՝ երեքն ո՛չ յարմարին աստուծոյ. *զի* ո՛չ հնանայ և ո՛չ ծերանայ...: - 114. Այլ *զի* բազմաժամանակեայ է և յաւիտենից: - 114. Գիտելի է, *զի* հին ասելով՝ զյաւիտեանն նշանակէ. և օր զժամանակն: - 115. Ա՛յս է *զի* կոչի յաւիտեան. և ժամանակ. և օր...: - 115. Նախ՝ *զի* է՛ և գո՛յ աստուած յամենայն յաւիտեանս. և յամենայն ժամանակ. և յամենայն օր: - 115. Երկրորդ՝ *զի* նախ է քան զամենայն յաւիտեանս. և քան զժամանակ. և քան զամենայն օր: - 115. Երրորդ՝ պատճառ է յաւիտենից. և ժամանակաց. և աւուրց. որպէս լոյս. իմաստութիւն և կեանք կոչի. *զի* պատճա՛ռ է սոցա: - 115. Դարձեալ՝ գիտելի է, *զի* հին աւուրց և ծեր ետես դանիէլ. «հեր գլխոյ նորա սպիտակ իբրև զձիւն»: - 115. Նախ՝ նշանակէ ծերն՝ *զի* սկիզբն է ամենայնի: - 115. Եւ մանուկն՝ *զի* անփոփոխ և առանց այլայլութեան է: - 115. *Զի* որ անսկիզբն է՝ անվախճան է. և նոյն անվախճանն

անսկիզբն է: - 115. Թէպէտ առ մեզ տեսանի անսկիզբն յառաջին կողմն, և անվախճանն ի վերջինն. այլ ի նա ո՛չէ առաջին և վերջին. *զի* պա՛րզ և միեղէ՛ն է: - 115. Երրորդ՝ այսպէս մեկնեն, եթէ հին աւուրց զնախնի ժամանակս նշանակէ. և մանուկն զնախնի թիւն. *զի* միակն սկիզբն է ամենայն թըւոց. և որ մերձ է միակին՝ սկզբնապետագո՛յն է քան զհեռագոյնն: - 115. Ապա յա՛յտ է *զի* հին աւուրցն նշանակէ նախ քան զժամանակ և զյաւիտեան. և բարձրագոյն և արարիչ ժամանակի և յաւիտենի. և պարունակօղ յաւիտենի. որպէս յաւիտեանն ժամանակի: - 115. Յաւիտեանս Յաւիտենից. որ է՛ սկզբնական և յարաձգական. *զի* նա պարունակէ զերեք յաւիտեանն. որ ո՛չ սկիզբն ունի և ո՛չ կատարած: - 116. Եւ գիտելի է՝ *զի* աստուած կոչի յաւիտեան անսկիզբն և անվախճան. և է՛ պատճառ պարունակողացն յաւիտենին. որ ո՛չ սկիզբն ունի և ո՛չ կատարած: - 116. Այլ՝ կոչի աստուած յաւիտեան. և միշտ. և ժամանակ. *զի* պատճառ է սոցա որպէս ասացաւ ի վերոյ: - 116. Իսկ հրեշտակք և հոգիք և աշխարհ՝ կոչին յաւիտենականք. *զի* հաղո՛րդ են յաւիտենին. այնմ որ սկսեալ է և անվախճան: - 116. Այլ զայս ստեղծեալ յաւիտեանս ասեմք ոչ սկիզբն ունիլ և ո՛չ կատարած. *զի* պարունակօղ է ա՛յլ յաւիտենից որք ունին սկիզբն կամ կատարած. այլ ինքն պարունակի յանստեղծ յաւիտենէն որ է՛ աստուած: - 116. Դարձեալ՝ գիտելի է, *զի* յաւիտեանն և միշտ և ժամանակն՝ վեցիւք զանազանին: - 116. Նախ՝ *զի* յաւիտեանն ո՛չ ունի սկիզբն և ո՛չ վախճան: - 116. Նախ՝ ի աստուած ինքնակեա՛նք է. *զի* յինքենէ՛ ունի: - 117. Երկրորդ՝ *զի* աստուած կենդանարար կեանք է: - 117. Անմահութեամբ հաւասարք են. *զի* սկսեալք են և անվախճան: - 117. Եւ զանազանին միով. այսինքն փոփոխմամբ. *զի* հրեշտակն նոյն և անփոփոխ կենդանի է: - 117. *Զի* նախ կենդանի է մարմնով. յետոյ անմարմին. և յետոյ միաւորութեամբ յաւիտեան: - 117. Այսու հաւասա՛ր են, *զի* ի միոյ կենդանական պատճառէ՛ են սկսեալք: - 117. Այլ զանազանին, Նախ՝ *զի* իմանալին անմա՛հ կեանք է. և զգալին մահկանացու: - 117. Հաւասարին, Նախ՝ *զի* տարրական են: - 117. Երկրորդ՝ *զի* ապականացո՛ւ են: - 117. Եւ զանազանին, Նախ՝ *զի* տնկականն միայն ի ջերմութենէ հրո՛յ է: - 117. Երկրորդ՝ *զի* տնկականն ունի զկերակրիլն՝ զաճիլն՝ և զծնանիլն: - 117. Միտք մեր բ պակասութիւն ունի. այսինքն զմոռացումն և զտգիտութիւն. *զի* զանցեալն մոռանայ. և զապագայն ո՛չ գիտէ: - 117. Վասն է՞ր է *զի* աստուած զանգործս և զոչէսն տեսանէ. իսկ մեք զեղեալն և զգործեալն: - 118. *Զի* ուր բնութիւն ո՛չ հասանի, անդ և միտք մեր ո՛չ կարեն հասանիլ: - 118. *Զի* ինքն միա՛յն գիտէ զինքն: - 118. Ո՞րպէս տեսանէ աստուած զէքս. *զի* զգայութիւն ո՛չ ունի. որպէս մեք ներքին զգայութեամբ զիմանալիս՝ և արտաքին զգայութեամբ զերևելիս տեսանեմք: - 118. Համանգամայն, այս է՝ զանցեալն և զհանդերձեալն իբր ներկայ տեսանէ և ներկայապէս. *զի* յինքն տեսանէ զամենայն. և ինքն ներկա՛յ է ինքեան: - 118. Կատարեալ, *զի* առանց աւելածոյ և պակասութեան. և Անփոփոխ, *զի* տեսութիւնն աստուծոյ նոյն է: - 118. Եւ այս ամենայն ընդդէմ է տեսութեան մեր. *զի* մեք մասամբ տեսանեմք. և մի զկնի միոյ. և առաւել և պակաս գիտութեամբ. և ըստ իրին փոփոխմամբ: - 118. Դարձեալ է՛ յատկութիւն, *զի* նախ տեսութիւնն է աստուծոյ, և ապա էութիւն ամենայն իրի՝ տեսութեանն նորա հետևի: - 118. Իսկ մեր տեսութիւնս էութեանն հետևի. *զի* նախ իրն լինի, և ապա՛ մեք տեսանեմք: - 118. *Զի* աստուած նախ քան զգործն՝ և յառաջ քան զկամիլն՝ և նախ քան զէանալն տեսանէ...: - 118. Դարձեալ՝ տեսանէ աստուած ըստ պատճառի. *զի* ամենեցուն է պատճառ. և ըստ պարունակութեան, որ զամենայն առ ինքն ունի. և ըստ կատարման, որ ամենեցուն է վաղճան և կատարումն: - 118. *Զի* աստուած ո՛չ արտաքոյ ինքեան ունի զտեսութիւնն. այլ ի ներքս միայն. *զի* զինքն ի յինքն տեսանէ՝ և զայլս ի յինքն. ապա զեղեալքս ի յարացոյցն որ է տեսութիւնն աստուծոյ որպէս ասացաք: -118-119. Նախ՝ *զի* առ աստուած բոլորն տեսութիւն է՝ և լուր՝ և այլն: - 119. Երկրորդ՝ *զի* զամենայն տեսանէ. այսինքն զարդարս և զմեղաւորս: - 119. Երրորդ՝ *զի* ամենայն գործսն տեսանէ ի ներս և ի դուրս. զմտաց և զբանից և զայլն: - 119. Չորրորդ՝ *զի* զանցեալն և զներկայն և զհանդերձեալն տեսանէ: - 119. Սակայն՝ *զի* թէ էն ըստ որում է աստուած՝ կրկին կերպիւ տեսանի. այսինքն գիտութեամբ և անգիտութեամբ. դնելով և բացաբառնալով այսպէս: - 119. Դարձեալ՝ և այսպէս տեսանի աստուած. յորժամ միտք յամենայն եղելոց որոշեսցի. նաև յինքենէ՛ *զի* եղակա՛ն է. թողեալ զինքն միաւորեսցի յաստուածային ճառագայթն որ անքննելի լոյսն է և իմաստութիւնն: - 119. Պարզ և միեղէն, *զի* զնիւթաւորքս և զբաժանեալքս միով և պարզ տեսանեն: - 119. Եւ գերամբարձ, *զի* ի բա՛րձր կոյս տեսանեն և ամբառնան և ոչ ի խոնարհ: - 119. Ա՛յս է՝ *զի* ի բանն աստուած տեսանեն զաստուած ի յինքն. և զեղեալքս ի յինքն: - 119. Եւ ա՛յս է նոցա առաւօտու և երեկոյի ճանաչումն, *զի* զաստուած տեսանելով՝ նոր լինի նոցա ճանաչումն միշտ՝ որ է՛ առաւօտու: - 119. Այսու հաւասար է, *զի* պա՛րզ է և միեղէն և բարձրագոյն տեսութիւն որպէս ասացաք: - 119. *Զի* ի մի և ի նոյն բանն աստուած տեսանեն զաստուած, և տեսանեն զեղեալքս ի յարացոյցն իւրեանց: - 120. Այլ այսու զանազանին, *զի* աստուած ինքնիմա՛ստ ունի զտեսութիւնն. այսինքն յինքենէ՛ է անսկիզբն և անվախճան: - 120. Իսկ

հրեշտակք ո՛չ յինքենէ՛, այլ յաստուծոյ սկսեալ և անվախճան. *զի* առանց մոռացութեան ունին: - 120. Նախ՝ *զի* իմացումն խոնարհի ի յիմացածն որ առաջի իւր: - 120. Իսկ շնորհականն է ընդդէմ այսոցիկ. *զի* պարզ և միեղէն իմացմամբ բարձրանայ յաստուածային գիտութիւնն. և այնպէս ի զարմացման լինի տեսութեամբ նորին: - 120. Նախ՝ *զի* հրեշտակացն իմանալի և միահաղոյն է տեսութիւն. իսկ մարդկան բանական և մասն մասն ժողովելով: - 120. Չորրորդ՝ միեղէն է նոցա տեսութիւնն և ի միոյ. իսկ մերս բազում և ի բազմաց. *զի* բաժանեալ զգայարանօք զբաժանեալ իրս տեսանեմք: - 120. Նախ՝ *զի* լպրծի՛ միտք մեր և մոռանայ զբանն. *զի* հով և գէջ է պարուտակն և ուղեղ գլխոյն: - 120. **Երկրորդ՝ *զի* հարստահարեալ ի մարմնոյ ախտից՝ մոռանայ զբանն**: - 120. Եւ *զի* յետ մահու և յարութեան ո՛չ գոն այսոքիկ պատճառք՝ անմոռանալի մնայ իմացումն: - 120. Նախ՝ *զի* միտք զանմարմինն տեսանէ, և զգայութիւն զմարմինն: - 120. Նախ՝ *զի* ամենայն բանից և իմաստութեանց է բաշխօղ: - 121. Երկրորդ՝ *զի* զամենայն է քրիստոս ի նախագաղափար բանն իւր ժողովեալ ունի...: - 121. Երրորդ՝ *զի* բանս մեր ձայնիւ յամենայն լսելիս անցանէ և թղթով յամենայն տեղիս ընթանայ. և բանն աստուծոյ սո՛ւր է և հատու և ընդ ամենայն է քրիստոս անցանէ թափանցաբար: - 121. Չորրորդ՝ *զի* պարզի բանս մեր երիւրմամբ խռչափողիցն...: - 121. Հինգերորդ՝ *զի* ընդարձակի բանս մեր քան զամենայն ինչ. և բանն աստուծոյ ընդարձակեալ է առ ամենայն ինչ՝ գոյացութեամբ և արարչութեամբ: - 121. *Զի* յայս ճշմարտութենէս լոյս հաւատոյն ծագեալ ի միտս հաւատացելոց, անփոփոխ սերտութեամբ հաստատէ՛ զհաւատացեալս ի ճշմարտութիւնն. և զճշմարտութիւնն ի նոսա: - 121. Այսու հաւասարին, *զի* երկոքինն առ ճշմարիտն ունին զդիտումն: - 121. Նախ՝ *զի* բանականն առ երկրաւորս և բազում ճշմարտութեամբ կատարի: - 122. Երկրորդ՝ *զի* բանականն մոլորի երբեմն ի ճշմարտութենէն և տարակուսի: - 122. Եւ է սա՛ առաջին. *զի* զոր նա՛խ է քան զյաւիտեանս և զժամանակս՝ աստուածաբանէ՛ և քննէ՛: - 122. Եւ է սա՛ երկրորդ. *զի* ի պատճառէ՛ ստեղծման էիցս՝ աստուածաբանութիւնս այս յառաջագայի: - 122. Եւ է սա՛ երրորդ ըստ կարգի. *զի* յերևելեաց և ի մարմնականաց աստուածաբանութիւնս այս յառաջագայի: - 122. *Զի* ո՛չ մարմին է. և ո՛չ հոգի. և ո՛չ միտ. և ո՛չ այլ ինչ զոր մեք գիտեմք կամ իմանամք: - 122. *Զի* որպէս խաւարն անյայտ է, նոյնպէս և առաւել լոյսն անտեսութիւն առնէ. և նա անտես է ի հրեշտակաց. և անյայտ ի մարդկային մտաց. թէ ո՞րպէս կամ զի՞նչ է էութիւն և բնութիւն աստուածութեանն: - 122. Նախ՝ *զի* խորհրդով և հաւատով տեսանի և ո՛չ քննութեամբ մտաց: - 123. Երկրորդ՝ *զի* խորհրդով և ծածո՛ւկ է. և ո՛չ առակաւ և նշանակաւ. որպէս այլ աստուածաբանութիւնքն որպէս ասացաւ ի վերոյ: - 123. Երրորդ՝ *զի* խորհրդով և ծածուկ է պահելի ի հերձուածողաց և ի հեթանոսաց և յանվարժ մտաց ախմարաց...: - 123. **Ծանիր և զայս ուշիմ մտօք, *զի* ամենայն աստուածաբանութիւն նախ յերկուս բաժանի. այսինքն դրութեամբ և բացբարձմամբ:** - 123. **Գիտելի է՝ *զի* առաջին աստուածաբանութիւնն նեղագոյն է և սակաւաբան. որ է տպաւորականն: - 123. Եւ երկրորդն որ է պատճառաբանականն՝ առաւել է քան զառաջինն. *զի* յաղագս աստուածային անուա՛նցն է քննութիւն:** - 123. *Զի* որքան ի վերուստ ի վայր իջանէ՝ ի բազումս բաժանի. որպէս ի սեռէ ի տեսակս և յանհատս իջեալ բազմանայ: - 123. **Որո՞վ զանազանին և հաւասարին բացբարձականքն և ուրացականքն. *զի* մի և նոյն երևին: - 124. Նախ՝ *զի* նոյն ուրացական մասնիկն այն՝ այսինքն ո՛չն՝ ներգործէ՛ զուրացումն և զբառնալն: - 124. Երկրորդ՝ *զի* ընդդիմակ բառնալոյն՝ դրութիւնն է. և ընդդիմակ ուրացութեան՝ խոստովանութիւնն: - 124. Նախ՝ *զի* ուրացականն ըստ պակասութեան է. որ ասէ ո՛չէ աստուած քրիստոս. այսինքն պակա՛ս է և ո՛չէ աստուած. և ո՛չէ հայր. և ո՛չ որդի: - 124. Իսկ բացբարձականն ըստ գերազանցութեան է. *զի* գերազա՛նց բան է՝ և գերագունա՛կ միտ. և գերագոյն և առաւել հայր՝ և որդի. և ո՛չ ըստ մեր կարգիս որպէս մեր բանս է և միտք: - 124. Երկրորդ՝ ուրացականն ընդդէմ էութեան և փառացն աստուծոյ է. *զի* զէութիւն և զփառս աստուծոյ ուրանալ տայ:** - 124. Պատասխանեմ առաջնոյն, թէպէտ մի և նոյն ուրացական մասնիկն որ է ո՛չն՝ գործէ՛ զուրացումն և զբառնալն, այլ ուրացումն և բառնալն ո՛չ է նոյն. *զի* բազում պատահի որ գործին նոյն է որպէս ձեռն. այլ գործելն ո՛չ է նոյն. որպէս կտրելն և կարելն: - 124. *Զի*՝ մի արեգակն սկիզբն է **բ** լուսոյն. այսինքն դեղնին և սպիտակին: - 124. Եւ յատկութիւն արեգականն յայտնի է, *զի* սկիզբն է **բ** լուսոյն: - 124. Նախ՝ *զի* ի միոյ սկզբնէ են: - 125. Երկրորդ դարձեալ՝ **բ** լոյսքն զփիւռ և տարա՛ծք են. *զի* անմարմին են ծնունդ և բղխումն: - 125. Երրորդ՝ *զի* նոյն են բնութեամբ: - 125. Վեցերորդ՝ *զի* լուսաւորիչք են: - 125. Եւ արդ՝ *զի* հասարակ են էութեամբ՝ և յատուկ առանձնաւորութեամբ, յաղագս որոյ զանազանելի է զյատկութիւնս ըստ երկուց լուսոյն: - 125. Նախ՝ *զի* դեղին լոյսն ձևանայ ընդ երթս կամ ընդ լուսանցս մտեալ, իսկ սպիտակն ոչ: - 125. *Զի* ընդ ժամանակաւ եմուտ և զստուեր օրինացն կատարեաց: - 125. Այս է *զի* հոգին սուրբ որդւով պարգևի ամենայն արարածոց յերկինս և երկրի: - 125. Նախ՝ *զի* որպէս արեգակն ունի մշտնջենաւոր զլոյսն՝ և առնէ ի վերոյ երկրի տիւ և գիշեր: - 125. Երկրորդ՝ *զի* որպէս մի արեգակն կոչի տարրեղէն ամանն լուսովն և

իրովն: - 125. Հինգերորդ՝ *զի* յարնելից ընդ հարաւ խոնարհի յարևմուտս՝ և պատէ՛ հիւսիս, և դարձեալ ելանէ յարևելս: - 126. *Զի* որպէս ո՛չէ սկիզբն աստուածութեան նորա, և ո՛չ վախճան մարդկութեան նորա: - 126. *Զի* առաջինքն խորհրդով և օրինակաւ՝ և վերջինքս իրօք և ճշմարտութեամբ լուսաւորեալք ի նմանէ: - 126. Եօթնժերորդ՝ հաւասա՛ր է լուսով և ջերմութեամբ. *զի* ուր հասանի լոյսն անդ և ջերմութիւնն: - 127. Եւ տէր մեր հաւասար ողորմութեամբ և արդարութեամբ. *զի* որքան տեսանեն ողորմութեամբ՝ ծգտին առ շնորհն արդարութեան: - 127. Իսկ արժանապէսն՝ *զի* կարօղ աչքն լուսաւորին, և տկարքն խաւարին: - 127. *Զի* ոմանց տացի և յաւելցի. և յոմանց բարձցի և պակասեսցի ըստ չափու ունակութեան ընդունողաց: - 127. Իսկ զարմացումն լինի ի սիրոյ առ սիրելին. *զի* զմիտս զկեանս և զամենայն ինչ թողու սիրօղն՝ և սիրելւոյն համարի: - 127. Ո՞րպէս է նախանձն ի յաստուած. ըստ այնմ, «ես աստուած նախանձո՛տեմ». *զի* նախանձն ա՛խտ է առ մեզ: - 127. Նոյնպէս նախանձիլն. *զի* ո՛չէ և ասի: - 128. Դարձեալ՝ հոմանուն է նախանձն. *զի* նախա՛նձ է յաչաղելն և ատելն...: - 128. **Իսկ նախանձն աստուծոյ պարզապէս միայն ունի սիրել և զայլս և ո՛չ ատել. *զի* նախանձն աստուծոյ՝ սիրոյ առաւելութիւնն է. որպէս բոցն հրոյ**: - 128. Դարձեալ՝ նախանձո՛տ է և նախանձելի. այսինքն նախանձո՛տ է իբր զսիրեցօղ. և նախանձելի իբր զսիրելի. *զի* շարժէ՛ զմեզ ի սէր իւր: - 128. Դարձեալ՝ ինքնանախա՛նձ է. *զի* ո՛չ յայլմէ շարժի ի սէր որպէս մեք. այլ յինքենէ՛ շարժի ի սիրել և ի սիրիլ: - 128. Նախ՝ *զի* պատկե՛ր է նմա. և ապա *զի* փառաբանիչ աստուծոյ: - 128. Երկրորդ՝ *զի* էութիւնն աստուծոյ սէ՛ր է. և շարժի՛ սիրել զմեզ. և շարժէ՛ զմեզ սիրել զինքն: - 128. Երրորդ՝ *զի* ինքն ինքեա՛մբ է յառաջածու, վասն որոյ կոչի սիրօղ: - 128. Եւ կոչի սէր, *զի* շարժէ՛ զմեզ. և յառաջածու զօրութիւն է. և երևեցուցիչ. և միաւորիչ. *զի* այսոքիկ սիրոյ ներգործութիւնք են. վասն այն կոչի սէր: - 128. *Զի* ի բարւոյն եմք յառաջ եկեալ. և ի բարին հաստատեալ. և ի բարին կատարիմք: - 128. Ի յաստուածութիւնն՝ սոքա առաջին և վերջին ո՛չ ասին. *զի* համանգամայն զօրութիւնք են ի յաստուածութիւնն: - 128. Սակայն ըստ մեր իմացմանս հասարակ է բարին քան զսէրն. *զի* ասեմք՝ սէրն բարի է. ազնիւն բարի է. և այլն. որպէս ասեմք՝ մարդն կենդանի է. ձին կենդանի է. և այլն: - 128-129. Այլ ի ստեղծումն էիցս՝ սէրն առաջին է քան զբարին. *զի* ի սիրո՛յ շարժեցաւ յառաջ բարերարել և խնամել: - 129. Երկայնութիւն՝ որ ո՛չէ լայն և ընդարձակ. այլ միայն երկայն. *զի* երկարագծի զօրութեամբ ի բոլորս: - 129. Իսկ խորութիւն՝ *զի* ամենայն էից անպարունակելի է թաքնութիւն և անգիտութիւն: - 129. **Նախ ա՛յս է միտքն՝ որ այբն առաջին է և քէն վերջին. այսինքն ես եմ առաջին աստուածութեամբս. և ես եմ վերջին մարդկութեամբս. *զի* մարդն վերջին է արարածոց**: - 129. Երկրորդ՝ ես եմ սկիզբն և կատարած ամենայնի. *զի* ի բանէն աստուծոյ եղեն ամենեքեան և ի նոյն բանն վախճանին: - 129. Հինգերորդ՝ անսկիզբն աստուածութեամբն. և անվախճան մարդկութեամբն. *զի* որպէս ո՛չ է սկիզբն աստուածութեանն, և ո՛չ վախճան մարդկութեանն: - 129. Եօթներորդ՝ սկիզբն և վախճան գիտութեամբն ասի. *զի* զսկիզբն էից և զկատարածն ի ներքոյ իւր ամենահաս գիտութեանն բովանդակեալ ունի: - 129-130. Նախ՝ աստուածաբանն գրիգոր՝ զոտքն մարմնով տընօրէնութեանն ասէ նշանակ. *զի* մարմնով եկեալ զփրկութիւն մեր արար. և մարմնով համբարձաւ առ հայր: - 130. Երկրորդ՝ *զի* ոտք վերջին է մասն. և ի վերջին ժամանակս երևեցաւ մարմնով քրիստոս: - 130. Հինգերորդ՝ ոտքն են հաւատացեալք և առաքեալք նորին. և գլուխ է քրիստոս. *զի* անդամք և մարմին եմք նմա ըստ առաքելոյ: - 130. Իմանալի է իմացօղն. իսկ իմացական իմացեալն. *զի* իմացականն սնունդ և յառաջ եղեալ է իմանալւոյն: - 130. Ծանիր զայս, *զի* աստուած է միայն իմացական և ո՛չ իմանալի. և հրեշտակք իմացական և իմանալի. *զի* իմացականք են վերինքն. և իմանալի ներքինքն: - 130. Իսկ՝ հոգի մարդոյ միայն իմանալի և ո՛չ իմացական. *զի* իմանան զվերինսն՝ իմանալի՛ են: - 130. Երկրորդ՝ է՛ գործ արդարութեան. *զի* ըստ արժանեաց հատուսցի մեծաց և փոքունց. և առաջնոց և երկրորդաց: - 130. Երրորդ՝ է՛ գործ նախախնամութեան. *զի* ըստ ընտանի կարողութեան իւրեանց՝ համեմատապէս զպարգևս ընկալցին. զի մի վնասեսցին փոքունքն մեծամեծօք. և թերի մնացին մեծամեծքն սակաւուք: - 130. Ա՛յլ է բանն՝ և ա՛յլ է ձայնն. *զի* բանն անմարմին ծնունդն է մտաց. և ձայնն է՛ շարժումն օդոյ ի ձայնական գործեաց ի յօդս բախեալ. իսկ ի սրտի միաւորին նոքա՝ այսինքն բանն և ձայնն. և լեզուաւ յօ՛դս բախեալ՝ հասանէ մինչև ի լսելիս, և անդ ձայնն արտաքոյ մնացեալ, և բանն անմարմին ի միտս լողացն նստեալ: - 131. Երկրորդ՝ *զի* ձայնին ընդունարան է լսելիքն մերձ գոլով օդոյն: - 131. Նախ՝ *զի* նիւթեղէն միտք՝ միջնորդութեամբ նիւթո՛յ հասանէ յաննիւթն. որպէս տեսեալ զգիր՝ իմանամք զզօրութիւն նորա. և տեսեալ զորակ և զքանակ՝ իմանամք զգոյացութիւն իրին: - 131. Երկրորդ՝ *զի* ծածկեցաւ ի յանարժանիցն մտօք և գործովք...: - 132. Երրորդ՝ *զի* մեզ յայտնեսցի ծածուկ խորհրդով...: - 131. Չորրորդ՝ *զի* թէ պատւական նիւթով երևէին որպէս արեգակն՝ հուր՝ ոսկի՝ և ակն. գիտէաք թէ զնոյն բնութիւն ունին, և ո՛չ այլ ինչ գերիվերոյ: - 132. Հինգերորդ՝ *զի* տեսեալ զանարգ կերպարանն՝ խնդրեմք զճշմարիտ իմացումն: - 132.

Վեցերորդ՝ *զի* թէպէտ անա՛րգ են՝ ունին զբարի գոլն ստեղծմամբ և նախախնամութեամբ: - 132. Ութերորդ՝ *զի* խորանն առաջին և երկրորդ և երրորդ՝ վարագո՛յր էր. և ծածկէին զմիմեանս և յայտնէին. այսպէս առաջին խորանն է աստուածայինքն. և երկրորդն հրեշտակացն. և երրորդն մերս՝ վարագուրիւք ծածկեալ՝ որ յայտնեն զմիմեանս: - 132. Իններորդ՝ *զի* նշանակեալքն՝ վայրիք գազանք՝ հրեղէնք՝ և թևաւորք երևէին. ցուցանելով թէ արտաքոյ և հեռի՛ են յերևելեացս բնութեանց. և անըմնելք և վայրենիք: - 132. **Տասներորդ՝ *զի* ի սոցանէ՛ իմանամք զաննման նմանն**: - 132. Ա՛յսպէս, *զի* սոքա ունին սրտմտութիւն և ցանկութիւն: - 132. Եւ նոքա ըստ առաւելութեան. *զի* ունին զիմացականն բան և զգայութիւն: - 132. *Զի* երկնային է արծուին. և մարդն յերկրէ. և կենդանիքն ի ծովու: - 132. Երրորդ՝ *զի* չորեքկին կենդանիքն թագաւորականքն են: - 132. Առիւծն՝ *զի* թագաւոր է. և եզն՝ *զի* քահանայ է և պատարագ: - 132. Մարդն՝ *զի* այրացեալ աստուած. և արծուին՝ *զի* հոգին ի վերուստ պարգևեալ: - 132. և Նախ՝ *զի* նոցայն՝ էութիւն ո՛չ է. այլ առ աչօք ուրուական ցուցմունք. որպէս ի միտս ցնորք: - 133. Երրորդ՝ *զի* անդ բազմաց շրտնու տեսութիւնն. և աստ միայն զօրանայ տեսողական մասն միոյն. որպէս աշակերտին եղիսէի: - 133. Տասներորդ՝ դարձեալ զանազանի, *զի* երևմունքն միայն փոխեն զհասարակ զգայութիւնն: - 133. *Զի* աստուած առնէ զբորբոքումն ախորժակին. որպէս հուր որ վառէ՛ զփայտ: - 133-134. Երկրորդ՝ *զի* ժերորդ է մարդս կարգեալ ի թիւ նոցա ըստ հարիւրերորդ մոլորեալ ոչխարին, և կորուսեալ ժերորդ դրամին: - 134. Դարձեալ, *զի* ժերորդն աստուածպետութիւնն. և կատարումն ի վերայ ամենեցուն: - 134. Երկրորդ՝ *զի* թիւ է կատարեալ. առաջին միջին և վերջին: - 134. Երրորդ՝ *զի* են էութիւն զօրութիւն և ներգործութիւն: - 134. Համաձայնին միմեանց սուրբ վարդապետք. *զի* դիոնէսիոս ինն դասս ասէ հրեշտակաց. այլ առաջին դասքն անընդմիջաբա՛ր են յաստուածային իմացումն, համապատիւք և համափառք: - 134. Ասեմք եթէ՝ նոքա երեքեան դասքն՝ այսինքն աթոռք՝ քերօբէք՝ և սերօբէք՝ միակարգ միապատիւ և գերազանց էութիւնք են. *զի* անընդմիջաբար յաստուծոյ ամենայն լուսափայլութիւնք իմաստք և շնորհք ի նոսա հեղանին համակարգապէս. և ապա նոքօք յայլ ամենայն գոյս երկնաւոր և երկրաւոր: - 135. Նախ՝ *զի* զաթոռն մերձ նստողին տեսին եզէկիէլ և եսայի, և շուրջ զքերօբէքն և զսերօբէքն: - 135. **Երկրորդ՝ *զի* աթոռքն վերաբերին ի դէմս հօր...: - 135. Եւ քերօբէն որ է՛ բազում գիտութիւն՝ ի դէմս որդւոյ. *զի* նա՛ է իմաստութիւն և գիտութիւն հօր ըստ առաքելոյն: - 135. Եւ սերօբէն որ է՛ ջեռուցիչ՝ ի դէմս հոգւոյն սրբոյ. *զի* նա՛ է հուր սիրոյ զոր էարկ տէր մեր յերկիր: - 135. Երրորդ՝ *զի* սերօբէն մաքրական լսի և հրաբերձ. ըստ որում մաքրեաց զմարգարէն. և քերօբէն իմաստութեամբ լուսաւորիչ. և աթոռքն ուղղութեամբն կատարիչ**: - 135. **Նախ՝ *զի* սերօբէն խոկայ զբարութիւնն աստուծոյ. և քերօբէն զճշմարտութիւնն. և աթոռք զուղղութիւնն:** - 135. **Երկրորդ՝ *զի* սերօբէն բորբոքէ ի սէրն որ է անմիջոց կապ. և քերօբէն ի ճանաչումն ճշմարտութեան. և աթոռքն ի յուղղութիւնն. և նոքա են վերակացուք դատաստանի իրաւանց:** - 135. Որև յայլուրեք ի քերօբէս ասի նստել. *զի* ամենեքեան աստուածակիրք են և հանգիստ կամացն աստուծոյ: - 135. Նախ՝ *զի* տէրութիւնն ակնարկէ՛ առ հայր. և զօրութիւնն առ որդին. և իշխանութիւնն առ իշխանակից սուրբ հոգին: - 135. **Նախ՝ *զի* պետութիւնք պատշաճին առ հայր. և հրեշտակապետքն առ որդի իբր յերկուց միացեալ. և հրեշտակքն ի դէմս հոգւոյն իբր նախ եկաւորեալք յամենայն ուրեք, և ապա յորդի և ի հայր բնակեալ**: - 136. Նախ՝ *զի* հաւասա՛րք են բնութեամբ. անմարմինք՝ հրեղէնք՝ իմացական՝ և այլն: - 136. Երրորդ՝ *զի* վերինքն զներքնոցն ունին բոլորապէս զամենայն. և ներքինքն զվերնոցն մասնաբար ըստ չափու իւրեանց. և քահանայապետն ունի զաստիճան ներքնոցն բոլորապէս. և ներքինք զվերին քահանայապետիցն մասնապէս: - 136. Ապա յա՛յտ է *զի* ա՛յլ է կարգ շնորհականին, և այլ է կարգ բնականին. *զի* բնականք ներքինք զվերնոցն բոլորապէս ունին և կոչին. այլ ո՛չ անդրադարձեալ. որպէս անհատն զտեսակն և զսեռն բոլորապէս ունի և կոչի. *զի* պետրոս մարդ է և կենդանի և կոչի. այլ կենդանին մարդ՝ կամ մարդն պետրոս ո՛չ է և ո՛չ ասի: - 136. Ա՛յս է պատճառն, *զի* որ առաջին է և վերին՝ ունի զերկրորդն և զներքինն: - 136. Նախ՝ *զի* ընդհանուր դասք և իւրաքանչիւր անհատք ունին էութիւն՝ զօրութիւն՝ և ներգործութիւն. այսինքն ըստ որում էացեալքեն, և կարողութիւն ունին, և ներգործեն: - 137. Երկրորդ՝ *զի* առանձնաւորութիւն է զօրութեանց, այսինքն արիութիւն յաստուածայինսն և անշարժ գոլն և զօրացուցանելն. և զայս առ հասարակ ունին. վասն որոյ առ հասարակ զօրութիւնք կոչին: - 137. Երրորդ պատճառ. *զի* զօրութիւնք միջին են դասակարգեալ բոլորից. ի նոցունց դասուց և երիցն: - 137. Երրորդ՝ ամենեքեան զօրութիւնք կոչին. *զի* ունին զօրութիւն էութիւն և ներգործութիւն: - 137. Չորրորդ՝ *զի* ամենեքեան խնամարկուք են մարմնեղինաց: - 137. Վեցերորդ՝ *զի* հնազանդեալք են ի սպաս կամացն աստուծոյ: - 137. Եօթներորդ՝ *զի* երանեալք են ի սէրն և ի տեսութիւնն աստուծոյ: - 137. **Ութերորդ՝ *զի* ազատ և անձնիշխան կամօք ընտրեն զբարին և խոտեն զչարն. և դիւրասերտեալք ի բարին, և դժուարաշարժք ի չարն**: - 137. Իններորդ՝ *զի* ամենեքեան հրեղէն բնութեամբ

են ի շնորհս և ի փառս անփոփոխելիք: - 137. Տասներորդ՝ *զի* մշտաշարժք են երեքկին. այսինքն բոլոր՝ ուղիղ՝ և կողմնաւոր. որպէս ցուցցի յառաջիկայսդ: - 137. Երկրորդ՝ փառքն և պատիւն. *զի* ոմանք են ի գերագոյն փառսն քան զոմանս: - 137. Երրորդ՝ տեսութեամբն և իմացմամբն աստուծոյ. *զի* ոմանց առաւել է և ոմանց նըւազ: - 137. Չորրորդ՝ յատուկ է նոցա կարգն. *զի* ոմանք բարձրագոյնք են քան զոմանս: - 138. Հինգերորդ՝ *զի* ոմանք իշխան են և ոմանք իշխին: - 138. Եօթներորդ՝ ուսմամբ. *զի* ուսուցանեն և ուսանին: - 138. Ութերորդ՝ խնամարկութեամբ. *զի* ոմանք ազգի և թագաւորութեան, և ոմանք անհատի և առանձնականի լինին պահապան: - 138. Այսպէս, Նախ՝ *զի* մաքրել և լուսաւորել և կատարելագործել հասարակ է ի սոսա: - 138. Երկրորդ՝ *զի* նախ մաքրելն է, և ապա՛ լուսաւորելն, և ապա՛ կատարելագործելն. և այս կարգ հասարա՛կ է ի նոսա: - 138. Երրորդ՝ *զի* անբաժանելի է յունօղսն. որպէս յաստուած՝ և ի հրեշտակս, այսպէս և ի մարդն արժանացեալ. *զի* ունակութիւն է յարամնայ և կնիք անքակտելի: - 138. **Նախ՝ *զի* յաստուած ինքնակատար և նախակատա՛ր է քահանայապետութիւնն:** - 138. Երկրորդ՝ *զի* աստուած միշտ տայ և ո՛չ առնու: - 138. Իսկ հրեշտակն առնու՝ և տայ. *զի* առնու յառաջնոցն՝ և տայ ի վերջինսն: - 138. Երրորդ՝ *զի* աստուած անսկզբնապէս և բնութեամբ ունի: - 138. Նախ՝ *զի* առաջին դասքն անընդմիջաբար առնուն յաստուծոյ. իսկ միջինքն և վերջինքն միջնորդութեամբ: - 138. Երկրորդ՝ *զի* առաջինքն առանց տարակուսութեան առնուն զգիտութիւն. և այլքն նախ տարակուսին և ապա առնուն. *զի* այն որ առաջին դասն նախ էառ՝ տարակո՛յս է նոցա՝ մինչև ինքեանք ևս առցեն: - 138. Երրորդ՝ *զի* առաջինքն առաւել լուսաւորին գիտութեամբ, և այլքն ըստ չափու: - 138. Իսկ հրեշտակաց և մարդկան, Նախ՝ *զի* մարդիկ միջնորդութեամբ հրեշտակաց առնուն, և ո՛չ անդրադարձեալ. թէ և մարդացեալ բանիւն: - 138. Դարձեալ՝ առ հրեշտակս մի և նոյն իմացումն աստուածային՝ է՛ սրբութիւն՝ լուսաւորութիւն՝ և կատարումն նոցա. *զի* աստուածային գիտութիւնն սրբէ յառաջին տգիտութենէն և լուսաւորէ՛ զնոսա, և կատարին նոյն հանճարովն: - 139. Նախ՝ *զի* աստուած մերձաւո՛ր է նոցա: - 139. Երկրորդ՝ *զի* կամքն աստուծոյ հանգուցեալ է ի նոսա և ուղղէ՛: - 139. Երրորդ՝ *զի* ճշմարտութեամբ են պարփակեալ: - 139. Չորրորդ՝ *զի* զբարին սիրեցին: - 139. Հինգերորդ՝ *զի* անխոտո՛ր են տեսութեամբն ի յաստուած: - 139. Վեցերորդ՝ *զի* անփոփո՛խ են էութեամբ: - 139. Եօթներորդ՝ *զի* երանեալքեն կենօք: - 139. Ութերորդ՝ *զի* ի լո՛յս են բնակեալ: - 139. Իններորդ՝ *զի* թեթևացեալ են ի բարձունս: - 139. Տասներորդ՝ *զի* չարն իւրովի ատեաց զնոսա և հեռացաւ, և իբրև զմրուր յերկիրս զետեղեցաւ: - 139. Վասն առաջնոյն գիտելի՛ է, *զի* ամենայն շնորհ բղխո՛ւմն է և ճառագայթ, յանեղական լուսոյն իջեալ առ էակս ամենայն իմանալի և զգալի. և զարդարէ՛ զսոսա ըստ նմանութեան այնմ պարզևեալ շնորհի. եթէ ըստ բնութեան՝ և եթէ անձնական. ի հրեշտակս և ի մարդիկս: - 140. Վասն երրորդին անչա՞փ է թէ չափաւոր՝ գիտելի՛ է, *զի* անչա՛փ է շնորհն ըստ իւրում ինքնութեան. այլ չափաւորի՛ ըստ տըւողին կամաց և ըստ ընդունողին կարեաց. որպէս բան մարդոյ ի լսելիս: - 140. Նախ՝ *զի* հոգին բանական է. և հրեշտակն իմացական: - 140. Նախ՝ *զի* հրեշտակն միեղէն և բոլոր իմանայ. իսկ հոգին բան բան և մասնաւոր. վասն որոյ բանական կոչի: - 141. *Զի* գիտեմք զդոսա ինն գոլ դասս ըստ սրբոյն դիոնիսեայ. և երիս երրեակս որոշեալ ի դէմս Երրորդութեանն: - 141. *Զի* թիւ մեր նիւթեղէն և տկա՛ր և չափաւո՛ր է. վասն որոյ զանբաւութիւն նոցա ո՛չ կարէ չափել. - 141. Նախ՝ *զի* ամենեցուն սկիզբն է և պատճառ, գիտէ զսկսեալսն ի նմանէ: - 141. Երկրորդ՝ *զի* զամենեսեան միահամուռ ունի և պահէ՛. և այսպէս գիտէ զորս ունի առ ինքն և պահէ՛: - 141. Երրորդ՝ *զի* ամենեցուն կատարումն է և բովանդակութիւն. ապա այսպէս գիտէ զամենեսեան. ըստ որում սկիզբն է և կատարումն, յամենայնսն թափանցեալ է և ունի: - 141-142. Իսկ ուղիղ՝ *զի* իջանեն առ երկրորդսն նախախնամապէս ո՛չ ի նոյնէ ի նոյն, այլ ի միոյ ի միւսն: - 142. Նախ՝ *զի* ինքն ըստ ինքեան իմանայ և տեսանէ: - 142. Եւ կարօտի սա **բ** իրաց. այսինքն *զի* զգայութիւնն առո՛ղջ իցէ, և զգալի առաջի եդեալ իրն յստա՛կ. ապա թափանցէ՛ յինքն ի սոցանէ՛ պա՛րզ տեսութիւն. ապա թէ ո՛չ՝ ո՛չ կարէ միտքն յստակապէս տեսանել սոքօք: - 143. *Զի* ունի զգայարանք. այսինքն տեսանելի՛ք՝ լսելիք՝ և այլն: - 143. Իսկ հրեշտակք *զի* ո՛չ ունին զգայարանք՝ ո՛չ կարօտին գրոց և բանից: - 143. Ապա յա՛յտ է՝ *զի* գիրն ներգործակա՛ն է իմացութեանցն որ ըստ ինքեանն զոր ի վերոյ ասացաք: - 143. Ի յինքն՝ *զի* իւրաքանչիւր ոք սիրէ զինքն և կամի զգոլն իւր: - 143. Այլ և մարդ զկենդանիս և զանկենդանս. *զի* համասեռ գոյեղէնք են. և այս սիրովս շաղկապին առ իրեարս: - 143. Նախ՝ *զի* գութն բնական է, և սէրն ստացական: - 144. Եւ *զի*՝ գութն յատուկ տեսանի յանբան կենդանիսն, և սէրն յատուկ է առ աստուած: - 144. Իսկ մարդս *զի* յերկուց է գոյացեալ՝ ունի զգութ բնական՝ և զսէրն աստուածական: - 144. Դարձեալ՝ դիք ընդ աստուծոյ. *զի* դիտաւորութիւն ո՛չ կարէ թագչիլ յաստուծոյ: - 144-145. Այլ և հրեշտակն խօսի ընդ աստուծոյ. *զի* զբաղձանս իւր ընծայէ՛ նմա: - 145. Եւ ա՛յսպէս խօսին միայն վերինքն առ ստորինս. *զի* հաղորդեսցեն զնոսա աստուածային յայտնութեանցն: - 145. Դարձեալ ունին հրեշտակք առաւօտեան և երեկոյին ճանաչումն.

այսինքն *զի* տեսանելով. զբանն աստուած՝ կոչի առաւօտու ճանաչումն: - 145. *Զի* հոգին խօսի ընդ աստուծոյ բաղձանօքն որ մերկապարանո՛ցն է առաջի նորա: - 145. Դարձեալ՝ հոգին խօսի ընդ դիւին, *զի* զբաղձանք սրտին տպաւորէ ի զգայութիւնսն: - 145. Զամենայն հրեշտակս բարի արար աստուած, այլ ո՛չ ծայրագոյն բարիս. այլ միջակս. որ է ի մէջ անփոփոխ և փոփոխական բարւոյն. այնպէս՝ *զի* թէ դառնային և սիրէին զայն՝ որ ի վեր քան զինքեանս, ելանէին յորպիսութիւն շնորհաց և փառաց. որպէս այժմ են հրեշտակք բարիք: - 146. Յոգնորն այն է՝ *զի* անկաւ անձնիշխան կամօք ի բարւոյն ի չարն, ի լուսոյն ի խաւարն, ի գիտութենէն յանգիտութիւն, յանմեղութենէն ի մեղս, յերանութենէն ի թշուառութիւն, ի սիրոյն յատելութիւն: - 146. *Զի* յետ անկմանն եղև խստացեալ և անզեղջ ի չարն. կորացեալ ի ճշմարտութենէն. անկեալ ի բարւոյն. տկարացեալ ի զօրութենէն. արտաքսեալ յաստուածային խոկմանէն: - 146. Նաև անբարիշտ կամք նորա դարձել է յատելութիւն և ի նախանձ մարդոյն. *զի* ամենայն ջանիւ նկրտի ի կործանումն նորա բազմադիմի փորձութեամբ: - 146. Եւ այնչափ կուրացեալ է՝ մինչ զի պատերազմի ընդ դէմ աստուծոյ. թէպէտ գիտէ զայն լինիլ ինքեան ի չար, *զի* զոր ինչ չար գործէ անձնիշխան կամօքն, մեղանչէ մահու չափ: - 146. Նախ՝ *զի* հակառա՛կ է աստուծոյ, և մարդն պատկեր է աստուծոյ. յորժամ տկարանայ ի նախատիպն՝ ընդ պատկերն հակառակի: - 146. Երկրորդ՝ *զի* կամի այնու զփառս և զպատիւ աստուծոյ նուազել: - 146. Երրորդ՝ *զի* ի սիրոյն աստուծոյ զրկեսցէ զմեզ. *զի* կարասցէ յաղթել: - 146. Չորրորդ՝ *զի* ընդ ինքեան ի տանջանս քարշեսցէ: - 146. *Զի* ընդ իւր անկումն ի պատուոյ այնչափ չէ՛ տրտում, որքան ընդ մարդոյն փառաւորիլն: - 146. Ա՛րդ՝ բնութեան նոցա պատշաճի բարձրագոյն տեղիք որ է երկինքն յորում ստեղծան. *զի* թէ կացեալ էին կատարելոց էին անդ: - 146. *Զի* ի կատարածի աշխարհի յորժամ դադարի գործ դիւացն՝ ամենեքեան միահաղոյն փակեսցին ի դժոխս: - 147. *Զի* զոր ինչ բնութեամբ ունէին դեք՝ եթող ի նոսա աստուած յետ յանցմանն. և զոր ինչ երանութեամբ ստանալոց էին՝ զրկեցան: - 147. Անմարմին՝ *զի* յատկասցի. և լոյս՝ *զի* պատրեսցէ. և անմահ՝ *զի* տանջեսցի միշտ: - 147. *Զի* ինքնագիտ չարութեամբ նախ ինքն չարացաւ որ ասի գտակ. և ապա զայլս չարացոյց որ ասի մայր. որպէս սկիզբն և սերմանօղ չարեաց ի յայլս: - 148. Եւ կոչի արուսեակ դարձեալ, *զի* քան զայլս՝ իւր լուսոյ գեղեցկութիւնն առաւել կուրացոյց զինքն: - 148. Իսկ «առաւօտի», *զի* ի սկիզբն ստեղծման աշխարհի ընդ բաժանիլ ի մէջ լուսոյն և խաւարին՝ յայնժամ միայն ծագեցին յառաջին օրն յանկարծակի և անկան յերկնից. թէպէտ ոմանք յերկրորդ օրն ասեն: - 148. Եւ ապա *զի* ցուցցէ թէ՝ չար խորհրդոցն վրէժ խնդրութիւն կայ և պատիժ: - 148. Եւ դարձեալ, անմ զերկինս նշանակէ. *զի* ոմանք օդեղէն ասեն զերկինս: - 148. Եւ դարձեալ, *զի* ամպով և հողմով ասի շարժիլ աստուծոյ. և այսու լինիլ նման այսինքն ի վերայ ամպոց և հողմոց և հրեշտակաց շրջելով: - 148-149. Յաճոյ թուեցաւ նոցա բարձրութիւն նորա. խորհելով՝ *զի* թէ նա աստուծոյ յաղթեալ էր, նոքա ևս այլոցն իշխէին կարողութեամբ: - 149. Նախ՝ *զի* գոյին այնպիսի հրեշտակք որք մնացին ի բարին: - 149. Երկրորդ՝ *զի* պա՛րտ էր տեսանել այլոցն զմեղս նոցա և զպատիժ և մնալ ի բարին: - 149. Դարձեալ՝ և ո՛չ զնա միայն փրկէր *զի* մեռանիլ ո՛չ կարէր: - 149. *Զի* աստուած փոխանակ ապաշխարութեան զմահն կամեցաւ. և հրեշտակք անմահք են. վասն որոյ առանց փրկութեան մնացին: - 149. Վասն արդարութեան. *զի* արդարապէս վարձս ընդունիցին: - 149. *Զի* թէ այնպիսիք էին որ ո՛չ կարէին մեղանչել՝ իբր կապեալք լինէին և բռնադատեալք, և վարձս ո՛չ առնուին: - 149. Այլ ետ նոցա անձնիշխան կամս՝ *զի* կամովին ընտրեսցեն զբարին և արդարապէս զհատուցումն ընկալցին զի մի՛ երբեք մեղանչել կարիցեն: - 149. Վասն զարդու գործոց իւրոց. որպէս նըկարիչ զթուխ գոյնն ի ներքոյ դնէ՝ *զի* սպիտակն և այլ պատուականքն երևեսցին: - 149. *Զի* ոմանք ասեն թէ ի միջին դասուցն անկան գ մասն, և մինն մնացեալ յիշխանութեանցն խառնեցաւ: - 150. Եւ յօհաննէս զսա օդո՛յ դասէ. վասն այն նոյն անուամբն՝ պօղոս իշխան օդոյս կոչէ. կամ *զի* յօդս են բնակեալ և իշխեն մարդկան: - 150. Ո՛չ են յաւերժահասունք որպէս ոմանք կարծեն թէ յերկուց տարերց այսինքն ի հրոյ և յօդոյ են բանական կենդանիք և ունին ծնունդ և մահ. սուտ է այսպիսի կարծիքս և ընդունայն և հակառակ սուրբ գրոց. *զի* բանական կենդանի և մահկանացու՝ մարդս միա՛յն է որոյ յարութիւն և դատաստան գոյ: - 150. Նոյնպէս և յաւերժահասունք՝ *զի* միշտ պատրեն զմարդիկ ուրախութեամբ: - 150. Եւ որք ի ջուրս և ի ծնունդս կանանց՝ ա՛լք կոչեցան. *զի* գէջ ախտիւն զհոգիս կորուսանեն. և ի ծնունդս՝ զմարմինս և զհոգին: - 150. Նախ՝ *զի* ասեն վարդապետք թէ ո՛չ ումեք խրատու մեղանչեաց, և ո՛չ ումեք օգնութեամբ նորոգեսցի: - 150. Երկրորդ՝ *զի* որպէս ծառայ առ տէրն՝ ընդդէմ աստուածակերպ իմացմանն մեղանչեաց: - 150. Չորրորդ՝ *զի* ի դևն շրջեալ է տրտնջականն ըստ յառաջանալոյ ի բարին: - 151. Յինգերորդ՝ *զի* հոգևոր բնութիւնն միանգամ միայն է շրջելի. վասն զի բոլորովին շրջէ զինքն՝ զոր ո՛չ առնէ մարդն. *զի* մարմինն միշտ մարտնչի ընդ հոգին. որպէս յառաջիկայդ ասի լբ գլուխն: - 151. Նախ՝ *զի* ուրախ լինի ի վերայ սպանելոցն յինքենէ: - 151. *Զի* պահպանութիւն օրինացն՝ մարդոյս է՛ զէն պատերազմի: - 151. *Զի* գ գլխոյն կրկին է եղջիւր. որ է

հպարտութիւն՝ նախանձ՝ և բարկութիւն. *զի* սոքօք յաջ և յահեակ պատերազմի. և առ ընտիրս և առ խոտանս գտանին բազում ուրեք երեքին ախտքս այսորիկ: 151-152. *Զի* զորս քրտամբք և աշխատութեամբ յաղթէ՝ զնոյն պսակն ի գլուխն իւր դնէ: - 152. Իսկ «երրորդ մասն», ասէ սուրբն մեթոդէոս եթէ՝ զապստամբ հրեշտակս ասէ որք զթիւ երկնաւոր դասուցն սխալեցին. *զի* մինչ ո՛չ էին կործանեալ՝ դ կարգ էին իւրաքանչիւր դասուցն. որպէս յա՛յտ է ի չորեքկերպեան կենդանեացն: - 152. Իսկ «տուտն», Նախ՝ նշանակէ զվերջին հետեւեալսն ընդ նմա. *զի* նա առաջին ինքնագիտ էր ի չարն. և այլքն հետևեցան նմա: - 152. Այսինքն *զի* ոմանք փախչին յանապատ և թաքչին: - 152. Եւ այս վասն այնորիկ՝ *զի* չարախօսէ՛ր զմարդիկ եթէ ինքնայօժար կամօք և բնութեամբ մեղան և ո՛չ ի պատրանաց իմոց...: - 153. *Զի* յետ քրիստոսի դադարեաց սատանայ զհոգիսն ի դժոխս տանելոյ որպէս ասէ սուրբն եպիփան: - 153. Եւ աստ ասէ իրինոս՝ *զի* թէ յաւիտենական է հուրն, զիա՞րդ վախճան ածեն տանջանաց յաւիտենից ունայնախոհքն. թերևս կարծելով թէ ի հուրն մաքրեսցի. զի մի՛ լիցի աշակերտացն ճշմարտութեան խորհիլ և ասել: - 153. Վասն դրախտին *զի* երկին կոչի և իմանալի տունկ: - 155. Նախ՝ *զի* գործ բնութեան է՛ բնական. իսկ գործ կամացն է պատահական: - 156. Տասներորդ՝ գործ բութեան ո՛չ ինչ ունի մեղք. *զի* ըստ բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն. իսկ կամացն գործ՝ մեղանչական է. վասն որոյ կամաւորին գով և պարսաւ հետևի: - 156. Գիտելի է, *զի* հնգետասան եղանակաւ են ասացեալ: - 156. Նախ՝ *զի* գործ մարդոյ շօշափմամբ է. իսկ աստուծոյն առանց շօշափման: - 156. Երկրորդ՝ *զի* մարդն կարօ՛տ է նիւթոյ. իսկ աստուած անկարօ՛տ է նիւթոյ: - 156. Երրորդ՝ *զի* կայ ի մարդս որ ի հարկէ՛ առնէ. իսկ աստուած առանց ամենայն հարկի է: - 156. Վեցերորդ՝ մարդս կարօ՛տ է ուսմանց և իմաստից. իսկ աստուած անկարօ՛տ է ուսման և իմաստութեան. *զի* ինքն է աղբիւր գիտութեան և իմաստութեան: - 156. Հնգետասաներորդ՝ *զի* մարդ յետ ստեղծանելոյն ո՛չ է ընդ ստեղծուածս իւր. իսկ աստուած յետ ստեղծանելոյն՝ միշտ է՛ ընդ ստեղծուածս իւր նախախնամութեամբ....: - 157. Յասարակութիւն է, Նախ՝ *զի* ի միոյ բարերար կամաց յառաջ եկին գործ արարչութեան...: - 157. Այսպէս և գործ նախախնամութեան. *զի* կամի՛ *զի* ամենայն մարդիկ կեցցեն և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն: - 157. Երկրորդ՝ *զի* ուր հասանէ գործ արարչութեան, անդ գոյ և նախախնամութեան. և անդրադարձեալ նս՝ *զի* ուր գործ նախախնամութեան է, անդ և գործ արարչութեան: - 157. Երկրորդ՝ *զի* առաջին է ստեղծանելն՝ և ապա՛ նախախնամելն. այս ի յեղեալ իրն: - 157. Իսկ ի նոյն ինքն՝ առաջին է նախախնամութիւնն առ աստուած, և ապա՛ ստեղծումն. *զի* վասն նախախնամական բարութեանն կամեցաւ ստեղծանել զեղեալքս. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս ի դ գլուխն որ յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց: - 157-158. Երրորդ՝ *զի* առնելն ի սկիզբն նայի ստեղծեալ իրին *զի* լինիցի. և նախախնամելն ի կատարածն զի մի՛ կորիցէ: - 158. Չորրորդ՝ *զի* գործ արարչութեանն մի՛ անգամ է և ո՛չ ևս. ...: - 158. Հինգերորդ՝ *զի* գործ արարչութեան է մի միայն առնելն. իսկ գործ խնամելոյն է՛ առնել և թոյլ տալ երբեմն երբեմն ըստ պիտոյից բարեգործութեան: - 158. *Զի* առնելն է հաճոյական գործ առանց կասկածանաց. որպէս բարի առնել բարեաց, որ է՛ արդարութեանն աստուծոյ. և չար առնել չարեաց, որև այս է՛ խրատ ուղղութեան. այլ բարի առնել չարեաց, այս ողորմութեան է և գրութեան. այսորիկ առնելոյն են տեսակք: - 158. Նախ՝ *զի* զծածուկ առաքինութիւն արդարոյն յայտնի արասցէ այլոց ամենեցունց. որպէս զյոբայն և զաբրահամոյն...: - 158. Երկրորդ՝ *զի* ի ձեռն անտեղի գործոց՝ փրկութիւն լիցի այլոց. որպէս ի ձեռն խաչին քրիստոսի՝ փրկութիւն եղև աշխարհի: - 158. Չորրորդ՝ թոյլ տայ փորձութեան արդարոց ի յուղղութիւն այլոց. որպէս ղազարոյն և մեծատանն. *զի* տեսանելով զղազարոս՝ և լսելով վասն մեծատանն՝ զարհուրիմք և գամք յուղղութիւն: - 158. Վեցերորդ՝ թողեալ լինին ոմանք չարչարեալ առ ի նախանձ այլոց. *զի* պատիւ չարչարելոցն յայտնի լիցի վասն հանդերձեալ յուսոյն. ...: - 158. Եօթներորդ՝ թոյլ տուեալ լինի և ոմանց անկանիլ ի մեղս ինչ. *զի* ի հպարտութենէն զոր ունէր վասն առաքինութեան՝ խոնարհեսցի և անկցի առաջի տեառն խոստովանութեամբ. և ընկալցի զթողութիւն. որ նախ համասե՛ռ էր սատանայի: - 159. Ութերորդ՝ թոյլ տալով սրբոց չարչարիլ՝ վասն պսակացն առաւելութեան է. *զի* կենցաղս այս հանդէ՛ս է նահատակութեան. և ըստ չափոյ համբերութեան՝ առցէ զյաղթանակն. որպէս սրբոյն ստեփաննոսի. *զի* ունէր զսարկաւագութեան և զառաքելութեան պատիւն, ընկալաւ և զմարտիրոսութեան պսակն ի քարկոծումն իւր. այսպէս և այլքն...: - 159. Մետասաներորդ՝ որպէս հայրն զորդին գան հարու *զի* զգաստացեալ մի՛ զրկեսցի ի ժառանգութենէ հայրենեացն. այսպէս և աստուած զուրբս և զսիրելիս իւր խրատէ՛: - 159. Երկոտասաներորդ՝ *զի* սուրբքն բանիւ մեզ ուսուցանեն՝ նեղութեան և փորձանաց համբերել. պատրին ինքեանք գործով կատարել զնոյն. *զի* հաւատարիմ լիցին բանք նոցա: - 159. Երեքտասաներորդ՝ *զի* տկար մարմնով անմարմին և զօրաւոր թշնամոյն յաղթեսցեն. որով աստուած իսկապէս փառաւորի. տեսանելով զտկարն յաղթել զօրաւորին ըստ այնմ որ զախորժակս

իւր յայտնէ՛ր սիրելոյն...: - 159. Չորեքտասաներորդ՝ *զի* գիտասցէ սատանայ զտկարութիւն իւր՝ թէ ո՛չ միայն յաստուծոյ, այլ և ի մարդկանէ յաղթի...: - 159. Հնգետասաներորդ՝ ասէ սուրբն դիոնէսիոս՝ թէ վասն այն տայ աստուած սրբոցն նեղութիւնս և փորձութիւնս, *զի* նեղութիւնն սիրելի և փափագելի՛ է նոցա. և յայնժամ ուրախանան սուրբքն, յորժամ ի մարմնական հեշտութեանց հեռանան. և արիանան ի փորձութիւնս. և սակաւ նեղութեամբ ժամանեն ի մեծ հանգիստն: - 159-160. Իսկ առաքեալն վասն արտաքին փորձութեանցն ասէ. որ ի հալածչաց հասանէ ի վերայ մեր. յորում ուրախանալ պարտիմք. *զի* որքան յաճախէ փորձութիւնն, ա՛յնքան առաւելու և պսակն: - 160. Եւ բաժանմամբ ցուցանի. *զի* դ ազգ է բարին: - 160. Եւ այսպէս խնդրի արքայութիւնն. *զի* ըստ ինքեա՛ն բարի է: - 160. Որպէս թոյնք իժից, *զի* են ինքեանք բնութեամբ չար և պատճառե՛ն զչար. բայց պատահեցաւ ոմանց՝ դեղ լինիլ: - 160. Եւ ըստ ա՛յսմ կերպի է փորձութիւնն բարի. *զի* բնութեամբ չար է. և պատճառէ՛ զչար մեղքն. բայց պատահեցաւ ոմանց *զի* յաղթեցին փորձութեանց և ընտրիք երևեցան: - 160. Արդ փորձէ մարդ՝ *զի* զստո՛յգն գիտեսցէ: - 160. Իսկ սատանայ փորձէ՝ *զի* ի չար ընկեսցէ: - 160. Իսկ աստուած փորձէ զմարդ՝ *զի* գիտէ զնա՛ բարի և հաւատարիմ. այլ ծածկեա՛լ է յայլոց. փորձէ՛ *զի* յայտնի լիցի ամենայն աշխարհի առաքինութիւն նորա: - 161. Եւ այսու զանազանի փորձութիւնն աստուծոյ և սատանայի, Նախ՝ որպէս ասացաք՝ աստուած փորձէ՛ *զի* յայտնեսցէ զբարութիւնն. և սատանայ փորձէ *զի* հանցէ ի բարւոյն: - 161. Երրորդ՝ աստուած փորձէ՛ և տայ զելն՝ զի մի՛ յուսահատեսցի. և սատանայ փորձէ և ծանծրացուցանէ *զի* ընկեղմեսցին: - 161. Չորրորդ՝ *զի* յետ փորձութեան աստուած զպսակն պարգևէ. և յետ փորձութեանն սատանայ, ընդ իւր ի կորուստն յաւիտենական սպանանէ: - 161. Հինգերորդ՝ զանազանութիւն՝ *զի* սատանայ ի փորձելն ո՛չ գիտէ զառաջիկայն թէ յաղթէ և թէ յաղթի. և եթէ էր տեղեակ՝ ո՛չ մրցէր ընդ կատարելոցն որք յաղթահարեն զնա. որպէս ընդ ստեփաննոսի, անտօնի, և այլոցն, որք յաղթեցին սատանայի: - 161. Երկրորդ՝ *զի* արդարութեամբ տացէ զպսակն կամ զտանջանքն. թէ յաղթեն և թէ յաղթին: - 161. Երկրորդ՝ *զի* համբերութիւն ուսուցանէ մեզ...: - 161. Երրորդ՝ *զի* հրամայէ՛ տէրն, «յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք». որով անդորրութիւն պարգևի ծեզ: - 161. Չորրորդ՝ *զի* ասէ ոսկեբերանն՝ «անկեղծ սիրոյ կապանք է առատութիւն նեղութեանն». *զի* կեղծաւոր և անկեղծ սէրն առ աստուած փորձութեամբն երևի: - 162. Հինգերորդ՝ *զի* ասէ թէ՝ «առաւելութիւն զղջման և առաքինութեան գործ է՛». ***զի* ի մէջ նեղութեանց լինելով՝ յանցեալ մեղացն զղջանամք և սրբիմք. և յապագայն զգուշութեամբ պարսպիմք. և ի ներկայն՝ արի՛ և կա՛զմ պատրաստիմք:** - 162. ***Զի* որպէս հուր զժանկ արծաթոյ՝ և խարտոց զժանկ երկաթոյ, նոյնպէս և նեղութիւն սրբէ զմեղս մարդոյ:** - 162. *Զի* յատուկ է առաջին պատճառին որ է՛ աստուած՝ ի հարկէ էակ գոլ՝ և միշտ ներգործութեամբ, և իսկապէս ներգործութեամբ. որովք տարորոշի յայսցանէ՝ որ կարելի՛ են էակ գոլ. և երբեմն ներգործութեամբ և հանդերձ զօրութեամբ: - 162. *Զի* կամ ի զօրութենէ լինի ներգործութեամբ. որպէս մանկան հիւսնել: - 162. *Զի* ի հարկէ՛ էակ է, որ զգոլն միայն ունի. իսկ զչգոլն ո՛չ ունի. ապա ուրեմն անփոփո՛խ է էութեամբ: - 162. Եւ միշտ ներգործութեամբ է. *զի* ո՛չ կարօտի սկզբան և կատարածի զօրութեամբ գոլ. ապա ուրեմն անսկիզբն է և անվախճան: - 162. Եւ իսկապէս ներգործութեամբ, *զի* զօրութեամբ որ է՛ անկատար իր ինչ ի յաստուած ո՛չ է. այլ ամենայն ներգործութեամբ. այսինքն ի տեսութիւնն և ի կամքն. ապա ուրեմն անշա՛րժ է տեսութեամբ և կամօք: - 162. Եւ *զի* յա՛յտ եղև այս, այժմ պատասխանեսցուք հարցմանն: - 162. Դարձեալ՝ կամքն աստուծոյ անփոփոխ է. *զի* ո՛չ տարակուսի և ո՛չ զղջանայ. ապա թէ արար աստուած զաշխարհս ի գոյութիւն՝ այժմ առնէ յանգոյութիւն, երևի փոփոխումն անփոփոխելոյն. կամ զղջումն և երկբայութիւն. որ օտա՛ր է արարչականն կամաց: - 162. Եւ թէ ոք ասիցէ, եթէ աստուած զոր ոչ կամի՝ ո՛չ կարէ, որպէս զչար *զի* ո՛չ կամի և ո՛չ կարէ. նոյնպէս զմեղս և զայլսն. ապա երևի անկարութիւն ի յաստուած գոլ: - 163. Իսկ առ աստուած կամքն և կարն հաւասա՛րք գոն. վասն որոյ հակադարձին ի միմեանս. *զի* զոր ինչ կամի՝ կարէ՛. և զոր կարէ՝ զնոյն և կամի՛: - 163. Ապա յա՛յտ է *զի* զչարն և զմեղս ո՛չ կամի, վասն այն ո՛չ կարէ: - 163. Ջորօրինակ՝ արեգակն ո՛չ կարէ լինիլ խաւար, *զի* առաւե՛լ է լոյս: - 163. Նմանապէս և աստուած ո՛չ կարէ զչար, *զի* առաւել կարէ զբարին: - 163. Եւ ո՛չ կարէ ոչ էանալ, *զի* առաւել է. և այլն ամենայն: - 163. Գիտելի է, *զի* կրկին է սկիզբն լինելութեան աշխարհի: - 163. Երկրորդ զանազանութիւն՝ *զի* նախկին սկիզբն համանգամա՛յն է ի միտքն. և երկրորդ սկիզբն նա՛խ է՝ և կատարումն յետոյ: - 163. Երրորդ զանազանութիւն՝ *զի* թէ շինի տաճարն և թէ ոչ՝ առաջին սկիզբն որ ի միտքն մնայ՝ նոյն ո՛չ առաւելու և ո՛չ նուազէ: - 163. Չորրորդ զանազանութիւն՝ *զի* առաջին սկիզբն զօրութեամբ է տաճարին. և երկրորդն ներգործութեամբ: - 163. Հինգերորդ զանազանութիւն՝ *զի* ձևն անմարմին է ի միտս. իսկ շինեալն մարմին: - 163. Իսկ հասարակութիւն է Նախ՝ *զի* երկուց սկզբանցն մի և նո՛յն է պատճառ ներգործական. որ է՛ արուեստաւորն: - 163. Երկրորդ՝ հասարակութիւն է, *զի* որպէս է նկարեալ ձևն, նոյնպէս

և շինեալ տաճարն քանակութեամբ և որպիսութեամբ. և անդրադարձեալ ևս: - 163. Եւ *զի* օրինակն ունի նմանութիւն և ունի աննմանութիւն. վասն որոյ կոչի օրինակ: - 163. Նախ՝ *զի* որպէս շինօղ տաճարին զսկիզբն և զկատարումն ետես. այսպէս և արարիչն աստուած ի կրկին սկիզբն գործոյն զկատարումն աշխարհի ետես: - 163. Երկրորդ՝ *զի* բանիւ գործէ արւեստաւորն. այսինքն իմաստութեամբ և կամօք. այսպէս և արարիչն աստուած զամենայն եղեալքս կամեցաւ և արար...: - 164. Նախ՝ *զի* շինօղն էր յառաջ, և յետոյ ետես զշինուածն: - 164. Երկրորդ՝ *զի* յետոյ ջնջեցա՛ւ նախատեսիլն: - 164. Երրորդ՝ *զի* շինօղն որ ինչ պատահի գործոյն ո՛չ գիտէ: - 164. Չորրորդ՝ *զի* շինուածն ի միտս զօրութեամբ է և սոսկ մտածմունք: - 164. Իսկ նախախնամութիւնն առ աստուած գոյացական է և միշտ. *զի* պատահումն ո՛չ գոյ յաստուած: - 164. Եօթներորդ՝ *զի* ուսմամբ է նախատեսութիւնն որ առ մեզ: - 164. Ութերորդ՝ *զի* բազմօք զբազումս տեսանեմք, կամ բազմօք զմի: - 164. Իններորդ՝ *զի* նախատեսութիւն մեր ի ներքուստ զարտաքոյսն՝ և արտաքուստ զներքոյսն ճանաչէ: - 164. Իսկ աստուած տեսանէ զներքոյսն ի ներքուստ, և զարտաքոյսն ի ներքուստ. *զի* զամենայն առ ինքն և յինքն տեսանէ. և ոչ ինչ է արտաքոյ ինքեան: - 164. Տասներորդ՝ *զի* տեսութիւն մեր զէ՛սն տեսանէ. և զոչ էսն ո՛չ տեսանէ: - 164. Եւ այլ բազում զանազանութիւն է գործոց մարդկան և աստուծոյ. *զի* մեք կարօտ եմք նիւթոյ. ժամանակի. տեղւոյ. օգնականի: - 164. Այլ և ո՛չ ըստ այնմ որ է՛ սկիզբն գոյացութեան աշխարհի. *զի* անփոփոխ կամօք կամեցաւ և արար ի գոյութիւն. և անկա՛ր է փոխիլ կամացն անեղին և առնել յանգոյութիւն զեղեալս էութիւն: - 165. Ժամանակն՝ *զի* նա՛խ է ունակութիւն. և յետոյ պակասութիւն: - 165. և Մասն՝ *զի* նոյն մասինն որոյ էր ունակութիւն՝ նորին եղիցի և պակասութիւն: - 165. և Նոյն՝ *զի* նոյն ունակութիւնն եղև նոյն պակասութիւն: - 165. *Զի* կարէ՛ ունակութեանն լինիլ պակասութիւն. և անկա՛ր է պակասութեանն լինիլ ունակութիւն: - 165. Ապա յա՛յտ է *զի* կուսութիւնն է ունակութիւն. և ապականութիւնն պակասութիւն նմին: - 165. Դարձեալ՝ կարելին և անկարելին են այլագիծք և այլասեռք. և ոչ կարեն լինիլ մի և նոյն. *զի* այլասե՛ռ հակակայք են: - 165. Ուստի յա՛յտ է *զի* կարելին ունի զգոլն և զչգոլն. և անկարն զմինն. կամ զգոլն կամ զչգոլն: - 165. Դարձեալ ասեմք, թէ կոյսն և պոռնիկն՝ առաքինութեան և չարութեան են տեսակք, և ներհա՛կք են առաքինութիւն և չարութիւն. *զի* փոփոխեն զմիմեանս. ըստ այնմ և թողութեան հանդիպին: - 165. Դարձեալ ասեմք թէ ո՛չ միապէս է մեղքն նախ քան զշնորհքն և յետ շնորհացն. *զի* առաջինն անգիտութեամբ էր, և վերջինն գիտութեամբ. և առաջինն հաւատովք սրբի, և վերջինս ապաշխարութեամբ և սրբութեամբ: - 166. Իսկ ապաշխարութիւնն կրկին. *զի* կնիք ո՛չ է. և վերջին է սրբութիւն: - 166. Եւ յայտնի եղեալ որպիսութիւն սոցա ի միտ առ. *զի* անհաւատն այժմ եկեալ ի հաւատս կարէ՛ լինիլ և քահանայ. իսկ չար հաւատացեալն ո՛չ կարէ լինիլ քահանայ: - 166. **Ուստի յա՛յտ է *զի* էրէցն երկրորդ ամուսնութեամբն ո՛չ կարէ քահանայագործել. յիրաւի և ապա պոռնկեալն էրէց կամ աբեղայ՝ ո՛չ կարէ քահանայագործել. *զի* ուխտազա՛նց է:** - 167. Նախ՝ *զի* գործն իշխանութեան է որ ո՛չ է խափանեալ: - 167. Եւ ապա *զի* ներգործօղն բա՛նն է աստուածային որ ո՛չ երբէք արգելի: - 167. Նախ *զի* փրկական է խորհուրդն ամենեցուն. այլ անարժան մերձեցեալն կորնչի. յիրաւի արգելցի ի սպասաւորութենէն: - 167. Երկրորդ՝ *զի* բազումք գայթակղութեամբ կորնչին. արդ ի հարկէ որպէս ասացաւ՝ կամ միոյ կամ բազմաց լինի կորուստ: - 167. Ապա ուրեմն ստուգապէս և յիրաւի՛ է կանոնեալ սուրբ հարցն, *զի* զայնպիսին արգելցեն ի սպասաւորութենէ խորհրդոյն: - 167. Այլ տեսցուք զայս և յօրինակս ճշմարտութեան. *զի* ադամ յետ միոյ յանցանացն ո՛չ մատոյց պատարագ զամենայն աւուրս կենաց իւրոց. այլ որդւո՛ցն հրամայէր մատուցանել: - 167. Յասցանէ յայտնի է *զի* զղջացեալ այնպիսին կարէ՛ հաղորդիլ ի ձեռն այլոց. այլ ո՛չ ինքն պատարագել: - 167. Գիտելի՛ է, *զի* հոմ անուն է զօրութիւնն. այսինքն կարութիւնն. և հոմանունն մա՛յր է մոլորութեան. վասն որոյ որոշելի է զնոսա: - 167. Դարձեալ այն զօրութիւնն և ներգործութիւնն և հարկաւորն մի է. և հետևին առ միմեանս. *զի* ամենայն որ հարկաւոր է՝ ներգործութեամբ է. և ամենայն ներգործութիւն զօրութեամբ ներգործէ. իսկ միւս զօրութիւնն և կարելին և ներընդունականն որ է մարթելի՝ մի է և հետևին առ իրեարս. *զի* ամենայն որ զօրութեամբն է՝ կարելի է և մարթելի: - 168. Դարձեալ այն զօրութիւնն անփոփոխ է. *զի* միայն ի գոլն կարէ, և ի չգոլն անկար: - 168. Դարձեալ՝ այն զօրութիւնն միշտ է. *զի* բնաւորեալ է ընդ ներգործութեան. իսկ միւս զօրութիւնն երբեմն է. *զի* կամ նախ է ներգործութեան. որպէս մանկան հիւսնել: - 168. Ապա յա՛յտ է զանազանութիւն սոցա, *զի* ոմն զօրութիւն հարկաւոր է և ներգործութեամբ և անփոփոխ և միշտ. որպէս հրոյ ջեռուցանել, և արեգական լուսաւորել: - 168. Եւ զայսպիսի զօրութիւնս ո՛չ երբէք ասեմք ի վերայ աստուծոյ. *զի* մշտնջենաւոր էութիւն է. և ոչ ընդունի զգոլն և զչգոլն: - 168. Նախ՝ *զի* պարզ ներգործութիւն է աստուած. *զի* եթէ գոյ ինչ զօրութեամբ նախատեսութիւնն աստուծոյ՝ ապա բաղադրեա՛լ է և ոչ պարզ ներգործութիւն: - 168. Երկրորդ՝ *զի* միշտ ներգործութիւն է աստուած. ապա թէ գոյ ինչ զօրութեամբ, ո՛չ լինի միշտ ներգործութիւն. այլ

երբեմն: - 168. Երրորդ՝ *զի* ի հարկէ՛ էակ է աստուած. և հարկն զմինն ունի ի հակադրութեանց. այսինքն կամ զգոյն կամ զչգոյն: - 168. Տասներորդ՝ *զի* գոյք ամենայն տարորոշին երրակի: - 169. Այլ արդ՝ լինելութիւն աշխարհի առ ինքն ըստ ինքեան ասի զօրութեամբ և ներգործութեամբ. *զի* ի զօրութենէ եկն ի ներգործութիւն. *զի* թէ ոչ գոյր զօրութեամբ նախ՝ ո՛չ լինէր յետոյ ներգործութեամբ: - 169. Ուստի յա՛յտ է *զի* ի լինիլն աշխարհի՝ նախագաղափար տեսութիւնն նոյնպէս եկաց մնաց առանց յաւելուածոյ և պակասութեան: - 169. Այլ արդ՝ երևի թէ արարածք պատահումն են ի յարարիչն *զի* յետո՛յ եղեն: - 169. Նախ՝ *զի* պատահմունքն են յէութենէ իրին երևեալ. այլ արարածք ոչ յէութենէ, այլ ի կամաց արարչին յոչնչէ ներգործեալ են: - 169. Երրորդ՝ *զի* արարածք՝ են ի գոյացական սեռէ, և ո՛չ ի պատահական. զիարդ լինին պատահումն ի յարարիչն: - 169. Այլ արարիչն առանց արարածոց ո՛չ է անկերպ և անզարդ. *զի* արարածք ոչ ինչ յաւելուած են արարչին: - 170. Նախ՝ *զի* զգոյն իւրեանց ունէին ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. թէպէտ յետո՛յ ընկալան գոյացութիւնս յինքեանս. որպէս տաճար ի միտս շինողին: - 170. Երկրորդ՝ թէպէտ յետոյ եղեն արարածք, ո՛չ են պատահումն. որպէս և բանն էր յառաջ, և յետոյ եղև մարմին. այլ մարմինն բանին ո՛չ է պատահումն. և որդի հօրն ո՛չ է պատահումն թէպէտ յետոյ ծնանի *զի* առ ինչ է հօրն: - 170. Նախ՝ *զի* աստուած միա՛յն է ինքն ինքեամբ. և ո՛չ յայլմէ հաստատեալ. ըստ որում ասէր առ մովսէս՝ «ե՛ս եմ որ էն»: - 170. Երկրորդ՝ *զի* պատահումն յետ գոյացութեան է: - 170. Այլ ի յաստուած ոչ ինչ է յետոյ. այլ ինքն նախ քան զամենայն է. *զի* «ի սկզբանէ՛ էր բանն». և այլն: - 170. Երրորդ՝ *զի* պատահումն ընդ գոյացութիւն խառնեալ՝ լինի բաղադրեալ. որպէս նիւթ և տեսակ: - 170. Չորրորդ՝ *զի* պատահումն է՛ փոփոխական իր. իսկ աստուած անփոփոխ է էութեամբ զօրութեամբ կամօք և գիտութեամբ...: - 170. *Զի* թէ գոյր պատահումն ի յաստուած, լինէր բազում և ո՛չ մի. իսկ աստուած մի է և ո՛չ բազում...: - 170. Վեցերորդ՝ *զի* ներհականայ պատահումն գոյացութեան. այլ աստուած աններհա՛կէ է: - 170. Եօթներորդ՝ *զի* պատահումն աւելո՛րդ է գոյացութեան. զի գոլովն ո՛չ գոյացուցանէ. և այլն: - 170. Եօթներորդ՝ զի պատահումն աւելո՛րդ է գոյացութեան. *զի* գոլովն ո՛չ գոյացուցանէ. և այլն: - 170. Ութերորդ՝ *զի* պատահումն ժողովելով առ գոյացութիւնն լինի մարմին: - 170. Իսկ ի յաստուած պատահումն ո՛չ է. *զի* ո՛չ է ինքն ինքեան այլ՝ և այլայլակ: - 170. Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ. *զի* է կոչի աստուած, ըստ այնմ «ես եմ որ էն». և ո՛չ ըստ այնմ որ բաժանի ի գոյացութիւն և ի պատահումն. որպէս հոմանուն կամ փաղանուն. կամ ի միոջէ և առ մի. որպէս ընդհանուր էակն է՝ բաժանի առ մեզ: - 171. Եւ դարձեալ՝ է կոչի աստուած, *զի* նա միա՛յն է տեսակ առանց նիւթոյ. և գոյ առանց պատահման: - 171. Նախ՝ *զի* գոյն նախկին է քան զպատահումն. և նախկին է աստուած ամենայնի: - 171. Երկրորդ՝ սկիզբն և պատճա՛ռ է գոյն. *զի* գոլովն գոյացուցանէ. և աստուած՝ ամենեցուն: - 171. Իսկ Ուր ոչ ասեմք տեղի աստուծոյ. *զի* տեղի որ է՛ բովանդակութիւն, եռաբա՛ր ասի: - 172. Յայտնանէ ազա՛տ է ամենայնիւ աստուածայինն էութիւն. *զի* անմարմին է և անսահման և անհաս մտաց: - 172. Այլ և ո՛չ տեղի պատահական. որպէս աստ և անդ. *զի* ոչէ ի տեղոջ իմիք պարունակեալ. և ո՛չ բացեայ ի տեղւոջէ իմիք զատեալ. *զի* նա՛ է ամենցուն տեղի: - 172. Այլ ասի տեղի կերպիւ ինչ, *զի* է՛ հայր ի յորդի. և որդի ի հայր. և հոգի ի հայր և յորդի. և անդրադարձեալ...: - 172. Իսկ Երբ ո՛չ ասի աստուծոյ. *զի* անժամանա՛կ է և ո՛չ ունի փոփոխումն. այլ ասի յաւիտենական. ըստ որում բոլորն համանգամա՛յն է և կատարեալ. *զի* ոչ կարօտի սկզբան և վախճանի. որպէս ժամանակն. և ո՛չ միայն սկզբան որպէս մշտնջենաւորն. այլ անսկիզբն է և անվախճան. վասն որոյ կոչի յաւիտենական: - 172. Իսկ Կալ՝ ո՛չ զկալն կամ զնստիլն մարմնապէս. այլ զհաստատիլն անշարժ էութեամբ. *զի* ո՛չ շարժի. ո՛չ բնութեամբ, ո՛չ կամաւ, և ո՛չ տեղեաւ: - 172. Բնութեամբ ոչ շարժի, *զի* անփոփոխելի է: - 172. Եւ ո՛չ կամաւ, *զի* անզղջանալի՛ է: - 172. Այլ և ո՛չ տեղեաւ, *զի* անբովանդակելի՛ է: - 172. Նախ զայս ասեմք թէ ամենայն ինչ հնարաւոր է աստուծոյ. *զի* կարէ՛ առնել զոր միտք մարդկան տեսանէ. և կարէ՛ զոր ո՛չ տեսանէ: - 173. Նախ՝ *զի* ասեմք եթէ աշխարհ յառաջ քան զլինիլն իւր գոյր ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. ապա ուրեմն ո՛չ է յոչ ուրեքէ յոչ երբեքէ: - 173. Մին է՝ *զի* միշտ ոչ ինչ է. *զի* ոչ զօրութեամբ և ո՛չ ներգործութեամբ ունի զգոլն. և յայս ոչ էակէս ոչ ինչ լինի: - 173. *Զի* երբեմն էր որ ոչ էին. և այժմ են, և յետոյ ապականին: - 173. Այսինքն կամօք է՝ *զի* գիտութիւնն և կամքն առաջնորդէ՛ գործոյն և հնարաւոր է՛ առնել զայս՝ և առնել զայն, զոր և կամեսցի. որպէս մարդ *զի* տէր է գործոյ իւրոյ՝ առնելոյ և ոչ առնելոյ: - 173. Իսկ գործ բնութեամբ է՝ *զի* բնութիւնն առաջնորդէ՛ գործոյն. որպէս հուր բնութեամբ այրէ, և սարդն բնութեամբ գործէ: - 173. Եւ այս ինչ է հարցումնդ *զի* թէ ասեմք կամաւ ներգործէ, ասեն՝ ապա փոփոխական ներգործէ որպէս մարդ. իսկ թէ ասեմք բնութեամբ, ասեն ցմեզ եթէ անբանապէս և ի հարկէ ներգործէ: - 173. *Զի* էակքս ամենայն՝ ոմանք բանաւորք են և ո՛չ միշտ ներգործականք. որպէս մարդս: - 173. Իսկ աստուածայինն է ընդդէմ սոցա. *զի* է բանաւոր և է միշտ ներգործական որպէս ասացաւ:

- 173. Ասեմք առ այս Նախ՝ եթէ ո՛չ ամենայն գործ բնութեան հետևի, այլ և կամաց. որպէս մարդոյ. *զի* մի է կամք ի քրիստոս, մի է և ներգործութիւնն: - 174. Եւ յա՛յտ է *զի* եզական և անհատն մարդ՝ է զանազանեալ իւր յատուկ որակութեամբն: - 174. Քանակաւն և որակաւն. *զի* սոքօք անհատ գոյացութիւնն երևի: - 174. Տեղին է պարագրող մարմնոյ. *զի* ամենայն մարմին տեղեաւ պարագրի. և ամենայն տեղի է ի պատահական սեռէ: - 174. Բաղկացական է, որ ընդ մարմնոյ մասնկանցն գոյանայ ի ներս և ի դուրս. վերոյ և ներքոյ շուրջանակի. *զի* իւրաքանչիւր մասունք ի տեղին ունին զդրութիւնն. և կայացեալ ի բոլորն: - 174. Իսկ անմարմնոյն ո՛չ է տեղի մարմնական. որպէս աստուծոյ կամ հրեշտակաց. կամ հոգւոց. *զի* անպարագրելի են: - 174. Եւ գիտելի է՝ զզանազանութիւն սոցա. *զի* հոգին է ի մարմինն կալմամբ և սահմանեալ. այլ ո՛չ պարագրեալ. իսկ հրեշտակն ո՛չ կալմամբ ի մարմին և ոչ պարագրեալ. այլ սահմանեալ: - 174. Իսկ աստուած արտաքոյ է սոցա. *զի* ո՛չ է սահմանեալ և ո՛չ պարագրեալ և ո՛չ կալեալ յիմեքէ. ո՛չ իմացմամբ և ո՛չ տեղեաւ կամ մարմնով: - 174. Ո՞րպէս է *զի* աստուած պարզ է և աննիւթ, զնիւթականքս յառաջ էած. *զի* այս է կարգն որ նիւթն ի նիւթոյ, և աննիւթն յաննիւթոյ յառաջագայի: - 175. Նախ՝ *զի* ո՛չ ունի քանակ, որակ, ձև, և այլքն, որ նիւթո՛յ են յատկականք: - 175. Երկրորդ՝ *զի* ի զատ ճողոպրի ի զգայութեանց. այսինքն ի տեսանելեաց, ի շօշափելեաց, և յայլոց, որ զնիւթականս զգան: - 175. Այլ թէպէտ աննիւթ է աստուած՝ ո՛չ է անկարգ զնիւթականքս յառաջ ածել ըստ այսմ օրինակի. *զի* նիւթն որ է՛ գոյացութիւն մարմնական՝ ունի որակութիւնս իմն մարմնական. որպէս քանակ. որակ. և այլքն: - 175. Եւ ուստի՞ է յայտ ասիցէ ոք. այսինքն *զի* բանն անմարմին է որ բաժանէ զսոսա. *զի* այս է կարգն որ մարմին զմարմին բաժանէ. և անմարմին զանմանմինն: - 175. Եւ մարմնով ո՛չ բաժանին սոքա. թէպէտ և մանր փոշի լինին՝ ունին զքանակն զորակն և զայլն. *զի* անմեկնելի որոշմունք են գոյացութիւն և պատահմունք: - 175. Եւ որովհետև ծանեաք *զի* անմարմին են սոքա, յա՛յտ է *զի* բաժանումն սոցա քակէ՛ զնիւթն ի մարմնոյ. ապա ուրեմն ի մի վայր ժողովումն՝ ծնանի զնիւթական մարմինն: - 175. *Զի* աննիւթ և պա՛րզ էութիւն է աստուած. և յառաջ էած յոչընչէ զաննիւթ էութիւնքս. այսինքն զգոյացութիւն, զքանակ, զորակ, և զայլսն. և իւրով զօրութեամբն ի միասին ժողովեալ կազմեաց մարմնական նիւթ: - 175. Նախ՝ *զի* սոքա անմարմինք են ըստ ինքեան. այսինքն քանակ, որակ, և այլքն. և յանմարմին էութիւնս ո՛չ տեսանին. որպէս ի հրեշտակս կամ ի հոգիս. *զի* նոքա ո՛չ ունին ձև. որակ. քանակ. և զայլսն: - 175. Երկրորդ՝ *զի* իր մարմնական են և ի մարմնի էանան սոքա՝ և ո՛չ են մարմին. այլ անմարմին էութիւն որպէս ասացաք: - 175. Չորրորդ՝ *զի* իւրաքանչիւր սոքա առանձին սահման ունին և բնութիւն. և ո՛չ միաբանին ընդ միմեանս և ո՛չ ընդ մարմնի. այսինքն քանակն որակն. և ծանրութիւնն. և այլքն: - 175. *Զի* քանակն որակ ո՛չ է և ոչ ասի. և ո՛չ ծանրութիւն. և ո՛չ կարծրութիւնն մարմին: - 175-176. Հինգերորդ՝ *զի* առանձին բնութեամբ սոքա ի մի էութիւն ժողովեալ խառնին. և մի բնութիւն նիւթոյ կատարեն. և ի բնութիւնս իւրեանց ո՛չ շփոթին և այլայլին: - 176. Ո՜վ մեծի աղետիս և վշտալից տարակուսի. *զի* այսպիսիքս զմի միաւորութիւն տեառն ուրանան...: - 176. *Զի* ուղղաձնութեան ուսուցիչք ի բաժանմանէ ի միութիւն եկեալ խոստովանին զքրիստոս. և սոքա ի միութենէ ի բաժանումն որոշեն: - 176. Եւ *զի* անշփո՛թ են սոքա յատկութեամբ՝ յայտ է. ուստի ասեմք, պետրոս մա՛րդ է և բանաւոր և կենդանի և զգայուն և շնչաւոր և մարմին և գոյացութիւն: - 176. Երկրորդ՝ վասն ատելութեան. *զի* բարձաք զսէրն: - 177. Չորրորդ՝ *զի* գրովն որ է մարմին՝ հասանիմք յանմարմին բանն: - 177. Հինգերորդ՝ *զի* յետոյ լինելոցն էր բանն աստուծոյ մարմին. որպէս գիրն ունի յինքեան զբանն. և խօսի ընդ մեզ: - 177. Գիտելի է, *զի* է դրամբ փակեալ է ծածուկ իմացումն գրոց: - 177. Նախ՝ *զի* է գիր: - 177. Եւ Նախ *զի* է գիր՝ ունի գովութիւն երեքկին: - 177. Առաջին՝ *զի* ամենայն գիր գործիք է բանի. և ունի իմաստութիւն և բան ծածկեալ յինքեան: - 177. Երկրորդ՝ *զի* ձեռամբ գրչի մտանէ ի բառ. և առանց բերանոյ բարբառի. և տեսանի աչաց. և լսի ականջաց. և ուսուցանէ զմիտս: - 177. Իսկ Երկրորդն *զի* է ձայնաւոր: - 177. Նախ՝ *զի* հնչէ՛ ձայն: - 177. Երկրորդ՝ *զի* ծնանի զբանն: - 177. Երրորդ՝ *զի* պարփակէ. այսինքն ժողովէ և որոշէ զբանն: - 177. Եւ զայս ունի այբն. *զի* է՛ ձայնաւոր ընդ այլ է ձայնաւորաց: - 178. Իսկ Երրորդն *զի* է առաջին: - 178. Նախ՝ *զի* առաջին է և հայր և ծնօղ ամենայն գրոց ձայնաւորաց և բաղաձայնից: - 178. Երկրորդ՝ *զի* առաջին և սկիզբն է թուոց. որպէս միակն թիւ բազմանայ և խառնի յայլս, այսինքն՝ ի **ժ. ի ճ. ի ռ.** և ի բիւրն. և ի միութենէն իւրմէ ո՛չ որոշի: - 178. Իսկ Չորրորդն *զի* ունի ձև, **գ** ստեղն ի մի խառնեալ: - 178. Երկրորդ՝ առաջին ստեղն է հայր. ոչ յումեքէ. միջինն որդի ծնունդ ի հօրէ. վերջինն հոգի բղխումն ի հօրէ և ելումն յորդւոյ. *զի* որդւովն երևի. և հարթ հաւասար աստուածութեամբ և արարչութեամբ: - 178. *Զի* նախախնամութեամբ հաղորդեալ են յարարածս. և իսկական բնութեամբն մեկնեալ և որոշեալ և յանհասս գերամբարձեալ: - 178. **Իսկ Հինգերորդ *զի* կոչի այբ. որ թարգմանի հայր**: - 178. Նախ *զի* է ծնօղ և սկիզբն ամենայն գրոյ և իմաստութեան. որպէս հայր աստուած բոլորից: - 178. Վեցերորդ՝ *զի* ի բազում բանս մտանէ և գրի քան զայլ ձայնաւորս. և յա՛յտ է, *զի* բազում իմաստութիւնս

ծնանի: - 178. Նա՛խ՝ *զի* իմաստութեամբն զնոսա կարեմք գտանել. և նոքօք զիմաստութիւնն ո՛չ: - 178. Եւ դարձեալ՝ *զի* նոցա ամենեցուն ներհակ գոյ. որպէս մեծութեան աղքատութիւն. առողջութեան հիվանդութիւն. կենաց մահ: - 178. *Զի* իմաստունն թէ մեծանայ, գիտէ՛ կարգաւորել: - 178. Նախ՝ *զի* առ ինչք են սոքա. ծնունդն զծնօղն ցուցանէ. և արարածն զարարիչն: - 179. Երկրորդ՝ *զի* ծնունդ եմք կամացն աստուծոյ, և արարածք բանին: - 179. Երրորդ՝ *զի* արարած լսելով՝ մի՛ կարծեսցես օտար ի նմանէ զեղեալքս, կոչէ՛ ծնունդ. և յորժամ ծնունդ լըւիցես, մի՛ կարծեսցես յէութենէն աստուծոյ զեղեալքս՝ ի վերայ բերէ արարած: - 179. Չորրորդ՝ *զի* ծնանիմք ի բարի կամացն աստուծոյ յառաջ գիտութեամբ նորին. և ապա գոյանամք արդեամբ և գոյացութեամբ ըստ իւրաքանչիւր տեսակաց: - 179. Ծնունդ, *զի* ի բնութենէ հօր նախքան զյաւիտեանս ծնեալ է: - 179. Բարութիւնն աստուծոյ. *զի* իցեն՝ որոց զբարութիւն իւր հաղորդէ՛: - 179. Եւ նա բազումք. *զի* աշխարհ կոչի աշխարհարարն. և աշխարհս. և մարդս ըստ հոմերոնի: - 179. Եւ այլապէս ո՛չ կարէր լինիլ. *զի* ամենայն ինչ ի սմա՛ կատարեալ գոյ. և ոչինչ է պակաս ի սմանէ: - 179. *Զի* գ են երկինք: - 180. Ասէ զայս, *զի* բնութեամբ անբովանդակելի է. և ոչ տեղեաւ ըմբռնի. մինչ զի ինքն զամենայն տեղիս պարունակէ. յորում կեամք և շարժիմք և եմք: - 180. *Զի* ըստ իմաստ նոյն է՛ աստուած ամենայն ուրէք և ո՛չ ուրէք. ոչ ի տեղւոջ իմիք՝ և ո՛չ բացեայ ի տեղւոջէ իմիք. այլ վերոյ սորա, և ներքոյ սորա. ի մէջ սորա, և արտաքոյ սորա: - 180. *Զի* թէ ոչ գոյ, ապա անուր և անե՛րբ է աշխարհս. և լինի յաւէտակից աստուծոյ: - 180. Այլ և ո՛չ աներբ. *զի* ի սկիզբն ժամանակի եղև: - 180. Եւ զի ո՛չ է ի տեղւոջ աստի յայտ է, *զի* տեղին է վերին և ներքին և միջին. և արտաքոյ աշխարհիս ո՛չ երևին սոքա: - 180. *Զի* առանց հողոյ շօշափումն ո՛չ լինի. և ո՛չ առանց ջրոյ կալումն և մածումն. և ո՛չ առանց օդոյ շարժումն. և ո՛չ առանց հրոյ երևումն: - 180. Եւ ջուրն քան զօդ. և օդն ծա՛նր է քան զհուր. *զի* սակաւ ինչ գիճութիւն ունի: - 180. *Զի* երկիր ցուրտ է և չոր: - 181. *Զի* ջուր ցրտութեամբ ընդ երկի՛ր է կապեալ. և գիճութեամբ ընդ օդ: - 181. Նախ՝ ի շարժմանէ՛ երկնային մարմնոց. *զի* միշտ նոյնպէս և անդադար շարժին. առնելով զօր և զամիս՝ և զեղանակս՝ և զտարի՝ ստուգագոյն չափով առանց յաւելուածոյ և պակասութեան: - 181. Երկրորդ՝ *զի* հաւասարութիւն և միաբանութիւն տարերաց անլուծանելի է. ըստ որում ներհակ որակօք հաւասարք են հակակայ. և միւսովն միաբանք: - 181. Երրորդ՝ ի լինելութեանց և յապականութեանց. *զի* անպակասք են. ըստ որում հատեալ ի տարերաց՝ լինելութիւն է ա՛յլ էակաց. և ապականութիւն նոցա լնու զհատումն տարերաց: - 181. Չորրորդ՝ *զի* մասն ապականի, այլ բոլորն կեայ. որպէս իւրաքանչիւր անհատ մարդոյ և ձիոյ մեռանի, այլ բոլորն մնայ. այսպէս և տարերք: - 181. Հինգերորդ՝ *զի* անձերանալի՛ է երկիր. ըստ որում շարժմամբ թօթափի երկիր ի ներքին պատահմանց. և հեղեղօք ողողի և սրբի յարտաքին պատահմանց: - 181. Նախ այսպէս ասեն եթէ՝ տարերքն գնդաձև պատեալ են զմիմեանս և ամրացեալ. *զի* բոլորակ հուրն պատեալ է զօդ. և օդ զջուր. և ի մէջ ջրոյն երկիր է՛ հաստատեալ: - 181. Երկրորդ՝ այսպէս. *զի* օդն հողմովն փեռեկէ՛ զհուրն ի բ կիսագունդս. վերոյ և ներքոյ: - 181. Եւ բնականն Նախ այսպէս. *զի* օդն որ ի մէջէ մտեալ և փեռեկեալ զներքին և զվերին կիսագունդն, նա՛ է պատճառ շարժութեան երկնից: - 182. Եւ երկիրս անշարժ է տեղեաւ, ետ սմա ապականիլ երեսօք. *զի* տեսեալ մարդիկ եղական և ծառայ իմասցեն զնոսա. և մի աստուածս կարծեսցեն և մոլորեսցին. որպէս ասէ նիւսացին ի գիրս կազմութեան: - 182. Առաջին պատճառ, *զի* երկինքն է պարզ մարմին. *զի* ո՛չ է ի չորից տարերց. այլ եերորդ էութիւն է: - 182. Եւ բոլորակ ձևն պա՛րզ է քան զամենայն ձև. *զի* եռանկիւնին յերից գծից բաղկանայ, և քառանկիւնին ի քառից. նոյնպէս և այլքն: - 182. Երկրորդ՝ *զի* բոլորակ ձևն պարունակօ՛ղ է. և երկինքն զամենայն պարունակեալ ունի ի ծոց իւր: - 182. Ապա ուրեմն պա՛րտ է *զի* ունիցի զձև բոլորակ: - 182. Երրորդ՝ *զի* բոլորակն սո՛ւր է ի շարժումն. և երկինքն սրագո՛յն է ի շարժումն, որ ի շրջիլն իւրում շօշափէ՛ զերկիր ի մի կէտ: - 182. Չորրորդ՝ *զի* երկինքն է կատարեալ մարմին. *զի* ազդէ՛ յամենայն ստորնային մարմինս խնամելով զնոսա: - 182. Նախ *զի* ո՛չ կարէ յաւելուլ ի նմա և ո՛չ պակասիլ: - 182. Երկրորդ՝ *զի* ո՛չ երևի ի նմա սկիզբն և ո՛չ կատարած: - 182. Երրորդ՝ *զի* վեցեակ թիւն ի մէջ ամենայն թուոց առաջին կատարեալ է. և զ թիւն է ի բոլորակ ձևն. *զի* որ քան է ի միջին կիտէն ի բոլոր ծիրն, վեց այնչափ է իւր բոլորակ ծիրն: - 182-183. Վեցերորդ՝ *զի* թէ երկինքն ո՛չ էր բոլորակ, յայնժամ արեգակն և այլ աստեղք յորժամ գային ի մէջ երկնից, մեծագոյն երևէին. քանզի ի միջին կիտէն երկնից առ մեզ է ուղղական գիծ. իսկ յարևելից առ մեզ է՛ խոտորնակի գիծ. և ուղղական գիծն կա՛րճ է քան զխոտորնակ գիծն: - 183. Այլ կոչի սա՛ հրեղէն, *զի* է՛ ի հրոյ: - 183. Երրորդն՝ է վերին մասն օդոյն. և կոչի եթերային երկին. *զի* մերձ ի տարրեղէն հուրն է. և վառի ի նմանէ. զոր թռիչ աստեղաց կոչեմք: - 183. Հինգերորդ՝ երկինք կոչի և դրախտն. *զի* բա՛րձր է և լուսաւոր և անմահութեան է վայր...: - 183. Սոքա հնգեքին կոչին երկինք. *զի* զյատկութիւնս երկնից ունին. և սոքօք լինին հնգետասան երկինք: - 183. Նախ կոչի երկինք ամենասուրբ Երրորդութիւնն. *զի* անհաս բարձրութեամբ գերազանցեալ է յամենայն եղելոց: -

183. Նախ՝ *զի* մարմին է բարձր. որ և ի սահմանս իւր նախադրի: - 184. Երկրորդ՝ *զի* է՛ փայլուն լուսաւոր: - 184. Երրորդ՝ *զի* բոլորակ ունի ձևս. որ է կատարեալ վեցեկի չափովք: - 184. Չորրորդ՝ *զի* պարզ և վճիտ է ըստ էութեան: - 184. Հինգերորդ՝ *զի* անապական է բնութեամբ: - 184. Վեցերորդ՝ *զի* աստեղօ՛ք է ջահաւորեալ: - 184. Եօթներորդ՝ *զի* է անդորր վայր. այսինքն հաւասար ընդարձակ և դաշտաձև գոլով: - 184. Ութերորդ՝ *զի* է՛ առանց պղտորման. այսինքն ծեան, կամ անձրևաց, խորշակի, և ցրտոյ: - 184. Իններորդ՝ *զի* մշտակա՛յ է ի պարունակութիւնս իւր. այսինքն *զի* ո՛չ ունի այլայլումն և փոփոխումն ըստ անարգ շարժութեան երկրի: - 184. Տասներորդ՝ և որ վեհագոյնն է. *զի* ապարանք և հանգիստ է միայն աստուծոյ պատշաճեալ: - 184. Նախ՝ *զի* խո՛ր է: - 184. Եւ զայս գիտել պարտ է. *զի* մեծն ներսէս զհաստատութիւնն՝ արփի ասէ և եթեր կոչէ. զոր արտաքինքն եերորդ տարր ասացին որ ո՛չ երևի մեզ: - 184. Եւ այս ևս գիտելի է, *զի* որպէս հրեղէն երկինն հոմանուն է, այսինքն լուսեղէնն որ ի սկզբանէ ստեղծաւ. և բոլորակ հրոյն: - 184. Գիտելի՛ է, *զի* հոմանուն է լոյսն: - 185. Եւ է՛ իմանալի լոյս՝ որպէս հրեշտակք՝ և հոգի մարդոյ. և պատուիրանն աստուծոյ. *զի* «պատուիրանք տեառն լոյս են» ասէ մարգարէն: - 185. Զի՞նչ է բարութիւն լուսոյն որ ասէ՝ «ետես աստուած զլոյսն *զի* բարի է»: - 185. Նա՛խ՝ *զի* հալածէ՛ զխաւարն: - 185. Տասներորդ՝ ըստ չափու և կարողութեան բաշխէ. որպէս ի կեանս յայսմիկ, և ի հանդերձեալն առաւել *զի* կարիցեմք տանել: - 185. Նախ՝ *զի* միատեսա՛կ է և մի: - 186. Եօթներորդ՝ *զի* ջերմ է զօրութեամբ: - 186. Ութերորդ՝ *զի* լուսաւո՛ր է: - 186. Վեցտասաներորդ՝ *զի* ամենայն լուսաւորք ի նմանէ՛ առնուն զլոյսն: - 186. Եօթնևժերորդ՝ *զի* չա՛փ է ժամանակաց: - 186. Նախ՝ *զի* մի բնութիւն է աստեղաց: - 186. Երկրորդ՝ *զի* լուսաւո՛ր է: - 186. Երրորդ՝ *զի* անապակա՛ն է: - 186. Չորրորդ՝ *զի* մշտաշա՛րժ է: - 186. Հինգերորդ՝ *զի* դիրքն իւր մեծ է. թէպէտ և առ մեզ փոքր: - 186. Վեցերորդ՝ *զի* հաստա՛տ է ի դիրս իւր: - 186. Եօթներորդ՝ *զի* զարդ երկնից է: - 186. Ութերորդ՝ *զի* նշան ժամանակաց է: - 186. Իններորդ՝ *զի* օրինակ փառաց մերո՛ց է: - 186. Տասներորդ՝ *զի* բոլո՛ր է: - 186. Նախ՝ *զի* միջա՛կ է արեգական և աստեղաց: - 186. Նա՛խ՝ *զի* ի ներքո՛յ է ամենեցուն. և ամենայնին զօրութիւն առ նա՛ ժողովի: - 187. Եւ յորժամ ի միւս կիսագունդն հասանէ, ընդ զ կենդանակերպս հետևեալ՝ բոլորի լոյսն ի նմա. *զի* ուղղապէս զլոյսն ընդունի: - 187. Եւ գիտելի՛ է, *զի* ընդ ամենևին հեռանալն լուսինն խաւարի. և ամենևիմբ մերձ եկեալ ի նոյն կենդանակերպն և ուղղապէս ընդ դէմ անցեալ արեգականն՝ խաւարէ՛ զնա. *զի* ընդ դիմատիպ է անօթ լուսնոյն: - 187. Եւ *զի* ո՛չ հանապազ խաւարին. *զի* ո՛չ միշտ ընդ նոյն շաւիղս ընթանան. թէպէտ հանդիպին ընդ նոյն կենդանակերպն: - 187. Նոյնպէս և լուսինն. *զի* այն որ պայծառն է՝ կերպարանք երկրի է. և աղտն՝ ծովուց: - 187. Նա՛խ՝ *զի* երկինքն բարձր է, և յայնմանէ առաւել զլոյսն ծագէ յերկիր: - 188. Երրորդ՝ աչք մեր որ է՛ լոյս՝ ի վերին մասն գլխոյս. և լուսաւորքն յերկինս. *զի* մերձաւոր նմանն զնմանն տեսցէ: - 188. Չորրորդ՝ *զի* ի վեր տեսցուք աչօք. և մտօք զվերինն խորհիմք...: - 188. Հինգերորդ՝ *զի* տեսցուք և իմասցուք թէ արտաքին սրահն երկնից այսպէս է զարդարուն. քանի՞ առաւել ներքին կողմն սրբութեան իմանալեացն դասուց: - 188. Վեցերորդ՝ *զի* ի միտ ածցուք զառաջին փառսն մեր և ցանկասցուք. և մի՛ որպէս զանասուն յերկիր կորասցուք: - 188. Նա՛խ՝ *զի* յոմանս առաւել է լոյսն. որպէս յարեգակն. և յոմանս նուազ. որպէս ի լուսին և յայլ աստեղս: - 188. Երկրորդ՝ յա՛յտ է *զի* ունին ջերմութիւն և ցրտութիւն. չորութիւն և գիճութիւն. որ յայտնապէս տարրական է որակութիւն: - 188. *Զի* Խոյն և Առիւծն և Աղեղնաւորն, ունին զբնութիւն հրոյ ջերմ և չոր: - 189. Իսկ մոլորակքն ի գօտիս իւրեանց շարժականք են. *զի* բարձրանան և խոնարհին: - 189. *Զի* տեսեալ մարդիկ զնոր և հին նորա՝ ասացին՝ մե՛զ ես օրինակ ծննդեան և մահուան. և կոչեցաւ ամիս: - 190. *Զի* յարևելից կիտէ՛ ի նոյն կէտ շրջեալ՝ լինի օր մի. որ է **իդ** ժամ. երկու ժամ միոյ կենդանակերպի: - 190. Եւ ի ներքինն անցեալ՝ գիշեր. *զի* գարշեցո՛յց զերր. որ է օդ և երես երկրի: - 190. Եւ յայծեղջիւրն ի ջրհոսն և ի ձուկն՝ առնէ զձմեռն. որ առաւելու գիշերն քան զտիւ **զ** ժամ. *զի* լինի գիշերն **ժե** ժամ. և տիւն ինն ժամ. որպէս յամառն տիւն է **ժե** ժամ. և գիշերն **թ** ժամ: - 190. Նա՛խ՝ *զի* տանի զերկոտասան կենդանակերպսն և վճարէ: - 190. *Զի* հինքն զեօթն մոլորակսն՝ է տուն աստուածոց կոչէին: - 190. Եւ գիտելի է, *զի* օրն պատկեր է ամսոյն և տարւոյն: - 190. *Զի* տարին է՛ **յկե** օր: - 190. *Զի* արեգակն յամենայն աւուր զընթացս իւր կատարէ՛ **իդ** ժամ, և **ժ** մասն և կէս: - 190. *Զի* արեգական տարին է՛ **յկե** օր. և լուսնին տարին **յծդ** օր. **ժա** օր պակաս քան զարեգակն: - 191. Զոր յամենայն ամի **ժա** թիւ ի վերայ լուսնոյն դնեմք, *զի* հաւասարեսցի արեգականն, և կոչեմք վերադիր: - 191. *Զի* լուսինն ընդ երեկս երևացաւ և մետասանօրեայ ստեղծաւ: - 191. Եւ վասն այն ստեղծաւ մետասանօրեայ, *զի* յաւուր ուրբաթի յորում ադամ ստեղծանիւր, լինէր լուսինն բոլոր և **ժդ**օրեայ: - 191. *Զի* **ըստ հոռոմ համարին այսպէս է. մա՛րտի ժէ՝ Առաջին օր արարչութեան է, յորում եղև լոյսն:** - 191. Եւ ի նիսանի մեկն կազմութիւն մարդոյն է. *զի* նիսանն կազմութիւն լսի: - 191. *Զի* օրն ընդ տիւ և ընդ գիշեր է՛ **իդ** ժամ: - 191. Իսկ իննևժերեակն է, *զի* ընթանայ լուսինն ի տարին **յծդ** օր՝ և **ժթ** մասն. որ լինի ի **ժթ** ամին՝ յկա մասն:

- 191. Եւ որպէս իննևժերեակն լուսնի, և **իը** երեակն արեգական ի միասին ժողովեալ` առնէ զհինգ հարիւրեակ շրջանն ի շլբ ամին. *զի* **ժթ իը** երեակ է. և **իը ժթ** երեակ: - 192. Նախ` *զի* իմանալիքն մշտնջենաւո՛րք են, ի սակաւ վայրկենի կատարեցան: - 192. Չորրորդ` երկիրս այս տեղիք ուսմա՛ն է մեր` ըստ կարգի կատարեցան. *զի* մեք զամենայն ինչ ըստ կարգի ուսցուք. և մի՛ անկարգ և շփոթեալ: - 192. Հինգերորդ` *զի* մարդն տէր և իշխա՛ն է երկրաւորացս, գիտասցէ ըստ կարգի զիշխանութիւնն իւր ուղղել. և մի՛ անկարգ և անիրաւ: - 192. Վեցերորդ` կամեցաւ աստուած *զի* մեք բանիւ և տեսութեամբ վայելիցեմք ի գործս արարչին: - 192. *Զի* առաջին օրն ցուցանէ զառաջին դարն` որ յադամայ մինչև ցնոյ: - 193. *Զի* սոքա են դարագլուխք **զ** դարուց. և էերորդն հանգիստ: - 193. Երկրորդ` *զի* մի և նոյն օր կատարի դարձմամբ արեգականն ի կիտէ՛ ի նոյն կէտ արևելից: - 193. Երրորդ` *զի* յորժամ կատարին է աւուրքն` դառնամք ի յառաջին օրն որ է՛ մի և նոյն: - 193. Չորրորդ` նշանակէ՛ զփութանցութիւն աւուրցս մեր. *զի* ամենայն ժամանակք մեր անցանեն իբրև զմի օր անզգայաբար: - 193. Նախ` *զի* սկիզբն և առաջին է ամենայն աւուրց. *զի* նա կրկնելով առնէ զայլ աւուրս որպէս ասացաւ: - 193. Երկրորդ` *զի* ի նմա եղեն երկինք և երկիր. հրեշտակք և լոյսն և ա՛յլ տարերք. որ են է գործք արարչութեան: - 193. Նա՛խ` *զի* վախճա՛ն է և սկիզբն: - 193. Երկրորդ` *զի* աներե՛կ է: - 193. Երրորդ` *զի* անփոխանո՛րդ է գիշերոյ: - 193. Չորրորդ` *զի* օր զնա ո՛չ երկրորդէ: - 193. Հինգերորդ` *զի* անշա՛րժ և անփոփոխ է ժամուց մասանց և րոպէից: - 193. *Զի* առաջին օրն եղև անառաւօտ. և վերջինն աներեկոյ. և միջինն ամենայն աւուրք ունին առաւօտ և երեկոյ: - 193. Նախ գիտելի է, *զի* կրկին է օր. այսինքն օր բնական, և օր արւեստական: - 194. Նա՛խ` *զի* բնական օրն է տիւ և գիշեր: - 194. Երկրորդ` բնական օրն հաւասարաչա՛փ է. *զի* ո՛չ առաւելու և ո՛չ նուազէ: - 194. *Զի* հրէայք և ասորիք` զերեկո՛յն դնեն սկիզբն բնական աւուր...: - 194. Եւ գիտելի է, *զի* ի սկզբանէ աշխարհիս մինչ ի քրիստոս լո՛յսն առաջանայր գիշերոյն. իսկ յետ քրիստոսի մինչ ի վախճան` գիշե՛րն առաջանայ լուսոյն: - 194. Ուստի յա՛յտ է` *զի* երեկոյ շաբաթուն որ կոչի կիրակմուտ` պատուակա՛ն է քան զմիւս գիշերն որ զհետագայ կիրակէին: - 194. Այս է պատճառն. *զի* ի սկզբանէ տիւն առաջանայր գիշերոյն. *զի* ադամ ի լուսոյ շնորհացն անկաւ ի խաւար մեղաց: - 194. Իսկ գիշեր յարութեանն քրիստոսի` փոխեաց զայս կարգ. *զի* յարութեամբն իւրով եհան զմեզ ի լոյս շնորհաց և արդարութեան: - 194. *Զի* է՛ պատճառ լուսոյ արեգակն. և պատճառ խաւարի ստուեր երկրի: - 194. Իսկ տեղիքն, *զի* յա՛յս կիսագունդս լինի լոյս, և ի միւսն խաւար: - 194. Նա՛խ` *զի* սկիզբն է տուընջեան, և վախճան գիշերոյ: - 196. Նա՛խ` *զի* պայծա՛ռ է լոյսն: - 196. Նա՛խ` *զի* վախճա՛ն է տուընջեան, և սկիզբն գիշերոյ: - 196. Նա՛խ` *զի* ի նմա՛ շրջին գազանք և կերակրին: - 196. Եւ գիշեր, *զի* գարշանա՛յ երր, որ է օդ: - 196. Նա՛խ` *զի* արարածոց սկզբնաւորութիւն ի նմա՛ եղև: - 196. Երկրորդ` *զի* ջրհեղեղն համաշխարհական` անդ սկսաւ` և դարձեալ դադարեաց: - 196. Նա՛խ` *զի* սկիզբն է տարւոյ. յորժամ արեգակն ի խոյն մտանէ: - 197. Նախ` *զի* արեգակն առ մեզ մերձի: - 197. Նա՛խ` *զի* կշիռ և հաւասա՛ր են տիւ և գիշեր: - 197. Կոչի աշուն, *զի* անշնչին: - 197. Նա՛խ` *զի* արեգակն հեռանայ ի մէնջ: - 197. Եւ ձմեռն, *զի* ձիւնամեռ լինին: - 197. Նա՛խ` *զի* ամառն կարի՛ ջերմ է և չոր` չորացուցանէ՛. և ձմեռն խիստ ցուրտ` սառուցանէ՛ զսերմն: - 197. *Զի* չորութիւն և ցրտութիւն հակառա՛կ է ծննդեան. և ջերմ և գէջն օգնական: - 197. Դարձեալ` յամառն և ի ձմեռն զրկո՛ւմն է տուընջեան և գիշերոյ. *զի* ամառն զրկէ զգիշերն, և ձմեռն զտիւ: - 198. Իսկ ամառն նորին նման. *զի* հունձք է և կատարած գործոց բարեաց. և ո՛չ ժամանակ սերմանելոյ կամ բուսանելոյ: - 198. Եւ յա՛յտ է յայսմանէ` *զի* ժամանակն առ մե՛զ է և ո՛չ յերկինս: - 198. Ի գոյից է, *զի* շարժումն երկնի և ընթացք լուսաւորացդ ծնանին զժամանակն: - 198. Եւ յանգոյից, *զի* անցեալն ապականեալ է, և ապագայն ո՛չ է ի միջի, և ներկայն անզգայաբար անցանէ: - 198. *Զի* ժամանակն նա՛խ է հանդերձեալ. և ապա ներկայ, և յետոյ լինի անցեալ: - 198. Իսկ թէ ըստ պատուոյ իմանաս, նա՛խ է ներկայն. *զի* է՛ ստոյգ և ճշմարիտ. և ապա՛ անցեալն. և յետոյ ապառնին. և այսպէս շարադասեն քերթողքն: - 198. Այսպիսի ժամանակ է յայտնապէս կեանք մեր. *զի* զոր ինչ ժամանակ կենցաղոյս չափէ բնութեամբ` ապականէ և փոփոխէ ...: - 199. Դարձեալ` ոչ ինչ պատուական քան զժամանակ. *զի* զինչ և իցէ յաշխարհի` երկու մասունքն կարե՛ն համանգամայն գոլ ի միասին բաց ի ժամանակէ և ի հասակէ՛. *զի* ժամանակին **բ** մասն անհնա՛ր է համանգամայն գոլ ի միասին. - 199. Վասն այն պա՛րտ է զժամանակ կենցաղոյս ի բարին ծախել. *զի* զառաջին ժամանակն ո՛չ ոք կարէ վերստին ստանալ: - 199. Դարձեալ` քան զժամանակն ոչ ինչ անցաւոր և հասական. *զի* ժամանակ կենցաղոյս հանապազ հոսի. *զի* չափէ՛ զբնութիւնս` և զինքն չափէ՛: - 199. Վասն այնորիկ յորժամ զիրս հոսականս և շարժունս չափէ՛, հա՛րկ է *զի* ի նոսին հոսեսցի. քանզի միշտ ժամանակն անցանէ և հոսի. յանցելոյն ի ներկայս. և ի ներկայէս յապառնին: - 199. ...*զի* ո՛չ ոք կարէ զվայրկեան ժամանակի մի ստուգել...: - 199. Դարձեալ` քան զժամանակ ոչ ինչ հասարակ. *զի* ժամանակ յամենեցունց հասարակ ստացեալ լինի. և հասարակապէս անցանէ: - 199. *Զի* աստուած ի հողոյ կազմեաց

զադամ: - 200. Ձնոյն յայտնէ և ի մերս. *զի* ուրբաթ ասի որ է՛ կազմութիւն: - 200. **Յոռի**. *զի* հորե՛ն երկրագործք և մշակք զցորեան և զգինի, յըշտեմարանս ժողովեալ. *զի* **թ** հոռի՝ մո՛ւտ է աշնան: - 200. **Սահմի**. *զի* գնայ հարաւայինն, և գայ հիւսասայինն: - 200. **Տրէ**. *զի* առնու գիշերն յօրէն զժամ և զմասունքն. որպէս կրելով յինքն: - 200. **Քաղոց**. *զի* արծակի խոյն ի հօտն ըստ հանճարեղ արանցն: - 200. Այլ և քաղի ժամք և մասունքն. *զի* քաղոցի տասն ծմեռնամո՛ւտ է: - 200. **Մեհեկի.** *զի* տունկք և բոյսք որպէս զմեռեալ զլինին եղեմնապատ և ծիւնաթաղ. մէհէկի. այսինքն ածի: - 201. «Արի՛ ասէ հիւսիս, և ե՛կ հարաւ». որ է՛ գարնան ամիս. *զի* ի **ժբ**ն մտանէ: - 201. Ա՛հ է ասեն մարդիկ ամենայն ուրեք. *զի* գետայարո՛յցք է: - 201. **Մարգաց**. որ է՛ ժամանակ ածելոյ զմարդ. որ ի դաշտս և ի հովիտս իցեն. յայգեստանս և ի բուրաստանս. յորժամ արեգակն առ շամբն և յետ շանն իցէ. *զի* ի **ժգ**ն՝ մո՛ւտ է ամռան: - 201. **Հրոտից**, ըստ դրութեան է. *զի* հո՛ւր է ոտիցն որ այրէ՛ ներքուստ ի վեր ջերմութիւն արեգականն: - 201. Բայց ասեն ոմանք թէ՝ յաւուրս մանասէի՝ Նումաս պումիլոս **բ** ամիս յաւել ի տարին հռօմոց. *զի* յառաջ քան զնա՝ **ժ** էր. և յաւել ի նոսա զյունվար և զփետրվար: - 201. Նա՛խ՝ *զի* տարրակա՛ն է հուր: - 202. Եւ *զի* ջերմ է: Հաղորդական: Ներգործական: - 202. *Զի* հուրն կրկին որակ ունի. ջերմ և չոր: - 202. Նա՛խ՝ *զի* Երագաշա՛րժ է հողմն և շարժօղ այլոց: - 202. Եւ դարձեալ *զի* Կառք է թռչնոց: - 202. Եւ դարձեալ *զի* է՛ Նուրբ: - 203. Եւ դարձեալ՝ *զի* ի գոլորշեաց է բաղկացեալ՝ արտաքին մասն հով է և գէջ, և ներքինն ջերմ և չոր. վասն որոյ զարտաքիննն պահէ՛, և զներքիննն ապականէ: - 204. Նա՛խ՝ *զի* ամպն յերկրէ ելեալ խափանէ՛ զլոյս և զջերմութիւն արեգական: - 206. Երկրորդ՝ *զի* ամպ և մէգն խառնէ՛ զպարզ օդն և խաւարէ՛: - 206. Եօթներորդ՝ *զի* լինի ամպ որ ո՛չ որոտայ և ո՛չ կայծ է վասն սաստիկ խստութեանն: - 206. Նախ՝ *զի* թեթև է ամպն այն. վասն որոյ յոյժ բարձրացեալ է: - 206. Երկրորդ՝ *զի* ամպն այն ո՛չ ունի խոնաւութիւն ինչ: - 206. Երրորդ՝ *զի* պայծառ և լուսաւո՛ր է: - 206. Չորրորդ՝ *զի* երագընթա՛ց է և փոյթ անէ: - 206. Հինգերորդ՝ *զի* հովանի լինի տօթոյ: - 206. Նախ՝ *զի* յանկարծ փայլէ: - 206. Չորրորդ՝ *զի* փայլատակեալն անբաժանելի մնայ: - 207. Եօթներորդ՝ *զի* սաստիկ է: - 207. Նա՛խ՝ *զի* ի կողէն քրիստոսի աղբիւրացաւ և բղխեաց առ մեզ: - 207. Չորրորդ՝ *զի* ի ջրոյ կազմեցաւ երկինք երկնից: - 207. Հինգերորդ՝ *զի* ծկամբք զարդարի: - 207. Երկրորդ՝ *զի* երկիր չո՛ր է և ցամաք, պարտ էր լինիլ բազմութեան ջուրց. *զի* խառնեսցի ընդ երկիր և ծննդականս արասցէ: - 207. Երրորդ՝ *զի* ամենայն տեղիս գտցի ջուր. ի լերինս և ի դաշտս, և արբցեն կենդանիք: - 207. Չորրորդ՝ *զի* տունկք և բոյսք ի ներքին հիւթոյ և ի վերին անձրևոյ միշտ դալար մնասցեն: - 207. Հինգերորդ՝ *զի* բազմազան կենդանիք ի ջուրս զտեղի կալցեն: - 207. Վեցերորդ՝ *զի* պատւական ակն և մարգարիտ և ազնիւ ոսկի ի ծովս գտանի: - 207. Եօթներորդ՝ *զի* ամենայն գետս ելեալ ի ծովէ, դարձեալ ծովն ի յինքն ընդունի: - 207. Ութերորդ՝ *զի* նաւք ի վերայ ջուրց ընթանան փութով. և զպէտս միմեանց լնուն: - 207. Տասներորդ՝ *զի* գեղեցիկ լինի ի տեսս աչաց երփն երփն գունով և վէտս վէտս. այսինքն ծալ ծալ ծիծաղի երեսօք: - 208. Նա՛խ՝ *զի* արարիչն աստուած բնական զծովս աղի և դա՛ռն արար. զի մի՛ հոտեսցին կենդանիքն ի նմա: - 208. Ջուրք ծո՛վուց ընդ մէջ երկրի անցանեն և պարզին ի ժանկոյն և ի դառնութեանցն. *զի* երկիր և աւազք զդառնութիւնն յինքեանս քարշեն, և մնայ քաղցր ջուրն: - 208. Նա՛խ՝ *զի* ի ձմեռն ջերմութիւնն ի սիրտ երկրի ժողովի. և յամառն ի վեր յերես սփռի: - 208-209. Երկրորդ՝ *զի* ամենայն ուրեք հողն ընդ ջրոյն խա՛ռն է. և յա՛յտ է ի ջրհոս. և ջուրն այն որ բարձրացեալ է ընդ հողոյն՝ իջանէ ի խոնարհ և բղխէ աղբիւր: - 209. Երրորդ՝ *զի* ջուրք ծովուն բա՛րձր է քան զերկիր. վասն որոյ հա՛րկ առնէ և ի վե՛ր մղէ և ապա՛ հեղու յերկիր. զորօրինակ մարդիկք ի բարձրագոյն լերանց իջուցանեն զջուրն, և ըստ նոյն չափոյ ի միւս կողմն ի վեր հանեն սակաւ ինչ պակաս: - 209. Նա՛խ՝ *զի* երկու իր է. այսինքն հող և ջուր. որ ընտանի՛ է նմա: - 210. Երկրորդ՝ *զի* ունի երկիցս **բ** ծայրք. երկայնք և լայնքն. որ է յարևելից յարևմուտս. և ի հիւսիսոյ ի հարաւ: - 210. Երրորդ՝ *զի* կրէ՛ զջուր ի մէջ իւր, և յեզերս, և ի վերայ երեսացն: - 210. Չորրորդ՝ երկիր. այսինքն *զի* յերերման և ի տատանմա՛ն է ի մէջ փորձանաց: - 210. Ասէ՝ երկի՛ր և կա՛ց ի կասկածանս. *զի* երկիւղ կայ անկանելոյ ի բաււոյն: - 210. Յաղագս Նա՛խ՝ *զի* մայր է մեր, ուստի ծնանիմք ամենեքեան: - 211. Նա՛խ՝ *զի* հաստատութիւն և բրգո՛ւնք են աշխարհի: - 211. Նախ՝ *զի* շնչմունք հողմոց ի բարձունս են, և զբարձանց ջերմութիւնն բարեխառնեն: - 211. Երկրորդ՝ *զի* վերին մասն օդոյն պա՛րզ է. և ներքին մասն մերձեալ ի յերկիր՝ թանձրանայ ի չորութեանց նորին. և ջերմութիւնն խառնեալ ընդ այն՝ առաւել շող լինի: - 211. Երրորդ՝ անդ մէկին է ջերմութիւն՝ և աստ կրկին. *զի* հասեալ ի գոգ երկրի, մակադարձութեամբ ժողովին առ նա և լինի շող: - 211. Նա՛խ՝ *զի* բղխումն ցուցանէ զկատարեալն. որ ամենայն ինչ կատարեալ և լի ստեղծան յարարչէն: - 212. Երրորդ՝ պէտք են իմաստութեանց. *զի* առակ օրինակի առնումք զնոսա ի դէպ ժամու: - 212. Չորրորդ՝ *զի* նիւթք եղեն երկնաւոր խորհրդոյն. որպէս ի տնկոց փայտ խաչին. և յայլ բուսոց հաց պատարագին և գինի. և ձէթ մեռոնի կազմեցաւ: - 212. Ոմանք ասեն թէ յօդոյն է. *զի* օդն կապոյտ է՝ խառնի ընդ ջրոյն և լինի կանանչ: - 212. *Զի*

են որ զկեղևն ուտեն և ո՛չ զմէջն. որպէս ծիրան: - 213. *Զի* արեգակն արու է *զի* ջերմ է. և լուսինն էգ՝ *զի* հով և գէջ է: - 213. *Զի* ի չորս տարրէ՛ է գոյացեալ. և ունի զաճումն հողոյն. վասն այն նախ աճէ ենթակայ մարմինն: - 213. *Զի* տղայութիւնն օդո՛յ է. և միջին հասակն հրոյ և հողոյ. և վերջինն ջրոյ. վասն այն սպիտակի. որպէս ցուցանի յառաջիկայդ **ժզ** գլուխն՝ **իզ** համարն: - 213. Նա՛խ՝ *զի* սերմնական զօրութիւնն է ի մէջն բնաւորեալ. ուստի բոլորապէս և հաւասար տայ շարժիլ տնկոյն: - 213. Դարձեալ՝ *զի* տնկականն վերափչո՛ւմն է օդոյն հանդերձ խոնաւութեամբն երկրի. վասն որոյ բոլորաձև արտաքս գայ և լինի ծառ: - 213. Նա՛խ՝ *զի* օդն վերընթա՛ց է և քարշէ՛ ի վեր և աճէ: - 213. Երկրորդ՝ *զի* ջերմութիւն լուսաւորացն սնուցանէ և զառ ի վեր քարշէ՛: - 214. Երրորդ՝ *զի* կարօ՛տ է երկնային մարմնոցն. վասն այն ի վե՛ր ընթանայ: - 214. Նա՛խ՝ *զի* բոյսք և խոտք մե՛րձ են երկրի, զշարժումն նորա դիւրա՛ւ ընդունին: - 214. Նախ՝ *զի* ծառայք են միշտ վասն այլոց. որպէս մարդս միշտ տէր է. և անասունքն տէր և ծառայք. *զի* ծառայք են մարդկան, և տէր բուսոց. իսկ բոյսք և տունկք միշտ ծառայք են: - 214. Երկրորդ՝ կոչին ծառք, այսինքն ծուռք. *զի* ընդ դէմ են ձևոյ աշխարհիս և մարդոյն: - 214. *Զի* մարդն ունի զգլուխն ի վեր որպէս երկինքն. և զոտքն ի վայր որպէս երկիրս. վասն որոյ ամենայն ծորմունք բնականապէս զառիվա՛յր հոսին. իսկ ծառն ծռեալ ունի զգլուխն ի վայր, և զոտսն ի վեր. կամ թէ ծռեա՛լ ունի զոտս և զստեղունս յայս կոյս և յայն կոյս: - 214. Երրորդ՝ կոչին ծերք. *զի* ծե՛րք են և ի սկզբանէ՛ եղեալք յարարչադիր հրամանէն...: - 214. Նմանապէս և կոչին փայտ. *զի* ի փտելոյ և յապականելոյ գոյանան այսպէս. յորժամ բորբոսի երկիր՝ նա՛ զարմատն ի վայր արձակէ և զբոյսն ի վեր: - 214. Նախ՝ *զի* թէպէտ զջուր կամ զհող միայն յիշէ աստուած. այլ երեքն ընդ միոյն առին հրաման...: - 214. Երկրորդ՝ *զի* ի հողն կան **գ** տարերքն ամբարեալք. որպէս երևին ուր ուրէք երակ հրոյ և երակ հողմոյ և երակ ջրոյ: - 214. Երրորդ՝ *զի* ինքն երկիրն ունի զթանձրութիւն որ հողոյն է. և զմածումն որ է՛ ջրոյն. և զշարժումն որ է հողմոյն. և զերևիլն որ է հրոյն: - 214-215. Նոյնպէս և ջուրն ունի զսոսա. *զի* շօշափելի՛ է՝ և մածեալ՝ և շարժի՝ և երևի: - 215. Չորրորդ՝ *զի* կենդանիքդ ունին զ**ե** զգայարանք: - 215. Հինգերորդ՝ *զի* ունին կենդանիքդ **դ** մաղձ որ են. **դ** տարերքն: - 215. Վեցերորդ՝ ըստ այլոց. *զի* բոլոր թանձր մարմինն է՛ հողոյ. և ամենայն հիւթք և մաղձք է՛ ջրոյ. թոքն է՛ օդոյն. և սիրտն է՛ հրոյն ջերմ գոլով: - 215. Եօթներորդ՝ *զի* ոսկերքն է քարուտն: - 215. *Զի* զգայ զջերմութիւն հրոյն. և զցրտութիւն՝ որ է ջրոյն. և զխոնաւութիւն որ է օդոյն. և չորութիւն հողոյն: - 215. Տասներորդ՝ *զի* **դ** ոտքն է նման չորից տարերաց: - 215. Ապա ուրեմն յա՛յտ է *զի* ամենայն կենդանիք ի չորից տարերց են: - 215. Եւ մի և նոյն է. *զի* շունչ կենդանեաց է թանձր մասն օդոյս՝ խառնեալ ընդ ջրոյ. և շունչ նոցա է անօսր մասն ջրոյ՝ խառնեալ ընդ օդոյ: - 215. Վասն է՞ր է՝ *զի* ջրայինքն և սողունքն ձայն ո՛չ ունին: - 216. Իսկ ձկունք *զի* ո՛չ ունին զօդ՝ ամենևին են անձայնք: - 216. Եւ սողունք կոչին, կամ *զի* սողալով գնան. կամ սղացեալ են ոտիւք. կամ *զի* սո՛ւղ են ձայնիւ: - 216. Իսկ անասուն, *զի* անխօսուն են. կամ *զի* անսնունդ և անընտել: - 216. Իսկ գազան, կամ *զի* գզօ՛ղ են և պատառօղ. կամ *զի* զանազան և ահագին կերպարանք ունին: - 216. Վասն է՞ր է *զի* մարդս ո՛չ ունի զբնութեամբ զէնս. կամ զծածկոյթ: - 217. *Զի* թէ մարդն ունէր զբնութեամբ զէնս, որպէս թէ եղջիւր ի գլուխն. և սուր զատամունսն. ճիրանունք ի ձեռս. և սմբակ կամ կճղակ ոտիւք. և զայլսն, Նախ՝ *զի* գազանադէմ և դժւարատես լինէր ամենեցուն: - 217. Երկրորդ՝ *զի* անհանգիստ և ի չարչարանս լինէր հանապազ. ընդ ինքեան ունելով զնոսա: - 217. Երրորդ՝ *զի* թէ ունէր ի բնութենէ զէնս կամ զգեստս. ո՛չ կարօտէր այլոց կենդանեաց. այլ և ո՛չ խնամէր զնոսա: - 217. Նա՛խ՝ *զի* եղեն ի գովեստ փառաց իւրոց: - 217. Երկրորդ՝ վասն հպարտութեան մարդոյն. *զի* յորժամ խայթեսցեն զնա՝ ծանիցէ զտկարութիւն իւր. որ և զփարաւօն ո՛չ թէ առիւծք կամ առջք հարին, այլ ճանճք և մժղուկք տանջեցին: - 217. Երրորդ՝ ստեղծան նոքա՝ *զի* ի նոցա՛ ջանից ընթերցմանց և բարեաց գործոց օրինակ առցուք. որպէս են մրջմունք և սարդք, և այլք այսպիսիք: - 217. Նա՛խ՝ ի փառս աստուծոյ ստեղծան. *զի* յորժամ զզանազան կերպարանս նոցա տեսանեմք, փառս տամք արարչին: - 217. Երկրորդ՝ *զի* լրումն և մա՛սն են աշխարհի: - 217. Երրորդ՝ *զի* թոյնք և խայթոցք նոցա՝ զէն և պահապան է նոցա. *զի* առիւծքն պատառելովն ապրին. նոյնպէս և այլքն: - 217. Չորրորդ՝ *զի* ահ և երկիւղ են մեղաւորաց: - 217. Հինգերորդ՝ *զի* ի նոցանէ ըստանամք զդեղս բժշկութեան մարմնոց: - 217. *Զի* վարդապետք ասեն եթէ՝ կերակուր գազանաց այլ կենդանիք են. վասն որոյ խնամքն աստուծոյ ետ նոցա առաւել հնարս և զօրութիւնս, *զի* կարասցեն ըմբռնել. զայլ կենդանիս և մի՛ ի սովոյ մեռցին: - 218. Այլ և գիտելի է, *զի* ամենայն կենդանեաց բնականապէս հնարք ետ աստուած վասն օգտի նոցա և փրկութեան: - 218. Եւ զի բնութեամբ ունին յայտ է, *զի* ամենայն տեսակն զմի և զնոյն ունի հնարս. վասն զի մի բնութենէ ի նոսա: - 218. *Զի* ամենայն գայլ խորամանկ է. և ամենայն աղուես նենգաւոր. և այլն նոյնպէս: - 218. *Զի* մարդս բազում իրօք զբաղեալ է ի միտս. իսկ նոքա միայն ի բնութիւնս իւրեանց փութով ճանաչեն: - 218. Նա՛խ՝ *զի* զդէմքն ընտրեաց՝ և ընդ եւայի՛ խօսեցաւ: - 218. Երկրորդ՝ *զի* զխորխն ձգէ և զաչսն լուսաւորէ՛: - 218. Հինգերորդ՝ *զի* խորամա՛նկ է և հնարօղ: - 218.

Նա՛խ՝ *զի* զդէմսն ընտրեսցէ, այլ և զտեղի և զժամանակն, և ապա խօսեսցի: - 218. Երկրորդ՝ *զի* աշխատութեամբ զմիտսն լուսաւորեսցէ. կամ ճգնութեամբ չարչարեսցէ: - 218. Չորրորդ՝ *զի* զտգիտութիւն իւր լուասցէ, և ապա՛ զգիտութիւն ուսցի: - 218. Նա՛խ՝ *զի* օձն ի յայն մասնէն սատակի: - 218. Երկրորդ՝ *զի* թո՛յլ է գլուխ օձին: - 218. Երրորդ՝ *զի* աղբիւր է մահաբեր թունիցն: - 218. Չորրորդ՝ *զի* չէ՛ր բանաւոր, և բանից տեսակով խաբեաց զմարդն: - 218. Հինգերորդ՝ *զի* մարդն գլուխ է ամենայն կենդանեաց, զնա սպանանել ջանայ: - 218. Վեցերորդ՝ *զի* գլխոյն՝ այսինքն տեառն աստուծոյ՝ իմանալի օձն հակառակեցաւ: - 218. Եօթներորդ՝ օրինակ՝ *զի* քրիստոս զգլուխ վիշապին խորտակեաց: - 218-219. Ութերորդ՝ օրինակ՝ *զի* գլուխ օձին է չար խորհուրդն որ մտանէ ի մեզ. պա՛րտ է սպանանել զնա: - 219. Ի նշանակել՝ *զի* մահու մարդոյն՝ սկիզբն օձն եղև: - 219. Նախ՝ *զի* անուամբն գոյանայ իրն ի միտս մեր. և անանունն իբր յանգոյս է համարեալ մեզ: - 219. Երրորդ՝ *զի* ադամայ ետ աստուած զբնական իմաստութիւնն առ ի ցուցանել զլաւագոյն ծնունդս բանին՝ հրամայէ՛ անունս դնել: - 219. Չորրորդ՝ *զի* ցուցցէ անձնիշխան զօլ զմարդն, վասն որոյ հրամայէ՛ նմա *զի* զոր ինչ և կամեսցի՝ անուն դնիցէ: - 219. Եօթներորդ՝ *զի* փչեաց ի նա զշնորհաց հոգին զանազան պարգևաց, այժմ զքահանայութեան շնորհին երևեցոյց ի նա՛: - 219. *Զի* քահանային է անունս դնել յետ աւազանին ծննդեանն: - 219. *Զի* ի կոչումն անուան՝ չորքս այսոքիկ երևին միանգամայն. բանն և խօսքն և ձայնն և տեսութիւնն. այսոքիւք զմարդն կատարեալ երևեցոյց աստուած: - 219. Տասներորդ՝ անունն յարմար նշանակութիւն է կենդանեաց ըստ բարուցն և զանազան կերպիցն եղեալ. *զի* ամենայն անուն՝ յիրէն և ի գործոյն և ի ձայնէն դնի: - 220. Եւ գիտելի է, *զի* գ են իր գոյացական. Սեռ. Տեսակ. և Անհատ: - 220. Ո՞րպէս գիտեմք թէ մարդն իշխան է ի վերայ անասնոց. *զի* ահա՛ բազումք անհնազանդք են. որպէս վայրիք և գազանք և այլք: - 220. Երկրորդ՝ *զի* պատկեր աստուծոյ է մարդն. այսինքն *զի* որպէս աստուած իշխան և թագաւոր է ամենայն արարածոց. նոյնպէս և մարդն իշխան է ամենայն կենդանեաց: - 220. Երրորդ՝ ի նոյն իսկ ի ձևոյ շինուածոյ մարդոյն. *զի* ուղիղ գոլով՝ զիշխանականն նշանակէ. իսկ կենդանիքն կո՛ր գլխով զծառայականն ցուցանեն: - 220. Վեցերորդ՝ *զի* անձնիշխա՛ն է մարդն այսինքն իշխէ բանականաւն ցասման և ցանկութեան որք են անասնական մասունք: - 220. Նա՛խ՝ *զի* յորժամ մարդն անհնազանդ եղև տեառն իւրոյ արարչին, յիրաւի անհնազանդք եղեն և մարդոյն անասունք տուեալ նմա ի ծառայութիւն: - 220. Երկրորդ՝ *զի* ցոր քան իշխէր ինքն ի վերայ անասնական մասանց իւրոց որպէս ասացաք, իշխէր և ի վերայ արտաքին անասնոց և գազանաց. իսկ յորժամ ապստամբեցին ներքինքն բանականին տեառն իւրեանց՝ ապստամբեցին և արտաքինքն մարդոյն տեառն իւրեանց: - 220. Երկրորդ՝ *զի* ունի զերեք յատկութիւնս երկնից. որ է՛ բարձրութիւն. լուսաւորութիւն. և անմահութիւն: - 221. Երկրորդ՝ իմանալի՛ է, *զի* իմացումն և իմաստութիւն տայ մեզ յայլ իրս. որպէս ծառն կենաց զքրիստոս: - 222. Երրորդ՝ *զի* իմանալեա՛ցն է տունկ. այսինքն բանականաց. հրեշտակաց կամ մարդկան. և ո՛չ զգալի կենդանեաց: - 222. Չորրորդ՝ *զի* նոյն ինքն դրախտն և տունկն է իմանալի և զգալի. որպէս վայելօղ մարդն էր իմանալի և զգալի: - 222. Ո՛չ թէ քան զտարրական հուրն ի վե՛ր է անցեալ. այլ *զի* լուսինն և արեգակն միշտ ի հարաւոյ կողմանէ ի ստորոտէ լերինն ելանեն. և ի հիւսիսոյ կողմն լերինն միշտ գիշեր լինի. որպէս աղէքսանդրու պատմութիւնն ասէ. և ի գլուխն միշտ լոյս. և ի հարաւոյ կողմն տիւ և գիշեր: - 222. յա՛յտ է *զի* գիշեր ո՛չ լինի անդ. և ո՛չ եղանակք փոփոխին: - 222. *Զի* ո՛չ անձրև և ոչ ձիւն և ոչ հողմ է անդ: - 222. *Զի* ի վերին մասն օդոյն է մերձեցեալ՝ որ է առաւել բարեսուն. և ամպոց և հողմոց շարժմունք ի միջին մասն օդոյ ծնանին. և ի դրախտն ո՛չ հասանեն: - 222. Նա՛խ՝ *զի* թէ ապականացու էր որպէս երկիրս այս, վասն է՞ր զմարդն պատուելով ի դրախտն եդ աստուած: - 222. *Զի* ապականեալ մարդն ապականեցաւ դրախտին էր վայելչական: - 222. Երրորդ՝ *զի* համաձայնին ամենեքեան՝ որ նախ քան զյանցանելն զմարդն անապական ասեն: - 222. Յայն՝ *զի* փայտ դրախտին անփուտ է. և տերևն անփտելի. և պտուղն անծորելի. և ծաղիկն անթառամելի. և աստուծոյ տնկեալ ձեռօք իւր. տեղի անապական ձեռագործին ադամայ: - 223. *Զի* թէ հնազանդեալ էր օրինացն, լինէր բարւոյ պատճառ. և ո՛չ հնազանդեալ՝ եղև չարի պատճառ: - 223. Եւ է՛ միւս բարի խառնակն և պատրուակեալն. որպէս է աշխարհական բարին. *զի* գունով և երևելեաւ բարի է, այլ ի ներքոյ ծածկեալ չա՛ր է. յայսմանէ հրաժարէ՛ զմեզ ոչ մերձենալ: - 224. *Զի* այնպիսի բարին մահու լինի առիթ: - 224. Այլք ասեն թէ՝ խաղո՛ղ էր. կամ ցորեան. *զի* զգինին ետ գրաւական կենաց՝ և զհաց մարմնոյն: - 224. *Զի* որպէս ջրհեղեղն ո՛չ եմուտ ի դրախտն *զի* ո՛չ էր ապականեալ մեղօք: - 225. *Զի* երկի՛ր անիծաւ և ապականեցաւ, և ո՛չ դրախտն: - 225. Նա՛խ՝ *զի* ասէ աստուածային հրամանն՝ «աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր»: - 225. Երկրորդ՝ *զի* դրախտն է տեղիք անապական. և ո՛չ լինէր ի մարդոյն ծորումն ինչ աղտեղութեան. և ոչ որպէս տնկոցն: - 225. Չորրորդ՝ *զի* թէ լինէր անդ ախտական ծնունդ որպէս ի յերկրի, կարօտանայր մարդն ամենայն պիտոյից զաւակին: - 225. Վեցերորդ՝ *զի* ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան եթէ

առաջին կեանք դրախտին էր կուսութիւն և անապականութիւն և հրեշտակաց նմանութիւն. և յետ յարութեանն վերըստին դառնամք յառաջին կեանս դրախտին. յանապականութիւն և ի հրեշտակաց հաւասարութիւն: - 225-226. Ասեմք թէ՝ կանխագէ՛տ է աստուած. և նախ ծանեաւ *զի* ո՛չ կարէին աճիլ անմեղութեամբ ի դրախտին որպէս զհրեշտակս. վասն որոյ կազմեաց նոցա մարմին, *զի* յերկրի անասնապէս աճեսցին: - 226. *Զի* յառաջնումն աւուր արարաւ մշտնջենաւոր լոյսն: - 227. Երեսունեւ՝ *Զի* ո՛չ ամաչէին: - 228. Երկրորդ՝ *զի* հողն բնակա՛ն ունի զթանձրութիւն, և այլքն խառնմամբ ի նմանէ. և մարմինս մեր թա՛նձր է ի հողոյ: - 229. Երրորդ՝ հողն վերջին է ի տարերս. *զի* գիտացէ զշնորհս աստուծոյ՝ որ այսպէս առաջին և պատկեր աստուծոյ ստեղծաւ: - 229. *Զի* թէ զպատկերն աստուծոյ տեսեալ ի մեզ հպարտասցուք, զհողն տեսեալ խոնարհեսցուք...: - 229. Հինգերորդ՝ *զի* հողն ապականացո՛ւ է, զապականութիւն մարմնոյս մեր նշանակէ: - 229. Վեցերորդ՝ *զի* տեսցէ ադամ թէ յապականացու հողոյս անապական մարմին կազմեցաւ վասն փառաց. և յորժամ կորոյս մեղօքն եղև ապականացու, ինքն իցէ պատճառ ապականութեան իւրոյ: - 229. Եօթներորդ՝ *զի* հողն ի հողմոյ փոշի լինի. այսպէս յորժամ հողմահուն շնչէ ի մարմինս մեր՝ ցրուի և լինի փոշի: - 229. *Զի* որ քան եմք ի մարմնի՝ միշտ պարտ է երկնչիլ ի պատժոյ ի գլորելոյ ի մահու և այլոցն: - 229. Իններորդ՝ *զի* մայր մեր հողն է. և սեղան և տեղիք և գերեզման. թէպէտ և այլ տարերքն են մեզ ազգականք. այլ մեք ի մօրէ՛ ծնանիմք: - 229. Տասներորդ՝ *զի* յայսմանէ հաստատեսցի ի մեզ հաւատ յարութեանն. որպէս զառաջինն ի հողոյ ստեղծ զմեզ, դարձեալ ի յարութեանն ի նոյն հողոյն լուծեալ և փոշիացեալ՝ յարուցանէ աստուած: - 229. Եւ դարձեալ՝ *զի* հաստատեսցի ի մեզ հաւատ մարդեղութեանն քրիստոսի. թէ որպէս ի յապականացու հողոյն ստեղծ ադամայ մարմին անապական: - 229. Դարձեալ ի հողոյ ստեղծ ի նախատինս սատանայի. *զի* յամօթ լիցի յորժամ տկարս այս և կաւեղէնս ի փառսն մտանէր յորմէ նա՛ որ փառաւորն էր անկաւ: - 229. Նա՛խ՝ *զի* մեծ և պատուական ասի մարդն: - 230. Եւ այս առհինչ է. *զի* մեծն ցուցանէ զփոքրն. և պատուականն զանապատիւն: - 230. Վասն որոյ պա՛րտ էր լինիլ նոցա նախ որ փոքունք և անպատիւք են, *զի* երևեսցի մեծն և պատուաւորն այսինքն մարդն: - 230. Երկրորդ՝ *զի* իշխան և զորաւո՛ր է մարդն. պիտո՛յ է *զի* լինիցի զօր և իշխեցեալ. և ապա՛ իշխանն և զօրաւորն. ապա թէ ո՛չ՝ ո՞ւմ լիցի իշխան և զօրավար: - 230. Չորրորդ՝ զի մի իցէ նեղասիրտ և տառապեալ բարուք տեսանելով զինքն ի չքաւորութեան ստեղծեալ. այլ տեսցէ զամենայն կատարեալ. *զի* արձակ և առատ բարուք սնանիցի և վայելեսցէ: - 230. Վեցերորդ՝ որք վասն որոց եղեն. *զի* ի գոյիցն ոմանք են վասն ինքեանց. իսկ այլ վասն այլոց և ոմանք ինքեանց և այլոց: - 230. Եօթներորդ՝ *զի* գ տեսակ հոգոց բացայայտեսցին. որ է՛ անկատար՝ և միջակ՝ և կատարեալ: - 231. Ութերորդ՝ ո՛չ արար նախ զմարդն, զի մի՛ արարչակից գիտասցէ զինքն ոչ գոյիցն, և անկցի հպարտութեամբ. այլ գործօղ գոյիցն, *զի* կացցէ պահպանութեամբն...: - 231. Իններորդ՝ *զի* ի սկիզբն ստեղծման արարածոց՝ եղեն իմանալի բանականքն ընդ լուսոյն գոյացեալ: - 231. Եւ ի վախճանի եղև զգալի բանականն իբրև մատնահար և կնիք արարածոց. ունելով զիմացումն և զզգացումն. *զի* իմաստութեամբն ծանիցէ զիմաստութիւն արարչին. և զգալովն զամենակարող զօրութիւն նորա՛: - 231. *Զի* մեծ է և անճառ և անպատում զօրութիւն և իմաստութիւն աստուծոյ...: - 231. Տասներորդ՝ մէջ և կապ ամենայն գոյիցս մա՛րդն է կազմեալ. *զի* ամենայն արարածք ի բ դէմս որոշին. այսինքն մինն յիմանալի և միւսն զգալի. և սոքա եղեն յառաջագոյն: - 231. *Զի* իցէ միաւորիչ և կա՛պ իմն բոլոր արարածոց: - 231. Եւ զկրկնակի կենաց վայելումն ըստ խառնեալ էութեան իւրոյ. *զի* թէ զաստուածայինսն բերցէ յինքեան ըստ որում ի պատկերն եղև, վերափոխեսցի անմահ կենօք ի պատրաստեալն ժառանգութիւն: - 231. *Զի* նմա՛ն է մարդն բոլոր աշխարհի վասն այն աշխարհ կոչի: - 231. Նա՛խ՝ *զի* աշխարհ է կամ իմանալի, որպէս հրեշտակք. կամ զգալի, որպէս մարմնականք: - 231. Երկրորդ՝ *զի* իմանայ ընդ հրեշտակաց. զգայ ընդ կենդանեաց. աճէ՛ ընդ տնկոց. գոյ ընդ անշնչից: - 231. Երրորդ՝ *զի* աշխարհ որ քան է ի բեւեռէ՛ հիւսիսոյ մինչև ի բեւեռն հարաւոյ, նոյն քան է յարևելից մինչև յարևմուտս: - 231-232. Եւ օդն է ի թոքն. *զի* հանապազ ի շարժութեան կայ և փչէ՛ ընդ դէմ ջերմութեան սրտին: - 232. Եւ հուրն է ի սիրտն. *զի* սիրտն ջե՛րմ է և նման է հրոյ. լայն է տակն և բարակ ծայրքն: - 232. *Զի* այսպէս ի կազմուածոյ քո ուսցիս զբարեկարգութիւն և զպատիւ առ վերինս և առ ներքինս և առ հաւասարս: - 232. Այսպէս գլուխ մարդոյս ունի զնմանութիւն երկնից. *զի* է՛ բոլոր. և աչքն որպէս լուսաւորքն. և իմացումն ի նմա՛ որպէս իմանալիքն յերկինս: - 232. Հինգերորդ՝ *զի* մարդն իշխան և տէր է ամենայն կենդանեաց. վասն որոյ ամենայն կենդանիք գլխակո՛ր են իբրև զծառայ և հնազանդ. և մարդն ուղղաձև իբրև ազատ և թագաւոր: - 233. Վեցերորդ՝ *զի* բաժանեսցի մարդն ի կենդանեաց և ի տնկոց. *զի* տունկք զհակառակն ունին զարմատն որ է՛ գլուխ՝ ի յերկիր, և զոտն ի յերկինս: - 233. Գլուխն որպէս երկինք ի վերոյ. և ոտքն որպէս երկիր ի ներքոյ. *զի* ծանրութիւնք և ծորմունք ամենայն ի վայր հոսեսցին: - 233. Եօթներորդ՝ վասն զգայութեանցն, որ ամենեքին յառաջ հեղուն յուղեղէն,

և ազատապէս տեսանեն և իմանան. *զի* թէ գլուխն և ուղիղն ի վա՛յր էր քարշեալ և կորացեալ՝ ո՛չ կարէր ուղղակի զգալ և իմանալ. որպէս այլ կենդանիք: - 233. Ութերորդ՝ վասն արտաքին զգայութեանցն որ են ի գլուխն. *զի* այլ կենդանիք միայն հեշտանան կերակրով և ցանկութեամբ. իսկ մարդն հեշտանայ առաւել գեղեցկութեամբ զգալեացս. յորժամ տեսանէ աչօքն զերկին և զերկիր. և ժողովէ՛ զճշմարիտ գիտութիւն նոցա և հեշտանայ: - 233. *Զի* թէ կորագլուխ էր որպէս այլ կենդանիքն, խափա՛ն լինէր զգայութեանցն և պակասումն գիտութեան: - 233. Իններորդ՝ ի վեր է գլուխն, *զի* լեզուն և ձեռն սպասաւորեսցեն բանի և գործոց: - 233. *Զի* թէ կորագլուխ էր մարդն, և երկոքին ձեռքն ի յերկիր հաստատեալ, ո՛չ կարէր գործել: - 233. Եւ պիտոյանայր լեզու երկայն և շրթունք ստուար, *զի* ժողովեսցէ զկերակուր. և յայնժամ ո՛չ կարէր սպասաւորել բանի որպէս ա՛յժմ: - 233. Տասներորդ՝ *զի* կիրք մարմնոյն հեղուն ի հոգին. որպէս յորժամ մարմինն ննջէ՝ և հոգին թմրի և անգործ մնայ...: - 233. Այլ և ի միտ ածցուք զփառս երկնային կենաց ուստի անկաք, և անդ դիմելոց եմք. *զի* տեսութիւն մտացն զհոգին ընդ ինքեան ի վեր տանի. և նա զշունչն. և շունչն ընդ արեանն է կապեալ. և արիւնն ընդ մարմնոյն. զգայարանքն ընդ մարմնոյն. և լինի մարդն բոլորովին երկնային: - 233. Եւ բնականն, Նա՛խ՝ *զի* նմանիմք երկրի որ յերեսն ունի զգեղեցկութիւն բուսոց, և ի թիկունս ոչ: - 234. Երրորդ՝ *զի* փափուկ ջիլք և նեարք՝ յերեսացն գան և առնեն զգայարանս. և հաստն ի թիկունքն սփռի վասն ուժոյ և պնդութեան և շարժութեան: - 234. Եւ յա՛յտ է *զի* ի դիմաց կուսէ առաւել հեշտանայ ամենայն կենդանի: - 234. Իսկ բարոյականն, Նա՛խ՝ *զի* յերեսն փչեաց զշունչ կենդանի. վասն որոյ յերեսն ունի զգայարանս մարմնոյ: - 234. Երրորդ՝ *զի* զդէմս ունիցիմք միշտ ի յերկինս. և զթիկունս յերկիր. և հանապազ ի բարին յառաջեմք ոտիւք և ձեռօք և ո՛չ դառնամք ի չարն: - 234. Երկրորդ՝ *զի* արարաւ մարդն ի պատկեր աստուծոյ, վասն որոյ պատկե՛րն է ցանկալի: - 234. Երրորդ՝ *զի* երեսն հայելի է սրտին. և նորա փոփոխմամբն զխորհուրդն ճանաչեմք. որպէս ի տխրիլն և ի զուարճանալն և յայլն...: - 234. Չորրորդ՝ *զի* յերեսա՛ցն ճանաչեմք զսիրելիս. վասն որոյ առաւել ցանկալի է: - 234. Հինգերորդ՝ *զի* ա՛նդ են հինգ զգայութիւնքն: - 234. Վեցերորդ՝ *զի* ցանկական երակք ա՛նդ են սփռեալ: - 234. Ութերորդ՝ *զի* ա՛նդ է ցանկական մասն աչաց զարդարեալ գեղով: - 234. *Զի* շօշափելիքն ի ներքո՛յ է որպէս երկիր. և ճաշակելիքն ի վերոյ որպէս ջուր. լսելիքն յօդն է. և տեսանելիքն հուրն ի վերոյ: - 235. Եւ հոտոտելիքն զառ ի վայր է, նա՛խ՝ *զի* հոտն վերընթա՛ց է՝ յինքն ընդունի: - 235. Եւ այն *զի* մերձ է բերանոյն...: - 235. Եւ այն *զի* աչքն ի դէմքն է, և ականջն ի կողմանէ. *զի* աչքն ուղղակշիռ ի դէմն տեսանէ. և ականջն շուրջանակի յամենայն կողմանէ լսէ. ի վերոյ ի ներքոյ և այլն: - 235. Երեքն ի սոցանէ գռեհիկք են. որ է շօշափելիք. ճաշակելիք. հոտոտելիք. *զի* խառնելովն ի զգալի իրն ճանաչեն: - 235. Նա՛խ՝ *զի* յառաջ եղեալ նմա՝ լո՛յսն է որ է վերին տարր. և լսելեացն օդն: - 235. Երկրորդ՝ *զի* տեսանելն հաստա՛տ է քան զլուր ունկան: - 235. Նա՛խ՝ *զի* ի տիւ և ի գիշեր լսէ: - 235. Երկրորդ՝ *զի* յամենայն կողմանէ լսէ: - 235. Երրորդ՝ *զի* զաստուածային բանս և զհոգևորս ականջն միա՛յն լսէ: - 235. Վասն է՞ր է *զի* ամենայն անհատք ի մարդկանէ համատիպք են միմեանց. և օտարք իրերաց. *զի* նմանք են, և աննմանք որակութեամբ և ձևով: - 235. Վասն առաջնոյն պա՛րտ է գիտել, *զի* առաւել հասարակն հեռի՛ է և մեծագոյն. և առաւել յատուկն մերձ է մեզ և նւազագոյն: - 235. Զորօրինակ՝ բնութեան յատուկն և անձին. *զի* բնութեան տարբերն հեռագոյն է և մեծ. որպէս կենդանին և բանականն. և դիմաց յատուկն մերձ և նուազ. որպէս յատուկն մերձ և նուազ. որպէս պատկեր և տիպ: - 235. Ըստ այսմ ապացուցի. *զի* բնութիւնն ի սեռո՛ւմն է և ի տարբերութեան ուստի բաղկանայ. և անձն ի բութիւնն է յորմէ կայանայ. և դէմքն ի յանձնէ՛. և կերպարանն ի դիմաց. և պատկերն ի կերպարանաց. և տիպն ի պատկերաց. և որակ տպաւորեալ ի պատահմանց: - 235. Իսկ երկրորդն թէ յորմէ՞ սեռէ է օտարն և աննմանն՝ գիտելի է, *զի* դէմն և կերպն ի չորից սեռից գոյանայ. ի գոյէ՝ ի քանակէ՝ յորակէ և ի տեղւոյ: - 236. *Զի* դէմքն ըստ որում մարդոյ և մարմին՝ գոյացութիւն է: - 236. Եւ նուազեալ ի սմանէ քանակին, լինի նման և աննմանն ցուցեալ. որպէս յա՛յտ է ի տառն գրեալ. *զի* նման և աննմանն ուրոյն են որակի: - 236. Ապա ուրեմն յա՛յտ է *զի* աննմանն և օտարն են ի սեռի որակութեան և յատուկ ձևոյ որակի: - 236. Եւ բնական, Նա՛խ այսպէս. *զի* ամենայն իր մարմնական ի նոյն տարերաց են բաղկացեալ. վասն որոյ ունին նմանութիւն առ միմեանս: - 236. Երկրորդ՝ *զի* ունին նոյնութիւն սեռի և տեսակի և անհատի: - 236. Երրորդ՝ *զի* ամենայն իր յէից և յոչ էից են գոյացեալ. յէից՝ ըստ նախածանօթ տեսչութեան գաղափարին. և յոչ էից՝ ըստ ինքեան ի ժամանակի հաստատեալք: - 236. Որպէս և իմաստունքն ասացին զամենայն երևելիս յարացոյց իմանալեացն. զոր գոյ և որակ կոչեն. և զնիւթս պատկեր գոյին. *զի* որակն և գոյք անմարմին են և աննիւթաբար ի մտածութիւնս երևին: - 236. Նա՛խ ցուցանի *զի* մի է արարիչ սոցա, և բազում արարածք. յաղագս որոյ նմանին և զանազանին: - 237. Երկրորդ՝ նշանակէ, *զի* առինչ է արարածս արարչին, ըստ այսմ նման են. և *զի* ա՛յլ են և զատեալք յարարչէն, ըստ այսմ աննմանք: - 237. *Զի* արարիչն սոցա մի է բնութեամբ. և ըստ բնութեան հաւասար, և անձամբ յատուկ:

- 237. Եւ ևս, *զի* **գ** դէմք Երրորդութեանն սուրբ՝ նոյն և նման գոն միմեանց: - 237. *Զի* որդի պատկե՛ր է հօր և տիպ և կերպարան: - 237. Իսկ *զի* անծին. և ծնեալ. և բղխեալ. ըստ այսմ աննման և յատուկ առանձնացեալ: - 237. Նա՛խ՝ *զի* անմարմին դիմօք առանձնանան ի միմեանց. և այս յատուկ դիմօքս ճանաչեն հոգիքն զմիմեանս. որպէս մեծատունն զղազարու և զաբրահամու հոգին: - 237. Ասեմք թէ՝ նոյն է պատասխանին. *զի* պատահումն առ մե՛զ հանդիպի. այլ առ աստուած ոչ ինչ է պատահմամբ. այլ ամենայն ինչ գիտութեամբ. *զի* ո՛չ տերև մի ի ծառոյ անկանի առանց գիտութեանն աստուծոյ: - 237. Այժմ տեսցուք թէ զի՞նչ է շահն աննման պատկերաց. *զի* բազում վնաս էր լինելոց թէ անհատք ո՛չ էին որոշեալ դիմօք: - 238. Նախ՝ *զի* ոչ ոք ճանաչէր զհայր կամ զեղբայր իւր. այլ ես զքեզ հայր գիտէի, և դու զայլ ոմն եղբայր. և լինէր մեծ շփոթումն: - 238. Երկրորդ՝ *զի* ոչ հարազատ որդին սեպհականէր զժառանգութիւնս հօր. այլ օտարն ի մեծութիւն հասանէր, և իւրն չքաւորութեամբ տառապէր: - 238. Երրորդ՝ *զի* ո՛չ գիտէին զանդրանիկն ժամանակաւ, և ո՛չ զկրտսերն. և լինէր փոփոխումն վիճակաց նոցին. որպէս յակոբ էառ զանդրանկութիւնն եսաւայ. և եփրեմ զմանասէին. թէ և սոքա տեսչութեամբն աստուծոյ. այլ նոքա ի պատրանաց լինէին: - 238. Չորրորդ՝ *զի* ո՛չ ճանաչէր այր զկին իւր, և ոչ կին զայր իւր. և լինէր անօրէն խառնակումն. որպէս յուդայ զնու իւր զթամար ո՛չ ճանաչեաց. և ո՛չ ղովտ զդստերսն իւր: - 238. Հինգերորդ՝ *զի* թէ ոք գողանայր և սպանանէր, զանմեղն դատապարտէին. և լինէր ամենևին անօրէնութիւն: - 238. Վեցերորդ՝ *զի* ո՛չ պատուաւորքն մեծարեին, և ո՛չ անարգք անպատուեին. այլ ընդդիմակն սոցա. *զի* ո՛չ կարէին ճանաչել զտէրն և զծառայն. զազատն և զանազատն: - 238. Եօթներորդ՝ *զի* ո՛չ կարէին ընտրել և խոտել զչարն և զբարին, և զսուրբն և զանսուրբն ի մարդկանէ, թէ գործ սորին է այս կամ այն. այլ անմեղութեամբ յարակցեին պղծոյն, և զխեղդ ոգւոց նորա ընդունէին: - 238. Ութերորդ՝ *զի* ո՛չ երևէր բարեկամն և թշնամին. սիրելին և ատելին. և լինէին բազում սպանութիւնք և աւերք. *զի* ոչ զգուշանային միմեանց: - 238. Եւ սուտ առաքեալք զճշմարտիցն կերպանային. և այն *զի* ո՛չ ունէին զնոյն տիպ. իսկ թէ ունիցին զնոյն տիպ՝ ո՞րչափ ևս: - 238. Նախ՝ բնական. *զի* յառաջ եղեալն աչացն անփոփո՛խ է իրօք. և ականջին ձայնն և բանն փոփոխական: - 239. Երկրորդ՝ ցուցմամբ. *զի* տեսանելն զհաւատն նշանակէ որ է հաստատ. և լսելն զուսումն ճարտարութեան: - 239. *Զի* աչաց լոյսն հուր է. և հուրն վերընթա՛ց է. վասն այն ի բնականսն նայելով հեշտանայ, և ի բռնութեամբն դժուարի և զարհուրի: - 239. Նմանապէս և այն. յորժամ զամենայն ինչ թողումք և ի լոյս ճրագին նայիմք. *զի* ազգական է իւր՝ զայն սիրէ և տեսանէ: - 239. Նա՛խ՝ *զի* պահապա՛ն է նմա յարտաքին վնասուց: - 239. Երկրորդ՝ *զի* զփոշին սրբէ որ ի յօդոյս նստի յաչքն. որպէս մեք ձեռօք սրբեմք զերեսս հայելւոյ: - 239. Հինգերորդ՝ սպիտակ ճրագուն. *զի* հո՛վ է բնութեամբ զջերմութիւն աչացն բարեխառնէ. նա և գեղեցկացուցանէ՛: - 239. *Զի* ուղեղն ի մէջն սնուցանէ զոսկրն. և ջիլն կապէ՛ առ միմեանս զի մի քակտեսցին ոսկերքն. և արիւնն կերակո՛ւր է նոցա: - 240. Եւ աղի ջուրն է՛ ի յաչքն. *զի* զջերմութիւնն բարեխառնէ՛: - 240. Երկրորդն ուղեղ գլխոյն է. հով է և գէճ ընդ դէմ սրտին ջերմութեանն և չորութեանն. *զի* բարեխառնեսցէ՛ զնոսա. և իւր տանուտէր լուսինն է: - 241. Եւ գլխաւո՛ր անդամք են սոքա. *զի* թէ յայլ անդամքն՝ այսինքն աչքն՝ ականջն՝ ձեռքն՝ և ոտքն՝ կամ այլն վնասի, մարդն ապրի: - 241. Իսկ սիրտն *զի* առաւել ջերմ է՝ հալէ՛ զճարպն: - 241. Իսկ լեարդն *զի* ներգործութեամբ է արիւնն ի նմա: - 241. Եւ թոքն *զի* անդադար շնչէ: - 241. Միսն տաք է և ջիլն հով. *զի* ջիլն ձկտի յորժամ յագենայ. և կծկի յորժամ քաղցենայ: - 242. Եւ միսն *զի* տաք է՝ հալէ՛ զկերակուրն որ ի յինքն ժողովեալ: - 242. *Զի* **դ** հիւթն ներքին անդամոց՝ ի ձեռն սրտին պատճառե՛ն զ**դ** հիւթն արտաքին: - 243. Ի լերդէն ջուր բերանոյն քաղցր. *զի* զամենայն համս առցէ: - 243. Յաչքն աղի ջուրն, *զի* տեսցէ զկսկիծ անձինն և այլոց, և արտասուեսցէ: - 243. Ի բերանն քաղցր. *զի* զամենայն բան քաղցր խօսեսցի: - 243. *Զի* սրտին արիւնն և լեարդն և լեղին որք ջերմայինք են՝ ի յաջոյ կողմն են մարդոյն: - 243. Եւ է՛ բնութիւն ոսկերաց ցուրտ և չոր. *զի* խոնաւն և լոյծն ի ցամաք և ի ցուրտ մածնու և լինի ոսկր. որպէս ջերմն և խոնաւն լինի միս: - 244. Գիտելի է, *զի* **գ** սկզբունք են սոցա: - 244. *Զի* սիրտն ունի **բ** տուն. ի յաջ կողմն իւր զարիւնն ժողովեալ որ առնու ի լերդէն: - 244. Եւ գիտելի է, *զի* հետևին միմեանց երեքեան սոքա. այսինքն ջիլն. և շնչերակն. և արեան երակն: - 244. *Զի* արիւնն կերակրէ՛. և ջիլն զգայութիւն տայ. և շնչերակն զջերմ կենդանութիւնն բոլոր մարմնոյն: - 244. Ասեմք եթէ երանքն. *զի* թէ հատանեն զերանսն, մարդն լինի որպէս կին. և մորուս ո՛չ բուսանի: - 245. Իսկ *զի* կէսք քարց և անմորուք լինին, *զի* ջլապինտ է մորթ երեսացն որպէս զթաթ ձեռաց. վասն որոյ մազ ո՛չ բուսանի: - 245. *Զի* խարտեաշ մաղձն ընդ արիւնն և ընդ մորթն խառնի: - 245. *Զի* թէ հուրն աւելի է, լինի շէկ գունով. և թէ օդն՝ լինի կարմիր. իսկ ջուրն առնէ սպիտակ. և հողն սեաւ գունով: - 245. Եւ գիտելի՛ է, *զի* յա՛յսց խառնուածոց լինի բարք իմն և ախտ ի մարդն: - 245. *Զի* որ զհուրն առաւել ունի որ է շէկն՝ բարկացօ՛ղ է: - 245. *Զի* բարկացօղ են դառնայ մաղձ ոտքն: - 245. Նա՛խ՝ *զի* այնպիսի նշանք ո՛չ դնեն հարկ ի մարդն. այլ ցուցանեն զձկտումն բնութեանն ի յայնպիսի

իրս: - 246. Երկրորդ՝ *զի* ոչ նոյնպէս աւելի և նուազ. այլ երբեմն՝ և հաւասար ամենայն մարդկան: - 246. Երրորդ՝ *զի* բանականութեամբ կարեն սանձիլ սոքա, յորժամ կամեսցին: - 246. Չորրորդ՝ *զի* բազմաց լինի նշան պատահական և ո՛չ բնական: - 246. Հինգերորդ՝ *զի* կարէ՛ մարդ ներհակ սովորութեամբ պահօք և աղօթիւք և կրթութեամբ մարմնոյ սանձել յինքեան զայսպիսիս նշանաց գործ: - 246. *Զի* ասեն եթէ՝ ոգի արուին է՛ փոյթ և քաչասիրտ. իսկ կին՝ ողորմած և երկչոտ: - 246. Շուրթն կախեալ սակաւ մի, տարտա՛մ է. *զի* յէշ և ի ձիս նմանի: - 247. Կարճ կլափն՝ նախանձո՛տ է և ո՛չ հեզ. *զի* նման է օձի: - 247. Եւ առ հասարակ ասեմ զայս դնել ի մտի. *զի* չափաւորութիւն անդամոցն ըստ ձևոյն և ըստ գունոյն և ըստ քանակութեան և ըստ կազուածոյն և ըստ շարժմանն, նշանակէ զբարի մտացն ընդաբոյս յարմարութիւնն: - 248. *Զի* բանական մասունքն տեսականաւն զարդարի: - 248. *Զի* տրամախոհութիւնն ա՛յնպէս է առ իմացումն որպէս գոյնն առ տեսանելիքն: - 249. *Զի* թէպէտ ըստ ներգործութեանն բաժանին երբեմն ի բաժանելի մարմնոյն՝ *զի* առանց մարմնոյն ո՛չ կարեն ներգործել սոքօք, այլ անբաժանելի մնան ըստ էութեանն ի հոգին. որպէս ցուցանելոց եմք յառաջիկայսդ: - 249. Իսկ ներքինն՝ որ է հասարակ զգայութիւնն. երևակայութիւնն. կարծիքն. տրամախոհութիւնն. յիշողութիւնն որ է միտք. *զի* ամենայն ինչ ի յիշողականն մտանէ: - 249. *Զի* տնկական հոգին յօժարի՛ գոլ. և զգայականն բարեպէս գոլ. և բանականն ևս բարեպէս գոլ. *զի* ո՛չ երբէք հանգչի, մինչև միաւորեսցի ընդ ևս բարեգունին: - 249. Վասն այնորիկ զօրութեամբ սիրոյն շարժի առ աստուած ի միջին կէտ իւր. *զի* գերազանցապէս հեշտասցի ի նա՛: - 249. *Զի* լոյս Բանին և պայծառախօսութիւն՝ ի խելքն ծագէ. և Իմացականն՝ ի միջին փորուած գլխոյն: - 250. *Զի* թէ ի սուրբ մարդ յարի՝ սրբի. և թէ ի պիղծ՝ պղծի: - 250. Նա՛խ՝ *զի* զգայարանքն նորա որպէս զկակուղ մոմ առաւել ընդունի զտիպն: - 251. Նախ՝ *զի* զգայարանքն պինտ է: - 251. Եւ գիտելի՛ է, *զի* զբնական արւեստն տղայքն առաւել ուսանին: - 251. *Զի* այսոքիկ ի կողմանէ մարմնո՛յն են պատճառք: - 251. Այլ այս է ուղիղ. *զի* որպէս նախախնամութիւնն աստուծոյ զդէմքն մարմնոյն ի հաւասարութիւնն անհաւասար պահեաց, և ի նմանութիւնն աննման: - 252. *Զի* ոմանք ասեն զհոգին յառաջ գոյանալ քան զմարմինն: - 252. *Զի* որք զհոգի յառաջ ասեն գոյանալ՝ զայս դնեն պատճառ, եթէ յէակքս իմանալիքն յառաջ ստեղծան քան զզգալիքս. ապա և ի մարդոյն էութիւն հոգին յառաջ է քան զմարմինն: - 252. Զոր ընդ դերևս հանէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան այսպէս եթէ, որք զհոգին յառաջ ասեն գոյանալ քան զմարմին. և վասն մեղաց եդեալ ի մարմին մարդոյ. որ է՛ համանման բանականութեամբ. և է՛ իներքոյ երկնային կենաց՝ *զի* մարմնաւո՛ր է: - 252. Այլ արդ ի մարմնի առաւել մեղանչէ քան յերկնային կեանս. վասն որոյ անկանի ի զգայական մարմին որպէս ասեն՝ որ ներքո՛յ է մարդոյն՝ և համանման ախտիւք *զի* զգայակա՛ն է: - 252. Այլ ա՛րդ ի յանբանսն ո՛չ է առաքինութիւն որով սրբի ի մեղաց. ապա պարտ է *զի* փոխեսցի ի ներքինն իւր որ է՛ տունկն. և նման կենդանւոյն *զի* աճէ՛: - 252. Այլ արդ՝ ի տունկն ո՛չ կարէ սրբիլ. այլ անկանի յանշունչն, որ ներքո՛յ է տնկոյն, և նման նորա *զի* մարմին է: - 252. Կարգաւո՛ր է ապա՝ *զի* յանշնչոյն փոխեսցի յանէն և յանգոյն. որ մերձակայ և ներքո՛յ է անշունչ մարմնոյն: - 252. Պատասխանեմք առ այս եթէ՝ փչումն ո՛չ զբանական հոգին ասեն սուրբ հարքն. *զի* մարդ ասելով զհոգի և զմարմին նշանակեաց. և զմարմինն *զի* ի նիւթո՛յ է՝ ի հողոյ ասաց. այսինքն ի դ տարերաց որ է՛ ի հողն. և զհոգին ո՛չ նշանակեաց թէ ուստի՞ է. *զի* յանէից է ստեղծումն նորա: - 253. Նախ եթէ վասն մարմնո՛յն եղև հոգի *զի* շարժեսցէ զնա. ապա անա՛րգ է հոգին քան զմարմին որ վասն նորա եղեալն է. և մեծ և պատուական է մարմին քան զհոգի: - 253. Երկրորդ՝ *զի* մի գոյութիւն է մարդն բաղադրեալ ի հոգւոյ և ի մարմնոյ. ոչ է պարտ բ լինիլ սկիզբն. այլ մի էութեանն մի է սկիզբն: - 253-254. Երրորդ՝ *զի* թէ հոգին յետո՛յ է քան զմարմին, լինի ինքն առ ինքն խեղ և անկատար: - 254. Չորրորդ՝ *զի* լինի առ ինքն հակառակութիւն, թէ ո՞ է երէց և կրտսեր առ ինքն: - 254. Հինգերորդ՝ *զի* տկարութիւն է զօրութեանն աստուծոյ՝ եթէ զմի էութիւն ըստ մասին յայլ և այլ ժամանակս գործեաց: - 254. *Զի* է՛ սկիզբն նիւթական մարմնոյ կազմուածոյն. և է՛ սկիզբն՝ ծննդեան հոգւոյ: - 254. *Զի* կազմողական զօրութիւնն որ է՛ ի նիւթն՝ ազդումն առեալ յարարչադիր հրամանէն, նախ կազմէ՛ և պատրաստէ՛ զնիւթն առ ի յընդունելոյ զտնկականն. և ապա զզգայականն. յետ որոյ զբանականն ի ծագմանէն աստուծոյ: - 254. Նախ՝ *զի* նիւթն այն ունի առ ինքն բնական զկենդանութիւն տնկականին. և տնկականն մա՛սն է զգայականին. և զգայականն բանականին. և սոքա ո՛չ որոշին ի բոլորէն. *զի* մի են էութեամբ ի մարդն թէպէտ ա՛յլ են ներգործութեամբ: - 254. Երկրորդ՝ *զի* զօրութեամբ ունի զհոգին յինքեան ծածկեալ. որ յետոյ ներգործութեամբ երևի: - 254. Ասեմք եթէ՝ ի կողմանէ նիւթո՛յն կարելի է ասել. *զի* զոմն ունի, և զոմն ընդունի. այսինքն զտնկականն ունի, և ընդունի զբանականն: - 254. *Զի* զօրութիւն ունի այս նիւթ՝ ընդունել զբանականն. զոր նիւթ անասնոցն ո՛չ կարէ ընդունել: - 254-255. Երրորդ՝ ևս յայտնի. *զի* ընդ նիւթոյ կազմութեանն համանգամա՛յն է և երևումն ոգւոյ. *զի* յորժամ անկատա՛ր է նիւթն, միայն կերակրիլն երևի ի

նմա: - 255. Նախ՝ *զի* ի կենդանի մարմնոյ է յառաջ եկեալ: - 256. Երկրորդ՝ *զի* կենդանի է և յառաջ եկեալն: - 256. Երրորդ՝ *զի* ի կենդանի երկիր անկանի: - 256. Չորրորդ՝ *զի* ո՛չ է այն մեռելութիւն միայն՝ որ բանականն կամ շունչն պակասի. այլ և որ տնկականն պակասի. որպէս քար. ա՛յն է իսկապէս մեռեալ: - 256. Հինգերորդ՝ *զի* ունակութիւնն նա՛խ է քան զպակասութիւնն. *զի* ուր ո՛չ է ունակութիւն, և ո՛չ է անդ պակասութիւն: - 256. Վեցերորդ՝ *զի* զգործն կենդանւոյ տեսանեմք ի նա որ է՛ ջերմութիւն, շարժութիւն, և ներգործութիւն. որ երևի ի կազմելն զհիւթն: - 256. Եւ թէ ոք հարցանէ, ընդէ՞ր է *զի* ամենայն սերմն ի մէջն է: - 256. Երրորդ՝ *զի* զօրութեամբ է նիւթն պա՛րտ է ծածուկ գոլ, *զի* ներգործութեամբ երևեսցի: - 256. Ծանիր և զայս. *զի* բազում զարմանագործութիւն գոյ ի սմա: - 256. Նա՛խ՝ *զի* զնման և զաննմանն ծնանի. որպէս հատն զցորեանն և զծեղ: - 256. Երկրորդ՝ *զի* ամենայն մասունս համանգամայն առ ինքն ունի: - 256. Երրորդ՝ *զի* զկենդանութիւն ունի և ո՛չ երևի: - 256. Չորրորդ՝ *զի* զօրութիւն է, և յետոյ ներգործութեամբ փոխի: - 256. Հինգերորդ՝ *զի* նիւթն հատանի, և զօրութիւնն ո՛չ: - 256. Վեցերորդ՝ *զի* յապականեալ նիւթոյն՝ զօրութիւն կենագործի: - 256. Եօթներորդ՝ *զի* մի գոլով սկիզբն ենթակային և կենդանութեանն որպէս ասացաք: - 256. Նա՛խ՝ *զի* անմարմին է հոգին. վասն որոյ ո՛չ հատանի. ո՛չ տընկականն. ո՛չ զգայականն. և ո՛չ բանականն: - 257. Երկրորդ՝ *զի* հատեալն ապականի. այլ հոգին անապական է և անմահ: - 257. Երրորդ՝ *զի* հատեալն մասնաւորի. այլ ընդ ծնանիլ զաւակին՝ ոչ ինչ պակասի ի ծնօղն. բան, կամ շունչ, կամ կենդանութիւն. այլ բոլորն է ի ծնօղն և բոլորն ի ծնեալն: - 257. Որպէս ճիւղ հատեալ ի ծառէ և տընկեալ յերկրի, ճիւղն է հատեալ ի ծառէն, այլ կենդանութիւնն ո՛չ. ուստի յա՛յտ է *զի* տընկեալ ճիւղն նոյն կենդանութեամբն բուսանի զոր ունի առ ինքն: - 257. Ասեմք առ այս. *զի* թէպէտ ա՛յլ է գործ ստեղծման և ա՛յլ նախախնամութեան. *զի* սեղծանելն է առնել իր ինչ ի յոչընչէ. և նախախնամելն՝ զեղեալն փոխանորդութեամբ ի նոյն տեսակն պահել: - 257. Իսկ բանականս մարդ ո՛չ ամենևին նախախնամութեամբ է. *զի* հոգին ո՛չ ի ծնողաց, այլ ի շնորհացն աստուծոյ պարգևի: - 257. Եւ ո՛չ ամենևին ստեղծմամբ. *զի* մարմինն նախախնամութեամբ փոխանորդի: - 257. *Զի* նախախնամութեամբ ունի զտնկականն և զզգայականն. և ստեղծմամբ զբանական հոգին զպատկերն աստուծոյ: - 257. Ո՛չ է հին, *զի* ըստ իւրաքանչիւր մարմնոյ համանգամայն ստեղծանի հոգին: - 257. Եւ ոչ նոր, *զի* մի և նոյն ի սկզբանէ հրամանն արարչադիր առանց տկարութեան ներգործէ մինչ ի կատարած. և ըստ իւրաքանչիւր հոգւոյ՝ նոր հրաման ստեղծանելոյ ո՛չ արձակի: - 257. *Զի* թէպէտ մի իրէ նախախնամութիւնն աստուծոյ առ արարածս, այլ զամենայնս ո՛չ միապէս պահէ և նախախնամէ: - 258. Եւ ստեղծմամբ *զի* ըստ գոյութեան իւրոյ շնորհօքն աստուծոյ նո՛ր պարգևեցաւ ընդ լինելութեան մարմնոյ: - 258. Նմանապէս և արուեստաւորն աստուած նախանկար տեսութեամբն ունի ի միտս իւր նախքան զլինիլն մարդոյն՝ զորպիսիութիւնն. զորքանութիւնն. և զայլն. իսկ արուեստն որ է արարչադիր հրամանն, ազդէ՛ ի նիւթն. և *զի* անկատա՛ր է նիւթն, անկատար տայ և նմա հոգի զտնկականն: - 258. Եւ բնակա՛ն է, *զի* յանկատարէն ի կատարեալն ելանէ. որպէս աստիճանաւ ի գլուխ սանդղոյն. և ի սակաւուն ի բազումս. այսպէս և հոգի: - 258. Իսկ բարոյականն այս ինչ է. *զի* զպատկերն արարչական և զառաջին կեանս դրախտին կորուսաք, և զանասնեղէն պատկերն և զերկրորդ և զախտաւոր կեանս ընտրեցաք. յիրաւի շրջեցաւ ի մեզ և լինելութիւն հոգւոյն: - 258. Նա՛խ՝ *զի* մի գոյութիւն է մարդն և մի կենդանի. մի հոգի է միոյ մարդոյ և մի կենդանութիւն: - 259. Երկրորդ՝ *զի* թէ այլ և այլ էր հոգի, ի յայլ հոգւոյ տեղիս ո՛չ բնակէր այլ հոգի որպէս յայլո՛յ կաղապար. և ա՛յլ դրօշած ի յա՛յլ կնիք. այլ մի է. վասն այն որ յետոյ երևի, յառաջնոյն խառնուածն կարէ՛ բնակիլ: - 259. *Զի* մի և նոյն հոգին ըստ այնմ որ ազդէ՛ ի տընկական ներգործութիւնն որ է՛ կերակրական. աճողական. և ծննդական. կոչի տընկական: - 259. *Զի* յորժամ ասես մին՝ այս առաջին մասն է երրորդին. և երկուքն երկու մասն: - 259. Այսպէս և զգայականն և տնկականն մասունք են բանականին՝ նախ եղեալ ի մարմինն. և յորժամ բանականն հեղի ի մարմինն, յայնժամ և սոքա հեղին ընդ նմա. *զի* զօրութիւնք և մասունք են նորա ըստ օրինակի նախասացեալ երրորդ թւոյն: - 259-260. Եւ թէ ասիցէ ոք, ո՞րպէս է մի, *զի* ահա ի մահուանն բաժանին ի նմանէ: - 260. Ասեմք առ այս, եթէ և յետ մահուան ո՛չ բաժանին սոքա ի հոգւոյն ըստ էութեան. *զի* մի է էութիւն սոցա. այլ ըստ ներգործութեան. *զի* ո՛չ է մարմին՝ ո՛չ կարէ ներգործել: - 260. Ասեմք առ այս, թէ մի է հոգի հաւաստեաւ. և ո՛չ է ինքն ինքեան առաջին և վերջին. *զի* մի էութեան՝ առաջին և վերջին ո՛չ է. այլ ըստ ներգործութեան. *զի* ըստ առաջին և վերջին զօրութեանն՝ առաջին և վերջին ներգործէ: - 260. Ասեմք առ այս թէ, օն ի բա՛ց տար ի մտաց քոց զհեթանոսական կարծիս. *զի* ո՛չ է հոգի յառաջ քան զմարմին. և ո՛չ մարմին նախ քան զհոգի որպէս ի սկիզբն ասացաք: - 260. *Զի* սերմնական զօրութիւնն որ է՛ ի նիւթն այն՝ իսկ ընդ խառնիլ սերմանցն յարգանդի, զուգապէս ցուցանէ զտնկականն: - 261. Եւ նախ սիրտն կազմի քան զայլ անդամսն. *զի* ջերմութիւն սերմանն ի մէջն ժողովի և կազմէ՛ զսիրտն: - 261. Ասեմք առ այս, եթէ քառասունն ունի զչորս և զտասն թիւն. *զի* դ տասն է: - 261-262.

Արդ՝ **ժ** թիւն կատարեալ է. և չորսն տարրական է. այսինքն *զի* կատարեալ հոգին բանական ի նո՛յն ժամն խառնեալ միաւորի ընդ մարմնոյն տարրական, և կերպացեալ լինի մի մարդ մի դէմ և մի բնութիւն մարդոյ ի հոգւոյ և ի մարմնոյ. որպէս քառասունն ի տասանց և ի չորից է գոյացեալ: - 262. *Զի* քսանն **դ ե** է. և կենդանին է ի չորից տարերց. ունելով զե զգայութիւնս: - 262. *Զի* վեցն որ է՛ կատարեալ թիւ, և նիւթն այն է՛ ի չորից տարերց, և ունի առ ինքն զկազմողական և զտնկական զօրութիւնն որ է **զ**: - 262. *Զի* ամենայն նիւթ սերմնականի է՛ ի չորից տարերց. և ունի զկազմողականն զօրութիւն. որով լինի տնկականն: - 262. *Զի* քարշեն յերկրէ զհիւթ, և ունակացեալ պահեն, և հալեալ փոխեն յինքեանս. և վտարեն զաւելորդսն ի կեղև՝ ի տերև՝ և յայլսն: - 262. Եւ այլք ևս յաւելեալ. *զի* են ի չորից տարերց՝ է և **ը** ամիսս կատարին: - 262. Ասեմք թէպէտ նիւթն ի չորից տարերց է, այլ տնկականն զօրացեալ քան զնիւթն՝ ըստ իւրոյ մասանցն ծնանի. *զի* ծնանիլն տնկականին է. այլ և ունի զտարերացն թիւ. *զի* յամիսս չորս կատարի այն՝ որ յառաջ ծնաւ: - 262-263. Այս է պատճառն. *զի* ոմանք յապաղեն. և ոմանք փութով տան զպտուղն որպէս ասացաք: - 263. Սակայն և նա՛ է ի թիւս յայս. այսինքն *զի* երիցս պատկելով երեքտասանն՝ լինի **լթ**. և ի քառասներորդումն պտղաբերի: - 263. Եւ յաւելեալ զկազմողականն՝ յութն ամիսս ծնանի և ո՛չ ապրի *զի* անկատա՛ր է: - 263. *Զի* բոյսք մանունք և չորքոտանիք մանունք կարեն ի նոյն ամի զնմանն ծնանիլ ըստ վերոյ ասացեալ երրեակ թուոյ ամսոյ, կամ կրկին վեցեկի: - 264. *Զի* մանունքն յամսօրէից և ի վայր, ի շաբաթս և յաւուրս և ի ժամս ըստ նոյն թուոյ կարեն զնմանն ծնանիլ. և առաւելքն առաւելեալ ամօք կրկին կամ երեքկին որպէս ասացաք: - 264. Իսկ մարդոյն խորհուրդն ըստ չորից տարերց և երից զօրութեանց տնկականին եօթեամբ կատարի. թիւ շնորհալի և մշտակոյս ըստ աթենայ. *զի* ոչ ծնեալ լինի և ո՛չ զայլս ծնանի: - 264. Եւ **է** ամեայ ուսումն ստանայ. վասն որոյ մինչև յեօթն ամն երեխայ կոչի. *զի* **գ** մասունք են հոգւոյն. բան. ցասումն. և ցանկութիւն. ըստ պղատոնի: - 264. Եւ *զի* ա՛յս է թիւ կատարեալ չափոյ հասակի մարմնոյ և մասանց հոգւոյ: - 265. *Զի* **ժ** ի չորից ծնանի. և չորսն տարրական է. վասն որոյ ի նմա կարէ մարդ ծնանիլ զնմանն իւր: - 265. Եւ ա՛յս է բարձր հասակն և կատարեալ. *զի* ի սմա պապ կարէ լինիլ մարդն երեսն ամենի: - 265. Եւ տե՛ս, *զի* **բ բ** են յաւելեալ թիւ ի չորեքտասան, յերեք հասակս փոփոխելով: - 265. Ապա ուրեմն յա՛յտ է՝ *զի* տղայութիւնն ո՛չ կարէ զնմանն ծնանիլ. այլ մանկութիւնն որպէս ասացաւ: - 266. Խնդրեմ և զայս ուսանիլ թէ ընդէ՞ր է՝ *զի* մարդս կատարեալ կենդանի է քան զանասունս. և յորժամ ծնանին նոքա ահա՛ ի նոյն ժամն կանգնին յոտից վերայ և գնան, և այլն. իսկ մարդն ոչ: - 266. Իսկ մարդոյն ուղեղն գէճ է և հով. *զի* նկարեսցէ յինքն զիմացումն մտացն. և ջիլքն յառաջեալ ի նման վասն գիճութեան ո՛չ կարէ պնդել զանդամսն. վասն որոյ ո՛չ կանգնի և ոչ գնայ: - 266. Ուստի յա՛յտ է՝ *զի* յառաւել կերակրի և աւելի աճէ և բազումս ծնանի տունկն քան զանասունս: - 266. Ուստի յա՛յտ է՝ *զի* այծեամն առաւել է տեսանելեաւ. և շուն հոտոտելեաւ. և այլն նմանապէս. վասն որոյ փութով շարժին և կանգնին քան զմարդն: - 266. Զայս կարգ պահէ՛ և ի զարգացման հասակին. *զի* մինչև ցեօթն ամն ատամն բուսանելով և փոփոխելով՝ նշանակէ՛ զկերակրականն: - 267. Դարձեալ՝ նախախնամութեանն է այսպէս կարգեալ. *զի* մարդս ունի դայեակ և սնուցօղ, պէտս ունի խնամարկութեան *զի* հասցէ ի չափ հասակի: - 267. Հինգերորդ՝ ի յուսումն խոնարհութեան մերոյ. *զի* տեսանելով զմեզ տկար քան զանասունս, մերկ և աղքատ ի մօրէ ծնեալ, խոնարհեալ զիջանիմք ի հնազանդութիւն արարչին. և զի մի՛ եկամուտ հպարտութեամբ կրեսցուք զանկումն արուսեկին: - 267. Նա՛խ՝ *զի* բանականի և անբանի սերմ ո՛չ խառնին ի միմեանս: - 267. Երկրորդ՝ վասն ժամանակին. *զի* մարդն յինն ամիսն կատարէ զանդամս, և արջն երեք: - 267. Նոյնպէս և յառիւծոյ և յիշոյ ո՛չ լինի ծնունդ. *զի* մինն մսակեր է և միւսն ընտակեր: - 267. Իսկ ի ձիոյ և յիշոյ լինի ջորի. *զի* ընտակերք են և միաժամք ծնանին: - 267. Ըստ բնականին այս է. *զի* ամենայն իր որ լինի՝ յանկատարութենէ ի կատարումն ելանէ, և ի զօրութենէ ի ներգործութիւն որպէս ի վերոյ ասացաւ: - 267. Իսկ նշանակէ նախ զժամանակն. *զի* անցեալն և հանդերձեալն ո՛չ է ի միջի այլ ներկայն: - 267. *Զի* է՛ որ բնական է, և է՛ որ աստուածային, և է՛ որ դիւական: - 268. Նա՛խ՝ *զի* մնացորդք գործոց և խորհրդոց կերպարանին ի յիշատակարանս հոգոյն զոր ինչ գործեաց ի անցելումն, կամ խորհեցաւ վասն հանդերձելոյն: - 268. Չորրորդ՝ ըստ բարուցն տեսանէ ոք. *զի* ա՛յլ է երազ արի մարդոյ, և այլ երկչոտին. ա՛յլ գիճասիրին, և այլ պարկեշտին: - 268. Իսկ *զի* բանական միտքն ո՛չ տեսանէ զերազն, այլ անբան մասն, որ է՛ տնկականն ի մեզ. նա՛ յածի յերազն. և ցուցանի այս ի կրկին իրաց: - 268. Նա՛խ՝ *զի* խորհրդական միտքն կարգաւոր և առանց տարակուսանաց տեսանէ. իսկ երազն անկարգ և տարակուսանօք և զանհնարն տեսանէ որպէս ի վերայ օդոյ թռչիլ, և ի ծովու գնալն, և աղքատաց թագաւորել, և այլն: - 268. Երկրորդ՝ *զի* բանական միտքն և զգայականն խափանեալ է ի գործոյ յորժամ ննջէ ոք: - 268. Եւ ա՛յս է պատճառն. *զի* լոյս հաւատոյն հեղումն է յաստուծոյ առ իմացումն մարդոյ. և ըստ որում իմացումն է մեր՝ իմաստութիւն կոչի: - 269. Նա՛խ՝ ըստ առաջ եդելոյն. *զի* առաջ եդեալք սորա են

աստուածայինքն և իմանալիք. իսկ նոցայն՝ մարմնականք և զգալիք: - 269. Երկրորդ՝ ըստ պատւոյն. *զի* այս երկնային և վերուստ իջեալ. իսկ այնոքիկ երկրաւոր և շնչաւոր որպէս ասէ առաքեալն: - 269. Երրորդ՝ ըստ կատարման. *զի* այս յետ փոխման զյոյսն ունի լծակցեալ անմահութեան և խնդութեան. իսկ այնոքիկ կորստական և անցաւոր: - 269. Դարձեալ հանճար ասի, *զի* առ յապայն ունի զկատարումն: - 270. Նախ՝ *զի* իմաստնոց ուղիղ է, և անմտաց կարծիք: - 270. Երրորդ՝ կարծիք է, *զի* ի ներկայս ո՛չ է. և ուղիղ խորհուրդ, *զի* յապագայն լինելո՛ց է: - 270. Դարձեալ՝ հանճարն է տրամախոհութեանն. *զի* կարծիք է կապեալ ընդ ուղիղ խորհրդոյ. իմաստութիւնն իմացմանն. գիտութիւնն յիշողութեանն: - 270. Դարձեալ՝ իմաստութիւնն է բանին. *զի* նորա՛ է իմանալն. գիտութիւնն ցասմանն. *զի* նորա է ընտրելն. և հանճարն ցանկութեանն. *զի* նորա է յանճարն տռփիլ: - 270. *Զի* իմաստութիւնն է ճանաչումն աստուծոյ բացարձակապէս. իսկ հանճարն է ճանաչումն համեմատաբար. այսինքն համեմատելով զստեղծուածս առ ստեղծօղն: - 270. Դարձեալ զանազանութիւն, *զի* հանճարովն ճանաչի աստուած լուսաւորութեամբ լսելոցն ի գիրս սուրբս. իսկ իմաստութեամբ ճանաչի աստուած ըստ ինքեան: - 270. Գիտելի՛ է, *զի* յերից է պատկերին գեղեցկութիւն որով նմանի ի նախատիպն: - 271. Ա՛ռդ՝ աստուածային գեղեցկութիւնն ո՛չ այսու երանգօք զարդարի *զի* զմեզ ի նմանն իւր կազմեսցէ: - 271. Նա՛խ՝ ի թագն. *զի* գլուխ և *տէր է* բոլոր հնազանդելոցն: - 271. Երկրորդ՝ ի ծիրանին. *զի* արքայա՛զն է և թագաւորածին: - 271. Երրորդ՝ ի գաւազանն և ի մատանին. *զի* ի վերայ իշխանաց և իշխեցելո՛ց է հաստատեալ և յեցեալ: - 271. Չորրորդ՝ կօշիկն կարմիր. *զի* արեամբ չափ ի ներքոյ ոտից են հնազանդեալք ամենայն: - 271. Նախ *զի* աստուած է՛ անձնիշխան և ինքնակալ. նոյնպէս և մարդս: - 271. Երրորդ՝ *զի* անմարմին է հոգին: - 271. Չորրորդ՝ *զի* անմա՛հ է որպէս զաստուած: - 271. Հինգերորդ՝ *զի* ամենայն տեսանէ և քննէ աստուած. այսպէս և մարդն ներքին և արտաքին զգայարանօք: - 271. Վեշտասաներորդ՝ *զի* բանական է: - 272. Եօթնեմ՝ *զի* իմաստուն է: - 272. Ութնեմ՝ *զի* անմե՛ղ է հոգին: - 272. Քսաներորդ՝ *զի* նախատե՛ս է: - 272. Քսանմեկ, *զի* շնորհ քահանայութեան ընկալաւ: - 272. Քսանբ, *զի* արարիչ է: - 272. Քսանգ, *զի* եռամասնեայ է: - 272. Զանազանի պատկեր և նմանութիւն, որպէս մարդն և կենդանին. *զի* ամենայն մարդ ասի կենդանի. այլ ո՛չ ամենայն կենդանի մարդ: - 272. *Զի* իր ինչ յաւելու մարդն ի վերայ կենդանւոյն, որ է՛ բանականն: - 272. *Զի* ի վերայ նմանութեան իր ինչ յաւելու պատկերն՝ որ է՛ նոյնութիւնն, և ապա՛ է պատկեր. *զի* պատկերն հոմանուն է: - 272. *Զի* ո՛չ է ըստ նմանութեան պատկեր. այլ ըստ նոյնութեան բնութեանն: - 272. Զորօրինակ՝ որդի թագաւորի պատկե՛ր է թագաւորին. *զի* բնութենակից է նմա: - 273. Եւ դարձեալ՝ որպէս ձու հաւի և ձու քարեայ՝ նման ասին միմեանց, այլ ո՛չ պատկեր. *զի* ո՛չ են ի միմեանց ելեալ. և ո՛չ զնոյն էութիւն ունին: - 273. Եւ այս չէ՛ ընդունելի. *զի* մարդն երրորդութեանն է պատկեր եղեալ որպէս ցուցաւ. և ո՛չ միայն որդւոյ և հոգւոյն սրբոյ: - 273. Եւ այս ևս չէ՛ ընդունելի. *զի* ցուցաւ ի վերոյ եթէ յարացոյցն նոյն ինքն աստուած է ամենեցուն: - 273. Եւ այս ևս ո՛չ է ընդունելի. *զի* սոցա պատասխանի տայ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց թէ՝ որ ասաց զպատկերն, իմանամք զնմանութիւնն ի պատկերին որպէս ցուցաւ ի վերոյ. *զի* ամենայն պատկեր ՚ի հարկէ նմա՛ն է: - 273. Եւ այլք ասեն թէ՝ մարդն ո՛չ է պատկեր աստուծոյ. այլ պատկեր պատկերի. *զի* որդի է հօր պատկեր, և մարդն որդւոյն. վասն այն ասաց նման և պատկերի: - 273. Եւ դարձեալ ասեն թէ՝ հոգին է պատկեր աստուծոյ ըստ զօրութեանցն. *զի* ունի միտք և իմացումն և կամք: - 273. Այլ նման է աստուծոյ *զի* աստուած է անմահ և աներևոյթ. և հոգիս մեր է անմահ և աներևոյթ: - 273. Դարձեալ՝ պատկեր է հոգիս մեր. *զի* բանն և շունչ կենդանութեանն ի նմանէ՛ յառաջ գայ: - 273. Իսկ նման, *զի* մի է երիցն էութիւն և բնութիւն. այնու նմա՛ն եմք աստուծոյ: - 273. Դարձեալ՝ պատկեր եմք աստուծոյ, *զի* ճանաչեմք զճշմարտութիւնն: - 273. Եւ նման աստուծոյ, *զի* սիրեմք զբարութիւն որպէս ասացաւ ի վերոյ: - 273. *Զի* թէ ո՛չ էր ասացեալ ընդ պատկերին զնմանն լինիլ, ամենայն ոք պատճառէր, և զմարդն պաշտելով անկանէր ի կռապաշտութիւն. վասն որոյ ասաց զնմանն, թէ յորժամ տեսցեն պատկերակից աստուծոյ զմարդն բանականութեամբ անմահութեամբ և այլովքն որ ինչ է ի հոգիս, իմանայցեն և զզանազանութիւնն աստուծոյ: - 274. Նա՛խ՝ *զի* խոստովանեալ է յամենեցունց որ ո՛չ է հաստելի. այսինքն ո՛չ ստեղծեալ: - 274. Եւ *զի* ո՛չ է ստեղծեալ, և ո՛չ է յեղեալ ի չգոյէ ի գոյ. ապա ուրեմն անեղ է: - 274. Եւ *զի* անեղ է. ի հարկէ մշտնջենաւոր և անվախճան է: - 274. Իսկ հոգւոյն առաձին, Նա՛խ՝ *զի* ամենայն ոք խոստովանի եղեալ զնա: - 274. Եւ *զի* եղեալ է, ապա ո՛չ է անեղ: - 274. Եւ *զի* ո՛չ է անեղ՝ յեղեալ է ի յոչնչէ յէութիւն: - 274. Եւ ապա *զի* յոչնչէ եղեալն կարէ՛ նմա և ի նոյն փոխիլ եթէ կամքն աստուծոյ թոյլ տացէ: - 274. Նա՛խ՝ *զի* մարդո՛յն է զանազանել զբարի և զչար. և փախչիլ ի չարէ՛, և երթալ զհետ բարւոյն՝ կատարելոցն է ըստ մարգարէին, «խոտորեաց ի չարէ՛ և արա՛ զբարի»: - 274. *Զի* անասունք զայս ո՛չ գիտեն. այլ միայն զհեշտալին ընտրեն: - 274. **Դարձեալ՝ մարդն է քաղաքական կենդանի. *զի* լինիցի համաբնակք և կարեկիցք և օգտակարք ի բարին:** - 274-275. Դարձեալ՝ մարդո՛յս է խօսիլ և բանաւորիլ. *զի* այլ

կենդանեացն նմանութեամբ է և ո՛չ իսկապէս: - 275. *Զի* որպէս որդի՛ է ի հօրէ նոյն բնութեամբ. և մարդն ի մարդոյ նոյն բնութեամբ: - 275. Դարձեալ՝ յատկութիւն ի տկարութենէ. *զի* հանապազորդ ունի զպակասութիւն. և անկա՛ր է ի միշտ կանգնիլն: - 275. Երկրորդ՝ զի մի՛ անփոյթ և անհնազանդ եղիցի մարդոյն. այլ ի նմանէ՛ ի կողիցն, *զի* որպէս մարմին հնազա՛նդ լիցի գլխոյն: - 276. Երրորդ՝ *զի* որպէս խօսիլ գլխոյն է. նոյնպէս լռութիւն կողին է. *զի* լուռ լիցի կինն ընդ իշխանութեամբ առնն: - 276. Հինգերորդ՝ *զի* կողնէ աման և տեղի երիկամանց. յորմէ շարժի ցանկութիւնն. *զի* թէպէտ ո՛չ շարժէ զնա. այլ ազդումն ինչ ունի զնմանէ: - 276. Վեցերորդ՝ ո՛չ առնու ի գլխոյն և ո՛չ յոտիցն. այլ ի միջացն. *զի* խրատէ՛ զմարդիկ ո՛չ հաւասար գլխոյն պատուել զկինն, և ո՛չ անարգել իբրև զոտք. այլ միջակ պատուով չափաւորել զնա: - 276. Եօթներորդ՝ ***զի* պարունակածն է կողն. ի նշանակել, *զի* կինն պարունակիչ և հաւաքիչ է տան առն և ընչից**: - 276. Ութերորդ՝ *զի* կողն կեռ գոլով՝ ցուցանէ զկինն նենգ գոլ և երկմիտ. կեռ, այսինքն խեռ ընդ առն: - 276. Իններորդ՝ *զի* որպէս կողից երեսն որ ի փորն նայի՝ կոկ գոլով և մզղնա տեսակ. իսկ մէջն փուչ և մրրախառն. այսպէս սէրն զոր ցուցանէ առ այրն, նօսր առ ի ցոյցս՝ և երեսս միայն ունի. իսկ ի սիրտն զմրուր դառնութեան: - 276. Նա՛խ՝ *զի* յառնէ՛ իւրմէ առաւ: - 276. Չորրորդ՝ կին, *զի* ի կենդանւոյ առաւ: - 276. Նա՛խ՝ *զի* ո՛չ ունի զառնողական զօրութիւնն. որպէս և յամենայն կենդանիս էգն: - 276. Երկրորդ՝ *զի* ի ձախ կողէ՛ շինեցաւ կինն. և տկա՛ր է ձախ կողմն մարդոյս: - 276. Տասներորդ՝ կին, իբր թէ կեանք. *զի* որպէս կենօք է տնել. նոյնպէս տեսակ մարդոյս ի ձեռն կնոջ ծննդեանն տնէ՛, և կայ մնայ մինչ ի կատարած: - 276. **Վասն այսր պատճառի կոչեաց զանուն կնոջ իւրոյ կեանս. *զի* աճումն է և ծնունդն և մայր ամենայն կենդանեաց**: - 276. Նա՛խ՝ *զի* հրամանքն է ստեղծողի առ ստեղծուածս: - 277. Երրորդ՝ մահու մեռանիլ զհոգւոյ մահն ասէ որ մեղօքն մեռանի. *զի* այն է առաւել մահ և յաւիտեան չար...: - 277. Չորրորդ՝ մահու մեռանիլ այն է, որ հոգւով և մարմնով տրտմին. և անմահ չարչարին. որպէս մեղաւորք յայս կեանս և յետ մահու. *զի* որ մեռանի մարմնով՝ զպարտս վճարէ. և որ տրտմի հոգւով՝ անմահ մահանայ: - 277. Գիտելի է, *զի* որպիսութիւն կենաց մարդոյս տրամատի յերիս. ըստ երից փոփոխմանց մարդոյն. այսինքն նախ քան զմեղքն. և յետ մեղացն. և յետ մահուն: - 278. *Զի* նախ քան զմեղանչելն ի դրախտին՝ մարդն կարէ՛ր մեղանչել, և կարէր ոչ մեղանչել. կարէր մեռանիլ, և կարէր ոչ մեռանիլ: - 278. Նախ՝ վասն պարզամտութեանն. *զի* որպէս տղայք ո՛չ ամաչեն անծածուկ ունելով զմասունս. նոյնպէս և նոքա: - 278. Երկրորդ՝ վասն անմեղութեանն. *զի* ամօթն յետ մեղա՛ցն է: - 278. Երրորդ՝ *զի* չէին առեալ զպատւէրս որ ծնանէր զերկիւղ և զգուշութիւն. որ ի պակասումն զգուշութեան ամօ՛թն է: - 278. Չորրորդ՝ *զի* ընդ ծառս դրախտին և յանթառամ ծաղիկս և ի բազմապատիկ պտուղսն պշուցեալ էին, ո՛չ զերկնչիլն գիտէին և ո՛չ զամաչելն: - 278. Հինգերորդ՝ *զի* մտօք յաստուածային խոկումն էին վերացեալ, և զգայարանօք ընդ գործս հրաշիցն. և ոչ էին պարապեալ քննութեան անձին. *զի* «աչք իմաստնոյն ի գլուխ իւր»: - 278. Վեցերորդ՝ *զի* թէպէտ ի ձեռագործ հանդերձից մե՛րկ էին, սակայն ի լուսոյ շնորհաց զարդարեա՛լ էին: - 278. Նա՛խ՝ ի տեսութենէն, *զի* ո՛չ ևս յաւել տեսանել զերեսս աստուծոյ: - 279. Ի խօսակցութենէն, *զի* մինչ ի յորդանան այլ ո՛չ ասի հօր աստուծոյ խօսիլ ընդ մարդկան: - 279. Ի լուսաւոր պատմուճանէն, յորժամ կերին ի պտղոյն և ծանեան *զի* մերկ էին և արարին սփածանելիս: - 279. Ի քահանայութենէն, *զի* ո՛չ իշխեաց պատարագ մատուցանել ի կեանս իւր: - 279. Իսկ մարգարէութիւնն լռեաց, *զի* ո՛չ ևս երևի բան մի յիշատակ շնորհաց նորա: - 279. Նա՛խ՝ *զի* արար աստուած: - 279. Նա՛խ՝ *զի* ցանկացաւ աստուածանալ: - 279. Երկրորդ՝ *զի* հաւատաց օձին: - 279. Երրորդ՝ *զի* հնազանդեցաւ կնոջն առաւել քան աստուծոյ: - 279. Չորրորդ՝ *զի* եկեր ի պտղոյն: - 279. Հինգերորդ՝ *զի* թաքեաւ: - 279. Վեցերորդ՝ *զի* ո՛չ զղջացաւ մեղա՛յ ասելով: - 279. Եօթներորդ՝ *զի* զաստուած ասաց պատճառ. եթէ կինս զոր ետուր՝ սա՛ ետ ինձ ուտել: - 279. Նա՛խ՝ *զի* մերկացաւ յանմահութենէն և յանասնոց կարգ անկաւ: - 279. Երկրորդ՝ *զի* զրկեցաւ ի կենացն փայտէն և ի դրախտէն արտաքսեցաւ: - 279. Երրորդ՝ *զի* ընդդէմ դրախտին բնակեցաւ և ի միշտ նախանձէն մաշեցաւ: - 279. Չորրորդ՝ *զի* քրտամբ և աշխատութեամբ վարեցաւ: - 279. Հինգերորդ՝ *զի* ցաւօք և հեծեծանօք ապրեցաւ: - 279. Վեցերորդ՝ *զի* յառաջ քան զիւր վախճանն ետես զմահ կնոջն և զորդւոյն: - 279. Եօթներորդ՝ *զի* լուծաւ և եմուտ յարգանդ երկրի. այսինքն ի գերեզման: - 279. Երկրորդ՝ հեշտութիւն խօսակցիլ ընդ օձին. և վասն այն կամեցաւ լսել, *զի* հեշտացաւ վասն փառաց աստուածանալոյն: - 280. Հինգերորդ՝ երկիւղն յայնմ. *զի* լաւն զձայն գնալոյ տեառն և երկեան: - 280. Ութերորդ՝ մաշկեղէն հանդերձն. ո՛չ ըստ ոմանց թէ մորթ մարմնոյս, *զի* ունէր զայս ի ստեղծմանէն: - 280. Տե՛ս, *զի* յայտնապէս ցուցանէ սուրբն, *զի* թէ պահպանութեամբ կացեալ էին ի դրախտին, ո՛չ ևս ամուսնութեամբ լինէր աճումն: - 280. Այլ կամ իբր զհրեշտակս, կամ որպէս ի միոյ լուսոյ բազումք, կամ կուսութեամբ ծնունդ. որպէս սուրբ կոյսն մարիամ աստուածածին սրբութեամբ և կուսութեամբ ծնեալ փոխեաց զկարգ բնութեան ծննդեանս որ ի սերմանէ առն և կնոջ. *զի* սա՛ ծնունդ միայն ի մօրէ՛: - 280. Եւ

**ե**երորդ՝ ո՛չ ևս թզենեաւ՝ այսինքն դառն վարուք ստուերանալ. *զի* տերև թզենւոյն դա՛ռն է և փշոտ ըստ մեղացն առակի: - 281. Վեցերորդ՝ *զի* անկասկած լիցուք ի վատթար երկիւղէ. յորում երկիւղազգածք չարչարին ըմբռնեալք ի մեղս: - 281. Եւ զուստին մի՛ հարցանէր թէ ի կենդանւո՞յ էառ, և թէ նո՛ր գոյացոյց. *զի* ամենայն ինչ կարելի՛ է աստուծոյ: - 281. Երրորդ՝ զմեռելութիւն ախտից. *զի* պարտիմք մեռուցանել ի մեզ զմարմնական ախտն: - 281. Ասեմք եթէ՝ զոր ինչ ի յարութեանն աւուր լինելոց է սրբոցն, զսկիզբն անդանօր սերմանեաց ի նախնի մարդն ադամ. *զի* թէ յիւրում ժամանակին կերեալ էին ի կենաց պտղոյն, լինէին կատարեալ անմահք. և փոխեին յարքայութիւնն: - 282. *Զի* զանմահութեան և զանապականութեան սկիզբն և զսերմն ընկալաւ ադամ: - 282. *Զի* պահելով զպատուիրանն ի կատարեալ անմահութիւնն ժամանէր յերկինս. իսկ անցանելովն փոխեցաւ ի մահ և անկաւ յերկիր: - 282. *Զի* յանապական կուսէ ծնաւ եցոյց զանընդդիմահարութիւնն և զանօսրութիւնն. և գնալով ի վերայ ծովուն, զթեթևութիւնն և զերագութիւնն. իսկ զպայծառութիւնն յայլակերպիլն: - 282. Եւ *զի* **գ** պատարագս ունիմք. և թէ զի՞նչ էր կրկին ողջակէզն: - 284. Եւ *զի* աւելորդ ծորումն ո՛չ էր ի քրիստոս: - 285. Եւ *զի* յերիս տեղիս պատերազմին դևք: - 285. Ռուբէն օրհնի, *զի* ապաշխարեաց: - 285. Նա՛խ *զի* սիրտ սուրբ և աննենգ ունէր. ուստի յա՛յտ է յանմեղութեամբ գնալոյն ընդ եղբօրն ի դաշտն: - 286. Երկրորդ՝ *զի* խոնարհ և հնազանդ էր յամենայնի. ուստի մնաց եղբօրն պատարագի. որ իւրն **գ** ամսով յառա՛ջ էր հասեալ քան զեղբօրն. այսինքն ծնունդ ոչխարացն քան զպտուղ երկրին...: - 286. Երրորդ՝ *զի* էր յօժար կամօք և զուարթ սրտիւ. ուստի երևի այս ի նուէրքն...: - 286. Չորրորդ՝ *զի* զանարատսն և զպարարտսն մատուցանէր յօրինակ անարատ գառինն քրիստոսի. և ճարպաւորն՝ լուսոյ աստուածութեանն: - 286. Հինգերորդ՝ *զի* զանդրանիկսն մատուցանէր...: - 286. Իսկ զփոխարէն պարգևսն զոր ընկալաւ, Վասն առաջնոյն՝ *զի* ասէ գիր, «հայեցաւ», այսինքն հաճեցաւ աստուած ի հաբէլ: - 286. Վասն երկրորդին՝ *զի* ասէ՝ «և ի պատարագս նորա». այսինքն *զի* ընկալաւ ի հոտ անուշից: - 286. Վասն չորրորդին՝ *զի* առաջին եղև քահանայ ի տիպ ճշմարիտ քահանայապետին քրիստոսի: - 286. Վասն **ե**երորդին՝ *զի* զանդրանկութեան օրհնութիւնն ընկալաւ որպէս յակոբ զեսաւայն: - 286. Դարձեալ սիրեցաւ յաստուծոյ, *զի* առաջին մարտիրոս սա՛ եղև. թէպէտ թոյլ ետ իջանել ի դժոխս, *զի* ի պատճառս նորա խնդրեսցին այլքն. որպէս ի պատճառս ղովտայ զերծան սոդոմայեցիքն աբրահամաւ: - 287. Իսկ կայեն *զի* ո՛չ այսպիսի կամօք մատոյց՝ անարգեցաւ եօթնիցս ընդդիմակօքն: - 287. *Զի* ո՛չ հաճեցաւ ի նա և ո՛չ ի զոհս նորա. և տրտմեցան երեսք նորա և այլն: - 287. Հինգերորդ՝ *զի* առաջին սպանօղ եղև: - 287. Վեցերորդ՝ *զի* եղբայրսպան է: - 287. Եօթներորդ՝ *զի* ստեաց աստուծոյ ի հարցանելն վասն զղջման: - 287. Իսկ գործել ասաց զերկիր, *զի* դրախտին չեղև արժանի: - 287. Նախ՝ *զի* արեա՛մբ շաղախեցեր զնա: - 287. Երկրորդ՝ *զի* զօրութիւնն որ քեզ տւաւ յաստուծոյ՝ չարաչար արկեր ի կիր: - 287. Եւ չորրորդ՝ *զի* յաւելեր անէծս երկրի զկնի հօրն քոյ Ադամայ: - 287. Իսկ *զի* ասէ «երերեալ»՝ յա՛յտ է իբրև զծառ մարմնովն: - 287. Երկրորդ՝ *զի* զպատիժս անցաւորովս կրեսցէ: - 288. Երրորդ՝ *զի* որ նոր չարիս գործեսցէ՝ առաւել պատժեսցի: - 288. *Զի* պատկերն աստուծոյ վերստին նորոգեցաւ ի նմա: - 288. Նա՛խ՝ *զի* յաներևոյթ կեանսն և ի հանդերձեալն յուսացաւ. և արհամարհեաց զերկրաւորս որ տեսանի...: - 288-289. Երրորդ՝ յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ ի յօգնութիւն. զոր մարդիկ յուսահատեալ էին եթէ վասն մեղաց մերոց եթող զմեզ աստուած ի ձեռաց. և նա ի յօգնութիւն կոչեաց զանուն տեառն աստուծոյ. այսինքն *զի* տէր է՝ ո՛չ գարշի ի ծառայից իւրոց. և *զի* աստուած է՝ էա՛ծ զմեզ աստ ոչ ի կորուսանել, այլ ի կեցուցանել: - 289. Չորրորդ՝ *զի* **բ** արձան կանգնեաց պղնձի և խեցի և արար գիր. և զոր ինչ ադամ անունս եդ իրաց, զամենայն գրեաց ի նոսա. զի մի՛ այլայլեսցին ի գնչուտ և ի լեզուատ արանց: - 289. *Զի* թէ նախ ջրով ապականեսցի պղնձի սիւնն մնասցէ. և թէ հրով՝ աղիւսն: - 289. Ի դրախտն, *զի* թանձր մարմնով ո՛չ բնակին յիմանալեացն կայանս. և յօդս կախիլ անպատշա՛ճ էր: - 289. Ապա ուրեմն ի դրախտն մտնի. *զի* դրախտն երկին կոչի: - 289. Իսկ *զի* **բ** սոքա մտին, այս վասն **ե** պատճառի: - 289. Նա՛խ՝ *զի* հաստատեսցէ զերկու կարծիս թերութեան մարդկան: - 289. Երկրորդ՝ զմին յառաջ քան զջրհեղեղն, և զմիւսն յետոյ. *զի* ցուցցէ թէ յերկոսին ժամանակս ընտրեալքն հաճոյ եղեն աստուծոյ: - 289. Երրորդ՝ մինն կուսութեամբ, և միւսն ողջախոհ ամուսնութեամբ. *զի* ցուցցէ թէ ի կուսից և յամուսնացելոց մտցեն յարքայութիւնն երկնից: - 289. *Զի* փոխելն ցուցանէ նախ զկարօղ զօրութիւն փոխողին: - 289. Նախ՝ *զի* նախանձախնդիր էր աստուծոյ: - 289. Երրորդ՝ *զի* կուսութեամբ եկաց. և այսոքիկ երկնայինք են և հանեն զմարդն առ աստուած: - 289. Այլ ի դէ՛պ է *զի* նախանձախնդի՛ր է աստուծոյ ընդդէմ տանն կայենի: - 290. Երկրորդ՝ *զի* առանձնակի կեանս ստացաւ **բճ** ամ: - 290. Երրորդ՝ *զի* ո՛չ հայէր ի վեր. երկաթի կապիճս եդեալ ի գլուխն: - 290. Չորրորդ՝ *զի* պտուղ ո՛չ եկեր. որով նա ուտելովն զրկեցաւ կենաց. և այսպիսիքս յերկինս հանեն զմարդն: - 290. Դարձեալ ըստ եփրեմի հինգերորդ՝ *զի* սուրբ էր սրտիւ. և Վեցերորդ՝ *զի* միամիտ էր կամօք. և սոքա առնեն զմարդն մերձակայ աստուծոյ: - 290. Եւ այս

թաքուցեալ լինի ի սատանայէ՛: - 461. Տասներորդ՝ որպէս ի դրախտին մերկ էին ադամ և եւա և ո՛չ ամաչէին *զի* անմեղք էին: - 461. Եւ գիտելի է, *զի* ի տաճարն **ժդ** ամաց էր: - 461. Նա՛խ՝ սրբութիւն հասարակ. որպէս շնորհք մկրտութեան և խոստովանութեան. *զի* որք անցանեն ընդ նա՞ սրբին: - 462. Եւ գիտելի է, *զի* թէպէտ մեծագո՛յն է ըստ ինքեան սրբութիւն արգանդին քան զսրբութիւն մկրտութեանն. այնու, զի բառնայ զդիւրասահութիւն մեղանչելոյն: - 462. Սակայն ըստ ներգործութեան մեծագոյն է սրբութիւն մկրտութեանն. *զի* տպաւորէ զկնիքն. այլ և բանայ զդուռն արքայութեան. այլ և պատրաստէ՛ զմարդն առ ի խորհուրդս ամենայն. զոր ո՛չ ներգործեն ա՛յլ երկոքին եզական շնորհքն: - 462. *Զի* ի խորհուրդ մկրտութեանն ի յառնուլ ջուր, հոգին սուրբ և զօրութիւն բարձրելոյն և ողջոյն հօրն ի ձեռն հրեշտակին որ հերքէր զմեղս ըստ մկրտութեան: - 462. Նաև ունէր զշնորհս սրբութեան արգանդին. *զի* յորովայնէ՛ սրբեցաւ յարգանդէ: - 462. *Զի* գալ հոգւոյն սրբոյ պատճա՛ռ էր կրկին ներգործութեան. այսինքն սրբութեան արմատոյ մեղաց. և պտղաբերութեան կուսածին զաւակին. ծնանիլ և կոյս մնալ յետ ծննդեանն: - 463. *Զի* ունի մայրական խնդութիւն հանդերձ կուսութեան պատուով: - 463. Նա՛ ևս գերազանցեալ քան զհրեշտակս այսու, *զի* նոքա ի գոյացական վարձս ո՛չ աճիլ կարեն և ո՛չ նուազիլ. իսկ երանուհի կոյսն կարէր յառաջանալ յարդիւնս և ո՛չ նուազիլ: - 463. Երկրորդ՝ *զի* հրեշտակք ի հարկէ բնութեան ունին զկուսութիւնն. իսկ աստուածածինն զայն պահեաց մաքրութեամբ մարմնով զկուսութիւն ողջախոհութեան: - 463. Նա՛խ՝ *զի* աստուած էր որ ծնանէր. պարտ էր *զի* աւետաւորն հրեշտակ աստուծոյ լինէր: - 463. Երրորդ՝ *զի* նորոգումն որ լինելոց էր ծննդեամբ կուսին՝ ո՛չ միայն մարդկան էր, այլ և հրեշտակաց. պարտ էր հրեշտակին սպասաւորել կուսին: - 463. Չորրորդ՝ *զի* անկասկած լիցի ամենևին և անկարծ ի չարեաց զատուցեալ սուրբ կոյսն. ի ձեռն հրեշտակին աւետարանել զյղութիւնն. և ո՛չ ի ձեռն մարդոյ: - 463. Հինգերորդ՝ *զի* դեղն պատասխանէր հիւանդութեանն: - 463. *Զի* որպէս սատանայ օձիւն խօսեցաւ առ կոյսն եւա, այսպէս տէր մեր հրեշտակիւն առ կոյսն մարիամ: - 463. **Նա՛խ՝ *զի* աստուած էր ողջոյնառաքն.** որ խօսէր զկոյսն ի հարսնութիւն կուսութեան, կուսաբեր լինիլ պտղովն: - 464. Երկրորդ՝ *զի* հրեշտակ էր **ողջունաբերն**. կոյսն և անապական բնութեամբ: - 464. Երրորդ՝ *զի* կոյս էր **ողջոյնընկալն** և գերազանց քան զամենայն կոյս որպէս ցուցաւ: - 464. Չորրորդ՝ *զի* ասելն «ուրախ լեր» ի յայլ թարգմանս է «ողջ». ցուցանէ զողջութիւն և զանմեղութիւն կուսին: - 464. Իններորդ՝ *զի* ո՛չ մարգարէիւ յայտնեաց կուսին. որ էր աղօտ գիտութիւն համեմատեալ ընդ հրեշտակին: - 464. Այլ և ծանիր, *զի* յընտրողութիւնն ոչ էր վաղվաղուկ որպէս եւա: - 465. Խորհիլ՝ *զի* ընտրեսցէ զճշմարիտն: - 465. *Զի* ասելն «Աhաւասիկ» ցուցանէ զյօժարական հնազանդութիւնն: - 465. Այլ և ծանիր. *զի* է բան յիշէ սուրբ գիրք զոր խօսեցաւ աստուածածին կոյսն: - 465. Եւ տե՛ս, *զի* ամենայն բանք կուսին են կարճ: - 466. Նա՛խ՝ աստուածածին վասն այն ասեմք, *զի* ծնեալն ի նմանէ աստուած է: - 466. Տասներորդ, յա՛յտ է ի սքանչելեաց ծննդեանն. *զի* անսերմն յղացումն. և անապական ծնունդ. և անխախտ կուսութիւն: - 466. եթէ զոր օրինակ բժիշկք՝ ո՛չ ի սկիզբն ցաւոց և ո՛չ ամենևին անագան տան ըզդեղ հիւանդին. *զի* անօգուտ է և վնասիչ. այլ ի դիպօղ ժամու յորում առողջասցի: - 467. Նա՛խ՝ *զի* ո՛չ խնդրէին, ըստ որում ո՛չ ցանկանային: - 467. Երկրորդ՝ *զի* ո՛չ հաւատային. ըստ որում ո՛չ գիտէին: - 467. Նա՛խ՝ *զի* յուսահատութեամբ վրիպէին: - 467. Երկրորդ՝ *զի* այն քան բազմութիւնք հաւատացելոց կորնչելո՛ց էին, որ ո՛չ վայելէր ամէնիմաստ գիտութեանն աստուծոյ: - 467. Նա՛խ՝ անպատշա՛ճ էր թէ հայր էր մարմնացեալ. *զի* հայր անսկիզբն է. և յայնժամ ո՛չ ոք լինէր առանց սկզբան: - 468. Երկրորդ՝ *զի* թէ հոգին սուրբ էր մարմնացեալ, յայնժամ լինէին **բ** որդիք: - 468. Երրորդ՝ *զի* թէ հայր էր մարմնացեալ, մի և նոյն լինէր հայր և որդի: - 468. Ութերորդ՝ *զի* լիցի պատճառ փրկութեան որ եղև պատճառ զլորման: - 468. *Զի* մարդն ցանկացաւ գիտութեանն աստուծոյ որ է յատուկ որդւոյ՝ և անկաւ. նոյնպէս նովին գիտութեամբն պարտ էր և կանգնիլ: - 468. Տասներորդ՝ *զի* սէր հօր երևեսցի առ մեզ...: - 468. Այսքան վասն բանին մարդեղութեան, *զի* բազում են պատճառք ասացեալ վարդապետաց. զոր մեք զսակաւն եդաք աստ: - 468. Նա՛խ՝ *զի* ո՛չ լինէր այն որդի ըստ բնութեան ծնողին. որպէս և ո՛չ եւա ադամայ. վասն որոյ յարգանդէ ծննդեամբ եղև որդի կուսին: - 469. Երկրորդ՝ *զի* ո՛չ ինչ անդամ զազրելի է ի մարդն. այլ ամենայնն հաւասար են յարդարութիւն. եթէ ոչ եկամուտ ինչ խառնեսցի ի նմա: - 469. Երրորդ՝ *զի* ո՛չ ինչ յորոց ստեղծ աստուած զարշի բնակիլ. մանաւանդ յարգանդի զարդարեալ կուսութեամբ. *զի* զոր ստեղծ ձեռօք, բնակէ՛ ի տան ձեռագործի իւրոյ: - 469. Չորրորդ՝ *զի* նա՛ է առաւել օգնական բնութեանս. մարտնչելով աճելութեամբ ընդ դէմ պակասութեան մահու: - 469. Հինգերորդ՝ *զի* սրբեսցէ զբոլոր բնութիւնս մեր ի մեղաց. ի սկիզբն ի մէջն և ի կատարումն: - 469. *Զի* էր պտղաբերութիւն առանց ապականութեան կնքոյ: - 469. *Զի* նա՛ եղև մայր հօր. և դուստր զաւակին: - 469. Զերծեալ յանծից. *զի* անիծեալք էին կուսանք և ամուսնացեալք: - 469. Կուսանք՝ *զի* ո՛չ ծնան: - 469. Ամուսնացեալք՝ *զի* ցաւօք ծնան: - 469. *Զի* կուսութեամբ ծնաւ և զցաւս ո՛չ զգաց: - 469. *Զի* որպէս զհայելին ո՛չ բեկանէ շառաւիղ արեգականն: - 469.

*Զի* իսկոյն էր անդ բաժանումն արեանն. թանձրանալն. ձևանալն. հոգևորիլն. և աստուածանալն: - 469-470. *Զի* բարձօղն աշխարհի՝ ձեռամբ կնոջ բարձեալ լինի: - 470. *Զի* յղացումն տն ո՛չ եղև ի սերմանէ առն: - 470. Նա՛խ՝ *զի* կազմեցի զօրութեամբ բարձրելոյն ի հոգւոյն սրբոյ և ո՛չ նպաստութեամբ մարդոյ: - 470. Նա՛խ՝ *զի* ո՛չ վայելէր մաքրութեան կուսին: - 470. Երկրորդ՝ *զի* վէմն առանց ձեռին հատաւ ի կուսական լեռնէն ըստ դանիէլի: - 470. Նա՛խ՝ *զի* այն ո՛չ ունէր ծնունդ: - 470. Երկրորդ՝ *զի* ներգործութեամբ մասն՝ ո՛չ լինի զօրութեամբ բոլոր. վասն որոյ ոչ է նիւթ ծննդեան: - 470. Նա՛խ՝ *զի* ո՛չ ապականիւր կուսականն ամբողջութիւն: - 470. Երկրորդ՝ *զի* զօրութեամբ ունի և ոչ է ներգործական մասն: - 470. *Զի* ի հօրէ միշտ ծնանի աստուած. ի մօրէ միանգամ ծնաւ մարմինն. և ի միտս ծնանի բազում անգամ: - 471. *Զի* որպէս ի կուսական արգանդէ, նոյնպէս ծնաւ ի կոյս գերեզմանէ վիմովն կնքելով: - 471. Երրորդ՝ *զի* նա՛ միա՛յն է ի հօրէ ծնեալ. և չունի եղբայր: - 472. Եւ *զի* հոգին է ևս ի հօրէ, սակայն բղխումն է և ո՛չ ծնունդ որպէս ցուցաւ ի վերոյ: - 472. Եօթներորդ՝ նա՛ միա՛յն է միշտ և անդադար ծնունդ. *զի* ո՛չ սակաւ ի ժամանակի, և ո՛չ ի ժամանակի դադարի. այլ որպէս լոյս ի հրոյ միշտ և անհատապէս ծնանի: - 472. Ութերորդ՝ նա՛ միա՛յն է ծնունդ ի հօրէ և ո՛չ երբէք հայրանայ. *զի* ո՛չ ունի յինքենէ ծնունդ որպէս նա՛ ի հօրէ: - 472. Տասներորդ՝ ասի ոմանց թէ ի ժամ ծննդեանն քրիստոսի արգելման ամենայն ծնունդք մինչև ծնաւ բարձօղն երկանց ամենայն ծննդոց. *զի* նա՛ լինէր անդրանիկ ամենայն ծննդոց: - 472. Նա՛խ՝ *զի* նա ի հօրէ՛ է սկսեալ. և եղեալքս ի հօրէ: - 472. *Զի* նա՛ յառաջ քան զյաւիտեանս. և մեք ի ժամանակի: - 472. Եւ աստ գիտելի՛ է, *զի* զ ինչ միայն յատուկ է մարդացելոյն քրիստոսի. և ո՛չ այլ ումեք պատշաճի մարդկայինս ազգի: - 473. Նա՛խ՝ *զի* սկզբնական արդարութեամբ ծնաւ. և պատճառի անսերմն յղացումն: - 473. *Զի* տրտմութիւն արտասուաց ընդ մահուանն բարձաւ. իսկ ամօթ և ցաւք մարմնոյ՝ ընդ մեղացն բարձան. որպէս ի հատանիլ արմատոյ՝ չորանան ստեղունքն: - 474. Եւ տե՛ս, *զի* բնութեամբ միաւորեցաւ՝ իմանի քրիստոս. յայտ է *զի* յորոշելն ըստ ոմանց՝ ո՛չ ևս մնայ քրիստոս: - 474. Եւ այս գիտելի է, *զի* բանն աստուած ի տնօրէնութեան իւրում ընկալաւ զամենայն եղանակս օծութեան: - 474. Դարձեալ գիտելի է, *զի* օծեալն նշանակէ երիս դէմս. այսինքն զօծեալն և զօծումն և զօծօղն: - 475. *Զի* հերձւածօղք ոմանք օծեալ ասեն զքրիստոս յառաջ քան զյղացումն: - 475. *Զի* արիոս կամէր զանեղական բանն աստուած եղական և կարօտ օծման ցուցանել: - 475. *Զի* թէ յետոյ ի մկրտութեանն օծաւ քրիստոս, զի՞նչ աւետարանեաց հրեշտակն եթէ՝ «ծնաւ ձեզ այսօր փրկիչ օծեալ տէր»: - 475. Այլ և ո՛չ յառաջ քան զյղանալն օծաւ. *զի* սրբիլ և առաքիլ և իջանել յերկնից ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ մարմին լինիլ և մարմնով երևիլ բանին: - 475. *Զի* կամ միաւորի էութիւն ընդ էութիւն. կամ պատահումն ընդ պատահման. կամ էութիւն ընդ պատահման: - 475. *Զի* էութիւն ընդ պատահման միշտ անշփոթ միաւորի. որպէս որակ և քանակ ի գոյացութեան. *զի* անմեկնելի որոշմունք են: - 475. *Զի* են որ միաւորեալքն էութիւնք են և շաղկապն պատահումն. որպէս երկուք ոմանք անջատեալք ի միմեանց՝ պատահմամբ սիրոյ շաղկապին: - 476. Նա՛խ՝ որպէս մարդն յայլ և այլ բնութեանց միաւորեալ՝ մի անձն և մի դէմ և մի բնութիւն կատարի. *զի* մի ասեմք զմարդն և մի զբնութիւն նորա: - 477. *Զի* այսպէս միատեսակ բնութեամբ խոստովանի ընդ մեզ և այլ ժողովուրդ ուղղափառաց ըստ ուսուցման մեծին դիոնիսեայ յերկրորդ գլուխն եկեղեցական քահանայապետութեանն ասել, - 477. Տասներորդ՝ *զի* ի ծնունդն միաւորութեան մերոյ ո՛չ ասի մարմին ծնեալ. այլ թէ մարդ ծնաւ յաշխարհ: - 478. Նա՛խ՝ *զի* միաւորութիւնն մարդոյս եղականա՛ց է ընդ միմեանս: - 478. Երկրորդ՝ *զի* հոգի և մարմին գոյակիցք են միմեանց անընդհատ ժամանակաւ: - 478. Երրորդ՝ *զի* հոգի միաւորեալ ընդ մարմնոյ՝ է երբէք *զի* որոշի և դարձեալ միանայ: - 478. *Զի* որպէս ո՛չ գոյ սկիզբն աստուածութեան նորա, այսպէս և ոչ կատարումն մարդկութեան և աստուածութեան նորա: - 478. *Զի* յիսուս քրիստոս երէկ և այսօր՝ նոյն և յաւիտեան: - 478. Չորրորդ՝ *զի* ի մարդն է մի միայն միաւորութիւն. այսինքն հոգւոյ և մարմնոյ: - 478. Հինգերորդ՝ *զի* հոգի միաւորեալ ընդ մարմնոյ՝ է՛ ի մարմնումն էութեամբ և ո՛չ այլ ուրեք թէ և մտօք բազումս տեսանէ: - 478. Վեցերորդ՝ *զի* հոգի և մարմին մասն գոլով գոյանայ մի կատարեալ: - 479. Եօթներորդ՝ *զի* ի բազմա՛ցելոց հոգի ասէ նիւսացին միաւորի ընդ մարմնոյ: - 479. Ութերորդ՝ *զի* աստ ի միաւորութիւն հոգւոյ ընդ մարմնոյ՝ զգայակից և ախտակից լինին միմեանց կրական գոլով: - 479. Իններորդ՝ *զի* ի հոգի՝ ի նմանամասունս և յաննմանամասունս այլ և ա՛յլ գործէ. ըստ որում ակն տեսանէ և ո՛չ լսէ. բերանն ճաշակէ՛ և ո՛չ հոտոտէ: - 479. Տասներորդ՝ *զի* թէ և միաւորի հոգի և մարմին՝ այլ ո՛չ հոգին մարմին և ո՛չ մարմինն հոգի ասի: - 479. Նա՛խ՝ զի մի՛ անընտել թուիցի մարդկան. *զի* թէ առ ժամայն ի ծնունդն եղեալ էր երեսնամեայ հասակաւ, առ աչօք համարէին զիրն. և կամ այլ ինչ: - 479. Երկրորդ՝ *զի* արարիչն ընդ բութեան կարգս եմուտ. որպէս մարդ լինիլն և ի կուսէ ծնանիլն: - 479. Երրորդ՝ *զի* իւրաքանչիւր հասակի զմեղս բարձցէ. որպէս ծննդեամբն զերկուսս ելոյծ. և մահուամբն զմահ. նոյնպէս և տղայ և մանուկ և երիտասարդ հասակաւ զնոսա

արդարացոյց: - 479. Նա՛խ՝ *զի* ծեր և հին աւուրց նշանակեցաւ հայր աստուած ի դանիէլէ՛. իսկ որդին նորածին և երիտասարդ հասակաւ: - 479. Երկրորդ՝ *զի* ծերն ո՛չ է կատարեալ հասակ, այլ դարձումն ի նուազութիւն: - 479. *Զի* մինչ յերեսուն ամն շարժի աճիլ. և յայնմ հետէ ի նուազիլ: - 479-480. Երրորդ՝ *զի* քրիստոս զչափ հասակի զադամայն ունէր, որ նախ քան զյանցանս և ադա՛մ ոչ ունէր հիւանդութիւն և ո՛չ ծերութեան փոփոխումն: - 480. Երկրորդ՝ *զի* երկրորդ ադամ եղև զպարտիս նորին վճարելով, պարտ էր ի կերպս ադամայ երևիլ: - 480. Երրորդ՝ *զի* արուն զօրաւո՛ր է քան զէգն. և նախաստեղծքն գլորեալ էին վասն հեշտութեան իւրեանց. պա՛րտ էր արու լինիլ և կանգնել զնոսա: - 480. Չորրորդ՝ որպէս արու բռնացա՛ւ տէր ի քակել զօրէնս բնութեան. և խզեաց զկապ կուսանաց և զմայրական. այսինքն *զի* որ մա՛յր է՝ կոյս ո՛չ է. և որ կոյս է՝ մայր ո՛չ է: - 480. Ութերորդ՝ սկիզբն մարդկութեանս ա՛յրն է. և կինն ի նմանէ. վասն որոյ այր եղև, *զի* զբոլորս լինէր առեալ և փրկեալ: - 480. *Զի* ծնօղն կանանց. նոյնպէս և ծնունդն կանանց: - 480. Այլ և եղև այր, *զի* որպէս ծնօղն աստուածածին ազգի կանանց, և ի նմանէ ծնեալն աստուած՝ արանց միանգամայն և հանուրց լիցի փրկութեան պատճառ: - 480. Եւ այն զի փաթութած է՝ ըստ հրէական օրինին է. *զի* կոնդակ և գալարելո՛վ էր նոցա գիրն. իբր թէ ծածո՛ւկ է ի նոցանէ խորհուրդ մարգարէիցն և թաքուն: - 481. Չորրորդ՝ *զի* կամաւ հնազանդեցաւ խաչի և չարչարանաց. վասն այն ի գլուխն է նկարեալ: - 481. Կրկին է գիր. այսինքն կենաց և մահու. *զի* բարի գործովք գրիմք ի դպրութիւնն կենաց. և մեղօք գրիմք ի գիրն մահու և դատապարտութեան. որպէս ասեմք թէ զձեռագիր յանցանաց քոց ջնջեսցէ աստուած: - 481. Եւ գիտելի է, *զի* **գ** ազգ լինի գիր: - 481. Եւ յա՛յսմանէ յա՛յտ է, *զի* սուրբքն զծնունդն և զյայտնութիւնն ի միասին տօնէին. և յետոյ բաժանեցին ոմանք վասն բեթլէհէմի և յորդանանու: - 482. Եւ այլք վասն արտեմոնի. *զի* նա՛ փոխեաց զծնունդն ի դեկտեմբերի **իե**: - 482. Ա՛րդ՝ ցուցից տումարաւ զտօնս մեր և զնոցայն. *զի* տօնախմբութիւն նոցա այսպէս կատարի առ յայտնութիւնն: - 483. Այլ մեզ այսպէս իմանալի է. *զի* թշրինի մէկն նուիրեալ օր սուրբ տեառն կոչեսցի ասացաւ. որ է՛ սեպտեմբերի **ժը**: - 483. Երրորդ՝ *զի* ո՛չ ասաց հրեշտակապետն զաքարիայի թէ ահա՛ եղիսաբեթ յղասցի և ծնեսցի քեզ որդի զներկայն ցուցանելով. որպէս ասաց թէ «ահա՛ եղիցիս համր». և առ կոյսն թէ՝ «յղասջիր»: - 483. Չորրորդ՝ *զի* որ յամսեանն զերորդի հրեշտակապետն եկն առ կոյսն, ի յղութենէն եղիսաբեթի ասաց զոլ **զ** ամիս, և ո՛չ յաւետեացն: - 483. Հինգերորդ՝ ի նմին իրացն յայտնի է՝ *զի* ռամիկ ժողովուրդն ի տօնի քաւութեանն երեքօրեայ սրբութեամբ մերձենային առ դուռն տաճարին: - 483. Վեցերորդ՝ *զի* հարկ էր մատուցմունք նւիրաց ժողովրդեանն. և կատարեալ էր մի օր պաշտամանն: - 484. *Զի* **բժ**ան օրն թէպէտ պակաս է ի թիւս տարւոյն, սակայն սկիզբն է տարւոյն: - 484. Ութերորդ՝ *զի* թէ հաւատան աւետարանին և ոչ ստեն **լ** ամաց գալ քրիստոսի ի մկրտութիւն, ի հարկէ՛ պա՛րտին կատարել և զմկրտութիւնն ի նոյն ի տօնի ծննդեանն իւրեանց ի դեկտեմբերի **իե** որ իցեն ամենևիմբ սուտ: - 484. Մետասաներորդ՝ յա՛յտ է յամիսս նոցա. *զի* առաջին ամիս սեպտեմբե՛ր է նոցա. և վասն ծննդեանն քրիստոսի՝ փոխեցին և եդին զյունվար առաջին ամիս: - 484. Հնգետասաներորդ՝ յա՛յտ է յայսմանէ. *զի* վասն տօնի տեառնընդառաջին առաքեաց յուստիանոս կայսրն յերուսաղէմ զօրս բազում երիցս անգամ...: - 484-485. ...*զի* զքառասնօրեայ գալուստն ի տաճարն՝ ըստ ծննդեանն տօնեսցեն և ո՛չ ըստ յայտնութեանն. որ է՛ յունվարի վեցն. զոր մեք տօնեմք **խ** օր թուեալ մինչև ի **ժդ**ն փետրվարի: - 485. *Զի* յառաջին ամին ջուր բղխեաց ի սեան մատրանն: - 485. *Զի* ո՛չ սկզբնական և ո՛չ ներգործական մեղս ինչ ունէր: - 485. *Զի* անսերմն յղութեամբ և ի սրբեալ յարենէ կուսին գոյացաւ մարդ: - 485. Նա՛խ՝ *զի* որ բանն մարդ եղև՝ ո՛չ գարշի յեդեալ օրինացն իւրոց *զի* վասն մարդկան եդ: - 485. Երկրորդ՝ *զի* ցուցցէ զճշմարիտ մարդեղութիւն իւր և ո՛չ կարծեսցի առ աչօք. որպէս զրկեալքն ի շնորհաց նորա ասացին: - 485. Երրորդ՝ *զի* զկարգեալ օրէնսն յինքենէ՞ պա՛րտ էր անձամբ կատարել. *զի* հաւատասցի թէ ի նմանէ՛ են կարգեալ: - 485. Չորրորդ՝ *զի* պատճառ ամենայն սրբութեան ինքն էր, պա՛րտ էր զգործս սրբարար յանձն իւր կրել: - 485. Վեցերորդ՝ *զի* ցուցցէ զինքն որդի աբրահամու. առ որ հրաման թլփատութեանն եղև և խոստումն օրհնեալ զաւակին. և այսպէս խոստմանն աստուծոյ կատարումն քրիստոս զինքն ցուցանէր: - 485. Եօթներորդ՝ *զի* յինքն կրելով զթլփատութիւնն և զայլ օրինականս, ի ծանրութենէ թլփատութեան և օրինացն ազատեսցէ զմեզ: - 485. Իններորդ՝ *զի* աւետիս հարցն հաստատեսցէ. *զի* անսո՛ւտ է խոստմունք աւետեացն աստուծոյ. և որպէս զայս աւետիս ուխտի կատարեաց, նոյնպէս և զայլսն կատարեսցէ. այսինքն ի ծառայութենէ ազատութիւն, և արքայութեան խոստմունքն: - 485. *Զի* իցէ ինքն սկիզբն և կատարումն ո՛չ միայն ըստ աստուածութեանն, այլ և ըստ մարդկութեանն: - 485. Եւ այն էր *զի* զաքարիա ի վերայ բազկացն յովսեփու թլփատեաց զնա: - 486. Ո՛չ հատանելով *զի* անպատշա՛ճ էր բաժանիլ ի մարմնոյ կամ յարենէ նորա: - 486. Որպէս եսաւ անդրանիկն իսահակայ՝ կցողական դեղօք ողջացոյց զմարմին իւր և արար անթլփատ. *զի* ցրեսցէ զուխտն աստուծոյ: -

486. Եւ աստ գիտելի է, զի կրկին է թլփատութիւն. մարմնաւոր և հոգևոր: - 486. Զի վարդապետք ի դ բաժանեն զթլփատութիւնն քրիստոսի: - 486. Մկրտութիւնն քրիստոսի ո՛չ վասն կարօտութեան էր. զի ամենամաքուր և սուրբ է բնութեամբ և սրբիչ ամենայնի: - 486. Նա՛խ` զի զմերն յանձն էառ սրբութիւն. որպէս զայլսն ամենայն տնօրէնութիւն: - 486. Երկրորդ` զի խորտակեսցէ զգլուխ վիշապին ի ջուրն: - 486. Երրորդ` զի լուասցէ զմեղս. և զհինն ադամ թաղեսցէ ի ջուրն: - 486. Չորրորդ` զի սրբեսցէ զմկրտիչն և զջուրն: - 486. Հինգերորդ` զի զօրացուսցէ զջուրն վերստին ծնանել զմեզ: - 486. Վեցերորդ` զի կատարեսցէ և լցցէ զօրէնսն: - 486. Եօթներորդ` զի օրինակ լիցի մեզ գալ ի մկրտութիւն: - 486. Ութերորդ` զի յայտնեսցէ անդ զխորհուրդ Երրորդութեանն: - 486. Իններորդ` զի նշանակեսցէ զօգտութիւնն մեր: - 486. Տասներորդ` զի ցուցցէ զխոնարհութիւն իւր: - 486. Զի ասէ աւետարանն, (իբրև մկրտեցաւ յիսուս` ել վաղվաղակի ի ջրոյն. և ահա՛ բացան նմա երկինք. և սուրբ հոգին իբրև զաղաւնի էջ ի վերայ նորա: - 487. Առաջինն որ ասէ «ել վաղվաղակի ի ջրոյն». զի ամենայն ոք որ մկրտէր ի յովհաննէ ի ջուրն` խոստովանէր զմեղս իւր և ապա՛ ելանէր...: - 487. Զի ո՛չ ասաց թէ որ ի դմա՛ է կամ դոքա ըստ բաժանողաց. այլ թէ դա՛. որ մի անձն բնութեամբ միացեալ նշանակէ: - 487. Զի են անուանք որ զբնութիւնն նշանակեն որպէս մարդ: - 487. Երրորդ որ ասէ «որդի» նշանակէ զհաւասարութիւնն ընդ հօր. զի որդին լսի հաւասար հօր: - 487. Երրորդ` օրինակն. զի ամենայն անսուրբ ջրով լուացեալ սրբիւր. և ողողեալ զհանդերձս այնպէս մտանէր ի բանակն. և յաւազանն խոստովանութեան ջրովն: - 488. Չորրորդ` մկրտութիւնն յովհաննու որ մկրտէր ի յապաշխարութիւն. զի կարասցեն ընդունել զհոգւով մկրտութիւնն. վասն այն յառաջէ՛ր և սրբէ՛ր ջրովն: - 488. Այլ զանազանին Նախ ի ձևն. զի մկրտութիւնն յոհաննու տուեալ լինէր յանուն այնմ որ գալոցն էր. իսկ քրիստոսին յանուն Երրորդութեանն: - 488. Երկրորդ` ի ներգործութիւնն. զի մկրտութիւնն քրիստոսի արդարացուցանէ և զդուռն_երկնից բանայ. և յովհաննուն ո՛չ: - 488. Երրորդ` ի վախճանն. զի յովհաննուն ունէր կարգեալ առ մկրտութիւնն քրիստոսի. զի յա՛յն սովորեցուցանէր զժողովուրդն որ էր կատարեալ մկրտութիւն: - 488. Զի օծն ի բազում ժամանակս վիշապ լինի: - 488. Ծանի՛ր, զի վասն չարչարանաց ասացեալ է ի վերոյ ի ծա պրակն աստուածաբանին գրիգորի ընդ դէմ արիոսի: - 489. Իսկ այժմ վասն խաչին նախ գիտելի է, զի չարչարանքն քրիստոսի ընդ դէմ է և բարձօղ է մոլորութեանց մեղաց: - 489. Նա՛խ` զի չորեքտասա՛ն էր լուսինն եկն ի ներքին կիսագնդէն ի վերին գունդն և ձգեցաւ առ արեգակն: - 490. Երրորդ` զի գ ժամ ընդ արեգականն ընթացաւ և խաւարեցոյց զնա մինչ ի թ ժամն: - 490. Չորրորդ` զի յինն ժամէն մինչև յերեկոյ ի տեղի իւր դարձաւ: - 490. Դարձեալ նշանակէ զմահն քրիստոսի. զոր արեգակն արդարութեան կամեցաւ ի մարմին իւր թաքչիլ. զի զմեզ լուսաւորեսցէ: - 490. Նա՛խ` զի ծանիցի թէ սոցա արարիչ է անարգեալն. վասն այն լուսեղէնք և օդեղէնք և օդն խաւարեցան. ջուր ի կողիցն բղխեաց. և երկիր շարժեցաւ: - 490. Երկրորդ` ի յանդիմանութիւն խաչողացն. զի լուսաւորքն տեսեալ զտէրն իւրեանց մերկացեալ, պատկառեցին և քօղ արկին զխաւարն: - 490. Եւ գերեզմանք բացան. զի կարօ՛տ էին ննջեցեալքն նմա. և նոքա փակեցին զգերեզմանս սրտից իւրեանց: - 490. Եւ վարագոյրն պատառեցաւ. զի յանարգանս փեսային պատառեաց հարսն զքօղն. և կողն աղբիւրացաւ. և նոքա ո՛չ արտասուեցին: - 490. Եւ զի պարտապանք եղեն արեանն և վճարելո՛ց էին: - 490. Նա՛խ` զի երևելի էր և ո՛չ անարգ ոք. որ և սակաւ ինչ յառաջ փառօք եմուտ ի քաղաքն: - 490. Երկրորդ` զի ի բարձր տեղւոջ էր ի թագաւորական քաղաքի: - 490. Երրորդ` զի ի մէջ ծանօթից էր և սիրելեաց: - 490. Չորրորդ` զի ի տօնի զատկին ի մէջ բազում ժողովրդոց: - 490. Եւ չորիւքս այս առաւելու ամօթն. իսկ Հինգերորդ` զի ի մէջ չարագործ աւազակա՛ցն էր համարեալ: - 490. Վեցերորդ` զի անարգանա՛ց մահ էր խաչն. զայս ամենայն կրեալ վասն մեր: - 491. Այլ և գիտելի է, զի ամենայն պատարագ յերեք դէմս որոշի. որ է՛ մատուցօղն, և ընդունօղն, և պատարագն: - 491. Զի է՛ որ մատուցօղն մեծ է քան զպատարագն. որպէս հին օրինաց պատարագն. զի անասունք էին: - 491. Նա՛խ` զի զաստուած աստուծոյ պատարագեաց: - 491. Երկրորդ` զի ինքն զինքն պատարագեաց: - 491. Զի ըստ որում մարդ եղև տընօրէնութեամբ պատարագեաց զինքն: - 491. Զի զայն որ փայտիւն յաղթեաց` յաղթեսցէ. և զայն որ փայտիւն անկաւ` փրկեսցէ: - 491. Նա՛խ` զի դատապարտեցաւ ընդ մահու: - 491. Երկրորդ` զի անհաշտ թշնամութիւն եղև հօր աստուծոյ ընդ մարդոյ: - 491. Երրորդ` զի եբարձ զհոգին շնորհաց: - 491. Զի զանմեղ մարմինն իւր կամաւ պատարագեաց վասն մեր: - 492. Զի ըստ այնմ որ կամաւ մեռաւ` դատապարտեաց զմահ: - 492. Զի թէպէտ սատանայ էր գերեալ զմարդն, սակայն ի գերութիւն նմա հա՛յր մատնեաց յորժամ պատժեաց զնա: - 492. Չորրորդ դարձեալ` դ թև խաչին նշանակէ զչորս բարերարութիւնս քրիստոսի. զի վերին մասն ցուցանէ զբացումն արքայութեանն երկնից. ներքինն զաւերումն դժոխոց. աջն զբաշխումն շնորհաց. ահեակն զթողութիւն մեղաց: - 493. Ոմանք ասեն թէ աւանդիլ հոգւոյն քրիստոսի, աւազակն եմուտ յերկրաւոր դրախտն ուստի ել ադամ. և չէ՛ հաւանելի. զի անդ մարմնովն եմուտ յետ յարութեանն: -

495. *Զի* պետրոս քարոզեալ ասէ հոգւոցն որ ի բազում ժամս կատարի: - 495. *Զի* որ քան ամ ի յերկրի քարոզեաց, նոյն քան ժամ ի դժոխս առ հոգիսն: - 495. Եւ այլք ասեն՝ դրախտ զտեսութիւն աստուածութեանն կոչէ. զոր յետ աւանդելոյ հոգւոյն ետես աւազակն. և այս ուղիղ է. *զի* ո՛չ ասաց թէ՝ իցեմք, այլ թէ՝ իցես: - 495. Գիտել պա՛րտ է, *զի* առ հասարակ մահն, հարկաւոր կիրք է մարդկայինս բնութեան. *զի* ամենայն որ ծնանի՝ մեռանի: - 495. Նա՛խ՝ *զի* յադամ եղև ներգործեալ. և ի մեզ բնաւորեալ. և ի քրիստոս առեալ: - 495. Դարձեալ՝ մահն ի յադամ պատիժ ինքեան էր. իսկ ի քրիստոս պատիժ այլոց. իսկ ի մեզ պատիժ ինքեան և այլոց. այսինքն *զի* վասն մեր և վասն ադամա՛յ կրեմք զմահն: - 496. Եւ այս գիտելի է, *զի* կրկին են կիրք. նախ բնական. և ապա եկամտական: - 496. Եւ ասին սոքա բնականք, *զի* նախ քան զյանցանելն ի դրախտին՝ բնաւորապէս գոյին առ ադամ: - 496. Եւ զայսոսիկ կատարեաց քրիստոս. *զի* ստեղծուած էր ինքեան: - 496. ...*զի* մեղքն ի մահ հրաւիրէ, և ապականութիւնն յանգոյութիւն ճանապարհորդէ՛: - 496. *Զի* որ վախճա՛ն է կենաց, նոյն և սկիզբն կենաց. այսինքն վախճան ժամանակին, և սկիզբն մշտնջենաւորին: - 496. Երկրորդ՝ զմահ կրեաց. *զի* ինքն եդ զմահն պատիժ ի վերայ մեր. իսկ զմեղքն և զապականութիւն՝ բանսարկուն և ադամ արկին ի բնութիւնս. վասն որոյ զոր ինքն ոչ եդ՝ ո՛չ կրեաց մարմնով իւրով: - 496. *Զի* թէ կրեալ էր զմեղս և զապականութիւն, ո՛չ կարէր ազատել զմեզ. ինքն ի ներքոյ անկեալ կրից և ապականութեանց: - 497. Զոր օրինակ՝ բժիշկն յորժամ հիւանդին զդեղն տայ, նախ ինքն ճաշակէ *զի* հաւատալի լիցի: - 497. Եւ ունի մահն կրկին յատկութիւն որ ընդ դէմ է երկուց ծայրիցն. այսինքն *զի* է՛ վախճան կենաց՝ և է՛ սկիզբն կենաց: - 497. *Զի* ապականութիւնն տանի յոչգոյութիւն. իսկ մահն առաջնորդէ՛ ի կեանս: - 497. Յաղագս որոյ զմահն կրեաց քրիստոս. *զի* այսպէս բարձցէ յերկուց կողմանց զմեղս և զապականութիւն: - 497. *Զի* որպէս մահուամբ զմահ եբարձ, և ապականութեամբ զապականութիւն, և անիծիւք զանէծք, և մեղօք զմեղս որպէս դու ժայթքե՛ս: - 497. Յայտնի՛ է ամենեցուն և առանց երկբայութեան՝ *զի* քրիստոս մեռաւ ըստ գրոց. և մահուամբ եբարձ զմահ և զապականութիւն: - 498. Եւ *զի* ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն՝ յա՛յտ է նախ ի գործոյն. *զի* ինքեամբ մահ ի ներքս մտեալ որոշէ՛ զհոգի և զմարմին. և ա՛յս է գործ նորա: - 498. Իսկ *զի* անապական է մարմին կենարարին՝ է՛ ի դաւանութենէ հաւատոյ. զոր ունիմք և եմք անփոփոխ: - 498. Երրորդ՝ ապականութիւնն ներգործէ՛ հակառակ արարչին. *զի* արարիչն յանգոյից գոյացուցանէ, իսկ ապականութիւնն զգոյսս ի յանգոյութիւն տարալուծէ և այլայլէ՛. վասն որոյ անապակա՛ն է մարմին արարչին: - 499. Այլ բանն աստուած զբնութիւնս մարդկային էառ և միաւորեաց զմասունս նորին և ո՛չ զապականութիւն *զի* ո՛չ է բնութիւն. ապա ուրեմն անապակա՛ն է: - 499. Վեցերորդ՝ զմարիամ մայր փրկչին կոյս և անապական խոստովանին հարք ուղղափառութեան. և զայս ո՛չ ըստ գոյացութեան բնութեան, այլ *զի* ծնաւ զբանն աստուած անապական մարմնով: - 499. Եւ *զի* սուտ է ապականացու ասելն, ճշմարի՛տ եղիցի անապական խոստովանիլն: - 500. Ասեմք առ այս՝ եթէ ո՛չ են նման մահկանացու և ապականացու ասելն. *զի* ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն որպէս ցուցաւ ի վերոյ: - 500. Ասեմք առ այս, եթէ ապականութիւնն առնէ կատարեալ և անապականութիւնն անկատար, ապա ադամ յառաջ քան զմեղանչելն անկատա՛ր էր *զի* անապական էր մարմնով...: - 500. Դարձեալ ասեմք ըստ ձեզ, թէ յետ խաչին յապականութիւն փոխեցաւ մարմինն տեառն, ապա յառաջ քան զխաչն կատարեալ էր *զի* ապականացո՛ւ էր. և յետ խաչին անկատար *զի* անապական եղև որպէս դուքդ ասէք: - 500. Եւ այժմ և յաւիտեանս անկատա՛ր է *զի* է անապական մարմնով: - 500. Եւ վասն այն աստուած եղև *զի* յառաջին փառս և որդիսութիւնն զմեզ հանցէ: - 500. Այլ *զի* բան ի յերկնից իջեալ միացաւ ի մարմնի. վասն այն և մարմնոյն ասէր «ա՛յս է հացն ի յերկնից իջեալ»: - 501. *Զի* աճումն զզգայութիւնն զարգացուցանէ. իսկ ապականութիւնն ընդ դէմ նմին զգոյն ի նուազութիւն և յոչգոյութիւն փոփոխէ: - 501. Դարձեալ ասեմք, փոփոխումն և աճումն հասակին ո՛չ եթէ ապականութեան էր ցոյցք. այլ *զի* զճշմարիտ մարդեղութիւնն հաստատեսցէ ընտել սովորութեամբ մեր որ ի տղայութենէ զարգանամք: - 501. Ասեմք եթէ, կերակրիլն ո՛չ է մասն ապականութեան. ուստի յա՛յտ է *զի* ադամ նախ քան զյանցանելն ի դրախտին կերակրիւր և ո՛չ էր ապականացու. այլ անապական: - 501. *Զի* ցուցանիցէ թէ նոյնպէս եկեր և յառաջ քան զխաչն անապական մարմնով: - 501. *Զի* թէ կրական, և ապա ապականացու: - 501. Եւ տէրն ի մարդեղութեանն զկամաւո՛րն կրեաց յինքեան և ո՛չ զակամայն. *զի* ո՛չ էր ի ներքոյ հարկի և ծառայութեան բնութեան որպէս մեք. այլ տէր և ազատ յամենայն կրից: - 501. Ուստի յա՛յտ է *զի* յորժամ կամէր՝ քաղցնոյր և ծարաւէր: - 501. *Զի* անեղ էութիւնն աստուծոյ անկրակա՛ն է կամաւորի և ակամայի: - 502. *Զի* կիրք՝ եղականի՛ է յայտնապէս: - 502. Իսկ տէր մեր *զի* էր աստուած մարդացեալ՝ ո՛չ ունէր ակամայ կիրք. այլ զկամաւորն: - 502. *Զի* ըստ որում աստուած՝ ո՛չ կրէր ակամայ. և ըստ որում մարդ ճշմարիտ և մարմին բանին՝ կրէր զկամաւորն: - 502. *Զի* ապականացու զապականացու մաքրել ո՛չ կարէ. այլ անապական մարմնովն եղև մաքրիչ տէրն մեր

ապականութեան մերում: - 502. Դարձեալ ասեն նոքա, *զի* թէ մարմին տն զկամայն ո՛չ կրէր, թերեկատար էր մարդեղութիւնն: - 502. Եւ դարձեալ *զի* ակամայքն ի մարդոյս բնութիւն յետամտականք են և անասնականք, և ո՛չ բնական բանականիս բնութեան: - 502. Ուստի յա՛յտ է *զի* մեք կրեմք զամենայն զայսոսիկ: - 502. Իսկ տէր մեր ի մարդեղութեան իւրում՝ զակամայն ո՛չ կրեաց. *զի* հա՛րկ է և ծառայական: - 502. Եւ ո՛չ զանգոսնելիսն կրեաց *զի* տեսա՛կ է մեղաց. ուրեմն ապա կրեաց զկամաւորն և զանանգոսնելիսն: - 502. *Զի* ափիբերան կարկեցին դնօղքն զբերանս յերկինս և զլեզուս ածելով զերկրաւ: - 502. Նա՛խ՝ *զի* ցուցցէ վասն որոյ մարդ եղև և մեռաւ *զի* ազատեսցէ զհոգիսն: - 503. Երկրորդ՝ *զի* ադամ ի միջակ լուծն կշռոց այսինքն յանձնիշխանութիւնն ստեղծաւ...: - 503. *Զի* յայնմանէ ազատեաց քրիստոս իջանելովն անդ. և աւերեաց զնա յաւիտեան. և առ հասարակ ազատեաց զհոգիսն: - 504. *Զի* որպէս յեսու աւերեաց զերիքով և անէծ զի մի՛ շինեսցի. նոյնպէս և զդժոխքն աւերեաց քրիստոս և անէծ զշինօղսն չար գործօք...: - 504. Ոմանք **դ** ասեն. և այլք՝ բազումք. *զի* ի գերեզմանի ասեն տանջիլ. և յօդս. և ի ծովս. և ի վէմս: - 504. *Զի* հակակայք են. և որ քան ասի մինն, նոյն քան ասի և միւսն: - 504. Իմաստունք զտեղին յերկուս բաժանեն. ի վերին և ի ներքին. *զի* սոքա են հակակայք և առինչք միմեանց. իսկ միջին տեղի ո՛չ է...: - 505. ...*զի* վերնոյն ներքին է, և ներքնոյն վերին. ապա սո՛ւտ է ասելդ թէ գոյ ներքին և վերին և միջին դժոխք: - 505. Իսկ վերջին դժոխք որ կոչի անջրդի գուբ, նոցա՛ է որք ո՛չ ունին չար և ո՛չ բարի. որպէս մանկունք անմկրտեալք. ո՛չ տանջին *զի* չեն մեղանչեալ. և ո՛չ հանգչին *զի* չեն արդարացեալ. այլ վասն սկզբնականին մնան յանջրդի գուբն խաւարին: - 505. Երկրորդ՝ *զի* ասէ աստուած մովսէսի «հուր բորբոքեցաւ ի բարկութենէ իմմէ. և իջցէ մինչ ի դժոխս ներքինս». ապա սո՛ւտ է լիմպոսն նոցա: - 506. Չորրորդ՝ *զի* ասէ դաւիթ «արձակել զորդիս մահապարտաց». այլ մահապարտք մեղաւո՛րքն են և ո՛չ արդարքն: - 506. Հինգերորդ՝ ադամ առաջին յանցաւորն էր ի ներքին դժոխս. *զի* ա՛յն է մահու մեռանիլն. այլ արդ եթէ քրիստոս ո՛չ գնաց ի ներքին դժոխքն, ո՛չ ազատեաց զադամ: - 506. Ուստի յա՛յտ է *զի* արդարք և մեղաւորք ի դժոխս էին: - 506. Երկրորդ՝ *զի* դժոխքն այն էր բուռն զօրութիւնն սատանայի. և քրիստոս կապեաց զհզօրն ըստ աւետարանին. ապա ուրեմն քրիստոս աւերեաց զդժոխս: - 506. Հինգերորդ՝ մահու մահն էր դժոխքն. *զի* մահ մարմնոյն՝ ապականութիւնն է, և մահ հոգւոյն՝ դժոխքն. ըստ որում վճիռ հատաւ ադամայ մահու մեռանիլ: - 506. Իններորդ՝ յա՛յտ է յօրինակէն. *զի* եգիպտոս հալոց երկաթի կոչի. նշանակէ՛ զդժոխքն որ տանջէր զհոգիսն: - 507. Ա՛րդ՝ ի կենդանեաց երկոքինն պահանջին. իսկ հոգւոցն բաւակա՛ն է միայն ներքին իմացումն *զի* չունին մարմին: - 508. Երկրորդ՝ *զի* փոխեալ է որպիսութիւն մարդոյն. *զի* ո՛չ կարէ մեռանիլ. նոյնպէս և ո՛չ կարէ արդարանալ ըստ ինքեան. նաև ո՛չ մեղանչել: - 508. Եւ որպէս դևք զկնի անկման իւրեանց ոչ կարեն արդարանալ ըստ ինքեան. *զի* անկումն նոցա մա՛հ է նոցա: - 508. *Զի* **բ** օր ասացեալ է ի վարդապետաց. մին բնական օր և միւսն շնորհական: - 508. Նա՛խ՝ *զի* խոստովանիմք զքրիստոս աստուած և զտօն նորա ըստ տէրունականացն կատարեմք: - 509. Տե՛ս *զի* ի ժողովն եփեսոսի հասարակ ամենայն ազգ այսօր նաւակատիս առնէին մինչ ի ժողովն քաղկեդոնի ուր փոխեցան տօնք և պահք և դաւանութիւնք: - 509. *Զի* տես աչացն հաստա՛տ է քան զլուր լսելեացն: - 509. Եւ տե՛ս, *զի* լուսաւորիչն կարգեաց զնաւակատիսս յայսմ աւուր որ էր յաւուրս նիկիական ժողովոյն. զոր յառաջն ունէին ամենայն ազգ, զնոյն կարգեաց մեզ: - 509. Հինգերորդ վկայ, *զի* ի բոլոր տարին յերեկոյի շաբաթուն կիրակմուտ անուանեն ամենայն ազգք. նոյնպէս և մեք յամենայն շաբաթս յերեկոյին լոյս զուարթ ասեմք, և սուրբ աստուած որ յարեար. ի յայս շաբաթի աւուրս սկիզբն առեալ: - 509. *Զի* հեթանոսք զոհէին արեամբ մանկանց. և հրէայք արեամբ անբան անասնոց կատարէին զնաւակատիսս իւրեանց: - 509. Իսկ առաքեալքն փոխեցին զնաւակատիս մեր առանց արեան *զի* որոշեսցուք ի նոցանէ: - 509. Եւ *զի* **ե** են զգայարանք մեր որով մեղանչեմք, **ե** օր է նաւակատեաց ի բոլոր տարին ի քաւութիւն **ե** զգայութեանցս: - 510. Եւ *զի* **գ** է օր ի բոլոր տարին. կամ ամենևին պահք. կամ ուտիք. կամ միջակ. որպէս նաւակատիկք: - 510. Եւ որ խոտէ և ունդ և պտուղ՝ է՛ կերակուր պահոց. *զի* անզգայ է և անշարժ տեղւոջէ ի տեղի և անշունչ: - 510. *Զի* ձու և կաթն ի կենդանւո՛յ են, այլ ինքեանք ո՛չ են կենդանիք: - 510. *Զի* ձուկն կենդանի է և յոչ կենդանւոյ. և ձուն ոչ կենդանի է և ի կենդանւոյ: - 510. Եւ տե՛ս և ի միտ առ. *զի* սոքա ի մի կարգի՛ են եղեալ. այսինքն ձուկն և ձու և կաթն. և որ ուտէ զմինն՝ կերիցէ և զմիւսն: - 510. Ասեմք թէ և այդ ևս է սուտ պատճառ. *զի* հրէից նախ զատիկն էր և ապա բաղարջակերքն պահք: - 510. Ապա *զի* ուտիք էր յորում բաժանեաց զձուկն: - 510. Նա՛խ՝ *զի* յետ յարութեանն ո՛չ էր պահք. այլ զատիկ մինչ փեսայն ընդ նոսա էր որպէս ինքն հրամայեաց: - 511. Եւ կրկին սուտ. *զի* ուր զձուկն կերին՝ ի գալիլեայ յեզր տիբերիայ ծովուն էր դ աւուր ճանապարհ հեռի յէմէ՛ և ի լեռնէն ձիթենեաց ուստի համբարձաւ քրիստոս: - 511. Ապա յա՛յտ է *զի* ո՛չ ի չորեքշաբաթի եկեր զձուկն. այլ ի յանցեալ կիրակէն: - 511. *Զի* **ե** անգամ ի **ե** կիրակէն երևեցաւ քրիստոս աշակերտացն մինչ ի համբարձումն:

- 511. Ասեմք, *զի* ո՛չ ունին շունչ օդոյ այլ շունչ ջրոյ. և հանեալ ի ջրոյն պակասի շունչն. որպէս ասացաւ ի վերոյ ի **ԺԸ** գլուխն ի **Զ** համարն: - 511. Ասեմք թէ՝ և զձու հաւի և զկաթն ո՛չ զենումք, կե՛ր և զայն ի պահոց. *զի* համատեսա՛կք են: - 511. Եւ դարձեալ՝ զձու և զկաթն վասն այն ո՛չ ուտես *զի* արիւն ունին. և դարձեալ դու ասես թէ արիւն ո՛չ ունին: - 511. Նա՛խ՝ *զի* աւետարանն յայտնապէս ո՛չ ասէ զժամ յարութեանն. որպէս զխաչին և զթաղմանն: - 512. Երկրորդ՝ *զի* վարդապետք եկեղեցւոյ ո՛չ համաձայնին յարութեան ժամուն: - 512. Նա՛խ՝ *զի* մատթէոս զերեկոյի շաբաթուն և զլուսանալ միաշաբաթին յիշէ. այսինքն զսկիզբն և զվախճան գիշերին. *զի* յերկուց մէջն որ է՛ հասարակն և մէջ գիշերին՝ նշանակեսցէ զժամ յարութեանն: - 512. Իններորդ, զեթէոն՝ այն որ զցօղն ետես ի վերայ գեղման, զիօր իւրոյ զեզն պարարակ հրամանաւ հրեշտակին ի մէջ գիշերին պատարագեալ. և զանտառն և զսեղանն բահաղու կործանեալ և զերծեալ ի ձեռաց նոցա. որ էր օրինակ փրկչին. *զի* նա՛ է եզն պարարակ պատարագեալ. և ի մէջ գիշերի զբագինսն դժոխոց կործանեալ և յարուցեալ և ապրեալ ի մահու: - 513. ...եթէ քրիստոս յարեաւ ի մէջ գիշերի. *զի* այց արասցէ մարդկան ազգի. և զանկեալքս ի խաւարի և ի ստուերս մահու՝ ի լոյս գիտութեան և շնորհաց յարուսցէ: - 514. Վեշտասաներորդ՝ ի մէջ գիշերի յարեաւ, *զի* զհոգիսն ի խաւարային բանտէն ի լոյս կենաց շրջեսցէ: - 514. Եօթնևժ՝ ի մէջ գիշերի յարեաւ, *զի* զօրէնս ստուերական ի լոյս ճշմարտութեան փոխեսցէ: - 514. Իննևժ՝ պատշա՛ճ էր ի մէջ գիշերի յառնել. *զի* ի նոյն ժամն սկսանի արեգակն բարձրանալ, և յառաւօտն ծագէ՛ առ մեզ: - 515. Քսաներորդ, յա՛յտ է յա՛յսմանէ՝ որ նախ քան զքրիստոս՝ էր սկիզբն աւուր ծագումն լուսոյն. իսկ յետ յարութեանն քրիստոսի եղև սկիզբն աւուրն ի մէջ գիշերի. *զի* այժմ ի խաւարէ՛ ի լոյս ճանապարհորդիմք: - 515. Եւ այս հարցանելի է, *զի* թէ մագդաղենացին ընդ առաջին կանայսն եկն զոր մատթէոս պատմէ և համբուրեցին զոտն յիսուսի...: - 515. Այս է, *զի* յորժամ ի մէջ գիշերին հրամայեաց հրեշտակն գնալ և պատմել աշակերտացն, ա՛յլ կանայքն որ ընդ նմայն էին՝ գնացին...: - 515. ...բայց մագդաղենացին ջե՛րմ էր ի սէրն քրիստոսի՝ եկաց *զի* ա՛յլ ինչ լուիցէ կամ տեսցէ: - 515. *Զի* յինն ժամու ուրբաթուն արձակեաց զհոգին և էջ ի դժոխս. և ապա՛ ընդ երեկոյս ի մուտն արևու մարմինն եմուտ ի գերեզման: - 516. Եւ ա՛յն է խորհուրդն, *զի* որ քան ամ մարմնով մարմնաւորացն քարոզեաց. նոյնքան ժամս հոգւով հոգւոցն քարոզեաց. այսինքն **ԼԳ** ամ և կէս ի յերկրի. **ԼԳ** ժամ և կէս ի դժոխս...: - 516. ...իսկ մարմինն յերեսուն ժամուն ի գերեզմանէն յարեաւ. *զի* երեսնամեայ մկրտեցաւ մարմնով և ել ի ջրոյն: - 516. Երկրորդ այսպէս, *զի* յուրբաթի գիշերն ըմբռնեցին մինչև ցվեց ժամն որ խաւար եղև մինչև ցինն ժամն: - 516. Յինգերորդ որ ուղիղն է. *զի* **Բ** է օր. բնական և արուեստական. և ասացեալքդ ամենայն յարուեստական օրս նկատեն և ի չարչարանս: - 516. Եւ է՛ այսպէս. *զի* անուամբ բոլորին պարտ է իմանալ զմասնաւորն. *զի* առաջին օրն անկատա՛ր է. նոյնպէս և երկրորդն անկատա՛ր է և մասն. այլ միջինն կատարեալ է: - 516. Իսկ պատանքն ո՛չ ծալեալ. *զի* խորհուրդ տընօրէնութեանն ո՛չ ամենևիմբ յայտնի է և ո՛չ անյայտ. որպէս կտաւն բազո՛ւմ ունէր փոթուածս: - 517. Եւ սոքա ամենայն ստուգե՛ն զյարութիւն նորա թէ ո՛չ է գողացեալ. *զի* գողն ո՛չ ծալէր զվարշամակն և զկտաւն զըմռեալ: - 517. Վասն է՞ր ոչ ետ թոյլ մերձենալ մարիամու. և այն *զի* ի ճանապարհին կալան զոտս նորա և համբուրեցին ա՛յլ կանայք: - 517. Երրորդ վասն այն արգել, *զի* ցուցանէ թէ յոյժ պատուեցաւ մարմինն այն և ո՛չ է համարձակելի որպէս յառաջն մաքսաւորք և պոռնիկք մերձենային: - 517. Եօթներորդ, կամ թէ եգիտ ի նա երկեւան ինչ թերութեան վասն յարութեանն. իբր *զի* ասէ յայսմ գիշերի մերձեցայք յոտս իմ և ո՛չ հաւատացեր. վասն այն կրկին անգամ ո՛չ հրամայէ մերձենալ: - 517. Ութերորդ, *զի* ծնունդ էր նա նոր և գլխաւոր. և այն՝ զի նովաւ կորընչէին ազգք և տոհմք և դարք: - 517. Յայսմիկ յայտ արար թէ ի յարութեան անդ ո՛չ դառնայ ոք յոք. ո՛չ հայր յորդիս՝ և ո՛չ որդիք առ հարս իւրեանց. այլ դառնան ամենեքեան յայս. *զի* արժանի լիցին ողորմութեամբ ելանել առ հայր: - 517. Տասներորդ, *զի* ցուցցէ թէ թշնամեաց նորա ո՛չ է իշխանութիւն բուռն հարկանել զնմանէ. իսկ բարեկամաց նորա գոյ իշխանութիւն այլով իւիք մերձենալ ի նա. այսինքն սիրով և երկիւղիւ յայնմիկ զոր ուտեն զնա: - 518. Մետասաներորդ, *զի* ձգեալ զձեռն նայի հնազանդեցոյց զմարմինն զայն ի ներքոյ մահու: - 518. Երեքտասաներորդ, *զի* մարիամ ո՛չ խոնարհութեամբ կամէր մերձենալ յոտս նորա որպէս այլ կանայքն. այլ յերե՛սն դիմեաց նա հպարտութեամբ առ ի համբուրել զնա. իսկ տէրն կամեցաւ ուսուցանել նմա զխոնարհութիւն՝ արգել զնա: - 518. Չորեքտասաներորդ, *զի* ցուցցէ թէ յայսմ հետէ արքն միա՛յն ունին իշխանութիւն մերձենալ առ ի պատարագել. և ո՛չ գոյ համարձակութիւն կանանց յայս գործ: - 518. Յնգետասաներորդ, *զի* բաւական համարեցաւ ի պատիւ կանանց զայն՝ զի յառաջագոյն մերձեցաւ ի նոսա ծննդեամբ. իսկ յետ յարութեանն կամի՛ *զի* ա՛րք նախ մերձեսցին ի նա մինչ դեռ ո՛չ է ելեալ նա առ հայր: - 518. Դարձեալ, հայր է քրիստոսի ըստ էութեանն. և աստուած վասն միաւորութեանն. *զի* հա՛յր միաւորեաց զբանն ի մարմնի...: - 518. *Զի* թռչիլն նշանակէ՛ զզանազան դասս ընտրելոցն: - 519. Իսկ զտեղի համբարձմանն քրիստոսի միտք ո՛չ կարէ

ցուցանել. *զի* ի լոյս անմատոյց է բնակեալ և ի ներքին կողմն վարագուրին ըստ առաքելոյն: - 519. Այլ համբարձումն նշանակէ՛ ի միտս համայն բարձր քան զամենայն դասս իմանալեացն. *զի* նմա՛ երկրպագեն ամենայն երկնայինքն. և անդր քան զտեղի տիրամօրն. *զի* ի միածին որդւոյ իւրմէ խնդրէ զփրկութիւն մարդկան: - 519. Նա՛խ՝ *զի* հանգիցէ ի վաստակոցն զոր **լգ** ամ վաստակեցաւ ի վերայ երկրի: - 519. *Զի* զանպարտ արիւնն իւր ցուցանէ հօր. և զխոցուած բևեռացն զոր վասն մեր ընկալաւ: - 519. Հինգերորդ՝ *զի* տացէ մեզ համարձակութիւն յուսալոյ ի նոյն. այսինքն մտանել մարմնով ի յաւիտենական ժառանգութիւնն: - 519. Վեցերորդ՝ *զի* զհոգին սուրբ առաքեսցէ մեզ. ըստ այնմ «եթէ ես ոչ երթայց, մխիթարիչն ո՛չ եկեսցէ առ ձեզ. ապա թէ երթայց՝ առաքեցից զնա առ ձեզ»: - 519. *Զի* յաշխարհի աստ նեղութիւն ունիք. ընդ իս զխաղաղութիւն ունեցիք: - 519. *Զի* արտաքս հանելով ցուցցէ ո՛չ ունել քաղաք որ աստէն մնալոց իցէ: - 519. Եւ եհան ի լեառն ձիթենեաց. *զի* լերամբն ցուցանի համբարձումն մտաց ի խոկումն աստուածային: - 519. Առաջինն է՝ *զի* ի տեսս աշակերտացն վերացաւ. այսինքն *զի* յորդորեսցէ զցանկութիւն գնալոյն առ նա: - 520. Երկրորդ՝ *զի* ամպն կալաւ զնա յաչաց նոցա. նշանակի թէ ի մահկանացու մարմինս ո՛չ կարեմք տեսանել ի բարձունս զքրիստոս: - 520. Երրորդ՝ ամբարձեալ ձեռօք վերանայր յերկինս վասն երկուց. նախ՝ *զի* զինքնն ընծայեսցէ հօրն. երկրորդ՝ *զի* զթշնամիսն հարկանիցէ զօրաւոր ձեռամբ բարձրացեալ: - 520. Հինգերորդ՝ համբարձաւ զուարճութեամբ. որ վերաբերի առ նոսա որք փրկեցան ի դժոխոցն և ընդ նմա ելին յերկինս. *զի* **բ** բանակօք ել յերկինս այսինքն սպասաւոր հրեշտակք և մարդկան փրկելովք: - 520. Նա՛խ՝ *զի* հաստատեսցի յարութիւն իւր բազում կերպիւ: - 520. Երկրորդ՝ *զի* տացէ օրինակ համբերութեան մերոյ, *զի* սպասեսցուք վարձուն ի հանդերձեալն. և ո՛չ իսկոյն վաղափոյթ լինիլ առնուլ այժմու կենօք...: - 520. Երրորդ՝ վասն մխիթարութեան աշակերտացն. *զի* **խ** օր մխիթարեսցէ զնոսա փոխանակ **խ** ժամուն որ տրտմեցան ի մահն քրիստոսի. որպէս ասացաւ թէ յարութիւնն ի մէջ գիշերի, այլ երևեցաւ ընդ արշալոյսն առաքելոցն...: - 520. ...*զի* ցուցցէ թէ աստուածային ուրախութիւնն գերազա՛նց է քան զմարմնաւոր տրտմութիւնս: - 520. Չորրորդ՝ **լգ** ամ յերկրի եկաց, *զի* ուսուսցէ զկենդանիս: - 520. Եւ **լգ** ժամ ի դժոխս, *զի* փրկեսցէ զհոգիսն: - 520. Եւ **խ** օր յօդս *զի* **լգ** օր զօդս սրբեսցէ ի ճենճերից կռոց. և **է** օրն ի խորհուրդ **է** աստեղեան խորանացն ի կայանս հոգւոցն: - 520-521. Հինգերորդ՝ յետ **խ** աւուր համբարձաւ, *զի* ցուցցէ թէ որք զ**ժ** բանեան օրէնսն չորիւք աւետարանաւն լնուն, կարեն յերկինս ելանել: - 521. Վեցերորդ, *զի* եկեղեցի որ է մարմինն քրիստոսի՝ յետ չարչարանաց նեռինն որ հանդերձեալ է կրել, զկնի **խ** աւուր յերկինս համբառնալոց հաւատացեալ լինի: - 521. Նա՛խ՝ *զի* չարչարանքն քրիստոսի պատճառ եղև պարգևաց սուրբ հոգւոյն, պարտ էր նախկին գոլ. որպէս ամենայն պատճառ նա՛խ է քան զպատճառելին: - 521. Երկրորդ՝ *զի* թէ քրիստոս այնպէս փառաւորեալ էր որպէս յետ խաչին, արգել և խափան լինէր ամենայն չարչարանացն և փրկութեան մարդկան: - 521. Երրորդ՝ *զի* պա՛րտ էր քրիստոսի հովուել զպարզամիտ աշակերտսն որպէս հաւ զձագս, և_մայր զմանկունսն. և թէ ի սկզբանէ զհոգին ընկալեալ էին՝ ո՛չ էր պիտոյ հովուել զնոսա: - 521. Չորրորդ՝ *զի* աշակերտքն զտկարութիւնս իւրեանց փորձիւ ճանաչեսցեն և գիտասցեն թէ ոչ վասն իւրեանց արժանաւորութեանն ընտրեցան...: - 521. ...*զի* ուսցին բառնալ զտկարութեան այլոց. որպէս քրիստոս զնոցայն եբարձ. իսկ թէ նախ զհոգին առեալ էին՝ ո՛չ կարէին բառնալ զայլոց տկարութիւնն: - 521. Հինգերորդ՝ *զի* գիտասցեն թէ քրիստոսիւ պարգևեցաւ. թէ յառաջագոյն էին ընկալեալ, պարզապէս յաստուծոյ կարծէին զտուչութիւն հոգւոյն և ո՛չ ի քրիստոսէ: - 521. Նա՛խ՝ ի կողմանէ պարգևողին. *զի* յորժամ քրիստոս նստեալ լինէր ըստ մարմնոյ ընդ աջմէ հօր իբր զթագաւոր փառաց յաթոռ թագաւորութեան իւրոյ, յայնժամ մեծագոյն լինէր պարգևք հոգւոյն տուեալ ի փառաւոր քրիստոսէ աստուծոյ: - 521. Երկրորդ՝ ի կողմանէ ընդունողաց առաքելոցն. *զի* պատշաճաւորեցան հոգոյն սրբոյ. *զի* փորձիւ գիտէին զվարդապետութիւնն քրիստոսի, զմահն և զյարութիւնն և զայլն: - 521-522. Երրորդ՝ ի կողմանէ հոգւոյն սրբոյ. *զի* առաւել հռչակելի և փառաւոր եղև այսպէս. *զի* ընկալեալ զհոգին՝ վաղվաղակի սքանչելիս առնէին վկայելով քրիստոսի. և զառաքեալսն առատապէս լցուցանելով, և նոքա զայլսն: - 522. *Զի* ո՛չ միայն համարի մեծ և փառաւոր զաստուածությունն նորա, այլ և զաղքատութիւնն և զանարգանս և զմահն. և յայնժամ արժանասցի առատապէս ընդունել զհոգին սուրբ: - 522. Նա՛խ՝ *զի* յանկարծակի՛ փայլէ. նոյնպէս և հոգին սուրբ յանկարծակի էջ: - 522. Երկրորդ՝ *զի* ի կերպ հրոյ փայլէ. այսպէս և հոգին սուրբ հրեղէն լեզուօք: - 522. Երրորդ՝ *զի* զամենայն փորուածս լնու. այսպէս և հոգին էլից զամենայն տունն յորում նստէին: - 522. Չորրորդ՝ *զի* փայլատակեալն անբաժանելի մնայ յինքենէ. այսպէս և շնորհք հոգոյն սրբոյ անբաժանելի գոլով բաժանեցաւ յառաքեալսն: - 522. Եօթներորդ՝ *զի* սաստիկ է. *զի* ամենայն ոք ի հարկէ զաչս խփէ որ հանապազ տեսանեմք զլոյս: - 522. Տասներորդ՝ *զի* օդ յիւրաքանչիւր ոք զանազան արտաբերէ զձայն և զբան: - 523. Նա՛խ՝ *զի* յայսմ աւուր երևեցաւ աստուած մովսէսի ի սինա լեռինն: - 523-

524. Նախ՝ *զի* ցուցանէ թէ որ ետ զօրէնսն՝ նոյն առաքեաց և զհոգին և ի նոյն տիպն որոտ և փայլատակումն հողմ և հուր երևեալ որպէս անդ ի լերինն: - 524. Երկրորդ՝ *զի* որ անդ ի ծածուկ ծանոյց զինքն յանձինս մարգարէից նոյն ինքն աստ զԵրրորդութիւնն յայտնեաց առաքելոցն: - 524. Երրորդ՝ *զի* անդ ո՛չ կարէր արդարանալ *զի* հիւանդ էր սիրտն, ետ նոր օրէնս ի սիրտս մեր որ կարօ՛ղ է արդարացուցնել զժողովուրդս և զհեթանոսս: - 524. Նա՛խ՝ մաքրութիւն ի մահու չափ մեղաց. *զի* այլ ո՛չ ևս տիրեցին նոցա յետ հոգւոյն իջմանն: - 524. Իսկ աստուածաբանն ասէ, ուր պիտոյ էր՝ յամենայն լեզուս խօսիլ կարէին. *զի* լիցի շնորհքն խօսողաց և ո՛չ թէ լսողաց: - 525. Նախ զայս ասեմք թէ՝ համաբուն և համապատիւ է Երրորդութիւնն սուրբ. *զի* միոյն փառքն երիցն է և երիցն միոյն: - 525. Դարձեալ՝ *զի* հայր մարմնով ո՛չ երևեցաւ որպէս բանն մարմնացեալ. կամ որպէս հոգին սուրբ աղաւնակերպ և հրաձև: - 525. Յիսունք, Վկայութիւն պահոցն մեծի. և շաբաթու. և չորեքշաբաթին. և *զի* յինանցն ո՛չ պահեմք: - 527. Վարդապետականն՝ մանկանց եկեղեցւոյ. *զի* յամէ օգտեալ վարդապետք՝ զգուշացուցանեն զմանկունս սիօնի սրբոյ: - 528. Եկեղեցի սուրբ նոր ժողովուրդ կոչեցաւ աստուծոյ. *զի* հաւատով արդարացաք և եղաք ժողովուրդք և ո՛չ ըստ հնոյն օրինօք: - 528. *Զի* նա բնութեամբ է որդի աստուծոյ, և մեք շնորհօք: - 528. Յինգերորդ՝ *զի* խոստովանի ամենայն լեզու թէ տէր է յիսուս քրիստոս ի փառս հօր աստուծոյ բազմեալ: - 529. Բանն աստուծոյ մի է թէ բազում. *զի* բազում երևի ի հին և ի նոր կտակս և յիւրաքանչիւր թուղթս գրեալ...: - 529. *Զի* մի է ըստ իւրում անձնաւոր գոյութեանն. և բազմանայ ի բազումս երևեալ: - 529. Եւ մի և նոյն բանն է ներտրամադրեալն ի սրտի. *զի* ըստ բան գոլոյն ո՛չ զանազանի. սակայն ըստ որպիսութեան որակին. *զի* էր անմարմին ի սրտի՝ և այժմ մարմնացաւ ի քարտիսի: - 529. Ասեմք առ այս, եթէ անմարմին իր անկատար ո՛չ լինի. *զի* սոյն բան աւետարանիս նոյն կատարեալ բանն է աստուծոյ որ ի մարմնի է միացեալ. և նախ քան զյաւիտեանս ծնեալ: - 529. *Զի* յատուկ է անմարմնոյ, որպէս ի բազումս բազմանայ և ի միութենէն ո՛չ բաժանի, այսպէս ի մասունս մասնաւորի և ի բոլորէն ո՛չ քակտի: - 529-530. Դարձեալ զորօրինակ, մարմինն քրիստոսի մի և նոյն էր ի խաչին բևեռեալ, և մի և նոյն մարմինն է ի բազում նշխարս միաւորեալ և ո՛չ բազմացեալ. *զի* նոյն է գոյացութիւն հացին և գոյացութիւն մարմնոյն քրիստոսի: - 530. *Զի* բազմանայ և ի միութեան մնայ. բովանդակի անբովանդակապէս. և բաժանի անբաժանապէս. որ է մի և նոյն տեսակաւ և գոյացութեամբ որպէս ցուցաւ: - 530. Նմանապէս և առ այս ասեմք, թէ ո՛չ ինչ է զանազանութիւն. *զի* յորժամ աւետարանն բանն քրիստոսի է ճշմարիտ, և քրիստոս աստուած է ճշմարիտ. ապա ուրեմն աւետարանն բանն աստուծոյ է ճշմարիտ: - 530. Եւ թէ ոք ասիցէ, ո՞րպէս է մի բանն աստուծոյ. *զի* ահա՛ բանն մարմնացեալ էր. և հայր բանիւ վկայեաց ի վերայ որդւոյն. և անյարմար է ինքն ինքեան վկայել: - 530. Ա՛րդ՝ յորժամ ամենայն ինչ նոյն է սուրբ Երրորդութեանն, որով յա՛յտ է՝ թէ հայր խօսի, և թէ որդի, և թէ հոգին սուրբ, մի և նոյն բանիւն խօսին. ապա ուրեմն ո՛չ է անյարմար եթէ հայր նոյն բանիւն վկայեսցէ ի վերայ որդւոյ. *զի* որդի և հայր նշանակէ զյատկութիւն անձանցն: - 530-531. Դարձեալ յայտնապէս, *զի* բանն միացեալ ի մարմնի՝ էր անբաժանաբար ի հայր. որպէս առ մեզ ներտրամադրեալս բան և գրեալն ի թղթի: - 531. Վասն առաջնոյն գիտելի է, *զի* դիւրին է զգազանս ընտելացնել, քան զտգէտ անձն ի գիտութիւն ածել: - 531. Նոյնպէս վասն երկրորդին գիտելի է, *զի* որպէս զփայտ թիւրութեամբ պնդեալ՝ դժուարին է ուղղել. նոյնպէս զչար սովորութիւն մարդկան դժուարին է փոփոխել: - 531. Վասն երրորդին գիտելի է, *զի* գոյ հիւանդութիւն մարմնոյ, գոյ և հիւանդութիւն հոգւոյ: - 531. Եւ որպէս անչափ են սպեղանիք և դեղք բժշկականք մարմնոյ ի բազում և զանազան ծաղիկս խոտոյ և յարմատս, ի տերևս ի պտուղս. և յայլսն. *զի* սոքա յայտնեն զբազմութիւն հիւանդութեանց մարմնոյ: - 531. Նոյնպէս և անչափութիւն բանից և խրատուց հարց և իմաստնոց գիրք սուրբք՝ հին և նոր կտակարանք ցուցանեն զանչափ հիւանդութիւն հոգւոյ. *զի* սոքօք առողջասցին: - 531. Այս է. *զի* հաւատն ունի գ յատկութիւն. որ է՛ հաւատն. և հաւատալն. և հաւատալին: - 531. Նա՛խ՝ *զի* իցէ սկիզբն ամենայն մարմնոյն. և *զի* իցէ յէութենէ նորին: - 532. Եւ հո՛մանուն է. *զի* եկեղեցի է շինեալն ի քարանց, և եկեղեցի է հաւատացեալ ժողովուրդն: - 532-533. Նախ՝ *զի* երկոքեանն տաճար են աստուծոյ. այսինքն շինեալն և մարդն...: - 533. Այլ և այսու, *զի* մեք մկրտութեամբ և հաղորդութեամբն լինիմք տաճար աստուծոյ: - 533. Նոյնպէս և շինեալն օրհնութեամբ. *զի* լուանամք նախ ջրով և ապա՛ գինւով: - 533. Իսկ յատուկ, *զի* նա՛ կոչի ժողովարան. և մեք ժողովեալք: - 533. Սակայն տեսցուք *զի* ըստ փիլիսոփային մի ասի գ եղանակաւ: - 533. Իբր *զի* հոմանուն է եկեղեցի և ունի դ նշանակութիւնս. որ է՛ ստորինս. և վերինն եկեղեցի. և շինեալք ի մէնջ. և հաւատն ժողովարան մեր: - 534. Նախ՝ *զի* եղբայր և ժառանգակից եմք քրիստոսի: - 534. Երկրորդ՝ *զի* աջակողմեան եմք: - 534. Որպէս և առ մեզ է. *զի* կին որդւոյն դուստր կոչի հօրն վասն մի մարմնոյն: - 534. *Զի* նա բնութեամբ. և մեք շնորհօք: - 534. Ի դէմս հօր՝ մարգարէքն. ի դէմս որդւոյ՝ առաքեալքն. ի դէմս հոգւոյն՝ քննիչ վարդապետք. *զի* «հոգին քննէ զամենայն և

զխորս աստուծոյ»: - 535. Երրորդ՝ *զի* առաքեալք իննաք տեսք եղեն քրիստոսի. և մարգարէք միջոցաւ ի բացեայ. և վարդապետք յետոյ նոցա: - 535. Չորրորդ՝ *զի* շինօղ և հաստատօղ եկեղեցւոյ առաքեալքն են. և ձեռնտու նիւթոց մարգարէքն. եզր և պարիսպ վարդապետք: - 535. Եւ այսպէս բացայայտի, *զի* երկու իրս խնդրին առ ի ճշմարիտ մարգարէ գոլ: - 536. Նա՛խ՝ *զի* յայտնեսցէ զծածուկն և զհեռաւոր իրն ժամանակաց. *զի* թէ զմերձաւոր և զյայտնին ասէ՝ ո՛չ է մարգարէ: - 536. Երկրորդ՝ *զի* թէ ճանաչիցէ զհեռաւորն միջնորդութեամբ բարի հոգւոյն. *զի* թէ յայտնէ միջնորդութեամբ չար հոգւոյն՝ ո՛չ է մարգարէ. այլ ստոցն ծանօթութիւն...: - 536. Յաղագս որոյ կացոյց հոգևոր իշխան զքահանայս. *զի* հոգէպէս ուղղեսցեն զմարդիկ և արգելցեն ի մեղաց: - 537-538. Եւ մարմնաւոր իշխան զթագաւորս և զբռնակալս. *զի* մարմնապէս կառավարեսցեն զմարդիկ և խրատեսցեն վասն մեղաց: - 538. Նա՛խ՝ *զի* մարմնաւորին հնազանդիմք յոչ կամաց. բռնութեամբ և ի հարկէ: - 538. *Զի* այս որդիական երկիւղէ, և այն ծառայական: - 538. Երկրորդ՝ *զի* մարմնաւորն իշխէ՛ որքան մերձ է և ձեռնհաս: - 538. *Զի* տեղիք զիշխանութիւն նորա և զսուր ո՛չ արգելուն: - 538. Ուստի յայտ է *զի* պատժէ զմարմին. և կապէ՛ զհոգին ի կեանս և ի մահ: - 538. *Զի* թէպէտ մեռանին թէ իշխանն և թէ իշխեցեալն, իշխանութիւնն ո՛չ խափանի: - 538. Նախ՝ *զի* սահմանն բնութեան է. իսկ կանոնն անձին: - 538. Կրկին իշխանութիւն է զոր ունի քահանայն. *զի* կապելն որոշելն է. սարկաւագին որ որոշէ՛ զանմաքուրն յեկեղեցւոյ: - 538. Եւ սոքա են սուր երկսայրիք տուեալ ի ձեռս քահանայից զինուորաց քրիստոսի. *զի* յաջ և յահեակ հարցեն. այսինքն զսատանայ և զչարսն ի մարդկանէ որք հակառակին բարեաց: - 538-539. Այլ գիտելի է, *զի* քահանայն զինուո՛ր է. ոչ զոր ինքն կամի և ախորժէ զայնս կապէ և արձակէ. այլ զոր հաճո՛յ է զօրավարին քրիստոսի: - 539. *Զի* քահանայն արդարութեանն աստուծոյ հրեշտա՛կ է. այսինքն յայտնօղ և թարգման...: - 539. *Զի* թէպէտ քահանայն և բանքն նոյն է, այլ ո՛չ դիտաւորութիւնն: - 539. Զորօրինակ, քահանայ ոք ի վաճառանոցն ի բազում հացս և ի գինիս ասասցէ «ա՛յս է մարմին իմ և արիւն իմ» ո՛չ կատարի. *զի* ոչ ունի զդիտաւորութիւնն. նոյնպէս և աստ: - 539. Ասեմք առ այս, թէ ձեռնադրեալն իցէ անարժան՝ ո՛չ առնու շնորհս. այլ դատապարտի ինքն և ձեռնադրօղն. *զի* սրբութիւն՝ շանց ետ: - 540. Եւ տե՛ս, *զի* սիմէի որքան յամեաց ի քաղաքն ըստ հրամանի սողոմոնի ո՛չ մեռաւ զերիս ամս: - 540. Եւ թէ ոք ասիցէ, այլավիճակք այլ և այլ աթոռոց ճշմարիտ երևի *զի* ինքնագլուխք են: - 541. Ասեմք առ այս, եթէ համակարգ և համիշխանք են վերջինն ընդ առաջնոյն ի կարգել և ի յուղղել. այլ ո՛չ ի թիւրել և ի քակել. *զի* առաջնոյն աւանդապա՛հ է վերջինն նո՛յն մտօք և նո՛յն կամօք: - 541. Վասն որոյ զայս **գ** ժողովքս տիեզերական և միմեանց համաձայն ընդունիմք. այլ զքաղկեդոնին ո՛չ ընդունիմք. *զի* ընդ դէմ է առաջնոցն և կաքտումն դաւանութեան տօնից կարգաց և կանոնաց ամենայնիւ: - 541. Եւ թէ ոք ասիցէ, այս առաջնոյն. *զի* վերջինն կարէ՛ ուղղել. այլ ո՛չ կարէ թիւրել: - 541. *Զի* եպիսկոպոսն փեսա՛յ է և վիճակն հարսն. նա՛ միա՛յն իշխէ: - 541. *Զի* պողքէր քոյր թագաւորին թէոդոսի ի կուսանաց վանս էր. և պղծեցաւ պոռնկութեամբ ի մարկիանոսէ. և ապա՛ եղև կին նմա. և ասեն թէ ի նեստորէ՛ էր մկրտեալ: - 542. Եւ յովսէփ փալանացի, և եզնակ կողբացի թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի կոստանդնուպօլիս. լուան զժողովոյն և գնացին ի քաղկեդոն. *զի* չէր յոյժ հեռի ի ճանապարհէն որով գային ի հայս...: - 543. ...և նոքա զամենայն ինչ ծածկապէս տեղեկացան. *զի* ժողովեալքն ի քաղկեդոն ակն առին թագաւորին և կնոջ իւրոյ. և զարհուրեցան ի սպառնալեացն. և զնեստորի կարծիսն հաստատեցին. զերկու բնութիւնսն. և զ**բ** կամսն. և զ**բ** ներգործութիւնսն: - 543. Բայց միայն *զի* խաբէութեամբ աստուածածին ասացին զկոյսն սուրբ: - 543. Եւ սուրբն դուկիոս սքանչելագործ և մարգարէաշնորհ, գրեաց առ մարկիանոս, թէ սուգ զգեցուցեր առաքելոց և մարգարէից. *զի* քակտեցեր զնոցա շինուածն. և արգելաւ հոգին սուրբ յօրհնելոյ զպատարագն և զաւազան մկրտութեան: - 543. Եւ պատճառ սոցա այն էր, *զի* քրիստոսի մի բնութիւն ասէին. և ինքեանք սահմանեցին **բ** բնութիւն. **բ** գործք. և **բ** կամք: - 544. Եւ համակա՛րգ է նոցա ըստ առաքելութեան և ըստ քահանայապետութեան. *զի* ամենայնքն համահաւասար զիշխանութիւն առաքելութեան և քահանայապետութեան ունէին: - 546. Նախ՝ *զի* յետ յարութեանն հաւասար ետ զիշխանութիւնն...: - 546. Երկրորդ՝ *զի* մերձ ի համբարձումն ձեռն եդ ի վերայ նոցա և օրհնեաց զնոսա և արար զնոսա առ հասարակ եպիսկոպոսունս: - 546. Երրորդ՝ *զի* յետ համբարձմանն յորժամ էջ հոգին սուրբ, արար զնոսա կաթողիկոսունս առ հասարակ: - 546. Չորրորդ՝ յա՛յտ է, *զի* իւրաքանչիւր առաքեալ յիւր վիճակն ընթացեալ ձեռնադրեցին եպիսկոպոսունս: - 546. Ասեմք առ այս, թէ որպէս ի մէջ սերովբէից և քերովբէից և աթոռոց ո՛չ ասի վերնագոյն և նուաստագոյն, *զի* համակա՛րգ են և շուրջ զաստուծով: - 547. Առ երրորդն ասեմք թէ՝ երիցս հարցումն սիրոյն և արածելն զոչխարսն՝ վասն երից ուրացութեանցն էր բժշկութիւն. *զի* ո՛ր մասն որ խոցի՝ նորին է բժշկական դեղն դնելի՝ և ո՛չ առողջից: - 547. *Զի* ա՛նդ բաժանեցին զբանն ի մարմնոյ. և պատառեցին զկանոն սուրբ հարցն: - 547. Ուստի յա՛յտ է, *զի* առեալ էր զքահանայութիւն. և մկրտեալ

զթագաւորն և լուսաւորեալ զազգս, և շինեալ եկեղեցիս: - 548. *Զի* առաքեալն թադէոս յորժամ ձեռնադրեաց զադդէ յուռհայ, և ապա՛ ի կեսարիայ եկն և ձեռնադրեաց առաջին եպիսկոպոս զթէոփիլոս. զայն յորոյ անունն գրեաց Ղուկաս զաւետարանն և զգործքն առ թէոփիլոս: - 548. *Զի* յղացեալ էր ի գերեզմանին թադէոսի. և սնաւ անդ՝ ուր առաքեալն սկսաւ քահանայագործել. և փոխեաց յինքն զշնորհս նորա անդր եղեալ եպիսկոպոս: - 548. *Զի* այսպէս սահմանեցին՝ թէ ինքնակալ թագաւոր մի և ինքնագլուխ հայրապետ մի նստցի ի հայս. և թագաւոր մի ինքնակալ՝ և ինքնագլուխ հայրապետ մի ի հռօմ. և ի վերայ միմեանց դիցեն զանձինս ի մահ. և սոսկալի գրով եղեն միմեանց եղբարք. թացեալ զգրիչն յահաւոր խորհուրդն: - 548. Ապա հե՞զն յամենայնի սուրբն գրիգոր ետ նոցա՝ *զի* նոքա շինեսցեն ընդարձակ. *զի* դեռ չէր շինեալ: - 549. Եւ վասն այն այլազգ ո՛չ հաւատան. *զի* յառաջն չկայր մինչ ի նա՛. և առաւել վասն այն անուանեցաւ լուսաւորիչ: - 549. *Զի* դ գլխաւորագոյն աթոռք կարգեցան ընդ բոլոր տիեզերս վասն չորից աւետարանչացն: - 549. Ասեմք թէ՝ ոչ ինչ է այս նախատինք մեզ. *զի* հեթանոսք յետոյ հաւատացին և լաւագոյնք են քան զիրէայս. և վերջին մշակքն ընդ առաջինսն առին զվարձս. և որք նախանձեցան կորեան: - 549. **Դարձեալ ասեմք թէ զիա՞րդ յետին. *զի* աբգար թագաւորն հայոց նախ քան զխաչն հաւատաց ի քրիստոս և երանեցաւ ի նմանէ: - 549. Եւ ա՛յս է պատճառն որ ոմանք յեօթանասնիցն ասեն. *զի* եօթանասունն աշակերտացն գլուխ և վարդապետ էր. որպէս պետրոս երկոտասանիցն. և առաջինքն ամենայն ուրեք յետնոցն անուամբ կոչէին. այս է ստոյգ պատճառն: - 549. Եւ ի գալն յերկիրս հայոց, ետուն նմա օգնական զիւղն օծման զոր քրիստոս օրհնեալ էր. և զգեղարդն. և այլոց ազգաց չկա՛յ այս պարծանքս. *զի* մեր մեռոնս հանապազ և միշտ զնոյն շնորհ ունի: - 549. Այլ թէ գիր չունէր մեր ազգս, տե՛ս *զի* յաստուծոյ տուաւ մեզ գիր, որպէս մովսէսիւ իսրայէլի. և այլ ո՞ր ազգ պարծի այսու:** - 549. Սակայն ըստ արիստոտէլի սեռն և տեսակն անհատին հետևին. *զի* են երկրորդ գոյացութիւն: - 550. Այսպէս ասեմք, *զի* որ ըստ ինքեան է ճշմարիտ և ըստ ինքեան բարի՝ առաւել է. և որ ըստ պատահման է ճշմարիտ կամ բարի՝ նուա՛զ է. վասն զի ըստ ինքեանն գոյացութեամբ և հարկաւո՛ր է. այսինքն անփոփոխ և միշտ: - 550. Ապա յա՛յտ է, *զի* նըւազ ճշմարիտն առաւել ճշմարտին հետևեսցի. որպէս նուազ բարին առաւել բարւոյն. եթէ ընդհանուրն և եթէ մասնաւորն: - 550. Այլ և արդ կարելի՛ է *զի* մինն բազմաց հակառակեսցի և յաղթեսցէ. որպէս ազգս հայոց զայլս ամենայն որ բազո՛ւմ են և ո՛չ մի: - 550. Դարձեալ՝ յայտնապէս ասել ո՛չ է հարկ՝ է ամենայն բազում պատուական է քան զմին. *զի* ահա՛ գոյացութիւնն մի է և պատահումն բազում. և արեգակն մի է և աստեղք բազում. և գլուխն մի է և անդամք բազում: - 551. Եւ զայս վասն է՞ր յերկարել ինձ. *զի* ցուցանիցի թէ ո՛չ է պարտ միոյն ճշմարտի բազում ստոց հետևիլ: - 551. **Ասեմք առ այս թէ՝ ո՛չ է հարկաւոր այս ամենայն ուրէք. *զի* գո՛յ և տարաձայնութիւն բարի՝ քան զիամաձայնութիւն ընդ հերձուածօղս. և լաւ է բաժանումն ի չար ժողովոց՝ քան զմիաբանութիւն:** - 551. **Դարձեալ, բնաւորեալ է մարդոյ՝ *զի* ամենայն ոք կարծէ զինքն ճշմարիտ և արդար. այլ որ ունի զճշմարտութիւնն նա՛ է ճշմարիտ և արդար**: - 551. Այլ դատաւոր միտն կացուցեալ երկու վկայ զանբիծ հաւատս և զօրէնս որ են հաւատք և գործք. *զի* առ ո՞ր և իցէ քրիստոս նա՛ է ճշմարիտ: - 551. Եւ *զի* ճշմարիտ վկայք են սոքա, և տէր մեր առ կուրացեալ հրէայսն զսոյն կացոյց վկայ, ասելով «թէ և ինձ ո՛չ հաւատայք, սակայն գործո՛ցն հաւատացէք»: - 551-552. Զա՛յս ասեմ, *զի* որ ինչ անօրէնութիւն է ազգիս հայոց, նո՛յն է օրէնք այլազգ քրիստոնէից. և որ մեզ երկբայութիւն է՝ նոյն դաւանութիւն է նոցա: - 552. *Զի* ամենայնն ի բերան մտանէ և ընդ արտաքս ելանէ ասեն: - 552. Այսինքն է, զազգս քրիստոնէից տեսանեմք *զի* ո՛չ ըստ անուանն և զմիութիւն կանոնական սահմանի ունել: - 553. *Զի* ահա՛ լատինացիք առանձնականս ունին աւանդութիւնս, - 553. Եւ այլք գոն յոլովք. *զի* յորժամ պարապով ոք քննիցէ գտանէ: - 553. Բայց պարտ է այնոցիկ որք ո՛չ գիտեն՝ և կամ թէ կամաւ տգիտանան՝ ցուցանել զմիաբանութիւն ազգիս հայոց առ այլ քրիստոնեայսն. *զի* գիտացեալ յամօթ լիցին յաղթեալք ի ճշմարտութենէն: - 553. Իսկ վասն ջրոյն զի՞նչ պարտ է ասել. *զի* յոյնք թերի ցուցանեն զլատինացւոց խառնումն, ինքեանց կրկին խառնմամբն. և զայն խորհուրդ առեալ: - 554. Ութերորդ՝ *զի* արևելեանք կոչին հայք: - 555. Նա՛խ՝ *զի* մեղքն յարմարի մարմնոյն. որ մեղկանայ և թուլանայ: - 555. Իսկ անօրէնութիւն՝ հոգւոյն է՛. *զի* օրէնքն հոգևո՛ր են: - 555. Բայց նախ զայս ասասցուք. *զի* մեղք մտացն կատարեալ մեղք է վասն բազում պատճառաց: - 556. Եւ այս յիրաւի իսկ. *զի* որ հայեցաւ ցանկական մտօք՝ ի կամս իւր գործեաց զմեղս: - 556. Երկրորդ յա՛յտ է ի բաժանմանէ. *զի* յերիս բաժանի տեսակ մեղաց. այսինքն ի մտաւորն, ի բանաւորն, և ի մարմնաւորն: - 556. Չորրորդ՝ ի զղջմանէ. *զի* ամենայն որ մեղք է՝ զղջալի է և խոստովանելի...: - 556. Հինգերորդ՝ *զի* մեղքն զանազանի ի կամայն և յակամայն. ի գիտութեան և յանգիտութեան: - 556. Ապա ուրեմն կատարեալ մեղք է մտաց մեղքն. *զի* զոմանս առաւել պատժէ, և զոմանս սակաւ: - 556. Տե՛ս *զի* ո՛չ բանիւ և ո՛չ գործով էր, այլ միայն ի միտս ունէին և յանդիմանեցան ի տնէ:

- 557. Ութերորդ յընդդիմակէն. *զի* թէ յաղօթելն միայն մտօք և սուրբ պահել զմիտս_առաքինութիւն է կատարեալ...: - 557. Իններորդ՝ *զի* թէ հաւատն և յոյսն և սէրն՝ աստուածային առաքինութիւնք են և լաւագոյն քան զամենայն առաքինութիւնս...: - 557. Տասներորդ՝ յա՛յտ է ի համազօրութենէ. *զի* երբեմն շարժէ՛ ախտ զմիտս. և երբեմն շարժի ի մտացն ախտ. որպէս ասէ երանելին եւագրիոս. եթէ մինչ յերեսնամեայ հասակս ախտն շարժէ զմիտս ի ցանկութիւն. և անտի յառաջ միտքն շարժէ զախտն: - 557. Նա՛խ՝ *զի* խորհրդոյն չարն ի բոլոր հոգի և ի մարմինն սփռի որպէս թոյնք օձից: - 557. *Զի* հոգի է աստուած. և յիմացական միտս և ի հոգիս բնակէ. և չէ՛ օգուտ մարմնոյն սրբութիւն յորժամ միտքն զբաղեալ է ի չարիս. *զի* հեռանայ ի սիրոյն աստուծոյ և ի բնակութեանց նորա...: - 558. *Զի* կրկին է յանցումն մտաց: - 558. ...*զի* տրտմութիւն և ձանձրութիւն մի երևին. *զի* տրտմութիւն ի պակասութենէ բարւոյն լինի, իսկ ձանձրութիւն յաւելուածոյ բարւոյն: - 559. Վասն այն այլ վարդապետք կոչեն զայս ախտ՝ ծուլութիւն. *զի* ծուլութիւնն յերկու իրաց երևի. մին որ յետս դառնայ ի հոգևոր բարւոյն և ծանրանայ ի գործելն. այսինքն պահել՝ աղօթել և այլն. և ըստ այսմ կոչի տրտմութիւն: - 559. *Զի* փառասէրն զիւր փառքն և զիւր բարին սիրէ. և զայլոց փառք և զբարիս յաչաղէ և ատէ: - 559. Իսկ խորհուրդ ասէ վասն դիւաց. *զի* անմարմին է դևն: - 559. Դարձեալ, *զի* ամենայն մեղք նախ ի խորհուրդն սերմանի և ապա բուսանի և աճէ գործելովն: - 559. Դարձեալ ասեմք թէ՝ այլ վարդապետք է ասեն զմեղս, *զի* **դ** տարերք են մարմնոյն, և **գ** զօրութիւնք հոգւոյն. այսինքն բան, ցասումն, և ցանկութիւն: - 559. Եւ ցանկութեանն են այլքն. *զի* ցանկայ ագահել. և որկորստել. և պոռնկիլ: - 559. *Զի* սատանայ հպարտացաւ յերկինս և նախանձեցաւ ընդ մարդոյն. իսկ այլքն ամենայն մարմնականք են ասեն: - 559. Յօդոյ որկորստութիւն և հպարտութիւն. *զի* վերընթա՛ց է և քարշօղ: - 560. Ի հրոյ ագահութիւն և բարկութիւն. *զի* պարունակօ՛ղ է և ջերմ: - 560. Ի հողոյ տրտմութիւն և ձանձրութիւն. *զի* ցուրտ է և հակօղ: - 560. Երկրորդ դարձեալ՝ *զի* **դ** են տարերք. և **դ** ազդումն միաւորութեանց հոգւոյն յիւրաքանչիւր տարերս ըստ այսմ օրինակի: - 560. Երրորդ՝ *զի* **ե** են զգայութիւնք և մի բոլոր մարմինն. ուստի ծնանին **զ** խորհուրդք այսպէս: - 560. *Զի* որկորստութիւն է ճաշակելեաց. և Պոռնկութիւն շօշափելեաց: - 560. Ի վեր շարժումն է հպարտութիւն և փառասիրութիւն. *զի* յատուկ է սոցա ի վերամբարձումն: - 560. Այլ զանազանին. *զի* հպարտն ի ներքուստ ունի զբարձրամտութիւնն. և փառասէրն յարտաքուստ յայլմէ՛ բերանոյ ընդունի զփառս գովութեան: - 560. Ի վայր շարժումն է տրտմութիւն և ձանձրութիւն. որ է՛ ծուլութիւն. *զի* մինն ծանրանայ և ո՛չ գործէ զբարիս. և միւսն տրտմի և պակասի: - 560. Յաջ շարժումն է արծաթսիրութիւն. *զի* զբարիս պատճառելով ժողովէ...: - 560. Յառաջ շարժումն է բարկութիւն. *զի* վասն չարեաց ասէ բարեկամ: - 560. Իսկ յետ և յահեակ որկորստութիւն և պոռնկութիւն. *զի* յետս դարձումն է ի ճշմարիտ բարւոյն, և զհետ ընթերցումն է առ ահեակ և սուտ բարիս: - 560. ...այսինքն *զի* կամ ցանկանայ ոչ ցանկացեալ, կամ հրաժարի յոչ հրաժարելեաց: - 560-561. ...*զի* անկարգ յօժարի ի կերակուրն. և թէ է ի պահպանութիւն տեսակին, լինի բղջախոհութիւն. *զի* անկարգ յօժարի ի պոռնկութիւն: - 561. *Զի* կամ հրաժարէ՛ և թիւրի բանականաւ. ըստ այսմ է՛ նախանձ: - 561. *Զի* առաջին մեղք հպարտութիւնն է որով սատանայ մեղանչեաց յերկինս և անկաւ. և ապա նախանձն զոր ընդ մարդոյն արարին: - 561. Նա՛խ՝ *զի* առաջին մարդն ի դրախտին որկորստութեամբ մեղաւ. և այն առաջին մեղք եղև մարդկայինս բնութեան: - 561. Երկրորդ՝ *զի* մանկունս հասակաւ նախ որկորստութիւնն տիրէ, և ապա՛ յերիտասարդութեանն պոռնկութիւնն զօրանայ: - 561. Երրորդ՝ *զի* շղթայք մեղաց այսպէս ունին զկարգն. *զի* նախ որկորստութեամբ լնու զորովայնն. և յետ այնորիկ պոռնկութեամբ թափէ՛ զնա. և ապա՛ արծաթ ժողովէ *զի* լնու զորովայնն և պոռնկի...: - 561. Նա՛խ՝ *զի* ամենայն մեղք կամ ընդ դէմ իւր մարմնոյ է, կամ ընկերին. իսկ հպարտութիւնն է մեղանչումն ընդ դէմ աստուծոյ. որպէս սատանայի: - 561. Երկրորդ՝ *զի* այլ ամենայն մեղք մարմնական է և գիտեմք թէ մեղք է. իսկ հպարտութիւնն անմարմին է և անօսր. և ո՛չ կարեմք գիտել զմեղանչումն: - 562. Երրորդ՝ *զի* զայլ մեղս մեղսասէրքն գործեն. իսկ զհպարտութիւնն սուրբք և ընտիրք. որպէս հրեշտակք յերկինս: - 562. Չորրորդ՝ *զի* ա՛յլ մեղօք կամք մեր անկարգանայ. այլ հպարտութեամբ՝ իմացմամբն յիմարիմք և ապշիմք. և ապա կամօք անկարգանամք: - 562. Հինգերորդ՝ *զի* յամենայն մեղս գտանի հպարտութիւն. *զի* որպէս առանց սիրոյ այլ առաքինութիւնք ոչ ինչ են, նոյնպէս առ հպարտութեան ամենայն մոլութիւնք ոչ ինչ են: - 562. *Զի* յամենայն մեղս երևի հպարտութիւն այսպէս. *զի* ամենայն մեղք խոտումն է պատուիրանացն աստուծոյ, և խոտորումն զհետ հեշտութեան մարմնոյ...: - 562. Վեցերորդ՝ *զի* զամենայն բարիսն որ ի մեզ են՝ արտաքս հանեն. զորօրինակ եկեալ խաւարն հանէ զլոյսն: - 562. Եօթներորդ՝ *զի* որ հպարտքն են ոչ ունին հանգիստ մտաց և մարմնոյ. քանզի որ քան մարդ խոնարհէ՝ այն քան հանգիստ է: - 562. Ութերորդ՝ *զի* ամենայն տեսակք ախտիցն ի՛ր մի երևեցուցանեն մեզ. որպէս գողութիւն զինչս, և պոռնկութիւն զհեշտութիւն. իսկ հպարտութեանն ո՛չ գոյ ամենևին ակնկալութիւն: - 562.

Իններորդ՝ *զի* ամենայն ոք որ առ պոռնիկն երթայ՝ գիտէ ճշմարտութեամբ թէ վրիպեցաւ ի ճշմարիտ արդարութենէն: - 562. Տասներորդ՝ *զի* ամենայն մեղաւորաց ներէ՛ աստուած ժամանակս ինչ *զի* զղջասցին. իսկ հպարտին ոչ. *զի* մարգարէն ասէր «տէր ամբարտաւանից հակառակ կայ»: - 562. Այսպէս մեղանչէ սատանայ և մարդ. *զի* զլոյսն աստուծոյ անձնիշխան կամօք և իմացմամբ մերժէ՝ և սիրէ զխաւար: - 562. Վասն է՞ր *զի* մարդոյս գործ և անասնոցն հասարա՛կ են, և մարդոյս միա՛յն է մեղք: - 563. Վասն բանին և անձնիշխան կամացն. *զի* անձնիշխան կամք անասնոց ո՛չ է. այլ բանականին: - 563. Նա՛խ՝ *զի* որ կամաւ և գիտութեամբ մեղանչէ, առաւել է քան զակամայն և զտգիտութեան. *զի* թէպէտ և սոքա մեղք են, այլ պատիժն նուազ. որպէս անասնոյն քան զմարդոյն: - 563. Երկրորդ ի միտ առ, *զի* որ առաւել գիտութեամբ և կամօք մեղանչէ, առաւել պատժի քան զայն որ նուազ գիտութիւն ունի և կամք...: - 563. ...*զի* վասն բոլոր ժողովրդեանն մին էր զուարակ. և վասն միայն քահանայապետին մին. և զշնացեալ դուստր քահանային այրէին. և զժողովրդեանն քարկոծէին. և վա՜յ ինձ *զի* անձամբ զանձն իմ դատապարտեմ: - 563. *Զի* սրտիւն ապրին մարմնակեր գազանք. և հեշտ ցանկութեամբ բազմածին կենդանիք աճեն. և երկչոտութեամբ ապրին նապաստակք և տկարք ի հզօրից...: - 563. Նա՛խ՝ *զի* ի նոսա չափաւո՛ր են ախտքս այսոքիկ. իսկ ի մարդն առաւել և անչափ: - 563-564. Որպէս յա՛յտ է ի տրտմիլն. *զի* խորհուրդն մշակ եղեալ յետոյ ի յոխս և ի քէնս և ի նախանձս յաւելու: - 564. Երկրորդ պատճառ, *զի* այսոսիկ անասունքն գործեն ըստ բնական կարգին. իսկ մեք ի հակառակն փոխեմք: - 564. Նա՛խ՝ ըստ գոյացութեան և ըստ տեսակին. *զի* մարդն է տեսակ և տեսակն գոյացութիւն. ըստ գոյացութեանն այսպէս: - 565. *Զի* **ժ** պատուիրանքն և է մահու չափ մեղքն են ըստ գոյացութեան մեղք. որպէս մի՛ շնարն և մի՛ գողանարն և մի սպանաներն և մի՛ սուտ վկայերն: - 565. Երրորդ, ըստ քանակին այսպէս. *զի* ոմն մի գործեաց զպոռնկութիւն, և ոմն **ռ**: - 565. Չորրորդ ըստ առընչին. այսինքն թէ առ ի՞նչ իրք գործէ զմեղքն. *զի* մարդն **դ** դիմօք գործէ զմեղս. այսինքն դիմաց աստուծոյ, դիմաց եկեղեցւոյ, դիմաց ընկերին, դիմաց իւր անձինն: - 565. Վեցերորդ ըստ երբին. այսինքն թէ ե՞րբ գործեն զմեղքն. ի տղայութեա՞ն, թէ ի ծերութեան որ մեծ մեղք է. ի սո՞սկ աւուրս, թէ ի տէրունական տօնս. *զի* որ ի տօնս մեղք գործէ, առաւել պատժի քան զմիւսն: - 565. Նոյնպէս և Կալն և Ունելն զամենայն մահու չափ մեղս. թէ գործեալ է և թողեալ. *զի* որ հաստատեալ է մեղքն յինքն, առաւել մեղանչէ: - 565. Երկրորդ՝ *զի* գիտէին զնա աստուած ի մարգարէիցն: - 566. Եւ *զի* խիստ էր հայհոյութիւնք նոցա, խստագոյնս քարկոծեցան տանջանօքն յաւիտենից: - 566. Երրորդ՝ *զի* չունէին պատճառս հայհոյութեան հոգւոյն որպէս զորդոյ. *զի* տեսանէին մարմին զգեցեալ, ուտել և ըմպել, տքնիլ և ննջել: - 566. Չորրորդ՝ որք միայն զորդւոյ ասեն բան՝ սակաւ պատիժն, *զի* մի է յերրորդութենէն. իսկ որ զփառակիցն նա՝ կրկնապատիկ հատուցանի նմա: - 566. *Զի* երեք են ի թողութիւնն. այսինքն թողօղ. և այն որում թողու. և պատրաստութիւն նորին: - 567. *Զի* որպէս ի մեղանչել հոգւոյն ապականեցաւ մարմինն ադամայ և եղև դիւրասահ առ վավաշոտ ցանկութիւնն. այսպէս և սերեալ մարմինն քարշելով ընդ ինքեան զապականութիւնն՝ աղտեղացուցանէ զհոգին: - 567. Եւ յա՛յտ է՝ *զի* սկզբնական մեղքն է՛ ի մարմինն և ի հոգին: - 567. Եւ կոչի ներելի, իբր ներելի և թողլի. *զի* ակամայ և անգիտութեամբ հանդիպի: - 567. Եւ կոչի մահացու, *զի* պարտական առնէ զմարդն յաւիտենից մահուն: - 567. Նա՛խ ըստ միութեան. *զի* մի է մեղքն սկզբնական և ո՛չ բաժանի. որպէս մահացուն **է**. և ներելին **գ**: - 567. Երկրորդ ըստ հասարակութեան. *զի* հասարակաբար ո՞ ոք որ հաղորդի բնութեանս՝ հաղորդի և սկզբնականին: - 568. *Զի* մահացուն ո՛չ էր ի յերեմիայ և ի յովհաննէս որք սրբեցան յորովայնէ. թէպէտ ո՛չ զերծանեին ի ներելւոյն: - 568. Որոյ պատճառ է, *զի* ո՛չ ի սերմանէ՝ այլ ի մաքուր արենէ կուսին էառ մարմին: - 568. Երրորդն ըստ հաւասարութեան. *զի* սկզբնականն հաւասարապէս է ամենայն մարդկան: - 568. Նա՛խ՝ *զի* սկզբնականն հարկիւ և ակամայ տիրէ. իսկ սոքա ըստ կամաց: - 568. Երկրորդ՝ *զի* սկզբնականն բնութեանն հետևի. իսկ սոքա անձին: - 568. Իսկ անձնականն ո՛չ. *զի* ներգործութեամբ է ստացեալ զայնոսիկ: - 568. Դարձեալ զանազանին ըստ թուոյ. *զի* մահացուն յեօթն բաժանի. որք են գլխաւորագոյնք: - 568. Դարձեալ զանազանին սոքա. *զի* մեղք խորհրդոյն կայանայ յերիս. ի տեսանելն, ի հաւանիլն, և ի կամիլն: - 568. *Զի* սուտ է բառնալն զոր ունի: - 568. Նա՛խ՝ *զի* գործ մեղաց է՛ ի զգայութիւնս ներքին կամ արտաքին: - 568. Դարձեալ բաժանին, *զի* գործ մեղացն է՛ յանցեալն և գնացեալն: - 568. Դարձեալ զանազանին. *զի* գործ մեղացն է յայլմէ՛ առ մեզ՝ կամ ի մէնջ առ այլս. այսինքն ի պատրանաց բանսարկուին և ի չարաց ոմանց առ մեզ. և ի մէնջ առ ընկերակիցս մեր: - 569. Իսկ ունակութիւն մեղացն է ի մէնջ և առ մեզ. *զի* կամաւորապէս կրեցաք և կամաւոր պահեմք ի մեզ: - 569. Դարձեալ զանազանին սոքա ըստ սեռին. *զի* գործ մեղացն է ի սեռս առնելոյն. և պատիժն ի սեռս կրելոյն. և ունակութիւն ի սեռս ունելոյն: - 569. *Զի* թէպէտ անպատեհ է ասել զբարկութիւնն առ աստուած *զի* անփոփոխելի քաղցրութիւն է. այլ կամքն որով մեղաւորքն վասն չար գործոցն տանջեալ լինին՝

բարկութիւն ասի աստուծոյ: - 569. Զգուշանալ պա՛րտ է յամբարտաւանութենէ, *զի* զիրեշտակս կարաց խաբել. և զիրեշտակն սատանայ դարձոյց: - 569. *Զի* որպէս ամբարտաւանութիւնն հանէ՛ զմարդն յաստուծոյ, նոյնպէս և նախանձն զմարդն զինքն յինքենէ՛ հանէ: - 569. *Զի* որպէս նախանձն կորուսանէ զինքն, այսպէս և բարկութիւնն փախուցանէ զընկերն: - 570. Զգուշանալ պարտ է ի բարկութենէ. և առաւել ի ժամ դատաստանին. *զի* մարդ բարկացեալ ո՛չ ճանաչէ զճշմարտութիւնն: - 570. Դարձեալ, բարկութեամբ զպատկերն աստուծոյ կորուսանեմք ի մեզ. և հոգին սուրբ փախչի ի բարկացեալ հոգւոյ. *զի* խաղաղութիւն է տեղի նորա: - 570. **Եւ ա՛յս է մեծագոյն չար աշխարհի. *զի* չէ աւելի աղքատ քան զայն որ ցանկայ աւելի ունել: - 570. *Զի* նման է ջրգողեալ հիւանդի. որ որքան աւելի խմէ, առաւել ծարաւի:** - 570. ...*զի* զկերակուրն ի հարկաւոր ժամանակին պարտ է ուտել. այսինքն որ քաղցեալ լինի. այլ ո՛չ յամենայն ժամ որ յագեալ լինի: - 570. Ա՛յս է որ զմարդն յաստուծոյ հեռացնէ. *զի* սուրբքն միա՛յն տեսանեն զաստուած: - 570. Նա՛խ՝ աստուածային ասին՝ *զի* երեքին սոքա յաստուած վերաբերին: - 571. *Զի* հաւատովն տեսանի ծայրագոյն բարին: - 571. Յուսովն ակն ունիմք ինքեան ողորմութեանն որ խոստացեալ է. *զի* գթած և ճշմարիտ է: - 571. Սիրովն սիրեմք զնա *զի* ինքն ինքեամբ բարի է: - 571. Եւ վասն այն սիրեմք զընկերն, *զի* ստեղծուած և պատկեր աստուծոյ է: - 571. Եւ գիտելի է, *զի* սահման առաքելոյն կատարեալ է: - 571. Եւ այլ սահմանք զոր դնեն վարդապետք՝ պարունակեալ են ի սահմանն պօղոսի. *զի* վարդապետաց սահմանն մեկնութիւն և յայտնութիւն է սահմանին պօղոսի: - 571-572. *Զի* կա՛մքն հրամայէ զգործ հաւատոյն. *զի* ո՛չ ոք հաւատայ, եթէ ոչ կամեցօղն: - 572. Նա՛խ՝ *զի* յառաջ եղեալ հանճարոյն է՛ ճշմարիտն. և յառաջ եղեալ կամացն բարին: - 572. Եւ *զի* յառաջ եղեալ հաւատոյն է՛ ճշմարիտն. վասն այն հաւատն է՛ յիմացումն որպէս ի ենթակայս. և յառաջ եղեալ յուսոյն և սիրոյն է բարին, վասն այն յոյսն և սէրն են ի կամքն որպէս ի յենթակայս: - 572. *Զի* թողութիւն մեղաց որ է՛ կենդանութիւն հոգւոյ՝ աստուածային զօրութեամբն լինի: - 573. Նա՛խ՝ *զի* ի մին աստուածն է և ի մի քրիստոսն: - 573. Երկրորդ՝ *զի* մի բոլոր և ոչ մասն: - 573. Երրորդ՝ *զի* ամենեցուն մի է: - 573. *Զի* յուսալ յիր ինչ առանց արդեանց ո՛չ է յոյս. այլ յանդգնութիւն: - 573. Եւ գիտելի է *զի* հաւատն և յոյսն այսպէս զանազանին: - 574. *Զի* հաւատն է վասն անցելոցն և հանդերձելոց: - 574. Այլ համաձայնին. *զի* երկոքեանն հաւատն և յոյսն՝ են յոչ երևելիսն: - 574. Այլ և զանազանի յոյսն. *զի* որք են ի ճանապարհ աստի կենաց, յոյս նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ կարծեաց որպէս ասացաւ: - 574. Իսկ որք ելեալք են ի մարմնոյ, յոյս նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ գիտութեան. *զի* ստուգապէս գիտեն զլինելոց հատուցումն: - 574. Նոյնպէս և այժմ սրբոց և երանելեաց յոյսն է հանդերձ ստուգութեամբ տեսութեանն. *զի* դեռևս հանդերձեալ է նոցա մարմնոցն յարութիւն. և փառք և պսակքն ըստ իրին: - 574. Եւ յայսցանէ յայտէ, *զի* յետ յարութեանն ի վերինն գաւառ ոչ գոյ յոյս. *զի* է՛ անդ երանութիւն, որ է ստացումն ամենայն բարեաց. բոլորն համանգամայն և կատարեալ. և ոչ ինչ է ապառնի յոր յուսացեալ լինի: - 574. Եւ գիտելի է, *զի* եռակի՛ է սէրն. բնական. բարոյական. և շնորհական: - 575. *Զի* զաստուած սիրեմք ի յինքն և վասն ինքեան. այլ զընկերն ի յաստուած և վասն աստուծոյ: - 575. *Զի* միով ունակութեամբ սիրոյ սիրի աստուած և ընկերն: - 575. Դարձեալ՝ սէրն է սկիզբն բարեաց. *զի* յաստուծոյ է. և է՛ մէջ բարեաց. *զի* ըստ աստուծոյ է. և է՛ վախճան բարեաց. *զի* վասն աստուծոյ է: - 575. Կամ այլ ազգ. սէրն է սկիզբն գործոց բարեաց, *զի* շարժէ՛ առ այն. որպէս ասեն վարդապետք՝ սէրն գործէ՛ մեծամեծս թէ է՛. և թէ դադարէ ի գործելոյն՝ ո՛չ է սէր: - 575. Ասի և մէջ. *զի* տեսակաւորէ՛ զգործս: - 575. Ասի և վախճան. *զի* ուղղէ՛ զգործս և ածէ՛ ի պատշաճաւոր վախճանն: - 575. Նա՛խ՝ *զի* սիրելին յօժարութեամբ լսէ սիրելոյն: - 575. Երրորդ՝ յորժամ սիրեմ զաստուած վասն ինքեան *զի* բարի է. և սէրս այս բարի է: - 576. Չորրորդ՝ յորժամ սիրեմ զիս վասն աստուծոյ. և այս ևս է լաւագոյն. *զի* ո՛չ խնդրէ մարդ զիւրն, այլ զաստուծոյն միայն: - 576. Երեք. այսինքն *զի* բոլոր սրտիւ սիրէ և միշտ սիրէ և առանց փոխարինաց սիրէ. որպէս ասացաւ յերկրորդ օրէնքն: - 576. Եւ այլ վարդապետք ասեն, սիրել պարտ է նախ զայն որ ի վերո՛յ է քան զմեզ. այսինքն զաստուած. և ապա՛ զմեզ. յետ որոյ զընկերն. և ապա՛ զմարմինս մեր. և ի նոյն աստիճանս զմարմին ընկերին. *զի* մարմինն երկրորդ է հոգւոյն: - 576. Երրորդ՝ ի ստեղծուածոց. *զի* ամենայն նման սիրէ զնմանն իւր. և խնդայ ընդ նմանին: - 577. Նա՛խ՝ *զի* առաւել մատչի առ կատարելութիւնն. *զի* մեծագոյն առաքինութիւն է: - 577. Երկրորդ՝ առաւել է ի թողութիւն պատժոյն. *զի* առաւել դժուարութիւն է: - 577. Երրորդ՝ է՛ յայտնագոյն նշան սիրոյ. *զի* է՛ ընդ դէմ շարժման բնութեանն: - 577. ***Զի* հաւատովն հաւանիմք աստուծոյ. յուսովն ապաստանիմք ի յաստուած, և սիրեմք զաստուած:** - 578. Այլ գիտելի է, *զի* առաքինութեամբն ուղղի հոգին ի զօրութիւնս իւր. քանզի խոհեմութիւնն ուղղէ զբանականն. արիութիւնն զցասմնականն. ողջախոհութիւնն զցանկականն. իսկ արդարութիւնն ուղղէ՛ զամենայն զօրութիւնս: - 578. *Զի* նա պարունակէ՛ զառաքինութիւնս որ կարգեն զմարդ առ ընկերն. որպէս ուղղութիւնն և առատաբաշխութիւնն: - 578. Վասն այն ասի արդարութիւնն ուղղութիւն կամաց. *զի* ո՛չ միայն է

առանձնական զօրութիւն կամ առաքինութիւն. այլ և հասարակ և պարունակիչ ուղղութեան հոգւոյն: - 579. Նա՛խ՝ *զի* մշտնջենաւոր առնէ զհոգին հաստատելով ի բարին: - 579. Եւ երկրորդ՝ *զի* մնասցէ ի վերին գաւառն ըստ էութեանն և ըստ գործոյն. իսկ այլ առաքինութիւնքն թէպէտ մնան ըստ էութեանն, այլ ո՛չ ըստ գործոյն: - 579. *Զի* խոհեմութիւնն ո՛չ զգուշանայ ի դարանակալութեանց: - 579. Եւ ծանիր, *զի* ա՛յլ է խոհեմութիւն աշխարհային. ա՛յլ մարդկային. և ա՛յլ աստուածային: - 580. Իսկ ժուժկալութիւնն առ շօշափելիսն ըստ ծննդական զօրութեանն. ի յորում դնէ զեղանակն. *զի* առաւել յօժարի մարդն ի գոլ անհատութիւնն սննդականաւն, և ի գոլ տեսակին ծննդականաւն. և յօժարութիւնքս այս՝ զսպին զգաստութեամբ և ժուժկալութեամբ: - 581. *Զի* սոքօք մարդկան հոգիք կարգաւորին և ո՛չ այլ կենդանեաց: - 581. Դարձեալ կոչին ծառայականք, *զի* և ի խառնուածոյ մարմնոյն գոյանան. որք ո՛չ հետևին միմեանց. *զի* որ ի խառնուածոյն ողջախո՛հ է, նա ո՛չ խոհեմ կամ արդար կամ արի կարէ գոլ: - 581. Եւ այսպիսիքս կոչին ծառայականք. *զի* ի հարկէ խառնուածոյ մարմնոյն լինին ողջախոհ կամ արի և այլն: - 581. Դարձեալ կոչին անբանք. *զի* ո՛չ գիտեն զպատճառն: - 581. Եւ գիտեն զպատճառն թէ վասն է՞ր է ողջախոհ. այսինքն *զի* յանառակ կենաց ժլատութիւնք լինին. և նա ի հարկէ արի գոյ զախտն ստորադասելով. այնպիսին և խոհեմ գոյ գիտելով թէ վասն մարմնական հեշտախտութեանց լինի անիրաւութիւն: - 582. Նա՛խ՝ *զի* սոքօք արտաքսեսցին է մոլորութիւնքն որպէս ասացաւ: - 583. Երկրորդ՝ *զի* օգնակա՛ն են բնական զօրութեանց հոգւոյն: - 583. Սուգն զնախանձն. *զի* որ սգայ վասն մեղաց այլոց, ո՛չ նախանձի ընդ նոսա: - 583. Սրբութիւն սրտին զորկրամոլութիւնն. *զի* սրբութիւն սրտին ո՛չ ծառայէ որովայնին ըստ օրինակի անբան անասնոց: - 583. Եւ որպէս ի թուումն պարգևացն է՛ կարգ արհեստական. *զի* նախ դնին արժանաւորագոյնքն: - 583. Այսպէս և ի թիւ երանութեանցս է՛ կարգ բնական. *զի* արժանաւորքն ի վերջո՛յ դնին: - 583. Իսկ սգալ վասն չարին, *զի* փախիցուք ի նմանէ: - 583. Այլ սգալ վասն յատուկ ինչ չարի, է՛ իւրաքանչիւր առաքինութեան. *զի* իւրաքանչիւր առաքինութիւն սըգայ վասն ներհակին: - 583. Կրկին տրտմութիւն է և կրկին խնդութիւն. *զի* է՛ աստուածային և է դիւական: - 584. Նա՛խ՝ *զի* ի հոգին է. **բ**՝ *զի* վասն հոգւոյն տրտմի և ցաւի. **գ**՝ արտասուս հոսէ. **դ**՝ զմահ զդատաստան և զտանջանս ի միտ ածէ՛...: - 584. Նա՛խ՝ *զի* զտրտմութեան դնն զծանծրութեան զկարճմտութեան զսրտմտութիւն և զոխն հանէ՛ ի հոգւոյն: - 584. Չորրորդ՝ ի խաղաղութեան բնակի. *զի* ուր խնդութիւն է՝ խաղաղութիւն է. և ուր խաղաղութիւն է՝ խնդութիւն է: - 584. Իսկ հեզութիւնն նոյն է ընդ մաստութիւնն. *զի* ասեն թէ՝ մաստութիւն է որ ո՛չ զգայ զդառնութիւն ինչ ոգոյ: - 584. Եւ մաստութիւնն է նոյն ընդ համբերութեանն. *զի* համբերութիւնն է տևումն մարմնաւոր նեղութեանց. իսկ մաստնութիւնն է տևումն նախատանաց: - 584. *Զի* արդարութեամբն անընդմիջաբար միաւորիմք ընդ աստուծոյ. որ ո՛չ լինի այլ առաքինութեամբք: - 584. *Զի* արդարութիւն որ ասէ աստ՝ պարունակէ՛ զհաւատն զյոյսն և զսէրն. որք անընդմիջաբար միաւորեն զմեզ ընդ աստուծոյ: - 584. Եւ վերջինս այս վասն այն ասի գործ ողորմութեան, *զի* կակուղ և խոնարհ պատասխանին խորտակէ՛ զբարկութիւն ընկերին և շահի՛ զնա: - 585. Եւ թէ իցէ ինչ՝ անզօ՛ր է. ապա յա՛յտ է *զի* խաղաղութիւնն է յո՛յժ մաքրեալ հոգւոյն: - 585. *զի* թէպէտ ողորմութիւնն առաւել նմանեցուցանէ զմարդն աստուծոյ ըստ արտաքին գործոյն...: - 585. Սոքա ամենեքեան երանելիք ասին. *զի* որդիք աստուծոյ կոչեսցին: - 585. Նա՛խ արար խաղաղութիւն յանձն իւր. *զի* զաստուածային և զմարդկային բնութիւնն միաւորեաց յինքեան ի մի կամս և ի մի ներգործութիւն անբաժանաբար: - 585. Հինգերորդ՝ *զի* աղօթս խաչողացն և չարչարողացն արար: - 585. ...քանզի խաղաղարարն է առանց հակառակութեան մարմնոյ՝ աշխարհի՝ և սատանայի. յա՛յտ է *զի* լինիցի պատրաստ ի յաղթել զփորձութիւն մահու: - 586. *Զի* տանելն մահու վասն քրիստոսի՝ է՛ նոյն աստիճան ըստ խաղաղութեանն: - 586. *Զի* ի վերոյ խաղաղութեան ո՛չ է այլ առաքինութիւն. *զի* խաղաղութիւնն է վախճան և կատարումն ամենայն առաքինութեանց: - 586. Նա՛խ՝ *զի* նո՛յն վարձն խոստացեալ լինի և նմա. այսինքն արքայութիւնն երկնից: - 586. Երկրորդ՝ *զի* փորձէ զայլսն ամենայն ի վերջնոյն մինչև ցառաջինն թէ ճշմարի՞տ իցեն արդեօք: - 586. *Զի* ասեն վարդապետք թէ որպիսի իւրաքանչիւր ոք ծածկեալ իցէ յինքեան. փո՛րձ է տուեալ նախատինքն: - 586. Տե՛ս *զի* բազում ասէ զվարձս բամբասանաց որչափ նախատիցին: - 586. *Զի* մկրտութիւնն է՛ խորհուրդ հաւատոյ. ուստի յա՛յտ է *զի* նախ հաւատամք և ապա՛ մկրտիմք: - 587. Դրոշմն է՛ խորհուրդ յուսոյ. *զի* յուսալով ի զօրութիւն սուրբ հոգւոյն կարողանամք ընդ դէմ թշնամւոյն: - 587. Հաղորդութիւնն է՛ խորհուրդ սիրոյ. *զի* սիրով միաւորիմք և յօդիմք ի գլուխն քրիստոս. մարմին ի մարմնոյ նորա և անդամ յանդամոց նորա: - 587. Ապաշխարութիւնն է՛ խորհուրդ արդարութեան. *զի* ի ձեռն զղջման և խոստովանութեան և այլոցն արդարանամք ի մեղաց: - 587. Օծումն է՛ խորհուրդ ի լրումն արդարութեան. *զի* ելեաք ի պատերազմէ՛ զփոշին և զքիրտն սրբեմք. որպէս ելեալքն ի մարմնական պատերազմէ՛: - 587. Կարգն է՛ ի խորհուրդ խոհեմութեան և գիտութեան. *զի* իմաստութեամբ և գիտութեամբ սպասաւորեսցէ

խորհրդոցն և խրատեալ ուսուցէ զժողովուրդն: - 587. Իսկ պսակն է՛ ի խորհուրդ ողջախոհութեան. *__զի__* ողջախոհ ամուսնութեամբ զսպեսցէ առ ինքն զբղջախոհ ցանկութիւնն. և արգելցի ի շնութենէ և ի պոռնկութենէ. վասն որոյ է են խորհուրդք եկեղեցւոյ: - 587. Դարձեալ՝ է և այլ պատճառ. *__զի__* կարգին ընդ դէմ երից մեղացն և ընդ դէմ չորեքկին պատժոցն: - 587. Եւ երկրորդ անպատշաճութիւն, *__զի__* յասելն թէ՝ ես կու մկրտեմ. երևի թէ նուիրեալն ո՛չ իւր կամաւն է եկեալ ի մկրտութիւն, այլ բռնութեամբ և ի հարկէ՛ կու մկրտեմ: - 588. ...*__զի__* պարզևք հոգւոյն ո՛չ արհամարհողաց և չկամողացն լինի տուեալ. այլ հաւատով խնդրողացն...: - 588. Դարձեալ գիտելի է, *__զի__* աստ ասեն հերձուածօղ ազգն Ֆռանկաց թէ՝ թէպէտ մկրտութիւնն գործ քահանայի է, բայց ի հարկաւոր ժամանակն թէ քահանայ ո՛չ լինի ամենայն ոք որ գիտէ զձև մկրտութեան՝ կարէ մկրտել: - 588. Նա՛խ՝ *__զի__* այսպիսի չար աղանդս ո՛չ գտանի յայլ եկեղեցիս քրիստոնէից: - 589. Երկրորդ, *__զի__* այս խորհրդոյ նշանակ ի սկզբան արարածոց աստուած ադամայ ետ և ո՛չ կնոջն. յորժամ էած զկենդանիսն առ ադամ *__զի__* անունս դիցէ նոցա: - 589. Երրորդ, *__զի__* թէ կայր հնար որ ի ձեռն կնոջն տուեալ լինէր շնորհք, աստուածածին կոյսն մարիամ ընդէ՛ր ոչ եղև մերձ մկրտութեան որդւոյն իւրոյ ի յորդանան: - 589. Չորրորդ, *__զի__* թէ ի ձեռն փիլիպպոսի առաքելոյ որ էր մի յեօթանց անտի սարկաւագացն ո՛չ եղև իջեալ հոգին ի վերայ ներքինւոյն մինչև յափշտակեցաւ յազովտոս - 589. Հինգերորդ, *__զի__* թէ գո՛յր հնար կնոջ վասն հարկին առնել զգործ քահանայի, ընդէ՛ր ոչ կարաց նունի կոյսն մկրտել զոք ի վրաց յորժամ դարձոյց յաստուածգիտութիւն. - 589. Վեցերորդ, *__զի__* թէ կինն կարէ մկրտել ի հարկաւոր ժամանակի, սուրբն գրիգոր լուսաւորիչն քանի ևս առաւել պատւական էր քան զմի կին...: - 589. Եօթներորդ, *__զի__* մկրտելն է գործ քահանայի. և քահանայութիւնն է սպասաւորութիւն աստուծոյ. իսկ զայս սպասաւորութիւն աստուծոյ և ո՛չ կռապաշտքն ունէին սովորութիւն սնոտի կռոցն ի ձեռն կանանցն մատուցանել զպատարագն. - 589. Ութերորդ, *__զի__* թէ զզենումն կենդանեաց ո՛չ ունին հրաման զենուլ ազգ կանանց որ է՛ խտրութիւն մարմնաւոր սրբութեանց. զիա՞րդ պատշաճի տալ հրաման կանանց ազգի մերձենալ ի կարգ հոգևոր սրբութեան: - 589. Իններորդ, ***__զի__* մկրտութիւնն է գործ քահանայութեան. և քահանայութիւնն է ազատ և ո՛չ ընդ ումեք հարկի ներքոյ. իսկ կինն ծառայ և ոտք է առն. վասն այսր հարկի ո՛չ է պարտ ծառային առնել զգործ տեառն**...: - 589. Տասներորդ, *__զի__* մկրտութիւնն է գործ քահանայի որ աղօթիւք կատարի...: - 589-590. Բայց գիտելի է, *__զի__* գործ մկրտութեանն է սրբել զհոգիս յամենայն մեղաց զոր ունիցի. թէ բնական թէ ներգործական և ի պատժոց մեղացն. *__զի__* թէ նոր մկրտեալն մեռանի, առ ժամայն թռչի ի կեանս յաւիտենականս: - 590. Նա՛խ՝ *__զի__* մարմնաւոր ծնունդն նշանա՛կ է հոգևոր ծննդեանն. և որպէս մի է մարմնաւոր ծնունդն, այսպէս մի է և հոգևորն: - 590. Երկրորդ՝ *__զի__* մկրտութիւնն է ընդ դէմ սկզբնական մեղաց. և սկզբնական մեղքն մի է և ո՛չ կրկին: - 590. Երրորդ՝ *__զի__* որ մկրտի՝ ի մահն քրիստոսի մկրտի. և քրիստոս միանգամ մեռաւ. և թէ ոք դարձեալ մկրտէ՝ անձանց ի խաչ հանէ զորդին աստուծոյ և դարձեալ խայտառակէ որպէս առաքեալն: - 590. Չորրորդ՝ *__զի__* մկրտութիւնն է անքակտելի կնիք ի հոգին. որպէս կարգն և դրոշմն. վասն որոյ ո՛չ կրկնին որք յանուն սուրբ Երրորդութեանն մկրտեցան: - 590. Եւ գիտելի է, *__զի__* ի ծնունդ սուրբ աւազանին երևի ե զարմանալի գործ որ ո՛չ է ի մարմնաւոր ծնունդս: - 590. Երկրորդ՝ *__զի__* կուսութեամբ ծնանի առանց ապականութեան. և զայս պատճառէ՛ հոգին սուրբ և նիւթ ջրոյն *__զի__* հեղո՛ւկ է: - 590. Երրորդ՝ *__զի__* միշտ անդրանիկ ծնանի և ո՛չ կրտսեր. *__զի__* պատկեր քրիստոսի ստանամք որ է՛ անդրանիկ հօր: - 590. Չորրորդ՝ *__զի__* միշտ որդի ծնանիմք աստուծոյ և ո՛չ դուստր և էգ. *__զի__* ի քրիստոս յիսուս արու և էգ ո՛չ է ասէ առաքեալն. և զայս ցուցանէ աւազանն ի յաջ կողմն եկեղեցւոյն: - 590. Հինգերորդ՝ *__զի__* համապատիւ ծնանիմք ամենեքեան. ո՛չ ոմն պատուով կամ անպատիւ. իշխան կամ իշխեցեալ...: - 590. ...որպէս ասէ առաքեալն, «չիք խտիր ո՛չ հրէի և ո՛չ հեթանոսի. ո՛չ ծառայի և ո՛չ ազատի». *__զի__* դուք միապատիւ էք ի քրիստոս յիսուս և համաժառանգք արքայութեանն: - 590. Զզաւակս այլազգեաց մկրտել պարտ է. *__զի__* թէ մեռանի ազատեալ է ի սկզբնական մեղաց և ի պատժոց դժոխոց: - 591. Այլ կնքահայր ո՛չ է պարտ առնել զայլազգին. *__զի__* ո՛չ ունի զհաւատն սուրբ, և ո՛չ է հրաժարեալ ի սատանայէ. վասն որոյ ո՛չ կարէ լեզու լինիլ տղային կամ երաշխաւոր. - 591. ...*__զի__* նա որ ոչ ունի զհաւատ, այլոց ո՛չ կարէ միջնորդել: - 591. Ո՛չ կարէ. *__զի__* կնքահայր ասեմք և ո՛չ կնքամայր. *__զի__* կնքամայր եկեղեցին է նորածնելոցն: - 591. Որոյ պատճառէ, *__զի__* կին երաշխաւոր և վկայ ո՛չ կարէ լինիլ, վասն որոյ և ո՛չ կնքահայր կարէ լինիլ: - 591. *__Զի__* ջուր հակառակ է հրոյ. և զի՞նչ է մեղք, եթէ ոչ հուր. որպէս յոգւոջ բարկութիւն. և ի մարմնի ցանկութիւն. ուստի յայտ է *__զի__* հրով տանջանաց պատժի. և աստ *__զի__* հուրն շիջցի ի ջուր մկրտիմք: - 591. Արդ փոքրիկ տղայն ո՛չ վասն այն տանջի թէ ադամ եթող զայն. այլ *__զի__* ինքն զարդարութիւնն զայն ո՛չ ունի վասն այն տանջի: - 591. Ապա ուրեմն յիրաւի՝ *__զի__* բնական արդարութիւն ի տղայն ո՛չ գտանի, յարդարութենէն աստուծոյ արդարապէս մերժի և ընդ անիրաւսն տանջի: - 591. ...*__զի__* բոլոր բնութիւնս մեր ի յանձն ադամայ մեղանչական եղև ցանկութեամբն...:

- 591-592. Պարտ է *զի* իւրաքանչիւր ոք ծնցի մկրտութեամբն քրիստոսի. *զի* սրբեսցի և ազատեսցի ի մահու: - 592. Դարձեալ՝ կրկին է գալուստն քրիստոսի. յառաջինն զհոգւոյ պատիժն եբարձ. և յերկրորդն զմարմնոյն. *զի* երկրորդ է մարմինն հոգւոյն: - 592. Մահուամբն քրիստոսի լուծան մեղք. բայց մեք ի հաւատ մահուն քրիստոսի մկրտիմք. *զի* տնկակից լիցուք մահու նորա: - 592. Ո՛չ է օգուտ. *զի* չև ևս ծնաւ երկրորդ ադամ. *զի* նախ պա՛րտ էր ըստ մարմնոյ ծնանիլ. և ապա ըստ հոգւոյ վերստին ծնունդ: - 592-593. *Զի* տանջանք հրոյն ներգործական մեղա՛ցն է և ո՛չ սկզբնականին պատիժ: - 593. Եւ գիտելի է, *զի* որ ի ճակատն և ի սիրտն և ի թիկնամէջն օծանէ, այն դրո՛շմ է. և որ զհինգ զգայութիւնսն օծանէ՝ այն ի խորհուրդ օծմանն է ծածկապէս: - 593. Եւ թէ ոք ասիցէ, զդրոշմն ո՛չ ունիք. *զի* եպիսկոպոսն տայ որպէս ազգն Ֆռանկաց: - 594. Եւ քահանայապետ ասէ զնա՝ որ պատարագէ և մկրտէ և դրոշմէ. *զի* նա՛ է պետ և աւագ ի կատարմունսն խորհրդոյն: - 594. Այս ըստ հակառակասիրութեան նոցա ասի. այլ ըստ ուղղութեան՝ քահանայն ունի իշխանութիւն զեօթն խորհուրդ եկեղեցւոյ կատարել. և եպիսկոպոսն առաւել ունի. *զի* միայն տայ զկարգն, եկեղեցի օրհնէ և սեղան: - 594. Եւ գիտելի է, *զի* յետ օծանելոյն զգեցուցանեն զհանդերձս պայծառ. որ զլուսաւոր վարս և զպայծառ հաւատս և զանմեղութիւնն նշանակէ: - 594. Իսկ ելանելն ի բեմն, *զի* յետ բոլոր անօրէնութեանցն քրիստոս ել յերկինս և նստաւ ընդ աջմէ հօր աստուծոյ: - 594. Եւ հաղորդելն, որպէս անդամ ի գլուխն յօդէ. *զի* ամենայն կատարմանց կատարումն հաղորդութիւնն է. այսինքն կարգին՝ պսակին՝ խոստովանութեան՝ մկրտութեան՝ և այլն: - 594. Այլ գիտելի է, *զի* ոմանք հետևօղք չար աղանդոյն քաղկեդոնի մոլորեալք ի ճշմարտութենէն՝ ջուր խառնեն յանապական բաժակ արեանն քրիստոսի: - 594. *Զի* յառաքելական կանոնս և կղեմայ և մակարայ և այլոցն: - 595. Որք ասեն՝ պա՛րտ է յամենայն աւուր ջերմ հաց հանել ի սեղանն և անապական բաժակ. *զի* անապական արեամբն քրիստոսի փրկեցաք: - 595. Նա՛խ՝ *զի* ջուրն և արիւնն որիշ բղխեաց և ո՛չ խառնեալ. ապա յա՛յտ է թէ որիշ է խորհուրդ ջրոյն և որիշ արեանն: - 595. Երկրորդ՝ *զի* թէ խառն բղխեաց ըստ քեզ վասն այն ի պատարագն ջուր խառնես, ապա և ի ջուրն գինի խառնեա և այնպէս մկրտեա՛: - 595. *Զի* առաւել յարմա՛ր է անապակ բաժակն անապական արեանն քրիստոսի, քան թէ խառնեալն ի ջրոյ և ապականեալն: - 595. Եւ թէ ասիցեն հակառակքն մեր, ո՛չ ապականի գինին *զի* սակաւ է ջուրն: - 595. ...*զի* մին կաթ ջուրն և մին սափորն հաւասար են բնութեամբ: - 595. Ապա ուրեմն թէպէտ և սակաւ խառնի ջուրն, բնութիւնք գինւոյն և ջրոյն ապականեցան. *զի* ո՛չ անապակ գինի է և ո՛չ պարզ ջուր: - 595-596. Եւ դու խառնեա զսոսա ի խորհուրդ պատարագին. *զի* իցես ուղղակի մեկնիչ և գրոյն հետևօղ: - 596. *Զի* ասելն «ա՛յս է մարմին իմ» զէութիւն հացին կատարեաց: - 596. ...*զի* որք կամին զմարմինն քրիստոսի ապականացու ասել՝ խմոր և ջուր խառնեն. թէպէտ այլ և այլ պատճառեն: - 596-597. Իսկ *զի* անխմոր բաղարջով է խորհուրդն՝ ասացաւ ի վերոյ **իա** գլուխն **լը** համարն: - 597. Ասեմք թէ **դ**. *զի* թէ մինն պակաս լինի, խորհուրդն ո՛չ կատարի: - 597. Նա՛խ՝ *զի* քրիստոս մի հաց էառ ի ձեռն ի սեղանոյն և օրհնեաց. նոյնպէս և զմի գինի: - 597. Երկրորդ՝ *զի* հրամայեաց եզական բանիւ «ա՛յս է մարմին իմ. և ա՛յս է արիւն իմ». որ զմին հացն նշանակէ՛: - 597. Նախ՝ *զի* մեք զգայարանօք՝ միջնորդութեամբ պատահմանցն հասանիմք ի գոյացութիւնն. *զի* անմեկնելի որոշմունք են ի գոյացութեանց սոքա: - 597. Երկրորդ՝ *զի* մեք կարասցուք մերձենալ ի սրբութիւնն, վասն այն մնան պատահմունքն...: - 597. ...*զի* թէ յայտնի կերպարանօք լինէր միս և արիւն, ո՛չ ոք իշխէր մերձենալ: - 597. Երրորդ՝ *զի* վարձատրեսցուք հաւատով. այլ հաւատն ի յաներևոյթն է որ է՛ գոյացութիւնն...: - 597. Չորրորդ՝ *զի* սովաւ իմասցուք զմարդեղութիւն բանին կրկին կերպիւ: - 598. Նա՛խ՝ *զի* արիւնն հեղուկ նիւթ է. կամ ո՛չ է տալի որպէս այլ ազգք, և զրկել զժողովուրդն ի փրկական արենէն: - 598. *Զի* որպէս բաշխի մարմինն, նոյնպէս և մասնաւորեսցի արիւնն առ հասարակ: - 598. *Զի* միապէս միաւորին արտաքս և ի ներքս. *զի* ամենայն կերակուր և ըմպելի ի ներքս միաւորի: - 598. Եւ թէ հրէա ոմն ետես *զի* հում միս արիւնաթաթախ տայր ժողովրդեանն. և զղջացաւ անկաւ յոտս սրբոյն և մկրտեցաւ: - 599. *Զի* թէ յօրհնեալ հացէն այլոցն ամենեցուն ցամա՛ք էր տուեալ և նորա թաց, պատճառ լինէր մատնութեանն յուդայի. և յիրաւի: - 599. Այլ թացեալ պատառն այսպէս էր. *զի* ի սկաւառակն ընդ վարդապետին փութացաւ մատնիչն տանիլ զձեռն լիրբ դիմօք և արհամարհեալ մտօք: - 599. Ապա յա՛յտ է *զի* ո՛չ ի մարմնոյ և ո՛չ յարենէն էր թացեալ պատառն. այլ ի այլ ինչ կերակրոյ ի սեղանոյն առեալ թացեալ և տուեալ. *զի* ցուցցէ զմատնիչն: - 599. ...*զի* յայտնապէս զարիւնն ո՛չ տայք, և ծածկապէս զմարմինն. *զի* յօրհնեալ մարմնոյն ո՛չ տայք. այլ սոսկ հաց որ ի բեմն: - 599. *զի* հաւատալի է թէ ի մարմինն քրիստոսի՝ է՛ և արիւնն կապակցութեամբ. և հոգին համազուգութեամբ. և աստուածութիւնն միաւորութեամբ: - 600. Նա՛խ՝ եթէ ո՛չ զմարմինն տան ժողովրդեանն. այլ սոսկ հաց և գինի. *զի* մարմին քրիստոսի այն մինն է որ օրհնեցաւ որպէս ցուցաւ ի վերոյ: - 600. *Զի* մարմին իմ ճշմարիտ կերակուր է և արիւն իմ ճշմարիտ ըմպելի: - 600. ...*զի* յայտնի զարիւնն չտաս. և ծածուկ զմարմինն...: - 600. ...*զի* սոսկ

հաց տաս և ո՛չ զօրհնեալն: - 600. ...*զի* որք արժանի են մարմնոյն, արժանի են և արեանն սրբոյ...: - 600. որք կամաւ յանձն առնուն. *զի* այս մինչև ի մահ ճգնութիւն է: - 600. Եւ զօրհնեալ բաժակն առաջի եդ *զի* կամաւ արբցեն: - 600. *Զի* որպէս **գ** կերպիւ մեղանչեմք. այսինքն ի խորհուրդս, ի բանս, և ի գործս: - 601. *Զի* շնորհքն աստուծոյ ո՛չ է մասն մասն. այլ բոլոր և կատարեալ: - 601. Եւ գիտելի է, *զի* մարդ որ ի մեղք անկանի և իմանայ զինքն որ մեղք գործեաց, և ունի զխոստովանահայրն պատրաստ ուղղափառ և գիտուն, ի յա՛յն պահն պարտի խոստովանիլ: - 601. *Զի* որպէս հուրն դիզին վնասակա՛ր է, նոյնպէս մեղքն հոգւոյն: - 601. ...*զի* պարտ է նմանեաւն զնմանն բժշկել: - 602. Եւ ա՛յս է պատճառն. *զի* անջրելի՛ է հրամանքն աստուծոյ...: - 602. ...*զի* յորժամ մեղանչեմք, գրիմք ի պատիժն յաւիտենից. այլ ի զղջանալն և փոխիլն մեր, փոխէ՛ աստուած և զպատիժն ի ժամանակեայս: - 602. ...այլ ապաշխարութիւնն ամբարէ՛ զբարիս ի հոգին *զի* պսակեսցի: - 602. *Զի* է՛ որ խոստովանին զմեղս և արմատն հաստա՛տ է...: - 603. ...*զի* խոստովանեալ մեղքն բարձուի, այլ պատիժն ո՛չ: - 603. *Զի* պատժոյ արմատն մեղքն է...: - 603. *Զի* ատելութիւն մեղաց զղջումն է սրտին. և խոստովանի բերանով. և զամօթն կրէ փոխանակ պատժոյն: - 603. ...*զի* պարտ է զոր ի մտի ունի՝ զբոլորն միոյ քահանայի խոստովանիլ: - 603. ...*զի* առանց խոստովանութեան մեղքն ո՛չ թողուի: - 603. Եւ թէ ոք ասիցէ, պա՛րտ է *զի* ձեռն քահանային մերձեսցի ի զգայարանսն: - 605. ...նախ վասն ա՛յս խորհրդոյս է. և երկրորդ՝ *զի* մկրտութիւնս մեր ո՛չ ի ջուրն յովաննու, այլ ի մահն քրիստոսի է: - 605. ...*զի* օծանեմք զնոսա որպէս զըմբիշս. *զի* ի հանդէս մտցէ ընդ այսս չարութեան օդոյդ: - 605. *Զի* նորին գործն է որ բանայ և փակէ զդուռն եկեղեցոյ: - 606. Ի ժամ մկրտութեանն քրիստոս եցոյց զքրիստոնէութեան խորհուրդն. *զի* մեք մկրտութեամբն լինիմք քրիստոնեայք: - 606. *Զի* եպիսկոպոսունք տան հոգի քահանայից և զկապելոյ և զարձակելոյ իշխանութիւն: - 607. Եւ գիտելի է, *զի* պսակն սկսանի ի նշանադրութիւնն...: - 609. *զի* երկուց կամաց հաւանումն հաստատէ՛ զպսակն: - 609. *Զի* յայնմ հետէ հարսն փեսային լինի նշանեալ, և փեսայն հարսինն է՛ յատկացեալ: - 609-610. *Զի* բռնութեամբ և առանց հաւանելոյ միմեանց՝ այսինքն փեսային և հարսին՝ ո՛չ հաստատի պսակն: - 610. ...այսինքն *զի* տեսեալ հաւանեսցին միմեանց: - 610. Յաւատն է՞ *զի* ո՛չ ոք ի յերկուցն պղծեսցի օտար անկողնով. որպէս այն որ թողու զհաւատն և ուրանայ բանիւ...: - 610. Իսկ զաւակն, *զի* ծնցի և սնուցանի ի պաշտօնն աստուծոյ. *զի* վասն ծննդեան զաւակին է հրաման պսակին: - 610. *Զի* թէպէտ և եկեղեցի սուրբ կարէ՛ բաժանել վասն արգելմանցն...: - 610. ...*զի* բազում արգելմունք գոն պսակին. որպէս ազգակցութիւնն հոգևոր կամ մարմնաւոր. կամ տկարութիւն բնութեանն. կամ պոռնկութիւնն. կամ այսահարութիւնն. կամ ծառայութիւնն. կամ բռնութեամբն. կամ այլ ինչ այսպիսի պատճառ. որով բաժանին այրն և կինն: - 610. *Զի* է՛ շաղկապ հոգևոր. այսինքն սրտիցն. և է՛ շաղկապ մարմնաւոր՝ խառնմամբ սերիցն: - 610. Գիտելի է, *զի* նախ առաջին բաժանի ազգն ի բնականն՝ և յօրինացն՝ և ի հոգևորն: - 611. *Զի* **բ** են հայր և մայր մեր. և **բ** ծնունդ որդին և դուստրն. և **բ** եղբայրն և քոյրն. և մեք ի մէջն **է** երորդ: - 611. *Զի* հայրն և որդին և թոռն որ է՛ **գ**. և թոռին թոռն որ է՛ **դ**. որ լինի **է**, և եզր արենակցութեան: - 611. *Զի* **դ** ազգակցութիւն մարմնական. *զի* մարմինն է ի չորից տարերց: - 611. Եւ երեքն հոգեկան. *զի* հոգին եռամասնեա՛յ է: - 611. *Զի* **դ** ծնունդ ի մէջն է ըստ չորից տարերց կատարման: - 611. *Զի* օտար ազգք՝ միջնորդութեամբ փեսային և հարսին որ են մի մարմին, լինին և նոքա մի ազգ: - 611. *Զի* կնքահայրն և սանամայրն ծնունդ մի. և նոցա զաւակն **բ**. և նոցա թոռն **գ**. և չորսն որ է՛ թոռին թոռն՝ լինին խնամիք: - 611. Որոյ պատճառէ. *զի* հոգին եռամասնեա՛յ է. այսինքն բան՝ ցասումն՝ և ցանկութիւն. - 611. *Զի* եղբայրն և քոյրն ունին զբոլոր արիւն ծնողին. - 612. ...*զի* անխառնակ և անշփոթ երևեսցի մադանալն բանին յազգէն յուդայ. որպէս ասացաւ ի վերոյ ի **լ** գլուխն, **դ** համարն: - 612. ...*զի* սէրն սփռեսցի և տարածեսցի ի բազում ազգս: - 612. Նա՛խ՝ *զի* մին կին ետ աստուած մին մարդոյն ադամայ՝ ի յօգնութիւն. նոյնպէս և ամենեցուն օրինադրեաց: - 612. Երկրորդ, *զի* մի կող էառ և ի նմանէ շինեաց: - 612. *Զի* ահա՛ նահապետքն բազում կանայս առին և հարճ ևս: - 613. Նա՛խ՝ *զի* արք վասն նորա ի զազիր տեղիսն խոնարհեսցին. - 613. Նա՛խ՝ *զի* միայն զհեշտ ցանկութիւնն սիրեն հանապազ. ինքն և գործակիցն իւր: - 613. *Զի* եկեղեցին ժողովո՛յ է անուն. որպէս հրամայեաց աստուած մովսէսի՝ - 613. *Զի* ողորմութիւնն ի կողմանէ յորժամ անտես առնէ զմեղս՝ դուռն է հարաւոյն: - 614. *Զի* մե՛ք կատարեմք զխորհուրդս. և ի մեզ կրեմք դարձեալ. որպէս մկրտութիւնն. դրոշմն. պատարագն. և այլն: - 614. Նա՛խ՝ *զի* վասն յանցանաց մարդոյն ադամայ դատապարտեցան տարերք. հող, ջուր, և այլն...: - 615. Երկրորդ՝ *զի* նիւթ սորա է՛ ի քարանց արտաքին և ի փայտից որ կոխան է եղեալ անասնոց և անսրբոց...: - 615. Երրորդ՝ *զի* մովսէս ի կանգնել զխորանն օրինակի՝ արեամբ նոխազաց և ջրով և իւղովն էօծ և սրբեաց: - 615. Չորրորդ՝ *զի* սողոմոն յորժամ շինեաց զտաճարն՝ յաղօթս եկաց և նոյնպէս օրհնեաց և օծ. որպէս մովսէս...: - 615. Յինգերորդ, օրհնեմք զեկեղեցիս, *զի* օրհնութիւն վերնատանն ուր տէրն պատարագեաց, և հոգին սուրբ էջ յառաքեալսն...: - 615.

Վեցերորդ օրհնեմք, *զի* բաժանեսցի յայլ աշխարհական տանց որք ո՛չ ունին զօծումն սրբութեան: - 615. Եօթներորդ՝ *զի* աստուած սուրբ է որ բնակէ ի տաճարն: - 615. Ութերորդ՝ սրբեմք զեկեղեցիս, *զի* լիցի սրբութիւն սրբոց. *զի* որք մերձեսցին ի սա՛ սրբեսցին: - 615. Իններորդ սրբեմք, *զի* բնակելոցս ի սմա և պաշտօնէիցս պա՛րտ է սուրբ լինի զի մի՛ պղծեսցեն զսրբութիւնսն: - 615. Եւ այն *զի* պղծեալ տաճարի կարդամք. կամ զշարժեալ սեղանն հաստատեմք: - 615. *Զի* յորժամ մեղօք ինչ սրբութիւնս մեր ապականի, կամ շարժի ոք ի հաւատոյ, վերստին կարէ՛ հաստատիլ ի հաւատս, և դարձեալ կրկնել զխոստովանութիւն և զապաշխարութիւն: - 615. *Զի* իւրաքանչիւր իշխանք և ցեղք մի մի օր նաւակատիս առնէին: - 616. Նա՛խ՝ *զի* զմի օր նոցա տօնեմք. և է յաւելեալ վասն է զգայարանաց. և վասն եօթնեկի մեղաց քաւութեան: - 616. Երկրորդ, *զի* **է** է խորհուրդ եկեղեցոյ. և **է** արփեան է շնորհք հոգւոյն. և մի կատարմունքն ի մեզ, որ լինի **ը**: - 616. *Զի* **բժ**ան առաքելոցն տօնեմք: - 616. Նա՛խ՝ *զի* ի հինն զտօն քաւութեան և զտաղաւարահարացն ի միասին տօնէին ի թշրինի **ժ**: - 616. Չորրորդ՝ *զի* խորանն մովսէսի խաչաձև էր կանգնեալ որպէս մերս եկեղեցի: - 616. Իսկ հինգերորդն ի նորոյս. *զի* խաչիւն քրիստոսի գնեցաւ և ազատեցաւ եկեղեցի սուրբ: - 616. Վեցերորդ՝ *զի* նոյն է խորհուրդն որ անդ ի վերայ խաչին պատարագեցաւ, և այժմ յեկեղեցի սուրբ ի խաչ սեղանին: - 616. Եօթներորդ՝ *զի* պսակ եկեղեցւոյ և փառք է՛ սուրբ խաչն տէրունական. որպէս ի գլուխն է կանգնեալ: - 616. Ութերորդ՝ *զի* ամենայն խորհուրդ եկեղեցւոյ՝ խաչիւն կատարի. Մկրտութիւն. Դրոշմն. Պատարագն. և այլն: - 616. Իններորդ, *զի* եկեղեցի հաւատացելոց՝ ունի զձև խաչին ըստ մարմնոյ. - 616. Տասներորդ՝ *զի* դշխոյն հեղինէ որ շինեաց զսուրբ յարութիւնն յերուսաղէմ: - 617. ...վասն որոյ յանարիւն կենդանւոյ զլոյսն վառեմք. *զի* կենդանին այն անարիւն է յորմէ մոմն գոյանայ: - 617. Նա՛խ՝ *զի* եկեղեցին է ի խորհուրդ դրախտին. ուր անասուն ո՛չ մտանէր. նոյնպէս և յեկեղեցի ո՛չ մտանէ: - 617. Վեցերորդ՝ *զի* եկեղեցին փարա՛խ է բանաւոր հօտից. և ո՛չ անբանից: - 617. Եօթներորդ՝ *զի* լի՛րբ է ոչխարն. և լիրբն արտաքսելի՛ է յեկեղեցւոյ. որպէս յուդա լրբութեամբ ել արտաքս: - 617. Երրորդ՝ *զի* մարմինք սրբոց ի գաւիթս պահին և ո՛չ յեկեղեցի. յօրինակ հոգւոց նոցա որք են ի պահեստ հոգւոյն ի տեղւոջ լուսոյ և հանգստեան: - 617. Դարձեալ՝ ի խորհուրդ գոչման փողոյն այն որ ի բարձունս. *զի* նախ յերկնից գոչէ փողն զաբրիէլի և ժողովէ զհոգիսն...: - 618. Երկրորդ՝ *զի* **գ** են փողք տիեզերաց: - 618. Երրորդ՝ *զի* երիցս գոչէ փողն. նախ զհոգիսն ի յերկնից կոչէ. և ապա՛ զմարմինս ի հողոյ. և ապա՛ յարուցեալ զհոգի և զմարմին ի դատաստան հրաւիրէ: - 618. *Զի* յառաւօտն մին խնկարկի ի տէր եթէ շրթունքն. և այն ևս **գ** անգամ պար առեալ. և մի յօրհնութիւնն ևս **գ** անգամ. և մի ի փառք ի բարձունսն ևս **գ** անգամ: - 618. Եւ այս է պատճառն, *զի* աստուած ետ մեզ միտք և բան և ձայնի գործիք և մարմնոյ մասունք և ինչք. վասն որոյ յամենայնէ՛ նուիրելի՛ է աստուծոյ: - 619. Նա՛խ՝ *զի* ի դառն մաղձոյն հոսի յորովայնն ի ներքոյ սրտին և կսկծեցուցանէ զսրտակրանքն...: - 619. Երրորդ՝ *զի* ջուր արտասուացն զհուր մեղացն շիջուցանէ: - 619. Չորրորդ՝ *զի* ջե՛րմ է արտասուքն և զսառուցումն հալէ և ջերմացուցանէ զսէրն: - 619. Հինգերորդ՝ *զի* դառնութիւն արտասուացն զցանկութիւն աչացն դարձուցանէ: - 619. ...*զի* տեսանելով զպակասութիւն մեր՝ արտասուեմք և լամք. վասն որոյ առնումք զթողութիւն...: - 619. Նաև բերանն դառնանայ և չորանայ տրտմեցելոյն. *զի* չո՛ր է և դառն...: - 620. Այլ գիտելի է, *զի* **գ** է արտասուքն հոգևոր. մին վասն մեղաց. որ է՛ ապաշխարութիւն: - 620. Եւ գիտացիր, *զի* **գ** է նախապատրաստութիւն աղօթիցն...: - 620. Գիտելի՛ է, *զի* ի հին օրէնսն մովսէսի **է** ժամ էր աղօթից...: - 621. Եւ **ծ**՝ մարտիրոսացն. *զի* ազատութիւն է: - 621. Եւ այս գիտելի է, *զի* ի գիշերն **դ** անգամ կատարի. այսինքն է հանգստեանն, մէջ գիշերին, առաւօտին, և արևագալին: - 622. *Զի* հասակ ամենայն մարդոյ ի չորս փոփոխի: - 622. Երկրորդ՝ վասն զի քահանայք եմք՝ պա՛րտ է հասարակ աղօթել. և *զի* աբեղայք՝ պա՛րտ է առանձնակի աղօթել: - 623. Երրորդ՝ *զի* ունիմք զբնութիւնս հասարակ՝ պա՛րտ է հասարակ աղօթել. և *զի* ունիմք անձն և դէմք յատուկ՝ պա՛րտ է առանձնակի աղօթել: - 623. Նա՛խ՝ *զի* հոգի և մարմին է մարդն: - 623. Նա՛խ՝ *զի* յերի՛ց եմք գոյացեալ ի մարմնոյ, ի հոգւոյ, և ի մտաց, որպէս ասեն ոմանք. վասն որոյ **գ** առանձնական աղօթս մատուցանեմք: - 623. *Զի* տիւ և գիշերն է՛ **իդ** ժամ. լինի ապա ընդ **բ** ժամն մի անգամ աղօթք: - 623. Որով յա՛յտ է՝ *զի* ի կէս աւուրն որ է **ժբ** ժամն՝ աղօթելի՛ է մեզ յամենայն օր. և զկէսն այլ՝ մարմնական հոգոց պարապիլ. գործոյ աշխատութեան՝ ննջելոյ՝ կամ այլ ինչ իրաց: - 623. Այլ վասն առաջնոյն՝ գոհանամք, *զի* հասոյց զմեզ ի ժամս այս աղօթից: - 624. ...*զի* հաղորդիցուք բարութեան նորա: - 624. ...*զի* քահանայն միջնո՛րդ է առ աստուած և առ մարդիկ: - 624. Եւ ա՛յս է պատճառն, *զի* քահանայն է՛ ի դէմս քրիստոսի, և եպիսկոպոսն հօր աստուծոյ. և խաղաղութիւնն է՛ հոգին սուրբ որ ի հօրէ առաքեցաւ...: - 625. Եւ յորժամ քահանայն ասէ զխաղաղութիւնն՝ ա՛յս է պատճառն, *զի* քահանայն է՛ միջնորդ առ աստուած և առ մարդիկ. - 625. *Զի* ընդ ամենեսեանն՝ զանձն նշանակէ. իսկ ամենեցունն՝ զշնորհս հոգոյն սրբոյ ցուցանէ: - 625. Նա՛խ՝ *զի* հոգին սուրբ պարգևք է խաչին քրիստոսի. այլ և ի

վերնատունն լուսեղէն խաչիւ հանգեաւ յառաքեալսն: - 625. *Զի* որդին մարմնացաւ և նա՛ նուիրէ զբարեգործութիւնս մեր առ հայր: - 625. ...վասն որոյ մեզ լեզու լինի և ի դէմս մեր գոհանայ զաստուծոյ ըստ իւրաքանչիւր ժամու. այսինքն յառաւօտն, ի հասարակ օրն, և յերեկոյն. *զի* գոհացումն է և ո՛չ աղօթք: - 626. Դարձեալ՝ քարոզն ըստ ինքեան յայտնի է *զի* յորդորո՛ւմն է մեզ: - 626. Նա՛խ՝ *զի* գոհութիւնն պարզև՛ է օրինաւոր ի բարեա՛ց մասնէ. - 626. Երկրորդ, *զի* ի գոհութիւնն ամենայն չարք կործանին որ հակառակ կան մեզ: - 626. Չորրորդ, *զի* բարեաց պատճառ զաստուած իմանամք և ի նա՛ վերաբերեմք: - 626. Երկրորդ, *զի* յարութեամբն իւրով յարոյց զմեզ քրիստոս: - 627. *Զի* ի կիրակէ և ի տէրունական տօնս ո՛չ կարօտիմք բարեխօսի. այլ երգս սրովբէականս նուագեմք: - 627. Իսկ թագաւորքն առաջին և վերջին. *զի* կիրակին է թագաւորելն աստուծոյ. այժմ առաջին, և զկնի վերջին. կամ աստ կամողացն միայն, և անդ կամողաց և ո՛չ կամողաց: - 627-628. Եւ կրկին տուն սաղմոսին, *զի* հոգի և մարմին եղև բանն: - 628. Եւ ի պահքն առաւել ծայնաւորքն քան զերգս. *զի* յաւուրս պահոց՝ հրեշտակաց նմանիմք, և յուտիքն մարդկան: - 628. *Զի* անուշահոտ վարուք հաճոյ եղեն աստուծոյ. և բուրմամբ աղօթից բարեխօսե՛ն վասն մեր: - 628. **Իսկ ի պահս ո՛չ խունկ և ո՛չ օրհնութիւն. *զի* ընդ ապաշխարութեամբ եմք, ո՛չ իշխեմք գոհանալ և ո՛չ ունիմք անուշահոտ վարս:** - 628. Իսկ Մեծացուսցէն ի կիրակէի, զբնաւ տնօրէնութիւնն պատմէ. *զի* թէ ոչ էր ծնեալ՝ և ո՛չ էր խաչեալ. և ո՛չ յարուցեալ. և ո՛չ զմեզ փրկեալ: - 628. Այլ և առընթեր յարութեան աւետարանն. *զի* նո՛յն է խորհուրդ ծննդեանն ի կոյս մօրէ և ի կոյս գերեզմանէ: - 628. ...*զի* առաջին փոխն է ի դէմս հօր. և միջինն առ որդի. և վերջինն առ հոգին սուրբ: - 628. Եւ այն որ **բ** ծայնիցն մի է մեսեդին. *զի* դարն ադամայ և ենովքայ միապէս բնական օրինօքն վարեին: - 629. Եւ որ նա՛խ է վերջին տունն ի մեսեդի կամ կցորդ. այն է *զի* քրիստոսիւ դարձաք յառաջինն և ի բարձրագոյնսն. ուստի ադամաւ խոնարհեցաք...: - 629. *Զի* առաջին կանոն երանելեացն, որք դառնան ի չարէ և զճանապարհս օրինացն ընթանան...: - 629. Իսկ երկրորդն, որ երկինք պատմեն զփառս աստուծոյ, զայնմ որ դատէ՛ զհակառակն մեր. *զի* յերկինս է ողորմութիւն նորա: - 629. ...և խոնարհեսցուք ընդ ձեռամբ նորա. *զի* դարձուսցէ ի մահու ի կեանս: - 629. ...*զի* օրն այն ուրախութիւն է արդարոց. և կործանումն ամբարշտաց. որպէս երգն այն ուրախութիւն է, և սուգ՝ եգիպտոսի: - 630. Մեղաց պատարագին խունկ և իւղ չէր հրամայեալ օրէնքն. *զի* տրտում և ժահահո՛տ է: - 630. *Զի* թէ մանկութիւնն է և թէ մեռանիլն, երկիւղի ժամանակ է. որպէս ծառայ ի տնէ: - 631. Նոյնպէս և յերեկոյին *զ'ի* նեղութեանն առաքեալքն կարգեցին յաւուրն ելն. *զի* ելք աստիճանաց ասի...: - 631. *Զի* այսպէս ասէ նեքտառիոս հայրապետն հռոմայ թէ՝ չէր հնար իջուցանել զմարմինն տեառն ի խաչէն վասն փայլատակմանցն ի խոցուածոյն: - 631. Եւ վկայէ՛ մեզ աւետարանիչն յոհաննէս. *զի* ասէ՝ եսայի ետես զփառս նորա և խօսեցաւ վասն նորա...: - 632. *Զի* խաչն պսակ և փառք է քրիստոսի և պարծանք քրիստոնէից և ո՛չ նախատինք...: - 632. Զբանս զայս՝ մարգարէն ի դէմս հօր ասէ. *զի* յայնժամ միայն զհայր պատմէին: - 632. Նա՛խ՝ *զի* զհայր աստուած ասեն և ո՛չ հզօր և ո՛չ անմահ: - 633. Երկրորդ, *զի* յայսպէս ասել սուրբ աստուած սուրբ և հզօր սուրբ և անմահ քրիստոս որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ: - 633. Երրորդ՝ *զի* չորրորդութիւն մուծանեն յերրորդութիւնն սուրբ...: - 633. Եւ գիտելի է, *զի* ամենայն ժամս աղօթից է՛ հասարակ և է՛ յատուկ: - 633. Իսկ յատուկ, Նա՛խ՝ զերեքսրբեանն ի դէմս որդւոյ. *զի* նա՛ է առաջնորդ որով զհայր տեսանեմք: - 633. Եւ տե՛ս՝ *զի* ամենայն ուրէք զհոգին սուրբ հօր աղերսեմք. *զի* ի հօրէ՛ բղխէ: - 633. Նա՛խ՝ *զի* առ որդին մարմնացեալ՝ և զգութ մօրն բարեխօս արկանեմք: - 633-634. Նա՛խ՝ *զի* պատարագն է՛ խաչելութեան ժամն. և յայնժամ ո՛չ ասաց յովսէփ: - 634. Երկրորդ՝ *զի* պատարագն է դէմ յանդիման լինի քրիստոսի. և ո՛չ եմք կարօտ բարեխօսի: - 634. *զի* ճառ խաչին պատւակա՛ն է առ աստուած և առ մարդիկ. և փառք քրիստոսի է խաչն և կատարումն ամենայն տնօրէնութեանցն: - 634. Նա՛խ՝ *զի* քրիստոսիւ ծանեաք զհայր: - 634. *Զի* Սուրբ աստուածն անդ հաստատեցաւ. որպէս և Փառք ի բարձունսն. սկսեալ ի հրեշտակացն ի ծնունդ քրիստոսի. և յերեք սուրբ ժողովնս եղև կատարեալ: - 635. *Զի* ի **դ** տեղւոջս յայս՝ պա՛րտ է ժողովրդեանն զգլուխս բանալ: - 635. ...***զի* աբեղութիւնն կրօնաւորութիւն է. և կրօնաւորին պարտ է զամենայն զգայարանս ծածուկ պահել**: - 635. Իսկ կրկին ասել զշարականս. *զի* եմք հոգի և մարմին: - 636. Կարգաւոր է *զի* ո՛ր դաս որ սկսանի զերգն, նոյնն աւարտէ փառօք. թէ այս՝ թէ այն: - 636. Եւ ա՛յս է խորհուրդն, *զի* որ վաստակի յերգս՝ նա՛ տացէ զփառս արժանապէս: - 636. Եւ որ ամէն շարականի սկիզբն ի մարգարէից դնեմք, այս է պատճառն, *զի* զհինն և զնորս ի միասին խառնեմք: - 636. Դարձեալ՝ *զի* զսկիզբն մարգարէքն եդին, և առաքեալքն զշինուածն: - 636. Եւ ա՛յս է պատճառն, *զի* մի տան շարականի **դ** տուն սաղմոսի պիտոյ է յերկու դասս. և մին շարականն **ժբ** տամբ աւարտի: - 636. Եւ գործատունն կրկին ասի. *զի* ամենայն արարածք կրկին են. այսինքն իմանալի և զգալի որք օրհնեն զարարիչն: - 637. Նմանապէս և ամենայն շարական **գ** տուն է, և հարցն **զ**. *զի* վեցն կրկին **գ** է: - 637. ...*զ'ի* քէն հայցեմքն

թէ առանձնապէս զմարդոյն, *զիա՞րդ* իցէ կենդանարար մարմինն մարդոյ. կամ ո՞րպէս առաքեցաւ նա ի հօրէ. *զիա՞րդ* իցէ և կենդանի վասն հօր: - 69. Իսկ թէ ըստ ինքեան զմարդկայինն, *զիա՞րդ* ունէր զփառս յառաջ քան զլինիլն աշխարհի. զի ինքն ի ժամանակի եղև: - 69. Իսկ թէ առանձնապէս մարդոյն, *զիա՞րդ* սոսկ մարդ իւրովի մեռանի, և իշխանութեամբ իւրով դարձեալ յառնէ: - 70. Էութիւն է և գոյացութիւն, և *զիա՞րդ* ո՛չ: - 86. Եւ *զիա՞րդ* բաժակաւ լրումն հանդիպեսցի կենդանաբուղխ ջրհորոյ: - 93. *Զիա՞րդ* միայն ի դէմս բանին իցէ այն՝ որ ի կերպարանս հօր է և հաւասար աստուծոյ: - 94. Եւ *զիա՞րդ* մարմին ի բնութենէն ադամայ՝ ներգործօղ բոլոր գոյից յանէին...: - 94. Իսկ եթէ շնորհօք, *զիա՞րդ* յետոյ ի ներգործութեանց ասես հանդիպիլ այնոցիկ: - 94. Զի թէ գոյացութիւն՝ և միաւորեալ է ընդ գոյացութիւն բանին, *զիա՞րդ* ո՛չ գիտէ զաստուածութիւն իւր: - 95. Ա՛րդ՝ եթէ պակա՛ս է շնորհք և իմաստութիւն նորա, մեք *զիա՞րդ* լիութեամբ առաք: - 97. Ապա *զիա՞րդ* պակաս լինի գիտութեամբ. ուսուցանօղն հրեշտակաց: - 98. Եւ թէ զհայր ո՛չ գիտէ, *զիա՞րդ* զբան նորա պահէ առ ինքեան: - 98. *Զիա՞րդ* առ հասարակ զօրութիւնք կոչին երկնայինքն...: - 137. Եւ աստ ասէ իրինոս՝ զի թէ յաւիտենական է հուրն, *զիա՞րդ* վախճան ածեն տանջանաց յաւիտենից ունայնախոհքն. թերևս կարծելով թէ ի հուրն մաքրեսցի. զի մի՛ լիցի աշակերտացն ճշմարտութեան խորհիլ և ասել: - 153. Եւ թէ ոք ասիցէ, ապա *զիա՞րդ* նոր եկեալքն ի հաւատս՝ թողեալք զկուռս և զամենայն չար՝ լինէին քահանայք և եպիսկոպոսունք. որպէս սուրբն կիպրիանոս: - 166. Երրորդ՝ զի արարածք՝ են ի գոյացական սեռէ, և ո՛չ ի պատահական. *զիա՞րդ* լինին պատահումն ի յարարիչն: - 169. Եւ զոր գիրք սուրբ ո՛չ է յայտնեալ, *զիա՞րդ* իշխէ մարդ խօսիլ: - 224. Եւ թէ մովսէսի ոչ հաւատայք որ փառաւո՛րն է ի մէջ ձեր, ինձ *զիա՞րդ* հաւատայք որ թշնամի կարծէք: - 405. Եւ թէ զդէմքն ո՛չ ծանեաւ, *զիա՞րդ* զխորհուրդն ճանաչէր: - 428. Ա՛րդ՝ թէ զխաբէութիւնն ո՛չ ճանաչէր, *զիա՞րդ* զճշմարիտ խորհուրդն գիտէր: - 428. Իններորդ՝ *զիա՞րդ* զարհուրեցաւ կինն յետ երդմանն, և անկաւ յերեսս մինչ քաջալերեաց սաւուղ և եհարց: - 428. Ա՛րդ՝ եթէ ծնօղն անապական է որպէս և է՛, *զիա՞րդ* ծնեալն ի նմանէ ապականացու լիցի. ապա ուրեմն անապակա՛ն է բանն աստուած ծնեալ մարմնովն: - 499. Եւ զապականացուն յանապականութիւն *զիա՞րդ* դատապարտէր: - 501. Եւ դարձեալ ասեմք. տէրն մեր՝ մարդեղութեամբն եկն զապականութիւն մեր յանապականութիւն փոխարկել. և *զիա՞րդ* ինքն կրէր զապականութիւն: - 502. Դարձեալ ասեմք թէ *զիա՞րդ* յետին. զի աբգար թագաւորն հայոց նախ քան զխաչն հաւատաց ի քրիստոս և երանեցաւ ի նմանէ: - 549. Եւ այն որ ի գլխաւորագոյնս ո՛չ ասի միաբանութիւն, և *զիա՞րդ* միաբանութիւն ասիցէ ոք զայս: - 552. ...և ապա՛ էջ հոգին ի մկրտեալն նորա. *զիա՞րդ* ի ձեռն կնոջ լինի տուեալ շնորհք հոգւոյն լուացմամբ ջրոյն: - 589. Ութերորդ, զի թէ զզենումն կենդանեաց ո՛չ ունին հրաման զենուլ ազգ կանանց որ է՛ խտրութիւն մարմնաւոր սրբութեանց. *զիա՞րդ* պատշաճի տալ հրաման կանանց ազգի մերձենալ ի կարգ հոգևոր սրբութեան: - 589. Որդի քրիստոնէին *զիա՞րդ* լինի մեղաւոր յորժամ սրբեալ է հայրն մկրտութեամբ: - 592. Թէ ամենեքեան յադամայ մեռան, *զիա՞րդ* ծնանին կենդանիք: - 592. Եւ դարձեալ ասեմք թէ՝ ամենայն հացն օրհնեցաւ այսօր. վաղիւն *զիա՞րդ* օրհնեն: - 597. Ասեմք առ այս նախ՝ ապա դու *զիա՞րդ* ասես թէ երթայ ի դժոխս: - 695. *Զիա՞րդ* վախճան ածեն տանջանաց ունայնախոհքն. թէրևս կարծելով թէ ի հուրն մաքրեսցին. զոր մի՛ լիցի աշակերտաց ճշմարտութեանն խորհիլ: - 703. Որք տեսչութեամբն աստուծոյ՝ ի մեռելոցն զառհաւատաչեայն ընկալան յարութեան, թէ *զիա՞րդ* ոչ ունէին ի մտի զանտի կենացն ծանօթութիւն. պատմել մեզ խնդրի: - 774. ...ասիցէ ոք, ապա *զիա՞րդ* ա՛յլք ի ծննդոց նորա որք ընդ նմա ի բանտէն ազատեցան, պատժապարտք գոլով...: - 775. Իսկ ի հանդերձելումն ապա *զիա՞րդ* թէ բազում անգամ զղջասցին ո՛չ գտանեն թողութիւն ասէ գիրն: - 778. Այսպէս և ժանգ յանցանաց մկրտելոց և քահանայից՝ բառնայ զգործ՝ կամ զնշանակութիւն շնորհացն. իսկ յետ սրբութեան զղջմամբ՝ *զիա՞րդ* կրկնի ունակացեալն ի նմա՛: - 782. Եթէ վարձատրելի է ասիցէ ոք, ապա *զիա՞րդ* որք ի հարկէ հաւատացին ո՛չ վարձատրեցան. որպէս դևքն ի հալածիլ. և որդիքն սկեւեայ. և սիմոն կախարդն. և այլք նման սոցին: - 783. Իսկ եթէ ոչ են վարձատրելի, ապա *զիա՞րդ* վասն նոցա անհնազանդութեանն անհնազանդ կոչի և ինքն որդի հօր: - 784. Թէ *զիա՞րդ* և որ ի ծիծաղելոյն արտասուքն քաղցր. և ի սրտմտութենէն աղի: - 786

***ԶԻԱ՛ՐԴ* +** Երրորդ՝ թէ արարած՝ *զիա՛րդ* կատարէ զմեզ լինիլ աստուածս յորդեգրութիւն հօր՝ աւազանաւն: - 51. Իսկ թէ և նա շնորհիւ ունի զորդիութիւնն, *զիա՛րդ* կարէ տալ ումեք զոր հազիւն հարստացաւ: - 67. Զի թէ ինքն ձևացոյց մարմին և շունչ և յարոյց զնա, *զիա՛րդ* ոչ ճանաչէր: - 428. Դու *զիա՛րդ* երկբայիս թէ ի յապականացու բութենէս ադամայ անապական բանն աստուած միաւորեաց ընդ իւր և ծնաւ անապական մարմնով: - 499

**ԶԻԿ +** Եւ ծնօտ՝ որ է՛ *զիկն* բոլորեալ. զիմանալի կերակուրն նշանակէ նոցա. զի ծնօտն գործի է կերակրոյ: - 344

**ԶԻ ՄԻ՛, ԶԻ ՄԻ՛ ԵՐԲԷՔ +** Ասելով թէ պատճառ ամենայնի՝ բարեաց և չարեաց մերոց ո՛չ մեք եմք, այլ է՛ առաջին պատճառն աստուած. որք փախչելով յառաջ ասացեալ բախտէ՛ և ճակատագրէ՛ աստեղացն, փոխանակ նոցա յառաջին պատճառն վերագրեն զիարկն. որպէս *զի մի՛* ասիցեն երկու սկիզբն ըստ մանիքոսի: - 13. Զորօրինակ ո՛չ է անզգուշագոյն յառել ի բոլորակս արեգական՝ զի շրտնու և ի սակաւուն զոր ունի. ըստ այսմ խնայեաց աստուած ի յազինս մարդկային, *զի մի՛* կրիցեմք զկիրս զանկելոյ արուսեկին. որ ո՛չ կարացեալ տանիլ մեծութեան փառացն՝ զրկեցաւ և ի չափաւորէն: - 24. Չորրորդ՝ *Զի մի՛* է տէր մեր և աստուած մարմնով՝ ի գլխով: - 30. Վեցերորդ՝ հակառակէ քրիստոսի՝ և քրիստոնէից. և սոքա հակառակին սուրբ եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ. և զոր բանն աստուած առեալ զմարդկայինս բնութիւն միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն՝ սոքա ընդդէմ նմին որոշեն զբանն ի մարմնոյն. *զի մի՛* իցէ աստուած մարդացեալ ըստ նոցա՝ և մարմինն աստուած. և պատճառս հայթայթելով պատրեն զմարդիկ: - 35. Նոյնպէս և վասն սոցա յառաջագոյն ասացաւ յառաքելոց և ի վարդապետաց. *զի մի՛* յանգէտս խոտորեսցին ընդ նոսա: - 35. Եօթներորդ՝ զի չարչարանօքն իւրովք յուսադրեաց զմեզ, *զի մի՛* յետ տկարութեանս և սակաւ չարչարանաց ի փորձողէն՝ կասեսցուք ի նահատակութեանց. այլ օրինակ դիցուք զչարչարիլն նորա մեզ և համբերեսցուք որպէս աւէ: - 43. Չորրորդ՝ այսու առաւել զմիակամութիւն ցուցանէ. *զի մի՛* է կամք իւր և հօրն. վասն այն ո՛չ կարէ առանց հօր. զի ո՛չ է որդւոյ այլ կամք զի զոր ինչ կամեսցի բաց ի հօրէ արասցէ: - 45. Նախ՝ *զի մի՛* շփոթեսցին բնութիւնքն ի միաւորութիւնն որպէս ասաց եւտիքէս: - 76. Երկրորդ՝ *զի մի՛* չարչարեալ լիցի աստուածային բնութիւնն ընդ մարդկութեանն: - 76. Երրորդ՝ *զի մի՛* Երրորդութիւնն մարմնացեալ երևեսցի: - 76. Որև ըստ այսմ պարտին նոքա ուրանալ և զանհատ բնութիւնս մարդկութեան նորին. *զի մի՛* հասարակ մարդկութիւնս միաւորեսցի: - 76. Եւ թէ՝ մի ասեմք զտէր մեր յիսուս քրիստոս. և մի զբնութիւն նորա. *զի մի՛* է բնութիւն բանին մարմնացելոյ: - 76 - 77. Զի՞նչ է ասելն աստուածաբանին, այլ և այլ ընդ նմին Երրորդութեանն ունի. քանզի՝ անդ այլ ոմն է և այլ. *զի մի՛* զդէմսն խառնակիցեմք: - 80. *Զի մի՛* զդէմսն, այսինքն զանձինսն շփոթիցեմք: - 80. *Զի մի՛* յատկասցին **բ** անձինք ի քրիստոս. *զի* թէ **բ** բնութիւն բաժանեմք ի հարկէ երկու անձն բաժանի: - 84. Ապա ուրեմն յայտնապէս նոքա ուրանան զայս, և ասեն թէ՝ ձեռքն քրիստոսի ոչ է աստուած. և գլուխն քրիստոսի ո՛չ է աստուած. և այլն. *զի մի* բազմաստուածք լիցին: - 91. Ասեմք նախ եթէ՝ ո՛չ է աննման. *զի մի* իրն լինի բոլոր և լինի մասն՝ առ այլ և այլս: - 92. Եւ դարձեալ՝ *զի մի՛* կարծի միայն յանմարմնութեանն պատկեր հօր, ի վերայ էած և ի լինելութեանն հաւասար աստուծոյ գոլ նովին մարմնովն առանց յափշտակութեան: - 93. Նախ՝ *զի մի՛* կարծեսցի հայր տկար վասն ծերութեան: - 105. Դարձեալ՝ որ զամենայն ստեղծ՝ հայր կոչի. և որ զամենայն պարունակէ՛ *զի մի՛* լուծցին՝ որդի. և որ շնչելով կենագործէ և զարդարէ զամենայն՝ հոգի սուրբ յորջորջի: - 108. Երրորդ՝ է՛ գործ նախախնամութեան. զի ըստ ընտանի կարողութեան իւրեանց՝ համեմատապէս զպարգևս ընկալցին. *զի մի* վնասեսցին փոքունքն մեծամեծօք. և թերի մնացին մեծամեծքն սակաւուք: - 130. *Զի մի՛* է ձայնն յառաջ եկեալ յասողէն. իսկ լսօղք՝ առաւել և նըւազ ընդունին: - 131. Քանզի դևք ո՛չ են ի վերին մասն օդոյն, *զի մի* խնդասցեն լուսովն. և ո՛չ ի ստորին մասն, *զի մի՛* առաւել վնասեսցեն զմարդիկ: - 146. Եւ գործոյն որ ունին կրթել զմարդիկ՝ յարմարի օդն որ է՛ մերձ առ մեզ փորձելոյ զմեզ. այլ ո՛չ ի լոյս. *զի մի* ուրախասցին: - 146. Վասն է՞ր ո՛չ ստեղծ զնոսա այնպէս *զի մի՛* կարիցեն մեղանչել: - 149. Այլ ետ նոցա անձնիշխան կամս՝ զի կամովին ընտրեսցեն զբարին և արդարապէս զհատուցումն ընկալցին *զի մի՛ երբեք* մեղանչել կարիցեն: - 149. Եւ աստ աւէ իրինոս՝ զի թէ յաւիտենական է հուրն, զիա՞րդ վախճան ածեն տանջանաց յաւիտենից ունայնախոհքն. թերևս կարծելով թէ ի հուրն մաքրեսցի. *զի մի՛* լիցի աշակերտացն ճշմարտութեան խորհիլ և ասել: - 153. Երրորդ՝ զի առնելն ի սկիզբն նայի ստեղծեալ իրին զի լինիցի. և նախախնամելն ի կատարածն *զի մի՛* կորիցէ: - 158. Երրորդ՝ որպէս պօղոսի տուաւ խայթ մարմնոյն *զի մի՛* զ'ի վերուստ առեալ շնորհն և զօրութիւն՝ հպարտութեամբ լքանիցէ...: - 158. Որպէս եղև առ մարիամ բորոտութիւն վասն բանբասելոյն զմովսէս. որ աստ սակաւ ինչ տանջեցաւ, *զի մի՛* ելցէ յերկնից ժառանգութենէն: - 159. Արդ ներքին է՝ որ ի փափկութեանց և ի հեշտութեանց փորձի բնութիւնս մեր և այլայլի ի զանազան տեսակս մեղաց. զոր պա՛րտ է հանապազ աստուածային խնամոյն՝ *զի մի՛* թողցէ յայսպիսի փորձութիւնս զմեզ ընկղմիլ: - 160. Երրորդ՝ աստուած փորձէ՛ և տայ զելն՝ *զի մի՛* յուսահատեսցի. և սատանայ փորձէ և ծանծրացուցանէ զի ընկեղմեսցին: - 161. Նախ՝ *զի մի՛* անձնիշխանութիւնն բարձցի ի մէնջ: - 161. Յաւատոյն յատուկ է՝ *զի մի՛* անգամ է, և կնի՛ք է ի հոգին նախկին: - 166. Նախ՝ վասն *զի մի՛* ջերմութիւն լուսաւորացդ կիզցէ զերկիր և վնասեսցէ: - 207. Նա՛խ՝ զի արարիչն աստուած բնական զծովս աղի և դա՛ռն արար. *զի մի՛* հոտեսցին կենդանիքն ի նմա: - 208. Երրորդ՝ զիաւատն որ է գլուխ՝ պահեսցէ, *զի մի՛* մոլորեսցի զհետ հերձուածողաց: - 218. Չորրորդ՝ *զի մի* իցէ նեղասիրտ և տառապեալ բարուք տեսանելով զինքն ի

չքաւորութեան ստեղծեալ. այլ տեսցէ զամենայն կատարեալ. զի արձակ և առատ բարուք սնանիցի և վայելեսցէ: - 230. Ութերորդ՝ ո՛չ արար նախ զմարդն, *զի մի՛* արարչակից գիտասցէ զինքն ոչ գոյիցն, և անկցի հպարտութեամբ...: - 231. Վեցերորդ՝ սեաւ պտուղն. *զի մի՛* վնասեսցէ զտեսութիւնն սպիտակն: - 239. Զի ուղեղն ի մէջն սնուցանէ զոսկրն. և ջիլն կապէ՛ առ միմեանս *զի մի* քակտեսցին ոսկերքն. և արիւնն կերակո՛ւր է նոցա: - 240. Ունականն է՝ յորժամ ժողովէ զկերակուրն՝ ձկտի և լայնանայ և փակէ՛ զամենայն դրունսն որ ի ներքոյ և ի վերոյ և ի կողմանէ, *զի մի՛* թափեսցի կերակուրն: - 242. Այսպէս ի սեաւ մաղձէն լինի արտասուքն աղի, *զի մի՛* հոտեսցի ակն որպէս ցուցաւ նախ: - 243. **Հինգերորդ՝ ի յուսումն խոնարհութեան մերոյ. զի տեսանելով զմեզ տկար քան զանասունս, մերկ և աղքատ ի մօրէ ծնեալ, խոնարհեալ զիջանիմք ի հնազանդութիւն արարչին. և *զի մի՛* եկամուտ հպարտութեամբ կրեսցուք զանկումն արուսեկին:** - 267. Նա՛խ՝ *զի մի՛* համեմատ առն կարծիցէ զինքն. այլ որպէս ոչ համահասակ և ոչ համահող լիցի: - 276. Երկրորդ՝ *զի մի՛* անփոյթ և անհնազանդ եղիցի մարդոյն. այլ ի նմանէ՛ ի կողիցն, զի որպէս մարմին հնազա՛նդ լիցի գլխոյն: - 276. Չորրորդ՝ *զի մի՛* տկար ոք կարծիցի. այլ որպէս կողե՛ղ և հաստակող ասեմք զըմբիշս. այսպէս զօրեղ եղիցի կինն ի տնօրինել զտունն: - 276. Զանէծքն ո՛չ յինքենէ ասաց *զի մի՛* սատակեսցի. այլ յերկիր ետ որ է՛ զէն մահու և չարչարիչ՝ և գերեզման յետոյ: - 287. Երրորդ՝ ասէ չտայ զզօրութիւնն, *զի մի՛* դադարեսցիս ի գործելոյ: - 287. Առաջին պատճառ, *զի մի՛* և այլոք համարձակեսցի: - 288. Չորրորդ՝ զի **բ** արձան կանգնեաց պղնձի և խեցի և արար գիր. և զոր ինչ ադամ անուանս եդ իրաց, զամենայն գրեաց ի նոսա. *զի մի՛* այլայլեսցին ի գնչուտ և ի լեզուատ արանց: - 289. Եւ այս ևս գիտելի է, զի զվերանալն եղիայի ետես եղիսէ, *զի մի՛* ասիցեն թէ սպանաւ յեզաբէլէ՛: - 290. Նոյնպէս և զփոխումն ենովքայ տեսին եղբարքն ուստերքն և դստերք նորա. *զի մի՛* ասիցեն թէ սպա՛ն զնա՛ կուրացեալն ղամեք թոռն կայենի: - 290. Վասն որոյ փութացաւ աստուած և փոխեաց զէնօք, *զի մի՛* սպանցեն և ասիցեն թէ փոխեցաւ յերկինս: - 290. Զայս ասէ գիրն եթէ՝ չորեքանկիւնի էր՝ *զի մի՛* շրջեսցի: - 293. Եւ նաւթն կո՛ւպրն է ներքոյ և արտաքոյ ծեփեալ *զի մի՛* վնասեսցի: - 293. **Տասներորդ՝ արիւն ուտել գազանա՛ց է հմակերաց. *զի մի՛* լիցուք անողորմ և գազանասիրտ՝ հրամայէ՛ զարիւնն հանել և զանզգայ մարմինն եփել և ուտել:** - 295. Եւ *զի մի՛* մարդիկ ի պատճառս նորա մեղս գործեսցեն. վասն որոյ ո՛չ կարէին տեսանել զտապանն: - 296. Ապա՛ ասեն՝ շինեսցուք բարձր աշտարակ *զի մի՛* ջրհեղեղն զմեզ կորուսցէ: - 296. Ասեն վարդապետք եթէ հողմն հնչեաց և ցրուեաց զաշտարակն. *զի մի՛* փլուցեալ վնասեսցէ զմարդիկ: - 298. Երկրորդ՝ *զի մի՛* միաբանեալ ի չարն անզղջապէս գործեսցեն: - 298. Եւ երրորդ՝ *զի մի՛* վասն աշտարակին ի նոյն տեղին մնասցեն՝ և աշխարհ ամենայն աւերակ կացցէ: - 298. Երկրորդ՝ զի գեղեցիկ էր՝ *զի մի* ի պատճառս նորա սպանցեն զդովտ: - 303. Իսկ զի հրամայէ՛ երից աւուրց ճանապարհ տանել, *զի մի՛* ապշեալ ինչ կարծեսցի: - 304. Եւ զի ո՛չ ասաց սառայի զիրն. *զի մի՛* մայրական աղետիւ խափա՛ն լիցի գործոյն: - 304. Հինգերորդ՝ *զի մի՛* երազ և առ աչօք համարեսցի տեսիլն: - 311. Եօթներորդ՝ *զի մի՛* հպարտասցի ի գօտէմարտիլն՝ կաղ առնէ զնա: - 311. Իններորդ՝ ի յանդիմանութիւն բնութեան մերոյ. *զի մի՛* կարծեսցէ թէ առաքինութեամբն և սիրովն առ աստուած՝ հաւասարիլ կարէ՛ սիրոյն աստուծոյ որ առ մեզ. այլ կաղ գտանի: - 311. Երրորդ՝ զի զազգաւն զազգակիցն մխիթարէր և ո՛չ խնդրէր բժիշկ. *զի մի՛* ի մարդկանէ լիցի օգնութիւն նմա: - 323. Վասն երկրորդին հակառակէր ընդ նոսա, *զի մի՛* սուտ լիցի վկայութիւն աստուծոյ ի վերայ նորա. զի և մեք ուսցուք՝ վասն վկայութեանն աստուծոյ այնչափ նախատինս յանձն առնուլ և ո՛չ ուրանալ. որպէս վկայից դասքն նահատակեցան: - 324. Երրորդ՝ *զի մի* հպարտասցի յետ յաղթութեանն սատանայի, խօսեցաւ աստուած և յաղթեաց բանիւ. զի տեսցէ զտկարութիւն իւր և խոնարհեսցի: - 325. Նա՛խ՝ զի անհաւա՛ն էր ժողովուրդն և անկատար, զգալի տեսլեամբ և ձայնիւ զարհուրեցոյց. *զի մի՛* մոռասցին. այլ հաւանեսցին և ի միտ պահեսցեն: - 341. Նա՛խ՝ հրամայեաց աստուած գրել զլինելութիւն աշխարհի. և ձևացոյց ի միտսն մովսէսի. *զի մի՛* մոռասցին հանգամանքն. վասն որոյ զգալի խորան հրամայէ կազմել: - 342. Եւ **ժե** կանգուն բարձր. *զի մի՛* երևեսցի խորանն: - 343. Չորրորդ՝ *զի մի՛* ջնջեսցի ի հրոյ կամ ի ջրոյ ի քարի՛ գրեաց: - 349. Նա՛խ եթէ՝ դո՛ւ աշխատեաց ի գործն, զի հաստատ պահեսցես. *զի մի՛* դիւրաւ արհամարհիցի: - 350. Նա՛խ՝ *զի մի* պակաս երևեսցի քան զհեթանոսս, խտրէին զմարմնոյ արատն: - 370. Ի խոստման աւետիսն ծե՛ր էր աբրահամ, և կինն ամուլ. *զի մի՛* անյուսասցին ի բնութիւնն նայելով. այլ ի բանն աստուծոյ որ ամենազօ՛ր է. վասն այն ասացաւ անթիւ լինիլ զաւակացն. և եղև այնպէս: - 377. Նա՛խ՝ *զի մի՛* խօսեսցի դևն և չարիս ուսուսցէ: - 387. Նա՛խ՝ *զի մի՛* հպարտասցի բաղաամ. զի և էշն ետես զհրեշտակն: - 388. Երրորդ, զի ողորմեցաւ աստուած անբանին *զի մի՛* հարկանիցէ անողորմ...: - 388. Երկրորդ՝ *զի մի՛* չար խրատ տացէ: - 388. Գլուխն նշանա՛կ է մտաց. զոր չէ պարտ յաւելուլ՝ և ո՛չ պակասել. որպէս մուրճ ո՛չ գործէր ի սեղանն *զի մի՛* պղծեսցի: - 390. Երրորդ՝ զառաջինն հարցն ետ որ սատակեցան. զերկրորդն որդւոցն տայ, *զի մի՛* լիցին

չար և դառնացող որպէս հարքն իւրեանց: - 393. Նախ՝ *զի մի* սնուցիչն լիցի եփիչ նորա: - 399. Եւ կամ այն թէ՝ «ութնօրեայ թլփատեցես զմանուկն և մի պակաս». *զի մի* ճիչ տղային չարչարեսցէ զգուք մօրն: - 399. Եւ հայրազեղծն որ հարկանէր զծնօղ, զանիծից փայտէ կախէին, և ի նոյն օր ի գերեզման իջուցանէին *զի մի* պղծեսցին: - 400. Եւ այս վասն խստասրտութեան նոցա *զի մի* սպանումն լիցի: - 400. Մովսէսին պատճառն վասն խստասրտութեան նոցա է որպէս տէրն ասաց. *զի մի* սպանումն լիցի: - 401. Իսկ որ զարձակեալն առնուին, և յառաջին բաժանեալն ո՛չ տային, վասն երկիւղի առն և կնոջ էր, *զի մի* լիցին պատճառ բաժանման: - 401. Չորրորդ՝ *զի մի* ամենևին օտարեսցին: - 402. Հինգերորդ՝ *զի մի* պատճառեսցեն չգիտելն: - 402. Չորրորդ՝ մարմին կենդանեաց որ առաւել պարարտ է քան զամենայն. վասն այն ի մսոյ հատանին պարկեշտք. *զի մի* առաւել գիրասցին և գազանասցին: - 407. Նախ՝ *զի մի* արհամարհիցեմք զսաստն. իբր թէ սուկ բանք են: - 408. Եւ անջրպետեալ ի մէջ ժողովրդեանն և մարմնոյն շուրջանակի. *զի մի* իմասցեն զքաղումն նորա: - 410. Չորրորդ՝ տեսեալ զմովսէս առաւել փառաւորեալ, և յետ վախճանին թոյլ ետ ներողութիւնն աստուծոյ ժպրհիլ բանսարկուին ստգտանօք մեղաց. *զի մի* տացեն նմա զգերազանց պատիւն աստուած կարծելով: - 410. Նախ՝ *զի մի* արհամարհեսցի աստուածն մեռեալ: - 411. Երրորդ՝ *զի մի* ժողովուրդն կանգնեսցէ արձան ի վերայ նորա ըստ սովորութեան երկրին: - 411. Չորրորդ՝ *զի մի* ծովացի վերին կողմ երկրին և վնասեսցին: - 414. Հինգերորդ՝ *զի մի* ընդ դառնալն ի վայր՝ ողողեսցէ զներքին կողմ եզերաց գետոյն: - 414. Երկրորդ՝ *զի մի* անբանքն՝ աստուծոյ պատւականք երևեսցին քան զբանականքս: - 416. Նախ՝ *զի մի* փախիցեն թշնամիքն. զի ընդ երեկս էր: - 416. Եւ դարձեալ՝ *զի մի* հեռասցի մասն երկնից ընդ որում էին լուսաւորքն: - 416. Երկրորդ՝ *զի մի* զատեսցին ի ժողովրդենէն. այլ ի քաղաքս ապաստանաց սփռեսցին և ուսուսցեն զնոսա: - 417. Երկրորդ՝ *զի մի* ի պատճառս նորա չարիս գործեսցեն. որպէս ասէին «տաճար տեառն առ մեզ է». և զանօրէնութիւնս առնէին: - 425. Նախ՝ *զի մի* համարեսցեն այլազգիք թէ դիքն իւրեանց առաջի ընթացան և զլուխ եղեն զօրացն և հարին զպատերազմն: - 425. Երրորդ՝ զի ո՛չ էր քահանայ. վասն որոյ յետոյ ասէր դաւիթ ցքահանայսն, դո՛ւք ղևտացիքդ սրբեցէք և բարձէք զտապանակն. *զի մի* լիցուք որպէս զոզիա: - 431. Նախ՝ *զի մի* մարդիկ յանդիմանեսցեն չարք և անողորմք. այլ աստուած յանդիմանեաց և ողորմեցաւ: - 432. Երկրորդ՝ *զի մի* կրեսցէ զյաւիտենական պատիժն: - 432. Չորրորդ՝ *զի մի* նախատ լիցի ծնողացն: - 433. Երկրորդ՝ որպէս թուեաց դովեկ զքահանայսն *զի մի* զերծանիցեն ի սրոյն. նոյնպէս և այս վասն քահանայիցն վրէժխնդրութեան էր. զի կամեցաւ ժողովուրդն փրկել զնոսա: - 434. Երկրորդ՝ *զի մի* սովորութեամբ գիտասցէ և զայլ կոյսս: - 439. Նախ՝ զի հեզութեամբ և քաղցրութեամբ մեծարեաց զնա *զի մի* սովեսցի և մեռցի: - 443. *Զի մի* սպանցեն զեղիայ յայնժամ: - 443. Նախ՝ *զի մի* զարհուրեսցի երուսաղէմ տեսեալ զսուրն որ կոտորեաց զնոսա: - 446. Երկրորդ՝ *զի մի* ոք փախիցէ: - 446. Երրորդ՝ *զի մի* կարծեսցեն թէ յինքեանց անկան սրով. այլ ի հրեշտակէն: - 446. Չորրորդ՝ *զի մի* վստահամբաւ լիցի ընդ ծնանելն իբր ոչ ունելով այր: - 461. Հինգերորդ՝ *զի մի* դատապարտեսցի իբր անժուժկալ. զի էր ի քահանայական ցեղէն. և այսպիսիքս այրեալ լինէին. իսկ այլ շնացօղք քարկոծեալ: - 461. Ութերորդ՝ *զի մի* հրէայքն համարելով զքրիստոս ո՛չ ունելով օրինաւոր ծնունդ՝ երևեսցին յիրաւի ի հալածելն զնա: - 461. Իններորդ՝ *զի մի* երևեսցի տէրն հակառակ օրինացն որ գովէր զպսակն: - 461. *Զի մի* յօրինաց, այլ ի շնորհացն քրիստոսի իմասցուք զարդարութիւն և զփրկութիւն մեր: - 467. Իններորդ՝ վասն հաստատ ժառանգութեան խոստացելոյն. *զի մի* ասիցէ ոք ցհայր, տէր դու ունիս որդի և ժառանգ: - 468. Երկրորդ՝ *զի մի* ապականութիւն կրեսցէ մարմին բարձողին զապականութիւն: - 470. Երրորդ՝ *զի մի* հցէ ի ներքոյ սկզբնական մեղաց: - 470. Երրորդ՝ *զի մի* հցէ ըստ հասարակաց կարգի. այլ ի վեր քան զբնութիւն որպէս ասացաւ: - 470. Նախ՝ *զի մի* անընտել թուիցի մարդկան. զի թէ առ ժամայն ի ծնունդն եղեալ էր երեսնամեայ հասակաւ, առ աչօք համարէին զիրն. և կամ այլ ինչ: - 479. Հինգերորդ՝ *զի մի* կարծիցի հակառակ ընդ դէմ օրինացն աստուծոյ...: - 485. Ութերորդ՝ զի թլփատութեամբն զինքն եղբայր հրէիցն ցուցանէր. ըստ այնմ «մարգարէ յարուսցէ ձեզ տէր յեղբարց ձերոց». *զի մի* մերժեսցեն զնա իբրև զօտար և ոչ վկայեալ ի մարգարէիցն: - 485. Եւ *զի մի* տեսցեն անարժանքն: - 490. Զի որպէս յեսու աւերեաց զերիքով և անէծ *զի մի* շինեսցի. նոյնպէս և զժոխքն աւերեաց քրիստոս և անէծ զշինօղսն չար գործօք...: - 504. Այլ դաւանութիւն նոցա այս է. որպէս *զի մի* լիցի ըստ նոցա աստուած մարդացեալ. կամ մերս բնութիւն ընդ աստուածութեանն միաւորեալ. որպէս ընդարձակապէս ցուցանէ աստուածաբանն կիւրեղ ի գիրս պարապմանց: - 552. Վասն որոյ և տէրն յորժամ ասաց զցանկութիւնն շնութիւն, յաւել ի վերայ թէ՝ «ի սրտի իւրում». *զի մի* կարծեսցի մարմնական շնութիւն, այլ հոգեկան և մտաւոր. ապա ուրեմն կատարեալ է մեղք մտացն: - 556. Երկիւղ է հոգևորապէս փախուստ ի չարէն. *զի մի* կորուսանիցէ զայն զոր սիրէ: - 582. Ապա

դուք բարուք առնէք չտալ հաղորդ ժողովրդեանն *զի մի՛* յուդա լիցին: - 598. Դարձեալ զգուշացի *զի մի՛* յամօթէ՛ կամ երկիւղէ՛ քահանային յուսահատութեամբ ծածկէ զմեղքն. - 601. ...այլ ապաշխարութիւնն ցանկ է և պարիսպ ապագային *զի մի՛* ևս գործեսցէ: - 602. *զի մի՛* ննջեսցես ի մահ. նոյնպէս և այլ զգայութեանցն ըստ իւրաքանչիւր աստիճանին ասէ: - 604. ...*զի մի՛* համարձակեսցին քահանայք և զծէք օրհնելն վերստին մուծցեն յեկեղեցիս մեր: - 605. Այլ ի մեծի ե շաբաթին օրհնեմք իւղ, *զի մի՛* մեռոնն սուրբ ի հասարակաց ոտս մերծեսցի: - 605. Իսկ խորհուրդն այն է, *զի մի՛* բաժանեսցին: - 610. ...և ո՛չ է աստուածային հրաման, այլ առաքելական ներումն ի դեղ անժուժկալութեան. *զի մի՛* ի պոռնկութեան անդունդս կործանեսցին: - 613. Իններորդ սրբեմք, զի բնակելոցս ի սմա և պաշտօնէիցս պա՛րտ է սուրբ լինի *զի մի՛* պղծեսցեն զսրբութիւնսն: - 615. Հինգերորդ զգուշանամք, *զի մի՛* ոչխարանոց լիցի եկեղեցի և գոմ: - 617. Ասեմք թէ՝ *զի մի՛* սովորեսցին և զպատուաւորս և զբռնաւորս և զայլս թաղեսցեն: - 617. ...*զի մի՛* լիցի այն ի մեղս կամ ի մահ: - 656. *Զի մի՛* միայն ողորմութեամբ՝ այլ և արդարութեամբ վայելեսցուք: - 663. *Զի մի՛* դիւրաւ գտեալ՝ դիւրաւ արհամարհելի լիցի: - 663. Չորրորդ նախախնամութեամբ. *զի մի՛* հպարտասցին. որպէս խէթն առաքելոյն պօղոսի: - 665. Եւ *զի մի՛* մարդիկ թիւրեսցին արտաքոյ բնութեանս լեալ: - 665. ...*զի մի՛* ծեռնամուխ լիցի ի նա թշնամին...: - 672. Երկրորդ, *զի մի* տեսցուք զգարշութիւն մարմնոյս...: - 677. Երրորդ, *զի մի՛* կոխան լիցի կամ կերակուր գազանաց որպէս շաղիղ անասնոցն: - 677. Չորրորդ, *զի մի՛* լիցին փողոցք և տունք մեր գերեզմանատուն մեռելոց...: - 677. Հինգերորդ, *զի մի՛* ի զազիր հոտոցն և որդանցն գարշեսցուք և թողցուք զշէնս աւերակ: - 677. Եօթներորդ, *զի մի՛* յարաժամ տեսցեն կենդանիքն և մոռմոքեսցին սիրտք նոցա: - 677. Ութերորդ, *զի մի՛* դատարկասցին ի մարմնական գործոց միշտ տեսանել զմեռեալս: - 677. Իններորդ, *զի մի՛* պաշտեսցեն զդիս մեռեալ սիրելեաց իւրեանց...: - 677. Իսկ տապանաքարն, Նա՛խ՝ *զի մի՛* գործեսցի երկիրն այն յայլ ինչ գործ, կամ քակտեսցի վասն այլ մեռելոյ: - 679. Նա՛խ՝ *զի մի՛* շարժեսցէ զնա այսն չարութեան որպէս զմարմին անհաւատից: - 679. Իսկ մեծատունն վասն եղբարցն աղօթէր, *զի մի՛* տանջանքն իւր առաւելասցի վասն նոցա: - 685. Ահա՛ ժամանակ ընդունելի. ահա՛ օր փրկութեան. մի և մի իւիք տայցէք պատճառս. *զի մի՛* արատեսցի պաշտօնն: - 698. ...և ընդ դէմ խօսեսցի աւետարանին և արգելուցու զուղղափառ վարդապետս *զի մի՛* քարոզեսցեն: - 708. Եւ այսպէս հսկել և պահել զտունս մեր, *զի մի՛* գող մահուն և կատարածի՝ գտեալ զմեզ անպատրաստ ի մեղս՝ տանիցի զհոգիս մեր ի տանջանս յաւիտենից: - 730. Նա՛խ՝ տեսանեն զմարդկութիւնն զի երկիցեն. և մի՛ զաստուածութիւնն *զի մի՛* խնդասցեն. զի սրտմտութեամբ հայի ի մեղաւորս...: - 741. Ապա առաւել նոքա որք չարչարեցին. *զի մի՛* այլ և այլ կարծեսցեն: - 741. Այլ *զի մի՛* իրողութիւն դատաստանին և յարութեան ուրուական և առ աչօք թուեսցի ընդհանուր ամենայն մարդկան, վասն որոյ ասեն վարդապետք ի յարութենէն մինչ ի գալուստն և քննութիւնն և հրով նորոգիլն և այլն՝ յերկարի միջոցաւ որքան ժամս **զ**: - 747. Չորրորդ առ այն որ եղիցի ընդդէմ ինքեան. *զի մի՛* յումեքէ կարիցէ վտանգիլ: - 764. Որպէս ասեն վարդապետք, յագեալ ցանկասցուք, *զի մի՛* յագեցումն ծնսի զտաղտկութիւն. ցանկացեալ յագեսցուք, *զի մի՛* ծանձրութեամբ իցէ ցանկութիւնն: - 766. Խնամք մարդասիրութեանն աստուծոյ որ զամենայն յամենայնի տընօրինէ՛, արգել զայս. *զի մի՛* ունիցին ինչ ի մտի յարուցեալքն ի մեռելոց. ապա թէ ոչ, որ ի սկզբանէ բարէատեացն էր և մարդասպան, բազում և զանազան երևոյթս...: - 775. Իսկ արտասուքն աղի և ջրատեսակ. զի բարեխառնեսցէ մինն զջերմութիւն հրոյ, և միւսն՝ *զի մի՛* նեխիցին պարուտակք աչաց. շրջապատեալ երակացն լուսոյ: - 786

**ԶԻՆԱՒՈՐ +** Եւ տէր մեր ի նոյն այրին յազգէ նոցին ըմբռնեալ. և ի *զինաւորս* պիղատոսի մատնեալ: - 423. Զի առաջակայք եղեն քրիստոսի, աթոռակիցք և *զինաւորք* նորա...: - 647

**ԶԻՆԻՄ +** Ուստի հեշտութիւն և աւանդութիւն յիրաւի խառնեալ ընդ միմեանս, և հակառակասիրութիւն և ինքնահաճութիւն յառաջ եկեալ, որով *զինեալ* պնդին ընդդէմ ուղղութեան. զի կարծեն զինքեանս ճշմարիտ գոլ քան զայլսն: - 33. Իսկ սուրբն կիւրեղ ընդ դէմ նեստորի *զինէր*. որ ասէր բնակութեամբ զբանն ի մարմնի. և նախ զմարդն ծնեալ ի կուսէն և շրջեալ ի յերկրի, և յետոյ բնակեալ բանն աստուած յետ մկրտութեանն. և յետ յարութեանն փառաւորեաց զնա և զօրացոյց յարակցութեամբ ընդ ինքեան: - 79. Եւ այժմ *զինեսցուք* առ քեզ՝ քոյին բանիւ. որպէս դուդ ասես՝ շնորհօք տըւաւ մարդոյն այն անուն օծութեան և որդիութեան և տէրութեան և իշխանութեան: - 94. Իններորդ՝ զի ինքն սատանայ ունի բնութիւն և մեղք և պատիժ. բնութեամբ աստ *զինի*. և մեղօք յետոյ. և յարութեանն պատժակից իւր առնելով: - 394. Դարձեալ զհերձուածօղս և զհեթանոսս. որք ընդ դէմ հաւատոց և գործոց *զինին*: - 539

**ԶԻՆՈՒՈՐ +** Իններորդ՝ նահատակադիրն քրիստոս է փրկիչն ամենեցուն. և ամենայն սուրբք *զինուո՛րք* նորա. պարտին և *զինւորքն* զօրավարին նմանիլ և նահատակիլ...: - 159. Եւ մտանէ ի կարգ *զինուորաց*. վասն որոյ մովսէս ի ի ամենիցն ի վեր թուէր *զզինուորսն*: - 265. Ընդ որովք *զինւորք* ճգնաւորք. ընդ նոսին

և կուսանք և մարտիրոսք: - 347. Հինգերորդ՝ թիւն զընտրութիւն՝ զդաս՝ և զկարգն ցուցանէ. զի գո՛յ ի նմա՛ առաջին միջին և վերջին. որպէս *զինւորք*. իսկ անթիւն խոտան և անկա՛րգ է. որպէս ծերք և տղայք: - 377. Եւ պակասն ի գիտութեանց բանին, և կնատքն և բղջախոհքն ո՛չ կարգին *զինուորք* աստուծոյ: - 377. Վասն զի մարմնոյ *զինւորն* ի ամեայ էր. զե ամն յաւել ի հոգևոր *զինւորսն* վասն ե զգայութեանցն: - 379. Եւ այսպէս բաժանեսցեն զաւարն. ի **ճէ**ն զմինն տայցեն քահանայապետին. և յիսնէն զմինն քահանայից և աղքատաց. և հնգէն զմինն թագաւորաց բաժին. և կէսն աւար բերողացն է *զինւորացն*. և կէսն այլ հեծելիցն. որպէս բաժանեաց մովսէս: - 390. Քսանգ, զօրավար կարգեցաւ դաւիթ. և տէր մեր գլուխ *զինւորաց* եկեղեցոյ: - 436. Չորրորդ՝ թլփատեցին զնա հրէայքն՝ ի չարչարանս՝ սրով խաչին. և զայս *զինուորքն* պիղատոսի: - 486. Եւ սոքա են սուր երկսայրիք տուեալ ի ձեռս քահանայից *զինուորաց* քրիստոսի. զի յաջ և յահեակ հարցեն. այսինքն զսատանայ և զչարսն ի մարդկանէ որք հակառակին բարեաց: - 538-539. Այլ գիտելի է, զի քահանայն *զինուո՛ր* է. ոչ զոր ինքն կամի և ախորժէ զայնս կապէ և արձակէ. այլ զոր հաճո՛յ է զօրավարին քրիստոսի: - 539. Եօթներորդ պսակն. որ է՛ խորհուրդ նոր *զինուորս* ի ներս մուծանելոյ ի ձեռն մարմնաւոր ծննդեան: - 587

**ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ +** Առաջին արքայութիւնն է բանն անճառելի: Երկրորդն խորանն *զինուորական*: Երրորդն հոգւոյ զմայլումն: Չորրորդն երկոցունցն ծայրագոյն միաւորութիւն: Յառաջնումն ողորմութիւն գտանեմք: Յերկրորդումն պանդխտանամք: Յերրորդումն իմտանամք: Ի չորրորդումն ի փառս թագաւորելոց եմք: - 755

**ԶԻՆՈՒՈՐԻՄ +** Որ օրհնեաց *զզինուորեալ* ռուբէնեանսն և արձակեաց ի տեղիս իւրեանց. որպէս ասէ «եկա՛յք օրհնեալք հօր իմոյ»: - 419

**ԶԻՆՈՒՈՐՈՒԹԻՒՆ +** Տասն ամն մանկութեան է. և ի՝ պատանեակ *զինուորութեան*. և **իը**՝ երիտասարդութեան որ է՛ **դէ**: - 343

**ԶԻ՞ՆՉ +** Այլ մեք *զի՞նչ* առ այս: - 8. Նախ՝ եթէ լինէր բանս մեր ի հարկէ ճըշմարիտ, նա ո՛չ մինն միայն, այլև ամենայն բան *զինչ* ասէաք՝ ճշմարիտ լինէր. որպէս շինել քաղաք, կամ ո՛չ շինել. տընկել այգի, կամ ո՛չ տնկել: - 8. *Զի՞նչ* է գործ բարւոյն՝ և գործ չարին: - 22. Եւ արդ *զինչ* զարմանք էր թէ յայնպիսի խաղաղութեան ձուլէին զսուսերս իւրեանց ի խոփս: - 27. Չորեքտասաներորդ՝ *Զի՞նչ* մի բնութիւն. և *զի՞նչ* երկուս. և *զի՞նչ* երկուցն եղեալ մի բնութիւն: - 30. Եօթնևտասներորդ՝ *Զի՞նչ* է ասելն համանգամայն աստուած և մարդ: - 30. Իննևտասներորդ՝ *Զի՞նչ* է հաւասարն աստուծոյ, և բարձրացոյցն, և շնորհեացն անուն: - 30. Եւ թէ յոչ ժամանակի, և *զի՞նչ* էր նոյն ինքն ժամանակն որ գոյացաւ ի սկիզբն լինելութեանն: - 37. Նախ ասեմք թէ՝ թագաւոր էր այր կերող և արբեցող և վաւաշոտ. *զի՞նչ* իցէ ի համար բան նորա. թէպէտ կարի ասել ո՛չ կարեմք: - 40. Պատասխանեմք, ո՛վ յանդուգն մեկնիչ դու. յետ *այն*.. *զինչ* վաղճան իցէ թագաւորութեանն նորա. ո՛վ ընկեսցէ և յի՛նչ պատճառս. և ո՞չ լուար ի հրեշտակէն, «թագաւորութեան նորա վախճան մի՛ լիցի»: - 41-42. *Զի՞նչ* է «ո՛չ կարեմ առնել յանձնէ և ոչ ինչ»: - 44. Եւ *զի՞նչ* է «որպէս հայր գործէ զնոյն և որդին նմին նման առնէ»: - 45. *Զի՞նչ* է տալն որդւոյ զկեանս՝ կամ զդատաստան՝ կամ զիշխանութիւն հեթանոսաց և ամէն մարմնոյ: - 46. *Զի՛նչ* է որ ասէ՝ «զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ աստուած. և զոր առաքեցեր զյիսուս քրիստոս»: - 47. *Զի՞նչ* է որ առ փորձիչ օրինաւորն ասաց՝ «չիք ոք բարի՝ բայց մի աստուած»: - 47. Եւ քրիստոս թէ՝ «մի՛ հոգայք *զինչ* ասիցէք. զի հոգին հօր ձերոյ տացէ ձեզ ի ժամուն յայնմիկ»: - 48. *Զի՞նչ* ասեմ, զի հոգւով հնազանդեցաւ ադամ, և մտօք հաւանեցաւ, և մարմնով զգործն ի կատարումն էած: - 50. Դարձեալ հարցանեն, թէ հաւասար է հոգի որդւոյ, *զի՞նչ* արգելու ո՛չ լինիլ որդի. ապա թէ ո՛չ՝ նւա՛զ է քան զորդի: - 53. *Զի՞նչ* է ծայրագոյն միաւորութիւն բանին մարմնացելոյ: - 77. *Զի՞նչ* է ասելն աստուածաբանին, այլ և այլ ընդ նմին Երրորդութեանն ունի. քանզի՝ անդ այլ ոմն է և այլ. զի մի՛ զդէմսն խառնակիցեմք: - 80. *Զի՞նչ* տայ իմանալ մի բնութիւն ասելն բանին և մարմնոյն: - 81. Եւ կամ *զի՞նչ* երկու բնութիւնն: - 81. Եւ կամ *զի՞նչ* յերկուցն եղեալ մի բնութիւն: - 81. Իսկ թէ *զի՞նչ* իմանի մի բնութիւն ասելն. և *զի՞նչ* երկու. և կամ յերկուցն մի բնութիւն: - 81. *Զի՞նչ* զոր ասէ սուրբն կիւրեղ ամենայն ուրեք՝ «համանգամայն աստուած և մարդ»: - 90. *Զի՞նչ* պատասխանեմք երկաբնակացն որք հարցանեն զմեզ, թէ մասունքն քրիստոսի աստուած է՝ այսինքն ոտքն և ձեռքն և գլուխն ապա բազմաստուածք էք: - 91. Թէ *զի՞նչ* է «լինիլն հաւասար աստուծոյ»: - 93. Եւ *զի՞նչ* է «զնա առաւել բարձրացոյց»: - 93. Եւ թէ *զի՞նչ* է «շնորհեաց նմա անուն»: - 93. Եւ թէ *զի՞նչ* է «'ի վեր քան զամենայն անուն»: - 93. Առաջինն թէ *զի՞նչ* է «լինիլն հաւասար աստուծոյ»: - 93. Եւ թէ *զի՞նչ* է «ի վեր քան զամենայն անուն»: - 93. *Զի՞նչ* իցէ տըւեալ, յորժամ զկատարեալ գիտութիւնն ո՛չ ետ: - 96. *Զի՞նչ* է հանգիստ մտաց: - 101. *Զի՞նչ* զանազանի և հաւասարի տեսութեանն աստուծոյ. և հրեշտակաց. և մարդկան: - 101. *Զի՞նչ* հասարակ և յատուկ նոցա: - 102. *Զի՞նչ* է շնորհքն. և *զի՞նչ* շնորհք

քահանայութեան: - 102. *Զի՞նչ* է անճառելի աստուածբանութիւն. և *զի՞նչ* ճառելի: - 103. *Զի՞նչ* է հանգիստ մտացն: - 104. *Զի՞նչ* է միաւորութիւն և որոշումն. այսինքն հասարակ և յատուկ աստուածային: - 104. *Զի՞նչ* է բաղդատութիւն որ բանն աստուած է էառ զմարդկայինս բնութիւն: - 106. *Զի՞նչ* է որ ասեն վասն աստուծոյ թէ՝ է՛ սկիզբն և պատճառ: - 110. *Զի՞նչ* է յարացոյցն: - 112. *Զի՞նչ* է որ ամենահայեաց ասի աստուած: - 119. *Զի՞նչ* է բանականութեան սկիզբն և կատարումն: - 121. *Զի՞նչ* է ճշմարտութիւնն: - 121. Երրորդն է նշանական աստուածաբանութիւն. որ ի զգալի կերպարանաց փոխակցիմք յիմանալի տեսութիւնն. թէ *զի՞նչ* նշանակէ մարդ երևելին. կամ առիւծ. գառն. հուր. լոյս. և այլն: - 122. Զի որպէս խաւարն անյայտ է, նոյնպէս և առաւել լոյսն անտեսութիւն առնէ. և նա անտես է ի հրեշտակաց. և անյայտ ի մարդկային մտաց. թէ ո՞րպէս կամ *զի՞նչ* է էութիւն և բնութիւն աստուածութեանն: - 122. Պօղոս առաքեալն ասէ, «*Զի՞նչ* է լայնութիւն՝ երկայնութիւն՝ խորութիւն՝ և բարձրութիւն աստուծոյ»: - 129. *Զինչ* է որ ասէ տեսիլն, «Ես եմ ալֆա և օմեգա. որ է այբ և քէ»: - 129. *Զի՞նչ* է իմացականն և իմանալին: - 130. *Զի՞նչ* է պատճառ՝ որ արտաբերեալ բանս մեր միաւորեալ է ընդ ձայնի. և բացակայքն զձայնն լսեն՝ և զբանն ո՛չ: - 131. *Զի՞նչ* է չորեքկերպեան կենդանիքն զոր ետես եզէկիէլ: - 132. *Զի՞նչ* է երկնայնոցն հասարակ՝ և *զի՛նչ* յատուկ: - 137. *Զի՞նչ* նշանակէ շնորհն: - 139. *Զի՞նչ* է շնորհ քահանայապետութեան: - 140. *Զի՞նչ* է ռք հազարաց և բիւրք բիւրուցն զոր ետես դանիէլ: - 141. *Զի՞նչ* է հրեշտակաց կալն և շարժումն ըստ եսայեայ թէ՝ «սերօբէք կային շուրջ զնովաւ և թռչէին»: - 142. *Զի՞նչ* է փառաբանութիւն ինն դասուց հրեշտակաց: - 144. *Զի՞նչ* է տեղական անկումն նոցա: - 146. Եւ այլք *զի՞նչ* մեղան որք ընդ նմա անկան: - 149. *Զի՞նչ* է հրեղէն վիշապն. որպէս ասէ տեսիլն **լգ** գլուխն: - 151. *Զի՞նչ* էր յանցումն և պատճառ կորստեան նոցա: - 147. Յաւերժահասունք և քաջք և ալն, *զի՞նչ* են: - 150. *Զի՞նչ* է է գլուխն և **ժ** եղջիւրն: - 151. *Զի՞նչ* է է խոյրն ի գլուխ վիշապին: - 152. *Զի՞նչ* է «տուտն նորա որ քարշէր զերրորդ մասն աստեղացն»: - 152. *Զի՞նչ* է գործ բնութեան՝ և գործ կամաց: - 154. *Զի՞նչ* էր պտուղն ադամայ, և գիտութիւն բարւոյ և չարի: - 155. *Զի՞նչ* զանազանի գործ մարդոյ ի գործոյ աստուծոյ: - 156. Երեքտասաներորդ՝ մարդ *զինչ* որ կամի ո՛չ կարէ. իսկ աստուած զոր ինչ և կամի և կարէ՛: - 157. *Զի՞նչ* հասարակութիւն է գործոյ արարչութեան և գործոյ նախախնամութեան. և *զի՞նչ* զանազանութիւն: - 157. Այս թէ *զի՞նչ* է հասարակութիւն: - 157. Իսկ թէ *զի՞նչ* է զանազանութիւն գործոյ արարչութեան և նախախնամութեան: - 157. *Զի՞նչ* է զոր տէրն հրամայէ աղօթել՝ «մի՛ տար զմեզ ի փորձութիւն». և առաքեալն յակոբոս՝ ուրախ լինիլ ասէ՝ «յորժամ ի պէս պէս փորձութեան մէջ անկանիցիք»: - 160. *Զինչ* է որ ասէ՝ «փորձեաց աստուած զաբրահամ». և յակոբոս ասէ՝ «աստուած անփորձէ չարեաց. փորձէ՛ և ո՛չ զոք»: - 160. Ի փորձութեանց ծանեաք զշահն որ ասացաւ ի վերոյ. այլ հասարակ ամենայն մարդկան *զի՞նչ* օգուտ է փորձութիւնն որ ասէ՝ «երանեալ է այր՝ որ համբերէ՛ փորձանաց»: - 161. Իսկ թէ կամիս ուսանիլ թէ *զի՞նչ* է նիւթ պսակին. որ ինչ առ աստուածութեան իւրում մեծութիւն գտանի, զա՛յն պատրաստեաց սիրելեաց իւրոց. զոր ո՛չ կարեմ զմտաւ ածել. կամ վայրապար լսելեօք լսել: - 161. Իսկ թէ *զի՞նչ* համբերութիւնն. ասէ՝ «գործ կատարեալ ունիցի». այսինքն թէ՝ նիւթ աստուծոյ գործոյն՝ փորձութիւնն և նեղութիւնն է. և յօրինօղ՝ հաւա՛տն է. և ի կատարումն ածօղ՝ համբերութիւնն է: - 161. *Զի՞նչ* է պատճառն աղաչեմ: - 162. Այլ արդ՝ բնականին հետևելով տեսցուք *զի՞նչ* է գոյացութիւն և *զի՞նչ* պատահումն: - 170. *Զի՞նչ* է որ ասեն փիլիսոփայք թէ յոչ ուրեքէն յոչ երբեքէն ոչինչ լինի: - 173. Ասեմք առ այս եթէ գիտելի է նախ՝ թէ *զի՞նչ* է բնութեամբն և *զի՞նչ* կամօքն: - 173. *Զի՞նչ* է էութիւն և բնութիւն՝ և անձն և գոյացութիւն: - 174. *Զի՞նչ* է տեղին: - 174. *Զի՞նչ* է պատճառ ստեղծման աշխարհիս: - 179. *Զի՞նչ* է պատճառ շարժութեան երկնից: - 182. *Զի՞նչ* է յատկութիւն երկնից: - 184. *Զի՞նչ* է բարութիւն լուսոյն որ ասէ՝ «ետես աստուած զլոյսն զի բարի է»: - 185. *Զի՞նչ* է որ ասէ մեծն իգնատիոս վասն արեգական՝ թէ յամենայն օր ի բաց դնէ զլոյսն և զջերմութիւն, և միւս անգամ յարփոյն առնու: - 186. *Զի՞նչ* է յատկութիւն լուսնի: - 186. Աղտն *զի՞նչ* է յերեսս լուսնին: - 187. *Զի՞նչ* է որ ի նորիլն եղջերակերպ երևի: - 187. *Զի՞նչ* է որ ասէ սուրբն բարսեղ, գնան հրեղէնք ընդ ջուրս և ո՛չ շիջանին: - 188. *Զի՞նչ* է բնութիւն կենդանակերպիցն: - 189. *Զի՞նչ* է յատկութիւն միաշաբաթ աւուրն որ է կիրակէն: - 193. *Զի՞նչ* է յատկութիւն աւուրն վերջին: - 193. *Զի՞նչ* է բաժանումն լուսոյ և խաւարի: - 194. *Զի՞նչ* է ժամանակն: - 198. Արդ՝ թէ *զի՞նչ* է ժամանակն՝ աստ ասասցի: - 198. *Զի՞նչ* է տարեմուտն: - 200. *Զի՞նչ* են անուանք ամսոց: - 200. Յորժամ փայտն այրի, ծանրութիւն *զի՞նչ* լինի: - 202. Դարձեալ ասեմք թէ՝ *զինչ* ծանրութիւն որ պատահական է՝ ի ցրուիլն նիւթոյն կորնչի ծանրութիւնն: - 202. *Զ՞ինչ* է ծիածանն որ կոչի աղեղն: - 203. *Զի՞նչ* է բակն որ զլուսնիւ և զարեգակամբն: - 203. *Զի՞նչ* է գիսաւոր աստղն: - 203. *Զի՞նչ* է թռիչ աստեղն: - 203. *Զի՞նչ* է փայլակն: - 203. *Զի՞նչ* է որոտն: - 203. *Զի՞նչ* է շանթքն որ ի մէջ ամպոյն: - 204. *Զի՞նչ* պէտս են բարձրագոյն լերինքն: - 211. *Զի՞նչ* իմաստութիւն օձին որոյ պարտ է մեզ նմանիլ: - 218. Այլ որպէս ասէ յոբ, «*զի՞նչ* երկիր իցէ յորում լոյսն ագանիցի»: - 222. Արդ *զի՞նչ* ասեմք,

անապականա՞ն՝ թէ ապականացու է դրախտն: - 222. Ա՛րդ՝ *զի՞նչ* ասես վասն կենաց պտղոյն. եթէ կերակրելի է և հատանելի, ո՞րպէս է կենաց պտուղ: - 223. *Զի՞նչ* էր պտուղն գիտութեան բարւոյ և չարի: - 223. *Զի՞նչ* էր պտուղն որ կերաւ ադամ: - 224. Քսանևք՝ *Զինչ* է պատկերն և նմանն: - 228. Երեսունգ՝ *Զի՞նչ* պատուիրանն. և մահու մեռանիլն: - 228. Այժմ տեսցուք թէ *զի՞նչ* է շահն աննման պատկերաց. զի բազում վնաս էր լինելոց թէ անհատք ո՛չ էին որոշեալ դիմօք: - 238. *Զինչ* է յորժամ մարդ ի վեր նայի հեշտանայ աչքն. և յորժամ ի վայր՝ դժուարի: - 239. *Զի՞նչ* է որ տղայն զմերձն աղէկ տեսնու. և ծերն զհեռուն: - 239. *Զի՞նչ* է որ զայր և զկին բաժանէ: - 245. *Զի՞նչ* է վատն: - 251. Խնդրեմ ուսանիլ վասն բոլոր էութեան հոգւոյն թէ ո՞րպէս կամ *զի՞նչ* եղանակաւ գոյանայ: - 252. Եւ թէ ոք ասիցէ, *զի՞նչ* է այն մի սկիզբն գոյութեան մարդոյ: - 254. Եւ թէ ոք ասիցէ, *զի՞նչ* է այս որ յետ **խ**, կամ **ծ** աւուր ստեղծանի բանական հոգին: - 254. *Զի՞նչ* է որ ամենայն ծնունդ թէ տունկք թէ կենդանիք՝ նախ յղանան և ապա ծնանին: - 267. Խնդրեմ ուսանիլ թէ *զի՞նչ* է երազն որ տեսանէ մարդ: - 268. *Զի՞նչ* է իմաստութիւն: - 269. *Զի՞նչ* է Իմաստասիրութեան անուն, և *զի՞նչ* Իմաստակն, և զի՞նչ Իմաստունն, և *զի՞նչ* Իմաստութիւն: - 269. *Զի՞նչ* է հանճար: - 270. *Զի՞նչ* է հանճարն՝ իմաստութիւն՝ և գիտութիւն: - 270. *Զի՞նչ* է «արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան»: - 271. *Զի՞նչ* է յատկութիւն մարդոյս: - 274. Եւ *զի՞նչ* է եօթն յանցանքն: - 279. *Զի՞նչ* է մաշկեղէն հանդերձն զոր զգեցոյց աստուած ադամայ: - 281. Եւ թէ *զի՞նչ* կերին. և *զի՞նչ* տայր լոյս և վասն ագռաւուն: - 283. Եւ մովսէս *զի՞նչ* էր բարձեալ. և *զի՞նչ* ասաց ի ծովուն: - 283. Եւ թէ *զի՞նչ* փոխի ի հանդերձեալն: - 284. Եւ թէ *զի՞նչ* է պանն և մուրկն և այլն: - 284. Քառասուն, *Զի՞նչ* նշանակէր կատարումն պատարագացն: - 284. Եւ զի **գ** պատարագս ունիմք. և թէ *զի՞նչ* էր կրկին ողջակէզն: - 284. Յիսունք, *Զի՞նչ* նշանակէր նաշիին և **դ դ** դորակ գինին՝ ի նորս: - 284. Վաթսուն֊եմի, Թէ *զի՞նչ* է ներելի մեղքն, և անթողլի: - 285. Վաթսունգ, Պղնձի օձն. և թէ *զի՞նչ* եղև: - 285. Երկու ցեղ և կէսն մնացին յայնկոյս, թէ *զի՞նչ* նշանակէր: - 285. Եւ *զի՞նչ* նշանակէր երկիրն աւետեաց: - 285. Եւ *զի՞նչ* է՝ անիծեալ կախեալ զփայտէ: - 285. Եւ *զի՞նչ* է նայիլ և հայիլ: - 285. Եօթանասունևը, Բարկութիւնն առ աստուած *զի՞նչ* է: - 285. *Զի՞նչ* է որ ասէ գիր, «Յայեցաւ աստուած ի հաբէլ և ի պատարագս նորա»: - 286. *Զի՞նչ* էր յոյսն ենովսայ որ ասէ գիրն՝ «յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ»: - 288. Իսկ թէ ոք հարցանէ թէ *զի՞նչ* էր սոցա առաքինութիւնն որ այսպէս պատուեցան: - 289. *Զի՞նչ* տայր լոյս ի տապանին: - 294. Ագռաւն *զի՞նչ* եղև: - 294. *Զի՞նչ* է ասելն «զմիս արեամբ շնչոյ մի՛ ուտիցէք»: - 295. *Զի՞նչ* է որ եփրեմ ի գիրս կցորդաց ասէ, Մելքիսեդեկ՝ որ նա՛ ինքն է սեմ: - 300. *Զի՞նչ* զանազանի քահանայութիւնն մելքիսեդեկի և աբրահամու: - 300. *Զի՞նչ* է անդրանկութեան խորհուրդն զոր եսաւ վաճառեաց: - 308. ... որպէս յասելն՝ *զի՞նչ* է, ասեմք՝ մարդ է, կամ կենդանի: - 311. *Զի՞նչ* է որ ասէ՝ «հռաքէլ լայր զորդիս իւր և ո՛չ կամէր մխիթարիլ զի ո՛չ էին»: - 312. Եւ տէր մեր գիտէր *զինչ* կրէր ի մարդն. այլ և զծածուկսն հօր յայտնեաց մեզ: - 313. *Զի՞նչ* է կապն որ ասէ՝ «կապեսցես զորթոյ. և զգնդակէ՛»: - 317. *Զի՞նչ* է՝ «առաւել օրհնութիւն քո քան զմշտնջենաւոր լերանց և բլրոց յաւիտենից»: - 319. *Զի՞նչ* է որ որդիքն յոբայ պատուէին զօր ծննդեան իւրեանց ի միասին ժողովիլով: - 321. *Զի՞նչ* է ասելն «կրկնեալ անդրէն»: - 323. *Զի՞նչ* էր մորենին վառեալ: - 330. Իսկ թէ *զի՞նչ* նշանակէ: - 331. *Զի՞նչ* է որ ասէ, «Լո՛յծ զկօշիկս յոտից քոց»: - 331. *Զի՞նչ* է՝ «որ էն առաքեացն»: - 331. Զի ըստ փիլիսոփային եթէ է՞, և *զի՞նչ* է, և ո՞րպիսի ինչ է: - 331. *Զի՞նչ* է գաւազանն ի յօձ փոխարկեալ: - 332. *Զի՞նչ* է որ բորոտեցաւ ձեռն: - 332. *Զի՞նչ* է գետն յարիւն փոխիլ: - 333. *Զի՞նչ* է որ ասէ՝ «ե՛ս խստացուցի զսիրտն փարաւոնի»: - 336. Մովսէս *զի՞նչ* ասաց ի պատառել ծովուն: - 338. *Զի՞նչ* էր սիւն լուսոյն: - 338. Մովսէս *զի՞նչ* ունէր բարձեալ: - 338. *Զի՞նչ* էր մանանայն: - 338. Մանանայն թարգմանի՝ «*զի՞նչ* սա»: - 338. Զոր տեսեալ ժողովրդեանն նոր՝ ասէին ցմիմեանս, *զինչ* է սա. և կոչեցաւ մանանայ: - 338. Եւ *զինչ* և կամէին, զամենայն համս տայր ի բերան կերողացն: - 338. Նա՛խ՝ զի կոչի «*զի՞նչ* սա՛». զի ամենայն հարցանելոյ լուծումն գոյ և պատասխանի. - 338. ...իսկ զաստուծոյ հարցանելն *զի՞նչ* է՝ անգիտելի մնայ. որպէս եհարց յակոբ, «*զի՞նչ* է անուն քո. և նա՛ ասէ՝ զի՞ հարցանես զանուն իմ. զի սքանչելի՛ է»: - 338. *Զի՞նչ* էր խորհուրդ մանանային ի մէջ սափորին: - 339. *Զի՞նչ* է օրէնք և իրաւունք: - 340. *Զի՞նչ* է երիցս երևիլ ի տարին: - 340. *Զի՞նչ* է որ զկէս արեան պատարագին խառնեաց ի ջուր և ցանեաց ի ժողովուրդն. և զկէսն էարկ շուրջ զսեղանովն: - 341. *Զի՞նչ* նշանակէր **ժ** փեղկ և ձև խորանին: - 342. *Զի՞նչ* է տապանակին չափն **բ** կանգուն և կէս երկայն: - 344. *Զի՞նչ* կայր ի սրբութեան մէջն: - 346. *Զի՞նչ* նշանակէր **բժ**ան ակունքն: - 348. *Զի՞նչ* էր նիւթ խնկոցն: - 349. *Զի՞նչ* է «զյետոյսն իմ տեսցես»: - 350. *Զի՞նչ* զանազանի որ մովսէս՝ աստուած և տէր կոչեցաւ: - 350. *Զի՞նչ* է «ողորմեցայց որում ողորմեցայց. և գթացայց յորս գթացայց»: - 350. *Զի՞նչ* է «առնել զողորմութիւն ի **ռ** ազգս»: - 351. *Զի՞նչ* է ի վիմէն ծնանիլն: - 353. *Զի՞նչ* հասարակ և *զի՞նչ* յատուկ քահանայութեան տեառն մերոյ՝ և հնոյն քահանայութեան: - 354. Յինն օրինա՛կ էր, և նորս ճշմարտութիւն. հանդերձեալն *զի՞նչ* փոխի: - 355. *Զի՞նչ*

էր հին պատարագն: - 357. *Զի՞նչ* նշանակէ կրկին ողջակէզն ի նորս. որպէս զուարակն և երկու խոյն կատարման: - 362. *Զի՞նչ* է որ յանկիւնս եկեղեցւոյն խունկ վառեմք: - 363. *Զի՞նչ* էր սուրբ և անսուրբ կենդանին: - 364. *Զի՞նչ* է **բ** հաւն ի սրբիլ բորոտին. մին զենեալ, և միւսն արեամբն թաթաւեալ և ի բաց թողեալ: - 368. *Զի՞նչ* նշանակէր բ նոխազն վիճակ արկեալ: - 369. *Զի՞նչ* է որ զարիւն անասնոյ հրամայէ՛ ծածկել և ո՛չ ուտել: - 371. *Զի՞նչ* էր շաբաթ շաբաթուցն: - 371. *Զի՞նչ* էր որ ի տաղաւարահարքն ըստ միոյ միոյ աւուրց մի մի զուարակ պակասէին ի տօնս. և յութերորդ օրն ի մինն յանգէին: - 374. Նաշիին, և Իւղն, և Գինին, *զի՞նչ* նշանակեն: - 374. *Զի՞նչ* է որ ըստ տօնից մեծութեանն առաւելոյր նաշիին և իւղն և գինին: - 375. *Զի՞նչ* է որ հրամայէ՛ զարծաթ ի վարձու ո՛չ տալ: - 375. *Զի՞նչ* է եօթնպատիկ պատիժ չարեաց. ըստ այնմ, «հատո՛ դրացեաց մերոց էպատիկ ի ծոց նոցա նախատինք»: - 376. *Զի՞նչ* է օրհնութիւն հին քահանայիցն: - 379. *Զի՞նչ* էր որ եհար զանդրանիկս եգիպտացւոց. և էառ զանդրանիկս իէլի. և զայն ևս փոխեաց և էառ զղևտացիս: - 380. *Զի՞նչ* ցուցանէր **գ** օր յառաջ գնալ տապանակին դիտեալ զհանգիստ: - 380. *Զի՞նչ* էր եօթն բանակ չուելն: - 380. *Զի՞նչ* ցուցանէ երկոտասան լրտեսքն: - 380. *Զի՞նչ* է տրտունջն. և *զի՞նչ* է բամբասանքն: - 381. *Զի՞նչ* նշանակէր կարմիր երինջն անարատ և անլուծ: - 383. *Զի՞նչ* էր ապաւառն: - 383. Երեք ջուր սրբութեանն *զի՞նչ* է ի նորս: - 384. *Զի՞նչ* էր յերրորդ օրն սրբիլ. և յեօթն սրբիլ. և թէ յերրորդն ոչ սրբեսցի, և մի՛ յեօթն սրբեսցի: - 384. *Զի՞նչ* է որ զակամայ մեղուցեալն քաւէր պատարագօք. և զկամաւոր յանցաւորն սատակել տայր ժողովրդեանն: - 385. *Զի՞նչ* եղև օձն պղնձի: - 387. *Զի՞նչ* է նզովք, և *զի՞նչ* անէծք: - 388. Եւ աստ հարցանեմ, *զի՞նչ* է դիւթն, և հըմայն, կախարդն, և այլն: - 388. *Զի՞նչ* է ուխտ, և *զի՞նչ* է սահման: - 389. *Զի՞նչ* նշանակէ որ **բ** ցեղն և կէսն մնացին յայնկոյս յորդանանու և ժառանգեցին, և այլքն անցին ի քանանացիքն: - 390. *Զի՞նչ* նշանակէ եղիազար քահանայ, և յեսու, և իշխանքն որք բաժանեցին զերկիրն: - 391. *Զի՞նչ* նշանակէր քաղաք ապաստանաց: - 392. *Զի՞նչ* նշանակէ անապատն մեծ և ահագին: - 393. *Զի՞նչ* է որ ընդ դովտայ որդիսն և եսաւայ ո՛չ հրամայեաց կռուիլ. այլ ընդ ամուր հարցւոցն: - 393. *Զի՞նչ* է որ զերկու թագաւորսն զսեհոն և զովք յայնկոյս յորդանանու կորոյս, և զայլսն ի քանանացիսն: - 393. *Զի՞նչ* է որ մովսէս ետես զերկիրն և ո՛չ եմուտ: - 394. *Զի՞նչ* է որ մովսէս ետես նախ զծովն որ յարևմուտս, և զհիւսիս և զհարաւ, և ապա՛ զարևելս: - 394. *Զի՞նչ* է ձեռն բարձր և բազուկ հզօր: - 395. *Զի՞նչ* նշանակէ երկիրն աւետեաց: - 395. *Զի՞նչ* է «ո՛չ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւն աստուծոյ»: - 397. *Զի՞նչ* է ասելն հայեաց ի քեզ: - 397. *Զի՞նչ* է ասելն «երկիրն յոր դուք մտանելոց էք՝ յանձրևո՛յ ըմպէ ջուր» և այլն: - 398. *Զի՞նչ* է «մի՛ եփել զգառն ի կաթն մօր»: - 399. *Զի՞նչ* է նշան մարգարէին որ ասէ, «մարգարէ յարուսցէ ձեզ իբրև զիս նմա՛ լուիջիք»: - 399. *Զի՞նչ* է որ ասէ, «անիծեալ որ կախեալ կայցէ զփայտէ»: - 400. *Զի՞նչ* էր գիրն ապահարզանի: - 400. *Զի՞նչ* է խորհուրդն: - 401. *Զի՞նչ* է որ ասաց նախ եթէ՝ «զառականս կնոջ եղբօր քոյ մի՛ յայտներ». և այժմ ասէ թէ՝ «առցէ զկին եղբօրն»: - 402. *Զի՞նչ* էր խորհուրդն որ յանուն եղբօրն զաւակ յարուցանէին: - 402. *Զի՞նչ* է օրհնութիւն և անէծք: - 403. Մեք ո՛չ կատարեմք զօրէնս մովսէսի, *զի՞նչ* լինիմք: - 403. *Զի՞նչ* է որ ասէ, «ընդ մի ճանապարհ գայցեն, և ընդ եօթն փախիցեն»: - 404. *Զի՞նչ* է «տեսանիցէք զկեանս ձեր կախեալ զփայտէ՛ զցայգ և զցերեկ և ո՛չ հաւատայք»: - 404. *Զի՞նչ* է որ ասէ՝ «ծածուկն տեառն աստուծոյ, և յայտնին մեզ և որդոց մերոց»: - 405. Զի թէ զամենայն բան քննեմք, աստուծոյ *զի՞նչ* թողումք յապայ: - 405. *Զի՞նչ* է օրհնելն զաստուած: - 406. *Զի՞նչ* է ապաշնորհն և ապերախտն: - 406. *Զի՞նչ* է նայիլ և հայիլ և տեսանելն: - 407. *Զի՞նչ* է որ բնաբանն ի բնագիրն ուրիշ է, և ի սաղմոսն ուրիշ: - 407. *Զի՞նչ* է «կեցցէ՛ ռուբէն և մի՛ մեռցի»: - 409. *Զի՞նչ* էր պատերազմն ընդ մարմնոյն մովսէսի: - 409. Ութերորդ՝ *Զի՞նչ* եփուտն և թերափն. և *զի՞նչ* մեղք որդւոցն հեղեայ: - 412. Եւ թէ *զի՞նչ* է խորհուրդն, գտցես ի չորրորդ թագաւորութեանց վերջքն իթ գլուխն լ համարն: - 421. *Զի՞նչ* նշանակէր գեղմ և ցօղն գեդէոնի: - 421. *Զի՞նչ* է եփուտն և թերափն: - 425. *Զի՞նչ* էր մեղքն որդոցն հեղեայ: - 425. *Զի՞նչ* է որ զերաստանս ուռոյց, և զմուկն եռացոյց: - 426. *Զի՞նչ* է որ յետ եօթն ամսոյ դարձաւ տապանակն: - 426. *Զի՞նչ* նշանակէր պատառիլ կրկնոցին: - 427. *Զի՞նչ* է «ամենայն որ մատիցէ ընդ յեբուսացիս ընդ կաղս և ընդ կոյրս յատելիս դաւթի»: - 431. *Զի՞նչ* էր կարօտիլն դաւթի ջրոյն բեթլէհէմի: - 434. *Զի՞նչ* է ի հազարս գտի այր մի. ի կանանց և ո՛չ մի: - 440. *Զի՞նչ* էր նշանք սամեայ մարգարէի առ սեղանն րոբովամու: - 442. *Զի՞նչ* է որ ի ձեռաց ագռաւու կերակրեցաւ եղիա. և ուստի՞ էր: - 443. *Զի՞նչ* նշանակէ յարութիւն որդւոյ այրւոյն: - 444. *Զի՞նչ* է որ ո՛չ պակասեաց ալիւրն և իւղն: - 444. *Զի՞նչ* է շարժմամբ վերանալն եղիայի: - 445. *Զի՞նչ* է նոր կուժն և աղն, որով բժշկեցան ջուրքն: - 445. *Զի՞նչ* է կծկիլին. և է անգամ յօրանչելն ի վերայ մեռեալ պատանոյն: - 446. *Զի՞նչ* գործեաց մահն քրիստոսի: - 454. *Զի՞նչ* է պատիւ իջման աւուրն: - 455. *Զի՞նչ* է որ ասէ՝ «հաւատարիմ է աստուած յամենայն բանս իւր»: - 457. *Զի՞նչ* է որ ասէ մարգարէն՝ «տէր յերկինս է ողորմութիւն քո. ճշմարտութիւն քո մինչև յամպս»: - 457. *Զի՞նչ*

է սրբութիւն կուսին որ ասէ մարգարէն՝ «սուրբ է տաճար քո սքանչելի արդարութեամբ»: - 462. *Զի՞նչ* է ողջոյնն որ ասէ «Ուրա՛խ լեր բերկրեալդ տէր ընդ քեզ»: - 463. *Զի՞նչ* յայտնէ պատգամ հրեշտակին: - 464. *Զի՞նչ* ցուցանեն պատասխանիք Կուսին: - 465. Չինգերորդ՝ «որդեակ *զի՞նչ* գործեցեր մեզ զայդ»: - 465. Եօթներորդ՝ «*զինչ* և ասացէ ձեզ՝ արասջիք»: - 465. *Զի՞նչ* է սքանչելիք յղութեանն: - 469. *Զի՞նչ* թարգմանի քրիստոսն և օծեալ: - 474. Զի թէ յետոյ ի մկրտութեանն օծաւ քրիստոս, *զի՞նչ* աւետարանեաց հրեշտակն եթէ՝ «ծնաւ ձեզ այսօր փրկիչ օծեալ տէր»: - 475. Եւ *զի՞նչ* է զանազանութիւնն: - 478. *Զի՞նչ* է որ ի փրկչական պատկերն գիր ի ձեռն և խաչ ի գլուխն նկարեն: - 481. *Զի՞նչ* է ձեռագիրն ադամայ զոր պատառեաց քրիստոս: - 481. Արդ զգիրն ադամայ պարտուց՝ տէրն որդի եղև նմա և անմեղ մահուամբն տարածեալ զձեռս ի խաչին պատառեաց ասելով, նա մեղաւ և մեռաւ. ես *զինչ* մեղայ. դո՛ւ ես պատճառն: - 482. *Զի՞նչ* է «զգլուխ վիշապին ջախջախեաց ի յորդանան» որպէս ասէ յոբ: - 488. Ապա *զի՞նչ* մեղաւ յուդա: - 491. *Զի՞նչ* գործեաց մահն քրիստոսի: - 491. *Զի՞նչ* է է բանն որ խօսեցաւ ի խաչին: - 492. *Զի՞նչ* նշանակէ քառաթև խաչն. երկայն, և լայն, խոր, և բարձր: - 493. *Զի՞նչ* նշանակէ չորս մասն փայտից Խաչին: - 494. Եւ դարձեալ ասեմք, թէ կերակուրն մասն է ապականութեան, զոր յանմարմնութեանն եկեր առ աբրահամ *զի՞նչ* ասէք: - 501. *Զի՞նչ* է վարշամակն ծալեալ և կտաւն ո՛չ: - 517. *Զի՞նչ* է որ ասէ «հայր իմ և հայր ձեր, աստուած իմ և աստուած ձեր»: - 518. *Զի՞նչ* զանազանին փոխիլն և համբառնալն և թռչիլ: - 519. *Զի՞նչ* է «զբերան իմ բացի և առի զՉոգի»: - 523. *Զի՞նչ* է պատիւ այսմ աւուր իջման հոգւոյն: - 523. Եւ թէ *զի՞նչ* է սահման հաւատոյ. և ի յո՞ր մասն է հոգւոյն: - 526. *Զի՞նչ* է նոր օրհնութիւնն որ ասէ դաւիթ «օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր»: - 528. *Զի՞նչ* է հիմն որ եղեալ է յիսուս քրիստոս, և շինուածն ոսկի արծաթ և այլն: - 531. *Զ՞ինչ* է որ քրիստոս գլուխ կոչի և եկեղեցի անդամք: - 532. *Զի՞նչ* է որ ասէ «զորս եդ աստուած յեկեղեցւոջ ա՛յս են»: - 535. *Զի՞նչ* է էութիւն առաքելութեան: - 535. *Զի՞նչ* է մարգարէութիւն: - 536. *Զի՞նչ* է կանոն: - 538. *Զի՞նչ* է կապելն և արձակելն: - 538. Եւ թէ ոք ասիցէ՝ *զի՞նչ* է խորհուրդ երկոտասանիցն: - 546. Ա՛րդ՝ *զի՞նչ* կամիս որ հնազանդիմք պետրոսի. ուրանա՞լ պարտ է զքրիստոս որ լինիմք հնազանդ պետրոսի, եթէ եղծանել զպահքն, թէ զամենայն պիղծ կերակուր ուտել…: - 548. *Զի՞նչ* պատասխանեմք որք բամբասեն զազգս հայոց ո՛չ միաբանիլ այլոց: - 550. Որպէս *զինչ* ասեմ համառօտ թէ՝ թերութիւն է մեր բաժանել զբանն ի մարմնոյն յերկու բնութիւնս և յերկու դէմս. ի կրկին կամս և ի գործս: - 552. Եւ *զի՞նչ* այս: - 553. Իսկ վասն ջրոյն *զի՞նչ* պարտ է ասել. զի յոյնք թերի ցուցանեն զլատինացւոց խառնումն, ինքեանց կրկին խառնմամբն. և զայն խորհուրդ առեալ: - 554. *Զի՞նչ* է պատճառն որ սրտմտութիւն և ցանկութիւն և այլն ի յանբան կենդանիսդ գործ է. իսկ ի մեզ ախտ և մեղք: - 563. *Զի՞նչ* է մեղքն և մահ և դառն մահ: - 564. *Զի՞նչ* է մեղքն ընդ դէմ հոգւոյն սրբոյ որ ո՛չ թողցի: - 566. *Զի՞նչ* է զանազանութիւն մեղաց: - 567. *Զի՞նչ* է մեղք: - 569. *Զի՞նչ* է ամբարտաւանութիւն: - 569. *Զի՞նչ* է նախանձն: - 569. *Զի՞նչ* է բարկութիւն: - 570. *Զի՞նչ* է ծուլութիւն: - 570. *Զի՞նչ* է ագահութիւն: - 570. *Զի՞նչ* է որկրամոլութիւն: - 570. *Զի՞նչ* է բղջախոհութիւն: - 570. *Զի՞նչ* է սահման հաւատոյն: - 571. *Զի՞նչ* է սահմանն յուսոյ: - 573. *Զի՞նչ* է սէրն: - 574. *Զի՞նչ* է նշանք սիրոյ: - 575. *Զի՞նչ* է աստիճանք սիրոյն: - 576. *Զի՞նչ* է նշան կատարեալ Սիրոյ: - 576. *Զի՞նչ* է կարգ Սիրոյն: - 576. *Զի՞նչ* է «պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրեսջիք զմիմեանս զի և ի հինն եւտ»: - 577. *Զի՞նչ* է առաքինութիւն: - 578. *Զի՞նչ* է արդարութիւն և *զի՞նչ* գործ նորա կամ մասունք: - 579. *Զի՞նչ* է խոհեմութիւնն և *զի՞նչ* գործ նորա և մասունք: - 579. *Զի՞նչ* է արիութիւն և *զի՞նչ* գործ նորա և մասունք: - 580. *Զի՞նչ* է ողջախոհութիւնն և *զի՞նչ* գործ նորա և մասունք: - 581. *Զի՞նչ* է հեզն և *զի՞նչ* խոնարհն: - 584. *Զի՞նչ* է խաղաղութիւն որդւոյն աստուծոյ: - 585. *Զի՞նչ* է մկրտութիւն: - 588. Զի ջուր հակառակ է հրոյ. և *զի՞նչ* է մեղք, եթէ ոչ հուր. որպէս յոգւոջ բարկութիւն. և ի մարմնի ցանկութիւն. ուստի յայտ է զի հրով տանջանաց պատժի. և աստ զի հուրն շիջցի ի ջուր մկրտիմք: - 591. Փոքրիկ տղային *զի՞նչ* է մեղք: - 591. Եւ *զի՞նչ* իցէ պատիժ անմկրտեալ տղային: - 592. *Զի՞նչ* է դրոշմն: - 593. *Զի՞նչ* նշանակէ մեռոնաւն սուրբ օծանել: - 593. *Զի՞նչ* է խորհուրդ հաղորդութեան: - 594. *Զի՞նչ* է որ յեկեղեցիս մեր մի նշխար օրհնեմք. և ա՛յլ ազգ բազում: - 597. *Զի՞նչ* է ապաշխարութիւն: - 601. *Զի՞նչ* է վերջին օծումն: - 604. Եւ թէ ասեն, միայն մարմինն օծանի՝ *զի՞նչ* ներգործէ ի հոգին: - 605. *Զի՞նչ* է կարգ քահանայութեան: - 606. *Զի՞նչ* է պսակն: - 609. *Զի՞նչ* նշանակէ եկեղեցին: - 613. *Զի՞նչ* նշանակէ ժամահարն: - 618. Եւ յորժամ միտքն երթայ յաշխարհական հոգս թէ *զինչ* կերիցուք և արբցուք, է՛ ներելի: - 620. *Զի՞նչ* զանազանի հասարակ աղօթքն և առանձնականն: - 623. *Զի՞նչ* է յորժամ երկուքն սաղմոսե՛ն, և զօրհնութիւնն այլո՛ց տան: - 624. *Զի՞նչ* է որ քահանայն աղօթէ՛ և եպիսկոպոս զխաղաղութիւնն տայ: - 625. *Զի՞նչ* է որ զառաւօտու քարոզն՝ այսինքն զԵրկրպագեմքն, և զՊատարագին զոհութիւնն, և յերեկոյն զՉասեալքս ի ժամն, աղօթից ձևով ասէ սարկաւագն: - 626. *Զի՞նչ* է խորհուրդ կանոն գլխին որ ձայնիւ ասեմք: - 626. Անբիծքն *զի՞նչ* խորհուրդ ունին: - 630. *Զի՞նչ* է որ ա՛յլ ազգք ի դէմս

Երրորդութեանն ասեն. և վկայ ածեն զսերովբէսն գ սուրբ և մի տէր ասելովն: - 632. *Զի՞նչ* է որ երկու դասք պաշտեն յեկեղեցիս: - 636. *Զի՞նչ* է ի **ե** օր ծննդեանն Ովսաննայ ի բարձունս: - 638. և հարցանէին՝ *զի՞նչ* և ո՞վ է սա: - 638. *Զի՞նչ* է, չորեքկերպեան կենդանեացն զխորհուրդ քարոզեաց ամլորդին: - 638. *Զի՞նչ* է որ նախ զմարգարէս, և ապա զառաքեալս, և ապա՛ զաւետարանն ընթեռնումք: - 643. *Զի՞նչ* է նախ սաղմոսն և ապա՛ մարգարէ կամ առաքեալ: - 643. *Զի՞նչ* է աւետարանին, Ո՜րթի. և մոմ վառեմք. և բուրվառ շարժեմք: - 644. *Զի՞նչ* է ալէլուն նախ քան զաւետարանն: - 644. *Զի՞նչ* է յայլ լեզուաց Ովսաննայ. Պռօսխումէ. և այլն: - 644. Իսկ թէ *զի՞նչ* է յորժամ վերընծայի խորհուրդն պաշտմամբ և հնչմամբ ժամահարաց: - 645. *Զի՞նչ* է բուրվառին խորհուրդ: - 645. *Զի՞նչ* նշանակէ գրակալն: - 646. *Զի՞նչ* է նախատօնակն որ յերեկոյն սուրբ զգեստիւ խաչիւ և աւետարանաւ և լոյս վառեալ համաձայն պաշտեմք: - 646. *Զի՞նչ* է օրհնութիւն սեղանոյն: - 654. *Զի՞նչ* է որ յետ կերակրոյն դարձեալ կրկին օրհնեմք: - 655. *Զի՞նչ* է աղուհաց կտրելն: - 655. *Զի՞նչ* է յորժամ գինի ըմպեմք, օրհնեմք և շնորհակալեմք միմեանց. և յայլ կերակուրս և ըմպելիս ո՛չ առնեմք նոյնպէս: - 655. *Զի՞նչ* է որ յըմպելն զգինին՝ թափեն յանուն մեռելին: - 656. *Զի՞նչ* է որ ի մէճլիսն յանկարծ ժամ մի լռեն: - 656. *Զի՞նչ* նշանակէ բաժանել զբաժակն ըստ կարգի: - 656. *Զի՞նչ* է ճաշն և ընթրիսն: - 656. *Զի՞նչ* է խորհուրդ բարեկենդանին որ յամենայն տեղիս ի վանորայս և յանապատս ներե՛ն սակաւ ինչ ի չափաւոր վայելս: - 657. *Զի՞նչ* է օրհնած աղն մատաղի: - 657. *Զի՞նչ* է «լսելիս հաստատեցեր զողջակէզս»: - 658. Եւ վասն մահու և ոգէվարի թէ *զի՞նչ* լինելոց է: - 660. որ ի դատաստանին պատասխանի չունենայ թէ ինձ *զի՞նչ* տուեր որ զքեզ սիրէի: - 664. *Զի՞նչ* է հիւանդութիւն: - 665. *Զի՞նչ* է չորեքկին բառս որ ասեմք, պակասեալ. այլեւեալ. լցեալ. և անցեալ զաւուրբք: - 666. *Զի՞նչ* է մահ: - 667. *Զի՞նչ* է ոմանք յերկար ոգէվարին, և ոմանք յանկարծակի մեռանին: - 668. *Զի՞նչ* նշանակէ սուգն և կոծն և հանդերձին պատառելն: - 670. *Զի՞նչ* է կարգ կատարելն: - 671. ...և *զի՞նչ* է պատճառ օծմանն: - 672. *Զի՞նչ* է ողջունելն առ հասարակ: - 673. Եւ թէ ոք ասիցէ, անմեղ տղայքն *զի՞նչ* պէտք ունին առաւել թաղման: - 674. Ո՞րն է **գ** հանգիստն. և *զի՞նչ* խորհուրդն: - 675. *Զի՞նչ* է որ առ հասարակ ամենեքեան. այր և կին՝ ծեր և տղայ ընդ մեռելոյն ընթանան ի գերեզմանն: - 675. Եւ *զի՞նչ* է օգուտ ի յօրհնեալ տեղիս թաղելն: - 678. *Զի՞նչ* է գերեզմանն: - 678. *Զի՞նչ* է քար գերեզմանին: - 679. *Զի՞նչ* է խաչիւ և աւետարանաւ կնքելն զգերեզմանն անշարժապէս: - 679. *Զի՞նչ* է որ յերկրորդ օրն դարձեալ գան ի գերեզմանն: - 680. *Զի՞նչ* է եօթնօրէքն և ամսագլուխն և տարէբոլորն: - 683. *Զի՞նչ* է զատկի երկուշաբաթի օրն մեռելոց առնելն: - 684. *Զի՞նչ* է գերեզմանօրհնէքն: - 684. *Զի՞նչ* է տուն օրհնելն ի զատկի և յայտնութեանն: - 684. Եւ *զի՞նչ* է որ ի մեծի բարեկենդանին զբ չորեքշաբաթ և զուրբաթն հանգստեան ասեմք: - 684. *Զի՞նչ* է աղօթք նոցա: - 685. Իսկ թէ *զի՞նչ* է պատճառ ոչ երևելոյն, - 686. *Զի՞նչ* է տուն հօր և օթևանք բազում: - 686. Ապա *զի՞նչ* էր արկանելիքն սպիտակ, և պսակն ոսկեղէն որպէս ասէ տեսիլն: - 690. *Զի՞նչ* է աներևոյթ տեղի մեղաւորաց: - 690. Դարձեալ ասեն, *զի՞նչ* է փառքն և պսակ արդարոցն, եթէ ոչ տեսութիւնն աստուծոյ զոր ունին հոգիքն: - 697. Ասեմք, թէ ո՛չ գիտես *զի՞նչ* է, ե՛րթ առ առաքեալն և ուսուսցէ քեզ, - 697. Ո՞րք են որ ասեն քաւարան հրոյ. և *զի՞նչ* է պատճառն: - 698. Եօթներորդ ասեն, *զի՞նչ* է որ ասէ յոհաննէս «ի գալս իմում առ քեզ՝ ընկրկեսցի հուրն» և այլն: - 703. *Զի՞նչ* է կապիլն սատանայի **ռ** ամ: - 705. *Զի՞նչ* է անուն նեռինն: - 707. *Զի՞նչ* է գոգ և մագոգ: - 708. *Զի՞նչ* է առաջին յարութիւնն և երկրորդն...: - 710. *Զինչ* է հազարամեայ թագաւորելն ընդ քրիստոսի: - 710. *Զի՞նչ* է **իդ** երիցունքն զոր ասէ տեսիլն: - 711. *Զի՞նչ* է սպիտակ հանդերձն: - 712. *Զի՞նչ* է արմաւենին ի ձեռս նոցա: - 712. *Զի՞նչ* է բուրվառն ոսկի և քնարն ի ձեռս նոցա: - 713. *Զի՞նչ* է «ի փող յետին՝ մեռեալք ի քրիստոս յարիցեն»: - 713. *Զի՞նչ* է ձայն փողոյն: - 713. *Զի՞նչ* է յարութիւն: - 716. Ապա *զի՞նչ* որ ասէ պօղոս, «մեք որ կենդանւոյն մնացեալ իցեմք՝ ո՛չ ժամանեմք ննջեցելոցն»: - 717. Ապա *զի՞նչ* է որ ասէ մարգարէն, «ո՛չ յարիցեն ամբարիշտք ի դատաստան» և այլն: - 724. *Զի՞նչ* է պատճառն որ **գ** մարմինք միայն մնան ի կատարածի: - 727. Ապա *զի՞նչ* ասէ աւետարանն «երկինք և երկիր անցցեն. և աստեղք անկցին. և լուսաւորք խաւարեսցին»: - 727. *Զի՞նչ* որակ պակասի ի տարերացդ և *զինչ* մնայ: - 728. *Զի՞նչ* է «գալարին երկինք որպէս մագաղաթ» ասէ: - 729. *Զի՞նչ* է որ ասէ տեսիլն, «գա՛մ ես վաղվաղակի»: - 730. *Զի՞նչ* է նշան գալստեան փրկչին: - 730. *Զի՞նչ* լինին բազմութիւնք նշանաց խաչին: - 732. *Զի՞նչ* է ասելն «յորժամ եկեսցէ որդի մարդոյ, նստցի յաթոռ փառաց իւրոց»: - 736. *Զի՞նչ* է նստիլն: - 736. *Զի՞նչ* է փառացն աթոռ: - 736. *Զի՞նչ* է աջ կողմն քրիստոսի և ձախս: - 738. *Զի՞նչ* է որ ասէ «օրհնեալք» կամ «անիծեալք». և ո՛չ թէ՝ ես օրհնեմ, կամ անիծանեմ: - 740. *Զի՞նչ* ցուցանէ վճիռ դատաստանին: - 740. *Զի՞նչ* է ասելն՝ դատել զկենդանիս և զմեռեալս: - 740. *Զի՞նչ* է որ ասէ դանիէլ «դպրութիւնք բացին»: - 741. Որք որպէս գիրք յայնժամ բացեալք եղիցին. քանզի վարդապետութիւնք նոցա և օրինակք՝ ամենեցունց յայտնեսցին. ի յորս ամենեքեան իբրև ի գիրս տեսցեն թէ *զի՞նչ* պարտ էր առնել կամ խոտել ինքեանց: - 742. Իսկ գիրք կենաց

է գիրքն քրիստոս. ի յորում ամենեքեան իբրև ի գիրս ընթերցցին թէ *զինչ* ի պատուիրանաց նորա արարին: - 742. *Զի՞նչ* է որ ասէ «**բ** և **գ** վկայիւք հաստատի ամենայն բան»: - 742. *Զի՞նչ* է՝ դնին կշիռք արդարութեան: - 744. *Զի՞նչ* է ասելն «եդից զողորմութիւն իմ ի կշիռս»: - 747. *Զի՞նչ* է որ ասէ տեսիլն, «կթեա՛ զխաղողն և ա՛րկ ի հնձանն աստուծոյ ի մեծ»: - 748. *Զինչ* է որ ասէ «ծուխ նոցա ելցէ յաւիտեան»: - 749. *Զի՞նչ* է որ ասէ տեսիլն, «ո՛չ հանգչին ի տանջանս. ո՛չ զտիւ և ո՛չ զգիշեր»: - 750. *Զի՞նչ* է խաւարն արտաքին: - 753. *Զի՞նչ* է «որդն նոցա ո՛չ մեռանի»: - 753. *Զի՞նչ* է երեսնաւոր վաթսունաւոր և հարիւրաւորն առակ աւետարանին: - 757. Ա՛րդ՝ եթէ ա՛յժմ են յերկինս և յայնժամն ի սրբեալ երկիր, *զի՞նչ* է փառաց փառքն: - 759. *Զի՞նչ* իցէ որ ասէ առաքեալն, եթէ՝ «ելանեմք ամպովք ընդ առաջ տն յօդս. և այնպէս յամենայն ժամ ընդ տն լինիցիմք»: - 759. Յետ այնորիկ *զի՞նչ* լինիցի բնակութիւն աշխարհի: - 759. Ապա *զի՞նչ* է տեղիք անկելոցն: - 760. *Զի՞նչ* իցէ ուրախութիւն սրբոցն և փառք: - 761. Եւ *զի՞նչ* իցեն այդորիկ, ընդարձակագո՛յն մեկնեա: - 761. Ա՛րդ՝ սոքա ամենայնքին մասնաւոր և փոփոխական են և հակառակաւ. *զի՞նչ* իմանաս զանտի երանութիւնն. որ բոլորովիմբ է, և անփոփոխ, և առանց հակառակի յաւիտենական: - 762. Զի թէ աստուածային բարութեանց շաւղացն շաւիղք այս քան ունին քաղցրութիւնս, *զի՞նչ* ունի ինքն աղբիւրն անուշութեան աստուած: - 762. *Զի՞նչ* է ծառն կենաց և պտուղն երկոտասան զոր ասէ տեսիլն: - 765. Տեսանելի՛ է թէ՝ *զի՞նչ* արդեօք իցէ ոչ ունելն ի մտի որ է՛ մոռանալ. այսինքն զանցեալն ո՛չ յիշել. և զհանդերձեալն ոչ տեսանել. իսկ զներկայն ո՛չ գիտել: - 774. Կամ *զինչ* անհնարին սաստ, եթէ ոք խոտեսցէ զսուրբ հոգւոյն խօսեցեալս ի գիրս սուրբս. ընտրելով զոմն յարուցեալ ի մեռելոց. կնքելով առակաւոր բանին, «զի թէ սուրբ գրոց ոչ լուիցեն, և ո՛չ թէ ի մեռելոց ոք յարիցէ և հաւատասցեն»: - 775. Եւ այն *զի՞նչ* իցէ, զի սա միշտ մի և նոյնպէս մնայ. իսկ նա՛ ատանօր ողորմի զղջացելոցն, և ո՛չ ոչ նոյնպիսոյն. իսկ անդանօր ո՛չ զղջացելոց ողորմի մարդկան մեղաւորաց և ոչ անզղջից անմարմնոց շեղելոց: - 778. Ապա թէ *զի՞նչ* է իսկապէս իմացումն, լուծանել խնդրեմ: - 781. Ապա *զի՞նչ* է այն՝ որ զշնորհս աւազանին ոչ ուրացութիւն և ո՛չ այլ ինչ նոյնպիսի մերկացուցանել կարէ: - 782. *Զի՞նչ* օգուտ է և հաւատալ նոցա: - 784. Թէ վասն *զի՞նչ* հարկի ամենայն անդրանիկ ե օր աւելի կայ առ ծնողին: - 785. Թէ *զի՞նչ* է ասելն ի սահման հաստատութեանն, մասամբ ինչ զօրութեամբ և մասամբ ինչ ներգործութեամբ: - 787. *Զի՞նչ* է սիւնքն աշխարհիս որ դողային ի յարութեանն քրիստոսի ի մեռելոց: - 788

***ԶԻՆՉ ԵՒ, ԶԻՆՉ ԵՒ ԻՑԷ +*** Ասեմք առ այս, եթէ ամենայն իր *զինչ և իցէ* ի ներկայս՝ գիտեմք զնա ի յէութեան իւրում. իսկ ի հանդերձեալն ո՛չ գիտեմք ի յէութեան իւրում. սակայն գիտեմք զնա ի պատճառ իւր: - 9. Ուստի յա՛յտ է մեծութիւն յանցանացն. քանզի ի հինն *զինչև* մեղանչէր ոք մեծ կամ փոքր՝ պատարագաւն սրբէր. թռչնօք և անասնօք: - 33. Դարձեալ՝ ոչ ինչ պատուական քան զժամանակ. զի *զինչ և իցէ* յաշխարհի՝ երկու մասունքն կարե՛ն համանգամայն գոլ ի միասին բաց ի ժամանակէ և ի հասակէ՛. զի ժամանակին **բ** մասն անհնա՛ր է համանգամայն գոլ ի միասին. զի և **բ** պահք ո՛չ կարեն համանգամայն գոլ: - 199. Եւ *զինչ և իցէ* պատճառաւ զկարգեալն առաքելոցն փոխեցին զծնունդն և զտեառնընդառաջին տօնն: - 482. Խոհեմ մարդն ո՛չ պարտի վաղվաղել ի գործ *զինչ և* է՛. այլ պա՛րտ է նա՛խ խորհիլ որ ո՛չ խաբի: - 579-580. Եւ *զինչ և իցէ*՝ միաւորեմք ընդ միմեանս և խոստովանիմք զբանն աստուած մարմնացեալ անբաժանելի ի մարմնոյ իւրմէ: - 598. Եւ *զինչ և իցէ*՝ խրատէ աստուած զմեզ. - 668. Ասեմք նա՛խ՝ եթէ ամենայն շնորհ *զինչ և իցէ* տուեալ բնութեան, ո՛չ քակտի ի նմանէ. թէպէտ ծածկի երբեմն վասն մեղաց: - 782. Շնորհք որ ի հինն *զինչ և իցէ* փոփոխական գոլով՝ օրինակ նորոյս էր. որպէս քահանայութեան և այլն: - 783

***ԶԻՆՉ ԷՆ +*** Ասեմք առ այս եթէ՝ *զինչ էն* անուամբ կամ սահմանաւ ճանաչի. և անունն յայտնի՛ է ըստ ինքեան: - 140. Զի *զինչ էն* ի գոյացութեան խնդիրն է. որպէս յասելն՝ զի՞նչ է, ասեմք՝ մարդ է, կամ կենդանի: - 311. Իսկ *զինչ էն* ի հանդերձեալն որքան կա՛ր է մեր. ըստ այնմ թէ, «տեսանելո՛ց եմք զնա՛ որպէս և էն»: - 331.

**ԶԻ՞ՆՉՊԷՍ** - Վասն առանձնակի եկեղեցոյս մեր կարգաւ. և *զի՞նչպէս* բաղդատի եկեղեցին՝ մարդն՝ և շինեալն: - 526

**ԶԻՋԱՆԻՄ +** Յինգերորդ՝ ի յուսումն խոնարհութեան մերոյ. զի տեսանելով զմեզ տկար քան զանասունս, մերկ և աղքատ ի մօրէ ծնեալ, խոնարհեալ *զիջանիմք* ի հնազանդութիւն արարչին. և զի մի՛ եկամուտ հպարտութեամբ կրեսցուք զանկումն արուսեկին: - 267. Այլ դու ո՛վ այրդ աստուծոյ մաքրամիտ և ճգնազգեաց միայնաւոր սուրբ հայրդ սահակ, թէ և *զիջանես* եղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ. սակայն կարող ես և զթերին լնուլ և զյաւելորդն կշռել. և զմեզ օգտեցուցանել ի ներգոյէ՛ քոյին պայծառամիտ սրբութեան սրտի: - 558

**ԶԻՋՈՒՄՆ +** Առաջին միտք՝ զի ասաց թէ «հայր գործէ՛ և ես գործեմ». և վասն այնր զչարացան

իրէայքն, այժմ իբր թէ զնուաստագոյնս ճառէ ի *զիջումն* բորբոքման նոցա: - 45. Վասն է՞ր փայլական նմանեցուցանէ *զիջումն* հոգւոյն սրբոյ: - 522. Եւ նա՛ խնդրեաց յաստուծոյ *զիջումն* լուսոյն ի նշան յարութեանն քրիստոսի: - 549

**ԶԻՍՏ +** Որպէս օրինակաւ մասունք հոգւոյ ասացան, նոյնպէս է և մասունք մարմնոյն իւրաքանչիւրոցն գործի... Գնացքն ի *զիստրն*: - 250

**ԶԿԾԵՑՈՒՑԱՆԵՄ +** Որպէս յա՛յտ է ի ծխոյ և ի փոշւոյ և յայլոց. ընդ դէմ գոլոյ պարզութեանցն լուսոյ՝ ի ներքս մտեալ *զկծեցուցանէ* զնա: - 786-787

**ԶԿՆԻ +** Եւ եթէ է մի *զկնի* միոյն, յայտ ուրեմն է թէ նախկինն է սկիզբն: - 21. Իսկ երեք թիւն՝ մի *զկնի* միոյ: - 108. Եւ այս ամենայն ընդդէմ է տեսութեան մեր. զի մեք մասամբ տեսանեմք. և մի *զկնի* միոյ. և առաւել և պակաս գիտութեամբ. և ըստ իրին փոփոխմամբ: - 118. Իսկ մեք *զկնի* գործոյն և կամելոյն և էութեան որպէս ասացաք: - 118. Մետասաներորդ՝ մարդոյս գործ մասնաւոր և մի *զկնի* միոյ. իսկ աստուծոյն համանգամայն և բոլորովիմբ: - 157. Ասեմք եթէ՝ ամենայն արարածք համանգամայն գոյացան յարարչէն. և ո՛չ մի *զկնի* միոյ որպէս օրինակաւ մասունք հոգւոյ ասացան, նոյնպէս է և մասունք մարմնոյն իւրաքանչիւրոցն գործի: - 253. Եւ չորրորդ՝ զի յաւելեր անէծս երկրի *զկնի* հօրն քոյ Ադամայ: - 287. Զի վարդավառին ա՛յն է, յորժամ կրկին **խ** պահեաց մովսէս ի լեառն և լուսաւորեցան երեսքն. վասն այն *զկնի* երկու յիսնակացն տօնեմք: - 373-374. Նախ տապանակն, և այլքն *զկնի*: - 380. Զի աթոռք՝ քերովբէք՝ սերովբէք՝ հաւասարապատիւք են՝ մի համարի դասս. և վեցն *զկնի* նոցա: - 380. Չորրորդ, նախքան զօրէնս և յօրէնն և *զկնի* օրինացն թէ ոչ արդարանամք. և ո՛չ յէ դարուն ոք արդարանայ: - 384. Իններորդ՝ գլուխ և տուտն ցասումն է և տրտմութիւնն *զկնի*. և ամենայն մեղաց յետ գործոցն տրտմութիւն հետևի: - 387. Տասներորդ՝ յետ որոյ հնազանդեցան նմա՛ ամենայն իսրայէլ. և տեառն մերոյ *զկնի* խաչին հաստատեցան ի հաւատս. մանաւանդ յետ է դար կենցաղոյս ամենայն լեզու խոստովան լիցի զտէր յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր ամէն: - 427. Եւ էր արտեմոնս այս *զկնի* առաքելոցն **բճ** ամաւ սուղ ինչ պակաս: - 482. Նախ անարգեցաւ ի պարտէզն *զկնի* արեան քրտանցն յորում մատնեցաւ ի յուդայէ. և իբրև աւազակ ըմբռնեցաւ և կապեցաւ: - 492. Վեցերորդ՝ ածաւ վերստին առ պիղատոս. և անդ խնդրեցին ի խաչ հանել. և *զկնի* ծաղեալ. և թուք ընկալեալ. և ի խաչ դատապարտեցաւ: - 492. Եւ որպէս դևք *զկնի* անկման իւրեանց ոչ կարեն արդարանալ ըստ ինքեան. զի անկումն նոցա մա՛հ է նոցա: - 508. Նոյնպէս և հոգի մարդոյ *զկնի* մահու ո՛չ կարէ արդարանալ ըստ ինքեան. բայց թէ ի ձեռս այլոց վճարի պարտ նոցա և հասանին ողորմութեան: - 508. Վեցերորդ, զի եկեղեցի որ է մարմինն քրիստոսի՝ յետ չարչարանաց նեռինն որ հանդերձեալ է կրել, *զկնի* **խ** աւուր յերկինս համբառնալոց հաւատացեալ լինի: - 521. Չորրորդ, գռեհիկ. զոր սովորութեամբ լուեալ ասեն՝ ձմեռն գայ, և *զկնի* այնորիկ գարուն ամառն և աշուն: - 536. Եւ սուրբն յոհան օծնեցին զեզր կաթողիկոսին և զայլոցն որք թիւրեալք էին *զկնի* քաղկեդոնի: - 541. Առաջին ժողովն եղև ի նիկիայ սրբոց հարց. *զկնի* **յժը**՝ կամ **յլ** ամի ծննդեանն քրիստոսի. և ի ի ամի թագաւորութեանն կոստանդիանոսի: - 542. Երրորդ ժողովն *զկնի* խբ ամի եղև յեփեսոս ի թագաւորութեանն թէոդոսի փոքու ի **ժա** ամի նորին: - 542. Չորրորդ, առ նոյն թագաւորաւն *զկնի* **իդ** ամի եղև արժանաւոր ժողովն եփեսոսի ընդ դէմ եւտիգի. որ առ աչօք ասէր զէտն մարդանալն: - 542. Առաջին ժողովն եղև ի տանս թորգոմայ յարևելից կողմանս. *զկնի* **է** երորդ ամի վախճանելոյ մեծին սահակայ: - 544. Իսկ թագաւորքն առաջին և վերջին. զի կիրակին է թագաւորելն աստուծոյ. այժմ առաջին, և *զկնի* վերջին. կամ աստ կամողացն միայն, և անդ կամողաց և ո՛չ կամողաց: - 627-628. Ապա՛ *զկնի* երից մանկանցն աղօթից որով քաւիմք ի մեղաց. ի փառս տալն ի բարձունս՝ անուշահոտ բուրմամբ նուիրեմք: - 628. Նոցա փառ կամ կցորդ գոյ *զկնի*. և որք որիշ են՝ նոցա կցորդ ո՛չ ասի: - 636. Եւ խաչիւն նախահայրն որ *զկնի*: - 642. ...և նմա սաղմոսն էր ի տաճարին. և ապա՛ այլոցն *զկնի*: - 643. Եւ զորօրինակ *զկնի* մկրտութեանն սկզբնական մեղքն ոչ երևի. նոյնպէս *զկնի* ապաշխարութեան ներգործական մեղքն ծածկի և կորնչի...: - 714. Այսու խորհրդով բարձրացուցանեմք զխաչն ի վերայ վառի. և ժամահար *զկնի*: - 732. Այլ *զկնի* դատաստանին՝ բարիքն թէպէտ տեսցեն զչարսն ի տանջանս, բայց չարքն ո՛չ երբէք այնուհետև տեսցեն զբարիսն որպէս ցուցաւ: - 754. Մինչ *զկնի* կարմիր ծովուն՝ յընկըղմիլն փարաւոնի հանդերձ զօրօքն, զթմբուկն ունելով երգէ՛ զերգն, «օրհնեսցուք զտէր զի փառօք է փառաւորեալ» և այլն: - 764. Երրորդ այնու՝ զի մեղքն որ յոյժ վտանգեաց զմարդիկ, եղիցի փակեալ ի դժոխս *զկնի* աւուրն դատաստանի. զի եղիցի ի դժոխս իբր ի տեղւոջ իւրում. զի ո՛չ կարասցէ մնալ. ո՛չ յերկինս և ո՛չ յերկրի. այլ իջանէ ի դժոխս ներքինս: - 764. Այսպէս և ի նաւորդսն *զկնի* վշտաց նաւաբեկութեանն ցնծան յոյժ. վասն զի երկեա՛ն յոյժ: - 765

**ԶՂՋԱԼԻ +** Չորրորդ՝ ի զղջմանէ. զի ամենայն որ մեղք է՝ *զղջալի* է և խոստովանելի...: - 556

**ԶՂՋԱԿԱՆ +** Վեցերորդ՝ շարժակա՛ն է և *զղջական*: - 164

**ԶՂՋԱՆԱՄ +** Նաև մարդկան չարեաց թոյլ տալ. զի կամ ընտրեսցեն զբարիս՝ կամ յետոյ *զղջասցին*. և այլ պէսպէս նախախնամութեամբ որպէս ինքն գիտէ աստուած՝ ներէ՛ չարեաց. որպէս տեսանելոց եմք յառաջիկայսդ: - 17. Երկրորդ՝ զի ամենայն մեղք զերկիւղն աստուծոյ սանձ ունի. որով և *զղջանայ*: - 33. ...ի մէջ նեղութեանց լինելով՝ յանցեալ մեղացն *զղջանամք* և սրբիմք. և յապագայն զգուշութեամբ պարսպիմք. և ի ներկայն՝ արի՛ և կա՛զմ պատրաստիմք: - 162. Դարձեալ՝ կամքն աստուծոյ անփոփոխ է. զի ո՛չ տարակուսի և ո՛չ *զղջանայ*. ապա թէ արար աստուած զաշխարհս ի գոյութիւն՝ այժմ առնէ յանգոյութիւն, երևի փոփոխումն անփոփոխելոյն. կամ զղջումն և երկբայութիւն. որ օտա՛ր է արարչականն կամաց: - 162. Եւ թէ ոք ասիցէ՝ ապա վասն է՞ր զթողութիւն գտանէ *զղջացեալն*: - 165. Եւ թէ ոք ասիցէ, ընդէ՞ր այլ մեղուցեալն *զղջացեալ* մտանէ ի կարգ, որպէս հպարտն և ագահն և պոռնիկն ո՞չ: - 166. Յասցանէ յայտնի է զի *զղջացեալ* այնպիսին կարէ՛ հաղորդիլ ի ձեռն այլոց. այլ ո՛չ ինքն պատարագել: - 167. Վեցերորդ՝ զի ո՛չ *զղջացաւ* մեղա՛յ ասելով: - 279. Նոյնպէս և ծնունդք սուրբ աւազանին որք են անդրանիկք և անդամք քրիստոսի եղեալք, ագահութեամբ և պոռնկութեամբ կորուսանեն զշնորհն երկնաւոր. և ո՛չ լան և ո՛չ *զղջան* որպէս եսաւ: - 309. Եւ թէ լան և *զղջան* բոլոր սրտիւ ի ձեռն ապաշխարութեան, գտանեն վերըստին զշնորհն անդրանկութեան, և հասանին թողութեան մեղաց: - 309. Զոր թէ ընկենու ոք, լինի երկրաքարշ մարդ և մեղաւոր. և մինչ *զղջացեալ* դարձեալ ըմբռնէ յետոյ, լինի պատճառ կանգնելոյ և փրկութեան: - 332. Չորրորդ՝ խնայեաց զնոսա իբր ի մարդիկ զի *զղջասցեն* փոքր խրատովն և ի մեծ պատուհասէն զերծանիցին. այլ նոքա խստացան մինչև զամենայնն կրեցին: - 333. Ողորմած առ *զղջացեալս*: - 351. Երբ զերեք հասակի մեղսն ներէ աստուած՝ և թէ ի չորրորդն ո՛չ *զղջանայ*, յայնժամ պատուհասէ՛: - 351. Եւ ո՛չ սրբին մինչև *զղջասցին* և խոստովանեսցին զմեղսն: - 370. Երկրորդ՝ մեղք եօթնից զգայարանացն պակասի. և արդարութիւն որ մինն է հաստատի առ *զղջացեալս*: - 374. Իսկ դադան ամենևին անզեղջ մնաց. թէպէտ գնաց մովսէս ի խորան նոցա՝ ո՛չ *զղջացան*: - 382. Եւ տե՛ս զշնորհս խոստովանութեան. վասն այն որ *զղջացաւ* և յայտնեաց, ի հնգէն զմին տայ տուգանք: - 384. Եւ թէ ոչ էր *զղջացեալ*, միոյն **դ** և **ե** էր տուգանք գողին: - 384. Դարձեալ՝ ականայ սպանօղն ցուցանէ *զզղջացեալն* ի մեղաց: - 392. Իսկ յետ մահու ա՛յնոցիկ հոգւոց որք *զղջան* կամ խոստովանին զմեղս, քաղաք ապաստանի է նոցա ի կայանս հոգւոցն տրտմութիւն և ցաւն վասն փոխարինաց մինչ մեռանի քահանայն մեծ. որ եկեղեցի սուրբ՝ պատարագաւ և աղօթիւք և ողորմութեամբ հատուցանէ՛ զպարտս նոցա և ազատին: - 392. Վեցերորդ՝ ի յոյս և յօրինակ ամենայն մեղաւորաց. որք *զղջան* և գտանեն զթողութիւն մեղաց: - 432. Զի գա՛յ զղջումն և խոստովանութիւն՝ որ զմեղքն բառնայ և զպատիժն ընդ նմին. որպէս հատեալ տունկ՝ չորանան ճիւղքն. որ բոլորով սրտիւ *զղջայ* և խոստովանի և այլ ո՛չ գործէ: - 432. Նա՛խ՝ ի յոյս թողութեան մեղուցելոց. զի և մեք *զղջացեալ* ապաշխարեմք զմեղս: - 433. Եւ տէրն *զզղջացեալն* փրկէ, և զանզեղջսն կորուսանէ: - 441. Եւ յորժամ *զղջանամք* ի մեղաց՝ նախ խոստովանութեամբ շինեմք զտաճար սրբութեան մերոյ. և ապաշխարութեամբն որ է՛ փոխարէնքն՝ կանգնեմք զպարիսպն եօթնիւք զգայութեամբք: - 448. Նոյնպէս և որք անբիծ են հաւատովք և սուրբ գործովք. և կամ որք *զղջացեալ* յետս դառնան ի մեղաց և ի հերձուածողաց. նոցա՛ է արձակումն և օրհնութիւնն: - 540. Եւ յետոյ բազումք *զղջացան* և ասացին, պատառեցաք զկանոնս հաւատոյ: - 543. Այլ արդ՝ *զղջանալ* և խոստովանիլ պարտ է զհպարտութիւն՝ զնախանձ՝ զատելութիւն՝ և զայլն, և ապա՛ թողութիւն գտանել: - 556. Դարձեալ ևս յայտնի. որ խորհրդովն է պղծեալ՝ ո՛չ կարծէ զինքն մեղանչական գոլ. այլ ի գործ մարմնոյն իմանայ զչարիս իւր *զղջա՛յ* և ապաշխարէ: - 558. Տասներորդ՝ զի ամենայն մեղաւորաց ներէ՛ աստուած ժամանակս ինչ զի *զղջասցին*. իսկ հպարտին ոչ...: - 562. Եւ թէ հրէա ոմն ետես զի հում միս արիւնաթաթախ տայր ժողովրդեանն. և *զղջացաւ* անկաւ յոտս սրբոյն և մկրտեցաւ: - 599. զի յորժամ մեղանչեմք, գրիմք ի պատիժն յաւիտենից. այլ ի *զղջանալն* և փոխիլն մեր, փոխէ՛ աստուած և զպատիժն ի ժամանակեայս: - 602. Եւ է՛ խոստովանութիւն որ զարմատ մեղացն քակէ՛ ի սրտէն և *զղջացեալ* ի մեղաց, հաստա՛տ է ի կամս և ի միտս այլ ո՛չ մեղանչել...: - 603. Հինգերորդ՝ որք բոլորովիմբ *զղջացեալք* և թողեալք զմեղս՝ գործեն զբարիս. զնոսա հովուէ՛ դպիրն սաղմոսիւք և ալէլուիւք: - 608. ...և *զղջացան* և խոստովանեցան զմեղս...: - 683. Եւ թէպէտ ամենայն մեղաւոր *զղջանայ* յետ մահու, այլ ո՛չ կարէ ապաշխարել...: - 684. Այլ հոգի դատարկ ի քաւարանին աչս ո՛չ ունի զի լացցէ որով յարատ հայեցաւ. և ո՛չ մարմին զի պահեսցէ և աղօթեսցէ. այլ և ո՛չ զղջումն. զի հոգին ինքն ըստ ինքեան ո՛չ կարէ *զղջալ*: - 699. Ութերորդ, այլ և *զղջացեալքն* զերեսնաւորն. և խոստովանեալքն զկաւորն. և ապաշխարեալքն հատուցմամբ՝ զհարիւրաւորն: - 758. Այլ և վկայէ՛ սիրաք զի *զղջացաւ* ադամ...: - 778. Եթէ յարդեան ժամանակիս հաւատարիմ է, զի որ ոք և իցէ յանցաւոր, եթէ *զղջասցի* և ատեսցէ զմեղս ըստ մարգարէին՝

խոստովանութեամբն առնու զմաքրութիւն և զվարձս ապաշխարութեան: - 778. Իսկ ի հանդերձելումն ապա զիա՞րդ թէ բազում անգամ *զղջասցին* ո՛չ գտանեն թողութիւն ասէ գիրն: - 778. Եւ այն զի՞նչ իցէ, զի սա միշտ մի և նոյնպէս մնայ. իսկ նա՛ աստանօր ողորմի *զղջացելոցն*, և ո՛չ ոչ նոյնպիսոյն. իսկ անդանօր ո՛չ *զղջացելոց* ողորմի մարդկան մեղաւորաց և ոչ անզղջից անմարմնոց չեղելոց: - 778. Իսկ թէ որ ի կեանս յայս *զղջասցին* ատելով զմեղս և խոստովանին, առցեն զվարձս ապաշխարութեան որ է՛ թողութիւն մեղաց. առանց երկբայութեան է այս: - 780. Իսկ դժոխայինքն թէ և *զղջան* կամ խոստովանին, արտաքոյ սոցա՛ է. վասն որոյ ո՛չ հանդիպին թողութեան...: - 780

**ԶՂՋՈՒՄՆ +** Երկրորդ՝ զի նոքա *զղջումն* ունին. և յա՛յտ է ի հեթանոսաց հաւատացելոց: - 33. Դարձեալ՝ կամքն աստուծոյ անփոփոխ է. զի ո՛չ տարակուսի և ո՛չ զղջանայ. ապա թէ արար աստուած զաշխարհս ի գոյութիւն՝ այժմ առնէ յանգոյութիւն, երևի փոփոխումն անփոփոխելոյն. կամ *զղջումն* և երկբայութիւն. որ օտա՛ր է արարչականն կամաց: - 162. Նա՛խ՝ եթէ թողութիւնն է հետևեալ և կայացեալ ի *զղջումն*. և *զղջումն* է ի կամքն. և կամքն է ի կարելեացն. վասն որոյ ներընդունի զթողութիւն ի ձեռն *զղջման*: - 165. Ասեմք առ այս Նա՛խ՝ եթէ թողութիւնն է ի *զղջումն*. և կարգն է ի յանձն ապականեալ. ապա ուրեմն իրաւի թէպէտ զթողութիւն ընկալաւ *զղջմամբն*, սակայն ի կարգն ո՛չ մտանէ ապականեալ և շրջեալ անձամբ և բնութեամբ, զորօրինակ բեկեալ և կցեալ անօթ՝ ո՛չ թւի ի կարգ անարատիցն: - 166. Դարձեալ ասեմք թէ՝ ամենայն մեղաց մտածումն՝ *զղջո՛ւմն* է նորին. իսկ պոռնկութեան մտածումն՝ վերստին նորոգո՛ւմն է ախտին: - 166. Ապա ո՛չ է նմանապէս ամենայն մեղաց *զղջումն* և ապաշխարութիւն: - 166. Եօթներորդ՝ զի ստեաց աստուծոյ ի հարցանելն վասն *զղջման*: - 287. Դարձեալ՝ *զղջմամբ* սատակի չար խորհուրդն. և ապա՛ խոստովանիմք լեզուաւ. և զնոսա փոխեալ գործե՛մք զբարիս: - 380. Չորրորդ, **գ** օրն ի մեզ *զղջմամբ* և խոստովանութեամբ և փոխարինաւն հանգչիմք: - 380. Այլ որ զուղիղն ասեն ա՛յս է, կորխ՝ եցոյց զօրինակ *զղջման*. զի լուաւ խրատուն մովսէսի և մնաց ընտրութեանն աստուծոյ ի դուռն խորանին: - 382. Երրորդ, *զղջումն* խոստովանութիւն՝ և թողութիւնն նա՛խ է. և ապա՛ ա՛յլ գործք ապաշխարութեան: - 384. Երրորդ՝ յորժամ ի խոստովանութիւն և յապաշխարութիւն գայ, լինի ներելի և ակամայ. զի թէ նախ քան զմեղանչելն ակամայն, և եթէ յետ մեղացն ակամայն, լինի *զղջմամբն* ներելի և թողելի: - 385. Կամ *զղջումն* խոստովանութիւնն՝ և փոխարէնքն: - 392. Երկրորդ՝ զի գիտէր աստուած *զզղջումն* դաւթի: - 432. Երրորդ՝ զի որք լսեցին զմեղսն դաւթի, տեսցեն և *զզղջումն*: - 432. Եւ վասն զի նաթան շարժեաց ի *զղջումն* զկէս պատժոյն կրեաց: - 432. Զի գա՛յ *զղջումն* և խոստովանութիւն՝ որ զմեղքն բառնայ և զպատիժն ընդ նմին. որպէս հատեալ տունկ՝ չորանան ճիւղքն. որ բոլորով սրտիւ զղջայ և խոստովանի և այլ ո՛չ գործէ: - 432. Որպէս դաւթին յետ *զղջմանն* յիշատակութիւն մեղացն մնաց, ապա նո՛յնպէս և ամենայն մարդոյ մնասցէ՞ թէպէտ և խոստովանի: - 432. Իսկ զգիր քրիստոնէից զոր յետ աւազանին մեղանչեմք և գրեմք զյանցանս, զայն պատառէ ապաշխարութիւնն. որ է՛ *զղջումն* սրտի և խոստովանութիւն լեզուի և հատուցումն գործոց մարմնոյ: - 482. Առ երկրորդն ասեմք թէ, ընդ ուրացութիւնն պետրոսի՝ սիրտ ամենայն առաքելոցն տրտմեցան և կոտորեցան. և ի *զղջումն* նորա ամենեքեան հաստատեցան վերստին: - 547. Չորրորդ՝ ի *զղջմանէ*. զի ամենայն որ մեղք է՝ զղջալի է և խոստովանելի...: - 556. Ապա ուրեմն յա՛յտ է թէ՝ առաւել չա՛ր է խորհուրդն արբեալ որ շարժէ՛ ի գործն. քան զգործն որ շարժէ՛ ի *զղջումն*: - 558. Ութերորդ, ո՛չ ասաց՝ թէ խնդրեսցէ ապաշխարութեամբ՝ արգելից զգութ և զողորմութիւն. այլ թէ՝ «ո՛չ թողցի». որով յա՛յտ է թէ առանց *զղջման* և տանջանաց ո՛չ թողցի: - 566. Ապաշխարութիւնն է՛ խորհուրդ արդարութեան. զի ի ձեռն *զղջման* և խոստովանութեան և այլոցն արդարանամք ի մեղաց: - 587. Եւ ապաշխարութիւնն **գ** բաժին ունի. այսինքն *զղջումն* սրտի. խոստովանութիւն բերանոյ. և ապաշխարութիւն գործով: - 601. Զի ատելութիւն մեղաց *զղջումն* է սրտին. և խոստովանի բերանով. և զամօթն կրէ փոխանակ պատժոյն: - 603. Ասեն վարդապետք թէ՝ զմի անգամ խոստովանեալն բարի հաւատով և կատարեալ *զղջմամբ*՝ ո՛չ է պարտ կրկնել. եթէ ոչ վասն չորից պատճառաց: - 603. Վեցերորդ՝ արտասուքն *զզղջումն* և զսուգն նշանակէ՛ զոր ունիմք վասն մեղաց: - 619. Նաև երիւք լինի թողութիւն մեղաց. այսինքն *զղջմամբ* խոստովանութեամբ և ապաշխարութեամբ. որ լինի մտօք բանիւ և գործով: - 681. Այլ հոգի դատարկ ի քաւարանին աչս ո՛չ ունի զի լացցէ որով յարատ հայեցաւ. և ո՛չ մարմին զի պահեսցէ և աղօթեսցէ. այլ և ո՛չ *զղջումն*. զի հոգին ինքն ըստ ինքեան ո՛չ կարէ զղջալ: - 699. Յաւատացեալ արդարք. որք ըստ օրինաց հնոյն կամ նորոյս գործեցին զարդարութիւն. կամ որք սխալեցին և ապաշխարեցին զմեղս *զղջմամբ* խոստովանութեամբ պահօք աղօթիւք ողորմութեամբ և այլովք: - 739. Այլ զանազանի. զի դևք ամենևին ո՛չ ունին *զղջումն* և ոչ կարեն. վասն որոյ ո՛չ հանդիպին թողութեան. իսկ մեղաւորն ունի *զղջումն* այլ ո՛չ կարէ վարձաւորիլ: - 780. Երկրորդ՝ զի ո՛չ ունին զգործս *զղջման*: - 780. Վեցերորդ՝ զի անցեա՛լ է ժամանակն յորում պահանջի *զղջումն*: - 780.

Եւ յայսցանէ երևի չորս ինչ հարկաւոր *զղջման*. այսինքն է որպիսութիւնն, ժամանակն, յորմէ, վասն որոյ: - 780. Այսպէս և ժանգ յանցանաց մկրտելոց և քահանայից՝ բառնայ զգործ՝ կամ զնշանակութիւն շնորհացն. իսկ յետ սրբութեան *զղջմամբ*՝ զիա՞րդ կրկնի ունակացեալն ի նմա՛: - 782. Այսպէս և ադամ *զղջմամբ* իւրով ընկալաւ. այսինքն երևեցոյց յինքեան զկորուսեալ շնորհն: - 783. Զի որպէս բառնի վասն մեղաց, նոյնպէս տացի վասն *զղջմանն:* - 783. Չորրորդ, հաւատն է՛ աստուածային առաքինութիւն. իսկ դևք զի են խստացեալ ի չար՝ ո՛չ ունին *զղջումն* որ է բարոյական. ապա և ոչ հաւատ որ է վերնագոյն և բարի կամաց խոկումն առ աստուած: - 784. Որպէս և այժմ մեռելոց *զղջումն* և խոստովանիլն անվա՛րձ է ամենևին և ակամայ: - 785

**ԶՄԱՅԼԻՄ +** Եւ ըմբռնօղ՝ զի բանական իմացմամբ մտաց *զմայլեալ* էր միաւորութեամբ աստուածային փառացն: - 100. Երրորդ՝ համակ հանապազորդ ներգործական դարձումն բոլոր մարդոյն առ աստուած. որով մարդն աստուածային քաղցրութեամբն *զմայլի*. որպէս հրեշտակք ի բոլոր սրտէ՝ յամենայն անձնէ և յամենայն զօրութենէ միշտ ներգործաբար դիմեն առ աստուած. և յիւրաքանչիւրսն ճառագայթի՛ ի նմա՛ աստուած: - 462. Եւ *զմայլեալ* ի բոլոր սրտէ և յամենայն անձնէ և ի զօրութենէ միշտ ներգործապէս դիմեալ առ աստուած հաստատեցաւ: - 463. Նոյնպէս քրիստոսիւ տեսանեմք զհայր աստուած, և առնեմք զկամս նորա. և կերակրիմք և *զմայլիմք* հոգէպէս: - 532. ...և թողութեան գինեաւն *զմայլիմք*...: - 615. ...այսպէս և հոգին *զմայլի* տեսութեամբ սուրբ Երրորդութեանն...: - 672. Այսրքիկ են խնծորք նոր և հին. որք հոտով զուարճացուցանեն, և համով *զմայլե՛ն*: - 756

**ԶՄԱՅԼՈՒՄՆ +** Չորրորդ՝ ի խրախութիւն գինւոյ՝ **ա**՝ մեղք գործին....**բ**՝ արբեցութիւն. **գ**՝ *զմայլումն* զգայութեանց. **դ**՝ փափկութիւն մարմնոյ...: - 322. Եւ ի կողից տեառն բղխեցին աղբերք ի *զմայլումն* պասքեցելոց և ի լուացումն ախտաժէտ հոգւոց: - 329. Կնդրուկ անուշահոտ բուրեալ. և Գինի ուրախարար ի *զմայլումն* հոգևոր: - 361. Եւ էր կատարեալ ի *զմայլումն*: - 470. Առաջին արքայութիւնն է բանն անճառելի: Երկրորդն խորանն *զինուորական*: Երրորդն հոգւոյ զմայլումն... Երրորդն հոգւոյ *զմայլումն*: - 755

**ԶՄՈՒՌՍ +** Եւ թէպէտ յովսէ՛փ իջոյց ի խաչէն, և յովսէփ և նիկոդիմոս պատեցին, այլ ինքն կամաւն էջ ի բազուկսն յովսեփայ և պատեցաւ *զմռով*: - 316. Չորրորդ՝ օծումն *զըմռոյ*. որպէս մեռելոց: - 474. Եւ զօծումն *զըմռոյ*՝ յորժամ թաղեցաւ: - 474

**ԶՄՌԵՄ +** Եւ սոքա ամենայն ստուգե՛ն զյարութիւն նորա թէ ո՛չ է գողացեալ. զի գողն ո՛չ ծալէր զվարշամակն և զկտաւն *զմռեալ:* - 517

**ԶՄՌՆԵՆԻ +** Ծաղիկ *զմռնեաց*. նմանէ պոյտն ծաղկի. և Կինամոն. արմա՛տ է խոտոյ ի տմորիս հայոց. և Խնկեղէգն. որ յարմատս ո՛չ ամենայն եղեգան լինի. և Յիրիկ. խէ՛ժ է ծառոց: - 349

**ԶՄՐՈՒԽՏ +** *Զմրուխտ*. կանա՛չ է և դեղնագոյն. գտանի ի փիսոն գետ. Դևի՛ է և Յոհաննէս: - 348. Յասպիս՝ նմա՛ն է *զմրխտի* դեղնագոյն. գտանի յեզեր թորքոմէտոս գետոյ յեզր կասբից ծովու: - 348

**ԶՆԱԱՍ** - Իններորդ՝ յետ է աւուր կորոյս *զնաաս* խռովարար, որ բրէր զաջոյ ակն իսրայէլի. և տէր մեր զխռովարար բանսարկուն, որ բրէ՛ զակն իմացականին մարդոյ...: - 427

**ԶՈՅ +** Պատասխանեմք թէ՝ ո՛չ են հեթանոսաց աստուածքն մի, այլ բազումք և միմեանց հակառակք կամօք պաշտմանն և *զոհիւք* խնդրոյն: - 54. Եւ վասն անխմոր և անմեղր *զոհից*. և վասն աղի: - 284. Զի ո՛չ հաճեցաւ ի նա և ո՛չ ի *զոհս* նորա. և տրտմեցան երեսք նորա և այլն: - 287. Նոյնպէս և որք հաղորդին մարմնոյն քրիստոսի, ո՛չ մերձենան ի զանազան ախտս մարմնական անթլփատութեան և *զոհից* դիւական: - 301. Եւ յամենայն աւուր ըստ թուոյ նոցա **ժ** *զոհ* մատուցանէր, և զուարակ մի վասն սրբութեան մտաց: - 321. Եւ նախ ասեմք զանկենդանն որ կոչի *զոհ*. որ է՛ մասնաւոր նւէրք. որպէս նաշիհ և իւղ և խունկ: - 357. Ա՛յսրքիկ են պատարագք *զոհիցն* ի նաշիոյ: - 358. Եօթներորդ՝ *զոհ*՝ պատարագն որ ի նաշիոյ և յիւղոյ որպէս ասացաւ ի վերոյ: - 358. Եւ *զոհ* նաշիոյ՝ յառաւօտն և յերեկոյն: - 359. Այլ և ալիւր գարեղէն *զոհ* յիշատակի փործութեան կանանց: - 359. Այլ և *զոհ* ուխտաւորաց զմազ հերացն այրել: - 359. Է՛ և ա՛յլ իմն տեսութիւն բանիս. զի կամի՛ զպաշտօնս մեր որոշել ի կռոց *զոհիցն*. զի սուտանուն դիքն խնդրէին ուստերս և դստերս և արջառս և ոչխարս զոհել և սպանումն օտարաց: - 396. Եւ հաց ոչ ուտել և ջուր ոչ ըմպել. զի անընդունելի՛ էր մարմին և արիւն *զոհիցն*: - 442-443. Եւ զի պիղծ և գարշելի էր *զոհք* կռոցն և կերակուրք հեթանոսաց: - 443. Ո՞չ ապաքէն առաքեալքն եդին զչորսս զայս. խորշիլ յարենէ և ի *զոհից* ի հեղձուցելոյ և ի պոռնկութենէ: - 552. Իսկ օրհնութիւն աղին, զի որոշեսցի ի *զոհից* կռոց, և ի հասարակ զենմանց...: - 657

**ԶՈՅԱԼ կմ ԶՕՅԱԼ +** Եւ է երկինք՝ է գօտիքն են է մոլորակացն. որ է *Զոհա՛լն*. Երևա՛կն. Յրա՛տն. Արեգա՛կն. Լուսնթա՛գն. Փայլածո՛ւն և Լուսինն: - 183. Եւ է՛ առաջին և վերջին մոլորակացն Երևակն. զոր պարսիկք *զօհալ* կոչեն. ցուրտ է և չոր. բ ամ և կէս յամէ ի կենդանակերպն. և յերեսուն ամն վճարէ՛ զամենայն: - 189.

*Զգօհալն* Կռօնոսի. Զմուշթարին Դիոսի. Զմառեխն Արէսի. Զարեգակն Իլիոսի. կամ Զևսիլոսի. Զօհրայն. Ափրոդիտեայ. Զօտարիտն Երմեսի. Զլուսինն Սելինի: - 190. Յինգերորդն փայծեղն է. որ է՛ ախոռ այրեցած արեանն. ցո՛ւրտ է և չոր. և ունի տանուտէր *զգոհալն* որ է երևակն ցուրտ և չոր գոլով: - 241. Դարձեալ ժերորդ՝ աստեղագէտք ասեն թէ յղացումն ամենայն մարդոյ *Զօհալին* է. և յիւրաքանչիւր մոլորակս ամիս մի թուեալ՝ լինի ծնունդն ի մուշթարին **թ** ամիս: - 264

**ԶՈՅԵՄ +** Նա՛խ՝ զի սովոր էին յեգիպտոս կռո՛ց *զոհել*, զայն նուէրքն ի յինքն ընկալաւ: - 355. Կենդանեաց զենմունքն զի յանունն աստուծոյ էր՝ սրբէր զմարդ. վասն է՞ր ապա ոչ սրբեին կռապաշտքն. զի և նոքա յաստուծոյ անունն *զոհէին* և խնկէին: - 361. Եւ զոր ուտէին և դիւաց *զոհէին* պիղծ ասաց. որպէս զխո՛զ, զճագա՛ր, և զնապաստակ: - 364. Նա՛խ՝ զի հեթանոսքն զանարա՛տն *զոհէին*: - 370. Է՛ և ա՛յլ իմն տեսութիւն բանիս. զի կամի՛ զպաշտօնս մեր որոշել ի կռոց զոհիցն. զի սուտանուն դիքն խնդրէին ուստերս և դստերս և արջառս և ոչխարս *զոհել* և սպանումն օտարաց: - 396. Սա՛ է որ զդուստր իւր աստուծոյ *զոհեաց:* - 420. Երրորդ՝ զի ոտք և ձեռք կապեալ բազումք զզաւակս *զոհէին* նմա. նոյնպէս և նորայն հատան: - 426. Զի հեթանոսք *զոհէին* արեամբ մանկանց. և հրէայք արեամբ անբան անասնոց կատարէին զնաւակատիսս իւրեանց: - 509

**ԶՈՅԳ +** Իսկ միաւորութեանն իմանալ՝ ոչ է ինչ մեծ. այլ է հաւասար որպէս առօղն՝ նոյնպէս և առեալն *զոյգ* աստուած և մարդ: - 39. Դարձեալ՝ հարցանեմ, հայր և որդի *զո՛յգ* բղխեն զհոգի, թէ անզոյգ: - 63. Զի եթէ *զոյգ* և հաւասար, ո՛չ գոյ առ նոսա կատարեալ բղխօղ. զի երկոքինն ի մի բղխողի տեղի են: - 63. Իսկ միւսն մա՛րդ էր բնութեամբ յարարեալ և ստեղծեալ բնութենէ. և խառնելով ընդ բանին՝ եղև առեալն որպէս առօղն *զո՛յգ* և հաւասար աստուած...: - 79. Նախ՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս սեռի՝ ո՛չ գոյ առաջին և վերջին. որպէս բաժանի կենդանին ի բանականն և յանբանն. և ո՛չ է ասել թէ՝ բանականն յառաջ է քան զանբանն. այլ *զոյգ* և համայնք են: - 87. Նոյնպէս և քրիստոսն անուն՝ և տէր՝ և աստուած՝ և այլն՝ *զո՛յգ* և հաւասա՛ր է մարդկութեան իւրոյ և աստուածութեանն. և ո՛չ առաւել և նուազ. կամ տկար և հզօր. կամ անգէտ և ամենագէտ. և որ ինչ այսմ նման: - 89. Յամանգամայն՝ այսինքն բոլորովիմբ. կամ *զոյգ* և հաւասար. կամ միանգամայն: - 90. Իսկ *զոյգ* և հաւասար՝ ընդ դէմ է նոցա: - 90. Երկրորդ՝ Երրորդութիւնն ցուցանէ զհամագոյութիւն երիցն. զի ո՛չ է առաջին և վերջին ի նոսա. այլ՝ *զո՛յգ* և համանգամայն: - 107-108. Եւ *զոյգն*. զի հոգի և մարմին՝ աստուածութեամբն միատեսակ եղեալ: - 361. Եւ սա *զո՛յգ* է ամենեցուն: - 464. Նոյնպէս և ադամ զծնեալս յինքենէ՝ այլ և այլ *զուգիցն* կապէր: - 534. Յինգերորդ, զի *զոյգ զոյգ* արար զնոսա. որպէս ասէ՝ «զոր աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ»: - 612. Եւ դարձեալ՝ հոգի և մարմին *զոյգ* և ի միասին ստեղծան և ծնան ի մարմնաւոր կեանքս...: - 669. ...*զոյգ* և ի միասին մտցեն ի հոգևոր կեանքն: - 669. Երրորդ, զի *զոյգ* և ի միասին ստեղծան և ծնան ի մարմնաւոր կեանքն հոգին և մարմինն...: - 691. ...*զոյգ* և ի միասին մտցեն ի հոգևոր կեանքն որպէս ասացաւ ի վերոյ: - 691. Իսկ կշռողականն է *զոյգ* արդարութեամբ կշռել. որպէս յորժամ ողորմելով միոյն՝ պատժէ՛ զընդդիմակն նորին. որպէս փրկեցաւ իսրայէլ և պատժեցաւ եգիպտոս. և յազատիլ բնութեան մարդոյս՝ պատժեցաւ սատանայ: - 747. Ա՛րդ՝ առաջինն անխա՛ռն է արդարութեան. երկրորդն նուա՛զ է. երրորդն *զո՛յգ* է: - 747

**ԶՈՆՈՐԻՈՍ** - Արար **զ** երրորդ ժողով՝ ագաթոն պապն հռօմայ. ի թագաւորութեան հօրն յուստիանու ի կոստանդնուպօլիս: Եւ պատրիարգունք էին անդ, Գէորգէոս կոստանդնուպօլսի. Թէոփիլոս անտիոքու. Պետրոս աղէքսանդրի: Եւ աքսորեցին զթէոդորոս զփարանու եպիսկոպոսն: *Զոնորիոս* ի հռօմայ: - 543

**ԶՈՊԱՅ +** *Զոպայն* ջերմ, յոյսն: - 368. Դարձեալ՝ կրկին հաւն նշանակէ՛ զքրիստոս. Փայտն, զխաչն. և Կարմիր արիւնն. զի աստուծոյ է արիւն. և *Զոպայն*, զհոգին սուրբ: - 368. Երրորդ՝ ջուր սրսկման *զոպային*, է՛ տարածումն աջոյն՝ և օրհնութիւնն ժողովոյն ի շնորհաց սուրբ հոգւոյն: - 384

**ԶՈՎԱՆԱՄ +** Եւ ինքն որդիէ՛ զօրութիւն հօր. և ծարաւ փրկութեան մարդկան, նովաւ *զովացեալ*: - 423. Եւ թէ ասեն՝ ջուրն կրկին յատկութիւն ունի. այսինքն *զովացնէ* և լուանայ: - 596. Զի նովաւ *զովացան* ամենայն ազգք. և բժշկեցան վէրք հոգոց մարդկան: - 768

**ԶՈՎԱՑՈՒՑԱՆԵՄ +** Երրորդ՝ ջուր բեթլէհէմի է՛ տէր մեր. որ զծարաւս մեր *զովացոյց*: - 434. Երրորդ՝ զջերմութիւն սրտին *զովացուցանէ* օդ: - 523. Ութերորդ՝ որք առեալ զօդ դարձեալ արտաքս փչեն ներհակ իմն գործով. այսինքն ջերմացուցանեն և *զովացուցանեն*. վառեն և շիջուցանեն: - 523

**ԶՈՐԱԿԱՑՆ** - Եւ զանազան տեսութիւնք վարդապետաց չեն ընդ դէմ միմեանց. այլ զորօրինակ ոմն զական պատուականութիւն, և այլ ոմն զբնութեան, և կէսք զասդողութեան, և ոմանք *զորակացն* գեղեցկութեանց, պատմեն զմի և զնոյն ական իր: - 781-782

**ԶՈՐ ՕՐԻՆԱԿ, ԶՈՐՕՐԻՆԱԿ +** *Զոր օրինակ*՝ յորժամ ասեմք՝ լինի անձրև կամ ո՛չ, ի հարկէ մինն ի

նոցանէ լինի: - 8. *Զորօրինակ*՝ իրն ի ներկայս որ է նիւթ ներընդունակ՝ ունի կրկին զօրութիւն. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ, և կարէ՛ ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ ջերմն գոլ, և կարէ՛ ո՛չ գոլ. և մինն ի նոցանէ՛ լինի ներգործութեամբ որն և հանդիպի: - 9. *Զորօրինակ* բ թշնամիք ոմանք ի յարկս թագաւորին ո՛չ իշխեն վնասել իրերաց, մինչև թագաւորն հրամայեսցէ: - 12. *Զորօրինակ*՝ ի կենդանեաց բազումք նշանակեն զլինելոց իրաց, և ո՛չ են նոքա պատճառք լինելոյ չարեացն կամ բարեաց: - 12. *Զորօրինակ*՝ թէ բազում մարդիկ անցանեն զճանապարհայն, և մերձ կացեալն տեսանէ նախ ըզմինն՝ և ապա զերկուսն՝ և որ զկնի: - 15. *Զորօրինակ*՝ արուեստաւոր ոք մինչ գործէ զսայլ, և ի հեռուստ տեսանէ ոք զոր նա՛ գործէ, այլ ո՛չ տեսութիւնն հարկեաց զսայլն լինիլ այնպէս. այլ կամք արւեստաւորին: - 16. *Զորօրինակ*՝ արուեստաւոր ոք կազմէ սուր ի պատճառս բարւոյ. այլ որ նորգործեաց չար՝ նա եղև չարին պատճառ: - 16. *Զորօրինակ* ո՛չ է անզգուշագոյն յառել ի բոլորակս արեգական՝ զի շրտնու և ի սակաւուն զօր ունի. ըստ այսմ խընայեաց աստուած ի յազինս մարդկային, զի մի՛ կրիցեմք ըզկիրս զանկելոյ արուսեկին. որ ո՛չ կարացեալ տանիլ մեծութեան փառացն՝ զրկեցաւ և ի չափաւորէն: - 24. *Զորօրինակ*՝ անհնա՛ր է յառաջ ընթանալով կոխել զստւերն: - 25. Արդ՝ *զորօրինակ* զգալի աչք մեր ո՛չ կարէ ըմբռնել զքանակութիւն արեգականն և այլ լուսաւորացն. այլ մտօք իմանամք զմեծութիւն նոցա: - 31. *Զոր օրինակ*՝ Աղբիւր բղխեալ առ մեզ հոգին սուրբ ա՛րդ սկիզբն աղբերն շարժի ի ծովէ՛. և հասանէ յակն. և յակնէն առ մեզ բղխէ: - 65. Այլ *զորօրինակ*՝ ոմն անհատ ունի զհասարակ զբնութիւնն լիով յիւրում առանձնութեանն: - 74. Այլ *զորօրինակ*՝ մարդոյ ձեռն և ոտն մարդ չէ, այլ՝ մարդոյ ձեռն, և մարդոյ ոտն. նոյնպէս և զքրիստոս է՛ ասեն: - 91. *Զոր օրինակ*, զգալի խաւարս մարմնոյ աչացն է: - 103. *Զորօրինակ* երեք լոյս լապտերաց միաւորեալ՝ և որոշմամբ յատկացեալ: - 106. *Զորօրինակ*՝ միակ թիւն ի բազումս բազմանայ, և մի է ըստ ինքեան: - 112. Եւ դարձեալ՝ որպէս ամենայն գիծ բոլորակին՝ ի միջին կէտն միաւորին առ միմեանս. և հեռացեալք ի միջին կէտէն բաժանին ի միմեանց. և *զորօրինակ*՝ մի է սեռն՝ և ի բազում տեսակս բազմանայ: - 112. *Զորօրինակ*՝ թափումն ի զգայութեանց թմրիլ՝ կամ ընդարմանալ ասի. այսպէս թափումն ի մտաց՝ զարմանալ ասի. ըստ պօղոսի որ յափշտակեցաւ. և ըստ դաւթի որ զարմացաւ. կամ ըստ ադամայ որ թմրեցաւ: - 127. *Զորօրինակ* գիտութիւն մարդկան ի սկիզբն և ի մէջն և յեզերն՝ նախ զտգիտութիւն փարատէ՛, և ապա՛ զմիտս լուսաւորէ՛ և կատարէ: - 139. Երրորդ՝ որ է՛ ինքն բարի, և պատճառէ՛ զայլ բարի. *զորօրինակ*՝ որպէս քաղցր դեղն պատճառէ՛ զառողջութիւն: - 160. *Զորօրինակ*՝ որպէս տղայ որ տեսանիցէ ցից ի յորմում, երթայ ի մօտ. թէ ամո՛ւր է՝ թողու. վասն զի ո՛չ կարէ հանել. և երթայ առ միւսն. թէ շարժի՝ ի մօտ կենայ մինչև հանէ՛: - 160-161. *Զորօրինակ* հուր միշտ ներգործութեամբ է ըստ ինքեան, և միշտ ներգործէ առ յայլս: - 162. *Զորօրինակ*՝ արեգակն ո՛չ կարէ լինիլ խաւար, զի առաւե՛լ է լոյս: - 163. *Զորօրինակ* եթէ կամիցի ոք տաճար շինել. նախ ձևանայ ի միտքն և յետոյ շինէ զտաճարն ըստ այնմ ձևոյ: - 163. Ասեմք առ այս Նա՛խ՝ եթէ թողութիւնն է ի զղջումն. և կարգն է ի յանձն ապականեալ. ապա ուրեմն իրաւի թէպէտ զթողութիւն ընկալաւ զղջմամբն, սակայն ի կարգն ո՛չ մտանէ ապականեալ և շրջեալ անձամբ և բնութեամբ, *զորօրինակ* բեկեալ և կցեալ անօթ՝ ո՛չ թւի ի կարգ անարատիցն: - 166. *Զորօրինակ* լոյսն որ միևնոյն է, այլ պայծառ՝ և բժտեալ ակն ոչ միապէս տեսանէ: - 166. *Զորօրինակ* խեցեղէն անօթ խորտակեալ՝ եթէ կա՛ւ է շինի դարձեալ անօթ. և թրծեալն ո՛չ շինի: - 166. *Զորօրինակ*՝ ներտրամադրեալ բանն է՛ նախ ի խորհուրդն կատարեալ. և յետոյ ժամանակաւ լինի յառաջ բերեալ և գրեալ բան. և նո՛յն բանն էր յառաջ բերեալս և գրեալս որ էր նախ ի խորհուրդն: - 169. Եւ *զորօրինակ*՝ անորակ նիւթն որ է՛ միշտ զօրութեամբ, ամենայն մարմինք որ ներգործութեամբ են՝ առ նա զօրութեամբ են: - 169. *Զորօրինակ*՝ **դ** մարդ երկու երկու ձեռօք զմիմեանս ըմբռնեն: - 181. *Զորօրինակ*՝ լիտր մին շաքար ի լիտր մին ջուր անկեալ, նոյն մին լիտր մնայ կշռեալ: - 202. Եւ *զորօրինակ*՝ լիտր մի ցորեան, կամ այլ ինչ. յորժամ ձեռօքդ բաժանես և ցրուես զհատսն, ո՛չ մնայ կշիռն: - 202. *Զորօրինակ*՝ եթէ ոք պատառէ զկտաւ և թափի փոշին: - 204. *Զորօրինակ*՝ յորժամ մարդն մեռանի՝ ջերմութիւնն ի սիրտն ժողովի և ապա քաղի: - 209. Երրորդ՝ զի ջուրք ծովուն բա՛րձր է քան զերկիր. վասն որոյ հա՛րկ առնէ և ի վե՛ր մղէ և ապա՛ հեղու յերկիր. *զորօրինակ* մարդիկք ի բարձրագոյն լերանց իջուցանեն զջուրն, և ըստ նոյն չափոյ ի միւս կողմն ի վեր հանեն սակաւ ինչ պակաս: - 209. Ասեն սուրբք, եթէ *զորօրինակ* աստուածածին կոյսն մարիամ կուսութեամբ ծնաւ առանց սերման կատարեալ և ճշմարիտ: - 226. Հինգերորդ՝ *զորօրինակ* մեծատուն ոմն զոք ի ճաշ կոչիցէ, նախ պատրաստէ՛ զամենայն պէտս կերակրոց և ըմպելեաց. և ապա՛ մեծարէ՛ զկոչնականսն: - 230. *Զորօրինակ*՝ բնութեան յատուկն և անձին. զի բնութեան տարբերն հեռագոյն է և մեծ. որպէս կենդանին և բանականն. և դիմաց յատուկն մերձ և նուազ. որպէս յատուկն մերձ և նուազ. որպէս պատկեր և տիպ: - 235. Եւ *զոր օրինակ*՝ տունկ ի յերկրի տնկեալ՝ նախ դալարի. և յորժամ հաստատի ծաղկի. և յորժամ ևս հաստատի՝ ապա պտղաբերի: - 255. Եւ համանգամայն

երևի ասեմ. *զոր օրինակ* նիւթն այն ունի առ ինքն ծածկեալ զմասունս մարմնոյ. զձեռս և զոտս, զմիս և զմազ, որ յետոյ երևին ի նմանէ: - 255. *Զորօրինակ*՝ արուեստաւոր ոք կամիցի դրօշել ի քարեայ պատկեր, նախ նկարէ՛ ի միտս իւր զձև պատկերին. և ապա հատանէ զքարն և տաշէ՛ և դրօշմէ՛ զկերպն ըստ այնմ նմանութեանն որ էր ի միտս ձևացեալ: - 258. Եւ *զորօրինակ*՝ ի զգայականն գոյ տընկականն, այլ մի է հոգի զգայականին և ո՛չ **բ**: - 259. Եւ *զորօրինակ*՝ մի է էութիւն իմացման, այլ ի **ե** զգայութիւնս բաժանի ըստ ներգործութեանն: - 259. Եւ *զորօրինակ*՝ մի է բոլորն մասամբ իւրով. այսպէս մի է բոլոր հոգի, և սոքա մասունք նորա: - 259. *Զոր օրինակ* ո՛չ ասի մարդ մարդոյ նման գոլ ըստ մարդկութեան. վասն զի նոյնութիւն է և ոչ նմանութիւն. բայց ասի նման մարդ մարդոյ ըստ երեսացն և գունոյն և ձևոյն նմանութեան: - 272. *Զորօրինակ*՝ որդի թագաւորի պատկե՛ր է թագաւորին. զի բնութենակից է նմա: - 273. *Զոր օրինակ* վարձ մշակացն է՛ մինչև յերեկոյն. այլ թէ հիւանդութիւն կամ այլ ինչ դիպի, հանէ՛ ի վարձուն և ի մշակութեանցն: - 291. *Զորօրինակ* թագաւոր ոք յորժամ լսէ՛ զգոյժ որդւոյ իւրոյ մեռելոյ, խորտակէ՛ զթագն, և զամենայն ինչ որ վասն նորա՛ է: - 349-350. *Զորօրինակ*՝ ճրագ զտեսօղս լուսաւորէ՛, և զտկարս խաւարէ՛. կամ որք ի ճրագ նային տեսանեն լոյս. և որք յետս դառնան խաւարին: - 403. ...եթէ *զոր օրինակ* բժիշկք՝ ո՛չ ի սկիզբն ցաւոց և ո՛չ ամենևին անագան տան զդեղ հիւանդին. զի անօգուտ է և վնասիչ. այլ ի դիպօղ ժամու յորում առողջասցի: - 467. *Զոր օրինակ*՝ անցեալ լինի մին ժամն յաւուր՝ կիրակէ կոչի. թէպէտ իգ ժամն պակա՛ս է: - 484. *Զոր օրինակ*՝ զմահապարտ ոմն թագաւորն հրամայէ՛ դահճին ի բանտ դնել. դարձեալ զնոյն թագաւորն աղերսեն և նա հրամայէ՛ արձակել ի բանտէն: - 492. *Զոր օրինակ* ի բարձր ուստէք քար հոլովեսցի, և որ մօտն կացցէ ասէ ցնա՝ երթալ ունիս մինչ ի ներքին վայր տեղիս և ապա դադարիս: - 497. *Զոր օրինակ*՝ բժիշկն յորժամ հիւանդին զդեղն տայ, նախ ինքն ճաշակէ զի հաւատալի լիցի: - 497. *Զոր օրինակ* հուրն հալէ զոսկին և բոցն ջնջէ ի նմանէ զժանգն: - 497. Այլ *զորօրինակ*՝ բժիշկք երբեմն նմանեաւն և երբեմն հակառակաւն բժշկեն. նմանեաւ՝ որպէս հրով զհուր, և ցրտով զցուրտ: - 497. *Զորօրինակ*՝ մի ոմն ծառ հատանէ, և այլ ոմն զհատեալն դարձեալ հերձու և բաժանէ՛ և տայ յայրումն: - 498. *Զոր օրինակ*, ներտրամադրեալ բանն մի է՝ և յառաջ բերեալ բազմանայ ի լսելիս և ի գիրս: - 529. Եւ դարձեալ *զոր օրինակ*, բան թագաւորին մի է, այլ ի բազում լեզուս և ի բազում լսելիս և ի բազում թուղթս որակացեալ և բազմացեալ, յիւրում միութենէն ո՛չ է քակտեալ: - 529. *Զոր օրինակ*, բան մարդոյ յիւրաքանչիւր մասնաւոր լսելիս բաժանի, և բոլոր և կատարեալ է և ո՛չ մասն: - 530. Եւ դարձեալ *զոր օրինակ*, գիր մատանւոյն մի և նոյն կատարեալն է տըպացեալ յամենայն մոմս կնքեալ և ո՛չ աւելի և ո՛չ նուազ: - 530. *Զոր օրինակ*, մի՛ է արեգակն անձամբ և գոյութեամբ, և ի բազում լուսանցս և ի հայելւոջ երևեալ նոյն մի անձամբ և գոյութեամբ և ո՛չ բազում: - 530. Դարձեալ *զորօրինակ*, մարմինն քրիստոսի մի և նոյն էր ի խաչին բևեռեալ, և մի և նոյն մարմինն է ի բազում նշխարս միաւորեալ և ո՛չ բազմացեալ. զի նոյն է գոյացութիւն հացին և գոյացութիւն մարմնոյն քրիստոսի: - 530. *Զորօրինակ*, յորժամ վկայեսցէ թագաւորն ներտրամադրեալ բանիւն ի վերայ գրեալ բանին իւրոյ եթէ՝ ստուգապէս սա՛ է իմ գիր և բան: - 531. *Զորօրինակ* ասեմք, իմացումն իմանալ. և իմանալի: - 531. *Զորօրինակ*՝ մեռեալ մարդ ո՛չ ասի պարզաբար մարդ, նոյնպէս և այս. որպէս ցուցաւ ի թագաւորութեանցն **իզ** գլուխն. **ժբ** համարն: - 536. *Զորօրինակ*, քահանայ ոք ի վաճառանոցն ի բազում հացս և ի գինիս ասասցէ «ա՛յս է մարմին իմ և արիւն իմ» ո՛չ կատարի. զի ոչ ունի զդիտաւորութիւնն. նոյնպէս և աստ: - 539. *Զորօրինակ*, արեգական լոյսն տկար աչաց վնասիչ է և ո՛չ օգուտ. և ջուր չորացեալ տնկոյ: - 540. *Զորօրինակ*՝ նախ լինի սարկաւագ, և ապա քահանայ: - 541. *Զորօրինակ*՝ յորժամ ասիցէ ոք զբարին բարի գոլ, այս ըստ ինքեան ճշմարիտ է: - 550. Դարձեալ, *զորօրինակ* բազումք ընթանան ի մի ճանապարհ, և ամենեքեան թողեալ զնոյն՝ ընդ այլս գնասցեն, և մինն մնասցէ ի նոյնն. ո՛չ ասեմք թէ մինն բաժանեցաւ ի ճանապարհէն, այլ՝ այլքն: - 551. *Զորօրինակ* **բ** ոք ի դատախազից իւրաքանչիւրն զինքն կամի և կարծէ ճշմարիտ գոլ. այլ մեծ եկեալ դատաւորին՝ վկայիւք յայտնի ճշմարիտն: - 551. *Զորօրինակ*՝ կանաչ բոյս՝ թէպէտ ի ցօղուն և ի հասկ՝ չէ՛ կատարեալ. այլ ի տեսակս իւր կատարեալ է: - 556. Վեցերորդ՝ զի զամենայն բարիսն որ ի մեզ են՝ արտաքս հանեն. *զորօրինակ* եկեալ խաւարն հանէ զլոյսն: - 562. *Զոր օրինակ* ցորեան մերկ սերմանի և խոտօք և պատենօք բուսանի: - 592. *Զոր օրինակ* զանգուած ինչ թունիւք ապականեալ լինի. ամենայն հաց ի նմանէ նիւթեալք մահաբերք են: - 592. Եւ *զորօրինակ*՝ ի ստորոտ լերին հասեալ զգրաստի բեռինս առեալ՝ թողումք յարօտս սակաւիկ մի: - 657. *Զորօրինակ* զմարտիկ ոք յետ հանդիսին դարձեալ լուանան ի փոշոյն և օծանեն: - 672. Եւ *զորօրինակ* յաշնայնոյ զդժնիկն խլեմք և զվարդենին տնկեմք, - 714. Եւ *զորօրինակ* զկնի մկրտութեանն սկզբնական մեղքն ոչ երևի. նոյնպէս զկնի ապաշխարութեան ներգործական մեղքն ծածկի և կորնչի. - 714. *Զոր օրինակ* նշան դրոշմի կայ ի մէջ քո՝ և անասնոյն՝ և տանն. զի ելեալ ի տանէ երթայ խառնի ի հասարակ նախիրն...: - 719. Ասեմք եթէ՝ *զորօրինակ*

սնդիկ լուծեալ և ի հող խառնեալ գնդապէս և փոշիացեալ. յորժամ ի մի վայր ժողովես՝ թողու զփոշիսն ի յորս խառնեալ է և պարզ միայն սնդիկն ժողովի: - 719. Նաև համապայծառ լոյս Երրորդութեանն ծածկէ՛ զամենայն լոյս լուսաւորացդ. զա՛յն ասէ խաւարումն արեգական և լուսնի և աստեղաց. *զոր օրինակ*՝ լոյս ճրագի ծածկի մերձ եկեալ լուսոյ արևու: - 728. *Զոր օրինակ* մի պատկերն դրոշմի ի զանազան մոմս. և ի հալիլ մոմոյն դրոշմ պատկերին ժողովի և մնայ ի մատանուջն: - 732. Դարձեալ *զոր օրինակ* բազում ստուերք ի մեծ ստուերն միաւորին: - 732. և Դարձեալ՝ *զոր օրինակ* բազում ճառագայթք շողից ի լոյսն արևու միաւորին. - 732. *Զոր օրինակ* ո՛չ էր բնութեանս անսերմ յղանալ և կուսութեամբ ծնանիլ, զոր բանն աստուած սքանչելապէս ներգործեաց: - 733. Եւ *զոր օրինակ* փայտն գիտութեան պատճառ մահու եղև. պատասխանեալ դեղն ցաւոց: - 734. *Զորօրինակ*, ի մի երկինս աստղ քան զաստղ առաւե՛լ է փառօք: - 760. *Զորօրինակ*՝ յակն աղբեր խառնեալ ինչ՝ ապականեսցին բաժանեալ առուքն: - 776. *Զորօրինակ* եթէ արմատ փայտի եդեալ ի հուր՝ նախ ինքն այրի և ապա ճիւղքն: - 777. *Զորօրինակ*, քարոզեցաւ նինուէի կործանումն. և նախագուշակ եղև եզեկիայի մահ. և ո՛չ մի ի սոցանէ կատարեցաւ: - 779. Եւ դարձեալ՝ *զորօրինակ*, լոյսն և ջերմութիւն են էութիւն նորին զուգասփիւռ. այլ երբեմն միոնն ծածուկ, և երբեմն երկոքին յայտնիք, և ընդ դէմ սորա: - 779. Եւ զանազան տեսութիւնք վարդապետաց չեն ընդ դէմ միմեանց. այլ *զորօրինակ* ոմն զական պատւականութիւն, և այլ ոմն զբնութեան, և կէսք զասդողութեան, և ոմանք զորակացն գեղեցկութեանց, պատմեն զմի և զնոյն ական իր: - 781-782. *Զորօրինակ*, ժանգ հայելւոյ ո՛չ զընդունակութիւնն բառնայ, այլ զտեսութիւնն. և յետ սրբելոյն, նոյն ծածկեալն երևի ի նմա: - 782. Դարձեալ՝ *զորօրինակ* **բ** անկատարք լինին մի կատարեալ. իսկ կատարեալն թէ և կրկնեսցի՝ ո՛չ է անկատար. այսպէս և ասացեալքդ: - 787

**ԶՈՒԱՐԱԿ +** Եւ յամենայն աւուր ըստ թուոյ նոցա **Ժ** զոհ մատուցանէր, և *զուարակ* մի վասն սրբութեան մտաց: - 321. Վասն է՞ր յոբ յետ խրախութեանն **Ժ** պատարագաւ սրբէր զորդիսն. և մի *զուարակ* վասն մտաց մեղացն մատուցանէր: - 322. Եւ ըստ նմանութեանն քրիստոսի մի *զուարակ*. որ վասն մեղաց մերոց մեռաւ: - 322. Վասն այն յոբ **Ժ** պատարագաւ սրբէ՛ր զ**Ժ** մասնաւոր մեղսն որ գտանին յարբեցութեան. և մին *զուարակն* ի սրբութիւն վասն ակամայ և խորհրդոյ մեղացն: - 322. Եօթներորդ, նոքա յօտարա՛ց մատուցանէին. այսինքն *զուարակ* և նոխազ, իսկ քահանայապետն մեր քրիստոս զմարմին իւր պատարագեաց հօր ի հոտ անուշից...: - 354. *Զուարակն* հզօր և արդիւնարար. զի արդիւնարարք և հզօրացեալք ի գործս բարիս՝ պատարագ են աստուծոյ...: - 358. Երկրորդ՝ վասն անգիտութեան և ակամայիցն *զուարակ* մի քահանային. և *զուարակ* մի՝ բոլոր ժողովրդեանն ի տօնի քաւութեանն: - 358. Այլ և ի տօնի քաւութեանն *զուարակ* մի և **բ** նոխազ վիճակով. մին տեառն և միւսն արձակման յանապատ: - 359. Նա՛խ՝ *զուարակն* զենեալ: - 361. Զի՞նչ նշանակէ կրկին ողջակէզն ի նորս. որպէս *զուարակն* և երկու խոյն կատարման: - 362. Երկու *զուարակ*, որ քրիստոս զենաւ վասն ադամայ և եւայի պարտուցն: - 373. Զի՞նչ էր որ ի տաղաւարահարքն ըստ միոյ միոյ աւուրց մի մի *զուարակ* պակասէին ի տօնս. և յութերորդ օրն ի մինն յանգէին: - 374. Առ տեղեաւն՝ նշանակէր զնուազութիւն աւուրցն տօնից ի պակասումն *զուարակացն*: - 374. *Զուարակն* է պատարագեալ. և խոյ մեզ ծնեալ. և գառն կերակրելի. և նոխազ զմեղս մեր առեալ: - 374. Նա՛խ՝ զի է էր պատարագն. վասն զի մատոյց է *զուարակ*. և է խոյ. վասն որոյ ընկալաւ պարգևս է բանից մարգարէութեան: - 387. Եւ զի կրկին ետես, Նա՛խ՝ զի կրկին էր պատարագն. խոյ և *զուարակ*: - 387. ...զի վասն բոլոր ժողովրդեանն մին էր *զուարակ*. և վասն միայն քահանայապետին մին. և զշնացեալ դուստր քահանային այրէին. և զժողովրդեանն քարկոծէին. և վա՜յ ինձ զի անձամբ զանձն իմ դատապարտեմ: - 563

**ԶՈՒԱՐԹ +** Բացունչն՝ *զուարթ* է և ուժեղ: - 246. Երրորդ՝ զի էր յօժար կամօք և *զուարթ* սրտիւ...: - 286. Հինգերորդ վկայ, զի ի բոլոր տարին յերեկոյի շաբաթուն կիրակմուտ անուանեն ամենայն ազգք. նոյնպէս և մեք յամենայն շաբաթս յերեկոյին լոյս *զուարթ* ասեմք, և սուրբ աստուած որ յարեար. ի յայս շաբաթի աւուրս սկիզբն առեալ: - 509. Եւ նոյնպէս **դ** անգամ յերեկոյն. ի լոյս *զըւարթն*, և յուղղեցին, և յերեքսրբեանն. կամ յարձակմանն խնկարկեն ոմանք: - 618

**ԶՈՒԱՐԹԱՆԱՄ +** ...և իւղով շնորհացն *զուարթանամք* և լուսաւորիմք: - 615

**ԶՈՒԱՐԹԱՐԱՐ +** Տասներորդ՝ և զի *զւարթարա՛ր* են: - 125. Նոյն և Իւղ *զուարթարար*. և նիւթ լուսոյ և շնորհաց: - 361

**ԶՈՒԱՐԹՆՈՑ -** Յայս միտս մեք ազգս քրիստոնէից յելս արևու և ի մուտս համաձայն վերին *զուարթնոցն* աղօթեմք առ աստուած: - 621. Եւ **թ** տունքն՝ ինն դասուց *զուարթնոց*: - 628. Զքահանայս ընդ սերովբէից և քերովբէից յառաջին դասս վերինն *զուարթնոցն*: - 672

**ԶՈՒԱՐԹՈՒԹԻՒՆ +** Եւ իւղն՝ *զուարթութեամբ* կատարելն առանց տրտմութեան: - 357. Եւ դարձեալ՝

նաշիհն է՛ նշանակ խոնարհ մարմնոյ մաքրութեան. և խունկն առաքինութեան հոգւոյ. և իւղն *զուարթութեան* մտաց: - 357. Իւղն լոյս և *զուարթութիւնն* մտաց: - 374. Անոխակալութիւն է զամբոխումն ատելութեան *զուարթութեամբ* և գթութեամբ արգելուլ: - 581

**ԶՈՒԱՐՃԱԼԻ +** Ուռն՝ կոյսն յարմատոյն և յեսսեայ. և Ողկոյզն տէր մեր ծնեալ ի նմանէ *զուարճալի* կերակուր մեզ: - 381. Ի վերոյ երկնից՝ *զուարճալի* համբարձմամբ: - 520

**ԶՈՒԱՐՃԱՆԱՄ +** Երրորդ՝ զի երեսն հայելի է սրտին. և նորա փոփոխմամբն զխորհուրդն ճանաչեմք. որպէս ի տխրիլն և ի *զուարճանալն* և յայլն...: - 234. Յինգերրորդ՝ տղա՛յ էր ժողովուրդն, և *զուարճանային* ի տեսութիւնն. վասն այն զանազան գունով զարդարեաց: - 342. Նա՛խ՝ զի տղա՛յք էին և ի տե՛սն *զուարճանային*. որպէս խորանն և ա՛յլ սրբութիւնք. նոյնպէս և զգեստք քահանայութեան: - 347

**ԶՈՒԱՐՃԱՑՈՒՑԱՆԵՄ +** Այսոքիկ են խնծորք նոր և հին. որք հոտով *զուարճացուցանեն*, և համով զմայլե՛ն: - 756

**ԶՈՒԱՐՃՈՒԹԻՒՆ +** Ի պատիւ մեծարեաց զմարդն. և նա՛խ՝ պատրաստեաց պէտս զանազան կերակրոց և ըմպելեաց որպէս ասացաք. և վառեաց զճրագ լուսաւորացն. և զգեղեցիկ ծայն երգեցողաց թռչնոց. և *զզուարճութիւն* զանազան ծաղկանց. և ապա՛ զմարդն ի պատիւ էած...: - 230. Յինգերրորդ՝ համբարձաւ *զուարճութեամբ*. որ վերաբերի առ նոսա որք փրկեցան ի դժոխոցն և ընդ նմա ելին յերկինս. զի **բ** բանակօք ել յերկինս այսինքն սպասաւոր հրեշտակք և մարդկան փրկելովք: - 520

**ԶՈՒԳԱԲԱԺԱՆԵԼ +** Գոյացութիւն որ սկիզբն է ամենեցուն և նախասեռ. և ի նմանէ *զուգաբաժանեալ* մարմինն. և շնչաւորն. և զգայունն. և կենդանին. և բանաւորն. և մարդն. ո՞չ ապաքէն բնութիւն են սոքա այլևայլ. և ժողովեալ գոյացուցանեն զմի անհատն պետրոս անշփոթ միութեամբ: - 176

**ԶՈՒԳԱԳՐԵԼ +** Եւ դարձեալ ասէ՝ *զուգագրեալք* են ի գիրն յաւիտենից, ի միասին և ժամանեսցին: - 669. Երկրորդ, զի *զուգագրեալք* են ի գիրն յաւիտենից: - 691

**ԶՈՒԳԱԿԻՑ +** Տասներորդ՝ զի և բանականս մարդ՝ քան զանբան կենդանիս տգէտ լինէր. վասն զի ամենայն կենդանի ունի բնական ճանաչումն իւրոց և օտարաց. ըստ այնմ որ արագիլ արդար՝ կերակրէ զհւր ծնօղսն միայն. և տատրակ մենացեալ ի *զուգակցէն*, ո՛չ զուգի ընդ ա՛յլ տատրակի: - 238-239. Դարձեալ մարդո՛յն է ունել օրհնաւոր ամուսնութիւն առ *զուգակիցս* իւր: - 274. Ոմանք ասեն թէ խեղդեցաւ ի ջուրն. և ընդ բերանն յղացեալ էր *զուգակիցն*: - 294

**ԶՈՒԳԱԿՇԻՌ +** Նա՛խ ցուցանէ զառատութիւն պարգևացն աստուծոյ, որ ո՛չ *զուգակշիռ* գործոցն հատուցանէ, այլ բազմապատիկ և հազարաւոր: - 351. Եւ առ այս եկն սով քաջ՝ *զուգակշիռ* հասարակութեանց մեծատանց և աղքատաց: - 789

**ԶՈՒԳԱԿՑԻՄ +** Չորրորդ՝ շանաճաննն. զի շնաբարոյք էին և մոլէին յառնականայս շնութեամբ. զի շանց է ոչ *զուգակցիլ* որպէս զայլ կենդանիս. վասն որոյ ի շանց ելեալ թունալից ճանճք խայթէին զնոսա: - 334. Վասն որոյ նախ քահանայն օրհնէ հոգևորապէս, և ապա մարմնաւորապէս *զուգակցին*: - 610

**ԶՈՒԳԱՉԱՓԵՄ +** Երկրորդ զգործս մեր *զուգաչափել*: - 745

**ԶՈՒԳԱՊԷՍ +** Ամենայն հրեշտակք *զուգապէս* ստեղծան յաստուծոյ. և ո՛չ մի ի միոյ. որպէս մարդ ի մարդոյ ծնանի: - 149. Զի սերմնական զօրութիւնն որ է՛ ի նիւթն այն՝ իսկ ընդ խառնիլ սերմանցն յարգանդի, *զուգապէս* ցուցանէ զտնկականն: - 261

**ԶՈՒԳԱՍՓԻՒՌ** - Եւ դարձեալ՝ զօրօրինակ, լոյսն և ջերմութիւն են էութիւն նորին *զուգասփիւռ*. այլ երբեմն մինն ծածուկ, և երբեմն երկոքին յայտնիք, և ընդ դէմ սորա: - 779

**ԶՈՒԳԱՒՈՐԵՄ +** Այսպէս և աստուածային օրինօք մի այր ընդ միոյ կնոջ *զուգաւորի* և ընկերակցի: - 612. Զի յայսմ կենցաղոյս *զուգաւորին* յիշելն երբեմն և մոռանալ զներքոյս և զարտաքոյս. ըստ որում փոխանցապէս ունիմք զերից ժամանակաց գիտութիւն: - 774

**ԶՈՒԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ +** Դարձեալ՝ պսակն է *զուգաւորութիւն* արուի և իգի. ունելով անբաժանելի կենցաղավարութիւն: - 609. Իսկ կատարի պսակն օրհնութեամբ քահանային. և մարմնական *զուգաւորութեամբն*: - 609. Իսկ ի կատարումն պսակին՝ նախ է՛ օրհնութիւն քահանային, և ապա՛ մարմնական *զուգաւորութիւնն*: - 610

**ԶՈՒԳԵՄ +** Տասներորդ՝ զի և բանականս մարդ՝ քան զանբան կենդանիս տգէտ լինէր. վասն զի ամենայն կենդանի ունի բնական ճանաչումն իւրոց և օտարաց. ըստ այնմ որ արագիլ արդար՝ կերակրէ զհւր ծնօղսն միայն. և տատրակ մենացեալ ի զուգակցէն, ո՛չ *զուգի* ընդ ա՛յլ տատրակի: - 238-239. Եւ թէ մինն է պատճառ՝ որ և հցէ թէ այրն և թէ կինն, առանց ամուսնութեան մնասցէ. և միւսն *զուգեսցի* այլոյ որ չէր պատճառ: - 401

**ԶՈՒՏ +** Քսաներորդ՝ զի ի հարկէ բարի է աստուած. որպէս ի հարկէ էա՛կ է. այլ արդ՝ հարկաւոր բարին է միշտ բարի և գոյացական բարի և *զուտ* բարի: - 15. Եւ զի *զո՛ւտ* և իսկապէս է բարի՝ անկար է խառնիլ չար: - 15. Եւ ամենայն ծառք *զզուտ* բարիս հոգէկանս: - 222. Մինն պարզ և *զուտ* բարին ներքոյ և արտաքոյ. որպէս առաքինութիւն. և հոգևոր գործն. յայսպիսիքս հրամայէ՛ մեզ մերձենալ: - 224. Տասներորդ՝ առ յատուկ բարին մերձենալ. այսինքն առ ամենևին *զուտ* բարին որ է՛ աստուած. խորհրդով բանիւ և գնացիւք: - 281. Դարձեալ՝ *զուտ* է և անխառն իսկապէս ճշմարիտն քան զխառնեալն ի ստէ: - 550

**ԶՈՒՐ +** Եւ մեղք լեզուին՝ ի սուտն, ի *զուրն*, և յանիրաւելն: - 568. Եւ *զուրն* է դնել զոր ո՛չ ունի: - 568

**ԶՈՒՐԱ** - Անունք Կանանց Նախապետացն... Երերայն *զուրա*՛: - 299

**ԶՍՊԵՄ +** Որ արագ ընթանայ և *զսպէ* զինքն՝ և զերեսն կորակնէ՛ և զբոլոր մարմինն կծկէ՛, երկնչո՛տ է և ըռիշտ և աղուեսաբարոյ: - 247. Չորրորդ՝ վասն զցանկութիւնն *զսպելոյ*: - 281. Դարձեալ ասեմք թէ յանապատին հրամայեցաւ *զսպել* ի սրբութիւն մանանային որ օրինա՛կ էր ճշմարիտ մանանային մարմնոյն սրբութեան: - 502. Իսկ ժուժկալութիւնն առ շօշափելիսն ըստ ծննդական զօրութեանն. ի յորում դնէ զեղանակն. զի առաւել յօժարի մարդն ի գոլ անհատութիւնն սննդականաւն, և ի գոլ տեսակին ծննդականաւն. և յօժարութիւնքս այս՝ *զսպին* զգաստութեամբ և ժուժկալութեամբ: - 581. Իսկ պսակն է՛ ի խորհուրդ ողջախոհութեան. զի ողջախոհ ամուսնութեամբ *զսպեսցէ* առ ինքն զբղջախոհ ցանկութիւնն. և արգելցի ի շնութենէ և ի պոռնկութենէ. վասն որոյ է են խորհուրդք եկեղեցւոյ: - 587

**ԶՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ +** Ա՛յս է նոցա *զրախօսութեանն* կարգ, որք զիրամանն համբաւեն: - 8. Եւ այս է նոցա զինուց զէն մեծ *զրախօսութեան* ի մարմին բանին: - 501

**ԶՐԱՒ +** Ա՛րդ եղև *զրաւ* բանիս, ի շրջագայութեան Յայկազեան Տօմարի, **պխզ** թուի: - 772

**ԶՐԿԱՆՔ +** Երկրորդ ի *զրկանաց* և յափշտակութեանց. և այս չա՛ր է: - 664

**ԶՐԿԵՄ +** Զորօրինակ ո՛չ է անզգուշագոյն յառել ի բոլորակս արեգական՝ զի շլտնու և ի սակաւուն զոր ունի. ըստ այսմ խըռնայեաց աստուած ի յազինս մարդկային, զի մի՛ կրիցեմք ըզկիրս զանկելոյ արուսեկին. որ ո՛չ կարացեալ տանիլ մեծութեան փառացն՝ *զրկեցաւ* և ի չափաւորէն: - 24. Զի որպէս սատանայ ամբարտաւանութեամբն ընդդէմ աստուծոյ՝ *զրկեցաւ* ի լուսոյն, նոյնպէս և հպարտն *զրկեցաւ* ի շնորհացն ըստ երեմիայ: - 32. Իսկ թէ զմարդն միայն ասես, *զրկեցեր* զբանն ի տէրութենէ. և առանձին մարդո՛վ ասես եղեալ զամենայն. որ է անհնարին չար: - 69. Իսկ թէ զմարդն ասես նստեալ, ահա՛ զբանն *զրկեցեր* յաթոռակցութենէ հօր՝ ո՛վ սիրօղ առանձնութեան: - 70. Եւ զփառս բանին *զրկելով* ետուր մարդոյն. և եղէք մարդապաշտք, և մարդոյ մարմնակերք. և ի մարդ մկրտեալք. և սուտ է փրկութիւն մարդոյ մարգարէն կնքեաց: - 90. Վասն զի իմաստունք մաքառին ընդ դէմ հաւատոց. և քննութեամբ մտաց ո՛չ կարեն հասանիլ. և *զրկին* ի փրկութենէ իւրեանց: - 96. Եւ կամ բանն զմարդկութիւնն իւր *զրկեաց* ի գիտութենէն և ո՛չ ետ: - 96. Արդ՝ եթէ բոլոր աստուածութիւնն ի քրիստոս էացեալ է մարմնապէս, և ծածկէ զգիտութիւնն ի նմանէ, այս լինի կամ ոչ աստուած մարմնացեալ և մարդացեալ կամ զէութիւնն տըւեալ և ի գիտութենէն *զրկեալ* որ է սուտ: - 98. Ապա *զրկեալ* է ի յաւիտենից կենացն: - 99. Երրորդ՝ զի ի սիրոյն աստուծոյ *զրկեսցէ* զմեզ. զի կարասցէ յաղթել: - 146. Զի զոր ինչ բնութեամբ ունէին դևք՝ եթող ի նոսա աստուած յետ յանցմանն. և զոր ինչ երանութեամբ ստանալոց էին՝ *զրկեցան*: - 147. Մետասաներորդ՝ որպէս հայրն զորդին գան հարու զի զգաստացեալ մի՛ *զրկեսցի* ի ժառանգութենէ հայրենեացն. այսպէս և աստուած զսուրբս և զսիրելիս իւր խրատէ՛: - 159. Դարձեալ՝ յամառն և ի ձմեռն զրկո՛ւմն է տուընջեան և գիշերոյ. զի ամառն *զրկէ* զգիշերն, և ձմեռն զտիւ: - 198. Եւ զի օրհնութիւնն ի յանէծս փոխեաց, ինքն անիծաւ և *զրկեցաւ* յօրհնութենէ ամենայն կենդանեաց: - 219. Երկրորդ՝ զի *զրկեցաւ* ի կենացն փայտէն և ի դրախտէն արտաքսեցաւ: - 279. Չորրորդ՝ զի պտուղ ո՛չ եկեր. որով նա ուտելովն *զրկեցաւ* կենաց. և այսպիսիքս յերկինս հանեն զմարդն: - 290. Այս է զոր արարն դարձեալ մարդկայինս ազգի *զրկելոցս* ի սատանայէ՛: - 302. Աղքատ և տնանկ զմարդկային բնութիւնս ասէ. որ հարստահարեցաւ և *զրկեցաւ* ի սատանայէ՛: - 317. Եթէ ոք զմեզ *զրկէ* արդարութի՞ւն է ապա թէ խաբեմք և գողանամք զինչս նորա: - 337. Ո՛չ է արդարութիւն. այլ նա՛ ընդ *զրկողացն* դատի, և դու ընդ գողոցն: - 337. Յինգերորդ՝ *զրկելով* աստ ի խոստմանէն լրոյ. և յետ մահու ի տեսութեանցն. և ի յարութեանն ի կատարմանցն: - 394. Տասներորդ՝ ունի **գ** տեղիս. կրկին ուստի *զրկեցաւ*. և օդդ ուր անկաւ. և հուրն ուր տանջի: - 394. Ա՛րդ նա՛խ՝ զայն հասակն լ ամեայ յորմէ *զրկեցաւ* մեղօք՝ լան: - 411. Վեցերորդ՝ զի թէ լինի անկարօտ գող և *զրկօղ*, ընդ տեառն իւրոյ կորուսանէ և զինչսն. որպէս աքարն որ ունէր բազում ստացւածս, և գողացաւ ի նզովիցն երիքովի. տեսին ամենայն ժողովուրդն և ցասեան ի վերայ նորա և իրաւունս ետուն սատակմանն: - 416. Երկրորդ՝ զի ցուցցէ զճշմարիտ մարդեղութիւն իւր և ո՛չ կարծեսցի առ աչօք. որպէս *զրկեալքն* ի շնորհաց նորա ասացին: - 485. Որպէս ոք զգալի ակն խփէ և *զրկի* ի լուսոյն և

առՆէ խաւար. նոյնպէս և նոքա: - 562. Այնպէս մարդ մեղօք *զրկի* ի շնորհաց լուսոյն. այլ լոյս խնամոցն աստուծոյ չէ հեռացեալ և սակաւ փայլէ ի ներքս ի տրտնջականն...: - 562-563. Նա՛խ՝ զի արիւնն հեղուկ նիւթ է. կամ ո՛չ է տալի որպէս այլ ազգք, և *զրկել* զժողովուրդն ի փրկական արենէն: - 598. ...ընդէ՞ր զժողովուրդն *զրկէք* ի հաղորդութենէ մարմնոյ և արեանն քրիստոսի...: - 599. ...ապա յորժամ *զրկես* յարենէն զժողովուրդն, *զրկես* և ի նոցանէ որ կապեալ են ընդ արիւնն. այսինքն մարմինն և հոգին և աստուածութիւնն: - 600. Ապա ուրեմն ծածուկ և յայտնի *զրկես* զժողովուրդն ի հաղորդութենէն քրիստոսի...: - 600. ...և բազումք անհաղորդ մեռանին և *զրկին* ի քրիստոսէ: - 600. Ասեմք առ այս, եթէ բանն սողոմոնի ո՛չ թէ *զրկէ՛* զոմանս յարեանն հաղորդութենէ...: - 600. Եւ դարձեալ՝ ի յարքայութիւնն երկնից այսպէս ըստ իւրաքանչիւր չափու և արժանեաց կարգաւորապէս պարգևէ աստուած զիմաստութիւնն. և ո՛չ անկարգ. կամ *զրկելով*. կամ աչաղելով: - 656. Արդ՝ եթէ նախ զայն էր տուեալ, այսպիսի իմն հանդիպէր. կամ մնալով անփոփոխ՝ *զրկէր* զերկիր: - 662. Նախ զերանական կեանս արդարոց ուստի *զրկեցաւ* մեղօք: - 669. Որք ո՛չ թլփատեցան ի հինն և ոչ մկրտեցան ի նորս, կամ չարք ի մարդկանէ, ունին զդատապարտութիւնն զոր *զրկելոց* են ի դատաստանին զանազան տանջանս և ո՛չ այժմ: - 690. Երկրորդ, աներևոյթ են ի տեսութեանց իւրեանց. զի *զրկեալ* են ի լուսոյ շնորհաց որով երանութիւնքն տեսանին: - 690-691. Չորրորդ, զի յայտնապէս *զրկէ* զժողովուրդն ի փրկութենէ, և ծուլութեամբ ընկղմէ ի մեղս...: - 698

**ԶՐԿՈՒՄՆ** - Այս է մեկնութիւնն թէ՝ հաւասարն աստուծոյ՝ յափշտակութիւն և *զրկումն* չհամարէր իւր զծառայի կերպարանս առնուլ. զի ո՛չ ունէր յայլմէ կասկած խլելոյ զփառսն. զի ի՛ւրն է սեպհական: - 39. Թէպէտ մեկնեն և այլ ազգ, թէ որ զմարդկայինս բնութիւն հաւասարեցոյց փառաց իւրոց և հաղորդ արար աստուածութեանն, ոչ ինչ *զրկումն* համարեցաւ. զի բնութիւնն մի է: - 39-40. Ասաց թէ՝ որ ի կերպարանս աստուծոյ էր բանն, այսինքն էակից հօր, ո՛չ ինչ *զրկումն* համարեցաւ ի ներգոյական փառաց զլինիլն հաւասար մեզ: - 93. Դարձեալ՝ յամառն և ի ձմեռն *զրկո՛ւմն* է տուընջեան և գիշերոյ. զի ամառն զրկէ զգիշերն, և ձմեռն զտիւ: - 198. Բայց կրկին է *զրկումն* լուսոյ. մի՝ որ ի ճառագայթէ՛ լուսոյն զակն խփէ և խաւարի. և **բ**՝ որ ընդ դէմ բոլորակի արեգականն հայիցի՝ կորուսանէ զլոյսն և խաւարի: - 562. *Զրկումն* ի տեսութենէն աստուծոյ: - 751

**ԶՐՈՅՑ +** Զի ասեն թէ՝ յոբայ հէճուպն ի պարսիկս փախեաւ, և անդ *զրոյց* ետ որ գրեցին իւրեանց գրովն. և սողոմոն բերել ետ և սրբագրեաց: - 320

**ԶՐՊԱՐՏԵՄ +** Եւ զոր դուք զայլս *զրպարտէիք*՝ ի նոյն բանս ձեր ընկղմեցայք: - 90. Եւ անեղ բնութեանցն աստուծոյ *զրպարտելով* շփոթումն համբաւես: - 176

**ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆ +** Ա՛րդ՝ բե՛ր ածցուք զվկայս առ դատաւոր միտս, և դատեսցուք ուղղութեամբ, այլ ո՛չ *զրպարտութեամբ*: - 552

**ԶՕԴՈՒԱԾ +** Քանի՞ են *զօդուածք* և ոսկերք մարդոյն: - 243. Ո՞րպէս է **յկե** *զօդուածք*: - 243. Ոմանք ասեն, **ժէ** գլխաւոր ջլօքն որ կապին սոքա՝ լինին **յկե** *զօդուածք*: - 243-244. Կամ *զօդուածք* ներքին գլխաւոր անդամոցն և արտաքին մարմնոյն, որ մորթ և միս և արիւն և այլքն առ միմեանս յօդին՝ լինին նոյնքան: - 244. Եւ դարձեալ թիւ ոսկերացն **մխը**. և **բժ**ան անդամքն, և **ե** զգայարանքն յօդեալ առ միմեանս, լինին **յկե** *զօդուածք*: - 244. Այլ և **յկե** *զօդուածովս* և **բժ**ան անդամօք մարմնոյս մեղանչեմք: - 683

**ԶՕՀՐԱ** - Հինգերորդ Լուսաբերն. որ է՛ արուսեակն. զոր կոչեն *զօհրա*. ջե՛րմ է և խոնաւ. **յխը** օրն կատարէ՛, զընթացսն. և այլք ասեն թէ ի **զ** ամիսն: - 189. Զզօհալն Կռոնոսի. Զմուշթարին Դիոսի. Զմառեխն Արէսի. Զարեգակն Իլիոսի. կամ Զևսիլոսի. *Զօհրայն*. Ափրոդիտեայ. Զօտարիտն Երմեսի. Զլուսինն Սելինի: - 190. Վեցերորդն երիկամունքն որ է տուն սերման. ջերմ և գէջ. և տանուտէր ունի *զզօհրայն*. որ է լուսաբերն: - 241

**ԶՕՐ +** Ասեմք առ այս, եթէ այսու վկայե՛ս և դու մեզ՝ թէ ո՛չ է հարկ. զի ի բոլոր քաղաքն այնքան բիւր մարդիկ՝ ծեր և տղայ՝ ե՛րբ և ո՛ւր ի մի շարժումն աստեղաց ծնան, որք ի միասին կործանեցան. կամ բազմութիւն *զօրացն*. կամ որք ի նաւին կային. զի սոքա ամենեքեան յայլևայլ ժամանակս և այլևայլ շարժումն աստեղաց էին ծնեալք. ապա ուրեմն ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. Սիրտն իշխա՛ն է անձինն. յորժամ երկնչի՝ զարիւնն առ ինքն ժողովէ իբր *զօրք* առ թագաւորն. և մնայ մորթն բնական գունովն դեղին: - 245. Եւ որք զայս ասեն՝ հետևին մոլորութեանցն պղատոնի մարմնափոփոխութեանցն. որ ասէ քաղաք ի յերկինս. և հոգիքն անդ ժողովեալ իբրև *զզօր* և զդասս: - 252. Եւ կամ որպէս *զօրք* թագաւորի՝ նախ հասանեն յիջևանն, և թագաւորին ասի իջևանն. թէպէտ յետոյ գայ: - 255. Այսպէս և հնազանդեալ *զօրք* հոգոյն՝ զգայականն և տնկականն է. և նոքօ՛ք է հոգին ի մարմինն: - 255. Սոքա՛ են ի սրբութիւն սրբոցն որ է՛ լուսեղէն երկինքն բնակարան անմարմին *զօրացն*: - 345. Յուդա. Իսաքար. և Զաբողոն. **ժը** բիւր և **ցն** *զօրք*

նոցա: - 378. Ռուբէն. Շմաւոն. և Գադ. **ժե** բիւր և **ռնծ** *զօրք* նոցա: - 378. Եփրեմ. Մանասէ. և Բենիամին. **բժ**ան բիւր և **ըռքճ** *զօրք* նոցա: - 378. Դան. Ասեր. և Նեփթաղիմ. **ժե** բիւր և **ռո** *զօրք* նոցա: - 378. Գիշերի սատակեցան *զօրքն* ռափսակայ. և վասն յովսիայ զի հարաւ և մեռաւ: - 413. Քսանևդ՝ յեսու զպարանոցս թագաւորացն կոխան ետ իշխանաց իւրոց և *զօրաց*: - 419. Որ ի ջուր ըմպելն ընտրեաց *զզօրսն*. և թաքուցեալ սափորօք զվառեալ լապտերսն, և էհար յ արամբք **ըզճի** հազարսն: - 420. Նա՛խ՝ զի մի՛ համարեսցեն այլազգիք թէ դիքն իւրեանց առաջի ընթացան և գլուխ եղեն *զօրացն* և հարին զպատերազմն: - 425. Երրորդ՝ ի նախատինս *զօրաց* իւրոց. զի հովիւ մանուկն և որդի յեսսեայ սպան զգողիաթ. և նոքա իշխանք և մեծամեծք ո՛չ կարացին: - 427. Նա՛խ՝ որպէս գեդէոն ջրովն փորձեաց զիաւատս *զօրացն*. նոյնպէս և դաւիթ: - 434. Այլ և դաւիթ եգիտ զսաւուղ և *զզօրսն* նորա ի քուն և ո՛չ վնասեաց. այլ զզէնն էառ. և տէրն ո՛չ կամի զմահ որք ննջեն ի մեղս. այլ զպատճառ մեղացն հանէ: - 437. Եօթանասուներորդ, յերիս առաջս *զօրօք* յաղթեաց թշնամեաց. և տէրն մարմնով և հոգւով և աստուածութեամբն յաղթեաց: - 438. Նա՛խ՝ իբր զթագաւոր վերացեալ կառօք և *զօրօք*: - 445. Երկրորդ՝ եցոյց թէ նոյնպէս ընդ քե՛զ է լինելոց *զօրք* հրեղինացն նովին հոգւովն: - 445. Վասն է՞ր ի գիշերի սատակեցան *զօրքն* ռափսակայ: - 446. Ամինադաբ ամաց խե՝ ծնանի զնայասօն. և էր ասէ ամինադաբ սպարապետ *զօրուն* յուդայի ի հանել մովսէսի զորդիսն իէլի յեգիպտոսէ: - 452. Հնգետասաներորդ՝ յա՛յտ է յայսմանէ. զի վասն տօնի տեառնընդառաջին առաքեաց յուստիանոս կայսրն յերուսաղէմ *զօրս* բազում երիցս անգամ...: - 484-485. Երկոտասաներորդ՝ դարձեալ սաւուղ կամէր պաշարել զդաւիթ. և եկն *զօրօքն* իւր և ննջեաց ի դաշտի...: - 514. Չորեքտասաներորդ՝ այլ և ի գիշերի հրեշտակն տն էհան *զզօրսն* ռափսակայ. որ պաշարեալ էին զէմ և փրկեաց զնոսա...: - 514. Եւ դարձեալ՝ գլուխ է քրիստոս. և հերք՝ որպէս դասք վերին *զօրացն* ի նմանէ՛ առ մեզ իջուցեալ զշնորհս: - 534. Երրորդ՝ երևակայութեամբ. որպէս եղիսէին ի տեսանել *զզօրս* հրեշտակացն, և մանկանն ո՛չ տեսանել: - 536. Ո՛չ ամրոց, ո՛չ պարիսպ կամ *զօրք* կամ այլ ինչ: - 538. Որ և պատուական է վարդապետն քան զաշակերտն. և զօրավարն քան *զզօրս*. և կառավարն քան զկառն և այլն: - 551. Եւ սոկրատ պատմագիրն ասէ թէ՝ մեծն իգնատիոս աստուածազգեացն ետես երկնային *զօրս*. և լուաւ ի նոցանէ ...: - 631. Եւ զայս դնեն պատճառ թէ՝ ի ժամանակս ինչ՝ *զօրք* հեծելոց նոցա ո՛չ հասին ի բարեկենդանն...: - 651. Եւ փարաւոն ընկղմեալ *զօրօքն*. զի ոչ ինչ կարեն վնասել չար դևքն՝ քրիստոնէից հոգւոց: - 682. Այլք ասեն թէ՝ գօգաւ և մագօգաւ իմացեալ լինին *զօրք* նեռինն...: - 708. Նոյնպէս և *զօրք* հրեշտակաց և մարդիկ երկիր պագանեն սրբոց. վասն որոյ թագաւոր թագաւորաց են և տէր տէրանց. - 711. Նա՛խ՝ որպէս **բժ**ան գունդ հրեշտակացն և չորք կենդանիքն զբոլոր երկնային *զօրսն* նշանակեն, նոյնպէս և իդ երիցունքն զբոլոր դասս սրբոցն: - 711. Երրորդ, բազմութիւնք երկնաւոր *զօրացն* ընդ նմա իջցեն...: - 737. Տասներորդ, զի և յօրն դատաստանին լինին վկայք **բ**՝ երկինք և երկիր, և *զօրք* երկնից: - 743. Մինչ զկնի կարմիր ծովուն՝ յընկղմիլն փարաւոնի հանդերձ *զօրօքն*, զթմբուկն ունելով երգէ՛ զերգն, «օրհնեսցուք զտէր զի փառօք է փառաւորեալ» և այլն: - 764. Երրորդ՝ ծառ կենաց իմանին տունկք իմանալի դրախտին. այսինքն բանակք երկնաւոր *զօրացն*. միշտ յարազուարճ բերկրանօք բարձրացեալ ի փառս: - 767

**ԶՕՐ** (զօրութիւն) + Երկրորդ՝ զի իշխան և զօրաւո՛ր է մարդն. պիտո՛յ է զի լինիցի *զօր* և իշխեցեալ. և ապա՛ իշխանն և զօրաւորն. ապա թէ ո՛չ՝ ո՞ւմ լիցի իշխան և զօրավար: - 230

**ԶՕՐԱԲԱԲԷԼ** - Ասեմք եթէ՝ խոստումն աստուծոյ կատարեցաւ ի ժամանակս *զօրաբաբէլի* և եզրայ...: - 28. Նմանապէս եզեկիա և ովսիա և *զօրաբաբէլ*: - 337. Եւ **բ** ծիթենիքն, *զօրաբաբէլ* և յեսու քահանայ: - 347. Երկրորդ՝ թագաւորք մինչ ի *զօրաբաբէլ*. և յեսու քահանայ: - 421. Դարձեալ՝ ի վերջին գերութենէն սեդեկիայ մինչ ի դարեհի **բ** ամն կատարի **հ** ամ. որ արձակեաց *զզօրաբաբէլ*: - 447. Մինչ ի դարեհի **բ** ամն արձակեցաւ *զօրաբաբէլ*, և ի **դ** ամն շինեաց զտաճարն: - 448. Դարձեալ՝ յերիս ժամանակս ազատեցան ի բաբիլօնէ՛. այսինքն կիւրոսիւ սաղմանասարաւ. դարեհիւ *զօրաբաբէլ*. արտաշէսիւ եզր դպիր և նէեմի: - 448. իսկ երկրորդն *զօրաբաբէլ* ի **զ** ամին կիւրոսի շինեցան զտաճարն...: - 449. Եւ աստի թուեալ ի դարեհէ՛ որդւոյ վշտասպեայ, որ արձաձեաց *զզօրաբաբէլ*. և յորոյ երկրորդ ամին շինէ զտաճարն: - 449

**ԶՕՐԱՆԱՄ +** Վեցերորդ՝ զի լինի *զօրանալ* պակասութեանն՝ և յաղթահարել զունակութիւնն: - 38. Եւ թէ էր երբեմն հայր առանց զօրութեան, զիա՞րդ *զօրանայր* ի ծնունդն որդւոյ: - 51. Իսկ յորժամ զյայլումն լսեն՝ արձակին ի վերայ մեր ասելով, եթէ յայլո՛ւմ է՝ պատահումն է ի հայր որպէս զօրութիւնս առ մեզ. իսկ եթէ *զօրացեալ* է՝ և ընդ *զօրանալն* դադարեսցէ ամենայնիւ. շարժումն եղիցի և ոչ շարժօղ: - 52. Պատասխանեմք թէ՝ ո՛չ է *զօրացեալ*՝ այլ զօրացուցանօղ...: - 52. Իսկ ասա աչքն *զօրանայ* ի տեսանել զերևեալ պատկերն կազմեալ ի յօդոյ: - 133. Երրորդ՝ զի անդ բազմաց շրտնու տեսութիւնն. և աստ միայն *զօրանայ* տեսողական մասն միոյն. որպէս աշակերտին եղիսէի: - 133. Ասեմք թէպէտ նիւթն ի չորից տարերց

է, այլ տնկականն *զօրացեալ* քան զնիւթն՝ ըստ իւրոյ մասանցն ծնանի. զի ծնանիլն տնկականին է. այլ և ունի զտարերացն թիւ. զի յամիսս չորս կատարի այն՝ որ յառաջ ծնաւ: - 262-263. Եւ յանուանէն *զօրացեալ* էր մովսէս. և նոքա տկար և տգէտ: - 350. Նա՛խ՝ նշանակէ՛ զնահապետսն. **իե** ազգ որ բնական օրինօք արդարացան նախ, և ապա՛ գրաւորն բնականաւն *զօրացեալ* արդարացոյց զնոսա: - 390. Երեսուներորդ, ի տեառնէ յաջողեալ զօրութեամբ ծնօտին, և նովաւ *զօրացեալ* մեծ ծարաւն սամփսոնի: - 423. Ուժգնեմ, *զօրացաւ* դաւիթ անուամբն աստուծոյ. և տէր մեր զօրութիւն է հօր աստուծոյ: - 436. Այլ ի դիպօղ ժամու յորում ցաւն *զօրացաւ* և կարօտացաք բժշկութեան...: - 467. Որպէս այնոքիկ որք *զօրացան* այսու մահուամբ և զորդեգրութեանն ընկալան շնորհ և նահատակեցան, նոքա չարչարակից եղեն քրիստոսի, և փառացն հաղորդակիցք: - 497. Երկրորդ՝ զի մանկունս հասակաւ նախ որկորստութիւնն տիրէ, և ապա՛ յերիտասարդութեանն պոռնկութիւնն *զօրանայ*: - 561. Երկրորդ զօրացուցանէ. որպէս յա՛յտ է ի մակաբայեցւոցն զկնոջէն որ ունէր է որդիս՝ ածեալ ի սպանումն ի միումն աւուր տեսեալ. և տանէր այնմ՝ յուսովն որ առ աստուած. նոյնպէս և ամենայն դասք մարտիրոսացն յուսով *զօրացան*: - 574. Եօթներորդ՝ հաւատովն համբերեմք. յուսովն հաստատիմք. սիրովն *զօրանամք*. և զայս ասէ նազրիոս: - 578. Երրորդն հաղորդութիւնն. որ է՛ վերըստին *զօրացելոցն* ի պատերազմի, և հոգևոր կերակուր: - 587. Դրոշմն է հաստատութեան խորհուրդ. որ տուեալ լինի առ ի *զօրացնել* և քաջացնել զմարդն: - 593. նոքա սիրեն զտէր. և *զօրացեալ* ի նմանէ՝ կոխեն զանմարմին թշնամին. որպէս ժողովուրդն զփարաւօն: - 629. ...իսկ թէ յայլ երիցն է, նայիլ պարտ է առ ինքն թէ ո՞ր յանցանք առաւել *զօրացեալ* է յինքն, զայն պակասեցուցանել. - 665. Զի յորժամ առաքինութեամբ ախտ մարմնոյն մեռանի՝ *զօրանայ* հոգին...: - 668. Եւ յորժամ չարութեամբ հոգին նուազի, մարմինն *զօրանայ* և լինի մարդն շնչաւոր և անբան...: - 668. Ա՛յն է որ սատանայ խաբէութեամբ և բռնութեամբ *զօրացեալ* էր և իշխան եղեալ ի վերայ մարդկան. ի կեանս զանազան չարեօք և կռոց պաշտմամբ...: - 705. Ի գնացս հոգւոյն *զօրացեալ*, զի ըստ տընօրէնութեանն խորհրդոյ միշտ հոգւով սրբով ներգործէր. ունելով տերև զաշխարհակեցոյց վարդապետութիւնն: - 768. Ի բղխմանէ կողահոս աղբերացն ոռոգեալ և *զօրացեալ*: - 768. Թէ ի բերան պատերազմի յել անմահին և ի մուտ մահկանացուին. դիցես պահապան բերանոյդ. լար կարմիր շրթանցդ. այսինքն հաւատով սիրով *զօրացեալ*. և ո՛չ բաժանիլ ի քնասիրութիւն և յարծաթսիրութիւն. յառաքինասիրութիւն. և յախտասիրութիւն. յընկերսիրութիւն և յարատսիրութիւն: - 770-771

**ԶՕՐԱՎԱՐ +** Իններորդ՝ նահատակադիրն քրիստոս է փրկիչն ամենեցուն. և ամենայն սուրբք զինուո՛րք նորա. պարտին և զինուորքն *զօրավարին* նմանիլ և նահատակիլ...: - 159. Երկրորդ՝ զի իշխան և զորաւո՛ր է մարդն. պիտո՛յ է զի լինիցի զօր և իշխեցեալ. և ապա՛ իշխանն և զօրաւորն. ապա թէ ո՛չ՝ ո՞ւմ լիցի իշխան և *զօրավար*: - 230. Վասն է՞ր յետ մովսէսի եղև *զօրավար* յեսու: - 414. Քսանգ, *զօրավար* կարգեցաւ դաւիթ. և տէր մեր գլուխ զինուորաց եկեղեցոյ: - 436. Երեսուննէ *զօրավարք* դաւթի. և **լէ** թիւ հնոյն օրինաց. և այլ նորոց կտակի. և կամ **իբ** գլխաւո՛ր են գրոց հնոց. և **ժ** բան օրինաց. և չորից աւետարանաց. և միոյն առաքելական: - 438. Այլ գիտելի է, զի քահանայն զինուո՛ր է. ոչ զոր ինքն կամի և ախորժէ զայնս կապէ և արձակէ. այլ զոր հաճո՛յ է *զօրավարին* քրիստոսի: - 539. Որ և պատուական է վարդապետն քան զաշակերտն. և *զօրավարն* քան զզօրս. և կառավարն քան զկառն և այլն: - 551

**ԶՕՐԱՎԻԳ(Ն) +** Եւ է ճրագարան և է բերան ճրագացն, է արքն մեծապատիւք *զօրավիգք* թագաւորին. այսինքն յեսու, զաքարիա, խոդէստուբիա, յեդոյիա, յեշոյիա, և եզր դպիր: - 346. Արդ նա՛ որ զամենայն գերեզման կնքեալ պահէ, զեկեղեցիս օրհնէ՛ և հաստատէ՛ և ամենեցուն *զօրաւիգն* է ի փորձութիւնս, կարօ՛ղ է անապական լինիլ. զի աստուածային է նշան: - 733

**ԶՕՐԱՑՈՒՑԱՆԵՄ +** Պատասխանեմք թէ՝ ո՛չ է զօրացեալ՝ այլ *զօրացուցանօղ*. ըստ առաքելոյն և ընտրօղ. «զի նախ քան զլինիլն աշխարհի ընտրեաց»: - 52. Իսկ սուրբն կիւրեղ ընդ դէմ նեստորի զինէր. որ ասէր բնակութեամբ զբանն ի մարմնի. և նախ զմարդն ծնեալ ի կուսէն և շրջեալ ի յերկրի, և յետոյ բնակեալ բանն աստուած յետ մկրտութեանն. և յետ յարութեանն փառաւորեաց զնա և *զօրացոյց* յարակցութեամբ ընդ ինքեան: - 79. Երկրորդքն՝ *զօրացուցանեն* ի գործս սքանչելեաց և հոգևոր պատերազմաց: - 136. Երկրորդ՝ զի առանձնաւորութիւն է զօրութեանց, այսինքն արիութիւն յաստուածայինսն և անշարժ գոլն և *զօրացուցանելն*. և զայս առ հասարակ ունին. վասն որոյ առ հասարակ զօրութիւնք կոչին: - 137. Իսկ ի հիւանդանալն՝ եղիսէոս եդ զձեռն ի վերայ ձեռաց արքային յովասու և *զօրացոյց* զնա ի պատերազմին ընդ դէմ ասորոցն փոխանակ լալոյն ի վերայ նորա: - 446. Երրորդ՝ թէ ո՞րպէս քաղցրութեամբ *զօրացոյց* զնա ասելով «մի՛ երկնչիր մա՛րիամ»: - 465. Հինգերորդ՝ զի *զօրացուցէ* զջուրն վերստին ծնանել զմեզ: - 486. Մկրտեալն քրիստոս. որ սրբեաց ջզուրն և *զօրացոյց* վերստին ծնանիլ զմեզ: - 487. Երկրորդ *զօրացուցանէ*.

որպէս յա՛յտ է ի մակաբայեցւոցն զկնոջէն որ ունէր է որդիս՝ ածեալ ի սպանումն ի միումն աւուր տեսեալ. և տանէր այնմ՝ յուսովն որ առ աստուած. նոյնպէս և ամենայն դասք մարտիրոսացն յուսով զօրացան: - 574. Նա՛խ՝ իբր գոհութիւն և շնորհակալութիւն աստուծոյ որ *զօրացոյց* զմեզ: - 627. Եւ ապա ի սէր և անձուկ ժտելոյ նորին, ապաստանեալ ի նոյն որ *զօրացոյց* զտկարս, ձեռն ի գործ արկեալ աւարտեցաւ բազում միջոցաւ. և փախստեամբ ի տեղիս. և մեծ ջանիւ փութացեալ: - 772

**ԶՕՐԱՒՈՐ +** Ութերորդ՝ *զզօրաւորսն* պահէ՛: - 49. Երկրորդ՝ *զօրաւոր* մասն է տուտն սողնոց. ցուցանէ զբռնութեամբ քարշելն ընդ ինքեան: - 152. Երեքտասաներորդ՝ զի տկար մարմնով անմարմին և *զօրաւոր* թշնամոյն յաղթեսցեն. որով աստուած իսկապէս փառաւորի. տեսանելով զտկարն յաղթել *զօրաւորին* ըստ այնմ որ զախորժակս իւր յայտնէ՛ր սիրելոյն՝ «շա՛տ է քեզ շնորհ իմ. զի զօրութիւն իմ ի տկարութեան քում կատարի». այսինքն թէ՝ որպէս ես աստուածային մարմնոյս զօրութեամբն յաղթեցի փորձողին, նոյնպէս և դու շնորհօք իմովք՝ տկար մարմնով քո՝ յաղթես և նկուն առնես զնա: - 159. Վասն այն ի նորանալն առաւել *զօրաւոր* և ազդո՛ւ է սերմանելոյ և այլոց: - 187. Երկրորդ՝ զի իշխան և *զորաւո՛ր* է մարդն. պիտո՛յ է զի լինիցի զօր և իշխեցեալ. և ապա՛ իշխանն և *զօրաւորն*. ապա թէ ո՛չ՝ ո՞ւմ լիցի իշխան և զօրավար: - 230. Դարձեալ՝ ամենայն իր առաւել ունի զօրութիւն ի տեսակս իւր՝ քան ի յայլս. որպէս ջուր առաւել *զօրաւոր* է ի գետս՝ քան ի յերկիր խառնեալ. և տընկականն առաւել է ի տունկս՝ քան յանասունս: - 266. Եւ քրիստոս կոչեցաւ եզն պարարակ *զօրաւոր* և արդիւնարար: - 361. Նա՛խ՝ *զօրաւոր* նշանք և արուեստքն յեգիպտոս: - 395. Երրորդ՝ *զօրաւոր* հարւածքն եգիպտոսի, որ ո՛չ ոք կարէր հասանիլ և բռնել զպատիժն. որպէս ոք հարկանէ և դարձեալ բարձրացուցանէ զձեռն: - 395. Երրորդ՝ զի արուն *զօրաւո՛ր* է քան զէգն. և նախաստեղծքն գլորեալ էին վասն հեշտութեան իւրեանց. պա՛րտ էր արու լինիլ և կանգնել զնոսա: - 480. Երրորդ՝ ամբարձեալ ձեռօք վերանայր յերկինս վասն երկուց. նախ՝ զի զինքնն ընծայեսցէ հօրն. երկրորդ՝ զի զթշնամիսն հարկանիցէ *զօրաւոր* ձեռամբ բարձրացեալ: - 520

**ԶՕՐԵԱՅ** (վեցօրյա) - Եւ ներքին և վերին կողմամբն լինի **զ** կողմ. առաջին *զօրեայ* ստեղծմանն նշանակ: - 293

**ԶՕՐԵՂ +** Իսկ գազանացն միս է՛ *զօրեղ*. վասն այն ի խելս նոցա առաւել յարմարի և ուժովացնէ՛ զնոսա: - 218. Եւ փայծեղն և թոքն ցրտայինք ի ձախ կողմն են. վասն այն աջն *զօրեղ* է և ձախն տկար: - 243. Չորրորդ՝ զի մի՛ տկար ոք կարծիցի. այլ որպէս կողե՛ղ և հաստակող ասեմք զըմբիշս. այսպէս *զօրեղ* եղիցի կինն ի տնօրինել զտունն: - 276. և զայս պատճառէ՛ *զօրեղ* իշխանութիւն քահանային և ջրոյ առաւելութիւնն: - 590

**ԶՕՐԵՂԱԳՈՅՆ +** նոյնպէս և սուրբք ժամանակին այնորիկ լինիցին *զօրեղագոյն* քան զամենայն յառաջագոյն մարտիրոսսն: - 708

**ԶՕՐԷՆ +** Զոր և ես *զօրէն* մշակաց բազմահաւաք պտղոց. կամ փունջ մի անուշահոտ բազմերանգ ծաղկանց. կամ չնչին թռչնոյ զխորիսխ մեղու. կամ որպէս զլոմայս այրւոյն տառապեալ գոյիւ: - 772. Իսկ ստինք յատկապէս գործի՛ է բնութեան ի պէտս սննդեան այնոցիկ ծննդոց *զօրէն* սերմանեաց երկրի. յորմէ հիւթոյ արեանն գոյացելոյ, ընդ ազուգայս երակաց արտագունեալ որակօք կաթն փոխակերպեալ: - 786. Իսկ ի ներքուստ, ի լինիլ տրտմութեանց՝ խուճապեալ մարմնոյն հոսի մաղձ դառն ի ստամոքս որովայնի. և վերացեալ գոլորշեաց նորա *զօրէն* շոգոլեաց պուտկի առ խելապատակս գլխոյ. և ծանրացեալ անտի թորի՛ առ բիբն ասացեալ ական. չոր գոլով և աղէգոյն ի սևատեսա՛կն մաղձոյ: - 787

**ԶՕՐՈՒԹԻՒՆ +** Առաջին պատճառն աստուած՝ եդ *զզօրութիւն* իւր յաստեղս. և նոքա ազդե՛ն ի մեզ, և դարձուցանեն զմեզ ըստ իւրեանց շարժութեանն ի չար կամ ի բարի: - 7. Զորօրինակ՝ իրն ի ներկայս որ է նիւթ ներընդունակ՝ ունի կրկին *զօրութիւն*. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ, և կարէ՛ ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ ջերմն գոլ, և կարէ՛ ո՛չ գոլ. և միևն ի նոցանէ՛ լինի ներգործութեամբ որն և հանդիպի: - 9. Զորօրինակ՝ իրն ի ներկայս որ է նիւթ ներընդունակ՝ ունի կրկին *զօրութիւն*. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ, և կարէ՛ ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ ջերմն գոլ, և կարէ՛ ո՛չ գոլ. և միևն ի նոցանէ՛ լինի ներգործութեամբ որն և հանդիպի: - 9. Ա՛յսպէս և որ ի հանդերձեալն լինելոցն է՝ ունի կրկին *զօրութիւն* լինելոյ և ո՛չ լինելոյ. և հանդիպմամբ միևն յառաջէ՛ ի նոցանէ և լինի ներգործութեամբ: - 9. Մանաւանդ թէ առ առաջին պատճառն վերանայ այս անհրաւութիւն, որ ետ *զօրութիւն* աստեղացն այսպէս անիրաւ բաժանարար գոլ: - 12. Դարձեալ ասեն հակառակօղքն, թէ բոյսք և ծաղիկք և պտուղք երկրի ունին *զօրութիւն* ազդողական. իսկ աստեղք երկնից ո՞չ ունիցին: - 12. Ասեմք առ այս թէպէտ ունին *զօրութիւնս*, բայց այլ և այլ կերպիւ. զի բոյսք որք յերկրի են դարմանիչք և բժշկութիւնք մարմնոց. այլ երկնային աստեղքն են արարիչք լուսոյ և ժամանակաց. և ի նշանս ապագայից. զի յամենայն ուստեք տեսեալ

պատրաստեսցին մարդիկք. որպէս ասէ գիր, եղիցին լուսատու լինիլ երկրի. ի ժամանակս և ի նշանս: - 12. Դարձեալ ասեն ըստ փիլիսոփային թէ՝ ո՛չ աստուած՝ և ո՛չ բնութիւնն՝ և ո՛չ արհեստ՝ վայրապար իրս երբեք ստեղծանեն. ապա թէ աստեղքն ո՛չ ունին *զօրութիւն* ազդելոյ՝ վայրապա՛ր են ստեղծեալք յարարչէն: - 13. Այլ արդ՝ որ հակակայութեամբ լինի՝ նա՛խ է *զօրութեամբ*՝ և ապա՛ ներգործութեամբ լինի: - 14. Այլ ի յաստուած *զօրութեամբ* իր ո՛չ ինչ գոյ, ո՛չ բարի և ո՛չ չար: - 14. Յէից՝ որպէս դու ի քո հօր մէջքն էիր *զօրութեամբ*, և յետոյ ծնար նոր գործութեամբ: - 37. Այլ նա ընդ ամենայն է քրիստոս *զօրութեամբ* և էութեամբ թափանցեալ է. և ո՛չ է տեղի թափուր ի նմանէ...: - 40. Նախ՝ ոչ կարել վասն նուազութեան *զօրութեան* ժամանակի և դիմի. որպէս ո՛չ կարէ մանուկ կռուիլ՝ և կորիւն տեսանել: - 44. Եւ որպէս ո՛չ ոմն նուազ *զօրութեամբ* ընդ առաւելն մրցի. այլ ընդ համացեղսն: - 44. Զի երկուս այս հարկաւոր է, բժշկելոցն հաւատ, և բժշկին *զօրութիւն*: - 44. Հինգերորդ՝ զի *զօրութիւն* կարողութիւն՝ ուստի առնելն է՝ և աստուածութիւն՝ տէրութիւն՝ իշխանութիւն և այլք այսպիսիք՝ ո՛չ են առանձին անձնաւորութեանց. այլ հասարա՛կ են. և ո՛չ մին առաւել քան զմի. վասն այն ո՛չ կարէ որդի առնել ինչ յանձնէ իւրմէ թարց հօր որպէս ասացաք: - 45. Եօթներորդ՝ նախ քան զխաչն, որ ետ *զօրութիւն* առաքելոցն: - 50. Իսկ որք բառնան զաստուածութիւնն ի միոյն՝ և ո՛չ երկոցունց տան զաստուածութիւնն, իմա՛, ըստ առաքելոյն *զօրութիւն* և իմաստութիւն է հօր որդի. և բան՝ ըստ աւետարանին յոհաննու: - 51. Եւ թէ էր երբեմն հայր առանց *զօրութեան*, զիա՞րդ զօրանայր ի ծնունդն որդւոյ: - 51. Եւ այլք *զօրութիւն* ի աստուած ասացին: - 51. Զի ասեն զմինն արարիչ՝ *զօրութեամբ* և բնութեամբ անսահմանելի: - 51. Իսկ զմիւսն գործակից՝ *զօրութեամբ* անսահմանելի. զի իւր ասեն արար գործակից. իսկ բնութեամբ սահմանելի. զի արարած է: - 51. Իսկ զմիւսն *զօրութեամբ* և բնութեամբ սահմանելի. զի արարած և պաշտօնեայ և ծառա՛յ է ասեն: - 51. Այլ մեր բանս ո՛չ է ընդ այլսն ամենայն, այլ որք *զօրութիւն* և արարած ասեն զոլ զհոգին: - 51. Իսկ յորժամ զյայլումն լսեն՝ արձակին ի վերայ մեր ասելով, եթէ յայլո՛ւմ է՝ պատահումն է ի հայր որպէս *զօրութիւնս* առ մեզ. իսկ եթէ զօրացեալ է՝ և ընդ զօրանալն դադարեսցէ ամենայնիւ. շարժումն եղիցի և ոչ շարժօղ: - 52. Ամենայնիւ այսոքիկ շարժողի՛ են և ո՛չ շարժութեան. ապա ուրեմն հոգին ո՛չ է *զօրութիւն*: - 52. Իսկ արիոսի՝ զի նա միայն զհա՛յր ասէր աստուած. զայս ասեմք թէ, ո՛չ են մեզ երեք աստուածք՝ այլ մի աստուած և երեք անձինք. և երկուքն ի մի և ի նոյն էութենէն յառաջ եկեալ. կամօք մի և *զօրութեամբ* մի: - 54. Իսկ աստուած ո՛չ այսպէս. այլ որպէս մի է բնութեամբ՝ և կամօք և *զօրութեամբ* մի: - 54. Եւ այսքան է միաւորթիւնն, զի որքան մին ինքն առ ինքն ունի զբնութիւնն և *զզօրութիւնն* և զկամքն, նոյնքան և ունի առ երկուսն. թէ զհայր իմանաս՝ թէ զորդի՝ թէ զհոգին: - 54. Մեծ է հայր. մեծ է և որդի. անբովանդակելի է և հոգին սուրբ. ըստ հոգէնըւագին որ ասէ, «Մեծ է տէր մեր. և մեծ է *զօրութիւն* նորա». որ է քրիստոս աստուծոյ *զօրութիւն*: - 56. Այլ *զօրութիւնս* այս վերաբերի ի հոգին սուրբ...: - 57. Այլ զի ամենայն ինչ զօր ունի հայր՝ որդւոյ է. և քրիստոս աստուծոյ *զօրութիւն* և իմաստութիւն: - 65. Իսկ հոգին առնու յիմաստութեանց և *զօրութեանց* որդւոյ և բաշխէ՛ արարածոց: - 65. Նոյնպէս և զկիրսն և *զզօրութիւնսն* անբաժանաբա՛ր ասեմք ի քրիստոս. որպէս Կիրք է քաղցնուլն. և Ներգործութիւն զհազարսն կերակրել: - 85. Չորեքտասաներորդ՝ ասէ պօղոս յեփեսացւոցն թէ՝ հայր կացոյց զքրիստոս յերկնաւորս ի վերայ ամենայն իշխանութեանց. և պետութեանց. և *զօրութեանց*. և ամենայն անուանելոց. ո՛չ միայն յաշխարհիս այլ և ի հանդերձելումն: - 97. Եւ հասարակ հրեշտակք և *զօրութիւնք* կոչին: - 102. Նմանապէս և արարիչն աստուած. ներքոյ և հիմն է ամենեցուն որ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ: - 110. Եւ որպէս մի է *զօրութիւն* հոգւոյն, և յիւրաքանչիւր մասունս մասնաւորի: - 112-113. Դարձեալ՝ զի անեղ է բնութեամբն աստուած. ապա և անհո՛ւն է *զօրութեամբ*. զի եղական բնութեան *զօրութիւն* հունաւո՛ր է: - 113. Այլ արդ՝ ըստ անեղ էութեանն յառաջ էած զանեղ էութիւնն որդւոյ և հոգւոյ. և ըստ անհուն *զօրութեանն* յառաջ էած զեղականն էութիւն. զի անհուն *զօրութիւնն* կարօ՛ղ է ամենայն ընդդիմակաց. ըստ որում ամենազօ՛ր է: - 113. Եւ յորժամ ասեմք ունայնանալ, զառաւել *զօրութիւնն* նշանակէ: - 118. Եւ զտկարանալն ի խաչին, զառաւել *զօրութիւն* նորա. և այլն ամենայն: - 118. Դարձեալ՝ գործնականին սկիզբն կամքն է. և տեսականին իմացական *զօրութիւն* մտացն: - 121. Մեծ է տէր մեր և մեծ է *զօրութեամբ*. այլ քանակեալ մարմնով ի չափս մեր տեսանի: - 127. Եւ կոչի սէր, զի շարժէ՛ զմեզ. և յառաջածու *զօրութիւն* է. և երևեցուցիչ. և միաւորիչ. զի այսոքիկ սիրոյ ներգործութիւնք են. վասն այն կոչի սէր: - 128. Ի յաստուածութիւնն՝ սոքա առաջին և վերջին ո՛չ ասին. զի համանգամայն *զօրութիւնք* են ի յաստուածութիւնն: - 128. Լայնութիւն՝ իմաստութիւնն է. երկայնութիւն՝ *զօրութիւնն*. խորութիւն՝ անյայտութիւնն. բարձրութիւն՝ անհասութիւնն: - 129. Երկայնութիւն՝ որ ո՛չէ լայն և ընդարձակ. այլ միայն երկայն. զի երկարագծի *զօրութեամբ* ի բոլորս: - 129. Նախ՝ զի նիւթեղէն միտք՝ միջնորդութեամբ նիւթո՛յ հասանէ յաննիւթն. որպէս տեսեալ զգիր՝ իմանամք *զզօրութիւն* նորա. և տեսեալ զորակ և զքանակ՝

իմանամբ զգոյացութիւն իրին: - 131. Երկրորդ՝ Տէրութիւնք. *Զօրութիւնք*. Իշխանութիւնք: - 134. Երրորդ՝ զի են էութիւն *զօրութիւն* և ներգործութիւն: - 134. Նմանապէս և ի միջին կարգ քահանայապետութեանն՝ առաջին է տէրութիւնքն. և ապա *զօրութիւնք*. և ընդ նմին իշխանութիւնք: - 135. Թէպէտ և զայս կարգ փոխեն ոմանք և *զզօրութիւնն* և զպետութիւնն աւանդեն որ մեզ ո՛չ է հետևելի. այլ սրբոյն դիոնիսեայ որպէս ասացաք: - 135. Նախ՝ զի տէրութիւնն ակնարկէ՛ առ հայր. և *զօրութիւնն* առ որդին. և իշխանութիւնն առ իշխանակից սուրբ հոգին: - 135. Դարձեալ՝ յառաջինսն տիրէ աստուած իբր մեծութիւն. ի յերկրորդսն կառավարէ իբր *զօրութիւն*. ի յերրորդսն պարսպէ՛ իբր փրկութիւն: - 135. Նախ՝ զի ընդհանուր դասք և իւրաքանչիւր անհատք ունին էութիւն՝ *զօրութիւն* և ներգործութիւն. այսինքն ըստ որում էացեալքեն, և կարողութիւն ունին, և ներգործեն: - 137. Վասն որոյ պարունակ բանիւ կոչին էութիւնք, *զօրութիւնք*, և այլն: - 137. Երկրորդ՝ զի առանձնաւորութիւն է *զօրութեանց*, այսինքն արիութիւն յաստուածայինսն և անշարժ գոլն և զօրացուցանելն. և զայս առ հասարակ ունին. վասն որոյ առ հասարակ *զօրութիւնք* կոչին: - 137. Երրորդ պատճառ. զի *զօրութիւնք* միջին են դասակարգեալ բոլորից. ի նոցունց դասուց և երիցն: - 137. Եւ արդ որպէս ցուցաւ՝ վերինք մինչ ի միջինս ունին բոլորապէս զներքնոցն. և ներքինքն մասնաւորաբար մինչ ի *զօրութիւնսն* յաղագս առ հասարակ *զօրութիւնք* կոչին: - 137. Երրորդ՝ ամենեքեան *զօրութիւնք* կոչին. զի ունին *զօրութիւն* էութիւն և ներգործութիւն: - 137. Եւ ասեն՝ տէր հզօր *զօրութեամբ*, տէր կարօղ ի պատերազմի: - 144. Եւ ասեն, սուրբ սուրբ սուրբ տէր *զօրութեանց*. որպէս լըւաւ եսայի: - 144. Այլ ի մերկանալն ի մարմնոյն՝ կարօտանայ յատուկ իմն *զօրութեան* որով խօսեցի ընդ հրեշտակին: - 145. Զի յետ անկմանն եղև խստացեալ և անզեղջ ի չարն. կորացեալ ի ճշմարտութենէն. անկեալ ի բարւոյն. տկարացեալ ի *զօրութենէն*. արտաքսեալ յաստուածային խոկմանէն: - 146. Եօթն գլուխն է է չար *զօրութիւն* նորին. որպէս հոգւոյ մարդոյ է բարի *զօրութիւնք* են և **է** առաքինութիւնք...:- 151. Եւ **ծ** կատարեալ թիւ է. նշանակէ՛ զկատարեալ *զօրութիւնս* թշնամւոյն որով կռուի ընդ մեզ. զոր նշանակեն եղջիւրքն: - 151. Չորրորդ՝ անկումն է ի *զօրութենէ* իւրեանց մինչ անգործ եղեալ մատնին. և այս կրկին: - 153. Եւ քրիստոսիւ տկարացան ի կրկին *զօրութենէ*. ըստ այնմ, «թշնամւոյն զէն պակասեաց մինչ իսպառ»: - 153. Աշխարհ *զօրութեամբ* ո՛չ ասի: - 154. Տասներորդ՝ գործ մարդոյս նախ *զօրութեամբ*՝ և յետոյ ներգործութեամբ եղանի. իսկ աստուծոյն միշտ ներգործութեամբ է. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 157. Երրորդ՝ որպէս պօղոսի տուաւ խայթ մարմնոյն զի մի՛ զ'ի վերուստ առեալ շնորհն և *զօրութիւն* հպարտութեամբ լքանիցէ ...: - 158. Երեքտասաներորդ՝ զի տկար մարմնով անմարմին և զօրաւոր թշնամոյն յաղթեսցեն. որով աստուած իսկապէս փառաւորի. տեսանելով զտկարն յաղթել զօրաւորին ըստ այնմ որ զախորժակս իւր յայտնէ՛ր սիրելոյն՝ «շա՛տ է քեզ շնորհ իմ. զի *զօրութիւն* իմ ի տկարութեան քում կատարի». այսինքն թէ՝ որպէս ես աստուածային մարմնոյս *զօրութեամբն* յաղթեցի փորձողին, նոյնպէս և դու շնորհօք իմովք՝ տկար մարմնով քո՝ յաղթես և նկուն առնես զնա: - 159. Զի յատուկ է առաջին պատճառին որ է՛ աստուած՝ ի հարկէ էակ գոլ՝ և միշտ ներգործութեամբ, և իսկապէս ներգործութեամբ. որովք տարորոշի յայսցանէ՝ որ կարելի՛ են էակ գոլ. և երբեմն ներգործութեամբ և հանդերձ *զօրութեամբ*: - 162. Որպէս այսոքիկ որ փոփոխականք են. որ կարեն գոլ և ո՛չ գոլ. և երբեմն հանդերձ *զօրութեամբ*: - 162. Զի կամ ի *զօրութենէ* լինի ներգործութեամբ. որպէս մանկան հիւսնել: - 162. Եւ կամ ի ներգործութենէ լինի *զօրութեամբ*. որպէս ի շարժմանէ դադարեալ: - 162. Եւ միշտ ներգործութեամբ է. զի ո՛չ կարօտի սկզբան և կատարածի *զօրութեամբ* գոլ. ապա ուրեմն անսկիզբն է և անվախճան: - 162. Եւ իսկապէս ներգործութեամբ, զի *զօրութեամբ* որ է՛ անկատար իր ինչ ի յաստուած ո՛չ է. այլ ամենայն ներգործութեամբ. այսինքն ի տեսութիւնն և ի կամքն. ապա ուրեմն անշա՛րժ է տեսութեամբ և կամօք: - 162. Չորրորդ զանազանութիւն՝ զի առաջին սկիզբն *զօրութեամբ* է տաճարին. և երկրորդն ներգործութեամբ: - 163. Չորրորդ՝ զի շինուածն ի միտս *զօրութեամբ* է և սոսկ մտածմունք: - 164. Իսկ առ աստուած ներգործութեամբ. *զօրութեամբ* և սոսկ մտածմունք ո՛չ բնաւ: - 164. Աղաչեմ զոր յիշեցաւ ի վերոյ բացայայտել, եթէ ի նախատեսութիւնն աստուծոյ աշխարհ *զօրութեամբ* ո՛չ ասի: - 167. Գիտելի՛ է, զի հոմ անուն է *զօրութիւնն*. այսինքն կարութիւնն. և հոմանունն մա՛յր է մոլորութեան. վասն որոյ որոշելի է զնոսա: - 167. Արդ՝ է՛ *զօրութիւն* մի՝ որ հանդերձ ներգործութեամբ է. և է՛ *զօրութիւն* որ առանց ներգործութեան է: - 167. *Զօրութիւն* որ ներգործութեամբ է՝ հարկաւո՛ր է. իսկ առանց ներգործութեան *զօրութիւն* կարելին է որ է ներընդունականն: - 167. Դարձեալ այն *զօրութիւնն* և ներգործութիւնն և հարկաւորն մի է. և հետևին առ միմեանս. զի ամենայն որ հարկաւոր է՝ ներգործութեամբ է. և ամենայն ներգործութիւն *զօրութեամբ* ներգործէ. իսկ միւս *զօրութիւնն* և կարելին և ներընդունականն որ է մարթելի՝ մի է և հետևին առ իրեարս. զի ամենայն որ *զօրութեամբն* է՝ կարելի է և մարթելի: - 168. Դարձեալ այն *զօրութիւնն* անփոփոխ է. զի միայն ի գոլն կարէ, և ի չգոլն անկար: - 168. Իսկ միւս *զօրութիւնն* որ է

փոփոխական՝ ի գոլն և ի չգոլն կարէ՛. և անկար առ ո՛չ ոք է: - 168. Դարձեալ՝ այն *զօրութիւնն* միշտ է. զի բնաւորեալ է ընդ ներգործութեան. իսկ միւս *զօրութիւնն* երբեմն է. զի կամ նախ է ներգործութեան. որպէս մանկան հիւսնել: - 168. Ապա յա՛յտ է զանազանութիւն սոցա, զի ոմն *զօրութիւն* հարկաւոր է և ներգործութեամբ և անփոփոխ և միշտ. որպէս հրոյ ջեռուցանել, և արեգական լուսաւորել: - 168. Եւ զայս *զօրութիւնս* ասեմք աստուծոյ՝ ամենազօր՝ ամենակարող՝ և այլն: - 168. Իսկ միւս *զօրութիւնն* որ կարելի է՝ և ներընդունի զգոլն և զչգոլն՝ և երբեմն՝ ասի ի վերայ փոփոխական բնութեանց. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ և ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ՛ ցրտացուցանել և ո՛չ ցրտացուցանել: - 168. Եւ զայսպիսի *զօրութիւնս* ո՛չ երբէք ասեմք ի վերայ աստուծոյ. զի մշտնջենաւոր էութիւն է. և ոչ ընդունի զգոլն և զչգոլն: - 168. Եւ ուսեալք զայս, ընկա՛լ և այժմ զլուծումն խնդրոյն. եթէ լինելութիւն աշխարհի ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ ո՛չ է *զօրութեամբ*՝ այլ ներգործութեամբ վասն բազում պատճառի: - 168. Նախ՝ զի պարզ ներգործութիւն է աստուած. զի եթէ գոյ ինչ *զօրութեամբ* նախատեսութիւնն աստուծոյ՝ ապա բաղադրեա՛լ է և ոչ պարզ ներգործութիւն: - 168. Ապա ուրեմն նախատեսութիւնն աստուծոյ ո՛չ է *զօրութեամբ*. այլ ներգործութեամբ: - 168. Երկրորդ՝ զի միշտ ներգործութիւն է աստուած. ապա թէ գոյ ինչ *զօրութեամբ*, ո՛չ լինի միշտ ներգործութիւն. այլ երբեմն: - 168. Այլ արդ՝ եթէ գոյ *զօրութեամբ* ինչ ի նա՛ ո՛չ է ի հարկէ էակ. այլ կարելի՛ էակ: - 168. Չորրորդ՝ *զօրութիւն* և ներգործութիւն են հակակա՛յ իրերաց. ապա թէ է *զօրութեամբ* և ներգործութեամբ՝ գո՛յ ինքն ինքեան հակակայ որ է բնաւ սուտ: - 168. Հինգերորդ՝ *զօրութեամբ* և ներգործութեամբ փոփոխեն զմիմեանս: - 168. Այլ արդ եթէ է *զօրութիւն* ի յաստուած լինի փոփոխական և նա որ է՛ անտեղի: - 168. Վեցերորդ՝ *զօրութեամբն* է անկատար՝ և ներգործութեամբն կատարեալ: - 168. Եւ թէ է *զօրութիւն* ի նա՛, լինի յանկատարութենէ ի կատարելութիւն եկեալ, կամ հակադարձեալ. որ է՛ անհնարին հերձուած: - 168. Եօթներորդ՝ ներգործութեամբն պատւական է քան *զօրութեամբն*. և թէ գոյր *զօրութեամբ*, լինէր ինքն ինքեան պատուական և անպատիւ որ է՛ անյարմար: - 168-169. Եւ թէ գոյր ինչ *զօրութեամբ* ի նա՛, և նա՛ լինէր ընդ եղելոցս ի ժամանակի որ է սուտ: - 169. Իններորդ՝ և է ուրեք ժամանակաւ առաջին ներգործութեամբն՝ և վերջին *զօրութեամբն*. որպէս շարժման դադարիլն: - 169. Եւ թէ գոյր ինչ այսպիսի *զօրութիւն* ի նա, լինէր վախճանաւոր և նա. և թէ էր վախճանաւոր, և էր սկզբնաւոր՝ որ է՛ անպատշաճ: - 169. Է՛ որ միշտ ներգործութեամբ. որպէս աստուած. և է՛ որ միշտ *զօրութեամբ*. որպէս նիւթն և ժամանակ. և է՛ որ երբեմն *զօրութեամբ* և երբեմն ներգործութեամբ. որպէս այսոքիկ որ ի լինելութեան և յապականութեան են: - 169. Ապա ուրեմն յա՛յտ է ի բաժանման է թէ ի յաստուած ո՛չ գոյ իր ինչ *զօրութեամբ*. այլ բովանդակն ներգործութեամբ որպէս ցուցաւ: - 169. Այլ արդ՝ լինելութիւն աշխարհի առ ինքն ըստ ինքեան ասի *զօրութեամբ* և ներգործութեամբ. զի ի *զօրութենէ* եկն ի ներգործութիւն. զի թէ ոչ գոյր *զօրութեամբ* նախ՝ ո՛չ լինէր յետոյ ներգործութեամբ: - 169. Եւ զորօրինակ՝ անորակ նիւթն որ է՛ միշտ *զօրութեամբ*, ամենայն մարմինք որ ներգործութեամբ են՝ առ նա *զօրութեամբ* են: - 169. Նոյնպէս և *զօրութեամբ* լինելութիւն աշխարհիս՝ առ աստուած ներգործութեամբ է: - 169. Իսկ Առնելն՝ յարարածոց յայտ է. և Կրել զնոսա բանիւ *զօրութեան* իւրոյ ըստ առաքելոյ: - 172. Մին է՝ զի միշտ ոչ ինչ է. զի ոչ *զօրութեամբ* և ո՛չ ներգործութեամբ ունի զգոլն. և յայս ոչ էակէս ոչ ինչ լինի: - 173. Եւ դարձեալ է՛ ոչ էակ՝ որ թէպէտ ներգործութեամբ ո՛չ է, սակայն *զօրութեամբ* ունի զգոլն. և յայսպիսի յոչնչէ եղեն արարածք ամենայն. ապա ուրեմն յայտնի է հարցումնդ: - 173. Եւ է՛ էակ որ երբեմն *զօրութեամբ* է. որպէս այնոքիկ որ ի լինելութեան և յապականութեան են որք միշտ փոփոխին. որպէս մարդ և ոչխար և ծառ: - 173. Եւ այսպիսի էակքս կրկին ունին *զօրութիւն*. լինելոյ և ո՛չ լինելոյ. գոլոյ և ո՛չ գոլոյ. և այլն: - 173. Իսկ մշտնջենաւոր էակն միայն մին ունի *զօրութիւն* որ է առինքն ներգործութեամբ. որպէս հրոյ ջեռուցանելն. և արեգական լոյսն. և հրեշտակին անապականութիւնն: - 173. Զի աննիւթ և պա՛րզ էութիւն է աստուած. և յառաջ էած յոչընչէ զաննիւթ էութիւնքս. այսինքն զգոյացութիւն, զքանակ, զորակ, և զայլսն. և իւրով *զօրութեամբն* ի միասին ժողովեալ կազմեաց մարմնական նիւթ: - 175. Եօթներորդ՝ զի ջերմ է *զօրութեամբ*: - 186. Զամենայն մոլորակաց *զօրութիւն* ունի: - 187. Նա՛խ՝ զի ի ներքո՛յ է ամենեցուն. և ամենայնին *զօրութիւն* առ նա՛ ժողովի: - 187. Երրորդ՝ որ զերկնայինսն կատարեալ ստեղծ, ամենակարող *զօրութեանն* է ցոյցք: - 192. Եւ վասն առաւել և ազդու *զօրութեան* և ջերմութեան՝ զգոյացութիւն կենդանեաց և մարդկան առ որս դիպի ապականէ՛. և պատահմունքն քանակ և որակ մնան: - 204. Այսպէս յեգիպտոս հուրն որ ընդ կարկտին իջանէր, վասն ազդու *զօրութեանն* զկենդանիսն սպանանէր, և մարմինքն ամբո՛ղջ մնային: - 204. Այլ Ամպն լինի, յորժամ *զօրութեամբ* արեգականն ի վեր քարշին գոլորշիքն ի ջուրց և ի գէջ տեղեաց: - 204. Իսկ Կարկուտն ծնանի ի յամենախմբ ջերմ ամպոյ, *զօրութեամբ* արեգականն ի վեր քարշեալ: - 205. Եւ ի բաքու յեզրն կազբիական ծովուն. ուստի ծծումբն *զօրութեամբ* ունի զհուրն: - 208. Նա՛խ՝ զի սերմնական

*զօրութիւնն* է ի մէջն բնաւորեալ. ուստի բոլորապէս և հաւասար տայ շարժիլ տնկոյն: - 213. Զի վարդապետք ասեն եթէ՝ կերակուր գազանաց այլ կենդանիք են. վասն որոյ խնամքն աստուծոյ ետ նոցա առաւել հնարս և *զօրութիւնս*, զի կարասցեն ըմբռնել. զայլ կենդանիս և մի՛ ի սովոյ մեռցին: - 218. Երրորդն է անապական ըստ *զօրութեան* ներգործողին զնա: - 221. Այլ ո՛չ թէ հոգի ունէր բանական. այլ *զօրութիւն* իմացական: - 222. Եւ թէ տկարանաս ի *զօրութիւնն* աստուծոյ՝ առ մե՛զ ևս գոն քեզ հաստատութեան նշան՝ անփուտ փայտ. և անթառամ ծաղիկ. և մշտականաչ սաղարթ. և անթափ պտուղ: - 223. Յնգետասաներորդ՝ Վասն *զօրութեան* հոգւոյն **ժթ** թուով: - 227. Եւ ի վախճանի եղև զգալի բանականն իբրև մատնահար և կնիք արարածոց. ունելով զիմացումն և զզգացումն. զի իմաստութեամբն ծանիցէ զիմաստութիւն արարչին. և զգալովն զամենակարօղ *զօրութիւն* նորա՛: - 231. Եւ է՛ բանն առաջին մասն և *զօրութիւն* հոգւոյն: - 232. Եւ ունի ստամոքն **դ** *զօրութիւնս*. որ է՛ քարշողական. ունական. հալողական. վտարական: - 242. Ո՞րքան են *զօրութիւնք* հոգւոյն: - 248. Ըստ փիլիսոփային **բ** են *զօրութիւնք* անձին. այսինքն գիտնականս և կենդանականս: - 248. Եւ իւրաքանչիւրն **ե ե** *զօրութիւն* ունին: - 248. Իսկ մաքսիմոս իմաստասէրն ասէ, Յոգի մարդոյ **բ** *զօրութիւն* ունի. միտք և բան: - 248. Եւ սոքա ե ե *զօրութիւնս* ունին. Մտացն. Իմաստութիւն. Տեսողութիւն. Ուսողութիւն. Անմոռացութիւն: - 248. Իսկ ըստ այլոց, *զօրութիւնք* հոգւոյն բաժանին յերկուս. որ է իմացումն և կամքն: - 248. Դարձեալ են *զօրութիւնք* հոգւոյն բաժանեալք ի մարմնոյն. որպէս իմանալն և կամիլն: - 249. Դարձեալ հոգին ունի *զօրութիւնս* ոմանս անխառն ընդ մարմնոյն. որպէս բանն՝ կամքն՝ և սոյնպիսիք: - 249. Եւ զոմանս ունի խառնեալս ընդ մարմնոյ. որպէս է բնական *զօրութիւն* կենդանականն և շնչականն որպէս ասացաւ ի վերոյ: - 249. Դարձեալ հոգին ունի *զօրութիւնս* ոմանս հասարակ ընդ անասնոց. որպէս զգայականութիւնն: - 249. Դարձեալ են և ա՛յլ *զօրութիւնք* անբաժանելիք ի հոգւոյն. որպէս տնկականք, և զգայականք: - 249. Դարձեալ *զօրութիւնք* հոգւոյն. ոմանք են հնազանդ բանին. և ոմանք են անհնազանդ: - 249. Դարձեալ *զօրութիւնք* հոգւոյն բաժանին ի ներքին զգայութիւնքն և յարտաքին: - 249. Դարձեալ *զօրութիւնք* հոգւոյն բաժանին երրակի ըստ երից ներգործութեանցն. որ է՛ կենդանանալն. զգալն. և բանաւորիլն: - 249. Եւ ըստ այսմ զանազանին երեքկին *զօրութիւնք* հոգւոյն. այսինքն տնկական. զգայական. և բանական: - 249. Վասն այնորիկ *զօրութեամբ* սիրոյն շարժի առ աստուած ի միջին կէտ իւր. զի գերազանցապէս հեշտասցի ի նա՛: - 249. Յինգերորդ՝ զի տկարութիւն է *զօրութեանն* աստուծոյ՝ եթէ զմի էութիւն ըստ մասին յայլ և այլ ժամանակս գործեաց: - 254. Պատասխանեմք եթէ, սերմնական *զօրութիւնն* որ է՛ ի մեզ, նոյն է սկիզբն գոյութեան մարդոյ: - 254. Եւ թէ որպէս, ասելի է թէ, ի սերմնական *զօրութիւնն* տեսանի երկու իր: - 254. Զի կազմողական *զօրութիւնն* որ է՛ ի նիւթն՝ ազդումն առեալ յարարչադիր հրամանէն, նախ կազմէ՛ և պատրաստէ՛ զնիւթն առ ի յընդունելոյ զտնկականն. և ապա զզգայականն. յետ որոյ զբանականն ի ծագմանէն աստուծոյ: - 254. Երկրորդ՝ զի *զօրութեամբ* ունի զհոգին յինքեան ծածկեալ. որ յետոյ ներգործութեամբ երևի: - 254. Եւ թէ ասէ ոք, ո՞րպէս է բանական հոգին նախ *զօրութեամբ* և յետոյ ներգործութեամբ: - 254. Զի *զօրութիւն* ունի այս նիւթ՝ ընդունել զբանականն. զոր նիւթ անասնոցն ո՛չ կարէ ընդունել: - 254-255. Այլ ի կողմանէ հոգւոյն՝ *զօրութեամբ* ո՛չ է ի սերմն այն ըստ ինքնութեան բոլորին. այլ ըստ ինքնութեան մասին. որ է տնկականն և զգայականն: - 255. Եւ այս կազմողական *զօրութեանն* է որ նախ պատրաստէ՛ զնիւթ առ կեանքն. և ապա ի զգայութիւնն. և ապա ի բանաւորութիւնն: - 255. Եւ դարձեալ՝ որպէս հատն ցորենոյ ունի առ ինքն *զօրութեամբ* զխոտն և զծաղիկն և զհասկն. և սոքա համանգամա՛յն են ի հատն այն *զօրութեամբ*. որ յետ ժամանակաւ ըստ դասի երևին: - 255. Դարձեալ՝ ջերմ և գէջ չափաւորեալ է ի նիւթն այն. և որ արտաքուստ մտանէ՝ անչափութեամբն վնասեսցէ՛ զսերմնական *զօրութիւնն* ընդ նիւթոյն: - 256. Պատասխանեմք եթէ՝ ոմանք յարմատս ունին զսերմն. ոմանք ի ծայրքն. կէսք ի տերևն. այլք ի կեղևն. թէպէտ և սոցա սերմնական *զօրութիւնն* է՛ ի մէջն, այլ առաւել կենդանւոյն: - 256. Նախ վասն՝ ի մէջն գոլով հաւասարապէս հուպ յամենայն մասանցն *զօրութիւն* առնլոյ: - 256. Երրորդ՝ զի *զօրութեամբ* է նիւթն պա՛րտ է ծածուկ գոլ, զի ներգործութեամբ երևեսցի: - 256. Չորրորդ՝ զի *զօրութիւն* է, և յետոյ ներգործութեամբ փոխի: - 256. Յինգերորդ՝ զի նիւթն հատանի, և *զօրութիւնն* ո՛չ: - 256. Վեցերորդ՝ զի յապականեալ նիւթոյն՝ *զօրութիւն* կենագործի: - 256. Ասեմք առ այս թէ՝ ո՛չ են գ հոգիք ի մարդն. այլ **գ** *զօրութիւնք* են հոգւոյ: - 259. Այլ ի մարդն ո՛չ է պարտ ասել գ հոգի. այլ մի հոգի և **գ** *զօրութիւն*: - 259. Նոյնպէս և ի զգայականս ո՛չ է պարտ ասել բ հոգի. այլ **բ** *զօրութիւն*: - 259. Իսկ զտնկականն ի տունկն ո՛չ է պարտ ասել *զօրութիւն*. այլ հոգի է տնկական: - 259. Այլ զանազան *զօրութիւն* ի զանազան ներգործութեանցն երևի. որ է՛ աճիլն. զգալն. և խորհիլն: - 259. Եւ ըստ որում իմանայ և խորհի, կոչի բանական հոգի. որպէս այլուր բաժանի ի տեսողական *զօրութիւնն*. և յիմացականն. և ի յիշողականն. մնալով անբաժանելի ներգործէ՛ ի նոսա: - 259. Իսկ թէ զոսա **գ** տեսակս ասես, կամ *զօրութիւնս*, կամ

մասունս բանական հոգւոյն, մի՛ է տեսութիւնն: - 259. Այսպէս և զգայականն և տնկականն մասունք են բանականին՝ նախ եղեալ ի մարմինն. և յորժամ բանականն հեղի ի մարմինն, յայնժամ և սոքա հեղին ընդ նմա. զի *զօրութիւնք* և մասունք են նորա ըստ օրինակի նախասացեալ երրորդ թուոյն: - 259-260. Եւ յայնժամ զգայականն և տնկականն ո՛չ ունին զներգործութիւն իւրեանց ի կազմողական *զօրութենէն*. այլ ի նոյն ինքն ի հոգւոյն: - 260. Եւ նա հոգին է որ զզգայական և զտնկական *զօրութիւնն* ի գործ ածէ միայն ի մարմինն որքան է ի մարմնի: - 260. Ասեմք առ այս, թէ մի է հոգի հաւաստեաւ. և ո՛չ է ինքն ինքեան առաջին և վերջին. զի մի էութեան՝ առաջին և վերջին ո՛չ է. այլ ըստ ներգործութեան. զի ըստ առաջին և վերջին *զօրութեանն*՝ առաջին և վերջին ներգործէ: - 260. Եւ թէ ասիցէ ոք, երևի ապա թէ առաջին *զօրութիւն* հոգւոյն տնկականն է՝ և վերջին բանականն որ է՛ յոյժ անպատշաճ: - 260. Այսպէս իմա՛ և աստ վասն հոգւոյ և *զօրութեանց* նորա: - 260. Պատճառ յապաղելոյ և փութալոյ սերմնականին *զօրութեան* **գ** են: - 261. Զի սերմնական *զօրութիւնն* որ է՛ ի նիւթն այն՝ իսկ ընդ խառնիլ սերմանցն յարգանդի, զուգապէս ցուցանէ զտնկականն: - 261. Զի վեցն որ է՛ կատարեալ թիւ, և նիւթն այն է՛ ի չորից տարերց, և ունի առ ինքն զկազմողական և զտնկական *զօրութիւնն* որ է **գ**: - 262. Զի ամենայն նիւթ սերմնականի է՛ ի չորից տարերց. և ունի զկազմողականն *զօրութիւն*. որով լինի տնկականն: - 262. Իսկ տնկականն ունի երիս *զօրութիւնս*. այսինքն զկերակրականն որ է՛ սննդականն. զաճողականն և զծննդականն: - 262. Նմանապէս և կերակրականն ունի *զօրութիւնս* **դ**. որ է՛ քարշողականն. ունականն. հալողականն. և վտարականն: - 262. Արդ՝ տնկական *զօրութիւնն* բնականապէս՝ է նիւթն. որով կազմի և պատրաստի նիւթն առ տեսակս ազգի իւրեանց: - 262. Վասն որոյ ըստ թուոյ *զօրութեան* իւրոյ որ է՛ սնանիլն աճիլն և ծնանելն, յերեք ամիսս ծնանի զպտուղս. որպէս ցորեան և այլքն: - 262. Վասն որոյ բոյսք առ հասարակ յերեք ամիսս ծնանին, և ի չորրորդումն կատարին յաւելեալ ի վերայ զկազմողական *զօրութիւնն*: - 262. Եւ այլք ունելով և զկերակրականին *զօրութիւնս*՝ յապաղեն մինչ **բժ**ան ամիսս: - 262. Այլ և պարզապէս ըստ չորից տարերց տնկականին՝ **գ** *զօրութիւնք* և **ե** զգայութիւնք՝ լինի **բժ**ան: - 263. Դարձեալ տըլնկականն ունի **գ** *զօրութիւն*, և **ա** զնիւթն, և **ե** զգայութիւնս, որ լինի **թ**. վասն որոյ **թ** ամսեայ ծնանի: - 263. Իսկ մարդոյն խորհուրդն ըստ չորից տարերց և երից *զօրութեանց* տնկականին եօթեամբ կատարի. թիւ շնորհալի և մշտակայս ըստ աթենայ. զի ոչ ծնեալ լինի և ո՛չ զայլս ծնանի: - 264. Եւ վասն տնկական և զգայական մասին՝ կազմողական *զօրութիւնն* այլ ևս աճեցուցեալ զմարմինն **բ** ամ և դադարեալ յերեսներորդին, լինի ժամանեալ ի չափ հասակի կատարմանն քրիստոսի, յորում մկրտեցաւ տէրն մեր: - 265. Իսկ ձմեռն, և յինն ժամէն մինչև յերեկոյ և բոլոր գիշերն, և սպիտակաթոյր հիւր պլղամին, և ծեր մարդ, ըստ նմանութեան ջրոյ ցուրտ և գէջ գոլով. վասն որոյ սպիտակի և ցրտանայ և պակասի *զօրութեամբ*: - 266. Դարձեալ՝ ամենայն իր առաւել ունի *զօրութիւն* ի տեսակս իւր՝ քան ի յայլս. որպէս ջուր առաւել զօրաւոր է ի գետս՝ քան ի յերկիր խառնեալ. և տըլնկականն առաւել է ի տունկս՝ քան յանասունս: - 266. Ըստ բնականին այս է. զի ամենայն իր որ լինի՝ յանկատարութենէ ի կատարումն ելանէ, և ի *զօրութենէ* ի ներգործութիւն որպէս ի վերոյ ասացաւ: - 267. Քսանևդ, ըստ ունակութեան՝ *զօրութեան* և ներգործութեան. բայց այլազգաբա՛ր են ի մեզ և յաստուած: - 272. Եւ դարձեալ ասեն թէ՝ հոգին է պատկեր աստուծոյ ըստ *զօրութեանցն*. զի ունի միտք և իմացումն և կամք: - 273. Դարձեալ՝ ըստ երից բնական *զօրութեանց* հոգւոյն պատկեր եմք աստուծոյ. այլ սրբութեամբ արդարութեամբ և առաքինութեամբ նման եմք աստուծոյ: - 273. Տասներորդ՝ որպէս կողն *զզօրութիւնն* քարշէ՛ և տայ ի թիկունքն և պնդէ՛ զնա. այսպէս կինն զփառս և զինչս առն յինքն քարշելով թանձրացուցանէ և պնդէ՛ զինքն: - 276. Երրորդ՝ կին, իբր թէ կող մի. որ է՛ *զօրութիւն* սիւն: - 276. Եօթներորդ՝ կին, իբր թէ կրօղ *զօրութեան* և ընչից առն: - 276. Նա՛խ՝ զի ո՛չ ունի զառնողական *զօրութիւնն*. որպէս և յամենայն կենդանիս էգն: - 276. Եւ զանչարչարութիւնն ի վերնատունն. յորժամ զմարմինն իւր ուտել ետ աշակերտացն՝ անչարչարելի էր ներգործութեամբ և ոչ թէ *զօրութեամբ*: - 282. Չորրորդ՝ չտալն **զ** *զօրութիւնն*: - 287. Երկրորդ՝ զի *զօրութիւնն* որ քեզ տւաւ յաստուծոյ՝ չարաչար արկեր ի կիր: - 287. Երրորդ՝ ասէ չտայ *զզօրութիւնն*, զի մի՛ դադարեսցիս ի գործելոյ: - 287. Զի փոխելն ցուցանէ նախ զկարօղ *զօրութիւն* փոխողին: - 289. Նոյնպէս և վերացուցանելն զկարօղ *զօրութիւն* յայնմ որ վերացոյցն: - 289. Դարձեալ՝ որ քան յերկարի ժամանակս, մաշի՛ երկիր և ի ծերութիւն երթայ և տկարանայ. որպէս ծեր մարդոյն *զօրութիւնն* պակասի և ցաւքն առաւելու: - 292-293. Նա՛խ՝ զի յայնմանէ ճանաչեցին թէ անյաղթ և ամենայա՛ղթ է *զօրութիւնն* աստուծոյ: - 298. Չորրորդ՝ զի յորժամ փրկեսցի ղովտ ի սոդոմայ, *զօրութիւն* աստուծոյ յայտնի լիցի: - 302. Չորրորդ՝ զի բարիքն ամբողջ մնալով ի մէջ չարացն, *զօրութիւնն* և արդարութիւնն աստուծոյ երևեսցի: - 302. Եւ անդանօր լինի անմահ և անապական ծնունդ և որդիք յարութեան. զի մեռանիլ ո՛չ ևս կարեն ասէ. վասն զի յանմահ *զօրութենէն* աստուծոյ ծնանիմք, և յանապական տարրեղէն նիւթոց. վասն

որոյ անմահ և անապական կայանան: - 308. Երկրորդ՝ զի նախկին *զօրութիւն* է ծնողաց: - 309. Գօտին *զօրութիւն* նշանակէ որ էր ի մէջքն. այլ և ի յաղօթս կայր և գօտեաւ պնդեալ էր: - 311. Նոյնպէս և քրիստոս զզէն և *զզօրութիւն* սատանայի եբարձ որ էր մեղքն և մահ դժոխոցն: - 314. Քսաներորդ, և որպէս յովսէփ եթող զքուրմն և զերկիր նոցա, զոր քրիստոս էր բառնալոց զմեծամեծ մեղսն և զկռապաշտութիւնն. զի ըստ առն և *զօրութիւն* իւր. և ըստ աստուծոյ և գործք իւր: - 314. Եւ այն ի քթթելական կարօղ *զօրութեամբն* աստուծոյ: - 314. Այս է՝ է *զօրութեամբ* հոգւոյն և ե զգայարանօք մարմնոյ մեռանիմք և յառնեմք **գ** կատարելութեամբ: - 315. Եւ տէր մեր հզօր *զօրութեամբ*, «որ կրէ զամենայն բանիւ *զօրութեան* իւրոյ»: - 315. Եւ ի սակաւ *զօրութենէն* նախքան զյարութիւնն չարչարէին դևքն, և աղաչէին թէ «մի՛ յառաջ քան զժամանակն տանջեր զմեզ»: - 316. Երկրորդ՝ խեցեաւն սրբէր զամանն խեցեղէն, զի թրծեալ էր *զօրութամբն* աստուծոյ: - 323. Եւ **դ** օղք և **բ** լծակքն, զի չորեքնիւթեայ աշխարհի են խնամածուք երկակի *զօրութեամբ* խնամոցն աստուծոյ. այսինքն արարչական և արքունական: - 344-345. Աշտանակ ոսկի, անապական *զօրութիւնն* աստուծոյ որ խնամէր զնոսա և բարձեալ կրէր: - 346. Այլ և **է** խորհուրդ եկեղեցւոյ, և **է** *զօրութիւնք* հոգւոյս. չորսն ստացական, և **գ**ն աստուածային առաքինութիւնք: - 347. Եւ **բ** ծիթենիք՝ *զօրութիւն* հօր, և սուրբ հոգին հովանացեալ ի վերայ նորա: - 347. Եւ ցանեալ **է** անգամ ի վարագոյրն. որ է՛ քաւութիւն **է** զգայարանցս ի **է** *զօրութեանց* հոգւոյն. **է** խորհրդով եկեղեցւոյ. առ **է** դար կենցաղոյս: - 360. Նա՛խ՝ զի ո՛չ ունի կատարեալ *զօրութիւն* սերման: - 365. Փայտն եղևնեայ, *զօրութիւն* հաւատոյն: - 368. Երկու հաւն՝ կրկին *զօրութիւնք* ի մեզ. տեսնական և գործնական: - 368. Երկոտասաներորդ՝ միորձի. պակաս *զօրութեամբ* և անգործ: - 370. Դարձեալ զ**է** ժամանակն ասէ. կամ զ**է** հասակս. կամ **է** զգայարանօք մարմնոյս. կամ է *զօրութեամբ* հոգւոյս: - 376. Նա՛խ՝ զի ծերն և տղայն պակա՛ս է ի *զօրութենէ*: - 377. Չորրորդ՝ պակասեալ է *զօրութեամբ* տեսանել և լսել և այլն: - 377. Տասն *զօրութիւնք* հոգւոյ և մարմնոյ զանգիտօղք և երկրասէրք: - 380. Երրորդ, սուրբ խաչն աստուածընկալ դալար *զօրութեամբ*. շառաւիղ թևն. պտուղ քրիստոս ծաղկեալ արեամբ և ջրով: - 382. Երկրորդ, զի գիտասցէ թէ առաւել *զօրութիւն* գոյ աստուծոյ քան զամենայն: - 387. Երրորդ՝ զի ցուցցէ թէ ոչ ինչ *զօրութիւն* ունի բան նորա: - 388. Եւ յա՛յտ է, զի ոչ ինչ *զօրութիւն* ունէր բան նորա: - 388. Ապա յա՛յտ է զի անօրինին ո՛չ անէծքն ունի *զօրութիւն*. և ո՛չ օրհնութիւնն շնորհք: - 388. Եւ ո՛չ զչամիչն, զի արևակէ՛զ է և պակաս ի *զօրութենէ*: - 390. Եղիազար՝ աստուծոյ *զօրութիւն* լսի որ է՛ քրիստոս և քահանայ և փրկիչ մեր. և իշխանք՝ **բժ**ան առաքեալքն աթոռակիցք քրիստոսի: - 391. Չորրորդ՝ ձեռն գործոց է նշանակ, և բազուկն *զօրութեան* զի անաշխատ գործէ: - 395. Եւ *զօրութիւն* է, զի զգայարանքս *զօրութիւն* է հոգւոյն և միտքն: - 396. Այլ բանն աստուծոյ ի ծովէ լորամարգ ի վիմէն ջուր և յօդոյ մանանայիւ կերակրեաց զնոսա. զի ամենակա՛ր է *զօրութիւնն* աստուծոյ: - 397. Եւ մի՛ մոռանար *զզօրութիւնն* աստուծոյ և զերախտիսն զոր արա՛ր հասարակ և առանձնակի: - 398. Այս է՝ ի միոյ բարի էութենէն աստուծոյ յառաջ գայ արարչական և արքունական *զօրութիւն*. իբր աջ և ահեակ ձեռն: - 403. Եւ յորժամ է *զօրութեամբք* հոգւոյ յաղթիցեն նոցա, փախիցեն յէ զգայարանաց մարդոյն եօթնեկի մահացու մեղօք. զայս կատարելո՛ցն է իմանալ. և ո՛չ մեզ տկարացս: - 404. Եւ բանն՝ որ կրէ՛ զամենայն *զօրութեամբ* իւրով: - 405. Զայս նշանակէ թէ՝ յետ ելանելոյ հոգւոյ ի մարմնոյ և գնալոյ ի վերին շաւիղն, հակառակ կայ սատանայ և չար *զօրութիւնքն* ընդ նմա, տանիլ զհետ իւրեանց որ զչա՛րսն են գործեալ. և յարդարոցն յաղթին հրեշտակին օգնութեամբն. որպէս և անտօն ետես. զի իմացեալ և մեք զգուշասցուք այնմ: - 410. Իսկ յետ մահուանն մովսէսի վերացաւ ամպն. և հրամայեցաւ ժողովրդեանն հեռու կալ կանգունս երկուց հազարաց վասն փառաց տապանակին և վասն *զօրութեան* նորա: - 415. Նա՛խ՝ զի լինէր առաւել *զօրութիւն*: - 416. Հինգերորդ՝ օրհնեալ ի տեառնէ մանուկն սամփսոն, և հոգւով *զօրութեամբ* շրջէր: - 422. Երեսուներորդ, ի տեառնէ յաջողեալ *զօրութեամբ* ծնօտին, և նովաւ զօրացեալ մեծ ծարաւն սամփսոնի: - 423. Եւ ինքն որդիէ՛ *զօրութիւն* հօր. և ծարաւ փրկութեան մարդկան, նովաւ զովացեալ: - 423. Եւ *զօրութեամբ* խաչելոյն գլուխ չարին ջախջախի. և սրբին անդամք մեր: - 424. Գիտելի՛ է, զի որպէս *զօրութեամբն* սամփսոնի՝ տեառն *զօրութիւնն* նկարեցաւ: - 424. Եօթներորդ՝ տկարանայ *զօրութիւնն*: - 424. Երրորդ՝ նա՛ ի կրտսեր ազգէ բենիամենի թագաւորեաց ամենայն իէլի. և տէր մեր յազգէ մարդկան կրտսերաց առեալ մարմին և թագաւորեալ ամենայն *զօրութեանց* երկնից: - 426. ...երիս *զօրութեամբ* ի վերայ խաչին. որ է՛ ձայնիւն և մարմնովն և հոգւովն որ էջ ի դժոխս. կամ **գ** գոյացութեամբ. այսինքն աստուածութեանն և հոգւոյն և մարմնոյն: - 427. Եւ է *զօրութիւնք* հոգւոյ. և **է** առաքինութիւնք. **դ** մարմնականք և **գ** աստուածայինք: - 431. Ութե**ժ**, զօրացաւ դաւիթ անուամբն աստուծոյ. և տէր մեր *զօրութիւն* է հօր աստուծոյ: - 436. Եւ քրիստոսէ աստուծոյ *զօրութիւն* և իմաստութիւն: - 440. Նոյնպէս և ամենայն խաչի *զօրութիւնն* քրիստոս է. ի ձեռս արժանաւոր և կատարեալ հաւատոց առնէ սքանչելիս. իսկ

ոչ նոյնպիսեացն ծածկէ *զզօրութիւնն*: - 445. Եւ են սոքա կրկին *զօրութիւնք*. արարչական և արքունական. ըստ փիլոնի որպէս կրկին ձեռք մարդոյ աջ և ահեակ: - 457. Երրորդ՝ համակ հանապազորդ ներգործական դարձումն բոլոր մարդոյն առ աստուած. որով մարդն աստուածային քաղցրութեամբն զմայլի. որպէս հրեշտակք ի բոլոր սրտէ՝ յամենայն անձնէ և յամենայն *զօրութենէ* միշտ ներգործաբար դիմեն առ աստուած. և յիւրաքանչիւրսն ճառագայթի՛ ի նմա՛ աստուած: - 462. Զի ի խորհուրդ մկրտութեանն ի յառնուլ ջուր, հոգին սուրբ և *զօրութիւն* բարձրելոյն և ողջոյն հօրն ի ձեռն հրեշտակին որ հերքէր զմեղս ըստ մկրտութեան: - 462. Եւ զմայլեալ ի բոլոր սրտէ և յամենայն անձնէ և ի *զօրութենէ* միշտ ներգործապէս դիմեալ առ աստուած հաստատեցաւ: - 463. Եւ այս ո՛չ զիետ իրերաց. այլ համանգամայն յանկարծօրէն ի վայրկեան ժամու *զօրութեամբ* հոգւոյն սրբոյ. որոյ յանկարծօրէն է ներգործելն աստուծոյ: - 470. *Զօրութիւնն* երկնից՝ տկարանայ. և կեանքն ամենեցուն մեռանի: - 470. Նա՛խ՝ զի կազմեցի *զօրութեամբ* բարձրելոյն ի հոգւոյն սրբոյ և ո՛չ նպաստութեամբ մարդոյ: - 470. Երկրորդ՝ զի ներգործութեամբ մասն՝ ո՛չ լինի *զօրութեամբ* բոլոր. վասն որոյ ոչ է նիւթ ծննդեան: - 470. Երկրորդ՝ զի *զօրութեամբ* ունի և ոչ է ներգործական մասն: - 470. Յաղագս որոյ պատրաստեաց նիւթ արեան, կազմեալ *զօրութեամբ* հոգւոյն. որով լինիցի ճշմարիտ մայր քրիստոսի: - 470-471. Չորրորդ եղանակն որ կատարումն է այլոցն՝ ի կնոջէ առանց առն. որպէս ծնունդն քրիստոսի *զօրութեամբ* հոգւոյն սրբոյ: - 471. Եւ զօծումն *զօրութեան* յորժամ օծաւ արեամբ ի վերայ խաչին և քակեաց զամուրս հզօրին և էառ աւար: - 474. Ութերորդ՝ որպէս ի միաւորիլ հոգւոյ և մարմնոյ յառաջագայի ի միոյ կամաց միով *զօրութեամբ* հանճար և ներգործութիւն: - 478. Այսպէս և բոլոր տընօրէնութիւն մարդացելոյն բանի՝ միով *զօրութեամբ* և կարողութեամբ ըստ միութեանն կամաց մի ներգործութիւն երևի: - 478. Նախ նշանակէ զպէս պէս *զօրութիւնս* քրիստոսի. որ երբեմն զբարձրագոյնս ներգործէր և երբեմն զնուաստագոյնս երևեցուցանէր յինքեան: - 493. Որում փառք և *զօրութիւն* յաւիտեանս ամէն: - 498. Երկրորդ՝ վասն բազում մասանցն. որք կրեն զտանջանս մարմնոյ մասամբ և զգայութեամբ. և հոգւոյ *զօրութեամբ* և մտաց իմացմամբ: - 505. Երկրորդ՝ զի դժոխքն այն էր բուռն *զօրութիւնն* սատանայի. և քրիստոս կապեաց զհզօրն_ըստ աւետարանին. ապա ուրեմն քրիստոս աւերեաց զդժոխս: - 506. ...և զաւարն ժողովեցին ի տիպ խորհրդոյն քրիստոսի. որ ի գիշերի եհար *զզօրութիւնն* սատանայի և յառաւօտուն ցուցեալ զինքն աշակերտաց իւրոց և զյարուցեալսն ընդ իւր: - 514. Համբարձումն վերաբերի առ քրիստոս յատուկ *զօրութեամբն* իւր: - 519. Նա՛խ՝ զի յայսմ աւուր էջ հոգին սուրբ յառաքեալսն. և լուծաւ ասացեալն թէ «մի բնակեսցէ հոգի իմ ի մարդիկդ այդ յաւիտեան». և ետ առաքելոցն պարգևս և շնորհս *զօրութեան*: - 524. Երրորդ՝ ի գլխո՛յն իջանեն կենդանութիւնք և *զօրութիւնք* և առողջութիւնք և շարժութիւնք ի բոլոր անդամս ի ձեռն ջլոյն: - 532. Նոյնպէս ի քրիստոսէ ի մեզ իջանէ կենդանութիւն հոգևոր, և *զօրութիւն*, և առողջութիւն, և շարժութիւն յօդոց և խաղալեաց ի ձեռն հաւատոյն շաղկապութեան: - 532. Եւ նա՛խ *զօրութեամբ*, և ապա՛ ներգործութեամբ: - 541. Այլ սոքա ամենայնքն նախկին և պատւականք են. այսինքն քահանայ քան զսարկաւագ. և բանական քան զգայական. և ներգործութեամբ քան *զօրութեամբ*. այսպէս արձակելն քան զկապելն: - 541. Որում փառք և *զօրութիւն* ընդ Հօր իւրում և սուրբ Հոգւոյն ամէն: - 555. Դարձեալ ասեմք թէ՝ այլ վարդապետք է ասեն զմեղս, զի **դ** տարերք են մարմնոյն, և **գ** *զօրութիւնք* հոգւոյն. այսինքն բան, ցասումն, և ցանկութիւն: - 559. Եւ այսպիսի ասացեալ տկարութեան մեղաց առողջութիւն է բժշկարան է *զօրութիւնք* որ կոչին առաքինութիւնք. որ են այսոքիկ: - 571. Եւ չորք *զօրութիւնքն* այս է: - 571. Արիստոտէլ **գ** սեռս *զօրութեան* ասէ հոգւոյն. այսինքն է մինն անհնազանդ բանին. և մինն հնազանդ. և մինն բան էութեամբ: - 572. Զի թողութիւն մեղաց որ է՛ կենդանութիւն հոգւոյ՝ աստուածային *զօրութեամբն* լինի: - 573. Այլ գիտելի է, զի առաքինութեամբն ուղղի հոգին ի *զօրութիւնս* իւր. քանզի խոհեմութիւնն ուղղէ զբանականն. արիութիւնն զցասմնականն. ողջախոհութիւնն զցանկականն. իսկ արդարութիւնն ուղղէ՛ զամենայն *զօրութիւնս*: - 578. Վասն այն ասի արդարութիւնն ուղղութիւն կամաց. զի ո՛չ միայն է առանձնական *զօրութիւն* կամ առաքինութիւն. այլ և հասարակ և պարունակիչ ուղղութեան հոգւոյն: - 579. Արդարութիւն է *զօրութիւն* պահող զմարդկային ընտրութիւնն: - 579. Խոհեմութիւնն է *զօրութիւն* հոգւոյ, որով ընտրութիւն առնէ ի մէջ չարին և բարւոյն: - 579. Արիութիւն է *զօրութիւն* իմն որով հեշտութեամբ տանի ամենայնի վասն սիրելի իրաց: - 580. Իսկ ժուժկալութիւնն առ շօշափելիսն ըստ ծննդական *զօրութեանն*. ի յորում դնէ զեղանակն. զի առաւել յօժարի մարդն ի գոլ անհատութիւնն սննդականաւն, և ի գոլ տեսակին ծննդականաւն. և յօժարութիւնքս այս՝ զսպին զգաստութեամբ և ժուժկալութեամբ: - 581. Չորրորդ *զօրութիւն*: - 582. *Զօրութիւն* է ունել ինչ որով տանի չարչարանացն: - 582. Երկրորդ՝ զի օգնակա՛ն են բնական *զօրութեանց* հոգւոյն: - 583. Դրոշմն է՛ խորհուրդ յուսոյ. զի յուսալով ի *զօրութիւն* սուրբ հոգւոյն կարողանամք ընդ դէմ թշնամւոյն: - 587. Եւ ե երրորդն առ մովսէս մեծ եղև *զօրութիւնն*: - 629. Նոյնպէս և

հինգերորդն, բարի՛ է աստուած և ողորմած տեսողացն զաստուած հնգիւք *զօրութեամբ* հոգւոյ...: - 629. Վասն քրիստոսի ասէ որ եղև մեզ *զօրութիւն* յազգէ դաւթի: - 638. Նոյն *զօրութիւն* է ամենայն խաչի. որպէս բազում ճառագայթք արևուն...: - 639. Եօթն աղին՝ է զգայարանս. և եօթն փոփոխմունք եօթնից դարուցն. և *զօրութիւնք* հոգւոյ: - 641. Երկրորդ, սա՛ զամենայն գրելոց *զօրութիւնս* յինքն ունի...: - 643. Զի գոհութիւնն կրկին *զօրութիւն* ունի...: - 655. Զի նախ է մարմին քան զհոգի. ոչ ժամանակաւ և պատւով. այլ նիւթով և *զօրութեամբ*: - 662. Չորրորդ ի հասակն է իմանալ. զի տիքն անցանեն, և *զօրութիւնք* և ներգործութիւնքն պակասին...: - 666. ...թէպէտ են և այլ տարերք *զօրութեամբ* ի հողն: - 678. Նաև գ *զօրութիւնք* են տնկականին. այսինքն կերակրիլն, աճիլն, և ծնանիլն. և մեք ունիմք զայս: - 681. Այլ և բանական հոգւոյն գ են *զօրութիւնք*. բան ցասումն և ցանկութիւն: - 681. Երկրորդ ի մեզ. զի գ *զօրութեամբ* հոգւոյ և դ նիւթով մարմնոյ մեղանչեմք: - 683. և զքաւարանին *զօրութիւնն* առաւել ասեն քան զքրիստոսի: - 698. ...և խաչիւն ելոյծ *զզօրութիւն* մահու. - 705. Սակայն ի յղութեանն իջանէ չար հոգին ի յորովայն մօրն. և նմա *զօրութեամբն* և ներգործութեամբն ծնանի մանուկն և սնանի և հասանէ յերիտասարդութիւն. - 706. Երկրորդ երևելի ձայնն հրեշտակապետին. որպէս ձայնն փողոյ ի սինա լերինն. և ազդումն *զօրութեանն* քրիստոսի: - 713. Վեցերորդ, զի յարութիւնն է գործ սքանչելեացն աստուծոյ և ո՛չ բնութեան. զի բութիւնն հունաւորեալ է *զօրութեամբ* յերկար ժամանակս գործէ: - 717. Իսկ աստուած անհուն է *զօրութեամբ*՝ յանկարծակի ի նոյն կէտ վայրկեան ժամանակի յարուցանէ: - 717. Ապա ուրեմն կենդանեաց մարմինն ոչ յառնէ ի մեզ ըստ բոլոր նիւթոյն, այլ ըստ չափոյ *զօրութեանն* որ փոխեցաւ ի մեզ և եղև մարմին մարդոյ, ա՛յն մարմինն յառնէ: - 718. Նա՛խ՝ ամենակարող *զօրութեանն* աստուծոյ և արարչութեանն է գործ: - 719. Նոյնպէս մարմին սրբոցն ընդ ամենայն երկինս անցանէ *զօրութեամբն* աստուծոյ մինչև ի հրեղէն երկինս...: - 722. Զպայծառութիւնն՝ ի թաբօր լեառն. և Զանչարչարութիւնն ի յօրհնելն զմարմինն իւր և տալ աշակերտացն ի վերնատունն՝ անչարչարելի էր մարմինն քրիստոսի ներգործութեամբ և ո՛չ *զօրութեամբ*: - 723. Եւ որպէս հոգին ունի *զզօրութիւն* իւր անպակաս. նոյնպէս և անդամք մարմնոյն պարտ է լինիլ անպակաս զի իցէ կատարեալ մարդ: - 725. Եւ սոքա ուղղին ի յարութեանն. զի գո՛րծ է կարող *զօրութեանն* աստուծոյ և ո՛չ տկար բնութեան: - 725. ...այլ ա՛յս է՝ զի իւրաքանչիւր մարմինք սրբոց պայծառասցին էպատիկ քան զարեգակն. որպէս տն մերոյ ի թաբօր լերինն. և թ դասուց հրեշտակաց լոյսն յերկիր ծաւալին. զի *զօրութիւնք* երկնից շարժեսցին: - 728. Երրորդ՝ դարձեալ զերկնային *զօրութեանց* վշտանալն ցուցանէ ի վերայ կործանելոցն. զի վասն իմ գալարին և ընդ իմ կործանումն՝ տրտմութիւն զգենուն: - 729. Երկրորդ՝ զի հուրն կրկին ունի *զօրութիւն*. այսինքն զլոյսն և զայրելն. և կրկին լինին մարդիկ. այսինքն արդարք և մեղաւորք. - 731. Նիւթ նշանացս է՛ բազում և զանազան. այլ *զօրութիւն* և ձևն մի և նոյն է խաչին: - 732. Երկրորդ՝ զի աստուած զամենայն արարածս կրէ բանիւ *զօրութեան* իւրոյ ասէ առաքեալն և ի նոյնութեան պահէ. և սոքա պահին առանց միաւորութեան էութեան նորա: - 733. Իններորդ՝ զի դևք հալածական լինին ի *զօրութենէ* աստուածեան նշանին. և հրեշտակք սպասաւորեն նմա. - 734. Եւ պա՛րտ է գիտել զի ի միոյ սեռէ բարութեանցն աստուծոյ՝ յառաջե՛ն առ մեզ ողորմութիւն և արդարութիւն. կրկին տեսակ կամ գործք կամ *զօրութիւն*. որպէս ի մեզ երկոքին ձեռք մարմնոյ. և որպէս իմացումն և կամք հոգւոյ: - 745. Առաւանքն երեքկղի՝ յԵրրորդութեանն դիմաց արդարութեան և ողորմութեան *զօրութիւնք* առ մեզ խոնարհեալ. ունելով զյիշատակ բարեացն և չարեացն մերոց: - 745. Է՛ ուրեմն ասել, եթէ ոչ տն սաբաւովթ, այսինքն *զօրութեանց*, թողեալ էր մեզ սերմն առաքելօք և մարգարէիւք և այլովք սրբովք և վարդապետութեամբ աւետարանին, համերք և ի մեղս լինէաք խստացեալք: - 755. Յաւատն սկիզբն աստ. և անդ *զօրութիւն* գործոյ: - 769. Եւ քրիստոս աստուծոյ *զօրութիւն* և աստուծոյ իմաստութիւն ի հօրէ ըստ սրբոյն դիոնիսեայ: - 770. Ծնունդն, *զօրութիւնն*, մահն, ընդ աջմէ հօր նստիլն, և այլն ամենայն, զաստուած ի մարդում, մանաւանդ զմարդ յաստուածում ըստ սքանչելագործին գրիգորի ցուցանեն: - 770. Որով և ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ վայելէ փառք և պատիւ և իշխանութիւն և *զօրութիւն*. այժմ և միշտ և յաւիտենից յաւիտեանս Ամէն: - 771. Եւ ո՛չ այս միայն, այլ և ի կոչմանն *զօրութենէ* առ որդւովքն սկևեայ հալածեին նոքա: - 784. Յաղագս որոյ որ ինչ գոյ միոյն յայտնի և ներգործական մասունք, գոն նոքա և միւսոյն բնաւորապէս ծածուկ և *զօրութեամբ*: - 786. Թէ զի՞նչ է ասելն ի սահման հաստատութեանն, մասամբ ինչ *զօրութեամբ* և մասամբ ինչ ներգործութեամբ: - 787. Ո՞ր է մասն *զօրութեամբ*, և ո՞ր մասն ներգործութեամբ: - 787. Եւ երկրորդն է լուսաւոր *զօրութեամբ* թափանցանց. գոլով ջրեղէն կամ պլօրեայ ըստ ոմանց: - 787. Իսկ երրորդն մասամբ լուսաւոր և մասամբ թափանցանց. որ ասէ *զօրութեամբ* և ներգործութեամբ: - 788. Այլ և շարժումն երկնից բոլորաձև կարէ՛ ասիլ. մասամբ *զօրութեամբ*, և մասամբ ներգործութեամբ: - 788

# Է

**Է +** Նախ՝ եթէ չարն ո՛չ է էութիւն, և ո՛չ ի *յէս*. և ո՛չ ի *յէից*. և ո՛չ սկիզբն *էից*: - 22. Այլ և ո՛չ ի *յէս* է չարն. և զայս ցուցցուք ի բաժանմանէ: - 22. Այլ և ո՛չ *յէից* է չարն. զի ամենայն որ *է* է՝ բարի՛ է և անդրադարձեալ ևս. «զի ծառ բարի՝ պտուղ բարի առնէ ասէ տէր»: - 22. Դարձեալ՝ ամենայն ինչ որ *յէից* է՝ սկիզբն ունի և պատճառ. իսկ չարն ո՛չ ունի սկիզբն և ո՛չ պատճառ. վասն որոյ ո՛չ է *յէից*: - 22. Դարձեալ՝ ամենայն ինչ որ *յէից* է՝ սկիզբն ունի և պատճառ. իսկ չարն ո՛չ ունի սկիզբն և ո՛չ պատճառ. վասն որոյ ո՛չ է *յէից*: - 22. Այլ և ո՛չ սկիզբն է *էից*. զի ի չարէն բարի ո՛չ լիցի: - 22. Եւ այսպիսի չարս ո՛չ է *է*. և ո՛չ ի *յէսս*. և ո՛չ սկիզբն ունի կամ պատճառ. և ո՛չ ինքն սկիզբն այլոց կամ պատճառ. ա՛յս է ինքնաչարն: - 22. Եթէ ոք գիր ո՛չ գիտէ, և ո՛չ զվկայութիւն ընդունի սուրբ գրոց, որպէս ցուցանեմք նմա թէ *է՛* աստուած: - 25. Յեղելոց իրաց կարե՛մք ցուցանել թէ *է՛* և գո՛յ աստուած՝ երեք եղանակաւ: - 25. Եւ յայսցանէ պա՛րտ է իմանալ թէ *է՛* արարիչ սոցա: - 26. Ըստ որում ոմն ի բնախօս արանց նկատմամբ առաջնորդականին՝ վարաթևեաց ի սկիզբն առաջին՝ թէ *է՛* ոմն որ շարժէ՛ զերկնային մարմին: - 26. Երկրորդ՝ *Զէ՞ն* ծնաւ, թէ զոչ *էն*: - 29. Չորրորդ՝ ոչինչ արգելէ զհոգին լինիլ որդի, թէ *է՛* ի նոյն բնութենէ: - 30. Երկրորդ հարցումն չարափառաց, *զէ՛ն* ծնաւ, թէ զոչ *էն*: - 36. Բայց հարցմունքս այս կարէ՛ ասիլ ի վերայ մեր. զի ասիմք՝ *յէից* եղեալ և յոչ *էից*: - 37. *Յէից*՝ որպէս դու ի քո հօր մէջքն էիր զօրութեամբ, և յետոյ ծնար նոր գործութեամբ: - 37. Եւ յոչ *էից*՝ զի սակաւ հիւթն այն՝ ո՛չ կայր միս և ոսկր և ջիլ. կամ մորթ: - 37. Դարձեալ՝ *յէից*, զի մեք ի տարերցս եմք: - 37. Եւ յոչ *էից*, զի տարերքն այնք յոչ *էից* եղեն: - 37. Իսկ թէ յո՛չ ումեքէ, կարգեցեր զնա ընդ յոչ *էից* գոյացելոց: - 37. Զի և յօհան դամասկացին ասէ հարկ գոլ ամենայն սկսզման ունել դադարումն. այլ զի հրեշտակք և հոգիք ոչ դադարին, այս կամա՛ցն աստուծոյ է պահպանութիւն, և ոչ բնութեան նոցա. զի յո՛չ *էից* եղեալքն՝ կարեն յոչ էութիւն փոխիլ: - 37. Զի միշտ *է է*, ո՛չ ոչ էանայ. և միշտ բարի և լոյս *է*, ո՛չ չարանայ և խաւարի: - 44. *Է՛* և անկարութիւն առ մեզ՝ ոչ էին գոյ լինիլ. և չորսին չորեքտասան: - 44. Բայց թըլի թէ՝ *էն* և Աստուածն մերձ է աստուծոյ բնութեանն քան զայլսն: - 49. Եւ յայսցանէ *էն* առաւել է. զի **Աստուածն յաստ էած զմեզ, և կամ ստեղծօղ, և կամ ճանաչօղ լսի**: - 49. Իսկ *էն* զմիշտ լինիլն ցուցանէ. ըստ այնմ՝ «ես եմ ալֆա և օմեգա». այսինքն առաջին և վերջին: - 49. *Է՛* և այլ բազում միտք վասն բանին. զոր մեք զսակաւն գրեցաք: - 49. Այս են որ ո՛չ *է* և ասի. *է՛* և ո՛չ ասի. ո՛չ *է* և ո՛չ ասի. *է՛* և ասի որպէս ցուցաք: - 55. Զի՞նչ է որ ասեն վասն աստուծոյ թէ՝ *է՛* սկիզբն և պատճառ: - 110. Երկրորդ՝ սկիզբն է յարացուցի. և պատճառ *էից*. պատկեր և նմանութիւն նորին յարացուցի: - 110. Գիտելի՛ է, զի ոչ *էն* բազմաեղանա՛կ ասի: - 111. Երկրորդ՝ ոչէ ասի գերագոյն *էն* և գոյն. որպէս ի *յէիցս* ո՛չէ և ո՛չ գոյ. այլ գերագոյն *է* և գերագոյն ոչէ: - 111. Եւ գիտելի է, զի որքան եղանակաւ ասի ոչ էն, նոյնքանաբար և *էն*. զի ընդ դէմ միմեա՛նց են: - 111. Այլ բաժանի *էն* նախ ի յերիս: - 111. Ի *յէից* էակն. որ է նախագոյ պատճառ ամենայնի: - 111. Երկրորդ՝ զի նախ՝ գո՛յ և *է է*. և ապա բարի և իմաստուն և այլն: - 111. Զի անդրանիկ է *էն* անուն՝ քան զամենայն բարի և ազնիւ և այլն. վասն որոյ ասաց մովսէսի՝ «ես եմ որ էնն»: - 111. Վասն է՞ր կոչեմք զնա *էր*. և *է՛*. և եղիցի. ըստ այսմ. «ես եմ որ էն». և «ի սկզբանէ էր բանն». և եղիցի աստուած ամենայն յամենայնի: - 111. Նախ՝ եթէ անեղ է աստուած՝ ըստ որում անսկիզբն և անեղ էին արարածք ըստ անգոյին՝ կարգաւո՛ր է և յոյժ որպէս դու ասացեր. զի անեղ *էն* աստուած յառաջ էած զանեղն ի յէութիւն: - 113. Վասն է՞ր *է* զի աստուած զանգործս և զոչէսն տեսանէ. իսկ մեք զեղեալն և զգործեալն: - 118. Իսկ անեղն ի բ դէմս որոշի. որպէս անեղ *էն* աստուած. և անեղ՝ որ դեռևս ո՛չէ եղեալ և գոյացեալ: - 118. Դարձեալ *է՛* յատկութիւն, զի նախ տեսութիւնն է աստուծոյ, և ապա էութիւն ամենայն իրի՝ տեսութեանն նորա հետևի: - 118. Ո՞րպէս տեսանէ աստուած *զէքս*. զի զգայութիւն ո՛չ ունի. որպէս մեք ներքին զգայութեամբ զիմանալիս՝ և արտաքին զգայութեամբ զերևելիս տեսանեմք: - 118. Սակայն՝ զի թէ *էն* ըստ որում է աստուած՝ կրկին կերպիւ տեսանի. այսինքն գիտութեամբ և անգիտութեամբ. դնելով և բացաբառնալով այսպէս: - 119. Նախ՝ հայելով ի կերպարանս և ի նմանութիւնս որ է՛ կարգաւորութիւն արարածոց. և սոքօք ի յարացոյցն սոցա ելանել, և ի նմանէ դարձեալ ի նախատիպ յարացուցին ելանել. և այնպէս տեսանել թէ *է՛* աստուած պատճառ ամենայնի: - 119. Եւ է սա՛ երկրորդ. զի ի պատճառէ՛ ստեղծման *էիցս*՝ աստուածաբանութիւնս այս յառաջագայի: - 122. Իսկ չորրորդն է խորհրդական աստուածաբանութիւն. յորժամ զամենայն զգալի և զիմանալի էութիւն արտաքոյ թողեալ, ի խորս ընթանամք մտօք և մտանեմք յամպն և ի մէգն ըստ մովսէսի. և ապա տեսանեմք զնա արտաքս որոշեալ յամենայն *էից*: - 122. *Է՛* և ասի: - 123. *Է՛* և ո՛չ ասի: - 123. Իսկ ի ներքուստ ի վեր՝ ի բազմութենէ առ միոն ընթանայ. որպէս խորհրդական աստուածաբանութիւնն արտաքոյ թողեալ զբազմութիւն *էից* և ի միոն ընթացեալ, որ ամենեւին անբանութիւն է և անիմացութիւն. անճառելի. անիմանալի. և լռութեամբ պատուի յամենայն արարածոց: - 123. Եւ *է՛* հօր պատկեր բոլոր արեգակն: - 124.

Այսպէս վասն գերազանց սիրոյն զոր ունի աստուած առ *էսս*՝ զարմանալ ասի. այսինքն արտաքս ելանել՝ թափիլ և հեղուլ ի *յէսս*. և միաւորիլ անփոխաբուն բնութեամբ: - 127. Եւ *է՛* ինքն բարի և գեղեցիկ, կոչի սիրելի: - 128. Եւ *է՛* ինքն անսկիզբն և անվախճան: - 128. Լայնութիւնն է ընդարձակ ճանապարհ աստուծոյ. որ է նախախնամութիւն նորա յամենայն *էբս*: - 129. Այլ ի ստեղծումն *էիցս*՝ սէրն առաջին է քան զբարին. զի ի սիրո՛յ շարժեցաւ յառաջ բարերարել և խնամել: - 129. Իսկ խորութիւն՝ զի ամենայն *էից* անպարունակելի է թաքնութիւն և անգիտութիւն: - 129. Այլք ասեն թէ՝ *է՛* ի յաստուած լայնութիւն սիրոյ, որով յետս դարձուցանէ զմեզ ի մոլորութեանց վասն առաւել սիրոյն: - 129. Եօթներորդ՝ սկիզբն և վախճան գիտութեամբն ասի. զի զսկիզբն *էից* և զկատարածն ի ներքոյ իւր ամենահաս գիտութեանն բովանդակեալ ունի: - 129-130. Երկրորդ՝ *է՛* գործ արդարութեան. զի ըստ արժանեաց հատուցի մեծաց և փոքունց. և առաջնոց և երկրորդաց: - 130. Երրորդ՝ *է՛* գործ նախախնամութեան. զի ըստ ընտանի կարողութեան իւրեանց՝ համեմատապէս զպարգևս ընկալցին. զի մի վնասեսցին փոքունքն մեծամեծօք. և թերի մնասցին մեծամեծքն սակաւուք: - 130. Իսկ *է* երկինք զիրեշտակաց դասուցն ասէ, մի քան զմի բարձրագոյն յիրաքանչիւր երկինս: - 134. Այլ արդ՝ շնորհքն ըստ իւրում ինքնութեան *է՛* անեղ՝ յանեղ է *էն* յառաջեալ, և նախախնամաբար եղելոցս հաղորդի, և յիւրմէ էութենէն ո՛չ փոփոխի: - 140. Որ *է՛* **ժ, ճ, ռ**, բիւր: - 141. *Է՛* որ իմացումն մտացն առ ինքն ժողովի ի յիշողականէ՝ ի տրամախոհութեանցն՝ ի կարծեաց՝ և յայլոցն, և այնպէս ըստ ինքեան տեսութեանն ի աստուած հայի. այս է գերագոյն իմացումն. և կոչի իմացական տեսութիւն: - 142. Եւ *է՛* յորժամ իմացումն ի յիշողութիւնն ի տրամախոհութիւնն և յայլս բաժանի, և նոքօք իմանայ և տեսանէ զաստուած. և այս ևս է կատարեալ տեսութիւն. և կոչի սա բնական տեսութիւն: - 142. Միատեսակ է՝ յորժամ ըստ ինքեան ժողովէ յամենայն զգայարանաց, և բոլոր և միեղէն սիրով հայի յաստուած. և *է՛* այս գերակատար սէր: - 143. *Է՛* և խօսք հոգւոց: - 145. Իսկ ոչ *էիցն* ո՛չ արարչութիւն է և ո՛չ խնամակալութիւն: - 157. Տասներորդ՝ զի տեսութիւն մեր *զէ՛սն* տեսանէ. և զոչ *էսն* ո՛չ տեսանէ: - 164. Այլ տեսութիւնն աստուծոյ զոչ *էսն* տեսանէ և նախընտրէ...: - 164. Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ. զի *է* կոչի աստուած, ըստ այնմ «ես եմ որ էն». և ո՛չ ըստ այնմ որ բաժանի ի գոյացութիւն և ի պատահումն. որպէս հոմանուն կամ փաղանուն. կամ ի միոջէ և առ մի. որպէս ընդհանուր էակն է՝ բաժանի առ մեզ: - 171. Այլ կոչի *է*, ըստ այնմ որ միշտ *է՛*, ո՛չ ունելով սկիզբն և ո՛չ վախճան. այլ ինքն է ամենեցուն սկիզբն և վախճան...: - 171. Եւ դարձեալ՝ *է* կոչի աստուած, զի նա միա՛յն է տեսակ առանց նիւթոյ. և գոյ առանց պատահման: - 171. Եւ դարձեալ *է՛* ոչ էակ՝ որ թէպէտ ներգործութեամբ ո՛չ է, սակայն զօրութեամբ ունի զգոյն. և յայսպիսի յոչնչէ եղեն արարածք ամենայն. ապա ուրեմն յայտնի է հարցումնդ: - 173. Եւ *է՛* էակ որ երբեմն զօրութեամբ է. որպէս այնոքիկ որ ի լինելութեան և յապականութեան են որք միշտ փոփոխին. որպէս մարդ և ոչխար և ծառ: - 173. Ուստի պատճառի լինելութիւն *էիցս* միշտ և անխափան. որպէս ասի ի գիրս աշխարհաց: - 181. Երրորդ՝ զի ամենայն իր *յէից* և յոչ *էից* են գոյացեալ. *յէից*՝ ըստ նախածանօթ տեսչութեան գաղափարին. և յոչ *էից*՝ ըստ ինքեան ի ժամանակի հաստատեալք: - 236. Վասն որոյ գտանի յամենայն իրս նման և աննման ըստ որում *յէից* և յոչ *էից* են հաստատեալք: - 237. *Է* և այլ իմն աննմանութիւն հոգւոյ ըստ իմացմանն. առաւել և նուազ. ուշիմ և ապուշ. չկամ և կամեցօղ. հեզ և յանդուգն. ցանկացօղ և ողջախոհ. ըստ բնական բարոյիցն որակացեալ. նման և աննման գոլով իրերաց: - 237. Եւ նախ ասի իմաստութիւն նոցա, որ զբնութիւն *էիցս* քննեցին. և զշարժումն լուսաւորացն. որպէս իմաստունքն յունաց: - 269. Իններորդ՝ անշարժ նոյնութեամբ իւրով զամենայն քննէ և իմանայ. այսպէս և միտք առ մարդն գոլով զգիտութիւն *էիցս* քննէ: - 271. ...իսկ միջակ արդարքն որ են ի կայանս հոգւոցն՝ և զտեսանելն պայծառապէս ընկալցին ի յարութեանն դէմ յանդիման որպէս և *էն*. - 697-698. Եւ ոչ օրինակս կարէ յայտնել զոր ինչ *էն*: - 770. Նոյնպէս ողորմութեան և արդարութեան է միշտ բարերարելն և պատժելն ըստ նախասահման գիտութեան նորին նախքան զլինիլն *էիցս* ըստ առաքելոյ: - 779

***ՈՐ ԷՆ +*** Իններորդ՝ *Որ էն*՝ աստուած կոչի. ըստ այնմ որ ասացաւ մովսէսի, «ես եմ *որ էնն*»: - 73. Ապա ուրեմն որդին մարդոյ *որ էն* է և յերկինս: - 73. Զի անդրանիկ է էն անուն՝ քան զամենայն բարի և ազնիւ և այլն. վասն որոյ ասաց մովսէսի՝ «ես եմ *որ էնն*»: - 111. Վասն է՞ր կոչեմք զնա էր. և է՛. և եղիցի. ըստ այսմ. «ես եմ *որ էն*». և «ի սկզբանէ էր բանն». և եղիցի աստուած ամենայն յամենայնի: - 111. Նախ՝ զի աստուած միա՛յն է ինքն ինքեամբ. և ո՛չ յայլմէ հաստատեալ. ըստ որում ասէր առ մովսէս՝ «ե՛ս եմ *որ էն*»: - 170. Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ. զի Է կոչի աստուած, ըստ այնմ «ես եմ *որ էն*». և ո՛չ ըստ այնմ որ բաժանի ի գոյացութիւն և ի պատահումն. որպէս հոմանուն կամ փաղանուն. կամ ի միոջէ և առ մի. որպէս ընդհանուր էակն է՝ բաժանի առ մեզ: - 171. *Որ էն*: - 312. Զի՞նչ է՝

«*որ էն* առաքեացն»: - 331. *Որ էնն* ո՛չ թէ զէութիւնն աստուծոյ յայտնէ: - 331. Իսկ ասելն *որ էն*: - 331. Այլ և էն և օն՝ անփակ գիր է. որպէս այն «ես եմ աստուած *որ էն*» և բացարձակ: - 638

**ԷԱԿ +** Ապա ուրեմն յա՛յտ է՝ զի բանն զիրն ո՛չ կարէ ճշմարտել. այլ իրն զբանն ճշմարտէ. յորժամ գոյ կամ ո՛չ գոյ. որպէս ասէ ի հարկէ՛ գոլ *զէակն* յորժամ է՛. և ո՛չ գոլ յորժամ ո՛չ է: - 9. Իսկ թէ չար է և առնէ զչար, ո՛չ ոք է ի *յէակս* բարի: - 14. Քսաներորդ՝ զի ի հարկէ բարի է աստուած. որպէս ի հարկէ *էա՛կ* է. այլ արդ՝ հարկաւոր բարին է միշտ բարի և գոյացական բարի և զուտ բարի: - 15. Եթէ ոչ հաղորդին, մինն է ի նոցանէ *էակ*. և այնպէս ո՛չ երկու սկիզբն: - 21. Ասաց թէ՝ որ ի կերպարանս աստուծոյ էր բանն, այսինքն *էակից* հօր, ո՛չ ինչ զրկումն համարեցաւ ի ներգոյական փառաց զլինիլն հաւասար մեզ: - 93. Ի յէից *էակն*. որ է նախագոյ պատճառ ամենայնի: - 111. Վասն առաջնոյն գիտելի՛ է, զի ամենայն շնորհ բղխո՛ւմն է և ճառագայթ, յանեղական լուսոյն իջեալ առ *էակս* ամենայն իմանալի և զգալի. և զարդարէ՛ զսոսա ըստ նմանութեան այնմ պարգևեալ շնորհի. եթէ ըստ բնութեան՝ և եթէ անձնական. ի հրեշտակս և ի մարդիկս: - 140. Զի յատուկ է առաջին պատճառին որ է՛ աստուած՝ ի հարկէ *էակ* գոլ՝ և միշտ ներգործութեամբ, և իսկապէս ներգործութեամբ. որովք տարորոշի յայսցանէ՝ որ կարելի՛ են *էակ* գոլ. և երբեմն ներգործութեամբ և հանդերձ զօրութեամբ: - 162. Զի ի հարկէ՛ *էակ* է, որ զգոլն միայն ունի. իսկ զչգոլն ո՛չ ունի. ապա ուրեմն անփոփո՛խ է էութեամբ: - 162. Երրորդ՝ զի ի հարկէ՛ *էակ* է աստուած. և հարկն զմինն ունի ի հակադրութեանց. այսինքն կամ զգոլն կամ զչգոլն: - 168. Այլ արդ՝ եթէ գոյ զօրութեամբ ինչ ի նա՛ ո՛չ է ի հարկէ *էակ*. այլ կարելի՛ *էակ*: - 168. Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ. զի Է կոչի աստուած, ըստ այնմ «ես եմ որ էն». և ո՛չ ըստ այնմ որ բաժանի ի գոյացութիւն և ի պատահումն. որպէս հոմանուն կամ փաղանուն. կամ ի միոջէ և առ մի. որպէս ընդհանուր *էակն* է՝ բաժանի առ մեզ: - 171. Ութերորդ՝ ի բոլոր իրն է գոյն և ի մասունս. և աստուած ի բոլոր *էակրս* և ի մասնաւորս: - 171. Եւ ո՛չ թիւ պատահական կամ բան տարալուծական. այլ մի երրեակ. և երրեակ մի. ըստ որում սկիզբն է թուոց՝ և ո՛չ թիւ. և բաժանեալ յա՛յլ *էակաց*: - 171. Երկրորդ՝ ասեմք թէ կրկին է ոչ *էակն*. այսինքն ոչ ինչն: - 173. Մին է՝ զի միշտ ոչ ինչ է. զի ոչ զօրութեամբ և ո՛չ ներգործութեամբ ունի զգոլն. և յայս ոչ *էակէս* ոչ ինչ լինի: - 173. Եւ դարձեալ է՛ ոչ *էակ*՝ որ թէպէտ ներգործութեամբ ո՛չ է, սակայն զօրութեամբ ունի զգոլն. և յայսպիսի յոչնչէ եղեն արարածք ամենայն. ապա ուրեմն յայտնի է հարցումնդ: - 173. Նմանապէս ծանիր և զայս կրկին է *էակն*. մին մշտնջենաւոր և միշտ ներգործութեամբ, որպէս աստուած. հրեշտակք. և արեգակն և հուր: - 173. Եւ է՛ *էակ* որ երբեմն զօրութեամբ է. որպէս այնոքիկ որ ի լինելութեան և յապականութեան են որք միշտ փոփոխին. որպէս մարդ և ոչխար և ծառ: - 173. Եւ այսպիսի *էակրս* կրկին ունին զօրութիւն. լինելոյ և ո՛չ լինելոյ. գոլոյ և ո՛չ գոլոյ. և այլն: - 173. Իսկ մշտնջենաւոր *էակն* միայն մին ունի զօրութիւն որ է առինքն ներգործութեամբ. որպէս հրոյ ջեռուցանելն. և արեգական լոյսն. և հրեշտակին անապականութիւնն: - 173. Արդ այսպէս պատասխանեմք, եթէ բնութեամբ և կամօք ներգործէ աստուած ընդդէմ *էակացս*: - 173. Զի *էակրս* ամենայն՝ ոմանք բանաւորք են և ո՛չ միշտ ներգործականք. որպէս մարդս: - 173. Երրորդ՝ ի լինելութեանց և յապականութեանց. զի անպակասք են. ըստ որում հատեալ ի տարերաց՝ լինելութիւն է ա՛յլ *էակաց*. և ապականութիւն նոցա լնու զհատումն տարերաց: - 181. Զի որք զհոգի յառաջ ասեն գոյանալ՝ զայս դնեն պատճառ, եթէ *յէակրս* իմանալիքն յառաջ ստեղծան քան զզգալիքս. ապա և ի մարդոյն էութիւն հոգին յառաջ է քան զմարմինն: - 252. Իսկ բանն աստուած մարդացեալ՝ էութեամբ է առ հայր. պահպանութեամբ ի բոլոր *էակրս*. շնորհօք յամենայն սուրբս. և բնութեամբ ի մարմնի միաւորեալ: - 478

**ԷԱԿԱՆ +** *էական*, որպէս գոյացութիւն և պատահումն: - 318. Հինգերորդ՝ բանն պատկեր է հօր *էական*. և մարդն պատկեր նմանութեան. վասն այն բանն աստուծոյ եղև ի պատկեր մարդոյ: - 468

**ԷԱԿԱՆԱՊԷՍ** - Երբեմն նշանակէ՛ զբոլորութիւնն. որպէս ասէ՝ «աստուած սէր է». և այս առաւել լինի անձնականապէս և *էականապէս*: - 575

**ԷԱԿԱՆՈՒԹԻՒՆ +** Ի սեռս *էականութեան* գոյացութիւն նախապատիւ է քան զպատահումն. և զի նախապատիւ է աստուած ամենայն գոյից, վասն որոյ գոյացութիւն է և ո՛չ պատահումն: - 170

**ԷԱԿԻՑ +** «Եւ գլուխ քրիստոսի աստուած հայր». զի սկիզբն է որդոյ և *էակից* նմա: - 532

**Է ԱՄԵԱՅ** (7-ամեայ) - Եւ *է ամեայ* ուսումն ստանայ. վասն որոյ մինչև յեօթն ամն երեխայ կոչի. զի գ մասունք են հոգւոյն. բան. ցասումն. և ցանկութիւն. ըստ պղատոնի: - 264

**Է ԱՄՍԵԱՅ** (7-ամսեայ) - Տնկական. զգայական. և բանական. վասն որոյ *է ամսեայ* ծնեալն ապրի և շնորհալի լինի վասն շնորհալի թուոյ եօթներորդին: - 263

**ԷԱՆԱՄ +** Իսկ չարն ըստ ենթակային *էանայ* և երևի, և ըստ ինքեան ոչընչանայ և ապականի. զի ո՛չ է է. և ո՛չ գոյ: - 23. Չորրորդ՝ ոչ էն յորժամ *էանայ*՝ դարձեալ յոչ էութիւն ո՛չ կարէ փոխիլ: - 23. Բայց ա՛յս է

անկարութիւն աստուծոյ. չարանալ և ոչ *էանալ*: - 44. Զի միշտ է է, ո՛չ ոչ *էանայ*. և միշտ բարի և լոյս է, ո՛չ չարանայ և խաւարի: - 44. Նմին իրի թէ ոչ հայր և ոչ որդի զի որդի հօրն է որդի՝ ըստ այսմ ապա ո՛չ *էանայ* աստուածութիւնն որ անկար է, որպէս ասացաք: - 45. Արդ՝ եթէ բոլոր աստուածութիւնն ի քրիստոս *էացեալ* է մարմնապէս, և ծածկէ զգիտութիւնն ի նմանէ, այս լինի կամ ոչ աստուած մարմնացեալ և մարդացեալ կամ զէութիւնն տըւեալ և ի գիտութենէն զրկեալ որ է սուտ: - 98. Ա՛րդ՝ եղականքս որ յետոյ *էացաք* անեղ էաք ի յանեղ տեսութիւնն աստուծոյ: - 114. Զի աստուած նախ քան զգործն՝ և յառաջ քան զկամիլն՝ և նախ քան *զէանալն* տեսանէ ...: - 118. Եօթներորդ՝ այն երևեալ և ո՛չ կայացեալ. և աստ երևեալ և կայացեալ, որպէս ասեմք զեղջերւաքաղն անուանեալ և ո՛չ ենթակայացեալ. իսկ զեղջիւրն անւանեալ և *էացեալ*: - 133. Նախ՝ զի ընդհանուր դասք և իւրաքանչիւր անհատք ունին էութիւն՝ զօրութիւն՝ և ներգործութիւն. այսինքն ըստ որում *էացեալքեն*, և կարողութիւն ունին, և ներգործեն: - 137. Եւ ո՛չ կարէ ոչ *էանալ*, զի առաւել է. և այլն ամենայն: - 163. Գոյացութիւն է ինքն ինքեամբ *էացեալ* և ոչ կարօտեալ յայլս հաստողի: - 170. Երկրորդ՝ զի իր մարմնական են և ի մարմնի *էանան* սոքա՝ և ո՛չ են մարմին. այլ անմարմին էութիւն որպէս ասացաք: - 175. Եւ որպէս ընդ հանուր մարդկութիւնս լրիւ *էացաւ* ի տեսութիւնն աստուծոյ յորչափութիւնն և ի թիւն: - 254. Եւ թէ ոք ասցէ, երևի ապա թէ **գ** հոգի է ի մարդն զանազանութեամբ *էացեալ*: - 258. Այլ է՛ նա՛խ *էացեալ* ի բանն աստուծոյ, և համանգամայն ընդ մարմնոյն երևեալ ի պարգևաց այնմ նախատես բանի: - 260

**ԷԱՊԷՍ +** Երկրորդ՝ զի թէ նա՛ շնորհիւ ունի զորդիութիւնն և ո՛չ *էապէս*, ապա ուրեմն մասամբ և ըստ կարգի ունի՝ և ո՛չ զլրումն աստուածութեանն. զի շնորհն է մասնաւո՛ր պարգև: - 66. Զի ո՛չ *էապէս*՝ այլ արտաքո՛ւստ և եկամուտ ունի զաստուածն անուն: - 70. Ութևժերորդ՝ ասէ առաքեալն ի կողոսացւոց, «ի նմա՛ բնակի ամենայն լրումն աստուածութեանն մարմնապէս». որ է *էապէս*: - 98. Եւ որպէս աստուած է՛ ամենայն ուրեք *էապէս*. և հոգի մարդոյն է՛ յիւրաքանչիւր մասունս մարմնոյն *էապէս*: - 275. Եւ երկրորդ՝ զի լրիւ աստուածութիւն բանին է՛ բովանդակեալ ի մարմնի և ո՛չ մասամբ. ըստ այնմ «ի նմա՛ բնակէ ամենայն լրումն աստուածութեանն մարմնապէս» որ է՛ *էապէս*: - 319

**ԷԱՋԱՀԵԱՆ** (ԵՕԹՆԱՋԱՀԵԱՆ) - Վասն է՞ր զաշտանակն եդ ի հարաւ: ... Աշտանակն *էաջահեան*: ...Նախ նշանա՛կ էր լուսաւորա՛ցդ երկնից որ ի հարաւ ընթանան: - 346

**ԷԱՐՓԵԱՆ** (ԵՕԹՆԱՐՓԵԱՆ) **+** Վասն երկրորդ մի՞ է թէ բազում, ասեմք եթէ՝ ի սկիզբն մի է ըստ էութեան ի միոյ պատճառէ՛ յառաջ եկեալ. և ի բազումս բազմացեալ ըստ որակութեան. որպէս ***է** արփեան* և ըստ աստիճանաց: - 140. Քսանևզ, Վասն ***է** արփեան* շնորհաց: - 526. Երկրորդ, զի է է խորհուրդ եկեղեցոյ. և ***է** արփեան* է շնորհք հոգւոյն. և մի կատարմունքն ի մեզ, որ լինի **ը**: - 616

**ԷԱՑՈՒՑԻՉ +** Բարին *էացուցիչ* է և խնամօղ: - 22

**ԷԳ +** Որպէս ի նիւթոյ և ի տեսակէ մարմին. և ի հոգւոյ և ի մարմնոյ կենդանին. և յարուէ՛ և *իգէ* ծնեալն. նոյնպէս ի ձայնաւորէ՛ և յանձայնէ՛ բանն ծնանի: - 177. Զի արեգակն արու է զի ջերմ է. և լուսինն *էգ*՝ զի հով և գէջ է: - 213. Ոմանք կամին ցուցանել ապականացու գոլ զդրախտն և շաղաշարումն արուի և *իգի*. և առաւել ցանկութիւն և ծնունդ զաւակաց: - 225. Եւ *էգն* հոգևորի յետ **ձ** աւուրն՝ որպէս ասացաք զպատճառն վասն տեղւոյն ցրտութեան որ է՛ ձախ կողմն արգանդին. որ ցուրտ գոլով վասն փայծաղանն՝ յապաղէ՛ զկազմուած նիւթոյն ի կրկնապատիկ ժամանակս **ձ** աւուրց: - 261. Նա՛խ՝ զի ո՛չ ունի զառնողական զօրութիւնն. որպէս և յամենայն կենդանիս *էգն*: - 276. **Զի ի գալստեան տեառն կնատքն և թոյլքն ո՛չ թուին. այլ արիագոյնքն անխտիր. զի ի քրիստոս յիսուս արու և *էգ* ո՛չ է. ո՛չ ի մկրտութեանն և ո՛չ ի յարութեանն:** - 315. **Զի *էգն*, և չէ զոտքն, և անկատարն, և անհաւատն, և արիւնահեղն, և կարգաւոր, սոքա վեցեքեան ո՛չ կարեն զենուլ զի պիղծ է զենն նոցա:** - 365. Առաջին՝ զենօղն լիցի արու և ո՛չ *էգ*: - 365. Նոյնպէս և արիւն դաշտանւոյն պղծէ՛ զչորս դէմս. որպէս հոսումն արուին և բղխումն *իգին*: - 369. Երրորդ՝ զի արուն զօրաւո՛ր է քան *զէգն*. և նախաստեղծքն գլորեալ էին վասն հեշտութեան իւրեանց. պա՛րտ էր արու լինիլ և կանգնել զնոսա: - 480. Յաղագս որոյ ծնաւ արու և ո՛չ *էգ*: - 480. **Հինգերորդ՝ քրիստոս լինելոց էր քահանայ և թագաւոր յաւիտենական. և *էգն* ո՛չ կարէր օծանիլ քահանայ և թագաւոր. ո՛չ յօրինակն և ո՛չ ի ճշմարտութիւնս:** - 480. **Ա՛րդ՝ փեսայ և գլուխ և ժառանգ արուն է և ո՛չ *էգն*. վասն այն արու ծնաւ քրիստոս:** - 480. Չորրորդ՝ զի միշտ որդի ծնանիմք աստուծոյ և ո՛չ դուստր և *էգ*. զի ի քրիստոս յիսուս արու և *էգ* ո՛չ է ասէ առաքեալն. և զայս ցուցանէ աւազանն ի յաջ կողմն եկեղեցւոյն: - 590. Դարձեալ՝ պսակն է զուգաւորութիւն արուի և *իգի*. ունելով անբաժանելի կենցաղավարութիւն: - 609. Ամենեքեան արո՞ւ յառնեն, թէ արու և *էգ*: - 725. Ոմանք ասեն թէ՝ ամենեքեան արու յառնեն. և այլք թէ արու և *էգ*: - 725. Նա՛խ՝ զի արու և *էգ* անդ ո՛չ ճանաչին մասին անդամօք, այլ յատուկ դիմօք և բարի գործովք և փառօք և անուամբ զանազանին. որպէս դասք կուսանացն ի հայրապետացն: - 725. Երկրորդ՝ զի թէ արական մասն երևի՝ ոչ

ինչ նախապատուի կամ *էգն* անարգի. զի մասունք անդամոց անդ ո՛չ է զազրալի: - 726. Իսկ ամենայն զգայական կենդանւոյ թէպէտ *իգին* ստինք զոն վասն զծննունդս կերակրելոյ. սակայն և արուացն գոյ նոյն մասն անդամոց կազմեալ յարարչէն. և այն յի՞նչ պէտս լինի. խնդրել արժան է: - 785. Ըստ աստուածեղէն տառից՝ արարաւ *էգն* ի յարուէն ամենայնիւ նման նմա օգնական: - 786

**ԷԼ +** Դարձեալ՝ ի յեբրայեցի լեզուն «ալ», ասէ թէ՝ գայ յայտնեսցի. «*էլ*», աստուած. «ուիայ», օրհնեցէք և գովեցէք զկենդանին աստուած: - 644

**ԷՄՄԱՆՈՒԷԼ** - Երկրորդ՝ սառա ամլութեամբ ծնաւ զիսաակ. և մարիամ կուսութեամբ *զէմմանուէլ*. և եկեղեցի միշտ կուսութեամբ ծնանի զծնունդս աւազանին: - 307. Անդրանիկ է *էմմանուէլն* ի բազում եղբարս: - 308. Եւ տէր մեր է՛ր աստուած և կոչեցաւ *էմմանուէլ*. և իրօք զգործս աստուծոյ ցուցանէր: - 329. Երկրորդ՝ զի ասէ «իբրև զիս». իբրևն օրինա՛կ է. որպէս մովսէս աստուած կոչեցաւ, և տէր մեր *էմմանուէլ*. և զնա՛ հայր կնքեաց աստուած. և որպէս մովսէս իշխէր տարերաց, և տէր ի ծովուն գնայր, և ի վերայ օդոյն: - 399. Երկրորդ, մարգարէն եսայի ասէ, «կոյսն յղասցի և ծնցի որդի *զէմմանուէլն*». իսկ *էմմանուէլն* թարգմանի մարդացեալ աստուած: - 466. Ապա ուրեմն կոյսն որ ծնաւ *զէմմանուէլն* մա՛յր է աստուծոյ մարդացելոյ: - 466. Նոյն և կամք և կիրք և ներգործութիւն մարդկային ընդ աստուածայինն միաւորեալ. միջնորդելով հոգւոյ բանականի՝ աստուածութեանն՝ և մարմնոյն. որ է՛ ներգործութեամբ միշտ աստուած և փրկիչ բնութեամբ. քրիստոս. նոր ադամ. *էմմանուէլ* ճշմարտութեամբ: - 770

**ԷՆԻԱ** - Այլ և սամարուհի կնոջն լուսինա՛ էր անունն: Տեռատեսին փոտինա: Քանանուհւոյն վերինէ՛: Անդամալուծին *էնիա*: - 495

**ԷՇ +** Այլ այժմ վասն զգեստուց պահեմք զոչխարս. և վասն կերակրոյ զեզինս. և վասն բեռին *զէշս*. և վասն բառնալոյ զմեզ զձիս. և վասն զբշնամիս հալածելոյ զշունս. և վասն զթռչունս ըմբռնելոյ զբազէս. և զայլսն նմանապէս: - 217. Շուրթն կախեալ սակաւ մի, տարտա՛մ է. զի *յէշ* և ի ձիս նմանի: - 247. Նոյնպէս և յառիւծոյ և *յիշոյ* ո՛չ լինի ծնունդ. զի մինն մսակեր է և միւսն ընտակեր: - 267. Իսկ ի ձիոյ և *յիշոյ* լինի ջորի. զի ընտակերք են և միաժամք ծնանին: - 267. Եւ էր մեծութիւն նորա մարմնական... *էշք* մատակ արօտականք **եճ**: - 321. Եւ յաւուր փորձութեանցն հուր անկեալ յերկնից այրեաց զհօտսն. և ասպատակք աւար առին զուղտն և *զէշսն* և զեզինսն: - 321. Եւ այսպէս է էին հարուածքն. այսինքն **ա**՝ եզինքն. **բ**՝ *էշքն*. **գ**՝ ուղտքն. **դ**՝ անասնոց մահն. **ե**՝ սպասաւորաց նոցին. **զ**՝ զաւակաց մահն. **է**՝ մարմնոյն հարուածքն: - 322. Այսինքն իգամոլք իբրև զձիս. խեռաբարոյք որպէս *զէշ*. և խորամանկք որպէս զուղտ: - 334. Վասն է՞ր խօսեցաւ *էշն*: - 388. Նա՛խ՝ զի մի՛ հպարտասցի բաղաամ. զի և *էշն* ետես զհրեշտակն: - 388. Երկրորդ՝ զի *իշովն* յանդիմանեսցէ զանմտութիւն նորա. և զանօրէնութիւնն արգելցէ. որպէս ասի ի կաթողիկէքն: - 388. Նա՛խ՝ զի բարկացեալ՝ *զէշն* կամէր սպանանել սրով. թէ գոյր ի ձեռին ընդէ՞ր բանիւ ոչ սատակէր: - 388. Եւ ծնօտիւ *իշոյն* եհար զհազարն: - 420. Քսանեւ, նա՛ ծնօտիւք *իշոյ* զհազարսն խորտակեալ: - 423. Նա՛խ՝ որպէս սաւուղ ի խնդիր *իշոյ* ել և թագաւորութիւն եգիտ. և տէր մեր մարդկան ազգի որ հաւասարեաց անբանից, և թագաւորեաց մեզ: - 426. Երկրորդ՝ անցեալ ընդ լերամբ և ո՛չ գտեալ. մինչև առ տեսանօղն եկեալ. և տէր մեր էանց զլերինս հրեշտակաց և եկն ի մարգարէս. և նոքա աւետեցին զգիւտն **գ** օրեայ կորստեան *իշոյն*...: - 426. Բաղդատութիւն Դաւթի և Տեառն մերոյ ...Դաւիթ երիցս սուգ էառ մեռելոյ. և տէրն ի վերայ երուսաղէմի և ի գերեզմանն ղազարու և մեծ ի խաչն... Երկու յաւանակն սիբայի. *էշն* և յաւանակն յիսուսի: - 438. Այլ և փայտն բարձեալ ի վերայ *իշոյն* իսահակայ: - 494. Կամ լինէիր ուժեղ որպէս սամփսոն. որ զհազար այր ծնօտիւ *իշոյն* եսպան: - 761. Որպէս զսաւուղայ ասեն՝ *էշ* կորուսեալ և թագաւորութիւն գտեալ: - 762

***ԷՇ ԲԱՂԱՄՈՒ*** - և Դարձեալ որպէս *իշովն բաղամու* զօգուտն խօսեցաւ, և ըզլեզու սուտ մարգարէին շարժեաց յանիծիցն յօրհնութիւնս: - 325

**ԷՈՒԹԻՒՆ +** Ասեմք առ այս, եթէ ամենայն իր զինչ և իցէ ի ներկայս՝ գիտեմք զնա ի յէութեան իւրում. իսկ ի հանդերձեալն ո՛չ գիտեմք ի *յէութեան* իւրում. սակայն գիտեմք զնա ի պատճառ իւր: - 9. Նախ թէ՝ երկնային մարմինքն ո՛չ են ի չորից տարրաց. այլ են հինգերորդ տարր կամ *էութիւն* ըստ արիստոտէլի. և որք են ի պարզ տարրէ միայն ո՛չ հակակային միմեանց: - 12. Նախ՝ զի բարին *էութիւն* է. ուստի յա՛յտ է՝ զի հակադարձին առ միմեանս. զի ամենայն որ բարի՛ է՝ է է. և ամենայն որ է է՝ բարի՛ է: - 13. Իսկ չարն ո՛չ է *էութիւն*: - 13. Ա՛յլ արդ՝ աստուած պատճառ *էութեան* է և ո՛չ ոչ *էութեան*, ապա ուրեմն չարն ո՛չ է յաստուծոյ: - 13. Եւ ո՛չ որպէս ներհականք. որպէս ջերմ և ցուրտ. սպիտակ և սեաւ. զի սոքա որակութիւնք են. իսկ բարին *էութիւն* է, և չարն ո՛չ է *էութիւն*: - 21. Ասեմք առ այս եթէ՝ ջերմն ապականէ զցուրտ՝ և ինքն մնայ ի յենթակայն. զի *էութիւն* է և որակ: - 22. Իսկ չարն ոչ մնայ. զի չարն ոչ է *էութիւն*. այլ պակասութիւն: - 22. Եւ ի *յէութեան*

է. որպէս հիվանդութիւն ի յողջութեան, և ապականութիւն ի մարմնի: - 22. Նախ՝ եթէ չարն ո՛չ է *էութիւն*, և ո՛չ ի յէս. և ո՛չ ի յէից. և ո՛չ սկիզբն էից: - 22. Ասեմք զառաջինն թէ ո՛չէ է չար. զի ապականիչ և կորուսիչ է որպէս ցուցաւ. ա՛րդ՝ ընդ ապականել զայլսն՝ ապականէ և զինքն. և ո՛չ մնայ ի *յէութեան*: - 22. Զի է՛ ինչ որէ է՛ և բարի. որպէս ամենայն *էութիւնք*: - 22. Եւ ո՛չ է. և ո՛չ բարի. որպէս չարն արտաքոյ *էութեան* և արտաքոյ բարւոյ: - 22. Երկրորդ, ասեմք եթէ՝ չարն կրկին իմանի. է՛ որ ինքնաչա՛ր է. որ պարզ և ամենևիմբ չարն է. և արտաքոյ բարւոյ և *էութեան* է. որ ո՛չ ուրեք է. և ո՛չ երբեք. և ո՛չ էր. և ո՛չ է. և ո՛չ լինիլ կարող է. որ է ո՛չ ինչ: - 22. Եւ է չար՝ որ խա՛ռն է ընդ բարւոյ. և ի *յէութեան* գոյանայ. որպէս հիւանդութիւնն ի յողջութեան. ապականությիւնն ի մարմնի: - 22. Եւ յամենևին նըւազիլ կենաց՝ և մահն կորընչի. զի *յէութեան* ունի զգոլն ներհակապէս: - 22. Այսպէս և բարին՝ է՛ որ պարզ և միեղէն բարի է. որպէս աստուած. զի անփոփոխ և միշտ բարի է. զի *էութեամբ* բարի է. և բարին *էութիւն* է աստուծոյ: - 22. Եւ է՛ որ խառն բարի է. որպէս առ մեզ պատահեալ բարիս որ ունակութիւն է. զի ա՛յլ է *էութիւն* մեր, և ա՛յլ է բարի *յէութեան* մերում: - 22-23. Այժմ պատասխանեսցուք հարցմանն եթէ առաքինութեանն չարութիւն, և արդարութեանն անիրաւութիւն ներհական. որպէս խաւարն լուսոյ. և *էութիւն* է լոյսն. և ո՛չ *էութիւն* խաւարն. և օդն ընդունակ լուսոյ և խաւարի: - 23. Այսպէս հոգին *էութիւն* է և ընդունակ բարւոյ և չարի. այսինքն առաքինութեան և չարութեան: - 23. Նոյնպէս և բարին միշտ բարի է. թէպէտ ի հոգւոյն պակասեցաւ, դեռևս ի *յէութեան* է. զի է է բարին. և *էութիւն* ո՛չ կորնչի: - 23. Ապա ուրեմն յա՛յտ է զի բարին ըստ ենթակային և ըստ ինքեան՝ *էութիւն* է: - 23. Չորրորդ՝ ոչ էն յորժամ էանայ՝ դարձեալ յոչ *էութիւն* ո՛չ կարէ փոխիլ: - 23. Իսկ չարն ի *յէութեան* երևեալ՝ փոխի դարձեալ յոչինչ և յոչ գոյ: - 23. Սկիզբն և պատճառ՝ *էութեա՛ն* ասեմք ունիլ: - 23. Իսկ չարն արտաքո՛յ է *էութեան* և բնութեան. վասն որոյ անբաւ է և անպատճառ: 23. Դարձեալ՝ չափ և սահման ի վերջին եզր *էութեան* նկատէ, և սկիզբն և պատճառ ի յառաջինն: - 23. Ընդէ՞ր ոչ յայտնեաց աստուած *զէութիւն* իւր ի կեանս յայս՝ մարդկան ազգի: - 24. Իսկ պաշտօն կռոցն՝ մեղանչումն է ընդդէմ *էութեանն* աստուծոյ և փառաց: - 33. Առ որս ասելի է թէ՝ ո՛չ կամաւ, և ո՛չ յոչ կամայ. զի պատկեր և նկարագիր *էութեանն* հօր է որդի, ըստ առաքելոյ: - 36. Եւ ո՛չ լինի ի մէջ մի և նոյն *էութեանն* կամք և ոչ կամութիւն: - 36. Եւ թէ ասեն տգիտաբար, քակեն զնկարն. բառնի և *էութիւն* հօր: - 36. Ապա ուրեմն բնութեամբ և *էութեամբ* է որդի. և ոչ թէ կամաւ կամ ոչ կամայ: - 36. Զի թէ կամաւ, կամքն էր ապա յառաջ քան *զէութիւնն*. որ անհնար է և յեղեալքս: - 36. Եւ դարձեալ ի բաց պատառես *զէութիւնն*. որպէս թէ կէսն կայր՝ և զկիսոյն լինիլն կամեցաւ: - 36. Ի յայս տարակուսանքս՝ որ է ստութիւն յերկուց կողմանց, բառնի *էութիւն* հօր. և լինի արարած որդի: - 36. Զի թէ ասեն էր յառաջ քան զծնունդն որդի. իսկ *էութիւնն* հօր հայրութիւն է. և թէ ոչ էր որդւոյ հայր՝ բառնի *յէութենէն* իւրմէ, իսկ թէ ոչ էր և յետոյ ծնաւ՝ ո՞ւմ արդեօք իցէր հայր. զի ո՛չ էր որդի: - 36-37. Զի լուծումն է բանիդ յերկրուց դիմաց և հաստատող *էութեանն* հօր: - 37. Զի և յոհան դամասկացին ասէ հարկ գոլ ամենայն սկզման ունել դադարումն. այլ զի հրեշտակք և հոգիք ոչ դադարին, այս կամա՛ցն աստուծոյ է պահպանութիւն, և ոչ բնութեան նոցա. զի յո՛չ էից եղեալքն՝ կարեն յոչ *էութիւն* փոխիլ: - 37. Եւ նոյն ինքն հուրն է՛ օրինակ հօր. զի անհնա՛ր է լինել առանց լուսոյ և ջերմութեան. զի *էութիւն* են հրոյն: - 38. Հինգերորդ՝ զի որ եդեր նախկին զպակասութիւնն, բարձեր *զէութիւնն* հօր և որդւոյ: - 38. Այլ նա ընդ ամենայն է քրիստոս զօրութեամբ և *էութեամբ* թափանցեալ է. և ո՛չ է տեղի թափուր ի նմանէ...: - 40. Երրորդ՝ զի է՛ հնար առնուլ ի վերայ մարմնական իմաստութեանց՝ և արհեստից հանճարաց՝ և բնականին ներգործութեանց ի բնութիւն իրին յառաջ ածելով *զէութիւնն*. թէ ասեմք զիմաստութիւնս զայս ստեղծեալ նախկին. որ ասացաւ «ամենայն գործոց»: - 40. Իսկ հնազանդիլն որդւոյ հօր, ո՛չ թէ այժմ անհնազանդ է վասն հակառակութեան. զի այս աւազակա՛ցն է. և անհնա՛ր է ասել զմի և զնոյն *էութիւնն* ինքն ինքեան հնազանդ և անհնազանդ ըստ այնմ որ բան է. այսինքն զպարզ աստուածութիւնն: - 42. Եւ այս ոչ *էութիւն* և չարութիւն՝ առ մեզ կարէ՛ երևիլ, զի մասա՛մբ ունիմք զկարողութիւն և ո՛չ կատարեալ: - 44. Զի որպէս ունի *զէութիւնն* ի գոյութենէ հօր, այսպէս և զիշխանութիւնն յիշխանութենէ հօր. ըստ այսմ և զայլն իմասցիս զառնուլն: - 46. Հինգերորդ՝ զի բանն է սահման. և որպէս յայտնիչ է սահմանն սահմանելոյն, այսպէս և որդի սահմանէ՛ *զէութիւն* հօր. ըստ այնմ թէ, «որ ետես զիս՝ ետես զհայր»: - 49. Զի մեզ հոգին ըստ ինքեան գոյացութիւն, և յայլում տեսանի. այսինքն կատարեալ անձնաւորութիւն *յէութիւն* հօր: - 51. Առորս ասելի է թէ՝ ո՛չ է այլ *էութիւն* ի մէջ արարչին և արարածոյն. այլ հա՛րկ է զի լիցի աստուած՝ կամ արարած: - 52. Եւ ո՛չ այս կարէ լինիլ ի յերկուցն հատումն. այսինքն զի լիցի յաստուծոյ և արարածէն՝ և լինիլ մի *էութիւն*. որպէս ո՛չ է *էութիւն* եղջերուաքաղն որ յեղջերէ՛ և ի քաղէ ստեղծանի. ապա ուրեմն ո՛չ լինի *էութիւն* յարարչէն և յարարածէն: - 52. Եւ զի ստուգեցաք թէ ի հարկէ պիտոյ է *էութեան* զի լիցի կամ արարիչ կամ արարած: - 52. Իսկ արիոսի՝ զի նա միայն զհա՛յր ասէր աստուած. զայս ասեմք թէ, ո՛չ են մեզ երեք աստուածք՝ այլ մի աստուած և երեք անձինք. և երկուքն ի մի և

ի նոյն *էութենէն* յառաջ եկեալ. կամօք մի և զօրութեամբ մի: - 54. Վեցերորդ՝ թէ արարա՛ծ է բանն և հոգին աստուծոյ՝ ապա օտա՛ր է *յէութենէ* աստուծոյ և եկամուտ և աւելոր՛դ նմա: - 56. Եօթներորդ՝ թէ արարա՛ծ է բանն և հոգին աստուծոյ և են *յէութենէ* նորին, ապա և ինքն արարած է որոյ է բանն և հոգին: - 56. Ութերորդ՝ որպէս հոգի մարդոյն է՛ *յէութենէ* մարդոյն, այսպէս և հոգին աստուծոյ է *յէութենէն* աստուծոյ: - 58. Պատասխանեմք եթէ՝ թէպէտ հոգին ունի զբնութիւնն ի հօրէ՝ սակայն ո՛չ ծննդեամբ որպէս որդի, այլ բղխմամբ. որպէս շունչն և բանն ունին *զէութիւնն* հոգւոյն այլ և այլ կերպիւ. և որպէս ադամ յառաջ էած յինքենէ զսէթ և զևա. զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ. և ունին երեքեանն զմի և զնոյն բնութիւն մարդոյ: - 60. Այսպէս և հոգին սուրբ էառ յաւիտենականապէս *զէութիւնն* ի հօրէ բղխմամբ, և որդի ծննդեամբ: - 60. Եւ դարձեալ, զի ամենայն ինչ որ հօր է՝ այն որդւոյ է որպէս ասէ տէր. ապա ուրեմն հոգի հօր՝ հոգի է որդւոյ վասն միոյ *էութեանն*: - 61. Նախ՝ որպէս մատն է *յէութենէ* մարմնոյն, այսպէս և հոգին սուրբ է *յէութենէն* աստուծոյ: - 62. Իսկ վասն անբաժան *էութեանն* ծանի՛ր և զայդ օրինակաւ: - 74. Որպէս մի *էութիւն* է խնծորն. և ունի երեք յատկութիւնս որակաց. զհամն, և զհոտն, և զգոյնն ընդ ձևոյն: - 74. Եւ որպէս հուրն ունի *յէութեան* իւրում՝ լոյս և ջերմութիւն: - 75. Իսկ շօշափելիքն զգայ զջերմութիւնն՝ և տեսանելիքն զլոյսն միայն ի միում *էութեան*: - 75. Իսկ ընդ դէմ ետիքեայ անշփոթ ասել՝ պահէ՛ զյատկութիւն բնութեանցն՝ ի միութիւն խառնեալ *էութեանցն*: - 75. Ուրեմն և ծնեալ ի մօրէ միայն զմարդկութիւնն՝ և ո՛չ զաստուածային *էութիւնն*: - 75-76. Այսորիկ հային առ միութիւն *էութեանն*: - 77. Եւ սոքա *էութեամբ* և բնութեամբ ո՛չ խոստովանին զմիութիւնն. այլ՝ անձամբ միայն: - 82. Ա՛րդ՝ սոքա զանունն մի ասեն, և յանունն միաւորեն **զբ** *էութիւնսն*. այսինքն զաստուածն և զմարդն. և ասեն մի անձն. մի որդի. մի քրիստոս. և այլն: - 82. Իբր թէ բանն և մարդն բաժանեալ են *էութեամբ* և բնութեամբ, իսկ մի են որդիութեամբ: - 82. Իսկ յորժամ կամեցաւ արարիչն մարդ լինիլ, բանն աստուած իւրով կատարելութեամբն անձամբ և *էութեամբ*՝ ո՛չ մասամբ, այլ լրիւ միացաւ անճառապէս ի մարմնի: - 82-83. Զի անձն առանց բնութեան՝ կոչումն միա՛յն է ո՛չ *էութիւն*: - 84. Որպէս միաւորեալ ասեմք զբնութիւն մարդոյն ընդ *էութեանն* աստուծոյ, այսպէս միաւորեալ և մի է կամք բանին մարդացելոյ: - 85. Անձն այն *էութիւն* և գոյացութի՞ւն է թէ ոչ: - 86. *Էութիւն* է և գոյացութիւն, և զիա՞րդ ո՛չ: - 86. Արդ եթէ *էութիւն* է անձն, և ընդ անձինն մի ասեն զմարդկային բնութիւնն, մի է և ընդ *էութեանն*. և թէ մի է ընդ *էութեանն*. որպէս ճշմարիտ միութիւն, մի ասա և բնութիւն. զի *էութիւն* և բնութիւն մի են: - 86. Որպէս *յէութենէ* ի պատահումն: - 87. Կամ ի պատահմանէ *յէութիւն*: - 87. Այլ մարդկութիւնն քրիստոսի ո՛չ կարէ կայանալ առանց աստուածային *էութեանն*: - 87. Այլ և ո՛չ որպէս *էութիւն* ի պատահումն. զի մարդկութիւնն քրիստոսի է ի սեռէ գոյացութեան, և ո՛չ ի սեռէ պատահման: - 88. Այլ և ո՛չ որպէս պատահումն ի *յէութիւն*. զի բանն աստուած ո՛չ է անանձն և ազդումն ինչ որպէս մեր բանս ըստ ոմանց. որպէս մարկեղոս և փոտինոս դանդաչեն: - 88. Եւ կամ լինի մի քրիստոս ըստ կոչմանն, և **գ** ըստ *էութեանն*: - 90. Երրորդ՝ զի ո՛չ է նման առ մեզ և առ նա մասն և բոլորն. զի թէպէտ մասունք մարդոյ՝ ո՛չ ունին զկոչմունս բոլորին, սակայն մասունք մարմնոյն քրիստոսի՝ կոչին և ունին զբոլորին *էութիւն*: - 92. Իսկ թէ ասես միայնաբար աստուած է մարմինն՝ և աստուած է հոգին. այսու ո՛չ լինիս բազմաստուած. զի մի՛ է աստուածութիւնն ի սոսա միաւորեալ *էութեամբ* և գոյացութեամբ: - 93. Սակայն նա բնութեամբ և *էութեամբ* միացաւ. և սոքա շնորհօք և ժամանակաւ: - 95. Իսկ թէ միայն անուն առանց *էութեան*. ապա անւամբ խոստովանիս աստուած զքրիստոս և ո՛չ գոյացութեամբ. և հաւասարե՛ս զնա մովսէսի. որ անուամբ աստուած կոչեցաւ և ո՛չ *էութեամբ*: - 95. Արդ՝ եթէ բոլոր աստուածութիւնն ի քրիստոս էացեալ է մարմնապէս, և ծածկէ զգիտութիւնն ի նմանէ, այս լինի կամ ոչ աստուած մարմնացեալ և մարդացեալ կամ *զէութիւնն* տըւեալ և ի գիտութենէն զրկեալ որ է սուտ: - 98. Անճառելի է բնութեան և *էութեանն* բան. և ճառելի են անուանքն: - 103. Երկրորդ՝ զի տեսութիւն մտաց հասարակի ընդ գոյութեան *էութեան*. և ուր եզերի բնութիւն՝ անդ և *մտաւորութիւն*: - 103. Յայտ ուրեմն է, զի որ ի վեր է քան *զէութիւն*, ի վե՛ր է քան զգիտութիւն: - 103. Նմանապէս և հասարակն թէպէտ բազում է, այլ երկոտասան գլխով նշանակի. նախ Բնութիւն. որ նոյն է *էութիւն*. ապա Բարութիւն. Կամք. Անմահութիւն. Իմաստութիւն. Լուսաւորութիւն. Գեղեցկութիւն. Անփոփոխութիւն. Ցնծութիւն. Փառք. Իշխանութիւն. և Արարչութիւն: - 105. Նոյնպէս և *էութիւնն* աստուծոյ ի յէքս բազմացեալ. և աստուած անունն ի բազում աստուածս. և մնացեալ նոյն մի աստուած ըստ պօղոսի, «մեզ մի է աստուած հայր յորմէ ամենայն»: - 106. Հինգերորդ՝ ի բանէն կրկին *էութիւնք* յառաջեցան. այսինքն իմանալի և զգալի. զի թէ միայն ի հրեշտակաց էր առեալ՝ պակասէ՛ր զգալին. և թէ ի կենդանեաց՝ պակասէ՛ր իմանալին: - 107. Երրորդ՝ որդին ծնունդ նկատէ ի *յէութիւնն*, և հոգին ի կեանքն. և նախ է գոլ իրին՝ և ապա կենդանի: - 109. Եւ *էութիւնն* աստուծոյ ըստ ինքեան անբաժանելի է, և յարարածոց բաժանեալ: - 110. Երրորդ՝ բազմանայ ի *յէութիւն* եղելոցս. և բազմապատկի ի կեանս. ի շնորհս. և յայլ պարգևս: - 110. Հինգերորդ՝ սկիզբն *էութեան*. և

պատճառ կենաց և շնորհաց և այլոց: - 110. Եւ *յէութիւն* եղելոցս. որ է պատկեր և նմանութիւն յարացուցի: - 111. Դարձեալ՝ եղեալ *էութիւն* բաժանի կրկնակի. ի գոյացութիւն և ի պատահումն: - 111. Մին՝ զի նա՛խ է քան զամենայն գոյ. թէ սկիզբն և թէ *էութիւն*: - 111. Ոմանք ասացին զսկզբնապետագոյն տարերքն. ուստի եղեն ամենայն մարմնական *էութիւնք*: - 112. Ա՛րդ՝ ո՛չէ ի յաստուած անձնաւոր *էութիւն*. որպէս Երրորդական անձինքն. և ո՛չ բաժանեալ ի նմանէ. որպէս հրեշտակաց դասքն. և ո՛չ որպէս սոսկ մտածութիւն ի տեսութիւնն աստուծոյ: - 112. Զի առ աստուած՝ ո՛չէ սոսկ տեսութիւն արտաքոյ. այլ յինքն տեսանելով զյարացոյցն. և զմեզ ի յարացոյցն մեր իբր լինիլ մեզ նախ ի յաստուած, և ապա ի *յէութեան* մերում. և ո՛չ որպէս փոփոխումն ինչ ի բարի կամացն: - 112. Յարացոյցն մի է և պարզ. ըստ այնմ որ մի է *էութիւնն* աստուծոյ, և մի տեսութիւն, և մի ճշմարտութիւն: - 112. Նախ՝ եթէ անեղ է աստուած՝ ըստ որում անսկիզբն և անեղ էին արարածք ըստ անգոյին՝ կարգաւո՛ր է և յոյժ որպէս դու ասացեր. զի անեղ էն աստուած յառաջ էած զանեղն ի *յէութիւն*: - 113. Այլ արդ՝ ըստ անեղ *էութեանն* յառաջ էած զանեղ *էութիւնն* որդւոյ և հոգւոյ. և ըստ անհուն զօրութեանն յառաջ էած զեղականն *էութիւն*. զի անհուն զօրութիւնն կարօ՛ղ է ամենայն ընդդիմակաց. ըստ որում ամենազօ՛ր է: - 113. Դարձեալ է՛ յատկութիւն, զի նախ տեսութիւնն է աստուծոյ, և ապա *էութիւն* ամենայն իրի՝ տեսութեանն նորա հետևի: - 118. Իսկ մեր տեսութիւնս *էութեանն* հետևի. զի նախ իրն լինի, և ապա՛ մեք տեսանեմք: - 118. Իսկ մեք զկնի գործոյն և կամելոյն և *էութեան* որպէս ասացաք: - 118. Աստուածային *էութիւնն* ըստ որում բնութիւն է՝ թէ զինչ է կամ որպիսի ինչ է անգիտելի՛ է մեզ յայսմ աշխարհի և ի հանդերձելումն: - 119. Իսկ չորրորդն է խորհրդական աստուածաբանութիւն. յորժամ զամենայն զգալի և զիմանալի *էութիւն* արտաքոյ թողեալ, ի խորս ընթանամք մտօք և մտանեմք յամպն և ի մէգն ըստ մովսէսի. և ապա տեսանեմք զնա արտաքս որոշեալ յամենայն էից: - 122. Զի որպէս խաւարն անյայտ է, նոյնպէս և առաւել լոյսն անտեսութիւն առնէ. և նա անտես է ի հրեշտակաց. և անյայտ ի մարդկային մտաց. թէ ո՞րպէս կամ զի՞նչ է *էութիւն* և բնութիւն աստուածութեանն: - 122. Երկրորդ՝ ուրացականն ընդդէմ *էութեան* և փառացն աստուծոյ է. զի *զէութիւն* և զփառս աստուծոյ ուրանալ տայ: - 124. Իսկ բացբարձականքն՝ ո՛չ *զէութիւն* կամ զփառս աստուծոյ բառնայ, այլ զոր յետ *էութեանն* աստուծոյ է և ի նմանէ ստեղծեալ՝ և զխոնարհութիւնսն բառնայ: - 124. Եւ արդ՝ զի հասարակ են *էութեամբ*՝ և յատուկ առանձնաւորութեամբ, յաղագս որոյ զանազանելի է զյատկութիւնս ըստ երկուց լուսոյն: - 125. Երկրորդ՝ զի *էութիւնն* աստուծոյ սէ՛ր է. և շարժի՛ սիրել զմեզ. և շարժէ՛ զմեզ սիրել զինքն: - 128. Ոմանք մերձ են *էութեամբ* արարչին. և ոմանք հեռի. որպէս իմացականքն քան զբանականս. և սա՛ քան զկենդանիս. և նոքա քան զտունկս. և հուսկ յետոյ անշունչ գոյացութիւնքն. ըստ մերձ և հեռաւոր բնութեանց՝ զանազանապէս առնուն: - 131. Ա՛յսպէս և անմարմին *էութեանցն* է: - 132. և Նախ՝ զի նոցայն՝ *էութիւն* ո՛չ է. այլ առ աչօք ուրուական ցուցմունք. որպէս ի միտս ցնորք: - 133. Իսկ աստ *էութիւն* հրեշտակին է կերպարանեալ մարմին տեսանելի: - 133. Երրորդ՝ զի են *էութիւն* զօրութիւն և ներգործութիւն: - 134. **Ասեմք եթէ՝ նոքա երեքեան դասքն՝ այսինքն աթոռք՝ քերօբէք՝ և սերօբէք՝ միակարգ միապատիւ և գերազանց *էութիւնք* են. զի անընդմիջաբար յաստուծոյ ամենայն լուսափայլութիւնք իմաստք և շնորհք ի նոսա հեղանին համակարգապէս. և ապա նոքօք յայլ ամենայն գոյս երկնաւոր և երկրաւոր**: - 135. Նախ՝ զի ընդհանուր դասք և իւրաքանչիւր անհատք ունին *էութիւն*՝ զօրութիւն՝ և ներգործութիւն. այսինքն ըստ որում էացեալքեն, և կարողութիւն ունին, և ներգործեն: - 137. Վասն որոյ պարունակ բանիւ կոչին *էութիւնք*, զօրութիւնք, և այլն: - 137. Երրորդ՝ ամենեքեան զօրութիւնք կոչին. զի ունին զօրութիւն *էութիւն* և ներգործութիւն: - 137. Այս զանազանութիւն առ երրորդ *էութիւնս* որպէս ցուցաւ: - 138. Վեցերորդ՝ զի անփոփո՛խ են *էութեամբ*: - 139. Այլ արդ՝ շնորհքն ըստ իւրում ինքնութեան է՛ անեղ՝ յանեղ է էն յառաջեալ, և նախախնամաբար եղելոցս հաղորդի, և յիւրմէ *էութենէն* ո՛չ փոփոխի: - 140. Վասն երկրորդ մի՞ է թէ բազում, ասեմք եթէ՝ ի սկիզբն մի է ըստ *էութեան* ի միոյ պատճառէ՛ յառաջ եկեալ. և ի բազումս բազմացեալ ըստ որակութեան. որպէս է արփեան և ըստ աստիճանաց: - 140. Այլ ինքեանց վերին *էութեանցն* գիտելի է թիւ նոցա՝ շնորհեալ յամէնիմաստ գիտութենէն: - 141. Մետասաներորդ) *էութիւն* և բնութիւն՝ և անձն՝ և պարագրող՝ և տեղի: - 154. Զի ի հարկէ՛ էակ է, որ զգոլն միայն ունի. իսկ զչգոլն ո՛չ ունի. ապա ուրեմն անփոփո՛խ է *էութեամբ*: - 162. Նախ որպէս ցուցաւ միշտ է աստուած *էութեամբ* և ներգործութեամբ. առ ինքեան միշտ է, և ներգործութիւն իւր առ ա՛յլս: - 162. Այլ և ո՛չ ըստ այնմ որ է՛ սկիզբն գոյացութեան աշխարհի. զի անփոփոխ կամօք կամեցաւ և արար ի գոյութիւն. և անկա՛ր է փոխիլ կամացն անեղին և առնել յանգոյութիւն զեղեալս *էութիւն*: - 165. Եւ զայսպիսի զօրութիւնս ո՛չ երբէք ասեմք ի վերայ աստուծոյ. զի մշտնջենաւոր *էութիւն* է. և ոչ ընդունի զգոլն և զչգոլն: - 168. Նախ՝ զի պատահմունքն են *յէութենէ* իրին երևեալ. այլ արարածք ոչ *յէութենէ*, այլ ի կամաց արարչին յոչնչէ ներգործեալ են: - 169. Իսկ պատահումն

ի յայլս ունի *զէութիւնն*, և կարօ՛տ է այլոյ ի գոլն. որպէս գոյն ի մարմնի: - 170. Չորրորդ՝ զի պատահումն է՛ փոփոխական իր. իսկ աստուած անփոփոխ է *էութեամբ* զօրութեամբ կամօք և գիտութեամբ...: - 170. Իսկ աստուած անմարմին *էութիւն* է: - 170. Իսկ անեղ և պարզ *էութեանն* պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ. զի է կոչի աստուած, ըստ այնմ «ես եմ որ էն». և ո՛չ ըստ այնմ որ բաժանի ի գոյացութիւն և ի պատահումն. որպէս հոմանուն կամ փաղանուն. կամ ի միոջէ և առ մի. որպէս ընդհանուր էակն է՝ բաժանի առ մեզ: - 171. Երրորդ՝ տեղի ասի և հասումն մտաց. ըստ որում պարունակէ՛ իմացմամբ *զէութիւն* իմացեալ իրին: - 172. Յայսցանէ ազա՛տ է ամենայնիւ աստուածայինն *էութիւն*. զի անմարմին է և անսահման և անհաս մտաց: - 172. Իսկ Կալ՝ ո՛չ զկալն կամ զնստիլն մարմնապէս. այլ զհաստատիլն անշարժ *էութեամբ*. զի ո՛չ շարժի. ո՛չ բնութեամբ, ո՛չ կամաւ, և ո՛չ տեղեաւ: - 172. Եւ թէպէտ ի *յէութիւնս* իւրեանց յետոյ, սակայն ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ, գոյին յառաջ քան ըզլինիլն իւրեանց *էութեամբ*, և յետոյ եղեն ըստ նոյն նմանութեան: - 172. Զի՞նչ է *էութիւն* և բնութիւն՝ և անձն և գոյացութիւն: - 174. *էութիւն* և բնութիւն մի են որպէս մարդկութիւն. այլ *էութիւնն* երբեմն նշանակէ զանձն որ ա՛ստ է և այժմ. իսկ բնութիւնն ո՛չ: - 174. Աննիւթ է աստուած և պարզ *էութիւն* ըստ երկու եղանակի: - 175. Եւ գոյացութիւն ասեմ, որով տարորոշի ընդդէմ ոչ գոյին. և որակութեամբ բացորոշի յանմարմին *էութեանց*. ուստի բաղկանայ մարմին գոյացութեամբ և որակութեամբ: - 175. Զի աննիւթ և պա՛րզ *էութիւն* է աստուած. և յառաջ էած յոչընչէ զաննիւթ *էութիւնքս*. այսինքն զգոյացութիւն, զքանակ, զորակ, և զայլսն. և իւրով զօրութեամբն ի միասին ժողովեալ կազմեաց մարմնական նիւթ: - 175. Նախ՝ զի սոքա անմարմինք են ըստ ինքեան. այսինքն քանակ, որակ, և այլքն. և յանմարմին *էութիւնս* ո՛չ տեսանին. որպէս ի հրեշտակս կամ ի հոգիս. զի նոքա ո՛չ ունին ձև. որակ. քանակ. և զայլսն: - 175. Երկրորդ՝ զի իր մարմնական են և ի մարմնի էանան սոքա՝ և ո՛չ են մարմին. այլ անմարմին *էութիւն* որպէս ասացաք: - 175. Երրորդ՝ ի ժողովիլն սոցա լինի մարմնական *էութիւն*. և յորոշելն կորնչի մարմինն: - 175. Հինգերորդ՝ զի առանձին բնութեամբ սոքա ի մի *էութիւն* ժողովեալ խառնին. և մի բնութիւն նիւթոյ կատարեն. և ի բնութիւնս իւրեանց ո՛չ շփոթին և այլայլին: - 176. Այսպէս իմա՛ ինձ և զբանին մարդեղութիւն յայլևայլ բնութեանց միաւորեալ ի մի *էութիւն* և ի մի դէմ անձնաւորեալ և ո՛չ շփոթեալ բնութեանցն յատկութիւն: - 176. Երրորդ՝ զի արարած լսելով՝ մի՛ կարծեսցես օտար ի նմանէ զեղեալքս, կոչէ՛ ծնունդ. և յորժամ ծնունդ լըիցես, մի՛ կարծեսցես *յէութենէն* աստուծոյ զեղեալքս՝ ի վերայ բերէ արարած: - 179. Առաջին պատճառ, զի երկինքն է պարզ մարմին. զի ո՛չ է ի չորից տարերց. այլ եերորդ *էութիւն* է: - 182. Ապա ուրեմն պարզ *էութեան* երկնից պարտ է ունել զպարզ ձև որ է բոլորակն: - 182. Չորրորդ՝ զի պարզ և վճիտ է ըստ *էութեան*: - 184. Այսպէս և հոմանուն է եթերն. այսինքն եերորդ *էութիւնն*, և տարրական հուրն: - 184. Ոմանք ասեն թէ եերորդ *էութիւն* են արտաքոյ չորից տարերաց ըստ արիստոտէլի: - 188. Այլ եերորդ *էութիւնն* է պարզ և հաւասար. առաւել և նուազ ո՛չ ընդունի: - 188. Նոյնպէս և նշանակէ՛ զհրեշտակաց բնութիւնն, որ նախ ստեղծան անկատար ճանաչմամբ և գիտութեամբ. այլ յորժամ երանեցան և տեսին *զէութիւնն* աստուծոյ անընդմիջաբար, յայնժամ կատարեցան ճանաչմամբ և գիտութեամբ: - 192. Նախ՝ օդն. որ *էութիւն* է ձայնի: - 216. Ոմանք աննիւթ և իմանալի, այլաբանութիւն և օրինակ ասացին. և ոչ *էութեամբ* ենթակայացեալ: - 221. Քսաներորդ՝ Վասն *էութեան* հոգոյն լուծումն հակառակ բանից. և ճշմարտութեանն հաստատութիւն զանազան հարցմամբ: - 228. Վասն որոյ յետոյ մարդն ստեղծաւ յերկուցն խառնեալ յիմանալւոյն և ի զգալոյն ի մի *էութիւն*: - 231. Ուստի միջակ գոլով ըստ *էութեան* և ի միջակ վայրս դրախտին բնակեալ: - 231. Եւ զկրկնակի կենաց վայելումն ըստ խառնեալ *էութեան* իւրոյ. զի թէ զաստուածայինսն բերցէ յինքեան ըստ որում ի պատկերն եղև, վերափոխեսցի անմահ կենօք ի պատրաստեալն ժառանգութիւն: - 231. Զի թէպէտ ըստ ներգործութեանն բաժանին երբեմն ի բաժանելի մարմնոյն՝ զի առանց մարմնոյն ո՛չ կարեն ներգործել սոքօք, այլ անբաժանելի մնան ըստ *էութեանն* ի հոգին. որպէս ցուցանելոց եմք յառաջիկայսդ: - 249. Խնդրեմ ուսանիլ վասն բոլոր *էութեան* հոգւոյն թէ ո՞րպէս կամ զի՞նչ եղանակաւ գոյանայ: - 252. Զի որք զհոգի յառաջ ասեն գոյանալ՝ զայս դնեն պատճառ, եթէ յէակքս իմանալիքն յառաջ ստեղծան քան զզգալիքս. ապա և ի մարդոյն *էութիւն* հոգին յառաջ է քան զմարմինն: - 252. Երկրորդ՝ զի մի գոյութիւն է մարդն բաղադրեալ ի հոգւոյ և ի մարմնոյ. ոչ է պարտ բ լինիլ սկիզբն. այլ մի *էութեանն* մի է սկիզբն: - 253-254. Հինգերորդ՝ զի տկարութիւն է զօրութեանն աստուծոյ՝ եթէ զմի *էութիւն* ըստ մասին յայլ և այլ ժամանակս գործեաց: - 254. Նախ՝ զի նիւթն այն ունի առ ինքն բնական զկենդանութիւն տնկականին. և տնկականն մա՛սն է զգայականին. և զգայականն բանականին. և սոքա ո՛չ որոշին ի բոլորէն. զի մի են *էութեամբ* ի մարդն թէպէտ ա՛յլ են ներգործութեամբ: - 254. Թէպէտ յայլ և այլ ժամանակս երևին սոքա. այլ մի են *էութեամբ*: - 259. Ապա ուրեմն մի է *էութիւն* հոգւոյ ի մարդն: - 259. Եւ զորօրինակ՝ մի է *էութիւն*

իմացման, այլ ի ե զգայութիւնս բաժանի ըստ ներգործութեանն: - 259. Այսպէս մի է *էութիւն* հոգւոյն ըստ ինքեան, և յերիս բաժանի ըստ ներգործութեան: - 259. Եւ որպէս ասէ արիստոտէլ զերեք թիւն` որ մի ունի *զէութիւն* իւր. այլ երկուքն և մինն մասունք են նորա: - 259. Ասեմք առ այս, եթէ և յետ մահուան ո՛չ բաժանին սոքա ի հոգւոյն ըստ *էութեան*. զի մի է *էութիւն* սոցա. այլ ըստ ներգործութեան. զի ո՛չ է մարմին` ո՛չ կարէ ներգործել: - 260. Ասեմք առ այս, թէ մի է հոգի հաւաստեաւ. և ո՛չ է ինքն ինքեան առաջին և վերջին. զի մի *էութեան* առաջին և վերջին ո՛չ է. այլ ըստ ներգործութեան. զի ըստ առաջին և վերջին զօրութեանն` առաջին և վերջին ներգործէ: - 260. Այլ հակադարձեալ սոքա ըստ կարգի և ըստ դասու` յառա՛ջ է տնկականն քան զզգայականն, և նա՛ քան զբանականն ի յերևումն. այլ *էութեամբ* համանգամայն են. որպէս անդ ուրեմն ասացաք վասն հոգւոյ և մարմնոյ: - 260. Եւ թէ զտեսութիւնս զայս կարծես *էութիւն* հոգւոյ ըստ որում է հոգի, ապա ո՛չ միայն ետես զհոգի, այլ և զմարմին` և զիւրաքանչիւրոց ընտրութիւն, և զհամար հերաց և զթիւն աստեղաց. և սոքա յետո՛յ են գոյացեալ ըստ կամաց տեսողին: - 260. Եւ է՛ գործի իմացման նոցա` յիշումն. և ենթակայ` երկնային մարմինք` և *էութիւնք* եղելոց: - 269. Իսկ մարդն ասի պատկեր աստուծոյ ըստ նմանութեանն. վասն զի ո՛չ ունի զնոյն *էութիւն*. այլ զնմանութիւնն աստուծոյ: - 273. Եւ դարձեալ` որպէս ծու հաւի և ծու քարեայ` նման ասին միմեանց, այլ ո՛չ պատկեր. զի ո՛չ են ի միմեանց ելեալ. և ո՛չ զնոյն *էութիւն* ունին: - 273. Իսկ նման, զի մի է երիցն *էութիւն* և բնութիւն. այնու նմա՛ն եմք աստուծոյ: - 273. Եւ զի ո՛չ է անեղ` յեղեալ է ի յոչնչէ *յէութիւն*: - 274. Որ էնն ո՛չ թէ *զէութիւնն* աստուծոյ յայտնէ: - 331. Երկրորդ` ընդ դէմ չէիցն է որք միայն անուանին, այլ *էութեամբ* ո՛չ են աստուածք. այլ նիւթ են եղական: - 332. Է՛ որ *զէութիւնն* փոխէ. որպէս մովսէս զգետն յարիւն դարձոյց և զգաւազանն յօձ. և այս կոչի սքանչելիք: - 335. Այսպէս և լայնքն, որ աճին իմաստիւք ի *յէութիւնս* իւրեանց: - 344. Չորրորդ` և բովանդակն **ե** կանգուն, ցուցանէ թէ ո՛չ են նոքա ի չորից տարերց. այլ **ե**երորդ *էութիւն* են. որպէս ասեն ոմանք. անմարմին անփոփոխ և անմահ. որ ո՛չ է տարրականացս: - 344. Նա՛խ` զի հինն ստուեր և օրինա՛կ էր. իսկ նորս *էութիւն* և ճշմարտութիւն: - 353. Այս է` ի միոյ բարի *էութենէն* աստուծոյ յառաջ գայ արարչական և արքունական զօրութիւն. իբր աջ և ահեակ ձեռն: - 403. Եւ յա՛յտ է յայսմանէ, զի հուր բորբոքեալ է ի բարկութենէ. ո՛չ *յէութենէ* և ո՛չ ի կամաց իմ, այլ ի բարկութենէ: - 408. Զի թէ աստուածայինքն ամենայն որք շուրջ զաստուծով` են անհպելիք. քանի՞ ևս անզննելի իւրն *էութեան* և եղելութեան աստուածն բանի: - 456. *էութիւն* առ *էութիւն*. ծառայ առ ծառայ. բանն առ բան: - 463. Զի կամ միաւորի *էութիւն* ընդ *էութիւն*. կամ պատահումն ընդ պատահման. կամ *էութիւն* ընդ պատահման: - 475. Զի *էութիւն* ընդ պատահման միշտ անշփոթ միաւորի. որպէս որակ և քանակ ի գոյացութեան. զի անմեկնելի որոշմունք են: - 475. Եւ այնք որ *էութիւն* ընդ *էութիւն* միաւորին` են որք շփոթմամբ միաւորին. որպէս ջուր ընդ գինի. և **դ** տարերք: - 475. Զի են որ միաւորեալքն *էութիւնք* են և շաղկապն պատահումն. որպէս երկուք ոմանք անջատեալք ի միմեանց` պատահմամբ սիրոյ շաղկապին: - 476. Եւ են որ *էութիւնք* են և *էութեամբ* շաղկապին. որպէս երկոքին նիւթք սոսընձով կամ երկաթով: - 476. Յասիցելոցս ո՛չ ոքն յարմարի միաւորութեան փրկչին. բայց միայն երրորդն առաջնոյն. այսինքն *էութիւն* առ *էութիւն* անշփոթ խառնումն. որպէս հոգւոյ և մարմնոյ. զոր և յառաջիկայդ ցուցցի: - 476. Եւ կամ աննիւթ ինչ և անկերպ` ընդ նիւթական կերպարանաց ձևացեալ. յորում իւրաքանչիւրոցն *էութիւնք* անշփոթաբար երևին. որպէս պղինձ գնդացեալ. կամ քուէացեալ: - 476. Հինգերորդ` զի հոգի միաւորեալ ընդ մարմնոյ` է՛ ի մարմնումն *էութեամբ* և ո՛չ այլ ուրեք թէ և մտօք բազումս տեսանէ: - 478. Իսկ բանն աստուած մարդացեալ` *էութեամբ* է առ հայր. պահպանութեամբ ի բոլոր էակքս. շնորհօք յամենայն սուրբս. և բնութեամբ ի մարմնի միաւորեալ: - 478. Այլ անապական մարմին յանապական կուսէ, ընդ անապական *էութեանն* աստուծոյ միաւորեալ: - 498. Զի անեղ *էութիւնն* աստուծոյ անկրակա՛ն է կամաւորի և ակամայի: - 502. Նոյնպէս և ծածուկ է աստուածային *էութիւնն* և անհաս յամենայն եղանակաց. միայն խնամօք երևի որոց կամի: - 517. Դարձեալ, հայր է քրիստոսի ըստ *էութեանն*. և աստուած վասն միաւորութեանն. զի հա՛յր միաւորեաց զբանն ի մարմնի...: - 518. Մի է բանն աստուծոյ անձնաւոր *էութիւն* և գոյացութիւն. որ էր ի ծոց հօր անմարմին. որով ամենայնքն ի լինելութիւն եկին: - 529. Նա՛խ` զի իցէ սկիզբն ամենայն մարմնոյն. և զի իցէ *յէութենէ* նորին: - 532. Զի՞նչ է *էութիւն* առաքելութեան: - 535. Արիստոտէլ **գ** սեռս զօրութեան ասէ հոգւոյն. այսինքն է մինն անհնազանդ բանին. և մինն հնազանդ. և մինն բան *էութեամբ*: - 572. Իսկ աստիճանք հաւատոյն որք են *յէութենէ* հաւատոյն, եթէ նկատեսցի առ այն որք արարին զհաւաքումն հաւատոյ, են երկոտասան աստիճանք ըստ թուոյ երկոտասան առաքելոցն: - 572. Գիտելի է, որպէս պատկեր աստուածութեանն կայանայ ի մի *էութիւն* և յերիս անձինս: - 577. Վեցերորդ` հաւատն է ի *յէութիւնն* աստուծոյ...: - 578. Եւ երկրորդ` զի մնասցէ ի վերին գաւառն ըստ *էութեանն* և ըստ գործոյն. իսկ այլ առաքինութիւնքն թէպէտ մնան ըստ *էութեանն*, այլ ո՛չ ըստ գործոյն: - 579. Ա՛րդ` **թ** երանութիւնք փրկչին զոր

քարոզեաց ի լերինն, **ը** են ըստ *էութեանն*. այլ է են ըստ աստիճանաց. - 583. Վասն այսորիկ ասեն վարդապետք թէ **ը** են երանութիւնքն ըստ *էութեանն*. այլ է միայն ըստ զանազանութեան աստիճանացն: - 586. Իսկ *զէութիւն* բանին որ է՛ յանուն Յօր և Որդւոյ և Յոգւոյն սրբոյ՝ ասելն մի՛անգամ պարտ է ասել և ո՛չ կրկնել տգիտաբար: - 588. Ասեմք թէ՝ յատկութիւն պատահմունք են. այլ խորհուրդն ի *յէութիւնն* է կացուցեալ որ մի է, և ո՛չ ի պատահմունքն որ բազումք են: - 596. Զի ասելն «ա՛յս է մարմին իմ» *զէութիւն* հացին կատարեաց: - 596. Եւ ասելն «ա՛յս է արիւն իմ» *զէութիւն* գինւոյն փոխարկեաց: - 596. Յրեշտակք առին *զէութիւնն* մշտնջենաւոր: - 639. Տասներորդ, **բ** են բանականաց տեսակ. մինս տարրական. և միւսն գերաշխարհիկ ի վերոյ քան զհինգերորդ *էութիւնս* երկնից...: - 654. Եւ **գ** փոփոխումն ունիմք. զի նախ յոչ է է ի *յէութիւն* գամք. - 681. ...և *յէութեանս* միշտ փոփոխիմք վասն կարօտութեան...: - 681. ...և յետոյ *յէութենէ* յոչ *էութիւն* փոփոխիմք մարմնով: - 681. Նա՛խ՝ զի բեհեզն է՛ անօսր. ցուցանէ զանօսր *էութիւն* և զմտածութիւն սրբոցն առանց թանձրութեան մարմնոյ: - 712. Այսպէս **դ** տարերք զչորեքին գործս մեր ընդ *էութեանս* ունին յաւանդի և յառաջ բերեն: - 714. Այլ բանն պօղոսի ո՛չ է այսպէս թէ մարմինն *էութեամբ* հոգի լինի. այլ նման հոգւոյ. զի անմահ լինի որպէս հոգի և անկարօտ կերակրոյ: - 720. Զի եթէ մազն որ է գեղեցկութիւն մարմնոյն յառնէ ըստ նորին տեառն թէ «ի գլխոյ ձերմէ մազ մի ո՛չ կորիցէ» քանի՞ առաւել ևս անդամք որ *յէութենէ* մարմնոյն են յարիցեն: - 725. Ասեն վարդապետք՝ եթէ են ինչ որ *էութեամբ* և պատահմամբ անցանեն. որպէս կենդանիք և տունկք և որ ինչ ի չորից տարերաց են գոյացեալք: - 727. Եւ են ինչ որ պատահմամբ անցանեն և *էութեամբ* մնան. որպէս երկնային մարմինք և **դ** տարերքս և մարդոյս մարմին. սոքա պատահմամբ անցանեն և գոյացութեամբ մնան: - 727. Դարձեալ՝ *էութիւնն* մնայ, այլ ներգործութիւնն պակասի՝ այսպէս. զի ջերմութիւն հրոյն և ցրտութիւն ջրոյն և փոփոխմունք օդոյդ որպէս ամպք և այլն, և սևութիւն երկրի...: - 728. Այն է ծալիլ և գալարիլ օդոյդ երկնի. և ո՛չ թէ հաստատութիւնն վերին *էութեամբ* ի բաց բառնի ըստ ոմանց: - 729. Երկրորդ՝ զի աստուած զամենայն արարածս կրէ բանիւ զօրութեան իւրոյ ասէ առաքեալն և ի նոյնութեան պահէ. և սոքա պահին առանց միաւորութեան *էութեան* նորա: - 733. Ապա ուրեմն ևս առաւել խաչն մնայ անապական զի *էութիւն* աստուծոյ է ի նմա. այսինքն բանն աստուած մարմնովն որ է՛ սևեռեալ ի նմա: - 733. Երկրորդ ի *յէութեանց* մերոց զի այլայլիմք: - 742. Նախ՝ զի անփոփոխ է յաւիտեանն. այլ և *էութիւն* մեր. այլ և վկայքն: - 742. Իսկ չար՝ թէպէտ լինի ներգործութեամբ անձնիշխան կամօք, այլ բնութեամբ չար ո՛չ է ըստ ինքեան. զի ո՛չ է *էութիւն* այլ պակասութիւն բարւոյ. որպէս ցուցաւ ի վերոյ ի ե համարն: - 758. Ոչ բաժանեալ կամ հատեալ ի հօրէ և ի հոգւոյն. որպէս ո՛չ ջերմութիւն ի հրոյ կամ ի լուսոյ. կամ նկարագիր *յէութենէ*: - 770. Եւ դարձեալ՝ զորօրինակ, լոյսն և ջերմութիւն են *էութիւն* նորին զուգասփիւռ. այլ երբեմն միոնն ծածուկ, և երբեմն երկոքին յայտնիք, և ընդ դէմ սորա: - 779. Զի է՛ բացասութիւն բացբարձօղ ամենայնի ուր և դիպեսցի. որպէս *զէութիւն* այսպէս զոչէութիւն: - 787. Յա՛յտ է զի ի բառնիլ ոչէին՝ *էութիւն* հաստատի բացասութեամբ կրկին. իսկ ստորասութեամբ նոյն մնայ: - 787

**ԷՊԱՏԻԿ** (յոթնապատիկ) - Նա՛խ՝ *էպատիկ*՝ զբազո՛ւմն նշանակէ. իբր թէ ըստ բազում մեղաց մերոց բազում և առաւել է պատուհասն: - 376. ...այլ ա՛յս է՝ զի իւրաքանչիւր մարմինք սրբոց պայծառասցին *էպատիկ* քան զարեգակն. որպէս տեառն մերոյ ի թաբօր լերինն. և **թ** դասուց հրեշտակաց լոյսն յերկիր ծաւալին. զի զօրութիւնք երկնից շարժեսցին: - 728

**ԷՐԷ (տ. ԵՐԷ) +** Յինգերորդ՝ բնակութիւնք եղջերուաց և մանր և մեծ *էրէոց*. ըստ այնմ «լերինք բարձունք են եղջերուաց և վէմք ապաւէնք նապաստակաց»: - 211

**ԷՕՐԵԱՅ** (7-օրյա) - Նոյնպէս և ի նորս պահեսցի *էօրեայ* սրբութիւն դաշտանի: - 369. Յինգերորդ, *է օրեայ* սրբութիւնք բորոտացն և կալ արտաքոյ բանակին՝ ի պիղծ մերձեցեալք: - 653

# Ը

**ԸՂՁԱԿԱՆ +** Նախ ասի ողջոյն *ըղձական* առողջութեան. ըստ այնմ «Ո՞ղջ լեր ա՛րքայ»: - 464. Երկրորդ՝ *ըղձական* շնորհաց. ըստ առաքելոյ «շնորհք ընդ ձեզ»: - 464. Երրորդ՝ *ըղձական* խնդրութեան. որպէս ի տուբիթն «խնդրութիւն քեզ»: - 464. Չորրորդ՝ *ըղձական* օրհութեան. որպէս ի հռութն ասէ «օրհնեսցէ՛ զքեզ տէր»: - 464. Նաև պատճառին. թէ խրատական է. թէ աւաղական. թէ սպառնական. թէ ողոքական. թէ *ըղձական*. և այլ այսպիսիք: - 643

**ԸՂՁԱՄ, ԸՂՁԱՆԱՄ +** Ուստի և նեղեալք՝ ի խնդիրս առ ի բարձունս զձեռս տարածել *ըղձան*: - 184. Որոց *ըղձանայր* դաւիթ, «երանի ում թողութիւն եղև մեղաց. և ծածկեցան ամենայն յանցանք նորա»: - 433

**ԸՄԲԻՇ +** Չորրորդ՝ զի մի՛ տկար ոք կարծիցի. այլ որպէս կողե՛ղ և հաստակող ասեմք *զըմբիշս*. այսպէս զօրեղ եղիցի կինն ի տնօրինել զտունն: - 276. զի օծանեմք զնոսա որպէս *զըմբիշս*. զի ի հանդէս մտցէ ընդ այսս չարութեան օդոյդ: - 605

**ԸՄԲՇԱՄԱՐՏ +** Երկրորդ՝ օծումն մարտական. որպէս *ըմբշամարտից*: - 474

**ԸՄԲՌՆԵԼԻՔ -** *Ըմբռնելիքն* ի վերին ծայրքն՝ է՛ յիշողականն ի մեզ: - 645. Ութերորդ, զի **գ** զգայութիւնքն հաստատ վկայք են. աչքն և ականջքն և *ըմբռնելիքն*: - 742

**ԸՄԲՌՆԵՄ +** Վասն այնորիկ ո՛չ երևի ճշմարիտ նոցա, զոր ո՛չ *ըմբռնէ* միտք. և ո՛չ այլ իրիք հաւատան, բայց միայն զայն՝ զոր իմանան: - 31. Արդ՝ զորօրինակ զգալի աչք մեր ո՛չ կարէ *ըմբռնել* զքանակութիւն արեգականն և այլ լուսաւորացն. այլ մտօք իմանամք զմեծութիւն նոցա: - 31. Քսանըերորդ՝ ասէ ալպերա վարդապետն ձեր թէ՝ «քրիստոս էր համանգամայն ճանապարհորդ և *ըմբռնօղ* ի կէտ յղութեանն իւրոյ»: - 100. Եւ *ըմբռնօղ*՝ զի բանական իմացմամբ մտաց զմայլեալ էր միաւորութեամբ աստուածային փառացն: - 100. Եւ այսու փառօք *ըմբռնէր* քրիստոս զամենայն հունաւորս ներգործութեամբ: - 100. Եւ օգոստինոս վարդապետ նոցա ասէ ի գիրս Երրորդութեանն, «*ըմբռնել* զաստուածային էութիւնն՝ պատկանի որդւոյն աստուծոյ ըստ բնութեանն. և որդւոյն մարդոյ՝ ըստ շնորհաց միաւորութեանն»: - 100. Եւ դարձեալ՝ քննութեամբ մտաց ո՛չ լինի հասեալ անհասանելին. այլ հաւատով լինի իմացեալ. և յուսով *ըմբռնեալ*. և սիրով միաւորեալ: - 101. Եւ այսպէս կարծեն յերկուց դիմաց *ըմբռնել* զմեզ: - 173. Ասէ զայս, զի բնութեամբ անբովանդակելի է. և ոչ տեղեաւ *ըմբռնի*. մինչ զի ինքն զամենայն տեղիս պարունակէ. յորում կեամք և շարժիմք և եմք: - 180. Որպէս կրիտէս թագաւորն կրէատացւոց կախեաց ի մէջ տաճարին անդամանդ քարեայ ամենայն ուստէք *ըմբռնեալ*: - 180. Զորօրինակ՝ **դ** մարդ երկու երկու ձեռօք զմիմեանս *ըմբռնեն*: - 181. Եւ զի ի միջին կիտէն իւր *ըմբռնի* անշարժ: - 211. Այլ այժմ վասն զգեստուց պահեմք զոչխարս. և վասն կերակրոյ զեզինս. և վասն բեռին զէշս. և վասն բառնալոյ զմեզ զձիս. և վասն զքշնամիս հալածելոյ զշունս. և վասն զթռչունս *ըմբռնելոյ* զբազէս. և զայլսն նմանապէս: - 217. Զի վարդապետք ասեն եթէ՝ կերակուր գազանաց այլ կենդանիք են. վասն որոյ խնամքն աստուծոյ ետ նոցա առաւել հնարս և զօրութիւնս, զի կարասցեն *ըմբռնել*. զայլ կենդանիս և մի՛ ի սովոյ մեռցին: - 218. Իմացումն է որ *ըմբռնէ* : - 248. Զթռչունս *ըմբռնել*. ի վերայ ծովու գնալ. դիւաց սաստել. ձեռօք առ այլս խօսիլ: - 275. Վեցերորդ՝ զի անկասկած լիցուք ի վատթար երկիւղէ. յորում երկիւղազգածք չարչարին *ըմբռնեալք* ի մեղս: - 281. Դարձեալ՝ բնականապէս *ըմբռնէ* գիտութիւնն զայն զոր ներգործէ բնութիւնն. իսկ գործն աստուածային՝ գիտութեամբ ո՛չ *ըմբռնի*. այլ հաւատո՛վք իմանի: - 292. Եւ ի վերայ տեառն ջահիւք և սուսերօք եկին *ըմբռնել* ըստ աւետարանին: - 306. Եւ գնդակն է քարոզութիւն նոցա որ *ըմբռնէ* զմերձաւորսն: - 317. Եւ այսու չորեքկին կապովս *ըմռնեմք* զաստուած անորոշապէս, ըստ այսմ, «ո՛ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն քրիստոսի. նեղութիւն թէ անձկութիւն» և այլն: - 317. Այն է, որ բովանդակ մարմինն այնպէս խոցոտեալ էր կեղով՝ և լուծեալ ի շարաւ և ի թարախ. որ ո՛չ կարէր յոտին կալ կամ սողալ ուրեք. և ո՛չ *ըմբռնիւր* յայլմէ: - 322-323. *Ըմբռնելն* յուսադրեաց զմովսէս յաղթել ցփարաւոնի և հանդարտել: - 332. Վեցերորդ՝ նշանակէ՛ զբանն աստուած գաւազան ուղղութեան և թագաւորութեան առ հայր. եկն նա՛ յերկիր և էառ զօձաձև բնութիւնս մեր. և դարձեալ *ըմբռնեալ* մարմնովն ել յերկինս և նստաւ ընդ աջմէ հօր: - 332. Զոր թէ ընկենու ոք, լինի երկրաքարշ մարդ և մեղաւոր. և մինչ զղջացեալ դարձեալ *ըմբռնէ* յետոյ, լինի պատճառ կանգնելոյ և փրկութեան: - 332. Իններորդ՝ խաւարն շօշափելի. կամ զի թանրացեալ *ըմբռնիւր* շօշափելով. կամ զի շօշափելով ձեռաց և գաւազանաւ կարէին շարժիլ: - 334. Եւ ի մէջ գիշերին յորում *ըմբռնեցաւ*, էհար զանդրանիկս դիւաց: - 337. Եւ սպառնալիքն աստուծոյ և մարդկան ո՛չ են նման. զի մարդոյս դատարկ բան է. իսկ սպառնալիքն աստուծոյ՝ է՛ բան զարհուրական. յորմէ լսօղքն զերծանին, և անլուրքն *ըմբռնին* ի նոյն: - 408. Քսանգ, նա՛ յազգէն յուդայ *ըմբռնեալ* և տուեալ յայլազգիս: - 423. Եւ տէր մեր ի նոյն այրին յազգէ

նոցին *ըմբռնեալ*. և ի զինաւորս պիղատոսի մատնեալ: - 423. Քառասուներորդ, սաւուղ բազում անգամ խնդրէր զդաւիթ և ո՛չ կարէր *ըմբռնել*. և որդիքն սաւուղայ զտէրն. զի ո՛չ էր հասեալ ժամ նորա: - 437. Եւ *ըմբռնեաց* զսեդեկիա արքա յուդայ, և փորեալ զաչսն տարաւ ի բաբիլօն: - 447. Եւ ո՛չ միայն ճանապարհորդ, այլ և *ըմբռնօղ* միշտ և յաւիտեան: - 470. Նախ անարգեցաւ ի պարտէզն զկնի արեան քրտանցն յորում մատնեցաւ ի յուդայէ. և իբրև աւազակ *ըմբռնեցաւ* և կապեցաւ: - 492. Որպէս մարմնական հուր զանմարմին հոգիսն և զդևսն տանջէ, նոյնպէս և տեղին *ըմբռնէ* : - 504. Չորրորդ՝ ի մէջ գիշերի *ըմբռնեցաւ* և կապեցաւ ի մահ. և ի մէջ գիշերի յարեաւ և արձակեցաւ ի մահու: - 512. Նոյնպէս ըստ օրինակին արար տէր մեր զատիկն յերեկոյի մեծի ե շաբաթին. և ի մէջ գիշերին յորում *ըմբռնեցաւ*՝ եհար զանդրանիկսն դիւաց: - 513. Ա՛րդ՝ ներքին այրն նշանակէ՛ զդժոխս. և արտաքինն զգերեզմանն. և սաւուղն զսատանայ որ *ըմբռնեալ* էր զմարդիկ: - 513. Երկրորդ այսպէս, զի յուրբաթի գիշերն *ըմբռնեցին* մինչև ցվեց ժամն որ խաւար եղև մինչև ցինն ժամն: - 516. Յուսովն *ըմբռնի*. և Սիրովն միաւորի աստուած: - 571. Ութերորդ՝ հաւատն տեսանէ. յոյսն *ըմբռնէ*. սէրն միաւորէ՛: - 578. Այլ և զձեռս ի հարկանել. *յըմբռնել*. և զոտս ի գնալ. համեստութիւնն ի նոսա ամենայնսն դնէ զեղանակն և զկարգն: - 581. Զի է՛ յոյս ակնունիլ ի հեռաւորն. և է՛ յոյս *ըմբռնել* ի մերձաւորն: - 695. Արդ՝ այս կենացս յոյս՝ ակն ունի ի հեռաւորն. և յետ մահու յոյս նոցա *ըմբռնէ* ի մերձաւորն: - 696. և այս բառնի ի հոգւոյն և լինի ամրութիւն և հաստատութիւն. զի զաստուած հաստատապէս *ըմբռնեմք* և բնաւ ո՛չ բաժանիմք ի նմանէ և ոչ մոռանամք: - 722. Չորրորդ պակասութիւն է՝ զի այժմ է՛ մարմին մեր թանձր և կոպիտ. այլ յայնժամ բառնի այս ի մարմնոյ և լինի անօսր և թափանցիկ. զոր ոչ պարիսպ կամ բանտ *ըմբռնել* կարիցէ: - 722. Քանզի մարմինս ո՛չ *ըմբռնեսցի* կամ իւրն ծանրութեամբ կամ այլ մարմնոյ ընդդիմահարութեամբ: - 766

**ԸՄՊԵԼԻ +** Հինգերորդ՝ զորօրինակ մեծատուն ոմն զոք ի ճաշ կոչիցէ, նախ պատրաստէ՛ զամենայն պէտս կերակրոց և *ըմպելեաց*. և ապա՛ մեծարէ՛ զկոչնականսն: - 230. Ի պատիւ մեծարեաց զմարդն. և նա՛խ՝ պատրաստեաց պէտս զանազան կերակրոց և *ըմպելեաց* որպէս ասացաք. և վառեաց զճրագ լուսաւորացն. և զգեղեցիկ ձայն երգեցողաց թռչնոց. և զզուարճութիւն զանազան ծաղկանց. և ապա՛ զմարդն ի պատիւ էած. ըստ այնմ «մարդ ի պատւի էր և ո՛չ իմացաւ»: - 230. Վեցերորդ՝ գետն նշանակէ՛ զբանն աստուած, որ հաղորդիլով ի մեզ՝ եղև մարմին և արիւն. և ետ մեզ *ըմպելի* զարիւն իւր սուրբ. և կերակուր զմարմինն: - 333. Տասներորդ՝ ի յարութեանն ո՛չ է մարմնական կերակուր և *ըմպելի*. այլ բանն աստուծոյ է կերակուր. որպէս այժմ հրեշտակաց յերկինս: - 397. Զագահութիւնն՝ բազմաբաշխութիւնն. որ ետ զմարմին իւր ի կերակուր և զարիւնն իւր *ըմպելի*. զհոգին ի գին. զջուր կողին ի լուացումն. զհանդերձն՝ խաչողացն. զմարմինն՝ աշակերտացն. և զմայրն՝ յոհաննու: - 489. *Ըմպելեաւ*, յորժամ ճաշակեաց քացախ ընդ լեղի: - 491. Նոյնպէս և զորկրամոլութիւնն յաւելու միտքն հնարելով զանազան կերակուրս և *ըմպելիս*: - 564. Զի միապէս միաւորին արտաքս և ի ներքս. զի ամենայն կերակուր և *ըմպելի* ի ներքս միաւորի: - 598. Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է և արիւն իմ ճշմարիտ *ըմպելի*: - 600. Թէ կրօնաւոր է՝ հարցանէ թէ ծոյլ եղեա՞լ է յաղօթքն. կամ անհնազանդ. թէ բղջախոհ. թէ յատուկ իրք ունօղ. թէ պճնօղ. թէ որոնօղ լաւ կերակրոց և *ըմպելեաց*. թէ քնափ և թէ կռւօղ: - 601. Վեցերորդ, ընդ կերակուր և *ըմպելիս* մեր՝ դնէ որ թշնամի է մեր բազում վնասս խառնէ...: - 654. Չորրորդն, զի բազում աշխատօղք գոն կերակրոցն և *ըմպելեացն*...: - 655. Զի՞նչ է յորժամ գինի ըմպեմք, օրհնեմք և շնորհակալեմք միմեանց. և յայլ կերակուրս և *ըմպելիս* ո՛չ առնեմք նոյնպէս: - 655. Վասն որոյ *ըմպելի* եղև քրիստոնէիցս և օրհնութեան բաժակ: - 655. ...ուր արդարք և մեղաւորք ի միասին բնակին կարօտ կերակրոց և *ըմպելեաց*: - 682

**ԸՄՊԵՄ + Որպէս յիմար հիւանդն ասիցէ, կամիմ ուտել և *ըմպել* զհաճոյսն իմ. եթէ առողջանալո՛յ եմ՝ առողջացայց. և եթէ մեռանելո՛յ՝ մեռայց**: - 18-19. Չորրորդ՝ զթոյնսն լուանայ և ապա՛ ջուր *ըմպէ* : - 218. Ծառք դրախտին ո՞րպէս *ըմպեն* ջուր, թէ անապականք են: - 224. Նոյնպէս և տունկք դրախտին *ըմպեն* զջուր գետոյն որ ոռոգանէ՛ զդրախտն: - 225. Իսկ թագաւորք յամենայն ամի զնոյն առնեն ուրախութիւն. ուտել և *ըմպել* և հեշտութիւն մարմնոյ. որպէս փարաւօն առնէր և հերովդէս: - 321. Երևի թէ ո՛չ. զի յուտել և *ըմպել* մեռան որ է մեղք: - 322. Հինգերորդ՝ նշանակէ թէ զարիւն տղայոցն չէ մոռացեալ աստուած զոր հեղձուցին ի գետն. զայն *ըմպել* տայ նոցա: - 333. Որ ի ջուր *ըմպելն* ընտրեաց զզօրսն. և թաքուցեալ սափորօք զվառեալ լապտերսն, և էհար յ արամբք ըզճի հազարսն: - 420. Չորրորդ՝ զի ուտելով և *ըմպելով* անփոյթ առնէին զուխտաւորս ի հեռուստ եկեալ քառասնօրեայ մանկամբ և այլ ուխտիւ. և յանձրև և յարև և ի ցուրտ վաստակէին: - 425. Եւ հաց ոչ ուտել և ջուր ոչ *ըմպել*. զի անընդունելի՛ էր մարմին և արիւն զոհիցն: - 442-443. Զորկրամոլութիւնն՝ *ըմպելովն* զքացախն և զլեղին: - 489. Երրորդ՝ զի չունէին պատճառս հայհոյութեան հոգւոյն որպէս զորդոյ. զի տեսանէին մարմին զգեցեալ, ուտել և *ըմպել*, տքնիլ և ննջել: - 566.

**Որկրամոլութիւն է անսահման բաղձանք ուտելոյ և *ըմպելոյ*:** - 570. Եւ ի չորրորդ գիրքն ի ի համարն ասէ, ետ զմարմինն ի կերակուր. զարիւնն *ըմպել*. զհոգին ի գին. զջուրն կողին ի լւացումն: - 594. Եւ թէ ոք ասիցէ, առանց ջրոյ գինի ո՛չ *ըմպեն* յերուսաղէմ: - 596. ...**որ ո՛չ ուտէ զմարմին իմ և ո՛չ *ըմպէ* զարիւն իմ, ո՛չ ունի կեանս: - 600. Որ ուտէ զմարմին իմ և *ըմպէ* զարիւն իմ, նա յիս բնակեսցէ և ես ի նմա**: - 600. Որ և հարցանէր որդւոցն զեբեթեայ թէ՝ կարո՞ղ էք *ըմպել* զբաժակն. այլ ո՛չ թէ միայն նոցա ետ և յայլ առաքելոցն արգել: - 600. Որք զծորանս հոգւոյն *արբին* և ի ժամանակս ժամանակս երգեցին եղանակաւ զերգս շարականաց՝ այսոքիկ են: - 637. Զի՞նչ է յորժամ գինի *ըմպեմք*, օրհնեմք և շնորհակալեմք միմեանց. և յայլ կերակուրս և ըմպելիս ո՛չ առնեմք նոյնպէս: - 655. Եւ յորժամ *ըմպեմք*, զնոյն օրհնութիւնն քրիստոսի յիշատակեմք: - 655-656. Նա՛խ՝ զի բաժանիցուք յայնցանէ որք զգինի մեղաց *ըմպեն*. և վասն մեղաց արբենան և շռայլին: - 656. Զի՞նչ է որ *յըմպելն* զգինին՝ թափեն յանուն մեռելին: - 656. ... որ ամենայնիւ ընդ դէմն փոխի ուտելն և *ըմպելն* ի ծոմ և ի ծարաւ. ծաղրն ի սուգ. հեշտութիւնն ի տքնութիւն. և ի չարչարանս և այլն: - 657

**ԸՄՊՈՒՄՆ** - Դարձեալ *ըմպումն* մահադեղին միում րոպէի՝ ածէ՛ զմահ յաւիտենական: - 744

**ԸՆԴ +** Եւ զի մարդոյ ճանաչումն է՛ այժմ *ընդ* լինիլ իրին. այլ աստուած ճանաչէ՛ յաւիտենից և յառաջ քան զլինիլ իրին: - 20. Չորրորդ՝ դարձեալ թէ լինէին երկու սկիզբն և հակառակ, մարտնչէին *ընդ* միմեանս՝ և *ընդ* սկսեալս իւրեանց. և ոչ ինչ մնայր ի խաղաղութեան: - 21. Ասեմք զառաջինն թէ ո՛չէ է չար. զի ապականիչ և կորուսիչ է որպէս ցուցաւ. ա՛րդ՝ *ընդ* ապականել զայլսն՝ ապականէ և զինքն. և ո՛չ մնայ ի յէութեան: - 22. Եւ է չար՝ որ խա՛ռն է *ընդ* բարւոյ. և ի յէութեան գոյանայ. որպէս հիւանդութիւնն ի յողջութեան. ապականությիւնն ի մարմնի: - 22. Վասն այն կամեցաւ աստուած զի ի տեսանելն զնա՝ անի բաց դնելի սիրով միացուք *ընդ* նմա: - 24. Որք զաչս իմաստից յիմանալի ճառագայթիցն խուսափեցին թիւր կամօք, և խոտոր մտօք. զանուղղայս խորհելով, և զանպատշաճս բարբառելով. յարձակեալ անկապ լեզւաւ և անդուռն շրթամբք բացեալ յերկինս. ցոպ բերանով ի բարձունս բարբանջելով. և յածեալ *ընդ* երկրաւ լեզուագարելով. որոց դատաստանն ի բնէ ո՛չ դատարկանայ. և կորուստն ո՛չ նիրհեսցէ: - 31. Ուստի հեշտութիւն և աւանդութիւն յիրաւի խառնեալ *ընդ* միմեանս, և հակառակասիրութիւն և ինքնահաճութիւն յառաջ եկեալ, որով զինեալ պնդին ընդդէմ ուղղութեան. զի կարծեն զինքեանս ճշմարիտ գոլ քան զայլսն: - 33. Երկոտասաներորդ՝ այլ և ուրա՛խ լինին *ընդ* խոտորումն չարութեան. որպէս ասէ առակն: - 33. Իսկ սոքա և զիրեշտակս *ընդ* մեզ դասեն. որպէս յայտ է ի գիրս պարապմանցն Կիւրեղի: - 34. *Ընդ* կարգաւորս շնալ կանանց՝ սրբութիւն նոցա համբաւեն: - 34. Վեցերորդ՝ հակառակէ քրիստոսի՝ և քրիստոնէից. և սոքա հակառակին սուրբ եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ. և զոր բանն աստուած առեալ զմարդկայինս բնութիւն միաւորեաց *ընդ* իւրում աստուածութեանն՝ սոքա ընդդէմ նմին որոշեն զբանն ի մարմնոյն. զի մի՛ իցէ աստուած մարդացեալ ըստ նոցա՝ և մարմինն աստուած. և պատճառս հայթայթելով պատրեն զմարդիկ: - 35. Նոյնպէս և վասն սոցա յառաջագոյն ասացաւ յառաքելոց և ի վարդապետաց. զի մի՛ յանգէտս խոտորեսցին *ընդ* նոսա: - 35. Վասն որոյ և մեք համաձայն գոլով ուղղափառաց հարցն սրբոց՝ դիցուք սուղ ինչ յառարկութեանց նոցա, և *ընդ* նմին զպատասխանիս: - 35. Այլ որքան հայրն հայր. նոյնքան և որդին *ընդ* նմա որդի: - 37. Իսկ թէ յո՛չ ումեքէ, կարգեցեր զնա *ընդ* յոչ էից գոյացելոց: - 37. Թէ ոչ՝ Զի թէ մերձ էիր դու քեզ որպէս ոք առ ոք, բաժանեցար *ընդ* երկու. և զիա՞րդ մի իցես: - 37. Ով արիանոսք՝ զի թէ որպէս զմեզ զորդի շնորհօք ասէք և արարած, մեք զի եմք շնորհօք որդիք՝ ունիմք *ընդ* մեզ և *ընդ* հայր շաղկապ. իբր թէ զլար զհոգին սուրբ: - 39. Այսք և այլ սոյնպիսիք՝ հաւասարութեան են ցոյցք *ընդ* հօր: - 39. Դարձեալ քննեսցուք ըստ մեզ. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ հայր մեծ է քան զորդի. զի երկոքին նոյն ինքն աստուածութեանն իմանին. ըստ այնմ որ զմեր նուաստ և տկար բնութիւնս միացոյց *ընդ* իւրում աստուածութեանն, և անտեսանելին տեսանիւր՝ և ծառայի կերպիւ շրջէր վասն տնօրէնութեան՝ ասի փոքր յայս միաւորութեանս քան զհայր. իսկ ըստ այնմ որ է՛ անճառ և նախքան զյաւիտեանս ծնունդ ի հօրէ՛, հաւասա՛ր է հօր և ոչ փոքր: - 40. Այլ նա *ընդ* ամենայն է քրիստոս զօրութեամբ և էութեամբ թափանցեալ է. և ո՛չ է տեղի թափուր ի նմանէ...: - 40. Այլ զի խոնարհեցաւ ի բարձրութենէ փառացն և *ընդ* նուաստ բնութեան մերում միաւորեցաւ. ա՛յս է որ առաքեալ ասի: - 40. Իսկ յորժամ ամէն լեզու խոստովան լիցի տէր զյիսուս քրիստոս, անզրաւապէս թագաւորէ՛ *ընդ* հօր և տնտեսութեամբն: - 42. Բայց է և այլ իմն տեսութիւն խորին և գեղեցիկ. զի նա՛ վասն սրբութեան չարչարեցաւ. և որ ոք ևս չարչարեսցի վասն սրբութեան՝ մի և նոյն է դիտաւորութիւն երկուցն. յայնժամ օգնեսցէ նմա. այսինքն միաւորեսցի *ընդ* նա՛ սրբութեամբն, և եղիցի աստուած ամենայն յամենայնի. այսինքն կատարեսցէ զնա աստուածս առնելովն. և եղիցին աստուածք ամենայնքն: - 43. Եւ ինքն աստուած ի վերայ ամենայնին՝ միաւորութեամբ գլխոյն *ընդ* անդամոցն: - 43. Այս օտարութիւն անուանցս լծակցեալ *ընդ* միմեանս՝ առնէ

զմոլորութիւն հերձուածողացն: - 43. Եւ որպէս ո՛չ ոմն նուազ զօրութեամբ *ընդ* առաւելն մրցի. այլ *ընդ* համացեղսն: - 44. Որպէս յովաբ ո՛չ *ընդ* դաւթի՝ այլ *ընդ* աբիսողո՛մ մարտեաւ: - 44. Երրորդ՝ ըստ ո՛չ պատշաճի. որպէս ո՛չ կարեն պահել որդիք առագաստի մինչ *ընդ* նոսա իցէ փեսայն որ է քրիստոս: - 44. Հինգերորդ՝ որ բնութեամբ անկարելի է. որպէս ծնեալն կրկին ծնանիլ. և *յուղոտ ընդ* ասեղ անցանել: - 44. Ասեմք զայս ըստ մարդկութեանն. զի ո՛չ ունէր բնութիւնս մեր. այլ յորժամ միացաւ *ընդ* բանին և եղև որպէս առօղն և առեալն իշխան և տէր ամենեցուն: - 46. Այլ այս առաւել զմիականութիւնն *ընդ* հօր և որդւոյ ցուցանէ. զի ասէ՝ ո՛չ իմ կամք այլ որիշ զի առնեմ, այլ զա՛յդ կամքդ առնեմ զի հասարա՛կ է: - 46. Այլ ա՛յս է լուծումն, զի յորժամ լսես թէ մի է աստուած, *զընդ* աստուած ասելոյն՝ զերրորդութիւնն իմացիր. զի ո՛չ է առանձին, այլ հասարա՛կ է աստուածութիւնն: - 47. Եւ դարձեալ՝ զի այժմ ասէ զհայր ճշմարիտ աստուած, և զոր առաքեցեր, *նն շաղկա՛պ է.* ցուցանէ՛ շաղկապ գրովն և զիւր աստուածութիւնն *ընդ* հօր: - 47. Եւ դու *ընդ* է՛ր ասես լինել ինձ ըստ մարդկան երկրորդաբար բարի. զի աստուածութեամբս եմ *ընդ* հօր ծայրագոյն բարի: - 47. Չորրորդ՝ զի *ընդ* գազանսն պատերազմի: - 49. Եւ այլք աստուած խոստովանին. որպէս և մերս դաւանութիւն՝ *ընդ* հօր և *ընդ* որդւոյ: - 51. Եւ *ընդ* անւանցն զշնորհին յարմարեն: - 51. Այլ մեր բանս ո՛չ է *ընդ* այլսն ամենայն, այլ որք զօրութիւն և արարած ասեն գոլ զհոգին: - 51. Իսկ յորժամ զյայլումն լսեն՝ արձակին ի վերայ մեր ասելով, եթէ յայլո՛ւմ է՝ պատահումն է ի հայր որպէս զօրութիւնս առ մեզ. իսկ եթէ զօրացեալ է՝ և *ընդ* զօրանալն դադարեսցէ ամենայնիւ. շարժումն եղիցի և ոչ շարժօղ: - 52. Ապա թէ ո՛չ՝ ընդէ՞ր զանմարմինն *ընդ* մարմնականացս իմանաս, և *ընդ* մեռեալս զկենդանին խնդրես ըստ եսայեայ: - 53. Եւ ապա՛ զադամ, զի ունի զսէք ծնունդ՝ և զևա ո՛չ ծնունդ. այլ հատումն ի նոյն բնութենէ. և *ընդ* միով սահմանաւ գոլ ծնողին և հատմանն և ծնիցելոյն: - 53. Զի որպէս էր հօր ծանօթութիւնն ի նախահարսն, և որդոյն *ընդ* աղօտ, այլ ի մարմնանալն իւր յայտնեցաւ: - 55. Նոյնպէս և առաքումն հոգւոյն ո՛չ նըւազութիւն ցուցանէ, այլ զհամականութիւն *ընդ* հօր և *ընդ* որդւոյ: - 60. Ապա ուրեմն հոգին սուրբ է հաւասար աստուած *ընդ* հօր և *ընդ* որդւոյ. արարչակից և մշտնջենաւորակից և փառակից: - 60. Նաև ի կանոն երից սուրբ ժողովոցն՝ *ընդ* բանիւ արգելեալք կան նոքա՝ որ ա՛յլ կերպիւ քարոզեն և այլ կերպիւ ուսուցանեն քան զոր նոքա ուսուցանեն: - 64. Չորրորդ՝ խօսքն նոյն է բնութեամբ *ընդ* բանին և մտացն. և հոգին սուրբ նոյն է բնութեամբ *ընդ* հօր և որդւոյ: - 66. Եօթներորդ՝ զի թէ մեք որպէս և եմք *ընդ* լծով ծառայութեան՝ այսպէս և նա՛...: - 67. Հնգէտասաներորդ՝ համաբարձաւ և նստաւ *ընդ* աջմէ հօր: - 67. Ա՛րդ եթէ է՛ այլ որդի և եղև աթոռակից հօր, ուրեմն ի բաց էհան զբանն ի նստելոյն *ընդ* աջմէ հօր որ է սեփհական նմա և վայելուչ հօր՝ լինիլ աթոռակից և գահակից: - 67. Վեշտասաներորդ՝ մանաւանդ զի յոյժ անվայելուչ է կարգել զծառայն *ընդ* տեառն՝ և զստեղծուածն *ընդ* ստեղծողին՝ յորժամ ա՛յլ է բնութեամբ: - 67. Իսկ թէ մարդկութեանն միայն, անկա՛ր *ընդ* մարդապաշտ հայհոյութեամբ. և փոխանակ արարչի՝ արարածո՛յ երկրպագեցեր ընդդէմ աստուածային օրինացն: - 68. Զի թէ ասես զառ ի յաստուծոյ հօրէ բանն, ահա կարգեցեր զնա *ընդ* եղեալքս կարօտ սրբութեան և շնորհօք որդիութեան: - 69. Զի թէ միայն յաստուծոյն, արկանես զանմահ բնութիւնն *ընդ* մահուամբ...: - 69. Նմանապէս ասա՛ և զայս. զբնութեա՞մբն որդի ասես *ընդ* աջմէ մեծութեանն նստեալ, թէ որ շնորհօքն որդիացեալ ըստ քեզ: - 70. Զի թէ զբնութեամբն ասես, ստեա՛ց ուրեմն առաքեալն և աւետարանն. որք զքրիստոս ասեն յարուցեալ և համբարձեալ և նեստեալ *ընդ* աջմէ հօր: - 70. Զի եթէ ըստ ինքեան բանին, ահա՛ կարգեցեր զանմահն *ընդ* մահւան: - 70. Ուստի *ընդ* հաւատացեալս է մինչ ի կատարած աշխարհի: - 71. Վեշտասաներորդ՝ աստուծոյ միա՛յն է *ընդ* կամելոյն և կարելն...: - 72. Ապա ուրեմն երևեալն մարմնով և խօսեցեալն է որդի աստուծոյ և մի *ընդ* հօր: - 73. Ապա ուրեմն և մարմինն այն յատուկ է մարմին բանին աստուծոյ. և այս ո՛չ կարէ լինիլ՝ եթէ ո՛չ լիցի միաւորեալ *ընդ* նմին: - 73. Ապա ուրեմն և ո՛չ էր յարութիւն և ո՛չ կենաց տըւօղ, եթէ ո՛չ էր միաւորեալ *ընդ* կեանքն յաւիտենական: - 74. Որպէս մի էութիւն է խնծորն. և ունի երեք յատկութիւնս որակաց. զհամն, և զհոտն, և զգոյնն *ընդ* ձևոյն: - 74. Զի աչք զգայ զգոյնն *ընդ* ձեւոյն. և ո՛չ զհամն և զհոտն: - 75. Երկրորդ՝ զի մի՛ չարչարեալ լիցի աստուածային բնութիւնն *ընդ* մարդկութեանն: - 76. Առաջնոյն ասեմք. թէպէտ բանն աստուած բնութեամբ միաւորեսցի *ընդ* մարդկութեանն, ո՛չ կրէ շփոթումն և կամ խառնակումն ինչ: - 76. Զի անմարմին է՝ և միաւորի *ընդ* մարմնոյ. որպէս հոգի և մարմին բնութեամբ միաւորին և ո՛չ շփոթին: - 76. Որև *ընդ* չարչարիլն քրիստոսի՝ չարչարեցաւ և մեռաւ բոլոր մարդկութիւնս ըստ նոցա: - 76. Ո՛չ յեղմամբ կամ շփոթմամբ. այլ անշփոթ միաւորութեամբ զբանն մարմին եղեալ և միաւորեալ զբնութիւնս մեր կատարելապէս *ընդ* իւրում աստուածութեանն: - 76. Երկրորդ՝ զի անեղի *ընդ* եղելոյ է միաւորութիւնն: - 77. Իսկ թէ ո՛չ, այլ պարզաբար աստուածածին խոստովանիս *ընդ* մեզ, ապա՛ և զծնեալն ի նմանէ խոստովանեա՛ աստուած մարմնացեալ և մարդացեալ: - 79. Իսկ միւսն մա՛րդ էր բնութեամբ յարարեալ և ստեղծեալ բնութենէ. և խառնելով *ընդ*

բանին` եղև առեալն որպէս առօղն զո՛ջ և հաւասար աստուած...: - 79. Իսկ սուրբն կիւրեղ ընդ դէմ նեստորի զինէր. որ ասէր բնակութեամբ զբանն ի մարմնի. և նախ զմարդն ծնեալ ի կուսէն և շրջեալ ի յերկրի, և յետոյ բնակեալ բանն աստուած յետ մկրտութեանն. և յետ յարութեանն փառաւորեաց զնա և զօրացոյց յարակցութեամբ *ընդ* ինքեան: - 79. Եւ հաստատեալ այսու եթէ` հոգին և մարմինն է միաւորեալ *ընդ* բանին աստուծոյ, կարգէ՛ և զայն. բայց որդիք ասէ ո՛չ բ. և ո՛չ աստուածք. զայս վասն դիմաց միաւորութեանն ասէ: - 80. Եւ ապա ի բարձր հանէ վարդապետութիւն զբնութեանցն միաւորութիւն. ասէ` այլ և այլ յորոց փրկիչն. եթէ ոչ` նո՛յն է երևելին և աներևոյթն. անժամանակն և *ընդ* ժամանակաւն: - 80. Զի՞նչ է ասելն աստուածաբանին, այլ և այլ *ընդ* նմին Երրորդութեանն ունի. քանզի` անդ այլ ոմն է և այլ. զի մի՛ զդէմսն խառնակիցեմք: - 80. Ասեմք եթէ` յորժամ մի ասեմք բնութիւն բանին և մարմնոյն, այս լինի կամ արիոսին. որ զբանն արարած ասէ և զմարմինն արարած. և այսպէս մի բնութիւն է արարածոյն ասէ. և զբանն *ընդ* մարմնոյն չարչարելի և մահկանացու: - 81. Դարձեալ` մի բնութիւն ասաց միւս եւտիքէս. ոչինչ առեալ մարմին ի կուսէն. այլ իբր *ընդ* խողովակ անցեալ իբր ի դարիճակի. միայն զձևն ի նմանէ ձևագրեալ: - 81-82. Ո՛չ զմասն ինչ առեալ զմարդոյ. այլ զբոլոր բնութիւնն ժողովեալ անհատ մարդկութեամբն. զհոգի բանական` և զմիտս` և զմարմինս մեր` միաւորեաց *ընդ* իւրում աստուածութեանն անշփոթ և անորոշ միութեամբ: - 83. Բանն աստուած իւրով կատարելութեամբն էառ զմարդկայինս բնութիւն. զհոգի և զմարմին և զմիտս. և միաւորեալ *ընդ* իւրում աստուածութեանն` եղև մի անձն կատարեալ և մի դէմ: - 84. Եւ չորրորդ` զի ամենայն իր բնութեամբ իւրով միանայ և ո՛չ արտաքոյ բնութեան. որպէս հուր *ընդ* երկաթ` և հոգի *ընդ* մարմին միաւորի: - 85. Որպէս միաւորեալ ասեմք զբնութիւն մարդոյն *ընդ* էութեանն աստուծոյ, այսպէս միաւորեալ և մի է կամք բանին մարդացելոյ: - 85. Արդ եթէ էութիւն է անձն, և *ընդ* անձինն մի ասեն զմարդկային բնութիւնն, մի է և *ընդ* էութեանն. և թէ մի է *ընդ* էութեանն. որպէս ճշմարիտ միութիւն, մի ասա և բնութիւն. զի էութիւն և բնութիւն մի են: - 86. Ապա և բաժանակա՛ն է *ընդ* մարդկային բնութեանն` և ո՛չ է միաւորեալ *ընդ* օտար տարբերեալ բնութիւն. և եղեր նեստորեան. **բ** անձն և **բ** բնութիւն յատուկ ասելով քրիստոսի: - 86. Իսկ եթէ զաստուածային անձն ասէք քրիստոս, որ է օծեալ. ահա *ընդ* օծեալս փոխադրեցիք: - 89. Եւ *ընդ* անօրէնս համարեցաւ. որ առաւել նախատանաց էր: - 94. Իսկ առաւել բարձրութիւնն. զի որպէս անհամեմա՛տ է խոնարհութիւն` աստուծոյ մարդանալ և չարչարիլ. և անզուգական բարձրութիւն է մարդոյս բնութեան *ընդ* աջմէ աստուծոյ նստիլ և հաւասարիլ: - 94. Զի թէ գոյացութիւն` և միաւորեալ է *ընդ* գոյացութիւն բանին, զիա՞րդ ո՛չ գիտէ զաստուածութիւն իւր: - 95. Ա՛րդ` եթէ տգէ՛տ է որդին աստուծոյ հօր, և տգէտ որդւով խօսեցաւ *ընդ* մեզ. տգիտութեան եղիցի և օրէնքս նոր քան զհինն: - 96. Որ ասես սոսկ մարդ գոլ զքրիստոս. և տգէտ և տկար. և ապականացու մարմին. և անկեալ *ընդ* կարեօք մարդկան: - 98. Երեսներորդ` զի վարդապետք սուրբք օրինակ տան մարդեղութեանն քրիստոսի, որպէս լոյս *ընդ* օդ` և հուր *ընդ* երկաթ միաւորեալ: - 100. Այսպէս մարմինն քրիստոսի միաւորեալ *ընդ* բանն աստուած` ունի զկարողութիւն և զաստուածութիւն բանին...: - 100. Եւ թէ` բանս մեր միաւորեալ է *ընդ* ձայնի: - 102. Երկրորդ` զի տեսութիւն մտաց հասարակի *ընդ* գոյութեան էութեան. և ուր եզերի բնութիւն` անդ և մտաւորութիւն: - 103. Նախ` զի բանն աստուած էառ զմարդկայինս բնութիւն և միաւորեաց *ընդ* աստուածութեան իւրում. ո՛չ մասն առեալ` կամ ըստ մասին միաւորեալ. այլ բոլորն *ընդ* բոլորին...: - 106-107. Հինգերորդ` զի **գ** թիւն բաժանին ի միմեանց. զի յորժամ բաժանես զմի թիւն` ո՛չ է երկուքն *ընդ* նմա: - 108. Վասն է՞ր յորժամ փառս տամք, նախ` հօր, *ընդ* նմին որդոյ, և ապա հոգւոյն: - 109. Ա՛րդ` զի հայր պատճա՛ռ է որդւոյ ծննդեան` և հոգւոյ բղխման, վասն որոյ հայր նախադասի. իսկ *ընդ* նմա որդի. ո՛չ որպէս ոմանք կարծեն որդի պատճառ է հոգւոյ բղխման, այլ **գ** է ուղիղ տեսութիւնն: - 109. Եւ ի միոյ աստուծոյ եղեն **ժ** դասք հրեշտակաց *ընդ* մարդկան. և հարիւր գունդքն ըստ ոչխարաց առակին. և **ռ** կենդանեաց տեսակքն որ յերկրի. և բիւր անկենդան բուսոց. և անթիւ գոյեղէնք: - 109. Իններորդ` մինն յայտնի է ի տասն և ի հարիւրն և ի հազարն և ի բիւրն *ընդ* աղօտ և ծածուկ: - 109. Երկոտասաներորդ` զի *ընդ* բազումս բազմանայ, և ի միութեան իւրում կայ և մնայ ըստ միոյն օրինակի: - 110. Երրորդ` թիւն *ընդ* գիտութեամբ մեր է. իսկ աստուած *ընդ* գիտութեամբ մեր ո՛չ պարունակի որպէս ասացաք. ապա ուրեմն ի վեր է քան զմի և զմիակ: - 110. Ոմանք զայս *ընդ* նիւթն շարադասեն: - 111. Այլ արդ` որդի և հոգի ըստ որում ի պատճառէն` սկիզբն ունին զհայր. և ըստ որում` նախ քան զյաւիտեանս` անսկիզբն են *ընդ* հօր: - 114. Այլ` անժամանակ է. զի ո՛չ է *ընդ* ժամանակաւ. այլ` *ընդ* յաւիտենիւ. և ժամանակն ի յաւիտեանն պարագրի: - 114. Իսկ հոգի մեր` և հրեշտակք` ասին յաւիտենականք. զի ո՛չ են *ընդ* ժամանակաւ. այլ *ընդ* յաւիտենիւ: - 114. Եւ զի ժամանակն *ընդ* թըւոյն է շարազուգեալ: - 115. Վասն որոյ *ընդ* կորուստ այսպիսի մասանց` և գիտութիւն մտաց մեր կորնչի: - 117. Երրորդ` զի բանս մեր ձայնիւ յամենայն լսելիս անցանէ և թղթով յամենայն տեղիս

ընթանայ. և բանն աստուծոյ սո՛ւր է և հատու և *ընդ* ամենայն է քրիստոս անցանէ թափանցաբար: - 121. Նոյնպէս՝ հաւատն միաւորէ զճշմարտութիւնն *ընդ* հաւատացողն: - 121. Չորրորդ՝ բանական քննութիւն զճշմարիտն *ընդ* մտա՛ցն քարշէ. իսկ հաւատոյն՝ միտք *ընդ* ճշմարտութեանն հետևի: - 122. Նախ՝ զի դեղին լոյսն ծնանայ *ընդ* երթս կամ *ընդ* լուսանցս մտեալ, իսկ սպիտակն ոչ: - 125. Զի *ընդ* ժամանակաւ եմուտ և զստւեր օրինացն կատարեաց: - 125. Եօթներորդ՝ ջերմութիւնն *ընդ* դեղին լուսո՛յն է: - 125. Ութերորդ՝ սպիտակ լոյսն առաւել թափանցիկ է. որպէս *ընդ* ամպս և յայլ նիւթս: - 125. Յիհգերորդ՝ զի յարևելից *ընդ* հարաւ խոնարհի յարևմուտս՝ և պատէ՛ հիւսիս, և դարձեալ ելանէ յարևելս: - 126. Եւ տէրն զիհն կտակն որ խստութիւն էր և սպանօղ՝ *ընդ* նորոյս խառնելով. որ հոգւով է և կեցուցանօղ: - 126. Զի՞նչ է պատճառ՝ որ արտաբերեալ բանս մեր միաւորեալ է *ընդ* ձայնի. և բացակայքն զձայնն լսեն՝ և զբանն ո՛չ: - 131. Երրորդ՝ բացակացեալն *ընդ* աղօտ լսէ ո՛չ զձայն բերանոյն, այլ զձայն բախման օդոյն. որպէս արձագանչումն յինքն նկարէ զձայնն և ո՛չ զբանն: - 131. Նմանապէս և ի միջին կարգ քահանայապետութեանն՝ առաջին է տէրութիւնքն. և ապա զօրութիւնք. և *ընդ* նմին իշխանութիւնք: - 135. Տասներորդ՝ յատուկ առանձնապէս տպաւորութիւնք խորհրդական. որպէս քերօբէքն բազմաչեայք և *ընդ* թևեանք. և սերօբէքն սրբաբան՝ *ընդ* աթոռոցն քառակերպեան: - 138. Երկրորդ՝ հոգին միաւորի *ընդ* մարմնոյն. և հրեշտակն ո՛չ: - 140. Երկրորդ՝ հրեշտակն պարզապէս իմանայ. և հոգին շարախառնի *ընդ* իրին: - 141. Ա՛րդ՝ ներքնագոյն սիրովն խնամէ աստուած զարարածս. և առաջին դասք հրեշտակաց զվերջինսն. և հարք զորդիս. և վարդապետք զաշակերտս. և իշխանք զիշխեցեալս. տեարք զծառայս. և այս սիրովս շարունակին *ընդ* նոսա: - 143. Իսկ վերնագոյն սիրով սիրեն արարածք զարարիչն. և վերջին հրեշտակք զառաջինսն. և որդիք զհարս. և նւազք զմեծամեծս. և այս սիրովս միաւորին *ընդ* նոսա: - 143. Ա՛րդ՝ բանիւ մտացն խօսի աստուած *ընդ* հրեշտակաց. նո՛յնպէս և հրեշտակք *ընդ* աստուծոյ: - 144. Դարձեալ՝ աստուած *ընդ* հոգիս, և հոգին *ընդ* աստուծոյ: - 144. Դարձեալ՝ դևք *ընդ* աստուծոյ. զի դիտաւորութիւն ո՛չ կարէ թագչիլ յաստուծոյ: - 144-145. Իսկ բանիւ բերանոյ խօսի մարդ *ընդ* մարդոյ, հրեշտակք *ընդ* մարդոյ՝ ծնացեալ մարմնովն: - 145. Իսկ բանիւ գործոյ խօսի աստուած *ընդ* դիւին. նա՛և հրեշտակք *ընդ* սատանայի. որպէս որոտ և կայծակունք հրոյ ի վերայ նոցա...: - 145. Այլ և հրեշտակն խօսի *ընդ* աստուծոյ. զի զբաղձանս իւր ընծայէ՛ նմա: - 145. Եւ խօսի հրեշտակն *ընդ* հրեշտակի. ցուցանելով նմա զտեսութիւն մտացն միջնորդութեամբ հոգևոր իմն ճառագայթիւք. և այսպէս խօսին հրեշտակք *ընդ* միմեանս: - 145. Իսկ խօսի հրեշտակն *ընդ* մարդոյ կրկին կերպիւ: - 145. Իսկ այլք ասեն թէ՝ հրեշտակն ո՛չ երևի ծնացեալ մարմնովն և ո՛չ խօսի *ընդ* մարդոյն. այլ՝ դնէ զնմանութիւն դիտաւորութեան ի յաչքն կամ ի յականջն մարդոյն. և անդ ընդունի հաստրակ զգայութիւնն զտեսակս այնմիկ, և տայ յերևակայութիւնն և յիմացականն. այսպէս երևին հրեշտակք և խօսին *ընդ* մարդոյ: - 145. Երկրորդ՝ կերպիւ խօսի հրեշտակն *ընդ* մարդոյ տպաւորութեամբ երեւակայութեան: - 145. Եւ սոյնպէս խօսի *ընդ* արթունս և *ընդ* ննջեալս: - 145. Իսկ խօսի հրեշտակն *ընդ* դիւին՝ ցուցանելով նմա զտեսակս իմացման իւրոյ առանց լուսաւորութեան իմն: - 145. Իսկ խօսի դևն *ընդ* մարդոյ՝ կամ փոփոխելով զգոյութիւնն որպէս հրեշտակն կամ զպատկեր նմանութեանն ցուցանէ տեսանելեացն. և կամ տպաւորէ՛ յերևակայութիւնն: - 145. Զի հոգին խօսի *ընդ* աստուծոյ բաղձանօքն որ մերկապարանո՛ցն է առաջի նորա: - 145. Նոյնպէս և խօսի հոգին *ընդ* հրեշտակն մարմնական կերպիւ զոր իմանայ հրեշտակն որպէս զայլ զգալիս որքան է ի մարմնի: - 145. Այլ ի մերկանալն ի մարմնոյն՝ կարօտանայ յատուկ իմն զօրութեան որով խօսեցի *ընդ* հրեշտակին: - 145. Դարձեալ՝ հոգին խօսի *ընդ* դիւին, զի զբաղձանք սրտին տպաւորէ ի զգայութիւնսն: - 145. Նախ՝ զի հակառա՛կ է աստուծոյ, և մարդն պատկեր է աստուծոյ. յորժամ տկարանայ ի նախատիպն՝ *ընդ* պատկերն հակառակի: - 146. Չորրորդ՝ զի *ընդ* ինքեան ի տանջանս քարշեսցէ: - 146. Զի *ընդ* իւր անկումն ի պատուոյ այնչափ չէ՛ տրտում, որքան *ընդ* մարդոյն փառաւորիլն: - 146. Եւ ոմանք ասեն թէ՝ *ընդ* պատիւ մարդոյն նախանձեցաւ և ի խորհուրդ եմուտ թէ սորա կատարումն ի՞նչ լինի, և ո՛չ կարաց հասու լինիլ: - 147. Որև կործանմամբն իւրով չարչարեաց զվերին դասքն սրտմտութեամբ, և զներքին դասքն սասանմամբ, և զհամակամսն *ընդ* ինքեան քարշեաց: - 148. Եւ այլք ասեն այսպէս հակառակիլ *ընդ* աստուծոյ, յորժամ ետես զինքն փառօք և վայելչութեամբ քան զամենայն դասս գերազանցեալ, կամեցաւ մեծ լինիլ ի վերայ ամենայնի և հաւասար աստուծոյ: - 149. Եւ այլք զի՞նչ մեղան որք *ընդ* նմա անկան: - 149. Վասն որոյ *ընդ* նմա և իշխանք նորա անկան և ի տանջանս մատնեցան: - 149. Յինգերորդ՝ զի հոգևոր բնութիւնն միանգամ միայն է շրջելի. վասն զի բոլորովին շրջէ զինքն՝ զոր ո՛չ առնէ մարդն. զի մարմինն միշտ մարտնչի *ընդ* հոգին. որպէս յառաջիկայդ ասի **լբ** գլուխն: - 151. Իսկ ժ եղջիւրն է **ժ** պատուիրանին յանցումն, որով պատերազմի *ընդ* մարդկան: - 151. Իսկ յանցումն օրինացն՝ լինի զէն և գործի դիւացն որով պատերազմին *ընդ* մարդոյս: - 151. Եւ **ժ** կատարեալ թիւ է. նշանակէ՛ զկատարեալ

զօրութիւնս թշնամւոյն որով կռուի *ընդ* մեզ. զոր նշանակեն եղջիւրքն: - 151. Իսկ բանսարկուն սատիէլ՝ զմի յերից մասանցն զչորրորդն քարշեաց *ընդ* ինքեան և կործանեաց յերկիր...: - 152. Իսկ դևք զանհաստատսն մտօք՝ ի ստորևս քարշեն և յերկիր կործանեն զերկրաւորս խորհելով. և *ընդ* ինքեան ի յատակս դժոխոց մերժեն: - 152. **Իսկ «տուտն», Նախ՝ նշանակէ զվերջին հետևեալսն *ընդ* նմա. զի նա առաջին ինքնագիւտ էր ի չարն. և այլքն հետևեցան նմա:** - 152. Երկրորդ՝ զօրաւոր մասն է տուտն սողնոց. ցուցանէ զբռնութեամբ քարշելն *ընդ* ինքեան: - 152. Յերկինս են լուսաւորքն. և վասն գոյութեանց նոցա. և գնան իրեղէնք *ընդ* ջուրս: - 154. Հնգետասաներորդ՝ զի մարդ յետ ստեղծանելոյն ո՛չ է *ընդ* ստեղծուածս իւր. իսկ աստուած յետ ստեղծանելոյն՝ միշտ է՛ *ընդ* ստեղծուածս իւր նախախնամութեամբ...: - 157. Հինգերորդ՝ և որպէս *ընդ* աղօտ ինչ նմանութեամբ ծանօթանամք ի գործն արարչութեան. այսպէս և ստւերակերպ նմանութեամբ ի ծանօթս գամք գործոյ նախախնամութեանն. այսինքն առնելոյն և թոյլ տալոյն: - 157. Երկրորդ՝ աստուած փորձէ և տայ զհամբերութիւնն. և սատանայ *ընդ* փորձութեանն առնէ զձանձրութիւն: - 161. Չորրորդ՝ զի յետ փորձութեան աստուած զպսակն պարգևէ. և յետ փորձութեանն սատանայ, *ընդ* իւր ի կորուստն յաւիտենական սպանանէ: - 161. Հինգերորդ՝ զանազանութիւն՝ զի սատանայ ի փորձելն ո՛չ գիտէ զառաջիկայն թէ յաղթէ և թէ յաղթի. և եթէ էր տեղեակ՝ ո՛չ մրցէր *ընդ* կատարելոցն որք յաղթահարեն զնա. որպէս *ընդ* ստեփաննոսի, անտօնի, և այլոցն, որք յաղթեցին սատանայի: - 161. Դարձեալ՝ այն զօրութիւնն միշտ է. զի բնաւորեալ է *ընդ* ներգործութեան. իսկ միւս զօրութիւնն երբեմն է. զի կամ նախ է ներգործութեան. որպէս մանկան հիւսնել: - 168. Եւ թէ գոյր ինչ զօրութեամբ ի նա՛, և նա՛ լինէր *ընդ* եղելոցս ի ժամանակի որ է սուտ: - 169. Երրորդ՝ զի պատահումն *ընդ* գոյացութիւն խառնեալ՝ լինի բաղադրեալ. որպէս նիւթ և տեսակ: - 170. Բաղկացական է, որ *ընդ* մարմնոյ մասնկանցն գոյանայ ի ներս և ի դուրս. վերոյ և ներքոյ շուրջանակի. զի իւրաքանչիւր մասունք ի տեղին ունին զդրութիւնն. և կայացեալ ի բոլորն: - 174. Չորրորդ՝ զի իւրաքանչիւր սոքա առանձին սահման ունին և բնութիւն. և ո՛չ միաբանին *ընդ* միմեանս և ո՛չ *ընդ* մարմնի. այսինքն քանակն որակն. և ծանրութիւնն. և այլքն: - 175. Վասն որոյ խոստովանիմք *ընդ* սրբոց հարցն վասն միաւորութեանն մի բնութիւն աստուծոյ բանին մարդացելոյ: - 176. Վասն էր՞ աստուած գրով խօսի *ընդ* մեզ որպէս մովսէսի և այլոցն: - 177. Նոյնպէս և աստուած *ընդ* արժանիսն դէմ յանդիման խօսեցաւ. որպէս առ ադամ. և առ նոյ. և առ աբրահամ. և առ մովսէս: - 177. Հինգերորդ՝ զի յետոյ լինելոցն էր բանն աստուծոյ մարմին. որպէս գիրն ունի յինքեան զբանն. և խօսի *ընդ* մեզ: - 177. Արդ հնչէ զձայնն ըստ ինքեան միայն. և ծնանի զբանն շարադրեալ *ընդ* բաղաձայնս: - 177. Եւ զայս ունի այբն. զի է՛ ձայնաւոր *ընդ* այլ է ձայնաւորաց: - 178. Նոյնպէս և այբն խառնի ի թաւ և ի լերկ, ի սուղ և յերկար, և միաբանի *ընդ* նոսա, և ի մի բնութենէ իւրմէ ո՛չ որոշի կամ այլայլի: - 178. Զի ջուր ցրտութեամբ *ընդ* երկի՛ր է կապեալ. և գիճութեամբ *ընդ* օդ: - 181. Եւ օդ ջերմութեամբ *ընդ* հուր. և հուր չորութեամբ *ընդ* երկիր: - 181. Եօթներորդ՝ միջնորդով զայլս լուսաւորէ. որպէս *ընդ* օդ և *ընդ* ապիկի: - 185. Որ և զծովս և զաղբերս և զհեր և զղեղս առաւելու *ընդ* իւր և նւազէ՛: - 187. Վարդապետք ասեն. որպէս սուրբն բարսեղ՝ թէ որպէս երկբերանի քսա՛կ է լուսինն. *ընդ* մինն ելանէ և ի վերի թիկունքն ժողովի և պակասի ի մէնջ լոյսն. և ի միւսն ի ներքս մտանէ և լուսաւորէ՛ զմեզ: - 187. Եւ յորժամ ի միւս կիսագունդն հասանէ, *ընդ* **զ** կենդանակերպս հետևեալ՝ բոլորի լոյսն ի նմա. զի ուղղապէս զլոյսն ընդունի: - 187. Եւ գիտելի՛ է, զի *ընդ* ամենևին հեռանալն լուսինն խաւարի. և ամենևիմբ մերձ եկեալ ի նոյն կենդանակերպն և ուղղապէս ընդ դէմ անցեալ արեգականն՝ խաւարէ՛ զնա. զի ընդ դիմատիպ է անօթ լուսնոյն: - 187. Եւ զի ո՛չ հանապազ խաւարին. զի ո՛չ միշտ *ընդ* նոյն շաւիղս ընթանան. թէպէտ հանդիպին *ընդ* նոյն կենդանակերպն: - 187. Զի՞նչ է որ ասէ սուրբն բարսեղ, գնան իրեղէնք *ընդ* ջուրս և ո՛չ շիջանին: - 188. Դարձեալ՝ հրեշտակք իրեղէնք գոլով՝ *ընդ* ջրեղէն կամարն գնալով ո՛չ շիջանին: - 188. Եւ է մոլորականքն *ընդ* սոսա գնալով խոնարհին և բարձրանան: - 189. Ոմանք ասեն որպէս արիստոտէլ, թէ ամենայն աստեղքն բևեռեալ են յերկինս և *ընդ* նմա՛ շրջին: - 189. Իսկ այլք ուղղակի՛ ասեն՝ թէ անմոլար աստեղքն ամրացեալ են ի հաստատութեանն որպէս սպի ի վերայ մարմնոյ, և *ընդ* նմա շարժին: - 189. Վեցերորդ Փայլածուն. զոր օտարիտ կոչեն. միշտ շրջի *ընդ* արեգականն. և սակաւ հեռանայ ի նմանէ. զընթացս իւր կատարէ՛ **յլը** աւուրս. **ժ** օր պակաս քան զլուսաբերն. և այլք թէ **գ** ամիս: - 189. Զի լուսինն *ընդ* երեկս երևացաւ և մետասանօրեայ ստեղծաւ: - 191. Զի օրն *ընդ* տիւ և *ընդ* գիշեր է՛ **իդ** ժամ: - 191. Իսկ միւսն է *ընդ* ծագումն լուսոյն. յորում զպահք և զստիք բաժանեն. այսինքն լոյսն և գիշերն: - 194. Եւ զի ստուեր երկրի է որ *ընդ* մեզ և *ընդ* արեգակն դնի: - 196. Այսպէս յեգիպտոս հուրն որ *ընդ* կարկտին իջանէր, վասն ազդու զօրութեանն՝ զկենդանիսն սպանանէր, և մարմինքն ամբո՛ղջ մնային: - 204. Իսկ Ցօ՛ղ է գիճութիւն ի պարզոյ իջեալ. զոր աստեղք ի գիշերի քարշեն ի վեր. և *ընդ* ծագել առաւօտուն՝ յետ ի յերկիր անկեալ մանրամասն շիթ: - 204. Եւ սառուցեալ ի ներհակ հողմոյն, համանգամայն *ընդ* փոխիլն ի ջուր: -

205. Իններորդ՝ *ընդ* փայլիլն և ի բաց փախչի: - 207. Իններորդ՝ ի դառնութենէ ի քաղցրութիւն փոխի *ընդ* երակս երկրի: - 207. Երկրորդ՝ զի երկիր չո՛ր է և ցամաք, պարտ էր լինիլ բազմութեան ջուրց. զի խառնեսցի *ընդ* երկիր և ծննդականս արասցէ: - 207. Եւ զի քարշեն լուսաւորք զգոլորշին յերկրէ՝ յայտ է ի ցօղ առաւօտուն և յեղեամն. որ ի գիշերն ի վեր քարշին. և *ընդ* ծագել լուսոյն հատանին և յետս յերկիր անկանին. և յաւուրս ձմերան լինի եղեամն. և յամարան ցօղ: - 208. Երկրորդ՝ զի ամենայն ուրեք հողն *ընդ* ջրոյն խա՛ռն է. և յա՛յտ է ի ջրհոս. և ջուրն այն որ բարձրացեալ է *ընդ* հողոյն՝ իջանէ ի խոնարհ և բղխէ աղբիւր: - 209. Երկրորդ՝ զի վերին մասն օդոյն պա՛րզ է. և ներքին մասն մերձեալ ի յերկիր՝ թանձրանայ ի չորութեանց նորին. և ջերմութիւնն խառնեալ *ընդ* այն՝ առաւել շող լինի: - 211. Ոմանք ասեն թէ յօդոյն է. զի օդն կապոյտ է՝ խառնի *ընդ* ջրոյն և լինի կանանչ: - 212. Նախ՝ զի թէպէտ զջուր կամ զհող միայն յիշէ աստուած. այլ երեքն *ընդ* միոյն առին հրաման...: - 214. Զերկիր ասելով, զայլ տարերքն *ընդ* նմա յիշէ և առնէ: - 214. Եւ մի և նոյն է. զի շունչ կենդանեաց է թանձր մասն օդոյս՝ խառնեալ *ընդ* ջրոյ. և շունչ նոցա է անօսր մասն ջրոյ՝ խառնեալ *ընդ* օդոյ: - 215. Երկրորդ՝ զի անհանգիստ և ի չարչարանս լինէր հանապազ. *ընդ* ինքեան ունելով զնոսա: - 217. Նա՛խ՝ զի զղէմքն ընտրեաց՝ և *ընդ* եւայի՛ խօսեցաւ: - 218. Հինգերորդ՝ *ընդ* հերձուածողաց և սատանայի մի՛ պարզմտութեամբ՝ այլ հնարիւք խօսեսցի: - 218. Եւ որպէս *ընդ* գլխոյն պատերազմեցաւ, գլուխն սատակեցաւ: - 219. Եւ զի զմարդն ընկէց յերկնից ի յերկիր, *ընդ* գարշապար ոտից նորա անկանի: - 219. Եւ զի նախանձեցաւ *ընդ* մարդոյն, ի լանջս և յորովայնս սողայ: - 219. Չորրորդ՝ յա՛յտ է ի հնազանդեցելոցն որք կան այժմ *ընդ* ձեռամբ մարդկան. որպէս ոչխար, պախրէ՛, և այլն: - 220. Ո՞րպէս ասէ մեծն Ներսէս շնորհալին. *ընդ* ծառոց երկրի զգալեաց. տնկեաց և զտունկս իմանալեաց: - 221. Եթէ յամենայն ամի նորն զհինն փոխէ, այս լինի կամ թափիլ պտղոյն ի ծառոյն. և կամ մնալ հինն *ընդ* նորոյն: - 224. Ա՛րդ՝ եթէ մնայ հինն *ընդ* նորոյն հանապազ. նա՛ ծանրանայ. և ո՛չ կարէ զայն քան ամաց բազմութիւն պտղոցն կրել, և այսպէս լինին ամենայն ծառքն կոտորեալ և ապականեալ...: - 224. յԱռաջին աւուրն՝ է արարածք եղեն. հրեղէն երկինքն. և չորս տարերք. և լոյս. և հրեշտակք *ընդ* լուսոյն: - 226. Այլ և տիւ և գիշեր որք *ընդ* լուսոյն եղեն: - 226. Նոյնպէս ի հողեղէն և յապականացու մարմնոյս մարդկան՝ էառ բանն աստուած. և միաւորելով *ընդ* ինքեան ծնաւ անապական մարմնով. անմեղ հոգւով և մտօք. և եղև երկրորդ ադամ Տէր յերնից: - 229. Իններորդ՝ զի ի սկիզբն ստեղծման արարածոց՝ եղեն իմանալի բանականքն *ընդ* լուսոյն գոյացեալ: - 231. Երկրորդ՝ զի իմանայ *ընդ* հրեշտակաց. զգայ *ընդ* կենդանեաց. աճէ՛ *ընդ* տնկոց. գոյ *ընդ* անշնչից: - 231. Տասներորդ՝ զի կիրք մարմնոյն հեղուն ի հոգին. որպէս յորժամ մարմինն ննջէ՝ և հոգին թմրի և անգործ մնայ. վասն որոյ արարաւ ձևն ուղիղ, զի միտքն *ընդ* նմա՛ ուղղեսցի ի վեր առ աստուած...: - 233. Այլ և ի միտ ածցուք զփառս երկնային կենաց ուստի անկաք, և անդ դիմելոց եմք. զի տեսութիւն մտացն զհոգին *ընդ* ինքեան ի վեր տանի. և նա զշունչն. և շունչն *ընդ* արեանն է կապեալ. և արիւնն *ընդ* մարմնոյն. զգայարանքն *ընդ* մարմնոյն. և լինի մարդն բոլորովին երկնային: - 233. Տասներորդ՝ զի և բանականս մարդ՝ քան զանբան կենդանիս տգէտ լինէր. վասն զի ամենայն կենդանի ունի բնական ճանաչումն իւրոց և օտարաց. ըստ այնմ որ արագիլ արդար՝ կերակրէ զիւր ծնօղսն միայն. և տատրակ մենացեալ ի զուգակցէն, ո՛չ զուգի *ընդ* ա՛յլ տատրակի: - 238-239. Յորժամ ծերանայ մարդն, և սպիտակ ջուրն որ է պալղամն առաւելու, յայնժամ մազն *ընդ* սպիտակ ջուրն ի դուրս անցանէ և սպիտակի՛: - 240. *Ընդ* վերին դուռն զգոլոշին ի խելապատա՛կն առաքէ: - 242. Նոյնպէս *ընդ* ներքին դուռն զաւելորդն արտաքս վտարէ *ընդ* աղիսն. և յայսմանէ ջրատեսակն *ընդ* ցնցուղ քաղրթին ի փալաբուշտն իջանէ և լինի մէզ: - 242. Նա՛խ՝ խելապատակն սկիզբն է ջլացն. որ միայնաբար *ընդ* ուղուղս պարանոցին անցանէ. և բաժանի ի թիկունս, ի ձեռս, և յա՛յլ մարմինս: - 244. Զի խարտեաշ մաղձն *ընդ* արիւնն և *ընդ* մորթն խառնի: - 245. Եւ այսպէս խառնին *ընդ* միմեանս: - 248. Իմաստութիւն *ընդ* խոկումն: - 248. Տեսողութիւն *ընդ* գործն: - 248. Ուսողութիւն *ընդ* առաքինութիւն: - 248. Անմոռացութիւն *ընդ* հաւատ: - 248. Դարձեալ հոգին ունի զօրութիւնս ոմանս անխառն *ընդ* մարմնոյն. որպէս բանն՝ կամքն՝ և սոյնպիսիք: - 249. Եւ զոմանս ունի խառնեալս *ընդ* մարմնոյ. որպէս է բնական զօրութիւն կենդանականն և շնչականն որպէս ասացաւ ի վերոյ: - 249. Դարձեալ հոգին ունի զօրութիւնս ոմանս հասարակ *ընդ* անասնոց. որպէս զգայականութիւնն: - 249. Իսկ զոմանս ունի ո՛չ հասարակ *ընդ* անասնոց. որպէս բանն. իմացումն. և կամքն. և սոյնպիսիք: - 249. Իսկ յանասունսն ամենևին ըստ երկոցունցն կորնչին *ընդ* մարմնոյն: - 249. **Զի տնկական հոգին յօժարի՛ գոլ. և զգայականն բարեպէս գոլ. և բանականն նա բարեպէս գոլ. զի ո՛չ երբէք հանգչի, մինչև միաւորեսցի *ընդ* նա բարեգունին:** - 249. Եւ որք ծուլանան, սողոսկեալ անկանին յերկիր *ընդ* մարմին մարդոյ շաղապատեալ: - 252. Զոր *ընդ* դերևս հանէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան այսպէս եթէ, որք զհոգին յառաջ ասեն գոյանալ քան զմարմին. և վասն մեղաց եղեալ ի մարմին մարդոյ. որ է՛ համանման

բանականութեամբ. և է՛ իներքոյ երկնային կենաց՝ զի մարմնաւո՛ր է: - 252. Երրորդ՝ ևս յայտնի. զի *ընդ* նիւթոյ կազմութեանն համանգամա՛յն է և երևումն ոգւոյ. զի յորժամ անկատա՛ր է նիւթն, միայն կերակրիլն երևի ի նմա: - 255. Այսպէս և հոգին *ընդ* անկատար նիւթոյն ունի զկերակրիլն. և յորժամ հաստատի զգայութեամբն ծաղկի. և յևս հաստատիլն՝ բանականութեամբ պտղաբերի ի վերին խնամոցն որպէս պտուղն այն յարեգակնէ՛: - 255. Այսպէս և բանական հոգին համանգամայն երևի *ընդ* ծնանալ մարմնոյն: - 255. Դարձեալ՝ ջերմ և գէջ չափաւորեալ է ի նիւթն այն. և որ արտաքուստ մտանէ՝ անչափութեամբն վնասեսցէ՛ զսերմնական զօրութիւնն *ընդ* նիւթոյն: - 256. Երրորդ՝ զի հատեալն մասնաւորի. այլ *ընդ* ծնանիլ զաւակին՝ ոչ ինչ պակասի ի ծնօղն. բան, կամ շունչ, կամ կենդանութիւն. այլ բոլորն է ի ծնօղն և բոլորն ի ծնեալն: - 257. Եւ ստեղծմամբ զի ըստ գոյութեան իւրոյ շնորհօքն աստուծոյ նո՛ր պարգևեցաւ *ընդ* լինելութեան մարմնոյ: - 258. Եւ դարձեալ պարզ և յայտնի, այսպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին եթէ, բանականին շնորհ *ընդ* լրումն մարդկութեանս թա՛փ էանց ի տեսութիւնն աստուծոյ՝ որքանութիւնն և որպիսութիւնն...: - 258. Այսպէս և զգայականն և տնկականն մասունք են բանականին՝ նախ եդեալ ի մարմինն. և յորժամ բանականն հեղի ի մարմինն, յայնժամ և սոքա հեղին *ընդ* նմա. զի զօրութիւնք և մասունք են նորա ըստ օրինակի նախասացեալ երրորդ թուոյն: - 259-260. Եւ յորժամ ծագէ՛ արեգակն, յայնժամ և նշոյլքն իւր *ընդ* իւր ծագեն և ինքեամբ լուսաւորեն զմեզ որպէս նախ նշուլիւքն: - 260. Այլ է՛ նա՛խ էացեալ ի բանն աստուծոյ, և համանգամայն *ընդ* մարմնոյն երևեալ ի պարզևաց այնմ նախատես բանի: - 260. Զի սերմնական զօրութիւնն որ է՛ ի նիւթն այն՝ իսկ *ընդ* խառնիլ սերմանցն յարգանդի, զուգապէս ցուցանէ զտնկականն: - 261. **Եւ յետ այնորիկ յեօթներորդէ՛ աւուրն սկսանի արհնածուծ լինիլ յարգանդէ մօրն *ընդ* պորտն. որպէս դըդում և ծմերուկ *ընդ* կոթն**: - 261. Արդ՝ **ժ** թիւն կատարեալ է. և չորսն տարրական է. այսինքն զի կատարեալ հոգին բանական ի նո՛յն ժամն խառնեալ միաւորի *ընդ* մարմնոյն տարրական, և կերպացեալ լինի մի մարդ մի դէմ և մի բնութիւն մարդոյ ի հոգւոյ և ի մարմնոյ. որպէս քառասունն ի տասանց և ի չորից է գոյացեալ: - 262. Կամ *ընդ* **դ** տարերց ունի զխառնումն երկուց նիւթոց, այսինքն արուական և իգական: - 262. Այլ և զգայականին յաւելեալ շնչականն և շարժականն և ցասմնականն *ընդ* ցանկականին՝ լինի **թ**. վասն որոյ ոմանք յինն ամիսս ծնանին կամ ի **ժ**: - 263. Այլ և յաւելեալ ի վերայ զշարժականն և զշնչականն և զցասմնականն և զցանկականն, *ընդ* նմին և զկազմողական նիւթն և զտնկականն, որ լինի **ժը**. վասն որոյ ոմանք ի տարին և կէսն ծնանին որպէս ուղտ: - 263. Իսկ տունկք որք են մեծաբոյսք՝ և չորքոտանիք մեծամեծք՝ յերրորդ ամին ծնանին զնմանն. որ է թիւ կրկին ամսոյ *ընդ* երրեակ վեցից: - 264. Դարձեալ և տէրն բաժանէ զհասակ մարդոյ ի **դ**. յերեկոյ. ի մէջ գիշեր. ի հաւախօս. և *ընդ* առաւօտս: - 265. Նախ ասեն ոմանք, եթէ ուղեղ գլխոյ անբանիցն *ընդ* խելապատակին ունի չորութիւն և հովութիւն. և ջիլքն ի նմանէ յառաջեալ յանդամս մարմնոյն՝ փութապէս պնդէ՛ և տայ շարժիլ: - 266. Իսկ սահմանօրէն, հանճարն կարծիք է կապեալ *ընդ* ուղիղ խորհրդոյ: - 270. Դարձեալ՝ հանճարն է տրամախոհութեանն. զի կարծիք է կապեալ *ընդ* ուղիղ խորհրդոյ. իմաստութիւնն իմացմանն. գիտութիւնն յիշողութեանն: - 270. Զի թէ ո՛չ էր ասացեալ *ընդ* պատկերին զնմանն լինիլ, ամենայն ոք պատճառէր, և զմարդն պաշտելով անկանէր ի կռապաշտութիւն. վասն որոյ ասաց զնմանն, թէ յորժամ տեսցեն պատկերակից աստուծոյ զմարդն բանականութեամբ անմահութեամբ և այլովքն որ ինչ է ի հոգիս, իմանայցեն և զզանազանութիւնն աստուծոյ: - 274. Զգոլն ունի *ընդ* քարանց: - 275. Կայ *ընդ* տընկոց: - 275. Իմանայ *ընդ* հրեշտակաց որպէս ասացաւ ի վերոյ: - 275. Երրորդ՝ զի որպէս խօսիլ գլխոյն է. նոյնպէս լռութիւն կողին է. զի լուռ լիցի կինն *ընդ* իշխանութեամբ առնն: - 276. Ութերորդ՝ զի կողն կեռ գոլով՝ ցուցանէ զկինն նենգ գոլ և երկմիտ. կեռ, այսինքն խեռ *ընդ* առն: - 276. Եւ այսպէս **ը** դիմօ՛ք է թշնամութիւն մեր *ընդ* միմեանս. և ամենայնին պատճառ սատանայ եղև, որ բնութեանս է թշնամի: - 278. Չորրորդ՝ զի *ընդ* ծառս դրախտին և յանթառամ ծաղիկս և ի բազմապատիկ պտուղսն պշուցեալ էին, ո՛չ զերկնչիլն գիտէին և ո՛չ զամաչելն: - 278. Հինգերորդ՝ զի մտօք յաստուածային խոկումն էին վերացեալ, և զգայարանօք *ընդ* գործս հրաշիցն. և ոչ էին պարապեալ քննութեան անձին...: - 278. Ի խօսակցութենէն, զի մինչ ի յորդանան այլ ո՛չ ասի հօր աստուծոյ խօսիլ *ընդ* մարդկան: - 279. Երկրորդ՝ հեշտութիւն խօսակցիլ *ընդ* օձին. և վասն այն կամեցաւ լսել, զի հեշտացաւ վասն փառաց աստուածանալոյն: - 280. Ասեմք եթէ՝ էառ քրիստոս մարմին ի կուսէն մարիամայ զմերս թանձր և մեղանչական. և միաւորելով *ընդ* ինքեան՝ եղև առաջին կերպ անմեղութեանն ադամայ որ էր ի դրախտին:- 282. Տասնևը՝ Առիւծու *ընդ* տեառն բաղդատութիւն **ի** գլխով: - 283. Ութսունևմի, Ո՞րքան խօսեցաւ աստուած *ընդ* նախահարսն: - 285. Նա՛խ զի սիրտ սուրբ և աննենգ ունէր. ուստի յա՛յտ է յանմեղութեամբ գնալոյն *ընդ* եղբօրն ի դաշտն: - 286. Զայսոսիկ որպէս ասացաւ ունէր նա՛ *ընդ* պատարագելն: - 286. Եւ որպէս կորխ դադան և աբիրոն վասն հակառակութեանցն *ընդ* մովսէս և ահարոն՝

իրով և բացմամբ երկրի դատապարտեցան: - 288. Այսպէս և ի նորս սուրբն ստեփաննոս որ եղև առաջին մարտիրոս և վկայ քրիստոսի՝ հեղլով զարիւն իւր. տեսանէր բացեալ զերկինս և զյիսուս *ընդ* աջմէ աստուծոյ: - 288. Յինգերորդ ևս յայտնի. աստ կեան նահապետքն ժամանակաւ *ընդ* ամենայն մարդոյ. և յետ մահու ի մշտնջենաւորն *ընդ* հրեշտակաց. և յետ յարութեանն յանվախճան յաւիտենին թագաւորեալք *ընդ* աստուծոյ: - 291. Ա՛րդ՝ առաջին դարն որ էր երևակին՝ *ընդ* երկա՛ր ապրէին մարդիկքն. զի ունի երևակն յերկար ընթանալ զճանապարհն իւր. որ ի լ ամն վճարէ զկենդանակերպսն: - 291. Երրորդ՝ զի թէ և դառնային մերձ ի մահ, ամենայնքն *ընդ* ապաշխարութեամբ մեռանէին. և ո՛չ ոք արդարութեան պսակին արժանաւորէր: - 292. **Առաջին պատճառ, զի *ընդ* ինքեան մարդկայինս բնութիւն այլայլո՛տ է և ցաւօք. և յորժամ աստուած ևս բազմացուցանէ, ո՞վ կարէ զաղէտն պատմել:** - 292. Ոմանք ասեն թէ խեղդեցաւ ի ջուրն. և *ընդ* բերանն յղացեալ էր զուգակիցն: - 294. Եւ բարձրացուցին **զժ** ամսոյ ճանապարհ *ընդ* ելն և *ընդ* էջն. որչափ բարձրացաւ ջուրն **ճճ** օր, և **ճճ** օր դարձեալ իջաւ: - 296-297. Դարձեալ՝ խառնակիլ լեզուին ա՛յն է որ *ընդ* պատուհասն զբարութիւնն խառնեաց. զի թէպէտ բաժանումն լեզուաց պատուհաս երևի, այլ պիտանի՛ է: - 297. Եւ յորժամ խօսեցաւ աստուած *ընդ* նմա, եցոյց զմարգարէութիւնն: - 300. Եւ տէր մեր յիսուսի քրիստոս է՛ թագաւոր յաւիտենական. և արդարութիւն արար մեզ և հաշտեցոյց զաստուած *ընդ* մարդկան: - 301. Եւ քրիստոսն օծեալ ո՛չ ըստ իւղոյ ինչ երևութապէս օծման, այլ միանալով *ընդ* բանին աստուծոյ՝ ասի օծեալ: - 301. Եւ աստուածութեամբն *ընդ* հօր և հոգւոյ՝ ընկալաւ ինքն: - 307. Ա՛րդ՝ զայս քան մեծագոյն պատիւ և խորհուրդ անդրանկութեանն անարգեաց եսաւ *ընդ* պոռնկութեան. և վաճառեաց *ընդ* կերակրոյ: - 309. Իններորդ՝ ցուցանէ թէ ո՛չ է այն անդրանիկն որ նախածին լինի և մարմնովն քաջ. զի ո՛չ հաճի տէր *ընդ* իրանս առն հսկայի. այլ անդրանիկ է այն՝ որ զհաճոյսն աստուծոյ կատարէ: - 310. Տասներորդ՝ ևս մեծագոյն խորհուրդ. զի բանն աստուած որ անդրանիկ էր հօր, եղև կրտսեր մարդ ի ժամանակի և փոքր. ըստ որում կոչեաց զինքն «փոքրիկ». զի բնութիւն մարդոյս *ընդ* ինքեան խառնելով արասցէ մեծ և անդրանիկ: - 311. Վասն է՞ր գօտէմարտեցաւ *ընդ* յակոբայ և կաղացոյց: - 311. Եւ մարտեաւ *ընդ* նմա այր, զչափ ուժոյ և զկերպարանքն եսաւայ զգեցեալ. զի կրթեսցի և մի երկիցէ ի նմանէ: - 311. Դարձեալ՝ վարժէ՛ զնա գօտեաւն՝ պատերազմիլ *ընդ* մեղս և *ընդ* մեղսասէր մարդիկ որ կամին զանմեղն քարշել արտաքոյ օրինացն աստուծոյ: - 311. Երկրորդ՝ որպէս նմա ասաց աստուած, ես իջից *ընդ* քեզ և ես հանից անտի: - 314. Ութերորդ՝ որպէս իջեալքն յեգիպտոս *ընդ* հարաւ մտին ի գեսեմ ի պարարտ երկիր: - 315. Եւ կոչի տաճար մարմինն միաւորեալ *ընդ* բանին անբաժանելի: - 319. Եւ այսպէս օրհնութիւն սոցա *ընդ* տեղւոյն իւրեանց կայ և մնայ մշտնջենաւոր յիշատակութեամբ: - 320. Վասն է՞ր այնչափ հակառակեցան բարեկամքն *ընդ* յոբայ: - 324. Նախ՝ զի շարժեալք էին ի բանսարկուէին. որպէս երբեմն ի ձեռն կնոջն. և յայնժամ բարեկամօքն մարտնչէր *ընդ* յոբայ: - 324. Չորրորդ՝ կամէին զինքեանս արդա՛ր ցուցանել, և յանցաւոր զյոբ. և վասն այսմ կարգէին *ընդ* յոբայ: - 324. Վասն երկրորդին հակառակէր *ընդ* նոսա, զի մի՛ սուտ լիցի վկայութիւն աստուծոյ ի վերայ նորա. զի և մեք ուսցուք՝ վասն վկայութեանն աստուծոյ այնչափ նախատինս յանձն առնուլ և ո՛չ ուրանալ. որպէս վկայից դասքն նահատակեցան: - 324. Վասն է՞ր թոյլ ետ սատանայի մարտնչիլ *ընդ* յոբայ: - 325. Վասն է՞ր աստուած խօսեցաւ *ընդ* յոբայ: - 325. Արդ զոր ադամայ ո՛չ վկայեաց, խօսեցաւ *ընդ* յակոբ և վկայեաց արդար և անարատ գոլ: - 325-326. Երկրորդ՝ զի թոյլ տուաւ փորձողին մարտնչիլ որպէս *ընդ* ադամայ՝ այսպէս *ընդ* յոբայ: - 327. Տասներորդ՝ կրկին եղև կեանքն և պատիւն յոբայ. և տէր մեր ել ի փառս առաջին և նստաւ մարմնով *ընդ* աջմէ հօր: - 327. ...և թուեցան *ընդ* ղևտացիս որպէս պատմէ մնացորդացն գիրք: - 330. Վեցերորդ՝ նշանակէ՛ զբանն աստուած գաւազան ուղղութեան և թագաւորութեան առ հայր. եկն նա՛ յերկիր և էառ զօձաձև բնութիւնս մեր. և դարձեալ ըմբռնեալ մարմնովն ել յերկինս և նստաւ *ընդ* աջմէ հօր: - 332. Ո՛չ է արդարութիւն. այլ նա՛ *ընդ* զրկողացն դատի, և դու *ընդ* գողոցն: - 337. Իսկ յաւուր **ե** շաբաթոջ երեկունն զգառն զենին և ելին յայգ ուրբաթի. նիսանի **ժե**. որ էր առաջին ամիս նոցա. և ի կիրակէ անցին *ընդ* ծովն որ էր նիսանի **ժէ**: - 337. Եւ յերեկոյ շաբաթուն պատառեցաւ ծովն. և ի գիշերի կիրակէին անցին *ընդ* ծովն. և ընկղմեցաւ փարաւոն: - 337. Յորում աւուր կիրակէին ի մէջ գիշերի *ընդ* առաւօտս յարեաւ տէր ի գերեզմանէն, ազատելով զհոգիսն ի դժոխոց: - 337. Եւ ի ձախն, Աղօնիա՞. տէր տէրանց *ընդ* մեզ: - 338. Երկրորդ՝ զի մի ոք որ կատարէ զօրէնս, պատուակա՛ն է աստուծոյ քան զամենայն աշխարհս. վասն այն *ընդ* միոյն խօսի: - 340. Եւ այն որ շուրջ զսեղանովն, նշանակէ՛ զքահանայս. որ մերձ սեղանոյն որ է՛ քրիստոս՝ միշտ սպասաւորե՛ն և պատերազմին արեամբ չափ *ընդ* ախտս և *ընդ* դևս: - 341. Եօթներորդ՝ զի նոր իմն չնաշխարհիկ կազմեաց. նոր ժողովրդեանն և նոր օրինացն, իցէ և նո՛ր տաճար հռչակեալ *ընդ* ծով և *ընդ* ցամաք. որպէս պսակ և փառք արդարոցն է՛ զոր ակն ո՛չ ետես և ունկն ո՛չ լուսաւ. նոյնպէս և սա՛ ի զգալիսս անհաս ի մտաց մարդկան: -

342. Եւ ի **ժե**ն նիսանի անցին *ընդ* ծովն որ է՛ **ե** ամիս. և **է** ամիս ի գործ խորանին: - 344. Եւ ներքոյ, զի բնութեամբ առին *ընդ* լինիլն իւրեանց զմաքրութիւնն: - 344. *Ընդ* որովք նախապետք, վարդապետք, և թագաւորք: - 347. *Ընդ* որովք զինուորք ճգնաւորք. *ընդ* նոսին և կուսանք և մարտիրոսք: - 347. Երկրորդ՝ զի ի տախտակէն խօսեսցի *ընդ* մովսէս: - 349. Տասներորդ՝ *ընդ* նոսա ձայնն աստուծոյ խօսեցաւ. և *ընդ* մեզ բանն: - 353. Չորրորդ՝ նոցա ձայնն միջնորդով օդիւ և մարգարէիւքն. և *ընդ* մեզ բանն աստուած անընդմիջաբար խօսեցեալ: - 353. Իսկ յատուկ, Նա՛խ՝ զի նոքա մարդիկ էին անկեալ *ընդ* տկարութեամբ: - 354. Իններորդ, նոքա ծառայաբար մատուցանէին. ուստի յա՛յտ է զի ո՛չ կարէին նստիլ ի սրբութիւնսն կամ ի քաւութիւնսն. իսկ քահանայապետն մեր տիրապէս և աստուածաբար նստեալ ի յերկինս *ընդ* աջմէ աստուծոյ...: - 354. Յնգետասաներորդ, նոցայն քահանայապետ մովսէս և ահարօն ո՛չ կարացին մտանել յերկիրն պարգևաց. իսկ քահանայապետն մեր էանց *ընդ* երկինս երկնից...: - 355. Նշանակէ՛ զմանկունս *ընդ* ձեռամբ խրատու վարժեալ և կրթեալ: - 357. Եւ յօշելն զանդամս **բժ**ան մասն *ընդ* ցեղիցն. և զոտս և զփորն լուանալն. և ողջակիզել ի վերայ պղնձի սեղանոյն: - 358. Երկոտասաներորդ, ոչխար տարևոր մեծի զատկին յելսն եգիպտոսի, խորովեալ հրով. և բաղարջ *ընդ* եղեգի կերեալ: - 359. Ի խնկոց սեղանն քաւէ՛ր արիւնն. զի զաղօթս սրբոցն բարեխօս ունիմք *ընդ* խորհրդաւոր արեանն: - 360. Դարձեալ՝ իւղով զանգեալ բաղարջն և նոյն չափ իւղովն որ չափ մասն գինւոյն. այն է՝ զի *ընդ* օրհնութեան բանին աստուծոյ՝ և հոգին սուրբ իջանէ ի հացն և ի բաժակն և կատարէ՛ մարմին և արիւն քրիստոսի: - 361. Զի նորահաս պտուղ եղև յարութեամբն մեռելոց, և նստելով *ընդ* աջմէ հօր: - 361. Երրորդ՝ ընտրութիւն է ի զենումն. զի բաժանեսցի նախ արիւնն, և *ընդ* նմա՛ շունչն և բնական ջերմութիւնն: - 366. Իսկ թէ արիւնն ելցէ՝ և շունչն և կենդանութիւնն *ընդ* նմա, ա՛յն է հրամայական մահ: - 366. Ապա յա՛յտ է թէ՝ որ անկանի *ընդ* քար կամ ի վիհ և մեռցի, ո՛չ է ուտելի: - 366. Ի ներքուստ՝ սիրտն և երիկամունքն և լերդաբոյթն *ընդ* ճարպին ճենճերեալ ի հոտ անուշից. որպէս հրամայեաց մովսէս: - 367. Երրորդ՝ զի աւետարանիչքն յայտնապէս ասեն թէ՝ *ընդ* մկրտիլ տեառն՝ նոյն ժամայն հոգին հանէ՛ զնա յանապատ. և պահեաց զ**խ** տիւ և զ**խ** գիշեր: - 373. Զի ի կեանս յայս հաւատով նուիրիմք. և յետ մահու յուսով. և յետ յարութեան կատարեալ սիրով *ընդ* քրիստոս միաւորիմք: - 375. Իսկ չորրորդ դորակ գինւոյն և իւղոյն *ընդ* նաշհոյ և գառինն, նշանակէ՛ զբանաւոր և զկենդանի պատարագս մեր: - 375. Այլ և ուղղիցին դ տուն է կիսամասնեայ. *ընդ* սրբոյ խաչեցարին հզօր և անմահ գառինն եդեալ: - 375. Զի կենդուրածինքն լցին զարևելս. և իսմայէլացիքն զհարաւ. եսաւացիք զհիւսիս և զարևմուտս. և սոքա ո՛չ անկան *ընդ* թուով: - 377. Երկրորդ՝ **գ** իշխանք նոցա *ընդ* իշխանութեամբ եղիազարու, **գ** դասքն են պաշտօնէից *ընդ* իշխանութեամբ քահանայիցն: - 379. Չորրորդ՝ գեթսոնի ազգն դռնապա՛նք էին. և մերարեայ երդմնեցուցիչք *ընդ* իշխանութեամբն իթամարայ քահանայի. և կահաթու գունդն աւագ պաշտօնեայք: - 379. Այլք ասեն վասն դադանեանցն թէ՝ հոգիք նոցա մարմնով ի տանջանս կային. ուր ընկեղմեցան մինչև ցաւարումն դժոխոց. *ընդ* որս և զնոսա ազատեաց քրիստոս իջանելովն ի դժոխս: - 382. Վեցերորդ՝ զի թէպէտ համբարձաւ յերկինս, *ընդ* մե՛զ է զամենայն աւուրս որպէս ասաց: - 385. Բաղաամ մո՛գ էր և կախարդ. և սովո՛ր էր *ընդ* դևս խօսիլ. վասն որոյ յառաջեաց աստուած և խօսեցաւ: - 387. Նա՛խ՝ զաւակաց որք *ընդ* հրամանաւ են ծնողաց: - 389. Վասն որոյ պա՛րտ է *ընդ* հրամանաւն կալ նոցա՝ յորմէ և առ որ զկապակցութիւն ունիմք եօթանցն ասացեալ: - 389. Եւ որպէս կնոջ *ընդ* հրամանս առնն իւրոյ յանցանել պոռնկութենէ, նոյնպէս և զաւակաց, և ծառայից, և աշակերտաց, և հնազանդելոց, և ժողովրդոց. նոյնպէս և հոգիս մեր ելեալ ի հրամանացն աստուծոյ՝ պոռնկութիւն է նմա. եթէ ըստ գործոց. եթէ ըստ հաւատոց: - 389. Ապա յա՛յտ է՝ զի որ *ընդ* ապաշխարութեամբ է և կրօնաւոր, ի գինւոյ ի մրգոյ և ի մսոյ պահեսցէ: - 390. Նոյնպէս և կրօնաւորն ո՛չ ցաւի և տրտմի և ո՛չ հեշտանայ *ընդ* աշխարհի: - 390. Եւ ուխտաւորն ի տուն սգոյ ո՛չ երթայ. այն է որ ի մեղքն այլ ո՛չ դառնայ. և ո՛չ *ընդ* մեղսասէր գործակիցս: - 390. Չորրորդ՝ ազգս քրիստոնէից. հաւասար անցեալք *ընդ* յորդանան և մկրտեալք: - 391. Զի՞նչ է որ *ընդ* ղովտայ որդիսն և եսաւայ ո՛չ հրամայեաց կռուիլ. այլ *ընդ* ամուր հարցուցն: - 393. Նշանակէ՛ որ չէ՛ պարտ կռուիլ մեզ *ընդ* ամենայն մարդկան. թէ չար թէ բարի. զի ա՛զգ են մեր և որդիք ադամայ: - 393. Այլ *ընդ* դևս պատերազմիլ միշտ. զի որոց դիւաց թէ յաղթէ մարդ, թէ հպարտութեան և թէ պոռնկութեան, զնոցա տեղիքն ժառանգէ յերկինս: - 393. Այլ **բ** թագաւորք մադիանացիքն էին, և **բ** այսոքիկ. որ են **է** դևք **է** գլխաւոր մեղաց. որք ի կեանս պատերազմին, և յետ մահու *ընդ* հոգւոցն բազումք: - 393. Նա՛խ՝ յէգիպտոս *ընդ* փարաւոնի. յորժամ եմք աստ: - 393. Երկրորդ՝ յանապատն ամաղէկ և այլքն. յետ մահու որ *ընդ* հոգիս պատերազմին. որք են այսք չարութեան ի ներքոյ յերկնից ըստ առաքելոյ: - 393-394. Երրորդ՝ ի քանանացիս. յետ յարութեանն *ընդ* ոսոխացն դիւաց: - 394. Երկրորդ՝ *ընդ* երից գոյացութեանց մեր. աստ *ընդ* մարմնոյս. և ի մահն *ընդ* հոգւոյս. և ի յարութեանն *ընդ* մտաց տեսութեանն հակառակին: - 394. Երրորդ՝ զայն ցուցանէ որ

կեանք դրախտին դարձաւ առ նոսա յանապատին անկարօտ ամենայնի. զի զգեստն ո՛չ մաշէր. այլ աճէ՛ր *ընդ* տղայոցն. և ոտն բոկ՝ և ոչ՛ կոշկոճէր...: - 397. Իններորդ՝ մանուկն յարգանդի ո՛չ հացիւ կեայ. այլ հրամանաւն աստուծոյ կերակրի *ընդ* պորտն զինն ամիս. որպէս տնկականք, և որպէս նոյ ի տապանն. մինչ ելանէ յարգանդէ...: - 397. Չորրորդ, նշանակէ՛ թէ՝ մի՛ *ընդ* յանցանաց ծնողին չարչարեսցես զզաւակն: - 399. Եօթներորդ՝ յորժամ անցանեն *ընդ* յորդանան մկրտութեամբ: - 402. Թէպէտ ո՛չ կատարեմք զօրէնսն՝ ո՛չ եմք *ընդ* անիծիւք նորա վասն երից: - 403. Եւ վասն աւուրն ասաց՝ տիւ. և գիշեր զխաւարումն. և *ընդ* երեկս լոյս դարձեալ: - 405. Վեցերորդ ըստ մտաց, զի մովսէս ջրածին լսի. զի որք ո՛չ ծնանին աւազանաւ, *ընդ* մահու իշխանութեամբ են: - 409. Զի՞նչ էր պատերազմն *ընդ* մարմնոյն մովսէսի: - 409. Երկրորդ՝ զհոգին մովսէսի ո՛չ կարէր յափշտակել սատանայ, փոխանակ հոգւոյն զմարմինն ջանայր յափշտակել. և վիճէր *ընդ* հրեշտակին թէ իմ է...: - 410. Զայս նշանակէ թէ՝ յետ ելանելոյ հոգւոյ ի մարմնոյ և գնալոյ ի վերին շաւիղն, հակառակ կայ սատանայ և չար զօրութիւնքն *ընդ* նմա, տանիլ զհետ իւրեանց որ զչա՛րսն են գործեալ. և յարդարոցն յաղթին հրեշտակին օգնութեամբն. որպէս և անտօն ետես. զի իմացեալ և մեք զգուշասցուք այնմ: - 410. Արդ սուգն օր *ընդ* տարւոյ երեսուն օր էր: - 411. Նա՛խ՝ զի *ընդ* աստուծոյ խօսեցաւ և ետես և լուաւ զբանն: - 411. **Քանի՞ցս անգամ խօսեցաւ աստուած *ընդ* հարսն ամենայն** ...*Ընդ* ադամայ և *ընդ* եւայի **ե**: ...*Ընդ* կայենի **դ**: ...*Ընդ* նոյի **զ**: ...*Ընդ* որդւոցն երկու: ...*Ընդ* աբրահամու **ը**: ...*Ընդ* իսահակայ երեք: ...*Ընդ* յակոբայ հինգ: ...*Ընդ* լաբանու ի տեսլեանն **ա**: ...*Ընդ* մովսէսի **ճկդ**: ...*Ընդ* ահարօնի առանձինն **է**: - 412. Երկրորդ՝ զի չարչարակից եղև մովսէսի. պահելով զերեք քառասունս *ընդ* նմա: - 414. Հինգերորդ՝ զի մի՛ *ընդ* դառնալն ի վայր՝ ողողեսցէ զներքին կողմ եզերաց գետոյն: - 414. Նա՛խ՝ զի մարդն տէ՛ր է և թագաւոր. և անասունքն ծառայ *ընդ* անցաւոր տէրանց. և ծառայքն պատուհասին. որպէս առ ջրհեղեղաւն: - 416. Երրորդ՝ ի յեղծանիլ պատկերին աստուծոյ որ վասն փառացն աստուծոյ ստեղծաւ, *ընդ* նմին եղծան և ապականեցան այլ արարածք որ վասն փառաց մարդոյն ստեղծան. որ ո՛չ միայն անասունք, այլ և հող և ջուր և օդ երկրին կորուսանեն զպտղածնութիւն. որպէս սոդոմայեցոցն: - 416. Հինգերորդ՝ զի քրէական մեղքն ազգաջինջ առնէ. որպէս զդադան և զաբիրոն. զի *ընդ* մովսէսի և աստուծոյ հակառակ կացին, ազգօք և աղխիւք ընկղմեցան զի այլքն երկիցեն: - 416. Վեցերորդ՝ զի թէ լինի անկարօտ գող և զրկօղ, *ընդ* տեառն իւրոյ կորուսանէ և զինչսն. որպէս աքարն որ ունէր բազում ստացւածս, և գողացաւ ի նզովիցն երիքովի. տեսին ամենայն ժողովուրդն և ցասեան ի վերայ նորա և իրաւունս ետուն սատակմանն: - 416. Եօթներորդ՝ որպէս ինքն պիղծ է, և իւրքն ամենայն պիղծ են. վասն որոյ *ընդ* նմին կորնչին: - 416. Նա՛խ՝ զի մի՛ փախիցեն թշնամիքն. զի *ընդ* երե՛կս էր: - 416. Այլ սուրբն եփրեմ՝ զշրջանս երկնից կացեալ ասէ *ընդ* լուսաւորացն: - 416. Չորրորդ՝ զի լիցին նոքա պատճառ գայթակղութեան նոցա, և խոչ *ընդ* ակն: - 416. Եւ տէր մեր զառաքեալս *ընդ* ծագս. որք համբաւեցին մեզ զյաղթութիւնն սատանայի և դժոխոց: - 417. Եւ տէր մեր զգլխաւորն սատանայի բևեռեաց *ընդ* խաչափայտին: - 418. և Երեսուներորդ, յեսու բաժանեաց զերկիրն ամենայն ցեղիցն. և եղիազար քահանայ և իշխանքն *ընդ* նմա: - 419. Եւ գիտելի՛ է, զի անցեալ *ընդ* յորդանան՝ սատակեցին զորդիսն ենակիմայ. և ապա՛ ժառանգեցին զերկիրն: - 419. Նոյնպէս անցեալ *ընդ* մկրտութիւն և յաղթեալ փորձութեանցն և եկեալ ի քրիստոնէութիւն: - 419. Դարձեալ անցեալ *ընդ* ապաշխարութիւն և սատակեալ զորդիսն բելիարայ, ապա՛ ժառանգեսցեն զարքայութիւնն երկնից ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ: - 419. Երրորդն Սամէգար. որդի անաթայ. որ մաճիւն **ո** այր եսպան՝ ամս **դ**. և Դեբովրա ամս **ե** *ընդ* այլազգեացն: - 420. Եւ **յ** արքն *ընդ* նմա ցամաք մնացին յարենէ մադիանացւոցն որ կոտորեցան: - 421. Այլ ո՛չ այսպէս. զի ե՞րբ եկաց և մնաց *ընդ* արև, կամ յառաջ քան զլուսին սողոմոն. այլ տէրն նորա: - 421. Նշանակէ զադամայինս մարմին ի կերակրոյ պտղոյն հաւասարեալ անբանից՝ *ընդ* բեռամբ մեղաց: - 423. Չորրորդ՝ նշանակ իմանալւոյն դագոնայ, որ զգլուխ իւր ամբարձ ընդ դէմ աստուծոյ. և *ընդ* բռամբ էարկ և կոխեաց զմարդկային ազգ. զորս խորտակեաց տէր մեր: - 426. Երկրորդ՝ անցեալ *ընդ* լերամբ և ո՛չ գտեալ. մինչև առ տեսանօղն եկեալ. և տէր մեր էանց զլերինս հրեշտակաց և եկն ի մարգարէս. և նոքա աւետեցին զգիւտն **գ** օրեայ կորստեան իշոյն...: - 426. Կամ զի աքիմելէք **գճ** քահանայիւք սպանաւ ի սաւուղայ. և աբիաթար փախեաւ առ դաւիթ և *ընդ* նմա՛ էր զամենայն աւուրս թագաւորութեան նորա. և յանուանէ զնա՛ յիշէ: - 427. Եօթներորդ՝ ընդէ՞ր ոչ եկեր *ընդ* նոսա և ոչ նստաւ և ոչ շօշափեցաւ: - 429. Կամ զի աղքատասէ՛ր էր դաւիթ և բազումք շրջէին *ընդ* նմա, վասն այն յեփուսացիքն նախանձեցան: - 431. Վասն որոյ ասաց դաւիթ, ամենայն որ մարտնչի սրով *ընդ* կաղս և *ընդ* կոյրս որպէս ասացին յեբուսացիքն, նա՛ ատելի՛ է անձին դաւթի. և խնայեաց ի նոսա և փրկեաց: - 431. Զի գա՛յ զղջումն և խոստովանութիւն՝ որ զմեղքն բառնայ և զպատիժն *ընդ* նմին. որպէս հատեալ տունկ՝ չորանան ճիւղքն. որ բոլորով սրտիւ զղջայ և խոստովանի և այլ ո՛չ գործէ: - 432. Վեցերորդ, լռեաց՝ զի տէր հատուցէ բարիս *ընդ* այնր որպէս եղև: -

434. Նա՛խ՝ թուել հրամայեաց, որպէս այն որ թոյլ ետ իսրայէլի մարտնչիլ *ընդ* բենիամենի, և անկան **լռ** ի դասուց նոցա: - 434. Երրորդ՝ որք թուեցան *ընդ* աբիսողոմայ և սպանանէին զդաւիթ, այս նոցա վրէժն է: - 434. Երեսուննմի, գիշերի *ընդ* պատուհանն ել, թողեալ զպատանսն յանկողնի. և տէրն ի գիշերի յարուցեալ եթող զկտաւն ի գերեզմանին կնքեալ: - 436-437. Վաթսուներորդ, մարտեաւ *ընդ* ադրիազարու և սպան զնա և քակեաց զկառս նորա, և զթագն եդ ի գլուխ իւր...: - 438. ...և տէրն մարտեաւ *ընդ* բելիարայ և յաղթեաց մահու. և քակեաց զդժխս. էառ աւար զգերեալսն և էհան յարքայութիւնն երկնից. տալով նոցա զանթառամ պսակն: - 438. Դաւթի **գ** արք անւանիք, և աբեսեա չորրորդ *ընդ* նոսա. **գ** աւետարանիչքն, և յոհաննէս որդի սողոմեայ: - 438. Զայս ցուցանէ թէ՝ որ քան ի խռովութեան եմք *ընդ* թշնամւոյն և յանձինս մեր՝ ո՛չ լինիմք տաճար աստուծոյ: - 440. Յնգետասաներորդ՝ *ընդ* աջմէ բազմեցաւ մայրն սողոմոնի: - 441. *Ընդ* աջմէ նստի և որդւոյն մայրն կոյսն աստուածածին: - 441. Եւ տէր մեր զամենայն առակս խօսէր *ընդ* ժողովրդեանն. և առանց առակի և ո՛չ ինչ: - 441. Եւ առաքեալքն զաւազանն *ընդ* չորեքծագեան տիեզերս: - 441. Եւ *ընդ* նոյն ճանապարհն ոչ դառնալ, զանդառնալի պատուհասն: - 442. Ոմանք ասեն թէ ի տաճարէն յերեսաց սեղանոյն *ընդ* առաւօտն և յերեկոյն բերէին ագռաւքն: - 443. Երկրորդ՝ եցոյց թէ նոյնպէս *ընդ* քե՛զ է լինելոց զօրք հրեղինացն նովին հոգւովն: - 445. Իսկ աղն բանն աստուած խառնեալ *ընդ* մարդկութիւնս. որ բժշկեաց զվէրս մեր: - 445. Առաջին րոբովամ որդին նաբատայ. և այլք *ընդ* նմա թագաւորք **ի**: - 446. Որ և յերկրորդ գալուստն նախ դատեսցէ. և ապա թագաւորեսցէ անվախճան. *ընդ* որով քահանայագործութեամբ մաքրէ՛ և լուսաւորէ՛ և կատարեալս առնէ միշտ անզրաւ յաւիտենիւ: - 450. Տեսիլն յոհաննու, և ննջումն էր *ընդ* եղբարսն: - 450. Եւ այսպէս խառնեցաւ ազգն յուդայ *ընդ* ազգն ղեւայ խնամութեամբ: - 452. Եւ էր սաղմոն իշխան ցեղին յուդայ յորժամ անցոյց զժողովուրդն *ընդ* յորդանան յեսու: - 452. Եւ վասն է՞ր յետ խ աւուր համբարձաւ. և նստելոյն *ընդ* աջմէ: - 455. Քանզի ճշմարտութիւնն յառաջանայ *ընդ* խստութեանն: - 459. ...իսկ Աննա ամուսնացաւ ի գալիլեայ *ընդ* յովակիմայ. և ծնաւ զաստուածածինն մարիամ ի պրոպատիկէ ի տունն յովակիմայ. և անտի տարեալ եդև ի տաճարն տեառն: - 460. Զի թէպէտ փակեալ էր օրէնքն խառնիլ երկուց ցեղիցն *ընդ* միմեանս, սակայն ղևտացւոցն ո՛չ գոյր ժառանգութիւն և բաժին, խառնեին երբեմն *ընդ* թագաւորական ազգն յուդայ: - 461. Չորրորդ՝ զի մի՛ վատահամբաւ լիցի *ընդ* ծնանիլն իբր ոչ ունելով այր: - 461. Նա՛խ՝ սրբութիւն հասարակ. որպէս շնորհք մկրտութեան և խոստովանութեան. զի որք անցանեն *ընդ* նա՞ սրբին: - 462. Զբառս զայս ընդունելութեան դնէ՝ *ընդ* քեզ. այսինքն տէրն յետ ծննդեանն *ընդ* քեզ յաւիտեանս յաւիտենից. որպէս ասէր *ընդ* աշակերտսն «ես *ընդ* ձեզ եմ զամենայն աւուրս»: - 464. Իններորդ՝ զի ո՛չ մարգարէիւ յայտնեաց կուսին. որ էր աղօտ գիտութիւն համեմատեալ *ընդ* հրեշտակին: - 464. Տասներորդ՝ այն քան գերազանցեաց պատիւ կուսին, զի այնմ որ մարգարէք գուշակէին զլինելոցն. ի սմա *ընդ* խօսից հրեշտակին եղև կատարումն: - 464. Իսկ ողջոյնս այս ունի համազուգիլ *ընդ* ամենայնսն: - 464. Պարտ ուրեմն էր բանին կենաց ելանել յայնմ անդամոց, որ պատերազմի՛ *ընդ* մահու: - 469. Նա միա՛յն էր մայր և կոյս. որ *ընդ* աստուծոյ ունէր զորդին: - 469. Եւ թէպէտ կատարեալ և լի և անթերի էին մասունք մարմնոյն քրիստոսի. այլ ա՛յն քան փոքրիկ, մինչ զի հազիւ անկարէր *ընդ* տեսութեամբ մարդոյ: - 470. Դարձեալ ի սկիզբն յղութեան անդ բանական հոգւով գիտաց զամենայն միաւորեալ *ընդ* բանին: - 470. Երկրորդ՝ *ընդ* մտանելն յարգանդ բանին՝ շնչաւորիլն և գտանիլն որպէս քառասնօրեայ: - 471. Յինգերորդ՝ նա՛ միա՛յն է ծնունդ համահաւասար կատարելութեամբ զօրութեամբ և իմաստութեամբ *ընդ* հօր...: - 472. Եւ ոմանք յաւելուն այլ ևս զամօթ՝ զտրտմութիւն՝ և զցաւս մարմնական. որ և սոքա *ընդ* նոսա են: - 474. Զի տրտմութիւն արտասուաց *ընդ* մահուանն բարձաւ. իսկ ամօթ և ցաւք մարմնոյ՝ *ընդ* մեղացն բարձան. որպէս ի հատանիլ արմատոյ՝ չորանան ստեղունքն: - 474. Տասներորդ գերագոյն սոցա՝ ըստ բնութեան միաւորութեան. որպէս բանին աստուծոյ *ընդ* մարդկութիւնս: - 474. Իսկ զօծումն բնութեանն միաւորութեան՝ ընկալաւ ի կուսական արգանդին. ուր խառնեալ միաւորեաց զմերս բնութիւն *ընդ* իւրում աստուածութեանն և ծնաւ քրիստոս որ թարգմանի օծեալ: - 475. Զի կամ միաւորի էութիւն *ընդ* էութիւն. կամ պատահումն *ընդ* պատահման. կամ էութիւն *ընդ* պատահման: - 475. Զի էութիւն *ընդ* պատահման միշտ անշփոթ միաւորի. որպէս որակ և քանակ ի գոյացութեան. զի անմեկնելի որոշմունք են: - 475. Իսկ պատահումն *ընդ* պատահման միշտ շփոթմամբ միաւորին. որպէս գոլն ի սևէ և ի սպիտակէ՛: - 475. Եւ այնք որ էութիւն *ընդ* էութիւն միաւորին՝ են որք շփոթմամբ միաւորին. որպէս ջուր *ընդ* գինի. և **դ** տարերք: - 475. Յետ այսորիկ երկրորդ միաւորութիւն սովորեցաք կոչել թէպէտ և ո՛չ իսկապէս՝ և զանհամանիւթից ոմանց. և կամ զհամանիւթից մարմնոց յարադրութիւն. որոց *ընդ* մէջ է մակերևութիւն միայն: - 476. Եւ կամ աննիւթ ինչ և անկերպ՝ *ընդ* նիւթական կերպարանաց ձևացեալ. յորում իւրաքանչիւրոցն էութիւնք անշփոթաբար երևին. որպէս պղինձ գնդացեալ. կամ քուէացեալ: - 476. Եւ կամ

որպէս հուր _ընդ_ գնդացելոյն ձևացեալ պղնձոյ: - 476. Զի այսպէս միատեսակ բնութեամբ խոստովանի _ընդ_ մեզ և այլ ժողովուրդ ուղղափառաց ըստ ուսուցման մեծին դիոնիսեայ յերկրորդ գլուխն եկեղեցական քահանայապետութեանն ասել...: - 477. Չինգերորդ՝ որպէս մարմինն զգայական միաւորեալ _ընդ_ բանական հոգոյ՝ ո՛չ է և ոչ ասի զգայական. այլ բանական մարդ: - 477. Այսպէս և մարդկութիւնն միաւորեալ _ընդ_ բանին՝ ո՛չ ունի տգիտութիւն ինչ մարդկային. այլ գիտէ զամենայն աստուածաբար: - 477. Վեցերորդ՝ որպէս անկենդան մարմինս միաւորեալ _ընդ_ հոգւոյն՝ կենդանի է և ասի: - 477. Այսպէս միաւորեալն _ընդ_ բանին մարմին՝ է՛ և ասի միշտ կենդանի և կենդանարար: - 477. Եօթներորդ՝ որպէս այլայլական և փոփոխելի մարմինս կայ և մնայ անփոփոխ և անապական միաւորեալ _ընդ_ հոգւոյն մինչև ցորոշումն: - 477. Նա՛խ՝ զի միաւորութիւնն մարդոյս եղականա՛ց է _ընդ_ միմեանս: - 478. Իսկ փրկչին բոլորից՝ անեղ _ընդ_ եղականի: - 478. Երրորդ՝ զի հոգի միաւորեալ _ընդ_ մարմնոյ՝ է երբէք զի որոշի և դարձեալ միանայ: - 478. Իսկ բանին աստուծոյ քաջ սիրով եռացումն _ընդ_ մարմնոյ անբաժ և անորիշ գործեաց միաւորութիւն: - 478. Իսկ ի քրիստոս եռակի գոյ միաւորութիւն. այսինքն աստուծոյ _ընդ_ հոգւոյ. հոգւոյ _ընդ_ մարմնոյ. աստուծոյ _ընդ_ մարմնոյ: - 478. Չինգերորդ՝ զի հոգի միաւորեալ _ընդ_ մարմնոյ՝ է՛ ի մարմնումն էութեամբ և ո՛չ այլ ուրեք թէ և մտօք բազումս տեսանէ: - 478. Եօթներորդ՝ զի ի բազմա՛ցելոց հոգի ասէ նիւսացին միաւորի _ընդ_ մարմնոյ: - 479. Ութերորդ՝ զի աստ ի միաւորութիւն հոգւոյ _ընդ_ մարմնոյ՝ զգայակից և ախտակից լինին միմեանց կրական գոլով: - 479. Իսկ քրիստոս ամենևին ա՛կն՝ ամենևին ունկն՝ _ընդ_ հօր և հոգւոյն աստուածաբար ներգործէ: - 479. Երկրորդ՝ զի արարիչն _ընդ_ բութեան կարգս եմուտ. որպէս մարդ լինիլն և ի կուսէ ծնանիլն: - 479. Երրորդ՝ եթէ քահանայ է և թագաւոր. վասն այն _ընդ_ թագին և խա՛չն նկարի: - 481. Իններորդ՝ զի և նոքա իսկ որ զայս ասեն՝ առնեն յունվարի **գ** ճրագալոյց _ընդ_ մեզ. և ճրագալոյցն ո՛չ է մկրտութեան, այլ ծննդեան ի մէջ գիշերի: - 484. Երրորդ որ ասէ «որդի» նշանակէ զհաւասարութիւնն _ընդ_ հօր. զի որդին լսի հաւասար հօր: - 487. Վեցերորդ որ ասէ՝ «հաճեցայ». նշանակէ զմիաւորթիւնն _ընդ_ հօր: - 487-488. Այն է տուտն որ զերրորդ մասն աստեղաց _ընդ_ իւր քարշեաց: - 489. Երրորդ՝ զի **գ** ժամ _ընդ_ արեգականն ընթացաւ և խաւարեցոյց զնա մինչ ի **թ** ժամն: - 490. Ըմպելեաւ, յորժամ ճաշակեաց քացախ _ընդ_ լեղի: - 491. Եւ աստուածութեամբն _ընդ_ հօր և _ընդ_ հոգւոյ ընկալաւ զինքն: - 491. Նա՛խ՝ զի դատապարտեցաւ _ընդ_ մահու: - 491. Երկրորդ՝ զի անհաշտ թշնամութիւն եղև հօր աստուծոյ _ընդ_ մարդոյ: - 491. Եւ վասն անմեղ մահուն՝ հաշտեցաւ հայր աստուած _ընդ_ մարդկան: - 492. Այլ և ցուպն յակոբայ անցեալ _ընդ_ յորդանան. և սանդուղքն ասացեալ: - 494. Այլ և ցիցն ի ձեռին յայելի զոր վարսեաց _ընդ_ ծամելիսն սիսարայ: - 494. Իսկ մահն ո՛չ է պարզաբար չար. այլ շարամանեալ _ընդ_ բարւոյ անուամբ և իրօք: - 496. Նոյն և իր մահուն խա՛ռն է _ընդ_ բարւոյ: - 496. Դարձեալ՝ մահն խառնեա՛լ է _ընդ_ բարւոյ. և ապականութիւնն ամենևին չար. որպէս ցուցաւ ի գիրս քառասնօրեայ գալստեանն և մահուն սիմէօնի. ապա յա՛յտ է թէ ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն: - 498. Այլ անապական մարմին յանապական կուսէ, _ընդ_ անապական էութեանն աստուծոյ միաւորեալ: - 498. Դու զիա՛րդ երկբայիս թէ ի յապականացու բութենէս ադամայ անապական բանն աստուած միաւորեաց _ընդ_ իւր և ծնաւ անապական մարմնով: - 499. Այլ միաւորեալ _ընդ_ ինքեան բաժանեաց զմեղս ի հոգւոյն և զապականութիւն ի մարմնոյն. որպէս հուր ընդ ոսկւոյ միաւորեալ բաժանէ զժանկն ի նմանէ: - 500. Այլ միաւորեալ ընդ ինքեան բաժանեաց զմեղս ի հոգւոյն և զապականութիւն ի մարմնոյն. որպէս հուր _ընդ_ ոսկւոյ միաւորեալ բաժանէ զժանկն ի նմանէ: - 500. Այլ միաւորելով _ընդ_ ինքեան՝ էհան յառաջին անմեղ և անապական բնութիւնն ադամայ: - 500. Ա՛րդ՝ եթէ յանմեղութեանն ապականացու էր ադամ, ապա յառաջ քան զմեղքն էր դատապարտեալ _ընդ_ ապականութեամբ: - 501. Նաև յետ յարութեանն եկեր _ընդ_ աշակերտսն անապական մարմնովն: - 501. Դարձեալ ասեն նոքա, եթէ կրեաց զակամայս _ընդ_ անգոսնելի ծորմանն: - 502. Որ և անդ ժամանեաց տէրն և կապեաց զհզօրն. և զկարծրացեալ ամրոցն աւերեաց. և կողոպտեաց ի նմանէ զհոգիսն մարդկան որ յադամայ հետէ _ընդ_ բռամբ ունէր: - 503. Զի և նա՛ չարչարէ՛ զհոգիս և է կենդանւոյն ի դժոխս _ընդ_ մեզ շրջեալ: - 505. ...վասն զի շնորհաց և ազատութեան էր ժամանակն. պա՛րտ էր մեղաւորացն _ընդ_ արդարոցն վայելել ի շնորհին: - 507. Որպէս բազում անգամ ի ժամանակս պատժոց մեղաց՝ և արդարք _ընդ_ մեղաւորացն կրեն զպատուհասն: - 507. Եւ դարձեալ՝ դարձցին մեղաւորք անդրէն ի դժոխս թէ ի նոյն տեղի ըստ ոմանց, կամ յայլ տեղի տանջանաց _ընդ_ գործոց հատուցման: - 508. Նոյնպէս և որ ոք յայս օրս պահէ և յամենայն կերակրոց չուտէ, կամ միս ուտէ, _ընդ_ դատապարտութեամբ է: - 510. Դարձեալ պատճառե՛ն թէ՝ յետ յարութեանն եկեր ձուկն _ընդ_ աշակերտսն. յորում կրակեաղ կայծականց տեսին և ձուկն խորովեալ և հաց. և օրն էր չորեքշաբաթի. և ի **ե** շաբաթի համբարձաւ: - 511. Նա՛խ՝ զի յետ յարութեանն ո՛չ էր պահք. այլ զատիկ մինչ փեսայն _ընդ_ նոսա էր որպէս ինքն հրամայեաց: - 511. Իսկ ա՛յլ վարդապետք _ընդ_ արշալոյսն առաւօտուն ասեն յարուցեալ ըստ

մարկոսի և այլ աւետարանչացն: - 512. Եօթներորդ՝ դարձեալ յաւուր կիրակէի էանց մովսէս *ընդ* ծովն կարմիր. և ընկղմեցաւ փարաւոն ի տիպ յարութեանն քրիստոսի և կորստեան սատանայի: - 512-513. Որ այսպիսի էր պատկեր աւուրն. յաւուր **ե** շաբաթոջ երեկոյին ի չորեքտասան լուսնին զգառն զենին և ելին յայգ ուրբաթի **ժե** ամսեանն. և ի կիրակէ անցին *ընդ* ծովն որ էր նիսանի **ժէ**: - 513. Եւ յերեկոյի շաբաթուն պատառեցաւ ծովն, և ի գիշերի կիրակէի անցին *ընդ* ծովն և ընկղմեցաւ փարաւոն: - 513. Յորում աւուր կիրակէի ի մէջ գիշերի *ընդ* առաւօտն յարեաւ տէրն ի գերեզմանէն. հանելով զհոգիսն յանապատն երկնից. և խաչանիշ գաւազանաւն ընկղմեցաւ փարաւոն յանդունդս դժոխոց: - 513. Որ և պահապանքն շրջապատեալ. որ և զհանդերձն պատատեալ յանկողնի, և լերդ այծեաց և մազ ի սնարսն. և ի գիշերի իջեալ *ընդ* պատուհանն և ելեալ առ սամուէլ զերծաւ ի ձեռաց նոցա: - 513. ...և զաւարն ժողովեցին ի տիպ խորհրդոյն քրիստոսի. որ ի գիշերի եհար զզօրութիւնն սատանայի և յառաւօտուն ցուցեալ զինքն աշակերտաց իւրոց և զյարուցեալսն *ընդ* իւր: - 514. Այսպէս իմանալի արեգակն քրիստոս ի նոյն ժամն յարեաւ ի գերեզմանէն. և *ընդ* արշալոյսն երևեցաւ իւղաբերիցն և առաքելոց: - 515. Իսկ թէ ոք ասիցէ, աւետարանն *ընդ* արշալոյսն ասէ զգալ կանանցն և տեսանել զքրիստոս: - 515. Ասեմք նախ՝ թէ յարութիւնն ի մէջ գիշերի է որպէս ցուցաւ. այլ երևիլն *ընդ* արշալո՛յսն է: - 515. Եւ զերկրորդն ղուկաս պատմէ՛ վաղ քաջ *ընդ* առաւօտն. և տեսին արք երկու լուսազգեացք. և զվէմն թաւալեալ: - 515. Իսկ **զ**երրորդն մարկոս պատմէ՛ առաւօտուն և յարևագալն յետ ղուկասու. և տեսին երիտասարդ մի ի ներքս ի գերեզմանն *ընդ* աջմէ նստեալ: - 515. Եւ այս հարցանելի է, զի թէ մագդաղենացին *ընդ* առաջին կանայսն եկն զոր մատթէոս պատմէ և համբուրեցին զոտն յիսուսի...: - 515. Այս է, զի յորժամ ի մէջ գիշերին հրամայեաց հրեշտակն գնալ և պատմել աշակերտացն, ա՛յլ կանայքն որ *ընդ* նմայն էին՝ գնացին...: - 515. Զի յինն ժամու ուրբաթուն արձակեաց զհոգին և էջ ի դժոխս. և ապա՛ *ընդ* երեկոյս ի մուտն արևու մարմինն եմուտ ի գերեզման: - 516. Երրորդ սոյնպէս ասեն, *ընդ* տիւն և *ընդ* գիշերն **գ**. որ է՛ ուրբաթն, և շաբաթի գիշերն, և շաբաթի օրն. և յերեկօրեայ յարութիւնն: - 516. Եւ այսպէս սովորաբար խօսիմք, թէ յուրբաթի կէս օրն ելեալ ոք ի տեղւոջէ՛ մինչև գայ առ մեզ ի լոյս կիրակէին կամ *ընդ* առաւօտն, ասեմք թէ **գ** օր է ճանապարհին. նոյնպէս և յարութիւնն քրիստոսի: - 516. Վասն այն ո՛չ ետ մարիամու մերձենալ. այլ պահեաց զնա բազկին այնմիկ որ նստոյց զնա *ընդ* աջմէ իւրմէ: - 518. Զի յաշխարհի աստ նեղութիւն ունիք. *ընդ* իս զխաղաղութիւն ունեցիք: - 519. Այլ ասեն վարդապետք եթէ՝ ի համբարձմանն քրիստոսի *ընդ* իրս տեսանելի է որք են պարագայք համբարձմանն: - 520. Հինգերորդ՝ համբարձաւ զուարճութեամբ. որ վերաբերի առ նոսա որք փրկեցան ի դժոխոցն և *ընդ* նմա ելին յերկինս. զի **բ** բանակօք ել յերկինս այսինքն սպասաւոր հրեշտակք և մարդկան փրկելովք: - 520. Երրորդ՝ վասն մխիթարութեան աշակերտացն. զի **խ** օր մխիթարեսցէ զնոսա փոխանակ **խ** ժամուն որ տրտմեցան ի մահն քրիստոսի. որպէս ասացաւ թէ յարութիւնն ի մէջ գիշերի, այլ երևեցաւ *ընդ* արշալոյսն առաքելոցն...: - 520. Եւ այլք ասեն թէ՝ **խ** օր յերկրաւոր դրախտին եկաց ինքն և յարուցեալքն *ընդ* նմա. և մխիթարեաց զեղիա և զենովք: - 521. Նա՛խ՝ ի կողմանէ պարգևողին. զի յորժամ քրիստոս նստեալ լինէր ըստ մարմնոյ *ընդ* աջմէ հօր իբր զթագաւոր փառաց յաթոռ թագաւորութեան իւրոյ, յայնժամ մեծագոյն լինէր պարգևք հոգւոյն տուեալ ի փառաւոր քրիստոսէ աստուծոյ: - 521. Իններորդ՝ որպէս թագաւորք նախ հաշտին *ընդ* նախապարտս և ապա՛ պարգևաց արժանի առնեն: - 522. Այլ *ընդ* տն մերոյ բազումք խօսակիցք եղեն և տեսին: - 522. Երրորդ՝ և յայսմ աւուր ուխտ եդ աստուած *ընդ* ամենայն ժողովրդեանն իսրայէլի: - 524. Յետ այսորիկ հարցանելի՛ է ի նոր օրինաց և յեկեղեցւոյ կարգաւորապէս *ընդ* մարդեղութեան բանին յարմարեալ. իբր պատճառելիք առ պատճառ նորին հետևեալ և շարադասեալ: - 528. Նախ այն է՝ որ զորդի *ընդ* հօր և սուրբ հոգւոյն փառաւորեմք և օրհնեմք **գ** անձինք ի միում բնութեան. և ո՛չ որպէս հինքն հրէական օրհնութիւնս. որք ո՛չ օրհնէին զորդի և զհոգի: - 528. Այսպէս մի և նոյն բանն է յիւրաքանչիւր աւետարանս ձևացեալ, և *ընդ* աջմէ հօր նստեալ. և ոչ աւելի և ո՛չ նուազ: - 530. Ո՞րպէս է մի կաթուղիկէ եկեղեցի *ընդ* ոլորտս տիեզերաց: - 532. Երկրորդ՝ վասն գերազանց և ծայրագոյն միաւորութեանն քրիստոսի *ընդ* եկեղեցի: - 534. *Ընդ* քրիստոսի միաւորեալ. որպէս փեսայն որդի է, և հարսն դուստր կոչի աստուծոյ հօր: - 534. **Եւ ի կարմրանալ երկնից *ընդ* երեկս և *ընդ* առաւօտս, զերաշտոց և զանձրևոց ի փորձոյ ուսեալք յառաջագուշակ լինին:** - 536. Իսկ կապելն ի դէմս մեղացն է և մեղսասիրաց. որպէս տէր մեր բևեռեաց զմեղս և զսատանայ *ընդ* խաչափայտին: - 540. Ասեմք առ այս, եթէ համակարգ և համիշխանք են վերջինն *ընդ* առաջնոյն ի կարգել և ի յուղղել. այլ ո՛չ ի թիւրել և ի քակել. զի առաջնոյն աւանդապա՛հ է վերջինն նո՛յն մտօք և նո՛յն կամօք: - 541. Որպէս և քրիստոս արար. որ քան մարմնով *ընդ* առաքեալսն էր՝ եպիսկոպոսունս արար զնոսա. և յետ համբառնալոյն՝ հոգւովն սրբով արար զնոսա կաթողիկոսունս: - 546. Առ երկրորդն ասեմք թէ, *ընդ* ուրացութիւնն պետրոսի՝ սիրտ ամենայն առաքելոցն

տրտմեցան և կոտորեցան. և ի զղջումն նորա ամենեքեան հաստատեցան վերստին: - 547. Զի **դ** գլխաւորագոյն աթոռք կարգեցան *ընդ* բոլոր տիեզերս վասն չորից աւետարանչացն: - 549. Սոքա է սիւնք և է խարիսխք են եկեղեցւոյ գլուխ կարգեալք *ընդ* բոլոր տիեզերս որպէս ասացաւ: - 549. **Ասեմք թէ՝ ոչ ինչ է այս նախատինք մեզ. զի հեթանոսք յետոյ հաւատացին և լաւագոյնք են քան զիրէայս. և վերջին մշակքն *ընդ* առաջինսն առին զվարձս. և որք նախանձեցան կորեան**: - 549. Այլ ա՛րդ՝ յամենայն ազգաց ելին հերձուածօղք որ է սուտ. և խառնեցան *ընդ* ճշմարտութեանն: - 550-551. Ասեմք առ այս թէ՝ ո՛չ է հարկաւոր այս ամենայն ուրէք. զի գո՛յ և տարաձայնութիւն բարի՝ քան զհամաձայնութիւն *ընդ* հերձուածօղս. և լաւ է բաժանումն ի չար ժողովոց՝ քան զմիաբանութիւն: - 551. Այլ դաւանութիւն նոցա այս է. որպէս զի մի՛ լիցի ըստ նոցա աստուած մարդացեալ. կամ մերս բնութիւն *ընդ* աստուածութեանն միաւորեալ. որպէս ընդարձակապէս ցուցանէ աստուածաբանն կիւրեղ ի գիրս պարապմանց: - 552. Զի ամենայնն ի բերան մտանէ և *ընդ* արտաքս ելանէ ասեն: - 552. Եւ այլ բազում և զանազան ազգապղծութիւն *ընդ* հոգևորս և *ընդ* մարմնաւորս. երկու եղբարց և բ քերց. և *ընդ* քերց հոգևոր մօր. և անխտիր ի բազմանկողինս և այլս բազումս որ զազիր է խօսելոյ օրէնքէ նոցա: - 552. Եւ այսպէս բազում ունելով իւրաքանչիւր ոք սահմանս առանձին, միայն հայք նախատեալ լինին որպէս ո՛չ ունել միաբանութիւն *ընդ* այլս ի քրիստոնէից. այլ առանձին միայնաբար ընթանալ. և այսու որպէս հակառակ եպերեալ: - 553. Որում փառք և զօրութիւն *ընդ* Յօր իւրում և սուրբ Յոգւոյն ամէն: - 555. Ա՛րդ՝ որք զնոյն ախտանան մտօք՝ զնոյն մեղանչեն և *ընդ* նմին պատժին որպէս ասէ առակն, «նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ. որ ոք զկնի ընթանայ՝ ի նորին սակին է». ապա ուրեմն կատարեալ է մեղք մտացն: - 556. Ապա ուրեմն և հայհոյելն մտօք և մախալն և նենգելն կատարեալ չարութիւն է և մեղք. զոր մարգարէն *ընդ* մարդասպանս կարգէ...: - 557. Նաև զամենայն գլխաւոր մեղս *ընդ* հզօր խորհուրդ ասէ սուրբն եւագրիոս. վասն զի նախ ի խորհուրդն տնկի ամենայն սերմն մեղաց. և ապա ի մարմինն բուսանի և աճէ: - 557. Եւ երկրորդ յանցումնէ՝ որք մտօքն հեշտացեալ մեղկանան *ընդ* տեսութեանն. և հաւանին խոկացեալք ի նոյն: - 558. Եւ այսպէս լինի կատարեալ. մեղք խառնեալ օտարին գաղտնապէս, *ընդ* մտածութեանն բնաւորապէս: - 558. Վասն է՞ր նագրիոս *ընդ* խորհուրդ ասէ մեղաց, և այլ վարդապետք է ասեն զմահու չափ մեղսն: - 559. Զի սատանայ հպարտացաւ յերկինս և նախանձեցաւ *ընդ* մարդոյն. իսկ այլքն ամենայն մարմնականք են ասեն: - 559. Զի առաջին մեղք հպարտութիւնն է որով սատանայ մեղանչեաց յերկինս և անկաւ. և ապա նախանձն զոր *ընդ* մարդոյն արարին: - 561. Վասն այն առաջին է ամբարտաւանութիւն, և *ընդ* նմա նախանձն, և այլքն ըստ կարգի: - 561. Այլ ես հաւանիմ որք ասեն **ժ** գոլ զմեծութիւն մեղաց. և այն համեմատի *ընդ* **ժ** ստորոգութիւնն: - 565. Զի որպէս ի մեղանչել հոգւոյն ապականեցաւ մարմինն ադամայ և եղև դիւրասահ առ վավաշոտ ցանկութիւնն. այսպէս և սերեալ մարմինն քարշելով *ընդ* ինքեան զապականութիւնն՝ աղտեղացուցանէ զհոգին: - 567. Նախանձն է նախանձիլ *ընդ* այլոց բարեբախտութիւն: - 569. Վեցերորդն՝ ելեալ ի յերկինս նստաւ *ընդ* աջմէ հօր. որ է հաւասարութիւն հօր: - 573. Իններորդ՝ խնդայ *ընդ* մեծ գոլն նորա: - 575. Տասներորդ, ցաւի *ընդ* հեռանալն նորա: - 575. Երրորդ՝ ի ստեղծուածոց. զի ամենայն նման սիրէ զնմանն իւր. և խնդայ *ընդ* նմանին: - 577. Սուգն զնախանձն. զի որ սգայ վասն մեղաց այլոց, ո՛չ նախանձի *ընդ* նոսա: - 583. Խաղաղութիւնն արտաքսէ՛ զբղջախոհութիւնն. քանզի *ընդ* ճաշակելն զհոգևորն՝ անհամանայ նմա ամենայն մարմնաւոր: - 583. Իսկ հեզութիւնն նոյն է *ընդ* մաստութիւնն. զի ասեն թէ՝ մաստութիւն է որ ո՛չ զգայ զդառնութիւն ինչ ոգոյ: - 584. Եւ մաստութիւնն է նոյն *ընդ* համբերութեանն. զի համբերութիւնն է տևումն մարմնաւոր նեղութեանց. իսկ մաստնութիւնն է տևումն նախատանաց: - 584. Զի արդարութեամբն անընդմիջաբար միաւորիմք *ընդ* աստուծոյ. որ ո՛չ լինի այլ առաքինութեամբք: - 584. Զի արդարութիւն որ ասէ աստ՝ պարունակէ՛ զհաւատն զյոյսն և զսէրն. որք անընդմիջաբար միաւորեն զմեզ *ընդ* աստուծոյ: - 584. Նախ որ խաղաղութիւն առնէ այլոց *ընդ* այլ. որպէս միջնորդք: - 585. Երկրորդ՝ հաշտեցոյց զհայր աստուած *ընդ* արարածս, և զհոգին սուրբ պարգևեաց: - 585. Երրորդ՝ զիրեշտակս *ընդ* մարդիկ. և զիրեղէն սուրն և զքշնամութիւն եբարձ: - 585. Ա՛րդ՝ առաջինն ինքն առ ինքն խաղաղութիւն. և վերջինն ինքեան *ընդ* այլս խաղաղութիւն. և միջին երեքն, այլոյ ընդ ա՛յլ է խաղաղութիւն: - 586. Առաքինութիւնս այս ցուցանէ թէ համբերել հալածանաց վասն արդարութեան՝ կապակցեալ է *ընդ* խաղաղութիւնն...: - 586. Վեցերորդ, *ընդ* հրեշտակաց զնոր իմաստ և զնոր գիտութիւն առնուն: - 586. Իններորդ, զի մկրտութիւնն է գործ քահանայութեան. և քահանայութիւնն է ազատ և ո՛չ *ընդ* ումեք հարկի ներքոյ. իսկ կինն ծառայ և ոտք է առն. վասն այսր հարկի ո՛չ է պարտ ծառային առնել զգործ տեառն...: - 589. ...բայց թէ ազատեալ լիցի տեառն կամօք. որպէս նեսիմոնս այն. իսկ թէ զայր որ *ընդ* ծառայութեամբ է՝ ո՛չ հրամայեցին հայրապետքն սուրբք գալ ի յաստիճան եկեղեցւոյ...: - 589. Զի և տիրամայր կոյսն ո՛չ էր ի ժամ մկրտութեանն *ընդ* քրիստոսի ի

**ԸՆԴԷ՞Ր +** Ութերորդ ասեն, թէ աստուած ո՛չ կամի զչար, ապա կարեմք առնել ինչ զոր ո՛չ կամի աստուած. ապա *ընդէ՞ր* ասէ աւետարանն, «տերև մի ի ծառոյ ո՛չ անկանի, և մազ մի ի գլխոյ ո՛չ սպիտակի առանց հրամանի»: - 17. Իններորդ ասեն, *ընդէ՞ր* ապա ասէ ինքն աստուած, «ես եմ որ առնեմ զխաղաղութիւն. և հաստատե՛մ զչար. և սպանանեմ և կեցուցանեմ»: - 18. Տասներորդ ասեն՝ *ընդէ՞ր* ասէ մարգարէն, «ի գիրս քո ամենայնք գրեցան»: - 18. *Ընդէ՞ր* ոչ յայտնեաց աստուած զէութիւն իւր ի կեանս յայս՝ մարդկան ազգի: - 24. Մետասաներորդ՝ Աստուած աստուած իմ *ընդէ՞ր* թողեր զիս. և պատասխանիք նոցա **ը** գլխով: - 29. Եօթներորդ հարցումն հակառակորդացն. *ընդէ՞ր* ասէ քրիստոս թէ՝ «առաքեցայ ի հօրէ՛»: - 39. Իսկ «աստուած աստուած իմ *ընդէ՞ր* թողեր զիս», ո՛չ թէ յինքնէ՛ թողալ և կամ ի հօրէ. որպէս թէ երկեաւ ի չարչարանացն. վասն զի կամաւ եկն և ո՛չ հարկիւ: - 42. Տարակուսելի է առ այս, զի թէ հա՛րկ է որոց բնութիւնքն մի գոլ՝ նոցա և կամքն և ներգործութիւնն մի լինիլ. *ընդէ՞ր* ապա զի մարդկային բնութիւնս մի է և նոյն հօրն և որդւոյն՝ և ո՛չ է կամքն և գործքն մի: - 45. Կամ նա՝ զի և հայր է ամենակատար՝ *ընդէ՞ր* ո՛չ լինիցի որդի, զի է՛ ի նոյն բնութենէն: - 53. Ապա թէ ո՛չ՝ *ընդէ՞ր* զանմարմինն ընդ մարմնականացս իմանաս, և ընդ մեռեալս զկենդանին խնդրես ըստ եսայեայ: - 53. *Ընդէ՞ր* մարդն երկու բնութիւն է և մի անձն: - 84. Ապա *ընդէ՞ր* ո՛չ ասէք մի անձն և բ բնութիւն: - 84. Ապա *ընդէ՞ր* ո՛չ ասէք անձամբ միացեալ: - 84. *Ընդէ՞ր* ապա նա միա՛յն երկրպագի յերկնաւորաց և երկրաւորաց: - 95. *Ընդէ՞ր* ապա զնորա մարմինն ճաշակեմք. և ի նա մկրտիմք և նովաւ յառնեմք և այլն ևս: - 95. *Ընդէ՞ր* մայր ո՛չ կոչի յիգական սեռէ: - 109. *Ընդէ՞ր* դուստր ո՛չ անուանի: - 109. Հոգին սուրբ *ընդէ՞ր* ո՛չ կոչի որդի: - 109. *Ընդէ՞ր* այլ հրեշտակք ո՛չ ստեղծ փոխանակ նոցա: - 149. *Ընդէ՞ր* քրիստոս ո՛չ փրկեաց զնոսա որպէս փրկեաց զմարդիկ: - 149. Եւ զի նախագէ՛տ էր աստուած՝ *ընդէ՞ր* ստեղծ զնոսա որ այնպիսիք եղեն: - 149. Եւ թէ ոք ասիցէ, *ընդէ՞ր* այլ մեղուցեալն զղջացեալ մտանէ ի կարգ, որպէս հպարտն և ագահն և պոռնիկն ո՞չ: - 166. Ապա *ընդէ՞ր* սորա՝ գոյացութիւն, որակ, քանակ, և այլքն, եղական գոլով ո՛չ շփոթին ի մի բնութիւն խառնեալ: - 176. *Ընդէ՞ր* մի աշխարհ ստեղծ, և ո՛չ **բ**, կամ այլևս: - 179. Աշխարհս *ընդէ՞ր* ոչ ունի զգայարանք. այսինքն տեսանելիք. լսելիք. և այլն: - 179. Եւ թէ ոք ասիցէ, յորժամ ունի զկենդանութիւն սերմն այն՝ *ընդէ՞ր* ի վիժումն մեռանի: - 256. Եւ թէ ոք հարցանէ, *ընդէ՞ր* է զի ամենայն սերմն ի մէջն է: - 256. Խնդրեմ և զայս ուսանիլ թէ *ընդէ՞ր* է՝ զի մարդս կատարեալ կենդանի է քան զանասունս. և յորժամ ծնանին նոքա ահա՛ ի նոյն ժամն կանգնին յոտից վերայ և գնան, և այլն. իսկ

մարդն ոչ: - 266. *Ընդէ՞ր* է զի նախահարքն յերկարակեացք էին, և մեք սակաւակեացք: - 291. *Ընդէ՞ր* ոչ գիտէ մարդ զկատարած. կենաց իւրոց և զկատարած աշխարհի: - 292. *Ընդէ՞ր* կնոջ զենեալն ոչ ուտի: - 296. Ձձուկն *ընդէ՞ր* ոչ զենումք: - 296. Եւ թէ ոք ասիցէ, մովսէսի *ընդէ՞ր* ասաց՝ ա՛յս է անուն իմ յաւիտեան: - 312. Եւ թէ ոք ասիցէ՝ յորժամ սոյնպէս չարք էին՝ զնոցա բանքն *ընդէ՞ր* գրեաց հոգին սուրբ: - 325. Եւ թէ ճշմարիտ էր *ընդէ՞ր* նո՛ր ինչ ոչ առնէին: - 335. Երկրորդ՝ զի գաւազանն մովսէսի մի վիշապ եղեալ կլանէր զբազում վիշապս նոցա որ և հե՛տն միանգամայն ո՛չ երևէր. *ընդէ՞ր* ապա և նոցայն ո՛չ եկուլ զմովսէսին. քանզի սո՛ւտ էր: - 335. Եւ թէ ոք ասիցէ, *ընդէ՞ր* ծննդեան և յարութեան ը օրէք առնեմք և հոգւոյ գալստեան ո՛չ: - 373. Նա՛խ՝ զի բարկացեալ՝ զէշն կամէր սպանանել սրով. թէ գոյր ի ձեռին *ընդէ՞ր* բանիւ ոչ սատակէր: - 388. Եւ դարձեալ՝ ոչ ինչ շնորհ ունէր բան նորա. զի այնքան օրհնեաց զժողովուրդն, *ընդէ՞ր* ոչ դարձաւ մահն և սատակումն: - 388. Վեցերորդ՝ զի եհարց ի սաւուղ թէ «զո՞ խնդրես». և թէ զառաջիկայն գիտէր, զներկայ միտքն *ընդէ՛ր* ո՛չ գիտաց: - 428. Ութերորդ՝ զի ճչեաց թէ *ընդէ՞ր* խաբեցեր զիս, դու սաւո՛ւղ ես: - 428. Եւ թէ նա՛ յարուցանէր, *ընդէ՞ր* երկու եհան. զի նա՛ միայն զսամուէլ խնդրէր: - 428. Մետասաներորդ՝ *ընդէ՞ր* ոչ ծանեաւ թէ սամուէլ է. զի ասաց՝ «տեսանեմ այլ ալևոր, և կրկնոց զիւրև»: - 428. Երկոտասաներորդ՝ *ընդէ՞ր* յետոյ ստեաց և կինն զտեսիլն զի եղեն զորթն իւր զդիեցիկ: - 428. Նա՛խ՝ եթէ ճշմարիտ յարեաւ սամուէլ, *ընդէ՞ր* ոչ եհար զվհուկն և սատակեաց. և *ընդէ՞ր* ոչ յանդիմանեաց զսաւուղ եկեալ առ վհուկն: - 429. Երկրորդ՝ *ընդէ՞ր* ոչ երևեցաւ սաւուղայ. այլ միայն կնոջն որպէս ասացաւ ի վերոյ: - 429. Երրորդ՝ *ընդէ՞ր* ինքն ո՛չ ասաց թէ ե՛ս եմ սամուէլ. այլ նոքա նմանեցուցին: - 429. Չորրորդ՝ *ընդէ՞ր* հաւանեցաւ աստուածս կոչել զինքն և երկրպագել նմա. զի նա մա՛րդ էր: - 429. Հինգերորդ՝ *ընդէ՞ր* հակառակ աստուծոյ և այլ մարգարէից զծածուկն սաւուղի յայտնէր: - 429. Վեցերորդ՝ *ընդէ՞ր* ոչ քաջալերեաց զնա ասելով, եթէ մեռանիս՝ վհուկդ յարուցանէ՛ զքեզ որպէս զիս: - 429. Եօթներորդ՝ *ընդէ՞ր* ոչ եկեր ընդ նոսա և ոչ նստաւ և ոչ շօշափեցաւ: - 429. Ութերորդ՝ *ընդէ՞ր* սուտ խօսեցաւ: - 429. Նախ այսպէս. զի եհարց թէ *ընդէ՞ր* հաներ զիս. այլ ո՛չ էր հարցեալ թէ գիտէր զխորհուրդն: - 430. Դաւիթ *ընդէ՞ր* ոչ ետ պատասխանի անարգանացն սիմէի: - 433. Եւ թէ *ընդէ՞ր* առն եղև խօսեցեալ: - 454. Դարձեալ ասեն հակառակքն, թէ կատարեալ կենդանի է ձուկն, *ընդէ՞ր* ոչ զենումք: - 511. Իսկ ի համակարգսն վերջինն զառաջ նոյն *ընդէ՞ր* ոչ փոխէ զկանոնսն: - 541. Իսկ համակարգ քահանայք կամ եպիսկոպոսք զնոյն ոմն *ընդէ՞ր* ոչ կապեն կամ արձակեն: - 541. Եւ յոլովք ի գիտողացն ասացին, թէ հաւատք զնեստորին հաստատէք զնա *ընդէ՞ր* նզովէք: - 543. Երրորդ, զի թէ կայր հնար որ ի ձեռն կնոջն տուեալ լինէր շնորհք, աստուածածին կոյսն մարիամ *ընդէ՛ր* ոչ եղև մերձ մկրտութեան որդւոյն իւրոյ ի յորդանան: - 589. Հինգերորդ, զի թէ գո՛յր հնար կնոջ վասն հարկին առնել զգործ քահանայի, *ընդէ՛ր* ոչ կարաց նունի կոյսն մկրտել զոք ի վրաց յորժամ դարձոյց յաստուածգիտութիւն. - 589. ...*ընդէ՞ր* ոչ մկրտեաց զոք ի հաւատացելոցն. մինչև գնաց ի կեսարիա ձեռնադրեցաւ. և ապա եկեալ զհազարս հազարաց և զբիւրս մկրտեաց ի գետն: - 589. Թէ մեղքն ի մահն քրիստոսի թողեալ լինի, *ընդէ՞ր* մկրտիմք մեք: - 592. ...*ընդէ՞ր* զժողովուրդն զրկէք ի հաղորդութենէ մարմնոյ և արեանն քրիստոսի. - 599. Թէ օրհնեալ է՝ *ընդէ՞ր* օրհնէք և թէ ոչ էր օրհնեալ՝ *ընդէ՞ր* տայք ժողովրդեանն իբր օրհնեալ մարմին և մոլորեցնէք զնոսա: - 600. Եւ եղիցի թէ այս օրհնեալ է. զարիւնն *ընդէ՞ր* ոչ տայք: - 600. Դարձեալ ասեմք, *ընդէ՞ր* ժողովրդեանն հաւատ քարոզես, և դու անհաւատանաս ի ճաշակումն արեանն. - 600. Դարձեալ՝ *ընդէ՞ր* ինքն տէրն հրամայէ...: - 600. Եւ թէ ոք ասիցէ՝ *ընդէ՞ր* ապա յորժամ խոստովանին հաղորդին: - 602. Եւ թէ ոք ասիցէ՝ օծումն խորհո՛ւրդ է. *ընդէ՞ր* մեք ո՛չ ունիմք: - 604. Եւ թէ *ընդէ՞ր* ո՛չ յայտնապէս որպէս այլազգաց: - 604. Եւ թէ ոք ասիցէ, զսրբոց մարմինս *ընդէ՞ր* արգելումք: - 617. Այլէլու *ընդէ՞ր* չասեն: - 630. Աստուած անուն *ընդէ՞ր* չկայ: - 631. Յինանցն *ընդէ՞ր* ոչ պահեմք. ո՛չ ուրբաթ և ո՛չ դ շաբաթի: - 654. *Ընդէ՞ր* ոչ ասեմք երեսնաւոր արքայութիւն զերկիր՝ և այլն: - 758. Առ այսոքիւք, թէ արտասուքն որ յաչացն հեղու, *ընդէ՞ր* աղի գոլով, Ո՛չ միայն զվասն էրն խնդրեմ. այլ և զորպէսն դառնալ նմա աղի ընդ երակս աչաց: - 786

**ԸՆԴԻՔՏԻՈՆ +** Ոլոմպիաթն չորրորդ ամ է. զոր հայք նահանջ ասեն. և *Ընդիքտիոնն* **ժե** ամ է. որով հոռոմք վարին: - 191

**ԸՆԴՀԱՆՈՒՐ +** Հինգերորդ՝ զի կանոն *ընդհանուր* ժողովոցն որ եղեն առ նոսա՝ բաւականաբար դաւանութիւն հաւատոյ տըւեալ է: - 64. Այսքան *յընդհանուր* վարդապետաց վասն միութեան և որոշման սրբաբանեալ: - 105. Երրորդ՝ զգայութիւն զմասնաւո՛րն տեսանէ. որպէս այս ինչ մարդ որ է անհատ. և միտք *զընդհանուրն* իմանայ՝ որ է բնութիւն. որպէս մարդկութիւն: - 121. Նոյնպէս կարգ և սահման *ընդհանուր* եղեալ լուսաւորեցին զամենեսեան: - 126. Նախ՝ զի *ընդհանուր* դասք և իւրաքանչիւր անհատք ունին էութիւն՝ զօրութիւն՝ և ներգործութիւն. այսինքն ըստ որում էացեալքեն, և կարողութիւն ունին, և ներգործեն:

- 137. Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ. զի է կոչի աստուած, ըստ այնմ «ես եմ որ էն». և ո՛չ ըստ այնմ որ բաժանի ի գոյացութիւն և ի պատահումն. որպէս հոմանուն կամ փաղանուն. կամ ի միոջէ և առ մի. որպէս *ընդհանուր* էակն է՝ բաժանի առ մեզ: - 171. Իսկ *զընդհանուր* տեսակացն՝ ադամ. որպէս եզն. ձի. և այլն: - 220. Եւ որպէս *ընդ հանուր* մարդկութիւնս լրիւ էացաւ ի տեսութիւնն աստուծոյ յորչափութիւնն և ի թիւն: - 254. Ա՛րդ՝ մի է ամենայն *ընդհանուր* եկեղեցիք որ է բոլոր քրիստոնեայք ըստ հաւատոյն և կոչմանն յուսոյն որպէս սեռիւ: - 533. Նախ՝ որպէս սահմանն պարունակէ՛ *զընդհանուր* սահմանեալսն որպէս սահման մարդոյ զմարդ: - 538. Այսպէս և կանոնն պարունակէ՛ *զընդհանուր* կանոնեալսն: - 538. Ապա յա՛յտ է, զի նըւազ ճշմարիտն առաւել ճշմարտին հետևեսցի. որպէս նուազ բարին առաւել բարւոյն. եթէ *ընդհանուրն* և եթէ մասնաւորն: - 550. Սոցա համաձայնին *ընդհանուր* ամենայն վարդապետք գոլ ի յերկնային խորանս անմարմնոց ի զանազան օթևանս լուսոյ: - 688. *Ընդհանուր* ամենայն վարդապետք ուղղափառաց համաձայնեալ աստուածեղէն գրոց՝ ո՛չ ասեն քաւարան հրոյ: - 698. Եւ հաւատարիմ վկայ *ընդհանուր* յարութեանն զգործս եցոյց. որ զղազար չորեքօրեայ ի գերեզմանէն յարոյց: - 716. Յինգերորդ, զի որդին ծնաւ ի կուսէն և յերկրի շրջեցաւ և քարոզեաց և չարչարանօք փրկեաց և պատճառ եղև *ընդհանուր* յարութեան բնութեանս մերոյ. - 735. Այլ զի մի՛ իրողութիւն դատաստանին և յարութեան ուրուական և առ աչօք թուեսցի *ընդհանուր* ամենայն մարդկան, վասն որոյ ասեն վարդապետք ի յարութենէն մինչ ի գալուստն և քննութիւնն և հրով նորոգիլն և այլն՝ յերկարի միջոցաւ որքան ժամս **զ**: - 747. Զի նւազունք են ամենայն փափկութիւնք որ լինին յաշխարհի մինչև ցօրն դատաստանի, բաղդատեալ առ այն քաղցրութիւն. որպէս կաթիլ մի ջրոյ առ համեմատութիւն *ընդ հանուր* ծովու: - 762

**ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ** (տեքստում նաև՝ ԸՆԹՀԱՆՐԱԿԱՆ) **+** Եւ զորս ես աստ պարկեշտութեամբ լռեմ, *յընթանրական* թղթին յօհաննէս ի նեռն առակէ ասելով. «արդէն իսկ նեռինք եկեալք են. զի ամենայն որ ուրանայ թէ յիսուս չէ՛ Քրիստոսն՝ նա իսկ է նեռն»: - 34. Կաթողիկէն *ընդհանրական* լսի. իսկ եկեղեցին ժողովումն: - 532. Այլ և ասեն թէ *ընդհանրական* կանոնքն ճշմարիտ է քան զառանձնականն: - 550. Նա՛խ՝ թէ ո՛չ ամենայն ուրէք է *ընդհանրականքն* ճշմարտիք. և ո՛չ ամենայն ուրեք առանձնականքն սուտք: - 550. Աhա՛ սոքա *ընդհանրականք* են և ո՛չ են ճշմարիտ. այլ սուտ: - 550. Այլև զգրեալն *ընդհանրական* թողութիւն ի դիմաց նորա ի վերայ գերեզմանին ընթեռնուն: - 674

**ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ** - Մինչև յօր դատաստանին տեսանեն մեղաւորք փառս արդարոց *ընդհանրապէս*՝ այլ ո՛չ մասնաւորաբար. զի տեսանիցեն զնոսա ի մեծ փառս՝ այլ ո՛չ ի յորպիսիս: - 741

**ԸՆԴՀԱՏ +** Ոչ ինչ *ընդհատ* բերելով ի մեզ զօրինակ մեծի սաստկասարսուռն ատենի: - 788

**ԸՆԴՈՒՆԱԿ +** Այժմ պատասխանեսցուք հարցմանն եթէ առաքինութեանն չարութիւն, և արդարութեանն անիրաւութիւն ներհական. որպէս խաւարն լուսոյ. և էութիւն է լոյսն. և ո՛չ էութիւն խաւարն. և օդն *ընդունակ* լուսոյ և խաւարի: - 23. Այսպէս հոգին էութիւն է և *ընդունակ* բարւոյ և չարի. այսինքն առաքինութեան և չարութեան: - 23. Ուստի յա՛յտ է ի սահմանէն. ամենայն մարդ կենդանի բանաւոր մահկանացու մտաց և հանճարոյ *ընդունակ*: - 74. Եւ դու պետրոս՝ մարդ կենդանի բանաւոր մահկանացու մտաց և հանճարոյ *ընդունակ*: - 74. Երրորդ՝ ըստ դամասկացւոյն՝ հրեշտակն ո՛չ է *ընդունակ* ապաշխարութեան. նմին իրի և ո՛չ թողութեան: - 151. Դարձեալ՝ մարդո՛յն է *ընդունակ* լինիլ ուսմանց և լինիլ հեզ և խոնարհ սրտիւ: - 275. Որո՞ց է պատժոց *ընդունակ* եղև: - 279. Եւ որպէս զկենդանարար ջուր *զընդունակս* իւր դալարացուցեալ. ծաղկեալ յաստիս և պտղաբերեալ ի հանդերձեալն. - 768. Եւ առ *ընդունակ* նոցին դադարիլ շնորհին գործելոյ, բացբարձումն է շնորհին իջելոյ: - 783

**ԸՆԴՈՒՆԱԿԱՆ +** Իսկ Գոյացութիւն կոչի աստուած, ո՛չ ըստ որում ներհակ պատահմանց է *ընդունական* որպէս մեք. այլ ըստ որում բաժանի ընդդէմ պատահմանց. որ է՛ միայն պարզ գոյացութիւն որպէս ասացուք: - 171

**ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ +** Զորօրինակ, ժանգ հայելւոյ ո՛չ *զընդունակութիւնն* բառնայ, այլ զտեսութիւնն. և յետ սրբելոյն, նոյն ծածկեալն երևի ի նմա: - 782

**ԸՆԴՈՒՆԱՅՆ +** Երրորդ՝ ասեն թէ կամքն աստուծոյ ո՛չ է *ընդունայն*. և ո՛չ ոք կայ ընդդէմ կամացն աստուծոյ. վասն որոյ զորինչ կամի՝ այնպէս առնէ. զոմն չար և զոմն բարի: - 16. Դարձեալ ասեմք՝ թէ կամքն աստուծոյ ո՛չ է *ընդունայն*. զի զոր ինչ կամի առնէ. այլ կամեցաւ և արար զմեզ անձնիշխան և տէր գործոց մերոց. եթէ չար՝ և եթէ բարի: - 16. Նախ՝ զի *ընդունայն* լինէին խոստմունքն. բարեացն վարձս և չարեացն պատիժս: - 20. Ո՛չ է ըստ չարափառացն ասել ուղղակի՝ թէ նախանձու կամ վասն փառաց որպէս ասեն, զի անգիտութեամբն պատուեսցի. *ընդունա՛յն* է կարծիքս այս. ասել զոր չէ՛ արժան անախտ և պարզ

բնութեանն աստուծոյ: - 24. Ո՛չ են յաւերժահասունք որպէս ոմանք կարծեն թէ յերկուց տարերց այսինքն ի հրոյ և յօդոյ են բանական կենդանիք և ունին ծնունդ և մահ. սուտ է այսպիսի կարծիքս և *ընդունայն* և հակառակ սուրբ գրոց. զի բնական կենդանի և մահկանացու՝ մարդս միա՛յն է որոյ յարութիւն և դատաստան գոյ: - 150. Իններորդ՝ և զեծցին *յընդունայն* վաստակոց կռոցն որ ոչ օգտէին. զի ունայնութիւն լսի գեբաղն: - 402. են և այլ բազում վկայութիւնք ի գրոց սրբոց որ զայսպիսի հերձուածս սուտ և *ընդունայն* երևեցուցանեն: - 590. Երրորդ, զի *ընդունայն* լինին աղօթք և տուրք և այլ օժանդակութիւնք եկեղեցւոյ՝ յորժամ ինքեանք քաւեսցեն: - 698

**ԸՆԴՈՒՆԱՐԱՆ +** Երկրորդ՝ զի ծայնին *ընդունարան* է լսելիքն մերձ գոլով օդոյն: - 131. Իսկ բանին *ընդունարան* է միտքն ի խո՛ր և ի հեռի կացեալ: - 131. Եւ զի գերեզման է մեր և *ընդունարան*: - 211

**ԸՆԴՈՒՆԵԼԻ +** Ոմանք ի դրախտն ևս ասեն թէ տիւ և գիշեր լինի. կամ գարուն և աշուն. զոր մեզ չէ *ընդունելի*: - 222. Եւ այս չէ՛ *ընդունելի*. զի մարդն երրորդութեանն է պատկեր եղեալ որպէս ցուցաւ. և ո՛չ միայն որդւոյ և հոգւոյն սրբոյ: - 273. Եւ այս ևս չէ՛ *ընդունելի*. զի ցուցաւ ի վերոյ եթէ յարացոյցն նոյն ինքն աստուած է ամենեցուն: - 273. Եւ այս ևս ո՛չ է *ընդունելի*. զի սոցա պատասխանի տայ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց թէ՝ որ ասաց զպատկերն, իմանամք զնմանութիւնն ի պատկերին որպէս ցուցաւ ի վերոյ. զի ամենայն պատկեր ՚ի հարկէ նմա՛ն է: - 273. Եւ այս երկոքեանս սո՛ւտ են. և ո՛չ են *ընդունելի* մեզ: - 290. Նախ ցուցանէ զխոհեմութիւն բարուց որ *ընդունելի* է աստուծոյ և մարդոյ. այլ պարզութիւնն է՛ պատարագ: - 356. Եւ կընդրուկն զմասն աստուծոյ *ընդունելի*: - 357. Իսկ հեթանոսք ըստ այնմ որ յանուն աստուծոյ նուիրէին՝ *ընդունելի*՛ էր: - 361. Որ մտօքն է՛ մոլի, և մեղօք հիւանդ, չէ՛ *ընդունելի*: - 371. Սակայն հաճելին մեր՝ *ընդունելի* է աստուծոյ. զառաւել սէրն նշանակէ. զի որ ինչ մեզ անպիտան է, և աստուծոյ անպիտան է: - 371. Այսոքիկ հասարակ կարծիք և *ընդունելիք*: - 391. Այլ այս ո՛չ է հասարակաց *ընդունելի* կարծիք: - 391. Այլ մեզ ուղղափառ եկեղեցւոյս միջինն է *ընդունելի*: - 391. Եւ թէ ասեն, չափաւոր ամուսնութիւն և ինչք *ընդունելի*՛ է աստուծոյ: - 404. Ասա՛ թէ՝ չափաւորն *ընդունելի* է. այլ անչափն պոռնկութիւն և ագահութիւն. իսկ կուսութիւն և աղքատութիւն որ չափ առաւելու՝ այնչափ գեղեցկանայ: - 404. Ոմանք ասեն թէ ի ջուր եթաց և լուաց յօրհնութենէն. և այս ո՛չ է *ընդունելի* կարծիս: - 599. այսինքն մին ի մարմինն. **բ** ի միտքն. **գ** ի կամքն. յորժամ սոքա պատրաստին, ապա՛ աղօթքն *ընդունելի* լինի աստուծոյ: - 620. Այս քան շարականս *ընդունելի*՛ է յեկեղեցի. և աւելին քան զայս՝ խոտելի՛ է և անպիտան: - 638. Երրորդ՝ *ընդունելի* եղև հօր ի հոտ անուշից: - 657. Եւ տարի՛ է քրիստոս. և ամ տեառն *ընդունելի*. և **բժ**ան ամիսք առաքեալքն: - 683. Իսկ չորրորդն և հինգերորդն *ընդունելի* են. և սակաւ զանազանին...: - 687. Ահա՛ ժամանակ *ընդունելի*. ահա՛ օր փրկութեան. մի և մի իւիք տայցէք պատճառս. զի մի՛ արատեսցի պաշտօնն: - 698. Եւ այսպէս ասացեալքս թերի՛ են և ո՛չ *ընդունելի* եկեղեցւոյ: - 706. Սո՛ւտ է այս և չէ՛ *ընդունելի* որպէս ցուցանելոց եմք: - 729. Երկրորդ, ապաշխարութեան ժամանակն *ընդունելի* է. իսկ որ քան մարդ է ի մեղս՝ ո՛չ է հաճոյ աստուծոյ: - 780

**ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ +** Զբառս զայս *ընդունելութեան* դնէ՝ ընդ քեզ. այսինքն տէրն յետ ծննդեանն ընդ քեզ յաւիտեանս յաւիտենից...: - 464. Իսկ *ընդունելութեան* ժամանակ **գ** են ասացեալ վարդապետք: - 779. Երրորդ՝ ժամանակ կենցաղոյս մինչև ի մահ, է՛ *ընդունելութեան* աստուծոյ. ըստ որում բազմեալ է յաթոռ շնորհաց ըստ առաքելոյ. իսկ յետ այնորիկ ո՛չ ևս. զի փոխի յաթոռ դատաստանաց ըստ աւետարանին: - 780

**ԸՆԴՈՒՆԻՄ (ԸՆԿԱԼՈՒՄ) +** Եթէ ոք գիր ո՛չ գիտէ, և ո՛չ զվակյութիւն *ընդունի* սուրբ գրոց, որպէս ցուցանեմք նմա թէ է՛ աստուած: - 25. Եւ զի ո՛չ *ընկալան* զարեգակն արդարութեան զքրիստոս, անկան ի լուսոյ ի խաւարն: - 27. Նոյնպէս ո՛չ կարէ իմանալ յորժամ ի սուրբ գրոց և ի սքանչելեաց և ի բանից սուրբ վարդապետաց՝ դարձուցանէ զմիտքն. որպէս ասէ առակն՝ պակասամիտն ոչ *ընդունի* զբանս խոհեմութեանց. բայց միայն զայն՝ որ շրջին ի միտս նորա: - 31. Երկրորդ և ոչ վասն յետին յանցանացն կռապաշտութեան եպերեմք զիմաստութիւն նորա և ո՛չ *ընդունիմք*. թէպէտ և հնա՛ր է պատճառել թէ այնքան իմաստութիւնն, զնա ո՛չ պահեաց հաճոյ մնալ աստուծոյ: - 40. Իսկ անտօն և ո՛չ գիր գիտէր՝ ո՛չ թէ այնքան իմաստութիւն, որպէս հաճոյ եղև աստուծոյ. մեք յի՞նչ հաւատամք և *ընդունիմք* զայն իմաստութիւն: - 40. Դարձեալ անդրանիկ է ըստ շնորհաց հոգւոյն զոր *ընկալաւ* ո՛չ վասն կարօտութեան՝ զի լիապէս ունէր այլ զի գլուխ էր մեր՝ ընկալաւ՝ զի յանդամս իւր սփռեսցէ: - 41. Պատասխանեմք նախ, որպէս ասէ ոսկէբերանն թէ՝ նորածնեալքն աւազանաւն՝ ըստ չափու շնորհացն արժանաւորեին իմաստութեան, թարգմանութեան, և այլն. այսպէս և ոմն շնորհս *ընդունէր* աղօթելոյ կարգաւորապէս. զի ի նմանէ ուսանէին և այլքն աղօթել: - 59. Վեցերորդ վկայ ի ժողովոյն քաղկեդոնի զոր նոքա *ընդունին* և ո՛չ մեք. այսպէս է գրեալ թէ՝ որ ոք զհոգին ի հօրէ և յորդւոյ բղխումն ասիցէ՝ նզովեալ լիցի: - 64. Չորրորդ՝ զի ամենայն իր յայլմէ *ընկալեալն* լինի և ի

բաց ընկենլի: - 66. Եւ զայս դու բաժանօղդ` յո՞ր դէմս ասես այսպէս *ընկալեալ*: - 70. Եւ դու այսպէս *ընկալ* և հաստատեա՛ ի քեզ. և լեր միացեալ ամենայն դիմօք և խաղալեօք ի համայնից գլուխն միշտ պաշտաճութեամբ ի քրիստոս: - 76. Ելե՛ր ի բանէդ և դժուարինս խօսիս. և զոր հարցի` ո՛չ *ընկալայ* զպատասխանին: - 92. Ահա զսակաւ ընծայ կարճառօտութիւն բանիս *ընկալ* ի քում ընդարձակութեան գանձարանի սրտի` երիցագոյն հարազա՛տդ Գէորգիէ: - 95. Իսկ հաւատոյն վարձս *ընդունի* և փառս: - 122. Եւ ըստ չափոյ *ընդունողաց* ծնանի քրիստոս ի սիրտս մեր: - 125. Նոյնպէս հրեշտակաց և դիւաց` չարաց ի մարդկանէ և բարեաց ընտրութեան հոգի *ընկալար*: - 126. Զի ոմանց տացի և յաւելցի. և յոմանց բարձցի և պակասեսցի ըստ չափու ունակութեան *ընդունողաց:* - 127. Նախ է՛ գործ իմաստութեան աստուծոյ. որով զանազանեսցին արարածք` առաւել և նըւազ *ընդունելով*. և մի՛ խառնափնդոր և անզանազանապէս: - 130. Երրորդ` է՛ գործ նախախնամութեան. զի ըստ ընտանի կարողութեան իւրեանց` համեմատապէս զպարգևս *ընկալցին*. զի մի վնասեսցին փոքունքն մեծամեծօք. և թերի մնացին մեծամեծքն սակաւուք: - 130. Իսկ թէ ո՞րպէս ի մի և նոյն պարզ պարգևացն զանազանապէս *ընկալցին*, ասէ սուրբն դիոնէսիոս` «ըստ հնչման ձայնի»: - 131. Զի մի՛ է ձայնն յառաջ եկեալ յասողէն. իսկ լսօղք` առաւել և նըւազ *ընդունին*: - 131. Իսկ առողջ լսելիք և տկար` պատճառի ի համակարգս. և ի հաւասարն բնութեամբ. որք իմացմամբ և սիրով և ներգործութեամբ առաւել կամ նըւազ են. ուստի առաւել կամ նըւազ պարգևս *ընդունին*: - 131. Վասն երրորդին անչա՞փ է թէ չափաւոր` գիտելի՛ է, զի անչա՛փ է շնորհն ըստ իւրում ինքնութեան. այլ չափաւորի՛ ըստ տըւողին կամաց և ըստ *ընդունողին* կարեաց. որպէս բան մարդոյ ի լսելիս: - 140. Իսկ այլք ասեն թէ` հրեշտակն ո՛չ երևի ձևացեալ մարմնովն և ո՛չ խօսի ընդ մարդոյն. այլ` դնէ զնմանութիւն դիտաւորութեան ի յաչքն կամ ի յականջն մարդոյն. և անդ *ընդունի* հասարակ զգայութիւնն զտեսակս այնմիկ, և տայ յերևակայութիւնն և յիմացականն. այսպէս երևին հրեշտակք և խօսին ընդ մարդոյ: - 145. Վասն այն թէ քրիստոս զմի հրեշտակի բնութիւն *ընդունէր*` զնա միա՛յն փրկէր և այլքն արտաքոյ մնային փրկութեան: - 149. Վասն արդարութեան. զի արդարապէս վարձս *ընդունիցին*: - 149. Այլ ետ նոցա անձնիշխան կամս` զի կամովին ընտրեսցեն զբարին և արդարապէս զհատուցումն *ընկալցին* զի մի՛ երբեք մեղանչել կարիցեն: - 149. Զայսմ վիշապէ՛ ասէ` զգլուխ վիշապին փրկիչն ջախջախեաց ի յորդանան. այն է որ զամենայն ջուրս ծովուն յականակապիճս իւր *ընդունէր*: - 151. Նոյնպէս և առ մեզ` որք մրցին և ջանան ընդ դէմ բանսարկուին և մեռուցանեն զէ գլուխ նորա` նոքա զնոյն պսակն ժուժկալութեամբ և առաքինութեամբ *ընդունին* ի գլուխս իւրեանց յիւրաքանչիւրոցն զորս կոխեն և յաղթահարեն...: - 152. Եօթներորդ` թոյլ տուեալ լինի և ոմանց անկանիլ ի մեղս ինչ. զի ի հպարտութենէն զոր ունէր վասն առաքինութեան` խոնարհեսցի և անկցի առաջի տեառն խոստովանութեամբ. և *ընկալցի* զթողութիւն. որ նախ համասե՛ռ էր սատանայի: - 159. Ութերորդ` թոյլ տալով սրբոց չարչարիլ` վասն պսակացն առաւելութեան է. զի կենցաղս այս հանդէ՛ս է նահատակութեան. և ըստ չափոյ համբերութեան` առցէ զյաղթանակն. որպէս սրբոյն ստեփաննոսի. զի ունէր զսարկաւագութեան և զառաքելութեան պատիւն, *ընկալաւ* և զմարտիրոսութեան պսակն ի քարկոծումն իւր. այսպէս և այլքն...: - 159. Ասեմք առ այս Նա՛խ` եթէ թողութիւնն է ի զղջումն. և կարգն է ի յանձն ապականեալ. ապա ուրեմն իրաւի թէպէտ զթողութիւն *ընկալաւ* զղջմամբն, սակայն ի կարգն ո՛չ մտանէ ապականեալ և շրջեալ անձամբ և բնութեամբ, զորօրինակ բեկեալ և կցեալ անօթ` ո՛չ թւի ի կարգ անարատիցն: - 166. Դարձեալ ասեմք, թէպէտ զթողութիւն *ընկալաւ* իսկապէս, և զպատիժս կրեաց հատուցմամբն, սակայն մնաց կնիք ապականութեանն ի յանձն որպէս ասացաք: - 166. Դարձեալ և ի յառակս անառակին որ դարձաւ առ հայրն` և ողջմամբ *ընկալաւ* և զգեցոյց զնա և զարդարեաց մատանի ի ձեռս` և կօշիկ յոտս. այլ ո՛չ ետ թոյլ նմա պատարագել. այլ հրամայէ՛ այլոցն...: - 167. Եւ զայսպիսի զօրութիւնս ո՛չ երբէք ասեմք ի վերայ աստուծոյ. զի մշտնջենաւոր էութիւն է. և ոչ *ընդունի* զգոլն և զչգոլն: - 168. Եւ ուսեալք զայս, *ընկա՛լ* և այժմ զլուծումն խնդրոյն. եթէ լինելութիւն աշխարհի ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ ո՛չ է զօրութեամբ` այլ ներգործութեամբ վասն բազում պատճառի: - 168. Նախ` զի զգոլն իւրեանց ունէին ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. թէպէտ յետո՛յ *ընկալան* գոյացութիւնս յինքեանս. որպէս տաճար ի միտս շինողին: - 170. Եւ յորժամ ի միւս կիսագունդն հասանէ, ընդ զ կենդանակերպս հետևեալ` բոլորի լոյսն ի նմա. զի ուղղապէս զլոյսն *ընդունի*: - 187. Եւ լուսաւոր անօթքն ի չորրորդում աւուր կազմեցան ի յօդոյ. և իւրաքանչիւրքն *ընկալան* զլոյսս և եղեն լուսաւորք: - 188. Այլ եերորդ էութիւնն է պարզ և հաւասար. առաւել և նուազ ո՛չ *ընդունի*: - 188. Եւ այն որ կրկին լինի, ներքին պայծառն է տիպ յարեգակնէն. և վերին նուազն զտիպ ներքնոյն է *ընկալեալ*: - 203. Եօթներորդ` զի ամենայն գետս ելեալ ի ծովէ, դարձեալ ծովն ի յինքն *ընդունի*: - 207. Եւ յետ յարութեանն *ընդունի* զպտուղ. որ է՛ պարգևք խոստմանց անվախճան կենացն: - 213. Նա՛խ` զի բոյսք և խոտք մե՛րձ են երկրի, զշարժումն նորա

դիւրա՛ւ *ընդունին*: - 214. Իսկ ծառք միջնորդութեամբ փայտին ի հեռուստ *ընդունին*: - 214. Եւ ոմանք միայն զգալի և ապականացու և ծորելի որպէս երկիրս այս. և զայսոսիկ ո՛չ *ընդունիմք* մեք ճշմարտութեան հետևօղքս: - 221. Եւ զայս *ընդունիմք* մեք: - 221. Զորս զայնպիսի ասացօղքն և *ընդունօղքն* որոշեալ նզովէ՛ եկեղեցի քրիստոսի աստուծոյ: - 226. Երկրորդ՝ պատուական մասն մարդոյն գլուխն է. վասն որոյ զվերինն և զառաջինն *ընկալաւ* տեղի: - 232. Եւ հոտոտելիքն զառ ի վայր է, նա՛խ՝ զի հոտն վերընթա՛ց է՝ յինքն *ընդունի*: - 235. Եօթներորդ՝ զի ո՛չ կարէին ընտրել և խոտել զչարն և զբարին, և զսուրբն և զանսուրբն ի մարդկանէ, թէ գործ սորին է այս կամ այն. այլ անմեղութեամբ յարակցեին պղծոյն, և զխեղդ ոգւոց նորա *ընդունէին*: - 238. Նա՛խ՝ զի զգայարանքն նորա որպէս զկակուղ մոմ առաւել *ընդունի* զտիպն: - 251. Զի կազմողական զօրութիւնն որ է՛ ի նիւթն՝ ազդումն առեալ յարարչադիր հրամանէն, նախ կազմէ՛ և պատրաստէ՛ զնիւթն առ ի *յընդունելոյ* զտնկականն. և ապա զզգայականն. յետ որոյ զբանականն ի ծագմանէն աստուծոյ: - 254. Ասեմք եթէ՝ ի կողմանէ նիւթո՛յն կարելի է ասել. զի զոմն ունի, և զոմն *ընդունի*. այսինքն զտնկականն ունի, և *ընդունի* զբանականն: - 254. Զի զօրութիւն ունի այս նիւթ՝ *ընդունել* զբանականն. զոր նիւթ անասնոցն ո՛չ կարէ *ընդունել*: - 254-255. Երկրորդ՝ շնորհիւ *ընկալեալք* որպէս բեսէլիէլ. եղիաբ ուրիեանց. և սողոմոն: - 269. Քսաններեկ, զի շնորհ քահանայութեան *ընկալաւ*: - 272. Զի զանմահութեան և զանապականութեան սկիզբն և զսերմն *ընկալաւ* ադամ: - 282. Իսկ զփոխարէն պարգևսն զոր *ընկալաւ*, Վասն առաջնոյն՝ զի ասէ գիր, «հայեցաւ», այսինքն հաճեցաւ աստուած ի հաբէլ: - 286. Վասն երկրորդին՝ զի ասէ՝ «և ի պատարագս նորա». այսինքն զի *ընկալաւ* ի հոտ անուշից: - 286. Վասն եերորդին՝ զի զանդրանկութեան օրհնութիւնն *ընկալաւ* որպէս յակոբ զեսաւայն: - 286. Որպէս կայեն յորժամ սպան զաբէլ, պատճառեաց ծնողացն եթէ զնորա պատարագն *ընկալաւ* աստուած և վերացոյց ի դրախտն: - 290. Վեցերորդ՝ նուիրեաց մելքիսեդեկ զպատարագն և *ընկալաւ* զտասանորդն. որպէս քրիստոս պարգևէ՛ հաւատացելոց զշնորհս, և առնու զտասնեակս զկատարեալ և զբարի գործս. կամ զտասն բանեան օրէնս ժ զգայարանօք: - 301. Տասներորդ՝ որպէս մելքիսեդեկ ետ զայն և *ընկալաւ* յաբրահամէ՛ զտասանորդսն: - 302. Գիտելի է, զի ամենայն պատարագ յերեք դէմս որոշի. այսինքն մատուցօղն, և *ընդունօղն* և պատարագն: - 306. Եւ է՛ որ մատուցօղն մեծ է քան *զընդունօղն*. որպէս մելքիսեդեկ քան զաբրահամ. և քահանայն մեծ է քան զժողովուրդն որ ճաշակէ: - 306. Այսինքն մեծ գոլ մատուցօղն և *ընդունօղն* և պատարագն: - 306-307. Երրորդ՝ դարձեալ ինքն *ընկալաւ*: - 307. Եւ աստուածութեամբն ընդ հօր և հոգւոյ՝ *ընկալաւ* ինքն: - 307. Նոյնպէս և տէր մեր փոխանակ շնացօղ ազգին հրէից *ընկալաւ* զեկեղեցի կոյս՝ և սուրբ ժողովուրդ իւր: - 313. Նոյնպէս և քրիստոս իմաստութեամբն իւրով կերակրէ՛ զնոսա և զգեցուցանէ որպէս իդ երիցանցն, որ տուաւ նոցա արկանելիս սպիտակս. այս է շնորհն մաքրութեան զոր *ընկալան* ի քրիստոսէ: - 315. Նմանապէս և միջակ կապիւն, զի ուսանիմք յաստուծոյ *ընկալեալք* զկարգ կրօնիցն. և ունիմք ուխտ և դաշին և հնազանդութեան նմա...: - 318. Քսաննմի, մովսէս դ ծնունդ *ընկալաւ*. ի մօրէ և ի ջրոյ՝ ի հրոյ և ի վիմէ: - 329. Եւ ամպն *ընկալաւ* զնա յաչաց նոցա և վերացաւ առ հայր: - 330. Վասն զի ե տանջանօք չարչարեաց զիէլ, կրկին *ընկալաւ* զհատուցումն: - 335. Եօթներորդ՝ զի որ աշակերտի մովսէսի՝ զլոյս *ընդունի*. և որ ո՛չ աշակերտի՝ ի խաւար մնասցէ որպէս քանանացիքն: - 352. Տասներորդ՝ զի որ զայնպիսի լոյսն յինքն *ընկալաւ*, զամօթ առականացն ադամայ ո՛չ ստացաւ: - 352. Առաջին, երեքօրեայ սրբութեամբ յիսներեկի աւուրն ելից յեգիպտոսէ. որ *ընկալաւ* զտասնբանեան օրէնս և պատմեաց ժողովրդեանն: - 352. Նա՛խ՝ զի սովոր էին յեգիպտոս կռո՛ց զոհել, զայն նուէրքն ի յինքն *ընկալաւ*: - 355. Երկրորդ՝ ի յօրինակ նորոյս պատարագի *ընկալաւ*. զի անդ ստուերն է. և աստ ճշմարտութիւն: - 355. Եւ իւղով զանգեալ և օծեալն, զի իւղով աստուածութեամբն օծաւ. այլ և զհոգին սուրբ *ընկալաւ* ի յորդանան: - 361. Այլ ապաւառ է՛ մեղքն մեր զոր *ընկալաւ* յինքն և մաքրեաց զմեզ: - 383. Այսպէս ի նորս խոստովանօղն սրբի. և *ընդունօղն* աղտեղի: - 384. Նա՛խ՝ զի է էր պատարագն. վասն զի մատոյց է զուարակ. և է խոյ. վասն որոյ *ընկալաւ* պարգևս է բանից մարգարէութեան: - 387. Նա՛խ՝ բանիւ ասաց. զի նահապետք բնական օրէնք *ընկալան*. աբրահամ. նոյ. և այլք: - 395. Չորրորդ՝ խորհրդական. զի մի է քրիստոս փեսայ. և զեկեղեցիս հրէից և հեթանոսաց *ընկալաւ* իւր հարսն սուրբ: - 401. Եւ նոյնպէս ամենայն հաւատացեալք մկրտին. և զնոյն շնորհք պարգևաց *ընդունին*: - 421. Նշանակ եօթնարփեան հոգւոյն *ընկալեալ* անկարօտաբար իբր ի գլուխ տէր մեր, և պարգևեալ անդամոց իւրոց: - 422. Չորրորդ՝ զի թէ սամուէլ էր որ ասաց թէ՝ տէր հեռացաւ ի քէն, և այս ո՛չ է մարգարէութիւն. զի կրկնեաց զիւր բանն. և թէ ո՛չ էր սամուէլ, այլ զանունն *ընկալաւ* և ինքն դև էր, սուտ խօսեցաւ ապա: - 430. Քսանևզ, ետ զանձս և *ընկալաւ* զիմաստս և զաստուած գիտութիւն: - 441. Եւ որպէս ասէ կղէմ և անանիա դամասկացի, թէ զ գիրք այլ *ընկալաք* յեկեղեցի: - 450. Այլ *ընկալեալ* են ի կարգս Աստուածաշունչ գրոց: - 451. Իսկ զչորրորդ սրբութիւնն որ է՛

միաւորութիւն բանականին առ աստուած, և միշտ ներգործապէս դիմել առ աստուած որպէս հրեշտակք. *ընկալաւ* աստուածածին կոյսն ի յղանալն զորդին աստուծոյ: - 463. Եւ այն ևս սքանչելիք, որ ի փոքրագոյն մարմինն *ընկալեալ* եղև հոգի բանական, և տեսակաւորեալ որպէս քառասնօրեայ մանուկ յարգանդի: - 470. Երրորդ՝ կոչի անդրանիկ ըստ հոգւոյն շնորհաց. զոր նախ *ընկալաւ* իբր գլուխ՝ և եհեղ յանդամքս իւր: - 473. ...իսկ մեք ո՛չ ի գործոց, այլ ի հաւատոցն քրիստոսի *ընկալաք* զսկզբնական արդարութիւնն և զներգործութիւն մարմնոյ և զսրբութիւն մտաց: - 473. Եւ այս գիտելի է, զի բանն աստուած ի տնօրէնութեան իւրում *ընկալաւ* զամենայն եղանակս օծութեան: - 474. Զօծումն մարմնական *ընկալաւ* ի պոռնիկ կնոջէն յորժամ եբեկ զշիշ իւղոյն ի գլուխ նորա ի տան սիմոնի: - 474. Իսկ զօծումն բնութեանն միաւորութեան՝ *ընկալաւ* ի կուսական արգանդին. ուր խառնեալ միաւորեաց զմերս բնութիւն ընդ իւրում աստուածութեանն և ծնաւ քրիստոս որ թարգմանի օծեալ: - 475. Նոյնպէս և ճանաչումն հասակի *ընկալաւ* ի փոքրութենէ ի մեծութիւն: - 479. Քանզի ո՛չ կարէին ի միում աւուր յերկոտեան ուխտսն կատարել զտօնսն հեռի գոլով ի միմեանց. երուսաղէմացիքն այսր աղագաւ փոխեցին. և փոքր փոքր աճմամբ *ընկալան* և ա՛յլ եկեղեցիք զնոյն: - 482. Այսպէս *ընկալեալ* ի նոցանէ և նիկիականն ժողովք՝ հաստատեցին առ մեզ: - 484. Իսկ տէրն մեր էր անդրանիկ ի հօրէ և անդրանիկ ի մօրէ. և անդրանիկ շնորհաց և արդարութեան. և անդրանիկ յարութեան մեռելոց. վասն որոյ անդրանկապէս *ընկալաւ* զօրէնս թլփատութեան: - 486. Չորրորդ՝ մկրտութիւնն յովհաննու որ մկրտէր ի յապաշխարութիւն. զի կարասցեն *ընդունել* զհոգւով մկրտութիւնն. վասն այն յառաջէ՛ր և սրբէ՛ր ջրովն: - 488. Երկրորդն է՛ տարածումն բազկացն ի գիրկ արկանել. և նշան *ընդունելոյ* զդարձեալսն ի մեղաց: - 489. Այլ և գիտելի է, զի ամենայն պատարագ յերեք դէմս որոշի. որ է՛ մատուցօղն, և *ընդունօղն*, և պատարագն: - 491. Եւ է՛ որ մատուցօղն մեծ է քան *զընդունօղն*. որպէս մելքիսեդեկ քան զաբրահամ. և քահանայն մեծ է քան զժողովուրդն որ ճաշակէ: - 491. Իսկ չորրորդն է՛ պատարագ տեառն մերոյ քրիստոսի որ ի մի դէմ անձնաւորութեան գ երես պատարագին բացայայտեցաւ. այսինքն մեծ գոլ մատուցօղն և *ընդունօղն* և պատարագն: - 491. Երրորդ՝ դարձեալ ինքն *ընկալաւ*: - 491. Եւ աստուածութեամբն ընդ հօր և ընդ հոգւոյ *ընկալաւ* զինքն: - 491. Վեցերորդ՝ ածաւ վերստին առ պիղատոս. և անդ խնդրեցին ի խաչ հանել. և զկնի ծաղեալ. և թուր *ընկալեալ*. և ի խաչ դատապարտեցաւ: - 492. Այլ և գաւազանն ի ձեռն հրեշտակին. որ *ընկալաւ* զպատարագն գեղէովնի: - 494. Որպէս այնոքիկ որք զօրացան այսու մահուամբ և զորդեգրութեանն *ընկալան* շնորհ և նախատակեցան, նոքա չարչարակից եղեն քրիստոսի, և փառացն հաղորդակիցք: - 497. Եւ տէրն ի մարդեղութեան իւրում *ընկալաւ* զոր ինչ բնականն էր մարդոյս բնութեան. և ոչ զեկամուտ անասնականն: - 502. Այլ զայսոսիկ ո՛չ *ընդունին* ուղղափառ վարդապետք: - 504. Իսկ հոգիքն ի դժոխս յորժամ տեսին զքրիստոս, այն էր ժամանակ փրկութեան նոցա և *ընդունելոյ* զողորմութիւն. յաղագս որոյ հաւատովք արդարացան նոքա միայն ի նոյն ժամն: - 508. Իններորդ, ասէ «մի՛ մերձենար», զի մարմինն այն պտուղ էր կանուխ դժոխոցն. և ինքն տէր մեր իբրև քահանայ նոր յամենայն ծեռաց պահէր զգուշութեամբ, զի պահեսցէ զնա ի ծեռինն որ կարօ՛ղ է *ընդունել* զայնպիսի պատարագն: - 517-518. Զի զանպարտ արիւնն իւր ցուցանէ հօր. և զխոցուած բևեռացն զոր վասն մեր *ընկալաւ*: - 519. Երրորդ՝ զի պա՛րտ էր քրիստոսի հովուել զպարզամիտ աշակերտսն որպէս հաւ զձագս, և մայր զմանկունսն. և թէ ի սկզբանէ զհոգին *ընկալեալ* էին՝ ո՛չ էր պիտոյ հովուել զնոսա: - 521. Չինգերորդ՝ զի գիտասցեն թէ քրիստոսիւ պարգևեցաւ. թէ յառաջագոյն էին *ընկալեալ*, պարզապէս յաստուծոյ կարծէին զտուչութիւն հոգւոյն և ո՛չ ի քրիստոսէ: - 521. Նոյնպէս պա՛րտ էր զսերմն հաւատոյ *ընդունել* նոցա քրիստոսիւ, և ապա փոքր փոքր աճմամբ հասանիլ պարգևաց հոգւոյն, և պտղաբերել և զայլսն: - 521. Երկրորդ՝ ի կողմանէ *ընդունողաց* առաքելոցն. զի պատշաճաւորեցան հոգոյն սրբոյ. զի փործիւ գիտէին զվարդապետութիւնն քրիստոսի, զմահն և զյարութիւնն և զայլսն: - 521-522. Երրորդ՝ ի կողմանէ հոգւոյն սրբոյ. զի առաւել հռչակելի և փառաւոր եղև այսպէս. զի *ընկալեալ* զհոգին՝ վաղվաղակի սքանչելիս առնէին վկայելով քրիստոսի. և զառաքեալսն առատապէս լցուցանելով, և նոքա զայլսն: - 522. Զի ո՛չ միայն համարի մեծ և փառաւոր զաստուածությունն նորա, այլ և զաղքատութիւնն և զանարգանս և զմահն. և յայնժամ արժանացի առատապէս *ընդունել* զհոգին սուրբ: - 522. Այսպէս որք *ընկալան* զհոգին ևս փափագին նմա: - 523. Եւ թէ ոք ասիցէ, զնոյնութիւնն *ընկալայ*. այլ ինձ այսպէս թուի թէ աւետարանս բանն է քրիստոսի, և քրիստոս բանն աստուծոյ. ապա ուրեմն և աւետարանս բան է բանին: - 530. Որով զփառս որդէգրութեան և զժառանգութիւն արքայութեան *ընկալաք*. որ է՛ անտրտում ուրախանութիւն: - 532. ...և առաքեալքն ծեռն դնելովն միայն՝ տային զհոգին սուրբ. և ի լեզուս խօսէին. և մարգարէանային *ընդունօղքն*. իսկ վարդապետք սուրբք՝ քարոզութեան նոցին հետևօղք և որդիք ծնողացն՝ երրորդ կարգին յետ նոցա: - 535. Իսկ թէ ծեռնադրօղն իցէ անարժան, միայն ինքն ոչ օգտի. այլ

դատապարտի. իսկ շնորհն կատարի՛ ի *յընդունօղն*: - 540. Վասն որոյ զայս **գ** ժողովքս տիեզերական և միմեանց համաձայն *ընդունիմք*. այլ զքաղկեդոնին ո՛չ *ընդունիմք*. զի ընդ դէմ է առաջնոցն և կաքտումն դաւանութեան տօնից կարգաց և կանոնաց ամենայնիւ: - 541. Եւ էր սիրելի փլաբիանոսի. և լևոնի. և թէոդորիտոսի զորս նզովեցին յեփեսոս. և վասն նոցա վրէժխնդրութեանն արարին ժողով **ուզ** եպիսկոպոսաց. և *ընկալան* զթուղթն լևոնի. և զնզովեալն յեփեսոս զփլաբիանոս *ընկալան*...: - 542-543. Այլ որ **ճծ** ամաւ յառաջ եկին ի հայք՝ ասորիք արք քաջաբանք, և կամեցան սերմանել զաղանդն նեստորի. որք նզովեալ որոշեցան. բայց ոմանք *ընկալեալ* էին և թարգմանեալ ի նոցանէ գիրս սուտս, Զգօրտոսակ. Զկիրակոսակ. Զպղի տեսիլն: - 545. Այլ զչար և զաստուածուրաց ժողովն քաղկեդոնի որ ի ձեռն մարկիանոսի և անիծելոյն պօղքերի՝ ո՛չ *ընդունիմք.* և *զընդունօղսն* նզովեմք: - 547. Իսկ յազգէս հայոց ո՛չ ոք իշխեաց խօսիլ հերձուած և զայլոցն ո՛չ *ընկալան*: - 551. Այլ զանազանին. զի հպարտն ի ներքուստ ունի զբարձրամտութիւնն. և փառասէրն յարտաքուստ յայլմէ՛ բերանոյ *ընդունի* զփառս գովութեան: - 560. Դարձեալ՝ է են խորհուրդք որ պատրաստեն զմեզ *ընդունիլ* զեօթն առաքինութիւնս: - 587. Ոչ ինչ ամենևին՝ թէ *ընկալցին* զմկրտութիւնն. որպէս և ոչ ցորենոյն է վտանգ թէ գողունի իցէ և սերմանի ի ձեռն գողի: - 593. Կարգն է կարողութիւն զոր ետ եպիսկոպոսն այնմ զոր ի կարգն *ընկալաւ* և ի սպասաւորութիւն խորհրդոյ եկեղեցւոյ: - 606. իբր թէ *ընկալաք* և հնազանդեցաք մարմնով...: - 644. Նա՛խ՝ գրակալն նշանակէ՛ զմովսէս. որ *ընկալեալ* զպատգամն աստուծոյ՝ խօսէր առ ժողովուրդն: - 646. ...այսինքն զպայծառութիւն գործոցն և զանմեղութիւն հոգւոյն զոր *ընկալան* ի շնորհացն քրիստոսի: - 648. ...զի նոցա բարեխօսութեամբն *ընկալցի* զպահքն մեր: - 650. Իններորդ, *ընկալաք* կրկին օրէնս հին և նոր. վասն որոյ **բ** աւուրս սրբութեամբ պահեմք: - 654. ...որպէս մեծատունն որ *ընկալաւ* զբարիսն ի յայս կեանքս: - 664. ...յայնժամ յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն փառս և զպսակ զոր *ընդունելոց* են նոքա ի յարութեանն աւուր...: - 668. ...զի զառհաւատչեայ տանջանացն *ընկալցի*...: - 669. Եւ որպէս արդարքն դեռևս ոչ են *ընկալեալ* զկատարեալ փառս իւրեանց...: - 669. ...ցուցանէ թէ ի նոյն հանդէսն ճանեցաւ և վախճան կատարման *ընկալաւ*: - 672. ...նոյնպէս և մեք ողջունիւս զհոգին և զշնորհքն նորա *ընդունիմք* ի մեզ: - 673. Նա՛խ՝ զի ի սրբոցն որ ա՛նդ են թաղեալ՝ օգնութիւնս *ընդունին* գերեզմանակիցք նոցա: - 678. Իսկ երրորդն ի դէմս Երրորդութեանն և է շնորհաց հոգւոյն զոր *ընկալաք* յաւազանին: - 683. Զի որք *ընկալան* զշնորհսն, պա՛րտին նոքա ընչիւք իւրեանց զեկեղեցւոյն լոյսն վառել զաւուրս ութն: - 684. Զի այնպիսիքն դատաստան *ընդունելոց* են անձանց իւրեանց ի մեծի ատենին քրիստոսի: - 684. Իսկ հոգիք հաւատացելոց որք ոչ գնացին այսպէս զհետ նորա, այլ *ընկալան* ի ներգործութեանցն սատանայի և ի կրից աշխարհի. - 688. Երկրորդ, ասէ սուրբն դիոնէսիոս ի ննջեցելոց կատարմանց գլուխն՝ եթէ մաքրելոց հոգին հասեալ ի վախճան՝ յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն փառս և զպսակ զոր *ընդունելո՛ց* են նոքա ի յարութեան աւուրն: - 691. ...բայց վարձ հատուցման ո՛չ կարէ *ընդունիլ* առանց մարմնոյն. զի ո՛չ միայն հոգւոյն է վաստակն, այլ և մարմնոյն: - 691. Ութերորդ, ասէ առաքեալն յեբրայեցիսն, (սոքա ամենեքեան վկայեալք ի հաւատոց՝ չև ևս *ընկալան* զաւետիսն աստուծոյ. վասն մեր լաւագոյն համարեալ...: - 692. Այլ որպէս ի միասին վարեցին զայս կեանս հոգին և մարմինն, նոյնպէս և զայն կեանս *ընդունիցին*: - 694. ...այլ *ընկալեալ* ունին զյոյս անմահութեան և զերանութեանն ի հոգի: - 695. Սակայն զփառսն չև ևս են *ընկալեալ* մինչև ի սքանչելի երկրորդն գալուստ. այսպէս մեծն անդրէաս: - 696. Երկրորդ՝ զի տեսութիւնն հաւատոյն է փոխարէն զոր հոգին *ընկալաւ*. և պսակն գործոյն է զոր մարմնով առնու: - 697. իսկ միջակ արդարքն որ են ի կայանս հոգւոցն՝ և զտեսանելն պայծառապէս *ընկալցին* ի յարութեանն դէմ յանդիման որպէս և էն...: - 697-698. Ա՛րդ՝ եթէ ճշմարիտ է մարգարէն և առաքեալն, զի ահա՛ ա՛ստ է *ընդունել* զապաշխարութիւն և փրկել զհոգիս...: - 698. Նա՛խ՝ յարութիւն է շնորհաց. որ զթողութիւնն մեղաց *ընկալաք* և զհաւատն քրիստոսի: - 710. Եւ որպէս զմարմինս մեր *ընդունին* յաւանդ, նոյնպէս և զգործս մեր խնդրէ ի սոցանէ և յառաջ բերեն: - 714. ...այլ սակաւ հիւթն այն որ ի սկզբանէ՛ գոյացութեան մերոյ ի ծնողացն է՛ *ընկալեալ*: - 718. ...այս է պակասութիւնս ի յարութեանն բառնի և եօթն զարդ *ընդունի*: - 722. ...և այս բառնի ի հոգւոյն և *ընդունի* ուրախութիւն և տարփումն հոգևոր առ աստուած...: - 722. Եւ յայնժամ յաղթեալ զթշնամին և զհարսն առ ինքն *ընկալեալ* յաթոռ մեծութեան նստցի. - 736. Այս է հնձան մեծ որ զամենայն մեղաւորս *ընդունի* յինքեան: - 748. Վասն հինգերորդին, որք աստէն զխրատս *ընդունել* ո՛չ կամեցան և ընդ մարդկան տանջիլ ո՛չ արժանացան. վասն յանորիկ արդարապէս անդ՝ անդադար հարկանին ուռամբ: - 752. Ուղղակի ուրեմն փայտս այս ասի գոլ տընկեալ մերձ յընթացս ջուրց. զի ի նմանութիւն մարմնոյ մեղաց երևեցաւ. և զամենայն նուաստութիւնս մեր յինքն *ընկալաւ*: - 755. Եւ քանզի մովսէս որ ջրային կամ ի ջրոյ հանեալ թարգմանի. թէպէտ երբեմն զօրէնս և երբեմն զտէրն նշանակէ. այլ աստ ոչ զօրէնս, այլ զտէրն գուշակէ՛. որ ի ջուրց մարդկայինս բնութեան

*ընկալեալ* եղև: - 756. Զոր *ընկալեալ* զսերմն հրամանաց աստուծոյ, և բուսուցեալ ի մեզ՝ տամք պտուղ **լ**, **կ**, և **ճ**: - 757. Ա՛րդ՝ նորոգեսցի երկիր որ *ընկալաւ* ի ծոց իւր զտէրունական մարմինն: - 759. Կամ լինէիր այնպէս ուրախ որպէս զայն որ ի կախաղան ածեալ լինի՝ և յանկարծակի ի ճանապարհին թագաւորութիւն *ընկալեալ* լինի: - 762. Եւ թէ այս և թէ այն, դու *ընկա՛լ* զխնդիր մտաց քոց առանց ամենայն երկբայութեանց. իբր ի միոյ կենեղուտ աղբերէ կենաց ուռճալրացեալ և պտղաւէտեալ: - 772. Եւ պիտանեացն՝ փառս վերընծայել այնմ, որ փառաւորեալն է ի պարգևս իւր. իսկ զանպիտանսն ներել մերոյ փոքր *ընկալ* անօթոյ և դանդաղկոտ փութոյ: - 772-773. Զի հասարակա՛ց է ամենայն մարդոյ կատարելոց և անկատարից, զի ի յանդիմանութիւն յանդիմանելեացն առհասարակ դժկամա՛կ երևի ի սկիզբն. թէպէտ ընտրողութեամբ լաւին *ընդունին* զխրատն: - 774. Որք տեսչութեամբն աստուծոյ՝ ի մեռելոցն զառհաւատաչեայն *ընկալան* յարութեան, թէ զիա՞րդ ոչ ունէին ի մտի զանտի կենացն ծանօթութիւն. պատմել մեզ խնդրի: - 774. Իսկ որք տեսչութեամբն աստուծոյ *ընկալան* զթերակատարն յարութիւն, ի վե՛ր է քան զբնութիւն. զի (ոգի որ ելանէ՝ այլ ոչ դառնայ) մինչ նորոգին վերստին: - 775. Այսպէս և ադամ զղջմամբ իւրով *ընկալաւ*. այսինքն երևեցոյց յինքեան զկորուսեալ շնորհն: - 783

**ԸՆԴՎԶԻՄ +** *Ընդվզեալ* սաբէի և կորուսեալ ի կնոջէ. և սատանայի կործանեալ յիմաստուն կուսէ: - 438

**ԸՆԴՕՐԻՆԱԿԵՄ +** Այլ և զերջանիկ գաղափարօղսդ մաղթեմ. որք *ընդօրինակէք* զգիր հարցմանցս այսորիկ, գրել և զսակաւ յիշատակս այսոցիկ: - 773

**ԸՆԹԱՆԱՄ +** Զորօրինակ՝ անհնա՛ր է յառաջ *ընթանալով* կոխել զստուերն: - 25. Իսկ որ զկամսն է չարացուցեալ, զճանապա՛րհն ունի թիւր. և որքան *ընթանայ*՝ մոլորի: - 33. Մետասաներորդ՝ որպէս մինն ի բազումս եկեալ ընդարձակի. և ի բազմաց ի մինն *ընթացեալ* նեղի: - 110. Երրորդ՝ զի բանս մեր ծայնիւ յամենայն լսելիս անցանէ և թղթով յամենայն տեղիս *ընթանայ*. և բանն աստուծոյ սո՛ւր է և հատու և ընդ ամենայն է քրիստոս անցանէ թափանցաբար: - 121. Իսկ չորրորդն է խորհրդական աստուածաբանութիւն. յորժամ զամենայն զգալի և զիմանալի էութիւն արտաքոյ թողեալ, ի խորս *ընթանամք* մտօք և մտանեմք յամպն և ի մէգն ըստ մովսէսի. և ապա տեսանեմք զնա արտաքս որոշեալ յամենայն էից: - 122. Իսկ ի ներքուստ ի վեր՝ ի բազմութենէ առ մինն *ընթանայ*. որպէս խորհրդական աստուածաբանութիւնն արտաքոյ թողեալ զբազմութիւն էից և ի մինն *ընթացեալ*, որ ամենեւին անբանութիւն է և անիմացութիւն. անճառելի. անիմանալի. և լռութեամբ պատուի յամենայն արարածոց: - 123. Երրորդ՝ առանց ոտից *ընթանայ*. առանց թևոց թռչի. առանց լեզուի խօսի. առանց ձեռաց գործէ: - 177. Այլ զաստղալից երկինս ի յօդոյ ասէ խտացեալ և թանձրացեալ. և ի նմա՛ են կառուցեալ աստեղք և *ընթանան*: - 184. Եւ զի ո՛չ հանապազ խաւարին. զի ո՛չ միշտ ընդ նոյն շաւիղս *ընթանան*. թէպէտ հանդիպին ընդ նոյն կենդանակերպն: - 187. Ասեմք եթէ՝ լուսինն *ընթանայ* ի կենդանակերպսն իթ օր և կէս՝ և ծնանի: - 191. Եւ ի մին հոլովն՝ **շ** ասպարէզ *ընթանայ*: - 191. Իսկ իննևժերեակն է, զի *ընթանայ* լուսինն ի տարին **յծդ** օր՝ և **ժթ** մասն. որ լինի ի **ժթ** ամին՝ **յկա** մասն: - 191. Եւ զի սուղ ծիրս *ընթանայ*: - 197. Չորեքտասաներորդ՝ ջուրն օդով ի վեր *ընթանայ*, և հողմով անձրևի՛ յերկիր: - 207. Ութերորդ՝ զի նաւք ի վերայ ջուրց *ընթանան* փութով. և զպէտս միմեանց լնուն: - 207. Երրորդ՝ զի կարօ՛տ է երկնային մարմնոցն. վասն այն ի վե՛ր *ընթանայ*: - 214. Եւ զի նենգաւո՛ր է, թիւր *ընթանայ*: - 219. Նոյնպէս և վերջին հուրն նովին չափով հեղեղին ի նոյն տեղիսն *ընթանայ*: - 225. Որ արագ *ընթանայ* և զսպէ զինքն՝ և զերեսն կորակնէ՛ և զբոլոր մարմինն կծկէ՛, երկնչո՛տ է և ըռիշտ և աղուեսաբարոյ: - 247. Ա՛րդ՝ առաջին դարն որ էր երևակին՝ ընդ երկա՛ր ապրէին մարդիկքն. զի ունի երևակն յերկար *ընթանալ* զճանապարհն իւր. որ ի **լ** ամն վճարէ զկենդանակերպսն: - 291. Նոյնպէս և աստ հոլովմամբ ժամանակաց *ընթանամք* մինչև ընկերեսցի անիւն ի գուբն: - 314. Եւ քրիստոս ի վերայ ծովուն *ընթացաւ*: - 328. Եւ սրբութիւն է՛ երկինքն յոր *ընթանան* լուսաւորք: - 343. Նախ նշանա՛կ էր լուսաւորա՛ցդ երկնից որ ի հարաւ *ընթանան*: - 346. Վասն է՞ր տապանակն յառաջ *ընթանայր* և վէմն զհետ բանակին: - 385. Հինգերորդ, զի ուղղորդ և առանձին *ընթանայր*՝ ետես զաստուած: - 387. Եւ ի մեծի ուրբաթի խաչին, լուսինն *ընթացաւ* և ձգեցաւ յարևն, և յետս դարձաւ. որպէս ցուցանի յառաջիկայդ առ խաչելութեամբն ի **լ** գլուխն ի **իզ** համարն: - 416. Նա՛խ՝ զի մի՛ համարեսցեն այլազգիք թէ դիքն իւրեանց առաջի *ընթացան* և գլուխ եղեն զօրացն և հարին զպատերազմն: - 425. Եւ մինչ *ընթացաւ* ի կալն ուռնայի և գնեաց զեզինսն և ողջակիզեաց, եհաս ի **զ** ժամն. որ յառաջն դադարեալ էր սուրն: - 435. Երկրորդ՝ զվեց կենդանակերպսն կոխեաց, որ էր եժան աւուր ճանապարհ ի կուսէն ի խոյն *ընթացեալ*: - 490. Երրորդ՝ զի **գ** ժամ ընդ արեգականն *ընթացաւ* և խաւարեցոյց զնա մինչ ի **թ** ժամն: - 490. Այլ և խաչաձև *ընթանայ* նաւ ի վերայ ջուրց յորժամ լարէ հողմ զարմիոնն. կամ տարածեալ թևօք հասանին ի նաւահանգիստն: - 494. Վեցերորդ՝ զի երա՛գ է փայլակն. ըստ տեառն՝ «ելանէ յարևելից և երևի մինչ ի մուտս արևու ի քթթելական». զոր

արեգակն յերկոտասան ժամս *ընթանայ* յարևմուտս: - 522. Չորրորդ՝ յա՛յտ է, զի իւրաքանչիւր առաքեալ յիւր վիճակն *ընթացեալ* ձեռնադրեցին եպիսկոպոսունս: - 546. Դարձեալ, զորօրինակ բազումք *ընթանան* ի մի ճանապարհ, և ամենեքեան թողեալ զնոյն՝ ընդ այլս գնասցեն, և մինն մնասցէ ի նոյնն. ո՛չ ասեմք թէ մինն բաժանեցաւ ի ճանապարհէն, այլ՝ այլքն: - 551. Եւ այսպէս բազում ունելով իւրաքանչիւր ոք սահմանս առանձին, միայն հայք նախատեալ լինին որպէս ո՛չ ունել միաբանութիւն ընդ այլս ի քրիստոնէից. այլ առանձին միայնաբար *ընթանալ*. և այսու որպէս հակառակ եպերեալ: - 553. Երրորդ, ի յարութեանն յորժամ փողն գոչէ՝ յառնեմք և յառաջ *ընթանամք* քրիստոսի: - 627. Զի առաջին կանոն երանելեացն, որք դառնան ի չարէ և զճանապարհս օրինացն *ընթանան*...: - 629. ...կամ յառաջնոյն ի վերջն *ընթանալ* կարգաւ. կամ ի վերջնոյն յառաջքն: - 642. ...պահեմք զչորեքշաբաթն. և վեցիւք շարժմամբ ի մեղս *ընթանամք*, պահեմք զուրբաթն: - 653. ...որով *ընթանամք* առ աստուած և աստուած ի մեզ գայ. - 666. Իններորդ՝ ճանապարհ կոչի և մահն որով ի հանդերձեալն *ընթանամք*...: - 666. Յորժամ սրբազան և մաքուր հոգին հասանէ ի վախճան՝ ուրախութեամբ ցնծայ իբր ի հանդիսից զերծեալ և ի պսակն *ընթացեալ*. և որպէս յանփոփոխ կեանքն հետևեալ: - 668. Զի ի չար կենաց ի չար տանջանս *ընթանայ*: - 669. և ոտքն *ընթացաւ* ի ծառն...: - 670. Իսկ կնկուղ ի գլուխ կրօնաւորաց և օդ յոտս և գօտի ընդ մէջ. զսպառազինիլն և զարիութեամբ *ընթանալն* ի պատերազմ: - 671. ...ցուցանէ թէ անուշահոտ վարուք և խրատու աւետարանին *ընթացաւ* զկեանս իւր: - 674. Զի՞նչ է որ առ հասարակ ամենեքեան. այր և կին՝ ծեր և տղայ ընդ մեռելոյն *ընթանան* ի գերեզմանն: - 675. Նախ ցուցանէ թէ՝ և այսպէս հասարակ *ընթանամք* առաջի քրիստոսի: - 675. Նա՛խ՝ զի յետս դառնամք մահուամբ, այսինքն ի դրախտն և ի մայր մեր, պա՛րտ է զի նախ ոտքն *ընթասցի*: - 676. ...հաւատն նշան է նոցա, և բարի գործքն զարդ. և մահն ի հարսանիս *ընթանալ*. - 681. Այսպէս և բաժանեալ հոգին ի մարմնոյ՝ *ընթանայ* յերկինս և ամփոփի ի տեղւոջ լուսոյ յօթևանս հոգւոց. - 681. ...և ելեալ ի մարմնոյն *ընթանայ* յօդս: - 682. ...որք ունին ըզհին օրէնս և ո՛չ զնորս. այլ ի ներքոյ մնացեալ սկզբնական մեղաց՝ նոքա ի տանջանս *ընթանան*: - 678. Եւ ամենեքեան անցանեն ընդ հուրն որ յառաջ *ընթանայ* գալստեանն քրիստոսի: - 702. Զի ուր կամք հոգւոյն խնդրէ՝ անդ *ընթանայ* և մարմինն անարգել ի յական թօթափելն. - 722. Զի հուր մեծ *ընթանայ* ի գալստեանն քրիստոսի. և վառեսցին երկինք և երկիր հրովն այն, որպէս ասէ պետրոս: - 727-728

**ԸՆԹԱՑ(Ք) +** Երրորդ՝ եթէ զոր ինչ ասէաք և ճշմարիտ էր, յայնժամ բանս մեր ո՛չ հետևէր իրացն. այլ իրն բանիցն հետևէր. որ է՛ յայտնապէս սուտ. զի մնացականն՝ ոչ մնացականին ո՛չ հետևի. այլ անդրադարձեալ. զի հետքն՝ *ընթացից* ոտիցն հետևին. և ո՛չ ոտքն հետոցն: - 8-9. Յորոյ փախչելով մեր և յերկուց ծայրիցն, զառ ի մէջն ունելով ուղղապէս *ընթացք*, ասեմք եթէ քրիստոս ըստ անշփոթ միաւորութեանն՝ աստուածային բնութեամբն մարդ է, և մարդկային բնութեամբն աստուած է: - 75. *Ընթացք* աստուածպաշտութեան՝ զմիջինն ուսուցանեն մեզ գիրք սուրբք...: - 80. Եւ այսպէս փախչելով ի թիւր ծայրիցն, զմիջինն պահելով *ընթացք* բարեպաշտութեան, անշթոփ և անբաժան միութիւն, խոստովանիմք զքրիստոս՝ աստուած մարդացեալ. մի անձն և մի բնութիւն. և մի կամք և գործք ըստ ուղղութեանն բանի: - 81. Հինգերորդ Լուսաբերն. որ է՛ արուսեակն. զոր կոչեն զօհրա. ջե՛րմ է և խոնաւ. յխը օրն կատարէ՛, *զընթացսն*. և այլք ասեն թէ ի **գ** ամիսն: - 189. Վեցերորդ Փայլածուն. զոր օտարիտ կոչեն. միշտ շրջի ընդ արեգականն. և սակաւ հեռանայ ի նմանէ. *զընթացս* իւր կատարէ՛ **յլը** աւուրս. **ժ** օր պակաս քան զլուսաբերն. և այլք թէ **գ** ամիս: - 189. Զի արեգակն յամենայն աւուր *զընթացս* իւր կատարէ՛ **իդ** ժամ, և **ժ** մասն և կէս: - 190. Իսկ վերադիրն լինի ի պակաս *ընթացից* լուսնոյն ըստ այսմ օրինակի: - 191. Ի գոյից է, զի շարժումն երկնի և *ընթացք* լուսաւորացդ ծնանին զժամանակն: - 198. Երրորդ՝ կամքն կանգնեալ է մոլար *ընթացից* ջատագով: - 251. Իսկ ի վերջին դարս որ է՛ լուսնին՝ սակաւակեացք են մարդիկք. զի նա՛ ի **լ** օրն վճարէ զբոլոր *ընթացս* իւր: - 291. Չորրորդ՝ զանազան նկարք աշտանակին, զանազան ներգործութիւնք *ընթացից* նոցա առ երկիրս, կենդանեաց՝ տնկոց՝ և անշնչից: - 346. Նոյնպէս և ոտքն ըստ չորից տարերց *ընթացից*: - 367. Ութերորդ՝ ոտնաբեկ. *յընթացս* վարուց: - 370. Վեցերորդ՝ աստ ի հանդիսից սխալէ. և յետոյ ի *յընթացից*. և ի յարութեանն յաղթանակաց պսակէն: - 394. Հինգերորդ՝ *զընթացս* մեղաց և զգործն որ է սկզբնական և ներգործական մեղք, և զգլուխն որ է՛ մահ և ապականութիւն, խորտակեաց քրիստոս...: - 426. Տասներորդ՝ և այսմ կողմանէ՛ շարժին լուսաւորքդ ի *յընթացս* իւրեանց. որ են կարապետ մեծին լուսոյ ծագմանն: - 555. Որ և յարազուարճ բարերջանկութեամբ լի և ամենազան քաղցրորակ պտղաւէտութեամբ տընկեսցիս ծառ բարձրաբերձ *յընթացս* հոգւոյն ի մէջ եկեղեցւոյ տանս թորգոմեան ազգիս հայկազնեան: - 558. Եւ բոլորն զկատարեալ *ընթացս* մեր առ աստուած ուղղեալ: - 645. Նախ ճանապարհ կոչի ծնունդն. որով ի կեանս գամք ըստ հասարակութեան *ընթացից* մարդկան: - 665. Կրկին ասեն զշաւիղս *ընթացից* հոգւոց. այսինքն

մինն ի վեր յերկինս, և միւսն ի ներքոյ երկնից: - 688. Ուղղակի ուրեմն փայտս այս ասի գոլ տընկեալ մերձ *յընթացս* ջուրց. զի ի նմանութիւն մարմնոյ մեղաց երևեցաւ. և զամենայն նուաստութիւնս մեր յինքն ընկալաւ: - 755. Երեք գլխօք վարէ՛ *զընթացս* մարդկութեանն: - 770

**ԸՆԹԵՌՆԼԻ +** Զգիրս ո՞րպէս է *ընթեռնլի* յեկեղեցի: - 643. և զմարգարէսն ի չորրորդ ձայնս է *ընթեռնլի*. և ներբողեանն ի վերջին ձայնն: - 643

**ԸՆԹԵՌՆՈՒՄ +** Եւ անդ *ընթեռնու* դնն որպէս ի քարտիսի և իմանայ յայնմանէ: - 145. Այս է յորժամ *ընթեռնումք* յերկար զպատմութիւնն և լսեմք. իբրու թէ տեսանեմք աչօք. և մտօք վայելեմք: - 192. Իսկ դիւականն ընդդէմ այսմ՝ վասն մոլորութեան զանազան երևմունս ցուցանէ աղտեղութեան. և կամ զբարին խափանել ջանայ. որպէս ի չարչարանս տեառն վասն կնոջն պիղատոսի *ընթերցեալ* լինի. և որպէս գրէ սուրբն և ագրիոս: - 268. Երրորդ՝ զի միշտ *ընթերցեալ* մնասցէ ի միտս նոցա: - 349. Որ զգլուխն *ընթերցար*, զհամակարգն ընդէ՞ր մոռացար: - 546. Եւ գո՛րծ է նոցա *ընթեռնուլ* զամենայն գիրս: - 608. Վեցերորդ, զի և առաջին ծնօղքն և հարք թէպէտ աւելի կին առնուին վասն զաւակաց, այլ հարսանիսն կրկնեալ ո՛չ *ընթերցեալ* լինի: - 612. Եւ յայս միտս ի կիրակէ գիշերն գ անգամ աւետարան *ընթեռնուն*: - 618. Իսկ սարկաւագն՝ յորժամ քարոզէ՛ կամ խնկարկէ կամ *ընթեռնու*: - 635. Զի՞նչ է որ նախ զմարգարէս, և ապա զառաքեալս, և ապա՛ զաւետարանն *ընթեռնումք*: - 643. Վասն այն և տեղեաւ փոխեմք. զմարգարէսն ի մէջ եկեղեցւոյն, և զառաքեալսն մերձ բեմին *ընթեռնումք*: - 643. ...և զայլ մարգարէսն ի շաբաթն *ընթեռնուին*. վասն այն միշտ սա՛ երգի յեկեղեցի: - 643. Նմանապէս և զեսայի միշտ ի կիրակէս *ընթեռնումք*...: - 644. Այլ և յարութիւնն կատարումն է տնօրէնութեանցն. վասն այն զեսայի *ընթեռնումք*: - 644. Այլ և բոլոր ամենայն տնօրէնութեանցն պատմօղ. վասն այն յամենայն օր ի տօնս, ի պահս, և յուտիս, ի շաբաթս, և ի կիրակէ, զնա՛ *ընթեռնումք*: - 644. Յայս միտս սարկաւագն նախ առաջի քահանային *ընթեռնու* իբր ի նմանէ՛ ուսեալ...: - 644. ...վասն որոյ նոքա միշտ մերձին գրակալին յորժամ *ընթեռնուն*: - 646. Դարձեալ, նշանակէ զժողովուրդն աստուծոյ. յորոց ունկն *ընթերցեալ* լինին միշտ բանք աստուածայինք. հնգիւք զգայութեամբք հոգւոյ և մարմնոյ առ միմեանս յեռեալք: - 646. Այսպէս է վախճան մաքուր և սուրբ հոգւոցն. ուրախութեամբ *ընթացեալ* ի պսակն և զերծեալ ի բանտէ խաւարային մարմնոյ: - 669. Այլև զգրեալն ընդհանրական թողութիւն ի դիմաց նորա ի վերայ գերեզմանին *ընթեռնուն*: - 674. ...որպէս ասեն ոմանք. վասն սոցա երեք հանգստեան տամք և աւետարան *ընթեռնումք*: - 675. Իններորդ, վասն **գ** գոչման փողոյն երիցս *ընթեռնումք* զաւետարանն: - 675. Արդ՝ ա՛յս գիր գործոց մերոց գրեալ ի հոգի և ի մարմին մեր որպէս ի մագաղաթի՝ դատաւորն *ընթեռնու* ի տես և ի լուր հրեշտակաց և սրբոց: - 741. Եւ իւրաքանչիւր ոք զգործս իւր *ընթեռնու* յայտնապէս և ո՛չ կարէ ուրանալ և մոռանալ: - 741. Իսկ գիրք կենաց է գիրքն քրիստոս. ի յորում ամենեքեան իբրև ի գիրս *ընթերցցին* թէ զինչ ի պատուիրանաց նորա արարին: - 742

**ԸՆԹԵՐՑԱՍԷՐ +** Աղերս ընծայեցի ի գանձանակ ճոխութեան ձերդ մեծութեան. իմաստասէր և ճշմարտասէր եկեղեցւոյդ հայաստանեայց և *ընթերցասէրդ* մտաց: - 772

**ԸՆԹԵՐՑՈՂ +** Եւ որք զխնկոցն՝ դպիրք են և *ընթերցօղք*: - 379. Ութերորդ՝ Անագանոսք. որ են *ընթերցօղք*: - 608. Երկրորդ ուրացօղք. և սոցա քարոզէ՛ *ընթերցօղն*: - 608. *Ընթերցօղն* ջրոյ: - 609. *Ընթերցօղ* սարկաւագն, որ է՛ հրեշտակն միջնորդ...: - 644

**ԸՆԹԵՐՑՈՂՈՒԹԻՒՆ +** Երկրորդ կարգն է *Ընթերցողութիւնն*: - 606

**ԸՆԹԵՐՑՈՒԱԾ +** Որ է՛ *ընթերցուածն* յակոբայ: - 450. Եւ որպէս կարգեաց տն եղբայրն յակոբոս *զընթերցուածն*. և ի նմին աւուր զերկու տօնս: - 482. Երեքտասաներորդ՝ ականատես տնօրէնութեանն եղբայր տն յակոբոս որ կարգեաց *զընթերցուածն*, յունվարի վեցն աւանդեաց զտօնն ծննդեանն. և ի նոյն օրն դարձեալ զմկրտութեանն: - 484. Եւ գուբղայն որպէս *ընթերցուածն*: - 631. Վասն է՞ր առաջաւորաց պահքն առանց *ընթերցւածո՛ց* է: - 650. Զմեծ կարգն՝ է՛ կանոնեալ տն եղբայրն յակոբոս որ *զընթերցուածն* կարգեաց...: - 651. Որպէս գանձակեցին գրէ *ընթերցուածոց* մեկնիչն: - 651. վասն որոյ թեթև է *ընթերցուածովք*: - 651. Վասն որոյ ի թագաւորութեանցն սկսանի *ընթերցուածն*. որպէս յա՛յտ է ի մեկնութիւն նորին: - 651

**ԸՆԹԵՐՑՈՒՄՆ +** Վասն որոյ գրով և բանիւ՝ այսինքն *ընթերցմամբ* և լսելով ժողովեմք զգիտութիւն: - 143. Երրորդ՝ ստեղծան նոքա՝ զի ի նոցա՛ ջանից *ընթերցմանց* և բարեաց գործոց օրինակ առցուք. որպէս են մրջմունք և սարդք, և այլք այսպիսիք: - 217. Իսկ յետ և յահեակ որկորստութիւն և պոռնկութիւն. զի յետս դարձումն է ի ճշմարիտ բարւոյն, և զհետ *ընթերցումն* է առ ահեակ և սուտ բարիս: - 560. Եւ ապա՛ *ընթերցմունք* յիշատակ սրբոցն որք աստ նահատակեցան և անդ պսակեալք թագաւորե՛ն ընդ քրիստոսի: - 628. Այլ և *յընթերցումն* աւետարանին զգլուխս բանամք: - 635

**ԸՆԹՐԻՔ +** Յօշարակաւ մաճնաւն, յորժամ զմարմին և զարիւն իւր ետ աշակերտացն յետ *ընթրեացն*: - 491. Եւ կարգաւ բաժանելն. և թափել գինւոյն. և *ընթրիսն*. և բարեկենդաննն: - 527. Ոմանք ասեն թէ ի հասարակ *ընթրիսն* յորժամ բազմեցան՝ ի հասարակ սեղանոյն թացեալ զպատառն ետ յուդայի...: - 599. ...այսպէս պատմէ Մատթէոս և Մարկոս. իսկ Ղուկաս և Յոհաննէս յետ *ընթրեա՛ցն* նշանակեն զթացեալ պատառն: - 599. Եւ այլք ասեն թէ՝ թէպէտ յետ *ընթրեա՛ցն* էր...: - 599. Զայս կարգս կացոյց քրիստոս յորժամ ի ժամ *ընթրեացն* զհացն ի մարմին իւր և զգինին ի յարիւն իւր փոխեաց: - 606. Եւ զայս ուսաք ի քրիստոսէ. որ ի վերնատունն յետ *ընթրեացն* օրհնեցին և ելին ի լեառն ձիթենեաց: - 655. Զի՞նչ է ճաշն և *ընթրիսն*: - 656. Կերակուրն մինչ ի **զ** ժամն կոչի. և անտի յառաջ *ընթրիս*: - 656. Եւ նշանակէ՛ ճաշն զաստիս, և *ընթրիսն* զհանդերձեալն: - 656. Եւ դարձեալ ճաշքն ցուցանեն յերիս հասակս զբարեգործսն. և *ընթրիսն* զվերջին հասակին յորում ննջեմք ի գերեզմանի: - 656. Դարձեալ, արքայութիւնն երկնից երբեմն կոչի *ընթրիս*՝ վասն անճառ բարեացն վայելման: - 757

**ԸՆԾԱՅ +** Ահա զսակաւ *ընծայ* կարճառօտութիւն բանիս ընկալ ի քում ընդարձակութեան գանձարանի սրտի՝ երիցագոյն հարազա՛տդ Գէորգիէ: - 95. Հասարակ, զի ամենայն քահանայ միջնորդ և հաշտարա՛ր է աստուծոյ և մարդկան. *զընծայս* ժողովրդեանն աստուծոյ նուիրելով և յաստուծոյ շնորհս և քաւութիւն ժողովրդեանն առնելով: - 354. Դարձեալ ասեմք, ի հինն կրկին էր *ընծայ* պատարագայցն: - 356. Եւ **ծ** թիւ կատարեալ նուէր և սուրբ է աստուծոյ. յաղագս որոյ թագաւորք երկրի *զընծայս* ի մարդկանէ՛ հնազանդելոց **թ թ** խնդրեն...: - 376. Յայս միտս ի բերել *ընծային* ի սեղանն՝ է դասք քահանայից կան ի սպասու. և երգեն եղանակաւ. և քշոց և բուրվառ և զանգակ հնչէ: - 431. Եւ նոյնպէս թագաւորքն մոգուց բերին ընծայ քրիստոսի: - 441. Իսկ արտասուքն հանապազո՛րդ է ըստ ամենայնին. և առաւել քան զամենայն *ընծայ* հաշտութեան: - 619. Նոյնպէս և մեք *զնծայս* սաղմոսից և զայլ երգոց տամք ի քահանայս, - 624. Այսպէս և ի տընօրինէքն *ընծայք* խաչին և աւետարանին որ ի նոցա տունն մտանէ: - 684

**ԸՆԾԱՅԱԲԵՐ +** իսկ ցօղ իմաստութիւնն որ տուաւ նմա յաստուծոյ. և թագաւորք արաբայ և սաբայ, *ընծայաբերքն* նմա: - 421

**ԸՆԾԱՅԵՄ +** Իսկ յորժամ հնազանդին ամենայն անդամք գլխոյն քրիստոսի գիտութեամբ և փոփոխմամբ, յայնժամ և ինքն լնու զհնազանդութիւնն, *ընծայելով* զհնազանդեալքս հօր: - 42. Այլ և հրեշտակն խօսի ընդ աստուծոյ. զի զբաղձանս իւր *ընծայէ՛* նմա: - 145. Այլ ա՛յս է ճշմարիտն, զի ամենայն բարեկամքն որ ժողովեցան յետոյ և մխիթարեցին զնա՛, իւրաքանչիւրքն բերին մէն մի որոջ ոչխարի և **դ** դրամ ոսկի անգիր *ընծայեցին* նմա ի սատար խրախութեանն...: - 326. Չորրորդ՝ վասն փրկութեան ի հիւանդութենէ կամ ի պատերազմէ՛ փրկեալք, մատուցեն ասէ պատարագ և նւէրս *ընծայեսցեն* ի սեղանն ի հոտ անուշից: - 358. Նա՛խ՝ բերել ի դուռն խորանին և տաճարին. և ո՛չ ի բազում մեհեանս. զի ցուցցէ զմինն աստուած՝ և յանուն նորա *ընծայել*: - 359. Նա՛խ՝ զմեղքն սրբել ի մարդոյ. և ապա՛ *ընծայել* աստուծոյ: - 363. Երրորդ՝ զի բուրվառովն՝ աստուծոյ *ընծայէր* և գաւազանաւն զշնորհս ի ժողովրդեանն: - 382. Երրորդ՝ ամբարձեալ ձեռօք վերանայր յերկինս վասն երկուց. նախ՝ զի զինքնն *ընծայեսցէ* հօրն. երկրորդ՝ զի զթշնամիսն հարկանիցէ զօրաւոր ձեռամբ բարձրացեալ: - 520. Վեցերորդ՝ աղօթք է ինչք և պատարագք որ յեկեղեցիս *ընծայեն*...: - 619. Նա՛խ որպէս սովորութիւն է մարդկան որք զաղերսն *ընծայեն* ի դրունս մեծամեծացն, և նոքա՛ մատուցանեն թագաւորին: - 624. ...որպէս *ընծայէ՛* զաղօթս մեր աստուծոյ, նոյնպէս և ի նմանէ առնու և տայ մեզ զշնորհս և զպարգևս հաշտութեան: - 625. Եւ որ՝ քան զայս աւելի ասեն, որպէս տնօրինեցար. կամ *ընծայեցար*. կամ քո տէրութեամբդ. կամ որ եկիր ի բեթանիա. կամ ի վերնատունն: - 634. Այլ և *զընծայիլն* ի տաճարն. յորում երգէին մանկունքն՝ ո՛վսաննայ. որպէս յողոգոմեանն: - 638. Աղերս *ընծայեցի* ի գանձանակ ճոխութեան ձերդ մեծութեան. իմաստասէր և ճշմարտասէր եկեղեցոյդ հայաստանեայց և ընթերցասէրդ մտաց: - 772. Եւ այսպէս տրտմեալ սգով և թախծեալ մտօք *ընծայեցի* տխեղծ մատամբ զխուճախոյ նուէրս բանի, իբր զլումայս այրւոյն՝ քումդ գանձարանի: - 789

**ԸՆԿԵՆՈՒՄ +** Պատասխանեմք, ո՛վ յանդուգն մեկնիչ դու... ո՛վ *ընկեսցէ* և յի՛նչ պատճառս. և ո՞չ լուար ի հրեշատակէն, «թագաւորութեան նորա վախճան մի՛ լիցի»: - 41-42. Չորրորդ՝ զի ամենայն իր յայլմէ ընկալեալն՝ լինի և ի բաց *ընկենլի*: - 66. Ա՛յս է՝ մեղք հպարտութեանն որ է երկրային ախտ, ծանրացոյց և *ընկէց* յերկիր: - 148. ...որպէս զադամ ցանկութեամբ աստուածանալոյն յերկիր *ընկէց*. սոյնպէս և զայլս: - 148. Իսկ սատանայ փորձէ՝ զի ի չար *ընկեսցէ*: - 160. Եւ զի զմարդն *ընկէց* յերկնից ի յերկիր, ընդ գարշապար ոտից նորա անկանի: - 219. Նա՛խ՝ նշանակէ զնոյն ինքն սկզբնաչարն սատանայ. որ էր յերկինս գաւազան ուղղութեան և *ընկեցեալ* եղև օ՛ձ: - 332. Զոր թէ *ընկենու* ոք, լինի երկրաքարշ մարդ և մեղաւոր. և մինչ զղջացեալ դարձեալ ըմբռնէ յետոյ, լինի պատճառ կանգնելոյ և փրկութեան: - 332. Նա՛խ՝ զկերպն ադամայ

որ ի դրախտին՝ երևեցոյց յինքեան. զոր ետես մահ և *ընկէց* զքագն իւր: - 352. յայնժամ քակէ՛ զտունն մեր որ է՛ հոգի և մարմին. և արտաքոյ քաղաքին յանսուրբ տեղիս *ընկենու* որ է՛ դժոխքն արտաքոյ արքայութեանն, և անսուրբ տեղի մեղաց և մեղաւորաց. և անդ արտաքսէ զմեղաւորսն: - 368. Եւ ո՛չ զկորիզն, զի ի բաց *ընկենլի՛* է: - 389. Նոյնպէս յերեք տեղւոջ ոգորի. յերկրի՝ զի հանցէ յերկնից. և յօդդ՝ զի արգելցէ. և ի յարութեանն՝ զի *ընկեսցէ* ի հուրն: - 394. Տասներորդ՝ ի գարեգին. որ է՛ լեառն թլփատութեան. զի ելեալ ի լեառն հաւատոց՝ զաւելորդ մեղացն ի բաց *ընկեսցեն*, և զօրհնութիւնն աստուծոյ առցեն: - 402. Դարձեալ՝ տարածումն ձեռացն զմերժումն և զհերքումն թշնամւոյն, այլ և զիշխանութիւն նորա արտաքս *ընկենու*...: - 489. Վեցերորդիւն զամենայն հոգս մեր *ընկենուլ* առ աստուած: - 492. Հինգերորդ՝ զադամաստեղծ ձեռս իւր տարածեաց տէրն ի վերայ խաչին. և արտաքս *ընկէց* զչար իշխանն. և կորզեաց զմարդիկ յիշխանութենէ նորա: - 503. Երկոտասաներորդ, «մի՛ մերձենար», եցոյց թէ՝ որք յետ յարութեանն և վերանալոյն յերկինս կամին մերձենալ ի մարմին նորա առաքինութեամբ և սրբութեամբ, զախտս հոգւոց ի բա՛ց *ընկեսցեն* և մի ունայնապէս մերձեսցին ի նա: - 518. Ասեմք թէ ո՛չ. այլ առաւել վտա՛նգ է նոցա. զի ի բազում անգամ ի ձեռս դիւաց արտաքս *ընկեցեալ* լինին մարմինք նոցա: - 678. ...ապա պա՛րտ է ի նա՛ *ընկենուլ* զդատաստան չարչարողացն մերոց և հալածողաց. և ուրախութեամբ տանիլ զըլկանս. և մի՛ մեզէն վրէժխնդիր լինիլ մեզ. - 735. Ոմանք ի գերութիւն վարեալք արք և կանայք. և կէսք առաթուր դիաթաւալ սրախողխող գալարեալ. առհասարակ քահանայք և աշխարհականք գէշ անկեալ դիակամբ անթաղ *ընկեցեալք*: - 788

**ԸՆԿԵՐ +** Եւ ոմանք որպէս քաղկեդոնիկքն՝ մի անձն համբաւեն, և յերկու բնութիւնս բաժանեն զմի քրիստոսն. և **բ** կամք. և **բ** գործք. որպէս անիծեալն լևոն. և փլաբիանոս, և *ընկերք* նոցա: - 82. Եւ ի հաւասարս, որպէս յեղբարս և *յընկերս*: - 143. Իսկ հաւասար սիրով սիրէ մարդ զմարդ. և *ընկեր զընկեր*. այլ և մարդ զհրեշտակս. և հրեշտակք զմարդիկ. և զհաւասար արարածք են: - 143. Նախ՝ յորժամ սերօբէն ասէր սուրբ, և միւսն երկրորդէր զնոյն. և սա՛ լռեաց զփառաբանութիւն *ընկերին* երկրորդել աստուծոյ, թէ փառքն ի վերայ իւր անկանի և աստուածանայ որպէս ասաց պօղոս: - 147. Դարձեալ գիտելի՛ է, զի յոբ կրկնելով զբանսն՝ ուղղէ՛ր զբարեկամսն և ընկրկէ՛ր զսատանայ. զի այսպէս ամենայն ոք կարէ՛ յաղթել սատանայի յորժամ *զընկերն* ուղղէ ի բանս կամ ի գործս կամ ի հաւատս և յայլսն. յայնժամ սատանայ թիւրի և հեռանայ: - 323. Այլ յորժամ *զընկերն* թիւրեմք չար յաղթութեամբ, յայնժամ սատանայ ուղղի և ուրախանայ: - 323. Նախ՝ ուղղութիւն *ընկերաց*. **բ** գոհութիւն և համբերութիւն. **գ**՝ իմանալ զչար խորհուրդն սատանայի. **դ**՝ աղօթք և պահք. **ե**՝ խոնարհութիւն և ճշմարտութիւն. որ գերագոյն է ամենայն զինուց և իսպառ կորուսանէ զչար որ մայրն է ստութեան և հպարտութեան: - 324. Սոքա մարդկայինք են և առ *ընկերն* և յանցումն: - 340. Վեցերորդ, վասն յանցանաց ի նուէրս սրբութեանցն, և կամ յօրէնս աստուծոյ, և կամ *յընկերս* վնասու...: - 358. **Նոյնպէս ի թռչունսն, կռաշուրթն և մսակերն նոքա են, որ պատառեն *զընկերս*՝ պիղծ են**: - 365. Իսկ ճշմարիտն աստուած զայս ո՛չ խնդրէ. այլ երկիւղ խնդրէ ի տղայոց որով խորշին ի չարէ. և սէր ի սրտէ փոխանակ անասնոց. և խաղաղութիւն առ *ընկերս* և օտարս...: - 396. Աստ զսէրն աստուծոյ ասէ. զսէր *ընկերին*...: - 396. Ապա ուրեմն ի ժամանակիս յայս *ընկե՛ր* են սաւուղայ որք սակաւ մի կարծեօք հաւանին երազոց կամ վիճակաց և ռամտեսաց և այլոցն: - 429. Այլ զսէրն աստուծոյ և զսէր *ընկերին* ոչ: - 440. Նա՛խ՝ զի ամենայն մեղք կամ ընդ դէմ իւր մարմնոյ է, կամ *ընկերին*. իսկ հպարտութիւնն է մեղանչումն ընդ դէմ աստուծոյ. որպէս սատանայի: - 561. Խրոխտալ պարտ էր առ չարսն և ո՛չ հնազանդիլ. այժմ անհնազանդիմք օրինացն աստուծոյ և ամբարհաւաճիմք առ *ընկերս*: - 564. Չորրորդ ըստ առընչին. այսինքն թէ առ ի՞նչ իրք գործէ զմեղքն. զի մարդն դ դիմօք գործէ զմեղս. այսինքն դիմաց աստուծոյ, դիմաց եկեղեցւոյ, դիմաց *ընկերին*, դիմաց իւր անձինն: - 565. **Եւ որպէս օձ յայգւոյ ծաղկէն մեռանի, նոյնպէս նախանձոտն սատակի ի տեսանել զբարի *ընկերին***: - 569. **Զի որպէս նախանձն կորուսանէ զինքն, այսպէս և բարկութիւնն փախուցանէ *զընկերն***: - 570. Եւ վասն այն սիրեմք *զընկերն*, զի ստեղծուած և պատկեր աստուծոյ է: - 571. Բարոյականն առ *ընկերն*. և Շնորհականն առ աստուած: - 575. Դարձեալ զանազանութիւն է ի մէջ սիրոյ աստուծոյ և *ընկերին*: - 575. Զի զաստուած սիրեմք ի յինքն և վասն ինքեան. այլ *զընկերն* ի յաստուած և վասն աստուծոյ: - 575. Արդ յորժամ ասեմք կրկին զսէրն, այսինքն աստուծոյ և *ընկերին*. կրկինս այս ո՛չ է ըստ ունակութեանցն. այլ ըստ ներգործութեանցն: - 575. Զի միով ունակութեամբ սիրոյ սիրի աստուած և *ընկերն*: - 575. Կամ անկատար սիրով զմեզ. և կատարեալ *զընկերն*. և կատարելագոյն զաստուած: - 576. Եւ այլ վարդապետք ասեն, սիրել պարտ է նախ զայն որ ի վերո՛յ է քան զմեզ. այսինքն զաստուած. և ապա՛ զմեզ. յետ որոյ *զընկերն*. և ապա՛ զմարմինս մեր. և ի նոյն աստիճանս զմարմին *ընկերին*. զի մարմինն երկրորդ է հոգւոյն: - 576. Ուստի՞ ուսանիմք զսէր *ընկերին*: - 577. Ի հինն

ասաց սիրել *զընկերն*, և ի նորս յաւել սիրել զթշնամին: - 577. Ո՞րն է առաւել, սէր *ընկերի՞ն* թէ թշնամւոյն: - 577. Զի նա պարունակէ՛ զառաքինութիւնս որ կարգեն զմարդ առ *ընկերն*. որպէս ուղղութիւնն և առատաբաշխութիւնն: - 578. Գթութիւն է գութ ցուցանել առ *ընկերն* և սիրել զնա. վասն զի պատկեր աստուծոյ է: - 582. ...զ՝ աղօթել վասն փրկութեան *ընկերին*...: - 585. Եւ վերջինս այս վասն այն ասի գործ ողորմութեան, զի կակուղ և խոնարհ պատասխանին խորտակէ՛ զբարկութիւն *ընկերին* և շահի՛ զնա: - 585. Երկրորդ վասն *ընկերին*. որ է՛ ողորմութիւն և առաքինութիւն: - 620. Եւ ասացաւ նոցա հանգչիլ. մինչև լցցին ծառայակիցք և *ընկերք* նոցա: - 648. Արդարքն վասն իւրեանց սիրելեացն միշտ աղօթեն զի ազատեսցին ի փորձանաց և ուղղեսցին ի մոլորութեանց և *ընկեր* փառաց նոցա լինիցին: - 685. Այլ ըստ պսակացն որ մարմնով կատարին՝ և վասն *ընկերացն* որ ժողովին՝ պակաս է նոցա. զոր ի կատարածի լինելո՛ց է ի գալուստն քրիստոսի...: - 686. Պատւական ակունք սէրն առ աստուած և առ *ընկերն*. ուստի ամենայն բարեգործութիւնք կատարին: - 702. Տասներորդ, քրիստոս գլուխ է մեր և մեք անդամք. և զի քրիստոս է դատաւոր՝ պարտիմք մեք զնիմեանս մեծարել և սիրել. ըստ այնմ, «սիրեսցե՛ս *զընկեր* քո իբրև զանձն քո»: - 735. Վասն երրորդին, զի նախանձ և ատելութիւն աստէն որպէս որդունք խածատեցին *զընկերս*. արժանապէս որդունքն անդ խածատեն զնոսա: - 752. Երրորդ յաղագս սիրելութեան *ընկերացն* այնոցիկ. զի այն քան եղիցի սէր ի մէջ նոցա, մինչ զի զուրախութիւնս նոցա ինքեանց համարեսցեն: - 764. Այս վասն *ընկերացն*: - 764

**ԸՆԿԵՐԱԿԻՑ +** Դարձեալ զանազանին. զի գործ մեղացն է յայլմէ՛ առ մեզ՝ կամ ի մէնջ առ այլս. այսինքն ի պատրանաց բանսարկուին և ի չարաց ոմանց առ մեզ. և ի մէնջ առ *ընկերակիցս* մեր: - 569. Եւ այլ քահանայքն *ընկերակիցք* և սպասաւորք են խորհրդոյն: - 594

**ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ +** Վասն զի *զընկերակցութիւն* թ դասուց հրեշտակաց ապախտ արարին, արդարապէս թ տանջանս կրել արժանանան: - 752. Երրորդ ի վայելուչ *ընկերակցութենէն*: - 762

**ԸՆԿԵՐԱՆԱՄ (տ. ԸՆԿԵՐԱԿՑԻԼ) +** Նոյնպէս և աստ հոլովմամբ ժամանակաց ընթանամք մինչև *ընկերեսցի* անիւն ի գուբն: - 314. Այսպէս և աստուածային օրինօք մի այր ընդ միոյ կնոջ զուգաւորի և *ընկերակցի*: - 612

**ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ +** Դարձեալ վասն *ընկերութեանն* լիցի եռակի ուրախութիւն: - 763. Երկրորդ վասն ազնուական *ընկերութեանցն*. յորում եղիցի երանելի կոյսն. և հրեշտակք և սուրբք և սրբուհիք. և ամենայն թագաւորք և թագուհիք եղիցին: - 763

**ԸՆԿԵՐՍԻՐՈՒԹԻՒՆ +** Թէ ի բերան պատերազմի յել անմահին և ի մուտ մահկանացուին. դիցես պահապան բերանոյդ. լար կարմիր շրթանցդ. այսինքն հաւատով սիրով զօրացեալ. և ո՛չ բաժանիլ ի քնասիրութիւն և յարծաթսիրութիւն. յառաքինասիրութիւն. և յախտասիրութիւն. *յընկերսիրութիւն* և յարատսիրութիւն: - 770-771

**ԸՆԿՂՄԵՄ +** Եւ զոր դուք զայլս զրպարտէիք՝ ի նոյն բանս ձեր *ընկղմեցայք*: - 90. Արդ ներքին է՝ որ ի փափկութեանց և ի հեշտութեանց փորձի բնութիւնս մեր և այլայլի ի զանազան տեսակս մեղաց. զոր պա՛րտ է հանապազ աստուածային խնամոյն՝ զի մի՛ թողցէ յայսպիսի փորձութիւնս զմեզ *ընկղմիլ*: - 160. Երրորդ՝ աստուած փորձէ՛ և տայ զելն՝ զի մի՛ յուսահատեսցի. և սատանայ փորձէ և ծանծրացուցանէ զի *ընկեղմեսցին*: - 161. Եւ յերեկոյ շաբաթուն պատառեցաւ ծովն. և ի գիշերի կիրակէին անցին ընդ ծովն. և *ընկղմեցաւ* փարաւոն: - 337. Եւ խաչանիշ գաւազանաւն *ընկղմեաց* զիմանալին փարաւոն յանդունդս դժոխոց: - 337. **Եւ անուն փարաւոնի որ *ընկղմեցաւ*՝ փեսիոս. և ոմանք կանաքարիս կոչեն:** - 337. Դարձեալ՝ աստուած յառաջնումն ծննդեան յորժամ զյանցաւորս ըստ բնական մեղացն՝ ջրհեղեղաւն ջնջեաց. յերկրորդումն ծննդեան յորժամ զյանցաւորս ի կռապաշտութիւն՝ կարմիր ծովովն *ընկղմեաց.* յերրորդումն ծննդեան տուժեաց, յորժամ զյանցաւորս գրաւորական օրինացն պատերազմօք սատակեաց: - 351. Վասն է՞ր կորխեանքն. և դաղանեանքն *ընկղմեցան*: - 381. Իսկ դաղան կենդանի էջ ի դժոխս՝ ո՛չ սրբեցաւ. և ախտիւք իւր անսուրբ *ընկղմեցաւ:* - 382. Այլք ասեն վասն դաղանեանցն թէ՝ հոգիք նոցա մարմնով ի տանջանս կային. ուր *ընկեղմեցան* մինչև ցաւարումն դժոխոց. ընդ որս և զնոսա ազատեաց քրիստոս իջանելովն ի դժոխս: - 382. Եւ **բժ**ան քարինքն դարձեալ ի գետն եղեալ, նշանակէ՛ զմեղս ի խորս անդնդոց *ընկղմեալ:* - 415. Չինգերորդ՝ զի քրէական մեղքն ազգաջինջ առնէ. որպէս զդաղան և զաբիրոն. զի ընդ մովսէսի և աստուծոյ հակառակ կացին, ազգօք և աղխիւք *ընկղմեցան* զի այլքն երկիցեն: - 416. Իններորդ՝ հանեալ ի գետոյն **բժ**ան վէմս շինեաց սեղան. և նոյն թուով խորասուզեալ *ընկղմեաց*: - 418. Եւ տէր մեր զիաւատացեալս իւր հանեալ ի մեղաց շինեաց սեղան և եկեղեցի սուրբ. և զմեղս երկոտասան անդամոցն *ընկղմեալ* կորոյս: - 418. Էջ ի գերեզմանն և յանդունդս յաւիտենից *ընկղմեաց* զնոսա: - 418. Չամածայնին

ի նիւթ ջրոյն և ի կերպ *ընկեղմելոյն*: - 488. Եօթներորդ՝ դարձեալ յաւուր կիրակէի էանց մովսէս ընդ ծովն կարմիր. և *ընկղմեցաւ* փարաւոն ի տիպ յարութեանն քրիստոսի և կորստեան սատանայի: - 512-513. Եւ յերեկոյի շաբաթուն պատառեցաւ ծովն, և ի գիշերի կիրակէի անցին ընդ ծովն և *ընկղմեցաւ* փարաւոն: - 513. Յորում աւուր կիրակէի ի մէջ գիշերի ընդ առաւօտն յարեաւ տէրն ի գերեզմանէն. հանելով զհոգիսն յանապատն երկնից. և խաչանիշ գաւազանաւն *ընկղմեցաւ* փարաւոն յանդունդս դժոխոց: - 513. ...և ծովն պատառեցաւ. և փարաւոն *ընկղմեցաւ*...: - 682. Եւ փարաւոն *ընկղմեալ* զօրօքն. զի ոչ ինչ կարեն վնասել չար դևքն՝ քրիստոնէից հոգւոց: - 682. Չորրորդ, զի յայտնապէս զրկէ զժողովուրդն ի փրկութենէ, և ծուլութեամբ *ընկղմէ* ի մեղս. - 698. Մինչ զկնի կարմիր ծովուն՝ *յընկղմիլն* փարաւոնի հանդերձ զօրօքն, զթմբուկն ունելով երգէ՛ զերգն, «օրհնեսցուք զտէր զի փառօք է փառաւորեալ» և այլն: - 764

**ԸՆԿՈՅԶ +** Իսկ ծաղկեալ գաւազանն չորս ինչ յաւելու. Դալարի. Շառաւիղ. Ծաղիկ. և Պտուղն *ընկուզ*: - 382

**ԸՆԿՐԿԵՄ +** Վասն այն տէրն *ընկրկեաց* զօրինականն թէ միայն ծայրագոյն բարի է՛ աստուած. և ի մարդկանէ ո՛չ ոք ունի զայս: - 47. Երրորդքն՝ յետս *ընկրկեն* զիշխանութիւնս դիւաց և չարաց: - 136. Դարձեալ գիտելի՛ է, զի յոր կրկնելով զբանսն՝ ուղղէ՛ր զբարեկամսն և *ընկրկէ՛ր* զսատանայ. զի այսպէս ամենայն ոք կարէ՛ յաղթել սատանայի յորժամ զընկերն ուղղէ ի բանս կամ ի գործս կամ ի հաւատս և յայլսն. յայնժամ սատանայ թիւրի և հեռանայ: - 323. վասն որոյ ի գիշերի կենցաղոյս լուսաւորէ զհոգիս յետս *ընկրկելով* զբշնամիս: - 629

**ԸՆՁԵՌԵՄ +** Երրորդ՝ այլ ինն գերազանց *ընձեռէ* իմաստս: - 237

**ԸՆՁԻՒՂԵՄ +** Եւ զբոյսս զանազան առաքինութեանց *ընծիւղեալ* երևեցուցանեն: - 126

**ԸՆՏԱԿԵՐ +** Նոյնպէս և յառիւծոյ և յիշոյ ո՛չ լինի ծնունդ. զի մինն մսակեր է և միւսն *ընտակեր*: - 267. Իսկ ի ձիոյ և յիշոյ լինի ջորի. զի *ընտակերք* են և միաժամբ ծնանին: - 267. Եւ *ընտակերքն* սուրբ են: - 365

**ԸՆՏԱՆԱՆԱՄ +** այլ նախ բնակեսցէ հոգւով, և *ընտանացեալ* մտցէ և մարմնով: - 662

**ԸՆՏԱՆԻ +** Երրորդ՝ է՛ գործ նախախնամութեան. զի ըստ *ընտանի* կարողութեան իւրեանց՝ համեմատապէս զպարգևս ընկալցին. զի մի վնասեսցին փոքունքն մեծամեծօք. և թերի մնացին մեծամեծքն սակաւուք: - 130. **Երրորդ՝ զուքն առ *ընտանիս* է, և սէրն առ օտարս:** - 144. Նա՛խ՝ զի երկու իր է. այսինքն հող և ջուր. որ *ընտանի՛* է նմա: - 210. Ի կապ արեանն որպէս *ընտանեաց*: - 317. Եւ մեք նորա կոչիմք զգեստ, զի *ընտանի* անդամք և ոսկերք եմք մարմնոյ նորա: - 318. Զորս պօղոս՝ *յընտանի* և ի վայրենի ձիթենիս առակէ՛ ի թուղթն հռօմոց: - 347. Վասն է՞ր զաքար *ընտանեօք* և անասնօք պատժեաց: - 415. Նաև *զընտանիսի* աքարայ պատժեաց. զի և նոքա ո՛չ խոստովանեցան զգողօնքն: - 415. Եօթներորդ՝ զի և կարօտ *ընտանեաց*: - 442. Եւ այլք ասեն՝ նախ սիրելոյ է աստուած. երկրորդ ծնօղքն. յետոյ որդիքն. ապա՛ *ընտանիքն*. վերջոյ թշնամիքն: - 576. Երկրորդն կարգաւորել *զընտանիսն*: - 580

**ԸՆՏԵԼ +** Դարձեալ ասեմք, փոփոխումն և աճումն հասակին ո՛չ եթէ ապականութեան էր ցոյցք. այլ զի զճշմարիտ մարդեղութիւնն հաստատեսցէ *ընտել* սովորութեամբ մեր որ ի տղայութենէ զարգանամք: - 501

**ԸՆՏԵԼԱՑՆԵՄ** - Վասն առաջնոյն գիտելի է, զի դիւրին է զգազանս *ընտելացնել*, քան զտգէտ անձն ի գիտութիւն ածել: - 531

**ԸՆՏԻՐ +** Իսկ «զեսաւն ատել և զյակոբ սիրելն» է՛ որպէս ցուցաւ ի վերոյ. զի *զընտիրսն* սիրէ և զխոտանսն անարգէ՛ նախատես ճանաչմամբն: - 20. Զի գ գլխոյն կրկին է եղջիւր. որ է հպարտութիւն՝ նախանձ՝ և բարկութիւն. զի սօքօք յաջ և յահեակ պատերազմի. և առ *ընտիրս* և առ խոտանս զտանին բազում ուրեք երեքին ախտքս այսորիկ: 151-152. Եւ ըստ ա՛յսմ կերպի է փորձութիւնն բարի. զի բնութեամբ չար է. և պատճառէ՛ զչար մեղքն. բայց պատահեցաւ ոմանց զի յաղթեցին փորձութեանց և *ընտրիք* երևեցան: - 160. Յինգերորդ՝ *զընտիրս* և զխոտանս որոշէ՛: - 185. Վեցերորդ՝ ի սոցանէ երևի և գործ արդարութեան. որ *ընտիրսն* աստուծոյ նուիրէր գիտելով զմեծութիւն նորա և զբոլորիցն տուրսն. և զխոտանն ի՛ւր թողլով: - 286. Ութերորդ՝ նախկին է ժամանակս, և երկրորդ հանդերձեալն. և կեանք ժամանակիս խոտեալ է և անարգ. և հանդերձեալն պատուական է և *ընտիր*: - 310. Նա՛խ՝ զի ամենայն իր որ *ընտի՛ր* է՝ չա՛փ ունի և սահման. և ո՛չ շփոթումն. վասն այն կանգնաւ չափէ զնոսա: - 344. Եւ տէր մեր յաղթեաց իշխանին դիւաց. և եհատ զնորայն բռնութիւն աջոյ. և զոմանս եթող ձախիւ թիւրելոյ և *զընտիրս* որոշելոյ: - 419. Երրորդ՝ զի զայլ մեղս մեղսասէրքն գործեն. իսկ զհպարտութիւնն սուրբք և *ընտիրք*. որպէս հրեշտակք յերկինս: - 562. վասն այն պա՛րտ է *զընտիրն* և զգէրն մատուցանել: - 657. Նա՛խ՝ զի բաժինն աստուծոյ *ընտիրն* լիցի և մի՛ անարգն: - 657. Յինգերորդ, *ընտիրն* յաչս մեր սիրելի՛ է. որպէս իսահակ աբրահամու: - 657

**ԸՆՏՐԵԱԼ +** Իսկ սկիզբն և կատարումն ի մեզ, որպէս նախածանօթ *ընտրեալքն* յառաջ քան զլինիլն աշխարհի. որ այժմ բարի գործովք կատարեսցին ըստ նախասահմանելոյն իւրեանց: - 18. Բայց նախախնամութիւնն աստուծոյ ճանաչէ զփրկեալսն, և տայ զկերպ փրկելոցն որով փրկին *ընտրեալքն*: - 18. Ա՛յս է գիր *ընտրելոցն*: - 18. Եւ այսպէս է *ընտրեալն* և կոչելն և արդարացուցանելն. որպէս գրէ առաքեալն: - 18. Ապա յիմա՛ր են այնոքիկ որք ասեն՝ կամիմ առնել զհաճոյսն իմ. զի թէ *յընտրելո՛ցն* եմ՝ փրկցյց. և եթէ ո՛չ՝ դատապարտեցայց: - 18. Եւ այս է կարօտութիւն ամենայն *ընտրելոց*. այսինքն անհասին անհասապէս հասանիլ. և զանտեսն անտեսութեամբ տեսանել: - 123. Բոլո՛ր է՝ յորժամ զիմացումն մտաց յամենայն եղելոց առ ինքն ժողովէ՛, և այնպէս բոլորովիմբ յաստուած հպի և միանայ. և ա՛յս է ի բոլոր սրտէ և ի բոլոր մտաց սիրել զաստուած. և զայս ունին *ընտրեալքն* մարգարէք և առաքեալք: - 142. Երկրորդ՝ զմին յառաջ քան զջրհեղեղն, և զմիւսն յետոյ. զի ցուցցէ թէ յերկոսին ժամանակս *ընտրեալքն* հաճոյ եղեն աստուծոյ: - 289. Անունք Նախահարցն... Ենովս մարդ *ընտրեալ*: ...Կայնան ստացուած *ընտրեալ* օրհնեալ աստուած: - 299. Եւ տէրն ո՛չ ի ձեռս հրեշտակաց սերօբէից և քերովբէից, և ո՛չ միջնորդութեամբ մարդկան *ընտրելոց* նահապետաց մարգարէից առաքելոց կամ մարտիրոսաց: - 302. Իսկ աստեղք՝ ծնունդքն իսահակայ պայծառ վարուք և երկնընթացք որպէս մարգարէքն՝ քահանայքն՝ և *ընտրեալ* թագաւորք՝ և այլքն: - 303. Վեցերորդ՝ անդրանիկք են և *ընտրեալքն* աստուծոյ. որք նախքան զլինիլն աշխարհի ընտրեցան. թէպէտ յետոյ ի ժամանակի ըստ հասարակաց գոյացան և կատարեցան: - 309. Նա՛խ զայս ունի խորհուրդ, զի յառաջագոյն *ընտրեալքն* յետոյ եղեն ի ժամանակի: - 310. Հինգերորդ, **թ** դասք հրեշտակաց. և մի դաս մարդկան *ընտրելոց* լինի **ժ**: - 343. Եւ եօթն ճրագ շուրջ զնովաւ, եօթնեքին դասք *ընտրելոց* նորա: - 347. Երես զիսկութիւն աստուածութեանն նշանակէ. զոր աստի կենօքս ո՛չ ոք կարէ տեսանել. որպէս զբոլորակ արեգականն. այլ ի հանդերձեալն տեսանեն *ընտրեալք* ըստ չափու: - 350. Անդրանկաց սատակումն եգիպտոսի, նշանակէ՛ զանկումն սատանայի յերկնից. և փոխանակ նոցա *ընտրեալ* և կոչեալ որդի անդրանիկ զիէլ. և զնոսա փոխարկեալ առնու զօծելոց դասս քրիստոնէից ի տեղի նոցա: - 380. Զի առաջին *ընտրեալք* և վերջին արդարք ի միասին ժառանգեսցեն զաւետիսն: - 391. Իսկ ի վերջինն գաւառ՝ կիսովն իմանին կուսանքն *ընտրեալք*. որք լնուն զթերութիւն անկեալ դասուն: - 391. Եւ է՛ անփոփոխ յաւիտենիցն որ առ աստուած *ընտրելոցն* է թիւ: - 392. Երրորդ՝ ըստ օգտութեան աստ. զի փորձին *ընտրեալքն*. և յետ մահու շնորհաց. և յարութեանն փառաց լինին առիթք: - 394. Ասա՛ նմա թէ՝ այն հասարակաց հեթանոսա՛ց է. զի աճին մարմնով և ընչիւք. իսկ մերս ո՛չ է հասարակաց. այլ արժանաւորաց և *ընտրելոց*: - 403. Ութերորդ՝ յօրինակ փրկչին յիսուսի, որ զբռնութիւն թշնամւոյն խորտակեաց և զխաբէութիւնն եթող. զի փորձեսցին *ընտրեալքն* և խոտեսցին վատթարքն: - 417. Քսանևզ՝ նա՛ սպան զթագաւորս և զիսկայսն քանանու. և զոմանս եթող ի փորձ *ընտրելոց*: - 419. Վեցերորդ՝ զնա վկայէ՛ բարի և լաւ և անձնեայ ի մէջ իէլի. և տէր մեր բարի և *ընտրեալ* ի մէջ բիւրաւոր արարածոց: - 426-427. Եօթներորդ՝ կոչի սաւուղ, որ է՛ *ընտրեալ* հայեցումն. և տէր մեր հայեցումն և ակնկալութիւն է ամենայն արարածոց: - 427. Դարձեալ նշանակէ՛ զխաւարումն այնմ ժամանակի, յորում եթէ գուցէ հնար՝ *ընտրեալքն* մոլորեսցին: - 490. Զի թռչիլն նշանակէ՛ զզանազան դասս *ընտրելոցն*: - 519. Ապա նշան *ընտրելոցն* է խոնարհութիւնն. և անարգանացն է ամբարտաւանութիւնն: - 569. Ամպօք վերանալ. և փառք *ընտրելոցն*: - 640. Տասներորդ, և աստի *ընտրեալքն* յաջմէ, և խոտելիքն ի ձախմէ միշտ նշանակին: - 646. Եւ թիւ *ընտրելոցն*. և լոյս նոցա: - 661. Հինգերորդ՝ մարդոյս պիտոյ էր ժամանակաւ աճումն. զի թուով առցէ զկատարումն վերջին *ընտրելոյն*: - 662. Երրորդ հիւանդութիւն է *ընտրելոց*, զի փո՛րձ երևեսցին ի յամօթ չարին. որպէս յոբայն: - 665. Արդ տանուտէր աստ կոչէ զաստուած, և այգի է եկեղեցի. և գաւառապետ կոչէ զքրիստոս. և առաւօտ յաբելէ առաջին արդարոյն. և երեկոյ օր դատաստանին յորժամ *ընտրեալքն* ամենայն ժողովին. - 692. Սերմն բարի են սուրբք և *ընտրեալք* զոր սերմանեաց աստուած յեկեղեցի: - 693. Ապա ուրեմն մինչ ի դատաստան *ընտրեալքն* ո՛չ ունին կեանս, և ո՛չ մեղաւորքն տանջանս: - 693. Երրորդ, ներելով արձակէ զսատանայ որով փորձին *ընտրեալքն* որպէս ցորեան ի շտեմարանս արքայութեան. - 706. Երկրորդ, որպէս չորք կենդանիքն զվեհագոյնս և զնախամեծարս երկնայնոցն ցուցանեն. նոյնպէս և իդ երիցունքն զնախամեծարս *ընտրելոցն* մարդկան, - 711. Վեցերորդ, ոմանք ատոքք և կէսք ազազունք և այլք անպտուղք. այսպէս և մարմինք *ընտրելոցն* և ոչ նոյնպիսեացն ըստ չափու զանազանին: - 721. Ի մէջ գիշերի. յորում ժամու հրեշտակն զեգիպտոս եհար, և տէրն զժողովս աւերեաց. յայն ժամու *զընտրեալս* իւր յաշխարհէ ազատեսցէ: - 734. *Ընտրելոցն* երևի այնու կերպիւ որ ի թափօր երևեցաւ: - 740. Այսպէս գիր *ընտրելոցն*: - 741. Են և *ընտրեալքն*: - 742. Ո՞ր քան է *ընտրելոցն* թիւ: - 760. Եւ գիտելի է, զի ուրախութիւն *ընտրելոցն* հանդիպեսցի իբրև ի վեց կողմանէ: - 762. Երրորդ ուրախութիւնն եղիցի ի տեսութենէ միաւորութեան մարդկային

բնութեանն առ աստուածայինն. քանզի սքանչելի ուրախութիւն լինիցի *ընտրելոցն*, յորժամ ճանաչիցեն թէ եղբայր նոցա ըստ մարմնոյ՝ ճշմարիտ աստուած է: - 763. Երկրորդ՝ ի տեղւոյն բարձրութեան եռակի ուրախութիւն *ընտրելոցն* հանդիպեսցի: - 763. Հինգերորդ վասն դժոխոցն եռակի հանդիպեսցի *ընտրելոց* ուրախութիւն: - 764. Վեցերորդ և վերջին՝ վասն աշխարհի՝ *ընտրելոցն* հանդիպի եռակի ուրախութիւն: - 764. Իսկ երկոտասան պտուղ *ընտրելոցն* ի հանդերձեալն այս ինչ է: - 766. Կամ զինչ անհնարին սաստ, եթէ ոք խոտեսցէ զսուրբ հոգւոյն խօսեցեալս ի գիրս սուրբս. *ընտրելով* զոմն յարուցեալ ի մեռելոց...: - 775. Ասեմք թէ՝ յիրաւի, որովհետև երևեցաւ տէր մեր ի փրկութիւն *ընտրելոց* ըստ ամբակումայ, նախահայրն յաւիտեան. իսկ այլք ազատեցան ժամանակեայ: - 777

**ԸՆՏՐԵԼԻ +** Տե՛ս՝ ի չորից բաժանմանցդ մինն է *ընտրելի*, և **գ**ն խոտելիք են: - 215. Հինգերորդ՝ նշանակէ զկրկին ծնունդս մարդոյ. առաջինն մարմնաւոր և խոտելի. և վերջինն հոգևոր և *ընտրելի*: - 310. Ո՞րպէս է *ընտրելի* զենումն կենդանեաց: - 365. Չորրորդ՝ *ընտրելի* է զէնն որ է՛ գործիք. զի լիցի սուր երկաթոյ. զի երկա՛թն է գործի բաժանման: - 366. Հինգերորդ՝ *ընտրելի* է մասն որ է հատումն գլխոյ. յառաջուստ ուր են շնչերակքն՝ արիւնն և այլքն: - 366. Երկոքեանն են *ընտրելի*. և ա՛յս է խորհուրդն: - 642. Եւ ո՞ր ի սոցանէ *ընտրելի* է ճշմարիտն: - 687

**ԸՆՏՐԵՄ +** Դարձեալ՝ ունիմք խորհուրդ, և *ընտրեմք* զառնելիսն, և խոտեմք զոչ առնելիսն. և բազում անգամ խորհելովն հանդիպիմք բարւոյ, և փախչիմք ի չարէ. և խորհուրդն ի հնարաւորա՛ցն է որպէս ասացաւ և ո՛չ ի հարկաւորացն: - 11. Նախ թէ աստուած ստեղծ զկամքն բարի. և զբարին եդ առաջի կամիլ. իսկ նա անձնիշխանութեամբ հեռացեալ ի բարւոյն՝ գտա՛կ եղև չարին. զի չարն ո՛չ այլ ինչ է, բայց հեռացումն. կամ պակասութիւն բարւոյ. ապա ուրեմն թէպէտ բանն և կամքն է աստուծոյ, այլ կամիլն և *ընտրելն* զչարն՝ ոչ է յաստուծոյ, այլ կամացն և բանին: - 16. Նաև մարդկան չարեաց թոյլ տալ. զի կամ *ընտրեսցեն* զբարիս՝ կամ յետոյ զղջասցին. և այլ պէսպէս նախախնամութեամբ որպէս ինքն գիտէ աստուած՝ ներէ՛ չարեաց. որպէս տեսանելոց եմք յառաջիկայսդ: - 17. Այլ զի արեգակն անբանապէս տայ զլոյսն. իսկ աստուած բանիւ և իմացմամբ *ընտրէ* զարժանիսն և փրկէ. որպէս մարդիկ զընտրելիս *ընտրեն*, և ոչ զխոտելիս: - 20. Պատասխանեմք թէ՝ ո՛չ է զօրացեալ՝ այլ զօրացուցանօղ. ըստ առաքելոյն և *ընտրօղ*. «զի նախ քան զլինիլն աշխարհի *ընտրեաց*»: - 52. Սմին նման և տէր մեր *ընտրեաց* զառաքեալս և նոքօք կոչեաց զհաւատացեալս: - 127. Ութերորդ՝ զի ազատ և անձնիշխան կամօք *ընտրեն* զբարին և խոտեն զչարն. և դիւրասերտեալք ի բարին, և դժուարաշարժք ի չարն: - 137. Այլ ետ նոցա անձնիշխան կամս՝ զի կամովին *ընտրեսցեն* զբարին և արդարապէս զհատուցումն ընկալցին զի մի՛ երբեք մեղանչել կարիցեն: - 149. Նա՛խ՝ զի զդէմքն *ընտրեաց*՝ և ընդ եւայի՛ խօսեցաւ: - 218. Նա՛խ՝ զի զդէմսն *ընտրեսցէ,* այլ և զտեղի և զժամանակն, և ապա խօսեսցի: - 218. Եօթներորդ՝ զի ո՛չ կարէին *ընտրել* և խոտել զչարն և զբարին, և զսուրբն և զանսուրբն ի մարդկանէ, թէ գործ սորին է այս կամ այն. այլ անմեղութեամբ յարակցեին պղծոյն, և զխեղդ ոգւոց նորա ընդունէին: - 238. Իսկ բարոյականն այս ինչ է. զի զպատկերն արարչական և զառաջին կեանս դրախտին կորուսաք, և զանասնեղէն պատկերն և զերկրորդ և զախտաւոր կեանս *ընտրեցաք*. յիրաւի շրջեցաւ ի մեզ և լինելութիւն հոգւոյն: - 258. Երրորդ՝ իմաստութիւն ասի և բանական քննութիւն. որք բանիցն տեղեկացեալ *ընտրեն* զստոյգն ի ստոյն: - 269. Դարձեալ՝ իմաստութիւնն է բանին. զի նորա՛ է իմանալն. գիտութիւնն ցասմանն. զի նորա է *ընտրելն*. և հանճարն ցանկութեանն. զի նորա է յանճարն տռփիլ: - 270. Զի անասունք զայս ո՛չ գիտեն. այլ միայն զհեշտալին *ընտրեն*: - 274. Դարձեալ՝ զբանջարն *ընտրելով* ուտեմք. այս է զի զվնասակարն և զդառն և զժահահոտն ի բաց ձգեմք և զչորրորդ մասն ուտեմք: - 295. Նոյնպէս ի կենդանեաց զսուրբն և անսուրբն *ընտրեմք*: - 295. Վեցերորդ՝ անդրանիկք են և ընտրեալքն աստուծոյ. որք նախքան զլինիլն աշխարհի *ընտրեցան*. թէպէտ յետոյ ի ժամանակի ըստ հասարակաց գոյացան և կատարեցան: - 309. Վասն է՞ր զանդրանիկն խոտէր և զկրտսերն *ընտրէր*. որպէս կայեն խոտեցաւ և սէթ *ընտրեցաւ*: - 309. Նա՛խ՝ զի յանդրանիկ տեսութիւնս իւր *ընտրեաց* զնոսա յառաջ քան զլինիլն աշխարհի, և յետոյ զնոյն անդրանիկսն պատուեաց: - 309. Իսկ այն որ երբեմն անդրանիկն խոտիւր և կրտսերն *ընտրիւր*, բազում ունի խորհուրդ և նշանակութիւն: - 310. Երրորդ՝ զանդրանիկ կեանս ի դրախտին անարգեաց ադամ և զերկրորդն *ընտրեաց*. և իւր անդրանիկն խոտեցաւ և կրտսերն *ընտրեցաւ*: - 310. Չորրորդ՝ նշանակէ՛ զհրէայս որ էին անդրանիկ ժողովուրդ խոտեցան. և հեթանոսք կրտսերք *ընտրեցան* և եղեն անդրանիկ ժորովուրդ աստուծոյ: - 310. Երկոտասաներորդ, մովսէս **հ** ծերս *ընտրեաց* և ետ ի հոգւոյն: - 328. Որպէս նախ քան զօրէնս, բնական քննութեամբ *ընտրէին* մարդիկ. կամ զանճոռնի մեծն, կամ զամենևին փոքրն, կամ զգարշն տեսութեամբ, կամ զվնասակարն, ուտելոյ պիղծ ասէին զսոսա: - 364. Եւ այսպէս ըստ բարուց մարդկան *ընտրէր* նոյ ի սրբոցն է. և յանսրբոցն **բ**. որպէս

ասացաւ ի վերոյ **ժգ** գլուխն ի **գ** համարն: - 364. Դարձեալ՝ որպէս ծառա՛յ են կենդանիք և սպասաւոր մարդկան. նոյնպէս և յօրինակ ընտրութեան մարդկան *ընտրեցան* զսուրբս և զանսուրբս նշանակելով այսպէս: - 364. Եւ այսպէս վեցեքին սոքօք *ընտրեսցի* սուրբ զենումն: - 365. Վասն է՞ր զպատարագն անարատ *ընտրէին*: - 370. Նախ՝ զի փորձեսցին և *ընտրեսցին* ի միմեանց հաստատունքն ի հաւատս և տկարքն: - 388. Ա՛րդ՝ նախ վասն հարցն սիրոյ զզաւակսն նոցա *ընտրեաց* աստուած: - 398. Երրորդ, վասն վերջնոցն լաւութեան *ընտրեցան* և խոտանքն. որպէս զիող զքար և զխեցգէ մորթն պատւեմք վասն ոսկւոյ և արծաթոյ և մարգարտին: - 398. Նոյնպէս ազգն իսրայէլի *ընտրեցաւ* վասն աստուածածին կուսին մարիամու: - 398. Որ ի ջուր ըմպելն *ընտրեաց* զզօրսն. և թաքուցեալ սափորօք զվառեալ լապտերսն, և էհար յ արամբք ըզճի հազարսն: - 420. Վեցերորդ, խոտեցաւ սաւուղ և *ընտրեցաւ* դաւիթ. խոտեցաւ հին օրէնքն, և *ընտրեցաւ* նորս: - 435. Խորհիլ՝ զի *ընտրեսցէ* զճշմարիտն: - 465. Չորրորդ՝ զի աշակերտքն զտկարութիւնս իւրեանց փորձիւ ճանաչեսցեն և գիտասցեն թէ ոչ վասն իւրեանց արժանաւորութեանն *ընտրեցան*...: - 521. Յոտոտելիք՝ որք *ընտրեն* և որոշեն զբարի և զչար: - 534. Վասն որոյ և տէրն **բժան** թիւ *ընտրեաց* առաքելոցն, և ետ **բժան** աթոռ դատողական: - 546. Դարձեալ ասեն վարդապետք եթէ՝ խորհրդոցն մեղք՝ որ *ընտրէ* և կամաւ հեշտանայ, առաւել չար է քան զգործոցն ըստ պատահմանն: - 557. ...այսինքն չարութեամբն յորժամ կամքն կարէ՛ և գիտէ ընդ դէմ կալ չարի իմն, սակայն վասն չարութեան *ընտրէ* զայն: - 566. Երկրորդ՝ թէ տգէտ լիցի քահանայն և ո՛չ կարէր *ընտրել* զծանրութիւն մեղացն և զանազանել: - 603. ...իսկ այս *ընտրեցաւ* վասն նորոյս և ճշմարտութեան: - 658. Նախ՝ զի թէ բարի է մարդն, *ընտրէ՛* աստուած և տայ զմեծութիւնն որ կարօտելոց ի գո՛րծ ածէ...: - 664. ...են հոգիք նոցա ի միում խորանի մինչ դատաստանն *ընտրեսցէ* զնոսա և որոշեսցէ. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 687. Նախ կոչի հնձան նախածանօթ տեսութիւնն աստուծոյ. ուր *ընտրէ՛* և ժողովէ՛ զսուրբս իւր յառաջ քան զլինիլն իւրեանց...: - 748. Որքան մնացին հրեշտակք ի յերկինս, նոյնքան և բազմութիւնք ի մարդկանէ *ընտրեսցին*: - 760. Վասն որոյ առհասարակ դժկամակ թուի. մինչ *ընտրեսցեն* ի միմեանց. զի ինքեանց գիտակքն իմաստունք են: - 774

**ԸՆՏՐՈՂՈՒԹԻՒՆ +** Որ է՛ *ընտրողութիւն* բարւոյ և չարի՝ կատարելոցն իմաստիւք: - 224. Իսկ կենդանականին են, Կամք. *Ընտրողութիւն*. Յօժարութիւն. Բարկութիւն. Ցանկութիւն: - 248. Բանականք են Միտք. Տրամախոհութիւն. Կարծիք. Կամք. *Ընտրողութիւն*: - 248. Ութերորդ՝ զխաբէութիւնս որ ճաշակելեօք և տեսանելեօք է՝ ի բաց մերժել, և զամենայն զզայութեանցս *ընտրողութիւն*: - 281. Յինգերորդ՝ կարճունչն. պակաս *ընտրողութեամբ*: - 370. Այլ և ծանիր, զի *յընտրողութիւնն* ոչ էր վաղվաղուկ որպէս եւա: - 465. Ապա թէ առանց *ընտրողութեան* ամենայն բանի հաւանին՝ կորիցեն որպէս եւա: - 465. Զի հասարակա՛ց է ամենայն մարդոյ կատարելոց և անկատարից, զի ի յանդիմանութիւն յանդիմանելեացն առհասարակ դժկամա՛կ երևի ի սկիզբն. թէպէտ *ընտրողութեամբ* լաւին ընդունին զխրատն: - 774

**ԸՆՏՐՈՒԹԻՒՆ +** Նախ՝ անօթն *ընտրութեան* առաքեալն պօղոս գրէ հաւատացելոցս. «քրիստոս աստուծոյ զօրութիւն. և աստուծոյ իմաստութիւն»: - 96. Ութերորդ՝ սիրելեաց և ատելեաց *ընտրութիւն* շնորհէ: - 126. Նոյնպէս հրեշտակաց և դիւաց՝ չարաց ի մարդկանէ և բարեաց *ընտրութեան* հոգի ընկալաք: - 126. Երրորդն արդարութեան և *ընտրութեան*: - 210. Եւ թէ զտեսութիւնս զայս կարծես էութիւն հոգւոյ ըստ որում է հոգի, ապա ո՛չ միայն ետես զհոգի, այլ և զմարմին՝ և զիւրաքանչիւրոց *ընտրութիւն*, և զհամար հերաց և զթիւն աստեղաց. և սոքա յետո՛յ են գոյացեալ ըստ կամաց տեսողին: - 260. Իրաւունքն է *ընտրութիւն* և հատուցումն դատաստանին այսպէս. զի դատաստանն է տեղիք քննութեան. և արդարութիւնն է գործ դատաստանին: - 340. Դարձեալ՝ որպէս ծառա՛յ են կենդանիք և սպասաւոր մարդկան. նոյնպէս և յօրինակ *ընտրութեան* մարդկան ընտրեցան զսուրբս և զանսուրբս նշանակելով այսպէս: - 364. Ի զենումն *ընտրութիւն* է **գ** իրաց. այսինքն Զենօղն, Զենլին, Զենումն, Զէնն, Մասն, Դիտաւորութիւն: - 365. Երկրորդ՝ *ընտրութիւն* է առ զենլին: - 366. Երրորդ՝ *ընտրութիւն* է ի զենումն. զի բաժանեսցի նախ արիւնն, և ընդ նմա՛ շունչն և բնական ջերմութիւնն: - 366. Ի նոր պատարագս այսպիսի մարմնոյ *ընտրութիւն* ո՛չ է: - 371. Յինգերորդ՝ թիւն *զընտրութիւն* զդաս՝ և զկարգն ցուցանէ. զի գո՛յ ի նմա՛ առաջին միջին և վերջին. որպէս զինուորք. իսկ անթիւն խոտան և անկա՛րգ է. որպէս ծերք և տղայք: - 377. Այլ որ զուղիղն ասեն ա՛յս է, կորխ՝ եցոյց զօրինակ զղջման. զի լուաւ խրատուն մովսէսի և մնաց *ընտրութեանն* աստուծոյ ի դուռն խորանին: - 382. Վասն է՞ր զնշան *ընտրութեան* ի բուրվառս և ի գաւազանս տայ: - 382. Երկրորդ՝ զի սովն և սուրն զբարի և զչար ի միասին պատժէ. այլ մահն *ընտրութեամբն* աստուծոյ է. և ժողովի ի վերայ յանցաւորացն. ուստի յա՛յտ է զի դաւիթ ո՛չ էր յանցաւոր ո՛չ պատժեցաւ: - 435. Ցուցանէ թէ տարաժամ մահն *ընտրութեամբ* և կամօքն աստուծոյ լինի, և ո՛չ

պատահմամբ որպէս ասեն ոմանք: - 435. Աջ և ահեակն *զընտրութիւն* դատաստանին. զփառս աջակողմեանց, և զպատիժ ձախակողմեանց: - 493. Ո՞չ ապաքէն մովսէս ի հինն որոշեաց զսուրբս և անսուրբս. մանաւանդ թէ յաւուրս նոյի գոյր *ընտրութիւնս*. այսպէս ցուցաւ և մեզ պահելի իբր զբնական օրէնս. այլ սոցա ոչինչ է պիղծ ի կենդանեաց: - 552. Արդարութիւն է զօրութիւն պահօղ զմարդկային *ընտրութիւնն*: - 579. Խոհեմութիւնն է զօրութիւն հոգւոյ, որով *ընտրութիւն* առնէ ի մէջ չարին և բարւոյն: - 579. ...այլ միապէս *զընտրութիւնն* ի դատաստանին ասեն: - 687. Երրորդ երկնից արժանաւորն տեսլեամբ, և անօթն *ընտրութեան* հոգւոյն, որ կրէր յինքեան զկրօղն էից առաքեալն պօղոս ասէ...: - 761. Եւ է՛ այս ի բաց դնելի *ընտրութեանն* կամօք: - 783. Եւ է՛ շնորհ յատուկ *ընրութեամբն* աստուծոյ, որ պատճառ է՛ զփառս զանազան ներգործութեամբ. և է՛ սա՛ ան՛ի բաց դնելի անզեղջ խոստմամբ ի կողմանէ տուողին. որպէս է՛ առ մեզ շնորհք աւազանին: - 783

**ԸՇՏՌՏՈՒՐՄՈՒՂ** - Ջայլամն որ է՛ *ըշտռտուրմուղն*, կեղծաւորքն են և անպիտանքն գործոյ. և այլքն նմանապէս: - 365

**ԸՌԸՆԳՈՒՆՔ** (տեքստում՝ **ըռընկունքն**) **+** Ա՛րդ՝ զանազան զգայութեամբ զանազանապէս զգամք, և ո՛չ ամենայնիւ զմինն՝ կամ միովն զամենայն... Իսկ *ըռընկունքն* զհոտն. և զայլսն ո՛չ: - 75

**ԸՍՏ +** Ասելով թէ պատճառ ամենայնի՝ բարեաց և չարեաց մերոց ո՛չ մեք եմք, այլ է՛ առաջին պատճառն աստուած. որք փախչելով յառաջ ասացեալ բախտէ՛ և ճակատագրէ՛ աստեղացն, փոխանակ նոցա յառաջին պատճառն վերագրեն զհարկն. որպէս զի մի՛ ասիցեն երկու սկիզբն *ըստ* մանիքոսի: - 13. Եւ եթէ երկուցն **բ** է սկիզբն, և այսպէս ի յաստուած երևի երկու սկիզբն, կամ երկու անսկիզբն *ըստ* մանիքոսի: - 14. Իննևժերորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ, այլ արդ է՝ ըստ ինքեան չար, և է *ըստ* պատահման: - 15. Եւ ըստ ինքեան չար է՝ որպէս ասեմք զչարն չար. և *ըստ* պատահման՝ որպէս ասեմք զմարդն չար: - 15. Դարձեալ ասեմք թէ՝ աստուած ո՛չ է պատճառ. ստեղծուածոցս ի հարկէ. այլ *ըստ* կամաց որով առնէ. զի ոմանք դիպին ի հարկէ, և ոմանք ո՛չ ի հարկէ: - 15. Իսկ ի տեսութիւն մարդոյ է՛ առաջին և վերջին. զի զանցեալն տեսանէ յիշմամբ, և զներկայն իմացմամբ. և զհանդերձեալն ի պատճառն իւր *ըստ* ժամանակին փոփոխման որպէս ասացաք: - 15. Չորրորդ ասեն՝ թէ չարն ո՛չ է յաստուծոյ, ապա երևի թէ այլ ոմն է չարի սկիզբն, և այլ ոմն բարւոյ. և լինի բ սկիզբն բարի և չար *ըստ* մանիքոսի: - 16. Ասեմք նախ եթէ՝ չարն ո՛չ է յաստուծոյ որպէս բարին. զի բարին *ըստ* կամա՛ց է. իսկ չարն թոյլ տալով է. և ա՛յլ է կամացն որ յօժարութեամբ է, և այլ է թոյլ տալովն որ իբր ի յո՛չ կամացէ: - 17. Իսկ սկիզբն և կատարումն ի մեզ, որպէս նախածանօթ ընտրեալքն յառաջ քան զլինիլն աշխարհի. որ այժմ բարի գործովք կատարեսցին *ըստ* նախասահմանելոյն իւրեանց: - 18. Եւ թէ սկսանիմք զչար, և նա փոխէ ի բարին *ըստ* բարի խնամոցն իւրոց: - 18. Դարձեալ ասեմք թէ՝ ըստ ինքեան սոքա ոչ են չար. այլ բարի. որպէս տգէտն ի մեղաց. և բարկութիւնն ընդդէմ չարեաց. և ցանկացօղն բարեաց. զի *ըստ* բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն: - 19. Եւ ի բացայայտութիւն այսմ բանի՝ ծանիր *ըստ* օրինակի: - 20. Ասեմք առ այս եթէ՝ բարի և չար *ըստ* ենթակային ներհակք են միմեանց. իսկ ըստ ինքեանց՝ ունակութիւն և պակասութիւն որպէս ասացաք: - 21. Ապա ուրեմն յա՛յտ է զի բարին *ըստ* ենթակային և ըստ ինքեան՝ էութիւն է: - 23. Իսկ չարն *ըստ* ենթակային էանայ և երևի, և ըստ ինքեան ոչընչանայ և ապականի. զի ո՛չ է է. և ո՛չ գոյ: - 23. Ջբացբարձականսն ի վերայ աստուծոյ՝ որպէս անճառ և անսահման՝ ո՛չ *ըստ* պակասութեան կոչեմք, այլ *ըստ* գերազանցութեան: - 24. Իսկ ճանաչի աստուած *ըստ* հինգ եղանակս: - 24. Իսկ հինգերորդն ի հանդերձեալն դէմ՝ յանդիման տեսութիւն *ըստ* առաքելոյ: - 24. Ո՛չ է *ըստ* չարափառացն ասել ուղղակի՝ թէ նախանձու կամ վասն փառաց որպէս ասեն, զի անգիտութեամբն պատուեսցի. ընդունա՛յն է կարծիքս այս. ասել զոր չէ՛ արժան անախտ և պարզ բնութեանն աստուծոյ: - 24. Արդ՝ *ըստ* ուղղափառ վարդապետաց եկեղեցւոյ: - 24. Երրորդ՝ զի կամեցաւ աստուած ո՛չ միայն ողորմութեամբ՝ այլև *ըստ* արդարութեան, վարձս նահատակութեան տացէ *ըստ* գործոցն համբերութեան: - 25. Եւ թէ ասիցեն հրէայքն, ո՛չ ամենայն հրէայքն ժողովեալ են *ըստ* խոստմանն: - 28. Ջի որպէս սատանայ ամբարտաւանութեամբն ընդդէմ աստուծոյ՝ զրկեցաւ ի լուսոյն, նոյնպէս և հպարտն զրկեցաւ ի շնորհացն *ըստ* երեմիայ: - 32. Վեցերորդ՝ հակառակէ քրիստոսի՝ և քրիստոնէից. և սոքա հակառակին սուրբ եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ. և զոր բանն աստուած առեալ զմարդկայինս բնութիւն միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն՝ սոքա ընդդէմ նմին որոշեն զբանն ի մարմնոյն. զի մի՛ իցէ աստուած մարդացեալ *ըստ* նոցա՝ և մարմինն աստուած. և պատճառս հայթայթելով պատրեն զմարդիկ: - 35. Եւ որպէս նեռնն ազդումն է սատանայի՝ որպէս առաքեալն ասէ. և նոքա յազդմանէ սատանայի՝ խորհին և խօսին զանազան հերձուածս *ըստ* չար խորհրդոց նորա: - 35. Պատասխանեմք թէ՝ ամենայն հաւանութիւն որ է կամք յետ խոկմանցէ և իմաստութեանց. և քրիստոս է աստուծոյ իմաստութիւն *ըստ* առաքելոյ: - 36. Առ որս ասելի է

թէ՝ ո՛չ կամաւ, և ո՛չ յոչ կամայ. զի պատկեր և նկարագիր էութեանն հօր է որդի, *ըստ* առաքելոյ: - 36. Եւ ոչ յետոյ *ըստ* կարծեացն արիոսի: - 37. Այլ մեր պատասխանին առ այս՝ է՛ այս ինչ, թէ միշտ ծնունդ է ի հօրէ *ըստ* բնութեանն որդի. այլ անձամբ կատարեալ. որպէս լոյս ի հրոյն միշտ ծնանի և ոչ է անկատար՝ յօրինակ որդւոյ: - 37. Երկրորդ՝ զի անծնելութիւն և ծնելութիւն *ըստ* քո ասելոյդ եթէ բնութիւն իցէ՝ հակառակութիւն եղեր յաստուածութիւնն: - 38. Պատասխանեմք թէ՝ կարի՛ յիմարութիւն է հարցումնդ. և զի գոյ հայր *ըստ* քում բանիդ ծնօղ որդւոյ. ապա ուրեմն ո՛չ կարէ ոչ լինիլ և ծնանիլ: - 38. Եւ դարձեալ՝ *ըստ* ձեզ պարտ էր ասել. թէ՝ ես ի միասին հօր, և մասն հօր ի յիս: - 39. Դարձեալ ասի մեծ *ըստ* պատճառին, և հաւասար *ըստ* բնութեանն: - 39. Զոր հայր մեր է *ըստ* ստեղծմանն և հանդերձելոյ աշխարհին: - 39. Դարձեալ քննեսցուք *ըստ* մեզ...: - 40. Եւ գիտեմք հաւաստի թէ որդի էր. զի հրեշտա՛կ անուանէ զնա գիրն. և զի հայր երբէք հրեշտակ ո՛չ կոչեցաւ՝ այլ որդի *ըստ* եսայեայ մարգարէի...: - 40. Արդ ստեղծուած ասի իմաստութիւնն *ըստ* խոնարհ ծննդեանն. և ծնունդ *ըստ* առաջնումն անհասանելոյն: - 41. Դարձեալ ասի անդրանիկ և *ըստ* մարմնոյն ծննդեան: - 41. Դարձեալ անդրանիկ է *ըստ* շնորհաց հոգւոյն զոր ընկալաւ ո՛չ վասն կարօտութեան՝ զի լիապէս ունէր այլ զի գլուխ էր մեր՝ ընկալաւ՝ զի յանդամս իւր սփռեսցէ: - 41. Տասներորդ՝ առարկութիւն արիանոսացն՝ Պարտէ ասեն թագաւորել սմա մինչև ի ժամանակաց փոփոխումն *ըստ* առաքելոյն: - 41. Զի **բ** թագաւորութիւն լուաք ի գրոց. **ա** *ըստ* արարչութեան, և **բ** *ըստ* տնտեսութեան: - 42. Մինն որ է աստուած՝ իսկապէս մեզ, և նմա *ըստ* մարմնոյն: - 43. Զի նմա՛ բնութեամբ է հայր, և մեզ *ըստ* շնորհաց: - 43. Երրորդ՝ *ըստ* ո՛չ պատշաճի. որպէս ո՛չ կարեն պահել որդիք առագաստի մինչ ընդ նոսա իցէ փեսայն որ է քրիստոս: - 44. Ապա առ *ըստ* ոչ ախորժանացն թէ աշխարհք որք են աշխարհասէրքն՝ ո՛չ կարեն ատել զաշխարհասէրսն: - 44. Եւ թէ արար հայր առանց որդւոյ, անիմա՛ստ արար. զի որդի է իմաստութիւն հօր *ըստ* առաքելոյ. և կամ այլ ինն իմաստութեամբ որ է՛ սուտ ամենևին: - 46. Ասեմք զայս *ըստ* մարդկութեանն. զի ո՛չ ունէր բնութիւնս մեր. այլ յորժամ միացաւ ընդ բանին և եղև որպէս առօղն և առեալն իշխան և տէր ամենեցուն: - 46. Եւ թէ և *ըստ* աստուածութեանն իմանաս՝ ո՛չ է անտեղի: - 46. Եւ թէ *ըստ* մարդկութեանն իմանաս, մի՛ կարծիցես պարգև և շնորհ զտալս զայս. զի այն նեստորին է: - 46. Եւ զի է՛ որդի, ապա ուրեմն և է՛ ճշմարիտ աստուած և թագաւոր թագաւորաց և այլն *ըստ* առաքելոյն: - 47. *Ըստ* քում բանիդ աստ հօ՛ր տաս զաստուածութիւնն և բառնաս յորդւոյ. և ի մարգարէն՝ որդւոյ ասես զաստուածութիւնն և բառնաս ի հօրէ, ապա հա՛րկ է քեզ լինիլ անաստուած. զի միովն միւսոյն յաղթութիւն տաս: - 47. Եւ դու ընդէ՛ր ասես լինել ինձ *ըստ* մարդկան երկրորդաբար բարի. զի աստուածութեամբս եմ ընդ հօր ծայրագոյն բարի: - 47. Ա՛րդ կատարեալ է աստուածութիւնն երիս անձինս և մի աստուածութիւն. լոյ՛ս և լո՛յս և լո՛յս. և մի՛ լոյս. որպէս մի աստուած *ըստ* մարգարէին թէ՝ «ի լոյս երեսաց քոց տեսանեմք զլոյս»: - 51. Իսկ որք բառնան զաստուածութիւնն ի միոյն՝ և ո՛չ երկոցունց տան զաստուածութիւնն, իմա՛, *ըստ* առաքելոյն զօրութիւն և իմաստութիւն է հօր որդի. և բան՝ *ըստ* աւետարանին յոհաննու: - 51. Երկրորդ՝ զի *ըստ* մեզ արարած ասեն զհոգին: - 51. Բե՛ր նախ տեսցուք *ըստ* քո կարծեացդ թէ արարա՞ծ է հոգին: - 52. Ասեմք մարմնասիրեացն եթէ՝ մարմնակա՛ն կարծէք զծնունդն *ըստ* մեզ ո՛վ ծիծաղելիք: - 52. Եթէ *ըստ* մեզ կարծէք զծնունդն, պիտոյանայ երկուորիս և գործիս հօր. լիցի և այրութիւն և իգութիւն յաստուած. և լիցին որդիք երկորեակք էրէց և կրտսեր: - 52. Եւ աղճատանք լիցի քեզ ծնունդն *ըստ* մարկիոնի ութ աստուծոյն և ութ յաւիտենին: - 52. Ապա թէ ո՛չ՝ ընդէ՞ր զանմարմինն ընդ մարմնականացս իմանաս, և ընդ մեռեալս զկենդանին խնդրես *ըստ* եսայեայ: - 53. Ապա թէ ո՛չ՝ *ըստ* բանիդ և հայր լինի եղեալ ի ձեռն որդւոյ: - 53. Ապա ուրեմն զի դուք գ ասէք՝ հայր և որդի և հոգի, *ըստ* թըլոյն և երեք բնութեան հաղորդին և ո՛չ միոյն: - 54. Եւ դարձեալ՝ *ըստ* սողոմոնի **գ** են սիգաճեմք. առիւծ՝ և նոխազ՝ և աքաղաղ: - 54. Իսկ յորժամ քակես՝ լինի մի և մի. քակեցաւ այժմ ի յառաջին բնութենէն *ըստ* քեզ՝ և ունի դեռևս զնոյն համարն: - 55. Զաշխարհս ամենայն ելից հայր. այլ ո՛չ առանց որդւոյ. *ըստ* գրեցելումն՝ «զերկին և զերկիր ե՛ս լնում ասէ տէր ամենակալ»: - 56. Մեծ է հայր. մեծ է և որդի. անբովանդակելի է և հոգին սուրբ. *ըստ* հոգէնըւագին որ ասէ, «Մեծ է տէր մեր. և մեծ է զօրութիւն նորա». որ է քրիստոս աստուծոյ զօրութիւն: - 56. Խաղաղութիւն է և որդի *ըստ* պօղոսի, «նա՛ է խաղաղութիւն մեր որ արար զերկոսեանն մի. և արար խաղաղութիւն արեամբ խաչին իւր»: - 56. Տէր է և որդի *ըստ* պօղոսի, «մեզ մի՜ է տէր յիսուս քրիստոս»: - 57. Երկոտասաներորդ՝ ուսուցանել զմիտս մարդոյն ի ներքս՝ միայն աստուծոյ է *ըստ* սաղմոսին, «ո՛ ուսուցանէ զգիտութիւն»: - 58. Պատասխանեմք նախ, որպէս ասէ ոսկէբերանն թէ՝ նորածնեալքն աւազանաւն՝ *ըստ* չափու շնորհացն արժանաւորեին իմաստութեան, թարգմանութեան, և այլն. այսպէս և ոմն շնորհս ընդունէր աղօթելոյ կարգաւորապէս. զի ի նմանէ ուսանէին և այլքն աղօթել: - 59. Իսկ թէ՝ «իմս» այս՝ զբղխումն յորդւոյ ասէ, ապա և այլուր *ըստ* քեզ զհայր մարմնացեալ կարծես: - 61. Վեցերորդին պատասխանեմք, թէ ասիցես որդին անկենդան է յորմէ

հոգին ո՛չ բղխէ. ապա՛ և *ըստ* քեզ հոգին անբան է զի ըզբանն ո՛չ ծնանի: - 61-62. Ուստի մինն տըւօղ և միւսն առօղ ըստ նոցայն. *այս* է բանն և մարդն: - 66. Վեցերորդ՝ զի թէ մեք շնորհիւ՝ որդեգրեալքս կերպանամք առ ճշմարիտ և բնութեամբ որդին, և թէ և նա՛ է *ըստ* մեզ շնորհիւ, պիտո՛յ է նմա վերնագոյն բնութեամբ որդի մարմնացեալ ի յոր կերպասցի և սա՛ ի նմանութիւն նորա շնորհօք որդի: - 67. Ստեաց ուրեմն *ըստ* նոցա՝ այն որ «ո՛չ արար մեղս, և ո՛չ գտաւ նենգութիւն ի բերան նորա»: - 67. Ա՛րդ եթէ երկրպագելի և աստուած՝ և այս վասն բնակութեան աստուծոյ, ապա ուրեմն եղեալ առ ժամայն աստուած և օտար *ըստ* բնութեան: - 67. Պարտաւորեցան *ըստ* մարդապաշտութեամբ ո՛չ միայն երկրաւորքս՝ այլ և երկնայինքն: - 67. Եօթնևժերորդ՝ զի թէ ծնեալն *ըստ* մարմնոյ՝ է առանձնապէս մարդ ապա ուրեմն ծնօղ նորին ո՛չ է աստուածածին, այլ՝ մարդածին: - 68. Իսկ եթէ զանդրանիկն առանձին, ահա՛ զկուսածինն որդի՝ ո՛չ ասէք աստուած՝ *ըստ* նեստորի: - 68. Նմանապէս ասա՛ և զայս. զբնութեա՞մբն որդի ասես ընդ աջմէ մեծութեանն նստեալ, թէ որ շնորհօքն որդիացեալ *ըստ* քեզ: - 70. Երկոտասաներորդ՝ աստուծոյ է յաւիտենական և անփոփոխ գոլ. *ըստ* մարգարէին «ես աստուած նոյն եմ և ո՛չ փոփոխիմ»: - 71. Վասն որոյ հարկաւորիմ ցուցանել նոյն քան գլխով եթէ աստուած է քրիստոս և *ըստ* մարմնոյն միութեան մարմնացեալ և մարդացեալ աստուած: - 72. Քրիստոս *ըստ* մարդկայի՞ն բնութեանն աստուած է, թէ *ըստ* աստուածային բնութեանն մարդ: - 75. Յարցումնս այս է՛ երկաբնակացն. և նմանի այնմ թէ՝ մարդ *ըստ* հոգւոյն բնութեանն մարմին է, թէ *ըստ* մարմնոյն բնութեանն հոգի: - 75. Ա՛րդ՝ որպէս կարծեն ինքեանք զէն մեծ ունիլ առ երկոսին կողմանս, կամ հարկիւ անկանիլ ի նեստորին բնութիւն և բնութիւն, և կամ *ըստ* եւտիքեայ շփոթել զբնութիւնսն: - 75. Յորոյ փախչելով մեր և յերկուց ծայրիցն, զառ ի մէջն ունելով ուղղապէս ընթացք, ասեմք եթէ քրիստոս *ըստ* անշփոթ միաւորութեանն՝ աստուածային բնութեամբն մարդ է, և մարդկային բնութեամբն աստուած է: - 75. Զի աստուած է իւրում բնութեանն. և նոյն մարդ *ըստ* նորին բութեամբ միաւորութեանն: - 75. Որև մարդկութիւնն աստուած էր *ըստ* նորին բնութեամբ միաւորութեանն. և նոյնն մարդ *ըստ* իւրում յատկութեանն: - 75. Այսպէս և անմահ է բանն *ըստ* իւրում բնութեանն. և նոյնն մահացեալ *ըստ* միաւորութեանն: - 75. Որև մարդկութիւնն անմահ *ըստ* միաւորութեանն. և մահացեալ *ըստ* իւրոյն յատկութեանն: - 75. Այսպէս իմասցիս *ըստ* միաւորութեան բանին և անշփոթելի խառնմանն: - 75. Որև ընդ չարչարիլն քրիստոսի՝ չարչարեցաւ և մեռաւ բոլոր մարդկութիւնս *ըստ* նոցա: - 76. Եւ երևեալ մարմնովն մի բնութիւն տեսակացեալ և մի անձնաւորութիւն. մի տէր. մի որդի. *ըստ* սուրբ հարցն ուղղափառութեան: - 76. Դարձեալ՝ *ըստ* նոյն սարասի՝ բանն աստուած ունի ծնունդ ի հօրէ նախ քան զյաւիտեանս. և ունի ծնունդ ի մօրէ ի յետին ժամանակիս. և ո՛չ ասի երկածին. այլ՝ միշտ միածին. այսպէս նոյն բանն ունի զբնութիւն աստուծոյ ի հօրէ. ունի և զբնութիւն մարդոյ ի մօրէ՛. և ո՛չ ասի բ բնութիւն. այլ մի բնութիւն վասն միաւորութեանն: - 77. Իսկ աստ թէպէտ միութիւն է, բայց ոչ է բաժանումն անձանց. այլ *ըստ* միութեան բնութեանն մի՛ է անձն: - 80. Եւ այսպէս փախչելով ի թիւր ծայրիցն, զմիջինն պահելով ընթացք բարեպաշտութեան, անշթոփ և անբաժան միութիւն, խոստովանիմք զքրիստոս՝ աստուած մարդացեալ. մի անձն և մի բնութիւն. և մի կամք և գործք *ըստ* ուղղութեանն բանի: - 81. Զնոյն գոլ աստուած և որդի աստուծոյ *ըստ* հոգւոյ. իսկ որդի մարդոյ *ըստ* մարմնոյ: - 83. *Ըստ* անձին մի է, և *ըստ* բնութեանն երկու: - 86. Զի թէ ասես միաւորական, ահա՛ արարեր դու զանձն բնութիւն. զի բնութիւն է միարար *ըստ* պորփիւրի, տեսակին կցորդութեամբ բազում մարդիկ մու: - 86. Ապա և Երրորդութիւնն է միաւորեալ *ըստ* քեզ: - 86. Ութ են եղանակք բաժանման *ըստ* փիլիսոփային. այսինքն Որպէս սեռ ի տեսակս. Տեսակ յանհատս: - 87. Արդ՝ տեսցուք թէ *ըստ* որո՞յ եղանակի բաժանէք զմի անձն յերկուս բնութիւնս: - 87. Իսկ աստ բնութիւնք **բ** միայն. կամ **գ** *ըստ* ոմանց: - 88. Այլ աստուածութիւնն և մարդկութիւնն ո՛չ նման միմեանց. և ո՛չ բոլորին կոչին *ըստ* ոմանց: - 88. Երկրորդ՝ զի ո՛չ մասամբ ինչ *ըստ* ոմանց ապօղինարի և այլոց. այլ յերկուց կատարեալ բնութեանց է միաւորութիւն փրկչին: - 88. Այլ և ո՛չ որպէս պատահումն ի յէութիւն. զի բանն աստուած ո՛չ է անանձն և ազդումն ինչ որպէս մեր բանս *ըստ* ոմանց. որպէս մարկեղոս և փոտինոս դանդաչեն: - 88. Ա՛րդ՝ նո՛յն է եթէ ի բնութենէ բաժանեն, և եթէ յանձնէ յանձն *ըստ* նեստորի. և եթէ յանձնէ ի բնութիւն բաժանեն *ըստ* քաղկեդոնի: - 88. *Ըստ* որոյ կերպի և իցէ, թիւ ի ներքոյ բերէ միոջէն և առ մին. և նոյնէ անձն որոշեալ թըւով: - 88. Զի եթէ զմարդկայինն ասէք քրիստոս, ահա՛ առանձնապէս որոշեցիք զնա *ըստ* նեստորի. և սոսկ մարդ ասէք զքրիստոս: - 89. Եթէ զաստուածային անձն և զնորին բնութիւնն ասէք մի քրիստոս, դեռևս կայք յառաջ ասացեալ տարակուսանսդ. զի զաստուածային անձն և զբնութիւնն ասէք չարչարեալ և մեռեալ. զի քրիստոս խաչեցաւ և մեռաւ *ըստ* գրոց: - 89. Իսկ եթէ աստուածային բնութիւնն և զմարդկայինն առանց անձին ասէք քրիստոս, ահա՛ շփոթեցիք զերկու բնութիւնսն առանց անձին միանալոյ *ըստ* եւտիքեայ: - 90. Եւ եթէ բաժանմամբ, այս լինի **բ** քրիստոս, կամ **գ**՝ *ըստ* անձին և բնութեանցն բաժանման: - 90. Եւ կամ լինի

մի քրիստոս *ըստ* կոչմանն, և **գ** *ըստ* էութեանն: - 90. Այսպէս և նեստոր մի ասէր զքրիստոս ո՛չ *ըստ* իրին միութեան, այլ *ըստ* անուանն համաձայնութեան. որպէս հոմանուն ձայն մի ունելով զկոչմունս, և զանազան բնութիւնս ի ներքոյ մի անուանն: - 90. Երևի ապա զի աստուծոյ ո՛չ ասեն զմասունքն, այսինքն զձեռն և զոտն. ապա *ըստ* նոցա և մարմինն չէ աստուծոյ մարմին. և արիւնն չէ աստուծոյ. և հոգին չէ աստուծոյ. այլ ամենեքեան սոքա մարդո՛յ են: - 91. Իսկ ասելն «զնա», կամ *ըստ* միութեան իմանի. և կամ *ըստ* այլոց բաժանմամբ: - 94. Իսկ *ըստ* միութեան յոյժ վայելչապէս: - 94. Եւ այս *ըստ* միութեանն: - 94. Ա՛րդ՝ եթէ զհայր ո՛չ ոք ի յօտարաց ճանաչէ՝ և ո՛չ որդի ճանաչէ *ըստ* քեզ, եղիցի և որդին օտար ի հօրէ: - 96. Արդ կամ ստեաց զաւետարանն, կամ սուտ լեր ի բանս քո *ըստ* նմանութեան հօր քոյ սատանայի: - 97. Ո՞րպէս զամենայն գիտէ՝ որ զինքն ո՛չ գիտէ *ըստ* քեզ: - 98. Իսկ թէ ա՛յլ է բանին և այլ է մարմնոյն, ապա բաժանե՛ս զմարդկութիւնն ի յանձնէն. և ասես **բ** անձն. և երկու բնութիւն. *ըստ* նեստորի առաջնորդին քոյ. և պօղոսի սամոստացւոյ. որ մինչև ցայժմ ծածուկ է իր նեստորեան, և այժմ յայտնեցեր զքեզ: - 98. Եւ այժմ առ քեզ խօսեսցուք *ըստ* վկայութեան կարգիս ո՛վ նեստորական երկաբնակ և մարդադաւան որոշօղ քրիստոսի, և որոշեալ ի շնորհաց նորին: - 98. Ա՛րդ՝ դատէ որդի ո՛չ միայն *ըստ* աստուածութեան իւրում. այլ և *ըստ* մարդկութեանն: - 100. Ա՛րդ՝ ճանապարհո՛րդ էր *ըստ* մարմնոյ տնօրէնութեանն մահւամբ և յարութեամբ մտանել ի փառս: - 100. Անհաւասա՛ր է պարգևն *ըստ* հնչման ձայնի: - 102. Եւ վերին խոկմամբ՝ որ ի վե՛ր է քան զմեզ՝ *ըստ* կարողութեան լուսաւորիմք ճառել զանճառէն: - 103. Յինգերորդ՝ որպէս միա՛կ է հայր. զի սկիզբն է ամենայն բւոց. և երկեակ որդի. և երրեակ հոգի *ըստ* աստուածաբանին: - 105. Չորրորդ՝ հասարակ է ի միոյ բարերար կամաց յառաջ եկելոց հաղորդեալ անհաղորդաբար *ըստ* համեմատութեան: - 106. Եւ յատուկ՝ զի որոշեալ և բաժանեալ է յարարածոց. և ո՛չ մի է *ըստ* սոսա. ո՛չ մասն է արարածոց և ո՛չ բոլոր: - 106. Յինգերորդ՝ *ըստ* այլ եղանակի է՛ միութիւն և յատկութիւն: - 106. Ութերորդ՝ նա ծնաւ *ըստ* մարմնոյ, զի դու ծնցիս *ըստ* հոգւոյ: - 107. Եւ զի նա հոգևոր ծնեալ՝ ծնաւ *ըստ* մարմնոյ. զի դու մարմնաւոր ծնեալ՝ ծնցիս վերստին *ըստ* հոգւոյ: - 107. Եւ զի անձամբ յատկացեալք են և բնութեամբ մի. վասն այն Երրորդութիւն ո՛չ ասի միոյ անձին. այլ աստուած կամ աստուածութիւն *ըստ* միութեան բնութեանն: - 108. Յասացելոցս ո՛չ ինչ է վայելչական աստուծոյ. բայց միայն *ըստ* պատճառին: - 109. Եւ ի միոյ աստուծոյ եղեն **ծ** դասք հրեշտակաց ընդ մարդկան. և հարիւր գունդքն *ըստ* ոչխարաց առակին. և **ռ** կենդանեաց տեսակքն որ յերկրի. և բիւր անկենդան բուսոց. և անթիւ գոյեղէնք: - 109. Երկոտասաներորդ՝ զի ընդ բազումս բազմանայ, և ի միութեան իւրում կայ և մնայ *ըստ* միոյն օրինակի: - 110. Այլ բազո՛ւմ է և զանազան *ըստ* պատկերի և նմանութեան յարացուցելոցս որք են բազումք. զի աստուած միով յարացուցիւ զբազումս տեսանէ. որպէս անմարմնութեամբն զմարմնաւորս տեսանէ. և յաւիտենիւ զժամանակեայս: - 112. Այսպէս ի մի և ի նոյն սկիզբն որ է՛ յարացոյցն՝ զբազում սկսեալքս *ըստ* յարացուցին: - 112. Եւ բազում է *ըստ* բազում պատկերաց: - 112. Այսպէս մի է յարացոյցն ըստ ինքեան. և բազմանայ *ըստ* բազմացելոցն ի նմանէ: - 113. Նախ՝ եթէ անեղ է աստուած՝ ըստ որում անսկիզբն և անեղ էին արարածք *ըստ* անգոյին՝ կարգաւո՛ր է և յոյժ որպէս դու ասացեր. զի անեղ էն աստուած յառաջ է ած զանեղն ի յէութիւն: - 113. Այլ արդ՝ *ըստ* անեղ էութեանն յառաջ էած զանեղ էութիւնն որդւոյ և հոգւոյ. և *ըստ* անհուն զօրութեանն յառաջ էած զեղականն էութիւն. զի անհուն զօրութիւնն կարօ՛ղ է ամենայն ընդդիմակաց. ըստ որում ամենազօ՛ր է: - 113. Ա՛րդ՝ կարգաւո՛ր է զի անեղն աստուած՝ զանեղն *ըստ* տեսութեան՝ յեղելութիւն ածցէ *ըստ* գոյացութեան իւրեանց: - 114. Վասն է՞ր կոչի աստուած հին աւուրց *ըստ* դանիէլի: - 114. Եւ մանուկն *ըստ* թըւոյ: - 115. Եւ այս նոյն է *ըստ* առաջին մտացն: - 117. Անմիտն և անզգայն զոր ասեմք աստուծոյ, ո՛չ *ըստ* պակասութեան, այլ *ըստ* գերազանցութեան է դնելի: - 118. Եւ այս ամենայն ընդդէմ է տեսութեան մեր. զի մեք մասամբ տեսանեմք. և մի զկնի միոյ. և առաւել և պակաս գիտութեամբ. և *ըստ* իրին փոփոխմամբ: - 118. Դարձեալ՝ տեսանէ աստուած *ըստ* պատճառի. զի ամենեցուն է պատճառ. և *ըստ* պարունակութեան, որ զամենայն առ ինքն ունի. և *ըստ* կատարման, որ ամենեցուն է վաղճան և կատարումն: - 118. Իսկ չորրորդն է խորհրդական աստուածաբանութիւն. յորժամ զամենայն զգալի և զիմանալի էութիւն արտաքոյ թողեալ, ի խորս ընթանամք մտօք և մտանեմք յամպն և ի մէղն *ըստ* մովսէսի. և ապա տեսանեմք զնա արտաքս որոշեալ յամենայն էից: - 122. Եւ իւրաքանչիւր սոցա երկատի, որ լինին չորս *ըստ* աստուածաբանին գրիգորի այսպէս: - 123. Կամ ննջել և զարթնուլ. որ ո՛չէ ի յաստուած. այլ դնելով ի վերոյ *ըստ* ներգործութեանն տարացուցի: - 123. Եւ այս ո՛չ *ըստ* պակասութեան, այլ *ըստ* գերազանցութեան: - 123. Նախ՝ զի ուրացականն *ըստ* պակասութեան է. որ ասէ ո՛չէ աստուած քրիստոս. այսինքն պակա՛ս է և ո՛չէ աստուած. և ո՛չէ հայր. և ո՛չ որդի: - 124. Իսկ բացբարձականն *ըստ* գերազանցութեան է. զի գերազա՛նց բան է՝ և գերագունա՛կ միտ. և գերագոյն և առաւել հայր՝ և որդի. և ո՛չ ըստ մեր կարգիս որպէս մեր բանս է և միտք: -

124. Եւ արդ՝ զի հասարակ են էութեամբ՝ և յատուկ առանձնաւորութեամբ, յաղագս որոյ զանազանելի է զյատկութիւնս *ըստ* երկուց լուսոյն: - 125. Երկրորդ՝ *ըստ* չափոյ մտիցն քանականայ մեծ կամ փոքր: - 125. Եւ *ըստ* չափոյ ընդունողաց ծնանի քրիստոս ի սիրտս մեր: - 125. Նմանապէս և իմանալի արեգակն արդարութեան քրիստոս՝ *ըստ* հաւասարութեան բաշխէ զմարմնաւորս...: - 127. Զի ոմանց տացի և յաւելցի. և յոմանց բարձցի և պակասեսցի *ըստ* չափու ունակութեան ընդունողաց: - 127. Զորօրինակ՝ թափումն ի զգայութեանց թմրիլ՝ կամ ընդարմանալ ասի. այսպէս թափումն ի մտաց՝ զարմանալ ասի. *ըստ* պօղոսի որ յափշտակեցաւ. և *ըստ* դաւթի որ զարմացաւ. կամ *ըստ* ադամայ որ թմրեցաւ: - 127. Սակայն *ըստ* մեր իմացմանս հասարակ է բարին քան զչէրն. զի ասեմք՝ սէրն բարի է. ազնիւն բարի է. և այլն. որպէս ասեմք՝ մարդն կենդանի է. ձին կենդանի է. և այլն: - 128-129. Այս է՝ *ըստ* խորութեան թաքո՛ւն. և *ըստ* անգիտութեամբ բա՛րձր: - 129. Չորրորդ՝ ներքին է բոլոր մարմնոյն. և հիմն եկեղեցւոյ է քրիստոս *ըստ* առաքելոյ: - 130. Հինգերորդ՝ ոտքն են հաւատացեալք և առաքեալք նորին. և գլուխ է քրիստոս. զի անդամք և մարմին եմք նմա *ըստ* առաքելոյ: - 130. Երկրորդ՝ է՛ գործ արդարութեան. զի *ըստ* արժանեաց հատուցի մեծաց և փոքունց. և առաջնոց և երկրորդաց: - 130. Երրորդ՝ է՛ գործ նախախնամութեան. զի *ըստ* ընտանի կարողութեան իւրեանց՝ համեմատապէս զպարգևս ընկալցին. զի մի վնասեսցին փոքունքն մեծամեծօք. և թերի մնացին մեծամեծքն սակաւուք: - 130. Ոմանք մերձ են էութեամբ արարչին. և ոմանք հեռի. որպէս իմացականքն քան զբանականս. և սա՛ քան զկենդանիս. և նոքա քան զտունկս. և հուսկ յետոյ անշունչ գոյացութիւնքն. *ըստ* մերձ և հեռաւոր բնութեանց՝ զանազանապէս առնուն: - 131. Եւ սոքա կոչին անբանք և անզգայք *ըստ* պակասութեան: - 132. Եւ նոքա *ըստ* առաւելութեան. զի ունին զիմացականն բան և զգայութիւն: - 132. Վեցերորդ՝ *ըստ* այլ եղանակի որպէս ասէ՝ իրինոս: - 133. Վեցերորդ՝ այն է՛ արւեստ *ըստ* բնութեան կարգի. և այս նշան ի վեր քան զբնութիւն: - 133. Նախ՝ *ըստ* սրբոյն դիոնէսիոսի որ ինն ասէ գոլ զդասս կարգապետութեան նոցա: - 134. Երկրորդ՝ զի ժերորդ է մարդս կարգեալ ի թիւ նոցա *ըստ* հարիւրերորդ մոլորեալ ոչխարին, և կորուսեալ ժերորդ դրամին: - 134. Եւ քերօբէն որ է՛ բազում գիտութիւն՝ ի դէմս որդւոյ. զի նա՛ է իմաստութիւն և գիտութիւն հօր *ըստ* առաքելոյն: - 135. Այլ թէ *ըստ* կարգին իմասցիս՝ հետևիմք առաջասացեալ սրբոյն դիոնիսեայ. որպէս աւանդեցաւ նմա յառաքելոյն պօղոսէ յափշտակելոյն յերրորդ երկինս: - 135. Երրորդ՝ զի վերինքն զներքնոցն ունին բոլորապէս զամենայն. և ներքինքն զվերնոցն մասնաբար *ըստ* չափու իւրեանց. և քահանայապետն ունի զաստիճան ներքնոցն բոլորապէս. և ներքինք զվերին քահանայապետիցն մասնապէս: - 136. Երրորդ՝ զի առաջինքն առաւել լուսաւորին գիտութեամբ, և այլքն *ըստ* չափու: - 138. Վասն առաջնոյն գիտելի՛ է, զի ամենայն շնորհ բղխո՛ւմն է և ճառագայթ, յանեղական լուսոյն իջեալ առ էակս ամենայն իմանալի և զգալի. և զարդարէ՛ զսոսա *ըստ* նմանութեան այնմ պարգևեալ շնորհի. եթէ *ըստ* բնութեան՝ և եթէ անձնական. ի հրեշտակս և ի մարդիկս: - 140. Այլ արդ՝ շնորհքն *ըստ* իւրում ինքնութեան է՛ անեղ՝ յանեղ է էն յառաջեալ, և նախախնամաբար եղելոցս հաղորդի, և յիւրմէ էութենէն ո՛չ փոփոխի: - 140. Վասն երկրորդ մի՞ է թէ բազում, ասեմք եթէ՝ ի սկիզբն մի է *ըստ* էութեան ի միոյ պատճառէ՛ յառաջ եկեալ. և ի բազումս բազմացեալ *ըստ* որակութեան. որպէս է արփեան և *ըստ* աստիճանաց: - 140. Վասն երրորդին անչա՞փ է թէ չափաւոր՝ գիտելի՛ է, զի անչա՛փ է շնորհն *ըստ* իւրում ինքնութեան. այլ չափաւորի՛ *ըստ* տուողին կամաց և *ըստ* ընդունողին կարեաց. որպէս բան մարդոյ ի լսելիս: - 140. Կատարեալ և գերակատար թիւք դոքա են առ մեզ. որ ի **դ** գլխաւորին *ըստ* չորից տարերց: - 141. Զի գիտեմք զդոսա ինն գոլ դասս *ըստ* սրբոյն դիոնիսեայ. և երիս երրեակս որոշեալ ի դէմս Երրորդութեանն: - 141. Այլ և երկոտասան գունդս հրեշտակաց եցոյց տէրն յաւետարանին *ըստ* թւոյ երկոտասան առաքելոցն և երկոտասան կենդանատեսակացն: - 141. Իսկ թէ աստուած ո՞րպէս գիտէ զթիւ ամենայնի ըստ այնմ, «ո՛ թւէ՛ զբազմութիւն աստեղաց». զայս ասեմք *ըստ* եռակի: - 141. Զի՞նչ է հրեշտակաց կալն և շարժումն *ըստ* եսայեայ թէ՝ «սէրօբէք կային շուրջ զնովաւ և թռչէին»: - 142. Կայումն *ըստ* բնութեան, և շարժումն *ըստ* իմացման և ներգործութեան: - 142. Իսկ շարժումն է եռակի *ըստ* սրբոյն դիոնիսեայ. այսինքն բոլոր՝ ուղղակի՝ և կողմնաւոր: - 142. Իսկ որ գերակատար իմացումն է և *ըստ* բնականին տեսութիւն՝ անկարօ՛տ է գրոց և սիղոբայից: - 143. Երկրորդ՝ ասեն թէ՝ ի լինիլ աստեղաց՝ հրեշտակք օրհնեցին զաստուած *ըստ* յոբայ: - 147. Այլ նոքա ամենեքեան ա՛զգ են դիւաց. և *ըստ* զանազան գործոյն՝ զանազան անուան հանդիպեցան. որպէս դևն պոռնկութեան, և հպարտութեան, և բէէղզեբիւղ, բեհմովթ, և այլն: - 150. Չորրորդ՝ զի ի դևն շրջեալ է տրտնջականն *ըստ* յառաջանալոյ ի բարին: - 151. Երրորդ՝ *ըստ* դամասկացւոյն՝ հրեշտակն ո՛չ է ընդունակ ապաշխարութեան. նմին իրի և ո՛չ թողութեան: - 151. Եւ թէպէտ անկան և եղեն դևք՝ գոյացականքն մնացին առ նոսա. և հրեշտակ լուսոյ կերպարանին *ըստ* առաքելոյն: - 151. Տասներորդ՝ գործ բութեան ո՛չ ինչ ունի մեղք. զի *ըստ* բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն. իսկ կամացն

գործ՝ մեղանչական է. վասն որոյ կամաւորին գով և պարսաւ հետևի: - 156. ...այսպէս իմաստութեամբ և նախախնամէ՛ զբոլորն՝ և զի իւրաքանչիւրսն *ըստ* իւրում պիտոյից զանազանապէս: - 157. Հինգերորդ՝ զի գործ արարչութեան է մի միայն առնելն. իսկ գործ խնամելոյն է՛ առնել և թոյլ տալ երբեմն երբեմն *ըստ* պիտոյից բարեգործութեան: - 158. Ութերորդ՝ թոյլ տալով սրբոց չարչարիլ՝ վասն պսակացն առաւելութեան է. զի կենցաղս այս հանդէ՛ս է նահատակութեան. և *ըստ* չափոյ համբերութեան՝ առցէ զյաղթանակն. որպէս սրբոյն ստեփաննոսի. զի ունէր զսարկաւագութեան և զառաքելութեան պատիւն, ընկալաւ և զմարտիրոսութեան պսակն ի քարկոծումն իւր. այսպէս և այլքն...: - 159. Ասելի է թէ՝ կոյսն և ապականեալն են հակակայք *ըստ* ունակութեան և պակասութեան. որպէս երեսք և կուրութիւն. որոց ի լինիլն համահետևին երեքին սոքա. այսինքն ժամանակն, և մասն, և նոյն: - 165. Եւ բաժանումն ասեմ ո՛չ *ըստ* նախախնամութեան, այլ *ըստ* գոյացութեան: - 169. Եւ *ըստ* բազում բաղդատութեան կոչի աստուած գոյ: - 171. Ո՛չ *ըստ* տարաչափութեան քանակի ասեմք. այլ *ըստ* ամենազօր կարողութեան և անչափ անհասութեան ասեմք զնա մեծ: - 171. Նախ է տեղի մարմնական. որ *ըստ* իւրաքանչիւր մասնկանց մարմնոյն պատահի: - 172. Իսկ Առնելն՝ յարարածոց յայտ է. և Կրել զնոսա բանիւ զօրութեան իւրոյ *ըստ* առաքելոյ: - 172. Եւ թէպէտ ի յէութիւնս իւրեանց յետոյ, սակայն ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ, գոյին յառաջ քան ըզլինիլն իւրեանց էութեամբ, և յետոյ եղեն *ըստ* նոյն նմանութեան: - 172. Դարձեալ՝ որպէս մի է բնութիւն բանին մարդացելոյ *ըստ* սրբոյն կիւրղի, մի է և ներգործութիւնն *ըստ* սրբոյ աստուածաբանին գրիգորի և դիոնէսիոսի: - 174. Աննիւթ է աստուած և պարզ էութիւն *ըստ* երկու եղանակի: - 175. Այլ մի է պետրոսն *ըստ* անձին անհատ գոլոյն. և մի է բնութիւն պետրոսին *ըստ* միաւորութեան բանին. իսկ սոքա օրինակ՝ և նա՛ ճշմարտութիւն: - 176. Այլ և *ըստ* համարոյն՝ կնքէ՛ զինչս թագաւորաց. և չտայ գողանալ ծառայից. և զգողացեալն յայտնէ և յանդիմանէ: - 178. Չորրորդ՝ զի ծնանիմք ի բարի կամացն աստուծոյ յառաջ գիտութեամբ նորին. և ապա գոյանամք արդեամբ և գոյացութեամբ *ըստ* իւրաքանչիւր տեսակաց: - 179. Եւ նս բազումք. զի աշխարի կոչի աշխարհարարն. և աշխարհս. և մարդս *ըստ* հոմերոնի: - 179. Զի *ըստ* իմաստ նոյն է՛ աստուած ամենայն ուրէք և ո՛չ ուրէք. ոչ ի տեղւոջ իմիք՝ և ո՛չ բացեայ ի տեղւոջէ իմիք. այլ վերոյ սորա, և ներքոյ սորա. ի մէջ սորա, և արտաքոյ սորա: - 180. Տասն բնական երկինքն. և ե յատկական. և ե *ըստ* նմանութեան. որ լինին ի երկինք: - 184. Չորրորդ՝ զի պարզ և վճիտ է *ըստ* էութեան: - 184. Իններորդ՝ զի մշտակա՛յ է ի պարունակութիւնս իւր. այսինքն զի ո՛չ ունի այլայլումն և փոփոխումն *ըստ* անարգ շարժութեան երկրի: - 184. Տասներորդ՝ *ըստ* չափու կարողութեան զաչս լուսաւորէ՛: - 185. Տասներորդ՝ *ըստ* չափու և կարողութեան բաշխէ. որպէս ի կեանս յայսմիկ, և ի հանդերձեալն առաւել զի կարիցեմք տանել: - 185. Ի բաց դնելն կրկին է. մին *ըստ* տեսակի, և միւսն ներգործութեամբ: - 186. Արդ՝ *ըստ* տեսակի՝ անիբաց դնելի՛ է լոյս արեգականն: - 186. Այլ *ըստ* ներգործութեան որ ի մէնջ պակասի և լուսաւորի՝ զայն ասէ: - 186. Ոմանք ասեն թէ եերորդ էութիւն են արտաքոյ չորից տարերաց *ըստ* արիստոտէլի: - 188. Այլ վարդապետք եկեղեցւոյ ասեն *ըստ* պղատոնի եթէ՝ լոյսն խզումն է ի տարրական հրոյ, որ յառաջին օրն գոյացաւ: - 188. Զի *ըստ* հռոմ համարին այսպէս է. մա՛րտի **dt**՝ Առաջին օր արարչութեան է, յորում եղև լոյսն: - 191. Հինգերորդ՝ օ՛ր է հասարակ յարութեան մարդկան. և գալստեանն քրիստոսի. և հատուցման *ըստ* իւրաքանչիւր գործոց: - 193. Հնգետասաներորդ՝ ասի օրէնքն օր *ըստ* սովորութեան...: - 195. Է՛ որ ինքնաչա՛փ է. որպէս գիծն ի կանգունն՝ ըստ ինքեան չափէ՛ զկանգունն ի յորում է. և *ըստ* պատահման չափէ՛ զկտաւն ի յորում ո՛չ է: - 198. Իսկ թէ *ըստ* պատուոյ իմանաս, նա՛խ է ներկայն. զի է՛ ստոյգ և ճշմարիտ. և ապա՛ անցեալն. և յետոյ ապառնին. և այսպէս շարադասեն քերթօղքն: - 198. Իսկ հայոցս է՛ ի վերայ հայկին *ըստ* տասն ծննդոցն: - 200. Քաղոց. զի արծակի խոյն ի հօտն *ըստ* հանճարեղ արանցն: - 200. և Հրոտից, *ըստ* դրութեան է. զի հո՛ւր է ոտիցն որ այրէ՛ ներքուստ ի վեր ջերմութիւն արեգականն: - 201. Գէջ օդն գոգացեալ և դէմ եղեալ արեգականն՝ առնու զլոյսն ի նմանէ *ըստ* բոլորակ ձևոյ նորա: - 203. Եւ *ըստ* չափու թանձրութեանն պատառեալ բեկանի, և ի վայր բերմամբ գնդի ի ջերմութենէ օդոյն, և լինի կարկուտ: - 205. Երրորդ՝ զի ջուրք ծովուն բա՛րձր է քան զերկիր. վասն որոյ հա՛րկ առնէ և ի վե՛ր մղէ և ապա՛ հեղու յերկիր. զորօրինակ մարդիկք ի բարձրագոյն լերանց իջուցանեն զջուրն, և *ըստ* նոյն չափոյ ի միւս կողմն ի վեր հանեն սակաւ ինչ պակաս: - 209. Վեցերորդ՝ *ըստ* այլոց. զի բոլոր թանձր մարմինն է՛ հողոյ. և ամենայն հիւթք և մաղձք է՛ ջրոյ. թոքն է՛ օդոյն. և սիրտն է՛ հրոյն ջերմ գոլով: - 215. Տասներորդ՝ անունն յարմար նշանակութիւն է կենդանեաց *ըստ* բարուցն և զանազան կերպիցն եդեալ. զի ամենայն անուն՝ յիրէն և ի գործոյն և ի ձայնէն դնի: - 220. Առաջին երկինն անապական է *ըստ* տեսակի: - 221. Երկրորդն է անապական *ըստ* հիւթոյ: - 221. Երրորդն է անապական *ըստ* զօրութեան ներգործողին զնա: - 221. Պտուղքն դրախտին շօշափելիք են և կերակրելիք. հատանի և ծասկի և փոփոխի *ըստ*

պատահական որակացն. և անապական մնայ *ըստ* գոյացութեանն և ներգործութեանն ի կերօղն: - 223. Որպէս հաց մարմնոյն քրիստոսի *ըստ* գոյացութեան և ներգործութեան անապական է. թէ և փոփոխի *ըստ* արտաքին որակացն: - 223. Թէպէտ *ըստ* նիւթոյն յապականացու երկրէ է, այլ *ըստ* կատարման յանապականութիւն փոխեցաւ: - 225. Ա՛րդ՝ վերջին հրովն յորում վառին երկինք և երկիր, *ըստ* նիւթոյ մասին պարզի. այլ *ըստ* ապականութեան մնայ անփոփոխ: - 225. Նոյնպէս և *ըստ* թանձրութեանն: - 225. Որ ընդ դէմ է *ըստ* գրոց. և ուղղափառ հարց: - 225. Ոմանք իբ ասեն *ըստ* նշանագրացն եբրայեցւոց. և այլք իդ *ըստ* ժամուց աւուրցն: - 226. Չորեքտասաներորդ՝ Պատկերացուցութիւն մարդոյն *ըստ* մասին: - 227. Ուստի միջակ գոլով *ըստ* էութեան՝ և ի միջակ վայրս դրախտին բնակեալ: - 231. Եւ զկրկնակի կենաց վայելումն *ըստ* խառնեալ էութեան իւրոյ. զի թէ զաստուածայինսն բերցէ յինքեան ըստ որում ի պատկերն եղև, վերափոխեսցի անմահ կենօք ի պատրաստեալն ժառանգութիւն: - 231. Իսկ թէ *ըստ* մարմնոյն շեղեսցի՝ ի մահ պարտաւորեսցի և տնկեսցի ի մարմնաւոր տեղիս. որպէս և եղև իսկ: - 231. Նա՛խ՝ *ըստ* փիլիսոփայիցն ներքին մասունքն հոգւոյն պատճառե՛ն զարտաքին մասունս մարմնոյն. և *ըստ* պղատոնի՝ հոգին եռամասնեայ գոլով՝ բան և ցասումն և ցանկութիւն: - 232. Գլխոյն հերն որպէս արմատ. և ջիլք և ոտք՝ որպէս ոստք *ըստ* ծևոյ աշխարհի: - 233. Երրորդ՝ զի ամենայն իր յէից և յոչ էից են գոյացեալ. յէից՝ *ըստ* նախածանօթ տեսչութեան գաղափարին. և յոչ էից՝ ըստ ինքեան ի ժամանակի հաստատեալք: - 236. Զի արարիչն սոցա մի է բնութեամբ. և *ըստ* բնութեան հաւասար, և անծամբ յատուկ: - 237. Եւ որպէս մարմնոյն պատկերք նման և աննման են իրերաց. նոյնպէս և հոգին *ըստ* միոյ բնութեան ստեղծեալք նման և աննմանք են իրերաց: - 237. Է և այլ իմն աննմանութիւն հոգւոյ *ըստ* իմացմանն. առաւել և նւազ. ուշիմ և ապուշ. չկամ և կամեցօղ. հեզ և յանդուգն. ցանկացօղ և ողջախոհ. *ըստ* բնական բարոյիցն որակացեալ. նման և աննման գոլով իրերաց: - 237. Իսկ **դ** ջուրն որ է ի մարդն՝ *ըստ* չորս տարերացդ է: - 240. Եւ բաժանին **բժ**ան անդամքն *ըստ* երկոտասան կենդանակերպիցն. և **բժ**ան մասին երկրի: - 241. Իսկ է գլխաւոր անդամքն են այսոքիկ *ըստ* է մոլորակացն ունելով զբնութիւնս նոցա: - 241. Եւ առ հասարակ ասեմ զայս դնել ի մտի. զի չափաւորութիւն անդամոցն *ըստ* ծևոյն և *ըստ* գունոյն և *ըստ* քանակութեան և *ըստ* կազուածոյն և *ըստ* շարժմանն, նշանակէ զբարի մտացն ընդաբոյս յարմարութիւնն: - 248. *Ըստ* փիլիսոփային **բ** են զօրութիւնք անձին. այսինքն գիտնականս և կենդանականս: - 248. Վասն այսորիկ կատարեալ իմաստութիւնն յերկուս բաժանի. ի տեսականն և ի գործնականն. այս *ըստ* դաւթի: - 248. Իսկ *ըստ* այլոց, զօրութիւնք հոգւոյն բաժանին յերկուս. որ է իմացումն և կամքն: - 248. Զի թէպէտ *ըստ* ներգործութեանն բաժանին երբեմն ի բաժանելի մարմնոյն՝ զի առանց մարմնոյն ո՛չ կարեն ներգործել սոքօք, այլ անբաժանելի մնան *ըստ* էութեանն ի հոգին. որպէս ցուցանելոց եմք յառաջիկայսդ: - 249. Զի թէպէտ ըստ ներգործութեանն բաժանին երբեմն ի բաժանելի մարմնոյն՝ զի առանց մարմնոյն ո՛չ կարեն ներգործել սոքօք, այլ անբաժանելի մնան *ըստ* էութեանն ի հոգին. որպէս ցուցանելոց եմք յառաջիկայսդ: - 249. Իսկ յանասունսն ամենևին *ըստ* երկոցունցն կորնչին ընդ մարմնոյն: - 249. Դարձեալ զօրութիւնք հոգւոյն բաժանին երրակի *ըստ* երից ներգործութեանցն. որ է՛ կենդանանալն. զգալն. և բանաւորիլն: - 249. Եւ դարձեալ՝ եթէ տամք զփչումն՝ բանական հոգւոյն *ըստ* ոմանց, և այսու յետո՛յ իմանալ զհոգին քան զմարմինն մեղանչումն է ճշմարտութեան *ըստ* **ե** եղանակի: - 253. Հինգերորդ՝ զի տկարութիւն է զօրութեանն աստուծոյ՝ եթէ զմի էութիւն *ըստ* մասին յայլ և այլ ժամանակս գործեաց: - 254. Եւ այս ո՛չ ժամանակաւ յետոյ *ըստ* երից պատճառաց: - 254. Այլ ի կողմանէ հոգւոյն՝ զօրութեամբ ո՛չ է ի սերմն այն *ըստ* ինքնութեան բոլորին. այլ *ըստ* ինքնութեան մասին. որ է տնկականն և զգայականն: - 255. Եւ դարձեալ՝ որպէս հատն ցորենոյ ունի առ ինքն զօրութեամբ զխոտն և զծաղիկն և զհասկն. և սոքա համանգամա՛յն են ի հատն այն զօրութեամբ. որ յետ ժամանակաւ *ըստ* դասի երևին: - 255. Ո՛չ է հին, զի *ըստ* իւրաքանչիւր մարմնոյ համանգամայն ստեղծանի հոգին: - 257. Եւ ոչ նոր, զի մի և նոյն ի սկզբանէ հրամանն արարչադիր առանց տկարութեան ներգործէ մինչ ի կատարած. և *ըստ* իւրաքանչիւր հոգւոյ՝ նոր հրաման ստեղծանելոյ ո՛չ արծակի: - 257. Եւ ստեղծմամբ զի *ըստ* գոյութեան իւրոյ շնորհօքն աստուծոյ նո՛ր պարգևեցաւ ընդ լինելութեան մարմնոյ: - 258. Եւ ի կատարիլ մարմնոյն՝ հեղու ի նա զհոգի բանական *ըստ* նախատես գաղափարի այնորիկ որ էր ի միտս արարչին յառաջ քան զլինիլն աշխարհի: - 258. Եւ *ըստ* անասնոցն հաւասարութեան նախ գոյանայ անասնականն որ է տնկականն և զգայականն. և յետոյ բանականն: - 258. Եւ զորօրինակ՝ մի է էութիւն իմացման, այլ ի **ե** զգայութիւնս բաժանի *ըստ* ներգործութեանն: - 259. Այսպէս մի է էութիւն հոգւոյն ըստ ինքեան, և յերիս բաժանի *ըստ* ներգործութեան: - 259. Այսպէս և զգայականն և տնկականն մասունք են բանականին՝ նախ եդեալ ի մարմինն. և յորժամ բանականն հեղի ի մարմինն, յայնժամ և սոքա հեղին ընդ նմա. զի զօրութիւնք և մասունք են նորա *ըստ* օրինակի նախասացեալ երրորդ թուոյն: - 259-260. Ասեմք առ

այս, եթէ և յետ մահուան ո՛չ բաժանին սոքա ի հոգւոյն *ըստ* էութեան. զի մի է էութիւն սոցա. այլ ըստ ներգործութեան. զի ո՛չ է մարմին՝ ո՛չ կարէ ներգործել: - 260. Ասեմք առ այս, եթէ և յետ մահուան ո՛չ բաժանին սոքա ի հոգւոյն ըստ էութեան. զի մի է էութիւն սոցա. այլ *ըստ* ներգործութեան. զի ո՛չ է մարմին՝ ո՛չ կարէ ներգործել: - 260. Ասեմք առ այս, թէ մի է հոգի հաւաստեաւ. և ո՛չ է ինքն ինքեան առաջին և վերջին. զի մի էութեան՝ առաջին և վերջին ո՛չ է. այլ *ըստ* ներգործութեան. զի *ըստ* առաջին և վերջին զօրութեանն՝ առաջին և վերջին ներգործէ: - 260. Ասեմք առ այս, եթէ բանականն առաջին է *ըստ* պատւոյ քան զզգայականն. և զգայականն քան զտնկականն: - 260. Այլ հակադարձեալ սոքա ըստ կարգի և *ըստ* դասու՝ յառա՛ջ է տնկականն քան զզգայականն, և նա՛ քան զբանականն ի յերևումն. այլ էութեամբ համանգամայն են. որպէս անդ ուրեմն ասացաք վասն հոգւոյ և մարմնոյ: - 260. Եւ թէ զտեսութիւնս զայս կարծես էութիւն հոգւոյ ըստ որում է հոգի, ապա ո՛չ միայն ետես զհոգի, այլ և զմարմին՝ և զիւրաքանչիւրոց ընտրութիւն, և զհամար հերաց և զթիւն աստեղաց. և սոքա յետո՛յ են գոյացեալ *ըստ* կամաց տեսողին: - 260. Այսպէս և հոգի *ըստ* կամաց խնամողին յետոյ պարգևեալ *ըստ* թուոյ ծննդեան իւրաքանչիւր մարդոյ որպէս ինքն գիտէ: - 260-261. Ոմանք *ըստ* ազգի և տեսակի իւրեանց հով և ջերմ՝ չոր և գէջ գոլով, փութով կամ յապաղելով բուսանին: - 261. Վասն որոյ *ըստ* թուոյ զօրութեան իւրոյ որ է՛ սնանիլն աճիլն և ծնանելն, յերեք ամիսս ծնանի զպտուղս. որպէս ցորեան և այլքն: - 262. Ասեմք թէպէտ նիւթն ի չորից տարերց է, այլ տնկականն զօրացեալ քան զնիւթն՝ *ըստ* իւրոյ մասանցն ծնանի. զի ծնանիլն տնկականին է. այլ և ունի զտարերացն թիւ. զի յամիսս չորս կատարի այն՝ որ յառաջ ծնաւ: - 262-263. Կամ *ըստ* ազգի իւրեանց, և կամ *ըստ* տեղւոյն և ժամանակին ցրտութեան և ջերմութեան և այլն: - 263. Իսկ որք ի **խ** աւուրս ծնանին և կամ ի **ի**, որպէս հաւ. ունին նոքա զխորհուրդ չորից տասանց և չորից հնգից, *ըստ* **ե** զգայութեանց ներքոյ և **ե** զգայութեանց արտաքոյ որպէս ասացաք: - 263. Այլ և պարզապէս *ըստ* չորից տարերց տնկականին՝ **գ** զօրութիւնք և **ե** զգայութիւնք՝ լինի **բժ**ան: - 263. Եւ կամ *ըստ* ազգի իւրեանց և *ըստ* տեղւոյն և ժամանակին փութան և յապաղեն զծնունդն: - 263. Դարձեալ **թ** խառնուա՛ծ է չորից տարերց *ըստ* կրկին քառից որակաց առաւել և նուազ, և իններորդն հաւասար է որ է ի մարդն. վասն որոյ ինն ամսեայ ծնանի: - 264. Զի բոյսք մանունք և չորքոտանիք մանունք կարեն ի նոյն ամի զնմանն ծնանիլ *ըստ* վերոյ ասացեալ երրեակ թուոյ ամսոյ, կամ կրկին վեցեկի: - 264. Զի մանունքն յամսօրէից և ի վայր, ի շաբաթս և յաւուրս և ի ժամս *ըստ* նոյն թուոյ կարեն զնմանն ծնանիլ. և առաւելքն առաւելեալ ամօք կրկին կամ երեքկին որպէս ասացաք: - 264. Իսկ մարդոյն խորհուրդն *ըստ* չորից տարերց և երից զօրութեանց տնկականին եօթեամբ կատարի. թիւ շնորհալի և մշտակոյս *ըստ* աթենայ. զի ոչ ծնեալ լինի և ո՛չ զայլս ծնանի: - 264. Եւ **է** ամեայ ուսումն ստանայ. վասն որոյ մինչև յեօթն ամն երեխայ կոչի. զի **գ** մասունք են հոգւոյն. բան. ցասումն. և ցանկութիւն. *ըստ* պղատոնի: - 264. Եւ այսպէս է *ըստ* ոմանց վեցեկի շարժմունք հասակի մարդոյս որպէս ասացաւ. այսինքն Երեխայ: - 265. Եւ այսպէս միջին հասակս կատարեալ, ձգի մինչև ի **խզ** ամն. որ է **դ ժզ**. և վեցն կատարեալ թիւ է. և աստ տիրէ ալիք և սկիզբն լինի ծերութեան մինչև ի **իբ** ամն. յորում է ծայրք կենաց *ըստ* դաւթի, և թիւ երկոտասան վեցից խորհրդաւոր: - 265. Եւ դարձեալ *ըստ* չորից տարերց և եղանակաց և ժամուց աւուր և հիւթոց համեմատաբար փոփոխին և հասակ մարդկան: - 266. Իսկ ամառն, և մինչ ի **զ** ժամս աւուրն, և խարտեաշ մաղձն, և երիտասարդն՝ *ըստ* նմանութեան տարրական հրոյ ջերմ և չոր գոլով. վասն որոյ առաւել բարկացօղ և ցանկասէր լինի: - 266. Իսկ աշունն, և մինչ ի **թ** ժամս աւուրն, և սեաւ մաղձն, և ալևորն, *ըստ* նմանութեան երկրի ցուրտ և չոր գոլով՝ ծոյլ և պղերգ գոլով ամենայն ուսմանց և գործոց: - 266. Իսկ ձմեռն, և յինն ժամէն մինչև յերեկոյ և բոլոր գիշերն, և սպիտակաթոյր հիւր պլղամին, և ծեր մարդ, *ըստ* նմանութեան ջրոյ ցուրտ և գէջ գոլով. վասն որոյ սպիտակի և ցրտանայ և պակասի զօրութեամբ: - 266. *Ըստ* բնականին այս է. զի ամենայն իր որ լինի՝ յանկատարութենէ ի կատարումն ելանէ, և ի զօրութենէ ի ներգործութիւն որպէս ի վերոյ ասացաւ: - 267. Իսկ բնական երազն բաժանի ի չորս *ըստ* սրբոյն նիւսացւոյ ի գիրս կազմութեան: - 268. Երրորդ՝ *ըստ* հիւթին յաւելւածոյ՝ և պակասութեան մաղձիցն՝ ի ներքուստ կամ յարտաքուստ, ջերմ և ցուրտ և այլն, զնորին նմանն և զկերպարանն առնու առ ինքն: - 268. Չորրորդ՝ *ըստ* բարուցն տեսանէ ոք. զի ա՛յլ է երազ արի մարդոյ, և այլ երկչոտին. ա՛յլ գիճասիրին, և այլ պարկեշտին: - 268. Իսկ տընկականն միայն գործ է ի կերակրիլն և աճիլն, նա նկարէ յինքեան ի զգայութեանցն և ի մտացն *ըստ* տկարութեան իւրոյ անկարգաբար երևեցուցեալ ի յիշատակարանս մտացն որպէս ասացաք: - 268. Նա՛խ՝ *ըստ* առաջ եդելոյն. զի առաջ եդեալք սորա են աստուածայինքն և իմանալիք. իսկ նոցայն՝ մարմնականք և զգալիք: - 269. Երկրորդ՝ *ըստ* պատւոյն. զի այս երկնային և վերուստ իջեալ. իսկ այնոքիկ երկրաւոր և շնչաւոր որպէս ասէ առաքեալն: - 269. Երրորդ՝ *ըստ* կատարման. զի այս յետ փոխման զյոյսն ունի լծակցեալ անմահութեան և խնդութեան. իսկ այնոքիկ կորստական և

անցաւոր: - 269. Իմաստասէր իմանամք զայնս՝ որք *ըստ* արտաքին փիլիսոփայիցն կրթութեան են վարժեալք. որպէս պղատոն, արիստոտէլ, և այլքն: - 269. Իսկ իմաստունն *ըստ* երկուց եղանակաց իմանալի է: - 269. Իսկ իմաստութիւն միայն քրիստոս ասի *ըստ* պօղոսի. «քրիստոս՝ աստուծոյ զօրութիւն և աստուծոյ իմաստութիւն»: - 269. Դարձեալ՝ իմաստութիւնն պատշաճի հօր *ըստ* կարողութեան. և գիտութիւնն որդոյ իբր բան. և հանճարն հոգւոյն բղխման: - 270. Այսպէս իսկապէս թագաւորն ամենայն աշխարհի՝ ստեղծեաց զմարդն *ըստ* պատկերի իւրոյ: - 271. Հայր և Որդի և Հոգին սուրբ. այսպէս ի մարդն միտքն բանն հոգին. *ըստ* եզնկացւոյ պլուզ վարդապետին: - 271. Քսաննդ, *ըստ* ունակութեան՝ զօրութեան՝ և ներգործութեան. բայց այլազգաբա՛ր են ի մեզ և յաստուած: - 272. Ի սոցանէ ոմանք *ըստ* հոգւոյն միա՛յն են. և ոմանք *ըստ* հոգւոյն և մարմնոյն: - 272. Զի ո՛չ է *ըստ* նմանութեան պատկեր. այլ *ըստ* նոյնութեան բնութեանն: - 272. Զոր օրինակ ո՛չ ասի մարդ մարդոյ նման գոլ *ըստ* մարդկութեան. վասն զի նոյնութիւն է և ոչ նմանութիւն. բայց ասի նման մարդ մարդոյ *ըստ* երեսացն և գունոյն և ձևոյն նմանութեան: - 272. Իսկ մարդն ասի պատկեր աստուծոյ *ըստ* նմանութեանն. վասն զի ո՛չ ունի զնոյն էութիւն. այլ զնմանութիւնն աստուծոյ: - 273. Իսկ դրամն և տախտակն ուր գրեալ է պատկեր թագաւորին՝ միայն նման է թագաւորին *ըստ* ձևոյն. այլ ո՛չ *ըստ* բնութեանն: - 273. Այսպէս ասեն թէ՝ մարդն կազմեալ է ի պատկեր որդւոյ, և *ըստ* նմանութեան հոգւոյն սրբոյ: - 273. Եւ դարձեալ ասեն թէ՝ հոգին է պատկեր աստուծոյ *ըստ* զօրութեանցն. զի ունի միտք և իմացումն և կամք: - 273. Դարձեալ՝ *ըստ* երից բնական զօրութեանց հոգւոյն պատկեր եմք աստուծոյ. այլ սրբութեամբ արդարութեամբ և առաքինութեամբ նման եմք աստուծոյ: - 273. Դարձեալ՝ մարդո՛յն է կարգաւորել զկիրս բարկութեան և ցանկութեան *ըստ* կանոնաց բանականին: - 274. Եւ պատուէրն *ըստ* կամաց: - 277. Գիտելի է, զի որպիսութիւն կենաց մարդոյս տրամատի յերիս. *ըստ* երից փոփոխմանց մարդոյն. այսինքն նախ քան զմեղքն. և յետ մեղացն. և յետ մահուն: - 278. Նաև *ըստ* երից դրութեանց տեղեացն. որ է՛ դրախտն. և աշխարհս այս. և հանդերձեալն: - 278. Ութերորդ՝ մաշկեղէն հանդերձն. ո՛չ *ըստ* ոմանց թէ մորթ մարմնոյս, զի ունէր զայս ի ստեղծմանէն: - 280. Եւ եերորդ՝ ո՛չ ևս թզենեաւ՝ այսինքն դառն վարուք ստուերանալ. զի տերև թզենւոյն դա՛ռն է և փշոտ *ըստ* մեղացն առակի: - 281. *Ըստ* իրին նշանակէր զշնորհաց հոգին, զոր ի մարմին եղելոցն վերացոյց. և ի վերնատունն դարձեալ փչեաց: - 282. Իսկ *ըստ* նշանակութեան ցուցանէր զբանական հոգին. որով կենդանացաւ մարդն: - 282. Երկրորդ՝ զի խոնարհ և հնազանդ էր յամենայնի. ուստի մնաց եղբօրն պատարագի. որ իւրն գ ամսով յառա՛ջ էր հասեալ քան զեղբօրն. այսինքն ծնունդ ոչխարացն քան զպտուղ երկրին...: - 286. Աստ հայր ազգաց բազմաց եղև. մանաւանդ թէ և նորին իսկ քրիստոսի *ըստ* մարմնոյն: - 288. *Ըստ* չորից իմանի յոյսն ենովսայ: - 288. Դարձեալ *ըստ* եփրեմի հինգերորդ՝ զի սուրբ էր սրտիւ. և Վեցերորդ՝ զի միամիտ էր կամօք. և սոքա առնեն զմարդն մերձակայ աստուծոյ: - 290. Եւ զխ ամ շինեցին յամառն և ձմեռն *ըստ* բարեխառնութեան տեղւոյն. մինչև հասին յործկուտ օդն թանձրացեալ ի գոլորշեաց և ջերմացեալ յարևուն: - 297. Երրորդ՝ զի մելքիսեդեկ քահանայ ո՛չ *ըստ* մարմնական ինչ օծմամբ իւղոյ որպէս այլոցն, այլ շնորհօք հոգւոյն անընդմիջաբար: - 301. Եւ քրիստոսն օծեալ ո՛չ *ըստ* իւղոյ ինչ երևութապէս օծման, այլ միանալով ընդ բանին աստուծոյ՝ ասի օծեալ: - 301. Չորրորդ՝ *ըստ* անուանակոչութեանն. զի մելքի՝ որ է՛ թագաւոր. և թագաւորէր սաղիմայ: - 301-302. Որք հաղորդեցան մարմնոյ նորա, եղեն զաւակք *ըստ* մարմնոյ՝ *ըստ* թլփատութեան և այլոց օրինաց նորա: - 303. Եւ թէպէտ կարելի՛ է *ըստ* բազմազան եղանակաց այս կարգ համեմատութեան ի սոյն խնամով աշխատասիրաց: - 304. Սապէս և քրիստոս *ըստ* մարմնոյ որդի է աբրահամու *ըստ* մատթէոսի: - 304. Երրորդ՝ ծնաւ իսահակ ո՛չ բնականապէս *ըստ* բնութեան կարգի. զի անցեալ էին զաւուրբք. այլ էր աստուծոյ պարգև: - 304. Եւ ի վերայ տեառն ջահիւք և սուսերօք եկին ըմբռնել *ըստ* աւետարանին: - 306. Տասներորդ՝ բազմամա՛յր եղև սառա *ըստ* նահապետացն. բազմամա՛յր է և կոյսն *ըստ* հաւատացելոցն. բազմամա՛յր է և եկեղեցի *ըստ* վերածնելոցն...: - 307. Դարձեալ՝ նո՛ր էր ծնունդ սառայի և ո՛չ *ըստ* օրինաց կարգի: - 307. Երրորդ՝ *ըստ* առաքինութեան ի պատուիրանէն տեառն յղացեալք, և ծնանիմք առաքինութեամբ զփրկութիւն հոգւոյ...: - 308. Չորրորդ՝ *ըստ* գերազանցութեան. զի յանկարծակի ծագէ՛ ի մեզ շնորհն աստուծոյ եթէ ի հաւատս՝ և եթէ յայլ ինչ գործս ի հաճոյսն աստուծոյ: - 308. Հինգերորդ՝ *ըստ* բանի՝ յղացեալք խոհեմութեամբ և ծնանիմք զիմաստութիւն: - 308. Վեցերորդ՝ *ըստ* արուեստից՝ յղացեալք հանճարով, ծնանիմք զգործս: - 308. Եօթներորդ՝ *ըստ* ուսման. որպէս աշակերտք ծնունդք կոչին վարժողաց. եթէ ի մարմնականս. և եթէ ի հոգեկանս...: - 308. Ութերորդ՝ *ըստ* մեղաց. զի սերմ առեալք ի սատանայէ՛ յղանամք զցաւս և ծնանիմք զանօրէնութիւն: - 308. Իններորդ՝ *ըստ* փոփոխման ասի. զի յղացեալ ունիմք զմահ անդստին. և ի վախճան մերձեալ հասանէ երկն ցաւոց. և բաժանեալ հոգին ծնանի ի մահ: - 308. Վեցերորդ՝ անդրանիկք են և ընտրեալքն աստուծոյ. որք նախքան զլինիլն աշխարհի

ընտրեցան. թէպէտ յետոյ ի ժամանակի *ըստ* հասարակաց գոյացան և կատարեցան: - 309. Ութերորդ՝ անդրանիկք են *ըստ* մարմնոյ վերակացուք և տեարք. որպէս թագաւորք, և իշխանք. նոյն և առաջին ծնունդք ելեալ յարգանդէ՛: - 309. Եւ սոքա որ երևինս մեզ կրտսեր և վերջին, փոխեին և լինէին նախկին և առաջին *ըստ* նախընտրութեանն աստուծոյ: - 310. Այս քան *ըստ* խորհրդոյ որ անդրանիկքն խոտեին, և կրտսերքն պատուեին: - 311. Քսաներորդ, և որպէս յովսէփ եթող զքուրմն և զերկիր նոցա, զոր քրիստոս էր բառնալոց զմեծամեծ մեղսն և զկռապաշտութիւնն. զի *ըստ* առն և զօրութիւն իւր. և *ըստ* աստուծոյ և գործք իւր: - 314. Եւ յամենայն աւուր *ըստ* թուոյ նոցա **ժ** զոհ մատուցանէր, և զուարակ մի վասն սրբութեան մտաց: - 321. Նա՛խ՝ զի **ժ** էին թուով. է ուստերք և գ դստերք. *ըստ* թըւոյ նոցա մատուցանէր: - 322. Եւ *ըստ* նմանութեանն քրիստոսի մի զուարակ. որ վասն մեղաց մերոց մեռաւ: - 322. Այլ *ըստ* մտաց՝ ունի **զ** խորհուրդս: - 323. Հինգերորդ՝ *ըստ* առաջին կարգին դարձեալ ասացին բարեկամքն յոբայ՝ թէ հաճո՛յ ես աստուծոյ՝ լուիցէ և խօսեսցի աստուած. վասն այն առաջի նոցա խօսեցաւ և վկայեաց: - 326. Եւ ոմանք **լր** ասեն *ըստ* անդամալուծին զոր բժշկեաց քրիստոս: - 326. Որպէս և յոբ *ըստ* կարծեաց բարեկամաց ասէր՝ «ե՛ս մոլորեցայ»: - 327. «Եւ վէմն էր քրիստոս» *ըստ* առաքելոյ: - 329. ...և նա՛ կոչի հրեշտակ մեծի խորհրդոյ *ըստ* մեծին եսայեայ...: - 330-331. Զի *ըստ* փիլիսոփային եթէ է՞, և զի՞նչ է, և ո՞րպիսի ինչ է: - 331. Եւ ա՛յն է մտանել ի միտս անարգութեան *ըստ* առաքելոյ: - 336. Որ լինի բովանդակն մինչև յելսն եգիպտոսի, **գռոծք** ամ *ըստ* եօթանասնիցն: - 337. Իսկ *ըստ* նաեբեայ, վպթ ա՛մ է. զկայնան **ճի** ամ ի ներս առեալ, որ է՛ որդի արփաքսաթայ՝ և հայր սաղայի. զոր յիշէ աւետարանն, և ո՛չ յիշէ մովսէս: - 337. Երկրորդ՝ *ըստ* ախորժակաց նոցա պատրաստէր. զի գիտացեն թէ զկամս նոցա կատարէ՛ աստուած: - 339. Ութերորդ՝ մի՛ անգամ յաւուրն. և մի անգամ պատարագեմք զքրիստոս *ըստ* աւուրց: - 339. Նշանակէ՛ *ըստ* փիլոնի, զի անմարմինքն մինչև յերեքն հասանին. որպէս երկրաչափքն գրեն նիշ՝ գիծ՝ երևոյթ. ա՛յս է իմանալեացն չափ: - 344. Եւ արտաքոյ, զի օրըստօրէ յաւելուն լուսափայլ իմաստիւք *ըստ* մեծին դիոնիսեայ: - 344. Դարձեալ *ըստ* սրբոյն կիւրղի՝ տապանա՛կ է տէրն մեր յիսուս քրիստոս. և անփուտ փայտն անապական մարմինն: - 345. Երես զիսկութիւն աստուածութեանն նշանակէ. զոր աստի կենօքս ո՛չ ոք կարէ տեսանել. որպէս զբոլորակ արեգականն. այլ ի հանդերձեալն տեսանեն ընտրեալք *ըստ* չափու: - 350. Դարձեալ՝ աստուած յառաջնումն ծննդեան յորժամ զյանցաւորս *ըստ* բնական մեղացն՝ ջրհեղեղաւն ջնջեաց. յերկրորդումն ծննդեան յորժամ զյանցաւորս ի կռապաշտութիւն՝ կարմիր ծովովն ընկղմեաց. յերրորդումն ծննդեան տուժեաց, յորժամ զյանցաւորս գրաւորական օրինացն պատերազմօք սատակեաց: - 351. Զայս ասէ մեծն ներսէս երեք քառասունք մովսէսի *ըստ* թուոյ ամաց նորին: - 353. Միևն *ըստ* բնութեան ծնողաց: - 353. Եւ **գ** *ըստ* շնորհաց. որպէս ի ջրոյ, ի հրոյ, և ի վիմէ. ի տիպ տեառն մերոյ որպէս ասացաւ: - 353. Հինգերորդ, նոքա մատուցանէին պատարագ նախ վասն իւրեանց, և ապա՛ վասն ժողովրդեանն անգիտութեան. իսկ տէրն մեր ո՛չ արար մեղս *ըստ* մարգարէին. այն անմեղն վասն մեղաւորաց պատարագեցաւ...: - 354. Այլ և միշտ և անփոփոխ. և անմիջաբար դեմ յանդիման քահանայագործութիւն է անդ *ըստ* իմանալեացն օրինի: - 355. Եւ *ըստ* միտս, զի առաքինութիւնն է ի փառս աստուծոյ. այլ և ի պատիւ և ի գովութիւն մարդկան. զի բազումք հաղորդին սրբութեան նորա: - 358. Այլ *ըստ* գործո՛ց նոցա զանազանին սուրբն և անսուրբն: - 364. Եւ այսպէս *ըստ* բարուց մարդկան ընտրէր նոյ ի սրբոցն **է**. և յանսրբոցն **բ**. որպէս ասացաւ ի վերոյ **ժզ** գլուխն ի **զ** համարն: - 364. Եւ լիցի սուրբ *ըստ* նշանակութեան օրինացն. զի անսուրբն և պիղծն ո՛չ է զենլի: - 365. Երկրորդ՝ զի անարիւն է զենումն նոցա և ո՛չ *ըստ* հնոյ քահանայիցն: - 366. Եւ նշան սրբոյն և պղծոյն *ըստ* օրինացն ասացաւ ի վերոյ: - 366. Նոյնպէս և ոտքն *ըստ* չորից տարերց ընթացից: - 367. Այլ ուղիղն, զի օրէնքն թէպէտ *ըստ* խորհրդոյն փոխեցաւ, այլ *ըստ* իրին մնաց յաւիտեան. զի օրինակն էանց, այլ ճշմարտութիւնն մնաց: - 369. Չորրորդ՝ ամսամուտն նոցա. զոր ի նորանալ լուսնին տօնէին. իսկ մեզ տօն կուսին մարիամու որ լուսաւորութիւն լսի *ըստ* ոմանց: - 372-373. Այլ *ըստ* ոմանց՝ տօն քաւութեան որթագործութեանն, նշանակէ ի մեզ զտօն մեծ քառասնորդացն պահոց: - 373. Զի՞նչ էր որ ի տաղաւարահարքն *ըստ* միոյ միոյ աւուրց մի մի զուարակ պակասէին ի տօնս. և յութերորդ օրն ի միևն յանգէին: - 374. Զի՞նչ է որ *ըստ* տօնից մեծութեանն առաւելոյր նաշիհն և իւղն և գինին: - 375. Կարդացմունք. քարոզք. ներբողեանք և այլք. որ *ըստ* տօնից առաւելուլ պարտ է զնոսա: - 375. Նա՛խ՝ **է**պատիկ՝ զբազո՛ւմն նշանակէ. իբր թէ *ըստ* բազում մեղաց մերոց բազում և առաւել է պատուհասն: - 376. Ոմանք ասեն է *ըստ* **ի** ամացն: - 378. Իսկ այլք ի **դ** բաժանեն *ըստ* չորից տարերաց և **դ** պահու գիշերոյն. որպէս ասացաւ ի վերն **ժզ** գլուխն **իգ** համարն: - 378. Հինգերորդ, *ըստ* փիլոնի գաւազանն է իմաստութիւնն. դալարեալ մտօք և ծաղկեալ ուսմամբն. և պտուղ՝ ուսուցմամբ աշակերտաց: - 382. Երինջն *ըստ* իրաւանցն ունէր զմեղս ժողովրդեանն. և խորհրդովն քրիստոսի՝ սրբութիւն գործէր: - 384. Եւ վէմն էր քրիստոս *ըստ*

առաքելոյ: - 385. Երկրորդ, *ըստ* փիլոնի, օձն ցանկութեան է օրինակ, որ զցանկացօղ ժողովուրդն սատակէր. ի յախտս իւրեանց նմանեցոյց զպատիժն: - 386. Տասներորդ, որպէս ասէ փիլոն՝ նշանակ հեշտ ցանկութեան է օձն. որ և զցանկացօղ ժողովուրդն սատակէր. *ըստ* ախտին իւրեանց նմանեցոյց զպատուհասն: - 387. Եւ տէրն արդար դատաստանաւ *ըստ* նմանութեան մեղացն պատժէ՛ զմեղապարտն: - 387. Երկրորդ՝ *ըստ* հոգւոյ և *ըստ* մարմնոյ: - 387. Եւ որպէս կնոջ ընդ հրամանս առնն իւրոյ յանցանել պոռնկութենէ, նոյնպէս և զաւակաց, և ծառայից, և աշակերտաց, և հնազանդելոց, և ժողովրդոց. նոյնպէս և հոգիս մեր ելեալ ի հրամանացն աստուծոյ՝ պոռնկութիւն է նմա. եթէ ըստ գործոց. եթէ *ըստ* հաւատոց: - 389. Եւ **թ** միւս որմունք *ըստ* դասուցն իմանալեացն փառաբանիչք: - 391. Երկրորդ՝ յանապատն ամաղէկ և այլքն. յետ մահու որ ընդ հոգիս պատերազմին. որք են այսք չարութեան ի ներքոյ յերկնից *ըստ* առաքելոյ: - 393-394. Երրորդ՝ *ըստ* օգտութեան աստ. զի փորձին ընտրեալքն. և յետ մահու շնորհաց. և յարութեանն փառաց լինին առիթք: - 394. *Ըստ* մարմնոյ յա՛յտ է զի երկիրն եգիպտացւոց դա՛շտ է. վասն այն նեղոս գետն արբուցանէ զնա՛: - 398. Այլ երուսաղէմ լեառն է և դաշտ, յանձրևոյ ոռոգի. իբր թէ խնամօքն աստուծոյ լինի անձրև աւելի և նուազ, ի ժամու և տարաժամու *ըստ* արժանեացն ծերոց: - 398. Վեցերորդ՝ զի ասէ *ըստ* հրամանին աստուծոյ գնալ: - 399. Եւ փոխանակ մօրն տարերք ամենայն. որ հեծեն և յոգոց հանեն վասն ապականութեան մեր *ըստ* առաքելոյ: - 400. Եւ հայր աստուած որ ո՛չ կատարի կամք նորա ի մեզ. յայնժամ *ըստ* բազում գթութեան իւրոյ առաքեաց զմիածին որդին որ փոխանակ մեր կախեցաւ զփայտէն և ազատեաց զմեզ յանծիցն օրինաց...: - 400. Վեցերորդ *ըստ* մտաց, զի մովսէս ջրածին լսի. զի որք ո՛չ ծնանին աւազանաւ, ընդ մահու իշխանութեամբ են: - 409. Երրորդ՝ զի մի՛ ժողովուրդն կանգնեսցէ արձան ի վերայ նորա *ըստ* սովորութեան երկրին: - 411. *Ըստ* եօթանասնից **վչլ** ամաց պատմութիւն է: - 411. Իսկ *ըստ* ևսեբեայ վկծ ամք. թիւ մի պակաս: - 411. Զի *ըստ* սրբոյն եփրեմի՝ ապաշխարութիւնն է վճարք մեղաց և նիւթ պսակաց: - 413. Նա՛խ *ըստ* հոմանունն. զի յեսու՝ փրկիչ, և յիսուսն փրկիչ լսի *ըստ* հրեշտակին, «կոչեսցի յիսուս. զի նա՛ փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց»: - 417. Երկրորդ *ըստ* իրին. զի յեսու փրկեաց զժողովուրդն ի մարմնաւոր թշնամեաց: - 417. Եւ յետ յեսուայ դատաւորք դատեցին առաջնորդութեամբ զիէլ **նժ** *ըստ* եօթանասնիցն թուով երեքտասան դատաւորք մինչև ի հեղի քահանայ: - 420. Նա՛խ՝ *ըստ* անուանն. զի սամփսոն՝ արեգակն կամ փրկութիւն լսի: - 421. Ասեմք եթէ ժամանակն ի շարժմանէ՛ լուսաւորա՛ցն է. *ըստ* գնացից նոցա զառաջիկայն ասեն սովորապէս: - 430. Եւ այսպէս ամենայն տղայոց հանդիպի մահ *ըստ* խնամոցն աստուծոյ: - 433. Եւ այն զի յառաւօտէն մինչ յերեք ժամն՝ **հռ** սատակեցաւ *ըստ* արդարութեան վճռին: - 435. Գտի զդաւիթ այր *ըստ* սրտի իմում, որ արասցէ զամենայն կամս իմ: - 435. Իսկ այժմ ուխտէ՛ սպանանել. զի *ըստ* օրինացն զգործ արդարութեանն գործեսցէ: - 439. Սոքա *ըստ* իրին ո՛չ առաւելուն և ո՛չ նուազին. թէպէտ հաղորդեալքն առաւելուն և նուազին *ըստ* ունակութեան: - 444. Նա՛խ՝ զի **հ** ա՛մ է վճիռ կենաց մարդոյս *ըստ* դաւթի: - 448. Ի յադամայ մինչ ի ծնունդն քրիստոսի՝ է՛ *ըստ* եպիփանու **բչ** ամ: - 451. Եւ *ըստ* ասորոց և յունաց՝ **ց** ամ: - 451. Եւ *ըստ* այլոց՝ **րմկգ** ամ: - 451. Եւ *ըստ* հրէից և շամրտացւոց՝ **դռ** ամ: - 451. *Ըստ* եօթանասնիցն՝ **րճղը** ամ: - 451. Եւ *ըստ* անանիա շիրակացւոյ, յադամայ ի թուականն հայոց՝ են ամք՝ **րթճհզ**: - 451. Իսկ *ըստ* ազգաբանութեանն Մատթէի, ծնանի յեքոնիա զսաղաթիէլ ամաց **ծզ**: - 453. Եւ միանգամայն յադամայ ի ծնունդն քրիստոսի ամք **րճղը**. *ըստ* եօթանասնիցն որպէս ասացաւ ի վերոյ: - 453. Յաւատարիմ բառս՝ որ ի սուրբ գիրս՝ *ըստ* չորից եղանակաց իմասցի: - 457. Նա՛խ՝ հաւանական *ըստ* կերպի դաւանութեանն հաւատոյ, ըստ այնմ, «հաւատալ պա՛րտ է թէ է՛ աստուած»: - 457. Երկրորդ՝ առեալ լինի ի տեղի միամտութեան, *ըստ* տնտեսին որ էր «հաւատարիմ և իմաստուն»: - 457. ...իմացեալ լինի *ըստ* չորրորդ եղանակին անփոփոխ ճշմարտութիւնն. իսկ այն ո՛չ պատշաճի: - 457. Իսկ *ըստ* տնօրէնութեանն քրիստոսի՝ պատշաճի և երրորդ եղանակն: - 457. Իսկ հաւասարապէս պատշաճի բոլոր բանական եղելոցս *ըստ* տեղւոյն դիպման: - 457. Եւ են սոքա կրկին զօրութիւնք. արարչական և արքունական. *ըստ* փիլոնի որպէս կրկին ձեռք մարդոյ աջ և ահեակ: - 457. Եւ այսպէս բազումս տեսանի *ըստ* մասին գործ ողորմութեան և արդարութեանն աստուծոյ: - 458. Նա՛խ՝ յորժամ հատուցանէ ումեք *ըստ* արժանեաց: - 458. Այլ իւրաքանչիւրոցն հատուցանէ *ըստ* արժանեաց. այսինքն բարեացն բարիս, և չարացն չարիս: - 459. Քանզի առ ի կատարել զգործ արդարութեանն՝ պահանջէ ինչ և ի կողմանէ մարդոյն. այսինքն պահանջումն *ըստ* արժանւոյն...: - 459. Ապա յայտ է թէ *ըստ* մարմնոյ՝ կոյսն էր յազգէն յովսէփայ: - 460. Իսկ յակոբ որ էր յազգէն սողոմոնի՝ առեալ զկին եղբօրն *ըստ* օրինացն զի յարուսցէ զաւակ եղբօրն. և ծնաւ զյովսէփ: - 460. Եւ վասն այն խառնեցան **բ** ցեղքն. զի ծնեալն ի նոցանէ քրիստոս *ըստ* մարմնոյ, թագաւոր և քահանայ լինէր: - 461. Սակայն *ըստ* ներգործութեան մեծագոյն է սրբութիւն մկրտութեանն. զի տպաւորէ զկնիքն. այլ և բանայ զդուռն արքայութեան. այլ և պատրաստէ՛ զմարդն առ ի խորհուրդս

ամենայն. զոր ո՛չ ներգործեն ա՛յլ երկոքին եզական շնորհքն: - 462. Զի ի խորհուրդ մկրտութեանն ի յառնուլ ջուր, հոգին սուրբ և զօրութիւն բարձրելոյն և ողջոյն հօրն ի ձեռն հրեշտակին որ հերքէր զմեղս *ըստ* մկրտութեան: - 462. Յինգերորդ՝ ցուցանէ զշնորհին որ ասէ՝ «լի շնորհօք» *ըստ* այլ թարգմանչաց: - 464. Ողջոյնն *ըստ* աշխարհի տրամատի ի **ե**: - 464. Երկրորդ՝ ըղձական շնորհաց. *ըստ* առաքելոյ «շնորհք ընդ ձեզ»: - 464. «*Ըստ* բանի քում» նշանակէ զկատարեալ հաւատն: - 465. Այլ արդ՝ քրիստոս ո՛չ է որդի աբրահամու և ո՛չ ի հարցն՝ թէ ոչ է որդի կուսին. ապա ուրեմն *ըստ* մարմնոյ աստուած է քրիստոս, և աստուածածին է ծնօղն. և մայր *ըստ* մարմնոյն քրիստոսի: - 466. Ասեմք եթէ յետ յղացման բանին յարգանդի կուսին օրինօք և ոչ օրինօք բնութեան, ժուժկալեալ ամսոց ըննից և աւուրց հնգից, *ըստ* հասարակաց ասեմ և անդրանկաց. *ըստ* հնգից յաւելեալ թւոց նախաստեղծին նախարարչութեան աւուրց: - 469. Նա՛խ՝ զի ո՛չ լինէր այն որդի *ըստ* բնութեան ծնողին. որպէս և ո՛չ եւա ադամայ. վասն որոյ յարգանդէ ծննդեամբ եղև որդի կուսին: - 469. Որ ո՛չ *ըստ* բնութեան կարգի, այլ *ըստ* անբաւազօր կարողութեանն աստուծոյ միայնոյ: - 469. Երկրորդ՝ զի վէմն առանց ձեռին հատաւ ի կուսական լեռնէն *ըստ* դանիէլի: - 470. Երրորդ՝ զի մի՛ իցէ *ըստ* հասարակաց կարգի. այլ ի վեր քան զբնութիւն որպէս ասացաւ: - 470. Եւ երեքեան ծնունդ քրիստոս՝ *ըստ* երից գոյացութեանցն որ ի քրիստոս. այսինքն աստուածութիւնն՝ մարմինն՝ և հոգին: - 471. Եւ ոմանք *ըստ* չորրորդ եղանակի ասեն. երեքն յառաջագոյն եղեալ, և չորրորդ ծնունդն փրկչին: - 471. Աստ գիտելի է, որպէս միածին կոչի անմարմնաբար և *ըստ* մարմնոյ: - 472. Իսկ անդրանիկ ըստ որում երէց և առաջին՝ ասի *ըստ* չորից: - 472. Երրորդ՝ կոչի անդրանիկ ըստ *հոգւոյն* շնորհաց. զոր նախ ընկալաւ իբր գլուխ՝ և եհեղ յանդամքս իւր: - 473. Ի վեց իրաց գլխաւորօրէն փրկութիւն ներգործեաց. *ըստ* յոբայ վեցիցս փրկեցաք նովաւ: - 473. *Ըստ* լեզուիս մեր՝ օծեալ. ի հոռոմն քրիստոս. և յեբրայեցին մեսիա թարգմանի: - 474. Տասներորդ գերագոյն սոցա՝ *ըստ* բնութեան միաւորութեան. որպէս բանին աստուծոյ ընդ մարդկութիւնս: - 474. Եւ տե՛ս, զի բնութեամբ միաւորեցաւ՝ իմանի քրիստոս. յայտ է զի յորոշելն *ըստ* ոմանց՝ ո՛չ ևս մնայ քրիստոս: - 474. Իսկ մկրտութիւն նորա ո՛չ որդեգրութեան էր որպէս մերս. այլ ճշմարիտ որդիութեանն յայտնութիւն *ըստ* ձայնին հօր «դա՛ է որդի իմ սիրելի»: - 474. Իսկ շաղադրեալն միաւորութիւն՝ և սա՛ բաժանի յերիս. այսինքն *ըստ* դրութեան. *ըստ* ժողովման. *ըստ* կոչման: - 476. Առաջինն *ըստ* դրութեան, որպէս կէտ. գիծ. մակերևոյթ. և մարմին: - 476. Իսկ *ըստ* ժողովման, որպէս եկեղեցի. և անձն. հօտ. կամ քաղաք: - 476. Իսկ *ըստ* կոչման, որպէս քրիստոնեայք. մկրտեալք. ծառայք. և ստեղծեալք: - 476. Երրորդ առ այսոքիւք՝ միաւորութիւն անուանեմք և զխառնուածս երկուց նայից *ըստ* զանազան որակութեանց. յորում ո՛չ ոք ի խառնեցելոցն զիւր ծայրագոյն որակութիւնն սեռաբար կարօղ է պահել. այլ շփոթեալ անկանի ի ծայրագոյն որակութենէն. որպէս զջուրց և զգինեացն խառնուած, և զմեղերաց: - 476. Զի այսպէս միատեսակ բնութեամբ խոստովանի ընդ մեզ և այլ ժողովուրդ ուղղափառաց *ըստ* ուսուցման մեծին դիոնիսեայ յերկրորդ գլուխն եկեղեցական քահանայապետութեանն ասել, - 477. Ամենակատար և անշփոթ մարդանալովն *ըստ* մեզ մարդասիրապէս՝ ի բութիւնս մեր տեսակցեալ, և առ բաժանականս մեր անայլայլաբար *ըստ* բնութեան միոյ յառաջ եկեալ: - 477. Նոյնպէս և յորոշելն *ըստ* ոմանց զաստուածն և զմարդ՝ ո՛չ է քրիստոս. այլ մարդ սոսկ կամ մերկ աստուած: - 477. Գերաբնապէս ապա և բանն մարմին եղեալ անփոփոխելի և անապական ներգործեալ մարմին *ըստ* մերոյս բնութեան անբաժ միաւորութեան: - 477. Այսպէս և բոլոր տընօրէնութիւն մարդացելոյն բանի՝ միով զօրութեամբ և կարողութեամբ *ըստ* միութեանն կամաց մի ներգործութիւն երևի: - 478. Իսկ բանն աստուած միաւորեալ մարմնովն կրեալ զմերս վասն մեր. անկրելի գոլով *ըստ* իւրում բնութեանն: - 479. Եւ այն զի փաթութած է՝ *ըստ* հրէական օրինին է. զի կոնդակ և գալարելո՛վ էր նոցա գիրն. իբր թէ ծածո՛ւկ է ի նոցանէ խորհուրդ մարգարէիցն և թաքուն: - 481. Նոյնպէս և քրիստոսի մինչ զտղայական հասակն նկարեն, փաթութեալ հանեն զթուղթն ի ձեռն. իբր ի հրէից ծնեալ զամենայն ինչ *ըստ* օրինացն առնել: - 481. Այս դպրութիւնքս բանին ի կատարածի *ըստ* դանիէլի. որպէս գրեալ է աստ յայլում տեղւոջ՝ անդ տեսցես: - 481. Յառաջագոյն ամենայն ազգք քրիստոնէից սկսեալ յառաքելոցն այսպէս տօնէին. ի վեցն յունվարի զծնունդն, և ի նմին աւուր զմկրտութիւնն *ըստ* աւետարանին վկայութեան: - 482. *Ըստ* ձեզ ապա և ո՛չ ժողովրդեանն նմանեցաւ: - 484. Անմարթ էր թողուլ զժողովուրդն ի դրան տաճարին և մերձիլ յանկողինս. և *ըստ* օրինացն գօրեայ սրբութիւն ստանալ. որ անհնա՛ր է ամենևին. թէպէտ ասեն՝ գոյր ա՛յլ քահանայապետ որ զկարգ պաշտամանն կատարէր: - 484. Զոր ունի զայս աւանդ այժմ սուրբ և ուղիղ աւանդապահ եկեղեցիս հայաստանեայց *ըստ* վկայութեանս որ եղաւ: - 484. Չորեքտասաներորդ՝ *ըստ* մեծին գրիգորի աստուածաբանի և սրբոյն բարսղի կեսարացւոյ որպէս ասացաւ ի վերոյ: - 484. ...զի զքառասնօրեայ գալուստն ի տաճարն՝ *ըստ* ծննդեանն տօնեսցեն և ո՛չ ըստ յայտնութեանն. որ է՛ յունվարի վեցն. զոր մեք տօնեմք **խ** օր թուեալ մինչև ի **ժդ**ն փետրվարի: - 485. Զի

իցէ ինքն սկիզբն և կատարումն ո՛չ միայն *ըստ* աստուածութեանն, այլ և ըստ մարդկութեանն: - 485. Զի իցէ ինքն սկիզբն և կատարումն ո՛չ միայն ըստ աստուածութեանն, այլ և *ըստ* մարդկութեանն: - 485. Զի ո՛չ ասաց թէ որ ի դմա՛ է կամ դոքա *ըստ* բաժանողաց. այլ թէ դա՛. որ մի անձն բնութեամբ միացեալ նշանակէ: - 487. Այլ և մաքրութիւն մեղաց *ըստ* չորից նիւթոց մարմնոյս: - 493. Այլ և պահապան չորից զգոյութեանց *ըստ* չորից տարերաց: - 493. Այս քան *ըստ* նշանակութեան սրբոյ Խաչին: - 494. Յայտնի՛ է ամենեցուն և առանց երկբայութեան՝ զի քրիստոս մեռաւ *ըստ* գրոց. և մահուամբ եբարձ զմահ և զապականութիւն: - 498. Վեցերորդ՝ զմարիամ մայր փրկչին կոյս և անապական խոստովանին հարք ուղղափառութեան. և զայս ո՛չ *ըստ* գոյացութեան բնութեան, այլ զի ծնաւ զբանն աստուած անապական մարմնով: - 499. Դարձեալ ասեմք *ըստ* ձեզ, թէ յետ խաչին յապականութիւն փոխեցաւ մարմինն տեառն, ապա յառաջ քան զխաչն կատարեալ էր զի ապականացո՛ւ էր. և յետ խաչին անկատար զի անապական եղև որպէս դուքդ ասէք: - 500. Ապա թէ ոչ՝ նա՛ որ զադամ երեսնամեայ ստեղծ, կարէ՛ր և նոյն հասակաւն ծնանիլ. այլ այն ո՛չ լինէր *ըստ* սովորութեան մեր որպէս ցուցաւ ի վերոյ: - 501. Եւ որպէս ի մի արքայութիւնն օթևանք և փառք բազում են *ըստ* գործոցն. այսինքն երեսնաւոր. վաթսնաւոր. և **ճ**աւոր: - 504-505. Դարձեալ՝ եթէ հարկիւ պահանջես *ըստ* մտաց քոց **գ** դժոխք: - 505. Երկրորդ՝ զի դժոխքն այն էր բուռն զօրութիւնն սատանայի. և քրիստոս կապեաց զիզօրն_ *ըստ* աւետարանին. ապա ուրեմն քրիստոս աւերեաց զդժոխս: - 506. Նոյնպէս և քրիստոսիւ ամենայնքն փրկեցան արդարք և մեղաւորք *ըստ* առաքելոյ: - 507. Եւ դարձեալ՝ դարձցին մեղաւորք անդրէն ի դժոխս թէ ի նոյն տեղի *ըստ* ոմանց, կամ յայլ տեղի տանջանաց ընդ գործոց հատուցման: - 508. Նա՛խ՝ զի խոստովանիմք զքրիստոս աստուած և զտօն նորա *ըստ* տէրունականացն կատարեմք: - 509. Եւ որ ոք ո՛չ խոստովանի զքրիստոս աստուած, զտօն նորա *ըստ* հասարակ մարտիրոսացն առնէ ի մէջ գիշերոյն ի վեր: - 509. Եւ վա՛յ ասեմ որովայնամոլ ազգացն որք զամենայն պահքս լուծանեն ի ձուկն անխտիր. որոց աստուած որովայնք իւրեանց է և փառք ամօթն *ըստ* առաքելոյ: - 510. Եւ *ըստ* եկեղեցոյ ցուցաւ խտրութիւնն ի վերոյ ի **իա** գլուխն **խե** համարն: - 511. Ասեմք թէ՝ օր յարութեանն քրիստոսի կիրակէն է *ըստ* աւետարանչացն: - 512. Իսկ ա՛յլ վարդապետք ընդ արշալոյսն առաւօտուն ասեն յարուցեալ *ըստ* մարկոսի և այլ աւետարանչացն: - 512. Նոյնպէս *ըստ* օրինակին արար տէր մեր զատիկն յերեկոյի մեծի **ե** շաբաթին. և ի մէջ գիշերին յորում ըմբռնեցաւ՝ եհար զանդրանիկսն դիւաց: - 513. Եւ յերեկոյի շաբաթուն յորում լուսանայր միաշաբաթին լինի յարութիւնն քրիստոսի *ըստ* մատթէոսի: - 516. Արդ մի՛ մերձենար դու յիս անկատար գոլով. որպէս մայր քո եւա ի ծառն գիտութեան. յորժամ առ բնութեամբ իմ հայր՝ և ձեր *ըստ* շնորհի՝ և աստուած մարմնոյս իմոյ ես ելանիցեմ, որոտմամբ իջեալ հոգին զձեզ կատարէ՛. արժանաւորիք յայնժամ առ իս մերձենալ: - 518. Դարձեալ, հայր է քրիստոսի *ըստ* էութեանն. և աստուած վասն միաւորութեանն. զի հա՛յր միաւորեաց զբանն ի մարմնի...: - 518. Իսկ զտեղի համբարձմանն քրիստոսի միտք ո՛չ կարէ ցուցանել. զի ի լոյս անմատոյց է բնակեալ և ի ներքին կողմն վարագուրին *ըստ* առաքելոյն: - 519. Վեցերորդ՝ համբարձաւ ձայնիւ փողով *ըստ* դաւթի. և այս վերաբերի յառաքեալսն. որ յանձնեցաւ նոցա երթալ քարոզել ամենայն հեթանոսաց. և փողք եղեն տիեզերաց...: - 520. Նա՛խ՝ ի կողմանէ պարգևողին. զի յորժամ քրիստոս նստեալ լինէր *ըստ* մարմնոյ ընդ աջմէ հօր իբր զթագաւոր փառաց յաթոռ թագաւորութեան իւրոյ, յայնժամ մեծագոյն լինէր պարգևք հոգւոյն տուեալ ի փառաւոր քրիստոսէ աստուծոյ: - 521. Եւ *ըստ* յունաց թէ աստիճանն. և ըստ մեծին դիոնիսեայ. և մինչ ի **ղ ղ** կարգն փոքր է. հրաման ամուսնութեան: - 526. Եկեղեցի սուրբ նոր ժողովուրդ կոչեցաւ աստուծոյ. զի հաւատով արդարացաք և եղաք ժողովուրդք և ո՛չ *ըստ* հնոյն օրինօք: - 528. Զի մի է *ըստ* իւրում անձնաւոր գոյութեանն. և բազմանայ ի բազումս երևեալ: - 529. Եւ մի և նոյն բանն է ներտրամադրեալն ի սրտի. զի *ըստ* բան գոլոյն ո՛չ զանազանի. սակայն *ըստ* որպիսութեան որակին. զի էր անմարմին ի սրտի՝ և այժմ մարմնացաւ ի քարտիսի: - 529. Նոյնպէս մի է տէր մեր յիսուս քրիստոս և ո՛չ երկու *ըստ* բաժանողաց ոմանց: - 532. Սակայն տեսցուք զի *ըստ* փիլիսոփային մի ասի **գ** եղանակաւ: - 533. Ա՛րդ՝ մի է ամենայն ընդհանուր եկեղեցիք որ է բոլոր քրիստոնեայք *ըստ* հաւատոյն և կոչմանն յուսոյն որպէս սեռիւ: - 533. Եւ մի է *ըստ* խորհրդոյն՝ այսինքն մկրտութեամբ՝ պատարագելով՝ կարգիւ՝ և այլովն՝ որպէս տեսակաւ: - 533. Եւ մի է *ըստ* ձևոյն արարողութեան պահոց աղօթից որպէս անհատիւ: - 533. Նա՛խ յաղագս շնորհին և ճշմարտութեան. և մարգարէք վասն ստուերին և օրինակին. և վարդապետք *ըստ* չափոյ պիտոյից նոցին: - 535. Իսկ գործ առաքելութեանն է *ըստ* բազում օրինակի: - 535. Իններորդ վասն սրբութեան. *ըստ* կայծականն մարգարէին: - 536. Եւ այս լինի *ըստ* չորից եղանակաց: - 536. Եւ որոց պարգևի մասնաւոր այս շնորհ, թէ և ո՛չ բոլորապէս *ըստ* նոցայն: - 537. Եւ տե՛ս, զի սիմէի որքան յամեաց ի քաղաքն *ըստ* հրամանի սողոմոնի ո՛չ մեռաւ զերիս ամս: - 540. Եւ համակա՛րգ է նոցա *ըստ* առաքելութեան

և *ըստ* քահանայապետութեան. զի ամենայնքն համահաւասար զիշխանանութիւն առաքելութեան և քահանայապետութեան ունէին: - 546. Եւ փոխանորդ իւր նստոյց յաթոռ զսուրբն արիստակէս համանըման նորին առաքինութեամբ, և որդի *ըստ* մարմնոյ. և ապա՛ գնաց ի հռօմ: - 548. Ահա՛ սոքա առանձնականք և ճշմարիտք. որպէս ասի *ըստ* իմաստասիրացն: - 550. Դարձեալ՝ թէպէտ *ըստ* պորփիւրոսի՝ մասն բոլորին հետևի. որպէս անհատն տեսակին. և տեսակն սեռին: - 550. Սակայն *ըստ* արիստոտէլի սեռն և տեսակն անհատին հետևին. զի են երկրորդ գոյացութիւն: - 550. Այսպէս ասեմք, զի որ ըստ ինքեան է ճշմարիտ և ըստ ինքեան բարի՝ առաւել է. և որ *ըստ* պատահման է ճշմարիտ կամ բարի՝ նուա՛զ է. վասն զի ըստ ինքեանն գոյացութեամբ և հարկաւո՛ր է. այսինքն անփոփոխ և միշտ: - 550. Իսկ *ըստ* պատահմանն՝ կարելի՛ է և ներընդունական. այսինքն փոփոխական և երբեմն: - 550. Եւ յորժամ ասիցէ զբարին ոչ չար գոլ, ճշմարիտ է և այս. այլ *ըստ* պատահման է որպէս ցուցաւ: - 550. Այլ դաւանութիւն նոցա այս է. որպէս զի մի՛ լիցի *ըստ* նոցա աստուած մարդացեալ. կամ մերս բնութիւն ընդ աստուածութեանն միաւորեալ. որպէս ընդարձակապէս ցուցանէ աստուածաբանն կիւրեղ ի գիրս պարապմանց: - 552. Եւ յայսոսիկ միաբանութիւնս որ *ըստ* կանոնի՝ յաւէտ միաբանութիւն զայս է իմանալ՝ որ *ըստ* բոլորին օրինադրութեանց սահմանաց կամ *ըստ* գլխաւորագունիցն լինիցի. և ո՛չ մասամբ միով միաբանեալք և բազմօք զանազանեալք. մանաւանդ թէ հակառակեալք և ընդդիմացեալք: - 552. Այսինքն է, զազգս քրիստոնէից տեսանեմք զի ո՛չ *ըստ* անուանն և զմիութիւն կանոնական սահմանի ունել: - 553. Հինգերորդ՝ այսմաւուրօք ո՛չ տօնել *ըստ* յունաց. այլ այլո՛վ օրինակաւ տօնել: - 554. Երկրորդ՝ ի քրիստոս բնութեանցն միացելոց մի ասել բնութիւն *ըստ* սրբոյն աթանասի և կիւրեղի: - 554. Նա՛խ՝ *ըստ* դրութեան կարգի աղօթիցն որ յեկեղեցիս նոցա: - 554. Բայց ոմանք բերանաբաց եղեալ հակառակին՝ զծնունդն և որ *ըստ* նորին ամենեցուն առ հասարակ միաբանեալ բաց ի հայոց: - 554. Եւ *ըստ* այսմ միաբանութեան և զմէրս տեսանեմք եկեղեցի ունել եզով միաբանութիւն առ այլ քրիստոնեայս: - 554. Ա՛րդ՝ մեղք մտացն թէպէտ *ըստ* բանականին և մարմնականին չէ կատարեալ, այլ ի տեսակս իւր կատարեալ է: - 556. Ութերորդ յընդդիմակէն. զի թէ յաղօթելն միայն մտօք և սուրբ պահել զմիտս առաքինութիւն է կատարեալ *ըստ* առաքելոյ թէ՝ «սաղմոս ասացից մտօք» և այլն: - 557. Դարձեալ ասեն վարդապետք եթէ՝ խորհրդոցն մեղք՝ որ ընտրէ և կամաւ հեշտանայ, առաւել չար է քան զգործոցն *ըստ* պատահմանն: - 557. Առաջինն է սակաւ ինչ միայն յանցուած տեսութեան *ըստ* բնաւորական մտածութեան նորա առ ամենայն իրս: - 558. Դարձեալ ասեմք զեօթնեքինն *ըստ* երից մասանց հոգւոյն այսպէս: - 559. Այս *ըստ* նոցա որ է ասեն զմահու չափ մեղքն: - 559. Նա՛խ՝ *ըստ* չորից տարերց այլ և այլ որակութեանց լինին **ը** խորհուրդ մեղաց: - 560. Եւ *ըստ* միաւորութեան հոգւոյն ի տարերս, Յոգւոյ և ի հրոյ բարկութիւնն: - 560. Ա՛րդ՝ *ըստ* առաջին կարգին թէ ցանկայ ի ներքս, ըստ որում է՛ հպարտութիւն և փառասիրութիւն: - 561. Այս *ըստ* առաջին մասին որ ցանկայ ոչ ցանկալեաց: - 561. Եւ այս լինի երրակի *ըստ* երից մասանց հոգւոյն: - 561. Նա՛խ՝ *ըստ* գոյացութեան և *ըստ* տեսակին. զի մարդն է տեսակ և տեսակն գոյացութիւն. *ըստ* գոյացութեանն այսպէս: - 565. Զի **ժ** պատուիրանքն և է մահու չափ մեղքն են *ըստ* գոյացութեան մեղք. որպէս մի՛ շնարն և մի՛ գողանարն և մի սպանաներն և մի՛ սուտ վկայերն: - 565. Երկրորդ *ըստ* որակին. որպէս թէ **բ** մարդ գործեն զորովայնամոլութիւն: - 565. Երրորդ, *ըստ* քանակին այսպէս. զի ոմն մի գործեաց զպոռնկութիւն, և ոմն **ռ**: - 565. Չորրորդ *ըստ* առընչին. այսինքն թէ առ ի՞նչ իրք գործէ զմեղքն. զի մարդն **դ** դիմօք գործէ զմեղս. այսինքն դիմաց աստուծոյ, դիմաց եկեղեցւոյ, դիմաց ընկերին, դիմաց իւր անձինն: - 565. Հինգերորդ *ըստ* ուրին. թէ ուր գործեն զմեղքն. կամ ի վանք, կամ յեկեղեցի որ է տուն աստուծոյ. կամ ի գեօղ, կամ ի քաղաք, կամ ի պոռնկատուն: - 565. Վեցերորդ *ըստ* երբին. այսինքն թէ ե՞րբ գործեն զմեղքն. ի տղայութեա՞ն, թէ ի ծերութեան որ մեծ մեղք է. ի սո՞սկ աւուրս, թէ ի տէրունական տօնս. զի որ ի տօնս մեղք գործէ, առաւել պատժի քան զմիւսն: - 565. Այլ յատկապէս *ըստ* երից դիմացն, որ տկարութեամբ մեղանչէ՝ է՛ ընդ դէմ հօր. և տգիտութեամբն ընդ դէմ որդւոյ. և չարութեամբն ընդ դէմ հոգւոյն սրբոյ...: - 566. Ա՛րդ՝ մեղք սկզբնականին չորիւք զանազանի յայլոցն. այսինքն ի մահացուէն և ի ներելոյն. *ըստ* միութեան. *ըստ* հասարակութեան. *ըստ* հաւասարութեան. *ըստ* որակի տարբերութեան: - 567. Նա՛խ *ըստ* միութեան. զի մի է մեղքն սկզբնական և ո՛չ բաժանի. որպէս մահացուն է. և ներելին **գ**: - 567. Երկրորդ *ըստ* հասարակութեան. զի հասարակաբար ո՞ ոք որ հաղորդի բնութեանս՝ հաղորդի և սկզբնականին: - 568. Երրորդն *ըստ* հաւասարութեան. զի սկզբնականն հաւասարապէս է ամենայն մարդկան: - 568. Չորրորդն *ըստ* տարբերութեան որակացն: - 568. Նա՛խ՝ զի սկզբնականն հարկիւ և ակամայ տիրէ. իսկ սոքա *ըստ* կամաց: - 568. Յաղագս որոյ այն որ *ըստ* բնութեան է մեղք՝ *ըստ* բնութեանն և յորդիս անցանէ: - 568. Իսկ զանազանի մահացուն և ներելին *ըստ* առաւելութեան և նուազութեան. որպէս առաւել է հարկանումն օձի քան զլուոյ. և նետի քան զփշի. այսպէս

և մահացուն է առաւել քան զծերելին: - 568. Դարձեալ զանազանին *ըստ* թուոյ. զի մահացուն յեօթն բաժանի. որք են գլխաւորագոյնք: - 568. Իսկ ներելին թէպէտ որոշի յերիս տեսակս *ըստ* մեծութեան և նուաղութեան. այլ մանրամասնաբար յանթիւս ելանէ. որպէս ծիծաղիլ. վայրաբանել. և այլն: - 568. Այս բաժանումս է՛ *ըստ* տեսակի մեղաց: - 568. Դարձեալ՝ *ըստ* ենթակային բաժանի մեղքն յերիս. այսինքն ի մեղք սրտին. ի մեղք բերանոյն. և ի մեղք մարմնոյն: - 568. Այսպէս զանազանին մեղք *ըստ* նիւթոյն և ենթակային: - 568. Դարձեալ *ըստ* կատարման բաժանի մեղքն յերիս. այսինքն ի գործ մեղացն, և յունակութիւնն, ի պատիժն: - 568. Դարձեալ զանազանին սոքա *ըստ* սեռին. զի գործ մեղացն է ի սեռս առնելոյն. և պատիժն ի սեռս կրելոյն. և ունակութիւն ի սեռս ունելոյն: - 569. Այս քան *ըստ* տեսակի և *ըստ* նիւթոյ և *ըստ* կատարման զանազանութիւն մեղաց: - 569. Իսկ աստիճանք հաւատոյն որք են յէութենէ հաւատոյն, եթէ նկատեսցի առ այն որք արարին զհաւաքումն հաւատոյ, են երկոտասան աստիճանք *ըստ* թուոյ երկոտասան առաքելոցն: - 572. Չորրորդն՝ որդին աստուծոյ իջեալ ի դժոխս *ըստ* հոգւոյն: - 573. Ապա ո՞րպէս մի է հաւատս *ըստ* առաքելոյ: - 573. Նոյնպէս և այժմ սրբոց և երանելեաց յոյսն է հանդերձ ստուգութեամբ տեսութեանն. զի դեռևս հանդերձեալ է նոցա մարմնոցն յարութիւն. և փառք և պսակքն *ըստ* իւրին: - 574. Սակայն ներկայ է *ըստ* ճանաչման տեսութեանն: - 574. Եւ *ըստ* ներգործութեանն սահմանի քառակի: - 575. Արդ յորժամ ասեմք կրկին զսէրն, այսինքն աստուծոյ և ընկերին. կրկինս այս ո՛չ է *ըստ* ունակութեանցն. այլ *ըստ* ներգործութեանցն: - 575. Դարձեալ՝ սէրն է սկիզբն բարեաց. զի յաստուծոյ է. և է՛ մէջ բարեաց. զի *ըստ* աստուծոյ է. և է՛ վախճան բարեաց. զի վասն աստուծոյ է: - 575. Երրորդ՝ հաւատն է որպէս արմատ ծառոյն որ է հայր. յոյսն ստեղունքն որ է որդի. սէրն հոգին սուրբ որ է՛ ծաղիկ և պտուղ *ըստ* դիոնիսեայ: - 577. Հինգերորդ՝ *ըստ* որպիսութեան մեր հաւատն է այժմ. յոյսն յետ մահու...: - 578. Իններորդ *ըստ* հոգւոյն մասանց. հաւատն է ի բանն. յոյսն ի ցասումն. սէրն ի ցանկութիւնն: - 578. Եւ երկրորդ՝ զի մնացէ ի վերին գաւառն *ըստ* էութեանն և *ըստ* գործոյն. իսկ այլ առաքինութիւնքն թէպէտ մնան *ըստ* էութեանն, այլ ո՛չ *ըստ* գործոյն: - 579. Դարձեալ՝ խոհեմութիւն է ուղղել զառաքինութիւնս *ըստ* բարոյական իմաստասիրութեանն: - 580. Իսկ ժուժկալութիւնն առ շօշափելիսն *ըստ* ծննդական զօրութեանն. ի յորում դնէ զեղանակն. զի առաւել յօժարի մարդն ի գոլ անհատութիւնն սննդականաւն, և ի գոլ տեսակին ծննդականաւն. և յօժարութիւնքս այս՝ զսպին զգաստութեամբ և ժուժկալութեամբ: - 581. Ա՛րդ՝ **թ** երանութիւնք փրկչին զոր քարոզեաց ի լերինն, **ը** են *ըստ* էութեանն. այլ է են *ըստ* աստիճանաց...: - 583. Սրբութիւն սրտին զորկրամոլութիւնն. զի սրբութիւն սրտին ո՛չ ծառայէ որովայնին *ըստ* օրինակի անբան անասնոց: - 583. Եւ աղքատք հոգւով են *ըստ* մարմնոյ աղքատքն. որք ոչ ինչ ունին և զամենայն ինչ ունին: - 583. Քաղց է *ըստ* մարմնոյ՝ թերութիւն ստամոքսի. իսկ ծարաւ՝ տապութիւն ջերմութեանն: - 584. ...զի թէպէտ ողորմութիւնն առաւել նմանեցուցանէ զմարդն աստուծոյ *ըստ* արտաքին գործոյն...: - 585. ...սակայն *ըստ* ներքնոյն առաւել նմանեցուցանէ խաղաղութիւնն: - 585. Զի տանելն մահու վասն քրիստոսի՝ է՛ նոյն աստիճան *ըստ* խաղաղութեանն: - 586. Վասն այսորիկ ասեն վարդապետք թէ **ը** են երանութիւնքն *ըստ* էութեանն. այլ է միայն *ըստ* զանազանութեան աստիճանացն: - 586. Նա՛խ՝ *ըստ* զանազանութեան մարդկան որ են յեկեղեցի: - 587. Արդ ունիմք կրկին ծնօղ. *ըստ* մարմնոյ զադամ. և *ըստ* հոգւոյ զքրիստոս: - 592. Ո՛չ է օգուտ. զի չև ևս ծնաւ երկրորդ ադամ. զի նախ պա՛րտ էր *ըստ* մարմնոյ ծնանիլ. և ապա *ըստ* հոգւոյ վերստին ծնունդ: - 592-593. Եւ դնէ զայս քահանայն սուրբ մեռոնաւն ի ճակատ նուիրելոյն ասելով այսպէս. *ըստ* այլազգաց եկեղեցեաց. թէ ի ներքոյ ձևիս այս ես կու նշանեմ զքեզ նշանաւ խաչի...: - 593. Եւ *ըստ* մեր եկեղեցւոյս է՛ այս: - 593. Ասեմք թէ՝ առնեմք *ըստ* ազգին յունաց. որ որպէս քահանայն պատարագէ և մկրտէ, նոյնպէս և դրոշմէ *ըստ* սրբոյն դիոնիսեայ: - 594. Այս *ըստ* հակառակասիրութեան նոցա ասի. այլ *ըստ* ուղղութեան՝ քահանայն ունի իշխանութիւն զեօթն խորհուրդ եկեղեցւոյ կատարել. և եպիսկոպոսն առաւել ունի. զի միայն տայ զկարգն, եկեղեցի օրհնէ և սեղան: - 594. Երկրորդ՝ զի թէ խառն բղխեաց *ըստ* քեզ վասն այն ի պատարագն ջուր խառնես, ապա և ի ջուրն գինի խառնեա և այնպէս մկրտեա՛: - 595. Եօթներորդ վկայութիւն *ըստ* իրացն: - 595. Ասեմք առ այս, թէ յառաջ խառնումն ջրոյն ո՛չ է *ըստ* խորհրդոյն. որպէս և ո՛չ առ մեզ, թէ վաճառօղն խառնեսցէ ջուր. այլ քրիստոս ո՛չ խառնեաց: - 596. Նա՛խ՝ որպէս հացն նոյն է *ըստ* ձևին, այլ այլ գոյացութիւնն է եղեալ մարմին քրիստոսի...: - 598. ...նոյնպէս վերերևոյթ կերպարանքն նոյն է *ըստ* ձևին. այլ բնութիւնն միաւորեալ է ընդ բանին աստուծոյ և եղեալ աստուած: - 598. Վասն որոյ ճաշակեմք զմարմինն և զարիւնն աստուծոյ և ո՛չ մարդոյ. և ճաշակելով լինիմք աստուած *ըստ* կարողութեան և ո՛չ թէ լինիմք մարդ: - 598. Այս *ըստ* այլազգաց եկեղեցեայց է: - 604. Իսկ *ըստ* եկեղեցւոյս մեր ա՛յս է այժմ: - 604. ...զի մի՛ ննջեսցես ի մահ. նոյնպէս և այլ զգայութեանցն *ըստ* իւրաքանչիւր աստիճանին ասէ: - 604. Ապա և ո՛չ աղօթք և պաշտօն քահանայից կամ

տուրք կամ պատարագք է օգուտ հոգւոյն *ըստ* քեզ որ է բնաւ սուտ և չար հերձւած: - 605. Եւ են **է** կարգ *ըստ* է պարգևաց հոգւոյն սրբոյ: - 606. Այս *ըստ* հռօմայեցւոց եկեղեցւոյն: - 606. Իսկ *ըստ* եկեղեցւոյն յունաց, Առաջին դասք են Պատրիարգունքն. որ թարգմանին հայրապետ...: - 607. Իսկ *ըստ* մեծին դիոնիսեայ այսպէս: - 608. Չորրորդ ասեն եթէ՝ **դ** աստիճանք *ըստ* չորից տարերացդ կարգաւորին: - 609. Եւ այս անման սկիզբն պսակն է. որ միանայ հարսն ընդ փեսային. և լինի *ըստ* սահմանադրութեանն աստուծոյ ծննդագործութիւն: - 609. Եւ սոքա լինին է ազգ *ըստ* մեծին ներսէսի: - 611. Զի **դ** ծնունդ ի մէջն է *ըստ* չորից տարերց կատարման: - 611. Ա՛րդ՝ **բ** եկեղեցոյս մին է անուն. և ունին բազում բաղդատութիւն *ըստ* մի անուանն: - 613. Իններորդ, *ըստ* մասին ի սմա խաչն փրկական: - 614. Երրորդ, վասն է կենցաղոյս՝ և *ըստ* հանդերձելումն **ը** օր տօնեմք: - 616. Իններորդ, զի եկեղեցի հաւատացելոց՝ ունի զձև խաչին *ըստ* մարմնոյ...: - 616. Իսկ արտասուքն հանապազո՛րդ է *ըստ* ամենայնին. և առաւել քան զամենայն ընծայ հաշտութեան: - 619. ...որ լինի **թ** անգամ աղօթք *ըստ* **թ** դասուց հրեշտակաց: - 621. Եւ **ճ** տէրողորմեայն, *ըստ* թուոյ **ճ** ոչխարացն միոյն մոլորելոյ: - 621. Դարձեալ՝ ունիմք **բժ**ան անդամք. *ըստ* իւրաքանչիւրոցն մի մի ժամս աղօթեմք: - 624. ...վասն որոյ մեզ լեզու լինի և ի դէմս մեր գոհանայ զաստուծոյ *ըստ* իւրաքանչիւր ժամու. այսինքն յառաւօտն, ի հասարակ օրն, և յերեկոյն. զի գոհացումն է և ո՛չ աղօթք: - 626. Դարձեալ և *ըստ* մերոց վարդապետաց, առաջին կանոնին **ը** երրորդ գուբղայն օրհնութիւն՝ ի հանդերձելումն ակնարկէ...: - 630. Այլ և ասորիք ասեն *ըստ* մեզ զուրբ աստուածն որ խաչեցար՝ մինչև ցայսօր: - 632. Եւ **գ** կրկնելով լինի **թ**. *ըստ* **թ** դասուց հրեշտակաց: - 632. Եւ *ըստ* **թ** դասուց եկեղեցւոյ որ աստուածաբանեն միշտ, զխաչեալն պաշտելով: - 632. ...և մի դէմ զքրիստոսն որ խաչեցաւ. որ լինի չորրորդ դէմ և անձն *ըստ* նոցա: - 633. Զգորս *ըստ* պատկերին, գրիգոր մագիստրոսն: - 637. Այլ և ութն ձայնք **դ** են *ըստ* չորից տարերց. այս է՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ: - 639. Որ լինի **ժ** *ըստ* **ժ** մասանց արարածոց: - 639. Եւ ոմանք ասեն **ը** ձայն վասն ութ ձայնաւոր գրոց. և **ժ** ձայն *ըստ* **ժ** առոգանութեանցն: - 640. Եւ զի չորք են ձայնք բնականք *ըստ* չորից տարերց, ցուցցի հոգեպէս: - 640. Նա՛խ *ըստ* աւուրց: - 641. Եւ նախ *ըստ* աւուրց տօնից, որպէս մեծն ներսէս ասացեալ է զերգն: - 641. Այս *ըստ* տօնի աւուրց: - 642. Երկրորդն *ըստ* համանմանութեանց. և է՛ համանմանքն կրկին: - 642. Իսկ կցորդ և սկիզբն, այն մին տունն է խորհրդաւոր *ըստ* պատշաճի աւուրն: - 643. Եօթներորդ՝ շաբաթի օր տօնեմք սրբոցն և պատարագ մատչի *ըստ* նիկիական կանոնին...: - 648. Առաջին և երկրորդն՝ ծննդեան և մկրտութեանն. զոր ի միասին տօնեմք *ըստ* կանոնաց սուրբ հարցն և տեառն եղբօրն յակոբայ: - 649. ...որ լինի յիսնեակ *ըստ* առաքելական կանոնին: - 651. Եւ այլ ևս, յորժամ զշաբաթ և զկիրակէ արտաքոյ թուեմք որ պատարագ մատչի, **ե** օր առաջաւորն *ըստ* աղուհացիցն համարեալ՝ լինի **խ** օր: - 651. Եւ այսպէս բազում են խորհուրդ քառասնորդացն. և *ըստ* խորհրդոցն պահքն ո՛չ լուծանի: - 651-652. Եօթներորդ, **գ գ** դնելն զիացն առաջաւուր *ըստ* շաբաթուց: - 653. Հինգերորդ, *ըստ* անուանն. զչորեքշաբաթն պահեմք, զի ի չորիցս չարաց պահպանեալ լիցուք...: - 653. Վեցերորդ, *ըստ* թուոյն. զի չորեքնիւթեայ բնութեամբ մեղանչեմք...: - 653. Եւ ոմանք *ըստ* իւրաքանչիւր պատառոյ զմահն ի միտ ածեն և զդատաստանն...: - 655. Եւ դարձեալ՝ ի յարքայութիւնն երկնից այսպէս *ըստ* իւրաքանչիւր չափու և արժանեաց կարգաւորապէս պարգևէ աստուած զիմաստութիւնն. և ո՛չ անկարգ. կամ զրկելով. կամ աչառելով: - 656. Երկոտասաներորդ, Թէ հատուցումն *ըստ* գործոց՝ է՛ ի կատարածի, **լ** վկայութեամբ: - 660. Եւ *ըստ* աստիճանի՝ նախ ի ներքինն, և ապա ի վերինն ելք: - 662. ...և նովաւ արժանաւորիլ մեզ վերնոյն գաւառի *ըստ* անհաս իմաստութեանն իւրոյ: - 663. Բոլորապէս **դ** է. այսինքն Նախ *ըստ* տարերց ի լինելութիւն և յապականութիւն: - 663. Երկրորդ *ըստ* տնկոց ի մանկութիւն և ի ծերութիւն: - 663. Երրորդ *ըստ* կենդանեաց յողջութիւն և ի հիւանդութիւն: - 663. Չորրորդ *ըստ* բանական հոգւոյն յառաքինութիւն և ի չարութիւն: - 663. Նախ *ըստ* իմացման՝ տգիտութիւն և գիտութիւն: - 663. Երկրորդ *ըստ* ախորժակին, տրտմութիւն և ուրախութիւն: - 663. Երրորդ *ըստ* արտաքին ընչից, աղքատութիւն և փարթամութիւն: - 663. Այլ *ըստ* իմացման առաւելուն ի գիտութիւն. և այն ո՛չ է նոցա փոփոխումն, այլ աճումն իմաստութեամբ: - 663. Է՛ և այլ իմն եղանակ փոփոխման *ըստ* իմաստասիրացն **դ**: - 664. *Ըստ* մարմնոյն ջերմ և սպիտակ: - 664. Եւ *ըստ* հոգւոյն բարի և չար: - 664. Եւ *ըստ* մտացն իմաստութիւն և տգիտութիւն: - 664. Եւ *ըստ* բոլոր անձինն ողջութիւն և հիւանդութիւն: - 664. Ա՛րդ՝ եթէ *ըստ* բնականին է հիւանդութիւնն, պա՛րտ է բժշկական դեղով առողջանալ...: - 665. Նախ ճանապարհի կոչի ծնունդն. որով ի կեանս գամք *ըստ* հասարակութեան ընթացից մարդկան: - 665. ...զի ի մեծի ծագման առաւօտուն կրեսցեն զպատիժն *ըստ* գործոց իւրեանց: - 669. Այլ թէ ասեն՝ հաղորդադրամ, կամ խոստովանադրամ, խո՛րք է. յագահութեանց երիցանց սահմանեալ և ո՛չ *ըստ* կանոնաց որպէս այլքն: - 684. Իսկ չար հոգիքն ճանաչեն այն քան զչարս՝ վասն զի *ըստ* արժանեաց իւրոց տանջելոց են: - 685. ...զայն աղերսեն նմա. սակայն *ըստ* հաճոյութեան կամացն

աստուծոյ խնդրեն և ո՛չ զհակառակն: - 685. Այլ *ըստ* պսակացն որ մարմնով կատարին՝ և վասն ընկերացն որ ժողովին՝ պակաս է նոցա. զոր ի կատարածի լինելո՛ց է ի գալուստն քրիստոսի...: - 686. Տեսութիւնն է աստուծոյ. որք *ըստ* բազմազան գործոց իւրեանց տեսանեն. և որպէս ի տան փառաւորին: - 686. Իսկ արդարքն և մեղաւորքն միջակք՝ որք առին զօրէնսն և *ըստ* օրինացն գործեցին զբարիս. կամ սխալեցին...: - 687. Այլ որք ուղիղ դատեցան վարդապետք եկեղեցւոյ *ըստ* տեսլեանն յօհաննու. որպէս մեծն անդրէաս և համախոհք նմին սուրբն իրինոս, եպիփան, և բասիլիոս: - 687. Եւ այն է քաղաք աստուծոյ և վերին երուսաղէմ՝ և եկեղեցիք արդարոց *ըստ* պօղոսի: - 688. ...և սոքա ո՛չ գան ի դատաստան. այլ ի դատել զհրեշտակս և զմարդիկ *ըստ* առաքելոյ: - 688. Եւ սկիզբն անդ ժողովելոյ՝ ի յարծակելն քրիստոսի առ ժամանակեայ զհոգիսն անարժանից՝ անդ մնացին և անտի դարձցին մեղաւորք անրդէն ի դժոխս *ըստ* մարգարէին: - 688. Անդ ժողովին և հոգիք չարաց և ամբարշտաց ի ձեռն հրեշտակաց չարաց. ո՛չ *ըստ* բնութեան...: - 688. ...այլ սրտմտութեամբ տանջանաց արդէն իսկ դատապարտելոց *ըստ* աւետարանին ձայնի: - 688-689. ...այսինքն զմեղօք մեռեալ հոգիսն ի դատաստան *ըստ* գործոց: - 689. Բայց այժմ ըստ ինքեան, և անդ *ըստ* հատուցման: - 690. Չորրորդ, ասէ սուրբն եպիփան ի հաւատոց գիրն, եթէ որպէս հոգին միայն դատի *ըստ* բանի հերձուածողացն զի կարէ՛ ասել մարմնոյն եղեալ զյանցանքն: - 691. Նմանապէս հետևի զի մարմինն ո՛չ կրեսցէ տանջանս. զի ո՛չ յառնէ *ըստ* նոցա կարծեացն: - 694. Արդ *ըստ* կատարեալ գործոցն զոր ունին յինքեանս՝ եղեն անդրանիկ երանութեամբ և հանգստեամբ: - 695. Ասեմք *ըստ* նիւսացւոյն գրիգորի, թէ յոյս նոցա ո՛չ է տանջանք, այլ վայելչութիւն է նոցա. - 695. Ասեմք առ այս, եթէ նախ է բարին ի հոգին *ըստ* տեսութեան մտացն և կամացն. - 696. Ասեմք *ըստ* սրբոյն անդրէի մեկնչի՝ եթէ սուրբքն զաշխարհի վախճան խնդրեցին. որոց ցուցանէ զպատճառս երկայն մտելոյն...: - 696. Իններորդ, հուր քաւարանին պատիժ է մեղացն *ըստ* նոցա: - 699. Տասնեմի, պատժոյն մեղաց չափ և ժամանակ գոյ *ըստ* իւրաքանչիւրիցն. որպէս յա՛յտ է ի կանոնս: - 700. Իսկ թէ այժմ հոգւոյն եղեալ է դատաստան, և հատուցումն *ըստ* գործոց, և արդարոցն փառք և մեղաւորացն տանջանք. և յայնժամ մարմնոյն որպէս ասեն նոքա. - 700. Երկրորդ, զի ի սուրբ գրոց ածեն վկայութիւնս և մեկնեն *ըստ* կամաց իւրեանց. - 701. Եւ որ քարոզէ՛ առանց հաւատոյ՝ ոչ խօսի զբանն հաւատարիմ որ *ըստ* աստուծոյ: - 702. Դարձեալ ասեմք, թէ սուրբն ոսկեբերան *ըստ* չորից հակառակի՛ և ստէ՛ զնոսա: - 702. ...և *ըստ* իւրաքանչիւրոցն տեսանէ զփառս և յուսով վայելէ...: - 705. Զի զգլուխ վիշապին ի ջուրսն յորդանանու ջախջախեաց *ըստ* յոբայ որ է մեղքն...: - 705. ...բայց *ըստ* վերերևութեանն ցուցանէ զսրբութիւն. զի դիւրաւ խաբեսցէ: - 707. Եւ լինիցի յանդուգն. զի ո՛չ համարի պատժիլ ի յաստուծոյ. զի յապաղէ դատաստանն. *ըստ* սաղմոսին «բարձեալ են իրաւունք յերեսաց նորա»: - 707. Թագաւորէ՛ նեռն զաւուրս **ռ** երկերիւր **հէը**, *ըստ* դանիէլի: - 709. Եւ մինչդեռ ասասցեն զայս, յանկարծակի եկեսցէ ի վերայ նոցա սատակումն որպէս յաւուրսն նոյի *ըստ* հրամանի փրկչին: - 709. Յինգերորդ, *ըստ* համարոյ **իդ** տառիցն որովք իմաստնացան և ի գիտութիւն ճշմարտութեան հասին: - 711-712. Երկրորդ, *ըստ* ոմանց **գ** է գոչումն փողոյն...: - 713. Չորրորդ, *ըստ* ոմանց **դ** է գոչումն փողոյն. - 713. Ապա ուրեմն գոյ յարութիւն. և այս *ըստ* բնականին: - 715. Ուստի և փրկչին ակնունիմք նորոգել զմարմին խոնարհութեան մերոյ *ըստ* մարմնոյ փառաց իւրոց: - 716. Այլ արդ՝ մարմնով աճումն է *ըստ* բնութեան. և բնութիւնն *ըստ* ժամանակի փոփոխման կատարի: - 716. Նաև անդանօր ետես նախանըկար տեսչութեամբ զօրքանութիւն մարդկան *ըստ* թւոյ: - 716. Նա՛խ՝ զի շնորհն աստուածային պատկերին որ համանգամայն կամեցաւ զբոլոր բնութիւնս *ըստ* հրեշտակացն օրինակի մուծանել ի կեանս. - 716. ...և ի դադարիլ ժամանակին՝ ի նոյն կէտն համանգամայն վերառեցեալ մտանեն ի կեանս առաջին *ըստ* խոստման բանին: - 716-717. Եւ տարերք ամենայն շտեմարանք են աստուծոյ. և տիեզերք ամենայն ի ձեռին նորա՛ են *ըստ* մարգարէին: - 718. Ապա ուրեմն կենդանեաց մարմինն ոչ յառնէ ի մեզ *ըստ* բոլոր նիւթոյն, այլ *ըստ* չափոյ զօրութեանն որ փոխեցաւ ի մեզ և եղև մարմին մարդոյ, ա՛յն մարմինն յառնէ: - 718. Որ արարն յոչ էից, գիտէ անխառնապէս որոշել զիւրաքանչիւր փոշիս արդարոց և մեղաւորաց. զի հատուսցէ իւրաքանչիւր *ըստ* գործոց: - 719. Երրորդ, որպէս նոյն հատն սերմանեալ նոյն հատն բուսանի *ըստ* ազգի իւրում. - 720. ...և մարմինն մեռեալ առաւել նոյն ինքն յառնէ. այլ ո՛չ թէ նմանն մեզ *ըստ* ազգի մերում...: - 720. Վեցերորդ, ոմանք ատոքք և կէսք ազազունք և այլք անպտուղք. այսպէս և մարմինք ընտրելոցն և ոչ նոյնպիսեացն *ըստ* չափու զանազանին: - 721. Ութերորդ, բարի և չար սերմանիքն ի միասին բուսանին և մնան մինչ ի հունձս. մանաւանդ մինչ ի կալն *ըստ* առակի տեառն...: - 721. Յինգերորդ, ստեղծաւ մարդն հաւասար հրեշտակաց. և յորժամ մեղանչեաց՝ անասնոց հաւասարեցաւ *ըստ* դաւթի և ընդ նոսա ապականեցաւ և պատժեցաւ. - 724. Երրորդ՝ ուղղի մոլորութիւնն որ է՛ խանգարումն անդամոցն ի միմեանս սխալեալ *ըստ* բնութեան տկարութեանն: - 725. Զի յարիցեն մարդիկ *ըստ* գոլոյն՝ և ամբողջ գոլոյն՝ և գեղեցիկ գոլոյն: - 725.

Իսկ զի նիւթ խաչին մնայ *ըստ* ոմանց՝ այս ո՛չ է ըստ բնութեան կարգի, այլ սքանչելեաց հարկի որպէս ցուցանի յառաջիկայդ: - 727. Իսկ զի նիւթ խաչին մնայ ըստ ոմանց՝ այս ո՛չ է *ըստ* բնութեան կարգի, այլ սքանչելեաց հարկի որպէս ցուցանի յառաջիկայդ: - 727. Զի վերին մարմինք երկինք և լուսաւորք ամենևին անապակա՛ն են. իսկ **դ** տարերք թէպէտ *ըստ* մասին ապականին, այլ ըստ բոլորին ո՛չ. - 727. Զի վերին մարմինք երկինք և լուսաւորք ամենևին անապակա՛ն են. իսկ **դ** տարերք թէպէտ ըստ մասին ապականին, այլ *ըստ* բոլորին ո՛չ. - 727. Եւ *ըստ* ոմանց կարծեաց զի տեղիք լիցին երեսնաւոր արդարոցն. որպէս ցուցանելոց եմք յառաջիկայդ: - 727. Իսկ *ըստ* իրին, զի որպէս ամպ զարեգակն արգելու, այսպէս նսեմութիւն օդոյդ զարփին որ արգելէ՛ զտեսութիւն մեր: - 729. Այն է ծալիլ և գալարիլ օդոյդ երկնի. և ո՛չ թէ հաստատութիւնն վերին էութեամբ ի բաց բառնի *ըստ* ոմանց: - 729. Նա՛խ՝ զի աշխարհս ջրով և հրով ապականեսցի *ըստ* մարգարէութեանն եհովքայ: - 731. Եւ ո՛չ միայն խաչն, այլ և ամենայն գործիք չարչարանացն. այսինքն բևեռքն գեղարդն և այլք. որք բերին առաջի դատաւորին. և ի մարմին նորա երևին սպիք խոցուածոց նորա *ըստ* զաքարիայ...: - 732. Նախ դիմակայութեամբ եթէ՝ ո՛չ է *ըստ* օրինի բնութեան անապական մնալ նմա, այլ սքանչելիք աստուածային: - 733. Այսպէս և այս ո՛չ է *ըստ* բնութեան կարգի. զի նոյն բանն աստուած ի սա՛ է միաւորեալ անբաժանապէս: - 733. Այսպէս և **դ** տարերք ըստ ինքեանց անապականք են. զի մասնաւորքն ի նոցանէ ապականին և դարձեալ ի նոսա խառնին. և այսոքիկ *ըստ* կամացն աստուծոյ են կամ մշտապէս: - 733. վասն որոյ նմա՛ պարտ էր դատաւոր լինիլ և հատուցանել *ըստ* գործոց հաւատացելոց և անհաւատից: - 735. Յաւատացեալ արդարք. որք *ըստ* օրինաց հնոյն կամ նորոյս գործեցին զարդարութիւն. կամ որք սխալեցին և ապաշխարեցին զմեղս զղջմամբ խոստովանութեամբ պահօք աղօթիւք ողորմութեամբ և այլովք: - 739. Եւ միւս գիր է գործոց փոփոխական և ջնջելի *ըստ* ժամանակիս: - 741. Իսկ խոստելոցն գիր, դպիր է պիղծ հոգին դիւական. և չար կամքն իւրեանց և խորհուրդն և հեշտութիւն մարմնոյն մելան. և *ըստ* գործոց առաւել և նւազ գրեն ի գիրն դատապարտութեան: - 741. Իսկ դատաւորն նստեալ յաթոռ արդարութեան արդարապէս հատուցանէ *ըստ* գործոց. ըստ որում յիմար կուսիցն փակեցաւ դուռն և ո՛չ առին զխնդիրն: - 742. Նախ հոգին և մարմինն. զի ցանկան հակառակ միմեանց *ըստ* այրւոյ առակին առ անիրաւ դատաւորին: - 743. Եւ արդարութիւնն առ այս է *ըստ* չորից իմն եղանակաց: - 745. Դարձեալ կշիռք արդարութեան առանձնապէս իմանի տէր մեր *ըստ* չորից: - 745. Նախ *ըստ* գոյացութեան. զի որպէս անսկիզբն է աստուածութեամբն, նոյնպէս և անվախճան է մարդկութեամբն հաւասարեալ: - 745. Եւ նմանապէս *ըստ* չորից իմն է արդարութիւնն: - 746. Իսկ անդ հաւասարի կշիռն *ըստ* յուսոյ, և միտէ՛ ողորմութիւնն *ըստ* սիրոյ: - 746. Նոյնպէս և հատուսցի առաւել և նուազ և հաւասար. ո՛չ միայն *ըստ* սեռի գործոց, այլ և *ըստ* տեսակի և քանակի և որակութեանց նմին: - 746. Զի *ըստ* սեռի հատուցանի բարեացն բարի և չարացն չար: - 746. Իսկ *ըստ* տեսակի, որպիսութիւն հատուցմանց *ըստ* հաւատոց և գործոց վկայից և կուսից: - 746. Իսկ *ըստ* քանակի, չափու գործելեացն առաւել և նուազ իւրաքանչիւրոց ի խորհուրդս ի բանս և ի գործս: - 746. Իսկ *ըստ* որակացն, կամայի և ակամայի. գիտութեան և անգիտութեան և այլն: - 746. Չորրորդ, կշիռն նշանակէ՛ զգործս մարդկան. *ըստ* կշռոյ օրինացն հաւասարել և հատուցանել. եթէ *ըստ* բնականին կամ *ըստ* գրոյն և աւետարանին. որում շատ տուաւ առաւել պահանջել: - 747. Եւ թէ ունիցին *ըստ* օրինացն հաւասարեալ ի գործս կամ ի հաւատս, և եթէ միտեալ և կամ նուազեալ, *ըստ* նոցին օրինացն հատուցանել. և կամ արտաքոյ օրինացն կորնչիլ ի յայսմ կշռոյ է հատուցումն: - 747. Երկրորդ՝ ի ստեղծումն յարարչութեան բոլորից՝ ուրախ եղև տէր յարարածս իւր և յորդիս մարդկան *ըստ* սողոմոնի: - 748. Երկրորդ կոչի հնձան արքայութիւնն երկնից. ուր ժողովին պսակք և փառք զանազան հանգստեան սրբոց զոր պատրաստեալ է աստուած սիրելեաց իւրոց *ըստ* առաքելոյ: - 748-749. Այլ *ըստ* զանազանութեան չափոյն, ոմանք **ժ** են ասացեալ թուով *ըստ* հարուածոցն եգիպտոսի: - 751. և Ոմանք *ըստ* քաղաքական օրինացն **ը** ասեն գոլ պատիժ: - 751. Զի *ըստ* առաջնոյն ամբարիշտքն կորուսին զաստուած և զամենայն բարի շնորհս և զփառս. և ոչ ունին յոյս ողորմութեանն աստուծոյ...: - 751. Որ է՛ պտուղ առաքինութեան *ըստ* մարմնոյ և հոգւոյ և մտաց մերոց: - 757. Վեցերորդ, այլ և բարեպաշտ թագաւորք՝ և իշխանք՝ և իշխեցեալք՝ ունին զայս կարգ. թէ օրինօք կենցաղավարին *ըստ* հրամանացն աստուծոյ: - 757. Նմին նման և մեք յուսասցուք արժանաւորիլ տեսութեանն քրիստոսի. զի թէ և ի դժոխս իցեմք՝ ա՛յն է արքայութիւն մեր. և ո՛չ թէ յերկրի կամ յայլում տեղւոջ *ըստ* սրբոյն ոսկէբերանի: - 759. Ա՛րդ՝ ի տեղի անկելոց հրեշտակացն՝ *ըստ* թւոյ նոցա խառնելո՛ց են դասք կուսանաց սրբոց: - 760. Երրորդ ուրախութիւնն եղիցի ի տեսութենէ միաւորութեան մարդկային բնութեանն առ աստուածայինն. քանզի սքանչելի ուրախութիւն լինիցի ընտրելոցն, յորժամ ճանաչիցեն թէ եղբայր նոցա *ըստ* մարմնոյ՝ ճշմարիտ աստուած է: - 763. Եւ *ըստ* իմաստասիրին, յառաջ քան զմարմինն յորում է զանազանութիւն լուսոյ՝ է՛ միւսն ի վերոյ յորում է

միակերպութիւն լուսոյ: - 763. Երրորդ անդուստ՝ զի իբրև նոքա որ այն քան տկարքն էին՝ սակայն յա՛յնպիսի թշնամին այն քան յաղթութիւնս գործեցին *ըստ* յոբայ: - 765. Ունելով տերև և ծաղիկ և պտուղ. այսինքն մաքրել, լուսաւորել, և կատարեալս առնել *ըստ* մեծին դիոնիսի: - 767. Եւ երկոտասան պտուղ *ըստ* **բժ**ան գնդիցն ասացեալ ի տեառնէ: - 767. Ի գնացս հոգւոյն զօրացեալ, զի *ըստ* տընօրէնութեանն խորհրդոյ միշտ հոգւով սրբով ներգործէր. ունելով տերև զաշխարհակեցոյց վարդապետութիւնն: - 768. Այլ և ծաղիկ՝ զպայծառ և զանուշահոտ վարս առաքինութեան. և պտուղ՝ արդիւնքն *ըստ* գործոց. յորմէ փրկութիւն եղև ամենայն աշխարհի և վայելչութիւն արքայութեանն երկնից: - 768. Եւ քրիստոս աստուծոյ զօրութիւն և աստուծոյ իմաստութիւն ի հօրէ *ըստ* սրբոյն դիոնիսեայ: - 770. Մի դէմն յԵրրորդութենէն որդի լինի. մի դէմ ի մարդկութենէս ի կուսէ առեալ բնութիւն մարդկութեան, աստուածութիւնն բոլորովին յաղագս անհաս միաւորութեանն *ըստ* ոսկէբերանին յոհաննու: - 770. Ծնունդն, զօրութիւնն, մահն, ընդ աջմէ հօր նստիլն, և այլն ամենայն, զաստուած ի մարդում, մանաւանդ զմարդ յաստուածում *ըստ* սքանչելագործին գրիգորի ցուցանեն: - 770. Եթէ ի խելս և ի խորհուրդ ցնորութիւնք և զայրոյք ուռուցանիցեն խխայթեալք. բժշկեսցիս հաւատով. *ըստ* մարգարէին հիացեալ՝ ստուերս և ունայնս դնելով զամենայն անցաւորս: - 770. Ա՛րդ՝ է՛ ինչ ի սմա հաւաքեալ ի լուսաւոր բանից վարդապետաց սրբոց *ըստ* գրոյն կամ իմացուածոյն: - 772. Եւ է՛ ինչ ի ներգործութեանց հոգւոյն աստուծոյ շնորհաց. որ ծածկէ՛ յիմաստնոց և յայտնէ տղայոց յիւրաքանչիւր ժամանակս *ըստ* կամաց իւրոց: - 772. Զի նա՛ ծնաւ զմեզ *ըստ* բանի՝ բազմաջան երկօք. կրթեալ ի մամուլս վարժարանի և ի յոյսն կենդանի: - 773. ...մարմնով մեռելոցն անթիւ օճիրս ստախօսութեան գործէր. զանտի կենաց զյարութեան յուսոյ և զհատուցմանց *ըստ* գործոց՝ բառնալով. զերկիւղ դժոխոց և զսէր արքայութեան. և զամենայն ինչ որ նմանէ այսմ հոգևոր բարութեան: - 775. Երկրորդ, զի դժոխքն այն պատիժ բնութեանս էր և ո՛չ առանձին գործոց. զի հաստատեաց օր մի յորում դատելո՛ց է զամենայն *ըստ* պօղոսի: - 776. Ասեմք թէ՝ յիրաւի, որովհետև երևեցաւ տէր մեր ի փրկութիւն ընտրելոց *ըստ* ամբակումայ, նախահայրն յաւիտեան. իսկ այլք ազատեցան ժամանակեայ: - 777. Վասն որոյ կրկին է և պատիժն. զառաջինն ի նախնւոյն հասեալ. և ապա յետոյ յօր մի հաստատեալ *ըստ* առաքելոյ: - 777. Եթէ յարդեան ժամանակիս հաւատարիմ է, զի որ ոք և իցէ յանցաւոր, եթէ զղջասցի և ատեսցէ զմեղս *ըստ* մարգարէին՝ խոստովանութեամբն առնու զմաքրութիւն և զվարձս ապաշխարութեան: - 778. Իսկ եթէ ոք զփոփոխումն ի մեզ ասիցէ *ըստ* օրինակի արեգական. որ զչորեսին եղանակս կազմէ՛ և ինքն անյեղ մնայ: - 778. Եւ այսոքիկ որք երևին ընդ դէմ միմեանց, կամ առ այլս կամ երբեմն, ո՛չ փոփոխումն ինչ ցուցանեն անփոփոխելոյն. առ մեզ փոփոխելոց *ըստ* արժանոյն գութ կամ հատուցումն. թէ աստ՝ թէ ի հանդերձեալն: - 779. Զի յորժամ ինքեանք փոխեցան, փոխեցաւ և *ըստ* նոցա պատիժն ասացեալ. այսպէս և ամենայն ուրէք տեսցես: - 779. ...նոյնպէս ողորմութեան և արդարութեան է միշտ բարերարելն և պատժելն *ըստ* նախասահման գիտութեան նորին նախքան զլինիլն էիցս ըստ առաքելոյ: - 779. ...նոյնպէս ողորմութեան և արդարութեան է միշտ բարերարելն և պատժելն ըստ նախասահման գիտութեան նորին նախքան զլինիլն էիցս *ըստ* առաքելոյ: - 779. Նա՛խ՝ աղօթիցն ժամ. ո՛չ միայն յերեկոյս և ի վաղորդեան՝ ի հասարակն կամ է անգամ աւուր *ըստ* մարգարէին: - 779. Երրորդ՝ ժամանակ կենցաղոյս մինչև ի մահ, է՛ ընդունելութեան աստուծոյ. ըստ որում բազմեալ է յաթոռ շնորհաց *ըստ* առաքելոյ. իսկ յետ այնորիկ ո՛չ ևս. զի փոխի յաթոռ դատաստանաց *ըստ* աւետարանին: - 780. Այսպէս բարւոք տեսցես ինձ յամենայն ուրէք *ըստ* ժամանակի զգործս յարմարեալ: - 780. Նա՛խ՝ ի շինուածոյս մերոյ կազմութեան *ըստ* նիւսացոյ ասիցն: - 780. Եւ այլևս յարմար տեղւոյս այսպէս իմանի. զի սուրբ հարքն առաջինք պակաս ունէին զչարչարանս. վասն որոյ ո՛չ կարէին փրկիլ. իսկ քրիստոս եղեալ *ըստ* մարմնոյ որդի նոցա, զպակասութիւն հարցն չարչարանաց յիւրումն մարմնի էլից: - 781. Զի այսպէս ուսաք ի սրբազան վեհէն մերմէ *ըստ* սրբոցն աւանդութեանց. թէ ամենայն իր որ բնութեան է պարգև, ան՛ի բաց դնելի՛ է ի նմանէ: - 782. Դարձեալ, ամենայն շնորհք առ ո ոք և իցէ՝ բառնի վասն մեղաց. ո՛չ *ըստ* ունակութեան՝ այլ *ըստ* ներգործութեան կամ նշանակութեան: - 782. Որպէս ծառ մերկացեալ ի պտղոյ՝ այլ ո՛չ *ըստ* ունակութեանց. և նովին ունակութեամբ վերստին պտղաբերի ինքն: - 782-783. Շնորհքն որ տւաւ ադամայ, փոփոխական էր *ըստ* նմա: - 783. Որոց սկիզբն է հաւատն առ մկրտութեամբն. և կատարումն հայի առ գործն. և սոքա փոփոխականք են *ըստ* քանքարացն յարգելոյ և պակասելոյ: - 783. Եւ յարամնայութիւն կնքոյն պատճառէ՛ ոմանց գերագոյն պատիւս. և ոմանց խստագոյն պատիժս. *ըստ* բազում գանից առակի ասիցն: - 783. Նախ բնական առարկութեամբ *ըստ* փիլիսոփայիցն հասողութեան. և սա՛ կոչի գիտութիւն: - 784. Որք դարձուսցեն զսիրտ հարց յորդիս *ըստ* մաղաքիայի. այսինքն ուսուցանեն զհաւատն փրկչին զոր հարքն ունէին. և է՛ վարձաւորելի և կարի քաջ. և թէ այսպէս և թէ այն՝ քրիստոս քարոզի: - 785. Զի արարիչն և բնութիւնն և արուեստն ոչ ինչ ծրի և վայրապար

ստեղծանեն *ըստ* իմաստասիրին: - 785. *Ըստ* աստուածեղէն տառից՝ արարաւ էգն ի յարուէն ամենայնիւ նման նմա օգնական: - 786. Եւ ԵՒս. կրկնեալ սուտք համազգիք ճշմարիտ. բաղարկոցի *ըստ* ասիցդ վերոյ: - 787. Եւ *ըստ* այլ կերպի փոփոխին սոքա ի միմեանս և լինի ստորասութիւնն բացասութիւն, և բացասութիւնն ստորասութիւն: - 787. Եւ երկրորդն է լուսաւոր զօրութեամբ թափանցանց. գոլով ջրեղէն կամ պլօրեայ *ըստ* ոմանց: - 787. Եւ սիւնք սորա տարր օդոյ *ըստ* նիւսացոյ: - 788. Զի առ հասարակ ամենայն տարերք *ըստ* իւրեանց կերպի կրեցին զայլայլութիւն սըգոյ, չարչարակիցք գոլով արարչին իւրեանց: - 788. Ո՛չ *ըստ* բաւական բանի առեալ զլուծումն. այլ *ըստ* կարի տկարութեան արտայայտումն. մանաւանդ հարկեալ ի սիրոյ քումդ եղբայրական խնդրոյ: - 788. Եւ մաղթե՛մ եղբայրական սիրով, *ըստ* բնածին բարեբոյս բարուցդ աժխոյժ մտօք ուղղապէս որոնել. զթերին լնլով և զաւելորդն կշռել: - 789

***ԸՍՏ ԱՅԴՄ*** - Նախ՝ թէ *ըստ այդմ* բանի հա՛րկ է ապա և քեզ ջուր լինիլ և զջուրն գիտել. և քար լինիլ և զքարն ճանաչել, և զայլսն նոյնպէս: - 17. Եւ ո՛չ ասի ի գիրս սուրբս *ըստ այդմ* բառի, բայց այլ կերպիւ ցուցանէ զայդ. այսինքն զի ասէ, «Ես եմ ալֆա և օմեգա». յայսմանէ իմանամք զանսկիզբն և զանվախճանն: - 55

***ԸՍՏ ԱՅՆՄ +*** Դարձեալ, անձնիշխան կամքն է՛ յաստուծոյ. և է՛ յոչընչէ եղեալ. այլ ա՛րդ՝ անձնիշխան կամքն *ըստ այնմ* որ յաստուծոյ է եղեալ՝ ո՛չ է պատճառ չարի. այլ *ըստ այնմ* որ յոչընչէ՝ և ցանկայ ոչընչի. այսինքն չարի. վասն այսորիկ մեղքն և չարն ո՛չ են յաստուծոյ. այլ յոչընչէ՝ որ է՛ սկիզբն նոցա: - 16. Վասն որոյ պա՛րտ է խնդրել ստէպ. *ըստ այնմ*, «հաւատա՛մ օգնեա՛ անհաւատութեանս իմում»: - 32. Նաև սէր աշխարհիս և փառաց՝ ո՛չ ետ թոյլ հաւատալ. *ըստ այնմ*, «դուք փառս ի միմեանց առնուք. և զփառս ի միոյն ո՛չ խնդրէք. վասն այսորիկ ո՛չ կարէք հաւատալ»: - 32. Դարձեալ քննեսցուք ըստ մեզ. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ հայր մեծ է քան զորդի. զի երկոքին նոյն ինքն աստուածութեանն իմանին. *ըստ այնմ* որ զմեր նուաստ և տկար բնութիւնս միացոյց ընդ իւրում աստուածութեանն, և անտեսանելին տեսանիւր՝ և ծառայի կերպիւ շրջէր վասն տնօրէնութեան՝ ասի փոքր յայս միաւորութեանս քան զհայր. իսկ *ըստ այնմ* որ է՛ անճառ և նախքան զյաւիտեանս ծնունդ ի հօրէ՛, հաւասա՛ր է հօր և ոչ փոքր: - 40. Այլ նա ընդ ամենայն է քրիստոս զօրութեամբ և էութեամբ թափանցեալ է. և ո՛չ է տեղի թափուր ի նմանէ. *ըստ այնմ* թէ՝ «զերկին և զերկիր ե՛ս լնում»: - 40. Իսկ հնազանդիլն որդւոյ հօր, ո՛չ թէ այժմ անհնազանդ է վասն հակառակութեան. զի այս աւազակա՛ցն է. և անհնա՛ր է ասել զմի և զնոյն էութիւնն ինքն ինքեան հնազանդ և անհնազանդ *ըստ այնմ* որ բան է. այսինքն զպարզ աստուածութիւնն: - 42. Որով ցուցանի կատարեալ սէրն նորա առ մեզ արդեամբք և ճշմարտութեամբ. *ըստ այնմ* թէ՝ «կատարեալ սէր ո՛չ ոք ունիցի, որպէս ես զանձն իմ եդի»: - 43. Նախ՝ զի որպէս զգեստիւն ծածկի մարմինն, այսպէս տէրն զաստուածութիւնն իւր ամփոփեաց մարմնովն անհաս լինիլ ի փորձողէն. *ըստ այնմ*. «խաւար նմա ոչ եղև հասու»: - 43. Երկրորդ՝ որպէս յոլովագոյնն. *ըստ այնմ* «ո՛չ կարէ քաղաք թագչել որ ի վերայ լերին կայցէ»: - 44. Եւ թէ բան իմանաս՝ և ոչ պահքն պատշաճ էր սրբեցելոցն բանիւն. *ըստ այնմ* «դուք սուրբ էք վասն բանին զոր խօսեցայ ընդ ձեզ». զի պահքն զոչ սուրբն սրբէ. իսկ նոքա զի սուրբք էին ոչ պատշաճ պահքն. վասն այն ո՛չ կարէին: - 44. *Ըստ այնմ* թէ «կամի զի ամենայն ոք կեցցէ՝ և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցէ»: - 48. Իսկ էն՝ զմիշտ լինիլն ցուցանէ. *ըստ այնմ* «ես եմ ալֆա և օմեգա». այսինքն առաջին և վերջին: - 49. Հինգերորդ՝ զի բանն է սահման. և որպէս յայտնիչ է սահմանն սահմանելոյն, այսպէս և որդի սահմանէ՛ զէութիւն հօր. *ըստ այնմ* թէ, «որ ետես զիս՝ ետես զհայր»: - 49. Ութերորդ՝ ասի բան վասն հաստատելոյ զամենայն. *ըստ այնմ* թէ՝ «բանիւ *տեառն* երկինք հաստատեցան»: - 49. Չորրորդ՝ զիա՞րդ ինքն կարգի ի թիւ Երրորդութեանն. *ըստ այնմ* «մկրտեցէք յանուն հօր և որդոյ և հոգւոյն սրբոյ»: - 51. Եւ զայրանայ և տրտմի. *ըստ այնմ*. «մի՛ տրտմեցուցանէք զհոգին սուրբ»: - 52. Բարի՛ է և հոգին սուրբ. *ըստ այնմ* «հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ»: - 57. Երկրորդ՝ պաշտօն որ յաստուած վերաբերի՝ միայն աստուծոյ պատշաճի. *ըստ այնմ*, «տեառն աստուծոյ քում երկիր պագցես, և զնա միա՛յն պաշտեսցես»: - 57. Չորրորդ՝ հոգևոր կենդանութիւն է յաստուծոյ. *ըստ այնմ* «կենդանի՛ է հայր. և ես կենդանի եմ՝ վասն հօր. և որ ուտէն զիս՝ և նա՛ կեցցէ վասն իմ»: - 57. Հինգերորդ՝ յարուցանել՝ միայն աստուծոյ պատշաճի. *ըստ այնմ*, «որպէս հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ, նոյնպէս և որդի զորս կամի կենդանի առնէ»: - 57. Եօթներորդ՝ քննել զսիրտս աստուծոյ՝ ո՛չ է ստեղծուածոյ ումեք. *ըստ այնմ*, «ո՛չ ոք գիտէ զորդի, եթէ ո՛չ հայր որ է աստուած. և ո՛չ զհայր ոք գիտէ, եթէ ո՛չ որդի»: - 57. Պատասխանեմք եթէ՝ որպէս ասի որդի առաքեալ ի հօրէ և ի հոգւոյն, *ըստ այնմ* «տէր տէր առաքեաց զիս և հոգի նորա». և այս ո՛չ վասն փոքրկութեան, այլ վասն միութեան կամացն: - 60. Դարձեալ՝ շարժումն ո՛չ միայն ասի ի վերայ հոգւոյն սրբոյ, այլ և հօր և որդւոյ. *ըստ այնմ* «լըւան զձայն զգնալոյ *տեառն* աստուծոյ ի դրախտի անդ»: - 60. *Ըստ*

*այնմ* «չև էր հոգի, քանզի յիսուս չև էր փառաւորեալ»: - 61. *Ըստ այնմ* «տէր տէր առաքեաց զիս և հոգի նորա»: - 61. Տե՛ս՝ փառաւորէ՛ և հայր զորդի որ սկիզբն է նորա. *ըստ այնմ* «փառաւոր արարի՝ և դարձեալ փառաւոր արարից»: - 61. Առ եօթներորդն ասեմք, եթէ՝ մատն աստուծոյ երբեմն նշանակէ զերրորդութիւն անձանցն. *ըստ այնմ*, «ո՛ կշռէ երիւք մատամբ զծանրութիւն երկրի»: - 62. Երբեմն զմի անձն միայն. *ըստ այնմ*, «մատամբն աստուծոյ հանեմ զդևս»: - 62. Երբեմն զառաւել զօրութիւնն. *ըստ այնմ* որ ասէին գէտքն եգիպտացւոց՝ «մատն աստուծոյ է այս»: - 62. Երկրորդ՝ զի որպէս մատամբ գրեմք կամ գործեմք զամենայն գործս, այսպէս և հոգին սուրբ գրէր ի մարգարէսն. *ըստ այնմ*, «յորում և յորպիսի ժամանակի ազդէր ի նոսա հոգին քրիստոսի»: - 62. Ուղիղ է, զի որպէս խօսքն թարքման է մտաց և բանի, այսպէս և հոգին սուրբ՝ հօր և որդւոյ. *ըստ այնմ*, «ո՛չ եթէ յանձնէ ինչ խօսիցի, այլ զոր լսէն»: - 62. Եւ մեք համաձայնեալ սուրբ և ուղղափառ վարդապետութեանցս, այսպէս դաւանիմք և խոստովանիմք զՀոգին սուրբ աստուած բղխումն ի հօրէ աստուծոյ. *ըստ այնմ* «հոգին որ ի հօրէ ելանէ»: - 65. Եւ առօղ յորդւոյ աստուծոյ. *ըստ այն* «յիմմէ՛ անտի առնուցու»: - 65. Եւ գիտելի է, զի որպէս բան կոչի որդին աստուծոյ, նոյնպէս խօսք կոչի հոգին սուրբ. *ըստ այնմ* «զոր լսէն խօսեսցի, և զգալոցն պատմեսցէ»: - 66. Նախ այսպէս. գործ աստուծոյ՝ ստեղծանելն է. *ըստ այնմ* «ի սկզբանէ՛ արար աստուած զերկինս և զերկիր»: - 70. Երկրորդ՝ աստուած կենագործօ՛ղ է. *ըստ այնմ* «ե՛ս սպանանեմ և ե՛ս կեցուցանեմ»: - 70. Հինգերորդ՝ անգիտելի է աստուած. *ըստ այնմ*, «ո՛չ ոք գիտէ զհայր՝ եթէ ոչ որդի»: - 71. Իններորդ՝ սքանչելագործելն միայն աստուծոյ է. *ըստ այնմ*, «դու ես աստուած որ առնես սքանչելիս»: - 71. Եւ տէր մեր քրիստոս առնէր սքանչելիս. *ըստ այնմ*, «հայր իմ մինչև ցայժմ գործէ՛ և ես գործեմ»: - 71. Տասներորդ՝ աստուծոյ միա՛յն է թողուլ զմեղս. *ըստ այնմ* «ո՞ կարէ թողուլ զմեղս, բայց մի աստուած»: - 71. Չորեքտասաներորդ՝ ամենայն ուրեք աստուծոյ միայն է լինիլ. *ըստ այնմ*, «աստուած մեր յերկինս և յերկրի»: - 71. Հնգետասաներորդ՝ տաճար միայն աստուծոյ սրբի. *ըստ այնմ*, «տէր ի տաճար սուրբ իւրում»: - 71. Վեշտասաներորդ՝ աստուծոյ միա՛յն է ընդ կամելոյն և կարելն. *ըստ այնմ*, «զամենայն ինչ կամեցաւ և արար տէր»: - 72. Եօթնևժերորդ՝ ամենևիմբ սրբութեամբ արդարութիւն միայն աստուծոյ է. *ըստ այնմ*, «ո՛չ գոյ սուրբ որպէս զտէր. և ո՛չ արդար որպէս զաստուած մեր»: - 72. Իննևժերորդ՝ տէր փառաց միայն աստուած է. *ըստ այնմ* «տէր զօրութեանց նա ինքն է թագաւոր փառաց»: - 72. Ա՛րդ՝ որով ամենայն՝ յարմարի բանին. *ըստ այնմ* ամենայն՝ «ինչ բանիւն եղև». և յիսուս կոչի մարդն: - 72. Վեցերորդ՝ բանն աստուած անմարմին է և ի սկզբանէ. *ըստ այնմ* «ի սկզբանէ՛ էր բանն»: - 73. Իննևժերորդ՝ թէպէտ մարդիկ ոմանք կոչին տէր վասն ունելոյ իշխանութիւն ինչ, այլ տէր միայն աստուած է. *ըստ այնմ* «տէր զօրութեանց. նա՛ ինքն է թագաւոր փառաց»: - 74. Իսկ միւսն մա՛րդ էր բնութեամբ յարարեալ և ստեղծեալ բնութենէ. և խառնելով ընդ բանին՝ եղև առեալն որպէս առօղն զո՛յգ և հաւասար աստուած. *ըստ այնմ* թէ՝ «զնա տէր և օծեալ աստուած արար»: - 79. Վասն որոյ ասէ սուրբն կիւրեղ եթէ՝ ո՛չ մարդն աստուածացաւ, այլ աստուած բանն էջ յարգանդ կուսին և առեալ հոգի և մարմին ի նմանէ՝ աստուածն մարդ եղև. *ըստ այնմ* թէ՝ «բանն մարմին եղև»: - 79. Եւ զծածուկ սրտին գիտել միայն աստուծոյ է՝ *ըստ այնմ* «որ քննէ զսիրտս և զերիկամունս աստուած»: - 97. Նախ՝ զի բանն աստուած էառ զմարդկայինս բնութիւն և միաւորեաց ընդ աստուածութեան իւրում. ո՛չ մասն առեալ՝ կամ ըստ մասին միաւորեալ. այլ բոլորն ընդ բոլորին. *ըստ այնմ*, «ի նմա՛ բնակի ամենայն լրումն աստուածութեանն մարմնապէս»: - 106-107. Եւ այս թէ առընչապէս, և թէ բնակցապէս ուղղակի՛ իմասցի. *ըստ այնմ*, «հայր ի յիս և ես ի հայր». և «հոգւով սրբով գործեմ զգործս»: - 108. Ո՞րպէս մի է աստուած, *ըստ այնմ* «տէր աստուած քո տէր մի է». և թէ՝ «մի է աստուած հայր, և մի տէր յիսուս քրիստոս»: - 109. Յարացոյցն մի է և պարզ. *ըստ այնմ* որ մի է էութիւնն աստուծոյ, և մի տեսութիւն, և մի ճշմարտութիւն: - 112. Ա՛յս է զի կոչի յաւիտեան. և ժամանակ. և օր. *ըստ այնմ* «յաւիտենից յաւիտեանս դու ես. և ամք քո ո՛չ անցանեն»: - 115. Զի աստուած նախ քան զգործն՝ և յառաջ քան զկամիլն՝ և նախ քան զէանալն տեսանէ. *ըստ այնմ*, «զանգործս իմ տեսին աչք քո»: - 118. Վասն է՞ր ասեմք աստուծոյ բան ունիլ. *ըստ այնմ* «բանիւ տեառն երկինք հաստատեցան»: - 121. Ո՞րպէս է նախանձն ի յաստուած. *ըստ այնմ*, «ես աստուած նախանձո՛տեմ». զի նախանձն ա՛խտ է առ մեզ: - 127. Դարձեալ՝ հոմանուն է նախանձն. զի նախա՛նձ է յաչաղելն և ատելն. *ըստ այնմ*, «նախանձու բանսարկուին՝ եմուտ մահ յաշխարհ»: - 128. Եւ նախա՛նձ է սիրելն և փափագիլն. *ըստ այնմ*, «նախանձաւոր լերուք շնորհացն որ լաւն են»: - 128. Իսկ խորութիւն է արդարութիւնն. որով դատապարտէ՛ զչարսն. *ըստ այնմ*, «երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից»: - 129. Երկրորդ՝ զի ծածկեցաւ ի յանարժանիցն մտօք և գործովք. *ըստ այնմ*, «մի՛ տեսցեն աչօք, և մի իմասցին սրտիւք»: - 132. Երկրորդ՝ զի աթոռքն վերաբերին ի դէմս հօր. *ըստ այնմ* «աթոռ քո աստուած յաւիտեան». և թէ՝ «աթոռք եդան և հին աւուրցն նստաւ», որ է՛ հայր: - 135. Զիա՞րդ առ հասարակ զօրութիւնք կոչին երկնայինքն. *ըստ այնմ*, «զօրութիւնք երկնից

շարժեսցին»: - 137. Քահանապետութիւնն *ըստ այնմ* որ կա՛րգ է՝ մի և նոյն է ի մարդիկ՝ ի հրեշտակս՝ և յաստուածպետութիւնն սուրբ: - 138. Շնորհն երբեմն ի տեղի ողջունի դնի. *ըստ այնմ* թէ՝ «շնո՛րհք ընդ ձեզ և խաղաղութիւն». որով հոգին սուրբ տըւեալ լինի: - 139. Երբեմն ի տեղի գոհութեան է. *ըստ այնմ* թէ՝ «շնո՛րհ ունիմ այնմիկ որ զօրացոյցն զիս»: - 139. Երբեմն զնեղութիւնն ասէ. *ըստ այնմ* թէ՝ «նշղեհակից եղև ի շնորհս յայս». այսինքն ի նեղութիւնս և ի վիշտս: - 139. Երբեմն զթողութիւնն ասէ՝ *ըստ այնմ*, «զի թէ ումեք շնորհիցէք՝ և ես»: - 139. Երբեմն զօգնականութիւնն ասէ. *ըստ այնմ*, «զի ի բազմադէմ շնորհացն որ ի մեզ՝ բազմօք յաճախեսցին գոհութիւնքն վասն ձեր»: - 139. Երբեմն զքարոզութիւնն ասէ. *ըստ այնմ*, «շնորհքն յաճախեալ ի բազմաց գոհութենէ առաւելասցին ի փառս աստուծոյ»: - 139 - 140. Երբեմն զնշան և զարուեստն կոչէ. *ըստ այնմ*, «ո՛չ մարմնեղէն իմաստութեամբ, այլ շնորհօք աստուծոյ շրջեցաք յերկրի»: - 140. Երբեմն զհաւատն և զսէրն կոչէ. *ըստ այնմ* թէ՝ «գործակից եմք շնորհացդ ձերոց». այսինքն հաւատոց. և թէ՝ «նախանձաւոր լերուք շնորհացն որ լաւն են» այսինքն է սէրն: - 140. Երբեմն զզանազան պարգևս հոգւոյն՝ զոր յաւազանէն տայ մարգարէութիւն քահանայութիւն՝ լեզւաց գիտութիւն. *ըստ այնմ*, «թէպէտ և բաժինք շնորհա՛ց են՝ այլ հոգի նո՛յն է»: - 140. Իսկ թէ աստուած ո՞րպէս գիտէ զթիւ ամենայնի *ըստ այնմ*, «ո՛ թըւէ՛ զբազմութիւն աստեղաց». զայս ասեմք ըստ եռակի: - 141. Իսկ բանիւ գործոյ խօսի աստուած ընդ դիւին. նա՛և հրեշտակք ընդ սատանայի. որպէս որոտ և կայծակունք հրոյ ի վերայ նոցա. *ըստ այնմ*, «որոտաց տէր յերկնից. և բարձրեալն ետ զձայն իւր ի կարկուտ և ի կայծակունս հուր»: - 145. Եւ գ է գոյացութիւն նոցա. անմարմին՝ անմահ՝ և հրեղէն գոլն. *ըստ այնմ*, «ո՛ արար զհրեշտակս յոգիս և ի բոց հրոյ»: - 151. *Ըստ այնմ* «տեսանէի զսատանայ անկեալ իբրև զփայլակն. և ետու ձեզ իշխանութիւն կոխել զնա»:: - 153. Երկրորդ՝ անկումն եղև ի փառաց յուսոյն. *ըստ այնմ*, «իշխան աշխարհիս ընկեսցի արտաքս»: - 153. Եւ քրիստոսիւ տկարացան ի կրկին զօրութենէ. *ըստ այնմ*, «թշնամւոյն զէն պակասեաց մինչ իսպառ: - 153. Եւ վասն երկրորդին ինքն տէրն ասէ՝ կապեալ զհզօրն և զտուն նորա աւար հարեալ որ է՛ դժոխքն. *ըստ այնմ*, «քաղաքս աւերեցեար, և կորեաւ յիշատակ նոցա աղաղակաւ»: - 153. Յնգետասաներորդ՝ զի մարդ յետ ստեղծանելոյն ո՛չ է ընդ ստեղծուածս իւր. իսկ աստուած յետ ստեղծանելոյն՝ միշտ է՛ ընդ ստեղծուածս իւր նախախնամութեամբ. *ըստ այնմ* «ես ընդ ձե՛զ եմ զամենայն աւուրս մինչ ի կատարած աշխարհի»: - 157. Յասարակութիւն է, Նախ՝ զի ի միոյ բարերար կամաց յառաջ եկին գործ արարչութեան, *ըստ այնմ* «զոր ինչ կամեցաւ և արար տէր»: - 157. Երրորդ՝ զի որպէս իմաստութեամբ արար, *ըստ այնմ* «աստուած իմաստութեամբ հիմունս էարկ երկրի». այսպէս իմաստութեամբ և նախախնամէ՛ զբոլորն՝ և զի իւրաքանչիւրսն ըստ իւրում պիտոյից զանազանապէս: - 157. Չորրորդ՝ զի որպէս անգիտելի են գործք արարչութեան, *ըստ այնմ* «ո՞ գիտաց զմիտս տեառն. կամ ընդ ո՞ւմ եղև խորհրդակից». այսպէս և անգիտելի՛ են գործք նախախնամութեանն. *ըստ այնմ* «ո՜ խորք մեծութեան և իմաստութեան. զի անզննելի՛ են ճանապարհք՝ և անքննելի՛ են դատաստանք նորա»: - 157. Չորրորդ՝ զի գործ արարչութեանն մի՛ անգամ է և ո՛չ ևս. *ըստ այնմ*, «հանգեաւ աստուած յամենայն գործոց իւրոց»: - 158. Իսկ գործ խնամելոյն միշտ և հանապազ. *ըստ այնմ* «հայր իմ մինչև ցայժմ գործ է՛ և ես գործեմ». որ է՛ նախախնամելն: - 158. Նախ՝ զի զծածուկ առաքինութիւն արդարոյն յայտնի արասցէ այլոց ամենեցունց. որպէս զյոբայն և զաբրահամոյն. *ըստ այնմ* որ ասէր՝ «ա՛յժմ ծանեայ թէ երկիւղած ես դու յաստուծոյ». այսինքն այժմ ծանուցի: - 158. Յինգերորդ՝ թոյլ տալով լինին ոմանք ի փառս այլոց. որպէս ի ծնէ կուրին. *ըստ այնմ* «ո՛չ դորա վնաս է և ո՛չ հօր և մօր իւրոյ. այլ վասն փառացն աստուծոյ»: - 158. Ութերորդ՝ թոյլ տալով սրբոց չարչարիլ՝ վասն պսակացն առաւելութեան է. զի կենցաղս այս հանդէ՛ս է նահատակութեան. և ըստ չափոյ համբերութեան՝ առցէ զյաղթանակն. որպէս սրբոյն ստեփաննոսի. զի ունէր զսարկաւագութեան և զառաքելութեան պատիւն, ընկալաւ և զմարտիրոսութեան պսակն ի քարկոծումն իւր. այսպէս և այլքն. *ըստ այնմ* «թէ ընտիր ևս գտանիցի՝ առցէ զպսակն կենաց»: - 159. Իններորդ՝ նահատակադիրն քրիստոս է փրկիչն ամենեցուն. և ամենայն սուրբք զինուո՛րք նորա. պարտին և զինւորքն զօրավարին նմանիլ և նահատակիլ. *ըստ այնմ* «եթէ չարչարանացն կցորդեսցուք, և փառացն հաղորդ լինելոց եմք»: - 159. Երեքտասաներորդ՝ զի տկար մարմնով անմարմին և զօրաւոր թշնամոյն յաղթեսցեն. որով աստուած իսկապէս փառաւորի. տեսանելով զտկարն յաղթել զօրաւորին *ըստ այնմ* որ զախորժակս իւր յայտնէ՛ր սիրելոյն՝ «շա՛տ է քեզ շնորհ իմ. զի զօրութիւն իմ ի տկարութեան քում կատար». այսինքն թէ՝ որպէս ես աստուածային մարմնոյս զօրութեամբն յաղթեցի փորձողին, նոյնպէս և դու շնորհօք իմովք՝ տկար մարմնով քո՝ յաղթես և նկուն առնես զնա: - 159. *Ըստ այնմ* «բազում նեղութեամբ պա՛րտ է մտանել յա՛յն հանգիստն»: - 160. Զորօրինակ եթէ կամիցի ոք տաճար շինել. նախ ձևանայ ի միտքն և յետոյ շինէ զտաճարն *ըստ այնմ* ձևոյ: - 163. Այլ տեսութիւնն աստուծոյ զոչ էսն տեսանէ և նախընտրէ. *ըստ այնմ*, «զանգործս իմ տեսին աչք քո»: - 164. Եւ որովհետև

գիտացեալ եղև այս, ապա յա՛յտ է թէ անկա՛ր է ոչ երևիլ սկիզբն լինելութեան աշխարհի. *ըստ այնմ* որ էր ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ: - 164-165. Այլ և ո՛չ *ըստ այնմ* որ է՛ սկիզբն գոյացութեան աշխարհի. զի անփոփոխ կամօք կամեցաւ և արար ի գոյութիւն. և անկա՛ր է փոխիլ կամացն անեղին և առնել յանգոյութիւն զեղեալս էութիւն: - 165. Դարձեալ ասեմք, թէ կոյսն և պոռնիկն՝ առաքինութեան և չարութեան են տեսակք, և ներհա՛կք են առաքինութիւն և չարութիւն. զի փոփոխեն զմիմեանս. *ըստ այնմ* և թողութեան հանդիպին: - 165. Չորրորդ՝ զի պատահումն է՛ փոփոխական իր. իսկ աստուած անփոփոխ է էութեամբ զօրութեամբ կամօք և գիտութեամբ. *ըստ այնմ* «ես նո՛յն եմ և ո՛չ փոփոխիմ»: - 170. Զի թէ գոյր պատահումն ի յաստուած, լինէր բազում և ո՛չ մի. իսկ աստուած մի է և ո՛չ բազում. *ըստ այնմ*, «տէր աստուած քո տէր մի է»: - 170. Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ. զի Է կոչի աստուած, *ըստ այնմ* «ես եմ որ Էն». և ո՛չ *ըստ այնմ* որ բաժանի ի գոյացութիւն և ի պատահումն. որպէս հոմանուն կամ փաղանուն. կամ ի միոջէ և առ մի. որպէս ընդհանուր էակն է՝ բաժանի առ մեզ: - 171. Այլ կոչի է, *ըստ այնմ* որ միշտ է՛, ո՛չ ունելով սկիզբն և ո՛չ վախճան. այլ ինքն է ամենեցուն սկիզբն և վախճան. որպէս ասէր՝ «ես եմ ալֆա և օմեգա»: - 171. Առհասարակ զսոսա ունի այբն *ըստ այնմ* որ է՛ գիր: - 177. Այլ և է՛ ուրէք. *ըստ այնմ* որ յա՛յլս է հաստատեալ: - 180. Վեցերորդ՝ բանն աստուծոյ կրէ՛ զամենայն զօրութեամբ իւրով. *ըստ այնմ*, «հաստատեաց զերկիր ի վերայ հաստատութեան իւրոյ, զի մի՛ սասանեսցի յաւիտեան»: - 182. Յնգետասաներորդ՝ ասի օրէնքն օր ըստ սովորութեան. *ըստ այնմ*, «որ զծանրութիւն աւուրն բարձաք և զտօթ»: - 195. Այլ և մովսէս հրամայեաց յամենայն ամսամուտս տօնել և փող հարկանել. *ըստ այնմ*՝ «փող հարէք ի գլուխս ամսոց յաւուր նշանաւորի տարեկանաց մերոց»: - 200. Եւ ոմանք ասեն՝ ի տարրական հրոյն բաժանի կիզումն. և լոյսն միա՛յն իջանէ. *ըստ այնմ* «ձայն տեառն հատանէ՛ զբոց ի հրոյ»: - 203. Չորրորդ՝ ի պէտս բուսոց և բժշկական խոտոց. *ըստ այնմ*՝ «բուսուցեր զխոտ ի լերինս»: - 211. Յինգերորդ՝ բնակութիւնք եղջերուաց և մանր և մեծ էրէոց. *ըստ այնմ* «լերինք բարձունք են եղջերուաց և վէմք ապաւէնք նապաստակաց»: - 211. Վեցերորդ՝ ծնօղք են աղբերականց. *ըստ այնմ*, «առաքեցեր զաղբերս ընդ ձործորս. և ի մէջ լերանց գնասցեն ջուրք»: - 211. Այսպէս հացտուն ամենեցուն աստուած է. *ըստ այնմ*, «աչք ամենեցուն ի քեզ յուսան. և դու տաս զկերակուր նոցա ի ժամու»: - 230. Ի պատիւ մեծարեաց զմարդն. և նա՛խ՝ պատրաստեաց պէտս զանազան կերակրոց և ըմպելեաց որպէս ասացաք. և վառեաց զճրագ լուսաւորացն. և զգեղեցիկ ձայն երգեցողաց թռչնոց. և զզուարճութիւն զանազան ծաղկանց. և ապա՛ զմարդն ի պատիւ էած. *ըստ այնմ* «մարդ ի պատւի էր և ո՛չ իմացաւ»: - 230. Զի մեծ է և անճառ և անպատում զօրութիւն և իմաստութիւն աստուծոյ. *ըստ այնմ* «մեծ է տէր և մեծ է զօրութիւն նորա. և իմաստութեան նորա ո՛չ գոյ բաւ»: - 231. Վասն է՞ր մարդն աշխարհ կոչի. *ըստ այնմ* թէ՝ «աշխարհ զնա ո՛չ ծանեա»: - 231. Տասներորդ՝ զի կիրք մարմնոյն հեղուն ի հոգին. որպէս յորժամ մարմինն ննջէ՝ և հոգին թմրի և անգործ մնայ. վասն որոյ արարաւ ձև ուղիղ, զի միտքն ընդ նմա՛ ուղղեսցի ի վեր առ աստուած. *ըստ այնմ* «զվերինն խորհեցարուք ուր քրիստոս նստի ընդ աջմէ աստուծոյ»: - 233. Տասներորդ՝ զի և բանականս մարդ՝ քան զանբան կենդանիս տգէտ լինէր. վասն զի ամենայն կենդանի ունի բնական ճանաչումն իւրոց և օտարաց. *ըստ այնմ* որ արագիլ արդար՝ կերակրէ զիւր ծնօղսն միայն. և տատրակ մենացեալ ի զուգակցէն, ո՛չ զուգի ընդ ա՛յլ տատրակի: - 238-239. Ասեմք եթէ՝ ամենայն արարածք համանգամայն գոյացան յարարչէն. և ո՛չ մի զկնի միոյ. *ըստ այնմ* որ ասէ մովսէս, «Ի սկզբանէ՛ արար աստուած զերկինս, և ապա զերկիր»: - 253. Զորօրինակ՝ արուեստաւոր ոք կամիցի դրօշել ի քարեայ պատկեր, նախ նկարէ՛ ի միտս իւր զձև պատկերին. և ապա հատանէ զքարն և տաշէ՛ և դրօշմէ՛ զկերպն *ըստ այնմ* նմանութեանն որ էր ի միտս ձևացեալ: - 258. Զի մի և նոյն հոգին *ըստ այնմ* որ ազդէ՛ ի տնկական ներգործութիւնն որ է՛ կերակրական. աճողական. և ծննդական. կոչի տընկական: - 259. Եւ *ըստ այնմ* որ ներգործէ՛ ի զգայարանս, կոչի զգայական: - 259. Դարձեալ ₱ թիւն պակա՛ս է ի ժերորդէն. և մեք պակասեցաք յինն դասուց հրեշտակաց, որ նախ հաւասար էաք ի դրախտին. և կարօտացաք մարմնաւոր ծննդեան, նմանելով անասնոց. *ըստ այնմ*՝ «մարդ ի պատուի էր և ո՛չ իմացաւ. հաւասարեաց անասնոց»: - 264. Եօթներորդ՝ տերևօք և սաւերօ՛ք թաքչիլն. *ըստ այնմ* «լուայ զձայն գնալոյ և երկեայ. քանզի մերկ էի և թաքեայ»: - 280. Իսկ ժերորդ՝ յորում ամուսնութիւնն մխիթարութիւն տուաւ մեռելոյն. *ըստ այնմ*, «աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր»: - 280. Եւ *ըստ այնմ* որ նշանակութիւն է, ցուցանէ զմարմինս մեր փոփոխական. որպէս այն որ փչեաց յերեսս մարդոյն շունչ կենդանի: - 282. Վասն վեցերորդին՝ արդար վկայեցաւ յամէներանեան բերանոյն. *ըստ այնմ*, «յարենէ՛ աբէլի արդարոյ մինչև ցարիւնն զաքարիայ՝ խնդրեսցի յազգէդ յայդմանէ. այսինքն ի սպաննողացդ. զի սպանողին ազգ՝ սպանօ՛ղ է»: - 286. Վասն Էերորդին, ա՛յն քան սիրեցաւ յաստուծոյ, մինչ զի յետ մահուանն վրէժ խնդիր եղև արեան նորա. *ըստ այնմ*

«գոչումն արեան եղբօր քոյ բողոքէ՛ առիս»: - 287. Ամենայն մարդոյ թիւ կենաց չափեալ է առ աստուած. և ո՛չ ոք կարէ սահմանն անցանել *ըստ այնմ* «սահման եդ և ո՛չ անցանեն»: - 291. Եւ տէր մեր էառ մարմին ի դատապարտեալ ազգէ մարդկային. *ըստ այնմ* թէ՝ «վասն մեր անէծք կոչեցաւ»: - 301. Զի աբրահամ հաւատով արդարացաւ. և մեք նովին հաւատովն աւազանաւն արդարանամք. *ըստ այնմ*, «կարօ՛ղ է աստուած ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս աբրահամու»: - 303. Մանաւանդ թէ և միածին. *ըստ այնմ* «միածին որդին պատմեաց մեզ»: - 305. Մետասաներորդ՝ որպէս խահակաւ յայտնեցաւ կատարեալ սէրն աբրահամու առ աստուած. *ըստ այնմ*, «ա՛յժմ ծանեայ թէ երկիւղա՛ծ ես դու յաստուծոյ»: - 305. Եօթներորդ՝ ըստ ուսման. որպէս աշակերտք ծնունդք կոչին վարժողաց. եթէ ի մարմնականս. և եթէ ի հոգեկանս. *ըստ այնմ* «ի քրիստոս յիսուս յաւետարանաւն ե՛ս ծնայ զձեզ»: - 308. Եւ այս ևս գիտելի է, զի տէրն մեզ կոչի զգեստ փրկութեան և պատմուճան ուրախութեան ի ձեռն մկրտութեան. *ըստ այնմ* «որք ի քրիստոս մկրտեցայք՝ զքրիստոս զգեցեալ էք»: - 318. Զի է՛ տաճար միաւորեալ. որպէս մարմինն մեր կոչի տաճար մեզ. *ըստ այնմ*, «տաճար շինուածոյս մերոյ քակտեսցի»: - 319. Եւ երկրորդ՝ զի լրիւ աստուածութիւն բանին է՛ բովանդակեալ ի մարմնի և ո՛չ մասամբ. *ըստ այնմ* «ի նմա՛ բնակէ ամենայն լրումն աստուածութեանն մարմնապէս» որ է՛ էապէս: - 319. Երրորդ՝ ի յառնելն զարարածս լերամբք և բլրօք. զի լերինք և բլուրք, հիմունք և բրգունք են աշխարհի. վասն որոյ օրհնեցան անշարժապէս. *ըստ այնմ* «ազգ գայ և ազգ գնայ և երկիր յաւիտեան կայ»: - 319. Նա՛խ՝ զի աղբիւսէ մարմինս. և վաղվաղակի յաղբիւսն երթայ. *ըստ այնմ*, «հող էիր և ի հող դարձցիս»: - 323. Եւ պա՛րտ է զաղտեղութիւնն հանել և սրբել. *ըստ այնմ* «զփոշին որ կռուեալ է յոտս մեր՝ թօթափեսցուք»: - 331. Իսկ զինչէն ի հանդերձեալն որքան կա՛ր է մեր. *ըստ այնմ* թէ, «տեսանելո՛ց եմք զնա՛ որպէս և էն»: - 331. Հինգերորդ՝ նշանակէ՛ զփարաւոն զվիշապն դառնաշունչ *ըստ այնմ* «դու փշրեցեր զգլուխ վիշապին ի վերայ ջուրց»: - 332. ...որք «զարքայութիւնն աստուծոյ ո՛չ ժառանգեն». մինչև սրբին ի ձեռն ապաշխարութեան և արտասուաց. *ըստ այնմ* «թէ իցեն մեղք ձեր իբրև զորդան կարմիր, իբրև զասր սուրբ արարից»: - 333. *Ըստ այնմ*, «ես արդարութեամբ երևեցայց երեսաց քոց. և յագեցայց յերևիլ փառաց քոց»: - 341. Եւ թեթևացնէ՛ զպարտս մեղաց. որպէս արար ողորմութիւն միածին բանն աստուած յիշելոյ զառաջին արդարսն. *ըստ այնմ*, «յիշեաց յաւիտենից զուխտ իւր. և զբանն զոր պատուիրեաց մինչ ի ռ ամ»: - 351. Երկրորդ, զի նոցա նոցայն ժամանակեայ և խափանելի, իսկ տեառն մերոյ մշտնջենաւոր և յաւիտենական. *ըստ այնմ* «դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին մելքիսեդեկի»: - 354. Երրորդ, այն առանց գթութեան հատուցանէր պատիժս պարտուց. իսկ տեառն մերոյ շնորհիւ և ողորմութեամբ. *ըստ այնմ* թէ՝ «զի ողորմած լիցի և հաւատարիմ քահանայապետ»: - 354. Չորրորդ, զի նոքա ոչ կարէին լինիլ ախտակից տկարացելոցն. իսկ տէրն որ զփորձ էառ՝ կարօ՛ղ է և փորձանաւորացն օգնել. *ըստ այնմ*, «ո՛չ եթէ ունիմք քահանայապետ որ ո՛չ կարէ ախտակից լինիլ տկարութեան մերում. այլ փորձէ ամենայնիւ ըստ նմանութեան առանց մեղաց»: - 354. Հինգերորդ, նոքա մատուցանէին պատարագ նախ վասն իւրեանց, և ապա՛ վասն ժողովրդեանն անգիտութեան. իսկ տէրն մեր ո՛չ արար մեղս ըստ մարգարէին. այն անմեղն վասն մեղաւորաց պատարագեցաւ. *ըստ այնմ* թէ՝ «նա՛ վասն մեղաց մերոց չարչարի»: - 354. Եօթներորդ, նոքա յօտարա՛ց մատուցանէին. այսինքն զուարակ և նոխազ, իսկ քահանայապետն մեր քրիստոս զմարմին իւր պատարագեաց հօր ի հոտ անուշից. *ըստ այնմ*, «քրիստոս եկեալ քահանայապետ ո՛չ արեամբ նոխազաց և զուարակաց. այլ իւրով արեամբն»: - 354. Ութերորդ, նոքա մատուցանէին ի ձեռագործ խորանսն որ ի մովսիսէ՛ կանգնեցաւ, իսկ տէրն մեր անցեալ ի ներքին կողմն վարագուրին. այսինքն յանձեռագործն մատոյց. *ըստ այնմ* թէ՝ «սրբութեանցն պաշտօնեայ և խորանին ճշմարտութեան զոր կանգնեաց տէր և ո՛չ մարդ»: - 354. Իններորդ, նոքա ծառայաբար մատուցանէին. ուստի յա՛յտ է զի ո՛չ կարէին նստիլ ի սրբութիւնսն կամ ի քաւութիւնսն. իսկ քահանայապետն մեր տիրապէս և աստուածաբար նստեալ ի յերկինս ընդ աջմէ աստուծոյ. *ըստ այնմ* «այսպիսի ունիմք քահանայապետ որ նստաւ ընդ աջմէ մեծութեան ի բարձունս»: - 354. Տասներորդ, նոքա յօրինա՛կն էին և ի ստուերն. *ըստ այնմ* «զստուերն հանդերձելոց բարեացն ունէին օրէնքն»: - 354-355. Մետասաներորդ, նոքա ո՛չ իշխէին ճաշակել զպատարագս իւրեանց. այլ արտաքոյ յարէին. իսկ տէրն մեր և մեք ճաշակեմք զպատարագ նորոյս. *ըստ այնմ* «ունիմք մեք սեղան, ուստի ո՛չ ունին իշխանութիւն ճաշակել որք պաշտեն զպաշտօն խորանին»: - 355. Երկոտասաներորդ, նոքա հին ուխտին էին միջնորդ. իսկ տէրն նորոյս. *ըստ այնմ* «այս նոր ուխտ է իմոյ արեան փոխանակ հնոյն»: - 355. ...*ըստ այնմ* «ունիմք քահանայապետ մեծ անցեալ ընդ երկինս զյիսուս զորդին աստուծոյ. և նմա կրկնի ամենայն ծունր. և ամենայն լեզու խոստովան լիցի զնա տէր յիսուս քրիստոս ի փառս հօր ամէն: - 355. Աղալ յերկանս՝ մաղիլ և զանգիլ՝ և ի հուր և յիւղս եփիլ. *ըստ այնմ*, «անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր»: - 357. Նաշիհ և իւղ զանգեալ

և ո՛չ եփեալ, նշանա՛կ է նոցա՝ որ ի փորձութիւնս մտեալ և փութով ելեալ ի ձեռն աղօթից. *ըստ այնմ*, «յաղօթս կացէք, զի մի՛ մտանիցէք ի փորձութիւն»: - 357. Իսկ հեթանոսք *ըստ այնմ* որ յանուն աստուծոյ նուիրէին՝ ընդունելի՛ էր: - 361. Եւ *ըստ այնմ* զկուռս կոչէին աստուած՝ դատապարտութիւն էր նոցա: - 361. Զի՞նչ է եօթնպատիկ պատիժ չարեաց. *ըստ այնմ*, «հատո՛ դրացեաց մերոց էպատիկ ի ծոց նոցա նախատինք»: - 376. Հինգերորդ՝ զի անխառն և յստա՛կ է յառաքինութիւն, *ըստ այնմ*, «ծերութիւն իմ ի ձէթ պարարտութեան»: - 378. Երրորդ՝ զի առաջնո՛րդ է ի մուտն մեր և յելս յաշխարհէ. *ըստ այնմ*, «տէր պահեսցէ զմուտ և զել քո»: - 385. Նզովքն որոշումն ասի. *ըստ այնմ*, «կամէի նզովս լինիլ վասն ազգին իմոյ»: - 388. Եւ անէծքն սատակումն. *ըստ այնմ* «որք անիծանեն՝ սատակեսցին ի նմանէ»: - 388. Դարձեալ՝ նզովքն ի մէնջէ. և անէծքն ի տեառնէ. *ըստ այնմ* «անէծք տեառն ի տունս ամբարշտաց»: - 388. Եւ յայտնի նշան մոլորութեան նոցա ա՛յս է, զի այնպիսեացն կատարօղք վատթարք են գործովք և մոլի. և առ դևս տանին զմարդիկք բռնութեամբ. *ըստ այնմ* որ ասէ պօղոս, «մինչ հեթանոսքն էիք՝ առ կուռս անմռունչս ո՞րպէս երթայիք և գայիք»: - 389. Զի մարմնովն է երկիւղական սէրն. *ըստ այնմ* «բևեռեա՛ յերկիւղ քո զմարմին իմ»: - 396. Իսկ մեզ նորոյս հրամայէ՛ զբանեղէնն մատուցանել որ է՛ հոգի և մարմին և կամք. *ըստ այնմ*, «զլսելիս հաստատեցեր ողջակէզ. և սիրտ սուրբ և հոգի խոնարհ զոր աստուած ո՛չ արհամարհէ»: - 396. Վասն է՞ր հասարակաց արարիչն զազգս հրէից միայն սիրեաց այնպիսի օրինօք՝ նշանօք՝ և այլն. *ըստ այնմ* «ո՛չ այսպէս արար ամենայն ազգաց տէր»: - 398. Նոցա զգալի թշնամիքն ետ կոխան. և մեզ զիմանալին. *ըստ այնմ*, «ետու ձեզ զիշխանութիւն կոխել զօձս և զկարիճս»: - 398. Զի փայտն և հողն անիծաւ ադամաւ. *ըստ այնմ*, «անիծեալ լիցի երկիր ի գործս քո. և փուշք բուսցին ի քեզ»: - 400. Անիծեալն՝ սատակեալ և սպանեալ ասի. որ է մեկնեալ և հեռացեալ ի կենաց աստուծոյ. *ըստ այնմ*, «ոյք հեռացան ի քէն՝ կորիցեն և սատակեսցին»: - 403. Երրորդ՝ յայտնի և ճշմարիտ կեանք քրիստոս է. *ըստ այնմ* «ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք»: - 405. Հայիլն ներքուստ ի վեր. *ըստ այնմ* «հայեցայ ի բարձունս»: - 407. Դարձեալ՝ Նայիլ և Հայիլ՝ է՛ հոգեկան. *ըստ այնմ* «հայեա՛ց յանձն քո: - 407. իսկ Տեսանելն մարմնական. *ըստ այնմ* «տես աչօք քո»: - 407. Եւ տէրն իմանալի հարուածով. *ըստ այնմ* «մի յառաջ քան զժամանակս տանջեր զմեզ» աղաղակէին: - 419. Հինգերորդ՝ զընթացս մեղաց և զգործն որ է սկզբնական և ներգործական մեղք, և զգլուխն որ է՛ մահ և ապականութիւն, խորտակեաց քրիստոս. *ըստ այնմ* «զգլուխ վիշապին փրկիչն ջախջախեաց»: - 426. Նա՛խ՝ հաւանական ըստ կերպի դաւանութեանն հաւատոյ, *ըստ այնմ*, (հաւատալ պա՛րտ է թէ է՛ աստուած»: - 457. Երրորդ՝ իմասցի ի տեղի հնազանդապէս սպասաւորութեան, ըստ *այնմ* թէ՝ «հաւատարիմ է արարչին իւրոյ»: - 457. Եւ գիտելի է, յորժամ ասի յաղագս աստուծոյ հաւատարիմ գոլ. *ըստ այնմ* թէ «աստուած հաւատարիմ է» և այլն. - 457. Նախ ասի ողջոյն ըղձական առողջութեան. *ըստ այնմ* «Ո՛ղջ լեր ա՛րքայ»: - 464. Հինգերորդ՝ տըւչական խաղաղութեան. *ըստ այնմ* «խաղաղութիւն ընդ ձեզ. ե՛ս եմ մի՛ երկնչիք»: - 464. Նմանապէս և յարութիւնն մեր կոչի ծնունդ ի հանդերձեալ կեանսն. *ըստ այնմ* «յարութեան որդիք են և հաւասար հրեշտակաց»: - 471. Երկրորդ՝ զի նա՛ միա՛յն ի հօրէ ծնեալ է անմայր. *ըստ այնմ*, «ելի ի հօրէ և եկի յաշխարհ»: - 472. Հինգերորդ՝ նա՛ միա՛յն է ծնունդ համահաւասար կատարելութեամբ զօրութեամբ և իմաստութեամբ ընդ հօր. *ըստ այնմ*, «որպէս գիտէ զիս հայր, գիտեմ և ես զհայր»: - 472. Իններորդ՝ ասի միածին ըստ մարմնաւոր ծննդեանն ի մօրէ ծնեալ առանց հօր. *ըստ այնմ* որ ասաց հրեշտակն՝ «որ ծնանելոցն է ի քէն՝ ի հոգւոյն սրբոյէ»: - 472. Երկրորդ՝ փրկեաց յանիծից օրինացն. *ըստ այնմ* «իբրև եկն լրումն ժամանակին՝ առաքեաց աստուած զորդի իւր որ եղև ի կնոջէ և եմուտ ընդ օրինօք. զի զորս ընդ օրինօքն իցեն՝ գնեսցէ» և թէ՝ «քրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինացն»: - 473. Երրորդ՝ փրկեաց ի բուռն ծառայութենէ սատանայի. *ըստ այնմ* «փրկեաց զմեզ յիշխանութենէ խաւարի. և փոխեաց յարքայութիւն որդոյ իւրոյ սիրելոյ»: - 473. Իսկ ի միաւորութիւն փրկչին բոլորից՝ բանն անդրանիկ կոչի և ի բազում եղբարս. և մարդն միածին հօր. *ըստ այնմ* «միածինն որ ի ծոց հօր՝ նա՛ պատմեաց մեզ»: - 479. Ութերորդ՝ զի թլփատութեամբն զինքն եղբայր հրէիցն ցուցանէր. *ըստ այնմ* «մարգարէ յարուսցէ ձեզ տէր յեղբարց ձերոց». զի մի՛ մերժեսցեն զնա իբրև զօտար և ոչ վկայեալ ի մարգարէիցն: - 485. Երկրորդ՝ ասելն «է» նշանակէ՛ ըզմշտնջենաւոր գոլն. *ըստ այնմ* «յիսուս քրիստոս երէկ և այսօր նոյն և յաւիտեան»: - 487. Հինգերորդն է բևեռք ոտիցն և ձեռացն. առ միշտ յիշատակելոյ զմեզ ի միտս իւր. *ըստ այնմ* «ի ձեռս իմ գրեցից զքեզ»: - 489. Դարձեալ՝ տարածումն ձեռացն զմերժումն և զհերքումն թշնամւոյն, այլ և զիշխանութիւն նորա արտաքս ընկենու. *ըստ այնմ* «այժմ իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս»: - 489. Այլ և հանգուցեալ ի գիրկս իւր զվաստակեալսն մեղօք. *ըստ այնմ* «եկայք առ իս ամենայն աշխատեալք, և ես հանգուցից զձեզ»: - 490. Յորժամ հայր մատնեաց զորդի, *ըստ այնմ* «որ յիւր որդին ո՛չ խնայեաց. այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա՛»: - 491. Զի *ըստ այնմ* որ

կամաւ մեռաւ՝ դատապարտեաց զմահ: - 492. Զի որ ասի մահ, նոյն և նինջ կոչի ի սուրբ գիրս. *ըստ այնմ* թէ «աստուած զննջեցեալսն՝ ի ձեռն յիսուսի ածցէ»: - 496. Սկիզբն կենաց՝ *ըստ այնմ* որ վախճա՛ն է կենաց՝ վախճա՛ն է մեղաց: - 497. Եւ *ըստ այնմ* որ սկիզբն է կենաց՝ ընդ դէմ է ապականութեանց: - 497. Եւ դարձեալ յոյս գոյ ի մեռեալսն. *ըստ այնմ* «յոյս նոցա լի՛ է անմահութեամբ». և յոյսն է մասն հաւատոյն: - 507. Ա՛րդ՝ յարութիւնն մեր է՛ ի վերջնումն կիրակէն ի մէջ գիշերի. *ըստ այնմ* «ի մէջ գիշերի եղև բարբառ ահա՛ փեսայ գայ արի՛ք ելէք ընդ առաջ նորա»: - 512. Վեցերորդ՝ զի զհոգին սուրբ առաքեսցէ մեզ. *ըստ այնմ* «եթէ ես ոչ երթայց, մխիթարիչն ո՛չ եկեսցէ առ ձեզ. ապա թէ երթայց՝ առաքեցից զնա առ ձեզ»: - 519. Զբերան մտացն ասէ. այսինքն է՛ յօժարութիւն հոգւոյն որ առնու զհոգին սուրբ. *ըստ այնմ* որ ասէր, «բա՛ց զբերան քո և լցից զդա»: - 523. Եւ հոգին սուրբ կենդանութիւն է ներքին մարդոյն. *ըստ այնմ* «հոգին է կենդանարար»: - 523. Նոյնպէս և հոգին սուրբ. *ըստ այնմ*, «հոգին հօր իմոյ խօսեսցի ի ձեզ»: - 523. Չորրորդ՝ զկատարեալ իմաստութիւն գիտութեանն ամենայն կտակարանաց մարգարէից. *ըստ այնմ*, «այլ մեզ հոգի՛ս սուրբ յայտնեաց. զի հոգին քննէ զամենայն և զխորս աստուծոյ»: - 524. Հինգերորդ՝ զանբաժանելի միացումն ի սէրն քրիստոսի. զի որ ի խաչին թողին և փախեան, յետ իջման հոգւոյն՝ ամենեքեան վասն անուան նորա չարչարեցան և մեռան. *ըստ այնմ* «ո՛ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն քրիստոսի. նեղութիւնք, թէ չարչարանք՝» և այլն: - 524-525. Վեցերորդ՝ զլեզուաց գիտութիւն ամենայն ազգաց. *ըստ այնմ* «խօսէին այլ և այլ լեզուս որպէս և հոգին տայր բարբառիլ նոցա»: - 525. Հիմն և շինուածն ցուցանեն եթէ տաճարս կամի շինել զմեզ աստուծոյ. *ըստ այնմ* «դուք տաճար աստուծոյ կենդանւոյ էք»: - 531. Ասեմք առ այս թէ՝ անկատար մնայ *ըստ այնմ* որ ի յանիծելն ո՛չ կատարի. այլ ըստ որում դառնայ ի յանիծօղն կատարի: - 539. Չորրորդ՝ ի զղջմանէ. զի ամենայն որ մեղք է՝ զղջալի է և խոստովանելի. *ըստ այնմ* «զմեղս ատեցի և անարգեցի»: - 556. Վեցերորդ՝ սկիզբն և արմատ ամենայն մեղաց զմիտս ասաց տէրն. *ըստ այնմ* «ի սրտէն յառաջ գայ չարակնութիւն՝ ցանկութիւն՝» և այլն: - 556. Եւ սոքա են ի միտս. *ըստ այնմ* «սիրեսցես զտէր աստուած քո յամենայն սրտէ և ի մտաց քոց»: - 557. Նա՛խ ազատէ՛ ի նեղութենէ. *ըստ այնմ* «ի քեզ յուսացան հարքն մեր և փրկեցեր զնոսա»: - 574. Հինգերորդ տայ զժամանակաւորս. *ըստ այնմ* «աչք ամենեցուն ի քեզ յուսան. և դու տաս նոցա»: - 574. Երբեմն առեալ լինի վասն եռանդեան սիրոյն. *ըստ այնմ* «թողեալ լիցին նմա մեղք իւր բազում, զի յոյժ սիրեաց»: - 575. Յերից. Նա՛խ՝ ի բնական իրաւանց. *ըստ այնմ* «զոր ինչ կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արարէք և դուք նոցա»: - 577. Զթշնամիսն մեր պա՛րտ է սիրել և աղօթել վասն նոցա. և զթշնամիսն աստուծոյ ատել. *ըստ այնմ* «զատելիս քո տէր ատեցի»: - 577. Հինգերորդ՝ ըստ որպիսութեան մեր հաւատն է այժմ. յոյսն յետ մահու. *ըստ այնմ* «յոյս նոցա լի՛ է անմահութեամբ». և սէրն յետ յարութեանն ըստ առաքելոյ. «սոքա երեքեան հաւատ, յոյս, սէր. և մեծ քան զսոսա սէր է»: - 578. Վեցերորդ՝ հաւատն է ի յէութիւնն աստուծոյ. *ըստ այնմ* «հաւատալ պա՛րտ է թէ է՛ աստուած»: - 578. Յոյսն ի բարրութիւնն. *ըստ այնմ* «ակն կալցուք յուսոյն և բարրութեանն աստուծոյ»: - 578. Երրորդ խոհեմութիւն է գործոյն. որ կայանայ ի փախուստ չարին և յընտրութիւն բարւոյն. *ըստ այնմ* «խոտորեա՛ ի չարէ և արա՛ զբարի»: - 580. Նախ՝ զի կարէ՛ միանգամայն ծնանիլ բոլոր ազգ մի. եթէ **ո**, եթէ բիւր. *ըստ այնմ* «ո՞ր ետես և լուաւ եթէ երկնեաց սիօն և ծնաւ ազգ մի ողջոյն»: - 590. ...զի էառ որպէս գլուխ մեր, և եհեղ յանդամս ի հաւատացեալս իւր. *ըստ այնմ*, «որպէս իւղ զի իջանէ ի գլուխ» և այլն: - 593. Ասեմք թէ՝ կացոյց քրիստոս զբազումս մկրտել. *ըստ այնմ*, «մկրտեցէք զնոսա յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ»: - 597. Արդ *ըստ այնմ* որ է՛ հնարք՝ ո՛չ է օգուտ որ քան է մարդ ի մեղս: - 603. Այլ ո՛չ է պարտ բաժանել զպսակն զայն որ օրինօք լինի պսակեալ. *ըստ այնմ* «զոր աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ»: - 610. Չորրորդ, սա՛ կոչի տաճար աստուծոյ և բնակարան. *ըստ այնմ* «տէր ի տաճար սուրբ իւր»: - 614. Նա՛խ է մտօք աղօթել. *ըստ այնմ* «սաղմոս ասացից մտօք»: - 618. Երկրորդ բանիւ. *ըստ այնմ* «ունկնդիր բանից բերանոյ իմոյ»: - 619. Երրորդ ձայնիւ. *ըստ այնմ* «ձայնիւ իմով ես առ տէր կարդացի»: - 619. Չորրորդ երկրպագութեամբ. *ըստ այնմ* «եկայք երկիր պագցուք նմա»: - 619. Հինգերորդ արտասուօք. *ըստ այնմ* «անկցուք և լացցուք առաջի տեառն»: - 619. Վեցերորդ՝ աղօթք է ինչք և պատարագք որ յեկեղեցիս ընծայեն. *ըստ այնմ* «քեզ տացին աղօթք յերուսաղէմ»: - 619. Նոյնպէս ուսոյց և զառանձինն. *ըստ այնմ* «մուտ ի սենեակ քո և աղօթեա՛ ի ծածուկ»: - 623. Նախ յաշխատութեանց վաստակոց. *ըստ այնմ* «գործք ձեռաց մեծացուցանեն». և այս բարի՛ է: - 664. Չորրորդ տուրք աստուծոյ է. *ըստ այնմ* «տէր աղքատացուցանէ և տէր մեծացուցանէ»: - 664. Ո՛չ. զի *ըստ այնմ* որ զերծան ի չարեաց, միայն ի հոգիս իւրեանց ունին զուրախութիւնն: - 686. Նախ՝ այսու զաստուածութիւնն իւր յայտնէ. զի ամենայն մարգարէք զաստուած ասացին գոլ դատաւոր. *ըստ այնմ* «աստուած դատաւոր արդար»: - 735. Չորրորդ, հայր անտեսանելի՛ է և անմարմին. *ըստ այնմ* «զաստուած ոչ ոք ետես երբէք» և ո՛չ տեսանել կարող է. - 735. Տասներորդ, քրիստոս գլուխ է մեր և մեք անդամք. և զի

քրիստոս է դատաւոր՝ պարտիմք մեք զմիմեանս մեծարել և սիրել. *ըստ այնմ*, «սիրեսցե՛ս զընկեր քո իբրև զանձն քո»: - 735. Չորրորդ, զի հնազանդին նմա բոլոր արարածք. *ըստ այնմ* «նմա կրկնեսցի ամենայն ծունր, և ամենայն լեզու խոստովան եղիցի եթէ տէր յիսուս քրիստոս է՛ ի փառս աստուծոյ հօր»: - 737. Երկրորդ, հրեշտակք. որք արկանեն ի հուրն. *ըստ այնմ* «առաքեսցէ զհրեշտակս և ժողովեսցէ զգայթակղութիւն և արկցեն զնոսա ի հնոց հրոյն բորբոքելոյ»: - 743. Եւ ի վեր քան զարդիւնս. *ըստ այնմ* «չափ շարժուն թաթաղուն տացին գոգս ձեր»: - 746-747. Իսկ յատուկն է, որպէս զղջացելոց. *ըստ այնմ* «ողորմեցայց ում ողորմեցայց» և այլն: - 747. Չորրորդ՝ վասն արմատոյն խոշորութեան. և խոշորութիւնն է **բ** կերպիւ. մին վասն մտացն մտածութեան. *ըստ այնմ* «խորհեցայ զաւուրս իմ զառաջինս ի դառնութիւն»: - 765-766. Հինգերորդ՝ խիստ է կեղևն. նոյնպէս և արդարքն խստակրօնք են. *ըստ այնմ* «թէ անիծանիցեն ըզձեզ մարդիկ, և ցնծացէ՛ք զի վարձք ձեր բազում են յերկինս»: - 766. Նոյնպէս և միշտ զգուշասցի արդարն զի մի անկցի. *ըստ այնմ*, «զանօթ բրտի փորձէ հնոց»: - 766. Տասներորդ՝ վասն պտղոյն քաղցրութեան. *ըստ այնմ* «ամենայն խրատ ի ներկայս յիմարութիւն թուի. բայց ի հանդերձելումն եղիցի պտուղ խաղաղութեան»: - 766. Դարձեալ, ծառ կենաց և անմահական պտուղ՝ մարմին և արիւնն սուրբ. յորմէ ճաշակեալ հանապազ՝ անմահ կենացն վիճակէ զմեզ. *ըստ այնմ* «որ ուտէ զմարմին իմ ասէ տէր և ըմպէ զարիւն իմ, զմահ մի՛ տեսցէ ի յաւիտեան»: - 768. Զի ի ժամանակի եղեալք՝ ընդ ժամանակի փոփոխակա՛ն են. իսկ անեղն՝ ի ժամանակի ո՛չ է փոփոխական. *ըստ այնմ* «դու նո՛յն ես և ոչ փոփոխիս»: - 779. Հինգերորդ, հաւատով տեսանի աստուած և երանեսցին. *ըստ այնմ*, «երանի որ հաւատասցէն»: - 784. Վեցերորդ, հաւատովն փրկի ոք. *ըստ այնմ* «հաւատք քո կեցուցին զքեզ». այլ արդ դիւաց ո՛չ գոյ փրկութիւն: - 784. Եօթներորդ, հաւատովք արդարանայ ոք. *ըստ այնմ* «հաւատաց աբրահամ յաստուած և համարեցաւ նմա յարդարութիւն». այլ դևն ո՛չ կարէ արդարանալ: - 784. Ութերորդ, հաւատով կատարին կամք մարդոյ. *ըստ այնմ* «մեծ են հաւատք քո. եղիցի քեզ որպէս և կամիս»: - 784. Չորրորդ, հեղմամբ շնորհաց. *ըստ այնմ* «մարմին և արիւն ո՛չ յայտնեաց, այլ հայրն իմ». և է այս տեսակաւորեալ հաւատ: - 784-785. Դարձեալ, հիմունք երկրի ասին ջուրք ի ներքոյ. *ըստ այնմ* «ի վերայ ծովու հիմունս էարկ նմա»: - 788

***ԸՍՏ ԱՅՍՄ*** - Զորօրինակ ո՛չ է անզգուշագոյն յառել ի բոլորակս արեգական՝ զի շրտնու և ի սակաւուն զօր ունի. *ըստ այսմ* խնայեաց աստուած ի յազինս մարդկային, զի մի՛ կրիցեմք ըզկիրս զանկելոյ արուսեկին. որ ո՛չ կարացեալ տանիլ մեծութեան փառացն՝ զրկեցաւ և ի չափաւորէն: - 24. Հինգերորդ՝ է՛ ո՛չ խնդրել զօգնութիւնն աստուծոյ ի հաւատալն. զի հաւատն ո՛չ է բնական. զի *ըստ այսմ* միապէս լինէր ամենեցուն. այլ ի բարութէն աստուծոյ ձրի պարգևքէ: - 32. *Ըստ այսմ* օրինակի և նոր հերձւածօղք քաղկեդոնիկք նեռին կարապետք. հետևօղք նեստորի անիծելոյ՝ և լևոնի պղծոյ: - 34. Իմա՛, որպէս բրուտն կարէ՛ գործել անօթ ինչ, այլ ո՛չ երկինք, և երբեմն ի բարւոջ և երբեմն ի չար և ապականեալ. այլ *ըստ այսմ* ո՛չ լինի աստուած: - 44. Նմին իրի թէ ոչ հայր և ոչ որդի զի որդի հօրն է որդի՝ *ըստ այսմ* ապա ո՛չ էանայ աստուածութիւնն որ անկար է, որպէս ասացաք: - 45. Այլ աստուծոյն ո՛չ *ըստ այսմ* տեսանի: - 45. Զի որպէս ունի զէութիւնն ի գոյութենէ հօր, այսպէս և զիշխանութիւնն յիշխանութենէ հօր. *ըստ այսմ* և զայլն իմասցիս զառնուլն: - 46. Եւ *ըստ այսմ* լինին մանեայ **բ** աստուածքն. մինն բարւոյ և մինն չարի արարիչ. որ է անաստուածութիւն: - 62. Ապա ուրեմն որդի և հոգին սուրբ ի հօրէ ելանեն իբր **բ** շառաւիղ. և *ըստ այսմ* ո՛չ ելանէ մի ի միւսոյն: - 65. Որև *ըստ այսմ* պարտին նոքա ուրանալ և զանհատ բնութիւնս մարդկութեան նորին. զիմի՛ հասարակ մարդկութիւնս միաւորեսցի: - 76. Ապա *ըստ այսմ* հետևի՝ զի մարիամ մայր քրիստոսի լինի և ո՛չ աստուծոյ. զի լաւ է քրիստոսածին և մարդածին կոչիլ՝ քան թէ աստուածածին: - 91. *Ըստ այսմ* ապա և բազմութիւն արարածոցս միո՛յ են հաղորդեալ. մի սկզբան. մի աստուծոյ. և մի խնամողի: - 106. Վասն է՞ր կոչեմք զնա էր. և է՛. և եղիցի. *ըստ այսմ*. «ես եմ որ էն». և «ի սկզբանէ էր բանն». և եղիցի աստուած ամենայն յամենայնի: - 111. Իսկ աստ այլապէս բաղդատի արեգակն սրբոյ Երրորդութեանն *ըստ այսմ* օրինակի: - 124. Եւ *ըստ ա՛յսմ* կերպի է փորձութիւնն բարի. զի բնութեամբ չար է. և պատճառէ՛ զչար մեղքն. բայց պատահեցաւ ոմանց զի յաղթեցին փորձութեանց և ընտրիք երևեցան: - 160. Այլ թէպէտ աննիւթ է աստուած՝ ո՛չ է անկարգ զնիւթականքս յառաջ ածել *ըստ այսմ* օրինակի. զի նիւթն որ է՛ գոյացութիւն մարմնական՝ ունի որակութիւնս իմն մարմնական. որպէս քանակ. որակ. և այլքն: - 175. Մանաւանդ թէ իւրաքանչիւր տարերք բ ծայրք որակութեանց ունին. զմինն գոյացական և զմիւսն պատահական. *ըստ այսմ* պա՛րտ է ասել քեզ մետասան բնութիւն քրիստոսի: - 176. Դարձեալ՝ ա՛յլ է բնութիւն մարմնոյն. ա՛յլ ոսկերացն. և ա՛յլ է ջիլն և երակն և մորթն և մազն և իւրաքանչիւր մաղձքն. *ըստ այսմ* ապա ասա՛ և բազում բնութիւնս քրիստոսի: - 176. Չորրորդ՝ հոգևոր բարութիւնքն և վարձք սրբոցն կոչին երկինք. *ըստ այսմ* «վարձք ձեր բազում են յերկինս»: - 183. Իսկ վերադիրն լինի ի պակաս ընթացից

լուսնոյն *ըստ այսմ* օրինակի: - 191. *Ըստ այսմ* ապացուցի. զի բնութիւնն ի սեռ՛ումն է…: - 235. Եւ *ըստ ա՛յսմ* է տարբերութիւնն և յատուկ և պատահումն նոյն գոլ: - 236. Երկրորդ՝ նշանակէ, զի առինչ է արարածս արարչին, *ըստ այսմ* նման են. և զի ա՛յլ են և զատեալք յարարչէն, *ըստ այսմ* աննմանք: - 237. Նոյնպէս և հոգի. *ըստ այսմ* նման: - 237. Իսկ զի անծին. և ծնեալ. և բղխեալ. *ըստ այսմ* աննման և յատուկ առանձնացեալ: - 237. Եւ *ըստ այսմ* զանազանին երեքկին զօրութիւնք հոգւոյն. այսինքն տնկական. զգայական. և բանական: - 249. Երկրորդ՝ իմաստութիւն ասի զանազան արուեստից գիտք. *ըստ այսմ* «ո՞ եւ կանանց իմաստութիւն նկարակերտութեան»: - 269. Դարձեալ *ըստ այսմ* կարգ ի իմաստութիւն է հաւատն. գիտութիւն յոյսն. հանճար սէրն: - 270. Եւ *ըստ այսմ* բազում եղանակաւ ասի մարդն պատկեր աստուծոյ: - 271. Պոռնիկն *ըստ այսմ* որ շնացօղ է թէ կին և թէ այր՝ քարկոծէ՛ր օրէնքն: - 401. *Ըստ այսմ* կարգի նախ կապելն է և ապա արձակելն…: - 541. Վասն այն այլ վարդապետք կոչեն զայս ախտ՝ ծուլութիւն. զի ծուլութիւնն յերկու իրաց երևի. մին որ յետս դառնայ ի հոգևոր բարւոյն և ծանրանայ ի գործելն. այսինքն պահել՝ աղօթել և այլն. և *ըստ այսմ* կոչի տրտմութիւն: - 559. Երկրորդ դարձեալ՝ զի դ են տարերք. և դ ազդումն միաւորութեանց հոգւոյն յիւրաքանչիւր տարերս *ըստ այսմ* օրինակի: - 560. Զի կամ հրաժարէ՛ և թիւրի բանականաւ. *ըստ այսմ* է՛ նախանձ: - 561. Կամ թիւրի՛ ցասմամբ. և *ըստ այսմ* է՛ բարկութիւն: - 561. Կամ և թիւրի ցանկութեամբ. և *ըստ այսմ* է՛ ծուլութիւն. որ է՛ տրտմութիւն և ծանծրութիւն: - 561. Որ և *ըստ այսմ* կերպիս ո՛չ լինի տուեալ շնորհք հոգոյն ի մկրտողէն առ մկրտեալն…: - 588. Վասն զի մարմինն ի չորից տարերց է. և ի **դ** ծնունդս փոխին **դ** արիւնք տարրականք *ըստ այսմ* օրինակի: - 612. Յիրաւի ապա *ըստ այսմ* օրինակի՝ որք ի մշտնջենաւորէն փոխանցին առ երազ սնոտեաց, ոչ ունիցին ինչ ի մտի. թէ և անդրադարձեալ աստի անդ մնացէ յիշատակութիւն որպէս ասացաւ: - 775. Եւ ո՛չ այս միայն, այլ և մեղքն ադամայ նուազ ևս քան զծննդոց նորա *ըստ այսմ* օրինակի: - 777

***ԸՍՏ ՈՐՈՒՄ +*** Իսկ չար փոխանակ բարւոյ ո՛չ առնէ ըստ որում անիրաւութիւնէ. այլ առնէ երբեք *ըստ որում* նախախնամութիւնէ. զի ի չարէն լինիցի բարի. թէպէտ մեզ չար երևի, այլ այս ևս բարի է. որպէս հիւանդութիւն. փորձութիւն. և այլն: - 18. Ապա ուրեմն թէ չարն ապականիչ է այլոց, ուրև պատահի ապականէ՛ և զինքն *ըստ որում* չար է. ապա ուրեմն ոչ է՝ և ո՛չ կարէ գոլ չարն: - 22. Ա՛րդ՝ *ըստ որում* յոլովք են բազումք, ուրեմն և միակք: - 26. *Ըստ որում* ոմն ի բնախօս արանց նկատմամբ առաջնորդականին՝ վարաքևեաց ի սկիզբն առաջին՝ թէ է՛ ոմն որ շարժէ՛ զերկնային մարմին: - 26. Կեանք է և հոգին սուրբ. *ըստ որում*, «հոգին է կենդանարար»: - 57. Այլ այնպէս ասաց առ ի ցուցանել զանչափ յաւիտենական աստուածութիւնն՝ որ ըստ ինքեան պարունակէ զամենայն ժամանակս. *ըստ որում* աստուածային ելմունք ի յապառնի ժամանակս իցեն. և կերպիւ ինչ ներկայաբա՛ր գոն: - 65. Նոյնպէս ի մարդեղութեան բանին անբաժան գոլով հայր և հոգի, *ըստ որում* «ես ի հայր՝ և հայր ի յիսէ» և թէ՝ «հոգւովն աստուծոյ հանեմ զդևս»: - 75. Իսկ աստ նման միմեանց՝ և բոլորին կոչի քրիստոս. *ըստ որում* ասի՝ քրիստոս էջ յերկնից. որ է բանն. և քրիստոս եդաւ ի գերեզմանի. որ միայն մարմինն է աստուածութեամբն. և քրիստոս էջ ի դժոխս. որ միայն հոգին էր աստուածութեամբն: - 88. Երանելին պօղոս՝ զխորհուրդն աստուածպաշտութեան յայտնի և մեծ ասէ. *ըստ որում* երևեցաւ բանն մարմնով. բնաւին ապա բաժանելն ի մարմնոյն ամբարշտութիւն է և իմացմամբ և բանիւ: - 93. Եւ դարձեալ՝ քրիստոսն անուն զմիաւորութիւնն նշանակէ երկուց բնութեանց. *ըստ որում* աստուածութիւնն էօծ զմարդկութիւնն. որպէս ասէ աստուածաբանն և սուրբն կիւրեղ: - 95. *Ըստ որում* մինն ի սուրբ Երրորդութենէն բանն աստուած հաղորդեցաւ բնութեան մերում անքակ միութեամբ. և եղև աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ: - 106. Նախ՝ եթէ անեղ է աստուած՝ *ըստ որում* անսկիզբն և անեղ էին արարածք ըստ անգոյին՝ կարգաւո՛ր է և յոյժ որպէս դու ասացեր. զի անեղ էն աստուած յառաջ էած զանեղն ի յէութիւն: - 113. Այլ արդ՝ ըստ անեղ էութեանն յառաջ էած զանեղ էութիւնն որդւոյ և հոգւոյ. և ըստ անհուն զօրութեանն յառաջ էած զեղականն էութիւն. զի անհուն զօրութիւնն կարօ՛ղ է ամենայն ընդդիմակաց. *ըստ որում* ամենազօ՛ր է: - 113. Այլ արդ՝ որդի և հոգի *ըստ որում* ի պատճառէն՝ սկիզբն ունին զհայր. և *ըստ որում* նախ քան զյաւիտեանս՝ անսկիզբն են ընդ հօր: - 114. Աստուածային էութիւնն *ըստ որում* բնութիւն է՝ թէ զինչ է կամ որպիսի ինչ է անգիտելի՛ է մեզ յայսմ աշխարհի և ի հանդերձելումն: - 119. Սակայն՝ զի թէ էն *ըստ որում* է աստուած՝ կրկին կերպիւ տեսանի. այսինքն գիտութեամբ և անգիտութեամբ. դնելով և բացաբառնալով այսպէս: - 119. Երրորդ՝ զի սերոբէն մաքրական լսի և հրաբերծ. *ըստ որում* մաքրեաց զմարգարէն. և քերոբէն իմաստութեամբ լուսաւորիչ. և աթոռքն ուղղութեամբն կատարիչ: - 135. Նախ՝ զի ընդհանուր դասք և իւրաքանչիւր անհատք ունին էութիւն՝ զօրութիւն՝ և ներգործութիւն. այսինքն *ըստ որում* էացեալքեն, և կարողութիւն ունին, և ներգործեն: - 137. Վեցերորդ՝ ներգործութեամբ. *ըստ որում* մաքրեն և մաքրին և այլն: - 138. Երրորդ՝ զի ամենեցուն կատարումն է և բովանդակութիւն. ապա այսպէս

գիտէ զամենեսեան. *ըստ որում* սկիզբն է և կատարումն, յամենայնսն թափանցեալ է և ունի: - 141-142. Եւ *ըստ որում* մի է սկիզբն և կատարումն և թափանցումն. վասն որոյ միով և ինքեամբ գիտէ զբազումս. և ո՛չ որպէս մեք բազմօք զբազումս: - 142. Իսկ աստուած է պարզ գոյացութիւն և անշարադիր. *ըստ որում*, ի լոյս բաղդատի: - 170. Իսկ Գոյացութիւն կոչի աստուած, ո՛չ *ըստ որում* ներհակ պատահմանց է ընդունական որպէս մեք. այլ *ըստ որում* բաժանի ընդդէմ պատահմանց. որ է՛ միայն պարզ գոյացութիւն որպէս ասացուք: - 171. Եւ ո՛չ թիւ պատահական կամ բան տարալուծական. այլ մի երրեակ. և երրեակ մի. *ըստ որում* սկիզբն է թուոց՝ և ո՛չ թիւ. և բաժանեալ յա՛յլ էակաց: - 171. Ո՛ր *ըստ որում* շարժօղ զգայութեանցս որ առ մեզ՝ կոչին որակք՝ գոյն, և համ, և սոյնպիսիք: - 171. Երկրորդ՝ տեղի լսի սահման. *ըստ որում* բովանդակէ՛ զբնութիւն իրին: - 172. Երրորդ՝ տեղի ասի և հասումն մտաց. *ըստ որում* պարունակէ՛ իմացմամբ զէութիւն իմացեալ իրին: - 172. Իսկ Երբ ո՛չ ասի աստուծոյ. զի անժամանա՛կ է և ո՛չ ունի փոփոխումն. այլ ասի յաւիտենական. *ըստ որում* բոլորն համանգամա՛յն է և կատարեալ. զի ոչ կարօտի սկզբան և վախճանի. որպէս ժամանակն. և ո՛չ միայն սկզբան որպէս մշտնջենաւորն. այլ անսկիզբն է և անվախճան. վասն որոյ կոչի յաւիտենական: - 172. Երկրորդ՝ զի հաւասարութիւն և միաբանութիւն տարերաց անլուծանելի է. *ըստ որում* ներհակ որակօք հաւասարք են հակակայ. և միւսովն միաբանք: - 181. Երրորդ՝ ի լինելութեանց և յապականութեանց. զի անապականք են. *ըստ որում* հատեալ ի տարերաց՝ լինելութիւն է ա՛յլ էակաց. և ապականութիւն նոցա լնու զհատումն տարերաց: - 181. Հինգերորդ՝ զի անճերանալի՛ է երկիր. *ըստ որում* շարժմամբ թօթափի երկիր ի ներքին պատահմանց. և հեղեղօք ողողի և սրբի յարտաքին պատահմանց: - 181. Հայելի՛ է աշխարհի. *ըստ որում* աղտ յերեսն երևի: - 187. Եւ զկրկնակի կենաց վայելումն ըստ խառնեալ էութեան իւրոյ. զի թէ զաստուածայինսն բերցէ յինքեան *ըստ որում* ի պատկերն եղև, վերափոխեսցի անմահ կենօք ի պատրաստեալն ժառանգութիւն: - 231. Զի դէմքն *ըստ որում* մարդոյ և մարմին՝ գոյացութիւն է: - 236. Եւ են աննմանք՝ *ըստ որում* են գոյացութիւնք յատկացեալք ի միմեանց: - 236. Վասն որոյ գտանի յամենայն իրս նման և աննման *ըստ որում* յէից և յոչ էից են հաստատեալք: - 237. Եւ *ըստ որում* իմանայ և խորհի, կոչի բանական հոգի. որպէս այլուր բաժանի ի տեսողական զօրութիւնն. և յիմացականն. և ի յիշողականն. մնալով անբաժանելի ներգործէ՛ ի նոսա: - 259. Եւ թէ զտեսութիւնս զայս կարծես էութիւն հոգւոյ *ըստ որում* է հոգի, ապա ո՛չ միայն ետես զհոգի, այլ և զմարմին՝ և զիւրաքանչիւրոց ընտրութիւն, և զհամար հերաց և զթիւն աստեղաց. և սոքա յետո՛յ են գոյացեալ ըստ կամաց տեսողին: - 260. Եւ ա՛յս է պատճառն. զի լոյս հաւատոյն հեղումն է յաստուծոյ առ իմացումն մարդոյ. և *ըստ որում* իմացումն է մեր՝ իմաստութիւն կոչի: - 269. Եւ *ըստ որում* լոյս շնորհաց՝ հաւատ և լոյս անուանի: - 269. *Ըստ որում* առաւել փառաւորեցաւ կրկին կենօք: - 288. Զի *ըստ որում* մարդ եղև տնօրէնութեամբ՝ պատարագեաց զինքն: - 307. Եօթներորդ՝ ցնծութիւն եղև իսահակ ազգին իւրում. *ըստ որում* կոչեցաւ իսահակ որ է՛ ծաղր. և ճշմարիտ ցնծութենէ քրիստոս ամենայն հաւատացելոց...: - 307. Տասներորդ՝ ևս մեծագոյն խորհուրդ. զի բանն աստուած որ անդրանիկ էր հօր, եղև կրտսեր մարդ ի ժամանակի և փոքր. *ըստ որում* կոչեաց զինքն «փոքրիկ». զի բնութիւն մարդոյս ընդ ինքեան խառնելով արասցէ մեծ և անդրանիկ: - 311. Եւ զգեստ կոչի մարմինն որ ծածկէ զհոգին. *ըստ որում* մաշկեղէն հանդերձն ադամայ որ էր արտաքին զգեստ և նշանակէր զմարմինն: - 318. Ոմանք է ամ ասեն. *ըստ որում* ի վեցից վշտաց փրկեսցէ, և յեօթներորդին ո՛չ փործեսցի չար: - 326. ...*ըստ որում* մեզ ասաց, բարկանայք բանիւ, և մի՛ մեղանչէք գործով. նոյնպէս բարկութիւնն աստուծոյ՝ սպառնա՛լն է. և սրտմտիլն գործն: - 408. Երկրորդ՝ զի ողորմութիւն է բացարձակ և պարզապէս բարի. իսկ արդարութիւնն է խառնեալ բարի. *ըստ որում* հատուցանէ բարեացն բարիս, և չարեացն տանջանս: - 458. Նա՛խ՝ զի ո՛չ խնդրէին, *ըստ որում* ո՛չ ցանկանային: - 467. Երկրորդ՝ զի ո՛չ հաւատային. *ըստ որում* ո՛չ գիտէին: - 467. ...եկն երևեցաւ. այսինքն մարդացաւ մարդասէր բժիշկն. և առողջացոյց զկարեվէր խոցեալքս. *ըստ որում* բժիշկ անուանէր զինքն անկեալ ի ձեռս աւազակաց հիւանդին: - 467. Երրորդ ծնունդն ի մօրէ. *ըստ որում* ծնաւ մարմնով և երևեցաւ մեզ...: - 471. Իսկ անդրանիկ *ըստ որում* երէց և առաջին՝ ասի ըստ չորից: - 472. ...*ըստ որում* որ էջ հոգին սուրբ յորովայն անարատ կուսին և մաքրեաց զնա, և կազմեաց ի նմանէ զարիւնն. և սրբեաց և օծեաց զնա միաւորելով պատկերապէս: - 475. Իններորդ՝ զի ի հոգի՝ ի նմանամասունս և յաննմանամասունս այլ և ա՛յլ գործէ. *ըստ որում* ակն տեսանէ և ո՛չ լսէ. բերանն ճաշակէ՛ և ո՛չ հոտոտէ: - 479. Զի *ըստ որում* մարդ եղև տըրնօրէնութեամբ պատարագեաց զինքն: - 491. Զի *ըստ որում* աստուած՝ ո՛չ կրէր ակամայ. և *ըստ որում* մարդ ճշմարիտ և մարմին բանին՝ կրէր զկամաւորն: - 502. Հինգերորդ՝ մահու մահն էր դժոխքն. զի մահ մարմնոյն՝ ապականութիւնն է, և մահ հոգւոյն՝ դժոխքն. *ըստ որում* վճիռ հատաւ ադամայ մահու մեռանիլ: - 506. Ասեմք առ այս թէ՝ անկատար մնայ ըստ այնմ որ ի յանիծելն ո՛չ կատարի. այլ *ըստ որում* դառնայ ի

յանիծօղն կատարի: - 539. Ա՛րդ՝ եթէ շարժումն ախտիցն մեղք է *ըստ որում* է՛, ապա և շարժումն մտացն մեղք է որպէս ցուցաւ: - 557. Եւ միւս՝ որ դառնայ ի հեշտալին որ է՛ հանգիստ մարմնոյ. *ըստ որում* կոչի ծուլութիւն: - 559. Ա՛րդ՝ ըստ առաջին կարգին թէ ցանկայ ի ներքս, *ըստ որում* է՛ հպարտութիւն և փառասիրութիւն: - 561. Եւ թէ ցանկայ արտաքս, *ըստ որում* է՛ արծաթսիրութիւն և ագահութիւն: - 561. Այս ո՛չ եթէ բաժանմամբ. այլ նկատմամբ ի յատկութիւնս անձանց. *ըստ որում* սկիզբն է հայր. և փրկութիւն է որդին. և ջերմութիւն հոգին: - 577. Երկրորդ եղանակաւ ամենակալ թագաւո՛ր է քրիստոս *ըստ որում* անվախճան է մարդկութեամբն. - 711. Դարձեալ, զի քրիստոս էր վարդապետ *ըստ որում* զճշմարտութիւնն քարոզեաց. - 712.... և էր մարտիրոս *ըստ որում* չարչարանաց համբերեաց...: - 712. ...և էր կոյս *ըստ որում* պահեաց զմաքրութիւնն. վասն որոյ նմանակիցք նորին՝ թագիւ պսակին ընդ նմին: - 712. *...ըստ որում* երեքօրեայ յարեաւ ի գերեզմանէն անապական մարմնով. և զբազումս յարոյց ընդ իւր և մտին ի քաղաքն սուրբ...: - 716. Իսկ վիժեալն ի յարգանդէ *ըստ որում* է սերմ կամ արիւն մօրն՝ ի մա՛յրն յարիցէ: - 719. Երրորդ՝ զի խաչն այն մածեալ է արեամբն աստուածային. *ըստ որում* բևեռեցաւ ի նմա: - 733. Իսկ դատաւորն նստեալ յաթոռ արդարութեան արդարապէս հատուցանէ ըստ գործոց. *ըստ որում* յիմար կուսիցն փակեցաւ դուռն և ո՛չ առին զխնդիրն: - 742. ...ծառ կենաց կոչի տէր մեր յիսուս քրիստոս. *ըստ որում* փայտ դալար էր աստուածութեամբն. և մեզ կեանք և կենդանարար եղև յարութեամբն իւրով: - 768. Զի հաճելի՛ է բնաւորեալ գովութիւն մարդոյ. *ըստ որում* մեծարեցաւ տիրական պատուով. և է՛ այս հասարակ: - 774. Զի յայսմ կենցաղոյս զուգաւորին յիշելն երբեմն և մոռանալ զներքոյս և զարտաքոյս. *ըստ որում* փոխանցապէս ունիմք զերից ժամանակաց գիտութիւն: - 774. Իսկ հրեշտակական կենաց է հրաշափառապէս գիտել և ո՛չ մոռանալ միշտ. *ըստ որում* զանցեալն և զհանդերձեալն ներկայապէս կրեն. զբոլորն համանգամայն և կատարեալ...: - 774. Իսկ յանցանել նորա՝ կորոյս զամենայն. ո՛չ միայն զխոստացեալն, այլ և զպարգևեալն. զի *ըստ որում* յանմեղութենէն մեղանչական գտաւ, այսպէս մահու և ապականութեան գրաւեցաւ: - 776. Երրորդ՝ ժամանակ կենցաղոյս մինչև ի մահ, է՛ ընդունելութեան աստուծոյ. *ըստ որում* բազմեալ է յաթոռ շնորհաց ըստ առաքելոյ. իսկ յետ այնորիկ ո՛չ ևս. զի փոխի յաթոռ դատաստանաց ըստ աւետարանին: - 780. Յայտ է յաշխարհակազմութեանն. *ըստ որում* իւրաքանչիւրքն պատշաճապէս ներգործեցան: - 780

**Ը ՕՐԵԱՅ (ՈՒԹՆ ՕՐԵԱՅ)** - Վեցերորդ՝ իսահակ նախկին էր կատարումն ուխտի ***ը*** *օրեայ* նշանին: - 305. Նոյնպէս և **ը** ծայն եղանակաց. և ***ը*** *օրեայ* զտօնս գլխաւորս. որպէս ծննդեանն ութն օր. և յարութեանն՝ և հոգւոյն գալստեանն՝ և խաչի՝ և եկեղեցւոյ՝ և այլն: - 627. Այսօրիկ են մեզ ***ը*** *օրեայ* տօնք: - 649

# Թ

**ԹԱԲՕՐ +** Ապա՛ ի *թաբօր* լերինն ամպ խոնարհեալ և ձեռն կարկառեալ ձեռնադրեաց զնա ասելով, այս մելքիսեդեկ անհայր անմայր չհամարեալ յազգս՝ նմանեալ որդւոյն աստուծոյ: - 300. Ութերորդ՝ ի լեառն *թաբօր* յայտնեաց զփառս աստուածութեան իւրոյ և օրհնեաց: - 320. Նախ՝ զի սովո՛ր է աստուած երևիլ ամպօք. որպէս ի սինա և ի *թաբօր*...: - 326. Եւ տեառն ի *թաբօր*: - 328. Նոյնպէս և տէր ի հօրէ և ի մօրէ. պայծառութեամբն ի *թաբօր*. մկրտութեամբն ի ջրոյ. և յարութեամբն ի գերեզմանէ՛: - 329. Մետասաներորդ՝ յօրինակ տեառն որ պայծառացաւ ի *թաբօր*: - 352. Եւ զքառասունսն պահեաց. և պայծառացաւ ի *թաբօր*. և այլն: - 399. Որ և մովսէս եկեալ ի *թաբօր* վկայէր նմա, և աղերսէր ելանել ի խաչ և բանալ զդուռն արքայութեան. որում մարգարէքն սպասէին: - 411. Եւ ապա՛ թագաւոր ի *թաբօր* և յաւանակաւն: - 450. Եւ զօծումն քահանայութեան ի *թաբօր* լերինն. ուր և հոգին սուրբ ամպ հովանի եղեալ. և հայր հաճութեամբ վկայեալ: - 474. Իսկ ի *թաբօր* լերինն ձայնիւ հայրական և հովանեաւ հոգւոյն եղև քահանայ. ցուցեալ մովսէս և եղիա սարկաւագունք յաջմէ և յահեկէ: - 607. Զպայծառութիւնն՝ ի *թաբօր* լեառն. և Զանչարչարութիւնն ի յօրինելն զմարմինն իւր և տալ աշակերտացն ի վերնատունն՝ անչարչարելի էր մարմինն քրիստոսի ներգործութեամբ և ո՛չ զօրութեամբ: - 723. ...այլ ա՛յս է՝ զի իւրաքանչիւր մարմինք սրբոց պայծառասցին էպատիկ քան զարեգակն. որպէս տեառն մերոյ ի *թաբօր* լերինն. և **թ** դասուց հրեշտակաց լոյսն յերկիր ծաւալին. զի զօրութիւնք երկնից շարժեսցին: - 728. Այլ ի գալուստն քրիստոսի Առաջին փառք է՝ զի փառաւոր երևեսցի սիրելեաց իւրոց, յայտնեալ զաստուածութեան փառս միաւորեալ ի մարմնի. որպէս երևեցաւ ի *թաբօր:* - 736. Ի *թաբօր* մովսէս և եղիա վկայէին վասն մահու նորա: - 742. Որպէս ի *թաբօր* ծածկեաց զլոյս նորա. նոյնպէս և ի յարութեանն: - 760

**ԹԱԳ +** Նա՛խ՝ ի *թագն*. զի գլուխ և *տէր է* բոլոր հնազանդելոցն: - 271. Եւ որպէս զպատկեր թագաւորին նկարեն *թագիւ* և ծիրանեաւ և այլովն՝ և անուանեն զպատկերն թագաւոր: - 271. Եւ փոխանակ *թագին* ինքնիշխան կամօք զարդարեաց: - 271. Զորօրինակ թագաւոր ոք յորժամ լսէ՛ զգոյժ որդւոյ իւրոյ մեռելոյ, խորտակէ՛ *զթագն*, և զամենայն ինչ որ վասն նորա՛ է: - 349-350. Նա՛խ՝ զկերպն ադամայ որ ի դրախտին՝ երևեցոյց յինքեան. զոր ետես մահ և ընկէց *զթագն* իւր: - 352. Վաթսուներորդ, մարտեաւ ընդ ադրիազարու և սպան զնա և քակեաց զկառս նորա, և *զթագն* եդ ի գլուխ իւր...: - 438. Եւ յետ հնգետասան ամի յաւուրս աքազու՝ ել *թագ* ղաթփաղսար արքայ ասորեստանի ի վերայ իսրայէլի...: - 446-447. Երրորդ՝ եթէ քահանայ է և թագաւոր. վասն այն ընդ *թագին* և խա՛չն նկարի: - 481. Վասն որոյ երից սոցա պատշաճի *թագն* ոսկեղէն: - 712. ...և էր կոյս ըստ որում պահեաց զմաքրութիւնն. վասն որոյ նմանակիցք նորին՝ *թագիւ* պսակին ընդ նմին: - 712. **Որպէս յորժամ կայսր մտեալ ի քաղաք՝ *թագ* և այլ նշանք առաջի տարցին, որով գալուստ նորա ցուցանիցի**: - 734

**ԹԱԳԱԿԻՑ +** Ուստի որդին աստուծոյ եկեալ թագաւորական աթոռովն և ամենայն *թագակիցք* ընդ նմա: - 763

**ԹԱԳԱՒՈՐ +** Եւ թէ ոք ասիցէ, բազում բանք մեր բացորոշակի լինին ի հանդերձեալն. որպէս *թագաւորն* յորժամ ասէ շինեսցի քաղաք, և շինի. և ասեմք թէ այսանուն մարդ մեռանելոց է, և մեռանի. և աղօթեմք և լինի. և այլն նմանապէս անէծք կամ օրհնութիւնք: - 9. Եւ որովհետև ծանեաք զայս, արդ պատասխանեմք առարկութեանցն, եթէ որքան է՛ ի հարկաւոր պատճառ է՛, լինի բացորոշապէս բանն ճշմարիտ. որպէս բան *թագաւորի*. և մարդոյն մեռանիլն. և արև ծագելն. և լինիլն գարուն յետ ձմռան: - 10. Զորօրինակ **բ** թշնամիք ոմանք ի յարկս *թագաւորին* ո՛չ իշխեն վնասել իրերաց, մինչև *թագաւորն* հրամայեսցէ: - 12. Երկրորդ՝ զփոփոխումն *թագաւորաց*, զաղքատաց մեծանալն, և զփարթամացն տնանկանալ: - 26. ...խօսի աստ ի վերայ չորից *թագաւորացն* որք հալածեցին զիսրայէլ: - 28. Արդ՝ թէ ինն ամսով յառաջ թագաւորեալ էր *թագաւորն* չար, ապա ուրեմն ի ժամանակս Օգոստոս կայսեր ծնաւ քրիստոս. զոր և վկայէ՛ աւետարանն սուրբ: - 29. Նախ ասեմք թէ՝ *թագաւոր* էր այր կերող և արբեցող և վաւաշոտ. զի՞նչ իցէ ի համար բան նորա. թէպէտ կարի ասել ո՛չ կարեմք: - 40. Եւ զի է՛ որդի, ապա ուրեմն և է՛ ճշմարիտ աստուած և *թագաւոր թագաւորաց* և այլն ըստ առաքելոյն: - 47. Յիշխանականն. որպէս Տէր սաբաւօթ. *Թագաւոր* ամենակալ: - 49. Նախ՝ զի մելքի *թագաւոր* լսի: - 50. Երրորդ՝ զի *թագաւոր* էր սաղիմայ. որ է՛ խաղաղութեան: - 50. Առիւծն գազանաց. և Մարդն ամենայն կենդանեաց. և Նստեալն ի վերայ սոցա *Թագաւոր թագաւորաց*: - 132. Առիւծն՝ զի *թագաւոր* է. և եզն՝ զի քահանայ է

և պատարագ: - 132. Առիւծն թագաւորական՝ նշանակէ՛ զյօհաննէս. ի սկզբանէ՛ զբանն աստուած և *թագաւոր* յաւիտենից ցուցեալ: - 133. Արբանեակ լինի և մեկնէ զխորհուրդս *թագաւորաց*: - 177. Այլ և ըստ համարոյն՝ կնքէ՛ զինչս *թագաւորաց*. և չտայ գողանալ ծառայից. և զգողացեալն յայտնէ և յանդիմանէ: - 178. Որպէս կրիտէս *թագաւորն* կրէատացւոց կախեաց ի մէջ տաճարին անդամանդ քարեայ ամենայն ուստէք ըմբռնեալ: - 180. Իսկ մարտն և ապրիլն՝ իմաստասիրա՛ց անուանքն են. և Օգոստոսն *թագաւորի*: - 201. Այլ է՛ նշան փոխելոյ *թագաւորաց*. պատերազմի. և սովոյ. կամ այլ ինչ խռովութեան երկրի: - 203. Նոյնպէս և *թագաւորք* երկրի և իշխանք՝ որք բարձրացեալ են փառօք և դատա՛րկ յառաքինութեանց, են որպէս հովանաւորք: - 212. Եւ *թագաւոր* ջրայնոցն Լեհաթանն: - 216. Իսկ մարդն բոլորի՛ցն է իշխան և *թագաւոր*: - 216. Եւ զի մարդն *թագաւոր* և իշխան է ամենայն կենդանեաց՝ յա՛յտ է ի բազմաց: - 220. Երկրորդ՝ զի պատկեր աստուծոյ է մարդն. այսինքն զի որպէս աստուած իշխան և *թագաւոր* է ամենայն արարածոց. նոյնպէս և մարդն իշխան է ամենայն կենդանեաց: - 220. Եւ սպասաւորն քան *զթագաւորն* առաջին հանդիպի: - 230. Երրորդ՝ կամեցաւ աստուած՝ *թագաւոր* ստեղծանել զմարդն...: - 230. Կարգաւոր էր նախ պատրաստել զարքունիս որ է երկինք և երկիր. և զգահոյս որ է՛ դրախտն. և զսպասաւորքն որ են կենդանիքն. և զմեծութիւնս տնկոց և բուսոց. մանաւանդ ոսկւոյ և արծաթոյ և ականց ի սիրտ երկրի գանձել. և ապա՛ *թագաւորին* բնակիլ: - 230. Հինգերորդ՝ զի մարդն իշխան և տէր է ամենայն կենդանեաց. վասն որոյ ամենայն կենդանիք գլխակո՛ր են իբրև զծառայ և հնազանդ. և մարդն ուղղաձև իբրև ազատ և *թագաւոր*: - 233. Առաջինն սիրտն է՛ *թագաւոր* անձինն. տա՛ք է և չոր. և իւր տանուտէր արեգակն է: - 241. **Սիրտն իշխա՛ն է անձինն. յորժամ երկնչի՝ զարիւնն առ ինքն ժողովէ իբր զօրք առ *թագաւորն*. և մնայ մորթն բնական գունովն դեղին**: - 245. Եւ կամ որպէս զօրք *թագաւորի*՝ նախ հասանեն յիջևանն, և *թագաւորին* ասի իջևանն. թէպէտ յետոյ գայ: - 255. Եւ արդ՝ ի **դ** իրս երևի իշխանութիւն *թագաւորին*: - 271. Եւ որպէս զպատկեր *թագաւորին* նկարեն թագիւ և ծիրանեաւ և այլովն՝ և անուանեն զպատկերն *թագաւոր*: - 271. Այսպէս իսկապէս *թագաւորն* ամենայն աշխարհի՝ ստեղծեաց զմարդն ըստ պատկերի իւրոյ: - 271. Զորօրինակ՝ որդի *թագաւորի* պատկե՛ր է *թագաւորին*. զի բնութենակից է նմա: - 273. Իսկ դրամն և տախտակն ուր գրեալ է պատկեր *թագաւորին*՝ միայն նման է *թագաւորին* ըստ ձևոյն. այլ ո՛չ ըստ բնութեանն: - 273. Եւ յորժամ կոտորեաց *զթագաւորսն* քոդող գոմորայ, եցոյց թէ *թագաւոր* *թագաւորա՛ց* է: - 300. Նոյնպէս և մելքիսեդեկ *թագաւոր* էր սաղիմայ. որպէս և անունն յայտնէ. մելքի՝ որ է՛ *թագաւոր*: - 300. Զի մելքի՝ որ է *թագաւոր*. և սեդեկ՝ արդար. և սաղիմն խաղաղութիւն թարգմանի: - 301. Եւ տէր մեր յիսուսի քրիստոս է՛ *թագաւոր* յաւիտենական. և արդարութիւն արար մեզ և հաշտեցոյց զաստուած ընդ մարդկան: - 301. Չորրորդ՝ ըստ անուանակոչութեանն. զի մելքի՝ որ է՛ *թագաւոր*. և թագաւորէր սաղիմայ: - 301-302. Եւ քրիստոս *թագաւոր* գոլով անվախճան՝ ըստ հրեշտակին թէ՝ «թագաւորութեան նորա ո՛չ գոյ վախճան»: - 302. Եւ քրիստոս *թագաւորն* վերնոյն երուսաղէմէ մի՝ զնոյն խաղաղութիւն ետ առաքելոցն զոր ի ծննդեանն հրեշտակք երգէին: - 302. Իսկ աստեղք՝ ծնունդքն իսահակայ պայծառ վարուք և երկնընթացք որպէս մարգարէքն՝ քահանայքն՝ և ընտրեալ *թագաւորք*՝ և այլքն: - 303. Ութերորդ՝ անդրանիկք են ըստ մարմնոյ վերակացուք և տեարք. որպէս *թագաւորք*, և իշխանք. նոյն և առաջին ծնունդք ելեալ յարգանդէ՛: - 309. Նոյնպէս և յակոբ, եփրեմ, դաւիթ, կրտսեր ի մէջ եղբարցն և *թագաւորացն*. խնդրե՛մ ուսանիլ: - 309. Եւ տէր մեր է՛ *թագաւոր* յաւիտենական: - 315. Ութև**ժ**, չո՛րս են որք հզօրք են և պերճ շրջին ասէ սողոմոն. այսինքն աքաղաղ, և նոխազ, և *թագաւոր* հրապարակախօս, և առիւծ՝ որ ո՛չ դարձուցանէ թիկունս յանասնոց: - 316. Այսպէս կոչի և զգեստ մարմնոյն. զի արտաքին զգեստն որպէս ծիրանին *թագաւորի* ա՛յլ է ի զգեցողէն և պատահական նմա և փոփոխական. այսպէս զգեստ ո՛չ ասի մարմին նորա. այլ եկեղեցի սուրբ որպէս ասացաւ: - 319. Իսկ *թագաւորք* յամենայն ամի զնոյն առնեն ուրախութիւն. ուտել և ըմպել և հեշտութիւն մարմնոյ. որպէս փարաւօն առնէր և հերովդէս: - 321. Ուստի բազմացեալ լցին զարևելս ի պալի. յորմէ *թագաւորք* պարսից և հայոց արշակունիք կոչեցեալ: - 330. Եւ **է** ճրագարան և **է** բերան ճրագացն, **է** արքն մեծապատիւք զօրավիգք *թագաւորին*. այսինքն յեսու, զաքարիա, խոդէստուբիա, յեդոյիա, յեշոյիա, և եզր դպիր: - 346. Ընդ որովք նահապետք, վարդապետք, և *թագաւորք*: - 347. Եւ սովաւ օծէին *զթագաւորս* և քահանայս: - 349. Զորօրինակ *թագաւոր* ոք յորժամ լսէ՛ զգոյժ որդւոյ իւրոյ մեռելոյ, խորտակէ՛ զթագն, և զամենայն ինչ որ վասն նորա՛ է: - 349-350. Այլ և *թագաւորք* և իշխանք երկրի: - 374. Եւ **ժ** թիւ կատարեալ նուէր և սուրբ է աստուծոյ. յաղագս որոյ *թագաւորք* երկրի զընծայս ի

մարդկանէ՛ հնազանդելոց **թ թ** խնդրեն...: - 376. Որ նշանակէր՝ «աստուած ի հարաւոյ եկեսցէ» ի *թագաւորի* և քահանայի ցեղէն. զի բեթլէհէմ հարաւ է երուսաղէմի: - 379. Իսկ դադան քրէական մեղանչեաց որ է՛ յանցումն ի *թագաւոր*. զոր անհնարին պատուհասին. գոյիւք և ազգօք ջնջին: - 381. Այլ ի յաւարէ՛ *թագաւորաց* որ ի յերկրէն թշնամեաց բերեն՝ հալա՛լ է մատուցի՛ նուէրք յեկեղեցին: - 390. Եւ այսպէս բաժանեսցեն զաւարն. ի **ծ**էն զմինն տայցեն քահանայապետին. և յիսնէն զմինն քահանայից և աղքատաց. և հնգէն զմինն *թագաւորաց* բաժին. և կէսն աւար բերողացն է զինւորացն. և կէսն այլ հեծելիցն. որպէս բաժանեաց մովսէս: - 390. Այլ և ոսկին ի յաւարացն *թագաւորին* է բաժին. և արծաթն թագուհւոյն և կամ իշխանացն: - 390. Զի՞նչ է որ զերկու *թագաւորսն* զսեհոն և զովք յայնկոյս յորդանանու կորոյս, և զայլսն ի քանանացիսն: - 393. Այլ ե *թագաւորք* մադիանացիքն էին, և **բ** այսոքիկ. որ են **է** դևք **է** գլխաւոր մեղաց. որք ի կեանս պատերազմին, և յետ մահու ընդ հոգւոցն բազումք: - 393. Այսպէս և օրհնութիւն մարդկան որ գերագոյն է քան զմեզ, շնորհակալութիւն է և գոհութիւն. որպէս սրբոց կամ *թագաւորաց* և այլն: - 406. Եւ ո՛չ կոտորեաց զամենայն *թագաւորսն*: - 412. Եւ թէ նախ դատաւորք և *թագաւորք*, և ապա՛ քահանայք տիրեցին իսրայէլի: - 413. *Զթագաւորսն* քանանացւոց կոտորեաց թուով իթ: - 414. Եւ զ**ե** *թագաւորսն* մադիամու՝ և զսեհոն՝ և զովգ՝ յայնկոյս յորդանանու: - 414. Բովանդակն ամենայն **լզ** *թագաւորք*: - 414. Նա՛խ՝ զի մարդն տէ՛ր է և *թագաւոր*. և անասունքն ծառայ ընդ անցաւոր տէրանց. և ծառայքն պատուհասին. որպէս առ ջրհեղեղաւն: - 416. Ութևժ, *զթագաւորս* նոցա կախեաց յերկճղի փայտէ. և յերիկոյն ի գուբն սուզեաց: - 418. Քսանգ՝ յեսու փրկեաց զգաբաւոն ի **ե** *թագաւորացն* որք պաշարէին: - 419. Քսաննդ՝ յեսու զպարանոցս *թագաւորացն* կոխան ետ իշխանաց իւրոց և զօրաց: - 419. Քսաննե՝ յեսու նախ սպան *զթագաւորս*, և զքաղաքս նոցա աւերեաց: - 419. Քսաննզ՝ նա՛ սպան *զթագաւորս* և զիսկայսն քանանու. և զոմանս եթող ի փորձ ընտրելոց: - 419. Եւ ապա ըստ կարգի *թագաւորք*. Դաւիթ. Սողոմոն. և այլք մինչ ի գերութիւնն: - 421. Երկրորդ՝ *թագաւորք* մինչ ի զօրաբաբէլ. և յեսու քահանայ: - 421. ...իսկ ցօղ իմաստութիւնն որ տուաւ նմա յաստուծոյ. և *թագաւորք* արաբայ և սաբայ, ընծայաբերքն նմա: - 421. Սաւուղ առաջին *թագաւոր*, բաղդատի ի տէր մեր: - 426. Չորրորդ, ի հովւութենէ օծաւ *թագաւոր* և տէր մեր նա՛խ քարոզեաց, և ապա՛ ժողովեաց. և տիրեաց յերկինս և յերկրի: - 435. Եւ նոյնպէս *թագաւորքն* մոգուց բերին ընծայ քրիստոսի: - 441. Քսանևը, իշխան եղև ամենայն *թագաւորացն*: - 442. Քսանևթ, ցանկացան ամենայն *թագաւորք* տեսանել զսողոմոն: - 442. Եւ տեառն մերոյ ի հեթանոսաց փառք և մեծութիւն. որ նստի յանզուգական աթոռ դատողութեան **բժ**ան *թագաւորօք* դատել զամենայն: - 442. Երկրորդ՝ նա երկրաւոր *թագաւոր*. և քրիստոս երկնաւոր: - 442. Ա՛յս է՝ իբր թէ աստ ո՛չ է գրեալ բոլորն՝ ա՛նդ է գրեալ որ է մնացորդացն յուդայի *թագաւորացն*: - 443. Վասն է՞ր թիւ մի պակաս լինի *թագաւորացն*: - 443. Նա՛խ՝ իբր *զթագաւոր* վերացեալ կառօք և զօրօք: - 445. Արդ ի բաժանիլ *թագաւորացն* հրէաստանի յերկուս, յուդայի և իսրայէլի: - 446. *Թագաւորք* յուդայ նստան յէմ. Ռոբովամ. Աբիա. Ասափ. և այլ *թագաւորք* **իբ**: - 446. Եւ *թագաւորք* իսրայէլի ի սամարիա: - 446. Առաջին րոբովամ որդին նաբատայ. և այլք ընդ նմա *թագաւորք* **ի**: - 446. Եւ մանայէն *թագաւորն* իսրայէլի ետ նմա **դ** տաղանդ արծաթոյ և դարձաւ ի նմանէ: - 446. ...և երեք ամ պաշարեալ էառ զնա. և գերի վարեաց *զթագաւորն* ովսէէ որդի ելայ. և զ**ժ** ցեղն բովանդակ տարաւ յասորեստան: - 447. Եւ յետ **ե** ամսոյ՝ նաբուզարդան դահճապետն հրձիգ արար զէմ և զտաճարն և զտուն *թագաւորացն*. և զպարիսպն կործանեաց. և զպինձն պղնձի և զաւազանն և զամենայն կահ պղնձի և արծաթի տարաւ ի բաբիլօն: - 447. Եւ յայնմ ժամանակի ասէ՝ սպանցի օծեալն, յորում քահանայքն և իրաւունք ո՛չ իցեն. այսինքն *թագաւոր* և դատաւոր: - 449. Վասն է՞ր նախ դատաւորք և ապա *թագաւորք* և ապա քահանայք առաջնորդեցին մինչ ի տէր մեր յիսուս քրիստոս: - 449. Եւ ապա՛ *թագաւոր* ի թաբօր և յաւանակաւն: - 450. Ի սամարիայ **ժ** ազգին տիրէ՛ րոբովամ որդին նաբատայ. որք կոչեցան *թագաւորք* իսրայէլի չարք և ո՛չ բարիք: - 452. Որք կոչեցան *թագաւորք* յուդայ. և ոմանք ի սոցանէ բարիք: - 452. Զնա էառ կին յովիդա քահանայ. և խառնեցան երկու ցեղք *թագաւորաց* և քահանայից: - 452. Եւ վասն այն խառնեցան **բ** ցեղքն. զի ծնեալն ի նոցանէ քրիստոս ըստ մարմնոյ, *թագաւոր* և քահանայ լինէր: - 461. Զի օծեալք սոքա էին քահանայք և *թագաւորք*. յորոց և բազումք մարգարէք եղեն: - 461. Եւ սոյնպէս և քրիստոս եղև երկուց զարմիցն մի քահանայ և *թագաւոր* ճշմարիտ և մշտնջենաւոր քահանայ և *թագաւոր* յաւիտեան: - 461. Վեցերորդ՝ օծումն *թագաւորաց*. վասն տէրութեան: - 474. Յինգերորդ՝ քրիստոս լինելոց էր քահանայ և *թագաւոր* յաւիտենական. և էգն ո՛չ կարէր օծանիլ քահանայ և

*թագաւոր*. ո՛չ յօրինակն և ո՛չ ի ճշմարտութիւնս: - 480. Երրորդ՝ եթէ քահանայ է և *թագաւոր*. վասն այն ընդ թագին և խա՛չն նկարի: - 481. Երրորդ «առ յովհաննէս». այսինքն տէրն առ ծառայն, *թագաւորն* առ սպասաւորն, արեգակն առ արուսեակն: - 487. Զոր օրինակ՝ զմահապարտ ոմն *թագաւորն* հրամայէ՛ դահճին ի բանտ դնել. դարձեալ զնոյն *թագաւորն* աղերսեն և նա հրամայէ՛ արձակել ի բանտէն: - 492. Ուր արկեալ էր սատանայ զաթոռ իւրոյ իշխանութեանն. և անդ արգելեալ բանտէ՛ր զհոգիսն որ յադամայ. մինչ ի գնալ անդ անմահ *թագաւորին* մերոյ և աստուծոյ յիսուսի քրիստոսի: - 504. Նա՛խ՝ ի կողմանէ պարգևողին. զի յորժամ քրիստոս նստեալ լինէր ըստ մարմնոյ ընդ աջմէ հօր իբր *զթագաւոր* փառաց յաթոռ թագաւորութեան իւրոյ, յայնժամ մեծագոյն լինէր պարգևք հոգւոյն տուեալ ի փառաւոր քրիստոսէ աստուծոյ: - 521. Իններորդ՝ որպէս *թագաւորք* նախ հաշտին ընդ մահապարտս և ապա՛ պարգևաց արժանի առնեն: - 522. Երրորդ՝ համարձակութիւն քարոզութեան առանց երկիւղի խօսիլ զբանն առաջի ազգաց և ազանց և *թագաւորաց*. որպէս պետրոս ի միում ժամու զերեք հազարսն հաւատացոյց: - 524. Եւ դարձեալ զոր օրինակ, բան *թագաւորին* մի է, այլ ի բազում լեզուս և ի բազում լսելիս և ի բազում թուղթս որակացեալ և բազմացեալ, յիւրում միութենէն ո՛չ է քակտեալ: - 529. Զորօրինակ, յորժամ վկայեսցէ *թագաւորն* ներտրամադրեալ բանիւն ի վերայ գրեալ բանին իւրոյ եթէ՝ ստուգապէս սա՛ է իմ գիր և բան: - 531. Եւ մարմնաւոր իշխան *զթագաւորս* և զբռնակալս. զի մարմնապէս կառավարեսցեն զմարդիկ և խրատեսցեն վասն մեղաց: - 538. Չորրորդ, առ նոյն *թագաւորաւն* զկնի **իդ** ամի եղև արժանաւոր ժողովն եփեսոսի ընդ դէմ եւտիգի. որ առ աչօք ասէր զտեառն մարդանալն: - 542. Զի պողքէր քոյր *թագաւորին* թէոդոսի ի կուսանաց վանս էր. և պղծեցաւ պոռնկութեամբ ի մարկիանոսէ. և ապա՛ եղև կին նմա. և ասեն թէ ի նեստորէ՛ էր մկրտեալ: - 542. ...և զթէոդորիտոս եդին գլուխ ժողովոյն վասն մարդահաճութեան թագուհւոյն և *թագաւորին*. և զդէոսկորոս հայրապետն աղէքսանդրու, և զպետրոս անտիոքու, և զտիմոթէոս և զանատօլ, և զայլս բազումս խոտեցին. և վկայեցին նոքա ճշմարտութեան: - 543. ...և նոքա զամենայն ինչ ծածկապէս տեղեկացան. զի ժողովեալքն ի քաղկեդոն ակն առին *թագաւորին* և կնոջ իւրոյ. և զարհուրեցան ի սպառնալեացն. և զնեստորի կարծիսն հաստատեցին. զերկու բնութիւնսն. և զ**բ** կամսն. և զ**բ** ներգործութիւնսն: - 543. Եւ սուրբն սիմէոն սիւնակեացն այրեաց զթուղթն դաւանութեանն քաղկեդոնի՝ զոր գրեալ էր *թագաւորն* մարկիանոս աղաչանօք առ նա՛. և նզովեաց զթղտատարն որ էր թէոդորիտոս գլուխ ժողովոյն: - 543. Այլ հրամանաւ մեծի *թագաւորին* ուստիանեայ ժողովեցան յունաց և հռոմոց և հայոց և վրաց և աղուանից եպիսկոպոսունք. և կաթողիկոսն հայոց սահակ...: - 544. Ասեմք առ այս՝ թէ լուսաւորիչն գնաց ի հռօմ ո՛չ վասն ձեռնադրութեան, այլ վասն սիրոյ և միաբանութեան երկուց ազգաց և ուղղափառ *թագաւորացն* տրդատայ և կոստանդիանոսի: - 548. Ուստի յա՛յտ է, զի առեալ էր զքահանայութիւն. և մկրտեալ *զթագաւորն* և լուսաւորեալ զազգս, և շինեալ եկեղեցիս: - 548. Զի այսպէս սահմանեցին՝ թէ ինքնակալ *թագաւոր* մի և ինքնագլուխ հայրապետ մի նստցի ի հայս. և *թագաւոր* մի ինքնակալ՝ և ինքնագլուխ հայրապետ մի ի հռօմ. և ի վերայ միմեանց դիցեն զանձինս ի մահ. և սոսկալի գրով եղեն միմեանց եղբարք. թացեալ զգրիչն յահաւոր խորհուրդն: - 548. Դարձեալ ասեմք թէ զիա՞րդ յետին. զի աբգար *թագաւորն* հայոց նախ քան զխաչն հաւատաց ի քրիստոս և երանեցաւ ի նմանէ: - 549. Չորրորդ՝ աբգարու *թագաւորին* նախընծայ ի քրիստոս հաւատալն: - 555. Այլ մովսէս օրինադրեաց ի թիւքն առնել կրկին փողս արծաթի. և կոչեաց զնոսա փողս ազդեցութեան. որպէս դեռևս գոն ի դրունս *թագաւորաց* կրկին փողք: - 618. Նա՛խ որպէս սովորութիւն է մարդկան որք զաղերսն ընծայեն ի դրունս մեծամեծացն, և նոքա՛ մատուցանեն *թագաւորին*: - 624. Իսկ *թագաւորքն* առաջին և վերջին. զի կիրակին է թագաւորելն աստուծոյ. այժմ առաջին, և զկնի վերջին. կամ աստ կամողացն միայն, և անդ կամողաց և ո՛չ կամողաց: - 627-628. Այլ **գ** *թագաւորքն* պահոց, և **գ** տուն յուտիքն, ի դէմս սուրբ Երրորդութեանն: - 628. Իսկ վերջին սաղմոս, բարձր առնեմ զքեզ աստուած իմ և *թագաւոր* իմ: - 630. Եւ զպէնտակոստէին, և զվարդավառին, և զսուրբ գրիգորին և զյովհաննուն, և զմարգարէիցն, և զվարդանանցն, և զառաքելոցն, և *թագաւորացն*, և զանտօնին: - 637. Եւ այսպէս ի պահոց *թագաւորքն* նշանակի: - 641. Որպէս ի գալ *թագաւորին* նախ կարապետք և աւետաւորք մտանեն. - 646. Այսպէս և հանգստարանք եպիսկոպոսաց ի կարգս իւրեանց, և քահանայից, և կրօնաւորաց, և *թագաւորաց*, և աշխարհականաց: - 674. Երկրորդ եղանակաւ ամենակալ *թագաւո՛ր* է քրիստոս ըստ որում անվախճան է մարդկութեամբն...: - 711. Այսինքն զի աստուածք և տեարք կոչին յերկինս հրեշտակացն դասք, և *թագաւորք* յերկրի...: - 711. Նոյնպէս և զօրք հրեշտակաց և մարդիկ

երկիր պագանեն սրբոց. վասն որոյ *թագաւոր թագաւորաց* են և տէր տէրանց...: - 711. Վեցերորդ, այլ և բարեպաշտ *թագաւորք*՝ և իշխանք՝ և իշխեցեալք՝ ունին զայս կարգ. թէ օրինօք կենցաղավարին ըստ հրամանացն աստուծոյ: - 757. Մեծութիւն այսմ ուրախութեան կարէ՛ զմտաւ ածիլ յայնմանէ, զոր սովո՛ր են ծնօղք յորժամ որդիք նոցա լինին եպիսկոպոսունք կամ *թագաւորք*: - 763. Երկրորդ վասն ազնուական ընկերութեանցն. յորում եղիցի երանելի կոյսն. և հրեշտակք և սուրբք և սրբուհիք. և ամենայն *թագաւորք* և թագուհիք եղիցին: - 763

**ԹԱԳԱՒՈՐԱԾԻՆ** - Երկրորդ՝ ի ծիրանին. զի արքայա՛զն է և *թագաւորածին*: - 271

**ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ +** Երրորդ՝ զի չորեքկին կենդանիքն *թագաւորականքն* են: - 132. Առիւծն *թագաւորական* նշանակէ՛ զյօհաննէս. ի սկզբանէ՛ զբանն աստուած և թագաւոր յաւիտենից ցուցեալ: - 133. Նա՛խ՝ զի առիւծն *թագաւորակա՛ն* է: - 315. Երրորդ՝ *թագաւորական* գաւազան էր աղամ ի դրախտին. և յորժամ մեղաւ՝ անկաւ ի յերկիր և եղև օձ մեղաւոր: - 332. Եւ դարձեալ բանն աստուած բուռն էհար զգաւակէն աբրահամու և եղև անօթ *թագաւորական*: - 332. Եւ ի ձեռն մովսէսի դարձեալ եղև գաւազան *թագաւորական* և քահանայութեան: - 332. Փառաւորեալ և միշտ կոյսն Աստուածածին մարիամ՝ էր ի *թագաւորական* ցեղէն դաւթի...: - 459. Եւ յովսէփ արդարն էր ի *թագաւորական* ցեղէն. որպէս պատմէ՛ աստուածախօսութիւնն Մատթէոս և Ղուկաս: - 460. Իսկ յովակիմ արդարն էր ի *թագաւորական* ցեղէն յուդայի լը երորդ ի թոռանց նաթանայ որդւոյն դաւթի փառաւոր և մեծատուն յոյժ: - 460-461. Որպէս զի լիցի կոյսն մարիամ յազգէ հարց ի *թագաւորական* ցեղէն. և յազգէ մօր ի քահանայից: - 461. Զի թէպէտ փակեալ էր օրէնքն խառնիլ երկուց ցեղիցն ընդ միմեանս, սակայն ղևտացւոցն ո՛չ գոյր ժառանգութիւն և բաժին, խառնեին երբեմն ընդ *թագաւորական* ազգն յուդայ: - 461. Եւ զօծումն *թագաւորական* ի մարեմայ քեռէն դազարու. յորժամ նստաւ ի վերայ յաւանակին: - 474. Երկրորդ՝ զի ի բարձր տեղւոջ էր ի *թագաւորական* քաղաքի: - 490. Երկրորդ՝ աթոռ *թագաւորական* ի նշանակ բարձրութեան: - 736. Ուստի որդին աստուծոյ եկեալ *թագաւորական* աթոռովն և ամենայն թագակիցք ընդ նմա: - 763

**ԹԱԳԱՒՈՐԵՄ +** Արդ՝ թէ ինն ամսով յառաջ *թագաւորեալ* էր թագաւորն չար, ապա ուրեմն ի ժամանակս Օգոստոս կայսեր ծնաւ քրիստոս. զոր և վկայէ՛ աւետարանն սուրբ: - 29. Տասներորդ՝ *Թագաւորել* մինչև ի ժամանակս ասեն. և վասն հնազանդութեանն: - 29. Տասներորդ՝ առարկութիւն արիանոսացն՝ Պարտէ ասեն *թագաւորել* սմա մինչև ի ժամանակաց փոփոխումն ըստ առաքելոյն: - 41. Իսկ յորժամ ամէն լեզու խոստովան լիցի տէր զյիսուս քրիստոս, անզրաւապէս *թագաւորէ* ընդ հօր և տնտեսութեամբն: - 42. Եւ քրիստոս *թագաւո՛րէ* յաւիտենական: - 50. Նա՛խ՝ զի խորհրդական միտքն կարգաւոր և առանց տարակուսանաց տեսանէ. իսկ երազն անկարգ և տարակուսանօք և զանհնարն տեսանէ որպէս ի վերայ օդոյ թռչիլ, և ի ծովու գնալն, և աղքատաց *թագաւորել*, և այլն: - 268. Հինգերորդ ևս յայտնի. աստ կեան նահապետքն ժամանակաւ ընդ ամենայն մարդոյ. և յետ մահու ի մշտնջենաւորն ընդ հրեշտակաց. և յետ յարութեանն յանվախճան յաւիտենին *թագաւորեալք* ընդ աստուծոյ: - 291. Չորրորդ՝ ըստ անուանակոչութեանն. զի մելքի՝ որ է՛ թագաւոր. և *թագաւորէր* սաղիմայ: - 301-302. Հինգերորդ՝ մովսէս օրինա՛կ էր, և ճշմարտութիւնն քրիստոս. առ որ խափանեցաւ մահ, և *թագաւորեաց* կեանք: - 409. Եւ փոխանակ հոգւոյն՝ հրեշտակական օգնութեանն կարօտացաւ ցուցանել զտիրապէս իշխօղն բնութեան. որ և կշտամբեաց զբռնութեամբ *թագաւորելն* նորա: - 410. Նա՛խ՝ որպէս սաւուղ ի խնդիր իշոյ ել և թագաւորութիւն եգիտ. և տէր մեր մարդկան ազգի որ հաւասարեաց անբանից, և *թագաւորեաց* մեզ: - 426. Երրորդ՝ նա՛ ի կրտսեր ազգէ բենիամենի *թագաւորեաց* ամենայն իէլի. և տէր մեր յազգէ մարդկան կրտսերաց առեալ մարմին և *թագաւորեալ* ամենայն զօրութեանց երկնից: - 426. Երկրորդ՝ զի դաւիթ որ հատանէր զլօդկին սաւուղի, նա՛ *թագաւորէ*: - 427. Չորրորդ՝ զի ցուցանէ եթէ՝ **խ** ամ *թագաւորեաց*, և զայն մինն միա՛յն մեղանչեաց: - 432. Վեցերորդ՝ զի ո՛չ կարէր *թագաւորել*: - 433. Դաւիթ երեսնամեայ *թագաւորեաց*. և տէր մեր լամեայ մկրտեցաւ և ի գերեզմանէն յարեաւ: - 437. Դաւիթ **լգ** ամ *թագաւորեաց*. և տէր մեր մարմնով ի վերայ երկրի: - 437. *Թագաւորեաց* նախ **է** ամ ի վերայ յուդայ, և ապա ամենայն իսրայէլի. և տէր մեր յեօթն դարոյս *թագաւորէ՛* հաւատացելոց, և ի վախճանի ամենայնի...: - 437. Քառասուն ամ *թագաւորեաց* դաւիթ, որ է չորիցս **ժ**. և սկիզբն և կատարումն ամենայնի է՛ տէր մեր: - 437. Եօթներորդ՝ խոստացաւ յաւիտենից *թագաւորել*: - 441. Տասներորդ՝ ի սեւով օծաւ և յերուսաղէմ *թագաւորեաց*: - 441. Եւ տէր մեր յերկրի մարդացաւ, և յերկինս *թագաւորեաց*. իսկ նստիւն ի վերայ ջորոջ, որ է խաչն. զի վիրք

զխաչն ջուարի կոչեն: - 441. Զի ի նո՛յն ամն լինի վախճանն և *թագաւորելն*: - 443. Որ և յերկրորդ գալուստն նախ դատեսցէ. և ապա *թագաւորեսցէ* անվախճան. ընդ որով քահանայագործութեամբ մաքրէ՛ և լուսաւորէ՛ և կատարեալս առնէ միշտ անզրաւ յաւիտենիւ: - 450. Որոց առաջինն պատմէ՛ զսաւուղայ *թագաւորելն*: - 450. Սա երեսնամեայ *թագաւորեաց* ամս **խ**. կեցեալ ամս **հ**: - 452. Սա՛ յերկոտասան ամին *թագաւորէ՛* ամս **խ**. կեցեալ ամս **ծը**: - 452. Իսկ յէմ *թագաւորէ՛* ռոբովամ որդի Սողոմոնի: - 452. Ռոբովամ *թագաւորէ՛* յերուսաղէմ ամս **ժէ**: - 452. Իսկ թագաւորքն առաջին և վերջին. զի կիրակին է *թագաւորելն* աստուծոյ. այժմ առաջին, և զկնի վերջին. կամ աստ կամողացն միայն, և անդ կամողաց և ո՛չ կամողաց: - 627-628. Եւ ապա՛ ընթերցմունք յիշատակ սրբոցն որք աստ նահատակեցան և անդ պսակեալք *թագաւորե՛ն* ընդ քրիստոսի: - 628. Եւ *թագաւորեսցէն*, զհանդիպիլ իւղաբեր կանանցն: - 628. ...և սուրբքն ելեալք ի մարմնոյ և յաղթեալք թշնամոյն՝ *թագաւորեն* ընդ քրիստոսի որպէս ցուցանի յառաջիկայդ: - 706. Եւ ծնունդն ի քորազին. և սնունդն ի բեթսայիդայ. և *թագաւորեալ* ի բիւզանդիայ: - 706. Ընդ երևիլ նեռինն և *թագաւորելն* յերուսաղէմ, եկեսցեն ենովք և եղիա որպէս ասէ մաղաքիա և դարձուսցեն զսիրտս հարց յորդիս. - 709. Եւ յետ մահուն և յարութեան նոցա՝ *թագաւորեսցէ* նեռն այլևս **ժ** և **ե** օր: - 709. Ո՞ր քան *թագաւորէ՛* նեռն: - 709. *Թագաւորէ՛* նեռն զաւուրս **ռ** երկերիւր **հկը**, ըստ դանիէլի: - 709. Զինչ է հազարամեայ *թագաւորելն* ընդ քրիստոսի: - 710. Ցուցանեն այսոքիկ զկատարեալ և զառաւել հանգիստ սրբոցն այժմ յուսով և յետ մահու հոգւով *թագաւորեալ* ընդ քրիստոսի. և ապա յետ յարութեանն հոգւով և մարմնով ո՛չ **ռ** ամօք. այլ անվախճան կենօք...: - 710. Նախ աստուածութեամբն *թագաւորէ՛* ընդ հօր և հոգւոյն: - 710. Նոյնպէս և սուրբքն այժմ *թագաւորե՛ն* և տիրեն ի վերայ ախտից, և յետոյ ի վերայ դիւաց, և ապա ի վերայ մահու: - 711. Նոյնպէս և սուրբք ընդ քրիստոսի յաւիտեանս *թագաւորեն*...: - 711. Ապա ուրենն յա՛յտ է որպիսութիւն *թագաւորելոցն* սրբոց: - 711. Եւ ոսկեղէն պսակն *զթագաւորելն* ընդ քրիստոսի որպէս ցուցաւ: - 712. Եւ վասն այն ասի արքայութիւն, զի նովաւ յերկնաւորսն հանդերձեալ եմք *թագաւորել*: - 754. Ի չորրորդումն ի փառս *թագաւորելոց* եմք: - 755

**ԹԱԳԱՒՈՐԵՑՈՒՑԱՆԵՄ** + Զյովաքազ գերի տարաւ ներքաւով փարաւոն. և *թագաւորեցոյց* զեղիակիմ: - 453

զգուշացիր և անքոյդ մնաս: - 770. Եւ *թէ* յաջոյ յաջուածոց խենեշութիւն մեղկէ, վերնոյն հեշտալեաց հաւատա՛ և ո՛չ խաբիս: - 770. Եւ *թէ* ծախողակի վրիպութիւնք ամփոփե՛ն տրտմականօք, ի հաւատն սփոփեսցիս և մի անկցիս յուսահատեալ: - 770. *Թէ* ի բերան պատերազմի յել անմահին և ի մուտ մահկանացուին. դիցես պահապան բերանոյդ. լար կարմիր շրթանցդ. այսինքն հաւատով սիրով զօրացեալ. և ո՛չ բաժանիլ ի քնասիրութիւն և յարծաթսիրութիւն. յառաքինասիրութիւն. և յախտասիրութիւն. յընկերսիրութիւն և յարատսիրութիւն: - 770-771. Որում ոչ համարիմ զանձն *թէ* հասո՛ւ իցեմ: - 771. Եւ *թէ* այս և *թէ* այն, դու ընկա՛լ զխնդիր մտաց քոց առանց ամենայն երկբայութեանց. իբր ի միոյ կենեղուտ աղբերէ կենաց ուռճալրացեալ և պտղաւէտեալ: - 772. Որք տեսչութեամբն աստուծոյ՝ ի մեռելոցն զառհաւատաչեայն ընկալան յարութեան, *թէ* զիա՞րդ ոչ ունէին ի մտի զանտի կենացն ծանօթութիւն. պատմել մեզ խնդրի: - 774. Տեսանելի՛ է *թէ*՝ զի՞նչ արդեօք իցէ ոչ ունելն ի մտի որ է՛ մոռանալ. այսինքն զանցեալն ո՛չ յիշել. և զհանդերձեալն ոչ տեսանել. իսկ զներկայն ո՛չ գիտել: - 774. Իսկ եթէ բաղդատելով ոք ասիցէ, *թէ* ի մարմնի գոլով ապաշխարեալ սրբեցաւ նա ի ներգործականէն իւրմէ մեղաց. և այս ո՛չ ուրէք երևի ցոյցք ի գիրս սուրբս: - 775-776. Նախ խնդրելի է *թէ* վասն ի՞նչ պատճառի նախահօրն յանցանաց պատժապարտ եղեն և որդիքն: - 776. Ընդ որով *թէ* ազատեցա՞ն առհասարակ ընդ նմին: - 776. Ա՛րդ՝ առաջնոյն ասեմք *թէ*՝ ի պատկեր արարչին ինքնիշխան տէութեամբ և անմեղութեամբ կազմեցաւ առաջինն մարդ: - 776. Ուստի ասացաւ *թէ* մահու մեռցիս. ոչ սոսկ. այլ զկրկնակի նշանակելով մահ. այսինքն զմեռանիլն մարմնով և զպատժիլն հոգւով: - 776. Նա՛խ՝ որպէս ի վերոյ ասացաւ. զի *թէ* ադամ որ սկիզբն և պատճառ էր մեղաւորաց՝ ազատեցաւ. ապա ուրեմն և որդիքն որ վասն յանցանաց նորա՝ ազատեսցին: - 776. Ասեմք *թէ*՝ յիրաւի, որովհետև երևեցաւ տէր մեր ի փրկութիւն ընտրելոց ըստ ամբակումայ, նախահայրն յաւիտեան. իսկ այլք ազատեցան ժամանակեայ: - 777. Եւ *թէ* այս ո՛չ է գրեալ, նա՛ և ո՛չ այն եթէ մեղանչեաց ուրէք զամենայն կեանս իւր բաց ի միոյն. և ո՛չ մեղանչելն կրկին՝ ապաշխարութիւն է առաջնոյն: - 778. *Թէ* ասիցէ ոք, *թէ* աստուած յողորմութենէ կամացն փոխի յայնժամ յանողորմութեան յաթոռ: - 778. Եւ այսոքիկ որք երևին ընդ դէմ միմեանց, կամ առ այլս կամ երբեմն, ո՛չ փոփոխումն ինչ ցուցանեն անփոփոխելոյն. առ մեզ փոփոխելոց ըստ արժանոյն գութ կամ հատուցումն. *թէ* աստ՝ *թէ* ի հանդերձեալն: - 779. Եւ *թէ* նայիս մտօք, թէպէտ առ մեզ փոփոխին տիւ և գիշեր. այլ նա միշտ լոյս և միշտ գիշեր կազմէ ...: - 779. Ասեմք *թէ* այո՛. զի անկումն նոցա մահ է նոցա. այսու հաւասարք: - 780. Դարձեալ ասեմ, *թէ* անունս այս՝ պակասութիւն, նոյն է որ լսի չարչարանք. զի յորժամ կրէ ոք զչարչարանս զայս ինչ կամ զայն, պակասի ի նմանէ այն ինչ կամ այն. այսինքն առողջութիւն, կեանք, և այլն: - 781. Զի այսպէս ուսաք ի սրբազան վեհէն մերմէ ըստ սրբոցն աւանդութեանց. *թէ* ամենայն իր որ բնութեան է պարգև, ան՚ի բաց դնելի՛ է ի նմանէ: - 782. Եւ *թէ* որ ուտէ անարժանութեամբ, դատաստան անձին իւր ուտէ: - 782. Իսկ առ լուծումն խնդրոյս *թէ* վասն է՞ր արդեօք առ նորս շնորհ՝ որպէս աւազանին և կարգին ո՛չ բառնի ընդ բառնիլ շաղկապին. իսկ առ հնովն բարձաւ. որպէս յա՛յտ է ի վերոյ ասիցդ ադամայ և յայլոցն: - 782. Զի *թէ* կորուսեալ էր, այսինքն բարձեալ ամենևին յազգէն ադամայ, ուստի՞ գոյր որդւոց նորա. կամ ո՞րպէս առ ջրհեղեղաւն բառնիւր բարձեալն: - 782. Ասի ի գիրս սուրբս *թէ*՝ ի կատարածի յանուն յիսուս քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի. և ամենայն լեզու խոստովանեսցի զնա աստուած: - 783. Ա՛րդ՝ եթէ ի կատարածի ի հարկէ սքանչելեացն հաւատալ վարձատրելի՞ է *թէ* ոչ: - 783. Իսկ թէ իցէ հաւատ դիւաց, գո՛յ մտածել տղայական կարծեօք՝ *թէ* անկումն նոցա եղև հաւատոց պատճառ է որ է՛ սուտ: - 784. Որք դարձուսցեն զսիրտ հարց յորդիս ըստ մաղաքիայի. այսինքն ուսուցանեն զհաւատն փրկչին զոր հարքն ունէին. և է՛ վարձաւորելի և կարի քաջ. և *թէ* այսպէս և *թէ* այն՝ քրիստոս քարոզի: - 785. *Թէ* վասն զի՞նչ հարկի ամենայն անդրանիկ ե օր աւելի կայ առ ծնողին: - 785. Եւ այլք *թէ*՝ պատրուակ գոն ի խինծս արգանդի բնաւորեալ. յիւրաքանչիւր աւուրս հնգից՝ մին մին քակտին երկամբք. և ապա՛ արձակի ծնունդն: - 785. Յորում *թէ* վասն է՞ր իննամսեայ ծնանին, կամ յաւուր խ շնչաբերին, և որպիսութիւնք նոցա: - 785. Զի *թէ* ոչ գոյր ըստինք առն, ապա և ո՛չ կնոջն առեալ ի նմանէ: - 786. Առ այսոքիւք, *թէ* արտասուքն որ յաչացն հեղու, ընդէ՞ր աղի գոլով, Ո՛չ միայն զվասն էրն խնդրեմ. այլ և զորպէսն դառնալ նմա աղի ընդ երակս աչաց: - 786. *Թէ* զիա՞րդ և որ ի ծիծաղելոյն արտասուքն քաղցր. և ի սրտմտութենէն աղի: - 786. Ընդ այսմ և որ ի ձէնջ արկեալ եղև. *թէ* վասն է՞ր է զի երկու բացասութիւն լինի մի ստորասութիւն. իսկ **բ** ստորասութիւն ո՛չ կազմէ մի բացասութիւն: - 787. *Թէ* զի՞նչ է ասելն ի սահման հաստատութեանն, մասամբ ինչ զօրութեամբ և մասամբ ինչ

ներգործութեամբ: - 787. *Թէ* ասելն ումեմն ի սրբոցն, *թէ* աշխարհի սիւնք դողային: - 788. Եւ *թէ* այս և *թէ* այն, զնոյն իմանամք ասացեալ: - 788

**ԹԷԵՒ կմ ԹԷ ԵՒ +** Իսկ *թէ և* նա՛ սկսեալ՝ պիտո՛յ է և նման սկիզբն: - 25. Իսկ թէ արարչութեանն, ասեն *թէ և* որդի արարա՛ծ է: - 39. Յորմէ յա՛յտ է *թէ և* ի կատարածին ո՛չ հեռանայ: - 42. Թուի *թէ և* այս յոչ պատշաճէն ասի զի վնասեալք էին հաւատովք՝ ո՛չ էր պատշաճ անել նոցա նշանս: - 44. Եւ *թէ և* ըստ աստուածութեանն իմանաս՝ ո՛չ է անտեղի: - 46. Եօթներորդ՝ զի *թէ և* լռեալ է բանն և ոչ արտաբերեալ, բա՛ն է մտացն: - 49. Եւ *թէ և* նա՛ է բնակարան, ապա ո՛չ ինչ ունի քան զմեզ առաւել: - 66. Իսկ *թէ և* նա արտաքուստ ունի զորդիութիւն և զայլսն, գոյ կասկած երբեմն ի բաց մերժել զոր էառն: - 66. Իսկ *թէ և* նա շնորհիւ ունի զորդիութիւնն, զիա՛րդ կարէ տալ ումեք զոր հազիւն հարստացաւ: - 67. ...և *թէ և* նա՛ է ըստ մեզ շնորհիւ, պիտո՛յ է նմա վերնագոյն բնութեամբ որդի մարմնացեալ ի յոր կերպասցի և սա՛ ի նմանութիւն նորա շնորհօք որդի: - 67. Իսկ *թէ և* զերկու բնութիւնն ասես տէր, ընդդէմ խօսիս առաքելոյն որ մի ասաց զտէր մեր յիսուս քրիստոս՝ որպէս և զհայր: - 69. Եւ յայտնի եղև *թէ և* զքրիստոս գոլն ուրանան. և զաստուածն ուրանան այսպիսի առարկութեամբ: - 91. Իսկ *թէ և* որոշակի ասես ուղղափառ մտօք, և ո՛չ այն է զարտուղի. յորժամ ասես աստուծոյ մարմին և աստուծոյ արիւն. զի որ ինչ է՛ ի յաստուած՝ աստուած է և ո՛չ օտար յաստուծոյ: - 92-93. Իսկ հրեշտակաց և մարդկան, Նախ՝ զի մարդիկ միջնորդութեամբ հրեշտակաց առնուն, և ո՛չ անդրադարձեալ. *թէ և* մարդացեալ բանիւն: - 138. Նոյնպէս *թէ և* իցեն հրեշտակք արբանեկեալք ի ստեղծումն գոյից, սակայն մինն է աստուած պատճառ ամենայն գոյից: - 164. Կարծեմ *թէ և* քեզ ծանր թուի հարցումնս այս. սակայն մտաւորաբար լո՛ւր: - 180. Որպէս հաց մարմնոյն քրիստոսի ըստ գոյացութեան և ներգործութեան անապական է. *թէ և* փոփոխի ըստ արտաքին որակացն: - 223. Այսպէս երևի *թէ և* դրախտին պտուղն նորն զինն փոխէ՛: - 224. Երրորդ՝ զի ո՛չ գիտէին զանդրանիկն ժամանակաւ, և ո՛չ զկրտսերն. և լինէր փոփոխումն վիճակաց նոցին. որպէս յակոբ էառ զանդրանկութիւնն եսաւայ. և եփրեմ զմանասէին. *թէ և* սոքա տեսչութեամբն աստուծոյ. այլ նոքա ի պատրանաց լինէին: - 238. Եւ թէ ասիցէ ոք, ապա երևի *թէ և* բանական հոգին ի ծնողա՛ցն հատանի կամ գոյանայ: - 257. Երրորդ՝ զի *թէ և* դառնային մերձ ի մահ, ամենայնքն ընդ ապաշխարութեամբ մեռանէին. և ո՛չ ոք արդարութեան պսակին արժանաւորէր: - 292. Այլ զի տեսանօղքն զարհուրեալք ի ճշմարիտ նշանիցն մովսէսի՝ առ աչօք թուէր *թէ և* կախարդքն այնպէս առնէին: - 335. Հինգերորդ՝ զի հոգի միաւորեալ ընդ մարմնոյ՝ է՛ ի մարմնումն էութեամբ և ո՛չ այլ ուրեք *թէ և* մտօք բազումս տեսանէ: - 478. Իսկ աստուածայինն անեղ էութիւն ամենևին պարզ և մաքուր առաւել քան զիմացականն բնութիւն եղական իմն գոյութեամբ. *թէ և* ո՛չ են միաւորական մարմնոյ: - 479. Տասներորդ՝ զի *թէ և* միաւորի հոգի և մարմին՝ այլ ո՛չ հոգին մարմին և ո՛չ մարմինն հոգի ասի: - 479. Եօթներորդ՝ գիրք սուրբք մարդեղութիւն ասեն բանին. այլ մարդն կոչումն յատուկ արական է և ո՛չ իգական *թէ և* հասարակաց կոչի: - 480. Հարցումն *թէ և* ո՛չ կարի անազան: - 482. Ասեմք *թէ և* այդ ևս է սուտ պատճառ. զի հրէից նախ զատիկն էր և ապա բաղարջակերքն պահք: - 510. Տասներորդ՝ *թէ և* հասարա՛կ է ամենայն ինչ երրորդութեանն, տէրութիւն իշխանութիւն աստուածութիւն և այլն: - 522. Եւ որոց պարգևի մասնաւոր այս շնորհ, *թէ և* ո՛չ բոլորապէս ըստ նոցայն: - 537. Այլ դու ո՛վ այրդ աստուծոյ մաքրամիտ և ճգնազգեաց միայնաւոր սուրբ հայրդ սահակ, *թէ և* զիջանես եղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ. սակայն կարօղ ես և զթերին լնուլ և զյաւելորդն կշռել. և զմեզ օգտեցուցանել ի ներգոյէ՛ քոյին պայծառամիտ սրբութեան սրտի: - 558. Ապա *թէ և* զապաշխարօղքն ի թիւ կալցես, Կաթողիկոսն լինի **Ժ**երորդ. որպէս աստուած **Ժ**երորդ է ի վերայ **Թ** դասուց հրեշտակաց: - 608. Երրորդ, արտասուեմք զմեզ *թէ և* այնպէս հանդիպելոց է մեզ: - 676. Զի *թէ և* սակաւ ժամ լինի մնացեալ ի կենացն որ քան աւազակին ի յելս շնչոյն. և նա՛ յառաջ քան զամենայն արդարս եմուտ ի դրախտն աստուծոյ ընդ տեառն: - 758. Նմին նման և մեք յուսասցուք արժանաւորիլ տեսութեանն քրիստոսի. զի *թէ և* ի դժոխս իցեմք՝ ա՛յն է արքայութիւն մեր. և ո՛չ թէ յերկրի կամ յայլում տեղւոջ ըստ սրբոյն ոսկէբերանի: - 759. Յիրաւի ապա ըստ այսմ օրինակի՝ որք ի մշտնջենաւորէն փոխանցին առ երազ սնոտեաց, ոչ ունիցին ինչ ի մտի. *թէ և* անդրադարձեալ աստի անդ մնասցէ յիշատակութիւն որպէս ասացաւ: - 775. Իսկ դժոխայինքն *թէ և* զղջան կամ խոստովանին, արտաքոյ սոցա՛ է. վասն որոյ ո՛չ հանդիպին թողութեան...: - 780. Բարւոք ասացաւ յարարչէն. զի *թէ և* բնութիւն թարց երևակայութեան, և արհեստ հանդերձ երևակայութեամբ, սակայն կամք արարչական ետ նոցա բնական և բանական կարողութիւն. և ոչ ինչ վայրապար կազմեն զտեսակ գոյացական և զտեսակ պատահական. խնդրելով ոմն պարզ

նիւք. և ոմն տեսակացեալ: - 786. Դարձեալ՝ զորօրինակ **բ** անկատարք լինին մի կատարեալ. իսկ կատարեալն *թէ և* կրկնեսցի՝ ո՛չ է անկատար. այսպէս և ասացեալքդ: - 787

**ԹԷՈԴՈՍ** - Զի պողքէր քոյր թագաւորին *թէոդոսի* ի կուսանաց վանս էր. և պղծեցաւ պոռնկութեամբ ի մարկիանոսէ. և ապա՛ եղև կին նմա. և ասեն թէ ի նեստորէ՛ էր մկրտեալ: - 542

**ԹԷՈԴՈՍ ՄԵԾ** - Երկրորդ՝ յետ **կե** ամի եղև կոստանդնուպօլսի ժողովն ի չորրորդ ամի թագաւորութեանն *թէոդոսի մեծի*: - 542

**ԹԷՈԴՈՍ ՓՈՔՐ** - Երրորդ ժողովն զկնի խբ ամի եղև յեփեսոս ի թագաւորութեանն *թէոդոսի փոքու* ի **ժա** ամի նորին: - 542

**ԹԷՈԴՈՐԻՏՈՍ** - Եւ էր սիրելի փլաբիանոսի. և լևոնի. և *թէոդորիտոսի* զորս նզովեցին յեփեսոս. և վասն նոցա վրէժխնդրութեանն արարին ժողով **ոլզ** եպիսկոպոսաց. և ընկալան զթուղթն լևոնի. և զնզովեալն յեփեսոս զփլաբիանոս ընկալան...: - 542-543. ...և *զթէոդորիտոս* եդին գլուխ ժողովոյն վասն մարդահաճութեան թագուհւոյն և թագաւորին. և զդէոսկորոս հայրապետն աղէքսանդրու, և զպետրոս անտիոքու, և զտիմոթէոս և զանատօլ, և զայլս բազումս խոտեցին. և վկայեցին նոքա ճշմարտութեան: - 543. Եւ սուրբն սիմէոն սիւնակեացն այրեաց զթուղթն դաւանութեանն քաղկեդոնի՝ զոր գրեալ էր թագաւորն մարկիանոս աղաչանօք առ նա՛. և նզովեաց զքղտատարն որ էր *թէոդորիտոս* գլուխ ժողովոյն: - 543

**ԹԷՈԴՈՐՈՍ** - Եւ աքսորեցին *զթէոդորոս* զփարանու եպիսկոպոսն: - 543. *Թէոդորոս* անտիոքայ. **զճկե** եպիսկոպոսունքն: - 544. Որպէս յաղուհացս զառաջին շաբաթն *թէոդորոսի* կոչեմք. և զմիւսն ղազարու. կամ այլ ինչ: - 650

**ԹԷՈԴՈՒՊՕԼԻՍ** - Երկրորդն է ժողովն *թէոդուպօլսի*, որ այժմ կոչի կարնոյ քաղաք. ո՛չ այն զոր յետոյ հերակլ քաղկեդոնիկ ժողովեաց և խափեաց զեզր կաթուղիկոսն հայոց: - 544

**ԹԷՈՎՊԱՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն ...*Թէովպացիք*: - 298

**ԹԷՈՓԻԼՈՍ** - Եւ պատրիարգունք էին անդ, Գէորգէոս կոստանդնուպօլսի. *Թէոփիլոս* անտիոքու. Պետրոս աղէքսանդրի: - 543. Որպէս Թադէոս ի հայք զադէ և *զթէոփիլոս*: - 546. Զի առաքեալն թադէոս յորժամ ձեռնադրեաց զադէ յուռհայ, և ապա՛ ի կեսարիայ եկն և ձեռնադրեաց առաջին եպիսկոպոս *զթէոփիլոս*. զայն յորոյ անունն գրեաց Ղուկաս զաւետարանն և զգործքն առ *թէոփիլոս*: - 548. Եւ *թէոփիլեանք* ոմանք կոչեցեալք, արարին զերկու ստեղունս ասացեալ. և այսպէս աւարտեցաւ **ժ** ձայնքն: - 640

**ԹԷՊԷՏ, ԹԷՊԷՏ ԵՒ +** Առ այս ասեմք, *թէպէտ* ստորնային մարմինք կառավարին վերնային մարմնովք, այլ մարդկային ներգործութիւնք կառավարին անձնիշխան կամօք. և անձնիշխան կամքն ո՛չ նըւաճի ի ներքոյ երկնային մարմնոց: - 10. Ասեմք առ այս, թէ սնունդ և աճումն մարմնոց, տնկանին է և ոչ աստեղաց. *թէպէտ* օգնեալ լինի ի նոցանէ: - 10. Եւ *թէպէտ* մարմինք մարդկան են տարրականք, այլ բարի և չար ներգործի ըստ կամաց և ո՛չ ըստ բանականութեան: - 10. Ասեմք առ այս, *թէպէտ* խառնուածք մարմնոյն լինին ի շարժմանէ՛ աստեղացն, այլ բազումք անձնիշխան կամօք նըւաճեն զվատախառնութիւն մարմնոյն, և գործեն զբարիս: - 10. Ասեմք առ այս *թէպէտ* ունին զօրութիւնս, բայց այլ և այլ կերպիւ. զի բոյսք որք յերկրի են դարմանիչք և բժշկութիւնք մարմնոց. այլ երկնային աստեղքն են արարիչք լուսոյ և ժամանակաց. և ի նշանս ապագայից. զի յամենայն ուստեք տեսեալ պատրաստեցին մարդիկք. որպէս ասէ գիր, եղիցին լուսատու լինիլ երկրի. ի ժամանակս և ի նշանս: - 12. Երկրորդ և *թէպէտ* իցեն տարրականք և ներհակ որակք՝ յիմիասին դիպիլն՝ ո՛չ միշտ հակակային իրերաց. այլ եթէ կամք խնամողին հրաման տացէ: - 12. Նախ՝ *թէպէտ* աստուած տեսանէ զամենայն նախատեսութեամբ և ո՛չ ինչէ արտաքոյ տեսութեանն աստուծոյ, սակայն տեսանէ զոմանս ի հարկէ՝ և զոմանս ի ներընդունակութիւնէ լինիլ: - 15. Դարձեալ ասեմք՝ *թէպէտ* տեսանէ աստուած զամենայն նախքան զլինիլն իւրեանց, սակայն տեսութիւնն աստուծոյ ո՛չ հարկ է ի վերայ նոցա լինիլ չար կամ բարի: - 15-16. Մ՛րդ՝ *թէպէտ* չարն ո՛չ է յաստուծոյ, այսու ո՛չ լինին երկու աստուածք. կամ **բ** սկիզբն. զի չարն ո՛չընչութիւն է. և ո՛չընչին սկիզբն ո՛չ է աստուած. զի աստուած սկիզբն էութեանցէ: - 16. Նախ թէ աստուած ստեղծ զկամքն բարի. և զբարին եդ առաջի կամիլ. իսկ նա անձնիշխանութեամբ հեռացեալ ի բարւոյն՝ գտա՛կ եղև չարին. զի չարն ո՛չ այլ ինչ է, բայց հեռացումն. կամ պակասութիւն բարւոյ. ապա ուրեմն *թէպէտ* բանն և կամքն է աստուծոյ, այլ կամիլն և ընտրելն զչարն՝ ոչ է յաստուծոյ, այլ կամացն և բանին: - 16. Նախ թէ աստուած ստեղծ զկամքն բարի. և զբարին եդ առաջի կամիլ. իսկ նա

անձնիշխանութեամբ հեռացեալ ի բարւոյն՝ գտա՛կ եղև չարին. զի չարն ո՛չ այլ ինչ է, բայց հեռացումն. կամ պակասութիւն բարւոյ. ապա ուրեմն *թէպէտ* բանն և կամքն է աստուծոյ, այլ կամիլն և ընտրելն զչարն՝ ոչ է յաստուծոյ, այլ կամացն և բանին: - 16. Իսկ չար փոխանակ բարւոյ ո՛չ առնէ ըստ որում անիրաւութիւնէ. այլ առնէ երբեք ըստ որում նախախնամութիւնէ. զի ի չարէն լինիցի բարի. *թէպէտ* մեզ չար երևի, այլ այս ևս բարի է. որպէս հիւանդութիւն. փորձութիւն. և այլն: - 18. Եւ բարին մի է և ի միո՛յ պատճառ է որէ աստուած. *թէպէտ* առ մեզ ի բազումս բազմանայ: - 23. Եւ որպէս լոյսն միշտ լոյս է, *թէպէտ* պակասեցաւ ի յօդոյն. ուստի յայտ է՝ զի դարձեալ լուսաւորէ: - 23. Նոյնպէս և բարին միշտ բարի է. *թէպէտ* ի հոգւոյն պակասեցաւ, դեռևս ի յէութեան է. զի է է բարին. և էութիւն ո՛չ կորնչի: - 23. Երրորդ՝ ոչ էն ըստ ինքեան ո՛չ բարի է և ո՛չ չար. և չարն ըստ ինքեան չա՛ր է. *թէպէտ և* բարի: - 23. Չինգերորդ՝ ոչ ինչն ի յենթակայս եղեալ՝ ո՛չ ներհականայ էի. *թէպէտ* ըստ ինքեան ներհա՛կ է. և չարն ի յենթակայն երևեալ՝ ներհականայ և կորուսանէ՛ զբարին. *թէպէտ* ըստ ինքեան ոչ ինչ է և ոչ գոյ: - 23. Չինգերորդ՝ Չայր և Չոգի ո՛չ մարմնացեալ. *թէպէտ* մի բնութիւն է երրորդութեանն: - 30. Այլ և ատելութիւնն դարձուցանէ զմիտս բազմաց ի հաւատոցն. որպէս ատելութիւն և նախանձ փարիսեցւոցն՝ ո՛չ տային թոյլ հաւատալ ի քրիստոս. *թէպէտ* տեսանէին զամենայն նշանսն զորս առնէր...: - 32. Երրորդ՝ զի նոքա զաստուծոյ փառսն առաւելուին *թէպէտ* զճշմարիտն անգիտանային: - 33. Դարձեալ՝ ո՛չ կարէ ծնանիլ որդի զհայր՝ *թէպէտ* ունի զհօր բնութիւնն. որպէս դու ծնեալ ի հօրէն քո՝ ո՛չ կարես ծնանիլ զհայր քո և լինիլ հայր հօրն քում. *թէպէտ* ունիս յամենայնի զբնութիւն հօր քոյ: - 38. *Թէպէտ* մեկնեն և այլ ազգ, թէ որ զմարդկայինս բնութիւն հաւասարեցոյց փառաց իւրոց և հաղորդ արար աստուածութեանն, ոչ ինչ զրկումն համարեցաւ. զի բնութիւնն մի է: - 39-40. Նախ ասեմք թէ՝ թագաւոր էր այր կերօղ և արբեցօղ և վաւաշոտ. զի՞նչ իցէ ի համար բան նորա. *թէպէտ* կարի ասել ո՛չ կարեմք: - 40. Երկրորդ և ոչ վասն յետին յանցանացն կռապաշտութեան եպերեմք զիմաստութիւն նորա և ո՛չ ընդունիմք. *թէպէտ և* հնա՛ր է պատճառել թէ այնքան իմաստութիւնն, զնա ո՛չ պահեաց հաճոյ մնալ աստուծոյ: - 40. Այլ զայս երկբայիս յաղագս ոչ գիտելոյ քոյ թէ «մինչդ» ամենուրէք ո՛չ որոշէ ընդդէմ հանդերձելոյն. զի *թէպէտ* նշանակէ՛ զկէտն ուր մինչն է եդեալ, այլ զոր ա՛նդր է քան զնա՝ ո՛չ ուրանայ: - 42. Եւ պատաճառն է այս. զի *թէպէտ* մի է բնութիւն ծնողաց և ծնիցելոց, բայց ոչ ունին զմի կամս. զի հատեալ բաժանեցաւ որդին ի հօրէն: - 45. Իսկ բանն աստուած է՛ ծնեալ ի հօրէ՝ այլ ո՛չ բաժանեալ. որպէս ո՛չ բաժանի բան՝ ի մտաց. *թէպէտ* ի բազում լսելիք մտանէ. և թէ ի վերայ քարտիսի մարմին զգենու: - 45. Չորրորդ՝ ի նոցունց այլք. որպէս մեղուք ի մեղուշ արջառոյ. *թէպէտ* այժմ ի ծաղկանց լինին: - 53. Ապա ուրեմն և հայր և որդի և հոգի *թէպէտ* թըւով **գ** են, այլ ոչ **գ** բնութիւնք: - 55. Պատասխանեմք եթէ՝ *թէպէտ* հոգին ունի զբնութիւնն ի հօրէ՝ սակայն ո՛չ ծննդեամբ որպէս որդի, այլ բղխմամբ. որպէս շունչն և բանն ունին զէութիւնն հոգւոյն այլ և այլ կերպիւ. և որպէս ադամ յառաջ էած յինքենէ զսէթ և զևա. զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ. և ունին երեքեանն զմի և զնոյն բնութիւն մարդոյ: - 60. Առաջնոյն ասեմք. *թէպէտ* բանն աստուած բնութեամբ միաւորեսցի ընդ մարդկութեանն, ո՛չ կրէ շփոթումն և կամ խառնակումն ինչ: - 76. Եւ զնոյն բանն աստուած՝ աստուածութեամբն աստուած, և մարդկութեամբն աստուած. զի անբաժանելի՛ է. *թէպէտ և* էր նախ քան զմարդեղութիւնն աստուած, այլ յետ անճառ միաւորութեանն մարմնովն է աստուած: - 77. Իսկ աստ *թէպէտ* միութիւն է, բայց ոչ է բաժանումն անձանց. այլ ըստ միութեան բնութեանն մի՛ է անձն: - 80. Իսկ որք յետ միաւորութեանն բ ասեն բնութիւնս ի քրիստոս, և բաժանեն զկամս, և զգործս, և զկիրս, *թէպէտ և* անձն մի համբաւեն: - 81. Եւ *թէպէտ* համաձայն մեզ այլք ասացին մի անձն՝ բայց թիւրապէս: - 83. Եւ *թէպէտ և* ոմանք նմանապէս մեզ ասեն մի բնութիւն՝ բայց շփոթեալ: - 83. *Թէպէտ* բնութեամբ միաւորին՝ տարբերութիւնն ո՛չ բառնի. զի տարբերութեանցն մնալ՝ խափանումն ո՛չ առնէ միաւորութեանն. որպէս հոգւոյ և մարմնոյ. ոսկւոյ և հրոյ. և ծանի՛ր՝ զի կրկին է տարբերութիւն. բաղկացական և բաժանական: - 85. Այլ բաժանմամբ բնութեանցն՝ բաժանին և անձինքն ի քրիստոս. *թէպէտ* պատճառելով անձն մի համբաւեն: - 88. Աիա՛ այս ի կարճոյ բացայայտութիւն ծածկեալ ամբարշտութեանց, որք բ բնութիւնս սահմանեն ի վերայ միոյն քրիստոսի. *թէպէտ* անձն մի համբաւեն համաձայն մեզ, սակայն որոշմամբ բնութեանց լինին տարաձայն մեզ և եկեղեցեացն աստուծոյ: - 90. Երրորդ՝ զի ո՛չ է նման առ մեզ և առ նա մասն և բոլորն. զի *թէպէտ* մասունք մարդոյ՝ ո՛չ ունին զկոչմունս բոլորին, սակայն մասունք մարմնոյն քրիստոսի՝ կոչին և ունին զբոլորին էութիւն: - 92. Իսկ ի վերն քան զամենայն անուն. *թէպէտ և* անուանեին և յետու՝ և օծեալք բազումք ի հինն և ի նորս: - 95. Նմանապէս և հասարակն *թէպէտ* բազում է, այլ երկոտասան գլխով

նշանակի. նախ Բնութիւն. որ նոյն է էութիւն. ապա Բարութիւն. Կամք. Անմահութիւն. Իմաստութիւն. Լուսաւորութիւն. Գեղեցկութիւն. Անփոփոխութիւն. Ցնծութիւն. Փառք. Իշխանութիւն. և Արարչութիւն: - 105. *Թէպէտ* առ մեզ տեսանի անսկիզբն յառաջին կողմն, և անվախճանն ի վերջինն. այլ ի նա ո՛չէ առաջին և վերջին. զի պա՛րզ և միեղէ՛ն է: - 115. Չորրորդ՝ որ սկիզբն ունի և կատարած. և *թէպէտ* հասարակ սոքա յաւիտեանք կոչին, այլ ունին յատուկ անունս: - 115. Պատասխանեմ առաջնոյն, *թէպէտ* մի և նոյն ուրացական մասնիկն որ է ո՛չն՝ գործէ՛ զուրացումն և զբառնալն, այլ ուրացումն և բառնալն ո՛չ է նոյն. զի բազում պատահի որ գործին նոյն է որպէս ձեռն. այլ գործելն ո՛չ է նոյն. որպէս կտրելն և կարելն: - 124. Վեցերորդ՝ զի *թէպէտ* անա՛րգ են՝ ունին զբարի գոլն ստեղծմամբ և նախախնամութեամբ: - 132. *Թէպէտ և* զայս կարգ փոխեն ոմանք և զզօրութիւնն և զպետութիւնն աւանդեն որ մեզ ո՛չ է հետևելի. այլ սրբոյն դիոնիսեայ որպէս ասացաք: - 135. Եւ այնչափ կուրացեալ է՝ մինչ զի պատերազմի ընդ դէմ աստուծոյ. *թէպէտ* գիտէ զայն լինիլ ինքեան ի չար, զի զոր ինչ չար գործէ անձնիշխան կամօքն, մեղանչէ մահու չափ: - 146. Եւ *թէպէտ* լոյս կերպարանի այժմ, բայց չտեսնու զլոյս իւր. որպէս և ո՛չ մեք զմեր հոգւոյս: - 147. Իսկ «առաւօտի», զի ի սկիզբն ստեղծման աշխարհի ընդ բաժանիլ ի մէջ լուսոյն և խաւարին՝ յայնժամ միայն ծագեցին յառաջին օրն յանկարծակի և անկան յերկնից. *թէպէտ* ոմանք յերկրորդ օրն ասեն: - 148. Եւ *թէպէտ* անկան և եղեն դևք՝ գոյացականքն մնացին առ նոսա. և հրեշտակ լուսոյ կերպարանին ըստ առաքելոյն: - 151. Երրորդ՝ և *թէպէտ* իցեն բազում արբանեակք շինուածոյն, այլ մինն է արհեստաւորն և պատճառ: - 164. Ասեմք առ այս Նա՛խ՝ եթէ թողութիւնն է ի զղջումն. և կարգն է ի յանձն ապականեալ. ապա ուրեմն իրաւի *թէպէտ* զթողութիւն ընկալաւ զղջմամբն, սակայն ի կարգն ո՛չ մտանէ ապականեալ և շրջեալ անձամբ և բնութեամբ, զորօրինակ բեկեալ և կցեալ անօթ՝ ո՛չ թւի ի կարգ անարատիցն: - 166. Դարձեալ ասեմք, *թէպէտ* զթողութիւն ընկալաւ իսկապէս, և զպատիժս կրեաց հատուցմամբն, սակայն մնաց կնիք ապականութեանն ի յանձն որպէս ասացաք: - 166. *Թէպէտ* արարածք յետոյ եղեն, այլ ոչ են պատահումն արարչին: - 170. Նախ՝ զի զգոլն իւրեանց ունէին ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. *թէպէտ* յետո՛յ ընկալան գոյացութիւնս յինքեանս. որպէս տաճար ի միտս շինողին: - 170. Երկրորդ՝ *թէպէտ* յետոյ եղեն արարածք, ո՛չ են պատահումն. որպէս և բանն էր յառաջ, և յետոյ եղև մարմին. այլ մարմինն բանին ո՛չ է պատահումն. և որդի հօրն ո՛չ է պատահումն *թէպէտ* յետոյ ծնանի զի առ ինչ է հօրն: - 170. *Թէպէտ* ուր ուրէք զհանգիստ նշանակելով նստիլ ասի աստուծոյ, և ի յօգնութիւն ժամանել: - 172. Եւ *թէպէտ* ի յէութիւնս իւրեանց յետոյ, սակայն ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ, գոյին յառաջ քան ըզլինիլն իւրեանց էութեամբ, և յետոյ եղեն ըստ նոյն նմանութեան: - 172. Եւ դարձեալ է՛ ոչ էակ՝ որ *թէպէտ* ներգործութեամբ ո՛չ է, սակայն զօրութեամբ ունի զգոլն. և յայսպիսի յոչնչէ եղեն արարածք ամենայն. ապա ուրեմն յայտնի է հարցումնդ: - 173. Այլ և ո՛չ տեղի պատահական. *թէպէտ* ի նշան պատւոյ ասին յերկինս. այլ ոչ իբր ի մարմնական տեղւոջ: - 174. Այլ *թէպէտ* աննիւթ է աստուած՝ ո՛չ է անկարգ զնիւթականքս յառաջ ածել ըստ այսմ օրինակի. զի նիւթն որ է՛ գոյացութիւն մարմնական՝ ունի որակութիւնս իմն մարմնական. որպէս քանակ. որակ. և այլքն: - 175. Եւ մարմնով ո՛չ բաժանին սոքա. *թէպէտ և* մանր փոշի լինին՝ ունին զքանակն զորակն և զայլն. զի անմեկնելի որոշմունք են գոյացութիւն և պատահմունք: - 175. Եւ *թէպէտ* այսպէս ասացաւ, սակայն գոյացաբար է՛ աստուած յիմանալի երկինս. և կարողաբար ամենայն ուրէք: - 180. Հինգերորդ՝ զի դիրքն իւր մեծ է. *թէպէտ և* առ մեզ փոքր: - 186. Մերձ եկեալ ի նոյն կենդանակերպն՝ սակաւ լոյսն առնու ի նմանէ յարևելից կողմանէ. *թէպէտ* մեզ ի յարևմտիցն երևի. այլ նմա՛ արևելից մասն է որ զլոյսն առնու: - 187. Եւ զի ո՛չ հանապազ խաւարին. զի ո՛չ միշտ ընդ նոյն շաւիղս ընթանան. *թէպէտ* հանդիպին ընդ նոյն կենդանակերպն: - 187. Նոյնպէս և ջուր *թէպէտ* ջերմանայ, ո՛չ թեթևանայ: - 202. Իսկ այլք ասեն թէ՝ վասն առաւել բարձրութեանն՝ լոյս արեգականն ո՛չ երբէք հեռանայ ի նմանէ. *թէպէտ* ի ներքոյ երկրի անցանէ. որպէս լուսինն *թէպէտ* ի վերին կամարն լինի, զլոյսն առնու յարևէն որ ի ներքին կամարն: - 222. *Թէպէտ* ըստ նիւթոյն յապականացու երկրէ է, այլ ըստ կատարման յանապականութիւն փոխեցաւ: - 225. Իններորդ՝ զի մայր մեր հողն է. և սեղան և տեղիք և գերեզման. *թէպէտ և* այլ տարերքն են մեզ ազգականք. այլ մեք ի մօրէ՛ ծնանիմք: - 229. Այսպէս և մարդն *թէպէտ* յետոյ ստեղծաւ, մեծ և պատուակա՛ն է քան զամենայն երևելի արարածս: - 230. Զի *թէպէտ* ըստ ներգործութեանն բաժանին երբեմն ի բաժանելի մարմնոյն՝ զի առանց մարմնոյն ո՛չ կարեն ներգործել սոքօք, այլ անբաժանելի մնան ըստ էութեանն ի հոգին. որպէս ցուցանելոց եմք յառաջիկայսդ: - 249. Նախ՝ զի նիւթն այն ունի

առ ինքն բնական զկենդանութիւն տնկականին. և տնկականն մա՛սն է զգայականին. և զգայականն բանականին. և սոքա ո՛չ որոշին ի բոլորէն. զի մի են էութեամբ ի մարդն *թէպէտ* ա՛յլ են ներգործութեամբ: - 254. Եւ կամ որպէս զօրք թագաւորի՝ նախ հասանեն յիջևանն, և թագաւորին ասի իջևանն. *թէպէտ* յետոյ գայ: - 255. Այլ այժմ տնկականն գո՛յ ի նմա *թէպէտ* ո՛չ շունչն և ոչ բանն: - 256. Պատասխանեմք եթէ՝ ոմանք յարմատս ունին զսերմն. ոմանք ի ծայրքն. կէսք ի տերևն. այլք ի կեղևն. *թէպէտ և* սոցա սերմնական զօրութիւնն է՛ ի մէջն, այլ առաւել կենդանւոյն: - 256. Ասեմք առ այս. զի *թէպէտ* ա՛յլ է գործ ստեղծման և ա՛յլ նախախնամութեան. զի սեղծանելն է առնել իր ինչ ի յոչընչէ. և նախախնամելն՝ զեղեալն փոխանորդութեամբ ի նոյն տեսակն պահել: - 257. Զի *թէպէտ* մի իրէ նախախնամութիւնն աստուծոյ առ արարածս, այլ զամենայնս ո՛չ միապէս պահէ և նախախնամէ: - 258. *Թէպէտ* յայլ և այլ ժամանակս երևին սոքա. այլ մի են էութեամբ: - 259. Ասեմք *թէպէտ* նիւթն ի չորից տարերց է, այլ տնկականն զօրացեալ քան զնիւթն՝ ըստ իւրոյ մասանցն ծնանի. զի ծնանիլն տնկականին է. այլ և ունի զտարերացն թիւ. զի յամիսս չորս կատարի այն՝ որ յառաջ ծնաւ: - 262-263. Եւ *թէպէտ* զնանիր խոտոյ ասեն ի նոյն ժամն բուսանիլ և կատարիլ և խամրիլ, ի նոյն թուոյս ոչ ելանէ ժամուք կամ մասամբք: - 263. *Թէպէտ* ոմանք փոխեն զայս կարգ, ո՛չ ընդ դէմ բանիցս կարգի. այսպէս ասելով: - 265. Հինգերորդ՝ զի կողնէ աման և տեղի երիկամանց. յորմէ շարժի ցանկութիւնն. զի *թէպէտ* ո՛չ շարժէ զնա. այլ ազդումն ինչ ունի զնմանէ: - 276. Վեցերորդ՝ զի *թէպէտ* ի ձեռագործ հանդերձից մե՛րկ էին, սակայն ի լուսոյ շնորհաց զարդարեա՛լ էին: - 278. Դարձեալ սիրեցաւ յաստուծոյ, զի առաջին մարտիրոս սա՛ եղև. *թէպէտ* թոյլ ետ իջանել ի դժոխս, զի ի պատճառս նորա խնդրեսցին այլքն. որպէս ի պատճառս ղովտայ զերծան սոդոմայեցիքն աբրահամաւ: - 287. Իսկ ենովքայն *թէպէտ* գիրք ո՛չ յայտնեն, բայց միայն թէ «ենովք հաճոյ եղեալ աստուծոյ՝ փոխեցաւ յերկինս»: - 290. Ո՛չ կերին. զի *թէպէտ* ժողովեաց, սակայն ո՛չ կերին. այլ շնորհօքն աստուծոյ կացին որպէս մանուկն յարգանդի մօրն ապրի: - 294. Դարձեալ՝ խառնակիլ լեզուին ա՛յն է որ ընդ պատուհասն զբարութիւնն խառնեաց. զի *թէպէտ* բաժանումն լեզուաց պատուհաս երևի, այլ պիտանի՛ է: - 297. Եւ *թէպէտ* կարելի՛ է ըստ բազմազան եղանակաց այս կարգ համեմատութեան ի սոյն խնամով աշխատասիրաց: - 304. Երրորդ՝ անդրանիկ են հրեշտակք քան զմարդիկ ըստ կարգի և պատւոյ. *թէպէտ* բանականեմք որպէս նոքա: - 309. Չորրորդ՝ անդրանիկ է հոգին քան զմարմին բնութեամբ և պատւով. *թէպէտ* հաւասարք են ամանակաւ գոյացեալք: - 309. Վեցերորդ՝ անդրանիկք են և ընտրեալքն աստուծոյ. որք նախքան զլինիլն աշխարհի ընտրեցան. *թէպէտ* յետոյ ի ժամանակի ըստ հասարակաց գոյացան և կատարեցան: - 309. Եւ *թէպէտ* ելաց՝ ո՛չ եգիտ դարձեալ. զի ո՛չ էր բոլոր սրտիւ և ջերմ սիրով: - 309. Զի *թէպէտ* հրէա՛յքն խաչեցին, այլ իւր կամաւն մեռաւ: - 316. Եւ *թէպէտ* յովսէ՛փ իջոյց ի խաչէն, և յովսէփ և նիկոդիմոս պատեցին, այլ ինքն կամաւն էջ ի բազուկսն յովսեփայ և պատեցաւ զմռով: - 316. Նա՛խ՝ զի *թէպէտ* ի դէմս յոբայ սուտ էր խօսք նոցա, այլ ի դէմս ամենայն մեղաւորաց ճշմարի՛տ է: - 325. Սոյնպէս բարեկամք յոբայ *թէպէտ* շարժեալք էին ի բանսարկուէն, այլ աստուծոյ հոգւովն զօգտակարսն բարբառէին. վասն այն գրեցան բանք նոցա ի սուրբ գիրս: - 325. Երրորդ՝ զի չափով և թուով և կշռով տայ աստուած զտանջանս մեղաց. *թէպէտ* մեզ անգիտելի՛ է: - 333. Եւ թէ լիցի երկաթ և ո՛չ սուր, և ո՛չ է պիտանի. որպէս բոլոր երկաթն թէ հարցէ զկենդանին և սպանցէ, ո՛չ է ուտելի, զի *թէպէտ* զարիւնն հանէ, այլ ո՛չ համանգամայն զշունչն և զջերմութիւնն: - 366. Այլ ուղիղն, զի օրէնքն *թէպէտ* ըստ խորհրդոյն փոխեցաւ, այլ ըստ իրին մնաց յաւիտեան. զի օրինակն էանց, այլ ճշմարտութիւնն մնաց: - 369. Իսկ դադան ամենևին անզեղջ մնաց. *թէպէտ* գնաց մովսէս ի խորան նոցա՝ ո՛չ զղջացան: - 382. Եւ *թէպէտ* զարհուրելի բանս յերկարեաց ի խրատս, ո՛չ լուան. վասն որոյ ո՛չ սրբեցան: - 382. Իսկ աւելորդ ծորումն *թէպէտ* անանգոսնելի է, այլ ակամա՛յ է. և զակամայն ո՛չ կրեաց: - 383. Վեցերորդ՝ զի *թէպէտ* համբարձաւ յերկինս, ընդ մե՛զ է զամենայն աւուրս որպէս ասաց: - 385. Այլ՝ արձակեալ կինն ո՛չ դառնայր յառաջին այրն վերստին. *թէպէտ* մեռանէր վերջին մարդն: - 400. Զի քրիստոնէութիւն որպէս մկրտութիւն և այլն՝ անբաժանելի՛ է ի հոգւոյն. *թէպէտ* ուրանայ լեզուաւ և գործով: - 401. *Թէպէտ* ո՛չ կատարեմք զօրէնսն՝ ո՛չ եմք ընդ անիծիւք նորա վասն երից: - 403. Չորրորդ յա՛յտ է, զի *թէպէտ* սրտմտի՝ ո՛չ յինքենէ. այլ մե՛ք հարկանե՛մք զնա ի գործն, անդարձ լինելով մեր: - 408. Որպէս դաւթին յետ զղջմանն յիշատակութիւն մեղացն մնաց, ապա նո՛յնպէս և ամենայն մարդոյ մնասցէ՞ *թէպէտ և* խոստովանի: - 432. Եւ յայս ասեն հերձուածօղ ազգն Ֆռանգաց, *թէպէտ* խոստովանի՛ն աստ, յիշատակի՛ մեղքն ի դատաստանին: - 433. Երրորդ՝ ցուցանէ զպտուղ դրախտին նոյնպէս գոլ առանց

յաւելուածոյ և առանց նուազելոյ. *թէպէտ* կերակրիւր: - 444. Սոքա ըստ իրին ո՛չ առաւելուն և ո՛չ նւազին. *թէպէտ* հաղորդեալքն առաւելուն և նւազին ըստ ունակութեան: - 444. Եւ *թէպէտ* աստուած արդար է և ողորմած, սակայն յատկագոյն ասի ողորմած քան արդար: - 459. Զի *թէպէտ* փակեալ էր օրէնքն խառնիլ երկուց ցեղիցն ընդ միմեանս, սակայն ղևտացւոցն ո՛չ գոյր ժառանգութիւն և բաժին, խառնեին երբեմն ընդ թագաւորական ազգն յուդայ: - 461. Եւ գիտելի է, զի *թէպէտ* մեծագո՛յն է ըստ ինքեան սրբութիւն արգանդին քան զսրբութիւն մկրտութեանն. այնու, զի բառնայ զդիւրասահութիւն մեղանչելոյն: - 462. Հինգերորդ, որդի կնոջ ասի ոք՝ որ լինի մարմին ի նմանէ. *թէպէտ* հոգին յաստուծոյ է: - 466. Նոյնպէս որդին աստուծոյ որդի է կուսին որ էառ մարմին ի նմանէ. *թէպէտ* աստուածութիւնն ի հօրէ է. ապա ուրեմն աստուածածին է կոյսն: - 466. Վեցերորդ, մայր մարդոյ ասի կինն որ ծնաւ զմանուկ. *թէպէտ* հոգին ո՛չ է ի մօրէն. այլ վասն միաւորեալ մարմնոյն մարդածին կոչի: - 466. Եւ *թէպէտ* կատարեալ և լի և անթերի էին մասունք մարմնոյն քրիստոսի. այլ ա՛յն քան փոքրիկ, մինչ զի հազիւ անկարէր ընդ տեսութեամբ մարդոյ: - 470. Այլ և անդրանիկ ծնաւ ի մօրէ առաջին ծնունդ. *թէպէտ* ո՛չ ունի եղբար ի կուսէն, անդրանկութիւն իւր ո՛չ խափանի: - 472. Յետ այսորիկ երկրորդ միաւորութիւն սովորեցաք կոչել *թէպէտ և* ո՛չ իսկապէս՝ և զանհամանիւթից ոմանց. և կամ զհամանիւթից մարմնոց յարադրութիւն. որոց ընդ մէջ է մակերևութիւն միայն: - 476. Ո՞ր քան ևս քահանայապետին որ զերկոտասան օր պարտ էր խնկօք պաշտել ի մէջ տաճարին ի ժամ աղօթիցն. *թէպէտ* ի սուրբն սրբոց միանգամ ի տարւոջն: - 483-484. Անմարթ էր թողուլ զժողովուրդն ի դրան տաճարին և մերձիլ յանկողինս. և ըստ օրինացն գօրեայ սրբութիւն ստանալ. որ անհնա՛ր է ամենևին. *թէպէտ* ասեն՝ գոյր ա՛յլ քահանայապետ որ զկարգ պաշտամանն կատարէր: - 484. Զի **բժ**ան օրն *թէպէտ* պակաս է ի թիւս տարւոյն, սակայն սկիզբն է տարւոյն: - 484. Զոր օրինակ՝ անցեալ լինի մին ժամն յաւուր՝ կիրակէ կոչի. *թէպէտ* **իզ** ժամն պակա՛ս է: - 484. Զի *թէպէտ* սատանայ էր գերեալ զմարդն, սակայն ի գերութիւն նմա հա՛յր մատնեաց յորժամ պատժեաց զնա: - 492. Յիրաւի ապա տէր մեր զգին արեանն ի հայր ետ. *թէպէտ* սատանայ էր գերեալ և չարչարէր զմարդիկ: - 492. Արդ զապարանքն պիղատոսի իբր զմի տեղի առեալ. *թէպէտ* կրկնեալ եղև. և խաչելութեանն տեղի լինի **զ**. և գերեզմանն յորում հանգեաւ **է**: - 493. Եւ *թէպէտ* ասացաւ ճշմարիտն թէ անապակա՛ն է մարմինն տեառն, այլ այժմ դիցուք զբանս նոցա թէ վասն է՞ր ասեն ապականացու. և յարմարեսցուք զպատասխանիսն: - 500. Իսկ աւելորդ ծորումն *թէպէտ* անանգոսնելի՛ է, սակայն ակամայ է. և զակամայն ո՛չ կրեաց քրիստոս: - 502. Որպէս յօրինակէն տեսանի. որ *թէպէտ* առ հասարակ ելին յեգիպտոսէ յանապատն, այլ ոմանք մտին յերկիրն պարգևաց: - 508. *Թէպէտ* այսօր վասն պատրանաց մարդկան և փոխելոյ զտօնս՝ ոչ ինչ ուտեն զնաւակատեաց որ է ձուկն. զոր միշտ զքառասնորդ պահքս պղծեալ են ձկամբ և արբեցութեամբ: - 509. Այլ ես ասեմ թէ արիւն ունին յայտնապէս, *թէպէտ* փութով ցամաքի: - 511. Չորրորդ ասեն ոմանք թէ՝ դեռ չէր մկրտեալ մարիամ. և ոչ մկրտելոցն անհպելի՛ է. *թէպէտ և* իւրք իցեն: - 517. Դարձեալ՝ *թէպէտ* մի է հայր և մայր քրիստոսի և եկեղեցւոյ, այլ զանազան կերպիւ: - 534. Նախ՝ որ գիտէ. և *թէպէտ* գիտէ, ասէ թէ չեմ բաւական խօսելոյ: - 537. Զի *թէպէտ* մեռանին թէ իշխանն և թէ իշխեցեալն, իշխանութիւնն ո՛չ խափանի: - 538. Զի *թէպէտ* քահանայն և բանքն նոյն է, այլ ո՛չ դիտաւորութիւնն: - 539. Եւ դարձեալ՝ որպէս բանն աստուած անէծ զադամ, նոյն բանն դարձեալ օրհնեաց մարմնովն. *թէպէտ* մի է գործ Երրորդութեանն: - 542. Դարձեալ՝ *թէպէտ* ըստ պորփիւրոսի՝ մասն բոլորին հետևի. որպէս անհատն տեսակին. և տեսակն սեռին: - 550. Նմանապէս և ազգս հայոց *թէպէտ* մի է, կարէ՛ պատուական գոլ բազմաց: - 551. Ապա ուրեմն յա՛յտ է յայսցանէ՝ թէ առ մինն իցէ ճշմարիտ հաւատ և օրէնք՝ նա՛ է ճշմարիտ և ո՛չ այլքն. *թէպէտ* բաժանեալ լիցի ի նոցանէ: - 552. Երրորդ՝ առ քահանայս զգուշութիւն օրհնօք ունել. *թէպէտ և* ոմանք կաղան առ այս: - 554. Եւ այսորիկ *թէպէտ և* ոմանց ո՛չ թուեսցին որպէս փոքր կարծեցեալք. սակայն աւանդութիւն և ո՛չ հաւատ: - 554. Ա՛րդ՝ մեղք մտացն *թէպէտ* ըստ բանականին և մարմնականին չէ կատարեալ, այլ ի տեսակս իւր կատարեալ է: - 556. Զորօրինակ՝ կանաչ բոյս՝ *թէպէտ* ի ցօղուն և ի հասկ՝ չէ՛ կատարեալ. այլ ի տեսակս իւր կատարեալ է: - 556. Վասն որոյ *թէպէտ* գործն նոյն է, այլ բանն և կամքն ո՛չ է նոյն: - 563. Նա՛խ՝ զի որ կամաւ և գիտութեամբ մեղանչէ, առաւել է քան զակամայն և զտգիտութեան. զի *թէպէտ և* սոքա մեղք են, այլ պատիժն նւազ. որպէս անասնոյն քան զմարդոյն: - 563. Իսկ մահն՝ որ տգիտութեամբ մեղանչէ. *թէպէտ* ո՛չ գիտէ՝ հոգին մահանայ: - 564. Ա՛րդ՝ *թէպէտ* հոգին ո՛չ լինի սերեալ ի հօրէն որպէս մարմինն, սակայն սկզբնական մեղքն անցանէ ի հոգւոյն յադամայ ի հոգիս զհետ եկելոցն միջնորդութեամբ մարմնոյն ցանկութեամբ

ծնելոյն: - 567. Զի մահացուն ո՛չ էր ի յերեմիայ և ի յովհաննէս որք սրբեցան յորովայնէ. *թէպէտ* ո՛չ զերծանեին ի ներելւոյն: - 568. Իսկ ներելին *թէպէտ* որոշի յերիս տեսակս ըստ մեծութեան և նւաղութեան. այլ մանրամասնաբար յանթիւս ելանէ. որպէս ծիծաղիլ. վայրաբանել. և այլն: - 568. Զի *թէպէտ* անպատեհ է ասել զբարկութիւնն առ աստուած զի անփոփոխելի քաղցրութիւն է. այլ կամքն որով մեղաւորքն վասն չար գործոցն տանջեալ լինին՝ բարկութիւն ասի աստուծոյ: - 569. Եւ երկրորդ՝ զի մնասցէ ի վերին գաւառն ըստ էութեանն և ըստ գործոյն. իսկ այլ առաքինութիւնքն *թէպէտ* մնան ըստ էութեանն, այլ ո՛չ ըստ գործոյն: - 579. ...զի *թէպէտ* ողորմութիւնն առաւել նմանեցուցանէ զմարդն աստուծոյ ըստ արտաքին գործոյն...: - 585. Դարձեալ գիտելի է, զի աստ ասեն հերձուածող ազգն Ֆռանկաց թէ՝ *թէպէտ* մկրտութիւնն գործ քահանայի է, բայց ի հարկաւոր ժամանակն թէ քահանայ ո՛չ լինի ամենայն ոք որ գիտէ զձև մկրտութեան՝ կարէ մկրտել: - 588. Ասեմք, *թէպէտ* նիւթն սակաւ է այլ բնութիւնն հաւասա՛ր է...: - 595. Ապա ուրեմն *թէպէտ և* սակաւ խառնի ջուրն, բնութիւնք գինւոյն և ջրոյն ապականեցան. զի ո՛չ անապակ գինի է և ո՛չ պարզ ջուր: - 595-596. ...զի որք կամին զմարմինն քրիստոսի ապականացու ասել՝ խմոր և ջուր խառնեն. *թէպէտ* այլ և այլ պատճառեն: - 596-597. Եւ այլք ասեն թէ՝ *թէպէտ* յետ ընթրեա՛ցն էր...: - 599. Զի *թէպէտ և* եկեղեցի սուրբ կարէ՛ բաժանել վասն արգելմանցն...: - 610. Վեցերորդ, զի և առաջին ծնօղքն և հարք *թէպէտ* աւելի կին առնուին վասն զաւակաց, այլ հարսանիսն կրկնեալ ո՛չ ընթերցեալ լինի: - 612. Այլ *թէպէտ* առանձնականն կամաւո՛ր է, սակայն ի վերայ վանականաց որք են աբեղայք և կրօնաւորք, հարկաւո՛ր է վասն դ պատճառի: - 623. Եւ այս է մեկնութիւնն. *թէպէտ* հրէայքն որպէս յանցաւոր մարդ սպանին՝ սուրբ աստուած և ո՛չ սոսկ մարդ: - 632. *Թէպէտ* կամաւ տկարացար և ետուր զքեզ ի ձեռս խաչողացն՝ հզօ՛ր ես յամենայնի: - 632. *Թէպէտ* մեռար մարմնով և եդար ի գերեզմանի՝ սուրբ և անմահ և անապական ես: - 632. *Թէպէտ* բազում ուրէք զսոյն բանս ի դաւանութիւն երից անձանց և միոյ բնութեանն խոստովանիմք: - 633. Երրորդն գալստեան. *թէպէտ* յայլ և այլ աւուրս. որպէս քառասնօրեայն, և յաւանակաւն, և յինանց կիրակմտիցն: - 649. ...*թէպէտ* մեք անգիտանամք ի խորհրդոյն որպէս տկար տեսութեամբ: - 662. Եւ *թէպէտ* մարդ ո՛չ գիտէ զօր մահուն իւրոյ, այլ երիս իրս տուեալ է աստուած ի զգուշութիւն մեզ և կարապետ մահուն: - 665. ...*թէպէտ* են և այլ տարերք զօրութեամբ ի հողն: - 678. Դարձեալ՝ կրկին է օր մարդոյ *թէպէտ* յերկար ապրեսցի. այսինքն մին օր ծննդեանն, և մին օր մահուան: - 680. Այսպէս *թէպէտ* քրիստոնէից հոգիքն որ անարժանք են՝ ի ձեռն հրեշտակին ժամանեն ի կայանս հոգւոցն այսպիսի սքանչելեօք: - 682-683. Իսկ թէ անզեղջ կամօք և առանց խոստովանութեան ի մեղս մեռան, ո՛չ է օգուտ նոցա. *թէպէտ* մկրտեալ իցեն և հաւատացեալ...: - 683. Եւ *թէպէտ* ամենայն մեղաւոր զղջանայ յետ մահու, այլ ո՛չ կարէ ապաշխարել...: - 684. Այլ *թէպէտ* մի է տեղեաւ, այլ արդարքն յուսով ուրա՛խ են, և մեղաւորքն տանջին: - 689. Դարձեալ ասեմք, *թէպէտ* զներկայն ետես, սպիտակ հանդերձն ո՛չ ցուցանէ զփառս հատուցման. այլ զփառս և զհանգիստ գործոց: - 690. Զի *թէպէտ* անդ ո՛չ է փառք, այլ և ո՛չ տանջանք և չարչարանք գոյ. վասն այսորիկ առ աստուած ասէ որք են ի պահեստ հոգւոցն: - 695. Դարձեալ՝ *թէպէտ* վասն հոգւոյն ասեմք որպէս այս, և տեսիլ անտօնին, և այլոց, այն ո՛չ է բերքաթուր. այլ պատերազմ դիւաց. որպէս աստ մարմնով, նոյնպէս և յետ մահու առ հոգիսն. - 703. և ասասցեն՝ *թէպէտ* մեռաւ իշխանն մեր, սակայն մեք ունիմք անհոգութիւն և խաղաղութիւն: - 709. *Թէպէտ* բան յարութեան է ի մասնէ հաւատոյ, որպէս սկիզբն աշխարհի և վախճան. - 714. Եւ *թէպէտ* մարմինն փոփոխի հասակաւ կամ հիւանդութեամբ, կամ մեղօք հոգին հիւանդանայ. դիմաւոր նշանս այս անփոփոխ մնայ: - 719. Ասեմք, *թէպէտ* այնպիսի անդամքն ո՛չ են պիտոյ ի յարութեանն, սակայն յառնեն վասն կատարելութեան և գեղեցկութեան. - 725. Զի վերին մարմինք երկինք և լուսաւորք ամենևին անապակա՛ն են. իսկ դ տարերք *թէպէտ* ըստ մասին ապականին, այլ ըստ բոլորին ո՛չ...: - 727. Իսկ մարմին մարդոյս *թէպէտ* ապականացո՛ւ է, այլ ի կողմանէ հոգւոյն անապակա՛ն է. վասն որոյ անապական մնան: - 727. *Թէպէտ* ո՛չ ունին բանք և ոչ խօսք, այլ ընդ ամենայն երկիր ել բարբառ վկայութեան նոցա. զի ամենայն տեղիք և ամենայն ժամանակք մարդկան առ նոսա է՛ յայտնի: - 729. ...յիրաւի է ուրեմն որում անիրաւութիւնն եղև առնել դատաստան վասն վրիժու. *թէպէտ* նմա հայր և հոգին սուրբ գործակից լինին: - 735. Այլ զկնի դատաստանին՝ բարիքն *թէպէտ* տեսցեն զչարսն ի տանջանս, բայց չարքն ո՛չ երբէք այնուհետև տեսցեն զբարիսն որպէս ցուցաւ: - 754. Ո՛չ բնաւ, *թէպէտ* հայր տեսանէ զորդի կամ մայր զդուստր. և կամ զեղբայր և զայլս. ո՛չ միայն ո՛չ ցաւին, այլ ա՛յնպէս լինի հեշտալի, որպէս տեսանեմք զձկունս որ խաղան ի վտակս: - 754. Եւ քանզի մովսէս որ ջրային կամ ի ջրոյ հանեալ թարգմանի. *թէպէտ* երբեմն

զօրէնս և երբեմն զտէրն նշանակէ. այլ աստ ոչ զօրէնս, այլ զտէրն գուշակէ՛. որ ի ջուրց մարդկայինս բնութեան ընկալեալ եղև: - 756. Իսկ չար՝ *քէպէտ* լինի ներգործութեամբ անձնիշխան կամօք, այլ բնութեամբ չար ո՛չ է ըստ ինքեան. զի ո՛չ է էութիւն այլ պակասութիւն բարւոյ. որպէս ցուցաւ ի վերոյ ի ե համարն: - 758. Եւ *քէպէտ* մի իցէ արքայութիւն սրբոց, սակայն զանազանեսցին փառօք և պսակաւ և հանգստեամբ: - 760. Եւ *քէպէտ* գերազանցեալ են այսօրիկ փառք քան որք այժմ ունին յերկրի. այլ սակայն օրինակաւ սակաւ ինչ բացայայտութիւն առցուք: - 761. Զի հասարակա՛ց է ամենայն մարդոյ կատարելոց և անկատարից, զի ի յանդիմանութիւն յանդիմանելեացն առհասարակ դժկամա՛կ երևի ի սկիզբն. *քէպէտ* ընտրողութեամբ լաւին ընդունին զխրատն: - 774. Առ այս ասեմք, *քէպէտ* է՛ ամենայն իր բնութեամբ նա՛ և հասարակ. որպէս և սևութիւն ագռաւու. այլ ո՛չ անդրադարձեալ. զի է՛ ինչ բնութեամբ, այլ ո՛չ հասարակ. որպէս կնտութիւն մարդոյ: - 774. Այսպէս յընդդիմակէն տե՛ս և զայս. զի *քէպէտ* հասարակա՛ց է մարդոյ դժկամակ գոլ խրատու, այլ ո՛չ է բնութեամբ իր: - 774. Զի մեղքն ադամայ *քէպէտ* սկզբնապէս առհասարակ բնութիւնս տարածեցաւ. այլ ո՛չ առաւել քան զայլոցն եղև. այսինքն որդւոցն նորա...: - 777. Եւ որպէս թէ բազումք զմիմեանց զմիոջէ կախեալք զվախէ՛. և եթէ ոք խզեսցէ զառաջնոյն զկապ, միապէս անկանին. *քէպէտ* մինն առաջին: - 777. Եւ թէ նայիս մտօք, *քէպէտ* առ մեզ փոփոխին տիւ և գիշեր. այլ նա միշտ լոյս և միշտ գիշեր կազմէ. - 779. Ասեմք նա՛խ՝ եթէ ամենայն շնորհ զինչ և իցէ տուեալ բնութեան, ո՛չ քակտի ի նմանէ. *քէպէտ* ծածկի երբեմն վասն մեղաց: - 782. Իններորդ, հաւատով հնազանդի ոք օրինացն աստուծոյ. այլ դևն հակառակ կայ օրինացն և աստուծոյ. *քէպէտ* գիտէ զայն լինիլ ինքեան չար, այլ գիտութեամբ մեղանչէ: - 784. Իսկ ամենայն զգայական կենդանւոյ *քէպէտ* իգին ստինք գոն վասն զծնունդս կերակրելոյ. սակայն և արուացն գոյ նոյն մասն անդամոց կազմեալ յարարչէն. և այն յի՞նչ պէտս լինի. խնդրել արժան է: - 785. Իսկ զի և արուի *քէպէտ* ո՛չ նոյն պիտոյիւք. սակայն ո՛չ ընդ վայր կազմեցաւ. ի լրումն **բժ**ան դրանց անդամոց. ի ներքս մուծանելոյ և արտաքս հոսելոյ զպակաս և զաւելորդս ինչ. անվնաս կելով կենդանւոյն: - 786. Այլ և ոմանք ասեն և է գոլ սեանց ընդ շինեալ տունն ի սողոմոնէ. կանգնեալ սիւնս է մարմնապէս. *քէպէտ* ա՛յլ է իմացումն հոգէպէս: - 788

**ԹԹՈՒ +** Զդառնութիւնն ի լեղին. և զհոտածն յերիկամունսն. և զմրուրն և *զքքուն* ի փայծեղն. և զքաղցր արիւնն ի սիրտն. և սիրտն երակովն և շնչովն բաժանէ ի բոլոր մարմինն: - 242. Վասն է՞ր բերանն մարդոյն երբեմն քաղցր լինի. երբեմն դառն. և *քքու*. և այլ ինչ: - 242. Արդ եթէ ի խարտեաշ մաղձէն ի լեարդն է մնացեալ, լերդին համն ի լեղւոյն առնու և բերանն լեղի դառնայ. իսկ եթէ ի սեաւ մաղձէն է մնացեալ ի լեարդն. բերանն *քքու*՛ դառնայ. իսկ թէ պալղամն մնայ ի լեարդն, բերանն աղի փոխի. իսկ թէ յըստակ արիւնն մնայ ի լեարդն, լերդին համն անոյշ լինի, և բերանոյն համն անուշ տայ և քաղցր: - 242-243

**ԹԹՈՒԱԳՈՅՆ +** Տարորոշումն խառնեալ տարերց. և լաւին և վատթարին. զոմանս պահել և զոմանս վտարել... *Թթուագոյնն* յունչս: - 786

**ԹԻԶ +** Կանգունն գիրկն է մարդոյ. և այլք **ը** *թիզ* ասեն. զոր այժմ Ֆռանկք վարին: - 293. Դիւթ է՝ որ ձեռօք և նիւթո՛վ գործէ. որպէս գարի, և ալիւր, և աւազ, և ջուր, և քար. և այն որ *թզով* չափէ, և այլն ամենայն: - 388

**ԹԻԹԵՂՆ +** Խոյրն, վարշամակն. և Միթրն և *թիթեղն* ոսկի, պատկերք սրբոցն նկարեալ. և երկոքին Բազպանն, փոխանակ անդրավարտեաց: - 348. ...և **բ** Ակունք ուսոյն՝ կրկին կիսագունդք երկնից. ունելով **զզ** կենդանակերպս. և Վակաս լանջացն **բժ**ան ակամբք նոյն կենդանակերպք ի լանջս երկնից Միթրն՝ պսակ քահանայապետութեան. և *Թիթեղն* մտաց թեթևութեան: - 348. Վեցերորդ, *թիթեղն* ցուցանէր ի ճակատն գրեալ սրբութիւն տեառն նուիրեալ. զի նէրք քահանային սրբութիւն է: - 363

**ԹԻԼԳՈՒՐԱՆ** - Եւ է՛ ի մէջ արաբիոյ և եդոմայ. զոր այժմ կոչի *թիլգուրան*. ուր գերեզման նորա՛ է: - 327

**ԹԻԿՆԱՄԷՋ +** Եւ գիտելի է, զի որ ի ճակատն և ի սիրտն և ի *թիկնամէջն* օծանէ, այն դրո՛շմ է. և որ զհինգ զգայութիւնսն օծանէ՝ այն ի խորհուրդ օծմանն է ծածկապէս: - 593

**ԹԻԿՈՒՆՔ +** Վարդապետք ասեն. որպէս սուրբն բարսեղ՝ թէ որպէս երկբերանի քսա՛կ է լուսինն. ընդ մինն ելանէ և ի վերի *թիկունքն* ժողովի և պակասի ի մէնջ լոյսն. և ի միւսն ի ներքս մտանէ և լուսաւորէ՛ զմեզ: - 187. Վասն է՞ր դէմք մեր ի մի կողմանէ է. և միւսն *թիկունք*: - 234. Եւ բնականն, Նա՛խ՝ զի նմանիմք երկրի որ յերեսն ունի զգեղեցկութիւն բուսոց, և ի *թիկունս* ոչ: - 234. Երկրորդ՝ ըստ կարգի տարերց. *թիկունքն* թանձր և պինտ՝ է՛ երկիր: - 234. Երրորդ՝ զի փափուկ ջիլք և նեարք՝ յերեսացն գան

և առնեն զգայարանս. և հաստն ի *թիկունքն* սփռի վասն ուժոյ և պնդութեան և շարժութեան: - 234. Երրորդ՝ զի զդէմս ունիցիմք միշտ ի յերկինս. և *զթիկունս* յերկիր. և հանապազ ի բարին յառաջեմք ոտիւք և ձեռօք և ո՛չ դառնամք ի չարն: - 234. Դարձեալ, **ը** ոսկր է ի *թիկանցն* մինչ ի խաղալիքն այսպէս: - 243. Եւ թաթք ձեռացն **լբ** ոսկր. որ լինի բովանդակ ձեռքն ի *թիկանցն* **խ** ոսկր: - 243. Նա՛խ՝ խելապատակն սկիզբն է ջլացն. որ միայնաբար ընդ ուլունս պարանոցին անցանէ. և բաժանի ի *թիկունս*, ի ձեռս, և յա՛յլ մարմինս: - 244. Տասներորդ՝ որպէս կողն զզօրութիւնն քարշէ՛ և տայ ի *թիկունքն* և պնդէ՛ զնա. այսպէս կինն զփառս և զինչս առն յինքն քարշելով թանձրացուցանէ և պնդէ՛ զինքն: - 276. Իսկ քաղելով գործելն, զի սկսեալ բնութիւնս մեր ի գլխոյն լայնանայ ի *թիկունքն* և նրբի ի կրունկն, և բոլորեալ դարձեալ կատարի ի գլուխն: - 293. Ութևժ, չո՛րս են որք հզօրք են և պերճ շրջին ասէ սողոմոն. այսինքն աքաղաղ, և նոխազ, և թագաւոր հրապարակախօս, և առիւծ՝ որ ո՛չ դարձուցանէ *թիկունս* յանասնոց: - 316. Դարձեալ՝ առիւծաբար ել ի յորդանանէ. որպէս ասէ երեմիա «իբր ախոյեան ել ընդդէմ փորձողին ի յանապատ և յաղթեաց նմա». ա՛յս է ոչ դարձուցանել *թիկունս* յանասնոց: - 316. Լուսնաձև Վահանն ի վերայ *թիկանցն* և սրտին՝ և կրկին տախտակ դատաստանին յուսն, եմիփորո՛նն է: - 348. Եօթներորդ՝ սապատողն. կուզն. կամ ելուստ ի *թիկունքն*. որ ո՛չ կրէ զբեռն քահանայութեան հպարտութեամբ: - 370. Ութերորդ՝ զի դարձուցեալ է զերեսն առ աստուած՝ և *զթիկունսն* յաշխարհս: - 378. *Թիկունս* առ միմեանս դարձուցեալս: - 753. Եւ թէ ի *թիկանց* նետք մուխք սատանայի, սովաւ զգուշացիր և անքոյդ մնաս: - 770

**ԹԻՄԳԻԱՆՈՍ** - Իսկ *թիմգիանոս* արար մի գործի և **իզ** աղի: - 640

**ԹԻՒ +** Նախ՝ երկեակն ո՛չ կարէ սկիզբն լինիլ. զի ի *թիւս*՝ երկեակն ի միակէն բաղկանայ: - 20. Երրորդ՝ ի միակէ, զի ամենայն բազմութիւն է ի միակէ՛. որպէս տեսակն յանհատէ. և գիծն ի կիտէ. և բազում *թիւ* է՛ ի միոյն: - 25. Հնգետասաներորդ՝ Հարցումն երկաբնակացն առ մեզ **ժ** *թւով*. և անդ վասն մի կամաց՝ և մի գործոց՝ և կրից: - 30. Վեշտասաներորդ՝ Հարցմունք ուղղափառաց առ նոսա **ժ** *թւով*: - 30. Յաղօթս ծոյլ, և զողջոյնն *թւով* համարեն: - 34. Չորրորդ՝ զիա՞րդ ինքն կարգի ի *թիւ* Երրորդութեանն...: - 51. Դարձեալ հարցանեն թէ՝ զիա՞րդ ասէք երեք և մի բնութիւն. զի **գ** միոյ բնութեանն ո՛չ հաղորդի. այլ մինն հաղորդի միոյ բնութեանն, և երկուքն երկուքին. և երեքն երեքին. զի որքան է *թիւն*, այնքան բնութեան թըւակից լինի: - 54. Ապա ուրեմն զի դուք **գ** ասէք՝ հայր և որդի և հոգի, ըստ *թըւոյն* և երեք բնութեան հաղորդին և ո՛չ միոյն: - 54. Պատասխանեմք թէ՝ ամենայն *թիւ* ո՛չ բնութեան է յայտնիչ՝ այլ քանիութեան ներքոյ արկելոյ թըւին: - 54. Ապա ուրեմն և հայր և որդի և հոգի թէպէտ *թըւով* **գ** են, այլ ոչ **գ** բնութիւնք: - 55. Քսաներորդ՝ այսպէս Երրորդութիւնն լինի չորրորդութիւն. և *թիւ* և աւելած եղեալ ի բնութիւնն և ի դէմքն. եթէ ա՛յլ է առանձնապէս մարդ և ա՛յլ աստուած: - 68. Երկրորդ՝ զի անհատքն առանձնացեալ են *թըւով*: - 88. Իսկ աստ **բ** բնութիւն ի մի *թիւ* անձին որպէս համբաւեն ոմանք: - 88. Ըստ որոյ կերպի և իցէ, *թիւ* ի ներքոյ բերէ միոջէն և առ մին. և նոյնէ անձն որոշեալ *թըւով*: - 88. **ժգ**) *Թիւք* հրեշտակացն: - 102. Իսկ յատկութիւն և որոշումն դիմաց՝ սակաւ ինչ է. վասն այն *թըւով* տեսանի: - 104. Հինգերորդ՝ որպէս միա՛կ է հայր. զի սկիզբն է ամենայն *թւոց*. և երկեակ որդի. և երրեակ հոգի ըստ աստուածաբանին: - 105. Ո՛չ *թիւ* ասեմ. ապա թէ ո՛չ, մի հայր. մի որդի. մի հոգի: - 105. Դարձեալ՝ աստուածային առաքինութիւնք այսո՛ւ *թըւով* են. այսինքն հաւատ. յոյս. սէր: - 105. Նոյնպէս և ասելն՝ Երրորդութիւն. սովին *թըւով* բացայայտի: - 105. Նախ՝ զի **գ** *թիւն* կատարեալ է. զի ունի սկիզբն. և մէջ և կատարումն: - 107. Իսկ Երրորդութիւն կոչեմք՝ բաժանելով յերեք *թըւոյն*: - 107. Նախ՝ զի **գ** *թիւն* **գ** է և ո՛չ մի: - 107. Իսկ երեք *թիւն*՝ մի զկնի միոյ: - 108. Երրորդ՝ Երրորդութիւնն ցուցանէ երիցն զմի հասարակ բնութիւն. որպէս ասեմք մարդ և մարդկութիւն. ձի և ձիութիւն. ընդդէմ արիոսի որ ասէ՝ երեք *թիւն* ունի երեք բնութիւն, ասեմք երից անձանցն մի բնութիւն: - 108. Նախ՝ զի *թիւն* քանակ է պատահական՝ և գիտելի մեզ: - 108. Երկրորդ՝ յերեք *թիւն* մինն պակաս ունի քան զերկուքն. և երկուքն աւելի քան զմինն: - 108. Երրորդ՝ զի մին *թիւն* անկատա՛ր է քան զերկուքն. և երկուքն քան զերեքն: - 108. Չորրորդ՝ երեք *թիւն* փոփոխմամբ է. յորժամ ասեմք մի և **բ** և **գ**, փոխեցաւ ի միոյն և եղև երկու. և փոխեցաւ յերկուցն և եղև **գ**: - 108. Հինգերորդ՝ զի **գ** *թիւն* բաժանին ի միմեանց. զի յորժամ բաժանես զմի *թիւն*՝ ո՛չ է երկուքն ընդ նմա: - 108. Հինգերորդ՝ մի կոչի. որպէս միակն սկիզբն է *թըւոց* և ո՛չ *թիւ*. և աստուած սկիզբն է արարածոց և ո՛չ արարած: - 109. Եօթներորդ՝ միակն է կատարումն ամենայն *թըւոց*. և ամենայն գոյից կատարումն է աստուած: - 109. Նախ՝ զի *թիւն* պատահումն է. որ ի աստուած ո՛չ է: - 110. Երկրորդ՝ *թիւն* քանակ է. և աստուած ո՛չ չափի: - 110. Երրորդ՝ *թիւն* ընդ

գիտութեամբ մեր է. իսկ աստուած ընդ գիտութեամբ մեր ո՛չ պարունակի որպէս ասացաք. ապա ուրեմն ի վեր է քան զմի և զմիակ: - 110. Զի է՛ մի՝ որ սկիզբն է *թըւոյ*. և այսպէս մի ո՛չ ասի աստուծոյ. զի այս քանա՛կ է. և պատահումն ո՛չ գոյ յաստուած: - 110. Զորօրինակ՝ միակ *թիւն* ի բազումս բազմանայ, և մի է ըստ ինքեան: - 112. Երրորդ՝ այսպէս մեկնեն, եթէ հին աւուրց զնախնի ժամանակս նշանակէ. և մանուկն զնախնի *թիւն*. զի միակն սկիզբն է ամենայն *թըւոց*. և որ մերձ է միակին՝ սկզբնապետագո՛յն է քան զհեռագոյնն: - 115. Եւ զի ժամանակն ընդ *թըւոյն* է շարազուգեալ: - 115. Եւ մանուկն ըստ *թըւոյ*: - 115. Ո՞րքան է *թիւ* դասուց հրեշտակաց: - 134. Ասեմք եթէ՝ ինն դասք յերիս երրեակս որոշեալ *թըւոց*. որոց Առաջինն է Աթոռք. Քերօբէք. և Սերօբէք: - 134. Երկրորդ՝ զի **ժ**երորդ է մարդս կարգեալ ի *թիւ* նոցա ըստ հարիւրերորդ մոլորեալ ոչխարին, և կորուսեալ **ժ**երորդ դրամին: - 134. Երկրորդ՝ զի *թիւ* է կատարեալ. առաջին միջին և վերջին: - 134. Կատարեալ և գերակատար *թիւք* դոքա են առ մեզ. որ ի **դ** գլխաւորին ըստ չորից տարերց: - 141. Այլ և երկոտասան գունդս հրեշտակաց եցոյց տէրն յաւետարանին ըստ *թըւոյ* երկոտասան առաքելոցն և երկոտասան կենդանատեսակացն: - 141. Այլ *թիւ* իւրաքանչիւր առանձնութեանցն անգիտելի է մեզ որպէս զաստեղս երկնից: - 141. Զի *թիւ* մեր նիւթեղէն և տկա՛ր և չափաւո՛ր է. վասն որոյ զանբաւութիւն նոցա ո՛չ կարէ չափել. ուստի յայտ է՝ զի և ո՛չ *զթիւ* մեր կարեմք գիտել: - 141. Այլ ինքեանց վերին էութեանցն գիտելի է *թիւ* նոցա՝ շնորհեալ յամէնիմաստ գիտութենէն: - 141. Իսկ թէ աստուած ո՞րպէս գիտէ *զթիւ* ամենայնի ըստ այնմ, «ո՛ թըւէ՛ զբազմութիւն աստեղաց». զայս ասեմք ըստ եռակի: - 141. Եւ **ժ** կատարեալ *թիւ* է. նշանակէ՛ զկատարեալ զօրութիւնս թշնամւոյն որով կռուի ընդ մեզ. զոր նշանակեն եղջիւրքն: - 151. Իսկ «երրորդ մասն», ասէ սուրբն մեթոդէոս եթէ՝ զապստամբ հրեշտակս ասէ որք *զթիւ* երկնաւոր դասուցն սխալեցին. զի մինչ ո՛չ էին կործանեալ՝ **դ** կարգ էին իւրաքանչիւր դասուցն. որպէս յա՛յտ է ի չորեքկերպեան կենդանեացն: - 152. Յատկութիւնք գարնան և ամարան, աշնան և ձմերան նոյն *թուով*: - 154. Յատկութիւնք օդոյ երեսուն *թըւով*: - 155. Յատկութիւնք ջուրց ութն *թուով*. և զի բազում են ջուրք. և դառն է ծով և աղի: - 155. Վասն նշանակութեան ջուրց **ժբ** *թուով*: - 155. *Թիւ* գլխաւոր արարածոց: - 155. Եւ ո՛չ *թիւ* պատահական կամ բան տարալուծական. այլ մի երրեակ. և երրեակ մի. ըստ որում սկիզբն է *թուոց*՝ և ո՛չ *թիւ*. և բաժանեալ յա՛յլ էակաց: - 171. Երկրորդ՝ զի առաջին և սկիզբն է *թուոց*. որպէս միակն *թիւ* բազմանայ և խառնի յայլս, այսինքն՝ ի **ժ**. ի **ճ**. ի **ռ**. և ի բիւրն. և ի միութենէն իւրմէ ո՛չ որոշի: - 178. Երրորդ՝ զի վեցեակ *թիւն* ի մէջ ամենայն *թուոց* առաջին կատարեալ է. և **զ** *թիւն* է ի բոլորակ ձևն. զի որ քան է ի միջին կիտէն ի բոլոր ծիրն, վեց այնչափ է իւր բոլորակ ծիրն: - 182-183. Այս քան է *թիւ* երկնիցն: - 184. Զոր յամենայն ամի **ժա** *թիւ* ի վերայ լուսնոյն դնեմք, զի հաւասարեսցի արեգականն, և կոչեմք վերադիր: - 191. Իսկ սուրբն եփրեմ ասէ, մետասան *թիւ* գտանի ի մէջ երից աւուրցն՝ ստեղծման լուսնին: - 191. Եւ դարձեալ՝ յորժամ վերադիրն լինի **լ**. և **է** երեակն է ի միասին ի միում ամի. ասի այն կատարումն լուսնի. այսինքն մասանց *թուոյն*, և ո՛չ իրին: - 192. Վասն այն՝ ձեռն և ձայն և բան և *թիւ* և կարգ աւուրցն եդան: - 192. Ութերորդ՝ նշանակէ վեց *թիւն* որ է՛ կատարեալ՝ թէ բոլոր կատարելութիւն աշխարհիս ի յաստուծոյ է ստեղծեալ. երկինք և երկիր՝ և ամենայն ինչ: - 192-193. Տասներորդ՝ **զ** *թիւն* նշանակէ զժամանակս բարեգործութեան. այլ շաբաթն ուր հանգեաւ աստուած՝ զհանգիստն յաւիտենական: - 193. Եւ զի **զ** ժամ է. որ է կատարեալ *թիւ*: - 196. Հնգետասաներորդ՝ Վասն զօրութեան հոգւոյն **ժթ** *թուով*: - 227. Եւ զի պատկե՛ր է աստուծոյ՝ **լ** *թուով*: - 228. Երեսուն**ա**՝ Յատկութիւնք մարդոյն **լ** *թուով*: - 228. Եւ դարձեալ *թիւ* ոսկերացն **մխը**. և **բժ**ան անդամքն, և **ե** զգայարանքն յօդեալ առ միմեանս, լինին **յկե** զօդուածք: - 244. Եւ ջիլքն բաժանին **գճխը** *թուով*: - 244. Նոյն քան *թուով* երակացն: - 244. Եւ որպէս ընդ հանուր մարդկութիւնս լրիւ էացաւ ի տեսութիւնն աստուծոյ յորչափութիւնն և ի *թիւն*: - 254. Այսպէս և այժմ իւրաքանչիւրքն յառաջ եկեալ համանգամայն գոյութեամբ, լնուն զայն *թիւն*՝ որ նախ էր ի տեսութիւնն աստուծոյ: - 254. Եւ իւրաքանչիւր ոք ծննդեամբ յառաջ եկեալ առնու զնոյն պատկերին շնորհ ի ծագմանէն աստուծոյ. և լնուն զնոյն *թիւ* որքանութեան զոր ետես աստուած նախքան զլինինլն աշխարհի որպէս ասէ առաքեալն: - 258. Եւ որպէս ասէ արիստոտէլ զերեք *թիւն*՝ որ մի ունի զէութիւն իւր. այլ երկուքն և մինն մասունք են նորա: - 259. Եւ յորժամ ասես **գ**, յայնժամ զառաջին *թիւսն* ունելով յինքեան՝ կատարումն եղև նոցա: - 259. Այսպէս և զգայականն և տնկականն մասունք են բանականին՝ նախ եղեալ ի մարմինն. և յորժամ բանականն հեղի ի մարմինն, յայնժամ և սոքա հեղին ընդ նմա. զի զօրութիւնք և մասունք են նորա ըստ օրինակի նախասացեալ երրորդ *թուոյն*: - 259-260. Եւ թէ զտեսութիւնս զայս կարծես էութիւն հոգւոյ ըստ որում է հոգի, ապա ո՛չ միայն ետես զհոգի, այլ և

զմարմին՝ և զիւրաքանչիւրոց ընտրութիւն, և զհամար հերաց և *զթիւն* աստեղաց. և սոքա յետո՛յ են գոյացեալ ըստ կամաց տեսողին: - 260. Այսպէս և հոգի ըստ կամաց խընամողին յետոյ պարգևեալ ըստ *թուոյ* ծննդեան իւրաքանչիւր մարդոյ որպէս ինքն գիտէ: - 260-261. Ասեմք առ այս, եթէ քառասունն ունի զչորս և զտասն *թիւն*. զի **դ** տասն է: - 261-262. Արդ՝ **ժ** *թիւն* կատարեալ է...: - 262. Զի վեցն որ է՛ կատարեալ *թիւ*, և նիւթն այն է՛ ի չորից տարերց, և ունի առ ինքն զկազմողական և զտնկական զօրութիւնն որ է **զ**: - 262. Վասն որոյ ըստ *թուոյ* զօրութեան իւրոյ որ է՛ սնանիլն աճիլն և ծնանելն, յերեք ամիսս ծնանի զպտուղս. որպէս ցորեան և այլքն: - 262. Նա՛և այսու *թըւով* տունկք երից ամաց տան զպտուղս: - 262. Եւ թէ ասիցէ ոք, **դ** տարերքն են հիմն ամենայն նիւթոյ, պարտ էր լնուլ **զդ** *թիւն*: - 262. Ասեմք թէպէտ նիւթն ի չորից տարերց է, այլ տնկականն զօրացեալ քան զնիւթն՝ ըստ իւրոյ մասանցն ծնանի. զի ծնանիլն տնկականին է. այլ և ունի զտարերացն *թիւ*. զի յամիսս չորս կատարի այն՝ որ յառաջ ծնաւ: - 262-263. Նմանապէս ծառք և տունկք՝ որ յետ երից ամաց կամ չորից ցուցանեն զպտուղս՝ յայսմ *թըւոյ* ո՛չ ելանեն արտաքս: - 263. Եւ թէպէտ զնանիր խոտոյ ասեն ի նոյն ժամն բուսանիլ և կատարիլ և խամրիլ, ի նոյն *թուոյս* ոչ ելանէ ժամուք կամ մասամբք: - 263. Սակայն և նա՛ է ի *թիւս* յայս. այսինքն զի երիցս պատկելով երեքտասանն՝ լինի **լթ**. և ի քառասներորդումն պտղաբերի: - 263. Եւ աւելի և պակասն է ի նոյն *թիւն* չորից և երից. եթէ աւուրց և եթէ ժամուց մինչև ի ճանճ և ի մժեխ: - 263. Տնկական. զգայական. և բանական. վասն որոյ **է** ամսեայ ծնեալն ապրի և շնորհալի լինի վասն շնորհալի *թուոյ* եօթներորդին: - 263. Դարձեալ **թ** *թիւն* է երիցս երրեակ. և երեք *թիւն* է կատարեալ. ունելով առաջին միջին և վերջին. ի նմանութիւն **թ** դասուց հրեշտակաց: - 264. Դարձեալ **թ** *թիւն* պակա՛ս է ի **ժ**երորդէն. և մեք պակասեցաք յինն դասուց հրեշտակաց, որ նախ հաւասար էաք ի դրախտին. և կարօտացաք մարմնաւոր ծննդեան, նմանելով անասնոց...: - 264. Զի բոյսք մանունք և չորքոտանիք մանունք կարեն ի նոյն ամի զնմանն ծնանիլ ըստ վերոյ ասացեալ երրեակ *թուոյ* ամսոյ, կամ կրկին վեցեկի: - 264. Իսկ տունկք որք են մեծաբոյսք՝ և չորքոտանիք մեծամեծք՝ յերրորդ ամին ծնանին զնմանն. որ է *թիւ* կրկին ամսոյ ընդ երրեակ վեցից: - 264. Զի մանունքն յամսօրէից և ի վայր, ի շաբաթս և յաւուրս և ի ժամս ըստ նոյն *թուոյ* կարեն զնմանն ծնանիլ. և առաւելքն առաւելեալ ամօք կրկին կամ երեքկին որպէս ասացաք: - 264. Իսկ մարդոյն խորհուրդն ըստ չորից տարերց և երից զօրութեանց տնկականին եօթեամբ կատարի. *թիւ* շնորհալի և մշտակոյս ըստ աթենայ. զի ոչ ծնեալ լինի և ո՛չ զայլս ծնանի: - 264. Որ յայսմ *թուոջ* և նախահայրն ադամ ստեղծաւ: - 265. Եւ զի ա՛յս է *թիւ* կատարեալ չափոյ հասակի մարմնոյ և մասանց հոգւոյ: - 265. Եւ այսպէս միջին հասակս կատարեալ, ձգի մինչև ի **խզ** ամն. որ է **դ ժզ**. և վեցն կատարեալ *թիւ* է. և աստ տիրէ ալիք և սկիզբն լինի ծերութեան մինչև ի **հբ** ամն. յորում է ծայրք կենաց ըստ դաւթի, և *թիւ* երկոտասան վեցից խորհրդաւոր: - 265. Եւ տե՛ս, զի **բ բ** են յաւելեալ *թիւ* ի չորեքտասան, յերեք հասակս փոփոխելով: - 265. Երրորդ՝ Վասն կենաց նահապետացն և կենաց մեր՝ չափեալ *թուով*: - 283. Եւ բաղդատութեան իսահակայ և տեառն ի *թուով*: - 283. Յիսունե, *Թուոցն*. և ծերոցն. և հասակի մարդոյս: - 284. Եւ այլք ասեն ընդդէմ այսմ, եթէ յետ **ռ** ամին ի դրախտէն փոխիլոց էին յարքայութիւնն թէ պահէին զպատուիրանն. և յորժամ ելին ի դրախտէն՝ ի նոյն *թիւն* ո՛չ հասին: - 290. Երրորդ՝ **թ** դաս հրեշտակաց է յերկինս. և **ժ**երորդն մարդն կատարումն *թուոյ* նոցա. վասն այն ի կեանս այս ո՛չ հասանեն ի **ռ** *թիւն* կատարեալ. զի աստ ո՛չ լինի կատարումն դասուցն այլ ի հանդերձեալն: - 291. Չորրորդ՝ գլխաւոր *թիւրն* **դ** են. այսինքն **ժ**. և **ճ**. և **ռ**. և բիւր: - 291. Եւ յետ նորա **ժ** *թիւն* կենդանեա՛ցն է, որ ի չորից են բաղկացեալ. որպէս **ժ** ի **դ** *թուոց:* - 291. *Թիւ* կենաց մարդոյ չափեա՞լ է՝ թէ պատահմամբ յերկար և սակաւ ապրին: - 291. Ամենայն մարդոյ *թիւ* կենաց չափեալ է առ աստուած. և ո՛չ ոք կարէ սահմանն անցանել...: - 291. Եւ **է**երորդ ասէ *զթիւ* ամսոյն նոյի որ է՛ թշրին: - 294. Հինգերորդ՝ զի ունի զվերոյ ասացեալն խորհուրդ տասնեակ *թւով*. վասն որոյ յիրաւի անդրանիկն պատւեալ լինէր թէ ի հոգևորն և թէ ի մարմնաւորն: - 310. Եւ տէրն մեր կրկին *թուով* ամաց. զի աստուած և մարդ էր վաճառեցաւ **լ** արծաթոյ: - 313. Եւ յամենայն աւուր ըստ *թուոյ* նոցա **ժ** զոհ մատուցանէր, և զուարակ մի վասն սրբութեան մտաց: - 321. Նա՛խ՝ զի **ժ** էին *թուով*. է ուստերք և **գ** դստերք. ըստ *թըւոյ* նոցա մատուցանէր: - 322. Երրորդ՝ զի չափով և *թուով* և կշռով տայ աստուած զտանջանս մեղաց. թէպէտ մեզ անգիտելի՛ է: - 333. Զի եօթանսունքն **եռբճ** պակաս **բ** *թիւ* գրեն. և այլք **եռշ** ամ. որ է՛ **ե** դար և կէս: - 345. Զայս ասէ մեծն ներսէս երեք քառասունք մովսէսի ըստ *թուոյ* ամաց նորին: - 353. Այլ և այս գիտելի է, զի **ե** *թւով* շաբաթ էին ի հինն: - 372. Եւ **ժ** *թիւ* կատարեալ նուէր և սուրբ է աստուծոյ. յաղագս որոյ

թագաւորք երկրի զընծայս ի մարդկանէ՛ հնազանդելոց **թ թ** խնդրեն...: - 376. Նա՛խ՝ զայս նշանակէ թէ ի **ժ** դասուց հրեշտակաց մինն անկաւ, և մարդիկ զտեղի և *զթիւ* անկելոցն լնուն: - 376. Զի կենդուրածինքն լցին զարևելս. և իսմայէլացիքն զհարաւ. եսաւացիք զհիւսիս և զարևմուտս. և սոքա ո՛չ անկան ընդ *թուով*: - 377. Հինգերորդ՝ *թիւն* զընտրութիւն՝ զդաս՝ և զկարգն ցուցանէ. զի գո՛յ ի նմա՛ առաջին միջին և վերջին. որպէս զհնւորք. իսկ անթիւն խոտան և անկա՛րգ է. որպէս ծերք և տղայք: - 377. Նա՛խ՝ զի ո՛չ առնու ի համար *թըւոց*: - 377. Այլ և *թիւ* և համար գործոց. պահանջին ի մէնջ ի յերկրին աւետեաց: - 381. Եւ նշանակէ՛ր այս, զի է՛ *թիւ* ժամանակեայ և փոփոխական որ առ մեզ է: - 392. Եւ է՛ անփոփոխ յաւիտենիցն որ առ աստուած ընտրելոցն է *թիւ*: - 392. Յորում և զմեզ թուեսցէ ի *թիւ* սրբոց իւրոց անջինջ դպրութեամբ. և Նմա փառք յաւիտեանս ամէն: - 392. Իսկ ըստ Լսեբեայ **վպծ** ամբ. *թիւ* մի պակաս: - 411. Վասն զի զկայնան որդի արփաքսաթայ և հայր սաղայի **ճ** և **ի** ամ ի *թիւ* առնու: - 411. Զթագաւորսն քանանացւոց կոտորեաց *թուով* **իթ**: - 414. Իններորդ՝ հանեալ ի գետոյն **բժ**ան վէմս շինեաց սեղան. և նոյն *թուով* խորասուզեալ ընկղմեաց: - 418. Եւ յետ յեսուայ դատաւորք դատեցին առաջնորդութեամբ զիսրայէլ **նժ** ըստ եօթանասնիցն *թուով* երեքտասան դատաւորք մինչև ի հեղի քահանայ: - 420. Եօթնև**ժ**, երեսունքն *թուով* յետ **է** աւուրցն զարդարեցան: - 422. Ուստի յա՛յտ է, զի ցեղն իսրայէլի **ընռ** էին. և ցեղն յուդայ **եճռ**. և ցեղն քահանայից և բենիամենի ո՛չ անկաւ ի *թիւ*: - 434. Դարձեալ, ժամանակն ունի մասունս երիս. և մշտնջենաւորն. և դարձեալ յաւիտենական է բանն. և ժամանակեայ մարմինն. և մշտնջենաւոր հոգին. և անքակտելի միութիւնն ցուցանէ մեզ զչորս *թուոյն*. և ամենայնիւ կատարեալ գոյացութեամբ: - 437-438. Երեսուննէ զօրավարք դաւթի. և **լէ** *թիւ* հնոյն օրինաց. և այլ նորոց կտակի. և կամ **իբ** գլխաւո՛ր են գրոց հնոց. և **ժ** բան օրինաց. և չորից աւետարանաց. և մինն առաքելական: - 438. Վասն է՞ր *թիւ* մի պակաս լինի թագաւորացն: - 443. Եւ զայս *թիւ* ոմանք առնուն ի գերութենէն մանասէի՝ և աւելի՛ է: - 447. Եւ տարաձայնութիւն *թուոցդ* յայնմանէ լինի, որ **ծգ** ամաւ յառաջեաց բանն աստուած ի մարդանալն քան զնշանակութիւնս մարգարէիցն: - 449. Զի որպէս ադամ յաստուածանալն փութացաւ, և բանն աստուած ի մարդանալն փութացաւ. վասն որոյ ամք *թուոց* զանազան են եղեալ...: - 451. Երկոտասաներորդ, Միածին որդին **ժ** *թուով*: - 454. Եւ անդրանիկ **գ** *թուով*: - 454. Իջումն հոգւոյն փայլատակումն է՝ **ժ** *թուով*: - 455. Իսկ նորն ադամ նոյն ի **զ** դարուն յա՛յց ել և խնդրեաց զկորուսեալ պատկերն ի *թիւ* խորհրդաւոր կատարեալ վեցերորդին: - 467. Ասեմք եթէ յետ յղացման բանին յարգանդի կուսին օրինօք և ոչ օրինօք բնութեան, ժուժկալեալ ամսոց ըննից և աւուրց հնգից, ըստ հասարակաց ասեմ և անդրանկաց. ըստ հնգից յաւելեալ *թւոց* նախաստեղծին նախարարչութեան աւուրց: - 469. Զի **բժ**ան օրն թէպէտ պակաս է ի *թիւս* տարւոյն, սակայն սկիզբն է տարւոյն: - 484. Եւ **է** շաբաթն **ծ** օր է. որ է՛ ազատարար *թիւ* և օրինակ հանդերձելոյն: - 524. Վասն որոյ և տէրն **բժ**ան *թիւ* ընտրեաց առաքելոցն, և ետ **բժ**ան աթոռ դատողական: - 546. *Թիւ* սոցա առեալ լինի այսպէս: - 567. Դարձեալ զանազանին ըստ *թուոյ*. զի մահացուն յեօթն բաժանի. որք են գլխաւորագոյնք: - 568. Իսկ աստիճանք հաւատոյն որք են յէութենէ հաւատոյն, եթէ նկատեսցի առ այն որք արարին զհաւաքումն հաւատոյ, են երկոտասան աստիճանք ըստ *թուոյ* երկոտասան առաքելոցն: - 572. Այսպէս և ի *թիւ* երանութեանցս է՛ կարգ բնական. զի արժանաւորքն ի վերջո՛յ դնին: - 583. Ապա թէ և զապաշխարօղքն ի *թիւ* կալցես, Կաթողիկոսն լինի **ժ**երորդ. որպէս աստուած **ժ**երորդ է ի վերայ **թ** դասուց հրեշտակաց: - 608. Այլ մովսէս օրինադրեաց ի *թիւքն* առնել կրկին փողս արծաթի. և կոչեաց զնոսա փողս ազդեցութեան. որպէս դեռևս գոն ի դրունս թագաւորաց կրկին փողք: - 618. Եւ **ճ** տէրողորմեայն, ըստ *թուոյ* **ճ** ոչխարացն միոյն մոլորելոյ: - 621. Իսկ զոր կանոն գլուխ կոչեմք, ասելով **զ** գուբղայ հանդարտ ի *թիւ*. և զեօթներորդն ձայնիւ: - 627. Ի յայս միտս զվեց գուբղայն ի *թիւ* ասեմք. և զեօթներորդն ձայնիւ փողոյ: - 627. Եւ ճաշոյն մեսեդի **զ** *թուով*, ի խորհուրդ վեց դարուս: - 629. Եւ կատարեալ է **ժ** *թիւն*: - 639. Յորժամ *թիւն* առաջին լինի որ է Ֆարտ...: - 641. Եւ յորժամ *թիւն* երկրորդ լինի որ է՛ ջուխտ, - 641. Եւ է՛ այժմ **ժէ** շաբաթապահք. և *թիւ* վաթսնիցն **թ** շաբաթ. - 650. ...զոր նշանակէ **դ** *թիւն*. և ուրբաթն սուգ և բօթ լսի՝ պահելի՛ է: - 653. Վեցերորդ, ըստ *թուոյն*. զի չորեքնիւթեայ բնութեամբ մեղանչեմք, - 653. Որ **ժ** *թիւ* էր ի սրբոյն գրիգորէ յետ **ճժա** ամի անցանելոյ...: - 659. ...որ **ժդ** *թիւ* էր ի սրբոյն գրիգորէ: - 659. Հինգերորդ, Քահանայաթաղ. և օծման նոցա. և ողջունին. **ժ ժ** *թուով*: - 660. Երեքտասաներորդ, Վկայութիւնք հակառակ ախթարմայիցն. և պատասխանիք նոցա **ժե** *թուով*: - 660. Չորեքտասաներորդ, թէ ո՛չ է քաւարան հրոյ, **ժե** *թուով*: - 660. Հնգետասաներորդ, Վկայութիւնք քաւարանին, և լուծումն նոցա **ժ** *թուով*: - 660.

Երեսունևք, Քանի՞ են *թիւք* տանջանաց անդ: - 661. Եւ *թիւ* ընտրելոցն. և լոյս նոցա: - 661. Հինգերորդ՝ մարդոյս պիտոյ էր ժամանակաւ աճումն. զի *թուով* առցէ զկատարումն_վերջին ընտրելոյն: - 662. Ապա և ո՛չ լրումն *թուոյն*. զի միակն յառաջ է քան զբազումն: - 662. Վասն որոյ յերկրի աստ բազմանան *թուով*. և ապա՛ միահաղոյն մտցեն անդ որպէս բազմութիւնք հրեշտակաց: - 662. Երկրորդ ի *թիւ* ամացն. զի որքան յերկարեմք անցանելով, պակասի մասն վերին և յաւելու մասն ներքին...: - 666. Նա՛խ՝ զի **գ** *թիւն* խորհրդաւոր է. որ ունի սկիզբն և մէջ և կատարումն: - 681. ...որով դրոշմեալքն յետ արտաքս ելանելոյ ի մարմնոյս, թռչին յանապատն ի մեղաց յերկինս կերակրիլ անդ յուսով մինչև լնու *թիւ* կատարման աշխարհի: - 703. Եւ կարճել ո՛չ զժամ աւուրցն ասէ, այլ *զթիւ*: - 709. Հազար ամն է *թիւ* կատարեալ. զի ունի զտասն հարիւրեակն: - 710. Իսկ **իդ** *թիւն* ո՛չ եթէ սահման և կէտ է. այլ սովորութիւն է գրոց փոքր *թուով* զբազումսն ցուցանել: - 711. Չորրորդ, նշանակէ՛ *զթիւ* աւուրցն ժամուց յորում նոքա վաստակեցին և զարդարեցան: - 711. Վեցերորդ, զի **բժ**ան ցեղապետք էին հնոյն. և **բժ**ան առաքեալ նորոյս. զերկոցունց ազգաց նահապետսն դնելով զբոլոր *թիւ* ամենայն ազգին, նշանակէ՛: - 712. Նաև անդանօր ետես նախանըկար տեսչութեամբ զորքանութիւն մարդկան ըստ *թւոյ*: - 716. Եւ զորպիսութիւն բարեաց և չարեաց. և զերկայնութիւն ժամանակին որով *թիւ* մարդկան զլրումն առցէ: - 716. Դարձեալ որպէս հատն մերկ սերմանի և մերկ ո՛չ բուսանի. այլ զարդարեալ խոտով և տերևով եօթն *թուով*: - 721. Ո՞րպիսի հասակաւ յառնեն և յո՞ր *թիւ*: - 726. Վարդապետք ասեն թէ՝ ամենեքեան կատարեալ հասակաւ յառնեն և մի *թուով* երեսնամեայ: - 726. Եւ ի մէջ մանկութեան և ծերութեան երիտասարդութիւնն է *թիւ* կատարեալ...: - 726. ...և յայս *թիւս* ստեղծաւ ադամ որ է երեսնամեայ: - 726. Դարձեալ՝ երկրորդն ադամ յայս *թիւս* յարեաւ ի մեռելոց. վասն որոյ և մեք ամենեքեան յայնմ *թուի* յառնեմք. - 726. Եւ այսպէս համահասակ *թուով* ժամանակի և կատարելութեամբն լինին: - 726. Այլ ըստ զանազանութեան չափոյն, ոմանք **ժ** են ասացեալ *թուով* ըստ հարուածոցն եգիպտոսի: - 751. Ո՞ր քան է ընտրելոցն *թիւ*: - 760. Ո՛չ թէ որիշ դաս անկաւ այլ իմն *թուով*՝ արտաքոյ քան զինն դասս: - 760. Ա՛րդ՝ ի տեղի անկելոց հրեշտակացն՝ ըստ *թուոյ* նոցա խառնելո՛ց են դասք կուսանաց սրբոց: - 760. Ա՛րդ՝ եղև զրաւ բանիս, ի շրջագայութեան Հայկազեան Տօմարի, **պխզ** *թուի*: - 772. Եւ ոմանք յորոց սրբազան առաջնորդն մեր, պակասութիւն ասաց գոլ զորս յետոյ կրեցին անդամք նորա. այսինքն ըզհատումն մասանց. այրումն հրոյ. և այլ իմն բազմազան տանջանս. յորմէ *թուով* պակասեաց ի քրիստոս և յաւելաւ անդամս իւր: - 781. Իսկ մեծն ներսէս ասէ, պակասութիւնն այն է, որ կիրք չարչարանացն քրիստոսի *թուով* և տեսակաւ պակա՛ս էր յառաքեալն պօղոս. այսինքն խաչն, բևեռքն, և այլն. և զայն էլից քարոզութեամբն իւր ի մարմինս եկեղեցւոյ: - 781. Այլ վարկանին ոմանք *զթիւ* կազմութեան աւուրց պակաս գոլոյ նախնւոյն մարդոյ. զորոյ զտիպ յինքն նկարելով և այժմ անդրանիկն ծնունդ՝ յապաղելով գայ աշխարհ: - 785. Որ և զայս *թիւ* խորհրդոյ պահէ՛ յինքեան ամացն շրջագայութիւն: - 785

**ԹԻՒՔ** (Սուրբ Գրքի մաս) **+** Առաջին՝ Արարածք. Ելք. Ղևտականք. *Թիւք*: - 450. Եւ վասն ներելեացն թողութեան ասացաւ ի *թուոց* **իբ** գլուխն, **կա** համարն: - 603

**ԹԻՒՐ +** Որք զաչս իմաստից յիմանալի ճառագայթիցն խուսափեցին *թիւր* կամօք, և խոտոր մտօք. զանուղղայս խորհելով, և զանպատշաճս բարբառելով. յարձակեալ անկապ լեզւաւ և անդուռն շրթամբք բացեալ յերկինս. ցոպ բերանով ի բարձունս բարբանջելով. և յածեալ ընդ երկրաւ լեզուագարելով. որոց դատաստանն ի բնէ ո՛չ դատարկանայ. և կորուստն ո՛չ նիրհեսցէ: - 31. Վասն զի խղճմտութեամբ յանցաւորին ճանապարհն ո՛չ է *թիւր*. այլ ինքն *թիւրի* յուղիղ ճանապարհէն: - 33. Իսկ որ զկամսն է չարացուցեալ, զճանապա՛րհն ունի *թիւր*. և որքան ընթանայ՝ մոլորի: - 33. Ուսուցանեն *թիւր* հաւատս, և գործս վատթարս: - 35. **Եւ այսպէս փախչելով ի *թիւր* ծայրիցն, զմիջինն պահելով ընթացք բարեպաշտութեան, անշփոթ և անբաժան միութիւն, խոստովանիմք զքրիստոս՝ աստուած մարդացեալ. մի անձն և մի բնութիւն. և մի կամք և գործք ըստ ուղղութեանն բանի**: - 81. Եւ զի նենգաւո՛ր է, *թիւր* ընթանայ: - 219. Եւ ձնն ուղիղ և *թիւր*՝ որա՛կ է: - 236. Ձեռքն *թիւր*՝ շատախօ՛ս է. և շատակուլ: - 247. Եւ այլք զհայոյն՝ ծեքական և *թիւր* ուսանին. զի մասնաւո՛ր է լեզու նոցա: - 297. Չորրորդ՝ շիլ. *թիւր* տեսութիւն: - 370. ...և ա՛յս ճանապարհ է ի ձախմէն և *թիւր*: - 666

**ԹԻՒՐԱԿԷ +** Որպէս *թիւրակէքն* որք լինին յօձից և ի գազանաց: - 217

**ԹԻՒՐԱՄԻՏ** - Իսկ ամենայն անդամք որ ներհա՛կ են այսմ, *զթիւրամիտն* ցուցանեն: - 248

**ԹԻՒՐԱՊԷՍ** - Եւ թէպէտ համաձայն մեզ այլք ասացին մի անձն՝ բայց *թիւրապէս*: - 83

**ԹԻՒՐԵՄ +** Եւ կամ հո՛ղմ է արտաքս *թիւրեալ* ի ճանապարհէ՛ իւրմէ. և ի խոռոչս երկրի մտեալ. և

վասն թանձրութեան երկրին շարժէ զնա մինչև գտանէ ելս և ապա՛ դադարի: - 206. **Դարձեալ գիտելի՛ է, զի յոբ կրկնելով զբանսն՝ ուղղէ՛ր զբարեկամսն և ընկրկէ՛ր զսատանայ. զի այսպէս ամենայն ոք կարէ՛ յաղթել սատանայի յորժամ զընկերն ուղղէ ի բանս կամ ի գործս կամ ի հաւատս և յայլսն. յայնժամ սատանայ *թիւրի* և հեռանայ**: - 323. **Այլ յորժամ զընկերն *թիւրեմք* չար յաղթութեամբ, յայնժամ սատանայ ուղղի և ուրախանայ**: - 323. Երկրորդ՝ *թիւրէ* զճշմարտութիւնն յորժամ զչարն բարի ասէ և զբարին չար: - 325. Որ նշանակէ ի մեզ զերեք մասանց *թիւրիլն*. այսինքն բանից, ցասման, և ցանկութեան հինգ զգայարանօք: - 367. Եւ տէր մեր յաղթեաց իշխանին դիւաց. և եհատ զնորայն բռնութիւն աջոյ. և զոմանս եթող ձախիւ *թիւրելոյ* և զընտիրս որոշելոյ: - 419. Ասեմք առ այս, եթէ համակարգ և համիշխանք են վերջինն ընդ առաջնոյն ի կարգել և ի յուղղել. այլ ո՛չ ի *թիւրել* և ի քակել. զի առաջնոյն աւանդապա՛հ է վերջինն նո՛յն մտօք և նո՛յն կամօք: - 541. Յաղագս որոյ ո՛չ կարեմք զառաջնոյն հայրապետաց կարգ կամ զկանոնս զպահք կամ զայլ ինչ *թիւրել* և փոխել: - 541. Եւ սուրբն յոհան օձնեցին զեզր կաթողիկոսին և զայլոցն որք *թիւրեալք* էին զկնի քաղկեդոնի: - 541. Եւ թէ ոք ասիցէ, այս առաջնոյն. զի վերջինն կարէ՛ ուղղել. այլ ո՛չ կարէ *թիւրել*: - 541. Երկրորդ՝ որպէս կառք և կառավարն. եթէ մարմինն *թիւրի*, միտքն ուղղէ՛ զնա: - 557. **Իսկ թէ կառավարն *թիւրի*, կառքն ո՛չ կարէ ուղղել. այլ երկոքինն գահավիժին:** - 557. Զի կամ հրաժարէ՛ և *թիւրի* բանականաւ. ըստ այսմ է՛ նախանձ: - 561. Կամ *թիւրի*՛ ցասմամբ. և ըստ այսմ է՛ բարկութիւն: - 561. Կամ և *թիւրի* ցանկութեամբ. և ըստ այսմ է՛ ծուլութիւն. որ է՛ տրտմութիւն և ձանձրութիւն: - 561. Եւ երեքիւք *թիւրի* արդարութիւնն: - 579. Որպէս ո՛չ եղև վնաս յովսիայ որով հայրն *թիւրէր*: - 593. Եւ զի մի՛ մարդիկ *թիւրեսցին* արտաքոյ բնութեանս լեալ: - 665. Եւ յետ այնորիկ ոչ առ ժամայն գայցէ տէր ի դատաստան. այլ տացի խաղաղութիւն աւուրս խե. առ ի հանգիստ սրբոցն և ի յապաշխարութիւն *թիւրելոցն*: - 709. Զի դատաւորք երկրի վասն չորից *թիւրեն* զդատաստանս: - 744

**ԹԻՒՐՈՒԹԻՒՆ +** Ութերորդին ասեմք՝ եթէ օրինակաւ խօսից իմանալ զիոգին սուրբ՝ ունի ինչ ուղղութիւն և ունի ինչ *թիւրութիւն*: - 62. Իսկ *թիւրութիւն* է այսպէս: - 62. Նոյնպէս վասն երկրորդին գիտելի է, զի որպէս զփայտ *թիւրութեամբ* պնդեալ՝ դժուարին է ուղղել. նոյնպէս զչար սովորութիւն մարդկան դժուարին է փոփոխել: - 531. Ասեմք, եթէ որք ի հաւատս ունին *թիւրութիւն*. որպէս հերձուածօղք և վնասիչք եկեղեցւոյ. և որք ի զազիր վարս պղծեալ են գործովք և վնասեն զինքեանս. և անզեղջք են առ երկոսին. յետ մի անգամ և երկիցս խրատելոյ, որոշեսցին յեկեղեցւոյ և պատժեսցին: - 540. Եւ դարձեալ՝ կարէ՛ վերջինն զառաջնոյն *թիւրութիւնն* ուղղել և զանիրաւ կապեալն արձակել. որպէս աստուածաբանն գրիգոր զարիանոսացն: - 541

**ԹԼՓԱՏԵՄ +** Ութերորդ՝ զի ասացաւ աբրահամու *թլփատիլ* ի ծերութեան ժամուն իննսունինն ամաց գոլով: - 304. Երկրորդ՝ Գայլախազիւ *թլփատեաց:* - 412. Զժողովուրդն *թլփատեաց*: - 414. Վասն է՞ր գայլախազիւ *թլփատեաց* և ո՛չ երկաթով: - 415. Ութերորդ՝ զի զկարծր սիրտ նոցա *թլփատեսցէ* օրինօքն ի վէմն գրեալ: - 415. Տասներորդ՝ *թլփատեաց* գայլախազով զիսրայէլ: - 417. Եւ ո՞վ *թլփատեաց* զյիսուս: - 454. *Թլփատի* և այժմ եկեղեցի իւր չորեքկին սրով: - 454. Քրիստոս վասն է՞ր *թլփատեցաւ*: - 485. Ո՞վ *թլփատեաց* զյիսուս: - 486. Ոմանք ասեն թէ՝ յովսէփ *թլփատեաց*: - 486. Եւ այն էր զի զաքարիա ի վերայ բազկացն յովսեփու *թլփատեաց* զնա: - 486. Եւ քրիստոս ո՛չ միայն օրինակաւն, այլ և հոգևորաւն *թլփատեցաւ*: - 486. Նա՛խ՝ *թլփատեաց* զնա հայրն ի ծնունդն՝ աղքատութեան սրովն: - 486. Երկրորդ՝ *թլփատեցին* զնա իւրքն յաւուրն **ը** երորդի՝ օրինաց սրովն: - 486. Երրորդ՝ *թլփատեաց* ինքն զինքն յամենայն կեանս իւր՝ խոնարհութեան սրովն: - 486. Չորրորդ՝ *թլփատեցին* զնա հրէայքն՝ ի չարչարանսն՝ սրով խաչին. և զայս զինուորքն պիղատոսի: - 486. Դարձեալ՝ *թլփատի* քրիստոս և այժմ յեկեղեցի իւր չորեքկին: - 486. Այլ որպէս ի հինն ո՛չ առնէին ընդ հեթանոսացն խնամութիւն որք չէին *թլփատեալք*: - 612. Որք ո՛չ *թլփատեցան* ի հինն և ոչ մկրտեցան ի նորս, կամ չարք ի մարդկանէ, ունին զդատապարտութիւնն զոր զրկելոց են ի դատաստանին զանազան տանջանս և ո՛չ այժմ: - 690. Ա՛րդ՝ ծնանի ի բաբելօն ի ցեղէն դանայ. և եկեսցէ յերուսաղէմ և *թլփատեսցէ* զինքն: - 707

**ԹԼՓԱՏՈՒԹԻՒՆ +** Որք հաղորդեցան մարմնոյ նորա, եղեն զաւակք ըստ մարմնոյ՝ ըստ *թլփա-տութեան* և այլոց օրինաց նորա: - 303. Վեշտասաներորդ, մովսէս ետ *զթլփատութիւնն* և զլուացումն ջրոյ: - 329. Տասներորդ՝ ի գարեգին. որ է՛ լեառն *թլփատութեան*. զի ելեալ ի լեառն հաւատոց՝ զաւելորդ մեղացն ի բաց ընկեսցեն, և զօրհնութիւնն աստուծոյ առցեն: - 402. Տասներորդ՝ և նորս *թլփատութիւն* սրտի՝ վէմն քրիստոս լինելոց էր. որ կարծրացաւ աստուածութեամբն. և էարկ սուր յերկիր և բաժին: -

415. Զի *բլփատութիւնն* դրո՛շմ էր նոցա և որոշօղ: - 418. Եւ որպէս շնորհք մկրտութեան առաւել է քան *զբլփատութիւն* նոցա, զի զմեղս սրբէ և զարքայութիւնն բանայ: - 433. Քսանևդ, Վասն *բլփատութեան* տեառն **Ժ** պատճառաւ: - 454. Քրիստոս վասն մեր սպասաւոր եղաւ *բլփատութեան*. և ո՛չ վասն պիտոյից նորա: - 485. Այլ պատշա՛ճ էր *բլփատութիւն* նորա վասն բազում պատճառի: - 485. Վեցերորդ՝ զի ցուցցէ զինքն որդի աբրահամու. առ որ հրաման *բլփատութեանն* եղև և խոստումն օրհնեալ զաւակին. և այսպէս խոստմանն աստուծոյ կատարումն քրիստոս զինքն ցուցանէր: - 485. Եօթներորդ՝ զի յինքն կրելով *զբլփատութիւնն* և զայլ օրինականս, ի ծանրութենէ *բլփատութեան* և օրինացն ազատեսցէ զմեզ: - 485. Իսկ տէրն մեր էր անդրանիկ ի հօրէ և անդրանիկ ի մօրէ. և անդրանիկ շնորհաց և արդարութեան. և անդրանիկ յարութեան մեռելոց. վասն որոյ անդրանկապէս ընկալաւ զօրէնս *բլփատութեան*: - 486. Եւ աստ գիտելի է, զի կրկին է *բլփատութիւն*. մարմնաւոր և հոգևոր: - 486. Եւ որպէս զմարմնաւոր *բլփատութիւնն* աւանդեաց աբրահամու, նոյնպէս զհոգևորն որ է՛ *բլփատութիւն* սրտի՝ հրամայեաց ի ձեռն մովսէսի...: - 486. Զի վարդապետք ի **դ** բաժանեն *զբլփատութիւնն* քրիստոսի: - 486. Չինգերորդ՝ ոմանց *բլփատութիւն* ունել: - 553. Առաջին «որ յայտնեցար». աւետեաց, ծննդեան, մկրտութեան, և *բլփատութեան*, զա՛յս ասա: - 634

**ԹԼՓԱՏՈՒՄՆ** - Այլ և յեօթն տեղ մասնէ՛ բղխեաց արիւնն քրիստոսի: Առաջինն ի *բլփատումն*: Եւ ի քիրտ արեանն կայլակ հոսիլ: Եւ ի կողիցն: Եւ յերկոսին ձեռացն և ոտիցն: - 492

**ԹԽԱԿՆ** - *Թխակն* վատո՛ւժ է և ագահ: - 246. Իսկ *թխակն* և կարմրագոյն՝ քան զգազան չա՛ր է: - 246

**ԹԽԵՄ +** Երրորդ՝ յայլոց նոյնք. որպէս զձու կաքաւի և սագի *թխէ՛* հաւ. և նոյն կաքաւ, և սագ ելանէ: - 53

**ԹՂԹԱՏԱՐ +** Եւ սուրբն սիմէոն սիւնակեացն այրեաց զքուղքն դաւանութեանն քաղկեդոնի՝ զոր գրեալ էր թագաւորն մարկիանոս աղաչանօք առ նա՛. և նզովեաց *զթղտատարն* որ էր թէոդորիտոս գլուխ ժողովոյն: - 543

**ԹՄԲՈՒԿ +** Եւ չորսն ձեռօք. որ է տաւիղն, քնարն, *թմբուկն*, և ծնծղայք: - 431. Մինչ զկնի կարմիր ծովուն՝ յընկղմիլն փարաւոնի հանդերձ զօրօքն, *զթմբուկն* ունելով երգէ՛ զերգն, «օրհնեսցուք զտէր զի փառօք է փառաւորեալ» և այլն: - 764

**ԹՄՐԻՄ +** Զորօրինակ՝ թափումն ի զգայութեանց *թմրիլ*՝ կամ ընդարմանալ ասի. այսպէս թափումն ի մտաց՝ զարմանալ ասի. ըստ պօղոսի որ յափշտակեցաւ. և ըստ դաւթի որ զարմացաւ. կամ ըստ ադամայ որ *թմրեցաւ*: - 127. Տասներորդ՝ զի կիրք մարմնոյն հեղուն ի հոգին. որպէս յորժամ մարմինն ննջէ՝ և հոգին *թմրի* և անգործ մնայ...: - 233. Զի սամփսոն ի ժամ գերծելոյ գլխոյն *թմրեալ* ի ծունկս թալիլայ խոնարհէր. նոյնպէս և ամենայն մեղք զոր գործէ մարդ, և առաւել գէճ ցանկութիւն, անարգէ զմարդ: - 424. Չորրորդ՝ *թմրի* և հեշտանայ: - 424. Մէջ գիշերին է՛ երիտասարդութիւնն. յորում առաւել *թմրիմք* ի մեղս: - 622

**ԹՇՆԱՄԱՆՔ +** Եօթներորդ՝ բարեկամաց *թշնամանքն* յերկար հակառակութեամբ: - 322

**ԹՇՆԱՄԻ +** Զորօրինակ **բ** *թշնամիք* ոմանք ի յարկս թագաւորին ո՛չ իշխեն վնասել իրերաց, մինչև թագաւորն հրամայեսցէ: - 12. Ապա ուրեմն չարն ո՛չ է յաստուծոյ այլ ի մէնջ՝ կամ ի նենգութիւնէ *թշնամւոյն* որ պատրէ՛ զմեզ: - 19. Երրորդ՝ ի պատրանաց *թշնամւոյն* մոռանայ զբարի բանս: - 120. Եւ **Ժ** կատարեալ թիւ է. նշանակէ՛ զկատարեալ զօրութիւնս *թշնամւոյն* որով կռուի ընդ մեզ. զոր նշանակեն եղջիւրքն: - 151. Երեքտասաներորդ՝ զի տկար մարմնով անմարմին և զօրաւոր *թշնամոյն* յաղթեսցեն. որով աստուած իսկապէս փառաւորի. տեսանելով զտկարն յաղթել զօրաւորին...: - 159. Եւ այսպէս ջերմ և ցուրտ, չոր և գէճ, *թշնամիք* են անհաշտելիք. և լինին միաւորեալք դարձեալ ծայրիւքն և մնան սիրելիք անքակտելիք այսպէս: - 181. Եւ ա՛յս է՝ *թշնամիք* անհաշտելիք. և սիրելիք անքակտելիք: - 181. Վեցերորդ՝ զբարեկամս և *զթշնամիս* ցուցանէ: - 185. Երրորդ՝ *զթշնամին* սատանայ և զչարն փախուցանէ: - 185. Վեցերորդ՝ զբարեկամ հրեշտակս՝ և *զթշնամին* սատանայ ցուցանէ՛: - 185. Իններորդ՝ պարիսպ լինին շուրջանակի ջուրք. ի *թշնամեաց* ի գազանաց՝ և ի գողոց պահելով: - 207-208. Այլ այժմ վասն զգեստուց պահեմք զոչխարս. և վասն կերակրոյ զեզինս. և վասն բեռին զէշս. և վասն բառնալոյ զմեզ զձիս. և վասն *զթշնամիս* հալածելոյ զշունս. և վասն զթռչունս ըմբռնելոյ զբազէս. և զայլսն նմանապէս: - 217. Ութերորդ՝ զի ո՛չ երևէր բարեկամն և *թշնամին*. սիրելին և ատելին. և լինէին բազում սպանութիւնք և աւերք. զի ոչ զգուշանային միմեանց: - 238. Առաջին իսկապէս *թշնամի* մարդկան ազգի սատանայ է. իսկ այլ *թշնամիք* ի նմանէ՛ պատճառեցան: - 277. Երկրորդ՝ *թշնամիք* են մարդիկ միմեանց: - 277. Երրորդ՝ *թշնամի* են հոգի և մարմին իրերաց և մասունք նոցա: - 277. Չորրորդ՝

*թշնամիք* եղեն հրեշտակք մարդկան. որք պահէին սրով զճանապարհ ծառոյն: - 277. Հինգերորդ՝ *թշնամի* եղև աստուած, յորում արտաքսեաց ի դրախտէն: - 277. Վեցերորդ՝ *թշնամիք* եղեն գազանք և անասունք, յորում՝ «եդից թշնամութիւն ի մէջ քո և կնոջդ»: - 277. Եօթներորդ՝ *թշնամի* եղև գործն մեր. որ նա՛ ի մեղս փոխեաց անցանելով զպատուիրանն: - 277. Ութերորդ՝ *թշնամիք* եղեն կիրք պատժոցն. այսինքն մահ՝ ապականութիւն՝ տանջանք՝ հիւանդութիւնք՝ սով՝ և ծարաւ՝ և այլն ամենայն սոքա ի կրիցն են: - 277. Եւ այսպէս **ը** դիմօ՛ք է թշնամութիւն մեր ընդ միմեանս. և ամենայնին պատճառ սատանայ եղև, որ բնութեանս է *թշնամի*: - 278. Է՛ և ներքին և վերին վայր. մարմին և անմարմին. և այլք սոյնպիսիք տարբերութիւնք են բնութեան և ո՛չ *թշնամիք*: - 278. Չորեքտասաներորդ՝ եգիպտացիքն էին *թշնամիք*, և երկիր պագին յովսեփայ: - 314. Եւ ի կատարածի դիցին *թշնամիքն* քրիստոսի ի ներքոյ ոտից նորա ասացաւ: - 314. Եւ տէր մեր ի վերայ *թշնամւոյն*: - 315. Եւ ի յառնել տեառն մերոյ ի գերեզմանէն՝ սարսեցին ամենայն *թշնամիք* նորա որդիք անդնդոց: - 316. Իննև*ժ*, ո՛չ յառնէ առիւծն ի տեղւոջէն մինչև հնազանդէ՛ *զթշնամիս* իւր: - 316 Վեց են *թշնամիք* քրիստոսի: - 316. Նախ՝ սատանայ և անհաւատք աստուածութեան նորա. և մեղք և դժոխք հոգւոյ են *թշնամիք*. մահ և ապականութիւն մարմնոյն: - 316. Այլ ոտք զհաւատացեալ անդամս իւր ասէ. զի սոքա՛ վեցեքին *թշնամիքս* կոխան լինին հաւատացելոց ի կատարածի: - 317. Երրորդ՝ զի ձեռամբ *թշնամւոյն* նահատակեցան. որպէս այլ ամենայն մարտիրոսք: - 322. Սոքա երկոքինս պիտո՛յ են ամենայն մարդոյ ի մարտ *թշնամւոյն*: - 323. Ապա ուրեմն բովանդակ երևեցաւ **ե** զէն որով յաղթեմք *թշնամոյն*: - 324. Կամ որ զմեզ ազատեաց, և *զթշնամին* կապեաց: - 347. Հինգերորդ՝ սուր և փախուստ ի *թշնամեաց*: - 376. Եօթներորդ՝ սովն ուտել զմարմին զաւակաց. և գերութիւն ի *թշնամեաց*: - 376. Իններորդ՝ զի մերձեալ տեսանէ զօր մահուն և *զթշնամին* առաջի աչացն որով պատրաստի: - 378. Դարձեալ՝ քաղեբ և յեսու. հին և նոր կտակարանք. որք զհանդերձեալն մեզ պատմեն. և զյաղթելն անմարմին *թշնամւոյն*: - 380. Երկրորդ՝ զի պահապան է յառաջին և վերջին *թշնամեաց* որ է սատանայ և մեղքն: - 385. Երրորդ՝ հակառակատիպ տեսանի. զի անդ օձն պղնձի զմարդ *թշնամիս* իւր կեցուցանէր և զօձսն սատակէր. և տէր մեր զմարդիկ ազգակից իւր կեցուցանէր, և *զթշնամին* սատանայ հալածէր: - 386. Այլ ի յաւարէ՛ թագաւորաց որ ի յերկրէն *թշնամեաց* բերեն՝ հալա՛լ է մատուցի՛ նուէրք յեկեղեցին: - 390. Զի գործ արդարութեան է սպանանել *զթշնամիս*. նոյնպէս և աւարն արդարութեան մասն է: - 390. Իսկ ահագին, Նա՛խ՝ զի *թշնամիք* էին շուրջանակի. և գազանք և սողունք. և ծով. և ամայի. և անպարիսպ: - 393. Նա՛խ՝ շուրջ *թշնամիք* դևք. և գազանք խիղճ մտաց. և ծով մեղաց. և ամայութիւն բարեաց: - 393. Զայն ցուցանէ իբր միշտ *թշնամի* են մեր և հակառակ: - 394. Երկրորդ՝ բարձր փառօք հանել զժողովուրդն անձեռնարկելի *թշնամեաց*: - 395. Նոցա զգալի *թշնամիքն* ետ կոխան. և մեզ զիմանալին...: - 398. Եւ թէ մովսէսի ոչ հաւատայք որ փառաւո՛րն է ի մէջ ձեր, ինձ զիա՞րդ հաւատայք որ *թշնամի* կարծէք: - 405. Նա՛խ՝ զի մի՛ փախիցեն *թշնամիքն*. զի ընդ երե՛կս էր: - 416. Վասն է՞ր ոչ կոտորեաց զամենայն *թշնամիսն*: - 416. Ութերորդ՝ յօրինակ փրկչին յիսուսի, որ զբռնութիւն *թշնամւոյն* խորտակեաց և զխաբէութիւնն եթող. զի փորձեսցին ընտրեալքն և խոտեսցին վատթարքն: - 417. Երկրորդ ըստ իրին. զի յեսու փրկեաց զժողովուրդն ի մարմնաւոր *թշնամեաց*: - 417. Եօթնև*ժ*՝ յեսու կանգնեաց զգայիսոնն ի գայի, մինչ կոտորեցան *թշնամիքն*. որպէս մովսէս տարածմամբ ձեռաց զամաղէկ: - 418. Եւ տէրն մեր կանգնեաց զխաչն ի գողգոթայ մինչև յերեկոյ և վանեաց *զթշնամին* մեր: - 418. Եւ տէր մեր խաչիւ և մարմնով զբովանդակ *թշնամիսն* կործանեաց: - 423. Երեսունգ, սամփսոն զսրունս և զերանս *թշնամեաց*՝ և յետոյ զգլուխն ջախէր: - 424. Եւ տէր մեր մահուամբ առաւել կործյս *զթշնամին*, որ քան ի կեանս գործով հրաշից: - 424. Ութերորդ՝ ուրախանան *թշնամիքն*: - 424. Երկրորդ՝ զի այնու դիտասցէ զյաղթութիւն *թշնամեացն*: - 434. Եօթանասուներորդ, յերիս առաջս զօրօք յաղթեաց *թշնամեաց*. և տէրն մարմնով և հոգւով և աստուածութեամբն յաղթեաց: - 438. Զի *թշնամեաց* տեառն սատակումն՝ արդարութիւն էր նոցա: - 439. Զայս ցուցանէ թէ՝ որ քան ի խռովութեան եմք ընդ *թշնամւոյն* և յանձինս մեր՝ ո՛չ լինիմք տաճար աստուծոյ: - 440. Դարձեալ՝ տարածումն ձեռացն զմերժումն և զհերքումն *թշնամւոյն*, այլ և զիշխանութիւն նորա արտաքս ընկենու...: - 489. Տասներորդ, զի ցուցցէ թէ *թշնամեաց* նորա ո՛չ է իշխանութիւն բուռն հարկանել զնմանէ. իսկ բարեկամաց նորա գոյ իշխանութիւն այլով իւիք մերձենալ ի նա. այսինքն սիրով և երկիւղիւ յայնմիկ զօր ուտեն զնա: - 518. Երրորդ՝ ամբարձեալ ձեռօք վերանայր յերկինս վասն երկուց. նախ՝ զի զինքնն ընծայեսցէ հօրն. երկրորդ՝ զի *զթշնամիսն* հարկանիցէ զօրաւոր ձեռամբ բարձրացեալ: - 520. Չորրորդ՝ օրհնեաց զնոսա զինիլ ընդ դէմ

*թշնամեացն* և աճիլ երկնային բարեաւն: - 520. Չորրորդ փրկէ ի *թշնամեաց*...: - 574. Եւ այլք ասեն՝ նախ սիրելոյ է աստուած. երկրորդ ծնօղքն. յետոյ որդիքն. ապա՛ ընտանիքն. վերջոյ *թշնամիքն*: - 576. Ի հինն ասաց սիրել զընկերն, և ի նորս յաւել սիրել *զթշնամին*: - 577. Ո՞րն է առաւել, սէր ընկերի՞ն՝ թէ *թշնամւոյն*: - 577. **Սիրել զսիրելիս պարտական է ամենայն ոք. այլ սիրել *զթշնամիս* է՛ առաւել արդիւնաւոր**: - 577. Զո՞ր *թշնամիս* պարտ է սիրել: - 577. ***Զթշնամիսն* մեր պա՛րտ է սիրել և աղօթել վասն նոցա. և *զթշնամիսն* աստուծոյ ատել**...: - 577. Դարձեալ՝ կրկին է *թշնամին*. մեր անձինս, և եկեղեցւոյ: - 577. **Անձին *թշնամւոյն* պա՛րտ է բարի առնել. իսկ *թշնամւոյն* եկեղեցւոյ՝ ո՛չ առնել բարի և ո՛չ չար:** - 577. Դարձեալ՝ պարտ է սիրել զմարմնոյ *թշնամիս* մեր: - 577. Այլ զհոգւոյ *թշնամիս* ատել: - 577. Երկրորդն դրոշմն. որ է՛ պատերազմողացն ընդ դէմ *թշնամոյն* սատանայի: - 587. Դրոշմն է՛ խորհուրդ յուսոյ. զի յուսալով ի զօրութիւն սուրբ հոգւոյն կարողանամք ընդ_դէմ *թշնամւոյն*: - 587. Նա՛խ՝ է՛ վկայութիւն անդուստ իսկ *թշնամեացն*. քանզի ասէ ալպերտն ի յառաջին գիրքն **ժա** համարին, թէ հոգի ասեմ սրբութեան. արիւն փրկութեան. և ջուր լուացման: - 594. յորում բազումս նեղեաց զմեզ *թշնամին* մեր. գանկատիմք նմա և խնդրեմք զփրկութիւն: - 621. նոքա սիրեն զտէր. և զօրացեալ ի նմանէ՝ կոխեն զանմարմին *թշնամին*. որպէս ժողովուրդն զփարաւօն: - 629. ...վասն որոյ ի գիշերի կենցաղոյս լուսաւորէ զհոգիս յետս ընկրկելով *զթշնամիս*: - 629. Վեցերորդ, ընդ կերակուր և ըմպելիս մեր՝ դևն որ *թշնամի* է մեր բազում վնասս խառնէ...: - 654. ...զի մի՛ ձեռնամուխ լիցի ի նա *թշնամին*...: - 672. Օդ կամ կօշիկ յոտս, կուռ վառեալ զինու ընդ դէմ օդային *թշնամւոյն*: - 674. ...և սուրբքն ելեալք ի մարմնոյ և յաղթեալք *թշնամոյն* թագաւորեն ընդ քրիստոսի որպէս ցուցանի յառաջիկայդ: - 706. Եւ յայնժամ յաղթեալ *զթշնամին* և զհարսն առ ինքն ընկալեալ յաթոռ մեծութեան նստցի. - 736. Հինգերորդ, զի դիցէ *զթշնամիս* իւր ի ներքոյ ոտից իւրոց. այսինքն կորուսցէ զնեռն և զսատանայ և զամենայն գայթակղութիւն մարդկան՝ զմեղս և զմահ...: - 737. Հոգին սուրբ բերանով սիրելեաց և *թշնամեաց* յառաջագոյն օրհնեաց զարժանաւորս ասելով «օրհնեալ էք դուք ի տեառնէ»: - 740. Եւ վա՛յ է *թշնամեացն* աստուծոյ. որք զշիթսն զայնս յերկրի լիզեն և զաղբիւրն քաղցրութեան արհամարհեն: - 762. Երկրորդ այնու՝ զի *թշնամիք* նոցա տանջեսցին...: - 764. Երրորդ անդուստ՝ զի իբրև նոքա որ այն քան տկարքն էին՝ սակայն յա՛յնպիսի *թշնամին* այն քան յաղթութիւնս գործեցին ըստ յոբայ: - 765. Մեք եմք որպէս մարախ. *թշնամիք* մեր որպէս հսկայս: - 765. Վասն որոյ սպանօղք որդւոյ՝ հօր և հոգւոյ *թշնամիք* են: - 770

**ԹՇՆԱՄՈՒԹԻՒՆ +** Եւ զի *զթշնամութիւն* էարկ ի մէջ մարդոյն և աստուծոյ, *զթշնամութիւն* եդ ի մէջ մարդոյն և օձին: - 219. Եւ զի բարեկամութեամբ եկն և շրջեցաւ ի *թշնամութիւն*, ինքն յետս շրջի ի խածանելն: - 219. Եւ վասն *թշնամութեան*: - 228. *Թշնամութիւն* **ը** եղանակաւ առեալ լինի: - 277. Եւ այսպէս **ը** դիմօ՛ք է *թշնամութիւն* մեր ընդ միմեանս. և ամենայնին պատճառ սատանայ եղև, որ բնութեանս է թշնամի: - 278. Դարձեալ՝ ի մի խորհուրդ *թշնամութեամբ*: - 404. Երկրորդ՝ զի անհաշտ *թշնամութիւն* եղև հօր աստուծոյ ընդ մարդոյ: - 491. Երրորդ՝ զհրեշտակս ընդ մարդիկ. և զհրեղէն սուրն և *զթշնամութիւն* եբարձ: - 585

**ԹՇՈՒԱՌԱԿԱՆ +** Վասն *թշուառականին* ի բաց մերժի երջանկութիւնն: - 491

**ԹՇՈՒԱՌԱՊԷՍ +** Վասն ութերորդին, որք աստ ի տեսանելոյ զբարիս և ի լսելոյ խոյս տային. արդարապէս ահագին տեսլեամբ և լսելեօք *թշւառապէս* զարհուրին ընդ իւրաքանչիւրոցն: - 753

**ԹՇՈՒԱՌԵԼԻ +** Իսկ դևք ո՛չ տեսանեն զաստուած և են *թշուառելիք*: - 784

**ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆ +** «Զի թէ լոյսն վասն զգեստուն հալածեցաւ ի խաւարէն, խաւարն ո՞րչափ ևս». զի մեծ է նմա հալածիլն՝ քան թէ մեր վերջանալն *թշուառութեամբ*: - 43. Հոգևորն այն է՝ զի անկաւ անձնիշխան կամօք ի բարւոյն ի չարն, ի լուսոյն ի խաւարն, ի գիտութենէն յանգիտութիւն, յանմեղութենէն ի մեղս, յերանութենէն ի *թշուառութիւն*, ի սիրոյն յատելութիւն: - 146. Երրորդն՝ պատժոյն և *թշուառութեանն*: - 151. Վեցերորդն ամօթոյ և *թշուառութեան*: - 210. Եւ ունէր առաջադրեալ իւր զերանութիւնն և *զթշուառութիւնն*. որ է՛ անմահութիւն և մահ: - 282. Նա՛խ՝ ասի ողորմութիւն, իբր թէ որոշիչ *թշուառութեան* սրտին: - 459. Քանզի առնէ զմիտսն անյաղթելի և անփոփոխելի ի մէջ յաջողութեանց և *թշւառութեանց* ամենայնի: - 578. Եւ դարձեալ՝ ողորմութիւն է կամաւոր ցաւակցութիւն յաղագս այլոյ *թշուառութեանց:* - 584. Վասն է՞ր այն քան *թշուառութիւնս* կրեն: - 752. Նախ այնու՝ զի ի տանջանաց *թշուառութեան* այսմ տարագրութեան ազատեալք լիցին. զի անցեալն ի մահուանէ ի կեանս՝ զկենացն ուրախութիւն կրկնապատկէ՛: - 764

**ԹՇՐԻՆ** - Եւ էերորդ ասէ գթիւ ամսոյն նոյի որ է՛ *թշրին*: - 294. Երրորդ՝ ժողովումն արմտեաց ի յաշնան. որ ի *թշրինի* **ժ** կարգեցաւ: - 340. Ի եօթներորդն ամիսն որ է՛ *թշրին*՝ **ժ** օր քաւութեան տօնէին. զի **է** շաբաթ շաբաթուցն ի նա՛ է. և **է**երորդ ամիսն. այլ և **ժ**երորդ օրն շաբաթ էր: - 371. Այլ մեզ այսպէս իմանալի է. զի *թշրինի* մէկն նուիրեալ օր սուրբ տեառն կոչեսցի ասացաւ. որ է՛ սեպտեմբերի **ժը**: - 483. Եւ *թշրինի* **ժ** միշտ առաջին օր քաւութեան. յորում մտանէր քահանայապետն ի սուրբն սրբոց: - 483. Եւ լինի սեպտեմբերի **իէ**, և *թշրինի* **ժ**: - 483. Եւ *թշրինի* **ժե**՝ սկիզբն տօնի տաղաւարահարաց, որ է՛ հոկտեմբերի **բ**. և անտի մինչև ի **իբ**ն *թշրինի*՝ և ի հոկտեմբերի **թ** կատարումն տօնին: - 483. Եւ յղութիւնն եղիսաբեթի յաւուր շաբաթու ի լուսանալ **ժ**երորդ ամսոյն որ է *թշրինի* **իգ**: - 483. Նա՛խ՝ զի ի հինն զտօն քաւութեան և զտաղաւարահարացն ի միասին տօնէին ի *թշրինի* **ժ**: - 616

**ԹՈՂԵԼԻ** - Ակամայն անգիտութեամբ է. որ ներելի՛ է և *թողելի*՛. իսկ կամաւորն անթողելին և մահու չափն է: - 385. Երրորդ՝ յորժամ ի խոստովանութիւն և յապաշխարութիւն գայ, լինի ներելի և ակամայ. զի թէ նախ քան զմեղանչելն ակամայն, և եթէ յետ մեղացն ակամայն, լինի զղջմամբն ներելի և *թողելի*: - 385

**ԹՈՂՈՒԹԻՒՆ +** Երրորդ՝ ըստ դամասկացւոյն՝ հրեշտակն ո՛չ է ընդունակ ապաշխարութեան. նմին իրի և ո՛չ *թողութեան*: - 151. Աշխարհ ո՛չ լինի ոչէ. և ո՛չ ապականեալն կոյս. և վասն *թողութեան*. յորս նախագաղափար տեսութիւնն աստուծոյ: - 154. Եօթներորդ՝ թոյլ տուեալ լինի և ոմանց անկանիլ ի մեղս ինչ. զի ի հպարտութենէն զոր ունէր վասն առաքինութեան՝ խոնարհեսցի և անկցի առաջի տեառն խոստովանութեամբ. և ընկալցի *զթողութիւն*. որ նախ համասե՛ռ էր սատանայի: - 159. Եւ թէ ոք ասիցէ՝ ապա վասն է՞ր *զթողութիւն* գտանէ զղջացեալն: - 165. Նա՛խ՝ եթէ *թողութիւնն* է հետևեալ և կայացեալ ի զղջումն. և զղջումն է ի կամքն. և կամքն է ի կարելեացն. վասն որոյ ներընդունի *զթողութիւն* ի ձեռն զղջման: - 165. Դարձեալ ասեմք, թէ կոյսն և պոռնիկն՝ առաքինութեան և չարութեան են տեսակք, և ներհա՛կք են առաքինութիւն և չարութիւն. զի փոփոխեն զմիմեանս. ըստ այնմ և *թողութեան* հանդիպին: - 165. Եւ եթէ ոք ասիցէ, եթէ պոռնիկն դարձեալ ի կարգ քահանայութեան ոչ մտանէ, ապա չեղև իսկապէս *թողութիւն*: - 165. Ասեմք առ այս Նա՛խ՝ եթէ *թողութիւնն* է ի զղջումն. և կարգն է ի յանձն ապականեալ. ապա ուրեմն իրաւի թէպէտ *զթողութիւն* ընկալաւ զղջմամբն, սակայն ի կարգն ո՛չ մտանէ ապականեալ և շրջեալ անձամբ և բնութեամբ, զորօրինակ բեկեալ և կցեալ անօթ՝ ո՛չ թւի ի կարգ անարատիցն: - 166. Դարձեալ ասեմք, թէպէտ *զթողութիւն* ընկալաւ իսկապէս, և զպատիժս կրեաց հատուցմամբն, սակայն մնաց կնիք ապականութեանն ի յանձն որպէս ասացաք: - 166. Ապա ուրեմն ո՛չ է նմանապէս ամենայն մեղաց *թողութիւն*. որպէս և ո՛չ է նման գործն: - 167. Դարձեալ՝ մարդո՛յն է *թողութիւն* մեղաց վասն մարմնոյն՝ զոր ոչ ունին հրեշտակք: - 275. Եւ թէ լան և զղջան բոլոր սրտիւ ի ձեռն ապաշխարութեան, գտանեն վերըստին զշնորհն անդրանկութեան, և հասանին *թողութեան* մեղաց: - 309. Եւ տէր մեր՝ չարչարողացն իւրոց *թողութիւն* խնդրէր ի հօրէ՛: - 329. Վեցերորդ՝ այլ և ի *թողութեան* անն ուսուցէ թողուլ զպարտիս բանից և գործոց մերոց պարտապանաց: - 372. Եօթներորդ՝ ստուերապէս նշանակէր զազատութիւնն որ եղև մեզ ի ձեռն քրիստոսի. որ ազատեաց յօրինացն դժւարութեանց, և ի մեղացն, *զթողութիւն* շնորհելով: - 372. Հինգերորդ՝ յոբելեանն յիսներորդում. որ է՛ ամ *թողութեան* և ազատութեան: - 372. Երրորդ՝ ի *թողութիւն* մեղաց: - 372. Հինգերորդ՝ հանգիստն կատարեալ հոգւով և մարմնով. որ է՛ փողոց հնչմունք. ազատութիւն յապականութեանց. ամ *թողութեան* և իւրաքանչիւր ուրուք ի ստացուածս իւր դարձումն. որ է՛ գործոց հատուցումն: - 372. Այլ և վասն հին և նոր ժողովրդեանս *թողութեան*: - 373. Երկրորդ՝ ողողելոյ զհանդերձն, է՛ ջուր խոստովանութեանն և *թողութեան* մեղաց: - 384. Երրորդ, զղջումն՝ խոստովանութիւն՝ և *թողութիւնն* նա՛խ է. և ապա՛ ա՛յլ գործք ապաշխարութեան: - 384. Դարձեալ, եկեղեցի սուրբ՝ է՛ քաղաք ապաստանի. և քահանայապետ ի նմա՛ պատարագն. յոր մտեալ աղօթեմք և *թողութիւն* գտանեմք: - 392. Եւ սա՛ բղխէ զկաթն և զմեղր. որ է՛ քաղցրութիւն և *թողութիւն* մեղաց. նոյնպէս և զ**ժ** բանեան օրէնս: - 395. Եւ որ յառաջինն դառնայ. զի ներումն և *թողութիւն* շնորհէ: - 401. Հնգետասաներորդ՝ Վասն մեղացն դաւթի և *թողութեան*: - 412. Եւ զի թերութեամբ էր և ո՛չ յուսով *թողութեան*: - 415. Վեցերորդ՝ ի յոյս և յօրինակ ամենայն մեղաւորաց. որք զղջան և գտանեն *զթողութիւն* մեղաց: - 432. Նա՛խ՝ ի յոյս *թողութեան* մեղուցելոց. զի և մեք զղջացեալ ապաշխարեմք զմեղս: - 433. Սոյնպէս և շնորհք ապաշխարութեան նորոյս առաւե՛լ է քան զհնոյն. զի առանց գործոց հատուցման ո՛չ կարէին արդարանալ. իսկ աստ շնորհօք *թողութեանն* միայն, կարէ՛ արդարանալ: - 433. Ութերորդ՝ ողորմութիւն է ի *թողութիւն* մեղաց. և արդարութիւն ի ներումն պատժոց: - 458. Չորրորդ

դարձեալ՝ **դ** թւ խաչին նշանակէ զչորս բարերարութիւնս քրիստոսի. զի վերին մասն ցուցանէ զբացումն արքայութեանն երկնից. ներքինն զաւերումն դժոխոց. աջն զբաշխումն շնորհաց. ահեակն *զթողութիւն* մեղաց: - 493. Ա՛րդ՝ որպէս կենդանեաց շնորհեաց *զթողութիւն*, նոյնպէս և հոգւոցն առ հասարակ ազատութիւն. որպէս ասէ սուրբն եպիփան...: - 507. Այլ արդ՝ զղջանալ և խոստովանիլ պարտ է զհպարտութիւն՝ զնախանձ՝ զատելութիւն՝ և զայլն, և ապա՛ *թողութիւն* գտանել: - 556. Յայնժամ լոյս իմացականին կորեաւ և շիջաւ ի սատանայէ՛. և լոյս շնորհացն ո՛չ ներգործեաց ի նա. և ի նոյն սերտեալ հաստատեցաւ անզղջապէս. վասն որոյ մեծ են մեղք սատանայի և *թողութեան* ո՛չ հանդիպի: - 563. Հինգերորդ՝ նման սատանային լինին որք ուրանան զպատճառն գոյութեան հոգոց իւրեանց. յիրաւի ապա որպէս սատանայ ո՛չ ունի *թողութիւն* ի կեանս յայս և ո՛չ ի հանդերձեալն և գործ ունէի նմին: - 566. Յիրաւի որք ո՛չ հաւատան *թողութեան* խոստովանութեան, ո՛չ թողցի նոցա աստ կամ անդ: - 566. Զի երեք են ի *թողութիւնն*. այսինքն թողօղ. և այն որում թողու. և պատրաստութիւն նորին: - 567. Դարձեալ՝ պատրաստութեանն ի *թողութիւն* պարտի լինիլ կրկին. այսինքն ճանաչումն ճշմարտին՝ և սէր բարւոյն: - 567. Զի *թողութիւն* մեղաց որ է՛ կենդանութիւն հոգւոյ՝ աստուածային զօրութեամբն լինի: - 573. Երկրորդ՝ առաւել է ի *թողութիւն* պատժոյն. զի առաւել դժուարութիւն է: - 577. Որ և շնորհաց նորա և *թողութեանն* հաղորդեսցուք: - 592. և *թողութիւն* շնորհեսցէ յամենայն յանցանաց քոց. խոստովանելոցն և մոռացելոցն: - 602. Այժմ պատասխանեսցուք նախ՝ եթէ խոստովանութեամբն *թողութիւն* լինի ամենայն մեղաց...: - 602. Դարձեալ ասեմք թէ կրկին է խոստովանութիւնն. նոյնպէս և *թողութիւնն*: - 603. ...որպէս ազգն Ֆռանկաց ունին զայսպիսի խոստովանութիւնս միշտ քահանայքն և ժողովուրդքն. և այսպիսիս անկատար առնու *զթողութիւն*. - 603. Եւ վասն ներելեացն *թողութեան* ասացաւ **ի** թուոց **իբ** գլուխն, **կա** համարն: - 603. ...քան թէ բառնալ զխոստովանութիւնն որ հարկաւոր է. առանց որոյ ո՛չ գոյ ներգործական մեղացն *թողութիւն* գտանել: - 604. Այսպէս բազմապատիկ *թողութիւն* շնորհէ քահանայականն կարգ՝ ձեռնդնելով և բանիւ շնորհաց սրբելով: - 605. ...և *թողութեան* գինեաւն զմայլիմք...: - 615. ...զի տեսանելով զպակասութիւն մեր՝ արտասուեմք և լամք. վասն որոյ առնումք *զթողութիւն*...: - 619. ...վասն որոյ **բժ**ան ժամու աղօթիւք *զթողութիւն* խնդրեմք սոցա: - 624. Երկրորդ, փրկութեան է յոյս և *թողութեան* մեղաց: - 657. Այլև զգրեալն ընդհանրական *թողութիւն* ի դիմաց նորա ի վերայ գերեզմանին ընթեռնուն: - 674. ...վասն սոցա *թողութիւն* խնդրեմք: - 675. ...վասն որոյ երեք անգամ *թողութիւն* խնդրեմք: - 675. Չորրորդ, արտասուօք *թողութիւն* խնդրեմք զոր մեղաք նմա ի մարմնաւոր կեանս...: - 676. ...վասն որոյ կրկին գամք և *թողութիւն* խնդրեմք: - 680. Նաև երիւք լինի *թողութիւն* մեղաց. այսինքն զղջմամբ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ. որ լինի մտօք բանիւ և գործով: - 681. Իններորդ ասեն, ապա յայն կեանքն *թողութիւն* չկա՞յ: - 704. Նա՛խ՝ որպէս ո՛չ է անդ գործ մեղաց, նոյնպէս և ո՛չ *թողութիւն*: - 704. Տասներորդ, ասեն՝ «մի՛ թողցի. մի յայսմ աշխարհի և մի ի հանդերձելումն». որ ցուցանէ թէ գոյ ի հանդերձեալն *թողութիւն*: - 704. Ասեմք առ այս նախ՝ եթէ անդ մեղաց *թողութիւն* ո՛չ է զոր աստ ոչ *թողութիւն*: - 704. Այլ ամենայն մեղք որ աստ *թողութիւն* և անդ...: - 704. Նա՛խ՝ յարութիւն է շնորհաց. որ *զթողութիւնն* մեղաց ընկալաք և զհաւատն քրիստոսի: - 710. Դարձեալ, ծառ կենաց է աւետարանն սուրբ տնկեալ ի մէջ եկեղեցւոյ դրախտին. բերելով պտուղ կենաց զիմաստութիւնն երկնաւոր. որ կեանս տայ ճաշակողացն զնա. և միշտ շնորհս բժշկութեան և *թողութեան* մեղաց: - 768. Իսկ ի հանդերձելումն ապա զիա՞րդ թէ բազում անգամ զղջասցին ո՛չ գտանեն *թողութիւն* ասէ գիրն: - 778. Իսկ թէ որ ի կեանս յայս զղջասցին ատելով զմեղս և խոստովանին, առցեն զվարձս ապաշխարութեան որ է՛ *թողութիւն* մեղաց. առանց երկբայութեան է այս: - 780. Այլ թէ յետ մահու ո՛չ հանդիպի *թողութեան*, որպէս և ո՛չ դևք: - 780. Այլ զանազանի. զի դևք ամենևին ո՛չ ունին զղջումն և ոչ կարեն. վասն որոյ ո՛չ հանդիպին *թողութեան*. իսկ մեղաւորն ունի զղջումն այլ ո՛չ կարէ վարձաւորիլ: - 780. Վասն որոյն, որ է՛ դիտաւորութիւն *թողութեան*: - 780. Իսկ դժոխայինքն թէ և զղջան կամ խոստովանին, արտաքոյ սոցա՛ է. վասն որոյ ո՛չ հանդիպին *թողութեան*...: - 780

**ԹՈՂՈՒՄ +** Մետասաներորդ՝ Աստուած աստուած իմ ընդէ՞ր *թողեր* զիս. և պատասխանիք նոցա ը գլխով: - 29. ...ո՛չ թէ յինքենէ՛ *թողաւ* և կամ ի հօրէ. որպէս թէ երկեաւ ի չարչարանացն. վասն զի կամաւ եկն և ո՛չ հարկիւ: - 42. Այլ զի մեք *թողեալք* և անտես եղեալք յաստուծոյ վասն յանցանացն, զդէմս մեր տպաւորէ՛ յինքեան. բնութենակից գոլով մեր և գլուխ անդամոցս: - 42. Դարձեալ՝ և այսպէս տեսանի աստուած. յորժամ միտք յամենայն եղելոց որոշեսցի. նաև յինքենէ՛ զի եղակա՛ն է. *թողեալ* զինքն

միաւորեսցի յաստուածային ճառագայթն որ անքննելի լոյսն է և իմաստութիւնն: - 119. Իսկ չորրորդն է խորհրդական աստուածաբանութիւն. յորժամ զամենայն զգալի և զիմանալի էութիւն արտաքոյ *թողեալ*, ի խորս ընթանամք մտօք և մտանեմք յամպն և ի մէգն ըստ մովսէսի. և ապա տեսանեմք զնա արտաքս որոշեալ յամենայն էից: - 122. Իսկ ի ներքուստ ի վեր՝ ի բազմութենէ առ մինն ընթանայ. որպէս խորհրդական աստուածաբանութիւնն արտաքոյ *թողեալ* զբազումութիւն էից և ի մինն ընթացեալ, որ ամենեւին անբանութիւն է և անիմացութիւն. անճառելի. անիմանալի. և լռութեամբ պատւի յամենայն արարածոց: - 123. Իսկ զարմացումն լինի ի սիրոյ առ սիրելին. զի զմիտս զկեանս և զամենայն ինչ *թողու* սիրօղն՝ և սիրելւոյն համարի: - 127. Զի զոր ինչ բնութեամբ ունէին դևք՝ *եթող* ի նոսա աստուած յետ յանցմանն. և զոր ինչ երանութեամբ ստանալոց էին՝ զրկեցան: - 147. Վեցերորդ՝ *թողեալ* լինին ոմանք չարչարեալ առ ի նախանձ այլոց...: - 158. Արդ ներքին է՝ որ ի փափկութեանց և ի հեշտութեանց փորձի բնութիւնս մեր և այլայլի ի զանազան տեսակս մեղաց. զոր պա՛րտ է հանապազ աստուածային խնամոյն՝ զի մի՛ *թողցէ* յայսպիսի փործութիւնս զմեզ ընկղմիլ: - 160. Զորօրինակ՝ որպէս տղայ որ տեսանիցէ ցից ի յորմում, երթայ ի մօտ. թէ ամո՛ւր է՝ *թողու*. վասն զի ո՛չ կարէ հանել. և երթայ առ միւսն. թէ շարժի՝ ի մօտ կենայ մինչև հանէ՛: - 160-161. Նոյնպէս և սատանայ աներևոյթ մօտ՝ ի մարդն երթալ. թէ ամուր է հաւատն և կամքն՝ ո՛չ կենայ անդ, յուսահատի և *թողու*: - 161. Եւ թէ ոք ասիցէ, ապա զիա՞րդ նոր եկեալքն ի հաւատս՝ *թողեալք* զկուռս և զամենայն չար՝ լինէին քահանայք և եպիսկոպոսունք. որպէս սուրբն կիպրիանոս: - 166. Իսկ պատահական տեղի է, յորում նեստեալ ոք՝ կարէ՛ *թողուլ* զայն և լինիլ յայլ տեղւոջ. որպէս ի վեր կամ ի վայր: - 174. Ձձկունս ի թանձրագոյն մասն *եթող*, և զթռչունս յանօսրագոյն մասն որ է օդդ՝ վերացոյց: - 227. Նմանապէս և այն. յորժամ զամենայն ինչ *թողումք* և ի լոյս ճրագին նայիմք. զի ազգական է իւր՝ զայն սիրէ և տեսանէ: - 239. Վասն որոյ չարքն անամօթ կոչին. իբր *թողեալ* զպատիւ մարդոյն՝ և անասնոցն նմանեալ: - 274. Եւ կամ որպէս ճանապարհորդք հեռացեալք ի տանէ՞ յորժամ դարձցին վերստին ի տունս իւրեանց, նախ *թողուն* զվերջին բնակետղն ուստի դիմեցինն երթալ: - 280. Եւ ա՛րդ՝ հեռանալոյ մեզ ի դրախտէն կենաց վերջին ամուսնութիւնն եղև. զա՛յն նախ պա՛րտ է *թողուլ*, և ապա՛ յերկրաւոր հոգւոց և տառապանաց հեռանալ: - 281. Վեցերորդ՝ ի սոցանէ երևի և գործ արդարութեան. որ ընտիրսն աստուծոյ նուիրէր գիտելով զմեծութիւն նորա և զբոլորիցն տուրսն. և զխոտանն ի՛ւր *թողլով*: - 286. Երրորդ՝ յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ ի յօգնութիւն. զոր մարդիկ յուսահատեալ էին եթէ վասն մեղաց մերոց *եթող* զմեզ աստուած ի ծեռաց. և նա ի յօգնութիւն կոչեաց զանուն տեառն աստուծոյ. այսինքն զի տէր է՝ ո՛չ գարշի ի ծառայից իւրոց. և զի աստուած է՝ էա՛ծ զմեզ աստ ոչ ի կորուսանել, այլ ի կեցուցանել: - 289. *Թողում* զայլսն բազմօրինակ համանմանութիւն: - 305. Քսաներորդ, և որպէս յովսէփ *եթող* զքուրմն և զերկիր նոցա, զոր քրիստոս էր բառնալոց զմեծամեծ մեղսն և զկռապաշտութիւնն. զի ըստ առն և զօրութիւն իւր. և ըստ աստուծոյ և գործք իւր: - 314. Որպէս սովորութիւն է մարդոյ որ վատացն ասէ, ե՛ս արարի զայդ բանդ որ զքեզ ի քո կամդ *թողի* և ո՛չ խրատեցի: - 336. Ութերորդ՝ զի թէ *թողցեն* զվայելչութիւն խորանիս այս և այլոց հետևեսցին, անպատասխանի լիցին ի պատուհասն. որպէս *եթող* զապերախտ ժողովուրդն և էառ զվրանն մողոքայ և զաստղն հռեմփայ ի դատապարտութիւն ինքեանց: - 342. Բորոտից սրբիլն **բ** հաւ. զմինն զենուլ և զմինն յարիւն թաթաւել և *թողուլ*. և զառն և տատրակ և աղաւնի: - 359. Զի՞նչ է **բ** հաւն ի սրբիլ բորոտին. մին զենեալ, և միւսն արեամբն թաթաւեալ և ի բաց *թողեալ*: - 368. Վեցերորդ՝ այլ և ի թողութեան ամն ուսուսցէ *թողուլ* զպարտիս բանից և գործոց մերոց պարտապանաց: - 372. Վեցերորդ՝ զի մեղքն *թողեալ* է զմարդն. և ո՛չ թէ մարդ զմեղքն: - 377. Եօթներորդ՝ արևմուտք մեղք և տգիտութիւնն է. զոր *թողեալ* դառնամք առ աստուած ապաշխարութեամբ: - 395. Եւ թէ նա՛ ևս *թողոյր*, այլք զարձակեալ կինն առնուին: - 401. Զի թէ զամենայն բան քննեմք, աստուծոյ զի՞նչ *թողումք* յապայ: - 405. Ութերորդ՝ յօրինակ փրկչին յիսուսի, որ զբռնութիւն թշնամւոյն խորտակեաց և զխաբէութիւնն *եթող*. զի փործեսցին ընտրեալքն և խոտեսցին վատթարքն: - 417. Իսկ զփղշտացիսն *եթող* վասն ուխտին աբրահամու և աբիմելիքայ: - 417. Եօթներորդ՝ ռահաբ *եթող* զկուռս և զբազում հոմանիս. և ցանկացաւ յեսուայ: - 417. Եւ եկեղեցի *եթող* զպաշտօնս իւր և զչարիս՝ և սիրեաց զքրիստոս: - 417. Քսանևզ՝ նա՛ սպան զթագաւորս և զիսկայսն քանանու. և զոմանս *եթող* ի փորձ ընտրելոց: - 419. Եւ տէր մեր յաղթեաց իշխանին դիւաց. և եհատ զնորայն բռնութիւն աջոյ. և զոմանս *եթող* ծախիւ թիւրելոյ և զընտիրս որոշելոյ: - 419. *Թողին* և հրէայք զտէր մեր և հաւատան նեռին և ի հուր նորին այրեսցին: - 423. *Թողում* զգերծումն

մերկութեան և զթօշումն անարգութեան և տկարութեան խաչին. զայպանելն խաչողաց. և զխաւար լուսաւորացն. և յայլ դէմս դարձուցից զբանս: - 424. Եւ է՛ որ զմեղքն *թողու*՝ և զպատիժն կրէ. որք յայլմէ բռնաբա՛ր խոստովանին և պատահմամբ, և դարձեալ սխալին. այսպիսեաց մեղքն միայն *թողլի*: - 432. Եւ է՛ որ խոստովանի. և ոչ մեղքն միայն *թողուլի*. որք թերի են սրտիւ. և զմեղս թերի խոստովանին. և ի միտս եդեալ են դարձեալ գործել. այսպիսեաց ոչ մեղքն *թողուլի* և ոչ պատիժն. զի որպէս զշուն դառնայ ի փսխած իւր: - 432. Ասեմ թէ ոչ, զի կատարեալ խոստովանութիւնն *թողու* զմեղս, բառնայ զպատիժն, և ջնջէ՛ զյիշատակ մեղացն. մինչ զի ո՛չ երևի ի դատաստանին աստուծոյ: - 432. Եւ սոքա պատերազմօղք. *թո՛ղ* զայլ խառնիճաղանճն: - 434. Երկոտասաներորդ, *եթող* զոչխարսն ի տուարածսն. և տէրն զիննսուն և զինն յանապատին: - 436. Երեսունևմի, գիշերի ընդ պատուհանն եւ, *թողեալ* զպատանսն յանկողնի. և տէրն ի գիշերի յարուցեալ *եթող* զկտաւն ի գերեզմանին կնքեալ: - 436-437. Դաւիթ *եթող* զիրէաստան և բնակեցաւ յայլազգիս. և որդի նորա *եթող* զիրէայս և հանգեաւ ի հեթանոս: - 437. Նախ զայն ցուցանէ առ նորս, եթէ ոք յանգիտութեան մեղանչէ՝ *թողու* աստուած. և որ դարձեալ կրկնէ, և զառաջինն պահանջէ աստ: - 439. Եւ սոքա են հարճք որ կարեն ի բաց հանիլ ի ժառանգութենէ. զի սէրն է կապ և լար շարոցին որ ո՛չ *թողու* ցրւիլ: - 440. Երեքտասաներորդ՝ զառաջին մեղքն *եթող* զադոնիայ, և յերկրորդին սպան: - 441. Վեցերորդ՝ զի զփառս *եթող* և զսէր բարեկամաց: - 442. Յօրինակ ամենայն մարդոյ. զի պա՛րտ է ստուգել զամենայն բան. և ո՛չ դիւրապատիր լինիլ և *թողուլ* զիրամանն աստուծոյ: - 443. Եւ որ ո՛չ *եթող* զոք մերձ. զի ո՛չ ոք լինի գործակից յարութեան մերոյ. որպէս և ո՛չ ստեղծմանն: - 444. Անմարթ էր *թողուլ* զժողովուրդն ի դրան տաճարին և մերձիլ յանկողինս. և ըստ օրինացն զօրեայ սրբութիւն ստանալ. որ անհնա՛ր է ամենևին. թէպէտ ասեն՝ գոյր ա՛յլ քահանայապետ որ զկարգ պաշտամանն կատարէր: - 484. Առաջինն ուսուցանէ *թողուլ* զանիրաւութիւնս արարեալ ընդ դէմ մեր: - 492. Նոյնպէս և զհոգիքն *թողեալք* ի յաստուծոյ արգելուն դևքն: - 504. Ոմանք ասեն թէ ի չորրորդ դժոխքն էջ ուր էին արդարոց հոգիքն արտաքոյ ասացեալ երիցս, և զնա միայն աւերեաց. և զարդարսն միայն եհան. և զայլսն *եթող* անդ: - 505. Երկրորդ ասեն թէ զայն միայն աւերեաց և զայլսն *եթող*: - 506. Երրորդ ասեն թէ զարդարսն միայն հանեալ և զայլսն *թողեալ*: - 506. Իսկ առ երկրորդն որ ասեն թէ միայն զլիմպոսն աւերեաց և զայլսն *եթող*: - 506. Իսկ առ երրորդն որ ասեն թէ միայն զարդարսն եհան և զայլսն *եթող* անդ: - 507. Յորում ի մէջ գիշերի *թողեալ* զկտաւսն ի գերեզմանի և յարեաւ եւ առ հայր ի յերկինս: - 513. և ո՛չ մի հոգի *եթող* ի դժոխս. այլ զամենայն ազատեաց յարուցեալ ի մեռելոց. և բաշխեաց պարգևս որդւոց մարդկան: - 514. Հինգերորդ՝ զանբաժանելի միացումն ի սէրն քրիստոսի. զի որ ի խաչին *թողին* և փախեան, յետ իջման հոգւոյն՝ ամենեքեան վասն անուան նորա չարչարեցան և մեռան...: - 524-525. Եւ յորժամ եւ արտաքոյ քաղաքին *թողեալ* զկապանս սողոմոնի՝ սպանաւ: - 540. Դարձեալ, զորօրինակ բազումք ընթանան ի մի ճանապարհ, և ամենեքեան *թողեալ* զնոյն՝ ընդ այլս գնասցեն, և մինն մնասցէ ի նոյնն. ո՛չ ասեմք թէ մինն բաժանեցաւ ի ճանապարհէն, այլ՝ այլքն: - 551. Ապա յա՛յտ է թէ ո՛չ ազգս հայոց *եթող* և բաժանեցաւ, այլ նոքա *թողին* զուղիղն և բաժանեցան: - 551. Երկրորդ՝ գործօղն որ ունիցի զճշմարտութիւն ինչ կարգի՝ *թողու* զայն և գործէ՛ զմեղս: - 564. Երրորդ՝ ի յաստուած գիտութիւնն. որ եկեալ իցէ ի հաւատս ճշմարիտս. և գիտէ զքրիստոս աստուած ճշմարիտ. *թողու* և գործէ՛ զմեղս կամ զհաւատն: - 564. Նոյնպէս և Կալն և Ունելն զամենայն մահու չափ մեղս. թէ գործեալ է և *թողեալ*. զի որ հաստատեալ է մեղքն յինքն, առաւել մեղանչէ: - 565. Զի՞նչ է մեղքն ընդ դէմ հոգւոյն սրբոյ որ ո՛չ *թողցի*: - 566. Եւ զի ո՛չ *թողու* զմեղս՝ անհաշտ լինի. վասն այն մեղքն անջինջ և անթողլի մնայ: - 566. Ութերորդ, ո՛չ ասաց՝ թէ խնդրեսցէ ապաշխարութեամբ՝ արգելից զգութ և զողորմութիւն. այլ թէ՝ «ո՛չ *թողցի*». որով յա՛յտ է թէ առանց զղջման և տանջանաց ո՛չ *թողցի*: - 566. Յիրաւի որք ո՛չ հաւատան թողութեան խոստովանութեան, ո՛չ *թողցի* նոցա աստ կամ անդ: - 566. Տասներորդ՝ վասն հոգեմարտին մակեդոնի որ հայհոյէր զհոգին սուրբ նուազ ասելով քան զհայր և զորդի, ո՛չ *թողցի* նմա: - 566. Զի երեք են ի թողութիւնն. այսինքն *թողօղ*. և այն որում *թողու*. և պատրաստութիւն նորին: - 567. Ա՛րդ՝ ի *թողուլն* երկու են. այսինքն ողորմութիւն և արդարութիւն. ընդ դէմ առաջնոյն է՛ յուսահատութիւնն. և ընդ դէմ երկրորդին յանդըգնութիւնն: - 567. Նաև ի յայն որում *թողեալ* լինի՝ **բ** ինչ պահանջի. այսինքն ցաւ վասն գործելոցն, և մտադիւրութիւն վասն ոչ գործելոցն...: - 567. Եւ կոչի ներելի, իբր ներելի և *թողլի*. զի ակամայ և անգիտութեամբ հանդիպի: - 567. Եւ յայնմ ծնական բանիցն ո՛չ է պարտ ի բաց *թողուլ*. և ո՛չ այլ բան ի ներս խառնել: - 588. Մեղքն ադամայ այն է որ զարդարութիւն կորոյս. և մեղօք և

**ԺԱՆԳ, ԺԱՆԿ +** Զի որպէս հուր *զժանկ* արծաթոյ՝ և խարտոց *զժանկ* երկաթոյ, նոյնպէս և նեղութիւն սրբէ զմեղս մարդոյ: - 162. Ջուրք ծո՛վուց ընդ մէջ երկրի անցանեն և պարզին ի *ժանկոյն* և ի դառնութեանցն. զի երկիր և աւազք զդառնութիւնն յինքեանս քարշեն, և մնայ քաղցր ջուրն: - 208. Զոր օրինակ հուրն հալէ զոսկին և բոցն ջնջէ ի նմանէ *զժանկն*: - 497. Այլ միաւորեալ ընդ ինքեան բաժանեաց զմեղս ի հոգւոյն և զապականութիւն ի մարմնոյն. որպէս հուր ընդ ոսկւոյ միաւորեալ բաժանէ *զժանկն* ի նմանէ: - 500. ...և վառեսցեն զերկինս որ է՛ օդն. և զերկիր և զլերինս և զդաշտս և զբոյսս և զկենդանիս. և *զժանկս* մեղաց որպէս ասէ աստուածաբանն գրիգոր: - 731. Զորօրինակ, *ժանգ* հայելւոյ ո՛չ զընդունակութիւնն բառնայ, այլ զտեսութիւնն. և յետ սրբելոյն, նոյն ծածկեալն երևի ի նմա: - 782. Այսպէս և *ժանգ* յանցանաց մկրտելոց և քահանայից՝ բառնայ զգործ՝ կամ զնշանակութիւն շնորհացն. իսկ յետ սրբութեան զղջմամբ՝ զիա՞րդ կրկնի ունակացեալն ի նմա՛: - 782

**ԺԱՆԻՔ +** Մետասաներորդ, ի բերանոց գազանաց կորզէր զհօտս. և տէր մեր փշրելով *զժանիս* մեղաւորին, կորզեաց զհաւատացեալս իւր: - 436

**ԺԱՊԵՏ (ՏԱՍՆԱՊԵՏ)** - Ոմանք ասեն եթէ՝ մովսէս զդատաւորսն ի դ բաժանեաց ամենայն ժողովրդեանն. որ էր *ժապետ.* յիսնապետ. ճապետ. և ռապետ: - 609

**ԺԱՌԱՆԳ +** Ութերորդ՝ յուսով *ժառանգ* երկրին ծնաւ իսահակ. նոյնպէս և *ժառանգ* բոլորից տէր մեր. և *ժառանգ* արքայութեան ծնունդք աւազանին...: - 307. Յորոց փրկեսցէ զմեզ և զամենայն հաւատացեալս անուան իւրոյ ի յաւիտենական և յանել տանջանաց հրոյն. և մասնաւոր աջակողմեան դասուն և *ժառանգ* արքայութեանն երկնից կացուսցէ յիսուս քրիստոս տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս Ամէն: - 317. Տասներորդ՝ զի ուսցին նոքա ի նոցանէ զբարիսն, և մնասցեն *ժառանգ* երկրին. որպէս զաբաւոնացիքն: - 417. Վաթսունն՝ զ տասն է. նշան նոցա՝ որք զժ բանեան օրէնսն կատարեն ի զ դար կենցաղոյս. այսինքն ի տղայութենէ մինչ ի մահ. նոքա թագուհիք և *ժառա՛նգ* են արքայութեանն: - 440. Իններորդ՝ վասն հաստատ ժառանգութեան խոստացելոյն. զի մի՛ ասիցէ ոք ցհայր, տէր դու ունիս որդի և *ժառանգ*: - 468. Ա՛րդ՝ փեսայ և գլուխ և *ժառանգ* արուն է և ո՛չ էգն. վասն այն արու ծնաւ քրիստոս: - 480

**ԺԱՌԱՆԳԱԿԻՑ +** Տասներորդ՝ քրիստոս փեսայ կոչի և եկեղեցի հարսն հոգևոր. և նա՛ գլուխ և մեք անդամք և *ժառանգակիցք*: - 480. Նախ՝ զի եղբայր և *ժառանգակից* եմք քրիստոսի: - 534

**ԺԱՌԱՆԳԵՄ +** Չորրորդ՝ *ժառանգելն* զերկիրն քանանացւոց: - 196. Զի յորմէ հետէ խոստացաւ աստուած զերկիրն՝ աբրահամու, յետ դճ ամի *ժառանգեցին* զնա՛: - 351. Զի՞նչ նշանակէ որ բ ցեղն և կէսն մնացին յայնկոյս յորդանանու և *ժառանգեցին*, և այլքն անցին ի քանանացիքն: - 390. Զի առաջին ընտրեալք և վերջին արդարք ի միասին *ժառանգեսցեն* զաւետիսն: - 391. Նա՛խ՝ անդ զհարքն թուեաց որք կոտորեցան. և աստ զորդիսն որք *ժառանգէին* զերկիրն: - 392. Այլ ընդ դևս պատերազմիլ միշտ. զի որոց դիւաց թէ յաղթէ մարդ, թէ հպարտութեան և թէ պոռնկութեան, զնոցա տեղիքն *ժառանգէ* յերկինս: - 393. Եւ գիտելի՛ է, զի անցեալ ընդ յորդանան՝ սատակեցին զորդիսն ենակիմայ. և ապա՛ *ժառանգեցին* զերկիրն: - 419. Դարձեալ անցեալ ընդ ապաշխարութիւն և սատակեալ զորդիսն բելիարայ, ապա՛ *ժառանգեսցեն* զարքայութիւնն երկնից ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ: - 419. Այլ զփառս արքայութեան երկնից ի կատարածի *ժառանգեսցեն* հոգւով և մարմնով անվախճան յաւիտենիւ: - 617. ...Նոյնպէս և սուրբքն ակնունին յետ զ դարուց վճարման կենցաղոյս *ժառանգել* զհանգիստն յաւիտենական. - 648. Եւ ապա՛ ի ձեռն յիսուսի արժանաւորքն մտանեն յարքայութիւնն երկնից և *ժառանգեն* զնա՛. - 682. Եւ փոքր ինչ յետոյ մարմնովն զոր զգեցցի *ժառանգեսցէ* զփառսն

զայն...: - 691. ...յորժամ հոգին միաւորի ընդ մարմնոյն և մարմնովն *ժառանգէ* զփառս և զկեանսն յաւիտենից: - 710. Եւ որպէս այժմ հոգով և մարմնով զմահկանացու կեանս վայելեաց, նոյնպէս և յայնժամ հոգւով և մարմնով զանմահ կեանս *ժառանգեսցէ*. վասն այն յառնէ: - 724. Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ. երկնուղէշ զարգացմամբ մշտաստաղարթ կուսութեամբ ծաղկեալ և պայծառացեալ հոգւոյն սրբոյ եկաւորութեամբն. և պտղաբերեալ մեզ անմահ պտուղ զբանն մարմնացեալ. յորմէ վայելեալք երկնաւորք և երկրաւորք ի շնորհաց նորին զյաւիտենից կեանսն *ժառանգեցաք*: - 768

**ԺԱՌԱՆԳՈՐԴ +** ...և այն մին մեղքն վճարի և այն կենացն սուրբ և արժանաւոր *ժառանգորդ* լինի: - 664

**ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ +** Եւ ասեն, տըւան քեզ հեթանոսք ի *ժառանգութիւն* և յիշխանութիւն: - 144. Մետասաներորդ՝ որպէս հայրն զորդին զան հարու զի զգաստացեալ մի՛ զրկեսցի ի *ժառանգութենէ* հայրենեացն. այսպէս և աստուած զսուրբս և զսիրելիս իւր խրատէ՛: - 159. Որպէս եղև առ մարիամ բորոտութիւն վասն բանբասելոյն զմովսէս. որ աստ սակաւ ինչ տանջեցաւ, զի մի՛ ելցէ յերկնից *ժառանգութենէն*: - 159. Եւ զկրկնակի կենաց վայելումն ըստ խառնեալ էութեան իւրոյ. զի թէ զաստուածայինսն բերցէ յինքեան ըստ որում ի պատկերն եղև, վերափոխեսցի անմահ կենօք ի պատրաստեալն *ժառանգութիւն*: - 231. Երկրորդ՝ զի ոչ հարազատ որդին սեպհականէր *զժառանգութիւնս* հօր. այլ օտարն ի մեծութիւն հասանէր, և իւրն չքաւորութեամբ տառապէր: - 238. Երկրորդ՝ զի **խ** քաղաք առին ի բենիամենէ՛ յուդայի ցեղքն վասն շնութեան կնոջն պատահելոյ. և կոտորեցին զնոսա առ հասարակ իեռ արս. և մնաց վեց հարիւր այր զոր յետոյ ստացան *ժառանգութիւն* իւրեանց. որպէս յա՛յտ է ի դատաւորաց վերջքն: - 312. Որ յերուսաղէմէ՛ մինչ ի լիւրիկէ որ է՛ եզր աշխարհի՝ էլից զաւետարանն. և ստացաւ *ժառանգութիւն* նմին: - 312-313. Զնոյնս նշանակէ **բ** ցեղն յայնկոյս յորդանանու. որք այլոցն պատերազմակից եղեն, և ապա՛ ի միասին *զժառանգութիւնն* առին: - 394. Եւ փրկիչն մեր զհայրենի *ժառանգութիւնն*: - 419. Եւ բաշխեաց երկոտասան առաքելօքն աստ զնոր օրէնս, և անդ զվերին *ժառանգութիւնն* հաւատացելոց իւրոց: - 419. Եւ սոքա են հարճք որ կարեն ի բաց հանիլ ի *ժառանգութենէ*. զի սէրն է կապ և լար շարոցին որ ո՛չ թողու ցրիլ: - 440. Զի թէպէտ փակեալ էր օրէնքն խառնիլ երկուց ցեղիցն ընդ միմեանս, սակայն ղեւտացւոցն ո՛չ գոյր *ժառանգութիւն* և բաժին, խառնեին երբեմն ընդ թագաւորական ազգն յուդայ: - 461. Իններորդ՝ վասն հաստատ *ժառանգութեան* խոստացելոյն. զի մի՛ ասիցէ ոք ցհայր, տէր դու ունիս որդի և ժառանգ: - 468. Հինգերորդ՝ զի տացէ մեզ համարձակութիւն յուսալոյ ի նոյն. այսինքն մտանել մարմնով ի յաւիտենական *ժառանգութիւնն*: - 519. Որով զփառս որդէգրութեան և *զժառանգութիւն* արքայութեան ընկալաք. որ է՛ անտրտում ուրախանութիւն: - 532. ...որպէս և գրեալ է ի գիրս նիկիական կանոնացն եթէ զծառայս ի *ժառանգութիւն* եկեղեցւոյ կարգել ո՛չ հրամայեմք. - 589. Եւ ապա՛ միաւորի ընդ եկեղեցի սուրբ ի *ժառանգութիւն* արաքայութեանն: - 610. Սա՛ է մայր մեր եկեղեցի որ հոգևոր որդիս աստուծոյ օրըստօրէ ծնանի. որ հասեալ *ժառանգութեանն*. ի բաց տանելով զաղախինն և զորդի նորա: - 756. Վասն մեծի սիրոյն՝ *ժառանգութիւնն* այն ամենեցուն մի է իւրաքանչիւր ումեք բոլորն և ո՛չ մասնաւորն: - 764. Այլ և վարժապետին իմոյ և մեծ հռետորի հայոց, Յոհաննու Որոտնեցւոյ, եղիցի ի սմա յիշատակ մաղթանաց մասին օրհնութեան. և վիճակ *ժառանգութեան* սրբոցն ի լոյս: - 773

**ԺԲԱՆԵԱՅ (ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ) +** Դարձոյց ի յորդանանու զբերգելի որ տասամբն կերակրեաց զղաւիթ. ի տիպ հին օրինացն *ժ բանեան* զոր կատարեց քրիստոս: - 438. Վաթսունն՝ **զ** տասն է. նշան նոցա՝ որք *զժ բանեան* օրէնսն կատարեն ի **զ** դար կենցաղոյս. այսինքն ի տղայութենէ մինչ ի մահ. նոքա թագուհիք և ժառա՛նգ են արքայութեանն: - 440. Հինգերորդ՝ յետ **խ** աւուր համբարձաւ, զի ցուցցէ թէ որք *զժ բանեան* օրէնսն չորիւք աւետարանաւն լնուն, կարեն յերկինս ելանել: - 521. Եւ ամիսն **գ** տասամբ բաղկանայ. զոր ի հաւատ սուրբ Երրորդութեանն և *ժ բանեան* օրինացն յանցաւոր գտաք: - 683. Եւ եղջիւրս **ժ**. այսինքն զայնոսիկ որք մարտնչին ընդ *ժ բանեան* օրինացն: - 707

**ԺԺԱՆ +** իսկ Կախարդն՝ որ անօթ ինչ թաղէ ի հող. կապս, կամ մոմ, կամ երկաթ, և պէս պէս *ժժանօք* յարմարե՛ն զարուեստն: - 388

**ԺԻՏ +** Եւ ողորմութիւնն ի մէջ արդարութեանն առաւելու *ժտիւ* խնդրողաց: - 424

**ԺԻՐ +** Դարձեալ՝ կատարեալ սէր է, յորժամ է ունակութեամբ մեծ. ներքին շարժմամբն ուղիղ. արտաքին գործքն *ժիր*. արմատովն հաստատեալ. ջերմ եռանդութեամբն խոհեմ. և քաղցրութեամբն մխիթարական: - 576

**ԺԼԱՏՈՒԹԻՒՆ +** Եւ գիտեն զպատճառն թէ վասն է՞ր է ողջախոհ. այսինքն զի յանառակ կենաց

*ժլատութիւնք* լինին. և նա ի հարկէ արի գոյ զախտն ստորադասելով. այնպիսին և խոհեմ գոյ գիտելով թէ վասն մարմնական հեշտախտութեանց լինի անիրաւութիւն: - 582

**ԺԽՏԵՄ +** Զոր ո՛չ կարեն զայս ուրանալ ազգն *ժխտողաց*: - 509

**ԺՈՂՈՎ +** Վկայ անիրաւ զտնէ՛ հայիոյեն. և դա՛տ խռովութեան ի *ժողովս* մուծանեն: - 34. Այս է մեկնութիւն երկրորդ *ժողովոյն*: - 41. Յինգերորդ՝ զի կանոն ընդհանուր *ժողովոցն* որ եղեն առ նոսա՝ բաւականաբար դաւանութիւն հաւատոյ տըւեալ է: - 64. Նաև ի կանոն երից սուրբ *ժողովոցն* ընդ բանիւ արգելեալք կան նոքա՝ որ ա՛յլ կերպիւ քարոզեն և այլ կերպիւ ուսուցանեն քան զոր նոքա ուսուցանեն: - 64. Վեցերորդ վկայ ի *ժողովոյն* քաղկեդոնի զոր նոքա ընդունին և ո՛չ մեք. այսպէս է գրեալ թէ՝ որ ոք զհոգին ի հօրէ և յորդւոյ բղխումն ասիցէ՝ նզովեալ լիցի: - 64. Եւ այսորիկ նզովեալք են ի հոգւոյն սրբոյ ի *ժողովն* եփեսոսի և այլոցն. և եղիցին ի նզովս սուրբ եկեղեցւոյ: - 82. Եւ է՛ ուրեք զի միաւորեն զանունն՝ մի քրիստոս՝ մի տէր՝ մի որդի՝ և մի անձն ասելով որպէս քաղկեդոնի քըւի երկաբնակ *ժողովոյն*: - 87. Երրորդ՝ սառա կոչի առաքինութիւն. և մարիամ լուսաւորութիւն. և եկեղեցի *ժողովք* հաւատացելոց՝ գործով ունի զառաքինութիւն և զլոյս հաւատոյ: - 307. Երրորդ՝ ջուր սրսկման զոպային, է՛ տարածումն աջոյն՝ և օրհնութիւնն *ժողովոյն* ի շնորհաց սուրբ հոգւոյն: - 384. Իսկ դարձումն ի յետ, յեօթն դարուց կենցաղոյս դարձեալ ուստի ելին *ժողովին* ամենայն սրբութիւնք: - 426. *ժողովին* ի մովսիսէ՛ և յելիցն յեգիպտոսէ մինչև ցշինուած տաճարին ամք **դճձ**: - 452. Զոր ի *ժողովն* քաղկեդոնի հաստատեցին զսոյն տօն ի իեն դեկտեմբերի. պատճառելով թէ՝ ի հռօմ դարձի արեգական տօն կատարէին. և փոխեաց զայն պետրոս տօնել արեգականն արդարութեան: - 482. Այսպէս ընկալեալ ի նոցանէ և նիկիականն *ժողովք*՝ հաստատեցին առ մեզ: - 484. Տե՛ս զի ի *ժողովն* եփեսոսի հասարակ ամենայն ազգ այսօր նաւակատիս առնէին մինչ ի *ժողովն* քաղկեդոնի ուր փոխեցան տօնք և պահք և դաւանութիւնք: - 509. Եւ տե՛ս, զի լուսաւորիչն կարգեաց զնաւակատիսս յայսմ աւուր որ էր յաւուրս նիկիական *ժողովոյն*. զոր յառաջն ունէին ամենայն ազգ, զնոյն կարգեաց մեզ: - 509. Այնց է իմանալ, ուր *ժողով* լինէր մի լեզուաւ խօսէր ոք առաքեալ, և ամենայն ոք լսէր իւր ձայնիւն: - 525. Ութերորդ, Առանձին *ժողովք* հայոց: - 525. Վասն որոյ զայս **գ** *ժողովս* տիեզերական և միմեանց համաձայն ընդունիմք. այլ զքաղկեդոնին ո՛չ ընդունիմք. զի ընդ դէմ է առաջնոցն և կաքտումն դաւանութեան տօնից կարգաց և կանոնաց ամենայնիւ: - 541. Յորո՞ւմ ամի եղեն *ժողովքն*. և ո՞ւր. և վասն է՛ր: - 542. Առաջին *ժողովն* եղև ի նիկիայ սրբոց հարց. զկնի **յժը**՝ կամ **յլ** ամի ծննդեանն քրիստոսի. և ի **ի** ամի թագաւորութեանն կոստանդիանոսի: - 542. Երկրորդ՝ յետ **կե** ամի եղև կոստանդնուպօլսի *ժողովն* ի չորրորդ ամի թագաւորութեանն թէոդոսի մեծի: - 542. Երրորդ *ժողովն* զկնի **խբ** ամի եղև յեփեսոս ի թագաւորութեանն թէոդոսի փոքու ի **ժա** ամի նորին: - 542. Չորրորդ, առ նոյն թագաւորաւն զկնի իդ ամի եղև արժանաւոր *ժողովն* եփեսոսի ընդ դէմ եւտիգի. որ առ աչօք ասէր զէտն մարդանալն: - 542. Եւ գլուխ *ժողովոյն* էր սուրբն Դէոսկորոս աղէքսանդրացի: - 542. Յինգերորդ, յերկրորդ ամի թագաւորութեանն մարկիանոսի եղև *ժողովն* քաղկեդոնի: - 542. Եւ էր սիրելի փլաքիանոսի. և լևոնի. և թէոդորիտոսի զորս նզովեցին յեփեսոս. և վասն նոցա վրէժխնդրութեանն արարին *ժողով* **ոլզ** եպիսկոպոսաց. և ընկալան զթուղթն լևոնի. և զնզովեալն յեփեսոս զփլաքիանոս ընկալան...: - 542-543. ...և զթէոդորիտոս եդին գլուխ *ժողովոյն* վասն մարդահաճութեան թագուհւոյն և թագաւորին. և զդէոսկորոս հայրապետն աղէքսանդրու, և զպետրոս անտիոքու, և զտիմոթէոս և զանատօլ, և զայլս բազումս խոտեցին. և վկայեցին նոքա ճշմարտութեան: - 543. Եւ յովսէփ փալանացի, և եզնակ կողբացի թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի կոստանդնուպօլիս. լուան *զժողովոյն* և գնացին ի քաղկեդոն. զի չէր յոյժ հեռի ի ճանապարհէն որով գային ի հայս...: - 543. Եւ սուրբն սիմէոն սիւնակեացն այրեաց զթուղթն դաւանութեանն քաղկեդոնի՝ զոր գրեալ էր թագաւորն մարկիանոս աղաչանօք առ նա՛. և նզովեաց զթղտատարն որ էր թէոդորիտոս գլուխ *ժողովոյն*: - 543. Եւ զայլ ամենայն որպիսութիւն չար *ժողովոյն* քաղկեդոնի գտցես ի պատմագիրս միխայէլի: - 543. Ի թագաւորութեանն յուստիանոսի եղև դարձեալ **ե** երրորդ *ժողով* ի կոստանդնուպօլիս: - 543. Արար **զ** երրորդ *ժողով* ագաթոն պապն հռօմայ. ի թագաւորութեան հօրն յուստիանու ի կոստանդնուպօլիս: - 543. Իսկ **է** երրորդ *ժողովն* եղև ի թագաւորութեանն միւս կոստանդեայ. որոյ մայրն եռինէ: - 544. Այսորիկ են յայտնի *ժողովք* ազգաց: - 544. Եւ որպէս այսորիկ *ժողովք* ընդ դէմ հասարակ հերձւածողաց, նոյնպէս և առանձին *ժողովք* եղև ազգիս հայոց է երրորդ: - 544. Առաջին *ժողովն* եղև ի տանս թորգոմայ յարևելից կողմանս. զկնի **է** երրորդ ամի վախճանելոյ մեծին սահակայ: - 544. Եւ ի նոյն ժամանակս ասի լեալ անիծեալ *ժողովն* քաղկեդոնի: - 544. Երկրորդն է *ժողովն* թէոդուպօլսի, որ այժմ կոչի կարնոյ քաղաք.

ո՛չ այն զոր յետոյ հերակլ քաղկեդոնիկ ժողովեաց և խաբեաց զեզր կաթուղիկոսն հայոց: - 544. ...և հաստատեցին զկանոնսն երից սուրբ *ժողովոյն* որ ի նիկիայ՝ ի կոստանդնուպօլիս՝ և յեփեսոս: - 544. Եւ նզովեցին զաղանդն մարկիանու և զարտեմոնի, և զտումարն լևոնի. և միաբանեցան ի մի հաւատս սուրբ առաքելոցն. և ի կանոնս սուրբ *ժողովոյն* ինչ պետք էին յաւելին գլուխս **թ** ի զգուշութիւն եկեղեցւոյ: - 544. Երրորդ *ժողովն* է դվնայ, ի չորրորդ ամի թագաւորութեանն կոստանդեայ հռոմոց. հրամանաւ մեծի կաթողիկոսին հայոց ներսէսի շինողի. և այլ է և **Ժ** եպիսկոպոսաց՝ և վարդապետաց բազմաց և իշխանաց...: - 544. Չորրորդ՝ մեծ և արժանաւոր *ժողովն* եղև ի մանազկերտ. ի **ճհդ** թուականին. հրամանաւ և արդեամբք գիտնաւոր և մեծ իմաստասիրին սրբոյն յոհաննու կաթողիկոսին հայոց օձնեցւոյ: - 545. ...որ եզր եղև հաւատոյ ուղղութեան. և հրամանաւ հերակլի հաւանեցաւ *ժողովոյն* քաղկեդոնի. կացեալ **զ** կաթողիկոսք նոյն աղանդովն որ են այսոքիկ. Եզր. Մովսէս. Անաստաս. Իսրայէլ. Սահակ. Եղիա: - 545. Իսկ Հինգերորդ *ժողովն* եղև ի վիճակս գրիգորիսի. ի մայրաքաղաքն աղուանից պարտաւ: - 545. Վեցերորդ *ժողով* եղև յամս վաչագանայ արքայի աղուանից: - 545. Եօթներորդ՝ *ժողովն* սիմէօնի աղուանից կաթողիկոսի և հայոց կաթողիկոսի տէր եղիայի: - 545. Եւ երից սուրբ *ժողովոցն*: - 547. Այլ զչար և զաստուածուրաց *ժողովն* քաղկեդոնի որ ի ձեռն մարկիանոսի և անիծելոյն պօղքերի՝ ո՛չ ընդունիմք. և զընդունօղսն նզովեմք: - 547. Եւ **զճ** ամ աւելի՝ բազում ազգ Ֆռանկաց ո՛չ հնազանդեցան չար *ժողովոյն* քաղկեդոնի: - 547. Այլ և յառաջին *ժողովն* **գ** աթոռք ինքնագլուխք հաստատեցան: - 549. Այլ ա՛րդ՝ ճշմարտութիւն է առաքելական կանոնքն և հայրապետականն և երից սուրբ *ժողովոցն*: - 550. Ասեմք առ այս թէ՝ ո՛չ է հարկաւոր այս ամենայն ուրէք. զի գո՛յ և տարաձայնութիւն բարի՝ քան զհամաձայնութիւն ընդ հերձուածօղս. և լաւ է բաժանումն ի չար *ժողովոց*՝ քան զմիաբանութիւն: - 551. Այսպէս և ամենայն ազգք քրիստոնէից զնոյն ունէին ճանապարհ դաւանութեան և աւանդութեան յառաքելոց անտի մինչ ի *ժողովն* քաղկեդոնի. և յետ անտի բաժանեցան ամենայն ազգք յամենայն իրս, որպէս յա՛յտ է յիւրաքանչիւր եկեղեցիս: - 551. Իսկ անօրէնութիւն է մեզ լուծումն պահոց աւանդեալ յառաքելոց անտի զերեք յիսունս և զչորեքշաբաթի և զուրբաթ. և զայլ շաբաթապահս ի նիկիական *ժողովոյն* սրբութեամբ պահել: - 552. Չորրորդ՝ ի *ժողովոյն* քաղկեդոնի խորշիլ. և այսոքիկ առ ասորիս: - 554. Եւ նա՛ հրաման տայ *ժողով* առնել: - 607. Զի եկեղեցին *ժողովո՛յ* է անուն. որպէս հրամայեաց աստուած մովսէսի...: - 613. Եւ սուրբն կիւրեղ աղէքսանդրու հայրապետն ի *ժողովն* եփեսոսի ասաց զմիածին որդի ժամամուտն: - 631. Նաև ի հայք ի *ժողովն* դվնայ հաստատեցին ի սուրբն աստուածն խաչեցար ասել ստուգապէս: - 631. Եւ սուրբն կիւրեղ ասաց ի *ժողովն* եփեսոսի. զմիածին որդին ձայնիւ ընդ դէմ նեստորի: - 632. Եւ ի նոյն *ժողովն* ի փառք ի բարձունս, օրհնեալ տէր ուստ՛ ինձ զարդարութիւնս քո. **գ** անգամ: - 632. Զի սուրբ աստուածն անդ հաստատեցաւ. որպէս և փառք ի բարձունքն. սկսեալ ի հրեշտակացն ի ծնունդ քրիստոսի. և յերեք սուրբ *ժողովնս* եղև կատարեալ: - 635. Եւ մինչ ի *ժողովն* նիկիոյ զայս ասացին: - 635. Եւ մինչ ի *ժողովն* կոստանդնուպօլսի զա՛յս ասացին: - 635. Ապա ի *ժողովն* եփեսոսի վերստին հաստատեցին զփառք ի բարձունսն ի սաղմոսէն՝ յաւետարանէն՝ և ի մարգարէիցն զայս ինչ, «Տէր ապաւէն եղեր մեր յազգէ յազգ»: - 635. Այլ ի *ժողովն* նիկիոյ քարոզեցաւ պահք, բայց պատարագ մատչիլ: - 651

**ԺՈՂՈՎԱՐԱՆ +** Իսկ յատուկ, զի նա՛ կոչի *ժողովարան*. և մեք ժողովեալք: - 533. Իբր զի հոմանուն է եկեղեցի և ունի **դ** նշանակութիւնս. որ է՛ ստորինս. և վերինն եկեղեցի. և շինեալք ի մէնջ. և հաւատն *ժողովարան* մեր: - 534. Մինն բնակութիւնն, և միւսն բնակեալն. որ է՛ ժողովուրդ և *ժողովարան*: - 613

**ԺՈՂՈՎԵՄ +** Եւ թէ ասիցեն հրէայքն, ո՛չ ամենայն հրէայքն *ժողովեալ* են ըստ խոստմանն: - 28. Արդ՝ յաջ և յահեակ խոտորին հերձւածօղք. որպէս սաբէլ յաջ խոտորեալ՝ ի մի բնութիւն և ի մի անձն *ժողովեաց* զերրորդութիւնն սուրբ: - 80. Ո՛չ զմասն ինչ առեալ զմարդոյ. այլ զբոլոր բնութիւնն *ժողովեալ* անհատ մարդկութեամբն. զհոգի բանական՝ և զմիտս՝ և զմարմինս մեր՝ միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն անչափութ և անորոշ միութեամբ: - 83. Բոլորովիմբն է ընդ դէմ երկաբնակացն. որք մասամբ ասեն աստուած և մարդ զքրիստոս. այսինքն յաստուածութենէ և ի մարդկութենէ *ժողովեալ* աստուած և մարդ: - 90. Որք զմասունս բաժանեն. և զբոլորն *ժողովեն*: - 90. Եւ է դարձեալ անգիտութիւն՝ յորժամ զմիտս տարածեմք յամենայն եղեալս և զնա ոչ գտանեմք, *ժողովեմք* ի միւնն որ արտաքոյ է սոցա. և այնպէս անգիտութեամբ ճանաչի աստուած: - 103. Իսկ սուրբ գիտութիւնն ընդ դէմ այսմ լուսաւորէ՛ զմիտս և ուղղէ՛. և ընդարձակէ զտեսութիւնն և թեթեւացնէ առ վերինն. և *ժողովէ* ի միւնն. և կատարէ զպատկերն: - 104. Նախ՝ զի հրեշտակացն իմանալի և միահաղոյն է տեսութիւն. իսկ

մարդկան բանական և մասն մասն *ժողովելով*: - 120. Երկրորդ՝ զի զամենայն է քրիստոս ի նախագաղափար բանն իւր *ժողովեալ* ունի...: - 121. Բոլո՛ր է՝ յորժամ զիմացումն մտաց յամենայն եղելոց առ ինքն *ժողովէ՛*, և այնպէս բոլորովիմբ յաստուած հպի և միանայ. և ա՛յս է ի բոլոր սրտէ և ի բոլոր մտաց սիրել զաստուած. և զայս ունին ընտրեալքն մարգարէք և առաքեալք: - 142. Է՛ որ իմացումն մտացն առ ինքն *ժողովի* ի յիշողականէ՞ ի տրամախոհութեանցն՝ ի կարծեաց՝ և յայլոցն, և այնպէս ըստ ինքեան տեսութեանն ի աստուած հպի. այս է գերագոյն իմացումն. և կոչի իմացական տեսութիւն: - 142. Վասն որոյ գրով և բանիւ՝ այսինքն ընթերցմամբ և լսելով *ժողովեմք* զգիտութիւն: - 143. Միատեսակ է՝ յորժամ ըստ ինքեան *ժողովէ* յամենայն զգայարանաց, և բոլոր և միեղէն սիրով հպի յաստուած. և է՛ այս գերակատար սէր: - 143. Ութերորդ՝ զի պատահումն *ժողովելով* առ գոյացութիւնն լինի մարմին: - 170. Ստորոգութիւնս պատշաճի եղական գոյիցս իսկութեամբ. որ ի նիւթոյ և ի տեսակէ՝ ի գոյացութեանց և ի պատահմանց են *ժողովեալ*: - 171. Զի աննիւթ և պա՛րզ էութիւն է աստուած. և յառաջ էած յոչընչէ զաննիւթ էութիւնքս. այսինքն զգոյացութիւն, զքանակ, զորակ, և զայլսն. և իւրով զօրութեամբն ի միասին *ժողովեալ* կազմեաց մարմնական նիւթ: - 175. Երրորդ՝ ի *ժողովիլն* սոցա լինի մարմնական էութիւն. և յորոշելն կորնչի մարմինն: - 175. Որպէս տունն ի *ժողովիլ* փայտից և որմոց՝ շինի. և ի ցրուիլն սոցա կորնչի տունն: - 175. Եւ որպէս ի *ժողովիլ* հոգւոյ և մարմնոյ լինի մարդ. և ի բաժանիլն կորնչի. այսպէս և զայս իմա: - 175. Հինգերորդ՝ զի առանձին բնութեամբ սոքա ի մի էութիւն *ժողովեալ* խառնին. և մի բնութիւն նիւթոյ կատարեն. և ի բնութիւնս իւրեանց ո՛չ շփոթին և այլայլին: - 176. Գոյացութիւն որ սկիզբն է ամենեցուն և նախասեռ. և ի նմանէ զուգաբաժանեալ մարմինն. և շնչաւորն. և զգայունն. և կենդանին. և բանաւորն. և մարդն. ո՞չ ապաքէն բնութիւն են սոքա այլևայլ. և *ժողովեալ* գոյացուցանեն զմի անհատն պետրոս անշփոթ միութեամբ: - 176. Եւ *ժողովեալ* սոքա լինին մի բնութիւն պետրոսին: - 176. Երրորդ՝ զի պարփակէ. այսինքն *ժողովէ* և որոշէ զքանն: - 177. Այլ և *ժողովէ՛* զքանն և որոշէ. այսինքն զհեգ. զբառ. զբան. և զիմաստութիւն: - 178. Չորրորդ՝ հաւասարակշիռ է երկիրս բոլորակի. և յամենայն կողմանէ ծանրութիւնն ի մէջն *ժողովի*. և այսպէս ինքն ի վերայ իւր հաստատեալ է: - 182. Նա՛խ՝ զի ի ներքո՛յ է ամենեցուն. և ամենայնին զօրութիւն առ նա՛ *ժողովի*: - 187. Վարդապետք ասեն. որպէս սուրբն բարսեղ՝ թէ որպէս երկբերանի քսա՛կ է լուսինն. ընդ մինն ելանէ և ի վերի թիկունքն *ժողովի* և պակասի ի մէնջ լոյսն. և ի միւսն ի ներքս մտանէ և լուսաւորէ՛ զմեզ: - 187. Եւ **ժ** մասունքն *ժողովեալ* ի յամիսն՝ լինի **ժ** ժամ: - 190. Իսկ կէս մասն ի մեկ ամիսն՝ լինի կէս ժամ. և ի մեկ տարին **զ** ժամ. և ի **դ** տարին *ժողովեալ*՝ լինի օր մի **իդ** ժամ. և ա՛յն առնէ զնահանճն. և շարժէ՛ զտօնս և զեղանակս: - 190. Եւ *ժողովեալ* մէկ օրն **իդ** ժամ՝ լինի **դ** բիւր և **սբճ** ռոպէ: - 191. Եւ մի մասն *ժողովեալ*՝ ի **ցպխ** ամն՝ լինի **յկ** մասն: - 191. Եւ որպէս իննևժերեակն լուսնի, և **իը** երեակն արեգական ի միասին *ժողովեալ*՝ առնէ զհինգ հարիւրեակ շրջանն ի **շլբ** ամին. զի **ժթ իը** երեակ է. և **իը ժթ** երեակ: - 192. Եւ դարձեալ ի գարունն բուսանին բոյսք. և յամառն կատարին. և յաշունն *ժողովին*. և ի ձմեռն վայելեն. և յիւրաքանչիւր ժամանակս՝ իւր գործն առաւելու: - 198. Այլ և յորժամ սատակեցաւ յուլիանոս, *զժողովեալ* ինչսն սուրբն բարսեղ բաժանեաց ժողովրդեանն. նոր տարի անուանեալ ի կեսարիայ: - 200. Յոռի. զի հորե՛ն երկրագործք և մշակք զցորեան և զգինի, յըշտեմարանս *ժողովեալ*. զի **թ** հոռի՝ մո՛ւտ է աշնան: - 200. Եւ դարձեալ ի վեր քարշեալ *ժողովին* ի ծայրս խոտոց. և ծանրացեալ կախին իբրև զմարգարիտս: - 204-205. Եօթներորդ՝ ամենայն աղբերք և գետք *ժողովին* ի ծով՝ ուստի ելին: - 207. Նա՛խ՝ զի ի ձմեռն ջերմութիւնն ի սիրտ երկրի *ժողովի*. և յամառն ի վեր յերես սփռի: - 208-209. Զորօրինակ՝ յորժամ մարդն մեռանի՝ ջերմութիւնն ի սիրտն *ժողովի* և ապա քաղի: - 209. Եւ ծառք ի ձմեռն յարմատն *ժողովին*: - 209. Երրորդ՝ անդ մէկին է ջերմութիւն՝ և աստ կրկին. զի հասեալ ի գոգ երկրի, մակադարձութեամբ *ժողովին* առ նա և լինի շող: - 211. ...իսկ թէ թափի հիւնն. այս լինի կամ յատակս ծառոցն ծորեալ և ապականեալ. և կամ ամենայն ամբարեալ և *ժողովեալ* և բարձրացեալ քան զծառս դրախտին որ է անպատշաճ: - 224. Ութերորդ՝ վասն արտաքին զգայութեանցն որ են ի գլուխն. զի այլ կենդանիք միայն հեշտանան կերակրով և ցանկութեամբ. իսկ մարդն հեշտանայ առաւել գեղեցկութեամբ զգալեացս. յորժամ տեսանէ աչօքն զերկին և զերկիր. և *ժողովէ՛* զճշմարիտ գիտութիւն նոցա և հեշտանայ: - 233. Եւ պիտոյանայր լեզու երկայն և շրթունք ստուար, զի *ժողովեսցէ* զկերակուր. և յայնժամ ո՛չ կարէր սպասաւորել բանի որպէս ա՛յժմ: - 233. Եօթներորդ՝ ա՛նդ են *ժողովեալ* **դ** գոյնք տարերաց: - 234. Վասն զի անձն է մեզ առաջին հիմն և ի ներքոյ եդեալ. յորմէ և առ որ *ժողովին* տեսակն և սեռն և սեռականագոյն սեռք: - 236. Եւ միսն զի տաք է՝ հալէ՛ զկերակուրն որ ի յինքն

*ժողովեալ*: - 242. Ունականն է՝ յորժամ *ժողովէ* զկերակուրն՝ ծկտի և լայնանայ և փակէ՛ զամենայն դրունսն որ ի ներքոյ և ի վերոյ և ի կողմանէ, զի մի՛ թափեսցի կերակուրն: - 242. Եւ որպէս արիւն հոսմանն ի մէջ երակացն փոխի և լինի սպիտակ կաթն, և *ժողովի* ի ստինսն: - 242. Զի սիրտն ունի **բ** տուն. ի յաջ կողմն իւր զարիւնն *ժողովեալ* որ առնու ի լերդէն: - 244. Եւ ի ձախ կողմն զօդն *ժողովեալ* որ առնու ի թոքէն: - 244. Սիրտն իշխա՛ն է անձինն. յորժամ երկնչի՝ զարիւնն առ ինքն *ժողովէ* իբր զօրք առ թագաւորն. և մնայ մորթն բնական գունովն դեղին: - 245. Եւ որք զայս ասեն՝ հետևին մոլորութեանցն պղատոնի մարմնափոփոխութեանցն. որ ասէ քաղաք ի յերկինս. և հոգիքն անդ *ժողովեալ* իբրև զզօր և զդասս: - 252. Եւ նախ սիրտն կազմի քան զայլ անդամսն. զի ջերմութիւն սերմանն ի մէջն *ժողովի* և կազմէ՛ զսիրտն: - 261. Ի սմա՛ *ժողովեալ* գազանաբարոյ և հանդարտ մարդկան ո՛չ մեղանչելով միմեանց: - 294. Դարձեալ՝ տապանն չորեքկուսի՝ է՛ սուրբ խաչն քառակուսի. որ *ժողովէ*՛ յերկրպագութիւն իւր յամենայն ազգաց և լեզուաց: - 294. Ո՛չ կերին. զի թէպէտ *ժողովեաց*, սակայն ո՛չ կերին. այլ շնորհօքն աստուծոյ կացին որպէս մանուկն յարգանդի մօրն ապրի: - 294. Չորրորդ՝ ի յարութեանն խնդրի ամենայն արիւն մարդոյ և *ժողովի*. վասն այն այժմ ո՛չ է ուտելի: - 295. Նոյնպէս և սուրբքն ջերմ սիրովն աստուծոյ *ժողովին* ի կայանս հոգւոցն ի տեղւոջ լուսոյ և հանգստեան: - 315. Զի՞նչ է որ որդիքն յոբայ պատուէին զօր ծննդեան իւրեանց ի միասին *ժողովիլով*: - 321. Վասն որոյ ի ծննդեան աւուրն *ժողովին* և օրհնեն զաստուած և մարմնով ուրախանան. որպէս յոբայ ուստերքն և դստերքն միաբանեալ գային և ուրախ լինէին գիրն: - 321. Երրորդ՝ *ժողովին* և գոհանան զաստուծոյ՝ որ յոչնչէ՛ գոյացոյց զմարդն, և յարգանդէ՛ խաւարին ի լոյս եբեր. և ետ մեզ ինչս մարմնական: - 321. Վասն որոյ այսօր *ժողովեալ* փառս և պատիւս տամք աստուծոյն մերոյ որ յաւիտեան զփառաւորիչս իւր փառաւորէ՛: - 321-322. Այլ ոմանք ասեն ի ձեռն հրեշտակաց ի միում աւուր *ժողովեցան*. որպէս ի ձեռն դիւաց ցրուեցան: - 326. Այլ ա՛յս է ճշմարիտն, զի ամենայն բարեկամքն որ *ժողովեցան* յետոյ և մխիթարեցին զնա՛, իւրաքանչիւրքն բերին մէն մի որոջ ոչխարի և **դ** դրամ ոսկի անգիր ընծայեցին նմա ի սատար խրախութեանն...: - 326. Ուստի յա՛յտ է զի ի մի նիւթ *ժողովեաց* զամենայն որակս համոց: - 339. Երկրորդ՝ զմանանայն որ շատ *ժողովեաց*՝ ո՛չ յաւելաւ. և նւազն ո՛չ պակասեաց: - 339. Միանգամայն ի սկզբանէ գրոց արարածոցն *ժողովին* **Ե** գլխոյն՝ անուանք արարչին: - 412. Եւ տէր մեր մերժեաց զիրէայս և *ժողովեաց* զհեթանոս որ էր աղքատ ի բարեաց: - 422. Երկրորդ՝ զի սովն և սուրն զբարի և զչար ի միասին պատժէ. այլ մահն ընտրութեամբն աստուծոյ է. և *ժողովի* ի վերայ յանցաւորացն. ուստի յա՛յտ է զի դաւիթ ո՛չ էր յանցաւոր ո՛չ պատժեցաւ: - 435. Չորրորդ, ի հովուութենէ օծաւ թագաւոր և տէր մեր նա՛խ քարոզեաց, և ապա՛ *ժողովեաց*. և տիրեաց յերկինս և յերկրի: - 435. Այլ և առ ինքն *ժողովեալ* զհեռացեալսն դիւապաշտութեամբ: - 489-490. ...և զաւարն *ժողովեցին* ի տիպ խորհրդոյն քրիստոսի. որ ի գիշերի եհար զզօրութիւնն սատանայի և յառաւօտուն ցուցեալ զինքն աշակերտաց իւրոց և զյարուցեալսն ընդ իւր: - 514. Իսկ թէ ուրեք առաքեալք և մարգարէք հիմն կոչին, քանզի նա՛խ նոքա *ժողովեցան* ի հաւատս և եղեն հիմունք եկեղեցւոյ, և ապա՛ զայլս *ժողովեցին*: - 532. Իսկ յատուկ, զի նա՛ կոչի ժողովարան. և մեք *ժողովեալք*: - 533. Չորրորդ՝ եկեղեցի է անդրանկացն վերինն սիոնի որ է հոգիք սրբոցն *ժողովեալ*. զոր պողոս եկեղեցի կոչէ զորդիս արդարոց կատարելոցն: - 534. ...և նոքա զամենայն ինչ ծածկապէս տեղեկացան. զի *ժողովեալքն* ի քաղկեդոն ակն առին թագաւորին և կնոջ իւրոյ. և զարհուրեցան ի սպառնալեացն. և զնեստորի կարծիսն հաստատեցին. զերկու բնութիւնսն. և զ**բ** կամսն. և զ**բ** ներգործութիւնսն: - 543. Եւ *ժողովեին* հարքն սուրբք խլիչք ապականութեան, և սրբէին զեկեղեցի սուրբ: - 544. *ժողովեալ* **խ** եպիսկոպոսաց և բազում վարդապետաց և ժողովրդոց. կողմնակալք և մարզպանք, մեծամեծօքն հայոց, և սպարապետն վարդան ազգայնօքն իւր: - 544. Երկրորդն է ժողովն թէոդուպօլսի, որ այժմ կոչի կարնոյ քաղաք. ո՛չ այն զոր յետոյ հերակլ քաղկեդոնիկ *ժողովեաց* և խաբեաց զեզր կաթուղիկոսն հայոց: - 544. Այլ հրամանաւ մեծի թագաւորին ուստիանեայ *ժողովեցան* յունաց և հռոմոց և հայոց և վրաց և աղուանից եպիսկոպոսունք. և կաթողիկոսն հայոց սահակ...: - 544. *ժողովեալ* բազում եպիսկոպոսաց յամենայն կողմանց. և իշխանաց և մեծամեծաց հայոց. կարգեցին սահմանս կանոնականս **իբ** գլխով. և պայծառացուցին զեկեղեցի սուրբ: - 545. Որ ի նիկիայ յաւուրս մեծին կոստանդիանոսի ընդ դէմ արիոսի *ժողովեցան* հարքն սուրբ՝ **յժը**: - 547. Եւ **բճքն** որ յեփեսոս *ժողովեցան* ընդ դէմ նեստորի չարափառի և մարդադաւանի: - 547. Յաջ շարժումն է արծաթսիրութիւն. զի զբարիս պատճառելով *ժողովէ*...: - 560. Երրորդ՝ զի շղթայք մեղաց այսպէս ունին զկարգն. զի նախ

որկորստութեամբ լնու զորովայնն. և յետ այնորիկ պոռնկութեամբ թափէ՛ զնա. և ապա՛ արծաթ *ժողովէ* զի լնու զորովայնն և պոռնկի...: - 561. ...**դ**` *ժողովել* զօտարս...: - 585. Չորրորդ` զիրէայս և զիեթանոսս ի մի եկեղեցի *ժողովեաց*: - 585. վասն զի աղբիւր արեանն բաժանեալ ի մարմնոյն` դարձեալ միաւորեցաւ առ ինքն և *ժողովեցաւ* ի մարմինն իւր և ո՜չ ցրուեցաւ ա՛յլ արտաքոյ: - 598. Յայս միտս *ժողովիմք* քահանայքս և պաշտօն առնեմք յերեկօրեայ մինչ ի լոյս. - 604-605. ...«եկեղեցացո՛ զժողովուրդն ի դուռն խորանին». այսինքն *ժողովեա*՛: - 613. Նա՛խ` որպէս նա ի քարանց և յայլ նիւթո՛ց է *ժողովեալ*: - 613. Կամ ի զանազան դիմաց և ազգաց. որպէս այր, կին, ծեր, տղայ, *ժողովեալ* կոչի մի եկեղեցի: - 613. Երկրորդ, յորժամ արմըտիքն *ժողովեին* յաշնանն, յայնժամ տօնէին զերկու տօնն: - 616. Իսկ արմտիք և արդիւնք մեր խաչիւն *ժողովեցան* յեկեղեցի սուրբ: - 616. Եւ տապանն նշանակէ՛ զեկեղեցի. որք ի ձայն ժամահարին *ժողովին* և ապրին ի ջուրց հեղեղաց մեղաց: - 618. Եւ ա՛յն էր նշանակ չւելոյ բանակին կամ *ժողովելոյ* իշխանացն. կամ ամսամտից և այլ տօնից նոցա: - 618. Նոյնպէս և քահանայքն հնչէին ի հինն. որպէս այժմ ի յեկեղեցի *ժողովեն* ի յաղօթս հանապազորդ: - 618. Դարձեալ` ի խորհուրդ գոչման փողոյն այն որ ի բարձունս. զի նախ յերկնից գոչէ փողն գաբրիէլի և *ժողովէ* զհոգիսն...: - 618. Եւ քահանայքն հոլոնեալ. որ է *ժողովեալ* և խորհեալ: - 639. *ժողովէ* զկարծեցեալ ճաճանչն: - 639. ...յորժամ առ ինքն *ժողովէ* և ծագէ՛, ամենայն կարծիք լուծանին: - 639. Երրորդ, եօթնօրեայ *ժողովիլ* կենդանեացն առ դուռն տապանին անսուաղ մինչև տեղեաց անձրևն. և **է** **է** կենդանիք սուրբք: - 653. Երկրորդ, զի սիրելիք նոցա որք անդ *ժողովին*, տօնեն և յիշեն զնոսա աղօթիւք առ աստուած: - 678. Դարձեալ` հանգիստ է, զոր մինչև ցայժմ *ժողովէր* արդարութեամբ, այժմ կամի վայելել: - 679. Այլ ըստ պսակացն որ մարմնով կատարին` և վասն ընկերացն որ *ժողովին* պակաս է նոցա. զոր ի կատարածի լինելո՛ց է ի գալուստն քրիստոսի...: - 686. Եւ այլք ոմանք վեցերորդ կարծիս ստացեալ ասեն զբուն կատարեալ բարեաց հոգիսն *ժողովեալ* ի հրեշտակացն դասս. - 687. Ուր ետես զիդ երիցունսն շուրջ զաթոռովն աստուծոյ. և զբազմութիւն հոգւոց սրբոց յամենայն ազգաց *ժողովեալ* անդ: - 688. Անդ *ժողովեցան* առաքեալք և վկայք սուրբք և կատարեալք մինչ ի միւսանգամ գալուստն. - 688. Այս է խորանն առ երկնիւ ուր *ժողովին* արդարք և մեղաւորք հոգիք հաւատացելոց. որք դատաստանաւն կատարին, ակնունելով ողորմութեանն աստուծոյ: - 688. Իսկ ձախակողմեան խորան` է՛ ի յօդս յաներևոյթ տեղիս. ուր *ժողովին* հոգիք չարաց և մեղաւորաց. որք դատաստանաւն դատապարտին: - 688. Եւ սկիզբն անդ *ժողովելոյ*` ի յարձակելն քրիստոսի առ ժամանակեայ զհոգիսն անարժանից` անդ մնացին և անտի դարձցին մեղաւորք անրդէն ի դժոխս ըստ մարգարէին: - 688. Անդ *ժողովին* և հոգիք չարաց և ամբարշտաց ի ձեռն հրեշտակաց չարաց. ո՜չ ըստ բնութեան...: - 688. Արդ տանուտէր աստ կոչէ զաստուած, և այգի է եկեղեցի. և գաւառապետ կոչէ զքրիստոս. և առաւօտ յաբելէ առաջին արդարոյն. և երեկոյ օր դատաստանին յորժամ ընտրեալքն ամենայն *ժողովին*...: - 692. Եւ յայնժամ զորոմն քաղել առ ի յայրել ի հուրն. և զցորեանն ի շտեմարանն *ժողովել* ի կեանս: - 693. Այս կեանքս է սերմանելոյ, և անդ հնձելոյ և *ժողովելոյ*: - 704. Միջնովն *ժողովեալ* կուտին մարմինքն: - 713. Զի թէ զչգոյն կոչէ ի գոյ և լսեն նմա, քանի՞ առաւել զգոյն ի գոյից *ժողովէ*՛ և նորոգէ: - 714. Նա՛խ` զի ո՜չ է ի չորից տարերց *ժողովեալ* որ քակտելով մահանայ: - 715. Ո՞րպէս ի հող լուծեալ և յա՛յլ տարեր, և ի գազանաց կերեալ, *ժողովի* մարմինն մեր: - 718. առաւել աստուծոյ է կարելի զհոգիս յերկնից և զմարմինս ի տարերաց ի մի վայր *ժողովել* և յարուցանել: - 718. Ո՞րպէս ի հասարակ տարրէ՛ մարմին մարդոյ անխառնապէս *ժողովի*: - 719. Ասեմք եթէ` զորօրինակ սընդիկ լուծեալ և ի հող խառնեալ գնդապէս և փոշիացեալ. յորժամ ի մի վայր *ժողովես*` թողու զփոշիսն ի յորս խառնեալ է և պարզ միայն սնդիկն *ժողովի*: - 719. Յանմարմնոցն հրեշտակք և դևք. և հոգիք մարդկան. իսկ ի մարմնոց երկնային մարմինք և դ տարերք և մարմինք մարդկան. և այլք ամենայնքն ապականին և յիւրաքանչիւր տարերս *ժողովին*: - 727. ...պակասին սոքա և *ժողովին* ի ներքոյ երկրի և լինին տանջանարանք մեղաւորաց որպէս ասէ սուրբն բասիլիոս: - 728. Երրորդ զի պարզի հալեալ մոմ. այսպէս սևութիւն և թանձրութիւն երկրի ի դժոխս *ժողովին* և մարմինք մարդկան յերեսս երկրի: - 728. Իններորդ, է՛ նշան ամենեցուն *ժողովիլն.* - 730. Եւ ի կատարածի` տարրական հուրն և հրեղէն ծովն և ամենայն հուրք որ են յերկրի` *ժողովեսցին* ի միասին - 731. Զոր օրինակ մի պատկերն դրոշմի ի զանազան մոմս. և ի հալիլ մոմոյն դրոշմ պատկերին *ժողովի* և մնայ ի մատանւոջն: - 732. ...այսինքն յորժամ զճառագայթ բազում նշանացս առ ինքն *ժողովէ* խաչն սուրբ` յայնժամ ամենայն կարծիք լուծանին: - 732. Դարձեալ, որպէս մի շնչմամբ օդոյ` ցորեանն *ժողովի* և յարդն հոսի: - 739. Նախ` կոչի սիրտ և անձինք մեղաւորաց, ուր

*ժողովին* ամենայն գործք չար որ է՛ խաղող դառնութեան. և ունակացեալ պաhէ յինքեան. և հեշտութեամբն ճմլէ հանապազ և արբենայ մեղացն գինով: - 748. Զի արտաքոյ երկնային քաղաքին եէմի է՛ տանջանաց տեղի, ուր մեղաւորքն *ժողովին*: - 748. Նախ կոչի հնձան նախածանօթ տեսութիւնն աստուծոյ. ուր ընտրէ՛ և *ժողովէ՛* զսուրբս իւր յառաջ քան զլինիլն իւրեանց. - 748. Երկրորդ կոչի հնձան արքայութիւնն երկնից. ուր *ժողովին* պսակք և փառք զանազան հանգստեան սրբոց զոր պատրաստեալ է աստուած սիրելեաց իւրոց ըստ առաքելոյ: - 748-749. Եօթներորդ կոչի հնձան եկեղեցի սուրբ. ուր ամենայն առաքինութիւնք մեր *ժողովին*. ու ճմլէ ապաշխարութեամբ և բաշխէ՛ զգինի շնորհաց. - 749. Տասներորդ, ասի հնձան և կտակարանքն սուրբ. ուր հին և նոր իմաստութիւն *ժողովեցաւ* ի խառնարանին գինւոյ. յորմէ բաժակէ՛ արբին առաքեալքն ի սուրբ վերնատունն. և արբուցին ամենայն տիեզերաց...: - 749. Եւ յետ նոցա ամենայն բազմութեանց *ժողովելոց* յամենայն ազգաց ասէ. որք եկին ի բազում վշտաց աշխարհի. այսինքն որք զանազան առաքինութեամբ և բազում նեղութեամբ մտին ի հանգիստն: - 760

**ԺՈՂՈՎՈՒՄՆ +** Եւ որովհետև ծանեաք զի անմարմին են սոքա, յա՛յտ է զի բաժանումն սոցա քակէ՛ զնիւթն ի մարմնոյ. ապա ուրեմն ի մի վայր *ժողովումն*՝ ծնանի զնիւթական մարմինն: - 175. Երրորդ՝ *ժողովումն* արմտեաց ի յաշնան. որ ի թշրինի **ժ** կարգեցաւ: - 340. Եւ տօն սրբոյ խաչին. զի արմտեաց և արդեանց մերոց *ժողովումն* է սուրբ խաչն փրկչական: - 341. Տուփն՝ *ժողովումն* բարեաց: - 346. Եւ երրորդ *ժողովումն* Սրբագիրք: - 451. Իսկ շաղադրեալն միաւորութիւն՝ և սա՛ բաժանի յերիս. այսինքն ըստ դրութեան. ըստ *ժողովման*. ըստ կոչման: - 476. Իսկ ըստ *ժողովման*, որպէս եկեղեցի. և անձն. հօտ. կամ քաղաք: - 476. Կաթողիկէն ընդհանրական լսի. իսկ եկեղեցին *ժողովումն*: - 532. Զոր յառաջին ամին յորժամ նստաւ կաթողիկոս տէր սիմէոնի, ի ձեռն տէր եղիայի մեծահանդէս *ժողովմամբ* պայծառացոյց զեկեղեցի կանոնական հաստատութեամբ ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն: - 545

**ԺՈՂՈՎՈՒՐԴ +** Երրորդ՝ ելք *ժողովրդեանն* իսրայէլի յեգիպտոսէ: - 196. Այլ և յորժամ սատակեցաւ յուլիանոս, զժողովեալ ինչսն սուրբն բարսեղ բաժանեաց *ժողովրդեանն*. նոր տարի անուանեալ ի կեսարիայ: - 200. Յիսունևզ, Բանակետղ *ժողովրդեանն* խաչաձև. և վրան ժամուն ի միջի: - 284. Եւ օրհնութիւն քահանայից և *ժողովրդեանն*: - 284. Եւ տրտունջ *ժողովրդեանն*: - 284. Նաև յեգիպտոս **ղճ** ամ խոստացաւ ծառայութեան. և զերեսուն ամն յաւել վասն մեղաց *ժողովրդեանն*: - 292. Ներքնատունն՝ *ժողովրդեանն* տեղիք: - 294. Եւ է՛ որ մատուցօղն մեծ է քան զընդունօղն. որպէս մելքիսեդեկ քան զաբրահամ. և քահանայն մեծ է քան *զժողովուրդն* որ ճաշակէ: - 306. Չորրորդ՝ նշանակէ՛ զհրէայս որ էին անդրանիկ *ժողովուրդ* խոտեցան. և հեթանոսք կրտսերք ընտրեցան և եղեն անդրանիկ *ժողովուրդ* աստուծոյ: - 310. Նոյնպէս և տէր մեր փոխանակ շնացօղ ազգին հրէից ընկալաւ զեկեղեցի կոյս՝ և սուրբ *ժողովուրդ* իւր: - 313. Նոյնպէս և քրիստոս եկն առ եղբարս իւր որ էին որդիք դաւթի և աբրահամու և առաջնորդք *ժողովրդեանն*. և յուդա վաճառեց զնա. և տէր եղև կենդանեաց և մեռելոց և կերակրիչ. զի ազատեաց զհոգիսն ի սովոյ դժոխոցն: - 313. Եւ կապեալն ի գնդակէն՝ հաւատացեալ *ժողովուրդն*: - 317. Նոյնպէս և տեառն մերոյ կոչի տաճար արտաքին բնակարան. որպէս կոյսն մարիամ, և հաւատացեալ *ժողովուրդք*, և շինուածք տաճարաց: - 319. Երկրորդ՝ մովսէս քարոզէր *ժողովրդեանն* թէ՝ աստուած հարցն ձերոց առաքեաց զիս. և յերկրպագութիւն նմա հրաւիրէր: - 328. Եւ քրիստոս զհրէայսն ցրւեաց, և ի սիրտ հեթանոսաց նոր *ժողովրդեանն* աւանդեաց զօրէնսն: - 328. Քսաներորդ, նա՛ վասն հակառակօղ *ժողովրդեանն* աղօթէր առ աստուած: - 329. Եւ որպէս նա՛ ի մէջ գիշերի էհան *զժողովուրդն*: - 330. Որպէս մովսէս լուաւ զպատգամն և ետ *ժողովրդեանն*: - 330. Եւ **խ** ամ ի մադիամ եկաց. և ի հանել *զժողովուրդն*՝ **խ** ամ յանապատին եկաց: - 330. Նա՛խ՝ մորենին է՛ նշանակ *ժողովրդեանն* իէլի յեգիպտոս, որ վառեալ տանջիւր և ո՛չ սպառիւր. այլ առաւելոյր օրհնութեամբն աստուծոյ: - 331. Չորրորդ՝ ի ձեռն յովսեփայ *ժողովուրդն* էջ ի յեգիպտոս և եղև չարութիւն: - 332. Երրորդ՝ *ժողովուրդն* չարախայտ եղև յեգիպտոս. մինչև արկաւ ի ծոց խնամոցն աստուծոյ և ողջացաւ: - 332. Երկրորդ՝ յօրինակ *ժողովրդեանն* իսրայէլի. զի սրբութեամբ էջ յեգիպտոս և պղծեցաւ ի գործոց նոցա. մինչև սրբեցաւ յամպն և ի ծովն. և ճաշակեաց զմանանայն: - 333. Յորո՞ւմ աւուր ել *ժողովուրդն* յեգիպտոսէ, և քանի՞ ամ էր յադամայ: - 337. Եւ յաւուր ուրբաթու խաւարեցաւ երկիր որպէս ամպն ի վերայ *ժողովրդեանն*: - 337. Եւ որպէս դարձաւ *ժողովուրդն* ի հանգրուանն առաջին. և տեառն մարմինն եդաւ ի հող երկրի: - 337. Հրեշտա՛կ էր. որ ի տիւն հովանի լինէր ի տապոյ

արեւուն և ցուցանէր ամենայն աշխարհի զելս *ժողովրդեանն*: - 338. Զոր տեսեալ *ժողովրդեանն* նոր՝ ասէին ցմիմեանս, զինչ է սա. և կոչեցաւ մանանայ: - 338. Ասեմք թէ՝ նեխեցաւ վասն թերահաւատութեան և ագահութեան *ժողովրդեանն*: - 339. Նա՛խ՝ զի անհաւա՛ն էր *ժողովուրդն* և անկատար, զգալի տեսլեամբ և ձայնիւ զարհուրեցոյց. զի մի՛ մոռասցին. այլ հաւանեսցին և ի միտ պահեսցեն: - 341. Զի՞նչ է որ զկէս արեան պատարագին խառնեաց ի ջուր և ցանեաց ի *ժողովուրդն*. և զկէսն էարկ շուրջ զսեղանովն: - 341. Նշանակէ *զժողովուրդն* որք սրբին աւազանաւն և խառնին ի հաղորդութիւն արեանն քրիստոսի: - 341. Երրորդ՝ նախ զխառնեալ ջուրն ցանեաց ի վերայ *ժողովրդեանն* որ էր մկրտութիւնն. և սոքա ճաշակեն զջուրն և զարիւնն: - 341. **Հինգերորդ՝ տղա՛յ էր *ժողովուրդն*, և զուարճանային ի տեսութիւնն. վասն այն զանազան գունով զարդարեաց:** - 342. Եօթներորդ՝ զի նոր իմն չնաշխարհիկ կազմեաց. նոր *ժողովրդեանն* և նոր օրինացն, իցէ և նո՛ր տաճար հռչակեալ ընդ ծով և ընդ ցամաք. որպէս պսակ և փառք արդարոցն է՛ զոր ակն ո՛չ ետես և ունկն ո՛չ լուաւ. նոյնպէս և սա՛ ի զգալիսս անհաս ի մտաց մարդկան: - 342. Ութերորդ՝ զի թէ թողցեն զվայելչութիւն խորանիս այս և այլոց հետևեսցին, անպատասխանի լիցին ի պատուհասն. որպէս եթող զապերախտ *ժողովուրդն* և էառ զվրանն մողոքայ և զաստղն հռեմփայ ի դատապարտութիւն ինքեանց: - 342. Եւ հասարակ *ժողովուրդք* արտաքին սրահն: - 343. Խարիսխ՝ *ժողովուրդն*: - 343. Եւ որպէս առաջնորդ է՛ր *ժողովրդեանն* ի չուելն...: - 345. Եւ ի նմանէ լուսաւորեալք՝ պայծառացուցանեն վարդապետութեամբքն իւրեանց զերկու *ժողովուրդս* որք ի հրէից և որք ի հեթանոսաց օծեցան մկրտութեամբն: - 347. Վասն որոյ և յաւուրս զաքարիայի հօրն յովհաննու յորժամ յամեաց ի տաճարին և ել, ակնունէր *ժողովուրդն* տեսանել զա՛կնն և տե՛սին լուսափայլ սպիտակացեալ իբրև զձիւն. և լի՛ եղեն խնդութեամբ. զի երկնաւոր արքայութեան նշոյլքն պայծառացուցին զակն: - 349. Երկրորդ թէ՝ զքո ձեռագործն ցո՛յց անարժան *ժողովրդեանն*: - 350. Չորրորդ՝ զի զարհուրեսցի *ժողովուրդն* և հնազենդեսցի մովսէսի: - 352. Առաջին, երեքօրեայ սրբութեամբ յիսներեկի աւուրն ելից յեգիպտոսէ. որ ընկալաւ զտասնաբանեան օրէնս և պատմեաց *ժողովրդեանն*: - 352. Մին վասն հաւատոյ օրինաց. և մին վասն հոգւոյս իբր ահարօնի. և մին վասն մարմնոյս որպէս *ժողովրդեանն*: - 353. Հասարակ, զի ամենայն քահանայ միջնորդ և հաշտարա՛ր է աստուծոյ և մարդկան. զընծայս *ժողովրդեանն* աստուծոյ նուիրելով և յաստուծոյ շնորհս և քաւութիւն *ժողովրդեանն* առնելով: - 354. Հինգերորդ, նոքա մատուցանէին պատարագ նախ վասն իւրեանց, և ապա՛ վասն *ժողովրդեանն* անգիտութեան...: - 354. Եւ ո՛չ միայն այս, այլ զեօթն օր անխմոր բաղարջ ուտէին ամենայն *ժողովուրդն*. և Աբրահամ և ղովտ բաղա՛րջ յօրինեցին զխորհուրդ փրկական մարմնոյ տեառն որ ի վերնատունն բաղարջով աւանդեաց: - 356. Երկրորդ՝ վասն անգիտութեան և ակամայիցն զուարակ մի քահանային. և զուարակ մի՝ բոլոր *ժողովրդեանն* ի տօնի քաւութեանն: - 358. Իբր թէ հաւասա՛ր ծանր է մեղք քահանայապետին և բոլոր *ժողովրդեանն*: - 358. Դարձեալ՝ հարաւն նշանակէր զիրէայս, և հիւսիս զհեթանոսս. որ լինելոց էին պատարագ և *ժողովուրդ* աստուծոյ...: - 360. Իսկ թէ ի տունն ի *ժողովուրդս* նորա. կամ յեկեղեցիս մեղանչեմք. յետ է ժամանակի փոխելոյ՝ որ է՛ է հասակ մեր. և է դար կենցաղոյս...: - 368. Այլ և վասն հին և նոր *ժողովրդեանս* թողութեան: - 373. Որպէս ետ առաքելոցն, Նոյնպէս և նոցա ի գիր նզովից զկապելն. և յօրհնութիւն *ժողովրդեանն* զարձակելն: - 379. Եւ զամենայնն ունէր *ժողովուրդն*: - 381. Երրորդ՝ զի բուրվառովն՝ աստուծոյ ընծայէր և գաւազանաւն զշնորհս ի *ժողովրդեանն*: - 382. Չորրորդ, քրիստոնէական *ժողովուրդն* դալարացեալ ի մեղաց. շառաւիղեալ ծննդօք. ծաղկեալ հաւատով և պտղաբերեալ: - 382. Երինջն ըստ իրաւանցն ունէր զմեղս *ժողովրդեանն*. և խորհրդովն քրիստոսի՝ սրբութիւն գործէր: - 384. Զի՞նչ է որ զակամայ մեղուցեալն քաւէր պատարագօք. և զկամաւոր յանցաւորն սատակել տայր *ժողովրդեանն*: - 385. Իսկ կրկին պատարագն. մին վասն բոլոր *ժողովրդեանն*, և մին վասն անձին ակամայիցն. ցուցանէ զկրկին խոստովանութիւնն. մին յայտնի առհասարակ եկեղեցոյն. և միւսն ծածուկ առանձին մեղաց: - 385. Վասն է՞ր օձիւ հարկանէր *ժողովուրդն*: - 386. Երկրորդ, ըստ փիլոնի, օձն ցանկութեան է օրինակ, որ զցանկացող *ժողովուրդն* սատակէր. ի յախտս իւրեանց նմանեցոյց զպատիժն: - 386. Տասներորդ, որպէս ասէ փիլոն՝ նշանակ հեշտ ցանկութեան է օձն. որ և զցանկացող *ժողովուրդն* սատակէր. ըստ ախտին իւրեանց նմանեցոյց զպատուհասն: - 387. Նա՛խ՝ զի բերան մեղաւորի մի՛ բացցի ի *ժողովրդեանն* աստուծոյ: - 388. Զի թէ անիծեալ էր, յորժամ *ժողովուրդն* անկաւ ի սատակումն ի բելբէքովր, ասէին թէ ի նորա անիծիցն եղև: - 388. Եւ դարձեալ՝ ոչ ինչ շնորհ ունէր բան նորա. զի այնքան օրհնեաց *զժողովուրդն*, ընդէ՞ր ոչ

դարձաւ մահն և սատակումն: - 388. Վեցերորդ՝ շնորհընկալք. որպէս խոստովան որդիք. և *ժողովուրդք*. և քահանայք հայրապետաց: - 389. Եւ որպէս կնոջ ընդ հրամանս առնն իւրոյ յանցանել պոռնկութենէ, նոյնպէս և զաւակաց, և ծառայից, և աշակերտաց, և հնազանդելոց, և *ժողովրդոց*. նոյնպէս և հոգիս մեր ելեալ ի հրամանացն աստուծոյ՝ պոռնկութիւն է նմա. եթէ ըստ գործոց. եթէ ըստ հաւատոց: - 389. Եւ աստ հարցանեմ ի վերջոյ. վասն է՞ր կրկին անգամ թւեաց *զժողովուրդն*: - 392. Երկրորդ՝ բարձր փառօք հանել *զժողովուրդն* անձեռնարկելի թշնամեաց: - 395. Երկրորդն ի դէմս *ժողովրդոցն*: - 395. Զի հին *ժողովուրդն* զանասունս մատուցանէր պատարագ ոչխար և արջառ և այլն: - 396. Նա՛խ՝ վասն *ժողովրդեանն* ասէ, թէ ոչ միայն հացիւ կեայ մարդ. որպէս ասաց ադամայ ուտել զհաց քրտամբք: - 397. վասն որոյ յայսմանէ ասեն ոմանք թէ՝ **գ** ամ կամ **խ** օր յամեաց ադամ ի դրախտին. որպէս *ժողովուրդն* ի յանապատին. կամ որպէս մովսէս ի լեառն: - 397. Հինգերորդ և մեծն ա՛յս է, զի գառն քրիստոս է. և կաթն օրէնք. և մայր *ժողովուրդն*: - 399. Երկրորդ՝ զներքինս օրհնեմք, և աստուծոյ բարութեանցն կցորդեմք. ողորմութեան, պարգևաց, կամ այլ ինչ շնորհաց. և այսու եղանակաւ օրհնեմք զքահանայս. *զժողովուրդս*. զմեռեալս և զկենդանիս: - 406. Եւ անջրպետեալ ի մէջ *ժողովրդեանն* և մարմնոյն շուրջանակի. զի մի՛ իմասցեն զթաղումն նորա: - 410. Եօթներորդ՝ ոմանք մարմին մովսէսի զօրէնսն ասեն. զոր ի բերելն հակառակէր սատանայ, խոտան և անարժան գոլ *ժողովրդեանն*. վասն որոյ միքայէլ վերակացու *ժողովրդեանն* հալածէր զնա: - 410. Ութերորդ՝ և ոմանք զմարմինն մովսէսի *զժողովուրդն* կոչեն յելսն եգիպտոսի. որ հակառակէր ազատելոյ զնոսա յեգիպտոսէ՛: - 410. Երրորդ՝ զի մի՛ *ժողովուրդն* կանգնեսցէ արձան ի վերայ նորա ըստ սովորութեան երկրին: - 411. Հինգերորդ՝ և մի՛ *ժողովուրդն* առցէ ի նշխարացն և պատկեր կազմեսցէ: - 411. Յետ վախճանելոյն Մովսէսի՝ առաջնորդեաց *ժողովրդեանն* փոխանորդ նորին Յեսու որդի նաւեայ. ի ցեղէն եփրեմի: - 414. *Զժողովուրդն* թլփատեաց: - 414. Երկրորդ՝ զի *ժողովուրդն* առանց երկիւղի անցանիցէ. զի թէ դիզեալ և կուտեալ լինէր, երկիւղ գոյր: - 414. Եւ այս գիտելի է, զի **գ** պարգևք էր *ժողովրդեանն.* այսինքն Ամպն, Վէմն, և Մանանայն: - 415. Իսկ յետ մահուանն մովսէսի վերացաւ ամպն. և հրամայեցաւ *ժողովրդեանն* հեռու կալ կանգունս երկուց հազարաց վասն փառաց տապանակին և վասն զօրութեան նորա: - 415. Վեցերորդ՝ զի թէ լինի անկարօտ գող և զրկօղ, ընդ տեառն իւրոյ կորուսանէ և զինչսն. որպէս աքարն որ ունէր բազում ստացւածս, և գողացաւ ի նզովիցն երիքովի. տեսին ամենայն *ժողովուրդն* և ցասեան ի վերայ նորա և իրաւունս ետուն սատակմանն: - 416. Երկրորդ՝ զի մի՛ զատեսցին ի *ժողովրդենէն*. այլ ի քաղաքս ապաստանաց սփռեսցին և ուսուսցեն զնոսա: - 417. Երկրորդ ըստ իրին. զի յեսու փրկեաց *զժողովուրդն* ի մարմնաւոր թշնամեաց: - 417. Եւ տէրն կորոյս զիէլ ազգօք. և փոխանակեաց իւր *ժողովուրդ* զիեթանոսս օրինօք: - 418. Եւ յետ գերութեանն քահանայք իշխեցին *ժողովրդեանն*: - 421. Եւ տէրն մեր արեգակն արդարութեան ծագեաց երկիւղածաց իւրոց և փրկութիւն *ժողովրդեանն* իւրոյ: - 421. Նոյնպէս ի նորս քահանայք և *ժողովուրդք*: - 425. Որպէս և մովսէս զտախտակն աստուածագիծ խորտակեաց վասն յանցանաց *ժողովրդեանն*: - 425. Երկրորդ՝ զի *ժողովուրդն* ոտիւք գայր, և զձեռս տարածէր, և զգլուխսն խոնարհեալ երկիր պագանէին. վասն որոյ հատան այնպիսի մասունքն: - 426. Վասն է՞ր հրամայեաց թուել և մահ ածել *ժողովրդեանն*: - 434. Երկրորդ՝ որպէս թուեաց դովեկ զքահանայսն զի մի՛ զերծանիցեն ի սրոյն. նոյնպէս և այս վասն քահանայիցն վրէժխնդրութեան էր. զի կամեցաւ *ժողովուրդն* փրկել զնոսա: - 434. Ապա թէ ոչ՝ ի միում աւուրն **եճ** և **կռ** կամէր կոտորել այսու համարով. և ոչ ինչ մնայր ի *ժողովրդենէն*: - 435. Դարձեալ հալածեցաւ յաբիսողոմայ. և տէրն յորդոց *ժողովրդեանն* իւրոյ: - 438. Եւ տէր մեր զամենայն առակս խօսէր ընդ *ժողովրդեանն*. և առանց առակի և ո՛չ ինչ: - 441. ...և նա՛ վկայեաց վասն գերութեան *ժողովրդեանն*. այլ վասն բարեպաշտութեան ովսիա ո՛չ գնաց գերի: - 447. Երրորդ՝ որպէս զստնդիայի մանուկն է ամ խրատէ՛ դայեակն. այսպէս *ժողովուրդն* որ ել յերկրէն իւրեանց, երկիրն բաբիլացւոց **հ** ամ ի գիրկս իւր դայեկեաց զնոսա և սնոյց. զի յետ դարձին յերկիրն իւրեանց՝ զբարիս գործեսցեն: - 448. Եւ էր սաղմոն իշխան ցեղին յուդայ յորժամ անցոյց *զժողովուրդն* ընդ յորդանան յեսու: - 452. Զի այսպէս միատեսակ բնութեամբ խոստովանի ընդ մեզ և այլ *ժողովուրդ* ուղղափառաց ըստ ուսուցման մեծին դիոնիսեայ յերկրորդ գլուխն եկեղեցական քահանայապետութեանն ասել, - 477. Հինգերորդ՝ ի նմին իրացն յայտնի է՝ զի ռամիկ *ժողովուրդն* ի տօնի քաւութեանն երեքօրեայ սրբութեամբ մերձենային առ դուռն տաճարին: - 483. Ըստ ծեզ ապա և ո՛չ *ժողովրդեանն* նմանեցաւ: - 484. Վեցերորդ՝ զի հարկ էր մատուցմունք նւիրաց *ժողովրդեանն*. և կատարեալ էր մի օր պաշտամանն: - 484. Անմարթ էր թողուլ *զժողովուրդն* ի դրան տաճարին և մերձիլ

յանկողինս. և ըստ օրինացն գօրեայ սրբութիւն ստանալ. որ անհնա՛ր է ամենևին. թէպէտ ասեն՝ գոյր ա՛յլ քահանայապետ որ զկարգ պաշտամանն կատարէր: - 484. Երրորդ՝ ի վախճանն. զի յովհաննուն ունէր կարգեալ առ մկրտութիւնն քրիստոսի. զի յա՛յն սովորեցուցանէր *գժողովուրդն* որ էր կատարեալ մկրտութիւն: - 488. Չորրորդ՝ զի ի տօնի զատկին ի մէջ բազում *ժողովրդոց*: - 490. Եւ է՛ որ մատուցօղն մեծ է քան զընդունօղն. որպէս մելքիսեդեկ քան զաբրահամ. և քահանայն մեծ է քան *գժողովուրդն* որ ճաշակէ: - 491. Այլ ա՛րդ՝ մովսէս բովանդակ *գժողովուրդն* եհան յանապատ: - 507. Եւ յորում ժամու եւ մովսէս յեգիպտոսէ և եհան *գժողովուրդն*, ի նոյն ժամն յարեաւ քրիստոս ի մեռելոց և եհան ազատեաց զհոգիսն ի հրահալոց չարութենէ դժոխոցն և ի բռնութեանց իմանալի փարաւոնին: - 512. Եւ յաւուր ուրբաթու խաւարեցաւ երկիր. որպէս ամպն ի վերայ *ժողովրդեանն*: - 513. Եւ որպէս դարձաւ *ժողովուրդն* ի հանգրուանն առաջին, և տեառն մարմինն եդաւ ի հող երկրի: - 513. Եւ տէրն ի գիշերի ելեալ ի գերեզմանէն բաժանեաց և էառ զհոգիս մարդկան ի նմանէ. և արար իւր հանդերձ զսուրբ *ժողովուրդ* իւր: - 513-514. ...և տէր մեր յետ յերից օրինաց՝ այսինքն բնական բանական և գրաւական՝ երևեալ ի գիշեր կենցաղոյս և իջեալ ի դժոխս աւերելով զնա դարձոյց զերկոսին *ժողովուրդս* իւր...: - 514. Երրորդ՝ և յայսմ աւուր ուխտ եդ աստուած ընդ ամենայն *ժողովրդեանն* խսրայէլի: - 524. Երրորդ՝ զի անդ ո՛չ կարէր արդարանալ զի հիւանդ էր սիրտն, ետ նոր օրէնս ի սիրտս մեր որ կարօ՛ղ է արդարացուցնել *գժողովուրդս* և զհեթանոսս: - 524. Եօթներորդ, Յաղագս առ հասարակ *ժողովրդոց*: - 525. Եւ վասն միաւորութեան. և թացեալ պատառացն. և թէ ո՛չ տան *ժողովրդեանն* յօրհնեալ մարմնոյն քրիստոսի: - 526. Եկեղեցի սուրբ նոր *ժողովուրդ* կոչեցաւ աստուծոյ. զի հաւատով արդարացաք և եղաք *ժողովուրդք* և ո՛չ ըստ հնոյն օրինօք: - 528. Վասն որոյ նոր օրհնութիւն նորածին աստուծոյ և տեառն մատուցանեմք նոր *ժողովուրդքս* աստուծոյ: - 528. Եւ հո՛մանուն է. զի եկեղեցի է շինեալն ի քարանց, և եկեղեցի է հաւատացեալ *ժողովուրդն*: - 532-533. Իսկ գրապան՝ վարդապետք և քահանայք պահապանք *ժողովրդեանն*. որք բոլորակի զգեստ կոչեցան քրիստոսի: - 534. Եւ գիտելի է, թէ քահանայ ոմն *գժողովուրդ* իւր կապիցէ, ա՛յլ քահանայ ո՛չ կարէ արձակել: - 541. Ասեմք առ այս, եթէ համակա՛րգ են քահանայք կամ եպիսկոպոսք որպէս առաքեալքն. այլ ունին զվիճակ և *ժողովուրդ* այլ և այլ: - 541. Իսկ քահանայք *ժողովրդեանն* նա կանոնս դնէ՝ որ խոստովանա հա՛յր է և գիտէ զկարն և զորքանն մեղաց: - 541-542. Ժողովեալ **խ** եպիսկոպոսաց և բազում վարդապետաց և *ժողովրդոց*. կողմնակալք և մարզպանք, մեծամեծօքն հայոց, և սպարապետն վարդան ազգայնօքն իւր: - 544. Նա՛խ՝ ի բաժակէն ո՛չ տալ *ժողովրդեանն*: - 553. Եւ ո՛չ միաբանին յայս տօնախմբութիւն ամենայն հաւատացելոց *ժողովուրդք*: - 554. Իսկ յետ օրինացն՝ անօրէնութիւն. որպէս որք յանապատի անդ անօրինեցաւ *ժողովուրդն*: - 555. ...որպէս առաւել է մեղք հրեշտակին քան զմարդոյն. վասն այն մին քահանայի մեղք՝ որ չափ բոլոր *ժողովրդեանն* է. ուստի յա՛յտ է ի պատարագէ հնոյն...: - 563. ...զի վասն բոլոր *ժողովրդեանն* մին էր զուարակ. և վասն միայն քահանայապետին մին. և զշնացեալ դուստր քահանային այրէին. և *գժողովրդեանն* քարկոծէին. և վա՜յ ինձ զի անձամբ զանձն իմ դատապարտեմ: - 563. Կարգն է՛ ի խորհուրդ խոհեմութեան և գիտութեան. զի իմաստութեամբ և գիտութեամբ սպասաւորեսցէ խորհրդոցն և խրատեալ ուսուսցէ *գժողովուրդն*: - 587. Նա՛խ՝ զի արիւնն հեղուկ նիւթ է. կամ ո՛չ է տալի որպէս այլ ազգք, և զրկել *գժողովուրդն* ի փրկական արենէն: - 598. Եւ կամ միաւորեալ ընդ մարմնոյն և տալ *ժողովրդեանն*: - 598. Ապա դուք բարւոք առնէք չտալ հաղորդ *ժողովրդեանն* զի մի՛ յուդա լիցին: - 598. Եւ սուրբն բարսեղ կեսարացի այսպէս բաշխէր *ժողովրդեանն*. որպէս գրեալ է ի պատմութեան նորին յունվարի **ա**: - 599. Եւ թէ հրէա ոմն ետես զի հում միս արիւնաթաթախ տայր *ժողովրդեանն*. և զղջացաւ անկաւ յոտս սրբոյն և մկրտեցաւ: - 599. ընդէ՞ր *գժողովուրդն* զրկէք ի հաղորդութենէ մարմնոյ և արեանն քրիստոսի. - 599. Թէ օրհնեալ է՝ ընդէ՞ր օրհնէք և թէ ոչ էր օրհնեալ՝ ընդէ՞ր տայք *ժողովրդեանն* իբր օրհնեալ մարմին և մոլորեցնէք զնոսա: - 600. Եւ թէ ասեն՝ բաւակա՛ն է *ժողովրդեանն* միայն մարմինն. - 600. Նա՛խ՝ եթէ ո՛չ զմարմինն տան *ժողովրդեանն*. այլ սոսկ հաց և գինի. զի մարմին քրիստոսի այն մինն է որ օրհնեցաւ որպէս ցուցաւ ի վերոյ: - 600. Դարձեալ ասեմք, ընդէ՞ր *ժողովրդեանն* հաւատ քարոզես, և դու անհաւատանաս ի ճաշակումն արեանն...: - 600. ...ապա յորժամ զրկես յարենէն *գժողովուրդն*, զրկես և ի նոցանէ որ կապեալ են ընդ արիւնն. այսինքն մարմինն և հոգին և աստուածութիւնն: - 600. Ապա ուրեմն ծածուկ և յայտնի զրկես *գժողովուրդն* ի հաղորդութենէն քրիստոսի. - 600. Զամենայն ճշմարտութեամբ հարցանէ քահանայն. և այնպէս որ մի՛ լիցի ի հարցանելն մեղք ուսուցանել *ժողովրդեանն*: - 601. Իսկ

յորժամ քահանայն լաւ քննէ զխղճմտանքն *ժողովրդեանն*. խորհի վասն ապաշխարութեանն թէ ո՞րպէս կարէ ապաշխարել...: - 601. ...որպէս ազգն Ֆռանկաց ունին զայսպիսի խոստովանութիւնս միշտ քահանայքն և *ժողովուրդքն*. և այսպիսիս անկատար առնու զթողութիւն. - 603. Սա՛ առնու զխաղաղութեան ողջոյնն և տայ *ժողովրդեանն*: - 606. Դպիրք եղեն առաքեալքն սպասաւորելով *ժողովրդեանն* հրամանաւ. և Սարկաւագունք՝ օծանելով զհիւանդս. հրաման տալով նոցա իւղ օրհնել յիւրմէ: - 607. Եւ սուրբ *ժողովուրդն* և երեխայն որ դեռևս մկրտի, զայսոսիկ նւիրեալք կոչէ: - 608. ...և իշխէ *ժողովրդեանն* ներքին դասուց որպէս ասացաք: - 608. Ոմանք ասեն եթէ՝ մովսէս զդատաւորսն ի դ բաժանեաց ամենայն *ժողովրդեանն*. որ էր **ժ**ապետ. յիսնապետ. **ճ**ապետ. և **ռ**ապետ: - 609. Երկրորդ ասեն, **դ** դասք էին իշխեցօղք *ժողովրդեանն*. այսինքն իշխանք ցեղիցն՝ և ծերքն՝ և դատաւորքն՝ և ատենադպիրքն: - 609. Մինն բնակութիւնն, և միւսն բնակեալն. որ է՛ *ժողովուրդ* և ժողովարան: - 613. ...և ապա լինի եկեղեցի և *ժողովուրդ* քրիստոսի. որպէս ասացաւ ի վերոյ **լա** գլուխն, **գ** համարն: - 614. Յօրինակ յեսուայ, որ տապանակաւն և քահանայիւք և *ժողովրդովք* զվեց օր շրջեցաւ լռութեամբ...: - 627. ...և յեօթներորդ օրն ի եօթն նուագին բարձրաձայն փողովք հնչեցին քահանայքն. և *ժողովուրդն* բարձրաձայն աղաղակեաց. յորմէ կործանեցաւ եօթնապատեան պարիսպն երիքովի: - 627. Եւ զփոխն առաւել բարձր, որ է՛ աղաղակ *ժողովրդեանն*: - 627. ...նոքա սիրեն զտէր. և զօրացեալ ի նմանէ՝ կոխեն զանմարմին թշնամին. որպէս *ժողովուրդն* զփարաւոն: - 629. Զի ի **դ** տեղուոջս յայս՝ պա՛րտ է *ժողովրդեանն* զգլուխս բանալ: - 635. ...այն է, որ հրամայեաց աստուած ահարոնի զգենուլ զպճղնաւորն և զվակասն և զխոյրն և զայլն, և ելանել առ *ժողովուրդն*: - 636. Տեսանէր *ժողովուրդն* ուր կայր աստուած, և ընդ ոտիւքն իբր զգործած աղիւս շափիւղայ. որ է՛ ակն պատւական. և աղիւսն խաչաձև է: - 639. Որպէս *ժողովուրդն* գնաց մերձ ի լեառնն, և մեզ պա՛րտ է յոտաց կալ և յառաջ գնալ և լսել: - 644. ...և ապա՛ դառնայ առ *ժողովուրդն*: - 644. Որպէս *ժողովուրդն* ասաց և երկիրպագին, նոյնպէս և մեք երկիրպագանեմք և համբուրեմք զաւետարանն...: - 644. Նա՛խ՝ գրակալն նշանակէ՛ զմովսէս. որ ընկալեալ զպատգամն աստուծոյ՝ խօսէր առ *ժողովուրդն*: - 646. Դարձեալ, նշանակէ *զժողովուրդն* աստուծոյ. յորոց ունկն ընթերցեալ լինին միշտ բանք աստուածայինք. հնգիւք զգայութեամբք հոգւոյ և մարմնոյ առ միմեանս յեռեալք: - 646. Ա՛րդ՝ եթէ ի հասարակ *ժողովրդենէ* իցէ ննջեցեալն, հանեն զհին հանդերձն և պատե՛ն սուրբ կտաւովք և զգլուխն փակեղամբ և վարշամակօք, և օղ յոտս: - 671. Եւ զհասարակ *ժողովուրդն* ի դասս հրեշտակաց ըստ սրբոյն դիոնիսեայ: - 672. Այսպէս է կարգ կատարման ննջեցելոց սրբոց քահանայից և կրօնաւորաց և առ հասարակ *ժողովրդոց*: - 674. ...և ապա՛ *ժողովուրդն* ծածկէ՛ հողով զմարմինն: - 676. Զոր բազում հարուածովք եհան *զժողովուրդն*. - 682. Ա՛րդ՝ փեսա քրիստոս է. և հարսն հաւատացեալ *ժողովուրդքն*: - 693. Չորրորդ, զի յայտնապէս զրկէ *զժողովուրդն* ի փրկութենէ, և ծուլութեամբ ընկղմէ ի մեղս. - 698. Եթէ ինքեամբ՝ եթէ ի ձեռն միքայէլի. ի մէջ վրանի և յաթոռն իւր սատակեսցի. և գլորեսցի մարմինն ակներև *ժողովրդեան* իւրոյ...: - 709. Պատասխանեն վարդապետք թէ՝ որպէս մովսէս թանձրամիտ *ժողովրդեանն* խսրայէլի պատմէր զլինելութիւն արարածոց ի **զ** օրս...: - 717. Նոյնպէս և եզեկիէլ թանձրամիտ *ժողովրդեանն* զյարութիւնն ննջեցելոցն ի բազումս բաժանեաց...: - 717

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ +** Զուր **բժ**ան կերպիւ ասի... Երկրորդ՝ *ժողովրդական*: - 209

**ԺՈՂՈՎՐԴԱՆՈՑ +** Եւ ի նազերեթացոց *ժողովրդանոցին* դպիր ցուցաւ ի կարդալն զեսայի մարգարէն՝ յոտն և բացաւ գլխով: - 606

**ԺՈՂՈՎՕՂ** (Սուրբ Գրքի մաս) - Վասն երրորդին ասէ *ժողովօղն* «շրջելով շրջի երկին». և թէ «ելանէ արեգակն և մտանէ՝ և ի տեղի իւր ձգի»: - 26. Զի և ներկայ ժամանակս որ յայտնի երևի, այսպէս անյայտ և անկայուն է. զի ո՛չ ոք կարէ զվայրկեան ժամանակի մի ստուգել որպէս ասէ *ժողովօղն* «յառաւօտէ՛ մինչև ցերեկոյ փոփոխի ժամանակն»:- 199. Նոյնպէս և մարդկային կենցաղս ամենեքեան հասարակաբար հաղորդին. և ամենեքեան առ հասարակ փոփոխին և կորուսանեն. որպէս ասէ *ժողովօղն* «ամենայն իրաց ժամանակ գոյ. և ժամանակաւ իւրեանց անցանեն ընդ հանուրք»: - 199. Եւ ոմանք **գռ** գիրք ասեն որպէս առակն և *ժողովօղն*. և **եռ** օրհնութիւնս որպէս երգ երգոցն. որպէս դաւթի **ճծ** սաղմոսն: - 441. Որ է՛ առակս: *ժողովօղ*: Երգ երգոց և Իմաստութիւնն: - 450. Չորս՝ *ժողովօղն*: - 451. ...որպէս ասէ *ժողովօղն*, «ազգ գայ և ազգ գնայ և երկիր յաւիտեան կայ»: - 727. Եւ *ժողովօղն*, «քաղցր է լոյս. և հեշտալի կենդանեաց աչաց արեգակն»: - 762. Երրորդն է յագեցումն առանց տաղտկանալոյ. *ժողովօղն*, «ո՛չ յագի ակն ի տեսութիւն, և ո՛չ ունկն ի լուր»: - 766

**ԺՈՅԺ (ՈՒՆԵՄ)** - Այս է թէ՝ եթէ ո՛չ *ունիցին ժոյժ* ընդ դէմ ցանկութեան, զգեցցին զօրինաւորն: - 331

**ԺՈՒԺԿԱԼ** + Ներքինն զարի և *ժուժկալ* վարս համբերութեամբ ստանալ զիոգիս: - 493

***ԺՈՒԺԿԱԼ ԼԻՆԵԼ +*** Իսկ յորժամ դառնամք ի մեղաց՝ յորդորէ՛ զմեզ ի ծածուկ իմաստիւքն իւրովք, *ժուժկալ լինել* ի փորձութիւնս և համբերել տանջանաց որով ինքն զփորձ էառ: - 48

**ԺՈՒԺԿԱԼԵՄ +** Զի մեք որ ի նեղութիւնս և ի փորձութիւնս *ժուժկալեմք* աղաչանօք. իսկ մեր մաղթանքն նմա՛ վերաբերի: - 48. Ասեմք եթէ յետ յղացման բանին յարգանդի կուսին օրինօք և ոչ օրինօք բնութեան, *ժուժկալեալ* ամսոց ըննից և աւուրց հնգից, ըստ հասարակաց ասեմ և անդրանկաց. ըստ հնգից յաւելեալ թւոց նախաստեղծին նախարարչութեան աւուրց: - 469. Այսմ փայտի ո՛ստ են գ կարգ յեկեղեցի աստուծոյ. այսինքն ամուսնացելոց, *ժուժկալողաց,* և կուսանաց: - 755. Երեք կարգս այսորիկ գուշակեին երեքումբք արամբքն զորս եզեկիէլ մարգարէացաւ. փրկելոցն Նոյիւ Յոբաւ և Դանիէլիւ...Յոբաւ՝ *ժուժկալողացն*: - 755

**ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ +** Նոյնպէս և առ մեզ՝ որք մրցին և ջանան ընդ դէմ բանսարկուին և մեռուցանեն զէ գլուխ նորա՝ նոքա զնոյն պսակն *ժուժկալութեամբ* և առաքինութեամբ ընդունին ի գլուխս իւրեանց յիւրաքանչիւրոցն զորս կոխեն և յաղթահարեն...: - 152. Նա՛խ՝ զի ի դնելն զնա ամբարիշտ՝ լուծցի *ժուժկալութիւն* նորա: - 325. Այլ մասունք ողջախոհութեան են երեք. այսինքն *ժուժկալութիւն*. անոխակալութիւն. և համեստութիւն: - 581. Ա՛րդ՝ *ժուժկալութիւն* է որով ամենայն ցանկութիւն ուղղի կառավարութեամբ խրատուն: - 581. Իսկ տեսակ ողջախոհութեան են գ. այսինքն զգաստութիւն. *ժուժկալութիւն*. և համեստութիւն: - 581. Իսկ *ժուժկալութիւնն* առ շօշափելիսն ըստ ծննդական զօրութեանն. ի յորում դնէ զեղանակն. զի առաւել յօժարի մարդն ի գոլ անհատութիւնն սննդականաւն, և ի գոլ տեսակին ծննդականաւն. և յօժարութիւնքս այս՝ զսպին զգաստութեամբ և *ժուժկալութեամբ*: - 581. Նաև բժշկութիւնն բազում անգամ *ժուժկալութիւն* ուսուցանէ ընդդէմ անչափութեան կերակրոց...: - 665

**ԺՊՐՀԻՄ +** Չորրորդ՝ տեսեալ զմովսէս առաւել փառաւորեալ, և յետ վախճանին թոյլ ետ ներողութիւնն աստուծոյ *ժպրհիլ* բանսարկուին ստգտանօք մեղաց. զի մի՛ տացեն նմա զգերազանց պատիւն աստուած կարծելով: - 410

**ԺՏԻՄ +** Նա՛խ՝ զի ուսուցէ, եթէ մի անգամն ո՛չ լսի՝ պա՛րտ է անձանձիր աղօթել. որպէս այրին որ *ժտելովն* էառ: - 444. ...զոր վասն յոյժ *ժտելոյն* յարուցեալ միտքն տացէ զխոստովանութիւն հաւատոյ սուրբ Երրորդութեանն. զոր յերիս նկանակս յառակեաց: - 697. Եւ ապա ի սէր և անձուկ *ժտելոյ* նորին, ապաստանեալ ի նոյն որ զօրացոյց զտկարս, ծեռն ի գործ արկեալ աւարտեցաւ բազում միջոցաւ. և փախստեամբ ի տեղիս. և մեծ ջանիւ փութացեալ: - 772

# Ի

**Ի ԲԱՑ +** Վեցերորդ՝ է՛ պատրուակ մեղացն. զի ոմանք չար գործով *ի բաց* մերժեն յինքեանց զլոյս արեգականն արդարութեան...: - 32. Եւ զի եղեր զկամքն միջոց, *ի բա՛ց* պարսպեցար յողորմութեանց նորին առ իւր արարածքս. զի եղեր ա՛յլ իմն զկամիլն և զկամքն: - 36. Եւ դարձեալ *ի բաց* պատառես զէութիւնն. որպէս թէ կէսն կայր՝ և զկիսոյն լինիլն կամեցաւ: - 36. Առարկութիւնս այս յայտնապէս զորդի կամ զհայր *ի բա՛ց* մերժէ յաստուածութենէն. ճարտա՛ր իմա, ո՛չ ասէ զհօրէ ոչ գոլ աստուած. այլ զանծնելութենէն: - 38. Չորրորդ՝ զի ամենայն իր յայլմէ ընկալեալն՝ լինի և *ի բաց* ընկենլի: - 66. Իսկ թէ և նա արտաքուստ ունի զորդիութիւն և զայլսն, գոյ կասկած երբեմն *ի բաց* մերժել զոր էառն: - 66. Ա՛րդ եթէ է՛ այլ որդի և եղև աթոռակից հօր, ուրեմն *ի բաց* էհան զբանն ի նստելոյն ընդ աջմէ հօր որ է սեփհական նմա և վայելուչ հօր՝ լինիլ աթոռակից և գահակից: - 67. Զի՞նչ է որ ասէ մեծն իգնատիոս վասն արեգական՝ թէ յամենայն օր *ի բաց* դնէ զլոյսն և զջերմութիւն, և միւս անգամ յարփոյն առնու: - 186. *Ի բաց* դնելն կրկին է. մին ըստ տեսակի, և միւսն ներգործութեամբ: - 186. Իններորդ՝ ընդ փայլիլն և *ի բաց* փախչի: - 207. Այլ այժմ ի ձեռն արուեստից ստացեալ զզէնս, յորժամ պիտոյանայ՝ առնու և ի գործ ածէ. և յորժամ կամի՝ *ի բաց* դնէ և հանգչի: - 217. Ասեմք առ այս թէ, օն *ի բա՛ց* տար ի մտաց քոց զհեթանոսական կարծիս. զի ո՛չ է հոգի յառաջ քան զմարմին. և ո՛չ մարմին նախ քան զհոգի որպէս ի սկիզբն ասացաք: - 260. Դարձեալ՝ զբանջարն ընտրելով ուտեմք. այս է զի զվնասակարն և զդառն և զժահահոտն *ի բաց* ձգեմք և զչորրորդ մասն ուտեմք: - 295. Ութերորդ՝ զխաբէութիւնս որ ճաշակելեօք և տեսանելեօք է՝ *ի բաց* մերժել, և զամենայն զգայութեանցս ընտրողութիւն: - 281. Վեցերորդ՝ ձեռն հօր է՛ միածին որդին որ ել ի ծոցոյ հօր և էառ զօձաձև բնութիւնս մեր. և դարձեալ ել առ հայր, ի նոյն բնութենէն ո՛չ կացեալ *ի բաց*: - 333. Եւ զմորթն *ի բաց* հանել. զծածկոյթ մեղացն: - 360. Եւ զայս ցուցանէ զմորթն *ի բաց* հանելն և ապա՛ պատարագել: - 363. Զի՞նչ է **բ** հաւն ի սրբիլ բորոտին. մին զենեալ, և միւսն արեամբն թաթաւեալ և *ի բաց* թողեալ: - 368. Եւ ո՛չ զկորիզն, զի *ի բաց* ընկենլի՛ է: - 389. Տասներորդ՝ ի գարեգին. որ է՛ լեառն թլփատութեան. զի ելեալ ի լեառն հաւատոց՝ զաւելորդ մեղացն *ի բաց* ընկեսցեն, և զօրհնութիւնն աստուծոյ առցեն: - 402. Ասա՛ թէ՝ քահանայիցն հրամայեաց *ի բաց* կալ յամուսնութենէ յորժամ մտանէին ի տաճարն և ի խորանն. և յորժամ լսէին զօրէնս աստուծոյ զօրեայ սրբեցան: - 404. Եւ սոքա են հարճք որ կարեն *ի բաց* հանիլ ի ժառանգութենէ. զի սէրն է կապ և լար շարոցին որ ո՛չ թողու ցրուիլ: - 440. Եւ հրաւիրակք են անուանեալ քրիստոնեայք. որք չունին զգործս՝ նոքա փութով հանին *ի բաց*: - 440. Ո՞ր քան առաւել մերս անկրթութեան մտօք և իրօք պարտ էր հրաժարիլ և *ի բաց* փախչիլ որպէս խռիւ ի հրոյ և զաչացու ի լուսոյ: - 456. Վասն թշուառականին *ի բաց* մերժի երջանկութիւնն: - 491. Այսպէս և քրիստոս զմահ կրեաց և *ի բաց* ջնջեաց զմեղս և զապականութիւն ի մերմէ բնութենէս: - 497. Երկոտասաներորդ, (մի՛ մերձենար,) եցոյց թէ՝ որք յետ յարութեանն և վերանալոյն յերկինս կամին մերձենալ ի մարմին նորա առաքինութեամբ և սրբութեամբ, զախտս հոգւոց *ի բա՛ց* ընկեսցեն և մի ունայնապէս մերձեսցին ի նա: - 518. Վրէժխնդրութիւն է ջատագով լինիլ. որով բռնութիւն և անիրաւութիւն և ամենայն վնասակար *ի բաց* մերժի: - 579. Եւ յայնմ ձևական բանիցն ո՛չ է պարտ *ի բաց* թողուլ. և ո՛չ այլ բան ի ներս խառնել: - 588. ...որպէս որք մահկանացու ասեն զհոգին. և այս խոտելի է *ի բաց*: - 687. յայնժամ *ի բաց* կացցէ ի նմանէ հրեշտակն...: - 707. ...և տան *ի բաց* զոր ունին յաւանդի: - 714. Այն է ծալիլ և գալարիլ օդոյդ երկնի. և ո՛չ թէ հաստատութիւնն վերին էութեամբ *ի բաց* բառնի ըստ ոմանց: - 729. Սա՛ է մայր մեր եկեղեցի որ հոգևոր որդիս աստուծոյ օրըստօրէ ծնանի. որ հասեալ ժառանգութեանն. *ի բաց* տանելով զաղախինն և զորդի նորա: - 756. Վեցերորդն է անչարչարութիւնն. առ որ անմահութիւնն վերաբերի. եսայի, (ո՛չ անկցի ի վերայ արև և ոչ տօթ ինչ. և *ի բաց* ընկեսցէ զմահ ի յաւիտեան:) - 767. Զհոյ գիրն ա՛ռ *ի բաց*, աւատ ասի. ամենայնի դէպ ասեն թէ աւատ կայ: - 769. Նա՛խ՝ նշանակէ՛ ի մեզ զջերմեռանդ բորբոք այրեցման սրտին. որ *ի բա՛ց* հանէ զօձիսն և արտաււէ...: - 670. Իսկ որք զմի քանքար հաւատոյ կամ զմկրտութեանն շնորհի *ի բաց* կորուսանեն, ո՛չ զկնիքն խորհրդապէս, այլ զարժանն վարձու իրողապէս: - 783. Եւ է՛ այս *ի բաց* դնելի ընտրութեանն կամօք: - 783

**ԻԲՐ +** Իսկ ոմանք յաւելուն յևս ամբարշտութիւն. *իբր* փախչելով ի ձախոյն՝ խոտորին յաջ կողմն: - 13. Ասեմք նախ եթէ՝ չարն ո՛չ է յաստուծոյ որպէս բարին. զի բարին ըստ կամա՛ց է. իսկ չարն թոյլ տալով է. և ա՛յլ է կամացն որ յօժարութեամբ է, և այլ է թոյլ տալովն որ *իբր* ի յո՛չ կամացէ: - 17. Չորրորդ՝ վասն ոչ ախորժողաց՝ *իբր* ոչ կարաց անդ նշանս առնել վասն անհաւատութեանց նոցա: - 44. Այսոքիկ *իբր*

առնչակա՛ն են և ո՛չ առանձին բնութեանն: - 49. Իսկ որդի մարդոյ կոչի, զի էր ի յարենէն ի զանգւածոյն ադամայ *հբր* ի նախահօրէ՛. և ի կուսէն՝ *հբր* ի մօրէ՛: - 50. Եւ դարձեալ՝ հոգին որ ի հօրէ ելանէ և կայանայ յորդի. և ի ձեռն որդւոյ *հբր* զհայրական բարի ամենայն գոյիցս բաշխի երկնաւորաց և երկրաւորաց. նախ քան զմարմնանալն՝ և ի մարդեղութեանն: - 61. Դարձեալ հոգին սուրբ բղխէ ի հօրէ *հբր* ջերմութիւն ի հրոյ: - 64. Ապա ուրեմն որդի և հոգին սուրբ ի հօրէ ելանեն *հբր* **բ** շառաւիղ. և ըստ այսմ ո՛չ ելանէ մի ի միւսոյն: - 65. Եւ հասանէ *հբր* յակն առ որդի. և յորդւոյ առ մեզ հեղու: - 65. Դարձեալ՝ մի բնութիւն ասաց միւս եւտիքէս. ոչինչ առեալ մարմին ի կուսէն. այլ *հբր* ընդ խողովակ անցեալ *հբր* ի դարիճակի. միայն զձևն ի նմանէ ձևագրեալ: - 81-82. Իսկ թէ յայնցանէ փախչիք *հբր* յայտնապէս որոշումն՝ և այլինն պատճառաւ որպէս գառնենեաւ ծածկէք զգայլենիս ձեր: - 89. Զի առ աստուած՝ ո՛չէ սոսկ տեսութիւն արտաքոյ. այլ յինքն տեսանելով զյարացոյցն. և զմեզ ի յարացոյցն մեր *հբր* լինիլ մեզ նախ ի յաստուած, և ապա ի յէութեան մերում. և ո՛չ որպէս փոփոխումն ինչ ի բարի կամացն: - 112. Երբեմն յարացոյց. *հբր* միշտ ի տեսութիւնն աստուծոյ: - 112. Երբեմն նախագաղափար. *հբր* նախօրինակ. և մեք պատկեր և նմանութիւն նորին: - 112. ...**նախ սահմանեաց զմեզ աստուած ի կամս իւր *հբր* անփոփոխելի սահմանադրութիւն**: - 112. Նոյն է և գիր դպրութիւն կենաց. *հբր* անջնջելի դարձումն ի նախասահմանութիւնն: - 112. Դարձեալ անեղ ասի աստուած՝ *հբր* պատճառ անեղից. և նախ քան զամենայն անեղ. և կատարումն. և բովանդակութիւն ամենայն անեղի: - 113. Յամանգամայն, այս է՝ զանցեալն և զհանդերձեալն *հբր* ներկայ տեսանէ և ներկայապէս. զի յինքն տեսանէ զամենայն. և ինքն ներկա՛յ է ինքեան: - 118. Այս է յղացմամբ յարգանդի և ծննդեամբ. և քարոզութեամբ. և մահւամբ. և յարութեամբն և համբարձմամբն առ հայր՝ *հբր* զպսակ տարւոյ կատարեալ բնութեամբ մեր՝ ի ներքին կողմն վարագուրին մտեալ: - 126. Նոյնպէս իմանալի արեգակն քրիստոս ի հայրական ծոցոյ անհա՛ս է բնութեամբ՝ և ի սրբոյ կուսէն *հբր* ի յարևելից ծագեալ. և ջերմ սիրով ի մարդկային ազգս որպէս յարևմուտս խոնարհեալ. և զսառուցեալ բնութիւնս պատեալ. և ի գերեզմանէն ի բարձունս դարձեալ յարևելս առ հայր ամբարձեալ: - 126. **Դարձեալ՝ նախանձո՛տ է և նախանձելի. այսինքն նախանձո՛տ է *հբր* զսիրեցող. և նախանձելի *հբր* զսիրելի. զի շարժէ՛ զմեզ ի սէր իւր:** - 128. Դարձեալ՝ յառաջինսն տիրէ աստուած *հբր* մեծութիւն. ի յերկրորդսն կառավարէ *հբր* զօրութիւն. ի յերրորդսն պարսպէ՛ *հբր* փրկութիւն: - 135. Նախ՝ զի պետութիւնք պատշաճին առ հայր. և հրեշտակապետքն առ որդի *հբր* յերկուց միացեալ. և հրեշտակքն ի դէմս հոգւոյն *հբր* նախ եկաւորեալք յամենայն ուրեք, և ապա յորդի և ի հայր բնակեալ: - 136. **Դարձեալ, ի յառաջինսն կառավարէ՛ աստուած *հբր* նախապետութիւն:** - 136. Ի յերրորդսն սնուցանէ *հբր* ազդօղ: - 136. Երկրորդ՝ ամենեքեան հրեշտակք կոչին. *հբր* միմեանց ուսուցիչք և յայտնօղք: - 137. Ամպ՝ զբարձրութիւնն նշանակէ ի վերայ այլոց. և Դարձեալ՝ ամպ զմարգարէսն. *հբր* հրամանատո՛ւ լինիլ մարգարէիցն: - 148. Զի թէ այնպիսիք էին որ ո՛չ կարէին մեղանչել՝ *հբր* կապեալք լինէին և բռնադատեալք, և վարձս ո՛չ առնուին: - 149. Իսկ առ չարն յո՛յժ ազդողակա՛նք են. այլ ո՛չ այնքան որչափ և կամին. այլ որքան *հբր* ի հրեշտակաց թոյլ տացի: - 149. Զոր եկեալ տէրն անմեղ և անապական մարմնովն նահանջեաց զմեղս, և զարդարութիւն սփռեաց ի վերայ մարդկան. և դատապարտեաց զսատանայ *հբր* զդաւաճանօղ մարդկան և կոխան արար ի ներքոյ մարդկան: - 153. Այլ և ո՛չ տեղի պատահական. թէպէտ ի նշան պատւոյ ասին յերկինս. այլ ոչ *հբր* ի մարմնական տեղւոջ: - 174. Նախ՝ զի անուամբն գոյանայ իրն ի միտս մեր. և անանունն *հբր* յանգոյս է համարեալ մեզ: - 219. Սիրտն իշխա՛ն է անձինն. յորժամ երկնչի՝ զարիւնն առ ինքն ժողովէ *հբր* զօրք առ թագաւորն. և մնայ մորթն բնական գունովն դեղին: - 245. **Դարձեալ՝ իմաստութիւնն պատշաճի հօր ըստ կարողութեան. և գիտութիւնն որդոյ *հբր* բան. և հանճարն հոգւոյն բղխման:** - 270. Վասն որոյ չարքն անամօթ կոչին. *հբր* թողեալ զպատիւ մարդոյն՝ և անասնոցն նմանեալ: - 274. Այլ կամ *հբր* զհրեշտակս, կամ որպէս ի միոյ լուսոյ բազումք, կամ կուսութեամբ ծնունդ. որպէս սուրբ կոյսն մարիամ աստուածածին սրբութեամբ և կուսութեամբ ծնեալ փոխեաց զկարգ բնութեան ծննդեանս որ ի սերմանէ առն և կնոջ. զի սա՛ ծնունդ միայն ի մօրէ՛: - 280. Այլք եղջիւրս ասեն ունել ի ճակատն որ *հբր* զփող գոչէր թէ՝ գա՛յ ահա կայեն եղբայրասպանն: - 287. Մետասաներորդ՝ յառնելոյն կոչի առիւծ. *հբր* առից գնացից անհոգ յայլմէ: - 315. Նա՛խ՝ զի աստուծոյ է մարմին՝ կոչի տաճար *հբր* կարօղ սրբութեանց. և դարձեալ զի անշփոթ է միաւորեալ՝ կոչի տաճար: - 319. Երրորդ՝ էն՝ զմիշտն ցուցանէ. *հբր* անսկիզբն և անվախճան: - 332. Տասներորդ՝ մահ անդրանկացն. *հբր* ի փոքունցն կարգաւ ի խստագոյնն ելեալ: - 333. Չորրորդ՝ խնայեաց զնոսա *հբր* ի մարդիկ զի զղջասցեն փոքր խրատովն և ի մեծ պատուհասէն զերծանիցին. այլ նոքա խստացան մինչև զամենայնն կրեցին: - 333. Վասն է՞ր եզական դնէ զօրէնս *հբր*

առ մի դէմս ասելով՝ «մի՛ սպանաներ և այլն»: - 340. *Իբր*՝ քահանայապետն գլուխ գոլով՝ առեալ զբոլոր արարածս նուիրէ աստուծոյ: - 348. Մին վասն հաւատոյ օրինաց. և մին վասն հոգւոյս *իբր* ահարօնի. և մին վասն մարմնոյս որպէս ժողովրդեանն: - 353. Առաջին, զի նախ ձայնն հասանէ, և ապա՛ բանն *իբր* կարապետ եղեալ բանին: - 353. Որ յետ խոստովանութեան դառնայ ի նոյն մեղս, *իբր* շուն դառնայ ի փըսխած իւր. և սա՛ ևս այրի հրով. զի զառաջինն ևս խնդրեսցեն ասէ առաքեալն: - 367. Եօթներորդ՝ երկին երկաթի և երկիր պղնձի. *իբր* չորացեալ երաշտութեամբ որպէս եղիայիւ: - 376. Կամ ո՛չ լսել աղաղակի մերոյ. *իբր* երկաթի երկինք ընդ մէջ գոլով: - 376. Կամ չողորմել կսկծողաց. *իբր* պղնձի մարմին զգեցողաց: - 376. Ձայն ցուցանէ *իբր* միշտ թշնամի են մեր և հակառակ: - 394. Այս է՝ ի միոյ բարի էութենէն աստուծոյ յառաջ գայ արարչական և արքունական զօրութիւն. *իբր* աջ և ահեակ ձեռն: - 403. Նա՛խ՝ շնորհակալութիւն է և գոհութիւն երախտեացն աստուծոյ տրիտուր. ո՛չ *իբր* կարօտի, այլ անկարօտի որպէս աստուծոյ: - 406. Նշանակ եօթնարփեան հոգւոյն ընկալեալ անկարօտաբար *իբր* ի գլուխ տէր մեր, և պարգևեալ անդամոց իւրոց: - 422. Եւ տէրն զոսոխն մեր սատանայ *իբր* զառիւծ պատառօղ՝ տարածմամբ ձեռաց ի խաչին սատակեաց: - 422. Երրորդ՝ զի յառաջ քան զճենճերիլն ուտէին. *իբր* յառաջ քան զժամ պատարագին: - 425. Երկրորդ՝ կոչի դաւիթ որ է՛ սիրեցեալ և բաւական ձեռօք. և տէր մեր սիրեցեալ ի հօրէ և ի մարդկանէ *իբր* զորդիս մի եղջերոյ. և նա՛ է բաւական յամենայն գործս և ի պարգևս: - 435. Նա՛խ՝ *իբր* զթագաւոր վերացեալ կառօք և զօրօք: - 445. *Իբր* լինի **լգ** հին կտակարանք և **լգ** նորս. բովանդակն **հբ**: - 451. Չորրորդ՝ զի մի՛ վատահամբաւ լիցի ընդ ծնանիլն *իբր* ոչ ունելով այր: - 461. Հինգերորդ՝ զի մի՛ դատապարտեսցի *իբր* անժուժկալ. զի էր ի քահանայական ցեղէն. և այսպիսիքս այրեալ լինէին. իսկ այլ շնացօղք քարկոծեալ: - 461. Երրորդ՝ կոչի անդրանիկ ըստ հոգւոյն շնորհաց. զոր նախ ընկալաւ *իբր* գլուխ՝ և եհեղ յանդամքս իւր: - 473. Այսպէս թէ ուրեք մարդ միայն անուանի քրիստոս «զճշմարութիւն խօսեալ». և կամ՝ «աստուած կնքեալ». ո՛չ ինչ ուրէք վնասէ զմիաւորութիւնն *իբր* մարդ սոսկ կամ աստուած միայն. այլ աստուած համանգամայն և մարդ խոստովանի միացեալ: - 477. Ասեն վարդապետք եթէ՝ որպէս մարգարէքն և առաքեալքն զխօսեցեալ բանս իւրեանց ի ձեռս ունին *իբր* պատգամաբեր յաստուծոյ առ մարդիկ: - 481. Նոյնպէս և քրիստոսի մինչ զտղայական հասակն նկարեն, փաթութեալ հանեն զթուղթն ի ձեռն. *իբր* ի հրէից ծնեալ զամենայն ինչ ըստ օրինացն առնել: - 481. Արդ զապարանքն պիղատոսի *իբր* զմի տեղի առեալ. թէպէտ կրկնեալ եղև. և խաչելութեանն տեղի լինի **գ**. և գերեզմանն յորում հանգեաւ է: - 493. Յայնժամ փախուցեալ սատանայ *իբր* զապստամբ ծառայ. և մտեալ յորջն դժոխոց կարծէր ամրանալ անդ և ունել զհոգիսն: - 503. Եօթներորդ, կամ թէ եգիտ ի նա երկեւան ինչ թերութեան վասն յարութեանն. *իբր* զի ասէ յայսմ գիշերի մերձեցայք յոտս իմ և ո՛չ հաւատացեր. վասն այն կրկին անգամ ո՛չ հրամայէ մերձենալ: - 517. Իսկ որ ասէ սուրբն ստեփաննոս «յիսուս կայ ընդ աջմէ աստուծոյ», կալն նշանակէ *իբր* պատերազմակից և յօգնականութիւն գալ որք նահատակին վասն անուան նորա: - 521. Նա՛խ՝ ի կողմանէ պարգևողին. զի յորժամ քրիստոս նստեալ լինէր ըստ մարմնոյ ընդ աջմէ հօր *իբր* զթագաւոր փառաց յաթոռ թագաւորութեան իւրոյ, յայնժամ մեծագոյն լինէր պարգևք հոգւոյն տուեալ ի փառաւոր քրիստոսէ աստուծոյ: - 521. Յետ այսորիկ հարցանելի՛ է ի նոր օրինաց և յեկեղեցւոյ կարգաւորապէս ընդ մարդեղութեան բանին յարմարեալ. *իբր* պատճառելիք առ պատճառ նորին հետևեալ և շարադասեալ: - 528. *Իբր* զի հոմանուն է եկեղեցի և ունի **դ** նշանակութիւնս. որ է՛ ստորինս. և վերինն եկեղեցի. և շինեալք ի մէնջ. և հաւատն ժողովարան մեր: - 534. Հինգերորդ՝ առաջին առաքեալքն *իբր* կատարումն բանից. երկրորդ մարգարէք նախաձայնք նոցին. երրորդ վարդապետք մեկնիչք և թարգմանք երկուցն քարոզութեանց: - 535. Ո՞չ ապաքէն մովսէս ի հինն որոշեաց զսուրբս և անսուրբս. մանաւանդ թէ յաւուրս նոյի գոյր ընտրութիւնս. այսպէս ցուցաւ և մեզ պահելի *իբր* զբնական օրէնս. այլ սոցա ոչինչ է պիղծ ի կենդանեաց: - 552. Եւ ոմանք ոչ ինչ համարին զյանցանս մտաց. և ո՛չ դնեն ի կարգս մեղաց. օրինակ տալով *իբր* զդատարկ սեղան ոչ ինչ կերակրել. և *իբր* զպտուղ ծառոց տեսութեամբ միայն վայելել: - 555. Այլ ի մարմինն նիւթօրէն և սկզբնաբար. իսկ ի հոգին տեսակաբար և *իբր* նենթակայոջ: - 567. Եւ կոչի ներելի, *իբր* ներելի և թողլի. զի ակամայ և անգիտութեամբ հանդիպի: - 567. Հաւատն ի յո՛ր մասն է հոգւոյն *իբր* ի յենթակայ: - 572. Իսկ թէ նկատիցեմք առ այն որք են *իբր* արմատս հաւատալեաց, յայնժամ են չորեքտասան աստիճանք: - 572. Թէ օրհնեալ է՝ ընդէ՞ր օրհնէք և թէ ոչ էր օրհնեալ՝ ընդէ՞ր տայք ժողովրդեանն *իբր* օրհնեալ մարմին և մոլորեցնէք զնոսա: - 600. Երկրորդ յայտնել ասի. *իբր* չէ ծածուկ այլ յայտնի է աստուածութիւն նորա յարարածս իւր: - 624. Երրորդ խոստովանութիւն և վկայութիւն է. *իբր* բարի՛ է. երջանի՛կ է. անմա՛հ է բնութեամբ և այլն. որպէս ասացաւ

ի վերոյ: - 624. Նա՛խ` *իբր* գոհութիւն և շնորհակալութիւն աստուծոյ որ զօրացոյց զմեզ: - 627. Եւ ապա՛ *իբր* զհայր մեր որ յերկինս առ հայր: - 633. Եւ ապա՛ *իբր* զկնիք զբաշխումն շնորհաց ի հոգւոյն սրբոյ աղերսեմք: - 633. ...և իւրաքանչիւր ոք լոյս և հուր վառեալ` նմա՛ նուիրէին զպաշտօնն *իբր* արարչի...: - 638. Տեսանէր ժողովուրդն ուր կայր աստուած, և ընդ ոտիւքն *իբր* զգործած աղիւս շափիւղայ. որ է՛ ակն պատւական. և աղիւսն խաչաձև է: - 639. Ասեմք նա՛խ` թէ մարգարէքն *իբր* յառաջասաց` պատմեցին զմարդեղութիւն բանին և զփրկութիւն մարդկան: - 643. Իսկ առաքեալքն *իբր* ականատեսք վկայեցին: - 643. Յայս միտս սարկաւագն նախ առաջի քահանային ընթեռնու *իբր* ի նմանէ՛ ուսեալ...: - 644. Յորժամ սրբազան և մաքուր հոգին հասանէ ի վախճան` ուրախութեամբ ցնծայ *իբր* ի հանդիսից զերծեալ և ի պսակն ընթացեալ. և որպէս յանփոփոխ կեանքն հետևեալ: - 668. Իսկ` նախ ի յարնելս, ցուցանէ զմիածինն որ *իբր* յարևելից ի ծոցոյ հօր ծագեցաւ մեզ արեգակն արդարութեան...: - 673. Նոյնպէս յորժամ ի գերեզման դնեն զմարմինն, *իբր* յաշխարհի ծովէ ելեալ զվառն խոնարհեցուցանեն: - 676. ...և պահեմք զմարմինն *իբր* զգանձ պատւական: - 677. Իսկ դիրք կոչի. զի ի նմա՛ դնի մարմինն *իբր* ի յանօթ ինչ: - 678. Իսկ տէրն մեր անմեղ մարմնովն դատապարտեաց զնա *իբր* զպատճառ մեղաց...: - 705. Իսկ ի կատարածի ցրտացեալ լինին մարդիկ ի սիրոյն աստուծոյ *իբր* ծերացեալ աշխարհի. վասն այն ջերմ հրով պատժեսցին: - 731. Դարձեալ յուշ առնէ մարդոյ զչարչարանքն քրիստոսի. և խնդրեսցի ի նոցանէ մահն քրիստոսի *իբր* զգին որ տըւեալ է նոցա, և նոքա յափշտակեցին զինքեանս ի նմանէ: - 732. Նստի քրիստոս ի բարձրագոյն աթոռ ի վերայ օդոյդ, և սուրբքն ընդ աջմէ. այսինքն ի վեր ի փառս ընդ նմա ի վերայ օդոյդ. հաւատոյ և գործոյ թևօ՛քն բարձրացեալ *իբր* զարծուի: - 738. Երկրորդ, աթոռակիցքն քրիստոսի. որպէս առաքեալքն և մարգարէք և կատարեալքն դատեն զմեղաւորս *իբր* տեղեակք օրինացն աստուծոյ: - 738. Նա՛խ` զի առ նոսա միաւորեալ է քրիստոս *իբր* տէր ընդ ծառայս. իսկ միաւորի ընդ եկեղեցի *իբր* փեսայ ընդ հարսին. և գլուխ ընդ անդամոց: - 757. Եօթներորդ, որ ի տղայութեանն հասակէ՛ կան յաստուածպաշտութիւն, *իբր* զխոտս դալարի պտղաբերեն զհարիւրաւորն: - 757. *Իբր* ո՛չ այսպէս զոր երևի տեսանելոց եմք ասէ: - 759. Երրորդ այնու` զի մեղքն որ յոյժ վտանգեաց զմարդիկ, եղիցի փակեալ ի դժոխս զկնի աւուրն դատաստանի. զի եղիցի ի դժոխս *իբր* ի տեղւոջ իւրում. զի ո՛չ կարասցէ մնալ. ո՛չ յերկինս և ո՛չ յերկրի. այլ իջանէ ի դժոխս ներքինս: - 764. Եւ թէ այս և թէ այն, դու ընկա՛լ զխնդիր մտաց քոց առանց ամենայն երկբայութեանց. *իբր* ի միոյ կենդանի աղբերէ կենաց ուռճալրացեալ և պտղաւէտեալ: - 772. Ո՛չ *իբր* կարօտի բազմաց բաշխողի. կամ փորձողի փորձոյ սիրալի: - 773. Այսպէս սատանայ է մեղադրելի *իբր* պատճառ և գտակ չարեաց մարդկայինս բնութեան և ո՛չ ադամ: - 777. Զի որպէս քրիստոս չարչարանօքն փրկեաց զեկեղեցի և հարսնացոյց, նոյն և առաքեալն քարոզութեամբ *իբր* զկոյս մի սուրբ յանդիման արար փեսային քրիստոսի: - 781. *Իբր* ասութիւն է այլ ո՛չ հաւանութիւն: - 787. Որ և մեր նստելով *իբր* ի մետաղս կամաւոր դիպահոջ` շահապօնս կոչեցեալ ամրոցի: - 788. Եւ այսպէս տրտմեալ սըգով և թախծեալ մտօք ընծայեցի տըխեղծ մատամբ զխունախոյ նուէրս բանի, *իբր* զլոմայս այրւոյն` քումդ գանձարանի: - 789

**ԻԲՐԵՒ +** Իններորդ` օգոստոս կայսր. որ *իբրև* զերկաթ մանրեսցէ զամենեսին: - 29. Այլ ա՛յս է, Զի ճանաչէ՛ *իբրև* զաստուած. այլ *իբրև* զմարդ անգիտնայ. զի բացարձա՛կ է որդւոյն անունն. այսինքն անորոշակի. զի որոյ և տացես թէ բանին և թէ մարմնոյն` կարէ՛ ասիլ: - 48. Դարձեալ` հոգին սուրբ ելանէ *իբրև* զարտաշնչեալ և բղխեալ: - 63. Դարձեալ` հոգին ելանէ *իբրև* զշաղկապ և միաւորիչ. մի *իբրև* զմէջ որ շաղկապէ՛ զերկու եզերն. և միւս *իբրև* երեք` և եզր: - 64. Ա՛րդ` եթէ ելանէ ի հօրէ և յորդւոյ, լինի *իբրև* եզր և **գ**. և ո՛չ *իբրև* զմիջին: - 64. Դարձեալ` զի ասէ թէ, ա՛յս միաւորութիւնս որ ի քրիստոս է, ո՛չ է *իբրև* զայն որ յԵրրորդութիւնն է. զի անդ միութիւն է, բայց բաժանումն անձանց: - 80. Ի յերկրորդսն յայտնի *իբրև* զլոյս: - 136. Տասներորդ` զի չարն իւրովի ատեաց զնոսա և հեռացաւ, և *իբրև* զմրուր յերկիրս զետեղեցաւ: - 139. Ո՛չ մի ժամանակս կատարեալ. քանզի «ի ճշմարտութեան ո՛չ եկաց» ասէ տէրն. այլ վաղվաղակի *իբրև* ստեղծաւ` անկաւ և ո՛չ յամեաց. և ո՛չ ի յաւիտենական քաղցրութենէն ճաշակեաց. վասն որոյ ո՛չ երանեցաւ և ո՛չ մնաց ի բարութեան: - 147. Չորրորդ` նշանակէ՛ զփութանցութիւն աւուրցս մեր. զի ամենայն ժամանակք մեր անցանեն *իբրև* զմի օր անզգայաբար: - 193. Նոյն և սա՛ գոլորշի՛ է վերացեալ հողմոց. և մերձեցեալ ի հուռն` վառի՛ ի նմանէ. և բռնութեամբ հողմոյն վարեալ երևի *իբրև* զթռիչ աստղ և փութով շիջանի: - 203. Եւ դարձեալ ի վեր քարշեալ ժողովին ի ծայրս խոտոց. և ծանրացեալ կախին *իբրև* զմարգարիտս: - 204-205. Եւ ի վախճանի եղև զգալի բանականն *իբրև* մատնահար և կնիք արարածոց. ունելով զիմացումն և զզգացումն. զի իմաստութեամբն ծանիցէ զիմաստութիւն արարչին. և զգալովն զամենակարօղ զօրութիւն նորա՛: - 231. Հինգերորդ` զի մարդն

իշխան և տէր է ամենայն կենդանեաց. վասն որոյ ամենայն կենդանիք գլխակո՛ր են *իբրև* զծառայ և հնազանդ. և մարդն ուղղաձև *իբրև* ազատ և թագաւոր: - 233. Եւ որք զայս ասեն՝ հետևին մոլորութեանցն պղատոնի մարմնափոփոխութեանցն. որ ասէ քաղաք ի յերկինս. և հոգիքն անդ ժողովեալ *իբրև* զզօր և զդասս: - 252. Վեցերորդ՝ ո՛չ առնու ի գլխոյն և ո՛չ յոտիցն. այլ ի միջացն. զի խրատէ՛ զմարդիկ ո՛չ հաւասար գլխոյն պատուել զկինն, և ո՛չ անարգել *իբրև* զոտք. այլ միջակ պատուով չափաւորել զնա: - 276. Եօթանասունք, Մարգարէ *իբրև* զիս: - 285. Իսկ զի ասէ «երերեալ՝» յա՛յտ է *իբրև* զծառ մարմնովն: - 287. Եւ տատանեալ *իբրև* զծով ալեկոծեալ միշտ խորհրդովն: - 287. Այլ գիտելի է, զի մեղքն երբեմն յերկարէ՛ զկեանս՝ զի չարչարեսցի *իբրև* զկայեն: - 292. Հինգերորդ՝ որ ասացաւ լինիլ զաւակաց նորա *իբրև* զաստեղս՝ և ոչ երկմտեաց: - 304. Հինգերորդ, մա՛հ անասնոց. քանզի ե զգայարանօք *իբրև* զանասունս եղեն և կորուսին յինքեանց զբանն: - 334. Վասն որոյ և յաւուրս զաքարիայի հօրն յովհաննու յորժամ յամեաց ի տաճարին և ել, ակնունէր ժողովուրդն տեսանել զա՛կնն և տե՛սին լուսափայլ սպիտակացեալ *իբրև* զձիւն. և լի՛ եղեն խնդութեամբ. զի երկնաւոր արքայութեան նշոյլքն պայծառացուցին զակն: - 349. Երրորդ, դարձեալ խ պահեաց և էառ զկրկին տախտակն գրեալ մատամբն աստուծոյ *իբրև* զառաջինն, և եդ ի տապանակ վկայութեանն: - 352. Երկրորդ՝ զի ասէ «*իբրև* զիս». *իբրևն* օրինա՛կ է. որպէս մովսէս աստուած կոչեցաւ, և տէր մեր էմմանուէլ. և զնա՛ հայր կնքեաց աստուած. և որպէս մովսէս իշխէր տարերաց, և տէր ի ծովուն գնայր, և ի վերայ օդոյն: - 399. Նախ ասեն թէ զնիւթն աստուած կարծեցին, սատանայ խաբէր թէ ի՛մ է այս մարմինս *իբրև* տեառն նիւթոյ...: - 409-410. Երկրորդ՝ զի սուրբ գիրն ո՛չ պարտաւորէ զնա *իբրև* զմահապարտ: - 443. Երկրորդ՝ զի ի ամն *իբրև* զմի օր համարեցաւ նոցա. զի հանգիցեն ի չար գործոց, և երկիրն ի չար գործելոյ: - 448. Եօթներորդ՝ արեամբ և վկայութեամբ. զոր և ինքն քրիստոս մկրտեցաւ վասն մեր *իբրև* յոյժ գովելի և երանելի այս մկրտութիւնս քան զառաջինսն: - 488. Նախ անարգեցաւ ի պարտէզն զկնի արեան քրտանցն յորում մատնեցաւ ի յուդայէ. և *իբրև* աւազակ ըմբռնեցաւ և կապեցաւ: - 492. Վերին մասն զխոհեմ և զիմաստ բանս *իբրև* աղիւ համեմեալ: - 493. Իններորդ, ասէ «մի՛ մերձենար», զի մարմինն այն պտուղ էր կանուխ դժոխոցն. և ինքն տէր մեր *իբրև* քահանայ նոր յամենայն ծեռաց պահէր զգուշութեամբ, զի պահեսցէ զնա ի ծեռինն որ կարո՛ղ է ընդունել զայնպիսի պատարագն: - 517-518. ...թէ զերկու քորս **բ** եղբարցն տալ. կամ զսանին քոյրն միւս եղբօրն. որպէս քո սուտ պետրոսին կանոն է, և ո՛չ ճշմարիտ պետրոսին. և զայլն լռեմ *իբրև* զամօթալի: - 548. Եւ զայս առնէ միտքն *իբրև* մշակ. որ առեալ զսերմն և բազմաբեղունս աճեցուցանէ. այսպէս և միտքն խորհելով զչարն՝ զայսոսիկ ախտս առաւելու ի մեզ: - 564. Իսկ վեցերորդ կոչին մակստացականք. այսինքն ի վեր ստացեալ աշխատութեամբ. որք հետևին միմեանց *իբրև* զչարս շղթայից: - 582. Իսկ յորժամ մեղաւոր հոգին հասանէ ի վախճան, տրտմութեամբ և ակամայ *իբրև* զանասուն ի սպանդ վարեալ...: - 669. ...մինչ դարձեալ միաւորի ընդ մարմնոյն. և *իբրև* զարեգակն պայծառացեալ ծագէ ընդ քրիստոսի: - 681. Եւ երթայ առ իւր տէրն հեշտութեամբ. և անդէն վաղվաղակի *իբրև* երևմամբ և տեսութեամբ իմն շահի զպտուղն առաջիկայ երանութեանց: - 691. Այլ որպէս կայծ հրոյ և անօթ արեգական բոլորովիմբ է լոյս, նոյնպէս և անդ բոլոր անդամօքն փայլեսցին *իբրև* զարեգակն: - 726. Չորրորդ ի պնդութենէն թափանցիկ լինի. այսպէս և երկիր *իբրև* զապակի: - 728. Որք որպէս գիրք յայնժամ բացեալք եղիցին. քանզի վարդապետութիւնք նոցա և օրինակք՝ ամենեցունց յայտնեսցին. ի յորս ամենեքեան *իբրև* ի գիրս տեսցեն թէ զի՞նչ պարտ էր առնել կամ խոտել ինքեանց: - 742. Իսկ գիրք կենաց է գիրքն քրիստոս. ի յորում ամենեքեան *իբրև* ի գիրս ընթերցցին թէ զինչ ի պատուիրանաց նորա արարին: - 742. Գիր ևս կենաց է տեսութիւնն աստուածային. ի յորում ամենեքեան զխիղճս մտաց իւրեանց *իբրև* զգրեալս տեսցեն: - 742. Այսոքիկ են երեք բազուկքն անգուցեալք *իբրև* ուռս որթոյ. ուստի ճշմարտութիւնն ասէ յաւետարանին, «ես եմ որթն ճշմարիտ, և դուք ուռ»: - 755. Յորս *իբրև* յոստս թռչունք երկնից՝ այսինքն սուրբքն հանգուցեալ են և բունի՛ն: - 755. Եւ գիտելի է, զի ուրախութիւն ընտրելոցն հանդիպեսցի *իբրև* ի վեց կողմանէ: - 762. Նախ ի տեսանելն զերեսս աստուածային որ է անճառելի ցնծութիւն. որպէս ասեն վարդապետք, այն է ճշմարիտ և միայն ուրախութիւն, և ո՛չ յաղագս ստեղծուածոյ, այլ ի ստեղծողին լինի. զոր *իբրև* ստանայցես, ո՛չ ոք բարձցէ ի քէն: - 762. Երրորդ անդուստ՝ զի *իբրև* նոքա որ այն քան տկարքն էին՝ սակայն յա՛յնպիսի թշնամին այն քան յաղթութիւնս գործեցին ըստ յոբայ: - 765. *Իբրև* ի հակառակս լ ամեայ միշտ մնասցեն...: - 766

***ԻԲՐ ԹԷ +*** Ով արիանոսք՝ զի թէ որպէս զմեզ զորդի շնորհօք ասէք և արարած, մեք զի եմք շնորհօք որդիք՝ ունիմք ընդ մեզ և ընդ հայր շաղկապ. *իբր թէ* զլար զհոգին սուրբ: - 39. ...այժմ *իբր թէ*

զնուաստագոյնս ճառէ ի զիջումն բորբոքման նոցա: - 45. *Իբր թէ* բանն և մարդն բաժանեալ են էութեամբ և բնութեամբ, իսկ մի են որդիութեամբ: - 82. Եւ է մի` որ անդրադարձի էի. և այսպէս ասի մի աստուած *իբր թէ* է՛. զի պատահումն ո՛չ ցուցանէ: - 110. Ա՛րդ «արուսեակ անկեալ». *իբր թէ* ի լուսոյն զրկեալ և եղեալ խաւար: - 148. Երկրորդ` կին, *իբր թէ* կէս մարդոյ: - 276. Երրորդ` կին, *իբր թէ* կող մի. որ է՛ զօրութիւն սիւն: - 276. Հինգերորդ` կին, *իբր թէ* կողաբոյս կամ կողածին: - 276. Վեցերորդ` կին, *իբր թէ* կայանք և հանգիստ մարդոյն: - 276. Եօթներորդ` կին, *իբր թէ* կրօղ զօրութեան և ընչից առն: - 276. Ութերորդ` կին, *իբր թէ* կցորդ և օգնական առն յամենայն գործս: - 276. Տասներորդ` կին, *իբր թէ* կեանք. զի որպէս կենօք է տնել. նոյնպէս տեսակ մարդոյս ի ձեռն կնոջ ծննդեանն տևէ՛, և կայ մնայ մինչ ի կատարած: - 276. Նախ` առ ի նշանակել զանձնիշխանութիւն մարդոյն. *իբր թէ* ունի կարողութիւն պահել և ո՛չ պահել: - 277. Նա՛խ` ասի մահու մեռանիլ, *իբր թէ* է՛ ոմն անձնաւոր մահ որ է՛ բանսարկուն. և նովաւ մեռանիցիս աստ: - 277. Նա՛խ` *իբր թէ* է՛ և գո՛յ աստուած որպէս ասացաք: - 331. Երկրորդ` *իբր թէ* տղայքն զորս ի ջուրն հեղձուին` կենդանացեալ տանջեն զնոսա: - 334. *Իբր թէ* զսոսա ի վե՛ր բարձրացուցի և ի սէր սրտի իմում ունիմ: - 348. *Իբր թէ* հաւասա՛ր ծանր է մեղք քահանայապետին և բոլոր ժողովրդեանն: - 358. Նա՛խ` **է**պատիկ` զբազո՛ւմն նշանակէ. *իբր թէ* ըստ բազում մեղաց մերոց բազում և առաւել է պատուհասն: - 376. Երիտասարդն **գ ժ** է հասակն. *իբր թէ* հասա՛ք ի չափ լրման և աճման: - 378. Այլ երուսաղէմ լեառն է և դաշտ, յանձրևոյ ոռոգի. *իբր թէ* խնամօքն աստուծոյ լինի անձրև աւելի և նուազ, ի ժամու և տարաժամու ըստ արժանեացն ձերոց: - 398. Երկրորդ` խոստովանութիւն է և վկայութիւն. *իբր թէ* բարի ես բնութեամբ. երջանիկ. և այլն: - 406. Երրորդ` յայտնել թարգմանի. *իբր թէ* յայտնի՛ է աստուած և ո՛չ ծածուկ կամ թաքուն: - 406. Նա՛խ` զի մի՛ արհամարհիցեմք զսաստն. *իբր թէ* սոսկ բանք են: - 408. Ա՛յս է` *իբր թէ* ասա ո՛չ է գրեալ բոլորն` ա՛նդ է գրեալ որ է մնացորդացն յուդայի թագաւորացն: - 443. Նա՛խ` ասի ողորմութիւն, *իբր թէ* որոշիչ թշուառութեան սրտին: - 459. Երրորդ ասի ողորմութիւն, *իբր թէ* զարմանալի իմն քաղցրութեամբ ոռոգել զսիրտս: - 459. Եւ այն զի փաթութած է` ըստ հրէական օրինին է. զի կոնդակ և գալարելո՛վ էր նոցա գիրն. *իբր թէ* ծածո՛ւկ է ի նոցանէ խորհուրդ մարգարէիցն և թաքուն: - 481. Երկոտասաներորդ` յա՛յտ է յերից իրաց թէ ապականացու ասելն` ակնարկէ՛ ի յապագայն *իբր թէ* ապականելի՛ է. որպէս ասեմք մահկանացու և չարչարելի. և ահա չարչարեցաւ և մեռաւ: - 499. *իբր թէ* ընկալաք և հնազանդեցաք մարմնով...: - 644. ...*իբր թէ* նա՛ է առաւել պատճառ հիւանդութեան: - 665. Դարձեալ` ցուցանէ` *իբր թէ* սիրելոյն որ մեռաւ` կցորդիմք և չարչարեմք զմարմինս. մերկանալով, ի սով և ի ծարաւ, ի մութն և ի հող որպէս նա ի գերեզմանի եղև: - 670. ...*իբր թէ* այսպիսի սղալումն ի ճաշակելոյ պտղոյն եղև. որ ձեռօք հատեալ եդ ի բերանն: - 670. ...*իբր թէ* սիրտն ցանկացաւ...: - 670. Այլք այլ իմն ասեն. *իբր թէ* իւրաքանչիւր մեղաւոր հոգի ի գերեզմանս իւրեանց կամ ի յերկրի տանջին...: - 686. *Իբր թէ* յայնժամ առնուն զգործոց հատուցումն: - 692. ...պատճառեն գործոց իւրեանց հնարս. *իբր թէ* ակամայ զերծանիցին ի տանջանաց: - 701. Զի որ խոկայ առանց հաւատոյ` այնպէս է *իբր թէ* ջանայ ոք տեսանել զարեգակն առանց աչաց: - 702. Յորժամ պարուկաւ այսինքն հացմամբ ասի. որպէս ասելն, ո՞չ քեզ ասացի զայդ. ահա՛ եղև ստորասութիւն. *իբր թէ*` ասացի՛: - 787. Եւ դարձեալ, ո՞վ քեզ ասաց զայդ. *իբր թէ*` ո՛չ ոք: - 787

**ԻԲՐՈՒ ԹԷ (տ. ԻԲՐ ԹԷ) +** Այս է յորժամ ընթեռնումք յերկար զպատմութիւնն և լսեմք. *իբրու թէ* տեսանեմք աչօք. և մտօք վայելեմք: - 192

**ԻԳԱԿԱՆ +** Ընդէ՞ր մայր ո՛չ կոչի *յիգական* սեռէ: - 109. Ի մածնուլն արուական և *իգական* սերմանցն` լինի որպէս պանիր մինչև ի **զ** օրն. ըստ յոբայ որ ասէ, «որպէս կաթն կթեցեր զիս. և որպէս պանիր մածուցեր»: - 261. Կամ ընդ **դ** տարերց ունի զխառնումն երկուց նիւթոց, այսինքն արուական և *իգական*: - 262. Եւ անհաւատն սպանեալ է զհոգին մեղօք. և կամ ունի զգործ *իգական*` պիղծ է: - 366. Վեցերորդ` ի յանմարմին բնութիւնն ո՛չ կոչէր *իգական*. այլ արական որդի. իսկ թէ ի մարդեղութիւնն լինէր *իգական*, փոփոխումն էր դիմացն և սերիցն: - 480. Եօթներորդ` գիրք սուրբք մարդեղութիւն ասեն բանին. այլ մարդն կոչումն յատուկ արական է և ո՛չ *իգական* թէ և հասարակաց կոչի: - 480. **Վասն է՞ր երբեմն *իգական* հարսն և դուստր կոչի եկեղեցի. և երբեմն արական որդի:** - 534

**ԻԳԱՄՈԼ +** Այսինքն *իգամոլք* իբրև զձիս. խեռաբարոյք որպէս զէշ. և խորամանկք որպէս զուղտ: - 334

**ԻԳԱՑՈՒՑԱՆԵՄ +** Երկրորդ` զի սատանայագիտ էր քնար և տաւիղ, *իգացուցանել* զմարդիկ. խառնեաց զնոսա ի բանս հոգւոյն, զի իւր սրովն խոցեսցէ զինքն և հալածեսցէ որպէս ի սաւուղայ: - 641

**ԻԳՈՒԹԻՒՆ +** Եթէ ըստ մեզ կարծէք զծնունդն, պիտոյանայ երկուորիս և գործիս հօր. լիցի և այրութիւն և *իգութիւն* յաստուած. և լիցին որդիք երկորեակք էրէց և կրտսեր: - 52. Եւ ի հոտոտելեացս *իգութիւն*` ի հոտոյ անուշութեան իւղոյդ: - 771

**ԻԹԱՄԱՐԱՅ** - Չորրորդ՝ զեթսոնի ազգն դռնապա՛նք էին. և մերարեայ երդմնեցուցիչք ընդ իշխանութեամբն *իթամարայ* քահանայի. և կահաթու գունդն աւագ պաշտօնեայք: - 379. Եւ եղև քոյր սորա եղիսաբեթ կին ահարոնի քահանայի. յորմէ ծնաւ նաբաթ և աբիուդ. եղիազար և *իթամար* քահանայք: - 452

**ԻԺ +** Ութերորդ՝ զնա ո՛ծ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն զբազումս. և արտաքսեն ի դրախտէ եկեղեցւոյ. և թոյնք *իժից* ի ներքոյ շրթանց ունելով և խայթոց՝ զի առորս մերձենան, ի յսկիզբն բանից կամ ի վերջն՝ մահացուցանեն զհոգիս. երկճղի ունելով լեզու նենգաւոր՝ չար և բարի, ծածուկ և յայտնի: - 35. Որպէս թոյնք *իժից*, զի են ինքեանք բնութեամբ չար- և պատճառե՛ն զչար. բայց պատահեցաւ ոմանց՝ դեղ լինիլ: - 160. Եւ սողնոց Օձն արքայեկ. զոր *իժ* և քարբ ասեն: - 216. Որպէս դանիէլ առիւծուցն յաղթեաց. և պօղոս *իժին*. և բազում ճգնաւորաց որք անապատս էին՝ գազանք և անասունք սպասաւորէին նոցա: - 220

**ԻԼԻՈՆ** - Ի սորա երեք ամին *իլիոն* առաւ: - 420

**ԻԼԻՈՍ** - Զզօհալն Կռօնոսի. Զմուշթարին Դիոսի. Զմառեխն Արէսի. Զարեգակն *Իլիոսի*. կամ Զևսիլոսի. Զօհրայն. Ափրոդիտեայ. Զօտարիտն Երմեսի. Զլուսինն Սելինի: - 190

**ԻՂՋ +** Այլ և թերափն՝ *իղձք* ասէ. և թերափիմք՝ տօնահմայք: - 425. Միանգամայն և *իղձք* փրկական և հրաման հարկի ժամանեալ էհաս առ ներգևեալս ոգի և թաւազարթ թզենի: - 773

**ԻՄԱՆԱԼԻ +** Վասն ճանաչման իւրոյ աստուած կազմեաց կրկին կերպիւ օրինակս. այսինքն *իմանալի* և զգալի. որպէս հոգին, միտքն, և նմանք սոցա. կամ արեգակն, լոյս, և նմանք նոցա: - 24. Իսկ երկրորդ ի կարգէ իրաց *իմանալի* է ճշմարիտն աստուած: - 25. Որք զաչս իմաստից *յիմանալի* ճառագայթիցն խուսափեցին թիւր կամօք, և խոտոր մտօք. զանուղղայս խորհելով, և զանպատշաճս բարբառելով. յարձակեալ անկապ լեզւաւ և անդուռն շրթամբք բացեալ յերկինս. ցոպ բերանով ի բարձունս բարբանջելով. և յածեալ ընդ երկրաւ լեզուագարելով. որոց դատաստանն ի բնէ ո՛չ դատարկանայ. և կորուստն ո՛չ նիրհեսցէ: - 31. Նոյնպէս *զիմանալի* խորհուրդս և զգիտութիւնս զոր տկարանայ միտք, կարողանայ հաւատքն տեսանել. այլ ո՛չ ունի հաւատ՝ քան զտեսութիւն մտացն: - 31. Քանզի որպէս արեգակն ո՛չ տեսանի՝ եթէ ո՛չ լուսովն իւրով. այսպէս *իմանալին* աստուած ո՛չ տեսանի, եթէ ո՛չ լուսով շնորհաց հաւատոյն իւրոյ: - 32. Ութևտասներորդ՝ ո՛չ որ *իմանալի* ստեղծւած և մասնաւոր՝ կարէ հաղորդիլ բազմաց: - 59. Եւ մերձ բանին *իմանալեացն* քննութիւն: - 103. Իսկ տրամախոհութեամբ քննէ *զիմանալիս*. որպէս հրեշտակ: - 103. Նախ՝ զի եղականք ամենայն չափաւորեալ գոյացան. եթէ *իմանալիք* և եթէ զգալիք: - 103. Եւ միտք *յիմանալին* որ նմա՛ է ազգակից: - 104. Չորրորդ՝ բանն գերագոյն է *յիմանալիսն*. և մարդն գերագոյն է ի զգալիսս. վասն որոյ մարդ եղև: - 107. Հինգերորդ՝ ի բանէն կրկին էութիւնք յառաջեցան. այսինքն *իմանալի* և զգալի. զի թէ միայն ի հրեշտակաց էր առեալ՝ պակասէ՛ր զգալին. և թէ ի կենդանեաց՝ պակասէ՛ր *իմանալին*: - 107. Երրորդ՝ սկիզբն *իմանալեաց*. և պատճառ զգալեաց. որ են յաւիտենականք և ժամանակեայք: - 110. Հինգերորդ՝ ժամանակն է զգալեաց. և միշտն *իմանալեաց*. և յաւիտեանն անիմանալեաց: - 116. Որո՞վ զանազանի և հաւասարի *իմանալի* և զգալի կեանք: -117. Այլ զանազանին, Նախ՝ զի *իմանալին* անմա՛հ կեանք է. և զգալին մահկանացու: - 117. Երկրորդ՝ *իմանալին* անընդմիջաբա՛ր է ի պատճառէն. իսկ զգալին միջնորդիւ տարերց: - 117. Ո՞րպէս տեսանէ աստուած զէքս. զի զգայութիւն ո՛չ ունի. որպէս մեք ներքին զգայութեամբ *զիմանալիս*՝ և արտաքին զգայութեամբ զերևելիս տեսանեմք: - 118. Նախ՝ զի հրեշտակացն *իմանալի* և միահաղոյն է տեսութիւն. իսկ մարդկան բանական և մասն մասն ժողովելով: - 120. Երրորդն է նշանական աստուածաբանութիւն. որ ի զգալի կերպարանաց փոխակցիմք *յիմանալի* տեսութիւնն. թէ զի՞նչ նշանակէ մարդ երևելին. կամ առիւծ. գառն. հուր. լոյս. և այլն: - 122. Իսկ չորրորդն է խորհրդական աստուածաբանութիւն. յորժամ զամենայն զգալի և *զիմանալի* էութիւն արտաքոյ թողեալ, ի խորս ընթանամք մտօք և մտանեմք յամպն և ի մէգն ըստ մովսէսի. և ապա տեսանեմք զնա արտաքս որոշեալ յամենայնն էից: - 122. Ա՛յս է երանութիւն *իմանալեացն*: - 123. Նոյնպէս *իմանալի* արեգակն քրիստոս ի հայրական ծոցոյ անհա՛ս է բնութեամբ՝ և ի սրբոյ կուսէն իբր ի յարևելից ծագեալ. և ջերմ սիրով ի մարդկային ազգս որպէս յարևմուտս խոնարհեալ. և զսառուցեալ բնութիւնս պատեալ. և ի գերեզմանէն ի բարձունս դարձեալ յարևելս առ հայր ամբարձեալ: - 126. Նմանապէս և *իմանալի* արեգակն արդարութեան քրիստոս՝ ըստ հաւասարութեան բաշխէ զմարմնաւորս...: - 127. Նոյնպէս զլուսոյ և զհրոյ յատկութիւնս բաղդատել դիւրին է *իմանալի* լուսոյն ճշմարտի. որպէս գրեալ ի ի գլուխն՝ լե համարն տե՛ս անդ: - 127. Զի՞նչ է իմացականն և *իմանալին*: - 130. *Իմանալի* է իմացօղն. իսկ իմացական իմացեալն.

զի իմացականն սնունդ և յառաջ եդեալ է *իմանալւոյն*: - 130. Ծանիր զայս, զի աստուած է միայն իմացական և ո՛չ *իմանալի*. և հրեշտակք իմացական և *իմանալի*. զի իմացականք են վերինքն. և *իմանալի* ներքինքն: - 130. Իսկ՝ հոգի մարդոյ միայն *իմանալի* և ո՛չ իմացական. զի իմանան զվերինսն՝ *իմանալի՛* են: - 130. Եւ են առաջինքն իմացականք. և վերջինքն *իմանալիք*. և միջինքն իմացականք և *իմանալիք*. որպէս ա՛յլ եղանակաւ ասացաւ ի վերոյ: - 134. Իսկ յերիս երրեակս թըւեալ՝ բազմազա՛ն է *իմանալի*: - 134. Վասն առաջնոյն գիտելի՛ է, զի ամենայն շնորհ բղխո՛ւմն է և ճառագայթ, յանեղական լուսոյն իջեալ առ էակս ամենայն *իմանալի* և զգալի. և զարդարէ՛ զսոսա ըստ նմանութեան այնմ պարգևեալ շնորհի. եթէ ըստ բնութեան՝ և եթէ անձնական. ի հրեշտակս և ի մարդիկս: - 140. Վասն դրախտին զի երկին կոչի և *իմանալի* տունն: - 155. Աստուած՝ *իմանալի* աշխարհ. և աշխարհ՝ զգալի. որ և մարդս *իմանալի* և զգալի աշխարհ: - 179. Եւ թէպէտ այսպէս ասացաւ, սակայն գոյացաբար է՛ աստուած *յիմանալի* երկինս. և կարողաբար ամենայն ուրէք: - 180. Երրորդն *իմանալի*. յորում Երրորդութիւնն սուրբ ի նոցանէ դեմ յանդիման նկատի: - 180. Իսկ եղական լոյսն դարձեալ բաժանի *յիմանալին* և ի զգալին: - 185. Եւ է՛ *իմանալի* լոյս՝ որպէս հրեշտակք՝ և հոգի մարդոյ. և պատւիրանն աստուծոյ...: - 185. Նմանապէս և *իմանալի* լոյսն ներգործէ՛ զայս: - 185. Նախ՝ զի *իմանալիքն* մշտնջենաւո՛րք են, ի սակաւ վայրկենի կատարեցան: - 192. Վեցերորդ՝ զի գլխոյն՝ այսինքն տեառն աստուծոյ՝ *իմանալի* օձն հակառակեցաւ: - 218. Վեցերորդ՝ Առաջին երկինքն է *իմանալի*: - 221. Երրորդն զգալի և *իմանալի*: - 221. Ո՞րպէս ասէ մեծն Ներսէս շնորհալին. ընդ ծառոց երկրի զգալեաց. տընկեաց և զտունկս *իմանալեաց*: - 221. Ոմանք աննիւթ և *իմանալի*, այլաբանութիւն և օրինակ ասացին. և ոչ էութեամբ ենթակայացեալ: - 221. Այլ ոմանք *իմանալի* և զգալի. և մարմին նիւթական: - 221. Որպէս դամասկացին յոհան՝ և օգոստինոս՝ *իմանալի* և զգալի ասացին: - 221. Նա՛խ՝ եթէ *իմանալի* է մեզ. զոր ո՛չ կարեմք այժմ զգալապէս տեսանել: - 222. Երկրորդ՝ *իմանալի՛* է, զի իմացումն և իմաստութիւն տայ մեզ յայլ իրս. որպէս ծառն կենաց զքրիստոս: - 222. Երրորդ՝ զի *իմանալեա՛ցն* է տունկ. այսինքն բանականաց. հրեշտակաց կամ մարդկան. և ո՛չ զգալի կենդանեաց: - 222. Չորրորդ՝ զի նոյն ինքն դրախտն և տունկն է *իմանալի* և զգալի. որպէս վայելող մարդն էր *իմանալի* և զգալի: - 222. Եւ այլք թէ՝ *իմանալի՛* է լոյս նոցա. և կամ յեթերէն: - 222. Նա՛խ՝ որպէս ասացաւ ի վերոյ, հողն ունի զայլ գ տարերքն ի յինքն խառնեալ. յորժամ ի հողոյ ասէ՝ *իմանալի* զդ տարերս: - 229. Եւ այս իսկ է գործն, այսինքն վայելել հոգւով *յիմանալիսն*, և մարմնով ի զգալիսս. պարտ էր նախ գոյանալ նոցա, և ապա՛ գործողին և վայելողին: - 231. Իններորդ՝ զի ի սկիզբն ստեղծման արարածոց՝ եղեն *իմանալի* բանականքն ընդ լուսոյն գոյացեալ: - 231. Տասներորդ՝ մէջ և կապ ամենայն գոյիցս մա՛րդն է կազմեալ. զի ամենայն արարածք ի **բ** դէմս որոշին. այսինքն մինն *յիմանալի* և միւսն զգալի. և սոքա եղեն յառաջագոյն: - 231. Վասն որոյ յետոյ մարդն ստեղծաւ յերկուցն խառնեալ *յիմանալւոյն* և ի զգալոյն ի մի էութիւն: - 231. Նա՛խ՝ զի աշխարհ է կամ *իմանալի*, որպէս հրեշտակք. կամ զգալի, որպէս մարմնականք: - 231. Եւ մարդն ունի *իմանալի* հոգի և զգալի մարմին: - 231. Այսպէս գլուխ մարդոյս ունի զնմանութիւն երկնից. զի է՛ բոլոր. և աչքն որպէս լուսաւորքն. և իմացումն ի նմա՛ որպէս *իմանալիքն* յերկինս: - 232. Որպէս և իմաստունքն ասացին զամենայն երևելիս յարացոյց *իմանալեացն*. զոր գոյ և որակ կոչեն. և զնիւթս պատկեր գոյին. զի որակն և գոյք անմարմին են և աննիւթաբար ի մտածութիւնս երևին: - 236. Զի որք զհոգի յառաջ ասեն գոյանալ՝ զայս դնեն պատճառ, եթէ յէակքս *իմանալիքն* յառաջ ստեղծան քան զգալիքս. ապա և ի մարդոյն էութիւն հոգին յառաջ է քան զմարմինն: - 252. Եւ այժմ պատասխանեսցուք այնմ որ ասեն՝ յարարածքս *զիմանալիս* յառաջ ստեղծեալ քան զգալիս: - 253. Չորրորդ՝ և կատարեալ իմաստութիւն է՝ իմացմանն հպիլ յաստուած և յաստուածայինս ի հոգևոր և *յիմանալի* կեանս: - 269. Նա՛խ՝ ըստ առաջ եդելոյն. զի առաջ եդեալք սորա են աստուածայինքն և *իմանալիք*. իսկ նոցայն՝ մարմնականք և զգալիք: - 269. Իսկ իմաստունն ըստ երկուց եղանակաց *իմանալի* է: - 269. Մտաց՝ որով տեսանէ *զիմանալիս*: - 275. Եւ ի հողմոյն յայնմանէ հոտ անուշութեան դրախտին բուրեաց ի նոսա. և տեսիլ *իմանալի* տեսին, և լուր *իմանալի* լուան. և յայնմանէ մոռացան զառաջինն. և որպէս ի քնոյ զարթուցեալք ո՛չ լսէին զլեզուս միմեանց: - 298. Եւ տէրն մեր *զիմանալի* օձն կորոյս և կոխանեդ: - 329. Դարձեալ՝ մորենին էր կոյսն մարիամ, որ *զիմանալի* հուր աստուածութեանն յինքեան կրելով ո՛չ կիզաւ...: - 331. Եւ խաչանիշ գաւազանաւն ընկղմեաց *զիմանալին* փարաւոն յանդունդս դժոխոց: - 337. Վեցերորդ՝ զի յերկնից իջեալ հացին է օրինակ որ է կերակուր *իմանալի* հրեշտակաց: - 338. Նշանակէ՛ ըստ փիլոնի, զի անմարմինքն մինչև յերեքն հասանին. որպէս երկրաչափքն գրեն նիշ՝ գիծ՝ երևոյթ. ա՛յս է *իմանալեացն* չափ: - 344. Եւ ծնօտ՝ որ է՛ զիկն բոլորեալ. *զիմանալի* կերակուրն նշանակէ նոցա. զի ծնօտն գործի է կերակրոյ: - 344. Այլ *իմանալեացն* դասք վկայք

են Նա՛խ` զի ի դրունս են սուրբ Երրորդութեանն և տեսօ՛ղք են անճառելի փառացն: - 345. Եւ որպէս ներքին տապանակն օրինակ ցուցաւ *իմանալեացն*: - 346. Վեցերորդ` զի *իմանալի* ունի լոյս` ցուցանէ՛ զգալի լոյսն. զի ի գիշերի ելեալ ի խորանէն հալածէր զխաւարն և լուսաւորէր զանապան: - 352. Այլ և միշտ և անփոփոխ. և անմիջաբար դեմ յանդիման քահանայագործութիւն է անդ ըստ *իմանալեացն* օրինի: - 355. Երրորդ` որպէս ինքն զգալի աստեղս թըւէ՛ և յանուանէ՛ կոչէ, նոյնպէս և *զիմանալի՛սն* ետ թուել: - 377. Եւ **թ** միւս որմունք ըստ դասուցն *իմանալեացն* փառաբանիչք: - 391. Եւ յիսուս փրկեաց զմեզ *յիմանալւոյն* ձեռաց: - 417. Եւ տէրն *իմանալի* հարուածով. ըստ այնմ «մի յառաջ քան զժամանակս տանջեր զմեզ» աղաղակէին: - 419. Սա՛ ետես զգեղմն *իմանալի* յորժամ ծեծէր զցորեանն ի կալն: - 420. Չորրորդ` նշանակ *իմանալւոյն* դագոնայ, որ զգլուխ իւր ամբարձ ընդ դէմ աստուծոյ. և ընդ բռամբ էարկ և կոխեաց զմարդկային ազգ. զորս խորտակեաց տէր մեր: - 426. Երրորդ, նա՛ հովիւ հօտից. և տէր մեր հովիւ կոչեցաւ *իմանալեացն* վերնոց և մարդկան մոլորելոց: - 435. Արդ աղեղն և նետն ի վերայ եդեալ` նշանակէ՛ զխաչն փրկական ընդ դէմ *իմանալի* ասորւոյն սատանայի: - 446. Այլ մեզ այսպէս *իմանալի* է. զի թշրինի մէկն նուիրեալ օր սուրբ տն կոչեցիի ասացաւ. որ է՛ սեպտեմբերի **ժը**: - 483. Եւ յորում ժամու ել մովսէս յեգիպտոսէ և եհան զժողովուրդն, ի նոյն ժամն յարեաւ քրիստոս ի մեռելոց և եհան ազատեաց զհոգիսն ի հրահալոց չարութենէ դժոխոցն և ի բռնութեանց *իմանալի* փարաւոնին: - 512. Այսպէս *իմանալի* արեգակն քրիստոս ի նոյն ժամն յարեաւ ի գերեզմանէն. և ընդ արշալոյսն երևեցաւ իւղաբերիցն և առաքելոց: - 515. Այլ համբարձումն նշանակէ՛ ի միտս համայն բարձր քան զամենայն դասս *իմանալեացն*. զի նմա՛ երկրպագեն ամենայն երկնայինքն. և անդր քան զտեղի տիրամօրն. զի ի միածին որդւոյ իւրմէ խնդրէ զփրկութիւն մարդկան: - 519. Ջորօրինակ ասեմք, իմացումն իմանալ. և *իմանալի*: - 531. Իսկ երկրորդ սեռն հնազանդ բանին` ցասումն և ցանկութիւնն. և սոքա ո՛չ կարեն լինիլ ենթակայ *իմանալի* առաքինութեանց: - 572. ...վասն որոյ պա՛րտ է աչօք տեսանել զգալիսն, և մտօք հայիլ *յիմանալին* և երանիլ: - 597. Եւ գործատունն կրկին ասի. զի ամենայն արարածք կրկին են. այսինքն *իմանալի* և զգալի որք օրինեն զարարիչն: - 637. Առաջին` ձայն *իմանալեաց*: - 640. ...և ի է օրն սկսաւ *զիմանալի* աշխարհն որ սրբոցն է հանգիստ: - 647. Ա՛րդ` *իմանալի* մահ է` ի ձեռն առաքինութեան զմարմինն մեռուցանել և ի ձեռն չարութեան զհոգին: - 668. ...և *զիմանալի* լոյս շնորհաց ոչ ունին: - 669. Նոյնպէս և լուսեղէն պսակքն որ իջանէր ի վերայ նոցա` յայտնապէս ցուցումն է *իմանալի* պսակացն: - 697. ...զի կամ *իմանալիք* են որպէս հրեշտակք. կամ զգալիք որպէս տարրեղէնք. և կամ յերկուց գոյացեալ որպէս մարդ. այսինքն ի հոգւոյ և մարմնոյ...: - 715. Նախ վասն անկարօտութեան. զի սուրբքն *իմանալի* լոյս ունին զքրիստոս. և ո՛չ են կարօտ զգալի լուսոյ: - 760. Ջի ո՛չ զգալի գիշեր և ո՛չ *իմանալի*. մեղաց կամ անհաւատութեան կամ տգիտութեան գտանի անդ: - 761. Երրորդ` ծառ կենաց իմանին տունկք *իմանալի* դրախտին. այսինքն բանակք երկնաւոր զօրացն. միշտ յարազուարճ բերկրանօք բարձրացեալ ի փառս: - 767. Այսպէս վասն երկնային և *իմանալի* տնկոցն որ կոչին ծառ կենաց. ունելով յինքեան զկեանս և բաշխելով այլոց ամենեցուն զխնամս: - 767

**ԻՄԱՆԱՄ +** Երկրորդ, ասեմք եթէ` չարն կրկին *իմանի*. է՛ որ ինքնաչա՛ր է. որ պարզ և ամենևիմբ չարն է. և արտաքոյ բարւոյ և էութեան է. որ ո՛չ ուրեք է. և ո՛չ երբեք. և ո՛չ էր. և ո՛չ է. և ո՛չ լինիլ կարօղ է. որ է ո՛չ ինչ: - 22. Եւ թէ ո՛չ` ի կարգէ իրացն *իմասցին* մտօք: - 25. Եւ յայսցանէ պա՛րտ է *իմանալ* թէ է՛ արարիչ սոցա: - 26. Ասեմք եթէ` գոգ և մազօգն` հոգևորապէս *իմացեալ* լինին ամենայն հալածօղք եկեղեցւոյ...: - 28. Վասն այնորիկ ո՛չ երևի ճշմարիտ նոցա, զոր ո՛չ ըմբռնէ միտք. և ո՛չ այլ իրիք հաւատան, բայց միայն զայն` զոր *իմանան*: - 31. Արդ` զորօրինակ զգալի աչք մեր ո՛չ կարէ ըմբռնել զքանակութիւն արեգականն և այլ լուսաւորացն. այլ մտօք *իմանամք* զմեծութիւն նոցա: - 31. Նոյնպէս ո՛չ կարէ *իմանալ* յորժամ ի սուրբ գրոց և ի սքանչելեաց և ի բանից սուրբ վարդապետաց` դարձուցանէ զմիտքն. որպէս ասէ առակն` պակասամիտն ոչ ընդունի զբանս խոհեմութեանց. բայց միայն զայն` որ շրջին ի միտս նորա: - 31. Երրորդ` է՛ նրբութիւն *իմանալեացն* և բնութիւն իմացմանն. որպէս բժոտ աչքն ո՛չ տեսանէ զմազն ի հեռաստանէ: - 31. Եւ զոր ինչ տեսանէ աչք արծըւին` ո՛չ կարէ տեսանել աչք մարդոյ. այնպէս բթամիտն ո՛չ *իմանայ*, զոր *իմանայ* նրբահայեացն և ուսեալն յաստուծոյ. զոր եդ աստուած ուսուցիչ այլոց. որպէս մարգարէքն, և առաքեալքն, և վարդապետք: - 31. Առարկութիւնս այս յայտնապէս զորդի կամ զհայր ի բա՛ց մերժէ յաստուածութենէն. ճարտա՛ր *իմա*, ո՛չ ասէ զհօրէ ոչ գոլ աստուած. այլ զանձնելութենէն: - 38. Իսկ միաւորութեանն *իմանալ*` ոչ է ինչ մեծ. այլ է հաւասար որպէս առօղն` նոյնպէս և առեալն զոյգ աստուած և մարդ: - 39. Դարձեալ քննեսցուք ըստ մեզ. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ հայր մեծ է քան զորդի. զի երկոքին նոյն ինքն աստուածութեանն *իմանին*...: - 40. Արդ

156. Երկրորդ՝ գործ բնութեան է՛ հարկաւոր. *իսկ* գործ կամացն պատշաճաւոր: - 156. Երրորդ՝ գործ բնութեան է՛ հասարակ. *իսկ* կամացն առանձնակի: - 156. Չորրորդ՝ գործ բնութեանն է միշտ. *իսկ* կամացն երբեմն: - 156. Հինգերորդ՝ գործ բնութեանն է մի առ բազումս. *իսկ* կամացն բազում առ բազումս: - 156. Վեցերորդ՝ գործ բնութեանն է նոյնպէս և նման. *իսկ* կամացն զանազանապէս և աննման: - 156. Եօթներորդ՝ գործ բնութեան անբաժա՛ն է. *իսկ* կամացն բաժանական: - 156. Ութերորդ՝ գործ բնութեան ո՛չ առաւելու և ո՛չ նւազէ. *իսկ* կամացն առաւելու և նուազէ՛: - 156. Իններորդ՝ գործ բնութեան առանց ուսմա՛ն է. *իսկ* կամացն ուսմամբ է և կրթութեամբ: - 156. Տասներորդ՝ գործ բութեան ո՛չ ինչ ունի մեղք. զի ըստ բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն. *իսկ* կամացն գործ՝ մեղանչական է. վասն որոյ կամաւորին գով և պարսաւ հետևի: - 156. Նախ՝ զի գործ մարդոյ չօշափմամբ է. *իսկ* աստուծոյն առանց չօշափման: - 156. Երկրորդ՝ զի մարդն կարօ՛տ է նիւթոյ. *իսկ* աստուած անկարօ՛տ է նիւթոյ: - 156. Երրորդ՝ զի կայ ի մարդս որ ի հարկէ՛ առնէ. *իսկ* աստուած առանց ամենայն հարկի է: - 156. Չորրորդ՝ մարդս պակասութիւն ունի. *իսկ* աստուած առանց ամենայն պակասութեան է: - 156. Հինգերորդ՝ մարդ թէ բնութեամբ և թէ կամօք գործէ՝ կարօ՛տ է օգնականի, *իսկ* աստուած անկարօ՛տ է օգնականի: - 156. Վեցերորդ՝ մարդս կարօ՛տ է ուսմանց և իմաստից. *իսկ* աստուած անկարօ՛տ է ուսման և իմաստութեան. զի ինքն է աղբիւր գիտութեան և իմաստութեան: - 156. Եօթներորդ՝ մարդ կարօ՛տ է ժամանակի. *իսկ* աստուած ո՛չ է կարօտ ժամանակի. և այլ և զյաւիտենանս արար: - 156. Ութերորդ՝ մարդկան գործ աշխատութեամբ է. *իսկ* աստուծոյն առանց աշխատութեան: - 156-157. Իններորդ՝ մարդս սխալակա՛ն է ի գործն. *իսկ* աստուած առանց սխալման: - 157. Տասներորդ՝ գործ մարդոյս նախ զօրութեամբ՝ և յետոյ ներգործութեամբ եղանի. *իսկ* աստուծոյն միշտ ներգործութեամբ է. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 157. Մետասաներորդ՝ մարդոյս գործ մասնաւոր և մի զկնի միոյ. *իսկ* աստուծոյն համանգամայն և բոլորովիմբ: - 157. Երկոտասաներորդ՝ կատարած գործոյ մարդոյ ի սկիզբն անգիտելի է. *իսկ* աստուծոյն ի սկիզբն կատարածն գիտելի է նմա: - 157. Երեքտասաներորդ՝ մարդ զինչ որ կամի ո՛չ կարէ. *իսկ* աստուած զոր ինչ և կամի և կարէ՛: - 157. Չորեքտասաներորդ՝ մարդն ո՛չ կարէ արարչագործ լինիլ. *իսկ* աստուած արարչագործ է՛: - 157. Հնգետասաներորդ՝ զի մարդ յետ ստեղծանելոյն ո՛չ է ընդ ստեղծուածս իւր. *իսկ* աստուած յետ ստեղծանելոյն՝ միշտ է՛ ընդ ստեղծւածս իւր նախախնամութեամբ...: - 157. *Իսկ* ոչ էիցն ո՛չ արարչութիւն է և ո՛չ խնամակալութիւն: - 157. Առաջին՝ զի արարչութիւն է յոչէից ստեղծանել. *իսկ* նախախնամութիւն է զեղեալն ի նոյնութեան պահել: - 157. *Իսկ* ի նոյն ինքն՝ առաջին է նախախնամութիւնն առ աստուած, և ապա՛ ստեղծումն. զի վասն նախախնամական բարութեանն կամեցաւ ստեղծանել զեղեալքս...: - 157-158. Հինգերորդ՝ զի գործ արարչութեան է մի միայն առնելն. *իսկ* գործ խնամելոյն է՛ առնել և թոյլ տալ երբեմն երբեմն ըստ պիտոյից բարեգործութեան: - 158. *Իսկ* չար առնել բարեացն՝ է գործ անիրաւութեան, և ո՛չ գոյ յաստուած: - 158. *Իսկ* առաքեալն վասն արտաքին փորձութեանցն ասէ. որ ի հալածչաց հասանէ ի վերայ մեր. յորում ուրախանալ պարտիմք. զի որքան յաճախէ փորձութիւնն, ա՛յնքան առաւելու և պսակն: - 160. Դարձեալ այսպէս մեկնեն եթէ՝ փորձութիւնն ըստ ինքեան ո՛չ է բարի. այլ պատահմամբ լինի բարի. յորժամ համբերութիւնն մեծ դնի և յաղթիցէ. *իսկ* յորժամ համբերութիւն ոչ լիցի, ըստ ինքեան չար և վատ է փորձութիւնն. վասն այն տէրն արգելուլ հրամայէ: - 160. *Իսկ* սատանայ փորձէ՝ զի ի չար ընկեսցէ: - 160. *Իսկ* աստուած փորձէ զմարդ՝ զի գիտէ զնա՛ բարի և հաւատարիմ. այլ ծածկեա՛լ է յայլոց. փորձէ՞ զի յայտնի լիցի ամենայն աշխարհի առաքինութիւն նորա: - 161. *Իսկ* աստուած գիտէ զառաջիկայն և այնպէս տայ ի փորձանս: - 161. Զի ի հարկէ՛ էակ է, որ զգոյլն միայն ունի. *իսկ* զչգոյլն ո՛չ ունի. ապա ուրեմն անփոփո՛խ է էութեամբ: - 162. *Իսկ* առ աստուած կամքն և կարն հաւասա՛րք գոն. վասն որոյ հակադարձին ի միմեանս. զի զոր ինչ կամի՝ կարէ՛. և զոր կարէ՝ զնոյն և կամի՛: - 163. *Իսկ* այն որ ո՛չ կարէ զչար, առաւել կարողութեանն է ցոյցք, և ո՛չ եթէ անկարութեան: - 163. *Իսկ* որ ասէ, մինչ զի ո՛չ երևիլ սկիզբն լինելութեան սորա: - 163. Հինգերորդ զանազանութիւն՝ զի ծնն անմարմին է ի միտս. *իսկ* շինեալն մարմին: - 163. *Իսկ* հասարակութիւն է Նախ՝ զի երկուց սկզբանցն մի և նո՛յն է պատճառ ներգործական. որ է՛ արուեստաւորն: - 163. *Իսկ* այս օրինակ, և նա՛ ճշմարտութիւն: - 163. *Իսկ* աննմանութիւն բազում ևս: - 164. *Իսկ* նախատեսութիւնն աստուծոյ է՝ անսկիզբն յաւիտենիւ: - 164. *Իսկ* առ աստուած անջնջելի՛ է գիր նախատեսութեանն: - 164. *Իսկ* առ աստուած ներգործութեամբ. զօրութեամբ և սոսկ մտածմունք ո՛չ բնաւ: - 164. *Իսկ* նախախնամութիւնն առ աստուած գոյացական է և միշտ. զի պատահումն ո՛չ գոյ յաստուած: - 164. *Իսկ* առ աստուած նախատեսութիւնն անշա՛րժ է և անզղջական: - 164. *Իսկ* առ աստուած բնութեամբ է և առանց ուսման: - 164. *Իսկ* նախատեսութիւնն աստուծոյ միով զբազումս տեսանէ, և միով զմի: - 164. *Իսկ* աստուած

տեսանէ զներքոյսն ի ներքուստ, և զարտաքոյսն ի ներքուստ. զի զամենայն առ ինքն և յինքն տեսանէ. և ոչ ինչ է արտաքոյ ինքեան: - 164. *Իսկ* աստուած անկարօ՛տ է սոցա: - 164. *Իսկ* վասն երկրորդ հարցմանն թէ՝ անկա՛ր է կուսի ապականելոյ լինի կոյս: - 165. *Իսկ* ներհական հակակայքն և այլքն կարեն փոփոխիլ ի միմեանս. որպէս չարն և բարին. ջերմն և ցուրտն: - 165. Այլ արդ՝ կուսութիւնն է ի կարելոյն որ ունի զգոլն և զչգոլն. *իսկ* ապականութիւնն է յանկարելւոյն. որ ունի զմինն և ո՛չ կարէ հակադարձիլ առ միւսն: - 165. *Իսկ* գործ պոռնկութեանն զկնիք կուսութեանն շրջէ և զբնութիւնն ապականէ ...: - 165. *Իսկ* ապաշխարութիւնն կրկին. զի կնիք ո՛չ է. և վերջին է սրբութիւն: - 166. Եւ յայտնի եղեալ որպիսութիւն սոցա ի միտ առ. զի անհաւատն այժմ եկեալ ի հաւատս կարէ՛ լինիլ և քահանայ. *իսկ* չար հաւատացեալն ո՛չ կարէ լինիլ քահանայ: - 166. Դարձեալ ասեմք թէ՝ ամենայն մեղաց մտածումն՝ զղջո՛ւմն է նորին. *իսկ* պոռնկութեան մտածումն՝ վերստին նորոգո՛ւմն է ախտին: - 166. Դարձեալ ասեմք թէ՝ ամենայն մեղաց անչա՛փն մեղք է. *իսկ* չափաւորն ո՛չ է ի մեղանս. որպէս չափաւոր ագահութիւնն. և չափաւոր բարկութիւնն. և այլն: - 166. *Իսկ* պոռնկութեան չափաւորն և անչափն մեղք են. որպէս մի՛ անգամ կոյսն ապականեալ՝ և մի՛ անգամ պոռնկեալ՝ կոչի պոռնիկ և ապականեալ: - 166. *Իսկ* աբեղայն ուխտեալ է կուսութեամբ քահանայագործել: - 167. Զօրութիւն որ ներգործութեամբ է՝ հարկաւո՛ր է. *իսկ* առանց ներգործութեան զօրութիւն՝ կարելին է որ է ներընդունականն: - 167. ...*իսկ* միւս զօրութիւնն և կարելին և ներընդունականն որ է մարթելի՝ մի է և հետևին առ իրեարս. զի ամենայն որ զօրութեամբն է՝ կարելի է և մարթելի: - 168. *Իսկ* միւս զօրութիւնն որ է փոփոխական՝ ի գոլն և ի չգոլն կարէ՛. և անկար առ ո՛չ ոք է: - 168. Դարձեալ՝ այն զօրութիւնն միշտ է. զի բնաւորեալ է ընդ ներգործութեան. *իսկ* միւս զօրութիւնն երբեմն է. զի կամ նախ է ներգործութեան. որպէս մանկան հիւսնել: - 168. *Իսկ* միւս զօրութիւնն որ կարելի է՝ և ներընդունի զգոլն և զչգոլն՝ և երբեմն՝ ասի ի վերայ փոփոխական բնութեանց. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ և ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ՛ ցրտացուցանել և ո՛չ ցրտացուցանել: - 168. *Իսկ* առ նախատեսութիւն արարչին՝ միշտ ներգործութեամբ: - 169. Պատասխանեմք առ այս եթէ՝ առանց ջերմութեան անձև և անկերպ է անորակ մարմինն. *իսկ* տերևն զա՛րդ է ծառոյն. և մազն մարմնոյն: - 170. *Իսկ* պատահումն ի յայլս ունի զէութիւնն, և կարօ՛տ է այլոյ ի գոլն. որպէս գոյն ի մարմնի: - 170. *Իսկ* աստուած է պարզ գոյացութիւն և անշարադիր. ըստ որում, ի լոյս բաղդատի: - 170. Չորրորդ՝ զի պատահումն է՛ փոփոխական իր. *իսկ* աստուած անփոփոխ է էութեամբ զօրութեամբ կամօք և գիտութեամբ. ըստ այնմ՝ «ես նո՛յն եմ և ո՛չ փոփոխիմ»: - 170. Զի թէ գոյր պատահումն ի յաստուած, լինէր բազում և ո՛չ մի. *իսկ* աստուած մի է և ո՛չ բազում...: - 170. *Իսկ* ի յաստուած աւելորդ ինչ ո՛չ է: - 170. *Իսկ* աստուած անմարմին էութիւն է: - 170. *Իսկ* ի յաստուած պատահումն ո՛չ է. զի ո՛չ է ինքն ինքեան այլ՝ և այլայլակ: - 170. Տասներորդ՝ պատահումն է առաւել և նըւազ. *իսկ* գոյացութիւն ո՛չ է առաւել և նուազ: - 171. *Իսկ* անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ. զի Է կոչի աստուած, ըստ այնմ «ես եմ որ էն». և ո՛չ ըստ այնմ որ բաժանի ի գոյացութիւն և ի պատահումն. որպէս հոմանուն կամ փաղանուն. կամ ի միոջէ և առ մի. որպէս ընդհանուր էակն է՝ բաժանի առ մեզ: - 171. *Իսկ* Գոյացութիւն կոչի աստուած, ո՛չ ըստ որում ներհակ պատահմանց է ընդունական որպէս մեք. այլ ըստ որում բաժանի ընդդէմ պատահմանց. որ է՛ միայն պարզ գոյացութիւն որպէս ասացուք: - 171. *Իսկ* բան՝ ներտրամադրեալ և անբաժանական: - 171. *Իսկ* Որակ կոչի, որպէս բարի, լոյս, քաղցր, և գեղեցիկ: - 171. *Իսկ* Առինչ կոչի, ո՛չ որպէս առ մեզ առինչք են մակագոյեղքն. այլ գոյացական, կամ բաղդատական. որպէս ծնօղ. ծնեալ. բղխօղ. բղխեալ. կամ արարիչ և տէր արարածոց և ծառայից: - 172. *Իսկ* Ուր ոչ ասեմք տեղի աստուծոյ. զի տեղի որ է՛ բովանդակութիւն, եռաբա՛ր ասի: - 172. *Իսկ* Երբ ո՛չ ասի աստուծոյ. զի անժամանա՛կ է և ո՛չ ունի փոփոխումն. այլ ասի յաւիտենական...: - 172. *Իսկ* Ունիլ ասի, իմաստութիւն և բան ունի և զարարածս. և ունի յատկութիւն որով տարորոշի յարարածոց: - 172. *Իսկ* Կալ՝ ո՛չ զկալն կամ զնստիլն մարմնապէս. այլ զհաստատիլն անշարժ էութեամբ. զի ո՛չ շարժի. ո՛չ բնութեամբ, ո՛չ կամաւ, և ո՛չ տեղեաւ: - 172. *Իսկ* Առնելն՝ յարարածոց յայտ է. և Կրել զնոսա բանիւ զօրութեան իւրոյ ըստ առաքելոյ: - 172. Դարձեալ առնելն է գործ ստեղծման. *իսկ* կրելն գործ նախախնամութեան: - 172. Դարձեալ առնելն է յինքենէ յայլս. *իսկ* կրելն յայլմէ առինքն...: - 172. *Իսկ* մեք ասեմք յոչնչէ ստեղծեալ աստուծոյ զարարածս: - 173. *Իսկ* բանք փիլիսոփայիցն ո՛չ են ընդդէմ եկեղեցւոյ. այլ համաձայնին միմեանց: - 173. *Իսկ* մշտնջենաւոր էակն միայն մին ունի զօրութիւն որ է առինքն ներգործութեամբ. որպէս հրոյ ջեռուցանելն. և արեգական լոյսն. և հրեշտակին անապականութիւնն: - 173. *Իսկ* գործ բնութեամբ է՝ զի բնութիւնն առաջնորդէ՛ գործոյն. որպէս հուր բնութեամբ այրէ, և սարդն բնութեամբ գործէ: - 173. *Իսկ* աստուածայինն է ընդդէմ սոցա. զի է բանաւոր և է միշտ ներգործական

որպէս ասացաւ: - 173. Էութիւն և բնութիւն մի են որպէս մարդկութիւն. այլ էութիւնն երբեմն նշանակէ զանձն որ ա՛ստ է և այժմ. *իսկ* բնութիւնն ո՛չ: - 174. *Իսկ* ենթադրութիւն է զանազանելին և ո՛չ զանազանեալն բացորոշ յատկութեամբ. որպէս ոմն մարդ: - 174. *Իսկ* անձն է զանազանեալ հանդերձ բացորոշ յատկութեամբ. որպէս պետրոս: - 174. *Իսկ* պատահական տեղի է, յորում նեստեալ ոք՝ կարէ՛ թողուլ զայն և լինիլ յայլ տեղւոջ. որպէս ի վեր կամ ի վայր: - 174. *Իսկ* անմարմնոյն ո՛չ է տեղի մարմնական. որպէս աստուծոյ կամ հրեշտակաց. կամ հոգւոց. զի անպարագրելի են: - 174. Եւ գիտելի է՝ զզանազանութիւն սոցա. զի հոգին է ի մարմինն կալմամբ և սահմանեալ. այլ ո՛չ պարագրեալ. *իսկ* հրեշտակն ո՛չ կալմամբ ի մարմին և ոչ պարագրեալ. այլ սահմանեալ: - 174. *Իսկ* աստուած արտաքոյ է սոցա. զի ո՛չ է սահմանեալ և ո՛չ պարագրեալ և ո՛չ կալեալ յիմեքէ. ո՛չ իմացմամբ և ո՛չ տեղեաւ կամ մարմնով: - 174. Այլ մի է պետրոսն ըստ անձին անհատ գոլոյն. և մի է բնութիւն պետրոսին ըստ միաւորութեան բանին. *իսկ* սոքա օրինակ՝ և նա՛ ճշմարտութիւն: - 176. *Իսկ* առ յանցաւորսն գրով խօսի: - 177. *Իսկ* Երկրորդն զի է ձայնաւոր: - 177. *Իսկ* Երրորդն զի է առաջին: - 178. *Իսկ* Չորրորդն զի ունի ձև, **գ** ստեղն ի մի խառնեալ: - 178. *Իսկ* Հինգերորդ զի կոչի այբ. որ թարգմանի հայր: - 178. *Իսկ* իմաստութեան ոչ ինչ է ներհակ: - 178. *Իսկ* արիստոտէլ ի վերայ երկուց բևեռացն ասէ շարժիլ երկնի որպէս անիւ սայլին ի վերայ սռնոյ: - 182. *Իսկ* բոլորակ ձևն ի միոյ գծոյ բաղկանայ: - 182. *Իսկ* բոլորակ ձևն ի մէջ ամենայն ձևոց է կատարեալ: - 182. Վեցերորդ՝ զի թէ երկինքն ո՛չ էր բոլորակ, յայնժամ արեգակն և այլ աստեղք յորժամ գային ի մէջ երկնից, մեծագոյն երևէին. քանզի ի միջին կիտէն երկնից առ մեզ է ուղղական գիծ. *իսկ* յարևելից առ մեզ է՛ խոտորնակի գիծ. և ուղղական գիծն կա՛րճ է քան զխոտորնակ գիծն: - 183. *Իսկ* Յատկական երկինքն է **ե**: - 183. *Իսկ* Նմանական երկինք է **ե**: - 183. *Իսկ* եղական լոյսն դարձեալ բաժանի յիմանալին և ի զգալին: - 185. *Իսկ* զգալի լոյս դարձեալ բաժանի յերկնայինս և յերկրայինս: - 185. *Իսկ* երկրային լոյս՝ է ճրագն և պայծառ օդն և լոյս աչաց: - 185. *Իսկ* Ցուլն և Կոյսն և Այծեղջիւրն, ունին զբնութիւն հողոյ չոր և ցուրտ: - 189. *Իսկ* Եկաւորն և Կշիռն և Ջրհոսն, ունին զբնութիւն օդոյ ջերմ և գէջ: - 189. *Իսկ* Խեցգետինն և Կարիճն և Ձուկն, ունին զբնութիւն ջրոյ ցուրտ և գէճ: - 189. *Իսկ* այլք ուղղակի՛ ասեն՝ թէ անմոլար աստեղքն ամրացեալ են ի հաստատութեանն որպէս սպի ի վերայ մարմնոյ, և ընդ նմա շարժին: - 189. *Իսկ* մոլորակքն ի գօտիս իւրեանց շարժականք են. զի բարձրանան և խոնարհին: - 189. *Իսկ* յատուկ՝ յարևմտից յարևելս: - 189. *Իսկ* զօր՝ որ է տիւ և գիշեր. և զդ եղանակս. և զտարի, արեգա՛կն կատարէ: - 190. *Իսկ* շաբաթն որ է՛ **է** օր՝ կոչեցաւ յեօթն մոլորակաց: - 190. *Իսկ* կէս մասն ի մեկ ամիսն՝ լինի կէս ժամ. և ի մեկ տարին **զ** ժամ. և ի **դ** տարին ժողովեալ՝ լինի օր մի **իդ** ժամ. և ա՛յն առնէ զնահանճն. և շարժէ՛ զտօնս և զեղանակս: - 190. *Իսկ* վերադիրն լինի ի պակաս ընթացից լուսնոյն ըստ այսմ օրինակի: - 191. *Իսկ* սուրբն եփրեմ ասէ, մետասան թիւ գտանի ի մէջ երից աւուրցն՝ ստեղծման լուսնին: - 191. *Իսկ* **ե** օր աւելեացն՝ է՛ **ե** օր Արարաչութեանն նախքան զստեղծումն ադամայ: - 191. *Իսկ* Գարնանամուտ՝ որ է՛ հասարակածն՝ է՛ չորրորդ օրն. յորում լուսաւորքն կազմեցան: - 191. *Իսկ* եբրայեցիքն ո՛չ այսպէս, այլ՝ առաջին օր արարչութեան է՛ նոցա աւելեացն **ա**: - 191. *Իսկ* Ռոպէն այս է: - 191. *Իսկ* հիննժերեակն է, զի ընթանայ լուսինն ի տարին **յճդ** օր՝ և **ժթ** մասն. որ լինի ի **ժթ** ամին՝ **յկա** մասն: - 191. *Իսկ* երկրաւորքս ժամանակեայ. և ժամանակն կարգ ունի, առաջին՝ միջին՝ և վերջին: - 192. *Իսկ* որ զերկրաւորքս ըստ կարգի, ամենագութ մարդասիրութեանն է երևումն. ո՞րպէս խնամով զպէտս մարդկան յայնքան աւուրս կատարեաց: - 192. *Իսկ* օր արուեստակա՛ն է ծագումն լուսոյ մինչև յերեկոյ՝ առհասարակ յամենայն ազգս: - 194. *Իսկ* արուեստական օրն միայն տիւ ասացաւ: - 194. *Իսկ* արուեստական օրն առաւելու և նուազէ՛: - 194. *Իսկ* աստեղագէտք զհասարակ օրն. յորում արեգակն ի բարձրութիւնս իւր հասանէ: - 194. *Իսկ* ա՛յժմ քրիստոնէիցս կրկին է սկիզբն բնական աւուր. այսինքն մէջ գիշերն, և առաւօտն: - 194. *Իսկ* միւսն է ընդ ծագումն լուսոյն. յորում զպահք և զուտիք բաժանեն. այսինքն լոյսն և գիշերն: - 194. Եւ գիտելի է, զի ի սկզբանէ աշխարհիս մինչ ի քրիստոս լո՛յսն առաջանայր գիշերոյն. *իսկ* յետ քրիստոսի մինչ ի վախճան՝ գիշե՛րն առաջանայ լուսոյն: - 194. *Իսկ* գիշեր յարութեանն քրիստոսի՝ փոխեաց զայս կարգ. զի յարութեամբն իւրով եհան զմեզ ի լոյս շնորհաց և արդարութեան: - 194. *Իսկ* տեղիքն, զի յա՛յս կիսագունդս լինի լոյս, և ի միւսն խաւար: - 194. *Իսկ* գարուն և աշուն է՛ միջակ և ջերմ և գէջ՝ բուսուցանէ: - 197. *Իսկ* գարուն և աշուն հաւասար արդարութիւն է տուընջեան և գիշերոյ. վասն որոյ բուսանին սերմանիք: - 198. *Իսկ* աշուն զնմանութիւն գարնան ունի. վասն այն և նա՛ բուսուցանէ: - 198. *Իսկ* ձմեռն է կատարած և վերջք կենցաղոյս. վասն այն բոյսք և ծնունդք դադարին և չորանան: - 198. *Իսկ* ամառն նորին նման. զի հունձք է և կատարած գործոց բարեաց. և ո՛չ ժամանակ սերմանելոյ կամ բուսանելոյ: - 198. *Իսկ* հար, որ է՛ նոյ արդար. Սիւան, սեմ.

Թամուզ. թարա. Ապ, աբրահամ: - 200. *Իսկ* հայոցս է՛ ի վերայ հայկին ըստ տասն ծննդոցն: - 200. *Իսկ* աղուանից ամիս Նաւասարդուլ. որ է՛ նաւասարդացի. այսինքն ի թոռանց է. յուստերաց կամ ի դստերաց: - 201. *Իսկ* վրացն Ախալծիլ, որ ստուգաբանի Ախացայ. այսինքն թէ մեծ պարոնացի. Սեթալի. որ է՛ սոնթեցի: - 201. *Իսկ* յունացն՝ ի վերայ դիցն անուանցն է: - 201. *Իսկ* հռոմայեցւոցն ի վերայ նախնեա՛ցն է: - 201. *Իսկ* մարտն և ապրիլն՝ իմաստասիրա՛ց անուանքն են. և Օգոստոսն թագաւորի: - 201. *Իսկ* ծանրութիւն երկաթոյն բնական է. վասն որոյ ո՛չ կորնչի: - 202. *Իսկ* այլք ասեն, թէ ի պարզոյ լինի, նշա՛ն է խոնաւի. և թէ ի խոնաւ՝ նշա՛ն է պարզի: - 203. *Իսկ* գէջն լինի ամպ. և չորն ի մէջ ամպոյն նեղեալ պատառելով զծալմունս ամպոյն՝ լինի որոտ և փայլատակունք ևս: - 204. *Իսկ* հուրս առ մեզ որ կապեալ է ի նիւթ՝ տկա՛րն ունի զայրելն. վասն որոյ նախ զքանակն և զորակն ապականէ, և ապա զգոյացութիւն իրին: - 204. *Իսկ* ի չորրոյն՝ հողմունք և հնչմունք զանազանք. որոտք և փայլատակմունք. կայծ. և այլն որպէս ցուցաւ: - 204. *Իսկ* Մառախուղն է մթագոյն գոլորշի անծննդական ջուրց. քան զօդ թա՛նձր է, և քան զամպ նօսր: - 204. *Իսկ* Ցօ՛ղ է գիճութիւն ի պարզոյ իջեալ. զոր աստեղք ի գիշերի քարշեն ի վեր. և ընդ ծագել առաւօտուն՝ յետ ի յերկիր անկեալ մանրամասն շիթ: - 204. *Իսկ* Եղեա՛մն է նոյն ցօղն թերասառոյց ի վերայ երկրի: - 205. *Իսկ* Անձրևն է ջուր իջեալ ի թօթափման է ամպոց. թանձրացելոց ի խոնաւութեանց: - 205. *Իսկ* Ձիւնն ծնանի ի ջերմացեալ ամպս ի մէջ երկուց ներհակ հողմոց: - 205. *Իսկ* Կարկուտն ծնանի ի յամենևիմբ ջերմ ամպոյ, զօրութեամբ արեգականն ի վեր քարշեալ: - 205. *Իսկ* չորն ի ցրումն վանելով արտաքս հոսմանէն հո՛ղմ եղև: - 205. *Իսկ* որ ի Հարաւո՛յ հնչէ, հասարակ Նօտոսք կոչին: - 205. *Իսկ* Արևմտիցն հասարակ Զեփիւռք կոչին: - 205. *Իսկ* Հիւսիսայինքն, Վաւռէք կոչին. որք են ցուրտ: - 205. *Իսկ* միջինն Ապէլիօդ. բարեխառն. անձրև, և արև: - 205. *Իսկ* միջինն է Զեփիւռն. շարժէ՛ զծաղիկս: - 205. *Իսկ* միջինն՝ Ապարքտիաս. ցուրտ և կարկտաբե՛ր է: - 206. *Իսկ* միջինն է՛ Նօտոսն. առնէ որոտ. և փայլակն. և անձրև խիստ: - 206. *Իսկ* մրրիկ հո՛ղմ է ի յամպոյն ելեալ և առ ինքն ի յամպն ներման առեալ և շրջեալ: - 206. *Իսկ* շա՛րժն է թանձր գոլորշի արտաքս քարշեալ յերկրէ, և նեղեալ ի յելսն շարժէ՛ զերկիր: - 206. Եւ օրինակ տայ զկերակուրն որ ի ստամոքսն եփի. և գոլոշիկքն ի գլուխն ելանէ և պարզ ջուրն ի լեարդն. *իսկ* մնացեալ թանձրն լինի դառն և աղի: - 208. *Իսկ* ի դաշտս ո՛չ է հողմ. վասն որոյ առաւել շողէ: - 211. *Իսկ* մայրք անպտուղք՝ են պիտանացու ի վեց իրս: - 212. Եւ դադարք դիւաց. *իսկ* յետոյ լուցկի են գեհենին յաւիտենից: - 212. *Իսկ* պտուղք զկարգ տարերա՛ցն բերէ որպէս ցուցաւ. ի հողոյն սկսեալ և առ հուրն դադարեալ: - 213. *Իսկ* ծառք միջնորդութեամբ փայտին ի հեռուստ ընդունին: - 214. Նախ՝ զի ծառայք են միշտ վասն այլոց. որպէս մարդս միշտ տէր է. և անասունքն տէր և ծառայք. զի ծառայք են մարդկան, և տէր բուսոց. *իսկ* բոյսք և տունկք միշտ ծառայք են: - 214. Զի մարդն ունի զգլուխն ի վեր որպէս երկինքն. և զոտքն ի վայր որպէս երկիրս. վասն որոյ ամենայն ծորմունք բնականապէս զառիվա՛յր հոսին. *իսկ* ծառն ծռեալ ունի զգլուխն ի վայր, և զոտսն ի վեր. կամ թէ ծռեա՛լ ունի զոտս և զստեղունս յայս կոյս և յայն կոյս: - 214. *Իսկ* ձկունք զի ո՛չ ունին զօդ՝ ամենևին են անձայնք: - 216. *Իսկ* անասուն, զի անխօսուն են. կամ զի անսնունդ և անընտել: - 216. *Իսկ* գազան, կամ զի գզօ՛ղ են և պատառօղ. կամ զի զանազան և ահագին կերպարանք ունին: - 216. *Իսկ* մարդն բոլորի՛ցն է իշխան և թագաւոր: - 216. Տասներորդ՝ մաշկեղէն հանդերձն ադամայ. *իսկ* այլ զգեստք ի յարւեստից կազմեցան յետոյ: - 216. *Իսկ* գազանացն միս է՛ զօրեղ. վասն այն ի խելս նոցա առաւել յարմարի և ուժովացնէ՛ զնոսա: - 218. *Իսկ* մարդոյս հնարք և իմաստութիւնն բանականութեամբ է. վասն այն բազում է ի նոսա հնարք. և առաւել և նուազ, և ո՛չ հաւասարք: - 218. Զի մարդս բազում իրօք զբաղեալ է ի միտս. *իսկ* նոքա միայն ի բնութիւնս իւրեանց փութով ճանաչեն: - 218. *Իսկ* ադամայ կոչելն փա՛ռք է որդւոցս: - 220. *Իսկ* զընդհանուր տեսակացն՝ ադամ. որպէս եզն. ձի. և այլն: - 220. *Իսկ* զմասնաւոր անհատիցն՝ դնեն իւրաքանչիւր ոք ծնունդք ադամայ: - 220. Երրորդ՝ ի նոյն *իսկ* ի ձևոյ շինուածոյ մարդոյն. զի ուղիղ գոլով՝ զիշխանականն նշանակէ. *իսկ* կենդանիքն կո՛ր գլխով զծառայականն ցուցանեն: - 220. *Իսկ* որք այժմ ապստամբք եղեն՝ վասն **բ** պատճառի: - 220. Երկրորդ՝ զի ցոր քան իշխէր ինքն ի վերայ անասնական մասանց իւրոց որպէս ասացաք, իշխէր և ի վերայ արտաքին անասնոց և գազանաց. *իսկ* յորժամ ապստամբեցին ներքինքն բանականին տեառն իւրեանց՝ ապստամբեցին և արտաքինքն մարդոյն տեառն իւրեանց: - 220. *Իսկ* զբանն ներսէսի՝ ա՛յսպէս պարտ է իմանալ: - 222. *Իսկ* այլք ասեն թէ՝ վասն առաւել բարձրութեանն՝ լոյս արեգականն ո՛չ երբէք հեռանայ ի նմանէ. թէպէտ ի ներքոյ երկրի անցանէ. որպէս լուսինն թէպէտ ի վերին կամարն լինի, զլոյսն առնու յարևէն որ ի ներքին կամարն: - 222. Դարձեալ ասեն ոմանք, նախ քան զուտելն ի պտղոյն՝ գիտէր ադամ զբարին փորձիւ, և զչարն գիտութեամբ. *իսկ* յորժամ եկեր՝ գիտաց զչարն փորձիւ, և զբարին գիտութեամբ. այն է գիտութիւն բարւոյ և չարի: - 223. *Իսկ* սուրբն նիւսացին

ասէ թէ՝ կրկին է բարին: - 224. Եւ թէ ասեն, հրեշտակք յանէից գոյացան և ո՛չ ի միմեանց. *իսկ* մարդկան ազգ պա՛րտ էր ի միո՛յն ծնանիլ: - 226. *Իսկ* ամպք և հողմունք ի յօդոյն են. որպէս քարինք և երկաթք յերկրէ. սոյնպէս աղբիւրք և գետք ի ծովէ՛: - 227. *Իսկ* յերրորդումն, զգազանս և զմարդն. ի վերջին տարրէ՛ այսինքն ի հողոյ կազմեաց: - 227. Վեցերորդ՝ որք վասն որոց եղեն. զի ի գոյիցն ոմանք են վասն ինքեանց. *իսկ* այլ վասն այլոց և ոմանք ինքեանց և այլոց: - 230. Եւ այս *իսկ* է գործն, այսինքն վայելել հոգւով յիմանալիսն, և մարմնով ի զգալիսս. պարտ էր նախ գոյանալ նոցա, և ապա՛ գործողին և վայելողին: - 231. Իսկ թէ ըստ մարմնոյն շեղեսցի՝ ի մահ պարտաւորեսցի և տնկեցի ի մարմնաւոր տեղիս. որպէս և եղև *իսկ*: - 231. *Իսկ* այլ անդամքն ըստ կարգի զմիջին և զվերջին: - 232. *Իսկ* այլ կենդանեացն հողն բազում է. վասն որոյ ծանրացեալ ի վա՛յր հակէ: - 233. *Իսկ* մարդս ուղիղ ի վեր: - 233. Ութերորդ՝ վասն արտաքին զգայութեանցն որ են ի գլուխն. զի այլ կենդանիք միայն հեշտանան կերակրով և ցանկութեամբ. *իսկ* մարդն հեշտանայ առաւել գեղեցկութեամբ զգալեացս...: - 233. *Իսկ* բարոյականն, Նա՛խ՝ զի յերեսն փչեաց զշունչ կենդանի. վասն որոյ յերեսն ունի զգայարանս մարմնոյ: - 234. *Իսկ* մարմինն անզգայ և անշա՛րժ է. և յայտ է ի մեռանիլն: - 234. *Իսկ* երկուքն իշխանականք. որ է՛ տեսանելիքն և լսելիքն. ի հեռաստանէ՛ զգան: - 235. *Իսկ* ի սոցանէ պատուական է տեսանելիքն: - 235. Այսպէս ի հասարակաց ի նուազունս գոլով ի մարմնականն տիպ. *իսկ* անդրադարձեալ: - 235. *Իսկ* երկրորդն թէ յորմէ՞ սեռէ է օտարն և աննմանն՝ գիտելի է, զի դէմն և կերպն ի չորից սեռից գոյանայ. ի գոյէ՝ ի քանակէ՝ յորակէ և ի տեղւոյ: - 236. *Իսկ* միայնացեալ որակ ի ձևոյն, երևի աննման. զի նմանն ի վերայ որակութեան ասի. որպէս ծանրութիւն: - 236. *Իսկ* երրորդն թէ վասն է՞ր յամենայն իրս երևի նման և աննման. որպէս ի շնչաւորս և յանշունչս. ի կենդանիս և յանկենդանս և յայլսն ամենայն: - 236. *Իսկ* բանականն այսպէս: - 237. *Իսկ* զի անծին. և ծնեալ. և բղխեալ. ըստ այսմ աննման և յատուկ առանձնացեալ: - 237. *Իսկ* մազն արտաքոյ անզգայ՝ ծածկոյթ՝ զգեստ՝ և պահապա՛ն է ամենեցուն: - 240. *Իսկ* մազն է այրեցած արիւնն. որ օդովն ի դուրս փչի. որպէս տունկք յերկրէ: - 240. *Իսկ* յորժամ առողջանայ մարդն և արիւնն յստակի, արիւնն միս լինի, և մազն ո՛չ աճէ: - 240. *Իսկ* ի ծերութեանն՝ լինի հողմն հիւսիսոյ հով և գէջ: - 240. *Իսկ* **դ** ջուրն որ է ի մարդն՝ ըստ չորս տարերացդ է: - 240. *Իսկ* **է** գլխաւոր անդամքն են այսոքիկ ըստ է մոլորակացն ունելով զբնութիւնս նոցա: - 241. *Իսկ* սիրտն զի առաւել ջերմ է՝ հալէ՛ զճարպն: - 241. *Իսկ* լեարդն զի ներգործութեամբ է արիւնն ի նմա: - 241. *Իսկ* պարզն և մաքուրն մնայ ի յուղեղն ի փափկոց խելացն: - 242. *Իսկ* բարոյական պատճառ: - 243. *Իսկ* սիրտն սկիզբն է շնչերակացն: - 244. *Իսկ* լեարդն է սկիզբն արեան երակացն. որ ելանէ ի լերդէն **է** երակ լի արեամբ: - 244. *Իսկ* զի կէսք քարց և անմորուք լինին, զի ջլապինտ է մորթ երեսացն որպէս զթաթ ձեռաց. վասն որոյ մազ ո՛չ բուսանի: - 245. Զի թէ հուրն աւելի է, լինի շէկ գունով. և թէ օդն՝ լինի կարմիր. *իսկ* ջուրն առնէ սպիտակ. և հողն սեաւ գունով: - 245. Զի ասեն եթէ՝ ոգի արուին է՛ փոյթ և քաչասիրտ. *իսկ* կին՝ ողորմած և երկչոտ: - 246. *Իսկ* լայնն՝ փոքրախելք: - 246. *Իսկ* քառակուսի և չափաւոր մեծն՝ իմաստուն է և մեծահոգի: - 246. *Իսկ* թխակն և կարմրագոյն՝ քան զգազան չա՛ր է: - 246. *Իսկ* որ հաւասար ի ճակատէն իջանէ ոչ բարձր և ո՛չ ցած, արիութեան և խոհեմութեան է նշան: - 247. *Իսկ* որ իջանէ ի բարձսն, չարակա՛մ է և չարախնդաց: - 247. *Իսկ* հերն կիսասև և ոչ յոյժ բարակ՝ զբարեբարոյն և զբարի կազմուածն ցուցանէ: - 248. *Իսկ* ամենայն անդամք որ ներհա՛կ են այսմ, զթիւրամիտն ցուցանեն: - 248. *Իսկ* կենդանականին են, Կամք. Ընտրողութիւն. Յօժարութիւն. Բարկութիւն. Ցանկութիւն: - 248. *Իսկ* անբանք՝ Երևակայութիւն. Զգայութիւն. Յօժարութիւն. Բարութիւն. Ցանկութիւն: - 248. *Իսկ* մաքսիմոս իմաստասէրն ասէ, Յոգի մարդոյ **բ** զօրութիւն ունի. միտք և բան: - 248. *Իսկ* Բանին, Խոկումն. Գործ. Առաքինութիւն. Յաւատ: - 248. *Իսկ* բանն սկիզբն առեալ ի խոկմանէն, զտեղի առնու ի բարին: - 248. *Իսկ* ըստ այլոց, զօրութիւնք հոգւոյն բաժանին յերկուս. որ է իմացումն և կամքն: - 248. *Իսկ* զոմանս ունի ո՛չ հասարակ ընդ անասնոց. որպէս բանն. իմացումն. և կամքն. և սոյնպիսիք: - 249. *Իսկ* յանասունսն ամենևին ըստ երկոցունցն կորնչին ընդ մարմնոյն: - 249. *Իսկ* անհնազանդ բանին՝ որպէս բանականն և տնկականն: - 249. *Իսկ* ներքինն՝ որ է հասարակ զգայութիւնն. երևակայութիւնն. կարծիքն. տրամախոհութիւնն. յիշողութիւնն որ է միտք. զի ամենայն ինչ ի յիշողականն մտանէ: - 249. *Իսկ* զբանականն և զիմաստութիւնն՝ կատարեալքն հասակաւ. յորժամ բանին մասն կատարի ի մարդն: - 251. *Իսկ* տրամադրութիւնք հոգւոյն՝ խառնուածոյ մարմնոյն ո՛չ հետևին: - 251-252. *Իսկ* որ ի զ օրն ասեմք ստեղծեալ զարարածս, այս զկարգ և զդասն նշանակէ մի քան զմի յետոյ. այլ ստեղծումն համանգամայն եղև: - 253. *Իսկ* որ զմարմին յառաջ ասեն քան զհոգի,վկայ ածելով զմովսէս որ ասէ եթէ՝ էառ զհողն և շինեաց մարմին. և յետոյ փչեաց ի նա զշունչն կենդանի, որ է կենդանարար հոգին: - 253. *Իսկ* վարդապետք ուղղաձևութեան՝ յանդիմանեալ

զերկուսին կողմանց ստախօսութիւն, ո՛չ զհոգի յառաջ քան զմարմին ասեն ստեղծեալ, և ո՛չ զմարմին քան զհոգի: - 254. *Իսկ* բանականս մարդ ո՛չ ամենևին նախախնամութեամբ է. զի հոգին ո՛չ ի ծնողաց, այլ ի շնորհացն աստուծոյ պարգևի: - 257. Նմանապէս և արուեստաւորն աստուած նախանկար տեսութեամբն ունի ի միտս իւր նախքան զլինիլն մարդոյն՝ զորպիսիութիւնն. զորքանութիւնն. և զայլն. *իսկ* արուեստն որ է արարչադիր հրամանն, ազդէ՛ ի նիւթն. և զի անկատա՛ր է նիւթն, անկատար տայ և նմա հոգի զտնկականն: - 258. *Իսկ* յառաջ ածեալն նոր գոյացաւ: - 258. *Իսկ* բարոյականն այս ինչ է. զի զպատկերն արարչական և զառաջին կեանս դրախտին կորուսաք, և զնասնեղէն պատկերն և զերկրորդ և զախտաւոր կեանս ընտրեցաք. յիրաւի շրջեցաւ ի մեզ և լինելութիւն հոգւոյն: - 258. *Իսկ* հոգի մի է մարդոյ ի միոյ նախախնամութենէ յառաջ բերեալ. յանկատար նիւթն եդեալ զտնկականն և զզգայականն. և ի կատարեալն զհոգի բանական ծագեալ: - 259. *Իսկ* զտնկականն ի տունկն ո՛չ է պարտ ասել զօրութիւն. այլ հոգի է տնկական: - 259. *Իսկ* զերրորդ գործն որ է իմանալն և բանաւորիլն, ունի հոգին և յետ անջատելոյն ի մարմնոյն: - 260. *Իսկ* որ հասարակն է սոցա և պատշաճաւոր, ունին զնոյն հասարակութիւն բուսոց ի նոյն ժամանակս: - 261. Զի սերմնական զօրութիւնն որ է՛ ի նիւթն այն՝ *իսկ* ընդ խառնիլ սերմանցն յարգանդի, զուգապէս ցուցանէ զտնկականն: - 261. *Իսկ* տնկականն կերակրի յետ **զ** աւուր: - 262. *Իսկ* տնկականն ունի երիս զօրութիւնս. այսինքն զկերակրականն որ է՛ սննդականն. զաճողականն և զծննդականն: - 262. *Իսկ* որք ի **խ** աւուրս ծնանին և կամ ի **ի**, որպէս հաւ. ունին նոքա զխորհուրդ չորից տասանց և չորից հնգից, ըստ **ե** զգայութեանց ներքոյ և **ե** զգայութեանց արտաքոյ որպէս ասացաք: - 263. *Իսկ* հինգ օրեայ անդրանկանն յետոյ լինիլ՝ բերէ՛ զնմանութիւն նախնի մարդոյն. որ յետ **ե** աւուր ստեղծաւ: - 264. *Իսկ* տունկք որք են մեծաբոյսք՝ և չորքոտանիք մեծամեծք՝ յերրորդ ամին ծնանին զնմանն. որ է թիւ կրկին ամսոյ ընդ երրեակ վեցից: - 264. *Իսկ* այլ նուազունքն և կամ յաղթանդամքն մարմնով՝ առաւել և նուազ: - 264. *Իսկ* մարդոյն խորհուրդն ըստ չորից տարերց և երից զօրութեանց տնկականին եօթեամբ կատարի. թիւ շնորհալի և մշտակոյս ըստ աթենայ. զի ոչ ծնեալ լինի և ո՛չ զայլս ծնանի: - 264. *Իսկ* ամառն, և մինչ ի **զ** ժամս աւուրն, և խարտեաշ մաղձն, և երիտասարդն՝ ըստ նմանութեան տարրական հրոյ ջերմ և չոր գոլով. վասն որոյ առաւել բարկացօղ և ցանկասէր լինի: - 266. *Իսկ* աշունն, և մինչ ի **թ** ժամս աւուրն, և սեաւ մաղձն, և ալևորն, ըստ նմանութեան երկրի ցուրտ և չոր գոլով՝ ծոյլ և պղերգ գոլով ամենայն ուսմանց և գործոց: - 266. *Իսկ* ձմեռն, և յինն ժամէն մինչև յերեկոյ և բոլոր գիշերն, և սպիտակաթոյր հիւր պլղամին, և ծեր մարդ, ըստ նմանութեան ջրոյ ցուրտ և գէջ գոլով. վասն որոյ սպիտակի և ցրտանայ և պակասի զօրութեամբ: - 266. Խնդրեմ և զայս ուսանիլ թէ ընդէ՞ր է՝ զի մարդս կատարեալ կենդանի է քան զանասունս. և յորժամ ծնանին նոքաահա՛ ի նոյն ժամն կանգնին յոտից վերայ և գնան, և այլն. *իսկ* մարդն ոչ: - 266. *Իսկ* մարդոյն ուղեղն գէճ է և հով. զի նկարեսցէ յինքն զիմացումն մտացն. և ջիլքն յառաջեալ ի նման վասն գիճութեան ո՛չ կարէ պնդել զանդամսն. վասն որոյ ո՛չ կանգնի և ոչ գնայ: - 266. *Իսկ* անասնոցն ո՛չ է դաստիարակ արտաքուստ. վասն որոյ բնութիւնն խնամէ զնոսա ի ներքուստ: - 267. *Իսկ* ի ձիոյ և յիշոյ լինի ջորի. զի ընտակերք են և միաժամք ծնանին: - 267. *Իսկ* նշանակէ նախ զժամանակն. զի անցեալն և հանդերձեալն ո՛չ է ի միջի այլ ներկայն: - 267. *Իսկ* դիւականն ընդդէմ այսմ՝ վասն մոլորութեան զանազան երևմունս ցուցանէ աղտեղութեան...: - 268. *Իսկ* բնական երազն բաժանի ի չորս ըստ սրբոյն նիւսացւոյ ի գիրս կազմութեան: - 268. *Իսկ* զի բանական միտքն ո՛չ տեսանէ զերազն, այլ անբան մասն, որ է՛ տնկականն ի մեզ. նա՛ յածի յերազն. և ցուցանի այս ի կրկին իրաց: - 268. **Նա՛խ՝ զի խորհրդական միտքն կարգաւոր և առանց տարակուսանաց տեսանէ. *իսկ* երազն անկարգ և տարակուսանօք և զանհնարն տեսանէ որպէս ի վերայ օդոյ թռչիլ, և ի ծովու գնալն, և աղքատաց թագաւորել, և այլն:** - 268. ***Իսկ* տընկականն միայն գործ է ի կերակրիլն և աճիլն, նա նկարէ յինքեան ի զգայութեանցն և ի մտացն ըստ տկարութեան իւրոյ անկարգաբար երևեցուցեալ ի յիշատակարանս մտացն** որպէս ասացաք: - 268. Նա՛խ՝ ըստ առաջ եդելոյն. զի առաջ եդեալք սորա են աստուածայինքն և իմանալիք. *իսկ* նոցայն՝ մարմնականք և զգալիք: - 269. Երկրորդ՝ ըստ պատւոյն. զի այս երկնային և վերուստ իջեալ. *իսկ* այնոքիկ երկրաւոր և շնչաւոր որպէս ասէ առաքեալն: - 269. Երրորդ՝ ըստ կատարման. զի այս յետ փոխման զյոյսն ունի լծակցեալ անմահութեան և խնդութեան. *իսկ* այնոքիկ կորստական և անցաւոր: - 269. *Իսկ* իմաստունն ըստ երկուց եղանակաց իմանալի է: - 269. *Իսկ* իմաստութիւն միայն քրիստոս ասի ըստ պօղոսի. «քրիստոս՝ աստուծոյ զօրութիւն և աստուծոյ իմաստութիւն»: - 269. ***Իսկ* սահմանօրէն, հանճարն կարծիք է կապեալ ընդ ուղիղ խորհրդոյ**: - 270. *Իսկ* գիտութիւն է ստացականն: - 270. Զի իմաստութիւնն է ճանաչումն աստուծոյ բացարձակապէս. *իսկ* հանճարն է ճանաչումն համեմատաբար. այսինքն համեմատելով զստեղծուածս առ ստեղծօղն: - 270.

Դարձեալ զանազանութիւն, զի հանճարովն ճանաչի աստուած լուսաւորութեամբ լսելոցն ի գիրս սուրբս. *խսկ* իմաստութեամբ ճանաչի աստուած ըստ ինքեան: - 270. *Իսկ* մարդն ասի պատկեր աստուծոյ ըստ նմանութեանն. վասն զի ո՛չ ունի զնոյն էութիւն. այլ զնմանութիւնն աստուծոյ: - 273. *Իսկ* դրամն և տախտակն ուր գրեալ է պատկեր թագաւորին՝ միայն նման է թագաւորին ըստ ձևոյն. այլ ո՛չ ըստ բնութեանն: - 273. *Իսկ* այլք ասեն թէ՝ պատկեր եմք աստուծոյ, և նման յարացոյց նախագաղափարին: - 273. *Իսկ* նման, զի մի է երիցն էութիւն և բնութիւն. այնու նմա՛ն եմք աստուծոյ: - 273. *Իսկ* պատկեր շնորհաց և փառաց է, կատարելապէս ճանաչել և սիրել զաստուած. և այս է նմանութիւնն զոր կատարեալքն ունին աստ և ի վերին գաւառին: - 274. *Իսկ* սուրբն գրիգոր նիւսացին գեղեցիկ իմն կարգաւ մեկնէ՛: - 274. *Իսկ* հոգւոյն առանձին, Նա՛խ՝ զի ամենայն ոք խոստովանի եղեալ զնա: - 274. *Իսկ* անասունք սիրեն միայն զսննդակիցս իւրեանց: - 274. Դարձեալ՝ մարդոյս միա՛յն է կարգ կանոնաց, բնութեան, կամաց, և հարկի. *խսկ* անասնոց միայն բնութեան է: - 275. Իններորդ՝ զի որպէս կողից երեսն որ ի փորն նայի՝ կոկ գոլով և մզղնա տեսակ. *խսկ* մէջն փուչ և մրրախառն. այսպէս սէրն զոր ցուցանէ առ այրն, նօսր առ ի ցոյցս՝ և երեսս միայն ունի. *խսկ* ի սիրտն զմրուր դառնութեան: - 276. *Իսկ* պատուիրանքն՝ բարեկամի առ բարեկամս քաղցրութեամբ. որպէս հօր առ որդիս. և եղբօր առ եղբարս: - 277. Առաջին իսկապէս թշնամի մարդկան ազգի սատանայ է. *խսկ* ալ թշնամիք ի նմանէ՛ պատճառեցան: - 277. *Իսկ* յետ մեղացն յաշխարհիս այս՝ կարէ՛ մեղանչել, և ո՛չ կարէ ոչ մեղանչել: - 278. *Իսկ* յետ մահուն ի հանդերձեալն. ո՛չ կարէ մեղանչել, և անկա՛ր է մեղանչել: - 278. *Իսկ* մարգարէութիւնն լռեաց, զի ո՛չ ևս երևի բան մի յիշատակ շնորհաց նորա: - 279. *Իսկ* **ժ**երորդ՝ յորում անուսնութիւնն մխիթարութիւն տուաւ մեռելոյն. ...: - 280. *Իսկ* մաշկն որ է՛ մորթ մեռելոյ, նշանակէ՛ նախ զսուգ և զտրտմութիւն վասն մեղաց: - 281. *Իսկ* այն որ ինքն զգեցուցանէ, նշանակէ՛ զինքնազգեստ փառս անմահութեան, զոր այժմ զգեցոյց քրիստոս շնորհօք, և յետ յարութեանն զգեցուցանէ փառօք: - 281. *Իսկ* ըստ նշանակութեան ցուցանէր զբանական հոգին. որով կենդանացաւ մարդն: - 282. Որպէս ասէ աստուածաբանն թէ՝ ոչ ինչ էր ծածկոյթ ի մէջ նոցա և աստուծոյ. *խսկ* յետ մեղացն փոխեցան այսօրիկ. վասն որոյ մաշկեղէն հանդերձին ցուցմամբն նշանակէ՛ զմարմինս: - 282. Զի պահելով զպատուիրանն ի կատարեալ անմահութիւնն ժամանէր յերկինս. *խսկ* անցանելովն փոխեցաւ ի մահ և անկաւ յերկիր: - 282. *Իսկ* զփոխարէն պարգևսն զոր ընկալաւ, Վասն առաջնոյն՝ զի ասէ գիր, «հայեցաւ», այսինքն հաճեցաւ աստուած ի հաբէլ: - 286. *Իսկ* կայեն զի ո՛չ այսպիսի կամօք մատոյց՝ անարգեցաւ եօթնիցս ընդդիմակօքն: - 287. *Իսկ* մարդոյս է չարիքն կրկին է: - 287. *Իսկ* գործել ասաց զերկիր, զի դրախտին չեղև արժանի: - 287. *Իսկ* ի վերջին դարս որ է՛ լուսնին՝ սակաւակեացք են մարդիկք. զի նա՛ ի **լ** օրն վճարէ զբոլոր ընթացս իւր: - 291. *Իսկ* վարդապետք ասեն թէ՝ չեմք նման առաջնոցն ո՛չ ամօք և ո՛չ վաստակօք: - 291. *Իսկ* այժմ ամենայն ոք ի գրեալսն ուսանի զպատուիրանս աստուծոյ և ո՛չ ի հարց իւրեանց: - 291. *Իսկ* ի նախնիքն տղայ և առոյգ էր բնութիւնս՝ վասն որոյ յերկար ապրէին: - 291. Դարձեալ՝ բնականապէս ըմբռնէ գիտութիւնն զայն զոր ներգործէ բնութիւնն. *խսկ* գործն աստուածային՝ գիտութեամբ ո՛չ ըմբռնի. այլ հաւատո՛վք իմանի: - 292. *Իսկ* կցկցեալ. զի յօդեալ և կցեալ են ոսկերք մարդոյն առ իրեարս. և ի ներքոյ միս՝ և արտաքոյ մորթն է պատեալ: - 293. *Իսկ* չորեքկուսի, զի խաչաձև՛ է մարդն: - 293. *Իսկ* քաղելով գործելն, զի սկսեալ բնութիւնս մեր ի գլխոյն լայնանայ ի թիկունքն՝ և նրբի ի կրունկն, և բոլորեալ դարձեալ կատարի ի գլուխն: - 293. *Իսկ* երեսունն, մինչ ի մեծն թէոդոս. որ եբարձ զամենայն մեհեանս կռոցն և բարձրացաւ սուրբ խաչն ի գլուխս գմբեթարդ սուրբ եկեղեցեաց: - 294. *Իսկ* ի մերս տապանի՝ ա՛կն է լուսատու և միտքն: - 294. Եօթներորդ՝ արիւնն հուրն է՝ և շունչն օդն. պա՛րտ է հանել զբ տարրն. *խսկ* մնացեալն ջուր է և հող՝ ուտելի է: - 295. *Իսկ* զչորրորդ մասն որ արտաքո՛յ է սոցա՝ ուտեմք: - 296. *Իսկ* չորրորդ մասն միայն զկակուղ միսն ուտեմք: - 296. *Իսկ* խառնակել՝ ո՛չ զշփոթելն ասէ որ անլո՛ւր էին միմեանց լեզուին: - 297. *Իսկ* որ զդպրութիւն գիտէ և գրով վարի՝ **բժ**ան ազգ է. այսինքն Եբրայեցիք. Քաղդէացիք. Ասորիք. Պարսիկք. Մարք. Հնդիկք.: Փիւնիկեցիք: - 299. *Իսկ* ոմանք զարաբացիս և զմակեդոնացիս՝ յեբրայեցիս համարին՝ և կէսք ոչ: - 299. *Իսկ* վիրք և աղւանք ո՛չ կատարեալ գրով. այլ առեալ ի հայոց. որպէս ասորին և իսմայէլացին յեբրայեցւոցն: - 299. *Իսկ* **դ** կանայքն որք խառնեցան յօրինութեան ազգն իսրայէլի...: - 300. *Իսկ* քահանայ, զի հաց և գինի պատարագ մատոյց: - 300. *Իսկ* մարգարէ, զի օրհնեաց զաբրահամ: - 300. *Իսկ* աբրահամ ո՛չ: - 301. *Իսկ* աբրահամուն յետ նորա և երկրաւոր: - 301. *Իսկ* աստեղք՝ ծնունդքն իսահակայ պայծառ վարուք և երկնընթացք որպէս մարգարէքն՝ քահանայքն՝ և ընտրեալ թագաւորք՝ և այլքն: - 303. *Իսկ* մարդ փորձէ՝ զի գիտասցէ: - 304. *Իսկ* սատանայ փորձէ՛ զի խաբեսցէ որպէս զնախահայրն: - 304. *Իսկ* զի հրամայէ՛ երից աւուրց ճանապարհ տանել, զի մի՛ ապշեալ ինչ կարծեսցի:

- 304. *Իսկ* հօրն ամենևին ո՛չ պղտորեցան խորհուրդք. և ո՛չ տրտմեցան սիրտք. և ո՛չ տխրեցան դէմք: - 304. *Իսկ* մեզ հոգևորապէս ետ պարգև զբնակութիւնս երկնից...: - 306. *Իսկ* չորրորդն է՛ պատարագ տեառն մերոյ քրիստոսի որ ի մի դէմ անձնաւորութեան **գ** երես պատարագին բացայայտեցաւ: - 306. *Իսկ* այն որ երբեմն անդրանիկն խոտիւր և կրտսերն ընտրիւր, բազում ունի խորհուրդ և նշանակութիւն: - 310. *Իսկ* յայլմէ ո՛չ դնի աստուծոյ անուն. ո՛չ բնութեան. և ո՛չ անձնական. զի ո՛չ ոք է նախ քան զնա, և ո՛չ հաւասար նմա: - 312. *Իսկ* էն անսկիզբն և անվախճան է. յորմէ երրորդ աստուածաբանութիւն մեզ բացորոշի: - 312. *Իսկ* կապ մարմնական՝ և նա՛ բաժանի ի **դ** տեսակս: - 317. *Իսկ* յատկականն ասացեալ եղև: - 318. *Իսկ* գոյացական մարմինն քրիստոսի կոչի զգեստ վայելչական...: - 319. *Իսկ* լեառն հողեղէն բնութեանս մերում, կամաւ հօր վկայելով ի վերայ նորա՝ և հաճութեամբ սուրբ հոգւոյն աղաւնակերպ իջմամբ, և անքակտելի միացեալ բանիւն եղև լեառն մածեալ մշտնջենաւոր և անեզր յաւիտենիւ բարձրացեալ օրհնութեամբ և առաւելեալ: - 320. *Իսկ* թագաւորք յամենայն ամի զնոյն առնեն ուրախութիւն. ուտել և ըմպել և հեշտութիւն մարմնոյ. որպէս փարաւօն առնէր և հերովդէս: - 321. *Իսկ* այնմ որ ասեն թէ յարբեցութեան մեռան, պատասխանեմք եթէ՝ զմեղս յամենայն աւուր արիւն պատարագացն սրբէ՛ր. *իսկ* զայնմ աւուր՝ արիւնն իւրեանց: - 322. Չորրորդ՝ զի վայելէ՛ր *իսկ* նմա որպէս զիատ ցորենոյ թաղեալ յաղբիւսն՝ այսինքն յերկիր. և պարարտացեալ հասցէ ի հունձս պտղաբերութեան: - 323. Արդ՝ առաջինն և վերջինն վայելչակա՛ն է յոբայ և աստուծոյ. *իսկ* միջին երկուքն բարեկամացն յոբայ, և չար բանսարկուին յարմարի: - 323. *Իսկ* ի հոգւոյ մարդոյն **բ** իր հեռացուցանեն զդևսն. այսինքն խոնարհութեամբ և ճշմարտութեամբ. վասն զի զերկուքս զայս ո՛չ ունի սատանայ. և ամենևին փախչի և ատէ՛ զխոնարհութիւն և զճշմարտութիւն: - 324. *Իսկ* երանելին յոբ չորիցս այսոցիկ ընդդիմամարտէ՛ր և պատասխանի առնէր: - 324. *Իսկ* արդարք աստ ի նեղութեան կան վասն կրկին պատճառի: - 324. *Իսկ* զխորհուրդ նորն ադամայ բազումս տպաւորէր: - 327. *Իսկ* քրիստոս խնամարկեալ իւրոցն **ժ** սքանչելեօք ի մարմինս նոցա բժշկէր...: - 328. *Իսկ* քրիստոս անխայելով յեկեղեցի՝ փոխեաց ի մկրտութիւն: - 329. Զսոյն և մեզ պարգևեաց ծնանիլ ի ջրոյ, և ի հրոյ, և ի հոգւոյ, և յարութեամբն մարմնոյ. *իսկ* ի մօրէ՛ բնականապէս: - 329. *Իսկ* վերջին խորհուրդ է, յորժամ վասն հարկաւոր պիտոյից կերակրոյ և հանդերձի՝ յերկրաւորս հպիմք: - 331. *Իսկ* որ ասէր ազանել հողաթափս: - 331. *Իսկ* որպիսի ինչէն աստուծոյ՝ անգիտելի մնայ աստ և ի հանդերձեալն յամենայն եղական մտաց. թէ հրեշտակաց և թէ մարդկան: - 331. *Իսկ* ասելն «որ էն»: - 331. *Իսկ* տէրն մեր բոլոր անդամօք մեռաւ. զի զբոլոր բնութիւնս փրկեաց: - 332. Եւ որպէս սատանայ հրեշտակ լուսոյ կերպարանի որ չէ *իսկ*: - 335. *Իսկ* դևքն փոխեն զերևակայութիւնն և զզգայարանս, այլ ո՛չ զմիտս: - 336. *Իսկ* հրեշտակք կարե՛ն փոխել զմիտս և շրջել ի բարին. նաև զերևակայութիւնս և զզգայարանս, այլ ո՛չ զկամս: - 336. *Իսկ* աստուած փոխէ՛ և զկամս ազդելով ի նոսա զբարին. և դարձուցանէ՛ ի չարէ՛. և երբեմն թոյլ տալով անձնիշխան կամացն դառնալ ի չարիս: - 336. *Իսկ* դևք խօսին զմերձաւոր հանդերձեալն: - 336. Երկրորդ՝ զի նոցա հատուցմունքն մարմնական էր, *իսկ* մերս հոգեկա՛ն է: - 337. *Իսկ* ըստ ևսեբեայ, **վպք** ա՛մ է. զկայնան **ճի** ամ ի ներս առեալ, որ է՛ որդի արփաքսաթայ՝ և հայր սաղայի. զոր յիշէ աւետարանն, և ո՛չ յիշէ մովսէս: - 337. *Իսկ* յաւուր **ե** շաբաթոջ երեկունն զգառն զենին և ելին յայգ ուրբաթի. նիսանի **ժե**. որ էր առաջին ամիս նոցա. և ի կիրակէ անցին ընդ ծովն որ էր նիսանի **ժէ**: - 337. *Իսկ* յամենայն օր հալէր հրամանաւն աստուծոյ, զի դադարեսցեն ի հաւաքելոյ. և ապա զի դարձեալ խնդրեսցեն առաւօտել առ աստուած: - 339. Գոյացութիւն հացին փոխեալ է ի գոյացութիւն մարմնոյն քրիստոսի և է՛ անապական. *իսկ* քանակն և որակն մնացեալ է դեռևս փոփոխելի. և յայնմանէ փոխարկեպին այլայլմունք ինչ: - 339. *Իսկ* առ մեզ **ժ** մասունք և **գ** կիցն, զի **ժ**՝ սուրբ և նըւէ՛ր է աստուծոյ: - 340. *Իսկ* ոսկին, զի անապակա՛ն է բնութիւնն աստուծոյ: - 340. *Իսկ* օրէնքն և պատւիրանքն այնպէս զանազանին: - 340. *Իսկ* ի նորս զատիկ մեր զենաւ քրիստոս և ազատեաց զմեզ: - 341. *Իսկ* մեզ կատարելոցս՝ բանիւ աւանդեաց: - 341. *Իսկ* սոքա նախ հեղուն զարիւնն և յետո՛յ զջուրն: - 341. *Իսկ* ձև խորանին, որպէս սագաշէն եկեղեցոյ: - 343. *Իսկ* կէսն, զի կիսկատար և պակա՛ս են քան զաստուած այնու, զի եղակա՛նք են և յոչ գոյից գոյացեալք որպէս ասացաք: - 344. *Իսկ* չորրորդն որ է՛ մարմին, զգալիքս են թանձրացեալ: - 344. *Իսկ* պատելն ոսկի ներքոյ և արտաքոյ, զի աստուածատեսա՛նք են և մաքուր: - 344. *Իսկ* վկայութիւնն որ է՛ տախտակքն օրինաց. զի վկայե՛ն պահողացն բարիս. և ոչ պահողացն պատիժս: - 345. *Իսկ* **ե** կանգուն և կէսն. զի գալուստն քրիստոսի և փրկական խաչն և եկեղեցի՝ է՛ ի **ե**երորդ դարն և կէսն երևեալ ի մուտ զ**ռ** ամին: - 345. *Իսկ* հնոյն խորհուրդ, **դ** որակ նիւթոցն՝ **դ** տարերացն. և ոսկին անապական՝ երկնից: - 348. *Իսկ* մովսէս ո՛չ բնութեամբ՝ այլ անուամբ և գործով. զի բարի առնէր և պատուհասէր: - 350. *Իսկ* կուռքն միայն անուամբ.

ո՛չ բնութեամբ և ո՛չ գործով: - 350. Նա՛խ՝ զի հինն ստուեր և օրինա՛կ էր. *իսկ* նորս էութիւն և ճշմարտութիւն: - 353. *Իսկ* յատուկ, Նա՛խ՝ զի նոքա մարդիկ էին անկեալ ընդ տկարութեամբ: - 354. Երկրորդ, զի նոցա նոցայն ժամանակեայ և խափանելի, *իսկ* տեառն մերոյ մշտնջենաւոր և յաւիտենական...: - 354. Երրորդ, այն առանց գթութեան հատուցանէր պատիժս պարտուց. *իսկ* տեառն մերոյ շնորհիւ և ողորմութեամբ...: - 354. Չորրորդ, զի նոքա ոչ կարէին լինիլ ախտակից տկարացելոցն. *իսկ* տէրն որ զփորձ էառ՝ կարո՛ղ է և փորձանաւորացն օգնել...: - 354. Հինգերորդ, նոքա մատուցանէին պատարագ նախ վասն իւրեանց, և ապա՛ վասն ժողովրդեանն անգիտութեան. *իսկ* տէրն մեր ո՛չ արար մեղս ըստ մարգարէին. այն անմեղն վասն մեղաւորաց պատարագեցաւ...: - 354. Վեցերորդ, նոքա հանապազ մատուցանէին վասն հանապազ յանցմանն ի բազմօրինակ մեղս. *իսկ* տէրն մեր «մի՛ անգամ եմուտ ի սրբութիւնսն յաւիտենական, գտեալ զփրկութիւն»: - 354. Եօթներորդ, նոքա յօտարա՛ց մատուցանէին. այսինքն զուարակ և նոխազ, *իսկ* քահանայապետն մեր քրիստոս զմարմին իւր պատարագեաց հօր ի հոտ անուշից...: - 354. Ութերորդ, նոքա մատուցանէին ի ձեռագործ խորանսն որ ի մովսիսէ՛ կանգնեցաւ, *իսկ* տէրն մեր անցեալ ի ներքին կողմն վարագուրին. այսինքն յանձեռագործն մատոյց...: - 354. Իններորդ, նոքա ծառայաբար մատուցանէին. ուստի յա՛յտ է զի ո՛չ կարէին նստիլ ի սրբութիւնսն կամ ի քաւութիւնսն. *իսկ* քահանայապետն մեր տիրապէս և աստուածաբար նստեալ ի յերկինս ընդ աջմէ աստուծոյ...: - 354. *իսկ* քահանայապետն մեր եմուտ ո՛չ յօրինակս ճշմարտութեան, այլ ի բուն *իսկ* յերկինս յանդիման լինիլ յերեսացն աստուծոյ վասն մեր: - 355. Մետասաներորդ, նոքա ո՛չ իշխէին ճաշակել զպատարագս իւրեանց. այլ արտաքոյ յարէին. *իսկ* տէրն մեր և մեք ճաշակեմք զպատարագ նորոյս...: - 355. Երկոտասաներորդ, նոքա հին ուխտին էին միջնորդ. *իսկ* տէրն նորոյս...: - 355. Երեքտասաներորդ, նոքա փոփոխականք էին վասն մահու արգել լինելոյ. *իսկ* տէր մեր անփոփոխ և յաւիտեան է քահանայ. վասն յաւիտեան և անմահ գոլոյն: - 355. Չորեքտասաներորդ, նոքա յերկրէ և յերկրի մատուցանէին պատարագ. *իսկ* տէրն մեր յերկնից և յերկինս մատոյց: - 355. Հնգետասաներորդ, նոցայն քահանայապետ մովսէս և ահարօն ո՛չ կարացին մտանել յերկիրն պարգևաց. *իսկ* քահանայապետն մեր էանց ընդ երկինս երկնից...: - 355. *Իսկ* այն որ զմեղրովն պտուղն նուիրէին քահանայից, բայց ի սեղանն ոչ: - 356. *Իսկ* զի խմոր ո՛չ խառնէին: - 356. *Իսկ* ի նորս ունիմք զճշմարտութիւն՝ ունիմք և զօրինակն: - 356. *Իսկ* յօրինակն խառնեմք աղ. որպէս յագապս. յոգէհանգիստս և ի տօնական պատարագս: - 356. *Իսկ* իւղն զանգեալ՝ օրհնութիւնն է որ միանայ ի խորհուրդն և կատարէ՛ մարմին և արիւն քրիստոսի: - 357. *Իսկ* պան բաղարջն է՛ նաշհին զանգեալ իւղով. և որպէս բոկեղն եփեալ ի թոնրի: - 357. *Իսկ* կասկարա՛յ է պուտուկ պղնձի: - 357. *Իսկ* մուրկ փխրեալ՝ եղին է փշրեալ: - 357. *Իսկ* երախայրին՝ որ է՛ կալոյ և հնձանաց առաջին չափն: - 357. *Իսկ* որ վասն մեղաց նաշհի իւղ և խունկ ոչ դնէին. զի տրտմութիւն և խաւար է մեղքն, և գարշ հոտ գայ ի խղճմտանացն մինչև ապաշխարեսցէ: - 357. *Իսկ* փայտն. մարմնոյ ցամաքութիւն և պարկեշտութիւն. որ առաւել բորբոքէ զպատարագն: - 360. *Իսկ* հեթանոսք ըստ այնմ որ յանուն աստուծոյ նուիրէին՝ ընդունելի՛ էր: - 361. *Իսկ* Աղ կոչեցաւ. զի զանհամութիւնս մեր համեմեաց, և զվէրս ողջացոյց: - 361. *Իսկ* Մուրկ նորահաս, և Երախայրիք կալոյ: - 361. *Իսկ* ի նորս ճշմարտութենէ պատարագ քրիստոս. որ միշտ բաշխի յեկեղեցի: - 362. *Իսկ* միւս խոյն կատարմանն, քահանայիցն կերակուր և նուէրքն մովսէսի: - 362. *Իսկ* մեք **խ** զմովսէսին պահեմք որ ի լեառն սինա, և յեսու արտաքոյ միգին: - 363. *Իսկ* ի ներսն, **ա**՝ հացին երեսաց և գառին. **բ**՝ խնկոցն. **գ**՝ շօթին և զհացին. **դ**՝ մին ա՛յլ **զ** հացին. զի **ժբ** հաց էր. և **բ** սեղան: - 364. Նա՛խ՝ զի այրն կատարեալ է. *իսկ* կինն կէս: - 365. Երկրորդ՝ արուն առնօ՛ղ է. *իսկ* կինն կրօղ: - 365. *Իսկ* քահանայքն ի նորս ո՛չ հեղուն զարիւն: - 366. Նա՛խ՝ զի իցէ կենդանի յորմէ ելցէ արիւն. *իսկ* մեռեալն կամ անշունչ քար ո՛չ ունի արիւն: - 366. *Իսկ* կրկին հաւն մեռեալ և կենդանի. քրիստոս մեռեալ մարմնովն, և կենդանի աստուածութեամբն: - 368. *Իսկ* հոգևոր ծորումն է՛ եռակի: - 368. *Իսկ* որ զքրիստոս պատարագէ, խտրութիւն է արատոյ ի հոգի և ի մարմին: - 370. Նա՛խ՝ կոյրն. *իսկ* ի մեզ որ մտօ՛քն իցէ: - 371. *Իսկ* այս օրինակն է և տուրք աղքատացն: - 371. *Իսկ* զարիւնն ծածկել հրամայէր...: - 371. *Իսկ* ի նորս՝ զկէս ընչիցն հրամայեցաւ տալ աղքատաց յաւտրնին. որ է՛ հաւասար հոգւոյն և մարմնոյն: - 372. Երրորդ՝ տօն փողոցն. *իսկ* մեզ առաքելոցն տօն. զի նոքա են փողք տիեզերաց: - 372. Չորրորդ՝ ամսամուտն նոցա. զոր ի նորանալ լուսնին տօնէին. *իսկ* մեզ տօն կուսին մարիամու որ լուսաւորութիւն լսի ըստ ոմանց: - 372-373. *Իսկ* խոյն քրիստոս է: - 373. *Իսկ* **է** գառն անարատ, **է** զգայարանքն սուրբ: - 373. *Իսկ* զվարդավառին և զփոխմանն տօն՝ ի նորո՛յս է աւանդեալ. որպէս ողոգոմեանն, և քառասնօրեայ գալստեանն: - 373. *Իսկ* նաշհին՝ ճգնաւորք և կուսանք. որք ի յերկանս ճգնութեան ճնշեն զմարմինս

իւրեանց: - 374. *Իսկ* չորրորդ դորակ գինւոյն և իւղոյն ընդ նաշիոյ և գառինն, նշանակէ՛ զբանաւոր և զկենդանի պատարագս մեր: - 375. *Իսկ* զսառայածինսն հրամայէ՛ թուել որպէս զաստեղս: - 377. Հինգերորդ՝ թիւն զընտրութիւն՝ զդաս՝ և զկարգն ցուցանէ. զի գո՛յ ի նմա՛ առաջին միջին և վերջին. որպէս զինւորք. *իսկ* անթիւն խոտան և անկա՛րգ է. որպէս ծերք և տղայք: - 377. Իններորդ՝ զի թե՛փն է ամաց մերոց *իսկ* նաշիի ալիւրն երիտասարդութիւնն է: - 377. *Իսկ* գովութիւն ծերոյ, Նա՛խ՝ զի խափանեալ է ամենայն մեղաց շարժմունքն: - 378. Որ է՛ Տղայ. Մանուկ. Պատանեակ. Երիտասարդ. Ալևոր. Ծեր. *իսկ* երեխայն դեռածինն է: - 378. *Իսկ* այլք ի **դ** բաժանեն ըստ չորից տարերաց և **դ** պահու գիշերոյն. որպէս ասացաւ ի վերն **ժզ** գլուխն **իզ** համարն: - 378. *Իսկ* մովսէս և ահարօն և ա՛յլ քահանայք յարևելից կուսէ ուր սուրբն սրբոց էր պաշտէին: - 379. *Իսկ* ի նորս՝ ի կատարեալ հասակն երեսնամեայ լինին քահանայք. ի հասակ մկրտութեանն քրիստոսի: - 379. Նա՛խ՝ զի զա՛յլ հարուածոց փոխն կրեցին զչարչարանքն յեգիպտոս. *իսկ* անդրանկացն մնաց: - 380. *Իսկ* այլ տասունքն իմաստասիրաց բանքն. որպէս պղատոնին. արիստոտէլին. պիթագորին և այլք. որք միայն զաստեա՛ցս պատմեն մեզ: - 380. *Իսկ* Նուռն բժշկական է և դառն կեղևն: - 381. *Իսկ* Թուզն քաղցր և մանրակորիզ. բանքն աստուծոյ քա՛ղցր են ի մեզ և մանրաքնին: - 381. *Իսկ* իշխանութիւնն երկրաւոր, վասն որոյ բացաւ երկիր և եկուլ զդադան: - 381. *Իսկ* դադան քրէական մեղանչեաց որ է՛ յանցումն ի թագաւոր. զոր անհնարին պատուհասին. գոյիւք և ազգօք ջնջին: - 381. *Իսկ* կորխ ի քահանայս մեղանչեաց: - 381. *Իսկ* դադան կենդանի էջ ի դժոխս՝ ո՛չ սրբեցաւ. և ախտիւք իւր անսուրբ ընկղմեցաւ: - 382. *Իսկ* դադան ամենևին անզեղջ մնաց. թէպէտ գնաց մովսէս ի խորան նոցա՝ ո՛չ զղջացան: - 382. *Իսկ* ծաղկեալ գաւազանն չորս ինչ յաւելու. Դալարի. Շառաւիղ. Ծաղիկ. և Պտուղն ընկուզ: - 382. *Իսկ* որ ի խորանէն բերին մովսէս և ահարօն զգաւազանն ծաղկեալ. զի ի սիօնէ՛ ելցէ օրէնք. որ է՛ յեկեղեցւոյ ամենայն իշխանութիւն: - 382. *Իսկ* տէրն ի մարդեղութեան զակամայն ո՛չ կրեաց. զի հեռի է յաստուծոյ ակամայն: - 383. *Իսկ* աւելորդ ծորումն թէպէտ անանգոսնելի է, այլ ակամա՛յ է. և զակամայն ո՛չ կրեաց: - 383. Ակամայն անգիտութեամբ է. որ ներելի՛ է և թողելի՛. *իսկ* կամաւորն անթողելին և մահու չափն է: - 385. *Իսկ* կրկին պատարագն. մին վասն բոլոր ժողովրդեանն, և մին վասն անձին ակամայիցն. ցուցանէ զկրկին խոստովանութիւնն. մին յայտնի առհասարակ եկեղեցոյն. և միւսն ծածուկ առանձին մեղաց: - 385. *Իսկ* քարկոծումն այն է, որ անզեղջն ի մեղաց՝ արտաքսի՛ յեկեղեցւոյ և անիծանի: - 385. *Իսկ* ի ջուր, Նա՛խ՝ զի ջուր բղխեաց ի լուացումն և յարբուցումն. որպէս ի կողից փրկչին ջուր և արիւն: - 386. *Իսկ* մովսէս հրամանաւն աստուծոյ արար պղնձի օձ. և բարձրացոյց ի դուռն խորանին. և որ հայէր ի նա՝ ապրէր ի թունից օձիցն: - 386. *Իսկ* Կախարդն՝ որ անօթ ինչ թաղէ ի հող. կապս, կամ մոմ, կամ երկաթ, և պէս պէս ժժանօք յարմարե՛ն զարուեստն: - 388. Երկրորդ՝ զի գործունեայք և հաւանօղքն այնպիսեացն պատժեցին. որպէս ի յերկրորդ օրէնքն հրամայէ՛ սպանանել այնպիսիսն. *իսկ* հաստատունքն ի հաւատս՝ վարձս առցեն ի հաւատոց իւրեանց: - 388-389. *Իսկ* ուխտաւորին օրէնք զայն հրամայեաց աստուած: - 389. *Իսկ* **թ** ցեղն նշանակէ՛ զեկեղեցի նոր օրինացս **թ** աստիճանօք կարգաւորեալ: - 391. *Իսկ* ի վերջինն գաւառ՝ կիսովն իմանին կուսանքն ընտրեալք. որք լնուն զթերութիւն անկեալ դասուն: - 391. *Իսկ* զ**խ** իջևանքն ոմանք խորհուրդ առնուն յետ ելիցն ի մարմնոյ հոգւոյն՝ **խ** աւուրբ հասեալ յօթևանս: - 391. *Իսկ* **է** ի յայն խորհուրդն, զի որ ի պիղծ մերձենայր՝ **է** օր արտաքոյ բանակին կալով յերրորդ և յէերորդ օրն սրբէր, և ապա՛ մտանէր. վասն որոյ **գ** օրէք և **է** օրէք կատարեմք: - 391. *Իսկ* յետ մահու ա՛յնոցիկ հոգւոց որք զղջան կամ խոստովանին զմեղս, քաղաք ապաստանի է նոցա ի կայանս հոգւոցն տրտմութիւն և ցաւն վասն փոխարինաց մինչ մեռանի քահանայն մեծ. որ եկեղեցի սուրբ՝ պատարագաւ և աղօթիւք և ողորմութեամբ հատուցանէ՛ զպարտս նոցա և ազատին: - 392. Վեցերորդ՝ առաջին օրէնքն է կանոնաց. որ կարգաւորէ՛ զհոգի. *իսկ* երկրորդն դատաստանաց. որ կարգաւորէ՛ զմարմին: - 393. *Իսկ* ահագին, Նա՛խ՝ զի թշնամիք էին շուրջանակի. և գազանք և սողունք. և ծով. և ամայի. և անպարիսպ: - 393. *Իսկ* անապատ՝ գրաւոր օրէնքն ի ձեռն մովսէսի: - 395. *Իսկ* խոստման երկիրն նոր օրինօքս ի ձեռն փրկչին յիսուսի: - 395. *Իսկ* խորտակեալ տախտակն մովսէսին և մնացեալն՝ նո՛ր օրէնս: - 395. *Իսկ* սիրտ՝ զհոգին ասէ. որ ծածուկ է. և տեղիք խորհրդոց. և մի է. և կենդանութիւն մարմնոյն: - 396. *Իսկ* ճշմարիտն աստուած զայս ո՛չ խնդրէ. այլ երկիւղ խնդրէ ի տըղայոց որով խորշին ի չարէ. և սէր ի սրտէ փոխանակ անասնոց. և խաղաղութիւն առ ընկերս և օտարս...: - 396. *Իսկ* մեզ նորոյս հրամայէ՛ զբանեղէնն մատուցանել որ է՛ հոգի և մարմին և կամք...: - 396. *Իսկ* երկիրն նոր օրինացս ո՛չ բնական իմաստութեամբ հեթանոսաց ոռոգի, այլ շնորհօքն աստուծոյ և հաւատով դալարի: - 398. *Իսկ* տարի՛ է յաւիտենական փառքն. որոյ սկիզբն խնամոցէ՛ նախ քան զլինիլն աշխարհի. և կատարումն անվախճան փառքն: - 399. *Իսկ* որ զարձակեալն առնուին, և յառաջին

բաժանեալն ո՛չ տային, վասն երկիւղի առն և կնոջ էր, զի մի՛ լիցին պատճառ բաժանման: - 401. *Իսկ* խորհուրդն, ի յօրէնքն նոցա է զի փոփոխական էր օրէնքն նոցա. և որ փոխիւր, այլ ո՛չ դառնայր յօրէնս նոցա: - 401. Երկրորդ՝ բարոյական. զի մին կնոջ ի բազում արանց ո՛չ երևի հարազատ զաւակն. *իսկ* մի այր ի բազում կանանց կարէ՛ ծնանիլ հարազատ մանկունս և սիրել զնոսա: - 401. *Իսկ* մի այր և բազում հաւատք և բազում աստուածք՝ շնութիւն է հոգևոր: - 401. *Իսկ* ոմանք զքրիստոսէ՛ ասեն բնութեամբ և շնորհօք որդի. որպէս նեստորք և քաղկեդոնիկք անիծեալք. զի այսպէս լինին **բ** որդիք և **բ** անձինք: - 402. *Իսկ* օրհնեալն՝ յայտնեալ և յարեալ յաստուած որ է՛ կեանք և երանութիւն: - 403. *Իսկ* ի միասին կարգէ՛, զի կամ երկիցեն յանիծիցն, և կամ ցանկասցին օրհնութեանն և պահեսցեն զօրէնսն աստուծոյ: - 403. Չորրորդ՝ ադամայ նախ զօրհնութիւն և ապա անէծք ետ. *իսկ* այժմ դարձուցեալ ի յօրհնութիւնն աւարտէ՛: - 403. Ասա՛ նմա թէ՝ այն հասարակաց հեթանոսա՛ց է. զի աճին մարմնով և ընչիւք. *իսկ* մերս ո՛չ է հասարակաց. այլ արժանաւորաց և ընտրելոց: - 403. Ասա՛ թէ՝ չափաւորն ընդունելի է. այլ անչափն պոռնկութիւն և ագահութիւն. *իսկ* կուսութիւն և աղքատութիւն որ չափ առաւելու՝ այնչափ գեղեցկանայ: - 404. *Իսկ* ի միտս, մահու չափ մեղաց է իշխանք և գունդք դիւաց: - 404. *Իսկ* առ մեզ Նախ ծածուկ ներտրամադրեալն բան. զի աստուած քննէ զսիրտս: - 406. Դարձեալ՝ Նայիլն և Հայիլն յատուկ տեսողութեանն է. *իսկ* Տեսանելն հասարակ զգայութեան: - 407. *Իսկ* բարեաց չար առնել՝ անիրաւութիւն է. որ ո՛չ գոյ բնաւ առ աստուած. ո՛չ ի կեանս յայս և ո՛չ ի հանդերձելումն: - 408. *իսկ* աստուած անա՛խտ է՝ ձևանայ բարկացեալ և սրտմտեալ. զի զմեզ դարձուսցէ յառաջին բարին: - 408. *Իսկ* ի գործ ածել զստրմտութիւն՝ լինի վասն **դ** պատճառի: - 408. Եւ սպառնալիքն աստուծոյ և մարդկան ո՛չ են նման. զի մարդոյս դատարկ բան է. *իսկ* սպառնալիքն աստուծոյ՝ է՛ բան զարհուրական. յորմէ լսօղքն զերծանին, և անլուրքն ըմբռնին ի նոյն: - 408. *Իսկ* շմաւոն ո՛չ էր ապաշխարեալ, վասն որոյ ո՛չ օրհնեաց: - 409. Չորրորդ, մահ՝ այսինքն սատանայ որ յաղթեաց ադամայ. *իսկ* մարմնոյն մովսէսի ո՛չ կարաց յաղթել հրեշտակային օգնականութեամբն. որպէս ասի յառաջիկայդ: - 409. ...*իսկ* յորժամ սպասաւորեաց հրեշտակապետն՝ զտիրական անունն ի սաստ կոչելով. յայնժամ անպ ինչ լուսաւոր ծագեալ ի տեղւոջն, շիջոյց զերևումն չարին: - 410. Նա՛խ՝ փոփոխմամբ իւր նշանակէ՛ զփոփոխելի կենցաղս այս. *իսկ* արեգակն անփոփո՛խ է. որ է՛ հանդերձեալն: - 411. *Իսկ* ըստ Սեբեայ վլծ ամք. թիւ մի պակաս: - 411. *Իսկ* յետ մահուան ահարօնի նուազեաց մանանայն. յորում տրտնջէին և յօձից սատակեցան: - 415. *Իսկ* յետ մահուանն մովսէսի վերացաւ ամպն. և հրամայեցաւ ժողովրդեանն հեռու կալ կանգունս երկուց հազարաց վասն փառաց տապանակին և վասն զօրութեան նորա: - 415. *Իսկ* զփղշտացիսն եթող վասն ուխտին աբրահամու և աբիմելիքայ: - 417. Զոր եօթանասունքն ի ասեն. *իսկ* սամուէլ և սաւուղ ամս **խ**: - 420. Եւ այն զի քամեալ լցաւ կուրն և ո՛չ երկիր. զի մնացին և կատարեցան բանք մարգարէիցն ամենայն և ո՛չ եղծան. *իսկ* յետոյ հոգի տեառն ելից զտիեզերս մարգարէութեամբ և շնորհօքն քրիստոսի: - 421. ...*իսկ* ցօղ իմաստութիւնն որ տուաւ նմա յաստուծոյ. և թագաւորք արաբայ և սաբայ, ընծայաբերքն նմա: - 421. *Իսկ* տէրն մեր զմարմին և զհաւատացեալս իւր ապրեցոյց յիշխանէն այլազգեացն դիւաց: - 423. *Իսկ* թերափն է բոլորակ հանդերձ ծածկոյթ տապանակին: - 425. *Իսկ* դարձումն ի յետ, յեօթն դարուց կենցաղոյս դարձեալ ուստի ելին ժողովին ամենայն սրբութիւնք: - 426. *Իսկ* անդրանկածին երինջքն են մարգարէք և առաքեալք. որ զհաւատացեալս անդրանիկ ծնան. նոքա են ամոլք և պատարագք աստուծոյ: - 426. *Իսկ* սայլն՝ կրկին կտակքն. որ միշտ հոլովին առ մեզ: - 426. *Իսկ* որ բոլորովին հաւանին՝ վիհ՛ւկ են և արտաքսեալ յեկեղեցւոյ: - 429. *Իսկ* մեղքն դաւթի յիշատակեցաւ վասն երկու պատճառի: - 433. Սոյնպէս և շնորհք ապաշխարութեան նորոյս առաւե՛լ է քան զհնոյն. զի առանց գործոց հատուցման ո՛չ կարէին արդարանալ. *իսկ* աստ շնորհօք թողութեանն միայն, կարէ՛ արդարանալ: - 433. ...*իսկ* յետ մահու պաշտօնք և տուրք աղքատաց և այլն՝ է՛ հատուցումն պատժոց միայն...: - 434. ...*իսկ* յետ յարութեանն տանջանք անվճար և առանց հատուցման...: - 434. *Իսկ* այժմ ուխտէ՛ սպանանել. զի ըստ օրինացն զգործ արդարութեանն գործեսցէ: - 439. Ասեն թէ՝ **ռ** կին էր սողոմոնի. **է ճ** տիկնայք, և **գ ճ** հարճք. և նոցա **ռ** պահապան. *իսկ* ի փորձելն խաբեաց զիազար կանայսն. և ի յարանցն մին ո՛չ խաբեցաւ. այս առասպե՛լ է: - 440. *Իսկ* այն որ ասէ **կ** էին թաքուհիք և ութսուն հարճք. և անթիւ հարսնածուք: - 440. Եւ տէր մեր յերկրի մարդացաւ, և յերկինս թագաւորեաց. *իսկ* նստիլն ի վերայ ջորոջ, որ է խաչն. զի վիրք զխաչն ջուարի կոչեն: - 441. *Իսկ* որդին աջ և բազուկ է հօր, վասն որոյ աջմէ հօր նստի: - 441. Տասներորդ՝ յորժամ եկն հեզութեամբ լսէր ի նմանէ. *իսկ* զայս ամենայն համեմատելով ի վերայ հրէիցն՝ յիրաւի ուրեմն դատապարտեսցէ զնոսա ի դատաստանի: - 442. Նա՛խ՝ զի միայն մասին աշխարհի և սակաւո՛ւց էր տէր *իսկ* քրիստոս ամենայնի: - 442. Իններորդ՝ և մարմնական որդի էր դաւթի ըստ կարգի

հասարակ մարդկան. *իսկ* քրիստոս ակնկալութեան և աւետեաց և ի վեր քան զկարգ բնութեան աստուած մարդացեալ: - 442. Տասներորդ՝ զի սողոմոն ի քարանց ձեռագործաց կազմէր տաճար աստուծոյ. *իսկ* քրիստոս զբանական հոգիս մարդկան շինէր օթևան սուրբ երրորդութեանն: - 442. *Իսկ* ի մէջ ծնկաց գլուխն՝ այն է, որ զծունկն ի գետինն եդ, և զգլուխն հանդէպ նմին. և յայսկոյս և յայնկոյս զձեռսն խաչանման ի գետինն: - 444. *Իսկ* նստիլն ի յաթոռ՝ ասէր պատրել զաքայաբ, թոյլ տալն է աստուծոյ որ մարդ իւր կամօքն հաւանի չարին և պատժի: - 444. Եւ շուրջ զնովաւ հրեշտակք ամենայն ոչ հաւանեցան. զի նոքա զամենայնն ճշմարիտ խօսին. և բարի առնեն մարդկան. և յապաշխարութիւնն խնդան. *իսկ* սուտ խօսիլն և չար առնելն և ի վիշտս ուրախանալ՝ դիւա՛ցն է որ են չար հոգիքն: - 444. *Իսկ* աղն բանն աստուած խառնեալ ընդ մարդկութիւնս. որ բժշկեաց զվէրս մեր: - 445. *Իսկ* մկրտութիւնն բառնայ զերկոսին. այսինքն զմեղս և զմահ: - 445. Նոյնպէս և ամենայն խաչի զօրութիւնն քրիստոս է. ի ձեռս արժանաւոր և կատարեալ հաւատոց առնէ սքանչելիս. *իսկ* ոչ նոյնպիսեացն ծածկէ զզօրութիւնն: - 445. Դարձեալ՝ առաջին գալուստն ծածուկ փրկութիւն և կեանս շնորհեաց. *իսկ* յերկրորդին յայտնապէս յարուցանէ: - 446. *Իսկ* ի հիւանդանալն՝ եղիսէոս եդ զձեռն ի վերայ ձեռաց արքային յովասու և զօրացոյց զնա ի պատերազմին ընդ դէմ ասորոցն փոխանակ լալոյն ի վերայ նորա: - 446. *Իսկ* ի մահուն որ յարոյց զմեռեալն յորժամ մերձեցաւ ի յոսկերսն եղիսէի, ի տիպ մահուն քրիստոսի որ մահուամբն մեզ կեանք և յարութիւն շնորհեաց: - 446. *իսկ* երկրորդն զօրաբաբէլ ի **զ** ամին կիւրոսի շինեցան զտաճարն...: - 449. ...*իսկ* երրորդն նէեմի և եզր դպիր՝ կանգնեցին զպարիսպն և զդրունսն. նշանակեն զառաքեալսն զհայրապետսն և զվարդապետսն. որք օրինօք պարսպեն զեկեղեցի, և հանապազ ուսուցանեն զդպրութիւն: - 449. *Իսկ* այլ ոմանք թուեն զեօթներորդն դանիէլի ի դարեհի որդւոյ արշուրեայ առաջին ամէն. յորում զտեսիլն ետես մարգարէն. մինչև ի ծնունդն քրիստոսի ամք **նձզ**: - 449. *Իսկ* նոր կտակքն յայտնի՛ են: - 450. *Իսկ* Սիրաք և Իմաստութիւնն և Յուդիդն և Տուբիդն և Տուբիայն և Մակաբայեցիքն և Կտակքն և այլք, չեն յայսմ համարի: - 451. ...*իսկ* եբրայեցիք զամենայն շաբաթսն ո՛չ թուէին ի համարն. վասն որոյ նուազի՛ նոցայն: - 451. *Իսկ* յերուսաղէմ թագաւորէ՛ ռոբովամ որդի Սողոմոնի: - 452. *Իսկ* ըստ ազգաբանութեանն Մատթէի, ծնանի յեքոնիա զսաղաթիէլ ամաց **ծզ**: - 453. ...իմացեալ լինի ըստ չորրորդ եղանակին անփոփոխ ճշմարտութիւնն. *իսկ* այն ո՛չ պատշաճի: - 457. *Իսկ* ըստ տնօրէնութեանն քրիստոսի՝ պատշաճի և երրորդ եղանակն: - 457. *Իսկ* հաւասարապէս պատշաճի բոլոր բանական եղելոցս ըստ տեղւոյն դիպման: - 457. Եւ է՛ ողորմութիւն նորա ծրի շնորհօք և պարգևօք. *իսկ* արդարութիւնն տուրք փոխարէնք և հատուցումն: - 457. Երկրորդ՝ զի ողորմութիւն է բացարձակ և պարզապէս բարի. *իսկ* արդարութիւնն է խառնել բարի. ըստ որում հատուցանէ բարեացն բարիս, և չարեացն տանջանս: - 458. *Իսկ* այլ վարդապետք ասեն թէ՝ արդարութիւնն աստուծոյ երեք կերպիւ առեալ լինի: - 458. *Իսկ* ողորմութիւն բարեխառնէ զխստութիւնն: - 459. *Իսկ* երբեմն երկոքեանն յայտնի. որպէս ի հատուցումն արդարոց. և ի պատիժ անարգելոցն...: - 459. ...*իսկ* ի կատարել զգործ ողորմութեանն՝ ո՛չ ինչ պահանջի, եթէ ոչ կամքն նորա, որպէս երևեցաւ ի մարդեղութիւն բանին աստուծոյ ի սրբոյ կուսէն մարիամայ: - 459. *Իսկ* յակոբ որ էր յազգէն սողոմոնի՝ առեալ զկին եղբօրն ըստ օրինացն զի յարուսցէ զաւակ եղբօրն. և ծնաւ զյովսէփ: - 460. *Իսկ* ի մօր կողմանէ՝ մարիամ էր ի քահանայից ցեղէն, զի մատթան քահանայն բնակէր ի բեթլէհէմ, և ունէր երիս դստերս: - 460. ...*իսկ* Աննա ամուսնացաւ ի գալիլեայ ընդ յովակիմայ. և ծնաւ զաստուածածինն մարիամ ի պրոպատիկէ ի տունն յովակիմայ. և անտի տարեալ եղև ի տաճարն տեառն: - 460. *Իսկ* յովակիմ արդարն էր ի թագաւորական ցեղէն յուդայի **լը** երորդ ի թոռանց նաթանայ որդւոյն դաւթի փառաւոր և մեծատուն յոյժ: - 460-461. Յինգերորդ՝ զի մի՛ դատապարտեսցի իբր անժուժկալ. զի էր ի քահանայական ցեղէն. և այսպիսիքս այրեալ լինէին. *իսկ* այլ շնացօղք քարկոծեալ: - 461. *Իսկ* չորրորդ սրբութիւնն լիակատար շնորհաց ի վերին գաւառն որ է՛ հրեշտակային՝ գերազանցէ՛ զամենեքումբք: - 462. *Իսկ* զչորրորդ սրբութիւնն որ է՛ միաւորութիւն բանականին առ աստուած, և միշտ ներգործապէս դիմել առ աստուած որպէս հրեշտակք. ընկալաւ աստուածածին կոյսն ի յղանալն զորդին աստուծոյ: - 463. ...*իսկ* երանուհի կոյսն կարէր յառաջանալ յարդիւնս և ո՛չ նուազիլ: - 463. Երկրորդ՝ զի հրեշտակք ի հարկէ բնութեան ունին զկուսութիւնն. *իսկ* աստուածածինն զայն պահեաց մաքրութեամբ մարմնով զկուսութիւն ողջախոհութեան: - 463. *Իսկ* ողջոյնս այս ունի համազուգիլ ընդ ամենայնսն: - 464. *Իսկ* հաւանական պատասխանիք սրբուհւոյ կուսին մարիամու են **դ** բանք: - 465. ...*իսկ* էմմանուէլն թարգմանի մարդացեալ աստուած: - 466. Նոյնպէս և բանն աստուած թէ կարի *իսկ* յառաջին դարս էր մարմնացեալ, որպէս յաւուրս նոյի՝ աբրահամու և կամ մովսէսի՝ լինէր կրկին վնաս: - 467. *Իսկ* ա՛յլ վարդապետք ասեն, թէ ետ զբնական օրէնս որպէս նոյի և

յառաջ քան զնա: - 467. Եւ զբնականն աբրահամու. *իսկ* զգրաւորն մովսիսի: - 467. *Իսկ* մեր վարդապետք ասեն որպէս մեծն ներսէս, թէ ի զերորդ աւուր արարաւ առաջին ադամն ի պատկեր տիրական: - 467. *Իսկ* նորն ադամ նոյն ի **զ** դարուն յա՛յց եղ և խնդրեաց զկորուսեալ պատկերն ի թիւ խորհրդաւոր կատարեալ վեցերորդին: - 467. Յինգերորդն Մովսէսի. *իսկ* Վեցերորդ դարն՝ յորում ծնաւ Փրկիչն մեր Քրիստոս. և փրկեաց և բժշկեաց զմեզ: - 467. Այլ և ունէր հայր ի յերկինս, և մայր ի յերկրի. *իսկ* անդ հայր առանց մօր. և աստ մայր առանց հօր: - 470. *Իսկ* վարդապետք եկեղեցւոյ բովանդակեալ զամենայն՝ **զ** եղանակաւ ասեն զծնունդն քրիստոսի: - 471. *Իսկ* անդրանիկ ըստ որում երէց և առաջին՝ ասի ըստ չորից: - 472. Եւ նա՛ ծնունդ ի հօրէ. *իսկ* մեք արարածք: - 472. ...*իսկ* մեք ո՛չ ի գործոց, այլ ի հաւատոցն քրիստոսի ընկալաք զսկզբնական արդարութիւնն և զներգործութիւն մարմնոյ և զսրբութիւն մտաց: - 473. Ա՛րդ՝ ի դէմս փրկչին նայելով յիրէ՛ն է փրկիչն. *իսկ* ի դէմս փրկելոցն ի գործոյն: - 473. Զի տրտմութիւն արտասուաց ընդ մահուանն բարձաւ. *իսկ* ամօթ և ցաւք մարմնոյ՝ ընդ մեղացն բարձան. որպէս ի հատանիլ արմատոյ՝ չորանան ստեղունքն: - 474. *Իսկ* զօծումն մարտի՝ յորժամ վարեցաւ ի հոգւոյն յանապատ և յաղթեաց հակառակին: - 474. *Իսկ* զօծումն հիւանդաց եցոյց ինքեամբ յայլս. յորժամ զանկեալն ի ձեռս աւազակաց ձիթով և գինւով բժշկեաց: - 474. *Իսկ* զօծումն հոգւոյն սրբոյ՝ յորժամ էջ աղաւնակերպ ի վերայ նորա: - 474. *Իսկ* մկրտութիւն նորա ո՛չ որդեգրութեան էր որպէս մերս. այլ ճշմարիտ որդիութեանն յայտնութիւն ըստ ձայնին հօր «դա՛ է որդի իմ սիրելի»: - 474. *Իսկ* զօծումն բնութեանն միաւորութեան՝ ընկալաւ ի կուսական արգանդին. ուր խառնեալ միաւորեաց զմերս բնութիւն ընդ իւրում աստուածութեանն և ծնաւ քրիստոս որ թարգմանի օծեալ: - 475. *Իսկ* ոմանք յետ ծննդեանն ի կուսէն ասեն օծեալ զքրիստոս ի մկրտութեանն. վկայ բերելով «զյիսուս որ ի նազարեթէ, զոր էօծ աստուած հոգւով և զօրութեամբ»: - 475. *Իսկ* պատահումն ընդ պատահման միշտ շփոթմամբ միաւորին. որպէս գոյն ի սևէ և ի սպիտակէ՛: - 475. *Իսկ* միաւորութիւնն որ է շաղկապաւ, և սա՛ բաժանի յերիս: - 476. *Իսկ* շաղադրեալն միաւորութիւն՝ և սա՛ բաժանի յերիս. այսինքն ըստ դրութեան. ըստ ժողովման. ըստ կոչման: - 476. *Իսկ* ըստ ժողովման, որպէս եկեղեցի. և անձն. հօտ. կամ քաղաք: - 476. *Իսկ* ըստ կոչման, որպէս քրիստոնեայք. մկրտեալք. ծառայք. և ստեղծեալք: - 476. *Իսկ* փրկչին բոլորից՝ անեղ ընդ եղականի: - 478. *Իսկ* բանն աստուած է՛ անսկզբնաբար ի հօրէ. և յետոյ սկսեալ ի կուսէ: - 478. *Իսկ* բանին աստուծոյ քաջ սիրով եռացումն ընդ մարմնոյ անբաժ և անորիշ գործեաց միաւորութիւն: - 478. *Իսկ* ի քրիստոս եռակի գոյ միաւորութիւն. այսինքն աստուծոյ ընդ հոգւոյ. հոգւոյ ընդ մարմնոյ. աստուծոյ ընդ մարմնոյ: - 478. *Իսկ* բանն աստուած մարդացեալ՝ էութեամբ է առ հայր. պահպանութեամբ ի բոլոր էակքս. շնորհօք յամենայն սուրբս. և բնութեամբ ի մարմնի միաւորեալ: - 478. *Իսկ* բանն աստուած կատարեալ լրիւ մարդացեալ բովանդակապէս. հոգի մարմին և միտս ունելով անշփօթ կատարելութեամբ և անբաժ ենթակայութեամբ: - 479. *Իսկ* աստուածայինն անեղ էութիւն ամենևին պարզ և մաքուր առաւել քան զիմացականն բնութիւն եղական իմն գոյութեամբ. թէ և ո՛չ են միաւորական մարմնոյ: - 479. *Իսկ* բանն աստուած միաւորեալ մարմնովն կրեալ զմերս վասն մեր. անկրելի գոլով ըստ իւրում բնութեանն: - 479. *Իսկ* քրիստոս ամենևին ա՛կն՝ ամենևին ունկն՝ ընդ հօր և հոգւոյն աստուածաբար ներգործէ: - 479. *Իսկ* ի միաւորութիւն փրկչին բոլորից՝ բանն անդրանիկ կոչի և ի բազում եղբարս. և մարդն միածին հօր...: - 479. Նա՛խ՝ զի ծեր և հին աւուրց նշանակեցաւ հայր աստուած ի դանիէլէ՛. *իսկ* որդին նորածին և երիտասարդ հասակաւ: - 479. *Իսկ* ի քրիստոս ոչ ինչ է անկատարութիւն. ապա և ո՛չ ծերութիւն մարմնոյ: - 480. *Իսկ* զկատարեալ հասակն նկարելով՝ ի ձև չորեքկուսի հանեն զաւետարանն ի ձեռն և ի գիրկն: - 481. *Իսկ* որ ի գլուխն խաչ նկարեն: - 481. *Իսկ* զձեռագիր հրէիցն, և զայն ևս պատառեաց քրիստոս կատարելով զամենայն օրէնս աստուծոյ: - 482. *Իսկ* զգիր քրիստոնէից զոր յետ աւազանին մեղանչեմք և գրեմք զյանցանս, զայն պատառէ ապաշխարութիւնն. որ է՛ զղջումն սրտի և խոստովանութիւն լեզուի և հատուցումն գործոց մարմնոյ: - 482. *Իսկ* հայաստանեայ քրիստոս որպէս ուսան ի սրբոյն գրիգորէ՞ անփոփոխ կացին ի նմին: - 482. Իններորդ՝ զի և նոքա *իսկ* որ զայս ասեն՝ առնեն յունվարի զ ճրագալոյց ընդ մեզ. և ճրագալոյցն ո՛չ է մկրտութեան, այլ ծննդեան ի մէջ գիշերի: - 484. Եւ յառաջին ամին յօստոս էր հայրապետ յէմ. *իսկ* յերկրորդն սուրբն մակար: - 485. *Իսկ* տէրն մեր էր անդրանիկ ի հօրէ և անդրանիկ ի մօրէ. և անդրանիկ շնորհաց և արդարութեան. և անդրանիկ յարութեան մեռելոց. վասն որոյ անդրանկապէս ընկալաւ զօրէնս թլփատութեան: - 486. *իսկ* քրիստոս ո՛չ ունէր զմեղս. վայն այն վաղվաղակի ել ի ջրոյն. և նշանակէ ի մեզ զշնորհաց հեղումն. որ մկրտեալն ազատի ի մեղաց և խսկոյն ելանէ յառաքինութիւնս: - 487. Յոգին սուրբ աղաւնակերպ. *իսկ* Դիտաւորութիւնն հետևիլն ձայնին առ որ մկրտի: - 487. *Իսկ* ձայնն

հօր ի վերայ որդւոյն՝ ցուցանէ զգերազանցութիւնն քրիստոսի: - 487. Այլ զանազանին Նախ ի ձևն. զի մկրտութիւնն յոհաննու տուեալ լինէր յանուն այնմ որ գալոցն էր. *իսկ* քրիստոսին յանուն Երրորդութեանն: - 488. *Իսկ* այժմ վասն խաչին նախ գիտելի է, զի չարչարանքն քրիստոսի ընդ դէմ է և բարձօղ է մոլորութեանց մեղաց: - 489. *Իսկ* խաւարումն արեգականն նշանակէ՛ զամենայն կուրութիւնս հրէիցն: - 490. *Իսկ* ամօթն քառակի էր: - 490. Եւ չորիւքս այս առաւելու ամօթն. *իսկ* Հինգերորդ՝ զի ի մէջ չարագործ աւազակա՛ցն էր համարեալ: - 490. *Իսկ* չորրորդն է՛ պատարագ տեառն մերոյ քրիստոսի որ ի մի դէմ անձնաւորութեան **գ** երես պատարագին բացայայտեցաւ. այսինքն մեծ գոլ մատուցօղն և ընդունօղն և պատարագն: - 491. Հայր մատնեաց զնա՛ վասն սիրոյ. և Որդի մատնեաց զանձն իւր վասն փրկութեան մերոյ. *իսկ* յուդա մատնեաց վասն ագահութեան: - 491. Գրաւորն մովսէսի. *իսկ* Աւետարանն չորրորդ ի ձեռն խաչին: - 494. Դարձեալ՝ մահն ի յադամ պատիժ ինքեան էր. *իսկ* ի քրիստոս պատիժ այլոց. *իսկ* ի մեզ պատիժ ինքեան և այլոց. այսինքն զի վասն մեր և վասն ադամա՛յ կրեմք զմահն: - 496. *Իսկ* եկամուտ կիրքն բաժանի յերիս տեսակս: - 496. *Իսկ* ապականութիւնն վերջին. հետևեալ ի հնարից բանսարկուին: - 496. *Իսկ* զմիջին պատուհասն եդ աստուած ի վերայ զմահն: - 496. *Իսկ* մահն ո՛չ է պարզաբար չար. այլ շարամանեալ ընդ բարւոյ անուամբ և իրօք: - 496. *Իսկ* տէր մեր ի մարդեղութեան իւրում յայսցանէ եկամուտ կրից միայն զմահն կրեաց. *իսկ* զմեղս և զապականութիւնս ո՛չ կրեաց: - 496. Երկրորդ՝ զմահ կրեաց. զի ինքն եդ զմահն պատիժ ի վերայ մեր. *իսկ* զմեղքն և զապականութիւն՝ բանսարկուն և ադամ արկին ի բնութիւնս...: - 496. Դարձեալ ասեմք, մեղքն ապականութիւնն են առաջին և վերջին ծայրքն կրից. *իսկ* մահն միջին որպէս ցուցաւ ի վերոյ: - 497. Զի ապականութիւնն տանի յոչգոյութիւն. *իսկ* մահն առաջնորդէ՛ ի կեանս: - 497. *Իսկ* հակառակաւն՝ որպէս ջերմ զցուրտ, և գէճ զչորն արտաքսէ: - 497. Այսպէս և տէր մեր նմանեաւ, որպէս անիծիւք զանէծս՝ և մահուամբ զմահ եբարձ. *իսկ* հակառակաւն՝ անապական և անմեղ մարմնովն զմեղս և զապականութիւն ելոյծ: - 498. *Իսկ* ապականութիւն այլայլութեամբն ի ներքս մտանէ ...: - 498. Դարձեալ ևս յայտնի. մահն զանձն քակէ՛ և որոշէ՛. *իսկ* ապականութիւն զբնութիւնն ապականէ և այլայլէ՛: - 498. *Իսկ* զի անապական է մարմին կենարարին՝ է՛ ի դաւանութենէ հաւատոյ. զոր ունիմք և եմք անփոփոխ: - 498. Երրորդ՝ ապականութիւնն ներգործէ՛ հակառակ արարչին. զի արարիչն յանգոյից գոյացուցանէ, *իսկ* ապականութիւնն զգոյսս ի յանգոյութիւն տարալուծէ և այլայլէ՛. վասն որոյ անապակա՛ն է մարմին արարչին: - 499. Հինգերորդ՝ ապականութիւն մեր մարմնոցս է՛ ի սերմանէ հօր ի ձեռն կնոջ խառնեալ. *իսկ* մարմին բանին ո՛չ է ի սերմանէ հօր և մօր. այլ ի կուսական արգանդէ և յանապական արենէ բեղնաւորեալ որպէս ցուցաւ ի վերոյ ի սոյն գլուխ ի **ժ** համարն. ապա ուրեմն անապակա՛ն է մարմին բանին աստուծոյ: - 499. Զի աճումն զզգայութիւնն զարգացուցանէ. *իսկ* ապականութիւնն ընդ դէմ նմին զգոյն ի նուազութիւն և յոչգոյութիւն փոփոխէ: - 501. *Իսկ* հասարակ մարդիկ կրակա՛ն են կամաւորի և ակամայի. բնութեամբ և կամօք: - 502. *Իսկ* տէր մեր զի էր աստուած մարդացեալ՝ ո՛չ ունէր ակամայ կիրք. այլ զկամաւորն: - 502. *Իսկ* տէր մեր ի մարդեղութեան իւրում՝ զակամայն ո՛չ կրեաց. զի հա՛րկ է և ծառայական: - 502. *Իսկ* աւելորդ ծորումն թէպէտ անանգոսնելի՛ է, սակայն ակամայ է. և զակամայն ո՛չ կրեաց քրիստոս: - 502. Իմաստունք զտեղին յերկուս բաժանեն. ի վերին և ի ներքին. զի սոքա են հակակայք և առինչք միմեանց. *իսկ* միջին տեղի ո՛չ է...: - 505. *Իսկ* միջին դժոխք որ կոչի բանտ դժոխոց՝ է՛ միջակ մեղաւորաց. որք ունին հաւատ և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալք. կամ գործք և ո՛չ հաւատ. որպէս թերահաւատք և անհաւատք: - 505. *Իսկ* վերջին դժոխք որ կոչի անջրդի գուբ, նոցա՛ է որք ո՛չ ունին չար և ո՛չ բարի. որպէս մանկունք անմկրտեալք. ո՛չ տանջին զի չեն մեղանչեալ. և ո՛չ հանգչին զի չեն արդարացեալ. այլ վասն սկզբնականին մնան յանջրդի գուբն խաւարին: - 505. *Իսկ* առ երկրորդն որ ասեն թէ միայն զլիմպոսն աւերեաց և զայլսն եթող: - 506. *Իսկ* առ երրորդն որ ասեն թէ միայն զարդարսն եհան և զայլսն եթող անդ: - 507. Ա՛րդ՝ ի կենդանեաց երկոքինն պահանջին. *իսկ* հոգւոցն բաւակա՛ն է միայն ներքին իմացումն զի չունին մարմին: - 508. *Իսկ* հոգիքն ի դժոխս յորժամ տեսին զքրիստոս, այն էր ժամանակ փրկութեան նոցա և ընդունելոյ զողորմութիւն. յաղագս որոյ հաւատովք արդարացան նոքա միայն ի նոյն ժամն: - 508. *Իսկ* զտէրունական տօնս երեկօրեայ յինն ժամ **է** աւուրն սկսանեմք. որ է՛ **թ** ժամաւ յառաջ քան զհասարակաց տօնս: - 508-509. *Իսկ* առաքեալքն փոխեցին զնաւակատիս մեր առանց արեան զի որոշեսցուք ի նոցանէ: - 509. Պահքն վասն հոգւոյն պատշաճի. և Ուտիքն մարմնոյն. *իսկ* Նաւակատիքն վասն խառնեալ շնչոյն: - 510. *Իսկ* նաւակատեաց կերակուր այն է՝ որ միջակ է սոցա երկոցունց. այսինքն ի կենդանւոյ և ի տնկոյ. որպէս ձուկն, ձու, և կաթն: - 510. *Իսկ* ձուկն կենդանի՛ է կատարեալ զգայարանօք և շարժմամբ. այլ զտուր և առ շնչոյ ո՛չ ունի. վասն այն պակա՛ս է: - 510. *Իսկ* կենդանիք զենեալ յառնէ

միայն կերակրելիք են. այլ ի կնոջէ ո՛չ: - 511. *Իսկ* ա՛յլ վարդապետք ընդ արշալոյսն առաւօտուն ասեն յարուցեալ ըստ մարկոսի և այլ աւետարանչացն: - 512. Քսաներորդ, յա՛յտ է յա՛յսմանէ՝ որ նախ քան զքրիստոս՝ էր սկիզբն աւուր ծագումն լուսոյն. *իսկ* յետ յարութեանն քրիստոսի եղև սկիզբն աւուրն ի մէջ գիշերի. զի այժմ ի խաւարէ՛ ի լոյս ճանապարհորդիմք: - 515. *Իսկ* զերրորդն մարկոս պատմէ՛ առաւօտուն և յարևագալն յետ ղուկասու. և տեսին երիտասարդ մի ի ներքս ի գերեզմանն ընդ աջմէ նստեալ: - 515. Ա՛րդ՝ շաբաթի գիշերն և տիւն **իդ** ժամ. և **զ** ժամ ի կիրակէէն մինչ ի մէջ գիշերն. որ լինի **լ** ժամ. *իսկ* հոգին **դ** ժամ և կէս նախ իջեալ ի դժոխս որ լինի **լգ** ժամ և կէս: - 516. *իսկ* մարմինն յերեսուն ժամուն ի գերեզմանէն յարեաւ. զի երեսնամեայ մկրտեցաւ մարմնով և ել ի ջրոյն: - 516. *Իսկ* պատանքն ո՛չ ծալեալ. զի խորհուրդ տրնօրէնութեանն ո՛չ ամենևիմբ յայտնի է և ո՛չ անյայտ. որպէս կտաւն բազո՛ւմ ունէր փոքուածս: - 517. Նա՛խ՝ ոմանք ասեն թէ մարդկօրէն կամէր իմանալ զնա և հարցանել վասն խաչին և դժոխոց և յարութեանն. *իսկ* այս կատարեալ մտաց պէտք էին և շա՛տ ժամու: - 517. Տասներորդ, զի ցուցցէ թէ թշնամեաց նորա ո՛չ է իշխանութիւն բուռն հարկանել զնմանէ. *իսկ* բարեկամաց նորա գոյ իշխանութիւն այլով իւիք մերձենալ ի նա. այսինքն սիրով և երկիւղիւ յայնմիկ զոր ուտեն զնա: - 518. Երեքտասաներորդ, զի մարիամ ո՛չ խոնարհութեամբ կամէր մերձենալ յոտս նորա որպէս այլ կանայքն. այլ յերե՛սն դիմեաց նա հպարտութեամբ առ ի համբուրել զնա. *իսկ* տէրն կամեցաւ ուսուցանել նմա զխոնարհութիւն՝ արգել զնա: - 518. Չնգետասաներորդ, զի բաւական համարեցաւ ի պատիւ կանանց զայն՝ զի յառաջագոյն մերձեցաւ ի նոսա ծննդեամբ. *իսկ* յետ յարութեանն կամի՛ զի ա՛րք նախ մերձեսցին ի նա մինչ դեռ ո՛չ է ելեալ նա առ հայր: - 518. *Իսկ* ասելն «չև՛ ևս ելեալ եմ առ հայր իմ», ցուցանէ թէ որպէս նախ զչարչարանսն և զյարութիւնն ասաց վասն չարչարանաց և յարութեանն: - 518. *Իսկ* փոխումն՝ աստուածամօրն կուսի. որ որդին յատկապէս սպասաւորէ մօրն: - 519. *Իսկ* թռչիլ ամենայն սրբոց ի ձեռն սպասաւորութեան հրեշտակաց: - 519. *Իսկ* զտեղի համբարձմանն քրիստոսի միտք ո՛չ կարէ ցուցանել. զի ի լոյս անմատոյց է բնակեալ և ի ներքին կողմն վարագուրին ըստ առաքելոյն: - 519. *Իսկ* ձիթենին զպարարտութիւն օծման ջերմեռանդ և ողորմած սրտին: - 519. Սակայն վարդապետք եկեղեցւոյ պատշաճե՛ն զստեղծանելն հօր. *իսկ* զտրոհելն որդոյ. և զզարդարելն հոգւոյն սրբոյ: - 522. *Իսկ* հոգին սուրբ երագ էջ յառաքեալսն. զոր արեգակն քրիստոս բազում ամօք յերկարեալ մարմնով ել յերկինս: - 522. *Իսկ* աստուածաբանն ասէ, ուր պիտոյ էր՝ յամենայն լեզուս խօսիլ կարէին. զի լիցի շնորհքն խօսողաց և ո՛չ թէ լսողաց: - 525. *Իսկ* հուրն կրկին ունի յատկութիւն. որ է լոյս և սրբիչ հաւատացելոց. պատիժ և այրիչ անհաւատից: - 525. *Իսկ* վասն շինուածոց ասացեալ է յառաջիկայդ ի **լե** գլուխն, ի **լէ** համարն: - 532. *Իսկ* հաւատացեալք բազումք: - 532. Կաթողիկէն ընդհանրական լսի. *իսկ* եկեղեցին ժողովումն: - 532. *Իսկ* յատուկ, զի նա՛ կոչի ժողովարան. և մեք ժողովեալք: - 533. *Իսկ* և որդի կոչի վասն երից: - 534. *Իսկ* մայրն է եկեղեցի վասն անդամոցն քրիստոսի: - 534. *Իսկ* ակն տեսանօղ՝ մարգարէքն. և առաքեալքն ինքնատեսք բանին աստուծոյ: - 534. *Իսկ* մորուս կոչին մարգարէք և առաքեալք և հայրապետք մերձ բերանոյն առ մեզ խօսելով զպատգամս օրինացն աստուծոյ: - 534. *Իսկ* գրապան՝ վարդապետք և քահանայք պահապանք ժողովրդեանն. որք բոլորակի զգեստ կոչեցան քրիստոսի: - 534. *Իսկ* առաքեալն փոխէ՛ զայս կարգ բնական ի կարգ արհեստական և զարժանաւորսն նախադասէ: - 535. ... և առաքեալքն ձեռն դնելովն միայն՝ տային զհոգին սուրբ. և ի լեզուս խօսէին. և մարգարէանային ընդունօղքն. *իսկ* վարդապետք սուրբք՝ քարոզութեան նոցին հետևօղք և որդիք ծնողացն՝ երրորդ կարգին յետ նոցա: - 535. *Իսկ* վերնագոյն սոցա. աստուած յաստուծոյ առաքեալ: - 535. *Իսկ* գործ առաքելութեանն է ըստ բազում օրինակի: - 535. *Իսկ* հինգերորդ մարգարէութիւն է հոգևոր և աստուածային գիտութեամբ. զոր յայտնութեամբ սուրբ հոգւոյն ունեալք խօսին առ ի զգուշութիւն մարդկան ի հոգևոր շինուածս: - 536. *Իսկ* հոգևորին հնազանդիմք կամաւ որպէս աստուծոյ: - 538. *Իսկ* հոգևորն իշխէ՛ ի մերձաւորս և ի հեռաւորս: - 538. *Իսկ* հոգևորն իշխէ՛ ի հոգի և ի մարմին: - 538. *Իսկ* մեկնութեամբ կոչի սահման: - 538. Նախ՝ զի սահմանն բնութեան է. *իսկ* կանոնն անձին: - 538. Երկրորդ սահմանն գոյացութիւն է. *իսկ* կանոնն պատահումն: - 538. Երրորդ՝ սահմանն իրին է. *իսկ* կանոնն գործոյն: - 538. *Իսկ* արձակելն որ է՛ մերձաւորել և հաղորդել՝ է՛ յատուկ քահանային: - 538. *Իսկ* առ ներքինս օրհնելն՝ իշխանութիւն և շնորհաց տալն թարգմանի. որ քահանայն կամ եպիսկոպոսն տայ. որպէս ցուցաւ ի վերոյ ի **իզ** գլուխն, **հե** համարն: - 540. Իսկ թէ ձեռնադրօղն իցէ անարժան, միայն ինքն ոչ օգտի. այլ դատապարտի. *իսկ* շնորհն կատարի՛ ի յընդունօղն: - 540. *Իսկ* որ անհնազանդ է, աստուծոյ է անհնազանդ: - 540. *Իսկ* կապելն ի դէմս մեղացն է և մեղսասիրաց. որպէս տէր մեր բևեռեաց զմեղս և զսատանայ ընդ խաչափայտին: - 540. *Իսկ* յերկրի և յերկինս, այսինքն ի կեանս և յետ մահու: - 541. *Իսկ*

ի համակարգսն վերջինն զառաջ նոյն ընդէ՞ր ոչ փոխէ զկանոնսն: - 541. *Իսկ* համակարգ քահանայք կամ եպիսկոպոսք զնոյն ոմն ընդէ՞ր ոչ կապեն կամ արձակեն: - 541. *Իսկ* քահանայք ժողովրդեանն՝ նա կանոնս դնէ՝ որ խոստովանա հա՛յր է և գիտէ զկարն և զորքանն մեղաց: - 541-542. *Իսկ* յովսէփ և եզնակ եկեալք ի հայս պատմեցին զամենայն ստուգութեամբ: - 543. *Իսկ* է երրորդ ժողովն եղև ի թագաւորութեանն միւս կոստանդեայ. որոյ մայրն եռիՆէ: - 544. *Իսկ* Հինգերորդ ժողովն եղև ի վիճակս գրիգորիսի. ի մայրաքաղաքն աղուանից պարտաւ: - 545. *Իսկ* անիատն է առաւել և իսկագոյն և առաջին գոյացութիւն. որ է առանձնական և մասնաւոր որպէս զազգս մեր: - 550. *Իսկ* ըստ պատահմանն՝ կարելի՛ է և ներընդունական. այսինքն փոփոխական և երբեմն: - 550. *Իսկ* յազգէս հայոց ո՛չ ոք իշխեաց խօսիլ հերձուած և զայլոցն ո՛չ ընկալան: - 551. *Իսկ* մերս դաւանութիւն ամենայնիւ նոյնն եկաց մնաց զոր ունէր նախ ի սրբոյն գրիգորէ՛ լուսաւորչէ և ի նմանեաց նորա: - 551. *Իսկ* անօրէնութիւն է մեզ լուծումն պահոց աւանդեալ յառաքելոց անտի զերեք յիսունս և զչորեքշաբաթի և զուրբաթ. և զայլ շաբաթապահս ի նիկիական ժողովոյն սրբութեամբ պահել: - 552. *Իսկ* մեզ անօրէնութիւն: - 552. Որպէս ահա՛ յերկոսեան ճրագալոյցսն այսինքն ի ծննդեանն և ի յարութեանն միաբանին հայք և յոյնք և ասորիք. *իսկ* լատինք ո՛չ: - 554. **Եւ ի հաց պատարագին զբոլորն մատուցանեն և ո՛չ մասն ինչ, լատինք և հայք և ասորիք. *իսկ* յոյնք ո՛չ:** - 554. *Իսկ* վասն ջրոյն զի՞նչ պարտ է ասել. զի յոյնք թերի ցուցանեն զլատինացւոց խառնումն, ինքեանց կրկին խառնմամբն. և զայն խորհուրդ առեալ: - 554. *Իսկ* ազգիս Հայոց ի յաստուծոյ առանձնական բարութիւն պարգևեալ այսորիկ: - 555. *Իսկ* անօրէնութիւն՝ հոգւոյն է՛. զի օրէնքն հոգևո՛ր են: - 555. *Իսկ* մեղք է յօրինաց կատարումն ո՛չ հասանիլ: - 555. *Իսկ* յետ օրինացն՝ անօրէնութիւն. որպէս որք յանապատի անդ անօրինեցաւ ժողովուրդն: - 555. Եւ այս յիրաւի *իսկ*. զի որ հայեցաւ ցանկական մտօք՝ ի կամս իւր գործեաց զմեղս: - 556. *Իսկ* գործ մարմնոյն միայն մասինն այն է որում պատահեցաւ: - 557. *Իսկ* գործ մեղացն բերէ յինքն զտրտմութիւն, զստրջանք, զապաշաւ, և զերկիւղ: - 557. *Իսկ* գործն զհակառակն նմին սուտ երևեցնէ զխորհուրդն և չար ցուցանէ զգործն և զազրալի: - 558. Նախ ասեմք թէ՝ համաձա՛յն են միմեանց. զի և սա նագրիոս է ասէ. զի տրտմութիւն և ծանձրութիւն մի երևին. զի տրտմութիւն ի պակասութենէ բարւոյն լինի, *իսկ* ձանձրութիւն յաւելուածոյ բարւոյն: - 559. *Իսկ* խորհուրդ ասէ վասն դիւաց. զի անմարմին է դևն: - 559. Բարկութիւնն ցասմանն. *իսկ* Ծուլութիւնն է հոգւոյն. Ագահութիւնն հրոյն. Որկրամոլութիւնն օդոյն. և Բղջախոհութիւնն ջրոյն: - 559. Զի սատանայ հպարտացաւ յերկինս և նախանձեցաւ ընդ մարդոյն. *իսկ* այլքն ամենայն մարմնականք են ասեն: - 559. *Իսկ* երկուքն պարզ մարմնական. այսինքն որկորստութիւնն և բղջախոհութիւնն: - 559. *Իսկ* սուրբն նագրիոս ը ասէ զխորհուրդս հզօրս. այս է: - 560. *Իսկ* յետ և յահեակ որկորստութիւն և պոռնկութիւն. զի յետս դարձումն է ի ճշմարիտ բարւոյն, և զհետ ընթերցումն է առ ահեակ և սուտ բարիս: - 560. *Իսկ* երկրորդ անկարգութիւն կամաց է՛ որ հրաժարի յոչ հրաժարելեաց: - 561. Վասն է՞ր ա՛յլ վարդապետք առաջին մեղք ասեն զհպարտութիւնն. *իսկ* նագրիոս զորկորստութիւնն: - 561. *Իսկ* եւագրիոս առաջին դնէ զորկորստութիւն վասն երից: - 561. *Իսկ* փառասիրութիւն և հպարտութիւն ո՛չ են այսց կարգաց. այլ յորժամ զվեցեքին սոքա յաղթէ, ապա՛ փառասիրի և հպարտանայ: - 561. Եւ ա՛յս է յաջ կողմն խոտորիլ. *իսկ* առաջինքն ձախակողմեան էին: - 561. Նա՛խ՝ զի ամենայն մեղք կամ ընդ դէմ իւր մարմնոյ է, կամ ընկերին. *իսկ* հպարտութիւնն է մեղանչումն ընդ դէմ աստուծոյ. որպէս սատանայի: - 561. Երկրորդ՝ զի այլ ամենայն մեղք մարմնական է և գիտեմք թէ մեղք է. *իսկ* հպարտութիւնն անմարմին է և անօսր. և ո՛չ կարեմք գիտել զմեղանչումն: - 562. Երրորդ՝ զի զայլ մեղս մեղսասէրքն գործեն. *իսկ* զհպարտութիւնն սուրբք և ընտիրք. որպէս հրեշտակք յերկինս: - 562. Ութերորդ՝ զի ամենայն տեսակք ախտիցն ի՛ր մի երևեցուցանեն մեզ. որպէս գողութիւն զինչս, և պոռնկութիւն զհեշտութիւն. *իսկ* հպարտութեանն ո՛չ գոյ ամենևին ակնկալութիւն: - 562. *Իսկ* ամբարտաւանն ո՛չ իմանայ զմեղսն զոր գործէ հպարտութեամբ. այլ գիտէ նս թէ առաքինութիւն է: - 562. **Տասներորդ՝ զի ամենայն մեղաւորաց ներէ՛ աստուած ժամանակս ինչ զի զղջասցին. *իսկ* հպարտին ոչ**...: - 562. *Իսկ* մեղանչելն սատանայի այնպէս է որ ընդ դէմ արեգականն հայի և զլոյսն կորուսանէ և խաւարի: - 563. Զի՞նչ է պատճառն որ սրտմտութիւն և ցանկութիւն և այլն ի յանբան կենդանիսդ գործ է. *իսկ* ի մեզ ախտ և մեղք: - 563. *Իսկ* գործքս այսորիկ որ նոցա պահպանօղք են՝ մեզ կորուստ և մեղք են: - 563. Նա՛խ՝ զի ի նոսա չափաւո՛ր են ախտքս այսորիկ. *իսկ* ի մարդն առաւել և անչափ: - 563-564. Երկրորդ պատճառ, զի այսոսիկ անասունքն գործեն ըստ բնական կարգին. *իսկ* մեք ի հակառակն փոխեմք: - 564. *Իսկ* մահն՝ որ տգիտութեամբ մեղանչէ. թէպէտ ո՛չ գիտէ՝ հոգին մահանայ: - 564. *Իսկ* դառն մահն է՛ մահու չափն. որ գիտութեամբ մեղանչէ. այս է դառն մահն յաւիտենից: - 564. *Իսկ* կամաւոր մեղքն գրա՛ծ է ի հին օրէնքն իբ գլուխն տես: - 564. Չորրորդ՝ որք միայն զորդւոյ ասեն բան՝

սակաւ պատիժն, զի մի է յերրորդութենէն. *իսկ* որ զփառակիցն ևս՝ կրկնապատիկ հատուցանի նմա: - 566. *Իսկ* հոգին սուրբ միշտ շնորհաբաշխ և պարգևատու: - 566. *Իսկ* անթողլի մեղաց **զ** են պարագայք. այսինքն յուսահատութիւն. յանդըգնութիւն. մարտնչիլ զճշմարտութիւնն ճանաչելոյ. նախանձ ընդ դէմ եղբայրական սիրոյն. խստասրտութիւն և անզղջութիւն մինչ իսպառ: - 567. Այլ ի մարմինն նիւթօրէն և սկզբնաբար. *իսկ* ի հոգին տեսակաբար և իբր նենթակայոջ: - 567. *Իսկ* ներելի մեղքն է յանցանք փոքրագոյն. քանզի ի մանկունս յետ մկրտութեան նախ յառնեն ներելիքն, և ապա՛ մահու չափքն: - 567. *Իսկ* մահացուն մեղք է գլխաւորօրէն **է**. կամ **ը** որպէս ասացաւ: - 567. Նա՛խ՝ զի սկզբնականն հարկիւ և ակամայ տիրէ. *իսկ* սոքա ըստ կամաց: - 568. Երկրորդ՝ զի սկզբնականն բնութեանն հետևի. *իսկ* սոքա անձին: - 568. *Իսկ* անձնականն ո՛չ. զի ներգործութեամբ է ստացեալ զայնոսիկ: - 568. *Իսկ* զանազանի մահացուն և ներելին ըստ առաւելութեան և նուազութեան. որպէս առաւել է հարկանումն օձի քան զլուոյ. և նետի քան զփշի. այսպէս և մահացուն է առաւել քան զներելին: - 568. *Իսկ* ներելին թէպէտ որոշի յերիս տեսակս ըստ մեծութեան և նուաղութեան. այլ մանրամասնաբար յանթիւս ելանէ. որպէս ծիծաղիլ. վայրաբանել. և այլն: - 568. *Իսկ* անիրաւելն է բանիւ առ վերինս և առ ներքինս և առ հաւասարս: - 568. *Իսկ* ունակութիւն մեղացն է ի մէնջ և առ մեզ. զի կամաւորապէս կրեցաք և կամաւոր պահեմք ի մեզ: - 569. *Իսկ* պատիժն է յայլմէ առ մեզ. այսինքն յարդար իրաւանցն աստուծոյ առ անիրաւս հասեալ: - 569. *Իսկ* յորժամ սուրբ հոգին ելանէ, պիղծ հոգին այսինքն սատանայ բանկէ՛ ի նա: - 570. *Իսկ* երկրորդ սեռն հնազանդ բանին՝ ցասումն և ցանկութիւնն. և սոքա ո՛չ կարեն լինիլ ենթակայ իմանալի առաքինութեանց: - 572. *Իսկ* երրորդ սեռն որ է նոյն ինքն բանն որ է՛ ենթակայ աստուածային առաքինութեանց: - 572. *Իսկ* փառք և պսակք հետևին յուսոյն և սիրոյն: - 572. *Իսկ* աստիճանք հաւատոյն որք են յէութենէ հաւատոյն, եթէ նկատեսցի առ այն որք արարին զհաւաքումն հաւատոյ, են երկոտասան աստիճանք ըստ թուոյ երկոտասան առաքելոցն: - 572. *Իսկ* եօթնեքին աստիճանք առ մարդեղութիւնն քրիստոսի են այս: - 573. *Իսկ* յոյսն վասն հանդերձելոյն միայն: - 574. Դարձեալ՝ հաւատան է ի բարեաց ինքեան և այլոց. *իսկ* յոյսն է ի բարեացն ինքեան միայն: - 574. *Իսկ* որք ելեալք են ի մարմնոյ, յոյս նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ գիտութեան. զի ստուգապէս գիտեն զլինելոց հատուցումն: - 574. Անձին թշնամւոյն պա՛րտ է բարի առնել. *իսկ* թշնամւոյն եկեղեցւոյ՝ ո՛չ առնել բարի և ո՛չ չար: - 577. Այլ գիտելի է, զի առաքինութեամբն ուղղի հոգին ի զօրութիւնս իւր. քանզի խոհեմութիւնն ուղղէ զբանականն. արիութիւնն զցասմնականն. ողջախոհութիւնն զցանկականն. *իսկ* արդարութիւնն ուղղէ՛ զամենայն զօրութիւնս: - 578. Եւ երկրորդ՝ զի մնասցէ ի վերին գաւառն ըստ էութեանն և ըստ գործոյն. *իսկ* այլ առաքինութիւնքն թէպէտ մնան ըստ էութեանն, այլ ո՛չ ըստ գործոյն: - 579. *Իսկ* տեսակ ողջախոհութեան են **գ**. այսինքն զգաստութիւն. ժուժկալութիւն. և համեստութիւն: - 581. *Իսկ* ժուժկալութիւնն առ շօշափելիսն ըստ ծննդական զօրութեանն. ի յորում դնէ զեղանակն. զի առաւել յօժարի մարդն ի գոլ անհատութիւնն սննդականաւն, և ի գոլ տեսակին ծննդականաւն. և յօժարութիւնքս այս՝ զսպին զգաստութեամբ և ժուժկալութեամբ: - 581. *Իսկ* համեստութիւնն կայանայ ի յասելիսն. այլ և ի տեսանելիսն. ի լսելիսն. ի հոտոտելիսն: - 581. *Իսկ* վեցերորդ կոչին մակստացականք. այսինքն ի վեր ստացեալ աշխատութեամբ. որք հետևին միմեանց իբրև զչարս շղթայից: - 582. *Իսկ* սըգալ վասն չարին, զի փախիցուք ի նմանէ: - 583. *Իսկ* դիւական տրտմութիւն և խնդութիւնն մարմնաւո՛ր է և չար: - 584. *Իսկ* ընդ դէմ այսմ, դիւական տրտմութիւնն ի մարմինն է և վասն մարմնոյն. և զարտասուս ցամաքեցնէ. և տրտմի և ամբոխի. և հետևի նմա ոխ և ատելութիւն. այլ և մահ ևս գործէ որպէս ասէ առաքեալն: - 584. *Իսկ* աստուածային խնդութիւնն ունի դարձեալ **դ** յատկութիւնս: - 584. *Իսկ* որ մարմնական խնդութիւնն է և դիւական՝ ընդ դէմ այսմ ամենայնի. և ի վախճանի տրտմութիւն հետևի որպէս ասէ սուրբն եւագրիոս: - 584. *Իսկ* հեզութիւնն նոյն է ընդ մաստութիւնն. զի ասեն թէ՝ մաստութիւն է որ ո՛չ զգայ զդառնութիւն ինչ ոգոյ: - 584. Եւ մաստութիւնն է նոյն ընդ համբերութեանն. զի համբերութիւնն է տևումն մարմնաւոր նեղութեանց. *իսկ* մաստնութիւնն է տևումն նախատանաց: - 584. Քաղց է ըստ մարմնոյ՝ թերութիւն ստամոքսի. *իսկ* ծարաւ՝ տապութիւն ջերմութեանն: - 584. *Իսկ* գործ ողորմութեան են չորեքտասան. այսինքն եօթն մարմնաւոր և եօթն հոգևոր: - 584. *Իսկ* գործ հոգևոր ողորմութեան են այսոքիկ: - 585. *Իսկ* **ը** երրորդ երանութիւնն դառնայ յառաջին գլուխն կրկին կերպիւ: - 586. Ի յասացելոցս յառաջագոյն այս ինչ հաւաքի, եթէ ունակութիւնք մարդկային առաքինութեանց նախկնաբար պատրաստե՛ն ի վարժումն գործնական կենացն. *իսկ* ունակութիւնք պարգևացն պատրաստե՛ն ի վարժումն տեսական կենացն: - 586. *Իսկ* պսակն է՛ ի խորհուրդ ողջախոհութեան. զի ողջախոհ ամուսնութեամբ զսպեսցէ առ ինքն զբղջախոհ ցանկութիւնն. և արգելցի ի շնութենէ և ի պոռնկութենէ. վասն որոյ է են խորհուրդք եկեղեցւոյ:

- 587. *Իսկ* զէութիւն բանին որ է՛ յանուն Յօր և Որդւոյ և Յոգւոյն սրբոյ՝ ասելն մի՛անգամ պարտ է ասել և ո՛չ կրկնել տգիտաբար: - 588. *Իսկ* լուանալն պարտ է լինիլ ի մարմինն բոլոր: - 588. Եօթներորդ, զի մկրտելն է գործ քահանայի. և քահանայութիւնն է սպասաւորութիւն աստուծոյ. *իսկ* զայս սպասաւորութիւն աստուծոյ և ո՛չ կռապաշտքն ունէին սովորութիւն սնոտի կռոցն ի ձեռն կանանցն մատուցանել զպատարագն...: - 589. Իններորդ, զի մկրտութիւնն է գործ քահանայութեան. և քահանայութիւնն է ազատ և ո՛չ ընդ ումեք հարկի ներքոյ. *իսկ* կինն ծառայ և ոտք է առն. վասն այսր հարկի ո՛չ է պարտ ծառային առնել զգործ տեռան...: - 589. ...*իսկ* կանանց ազգին պատուիրէ՛ առաքեալն ի ժամ աղօթիցն շուք դնել գլխոյն վասն հրեշտակաց. այսինքն վասն քահանայից որ հրեշտակք կոչին ի գրոց...: - 590. *Իսկ* ելանելն ի բեմն, զի յետ բոլոր անօրէնութեանցն քրիստոս ել յերկինս և նստաւ ընդ աջմէ հօր աստուծոյ: - 594. *Իսկ* ձև այսմ խորհրդոյ ի վերայ հացին, «Ա՛յս է մարմին իմ»: - 594. Նա՛խ՝ է՛ վկայութիւն անդուստ *իսկ* թշնամեացն. քանզի ասէ ալպերտն ի յառաջին գիրքն ժա համարին, թէ հոգի ասեմ սրբութեան. արիւն փրկութեան. և ջուր լուացման: - 594. *Իսկ* ջուրն մնաց սոսկ ջուր և անկատար: - 596. *Իսկ* մեք դասք ուղղափառաց խոստովանիմք զկուսածին մարմինն քրիստոսի առանց ապականութեան...: - 597. *Իսկ* զի անխմոր բաղարջով է խորհուրդն՝ ասացաւ ի վերոյ **իա** գլուխն **լը** համարն: - 597. Պատահմունք և որակն մնան ի հացն և ի գինին. *իսկ* գոյացութիւնն փոխարկի ի մարմին և արիւնն քրիստոսի վասն **դ** պատճառի: - 597. *Իսկ* որք ոչ միաւորեն, բաժան և որիշ նշանակեն զբանն ի մարմնոյ իւրմէ. որպէս երկաբնակքն քաղկեդոնիկք: - 598. *Իսկ* որք այլ իմն շաղակրատեն թէ թացեալ պատառնէ՛ յուդայի: - 598. *Իսկ* յորժամ դուք անօրէն քահանայքդ առնուք զարիւնն ընդ մարմնոյն՝ ամենայնքն յուդա էք: - 598. *Իսկ* վասն թացեալ պատառին զանազան են կարծիք: - 599. ...այսպէս պատմէ Մատթէոս և Մարկոս. *իսկ* Ղուկաս և Յոհաննէս յետ ընթրեա՛ցն նշանակեն զթացեալ պատառն: - 599. ...*իսկ* զկուսութիւն և զմարտիրոսութիւն նազելեացն հրամայէ ...: - 600. *Իսկ* յորժամ մեղաւորն խոստովանի, պա՛րտ է հայիլ քահանային թէ կրօնաւո՞ր է թէ աշխարհական: - 601. *Իսկ* յորժամ քահանայն լաւ քննէ զխղճմտանքն ժողովրդեանն. խորհի վասն ապաշխարութեանն թէ ո՞րպէս կարէ ապաշխարել. - 601. *Իսկ* ըստ եկեղեցւոյս մեր ա՛յս է այժմ: - 604. *Իսկ* խոստովանութիւնն զմահու չափն և զներելին սրբէ...: - 604. *Իսկ* այժմ որ բաժա՛ն է՝ բաժանմամբ հասանէ ի նա ամենայն սրբութիւն: - 605. *Իսկ* ոմանք այսպէս ասեն: - 606. *Իսկ* ի թաբօր լերինն ձայնիւ հայրական և հովանեաւ հոգւոյն եղև քահանայ. ցուցեալ մովսէս և եղիա սարկաւագունք յաջմէ և յահեկէ: - 607. *Իսկ* ըստ եկեղեցւոյն յունաց, Առաջին դասք են Պատրիարգունքն. որ թարգմանին հայրապետ...: - 607. *Իսկ* ըստ մեծին դիոնիսեայ այսպէս: - 608. *Իսկ* **զ**երորդ՝ սարկաւագն ի վերայ ամենեցուն առ հասարակ հրամայէ՛ ...: - 608. *Իսկ* կատարի պսակն օրհնութեամբ քահանային. և մարմնական զուգաւորութեամբն: - 609. *Իսկ* հաւանումն երկուց կամացն՝ հաստատութիւն է պսակին: - 610. *Իսկ* ի կատարումն պսակին՝ նախ է՛ օրհնութիւն քահանային, և ապա՛ մարմնական զուգաւորութիւնն: - 610. *Իսկ* զաւակն, զի ծնցի և սնուցանի ի պաշտօնն աստուծոյ. զի վասն ծննդեան զաւակին է հրաման պսակին: - 610. *Իսկ* խորհուրդն այն է, զի մի՛ բաժանեսցին: - 610. *Իսկ* և մահն կրկին է, հոգևոր և մարմնաւոր: - 610. *Իսկ* ի կողմանէ, որպէս եղբայր և քոյր մեր, և նոցին ծնունդքն: - 611. *Իսկ* օրհնացն է՛ խնամութեամբ: - 611. *Իսկ* հոգևոր ազգն է կրկին. նախ աւազանին ծննդեամբ. և երկրորդն որդեգրութեամբ. - 611. *Իսկ* որդէգիրն որ բանիւ և կամօք լինի, ո՛չ լինին խնամիք մինչ ի կրկին ծնունդն. - 612. *Իսկ* օրինաց ազգն որ են խնամիքն, և բնականն որ են մարմնականքն, ո՛չ լինին խնամիք մինչ ի **դ** ծնունդն: - 612. *Իսկ* ի նորս յօտար ազգս առնել խնամութիւն...: - 612. *Իսկ* այժմ ի մէջ քրիստոնէից՝ ի մեռանիլ միոյն՝ միւսն ևս ածեն...: - 613. *Իսկ* որ երրորդ կրկնի, ի պոռնկութեան սակի գրի ի կանոնս սրբոց հարց: - 613. *Իսկ* ի նորս փոխեցաւ ի հոգևոր օրհնութիւն և ծնունդ. և զմարմնաւորն ի սկզբան չափաւորն կապեաց. որպէս ադամ և եւա: - 613. *Իսկ* պոռնկութիւնն ի բնական օրէնս և ի գրաւորն և ի նորս խոտեալ է: - 613. *Իսկ* ի մեզ դուռն մարմնոյս որ յերկիր և ի խաւար հայի, արևմտեանն է: - 614. *Իսկ* մարդս եկեղեցի, մկրտի ջրով և դրոշմի սուրբ մեռոնաւ...: - 614. *Իսկ* մեր քաւութեան տօն խաչն է. և տաղաւարահարն եկեղեցին. վասն այն զխաչի և եկեղեցւոյ ի միասին տօնեմք: - 616. *Իսկ* արմտիք և արդիւնք մեր խաչիւն ժողովեցան յեկեղեցի սուրբ: - 616. *Իսկ* հինգերորդն ի նորոյս. զի խաչիւն քրիստոսի գնեցաւ և ազատեցաւ եկեղեցի սուրբ: - 616. *Իսկ* նորոյս պատարագն բանաւո՛ր է և անարիւն...: - 617. *Իսկ* յեկեղեցի ճշմարիտ գառն պատարագի. վասն որոյ զօրինակն արգելումք: - 617. *Իսկ* ի նորս երեք անգամ է. այսինքն յառաւօտուն, և ի ճաշոյն, և յերեկոյն. և իւրաքանչիւրքն **գ գ**: - 618. *Իսկ* և ի ճաշոյն պատարագն **գ** անգամ. մին քահանայն. և **բ** սարկաւագն: - 618. *Իսկ* արտասուքն հանապազո՛րդ է ըստ ամենայնին. և առաւել քան զամենայն ընծայ

հաշտութեան: - 619. Երկրորդ՝ մեղքն ի հոգւոյն և ի մարմնոյն ի վեր ելանէ. *իսկ* արտասուքն վերուստ ի վայր հոսի և կորուսանէ՛ զնա: - 619. *Իսկ* ի լուր տրտմութեան՝ խուճապի մարմինն. և ի դառն մաղձոյն որ է՛ լեղին՝ հոսի ի բերան քաղրդին...: - 619-620. *Իսկ* մեք ո՛չ ոտք և ո՛չ լեզու ունիմք. այլ տիաս և տգէտ...: - 620. *Իսկ* մտօքն, յորժամ աղօթէ և միտքն ո՛չ է ի ներս. ո՛չ մեղք է և ո՛չ արդարութիւն: - 620. *Իսկ* կամօքն, յորժամ կամօք առնէ զաղօթքն՝ վարձք առնու: - 620. *Իսկ* ի նորս եկեղեցի քրիստոնէիցս ազգի՝ յաւելեալ է կրկին ժամ. այսինքն յետ առաւօտին զարևագալն. և յետ երեկոյին՝ զխաղաղականն...: - 621. *Իսկ* չորրորդ ժամն՝ ցերեկին երրորդ ժամուն առաջին ողորմեայն է ի դէմ հոգւոյն սրբոյ. որ յերրորդ ժամու էջ յառաքեալսն: - 622. *Իսկ* եկեսցէն ունի սաղմոսս **թ** փոխ բոլոր. պահապան **թ** ժամուց հանապազորդ գիշերոյն: - 622. *Իսկ* ի ցերեկին աղօթեմք **ե** անգամ ի դէմս հոգւոյս մերոյ: - 622. Նա՛խ՝ հասարակ աղօթքն է հարկաւոր. *իսկ* առանձնականն կամաւոր: - 623. Երրորդ, հասարակն զգայարանօք կատարի. *իսկ* առանձնականն ի միտս լուսափայլի: - 623. *Իսկ* ոմանք ևս կատարեալք ամենայնիւ՝ յերեք ժամանակս աղօթեն առանձնակի. մի ի մէջ գիշերի յառաջ քան զհասարակաց ժամն. և մի յայգն. և մի ի ցերեկն: - 623. Զի ընդ ամենեսեանն՝ զանձն նշանակէ. *իսկ* ամենեցունն՝ զշնորհս հոգոյն սրբոյ ցուցանէ: - 625. *Իսկ* ամենեցունն՝ զմիշտն և զանբաժանելի հոգին սուրբ: - 625. *Իսկ* ի նորս առ մեզ, Սակաւ ինչ հոգացեալ զեօթնիցս, այլ ութերորդին փոյթ տարեալ դարուց աւանդապահք եկեղեցոյ, կարգեցին ութն կանոնս ըր գուբղայիւ: - 627. *Իսկ* զոր կանոն գլուխ կոչեմք, ասելով **զ** գուբղայ հանդարտ ի թիւ. և զեօթներորդն ձայնիւ: - 627. *Իսկ* **ը** երորդն օրհնութիւն կոչի: - 627. *Իսկ* սկսուածն ընդ երգոյն խառնեալ, Նախ նշանակէ՛ թէ զմարգարէից և զառաքելոցն բանս ի միասին խառնեալ ունի նորս եկեղեցի: - 627. *Իսկ* յառնելն մեր ի յօրհնութիւն, նշանակէ նախ ի մեռելութենէ մեղաց և ի ծառայութենէ յառնելն: - 627. *Իսկ* թագաւորքն առաջին և վերջին. զի կիրակին է թագաւորելն աստուծոյ. այժմ առաջին, և զկնի վերջին. կամ աստ կամողացն միայն, և անդ կամողաց և ո՛չ կամողաց: - 627-628. *Իսկ* ի կիրակէի խնկարկելն և **ժ** օրհնութիւնն՝ նշանակէ զտասն քաղաքացն իշխանութիւն ունել. և **ժ** քանքարացն: - 628. *Իսկ* ի պահս ո՛չ խունկ և ո՛չ օրհնութիւն. զի ընդ ապաշխարութեամբ եմք, ո՛չ իշխեմք գոհանալ և ո՛չ ունիմք անուշահոտ վարս: - 628. *Իսկ* մեծացուսցէն ի կիրակէի, զբնաւ տնօրէնութիւնն պատմէ. զի թէ ոչ էր ծնեալ՝ և ո՛չ էր խաչեալ. և ո՛չ յարուցեալ. և ո՛չ զմեզ փրկեալ: - 628. *Իսկ* փակումն դրանն զթաղումն ի գերեզմանի: - 628. *Իսկ* ողորմեայն է՛ որպէս հարցն վասն յանցանացն ադամայ: - 628. *Իսկ* տէր երկնիցն, ընդ հրեշտակս օրհնաբանել զսուրբ Երրորդութիւնն...: - 628. *Իսկ* սաղմոսն՝ մանկացելոցն մկրտութեամբ հրամայէ որդիացելոցն օրհնել զհայրն երկնաւոր. որում փառք յաւիտեանս ամէն: - 629. *Իսկ* երկրորդն, որ երկինք պատմեն զփառս աստուծոյ, զայնմ որ դատէ՛ զհակառակն մեր. զի յերկինս է ողորմութիւն նորա: - 629. *Իսկ* չորրորդն, ողորմելիքս չորեքնիւթեայ բնութեամբ յուսասցուք ի տէր և երկիր պագցուք նմա. և այնու հաստատեսցին սիրտք մեր ի տէր: - 629. *Իսկ* և եօթներորդն խոստովան լինիլ բարութեան և արդարութեան տն. և մերձիլ խնդրուածովք. և օրհնել զաստուած նոր օրհնութեամբ յետ աստեացս: - 630. *Իսկ* ութերորդն ի նեղութեան դարուն օրհնել հոգւով. և գովել ի վերինն երուսաղէմ...: - 630. *Իսկ* վերջին սաղմոս, բարձր առնեմ զքեզ աստուած իմ և թագաւոր իմ: - 630. ...*իսկ* զմիջին ժամանակն ապաշխարութեամբ քաւեալ միաւորեցաւ: - 630. *Իսկ* փառքն, և ալէլուն, և օրհնութիւն և փառքն, և ամէնն, և ընդ հոգւոյդ քումն, և խաղաղութիւնն, այս ամէն Առաքելադի՛ր է: - 631. *Իսկ* առաքեալն պօղոս ի դէմս հոգւոյն ասէ ի գործքն. «բարւոք խօսեցաւ հոգին սուրբ ի ձեռն եսայեայ մարգարէի»: - 632-633. *Իսկ* աւետարանիչն յօհաննէս ի դէմս որդոյն ասէ: - 633. *Իսկ* որք ի վերայ Երրորդութեանն ասեն՝ երեք վնաս կայ ի բանս նոցա: - 633. *Իսկ* յատուկ, Նա՛խ՝ զերեքսրբեանն ի դէմս որդւոյ. զի նա՛ է առաջնորդ որով զհայր տեսանեմք: - 633. *Իսկ* յառաւօտն և յերեկոյն պատարագ ո՛չ մատչի. վասն այն ամենայն աղօթից և պաշտմանց կատարումն և աւարտ զխաչէն ճառեմք. - 634. *Իսկ* որ ասեն՝ հայր և որդի և սուրբ հոգի. կամ թէ՝ քրիստոս որ խաչեցար: - 635. *Իսկ* քահանայն՝ յորժամ աղօթէ՛ կամ պատարագէ՛: - 635. *Իսկ* սարկաւագն՝ յորժամ քարոզէ՛ կամ խնկարկէ կամ ընթեռնու: - 635. *Իսկ* որ այժմ աբեղայք ո՛չ բանան զգլուխս յամենայն աղօթս, այս է պատճառն...: - 635. *Իսկ* ի սրբութիւն սրբոցն մերկանալ զայն և զգեստ սպասաւորի զգենուլ միայն սպիտակ կտաւի և խնկարկել անդ: - 636. *Իսկ* երբեմն համաձայնին երկու դասքն. որպէս ի փառք ի բարձունս և յայլ երգսն: - 636. *Իսկ* կրկին ասել զշարականս. զի եմք հոգի և մարմին: - 636. *Իսկ* երեքկինն ի դէմս Երրորդութեանն է: - 636. *Իսկ* այլք ասեն թէ անանիա շիրակունին է ասացեալ: - 637. *Իսկ* զայսօր յարեաւն, զնորոգեալ կղզիքն, և զթոռանցն, ներսէս լամբրօնացին: - 637. *Իսկ* զխորհուրդն անճառ, և զմեծահրաշն, գրիգոր վկայասէրն: - 638. *Իսկ* զարեգականն, գրիգոր սկիւռացին: - 638. *Իսկ* զներսէսին մեծի, և զխոտաճարակացն, յոհաննէս պլուզն: - 638. *Իսկ* հոլանի և

անգօտի. գլխիբաց և գօտէլոյծն է: - 639. *Իսկ* և **դ** կողմունք նոցա որ լինի **ը**: - 639. *Իսկ* թիմգիանոս արար մի գործի և **իզ** աղի: - 640. *Իսկ* յետ սորա՝ Սինիգրէս արար զառաջին ձայնն, ի հիւսնականէ՛ գտեալ արուեստից: - 640. Դարձեալ՝ նոցա կրկին աղի. *իսկ* մերն բան և ձայն. և հոգի և մարմին: - 641. *Իսկ* **բ** շաբաթին հրեշտակաց. զի յառաջնում աւուրն ընդ լուսոյն ստեղծան: - 642. *Իսկ* մեծացուսցէքն, և խաչի, և հանգստեան, հանապազո՛րդք են. զի միշտ բարեխօսք են: - 642. *Իսկ* առաքեալքն իբր ականատեսք վկայեցին: - 643. *Իսկ* կցորդ և սկիզբն, այն մին տունն է խորհրդաւոր ըստ պատշաճի աւուրն: - 643. *Իսկ* սաղմոսն զամենայն յինքն ունի. զանցելոյն զներկայիս և զապագային...: - 643. *Իսկ* քեզ վայելէն, զարարչութեանն ունի խորհուրդ. այլ և զտնօրէնութեանն և զկատարածին...: - 644. *Իսկ* սաղմոս տունն է երգ մարդկան. այսինքն է զի հրեշտակք և մարդիկ միաբանեալ օրհնեմք զաստուած փրկիչն մեր որ խօսի ընդ մեզ: - 644. ...*իսկ* խունկն մերձեալ ի հուրն և զհոտն բուրեալ՝ է՛ մարմինն միաւորեալ ընդ բանին. և զհոտ անոյշ բուրեալ աշխարհի: - 645. *Իսկ* մի տախտակն յերկուս բաժանեալ և հնգիւք փակեալ...: - 646. *Իսկ* վաղն որ է՛ կատարեալ տօն, - 646. *Իսկ* հասարակ սրբոցն նախատօնակ ո՛չ է այսօր: - 647. *Իսկ* գլխաւորագոյն սրբոցն, որպէս յաւագ տօներն և յայլս, որ առնեմք նախատօնակ որպէս ի տօնս տէրունականս: - 647. *Իսկ* հայրապետքն բաժանեցին զերկու քառասունսն ի շաբաթապահս: - 649-650. *Իսկ* պահքն սուգ է և ապաշխարութիւն վասն յանցանաց նախաստեղծիցն. - 650. *Իսկ* ի շաբաթն և ի կիրակէն պատարագ մատչի: - 651. *Իսկ* տեառն մերոյ քառասնիցն սկիզբն է երկրորդ շաբաթն, և կատարումն չարչարանք մեծի ուրբաթուն: - 651. *Իսկ* վասն քառասնից պահոց, Նախ մովսէս պահեաց կրկին խ ի լերինն. և յեսու ընդ նմա: - 652. *Իսկ* շաբաթապահքն բազում ունի նշանակ: - 653. *Իսկ* ճշմարտութիւնն ի մեզ, վասն **ե** զգայարանացս սրբութեան. որով մեղանչեմք՝ սրբիմք պահօք և ապա՛ սրբոցն ի բարեխօս մեզ: - 653. *Իսկ* չորեքշաբաթն և ուրբաթն առանձին պահել...: - 653. *Իսկ* վասն ողորմութեան ասացաւ ի վերոյ **լ** գլուխն յառաջին համարն: - 654. *Իսկ* քրիստոնէիցս օրհնութեամբ է և շնորհօք: - 654. *Իսկ* մատռւակն յոտն կացեալ, նշանակէ՛ զծառայն ի գործ սպասու: - 656. *Իսկ* տեարքն բազմեալ ի հանգիստ վայելման: - 656. *Իսկ* պահքն զկենաց կարօտութիւնս զայս: - 657. *Իսկ* պահքն զչարութիւնն. զի նուազի և կարօտի հոգին յամենայն բարեաց. որպէս ի պահոց մարմինն: - 657. ***Իսկ* օրհնութիւն աղին, զի որոշեսցի ի զոհից կռոց, և ի հասարակ զենմանց**...: - 657. *Իսկ* զկամքն տալ աստուծոյ հաճո՛յ է քան զպատարագ՝ վասն չորից: - 658. Նախ՝ զի լսելովն զկամս աստուծոյ կատարեմք. *իսկ* պատարագաւն զմերս: - 658. ...*իսկ* այս ընտրեցաւ վասն նորոյս և ճշմարտութեան: - 658. *Իսկ* զկանոն ջրօրհնէից՝ սրբոյն բարսղի է արարեալ յեօթն ամի հայրապետութեան իւրոյ յէմ. զի անդ հանդիպեցաւ: - 658. *Իսկ* խոսրով թարգմանիչ եբեր ի հայս. որ գնացեալ էր յերուսաղէմ հրամանաւ սրբոյն սահակայ: - 658. *Իսկ* ապաշխարօղսն կարգել. և դարձեալ ի մեծի **ե** շաբաթի աւուրն արձակել...: - 658. *Իսկ* զկարգ մայրօրհնէից՝ սուրբն կիպրիանոս կարգեդոնացի: - 658. *Իսկ* վասն ագապս առնելոյ որ է՛ ոգէհանգիստ. և վասն քահանայաթաղին որ է՛ **ծը** աւետարան...: - 658. *Իսկ* վասն տեառնականին և աղօրհնէիցն, սուրբն յոստո՛ս է արարեալ. որ չորրորդ եպիսկոպոս էր յէմ յառաքելոյն յակոբայ: - 659. *Իսկ* զսքեմայ կարգն՝ սուրբն դիոդորոս եպիսկոպոս պամփիւլացոց քաղաքի. յառաջին ամի իւրոյ. հրամանաւ մեծին անտօնի և **բ** թեբայեցոցն. և **բ** սկիւթացւոց լերինն: - 659. *Իսկ* վասն գրակարդացի և նկարեալ եկեղեցւոյ. և վասն զնշխարս ի հանգիստ փոխելոյ. այս ամենայն յիշատակ է մեզ ի սրբոյն գրիգորէ՛ լուսաւորչէն մերմէ: - 659. *Իսկ* վասն քահանայօրհնէիցն, սուրբն սահա՛կ է արարեալ. յառաջին ամի եպիսկոպոսութեան իւրոյ. ի նաւասարդի ամսեանն որ օր մի էր. և յիշատակ սուրբ կարապետին արար զքահանայօրհնէքն: - 659. *Իսկ* վասն հիմնարկութեան սուրբ տաճարի և ժամահար օրհնելոյ. սկիհ և մաղզմայ. և զգիրք. և զկնունք առնելոյ. և խաչօրհնելոյ. և զքառասնորդաց **գ** ժամուց զքարոզքն և զաղօթսն, յոհան մանդակունին է արարեալ...: - 659. *Իսկ* աղօթքն զոր յովհաննէս ուսոյց աշակերտաց իւրոց այս էր: - 659. *Իսկ* որ ասեն՝ նախապատիւ է պատուականն քան զանարգն: - 663. *Իսկ* վախճանեալն կատարեալ լսի. որպէս թէ ոք սկսանի երթալ ի ճանապարհ կամ ի գործ ինչ և ի յաւարտիլն կատարած ասի: - 666. *Իսկ* լի աւուրբ ասէ և ոչ ամօք կամ ամսօք...: - 666. ...*իսկ* մահն մուտն է անփոփոխ յաւիտենին...: - 667. Նախ աստ հոգի մարդոյն է ի մէջ չարեաց և բարեաց. *իսկ* յետ մահու ի մէջ բարեաց միայն. և ի յարութեանն ի մէջ բարեաց և փառաց: - 667. ...*իսկ* մահն սկիզբն է և ճանապարհ...: - 667. Եւ դարձեալ՝ աստ հաւատոյն է. *իսկ* յետ մահու յուսոյն. և ի յարութեանն սիրոյն: - 667. ...*իսկ* յետ մահու հաստատուն յուսով տեսանեմք և ուրախանամք...: - 667. ...*իսկ* յետ յարութեան սերտ և անքակտելի սիրով միաւորիմք. - 667. *Իսկ* յետ մահու կարէ՛ ոչ մեղանչել: - 667. *Իսկ* մարմնաւոր մահն բաժանի ի **դ**. այսինքն ի բնականն, ի պատահականն, յանձնիշխանականն, և ի խնամականն: - 668. *Իսկ* չարաց՝ առ

**ԼԱՄ +** ...հռաքէլ *լայր* զորդիս իւր: - 283. Եւ թէպէտ *ելաց*՝ ո՛չ եգիտ դարձեալ. զի ո՛չ էր բոլոր սրտիւ և ջերմ սիրով: - 309. Նոյնպէս և ծնունդք սուրբ աւազանին որք են անդրանիկք և անդամք քրիստոսի եղեալք, ագահութեամբ և պոռնկութեամբ կորուսանեն զշնորհն երկնաւոր. և ո՛չ *լան* և ո՛չ զղջան որպէս եսաւ: - 309. Եւ թէ *լան* և զղջան բոլոր սրտիւ ի ձեռն ապաշխարութեան, գտանեն վերըստին զշնորհն անդրանկութեան, և հասանին թողութեան մեղաց: - 309. Զի՞նչ է որ ասէ՝ «հռաքէլ *լայր* զորդիս իւր և ո՛չ կամէր մխիթարիլ զի ո՛չ էին»: - 312. Յաղագս երից որդւոց է *լալ* մօրն հռաքէլի: - 312. Վասն նոցա *լայր* անմխիթար սգով, զի ո՛չ եղև մայր նահատակացն: - 312. Զի **խ** վասն այն կատարեմք, որ առաջինքն զննջեցեալքն **խ** օր *լային* անմխիթար. որպէս զնահապետն յակոբ *լացին* **խ** օր: - 391. Զի զահարօն և զմովսէս **լ** օր *լացին*: - 391. Ա՛րդ նա՛խ՝ զայն հասակն **լ** ամեայ յորմէ զրկեցաւ մեղօք՝ *լան*: - 411. Իսկ ի հիւանդանալն՝ եղիսէոս եդ զձեռն ի վերայ ձեռաց արքային յովասու և զօրացոյց զնա ի պատերազմին ընդ դէմ ասորոցն փոխանակ *լալոյն* ի վերայ նորա: - 446. Դժոխ՝ զդժուար զնեղ և զանձուկն նշանակէ. և կոչի բազմաւոր, Նախ վասն բազում կրիցն. ուր *լալ* աչացն է և կրճել ատամանց և խաւար ներքին և արտաքին և այլն: - 505. Դարձեալ ապաշխարութիւն է վասն անցեալ չարեացն *լալ*. և *լալովն* վերստին այլ ո՛չ առնել: - 601. ...զի տեսանելով զպակասութիւն մեր՝ արտասւեմք և *լամք*. վասն որոյ առնումք զթողութիւն. - 619. ...երախայ և ո՛չ ունի լեզու, միայն *լայ*. և մայրն գթայ ի յարտասուքն և տայ կերակուր: - 620. ...*լալ* և կրճել ատամանցն. փոշիմանիլ, տխրիլ, և ոչ ինչ օգտիլ...: - 671. Այլ հոգի դատարկ ի քաւարանին աչս ո՛չ ունի զի *լացցէ* որով յարատ հայեցաւ. և ո՛չ մարմին զի պահեսցէ և աղօթեսցէ. այլ և ո՛չ զղջումն. զի հոգին ինքն ըստ ինքեան ո՛չ կարէ զղջալ: - 699. Երկրորդ՝ անտանելի ցուրտ. յոր եթէ հրեղէն լեառն անկանէր՝ սառն դառնայր. վասն այս երկուցս ասի՝ *լալ* աչաց և կրճել ատամանց. - 752. ...զի ծուխն ի հրոյն պատճառէ *զլալ* աչաց. և ցուրտն զկրճել ատամանց: - 752. Ութերորդ՝ ահագին տեսիլն դիւաց և վիշապաց. զոր ի կայծի կայծել հրոյն տեսանեն. և ողորմելի աղաղակ *լալ* ականացն և ոտնհար լինողացն: - 752. Այլոց հուր և խաւար և տարտարոս. *լալ* աչաց և կրճել ատամանց. և այլոց այլ իմն: - 760

**Լ ԱՄԵԱՅ (ԵՐԵՍՆԱՄԵԱՅ +)** - Երկոտասաներորդ՝ յովսէփ *լ ամեայ* իշխանացաւ երկրին: - 313. Եւ տէրն մեր *լ ամեայ* մկրտեցաւ. զորմէ հրամայեաց հայր՝ դմա՛ լուարուք ամենայքն: - 313. Երկրորդ՝ նշանակէ զմահ և զյարութիւն մեր. որ *լ ամեայ* յառնեմք. որպէս ադամ *լ ամեայ* ստեղծաւ: - 411. Ա՛րդ նա՛խ՝ զայն հասակն *լ ամեայ* յորմէ զրկեցաւ մեղօք՝ լան: - 411. Դաւիթ երեսնամեայ թագաւորեաց. և տէր մեր *լամեայ* մկրտեցաւ և ի գերեզմանէն յարեաւ: - 437. Իբրև ի հակառակս *լ ամեայ* միշտ մնացեն...: - 766

**ԼԱՄԻՄԱՆԱՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն: *Լամիմանացիք*: - 298

**ԼԱՄՍՈՒՐ** - Եւ իշխանք վերակացուք գործոյն՝ *Լամսուր* ի սեմա՛յ ազգէն: - 297

**ԼԱՅՆ +** *Լայն*. երկայն. խոր. և բարձր ասի աստուած: - 102. Երկայնութիւն՝ որ ո՛չէ *լայն* և ընդարձակ. այլ միայն երկայն. զի երկարագծի զօրութեամբ ի բոլորս: - 129. Երկրորդ՝ զի ունի երկիցս **բ** ծայրք. երկայնք և *լայնքն*. որ է յարևելից յարևմուտս. և ի հիւսիսոյ ի հարաւ: - 210. Եւ որպէս զհուր՝ ներքին կողմն *լայն* է և վերին ծայրքն նուրբք: - 215. Եւ հուրն է ի սիրտն. զի սիրտն ջե՛րմ է և նման է հրոյ. *լայն* է տակն և բարակ ծայրքն: - 232. Իսկ *լայնն*՝ փոքրախելք: - 246. Դարձեալ՝ մարդո՛յս է *լայն* եղունգն և ճաղատ գոլ: - 275. Երկայն՝ **գճ** կանգուն. և *լայն*՝ **ծ**. և բարձր՝ **լ**: - 293. Երկայն **իը** կանգուն. և բարձր **ժ**. և *լայն* **ի**. բոլորն հասարակ: - 343. Եւ **ծ** կանգուն *լայն* յարևելից և յարևմտից կողմն: - 343. Կանգուն և կէս *լայն*: - 344. Այսպէս և *լայնքն*, որ աճին իմաստիւք ի յէութիւնս իւրեանց: - 344. Հինգերորդ, որ ասաց զերեք ձևն, երկայն և *լայն* և բարձր. և ո՛չ զխորն որ է՛ թանձրութիւն: - 344. *Լայն* և ընդարձակ միջոցաւ: - 456. Զի՞նչ նշանակէ քառաթև խաչն. երկայն, և *լայն*, խոր, և բարձր: - 493. Նշանակէ՛ զպատկերն ոսկի **կ** կանգուն երկայն և **զ** *լայն*: - 637. Իսկ վաթսուննն զբաբելօնի պատկերն **կ** կանգուն երկայն, և **զ** *լայն*. յորում ընդարձակեցաւ կռամոլութիւն: - 708

**ԼԱՅՆԱՄԻՋՈՑ +** Եւ սկսան շինել հաստահիմն *լայնամիջոց*. աստիճանաձև ելիւք և իջիւք: - 296

**ԼԱՅՆԱՆԱՄ +** Երկրորդ՝ *լայնացեալ* յամենայն կողմանց: - 184. Ունականն է՝ յորժամ ժողովէ զկերակուրն՝ ձկտի և *լայնանայ* և փակէ՛ զամենայն դրունսն որ ի ներքոյ և ի վերոյ և ի կողմանէ, զի մի՛

թափեցցի կերակուրն: - 242. Իսկ քաղելով գործելն, զի սկսեալ բնութիւնս մեր ի գլխոյն *լայնանայ* ի թիկունքն՝ և նրբի ի կրունկն, և բոլորեալ դարձեալ կատարի ի գլուխն: - 293. Ասեն վարդապետք թէ՝ ի լուր ուրախութեան հեշտանայ լեարդն և տարածեալ *լայնանայ*. և այնպէս շունչն ելեալ յորդ ընդ շնչերականն և առնէ զծաղրն: - 619

**ԼԱՅՆԱՏԱՐԱԾ +** Նախ՝ *զլայնատարած* մեծութիւնն՝ և զհաստատ կամարաձգութիւնն երկնից: - 26

**ԼԱՅՆՈՒԹԻՒՆ +** *Լայնութիւն* իմաստութիւնն է. երկայնութիւն՝ զօրութիւնն. խորութիւն՝ անյայտութիւնն. բարձրութիւն՝ անհասութիւնն: - 129. Սուրբն դիոնէսիոս ասէ, «եռակի է ձև ամենայն մարմնոց». այսինքն *լայնութիւն*. երկայնութիւն. խորութիւն: - 129. *Լայնութիւնն* է ընդարձակ ճանապարհ աստուծոյ. որ է նախախնամութիւն նորա յամենայն էքս: - 129. Այլք ասեն թէ՝ է՛ ի յաստուած *լայնութիւն* սիրոյ, որով յետս դարձուցանէ զմեզ ի մոլորութեանց վասն առաւել սիրոյն: - 129. Եւ *լայնութիւնն* յամենայն յազգս մարդկան: - 129. Այսպէս մարմին մարդոյ որ քան է երկայնութեամբ ի գագաթէ՛ գլխոյն մինչև ի ներբանս ոտիցն, նոյն քան է *լայնութիւն* ի մէջ երկուց երկայն մատիցն ձեռաց: - 232. Զոր ոմանք լ ստադիոն ասեն զբարձրութիւնն և *զլայնութիւնն* շուրջանակի խդո քայլք. այսինքն **խդ** մղոն ձգեալ ասի: - 297. Եւ **բ** երեսին մէջն **ծ** կանգնոյ *լայնութիւն*: - 297. *Լայնութիւնն* աստուածային բարութեանն: - 493. *Լայնութիւն* հոգևոր սիրոյ: - 493

**ԼԱՆՋՔ +** Եւ զի նախանձեցաւ ընդ մարդոյն, ի *լանջս* և յորովայնս սողայ: - 219. *Լանջքն* մսակոյտ՝ տխմա՛ր է: - 247. *Լանջքն* որ երկայն է քան զփորն՝ խոհեմ է: - 247. *Լանջքն* որ փորիւն մազածածո՛ւկ է՝ անկրօն է և անկայուն և անգութ: - 247. Եւ թէ *լանջքն* միայն է մազեղ, սրտո՛տ է: - 247. ...և **բ** Ակունք ուսոյն՝ կրկին կիսագունդք երկնից. ունելով **զզ** կենդանակերպս. և Վակաս *լանջացն* **բժան** ակամբք նոյն կենդանակերպք ի *լանջս* երկնից Միթրն՝ պսակ քահանայապետութեան. և Թիթեղն՝ մտաց թեթևութեան: - 348. Որպէս **բժան** կենդանակերպք երկնից, և ամիսք տարւոյն. այլ և **բժան** առաքեալքն ի *լանջսն* յիսուսի: - 348. Որ և միով հպմամբ ի *լանջսն* մաքրեցաւ աշակերտն յայսպիսի կրից. քանի՞ առաւել որ եբարձ զապականութիւնս ազատ լիցի յայսպիսի կրից: - 383. Դարձեալ ասեմք, եթէ միով հպմամբ *լանջացն* յիսուսի մաքրեցաւ աշակերտն յայսպիսի կրից. քանի՞ առաւել բարձօղն ապականութեանց ազատ լիցի յայսպիսի կրից: - 502

**ԼԱՊՏԵՐ +** Զորօրինակ երեք լոյս *լապտերաց* միաւորեալ՝ և որոշմամբ յատկացեալ: - 106. Որ ի ջուր ընպելն ընտրեաց զզօրսն. և թաքուցեալ սափորօք զլառեալ *լապտերսն*, և էհար **յ** արամբք **ըզճի** հազարսն: - 420. Այլ և **ժ** աշտանակն. **ժ** կուսանք *լապտերօք*: - 441. Զքուն մահուն ասէ մինչ ի կատարած. և ի մէջ գիշերի յարութեանն աւուր յարեան ամենայն կուսանքն և կազմեցին *զլապտերս*: - 693

**ԼԱՏԻՆ + Որպէս ահա՛ յերկոսեան ճրագալոյցսն այսինքն ի ծննդեանն և ի յարութեանն միաբանին հայք և յոյնք և ասորիք. իսկ *լատինք* ո՛չ: - 554. Վասն զի սոքա պատարագ մատուցանեն ի նախատօնակ ծննդեանն և յարութեանն. և *լատինք* ո՛չ: - 554. Եւ ի հաց պատարագին զքոլորն մատուցանեն և ո՛չ մասն ինչ, *լատինք* և հայք և ասորիք. իսկ յոյնք ո՛չ: - 554. Եւ յառնուլ զաստիճան սարկաւագութեան ո՛չ տան հրաման կին առնուլ հայք և *լատինք* և յոյնք. բայց ասորիք ո՛չ**: - 554

**ԼԱՏԻՆԱՑԻ** - Զի ահա՛ *լատինացիք* առանձնականս ունին աւանդութիւնս, - 553. Իսկ վասն ջրոյն զի՞նչ պարտ է ասել. զի յոյնք թերի ցուցանեն *զլատինացւոց* խառնումն, ինքեանց կրկին խառնմամբն. և զայն խորհուրդ առեալ: - 554

**ԼԱՐ +** Ով արհանոսք՝ զի թէ որպէս զմեզ զորդի շնորհօք ասէք և արարած, մեք զի եմք շնորհօք որդիք՝ ունիմք ընդ մեզ և ընդ հայր շաղկապ. իբր թէ *զլար* զհոգին սուրբ: - 39. Եւ **յ** կանգուն երկայն, զի ի կրնկէն ի գագաթն *լար* չափեալ՝ **դ** պատ առնու զգլխովն: - 293. Վասն որոյ բարկացաւ աստուած և *լարս* առանց բժշկութեան արձակեաց ի նոսա: - 386. Եւ սոքա են հարճք որ կարեն ի բաց հանիլ ի ժառանգութենէ. զի սէրն է կապ և *լար* շարողին որ ո՛չ թողու ցրիլ: - 440. Երեքթելեան *լարքն*, հոգին եռամասնեայ և մարմինն ի չորս տարերաց: - 744-745. Շող յաստուծոյ ծագեալ հաւատ. զերկնից կախեալ *լար* իմն լուսեղէն. զորմէ բուռն հարեալ ձեռն զձեռամբ փոփոխեալ. ի ծովու սքանչելեաց յերկինս և յօդս վերանալ: - 769. Թէ ի բերան պատերազմի յել անմահին և ի մուտ մահկանացուին. դիցես պահապան բերանոյդ. *լար* կարմիր շրթանցդ. այսինքն հաւատով սիրով զօրացեալ. և ո՛չ բաժանիլ ի քնասիրութիւն և յարծաթսիրութիւն. յառաքինասիրութիւն. և յախտասիրութիւն. յընկերսիրութիւն և յարատսիրութիւն: - 770-771

**ԼԱՐԵՄ +** Այլ և խաչաձև ընթանայ նաւ ի վերայ ջուրց յորժամ *լարէ* հողմ զարմիռնն. կամ տարածեալ թևօք հասանին ի նաւահանգիստն: - 494

**ԼԱՒ +** Ապա ըստ այսմ հետևի՝ զի մարիամ մայր քրիստոսի լինի և ո՛չ աստուծոյ. զի *լաւ* է քրիստոսածին և մարդածին կոչիլ՝ քան թէ աստուածածին: - 91. Նոյնպէս թէ զարուեստն *լաւ* առնէ՝ գովի. և թէ վատթար՝ պարսաւի: - 250. Երկոտասաններորդ՝ զի որպէս իսահակ հնազանդ գտաւ հօրն մահո՛ւ չափ, *լաւ* համարելով զմեռանիլն՝ քան առանց հնազանդութեան զկալն: - 305. Երկրորդ՝ *լա՛ւ* համարեցաւ զերկնաւոր գանձն՝ քան զոսկի և քան զարծաթ կորստական: - 338. Վեցերորդ՝ զնա վկայէ՛ բարի և *լաւ* և անձնեայ ի մէջ իէլի. և տէր մեր բարի և ընտրեալ ի մէջ բիւրաւոր արարածոց: - 426-427. **Եւ *լաւ* է մի ակն պաւական՝ քան զբազում քարինս անպիտան:** - 551. Եւ թէ ոք ասիցէ, ապա ուրեմն *լա՛ւ* է տարածայնութիւն քան զհամաձայնութիւն. և բաժանումն քան զմիութիւն: - 551. Ասեմք առ այս թէ՝ ո՛չ է հարկաւոր այս ամենայն ուրէք. զի գո՛յ և տարածայնութիւն բարի՝ քան զհամաձայնութիւն ընդ հերձուածօղս. և *լաւ* է բաժանումն ի չար ժողովոց՝ քան զմիաբանութիւն: - 551. Թէ կրօնաւոր է՝ հարցանէ թէ ծոյլ եղեա՞լ է յաղօթքն. կամ անհնազանդ. թէ բղջախոհ. թէ յատուկ իրք ունօղ. թէ պճնօղ. թէ որոնօղ *լաւ* կերակրոց և ըմպելեաց. թէ քնափ և թէ կռւօղ: - 601. Իսկ յորժամ քահանայն *լաւ* քննէ զխղճմտանքն ժողովրդեանն. խորհի վասն ապաշխարութեանն թէ ո՞րպէս կարէ ապաշխարել...: - 601. Վասն որոյ հայրապետք եկեղեցւոյ *լա՛ւ* համարեցան զվայելչականն բառնալ որ ո՛չ ի լինիլն յաւելուած առնէ...: - 604. ...հրովն փորձի ոսկին թէ *լաւ* է թէ վատ...: - 664. Երրորդ, *զլաւ* մարդն աղքատացնէ և փորձէ, թէ վասն ընչի՞ցն սիրէր զաստուած՝ թէ յաղքատութեանն այլ նոյնպէս է. որպէս յոբայն: - 664. Նա՛խ՝ զի ամենատեսն աստուած գիտէր *զլաւս* և զխոտանսն: - 674. Զի հասարակա՛ց է ամենայն մարդոյ կատարելոց և անկատարից, զի ի յանդիմանութիւն յանդիմանելեացն առհասարակ դժկամա՛կ երևի ի սկիզբն. թէպէտ ընտրողութեամբ *լաւին* ընդունին զխրատն: - 774. Տարորոշումն խառնեալ տարերց. և *լաւին* և վատթարին. զոմանս պահել և զոմանս վտարել: - 786

**ԼԱՒԱԳՈՅՆ +** *Զլաւագոյն* կայս զոր աստուած տուեալ էր նմա՝ կամեցաւ ակամայ յաստուծոյ ի՛ւր շորթել. և այլոցն բռնաբար տիրապետել և հրամայել: - 149. Երրորդ՝ զի ադամայ ետ աստուած զբնական իմաստութիւնն առ ի ցուցանել *զլաւագոյն* ծնունդս բանին՝ հրամայէ՛ անունս դնել: - 219. Ասեմք թէ՝ ոչ ինչ է այս նախատինք մեզ. զի հեթանոսք յետոյ հաւատացին և *լաւագոյնք* են քան զհրէայս. և վերջին մշակքն ընդ առաջինսն առին զվարձս. և որք նախանձեցան կորեան: - 549. Իններորդ՝ զի թէ **հաւատն և յոյսն և սէրն՝ աստուածային առաքինութիւնք են և *լաւագոյն* քան զամենայն առաքինութիւնս**. ըստ որում ասէ պօղոս «սոքա երեքեան և մեծ քան զոսա սէրն է»: - 557. Չորրորդ՝ յորժամ սիրեմ զիս վասն աստուծոյ. և այս ևս է *լաւագոյն*. զի ո՛չ խնդրէ մարդ զիւրն, այլ զաստուծոյն միայն: - 576. Եւ վասն չորից պատճառաց *լաւագոյն* է սիրել քան զսիրիլ: - 576. ...զի *լաւագոյն* համարեցաւ աստուած մի՛ առանց մեր պսակիլ: - 696

**ԼԱՒՈՒԹԻՒՆ +** Ա՛յսպէս առնէ զչարս և զմեղաւորս, զի ի ձեռն բարեաց օգտեսցին և ի *լաւութիւն* գայցեն: - 19-20. Երրորդ, վասն վերջնոցն *լաւութեան* ընտրեցան և խոտանքն. որպէս զհող զքար և զխեցցէ մորթն պատւեմք վասն ոսկւոյ և արծաթոյ և մարգարտին: - 398

**ԼԵԱՌՆ +** Են և ո՛չ ասին ի յէքս. որք յանկոխ *լերինս* և ի խորս ծովուց անտեսք ի մարդկանէ: - 55. Քառասունևք) Վասն ջերմ ջուրց. և աղբերաց ի ձմերայնի. և զի ի *լերինս* բղխեն: - 155. Քառասունևե) Յատկութիւնք երկրի. և վասն *լերանց*. և ի ստորոտս *լերին* շո՛ղ լինի: - 155. Երկրորդն՝ ներքին մասն հրոյն. որ կոչի օլօմպային երկին. վասն մերձ գոլոյ յօլօմպիոս *լեառն*: - 183. Արաց. ի յունել ձեան *զլերինս* և զբլուրս, արա՛ց է ասեն այս ճանապարհ և ո՛չ կանանց: - 200-201. Երրորդ՝ զի ամենայն տեղիս գտցի ջուր. ի *լերինս* և ի դաշտս, և արբցեն կենդանիք: - 207. Նոյնպէս և հրոյ. որպէս յետն է *լեառն* յարևմուտս: - 208. Վասն է՞ր ի *լերինս* բղխեն աղբերք առաւել քան ի դաշտս: - 209. Երրորդ՝ զի ջուրք ծովուն բա՛րձր է քան զերկիր. վասն որոյ հա՛րկ առնէ և ի վե՛ր մղէ և ապա՛ հեղու յերկիր. զորօրինակ մարդիկք ի բարձրագոյն *լերանց* իջուցանեն զջուրն, և ըստ նոյն չափոյ ի միւս կողմն ի վեր հանեն սակաւ ինչ պակաս: - 209. Չորրորդ՝ ցոյցք է ամենաիրաշ խնամոց արարչին. որ զհոսանուտ ջուրս ներքին՝ ի մէջ *լերանց* ի վե՛ր հանէ ի պէտս կենդանեաց որ ա՛նդ են. այլ և յոռոգումն ուր գետք ոչ ելանեն: - 209. Զի՞նչ պէտս են բարձրագոյն *լերինքն*: - 211. Վասն է՞ր ի ստորոտս *լերանց* առաւել շող լինի քան ի գլուխն որ մե՛րձ է արեգական: - 211. Ո՛չ թէ քան զտարրական հուրն ի վե՛ր է անցեալ. այլ զի լուսինն և արեգակն միշտ ի հարաւոյ կողմանէ ի ստորոտէ *լերինն* ելանեն. և ի հիւսիսոյ կողմն *լերինն* միշտ գիշեր լինի. որպէս աղէքսանդրու պատմութիւնն ասէ. և ի գլուխն միշտ լոյս. և ի հարաւոյ կողմն տիւ և գիշեր: - 222. Որպէս *լերինք* ցուրտ գոլով՝ զպտուղս ո՛չ հասուցանեն որպէս ի դաշտի: - 261. Քանանի, Մշտնջենաւոր *լերինքն*:

- 283. Եւ քանի՞ անգամ ել ի *լեառն*. և **գ** քառասուն պահեաց. և **դ** ծնունդն մովսէսի: - 284. Եւ **ծ** ամն՝ որ առ որդւով նորին կոստանդեաւ յերկնից լուսափայլեալ ի *լեռնէն* ծիթենեաց մինչև ի սուրբ գողգոթա: - 294. Ապա՛ ի թաբօր *լերինն* ամպ խոնարհեալ և ձեռն կարկառեալ ձեռնադրեաց զնա ասելով, այս մելքիսեդեկ անհայր անմայր չհամարեալ յազգս՝ նմանեալ որդւոյն աստուծոյ: - 300. Նա՛խ՝ *լերինք* և բլուրք մշտնջենաւորք կոչին հրեշտակացն դասք բարձրացեալք յերկինս և անշարժութեամբ սերտեալք...: - 319. Երկրորդ՝ նահապետք և մարգարէք կոչին *լերինք* և բլուրք մշտնջենաւոր վարուք և անշարժ աստուածապաշտութեամբ: - 319. Երրորդ՝ ի յառնելն զարարածս *լերամբք* և բլրօք. զի *լերինք* և բլուրք, հիմունք և բրգունք են աշխարհի. վասն որոյ օրհնեցան անշարժապէս...: - 319. Հինգերորդ՝ ի *լերինն* մասեայ յորժամ ել նոյ ի տապանէն՝ օրհնեաց աստուած զնա՛ և զորդիսն նորա աստ գիրն. և հայր և սերմ արար մարդկան ազգի: - 319-320. Վեցերորդ՝ օրհնեաց զաբրահամ ի *լերինն* ամուր հացւոց ի պատարագիլն իսահակայ...: - 320. Եօթներորդ՝ ի մարդեղութեան իւրում նստաւ ի *լերինն* ձիթենեաց և զերանութիւնն աւետարանեաց: - 320. Ութերորդ՝ ի *լեառն* թաբօր յայտնեաց զփառս աստուածութեան իւրոյ և օրհնեաց: - 320. Իններորդ՝ ի ձիթենեաց *լեառն* զգիշերս ագանելով և աղօթելով օրհնեաց: - 320. Տասներորդ՝ ի փործութեան *լեառն* զպատճառն ամենայն անիծից կործանեաց. և զառաջին անէծս յօրհնութիւն փոխեաց: - 320. Եւ բաց յայսցանէ և արտաքոյ սոցա, *Լեառն* պարարտ կոչի սուրբ Երրորդութիւնն ի մարգարէէն: - 320. Իսկ *լեառն* հողեղէն բնութեանս մերում, կամաւ հօր վկայելով ի վերայ նորա՝ և հաճութեամբ սուրբ հոգւոյն աղաւնակերպ իջմամբ, և անքակտելի միացեալ բանիւն եղև *լեառն* մածեալ մշտնջենաւոր և անեզր յաւիտենիւ բարձրացեալ օրհնութեամբ և առաւելեալ: - 320. Եօթներորդ՝ մովսէս **խ** օր անսըւաղ պահեաց ի *լերինն*: - 328. Եւ տէր մեր պահեաց **խ** օր ի փործութեան *լեառն*: - 328. Զի որ ի *լեառն* սուրբ առ աստուած մերձենայ, ո՛չ է պարտ յանկողինս կնոջ հեշտանալ...: - 331. Դարձեալ՝ ամենայն որ ի *լեառն* աստիճանէ բարձրանայ որպէս զմովսէս և կամ այլ ինչ, պա՛րտ է սրբութեամբ պաշտել: - 331. Քանի՞ անգամ ել ի *լեառն* մովսէս: - 352. Եւ մին վասն ահարօնի հաշտութեանն ելանել կրկին ի *լեառնն*: - 352-353. Դարձեալ՝ որպէս քրիստոս յետ մկրտութեանն՝ ի *լեառն* պահեաց **խ** օր: - 363. Զի վարդավառին ա՛յն է, յորժամ կրկին **խ** պահեաց մովսէս ի *լեառն* և լուսաւորեցան երեսքն. վասն այն զկնի երկու յիսնակացն տօնեմք: - 373-374. ...վասն որոյ յայսմանէ ասեն ոմանք թէ՝ **գ** ամ կամ **խ** օր յամեաց ադամ ի դրախտին. որպէս ժողովուրդն ի յանապատին. կամ որպէս մովսէս ի *լեառն*: - 397. Ութերորդ՝ մովսէս ի *լեառն* եկաց **խ** տիւ և **խ** գիշեր անսուաղ. և կերակրիւր բանիւն աստուծոյ. նոյնպէս և եղիա. նաև տէր մեր ի փործութեան *լերինն*: - 397. Այլ երուսաղէմ *լեառն* է և դաշտ, յանձրևոյ ոռոգի. իբր թէ խնամօքն աստուծոյ լինի անձրև աւելի և նուազ, ի ժամու և տարաժամու ըստ արժանեացն ձերոց: - 398. Հինգերորդ՝ զի նոքա խնդրէին երևիլ մարմնով. զի ո՛չ կարէին տանել աստուածային հրոյն ի *լերինն*: - 399. Տասներորդ՝ ի գարեգին. որ է՛ *լեառն* թլփատութեան. զի ելեալ ի *լեառն* հաւատոց՝ զաւելորդ մեղացն ի բաց ընկեսցեն, և զօրհնութիւնն աստուծոյ առցեն: - 402. Երրորդ՝ վախճանեալ մովսէս ի *լերինն*, և միքայէլ փոխադրէր զմարմինն. սկսաւ սատանայ հայհոյել զսուրբն և սպանօղ անւանել վասն հարկանելոյն զեգիպտացին. վասն որոյ սաստեաց նմա հրեշտակապետն: - 410. Եւ զաղխեալ դուռն քաղաքին եդեալ ի յուսն եհան ի գլուխ *լերինն*: - 420. Քսաներորդ, սամփսոն ի մէջ գիշերի զփակեալ դուռսն կորզեաց և էհան ի *լեառն*: - 423. Երկրորդ՝ անցեալ ընդ *լերամբ* և ո՛չ գտեալ. մինչև առ տեսանօղն եկեալ. և տէր մեր էանց *զլերինս* հրեշտակաց և եկն ի մարգարէս. և նոքա աւետեցին զգիւտն **գ** օրեայ կորստեան իշոյն...: - 426. Յետոյ վասն գազանաց երկրին՝ հնազանդեցաւ գրոյն մովսէսի. և ծածկեցին զաստուածս իւրեանց ի *լերին* սոմորոն. և անդ երկիր պագին սամարացիք: - 447. Երկրորդ՝ զի վէմն առանց ձեռին հատաւ ի կուսական *լեռնէն* ըստ դանիէլի: - 470. Եւ զօծումն քահանայութեան ի թաբօր *լերինն*. ուր և հոգին սուրբ ամպ հովանի եղեալ. և հայր հաճութեամբ վկայեալ: - 474. Եւ կրկին սուտ. զի ուր զձուկն կերին՝ ի գալիլեայ յեզր տիբերիայ ծովուն էր **դ** աւուր ճանապարհ հեռի յէէմէ՛ և ի *լեռնէն* ձիթենեաց ուստի համբարձաւ քրիստոս: - 511. Եւ ի մէջ գիշերի զարթեաւ և զդրունս փակեալ նգօքն և սեմօք եհան յուսն և ել ի *լեառն*: - 513. Որ նշանակէ՛ զյարութիւնն քրիստոսի ի մէջ գիշերի զդրունս դժոխոցն խորտակեալ. և զհոգիսն հանեալ ի *լեառն* երկնային: - 513. ...և դաւիթ մտեալ և առեալ զսուրն ի սնարից նորա. և ելեալ ի գիշերի ի *լեառն* աղաղակեաց առ նա «ո՞ւր է սուր քո»: - 514. Եւ յարուցեալ ի գիշերի ել ի *լեառն* երկնային. աղաղակեաց ասելով «ո՞ւր է մա՛հ յաղթութիւն քո. ուր է դժոխք խայթոց քո»: - 514. Եւ եհան ի *լեառն* ձիթենեաց. զի *լերամբն* ցուցանի համբարձումն մտաց ի խոկումն աստուածային: - 519. Եւ կալեալ յամպոյն այնու որով ի *լերինն*

այլակերպեցաւ: - 520. Նախ՝ զի ցուցանէ թէ որ եւտ զօրէնսն՝ նոյն առաքեաց և զհոգին և ի նոյն տիպն որոտ և փայլատակումն հողմ և հուր երևեալ որպէս անդ ի *լերինն*: - 524. Երկրորդ՝ ի վերնատանն դասք առաքելոցն ի վերայ նոր հաղորդութեանն մարմնոյ և արեանն՝ նոր օրինեցին զքրիստոս և ելին ի *լեառն* ձիթենեաց որպէս ասէ աւետարանն: - 528. Երրորդ՝ ի *լեառն* ձիթենեաց տեսին զտէրն ելեալ յերկինս՝ երկրպագեցին նմա: - 528. Վեցերորդ՝ տապանն նոյի յարարատ ի *լեառն* մասիս: - 555. Ա՛րդ՝ **թ** երանութիւնք փրկչին զոր քարոզեաց ի *լերինն*, **ը** են ըստ էութեանն. այլ է են ըստ աստիճանաց...: - 583. ...և գոհացեալ ելին ի *լեառն* ձիթենեաց...: - 599. Նաև տէրն կացոյց զայս կարգս. յորժամ ի *լերինն* զարքայութիւնն երկնից աւետարանեաց նոցա: - 606. Իսկ ի թաբօր *լերինն* ձայնիւ հայրական և հովանեաւ հոգւոյն եղև քահանայ. ցուցեալ մովսէս և եղիա սարկաւագունք յաջմէ և յահեկէ: - 607. Եւ ի *լեառն* ձիթենեաց հանեալ զնոսա և օրինեալ՝ արար զնոսա Կաթողիկոսունս և Պատրիարգունս, զամենայն շնորհելով նոցա լիով: - 607. Եւ եկեղեցի է *լեառն* անմատոյց. վասն որոյ անասունք և անարժանք ո՛չ մտանեն: - 617. Որպէս ժողովուրդն գնաց մերձ ի *լեառնն*, և մեզ պա՛րտ է յոտաց կալ և յառաջ գնալ և լսել: - 644. Իսկ վասն քառասնից պահոց, Նախ մովսէս պահեաց կրկին **խ** ի *լերինն*. և յեսու ընդ նմա: - 652. Եւ զայս ուսաք ի քրիստոսէ. որ ի վերնատունն յետ ընթրեացն օրինեցին և ելին ի *լեառն* ձիթենեաց: - 655. Եւ զորօրինակ՝ ի ստորոտ *լերին* հասեալ զգրաստի բեռինս առեալ՝ թողումք յարօտս սակաւիկ մի: - 657. Նոյնպէս և բարեկենդանս. զի ի *լեառն* պահո՛ց ելանեմք: - 657. Իսկ զքեմայ կարգն՝ սուրբն դիոդորոս եպիսկոպոս պամփիւլացոց քաղաքի. յառաջին ամի իւրոյ. հրամանաւ մեծին անտօնի և **բ** թեբայեցոցն. և **բ** սկիւթացւոց *լերինն*: - 659. **Դեկ նաւին ի ջուրս բեկեալ թուի. և ցաւոտ գլխոյ *լերինք* շարժեալ**: - 662. ...մինչ խօսիլ տայ բազնեաց, և *լերանց* գնալ, և ծառոց ծաղկիլ և չորանալ. և մեռելոց յառնել. և հրոյ իջանել յերկնից. և չար հոգւովն խօսիլ տայ այլ և այլ լեզուս: - 708. Ասեն ոմանք թէ **ժ** ցեղքն իսրայէլի որ փակեցան ի մէջ *լերանցն* կասբից...: - 708. Եւ յետ այսորիկ ի *լեառն* ձիթենեաց ուստի համբարձաւ քրիստոս՝ տէր իշխանութեամբ իւրով սպանցէ զնեռն: - 709. Զթեթևութիւնն՝ ի վերայ ծովուն և յարտևան *լերինն:* - 722. Զպայծառութիւնն՝ ի թաբօր *լեառն*. և Զանչարչարութիւնն ի յօրինելն զմարմինն իւր և տալ աշակերտացն ի վերնատունն՝ անչարչարելի էր մարմինն քրիստոսի ներգործութեամբ և ո՛չ զօրութեամբ: - 723. Նախ զի դիւրաւ հալի մոմ ի հրոյ. այսպէս և *լերինք* յերեսաց բարկութեան հրոյն: - 728. Երկրորդ զի հաւասարի հալեալ մոմ. այնպէս *լերինք* և բլուրք հարթեալ հալին և հասաւարին: - 728. ...այլ ա՛յս է՝ զի իւրաքանչիւր մարմինք սրբոց պայծառացին էպատիկ քան զարեգակն. որպէս տեառն մերոյ ի թաբօր *լերինն*...: - 728. ...և վառեսցեն զերկինս որ է՛ օդն. և զերկիր և *զլերինս* և զդաշտս և զբոյսս և զկենդանիս. և զժանկս մեղաց որպէս ասէ աստուածաբանն գրիգոր: - 731. Եօթներորդ, զի ահագնակերպ երևի ի վերայ մեղաւորաց. մինչ ասիցեն *լերանց* թէ անկերուք ի վերայ մեր. և բլրոց թէ ծածկեցէք զմեզ յերեսաց բարկութեանն աստուծոյ որ նստի յաթոռ. որպէս ասէ տեսիլն: - 737. Զի ձո՛ր է յաշխարհս այս՝ և *լեառն* երկինքն. ի ձորն ապա լիցի դատաստանն. այսինքն յայսմ աշխարհի ի վերայ օդոյդ: - 737. Քանզի *լեառն* ձիթենեաց նշանակէ՛ զողորմութիւնն որ մե՛րձ է ի ձորն այն: - 738. Երկրորդ՝ անտանելի ցուրտ. յոր եթէ հրեղէն *լեառն* անկանէր՝ սառն դառնայր. վասն այս երկուցս ասի՝ լալ աչաց և կրճել ատամանց. - 752. Ոչ այլ ինչ գոլով սիւն աշխարհի զգալապէս, բայց միայն բազմութիւն *լերանց* և քարանց: - 788

**ԼԵԱՌՆԱՆԱԼ (տ. ԼԵՌՆԱՆԱԼ) +** Որք առաքինութեամբքն են *լեառնացեալ* և դաշտացեալ աւելի և նուազ: - 398

**ԼԵԱՐԴ +** Եւ օրինակ տայ զկերակուրն որ ի ստամոքսն եփի. և գոլոշիկքն ի գլուխն ելանէ և պարզ ջուրն ի *լեարդն*. իսկ մնացեալ թանձրն լինի դառն և աղի: - 208. Կարմիրն որ է արիւնն ի *լեարդն* է՛ օդոյն: - 215. Երրորդն *լեա՛րդն* է, աղբիւր արեանն. տա՛ք է և գէճ՝ ունելով զբնութիւն մուշթարոյն, որ տանուտէր է նմա: - 241. Վասն է՞ր երիկամունքն ճարպով պատեալ է, և սիրտն և *լեարդն* ոչ: - 241. Իսկ *լեարդն* զի ներգործութեամբ է արիւնն ի նմա: - 241. Նոյնպէս *լեարդն* և լեղին հալեն զկերակուրն արտաքուստ ի յաջմէ կողմանէ: - 242. Նմանապէս և զմիջին դուռն բանայ, և զպարզ կերակուրն ի *լեարդն* յուղարկէ. և նա ներկէ յարիւն և բաժանէ: - 242. Ջուրն որ ի բերանն գայ՝ ի *լերդէն* ծնանի: - 242. Արդ եթէ ի խարտեաշ մաղձէն ի *լեարդն* է մնացեալ, *լերդին* համն ի լեղւոյն առնու և բերանն լեղի դառնայ. իսկ եթէ ի սեաւ մաղձէն է մնացեալ ի *լեարդն*. բերանն թթո՛ւ դառնայ. իսկ թէ պաղդամն մնայ ի *լեարդն*, բերանն աղի փոխի. իսկ թէ յստակ արիւնն մնայ ի *լեարդն*, *լերդին* համն անոյշ լինի, և բերանոյն համն անուշ տայ և քաղցր: - 242-243. Ի *լերդէն* ջուր բերանոյն քաղցր. զի զամենայն համս

առցէ: - 243. Զի սրտին արիւնն և *լեարդն* և լեղին որք ջերմայինք են՝ ի յաջոյ կողմն են մարդոյն: - 243. Զի սիրտն ունի **բ** տուն. ի յաջ կողմն իւր զարիւնն ժողովեալ որ առնու ի *լերդէն*: - 244. Իսկ *լեարդն* է սկիզբն արեան երակացն. որ ելանէ ի *լերդէն* է երակ լի արեամբ: - 244. Եւ բաժանին ամենայն երակք ի *լերդէն* **մէջ** երակք: - 244. Որպէս յարարածս աստուած ճանաչի, այսպէս և ի մարմնոյս զհոգին օրինակաւ իմանալ մարթի... Խնդութիւնն *լեարդ*: - 250. Որպէս օրինակաւ մասունք հոգւոյ ասացան, նոյնպէս է և մասունք մարմնոյն իւրաքանչիւրոցն գործի... Ղեշտութիւնն ի *լեարդն*: - 250. Այսպէս և արու մանկանն յաջ կողմն բեղնաւորեալ՝ վասն ջերմութեան *լերդին* և լեղւոյն՝ փութով կատարի անդամօք: - 261. Կամ *լեարդն* ի ներքոյ. սիրտն ի մէջն. և թոքն թեթև ի վերոյ: - 293. Ասեն վարդապետք թէ՝ ի լուր ուրախութեան հեշտանայ *լեարդն* և տարածեալ լայնանայ. և այնպէս շունչն ելեալ յորդ ընդ շնչերակսն և առնէ զծաղրն: - 619. Եւ ի հիւթոյն յայնմանէ ելեալ ի գլուխն լինի արտօսր քաղցր վասն քաղցրութեան *լերդին*: - 619. յորժամ ի գլխաւորագոյն անդամքն դիպին. այսինքն ի սիրտն, կամ ի *լեարդն*, կամ ի խելապատակն: - 668. Եւ թէ ոք ասիցէ, բազում անդամք են կենդանականք, որպէս սիրտն *լեարդն* թոքն և այլքն որք ի յարութեանն ո՛չ են պէտք. զի ո՛չ է հարկ կենդանութիւն մարդկան: - 725. Ի ստամոքս որովայնի. և ի *լեարդս*, և ի յուղեղս գլխոյն: - 786. Նոյնպէս և երբեմն յուզել ուրախութեանց. ի փեռեկեալ թոքոյ ի կոտորումն շնչոյն, ի թաղանէթ՝ որ առ *լերդաւն* հիւթ ինչ ծաւալի առ նոյն ասացեալ տեղի. ելեալ գոլորշեացն նմանապէս առաջնոյն. և լինի քաղցրագոյն արտօսր. վասն ասացեալ հիւթոյն ի քաղցրորակն անօթոյ: - 787

**ԼԵԶՈՒ +** Որք զաչս իմաստից յիմանալի ճառագայթիցն խուսափեցին թիւր կամօք, և խոտոր մտօք. զանուղղայս խորհելով, և զանպատշաճս բարբառելով. յարձակեալ անկապ *լեզւաւ* և անդուռն շրթամբք բացեալ յերկինս. ցոպ բերանով ի բարձունս բարբանջելով. և յածեալ ընդ երկրաւ լեզուագարելով. որոց դատաստանն ի բնէ ո՛չ դատարկանայ. և կորուստն ո՛չ նիրհեսցէ: - 31. **Եւ սոքա զմիայն տէրն ուրացեալ՝ քրիստոսամարտ *լեզուաւ* զանձինս կորուսանեն**: - 34. Ի շրթունս խօսին, և ի *լեզուս* դաւաճանեն: - 34. Եօթներորդ՝ զնա փոքր եղջիւր կոչէ դանիէլ. խեթկի և մեծամեծս բարբառելով. և սոքա խեթկեն զեկեղեցի. և բանան զհայհոյիչ բերանս իւրեանց յերկինս, և *զլեզուս* ածէին զերկրաւ: - 35. **Ութերորդ՝ զնա օ՛ձ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն զբազումս. և արտաքսեն ի դրախտէ եկեղեցւոյ. և թոյնք իժից ի ներքոյ շրթանց ունելով և խայթոց՝ զի առորս մերձենան, ի յսկիզբն բանից կամ ի վերջն՝ մահացուցանեն զհոգիս. երկճղի ունելով *լեզու* նենգաւոր՝ չար և բարի, ծածուկ և յայտնի**: - 35. **Իսկ յորժամ ամէն *լեզու* խոստովան լիցի տէր զյիսուս քրիստոս, անզրաւապէս թագաւորէ՛ ընդ հօր և տնտեսութեամբն**: - 42. Գլուխ գոլով մեր և *լեզու*. զտկարութիւն բնութեան անդամոցս ցուցանելով հօր: - 42. Իսկ հոգին սուրբ էր որ խօսէր ի *լեզուս*. որպէս ասէ փրկիչն՝ «ոչ թէ դուք էք որ խօսիցիք, այլ՝ հոգին հօր ձերոյ որ խօսեսցի ի ձեզ»: - 58. Եւ ո՞րպէս երկիր պագանեն նմա երկնաւորք և երկրաւորք և սանդարամետականք. և ամենայն *լեզու* խոստովան լիցի թէ տէր է յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր: - 99. Ա՛յլ է բանն՝ և ա՛յլ է ձայնն. զի բանն անմարմին ծնունդն է մտաց. և ձայնն է՛ շարժումն օդոյ ի ձայնական գործեաց ի յօդս բախեալ. իսկ ի սրտի միաւորին նոքա՝ այսինքն բանն և ձայնն. և *լեզուաւ* յօ՛դս բախեալ՝ հասանէ մինչև ի լսելիս, և անդ ձայնն արտաքոյ մնացեալ, և բանն անմարմին ի միտս լսողացն նստեալ: - 131. Երբեմն զզանազան պարգևս հոգւոյն՝ զոր յաւազանէն տայ մարգարէութիւն քահանայութիւն՝ *լեզւաց* զիտութիւն...: - 140. Երրորդ՝ առանց ոտից ընթանայ. առանց թևոց թռչի. առանց *լեզուի* խօսի. առանց ձեռաց գործէ: - 177. Ուսաք յիմաստնոց թէ՝ ի բաժանիլ *լեզուաց* **հր** տանուտերանց, և ի գնալն յիւրաքանչիւր տեղիս ի հեռու կամ ի մօտաւոր աշխարհս. զօրն զայն տարեմուտս կարգեցին. և ուսուցին որդւոց իւրեանց պատուեալ զօրն զայն տրօք ընչից: - 200. Երկրորդ՝ ձայնական գործիքն. որ են **է**. որպէս Շրթունք. Ատամունք. *Լեզու*. Մակալեզու. Բերան. Խռչափող. Թոք: - 216. Եւ զի երկատեսա՛կ էր բանն՝ այսինքն սուտ և ճշմարիտ, *լեզուն* երկճղի եղև: - 219. Իններորդ՝ ի վեր է գլուխն, զի *լեզուն* և ձեռն սպասաւորեսցեն բանի և գործոց: - 233. Եւ պիտոյանայր *լեզու* երկայն և շրթունք ստուար, զի ժողովեսցէ զկերակուր. և յայնժամ ո՛չ կարէր սպասաւորել բանի որպէս ա՛յժմ: - 233. Իններորդ՝ ա՛նդ են բերան և *լեզուն*. ուստի ներքին կիրք հոգւոյն և ամենայն բարութիւնք յառաջեն ի մեզ: - 234. Եւ բաց յայսցանէ՝ ի յուղեղէն **բ բ** երակ գայ յիւրաքանչիւր զգայարանս. **բ** յաչքն. **բ** յականջն. **բ** ի քիթն. **ա** ի բերանն. մին ի *լեզուն*. **բ** ի ձեռքն. **բ** ի յոտքն. որ լինի **ժբ**: - 244. Օրէնք *լեզուն*: - 250. Որպէս օրինակաւ մասունք հոգւոյ ասացան, նոյնպէս է և մասունք մարմնոյն իւրաքանչիւրոցն գործի... Ձայնն ի *լեզուն*: - 250. Եօթներորդ՝ Վասն աշտարակին. և բաժանման *լեզւացն* **հր**: - 283. Դարձեալ՝ տապանն չորեքկուսի՝ է՛ սուրբ խաչն

քառակուսի. որ ժողովէ՛ յերկրպագութիւն իւր յամենայն ազգաց և *լեզուաց*: - 294. Եւ որպէս **է է** գործիք ձայնին, որ է՛ թոքն. խռչափողն. մակալեզուն. բերանն. *լեզուն*. ատամունքն. և շրթունքն. և սոքա միաբանին ի խօսքն: - 296. Յայր առ որդի և հոգի սուրբ ասաց, որովք արար զմարդն մի ազգ և մի *լեզու*: - 297. Իսկ խառնակել՝ ո՛չ զշփոթելն ասէ որ անլո՛ւր էին միմեանց *լեզուին*: - 297. Զայն է իմանալ, որ ի բաժանել *զլեզուս*, բան և բառ և անուն խա՛ռն գտանին բազում ազգաց: - 297. Դարձեալ՝ ա՛յն է խառնակիլն, որ ի միոյ խոշոր *լեզուէ* քաղղէացոցն խառնակեցան և եղեն զանազանք: - 297. Պերճական պարսիկն. և **համեղ հայոյն. որ բոլորապէս կարո՛ղ է զամենայն *լեզու* ուղղակի ուսանիլ**: - 297. Եւ այլք զհայոյն՝ ծեքական և թիւր ուսանին. զի մասնաւո՛ր է *լեզու* նոցա: - 297. Դարձեալ՝ խառնակիլ *լեզուին* ա՛յն է որ ընդ պատուհասն զբարութիւնն խառնեաց. զի թէպէտ բաժանումն *լեզուաց* պատուհաս երևի, այլ պիտանի՛ է: - 297. **Նախ ի գեղեցկութիւն *լեզուին*. զի որպէս գոյն առ գունով պայծառանայ, և արուեստ առ արուեստ**: - 297. Նոյնպէս *լեզու* առ *լեզու* գեղեցկանայ ի խօսքն: - 297. **Դարձեալ՝ պիտանի է ի ստուգաբանութիւնս բանի. զի թէ ոք զամենայն *լեզուս* գիտիցէ, ոչ ինչ բառի կարօտանայ**: - 297. Եւ այս ևս գիտելի է, զի *լեզու* կոչի գործիք խօսիցն. և *լեզու* կոչի որակ խօսիցն: - 297. Զորս հրեշտակս կոչէ ո՛չ վասն առաքինութեան, այլ զի պատգամաբերք և թարգմանք եղեն աստուծոյ իմաստութեանն առ մեզ ի ձեռն *լեզուաց* գիտութեանն: - 297. Եւ սահման կոչէ *զլեզուս* որ բաժանէ՛ ի միմեանց զազգս և զազինս. որպէս որք պարսպով և նշանիւ սահման դնեն և զանդս բաժանեն: - 298. Եւ դարձեալ՝ որպէս սահմանն զտեսակս ազգացն նշանակէ. նոյնպէս և *լեզուն* զիւրաքանչիւր ազգս ցուցանէ: - 298. Նմանապէս և զայս սահման *լեզուի* ո՛չ ոք կարէ փոփոխել. ո՛չ բռնաւոր և ո՛չ իշխան. բայց միայն աստուած որ եդ զսա: - 298. Եւ յորժամ փոփոխի այս, այսինքն ի հանդերձեալն, յայնժամ ի *լեզուս* հրեշտակաց խօսիցիմք: - 298. Եւ ո՛չ որպէս ասեն ոմանք թէ ի *լեզուս* ադամայ: - 298. Եւ թէ ո՞ր է ադամայ *լեզուն*: - 298. Եւ ի հողմոյն յայնմանէ հոտ անուշութեան դրախտին բուրեաց ի նոսա. և տեսիլ իմանալի տեսին, և լուր իմանալի լուան. և յայնմանէ մոռացան զառաջինն. և որպէս ի քնոյ զարթուցեալք ո՛չ լսէին *զլեզուս* միմեանց: - 298. Իսկ գեղեցկախօսութիւն *լեզուաց*, Փափուկ հելլենն: Սաստիկ Յռօմայեցին: Սպառնական հոնին: Աղաչական ասորին: Պերճական պարսիկն: Գեղազանդ աղուանն: Ծաղրական մունդն: Խափարաձայն եգիպտացին: Ճըճուողական հնդիկն: Յամեղական հայն որ կարո՛ղ է զամենայն *լեզուս* յինքն ամփոփել և բոլոր խօսիլ. և այլքն ո՛չ՝ որպէս ասացաւ ի վերոյ: - 299. Երբ *լեզուքն* բաժանեցան, զառաջին գիրն ո՞րպէս կարէին կարդալ: - 299. Եբրայական *լեզուաւն* կարդային որ ունէր դեռ զառաջինն. որպէս ասէ մեր լուսաւորիչն: - 299. Զի ասեն թէ՝ ամենայն մարդ կարծէր թէ ե՛ս եմ ըղորդ և ե՛ս ունիմ զառաջին *լեզուն*: - 299. Եւ մինչ զգիրն յառաջ կալան թէ այսո՛ւ փորձիմք, այլ ո՛չ ոք գիտաց կարդալ՝ բաց յեբրայեցւոցն. վասն այն ասի եբեր, թէ զառաջին *լեզուն* նա՛ եբեր: - 299. Դարձեալ որպէս իշովն բաղամու զօգուտն խօսեցաւ, և *զլեզու* սուտ մարգարէին շարժեաց յանիծիցն յօրհնութիւնս: - 325. Երրորդ՝ ի գուշակ սուրբ հոգւոյն որ այնպէս որոտմամբ և հրեղէն *լեզուօք* էջ յառաքեալսն: - 341. Ութերորդ՝ զի տեսիլ աչացն առաւել պարզեսցէ *զլեզու* նորա փոխանակ ճարտարութեան *լեզուին*: - 352. **Դարձեալ՝ զղջմամբ սատակի չար խորհուրդն. և ապա՛ խոստովանիմք *լեզուաւ*. և զնոսա փոխեալ գործե՛մք զբարիս:** - 380. Զի քրիստոնէութիւն որպէս մկրտութիւն և այլն՝ անբաժանելի՛ է ի հոգւոյն. թէպէտ ուրանայ *լեզուաւ* և գործով: - 401. Տասներորդ՝ յետ որոյ հնազանդեցան նմա՛ ամենայն իսրայէլ. և տեառն մերոյ զկնի խաչին հաստատեցան ի հաւատս. մանաւանդ յետ է դար կենցաղոյս ամենայն *լեզու* խոստովան լիցի զտէր յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր ամէն: - 427. Ասեմք թէ՝ մեզ պա՛րտ է ի մտի պահել և ի *լեզուի* զմեղս. և ցաւիլ և հոգալ հանապազ վասն անցեալ մեղացն և չգործելոյ բարեացն: - 433. ԵօթնԺ, անդ միով քարամբ էհար. և աստ մի բանիւ բերանոյ ի պարսէ՛ *լեզուին*: - 436. Ուստի տէր տէր տայ ինձ *լեզու* խրատու և սիրտ ի ժամու: - 456. Ըստ *լեզուիս* մեր՝ օծեալ. ի հոռոմն քրիստոս. և յեբրայեցին մեսիա թարգմանի: - 474. Իսկ զգիր քրիստոնէից զոր յետ աւազանին մեղանչեմք և գրեմք զյանցանս, զայն պատառէ ապաշխարութիւնն. որ է՛ զղջումն սրտի և խոստովանութիւն *լեզուի* և հատուցումն գործոց մարմնոյ: - 482. Այն է որ հրեղէն *լեզուաւ* սփռեաց յառաքեալսն զշնորհս հոգւոյն սրբոյ: - 488. Զի ափիբերան կարկեսցին դնօղքն զբերանս յերկինս և *զլեզուս* ածելով զերկրաւ: - 502. Երկրորդ՝ զի ի կերպ հրոյ փայլէ. այսպէս և հոգին սուրբ հրեղէն *լեզուօք*: - 522. Ո՞րպէս խօսէին յամենայն *լեզուս*: - 525. Այնց է իմանալ, ուր ժողով լինէր մի *լեզուաւ* խօսէր ոք առաքեալ, և ամենայն ոք լսէր իւր ձայնիւն: - 525. Իսկ աստուածաբանն ասէ, ուր պիտոյ էր՝ յամենայն *լեզուս* խօսիլ կարէին. զի լիցի շնորհքն խօսողաց և ո՛չ թէ լսողաց: - 525. Վասն է՞ր ի յորդանան աղաւնակերպ էջ հոգին սուրբ, և ի վերնատունն հրեղէն *լեզուաւ*: - 525. Յինգերորդ՝ զի խոստովանի

ամենայն *լեզու* թէ տէր է յիսուս քրիստոս ի փառս հօր աստուծոյ բազմեալ: - 529. ...ամենայն ազգ և ամենայն *լեզուք*, գայցեն ի կատարածի յերկրպագութիւն քրիստոսի. և անեզր յաւիտենիւ փառաւորեալ օրհնեն զնա: - 529. Եւ դարձեալ զոր օրինակ, բան թագաւորին մի է, այլ ի բազում *լեզուս* և ի բազում լսելիս և ի բազում թուղթս որակացեալ և բազմացեալ, յիւրում միութենէն ո՛չ է քակտեալ: - 529. Բերան՝ աւետարանիչքն. և *լեզուք*՝ քարոզք բանին կենաց: - 534. և առաքեալքն ձեռն դնելովն միայն՝ տային զհոգին սուրբ. և ի *լեզուս* խօսէին. և մարգարէանային ընդունօղքն. իսկ վարդապետք սուրբք՝ քարոզութեան նոցին հետևօղք և որդիք ծնողացն՝ երրորդ կարգին յետ նոցա: - 535. Եւ եբեր միայն պահեաց անխառնակ զնախնական *լեզուն*: - 551. Ազգ առ ազգ բաժանեալ լինի գաւառաւ և *լեզւաւ* և կանոնական սահմանաւ որ են աւանդութիւնք և հաւատք եկեղեցւոյ: - 552. Եւ բաժանումն յաւէտ զքան գաւառաւ և *լեզուաւ*՝ կանոնական սահմանաւն ասացեալ լինի. այսպէս և առ միաբանութիւնս է իմանալ. առաւել միաբանութիւն ասել զորս կանոնական սահմանադրութեամբ է, քան որ գաւառաւ և *լեզուաւ*: - 552. Մեղք բերանոյն է մեղք *լեզւին*: - 568. Եւ մեղք *լեզուին*՝ ի սուտն, ի զուրն, և յանիրաւելն: - 568. Այլ կնքահայր ո՛չ է պարտ առնել զայլազգին. զի ո՛չ ունի զհաւատն սուրբ, և ո՛չ է հրաժարեալ ի սատանայէ. վասն որոյ ո՛չ կարէ *լեզու* լինիլ տղային կամ երաշխաւոր...: - 591. ...և ոմն *լեզուն* պարզեալ խնդրէ ի մօրէն...: - 620. ...և միւսն երախայ և ո՛չ ունի *լեզու*, միայն լայ. և մայրն գթայ ի յարտասուքն և տայ կերակուր: - 620. Իսկ մեք ո՛չ ոտք և ո՛չ *լեզու* ունիմք. այլ տհաս և տգէտ...: - 620. ...վասն որոյ մեզ *լեզու* լինի և ի դէմս մեր գոհանայ զաստուծոյ ըստ իւրաքանչիւր ժամու. այսինքն յառաւօտն, ի հասարակ օրն, և յերեկոյն. զի գոհացումն է և ո՛չ աղօթք: - 626. Հինգերորդ՝ որ հաւասա՛ր է բանն և ձայնն ի *լեզուն.* որպէս բարբառ խօսից: - 639. Չորրորդն հրեղէն *լեզուօք*: - 640. Հինգերորդ, յաղագս ջերմ սիրոյն առ աստուած՝ ո՛չ բաւական համարեցաւ միայն *լեզուաւ* երգել աստուծոյ. - 641. Դարձեալ՝ ի յեբրայեցի *լեզուն* «ալ», ասէ թէ՝ գայ յայտնեսցի. «էլ», աստուած. «ուիայ», օրհնեցէք և գովեցէք զկենդանին աստուած: - 644. Զի՞նչ է յայլ *լեզուաց* Ովսաննայ. Պռօսխումէ. և այլն: - 644. Եւ փոխանակ դաղմատին է՛ իւրաքանչիւր *լեզու* որ պատարագէ՛: - 645. Երկրորդ, որպէս կենդանւոյն աղ, նոյնպէս ի կեանս մեր հանապազ պա՛րտ է ի *լեզուս* ունել զօրհնութիւն և զփառս աստուծոյ: - 658. Որպէս *լեզուն* մտաց՝ և ձեռքն սրտին է գործի. նոյնպէս ունկն կամա՛ց է. հնազանդութեան և կամ ոչ: - 658. ...մինչ խօսիլ տայ բազնեաց, և լերանց գնալ, և ծառոց ծաղկիլ և չորանալ. և մեռելոց յառնել. և հրոյ իջանել յերկնից. և չար հոգւովն խօսիլ տայ այլ և այլ *լեզուս*: - 708. Չորրորդ, զի հնազանդին նմա բոլոր արարածք. ըստ այնմ «նմա կրկնեսցի ամենայն ծունր, և ամենայն *լեզու* խոստովան եղիցի եթէ տէր յիսուս քրիստոս է՛ ի փառս աստուծոյ հօր»: - 737. Դարձեալ որպէս ի վեր անդր ի հրեշտակացն՝ բանն յերիս որոշեցաւ. այսինքն է՛ բան մտաց և բան *լեզուի* և բան գործոյ: - 739. Որպէս առաքեալքն ի մի *լեզու* քարոզէին և ամենեքեան ի *լեզուս* իւրեանց լսէին: - 739. Եօթներորդ, այլ և **գ** է գործիք բանին. խելքն որ ծնանի. սիրտն որ խորհի. *լեզուն* որ խօսի: - 742. Նմանապէս և հուրն որով հրեղէն *լեզուօք* երևեցաւ սրբութեան հոգին, բաժանեսցի այրեցումն և մշտափայլ լուսով փայլեսցի որպէս զարփին և որպէս զարեգակն: - 759-760. Իսկ երկոտասան պտուղն իցէ երկոտասան աստիճանք հաւատոյն. որ ի սրտի և ի *լեզուս* առանց խափանման հանապազ դաւանի և արտաբերի: - 768. Ասի ի գիրս սուրբս թէ՝ ի կատարածի յանուն յիսուս քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի. և ամենայն *լեզու* խոստովանեսցի զնա աստուած: - 783

**ԼԵԶՈՒԱԳԱՐԻՄ +** Որք զաչս իմաստից յիմանալի ճառագայթիցն խուսափեցին թիւր կամօք, և խոտոր մտօք. զանուղղայս խորհելով, և զանպատշաճս բարբառելով. յարձակեալ անկապ լեզւաւ և անդուռն շրթամբք բացեալ յերկինս. ցոպ բերանով ի բարձունս բարբանջելով. և յածեալ ընդ երկրաւ *լեզուագարելով*. որոց դատաստանն ի բնէ ո՛չ դատարկանայ. և կորուստն ո՛չ նիրհեսցէ: - 31

**ԼԵԶՈՒԱՏ +** Չորրորդ՝ զի **բ** արձան կանգնեաց պղնձի և խեցի և արար գիր. և զոր ինչ ադամ անունս եդ իրաց, զամենայն գրեաց ի նոսա. զի մի՛ այլայլեսցին ի գնչուտ և ի *լեզուատ* արանց: - 289. Երրորդ՝ *լեզւատն* որ է՛ անձայնն. որք ո՛չ ունին զխոստովանութիւն: - 371

**ԼԵՂԻ +** Խարտեաշն որ է *լեղին*՝ է՛ հրոյն: - 215. Եօթներորդն է՛ *լեղին*. որ է խարտեաշ մաղձն. տա՛ք է և չոր. և տանուտէր ունի զմառեխն որ է հրատն: - 241. Նոյնպէս և *լեղին*: - 241. Նոյնպէս լեարդն և *լեղին* հալեն զկերակուրն արտաքուստ ի յաջմէ կողմանէ: - 242. Զդառնութիւնն ի *լեղին*. և զհոտածն յերիկամունքն. և զմրուրն և զթթուն ի փայծեղն. և զքաղցր արիւնն ի սիրտն. և սիրտն երակովն և շնչովն բաժանէ ի բոլոր մարմինն: - 242. Արդ եթէ ի խարտեաշ մաղձէն ի լեարդն է մնացեալ, լերդին համն ի *լեղւոյն* առնու և բերանն *լեղի* դառնայ...: - 242-243. Եւ ի *լեղւոյն* ականջին դառն. պահապան

սողնոց: - 243. Զի սրտին արիւնն և լեարդն և *լեղին* որք ջերմայինք են՝ ի յաջոյ կողմն են մարդոյն: - 243. Ցասումն ի *լեղին*: - 250. Այսպէս և արու մանկանն յաջ կողմն բեղնաւորեալ՝ վասն ջերմութեան լերդին և *լեղւոյն* փութով կատարի անդամօք: - 261. Զորկրամոլութիւնն՝ ըմպելովն զքացախն և *զլեղին*: - 489. Քացախ և *լեղի* արբնու քաղցրութիւնն: - 491. Ըմպելեաւ, յորժամ ճաշակեաց քացախ ընդ *լեղի*: - 491. Որ *զլեղին* եբեր՝ ռաքոս: - 495. Իսկ ի լուր տրտմութեան՝ խունճապի մարմինն. և ի դառն մաղձոյն որ է՛ *լեղին* hոսի ի բերան քաղրդին...: - 619-620. ...և հիւքն ելեալ ի գլուխն լինի արտասուքն դառն վասն *լեղւոյն*: - 620

**ԼԵՐԴ (տ. ԼԵԱՐԴ) +** Որ և պահապանքն շրջապատեալ. որ և զհանդերձն պատառեալ յանկողնի, և *լերդ* այծեաց և մազ ի սնարսն. և ի գիշերի իջեալ ընդ պատուհանն և ելեալ առ սամուէլ զերծաւ ի ձեռաց նոցա: - 513

**ԼԵՐԴԱԲԱՑԻԿ** - Եւ այս են **հը** լեզուքն... *Լերդաբացիկք:* - 298

**ԼԵՐԴԱԲՈՅԹ +** Եւ յայսմանէ՝ հանեն մասն զերիկամունս և *զլերդափոյթն* և զբովանդակ ճարպն ի հոտ անուշից տեառն: - 358. և *Լերդափոյթն*, զուրախութիւնս և զհեշտութիւնս մեր նուիրել աստուծոյ: - 360. 'Ի ներքուստ՝ սիրտն և երիկամունքն և *լերդաբոյթն* ընդ ճարպին ճենճերեալ ի հոտ անուշից. որպէս հրամայեաց մովսէս: - 367

**ԼԵՐԿ +** Նոյնպէս և այքն խառնի ի թաւ և ի *լերկ*, ի սուղ և յերկար, և միաբանի ընդ նոսա, և ի մի բնութենէ իւրմէ ո՛չ որոշի կամ այլայլի: - 178. Եւ լիրբն առանց ամօթոյ որ է՛ *լերկն* և չարն պիղծ է: - 364

**ԼԵԻԻԱԹԱՆ +** Ասեն թէ **ռ** ազգ է. **ռ** ի ցամաքի թռչնովք. և **ն** ի ջուրս: Եւ թագաւոր ջրայնոցն *Լևիաթանն*: - 216

**ԼԵԻՈՆ** - Ըստ այսմ օրինակի և նոր հերձւածօղք քաղկեդոնիկք նեռին կարապետք. հետևօղք նեստորի անիծելոյ՝ և *լևոնի* պղծոյ: - 34. Եւ ոմանք որպէս քաղկեդոնիկքն՝ մի անձն համբաւեն, և յերկու բնութիւնս բաժանեն զմի քրիստոսն. և **բ** կամք. և **բ** գործք. որպէս անիծեալն *լևոն*. և փլաքիանոս, և ընկերք նոցա: - 82. Եւ թղթով նզովեցին զեւտիքէս և զփլաքիանոս և զդոմնաս և զտումարն *լևոնի*: - 542. Եւ էր սիրելի փլաքիանոսի. և *լևոնի*. և թէոդորիտոսի զորս նզովեցին յեփեսոս. և վասն նոցա վրէժխնդրութեանն արարին ժողով **ուզ** եպիսկոպոսաց. և ընկալան զթուղթն լևոնի. և զնզովեալն յեփեսոս զփլաքիանոս ընկալան...: - 542-543. **Եւ նզովեցին զաղանդն մարկիանու և զարտեմոնի, և զտումարն *լևոնի*. և միաբանեցան ի մի հաւատս սուրբ առաքելոցն. և ի կանոնս սուրբ ժողովոյն ինչ պետք էին յաւելին գլուխս թ ի զգուշութիւն եկեղեցւոյ**: - 544

**ԼԷԳԷՈՆ +** Երեքտասաներորդ՝ երբեմն խորասուզեաց *զլէգէոնն* ի խորս անդնդոց: - 207

**ԼԻ +** Ահա աւետարանն *լի՛* ասէ իմաստութեամբ. և դու պակաս: - 97. Նա՛խ՝ զի բղխումն ցուցանէ զկատարեալն. որ ամենայն ինչ կատարեալ և *լի* ստեղծան յարարչէն: - 212. Եւ յայս կողմս ունի **դ** երակ առանց արեան *լի* ջերմութեամբ. և բաժանի ամենայն երակ՝ յերեսունք երակս. որ լինի ամէնն ճիք երակ: - 244. Իսկ լեարդն է սկիզբն արեան երակացն. որ ելանէ ի լերդէն է երակ *լի* արեամբ: - 244. Եւ **բ** երակ երիկամանցն *լի* սերմամբ: - 244. Վասն որոյ և յաւուրս զաքարիայի հօրն յովհաննու յորժամ յամեաց ի տաճարին և ել, ակնունէր ժողովուրդն տեսանել զա՛կնն և տե՛սին լուսափայլ սպիտակացեալ իբրև զձիւն. և *լի՛* եղեն խնդութեամբ. զի երկնաւոր արքայութեան նշոյլքն պայծառացուցին զակն: - 349. Քսանեք, ունա՛յն էր ծնօտն ի պատերազմին, և *լի՛* էր ծարաւոյն: - 423. Եւ թէպէտ կատարեալ և *լի* և անթերի էին մասունք մարմնոյն քրիստոսի. այլ ա՛յն քան փոքրիկ, մինչ զի հազիւ անկարէր ընդ տեսութեամբ մարդոյ: - 470. Որ և յարազուարճ բարերջանկութեամբ *լի* և ամենազան քաղցրորակ պտղաւէտութեամբ տնկեցիս ծառ բարձրաբերձ յընթացս հոգւոյն ի մէջ եկեղեցւոյ տանս թորգոմեան ազգիս հայկազնեան: - 558. Իսկ *լի* աւուրք ասէ և ոչ ամօք կամ ամսօք. - 666. այս է, զի սրբոցն ամենայն աւուրքն *լի՛* են բարի գործովք: - 666. Եւ են յիմացումն և յուշի. որպէս ասէ առաքեալն թաղէոս. և յոյս նոցա *լի* է անմահութեամբ. և սիրով առ աստուած միացեալ: - 685. Ոմն *լի՛* է անմահութեամբ և խնդրութեամբ. և ոմն *լի* դառնութեամբ և յուսահատութեամբ. որպէս ասացաւ ի վերոյ: - 687. Այնպէս եղիցի *լի* մարդկամբ որպէս այժմ է. և այնպէս յիւրաքանչիւր գործս որպէս այժմ: - 714

**ԼԻԱ** - Անունք Կանանց Նահապետացն... Յակոբայն ռաքէլ և *լիա՛*: - 299

**ԼԻԱԿԱՏԱՐ +** Իսկ չորրորդ սրբութիւնն *լիակատար* շնորհաց ի վերին գաւառն որ է՛ հրեշտակային՝ գերազանցէ՛ զամենեքումբք: - 462. Արդարքն ունի՞ն *լիակատար* ուրախութիւն, թէ ոչ: - 686

**ԼԻԱՆԱՄ +** Եւ որք ծարաւին նմա՝ *լիանան*. և hակառակքն ունա՛յն մերժեցին: - 423

**ԼԻԱՊԷՍ +** Դարձեալ անդրանիկ է ըստ շնորհաց հոգւոյն զոր ընկալաւ ո՛չ վասն կարօտութեան՝ զի *լիապէս* ունէր այլ զի գլուխ էր մեր՝ ընկալաւ՝ զի յանդամս իւր սփռեսցէ: - 41. Կարծե՛մ որպէս ասացեալ եղև այս. բայց ո՛չ *լիապէս*: - 264. Ի չորրորդումն լիցուք *լիապէս* կատարեալք: - 755

**ԼԻԲԻԱ +** Կամ ունէիր իշխանութիւն որպէս աղէքսանդրու. որ զասիա զեւրոպիա և *զլիբիա* ընդ իշխանութեամբ էարկ: - 761

**ԼԻԳՐՈՆ (տ. ԼԻՆԳԻՐՈՆ) + Սուտակ՝ որ է՛ *լիգրոնն*. զոր ո՛չ գիտէ ոք զուստն. նման է կապուտակ աւազոյ. ոմանք ասեն յամազունից բերաւ ի կանանց աշխարհէն**: - 348

**ԼԻԶԵՄ +** Եւ վա՛յ է թշնամեացն աստուծոյ. որք զշիթսն զայնս յերկրի *լիզեն* և զաղբիւրն քաղցրութեան արհամարհեն: - 762

**ԼԻԹԱՆԻԱՅ** - Այլ և ի *լիթանիայս* ձեր ասի՝ քրիստոս անօթդ աստուածութեան՝ ողորմեա՛: - 89

**ԼԻՃ +** Եւ դարձեալ՝ վերջին յարութիւնն և *լիճն* հրոյ: - 640

**ԼԻՄՊՈՍ +** Եւ որք **դ** ասեն՝ զներքին դժոխքն մահու չափ մեղաւորացն ասեն. և զքաւարանն ներելի մեղաւորաց. և *զլիմպոսն* արդարոց. և զդժոխս ոչ մկրտելոցն: - 504. Երկրորդ՝ զի ասէ աստուած մովսէսի «հուր բորբոքեցաւ ի բարկութենէ իմմէ. և իջցէ մինչ ի դժոխս ներքինս». ապա սո՛ւտ է *լիմպոսն* նոցա: - 506. Իսկ առ երկրորդն որ ասեն թէ միայն *զլիմպոսն* աւերեաց և զայլսն եթող: - 506

**ԼԻՆԵԼՈՑ +** Ա՛յսպէս և որ ի հանդերձեալն *լինելոցն* է՝ - 9. Ջորօրինակ՝ ի կենդանեաց բազումք նշանակեն *զլինելոց* իրաց, - 12. Երկրորդ՝ ասեն թէ աստուած նախքան զլինիլն մեր՝ ի նախատեսութիւնն իւր ետես զամենայն *լինելոցն* այնպէս. զչարն չար, և զբարին բարի: - 15. Ոչ թէ անգիտանայ՝ քաւ լիցի. զի զամենայն որ *լինելոցն* էր ի կատարածին՝ ասաց. զիա՞րդ զժամն անգիտանայ: - 48. Այլ դատաւորին պարտէ ունիլ անհուն գիտութիւն. զի քննել կարասցէ զամենայն բնութիւն հրեշտակաց և մարդկան. և զամենայն գործս եղեալս և *զլինելոցն*. զխորհուրդս և զբանս բոլորից. զառաջինն՝ զմիջինն՝ և վերջինն: - 100. Հինգերորդ՝ ոչէ ասին նիւթականքն որ ի լինելութեան և յապականութեան են. զի երբեմն ո՛չ էին, և յետոյ ո՛չ *լինելոց* են: - 111. Վեցերորդ՝ ոչէ ասին և բացարձակքն որ ի հանդերձեալն. զի դեռևս ո՛չ են. այլ՝ *լինելոց* են միշտ: - 111. Նոյնպէս և հրեշտակք ո՛չ տեսանեն զնախագաղափար տեսութիւնն որ *լինելո՛ց* էր յետոյ: - 164. Հինգերորդ՝ զի յետոյ *լինելոցն* էր բանն աստուծոյ մարմին. որպէս գիրն ունի յինքեան զբանն. և խօսի ընդ մեզ: - 177. Ա՛րդ՝ եթէ առաջին կեանքն էր ամուսնութեամբ և որդէծնութեամբ որպէս նոքա շաղակրատեն. ապա և ի վերջին յարութեանն նոյնպէս է՛ *լինելոց*: - 226. Այժմ տեսցուք թէ զի՞նչ է շահն աննման պատկերաց. զի բազում վնաս էր *լինելոց* թէ անհատք ո՛չ էին որոշեալ դիմօք: - 238. Որ ի խորհրդական միտսն վասն օգտի *զլինելոցն* ցուցանէր: - 268. Երրորդ՝ կարծիք է, զի ի ներկայս ո՛չ է. և ուղիղ խորհուրդ, զի յապագայն *լինելո՛ց* է: - 270. Եւ այլք ասեն եթէ՝ պատկեր եղաք այժմ, այլ նման *լինելոց* եմք ի հանդերձեալն...: - 273. Եւ թէ ոք ասիցէ, այսորքիկ ի յարութեանն են *լինելոց* անկարօտ մարմնոցն: - 282. Ասեմք եթէ՝ զոր ինչ ի յարութեանն աւուր *լինելոց* է սրբոցն, զսկիզբն անդանօր սերմանեաց ի նախնի մարդն ադամ. զի թէ յիւրում ժամանակին կերեալ էին ի կենաց պտղոյն, լինէին կատարեալ անմահք. և փոխեին յարքայութիւնն: - 282. Հինգերորդ՝ նշանակ ահագին դատաստանացն աստուծոյ. զի այնպէս *լինելոց* է ամենայն մեղաւորաց այնպիսեաց: - 303. Քսանևէ, մովսէս ի վախճանիլն իւր՝ կտակ գրեաց *զլինելոցն*, և զեկեղեցին յանձնեաց ի կոյսն յեսու: - 329. Եւ զոր ինչ *լինելոց* էր ի տարին, ի նոյն կերպարանս փոխեին և ակունքն: - 349. Դարձեալ՝ հարաւն նշանակէր զիրէայս, և հիւսիս զհեթանոսս. որ *լինելոց* էին պատարագ և ժողովուրդ աստուծոյ..: - 360. Տասներորդ՝ և նորս թլփատութիւն սրտի՝ վէմն քրիստոս *լինելոց* էր. որ կարծրացաւ աստուածութեամբն. և էարկ սուր յերկիր և բաժին: - 415. Իսկ թէ մարգարէութիւն էր և *զլինելոցն* ասէր, ապա ո՛չ էր աստուած. սուտ կոչեցաւ անունն ի վերայ: - 430. Երկրորդ՝ եցոյց թէ նոյնպէս ընդ քե՛զ է *լինելոց* զօրք հրեղինացն նովին հոգւովն: - 445. Երրորդ՝ զի նորոգումն որ *լինելոց* էր ծննդեամբ կուսին՝ ո՛չ միայն մարդկան էր, այլ և հրեշտակաց. պարտ էր հրեշտակին սպասաւորել կուսին: - 463. Տասներորդ՝ այն քան գերազանցեաց պատիւ կուսին, զի այնմ որ մարգարէք գուշակէին *զլինելոցն*. ի սմա ընդ խօսից հրեշտակին եղև կատարումն: - 464. Հինգերորդ՝ քրիստոս *լինելոց* էր քահանայ և թագաւոր յաւիտենական. և էգն ո՛չ կարէր օծանիլ քահանայ և թագաւոր. ո՛չ յօրինակն և ո՛չ ի ճշմարտութիւնս: - 480. Իսկ որք ելեալք են ի մարմնոյ, յոյս նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ գիտութեան. զի ստուգապէս գիտեն *զլինելոց* հատուցումն: - 574. Ճշմարտութիւն է որ առանց փոփոխման ասին այնք որ են, կամ լինին, կամ *լինելո՛ց* են: - 579. Հանճարեղութիւն է նկատել զայնս որ են. և Նախատեսութիւն է տեսանել *զլինելոցն*. այլ Յիշողութիւնն է վերստին յիշել զեղեալսն: - 580.

Այլ և այսպէս **բ** որմունք *լինելոց* են ի հանդերձեալն. այսինքն է մին հրեշտակաց և միւսն մարդկան սրբոց յաւիտենից փառաբանիչք: - 636. Եւ վասն մահու և ոգէվարի թէ զի՞նչ *լինելոց* է: - 660. ...և զբաժին իւր գիտասցէ որ *լինելոց* է ի կատարածի..: - 669. Ձի ցուցցէ թէ նմանապէս *լինելոց* է ի յարութեանն հանգիստ նոցա ի կարգս իւրեանց: - 674. Այլ ըստ պսակացն որ մարմնով կատարին` և վասն ընկերացն որ ժողովին` պակաս է նոցա. զոր ի կատարածի *լինելո՛ց* է ի գալուստն քրիստոսի..: - 686. Նախ ասեմ, եթէ հանդերձ սպիտակ և պսակք և աթոռք և այլն ամենայն զոր ետես ի տեսիլն` ո՛չ ներկային. այլ հանդերձելոյն էր տեսութիւն որ ինչ *լինելոց* է ի կատարածի..: - 690. Երկրորդ, յանկնկալութենէ հատուցմանն կրեն զտանջանս. որ *լինելոց* է ի կատարածի: - 690. Պատասխանեմք առ այս որպէս ասէ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց եթէ առակ օրինակ են սոքա արդարոց և մեղաւորաց որ այսպէս *լինելոց* է ի կատարածի: - 695. Դարձեալ նշանակէ զամենայն ապստամբութիւնս որ յառաջին, և միջին, և վերջին ժամանակս *լինելոց* է: - 707. Եւ աստուած ո՛չ է մեռելոց այլ կենդանեաց. որոց հոգիքն ի ձեռս նորա կենդանի են. և մարմինքն ի ձեռս նորա կենդանի *լինելո՛ց* են: - 715. Երրորդ` քանակաւ հասակին. զի իւրաքանչիւր ոք յիւրն երեսնամեայ յարիցէ. որպէս հարիւրամեան անցեալ և քառասնօրեայ մեռեալ. որ *լինելոց* էր երեսնամեայ, ի նոյն հասակն յառնեն: - 726. Երրորդ, յարմարի տեղիքն այն` դատաստանին աստուծոյ որ անդ *լինելոց* է. այսինքն գործ ողորմութեան և գործ արդարութեան..: - 738. Դարձեալ, դատաստանն վերջին *լինելոց* է ի վերայ երկրի ի յօդս: - 759. Ձի **բ** որմունք *լինելոց* են յարքայութեանն երկնից: - 760. Ի յայս միտս ի ստորինս եկեղեցի այժմ կրկին են դասք պաշտամանց. որ և նոյնպէս է *լինելոց* ի վերնումն սիօնի յեկեղեցիս անդրանկաց: - 760

**ԼԻՆԵԼՈՒԹԻՒՆ +** Եւ թէ յոչ ժամանակի, և զի՞նչ էր նոյն ինքն ժամանակն որ գոյացաւ ի սկիզբն *լինելութեանն*: - 37. ...զառաջին *լինելութիւնն* ասէ ստեղծուած քան զամենայն եղելոց ասեն: - 40. Եւ դարձեալ` զի մի՛ կարծի միայն յանմարմնութեանն պատկեր հօր, ի վերայ էած և ի լինելութեանն հաւասար աստուծոյ գոլ նովին մարմնովն առանց յափշտակութեան: - 93. Հինգերորդ` ոչէ ասին նիւթականքն որ ի լինելութեան և յապականութեան են. զի երբեմն ո՛չ էին, և յետոյ ո՛չ լինելոց են: - 111. Առ այնոսիկ որք ասեն` անկա՛ր է աստուծոյ առնել զաշխարհս ոչ ինչ. մինչ զի ո՛չ երևիլ սկիզբն *լինելութեան* սորա: - 162. Իսկ որ ասէ, մինչ զի ո՛չ երևիլ սկիզբն *լինելութեան* սորա: - 163. Գիտելի է, զի կրկին է սկիզբն *լինելութեան* աշխարհի: - 163. Առաջին է նախագաղափար տեսութիւն արարչին. որպէս նախ քան զժամանակ անսկիզբն յաւիտենիւ. և Երկրորդ սկիզբն է ի ժամանակի *լինելութեան* իւրոյ: - 163. Եւ որովհետև գիտացեալ եղև այս, ապա յա՛յտ է թէ անկա՛ր է ոչ երևիլ սկիզբն *լինելութեան* աշխարհի. ըստ այնմ որ էր ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ: - 164-165. Եւ ուսեալք զայս, ընկա՛լ և այժմ զլուծումն խնդրոյն. եթէ *լինելութիւն* աշխարհի ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ ո՛չ է զօրութեամբ` այլ ներգործութեամբ վասն բազում պատճառի: - 168. Է՛ որ միշտ ներգործութեամբ. որպէս աստուած. և է՛ որ միշտ զօրութեամբ. որպէս նիւթն և ժամանակ. և է՛ որ երբեմն զօրութեամբ և երբեմն ներգործութեամբ. որպէս այսոքիկ որ ի *լինելութեան* և յապականութեան են: - 169. Այլ արդ` *լինելութիւն* աշխարհի առ ինքն ըստ ինքեան ասի զօրութեամբ և ներգործութեամբ. զի ի զօրութենէ եկն ի ներգործութիւն. զի թէ ոչ գոյր զօրութեամբ նախ` ո՛չ լինէր յետոյ ներգործութեամբ: - 169. Այսպէս և *զլինելութիւն* արարածոցս իմասցիս: - 169. Նոյնպէս և զօրութեամբ *լինելութիւն* աշխարհիս` առ աստուած ներգործութեամբ է: - 169. Եւ է՛ էակ որ երբեմն զօրութեամբ է. որպէս այնոքիկ որ ի *լինելութեան* և յապականութեան են որք միշտ փոփոխին. որպէս մարդ և ոչխար և ծառ: - 173. Ուստի պատճառի *լինելութիւն* էիցս միշտ և անխափան. որպէս ասի ի գիրս աշխարհաց: - 181. Երրորդ` ի *լինելութեանց* և յապականութեանց. զի անպակասք են. ըստ որում հատեալ ի տարերաց` *լինելութիւն* է ա՛յլ էակաց. և ապականութիւն նոցա լնու զհատումն տարերաց: - 181. Ապա ուրեմն համանգամայն ի միասին է հոգւոյ և մարմնոյ *լինելութիւնն*: - 255. Եւ թէ ասիցէ ոք. արդ յայտնեա՛, նախախնամութեա՞մբ է *լինելութիւն* հոգւոյ, թէ ստեղծմամբ: - 257. Եւ ստեղծմամբ զի ըստ գոյութեան իւրոյ շնորհօքն աստուծոյ նո՛ր պարգևեցաւ ընդ *լինելութեան* մարմնոյ: - 258. Իսկ բարոյականն այս ինչ է. զի զպատկերն արարչական և զառաջին կեանս դրախտին կորուսաք, և զանասնեղէն պատկերն և զերկրորդ և զախտաւոր կեանս ընտրեցաք. յիրաւի շրջեցաւ ի մեզ և *լինելութիւն* հոգւոյն: - 258. Վեցերորդ` խօսեցաւ աստուած` և զամենայն անճառելի գիտութիւնս վասն արարածոց ուսոյց նմա. զոր ոչ գիտէին մարդիկ *զլինելութիւն* երկնի և երկրի և ծովու և կենդանեաց: - 326. Նա՛խ` հրամայեաց աստուած գրել *զլինելութիւն* աշխարհի. և ձևացոյց ի միտսն մովսէսի. զի մի՛ մոռասցին հանգամանքն.

վասն որոյ զգալի խորան հրամայէ կազմել: - 342. Մի է բանն աստուծոյ անձնաւոր էութիւն և գոյացութիւն. որ էր ի ծոց հօր անմարմին. որով ամենայնքն ի *լինելութիւն* եկին: - 529. Յինգերորդ՝ որպէս ասեն այլ վարդապետք, թէ *լինելութիւն* մեղաց է յանկարգութենէ կամաց. և անկարգութիւն կամացն է կրկին..: - 560. Բոլորապէս **դ** է. այսինքն Նախ ըստ տարերց ի *լինելութիւն* և յապականութիւն: - 663. Պատասխանեն վարդապետք թէ՝ որպէս մովսէս թանձրամիտ ժողովրդեանն իէլի պատմէր *զլինելութիւն* արարածոց ի **զ** օրս..: - 717

**ԼԻՆԻՄ +** Որպէս արեգակն զի ո՛չ այրէ որ է հեռաւոր պատճառ. այլ հուրն ի նմանէ առեալ զջերմութիւն ի մերձ գոլով այրէ՛. որպէս յա՛յտ է ի հայելւոջն, որ առեալ զնշոյլս յարեգականէն՝ այրէ՛. ա՛յսպէս և բանս մեր ի հարկէ նոցա *լինի*՝ զոր ստորասեմք կամ բացասեմք: - 8. Զոր օրինակ՝ յորժամ ասեմք՝ *լինի* անձրև կամ ո՛չ, ի հարկէ մինն ի նոցանէ *լինի*: - 8. Իսկ երկրաւորք մերթ այսպէս և մերթ այնպէս. *լինին* և ո՛չ *լինին*. որպէս մարդ, ձի, ծառ, և այլն: - 8. Երրորդ, զի թէ է՛ ամենայն ի հարկէ, ո՛չ *լինի* անձնիշխան կամաց գործք. որ հաւասար է յերկոսինն. այսինքն յառնել և յո՛չ առնել: - 8. Չորրորդ, զի ո՛չ *լինի* ի դիպուածոց ինչ. որպէս սղից ոմանց պատահին բարեբախտութիւն, կամ վատաբախտութիւն. ա՛րդ՝ թէ է՛ ամենայն ի հարկէ, ո՛չ *լինին* վերոյ ասացեալքս: - 8. Եւ զի *լինին* և են սոքա՝ յա՛յտ է յայսցանէ, զի ո՛չ կարեն ոչ գոլ: - 8. Աստ ուրեմն ի հարկէ՛ երևեցաւ թէ գոն և են սոքա ասացեալքս, այսինքն գործ բնութեան և գործ կամաց և գործ պատահմանց. և ո՛չ ոք ուրաստ *լինի* վասն սոցա: - 8. Որպէս յորժամ ասեմք, վաղիւն *լինի* արև, կամ ո՛չ *լինի*. *լինի* անձրև, կամ ո՛չ *լինի*. ի հարկէ մինն ճշմարիտ է ի սոցանէ: - 8. Նախ՝ եթէ *լինէր* բանս մեր ի հարկէ ճըշմարիտ, նա ո՛չ մինն միայն, այլև ամենայն բան զինչ ասէաք՝ ճշմարիտ *լինէր*. որպէս շինել քաղաք, կամ ո՛չ շինել. տընկել այգի, կամ ո՛չ տնկել: - 8. Ա՛րդ՝ թէ ամենայն ո՛չ *լինի* ճըշմարիտ, նաև մի բանն ո՛չ *լինի* ճշմարիտ: - 8. Երկրորդ՝ զի թէ ի ներկայս ասեմք ի վերայ քարի թէ *լինիցի* փայտ. ո՛չ *լինի* այնպէս. արդ՝ թէ ասելն մեր զներկայն ո՛չ փոփոխէ, նա և ո՛չ զհանդերձեալ. կարէ փոխել. ո՛չ ըզմերձաւոր հանդերձեալն՝ և ո՛չ զհեռաւորն: - 8. Չորրորդ՝ զի թէ զոր ինչ ասեմք՝ ի հարկէ ճշմարիտ էր, յայնժամ աւելորդ էր խորհիլն մեր. զի խորհուրդն ո՛չ է ի հարկաւորացն. այլ ի ներընդդունակացն. զի կարէ՛ *լինիլ*, և ո՛չ *լինիլ*. զի թէ առնեմք զայս՝ եղիցի՛ այն. և թէ ո՛չ առնեմք զայս՝ ո՛չ եղիցի այն: - 9. Իսկ ի վաղիւն ո՛չ գիտեմք թէ անձրև է թէ ոչ. զի գիտեմք որ մինն *լինի*. այս՝ կամ այն՝ որ և հանդիպի. անձրև՝ կամ ո՛չ. այլ ի հարկէ բացորոշակի ո՛չ գիտեմք զմինն: - 9. Զորօրինակ՝ իրն ի ներկայս որ է նիւթ ներընդդունակ՝ ունի կրկին զօրութիւն. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ, և կարէ՛ ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ ջերմն գոլ, և կարէ՛ ո՛չ գոլ. և մինն ի նոցանէ՛ *լինի* ներգործութեամբ որն և հանդիպի: - 9. ունի կրկին զօրութիւն *լինելոյ* և ո՛չ *լինելոյ*. և հանդիպմամբ մինն յառաջէ՛ ի նոցանէ և *լինի* ներգործութեամբ: - 9. Եւ թէ ոք ասիցէ, բազում բանք մեր բացորոշակի *լինին* ի հանդերձեալն. որպէս թագաւորն յորժամ ասէ շինեսցի քաղաք, և շինի. և ասեմք թէ այսանուն մարդ մեռանելոց է, և մեռանի. և աղօթեմք և *լինի*. և այլն նմանապէս անէծք կամ օրհնութիւնք: - 9. Կամ է ի հարկաւոր պատճառ է. զի անխափան *լինիցի*. որպէս մարդ մեռանելո՛ց է: - 9. Կամ է՛ ի ներգործական պատճառն. որ ունիցի խափան ինչ և արգելումն. որպէս մանուկս այս երկար ապրեսցի. կամ թէ մանուկս այս *լինի* երաժիշտ, թէ ո՛չ *լինի* խափանումն իմն: - 9-10. Կամ է՛ ի ներընդունակ պատճառն իւր. որ հաւասար է ի *լինիլն* և յոչ *լինիլն*. որպէս ելանել ի զբօսանս, կամ ո՛չ. *լինիլ* անձրև, կամ ո՛չ: - 10. Եւ որովհետև ծանեաք զայս, արդ պատասխանեմք առարկութեանցն, եթէ որքան Է՛ ի հարկաւոր պատճառ է՛, *լինի* բացորոշապէս բանն ճշմարիտ. որպէս բան թագաւորի. և մարդոյն մեռանիլն. և արև ծագելն. և *լինիլն* գարուն յետ ձմռան: - 10. Եւ թէ է ի պատճառն ներգործական՝ որ ունի արգելումն, է՛ որպէս անէծք, կամ օրհնութիւնք, կամ աղօթք. և մանկանն յերկար ապրիլ. կամ *լինիլ* երաժիշտ: - 10. Ասեմք առ այս, եթէ՝ ամենայն ինչ որ *լինի*՝ ունի պատճառ. և նախ է պատճառն քան զպատճառելին. այլ ամենայն պատճառ ո՛չ է հարկաւոր. այլ գո՛յ և ներընդունակ պատճառ. ապա ուրեմն ո՛չ է հարկաւոր պատճառ շարժումն աստեղաց: - 10. Դարձեալ ասեն, թէ ամենայն ստորնային մարմինք՝ կառավարին վերնային մարմնովք. որպէս յա՛յտ է ի չորս եղանակս տարւոյն. այլև ծնունդ և աճումն՝ և բոյսք և պտուղք՝ ի շարժմանէ նոցա պատճառին. և շարժումն նոցա է՛ հարկաւոր. ապա ուրեմն ամենայն ինչ *լինի* ի հարկէ: - 10. Ասեմք առ այս, թէ սնունդ և աճումն մարմնոց, տնկանին է և ոչ աստեղաց. թէպէտ օգնեալ *լինի* ի նոցանէ: - 10. Ասեմք առ այս, թէպէտ խառնուածք մարմնոյն *լինին* ի շարժմանէ՛ աստեղացն, այլ բազումք անձնիշխան կամօք նըւաճեն զվատախառնութիւն մարմնոյն, և գործեն զբարիս: - 10. Իսկ թէ այլ և այլ է ամենեցուն հարկն, ապա նոյնպէս ո՛չ *լինէր* ամենեցուն չար: - 11. Դարձեալ, թէ էր հարկ շարժումն աստեղացն, ինքեանք ո՛չ *լինէին*

ընդ հարկաւ այլոց. ապա թէ ինքեանք են ընդ հարկաւ, ո՛չ են այլոց հարկ. զի են ինքեանք ընդ հարկաւ: - 11. Դարձեալ՝ թէ ի հարկէ է՝ ապա բարձեա՛լ են ամենայն սկզբունք բարոյական առաքինութեանց. այսինքն խոհեմութեան. արիութեան. ողջախոհութեան. և արդարութեան. զի սոքա ընտացեալ *լինին* առ ոմանս՝ և ո՛չ ի հարկէ: - 11. Դարձեալ թե ի հարկէ՛ է ոչ *լինին* օգուտ խրատք և սպառնալիք և ուսմունք. որովք բազումք յորդորին ի բարիս, և հեռանան ի չարեաց կենցաղոյս: - 11. Ասեմք առ այս թէպէտ ունին զօրութիւնս, բայց այլ և այլ կերպիւ. զի բոյսք որք յերկրի են դարմանիչք և բժշկութիւնք մարմնոց. այլ երկնային աստեղքն են արարիչք լուսոյ և ժամանակաց. և ի նշանս ապագայից. զի յամենայն ուստեք տեսեալ պատրաստեցին մարդիկք. որպէս ասէ գիր, եղիցին լուսատու *լինիլ* երկրի. ի ժամանակս և ի նշանս: - 12. Դարձեալ ասեն, ի հակառակ շարժմանց՝ *լինի* և հակառակ ներգործութիւն. ահա մոլորակք շարժին հակառակ. ապա ուրեմն և գործեն հակառակս: - 12. Եւ շարժումն նոցա ո՛չ պատճառէ զչար և զբարիս մարդկան. այլ են պատճառք աւուրց և ժամանակաց և եղանակաց. ծնանելոյ և աճելոյ. և նշան ապագայից որպէս ասացաք. այլ նշանն ո՛չ է պատճառ չար *լինելոյ* ումեք կամ բարի: - 12. և ո՛չ են նոքա պատճառք *լինելոյ* չարեացն կամ բարեաց: - 12. Չորրորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ, այլ արդ չարն եկամուտ է և պատահեալ. *լինէր* ապա ի յաստուած օտա՛ր ինչ և պատահական. որ է անտեղի: - 13. Այլ արդ՝ եթէ չարն յաստուծոյ է՝ *լինի* անկարգութիւն աստուծոյ որ է՛ անյարմար: - 13. Իններորդ՝ եթէ չարն է յաստուծոյ, ապա և կամի՛ զչարն. յայնժամ *լինի* կրկին կամք աստուծոյ. չար և բարի. զի կրկին գործ՝ ի կրկին կամաց առաջագայի: - 14. Վեշտասաներորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ որպէս բարին, և երկուցն սկիզբն է աստուած, և արդ՝ եթէ միևնոյն է սկիզբն երկուցն, անկարելի է ներհակացն ի միասին ունիլ մի սկիզբն. զի *լինէր* սկիզբն այն ո՛չ պարզ. այլ երկատեսակ. և ո՛չ միեղէն՝ այլ բաժանեալ և այլայլեալ. նաև *լինէր* ինքն ինքեան հակառակ, և յառաջ եկելոցն ի նմանէ: - 14. Եւ *լինէր* բարին և չարն ի սեռէ աստուծոյ, որ է անհնարին: - 14. Ութևժերորդ՝ զի թէ չարնէ յաստուծոյ, այս *լինի* կամ հակակայութեամբ յառաջ եկեալ. որպէս սպիտակն յո՛չ սպիտակէն. կամ բաղդատութեամբ. որպէս կենդանին ի կենդանւոյ: - 14. Այլ արդ՝ որ հակակայութեամբ *լինի*՝ նա՛խ է զօրութեամբ՝ և ապա՛ ներգործութեամբ *լինի*: - 14. Իսկ թէ բաղդատութեամբ, աստուած բարի՛ է և ի բարւոյն բարի *լինի* և ո՛չ չար: - 14. Իսկ թէ ըստ ինքեան է չարն յաստուծոյ, նա ո՛չ *լինէր* բարին յաստուծոյ. զի ըստ ինքեան՝ հարկաւոր է և գոյացական և անփոփոխ: - 15. Եւ զի միշտ է բարի՝ անկա՛ր է *լինիլ* ո՛չ բարի: - 15. Եւ զի գոյացական է բարի, անկա՛ր է *լինիլ* պատահական չար: - 15. Երկրորդ՝ ասեն թէ աստուած նախքան *զլինիլն* մեր՝ ի նախատեսութիւնն իւր ետես զամենայն լինելոցն այնպէս. զչարն չար, և զբարին բարի: - 15. Ա՛րդ՝ հարկ է ամենեցունց գոլ այնպէս որպէս աստուած ետես և գիտաց. և գիտութիւնն աստուծոյ անպատիր է. ապա ուրեմն ամենայնն *լինի* ի հարկէ տեսութեանն աստուծոյ: - 15. Նախ՝ թէպէտ աստուած տեսանէ զամենայն նախատեսութեամբ և ո՛չ ինչէ արտաքոյ տեսութեանն աստուծոյ, սակայն տեսանէ զոմանս ի հարկէ՝ և զոմանս ի ներընդունակութիւնէ *լինիլ*: - 15. Դարձեալ ասեմք՝ թէպէտ տեսանէ աստուած զամենայն նախքան *զլինիլն* իւրեանց, սակայն տեսութիւնն աստուծոյ ո՛չ հարկ է ի վերայ նոցա *լինիլ* չար կամ բարի: - 15-16. Դարձեալ ասեմք՝ թէպէտ տեսանէ աստուած զամենայն նախքան զլինիլն իւրեանց, սակայն տեսութիւնն աստուծոյ ո՛չ հարկ է ի վերայ նոցա *լինիլ* չար կամ բարի: - 15-16. Ձորօրինակ՝ արուեստաւոր ոք մինչ գործէ զսայլ, և ի հեռուստ տեսանէ ոք զոր նա՛ գործէ, այլ ո՛չ տեսութիւնն հարկեաց զսայլն *լինիլ* այնպէս. այլ կամք արւեստաւորին: - 16. Չորրորդ ասեն՝ թէ չարն ո՛չ է յաստուծոյ, ապա երևի թէ այլ ոմն է չարի սկիզբն, և այլ ոմն բարւոյ. և *լինի* **բ** սկիզբն բարի և չար ըստ մանիքոսի: - 16. Ա՛րդ՝ թէպէտ չարն ո՛չ է յաստուծոյ, այսու ո՛չ *լինին* երկու աստուածք. կամ **բ** սկիզբն. զի չարն ո՛չընչութիւն է. և ո՛չնչին սկիզբն ո՛չ է աստուած. զի աստուած սկիզբն էութեցէ: - 16. Նախ թէ աստուած ստեղծ զկամքն բարի. և զբարին եդ առաջի կամիլ. իսկ նա անձնիշխանութեամբ հեռացեալ ի բարւոյն՝ գտա՛կ *եղև* չարին. զի չարն ո՛չ այլ ինչ է, բայց հեռացումն. կամ պակասութիւն բարւոյ. ապա ուրեմն թէպէտ բանն և կամքն է աստուծոյ, այլ կամիլն և ընտրելն զչարն՝ ոչ է յաստուծոյ, այլ կամացն և բանին: - 16. Ձորօրինակ՝ արուեստաւոր ոք կազմէ սուր ի պատճառս բարւոյ. այլ որ նորգործեաց չար՝ նա *եղև* չարին պատճառ: - 16. Դարձեալ, անձնիշխան կամքն է՛ յաստուծոյ. և է՛ յոչնչէ եղեալ. այլ ա՛րդ՝ անձնիշխան կամքն ըստ այնմ՝ որ յաստուծոյ է *եղեալ*՝ ո՛չ է պատճառ չարի. այլ ըստ այնմ որ յոչընչէ՝ և ցանկայ ոչընչի. այսինքն չարի. վասն այսորիկ մեղքն և չարն ո՛չ են յաստուծոյ. այլ յոչնչէ՝ որ է՛ սկիզբն նոցա: - 16. Նախ՝ թէ ըստ այդմ բանի հա՛րկ է ապա և քեզ ջուր *լինիլ* և զջուրն գիտել. և քար *լինիլ* և զքարն ճանաչել, և զայլսն նոյնպէս: - 17. Իսկ սկիզբն և կատարումն ի մեզ, որպէս նախածանօթ ընտրեալքն յառաջ քան *զլինիլն* աշխարհի.

որ այժմ բարի գործովք կատարեսցին ըստ նախասահմանելոյն իւրեանց: - 18. Իսկ չար փոխանակ բարւոյ ո՛չ առնէ ըստ որում անիրաւութիւնէ. այլ առնէ երբեք ըստ որում նախախնամութիւնէ. զի ի չարէն *լինիցի* բարի. թէպէտ մեզ չար երևի, այլ այս ևս բարի է. որպէս հիւանդութիւն. փորձութիւն. և այլն: - 18. Այսպէս ի բնական ստեղծումն հոգւոյն՝ ումն խոհեմ և ումն անզգամ. ցանկասէր՝ և ողջախոհ. բարեբարոյ՝ և չարաբարոյ *լինին*: - 19. Նոյնպէս և աստուած զամենայն մարդոյ փրկութիւն կամի. որք անձնիշխան կամօք համակամ *լիցին* աստուծոյ՝ փրկին. և որք հակառակին կամօք՝ ո՛չ փրկին: - 20. Եւ զի մարդոյ ճանաչումն է՛ այժմ ընդ *լինիլ* իրին. այլ աստուած ճանաչէ՛ յաւիտենից և յառաջ քան *զլինիլ* իրին: - 20. Եւ գիտելի է այս, եթէ նախասահմանութիւնն աստուծոյ առնէր հարկ գործոց մարդկան, չարի և բարւոյ, *լինէր* բազում անպատշաճութիւն - 20. Նախ՝ զի ընդունայն *լինէին* խոստմունքն. բարեացն վարձս և չարեացն պատիժս: - 20. Երկրորդ՝ անիրաւ *լինէին* հատուցմունքն. բարեացն բարիս և չարեացն չարիս: - 20. Երրորդ՝ զի աստուած *լինէր* պատճառ չարեաց մերոց: - 20. Չորրորդ՝ անպիտան *լինէր* յոյսն և աղօթքն: - 20. Հինգերորդ՝ զի խափանեալ *լինէր* անձնիշխանութիւնն մեր. որ ունի զինքն առ երկոսեան կողմն: - 20. Վեցերորդ՝ զի ո՛չ բրգործքն *լինէին* գովելի, և ո՛չ չարքն պարսաւելի: - 20. Եօթներորդ՝ և ո՛չ *լինէին* մարդկային կամ աստուածային առաքինութիւնք: - 20. Տասներորդ՝ զի սուտ *լինէին* ամենայն օրէնք բնական՝ գրական և աւետարանական. զի սոքա ամենքն խրատեն զմեզ խոտորիլ ի չարէ՝ և առնել զբարի. և այլն ամենայն: - 20. Նախ՝ երկեակն ո՛չ կարէ սկիզբն *լինիլ*. զի ի թիւ՝ երկեակն ի միակէն բաղկանայ: - 20. Երրորդ՝ թէ *լինէին* երկու սկիզբն հակառակ միմեանց, մի զմիոյ ստեղծուածս ապականէին. և ո՛չ *լինէին* արարածք ինչ: - 20-21. Չորրորդ՝ դարձեալ թէ *լինէին* երկու սկիզբն և հակառակ, մարտնչէին ընդ միմեանս՝ և ընդ սկսեալս իւրեանց. և ոչ ինչ մնայր ի խաղաղութեան: - 21. Հինգերորդ՝ թէ է **բ** սկիզբն և հակառակ, սկսեալքն ի նոցանէ անկարգ *լինէին* և հակառակ: - 21. Եօթներորդ դարձեալ՝ թէ էին **բ** սկիզբն՝ *լինէր* այս կամ համանգամայն. կամ մի յետոյ միոյ: - 21. Այլ համանգամայն ո՛չ կարեն *լինիլ*. զի **բ** հակառակք ի միասին ոչ կարեն *լինիլ*: - 21. Իսկ թէ հաղորդին, ո՛չ կարէ *լինիլ* չար. զի չարն բարւոյն պակասութիւնէ. և սոյնպէս մի է սկիզբն: - 21. Այլ և այսու որոշեսցին. զի յունակութենէ պակասութիւն *լինի*. այլ ի պակասութենէ ունակութիւն ո՛չ երբեք: - 21. Այլ և ո՛չ սկիզբն է էից. զի ի չարէն բարի ո՛չ *լիցի*: - 22. Երկրորդ, ասեմք եթէ՝ չարն կրկին իմանի. է՛ որ ինքնաչա՛ր է. որ պարզ և ամենևիմբ չարն է. և արտաքոյ բարւոյ և էութեան է. որ ո՛չ ուրեք է. և ո՛չ երբեք. և ո՛չ էր. և ո՛չ է. և ո՛չ *լինիլ* կարող է. որ է ո՛չ ինչ: - 22. Նախ՝ զի ո՛չ էն փափագի և ցանկայի է *լինիլ* և գոյ: - 23. Իսկ չարն ո՛չ փափագի բարի *լինիլ*: - 23. Երկրորդ՝ ոչ էն հաղորդի էի և *լինի* է: - 23. Իսկ չարն բարւոյ ո՛չ հաղորդի և ո՛չ *լինի* բարի: - 23. Առ որս ասեմք եթէ՝ բանս այս «ամենայն» ո՛չ այնպէս նեղագոյն առեալ *լինի* ի սուրբ գիրս՝ որպէս առ փիլիսոփայսն: - 27. Այլ ոմանք ասեն թէ՝ նախ ասացեալ բանքս՝ ո՛չ *լինին* զառաջին գալստենէն քրիստոսի ասացեալ, այլ զերկրորդէն: - 27. Քանզի հրէայքն ի ժամանակս քրիստոսի ո՛չ *լինէին* նեղեալք յումեքէ: - 28. Ասեմք եթէ՝ գոգ և մագօգն՝ հոգևորապէս իմացեալ *լինին* ամենայն հալածօղք եկեղեցւոյ..: - 28. Չորրորդ՝ ոչինչ արգելէ ըզհոգին *լինիլ* որդի, թէ է՛ ի նոյն բնութենէ: - 30. Հինգերորդ՝ է՛ ո՛չ խնդրել զօգնութիւնն աստուծոյ ի հաւատալն. զի հաւատն ո՛չ է բնական. զի ըստ այսմ միապէս *լինէր* ամենեցուն. այլ ի բարրութէն աստուծոյ ձրի պարգևքէ: - 32. Եւ ո՛չ *լինի* ի մէջ մի և նոյն էութեանն կամք և ոչ կամութիւն: - 36. Զի բռնադատեալն ոչ *լինի* աստուած. - 36. Եւ դարձեալ ի բաց պատառես զէութիւնն. որպէս թէ կէսն կայր՝ և զկիսոյն *լինիլն* կամեցաւ: - 36. Ի յայս տարակուսանքս՝ որ է ստութիւն յերկուց կողմանց, բառնի էութիւն հօր. և *լինի* արարած որդի: - 36. Ասելովն ծնունդ ի հօրէ, ցուցանէ ոչ *լինիլ* յառաջ քան զհայր: - 37. Վեցերորդ՝ զի *լինի* զօրանալ պակասութեանն՝ և յաղթահարել զունակութիւնն: - 38. Պատասխանեմք թէ՝ կարի՛ յիմարութիւն է հարցումնդ. և զի գոյ հայր ըստ քում բանիդ ծնօղ որդւոյ. ապա ուրեմն ո՛չ կարէ ոչ *լինիլ* և ծնանիլ: - 38. Դարձեալ՝ ո՛չ կարէ ծնանիլ որդի զհայր՝ թէպէտ ունի զհօր բնութիւնն. որպէս դու ծնեալ ի հօրէն քո՝ ո՛չ կարես ծնանիլ զհայր քո և *լինիլ* հայր հօրն քում. թէպէտ ունիս յամենայնի զբնութիւն հօր քոյ: - 38. Եթէ որպէս հօր, է՛ հայրութիւն միայն. իւր *լինի* և բնութիւնն: - 39. Եւ թէ գոյր երիցագոյն, *լինէր* պատճառն և գերագոյն քան զաստուած. իսկ ստեղծանելն երևի պատճառաւ. այսինքն վասն փրկութեան մարդկան: - 41. Նախ՝ զի որպէս զգեստիւն ծածկի մարմինն, այսպէս տէրն զաստուածութիւնն իւր ամփոփեաց մարմնովն անհաս *լինիլ* ի փորձողէն..: - 43. Իմա՛, որպէս բրուտն կարէ՛ գործել անօթ ինչ, այլ ո՛չ երկինք, և երբեմն ի բարւոջ և երբեմն ի չար և ապականեալ. այլ ըստ այսմ ո՛չ *լինի* աստուած: - 44. Է՛ և անկարութիւն առ մեզ՝ ոչ էին գոյ *լինիլ*. և չորսին չորեքտասան: - 44. Եւ թէ *լինէր*՝ գոյր և ի բնութենէ օտար. հետևէր ապա ոչ գոլ որդի հօր. թէ ոչ էր ի նոյն բնութենէն. ապա և ոչ հայր.

զի հայր որդւո՛վն է հայր: - 44. Տարակուսելի է առ այս, զի թէ հա՛րկ է որոց բնութիւնքն մի գոլ՝ նոցա և կամքն և ներգործութիւնն մի *լինիլ*. ընդէ՞ր ապա զի մարդկային բնութիւնս մի է և նոյն հօրն և որդւոյն՝ և ո՛չ է կամքն և գործքն մի: - 45. Եւ զնոյն բանն աստուած մարմնացեալ. և շրջեալ ի վերայ երկրի. զի յայնմ օրինակին արար և որդի պիտոյ էր *լինիլ* և չորս աշխարհք: - 45-46. Ո՛չ թէ բացասութիւնքս այսոքիկ *զլինիլն* ցուցանէ, այլ թէ ո՛չ էր ամէնիւ: - 46. Ըստ քում բանիդ աստ հօ՛ր տաս զաստուածութիւնն և բառնաս յորդւոյ. և ի մարգարէն՝ որդւոյ ասես զաստուածութիւնն և բառնաս ի հօրէ, ապա հա՛րկ է քեզ *լինիլ* անաստուած. զի միովն միւսոյն յաղթութիւն տաս: - 47. Եւ դու ընդ է՛ր ասես *լինել* ինձ ըստ մարդկան երկրորդաբար բարի. զի աստուածութեամբս եմ ընդ հօր ծայրագոյն բարի: - 47. Դարձեալ՝ փորձիչս այս փառասիրութեամբ յառաջեաց առ քրիստոս. ուստի և ի բանից իւրոց երևի թէ ամէն պատուիրանացն պահպանօղ եմ. զոր տէրն պակաս *լինել* յանդիմանեաց: - 47. Իսկ էն՝ զմիշտ *լինիլն* ցուցանէ. ըստ այնմ՝ «ես եմ ալֆա և օմեգա». այսինքն առաջին և վերջին: - 49. Իսկ մարդ, զի սրբեսցէ ինքեամբ զմեզ՝ եղև ամենայն յաղագս ամենայնի. այսինքն հոգի և միտք և մարմին. զի յորոց հասարակաց եղև մահ, *լիցի* և կեանք: - 50. Տե՛ս՝ զի առանց որդւոյ անբան և տկա՛ր է հայր. ո՛չ կարէ *լինիլ* աստուած. ապա և ո՛չ հոգի: - 51. Երրորդ՝ թէ արարած՝ զիա՛րդ կատարէ զմեզ *լինիլ* աստուածս յորդեգրութիւն հօր՝ աւազանաւն: - 51. Առորս ասելի է թէ՝ ո՛չ է այլ էութիւն ի մէջ արարչին և արարածոյն. այլ հա՛րկ է զի *լիցի* աստուած՝ կամ արարած: - 52. Եւ ո՛չ այս կարէ *լինիլ* ի յերկուցն հատումն. այսինքն զի *լիցի* յաստուծոյ և արարածէն՝ և *լինիլ* մի էութիւն. որպէս ո՛չ է էութիւն եղջերուաքաղն որ յեղջերէ՛ և ի քաղէ ստեղծանի. ապա ուրեմն ո՛չ *լինի* էութիւն յարարչէն և յարարածէն: - 52. Եւ զի ստուգեցաք թէ ի հարկէ պիտոյ է էութեան՝ զի *լիցի* կամ արարիչ կամ արարած: - 52. Եւ թէ ծնեալ՝ ասեն հա՛րկ է զի *լիցի* ի հօրէ կամ յորդւոյ. թէ ի հօրէ է՝ *լինին* **բ** որդիք և եղբարք: - 52. Եւ թէ յերկուցն՝ ո՛չ է կարօղ հայր ծնանիլ և կարօտանայ որդւոյ օգնութեանն. և *լիցի* անկատար որդի: - 52. Եւ ծնեալն յանկատարից՝ նոյն ինքն *լիցի* և անկատար: - 52. Եթէ ըստ մեզ կարծէք զծնունդն, պիտոյանայ երկուորիս և գործիս հօր. *լիցի* և այրութիւն և իգութիւն յաստուած. և *լիցին* որդիք երկորեակք էրէց և կրտսեր: - 52. Եւ աղճատանք *լիցի* քեզ ծնունդն ըստ մարկիոնի ութ աստուծոյն և ութ յաւիտենին: - 52. Դարձեալ հարցանեն, թէ հաւասար է հոգի որդւոյ, զի՞նչ արգելու ո՛չ *լինիլ* որդի. ապա թէ ո՛չ՝ նւա՛զ է քան զորդի: - 53. Պատասխանեմք թէ ո՛չ է նըւազ հոգին. զի ո՛չ է անկատար աստուածութիւնն. և ո՛չ նըւազութիւնն առնէ հոգւոյն ո՛չ *լինիլ* որդի, այլ դէմքն և առանձնաւորութիւնքն: - 53. Ապա՛ թէ ո՛չ՝ անկարօտ է ամենայնիւ որդի՝ զիա՞րդ ո՛չ *լինիցի* հայր: - 53. Կամ ևս՝ զի և հայր է ամենակատար՝ ընդէ՞ր ո՛չ *լինիցի* որդի, զի է՛ ի նոյն բնութենէն: - 53. Ասեն դարձեալ, օրինակ տուք զի *լիցի* ի նոյն բնութենէն մինն ծնունդ՝ և միւսն ո՛չ ծնունդ. և ապա՛ հաւատամք աստուած զհոգին: - 53. Չորրորդ՝ ի նոցունց այլք. որպէս մեղուք ի մեղուշ արջառոյ. թէպէտ այժմ ի ծաղկանց *լինին*: - 53. Ապա թէ ո՛չ՝ ըստ բանիդ և հայր *լինի* եղեալ ի ձեռն որդւոյ: - 53. Զի *լիցի* քո պատճառն ի կողմանէս մեր՝ պատասխանի քեզ: - 54. Դարձեալ հարցանեն թէ՝ զիա՞րդ ասէք երեք և մի բնութիւն. զի **գ** միոյ բնութեանն ո՛չ հաղորդի. այլ մինն հաղորդի միոյ բնութեանն, և երկուքն երկուքին. և երեքն երեքին. զի որքան է թիւն, այնքան բնութեան թըւակից *լինի*: - 54. Իսկ յորժամ քակես՝ *լինի* մի և մի. քակեցաւ այժմ ի յառաջին բնութենէն ըստ քեզ՝ և ունի դեռևս զնոյն համարն: - 55. Հինգերորդ՝ թէ արտաքոյ արարածք են բանն և հոգին աստուծոյ, ապա անկարելի՛ է արարածոց՝ արարչի բան և հոգի *լինիլ*: - 56. Տասներորդ՝ թէ բանն աստուծոյ և հոգին արարա՛ծ են և այլ բնութիւն, յայնժամ ո՛չ *լինի* մի աստուած. այլ բազում և զանազան աստուած. զի յոլովութիւնն յոլովութիւն է աստուծոյ. որպէս թէ երեք բնութիւնն երեք աստուած, և երկու բնութիւնն երկու աստուած: - 56. Չորրորդ ասեն, տրտմութիւնն կիրք է և ո՛չ *լինի* յաստուած: - 60. Հինգերորդ ասեն, եթէ հոգին սուրբ առնու զբնութիւնն ի հօրէ՝ *լինի* որդի նորին. զի այն կոչի որդի որ ունի զբնութիւնն ի հօրէ ի նոյն տեսակէ: - 60. Այլ այսոքիկ զմիմեանց գործակից *լինիլն* յայտնեն: - 61. Իսկ եթէ զանձն ասացիք բղխեալ, ահա **բ** անձն ասացիք հոգւոյն. մինն ի հօրէ բղխեալ, և մինն ի յորդւոյ. և այսպէս *լինի* երրորդութիւնն չորրորդութիւն: - 62. Եւ ըստ այսմ *լինին* մանեայ բ աստուածքն. մինն բարւոյ և մինն չարի արարիչ. որ է անաստուածութիւն: - 62. Իսկ եթէ բոլոր, այս *լինի* կամ **բ** հոգի որպէս ասացաք, կամ աւելորդ գոյ բղխումն որդւոյ որ է յոյժ հայհոյութիւն: - 63. Իսկ թէ յանսկզբնէն և ի սկզբնաւորէն յառաջ գայ հոգին, *լինի* անեղ և եղական որ է մակեդոնեան և ծանր հայհոյութիւն: - 63. Դարձեալ՝ հարցանեմ, զի թէ մինն բոլոր բղխումն է հոգւոյն և ո՛չ մասն. զի թէ զմինն զայն հայր բղխէ, ապա ուրեմն ո՛չ բղխէ որդի. իսկ թէ զմինն զայն որդի բղխէ, բըղխեալն հոգի թո՛ռն *լինի* հօր, և ո՛չ բղխումն նմին: - 63. Ա՛րդ՝ եթէ ելանէ ի հօրէ և յորդւոյ, *լինի* իբրև եզր և **գ**. և ո՛չ իբրև զմիջին: -

64. Վեցերորդ վկայ ի ժողովոյն քաղկեդոնի զոր նոքա ընդունին և ո՛չ մեք. այսպէս է գրեալ թէ՝ որ ոք զհոգին ի հօրէ և յորդւոյ բղխումն ասիցէ՝ նզովեալ *լիցի*: - 64. Չորրորդ՝ զի ամենայն իր յայլմէ ընկալեալն՝ *լինի* և ի բաց ընկենլի: - 66. Ա՛րդ եթէ է՛ այլ որդի և եղև աթոռակից հօր, ուրեմն ի բաց էհան զբանն ի նստելոյն ընդ աջմէ հօր որ է սեփհական նմա և վայելուչ հօր՝ *լինիլ* աթոռակից և գահակից: - 67. Իննևժերորդ՝ զի թէ առանձնապէս մարդ է, ապա հետևի բաժանեալ բնութիւն և **բ** կամք և կրկին ներգործութիւն. յայնժամ ո՛չ *լինի* բանն մարդ եղեալ. այլ մարդն բնակութեամբ ի փառս բանին բարձրացեալ: - 68. Քսաներորդ՝ այսպէս Երրորդութիւնն *լինի* չորրորդութիւն. և թիւ և աւելած եղեալ ի բնութիւնն և ի դէմքն. եթէ ա՛յլ է առանձնապէս մարդ և ա՛յլ աստուած: - 68. Իսկ թէ ըստ ինքեան զմարդկայինն, զիա՞րդ ունէր զփառս յառաջ քան *զլինիլն* աշխարհի. զի ինքն ի ժամանակի եղև: - 69. Երկոտասաներորդ՝ այն որ սկիզբն յաշխարհի ունի՝ և ո՛չ է յառաջ քան *զլինիլն* իւր յաշխարհի՝ ո՛չ ասի գալ յաշխարհս: - 73. Ապա ուրեմն և մարմինն այն յատուկ է մարմին բանին աստուծոյ. և այս ո՛չ կարէ *լինիլ*՝ եթէ ո՛չ *լիցի* միաւորեալ ընդ նմին: - 73. Եւ դու այսպէս ընկալ և հաստատեա՛ ի քեզ. և *լեր* միացեալ ամենայն դիմօք և խաղալեօք ի համայնից գլուխն միշտ պաշտաճութեամբ ի քրիստոս: - 76. Երկրորդ՝ զի մի՛ չարչարեալ *լիցի* աստուածային բնութիւնն ընդ մարդկութեանն: - 76. Զի բնութիւնն հասարա՛կ է. և մայր նորին՝ Երրորդութեանն *լիցի* մայր: - 76. Ասեմք եթէ՝ յորժամ մի ասեմք բնութիւն բանին և մարմնոյն, այս *լինի* կամ արիոսին. որ զբանն արարած ասէ և զմարմինն արարած. և այսպէս մի բնութիւն է արարածոյն ասէ. և զբանն ընդ մարմնոյն չարչարելի և մահկանացու: - 81. Իսկ յորժամ կամեցաւ արարիչն մարդ *լինիլ*, բանն աստուած իւրով կատարելութեամբն անձամբ և էութեամբ՝ ո՛չ մասամբ, այլ լրիւ միացաւ անճառապէս ի մարմնի: - 82-83. Իսկ եթէ զաստուածային անձն և զաստուածային բնութիւնն և զմարդկայինն ասէք մի քրիստոս, այս *լինի* կամ միաւորութեամբ կամ բաժանմամբ: - 90. Եւ եթէ բաժանմամբ, այս *լինի* **բ** քրիստոս, կամ **գ**՝ ըստ անձին և բնութեանցն բաժանման: - 90. Եւ կամ *լինի* մի քրիստոս ըստ կոչմանն, և **գ** ըստ էութեանն: - 90. Ահա՛ այս ի կարճոյ բացայայտութիւն ծածկեալ ամբարշտութեանց, որք բ բնութիւնս սահմանեն ի վերայ միոյն քրիստոսի. թէպէտ անձն մի համբաւեն համաձայն մեզ, սակայն որոշմամբ բնութեանց *լինին* տարաձայն մեզ և եկեղեցեացն աստուծոյ: - 90. Ապա ուրեմն յայտնապէս նոքա ուրանան զայս, և ասեն թէ՝ ձեռքն քրիստոսի ոչ է աստուած. և գլուխն քրիստոսի ո՛չ է աստուած. և այլն. զի մի բազմաստուածք *լիցին*: - 91. Եւ թէ մարմինն քրիստոսի չէ աստուած, և հոգին քրիստոսի չէ աստուած, որպէս նոքա բարբանջեն. ապա և բոլորն քրիստոս չէ աստուած. զի բոլորն քրիստոս յաստուածութենէն միաւորեալ *լինի* մի քրիստոս. և բաժանեալ ո՛չ է քրիստոս: - 91. Ապա ըստ այսմ հետևի՝ զի մարիամ մայր քրիստոսի *լինի* և ո՛չ աստուծոյ. զի լաւ է քրիստոսածին և մարդածին կոչիլ՝ քան թէ աստուածածին: - 91. Զի թէ ասեմք եթէ ոչ է աստուած, յայնժամ բաժանեալ յաստուածութենէն՝ ո՛չ *լինի* աստուծոյ ձեռն. և ո՛չ աստուծոյ մարմին. կամ արիւն. զի մասն բաժանեալ ի բոլորէն ո՛չ է բոլորին մասն. և ո՛չ կոչի. որպէս ձեռն հատեալ յանդամոցն՝ ո՛չ կոչի մասն բոլորին: - 92. Եւ թէ ասես միայնաբար՝ աստուած է մարմինն. և աստուած է արիւնն, *լինի* բազմաստուածութեան ցոյցք: - 92. Ապա ուրեմն համանգամայն ի միասին *լինին* երկու հակակայք. այսինքն ուղղական և հոլովական. զի ասելն աստուած ուղղական է. և աստուծոյ՝ սեռական հոլով: - 92. Այլ և այսպէս ասելն՝ բոլորին կոչմունքն *լինի* մասնաւորին: - 92. Ասեմք նախ եթէ՝ ո՛չ է աննման. զի մի իրն *լինի* բոլոր և *լինի* մասն՝ առ այլ և այլս: - 92. Իսկ թէ ասես միայնաբար աստուած է մարմինն՝ և աստուած է հոգին. այսու ո՛չ *լինիս* բազմաստուած. զի մի՛ է աստուածութիւնն ի սոսա միաւորեալ էութեամբ և գոյացութեամբ: - 93. Ասաց թէ՝ որ ի կերպարանս աստուծոյ էր բանն, այսինքն էակից հօր, ո՛չ ինչ զրկումն համարեցաւ ի ներգոյական փառաց *զլինիլն* հաւասար մեզ: - 93. Ա՛րդ՝ եթէ բաժանեցեր զքրիստոս՝ բաժանեցար ի հաւատոցդ. և ո՛չ *լինիս* քրիստոնեայ: - 95. Ա՛րդ՝ եթէ քրիստոս տգէտ է և նոքա զմիտս տգիտի ունէին. ո՞րպէս *լինէին* հազարապետք աստուծոյ խորհրդոցն. կամ հազարապետքն առաւել են քան զխորհուրդն աստուծոյ: - 96. Ա՛րդ՝ եթէ հայր առաւել գիտէ և որդի նըւազ, այս *լինի* կամ հօրն նոյնպէս նըւազ գիտել որպէս որդի. և կամ որդի՝ ո՛չ ճշմարիտ ասել: - 97. Արդ կամ ստեաց զաւետարանն, կամ սուտ *լեր* ի բանս քո ըստ նմանութեան հօր քոյ սատանայի: - 97. Ապա զիա՞րդ պակաս *լինի* գիտութեամբ. ուսուցանօղն հրեշտակաց: - 98. Արդ՝ եթէ բոլոր աստուածութիւնն ի քրիստոս էացեալ է մարմնապէս, և ծածկէ զգիտութիւնն ի նմանէ, այս *լինի* կամ ոչ աստուած մարմնացեալ և մարդացեալ կամ զէութիւնն տըւեալ և ի գիտութենէն զրկեալ որ է սուտ: - 98. Իսկ գանձն և աղբիւրն իմաստութեան երկնի և երկրի՝ ո՛րպէս *լինի* կարօտ գիտութեան կամ ստացեալ յայլմէ: - 98. Ա՛րդ՝ եթէ՝ ի յարութեանն

հասարակ արդարք տեսանեն զաստուած դէմ յանդիման որպէս և է, և քրիստոս ո՛չ կարէ տեսանել, փո՛քր *լինի* գիտութեամբ քան զմարդ որ է սուտ: - 99. Եւ դարձեալ՝ քննութեամբ մտաց ո՛չ *լինի* հասեալ անհասանելին. այլ հաւատով *լինի* իմացեալ. և յուսով ըմբռնեալ. և սիրով միաւորեալ: - 101. Եւ զի որդին աստուծոյ բնութեամբ որդի մարդոյ եղև, մի՛ յերկուանալ թէ *լինիցիս* և դու շնորհօք որդի աստուծոյ: - 107. Եօթներորդ՝ աստուածն մարդ եղև և յերկիր էջ. զի դու *լիցիս* աստուած և յերկինս ելցես: - 107. Դարձեալ՝ գիտելի է՝ զի կրկին կերպիւ առեալ *լինի* մինն: - 110. Նախ՝ պարզ ոչ էն. որ է ոչ ուրեք և ոչ երբեք. որ ո՛չէր և ո՛չէ և ո՛չ *լինի*. որպէս ոչ ինչն: - 111. Զի առ աստուած՝ ո՛չէ սոսկ տեսութիւն արտաքոյ. այլ յինքն տեսանելով զյարացոյցն. և զմեզ ի յարացոյցն մեր իբր *լինիլ* մեզ նախ ի յաստուած, և ապա ի յէութեան մերում. և ո՛չ որպէս փոփոխումն ինչ ի բարի կամացն: - 112. Որպէս նախ քան *զլինիլն* մեր՝ էր սկիզբն մեր. և այժմ է՛ նոյն սկիզբն. և յետոյ ի կատարածի անփոփոխելի մնայ ի սկիզբն գոլոյ: - 112. Եւ գիտելի է, զի յարացուցիս և նախասահմանութեանս՝ արարողական պատճառ է աստուած. և նիւթական պատճառ իրն այն որ է նախասահմանի. և տեսական պատճառ է՛ կարգն. զի նախ տըւեալ *լինի* շնորհքն աստ. եւ ապա փառքն ի հանդերձեալն. և կատարողական պատճառ՝ զի *լինիցիմք* սուրբք և անբիծք: - 112. Նախ ասի անեղ՝ որ դեռ չէ՛ եղեալ. որպէս այն որ ի հանդերձեալն *լինի*. որ կարօտ է սկզբան: - 113. Իսկ մեր տեսութիւնս էութեանն հետևի. զի նախ իրն *լինի*, և ապա՛ մեք տեսանեմք: - 118. Եւ ա՛յս է նոցա առաւօտու և երեկոյի ճանաչումն, զի զաստուած տեսանելով՝ նոր *լինի* նոցա ճանաչումն միշտ՝ որ է՛ առաւօտու: - 119. Եւ զեղեալքս ի յաստուած տեսանելով նոր *լինի* գիտութիւն արարածոց՝ որ է՛ երեկոյի: - 119. Իսկ շնորհականն է ընդդէմ այսոցիկ. զի պարզ և միեղէն իմացմամբ բարձրանայ յաստուածային գիտութիւնն. և այնպէս ի զարմացման *լինի* տեսութեամբ նորին: - 120. Եւ իւրաքանչիւր սոցա երկատի, որ *լինին* չորս ըստ աստուածաբանին գրիգորի այսպէս: - 123. Իսկ զարմացումն *լինի* ի սիրոյ առ սիրելին. զի զմիտս զկեանս և զամենայն ինչ թողու սիրօղն՝ և սիրելւոյն համարի: - 127. Այսպէս և ծիածանն յինքն փոխէ զկերպարանն և *լինի* այլ: - 131. Ասեմք եթէ՝ տպաւորութիւնն *լինի* կրկնակի. մինն նման նմանութեամբ. որպէս լոյս. հուր. և այլն: - 131. Չորրորդ՝ այն փոփոխումն միայն տեսութեանն *լինի*: - 133. Ապա թէ ո՛չ՝ *լինէր* մետասաներորդ: - 134. Ա՛րդ՝ որ քան սրբութեամբ և իմացմամբ աստուածատեսակ *լինին* աստուածք կոչին. եթէ հրեշտակք և եթէ արք սուրբք որպէս մովսէս: - 137. Ութերորդ՝ խնամարկութեամբ. զի ոմանք ազգի և թագաւորութեան, և ոմանք անհատի և առանձնականի *լինին* պահապան: - 138. Եւ այս *լինի* կրկնակի: - 143. Եթէ զգայութեամբ և մարմնով սիրեսցես զաստուած՝ *լինի* կատարեալ սէր: - 143. Եւ եթէ զգայութեամբ սիրեսցես զմարմնականս՝ *լինի* անկատար սէր: - 143. Եւ այնչափ կուրացեալ է՝ մինչ զի պատերազմի ընդ դէմ աստուծոյ. թէպէտ գիտէ զայն *լինիլ* ինքեան ի չար, զի զոր ինչ չար գործէ անձնիշխան կամօքն, մեղանչէ մահու չափ: - 146. Երկրորդ՝ ասեն թէ՝ ի *լինիլ* աստեղաց՝ հրեշտակք օրհնեցին զաստուած ըստ յոբայ: - 147. Եւ ոմանք ասեն թէ՝ ընդ պատիւ մարդոյն նախանձեցաւ և ի խորհուրդ եմուտ թէ սորա կատարումն ի՞նչ *լինի*, և ո՛չ կարաց հասու *լինիլ*: - 147. Եւ յոհան ասէ թէ՝«ի մոլորիլն ի ճանապարհին» այլ ընդ այլոյ նայելո՛յն *լինի*: - 147. Ամպ՝ զբարձրութիւնն նշանակէ ի վերայ այլոց. և Դարձեալ՝ ամպ զմարգարէսն. իբր հրամանատո՛ւ *լինիլ* մարգարէիցն: - 148. Եւ դարձեալ, զի ամպով և հողմով ասի շարժիլ աստուծոյ. և այսու *լինիլ* նման այսինքն ի վերայ ամպոց և հողմոց և հրեշտակաց շրջելով: - 148-149. Եւ այլք ասեն այսպէս հակառակիլ ընդ աստուծոյ, յորժամ ետես զինքն փառօք և վայելչութեամբ քան զամենայն դասս գերազանցեալ, կամեցաւ մեծ *լինիլ* ի վերայ ամենայնի և հաւասար աստուծոյ: - 149. Զի թէ այնպիսիք էին որ ո՛չ կարէին մեղանչել՝ իբր կապեալք *լինէին* և բռնադատեալք, և վարձս ո՛չ առնուին: - 149. Իսկ յանցումն օրինացն՝ *լինի* զէն և գործի դիւացն որով պատերազմին ընդ մարդոյս: - 151. Եւ աստ ասէ իրինոս՝ զի թէ յաւիտենական է հուրն, զիա՞րդ վախճան ածեն տանջանաց յաւիտենից ունայնախոհքն. թերևս կարծելով թէ ի հուրն մաքրեսցի. զի մի՛ *լիցի* աշակերտացն ճշմարտութեան խորհիլ և ասել: - 153. Աշխարհ ո՛չ *լինի* ոչէ. և ո՛չ ապականեալն կոյս. և վասն թողութեան. յորս նախագաղափար տեսութիւնն աստուծոյ: - 154. Յատկութիւնք երկրի. և վասն լերանց. և ի ստորոտս լերին շո՛ղ *լինի*: - 155. Թէ ծնունդ ո՛չ *լինի* ի դրախտին: - 155. Չորեքտասաներորդ՝ մարդն ո՛չ կարէ արարչագործ *լինիլ*. իսկ աստուած արարչագործ է՛: - 157. Երրորդ՝ զի առնելն ի սկիզբն նայի ստեղծեալ իրին զի *լինիցի*. և նախախնամելն ի կատարածն զի մի՛ կորիցէ: - 158. Երկրորդ՝ զի ի ձեռն անտեղի գործոց՝ փրկութիւն *լիցի* այլոց. որպէս ի ձեռն խաչին քրիստոսի՝ փրկութիւն եղև աշխարհի: - 158. Վեցերորդ՝ թողեալ *լինին* ոմանք չարչարեալ առ ի նախանձ այլոց. զի պատիւ չարչարելոցն յայտնի *լիցի* վասն հանդերձեալ յուսոյն..: - 158. Եօթներորդ՝ թոյլ տուեալ *լինի* և ոմանց

անկանիլ ի մեղս ինչ. զի ի հպարտութենէն զոր ունէր վասն առաքինութեան՝ խոնարհեսցի և անկցի առաջի տեառն խոստովանութեամբ. և ընկալցի զթողութիւն. որ նախ համասե՛ռ էր սատանայի: - 159. Երկոտասաներորդ՝ զի սուրբքն բանիւ մեզ ուսուցանեն՝ նեղութեան և փորձանաց համբերել. պատրին ինքեանք գործով կատարել զնոյն. զի հաւատարիմ *լիցին* բանք նոցա: - 159. Դարձեալ այսպէս մեկնեն եթէ՝ փորձութիւնն ըստ ինքեան ո՛չ է բարի. այլ պատահմամբ *լինի* բարի. յորժամ համբերութիւնն մեծ դնի և յաղթիցէ. իսկ յորժամ համբերութիւն ոչ *լիցի*, ըստ ինքեան չար և վատ է փորձութիւնն. վասն այն տէրն արգելուլ հրամայէ: - 160. Որպէս թոյնք իժից, զի են ինքեանք բնութեամբ չար և պատճառե՛ն զչար. բայց պատահեցաւ ոմանց՝ դեղ *լինիլ*: - 160. Իսկ աստուած փորձէ զմարդ՝ զի գիտէ զնա՛ բարի և հաւատարիմ. այլ ծածկեա՛լ է յայլոց. փորձէ՝ զի յայտնի *լիցի* ամենայն աշխարհի առաքինութիւն նորա: - 161. ...ի մէջ նեղութեանց *լինելով* յանցեալ մեղացն զղջանամբ և սրբիմք. և յապագայն զգուշութեամբ պարսպիմք. և ի ներկայն՝ արի՛ և կա՛զմ պատրաստիմք: - 162. Դարձեալ ասեն՝ անկա՛ր է կուսի ապականելոյ *լինիլ* կոյս: - 162. Զի կամ ի զօրութենէ *լինի* ներգործութեամբ. որպէս մանկան հիւսնել: - 162. Եւ կամ ի ներգործութենէ *լինի* զօրութեամբ. որպէս ի շարժմանէ դադարեալ: - 162. Զորօրինակ՝ արեգակն ո՛չ կարէ *լինիլ* խաւար, զի առաւե՛լ է լոյս: - 163. Իսկ վասն երկրորդ հարցմանն թէ՝ անկա՛ր է կուսի ապականելոյ *լինի* կոյս: - 165. Ասելի է թէ՝ կոյսն և ապականեալն են հակակայք ըստ ունակութեան և պակասութեան. որպէս երեսք և կուրութիւն. որոց ի *լինիլն* համահետևին երեքին սոքա. այսինքն ժամանակն, և մասն, և նոյն: - 165. Զի կարէ՛ ունակութեանն *լինիլ* պակասութիւն. և անկա՛ր է պակասութեանն *լինիլ* ունակութիւն: - 165. Վասն որոյ կարէ կոյսն ապականիլ. և անկա՛ր է ապականեալն *լինիլ* կոյս: - 165. Դարձեալ՝ կարելին և անկարելին են այլագիծք և այլասեռք. և ոչ կարեն *լինիլ* մի և նոյն. զի այլասե՛ռ հակակայք են: - 165. Եւ զի այս այսպէս է, յորում պոռնիկն է՝ անկա՛ր է *լինիլ* ոչ պոռնկեալ. և ապականեալն կոյս: - 165. Եւ թէ ոք ասիցէ, ապա զիա՞րդ նոր եկեալքն ի հաւատս՝ թողեալք զկուռս և զամենայն չար՝ *լինէին* քահանայք և եպիսկոպոսունք. որպէս սուրբն կիպրիանոս: - 166. Եւ յայտնի եղեալ որպիսութիւն սոցա ի միտ առ. զի անհաւատն այժմ եկեալ ի հաւատս կարէ՛ *լինիլ* և քահանայ. իսկ չար հաւատացեալն ո՛չ կարէ *լինիլ* քահանայ: - 166. Նոյնպէս և քահանայն պոռնկեալ՝ ո՛չ *լինի* քահանայ: - 166. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ քահանայագործութիւն պոռնկին ո՛չ *լինի* կատարեալ. վասն այն արգիլեալ է ի գործոյն: - 167. Երկրորդ՝ զի բազումք գայթակղութեամբ կորնչին. արդ ի հարկէ որպէս ասացաւ՝ կամ միոյ կամ բազմաց *լինի* կորուստ: - 167. Ապա թէ ոչ՝ մշտնջենաւորն *լինի* փոփոխական որ սուտ է: - 168. Երկրորդ՝ զի միշտ ներգործութիւն է աստուած. ապա թէ գոյ ինչ զօրութեամբ, ո՛չ *լինի* միշտ ներգործութիւն. այլ երբեմն: - 168. Այլ արդ եթէ է զօրութիւն ի յաստուած *լինի* փոփոխական և նա որ է՛ անտեղի: - 168. Եւ թէ է զօրութիւն ի նա՛, *լինի* յանկատարութենէ ի կատարելութիւն եկեալ, կամ հակադարձեալ. որ է՛ անհնարին հերձուած: - 168. Եօթներորդ՝ ներգործութեամբն պատուական է քան զօրութեամբն. և թէ գոյր զօրութեամբ, *լինէր* ինքն ինքեան պատուական և անպատիւ որ է՛ անյարմար: - 168-169. Եւ թէ գոյր ինչ զօրութեամբ ի նա՛, և նա՛ *լինէր* ընդ եղելոցս ի ժամանակի որ է սուտ: - 169. Եւ թէ գոյր ինչ այսպիսի զօրութիւն ի նա, *լինէր* վախճանաւոր և նա. և թէ էր վախճանաւոր, և էր սկզբնաւոր՝ որ է՛ անպատշաճ: - 169. Այլ արդ՝ լինելութիւն աշխարհի առ ինքն ըստ ինքեան ասի զօրութեամբ և ներգործութեամբ. զի ի զօրութենէ եկն ի ներգործութիւն. զի թէ ոչ գոյր զօրութեամբ նախ՝ ո՛չ *լինէր* յետոյ ներգործութեամբ: - 169. Ուստի յա՛յտ է զի ի *լինիլն* աշխարհի՝ նախագաղափար տեսութիւնն նոյնպէս եկաց մնաց առանց յաւելուածոյ և պակասութեան: - 169. Զորօրինակ՝ ներտրամադրեալ բանն է՛ նախ ի խորհուրդն կատարեալ. և յետոյ ժամանակաւ *լինի* յառաջ բերեալ և գրեալ բան. և նո՛յն բանն էր յառաջ բերեալս և գրեալս որ էր նախ ի խորհուրդն: - 169. Երրորդ՝ զի արարածք՝ են ի գոյացական սեռէ, և ո՛չ ի պատահական. զիարդ *լինին* պատահումն ի յարարիչն: - 169. Երրորդ՝ զի պատահումն ընդ գոյացութիւն խառնեալ՝ *լինի* բաղադրեալ. որպէս նիւթ և տեսակ: - 170. Զի թէ գոյր պատահումն ի յաստուած, *լինէր* բազում և ո՛չ մի. իսկ աստուած մի է և ո՛չ բազում..: - 170. Ութերորդ՝ զի պատահումն ժողովելով առ գոյացութիւնն *լինի* մարմին: - 170. Եւ թէպէտ ի յէութիւնս իւրեանց յետոյ, սակայն ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ, գոյին յառաջ քան *ըզլինիլն* իւրեանց էութեամբ, և յետոյ եղեն ըստ նոյն նմանութեան: - 172. Զի՞նչ է որ ասեն փիլիսոփայք թէ յոչ ուրեքէն յոչ երբեքէն ոչինչ *լինի*: - 173. Նախ՝ զի ասեմք եթէ աշխարհ յառաջ քան *զլինիլն* իւր գոյր ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. ապա ուրեմն ո՛չ է յոչ ուրեքէ յոչ երբեքէ: - 173. Մին է՝ զի միշտ ոչ ինչ է. զի ոչ զօրութեամբ և ո՛չ ներգործութեամբ ունի զգոյն. և յայս ոչ էակէս ոչ ինչ *լինի*: - 173. Եւ այսպիսի էակքս կրկին ունին զօրութիւն. *լինելոյ* և ո՛չ

*լինելոյ*. գոլոյ և ո՛չ գոլոյ. և այլն: - 173. Իսկ պատահական տեղի է, յորում նեստեալ ոք՝ կարէ՛ թողուլ զայն և *լինիլ* յայլ տեղւոջ. որպէս ի վեր կամ ի վայր: - 174. Եւ մարմնով ո՛չ բաժանին սոքա. թէպէտ և մանր փոշի *լինին* ունին զքանակն զորակն և զայլն. զի աննեկնելի որոշմունք են գոյացութիւն և պատահմունք: - 175. Երրորդ՝ ի ժողովիլն սոցա *լինի* մարմնական էութիւն. և յորոշելն կորնչի մարմինն: - 175. Եւ որպէս ի ժողովիլ հոգւոյ և մարմնոյ *լինի* մարդ. և ի բաժանիլն կորնչի. այսպէս և զայս իմա: - 175. Պատճառելով՝ եթէ միաւորեալ ասեմք զբնութիննսն, շփոթումն *լինի*: - 176. Եւ ժողովեալ սոքա *լինին* մի բնութիւն պետրոսին: - 176. Արբանեակ *լինի* և մեկնէ զխորհուրդս թագաւորաց: - 177. Եւ արդ՝ այլ աշխարհն կամ *լինէր* որպէս այս, կամ այլապէս: - 179. Արդ եթէ *լինէր* որպէս այս, աւելո՛րդ *լինէր*. և աւելորդ ոչինչ է ի գործս աստուծոյ: - 179. Եւ այլապէս ո՛չ կարէր *լինիլ*. զի ամենայն ինչ ի սմա՛ կատարեալ գոյ. և ոչինչ է պակաս ի սմանէ: - 179. Յառաջ քան *զլինիլն* աշխարհի աստուած ո՞ւր էր: - 179. Զի թէ ոչ գոյ, ապա անուր և անե՛րբ է աշխարհս. և *լինի* յաւէտակից աստուծոյ: - 180. Զի առանց հողոյ շօշափումն ո՛չ *լինի*. և ո՛չ առանց ջրոյ կալումն և մածումն. և ո՛չ առանց օդոյ շարժումն. և ո՛չ առանց հրոյ երևումն: - 180. Եւ այսպէս ջերմ և ցուրտ, չոր և գէճ, թշնամիք են անհաշտելիք. և *լինին* միաւորեալք դարձեալ ծայրիւքն և մնան սիրելիք անքակտելիք այսպէս: - 181. Եւ այսպէս ի նոցա խառնուածոց *լինի* գոյացեալ մարմին և յառաջ եկեալ: - 181. Սոքա հնգեքին կոչին երկինք. զի զյատկութիւնս երկնից ունին. և սոքօք *լինին* հնգետասան երկինք: - 183. Տասն բնական երկինքն. և **ե** յատկական. և **ե** ըստ նմանութեան. որ *լինին* **ի** երկինք: - 184. Զի յարևելից կիտէ՛ ի նոյն կէտ շրջեալ՝ *լինի* օր մի. որ է **իդ** ժամ. երկու ժամ միոյ կենդանակերպի: - 190. Եւ յայծեղջիւրն ի ջրհոսն և ի ձուկն՝ առնէ զձմեռն. որ առաւելու գիշերն քան զտիւ **զ** ժամ. զի *լինի* գիշերն **ժե** ժամ. և տիւն ինն ժամ. որպէս յամառն տիւն է **ժե** ժամ. և գիշերն **թ** ժամ: - 190. Եւ **ժ** մասունքն ժողովեալ ի յամիսն՝ *լինի* **ժ** ժամ: - 190. Իսկ կէս մասն ի մեկ ամիսն՝ *լինի* կէս ժամ. և ի մեկ տարին **զ** ժամ. և ի **դ** տարին ժողովեալ՝ *լինի* օր մի **իդ** ժամ. և ա՛յն առնէ զնահանճն. և շարժէ՛ զտօնս և զեղանակս: - 190. Իսկ վերադիրն *լինի* ի պակաս ընթացից լուսնոյն ըստ այսմ օրինակի: - 191. Արդ յամենայն ամիս կէս օրն՝ ի բոլոր տարին *լինի* վեց օր պակաս լուսնոյն: - 191. Եւ ե օր ևս աւել աւուրքն, որ *լինի* **ժա** օր: - 191. Եւ վասն այն ստեղծաւ մետասանօրեայ, զի յաւուր ուրբաթի յորում ադամ ստեղծանիւր, *լինէր* լուսինն բոլոր և **ժդ**օրեայ: - 191. Որ *լինի* **ժ** ժամն **ժըռ** րոպէ: - 191. Եւ ժողովեալ մէկ օրն **իդ** ժամ՝ *լինի* **դ** բիւր և **սբճ** րոպէ: - 191. Իսկ իննև**ժ**երեակն է, զի ընթանայ լուսինն ի տարին **յծդ** օր՝ և **ժթ** մասն. որ *լինի* ի **ժթ** ամին՝ **յկա** մասն: - 191. Եւ մի մասն ժողովեալ՝ ի **ցպխ** ամն՝ *լինի* **յկ** մասն: - 191. Եւ դարձեալ՝ յորժամ վերադիրն *լինի* **լ**. և **է** երեակն է ի միասին ի միում ամի. ասի այն կատարումն լուսնի. այսինքն մասանց թուոյն, և ո՛չ իրին: - 192. Նա՛խ՝ զորքանութիւն աւուրցն ցուցանէ, թէ տիւ և գիշեր **իդ** ժամն *լինի* օր մի բնական: - 193. Օր բնական այն է՝ որ *լինի* ի կիտէ ի կէտ **իդ** ժամ: - 194. Իսկ տեղիքն, զի յա՛յս կիսագունդս *լինի* լոյս, և ի միւսն խաւար: - 194. Եւ ժամանակն, որ ի յայս ժամս *լինի* աստ լոյս, և ի միւս ժամն խաւար: - 194. Եւ ձմեռն, զի ձիւնամեռ *լինին*: - 197. Եւ ի յերկրի *լինի* ամառն և ձմեռն և ո՛չ ի յերկինս: - 198. Զի ժամանակն նա՛խ է հանդերձեալ. և ապա ներկայ, և յետոյ *լինի* անցեալ: - 198. Դարձեալ՝ քան զժամանակ ոչ ինչ հասարակ. զի ժամանակ յամենեցունց հասարակ ստացեալ *լինի*. և հասարակապէս անցանէ: - 199. Մեհեկի. զի տունկք և բոյսք որպէս զմեռեալ *զլինին* եղեմնապատ և ձիւնաթաղ. մէհէկի. այսինքն ածի: - 201. Մարերի. որպէս թուլանան մայրիք տերևօք և ոստովք. և *լինին* մայր թռչնոց և գազանաց: - 201. Յորժամ փայտն այրի, ծանրութիւն զի՞նչ *լինի*: - 202. Եւ այն որ կրկին *լինի*, ներքին պայծառն է տիպ յարեգակնէն. և վերին նուազն զտիպ ներքնոյն է ընկալեալ: - 203. Իսկ այլք ասեն, թէ ի պարզոյ *լինի*, նշա՛ն է խոնաւի. և թէ ի խոնաւ՝ նշա՛ն է պարզի: - 203. Փայլակն *լինի* ի շիջեալ հրոյն ջրով ամպոյն և հողմով որ ի մէջն է, վերստին արծարծի և արտաքս բացափայլէ: - 203. Իսկ գէջն *լինի* ամպ. և չորն ի մէջ ամպոյն նեղեալ պատառելով զծալմունս ամպոյն՝ *լինի* որոտ և փայլատակունք ևս: - 204. Շանթքն *լինի* ի մէջ գոլորշեացն որ ի մէջ ամպոյն. և ջերմութեամբն չորացեալ. քանզի հո՛ւր է քարացեալ: - 204. Եւ թա՛նձր ծանրութեամբն ի վայր բերեալ՝ կոչի կայծակ. և *լինի* յամառնային եղանակս: - 204. Ուստի՞ *լինին* ամպք և անձրևք: - 204. Եւ ի սմանէ *լինին* մառախուլ՝ և սառնամանեաց տեսակ, այլ և ամպք և ձիւնաբեր և կարկուտք: - 204. Այլ Ամպն *լինի*, յորժամ զօրութեամբ արեգականն ի վեր քարշին գոլորշիքն ի ջուրց և ի գէջ տեղեաց: - 204. Եւ վասն բարձր գիճութեանն՝ ի տե՛ս գայ. և սեղմացեալ ի վերայ միմեանց *լինի* ամպ: - 204. Եւ գործեալ *լինի* փրփրատեսակ և սպիտակագոյն: - 205. Եւ ի հիւսիսոյ հողմոյն որ կոչի ապարքտիաս՝ *լինի* պաղուցեալ: - 205. Եւ ըստ չափու թանձրութեանն պատառեալ բեկանի, և ի վայր բերմամբ գնդի ի ջերմութենէ օդոյն, և *լինի* կարկուտ: - 205. Այսոքիկ ի գէջ գոլորշոյն *լինին*: - 205. Եւ նախ

ի չորս դէմս բաժանին ամենայն հողմունք. և իւրաքանչիւրքն դարձեալ յերիս բաժանին. որ *լինի* բովանդակն **բժ**ան: - 205. Կամ ի յերկրի պատառմանէն ուժգին վերաբերեալք *լինին*: - 206. Եօթներորդ՝ զի *լինի* ամպ որ ո՛չ որոտայ և ո՛չ կայծ է վասն սաստիկ խստութեանն: - 206. Իններորդ՝ յորժամ լուծանի՝ ամենևին յարահետ *լինի*: - 206. Չինգերորդ՝ զի հովանի *լինի* տօթոյ: - 206. Երկրորդ՝ զի երկիր չո՛ր է և ցամաք, պարտ էր *լինիլ* բազմութեան ջուրց. զի խառնեսցի ընդ երկիր և ծննդականս արասցէ: - 207. Իններորդ՝ պարիսպ *լինին* շուրջանակի ջուրք. ի թշնամեաց ի գազանաց՝ և ի գողոց պահելով: - 207-208. Տասներորդ՝ զի գեղեցիկ *լինի* ի տեսս աչաց երփն երփն գունով և վէտս վէտս. այսինքն ծալ ծալ ծիծաղի երեսօք: - 208. Երկրորդ՝ ասէ արիստոտէլ՝ թէ ջերմութիւն լուսաւորացդ և տարրական հրոյն և օդոյն մտանեն ի ծովն և քարշեն ի նմանէ զքաղցր և զպարզ հիւթն. և մնացեալն *լինի* դառն և աղի: - 208. Եւ օրինակ տայ զկերակուրն որ ի ստամոքսն եփի. և գոլոշիկքն ի գլուխն ելանէ և պարզ ջուրն ի լեարդն. իսկ մնացեալ թանձրն *լինի* դառն և աղի: - 208. Եւ զի քարշեն լուսաւորք զգոլորշին յերկրէ՝ յայտ է ի ցօղ առաւօտուն և յեղեամն. որ ի գիշերն ի վեր քարշին. և ընդ ծագել լուսոյն հատանին և յետս յերկիր անկանին. և յաւուրս ձմերան *լինի* եղեամն. և յամարան ցօղ: - 208. Չորրորդ՝ որ յաւիտեան ստացեալ *լինի*: - 210. Վեցերորդ՝ յորում մարդ սատանայ *լինի*: - 210. Երկիր որ յաւիտեան ստացեալ *լինի*, է՛ գաւառն երկնաւոր: - 210. Վասն է՞ր ի ստորոտս լերանց առաւել շող *լինի* քան ի գլուխն որ մե՛րձ է արեգական: - 211. Երկրորդ՝ զի վերին մասն օդոյն պա՛րզ է. և ներքին մասն մերձեալ ի յերկիր՝ թանձրանայ ի չորութեանց նորին. և ջերմութիւնն խառնեալ ընդ այն՝ առաւել շող *լինի*: - 211. Երրորդ՝ անդ մէկին է ջերմութիւն՝ և աստ կրկին. զի հասեալ ի գոգ երկրի, մակադարձութեամբ ժողովին առ նա և *լինի* շող: - 211. Երրորդ՝ պատսպարանք *լինին*: - 212. Վասն է՞ր ամենայն բոյսք կանաչ *լինին* գունով: - 212. Ոմանք ասեն թէ յօդոյն է. զի օդն կապոյտ է՝ խառնի ընդ ջրոյն և *լինի* կանանչ: - 212. Եւ ի սոցա խառնուածոցն *լինի* ա՛յլ զանազան գոյնք: - 212. Դարձեալ՝ զի տնկականն վերափչո՛ւմն է օդոյն հանդերձ խոնաւութեամբն երկրի. վասն որոյ բոլորաձև արտաքս գայ և *լինի* ծառ: - 213. Նոյնպէս և ի ջուրն կան այլ **գ**ն. հողմն երևի ի գոլորշիքն. և հուրն և հողն՝ կայծն ի վայր անկեալ քար *լինի*: - 214. Զի թէ մարդն ունէր զբնութեամբ զէնս, որպէս թէ եղջիւր ի գլուխն. և սուր զատամունսն. ճիրանունք ի ձեռս. և սմբակ կամ կճղակ ոտիւք. և զայլսն, Նախ՝ զի գազանադէմ և դժւարատես *լինէր* ամենեցուն: - 217. Երկրորդ՝ զի անհանգիստ և ի չարչարանս *լինէր* հանապազ. ընդ ինքեան ունելով զնոսա: - 217. Որպէս թիւրակէքն որք *լինին* յօձից և ի գազանաց: - 217. Այլ իմաստունք ասեն եթէ՝ կերակուր անասնոցն խո՛տ է անզօր. վասն այն նոքա ապուշք և անզօրք *լինին*: - 218. Յաղագս այսորիկ անբան կենդանիք փութապէս զգան զառաջին շարժումն և զփոփոխումն օդոյդ քան զմարդ. և յառաջագէտ *լինին*: - 218. Որպէս մրջիւն նախ քան *զլինիլն* անձրևի՝ զկերակուրն պատրաստէ: - 218. Եւ աքաղաղ վաղախօս *լինի*: - 218. Իսկ այլք ասեն թէ՝ վասն առաւել բարձրութեանն՝ լոյս արեգականն ո՛չ երբէք հեռանայ ի նմանէ. թէպէտ ի ներքոյ երկրի անցանէ. որպէս լուսինն թէպէտ ի վերին կամարն *լինի*, զլոյսն առնու յարևէն որ ի ներքին կամարն: - 222. Ո՛չ թէ քան զտարրական հուրն ի վե՛ր է անցեալ. այլ զի լուսինն և արեգակն միշտ ի հարաւոյ կողմանէ ի ստորոտէ լերինն ելանեն. և ի հիւսիսոյ կողմն լերինն միշտ գիշեր *լինի*. որպէս աղէքսանդրու պատմութիւնն ասէ. և ի գլուխն միշտ լոյս. և ի հարաւոյ կողմն տիւ և գիշեր: - 222. Ոմանք ի դրախտն ևս ասեն թէ տիւ և գիշեր *լինի*. կամ գարուն և աշուն. զոր մեզ չէ ընդունելի: - 222. ...յա՛յտ է զի գիշեր ո՛չ *լինի* անդ. և ո՛չ եղանակք փոփոխին: - 222. Զի թէ հնազանդեալ էր օրինացն, *լինէր* բարւոյ պատճառ. և ո՛չ հնազանդեալ՝ եղև չարի պատճառ: - 223. Զի այնպիսի բարին մահու *լինի* առիթ: - 224. Եթէ յամենայն ամի նորն զհինն փոխէ, այս *լինի* կամ թափիլ պտղոյն ի ծառոյն. և կամ մնալ հինն ընդ նորոյն: - 224. Ա՛րդ՝ եթէ մնայ հինն ընդ նորոյն հանապազ. նա՛ ծանրանայ. և ո՛չ կարէ զայն քան ամաց բազմութիւն պտղոցն կրել, և այսպէս *լինին* ամենայն ծառքն կոտորեալ և ապականեալ...: - 224. ...իսկ թէ թափի հինն. այս *լինի* կամ յատակս ծառոցն ծորեալ և ապականեալ. և կամ ամենայն ամբարեալ և ժողովեալ և բարձրացեալ քան զծառս դրախտին որ է անպատշաճ: - 224. Ի դրախտին *լինէ՞ր* մարմնական ծնունդ որպէս այժմ ի յերկրի, թէ ոչ: - 225. Երկրորդ՝ զի դրախտն է տեղիք անապական. և ո՛չ *լինէր* ի մարդոյն ծորումն ինչ աղտեղութեան. և ոչ որպէս տնկոցն: - 225. Արդ եթէ ծորումն ոչ *լինէր*՝ և ո՛չ ապականութիւն մարմնական, և ո՛չ ծնունդ ախտական: - 225. Չորրորդ՝ զի թէ *լինէր* անդ ախտական ծնունդ որպէս ի յերկրի, կարօտանայր մարդն ամենայն պիտոյից զաւակին: - 225. Եւ *լինի* աղանդն այնոցիկ՝ որք ասեն մարմնաւոր արքայութիւն, և կերակուր և ամուսնութիւն, և այլ աղճատանք: - 226. Որովք *լինին* **իդ** արարածք: - 227. Դեղնի երեսն և կարմրի. և մին մարդն սև, և մին սպիտակ *լինի*. և շէկ և ծիծաղկոտ և

այլն: - 227. Եւ ի յարութեանն մեր՝ այսպէս *լինին* ամենայն մարմինք սրբոց: - 228. Եօթներորդ՝ զի հողն ի հողմոյ փոշի *լինի*. այսպէս յորժամ հողմահուն շնչէ ի մարմինս մեր՝ ցրւի և *լինի* փոշի: - 229. Դարձեալ ի հողոյ ստեղծ ի նախատինս սատանայի. զի յամօթ *լիցի* յորժամ տկարս այս և կաւեղէնս ի փառսն մտանէր յորմէ նա՛ որ փառաւորն էր անկաւ: - 229. Վասն որոյ պա՛րտ էր *լինիլ* նոցա նախ որ փոքունք և անպատիւք են, զի երևեսցի մեծն և պատւաւորն այսինքն մարդն: - 230. Երկրորդ՝ զի իշխան և զորաւո՛ր է մարդն. պիտո՛յ է զի *լինիցի* զօր և իշխեցեալ. և ապա՛ իշխանն և զօրաւորն. ապա թէ ո՛չ՝ ո՞ւմ *լիցի* իշխան և զօրավար: - 230. Զի թէ կորագլուխ էր որպէս այլ կենդանիքն, խափա՛ն *լինէր* զգայութեանցն և պակասումն գիտութեան: - 233. Այլ և ի միտ ածցուք զփառս երկնային կենաց ուստի անկաք, և անդ դիմելոց եմք. զի տեսութիւն մտացն զհոգին ընդ ինքեան ի վեր տանի. և նա զշունչն. և շունչն ընդ արեանն է կապեալ. և արիւնն ընդ մարմնոյն. զգայարանքն ընդ մարմնոյն. և *լինի* մարդն բոլորովին երկնային: - 233. Եւ պակասեալ ի սմանէ տեղին, *լինի* տիպ ի քանակէ և ի ծնոյ բաղկացեալ. որպէս յա՛յտ է ի մոմն տպացեալ: - 236. Եւ նուազեալ ի սմանէ քանակին, *լինի* նման և աննմանն ցուցեալ. որպէս յա՛յտ է ի տառն գրեալ. զի նման և աննմանն ուրոյն են որակի: - 236. Եւ թէ ասեն՝ ի պատահմանէ *լինին*. կամ յարուեստից, կամ ի բնութեանց գործոց: - 237. Այլ և ի թունից բանսարկուին ներկին և *լինին* չար: - 237. Նախ՝ զի ոչ ոք ճանաչէր զհայր կամ զեղբայր իւր. այլ ես զքեզ հայր գիտէի, և դու զայլ ոմն եղբայր. և *լինէր* մեծ շփոթումն: - 238. Երրորդ՝ զի ո՛չ գիտէին զանդրանիկն ժամանակաւ, և ո՛չ զկրտսերն. և *լինէր* փոփոխումն վիճակաց նոցին. որպէս յակոբ էառ զանդրանկութիւնն եսաւայ. և եփրեմ զմանասէին. թէ և սոքա տեսչութեամբն աստուծոյ. այլ նոքա ի պատրանաց *լինէին*: - 238. Չորրորդ՝ զի ո՛չ ճանաչէր այր զկին իւր, և ոչ կին զայր իւր. և *լինէր* անօրէն խառնակումն. որպէս յուդայ զնու իւր զթամար ո՛չ ճանաչեաց. և ո՛չ ղովտ զդստերսն իւր: - 238. Հինգերորդ՝ զի թէ ոք գողանայր և սպանանէր, զանմեղն դատապարտէին. և *լինէր* ամենևին անօրէնութիւն: - 238. Ութերորդ՝ զի ո՛չ երևէր բարեկամն և թշնամին. սիրելին և ատելին. և *լինէին* բազում սպանութիւնք և աւերք. զի ոչ զգուշանային միմեանց: - 238. Տասներորդ՝ զի և բանականս մարդ՝ քան զանբան կենդանիս տգէտ *լինէր*. վասն զի ամենայն կենդանի ունի բնական ճանաչումն իւրոց և օտարաց. ըստ այնմ որ արագիլ արդար՝ կերակրէ զհւր ծնօղսն միայն. և տատրակ մենացեալ ի զուգակցէն, ո՛չ զուգի ընդ ա՛յլ տատրակի: - 238-239. Իսկ յորժամ առողջանայ մարդն և արիւնն յստակի, արիւնն միս *լինի*, և մազն ո՛չ աճէ: - 240. Յորժամ պալղամն շատանայ ի մարդն, մազն նօսրանայ. վասն այն մարդն ի ծերութեանն *լինի* ճաղատ: - 240. Եւ յո՛ր մասն մարմնոյն գիճութիւն և ջերմութիւն առաւել *լինի*, անդ մազ բուսանի: - 240. Եւ յերիտասարդութեանն՝ *լինի* հողմն հարաւային տաք և չոր: - 240. Եւ յալևորութեանն՝ *լինի* հողմն արևմտիցն հով և չոր: - 240. Իսկ ի ծերութեանն՝ *լինի* հողմն հիւսիսոյ հով և գէջ: - 240. Եւ նոյն քան միւս ծեռքն՝ որ *լինի* **գ**: - 241. Եւ **գ** և **բ** ոտիցն՝ *լինին* **բժ**ան անդամք: - 241. Նոյնպէս ընդ ներքին դուռն զաւելորդն արտաքս վտարէ ընդ աղիսն. և յայսմանէ ջրատեսակն ընդ ցնցուղ քաղրթին ի փալաքուշտն իջանէ և *լինի* մէզ: - 242. Վասն է՞ր բերանն մարդոյն երբեմն քաղցր *լինի*. երբեմն դառն. և թթու. և այլ ինչ: - 242. Որպէս ջուրն ի մէջ ամպոյն փրփրի և *լինի* սպիտակ ծիւն: - 242. Եւ որպէս արիւն հոսմանն ի մէջ երակացն փոխի և *լինի* սպիտակ կաթն, և ժողովի ի ստինսն: - 242. Արդ եթէ ի խարտեաշ մաղձէն ի լեարդն է մնացեալ, լերդին համն ի լեղւոյն առնու և բերանն լեղի դառնայ. իսկ եթէ ի սեաւ մաղձէն է մնացեալ ի լեարդն. բերանն թթո՛ւ դառնայ. իսկ թէ պալղամն մնայ ի լեարդն, բերանն աղի փոխի. իսկ թէ յըստակ արիւնն մնայ ի լեարդն, լերդին համն անոյշ *լինի*, և բերանոյն համն անուշ տայ և քաղցր: - 242-243. Վասն է՞ր մի ջուրն ի բերանն քաղցր *լինի*, և յաչքն աղի. յունչն հոտեալ. և յականջն դառն: - 243. Այսպէս ի սեաւ մաղձէն *լինի* արտասուքն աղի, զի մի՛ հոտեսցի ակն որպէս ցուցաւ նախ: - 243. Եւ ատամունքն **լբ** ոսկր. որ *լինի* բովանդակն **լզ** ոսկր: - 243. Եւ ձախ կողքն **ը**. որ *լինին* սոքա **խ**: - 243. Եւ թաթք ձեռացն **լբ** ոսկր. որ *լինի* բովանդակ ձեռքն ի թիկանցն **խ** ոսկր: - 243. Որ *լինի* բովանդակ ոսկր ոտիցն **խբ**: - 243. Նոյնչափ միւս ոտքն. որ *լինի* **գ** քառասուն: - 243. Եւ ութն ոսկր կուրծքն. որ *լինի* **բճխը** ոսկր: - 243. Ոմանք ասեն, **ճէ** գլխաւոր ջլօքն որ կապին սոքա՝ *լինին* **յկե** զօղուածք: - 243-244. Կամ զօղուածք ներքին գլխաւոր անդամոցն և արտաքին մարմնոյն, որ մորթ և միս և արիւն և այլքն առ միմեանս յօդին՝ *լինին* նոյնքան: - 244. Եւ դարձեալ թիւ ոսկերացն **մխը**. և **բժ**ան անդամքն, և **ե** զգայարանքն յօդեալ առ միմեանս, *լինին* **յկե** զօղուածք: - 244. Եւ է՛ բնութիւն ոսկերաց ցուրտ և չոր. զի խոնաւն և լոյծն ի ցամաք և ի ցուրտ մաձնու և *լինի* ոսկր. որպէս ջերմն և խոնաւն *լինի* միս: - 244. Եւ ցուրտ և լոյծն խառնեալ՝ *լինի* ջիլ. որպէս ցուրտ և խոնաւն փողք: - 244. Եւ յայս կողմս ունի **դ** երակ առանց արեան լի ջերմութեամբ. և բաժանի ամենայն երակ՝ յերեսունք երակս.

զի ջերմութիւն *լուսաւորացն* սնուցանէ և զառ ի վեր քարշէ՛: - 214. Եւ դրախտն է բարձր տեղեաւ. և *լուսաւոր*. և անապական վայր: - 221. Վասն զի բնական *լուսաւո՛ր* է օդս որ ի մէջ դրախտին: - 222. Որպէս *լուսաւորք* երկնից քարշեն յերկրէ և ի ծովէ զհիւթ՝ և կերակրին և անապականք են: - 224. Եւ որպէս ակն կենդանւոյն մա՛սն է բոլոր մարմնոյն՝ և *լուսաւոր*: - 225. Ի պատիւ մեծարեաց զմարդն. և նա՛խ՝ պատրաստեաց պէտս զանազան կերակրոց և ըմպելեաց որպէս ասացաք. և վառեաց զճրագ *լուսաւորացն*. և զգեղեցիկ ձայն երգեցողաց թռչնոց. և զզուարճութիւն զանազան ծաղկանց. և ապա՛ զմարդն ի պատիւ էած...: - 230. Նոյնպէս մարմինն է ի ներքոյ. և հիւթ արեանցն ի վերոյ. և ապա շունչն օդոյ և հուր *լուսաւորացն* ի վերոյ: - 232. Վեցերորդ՝ այլ և ոսկերքն նման են քարանց... Աչքն՝ *լուսաւորացն*: - 232. Այսպէս գլուխ մարդոյս ունի զնմանութիւն երկնից. զի է՛ բոլոր. և աչքն որպէս *լուսաւորքն*. և իմացումն ի նմա՛ որպէս իմանալիքն յերկինս: - 232. Աչք որպէս զպայծառ շիտ *լուսաւոր*՝ նշանակէ՛ զհամեստն: - 246. Եւ նախ ասի իմաստութիւն նոցա, որ զբնութիւն էիցս քննեցին. և զշարժումն *լուսաւորացն*. որպէս իմաստունքն յունաց: - 269. Ի *լուսաւոր* պատմուճանէն, յորժամ կերին ի պտղոյն և ծանեան զի մերկ էին և արարին սփածանելիս: - 279. Երրորդ՝ սառնատեսակ. զի թափա՛նց է խաչ նշխարին. և ի մեզ *լուսաւոր* միտք: - 339. Երկին և *լուսաւորքն*: - 342. Եւ սրբութիւն է՛ երկինքն յոր ընթանան *լուսաւորք*: - 343. Նախ նշանա՛կ էր *լուսաւորա՛ցդ* երկնից որ ի հարաւ ընթանան: - 346. Հինգերորդ՝ աշտանակն ի մէջ սրբութեանն տայր լոյս. և *լուսաւորքն* ի յերկրի: - 346. Պճղնաւորն կապոյտ բոլորապատ՝ երկինքն է. և Բեհեզն՝ լուսոյ տարածումն ի ներքոյ. **բ** Վահանակն՝ *լուսաւորքն* մեծ...: - 348. Ճարպն, *զլուսաւոր* և զպարարտ առաքինութիւնն: - 360. Ա՛յս քան են և նիւթք *լուսաւորաց*: - 407. Չորրորդ՝ ի կենդանեաց. որպէս ճարպն առաւել քան զայլսն պարզ և *լուսաւոր*: - 407. ...իսկ յորժամ սպասաւորեաց հրեշտակապետն՝ զտիրական անունն ի սաստ կոչելով. յայնժամ ամպ ինչ *լուսաւոր* ծագեալ ի տեղւոջն, շիջոյց զերևումն չարին: - 410. Եօթներորդ Հատոր Հարցմանցս Ժողովի ի Յեսու. և ի Դատաւորն. և ի չորս Թագաւորութիւնքն... Երրորդ՝ Արգել *զլուսաւորսն*: - 412. Երկրորդ՝ զի տեսցեն զտկարութիւն դիցն որք *զլուսաւորսն* պաշտէին: - 416. Ոմանք ասեն միայն *զլուսաւորս* արգելեալ և զկամարն շրջեալ մինչ հասեալ ի նոյն կէտն: - 416. Այլ սուրբն եփրեմ՝ զշրջանս երկնից կացեալ ասէ ընդ *լուսաւորացն*: - 416. Եւ դարձեալ՝ զի մի՛ հեռասցի մասն երկնից ընդ որում էին *լուսաւորքն*: - 416. Քսաներորդ՝ յեսու *զլուսաւորսն* կապեաց և արար զմի օրն **բ**: - 418. Քսանև**ա**՝ յեսու յաղթեաց ըզդիս և զդիակունս հեթանոսաց. զի *զլուսաւորսն* պաշտէին: - 418. Թողում զգերծումն մերկութեան և զթօշումն անարգութեան և տկարութեան խաչին. զայպանելն խաչողաց. և զխաւար *լուսաւորացն*. և յայլ դէմս դարձուցից զբանս: - 424. Ասեմք եթէ ժամանակն ի շարժմանէ՛ *լուսաւորա՛ցն* է. ըստ գնացից նոցա զառաջիկայն ասեն սովորապէս: - 430. Նշանք խաչելութեանն. և խաւարումն *լուսաւորացն*: - 454. Հինգերորդ՝ *լուսաւորքն* խաւարեցան: - 490. Երկրորդ՝ ի յանդիմանութիւն խաչողացն. զի *լուսաւորքն* տեսեալ զտէրն իւրեանց մերկացեալ, պատկառեցին և քօղ արկին զխաւարն: - 490. Տասներորդ՝ և այսմ կողմանէ՛ շարժին *լուսաւորքդ* ի յընթացս իւրեանց. որ են կարապետ մեծին լուսոյ ծագմանն: - 555. Եւ գիտելի է, զի յետ օծանելոյն զգեցուցանեն զհանդերձս պայծառ. որ *զլուսաւոր* վարս և զպայծառ հաւատս և զանմեղութիւնն նշանակէ: - 594. Որ էր յերկինս երկնից բանն աստուած, ի պայծառ և *լուսաւոր* դասուց հրեշտակաց օրհնաբանեալ...: - 621. Երկու դամպարքն, **բ** *լուսաւոր* հրեշտակքն. այլ և զլոյս աւետարանին: - 628. Վեցերորդ՝ ամենայն պատուական իր՝ ի բարձր տեղւո՛ջէ. որպէս գլուխն զի պատուական մասն է. և *լուսաւորքն* և երկին քան զերկիրս: - 662. ...ապտակեալ. և նախատեալ. և բևեռեալ. և *լուսաւորացն* խաւարեալ. և այլն. զոր մեք ի վերայ մեռելոյն նշանակեմք: - 670-671. Եօթներորդ՝ **գ** օրս այս նշանակեցաւ յերիս աւուրսն որ նախ քան զլինիլն *լուսաւորաց*. - 681. Այլ մեր վարդապետք յերկինս և ի ներքոյ երկնից ասեն. որպէս և կալիստրատոս վկայն առ **ը**երորդ կամարաւն ուր են *լուսաւորք* և եթերային լոյսն: - 686. Զի վերին մարմինք երկինք և *լուսաւորք* ամենևին անապակա՛ն են. իսկ **դ** տարերք թէպէտ ըստ մասին ապականին, այլ ըստ բոլորին ո՛չ. - 727. Թօթափիլ կամ խաւարիլ *լուսաւորաց* ո՛չ է իմանալ թէ ի կամարէ՛ երկնից անկանին կամ զգոյացական տեսակն փոխեն: - 728. Զի թէ նսեմ երկիրս լուսաւորի, *լուսաւորքն* վասն է՛ր խաւարին: - 728. Նաև համապայծառ լոյս Երրորդութեանն ծածկէ՛ զամենայն լոյս *լուսաւորացդ*. զա՛յն ասէ խաւարումն արեգական և լուսնի և աստեղաց. զոր օրինակ՝ լոյս ճրագի ծածկի մերձ եկեալ լուսոյ արևու: - 728. Նոյնպէս և *լուսաւորքն* ի վերջին ժամանակս ի կատարածի ծածկեսցին, և դարձեալ յա՛յլ իմն յազնուականութիւն փոխեսցին: - 728. Նա՛խ՝ այն է գալարիլն երկնի, զի եթերն

որպէս մագաղաթ ծալեալ նուազի և նսեմանայ վասն առաւել ճառագայթից *լուսաւորացն* հրեշտակաց և սրբոցն յերկնէ երևեալ: - 729. Որպէս թօթափիլն է *լուսաւորաց*, նոյնպէս գալարիլն երկնի: - 729. Նա՛խ՝ զի խոնարհ և ցա՛ծ է կողմն հարաւոյ. և *լուսաւորքն* ա՛նդ շրջին. և աջ կողմ է աշխարհի. վասն այն ջերմ է: - 731. Իսկ հիւսիս բա՛րձր է. և *լուսաւորքն* հեռու. և է ձախ կողմն աշխարհի. վասն այն ցուրտ է և սառնամանիք: - 731. Երրորդ վասն պայծառութեանն. զի մարմինք արդարոցն առաւել *լուսաւոր* են քան զարեգակն. - 760. Եւ զա՛յն է իմանալ թօթափիլ *լուսաւորացն*. զի յառաւել լուսոյ նոցա՝ ծածկին և ստուերանան նոքա: - 760. ...որպէս ծաղկեալ գաւազանն ահարօնի նշանակէր զխրատ իմաստութեանն. որով զարդարեալ տայ զպտուղ *լուսաւոր* նիւթոյ կերակուր ոգւոյ: - 768. Արդ՝ ես վերջին ծնունդս եկեղեցւոյ և տրուպս բանասիրաց, Գրիգոր պիտակ անուն խնդրօղ բանին. բացայայտեցի զբանս Հարցմանց ի *լուսաւոր* բանից վարդապետաց եկեղեցւոյ: - 772. Ա՛րդ՝ է՛ ինչ ի սմա հաւաքեալ ի *լուսաւոր* բանից վարդապետաց սրբոց ըստ գրոյն կամ իմացուածոյն: - 772. Զի առաջնոյն ասէ՝ մարմին բարձր լուսաւորեալ ներգործութեամբ որ է՛ հրեղէն. այսինքն *լուսաւորն* երկին: - 787. Եւ երկրորդն է *լուսաւոր* զօրութեամբ թափանցանց. գոլով ջրեղէն կամ պլօրեայ ըստ ոմանց: - 787. Իսկ երրորդն մասամբ *լուսաւոր* և մասամբ թափանցանց. որ ասէ զօրութեամբ և ներգործութեամբ: - 788

**ԼՈՒՍԱՒՈՐԵԼԻ** - Յատկութիւնք Օդոց լ թուով... Թեթև: Անօսր: և *Լուսաւորելի*: - 203

**ԼՈՒՍԱՒՈՐԵՄ +** Որպէս արեգակն զամենայն *լուսաւորէ*, այլ պարզ նիւթն *լուսաւորի* և թանձրն ո՛չ: - 20. Եւ որպէս լոյսն միշտ լոյս է, թէպէտ պակասեցաւ ի յօդոյն. ուստի յայտ է՝ զի դարձեալ *լուսաւորէ* : - 23. Քսանևմիերորդ՝ արդ՝ եթէ քրիստոս տգէտ ունէր միտս, և տկար հոգի, և ապականացու մարմին և եկն քրիստոս զի բարձցէ զտկարութիւնս մեր. և *լուսաւորեսցէ* որ նստէաք ի խաւարի. և նա՛ է գառն աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի և զապականութիւն: - 99. Արդ՝ որպէս օդ *լուսաւորեալ*՝ ո՛չ ունի մասն խաւարի, Նո՛յնպէս հոգին քրիստոսի միաւորեալ ի բանն աստուած՝ ո՛չ ունի մասն տգիտութեան: - 100. Եւ վերին խոկմամբ՝ որ ի վե՛ր է քան զմեզ՝ ըստ կարողութեան *լուսաւորիմք* ճառել զանճառէն: - 103. Իսկ սուրբ գիտութիւնն ընդ դէմ այսմ *լուսաւորէ*՛ զմիտս և ուղղէ՛. և ընդարձակէ զտեսութիւնն և թեթեւացնէ առ վերինն. և ժողովէ ի մինն. և կատարէ զպատկերն: - 104. Վասն որոյ միեղէն տեսանեն և պարզ. որպէս զծագումն լուսոյ առանց ճանապարհորդութեան *լուսաւորեալ*. և միշտ բարձրանան տեսութեամբ: - 119. Եւ հոգւոյն շնորհք իջանէ ի մեղաւորս և *լուսաւորէ* : - 125. Երրորդ՝ արեգակն յարևելից առ մեզ ծագեալ *լուսաւորէ* : - 125. Եւ տէր մեր յարևելից ի հօրէ, և առ մեզ երևեալ ի մօրէ՛ *լուսաւորեաց* զմեզ: 125-126. Վեցերորդ՝ *լուսաւորէ* զաչս որոշել զգոյնսն: - 126. Եւ քրիստոսիւ *լուսաւորեալք* որոշեցաք զբարի և զչար: - 126. Նոյնպէս կարգ և սահման ընդհանուր եղեալ *լուսաւորեցին* զամենեսեան: - 126. Վեշտասաներորդ՝ մէջ գոլով աստեղացն և *լուսաւորէ.* որպէս միջին ստեղն եօթնաջահեանն լուսոյ: - 126. Զի առաջինքն խորհրդով և օրինակաւ՝ և վերջինքս իրօք և ճշմարտութեամբ *լուսաւորեալք* ի նմանէ: - 126. Իննևժերորդ՝ զոմանս ըստ ինքեան՝ և զայլս միջնորդով *լուսաւորէ*: - 127. Իսկ արժանապէսն՝ զի կարօղ աչքն *լուսաւորին*, և տկարքն խաւարին: - 127. Հինգերորդ՝ մաքրեն՝ *լուսաւորեն* և կատարեն: - 134. Այսպէս, Նախ՝ զի մաքրել և *լուսաւորել* և կատարելագործել հասարակ է ի սոսա: - 138. Երկրորդ՝ զի նախ մաքրելն է, և ապա՛ *լուսաւորելն*, և ապա՛ կատարելագործելն. և այս կարգ հասարա՛կ է ի նոսա: - 138. Երրորդ՝ զի առաջինքն առաւել *լուսաւորին* գիտութեամբ, և այլքն ըստ չափու: - 138. Եւ նոքա լոյս գոլով *լուսաւորին*. իսկ մեք ի խաւարէ՛ ի լոյս գամք: - 139. Դարձեալ՝ առ հրեշտակս մի և նոյն իմացումն աստուածային՝ է՛ սրբութիւն՝ լուսաւորութիւն՝ և կատարումն նոցա. զի աստուածային գիտութիւնն սրբէ յառաջին տգիտութենէն և *լուսաւորէ*՛ զնոսա, և կատարին նոյն հանճարովն: - 139. Զորօրինակ գիտութիւն մարդկան ի սկիզբն և ի մէջն և յեզերն՝ նախ զտգիտութիւն փարատէ՛, և ապա՛ զմիտս *լուսաւորէ*՛ և կատարէ: - 139. Ապա յա՛յտ է զանազանութիւն սոցա, զի ոմն զօրութիւն հարկաւոր է և ներգործութեամբ և անփոփոխ և միշտ. որպէս հրոյ ջեռուցանել, և արեգական *լուսաւորել*: - 168. Եօթներորդ՝ միջնորդով զայլս *լուսաւորէ.* որպէս ընդ օդ և ընդ ապիկի: - 185. Տասներորդ՝ ըստ չափու կարողութեան զաչս *լուսաւորէ*՛: - 185. Եօթներորդ՝ միջնորդով զայլս *լուսաւորէ*՛. որպէս տէրն մեր ասէր՝ «ե՛ս եմ լոյս աշխարհի»: - 185. Եւ նոքօք *լուսաւորեաց* զհաւատացեալս: - 185. Իններորդ՝ զերկնային և զերկրաւոր միտս մարդկան առ հասարակ *լուսաւորէ*՛: - 185. Իննևժերորդ՝ զոմանս խաւարէ՛ և զայլս *լուսաւորէ*՛: - 186. Այլ ըստ ներգործութեան որ ի մէնջ պակասի և *լուսաւորի*՝ զայն ասէ: - 186. Նոյնպէս յորժամ ասեմք թէ արեգակն խաւարեցաւ, ո՛չ ի բնական լուսոյն՝ այլ ի զմեզ *լուսաւորելոյն*: - 186. Զի՞նչ է յատկութիւն լուսնի... Զգիշերս *լուսաւորէ* : - 186. Մերձեալ յարեգակն *լուսաւորի*. այլ և եղջիւրաւորի՛: -

186. Վարդապետք ասեն. որպէս սուրբն բարսեղ՝ թէ որպէս երկբերանի քսա՛կ է լուսինն. ընդ մինն ելանէ և ի վերի թիկունքն ժողովի և պակասի ի մէնջ լոյսն. և ի միւսն ի ներքս մտանէ և *լուսաւորէ՛* զմեզ: - 187. Եւ թէ ասեն՝ յանօթո՛յն է որ մինն առաւել լոյս տայ և մինն նուազ, և ո՛չ ի լուսոյն. որպէս յստա՛կ ապիկի առաւել *լուսաւորէ*: - 188. Նորոգէ՛: Պարունակէ՛. և *Լուսաւորէ՛*: - 202. Մնացեալ ա՛մպ է շուրջ զաստեղօքն. որ քարշէ յինքն զսպիտակ լոյս մոլորակացն և *լուսաւորի*: - 203. Երկրորդ՝ զի զխորխն ծգէ և զաչսն *լուսաւորէ՛*: - 218. Երկրորդ՝ զի աշխատութեամբ զմիտսն *լուսաւորեսցէ*. կամ ճգնութեամբ չարչարեսցէ: - 218. Եւ յորժամ ծագէ՛ արեգակն, յայնժամ և նշոյլքն իւր ընդ իւր ծագեն և ինքեամբ *լուսաւորեն* զմեզ որպէս նախ նշուլիւքն: - 260. Նմանապէս և մեծն ի մարգարէս աստուածախօսն մովսէս որ աստուած կոչեցաւ փարաւոնի. իշխելով տարերցս փոփոխման, որ ջրածինն էր՝ եղև վիմածին և կայծակնածին. որում *լուսաւորեցան* երեսք: - 288. Նոյնպէս և սրբոցն միտք *լուսաւորին* յաջոյն քրիստոսի. զոր աստ շանմանդաղ տեսանէին զփառս, անդ յայտնապէս տեսցեն: - 314. Զի նա խաւարաւ տանջէր, և քրիստոս զկոյր աչսն լուսաւորէր: - 328. Իններորդ, նորա *լուսաւորեցան* երեսքն ի սինա: - 328. Եւ գունդն ջահ՝ տէր մեր, որ *լուսաւորէ՛* զհաւատացեալս իւր: - 347. Եւ ի նմանէ *լուսաւորեալք*՝ պայծառացուցանեն վարդապետութեամբքն իւրեանց զերկու ժողովուրդս որք ի հրէից և որք ի հեթանոսաց օծեցան մկրտութեամբն: - 347. Վասն է՞ր *լուսաւորեցան* երեսքն մովսէսի: - 352. Վեցերորդ՝ զի իմանալի ունի լոյս՝ ցուցանէ՛ զգալի լոյսն. զի ի գիշերի ելեալ ի խորանէն հալածէր զխաւարն և *լուսաւորէր* զանապան: - 352. Նա՛խ՝ զի տէրն բոլոր մարմնով *լուսաւորեցաւ*. և նա՛ մասամբ...: - 352. Երկոտասաներորդ, *լուսաւորեցաւ*՝ զի քող արկցէ երեսացն. որ օրինակէ՛ զհին կտակարանս. որ քօ՛ղ է արկեալ և առագաստ մտաց նոցա. մինչև դարձցին առ տէր հոգիքն որպէս զմովսէս. և ապա վերասցի քողն և յայտնեսցի լոյս գիտութեան նոցա: - 352. Զի վարդավառին ա՛յն է, յորժամ կրկին **խ** պահեաց մովսէս ի լեառն և *լուսաւորեցան* երեսքն. վասն այն զկնի երկու յիսնակացն տօնեմք: - 373-374. Զի երեսնամեայ յառնեմք. զոր և լուսինն նուազի և դարձեալ *լուսաւորի*: - 399. Զորօրինակ՝ ճրագ զտեսօղս *լուսաւորէ՛*, և զտկարս խաւարէ՛. կամ որք ի ճրագ նային տեսանեն լոյս. և որք յետս դառնան խաւարին: - 403. Երկրորդ՝ յորժամ երեսքն *լուսաւորեցան* որպէս ադամայն ի դրախտին՝ և ի յարութեանն: - 409. Որ և յերկրորդ գալուստն նախ դատեսցէ. և ապա թագաւորեսցէ անվախճան. ընդ որով քահանայագործութեամբ մաքրէ՛ և *լուսաւորէ՛* և կատարեալս առնէ միշտ անզրաւ յաւիտենիւ: - 450. Չորրորդ «մկրտիլ ի նմանէ». այսինքն աղբիւրն ի յառուն. լիութիւնն ի կաթիլ մի ջրոյն. մաքուրն ի կաւոյն սրբիլ. և արեգականս արեգակն՝ ի ճրագէն *լուսաւորիլ*: - 487. Դարձեալ նշանակէ զմահն քրիստոսի. զոր արեգակն արդարութեան կամեցաւ ի մարմին իւր թաքչիլ. զի զմեզ *լուսաւորեսցէ*: - 490. Նա խթեաց զտէգն և հասոյց յաչքն իւր և *լուսաւորեցաւ*...: - 495. Չորրորդ՝ զմիտս *լուսաւորելով* յայտնապէս առանց երևակայութեան՝ միայն միտքն *լուսաւորեալ* ի շնորհաց հոգւոյն...: - 536. Եւ նախ մաքրելն է ի մեղաց, և ապա *լուսաւորելն* ի շնորհաց: - 540. Մինչ եկաց երկրորդ լուսաւորիչն հայոց և կրկին կիւրղոս սուրբ իմաստասէրն յոհան. և *լուսաւորեաց* զեկեղեցի: - 545. Ուստի յա՛յտ է, զի առեալ էր զքահանայութիւն. և մկրտեալ զթագաւորն և *լուսաւորեալ* զազգս, և շինեալ եկեղեցիս: - 548. Կնիքս այս որ յանուն յիսուսի *լուսաւորեսցէ* զաչս քո...: - 604. Չորրորդն՝ որք կիսակատար դարձեալք են ի մեղաց. և զսոսա *լուսաւորէ* ջահընկալն: - 608. ...և իւղով շնորհացն զուարթանամք և *լուսաւորիմք*: - 615. ...վասն որոյ ի գիշերի կենցաղոյս *լուսաւորէ* զհոգիս յետս ընկրկելով զքշնամիս: - 629. Զի զգալի լոյս ո՛չ *լուսաւորէ* զնոսա...: - 669. ...զի լոյսն անմարմին սփռիւր ի յերկինս և *լուսաւորէր* մինչև ցերեկոյ...: - 681. Ասեմք եթէ՝ անդամքն այնք որ աստ լցեալ են ապաւառով, անդ լցցին **դ** հիւթովքն *լուսաւորեալ* լուսով: - 725. Զի թէ նսեմ երկիրս *լուսաւորի*, լուսաւորքն վասն է՛ր խաւարին: - 728. Եւ ոմանք թէ՝ խաչն *լուսաւորեալ* ճառագայթէ որպէս բևեռք և գեղարդն: - 732. Յառաջնումն *լուսաւորեալք*: - 755. Վասն է՞ր լոյս արեգականն ո՛չ *լուսաւորէ* զսուրբս: - 760. Երկրորդ վասն տեղւոյն. զի վերինն էմ է՛ ի բարձունս քան զարեգակն. վասն որոյ ո՛չ *լուսաւորէ* զնոսա: - 760. Ունելով տերև և ծաղիկ և պտուղ. այսինքն մաքրել, *լուսաւորել*, և կատարեալս առնել ըստ մեծին դիոնիսի: - 767. Զի առաջնոյն ասէ՝ մարմին բարձր *լուսաւորեալ* ներգործութեամբ որ է՛ հրեղէն. այսինքն լուսաւորն երկին: - 787

**ԼՈՒՍԱՒՈՐԻՉ +** Վեցերորդ՝ զի *լուսաւորիչք* են: - 125. Երրորդ՝ զի սերօբէն մաքրական լսի և հրաբերձ. ըստ որում մաքրեաց զմարգարէն. և քերօբէն իմաստութեամբ *լուսաւորիչ*. և աթոռքն ուղղութեամբն կատարիչ: - 135. Եւ *լուսաւորիչն* մեր զնոյնս երկրորդէ: - 147. Քսաննե, ասէ *լուսաւորիչն* մեր, թէ ձև մարդոյ երևեցաւ ի ստեղծանելն, զոր առնելոց էր զնոյն մարմին յետոյ ժամանակի. և ի նոյն

պատկերն արար զմարդն: - 272. Եբրայական լեզուաւն կարդային որ ունէր դեռ զառաջինն. որպէս ասէ մեր *լուսաւորիչն*: - 299. Եւ տե՛ս, զի *լուսաւորիչն* կարգեաց զնաւակատիսս յայսմ աւուր որ էր յաւուրս նիկիական ժողովոյն. զոր յառաջն ունէին ամենայն ազգ, զնոյն կարգեաց մեզ: - 509. Եւ *լուսաւորչին* ի կեսարիայ գնալն և ի հռօմ. և թադէոսի առաքելոյն: - 525. Մինչ եկաց երկրորդ *լուսաւորիչն* հայոց և կրկին կիւրղոս սուրբ իմաստասէրն յոհան. և լուսաւորեաց զեկեղեցի: - 545. Եւ թէ ոք ասիցէ, կարի՛ բարկացար. ո՛չ զայս ասեմ հնազանդիլ. այլ որպէս *լուսաւորիչն* գնաց ի հռօմ և հնազանդեցաւ: - 548. Ասեմք առ այս՝ թէ *լուսաւորիչն* գնաց ի հռօմ ո՛չ վասն ձեռնադրութեան, այլ վասն սիրոյ և միաբանութեան երկուց ազգաց և ուղղափառ թագաւորացն տրդատայ և կոստանդիանոսի: - 548. Եւ այսպէս ղևոնդիոս ձեռնադրեալ ի նմանէ պատրիարգ. յորմէ ձեռնադրեցաւ *լուսաւորիչն* մեր: - 548. Եւ վասն այն այլազգ ո՛չ հաւատան. զի յառաջն չկայր մինչ ի նա՛. և առաւել վասն այն անուանեցաւ *լուսաւորիչ*: - 549. Մեծն աթանաս և յոհան ոսկեբարանն և սուրբն բարսեղ և մերն *լուսաւորիչ*: - 595. *Լուսաւորիչն* գրիգոր ի հռօմայ գաhիցն պատւեցաւ: - 639. Եւ յորժամ մերն *լուսաւորիչ* ել ի վիրապէն, **ե** օր պաhք կարգեաց և ապա՛ բժշկեաց ի հարուածոյն. - 650. Եւ *լուսաւորիչն* կարգեաց զօրհնութիւն աղին: - 657

**ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ +** Նմանապէս և հասարակն թէպէտ բազում է, այլ երկոտասան գլխով նշանակի. նախ Բնութիւն. որ նոյն է էութիւն. ապա Բարութիւն. Կամք. Անմահութիւն. Իմաստութիւն. *Լուսաւորութիւն*. Գեղեցկութիւն. Անփոփոխութիւն. Ցնծութիւն. Փառք. Իշխանութիւն. և Արարչութիւն: - 105. Դարձեալ՝ առ հրեշտակս մի և նոյն իմացումն աստուածային՝ է՛ սրբութիւն՝ *լուսաւորութիւն* և կատարումն նոցա. զի աստուածային գիտութիւնն սրբէ յառաջին տգիտութենէն և լուսաւորէ՛ զնոսա, և կատարին նոյն հանճարովն: - 139. Իսկ խօսի հրեշտակն ընդ դիւին՝ ցուցանելով նմա զտեսակս իմացման իւրոյ առանց *լուսաւորութեան* իմն: - 145. Յինգերորդ՝ երկին կոչի ամենասուրբ Երրորդութիւնն վասն *լուսաւորութեան* և անհաս բարձրութեանն յամենայն եղելոց որպէս ասացաւ: - 184. Երկրորդ՝ զի ունի զերեք յատկութիւնս երկնից. որ է՛ բարձրութիւն. *լուսաւորութիւն*. և անմահութիւն: - 221. Դարձեալ զանազանութիւն, զի հանճարովն ճանաչի աստուած *լուսաւորութեամբ* լսելոցն ի գիրս սուրբս. իսկ իմաստութեամբ ճանաչի աստուած ըստ ինքեան: - 270. Երրորդ՝ սառն կոչի առաքինութիւն. և մարիամ *լուսաւորութիւն*. և եկեղեցի ժողովք հաւատացելոց՝ գործով ունի զառաքինութիւն և զլոյս հաւատոյ: - 307. Չորրորդ՝ ամսամուտն նոցա. զոր ի նորանալ լուսնին տօնէին. իսկ մեզ տօն կուսին մարիամու որ *լուսաւորութիւն* լսի ըստ ոմանց: - 372-373. Սոյնպէս և դաւթին մարգարէութիւն՝ մտաց *լուսաւորութեամբն* երգէր զամենայն սաղմոսն ի հոգւոյն սրբոյ: - 537. Այլ և որպէս նախաստեղծքն ի դրախտին ո՛չ ամաչէին. նոյնպէս և սուրբք ի յարութեանն. զի ծածկեալ են ի ներքուստ հոգւոյն *լուսաւորութեամբն*, և արտաքուստ պսակաւն և փառօք: - 726. Դարձեալ ասեմք առաջին կեանք մասնաւոր, զոր նախ քան զյանցանելն ունէր. անկարօտութիւն. *լուսաւորութիւն*. անծերանելի հասակ. անմահ կեանք. և այլն որ ասացաւ ի վերոյ **ժէ** գլուխն **լզ** համարն: - 758. Երրորդ, զի հաւատն է *լուսաւորութիւն* մտաց հեղեալ յաստուծոյ ի ճանաչել զհոգևոր բարիսն. իսկ դևք ո՛չ ունին զլոյս մտաց և ո՛չ զհեղումն շնորհաց. վասն որոյ ո՛չ ճանաչեն զհոգևոր բարիս: - 784

**ԼՈՒՍԱՓԱՅԼ +** Եւ արտաքոյ, զի օրըստօրէ յաւելուն *լուսափայլ* իմաստիւք ըստ մեծին դիոնիսեայ: - 344. Վասն որոյ և յաւուրս զաքարիայի հօրն յովհաննու յորժամ յամեաց ի տաճարին և ել, ակնունէր ժողովուրդն տեսանել զա՛կնն և տե՛սին *լուսափայլ* սպիտակացեալ իբրև զձիւն. և լի՛ եղեն խնդութեամբ. զի երկնաւոր արքայութեան նշոյլքն պայծառացուցին զակն: - 349. ...և աճին միշտ *լուսափայլ* իմաստութեամբն աստուծոյ: - 663. Չորրորդ զի *լուսափա՛յլ* է. նշանակէ՛ զբարձրագոյն տեսութիւնն որով լուսափայլին իմացմամբ: - 712

**ԼՈՒՍԱՓԱՅԼԵՄ +** Այս է զի ի լուր պատմութեանց նախնեացն՝ կամ ի կարգէ՛ իրաց՝ կամ ի տեսս զգալեաց՝ ի ծանօթս գամք աստուծոյն ճշմարտի. յորմէ հաւատն *լուսափայլեսցի*: - 25. Իսկ գնդակ որ է կողմնաւոր՝ շարժի հոգին, յորժամ բնականապէս *լուսափայլի* յաստուածային գիտութիւնս տեսութեամբ և մտածութեամբ. և այնպէս հոգէպէս ի յաստուած միաւորի. որպէս աշակերտաց առաքելոց և մարգարէից: - 142. Գոյնն հրային *լուսափայլեալ* աչօք՝ առ մոլորութիւն ձկտի: - 247. Եւ **ծ** ամն՝ որ առ որդւով նորին կոստանդեաւ յերկնից *լուսափայլեալ* ի լեռնէն ձիթենեաց մինչև ի սուրբ գողգոթա: - 294. Երրորդ, հասարակն զգայարանօք կատարի. իսկ առանձնականն ի միտս

*լուսափայլի*: - 623. Չորրորդ զի լուսափա՛յլ է. նշանակէ՛ զբարձրագոյն տեսութիւնն որով *լուսափայլին* իմացմամբ: - 712

**ԼՈՒՍԱՓԱՅԼՈՒԹԻՒՆ +** Ասեմք եթէ՝ նոքա երեքեան դասքն՝ այսինքն աթոռք՝ քերոբէք՝ և սերոբէք՝ միակարգ միապատիւ և գերազանց էութիւնք են. զի աներնդմիջաբար յաստուծոյ ամենայն *լուսափայլութիւնք* իմաստք և շնորհք ի նոսա հեղանին համակարգապէս. և ապա նոքօք յայլ ամենայն գոյս երկնաւոր և երկրաւոր: - 135

**ԼՈՒՍԵՂԷՆ +** Եւ այս ևս գիտելի է, զի որպէս հրեղէն երկինն հոմանուն է, այսինքն *լուսեղէնն* որ ի սկզբանէ ստեղծաւ. և բոլորակ հրոյն: - 184. Նոյնպէս հոմանուն է և արփին. այսինքն *լուսեղէնն* և հաստատութիւնդ: - 184. Եւ տեէ՛ որքան է նիւթ գոլորշոյն. և *լուսեղէն* բա՛շս արծակէ առ ի ցուցանել թէ ո՛չ է ի բնական աստեղաց: - 203. Հինգերորդ՝ Առաջին երկինքն է հրեղէն և *լուսեղէն*: - 221. Երկոտասան պարգև՛ք էին ի դրախտին զոր կորոյս ադամ... Չորրորդ՝ *լուսեղէն* պատմուճան: - 278. Այլ մորթ մաշկեղէն ստեղծեաց և զգեցոյց նմա փոխանակ *լուսեղէն* զարդուն. զմեռելութիւն նորա նշանակելով: - 280. Չորրորդ՝ է մոլորակաց գօտիք. և ը հաստատութիւնն. և ջրեղէն և *լուսեղէն* երկինքն: - 343. Սրբութիւն սրբոցն՝ *լուսեղէն* երկինքն և անջրպետ հաստատութիւնդ: - 343. Սոքա՛ են ի սրբութիւն սրբոցն որ է՛ *լուսեղէն* երկինքն բնակարան անմարմին զօրացն: - 345. Նա՛խ՝ զի ծանիցի թէ սոցա արարիչ է անարգեալն. վասն այն *լուսեղէնք* և օդեղէնք և օդն խաւարեցան. ջուր ի կողիցն բղխեաց. և երկիր շարժեցաւ: - 490. Նա՛խ՝ զի հոգին սուրբ պարգևք է խաչին քրիստոսի. այլ և ի վերնատունն *լուսեղէն* խաչիւ հանգեաւ յառաքեալսն: - 625. Է և ա՛յլ իմն տեսութիւն վերագոյն. զի արարողութիւն սգոյս ցուցանէ զառաջին անկումն մեր ի *լուսեղէն* կենացն ի խաւար աշխարհ տրտմութեամբ և ցաւօք մահու մեռեալք և ի հող դարձեալք. և այս ի ճաշակմանէ պտղոյն: - 670. Ա՛րդ՝ զգեստին հանելն նախ նշանակէ թէ՝ զկենցաղ աշխարհի մերկացաւ և զգեցաւ զգեստ *լուսեղէն* որ ի դրախտին: - 671. Եւ այն որ ի վերայ վառին նիւթեղէն զգեստէ, զի գայցէ խաչն ի վերայ *լուսեղէն* ամպոյ. յօդս բարձրացեալ և ցոլացեալ...: - 676. Նոյնպէս և *լուսեղէն* պսակքն որ իջանէր ի վերայ նոցա՝ յայտնապէս ցուցումն է իմանալի պսակացն: - 697. Զի որպէս փայլակն ելանէ յարևելից ի վերայ *լուսեղէն* ամպոյ, և քառաձև լուսովն լնու զչորս կողմ աշխարհի և հաստատի ի գողգոթայ յորում խաչեցաւ տէրն: - 732. Յօրինակ *լուսեղէն* ամպոյն վառն, և փորք վարշամակն ցոլմունք լուսոյն: - 732. Նմանապէս և **բժ**ան աթոռք առաքելոցն սրբոց ի յօդոյդ *լուսեղէն*: - 736. Շող յաստուծոյ ծագեալ հաւատ. զերկնից կախեալ լար իմն *լուսեղէն*. զորմէ բուռն հարեալ ձեռն զձեռամբ փոփոխեալ. ի ծովու սքանչելեաց յերկինս և յօդս վերանալ: - 769

**ԼՈՒՍԵՐԱԿՔ +** Եօթներորդ՝ *լուսերակն*. և ապա՛ լոյսն ի միջի: - 239. Երկու *լուսերակն* որ ասացաք՝ ի յղեղէն գայ ի յաչքն դատարակ և անարիւն: - 239

**ԼՈՒՍԸՆԿԱԼ +** Ուբեմ՝ *լուսնկալ* նիւթ է: - 207. Եւ այլք ասեն թէ ծաղիկք և տերևքն *լուսընկա՛լք* են: - 222

**ԼՈՒՍԻՆ +** Վասն *լուսնի*՝ և յատկութեան նորին: - 154. Եւ է երկինք՝ է գօտիքն են է մոլորակացն. որ է Զոհա՛լն. Երևա՛կն. Հրա՛տն. Արեգա՛կն. Լուսնթա՛գն. Փայլածո՛ւն և *Լուսինն*: - 183. Եւ է՛ երկնային լոյս՝ որպէս արեգակն և *լուսին* և աստեղք: - 185. Բազում ինչ բարութիւն և յատկութիւն է *լուսին*: - 185. Զի՞նչ է յատկութիւն *լուսնի*: - 186. Եւ դարձեալ արեգակն միջակ գոլով հաղորդի ամենայն մոլորակաց. և գայն անցուցանէ ի *լուսինն* լուսո՛վն հանդերձ: - 187. Վարդապետք ասեն. որպէս սուրբն բարսեղ՝ թէ որպէս երկբերանի քաւ՛կ է *լուսինն*. ընդ մինն ելանէ և ի վերի թիկունքն ժողովի և պակասի ի մէնջ լոյսն. և ի միւսն ի ներքս մտանէ և լուսաւորէ՛ զմեզ: - 187. Եւ գիտելի՛ է, զի ընդ ամենևին հեռանալն *լուսինն* խաւարի. և ամենևիմբ մերձ եկեալ ի նոյն կենդանակերպն և ուղղապէս ընդ դէմ անցեալ արեգականն՝ խաւարէ՛ զնա. զի ընդ դիմատից է անօթ *լուսնոյն*: - 187. Աղտն զի՞նչ է յերեսս *լուսնին*: - 187. Նոյնպէս և *լուսինն*. զի այն որ պայծառն է՝ կերպարանք երկրի է. և աղտն՝ ծովուց: - 187. Ստուեր երկրի ընդ մէջ անցեալ արեգական՝ խաւարէ՛ *զլուսինն*: - 187. Նա՛խ՝ զի յոմանս առաւել է լոյսն. որպէս յարեգակն. և յոմանս նուազ. որպէս ի *լուսին* և յայլ աստեղս: - 188. Որպէս յա՛յտ է ի *լուսինն* յորժամ ծնանի յարևմուտս. և գայ յարևելս ըստ կարգի կենդանակերպիցն: - 189. Եօթներորդ *Լուսինն*. զոր կամր կոչեն. ho՛վ է և գէճ. **բ** օր և կէս յամէ՛ ի կենդանակերպն. և ի **իթ** օր և կէս պատէ՛ զամենայն: - 189. Որպէս ասացաւ ի վերոյ, զխաւարումն լուսոյ՝ և զամիսս՝ *լուսինն* առնէ: - 190. Զզօհալն Կռոնոսի. Զմուշթարին Դիոսի. Զմառեխն Արէսի. Զարեգակն Իլիոսի. կամ Զևսիլոսի. Զօհրայն. Ափրոդիտեայ. Զօտարիտն Երմեսի. *Զլուսինն* Սելինի: - 190. Եւ *զլուսնին* երկուշաբթի: - 190. Իսկ վերադիրն լինի ի պակաս ընթացից *լուսնոյն* ըստ այսմ օրինակի: - 191.

Զի արեգական տարին է՛ **յկե** օր. և *լուսնին* տարին **յծդ** օր. **ժա** օր պակաս քան զարեգակն: - 191. Զոր յամենայն ամի **ժա** թիւ ի վերայ *լուսնոյն* դնեմք, զի հաւասարեսցի արեգականն, և կոչեմք վերադիր: - 191. Ասեմք եթէ՝ *լուսինն* ընթանայ ի կենդանակերպսն **իթ** օր և կէս՝ և ծնանի: - 191. Արդ յամենայն ամիս կէս օրն՝ ի բոլոր տարին լինի վեց օր պակաս *լուսնոյն*: - 191. Իսկ սուրբն եփրեմ ասէ, մետասան թիւ գտանի ի մէջ երից աւուրցն՝ ստեղծման *լուսնին*: - 191. Զի *լուսինն* ընդ երեկս երևացաւ և մետասանօրեայ ստեղծաւ: - 191. Եւ վասն այն ստեղծաւ մետասանօրեայ, զի յաւուր ուրբաթի յորում ադամ ստեղծանիւր, լինէր *լուսինն* բոլոր և ժդօրեայ: - 191. Իսկ իննևժերեակն է, զի ընթանայ *լուսինն* ի տարին **յծդ** օր՝ և **ժթ** մասն. որ լինի ի **ժթ** ամին՝ **յկա** մասն: - 191. Եւ արա՛ զերեսուն մասն մի ժամ, և զերկոտասան ժամն մի օր. և կոչի այս՝ իննևժերեկի ամ. որ աւելու ի *լուսինն* մի օր: - 191. Եւ ա՛յս է կատարումն մասանց *լուսնին*. զոր ոմանք կատարումն *լուսնի* ասեն: - 192. Եւ դարձեալ՝ յորժամ վերադիրն լինի **լ**. և **է** երեակն է ի միասին ի միում ամի. ասի այն կատարումն *լուսնի*. այսինքն մասանց թուոյն, և ո՛չ իրին: - 192. Եւ որպէս իննևժերեակն *լուսնի*, և **իը** երեակն արեգական ի միասին ժողովեալ՝ առնէ զհինգ հարիւրեակ շրջանն ի **շլբ** ամին. զի **ժթ իը** երեակ է. և **իը ժթ** երեակ: - 192. Եւ որպէս լրումն զատկի ունի աւուրս **ժզ**. և այլքն **ժե**. և այս ի տումարս մեր է. և իրն որ է՛ *լուսինն* մի և նոյն: - 192. Այսպէս և կատարումն մասանց *լուսնին* ի տումարս մեր է և ո՛չ ի յենթակայն նորին: - 192. Այլ կատարումն *լուսնի* է ի վախճանի աշխարհի. յորժամ արեգակն և *լուսին* խաւարեսցին որպէս ասէ աւետարանն: - 192. Զի՞նչ է բակն որ *զլուսնիւ* և զարեգակամբն: - 203. Յարեգակնէ՛ և ի *լուսնէ՛*: - 213. Զի արեգակն արու է զի ջերմ է. և *լուսինն* էգ՝ զի հով և գէջ է: - 213. Արևն պնդէ՛ և *լուսինն* թուլացնէ. և յայնմանէ գոյանայ համն և հոտն և այլն: - 213. Եւ ջերմութիւն արևուն և գիճութիւն *լուսնին* առնեն զգոյնն կարմիր: - 213. Իսկ այլք ասեն թէ՝ վասն առաւել բարձրութեանն՝ լոյս արեգականն ո՛չ երբէք հեռանայ ի նմանէ. թէպէտ ի ներքոյ երկրի անցանէ. որպէս *լուսինն* թէպէտ ի վերին կամարն լինի, զլոյսն առնու յարևէն որ ի ներքին կամարն: - 222. Ո՞րպէս ասեն թէ *լուսնոյ* կամարին հաւասա՛ր է: - 222. Ո՛չ թէ քան զտարրական հուրն ի վե՛ր է անցեալ. այլ զի *լուսինն* և արեգակն միշտ ի հարաւոյ կողմանէ ի ստորոտէ լերինն ելանեն. և ի հիւսիսոյ կողմն լերինն միշտ գիշեր լինի. որպէս աղէքսանդրու պատմութիւնն ասէ. և ի գլուխն միշտ լոյս. և ի հարաւոյ կողմն տիւ և գիշեր: - 222. Չորրորդն, արեգակն և *լուսին* և աստեղք: - 226. Նմանապէս և յայլ երիս յառաջնումն աւուր արար զլոյսն ժամանակեայ. զարեգակն և *զլուսին* և զաստեղս ի վերնագոյն տարրէ՛ հրոյն: - 227. Երկրորդն ուղեղ գլխոյն է. հով է և գէճ ընդ դէմ սրտին ջերմութեանն և չորութեանն. զի բարեխառնեսցէ՛ զնոսա. և իւր տանուտէր *լուսինն* է: - 241. Չորրորդն թո՛քն է. հո՛վ և գէճ. և է՛ տուն պլղամի. և ունի տանուտէր *զլուսինն*: - 241. Եւ թէ ի *լուսինն* ծնանի եօթն ամսեան ապրի: - 264. Իսկ ի վերջին դարս որ է՛ *լուսնին* սակաւակեացք են մարդիկք. զի նա՛ ի **լ** օրն վճարէ զբոլոր ընթացս իւր: - 291. Եւ ի գիշերն լոյս տայր նորա, և պահէր ի վնասէ՛ *լուսնոյն* և առաջնորդէ՛ր: - 338. Երկրորդ եղանակ՝ **է** գօտիք. և **ը**՝ անմոլարքն. **թ**՝ *լուսնոյդ* ի վայր. և **ժ** բանն աստուծոյ որ վարէ՛ զարարածս: - 343. Երրորդ այսպէս. ի *լուսնոյդ* ի վայր տարրական հուրն և որ ի նմա երեւոյթք լուսոյ. օդն և թռչունք. ջուր և լօղականք. երկիր և բոյսք. մարդ և անասունք: - 343. Չորրորդ՝ ամսամուտն նոցա. զոր ի նորանալ *լուսնին* տօնէին. իսկ մեզ տօն կուսին մարիամու որ լուսաւորութիւն լսի ըստ ոմանց: - 372-373. Զի երեսնամեայ յառնեմք. զոր և *լուսինն* նուազի և դարձեալ լուսաւորի: - 399. Երեսուն օրն աւուրք է *լուսնին* որ փոխէ զտխրութիւն և ի լոյս գայ: - 411. Զարեկագն և *զլուսինն* ոտնակապեաց: - 414. Ո՞րպէս արգել զարեգակն և *զլուսին*: - 416. Եւ ի մեծի ուրբաթի խաչին, *լուսինն* ընթացաւ և ձգեցաւ յարևն, և յետս դարձաւ. որպէս ցուցանի յառաջիկայդ առ խաչելութեամբն ի լ գլուխն ի **իզ** համարն: - 416. Այլ ո՛չ այսպէս. զի ե՞րբ եկաց և մնաց ընդ արև, կամ յառաջ քան *զլուսին* սողոմոն. այլ տէրն նորա: - 421. Նա՛խ՝ զի չորեքտասա՛ն էր *լուսինն* եկն ի ներքին կիսագնդէն ի վերին գունդն և ձգեցաւ առ արեգակն: - 490. Որ այսպիսի էր պատկեր աւուրն. յաւուր **ե** շաբաթօջ երեկոյին ի չորեքտասան *լուսնին* զգառն զենին և ելին յայգ ուրբաթի **ժե** ամսեանն. և ի կիրակէ անցին ընդ ծովն որ էր նիսանի **ժէ**: - 513. Ա՛րդ՝ ի քաւարանն ոչ է ժամանակ. զի ժամանակն յարեգակնէ՛ և ի *լուսնէ՛* լինի...: - 700. Վասն զի երկին որ շարժի՝ յօր դատաստանին դադարի և հաստատի յայն կարգն յոր նա՛խ ստեղծան. արեգակն յարևելս և *լուսինն* յարևմուտս: - 727. Եւ հուրն այնպէս փայլատակէ որպէս *զլուսին*. և *լուսինն* որպէս զարեգակն. և արեգակն եօթնապատիկ պայծառանայ որպէս ասէ եսայի: - 728. Նաև համապայծառ լոյս Երրորդութեանն ծածկէ՛ զամենայն լոյս լուսաւորացդ. զա՛յն ասէ խաւարումն արեգական և *լուսնի* և աստեղաց. զոր օրինակ՝ լոյս ճրագի ծածկի մերձ եկեալ լուսոյ արևու: - 728. Եւ դարձեալ՝ ուր գիշեր ոչ է՝ ոչ են պիտոյ անդ *լուսին* և աստեղք: - 728.

Այլ նախ ասի միշտ տիւ ի վերին երես երկրի. ուր արեգակն և *լուսին* զկա՛յէ առեալ. իսկ ներքինն միշտ գիշեր և խաւար անփոփոխելի: - 750

**ԼՈՒՍԻՆԱ** - Այլ և սամարուիի կնոջն *լուսինա՛* էր անունն: - 495

**ԼՈՒՍՆԱԶԵՒ +** *Լուսնաձև* Վահանն ի վերայ թիկանցն և սրտին՝ և կրկին տախտակ դատաստանին յուսն, եմիփորո՛նն է: - 348

**ԼՈՒՍՆԹԱԳ +** Եւ է երկինք՝ է գօտիքն են է մոլորակացն. որ է Զոհա՛լն. Երևա՛կն. Յրա՛տն. Արեգա՛կն. *Լուսնթա՛գն*. Փայլածո՛ւն և Լուսինն: - 183. Երկրորդ՝ *Լուսնթագն*. զոր մուշթարի կոչեն. ջե՛րմ է և գէճ. մին ամ յամէ՛ ի կենդանակերպն. և ի ժը ամն պատէ՛ զամենայն: - 189

**ԼՈՒՐ +** Այս է զի ի *լուր* պատմութեանց նախնեացն՝ կամ ի կարգէ՛ իրաց՝ կամ ի տեսս զգալեաց՝ ի ծանօթս գամք աստուծոյն ճշմարտի. յորմէ հաւատն լուսափայլեսցի: - 25. Արդ՝ առաջին ի *լրոյ*՝ Յիւրմէ վասն իւր. և յայլմէ վասն իւր: - 25. Նախ՝ զի առ աստուած բոլորն տեսութիւն է՝ և *լուր*՝ և այլն: - 119. Եօթներորդ՝ Տես աչացն հաստատէ՛ *զլուրն*. և ի վեր նայիլն հեշտանայ: - 227. Երկրորդ՝ զի տեսանելն հաստա՛տ է քան *զլուր* ունկան: - 235. Եւ ի հողմոյն յայնմանէ հոտ անուշութեան դրախտին բուրեաց ի նոսա. և տեսիլ իմանալի տեսին, և *լուր* իմանալի լուան. և յայնմանէ մոռացան զառաջինն. և որպէս ի քնոյ զարթուցեալք ո՛չ լսէին զլեզուս միմեանց: - 298. Նա՛խ՝ զոր լւան զօրէնս ականջօք, տեսցեն և աչօք զի հաստա՛տ է տեսն քան *զլուրն*: - 349. Յինգերորդ՝ զրկելով աստ ի խոստմանէն *լրոյ*. և յետ մահու ի տեսութեանցն. և ի յարութեանն ի կատարմանցն: - 394. Իններորդ՝ *լուր* բանին և տեսութիւն աչաց: - 444. Զի տես աչացն հաստա՛տ է քան *զլուր* լսելեացն: - 509. Չորրորդ՝ ի գլխո՛յն է տեսողութիւն և *լուր* և վայելչութիւնք համոց և հոտոց: - 532. Ասի ի *լրոյ* եթէ՝ նոյ արար փայտէ՛ կոչնակ. և կոչեաց զկենդանիսն ի տապանն: - 618. Ասեն վարդապետք թէ՝ ի *լուր* ուրախութեան հեշտանայ լեարդն և տարածեալ լայնանայ. և այնպէս շունչն ելեալ յորդ ընդ շնչերակսն և առնէ զծաղրն: - 619. Իսկ ի *լուր* տրտմութեան՝ խուճապի մարմինն. և ի դառն մաղձոյն որ է՛ լեղին՝ հոսի ի բերան քաղրդին. - 619-620. Արդ՝ ա՛յս գիր գործոց մերոց գրեալ ի հոգի և ի մարմին մեր որպէս ի մագաղաթի՝ դատաւորն ընթեռնու ի տես և ի *լուր* հրեշտակաց և սրբոց: - 741. Արդ որպէս յամենայն ժամանակս սոքօք գան ի հաւատս ուղղութեան և է՛ վարձատրելի. այսպէս և ի վերջին ժամանակս որք յետ նեռինն՝ ո՛չ միայն ի հարկէ սքանչելեաց, այլ և ի *լրոյ* քարոզչաց երկուցն վկայից իջելոց սրբոց: - 785. Եւ բազում ուրէք որք ընդ արեգակամբս խորհրդածուք էին, ի *լուր* բանից և ի տես սքանչելեաց ածին յուղղութիւն: - 785. Եւ նոյն ինքն տէրն բոլորից վկայ քարոզութեան զգործս կատարէր. զի սովորութիւն է մարդկան քան *զլուր* լսելեաց տեսութեան աչաց հաւանիլ: - 785

**ԼՈՒՑԱՆԵՄ +** Առաջին միաւորութիւն ստոյգ և ճշմարիտ՝ հոմանիւք մասնաւորաբար որոշեցելոց. որոց ոչ ինչ տարանիւք ընդ մէջ երևի. որպէս երկուց ջահից *լուցելոց* միաւորութիւն լուսոյն: - 476. Պատարագն ի հնումն անբան կենդանիքն էին. վասն որոյ և զճարպս նոցա *լուցանէին* ի տաճարին: - 617

**ԼՈՒՑԿԻ +** Եւ դաղարք դիւաց. իսկ յետոյ *լուցկի* են գեհենին յաւիտենից: - 212

**ԼՊՐԾԵՄ +** Նախ՝ զի *լպրծի՛* միտք մեր և մոռանայ զբանն. զի հով և գէջ է պարուտակն և ուղեղ գլխոյն: - 120

**ԼՌԵՄ +** Եւ զորս ես աստ պարկեշտութեամբ *լռեմ*, յընթանըական թղթին յօհաննէս ի նեռն առակէ ասելով. «արդէն իսկ նեռինք եկեալք են. զի ամենայն որ ուրանայ թէ յիսուս չէ՛ Քրիստոսն՝ նա իսկ է նեռն»: - 34. Եօթներորդ՝ զի թէ և *լռեալ* է բանն և ոչ արտաբերեալ, բա՛ն է մտացն: - 49. Ա՛րդ՝ ի մարդկանէ ո՛չ ոք ետես զաստուած, և որդի կուսին ո՛չ ետես որպէս դուդ ասես. սո՛ւտ է ապա և պատմութիւնն զոր ինչ ուսոյց մեզ. զի ո՛չ է տեսեալ և պատմէ. ահա անդունդք հայհոյութեան. զոր ի կարգիս *լռե՛մ*: - 96. Եւ այլք թէ՝ *լռեաց* և ո՛չ ետ փառս աստուծոյ: - 147. Նախ՝ յորժամ սերոբէն ասէր սուրբ, և միւսն երկրորդէր զնոյն. և սա՛ *լռեաց* զփառաբանութիւն ընկերին երկրորդել աստուծոյ, թէ փառքն ի վերայ իւր անկանի և աստուածանայ որպէս ասաց պօղոս: - 147. Նոյնպէս և յառնել մարդոյն և յանուն դնելն կենդանեաց՝ փառս ետուն աստուծոյ. իսկ նա *լռեաց*: - 147. Այլ մեզ զոր գիրք սուրբք *լռեալ* են՝ լռութեամբ պատուեսցի. և մի՛ մտացածին բանիւք վտարանդեալ ի գուբ կորըստեան անկցուք: - 226. Իսկ մարգարէութիւնն *լռեաց*, զի ո՛չ ևս երևի բան մի յիշատակ շնորհաց նորա: - 279. Վեցերորդ, *լռեաց*՝ զի տէր հաստուցէ բարիս ընդ այնր որպէս եղև: - 434. Եւ ա՛յսպէս ածեն զազգաբանութիւնն առ կոյսն և *լռեն*: - 460. Թէ զերկու քորս բ եղբարցն տալ. կամ զսանին քոյրն միւս եղբօրն. որպէս քո սուտ պետրոսին կանոն է, և ո՛չ ճշմարիտ պետրոսին. և զայլն *լռեմ* իբրև զամօթալի: - 548. Զի՞նչ է որ ի մէճլիսն յանկարծ ժամ մի *լռեն*: - 656. ամենեքեան սարսեցին և *լռեցին*: - 656

**ԼՌԵՑՈՒՑԱՆԵՄ +** Ոչ ինչ պղերգութիւն *լռեցուցէ*: - 765

**ԼՌՈՒԹԻՒՆ +** Իսկ ի ներքուստ ի վեր՝ ի բազմութենէ առ միՆն ընթանայ. որպէս խորհրդական աստուածաբանութիւնն արտաքոյ թողեալ զբազումութիւն էից և ի միՆն ընթացեալ, որ ամենեւին անբանութիւն է և անիմացութիւն. անճառելի. անիմանալի. և *լռութեամբ* պատուի յամենայն արարածոց: - 123. Այլ մեզ զոր գիրք սուրբք լռեալ են՝ *լռութեամբ* պատուեսցի. և մի՛ մտացածին բանիւք վտարանդեալ ի գուբ կորըստեան անկցուք: - 226. Երրորդ՝ զի որպէս խօսիլ գլխոյն է. նոյնպէս *լռութիւն* կողին է. զի լուռ լիցի կինն ընդ իշխանութեամբ առնն: - 276. Յօրինակ յեսուայ, որ տապանակաւն և քահանայիւք և ժողովրդովք զվեց օր շրջեցաւ *լռութեամբ*. - 627

**ԼՍԵԼԻ +** Իսկ բանն աստուած է՛ ծնեալ ի հօրէ՝ այլ ո՛չ բաժանեալ. որպէս ո՛չ բաժանի բան՝ ի մտաց. թէպէտ ի բազում *լսելիք* մտանէ. և թէ ի վերայ քարտիսի մարմին զգենու: - 45. Եւ որպէս մի է ձայնն, բազմանայ ի բազում *լսելիս*: - 113. Երրորդ՝ զի բանս մեր ձայնիւ յամենայն *լսելիս* անցանէ և թղթով յամենայն տեղիս ընթանայ. և բանն աստուծոյ սո՛ւր է և հատու և ընդ ամենայն է քրիստոս անցանէ թափանցաբար: - 121. Երկրորդ՝ առողջ *լսելեաց* և տկար գոլ: - 131. Իսկ առողջ *լսելիք* և տկար՝ պատճառի ի համակարգս. և ի հաւասարն բնութեամբ. որք իմացմամբ և սիրով և ներգործութեամբ առաւել կամ նըւազ են. ուստի առաւել կամ նըւազ պարգեւս ընդունին: - 131. Ա՛յլ է բանն՝ և ա՛յլ է ձայնն. զի բանն անմարմին ծնունդն է մտաց. և ձայնն է՛ շարժումն օդոյ ի ձայնական գործեաց ի յօդս բախեալ. իսկ ի սրտի միաւորին նոքա՝ այսինքն բանն և ձայնն. և լեզուաւ յօ՛դս բախեալ՝ հասանէ մինչև ի *լսելիս*, և անդ ձայնն արտաքոյ մնացեալ, և բանն անմարմին ի միտս լսողացն նստեալ: - 131. Երկրորդ՝ զի ձայնին ընդունարան է *լսելիքն* մերձ գոլով օդոյն: - 131. Վասն երրորդին անչա՞փ է թէ չափաւոր՝ գիտելի՛ է, զի անչա՛փ է շնորհին ըստ իւրում ինքնութեան. այլ չափաւորի՛ ըստ ըընդողին կամաց և ըստ ընդունողին կարեաց. որպէս բան մարդոյ ի *լսելիս*: - 140. Զի ունի զգայարանք. այսինքն տեսանելի՛ք՝ *լսելիք*՝ և այլն: - 143. Իսկ թէ կամիս ուսանիլ թէ զի՞նչ է նիւթ պսակին. որ ինչ առ աստուածութեան իւրում մեծութիւն գտանի, զա՛յն պատրաստեաց սիրելեաց իւրոց. զոր ո՛չ կարեմ զմտաւ ածել. կամ վայրապար *լսելեօք* լսել: - 161. Աշխարհս ընդէ՞ր ոչ ունի զգայարանք. այսինքն տեսանելիք. *լսելիք*. և այլն: - 179. Այլ ձայնն յա՛մր հասանէ ի *լսելիս* քան զփայլակն. վասն որոյ յետո՛յ լսի: - 204. Յոտոտելիքն և *լսելիքն* օդոյն՝ ի վերոյ նորա: - 215. Զի շօշափելիքն ի ներքո՛յ է որպէս երկիր. և ճաշակելիքն ի վերոյ որպէս ջուր. *լսելիքն* յօդն է. և տեսանելիքն հուրն ի վերոյ: - 235. Իսկ երկուքն իշխանականք. որ է՛ տեսանելիքն և *լսելիքն*. ի հեռաստանէ՛ զգան: - 235. Նա՛խ՝ զի յառաջ եղեալ նմա՝ լո՛յսն է որ է վերին տարր. և *լսելեացն* օդն: - 235. Եւ է՛ արտաքին զգայութիւնքն **Ե**. որ է մասնական զգայութիւն. այսինքն է տեսանելիքն. *լսելիքն*. հոտոտելիքն. ճաշակելիքն. և շօշափելիքն: - 249. Այն է որ թէ ի մասանց հոգւոյն և մարմնոյն այսինքն բանիւ՝ ցասմամբ՝ և ցանկութեամբ, կամ աչօք կամ *լսելեօք* կամ այլ ինչ գործով մեղանչէ դարձեալ, ուխտն ո՛չ եղև ամբողջ. դարձեալ նո՛ր պարտ է ապաշխարել: - 390. Զի տես աչացն հաստա՛տ է քան զլուր *լսելեացն*: - 509. Զոր օրինակ, ներտրամադրեալ բանն մի է՝ և յառաջ բերեալ բազմանայ ի *լսելիս* և ի գիրս: - 529. Եւ դարձեալ զոր օրինակ, բան թագաւորին մի է, այլ ի բազում լեզուս և ի բազում *լսելիս* և ի բազում թուղթս որակացեալ և բազմացեալ, յիւրում միութենէն ո՛չ է քակտեալ: - 529. Զոր օրինակ, բան մարդոյ յիւրաքանչիւր մասնաւոր *լսելիս* բաժանի, և բոլոր և կատարեալ է և ո՛չ մասն: - 530. Արծաթսիրութիւն տեսանելեաց. և Բարկութիւն *լսելեաց*: - 560. Իսկ համեստութիւնն կայանայ ի յասելիսն. այլ և ի տեսանելիսն. ի *լսելիսն*. ի հոտոտելիսն: - 581. Եւ **Ե** արտաքին զգայութիւն. այսինքն տեսանելիք. *լսելիք*. հոտոտելիք. ճաշակելիք. և շօշափելիք: - 622. Վեցերորդ, զի **գ** է բանին տեղիք. մին՝ միտք դատաւորին. և **բ**՝ *լսելիք* դաւողացն: - 742. Վասն ութերորդին, որք աստ ի տեսանելոյ զբարիս և ի լսելոյ խոյս տային. արդարապէս տեսանելի բարեացն պատուեսցին և *լսելեօք* բշւառապէս զարհուրին ընդ իւրաքանչիւրոցն: - 753. Սա՛ է ձորն այն յորում *լսելի* եղև հնչումն տապարին և ա՛յլ գործեաց: - 756. Եւ ի *լսելեացս* հեշտութիւն՝ լուռ՛ զձայն քո: - 771. Եւ նոյն ինքն տէրն բոլորից վկայ քարոզութեան զգործս կատարէր. զի սովորութիւն է մարդկան քան զլուր *լսելեաց* տեսութեան աչաց հաւանիլ: - 785. Այս է՝ զիրատեսակն յերակս աչաց. և զօդատեսակն *լսելեաց*. և զայլսն նմանապէս. և զմաքրագոյնն սոցա ի խելս ի զգուշութիւն զգայութեանց: - 786

***ԼՍԵԼԻ ԼԻՆԵԼ +*** Ապա վասն է՞ր յեմ ասեն զդժոխքն՝ թէ է՛ այր դիւահոտ և ձայն աղաղակի և չարչարանք և այրեցումն չարաչար դիւաց *լսելի լինի*: - 504

**ԼՍԵՄ +** Զի կամ *լսիցեն* ի նախնեացն թէ ի սկզբանէ՛ արար աստուած զերկինս և զերկիր: - 25.

Պատասխանեմք, ո՛վ յանդուգն մեկնիչ դու. յետ *այն..* զինչ վաղճան իցէ թագաւորութեանն նորա. ո՛վ ընկեսցէ և յի՛նչ պատճառս. և ո՞չ *լուար* ի հրեշատակէն, «թագաւորութեան նորա վախճան մի՛ լիցի»: - 41-42. Զի **բ** թագաւորութիւն *լուար* ի գրոց. **ա** ըստ արարչութեան, և **բ** ըստ տնտեսութեան: - 42. Այլ ա՛յս է լուծումն, զի յորժամ *լսես* թէ մի է աստուած, զընդ աստուած ասելոյն՝ զերրորդութիւնն իմացիր. զի ո՛չ է առանձին, այլ հասարա՛կ է աստուածութիւնն: - 47. Եկն առ յիսուս ասելով՝ «վարդապետ բարի». զի *լսիցէ*՝ աշակերտ բարի: - 47. Իսկ զի բարեխօսել *լսեմք* հոգւոյ և որդւոյ: - 48. Եւ յայսցանէ էն առաւել է. զի Աստուածն յաստ էած զմեզ, և կամ ստեղծօղ, և կամ ճանաչօղ *լսի*: - 49. Նախ՝ զի մելքի թագաւոր *լսի*: - 50. Իսկ յորժամ զյայլումն *լսեն*՝ արձակին ի վերայ մեր ասելով, եթէ յայլո՛ւմ է՝ պատահումն է ի հայր որպէս զօրութիւնս առ մեզ. իսկ եթէ զօրացեալ է՝ և ընդ զօրանալն դադարեսցէ ամենայնիւ. շարժումն եղիցի և ոչ շարժօղ: - 52. Դարձեալ՝ յորժամ ասի, թէ *լսիցէ* «ի հօրէ», և կամ «առնուցու», մի՛ իմասցի այնու թէ բղխումն հոգւոյն սրբոյ տակաւին ապառնի էր. զի յաւիտենակա՛ն էր: - 64. Դարձեալ ասէ, «*լսես* ծնունդ՝ զորպէսն մի՛ քններ. *լսես* թէ հոգին սուրբ յառաջ եկեալ է ի հօրէ, զորպէսն մի՛ հարցափորձեր. զի քննելն յանդգնութիւն է. հաւատալն բարեգործութիւն է. և ճանաչելն կեանք յաւիտենական»: - 65. Առ երրորդն ասեմք՝ թէ յիմարութիւն է ամենևիմբ և մոլորութիւն իսկ ի *լսել* զայս: - 76. Զի՞նչ է պատճառ՝ որ արտաբերեալ բանս մեր միաւորեալ է ընդ ձայնի. և բացակայքն զձայնն *լսեն*՝ և զբանն ո՛չ: - 131. Երրորդ՝ բացակացեալն ընդ աղօտ *լսէ* ո՛չ զձայն բերանոյն, այլ զձայն բախման օդոյն. որպէս արձագանչումն յինքն նկարէ զձայնն և ո՛չ զբանն: - 131. Նմանապէս և նըւագ ձայնն այն՝ փոխո՛ւմն է առաջին ձայնին. վասն այն *լսէ* զձայնն՝ և ո՛չ զբանն: - 131. Երրորդ՝ զի սէրօբէն մաքրական *լսի* և հրաբերձ. ըստ որում մաքրեաց զմարգարէն. և քերօբէն իմաստութեամբ լուսաւորիչ. և աթոռքն ուղղութեամբն կատարիչ: - 135. Երկրորդ՝ հրեշտակն պատգամաբեր և յայտնօ՛ղ *լսի*. և առհասարակ զծածուկս առնուն յառաջնոցն և յայտնեն երկրորդիցն: - 136. Վասն որոյ գրով և բանիւ՝ այսինքն ընթերցմամբ և *լսելով* ժողովեմք զգիտութիւն: - 143. Եւ ասեն, սուրբ սուրբ սուրբ տէր զօրութեանց. որպէս *լըւաւ* եսայի: - 144. Երրորդ՝ անկումն նոցա է՛ր ակնկալութիւն տանջանցն. և զայս մինչ ի քրիստոս ո՛չ գիտացին զպատրաստեալ տանջանս իւրեանց. այլ յորժամ զբացախօսութիւն գեհենին *լուան* ի քրիստոսէ՝ ասէին՝ «մի՛ յառաջ քան զժամանակն տանջէր զմեզ սուրբդ աստուծոյ. գիտե՛մք զքեզ զի տանջօ՛ղ ես մեր»: - 153. Չորրորդ՝ թոյլ տայ փորձութեան արդարոց ի յուղղութիւն այլոց. որպէս ղազարոյն և մեծատանն. զի տեսանելով զղազարոս՝ և *լսելով* վասն մեծատանն՝ զարհուրիմք և գամք յուղղութիւն: - 158. Իսկ թէ կամիս ուսանիլ թէ զի՞նչ է նիւթ պսակին. որ ինչ առ աստուածութեան իւրում մեծութիւն գտանի, զա՛յն պատրաստեաց սիրելեաց իւրոց. զոր ո՛չ կարեմ զմտաւ ածել. կամ վայրապար լսելեօք *լսել*: - 161. Երկրորդ՝ տեղի *լսի* սահման. ըստ որում բովանդակէ՛ զբնութիւն իրին: - 172. Երկրորդ՝ զի ձեռամբ գրչի մտանէ ի բառ. և առանց բերանոյ բարբառի. և տեսանի աչաց. և *լսի* ականջաց. և ուսուցանէ զմիտս: - 177. Երրորդ՝ զի արարած *լսելով*՝ մի՛ կարծեսցես օտար ի նմանէ զեղեալքս, կոչէ՛ ծնունդ. և յորժամ ծնունդ *լըւիցես*, մի՛ կարծեսցես յէութենէն աստուծոյ զեղեալքս՝ ի վերայ բերէ արարած: - 179. Կարծեմ թէ և քեզ ծանր թուի հարցումնս այս. սակայն մտաւորաբար *լո՛ւր*: - 180. Եւ ի նիսանի մեկն կազմութիւն մարդոյն է. զի նիսանն կազմութիւն *լսի*: - 191. Այս է յորժամ ընթեռնումք յերկար զպատմութիւնն և *լսեմք*. իբրու թէ տեսանեմք աչօք. և մտօք վայելեմք: - 192. Ասի և բօթ. այսինքն սուգ և տրտմութիւն վասն ելիցն ի դրախտէն, և *լսելոյն*՝ «հող էիր և ի հող դարձիցս»: - 200. Այլ ձայնն յա՛մր հասանէ ի լսելիս քան զփայլակն. վասն որոյ յետո՛յ *լսի*: - 204. Եւ այն զի աչքն ի դէմքն է, և ականջն ի կողմանէ. զի աչքն ուղղակշիռ ի դէմն տեսանէ. և ականջն շուրջանակի յամենայն կողմանէ *լսէ*. ի վերոյ ի ներքոյ և այլն: - 235. Նա՛խ՝ զի ի տիւ և ի գիշեր *լսէ*: - 235. Երկրորդ՝ զի յամենայն կողմանէ *լսէ*: - 235. Երրորդ՝ զի զաստուածային բանս և զհոգևորս ականջն միա՛յն *լսէ*: - 235. Վասն է՞ր տեսանելն հաստա՛տ է քան *զլսելն*: - 239. Երկրորդ՝ ցուցմամբ. զի տեսանելն զհաւատն նշանակէ որ է հաստատ. և *լսելն* զուսումն ճարտարութեան: - 239. Եւ դարձեալ՝ *լսելն* խափանի ի յարութեանն: - 239. Յականջն դառն. որ զչար բանս մի՛ *լուիցէ*: - 243. Վասն որոյ զխրատ և զուսումն ո՛չ *լսեն* մեծամեծք: - 251. Դարձեալ զանազանութիւն, զի հանճարովն ճանաչի աստուած լուսաւորութեամբ *լսելոցն* ի գիրս սուրբս. իսկ իմաստութեամբ ճանաչի աստուած ըստ ինքեան: - 270. Տասներորդ՝ մի և նոյն միտք է յաստուած որով զամենայն տեսանէ և զամենայն բարբառ *լսէ*. նոյնպէս և ի մարդս մի իմացումն է որ զանազան զգայարանօք իմանայ: - 271-272. Երկրորդ՝ հեշտութիւն խօսակցիլ ընդ օձին. և վասն այն կամեցաւ *լսել*, զի հեշտացաւ վասն փառաց աստուածանալոյն: - 280. Հինգերորդ՝ երկիւղն յայնմ. զի *լլան* զձայն գնալոյ տեառն և երկեան: - 280. Եօթանասուն, Վասն սիրոյ աստուծոյ *լո՛ւր*

իսրայէլ: - 285. Նախ՝ զի սա՛ այրարատ *լսի*: - 294. Եւ ի հողմոյն յայնմանէ հոտ անուշութեան դրախտին բուրեաց ի նոսա. և տեսիլ իմանալի տեսին, և լուր իմանալի *լուան*. և յայնմանէ մոռացան զառաջինն. և որպէս ի քնոյ զարթուցեալք ո՛չ *լսէին* զլեզուս միմեանց: - 298. Եւ տէրն մեր **լ** ամեայ մկրտեցաւ. զորմէ հրամայեաց հայր՝ դմա՛ *լուարուք* ամենայքն: - 313. Հինգերորդ՝ ըստ առաջին կարգին դարձեալ ասացին բարեկամքն յոբայ՝ թէ հաճո՛յ ես աստուծոյ՝ *լուիցէ* և խօսեսցի աստուած. վասն այն առաջի նոցա խօսեցաւ և վկայեաց: - 326. Նախ՝ զի զառաջին վկայութիւնն յոբայ անմարմինքն իմացան. դարձեալ վկայեաց՝ զի *լուիցեն* մարդիկք: - 326. ...**բդ**՝ խլից *լսել* տայր. **գդ**՝ համերց խօսիլ. **դդ**՝ ձեռաց շարժումն. **եդ**՝ կաղաց գնալ...: - 328. Որպէս մովսէս *լուաւ* զպատգամն և ետ ժողովրդեանն: - 330. Երրորդ՝ ի *լսելոյ*. որպէս զաւետիսն աբրահամու *լուաւ* յետ **ղճ** ամի լինիլ: - 336. Եօթներորդ՝ զի նոր իմն չնաշխարհիկ կազմեաց. նոր ժողովրդեանն և նոր օրինացն, իցէ և նո՛ր տաճար հռչակեալ ընդ ծով և ընդ ցամաք. որպէս պսակ և փառք արդարոցն է՛ զոր ակն ո՛չ ետես և ունկն ո՛չ *լուսաւ*. նոյնպէս և սա՛ ի զգալիսս անհաս ի մտաց մարդկան: - 342. Նա՛խ՝ զոր *լւան* զօրէնս ականջօք, տեսցեն և աչօք զի հաստա՛տ է տեսն քան զլուրն: - 349. Զորօրինակ թագաւոր ոք յորժամ *լսէ*՛ զգոյժ որդւոյ իւրոյ մեռելոյ, խորտակէ՛ զթագն, և զամենայն ինչ որ վասն նորա՛ է: - 349-350. Երկրորդ՝ նոքա զձայնն ի հեռուստ *լսէին*. և մեք զբանն ի մօտոյ: - 353. Երրորդ՝ զձայնն միայն *լսեցին* և զտեսիլն ո՛չ տեսին. և մեք *լուար* և տեսաք և շօշափեցաք զբանն կենաց: - 353. Իններորդ, զձայն և անասունք *լսեն*. և զբանն մարդ միայն: - 354. Չորրորդ՝ ամսամուտն նոցա. զոր ի նորանալ լուսնին տօնէին. իսկ մեզ տօն կուսին մարիամու որ լուսաւորութիւն *լսի* ըստ ոմանց: - 372-373. Կամ ո՛չ *լսել* աղաղակի մերոյ. իբր երկաթի երկինք ընդ մէջ գոլով: - 376. Չորրորդ՝ պակասեալ է զօրութեամբ տեսանել և *լսել* և այլն: - 377. Փորձանքն է՝ որպէս թէ զայս առնես՝ *լսեմք*. և թէ ոչ առնես՝ ո՛չ *լսեմք*. և Չարաչարն՝ հայհոյութեամբ տրտունջն է: - 381. Այլ որ զուղիղն ասեն ա՛յս է, կորխ՝ եցոյց զօրինակ զղջման. զի *լուաւ* խրատուն մովսէսի և մնաց ընտրութեանն աստուծոյ ի դուռն խորանին: - 382. Եւ թէպէտ զարհուրելի բանս յերկարեաց ի խրատս, ո՛չ *լուան*. վասն որոյ ո՛չ սրբեցան: - 382. Եղիազար՝ աստուծոյ զօրութիւն *լսի* որ է՛ քրիստոս և քահանայ և փրկիչ մեր. և իշխանք՝ **բժ**ան առաքեալքն աթոռակիցք քրիստոսի: - 391. Եւ զի զայս ամենայն վկայութիւնս նշանի տեսին աչօք և *լսեցին* ականջօք և ո՛չ հաւատացին. վասն այն վրէժ խնդրեաց աստուած ի նոցանէ. սատակեցան և ցրուեցան. «յաստուծոյ աչացն ելին, և ամենայն մարդկան ատելիք եղեն»: - 400. Իններորդ՝ և զեծցին յընդունայն վաստակոց կռոցն որ ոչ օգտէին. զի ունայնութիւն *լսի* գեբաղն: - 402. Ասա՛ թէ՝ քահանայիցն հրամայեաց ի բաց կալ յամուսնութենէ յորժամ մտանէին ի տաճարն և ի խորանն. և յորժամ *լսէին* զօրէնս աստուծոյ գօրեայ սրբեցան: - 404. Երրորդ՝ վասն հասարակ յարութեանն. զորմէ *լուաւ* սատանայ և բեկաւ ողն նորա: - 409. Վեցերորդ ըստ մտաց, զի մովսէս ջրածին *լսի*. զի որք ո՛չ ծնանին աւազանաւ, ընդ մահու իշխանութեամբ են: - 409. Նա՛խ՝ զի ընդ աստուծոյ խօսեցաւ և ետես և *լուաւ* զբանն: - 411. Նա՛խ՝ ըստ անուանն. զի սամփսոն՝ արեգակն կամ փրկութիւն *լսի*: - 421. Նոյնպէս և դևք ի նրբութենէ տեսութեան իւրեանց՝ կամ ի *լսելոյ*՝ խաբեն, զառաջիկայն պատմելով: - 430. Երրորդ՝ զի որք *լսեցին* զմեղսն դաւթի, տեսցեն և զզղջումն: - 432. Տասներորդ՝ յորժամ եկն հեզութեամբ *լսէր* ի նմանէ. իսկ զայս ամենայն համեմատելով ի վերայ հրէիցն՝ յիրաւի ուրեմն դատապարտեսցէ զնոսա ի դատաստանի: - 442. Նա՛խ՝ զի ուսուսցէ, եթէ մի անգամն ո՛չ *լսի*՝ պա՛րտ է անձանձիր աղօթել. որպէս այրին որ ժտելովն էառ: - 444. Յաղագս այսորիկ նւազ և փոքր *լսի* գործ արդարութեան քան զգործ ողորմութեան: - 458. Նոյնպէս պա՛րտ է ամենայն մարդոյ յորժամ *լսիցէ* զբանն, նախ խորհիլ և հարցանել, և ապա՛ հաւանիլ: - 465. Որպէս և ասաց եսայեաւ (’ի ժամանակի ընդունելութեան *լուայց* քեզ. և յաւուր փրկութեան օգնեցից քեզ: - 467. Իններորդ՝ զի ի հոգի՝ ի նմանամասունս և յաննմանամասունս այլ և ա՛յլ գործէ. ըստ որում ակն տեսանէ և ո՛չ *լսէ*. բերանն ճաշակէ՛ և ո՛չ հոտոտէ: - 479. Երրորդ որ ասէ «որդի» նշանակէ զհաւասարութիւնն ընդ հօր. զի որդին *լսի* հաւասար հօր: - 487. Երկրորդիւն *լսել* աղաչանաց: - 492. ...բայց մագդաղենացին ջե՛րմ էր ի սէրն քրիստոսի՝ եկաց զի ա՛յլ ինչ *լուիցէ* կամ տեսցէ: - 515. Այնց է իմանալ, ուր ժողով լինէր մի լեզուաւ խօսէր ոք առաքեալ, և ամենայն ոք *լսէր* իւր ձայնիւն: - 525. Իսկ աստուածաբանն ասէ, ուր պիտոյ էր՝ յամենայն լեզուս խօսիլ կարէին. զի լիցի շնորհքն խօսողաց և ո՛չ թէ *լսողաց*: - 525. Կաթողիկէն ընդհանրական *լսի*. իսկ եկեղեցին ժողովումն: - 532. Չորրորդ, գռեհիկ. զոր սովորութեամբ *լուեալ* ասեն՝ ձմեռն գայ, և զկնի այնորիկ գարուն ամառն և աշուն: - 536. Նոյնպէս՝ որք *լսեն* և ո՛չ առնեն, չա՛ր է: - 537. Եւ որք ո՛չ *լսեն* և առնեն, բարի՛ է: - 537. Եւ որք *լսեն* և առնեն, առաւել բարեգոյն է: - 537. Եւ որք ո՛չ *լսեն* և ո՛չ առնեն, չարագոյն է: - 537. Վերինն որ առ աստուած և առ սուրբս, երբեմն

յայտնութիւն *լսի*. երբեմն գոհութիւն և բարեբանութիւն. երբեմն մաղթանք և աղաչանք: - 539. Եւ յովսէփ փալանացի, և եզնակ կողբացի թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի կոստանդնուպօլիս. *լուան* զժողովոյն և գնացին ի քաղկեդոն. զի չէր յոյժ հեռի ի ճանապարհէն որով գային ի հայս...: - 543. Նա՛խ՝ զի սիրելին յօժարութեամբ *լսէ* սիրելոյն: - 575. Մեք այսպէս *լուաք* ի սուրբ գրոց թէ՝ անարժան ուտելն առնէ յուդա. և ո՛չ թէ միաւորութեամբ զմարմին և զարիւնն ճաշակել: - 598. Եւ սոկրատ պատմագիրն ասէ թէ՝ մեծն իգնատիոս աստուածազգեացն ետես երկնային_զօրս. և *լուաւ* ի նոցանէ...: - 631. ...և յոմանց *լուաք* թէ զսուրբ յակոբին այլ: - 637. զի շաբաթն հանգիստ *լսի*: - 642. Նա՛խ՝ զի սաղմոսն երգ *լսի*. և ի հինգն յամենայն ժամ զսա՛ երգէին ի տաճարին...: - 643. Որպէս ժողովուրդն գնաց մերձ ի լեառնն, և մեզ պա՛րտ է յոտաց կալ և յառաջ գնալ և *լսել*: - 644. Ովսաննայ՝ ի յեբրայեցւոցն ի մերս՝ փրկութիւն *լսի*. - 644....զոր նշանակէ **դ** թիւն. և ուրբաթն սուգ և բօթ *լսի*՝ պահելի՛ է: - 653. Նախ՝ զի *լսելովն* զկամս աստուծոյ կատարեմք. իսկ պատարագաւն զմերս: - 658. Իսկ վախճանեալն կատարեալ *լսի*. որպէս թէ ոք սկսանի երթալ ի ճանապարհ կամ ի գործ ինչ և ի յաւարտիլն կատարած ասի: - 666. Այլ մեծն ներսէս ասէ թէ՝ սուրբքն ի ձեռն պահապան՝ հրեշտակացն երկին. թէ յերազս թէ յարթնութեան. և օգնեն մեզ. և խօսին. և *լսեն* զաղօթս մեր: - 685. ...և են առ աստուած ի հանգիստ որպէս *լուաք*. և ճշմարիտ է հանգչիլն ի թանձրութենէն՝ յախտաւոր կրից զերծելոցն և առ աստուած եղելոցն: - 696. Անդ ի քունն ձայն *լսէ* թէ՝ կին դու յղացիս մեծ ոմն: - 706. Զի թէ զչգոյն կոչէ ի գոյ և *լսեն* նմա, քանի՞ առաւել զգոյն ի գոյից ժողովէ՛ և նորոգէ: - 714. Որպէս առաքեալքն ի մի լեզու քարոզէին և ամենեքեան ի լեզուս իւրեանց *լսէին*: - 739. Նոյնպէս և ի միոյ ձայնէն ոմանք զօրհնութիւնս և այլք զանէծսն *լսեն*: - 739. Նոյնպէս ի միոյ վճռէն՝ եկա՛յք և գնացէ՛ք *լսի*: - 739. Եւ պետրոս և որդիքն զեբեթեայ յորժամ *լուան* ի հօրէ «դա՛ է որդի իմ սիրելի դմա *լւարուք*», ապա և նոքա վկայեցին, և խաչեցաւ քրիստոս: - 742. Վասն ութերորդին, որք աստ ի տեսանելոյ զբարիս և ի *լսելոյ* խոյս տային. արդարապէս ահագին տեսլեամբ և լսելեօք թշւառապէս զարհուրին ընդ իւրաքանչիւրոցն: - 753. Զոր ակն ո՛չ ետես, և ունկն ո՛չ *լուաւ*, և ի սիրտ մարդոյ ո՛չ անկաւ, զա՛յն է պատրաստեալ աստուած սիրելեաց իւրոց: - 761. Եւ այլն ամենայն որ *լսի* ի սուրբ գիրս՝ անդ կատարեսցի: - 762. Եւ ի լսելեացս հեշտութիւն՝ *լուր*՛ զձայն քո: - 771. Դարձեալ ասեմ, թէ անունս այս՝ պակասութիւն, նոյն է որ *լսի* չարչարանք. զի յորժամ կրէ ոք զչարչարանս զայս ինչ կամ զայն, պակասի ի նմանէ այն ինչ կամ այն. այսինքն առողջութիւն, կեանք, և այլն: - 781

**ԼՍԵՑՈՒՑԱՆԵՄ +** Ասեմք եթէ՝ ձայնիւն և պսակաւն եցոյց մարդկան և *լսեցոյց* ի յաչս և ի յականջս թէ զայնպիսի կեանս վիճակեցին նոքա որք սուրբք են ի մարդկանէ. - 697

**ԼՍՆԱՆԱՄ +** ...և երեսն *լըսնանայ* վասն դեղնութեանն. և կապուտի ընդ կարմիրն խառնելով: - 620

**ԼՍՈՂ կմ ԼՍՕՂ (տ. ԼՍԵՄ) +** Զի մի՛ է ձայնն յառաջ եկեալ յասողէն. իսկ *լսօղք*՝ առաւել և նըւազ ընդունին: - 131. Եւ այսմ է՛ կրկին պատճառ *լսողին*: - 131. Ա՛յլ է բանն՝ և ա՛յլ է ձայնն. զի բանն անմարմին ծնունդն է մտաց. և ձայնն է՛ շարժումն օդոյ ի ձայնական գործեաց ի յօդս բախեալ. իսկ ի սրտի միաւորին նոքա՝ այսինքն բանն և ձայնն. և լեզուաւ յօ՛դս բախեալ՝ հասանէ մինչև ի լսելիս, և անդ ձայնն արտաքոյ մնացեալ, և բանն անմարմին ի միտս *լսողացն* նստեալ: - 131. Եւ սպառնալիքն աստուծոյ և մարդկան ո՛չ են նման. զի մարդոյս դատարկ բան է. իսկ սպառնալիքն աստուծոյ՝ է՛ բան զարհուրական. յորմէ *լսօղքն* զերծանին, և անլուրքն ըմբռնին ի նոյն: - 408. Այլ և աստ ապաշաւելն ոչ ինչ օգտեալ. որպէս և անդ ո՛չ *լսողաց* բերանով հաշեալք. որ և ո՛չ գոյր անդրէն դառնալ. և ո՛չ կարի յօժարացն շահավաճառ եղեալ. ո՛չ գիտ և ո՛չ ողորմ. հանգոյն յիմարացն օրիորդաց: - 789

**ԼՍՈՂՈՒԹԻՒՆ +** Որպէս յարարածս աստուած ճանաչի, այսպէս և ՚ի մարմնոյս զհոգին օրինակաւ իմանալ մարթի... *Լսողութիւնն* ունկն: - 250

**ԼՐԲՈՒԹԻՒՆ +** Եօթներորդ՝ զի լի՛րբ է ոչխարն. և լիրբն արտաքսելի՛ է յեկեղեցւոյ. որպէս յուդա *լրբութեամբ* ել արտաքս: - 617

**ԼՐՈՒԹԻՒՆ +** Իսկ թէ մարդ աստուածացեալ, ստէ՛ ուրեմն առաքեալն՝ ի *լրութենէն* ունայնութիւն ասացեալ. զի այս ընդդէմ նորին ի նըւաստութենէ ի բարձրութիւնս ելանէ: - 68

**ԼՐՈՒՄՆ +** Դարձեալ կերպիւ ինչ ասի հնազանդ որդի հօր գործով՝ *լրմամբ* կամացն: - 42. Երկրորդ՝ զի թէ նա՛ շնորհիւ ունի զորդիութիւնն և ո՛չ էապէս, ապա ուրեմն մասամբ և ըստ կարգի ունի՝ և ո՛չ *զլրումն* աստուածութեանն. զի շնորհն է մասնաւո՛ր պարգև: - 66. Եւ զիա՞րդ բաժակաւ *լրումն* հանդիպեսցի կենդանաբուղխ ջրհորոյ: - 93. Չորրորդ՝ անայէլ. որ է՛ *լրումն* աստուծոյ: - 144. Եւ որպէս *լրումն* զատկի ունի աւուրս **ժզ**. և այլքն **ժե**. և այս ի տումարս մեր է. և իրն որ է՛ լուսինն մի և նոյն: - 192. Երկրորդ՝ զի *լրումն* և մա՛սն են աշխարհի: - 217. Եւ դարձեալ պարզ և յայտնի, այսպէս ասէ սուրբն

գրիգոր նիւսացին եթէ, բանականին շնորհ ընդ *լրումն* մարդկութեանս թա՛փ էանց ի տեսութիւնն աստուծոյ՝ որքանութիւնն և որպիսութիւնն. բանիւն որ ասէ՝ «արար աստուած զմարդն ի պատկեր իւր». այսինքն զբոլոր մարդկային բնութիւնս: - 258. Եւ տէրն վերջին ի *լրումն* օրհնին ի նոյն քանիսն եղեալ հրամանին. զի ո՛չ ելոյծ զօրէնսն, այլ էլից: - 305. Դարձեալ ցուցանէ՝ ի *լրման* ժամանակի տասանց միոյ կորուսեալ դրամին ի խնդիր ելեալ: - 376. Երիտասարդն **գ ծ** է հասակն. իբր թէ հասա՛ք ի չափ *լրման* և աճման: - 378. Եւ տէր մեր *լրումն* աւետեաց ուխտին նախահարցն. և նախ քան զսկիզբն աշխարհի ուխտի աւետեաց մարդկան փրկանաց: - 422. Եւ պենտակոստէ գալուստ հոգւոյն և կատարումն խոստմանց և *լրումն* աւետեաց: - 524. Օծումն է՛ խորհուրդ ի *լրումն* արդարութեան. զի ելեաք ի պատերազմէ՛ զփոշին և զքիրտն սրբեմք. որպէս ելեալքն ի մարմնական պատերազմէ՛: - 587. Եւ դարձեալ գործս այս *լրումն* է աստուածային հրամանին որ ասէ «աճեցէք և բազմացարուք»: - 613. Ա՛րդ՝ նահապետքն առնուին բազում կանայս վասն որդէծնութեան և *լրման* մարմնաւոր օրհնութեանն: - 613. Թովմաս առաքեալն ի թաղումն տիրամօրն է ասացեալ. որպէս գրեալ է ի գիրս որ կանոնական *լրմունք* կոչի: - 633. Չորրորդ՝ *լրումն* օրհնաց քրիստոս եղև մարմնովն. - 647. Ապա և ո՛չ *լրումն* թուոյն. զի միակն յառաջ է քան զբազումն: - 662. Եւ որպէս ի քրիստոս բնակեալ է ամենայն *լրումն* աստուածութեան որպէս ասէ թեսաղոնիկեցոց. նոյնպէս և ի նեռն ամենայն *լրումն* անօրէնութեան...: - 707. Եւ զորպիսութիւն բարեաց և չարեաց. և զերկայնութիւն ժամանակին որով թիւ մարդկան *զլրումն* առցէ: - 716. Եւ ի նոյն կէտ *լրմանն* որ է՛ վախճան ժամանակի և սկիզբն յաւիտենին՝ լինի վերառութիւն համայնից մարդկան որպէս գրէ առաքեալն կորնթացւոց...: - 716. Նա՛խ խոստացաւ հրեշտակօք. աւետեաց մարգարէիւք. դաստիարակեաց օրինօք. և յետոյ երևեցաւ ի *լրումն* նոցին: - 776. Իսկ զի և արուի թէպէտ ո՛չ նոյն պիտոյիւք. սակայն ո՛չ ընդ վայր կազմեցաւ. ի *լրումն* **բժ**ան դրանց անդամոց. ի ներքս մուծանելոյ և արտաքս հոսելոյ զպակաս և զաւելորդս ինչ. անվնաս կելով կենդանւոյն: - 786

**ԼՐՏԵՍ +** Յիսուննը, **բժ**ան *լրտեսքն*. որ բերին ողկոյզ՝ նուռն՝ և թուզ: - 284. Եւ մին յորժամ *զլրտեսքն* առաքեցին ի կազիսա. և **խ** օր յամեցին և մովսէս զ**խ** պահեաց: - 353. Զի՞նչ ցուցանէ երկոտասան *լրտեսքն*: - 380. Երկոտասան *լրտեսաց* տասունքն չա՛ր համբաւէին. և երկուքն զբարութիւն երկրին: - 380. Որ առաքեաց *լրտեսս* ի տիպ առաքելոցն: - 414. Վեցերորդ՝ *լրտես* առաքեաց յեսու: - 417. որք *լրտեսք* եղեն երկրին աւետեաց: - 628

**ԼՑՈՂԱԿԱՆ +** Եւ դարձեալ ասէ՝ «ամենեցուն պատճառ և *լցողական* յիսուսի աստուածութիւնն, ո՛չ մասն և ո՛չ բոլոր գոլով. և բոլոր և մասն. որպէս զամենայն մասն և բոլոր յինքեան առեալ»: - 83

**ԼՑՈՒՑԱՆԵՄ +** Ութերորդ՝ ամպն առեալ ի ծովէն ծածկաբար, և ապա ցօղէ՛ յերկիր յայտնապէս. և *լցուցանէ* զնա ամենայն բարութեամբ: - 206. Երրորդ՝ ի կողմանէ հոգւոյն սրբոյ. զի առաւել հռչակելի և փառաւոր եղև այսպէս. զի ընկալեալ զհոգին՝ վաղվաղակի սքանչելիս առնէին վկայելով քրիստոսի. և զառաքեալսն առատապէս *լցուցանելով*, և նոքա զայլսն: - 522. Գլխաւորագոյն վեցեկի պարգևօք *լցոյց* զնոսա: - 524

**ԼՔԱՆԻՄ +** Երրորդ՝ որպէս պօղոսի տուաւ խայթ մարմնոյն զի մի՛ զ'ի վերուստ առեալ շնորհին և զօրութիւն՝ հպարտութեամբ *լքանիցէ*...: - 158. Այսպէս և աստ մինչև՝ զօր մինչ առ ինքն նշանակէ, և զհանդերձեալն ո՛չ *լքանէ*: - 704

**ԼՕԴԻԿ +** Երկրորդ՝ զի դաւիթ որ հատանէր *զլօղկին* սաւուղի, նա՛ թագաւորէ՛: - 427

**ԼՕՇ +** Եւ շօթն՝ քանձր *լօշ* եփեալ և ապա՛ օծեալ իւղով: - 357

# Խ

**ԽԱԲԵՄ +** Երկրորդ՝ է՛ դարձուցանել զիմացումն ի հաւատալեացն, և յայնցանէ որ ածեն զմարդն առ հաւատալն. այնպիսին *խաբեալ* է. զի բնութեամբ է մարդոյ ո՛չ տեսանել զյետոյս իւր. և ո՛չ առանց աչաց հայելոյ: - 31. Վասն **դ** պատճառի այնպէս որսայ և *խաբէ* զմարդիկ: - 146. Չորրորդ՝ զի չէ՛ր բանաւոր, և բանից տեսակով *խաբեաց* զմարդն: - 218. Եւ զի զ**ե** զգայարանս մարդոյն *խաբեաց*, **ե** մանն առնու ի գնալն: - 219. Երրորդ՝ *խաբելն* ի զբօսանս երթալ: - 287. Իսկ սատանայ փորձէ՛ զի *խաբեսցէ* որպէս զնախահայրն: - 304. Վասն է՞ր հրամայեաց *խաբել* և կողոպտել զեգիպտացիսն: - 336. Եթէ ոք զմեզ զրկէ արդարութի՞ւն է ապա թէ *խաբեմք* և գողանամք զինչս նորա: - 337. Նախ ասեն թէ զնիւթն աստուած կարծեցին, սատանայ *խաբէր* թէ ի՛մ է այս մարմինս իբրև տեառն նիւթոյ...: - 409-410. Նա՛խ՝ զի *խաբի* ի մեղաց և յայտնէ՛ զծածուկս սրտին: - 424. Ութերորդ՝ զի ճչեաց թէ ընդէ՞ր *խաբեցեր* զիս, դու սաւո՛ւղ ես: - 428. Ապա յա՛յտ է թէ՝ որպէս սաւուղ *խաբէր* զկինն, նոյնպէս և կինն *խաբէր* զսաւուղ նմանութեամբն սամուէլի: - 428. Նոյնպէս և դևք ի նրբութենէ տեսութեան իւրեանց՝ կամ ի լսելոյ՝ *խաբեն*, զառաջիկայն պատմելով: - 430. Ասեն թէ՝ **ռ** կին էր սողոմոնի. **է ճ** տիկնայք, և **գ ճ** հարճք. և նոցա **ռ** պահապան. իսկ ի փորձելն *խաբեաց* զհազար կանայսն. և ի յարանցն մին ո՛չ *խաբեցաւ*. այս առասպե՛լ է: - 440. Վասն է՞ր զմարգարէն սպան առիւծն. զի նա *խաբեցաւ* ի ծեր մարգարէէն: - 443. Ո՛չ էր պարտ պարզամտութեամբ *խաբիլ*. պարտ էր հարցանել զնա թէ մարգարէ՞ է թէ ոչ: - 443. Որ զաղամ *խաբեաց* օ՛ձ էր. այժմ ի յորդանան վիշապ: - 488. Երկրորդն է ժողովն թէոդուպօլսի, որ այժմ կոչի կարնոյ քաղաք. ո՛չ այն զօր յետոյ հերակլ քաղկեդոնիկ ժողովեաց և *խաբեաց* զեզր կաթուղիկոսն հայոց: - 544. Զպիղծ կենդանիս ո՛չ *խաբել*. և զհեղձուցեալսն ուտել. և այլ բազում ինչ: - 553. **Զգուշանալ պա՛րտ է յամբարտաւանութենէ, զի զհրեշտակս կարաց *խաբել*. և զհրեշտակն սատանայ դարձոյց**: - 569. Եւ գո՛րծ է սորա՝ որ ինքն նենգութիւն ո՛չ առնէ մարդոյ, և ո՛չ յայլ մարդոյ *խաբի*: - 579. Խոհեմ մարդն ո՛չ պարտի վաղվաղել ի գործ զինչ և է՛. այլ պա՛րտ է նա՛խ խորհիլ որ ո՛չ *խաբի*: - 579-580. ...բայց ըստ վերերևութեանն ցուցանէ զսրբութիւն. զի դիւրաւ *խաբեսցէ*: - 707. ...զի սուտ բարեբաստութեամբ նոցա զայլս *խաբեսցէ*: - 708. Երրորդ, յատեան դատաստանի **դ** խնդրին վկայք. զի միննն կարէ՛ ոք *խաբել* և սուտ վկայել. այլ զերկու և զերեքն ո՛չ: - 742. Եւ թէ յաջոյ յաջուածոց խենեշութիւն մեղկէ, վերնոյն հեշտալեաց հաւատա՛ և ո՛չ *խաբիս*: - 770

**ԽԱԲԷՈՒԹԻՒՆ +** Հինգերորդ՝ այն հրաշք միայն *խաբէութիւն* տեսութեան է: - 133. Եւ ապա ընկեսցի յերկիր և կործեսցէ *խաբէութիւնն* նորա...: - 148. Նախ՝ *խաբէութեամբ* զմարդիկ ի մեղս և ի կռապաշտութիւն ձգելոյ: - 153. Կամ *խաբէութիւն*. որպէս աղուեսուց. զայս և զսոյնպիսիս ունին կենդանիք բնութեամբ ի խնամս ինքեանց: - 216. Ութերորդ՝ *զխաբէութիւնս* որ ճաշակելեօք և տեսանելեօք է՝ ի բաց մերժել, և զամենայն զգայութեանցս ընտրողութիւն: - 281. Չորրորդ՝ կեղծաւորութիւն է և *խաբէութիւն* գովելն զչարն և զանիրաւն. վասն այն ո՛չ ասաց բարեկամացն բարիս՝ զի չարք էին: - 325. Ութերորդ՝ յօրինակ փրկչին յիսուսի, որ զբնութիւն թշնամւոյն խորտակեաց և *զխաբէութիւնն* եբող. զի փորձեսցին ընտրեալքն և խոտեսցին վատթարքն: - 417. Ա՛րդ՝ թէ *զխաբէութիւնն* ո՛չ ճանաչէր, զիա՞րդ զճշմարիտ խորհուրդն գիտէր: - 428. Բայց միայն զի *խաբէութեամբ* աստուածածին ասացին զկոյսն սուրբ: - 543. Երրորդ, չորեքշաբաթն ի խորհուրդ *խաբէութեան* նայի. յորում ասաց օձն ուտել ի պտղոյն. - 653. Ա՛յն է որ սատանայ *խաբէութեամբ* և բռնութեամբ զօրացեալ էր և իշխան եղեալ ի վերայ մարդկան. ի կեանս զանազան չարեօք և կռոց պաշտմամբ...: - 705

**ԽԱԺ +** Հօր անունն ռոմելոս ասեն. զմին ձեռն և զոտն երկայն և միննն կարճ. զմի ակն *խաժ*, և զմիւսն սև: - 706

**ԽԱԺԱԿՆ +** *խաժակն* և փայլուն, համարձա՛կ է ի չարութիւնն: - 246

**ԽԱԽՏԵՄ +** Նոյնպէս և զամբողջութիւն կուսին՝ մուտ և ել աստուածն բան ո՛չ *խախտեաց*: - 469

**ԽԱԾԱՆԵՄ +** Եւ զի բարեկամութեամբ եկն և շրջեցաւ ի թշնամութիւն, ինքն յետս շրջի ի *խածանելն*: - 219. Յայս միտս՝ յորժամ փոշիմանիմք ի վերայ բանի կամ տրտմիմք, ատամամբք զմատն *խածանեմք*...: - 670. Ի ներքուստ խիղճ մտացն *խածեալ*, և արտաքուստ աշխարհ բորբոքեալ: - 738. Վասն երրորդին, զի նախանձ և ատելութիւն ասաէն որպէս որդունք *խածատեցին* զընկերս. արժանապէս որդունքն անդ *խածատեն* զնոսա: - 752. Եւ յորժամ առաքին մեղաւորքն ի հուրն յաւիտենից, գտանեն զծնօղս իւրեանց որպէս գառինք զմարս, և յաւիտեան *խածատեն* զնոսա: - 753

**ԽԱԿ +** Եւ անկատար մանուկն՝ անհաս է և *խակ*: - 365

**ԽԱՂԱԼԻԿ +** Դարձեալ ոմանք ասեն զմին ձեռքն երեք անդամ. այս է՝ մինչ ի *խաղալիկն* մին. և մինչ յարմունկն **բ**. և մինչ ի կուռն երեք: - 241. *Խաղալիկն* **ա** ոսկր. եղև **ը**: - 243

**ԽԱՂԱԼԻՔ +** Եւ դու այսպէս ընկալ և հաստատեա՛ ի քեզ. և լեր միացեալ ամենայն դիմօք և *խաղալեօք* ի համայնից գլուխն միշտ պաշտաճութեամբ ի քրիստոս: - 76. Դարձեալ, **ը** ոսկր է ի թիկանցն մինչ ի *խաղալիքն* այսպէս: - 243. Նոյնպէս ի քրիստոսէ ի մեզ իջանէ կենդանութիւն հոգևոր, և զօրութիւն, և առողջութիւն, և շարժութիւն յօդոց և *խաղալեաց* ի ձեռն հաւատոյն շաղկապութեան: - 532

**ԽԱՂԱՂԱԿԱՆ +** Իսկ ի նորս եկեղեցի քրիստոնէիցս ազգի՝ յաւելեալ է կրկին ժամ. այսինքն յետ առաւօտին զարևագալն. և յետ երեկոյին՝ *զխաղաղականն*...: - 621. Ութերորդ՝ *խաղաղականն* է յետ երեկոյին ժամուն առ հոգին սուրբ. յորում ժամու հոգին քրիստոսի էջ ի դժոխս և խաղաղացոյց զնոսա: - 622. Այլ և *խաղաղականն* որ է ի կարդալն՝ է՛ է փոխ. ի պահպանութիւն **է** զգայարանցս. և ի մաքրութիւն անցեալ գործելեացն: - 622

**ԽԱՂԱՂԱՐԱՐ +** Ա՛րդ *խաղաղարարքն* առաւել ասին որդիք աստուծոյ քան այլքն. - 585. քանզի *խաղաղարարն* է առանց հակառակութեան մարմնոյ՝ աշխարհի՝ և սատանայի. յա՛յտ է զի լինիցի պատրաստ ի յաղթել զփորձութիւն մահու: - 586

**ԽԱՂԱՂԱՑՈՒՑԱՆԵՄ +** Ութերորդ՝ խաղաղականն է յետ երեկոյին ժամուն առ հոգին սուրբ. յորում ժամու հոգին քրիստոսի էջ ի դժոխս և *խաղաղացոյց* զնոսա: - 622

**ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ +** Դարձեալ ասեն թէ՝ աստեղք ունին բնութիւնս ներհակս միմեանց. չար և բարի. և միմեանց դիպեալ ներհականան իրերաց. և առնեն չար կամ բարի խռովութիւն կամ *խաղաղութիւն*. աւեր կամ շինութիւն. և այլն: - 12. Չորրորդ՝ դարձեալ թէ լինէին երկու սկիզբն և հակառակ, մարտնչէին ընդ միմեանս՝ և ընդ սկսեալս իւրեանց. և ոչ ինչ մնայր ի *խաղաղութեան*: - 21. Ասեմք թէ՝ զբանս զայս ասէ մարգարէն վասն *խաղաղութեան* որ եղև սակաւ մի յառաջ քան զգալուստն քրիստոսի՝ և ի բոլոր ժամանակս քրիստոսի, և յետ նորա **խ** ամ մինչև ապստամբեցին հրէայքն հռոմայեցւոց տէրութեանն: - 27. Ա՛րդ՝ յորժամ ծնաւ քրիստոս՝ այնպէս *խաղաղութիւն* էր՝ որ մին մարդ տիրէր ամենայն աշխարհի: - 27. Եւ արդ զինչ զարմանք էր թէ յայնպիսի *խաղաղութեան* ծուլէին զուսերս իւրեանց ի խոփս: - 27. Նոյնպէս ի ժամանակս քարոզութեանն քրիստոսի և առաքելոցն էր *խաղաղութիւն*: - 27. Եւ ի տնտեսականն. որպէս Աստուած փրկիչ. կամ արդարութեան. կամ *խաղաղութեան*. կամ աբրահամու. կամ իսահակայ և այլն. և այս հասարա՛կ է Երրորդութեանն: - 49. Երրորդ՝ զի թագաւոր էր սաղիմայ. որ է՛ *խաղաղութեան*: - 50. Եւ քրիստոս *խաղաղութիւն* արար յերկինս և յերկրի. և *զխաղաղութիւն* իւր ետ մեզ: - 50. *Խաղաղութիւն* է հայր. որ դէմ ասէ. «իբրև զգետ *զխաղաղութիւն* իմ»: - 56. *Խաղաղութիւն* է և որդի ըստ պօղոսի, «նա՛ է *խաղաղութիւն* մեր որ արար զերկոսեանն մի. և արար *խաղաղութիւն* արեամբ խաչին իւր»: - 56. *Խաղաղութիւն* է և հոգին սուրբ: - 56. Զի մելքի՝ որ է թագաւոր. և սեդեկ՝ արդար. և սաղիմն *խաղաղութիւն* թարգմանի: - 301. Վեցերորդ՝ զի սաղիմայ ասէ՝ որ է՛ եէմ. և թարգմանի *խաղաղութիւն*: - 302. Եւ քրիստոս թագաւորն վերնոյն երուսաղէմէ մի՝ զնոյն *խաղաղութիւն* ետ առաքելոցն զոր ի ծննդեանն հրեշտակք երգէին: - 302. Զի բարերարե՛ն և պատուիասե՛ն. զոմանս պահելով ի *խաղաղութեան*: - 345. Եւ թէ սպիտակէ՛ր, *խաղաղութեան* էր նշան: - 349. Չորրորդ՝ զի յայտնեսցի թէ՝ ի մէջ ծառայութեանն յեգիպտոս այնքան բազմացոյց զնոսա խնամքն աստուծոյ. այսքան բազմութիւնս ի տեղիս իւրեանց *խաղաղութեամբ* բնակեալ՝ ո՞րքան անթիւ բազմասցին: - 377. *Խաղաղութիւնն* ի միւս անգամ գալուստն: - 379. Իսկ ճշմարիտն աստուած զայս ո՛չ խնդրէ. այլ երկիւղ խնդրէ ի տըղայոց որով խորշին ի չարէ. և սէր ի սրտէ փոխանակ անասնոց. և *խաղաղութիւն* առ ընկերս և օտարս...: - 396. Դաւիթ էառ զերուսաղէմ և շինեաց իւր տուն. և տէրն զվերինն երուսաղէմ, և ետ իւրայնոցն *զխաղաղութիւն*: - 438. Այլ ա՛յս է ճշմարիտն. զի պատերազմ և խռովութիւն էր յաւուրս դաւթի մինչ սատակեաց զնոսա. և որդի նորա ի *խաղաղութեան* ժամու շինեաց զտաճարն: - 439-440. Այլ ի *խաղաղութեան* հոգւոյ և մարմնոյ և այլոցն: - 440. Երրորդ՝ սողոմոն *խաղաղութիւն* թարգմանի: - 440. Եւ տէր մեր արար *խաղաղութիւն* յերկինս և երկրի: - 440. Վասն է՞ր հարաւ ովսիայ յորժամ խոստացաւ *խաղաղութեամբ* ննջել: - 446. Հինգերորդ՝ տըւչական *խաղաղութեան*. ըստ այնմ «*խաղաղութիւն* ընդ ձեզ. ե՛ս եմ մի՛ երկնչիք»: - 464. Եւ *զխաղաղութիւն* «տէր ընդ քեզ»: - 464. Զի յաշխարհի աստ նեղութիւն ունիք. ընդ իս *զխաղաղութիւն* ունեցիք: - 519. Քառասունն**դ**, Մասնաւոր Աղօթք. և Օրհնութիւնք. և *Խաղաղութիւն*. Քարոզ. և Մաղթանք և Գոհութիւն: - 527. Դարձեալ, բարկութեամբ զպատկերն աստուծոյ կորուսանեմք ի մեզ. և հոգին սուրբ փախչի ի բարկացեալ հոգւոյ. զի *խաղաղութիւն* է տեղի նորա: - 570. Յաւասարին

զսէր և *զխաղաղութիւն*: - 579. ...այսինքն Աղքատութիւն հոգւոյ. Սուգ. Հեզութիւն. Քաղց արդարութեան. Ողորմածութիւն. Սրբութիւն սրտի. և *Խաղաղութիւն*: - 583. *Խաղաղութիւնն* արտաքսէ՛ զրղջախոհութիւնն. քանզի ընդ ճաշակելն զհոգևորն՝ անհամանայ նմա ամենայն մարմնաւոր: - 583. Չորրորդ՝ ի *խաղաղութեան* բնակի. զի ուր խնդութիւն է՝ *խաղաղութիւն* է. և ուր *խաղաղութիւն* է՝ խնդութիւն է: - 584. *Խաղաղութիւն* է ի կայումն առաքինութեան. յորում է հեշտութիւն ի յաստուած առանց հասարակութեան մարմնոյ՝ աշխարհի՝ և սատանայի: - 585. Եւ թէ իցէ ինչ՝ անզօ՛ր է. ապա յա՛յտ է զի *խաղաղութիւնն* է յո՛յժ մաքրեալ հոգւոյն: - 585. ...սակայն ըստ ներքնոյն առաւել նմանեցուցանէ *խաղաղութիւնն*: - 585. Դարձեալ *խաղաղութիւն*, սիրով առ հոմացեղսն կալ մնալ: - 585. Եւ *խաղաղութեան* տեսակք գ են: - 585. Նախ որ *խաղաղութիւն* առնէ այլոց ընդ այլ. որպէս միջնորդք: - 585. Երրորդ ինքն առ ինքն. որպէս առաքինիքն ի մէջ հոգւոյն և մարմնոյն և մտացն առնեն *զխաղաղութիւն*. և զպատերազմն որով ցանկայ մարմինն հակառակ հոգւոյն, հանեն ի միջոյ: - 585. Զի՞նչ է *խաղաղութիւն* որդւոյն աստուծոյ: - 585. Այս է՝ զմեղքն՝ զկամքն չար՝ և զսատանայ՝ որ խռովարարք էին եբարձ ի միջոյ. և արար *խաղաղութիւն* յերկինս և յերկրի: - 585. Նա՛խ արար *խաղաղութիւն* յանձն իւր. զի զաստուածային և զմարդկային բնութիւնն միաւորեաց յինքեան ի մի կամս և ի մի ներգործութիւն անբաժանաբար: - 585. Ա՛րդ՝ առաջինն ինքն առ ինքն *խաղաղութիւն*. և վերջինն ինքեան ընդ այլս *խաղաղութիւն*. և միջին երեքն, այլոյ ընդ ա՛յլ է *խաղաղութիւն*: - 586. Առաքինութիւնս այս ցուցանէ թէ համբերել հալածանաց վասն արդարութեան՝ կապակցեալ է ընդ *խաղաղութիւնն*. - 586. Զի տանելն մահու վասն քրիստոսի՝ է՛ նոյն աստիճան ըստ *խաղաղութեանն*: - 586. Զի ի վերոյ *խաղաղութեան* ո՛չ է այլ առաքինութիւն. զի *խաղաղութիւնն* է վախճան և կատարումն ամենայն առաքինութեանց: - 586. Սա՛ առնու *զխաղաղութեան* ողջոյնն և տայ ժողովրդեանն: - 606. ...և նա վերընծայէ առ աստուած զօրհնութիւնն, և *զխաղաղութիւնն* բերէ մեզ պարգև: - 625. Զի՞նչ է որ քահանայն աղօթէ՛ և եպիսկոպոս *զխաղաղութիւնն* տայ: - 625. Ո՛չ զամենայն, այլ զիւրաքանչիւր ժամու առաջին աղօթիցն եպիսկոպոսն ասէ *զխաղաղութիւնն*, և զայլն քահանայն որ աղօթէ՛: - 625. Եւ ա՛յս է պատճառն, զի քահանայն է՛ ի դէմս քրիստոսի, և եպիսկոպոսն հօր աստուծոյ. և *խաղաղութիւնն* է՛ հոգին սուրբ որ ի հօրէ առաքեցաւ. - 625. Վասն որոյ քահանայն աղերսէ՛ զեպիսկոպոսն, և նա՛ տայ *զխաղաղութիւնն*: - 625. Եւ յորժամ քահանայն ասէ *զխաղաղութիւնն* ա՛յս է պատճառն, զի քահանայն է՛ միջնորդ առ աստուած և առ մարդիկ. - 625. *Խաղաղութիւն* ամենեցո՞ւն պարտ է ասել, թէ ընդ ամենեսեան: - 625. **Ապա ուրեմն պա՛րտ է ասել՝ «*խաղաղութիւն* ամենեցուն». քան՝ «ընդ ամենեսեան»:** - 625. Վասն է՞ր ընդ *խաղաղութեանն* խաչակնքեմք: - 625. **Իսկ փառքն, և ալէլուն, և օրհնութիւն և փառքն, և ամէնն, և ընդ հոգւոյդ քումն, և *խաղաղութիւնն*, այս ամէն Առաքելադի՛ր է**: - 631. Դարձեալ՝ սկիզբն աղօթիցն է՛ առ հայր. և մէջն որ է՛ *խաղաղութիւնն* առ հոգին սուրբ. որպէս ասացաւ ի վերոյ. - 633. Եւ *խաղաղութեամբ* հոգին՝ կատարումն առ հոգին: - 633. ...վասն որոյ երիցս խնդրեմք զի այժմ բաժանեալ հոգին *խաղաղութեամբ* ժամանեսցէ յօթնեակս լուսոյ. - 675. «Զի հոգիք արդարոց ի ձեռին աստուծոյ են. և ո՛չ մերձեսցի ի նոսա չար». որպէս ասէ սողոմոն. և են ի *խաղաղութեան*: - 689. Եւ յետ այնորիկ ոչ առ ժամայն գայցէ տէր ի դատաստան. այլ տացի *խաղաղութիւն* աւուրս **խե**. առ ի հանգիստ սրբոցն և ի յապաշխարութիւն թիւրելոցն: - 709. ...և ասասցեն՝ թէպէտ մեռաւ իշխանն մեր, սակայն մեք ունիմք անհոգութիւն և *խաղաղութիւն*: - 709. Այլ հրէայքն յայնժամ դարձցին ի հաւատս քրիստոսի. և եկեղեցի սուրբ *խաղաղութեամբ* հանգիցէ մինչ ի կատարած աշխարհի...: - 709. Պոռնիկն սակաւ մի արտասուօք դարձաւ *խաղաղութեամբ*: - 745. Ութերորդ՝ վասն վարսին գեղեցկութեանն. և վասն արդարոցն ասէ. «թուեցան յաչս անզգամաց թէ չարչարեցան. բայց նոքա են ի *խաղաղութեան*»: - 766. Ութերորդն է *խաղաղութիւն* առանց խռովութեան. սաղմոսն՝ «ո՛ եդ զսահմանս քո ի *խաղաղութիւն*»: - 767. Նախ՝ որպէս անդանօր ողջունեն *զխաղաղութեան* և շինութեան գոլ. յեղակարծ ժամու հասանիլ բարկութեան: - 788-789

**ԽԱՂԱՄ +** Եւ նա՛ տայ *խաղալ* և շարժիլ ոտից և ձեռաց և այլ մասանց անդամոցն: - 244. Իններորդ, *խաղաց* հոգին ի վերայ դաւթի. և աղաւնակերպ հոգին ի վերայ քրիստոսի: - 436. Երեսունք, յետոյ առ սամուէլ ի նաւաթ գնացեալ և հոգի աստուծոյ *խաղացեալ*. և տէր մեր առ հայր ի յերկինս ելեալ, և յառաքեալսն զհոգին առաքեալ: - 437. Ո՛չ բնաւ, թէպէտ հայր տեսանէ զորդի կամ մայր զդուստր. և կամ զեղբայր և զայլս. ո՛չ միայն ո՛չ ցաւին, այլ ա՛յնպէս լինի հեշտալի, որպէս տեսանեմք զձկունս որ *խաղան* ի վտակս: - 754

**ԽԱՂԱՒԱՐՏ +** Վեցերորդ՝ կեղ՝ և *խաղաւարտ*: - 333. Վեցերորդ հարուածն է՛ կեղն և *խաղաւարտն*.

զի քերքեշէ՛ր զմորթն, և ի վեր եռացեալ լինէր *խաղաւարտն*. և մորմոքէր զմարմինս նոցա: - 334. Երրորդ՝ կեղն և *խաղաւարտն* եղև և ի կախարդսն և զայլ հարւածսն կրեցին. և ո՛չ կարէին ի մովսէս և յահարոն դարձուցանել զնոյնս: - 335

**ԽԱՂՈՂ +** Եւ են որ զերկունքն ևս ուտեն. որպէս *խաղողն*: - 213. Վասն որոյ ի հրոյն ոմն սևանայ. որպէս *խաղող*. և կէսք կարմրին և դեղնին. որպէս բոյսք՝ և տերևք չորացեալ ի հրոյ: - 213. Այլք ասեն թէ՝ *խաղո՛ղ* էր. կամ ցորեան. զի զգինին եւ գրաւական կենաց՝ և զհաց մարմնոյն: - 224. Եւ ո՛չ *զխաղող*, զի զբօսա՛նք է: - 389. Այգի և հնձան երբեմն զչարս օրինակէ՛ և երբեմն զբարիս. որպէս այն «յայգւոյն սոդոմա՛յ էր տունկ նոցա. և *խաղող* դառնութեան». այս չարացն է: - 748. Նախ՝ կոչի սիրտ և անձինք մեղաւորաց, ուր ժողովին ամենայն գործք չար որ է՛ *խաղող* դառնութեան. և ունակացեալ պահէ յինքեան. և հեշտութեամբն ճմլէ հանապազ և արբենայ մեղացն գինով: - 748. Ութերորդ՝ հնձան կոչի և աւազանն սուրբ. զի ի նմա ճմլին և կորնչին ամենայն մեղք մեր. «լուացեալ արեամբ *խաղողոյ* զհանդերձս մեր» և զարդարեալ պէս պէս պարգևօք շնորհաց հոգւոյն: - 749

**Խ ԱՄԵԱՅ** (40-ամյա) - Մովսէս *խ ամեա* էր յորժամ փախեաւ: - 330

**ԽԱՄՐԻՄ +** Եւ թէպէտ զնանիր խոտոյ ասեն ի նոյն ժամն բուսանիլ և կատարիլ և *խամրիլ*, ի նոյն թուլոյս ոչ ելանէ ժամուք կամ մասամբք: - 263

**ԽԱՅԹ +** Երրորդ՝ որպէս պօղոսի տուաւ *խայթ* մարմնոյն զի մի՛ զ՚ի վերուստ առեալ շնորհն և զօրութիւն՝ հպարտութեամբ լքանիցէ ...: - 158

**ԽԱՅԹԵՄ +** Երկրորդ՝ վասն հպարտութեան մարդոյն. զի յորժամ *խայթեսցեն* զնա՝ ծանիցէ զտկարութիւն իւր. որ և զփարաւօն ո՛չ թէ առիւծք կամ առջք հարին, այլ ճանճք և մժղուկք տանջեցին: - 217. Չորրորդ՝ շանաճանճն. զի շնաբարոյք էին և մոլէին յառնականայս շնութեամբ. զի շանց է ոչ զուգակցիլ որպէս զայլ կենդանիս. վասն որոյ ի շանց ելեալ թունալից ճանճք *խայթէին* զնոսա: - 334

**ԽԱՅԹՈՑ +** Ութերորդ՝ զնա օ՛ձ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն զբազումս. և արտաքսեն ի դրախտէ եկեղեցւոյ. և թոյնք իժից ի ներքոյ շրթանց ունելով և *խայթոց*՝ զի առորս մերձենան, ի յսկիզբն բանից կամ ի վերջն՝ մահացուցանեն զհոգիս. երկճղի ունելով լեզու նենգաւոր՝ չար և բարի, ծածուկ և յայտնի: - 35. Կամ *խայթոց*. որպէս մեղուի: - 216. Որպէս փուշք վարդից. և քիսք հասկից. և *խայթոցն* աղնճին: - 217. Երրորդ՝ զի թոյնք և *խայթոցք* նոցա՝ զէն և պահապան է նոցա. զի առիւծքն պատառելովն ապրին. նոյնպէս և այլքն: - 217. Գլուխ օձին մեղքն է. և *խայթոց*՝ կարծին մահին: - 489. Եւ ա՛յլ առաքինութեամբք կոխեալ հատանեմք *զխայթոցն* որ է՛ ներգործական մեղքն և մահ հոգւոց և դժոխք: - 489. ...և յարութեամբն եբարձ զապականութիւն որ է՛ *խայթոց* նմին: - 706

**ԽԱՅՏԱԽԱՐԻՒ +** Այլ և նշանեալ փայտն *խայտախարիւ* յաւազանս եղեալ: - 494

**ԽԱՅՏԱՄ +** Դարձեալ վասն նշանացն քրիստոսի ասեն վարդապետք այսպէս... Երրորդ՝ յովհաննու *խայտալն*: - 471

**ԽԱՅՏԱՌԱԿԵՄ +** Երկրորդ՝ կարկուտն զհպարտ և զհայհոյիչ բանս նոցա *խայտառակէ*, և հուրն զբարկութիւն սրտին զոր ունէին առ որդիսն իսրայէլի: - 334. Յորժամ մեղայ ասաց՝ վասն է՞ր ոչ եբարձ զպատիժն. զի ահա՛ *խայտառակեցան* կանայք նորա: - 432. Երրորդ՝ զի որ մկրտի՝ ի մահն քրիստոսի մկրտի. և քրիստոս միանգամ մեռաւ. և թէ ոք դարձեալ մկրտէ՝ անձանց ի խաչ հանէ զորդին աստուծոյ և դարձեալ *խայտառակէ* որպէս առաքեալն: - 590. Եւ այսպէս ասէ առաքեալն եթէ՝ մերկութեամբ մարմնոյն մերկեաց զիշխանս և զպետս *խայտառակեաց*: - 705. Այլ *խայտառակեսցին* ամօթով: - 726

**ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹԻՒՆ +** Երկրորդ՝ զի կրկին էր պատիժն. սուր ի տանն, և *խայտառակութիւն* կանանցն: - 432

**ԽԱՆԳԱՐԵՄ +** Նա՛խ՝ թէ *խանգարեալ* իցէ սերմն: - 256

**ԽԱՆԳԱՐՈՒՄՆ +** Երրորդ՝ ուղղի մոլորութիւնն որ է՛ *խանգարումն* անդամոցն ի միմեանս սխալեալ ըստ բնութեան տկարութեանն: - 725

**ԽԱՆՁԱՐՈՒՐ +** Եւ արծակօղն կապից՝ *խանծարրոք* պատի: - 470

**ԽԱՇՆ +** Եւ էր մեծութիւն նորա մարմնական, *խաշինք* **եռ** ոչխարաց: - 321. Եւ աստ գիտելի՛ է, զի յետ փորձանացն կրկին եղեն ըստացւածքն նորա... *խաշինքն* բիւր մի և **դռ**: - 326

**ԽԱՉ +** Չորրորդ՝ հրէայքն դաւանին զմովսէս՝ և ուրանան զքրիստոս, *զխաչն* և զօրէնս նորա: - 34. Եւ սոքա մարդադաւան ուրացօղք *խաչին* և կրօնից նորոց: - 34. Եօթներորդ՝ նախ քան *զխաչն*, որ եւ զօրութիւն առաքելոցն: - 50. Նմանապէս և որդին միածին էր ի ծոց հօր և յարգանդ կուսին. ի *խաչին*

անարգեալ՝ և յաթոռ փառաց բազմեալ...: - 71. Կիրք՝ բևեռիլն ի *խաչին*: - 86. Եւ մեռեալ ի *խաչին* զանձն միայն ասէք. որպէս երգէք յերեք սրբեանն ձեր, քրիստոս որ խաչեցար ողորմե՛ա մեզ: - 89. Զնձան *զխաչն* ասէ՝ որ արեամբ ներկեցաւ: - 98. Եւ զտկարանալն ի *խաչին*, զառաւել զօրութիւն նորա. և այլն ամենայն: - 118. Իսկ յանդիմանութեան անկումն դիւաց եղև գալստեամբն քրիստոսի ի ձեռն *խաչին*. և այս չորեքկին: - 153. Երկրորդ՝ զի ի ձեռն անտեղի գործոց՝ փրկութիւն լիցի այլոց. որպէս ի ձեռն *խաչին* քրիստոսի՝ փրկութիւն եղև աշխարհի: - 158. Եւ զայսոսիկ եցոյց քրիստոս նախքան *զխաչն*: - 228. Եւ զչորեքկին որպիսութիւնս զայսոսիկ երևեցոյց ի մարմինն ի՛ւր նախ քան *զխաչն*: - 282. Եւ փոխանակ **յ** կանգնոյն՝ **յ** ամքն ի քրիստոսէ մինչև ի մեծն կոստանդիանոս. ուր յայտնեցաւ *խաչն* փրկչական: - 294. Եւ տէրն եբարձ ի յուս իւր զփայտ *խաչին* մինչ ի նոյն տեղի գողգոթային ուր զենանէր իսահակ: - 306. Եւ տէրն բևեռեցաւ ի վերայ սեղանոյ *խաչին*: - 306. Եւ ի գոչել տեառն մերոյ ի վերայ *խաչին* սարսեցին դժոխայինքն ահաբեկեալ ի կենաց: - 316. Եւ թէպէտ յովսէ՛փ իջոյց ի *խաչէն*, և յովսէփ և նիկոդիմոս պատեցին, այլ ինքն կամաւն էջ ի բազուկսն յովսեփայ և պատեցաւ զմռով: - 316. Իններորդ՝ յոբայ մարմինն նորոգեցաւ յետոյ. և տէր մեր *խաչիւն* նորոգեաց զպատկերն ադամայ և զծննդոց նորա յարութեամբն իւրով: - 327. Եւ տէր ինքն բարձրացաւ ի *խաչ* և զհարեալսն ի թունիցն դիւաց բժշկէր: - 329. Եւ տէրն բազկատարած ի *խաչին* զսատանայ կործանէր: - 329. Եւ տէր մեր *խաչիւն* զծով մեղաց աշխարհի: - 329. Ութերորդ՝ *խաչն* փրկական նախ էր մահու գործիք. զոր առեալ ի ձեռն քրիստոս, և եղև կենաց պատճառ: - 332. Եւ ի ձեռն *խաչին* ներգործին ամենայն սքանչելիք որպէս ի ձեռն գաւազանին մովսէսի: - 332. Երրորդ՝ սառնատեսակ. զի թափա՛նց է *խաչ* նշխարին. և ի մեզ լուսաւոր միտք: - 339. Դարձեալ տապանակն քառակուսի անփուտ՝ է՛ *խաչն* քառաթև անապական աստուածընկալ: - 345. Եւ *խաչիւն* քաւեաց զմեզ. վասն որոյ սուրբ խաչ կոչի: - 345. Եւ *զխաչն* հրաշագործ՝ զկենսատու մանանայն. և բուրվառ զխունկս աղօթից. վէմն սեղանն սուրբ. և քերովբէք քշոցքն **բ**: - 345. Իսկ **ե** կանգուն և կէսն. զի գալուստն քրիստոսի և փրկական *խաչն* և եկեղեցի՝ է՛ ի **ե**երորդ դարն և կէսն երևեալ ի մուտ **զռ** ամին: - 345. Ի յա՛յս միտս յորժամ *խաչ* նկարեմք, զծագ մատին աջոյ մերձ ի բոյթն առնեմք որ է՛ ի համարն **զ**երորդ. զկէս զին նշանակելով: - 345. Դարձեալ՝ աշտանակ *խաչն*: - 347. Եւ **է** բերանքն՝ **է** բանքն խօսեցեալք ի վերայ *խաչին*: - 347. Եւ ձիթենիքն՝ կրկին բարութիւնք *խաչին*. որ զարքայութիւնն եբաց և զդժոխս աւերեաց: - 347. ...և Ալոջ, և Որոջ. ունելով զկէս ամն աւելի քան զերեք ամն ի ծննդենէն մինչև ի *խաչն*: - 361. Եւ միայն յողջակէզ. ի *խաչ* սեղանոյն ի հոտ անուշից հօր և հոգւոյն սրբոյ: - 361. Եւ վասն ուխտի, *խաչի*, և եկեղեցւոյ: Պտուղս: Շօթ: Նաշիհ: Ձէթ: Մոմ: Խունկ. և այլն: - 362. Նշանակէ՛ զպատարագիլն քրիստոսի ի սեղան *խաչին* ի հոտ անուշից հօր և հոգւոյն: - 362. Հինգերորդ՝ կրկին ողջակէզն. մին պատարագն է ամենայն աւուր. և միւսն տօն չարչարաց *խաչի* և մահու յամենայն ամի՛ զոր նոյն խորհրդով կատարէ՛ եկեղեցի: - 363. Դարձեալ՝ կրկին հաւն նշանակէ՛ զքրիստոս. Փայտն, *զխաչն*. և Կարմիր արիւնն. զի աստուծոյ է արիւն. և Զոպայն, զհոգին սուրբ: - 368. Չորրորդ՝ քաւութեանն. որ է տօն *խաչին*: - 372. Հինգերորդ՝ տաղաւարահարքն. որ է՛ եկեղեցւոյ տօն. վասն այն *զխաչին* և զեկեղեցւոյն ի միասին տօնեմք: - 372. Վասն որոյ ի միասին տօնեմք *խաչի* և եկեղեցւոյ. որպէս ասացաւ ի **լե** գլուխն, **լը** համարն: - 373. Երկրորդ, *խաչն* և մահն՝ և յարութիւնն **գ** օրեայ: - 380. Դարձեալ՝ ուռն և լծակն՝ *խաչն*. և Ողկոյզն անապական ճմլեալ ի վերայ *խաչին* հնձանի. և եղև ուրախարար գինի տրտմեցելոցս մեզօք: - 381. Որպէս սափորն կոյսն էր, և գաւազանն *խաչն*, նոյնպէս վէմն քրիստոս: - 386. Նա՛խ՝ որպէս բարձրացաւ օձն ի ձողին. նոյնպէս տէրն մեր ի *խաչին*: - 386. Եւ պա՛րտ է մեզ հանապազ զքրիստոս առաջի աչաց տեսանել ի *խաչ* վասն մեր և հաւատալ. և չարչարակից լինիլ նմա յամենայն ժամ: - 405. Եւ այսու եղանակաւ օրհնեմք զիրեշտակս, զսուրբս, *զխաչ*, և զայլն: - 406. Որ և մովսէս եկեալ ի թաբօր վկայէր նմա, և աղերսէր ելանել ի *խաչ* և բանալ զդուռն արքայութեան. որում մարգարէքն սպասէին: - 411. Քսանևէ, Յուպն եղիսէի *խաչն* էր. ծկիլն **է** անգամ: - 413. Երրորդ՝ յօրինակ փրկչին յիսուսի որ եղև առ *խաչին*: - 416. Եւ ի մեծի ուրբաթի *խաչին*, լուսինն ընթացաւ և ձգեցաւ յարևն, և յետս դարձաւ. որպէս ցուցանի յառաջիկայդ առ խաչելութեամբն ի **լ** գլուխն ի **իզ** համարն: - 416. Եւ տէր մեր *խաչիւն* զբնութիւնս ի տեղի իւր: - 418. Եւ տէրն զեկեղեցիս *խաչիւ* և արեամբ: - 418. Եւ տէրն մեր կանգնեաց *զխաչն* ի գողգոթայ մինչև յերեկոյ և վանեաց զթշնամին մեր: - 418. Եւ տէր մեր ի ժամ *խաչին* խաւարեցոյց զնոսա և մի օրն եղև **բ**: - 418. Եւ տէր մեր *խաչիւն* կործանեաց զկուռս և զպաշտամունս նոցա: - 418. Եւ ի ժամ *խաչին* վէմք պատառեալ. և «ետ զձայնն ի կարկուտ և ի կայծակունս հրոյ» իջանելով ի դժոխս: - 419. Եւ տէր մեր նախ կապեաց զհզօրն ի *խաչին* և զտուն նորա աւերեաց որ էր

ամրոց դժոխոցն: - 419. Եւ տէրն զոսոխն մեր սատանայ իբր զառիծ պատառօղ՝ տարածմամբ ձեռաց ի *խաչին* սատակեաց: - 422. Որ է՛ նախ քան *զխաչն*, և ի *խաչին*, և ի գերեզմանին հանգուցեալ: - 423. Եւ տէր մեր *խաչիւ* և մարմնով զբովանդակ թշնամիսն կործանեաց: - 423. Կամ զնոյն մեռեալ մարմինն ի *խաչին*. և զնոյն կենդանի գոլ աստուածութեամբն: - 423. Եւ տարածումն ի *խաչին* զօմանս կանգնէր, և զայլսն գլորէր: - 423. Թողում զգերծումն մերկութեան և զբօշումն անարգութեան և տկարութեան *խաչին*. զայպանելն խաչողաց. և զխաւար լուսաւորացն. և յայլ դէմս դարձուցից զբանս: - 424. Վասն այն և ի նորս *զխաչ* և զսրբութիւն և զեկեղեցի և զայլն տայ ի ձեռս այլազգեաց: - 425. ...երիս զօրութեամբ ի վերայ *խաչին*. որ է՛ ծայնիւն և մարմնովն և հոգւովն որ էջ ի դժոխս. կամ գ գոյացութեամբ. այսինքն աստուածութեանն և հոգւոյն և մարմնոյն: - 427. Տասներորդ՝ յետ որոյ հնազանդեցան նմա՛ ամենայն իսրայէլ. և տեառն մերոյ զկնի *խաչին* հաստատեցան ի հաւատս. մանաւանդ յետ է դար կենցաղոյս ամենայն լեզու խոստովան լիցի զտէր յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր ամէն: - 427. Նա՛խ՝ նշանակէ՛ զսեղան *խաչին* քրիստոսի. որ յերեք ժամուն մինչև ի զ ժամն խաչեցաւ- և հաշտեցաւ աստուած: - 435. Չորեքտասաներորդ, ցպով և պարսաքարով ել ընդ դէմ գողիաթու. և տէր մեր *խաչիւ* որ վէմ կոչեցաւ, և ի ձայն բարձր աղաղակեաց և արձակեաց զհոգին: - 436. Երեսուն**զ**, պահեցաւ սուրն գողիաթու ի խորանն. և *խաչն* փրկական ի յեկեղեցի: - 437. Երեսուն**ը**, դաւիթ այլակերպեցաւ ի մէջ այլազգեաց. և տէրն անարգեցաւ ի *խաչին*: - 437. Երիցս օծաւ դաւիթ. և որդի նորա ի յարգանդի, և ի յորդանան, և ի վերայ *խաչին* արեամբ: - 437. Յետիոտս փախեաւ և ծածկեալ գլխով. և նոյնպէս տէրն ի *խաչին*: - 438. Դաւիթ երիցս սուգ էառ մեռելոյ. և տէրն ի վերայ եէմի և ի գերեզմանն ղազարու և մեծ ի *խաչն*: - 438. Դաւիթ ծարաւեալ ջրոյն բեթլեհէմի ծնիցելոյն ի կուսէ. և ծարաւեալ տէրն ի *խաչին* փրկութեան մարդկան ազգի: - 438. Դաւիթ կանգնեաց սեղան և դարձոյց զսուր հրեշտակին. և տէր մեր զսեղան *խաչին* զենմամբ պատարագին ի փրկանս և ի կեանս աշխարհի: - 438. **Եւ տէր մեր յերկրի մարդացաւ, և յերկինս թագաւորեաց. իսկ նստիլն ի վերայ ջրոց, որ է *խաչն*. զի վիրք *զխաչն* ջուարի կոչեն**: - 441. Յայս միտս ի կենդանագիր կուսին՝ ի ձախոյ գիրկս լինի փրկչական պատկերն. նոյնպէս և առ ի *խաչին* ի յաջակողմն կացեալ: - 441. Որ է՛ *խաչն* և խաչ ելեալն: - 441. Դարձեալ *խաչն* երկրպագելի, և *խաչ* չարչարանաց մարդկան: - 441. Եւ տէրն զբազուկս ի վերայ *խաչին*: - 441. Զի խորհրդով *խաչին* աղօթեաց և էած անձրև: - 444. Ցուպն եղիսէի օրինակ էր *խաչին*. վասն է՞ր ոչ յարոյց զմեռեալն: - 445. Նոյնպէս և ամենայն *խաչի* զօրութիւնն քրիստոս է. ի ձեռս արժանաւոր և կատարեալ հաւատոց առնէ սքանչելիս. իսկ ոչ նոյնպիսեացն ծածկէ զզօրութիւնն: - 445. Արդ եղիսէէ նշանակէ՛ զբանն աստուած. որ փոքրկացաւ և բովանդակեցաւ ի ծոց կուսին ի մարմնի միաւորեալ. և ապա ի *խաչն* բարձրացեալ կեանս շնորհեաց մարդկան: - 446. Արդ աղեղն և նետն ի վերայ եդեալ՝ նշանակէ՛ *զխաչն* փրկական ընդ դէմ իմանալի ասորւոյն սատանայի: - 446. Եւ ապա՛ քահանայ ի վերնատունն և ի *խաչին*: - 450. Քանի՞ է մասն *խաչին*. և քանի՞ է բևեռն: - 454-455. Երեսուն**բ**, Վասն գալստեան սուրբ Յոգւոյն յետ *խաչին*, **ծ** պատճառաւ: - 455. Եւ զօծումն զօրութեան՝ յորժամ օծաւ արեամբ ի վերայ *խաչին* և քակեաց զամուրս հզօրին և էառ աւար: - 474. Զի՞նչ է որ ի փրկչական պատկերն գիր ի ձեռն և *խաչ* ի գլուխն նկարեն: - 481. Բայց անյա՛յտ էր գրեալն. մինչ *խաչիւ* և չարչարանօք զգիրն պատռանաց նախաստեղծիցն պատառեաց, և ապա՛ զայս գիր ետ յայտնապէս: - 481. Իսկ որ ի գլուխն *խաչ* նկարեն: - 481. Նա՛խ՝ ցուցանէ թէ կատարումն ամենայն տնօրէնութեանց *խա՛չն* եղև: - 481. Երկրորդ՝ թէ *խա՛չն* է փառք փրկչին մերոյ. ըստ որում «չև էր հոգի. քանզի յիսուս չև էր փառաւորեալ». այսինքն խաչեալ: - 481. Երրորդ՝ եթէ քահանայ է և թագաւոր. վասն այն ընդ թագին և *խա՛չն* նկարի: - 481. Չորրորդ՝ զի կամաւ հնազանդեցաւ *խաչի* և չարչարանաց. վասն այն ի գլուխն է նկարեալ: - 481. Յինգերորդ՝ զփշեղէն պսակն որ ի *խաչին* ի գլուխն էր՝ նշանակէ՛: - 481. Արդ զգիրն ադամայ պարտուց՝ տէրն որդի եղև նմա և անմեղ մահուամբն տարածեալ զձեռս ի *խաչին* պատառեաց ասելով, նա մեղաւ և մեռաւ. ես զինչ մեղայ. դո՛ւ ես պատճառն: - 482. Վասն այն ի փրկչական պատկերն նկարեալ է ի մին ձեռն գիր և ի միւսն *խաչ*: - 482. Յերկրորդ ամին աստուածածինն տպացաւ ի սեանն, և քառասնօրեայ մանուկն յիսուս ի գիրկն. և *խաչ* ծիրանի յերկոսին ձեռինն: - 485. Չորրորդ՝ թլփատեցին զնա հրէայքն՝ ի չարչարանս՝ սրով *խաչին*. և զայս զինուորքն պիղատոսի: - 486. Իսկ այժմ վասն *խաչին* նախ գիտելի է, զի չարչարանքն քրիստոսի ընդ դէմ է և բարձօղ է մոլորութեանց մեղաց: - 489. Եօթներորդն է բարձումն *խաչին*. ի նշան հետևելոյ մեզ նմին: - 489. Վեցերորդ՝ զի անարգանա՛ց մահ էր *խաչն*. զայս ամենայն կրեալ վասն մեր: - 491. Այլ ա՛րդ՝ բանն աստուած եղև մարդ և անմեղ պահեաց զբնական կիրս. և ներգործական կրիւքն հնազանդ եղև հօր՝

մահու չափ և մահու *խաչի*: - 492. Զի՞նչ է **է** բանն որ խօսեցաւ ի *խաչին*: - 492. Վեցերորդ՝ ածաւ վերստին առ պիղատոս. և անդ խնդրեցին ի խաչ հանել. և զկնի ծաղեալ. և թուք ընկալեալ. և ի *խաչ* դատապարտեցաւ: - 492. Զի՞նչ նշանակէ քառաթև *խաչն*. երկայն, և լայն, խոր, և բարձր: - 493. Չորրորդ դարձեալ՝ **դ** թև *խաչին* նշանակէ զչորս բարերարութիւնս քրիստոսի. զի վերին մասն ցուցանէ զբացումն արքայութեանն երկնից. ներքինն զաւերումն դժոխոց. աջն զբաշխումն շնորհաց. ահեակն զթողութիւն մեղաց: - 493. Դարձեալ նշանակէ **դ** թև *խաչին* փրկութիւն գոլ և լոյս հոգւոյ որք ի **դ** ծագս տիեզերաց հաւատացեալք են: - 493. Գրաւորն մովսէսի. իսկ Աւետարանն չորրորդ ի ձեռն *խաչին*: - 494. Դարձեալ՝ նշանակութիւն քառաթև *խաչին*...: - 494. Սեղան ողջակիզացն, և սեղան սրբութեանցն և սեղան խնկոցն. ամենայն քառակուսի նշանա՛կ են քառաթև *խաչին* յիսուսի: - 494. Այլ և *խա՛չն* է որ գրեալ է «արկցուք հաց ի փայտ նորա»: - 494. Զի՞նչ նշանակէ չորս մասն փայտից *խաչին*: - 494. Քանի՞ բևեռ է *խաչին*: - 495. Այլ և բովանդակ ամենայն բևեռք **թ** էր ի վերայ *խաչին*: - 495. Այսպէս. **բ** ոտիցն. **բ** ձեռացն. **ա** ուսոյն վերայ. **ա** *խաչին* թևին. **ա** պիղատոսի տախտակին. **բ** այն տախտակին որ պատուանդան էր և ոտքն ի վերայ բևեռեալ: - 495. ...ապա ուրեմն և նախ քան *զխաչն* անապական էր մարմինն քրիստոսի փրկչին մերոյ: - 499. Այլ ա՛րդ՝ յառաջ քան *զխաչն* ո՛չ ապականացու, և ո՛չ ի *խաչին*, և ո՛չ ի գերեզմանի որպէս մեք խոստովանիմք: - 500. Դարձեալ ասեմք ըստ ձեզ, թէ յետ *խաչին* յապականութիւն փոխեցաւ մարմինն տեառն, ապա յառաջ քան *զխաչն* կատարեալ էր զի ապականացո՛ւ էր. և յետ *խաչին* անկատար զի անապական եղև որպէս դուքդ ասէք: - 500. Զի ցուցանիցէ թէ նոյնպէս եկեր և յառաջ քան *զխաչն* անապական մարմնով: - 501. Հինգերորդ՝ զադամաստեղծ ձեռս իւր տարածեաց տէրն ի վերայ *խաչին*. և արտաքս ընկէց զչար իշխանն. և կորզեաց զմարդիկ յիշխանութենէ նորա: - 503. Նա՛խ՝ զի աւետարանն յայտնապէս ո՛չ ասէ զժամ յարութեանն. որպէս *զխաչին* և զթաղմանն: - 512. Հինգերորդ՝ մարիամ կղէոպեանց որ կայր առ *խաչին*: - 517. Նա՛խ՝ ոմանք ասեն թէ մարդկօրէն կամէր իմանալ զնա և հարցանել վասն *խաչին* և դժոխոց և յարութեանն. իսկ այս կատարեալ մտաց պէտք էին և շա՛տ ժամու: - 517. Ի վերայ երկրի՝ ի *խաչ* բարձրացեալ: - 520. Վասն է՞ր նախ քան *զխաչն* և զհամբարձումն ոչ պարգևեցաւ հոգին սուրբ երևելի նշանօք: - 521. Երկրորդ՝ զի թէ քրիստոս այնպէս փառաւորեալ էր որպէս յետ *խաչին*, արգել և խափան լինէր ամենայն չարչարանացն և փրկութեան մարդկան: - 521. Այսպէս նախ եկն քրիստոս և *խաչիւ* և մահուամբ հաշտեցոյց զհայր, և ապա՛ հայր աստուած առաքեաց զհոգին սուրբ պարգև մարդկան: - 522. Եւ զի պարգև *խաչին* է հոգին սուրբ, նմին իրի յիշատակեալ զհոգին սուրբ՝ *խաչիւ* դրոշմեմք զդէմս մեր: - 522. Հինգերորդ՝ զանբաժանելի միացումն ի սէրն քրիստոսի. զի որ ի *խաչին* թողին և փախեան, յետ իջման հոգւոյն՝ ամենեքեան վասն անուան նորա չարչարեցան և մեռան...: - 524-525. Եւ թէ *խաչի* և եկեղեցւոյ ի միասին տօնեմք: - 526. Չորրորդ՝ այժմ մանկունք հաւատոյ ի յեկեղեցիս նոր օրհնութիւն տալով **գ** սրբեան ձայնիւ աստուածաբանե՛ն զխաչեալն քրիստոս. և օրհնեն ի վերայ արքայութեան աթոռոյ *խաչին*: - 529. Դարձեալ զօրօրինակ, մարմինն քրիստոսի մի և նոյն էր ի *խաչին* բևեռեալ, և մի և նոյն մարմինն է ի բազում նշխարս միաւորեալ և ո՛չ բազմացեալ. զի նոյն է գոյացութիւն հացին և գոյացութիւն մարմնոյն քրիստոսի: - 530. Դարձեալ ասեմք թէ զիա՞րդ յետին. զի աբգար թագաւորն հայոց նախ քան *զխաչն* հաւատաց ի քրիստոս և երանեցաւ ի նմանէ: - 549. Եւ դնէ զայս քահանայն սուրբ մեռոնաւն ի ճակատ նուիրելոյն ասելով այսպէս. ըստ այլազգաց եկեղեցեաց. թէ ի ներքոյ ձևիս այս ես կու նշանեմ զքեզ նշանաւ *խաչի*...: - 593. Եւ *խաչն* զոր եբարձ ի լուծ պարանոցին: - 594. ...և պատարագ և *խաչ* օրհնեմք. եթէ կենդանենաց և եթէ մեռելոց: - 605. Եւ յորժամ զինքն ի *խաչին* հօր պատարագ մատոյց: - 606. Եւ *խաչիւ* չարչարեալ և յարուցեալ ի մեռելոց. և առ աշակերտսն մտեալ եպիսկոպոս եցոյց զինքն: - 607. Եւ ունին զգեստ՝ նափորտ բազմախաչ. և ի վերայ եմիփորոն ե կրկին *խաչիւ* զարդարեալ: - 607. Երկրորդ՝ Արքեպիսկոպոսք. որ թարգմանին եպիսկոպոսապետք. և սքեմ նոցա քականօթ և պճղնաւոր. և փիլոն. և ի վերայ նորա եմիփորոն **դ** կրկին *խաչիւ* շուրջ զիւրև: - 607. Եւ ուր չիցէ եպիսկոպոս՝ եկեղեցի օրհնեն և *խաչի* կնիք տան: - 608. Իններորդ, ըստ մասին ի սմա *խաչն* փրկական... Եւ ի մեզ *խաչ* չարչարանացն քրիստոսի և մահ: - 614. Երկրորդ ասեմք, և մեք **բժ**ան օր տօնեմք եկեղեցւոյ ի բոլոր ամն. որ են այս... Աշխարհամատրանն. և յետ գալստեան Հոգւոյն կիրակէն. Տապանակին. Շողակաթին. և **դ** օր ի *խաչին* տօնն. **բ** Գալստեանն. Վերնատանն. Եւ նոր կիրակէին: - 616. Վասն է՞ր *խաչի* և եկեղեցւոյ ի միասին տօնեմք: - 616. Իսկ մեր քաւութեան տօն *խաչն* է. և տաղաւարահարն եկեղեցին. վասն այն *զխաչի* և եկեղեցւոյ ի միասին տօնեմք: - 616. Իսկ արմըտիք և արդիւնք մեր *խաչիւն* ժողովեցան յեկեղեցի սուրբ: - 616. Երրորդ՝ ի բանակիլն խաչաձև բանակեցան

երկոտասան ցեղքն, և խորանն ի միջի. որ նշանակէ՛ զխորանն եկեղեցւոյ՝ խորհրդով *խաչին* քարոզեալ ընդ **դ** կողմ աշխարհի: - 616. Իսկ հինգերորդն ի նորոյս. զի *խաչիւն* քրիստոսի գնեցաւ և ազատեցաւ եկեղեցի սուրբ: - 616. Վեցերորդ՝ զի նոյն է խորհուրդն որ անդ ի վերայ *խաչին* պատարագեցաւ, և այժմ յեկեղեցի սուրբ ի *խաչ* սեղանին: - 616. Ութերորդ՝ զի ամենայն խորհուրդ եկեղեցւոյ՝ *խաչիւն* կատարի. Մկրտութիւն. Դրոշմն. Պատարագն. և այլն: - 616. Իններորդ, զի եկեղեցի հաւատացելոց՝ ունի զձև *խաչին* ըստ մարմնոյ...: - 616. ...և *զխաչն* համապազ կրեն ընդ ինքեանս. և լուսով խաչին ելանեն ընդ առաջ քրիստոսի: - 616. ...և զխաչն համապազ կրեն ընդ ինքեանս. և լուսով *խաչին* ելանեն ընդ առաջ քրիստոսի: - 616. և կանգնեաց *զխաչն* փրկական ի սուրբ գողգոթայ ի սեպտեմբերի **ժդ**ն...: - 617. կարգեաց **ը** օր նաւակատիս *խաչի* և եկեղեցոյ ի միասին տօնել: - 617. Որդորմեայն ի դէմս հօր որ առաքեաց զորդին ի *խաչ*. և պատարագն ի դէմս որդւոյ որ խաչեցաւ վասն մեր: - 622. Նա՛խ՝ զի հոգին սուրբ պարգևք է *խաչին* քրիստոսի. այլ և ի վերնատունն լուսեղէն *խաչիւ* հանգեաւ յառաքեալսն: - 625. Նոյնպէս և **ը** ձայն եղանակաց. և **ը** օրեայ զտօնս գլխաւորս. որպէս ծննդեանն ութն օր. և յարութեանն՝ և հոգւոյն գալստեանն՝ և *խաչի*՝ և եկեղեցւոյ՝ և այլն: - 627. Նոյն սարասիւք այժմ ի ձեռն փրկչին մերոյ յիսուսի՝ տապանակաւ *խաչին* և աղօթիւք սուրբ եկեղեցւոյս՝ բարձրացեալ պարիսպն չարութեան եօթնից զգայութեանց մեղաց որոշօղ ի մէջ մեր և աստուծոյ, կործանեսցի ի սպառ: - 627. Իսկ առաւօտու երգն, ի դէմս *խաչին*: - 629. Զի այսպէս ասէ ներքառիոս հայրապետն հռոմայ թէ՝ չէր հնար իջուցանել զմարմինն տեառն ի *խաչէն* վասն փայլատակմանցն ի խոցուածոյն: - 631. Եւ զսուրբ աստուածն խաչեցար. և այսպէս գրէ՝ եսայի ետես զքրիստոս նստեալ յաթոռ որ է *խաչն*. և երգէին զերեքսրբեանն: - 631. Զի *խաչն* պսակ և փառք է քրիստոսի և պարծանք քրիստոնէից և ո՛չ նախատինք...: - 632. ...և գայր բարբառ յերկնից, «փառաւորեցից». *զխաչէն* ասէր: - 632. Այսպէս ասէ մեծ իմաստասէրն և երկրորդ աւետարանիչն մեր և կաթողիկոսն սուրբ յոհան յօձնեցայ թէ՝ պատարագին ժամն խորհուրդ է *խաչին* քրիստոսի...: - 634. Իսկ յառաւօտն և յերեկոյն պատարագ ո՛չ մատչի. վասն այն ամենայն աղօթից և պաշտմանց կատարումն և աւարտ *զխաչէն* ճառեմք...: - 634. ...զի ճառ *խաչին* պատուակա՛ն է առ աստուած և առ մարդիկ. և փառք քրիստոսի է *խաչն* և կատարումն ամենայն տնօրէնութեանցն: - 634. Եւ դարձեալ՝ այսպէս էր քրիստոս ի վերայ *խաչին*...: - 635. *Զխաչին* և զեկեղեցոյ, սահակն որ գնաց ընդ դէմ տաճկաց: - 637. Եւ զսրբութիւն սրբոցն *խաչի*, ստեփաննոս սիւնեցին: - 638. Չորեքկերպեան կենդանիքն է՛ *խաչն*. և տեսեալն ի վերայ նորա՝ գառն որ բառնայ զմեղս աշխարհի: - 638. Նոյն զօրութիւն է ամենայն *խաչի*. որպէս բազում ճառագայթք արևուն...: - 639. Եւ այսպէս ի պահոց թագաւորքն նշանակի... Ուրբաթ *խաչի*: - 642. Եւ *խաչի* շարական ասեմք: - 642. Զի յարութեանն փառք՝ *խաչն* ցուցաւ: - 642. Նախ ասել աւետեաց, և ապա՛ ծննդեան. և գալստեան. և *խաչի*. և յարութեան. և համբարձման. և հոգւոյ գալստեան. և վարդավառի. և փոխման: - 642. Իսկ մեծացուսցէքն, և *խաչի*, և հանգստեան, հանապազո՛րդք են. զի միշտ բարեխօսք են: - 642. Նախ աստուածածնի՞ պարտ է ասել շարական. թէ *խաչի*: - 642. Այլ սուրբն ստեփաննոս սիւնեաց, և մեծն ներսէս, վասն պատուոյ՝ նախ *զխաչի* տունն են ասացեալ, և ապա՛ զաստուածածնին: - 642. Նա՛խ՝ զի յաղօթս զկոյսն սուրբ բարեխօս մաղթեմք. և *զխաչն* սուրբ՝ պահապան: - 642. Երկրորդ, ի կոյսն բնակեցաւ բանն **թ** ամիս. և ի *խաչն* յաւիտեանս յաւիտենից: - 642. Երրորդ, և նոյն ինքն տիրամայրն՝ *խաչին* երկիր պագանէր միշտ: - 642. ...զի առաւել քան զայլս զբոլոր տնօրէնութիւնն քրիստոսի խօսեցաւ. զծնունդն. *զխաչն*. և զայլն ամենայն: - 644. Նշնակութիւն է **գ** ազգ գրոյն ի վերայ *խաչին*. Եբրայեցի. Յունաց. և Դաղմատ: - 645. Դարձեալ՝ նշանակ *խաչին*. և քրիստոս ի վերայ նորա *խաչիւն* քարոզեալ: - 646. Զի՞նչ է նախատօնակն որ յերեկոյն սուրբ զգեստիւ *խաչիւ* և աւետարանաւ և լոյս վառեալ համաձայն պաշտեմք: - 646. Վասն որոյ զսրբութիւնն *զխաչն* և զաւետարանս ի դուրս բերեմք...: - 646. Եւ նոյն ինքն քրիստոս երևի մեզ ի *խաչն* և յաւետարանն: - 646. Տասներորդ *խաչի* **դ** տօնն. զոր ի սուրբ խաչին է. և երևմանն. և վարագայ *խաչին*. և խաչգիւտն: - 649. Եւ *խաչի* և եկեղեցւոյ կարգ: - 649. ...վասն որոյ պահեմք զչորեքշաբաթն. և ուրբաթն խաչելութեանն քրիստոսի. զի կցորդեսցուք *խաչին*: - 653. ...որպէս նոքա որ զդեղ մահու խառնեն. վասն որոյ նշանաւ *խաչին* կնքեմք զնոսա, զի փախիցեն դևքն: - 654. ...և դարձեալ հատանենն ի ձեռս իւրեանց որ լինի *խաչ*: - 655. Նա՛խ՝ զի այսու՝ *խաչին* քրիստոսի հաղորդեսցուք. և սուրբ հացին զոր ի վերնատունն բաժանեաց: - 655. Երկրորդ՝ ողջակէզ եղև ի վերայ *խաչին*: - 657. Երեսուներորդ, *խաչն* երևի. և անապական է: - 661. Այլ և նշանակէ սուգն զտեառն մերկութիւնն ի *խաչին*...: - 670. Եւ որպէս ի հիմնարկութեան եկեղեցւոյ *խաչիւ* և աւետարանաւ բրել է աստիճանաւ...: - 674. Իսկ *խաչն* վառել և ժամահարն յառաջ. նշանակէ՛

զվերջին գոչումն փողոյ հրեշտակապետին: - 676. Եւ *խաչն* բարձրացեալ զի նշան *խաչին* քրիստոսի յայնժամ ընդ երկնիւք ծագեսցէ և զչորս կողմ աշխարհի լցուսցէ: - 676. Եւ այն որ ի վերայ վառին նիւթեղէն զգեստէ, զի գայցէ *խաչն* ի վերայ լուսեղէն ամպոյ. յօդս բարձրացեալ և ցոլացեալ...: - 676. Զի՞նչ է *խաչիւ* և աւետարանաւ կնքելն զգերեզմանն անշարժապէս: - 679. Վասն որոյ *խաչիւ* և աւետարանաւ աւետեմք ննջեցելոցն զմեծ օր աւետեաց նոցա և կնքեմք զգերեզմանն: - 684. Այսպէս և ի տընօրինէքն ընծայք *խաչին* և աւետարանին որ ի նոցա տունն մտանէ: - 684. ...վասն որոյ զնոյն *խաչն* և զաւետարանն տարեալ ի տուն՝ օրհնեմք զբնակութիւնս մեր: - 684. ...և պատարագաւ *խաչին* հաշտեցոյց զհայր. և իջմամբ ի դժոխս կապեաց զհզօրն սատանայ և արձակեաց զկապեալ հոգիսն...: - 705. ...և *խաչիւն* ելոյծ զզօրութիւն մահու...: - 705. Իսկ զի նիւթ *խաչին* մնայ ըստ ոմանց՝ այս ո՛չ է ըստ բնութեան կարգի, այլ սքանչելեաց հարկի որպէս ցուցանի յառաջիկայդ: - 727. Երրորդ, զի երևեսցի նշան որդւոյ մարդոյ՝ այսինքն *խաչն*: - 730. Երևեսցի՞ *Խաչն* ի կատարածի: - 732. Եւ ո՛չ միայն *խաչն*, այլ և ամենայն գործիք չարչարանացն. այսինքն բևեռքն գեղարդն և այլք. որք բերին առաջի դատաւորին...: - 732. Նախ ի պարծանս հաւատացելոց զի բերկրեսցին երկրպագուք *խաչին*: - 732. Յորո՞ւմ աւուր երևի *խաչն*: - 732. Այսու խորհրդով բարձրացուցանեմք *զխաչն* ի վերայ վառի. և ժամահար զկնի: - 732. Զի՞նչ լինին բազմութիւնք նշանաց *խաչին*: - 732. Նիւթ նշանացս է՛ բազում և զանազան. այլ զօրութիւն և ձևն մի և նոյն է *խաչին:* - 732. այսինքն յորժամ զճառագայթ բազում նշանացս առ ինքն ժողովէ *խաչն* սուրբ՝ յայնժամ ամենայն կարծիք լուծանին: - 732. Երևի՞ անդ փայտ *խաչին* յորում խաչեցաւ տէրն: - 732. Ոմանք ասեն թէ լոյս երևի ի ձև *խաչին*: - 732. Եւ ոմանք թէ՝ *խաչն* լուսաւորեալ ճառագայթէ որպէս բևեռք և գեղարդն: - 732. Եւ ա՛յս է տարաձայնութիւն սոցա. զի ոմանք ապականացու ասեն *զխաչն* տէրունական առարկելով կրկին կերպիւ: - 732. Նա՛խ՝ զի ամենայն որ ի չորից տարերց է՝ կրէ՛ զապականութիւն. արդ *խաչն* փա՛յտ է և ի չորից տարերց. ապա ուրեմն ապականի և նա՛: - 732. Երկրորդ՝ զի թէ մարդոյ մարմին որ է՛ բանական և կենդանի՝ ապականի մահուամբ. ապա ուրեմն և *խաչն* ևս ապականի զի ո՛չ կենդանի է և ո՛չ բանական: - 732. Իսկ *խաչին* կենդանութիւնն քրիստոս է, և ո՛չ քակտի ի նմանէ...: - 733. Նմանապէս և *խաչն* աստուծոյ՝ է՛ ի կամացն աստուծոյ և ի նորին ներգործութենէն որ անապական կամի զնա. զի նովաւ արար փրկութիւն ազգի մարդկան: - 733. Ապա ուրեմն ևս առաւել *խաչն* մնայ անապական զի էութիւն աստուծոյ է ի նմա. այսինքն բանն աստուած մարմնովն որ է՛ սևեռեալ ի նմա: - 733. Երրորդ՝ զի *խաչն* այն մածեալ է արեամբն աստուածային. ըստ որում բևեռեցաւ ի նմա: - 733. Արդ եթէ *խաչն* ապականի, ապա և արիւնն որ ի նմա: - 733. Ուստի յայտ է թէ՝ զմարմին բանին ապականացու խոստովանին նոքա՝ որ *զխաչն* ապականացու ասեն. և են նեստորականք: - 733. Իսկ որք զբանն մարմնով անապական խոստովանի, պա՛րտին և *զխաչն* աստուածընկալ անապական խոստովանիլ: - 733. Չորրորդ յա՛յտ է յօրինակաց. զի գաւազանն ահարօնի որ ծաղկեցաւ՝ օրինա՛կ էր *խաչին.* և տախտակքն բանին. և ծառն կենաց որ ի մէջ դրախտին: - 733. Ա՛րդ՝ սոքա անապականք են յայնմ հետէ և առ յապայ որ օրինակք են. ապա ուրեմն և ճշմարտութիւնն անապական է որ է *խաչն* աստուածընկալ: - 733. Եօթներորդ՝ զի սողոմոն ասէ «օրհնեալ է փայտն որով լինի արդարութիւն» որ է՛ *խաչն* փրկչական: - 734. Իսկ վասն *խաչին* ասէ «փայտ կենաց է ամենեցուն»: - 734. ...որպէս յա՛յտ է ի սերովբէսն որ ի ներքոյ փառաց աթոռոյն, այսինքն է *խաչին.* թևասքօղեալ զերեքսրբեանն վերաձայնէին: - 734. Արդ՝ եթէ ապականացո՛ւ էր սա, ո՛չ երկնչէին ի սմանէ դևք. որպէս և ո՛չ յանասնոց և յանշնչից. ապա ուրեմն անապական է *խաչն*: - 734. Եւ այս ո՛չ թէ լոյս միայն է. զի զլոյսն ո՛չ ետ մեզ նշան. այլ *զխաչն* փայտեղէն յորոյ վերայ զձեռն իւր տարածեաց միածին բանն: - 734. Իսկ լոյսն ի փառս *խաչին* այնորիկ երևի: - 734. Այսպէս և *խաչն* իւր աստ տգեղ երևի, և ի կարապետութեանն իւրոյ արեգակնափայլ ճառագայթիւք: - 734. Եւ հրեշտակք *զխաչն* բարձեալ առաջի երթիցեն. և զմեռեալս՝ փողով և ձայնիւ ընդ առաջ նորա զարթուսցեն: - 734. Որք արտաքոյ օրինաց մեղանչեցին որպէս կռապաշտք՝ և հրէայքն որք յետ խաչելութեանն քրիստոսի. զի յետ *խաչին* պահպանութիւն օրինացն ի կռապաշտութիւն է համարեալ նոցա: - 739. Իններորդ՝ կոչի հնձան և *խաչն* փրկական. յորում ողկոյզն անապական ճմլեցաւ և ետ մեզ ուրախարար գինի զանապական արիւնն իւր...: - 749. Իսկ մեծն ներսէս ասէ, պակասութիւնն այն է, որ կիրք չարչարանացն քրիստոսի թուով և տեսակաւ պակա՛ս էր յառաքեալն պօղոս. այսինքն *խաչն*, բևեռքն, և այլն. և զայն էլից քարոզութեամբն իւր ի մարմինս եկեղեցւոյ: - 781. Որպէս և բազում ուրէք յերգս գտանի. վէմք պատառեալ. երկիր շարժեալ առ *խաչին* քրիստոսի: - 788

***Ի ԽԱՉ ՀԱՆԵԼ +*** Վեցերորդ՝ ածաւ վերստին առ պիղատոս. և անդ խնդրեցին *ի խաչ հանել*. և

զկնի ծաղեալ. և թուք ընկալեալ. և ի խաչ դատապարտեցաւ: - 492. Երրորդ՝ զի որ մկրտի՝ ի մահն քրիստոսի մկրտի. և քրիստոս միանգամ մեռաւ. և թէ ոք դարձեալ մկրտէ՝ անձանց *ի խաչ հանէ* զորդին աստուծոյ և դարձեալ խայտառակէ որպէս առաքեալն: - 590

***Ի ԽԱՉ ԵԼԱՆԵԼ +*** Առ առաջինն ասեմք թէ՝ որպէս ո՛չ ոք ընդ քրիստոսի *ի խաչ ելեալ* է՝ բայց միայն աւազակն...: - 697

**ԽԱՉԱԳԼՈՒԽ +** Եւ գո՛րծ է նոցա առաքեալ կարդալ, և մոմեղէնս կրել, և գրակալ. և *զխաչագլուխ* գաւազանն կրել: - 608

**ԽԱՉԱԿՆՔԵՄ +** Վասն է՞ր ընդ խաղաղութեանն *խաչակնքեմք:* - 625. Ապա ուրեմն պա՛րտ է յորժամ յիշատակեմք զիոգին սուրբ ամենայն ուրեք՝ *խաչակնքել* զդէմս և երկրպագել: - 625. ...վասն որոյ *խաչակնքեալ* ասեմք «անշարժ եղիցի»: - 679

**ԽԱՉԱՁԵՒ +** Իսկ չորեքկուսի, զի *խաչաձև*՛ է մարդն: - 293. *Խաչաձև* ապարօշն ի վերայ սրտին, եմիփորոնն պատեալ: - 348. Դարձեալ՝ *խաչաձև* է **դ** կողմն աշխարհի. որ է՛ Արևելք, Արևմուտք, Հիւսիս, և Հարաւ: - 494. Այլ և *խաչաձև*՛ է մարդ, գլուխ տարրական կենդանեաց: - 494. Այլ և *խաչաձև* թռչին օդապարիկ թռչունք. որ է տեսական միտք. զթև տարածեալ յերկոսին կողմանս: - 494. Այլ և *խաչաձև* ընթանայ նաւ ի վերայ ջուրց յորժամ լարէ հողմ զարմիոնն. կամ տարածեալ թևօք հասանին ի նաւահանգիստն: - 494. Եւ մարդս *խաչաձև* է...: - 613. Երրորդ՝ ի բանակիլն *խաչաձև* բանակեցան երկոտասան ցեղքն, և խորանն ի միջի. որ նշանակէ՛ զխորանն եկեղեցւոյ՝ խորհրդով խաչին քարոզեալ ընդ **դ** կողմ աշխարհի: - 616. Չորրորդ՝ զի խորանն մովսէսի *խաչաձև* էր կանգնեալ որպէս մերս եկեղեցի: - 616. Տեսանէր ժողովուրդն ուր կայր աստուած, և ընդ ոտիւքն իբր զգործած աղիւս շափիղայ. որ է՛ ակն պատւական. և աղիւսն *խաչաձև* է: - 639. Երրորդ, զի *խաչաձև* դնի մարմինն ի հանգիստն. որ և ձեռքն խաչանմա՛ն է ի վերայ սրտին: - 677. ...զի հրեշտակք *խաչաձև* երևեցան առ գերեզմանաւն տեառն: - 679

**ԽԱՉԱՆԻՇ +** Քասանը, մովսէս *խաչանիշ* գաւազանաւն զծովն պատառեաց: - 329. Եւ *խաչանիշ* գաւազանաւն ընկղմեաց զիմանալին փարաւոն յանդունդս դժոխոց: - 337. *Խաչանիշ* ծգեաց զգաւազանն ի վերայ ծովուն ընդ առաջ ասելով, Այիա՞. որ է՝ աստուած առաջի մեր: - 338. Յորում աւուր կիրակէի ի մէջ գիշերի ընդ առաւօտն յարեաւ տէրն ի գերեզմանէն. հանելով զիոգիսն յանապատն երկնից. և *խաչանիշ* գաւազանաւն ընկղմեցաւ փարաւօն յանդունդս դժոխոց: - 513

**ԽԱՉԱՆՄԱՆ +** Իսկ ի մէջ ծնկաց գլուխն՝ այն է, որ զծունկն ի գետինն եդ, և զգլուխն հանդէպ նմին. և յայսկոյս և յայնկոյս զձեռսն *խաչանման* ի գետինն: - 444. *Խաչանման* տարածեցաւ ի վերայ մանկանն և կծկեցաւ. այսինքն փոքրկացաւ ի չափ մանկանն. և ապա յայտնապէս է անգամ յօրանջելով և կծկելով կենդանացոյց զնա: - 446. Ասեմք թէ՝ և զայս ունիմք ծածկապէս. որպէս այն որ ի ջուր աւազանին *խաչանման* մեռոնն խառնի, - 605. Երրորդ՝ ձևն *խաչանման*. յարևելս գմբէթայարդ: - 613. Եւ զայս ի քրիստոսէ ուսաք. զի այսպէս *խաչանման* բեկանէր զիացն երկոքին ձեռօքն: - 655. Երրորդ, զի խաչաձև դնի մարմինն ի հանգիստն. որ և ձեռքն *խաչանմա՛ն* է ի վերայ սրտին: - 677

**ԽԱՉԱՏԱՐԱԾ +** Իննևժ, կրկին քերովբէքն *խաչատարած*...: - 441

**ԽԱՉԱՓԱՅՏ +** Եւ տէր մեր զգլխաւորն սատանայի բևեռեաց ընդ *խաչափայտին*: - 418. Իսկ կապելն ի դէմս մեղացն է և մեղասիրաց. որպէս տէր մեր բևեռեաց զմեղս և զսատանայ ընդ *խաչափայտին*: - 540. Եւ բևեռմամբ ձեռացն բևեռեաց ընդ *խաչափայտին* զսատանայ և զմեղս մեր: - 705. Իններորդ, զի բռնութիւն սատանայի էր կապեալ զնոսա. և տէր մեր կապեաց զնա ընդ *խաչափայտին*. որ նա ինքն էր դրունք դժոխոց. ապա ուրեմն արձակեցան անտի: - 777

**ԽԱՉԳԻՒՏ +** Տասներորդ խաչի **դ** տօնն. զոր ի սուրբ խաչին է. և երևմանն. և վարագայ խաչին. և *խաչգիւտն*: - 649

**ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ +** Չորրորդ՝ զայլայլումն լուսաւորացդ. այսինքն զի երբեմն խաւարին, որպէս առ *խաչելութեամբն*. և երբեմն յետս դառնան և կանգնին, որպէս յեսու և առ եզեկիա: - 26. Նոյնպէս և հոգին յիւրում ժամանակին. յետ *խաչելութեանն* քրիստոսի և համբառնալոյն առ հայր. և ապա իջանելոյ հոգւոյն. և յայտնելոյ զաստուածութիւնն իւր: - 55. Ոմանք ասացին ի խաւարմանէ *խաչելութեանն* է մնացեալ նշան: - 187. Եւ ի մեծի ուրբաթի խաչին, լուսինն ընթացաւ և ծգեցաւ յարևն, և յետս դարձաւ. որպէս ցուցանի յառաջիկայդ առ *խաչելութեամբն* ի **լ** գլուխն ի **իզ** համարն: - 416. Նշանք *խաչելութեանն*. և խաւարումն լուսաւորացն: - 454. Քանի՞ եղեն նշանք ի *խաչելութեանն*: - 490. Արդ

զապարանքն պիղատոսի իբր զմի տեղի առեալ. թէպէտ կրկնեալ եղև. և *խաչելութեանն* տեղի լինի **զ**. և գերեզմանն յորում հանգեաւ է: - 493. Նա՛խ՝ զի պատարագն է՛ *խաչելութեան* ժամն. և յայնժամ ո՛չ ասաց յովսէփ: - 634. Չորրորդ յայտնի և հաստատուն, որ ամենայն ազգ քրիստոնէից պահեն զչորեքշաբաթն և զուրբաթն վասն *խաչելութեանն* որ սո՛ւգ է և պահք: - 652. ...վասն որոյ պահեմք զչորեքշաբաթն. և ուրբաթն *խաչելութեանն* քրիստոսի. զի կցորդեսցուք խաչին: - 653. Գտցես և վասն մահու առ *խաչելութեանն* քրիստոսի ի **լ** գլուխն ի **իզ** համարն: - 668. Զի որպէս խաչեալն ի ժամ *խաչելութեանն* տգեղ երևէր, և ի միւսանգամ գալստեանն փառօք հօր և ընդ ամպս: - 734. Որք արտաքոյ օրինաց մեղանչեցին որպէս կռապաշտք՝ և հրէայքն որք յետ *խաչելութեանն* քրիստոսի. զի յետ խաչին պահպանութիւն օրինացն ի կռապաշտութիւն է համարեալ նոցա: - 739

**ԽԱՉԵՄ +** Վեցերորդ՝ նոքա անգիտութեամբ *խաչեցին*...: -34. Այլ *զխաչեալն* քրիստոս՝ տէր փառաց կոչէ պօղոս յառաջին կորնթացւոցն...: - 74. Այսպէս և խոնարհագոյնքն են աստուծոյ բանին վասն միաւորութեանն. որպէս մարդ ծնանիլ ի կուսէ՛ ժամանակեայ. *խաչիլ* և մեռանիլ...: - 74. Եւ մեռեալ ի խաչին զանձն միայն ասէք. որպէս երգէք յերեք սրբեանն ձեր, քրիստոս որ *խաչեցար* ողորմե՛ա մեզ: - 89. Եթէ զաստուածային անձն և զնորին բնութիւնն ասէք մի քրիստոս, դեռևս կայք յառաջ ասացեալ տարակուսանսդ. զի զաստուածային անձն և զբնութիւնն ասէք չարչարեալ և մեռեալ. զի քրիստոս *խաչեցաւ* և մեռաւ ըստ գրոց: - 89. Եւ ի մահ *խաչի*. որ անիծիցն էր: - 93-94. Չորրորդ՝ զի նիւթք եղեն երկնաւոր խորհրդոյն. որպէս ի տնկոց փայտ *խաչին*. և յայլ բուսոց հաց պատարագին և գինի. և ձէթ մեռոնի կազմեցաւ: - 212. Զի թէպէտ հրէա՛յքն *խաչեցին*, այլ իւր կամաւն մեռաւ: - 316. Ութերորդ՝ յոր ո՛չ անիծանէր, այլ աղօթիւքն զբարեկամսն փրկէր. և տէր մեր ի վերայ *խաչողացն* աղօթէր: - 327. Երկրորդ՝ ցուցանէ զանմեղ մահն քրիստոսի վասն մեր մեռեալ. զոր մատամբ ցուցանէին *խաչօղքն* թէ *խաչեսցի* դա՛: - 359. Զի տէր մեր ի հիւսիսո՛յ կողմ երուսաղէմ *խաչեցաւ*: - 360. Այլ և քահանայապետն դատապարտեաց զերևելին մարդ *խաչիլ*: - 369. Որ և զՍաւուղ ազատեաց ի մեղաց. և զայլ *խաչօղսն* որք հաւատացին ի նա՛: - 369. Եւ *խաչօղքն* անսուրբք էին մինչ յերեկոյանալ օրինացն հնոյն և ծագել նորոյն. մինչև սրբեցան աւազանաւն և խոստովան եղեն զքրիստոս: - 383. Երկրորդ՝ որ հայէր ի յօձն՝ բժշկէր. և որ հաւատայ ի *խաչեալն* բժշկի ի թունից մահաբեր օձին: - 386. Այլ այնո՛ւ էր առաւել, զի քրիստոս զհոգիս ազատեաց ի դժոխոց. և աստուած էր և մարդ եղև և *խաչեցաւ*. որ մեծ է քան զամենայնին: - 411. Եւ զօրութեամբ *խաչելոյն* գլուխ չարին ջախջախի. և սրբին անդամք մեր: - 424. Թողում զգերծումն մերկութեան և զքօշումն անարգութեան և տկարութեան խաչին. զայպանելն *խաչողաց.* և զխաւար լուսաւորացն. և յայլ դէմս դարձուցից զբանս: - 424. Նա՛խ՝ նշանակէ՛ զսեղան խաչին քրիստոսի. որ յերեք ժամուն մինչև ի **զ** ժամն *խաչեցաւ*, և հաշտեցաւ աստուած: - 435. Այլ և դաւիթ անյիշաչար եղև սիմէի նախատչի. և տէրն *խաչողաց* իւրոց աղօթէր: - 438. Եւ անուանք աւազակացն և *խաչողացն* և այլ կանանց: - 455. Եթէ ոչ էր *խաչեալ* քրիստոս՝ լինէ՞ր ձեր մարմնով: - 479. Երկրորդ՝ թէ խա՛չն է փառք փրկչին մերոյ. ըստ որում «չև էր հոգի. քանզի յիսուս չև էր փառաւորեալ». այսինքն *խաչեալ*: - 481. Հինգերորդ՝ զի մի՛ կարծիցի հակառակ ընդ դէմ օրինացն աստուծոյ. որպէս հրէայքն և *խաչօղքն* ասէին՝ «չէ այրն այն յաստուծոյ, զի զշաբաթս ո՛չ պահէ»: - 485. Զազահութիւնն՝ բազմաբաշխութիւնն. որ ետ զմարմին իւր ի կերակուր և զարիւնն իւր ըմպելի. զհոգին ի գին. զջուր կողին ի լուացումն. զհանդերձն՝ *խաչողացն*. զմարմինն՝ աշակերտացն. և զմայրն՝ յոհաննու: - 489. Երկրորդ՝ ի յանդիմանութիւն *խաչողացն*. զի լուսաւորքն տեսեալ զտէրն իւրեանց մերկացեալ, պատկառեցին և քօղ արկին զխաւարն: - 490. Եօթներորդ՝ ածաւ ի տեղի կառափելոյ և անդ *խաչեցաւ*: - 493. Եօթներորդ՝ գլուխն և պատուանդանն նշանակէ՛ միաւորեալ զաստուածութիւնն և զմարդկութիւնն քրիստոսի. որ *խաչեալն* է ի նմա: - 493. Աւազակն որ յաջմէն *խաչեցաւ*՝ դէմաս էր անունն. և որ յահեկէն՝ կոստաս: - 495. Չորրորդ՝ այժմ մանկունք հաւատոյ ի յեկեղեցիս նոր օրհնութիւն տալով **զ** սրբեան ձայնիւ աստուածաբանե՛ն *զխաչեալն* քրիստոս. և օրհնեն ի վերայ արքայութեան աթոռոյ խաչին: - 529. Հինգերորդ՝ զի աղօթս *խաչողացն* և չարչարողացն արար: - 585. Ողորմեալն ի դէմս հօր որ առաքեաց զորդին ի խաչ. և պատարագն ի դէմս որդւոյ որ *խաչեցաւ* վասն մեր: - 622. Իսկ մեծացուսցէն ի կիրակէի, զբնաւ տնօրէնութիւնն պատմէ. զի թէ ոչ էր ծնեալ՝ և ո՛չ էր *խաչեալ*. և ո՛չ յարուցեալ. և ո՛չ զմեզ փրկեալ: - 628. Ապա ի բացեայ կացեալ և զձեռս համբարձեալ ասէ, Սուրբ աստուած Սուրբ և հզօր Սուրբ և անմահ որ *խաչեցար* վասն մեր ողորմեա՛ մեզ: - 631. Նաև ի հայք ի ժողովն դվնայ հաստատեցին ի սուրբն աստուածն *խաչեցար* ասել ստուգապէս: - 631. Այլ և ասորիք

ասեն ըստ մեզ զսուրբ աստուածն որ *խաչեցար*՝ մինչև ցայսօր: - 632. Թէպէտ կամաւ տկարացար և ետուր զքեզ ի ձեռս *խաչողացն*՝ հզօ՛ր ես յամենայնի: - 632. Որ կամաւ *խաչեցար* վասն մեր, նոյն սիրովն ողորմեա՛ մեզ: - 632. Այսպէս հանապազ յիշատակեմք զերախտիս նորա որ վասն մեր *խաչեցաւ*: - 632. Եւ ըստ **ϸ** դասուց եկեղեցւոյ որ աստուածաբանեն միշտ, *զխաչեալն* պաշտելով: - 632. Եւ ի հասարակ օրն յորում *խաչեցաւ*: - 632. Երկրորդ, զի յայսպէս ասել սուրբ աստուած սուրբ և հզօր սուրբ և անմահ քրիստոս որ *խաչեցար* վասն մեր ողորմեա՛ մեզ: - 633. Յայտնապէս բաժանեն *զխաչեալն* քրիստոս և սոսկ մարդ խոստովանին: - 633. ...և մի դէմ զքրիստոսն որ *խաչեցաւ*. որ լինի չորրորդ դէմ և անձն ըստ նոցա: - 633. Իսկ որ ասեն՝ հայր և որդի և սուրբ հոգի. կամ թէ՝ քրիստոս որ *խաչեցար*: - 635. Սոքա քաղկեդոնին են. որք բաժանեն զբանն ի մարմնոյն. և *զխաչեալն*՝ մարդ սոսկ և տկար և մահկանացու խոստովանին: - 635. Զի նախ ծնաւ, և ապա՛ *խաչեցաւ*: - 642. Եւ այս է խորհուրդն. զի յայնմ աւուր *խաչեցաւ* քրիստոս, և գերեզմանք բացան և այլն: - 684. և Երկրորդ՝ զի կործանեցին ուրացօղքն և *խաչօղքն*: - 732. Ոմանք յաւուր ուրբաթու ասեն յորում *խաչեցաւ* քրիստոս. և այլք ի կիրակէն: - 732. Զի որպէս փայլակն ելանէ յարևելից ի վերայ լուսեղէն ամպոյ, և քառաձև լուսովն լնու զչորս կողմ աշխարհի և հաստատի ի գողգոթայ յորում *խաչեցաւ* տէրն: - 732. Երևի՞ անդ փայտ խաչին յորում *խաչեցաւ* տէրն: - 732. Զի որպէս *խաչեալն* ի ժամ խաչելութեանն տգեղ երևէր, և ի միւսանգամ գալստեանն փառօք հօր և ընդ ամպս: - 734. Ութերորդ, զի որ զնա՛ *խաչեցին* և սպանին, տեսցեն յայնժամ և իմասցեն թէ աստուածասպանք եղեն...: - 735. Ուր ինքն տէրն *խաչեցաւ* և յարեաւ. և սոքա ամենեքեան ձոր յովսափաթու կոչին, որ յերկու ձորի մէջն է յէմ: - 737. Երկրորդ՝ տեսանեն և կսկծին. զի ո՛չ հաւատացին ի *խաչեալն* վասն մեր: - 741. Եւ պետրոս և որդիքն զեբեթեայ յորժամ լուան ի հօրէ «դա՛ է որդի իմ սիրելի դմա լւարուք», ապա և նոքա վկայեցին, և *խաչեցաւ* քրիստոս: - 742

**ԽԱՉԵՑԱՐ** (Շարականի տեսակ) - Այլ և ուղղիցին **դ** տուն է կիսամասնեայ. ընդ սրբոյ *խաչեցարին* հզօր և անմահ գառինն եդեալ: - 375. Երրորդ՝ յերեքսրբեանն *զխաչեցարն* յաւելուլ: - 554. ...և կարգեաց յեկեղեցիս անտիոքայ յառաւօտն և յերեկոյն զսուրբ աստուածն *խաչեցար* ասել: - 631. Եւ զսուրբ աստուածն *խաչեցար*. և այսպէս գրէ՝ եսայի ետես զքրիստոս նստեալ յաթոռ որ է խաչն. և երգէին զերեքսրբեանն: - 631. Այլ և պետրոս անտիոքայ և տիմօթէոս աղէքսանդրու հրամանաւ յուստիանոսի կայսեր՝ հաստատեցին ի սուրբ աստուածն *խաչեցար* ասել: - 631. Չորրորդ «որ *խաչեցար*». յուրբաթի ճաշոյն ասա: - 634

**ԽԱՉՀԱՄԲՈՅՐ** - Նոյնպէս և յոտնալուայն և ի *խաչհամբոյրն*՝ գանձանա՛կն է քրիստոսի զօր յիշատակեմք: - 684

**ԽԱՉՕՐՀՆԵԼ** - Իսկ վասն հիմնարկութեան սուրբ տաճարի և ժամահար օրհնելոյ. սկիհ և մաղզմայ. և զգիրք. և զկնունք առնելոյ. և *խաչօրհնելոյ*. և զքառասնորդաց **գ** ժամուց զքարոզքն և զաղօթսն, յոհան մանդակունին է արարեալ...: - 659

**ԽԱՌՆ +** Եւ է չար՝ որ *խա՛ռն* է ընդ բարւոյ. և ի յէութեան գոյանայ. որպէս հիւանդութիւնն ի յողջութեան. ապականությիւնն ի մարմնի: - 22. Եւ է՛ որ *խառն* բարի է. որպէս առ մեզ պատահեալ բարիս որ ունակութիւն է. զի ա՛յլ է էութիւն մեր, և ա՛յլ է բարի յէութեան մերում: - 22-23. Երկրորդ՝ *խա՛ռն* է ի լուսոյ և ի խաւարէ՛: - 196. Երկրորդ՝ զի ամենայն ուրեք հողն ընդ ջրոյն *խա՛ռն* է. և յա՛յտ է ի ջրհոս. և ջուրն այն որ բարձրացեալ է ընդ հողոյն՝ իջանէ ի խոնարհ և բղխէ աղբիւր: - 209. Զայն է իմանալ, որ ի բաժանել զլեզուս, բան և բառ և անուն *խա՛ռն* գտանին բազում ազգաց: - 297. Նոյն և իր մահուն *խա՛ռն* է ընդ բարւոյ: - 496. Եւ երեքն *խառն* ի հոգւոյն և ի մարմնոյն. որ է բարկութիւն, ծուլութիւն, և ագահութիւն: - 559. Երկրորդ՝ զի թէ *խառն* բղխեաց ըստ քեզ վասն այն ի պատարագն ջուր խառնես, ապա և ի ջուրն գինի խառնեա և այնպէս մկրտեա՛: - 595

**ԽԱՌՆԱԿ +** Եւ է՛ միւս բարի *խառնակն* և պատրուակեալն. որպէս է աշխարհական բարին. զի գունով և երևելեաւ բարի է, այլ ի ներքոյ ծածկեալ չա՛ր է. յայսմանէ հրաժարէ՛ զմեզ ոչ մերձենալ: - 224. Ութերորդ՝ թաղամսաւորն. որ թաղիացեալ է միսն ի կաշին և չքերթուի. որ անորի՛շ է ի *խառնակ* կենաց: - 371

**ԽԱՌՆԱԿԵՄ +** Զի՞նչ է ասելն աստուածաբանին, այլ և այլ ընդ նմին Երրորդութեանն ունի. քանզի՝ անդ այլ ոմն է և այլ. զի մի՛ զդէմսն *խառնակիցեմք*: - 80. Իսկ ընդ դէմ նմին եւտիքէս զամենայն շփոթէ և *խառնակէ*. զանձն և բնութիւնն. և զկամս և զկիրս: - 81. Այլ և մի բնութիւն ասաց եւտիքէս. շփոթեալ և *խառնակեալ* զտարբերութեան յատկութիւնս բնութեանցն: - 81. Իսկ *խառնակել*՝ ո՛չ զշփոթելն ասէ որ

անլո՛ւր էին միմեանց լեզուին: - 297. Դարձեալ՝ ա՛յն է *խառնակիլն*, որ ի միոյ խոշոր լեզուէ քաղդէացոցն *խառնակեցան* և եղեն զանազանք: - 297. Դարձեալ՝ *խառնակիլ* լեզուին ա՛յն է որ ընդ պատուհասն զբարութիւնն խառնեաց. զի թէպէտ բաժանումն լեզուաց պատուհաս երևի, այլ պիտանի՛ է: - 297. Ասեմք եթէ՝ քաղդէացին որ է՛ արապն. զի մնաց առ եբեր և ո՛չ *խառնակեցաւ*: - 298

**ԽԱՌՆԱԿԵՐ +** Եւ գազա՛ն է ծուկն և վիթխարի և *խառնակեր* քան զամենայն գազանս: - 511

**ԽԱՌՆԱԿՈՒՄՆ +** Առաջնոյն ասեմք. թէպէտ բանն աստուած բնութեամբ միաւորեցի ընդ մարդկութեանն, ո՛չ կրէ շփոթումն և կամ *խառնակումն* ինչ: - 76. Չորրորդ՝ զի ո՛չ ճանաչէր այր զկին իւր, և ոչ կին զայր իւր. և լինէր անօրէն *խառնակումն*. որպէս յուդայ զնու իւր զթամար ո՛չ ճանաչեաց. և ո՛չ ղովտ զդստերսն իւր: - 238

**ԽԱՌՆԱՐԱՆ +** Երկրորդ՝ զի նախ ջուրն էր ի *խառնարանն* և եհե՛ղ զարիւնն ի վերայ որ է՛ ցոյց մկրտութեանն: - 341. Ասեմք թէ՝ խառնումն ո՛չ զջրոյ և գինւոյ ասէ, այլ խառնել զայն ասէ որ արկանի գինին ի *խառնարանն*: - 596. Այս է խառնումն գինոյն ի *խառնարանն* իմաստութեան: - 596. Իսկ թէ մարմնական խնդրես զխառնումն ջրոյ և պնդիս ի հակառակն, ասեմք քեզ թէ ո՛չ միայն ջրոյ, այլ և կաթին և մեղեր և գինւոյ ասէ խառնումն ի *խառնարանն*. - 596. Այլ և առաքեալքն և հետևօղք նոցա հարքն սուրբք՝ ո՛չ գիտէին *զխառնարանն*. և դու ուսար և խառնես ջուր և ընդ անիծիւք նոցա մնաս որպէս ցուցաւ ի վերոյ: - 596. Տասներորդ, ասի հնձան և կտակարանքն սուրբ. ուր հին և նոր իմաստութիւն ժողովեցաւ ի *խառնարանին* գինւոյ. յորմէ բաժակէ՛ արբին առաքեալքն ի սուրբ վերնատունն. և արբուցին ամենայն տիեզերաց...: - 749

**ԽԱՌՆԱՓՆԴՈՐ +** Նախ է՛ գործ իմաստութեան աստուծոյ. որով զանազանեցին արարածք՝ առաւել և նըւազ ընդունելով. և մի՛ *խառնափնդոր* և անզանազանապէս: - 130

**ԽԱՌՆԵԼԻ(Ք) +** Եւ թէ ոք ասիցէ՝ «խառնեաց ի *խառնելիս* զգինի իւր»: - 596

**ԽԱՌՆԵՄ +** Եւ զի զո՛ւտ և իսկապէս է բարի՝ անկար է *խառնիլ* չար: - 15. Ուստի հեշտութիւն և աւանդութիւն յիրաւի *խառնեալ* ընդ միմեանս, և հակառակասիրութիւն և ինքնահաճութիւն յառաջ եկեալ, որով զինեալ պնդին ընդդէմ ուղղութեան. զի կարծեն զինքեանս ճշմարիտ գոլ քան զայլսն: - 33. Իսկ ընդ դէմ եւտիքեայ անշփոթ ասել՝ պահէ՛ զյատկութիւն բնութեանցն՝ ի միութիւն *խառնեալ* էութեանցն: - 75. Իսկ միւսն մա՛րդ էր բնութեամբ յարարեալ և ստեղծեալ բնութենէ. և *խառնելով* ընդ բանին՝ եղև առեալն որպէս առօղն զո՛յգ և հաւասար աստուած...: - 79. Եթէ՝ բանն աստուած մարմնացաւ և մարդացաւ. և մարդկութիւնն աստուածացաւ *խառնելով* և միանալով բանին: - 79. Երկրորդ՝ *խառնի* ի նոսա: - 120. Եւ երրորդն որ է նշանակաւ, ա՛յլ առաւել և ընդարձակ և բազմաբա՛ն է. վասն զի *խառնի* ի զգալիսս. որ բազո՛ւմ է և բաժանեալ: - 123. Եւ տէրն զհին կտակն որ խստութիւն էր և սպանօղ՝ ընդ նորոյս *խառնելով*. որ հոգւով է և կեցուցանօղ: - 126. ...այսինքն ի դասէն ի չորիցն երեք բաժինն ի վայր անկաւ. և մինն անդ մնաց և յիշխանութեանց դասն *խառնեցաւ*: - 148. Զի ոմանք ասեն թէ ի միջին դասուցն անկան **գ** մասն, և մինն մնացեալ յիշխանութեանցն *խառնեցաւ*: - 150. Երրորդ՝ զի պատահումն ընդ գոյացութիւն *խառնեալ*՝ լինի բաղադրեալ. որպէս նիւթ և տեսակ: - 170. Ուստի տարերք և տարրեղէն մարմինք *խառնեցան* և յառաջ եկին ի մի և ի նոյն նիւթոյն: - 175. Յինգերորդ՝ զի առանձին բնութեամբ սոքա ի մի էութիւն ժողովեալ *խառնին*. և մի բնութիւն նիւթոյ կատարեն. և ի բնութիւնս իւրեանց ո՛չ շփոթին և այլայլին: - 176. Ապա ընդէ՞ր սոքա՝ գոյացութիւն, որակ, քանակ, և այլքն, եղական գոլով ո՛չ շփոթին ի մի բնութիւն *խառնեալ*: - 176. Երկրորդ՝ զի առաջին և սկիզբն է թուոց. որպէս միակն թիւ բազմանայ և *խառնի* յայլս, այսինքն՝ ի **ժ**. ի **ճ**. ի **ռ**. և ի բիւրն. և ի միութենէն իւրմէ ո՛չ որոշի: - 178. Նոյնպէս և այրն *խառնի* ի թաւ և ի լերկ, ի սուղ և յերկար, և միաբանի ընդ նոսա, և ի մի բնութենէ իւրմէ ո՛չ որոշի կամ այլայլի: - 178. Իսկ Չորրորդն զի ունի ծև, **գ** ստեղն ի մի *խառնեալ*: - 178. ...և Արարած եղև. այսինքն ի մարդկային բնութիւնս *խառնեալ* և միաւորեալ: - 179. Եւ այլք ասացին թէ՝ ունի բնական լոյս՝ և առնու զլոյս յարևէ. և այսպէս *խառնի* **բ** լոյսն ի նմա՛. և սնուցանէ զորս յերկրի: - 187. Գոլորշիք վերացեալ յերկրէ գէջ և չոր *խառնեալ*: - 203. Երկրորդ՝ զի ամպ և մէգն *խառնէ*՛ զպարզ օդն և խաւարէ՛: - 206. Երկրորդ՝ զի երկիր չո՛ր է և ցամաք, պարտ էր լինիլ բազմութեան ջուրց. զի *խառնեսցի* ընդ երկիր և ծննդականս արասցէ: - 207. Եւ կէսք ասեն թէ՝ երկրի բնութիւնն աղտաղտուկ է և շօր՝ որ ծովն ի վերայէ. և որ առ եզերսն են՝ զնոսա լուանան անձրևք և *խառնեն* ի ծովն: - 208. Երկրորդ՝ զի վերին մասն օդոյն պա՛րզ է. և ներքին մասն մերձեալ ի յերկիր՝ թանձրանայ ի չորութեանց նորին. և ջերմութիւնն *խառնեալ* ընդ այն՝ առաւել շող լինի: - 211.

Ոմանք ասեն թէ յօդոյն է. զի օդն կապոյտ է՝ *խառնի* ընդ ջրոյն և լինի կանանչ: - 212. Այսպէս և սևութիւն երկրին և դեղնութիւն հրոյն *խառնի* և առնէ զկանանչն: - 212. Եւ մի և նոյն է. զի շունչ կենդանեաց է թանձր մասն օդոյս՝ *խառնեալ* ընդ ջրոյ. և շունչ նոցա է անօսր մասն ջրոյ՝ *խառնեալ* ընդ օդոյ: - 215. Քանն**է**՝ Թէ *խառնին* սերմն կենդանեաց. և պատճառ յղացմանն: - 228. Նա՛խ՝ որպէս ասացաւ ի վերոյ, հողն ունի զայլ **գ** տարերքն ի յինքն *խաննեալ*. յորժամ ի հողոյ ասէ՝ իմանալի զ**դ** տարերս: - 229. Վասն որոյ յետոյ մարդն ստեղծաւ յերկուցն *խառնեալ* յիմանալւոյն և ի զգալոյն ի մի էութիւն: - 231. Եւ զկրկնակի կենաց վայելումն ըստ *խառնեալ* էութեան իւրոյ. զի թէ զաստուածայինսն բերցէ յինքեան ըստ որում ի պատկերն եղև, վերափոխեսցի անմահ կենօք ի պատրաստեալն ժառանգութիւն: - 231. Երեքն ի սոցանէ գռեհիկք են. որ է շօշափելիք. ճաշակելիք. հոտոտելիք. զի *խառնելովն* ի զգալի իրն ճանաչեն: - 235. Եւ նա՛ է զգայական. և յոր մասն և *խառնի*՝ առնէ զգացումն: - 244. Եւ ցուրտ և լոյծն *խառնեալ*՝ լինի ջիլ. որպէս ցուրտ և խոնաւն փողք: - 244. Զի խարտեաշ մաղձն ընդ արիւնն և ընդ մորթն *խառնի*: - 245. Եւ այսպէս *խառնին* ընդ միմեանս: - 248. Եւ զոմանս ունի *խառնեալս* ընդ մարմնոյ. որպէս է բնական զօրութիւն կենդանականն և շնչականն որպէս ասացաւ ի վերոյ: - 249. Զի սերմնական զօրութիւնն որ է՛ ի նիւթն այն՝ իսկ ընդ *խառնիլ* սերմանցն յարգանդի, զուգապէս ցուցանէ զտնկականն: - 261. Արդ՝ **ժ** թիւն կատարեալ է. և չորսն տարրական է. այսինքն զի կատարեալ հոգին բանական ի նո՛յն ժամն *խառնեալ* միաւորի ընդ մարմնոյն տարրական, և կերպացեալ լինի մի մարդ մի դէմ և մի բնութիւն մարդոյ ի հոգւոյ և ի մարմնոյ. որպէս քառասունն ի տասանց և ի չորից է գոյացեալ: - 262. Դարձեալ՝ ամենայն իր առաւել ունի զօրութիւն ի տեսակս իւր՝ քան ի յայլս. որպէս ջուր առաւել զօրաւոր է ի գետս՝ քան ի յերկիր *խառնեալ*. և տնկականն առաւել է ի տունկս՝ քան յանասունս: - 266. Նա՛խ՝ զի բանականի և անբանի սերմ ո՛չ *խառնին* ի միմեանս: - 267. Այսպէս և զամենայն հակառակ տեսակս իմասցիս ոչ *խառնիլ* սերմանք նոցա: - 267. Եւ զարիւնն *խառնեաց* ի ջուրն: - 283. Իններորդ՝ արիւնն և շունչն է սկիզբն գոյացութեան մերոյ. զի արիւնն փոխի ի սաղմն, և ջերմ օդով *խառնի* ի հով և ի գէճն, և լինի աճումն և սնունդ մարմնոյ: - 295. Դարձեալ՝ խառնակիլ լեզուին ա՛յն է որ ընդ պատուհասն զբարութիւնն *խառնեաց*. զի թէպէտ բաժանումն լեզուաց պատուհաս երևի, այլ պիտանի՛ է: - 297. Իսկ **դ** կանայքն որք *խառնեցան* յօրհնութեան ազգն իսրայէլի...: - 300. Տասներորդ՝ ևս մեծագոյն խորհուրդ. զի բանն աստուած որ անդրանիկ էր հօր, եղև կրտսեր մարդ ի ժամանակի և փոքր. ըստ որում կոչեաց զինքն «փոքրիկ». զի բնութիւն մարդոյս ընդ ինքեան *խառնելով* արասցէ մեծ և անդրանիկ: - 311. Զի՞նչ է որ զկէս արեան պատարագին *խառնեաց* ի ջուր և ցանեաց ի ժողովուրդն. և զկէսն էարկ շուրջ զսեղանովն: - 341. Նշանակէ զժողովուրդն որք սրբին աւազանաւն և *խառնին* ի հաղորդութիւն արեանն քրիստոսի: - 341. Եւ թէ ոք ասիցէ, պա՛րտ է ջուր *խառնել* ի խորհուրդն որպէս և մովսէս: - 341. Նա՛խ՝ զի մովսէս յայտնապէս զկէս արեանն անապական եհեղ զսեղանովն որ նշանակէր զանապական խորհուրդ արեանն. և զկէսն *խառնեաց* ի ջուր որպէս ցուցաւ ի խորհուրդ մկրտութեան և հաղորդութեանն *խառնեալ*: - 341. Երրորդ՝ նախ *զխառնեալ* ջուրն ցանեաց ի վերայ ժողովրդեանն որ էր մկրտութիւնն. և սոքա ճաշակեն զջուրն և զարիւնն: - 341. *Խառնեալ* և աղացեալ ի խորհուրդ չորից առաքինութեանց մերոց: - 349. Իսկ զի խմոր ո՛չ *խառնէին*: - 356. Երկրորդ, զիպարտացեալ փառքն նշանակէ. զոր ո՛չ է պարտ *խառնել* ի բարիս: - 356. Իններորդ, խմորունն *խառնեալ*, և անխմորն անխա՛ռն է և պարզ որ է սրբութիւն սրտին: - 356. Ա՛րդ՝ հինն նորոյս օրինակ էր՝ ի բովանդակն ա՛ղ *խառնիւր*: - 356. Ա՛րդ՝ ի ճշմարտութիւնն ո՛չ է օրինակ. վասն որոյ ո՛չ *խառնի* աղ: - 356. Իսկ յօրինակն *խառնեմք* աղ. որպէս յագապս. յոգէհանգիստս և ի տօնական պատարագս: - 356. Նախ՝ մանանայն, ուր ո՛չ *խառնիւր* աղ...: - 356. և Երկրորդ նաշիհն իւղով զանգեալ, ուր *խառնէին* աղ: - 356. Եւ զանգեալ նաշիհն զյիշատակ մարտիրոսացն՝ ուր *խառնեմք* աղ ի հատ պատարագին և իւղ անոյշ ի խորհուրդ նոցա: - 356-357. Այլ որք յամառելով յօրինակն՝ ա՛ղ *խառնեն* ի խորհուրդն, պա՛րտ է նոցա *խառնել* և ձէթ և մուրկ և խունկ և միս գառին. կամ զանգեալ ի կասկարայս, կամ օծեալ ի տապակի, զի զօրինակն կատարեսցեն. և հեռասցին ի ճշմարտութենէն: - 357. Եօթներորդ՝ քածաւարին. այլամազն *խառնեալ*. զանազան բարուց նշանակ: - 371. Ուստի յա՛յտ է, զի որակ ծնողացն *խառնի* ի բեղնաւորիլն. ի դաշտանւոյն գօդի. ի հիւանդութենէ, ի շիկութենէ. որպէս ադամ տրտմութեամբ ծնաւ զորդին կայէն. ցաւած ծնողացն ցաւածին որդի: - 439. Իսկ աղն բանն աստուած *խառնեալ* ընդ մարդկութիւնս. որ բժշկեաց զվէրս մեր: - 445. Դարձեալ՝ մեղք սկզբնական *խառնեցաւ* ի յաճումն հիւթին. և յետոյ մահ և ապականութիւն: - 445. Եւ այսպէս *խառնեցաւ* ազգն

յուդայ ընդ ազգն ղեւայ խնամութեամբ: - 452. Զնա էառ կին յովիդա քահանայ. և *խառնեցան* երկու ցեղք թագաւորաց և քահանայից: - 452. Երկրորդ՝ զի ողորմութիւն է բացարձակ և պարզապես բարի. իսկ արդարութիւնն է *խառնել* բարի. ըստ որում հատուցանէ բարեացն բարիս, և չարեացն տանջանս: - 458. Զի թէպէտ փակեալ էր օրէնքն *խառնիլ* երկուց ցեղիցն ընդ միմեանս, սակայն ղևտացւոցն ո՛չ գոյր ժառանգութիւն և բաժին, *խառնէին* երբեմն ընդ թագաւորական ազգն յուդայ: - 461. Եւ վասն այն *խառնեցան* **բ** ցեղքն. զի ծնեալն ի նոցանէ քրիստոս ըստ մարմնոյ, թագաւոր և քահանայ լինէր: - 461. Երկրորդ՝ զի ո՛չ ինչ անդամ զազրելի է ի մարդն. այլ ամենայնն հաւասար են յարդարութիւն. եթէ ոչ եկամուտ ինչ *խառնեսցի* ի նմա: - 469. Իսկ զօծումն բնութեանն միաւորութեան՝ ընկալաւ ի կուսական արգանդին. ուր *խառնեալ* միաւորեաց զմերս բնութիւն ընդ իւրում աստուածութեանն և ծնաւ քրիստոս որ թարգմանի օծեալ: - 475. Երրորդ առ այսոքիւք՝ միաւորութիւն անուանեմք և զխառնուածս երկուց նայից ըստ զանազան որակութեանց. յորում ո՛չ ոք ի *խառնեցելոցն* զիւր ծայրագոյն որակութիւնն սեռաբար կարող է պահել...: - 476. Եւ ակն խառնուած չորից թևոցն, *խառնեալ* զգայութեանց և մտաց: - 493. Դարձեալ՝ մահն *խառնեա*՛լ է ընդ բարւոյ. և ապականութիւնն ամենևին չար...: - 498. Հինգերորդ՝ ապականութիւն մեր մարմնոցս է՛ ի սերմանէ հօր ի ձեռն կնոջ *խառնեալ.* իսկ մարմին բանին ո՛չ է ի սերմանէ հօր և մօր...: - 499. Վասն զի բոլոր մարդն երիւք է կայացեալ. որ է հոգի և մարմին, և ի մէջ երկուցն շունչն է *խառնեալ*: - 510. Պահքն վասն հոգւոյն պատշաճի. և Ուտիքն մարմնոյն. իսկ Նաւակատիքն վասն *խառնեալ* շնչոյն: - 510. Դարձեալ՝ զուտ է և անխառն իսկապէս ճշմարիտն քան *զխառնեալն* ի ստէ: - 550. Այլ ա՛րդ՝ յամենայն ազգաց ելին հերձուածօղք որ է սուտ. և *խառնեցան* ընդ ճշմարտութեանն: - 550-551. Եւ այսպէս լինի կատարեալ. մեղք *խառնեալ* օտարին գաղտնապէս, ընդ մտածութեանն բնաւորապէս: - 558. Եւ յայնմ ձևական բանիցն ո՛չ է պարտ ի բաց թողուլ. և ո՛չ այլ բան ի ներս *խառնել*: - 588. ...և *խառնեմ* զքեզ այսօր ի հաւատն քրիստոսի: - 593. Այլ գիտելի է, զի ոմանք հետևօղք չար աղանդոյն քաղկեդոնի մոլորեալք ի ճշմարտութենէն՝ ջուր *խառնեն* յանապական բաժակ արեանն քրիստոսի: - 594. Դարձեալ՝ մելքիսեդեկ հաց և գինի մատոյց պատարագ աբրահամու և ո՛չ ջուր. որ նշանակէր զճշմարիտ պատարագն քրիստոսի. ապա ուրեմն ո՛չ է պարտ *խառնել* ջուր: - 595. Եւ որ ջուր *խառնէ*՝ նզովեալ եղիցի ասեն: - 595. Նա՛խ՝ զի ջուրն և արիւնն որիշ բղխեաց և ո՛չ *խառնեալ*. ապա յա՛յտ է թէ որիշ է խորհուրդ ջրոյն և որիշ արեանն: - 595. Երկրորդ՝ զի թէ խառն բղխեաց ըստ քեզ վասն այն ի պատարագն ջուր *խառնես*, ապա և ի ջուրն գինի *խառնեա* և այնպէս մկրտեա՛: - 595. Զի առաւել յարմա՛ր է անապակ բաժակն անապական արեանն քրիստոսի, քան թէ *խառնեալն* ի ջրոյ և ապականեալն: - 595. Ապա ուրեմն թէպէտ և սակաւ *խառնի* ջուրն, բնութիւնք գինւոյն և ջրոյն ապականեցան. զի ո՛չ անապակ գինի է և ո՛չ պարզ ջուր: - 595-596. Ասեմք առ այս, թէ յառաջ խառնումն ջրոյն ո՛չ է ըստ խորհրդոյն. որպէս և ո՛չ առ մեզ, թէ վաճառօղն *խառնեսցէ* ջուր. այլ քրիստոս ո՛չ *խառնեաց:* - 596. Ասեմք թէ՝ խառնումն ո՛չ զջրոյ և գինւոյ ասէ, այլ *խառնել* զայն ասէ որ արկանի գինին ի խառնարանն: - 596. Որպէս այլ ուր ասէ «գինի լի անապակ արկեալ». որ է՛ *խառնեալ*. զի արկանելն *զխառնելն* նշանակէ. և *խառնելն* է արկանել գինւոյն ի յանօթն: - 596. Դարձեալ՝ *խառնելն* զմիաւորելն նշանակէ զարեան ընդ մարմնոյն որպէս մեր է սովորութիւն: - 596. Դարձեալ՝ խառնումն է աստուծոյ իմաստութեանն ընդ մարդկան. որ բանիւն *խառնեալ* միաւորեցան. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս: - 596. Այլ և զիինն իմաստութիւն ընդ նորոյս *խառնեալ* միաւորեաց քրիստոս. այսինքն զօրինակն ընդ ճշմարտութիւնս: - 596. Եւ դու *խառնեա* զսոսա ի խորհուրդ պատարագին. զի իցես ուղղակի մեկնիչ և գրոյն հետևօղ: - 596. Այլ և առաքեալքն և հետևօղք նոցա հարքն սուրբք՝ ո՛չ գիտէին զխառնարանն. և դու ուսար և *խառնես* ջուր և ընդ անիծիւք նոցա մնաս որպէս ցուցաւ ի վերոյ: - 596. Ապա վասն է՞ր ոմանք ջուր *խառնեն* և խմոր: - 596. զի որք կամին զմարմինն քրիստոսի ապականացու ասել՝ խմոր և ջուր *խառնեն*. թէպէտ այլ և այլ պատճառեն: - 596-597. Ասեմք թէ՝ և զայս ունիմք ծածկապէս. որպէս այն որ ի ջուր աւազանին խաչանման մեռոնն *խառնի*...: - 605. ...և երեսն լըսնանայ վասն դեղնութեանն. և կապուտի ընդ կարմիրն *խառնելով*: - 620. Իսկ սկսուածն ընդ երգոյն *խառնեալ*, Նախ նշանակէ՛ թէ զմարգարէից և զառաքելոցն բանս ի միասին *խառնեալ* ունի նորս եկեղեցի: - 627. Չորրորդ՝ զմարդկան և զիրեշտակաց երգն ի միասին *խառնեալ*: - 627. Այլ և նշանակէ՛ զմարդիկ ընդ հրեշտակաց և զիրէայս և զհեթանոսս *խառնեալ* ի մի եկեղեցի: - 629. Նոյնպէս և որ անիծից փոխէ՝ զալէլուն որ օրհնութիւն է ո՛չ *խառնեմք*: - 630. Դարձեալ՝ ի հանդերձեալն յորժամ *խառնին* հրեշտակք և մարդիկք ի լնուլ զտեղի անկելոց՝ կուսանաց սրբոց: - 636. Եւ որ ամէն շարականի սկիզբն ի

մարգարէից դնեմք, այս է պատճառն, զի զհինն և զնորս ի միասին *խառնեմք*: - 636. Վասն է՞ր ձայն և քնար *խառնէր* դաւիթ ի յերգս հոգւոյն: - 641. ...*խառնեաց* զնոսա ի բանս հոգւոյն...: - 641. ...վասն որոյ *խառնէ՛* զձայնս նոցա ի բանս իւր և մատուցանէ աստուծոյ: - 641. Երեք չուանն յեռեալ ի միմեանս մակդարձապէս, է՛ չորեքնիւթեայ բնութիւնս մեր ի տարերց *խառնեալ*. կամ շնչոյ մարմնոյ և հոգոյ խառնումն: - 645. զի թէ աղտեղութիւն ինչ լինի *խառնեալ* արտաքուստ ի կալ կամ ի հնձան, սրբեսցին խղճմտանք մեր: - 654. Վեցերորդ, ընդ կերակուր և ըմպելիս մեր՝ դնն որ թշնամի է մեր բազում վնասս *խառնէ* ...: - 654. ...որպէս նոքա որ զդեղ մահու *խառնեն*. վասն որոյ նշանաւ խաչին կնքեմք զնոսա, զի փախիցեն դեքն: - 654. Զյղանալն ապականութեամբ և կուսութեամբ ասեն. թէ ի ներքինեաց առանց *խառնելոյ* ի ներքս անցեալ յղութիւն առնէ: - 706. Եւ նշանս այս անքակտելի՛ է ի հոգւոյն և ի մարմնոյն *խառնեա*...: - 719. Զոր օրինակ նշան դրոշմի կայ ի մէջ քո՝ և անասնոյն՝ և տանն. զի ելեալ ի տանէ երթայ *խառնի* ի հասարակ նախիրն. - 719. Նոյնպէս հոգին բաժանեալ և մարմին լուծեալ ի հասարակ տարրն, այսու *խառնեալ* դրոշմիւս ճանաչեն զմիմեանս անսխալապէս: - 719. Ասեմք եթէ՝ զորօրինակ սընդիկ լուծեալ և ի հող *խառնեալ* գնդապէս և փոշիացեալ. յորժամ ի մի վայր ժողովես՝ թողու զփոշիսն ի յորս *խառնեալ* է և պարզ միայն սնդիկն ժողովի: - 719. Այսպէս և ի մարմին մարդոյ ոչինչ *խառնի* ի հասարակ տարերաց ի յորս լուծաւ. այլ ինքն միայն գոյացութիւն մարմնոյն *խառնեսցի* ընդ հոգւոյն: - 719. Այսպէս և **դ** տարերք ըստ ինքեանց անապականք են. զի մասնաւորքն ի նոցանէ ապականին և դարձեալ ի նոսա *խառնին*. և այսոքիկ ըստ կամացն աստուծոյ են կամ մշտապէս: - 733. Ա՛րդ՝ ի տեղի անկելոց հրեշտակացն՝ ըստ թուոյ նոցա *խառնելո՛ց* են դասք կուսանաց սրբոց: - 760. Զորօրինակ՝ յակն աղբեր *խառնեալ* ինչ՝ ապականեսցին բաժանեալ առուքն: - 776. Տարորոշումն *խառնեալ* տարերց. և լաւին և վատթարին. զոմանս պահել և զոմանս վտարել: - 786

**ԽԱՌՆԻՃԱՂԱՆՃ +** Եւ սոքա պատերազմօղք. թո՛ղ զայլ *խառնիճաղանճն*: - 434

**ԽԱՌՆՈՒԱԾ +** Դարձեալ ասեն թէ՝ բազումք ի մարդկանէ գործեն ի *խառնւածոյ* մարմնոյն, որք հարկաւորին ի շարժմանէ աստեղացն: - 10. Ասեմք առ այս, թէպէտ *խառնւածք* մարմնոյն լինին ի շարժմանէ՛ աստեղացն, այլ բազումք անձնիշխան կամօք նըւաճեն զվատախառնութիւն մարմնոյն, և գործեն զբարիս: - 10. Նա՛խ՝ եթէ ուշիմ և ապուշ և այլն ըստ կարգի, սոքա եթէ ի մարմնոյն *խառնուածոյ* պատճառին՝ և եթէ բնական որակութեամբ հոգւոյն՝ նման և աննման գոլ, առանց ներգործելոյ ո՛չ չար են և ո՛չ բարի...: - 19. Եւ այսպէս ի նոցա *խառնուածոց* լինի գոյացեալ մարմին և յառաջ եկեալ: - 181. Եւ *խառնուա՛ծ* է ի նոցանէ ծիրանի և կարմիր գոյնն: - 203. Եւ ի սոցա *խառնուածոցն* լինի ա՛յլ զանազան գոյնք: - 212. Եւ թէ ոք ասիցէ, *խառնուածոցն* է այս, կամ յատուկ տեսակաց. որպէս ձայնք և տերևք և կենդանիք չեն նման միմեանց: - 237. Ասեմք թէ՝ և տեսակք և *խառնւածք* մարմնոց են ի տեսչութենէ խնամոցն արարչին: - 237. Ի ժամ յղացմանն՝ եթէ ի ծնողացն՝ եթէ ի ժամանակէն՝ և եթէ յախտից՝ որ տարր և յաւելու ի *խառնուածն*, նոյն որակ գունով ծնանի զաւակն: - 245. Եւ գիտելի՛ է, զի յա՛յսց *խառնւածոց* լինի բարք իմն և ախտ ի մարդն: - 245. Կամ ի *խառնւածոյ* տարերացն՝ չարախառն և բարեխառն գոլ: - 251. Իսկ տրամադրութիւնք հոգւոյն՝ *խառնւածոյ* մարմնոյն ո՛չ հետևին: - 251-252. Երկրորդ՝ զի թէ այլ և այլ էր հոգի, ի յայլ հոգւոյ տեղիս ո՛չ բնակէր այլ հոգի որպէս յայլո՛յ կաղապար. և ա՛յլ դրօշած ի յա՛յլ կնիք. այլ մի է. վասն այն որ յետոյ երևի, յառաջնոյն *խառնուածն* կարէ՛ բնակիլ: - 259. Դարձեալ **թ** *խառնուա՛ծ* է չորից տարերց ըստ կրկին քառից որակաց առաւել և նուազ, և իններորդն հաւասար է որ է ի մարդն. վասն որոյ ինն ամսեայ ծնանի: - 264. Այլ թէ լինին մարդակերպ կենդանիք, վայրիք են և գազանք. և ո՛չ ի *խառնուածոյ* մարդոյ: - 267. Իսկ թէ մարդ լինի շանադէմք, և այն ո՛չ է ի *խառնուածոյ* շանց, այլ նշան է հայրենեաց, կամ սպի անձանց: - 267. Նա՛խ՝ **գ** մասունք հոգւոյն, բան՝ ցասումն՝ և ցանկութիւն. և **դ** տարերաց *խառնուածն* որովք մեղանչէ մարդ: - 287. Երրորդ առ այսոքիւք՝ միաւորութիւն անուանեմք և *զխառնուածս* երկուց նայից ըստ զանազան որակութեանց. յորում ո՛չ ոք ի խառնեցելոցն զիւր ծայրագոյն որակութիւնն սեռաբար կարօղ է պահել. այլ շփոթեալ անկանի ի ծայրագոյն որակութենէն. որպէս զջուրց և զգինեացն *խառնուած*, և զմեղերաց: - 476. Եւ ակն *խառնուած* չորից թևոցն, խառնեալ զգայութեանց և մտաց: - 493. Դարձեալ կոչին ծառայականք, զի և ի *խառնուածոյ* մարմնոյն գոյանան. որք ո՛չ հետևին միմեանց. զի որ ի *խառնուածոյն* ողջախո՛հ է, նա ո՛չ խոհեմ կամ արդար կամ արի կարէ գոլ: - 581. Եւ այսպիսիքս կոչին ծառայականք. զի ի հարկէ *խառնուածոյ* մարմնոյն լինին ողջախոհ կամ արի և այլն: - 581. Երկրորդ՝ նշան իմն գոյ առանձնակի ի *խառնուածոյ* դիմացն: - 719. Իսկ ուղղակին. զի մոռացումն բնաւորեալ է առ *խառնուած* կազմութեան

մարդոյ. իսկ խրատ՝ յանդիմանութեան է՛ ի ցոյց ինքեան: - 774. Իսկ յետ մահու՝ յիշելն է միայն ըստ ինքեան զներքոյսն. խափանեալ *խառնուածոյ* նիւթոյն: - 774

**ԽԱՌՆՈՒՄՆ +** Այսպէս իմացիս ըստ միաւորութեան բանին և անշփոթելի *խառնմանն*: - 75. Երկրորդ՝ զի հողն բնակա՛ն ունի զթանձրութիւն, և այլքն *խառնմամբ* ի նմանէ. և մարմինս մեր թա՛նձր է ի հողոյ: - 229. Կամ ընդ **դ** տարերց ունի *զխառնումն* երկուց նիւթոց, այսինքն արուական և իգական: - 262. Ութերորդ՝ հուրն և օդն առաւել է յարիւնն զի առնօղք են. և յայտ է ի *խառնումն* միութեանց. զի հուրն մածուցանէ՛, և ջուրն և հողն մածնուն, և օդն սնուցանէ. վասն այն զարարօղն և զսնուցանօղն ո՛չ ուտեմք: - 295. Այլ *խառնումն* ի բաժանմանէ է: - 297. Յասիցելոցս ո՛չ ոքն յարմարի միաւորութեան փրկչին. բայց միայն երրորդն առաջնոյն. այսինքն էութիւն առ էութիւն անշփոթ *խառնումն*. որպէս հոգւոյ և մարմնոյ. զոր և յառաջիկայդ ցուցցի: - 476. Իսկ վասն ջրոյն զի՞նչ պարտ է ասել. զի յոյնք թերի ցուցանեն զլատինացւոց *խառնումն*, ինքեանց կրկին *խառնմամբն*. և զայն խորհուրդ առեալ: - 554. Նոյնպէս զզանկութիւնն ի շնութիւն և ի պոռնկութիւն յաւելու հանապազ. զոր անասունք յիւրեանց ժամանակին ունին *զխառնումն*: - 564. Ասեմք առ այս, թէ յառաջ *խառնումն* ջրոյն ո՛չ է ըստ խորհրդոյն. որպէս և ո՛չ առ մեզ, թէ վաճառօղն խառնեսցէ ջուր. այլ քրիստոս ո՛չ խառնեաց: - 596. Ասեմք թէ՝ *խառնումն* ո՛չ զջրոյ և գինւոյ ասէ, այլ խառնել զայն ասէ որ արկանի գինին ի խառնարանն: - 596. Դարձեալ՝ *խառնումն* է աստուծոյ իմաստութեանն ընդ մարդկան. որ բանիւն խառնեալ միաւորեցան. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս: - 596. Այս է *խառնումն* գինոյն ի խառնարանն իմաստութեան: - 596. Իսկ թէ մարմնական խնդրես *զխառնումն* ջրոյ և պնդիս ի հակառակն, ասեմք քեզ թէ ո՛չ միայն ջրոյ, այլ և կաթին և մեղեր և գինւոյ ասէ խառնումն ի խառնարանն. - 596. Զի է՛ շաղկապ հոգևոր. այսինքն սրտիցն. և է՛ շաղկապ մարմնաւոր՝ *խառնմամբ* սերիցն: - 610. Երեք չուանն յեռեալ ի միմեանս մակդարձապէս, է՛ չորեքնիւթեայ բնութիւնս մեր ի տարերց խառնեալ. կամ շնչոյ մարմնոյ և հոգոյ *խառնումն*: - 645. Նմանապէս և մարմին մարդոյ առ հասարակ մեռանին և ի հող լուծանին և յայլ տարերս. և յորժամ յառնեն՝ ո՛չ ունին ի հասարակ տարրէ ընդ ինքեանս. և այս մարմին ի յայն մարմնոյ ոչ ինչ ունի *խառնումն*: - 719-720

**ԽԱՐԱԶԱՆ +** Եւ ի տօն զատկին որ արար *խարազան* չուանեայ և եհան զվաճառականսն, ցուցաւ սարկաւագի գործ նորա: - 606-607. Չորրորդ՝ յօրինակ քրիստոսի որ *խարազանաւ* եհան ի տաճարէն զոչխարս և զարջառս. նոյնպէս և մեք արտաքսեմք: - 617

**ԽԱՐԵՄ +** Վասն է՞ր զմարմնոյ արատս *խարէին*: - 370

**ԽԱՐԻՍԽ +** Եւ յարտաքին սրահն հ սիւնք արծաթապատք. և յամէն սիւն **բ** *խարիսխք* և խոյակք յերկոքին ծայրքն: - 343. Հարիւր *խարիսխք* արծաթիք. և իւրաքանչիւրքն ի մի մի տաղանդէ՛ կշռոյ: - 343. Հարիւր *խարիսխք* արծաթիք. և իւրաքանչիւրքն ի մի մի տաղանդէ՛ կշռոյ: Եւ այլքն պղինձ արծաթապատ. որպէս սիմքուֆտ, և կամ ոսկի: *Խարիսխ*՝ ժողովուրդն: - 343. Սոքա **է** սիւնք և **է** *խարիսխք* են եկեղեցւոյ գլուխ կարգեալք ընդ բոլոր տիեզերս որպէս ասացաւ: - 549

**ԽԱՐՍԽԵՄ +** Զանսկիզբն սկզբան ի սկզբանէ՛ գոյին, և զանճառելի թաքնութեան և անհաս խորութեան յառաջ ճանապարհ ի մեզ միածին բանին... Անշարժ *խարսխեալ*: - 456. Այլ մեք եղբարք ուղեկիցք իմ և դաւանակիցք եղիցուք. շինեալք և հաստատեալք ի վերայ հաւատոյ հիման. անշարժ *խարսխեալք* ի վերայ յուսոյն քրիստոսի, սեռն և յստակ կատարեալ սիրով սուրբ հոգւոյն: - 503

**ԽԱՐՏԵԱՇ +** Եւ զի *խարտեաշ* մաղք առաւելուն ի մեզ: - 197. *Խարտեաշն* որ է լեղին՝ է՛ հրոյն: - 215. Եւ ջուրն **դ** հիւթք. այսինքն արիւնն. պաղղամն. սեաւ և *խարտեաշ* մաղձն: - 232. Եօթներորդն է՛ լեղին. որ է *խարտեաշ* մաղձն. տա՛ք է և չոր. և տանուտէր ունի զմառեխն որ է հրատն: - 241. Արդ եթէ ի *խարտեաշ* մաղձէն ի լեարդն է մնացեալ, լերդին համն ի լեղւոյն առնու և բերանն լեղի դառնայ. իսկ եթէ ի սեաւ մաղձէն է մնացեալ ի լեարդն. բերանն թթո՛ւ դառնայ. իսկ թէ պաղղամն մնայ ի լեարդն, բերանն աղի փոխի. իսկ թէ յստակ արիւնն մնայ ի լեարդն, լերդին համն անոյշ լինի, և բերանոյն համն անուշ տայ և քաղցր: - 242-243. Զի *խարտեաշ* մաղձն ընդ արիւնն և ընդ մորթն խառնի: - 245. Եւ ոմանք ասեն՝ թէ սեաւ մաղձն առնէ տրտմութիւն և սրտմտութիւն. և *խարտէշն* զբարկութիւն և զմախանք. արիւնն արի և վայրաբեր. և պաղղամն ծոյլ և քնափ: - 245. Իսկ ամառն, և մինչ ի **զ** ժամս աւուրն, և *խարտեաշ* մաղձն, և երիտասարդն՝ ըստ նմանութեան տարրական հրոյ ջերմ և չոր գոլով. վասն որոյ առաւել բարկացօղ և ցանկասէր լինի: - 266. Եղունգն, *խարտեա՛շ* է. և գտանի ի հնդիկս: - 349. Տասներորդ, մանուկ *խարտեաշ* և տեսլեամբ գեղեցիկ...: - 436

**ԽԱՐՏԵՄ +** Զոր եզեկիա *խարտեաց*. որպէս մովսէս զգլուխ որթոյն և կորոյս: - 387

**ԽԱՐՏՈՑ +** Զի որպէս հուր զժանկ արծաթոյ՝ և *խարտոց* զժանկ երկաթոյ, նոյնպէս և նեղութիւն սրբէ զմեղս մարդոյ: - 162

**ԽԱՒԱՐ +** Երկրորդ՝ բարին ունակութիւն է, և չարն պակասութիւն նմին. որպէս *խաւարն* լուսոյ: - 13. Ասեմ զառաջինն եթէ՝ չար ո՛չ է յաստուծոյ. զի աստուած բարի՛ է բնութեամբ. և ի բարւոյն չար ո՛չ գայ յառաջ. որպէս ո՛չ ի լուսոյն *խաւար*: - 16. Այլ և ո՛չ է բնութիւն. ո՛չ մասն և ո՛չ բոլոր. այլ պակասութիւն ունակութեան. զի բարին ունակութիւն է, և չարն պակասութիւն նորին. որպէս *խաւարն* լուսոյ, և հիվանդութիւնն առողջութեան, և մահ կենաց: - 16. Ա՛րդ՝ առաջնովն ճանաչեմք զլոյս. և երկրորդիւն *զխաւարն*. և առաջնովն ճանաչեմք զճշմարիտն. և երկրորդիւ զսուտն: - 17. Այլ թըւի որպէս ունակութիւն և պակասութիւն. զի բարին ունակութիւն է, և չարն պակասութիւն նմին. որպէս կուրութիւն երեսաց՝ և *խաւար* լուսո՛յ է պակասութիւն: - 21. Այժմ պատասխանեսցուք հարցմանն եթէ առաքինութեանն չարութիւն, և արդարութեանն անիրաւութիւն ներհական. որպէս *խաւարն* լուսոյ. և էութիւն է լոյսն. և ո՛չ էութիւն *խաւարն*. և օդն ընդունակ լուսոյ և *խաւարի*: - 23. Եւ զի ո՛չ ընկալան զարեգակն արդարութեան զքրիստոս, անկան ի լուսոյ ի *խաւարն*: - 27. Դարձեալ առարկեն, եթէ աստուած է հայր՝ և անծին է բնութեամբ, և որդի ծնեալ է, ապա ուրեմն ո՛չ է որդի աստուած. զի ծնելութիւն և անծնելութիւն հակառա՛կ են միմեանց. որպէս սեաւ սպիտակի կամ լոյս *խաւարի*: - 38. Եւ թէ զմիայն ճշմարիտն՝ հօր միայն տաս, կորուսեր ապա զորդի ստութեամբ և մահուամբ և *խաւարաւ* և այլովն: - 47. Քսանեմիերորդ՝ արդ՝ եթէ քրիստոս տգէտ ունէր միտս, և տկար հոգի, և ապականացու մարմին և եկն քրիստոս զի բարձցէ զտկարութիւնս մեր. և լուսաւորեսցէ որ նստէաք ի *խաւարի*. և նա՛ է գառն աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի և զապականութիւն: - 99. Արդ՝ որպէս օդ լուսաւորեալ՝ ո՛չ ունի մասն *խաւարի*, Նո՛յնպէս հոգին քրիստոսի միաւորեալ ի բանն աստուած՝ ո՛չ ունի մասն տգիտութեան: - 100. Եւ տգիտութիւնն է *խաւար* մտաց: - 101. Եւ այսպիսի տգիտութիւնս *խաւա՛ր* է մտացն և կուրութիւն: - 103. Տգիտութիւն ո՞րպէս *խաւար* է մտացն: - 103. Զոր օրինակ, զգալի *խաւարս* մարմնոյ աչացն է: - 103. Նոյնպէս և տգիտութիւնն մտա՛ցն է *խաւար* և մոլորութիւն. և կապ. և ծանրութիւն. և անջատօղ. և տգեղութիւն: 103-104. Զի որպէս *խաւարն* անյայտ է, նոյնպէս և առաւել լոյսն անտեսութիւն առնէ. և նա անտես է ի հրեշտակաց. և անյայտ ի մարդկային մտաց. թէ ո՞րպէս կամ զի՞նչ է էութիւն և բնութիւն աստուածութեանն: - 122. Երկրորդին պատասխանեմք եթէ՝ ո՛չէ նոյն դրութիւն և խոստովանութիւն. որպէս յորժամ ասեմք դնելով թէ՝ չա՛ր է. *խաւա՛ր* է. և մե՛ղք է. ահա այս ուրացութիւն է և պակասութիւն: - 124. Եւ յորժամ ասեմք ո՛չէ չար. ո՛չէ *խաւար*. ո՛չէ մեղք. ահա այս խոստովանութիւն է և ո՛չ դրություն: - 124. Իսկ արժանապէսն՝ զի կարօղ աչքն լուսաւորին, և տկարքն *խաւարին*: - 127. Եւ նոքա լոյս գոլով լուսաւորին. իսկ մեք ի *խաւարէ՛* ի լոյս գամք: - 139. Յոգնորն այն է՝ զի անկաւ անձնիշխան կամօք ի բարւոյն ի չարն, ի լուսոյն ի *խաւարն*, ի գիտութենէն յանգիտութիւն, յանմեղութենէն ի մեղս, յերանութենէն ի թշուառութիւն, ի սիրոյն յատելութիւն: - 146. Ա՛րդ «արուսեակ անկեալ», իբր թէ ի լուսոյն զրկեալ և եղեալ *խաւար*: - 148. Իսկ «առաւօտի», զի ի սկիզբն ստեղծման աշխարհի ընդ բաժանիլ ի մէջ լուսոյն և *խաւարին*՝ յայնժամ միայն ծագեցին յառաջին օրն յանկարծակի և անկան յերկնից. թէպէտ ոմանք յերկրորդ օրն ասեն: - 148. Ո՞ր է սկիզբն աւուր. և բաժանումն լուսոյ և *խաւարի*: - 154. Զորօրինակ՝ արեգակն ո՛չ կարէ լինիլ *խաւար*, զի առաւե՛լ է լոյս: - 163. Նա՛խ՝ զի հալածէ՛ *զխաւարն*: - 185. Նա՛խ՝ *զխաւար* անգիտութեանն հալածէ՛: - 185. *Խաւարի*՝ մահու՝ և յարութեան է նշան: - 186. Ոմանք ասացին ի *խաւարմանէ* խաչելութեանն է մնացեալ նշան: - 187. Եւ յորժամ առնու զլոյսն յարևոյն, ի յեզրն երկրիս ձևն բոլորակ է՝ *խաւար* մնա մէջն: - 187. Այս է պատճառն. զի ի սկզբանէ տիւն առաջանայր գիշերոյն. զի ադամ ի լուսոյ շնորհացն անկաւ ի *խաւար* մեղաց: - 194. Զի՞նչ է բաժանումն լուսոյ և *խաւարի*: - 194. Զի է՛ պատճառ լուսոյ արեգակն. և պատճառ *խաւարի* ստուեր երկրի: - 194. Իսկ տեղիքն, զի յա՛յս կիսագունդս լինի լոյս, և ի միւսն *խաւար*: - 194. Եւ ժամանակն, որ ի յայս ժամս լինի աստ լոյս, և ի միւս ժամն *խաւար*: - 194. Երկրորդ՝ խա՛ռն է ի լուսոյ և ի *խաւարէ՛*: - 196. Երրորդ՝ մերժէ՛ *զխաւար*: - 196. Վեցերորդ՝ որքան յամէ՝ լոյսն պայծառանայ, և *խաւարն* նուազի՛: - 196. Եւ զի մերժի լոյսն, և տարածի *խաւարն*: - 196. Վեցերորդն *խաւար* մթութեան: - 210. Եւ դարձեալ՝ որ քան մերձիմք կատարածի, այնքան մերձենամք ի ցաւս դժոխոցն. որպէս յերիկունն սակաւ սակաւ առաւելու *խաւարն* և ցուրտ: - 293. Չորրորդ՝ ի խորհուրդ յարութեան մերոյ, որ վերըստին գոյացուցանէ ի *խաւարէ՛* գերեզմանին և ի լոյս հանէ և ուրախութեամբ զարդարէ՛ և

փառաւորէ՛: - 321. Զի նա *խաւարաւ* տանջէր, և քրիստոս զկոյր աչսն լուսաւորէր: - 328. Եւ տէրն զերկիր շարժեաց և զգերեզմանս եբաց. և գ ժամ *խաւար* էած փոխանակ գ աւուր խաւարին եգիպտոսի: - 329. Իններորդ՝ *խաւարն*: - 333. Իններորդ՝ *խաւարն* շօշափելի. կամ զի թանրացեալ ըմբռնիւր շօշափելով. կամ զի շօշափելով ծեռաց և գաւազանաւ կարէին շարժիլ: - 334. Նշանակէր *զխաւար* անմտութեան նոցա որ առաւել էր քան զամենայն երկրի. զի զամենայն զարշ կենդանիս ի պաշտօն առին: - 334. Եօթներորդ՝ առաւօտին. զի առաւօտ գործէ կերողացն հալածելով *զխաւար* մեղաց: - 339. Վեցերորդ՝ զի իմանալի ունի լոյս՝ ցուցանէ՛ զգալի լոյսն. զի ի գիշերի ելեալ ի խորանէն հալածէր *զխաւարն* և լուսաւորէր զանապան: - 352. Եօթներորդ՝ զի որ աշակերտի մովսէսի՝ զլոյս ընդունի. և որ ո՛չ աշակերտի՝ ի *խաւար* մնացէ որպէս քանանացիքն: - 352. Իսկ որ վասն մեղաց նաշիհ իւղ և խունկ ոչ դնէին. զի տրտմութիւն և *խաւար* է մեղքն, և զարշ հոտ գայ ի խղճմտանացն մինչև ապաշխարեսցէ: - 357. Երկրորդ՝ կոյր. որ մտօքն են *խաւար*: - 370. Երրորդ՝ զի ինքն օրհնութիւն էր, և անէծքն մերձեալ ի նա յօրհնութիւն փոխեցաւ. որպէս *խաւարն* ի լոյս փոխի. և մեղքն յարդարութիւն. և մահ ի կեանս: - 400. Թողում զգերծումն մերկութեան և զթօշումն անարգութեան և տկարութեան խաչին. զայպանելն խաչողաց. և *զխաւար* լուսաւորացն. և յայլ դէմս դարձուցից զբանս: - 424. Երկրորդ՝ ի յանդիմանութիւն խաչողացն. զի լուսաւորքն տեսեալ զտէրն իւրեանց մերկացեալ, պատկառեցին և քօղ արկին *զխաւարն*: - 490. Դժոխ՝ զդժուար զնեղ և զանձուկն նշանակէ. և կոչի բազմաւոր, Նախ վասն բազում կրիցն. ուր լալ աչացն է և կրճել ատամանց և *խաւար* ներքին և արտաքին և այլն: - 505. Իսկ վերջին դժոխք որ կոչի անջրդի գուբ, նոցա՛ է որք ո՛չ ունին չար և ո՛չ բարի. որպէս մանկունք անմկրտեալք. ո՛չ տանջին զի չեն մեղանչեալ. և ո՛չ հանգչին զի չեն արդարացեալ. այլ վասն սկզբնականին մնան յանջրդի գուբն *խաւարին*: - 505. եթէ քրիստոս յարեաւ ի մէջ գիշերի. զի այց արասցէ մարդկան ազգի. և զանկեալքս ի *խաւարի* և ի ստուերս մահու՝ ի լոյս գիտութեան և շնորհաց յարուսցէ: - 514. Քսաներորդ, յա՛յտ է յա՛յսմանէ՝ որ նախ քան զքրիստոս՝ էր սկիզբն աւուր ծագումն լուսոյն. իսկ յետ յարութեանն քրիստոսի եղև սկիզբն աւուրն ի մէջ գիշերի. զի այժմ ի *խաւարէ՛* ի լոյս ճանապարհորդիմք: - 515. Երկրորդ այսպէս, զի յուրբաթի գիշերն ըմբռնեցին մինչև ցվեց ժամն որ *խաւար* եղև մինչև ցինն ժամն: - 516. Վեցերորդ՝ զի զամենայն բարիսն որ ի մեզ են՝ արտաքս հանեն. զորօրինակ եկեալ *խաւարն* հանէ զլոյսն: - 562. Այսպէս մեղանչէ սատանայ և մարդ. զի զլոյսն աստուծոյ անձնիշխան կամօք և իմացմամբ մերժէ՝ և սիրէ *զխաւար*: - 562. Որպէս ոք զգալի ակն խփէ և զրկի ի լուսոյն և առնէ *խաւար*. նոյնպէս և նոքա: - 562. *Խաւարն* միայն. թէ այժմ և թէ ի հանդերձեալն: - 593. Իսկ ի մեզ դուռն մարմնոյս որ յերկիր և ի *խաւար* հայի, արևմտեանն է: - 614. ...եկն ի յերկիր որ է՛ արևմուտք և *խաւար*. եղև որդի մարդոյ: - 621. Երեկոյ է տղայութիւնն. յորում նո՛ր զամք ի *խաւար* կենցաղոյս: - 622. Եւ *խաւարն* արտաքին. և որդն անքուն: - 661. Որպէս որք ի *խաւար* բանտից զերծանին և ազատեալք զլոյս տեսանեն. նոյնպէս և հոգին բաժանեալ ի մարմնոյ. և են ի լոյս և յերանութեան հանգիստն: - 669. ...և նա ցաւօք և տրտմութեամբ և հեծութեամբ կայ անդ ի *խաւարին* բանտն ընդ այլ խաւարասէր հոգւոցն: - 669. Դարձեալ՝ նշանակէ՛ յետ մեռելոյն զփոխումն ուրախութեան մեր ի սուգ և ի մերկութիւն. և ի սև հանդերձս. ի *խաւար* տունս և այլն: - 670. Է և ա՛յլ իմն տեսութիւն վերազոյն. զի արարողութիւն սըգոյս ցուցանէ զառաջին անկումն մեր ի լուսեղէն կենացն ի *խաւար* աշխարհ տրտմութեամբ և ցաւօք մահու մեռեալք և ի հող դարձեալք. և այս ի ճաշակմանէ պտղոյն: - 670. ...և հող զգլխով արկեալ, ի *խաւար* բնակիմք և այլն: - 670. Ութերորդ, զի որակ եկրի *խաւար* է և սեաւ. և ո՛չ է պայծառ որպէս այլքն...: - 678. Ի մարմնոյ բաժանեալ հոգին պայծառանայ տեսութեամբ. որպէս որք ի *խաւար* բանտից ազատին: - 685. այլ *խաւար* մեղացն արգելու զտեսութիւնն. և չա՛ր է կարծիք նոցա, և երկիւղ տանջանաց: - 685. Առաջին պակասութիւն է հոգւոյն իմացականին *խաւարն* և տգիտութիւնն. իսկ ի յարութեանն բառնի այս ի հոգւոյն և լինի լոյս պայծառ՝ և գիտութիւն աստուածային տեսութեանն. - 722. Վասն այն հոգիք մեղաւորաց լինին ի *խաւարն* անգիտութեան. և ի տրտմութիւն յաւիտենական. և որոշեալք յաստուծոյ: - 723. Եւ լո՛յս էր իսրայէլի, և *խաւար* եգիպտոսի: - 741. Այլ նախ ասի միշտ տիւ ի վերին երես երկրի. ուր արեգակն և լուսին զկա՛յէ առեալ. իսկ ներքինն միշտ գիշեր և *խաւար* անփոփոխելի: - 750. Ո՛չ նոյնն մարմնապէս, այլ նմանն հոգէպէս. ծարաւումն, *խաւարն*, հրախառն կարկուտն, ժահահոտն, և այլն ըստ կարգի: -751. Կրճել ատամանց ի ցրտոյ: *Խաւար*: Ծուխ: Արտաասուք ներքին: - 751. Վեցերորդ՝ *խաւար* շօշափելի. ուստի ասի «երկիր *խաւար* և մթին ուր ոչ ինչ կարգ և մշտնջենաւոր արհաւիրք բնակեալ»: - 752. Վասն

վեցերորդին, որք *գխաւար* մեղաց աստէն սիրեցին և առ լոյսն քրիստոս գալ ո՛չ կամեցան. վասն այնորիկ ահագին *խաւարաւ* անդ նսեմանան: - 752. Զի՞նչ է *խաւարն* արտաքին: - 753. Նա՛խ՝ զի արտաքո՛յ է այսմ *խաւարի* որ է պակասութիւն լուսոյ. այլ այն *խաւարն* պակասութիւն է բարեաց: - 753. Երրորդ՝ զի *խաւարն* լինի յօդոյ. և ա՛յն ի հրոյ: - 753. Չորրորդ՝ զի այս *խաւար* երբեք է և ուրեք. և այն միշտ և ամենեցուն: - 753. Որ և ա՛յն քան գերազանց է միաւորութիւնն քրիստոսի ընդ եկեղեցի քան զմարմնական հարսանեաց, որպէս լոյս քան *գխաւար*. և իւղ անոյշ քան զգարշութիւնս: - 757. Այլոց հուր և *խաւար* և տարտարոս. լալ աչաց և կրճել ատամանց. և այլոց այլ ինն: - 760

**ԽԱՒԱՐԱՅԱԼԱԾ +** Եօթներորդ՝ զի և *խաւարահալա՛ծք* են: - 125

**ԽԱՒԱՐԱՅԻՆ +** Վեշտասաներորդ՝ ի մէջ գիշերի յարեաւ, զի զհոգին ի *խաւարային* բանտէն ի լոյս կենաց շրջեսցէ: - 514. Այսպէս է վախճան մաքուր և սուրբ հոգւոցն. ուրախութեամբ ընթացեալ ի պսակն և զերծեալ ի բանտէ *խաւարային* մարմնոյ: - 669. Եւ ծովն պատառեալ ի ձեռն մովսիսի այսինքն *խաւարային* անդունդք օդոյդ ի ձեռն առաջնորդ հրեշտակին: - 682

**ԽԱՒԱՐԱՍԷՐ +** և նա ցաւօք և տրտմութեամբ և հեծութեամբ կայ անդ ի խաւարին բանտն ընդ այլ *խաւարասէր* հոգւոցն: - 669

**ԽԱՒԱՐԵՑՈՒՑԱՆԵՄ +** Ներգործութիւն *խաւարեցուցանելն* զարեգակն: - 86. Եւ տէր մեր ի ժամ խաչին *խաւարեցոյց* զնոսա և մի օրն եղև **բ**: - 418. Երրորդ՝ զի **գ** ժամ ընդ արեգականն ընթացաւ և *խաւարեցոյց* զնա մինչ ի **թ** ժամն: - 490. *Խաւարեցոյց* կնքեալ, այսինքն վկայեաց եցոյց թէ ոչ են աստուածք: - 639

**ԽԱՒԱՐԻՄ +** Չորրորդ՝ զայլայլումն լուսաւորացդ. այսինքն զի երբեմն *խաւարին*, որպէս առ խաչելութեամբն. և երբեմն յետս դառնան և կանգնին, որպէս յեսու և առ եզեկիա: - 26. Զի միշտ է է, ո՛չ ոչ էանայ. և միշտ բարի և լոյս է, ո՛չ չարանայ և *խաւարի*: - 44. Զի *խաւարի* միտքն. և մոլորի՛ իմացումն. և կապի ընդարձակ տեսութիւնն. և ծանրանայ_թեթեւութիւնն. և անջատի ի բազումս. և տգեղանայ պատկերն: - 104. Վասն այն աշխարհ ամենայն այժմ ի չարի կայ, և *խաւարեալ* զանազան մեղօք: - 139. Այլ առ ժամայն հպարտութեամբն ուռուցաւ և ի ճշմարտութենէ լուսոյն դարձոյց զանձն իւր և *խաւարեցաւ*: - 147. Իններորդ՝ զոմանս *խաւարէ՛* և զայլս լուսաւորէ՛: - 186. Նոյնպէս յորժամ ասեմք թէ արեգակն *խաւարեցաւ*, ո՛չ ի բնական լուսոյն՝ այլ ի զմեզ լուսաւորելոյն: - 186. Զարեգակն *խաւարէ՛*: - 186. Եւ գիտելի՛ է, զի ընդ ամենևին հեռանալն լուսինն *խաւարի*. և ամենևիմբ մերձ եկեալ ի նոյն կենդանակերպն և ուղղապէս ընդ դէմ անցեալ արեգականն՝ *խաւարէ՛* զնա. զի ընդ դիմատիպ է անօթ լուսնոյն: - 187. Եւ զի ո՛չ հանապազ *խաւարին*. զի ո՛չ միշտ ընդ նոյն շաւիղս ընթանան. թէպէտ հանդիպին ընդ նոյն կենդանակերպն: - 187. Ստուեր երկրի ընդ մէջ անցեալ արեգական՝ *խաւարէ՛* զլուսինն: - 187. Այլ կատարումն լուսնի է ի վախճանի աշխարհի. յորժամ արեգակն և լուսին *խաւարեսցին* որպէս ասէ աւետարանն: - 192. Երկրորդ՝ զի ամպ և մէգն խառնէ՛ զպարզ օդն և *խաւարէ՛*: - 206. Եւ յաւուր ուրբաթու *խաւարեցաւ* երկիր որպէս ամպն ի վերայ ժողովրդեանն: - 337. Վէմք պատառեցան. և *խաւարեցաւ* լոյսն: - 399. Զորօրինակ՝ ճրագ ըզտեսօղս լուսաւորէ՛, և զտկարս *խաւարէ՛*. կամ որք ի ճրագ նային տեսանեն լոյս. և որք յետս դառնան խաւարին: - 403. Յինգերորդ՝ լուսաւորքն *խաւարեցան*: - 490. Քանի՞ են նշանք ի *խաւարիլն*: - 490. Նա՛խ՝ զի ծանիցի թէ սոցա արարիչ է անարգեալն. վասն այն լուսեղէնք և օդեղէնք և օդն *խաւարեցան*. ջուր ի կողիցն բղխեաց. և երկիր շարժեցաւ: - 490. Եւ յաւուր ուրբաթու *խաւարեցաւ* երկիր. որպէս ամպն ի վերայ ժողովրդեանն: - 513. Բայց կրկին է զրկումն լուսոյ. մի՝ որ ի ճառագայթէ՛ լուսոյն զակն խփէ և *խաւարի*. և **բ**՝ որ ընդ դէմ բոլորակի արեգականն հայիցի՝ կորուսանէ զլոյսն և *խաւարի*: - 562. Ա՛րդ՝ մեղանչելն մարդոյ այնպէս է որ զակն խփեաց ի լուսոյն և *խաւարեցաւ*. սակայն լոյսն ծագէ՛ դեռևս ի վերայ աչացն և սակաւ փայլէ ի ներքս. և յորժամ բանայ վաղվաղակի լոյս տեսանէ: - 562. Իսկ մեղանչելն սատանայի այնպէս է որ ընդ դէմ արեգականն հայի և զլոյսն կորուսանէ և *խաւարի*: - 563. Զի այս ո՛չ է ի կարգէ դատաստանին. այլ ի սքանչելեաց միածնին. որպէս արեգական *խաւարիլն*, և գերեզմանաց բանիլն, և այլն: - 697. Թօքափիլ կամ *խաւարիլ* լուսաւորաց ո՛չ է իմանալ թէ ի կամարէ՛ երկնից անկանին կամ զգոյացական տեսակն փոխեն: - 728. Զի թէ նսեմ երկիրս լուսաւորի, լուսաւորքն վասն է՛ր *խաւարին*: - 728. Նաև վկայէ՛ մարգարէն «եղիցի երկիր նոր և երկին նոր» ապա յա՛յտ է զի ո՛չ ապականին և *խաւարին*. - 728. Նմանապէս և հիմունք երկրի ջուրք տատանեցան. այսպէս և սիւնք ասացեալն օդոյ դողային. և լուսաճեմքն *խաւարեին*: - 788

**ԽԱՒԱՐԻՆ +** Երրորդ՝ ժողովին և գոհանան զաստուծոյ՝ որ յոչնչէ՛ գոյացոյց զմարդն, և յարգանդէ՛ *խաւարին* ի լոյս եբեր. և ետ մեզ ինչս մարմնական: - 321. Եւ տէրն զերկիր շարժեաց և զգերեզմանս եբաց. և գ ժամ խաւար էած փոխանակ գ աւուր *խաւարին* եգիպտոսի: - 329. Զորօրինակ՝ ճրագ զտեսօղս լուսաւորէ՛, և զտկարս խաւարէ՛. կամ որք ի ճրագ նային տեսանեն լոյս. և որք յետս դառնան *խաւարին*: - 403

**ԽԱՒԱՐՈՒՄՆ +** Որպէս ասացաւ ի վերոյ, *զխաւարումն* լուսոյ՝ և զամիսս՝ լուսինն առնէ: - 190. Եւ վասն աւուրն ասաց՝ տիւ. և գիշեր *զխաւարումն*. և ընդ երեկս լոյս դարձեալ: - 405. Նշանք խաչելութեանն. և *խաւարումն* լուսաւորացն: - 454. Իսկ *խաւարումն* արեգականն նշանակէ՛ զամենայն կուրութիւնս հրէիցն: - 490. Դարձեալ նշանակէ՛ *զխաւարումն* այնմ ժամանակի, յորում եթէ գուցէ հնար՝ ընտրեալքն մոլորեսցին: - 490. Նաև համապայծառ լոյս Երրորդութեանն ծածկէ՛ զամենայն լոյս լուսաւորացդ. զա՛յն ասէ *խաւարումն* արեգական և լուսնի և աստեղաց. զոր օրինակ՝ լոյս ճրագի ծածկի մերձ եկեալ լուսոյ արևու: - 728

**ԽԱՒԱՐՉՈՒՏ +** ՚Ի գիրս բենետիքտոսի հարցեալ եղև թէ ո՞ւր են դժոխքն. և տուաւ պատասխանի թէ՝ յանկեան և յեզր ծովուն ի ներքոյ երկրի ի *խաւարչուտ* վայրս: - 504

**ԽԱՓԱՆ +** Կամ է՛ ի ներգործական պատճառն. որ ունիցի *խափան* ինչ և արգելումն. որպէս մանուկս այս երկար ապրեսցի. կամ թէ մանուկս այս լինի երաժիշտ, թէ ո՛չ լինի խափանումն իմն: - 9-10. Զի թէ կորագլուխ էր որպէս այլ կենդանիքն, *խափա՛ն* լինէր զգայութեանցն և պակասումն գիտութեան: - 233. Եւ զի ո՛չ ասաց սառայի զիրն. զի մի՛ մայրական աղետիւ *խափա՛ն* լիցի գործոյն: - 304. Եւ *խափա՛ն* եղև ի շրջակայ ազգացն խք ամ: - 448. Երկրորդ՝ զի թէ քրիստոս այնպէս փառաւորեալ էր որպէս յետ խաչին, արգել և *խափան* լինէր ամենայն չարչարանացն և փրկութեան մարդկան: - 521. Նոյնպէս և հոգւոցն ելեալ ի մարմնոց՝ այլ միջոց և արգելումն կամ *խափան* պսակացն չկայ: - 648

**ԽԱՓԱՆԵԼԻ** - Երկրորդ, զի նոցա նոցայն ժամանակեայ և *խափանելի*, իսկ տեառն մերոյ մշտնջենաւոր և յաւիտենական...: - 354

**ԽԱՓԱՆԵՄ +** Հինգերորդ՝ զի *խափանեալ* լինէր անձնիշխանութիւնն մեր. որ ունի զինքն առ երկոսեան կողմն: - 20. Նախ՝ զի գործն իշխանութեան է որ ո՛չ է *խափանեալ*: - 167. Նա՛խ՝ զի ամպն յերկրէ ելեալ *խափանէ՛* զլոյս և զջերմութիւն արեգական: - 206. Եւ դարձեալ՝ լսելն *խափանի* ի յարութեանն: - 239. Պատասխանեմք եթէ դ իրաց պակասութիւն, *խափանէ՛* զկենդանութիւն նորին: - 256. Իսկ դիւականն ընդդէմ այսմ՝ վասն մոլորութեան զանազան երևմունս ցուցանէ աղտեղութեան. և կամ զբարին *խափանել* ջանայ...: - 268. Երկրորդ՝ զի բանական միտքն և զգայականն *խափանեալ* է ի գործոյ յորժամ ննջէ ոք: - 268. Դարձեալ՝ գիտութիւն կատարածի *խափանէ՛* զվարձս հաւատոյ. զի վարձքն ի հաւա՛տն է և ո՛չ ի գիտութիւնն. վասն այն հաւատով ակն ունիմք կատարածի և ո՛չ գիտութեամբ: - 292. Եւ ի ձեռն կախարդաց *խափանէր* զժամանակն փրկութեան: - 336. Իսկ զովութիւն ծերոյ, Նա՛խ՝ զի *խափանեալ* է ամենայն մեղաց շարժմունքն: - 378. Հինգերորդ՝ մովսէս օրինա՛կ էր, և ճշմարտութիւնն քրիստոս. առ որ *խափանեցաւ* մահ, և թագաւորեաց կեանք: - 409. Այլ և անդրանիկ ծնաւ ի մօրէ առաջին ծնունդ. քեպէտ ո՛չ ունի եղբար ի կուսէն, անդրանկութիւն իւր ո՛չ *խափանի*: - 472. Եւ թէ ոք ասիցէ՝ հաւատն ա՛ստ է, և ի հանդերձեալն *խափանի:* - 507. Ասեմք եթէ՝ *խափանի* հաւատն ի հանդերձեալն վասն դէմ յանդիման տեսութեանն: - 507. Զի քեպէտ մեռանին թէ իշխանն և թէ իշխեցեալն, իշխանութիւնն ո՛չ *խափանի*: - 538. Եւ այն զի *խափանեցաւ* գործ մարմնոյն, ի ժամանակէն կամ ի տեղւոյն կամ ի դիմացն պատճառեցաւ: - 556. Այլ արդ՝ թէ օրըստօրէ յառնէր իւրաքանչիւր ոք, հաւատ յարութեանն *խափանէր*. զի հաւատն ոչ երևելեացն է: - 717. Երրորդ պատճառ, ասեն իմաստունքն թէ ծնունդք կենդանեաց և բուսոց լինին ի շարժմանէ երկնային մարմնոց. իսկ ի կատարածի *խափանի* շարժումն նոցա. վասն այն անբան կենդանիք և տունկք *խափանին*: - 727. և երկոտասան պտուղ, զի ո՛չ *խափանէ* զնոսա ձմեռն մեղաց: - 765. Իսկ յետ մահու՝ յիշելն է միայն ըստ իւրեան զներքոյսն. *խափանեալ* խառնւածոյ նիւթոյն: - 774

**ԽԱՓԱՆԻՉ +** Կապոյտն օդոյն է գոյն. զի թէ ա՛յլ գոյն էր, վնասիչ և *խափանիչ* լինէր տեսութեանց. որպէս սպիտակ կամ սեաւ. այլ կապոյտն է ի հեշտութիւն տեսութեանց: - 342. Երրորդ՝ օրէնքն որ ի ձեռն մովսէսի՝ էր *խափանիչ* մեղաց և մահու: - 409

**ԽԱՓԱՆՈՒՄՆ +** Կամ է՛ ի ներգործական պատճառն. որ ունիցի խափան ինչ և արգելումն. որպէս մանուկս այս երկար ապրեսցի. կամ թէ մանուկս այս լինի երաժիշտ, թէ ո՛չ լինի *խափանումն* իմն: - 9-

10. Եւ կամ թէ զո՜չ ոքն ասիցէք, ահա նո՛ր աղանդ չարափառութեան և *խառնմնման* տընօրէնութեան մեծի խորհրդոյն: - 68. Թէպէտ բնութեամբ միաւորին՝ տարբերութիւնն ո՛չ բառնի. զի տարբերութեանցն մնալ՝ *խառնմնման* ո՛չ առնէ միաւորութեանն. որպէս հոգւոյ և մարմնոյ. ոսկւոյ և հրոյ. և ծանի՛ր՝ զի կրկին է տարբերութիւն. բաղկացական և բաժանական: - 85. Իսկ երկոտասան պտուղն իցէ երկոտասան աստիճանք հաւատոյն. որ ի սրտի և ի լեզուս առանց *խառնմնման* հանապազ դաւանի և արտաբերի: - 768

**ԽԱՓԱՐԱԶԱՅՆ +** Իսկ գեղեցկախօսութիւն լեզուաց... *խափարածայն* եգիպտացին: - 299

**ԽԵԹԿԵՄ +** Եօթներորդ՝ զնա փոքր եղջիւր կոչէ դանիէլ. *խեթկի* և մեծամեծս բարբառելով. և սոքա *խեթկեն* զեկեղեցի. և բանան զհայհոյիչ բերանս իւրեանց յերկինս, և զլեզուս ածէին զերկրաւ: - 35

**ԽԵԼԱՄՈՒՏ +** Չերն չէկ և ստուար, ո՛չ է *խելամուտ*: - 248

**ԽԵԼԱՊԱՏԱԿ +** Նախ՝ մազն ի վերոյ. և մորթն. և միսն. վերին ոսկրն. և ներքին պինտ ոսկրն. *խելապատակ* մաշկն. և ուղեղն: - 239. Ընդ վերին դուռն զգուշին ի *խելապատա՛կն* առաքէ: - 242. Նա՛խ՝ *խելապատակն* սկիզբն է ջլացն. որ միայնաբար ընդ ուլունս պարանոցին անցանէ. և բաժանի ի թիկունս, ի ձեռս, և յա՛յլ մարմինս: - 244. Նախ ասեն ոմանք, եթէ ուղեղ գլխոյ անբանիցն ընդ *խելապատակին* ունի չորութիւն և հովութիւն. և ջիլքն ի նմանէ յառաջեալ յանդամս մարմնոյն՝ փութապէս պնդէ՛ և տայ շարժիլ: - 266. ...յորժամ ի գլխաւորագոյն անդամքն դիպին. այսինքն ի սիրտն, կամ ի լեարդն, կամ ի *խելապատակն:* - 668. Իսկ ի ներքուստ, ի լինիլ տրտմութեանց՝ խուճապեալ մարմնոյն հոսի մաղձ դառն ի ստամոքս որովայնի. և վերացեալ գոլորշեաց նորա զօրէն շոգլեաց պուտկի առ *խելապատակս* գլխոյ. և ծանրացեալ անտի թորի՛ առ բիբն ասացեալ ական. չոր գոլով և աղէգոյն ի սևատեսա՛կն մաղձոյ: - 787

**ԽԵԼՔ +** Իսկ զազանացն միս է՛ զօրեղ. վասն այն ի *խելս* նոցա առաւել յարմարի և ուժովացնէ՛ զնոսա: - 218. Իսկ պարզն և մաքուրն մնայ ի յուղեղն ի փափկոց *խելացն*: - 242. Զի լոյս Բանին և պայծառախօսութիւն՝ ի *խելքն* ծագէ. և Իմացականն՝ ի միջին փորուած գլխոյն: - 250. Նախ բնական *խելքն*. որ ի բարեխառն կազմուածոյ հանդիպի. որպէս էր՝ ակիտոփէլին և քուսեայ բարեկամին դաւթի: - 537. Եօթներորդ, այլ և **գ** է գործիք բանին. *խելքն* որ ծնանի. սիրտն որ խորհի. լեզուն որ խօսի: - 742. Եթէ ի *խելս* և ի խորհուրդ ցնորութիւնք և զայրութ ուռուցանիցեն խխայրեալք. բժշկեսցիս հաւատով. ըստ մարգարէին հիացեալ՝ ստուերս և ունայնս դնելով զամենայն անցաւորս: - 770. Այս է՝ ըզհրատեսակն յերակս աչաց. և զօդատեսակն լսելեաց. և զայլսն նմանապէս. և զմաքրագոյնն սոցա ի *խելս* ի զգուշութիւն զգայութեանց: - 786

**ԽԵՂ +** Երրորդ՝ զի թէ հոգին յետո՛յ է քան զմարմին, լինի ինքն առ ինքն *խեղ* և անկատար: - 254

**ԽԵՂԴ +** Եօթներորդ՝ զի ո՛չ կարէին ընտրել և խոտել զչարն և զբարին, և զսուրբն և զանսուրբն ի մարդկանէ, թէ գործ սորին է այս կամ այն. այլ անմեղութեամբ յարակցեին պղծոյն, և *զխեղդ* ոգւոց նորա ընդունէին: - 238

**ԽԵՂԴԵՄ +** Ոմանք ասեն թէ *խեղդեցաւ* ի ջուրն. և ընդ բերանն յղացեալ էր զուգակիցն: - 294. Քանանե, այսն չար *խեղդէ՛ր* զսաւուղ. և նոյն այսն զորդիսն սաւուղայ յաւուրս տեառն: - 436. Խորհի ակիտոփէլ չար վասն դաւթի և *խեղդի*. և յուդա վասն տեառն խորհեցաւ և *խեղդեցաւ*: - 438

**ԽԵՃԵՊ +** Որպէս զձու հաւի. դեղնուցն ի մէջ ջրոյն. և մզղնա տեսակն ի *խեճեպոյն* է ամրացեալ: - 181

**ԽԵՆԷՇՈՒԹԻՒՆ (տ. ԽԵՆԵՇՈՒԹԻՒՆ) +** Տասներորդ՝ վասն *խենէշութեան*: - 281. Եւ թէ յաջոյ յաջուածոց *խենեշութիւն* մեղկէ, վերնոյն հեշտալեաց հաւատա՛ և ո՛չ խաբիս: - 770

**ԽԵՌ +** Ութերորդ՝ զի կողն կեռ գոլով՝ ցուցանէ զկինն նենգ գոլ և երկմիտ. կեռ, այսինքն *խեռ* ընդ առն: - 276

**ԽԵՌԱԲԱՐՈՅ +** Այսինքն իգամոլք իբրև զձիս. *խեռաբարոյք* որպէս զէշ. և խորամանկք որպէս զուղտ: - 334

**ԽԵՑԳԵՏԻՆ +** Որպէս *զխեցգետինն* կենդանի ներշնչական զգայական: - 54. Իսկ *խեցգետինն* և Կարիճն և Ձուկն, ունին զբնութիւն ջրոյ ցուրտ և զէճ: - 189. Վերին եզրն կենդանակերպիցն է *խեցգետինն*. և ներքին՝ այծեղջիւրն: - 189. Ի *խեցգետինն* յառիւծն և ի կոյսն՝ առնէ զամառն. որ տիւն առաւել է քան զգիշերն **գ** ժամ: - 190

**ԽԵՑԵՂԷՆ +** Զորօրինակ *խեցեղէն* անօթ խորտակեալ՝ եթէ կա՛ւ է շինի դարձեալ անօթ. և թրծեալն ո՛չ շինի: - 166. Երկրորդ՝ խեցեաւն սրբէր զամանն *խեցեղէն*, զի թրծեալ էր զօրութամբն աստուծոյ: - 323

**ԽԵՑԵՄՈՐԹ +** Երրորդ, վասն վերջնոցն լաւութեան ընտրեցան և խոտանքն. որպէս զհող զքար և *զխեցգէ մորթն* պատւեմք վասն ոսկւոյ և արծաթոյ և մարգարտին: - 398

**ԽԵՑԻ +** Զանազա՛ն են զգեստ կենդանեացն... Ութերորդ՝ *խեցի*. որպէս կրիայից: - 216. **Չորրորդ՝ զի բ արծան կանգնեաց պղնձի և *խեցի* և արար գիր. և զոր ինչ աղամ անունս եդ իրաց, զամենայն գրեաց ի նոսա. զի մի՛ այլայլեսցին ի գնչուտ և ի լեզուատ արանց:** - 289. Նոյնպէս և *խեցեաւ* սրբէր զքարախն: - 323. Երկրորդ՝ *խեցեաւն* սրբէր զամանն խեցեղէն, զի քրծեալ էր զօրութամբն աստուծոյ: - 323. Չորրորդ՝ զի *խեցեաւ* սրբէր զմարմինն, և աղօթիւք զմիտս և զհոգին: - 323

**ԽԵԻԱՑԻ** - Եւ այս են **hբ** լեզուքն... Խեացիք: - 298

**ԽԶԵՄ +** Չորրորդ՝ որպէս արու բռնացա՛ւ տէր ի քակել զօրէնս բնութեան. և *խզեաց* զկապ կուսանաց և զմայրական. այսինքն զի որ մա՛յր է՝ կոյս ո՛չ է. և որ կոյս է՝ մայր ո՛չ է: - 480. Եւ որպէս թէ բազումք զմիմեանց զմիոջէ կախեալք զվախէ՛. և եթէ ոք *խզեսցէ* զառաջնոյն զկապ, միապէս անկանին. թէպէտ մինն առաջին: - 777

**ԽԶՈՒՄՆ +** Այլ վարդապետք եկեղեցւոյ ասեն ըստ պղատոնի եթէ՝ լոյսն *խզումն* է ի տարրական հրոյ, որ յառաջին օրն գոյացաւ: - 188

**ԽԷԹ +** Չորրորդ նախախնամութեամբ. զի մի՛ հպարտասցին. որպէս *խէթն* առաքելոյն պօղոսի: - 665

**ԽԷԺ +** Ծաղիկ զըմռնեաց. նմանէ պոյտն ծաղկի. և Կինամոն. արմա՛տ է խոտոյ ի տմորիս հայոց. և Խնկեղէգն. որ յարմատս ո՛չ ամենայն եղեգան լինի. և Չիրիկ. *խէ՛ժ* է ծառոց: - 349

**ԽԹԵՄ +** Նա *խթեաց* զտէգն և հասոյց յաչքն իւր և լուսաւորեցաւ...: - 495

**ԽԹՈՒՄՆ +** *Խթումն* ի՞նչ խորհուրդ է - 799

**ԽԻՂՃ +** Իններորդ՝ զի նոցա բանականն է մոլորեալ. և ո՛չ ցասումն և ցանկութիւնն. յորոց վերայ բանն բռնադատէ *խղճիւն*, և ստիպէ զնոսա յուղղութիւն. այլ ինքն կառավարն խոհեմութիւնն մոլորեալ ո՛չ ուղղի: - 32. Նոյնպէս յովսէփ և մարիամ մերկ էին ի մեղաց և առանց *խղճի* ամօթոյ: - 461. Որ և *խիղճ* որդանց անհանգիստ մտաց: - 789

***ԽԻՂՃ ՄՏԱՑ +*** Երկրորդ՝ հանգչիմք ի *խղճէ մտաց*: - 372. Նա՛խ՝ շուրջ թշնամիք դէք. և գազանք *խիղճ մտաց*. և ծով մեղաց. և ամայութիւն բարեաց: - 393. Տասներորդ՝ բրե՛ն զաչս *խղճի մտացն* և զյուսոյն: - 424. Զի գործք չարութեան այժմ դատէ՛ *խղճիւ զմիտս*. և յետ մահու զհոգիս. և յետ յարութեանն զհոգի և զմարմին որպէս ասացաւ: - 690. Ճանապարհ կեանս այս. և ոսոխ մարմինն. և դատաւոր միտքն. դահիճ *խիղճ մտացն* որ չարչարէ՛ զհոգին և ոչ ազատէ մինչև զամենայն պարտսն վճարեսցէ ապաշխարութեամբ: - 704. Նմանապէս այն որ ասէ եղբօր իւրում մօրոս, պարտաւոր լիցի ատտի դատաստանի և գեհենի *խղճի մտացն*: - 704. Ի ներքուստ *խիղճ մտացն* խածեալ, և արտաքուստ աշխարհ բորբոքեալ: - 738. Գիր ևս կենաց է տեսութիւնն աստուածային. ի յորում ամենեքեան *զխիղճս մտաց* իւրեանց իբրև զգրեալս տեսցեն: - 742. Այլ և արդարութիւնն աստուծոյ, պահապան հրեշտակքն, և *խիղճ մտացն* իւր, են երեք վկայք: - 743. Նմանապէս և չարեացն վկայ՝ ոսոխն մեր սատանայ և գործակիցքն. և *խիղճ մտացս* որով տանջիմք միշտ: - 743. Իսկ ի հանդերձեալն Առաջին ոսոխ է սոյն *խիղճ մտացն*. զորմէ ասէ դանիէլ, «դպրութիւնք բացան»: - 743. Ոմանք որդն *զխիղճ մտացն* ասեն որպէս ցուցաւ ի վերոյ: - 753. Այլք՝ ի ներքուստ *խիղճ մտացն*, և արտաքուստ անքուն որդունքն հրեղէնք: - 753. Մեր գործքն և յաստուծոյ տուեալ բարին հաւատով կնքի. և պակասն յանդիմանի այժմ ի *խղճէ մտաց* որպէս ի գրոյ. և անդ ի դատաւորէն, որ չար ծառայ կոչէ: - 769

**ԽԻՆԾ (տ. ԽԻՆՁ) +** Եւ այլք թէ՝ պատրուակ գոն ի *խինծս* արգանդի բնաւորեալ. յիւրաքանչիւր աւուրս հնգից՝ մին մին քակտին երկամբք. և ապա՛ արծակի ծնունդն: - 785

**ԽԻՍՏ +** Նա՛խ՝ զի ամառն կարի՛ ջերմ է և չոր՝ չորացուցանէ՛. և ձմեռն *խիստ* ցուրտ՝ սառուցանէ՛ զսերմն: - 197. Իսկ միջինն է՛ Նոտոսն. առնէ որոտ. և փայլակն. և անձրև *խիստ:* - 206. Արդ՝ յորժամ աղբիւրք ջրոյ՝ մերձին յերակն հրոյ որ է՛ ծծումբն, ջերմանան *խիստ* կամ թոյլ. մերձ կամ հեռի անցանելովն: - 208. Եւ հիւսիսայնոցն ո՛չ բուսանի վասն *խիստ* ցրտոյն. և միջերկրայքս վասն բարեխառնութեանն մորուս ունին: - 245. Չորրորդ՝ նոր չարիս գործեցին, *խիստ* և առաւել պատուհասեցան. որպէս և կայեն. զի նշան լիցին աշխարհի ահի՛ և երկիւղի: - 303. Երկրորդ ա՛յն է՝ որ յորժամ լինի կամքն մարդոյն չար և *խիստ* ի ծածուկ, և զայն յայտնէ՛ աստուած. որպէս նաբուգոդոնոսորայ. որ ունէր սիրտ գազանի՝ ի կերպարանս գազանաց փոխեցաւ: - 336. Եւ կաւագործութիւնն խստացաւ ի մովսիսի **իբ** ամէն ի վեր. որ լինի **ծթ** ամ *խիստ* ծառայութիւն նոցա: -

337. Երրորդ՝ *գխիստ* բարկութիւնն նշանակէ որ յիւր սրբութիւնն ո՛չ խնայէ վասն մեղաց մարդկան: - 425. Եւ զի *խիստ* էր հայհոյութիւնք նոցա, խստագոյնս քարկոծեցան տանջանօքն յաւիտենից: - 566. Կամ ի *խիստ* պատժէ անզղջից չարաց՝ իսկոյն սատակին: - 668. Սոդոմն համր՝ և գոմորն *խիստ* թարգմանի: - 755. Հինգերորդ՝ *խիստ* է կեղևն. նոյնպէս և արդարքն խստակրօնք են...: - 766

**ԽԼԵՄ +** Այս է մեկնութիւնն թէ՝ հաւասարն աստուծոյ՝ յափշտակութիւն և զրկումն չհամարէր իւր զծառայի կերպարանս առնուլ. զի ո՛չ ունէր յայլմէ կասկած *խլելոյ* զփառսն. զի ի՛ւրն է սեպհական: - 39. Եւ զի դժուարաւ *խլին* չարքն առանց վնասելոյ բարեաց, վասն որոյ թոյլ ետ մինչ ի ժամանակի հնձոցն: - 693. Եւ զորօրինակ յաշնայնոյ զդժնիկն *խլեմք* և զվարդենին տնկեմք...: - 714. ի գարունն ո՛չ թէ դժնիկն *խլեալ* բուսանի, այլ տնկեալ վարդենին. եթէ արմատն ոչ մնայ դժնկին: - 714

**ԽԼԻՉ +** Եւ ժողովեին հարքն սուրբք *խլիչք* ապականութեան, և սրբէին զեկեղեցի սուրբ: - 544

**ԽԼՈՒՐԴՆ +** *Խլուրդն* կո՛յրն է մտօք: - 365

**ԽԽԱՅԹԵԱԼ +** Եթէ ի խելս և ի խորհուրդ ցնորութիւնք և զայրոյք ուռուցանիցեն *խխայթեալք*. բժշկեսցիս հաւատով. ըստ մարգարէին հիացեալ՝ ստուերս և ունայնս դնելով զամենայն անցաւորս: - 770

**ԽԽՆՋԵՄ +** Ասեն եթէ՝ սեփաննոս ոմն երաժիշտ զամենայն ձայնս գոյից բաժանեաց **իզ.** որք են, բառաչել, կառաչել, *խխնչել*, և այլն նմանապէս: - 640

**ԽՂՃԱՄ +** Չորրորդ՝ զի *խղճացաւ* եսաւ և մի սպանցէ: - 311

**ԽՂՃՄՏԱՆՔ +** Իսկ որ վասն մեղաց նաշհի իւղ և խունկ ոչ դնէին. զի տրտմութիւն և խաւար է մեղքն, և գարշ հոտ գայ ի *խղճմտանացն* մինչև ապաշխարեսցէ: - 357. Նա՛խ՝ զի ի *խղճմտանք* մարդոյն կախեալ է կեանքն արժանի մահու. և տեսանէ՛ միշտ և ո՛չ հաւատայ և դադարէ ի մեղաց: - 404. Իսկ յորժամ քահանայն լաւ քննէ *զխղճմտանքն* ժողովրդեանն. խորհի վասն ապաշխարութեանն թէ ո՞րպէս կարէ ապաշխարել...: - 601. զի թէ աղտեղութիւն ինչ լինի խառնեալ արտաքուստ ի կալ կամ ի հնձան, սրբեսցին *խղճմտանք* մեր: - 654

**ԽՂՃՄՏՈՒԹԻՒՆ +** Վասն զի *խղճմտութեամբ* յանցաւորին ճանապարհն ո՛չ է թիւր. այլ ինքն թիւրի յուղիղ ճանապարհէն: - 33

**ԽՃՈՂԵՄ +** որք *խրճողե՛ն* զորովայնս իւրեանց առանց օրհնութեան: - 654

**ԽՄԵՄ +** Ջի նման է ջրգողեալ հիւանդի. որ որքան աւելի *խմէ*, առաւել ծարաւի: - 570

**ԽՄՈՐ +** Իսկ զի *խմոր* ո՛չ խառնէին: - 356. Նա՛խ՝ զի *խմորն* զհին չարութիւնն ցուցանէ. որ նախ հրաժարիլ պարտ, և ապա՛ զբարիս գործել: - 356. Եօթներորդ, *խմորն* զաղանդ սադուկեցւոցն և փարիսեցւոցն առակեաց տէրն: - 356. Ութերորդ, ապականութիւն է *խմորն*. վասն այն տէրն զանապական մարմինն իւր բաղարջով աւանդեաց: - 356. Տասներորդ, անզգամութիւն և ստութիւն է *խմորն* ըստ առաքելոյ որ ասէ, «տօնեսցուք մի՛ ի *խմորն* հին անզգամութեան, այլ անխմորն ստուգութեան»: - 356. Ապա ուրեմն սո՛ւտ են ազգն յունաց և ասորւոց որ *խմոր* դնեն ի խորհուրդն: - 356. Ապա վասն է՞ր ոմանք ջուր խառնեն և *խմոր*: - 596. ...զի որք կամին զմարմինն քրիստոսի ապականացու ասել՝ *խմոր* և ջուր խառնեն. թէպէտ այլ և այլ պատճառեն: - 596-597

**ԽՄՈՐՈՒՆ +** Վեցերորդ, *խմորունն* ո՛չ է կենդանի հաց. այլ թոյլ: - 356. Իններորդ, *խմորունն* խառնեալ, և անխմորն անխա՛ռն է և պարզ որ է սրբութիւն սրտին: - 356. Նոյնպէս և հաց պիղծ կոչի *խմորունն* և հասարակացն: - 427

**ԽՆԱՄ +** Իսկ որ սկիզբն ի մէնջ՝ և կատարումն ի *խնամոցն* աստուծոյ, այսինքն յորժամ սկսանիմք զբարին՝ և նա՛ աւարտէ՛ ի բարին: - 18. Եւ թէ սկսանիմք զչար, և նա փոխէ ի բարին ըստ բարի *խնամոցն* իւրոց: - 18. Արդ ներքին է՝ որ ի փափկութեանց և ի հեշտութեանց փործի բնութիւնս մեր և այլայլի ի զանազան տեսակս մեղաց. զոր պա՛րտ է հանապազ աստուածային *խնամոյն* զի մի՛ թողցէ յայսպիսի փործութիւնս զմեզ ընկղմիլ: - 160. Իսկ որ զերկրաւորքս ըստ կարգի, ամենագութ մարդասիրութեանն է երևումն. ո՞րպէս *խնամով* զպէտս մարդկան յայնքան աւուրս կատարեաց: - 192. Չորրորդ՝ ցոյցք է ամենահրաշ *խնամոց* արարչին. որ զհոսանուտ ջուրս ներքին՝ ի մէջ լերանց ի վե՛ր հանէ ի պէտս կենդանեաց որ ա՛նդ են. այլ և յոռոգումն ուր գետք ոչ ելանեն: - 209. Կամ խաբէութիւն. որպէս աղուեսուց. զայս և զսոյնպիսիս ունին կենդանիք բնութեամբ ի *խնամս* ինքեանց: - 216. Ջի վարդապետք ասեն եթէ՝ կերակուր գազանաց այլ կենդանիք են. վասն որոյ *խնամքն* աստուծոյ ետ նոցա առաւել հնարս և զօրութիւնս, զի կարասցեն ըմբռնել. զայլ կենդանիս և մի՛ ի սովոյ մեռցին: - 218. Եւ այս անճառ *խնամոցն* աստուծոյ է տեսչութիւն որպէս ցուցանի յառաջիկայդ: - 237. Ասեմք թէ՝ և

տեսակք և խառնուածք մարմնոց են ի տեսչութենէ *խնամոցն* արարչին: - 237. Եւ յորժամ ձևանայ ի կերպ մարդոյ, յայնժամ բանական հոգին երևի ի նմա ի *խնամոցն* աստուծոյ: - 255. Այսպէս և հոգին ընդ անկատար նիւթոյն ունի զկերակրիլն. և յորժամ հաստատի զգայութեամբն ծաղկի. և յևս հաստատիլն՝ բանականութեամբ պտղաբերի ի վերին *խնամոցն* որպէս պտուղն այն յարեգակնէ՛: - 255. Եւ մի՛ աստ ընդ դէմ բերցի բանիս թէ՝ ամենայն մեծամեծք գուք ունին փոքունց. զի և այս նախախնամութեանն է. որ եդ ի բնութեանս *խնամ* տանիլ նոցա, մինչ ինքեանք ևս ի չափ հասակի եկեսցեն և զերծանիցեն ի վնասուց: - 267. Եւ թէպէտ կարելի՛ է ըստ բազմազան եղանակաց այս կարգ համեմատութեան ի սոյն *խնամով* աշխատասիրաց: - 304. Արդ՝ լոյսն ցուցանէ *զխնամս* արժանաւորացն. և կիզումն զպատիժ անարժանիցն: - 330. Երրորդ՝ ժողովուրդն չարախայտ եղև յեգիպտոս. մինչև արկաւ ի ծոց *խնամոցն* աստուծոյ և ողջացաւ: - 332. Եւ **դ** օդք և **բ** լծակքն, զի չորեքնիւթեայ աշխարհի են խնամածուք երկակի զօրութեամբ *խնամոցն* աստուծոյ. այսինքն արարչական և արքունական: - 344-345. Զաստուած մասնակից առնել ընչիցն զի այլքն *խնամով* պահեսցին: - 376. Չորրորդ՝ զի յայտնեսցի թէ՝ ի մէջ ծառայութեանն յեգիպտոս այնքան բազմացոյց զնոսա *խնամքն* աստուծոյ. այսքան բազմութիւնս ի տեղիս իւրեանց խաղաղութեամբ բնակեալ՝ ո՞րքան անթիւ բազմասցին: - 377. Այլ երուսաղէմ լեառն է և դաշտ, յանձրևոյ ոռոգի. իբր թէ *խնամօքն* աստուծոյ լինի անձրև աւելի և նուազ, ի ժամու և տարաժամու ըստ արժանեացն ծերոց: - 398. Եւ այսպէս ամենայն տղայոց հանդիպի մահ ըստ *խնամոցն* աստուծոյ: - 433. Իսկ ամենայն մարդկան միտք հաստատեալ են ի *խնամս* չարի՝ վկայէ՛ աստուած...: - 473. Երկրորդ՝ նշանակէ աստուածային *խնամոցն* առ մեզ ներգործեալ: - 493. Նոյնպէս և ծածուկ է աստուածային էութիւնն և անհաս յամենայն եղանակաց. միայն *խնամօք* երևի որոց կամի: - 517. Այնպէս մարդ մեղօք զրկի ի շնորհաց լուսոյն. այլ լոյս *խնամոցն* աստուծոյ չէ հեռացեալ և սակաւ փայլէ ի ներքս ի տրտմնջականն...: - 562-563. Նոյնպէս և ի մէջ *խնամոցն* ո՛չ լինի այլ խնամութիւն մինչ ի **դ** ազգն: - 611. Կամ ի վերինն *խնամոցն*. զի արդարքն դիւրաւ փոխեսցին ի կեանս: - 668. Այլ և որք ի մի *խնամս* վայելեցին յաստուծոյ. յարև և յանձրև. և ի մի տեղիք բնակեցան և մի պիտոյիւք շատացան. և նոքա զտուօղն ո՛չ ճանաչեցին: - 738. Այսպէս վասն երկնային և իմանալի տնկոցն որ կոչին ծառ կենաց. ունելով յինքեան զկեանս և բաշխելով այլոց ամենեցուն *զխնամս*: - 767. Որոց *խնամօք* ամրացեալ փրկեսցուք յամենայն փորձութեանց ամէն: - 772. *Խնամք* մարդասիրութեանն աստուծոյ որ զամենայն յամենայնի տնօրինէ՛, արգել զայս. զի մի՛ ունիցին ինչ ի մտի յարուցեալքն ի մեռելոց. ապա թէ ոչ, որ ի սկզբանէ բարէատեացն էր և մարդասպան, բազում և զանազան երևոյթս...: - 775

**ԽՆԱՄԱԾՈՒ +** Հրեշտակք ի վերոյ ջրո՛յ են. բայց ի ներքոյ հաստատութեան *խնամածուք* կարգեալ են աշխարհի և մարդկան: - 150. Եւ երէց է աստուած քան զաշխարհս. և անդրանիկն զաստուծոյ պատկերն ունի. զի հայր և *խնամածո՛ւ* է այլ հարազատ եղբարցն: - 308. Եւ **դ** օդք և **բ** լծակքն, զի չորեքնիւթեայ աշխարհի են *խնամածուք* երկակի զօրութեամբ խնամոցն աստուծոյ. այսինքն արարչական և արքունական: - 344-345

**ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ +** Իսկ ոչ էիցն ո՛չ արարչութիւն է և ո՛չ *խնամակալութիւն*: - 157. Երկրորդն նոյն *խնամակալութիւն* և կշտամբութիւն: - 630

**ԽՆԱՄԱԿԱՆ +** Իսկ մարմնաւոր մահին բաժանի ի **դ**. այսինքն ի բնականն, ի պատահականն, յանձնիշխանականն, և ի *խնամականն*: - 668

**ԽՆԱՄԱՐԿԵՄ +** Իսկ քրիստոս *խնամարկեալ* իւրոցն **ժ** սքանչելեօք ի մարմինս նոցա բժշկէր զհսրայէլացիսն: - 328

**ԽՆԱՄԱՐԿՈՒ +** Չորրորդ՝ զի ամենեքեան *խնամարկուք* են մարմնեղինաց: - 137

**ԽՆԱՄԱՐԿՈՒԹԻՒՆ +** Ութերորդ՝ *խնամարկութեամբ*. զի ոմանք ազգի և թագաւորութեան, և ոմանք անհատի և առանձնականի լինին պահապան: - 138. Դարձեալ՝ նախախնամութեանն է այսպէս կարգեալ. զի մարդս ունի դայեակ և սնուցօղ, պէտս ունի *խնամարկութեան* զի հասցէ ի չափ հասակի: - 267

**ԽՆԱՄԵՄ +** Երկրորդ և թէպէտ իցեն տարրականք և ներհակ որակք՝ յիմիասին դիպիլն՝ ո՛չ միշտ հակակային իրերաց. այլ եթէ կամք *խնամողին* հրաման տացէ: - 12. Եւ ի ձեռն տէրանց *խնամէ՛* զծառայս և զհնազանդեալս: - 19. Բարին էացուցիչ է և *խնամօղ*: - 22. Ըստ այսմ ապա և բազմութիւն արարածոցս միո՛յ են հաղորդեալ. մի սկզբան. մի աստուծոյ. և մի *խնամողի*: - 106. Այսպէս բանն աստուած զվերին աշխարհին մշտնջենաւոր պահէ, և զներքինս ժամանակաւ չափելով պահէ՛ և *խնամէ*: - 125. Այլ ի ստեղծումն էիցս՝ սէրն առաջին է քան զբարին. զի ի սիրո՛յ շարժեցաւ յառաջ բարերարել և

*խնամել*: - 129. Իսկ կողմնաւոր՝ ի *խնամելոցն* առ աստուած դարձողապէս միացումն յառաջին սկիզբն: - 142. Ա՛րդ՝ ներքնագոյն սիրովն *խնամէ* աստուած զարարածս. և առաջին դասք հրեշտակաց զվերջինսն. և հարք զորդիս. և վարդապետք զաշակերտս. և իշխանք զիշխեցեալս. տեարք զծառայս. և այս սիրովս շարունակին ընդ նոսա: - 143. Իսկ գործ *խնամելոյն* միշտ և հանապազ. ըստ այնմ «հայրիմ մինչև ցայժմ գործ է՛ և ես գործեմ». որ է՛ նախախնամելն: - 158. Հինգերորդ՝ զի գործ արարչութեան է մի միայն առնելն. իսկ գործ *խնամելոյն* է՛ առնել և թոյլ տալ երբեմն երբեմն ըստ պիտոյից բարեգործութեան: - 158. Եւ ա՛յլ է ստեղծանելն ի յոչնչէ. և այլ է *խնամել* զստեղծեալ իրն որպէս ասացաք: - 172. Չորրորդ՝ զի երկինքն է կատարեալ մարմին. զի ազդէ՛ յամենայն ստորնային մարմինս *խնամելով* զնոսա: - 182. Երրորդ՝ զի թէ ունէր ի բնութենէ զէնս կամ զգեստս. ո՛չ կարօտէր այլոց կենդանեաց. այլ և ո՛չ *խնամէր* զնոսա: - 217. Սննդեան. աճելոյ. *խնամելոյ*. և այլոցն. և այսոքիկ ո՛չ են ի դրախտին. և ոչ զգեստ մարմնական: - 225. Եւ չորքոտանիք զծնունդս իւրեանց դիեցուցանեն և *խնամեն*: - 239. Այսպէս և հոգի ըստ կամաց *խնամողին* յետոյ պարգևեալ ըստ թուոյ ծննդեան իւրաքանչիւր մարդոյ որպէս ինքն գիտէ: - 260-261. Իսկ անասնոցն ո՛չ է դաստիարակ արտաքուստ. վասն որոյ բնութիւնն *խնամէ* զնոսա ի ներքուստ: - 267. Եօթներորդ՝ անդրանիկք են իշխանք հոգևորք, վերակացուք և *խնամողք* այլ հոգւոցն. որպէս քահանայք, ուսուցիչք, և այլք վասն որոյ երիցունք կոչին: - 309. Աշտանակ ոսկի, անապական զօրութիւնն աստուծոյ որ *խնամէր* զնոսա և բարձեալ կրէր: - 346. Չորրորդ՝ նա՛խ օրէնքն և ապա ջուրն. զի նախ հոգւով *խնամէ* և յետոյ մարմնով: - 385. Այլ և զհասարակքս *խնամեաց* առաւել քան զնոսա. զի ի մէջ նոցա օրինակօք էր, և ի մէջ մեր ճշմարտութեամբ: - 398. Իսկ տարի՛ է յաւիտենական փառքն. որոյ սկիզբն *խնամոցէ*՛ նախ քան զլինիլն աշխարհի. և կատարումն անվախճան փառքն: - 399. Երրորդ, ի *խնամելոյ* զմարդ և զանասունն՝ ցուցանի թէ նա՛ է արարիչ որ *խնամէ* և դարմանէ՛ զսոսա՛: - 406

**ԽՆԱՄԻ +** Զի կնքահայրն և սանամայրն ծնունդ մի. և նոցա զաւակն **բ**. և նոցա թոռն **գ**. և չորսն որ է՛ թոռին թոռն՝ լինին *խնամիք*: - 611. Իսկ որդէգիրն որ բանիւ և կամօք լինի, ո՛չ լինին *խնամիք* մինչ ի կրկին ծնունդն. - 612. Իսկ օրինաց ազգն որ են *խնամիքն*, և բնականն որ են մարմնականքն, ո՛չ լինին *խնամիք* մինչ ի **դ** ծնունդն: - 612. Վասն որոյ յօտար ազգէ լինին *խնամիք*. և յօտարէն հոգևոր որդիք: - 612

**ԽՆԱՄՈՒԹԻՒՆ +** Եւ այսպէս խառնեցաւ ազգն յուդայ ընդ ազգն ղևեայ *խնամութեամբ*: - 452. Ա՛րդ՝ բնականն է մարմնոյն. և օրինացն *խնամութեամբ*. և հոգևորն որդեգրութեամբ. - 611. Եւ առաջին ծնօղն ուստի յառաջ եկին **դ** ծնունդքն. և **ե** երրորդն որ լինի *խնամութիւն*. լինի այս **զ** ազգ: - 611. Իսկ օրինացն է՛ *խնամութեամբ*: - 611. Եւ որպէս ի մէջ արենազգացն ո՛չ լինի *խնամութիւն* մինչև ի չորրորդ ծնունդն: - 611. Նոյնպէս և ի մէջ խնամոցն ո՛չ լինի այլ *խնամութիւն* մինչ ի **դ** ազգն: - 611. եթէ ի հոգեւոր ազգն ո՛չ լինի *խնամութիւն* մինչ ի **գ** ծնունդն այսպէս: - 611. Եւ աստ վճարեցաւ արիւնն և ազգն. յետ նոցա ի **ե** երրորդ ծնունդն *խնամութիւն* լինի: - 612. Նոյնպէս և օրինաւոր ազգն *խնամութեան*, պահի մինչ ի **դ** ծնունդն: - 612. Իսկ ի նորս յօտար ազգս առնել *խնամութիւն*, - 612. Այլ որպէս ի հինն ո՛չ առնէին ընդ հեթանոսացն *խնամութիւն* որք չէին թլփատեալք: - 612. Նոյնպէս և մեք ո՛չ առնեմք *խնամութիւն* ընդ այլազգիս որք ո՛չ են մկրտեալք: - 612

**ԽՆԱՅԵՄ +** Զօրօրինակ ո՛չ է անզգուշագոյն յառել ի բոլորակս արեգական՝ զի շտնու և ի սակաւուն զօր ունի. ըստ այսմ *խնայեաց* աստուած ի յազինս մարդկային, զի մի՛ կրիցեմք ըզկիրս զանկելոյ արուսեկին. որ ո՛չ կարացեալ տանիլ մեծութեան փառացն՝ զրկեցաւ և ի չափաւորէն: - 24. Եւ այս՝ ի *խնայելո՛յ* ի նոսա. զի մարդասէ՛ր է և ողսեէր աստուած: - 303. Չորրորդ՝ *խնայեաց* զնոսա իբր ի մարդիկ զի զղջացեն փոքր խրատովն և ի մեծ պատուհասէն զերծանիցին. այլ նոքա խստացան մինչև զամենայնն կրեցին: - 333. Հինգերորդ՝ *խնայեաց* ի նա՛ տէր ո՛չ ցուցանել զերեսս իւր. այն կոչեաց զնա՛ տէր և արար զաչս նորա տէր և պատժօղ: - 352. Նա՛խ՝ զի *խնայեաց* աստուած ի ծերութիւն նորա որպէս ի մովսին: - 416. Երրորդ՝ զխիստ բարկութիւնն նշանակէ որ յիւր սրբութիւնն ո՛չ *խնայէ* վասն մեղաց մարդկան: - 425. Չորրորդ՝ ցուցանէ թէ որ ի սրբութիւնն իւր ո՛չ *խնայէ*, և ո՛չ ի ծեզ յանցաւորդ թէ ոչ դառնայք: - 425. Վասն որոյ ասաց դաւիթ, ամենայն որ մարտնչի սրով ընդ կաղս և ընդ կոյրս որպէս ասացին յեբուսացիքն, նա՛ ատելի՛ է անձին դաւթի. և *խնայեաց* ի նոսա և փրկեաց: - 431. Հինգերորդ՝ զի ցուցանէ թէ՝ որ ի սիրելին իւր դաւիթ ոչ *խնայեաց*, նոյնպէս և զամենայն մեղաւորս յանդիմանէ՛: - 432. Եւ այս է նշանն, եթէ տեսցես զվերանալն իմ, ապա լինի՛ պատիժ նոցա. ապա թէ ոչ տեսցես՝ չեն արժանի պատժոց. այլ շնորհքն *խնայէ*՛ ի նոսա: - 445. Այլ և ցուցանի թէ զայլ ամենայն բարութիւնս ո՛չ *խնայէ* մեզ զօր ինչ և խնդրեմք ի նմանէ: - 468

**ԽՆԴԱՄ +** Քանզի դևք ո՛չ են ի վերին մասն օդոյն, զի մի *խնդասցեն* լուսովն. և ո՛չ ի ստորին մասն, զի մի՛ առաւել վնասեսցեն զմարդիկ: - 146. Եւ շուրջ զնովաւ հրեշտակք ամենայն ոչ հաւանեցան. զի նոքա զամենայնն ճշմարիտ խօսին. և բարի առնեն մարդկան. և յապաշխարութիւնն *խնդան.* իսկ սուտ խօսիլն և չար առնելն և ի վիշտս ուրախանալ՝ դիւա՛ցն է որ են չար հոգիքն: - 444. Իններորդ՝ *խնդայ* ընդ մերձ գոլն նորա: - 575. Երրորդ՝ ի ստեղծուածոց. զի ամենայն նման սիրէ զնմանն իւր. և *խնդայ* ընդ նմանին: - 577. Նա՛խ՝ տեսանեն զմարդկութիւնն զի երկիցեն. և մի՛ զաստուածութիւնն զի մի՛ *խնդասցեն*. զի սրտմտութեամբ հայի ի մեղաւորս. - 741

**ԽՆԴԻՐ +** Նախ ի պատճառէ, զի ամենայն պատճառելեաց *խնդրի* պատճառս. և այնպէս պատճառի միւս պատճառ. և այսպէս բացաքայլութեամբ յանհունս ո՛չ է գիտութիւն: - 25. Պատասխանեմք թէ՝ ո՛չ են հեթանոսաց աստուածքն մի, այլ բազումք և միմեանց հակառակք կամօք պաշտմանն և զոհիւք *խնդրոյն*: - 54. Այլ զի զանձնաւոր բնութիւն և զանհատն ասեմք մարմնացեալ. զի սկիզբն միաւորութեանն է ի բնութիւնն, և կատարումն կայացեալ ի յանձն, յիմարա՛ց ուրեմն և ափշելոց է *խնդիր* նոցա: - 76. Զոր զայսպիսի չարութեան *խնդիրս* տարագրէ՛ եկեղեցի ուղղափառաց: - 76. Եւ ուսեալք զայս, ընկա՛լ և այժմ զլուծումն *խնդրոյն*. եթէ լինելութիւն աշխարհի ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ ո՛չ է զօրութեամբ՝ այլ ներգործութեամբ վասն բազում պատճառի: - 168. Ուստի և նեղեալք՝ ի *խնդիրս* առ ի բարձունս զձեռս տարածել ըղձան: - 184. Զի զինչէն ի գոյացութեան *խնդիրն* է. որպէս յասելն՝ զի՞նչ է, ասեմք՝ մարդ է, կամ կենդանի: - 311. Վեցերորդ՝ դիտաւորութիւնն *խնդրի*. յաղագս ո՞յր իցէ զենումն. կենդանեա՞ց թէ մեռելոց. վասն աստուծո՞յ թէ վասն մարդկան: - 365. Վեցերորդ՝ դիտաւորութիւնն *խնդրի* թէ վասն որո՞յ է զենումն. զի թէ վասն աստուծոյ է կամ հոգւոյ, հասարակա՛ց է. իսկ թէ վասն մարդկան և կենդանեաց, կամեցողա՛ց է: - 366. Դարձեալ ցուցանէ՝ ի լրման ժամանակի տասանց միոյ կորուսեալ դրամին ի *խնդիր* ելեալ: - 376. Նա՛խ՝ որպէս սաւուղ ի *խնդիր* իշոյ ել և թագաւորութիւն եգիտ. և տէր մեր մարդկան ազգի որ հաւասարեաց անբանից, և թագաւորեաց մեզ: - 426. Եւ այս ի *խնդրոյ* սրբոյ լուսաւորչին մերոյ ի պատիւ ազգիս հայոց: - 509. Եւ այսպէս բացայայտի, զի երկու իրս *խնդրին* առ ի ճշմարիտ մարգարէ գոլ: - 536. Յոգիք արդարոցն զամենայն գիտեն զոր ինչ վասն նոցա գործեմք. և վասն մեր բարեխօսե՛ն և կատարե՛ն *զխնդիրս*: - 685. Նոյնպէս և յառակս որ զքանքարն ետ և զմնասն. յետոյ եկն և արար *խնդիր*: - 693. Իսկ դատաւորն նստեալ յաթոռ արդարութեան արդարապէս հատուցանէ ըստ գործոց. ըստ որում յիմար կուսիցն փակեցաւ դուռն և ո՛չ առին *զխնդիրն*: - 742. Երրորդ, յատեան դատաստանի **դ** *խնդրին* վկայք. զի մինն կարէ՛ ոք խաբել և սուտ վկայել. այլ զերկու և զերեքն ո՛չ: - 742. Մինչ ի յօրն դատաստանի աղօթեն արդարք վասն մեղաւորաց. այլ յետ այնորիկ վասն դատապարտելոցն ո՛չ խնդրեն ինչ. զի ընդ դէմ աստուծոյ գոլ իմանան վասն նոցա *զխնդիրն*: - 754. Ի *խնդրոյ* ումեմն բանասիրի Ատոմի ուղղափառի: - 772. Եւ վասն իմոյ տկարութեան և ժամանակիս վրդովման *զխնդիրն* յապաղէի: - 772. Այլ զպիտանիս եկեղեցւոյ և վարդապետաց ոգէշահ *խնդիր* հաւատոյ միա՛յն հոգ տարեալ: - 772. Եւ թէ այս և թէ այն, դու ընկա՛լ *զխնդիր* մտաց քոց առանց ամենայն երկբայութեանց. իբր ի միոյ կենեղուտ աղբերէ կենաց ուռճալրացեալ և պտղաւէտեալ: - 772. Որ և առանց յապաղելոյ ապաստանեալ մեր՝ յօժանդակութիւն *խնդրոյդ:* - 773. Յոգաբարձութեամբ նայիլ ի լուծումն *խնդրոյս* աղաչեմ զիարազատդ մեր: - 776. Եւ ապա՛ լուծումն *խնդրոյս*: - 776. Իսկ առ լուծումն *խնդրոյս* թէ վասն է՞ր արդեօք առ նորս շնորհ՝ որպէս աւազանին և կարգին ո՛չ բառնի ընդ բառնիլ շաղկապին. իսկ առ հնովն բարձաւ. որպէս յա՛յտ է ի վերոյ ասիցդ ադամայ և յայլոցն: - 782. Ո՛չ ըստ բաւական բանի առեալ զլուծումն. այլ ըստ կարի տկարութեան արտայայտումն. մանաւանդ հարկեալ ի սիրոյ քումդ եղբայրական *խնդրոյ*: - 788

**ԽՆԴՈՒԹԻՒՆ +** *խնդութիւնն* և թաղծութիւնն ի յաչքն Աւետիքն ի յականջն: - 250. Երրորդ՝ ըստ կատարման. զի այս յետ փոխման զյոյսն ունի լծակցեալ անմահութեան և *խնդութեան*. իսկ այնոքիկ կորստական և անցաւոր: - 269. Երկրորդ՝ զի իսահակ աւետեաց է որդի և *խնդութեան* զաւակ որպէս անունն յայտնէ իսահակ, որ է՛ ծաղր: - 304. ...և մեք *խնդութեամբ* ծնանիմք յաւազանէն յուրախութիւն երկնաւորացն...: - 307. Վասն որոյ և յաւուրս զաքարիայի հօրն յովհաննու յորժամ յամեաց ի տաճարին և ել, ակնունէր ժողովուրդն տեսանել զա՛կնն և տե՛սին լուսափայլ սպիտակացեալ իբրև զձիւն. և լի՛ եղեն *խնդութեամբ*. զի երկնաւոր արքայութեան նշոյլքն պայծառացուցին զակն: - 349. Զի ունի մայրական *խնդութիւն* հանդերձ կուսութեան պատուով: - 463. Եւ *զխնդութիւնն* «Ուրա՛խ լեր բերկրեալդ»: - 464. Եւ որպէս ասացաւ ունի մայրական *խնդութիւն* հանդերձ կուսական պատուով: -

469. Յինգերորդ՝ ի գլխո՛յն են փառք և *խնդութիւն*. բան և իմաստութիւն: - 532. Քանի՞ է տրտմութիւն և *խնդութիւն*: - 584. Կրկին տրտմութիւն է և կրկին *խնդութիւն*. զի է՛ աստուածային և է դիւական: - 584. Աստուածային տրտմութիւն և *խնդութիւնն* հոգևո՛ր է և բարի: - 584. Իսկ դիւական տրտմութիւն և *խնդութիւնն* մարմնաւո՛ր է և չար: - 584. ...և հետևի նմա կեանք և *խնդութիւն* հոգևոր...: - 584. Իսկ աստուածային *խնդութիւնն* ունի դարձեալ դ յատկութիւնս: - 584. Չորրորդ՝ ի խաղաղութեան բնակի. զի ուր *խնդութիւն* է՝ խաղաղութիւն է. և ուր խաղաղութիւն է՝ *խնդութիւն* է: - 584. Իսկ որ մարմնական *խնդութիւնն* է և դիւական՝ ընդ դէմ այսմ ամենայնի. և ի վախճանի տրտմութիւն հետևի որպէս ասէ սուրբն եւագրիոս: - 584. Ոմն լի՛ է անմահութեամբ և *խնդրութեամբ*. և ոմն լի դառնութեամբ և յուսահատութեամբ. որպէս ասացաւ ի վերոյ: - 687. Տասներորդ, այլ և ի ժամանակս յայս առցեն սուրբք զերեսնաւորն. այսինքն *զխնդութիւնն* ի միտս: - 758

**ԽՆԴՐԵԼԻ** - Բովանդակեալ ոչ զամենայն որ ամենեցունց է գիտելի. այլ զբանս բազումս որ բազմա՛ց է պիտանի և *խնդրելի*: - 772. Նախ *խնդրելի* է թէ վասն ի՞նչ պատճառի նախահօրն յանցանաց պատժապարտ եղեն և որդիքն: - 776

**ԽՆԴՐԵԼԻՆ +** Ա՛րդ՝ եթէ սկիզբն այն անսկիզբն է, գտաք *զխնդրելին*: - 25

**ԽՆԴՐԵՄ +** Յինգերորդ՝ է՛ ո՛չ *խնդրել* զօգնութիւնն աստուծոյ ի հաւատալն. զի հաւատն ո՛չ է բնական. զի ըստ այսմ միապէս լինէր ամենեցուն. այլ ի բարութէն աստուծոյ ծրի պարգևքէ: - 32. Վասն որոյ պա՛րտ է *խնդրել* ստէպ. ըստ այնմ, «հաւատա՛մ օգնեա՛ անհաւատութեանս իմում»: - 32. Վասն որոյ որ հե՛ռգ է ի *խնդրել* զպարգևս զայս, ո՛չ կարէ հաւատալ: - 32. Այլ ա՛յս է հոգւոյն բարեխօսելն, զի յորժամ կամք յաղօթս՝ ո՛չ գիտեմք զպատշաճն *խնդրել*. ապա հոգին անմռունչ տայ մեզ իմաստ զպատշաճն աղօթել: - 48. Եւ թէ արարած է՝ զիա՞րդ հաւատամք և կատարիմք. այսինքն յորժամ *խնդրեմք* և առնումք. զի ո՛չ տան մեզ զիայցւածքն որք են արարածք. որպէս անւամբ միայն աստուածք հեթանոսացն: - 52. Ապա թէ ո՛չ՝ ընդէ՞ր զանմարմինն ընդ մարմնականացն իմանաս, և ընդ մեռեալս զկենդանին *խնդրես* ըստ եսայեայ: - 53. Այսպէս և հոգւոյն բարեխօսելն է. զի ինքն ծագէ ի սիրտս մեր զբարեխօսն լինիլ յաղօթս. այսինքն զայն *խնդրել* որ ինչ ի փառս աստուծոյ է: - 59. Ո՛չ ինչ ունիմ ասել առ այս. այլ՝ զուղիղ պատասխանին *խնդրեմ*: - 92. Յինգերորդ՝ զի տեսեալ զանարգ կերպարանն՝ *խնդրեմք* զճշմարիտ իմացումն: - 132. Նախ է՛ բարի՝ որ ինքն վասն իւր *խնդրի*. որպէս առողջութիւն: - 160. Եւ այսպէս *խնդրի* արքայութիւնն. զի ըստ ինքեա՛ն բարի է: - 160. Եւ այսպէս *խնդրի* ապաշխարանքն. որ պատճառէ՛ զյաւիտենական կեանքն: - 160. Վասն այսորիկ ո՛չ է պարտ *խնդրել* զփորձութիւնն և ո՛չ զարգելումն. այլ զյաղթութիւնն: - 160. *Խնդրեմ* և զայս որ ասացաւ ի վերոյ թէ պատահումն ո՛չ է յաստուած: - 169. Եւ ապա զվասն էրն *խնդրել*: - 235. Կամ զպարտս յոչ պարտականէն *խնդրէին*. որպէս ա՛յժմ անիրաւք զայլ ոք այլոյ գրաւ առնուն: - 238. Քարշողականն է՝ յորժամ կծկի և քաղցի, ներքուստ և արտաքուստ *խնդրէ* կերակուր: - 242. *Խնդրեմ* ուսանիլ վասն բոլոր էութեան հոգւոյն թէ ո՞րպէս կամ զի՞նչ եղանակաւ գոյանայ: - 252. *Խնդրեմ* և զայս ուսանիլ թէ ընդէ՞ր է՝ զի մարդս կատարեալ կենդանի է քան զանասունս. և յորժամ ծնանին նոքա ահա՛ ի նոյն ժամն կանգնին յոտից վերայ և գնան, և այլն. իսկ մարդն ոչ: - 266. Ի ծնանիլն նախ *խնդրէ* միայն կերակուր և աճէ՛. յետ որոյ տեսանէ՛ կանգնի՛ և գնայ. յետ որոյ խօսի և իմանայ: - 267. *Խնդրեմ* ուսանիլ թէ զի՞նչ է երազն որ տեսանէ մարդ: - 268. Երեսունևը, Վասն է՞ր *խնդրեաց* յանբանից պատարագ: - 284. Դարձեալ սիրեցաւ յաստուծոյ, զի առաջին մարտիրոս սա՛ եղև. թէպէտ թոյլ ետ հջանել ի դժոխս, զի ի պատճառս նորա *խնդրեսցին* այլքն. որպէս ի պատճառս դովտայ զերծան սոդոմայեցիքն աբրահամաւ: - 287. Ըստ կարգիս *խնդրեմ* և զայս: - 291. Չորրորդ՝ ի յարութեանն *խնդրի* ամենայն արիւն մարդոյ և ժողովի. վասն այն այժմ ո՛չ է ուտելի: - 295. Եւ *խնդրեցին* զդրախտն թէ ա՛նդ զերծանիմք և ո՛չ գտին. զի ծովք և շամանդաղ պատեալ էին: - 296. Եւ *խնդրեցին* զտապանն և զնա ոչ գտին. զի ո՛չ է հրաման տայ որ մարդն զարգանդ մօր իւրոյ տեսցէ: - 296. Նոյնպէս և տէրն մեր ետ հաւատացելոցն զկենարար մարմինն և արիւնն իւր. յորոց *խնդրէ* ըզգործս տասնաւոր. այսինքն զկատարեալս. և զկատարումն ծ բանեան օրինացն. ի յորս է՛ մաքրութիւն ծ զգայարանացս որպէս ի վերոյ ասացաւ: - 302. Նոյնպէս և յակոբ, եփրեմ, դաւիթ, կրտսեր ի մէջ եղբարցն և թագաւորացն. *խնդրե՛մ* ուսանիլ: - 309. Երրորդ՝ զի զազգաւն զազգակիցն մխիթարէր և ո՛չ *խնդրէր* բժիշկ. զի մի՛ ի մարդկանէ լիցի օգնութիւն նմա: - 323. Եւ տէր մեր՝ չարչարողացն իւրոց թողութիւն *խնդրէր* ի հօրէ՛: - 329. Իսկ յամենայն օր հալէր հրամանաւն աստուծոյ, զի դադարեսցեն ի հաւաքելոյ. և ապա զի դարձեալ *խնդրեսցեն* առաւօտել առ աստուած:

- 339. Ո՛չ թէ զմեղս հարց յորդւոցն *խնդրէ*. այլ մեղաց հարցն ներէ երկայնամիտ լինելով մինչև յորդոց յորդիս զի դարձցին ի մեղաց: - 351. Վասն է՞ր *խնդրեաց* աստուած յանբանից պատարագ արեամբ: - 355. Որ յետ խոստովանութեան դառնայ ի նոյն մեղս, իբր շուն դառնայ ի փըսխած իւր. և սա՛ ևս այրի հրով. զի զառաջինն ևս *խնդրեսցեն* ասէ առաքեալն: - 367. Որ և այս երևի ի հինն ստուերագրեալ թէ ոք *խնդրեսցէ*: - 373. Նախ է՝ որ ո՛չ գլուխն *խնդրի* և ո՛չ շահ. որպէս ողորմութիւն: - 375. Երկրորդ՝ որ գլուխն *խնդրի* և ո՛չ շահ. որպէս փոխն: - 375. Ա՛րդ՝ վասն այն ո՛չ *խնդրի* շահ արծաթոյ, զի փո՛խ է տուեալ: - 375. Եւ նոյն այս որ շահ և գլուխ *խնդրի*, բաժանի յերեք: - 375. Վասն է՞ր *խնդրեաց* տասանորդս ի պտղոց և յանասնոց: - 376. Եւ **ժ** թիւ կատարեալ նուէր և սուրբ է աստուծոյ. յաղագս որոյ թագաւորք երկրի զընծայս ի մարդկանէ՛ հնազանդելոց **թ թ** *խնդրեն*...: - 376. Եւ զհարիւրորդ մոլորեալ ոչխարն *խնդրեալ* տեառն մերոյ յիսուս քրիստոսի: - 376. Տասն հարւածք էր եգիպտոսի, վասն է՞ր միայն զանդրանկաց փոխարէնն *խնդրէ*: - 380. Դարձեալ, զի ցուցանէ թէ արիւնքն *խնդրին* ի մարդկանէ. որպէս օրէնք եդ...: - 380. Կորխ՝ յազգէ ղեւայ էր զքահանայութիւնն *խնդրէր*: - 381. Եւ դադան և աբիրոն որդիք ռուբենի՝ զիշխանութիւնն *խնդրէին* զի անդրանիկք էին: - 381. Է՛ և ա՛յլ իմն տեսութիւն բանիս. զի կամի՛ զպաշտօնս մեր որոշել ի կռոց զոհիցն. զի սուտանուն դիքն *խնդրէին* ուստերս և դստերս և արջառս և ոչխարս զոհել և սպանումն օտարաց: - 396. Իսկ ճշմարիտն աստուած զայս ո՛չ *խնդրէ*. այլ երկիւղ *խնդրէ* ի տղայոց որով խորշին ի չարէ. և սէր ի սրտէ փոխանակ անասնոց. և խաղաղութիւն առ ընկերս և օտարս...: - 396. Հինգերորդ՝ զի նոքա *խնդրէին* երևիլ մարմնով. զի ո՛չ կարէին տանել աստուածային հրոյն ի լերինն: - 399. Եօթնժ, Սատակումն մահուն. որ յերից զմինն *խնդրեաց* պատուհաս: - 413. Երեսունևմի, ջուրն կակուղ եւ ի կարծր ծնօտէն յորժամ *խնդրեցաւ*: - 424. Եւ ողորմութիւնն ի մէջ արդարութեանն առաւելու ժտիւ *խնդրողաց*: - 424. Եւ թէ նա՛ յարուցանէր, ընդէ՞ր երկու եհան. զի նա՛ միայն զսամուէլ *խնդրէր*: - 428. Վասն է՞ր յերից պատուհասից զմինն *խնդրեաց*: - 434. Քառասուներորդ, սաւուղ բազում անգամ *խնդրէր* զդաւիթ և ո՛չ կարէր ըմբռնել. և որդիքն սաւուղայ զտէրն. զի ո՛չ էր հասեալ ժամ նորա: - 437. Եւ կամ նշան *խնդրել*. և կամ զաստուած հարցանել և ապա՛ գնալ: - 443. Այսինքն թէ՝ ունի զմարգարէութեանն, և զսքանչելեացն *խնդրէ*: - 445. Կամ զգործոց և զարդեանցն *խնդրէ*. որ է՛ սքանչելեաց և պատժոցն. որպէս եղիա: - 445. Նա՛խ՝ զի ո՛չ *խնդրէին*, ըստ որում ո՛չ ցանկանային: - 467. Իսկ նորն ադամ նոյն ի **զ** դարուն յա՛յց եւ և *խնդրեաց* զկորուսեալ պատկերն ի թիւ խորհրդաւոր կատարեալ վեցերորդին: - 467. Այլ և իմաստութեանն հօր պարտ էր նորոգել *զխնդրօղ* իմաստութեանն որ է մարդն: - 468. Այլ և ցուցանի թէ զայլ ամենայն բարութիւնս ո՛չ խնայէ մեզ զոր ինչ և *խնդրեմք* ի նմանէ: - 468. Իւր անոյշ՝ *խնդրողաց* զփրկութիւն: - 474. Վեցերորդ՝ ածաւ վերստին առ պիղատոս. և անդ *խնդրեցին* ի խաչ հանել. և զկնի ծաղեալ. և թուք ընկալեալ. և ի խաչ դատապարտեցաւ: - 492. Երկրորդ՝ ասելն «չև ևս ելեալ եմ առ հայր իմ», ցուցանէ թէ՝ զոր այժմ *խնդրես*, հոգին գայ և զայդ ամենայն ծանուցանէ ծեզ: - 517. Վեցերորդ, ոմանք ասեն թէ պարզևս *խնդրէր* հոգևորական. վասն այն ասէ ելանեմ առ հայր իմ և իջանէ հոգին և լնու զծեզ ծրի պարգևօք. այժմ յաղագս այդորիկ մի՛ մերձենար: - 517. Այլ համբարձումն նշանակէ՛ ի միտս համայն բարձր քան զամենայն դասս իմանալեացն. զի նմա՛ երկրպագեն ամենայն երկնայինքն. և անդր քան զտեղի տիրամօրն. զի ի միածին որդւոյ իւրմէ *խնդրէ* զփրկութիւն մարդկան: - 519. Չորրորդ՝ զի որ քան և ծծեն՝ ևս *խնդրեն* զօղ: - 523. Եւ նա՛ *խնդրեաց* յաստուծոյ զիջումն լուսոյն ի նշան յարութեանն քրիստոսի: - 549. Այլ դու ո՛վ այրդ աստուծոյ մաքրամիտ և ճգնազգեաց միայնաւոր սուրբ հայրդ սահակ, թէ և զիջանես եղբայրական սիրով *խնդրել* բանս ի մէնջ. սակայն կարօղ ես և զբերին լնուլ և զյաւելորդն կշռել. և զմեզ օգտեցուցանել ի ներգոյէ՛ քոյին պայծառամիտ սրբութեան սրտի: - 558. Ութերորդ, ո՛չ ասաց՝ թէ *խնդրեսցէ* ապաշխարութեամբ՝ արգելից զգուշ և զողորմութիւն...: - 566. Ութևժ, *խնդրէ* ի նմանէ համարձակ յուսով: - 576. Չորրորդ՝ յորժամ սիրեմ զիս վասն աստուծոյ. և այս ևս է լաւագոյն. զի ո՛չ *խնդրէ* մարդ զիւրն, այլ զաստուծոյն միայն: - 576. Եւ աղքատք են հոգւով՝ որք ո՛չ *խնդրեն* զհեշտախտութիւնս: - 583. զի պարգևք հոգւոյն ո՛չ արհամարհողաց և չկամողացն լինի տուեալ. այլ հաւատով *խնդրողացն*...: - 588. Դարձեալ *խնդրի* որ մկրտօղն ունիցի դիտաւորութիւն որ այն մտօքն մկրտէ զոր բոլոր եկեղեցին: - 588. Այլ թէ որ հասակաւ մեծ է, *խնդրի* յատուկ հաւատ. իսկ թէ տղայ է՝ բաւական է խորհուրդն եկեղեցւոյ: - 588. այլ առաքեաց առ սուրբն գրիգոր և *խնդրեաց* քահանայս մկրտել զնոսա: - 589. Ո՛չ ումեք մեղք յայլմէ *խնդրի*. այլ ամենայն մարդ վասն իւր մեղացն պատժի: - 591. Աստուած զարդարութիւն յամենայն մարդոյ *խնդրէ* զոր յառաջն ետ. և ադամ եթող զայն:

- 591. Իսկ թէ մարմնական *խնդրես* զխառնումն ջրոյ և պնդիս ի հակառակն, ասեմք քեզ թէ ո՛չ միայն ջրոյ, այլ և կաթին և մեղեր և գինւոյ ասէ խառնումն ի խառնարանն. - 596. և ոմն լեզուն պարզեալ *խնդրէ* ի մօրէն...: - 620. Եւ սուրբքն աղօթիւք *խնդրեն* յաստուծոյ և առնուն: - 620. ...միայն արտասուօք *խնդրեմք* յաստուծոյ զողորմութիւն. ի հարկէ գթայ և տայ: - 620. Զարձակումն *խնդրեմք* բերանոյ հոգւոյ և մարմոյ: - 621. ...յորում բազումս նեղեաց զմեզ թշնամին մեր. գանկատիմք նմա և *խնդրեմք* զփրկութիւն: - 621. ...վասն որոյ **բժ**ան ժամու աղօթիւք զթողութիւն *խնդրեմք* սոցա: - 624. ...այսինքն ի քէն *խնդրեն*. նոյնպէս և մեք *խնդրեմք* աղօթիւք: - 654. Որպէս և մանկունք նախ *խնդրեն* և ապա՛ ծնօղքն կերակրեն: - 654. Երրորդ, զի կրկին օրհնեմք, առաջին օրհնութիւնն *խնդրելն* է, և վերջինն գոհանալն: - 655. Որպէս աղքատք նախ *խնդրեն*. և յորժամ առնուն՝ գոհանան. նոյնպէս և մեք առնեմք: - 655. ...թէ ասեն եպիսկոպոսին թէ ոք եկեալ է կնունք *խնդրել*, - 659. վասն այն հոգւոյ նորա աղօթիւք սրբութիւն և փրկութիւն *խնդրեմք*, - 672. ...վասն սոցա թողութիւն *խնդրեմք*: - 675. ...վասն որոյ երեք անգամ թողութիւն *խնդրեմք*: - 675. ...վասն որոյ երիցս *խնդրեմք* զի այժմ բաժանեալ հոգին խաղաղութեամբ ժամանեսցէ յօթևանս լուսոյ...: - 675. Չորրորդ, արտասուօք թողութիւն *խնդրեմք* զոր մեղաք նմա ի մարմնաւոր կեանս...: - 676. ...վասն որոյ կրկին գամք և թողութիւն *խնդրեմք*: - 680. ...զի մեղքն առնելն է, և պատիժն կրելն. յերեկեան օրն վասն մեղաց *խնդրեցաք*. այսօր վասն պատժոց: - 680. ...վասն որոյ կրկին անգամ ի կրկին մեղաց և ի կրկին կապանաց արձակումն *խնդրեմք*: - 680. ...զայն աղերսեն նմա. սակայն ըստ հաճոյութեան կամացն աստուծոյ *խնդրեն* և ո՛չ զհակառակն: - 685. Ասեմք ըստ սրբոյն անդրէի մեկնչի՝ եթէ սուրբքն զաշխարհի վախճան *խնդրեցին*. որոց ցուցանէ զպատճառս երկայն մտելոյն...: - 696. Ա՛րդ՝ եկեալ հրեշտակն *խնդրէ* ի նմանէ զբարի գործս որով նա կերակրի. - 697. ...իսկ հոգի մարդոյն յանհնարինս մտեալ երթայ առ միտս որ է՛ երրորդ բարեկամ և *խնդրէ* բարիս. - 697. Ութերորդ, ապաշխարութիւնն *խնդրէ* մարմնական տանջանք ի մարմնական գործիս: - 699. Երկրորդ, ասեն *խնդրէ* արդարութիւնն աստուծոյ՝ զի վասն մեղաց պատիժ տացի. որպէս յօրէնս մարդկային պատժին յանցաւորք...: - 701. Եւ որպէս զմարմինս մեր ընդունին յաւանդ, նոյնպէս և զգործս մեր *խնդրէ* ի սոցանէ և յառաջ բերեն: - 714. Այս զյարութիւնն ասէ ի ձեռաց գազանաց *խնդրելն*. զի յառնեն մարմինք որ մեռեալ են ի ձեռն գազանաց: - 715. Երրորդ պակասութիւն տրտմութիւնն է ի հոգին. զի բազում ինչ *խնդրէ* և ո՛չ կարէ առնուլ. և բազում ինչ ոչ *խնդրէ* և լինի նմա. - 722. Զի ուր կամք հոգւոյն *խնդրէ*՝ անդ ընթանայ և մարմինն անարգել ի յական թօթափելն. - 722. Դարձեալ յուշ առնէ մարդոյ զչարչարանքն քրիստոսի. և *խնդրեսցի* ի նոցանէ մահն քրիստոսի իբր զգին որ տըւեալ է նոցա, և նոքա յափշտակեցին զինքեանս ի նմանէ: - 732. Բարձումն յուսոյ և ամենայն փրկութեան Նաև զոլն իսկ որում տենչան ամենայն ստեղծուածք՝ է՛ նոցա պատիժ. վասն զի *խնդրեսցեն* զմահ և ո՛չ գտանիցեն: - 751. Ո՞չ *խնդրեն* յաստուծոյ վասն նոցա: - 754. Մինչ ի յօրն դատաստանի աղօթեն արդարք վասն մեղաւորաց. այլ յետ այնորիկ վասն դատապարտելոցն ո՛չ *խնդրեն* ինչ. զի ընդ դէմ աստուծոյ զոլ իմանան վասն նոցա զխնդիրն: - 754. Տէրն զգանձն մատանեաւ դրոշմեալ տայ ի ծառայս. և մատանին ի ձեռին է. երբ *խնդրէ*՝ թերին յանդիմանի: - 769. Արդ՝ ես վերջին ծնունդս եկեղեցւոյ և տրուպս բանասիրաց, Գրիգոր պիտակ անուն *խնդրող* բանին. բացայայտեցի զբանս Յարցմանց ի լուսաւոր բանից վարդապետաց եկեղեցւոյ: - 772. Որ և ոչ ժամանեաց ի կատար բանիս վերոյ ասացեալ *խնդրողն*: - 772. Որք տեսչութեամբն աստուծոյ՝ ի մեռելոցն զառհաւատաչեայն ընկալան յարութեան, թէ զիա՞րդ ոչ ունէին ի մտի զանտի կենացն ծանօթութիւն. պատմել մեզ *խնդրի*: - 774. Ապա թէ զի՞նչ է իսկապէս իմացումն, լուծանել *խնդրեմ*: - 781. *Խնդրեմք* լուծանել: - 782. *Խնդրել* փափաքիմ: - 784. Եւ կատարեալն տեսութիւն *խնդրեցաւ* ի վերոյ ի **ժզ** գլուխն **իբ** համարն: - 785. Իսկ ամենայն զգայական կենդանւոյ թէպէտ իգին ըստինք գոն վասն զծնունդս կերակրելոյ. սակայն և արուացն գոյ նոյն մասն անդամոց կազմեալ յարարչէն. և այն յի՞նչ պէտս լինի. *խնդրել* արժան է: - 785. Բարւոք ասացաւ յարարչէն. զի թէ և բնութիւն թարց երևակայութեան, և արհեստ հանդերձ երևակայութեամբ, սակայն կամք արարչական ետ նոցա բնական և բանական կարողութիւն. և ոչ ինչ վայրապար կազմեն զտեսակ գոյացական և զտեսակ պատահական. *խնդրելով* ոմն պարզ նիւթ. և ոմն տեսակացեալ: - 786. Առ այսոքիւք, թէ արտասուքն որ յաչացն հեղու, ընդէ՞ր աղի գոլով, Ո՛չ միայն զվասն էրն *խնդրեմ*. այլ և զորպէսն դառնալ նմա աղի ընդ երակս աչաց: - 786. Փոխանակ խրախութեանց ճիչ աղաղակի ընդդէմ հեշտալեաց. անհանգիստ ի խշտի՝ յերեկօրեայ զառաւօտ *խնդրէաք*. և ի նմա զեռանդ երանեալք: - 789

**ԽՆԴՐՈՒԱԾ(Ք) +** Երրորդ՝ զի յորում ժամու մտանէր մովսէս աղօթս առնել և *խնդրուածս*,

աստուածախօսութիւնք լինէին ի միջոյ քերովբէիցն որ կային անդ: - 379. Իսկ և եօթներորդն խոստովան լինիլ բարութեան և արդարութեան տեառն. և մերձիլ *խնդրուածովք*. և օրհնել զաստուած նոր օրհնութեամբ յետ աստեացս: - 630

**ԽՆԴՐՈՒԹԻՒՆ +** Եւ ապա զի ցուցցէ թէ՝ չար խորհրդոցն վրէժ *խնդրութիւն* կայ և պատիժ: - 148

**ԽՆՁՈՐ կամ ԽՆԾՈՐ +** Դարձեալ՝ հոգին սուրբ բղխէ ի հօրէ՛ որպէս հոտ ծաղկի կամ *խնձորի*: - 64. Որպէս մի էութիւն է *խնձորն*. և ունի երեք յատկութիւնս որակաց. զհամն, և զհոտն, և զգոյնն ըստ ծնոյն: - 74. Ոմանց որակ գունոց տայ. որպէս *խնձորոյ*. և զոմանց բառնա՛յ. որպէս զմարդոյ: - 186-187. Եւ առաջի կացցէ *խնձորն* մեզ օրինակ: - 213. Այլք ասեն թէ՝ *խնձո՛ր*. վասն զի բազում անգամ ի յերգսն *խնձոր* յիշի: - 224. Այսորիկ են *խնձորք* նոր և հին. որք հոտով զուարճացուցանեն, և համով զմայլե՛ն: - 756. *Խնձոր* նոր և հին, գիրքն են աստուածայինք. որք հինք են յօրէնս և ի մարգարէս. և նորք յաւետարանն և յառաքելական մատեանս: - 756

**ԽՆԿԱՂԱՑ +** *Խնկաղացն* բազմազան առաքինութեամբ խնկեալք: - 346. Եւ **ե** երրորդն՝ յորոյ վերայ *խնկաղացն* և նուիրանոցն և ճաշակն: - 364

**ԽՆԿԱՐԿԵՄ +** Կամ զի անժամ *խնկարկեցին*: - 364. Եւ քահանայքն հպարտացան և օտար հրով *խնկարկեցին* ի ներքս վարագուրին, վասն այն պատժեցան ի խրատ այլոց: - 364. Սա՛ բորոտեցաւ համարձակեալ ի տաճարն *խնկարկել*: - 452. Ի հինքն **բ** անգամ քահանայապետն և քահանայն յառաւօտն և յերեկոյն *խնկարկէին*...: - 618. Զի յառաւօտն մին *խնկարկի* ի տէր եթէ շրթունքն. և այն ևս **գ** անգամ պար առեալ. և մի յօրհնութիւնն ևս **գ** անգամ. և մի ի փառք ի բարձունսն ևս **գ** անգամ: - 618. Եւ նոյնպէս **դ** անգամ յերեկոյն. ի լոյս զուարթն, և յուղղեցին, և յերեքսրբեանն. կամ յարձակմանն *խնկարկեն* ոմանք: - 618. Իսկ ի կիրակէի *խնկարկելն* և **ժ** օրհնութիւնն՝ նշանակէ զտասն քաղաքացն իշխանութիւն ունել. և **ժ** քանքարացն: - 628. Իսկ սարկաւագն՝ յորժամ քարոզէ՛ կամ *խնկարկէ* կամ ընթեռնու: - 635. Իսկ ի սրբութիւն սրբոցն մերկանալ զայն և զգեստ սպասաւորի զգենուլ միայն սպիտակ կտաւի և *խնկարկել* անդ: - 636

**ԽՆԿԱՐԿՈՒՄՆ** - Կամ թէ յաւուրն կրկին էր *խնկարկումն*. յառաւօտն և յերեկոյն. և յառաւօտն խնկեալ էր ահարօն: - 364

**ԽՆԿԵՂԷԳ** - Ծաղիկ զըմռնեաց. նմանէ պոյտն ծաղկի. և Կինամոն. արմա՛տ է խոտոյ ի տմորիս հայոց. և *խնկեղէգն*. որ յարմատս ո՛չ ամենայն եղեգան լինի. և Յիրիկ. խէ՛ժ է ծառոց: - 349

**ԽՆԿԵՄ +** Խնկաղացն՝ բազմազան առաքինութեամբ *խնկեալք*: - 346. Կենդանեաց զենմունքն զի յանունն աստուծոյ էր՝ սրբէր զմարդ. վասն է՞ր ապա ոչ սրբեին կռապաշտքն. զի և նոքա յաստուծոյ անունն զոհէին և *խնկէին*: - 361. Կամ թէ յաւուրն կրկին էր խնկարկումն. յառաւօտն և յերեկոյն. և յառաւօտն *խնկեալ* էր ահարօն: - 364

**ԽՆՈՒՄ +** Եւ զի զգայութիւնք մարմնոյ զինքեանս *խնում*: - 196. Եւ որպէս ննջեցեալն քնով՝ ո՛չ տեսանէ զինքն. և որպէս յաւելի կերակրոյ *խնու* զգայարանքն. նոյնպէս ագահութիւն և փարթամութիւն և հպարտութիւն մոռանալ տայ զինքն. վասն այն ասեն թէ՝ ինքեանց գիտակքն իմաստունք են: - 397-398. ...իսկ միտքն տայ պատասխանի՝ դրունքս փակեալ են. այսինքն զգայարանքս *խցեալ* են և մեղաց մանկունքս ընդ ինև ո՛չ տան թոյլ...: - 697

**ԽՇՏԻ +** Փոխանակ խրախութեանց ճիչ աղաղակի ընդդէմ հեշտալեաց. անհանգիստ ի *խշտի*՝ յերեկօրեայ զառաւօտ խնդրէաք. և ի նմա զեռանդ երանեալք: - 789

**ԽՈԴԷՍՏՈՒԲԻԱ** - Եւ **է** ճրագարան և **է** բերան ճրագացն, **է** արքն մեծապատիւք զօրավիգք թագաւորին. այսինքն յեսու, զաքարիա, *խոդէստուբիա*, յեդոյիա, յեշոյիա, և եզր դպիր: - 346

**ԽՈԶ +** Եւ կայ ի տուն՝ կատու. և խուզօղն *խոզ*: - 220. Որպէս թէ ցանկութեամբն ասի *խոզ*. և բարկութեամբն շուն. յափշտակութեամբն գայլ. և այլն: - 274. Է՛ և երրորդ պատճառ. *զխոզն* ուտէին յեգիպտոս, և զարջառ և զոչխար պաշտէին. վասն որոյ հրամայեաց զաստուածս նոցա զենուլ զի չեն աստուածք. և ի խոզենւոյն հրաժարիլ ամենևին: - 355. Եւ զոր ուտէին և դիւաց զոհէին՝ պիղծ ասաց. որպէս *զխո՛զ*, զճագա՛ր, և զնապաստակ: - 364. Այս ազգ գործ՝ *խոզնիցն* է յատուկ և ո՛չ մարդկան: - 570

**ԽՈԶԵՆԻ +** Է՛ և երրորդ պատճառ. զխոզն ուտէին յեգիպտոս, և զարջառ և զոչխար պաշտէին. վասն որոյ հրամայեաց զաստուածս նոցա զենուլ զի չեն աստուածք. և ի *խոզենւոյն* հրաժարիլ ամենևին: - 355

**ԽՈԿԱՄ +** Նախ՝ զի սեռօրէն *խոկայ* զբարութիւնն աստուծոյ. և քերօրէն զճշմարտութիւնն. և աքոռք զուղղութիւնն: - 135. Ի նոյն *խոկալով* սիրել զնա՛ և ատել զհեշտութիւն զգայութեանցս: - 269. Եւ

երկրորդ յանցումնէ՝ որք մտօքն հեշտացեալ մեղկանան ընդ տեսութեանն. և հաւանին *խոկացեալք* ի նոյն: - 558. Զի որ *խոկայ* առանց հաւատոյ՝ այնպէս է իբր թէ ջանայ ոք տեսանել զարեգակն առանց աչաց: - 702

**ԽՈԿՈՒՄՆ +** Պատասխանեմք թէ՝ ամենայն հաւանութիւն որ է կամք յետ *խոկմանցէ* և իմաստութեանց. և քրիստոս է աստուծոյ իմաստութիւն ըստ առաքելոյ: - 36. Եւ վերին *խոկմամբ*՝ որ ի վե՛ր է քան զմեզ՝ ըստ կարողութեան լուսաւորիմք ճառել զանճառէն: - 103. Զի յետ անկմանն եղև խստացեալ և անզեղջ ի չարն. կորացեալ ի ճշմարտութենէն. անկեալ ի բարւոյն. տկարացեալ ի զօրութենէն. արտաքսեալ յաստուածային *խոկմանէն*: - 146. Իսկ Բանին, *խոկումն*. Գործ. Առաքինութիւն. Հաւատ: - 248. Իմաստութիւն ընդ *խոկումն*: - 248. Իսկ բանն սկիզբն առեալ ի *խոկմանէն*, զտեղի առնու ի բարին: - 248. Հաւատոյ և *խոկման* որով տեսանէ զաստուած: - 275. Հինգերորդ՝ զի մտօք յաստուածային *խոկումն* էին վերացեալ, և զգայարանօք ընդ գործս հրաշիցն. և ոչ էին պարապեալ քննութեան անձին...: - 278. Տասներորդ՝ իմացական *խոկումն*: - 444. Նոճն զբարձրութիւն *խոկմանն*. և Զիթենին զկակղութիւն ողորմութեանն: - 495. Եւ եհան ի լեառն ձիթենեաց. զի լերամբն ցուցանի համբարձումն մտաց ի *խոկումն* աստուածային: - 519. Ոսկի է *խոկումն* հաւատոյն: - 702. Չորրորդ, հաւատն է՛ աստուածային առաքինութիւն. իսկ դևք զի են խստացեալ ի չար՝ ո՛չ ունին զղջումն որ է բարոյական. ապա և ոչ հաւատ որ է վերնագոյն և բարի կամաց *խոկումն* առ աստուած: - 784

**ԽՈՀԱԳՈՐԾ +** Մատռուակն ուրա՛խ էր. և *խոհագործն* տրտում վասն ցուցման երազոյն: - 689

**ԽՈՀԱԿԱՆ +** Փորոտին զծածուկ խորհուրդն. զոր լուանալ հրամայէ՛ ջրով. այսինքն *խոհականաւն* զգարշելի մտածմունս սրբել: - 360. Եւ լուծ՝ *խոհական* իմացումն: - 744

**ԽՈՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ +** Որպէս յարարածս աստուած ճանաչի, այսպէս և ի մարմնոյս զհոգին օրինակաւ իմանալ մարթի... *խոհականութիւնն* խորհուրդ: - 250

**ԽՈՀԵՄ +** Մետասաներորդ՝ ասեն թէ որպէս ի կենդանիս ուղտն *խոհեմ* և տատրակն ողջախոհ է, և ա՛յլ կենդանիք են ապուշք և բղջախոհք: - 19. Այսպէս ի բնական ստեղծումն հոգւոյն՝ ոմն *խոհեմ* և ոմն անզգամ. ցանկասէր՝ և ողջախոհ. բարեբարոյ՝ և չարաբարոյ լինին: - 19. Դարձեալ, ասեմք եթէ՝ առնէ՛ աստուած զոմն *խոհեմ* և զոմն տգէտ, զի նա՛ ի նմանէ՛ ուսցի: - 19. Լանջքն որ երկայն է քան զփորն՝ *խոհեմ* է: - 247. Նոյնպէս և ի բանական որակութիւնս հոգւոյն՝ նման և աննման, հաւասար և անհաւասար բացատրեաց. այսինքն *խոհեմ* և տգէտ. հեզ և բարկացօղ. ողջախոհ և ցանկասէր. և այլ զանազան բարս բնական՝ մարդոյն: - 252. Նմանապէս *խոհեմին* և անզգամին. տրասիրին, և անյագ անիրաւին: - 268. Առաջինն *խոհեմք* և իմաստունք բնականապէս. որպէս նահապետքն առաջինք. աբրահամ. իսահակ. յակոբ. յոբ. կուռնէլիոս. և այլքն: - 269. Վերին մասն *զխոհեմ* և զհամեստ բանս իբրև աղիւ համեմեալ: - 493. Դարձեալ՝ կատարեալ սէր է, յորժամ է ունակութեամբ մեծ. ներքին շարժմամբն ուղիղ. արտաքին գործքն ժիր. արմատովն հաստատեալ. ջերմ եռանդութեամբն *խոհեմ*. և քաղցրութեամբն մխիթարական: - 576. *Խոհեմ* մարդն ո՛չ պարտի վաղվաղել ի գործ զինչ և է՛. այլ պա՛րտ է նա՛խ խորհիլ որ ո՛չ խաբի: - 579-580. Դարձեալ կոչին ծառայականք, զի և ի խառնուածոյ մարմնոյն գոյանան. որք ո՛չ հետևին միմեանց. զի որ ի խառնուածոյն ողջախո՛հ է, նա ո՛չ *խոհեմ* կամ արդար կամ արի կարէ գոլ: - 581. Այլ և ի յանբան կենդանիս բնաւորեցաւ գոլ. որպէս ուղտ *խոհեմ*. և առիւծ արի. տատրակ ողջախոհ. և արագիլ արդար: - 581. Եւ գիտեն զպատճառն թէ վասն է՞ր է ողջախոհ. այսինքն զի յանառակ կենաց ժլատութիւնք լինին. և նա ի հարկէ արի գոյ զախտն ստորադասելով. այնպիսին և *խոհեմ* գոյ գիտելով թէ վասն մարմնական հեշտախտութեանց լինի անիրաւութիւն: - 582

**ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ +** Դարձեալ՝ թէ ի հարկէ է՝ ապա բարձեա՛լ են ամենայն սկզբունք բարոյական առաքինութեանց. այսինքն *խոհեմութեան*. արիութեան. ողջախոհութեան. և արդարութեան. զի սոքա ըստացեալ լինին առ ոմանս՝ և ո՛չ ի հարկէ: - 11. Իններորդ՝ զի նոցա բանականն է մոլորեալ. և ո՛չ ցասումն և ցանկութիւնն. յորոց վերայ բանն բռնադատ խղճիւն, և ստիպէ զնոսա յուղղութիւն. այլ ինքն կառավարն *խոհեմութիւնն* մոլորեալ ո՛չ ուղղի: - 32. Ա՛րդ՝ ընդդէմ քումդ *խոհեմութեան* ո՛րպէս իմանաս ի միում հասարակ բնութեան զբանն ծնեալ և զհոգին բղխեալ. իսկ հայր ոչ ծնեալ կամ բղխեալ. և անդրադարձեալ ևս: - 74. Եւ *խոհեմութեամբ*՝ որ ի ներքս ի մեզ: - 103. Ութերորդ՝ *զխոհեմութեան* և խօսից և ձայնից և տէրութեան շնորհին այժմ երևեցո՛յց ի յադամ: - 219. Իսկ որ հաւասար ի ճակատէն իջանէ ոչ բարձր և ո՛չ ցած, արիութեան և *խոհեմութեան* է նշան: - 247. Հինգերորդ՝ ըստ բանի՝ յդացեալք

*խոհեմութեամբ* և ծնանիմք զիմաստութիւն: - 308. Նախ ցուցանէ *զխոհեմութիւն* բարուց որ ընդունելի է աստուծոյ և մարդոյ. այլ պարզութիւնն է՛ պատարագ: - 356. Առաջինն նշանակէ զմեծ *խոհեմութիւնն*: - 465. Եւ կարգաւ վասն Արդարութեան. և *Խոհեմութեան*. Արիութեան. և Ողջախոհութեան: - 526. Այսպէս և *զխոհեմութիւնն* ի չար խորհուրդս և ի խորամանկութիւնս փոխեմք: - 564. Խորագիտութիւն. որ է՛ *խոհեմութիւն*: - 571. Այլ գիտելի է, զի առաքինութեամբքն ուղղի հոգին ի զօրութիւնս իւր. քանզի *խոհեմութիւնն* ուղղէ զբանականն. արիութիւնն զցասմնականն. ողջախոհութիւնն զցանկականն. իսկ արդարութիւնն ուղղէ՛ զամենայն զօրութիւնս: - 578. Զի *խոհեմութիւնն* ո՛չ զգուշանայ ի դարանակալութեանց: - 579. Զի՞նչ է *խոհեմութիւնն* և զի՞նչ գործ նորա և մասունք: - 579. *Խոհեմութիւնն* է զօրութիւն հոգւոյ, որով ընտրութիւն առնէ ի մէջ չարին և բարւոյն: - 579. Եւ մասունք են *խոհեմութեան* **գ**. այսինքն հանճարեղութիւն, նախատեսութիւն, և յիշողութիւն: - 580. Դարձեալ՝ *խոհեմութիւն* է ուղղել զառաքինութիւնս ըստ բարոյական իմաստասիրութեանն: - 580. Դարձեալ՝ եռակի՛ է *խոհեմութիւնն*: - 580. Նախ *խոհեմութիւն* սրտին. և այս ի կարգաւորել զներկայն, ի միտ ածել զանցեալն, և նախատես լինիլ ապագային...: - 580. Երկրորդ *խոհեմութիւն*. և այս է չափաւորութեամբ բանից. ...: - 580. Երրորդ *խոհեմութիւն* է գործոյն. որ կայանայ ի փախուստ չարին և յընտրութիւն բարւոյն...: - 580. Եւ ծանիր, զի ա՛յլ է *խոհեմութիւն* աշխարհային. ա՛յլ մարդկային. և ա՛յլ աստուածային: - 580. Այս քան վասն *Խոհեմութեան*: - 580. Դարձեալ կոչին և բարոյական և տնտեսական և քաղաքական առաքինութիւնք. որպէս ասացաւ ի վերոյ ի ճառս *խոհեմութեան*: - 582. Որ է հաւատն՝ յոյս՝ սէր. *խոհեմութիւն* և այլն: - 587. Կարգն է՛ ի խորհուրդ *խոհեմութեան* և գիտութեան. զի իմաստութեամբ և գիտութեամբ սպասաւորեսցէ խորհրդոցն և խրատեալ ուսուսցէ զժողովուրդն: - 587. Գիր քոյոյ վսեմամիտ *խոհեմութեանդ* ո՛վ արփիածին հարազատ, և վերնոյն սիօնի նազելի զաւակ Գէորգէոս Րաբունեայ պետ: - 773

**ԽՈՂՈՎԱԿ +** Դարձեալ՝ մի բնութիւն ասաց միւս եւտիքէս. ոչինչ առեալ մարմին ի կուսէն. այլ իբր ընդ *խողովակ* անցեալ իբր ի դարիճակի. միայն զձևն ի նմանէ ձևագրեալ: - 81-82

**ԽՈՅ +** Իսկ որպէս հոմանուն ծայն, զի հաւասարապէս հաղորդի որոց կոչինն. որպէս *խոյ* երկնային և երկրային և ջրային. զի ո՛չ առաւել և ո՛չ նըւազ կոչին. այլ հաւասարապէս: - 89. Զի *Խոյն* և Առիւծն և Աղեղնաւորն, ունին զբնութիւն հրոյ ջերմ և չոր: - 189. Ի *խոյն* և ի ցուլն և յեկաւորն առնէ զգարուն. որ է հասարակ տիւն և գիշերն **ժբ** ժամ: - 190. Նա՛խ՝ զի սկիզբն է տարւոյ. յորժամ արեգակն ի *խոյն* մտանէ: - 197. Քաղոց. զի արծակի *խոյն* ի հօտն ըստ հանճարեղ արանցն: - 200. Որպէս ասեն տօմարագէտք, *Խոյն* գլուխն որ է՛ պարսիկք. և այլն: - 241. Զգողացեալն խոստովանիլ. և *խոյ* մի նուիրել: - 285. Որպէս *զխոյն* ի ծառոյն սաբեկայ. և զլորամարգն ի ծովէն. և զաստերն ի բերանոյ ծկանն հրաշագործեաց: - 326. Տասներորդ, *խոյն* կատարման քահանայից և պանն: - 359. *Խոյ* կոչեցաւ. զի ծնաւ և զգեցոյց զմեզ. և փեսա՛յ է եկեղեցոյ: - 361. Զի՞նչ նշանակէ կրկին ողջակէզն ի նորս. որպէս զուարակն և երկու *խոյն* կատարման: - 362. Իսկ միւս *խոյն* կատարմանն, քահանայիցն կերակուր և նուէրքն մովսէսի: - 362. Իսկ *խոյն* քրիստոսէ: - 373. Նա՛խ՝ զի ը էին նւէրք պատարագացն. է գառն. և մի *խոյ*: - 373. Զուարակն, և *Խոյն*, և Գառն, և Նոխազն, և այլ Նուէրն: - 374. Զուարակն է պատարագեալ. և *խոյ* մեզ ծնեալ. և գառն կերակրելի. և նոխազ զմեղս մեր առեալ: - 374. ...և Ամոլք հաւատոյ առաքեալքն սուրբք. և *խոյք* հայրապետացն դասք: - 374. Վասն է՞ր յորժամ զգողացեալն խոստովանի ասէ՝ և *խոյ* մի աստուծոյ նուիրէ՛: - 384. Եւ *զխոյն* աստուծոյ, զի զօրէնս նորա յանցեաւ: - 384. Եւ հինգ մասն տուգանքն՝ և *խոյն* ա՛յն է, որ ե զգայարանօքս ապաշխարեմք: - 384. Զի պահքն և աղօթքն *խո՛յ* է աստուծոյ. և ողորմութիւնն տուգանք. և ամենայն ապաշխարութիւն սոքօք կատարի: - 384. Նա՛խ՝ զի է էր պատարագն. վասն զի մատոյց է զուարակ. և է *խոյ*. վասն որոյ ընկալաւ պարգևս է բանից մարգարէութեան: - 387. Եւ զի կրկին ետես, Նա՛խ՝ զի կրկին էր պատարագն. *խոյ* և զուարակ: - 387. Եւ այլք այսպէս մեկնեն թէ՝ ամենայն անիծեալ կախեալ կայցէ զփայտէ. այլ ո՛չ ամենայն կախեալ զփայտէ՝ անիծեալ է. որպէս *խոյն* ի սաբեկայ կախեալ ո՛չ է անիծեալ: - 400. Երկրորդ՝ զվեց կենդանակերպսն կոխեաց, որ էր **եժ**ան աւուր ճանապարհի ի կուսէն ի *խոյն* ընթացեալ: - 490. Այլ և ծառն սաբեկայ ուր *խոյն* կախեցաւ: - 494. և Երկրորդ, մի անուն՝ և նշանակեալքն բազումք. որպէս *խոյ* է յերկինս և յերկրի և ի ծովս. նոյնպէս մի կոչի եկեղեցի կենդանի մարդն և շինեալն ի քարանց և եկեղեցին անդրանկացն յերկինս. սակայն զանազա՛ն են որպիսութեամբ: - 533. Եւ որպէս ի կենդանակերպս *խոյն* գլուխ է և առաջին: - 546. Եւ զերծեալ իսահակ և *խոյն* զենեալ. զի հոգին զերծանի ի տանջանացն և մարմինն մեռանի: - 682

**ԽՈՅԱԿ +** Եւ յարտաքին սրահն **հ** սիւնք արծաթապատք. և յամէն սիւն **բ** խարիսխք և *խոյակք* յերկոքին ծայրքն: - 343. Սիւնք՝ իշխանքն. և *խոյակք*՝ քահանայքն: - 343

**ԽՈՅՍ ՏԱԼ +** Վեցերորդ՝ զի թէ հաւատացեալ էր սաւուղ ո՛չ երթայր ի պատերազմ. այլ *խոյս տայր* և փախչէր: - 429. Քանանք, որք հայհոյեն զսիրելին՝ *խոյս տայ* ի նոցանէ: - 576. Վասն ութերորդին, որք աստ ի տեսանելոյ զբարիս և ի լսելոյ *խոյս տային*. արդարապէս ահագին տեսլեամբ և լսելեօք թշւառապէս զարհուրին ընդ իւրաքանչիւրոցն: - 753

**ԽՈՅՐ +** Զի՞նչ է է *խոյրն* ի գլուխ վիշապին: - 152. Եօթն *խոյրն* զդիւական ներգործութիւնսն նշանակէ. որովք յաղթէ՛ զմարդ և պսակի: - 152. *Խոյրն*, վարշամակն. և Միթրն և թիթեղն ոսկի, պատկերք սրբոցն նկարեալ. և երկոքին Բազպանն, փոխանակ անդրավարտեաց: - 348. այն է, որ հրամայեաց աստուած ահարոնի զգենուլ զպճղնաւորն և զվակասն և *զխոյրն* և զայլն, և ելանել առ ժողովուրդն: - 636

**ԽՈՆԱՐՀ +** Արդ ստեղծուած ասի իմաստութիւնն ըստ *խոնարհ* ծննդեանն. և ծնունդ ըստ առաջնումն անհասանելոյն: - 41. Վասն այն հեզն յամէնի արհամարհեաց զփառամոլ միտս նորա *խոնարհ* պատասխանեօք: - 47. Եւ գերամբարձ, զի ի բա՛րձր կոյս տեսանեն և ամբառնան և ոչ ի *խոնարհ*: - 119. Ի խոնա՛րհ է: - 186. Երկրորդ՝ զի ամենայն ուրեք հողն ընդ ջրոյն խա՛ռն է. և յա՛յտ է ի ջրհոս. և ջուրն այն որ բարձրացեալ է ընդ հողոյն՝ իջանէ ի *խոնարհ* և բղխէ աղբիւր: - 209. Դարձեալ՝ մարդո՛յն է ընդունակ լինիլ ուսմանց և լինիլ հեզ և *խոնարհ* սրտիւ: - 275. Երկրորդ՝ զի *խոնարհ* և հնազանդ էր յամենայնի...: - 286. Եւ դարձեալ՝ նաշիհն է՛ նշանակ *խոնարհ* մարմնոյ մաքրութեան. և խունկն առաքինութեան հոգւոյ. և իւղն զուարթութեան մտաց: - 357. Եւ միւսն, որ զմարմին մեր պատարագեմք միշտ. սիրտ սուրբ և հոգի *խոնարհ* ունելով. զոր աստուած ո՛չ արհամարհէ: - 363. Այսպէս և մեք *խոնարհ* մտօք և ուրախ սրտիւք տօնեմք զտօն պահոցն: - 373. Երկրորդ՝ զի միայն մովսէս կոչեցաւ աստուած. և ո՛չ անուամբ միայն, այլ և գործով իշխէր ի վերայ տարերաց ի վեր և ի *խոնարհ*. վասն այն աւագ օրհնութիւն կոչի: - 407. Երկրորդ «ի յորդանան». որ ստեղծօղն է տարերաց՝ եդ զինքն ի ներքոյ *խոնարհ* տարեր ջրոյն: - 487. Խորութիւն հաւատոյ. որ յոյժ իմաստուն և *խոնարհ* է: - 493. Երկիւղիւն *խոնարհք*: - 583. Եւ աղքատք հոգւով են *խոնարհքն* որք երկնչին: - 583. Զի՞նչ է հեզն և զի՞նչ *խոնարհն*: - 584. Եւ վերջինս այս վասն այն ասի գործ ողորմութեան, զի կակուղ և *խոնարհ* պատասխանին խորտակէ՛ զբարկութիւն ընկերին և շահի՛ զնա: - 585. Իսկ ի վայր ի *խոնարհ*...: - 611. Այլ և դարձեալ նշանակէ՛ զաստիճանաւորս ի *խոնարհ* քան զքահանայս. - 646. ...զի պատարագ աստուծոյ սիրտ սուրբ և հոգի *խոնարհ* զոր աստուած ո՛չ արհամարհէ: - 658. Նա՛խ՝ զի *խոնարհ* և ցա՛ծ է կողմն հարաւոյ. և լուսաւորքն ա՛նդ շրջին. և աջ կողմ է աշխարհի. վասն այն ջերմ է: - 731. Զի որպէս ի կշիռն արդար՝ մէտ մի յաւելուածն հարստահարէ՛ զդիմակն և ի *խոնարհ* ձգէ, այսպէս և դատաստանն աստուծոյ. - 745. Որով զամենայն ի *խոնարհ* թողեալ ի վերոյ անցանեմք անցաւորացս: - 769

**ԽՈՆԱՐՀԱԳՈՅՆ +** Այսպէս և *խոնարհագոյնքն* են աստուծոյ բանին վասն միաւորութեանն...: - 74

**ԽՈՆԱՐՀԱԿԱՆ +** Եւ ընդ անօրէնս համարեցաւ. որ առաւել նախատանաց էր... Այսոքիկ *խոնարհականք*: - 94

**ԽՈՆԱՐՀԵՑՈՒՑԱՆԵՄ +** Այլ և նոյն կերպարանն հօր՝ *խոնարհեցոյց* զինքն ի մահ. որ կարի վերջինն էր: - 93. Որպէս նորա ի սկիզբն քաւութեան պահօք *խոնարհեցուցանէին* զանձինս: - 373. Եօթներորդ ժամն է *խոնարհեցո՛* և ապրեցոն ի խորհուրդ թաղմանն քրիստոսի: - 622. Նոյնպէս յորժամ ի գերեզման դնեն զմարմինն, իբր յաշխարհի ծովէ ելեալ զվառն *խոնարհեցուցանեն*: - 676

**ԽՈՆԱՐՀԻՄ +** Այլ զի *խոնարհեցաւ* ի բարձրութենէ փառացն և ընդ նուաստ բնութեան մերում միաւորեցաւ. ա՛յս է որ առաքեալ ասի: - 40. Զի որ *խոնարհեցաւ* բանն ի մարմին՝ նո՛յն բարձրացաւ մարմնով. և որ էջն ի ստորինս երկիր, նո՛յն է որ ելն ի վերոյ քան զամենայն երկինս. և որ ունայնացաւ՝ նո՛յն ելից զամենայն: - 94. Նախ՝ զի իմացումն *խոնարհի* ի յիմացածն որ առաջի իւր: - 120. Երկրորդ՝ հրեշտակք բարձրանան ի տեսութիւնն աստուծոյ. և մարդիկ *խոնարհին* և շեղին ի յիմացածն: - 120. Հինգերորդ՝ զի յարևելից ընդ հարաւ *խոնարհի* յարևմուտս՝ և պատէ՛ հիւսիս, և դարձեալ ելանէ յարևելս: - 126. Նոյնպէս իմանալի արեգակն քրիստոս ի հայրական ծոցոյ անհա՛ս է բնութեամբ՝ և ի սրբոյ կուսէն իբր ի յարևելից ծագեալ. և ջերմ սիրով ի մարդկային ազգս որպէս յարևմուտս *խոնարհեալ*...: - 126. Եօթներորդ՝ թոյլ տուեալ լինի և ոմանց անկանիլ ի մեղս ինչ. զի ի հպարտութենէն զոր ունէր վասն առաքինութեան՝ *խոնարհեսցի* և անկցի առաջի տեառն խոստովանութեամբ. և

ընկալցի զթողութիւն. որ նախ համասե՛ռ էր սատանայի: - 159. Երեքտասաներորդ՝ *խոնարհի* և բարձրանայ: - 186. Եւ է մոլորականքն ընդ սոսա գնալով *խոնարհին* և բարձրանան: - 189. Իսկ մոլորակքն ի գօտիս իւրեանց շարժականք են. զի բարձրանան և *խոնարհին*: - 189. Զի թէ զպատկերն աստուծոյ տեսեալ ի մեզ հպարտասցուք, զհողն տեսեալ *խոնարհեսցուք*...: - 229. Հինգերորդ՝ ի յուսումն խոնարհութեան մերոյ. զի տեսանելով զմեզ տկար քան զանասունս, մերկ և աղքատ ի մօրէ ծնեալ, *խոնարհեալ* զիջանիմք ի հնազանդութիւն արարչին. և զի մի՛ եկամուտ հպարտութեամբ կրեսցուք զանկումն արուսեկին: - 267. Ապա՛ ի թաբօր լերինն ամպ *խոնարհեալ* և ձեռն կարկառեալ ձեռնադրեաց զնա ասելով, այս մելքիսեդեկ անհայր անմայր չհամարեալ յազգս՝ նմանեալ որդւոյն աստուծոյ: - 300. Այլ նոյն ինքն *խոնարհեալ* ի մերս՝ ինքեամբ արար զփրկութիւնս մեր: - 302. Նոյնպէս ի մահ *խոնարհեալ* դաւանիմք զհաւատն, և հաղորդիմք: - 314. Երկրորդ՝ զի այնչափ *խոնարհեցաւ*, որ աթոռոյն իւրմէ անկաւ ի հեզութիւն և ի յաղբիւսն: - 323. Հինգերորդ՝ ընդ դէմ հպարտացելոյն որ խորհէր զաթոռ իւր դնել յամպս և անկաւ յերկիր. նա՛ *խոնարհեցաւ* յերկիր և ել յերկինս: - 323. Երրորդ՝ զի մի հպարտասցի յետ յաղթութեանն սատանայի, խօսեցաւ աստուած և յաղթեաց բանիւ. զի տեսցէ զտկարութիւն իւր և *խոնարհեսցի*: - 325. Երրորդ՝ *խոնարհեցաւ* յոր ի պատւոյն. և տէր մեր էջ ի յերկիր և վասն մեր աղքատացաւ: - 327. Զի սամփսոն ի ժամ գերծելոյ գլխոյն թմրեալ ի ծունկս թալիլայ *խոնարհէր*. նոյնպէս և ամենայն մեղք զոր գործէ մարդ, և առաւել գէճ ցանկութիւն, անարգէ զմարդ: - 424. Երկրորդ՝ զի ժողովուրդն ոտիւք գայր, և զձեռս տարածէր, և զգլուխսն *խոնարհեալ* երկիր պագանէին. վասն որոյ հատան այնպիսի մասունքն: - 426. Եւ ինքն առ ինքն կրկին *խոնարհելով* և բարձրանալով: - 426. Եօթներորդ՝ զի որ հպարտքն են ոչ ունին հանգիստ մտաց և մարմնոյ. քանզի որ քան մարդ *խոնարհէ*՝ այն քան հանգիստ է: - 562. Նա՛խ՝ զի արք վասն նորա ի զազիր տեղիսն *խոնարհեսցին*...: - 613. Եւ որ նա՛խ է վերջին տունն ի մեսեդի կամ կցորդ. այն է զի քրիստոսիւ դարձաք յառաջինն և ի բարձրագոյնսն. ուստի ադամաւ *խոնարհեցաք*...: - 629. ...և *խոնարհեսցուք* ընդ ձեռամբ նորա. զի դարձուսցէ ի մահու ի կեանս: - 629. ...և գլուխն *խոնարհեցաւ*...: - 670. Երկրորդ՝ երկինք զհրեշտակս ասէ որ ի վայր գլորեալ *խոնարհին* ամենայն դասք. աթոռք կազմեալ, և սպասաւորք շրջապատեալ: - 729. Հինգերորդ՝ հոգիք մարդկան ի յերկնից *խոնարհին* և միաւորին ի մարմինս իւրեանց: - 729. Նա՛խ՝ զի մագաղաթն ի հուր մերձեալ գալարի. նոյնպէս և երկնայինքն յայնժամ *խոնարհին* յորժամ երկին և երկիր վառեսցին հրով: - 729. Առասանքն երեքկղի՝ յերրորդութեանն դիմաց արդարութեան և ողորմութեան զօրութիւնք առ մեզ *խոնարհեալ*. ունելով զյիշատակ բարեացն և չարեացն մերոց: - 745

**ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ +** Վասն որոյ ասէ՝ ընդ դէմ ասացելոցս *խոնարհութեանց*՝ Աստուած զնա առաւել բարձրացոյց: - 94. Իսկ առաւել բարձրութիւնն. զի որպէս անհամեմա՛տ է *խոնարհութիւն*՝ աստուծոյ մարդանալ և չարչարիլ. և անզուգական բարձրութիւն է մարդոյս բնութեան ընդ աջմէ աստուծոյ նստիլ և հաւասարիլ: - 94. Եւ ասես՝ վասն չարչարանացն *խոնարհութեան*՝ առաւել զնա բարձրացոյց աստուած: - 94. Իսկ բացբարձականքն՝ ո՛չ զէութիւն կամ զփառս աստուծոյ բառնայ, այլ զոր յետ էութեանն աստուծոյ է և ի նմանէ ստեղծեալ՝ և *զխոնարհութիւնսն* բառնայ: - 124. Չորրորդ՝ հողն *զխոնարհութիւն* նշանակէ ...: - 229. **Հինգերորդ՝ ի յուսումն *խոնարհութեան* մերոյ. զի տեսանելով զմեզ տկար քան զանասունս, մերկ և աղքատ ի մօրէ ծնեալ, խոնարհեալ զիջանիմք ի հնազանդութիւն արարչին. և զի մի՛ եկամուտ հպարտութեամբ կրեսցուք զանկումն արուսեկին:** - 267. Իսկ ի հոգւոյ մարդոյն **բ** իր հեռացուցանեն զդևսն. այսինքն *խոնարհութեամբ* և ճշմարտութեամբ. վասն զի զերկուքս զայս ո՛չ ունի սատանայ. և ամենևին փախչի և ատէ՛ *զխոնարհութիւն* և զճշմարտութիւն: - 324. Նախ՝ ուղղութիւն ընկերաց. **բ** գոհութիւն և համբերութիւն. **գ**՝ իմանալ զչար խորհուրդն սատանայի. **դ**՝ աղօթք և պահք. **ե**՝ *խոնարհութիւն* և ճշմարտութիւն. որ գերագոյն է ամենայն զինուց և իսպառ կորուսանէ զչար որ մայրն է ստութեան և հպարտութեան: - 324. Երրորդ՝ զի ուսցի *զխոնարհութիւն*: - 325. Դարձեալ՝ մորենին անարգ թուփ՝ նշանակէր *զխոնարհութիւնն* մովսէսի յոր հանգեաւ աստուած...: - 331. Երրորդ, զի կործնչելոց էին անդրանիկ ծնունդքն սատանայի. որ էր հպարտութիւնն և կռապաշտութիւն. զի *խոնարհութեամբ* էր գալուստն քրիստոսի և ի մի աստուածպաշտութիւն հրաւիրեաց և կորոյս զպաշտօնն դիւական: - 334. Դարձեալ՝ մոխիր և ջուրն՝ նշանակէր զարտասուս և *զխոնարհութիւն* ապաշխարութեան որով սրբիմք: - 383. Նոյնպէս և տկարութեամբ նորին՝ կորստական *խոնարհութիւն* ցուցանի մարմնոյ իւրոյ աշխարհի: - 424. «Աղախին

տեառն» բացատրէ՛ զկատարեալ *խոնարհութիւնն*: - 465. Երկրորդն զխորագոյն *խոնարհութիւնն*: - 465. Երրորդ՝ թլփատեաց ինքն զինքն յամենայն կեանս իւր՝ *խոնարհութեան* սրովն: - 486. Տասներորդ՝ զի ցուցցէ *զխոնարհութիւն* իւր: - 486. Ա՛րդ՝ *խոնարհութիւնն* քրիստոսի ցուցանի չորիւք...: - 486. Հինգերորդ՝ նշանակէ՛ զչորս առաքինութիւնս ի յորս պարտի տարածիլ ներքին մարդս մեր. այսինքն վերին մասն նշանակէ զսէրն. ներքինն *զխոնարհութիւնն*. աջն զհնազանդութիւնն. ահեակն զհամբերութիւնն: - 493. Երեքտասաներորդ, զի մարիամ ո՛չ *խոնարհութեամբ* կամէր մերձենալ յոտս նորա որպէս այլ կանայքն. այլ յերե՛սն դիմեաց նա հպարտութեամբ առ ի համբուրել զնա. իսկ տէրն կամեցաւ ուսուցանել նմա *զխոնարհութիւն* արգել զնա: - 518. Ապա նշան ընտրելոցն է *խոնարհութիւնն*. և անարգանացն է ամբարտաւանութիւնն: - 569. Հեզութիւնն է ընդ դէմ ցասման. և *խոնարհութիւնն* ընդ դէմ հպարտութեան: - 584. Ուստի և փրկչին ակնունիմք նորոգել զմարմին *խոնարհութեան* մերոյ ըստ մարմնոյ փառաց իւրոց: - 716

**ԽՈՆԱՐՀՈՒՄՆ +** Զամբարտաւանութիւնն՝ *խոնարհումն* գլխոյն: - 489. Առաջինն է *խոնարհումն* գլխոյն. ի համբոյր և ի նշան հաշտութեան մերոյ: - 489. ...և մեզ աւետիս տայ *խոնարհմամբ* գլխոյն: - 644

**ԽՈՆԱՒ +** Հինգերորդ Լուսաբերն. որ է՛ արուսեակն. զոր կոչեն զօհրա. ջե՛րմ է և *խոնաւ*. **յխը** օրն կատարէ՛, զընթացսն. և այլք ասեն թէ ի **զ** ամիսն: - 189. Իսկ այլք ասեն, թէ ի պարզոյ լինի, նշա՛ն է *խոնաւի*. և թէ ի *խոնաւ*՝ նշա՛ն է պարզի: - 203. Երկու գոլորշիք վերանան յերկրէ. մինն չոր և ծխատեսակ. և միւսն *խոնաւ* ի գէճ բնութեանց վերացեալ: - 204. Եւ է՛ բնութիւն ոսկերաց ցուրտ և չոր. զի *խոնաւն* և լոյծն ի ցամաք և ի ցուրտ մածնու և լինի ոսկր. որպէս ջերմն և *խոնաւն* լինի միս: - 244. Եւ ցուրտ և լոյծն խառնեալ՝ լինի ջիլ. որպէս ցուրտ և *խոնաւն* փողք: - 244. Հիւանդութիւն է անչափակցութիւն տարերց մարմնոյ. որ առաւելու և նուազէ՛. ջերմ և ցուրտ, *խոնաւ* և ցամաք: - 665

**ԽՈՆԱՒՈՒԹԻՒՆ +** Իսկ Անձրևն է ջուր իջեալ ի թօթափման է ամպոց. թանձրացելոց ի *խոնաւութեանց:* - 205. Երկրորդ՝ զի ամպն այն ո՛չ ունի *խոնաւութիւն* ինչ: - 206. Դարձեալ՝ զի տնկականն վերափչո՛ւմն է օդոյն հանդերձ *խոնաւութեամբն* երկրի. վասն որոյ բոլորաձև արտաքս գայ և լինի ծառ: - 213. Զի զգայ զջերմութիւն հրոյն. և զցրտութիւն՝ որ է ջրոյն. և *զխոնաւութիւն* որ է օդոյն. և չորութիւն հողոյն: - 215. Նա՛խ՝ զի որդի է յեսսեայ. որ է՛ պտուղ կղզւոյ. և տէրն մեր եղև պտուղ մարիամու ցամաքեալ ի *խոնաւութեանց* կենցաղոյս: - 435

**ԽՈՇՈՐ +** Դարձեալ՝ ա՛յն է խառնակիլն, որ ի միոյ *խոշոր* լեզուէ քաղդէացոցն խառնակեցան և եղեն զանազանք: - 297

**ԽՈՇՈՐՈՒԹԻՒՆ +** Չորրորդ՝ վասն արմատոյն *խոշորութեան*. և *խոշորութիւնն* է **բ** կերպիւ...: - 765-766

**ԽՈՉԸՆԴԱԿՆ +** Չորրորդ՝ զի լիցին նոքա պատճառ գայթակղութեան նոցա, և *խոչ ընդ ակն:* - 416

**ԽՈՌՈՉ +** Եւ կամ հո՛դմ է արտաքս թիւրեալ ի ճանապարհէ՛ իւրմէ. և ի *խոռոչս* երկրի մտեալ. և վասն թանձրութեան երկրին շարժէ զնա մինչև գտանէ ելս և ապա՛ դադարի: - 206

**ԽՈՍՏԱՆԱՄ +** ...բազում անգամ անարժանիցն բարիս *խոստանան*, և արժանեացն չարիս: - 12. Եւ դարձեալ վկայէ՛ առաքեալն թէ՝ «որ աբրահամիւ *խոստացաւ* յետ պատարագելոյ որդւոյն իսահակայ, յանձն իմ երդնում ասէ՛» զոր ինչ *խոստացաւ* նմա: - 40. Հինգերորդ՝ աստուած *խոստացաւ* աբրահամու թէ՝ «ի զաւակէ՛ քումմէ օրհնեսցին ամենայն ազգ երկրի»: - 72. Եւ մեք զնոյն դաւանութիւնն պինդ կալցուք անշարժ յուսով ի կեանս և ի մահ և յետ մահու. և նորին *խոստացեալ* բարեացն արժանի լիցուք ի քրիստոս յիսուս ի տէր մեր: - 101. Նաև յեզիպտոս **դճ** ամ *խոստացաւ* ծառայութեան. և զերեսուն ամն յաւել վասն մեղաց ժողովրդեանն: - 292. Եւ երբեմն կարճէ՛ ի կենաց որպէս առ նոյիւ. զի **ճի** ամ *խոստացաւ* նոցա, և զի ամն կարճեաց վասն չարեաց նոցա: - 292. Եւ **իե**րորդ՝ որպէս *խոստացաւ* թէ՝ «զաւակք քո զքաղաքս հակառակորդաց քոց ժառանգեսցեն». որպէս և եղև նոցա մարմնաւորապէս ժառանգել զերկիր ամոնացւոց, մովաբացւոց, և քանանացւոց: - 306. Երկրորդ՝ զի զտասաներորդն աստուծոյ *խոստացեալ*՝ եսաւայ ետ: - 311. Եւ ճշմարիտ ի *խոստացեալ* պարգևն սիրելեաց իւրոց: - 351. Զի յորմէ հետէ *խոստացաւ* աստուած զերկիրն՝ աբրահամու, յետ **դճ** ամի ժառանգեցին զնա՛: - 351. Իններորդ՝ անդ *խոստացաւ*. և աստ յայտնեաց աստուած զսէրն իւր ի մեզ: - 353. Եւ հոգւովն վարձկականն վասն *խոստացեալ* բարեացն: - 396. Էառ և զերկիրն պարգևաց. զոր *խոստացաւ* աստուած աբրահամու իսահակայ և յակոբայ: - 414. Եւ տէր մեր զզարդ և զպսակ անկելոցն *խոստացաւ* մեզ և ետ: - 422. Երկրորդ՝ զի այն քան երկեա՛ւ ի մահու վիուկն այն, որ այլոց կեանս *խոստանայր*: - 428. Որ և ո՛չ յաղթութիւն, այլ մահ *խոստացաւ* նմա: - 429. Եօթներորդ՝ *խոստացաւ*

յաւիտենից թագաւորել: - 441. Վեցերորդ՝ զի նա՛ զպարգևս երկրային *խոստանայր* առնողացն զպատուէրս. և քրիստոս զերկնայինն: - 442. Վասն է՞ր հարաւ ովսիայ յորժամ *խոստացաւ* խաղաղութեամբ ննջել: - 446. Երկրորդ՝ յորժամ *խոստացեալն* հատուցանի: - 458. Երկրորդիւն մարդեղութիւնն քրիստոսի. զի *խոստացեալ* եղև այն մարգարէիւք և նահապետօք: - 458-459. Իններորդ՝ վասն հաստատ ժառանգութեան *խոստացելոյն*. զի մի՛ ասիցէ ոք ցհայր, տէր դու ունիս որդի և ժառանգ: - 468. Ո՞ր է դրախտն զոր *խոստացաւ* աւազակին: - 495. Յայս միտս տէրն յորժամ *խոստացաւ* տալ զիշխանութիւնս պետրոսի՝ ասէ «մարմին և արիւն ո՛չ յայտնեաց քեզ. այլ հայրն իմ որ յերկինս է»: - 539. Ո՛չ թէ յայնժամ ետ, այլ յայնժամ *խոստացաւ* և յետո՛յ ետ. որպէս *խոստացաւ* նստուցանել յերկոտասան աթոռ և յետոյ ետ. նոյնպէս և զայն: - 547. Յուսովն ակն ունիմք ինքեան ողորմութեանն որ *խոստացեալ* է. զի գթած և ճշմարիտ է: - 571. Նա՛խ՝ զի նո՛յն վարձն *խոստացեալ* լինի և նմա. այսինքն արքայութիւնն երկնից: - 586. ...վասն անցեալ մեղացն ցաւի. և *խոստանայ* այլ ո՛չ մեղանչել զանցեալ մեղքն: - 602. Ա՛րդ՝ զայս կեանս շնորհեաց և զայն *խոստացաւ*: - 663. Նոքա որ թողին զամենայն և գնացին զհետ քրիստոսի, որոց *խոստացաւ* զհարիւրապատիկն աստ՝ և զկեանսն յաւիտենից: - 688. զի հաւատարիմ է *խոստացօղն* և ճշմարիտ: - 695. Այլ արկանելիք սպիտակ՝ զճաղկեալ նոցա առաքինութեանն երևեցուցանէ զպայծառութիւն յետ ի թանձրութենէ մարմնոյ փոխելոյն. զոր զգեցեալ են նախ քան *զխոստացեալ* զփառսն. - 696. Եւ ասէ հրէիցն թէ ե՛ս եմ քրիստոս *խոստացեալն* ձեզ...: - 707. Դարձեալ, ձորն յովսափաթու կոչի ձոր դատաստանի. այսինքն է կալն ուռնայի, ուր դաւթի *խոստացաւ* անդ առնել դատաստան. յորժամ սեղան շինեաց և պատարագեաց զեզինսն և բարձաւ մահն: - 737. Ասեմք առ այս, եթէ առաջին կեանքն դրախտին ո՛չ զայն իմանան վարդապետք զոր ունէրն ադամ. այլ զոր *խոստացաւն* ադամայ եթէ պահեալ էր զպատուիրանն. որ նոյն ինքն է արքայութիւնն երկնից ի տեղի անկելոց հրեշտակացն: - 758. Եւ պատուեալ երկակի զարդու. և պարգևեալ և *խոստացեալ* պատուիրանօք: - 776. Իսկ յանցանել նորա՝ կորոյս զամենայն. ո՛չ միայն *զխոստացեալն*, այլ և զպարգևեալն. զի ըստ որում յանմեղութենէն մեղանչական գտաւ, այսպէս մահու և ապականութեան գրաւեցաւ: - 776. Նա՛խ *խոստացաւ* հրեշտակօք. աւետեաց մարգարէիւք. դաստիարակեաց օրինօք. և յետոյ երևեցաւ ի լրումն նոցին: - 776. Զի առաջին ձեռամբն աստուծոյ նա՛ արարաւ, և նա՛ միայն յանցեաւ. և նմա՛ *խոստացաւ* փրկութիւն: - 778

**ԽՈՍՏՈՎԱՆ ԼԻՆԻՄ +** Իսկ յորժամ ամէն լեզու *խոստովան լիցի* տէր զյիսուս քրիստոս, անզրաւապէս թագաւորէ՛ ընդ հօր և տնտեսութեամբն: - 42. Եւ ո՞րպէս երկիր պագանեն նմա երկնաւորք և երկրաւորք և սանդարամետականք. և ամենայն լեզու *խոստովան լիցի* թէ տէր է յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր: - 99. Եւ խաչօղքն անսուրբք էին մինչ յերեկոյանալ օրինացն հնոյն և ծագել նորոյն. մինչև սրբեցան աւազանաւն և *խոստովան եղեն* զքրիստոս: - 383. Տասներորդ՝ յետ որոյ հնազանդեցան նմա՛ ամենայն իէլ. և տեառն մերոյ զկնի խաչին հաստատեցան ի հաւատս. մանաւանդ յետ է դար կենցաղոյս ամենայն լեզու *խոստովան լիցի* զտէր յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր ամէն: - 427. Այսպէս վեցերորդն ապաւինելով ի տէր *խոստովան եղիցուք* նմա..: - 629. Իսկ և եօթներորդն *խոստովան լինիլ* բարութեան և արդարութեան տեառն. և մերձիլ խնդրուածովք. և օրհնել զաստուած նոր օրհնութեամբ յետ աստեացս: - 630. Վասն եօթներորդին, որք զմեղս *խոստովան լինիլ* ո՛չ կամեցան զորս առնել ո՛չ էր պարտ. վասն այնորիկ անդանօր ամենեցուն մերկացեալ և բացեալ յաւիտեան յամօթ լինին: - 752-753

**ԽՈՍՏՈՎԱՆԱԴՐԱՄ +** Այլ թէ ասեն՝ հաղորդադրամ, կամ *խոստովանադրամ*, խո՛րթ է. յագահութեանց երիցանց սահմանեալ և ո՛չ ըստ կանոնաց որպէս այլքն: - 684

**ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՅՐ +** Երկրորդ՝ զկանոնս ապաշխարութեան նշանակէ զոր *խոստովանահայրն* կարգէ. զի թէ յանցանէ ոք՝ մեղանչէ՛: - 439. Իսկ քահանայք ժողովրդեանն՝ նա կանոնս դնէ՝ որ *խոստովանահա՛յր* է և գիտէ զկարն և զորքանն մեղաց: - 541-542. Եւ գիտելի է, զի մարդ որ ի մեղք անկանի և իմանայ զինքն որ մեղք գործեաց, և ունի *զխոստովանահայրն* պատրաստ ուղղափառ և գիտուն, ի յա՛յն պահն պարտի խոստովանիլ: - 601. Երկուքն ի կողմանէ *խոստովանահօրն*, և երկուքն ի խոստովանողին: - 603. Նա՛խ՝ թէ *խոստովանահայրն* չունի իշխանութիւն արձակելոյ. կամ ընդ բանիւ արգելեալ է: - 603

**ԽՈՍՏՈՎԱՆԵԼԻ** - Չորրորդ՝ ի զղջմանէ. զի ամենայն որ մեղք է՝ զղջալի է և *խոստովանելի*...: - 556. Իսկ արդ եթէ յանցանք մտացն *խոստովանելի*, ապա ուրեմն մեղք է: - 556

**ԽՈՍՏՈՎԱՆԵՄ, ԽՈՍՏՈՎԱՆԻՄ +** Նախ՝ եթէ դու քեզէ՛ն *խոստովանեցար* եթէ ոչ գոյ հարկ. այլ՝ աստուած և բնութիւնն և արհեստն ևս ներգործեն. ապա թէ է գործ արհեստի և բնութեան, ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. Երրորդ՝ հրէայքն ո՛չ *խոստովանին* երեք անձինք և մի բնութիւն: - 34. Առաջին՝ զի թէ աստուած էր անծնելութիւնն, պա՛րտ էր ունել և անծնելութեանն ստեղծուած ինչ. և զի ոչ ունի, և ո՛չ ոք ասէ ի հեթանոսացն այսպիսի բան. այլ ամենքն *խոստովանին* թէ աստուած է աստուած. և ո՛չ անծնելութիւն աստուած: - 38. Եւ այլք աստուած *խոստովանին*. որպէս և մերս դաւանութիւն՝ ընդ հօր և ընդ որդւոյ: - 51. Պատասխանեմք՝ Նախ՝ առ մակեդոնացիս որք զորդի *խոստովանին* աստուած՝ թէ ասացէ՛ք զպատճառ **բ** աստուածոց ձեր: - 54. Եւ մեք համաձայնեալ սուրբ և ուղղափառ վարդապետութեանցս, այսպէս դաւանիմք և *խոստովանիմք* զՅոգին սուրբ աստուած բղխումն ի հօրէ աստուծոյ...: - 65. Երրորդ՝ զի ո՛չ մի որդի և տէր յիսուս քրիստոս *խոստովանին* որպէս ասեն առաքեալքն և հարքն սուրբք: - 66. Այլ ի հարկէ **բ** գոլ *խոստովանին*. զոմն բնութեամբ՝ և զոմն շնորհիւ: - 66. Ո՛վ երկաբնակք, զքրիստոս աստուած մարդացեա՞լ *խոստովանիք*, թէ մարդ աստուածացեալ: - 68. Եւ թէ միայն բանին որ ի յերկնից իջեալ, ահա՛ որ երկու կամք ընդ դէմ միմեանց *խոստովանիս*. ծնողին և բանին: - 70. Այլ *խոստովանիմք* զբանն աստուած՝ ոչ մասամբ, այլ լրութեամբ իւր մարմնացեալ և մարդացեալ...: - 76. Իսկ թէ ո՛չ, այլ պարզաբար աստուածածին *խոստովանիս* ընդ մեզ, ապա՛ և զծնեալն ի նմանէ *խոստովանեա՛* աստուած մարմնացեալ և մարդացեալ: - 79. Իսկ եկեղեցի սուրբ՝ ընդ դէմ արիոսի մի բնութիւն *խոստովանի*. և ընդ դէմ սաբէլի **գ** անձինք: - 81. Ընդ դէմ նեստորի անբաժանելի *խոստովանին*. և ընդ դէմ եւտիքի անշփոթ միաւորութիւն: - 81. Եւ այսպէս փախչելով ի թիւր ծայրիցն, զմիջինն պահելով ընթացք բարեպաշտութեան, անշքոփ և անբաժան միութիւն, *խոստովանիմք* զքրիստոս՝ աստուած մարդացեալ. մի անձն և մի բնութիւն. և մի կամք և գործք ըստ ուղղութեանն բանի: - 81. Այլ նոքա ո՛չ *խոստովանին* զաստուած մարդացեալ. այլ՝ կամ ի նախագոյացեալ անձն բնակեալ ասեն զաստուածայինն բնութիւն, և կամ շնորհօք որդիացեալ որպէս նեստորի թըւի: - 81. Այլ և մի բնութիւն ասեն՝ որք ի յերկնից բերեալ զմարմինն *խոստովանին*: - 82. Այլ և մի բնութիւն ասեն՝ որք միայն սոսկ մարդ *խոստովանին* զքրիստոս, և ո՛չ աստուած մարդացեալ: - 82. Իսկ որք յետ միաւորութեանն՝ **բ** բնութիւնս *խոստովանին*, և սոքա են **բ** դասք: - 82. Եւ սոքա էութեամբ և բնութեամբ ո՛չ *խոստովանին* զմիութիւնն. այլ՝ անձամբ միայն: - 82. Ապա ուրեմն յորդիութիւնն և յանունն *խոստովանին* միութիւն ի պատրանս պարզամտաց. և զճշմարիտ միութիւնն ուրանան և փախչին: - 82. Եւ սոքա կամ շփոթեալ *խոստովանին*. որպէս եւտիքէս և այլքն: - 82. Եւ զայս միաւորութիւնս *խոստովանիմք* մեք մի անձն. և մի դէմ. և մի կերպ. և մի բնութիւն. և մի կամք, և մի ներգործութիւն: - 83. *Խոստովանիմք* զորդին աստուծոյ նախ քան զյաւիտեանս ծնեալ ի հօրէ՛. և յետոյ ի ժամանակի ծնեալ ի մօրէ՛: - 83. Այլ և մեծն դիոնէսիոս ի բազում տեղիս միաւորեալ և մի բնութիւն *խոստովանի* բանին աստուծոյ մարդացելոյ: - 83. Ա՛րդ՝ դուք որ **բ** բնութիւնս ասէք քրիստոսի, զբաժանական տարբերութիւնս ասէք. և մեք մի *խոստովանիմք* զբաղկացականս միաւորութիւն: - 85. Ա՛րդ՝ յատուկ անուամբ զմիութիւն *խոստովանին*. և ո՛չ իսկական բնութեամբ: - 87. Իսկ տէր մեր անուամբ և բնութեամբ է աստուած որպէս *խոստովանիմք* դասք ուղղափառաց: - 88. Ապա ուրեմն երևեցաւ՝ զի թէ մասունքն քրիստոսի ասին և աստուծոյ ո՛չ ասին, յա՛յտ է թէ զքրիստոս ո՛չ *խոստովանին* աստուած: - 91. Իսկ թէ միայն անուն առանց էութեան. ապա անուամբ *խոստովանիս* աստուած զքրիստոս և ո՛չ գոյացութեամբ. և հաւասարե՛ս զնա մովսէսի. որ անուամբ աստուած կոչեցաւ և ո՛չ էութեամբ: - 95. Ապա ուրեմն մարդկութիւնն սուտ *խոստովանի* «ամենայն ինչ տըւաւ ինձ». զի ո՛չ ետ զգիտութիւնն: - 96. Ա՛րդ՝ եթէ մի անձն *խոստովանիս* քրիստոսի, և բնութիւն մարդոյն միացեալ ի յանձն բանին, զոր ինչ բանին է բնութեամբ, ամենայնն եղիցի և մարմնոյն իւրոյ միաւորութեամբ: - 98. *Խոստովանեալ* յերկնաւորաց և յերկրաւորաց. և հաստատեալ սուրբ գրոց վկայութեամբ որպէս ցուցաւ: - 101. Այսպէս պարտէ սրտիւ հաւատալ. և բերանով *խոստովանիլ*...: - 101. Զի ամենայն ճշմարիտ դաւանօղքն զքրիստոս աստուած *խոստովանեցան*. և ի նոյնն նահատակեցան. և առ ճշմարտութիւնն քրիստոս յերկրէ յերկինս վերափոխեցան: - 101. Զոր ի տեսիլն անտօնի *խոստովանէին* զբանս զայս մեկնելով ի վերայ ինքեանց. այս վասն առաջնոյն: - 153. Վասն որոյ *խոստովանիմք* ընդ սրբոց հարցն վասն միաւորութեանն մի բնութիւն աստուծոյ բանին մարդացելոյ: - 176. Զի ուղղաձնութեան ուսուցիչք ի բաժանմանէ ի միութիւն եկեալ *խոստովանին* զքրիստոս. և սոքա ի միութենէ ի բաժանումն որոշեն: - 176. Նա՛խ՝ զի *խոստովանեալ* է յամենեցունց որ ո՛չ է հաստելի. այսինքն ո՛չ ստեղծեալ: - 274. Իսկ հոգւոյն առանձին, Նա՛խ՝ զի ամենայն ոք *խոստովանի* եղեալ զնա: -

274. Զգողացեալն *խոստովանիլ*. և խոյ մի նուիրել: - 285. և մեք անդամք ի նա՛ յարեցաք և եղաք անդրանիկք հրեշտակաց որ էաք կրսեր նոցա. զի ամենայն երկնաւորքն ծունր կրկնեն քրիստոսի և *խոստովանին* զնա՛ տէր: - 309. Չորրորդ յա՛յտ է, զի ինքեանք *խոստովանեցան* թէ մատն աստուծոյ է այս. և ո՛չ կարացին այնպէս առնել: - 335. Նոքա ո՛չ հաւասար մովսէսի ներեն զքրիստոս աստուած. զի մովսէս աստուած կոչեցաւ. և զնա մարդ *խոստովանին* սոսկ: - 350. Այսինքն յորժամ *խոստովանին* և փոխին յապաշխարութեան վարս, պատառեն զմեղս և սրբին ի գործեցեալ մեղացն: - 367. Եւ ի դարձեալ երևիլն դարձեալ լուանալ, այն է՝ որ դարձեալ *խոստովանիմք* և կրկնեմք զերկն ապաշխարութեան մինչև նկարեսցի ի մեզ քրիստոս: - 367. Ապա թէ բորոտիմք ծածուկ մեղօք ի մարմնի՝ կապեալ բերանով առանց *խոստովանելոյ*, արտաքսիմք յեկեղեցւոյ՝ ի հանգստենէ՝ և ի փառաց արդարոց: - 368. Եւ ո՛չ սրբին մինչև զղջասցին և *խոստովանեսցին* զմեղսն: - 370. Դարձեալ՝ զղջմամբ սատակի չար խորհուրդն. և ապա՛ *խոստովանիմք* լեզուաւ. և զնոսա փոխեալ գործե՛մք զբարիս: - 380. Վասն որոյ և պա՛րտ է և նմա՛ *խոստովանիլ* որպէս է՛ ի կանոնս հարցն: - 384. Վասն է՞ր յորժամ զգողացեալն *խոստովանի* ասէ՝ և խոյ մի աստուծոյ նուիրէ՛: - 384. Զի գողացեալ մեղքն միայն *խոստովանելով* ոչ քաւի. այլ հատուցանել պարտ է զգողօնքն. կամ ի տէրն, կամ յազգականս նորա. կամ ի քահանայն. զի միջնո՛րդ է մեռելոց և կենդանեաց: - 384. Նոյնպէս այժմ ի նորս պարտ է *խոստովանիլ* վասն կանոնաց եկեղեցւոյ. և զգողօնսն վճարել կամ ի տէրն, կամ ի քահանայս, կամ յաղքատս: - 384. Երկրորդ՝ որ անզեղջ մնայ և ո՛չ *խոստովանի*, անթողելի՛ է: - 385. Վեցերորդ՝ շնորհընկալք. որպէս *խոստովան* որդիք. և ժողովուրդք. և քահանայք հայրապետաց: - 389. Եւ այն որ քննէին ծերքն՝ *խոստովանիլն* է. և ապա՛ դնէին ի քաղաքն, ապաշխարութիւնն է: - 392. Իսկ յետ մահու ա՛յնոցիկ հոգւոց որք զղջան կամ *խոստովանին* զմեղս...: - 392. Այլ մեք այսպէս *խոստովանիմք* զքրիստոս. որդի աստուծոյ բնութեամբ. և զնոյն որդի մարդոյ բնութեամբ: - 402. Եւ զի *խոստովանեալ* մեղքն կորնչի: - 412. Նաև զընտանիսի աքարայ պատժեաց. զի և նոքա ո՛չ *խոստովանեցան* զգողօնքն: - 415. Զի գա՛յ զղջումն և խոստովանութիւն՝ որ զմեղքն բառնայ և զպատիժն ընդ նմին. որպէս հատեալ տունկ՝ չորանան ճիւղքն. որ բոլորով սրտիւ զղջայ և *խոստովանի* և այլ ո՛չ գործէ: - 432. Եւ է՛ որ զմեղքն թողու՝ և զպատիժն կրէ. որք յայլմէ բռնաբա՛ր *խոստովանին* և պատահմամբ, և դարձեալ սխալին. այսպիսեաց մեղքն միայն թողլի: - 432. Եւ է՛ որ *խոստովանի*. և ոչ մեղքն միայն թողուի. որք թերի են սրտիւ. և զմեղս թերի *խոստովանին*. և ի միտս եդեալ են դարձեալ գործել. այսպիսեաց ոչ մեղքն թողուի և ոչ պատիժն. զի որպէս զշուն դառնայ ի փսխած իւր: - 432. Սակայն բարի՛ է քան զայն որ ամենևին ո՛չ *խոստովանի*: - 432. Եւ այս գիտելի է, զի ամենայն *խոստովանելոց* թէ կատարեալ թէ անկատար, պա՛րտ է կարգել զապաշխարութիւն. այսինքն զհատուցումն փոխարինաց: - 432. Որպէս դաւթին յետ զղջմանն յիշատակութիւն մեղացն մնաց, ապա նո՛յնպէս և ամենայն մարդոյ մնասցէ՞ թէպէտ և *խոստովանի*: - 432. Եւ յայս ասեն հերձուածօղ ազգն Ֆռանգաց, թէպէտ *խոստովանի՛ն* աստ, յիշատակի՛ մեղքն ի դատաստանին: - 433. Եւ թէ ասիցեն՝ *զխոստովանեալ* մեղս այլ ո՞չ յիշեմք: - 433. Բազում պատճառաւ եկեղեցի սուրբ *խոստովանի* աստուածածին զկոյսն: - 466. Այլ արդ՝ սուրբ գիրք վկայեն, և ճշմարիտ հաւատն բռնադատէ՛ աստուած *խոստովանիլ* զծնեալն ի կուսէն. ապա ուրեմն և ծնօղն է՛ աստուածածին: - 466. Այլ մեք այսպէս *խոստովանիմք*. եթէ օծաւ բանն աստուած ի հոգւոյն սրբոյ յորժամ յղացաւ մերովս կերպիւ յորովայնի...: - 475. Զի այսպէս միատեսակ բնութեամբ *խոստովանի* ընդ մեզ...: - 477. Այսպէս թէ ուրեք մարդ միայն անուանի քրիստոս «զճշմարութիւն խօսեալ». և կամ՝ «աստուած կնքեալ». ո՛չ ինչ ուրէք վնասէ զմիաւորութիւնն իբր մարդ սոսկ կամ աստուած միայն. այլ աստուած համանգամայն և մարդ *խոստովանի* միացեալ: - 477. Որ և զչարչարանքն և զմահն՝ աստուծոյ մարդացելոյ *խոստովանիմք* որով փրկեցաքն: - 478. Առաջինն որ ասէ «ել վաղվաղակի ի ջրոյն». զի ամենայն ոք որ մկրտէր ի յովհաննէ ի ջուրն՝ *խոստովանէր* զմեղս իւր և ապա՛ ելանէր...: - 487. Վեցերորդ՝ զմարիամ մայր փրկչին կոյս և անապական *խոստովանին* հարք ուղղափառութեան...: - 499. Տասներորդ՝ ամենայն սուրբ վարդապետք ուղղափառաց որպէս եփրեմ՝ ոսկէբերանն՝ կիւրեղ՝ աթանաս՝ և այլք, անապական գրեն և *խոստովանին* զմարմինն սուրբ: - 499. Այլ ա՛րդ՝ յառաջ քան զխաչն ո՛չ ապականացու, և ո՛չ ի խաչին, և ո՛չ ի գերեզմանի որպէս մեք *խոստովանիմք*: - 500. Եւ զի սուտ է ապականացու ասելն, ճշմարի՛տ եղիցի անապական *խոստովանիլն*: - 500. Դեռևս ապա զմարմին կենարարին ապականացու *խոստովանիս*: - 503. Ասեմք եթէ՝ *խոստովանիլն* կրկին է. մին ներքին իմացմամբ. և միւսն մարմնով արտածայնութեամբ: - 508. Եւ թէ ոք ասիցէ, ապա ուրեմն ամենայն հոգիք

յետ մահու կարեն *խոստովանիլ*: - 508. Նա՛խ՝ զի *խոստովանիմք* զքրիստոս աստուած և զտօն նորա ըստ տէրունականացն կատարեմք: - 509. Եւ որ ոք ո՛չ *խոստովանի* զքրիստոս աստուած, զտօն նորա ըստ հասարակ մարտիրոսացն առնէ ի մէջ գիշերոյն ի վեր: - 509. Յինգերորդ՝ զի *խոստովանի* ամենայն լեզու թէ տէր է յիսուս քրիստոս ի փառս հօր աստուծոյ բազմեալ: - 529. Երկրորդ՝ գիտէ որ ո՛չ գիտէ. և *խոստովանի* թէ ո՛չ գիտեմ: - 537. Եւ վէմ դաւանութիւնն էր որ *խոստովանեցաւ* զքրիստոս որդի աստուծոյ կենդանւոյ. և ի վերայ այնմ դաւանութեան շինեցաւ եկեղեցի քրիստոնէից: - 547. Ես *խոստովանիմ* զքրիստոս ճշմարիտ աստուած և բնութեամբ որդի աստուծոյ. և դու բաժանմամբ մա՛րդ դաւանիս և շնորհօ՛ք որդի աստուծոյ: - 548. Տասներորդ՝ կանանց մկրտութիւն առնել. և աշխարհականաց *խոստովանիլ*. այլ և կրկին մկրտել: - 553. Այլ արդ՝ զղջանալ և *խոստովանիլ* պարտ է զիպարտութիւն՝ զնախանձ՝ զատելութիւն՝ և զայլն, և ապա՛ թողութիւն գտանել: - 556. Իններորդ՝ որ ո՛չ *խոստովանի* կամ թերի և անկատար լինի: - 566. Եւ այնք որ ո՛չ *խոստովանին* զմիասնական սուրբ Երրորդութիւնն, մկրտելի է զմկրտեալն ի նոցանէ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն: - 590. Իսկ մեք դասք ուղղափառաց *խոստովանիմք* զկուսածին մարմինն քրիստոսի առանց ապականութեան. - 597. Եւ զինչ և իցէ՝ միաւորեմք ընդ միմեանս և *խոստովանիմք* զբանն աստուած մարմնացեալ անբաժանելի ի մարմնոյ իւրմէ: - 598. Եւ զամենայն մեղք ըստ կարգի վերոյ գրելոց *խոստովանեսցի*: - 601. Դարձեալ թէ՝ ի՞նչ մարդոյ *խոստովանեցաւ*. թէ քահանա՞յ էր. հերձուածօ՞ղ էր թէ ուղղափառ: - 601. Եւ գիտելի է, զի մարդ որ ի մեղք անկանի և իմանայ զինքն որ մեղք գործեաց, և ունի զխոստովանահայրն պատրաստ ուղղափառ և գիտուն, ի յա՛յն պահն պարտի *խոստովանիլ*: - 601. Իսկ յորժամ մեղաւորն *խոստովանի*, պա՛րտ է հայիլ քահանային թէ կրօնաւո՞ր է թէ աշխարհական: - 601. ...և թողութիւն շնորհեսցէ յամենայն յանցանաց քոց. *խոստովանելոցն* և մոռացելոցն: - 602. Եւ թէ ոք ասիցէ՝ ընդէ՞ր ապա յորժամ *խոստովանին* հաղորդին: - 602. Մին է որ նախ *խոստովանին* և յետոյ ապաշխարեն...: - 602. ...որպէս այնք որք *խոստովանին* ի մուտս քառասնորդաց պահոց. որպէս ասէ եսայի: - 602. ...և յետոյ *խոստովանին* և հաղորդին. - 603. ...և այսպիսիքս, որպէս նոքա որք մերձ ի զատիկն *խոստովանին* և սրբութեանց արժանաւորին: - 603. Զի է՛ որ *խոստովանին* զմեղս և արմատն հաստա՛տ է. - 603. ...այս է որ ի միտ ունի *խոստովանիլ* և դարձեալ մեղանչել...: - 603. ...զի *խոստովանեալ* մեղքն բարձուի, այլ պատիժն ո՛չ: - 603. Զի ատելութիւն մեղաց զղջումն է սրտին. և *խոստովանի* բերանով. և զամօթն կրէ փոխանակ պատժոյն: - 603. *Զխոստովանեալ* մեղքն պա՞րտ է կրկնել թէ ոչ: - 603. Ասեն վարդապետք թէ՝ զմի անգամ *խոստովանեալն* բարի հաւատով և կատարեալ զղջմամբ՝ ո՛չ է պարտ կրկնել. եթէ ոչ վասն չորից պատճառաց: - 603. ...զի պարտ է զոր ի մտի ունի՝ զբոլորն միոյ քահանայի *խոստովանիլ*: - 603. Չորրորդ՝ եթէ անփոյթ արար և մոռացաւ զկարգեալ ապաշխարութիւն փոխարինացն, պա՛րտ է կրկին *խոստովանիլ*. - 603. Որպէս ազգն յունաց և վրաց և ասորւոց բարձեալ են զխոստովանութիւնն. որ անհնա՛ր է առանց *խոստովանելոյ* արդարանալ մարդոյ: - 604. Պիտանի է ապա *խոստովանիլ*՝ քան օծանիլ: - 604. Թէպէտ բազում ուրէք զսոյն բանս ի դաւանութիւն երից անձանց և միոյ բնութեանն *խոստովանիմք*: - 633. Յայտնապէս բաժանեն զխաչեալն քրիստոս և սոսկ մարդ *խոստովանին*: - 633. Սոքա քաղկեդոնին են. որք բաժանեն զբանն ի մարմնոյն. և զխաչեալն՝ մարդ սոսկ և տկար և մահկանացու *խոստովանին*: - 635. ...և զղջացան և *խոստովանեցան* զմեղս...: - 683. Եւ մեկնիչն ասէ, աստուածապա՛շտ են որք *խոստովանին* զմեղս. զոր գիտէ տէր յայսմ աշխարհի փրկել առանց քաւարանի հրոյ: - 699. Եւ անիրաւք որ ո՛չ *խոստովանին* զմեղս, նոքա ո՛չ զերծանին ի ձեռաց. այսինքն պատժոցն աստուծոյ...: - 699. Ա՛րդ՝ եթէ մեռեալք ո՛չ *խոստովանին* և ո՛չ օրհնեն. ապա և ո՛չ ապաշխարեն և ո՛չ քաւեն ըստ ինքեան զմեղս: - 699. Եւ ի *խոստովանիլ* մեղաց՝ լուծանի և պտուղն չար: - 701. Նաև *խոստովանեսցի* զինքն գոլ քրիստոս և ճշմարիտ որդի աստուծոյ: - 707. Ուստի յայտ է թէ՝ զմարմին բանին ապականացու *խոստովանին* նոքա՝ որ զխաչն ապականացու ասեն. և են նեստորականք: - 733. Իսկ որք զբանն մարմնով անապական *խոստովանի*, պա՛րտին և զխաչն աստուածընկալ անապական *խոստովանիլ*: - 733. Ութերորդ, այլ և զղջացեալքն զերեսնաւորն. և *խոստովանեալքն* ըզկաւորն. և ապաշխարեալքն հատուցմամբ՝ զհարիւրաւորն: - 758. Իսկ թէ որ ի կեանս յայս զղջասցին ատելով զմեղս և *խոստովանին*, առցեն զվարձս ապաշխարութեան որ է՛ թողութիւն մեղաց. առանց երկբայութեան է այս: - 780. Իսկ դժոխայինքն թէ և զղջան կամ *խոստովանին*, արտաքոյ սոցա՛ է ...: - 780. Ասի ի գիրս սուրբս թէ՝ ի կատարածի յանուն յիսուս քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի. և ամենայն լեզու *խոստովանեսցի* զնա աստուած: - 783. Եւ դարձեալ, ի կատարածի՝ կենդանեաց և

մեռելոց է *խոստովանիլ* զոր սանդարամետք կոչէ: - 785. Որպէս և այժմ մեռելոց զղջումն և *խոստովանիլն* անվա՛րձ է ամենևին և ակամայ: - 785

**ԽՈՍՏՈՎԱՆՈՂ (ԽՈՍՏՈՎԱՆՕՂ) +** Քանզի ասէ թէ՝ ջհուտն թարքմանի խոստովանօղ. քանզի *խոստովանօղքն* մեսիային փրկեսցին: - 28. Այսպէս ի նորս *խոստովանօղն* սրբի. և ընդունօղն աղտեղի: - 384. Զի ամօթն և արտասուքն ի տեղի հատուցմա՛նց են *խոստովանողին*: - 432. Երրորդ՝ զի փառք և պսակ է արդարոց և կատարեալ *խոստովանողաց*: - 432. Քսաներորդ, կոխեցին զայլազգիսն իէլ և յուդայ. և *խոստովանօղք* քրիստոսի զդևս այլազգիս: - 436. Իսկ թէ աշխարհական լինի. հայի քահանայն թէ *խոստովանօղն* իմաստուն մարդ լինի առանց բարի գործոց: - 601. Երկուքն ի կողմանէ խոստովանահօրն, և երկուքն ի *խոստովանողին*: - 603. Երրորդ՝ թէ *խոստովանօղն* կիսատեաց զխոստովանութիւնն և ծածկեաց. - 603. Դարձեալ ասեմք եթէ՝ *խոստովանողին* պատիժ ամօթն է զոր կրէ առաջի քահանային. և ո՛չ կրէ զամօթն յաւիտենից: - 701

**ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ +** Երկրորդ՝ զի ընդդիմակ բառնալոյն՝ դրութիւնն է. և ընդդիմակ ուրացութեան՝ *խոստովանութիւնն*: - 124. Ա՛րդ՝ մի և նոյն է դրութիւն և *խոստովանութիւն*. ապա մի և նոյն է բառնալն և ուրանալն: - 124. Երկրորդին պատասխանեմք եթէ՝ ո՛չէ նոյն դրութիւն և *խոստովանութիւն*. որպէս յորժամ ասեմք դնելով թէ՝ չա՛ր է. խաւա՛ր է. և մե՛ղք է. ահա այս ուրացութիւն է և պակասութիւն: - 124. Եւ յորժամ ասեմք ո՛չէ չար. ո՛չէ խաւար. ո՛չէ մեղք. ահա այս *խոստովանութիւն* է և ո՛չ դրություն: - 124. Եօթներորդ՝ թոյլ տուեալ լինի և ոմանց անկանիլ ի մեղս ինչ. զի ի հպարտութենէն զոր ունէր վասն առաքինութեան՝ խոնարհեսցի և անկցի առաջի տեառն *խոստովանութեամբ*. և ընկալցի զթողութիւն. որ նախ համասե՛ռ էր սատանայի: - 159. Եւ չորրորդ՝ յայտնել *խոստովանութեամբ* զգաղտնիս ամօթոյն: - 281. Վասն մեղա՛ց է՝ որ *խոստովանութեամբ* արտաքոյ ելեալ ի մեղաց և ապաշխարութեամբ քաւեմք զմեզ ներքին խորհրդով և արտաքին գործով: - 362. Ջրով լուանալ, *խոստովանութեամբն* է: - 367. Որ յետ *խոստովանութեան* դառնայ ի նոյն մեղս, իբր շուն դառնայ ի փսխած իւր. և սա՛ ևս այրի հրով. զի զառաջինն ևս խնդրեսցեն ասէ առաքեալն: - 367. Եւ ի սոցանէ ո՛ր և իցէ, արտա՛քս է յեկեղեցւոյ և ի սրբութեանց, օր մի կամ **բ** կամ աւելի. և սրբի *խոստովանութեան* ջրովն: - 368. Եւ նոյնպէս *խոստովանութեամբ* սրբի: - 369. Երրորդ՝ լեզւատն որ է՛ անձայնն. որք ո՛չ ունին *զխոստովանութիւն*: - 371. Չորրորդ, **գ** օրն ի մեզ զղջմամբ և *խոստովանութեամբ* և փոխարինաւն հանգչիմք: - 380. Երկրորդ՝ ողողելոյ զիանդերձն, է՛ ջուր *խոստովանութեանն* և թողութեան մեղաց: - 384. Երրորդ, զղջումն՝ *խոստովանութիւն*՝ և թողութիւնն նա՛խ է. և ապա՛ ա՛յլ գործք ապաշխարութեան: - 384. Եւ *զխոստովանութիւնն* եկեղեցոյն բաժին, զի զկանոնս նորա ելոյծ: - 384. Եւ տե՛ս զշնորհս *խոստովանութեան*. վասն այն որ զղջացաւ և յայտնեաց, ի հնգէն զմին տայ տուգանք: - 384. Երրորդ՝ յորժամ ի *խոստովանութիւն* և յապաշխարութիւն գայ, լինի ներելի և ակամայ. զի թէ նախ քան զմեղանչելն ակամայն, և եթէ յետ մեղացն ակամայն, լինի զղջմամբն ներելի և թողելի: - 385. Իսկ կրկին պատարագն. մին վասն բոլոր ժողովրդեանն, և մին վասն անձին ակամայիցն. ցուցանէ զկրկին *խոստովանութիւնն*. մին յայտնի առհասարակ եկեղեցոյն. և միւսն ծածուկ առանձին մեղաց: - 385. Եւ ա՛յս է գերծուլն, զառաջին գործեալ մեղքն սրբել *խոստովանութեամբ*. և զապաշխարութեան գործն մատուցանել աստուծոյ: - 389. Կամ զղջումն՝ *խոստովանութիւնն*՝ և փոխարէնքն: - 392. Երկրորդ՝ *խոստովանութիւն* է և վկայութիւն. իբր թէ բարի ես բնութեամբ. երջանիկ. և այլն: - 406. Նոյնպէս և ամենայն *խոստովանութիւնն* առնէ: - 432. Զի գա՛յ զղջումն և *խոստովանութիւն*՝ որ զմեղքն բառնայ և զպատիժն ընդ նմին. որպէս հատեալ տունկ՝ չորանան ճիւղքն. որ բոլորով սրտիւ զղջայ և խոստովանի և այլ ո՛չ գործէ: - 432. Զի սա՛ ի կանոնաց թեթևացեալ է որպէս յառաջիկայդ ցուցանի ի *խոստովանութեան* ճառն: - 432. Ասեմ թէ ոչ, զի կատարեալ *խոստովանութիւնն* թողու զմեղս, բառնայ զպատիժն, և ջնջէ՛ զյիշատակ մեղացն. մինչ զի ո՛չ երևի ի դատաստանին աստուծոյ: - 432. Եւ յորժամ զղջանամք ի մեղաց՝ նախ *խոստովանութեամբ* շինեմք զտաճար սրբութեան մերոյ. և ապաշխարութեամբն որ է՛ փոխարէնքն՝ կանգնեմք զպարիսպն եօթնիւք զգայութեամբք: - 448. Նա՛խ՝ սրբութիւն հասարակ. որպէս շնորհք մկրտութեան և *խոստովանութեան*. զի որք անցանեն ընդ նա՞ սրբին: - 462. Իսկ զգիր քրիստոնէից զոր յետ աւազանին մեղանչեմք և գրեմք զյանցանս, զայն պատառէ ապաշխարութիւնն. որ է՛ զղջումն սրտի և *խոստովանութիւն* լեզուի և հատուցումն գործոց մարմնոյ: - 482. Երրորդ՝ օրինակն. զի ամենայն անսուրբ ջրով լուացեալ սրբիւր. և ողողեալ զիանդերձս այնպէս մտանէր ի բանակն. և յաւազանն *խոստովանութեան* ջրովն: - 488. Վեցերորդն է մերկացումն մարմնոյն. ի նշան *խոստովանութեան* մերոյ

որ պարտ է լինիլ մերկապարանոց: - 489. Եւ գրեցին ապաշխարութեամբ *խոստովանութիւն*. և եդին ի տապանին դադայ՝ յեկեղեցւոջ սուրբ վկային դեմետրեայ: - 543. Երկրորդ՝ ոմանց *խոստովանութիւն* ո՛չ առնել: - 553. Յիրաւի որք ո՛չ հաւատան թողութեան *խոստովանութեան*, ո՛չ թողցի նոցա աստ կամ անդ: - 566. Ապաշխարութիւնն է՛ խորհուրդ արդարութեան. զի ի ձեռն զղջման և *խոստովանութեան* և այլոցն արդարանամք ի մեղաց: - 587. Եւ հաղորդելն, որպէս անդամ ի գլուխն յօդէ. զի ամենայն կատարմանց կատարումն հաղորդութիւնն է. այսինքն կարգին՝ պսակին՝ *խոստովանութեան* մկրտութեան՝ և այլն: - 594. Եւ ապաշխարութիւնն գ բաժին ունի. այսինքն զղջումն սրտի. *խոստովանութիւն* բերանոյ. և ապաշխարութիւն գործով: - 601. Եթէ *խոստովանութեամբ* թողլի մեղքն, վասն է՞ր դնի ապաշխարանքն: - 602. Ասեմք թէ՝ այնպէս է շնորհք *խոստովանութեանն* որ զյաւիտենից պատիժն ժամանակեայ առնէ. - 602. Այժմ պատասխանեսցուք նախ՝ եթէ *խոստովանութեամբն* թողութիւն լինի ամենայն մեղաց. - 602. Դարձեալ՝ *խոստովանութիւնն* սրբէ՛ զմեղս որ ո՛չ տանջի...: - 602. Դարձեալ՝ *խոստովանութիւնն* սրբէ զանցեալ մեղս...: - 602. Ասեմք եթէ՝ կրկին է *խոստովանութիւնն*: - 602. Եւ երկրորդ *խոստովանութիւնն* է՝ որք նախ ապաշխարեն պահօք և ճգնութեամբ...: - 602-603. Դարձեալ ասեմք թէ կրկին է *խոստովանութիւնն*. նոյնպէս և թողութիւնն: - 603. ...որպէս ազգն Ֆռանկաց ունին զայսպիսի *խոստովանութիւնս* միշտ քահանայքն և ժողովուրդքն. և այսպիսիս անկատար առնու զթողութիւն...: - 603. Եւ է՛ *խոստովանութիւն* որ զարմատ մեղացն քակէ՛ ի սրտէն և զղջացեալ ի մեղաց, հաստա՛տ է ի կամս և ի միտս այլ ո՛չ մեղանչել...: - 603. ...այսպիսիս կատարեալ *խոստովանութիւն* է. և զայսպիսոյ մեղս թողու քահանայական իշխանութիւնն. և զպատիժն ընդ նմին: - 603. Նաև կատարեալ *խոստովանութիւնն* ունի զերիս մասունս ապաշխարութեան: - 603. Յիրաւի ապա այսպիսի *խոստովանութիւնս* կատարելապէս թողու զմեղս և զպատիժս...: - 603. Որք իցեն ի մեծամեծ մեղս մահու չափ, օգնո՞ւտ է *խոստովանութիւնն* նոցա թէ ոչ: - 603. Ասեն վարդապետք եթէ՝ *խոստովանութիւնն* է հնարք, և է՛ հրաման: - 603. Երրորդ՝ թէ խոստովանօղն կիսատեաց *զխոստովանութիւնն* և ծածկեաց...: - 603. ...զի առանց *խոստովանութեան* մեղքն ո՛չ թողուի: - 603. Ասեմք թէ, ի հնարից չարին բարձին մարդիկք *զխոստովանութիւնն* որ հարկաւոր էր, յայն ապաւինեալ թէ՝ ի վերջին օրն օծանիմք ձիթով բալասամինաւ և արդարանամք: - 604. Որպէս ազգն յունաց և վրաց և ասորւոց բարձեալ են *զխոստովանութիւնն*. որ անհնա՛ր է առանց խոստովանելոյ արդարանալ մարդոյ: - 604. ...քան թէ բառնալ *զխոստովանութիւնն* որ հարկաւոր է. առանց որոյ ո՛չ գոյ ներգործական մեղացն թողութիւն գտանել: - 604. Իսկ *խոստովանութիւնն* զմահու չափն և զներելին սրբէ...: - 604. Դարձեալ՝ *խոստովանութեան* ջրովն սրբիմք...: - 615. Զի յորժամ մեղօք ինչ սրբութիւնս մեր ապականի, կամ շարժի ոք ի հաւատոյ, վերստին կարէ՛ հաստատիլ ի հաւատս, և դարձեալ կրկնել *զխոստովանութիւն* և զապաշխարութիւն: - 615. Երրորդ *խոստովանութիւն* և վկայութիւն է. իբր բարի՛ է. երջանի՛կ է. անմա՛հ է բնութեամբ և այլն. որպէս ասացաւ ի վերոյ: - 624. Նաև երիւք լինի թողութիւն մեղաց. այսինքն զղջմամբ *խոստովանութեամբ* և ապաշխարութեամբ. որ լինի մտօք բանիւ և գործով: - 681. Իսկ թէ անզեղջ կամօք և առանց *խոստովանութեան* ի մեղս մեռան, ո՛չ է օգուտ նոցա. թէպէտ մկրտեալ իցեն և հաւատացեալ...: - 683. ...զոր վասն յոյժ ժտելոյն՝ յարուցեալ միտքն տացէ *զխոստովանութիւն* հաւատոյ սուրբ Երրորդութեանն. զոր յերիս նկանակս յառակեաց: - 697. Նախ՝ զի քակե՛ն *զխոստովանութիւնն* յեկեղեցւոյ և ի քաւարանն ապաւինեալ կորնչին մեղօք: - 698. Ապա ուրեմն *խոստովանութեամբ* քաւին մեղքն և ո՛չ հրով: - 699. Ապա ուրեմն որք աստ *խոստովանութեամբ* արձակին ի մեղաց, անդ ազատեալ են ի տանջանաց: - 699. Նա՛խ եթէ ի *խոստովանութիւն* մեղացն մնայ պատիժն զոր ապաշխարութիւնն քաւէ. որպէս յայտ է ի կանոնս. - 701. ...որպէս ասացաւ ի վերոյ ի ճառս *խոստովանութեան*: - 701. Դարձեալ ասեմք եթէ ջուր զմկրտութիւնն աւէ, և հուր *զխոստովանութիւնն* մեղաց: - 701. Նոյնպէս կատարեալ *խոստովանութեամբն* կորնչի մեղքն և բուսանի արդարութիւնն: - 714. Յաւատացեալ արդարք. որք ըստ օրինաց հնոյն կամ նորոյս գործեցին զարդարութիւն. կամ որք սխալեցին և ապաշխարեցին զմեղս զղջմամբ *խոստովանութեամբ* պահօք աղօթիւք ողորմութեամբ և այլովք: - 739. Եւ աւազակն միով *խոստովանութեամբ* եմուտ ի դրախտն: - 745. Եւ *խոստովանութեամբ* մեղաց սատակին և նոքա: - 753. Որ եսդ տէր տէր հաւատարիմ յիսուս, անբաժանելի լեր ի զգայութեանցս. և յամենայն գոյացութեանց աստի իմոցս. ներկեալ *խոստովանութեամբ* և շնորհօք հոգի մարմին նիարդք իմ և աճառք: - 771. Եթէ յարդեան ժամանակիս հաւատարիմ է, զի որ ոք և իցէ յանցաւոր, եթէ զղջասցի և ատեսցէ զմեղս ըստ մարգարէին՝ *խոստովանութեամբն* առնու զմաքրութիւն և զվարձս ապաշխարութեան: - 778

**ԽՈՍՏՈՒՄՆ +** Նախ՝ զի ընդունայն լինէին *խոստմունքն*. բարեացն վարձս և չարեացն պատիժս: - 20. Ասեմք եթէ՝ *խոստումն* աստուծոյ կատարեցաւ ի ժամանակս զօրաբաբէլի և եզրայ...: - 28. Եւ թէ ասիցեն հրէայքն, ո՛չ ամենայն հրէայքն ժողովեալ են ըստ *խոստմանն*: - 28. Ութերորդ՝ սկիզբն է *խոստմանցն*, և կատարումն արդեանցն: - 130. Եւ յետ յարութեանն ընդունի զպտուղ. որ է՛ պարգևք *խոստմանց* անվախճան կենացն: - 213. Վեցերորդ՝ անդ երկրաւոր *խոստմունք*. և աստ երկնային: - 353. Զի յաւետիս *խոստմանն* ասացաւ թէ՝ «զաւակք քո լիցին իբր զաստեղս և զաւազ առանց թուոյ»: - 377. Ի *խոստման* աւետիսն ծե՛ր էր աբրահամ, և կինն ամուլ. զի մի՛ անյուսասցին ի բնութիւնն նայելով. այլ ի բանն աստուծոյ որ ամենազօ՛ր է. վասն այն ասացաւ անթիւ լինիլ զաւակացն. և եղև այնպէս: - 377. Հինգերորդ՝ զրկելով աստ ի *խոստմանէն* լրոյ. և յետ մահու ի տեսութեանցն. և ի յարութեանն ի կատարմանցն: - 394. Իսկ *խոստման* երկիրն նոր օրհնօքս ի ձեռն փրկչին յիսուսի: - 395. Ակնառութիւն ո՛չ է աստուծոյ. զնախնիքն սիրեաց աստուած, զի արժանիք էին. և եցոյց նոցա զինքն. և *զխոստումն* աւետեաց ուխտեաց նոցա մարդ լինիլ ի զաւակէ նոցա յետոյ: - 398. Երկրորդ՝ առաւել ի սպառնալեա՛ց երկնչի ոք, քան ի *խոստմանց*: - 403. Երրորդ՝ ի *խոստմունքն* շնորհակալութիւն, և ի պարգևն գոհութիւն: - 406. Քաննթ՝ *խոստումն* աւետեաց երկրին կատարեցաւ առ յեսու: - 419. Եւ *խոստումն* օրհնութեանց զաւակին՝ և օրհնաց կատարումն՝ փրկիչն եղև: - 419. *Խոստմամբ* յուսացուցին: - 456. Ապա ուրեմն հաւատարիմ և ճշմարիտ անսուտ *խոստումն* է աստուծոյ, զորմէ ասէ առաքեալն յեբրայցւոցն. «բ անփոփոխելի իրօք որով անհնա՛ր է ստել աստուծոյ»: - 457. Վեցերորդ՝ զի ցուցցէ զինքն որդի աբրահամու. առ որ հրաման թլփատութեանն եղև և *խոստումն* օրհնեալ զաւակին. և այսպէս *խոստմանն* աստուծոյ կատարումն քրիստոս զինքն ցուցանէր: - 485. Իններորդ՝ զի աւետիս հարցն հաստատեսցէ. զի անսո՛ւտ է *խոստմունք* աւետեացն աստուծոյ. և որպէս զայս աւետիս ուխտի կատարեաց, նոյնպէս և զայլսն կատարեսցէ. այսինքն ի ծառայութենէ ազատութիւն, և արքայութեան *խոստմունքն*: - 485. Եւ պենտակոստէ գալուստ հոգւոյն և կատարումն *խոստմանց* և լրումն աւետեաց: - 524. Դարձեալ՝ աստ *խոստմունքն* է պսակաց...: - 667. ...և ի դադարիլ ժամանակին՝ ի նոյն կէտն համանգամայն վերառեցեալ մտանեն ի կեանս առաջին ըստ *խոստման* բանին: - 716-717. Եւ է՛ շնորհ յատուկ ընրութեամբն աստուծոյ, որ պատճառ է՛ զփառս զանազան ներգործութեամբ. և է՛ սա՛ ան՛ի բաց դնելի անզեղջ *խոստմամբ* ի կողմանէ տուողին. որպէս է՛ առ մեզ շնորհք աւազանին: - 783

**ԽՈՍՐՈՎ** - Իսկ *խոսրով* թարգմանիչ եբեր ի հայս. որ գնացեալ էր յերուսաղէմ հրամանաւ սրբոյն սահակայ: - 658

**ԽՈՏ +** Եւ դարձեալ ի վեր քարշեալ ժողովին ի ծայրս *խոտոց*. և ծանրացեալ կախին իբրև զմարգարիտս: - 204-205. Չորրորդ՝ ի պէտս բուսոց և բժշկական *խոտոց*. ըստ այնմ՝ «բուսուցեր *զխոտ* ի լերինս»: - 211. Նա՛խ՝ զի բոյսք և *խոտք* մե՛րձ են երկրի, զշարժումն նորա դիւրա՛ւ ընդունին: - 214. Եւ սակաւակեացքն փութով. որպէս նարին *խոտն*, մանուշակն, և այլն: - 214. Այլ իմաստունք ասեն եթէ՝ կերակուր անասնոցն *խո՛տ* է անզօր. վասն այն նոքա ապուշք և անզօրք լինին: - 218. Եւ դարձեալ՝ որպէս հատն ցորենոյ ունի առ ինքն զօրութեամբ *զխոտն* և զճաղիկն և զհասկն. և սոքա համանգամա՛յն են ի հատն այն զօրութեամբ. որ յետ ժամանակաւ ըստ դասի երևին: - 255. Եւ թէպէտ զնանիր *խոտոյ* ասեն ի նոյն ժամն բուսանիլ և կատարիլ և խամրիլ, ի նոյն թուոյս ոչ ելանէ ժամուք կամ մասամբք: - 263. Ծաղիկ զմռնեաց. նմանէ պոյտն ծաղկի. և Կինամոն. արմա՛տ է *խոտոյ* ի տմորիս հայոց. և Խնկեղէգն. որ յարմատս ո՛չ ամենայն եղեգան լինի. և Հիրիկ. խէ՛ժ է ծառոց: - 349. Եւ որք խռիւ փայտ՝ *խոտ*՝ և եղէգն, այրեսցի անշէջ հրով: - 488. Եւ որպէս մի հուրն զանազանապէս այրէ զդալար փայտ՝ և զչոր *խոտ*՝ և զեղէգն: - 505. Եւ որպէս անչափ են սպեղանիք և դեղք բժշկականք մարմնոյ ի բազում և զանազան ծաղիկս *խոտոյ* և յարմատս, ի տերևս ի պտուղս. և յայլսն. զի սոքա յայտնեն զբազմութիւն հիւանդութեանց մարմնոյ: - 531. Զոր օրինակ ցորեան մերկ սերմանի և *խոտօք* և պատենօք բուսանի: - 592. Հինգերորդ, ասէ առաքեալն (որ շինէ ի վերայ հիմանն փա՛յտ, *խո՛տ*, եղէգն, տուժեսցի: - 701. Ոմանք *խոտ*. որ է ծուխ մարմնական հեշտութեանց: - 702. Եւ այլ վարդապետք փայտ *խոտ* և եղէգն զներելի մեղս ասեն. և առաւել և նուազ և միջակ: - 702. Իսկ այլք զերեք տեսակ մեղացն. այսինքն սկզբնականն որ է *խոտ*. և ներելին եղէգն. և մահացուն փայտ: - 702. Դարձեալ՝ *խոտն* մտաւոր մեղք խորհրդոց. և եղէգն յանցանք բանից. և փայտն մարմնական մեծամեծ մեղք: - 702. Եւ որք ունին զխռիւն և *զխոտ*, այրելիք են հրոյ: - 702. Երրորդ, նոքա փայտ *խոտ* և եղէգն զներելիսն ասեն. որք անդ ծախին և ազատին...: - 702. ...և ոսկեբերանն զմահացուն լինիլ ասէ փայտ *խոտ* և եղէգն. և նիւթ

յաւիտենից այրելոյն: - 702. Ահա՛ յայտնապէս զփայտ *զխոտ* և զեղէգն զոր նոքա վասն քաւարանին ասեն...: - 703. Եթէ փայտ *խոտ* եղէգն որ են մեղաւորքն, զի անդէն մնան: - 721. Դարձեալ որպէս հատն մերկ սերմանի և մերկ ո՛չ բուսանի. այլ զարդարեալ *խոտով* և տերևով եօթն թուով: - 721. Այսինքն նախ արմատն. և յետոյ *խոտն*. յետոյ ծղօտն. և ծնունդն. և ապա՛ տերև. պատանք. և քիստք. և ապա՛ ցորեանն ատոք ի հասկին: - 721. Եօթներորդ, որ ի տղայութեանն հասակէ՛ կան յաստուածպաշտութիւն, իբր *զխոտս* դալարի պտղաբերեն զհարիւրաւորն: - 757

**ԽՈՏԱՃԱՐԱԿ +** Իսկ զներսէսին մեծի, և *զխոտաճարակացն*, յոհաննէս պլուզն: - 638

**ԽՈՏԱՆ +** Իսկ «զեսաւն ատել և զյակոբ սիրելն» է՛ որպէս ցուցաւ ի վերոյ. զի զընտիրսն սիրէ և *զխոտանսն* անարգէ՛ նախատես ճանաչմամբն: - 20. Զի **գ** գլխոյն կրկին է եղջիւր. որ է հպարտութիւն՝ նախանձ՝ և բարկութիւն. զի սոքօք յաջ և յահեակ պատերազմի. և առ ընտիրս և առ *խոտանս* գտանին բազում ուրեք երեքին ախտքս այսոքիկ: 151-152. Հինգերորդ՝ զընտիրս և *զխոտանս* որոշէ՛: - 185. Վեցերորդ՝ ի սոցանէ երևի և գործ արդարութեան. որ ընտիրսն աստուծոյ նուիրէր գիտելով զմեծութիւն նորա և զբոլորիցն տուրսն. և *զխոտանն* ի՛ւր թողլով: - 286. Ապա թէ պակա՛ս է ի սոցանէ՝ պիղծ է և *խոտան* և ո՛չ է ուտելի զենեալն: - 365. Հինգերորդ՝ թիւն զընտրութիւն՝ զդաս՝ և զկարգն ցուցանէ. զի գո՛յ ի նմա՛ առաջին միջին և վերջին. որպէս զինւորք. իսկ անթիւն *խոտան* և անկա՛րգ է. որպէս ծերք և տղայք: - 377. Երրորդ, վասն վերջնոցն լաւութեան ընտրեցան և *խոտանքն*. որպէս զհող զքար և զխեցգէ մորթն պատւեմք վասն ոսկւոյ և արծաթոյ և մարգարտին: - 398. Եօթներորդ՝ ոմանք մարմին մովսէսի զօրէնսն ասեն. զոր ի բերելն հակառակէր սատանայ, *խոտան* և անարժան գոլ ժողովրդեանն. վասն որոյ միքայէլ վերակացու ժողովրդեանն հալածէր զնա: - 410. Նա՛խ՝ զի ամենատեսն աստուած գիտէր զլաւս և *զխոտանսն*: - 674. *Խոտան* ձկունքն ընդ բարեաց յուռկանին: - 756

**ԽՈՏԵԼԻ -** Այլ զի արեգակն անբանապէս տայ զլոյսն. իսկ աստուած բանիւ և իմացմամբ ընտրէ զարժանիսն և փրկէ. որպէս մարդիկ զընտրելիս ընտրեն, և ոչ *զխոտելիս*: - 20. Տե՛ս՝ ի չորից բաժանմանցդ մինն է ընտրելի, և **գ**ն *խոտելիք* են: - 215. Եւ սոքա երկոքեանս *խոտելի* են եկեղեցւոյ: - 252. Այլ և որ իսահակայ վատթարք և *խոտելիք* եղեն: - 303. Հինգերորդ՝ նշանակէ զկրկին ծնունդս մարդոյ. առաջինն մարմնաւոր և *խոտելի*. և վերջինն հոգևոր և ընտրելի: - 310. Նորոց քահանայից ո՞րն է *խոտելի* արատ: - 370. Այս քան շարականս ընդունելի՛ է յեկեղեցի. և աւելին քան զայս՝ *խոտելի*՛ է և անպիտան: - 638. Տասներորդ, և աստի ընտրեալքն յաջմէ, և *խոտելիքն* ի ձախմէ միշտ նշանակին: - 646. որպէս որք մահկանացու ասեն զհոգին. և այս *խոտելի* է ի բաց: - 687

**ԽՈՏԵՄ +** Դարձեալ՝ ունիմք խորհուրդ, և ընտրեմք զառնելիսն, և *խոտեմք* զոչ առնելիսն. և բազում անգամ խորհելովն հանդիպիմք բարւոյ, և փախչիմք ի չարէ. և խորհուրդն ի հնարաւորա՛ցն է որպէս ասացաւ և ո՛չ ի հարկաւորացն: - 11. Որ անձնիշխան կամօք և չար գործովք *խոտեսցին* չարքն: - 18. Ութերորդ՝ զի ազատ և անձնիշխան կամօք ընտրեն զբարին և *խոտեն* զչարն. և դիւրասերտեալք ի բարին, և դժուարաշարժք ի չարն: - 137. Եօթներորդ՝ զի ո՛չ կարէին ընտրել և *խոտել* զչարն և զբարին, և զսուրբն և զանսուրբն ի մարդկանէ, թէ գործ սորին է այս կամ այն. այլ անմեղութեամբ յարակցեին պղծոյն, և զխեղդ ոգւոց նորա ընդունէին: - 238. Երրորդ՝ թէ վնասակա՛ր է՝ *խոտեմք*: - 296. Վասն է՞ր զանդրանիկն *խոտէր* և զկրտսերն ընտրէր. որպէս կայեն *խոտեցաւ* և սէթ ընտրեցաւ: - 309. Իսկ այն որ երբեմն անդրանիկն *խոտիւր* և կրտսերն ընտրիւր, բազում ունի խորհուրդ և նշանակութիւն: - 310. Երկրորդ՝ հրեշտակք անդրանիկք են քան զմարդ ստեղծմամբ. և յորժամ մեղան դևքն՝ *խոտեցան* և եղեն կրտսերք. և մարդն ել ի տեղի նոցա և եղև անդրանիկ: - 310. Երրորդ՝ զանդրանիկ կեանս ի դրախտին անարգեաց ադամ և զերկրորդն ընտրեաց. և իւր անդրանիկն *խոտեցաւ* և կրտսերն ընտրեցաւ: - 310. Չորրորդ՝ նշանակէ՛ զիրէայս որ էին անդրանիկ ժողովուրդ *խոտեցան*. և հեթանոսք կրտսերք ընտրեցան և եղեն անդրանիկ ժորովուրդ աստուծոյ: - 310. Զա՛յս նշանակէ զանդրանիկն *խոտել* և զկրտսերն պատուել: - 310. Ութերորդ՝ նախկին է ժամանակս, և երկրորդ հանդերձեալն. և կեանք ժամանակիս *խոտեալ* է և անարգ. և հանդերձեալն պատուական է և ընտիր: - 310. Այս քան ըստ խորհրդոյ որ անդրանիկքն *խոտեին*, և կրտսերքն պատւեին: - 311. Ութերորդ՝ յօրինակ փրկչին յիսուսի, որ զբռնութիւն թշնամւոյն խորտակեաց և զխաբէութիւնն եթող. զի փորձեսցին ընտրեալքն և *խոտեսցին* վատթարքն: - 417. Վեցերորդ, *խոտեցաւ* սաւուղ և ընտրեցաւ դաւիթ. *խոտեցաւ* հին օրէնքն, և ընտրեցաւ նորս: - 435. Եւ որ *խոտէ* և ունդ և պտուղ՝ է՛ կերակուր պահոց. զի անզգայ է և անշարժ տեղւոջէ ի տեղի և անշունչ: - 510. և զթէոդորիտոս եդին գլուխ ժողովոյն վասն

մարդահաճութեան թագուհւոյն և թագաւորին. և զղէոսկորոս հայրապետն աղէքսանդրու, և զպետրոս անտիոքու, և զտիմոթէոս և զանատօլ, և զայլս բազումս *խոտեցին*. և վկայեցին նոքա ճշմարտութեան: - 543. Յորում զորոգինէի գրեալսն *խոտեցին*. և զսուրբն եւագրիոս միայնակեաց՝ և զիրաշալի այրն աստուծոյ զդիդիմոս՝ նզովեցին: - 543. այն է հպարտութիւն որ *խոտե՛մք* և անարգեմք զճշմարիտ բարին. և ապա խոտորիմք և հետևիմք զհետ փոփոխելոյ բարւոյս. և այսպէս երևի հպարտութիւնն յամենայն մեղս: - 562. Իսկ պոռնկութիւնն ի բնական օրէնս և ի գրաւորն և ի նորս *խոտեալ* է: - 613. Վասն այն *խոտեալ* է և պիղծ յամենայն օրէնս: - 612. Իսկ *խոտելոցն* գիր, դպիր է պիղծ հոգին դիւական. և չար կամքն իւրեանց և խորհուրդն և հեշտութիւն մարմնոյն մեղան. և ըստ գործոց առաւել և նւազ գրեն ի գիրն դատապարտութեան: - 741. Որք որպէս գիրք յայնժամ բացեալք եղիցին. քանզի վարդապետութիւնք նոցա և օրինակք՝ ամենեցունց յայտնեսցին. ի յորս ամենեքեան իբրև ի գիրս տեսցեն թէ զի՞նչ պարտ էր առնել կամ *խոտել* ինքեանց: - 742. Կամ զինչ անհնարին սաստ, եթէ որք *խոտեսցէ* զսուրբ հոգւոյն խօսեցեալս ի գիրս սուրբս...: - 775

**ԽՈՏՈՐ +** Որք զաչս իմաստից յիմանալի ճառագայթիցն խուսափեցին թիւր կամօք, և *խոտոր* մտօք. զանուղղայս խորհելով, և զանպատշաճս բարբառելով. յարձակեալ անկապ լեզաւ և անդունն շրթամբք բացեալ յերկինս. ցոպ բերանով ի բարձունս բարբանջելով. և յածեալ ընդ երկրաւ լեզուագարելով. որոց դատաստանն ի բնէ ո՛չ դատարկանայ. և կորուստն ո՛չ նիրհեսցէ: - 31

**ԽՈՏՈՐԵՄ +** Իսկ ոմանք յաւելուն յևս ամբարշտութիւն. իբր փախչելով ի ձախոյն՝ *խոտորին* յաջ կողմն: - 13. Տասներորդ՝ զի սուտ լինէին ամենայն օրէնք բնական՝ գրական և աւտրնական. զի սոքա ամենքն խրատեն զմեզ *խոտորիլ* ի չարէ՝ և առնել զբարի. և այլն ամենայն: - 20. Նոյնպէս և վասն սոցա յառաջագոյն ասացաւ յառաքելոց և ի վարդապետաց. զի մի՛ յանգէտս *խոտորեսցին* ընդ նոսա: - 35. Արդ՝ յաջ և յահեակ *խոտորին* հերձւածօղք. որպէս սաբէլ յաջ *խոտորեալ*՝ ի մի բնութիւն և ի մի անձն ժողովեաց զերրորդութիւնն սուրբ: - 80. Եւ ընդ դէմ նմին արիոս ի ձախ *խոտորեալ*՝ **գ** անձինք և **գ** բնութիւնս որոշեաց: - 80-81. Զայն ցուցանէ թէ յուղղութիւնս մեր երևի աստուած. այլ ի *խոտորիլն* ո՛չ: - 387. Եւ ա՛յս է յաջ կողմն *խոտորիլ*. իսկ առաջինքն ձախակողմեան էին: - 561. ...այն է հպարտութիւն որ խոտե՛մք և անարգեմք զճշմարիտ բարին. և ապա *խոտորիմք* և հետևիմք զհետ փոփոխելոյ բարւոյս. և այսպէս երևի հպարտութիւնն յամենայն մեղս: - 562

**ԽՈՏՈՐՆԱԿ +** Վեցերորդ՝ զի թէ երկինքն ո՛չ էր բոլորակ, յայնժամ արեգակն և այլ աստեղք յորժամ գային ի մէջ երկնից, մեծագոյն երևէին. քանզի ի միջին կիտէն երկնից առ մեզ է ուղղական գիծ. իսկ յարևելից առ մեզ է՛ *խոտորնակի* գիծ. և ուղղական գիծն կա՛րճ է քան *զխոտորնակ* գիծն: - 183. Եւ կենդանիք *խոտորնակ* և կողմաւոր: - 233. Ասեն վարդապետք թէ Բունն կիպարի էր վերուստ ի վայր. և *Խոտորնակն* արմաւենի: - 494

**ԽՈՏՈՐՈՒՄՆ +** Երկոտասաներորդ՝ այլ և ուրա՛խ լինին ընդ *խոտորումն* չարութեան. որպէս ասէ առակն: - 33. Այլ հետևիմք հարցն սրբոց, որք առանց կարծեաց և *խոտորմանց*՝ զմիաւորութիւնն քրիստոսի անշա՛րժ պահեն: - 83. Զի յամենայն մեղս երևի հպարտութիւն այսպէս. զի ամենայն մեղք խոտումն է պատուիրանացն աստուծոյ, և *խոտորումն* զհետ հեշտութեան մարմնոյ...: - 562. Երրորդ՝ զուղղութիւն իմացման նոցա առանց *խոտորման:* - 713

**ԽՈՏՈՒՄՆ +** Զի յամենայն մեղս երևի հպարտութիւն այսպէս. զի ամենայն մեղք *խոտումն* է պատուիրանացն աստուծոյ, և խոտորումն զհետ հեշտութեան մարմնոյ...: - 562

**ԽՈՐ +** Են և ո՛չ ասին ի յէքս. որք յանկոխ լերինս և ի *խորս* ծովուց անտեսք ի մարդկանէ: - 55. Լայն. երկայն. *խոր*. և բարձր ասի աստուած: - 102. Իսկ չորրորդն է խորհրդական աստուածաբանութիւն. յորժամ զամենայն զգալի և զիմանալի էութիւն արտաքոյ թողեալ, ի *խորս* ընթանամք մտօք և մտանեմք յամպն և ի մէղն ըստ մովսէսի. և ապա տեսանեմք զնա արտաքս որոշեալ յամենայն էից: - 122. Իսկ բանին ընդունարան է միտքն ի *խո՛ր* և ի հեռի կացեալ: - 131. Եօթներորդ՝ ներքին իմաստքն ամենևին *խոր* և բարձրագոյն տեսութիւն. զոր ըստ ինքեան միայն իմացումն տեսանէ և ի դուրս արտաբերէ՛: - 177. Նախ՝ զի *խո՛ր* է: - 184. Երեքտասաներորդ՝ երբեմն խորասուզեաց զլէգէօնն ի *խորս* անդնդոց: - 207. Մէջ գիշեր՝ երիտասարդութիւնն ի *խորս* մեղաց ննջեալ: - 266. Հինգերորդ, որ ասաց զերեք ծնն, երկայն և լայն և բարձր. և ո՛չ *զխորն* որ է՛ թանձրութիւն: - 344. Դարձեալ՝ օրէնքս յայտնի էր զոր ուսոյց. և աւետարանն ծածկեալ, զոր հոգին սուրբ յայտնէ որ քննէ *զխորս* աստուծոյ: - 405. Եւ **բժ**ան քարինքն դարձեալ ի գետն եղեալ, նշանակէ՛ զմեղս ի *խորս* անդնդոց ընկղմեալ: - 415. Դարձեալ՝ օձն ի յերեսս

երկրի, և վիշապն ի *խորս* և յանդունդս: - 488. Զի՞նչ նշանակէ քառաթև խաչն. երկայն, և լայն, *խոր*, և բարձր: - 493. Ասեմք թէ՝ վաղ առաւօտն և *խոր* երեկոյն զմէջ գիշերն նշանակեն...: - 515. Երրորդ՝ տիւ ասի պայծառ լուսոյն գիտութեան հասումն. և գիշեր ծածուկ *խորոցն* աստուծոյ անգիտութիւն անհասիցն: - 750. Եւ նմա աւանդել՝ յորում ծածկեա՛լ են ամենայն գանձք իմաստութեան. և որ քննէ *զխորս* աստուծոյ: - 759. Իսկ տիւ և գիշեր, այսինքն արևապէս հասումն նոցա՝ տիւ է համարեալ. և անհասութիւն *խորոցն* աստուծոյ՝ գիշեր: - 767. Դարձեալ, յերես անկեալ արտասուալի դիմօք հողս և փոշի՝ սուրբ գարշապարաց ձերոց, աղերսեմ ի *խորոց* սրտէ զիարազատ գութ հարց և եղբարց մեր հոգևորաց: - 773. Եւ անցեալ ընդ *խորս* չարեաց՝ օրհնեն զտէր և փառաւորեն: - 629

**ԽՈՐԱԳԷՏ +** Կշտերն բարակ՝ *խորագէ՛տ* է: - 247

**ԽՈՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ +** *խորագիտութիւն*. որ է՛ խոհեմութիւն: - 571. *Խորագիտութեամբ* պահէ զինքն յայլ մարդոյ. և միամտութեամբն այլոց վնաս ո՛չ առնէ: - 579

**ԽՈՐԱԳՈՅՆ +** Երկրորդն *զխորագոյն* խոնարհութիւնն: - 465

**ԽՈՐԱԶՄ** - Յորում պաշարեալք ի հինից նետողաց կրկին յարուցեալ *խորա՛զմ* անուանեալ ազգաց: - 788

**ԽՈՐԱՄԱՆԿ +** Զի ամենայն գայլ *խորամանկ* է. և ամենայն աղուես նենգաւոր. և այլն նոյնպէս: - 218. Հինգերորդ՝ զի *խորամա՛նկ* է և հնարօղ: - 218. Եւ փոքրիկն (է) *խորամանկ*: - 246. Եւ նօսրն՝ *զխորամանկն* ցուցանէ: - 246. Սևամորթն՝ *զխորամանկն* յայտնէ: - 247. Եւ մեզ պա՛րտ է իմանալ զչար խորհուրդ *խորամանկին* ի զանազան հնարս, և պատասխանել ի սուրբ գրոց. որպէս յայտ է ի գիրս Նագրեայ: - 323. Այսինքն իգամոլք իբրև զձիս. խեռաբարոյք որպէս զէշ. և *խորամանկք* որպէս զուղտ: - 334. Նա՛խ՝ պատրեսցէ զեկեղեցականս *խորամանկ* քարոզութեամբ...: - 708

**ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹԻՒՆ +** Այսպէս և զխոհեմութիւնն ի չար խորհուրդս և ի *խորամանկութիւնս* փոխեմք: - 564

**ԽՈՐԱՆ +** Ութերորդ՝ զի *խորանն* առաջին և երկրորդ և երրորդ՝ վարագո՛յր էր. և ծածկէին զմիմեանս և յայտնէին. այսպէս առաջին *խորանն* է աստուածայինքն. և երկրորդն հրեշտակացն. և երրորդն մերս՝ վարագուրիւք ծածկեալ՝ որ յայտնեն զմիմեանս: - 132. Երեսունևմի, Վասն *խորանին* առ հասարակ: - 283. Տասներորդ, մովսէս զեռայարկ *խորանն* կանգնէր ի չորից նիւթոց: - 328. Վասն է՞ր հրամայեաց ի զանազան նիւթոց հրաշալի *խորան* շինել և այլն: - 342. Նա՛խ՝ հրամայեաց աստուած գրել զլինելութիւն աշխարհի. և ձևացոյց ի միտսն մովսէսի. զի մի՛ մոռասցին հանգամանքն. վասն որոյ զգալի *խորան* հրամայէ կազմել: - 342. Երկրորդ՝ զորպիսութիւն և զձև աշխարհիս ցուցանէր ի *խորանն* եռայարկեան ի չորից նիւթոց փոխանակ դ տարերաց յանապական և յապականացու բնակչաց: - 342. Չորրորդ՝ ինքն անկարօտ գոլով ստեղծեաց զարարածս. և բարձեալ կրէ՛ զամենայն բանիւ. և նոյն ինքն հրամայէ՛ *խորան* կազմել: - 342. Վեցերորդ՝ սովո՛ր էին զտաճարս կռոցն զարդարել. վասն որոյ առաւել քան զնոսա զարդարէ՛ *զխորանն*: - 342. Ութերորդ՝ զի թէ թողցեն զվայելչութիւն *խորանիս* այս և այլոց հետևեսցին, անպատասխանի լիցին ի պատուհասն. որպէս եթող զապերախտ ժողովուրդն և էառ զվրանն մողոքայ և զաստղն հռեմփայ ի դատապարտութիւն ինքեանց: - 342. Տասներորդ՝ օրինա՛կ էր *խորանի* եկեղեցւոյ. զի նա՛ ստուե՛ր էր և սա՛ ճշմարտութիւն. վասն որոյ գեղեցկազարդ կազմեցաւ: - 342. Զի՞նչ նշանակէր **Ժ** փեղկ և ձև *խորանին*: - 342. Իսկ ձև *խորանին*, որպէս սագաշէն եկեղեցոյ: - 343. Եւ արտաքին սրահին պատուարն ի մէջ ունելով *զխորանն* յամենայն կողմանց **Ճ** կանգուն երկայն ի հիւսիսոյ և ի հարաւոյ կողմն: - 343. Եւ **ԺԵ** կանգուն բարձր. զի մի՛ երևեսցի *խորանն*: - 343. Ա՛րդ՝ եռայա՛րկ էր *խորանն*: - 343. Այլ թէ հարցանեն զորքանութիւն սիւնիցն. **Ծ** սիւն ի մէջ *խորանին*. և **Թ** սիւն վարագուրացն. և մի թափանց ի մէջն յարևելից յարևմուտս. որ լինի **Կ**. և **Ձ** սփռիչ. և **Խ** նիգք. և ամենայնն ոսկեպատ. որ բովանդակն լինի **ՃՁ** ի ներքս: - 343. Եւ ճարտարապետք *խորանին* բեսելիէլ ոսկւոյ և արծաթոյ: - 344. Եւ կատարեցաւ *խորանն* յեօթն ամիսս. և յերկրորդ ամին յառաջին ամսեանն կանգնեցաւ: - 344. Եւ ի **ԺԵ**ն նիսանի անցին ընդ ծովն որ է՛ **Ե** ամիս. և **Է** ամիս ի գործ *խորանին*: - 344. Այս քան վասն *խորանին*: - 344. Նա՛խ՝ զի տղա՛յք էին և ի տե՛սն զուարճանային. որպէս *խորանն* և ա՛յլ սրբութիւնք. նոյնպէս և զգեստք քահանայութեան: - 347. Վեցերորդ՝ զի իմանալի ունի լոյս՝ ցուցանէ՛ զգալի լոյսն. զի ի գիշերի ելեալ ի *խորանէն* հալածէր զխաւարն և լուսաւորէր զանապան: - 352. Ութերորդ, նոքա մատուցանէին ի ձեռագործ *խորանսն* որ ի մովսիսէ՛ կանգնեցաւ, իսկ տէրն մեր անցեալ ի ներքին կողմն վարագուրին...: - 354. Նա՛խ՝ բերել ի դուռն *խորանին* և տաճարին. և ո՛չ ի բազում մեհեանս. զի ցուցցէ զմինն աստուած՝ և յանուն նորա ընծայել: - 359. Ահարօն և որդիքն է օր

մնացին ի *խորանն*. վասն է՞ր մեք **խ**: - 363. Քանի՞ սեղան էր ի *խորանին*: - 364. Ի **դ** կողմն *խորանին* բանակեցան **բժ**ան ցեղքն. և ի մէջ նոցա *խորանն* էր Ղևտական ցեղօքն: - 378. Եւ ի յայս մէջս չուէր *խորանն*: - 378. Նոյնպէս և Ղևտացիքն շուրջ *զխորանաւն* բանակէին ի մէջ **բժ**ան ցեղիցն. և *խորանն* ի միջի նոցա այսպէս: - 378. Երկրորդ՝ զի միայն ժամու և աղօթից էր պիտանի *խորանն* այն, և ո՛չ այլ ինչ իրաց: - 379. Այլ որ զուղիղն ասեն ա՛յս է, կորխ՝ եցոյց զօրինակ զղջման. զի լուաւ խրատուն մովսէսի և մնաց ընտրութեանն աստուծոյ ի դուռն *խորանին*: - 382. Իսկ դադան ամենևին անզեղջ մնաց. թէպէտ գնաց մովսէս ի *խորան* նոցա՝ ո՛չ զղջացան: - 382. Իսկ որ ի *խորանէն* բերին մովսէս և ահարօն զգաւազանն ծաղկեալ. զի ի սիօնէ՛ ելցէ օրէնք. որ է՛ յեկեղեցւոյ ամենայն իշխանութիւն: - 382. Իսկ մովսէս հրամանաւն աստուծոյ արար պղնձի օձ. և բարձրացոյց ի դուռն *խորանին*. և որ հայէր ի նա՝ ապրէր ի թունից օձիցն: - 386. Որպէս զաւար մադիանացոց մովսէս մասնաւորեաց ի *խորանն* աստուծոյ: - 390. Ասա՛ թէ՝ քահանայիցն հրամայեաց ի բաց կալ յամուսնութենէ յորժամ մտանէին ի տաճարն և ի *խորանն*. և յորժամ լսէին զօրէնս աստուծոյ զօրեայ սրբեցան: - 404. Երկրորդ՝ զի ի սուրբ տեղոջ *խորանին* է: - 427. Երեսունևզ, պահեցաւ սուրն գողիաթու ի *խորանն*. և խաչն փրկական ի յեկեղեցի: - 437. Նաև յանձեռագործ *խորանն* հրաւիրէր զսիրելիս իւր: - 442. Եւ աւուրք պաշտամանն էր երկոտասան. **ե** օր քաւութեանն վասն որբոյն յանապատին. և **է** օր տաղաւարահարացն ի յիշատակ *խորանաւ* բնակելոյն յանապատին ամս **խ**. և այլ սքանչելեացն զոր գործեցաւ անդ: - 483. Եւ **խ** օր յօդս զի **լգ** օր զօդս սրբեսցէ ի ճենճերից կռոց. և **է** օրն ի խորհուրդ է աստեղեան *խորանացն* ի կայանս հօգւոցն: - 520-521. Երրորդն ասեն եթէ՝ **բ** ազգն գեթսոնի և **բ** գունդն մերարեայ՝ զչորս փոքրիկ աստիճանս ունէին ի *խորանն*. զպահպանութիւնն մինչ ի ջահընկալն որ զաշտանակն բառնային. և որդիքն կահաթու էին բարձրագոյնք: - 609. Երկրորդ, որպէս նա եռայարկեան *խորան*, որ է՛ գաւիթն, և մէջն և բեմն: - 613. Երրորդ՝ զի մովսէս ի կանգնել *զխորանն* օրինակի՝ արեամբ նոխազաց և ջրով և իւղովն էօծ և սրբեաց: - 615. Վասն է՞ր հինգքն **բժ**ան օր նաւակատիս կատարէին որ է՛ նորոգումն *խորանի* տաճարին: - 616. Երրորդ՝ ի բանակիլն խաչաձև բանակեցան երկոտասան ցեղքն, և *խորանն* ի միջի. որ նշանակէ՛ *զխորանն* եկեղեցւոյ՝ խորհրդով խաչին քարոզեալ ընդ **դ** կողմ աշխարհի: - 616. Չորրորդ՝ զի *խորանն* մովսէսի խաչաձև էր կանգնեալ որպէս մերս եկեղեցի: - 616. Որ ընդ տիւ և ընդ գիշեր ի *խորանին* երգէին: - 626. ...և բերէր ի *խորանն* հանգուցանէր. որպէս ցուցաւ յառաջագոյն յերկրորդ թագաւորութեանց **ժդ** համարն: - 645. Իններորդ, **գ** տեղիք մարդկան նշանակեցաւ յեռայարկ *խորանն* մովսէսի. առաջին միջին և վերջինն: - 682. ...և վասն եօթնից աստիճանաց, և եօթն աստեղան *խորանացն*, եօթօրէք կատարեմք: - 683. *Խորան* ասեն աջակողմ և ձախակողմ. այսինքն ի քաղցր հայեցողութիւնն քրիստոսի որ է աջ. և ի դառն և ահաւոր որ է՛ ձախ: - 686. ...են հոգիք նոցա ի միում *խորանի* մինչ դատաստանն ընտրեսցէ զնոսա և որոշեսցէ. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 687. Սոցա համաձայնին ընդհանուր ամենայն վարդապետք գոլ ի յերկնային *խորանս* անմարմնոց ի զանազան օթևանս լուսոյ: - 688. Իսկ թէ ո՞ւր իցեն սոքա երկոքեանս, տեսիլն յօհաննու յայտնապէս ցուցանէ. սրբոց *խորանս* ասէ զվերինն սիօն և զհրեշտակացն դասս: - 688. Այս է *խորանն* առ երկնիւ ուր ժողովին արդարք և մեղաւորք հոգիք հաւատացելոց. որք դատաստանաւն կատարին, ակնունելով ողորմութեանն աստուծոյ: - 688. Այսոքիկ ասին աջակողմեան *խորանք*: - 688. Իսկ ձախակողմեան *խորան* է՛ ի յօդս յաներևոյթ տեղիս. ուր ժողովին հոգիք չարաց և մեղաւորաց. որք դատաստանաւն դատապարտին: - 688. Եւ այսոքիկ են աջակողմեան և ձախակողմեան *խորանք*: - 689. Ի մի ասացին գոլ *խորանս* ի ներքոյ երկնից զարդարս և զմեղաւորս. որք դատաստանաւն որոշին: - 689. Դժոխքն նշանակէ զդժուարին և զնեղ տեղիս որ է՛ *խորանն* ձախակողմեան. ուր մեղաւորքն կրկին ունին զտանջանս: - 690. Երկրորդն *խորանն* զինուորական: - 755. Իսկ Երրորդն արքայութիւն, գուշակի յաւազանն պղնձի. զոր հրամայեաց մովսէս առնել ի հայելեացն կանանց որ նստէին առաջի դրան *խորանին*. յորում լւանային որդիքն ահարօնի նախ քան զմտանելն ի սուրբն սրբոց: - 756. Կանայք առաջի դրան *խորանին* նստեալք՝ են հաւատացեալքն. որք դրան երկնաւոր պալատին բանիլ ինքեանց ակն կալեալ մնան: - 756

**ԽՈՐԱՍՈՒԶԵՄ +** Երեքտասաներորդ՝ երբեմն *խորասուզեաց* զլէգէօնն ի խորս անդնդոց: - 207. Իններորդ՝ հանեալ ի գետոյն **բժ**ան վէմս շինեաց սեղան. և նոյն թուով *խորասուզեալ* ընկղմեաց: - 418

**ԽՈՐԵՆԱՑԻ -** Զայս ամենայն ոմանք անանիայի տան. և ոմանք *խորենացւոյն*: - 637

**ԽՈՐԹ +** Սոքա աւելորդք և *խո՛րթք* են ի տգիտաց ասացեալ: - 634. Այլ թէ ասեն՝ հաղորդադրամ,

կամ խոստովանադրամ, *խո՛րք* է. յազահութեանց երիցանց սահմանեալ և ո՛չ ըստ կանոնաց որպէս այլքն: - 684

**ԽՈՐԻ կամ ԽՈՒՐԻ կամ ԽՈՐ +** ...զոր արարեալ է սրբոյն եփրեմի *խորին* ասորւոյ ի նիկոմիդացոց քաղաքին: - 658-659

**ԽՈՐԻՆ +** Բայց է և այլ իմն տեսութիւն *խորին* և գեղեցիկ. զի նա՛ վասն սրբութեան չարչարեցաւ. և որ ոք ևս չարչարեսցի վասն սրբութեան՝ մի և նոյն է դիտաւորութիւն երկուցն. յայնժամ օգնեսցէ նմա. այսինքն միաւորեսցի ընդ նա՛ սրբութեամբն, և եղիցի աստուած ամենայն յամենայնի. այսինքն կատարեսցէ զնա աստուածս առնելովն. և եղիցին աստուածք ամենայնքն: - 43. Մետասաներորդ՝ աստուծոյ միա՛յն է յայտնել զգաղտնիս. որպէս ասէ դանիէլ, (աստուած յերկնից ինքն յայտնէ *զխորինս* և զգաղտնիս:) - 58

**ԽՈՐԻՍԽ +** Իններորդ՝ ետ *զխորիսխ* քաղցր հօր և մօր իւրոյ ի ճաշակ: - 422. Զոր և ես զօրէն մշակաց բազմահաւաք պտղոց. կամ փունջ մի անուշահոտ բազմերանգ ծաղկանց. կամ չնչին թռչնոյ *զխորիսխ* մեղու. կամ որպէս զլոմայս այրւոյն տառապեալ գոյիւ: - 772

**ԽՈՐԽ +** Չորրորդ՝ *խորխ*. որպէս օձից: - 216. Երկրորդ՝ զի *զխորխն* ձգէ և զաչսն լուսաւորէ՛: - 218. Եւ զի մերկացոյց զնախաստեղծքն ի փառաց, *զխորխ* իւր մերկանայ: - 219

**ԽՈՐԽՈՐԱՏ +** Վասն այն ո՛չ կարեն իմանալ՝ զի ասէ տէրն, «կոյր կուրի առաջնորդէ՛, երկոքին ի *խորխորատ* անկանին». այսպէս որ առնէ զգայարանս առաջնորդ իմացման՝ անկանի ի մոլորութիւն: - 31. Ութերորդ՝ ի *խորխորատէ՛* չարեաց ելցեն օրինօք. զի գեբաղն՝ «հին ծոր» թարգմանի: - 402. Դարձեալ անկանիլ ի *խորխորատ*՝ է՛ ժամանակաւոր. այլ մնալն անդ՝ է՛ յաւիտենական: - 744

**ԽՈՐՀԻՄ +** Չորրորդ՝ զի թէ զոր ինչ ասեմք՝ ի հարկէ ճշմարիտ էր, յայնժամ աւելորդ էր *խորհիլն* մեր...: - 9. Ապա յա՛յտ է՝ թէ զոր ինչ *խորհիմք*՝ ի հանդերձեալն զնոյն առնեմք. և ո՛չ ի հարկէ բանն մեր որպէս ցուցաւ: - 9. Դարձեալ՝ ունիմք խորհուրդ, և ընտրեմք զառնելիսն, և խոտեմք զոչ առնելիսն. և բազում անգամ *խորհելովն* հանդիպիմք բարւոյ, և փախչիմք ի չարէ. և խորհուրդն ի հնարաւորա՛ցն է որպէս ասացաւ և ո՛չ ի հարկաւորացն: - 11. Երրորդ՝ զփոփոխումն ի խորհրդոց և կամաց մարդկան. զի բազում ինչ *խորհիմք* և կամիմք և ո՛չ կատարի: - 26. Որք զաչս իմաստից յիմանալի ճառագայթիցն խուսափեցին թիւր կամօք, և խոտոր մտօք. զանուղղայս *խորհելով*, և զանպատշաճս բարբառելով...: - 31. Եւ որպէս նեռնն ազդումն է սատանայի՝ որպէս առաքեալն ասէ. և նոքա յազդմանէ սատանայի՝ *խորհին* և խօսին զանազան հերձուածս ըստ չար խորհրդոց նորա: - 35. Վեցերորդ՝ զի պահանջէ՛ ի սիրողաց իւրոց միշտ զայն *խորհիլ*. զի որպէս ինքն վասն սիրոյ զանձն իւր եդ ի վերայ մեր, և մեք վասն սիրոյ նորա փոխարէն դիցուք ի վերայ նորա: - 43. Եւ թէ էր երբեմն հայր առանց բանի և իմաստութեան, ի՞ւ *խորհէր* յետոյ ծնանիլ զորդի: - 51. Զի թէ բանին, անմնման ինչ *խորհիս*. զի նա՛ բնութեամբ ունի. մանաւանդ եղեր արիոսեան: - 70. Եւ միտք զվերինս *խորհելով* հեշտանայ: - 104. Եօթներորդ ի մեզ, մարդն բանն. առիւծն ցասումն. եզն ցանկութիւնն. արծուին գիտութիւն բարձրաթռիչ զվերինն *խորհիլ* միշտ: - 133. Յաճոյ թուեցաւ նոցա բարձրութիւն նորա. *խորհելով* զի թէ նա աստուծոյ յաղթեալ էր, նոքա ևս այլոցն իշխէին կարողութեամբ: - 149. Իսկ դևք զանհաստատսն մտօք՝ ի ստորևս քարշեն և յերկիր կործանեն զերկրաւորս *խորհելով*. և ընդ ինքեան ի յատակս դժոխոց մերժեն: - 152. Եւ աստ ասէ իրինոս՝ զի թէ յաւիտենական է հուրն, զիա՞րդ վախճան ածեն տանջանաց յաւիտենից ունայնախոհքն. թերևս կարծելով թէ ի հուրն մաքրեսցի. զի մի՛ լիցի աշակերտացն ճշմարտութեան *խորհիլ* և ասել: - 153. Չորրորդ՝ զի ի վեր տեսցուք աչօք. և մտօք զվերինն *խորհիմք*...: - 188. Այլ զանազան զօրութիւն ի զանազան ներգործութեանցն երևի. որ է՛ աճիլն. զգալն. և *խորհիլն*: - 259. Եւ ըստ որում իմանայ և *խորհի*, կոչի բանական հոգի. որպէս այլուր բաժանի ի տեսողական զօրութիւնն. և յիմացականն. և ի յիշողականն. մնալով անբաժանելի ներգործէ՛ ի նոսա: - 259. Նա՛խ՝ զի մնացորդք գործոց և խորհրդոց կերպարանին ի յիշատակարանս հոգոյն զոր ինչ գործեաց ի անցելումն, կամ *խորհեցաւ* վասն հանդերձելոյն: - 268. Յինգերորդ՝ ընդ դէմ հպարտացելոյն որ *խորհէր* զաթոռ իւր դնել յամպս և անկաւ յերկիր. նա՛ խոնարհեցաւ յերկիր և ել յերկինս: - 323. Զի առաջին խորհուրդ է մեր, յորժամ միտքն առ աստուած ամբառնայ զվերինն *խորհելով*: - 331. Քսանևէ, սաւուղ փոխանակ պատուելոյ *խորհէր* դաւթի չարիս...: - 436. *Խորհի* ակիտոփէլ չար վասն դաւթի և խեղդի. և յուդա վասն տեառն խորհեցաւ և խեղդեցաւ: - 438. Նոյնպէս պա՛րտ է ամենայն մարդոյ յորժամ լսիցէ զբանն, նախ *խորհիլ* և հարցանել, և ապա՛ հաւանիլ: - 465. *Խորհիլ*՝ զի ընտրեսցէ զճշմարիտն: - 465. Զոր զայսպիսի *խորհօղն* և

ասացօղսն ճզովէ՛ եկեղեցի ամենայն ուղղափառաց ամէն: - 475. Վերին մասն միշտ զվերինն *խորհիլ* ուր քրիստոս նստի...: - 493. Երրորդ՝ մարգարէք որպէս *խորհեցեալն* բան. առաքեալք որպէս խօսեցեալն. և վարդապետք որպէս գրեալն: - 535. Եւ զայս առնէ միտքն իբրև մշակ. որ առեալ զսերմն և բազմաբեղունս աճեցուցանէ. այսպէս և միտքն *խորհելով* զչարն՝ զայսոսիկ ախտս առաւելու ի մեզ: - 564. Յորժամ զայս *խորհեցաւ*, արտաքսեցաւ յերկնից: - 569. Խոհեմ մարդն ո՛չ պարտի վաղվաղել ի գործ զինչ և է՛. այլ պա՛րտ է նա՛խ *խորհիլ* որ ո՛չ խաբի: - 579-580. Իսկ յորժամ քահանայն լաւ քննէ զխղճմտանքն ժողովրդեանն. *խորհի* վասն ապաշխարութեանն թէ ո՞րպէս կարէ ապաշխարել...: - 601. Եւ որպէս հրեշտակապետն գաբրիէլ, նախ ետ զաւետիս սրբոյ կուսին, և նա՛ *խորհէր* ի միտս...: - 610. Եւ զմբէթն զվերինն *խորհիլ* ուր քրիստոս նստի ընդ աջմէ աստուծոյ: - 614. Եւ քահանայքն հոլոնեալ. որ է ժողովեալ և *խորհեալ*: - 639. Զիա՞րդ վախճան ածեն տանջանաց ունայնախոհքն. թէրևս կարծելով թէ ի հուրն մաքրեսցին. զոր մի՛ լիցի աշակերտաց ճշմարտութեանն *խորհիլ*: - 703. Եօթներորդ, այլ և **գ** է գործիք բանին. խելքն որ ծնանի. սիրտն որ *խորհի*. լեզուն որ խօսի: - 742

**ԽՈՐՀՈՒՐԴ +** Չորրորդ՝ զի թէ զոր ինչ ասեմք՝ ի հարկէ ճշմարիտ էր, յայնժամ աւելորդ էր խորհիլն մեր. զի *խորհուրդն* ո՛չ է ի հարկաւորացն. այլ ի ներընդունակացն. զի կարէ՛ լինիլ, և ո՛չ լինիլ. զի թէ առնեմք զայս՝ եղիցի՛ այն. և թէ ո՛չ առնեմք զայս՝ ո՛չ եղիցի այն: - 9. Դարձեալ՝ ունիմք *խորհուրդ*, և ընտրեմք զառնելիսն, և խոտեմք զոչ առնելիսն. և բազում անգամ խորհելովն հանդիպիմք բարւոյ, և փախչիմք ի չարէ. և *խորհուրդն* ի հնարաւորա՛ցն է որպէս ասացաւ և ո՛չ ի հարկաւորացն: - 11. Երրորդ՝ զփոփոխումն ի *խորհրդոց* և կամաց մարդկան. զի բազում ինչ խորհիմք և կամիմք և ո՛չ կատարի: - 26. Նոյնպէս զիմանալի *խորհուրդս* և զգիտութիւնս զոր տկարանայ միտք, կարողանայ հաւատքն տեսանել. այլ ո՛չ ունի հաւատ՝ քան զտեսութիւն մտացն: - 31. Եւ որպէս նեռնն ազդումն է սատանայի՝ որպէս առաքեալն ասէ. և նոքա յագդմանէ սատանայի՝ խորհին և խօսին զանազան հերձուածս ըստ չար *խորհրդոց* նորա: - 35. Եւ գիտեմք հաւաստի թէ որդի էր. զի հրեշտա՛կ անուանէ զնա գիրն. և զի հայր երբէք հրեշտակ ո՛չ կոչեցաւ՝ այլ որդի ըստ եսայեայ մարգարէի, որ «հրեշտակ մեծի *խորհրդոյ»* կոչէ զորդի. որ եղև մեծ *խորհրդոյս* սպասաւոր. այսինքն փրկութեան մերոյ՝ մարդանալովն իւր: - 40. Եւ կամ թէ զո՛չ ոքն ասիցէք, ահա նո՛ր աղանդ չարափառութեան և խափանումն տընօրէնութեան մեծի *խորհրդոյն*: - 68. Եւ տէրն զի գիտէր *զխորհուրդս* նոցա, ասէ «զի՛ խորհիք ի սիրտս ձեր»: - 71. Ծածուկ և զանխո՛ւլ է աստուածաբանութեան տեսութիւն հասարակ մտաց. և հազիւ ճանաչի կիրթ *խորհրդոց*՝ և նուրբ քննութեանց սրբոց: - 81. Որք ուսուցին մեզ *զխորհուրդ* աստուածպաշտութեան որպէս ցուցաւ: - 84. Եւ ուրանալ զբոլոր տնօրէնութեանն *խորհուրդ*: - 90. Երանելին պօղոս՝ *զխորհուրդն* աստուածպաշտութեան յայտնի և մեծ ասէ. ըստ որում երևեցաւ բանն մարմնով. բնաւին ապա բաժանելն ի մարմնոյն ամբարշտութիւն է և իմացմամբ և բանիւ: - 93. Իսկ թէ ասի ուրեք՝ ի հոգւոյն և ի հօրէ օծանիլ նմա, վասն տնօրէնութեանն *խորհրդոյ* ասին: - 95. Ա՛րդ՝ եթէ քրիստոս տգէտ է և նոքա զմիտս տգիտի ունէին. ո՞րպէս լինէին հազարապետք աստուծոյ *խորհրդոցն*. կամ հազարապետքն առաւել են քան *զխորհուրդն* աստուծոյ: - 96. Եւ առ *խորհուրդն* ճանաչումն ամենայն առնելեաց: - 97. Այլ դատաւորին պարտէ ունիլ անհուն գիտութիւն. զի քննել կարասցէ զամենայն բնութիւն հրեշտակաց և մարդկան. և զամենայն գործս եղեալս և զլինելոցն. *զխորհուրդս* և զբանս բոլորից. զառաջինն՝ զմիջինն՝ և վերջինն: - 100. Նախ՝ զի *խորհրդով* և հաւատով տեսանի և ո՛չ քննութեամբ մտաց: - 123. Երկրորդ՝ զի *խորհրդով* և ծածո՛ւկ է. և ո՛չ առակաւ և նշանակաւ. որպէս այլ աստուածաբանութիւնքն որպէս ասացաւ ի վերոյ: - 123. Երրորդ՝ զի *խորհրդով* և ծածուկ է պահելի ի հերձուածողաց և ի հեթանոսաց և յանվարժ մտաց ախմարաց...: - 123. Եւ զմասնաւոր *խորհուրդս* բա՛նն յայտնեաց: - 125. Զի առաջինքն *խորհրդով* և օրինակաւ՝ և վերջինքս իրօք և ճշմարտութեամբ լուսաւորեալք ի նմանէ: - 126. Որև այժմ ի յեկեղեցի ի նոյն *խորհուրդ*՝ սերօբէին պատկեր որ է քշոցն՝ ի ձեռն սարկաւագին աւանդի՝ որ է՛ մաքրօղն. և երրորդ կարգ յետ քահանային և քահանայապետին: - 135. Երկրորդ՝ մարդկան քահանայութիւն նիւթական *խորհրդով* ներգործի. որպէս հացիւ գինեաւ և այլով. իսկ նոցայն աննիւթութեամբ կատարի: - 139. Եւ սոյնպէս ածէ ի ներքս զչար *խորհուրդսն* թէ ի յարթնութեան թէ ի ննջման: - 145. Սակայն զչար *խորհուրդն* ո՛չ կարէ ածել ի ներքս որ միայն հաւանութեամբն է չար: - 145. Եւ ոմանք ասեն թէ՝ ընդ պատիւ մարդոյն նախանձեցաւ և ի *խորհուրդ* եմուտ թէ սորա կատարումն ի՞նչ լինի, և ո՛չ կարաց հասու լինիլ: - 147. Եւ զնայելոյն պատճառն իրինոս մեկնէ թէ՝ զմարդոյն լինիլն ետես այնպէս փառաւոր և ի *խորհուրդ* եմուտ որպէս ասէ յոբ...: - 147-148. Նախ՝ զչար *խորհուրդն* սատանայի

առարկէ՛: - 148. Եւ ապա զի ցուցցէ թէ՝ չար *խորհրդոցն* վրէժ խնդրութիւն կայ և պատիժ: - 148. Դարձեալ զպայծառացեալսն մկրտութեամբ որպէս զաստեղս և յերկինս եդեալ *զխորհուրդս* իւրեանց: - 152. Նախ զի փրկական է *խորհուրդն* ամենեցուն. այլ անարժան մերձեցեալն կորնչի. յիրաւի արգելցի ի սպասաւորութենէն: - 167. Ապա ուրեմն ստուգապէս և յիրաւի՛ է կանոնեալ սուրբ հարցն, զի զայնպիսին արգելցեն ի սպասաւորութենէ *խորհրդոյն*: - 167. Զորօրինակ՝ ներտրամադրեալ բանն է՛ նախ ի *խորհուրդն* կատարեալ. և յետոյ ժամանակաւ լինի յառաջ բերեալ և գրեալ բան. և նո՛յն բանն էր յառաջ բերեալս և գրեալս որ էր նախ ի *խորհուրդն*: - 169. Արբանեակ լինի և մեկնէ *զխորհուրդս* թագաւորաց: - 177. Չորրորդ՝ զի նիւթք եղեն երկնաւոր *խորհրդոյն*. որպէս ի տնկոց փայտ խաչին. և յայլ բուսոց հաց պատարագին և գինի. և ձէթ մեռոնի կազմեցաւ: - 212. Ութերորդ՝ օրինակ՝ զի գլուխ օձին է չար *խորհուրդն* որ մտանէ ի մեզ. պա՛րտ է սպանանել զնա: - 219. Երրորդ՝ զի երեսն հայելի է սրտին. և նորա փոփոխմամբն *զխորհուրդն* ճանաչեմք...: - 234. Դարձեալ *խորհուրդ* մարդոյն ճանաչի յերից. այսինքն կամ ի կերպէ՛ և յօրինակէ խօսիցն և ձայնին: - 250. Այսպէս և շնչականն գոյացեալ ի իերորդ աւուր՝ կիսակատար գոլով բանականին զնոյն ունի *խորհուրդ*: - 262. Եւ կամ որպէս մարդ կատարեալ բերելով ինքեան զ**դ** և զ**ժ** ինն *խորհուրդ*: - 263. Իսկ որք ի **խ** աւուրս ծնանին և կամ ի **ի**, որպէս հաւ. ունին նոքա *զխորհուրդ* չորից տասանց և չորից հնգից, ըստ **ե** զգայութեանց ներքոյ և **ե** զգայութեանց արտաքոյ որպէս ասացաք: - 263. Իսկ մարդոյն *խորհուրդն* ըստ չորից տարերց և երից զօրութեանց տնկականին եօթեամբ կատարի. թիւ շնորհալի և մշտակոյս ըստ աթենայ. զի ոչ ծնեալ լինի և ո՛չ զայլս ծնանի: - 264. Նա՛խ՝ զի մնացորդք գործոց և *խորհրդոց* կերպարանին ի յիշատակարանս հոգոյն զոր ինչ գործեաց ի անցելումն, կամ խորհեցաւ վասն հանդերձելոյն: - 268. Իսկ սահմանօրէն, հանճարն կարծիք է կապեալ ընդ ուղիղ *խորհրդոյ*: - 270. Երրորդ՝ կարծիք է, զի ի ներկայս ո՛չ է. և ուղիղ *խորհուրդ*, զի յապագայն լինելո՛ց է: - 270. Դարձեալ՝ հանճարն է տրամախոհութեանն. զի կարծիք է կապեալ ընդ ուղիղ *խորհրդոյ*. իմաստութիւնն իմացմանն. գիտութիւնն յիշողութեանն: - 270. Երրորդ՝ զմաշկեղէն պատմուճանն մերկանալ. այսինքն *զխորհուրդս* մարմնեղէնս և զմեռելոտիս: - 281. Տասներորդ՝ առ յատուկ բարին մերձենալ. այսինքն առ ամենևին զուտ բարին որ է՛ աստուած. *խորհրդով* բանիւ և գնացիւք: - 281. Տասնն**դ**՝ Վասն անդրանկութեանն *խորհրդոյ*: - 283. Երեսուն**բ**, Վասն տապանակին և *խորհրդոց* նորին. և այժմ ո՞ւր է տապանակն: - 284. Քառասուն**ա**, Կենդանեաց զենումն ի նորս *խորհուրդ*: - 284. Վաթսունէ, Քաղաքացն ապաստանի. և *խորհուրդ* նոցա: - 285. Եւ սատանային յայտնի են **է** չար *խորհուրդքն* որ կոչին գլխաւոր մեղք: - 287. Երկրորդ այսպէս. **գ** մասանց աւելին և պակասն լինին **զ** չարիք. և մի գործ մարմնոյն որ լինի է նենգութեան *խորհուրդ*: - 287. Եւ տատանեալ իբրև զծով ալեկոծեալ միշտ *խորհրդովն*: - 287. Ուր եկեալ աբրահամ, և նա՛ել ընդ առաջ նորա ջերմ բաղարջ հացով և գինեաւ օրինակ տէրունեան *խորհրդոյն*: - 300. Իսկ հօրն ամենևին ո՛չ պղտորեցան *խորհուրդք*. և ո՛չ տրտմեցան սիրտք. և ո՛չ տխրեցան դէմք: - 304. Զի՞նչ է անդրանկութեան *խորհուրդն* զոր եսաւ վաճառեաց: - 308. Իններորդ՝ ևս մեծագոյն *խորհուրդ*. զի անդրանիկ բանն աստուած ի հօրէ՛ ծնեալ՝ եկն ի բնութիւնս մեր և եղև գլուխ մեր...: - 309. Ա՛րդ՝ զայս քան մեծագոյն պատիւ և *խորհուրդ* անդրանկութեանն անարգեաց եսաւ ընդ պոռնկութեան. և վաճառեաց ընդ կերակրոյ: - 309. Հինգերորդ՝ զի ունի զվերոյ ասացեալն *խորհուրդ* տասնեակ թւով. վասն որոյ յիրաւի անդրանիկն պատւեալ լինէր թէ ի հոգևորն և թէ ի մարմնաւորն: - 310. Իսկ այն որ երբեմն անդրանիկն խոտիւր և կրտսերն ընտրիւր, բազում ունի *խորհուրդ* և նշանակութիւն: - 310. Նա՛խ զայս ունի *խորհուրդ*, զի յառաջագոյն ընտրեալքն՝ յետոյ եղեն ի ժամանակի: - 310. Տասներորդ՝ ևս մեծագոյն *խորհուրդ*. զի բանն աստուած որ անդրանիկ էր հօր, եղև կրտսեր մարդ ի ժամանակի և փոքր. ըստ որում կոչեաց զինքն «փոքրիկ». զի բնութիւն մարդոյս ընդ ինքեան խառնելով արասցէ մեծ և անդրանիկ: - 311. Այս քան ըստ *խորհրդոյ* որ անդրանիկքն խոտեին, և կրտսերքն պատուեին: - 311. Բազում ունի *խորհուրդ*: - 321. Չորրորդ՝ ի *խորհուրդ* յարութեան մերոյ, որ վերըստին գոյացուցանէ ի խաւարէ՛ գերեզմանին և ի լոյս հանէ և ուրախութեամբ զարդարէ՛ և փառաւորէ՛: - 321. Երրորդ՝ ի *խորհուրդ* **ժ** բանեան օրինացն **ժ** պատարագ մատուցանէր: - 322. Ե՝ փոխէ *զխորհուրդն*...: - 322. Վասն այն յոբ **ժ** պատարագաւ սրբէ՛ր զ**ժ** մասնաւոր մեղսն որ գտանին յարբեցութեան. և մին զուարակն ի սրբութիւն վասն ակամայ և *խորհրդոյ* մեղացն: - 322. Այլ ըստ մտաց՝ ունի **զ** *խորհուրդս*: - 323. Վեցերորդ՝ ի *խորհուրդն* ադամայ որ անկաւ յերկիր փշաբեր, անկաւ յոբ յերկիր և յաղբիւս: - 323. Եւ մեզ պա՛րտ է իմանալ զչար *խորհուրդ* խորամանկին ի զանազան հնարս, և պատասխանել ի սուրբ գրոց. որպէս յայտ է ի գիրս նագրեայ: - 323. Նախ՝

ուղղութիւն ընկերաց. **բ** գոհութիւն և համբերութիւն. **գ**՝ իմանալ զչար *խորհուրդն* սատանայի. **դ**՝ աղօթք և պահք. **ե**՝ խոնարհութիւն և ճշմարտութիւն. որ գերագոյն է ամենայն զինուց և իսպառ կորուսանէ զչար որ մայրն է ստութեան և հպարտութեան: - 324. Ի *խորհուրդ* է դարու վշտաց կենցաղոյս. և յութներորդին ազատութիւն բնութեանս: - 326. Իսկ *զխորհուրդ* նորն ադամայ բազումս տպաւորէր: - 327. և նա՛ կոչի հրեշտակ մեծի *խորհրդոյ* ըստ մեծին եսայեայ...: - 330-331. Նա՛խ թէ՝ զմեռելոտի *խորհուրդն* հա՛ն ի մտաց քոց: - 331. Եւ հանել զկօշիկս յոտից, այսինքն ի վերջին *խորհրդոց* յերկրաւորս մերձեցեալ: - 331. Զի առաջին *խորհուրդ* է մեր, յորժամ միտքն առ աստուած ամբառնայ զվերինն խորհելով: - 331. Եւ միջին *խորհուրդ* է, յորժամ ի քննութիւն էիցս պարապի: - 331. Իսկ վերջին *խորհուրդ* է, յորժամ վասն հարկաւոր պիտոյից կերակրոյ և հանդերձի՝ յերկրաւորս հպիմք: - 331. Երկրորդ՝ զի զանդրանիկ *խորհուրդն* աստուածպաշտութեան կորուսին յանձինս իւրեանց. վասն որոյ անդրանիկք նոցա մահացան և ապականեցան: - 334. Զի՞նչ էր *խորհուրդ* մանանային ի մէջ սափորին: - 339. Եւ **ժ** բան է՛ օրինացն. և **խզ** իրաւանցն. բովանդակն **ծզ**. *խորհուրդ* ազատութեան մերոյ հաւատով Երրորդութեանն: - 340. Եւ թէ ոք ասիցէ, պա՛րտ է ջուր խառնել ի *խորհուրդն* որպէս և մովսէս: - 341. Նա՛խ՝ զի մովսէս յայտնապէս զկէս արեանն անապական եհեղ զսեղանովն որ նշանակէր զանապական *խորհուրդ* արեանն. և զկէսն խառնեաց ի ջուր որպէս ցուցաւ ի *խորհուրդ* մկրտութեան և հաղորդութեանն խառնեալ: - 341. Բազում է *խորհուրդն*. բայց նախ հրեշտակաց յարմարի ցոյցք տապանին. զի նոքա են անապական և անմահ: - 344. Դարձեալ՝ տապանակն է՛ ի *խորհուրդ* սուրբ աստուածածնին: - 345. Ա՛յս *խորհուրդ* է տապանակին որ ի սրբութիւն սրբոցն: - 345. Ի *խորհուրդ* կենսատու հացին որ յեկեղեցին: - 346. Այլ և է *խորհուրդ* եկեղեցւոյ, և է զօրութիւնք հոգւոյս. չորսն ստացական, և գն աստուածային առաքինութիւնք: - 347. Չորրորդ՝ ի *խորհուրդ* վայելչական մարմնոյ ճշմարիտ քահանայապետին մերոյ քրիստոսի: - 347. Իսկ հնոյն *խորհուրդ*, **դ** որակ նիւթոցն՝ **դ** տարերացն. և ոսկին անապական՝ երկնից: - 348. Խառնեալ և աղացեալ ի *խորրուրդ* չորից առաքինութեանց մերոց: - 349. Չորրորդ՝ ի *խորհուրդ* հին օրինացն որ բարձաւ և նոր օրէնք տուաւ: - 350. Երրորդ՝ ի *խորհուրդ* նոր օրինացս որ հաստատ մնաց: - 350. Հինգերորդ՝ ի *խորհուրդ* սրբութեան. զառաջինն պարգևէ՛ աւազանաւն. և յետ մեղանչելոյն ապաշխարութեամբ և վաստակօք պարգևէ՛ զնոյնն: - 350. Եւ դարձեալ՝ **դ** են սեռք մեղանչելոյ. այսինքն *խորհուրդ*, խօսք, գործ, և յամառութիւն ի մեղս: - 351. Այլ և ի *խորհուրդ* ծննդեանն մերոյ: - 353. Երրորդ՝ անդ նկարեալ էր մեր հոգևորն. և աստ բացայայտեալ *խորհուրդ* տնօրէնութեան քրիստոսի աստուծոյ մերոյ: - 353. Եւ ո՛չ միայն այս, այլ զեօթն օր անխմոր բաղարջ ուտէին ամենայն ժողովուրդն. և Աբրահամ և ղովտ բաղա՛րջ յօրինեցին *զխորհուրդ* փրկական մարմնոյ տեառն որ ի վերնատունն բաղարջով աւանդեաց: - 356. Ապա ուրեմն սո՛ւտ են ազգն յունաց և ասորւոց որ խմոր դնեն ի *խորհուրդն*: - 356. Ա՛րդ՝ մանանայն նշանակէ՛ զփրկական *խորհուրդն* ուր ո՛չ է աղ: - 356. Եւ զանգեալ նաշհին զյիշատակ մարտիրոսացն՝ ուր խառնեմք աղ ի հատ պատարագին և իւղ անոյշ ի *խորհուրդ* նոցա: - 356-357. Այլ որք յամառելով յօրինակն՝ ա՛ղ խառնեն ի *խորհուրդն*, պա՛րտ է նոցա խառնել և ձէթ և մուրկ և խունկ և միս գառին. կամ զանգեալ ի կասկարայս, կամ օծեալ ի տապակի, զի զօրինակն կատարեսցեն. և հեռասցին ի ճշմարտութենէն: - 357. Իսկ իւղն զանգեալ՝ օրհնութիւնն է որ միանայ ի *խորհուրդն* և կատարէ՛ մարմին և արիւն քրիստոսի: - 357. Եւ ցանեալ է անգամ ի վարագոյրն. որ է՛ քաւութիւն է զգայարանցս ի է զօրութեանց հոգւոյն. է *խորհրդով* եկեղեցւոյ. առ է դար կենցաղոյս: - 360. Փորոտին զծածուկ *խորհուրդն*. զոր լուանալ հրամայէ՛ ջրով. այսինքն խոհականաւն զգարշելի մտածմունս սրբել: - 360. Այս է ողջակիզաց և այլ պատարագաց *խորհուրդն*: - 360. Ո՛չ միայն զի յանունն աստուծոյ, այլ զի օրինա՛կ էին նորոյս պատարագի. և *խորհրդովն* քրիստոսի սրբեցան: - 361. Եւ թէ ոք ասիցէ, ո՞րն է *խորհուրդն* քրիստոսի որով սրբիւր իէլ ի մեղաց: - 361. Ասեմք եթէ՝ ամենայն զենմունք և պատարագ ի *խորհուրդ* և յօրինա՛կ էր քրիստոսի: - 361. Ա՛յս է *խորհուրդ* հին պատարագացն և քրիստոսիւ մաքրեին: - 361. Վասն մեղա՛ց է՝ որ խոստովանութեամբ արտաքոյ ելեալ ի մեղաց և ապաշխարութեամբ քաւեմք զմեզ ներքին *խորհրդով* և արտաքին գործով: - 362. Հինգերորդ՝ կրկին ողջակէզն. մին պատարագն է ամենայն աւուր. և միւսն տօն չարչարաց խաչի և մահու յամենայն ամի՛ զոր նոյն *խորհրդով* կատարէ՛ եկեղեցի: - 363. Եւ որպէս երեխայն նախ քան զմկրտիլն **խ** օր ուսանի *զխորհուրդն*: - 363. Ի նոյն *խորհուրդ* նոր մանկունք յարգանդի մօր եկեղեցոյ սնանին: - 363. Զայն *խորհուրդն* պահեմք ի վերայ նոր սեղանոյս: - 363. Չորրորդ՝ ի յանպատշաճ *խորհրդոց* և ի տեսութեանց: - 368. Նա՛խ՝ բնականն. որ է բարի իմացուածն և *խորհուրդ* որ ո՛չ արդիւնանայ: - 368. Եւ այլք ասեն թէ, հինն ամենայն է՛ *խորհուրդ*.

և ի նորս իր և *խորհուրդ*: - 369. Զի իրն փոխեցաւ ի ճշմարտութիւն, և *խորհուրդն* մնաց նոյն. որպէս ջուրն և խունկն. իւղն և նաշիհն: - 369. Այլ ուղիղն, զի օրէնքն թէպէտ ըստ *խորհրդոյն* փոխեցաւ, այլ ըստ իրին մնաց յաւիտեան. զի օրինակն էանց, այլ ճշմարտութիւնն մնաց: - 369. Այլ զքրիստոս ո՛չ պատարագեն. և ո՛չ այլ ինչ ի *խորհրդոց* եօթանց կատարեն: - 370. Ցուցանէ թէ՝ մինչ ի մեղս իցեն քահանայքն՝ ո՛չ զիասն կերիցեն և ո՛չ ի սուրբ *խորհուրդն* մերձեսցին: - 370. Երրորդ՝ ի *խորհուրդ* պատարագողին. զի նուէրքն զնուիրո՛ղն նշանակէր: - 370. Այլ *խորհուրդն* է, Նա՛խ՝ զի օրինակ բազում է, և ճշմարտութիւնն մի: - 374. Ա՛յս է *խորհուրդ* առաւօտու և երեկոյի գառինն և նուէրք նորա: - 375. Եօթներորդ՝ զի միտքն զախտն շարժէ ի չարն. և ո՛չ ախտն զմիտքն. որպէս ասի, *խորհուրդք* ծերոց զքարինս պատառեն: - 377. Կապուտն նշանակէ՛ *զխորհուրդ* յայտնութեանն քրիստոսի: - 379. Դարձեալ՝ զղջմամբ սատակի չար *խորհուրդն*. և ապա՛ խոստովանիմք լեզուաւ. և զնոսա փոխեալ գործե՛մք զբարիս: - 380. Երինջն ըստ իրաւանցն ունէր զմեղս ժողովրդեանն. և *խորհրդովն* քրիստոսի՝ սրբութիւն գործէր: - 384. Երկրորդ, մկրտութիւնն է **գ** օրն. զի ունի հրաժարիլն և զդաւանելն և զմաքրիլն. և ապա՛ եօթն *խորհուրդ* եկեղեցւոյ: - 384. Զայս *խորհուրդ* յինքն ձգեաց տէրն ասելով. «որպէս մովսէս բարձրացոյց զօձն յանապատին, նոյնպէս բարձրանալ պա՛րտ է որդւոյ մարդոյ»: - 386. Երկրորդ, հին օրէնքն և մարգարէքն. որ նախ քան զմկրտութիւնս *խորհրդով* և օրինակօք յառաջապա՛հք եղեն նորոյս: - 390. Իսկ զխ իջևանքն ոմանք *խորհուրդ* առնուն յետ ելիցն ի մարմնոյ հոգւոյն՝ **խ** աւուրբ հասեալ յօթևանս: - 391. Իսկ է ի յայն *խորհուրդն*, զի որ ի պիղծ մերձենայր՝ է օր արտաքոյ բանակին կալով յերրորդ և յէերորդ օրն սրբէր, և ապա՛ մտանէր. վասն որոյ **գ** օրէք և **է** օրէք կատարեմք: - 391. Նշանակէ՛ զկրկին դևսն որ ի *խորհուրդս* և ի զգայութիւնս պատերազմին: - 393. Բազում է *խորհուրդն*: - 394. Իսկ սիրտ՝ զհոգին ասէ. որ ծածուկ է. և տեղիք *խորհրդոց*. և մի է. և կենդանութիւն մարմնոյն: - 396. Այլ և զգայութիւնք և միտք և *խորհուրդք*. ասէ՝ ամենայն մասամբքն սիրեա՛ զաստուած: - 396. Զի՞նչ է *խորհուրդն*: - 401. Իսկ *խորհուրդն*, ի յօրէնքն նոցա է զի փոփոխական էր օրէնքն նոցա. և որ փոխիւր, այլ ո՛չ դառնայր յօրէնս նոցա: - 401. Նոյնպէս և նորոյս *խորհուրդն* զի անքակտելի՛ է կինն: - 401. Զի՞նչ էր *խորհուրդն* որ յանուն եղբօրն զաւակ յարուցանէին: - 402. Նշանակէր զյարութեան *խորհուրդն* յոր նոքա ո՛չ հաւատային. աստէն իսկոյն եցոյց յարութեան անուամբն. այսինքն «յարուցէ՛» ասելովն: - 402. Դարձեալ՝ ի մի *խորհուրդ* թշնամութեամբ: - 404. Վեցերորդ՝ ի *խորհուրդ* քրիստոսի, որ օրինեաց զաշակերտսն և վերացաւ: - 409. Երրորդ՝ զհանդերձեալ յարութեան *խորհուրդն* յինքեան ցուցանէր: - 411. Եւ բաժանեաց **բժ**ան ցեղիցն ի *խորհուրդ* փրկչին յիսուսի: - 414. Բարձրամեծարն գործոյ ներմարդութեան բանին աստուծոյ՝ բազում եղեն նախատիպք *խորհրդոյ*. որպէս մովսէս, յովսէփ, իսահակ: - 417. Եւ որ շինէ զդժոխս հոգւով և մարմնով. նա՛ և անդրանիկ *խորհրդով* և մարմնոյ գործով: - 418. Եւ թէ զի՞նչ է *խորհուրդն*, գտցես ի չորրորդ թագաւորութեանց վերջքն **իթ** գլուխն **լ** համարն: - 421. Արին Սամփսոն բազում բաղդատութեամբ *խորհուրդ* և օրինա՛կ է Տեառն մերոյ ամենազօր փրկողին: - 421. Եւ տէր մեր *զխորհրդոց* և զգործոց՝ և յետոյ զպատիժն մեղաց ջնջէր: - 424. Եւ դևք ո՛չ միայն զապագայն ոչ գիտեն, այլ և զներկայ *խորհուրդն* ո՛չ ճանաչեն. նաև զանցեալ ճշմարիտն և զբարին ի միտ ո՛չ ունին: - 428. Եւ թէ զղէմքն ո՛չ ծանեաւ, զիա՞րդ *զխորհուրդն* ճանաչէր: - 428. Ա՛րդ՝ թէ զխաբէութիւնն ո՛չ ճանաչէր, զիա՞րդ զճշմարիտ *խորհուրդն* գիտէր: - 428. Նախ այսպէս. զի եհարց թէ ընդէ՞ր հաներ զիս. այլ ո՛չ էր հարցեալ թէ գիտէր *զխորհուրդն*: - 430. Ապա յայսմ ամենայն է յա՛յտ է՝ զի ոչ ինչ գիտեն զառաջիկայն դևք. և ո՛չ իմանան զներկայական *խորհուրդս*. և ո՛չ յառնեն մեռեալք. այլ սուտ կերպարանին: - 430. ...և Դարձեալ՝ նոյն ինքն քրիստոսի է իշխանութիւնն որ աստ լուծանէ ի ձեռն քահանային. և իշխանութիւն նորա ո՛չ տկարանայ երբէք. որպէս զհաց և զգինին կատարէ և զայլ *խորհուրդս*. նոյնպէս և աստ: - 433. Այլ պիղծ ագռաւքն ի *խորհուրդ* հեթանոսաց անցեալ զյորդանան և սրբեալ աւազանաւն: - 443. Երիցս փչելն՝ ի *խորհուրդ* Երրորդութեանն: - 444. Զի *խորհրդով* խաչին աղօթեաց և էած անձրև: - 444. և Երկրորդ՝ զծածուկ *խորհուրդն* որ ի յորդանան: - 445. Նոր կուժն ի *խորհուրդ* աստուածածին կուսին. որ նո՛ր էր յղացումն և անապական ծնունդ: - 445. Ի տիպ *խորհրդոյ* օրինակի մերոյս տաճարի գերեալ ի մեղաց և աւերեալ տաճար սրբութեանս եօթնիւք զգայութեամբք: - 448. Ա՛յս է *խորհուրդն*. զի տէր մեր նախ երևեցոյց զդատողութիւնն...: - 449. Եւ վկայքն հաստատեցին մեծ գոլ և ծածուկ՝ հրաշալի *խորհուրդ* միածնին փրկագործութեան երևումն առ մարդիկք: - 456. Ուստի և վեհագոյն իմացութեանց էից սերովբէն զքօղեալ զերեսս և զոտս մարդեղութեան *խորհրդոյն* պարուրեալ: - 456. Սակայն ըստ ներգործութեան մեծագոյն է սրբութիւն մկրտութեանն. զի տպաւորէ

զկնիքն. այլ և բանայ զդուռն արքայութեան. այլ և պատրաստէ՛ զմարդն առ ի *խորհուրդս* ամենայն. զոր ո՛չ ներգործեն ա՛յլ երկոքին եզական շնորհքն: - 462. Զի ի *խորհուրդ* մկրտութեանն ի յառնուլ ջուր, հոգին սուրբ և զօրութիւն բարձրելոյն և ողջոյն հօրն ի ձեռն հրեշտակին որ հերքէր զմեղս ըստ մկրտութեան: - 462. Եւ այն զի փաթութած է՝ ըստ հրէական օրինին է. զի կոնդակ և գալարելո՛վ էր նոցա գիրն. իբր թէ ծածո՛ւկ է ի նոցանէ *խորհուրդ* մարգարէիցն և թաքուն: - 481. Ութերորդ՝ զի յայտնեսցէ անդ *զխորհուրդ* Երրորդութեանն: - 486. Իններորդ՝ նշանակէ՛ զչորեսին *խորհուրդս* մեր: - 493. Վեցերորդ վկայ նոյն ինքեանք ազգն Ֆռանկաց. որ յամենայն շաբաթ օր վիճիլ ասեն. և միս ո՛չ ուտեն ի *խորհուրդ* նաւակատեաց մեծի շաբաթուս: - 509. Եւ ա՛յս է *խորհուրդն* որ առանց արեան կատարեմք: - 509. Եւ *խորհուրդ* նաւատակեաց ի դրախտին աւանդեցաւ յամենայն պտղոյ ուտել և ի միոյն ոչ: - 510. և զաւարն ժողովեցին ի տիպ *խորհրդոյն* քրիստոսի. որ ի գիշերի եհար զզօրութիւնն սատանայի և յառաւօտուն ցուցեալ զինքն աշակերտաց իւրոց և զյարուցեալսն ընդ իւր: - 514. Եւ ա՛յն է *խորհուրդն*, զի որ քան ամ մարմնով մարմնաւորացն քարոզեաց. նոյնքան ժամս հոգւով հոգւոցն քարոզեաց. այսինքն **լգ** ամ և կէս ի յերկրի. **լգ** ժամ և կէս ի դժոխս...: - 516. Իսկ պատանքն ո՛չ ծալեալ. զի *խորհուրդ* տընօրէնութեանն ո՛չ ամենևիմբ յայտնի է և ո՛չ անյայտ. որպէս կտաւն բազո՛ւմ ունէր փոթուածս: - 517. Եւ **խ** օր յօդս զի **լգ** օր զօդս սրբեսցէ ի ճենճերից կռոց. և **է** օրն ի *խորհուրդ* **է** աստեղեան խորանացն ի կայանս հոգւոցն: - 520-521. Երեքտասաներորդ, Եւագր **ը** ասէ *զխորհուրդս* մեղաց, և այլք **է**: - 525. Քսաննը, Թէ եօթն են *խորհուրդք* եկեղեցւոյ: - 526. Եւ մի է ըստ *խորհրդոյն*՝ այսինքն մկրտութեամբ՝ պատարագելով՝ կարգիւ՝ և այլովն՝ որպէս տեսակաւ: - 533. Ձեռք՝ քահանայք գործիք սուրբ *խորհրդոցն*: - 534. Եւ թէ ոք ասիցէ՝ զի՞նչ է *խորհուրդ* երկոտասանիցն: - 546. Զի այսպէս սահմանեցին՝ թէ ինքնակալ թագաւոր մի և ինքնագլուխ հայրապետ մի նստցի ի հայս. և թագաւոր մի ինքնակալ՝ և ինքնագլուխ հայրապետ մի ի հռօմ. և ի վերայ միմեանց դիցեն զանձինս ի մահ. և սոսկալի գրով եղեն միմեանց եղբարք. թացեալ զգրիչն յահաւոր *խորհուրդն*: - 548. Իսկ վասն ջրոյն զի՞նչ պարտ է ասել. զի յոյնք թերի ցուցանեն զլատինացւոց խառնումն, ինքեանց կրկին խառնմամբն. և զայն *խորհուրդ* առեալ: - 554. Ապա ուրեմն կատարեալ մեղք է ի *խորհրդոց* մտացն: - 557. Նաև զամենայն գլխաւոր մեղս ընդ հզօր *խորհուրդ* ասէ սուրբն եւագրիոս. վասն զի նախ ի *խորհուրդն* տնկի ամենայն սերմն մեղաց. և ապա ի մարմինն բուսանի և աճէ: - 557. Դարձեալ ասեն վարդապետք եթէ՝ *խորհրդոցն* մեղք՝ որ ընտրէ և կամաւ հեշտանայ, առաւել չար է քան զգործոցն ըստ պատահմանն: - 557. Նա՛խ՝ զի *խորհրդոյն* չարն ի բոլոր հոգի և ի մարմինն սփռի որպէս թոյնք օձից: - 557. Երրորդ, արբեալն ի *խորհրդոց*՝ արհամարհէ՛ զօրէնս և զամօթ և զխրատ մարդկան: - 557. Չորրորդ՝ *խորհուրդ* մեղացն ճշմարիտ և բարի ցուցանէ զգործն և սիրելի և հեշտ. վասն որոյ յօժարի և եռայ ի կատարումն: - 558. Իսկ գործն զհակառակն նմին սուտ երևեցնէ *զխորհուրդն* և չար ցուցանէ զգործն և զազրալի: - 558. Ապա ուրեմն յա՛յտ է թէ՝ առաւել չա՛ր է *խորհուրդն* արբեալ որ շարժէ՛ ի գործն. քան զգործն որ շարժէ՛ ի զղջումն: - 558. Դարձեալ ևս յայտնի. որ *խորհրդովն* է պղծեալ՝ ո՛չ կարծէ զինքն մեղանչական գոլ. այլ ի գործ մարմնոյն իմանայ զչարիս իւր զղջա՛յ և ապաշխարէ: - 558. Ապա յա՛յտ է թէ որպէս գործ մարմնոյն առ այլս է չար, և *խորհուրդ* մեղացն առաւել ինքեան է չար: - 558. Վասն է՞ր Նագրիոս ընդ *խորհուրդ* ասէ մեղաց, և այլ վարդապետք է ասեն զմահու չափ մեղսն: - 559. Իսկ *խորհուրդ* ասէ վասն դիւաց.զի անմարմին է դնն: - 559. Դարձեալ, զի ամենայն մեղք նախ ի *խորհուրդն* սերմանի և ապա բուսանի և աճէ գործելովն: - 559. Իսկ սուրբն Նագրիոս **ը** ասէ *զխորհուրդս* հզօրս. այս է: - 560. Նա՛խ՝ ըստ չորից տարերց այլ և այլ որակութեանց լինին **ը** *խորհուրդ* մեղաց: - 560. Երրորդ՝ զի **ե** են զգայութիւնք և մի բոլոր մարմինն. ուստի ծնանին **զ** *խորհուրդք* այսպէս: - 560. Ուստի յառաջեն ամենայն *խորհուրդք* այսպէս: - 560. Այսպէս յառաջ գան ի վեց շարժմանց **ը** *խորհուրդք*: - 560. Եւ յա՛յտ է թէ վասն է՞ր են **ը** *խորհուրդք*: - 561. Որպէս յա՛յտ է ի տրտմիլն. զի *խորհուրդն* մշակ եղեալ յետոյ ի յոխս և ի քէնս և ի նախանձս յաւելու: - 564. Այսպէս և զխոհեմութիւնն ի չար *խորհուրդս* և ի խորամանկութիւնս փոխեմք: - 564. Մեղք սրտին է մեղք *խորհրդոցն*: - 568. Դարձեալ զանազանին սոքա. զի մեղք *խորհրդոյն* կայանայ յերիս. ի տեսանելն, ի հաւանիլն, և ի կամիլն: - 568. Եւ ունակութիւնն է՛ ի *խորհուրդն* և ի կամքն: - 568. Առ աստիճանս այս պարունակի է *խորհուրդ* եկեղեցւոյ. որ է՛ Մկրտութիւնն. Դրոշմն. Պատարագն. Ապաշխարութիւնն. Կարգ քահանայութեանն. Պսակն. և Օծումն: - 573. Երրորդ խրատ որ է *խորհուրդն*: - 582. Ո՞րք են է *խորհուրդք* եկեղեցւոյ: - 587. Վասն է՞ր **է** են *խորհուրդք* եկեղեցւոյ: - 587. Առաջին *խորհուրդն* է՛ մկրտութիւնն որ է նոր մտելոցն յեկեղեցի: - 587. Վեցերորդ կարգն. որ է՛ սպասաւորելոցն այսմ *խորհրդոց* որք են յեկեղեցի

քահանայք և այլք: - 587. Եօթներորդ պսակն. որ է՛ *խորհուրդ* նոր զինուորս ի ներս մուծանելոյ ի ձեռն մարմնաւոր ծննդեան: - 587. Դարձեալ՝ **է** են *խորհուրդք* որ պատրաստեն զմեզ ընդունիլ զեօթն առաքինութիւնս: - 587. Զի մկրտութիւնն է՛ *խորհուրդ* հաւատոյ. ուստի յա՛յտ է զի նախ հաւատամք և ապա՛ մկրտիմք: - 587. Դրոշմն է՛ *խորհուրդ* յուսոյ. զի յուսալով ի զօրութիւն սուրբ հոգւոյն կարողանամք ընդ դէմ թշնամւոյն: - 587. Հաղորդութիւնն է՛ *խորհուրդ* սիրոյ. զի սիրով միաւորիմք և յօդիմք ի գլուխն քրիստոս. մարմին ի մարմնոյ նորա և անդամ յանդամոց նորա: - 587. Օծումն է՛ *խորհուրդ* ի լրումն արդարութեան. զի ելեաք ի պատերազմէ՛ զփոշին և զքիրտն սրբեմք. որպէս ելեալքն ի մարմնական պատերազմէ՛: - 587. Կարգն է՛ ի *խորհուրդ* խոհեմութեան և գիտութեան. զի իմաստութեամբ և գիտութեամբ սպասաւորեսցէ *խորհրդոցն* և խրատեալ ուսուսցէ զժողովուրդն: - 587. Իսկ պսակն է՛ ի *խորհուրդ* ողջախոհութեան. զի ողջախոհ ամուսնութեամբ զսպեսցէ առ ինքն զբղջախոհ ցանկութիւնն. և արգելցի ի շնութենէ և ի պոռնկութենէ. վասն որոյ է են *խորհուրդք* եկեղեցւոյ: - 587. Այլ թէ որ հասակաւ մեծ է, խնդրի յատուկ հաւատ. իսկ թէ տղայ է՝ բաւական է *խորհուրդն* եկեղեցւոյ: - 588. Երկրորդ, զի այս *խորհրդոյ* նշանակ ի սկզբան արարածոց աստուած ադամայ ետ և ո՛չ կնոջն. յորժամ էած զկենդանիսն առ ադամ զի անունս դիցէ նոցա: - 589. Դրոշմն է հաստատութեան *խորհուրդ*. որ տուեալ լինի առ ի զօրացնել և քաջացնել զմարդն: - 593. Եւ գիտելի է, զի որ ի ճակատն և ի սիրտն և ի թիկնամէջն օծանէ, այն դրո՛շմ է. և որ զհինգ զգայութիւնսն օծանէ՝ այն ի *խորհուրդ* օծմանն է ծածկապէս: - 593. Եւ որ զայլ մասունս օծանէ՝ յա՛յնմ *խորհրդոյ* է՝ որ յառաջ քան զմկրտութիւնն օծանեն այլ ազգք քրիստոնէից: - 593. Եւ քահանայապետ ասէ զնա՝ որ պատարագէ և մկրտէ և դրոշմէ. զի նա՛ է պետ և աւագ ի կատարմունս *խորհրդոյն*: - 594. Եւ այլ քահանայքն ընկերակիցք և սպասաւորք են *խորհրդոյն*: - 594. Այս ըստ հակառակասիրութեան նոցա ասի. այլ ըստ ուղղութեան՝ քահանայն ունի իշխանութիւն զեօթն *խորհուրդ* եկեղեցւոյ կատարել. և եպիսկոպոսն առաւել ունի. զի միայն տայ զկարգն, եկեղեցի օրհնէ և սեղան: - 594. Զի՞նչ է *խորհուրդ* հաղորդութեան: - 594. Հաղորդութիւնն է *խորհուրդ*՝ յորում պարունակի քրիստոս ի ներքոյ ձևի հացի և գինւոյ. և յերկոքին մասունքն է բոլոր քրիստոս: - 594. Նիւթ այսմ *խորհրդոյս* է՛ հաց ցորենոյ, և գինի որթոյ: - 594. Իսկ ձև այսմ *խորհրդոյ* ի վերայ հացին, «Ա՛յս է մարմին իմ»: - 594. Եւ սպասաւոր այսմ *խորհրդոյ* միայն քահանայն լինի: - 594. Եւ գո՛րծ է այսմ *խորհրդոյ*՝ յաւելցնել զշնորհն, և դեղ հանապազորդ մեղացն: - 594. Որ էր *խորհուրդ* անմահ գառինն. և հացն և գինին մարմին և արիւնն սուրբ: - 595. Հինգերորդ վկայութիւն հայրապետացն որք *զխորհուրդ* պատարագին գրեցին: - 595. Սոքա *զխորհուրդ* պատարագին ասացին և ջուր ո՛չ յիշեն: - 595. Նա՛խ՝ զի ջուրն և արիւնն որիշ բղխեաց և ո՛չ խառնեալ. ապա յա՛յտ է թէ որիշ է *խորհուրդ* ջրոյն և որիշ արեանն: - 595. Ասեմք առ այս, թէ յառաջ խառնումն ջրոյն ո՛չ է ըստ *խորհրդոյն*. որպէս և ո՛չ առ մեզ, թէ վաճառօղն խառնեսցէ ջուր. այլ քրիստոս ո՛չ խառնեաց: - 596. Ասեմք թէ՝ արիւնն է՛ ի *խորհուրդ* հաղորդութեանն. ջուրն ի մկրտութեանն...: - 596. Ասեմք թէ՝ յատկութիւն պատահմունք են. այլ *խորհուրդն* ի յէութիւնն է կացուցեալ որ մի է, և ո՛չ ի պատահմունքն որ բազումք են: - 596. Եւ *զխորհուրդն* ընդ իրին: - 596. Եւ դու խառնեա զսոսա ի *խորհուրդ* պատարագին. զի իցես ուղղակի մեկնիչ և գրոյն հետևօղ: - 596. Այլ և զայս հարցանեմք ձեզ. ո՞ր բան է որ զջուրն ի *խորհուրդ* կատարէ: - 596. ...վասն որոյ անխմոր հացիւ և անապական բաժակաւ կատարեմք *զխորհուրդ* մարմնոյ և արեան նորա: - 597. Իսկ զի անխմոր բաղարջով է *խորհուրդն*՝ ասացաւ ի վերոյ **իա** գլուխն **լը** համարն: - 597. Ասեմք թէ **դ**. զի թէ մինն պակաս լինի, *խորհուրդն* ո՛չ կատարի: - 597. Վասն է՞ր միաւորեմք *զխորհուրդ* մարմնոյ և արեանն: - 598. Յաղագս այսորիկ միաւորեմք *զխորհուրդն*: - 598. Ա՛րդ՝ միաւորել զսուրբ *խորհուրդն* ո՛չ է նորագիւտ ինչ եկամուտ մեզ ինքեանց: - 598. Այլ սուրբն աթանաս որ *զխորհուրդ* պատարագին աւանդեաց՝ այսպէս ուսոյց: - 599. այսպէս և օգոստինոս վարդապետն Ֆռանկաց ի *խորհրդոց* գիրս **ծա** համարն ասէ, թէ յառաջագոյն բաշխեաց զխորհուրդ մարմնոյ և արեանն և տուեալ յուդայի: - 599. ...այսպէս և օգոստինոս վարդապետն Ֆռանկաց ի խորհրդոց գիրս **ծա** համարն ասէ, թէ յառաջագոյն բաշխեաց *զխորհուրդ* մարմնոյ և արեանն և տուեալ յուդայի: - 599. Զի որպէս **գ** կերպիւ մեղանչեմք. այսինքն ի *խորհուրդս*, ի բանս, և ի գործս: - 601. Նովին բանիւն արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց. ի *խորհրդոց* ի բանից և ի գործոց. յանուն հօր և որդոյ և հոգւոյն սրբոյ: - 602. Եւ դարձեալ տամ զքեզ ի *խորհուրդ* սուրբ եկեղեցոյ. զոր ինչ գործեսցես, եղիցի քեզ ի բարեգործութիւն և ի փառս հանդերձեալ կենացն ամէն: - 602. Վերջին օծումն է *խորհուրդ* եկեղեցւոյ. որ տուեալ լինի հիւանդաց ի հոգէվարի օրն. յաչքն, յականջն, ի բերանն, ի ձեռքն, ի կուշտն, յոտից ներբանքն: - 604. Եւ գործ ա՛յս *խորհրդոյս* է՛, որ

զմնացեալ ներելի մեղքն թողու: - 604. Եւ թէ ոք ասիցէ՝ օծումն *խորհո՛ւրդ* է. ընդէ՞ր մեք ո՛չ ունիմք: - 604. Ասեմք թէ, ունիմք *զխորհուրդ* օծմանն, այլ ծածկապէս. որպէս ի մկրտութիւնն...: - 604. ...նախ վասն ա՛յս *խորհրդոյս* է. և երկրորդ՝ զի մկրտութիւնս մեր ո՛չ ի ջուրն յովաննու, այլ ի մահն քրիստոսի է: - 605. Դարձեալ և զօծման *խորհուրդս* ունիմք ի քահանայս ննջեցեալս...: - 605. Կարգն է կարողութիւն զոր ետ եպիսկոպոսն այնմ զոր ի կարգն ընկալաւ և ի սպասաւորութիւն *խորհրդոյ* եկեղեցւոյ: - 606. Որոյ գործն է սպասաւորել քահանային ի *խորհուրդ* եկեղեցոյն. զսկիհն պատրաստել, զաւետարանն կարդալ ի բեմն: - 606. Որոյ գործ է *զխորհուրդ* մարմնոյ և արեանն ի վերայ սեղանոյն օրհնել: - 606. Ի ժամ մկրտութեանն քրիստոս եցոյց զքրիստոնէութեան *խորհուրդն*. զի մեք մկրտութեամբն լինիմք քրիստոնեայք: - 606. Պսակն է *խորհուրդ* մեծ. որով օրհնութիւնն աստուծոյ կատարեալ լինի...: - 609. Եւ այս լինի ի ձեռն պսակին որ տուեալ լինի ի ձեռն *խորհրդոյ*: - 609. Զայս ունի *խորհուրդ*, որ հարսն և փեսայն յառաջ քան զպսակն տեսանեն զմիմեանս. և հաւանին սրտիւք և կամօք և ապա՛ պսակին: - 610. Ա՛րդ՝ բարի պսակն եռակի է. այսինքն հաւատն. զաւակն. և *խորհուրդն*: - 610. Իսկ *խորհուրդն* այն է, զի մի՛ բաժանեսցին: - 610. Չինգերորդ, ի սմա՛ երկոտասան քարինք հիմնարկեալք. և **բժ**ան լուսանցոյց ի *խորհուրդ* մարգարէիցն և առաքելոցն...: - 614. Եօթներորդ, ի սմա՛ է *խորհուրդ* եկեղեցւոյ ներգործի. և ի մեզ կատարի և կրի: - 614. Զի մե՛ք կատարեմք *զխորհուրդս*. և ի մեզ կրեմք դարձեալ. որպէս մկրտութիւնն. դրոշմն. պատարագն. և այլն: - 614. Եւ ի մեզ իշխանականն, և իմացումն, և *խորհուրդ* բարեաց: - 614. Զայս ունի *խորհուրդ* օրհնութիւն եկեղեցւոյն: - 615. Երկրորդ, զի **է** է *խորհուրդ* եկեղեցոյ. և **է** արփեան է շնորհք հոգւոյն. և մի կատարմունքն ի մեզ, որ լինի **ը**: - 616. Երրորդ՝ ի բանակիլն խաչածն բանակեցան երկոտասան ցեղքն, և խորանն ի միջի. որ նշանակէ՛ զխորանն եկեղեցւոյ՝ *խորհրդով* խաչին քարոզեալ ընդ **դ** կողմ աշխարհի: - 616. Վեցերորդ՝ զի նոյն է *խորհուրդն* որ անդ ի վերայ խաչին պատարագեցաւ, և այժմ յեկեղեցի սուրբ ի խաչ սեղանին: - 616. Ութերորդ՝ զի ամենայն *խորհուրդ* եկեղեցւոյ՝ խաչիւն կատարի. Մկրտութիւն. Դրոշմն. Պատարագն. և այլն: - 616. Նա՛խ՝ զի եկեղեցին է ի *խորհուրդ* դրախտին. ուր անասուն ո՛չ մտանէր. նոյնպէս և յեկեղեցի ո՛չ մտանէ: - 617. Դարձեալ՝ ի *խորհուրդ* գոչման փողոյն այն որ ի բարձունս. զի նախ յերկնից գոչէ փողն գաբրիէլի և ժողովէ զհոգիսն...: - 618. Եօթներորդ ժամն է խոնարհեցո՛ և ապրեցոն ի *խորհուրդ* թաղմանն քրիստոսի: - 622. Եւ ա՛յլ *խորհուրդ*. **գ** առանձնական աղօթքն, և **թ** հասարակն, որ լինի ամենայնն երկոտասան անգամ աղօթք: - 623. Զի՞նչ է *խորհուրդ* կանոն գլխին որ ձայնիւ ասեմք: - 626. Չինքն ի *խորհուրդ* եօթնից կենցաղոյ դարոյս՝ զեօթն առաւել պատուէին: - 626. Այլ և **ը** *խորհրդով* պատերազմն սատանայի. որպէս գրէ սուրբն եւագրիոս: - 627. Երրորդ՝ ի *խորհուրդ* **ը** երրորդին՝ ի կատարածի, յազատեալք յաստեացս՝ գոհանամք զաստուծոյ...: - 627. Այլ և առընթեր յարութեան աւետարանն. զի նո՛յն է *խորհուրդ* ծննդեանն ի կոյս մօրէ և ի կոյս գերեզմանէ: - 628. Եւ ճաշոյն մեսեդի **զ** թուով, ի *խորհուրդ* վեց դարուս: - 629. Եւ առ դաւիթ *խորհուրդ* հեթանոսաց եմուտ: - 629. Անբիծքն զի՞նչ *խորհուրդ* ունին: - 630. Այսպէս ասէ մեծ իմաստասէրն և երկրորդ աւետարանիչն մեր և կաթողիկոսն սուրբ յոհան յօձնեայ թէ՝ պատարագին ժամն *խորհուրդ* է խաչին քրիստոսի...: - 634. Եւ ա՛յս է *խորհուրդն*. եթէ մեր ամենայն ինչ յայտնի և բա՛ց է ծածկագիտին: - 635. Եւ ա՛յս է *խորհուրդն*, զի որ վաստակի յերգս՝ նա՛ տացէ զփառս արժանապէս: - 636. Իսկ *զխորհուրդն* անճառ, և զմեծահրաշն, գրիգոր վկայասէրն: - 638. Ի հինգերորդ օր արարչութեանն ի *խորհուրդ* մկրտութեան ջրային կենդանիք և թռչունք յօդս ելին: - 638. Զի՞նչ է, չորեքկերպեան կենդանեացն *զխորհուրդ* քարոզեաց ամլորդին: - 638. Նա՛խ՝ ամենևին անձայն. որպէս ներտրամադրեալն ի *խորհուրդս*: - 639. Եւ դարձեալ՝ ութ ձայն՝ ի *խորհուրդ* ութն դարուց: - 640. Այս է *խորհուրդ* չորս ձայնից: - 640. Զի մեծ զատկի կիրակէն առաջի ձայն լիցի. որ զյարութեանն ունի *խորհուրդ*: - 641. Դարձեալ՝ ունի *զխորհուրդ* անկմանն ադամայ որ վերջին խօսեցաւ աստուած և եհան ի դրախտէն: - 641. Այլ և ունի *զխորհուրդ* վերջին աւուրն որ կատարա՛ծ է աշխարհի: - 641. Երկոքեանն են ընտրելի. և ա՛յս է *խորհուրդն*: - 642. Այլ և յամենայն *խորհուրդս*. այսինքն ի կնքելն, և ի պատարագելն, ի կարգն, ի պսակն, և յայլն: - 643. Իսկ քեզ վայելէն, զարարչութեանն ունի *խորհուրդ*. այլ և զտնօրէնութեանն և զկատարածին...: - 644. Ի *խորհուրդ* օրինացն. յորժամ էջ տէր ի սինա, փող և որոտ, հուր և ծուխ և այլն: - 644. Այլ և **թ** տէր ողորմեայն ի պատարագն. և **թ** երեքսրբեանն, ի *խորհուրդ* **թ** դասուց վերնական յերիս երրեակս որոշեալ: - 645. Իսկ թէ զի՞նչ է յորժամ վերընծայի *խորհուրդն* պաշտմամբ և հնչմամբ ժամահարաց: - 645. Զի՞նչ է բուրվառին *խորհուրդ*: - 645. Այս է *խորհուրդն*. զի երեկոյս նշանակէ՛ զկեանս զայս որ տնօրէնութեամբ փրկչին սակաւ ինչ տեսօղ եղաք հաւատով: - 646.

Եւ ա՛յս է *խորհուրդն*. զի որ քան են սուրբք ի յերկրի կենդանի, ո՛չ տօնեմք նոցա մինչ ի հանդէս նահատակութեան են...: - 647. Եւ այսպէս բազում են *խորհուրդ* քառասնորդացն. և ըստ *խորհրդոցն* պահքն ո՛չ լուծանի: - 651-652. *Խորհուրդ* պահոց նախ ի դրախտին եդաւ մարդոյն. յամենայնէ ուտել և ի միոյն չուտել: - 652. Երրորդ, չորեքշաբաթն ի *խորհուրդ* խաբէութեան նայի. յորում ասաց օձն ուտել ի պտղոյն...: - 653. Չորրորդ, ի *խորհուրդ* կուսին որում աւետեաց հրեշտակն զփրկութիւն մեր...: - 653. Երրորդ, աղուհացքն այսմ կենաց *խորհուրդ*, որ եմք ի սուգ վասն մեղաց...: - 654. ...և յինունքն յարութեան *խորհուրդ*. զի ո՛չ է սուրգ և ո՛չ տրտմութիւն և ո՛չ ցաւք: - 654. Բազո՛ւմ է *խորհուրդն*: - 654. Եւ ա՛յս է *խորհուրդն*: - 655. Եւ ա՛յս է *խորհուրդն*: - 656. Զի՞նչ է *խորհուրդ* բարեկենդանին որ յամենայն տեղիս ի վանորայս և յանապատս ներե՛ն սակաւ ինչ ի չափաւոր վայելս: - 657. Եւ ա՛յս է *խորհուրդն*: - 657. ...թէպէտ մեք անգիտանամք ի *խորհրդոյն* որպէս տկար տեսութեամբ: - 662. Կոչի կարգ, Նախ զի քրիստոնէից մին կարգ՝ ննջեցելոց կատարումն է ի վերայ է *խորհրդոցս*. ութերորդ *խորհուրդ* և կարգ. վասն ութերորդին կենաց: - 671. գլխոյն օծումն *խորհրդով* յանդամն իջանէ...: - 672. ...այնմ *խորհրդով* որ ընդ չորս կողմն տիեզերաց աւետարանեցաւ: - 673. ...և զեօթն *խորհուրդ* եկեղեցւոյ կատարեաց: - 674. Եւ ի *խորհուրդ* եօթանց դարուց կենցաղոյս՝ զեօթն օր նաւակատիս կատարեմք թաղման քահանայից: - 674. Ա՛յս է *խորհուրդ* կատարման կարգին: - 675. Ո՞րն է **գ** հանգիստն. և զի՞նչ *խորհուրդն*: - 675. Երիցս կնքելն զգերեզմանն, Նախ ի *խորհուրդ* սուրբ Երրորդութեանն: - 679. Դարձեալ, յերեկեան օրն էր ի *խորհուրդ* թաղման. - 680. ...և այս առաւօտս է ի *խորհուրդ* յարութեան յառաւօտն վերջին: - 680. Եւ երեք աւուր յիշատակ ննջեցելոց ունի բազում *խորհուրդ*: - 681. Ա՛յս է *խորհուրդ* **գ**օրեայ ննջեցելոց յիշատակին: - 683. Նա՛խ՝ որպէս ասացաւ ի քահանայաթաղն վասն է շնորհաց հոգւոյն, և **է** *խորհրդոց* եկեղեցւոյ, և է առաքինութեանց, և **է** գլխաւորագոյն մեղաց, և **է** զգայարանօք մեղանչեմք, և **է** փոփոխմամբ հասակի...: - 683. Վասն որոյ ի սոյն աւուրքս կատարին արդիւնք ննջեցելոցն և յիշատակութիւնք նոցա այսու *խորհրդով*: - 683. Եւ այս է *խորհուրդն*. զի յայնմ աւուր խաչեցաւ քրիստոս, և գերեզմանք բացան և այլն: - 684. Նոյնպէս և յայլ *խորհրդոց* կատարմունքն. կնքոյ, պսակի, և այլոցն, լուսացուէ և խնկոց գին: - 684. Այս քան ի *խորհուրդ* ննջեցելոց ի թաղումն և ի կատարումն նոցա: - 684. Դարձեալ, Արծաթ մաքրութիւն սրտի և *խորհրդոյն*: - 702. Դարձեալ՝ խոտն մտաւոր մեղք *խորհրդոց*. և եղէգն յանցանք բանից. և փայտն մարմնական մեծամեծ մեղք: - 702. այլ ի սիրտս ամենեցուն *խորհուրդ* ամբարշտացն պատուհասից կերպարանի. իսկ պատիժն յետ արդար դատաստանին: - 703. Զի այժմ հոգիս փոփոխական է. որպէս *խորհրդով* կամօք և այլն. վասն որոյ զմիաւորութիւնն ընդ մարմնոյ փոփոխական ունի...: - 723. Եւ որք մկրտեալ մեռանին, առնուն վարձ ի *խորհրդոյ* եկեղեցւոյ և ի չարչարանացն քրիստոսի յոր մկրտեցան: - 724. Այսու *խորհրդով* բարձրացուցանեմք զխաչն ի վերայ վառի. և ժամահար զկնի: - 732. Իսկ խոտելոցն գիր, դպիր է պիղծ հոգին դիւական. և չար կամքն իւրեանց և *խորհուրդն* և հեշտութիւն մարմնոյն մելան. և ըստ գործոց առաւել և նւազ գրեն ի գիրն դատապարտութեան: - 741. Իսկ ըստ քանակի, չափու գործելեացն առաւել և նուազ իւրաքանչիւրոց ի *խորհուրդս* ի բանս և ի գործս: - 746. Զի այսպէս ասեն վարդապետք՝ թէ յորժամ յղանայ ոք ի միտս իւր *զխորհուրդ* մեղացն, ի սատանայէ՛ սերմն առեալ որպէս կին յառնէ. և ի ծնանիլ մեղացն՝ ծնանին և որդունքն ի հրեղէն ծովն որ է՛ ի հարաւ: - 753. Ի գնացս հոգւոյն զօրացեալ, զի ըստ տընօրէնութեանն *խորհրդոյ* միշտ հոգւով սրբով ներգործէր. ունելով տերև զաշխարհակեցոյց վարդապետութիւնն: - 768. Եթէ ի խելս և ի *խորհուրդ* ցնորութիւնք և զայրոյք ուռուցանիցեն խխայթեալք. բժշկեսցիս հաւատով. ըստ մարգարէին հիացեալ՝ ստուերս և ունայնս դնելով զամենայն անցաւորս: - 770. Իսկ աստուած ո՛չ փոխեաց *զխորհուրդն* իւր որ էր յաւիտենական. այլ վճիռն որ հայէր ի պատիժ արժանեաց նոցա: - 779. Թերևս հետևելով ո՛չ ինքեան, այլ ուղղակին *խորհրդոց* հաւանականք գոն: - 782. Նորս *խորհրդոյ* շնորհք ոմանք են անիբաց դնելիք. զի են կնիք ի հոգին անփոփոխ գոլով ընդ նմա. որպէս է՛ շնորհք կնքոյն դրոշմին և կարգին: - 783. Որ և զայս թիւ *խորհրդոյ* պահէ՛ յինքեան ամացն շրջագայութիւն: - 785

**ԽՈՐՀՐԴԱԲԱՐ +** Նախ՝ *խորհրդաբար*. ի **ե** շաբաթոջ աւուրն յերեկոյն թաղեցաւ ի սիրտ առաքելոցն ճաշակմամբ մարմնոյն. և յերեկոյի կիրակէին տեսին զտէրն յորժամ դրօքն փակելովք եմուտ առ նոսա: - 516

**ԽՈՐՀՐԴԱԾԵՄ +** Զի քանանացիքն *խորհրդածի* այսմ երկրի և կենաց: - 314

**ԽՈՐՀՐԴԱԾՈՒ +** Եւ բազում ուրէք որք ընդ արեգակամբս *խորհրդածուք* էին, ի լուր բանից և ի տես սքանչելեաց ածին յուղղութիւն: - 785

**ԽՈՐՀՐԴԱԿԱՆ +** Ո՞րքան է եղանակ աստուածաբանութեան... Չորրորդ՝ *խորհրդական* աստուածաբանութիւն: - 122. Իսկ չորրորդն է *խորհրդական* աստուածաբանութիւն. յորժամ զամենայն զգալի և զիմանալի էութիւն արտաքոյ թողեալ, ի խորս ընթանամք մտօք և մտանեմք յանպն և ի մէդն ըստ մովսէսի. և ապա տեսանեմք զնա արտաքս որոշեալ յամենայն էից: - 122. Սա՛ կոչի *խորհրդական* աստուածաբանութիւն: - 123. Իսկ բացբարձականքն ի *խորհրդական* աստուածաբանութեանն է. նախ որ է՛ և ո՛չ ասի. որպէս անսկիզբն և անվախճան. ո՛չ բան և ո՛չ միտ. ո՛չէ և այլն: - 123. Իսկ ի ներքուստ ի վեր՝ ի բազմութենէ առ մինն ընթանայ. որպէս *խորհրդական* աստուածաբանութիւնն արտաքոյ թողեալ զբազումութիւն էից և ի մինն ընթացեալ, որ ամենեւին անբանութիւն է և անիմացութիւն. անճառելի. անիմանալի. և լռութեամբ պատւի յամենայն արարածոց: - 123. Տասներորդ՝ յատուկ առանձնապէս տըպաւորութիւնք *խորհրդական*. որպէս քերօբէքն բազմաչեայք և ընդ թևեանք. և սերօբէքն սրբաբան՝ ընդ աթոռոցն քառակերպեան: - 138. Որ ի *խորհրդական* միտսն վասն օգտի զլինելոցն ցուցանէր: - 268. Նա՛խ՝ զի *խորհրդական* միտքն կարգաւոր և առանց տարակուսանաց տեսանէ. իսկ երազն անկարգ և տարակուսանօք և զանհնարն տեսանէ որպէս ի վերայ օդոյ թռչիլ, և ի ծովու գնալն, և աղքատաց թագաւորել, և այլն: - 268. Եթէ *խորհրդական* մարմինն քրիստոսի անապակա՛ն է, ուստի գոյանան կենդանիք և բորբոսք: - 339. Չորրորդ՝ *խորհրդական*. զի մի է քրիստոս փեսայ. և զեկեղեցիս հրէից և հեթանոսաց ընկալաւ իւր հարսն սուրբ: - 401. Իններորդ՝ *խորհրդական* մարմինն սուրբ զոր բաշխեաց ի վերնատունն՝ էր անապական և կենարար. ըստ որում «որ ուտէ զմարմին իմ՝ կեցցէ յաւիտեան». ապա ուրեմն և նախ քան զխաչն անապական էր մարմինն քրիստոսի փրկչին մերոյ: - 499. Զի և սա՛ մի է ի *խորհրդականաց* տօնից կենարարին մերոյ: - 554. Նոյնպէս յետ ամենայն *խորհրդական* աղօթից՝ առ հայր ամբառնամք և աղերսեմք զհոգին սուրբ բաշխել մեզ...: - 634

**ԽՈՐՀՐԴԱԿԻՑ +** Իններորդ՝ *խորհրդակից* ունել ո՛չ զթունարկու օձն. այսինքն զարկածք չարին. այլ զպատուիրանս աստուծոյ որ ի գիրս սուրբս: - 281

**ԽՈՐՀՐԴԱՆՈՑ +** Ասեմք թէ՝ ամենայն նշխարքն որ ի բեմն և ի *խորհրդանոցն* օրհնեցաւ այսօր, զնոյնն ի վաղիւն առնոյք և օրհնէք: - 599. Եւ է՛ աջ դասն աւազանին կողմն և *խորհրդանոցին*: - 641

**ԽՈՐՀՐԴԱՊԷՍ +** Դարձեալ՝ մարմին քրիստոսի *խորհրդապէս* է՛ եկեղեցի. և պա՛րտին չարչարակցիլ նորին՝ հետևելով նմին: - 781. Իսկ որք զմի քանքար հաւատոյ կամ զմկրտութեանն շնորհի ի բաց կորուսանեն, ո՛չ զկնիքն *խորհրդապէս*, այլ զարժանն վարձու իրողապէս: - 783

**ԽՈՐՀՐԴԱՒՈՐ +** Եւ այսպէս միջին հասակս կատարեալ, ծգի մինչև ի **խզ** ամն. որ է **դ ժզ**. և վեցն կատարեալ թիւ է. և աստ տիրէ ալիք և սկիզբն լինի ծերութեան մինչև ի **հբ** ամն. յորում է ծայրք կենաց ըստ դաւթի, և թիւ երկոտասան վեցից *խորհրդաւոր*: - 265. Ի խնկոց սեղանն քաւէ՛ր արիւնն. զի զաղօթս սրբոցն բարեխօս ունիմք ընդ *խորհրդաւոր* արեանն: - 360. Իսկ նորն ադամ նոյն ի **զ** դարուն յա՛յց ել և խնդրեաց զկորուսեալ պատկերն ի թիւ *խորհրդաւոր* կատարեալ վեցերորդին: - 467. Մի նշխարն է *խորհրդաւոր* և ո՛չ բազումն: - 597. Եւ է այս *խորհրդաւոր*: - 623. Իսկ կցորդ և սկիզբն, այն մին տունն է *խորհրդաւոր* ըստ պատշաճի աւուրն: - 643. Նա՛խ՝ զի **գ** թիւն *խորհրդաւոր* է. որ ունի սկիզբն և մէջ և կատարումն: - 681

**ԽՈՐՇԱԿ +** Ութերորդ՝ զի է՛ առանց պղտորման. այսինքն ձեան, կամ անձրևաց, *խորշակի*, և ցրտոյ: - 184

**ԽՈՐՇԻՄ +** Իսկ ճշմարիտն աստուած զայս ո՛չ խնդրէ. այլ երկիւղ խնդրէ ի տըղայոց որով *խորշին* ի չարէ. և սէր ի սրտէ փոխանակ անասնոց. և խաղաղութիւն առ ընկերս և օտարս...: - 396. Ո՞չ ապաքէն առաքեալքն եդին զչորսս զայս. *խորշիլ* յարենէ և ի զոհից ի հեղձուցելոյ և ի պոռնկութենէ: - 552. Չորրորդ՝ ի ժողովոյն քաղկեդոնի *խորշիլ*. և այսոքիկ առ ասորիս: - 554

**ԽՈՐՈՎԵՄ +** Ա՛րդ՝ **գ** հաց՝ և գառն *խորովեալ* դնէին յառաւօտուն. և չորրորդ մասն դորակի գինւոյ. նոյնպէս և յերեկոյն հանապազորդ: - 346. Եւ ի են ո՛չ ժամանեալ, պակաս գոլով մարմնոցն... Գինին՝ արեամբ կատարեալքն... Եւ *խորովեալքն*՝՝ կուսութեամբ: - 346. Մետասաներորդ, բոլորապտուղ. որ է հանապազորդ գառն *խորովեալ* յառաւօտն և յերիկոյն մին հացով և դ մասն դորակի գինով: - 359. Երկոտասաներորդ, ոչխար տարևոր մեծի զատկին յելսն եգիպտոսի, *խորովեալ* հրով. և բաղարջ ընդ եղեգի կերեալ: - 359. Եւ ապա՛ սիրտ սուրբ և գեղեցիկ ստանալ ի հաւատս և *խորովիլ* ի սէրն աստուծոյ: - 360. Երկրորդ՝ զի *խորովելոյ* միս առնուին և յաղէին: - 425. Դարձեալ պատճառե՛ն թէ՝ յետ յարութեանն եկեր ձուկն ընդ աշակերտսն. յորում կրակեաղ կայծականց տեսին և ձուկն *խորովեալ* և հաց. և օրն էր չորեքշաբաթի. և ի **ե** շաբաթի համբարձաւ: - 511. Այլ և մարգարէն մովսէս դնէր յերեսաց սեղանն գառ

մի *խորովեալ*. և հաց և գինի և չորրորդ մասն դորակի հանապազորդ. և ջուր ո՛չ դնէր: - 595. Չորրորդ՝ ի յօրինակն մի հաց և մի գառն *խորովեալ* լինէր. որ ընդ մասին գինւոյ դնէին յերեսաց սեղանն: - 597. Երկրորդ, ի հուր *խորովեալ* ողջակիզեմք: - 657

**ԽՈՐՈՒԹԻՒՆ +** Լայնութիւն՝ իմաստութիւնն է. երկայնութիւն՝ զօրութիւնն. *խորութիւն* անյայտութիւնն. բարձրութիւն՝ անհասութիւնն: - 129. Սուրբն դիոնէսիոս ասէ, «եռակի է ձև ամենայն մարմնոց». այսինքն լայնութիւն. երկայնութիւն. *խորութիւն*: - 129. Իսկ *խորութիւն* զի ամենայն էից անպարունակելի է թաքնութիւն և անգիտութիւն: - 129. Այս է՝ ըստ *խորութեան* թաքո՛ւն. և ըստ անգիտութեամբ բա՛րձր: - 129. Իսկ *խորութիւն* է արդարութիւնն. որով դատապարտէ՛ զչարսն...: - 129. *Խորութիւն* որ մինչև յերկիր և դժոխս էջ: - 129. Զանսկիզբն սկզբան ի սկզբանէ՛ գոյին, և զանճառելի թաքնութեան և անհաս *խորութեան* յառաջ ճանապարհի ի մեզ միածին բանին: - 456. *Խորութիւնն* աստուածային իմաստութեանն: - 493. *Խորութիւն* հաւատոյ. որ յոյժ իմաստուն և խոնարհ է: - 493. Սոքա՛ են հոսանք ջուրցն լիութեան. զորոց յերգս գտանի սիրելոյ. որ ի *խորութիւնն* հայեցեալ աղաւնւոյն, ի գալստենէ բազային զգուշանայ: - 756

**ԽՈՐՏԱԿԵՄ +** Զորօրինակ խեցեղէն անօթ *խորտակեալ*՝ եթէ կա՛ւ է շինի դարձեալ անօթ. և թրծեալն ո՛չ շինի: - 166. Եօթներորդ՝ օրինակ՝ զի քրիստոս զգլուխ վիշապին *խորտակեաց*: - 218-219. Երեսունև, Քարեղէն տախտակն. և *խորտակելն*: - 284. Մետասաներորդ, մովսէս զառաջին տախտակն *խորտակեաց* և ի նորն գրեաց զօրէնսն: - 328. Վասն է՞ր *խորտակեաց*: - 349. Զորօրինակ թագաւոր ոք յորժամ լսէ՛ զգոյժ որդւոյ իւրոյ մեռելոյ, *խորտակէ՛* զթագն, և զամենայն ինչ որ վասն նորա՛ է: - 349-350. Ա՛յս է պատճառ *խորտակելոյ* տախտակին. և ո՛չ որպէս ասեն ոմանք թէ գիրն ջնջեալ էր: - 350. Երկրորդ, քառասնօրեայ պահելով էառ զբ տախտակս և *խորտակեաց*: - 352. Իսկ *խորտակեալ* տախտակն մովսէսին և մնացեալն՝ նո՛ր օրէնս: - 395. Ութերորդ՝ յօրինակ փրկչին յիսուսի, որ զբռնութիւն թշնամւոյն *խորտակեաց* և զխաբէութիւնն եթող. զի փործեցին ընտրեալքն և խոտեցին վատթարքն: - 417. Եւ տէրն ի մէջ գիշերի զդրունս և զնիգս դժոխոց *խորտակեալ* յարեաւ ի գերեզմանէն. և զհոգիս մարդկան էհան յերկինս: - 423. Քանզի, նա՛ ծնօտիւք իշոյ զհազարսն *խորտակեալ*: - 423. Երեսունք, զկառափս իշխանացն *խորտակեաց*. և արեամբ զմարմինսն լուանայր: - 424. Որպէս և մովսէս զտախտակն աստուածագիծ *խորտակեաց* վասն յանցանաց ժողովրդեանն: - 425. Չորրորդ՝ նշանակ իմանալւոյն դագոնայ, որ զգլուխ իւր ամբարձ ընդ դէմ աստուծոյ. և ընդ բռամբ էարկ և կոխեաց զմարդկային ազգ. զորս *խորտակեաց* տէր մեր: - 426. Հինգերորդ՝ զընթացս մեղաց և զգործն որ է սկզբնական և ներգործական մեղք, և զգլուխն որ է՛ մահ և ապականութիւն, *խորտակեաց* քրիստոս...: - 426. Եօթներորդ՝ եգիպտոսի կռոց *խորտակիլն*: - 471. Երկրորդ՝ զի *խորտակեսցէ* զգլուխ վիշապին ի ջուրն: - 486. Որ և զերկոսինս զայսոսիկ *խորտակեաց* տէր իջմամբն առ նոսա: - 504. Ա՛րդ՝ եթէ քրիստոս ի ներքին դժոխքն ոչ էջ, ո՛չ է կապեալ հզօրն որպէս աւետարանն ասէ. և ոչ զդրունսն *խորտակեալ*. և ո՛չ զգերիսն աւար առեալ որպէս դաւիթ ասէ: - 506. Որ նշանակէ՛ զյաղթութիւնն քրիստոսի ի մէջ գիշերի զդրունս դժոխոցն *խորտակեալ*. և զհոգիսն հանեալ ի լեառն երկնային: - 513. Որոյ գործն այս է. ոչ ի նեղութիւնն *խորտակիլ* և ո՛չ ի հեշտութիւնն կակղանալ: - 580. Եւ վերջինս այս վասն այն ասի գործ ողորմութեան, զի կակուղ և խոնարհ պատասխանին *խորտակէ՛* զբարկութիւն ընկերին և շահի՛ զնա: - 585

**ԽՈՑ +** Չորրորդ՝ մարմառոտն. որ կաշին պատառեալ և *խոց* լինի նշանակէ՛ *զխոց* մեղաց: - 371

**ԽՈՑԵՄ +** Որպէս թէ մարմինն պետրոսի *խոցի* կամ տանջի, ասեմք թէ պետրոս *խոցեցաւ* և պետրոս տանջեցաւ: - 74. ...եկն երևեցաւ. այսինքն մարդացաւ մարդասէր բժիշկն. և առողջացոյց զկարեվէր *խոցեալքս*. ըստ որում բժիշկ անուանէր զինքն անկեալ ի ձեռս աւազակաց հիւանդին: - 467. Երակ հատեալ, յորժամ բևեռօք և գեղարդեամբ *խոցեցաւ*: - 491. Որ *խոցեաց*՝ ղունկիանոս: - 495. Ասեն թէ մին աչքն կո՛յր էր. և *խոցեաց* թէ սրտամեռուկ չլինի: - 495. Այսպէս և որդիքն սաւուղայ հարեալ նախանձու բևեռեցին զտէրն և *խոցեցին* նիզակաւ. և պահէին զգերեզմանն: - 513. զի իւր սրովն *խոցեսցէ* զինքն և հալածեսցէ որպէս ի սաւուղայ: - 641

**ԽՈՑՈՏԵՄ +** Այն է, որ բովանդակ մարմինն այնպէս *խոցոտեալ* էր կեղով՝ և լուծեալ ի շարաւ և ի թարախ. որ ո՛չ կարէր յոտին կալ կամ սողալ ուրեք. և ո՛չ ընբռնիր յայլմէ: - 322-323

**ԽՈՑՈՏԻՉ +** Երրորդ՝ հարուածն է մունն որ է՛ մանր տիզ. կամ մոծակ. կամ մժեխ. ի ցուցանել զի մանրակրծո՛ւ էին բարուք և *խոցոտիչք* բանիւք: - 334

**ԽՈՑՈՒԱԾ +** Դարձեալ ասեն նոքա թէ՝ *խոցուածն* և արիւնն և այլն ցուցակ ապականութեան են: -

502. Ասեմք, եթէ *խոցուածն* և արիւնն ցուցակ ապականութեան են, ապա և զայս *խոցուածս* եցոյց յետ յարութեանն. նաև ի կատարածի ցուցանելոյց է զամենայն *խոցուածս* վիրացն...: - 502-503. Դարձեալ՝ եթէ առհասարակ սոքա՝ կերակուր՝ արիւն և *խոցուածք* և մահ՝ ապականութիւնք են որպէս դու ասես, և փրկութիւն աշխարհի սոքօք ներգործեցաւ. այսինքն չարչարանօք՝ մահուամբ և *խոցւածովքն*: - 503. Զի զանպարտ արիւնն իւր ցուցանէ հօր. և *զխոցուած* բևեռացն զոր վասն մեր ընկալաւ: - 519. Զի այսպէս ասէ նեքտառիոս հայրապետն հռոմայ թէ՝ չէր հնար իջուցանել զմարմինն տն ի խաչէն վասն փայլատակմանցն ի *խոցուածոյն*: - 631. Եւ ո՛չ միայն խաչն, այլ և ամենայն գործիք չարչարանացն. այսինքն բևեռքն գեղարդն և այլք. որք բերին առաջի դատաւորին. և ի մարմին նորա երևին սպիք *խոցուածոց* նորա...: - 732. Իսկ զմարդկութիւնն քրիստոսի տեսանեն, նաև *զխոցուածն*, վասն **բ** պատճառի: - 740

**ԽՈՑՈՒՄՆ +** Իսկ այժմ վասն խաչին նախ գիտելի է, զի չարչարանքն քրիստոսի ընդ դէմ է և բարձօղ է մոլորութեանց մեղաց... Զբղջախոհութիւնն՝ *խոցմամբ* կողին: - 489. Դարձեալ *խոցումն* ի վայրկեան ժամանակս, ածէ՛ զմահ յաւիտենական: - 744

**ԽՈՒԶԵՄ +** Եւ կայ ի տուն՝ կատու. և *խուզօղն* խոզ: - 220. Իսկ լուծումն հարցմանցս այսոցիկ, ո՛չ ամենևին օտարածայն աւելորդս *խուզեալ*. և ո՛չ գեղջուկ իմն աշխարհական խօսից յարմարեալ: - 772

**ԽՈՒԼ +** ...**բդ**՝ *խլից* լսել տայր. **գդ**՝ համերց խօսիլ. **դդ**՝ ձեռաց շարժումն. եդ՝ կաղաց գնալ...: - 328. Իններորդ՝ ականջատն. որ *խուլ* է մտօք: - 371

**ԽՈՒՃԱՊԻՄ +** Իսկ ի լուր տրտմութեան՝ *խուճապի* մարմինն. և ի դառն մաղձոյն որ է՛ լեղին՝ հոսի ի բերան քաղրդին. - 619-620. Իսկ ի ներքուստ, ի լինիլ տրտմութեանց՝ *խուճապեալ* մարմնոյն հոսի մաղձ դառն ի ստամոքս որովայնի. և վերացեալ գոլորշեաց նորա զօրէն շոգլեաց պուտկի առ խելապատակս գլխոյ. և ծանրացեալ անտի թորի՛ առ բիբն ասացեալ ական. չոր գոլով և աղէգոյն ի սևատեսա՛կն մաղձոյ: - 787

**ԽՈՒՆԱԽՈՅ** - Եւ այսպէս տրտմեալ սգով և թախծեալ մտօք ընծայեցի տխեղծ մատամբ *զխունախոյ* նուէրս բանի, իբր զլոմայս այրւոյն՝ քումդ գանձարանի: - 789

**ԽՈՒՆԿ +** Երեսունևդ, **բժ**ան ակունքն. և *խունկքն*: - 283. Եւ զխաչն հրաշագործ՝ զկենսատու մանանայն. և բուրվառ *զխունկս* աղօթից. վէմն սեղանն սուրբ. և քերովբէք քշոցքն **բ**: - 345. Երկրորդ՝ սեղան *խնկոցն* ի մէջն: - 346. Նոյնպէս և սեղան *խնկոց* և երեսացն ցուցանէ զհոգիս սրբոց ելեալ ի մարմնոց և մտեալ դէմ յանդիման երեսացն աստուծոյ: - 346. Զի՞նչ էր նիւթ *խնկոցն*: - 349. Նմանապէս և *խունկ* ծխելոյ **դ** էր: - 349. Այլ որք յամառելով յօրինակն՝ ա՛ղ խառնեն ի խորհուրդն, պա՛րտ է նոցա խառնել և ձէթ և մուրկ և *խունկ* և միս գառին. կամ զանգեալ ի կասկարայս, կամ օծեալ ի տապակի, զի զօրինակն կատարեսցեն. և հեռասցին ի ճշմարտութենէն: - 357. Եւ նախ ասեմք զանկենդանն որ կոչի զոհ. որ է՛ մասնաւոր նուէրք. որպէս նաշիհ և իւղ և *խունկ*: - 357. Եւ դարձեալ՝ նաշիհն է՛ նշանակ խոնարհ մարմնոյ մաքրութեան. և *խունկն* առաքինութեան հոգւոյ. և իւղն զուարթութեան մտաց: - 357. Իսկ որ վասն մեղաց նաշիհ իւղ և *խունկ* ոչ դնէին. զի տրտմութիւն և խաւար է մեղքն, և գարշ հոտ գայ ի խղճմտանացն մինչև ապաշխարեսցէ: - 357. Հինգերորդ, վասն մեղաց պատարագ, ի մեռելոտի կամ ի պիղծ ինչ մերձեցեալ. ոչխարով և թռչնով և նաշիհով առանց իւղոյ և *խնկոյ* քաւէին: - 358. Բաց յայսցանէ բճճբ գլուխ ոսկի տուփ *խնկով*: - 359. Ի *խնկոց* սեղանն քաւէ՛ր արիւնն. զի զաղօթս սրբոցն բարեխօս ունիմք ընդ խորհրդաւոր արեանն: - 360. Եւ վասն ուխտի, խաչի, և եկեղեցւոյ: Պտուղս: Շօթ: Նաշիհ: Ձէթ: Մոմ: *Խունկ*. և այլն: - 362. Զի՞նչ է որ յանկիւնս եկեղեցւոյն *խունկ* վառեմք: - 363. Իսկ ի ներսն, **ա**՝ հացին երեսաց և գառին. **բ**՝ *խնկոցն*. **գ**՝ շօթին և զիացին. **դ**՝ մին ա՛յլ **զ** հացին. զի **ժբ** հաց էր. և **բ** սեղան: - 364. Զի իրն փոխեցաւ ի ճշմարտութիւն, և խորհուրդն մնաց նոյն. որպէս ջուրն և *խունկն*. իւղն և նաշիհն: - 369. *Խունկն*՝ աղօթք սրբոց և այլքն: - 374. Նոյնպէս և մեք ի հանդէս տօնից նուիրեմք նաշիհ և գինի պատարագի. ձէթ՝ մոմ՝ *խունկ*՝ և զենումն մատաղի: - 375. Մեսեդին **բ** տուն. և **բ** տուն ուղղիցին *խնկօքն*: - 375. Եւ որք *զխնկոցն*՝ դպիրք են և ընթերցօղք: - 379. Եւ այն որ վիճա՛կն է՝ ծիրանեգոյն հանդե՛րձ է. որ զսեղան հացին և *զխնկոցն* ծածկէին. և տեսութիւն կամ փրկութիւն թարգմանի: - 425. Եւ նիւթն ոսկի և արծաթ և պղինձ և երկաթ. այլ և *խունկն* և պատւական ակունքն ի հեթանոսա՛ց էր: - 440. Քսանևդ, եբեր բազում պատարագս. ոսկի և ակն և *խունկ*: - 441. Ոսկի անբիծ հաւատն. և ակն վարք պատւական. և *խունկ* աղօթից: - 441. Ո՞ր քան ևս քահանայապետին որ զերկոտասան օր պարտ էր *խնկօր* պաշտել ի մէջ տաճարին ի ժամ աղօթիցն. թէպէտ ի սուրբն սրբոց միանգամ ի տարւոջն: -

483-484. Սեղան ողջակիզացն, և սեղան սրբութեանցն և սեղան *խնկոցն*. ամենայն քառակուսի նշանա՛կ են քառաթև խաչին յիսուսի: - 494. Քառասուներորդ, Վասն ժամահարին. և *խնկոցն*: - 527. Աստ բուրվառ *խնկոց*. և ի մեզ բուրումն աղօթից: - 614. Յայս միտս ի վերայ սեղանոյն *խունկ* վառեմք. որպէս ասացաւ ի վերոյ իա գլուխն, խգ համարն: - 615. Քանի՞ անգամ *խունկ* արկանեն յեկեղեցին: - 618. Եւ յերեքին յաւետարանսն մերձ կացեալ *խնկօք* բուրելեօք: - 618. Չորրորդ և ուղիղ, որպէս ասէ տեսիլն հրեշտակք առնուին *զխունկս* որ է՛ աղօթք սրբոցն, և նուիրէին ի սեղանն ոսկի որ է՛ քրիստոս. և ի նմանէ բուրէր ծուխն առ հայր: - 625. Նոյնպէս և *խունկն* զիւղաբերից կանանցն և զբուրումն հանդերձելոյն առ մեզ: - 628. Նոյնպէս *խունկն* ի տօնս սրբոց: - 628. Իսկ ի պահս ո՛չ *խունկ* և ո՛չ օրհնութիւն. զի ընդ ապաշխարութեամբ եմք, ո՛չ իշխեմք գոհանալ և ո՛չ ունիմք անուշահոտ վարս: - 628. Մեղաց պատարագին *խունկ* և իւղ չէր հրամայեալ օրէնքն. զի տրտում և ժահահո՛տ է: - 630. Եւ ալէլուն եկեղեցւոյ *խունկ* և իւղ է: - 630. Եւ *խունկն* ծուխն: - 644. ...իսկ *խունկն* մերձեալ ի հուրն և զհոտն բուրեալ՝ է՛ մարմինն միաւորեալ ընդ բանին. և զհոտ անոյշ բուրեալ աշխարհի: - 645. Դարձեալ՝ սիրտք մեր բուրվա՛ռ է. և աղօթքն *խունկ.* և հուրն ջերմ սէրն նիւթ բուրվառին: - 645. *Խունկ* յոնգունքն, զանուշահոտ վարս նշանակէ: - 671. Եւ միջին սրբութին է կայանք հոգւոցն. ուր աշտանակն լուսոյ և *խունկն* և հաց երեսացն: - 682. Նոյնպէս և յայլ խորհրդոց կատարմունքն. կնքոյ, պսակի, և այլոցն, լուացուէ և *խնկոց* զին: - 684. Բուրվառն ոսկի և *խունկն* այսինքն զի զաղօթս երկրաւորաց սուրբքն և հրեշտակք մատուցանեն քրիստոսի: - 713. Զի ծուխ *խնկոցն* ի վերայ սեղանոյն, Նախ նշանակէ՛ սեղանն զքրիստոս. և ծուխն զաղօթս սրբոցն. զոր արծարծէ՛ հօր ի հոտ անուշից: - 749

**ԽՈՒՍԱՓԵՄ +** Որք զաչս իմաստից յիմանալի ճառագայթիցն *խուսափեցին* թիւր կամօք, և խոտոր մտօք. զանուղղայս խորհելով, և զանպատշաճս բարբառելով. յարձակեալ անկապ լեզւաւ և անդուռն շրթամբք բացեալ յերկինս. ցոպ բերանով ի բարձունս բարբանջելով. և յածեալ ընդ երկրաւ լեզուագարելով. որոց դատաստանն ի բնէ ո՛չ դատարկանայ. և կորուստն ո՛չ նիրհեսցէ: - 31. Եւ վէմն եկեղեցւոյ և պետ պետական գնդին՝ *խուսափէր*: - 456. Եւ արդ, Ո՜ հաւատ մեծ պաշտելի լոյս իմ և տիպ. և գանձ անկողոպուտ. կացցես առ իս. յարգանդէ մօր իմոյ *խուսափեալս* ի ծոց քո: - 771

**ԽՈՓ +**Եւ արդ զինչ զարմանք էր թէ յայնպիսի խաղաղութեան ծունէին զսուսերս իւրեանց ի *խոփս*: - 27

**ԽՌԻՒ +** Ո՞ր քան առաւել մերս անկրթութեան մտօք և իրօք պարտ էր հրաժարիլ և ի բաց փախչիլ որպէս *խռիւ* ի հրոյ և զաչացու ի լուսոյ: - 456. Եւ որք *խռիւ* փայտ՝ խոտ՝ և եղէգն, այրեսցի անշէջ հրով: - 488. Եւ որք ունին *զխռիւն* և զխոտ, այրելիք են հրոյ: - 702

**ԽՌՈՎԱՐԱՐ +** Իններորդ՝ յետ է աւուր կորոյս *զնաաս խռովարար*, որ բրէր զաջոյ ակն հէլի. և տէր մեր *զխռովարար* բանսարկուն, որ բրէ՛ զակն իմացականին մարդոյ...: - 427. Այս է՝ զմեղքն՝ զկամքն չար՝ և զսատանայ՝ որ *խռովարարք* էին եբարձ ի միջոյ. և արար խաղաղութիւն յերկինս և յերկրի: - 585

**ԽՌՈՎԵՄ +** բ՝ զհանդարտն *խռովէ*.: - 322. Այլ և ամենայն տարերք *խռովեսցին*. մրրիկ ծմերան և ցրտոյ՝ հրախառն յամենայն ուրէք սաստկացեալ...: - 735

**ԽՌՈՎՈՒԹԻՒՆ +** Դարձեալ ասեն թէ՝ աստեղք ունին բնութիւնս ներհակս միմեանց. չար և բարի. և միմեանց դիպեալ ներհականան իրերաց. և առնեն չար կամ բարի *խռովութիւն* կամ խաղաղութիւն. աւեր կամ շինութիւն. և այլն: - 12. Վկայ անիրաւ զտնէ՛ հայհոյեն. և դա՛տ *խռովութեան* ի ժողովս մուծանեն: - 34. Այլ է՛ նշան փոխելոյ թագաւորաց. պատերազմի. և սովոյ. կամ այլ ինչ *խռովութեան* երկրի: - 203. Երրորդ՝ տեղիք են բարեխառն ի շող ժամու, և ամրո՛ցք ի *խռովութեան* աւուրս: - 211. Այլ ա՛յս է ճշմարիտն. զի պատերազմ և *խռովութիւն* էր յաւուրս դաւթի մինչ սատակեաց զնոսա. և որդի նորա ի խաղաղութեան ժամու շինեաց զտաճարն: - 439-440. Զայս ցուցանէ թէ՝ որ քան ի *խռովութեան* եմք ընդ թշնամեայն և յանձինս մեր՝ ո՛չ լինիմք տաճար աստուծոյ: - 440. Բժիշկք զհիւանդաց առողջութիւն և զցաւս. և նաւավարք *զխռովութիւն* ալեաց և զանդորրութիւն: - 536. Ութերորդն է խաղաղութիւն առանց *խռովութեան*...: - 767. Եւ այս ի *խռովութեան* ժամու և յանձուկ տեղւոջ: - 788. Նմանապէս և աստ յաւուր նոր կիրակէի ասացեալն կրկնո՛յ զատկի, յանկարծահաս ժամու շարժեալ հեղեղաց ուղխից *խռովութեանց*: - 789

**ԽՌՉԱՓՈՂ +** Չորրորդ՝ զի պարզի բանս մեր երիւրմամբ *խռչափողիցն*...: - 121. Երկրորդ՝ ձայնական գործիքն. որ են է. որպէս Շրթունք. Ատամունք. Լեզու. Մակալեզու. Բերան. *Խռչափող*. Թոք: - 216. Վասն որոյ գլուխն է՛ ի վերոյ. և *խռչափողն* որ ունի զտուր և զառն՝ օդո՛յդ է նման. և ի ներքոյ այլ մարմինք և հիւթ արեն և ջրոյ՝ երկրիս է օրինակ: - 232-233. Եւ մինչ ի *խռչափողն* արիւն գայ, և անդ ի

սպիտակ ջուր փոխի: - 242. Եւ որպէս է է գործիք ձայնին, որ է՛ թոքն. *խռչափողն*. մակալեզուն. բերանն. լեզուն. ատամունքն. և շրթունքն. և սոքա միաբանին ի խօսքն: - 296

**ԽՍՏԱԳՈՅՆ +** Տասներորդ՝ մահ անդրանկացն. իբր ի փոքունցն կարգաւ ի *խստագոյնն* ելեալ: - 333. Եւ զի խիստ էր հայհոյութիւնք նոցա, *խստագոյնս* քարկոծեցան տանջանօքն յաւիտենից: - 566. քանզի մեծամեծ և *խստագոյն* չարչարանս տացէ պաշտօնէիցն աստուծոյ: - 708. Եւ յարամնայութիւն կնքոյն պատճառէ՛ ոմանց գերագոյն պատիւս. և ոմանց *խստագոյն* պատիժս. ըստ բազում գանից առակի ասիցն: - 783

**ԽՍՏԱԿՐՕՆ -** Յինգերորդ՝ խիստ է կեղնն. նոյնպէս և արդարքն *խստակրօնք* են...: - 766

**ԽՍՏԱՄԲԵՐ +** Կէսք *խստամբէր* կրիւք չարչարեալք. և այլ երկիւղիւ պակուցեալք: - 788

**ԽՍՏԱՆԱՄ +** Զի յետ անկմանն եղև *խստացեալ* և անզեղջ ի չարն. կորացեալ ի ճշմարտութենէն. անկեալ ի բարւոյն. տկարացեալ ի զօրութենէն. արտաքսեալ յաստուածային խոկմանէն: - 146. Ութերորդ՝ որք *խստացեալ* են անհաւատութեամբ և թանձրացեալ մեղօք՝ անգործ մնան ի նմանէ: - 185. Վասն այն մասնկունքն նորա ո՛չ *խստանան*. այլ անգայտացեալ ի վա՛յր բերի և կոչի ծիւն: - 205. Չորրորդ՝ խնայեաց զնոսա իբր ի մարդիկ զի զղջասցեն փոքր խրատովն և ի մեծ պատուհասէն զերծանիցին. այլ նոքա *խստացան* մինչև զամենայնն կրեցին: - 333. Եւ կաւագործութիւնն *խստացաւ* ի մովսիսի **իբ** ամէն ի վեր. որ լինի **ծք** ամ խիստ ծառայութիւն նոցա: - 337. այլ յորժամ *խըստանայ* ի չարիս մինչ զի զպաշտօնն աստուծոյ յինքն ձգեսցէ ...: - 707. Է՛ ուրենն ասել, եթէ ոչ տն սաբաւովք, այսինքն զօրութեանց, թողեալ էր մեզ սերմն առաքելօք և մարգարէիւք և այլովք սրբովք և վարդապետութեամբ աւետարանին, համերք և ի մեղս լինէաք *խստացեալք:* - 755. Չորրորդ, հաւատն է՛ աստուածային առաքինութիւն. իսկ դւք զի են *խստացեալ* ի չար՝ ո՛չ ունին զղջումն որ է բարոյական. ապա և ոչ հաւատ որ է վերնագոյն և բարի կամաց խոկումն առ աստուած: - 784

**ԽՍՏԱՍԻՐՏ +** Նա՛խ՝ զի *խստասի՛րտք* էին և անողորմք. և ո՛չ տային հանգչիլ ծառայիցն և անասնոցն: - 371

**ԽՍՏԱՍՐՏՈՒԹԻՒՆ +** Եւ այս վասն *խստասրտութեան* նոցա զի մի՛ սպանումն լիցի: - 400. Մովսէսին պատճառն վասն *խստասրտութեան* նոցա է որպէս տէրն ասաց. զի մի՛ սպանումն լիցի: - 401. Իսկ անթողլի մեղաց զ են պարագայք. այսինքն յուսահատութիւն. յանդըգնութիւն. մարտընչիլ զճշմարտութիւնն ճանաչելոյ. նախանձ ընդ դէմ եղբայրական սիրոյն. *խստասրտութիւն* և անզղջութիւն մինչ իսպառ: - 567. ընդ դէմ առաջնոյն է՛ *խստասրտութիւնն*. և ընդ դէմ երկրորդին անզղջութիւնն մինչ իսպառ: - 567

**ԽՍՏԱՑՈՒՑԱՆԵՄ +** Այսպէս է հաստատել զչարն. և *խստացուցանել* զսիրտն. և այլն: - 18. Զի՞նչ է որ ասէ՝ «Ե՛ս *խստացուցի* զսիրտն փարաւոնի»: - 336. Երրորդ, զի մեր ախորժակացս հետազայ և աստուծոյն. զի յորժամ ի բարին լինիմք՝ օգնէ՛. և ի չարն թո՛յլ տայ. ա՛յն է *խստացուցանելն* զսիրտ մարդոյ: - 336

**ԽՍՏՈՒԹԻՒՆ +** Եւ տէրն զհին կտակն որ *խստութիւն* էր և սպանօղ՝ ընդ նորոյս խառնելով. որ հոգւով է և կեցուցանօղ: - 126. Եօթներորդ՝ զի լինի ամպ որ ո՛չ որոտայ և ո՛չ կայծ է վասն սաստիկ *խստութեանն*: - 206. Քսանէ, Վասն կախարդացն. և խօսից դիւացն. և *խստութեան* սրտին. և կողոպտելն զեգիպտացիսն: - 283. Երկրորդ՝ թուլացուցանէ *զխստութիւն* սրտին: - 459. Քանզի ճշմարտութիւնն յառաջանայ ընդ *խստութեանն*: - 459. Իսկ ողորմութիւն բարեխառնէ *զխստութիւնն*: - 459. Տուեալ յաստուծոյ ընդ դէմ *խստութեան* սրտին: - 582. Նմանապէս և յանկարծակամահ լինի, կամ ի *խստութենէ* ցաւոյն...: - 668

**ԽՏԱՆԱՄ, ԽՏԻՄ +** Այլ զաստղալից երկինս ի յօդոյ ասէ *խտացեալ* և թանձրացեալ. և ի նմա՛ են կառուցեալ աստեղք և ընթանան: - 184. Եւ զի ստորին է այլ տարերաց և *խտեալ*: - 211

**ԽՏՐԵՄ +** Զհեղձուցեալսն ո՛չ *խտրեն*. և զազիր կերակրօք զեխին: - 34. Նա՛խ՝ զի մի պակաս երևեցի քան զհեթանոսս, *խտրէին* զմարմնոյ արատն: - 370. Ա՛րդ՝ որ առանձինն է՝ մարմնոյն արատն ոչ *խտրի*. այլ հոգւոյն: - 370. Եւ որ հասարակն, և սմա՛ մարմնոյն և հոգւոյն ո՛չ *խտրի*. զի եղբայր յեղբօրէ օգնեալ՝ զմիմեանց բառնան զտկարութիւն: - 370

**ԽՏՐՈՑ +** Եւ բարձեալ *զխտրոցս* բաժանման ասէ՝ երկոքեանն մի՛ են. առնլովն աստուծոյ և մարդանալովն. և մարդոյն աստուածանալովն. ահա զբնութեանցն միաւորութիւնն եցոյց: - 80. Իսկ որ *խտրոց* դնէ թէ «առանց բանի պոռնկութեան»: - 401

**ԽՏՐՈՒԹԻՒՆ +** Զի եթէ զաստուածային բնութիւնն պատւէք, հա՛րկ է ձեզ զմարդկայինն անարգել՝ և հրէական *խտրութեամբ* մոլիլ, որք ասէին՝ «դու մարդ ես՝ և զանձն քո աստուած առնես»: - 90. և Դարձեալ ասեն, բնական մեղքն *խտրութեան* մնաց ի գրաւորն, նոյնպէս ի նորս. որպէս սերմնակաթն և դաշտանին. այլ պատիժն փոխեցաւ հինն ի նորս: - 369. Իսկ որ զքրիստոս պատարագէ, *խտրութիւն* է արատոյ ի հոգի և ի մարմին: - 370. Երե՛ք է *խտրութիւն*: - 402. Եւ ըստ եկեղեցոյ ցուցաւ *խտրութիւնն* ի վերոյ ի իա գլուխն խե համարն: - 511. Երրորդ՝ և զայն ի միում եկեղեցւոջ առանց *խտրութեան*: - 553. Ութերորդ, զի թէ զզենումն կենդանեաց ո՛չ ունին հրաման զենուլ ազգ կանանց որ է՛ *խտրութիւն* մարմնաւոր սրբութեանց. զիա՞րդ պատշաճի տալ հրաման կանանց ազգի մերձենալ ի կարգ հոգևոր սրբութեան: - 589

**ԽՏՐՈՒՄՆ +** Դարձեալ այս է *խտրումն*: - 511

**ԽՐԱԽՈՒԹԻՒՆ +** Վասն է՞ր յոբ յետ *խրախութեանն* **ժ** պատարագաւ սրբէր զորդիսն. և մի զուարակ վասն մտաց մեղացն մատուցանէր: - 322. Չորրորդ՝ ի *խրախութիւն* գինւոյ՝ **ժ** մեղք գործին. այսինքն Նա՛խ՝ բազմակերութիւն...: - 322. Այլ ա՛յս է ճշմարիտն, զի ամենայն բարեկամքն որ ժողովեցան յետոյ և մխիթարեցին զնա՛, իւրաքանչիւրքն բերին մէն մի որոջ ոչխարի և **դ** դրամ ոսկի անգիր ընծայեցին նմա ի սատար *խրախութեանն*...: - 326. Երեքտասաներորդ՝ եօթնօրեայ եղև *խրախութիւն* հարսանեաց: - 422. Փոխանակ *խրախութեանց* ճիչ աղաղակի ընդդէմ հեշտալեաց. անհանգիստ ի խշտի՝ յերեկօրեայ զառաւօտ խնդրէաք. և ի նմա զեռանդ երանեալք: - 789

**ԽՐԱՏ +** Դարձեալ թե ի հարկէ՛ է ոչ լինին օգուտ *խրատք* և սպառնալիք և ուսմունք. որովք բազումք յորդորին ի բարիս, և հեռանան ի չարեաց կենցաղոյս: - 11. Ուստի յա՛յտ է թէ սերմանեաց ի բնութիւնս զբարին, և օրէնս եդ բարւոյ. այլ և *խրատ* և յորդորումն և պարգևս բարեաց: - 17. Երրորդ՝ ի *խրատ* մեզ. զի որպէս չարչարանօքն ազատութիւն արար մարդկային բնութեանս, այսպէս ամէն ոք չարչարանօք իւրովք ազատեսցի ի պատժոց ներգործական մեղացն: - 43. Եւ աստ երևումն և *խրատ* ուղղութեան. պատիժ կամ պարգևք բարութեան: - 133. Նախ՝ զի ասեն վարդապետք թէ ո՛չ ումեք *խրատու* մեղանչեաց, և ո՛չ ումեք օգնութեամբ նորոգեսցի: - 150. Զի առնելն է հաճոյական գործ առանց կասկածանաց. որպէս բարի առնել բարեաց, որ է՛ արդարութեանն աստուծոյ. և չար առնել չարեաց, որև այս է՛ *խրատ* ուղղութեան. այլ բարի առնել չարեաց, այս ողորմութեան է և գթութեան. այսոքիկ առնելոյն են տեսակք: - 158. Վասն որոյ *զխրատ* և զուսումն ո՛չ լսեն մեծամեծք: - 251. Վեցերորդ՝ կնոջն չար *խրատն* և կագն: - 322. Եօթներորդ՝ գաւազանն նշանա՛կ է *խրատու* և արդարութեան: - 332. Չորրորդ՝ խնայեաց զնոսա իբր ի մարդիկ զի զղջասցեն փոքր *խրատովն* և ի մեծ պատուհասէն զերծանիցին. այլ նոքա խստացան մինչև զամենայնն կրեցին: - 333. Եւ ի *խրատ* նոցա՝ պատժէ՛ զանասունս նոցա. զի զգաստացեալ երկիցեն յանձինս իւրեանց: - 334. Եւ պատուէրն է *խրատ* սիրելեաց և որդւոց: - 340. Աղն կըսկծո՛տ է, նշանակէ՛ *զխրատն*: - 356. Նշանակէ՛ զմանկունս ընդ ձեռամբ *խրատու* վարժեալ և կրթեալ: - 357. Եւ քահանայքն հպարտացան և օտար հրով խնկարկեցին ի ներքս վարագուրին, վասն այն պատժեցան ի *խրատ* այլոց: - 364. Երրորդ՝ զի կարէ՛ այլոց *խրատ* լինիլ բազում ինչ զփործ առեալ: - 378. Այլ որ զուղիղն ասեն ա՛յս է, կորխ՝ եցոյց զօրինակ զղջման. զի լուաւ *խրատուն* մովսէսի և մնաց ընտրութեանն աստուծոյ ի դուռն խորանին: - 382. Եւ թէպէտ զարհուրելի բանս յերկարեաց ի *խրատս*, ո՛չ լուան. վասն որոյ ո՛չ սրբեցան: - 382. Չորրորդ՝ բուրվառն աղօթք մեռելոց. և գաւազանն *խրատ* կենդանեաց: - 382. Երկրորդ՝ զի մի՛ չար *խրատ* տացէ: - 388. Ի *խրատ*՝ զի սնուցօղն մի լիցի չարչարօղ. և բանն օրհնութեան մի՛ անիծեսցէ զոք: - 399. Երկրորդ՝ ի *խրատ* մեղաւորաց. զի յորժամ գիտենան թէ ո՛չ յաջողի ճանապարհ մեղաւորի, արգելուն ի մեղաց: - 408. Եւ սրտմտութիւնն բարի՛ է և *խրատ*: - 408. Երկրորդ՝ զի վերջին *խրատն* և օրհնութիւնն մնացակա՛ն է: - 408. Նա՛խ՝ զի մեղայն դաւթի՝ զպատիժն յաւիտենից՝ արար ժամանակեայ *խրատ*: - 432. Այլ աստ ասէ սուրբն եփրեմ եթէ՝ *խրատն* դաւթի եղև հատուցումն մեղացն. այլ և պարտք բարեաց առ աստուած ի ցոյց օրինի ամենայն ապաշխարողաց: - 434. Ուստի տէր տէր տայ ինձ լեզու *խրատու* և սիրտ ի ժամու: - 456. Վասն է՞ր այսչափ ամենայն գիրք և բանք և *խրատք* գրեալ եղեն: - 531. Նոյնպէս և անչափութիւն բանից և *խրատուց* հարց և իմաստնոց գիրք սուրբք՝ հին և նոր կտակարանք ցուցանեն զանչափ հիւանդութիւն հոգւոյ. զի սոքօք առողջասցին: - 531. Երրորդ, արբեալն ի խորհրդոց՝ արհամարհէ՛ զօրէնս և զամօթ և *զխրատ* մարդկան: - 557. Եօթնժ, հաւանի *խրատուց* նորա: - 576. Ա՛րդ՝ ժուժկալութիւն է որով ամենայն ցանկութիւն ուղղի կառավարութեամբ *խրատուն*: - 581. Երրորդ

*խրատ* որ է խորհուրդն: - 582. Խրա՛տ է լոյս հոգւոյ առ ի յունել զհոգին. որ յերկրայինս և ի մարդկայինս ո՛չ շաղախի: - 582. Երկրորդ ինքեանց ընդ այլս. որպէս հեզք ըստ առաքելոյն *խրատու*. թէ «ընդ ամենայնսն զխաղաղութիւն ստացէք»: - 585. տայ *խրատ* և զգուշացուցանէ ի մեղացն որ այլ չգործէ ...: - 602. Պա՛րտ է ամենայն որ աղօթէ, զայսոսիկ ի միտ պահել և ապա՛ աղօթել. վասն որոյ ի սկիզբն գրեցի *զխրատս*: - 620. Երկրորդ, որ անզեղջ են ի մեղս՝ տայ աստուած զհիւանդութիւն ի *խրատ* ուղղութեան: - 665. Իսկ հող ցանել ի գլուխն, գլուխ զմիտքն նշանակէ. որ ինքնիշխան եղև յաստուծոյ. և հնազանդեալ *խրատու* հողակեր օձին՝ մահացաւ...: - 670. Իսկ տանիլն ի դ անկիւնս եկեղեցւոյն, վկայե՛ն նմա թէ՝ չորեքին աւետարանչացն *խրատու* շուրջ եկն զեկեղեցեաւն. - 673. ցուցանէ թէ անուշահոտ վարուք և *խրատու* աւետարանին ընթացաւ զկեանս իւր: - 674. Վասն հինգերորդին, որք աստէն *զխրատս* ընդունել ո՛չ կամեցան և ընդ մարդկան տանջիլ ո՛չ արժանացան. վասն յանորիկ արդարապէս անդ՝ անդադար հարկանին ուռամբ: - 752. ...որպէս ծաղկեալ գաւազանն ահարոնի նշանակէր *զխրատ* իմաստութեանն. որով զարդարեալ տայ զպտուղ լուսաւոր նիւթոյ կերակուր ոգւոյ: - 768. Զի հասարակա՛ց է ամենայն մարդոյ կատարելոց և անկատարից, զի ի յանդիմանութիւն յանդիմանելեացն առհասարակ դժկամա՛կ երևի ի սկիզբն. թէպէտ ընտրողութեամբ լաւին ընդունին *զխրատն*: - 774. Այսպէս յընդդիմակէն տե՛ս և զայս. զի թէպէտ հասարակա՛ց է մարդոյ դժկամակ գոլ *խրատու*, այլ ո՛չ է բնութեամբ իր: - 774. Իսկ ուղղակին. զի մոռացումն բնաւորեալ է առ խառնուած կազմութեան մարդոյ. իսկ *խրատ*՝ յանդիմանութեան է՛ ի ցոյց ինքեան: - 774

**ԽՐԱՏԱԿԱՆ +** Նաև պատճառին. թէ *խրատական* է. թէ աւաղական. թէ սպառնական. թէ ողոքական. թէ ըղձական. և այլ այսպիսիք: - 643

**ԽՐԱՏԵԼ +** Տասներորդ՝ զի սուտ լինէին ամենայն օրէնք բնական՝ գրական և աւտրնական. զի սոքա ամենքն *խրատեն* զմեզ խոտորիլ ի չարէ՝ և առնել զբարի. և այլն ամենայն: - 20. Մետասաներորդ՝ որպէս հայրն զորդին զան հարու զի զգաստացեալ մի՛ զրկեսցի ի ժառանգութենէ հայրենեացն. այսպէս և աստուած զսուրբս և զսիրելիս իւր *խրատէ*: - 159. Կամ ի հրահանգից *խրատողաց*: - 251. Վեցերորդ՝ ո՛չ առնու ի գլխոյն և ո՛չ յոտիցն. այլ ի միջացն. զի *խրատէ* զմարդիկ ո՛չ հաւասար գլխոյն պատուել զկինն, և ո՛չ անարգել իբրև զոտք. այլ միջակ պատուով չափաւորել զնա: - 276. Նախ՝ թոյլ տա՛լն է աստուծոյ. որ անձնիշխան կամօք ամրանայ մարդ ի չարն, և աստուած ներէ՛ և ո՛չ երկիւղիւ *խրատէ* զնա: - 336. Որպէս սովորութիւն է մարդոյ որ վատացն ասէ, ե՛ս արարի զայդ բանդ որ զքեզ ի քո կամդ թողի և ո՛չ *խրատեցի*: - 336. Հինգերորդ՝ զի *խրատեսցին* նոքօք և չարչարեսցին: - 417. Եւ զի հեղի ո՛չ *խրատէր* զնոսա սաստիւ և տանջանօք. վասն որոյ և ինքն պատժեցաւ և մեռաւ. և քահանայութիւնն յազգէ նորա փոխեցաւ յաւուրս սողոմնի: - 425. Երրորդ՝ զի *խրատեսցին* շնացօղք: - 433. Դարձեալ *խրատէ* զառաքեալս ի գործ ինչ՝ բոլոր և ամբողջ բերել առ տեարս իւրեանց. և նոքա մասնաւորեսցեն նոցա: - 443. Երրորդ՝ որպէս զստնդիայի մանուկն է ամ *խրատէ* դայեակն. այսպէս ժողովուրդն որ ել յերկրէն իւրեանց, երկիրն բաբիլացւոց հ ամ ի գիրկս իւր դայեկեաց զնոսա և սնոյց. զի յետ դարձին յերկիրն իւրեանց՝ զբարիս գործեսցեն: - 448. Եւ մարմնաւոր իշխան զթագաւորս և զբռնակալս. զի մարմնապէս կառավարեսցեն զմարդիկ և *խրատեսցեն* վասն մեղաց: - 538. Ասեմք, եթէ որք ի հաւատս ունին թիւրութիւն. որպէս հերձուածօղք և վնասիչք եկեղեցւոյ. և որք ի զազիր վարս պղծեալ են գործովք և վնասեն զինքեանս. և անզեղջք են առ երկոսին. յետ մի անգամ և երկիցս *խրատելոյ*, որոշեսցին յեկեղեցւոյ և պատժեսցին: - 540. ...դ՝ *խրատել* զերկմիտսն...: - 585. Կարգն է՛ ի խորհուրդ խոհեմութեան և գիտութեան. զի իմաստութեամբ և գիտութեամբ սպասաւորեսցէ խորհրդոցն և *խրատեալ* ուսուսցէ զժողովուրդն: - 587. ...որ սակաւ մի *խրատեցաւ* ի ձեռն աքիսողոմայ: - 602. Եւ մեք *խրատեալ* զնոյն երգեմք: - 621. ...որպէս *խրատէ* սողոմոն. «տո՛ւր բաժինս յեօթանց՝ այլև յութիցս»: - 658. Եւ զինչ և իցէ՝ *խրատէ* աստուած զմեզ...: - 668. Եւ մարգարէն երանէ զմարդ զոր *խրատէ* տէր: - 774

**ԽՐԱՑ +** Եւ մեծն ի ծնունդս որովայնի՝ *խրաց* մի կօշկաց նորին լուծելոյ ոչ բաւէր: - 456

**ԽՐԹՆՈՒԹԻՒՆ +** Այլ զբանիս *խրթնութիւն* առնէ կոչմանցն անորոշութիւն. զի կոչի շնորհ իջեալն պարգև. որպէս մարգարէութիւնն: - 783

**ԽՐՈԽՏ +** Չորրորդ՝ զի *խրո՛խտ* է և սրտամտող: - 315

**ԽՐՈԽՏԱԼ +** *Խրոխտալ* պարտ էր առ չարսն և ո՛չ հնազանդիլ. այժմ անհնազանդիմք օրինացն աստուծոյ և ամբարհաւաճիմք առ ընկերս: - 564

**ԽՐՈԽՏՈՒՄՆ +** ...և որկրամոլութեամբ մնան բազմամարմինք. և ատելութեամբ զերծանի ոչխարն ի գայլէ. և *խրոխտումն* մեծարգոյ առնէ զծին. և այլն նմանապէս: - 563

**ԽՓԵՄ +** Որ բազում անգամ բանայ և *խփէ* երկչոտ է և թոյլ: - 246. Եօթներորդ՝ զի սաստիկ է. զի ամենայն ոք ի հարկէ զաչս *խփէ* որ հանապազ տեսանեմք զլոյս: - 522. Որպէս ոք զգգալի ակն *խփէ* և զրկի ի լուսոյն և առնէ խաւար. նոյնպէս և նոքա: - 562. Բայց կրկին է զրկումն լուսոյ. մի՝ որ ի ճառագայթէ՛ լուսոյն զակն *խփէ* և խաւարի. և **բ**՝ որ ընդ դէմ բոլորակի արեգականն հայիցի՝ կորուսանէ զլոյսն և խաւարի: - 562. Ա՛րդ՝ մեղանչելն մարդոյ այնպէս է որ զակն *խփեաց* ի լուսոյն և խաւարեցաւ. սակայն լոյսն ծագէ՛ դեռևս ի վերայ աչացն և սակաւ փայլէ ի ներքս. և յորժամ բանայ վաղվաղակի լոյս տեսանէ: - 562

**ԽՕՍԱԿԻՑ +** Այլ ընդ տն մերոյ բազումք *խօսակիցք* եղեն և տեսին: - 522. ընդ որում անպատշա՛ճ էր լինիլ *խօսակից* և զուստն ո՛չ գիտել. այլ պատշա՛ճ էր որդւոյ վասն մարմնով երևելոյն: - 735

**ԽՕՍԱԿՑԻՄ +** Երկրորդ՝ հեշտութիւն *խօսակցիլ* ընդ օձին. և վասն այն կամեցաւ լսել, զի հեշտացաւ վասն փառաց աստուածանալոյն: - 280. Այլ որ քան և կարասցէ ոք զմիտս ուղղել. *խօսակցելով* առ նա, հաճո՛յ է աստուծոյ: - 779

**ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ +** Երկոտասան պարգև՛ք էին ի դրախտին զոր կորոյս ադամ... Երկրորդ՝ *խօսակցութիւնն*: - 278. Ի *խօսակցութենէն*, զի մինչ ի յորդանան այլ ո՛չ ասի հօր աստուծոյ խօսիլ ընդ մարդկան: - 279

**ԽՕՍԻՄ +** Նախ՝ ի բանէն եսայեայ որ ասէ, «եղիցի յաւուրս յետինս յայտնի լեառն տեառն». *խօսի* վասն գալստեան մէսիային: - 27. Ասեմք եթէ՝ սուրբ գիր *խօսի* բազում անգամ առակաւ...: - 27. Դարձեալ ի վերայ սաղմոսին որ ասէ, «զարթիր փառք իմ». ասէ մեկնիչն և աւանդութիւն հրէիցն թէ՝ *խօսի* աստ ի վերայ չորից թագաւորացն որք հալածեցին զիսրայէլ: - 28. Ի շրթունս *խօսին*, և ի լեզուս դաւաճանեն: - 34. Եւ որպէս նեռնն ազդումն է սատանայի՝ որպէս առաքեալն ասէ. և նոքա յազդմանէ սատանայի՝ խորհին և *խօսին* զանազան հերձուածս ըստ չար խորհրդոց նորա: - 35. Տասներորդ՝ յայտնի՛ է ի սուրբ գրոց թէ աստուած է որ *խօսեցաւ* մարգարէիւքն...: - 58. Այլ հոգին սուրբ էր որ *խօսէր* ընդ մարգարէսն...: - 58. Իսկ հոգին սուրբ էր որ *խօսէր* ի լեզուս. որպէս ասէ փրկիչն՝ «ոչ թէ դուք էք որ *խօսիցիք*, այլ՝ հոգին հօր ձերոյ որ *խօսեսցի* ի ձեզ»: - 58. Զոր և այժմ օրինա՛կ է առ մեզ սարկաւագն. զոր հոգի կոչէին վասն հոգևորապէս *խօսելոյն*: - 59. Ուղիղ է, զի որպէս խօսքն թարգման է մտաց և բանի, այսպէս և հոգին սուրբ՝ հօր և որդւոյ...: - 62. Իսկ թէ և զերկու բնութիւնն ասես տէր, ընդդէմ *խօսիս* առաքելոյն որ մի ասաց զտէր մեր յիսուս քրիստոս՝ որպէս և զհայր: - 69. Ապա ուրեմն երևեալն մարմնով և *խօսեցեալն* է որդի աստուծոյ և մի ընդ հօր: - 73. Ելե՛ր ի բանէդ և դժուարինս *խօսիս*. և զոր հարցի՝ ո՛չ ընկալայ զպատասխանին: - 92. Սակայն աշակերտացն է ուղղութեան՝ ո՛չ յանձնէ *խօսիլ*. այլ նախնեացն սրբոց հետևիլ և նոքօք ուղղել: - 93. Ա՛րդ՝ եթէ տգէ՛տ է որդին աստուծոյ հօր, և տգէտ որդւով *խօսեցաւ* ընդ մեզ. տգիտութեան եղիցի և օրէնքս նոր քան զհինն: - 96. Եւ այժմ առ քեզ *խօսեսցուք* ըստ վկայութեան կարգիս ո՛վ նեստորական երկաքնակ և մարդադաւան որոշօղ քրիստոսի, և որոշեալ ի շնորհաց նորին: - 98. Ա՛րդ՝ բանիւ մտացն *խօսի* աստուած ընդ հրեշտակաց. նո՛յնպէս և հրեշտակք ընդ աստուծոյ: - 144. Իսկ բանիւ բերանոյ *խօսի* մարդ ընդ մարդոյ, հրեշտակք ընդ մարդոյ՝ ձևացեալ մարմնովն: - 145. Իսկ բանիւ գործոյ *խօսի* աստուած ընդ դիւին. նա՛և հրեշտակք ընդ սատանայի. որպէս որոտ և կայծակունք հրոյ ի վերայ նոցա...: - 145. Այլ և հրեշտակն *խօսի* ընդ աստուծոյ. զի զբաղձանս իւր ընծայէ՛ նմա: - 145. Եւ *խօսի* հրեշտակն ընդ հրեշտակի. ցուցանելով նմա զտեսութիւն մտացն միջնորդութեամբ հոգևոր իմն ճառագայթիւք. և այսպէս *խօսին* հրեշտակք ընդ միմեանս: - 145. Եւ այսպէս *խօսին* մեծք առ փոքունսն. և փոքունքն առ մեծսն: - 145. Դարձեալ *խօսին* հրեշտակք հաղորդութեամբ աստուածային լուսոյն: - 145. Եւ ա՛յսպէս *խօսին* միայն վերինքն առ ստորինս. զի հաղորդեսցեն զնոսա աստուածային յայտնութեանցն: - 145. Իսկ *խօսի* հրեշտակն ընդ մարդոյ կրկին կերպիւ: - 145. Իսկ այլք ասեն թէ՝ հրեշտակն ո՛չ երևի ձևացեալ մարմնովն և ո՛չ *խօսի* ընդ մարդոյն. այլ՝ դնէ զնմանութիւն դիտաւորութեան ի յաչքն կամ ի յականջն մարդոյն. և անդ ընդունի հասարակ զգայութիւնն զտեսակս այնմիկ, և տայ յերևակայութիւնն և յիմացականն. այսպէս երևին հրեշտակք և *խօսին* ընդ մարդոյ: - 145. Երկրորդ՝ կերպիւ *խօսի* հրեշտակն ընդ մարդոյ տպաւորութեամբ երևակայութեան: - 145. Եւ սոյնպէս *խօսի* ընդ արթունս և ընդ ննջեալս: - 145. Իսկ *խօսի* հրեշտակն ընդ դիւին՝ ցուցանելով նմա զտեսակս իմացման իւրոյ առանց լուսաւորութեան իմն: - 145. Իսկ *խօսի*

դևն ընդ մարդոյ՝ կամ փոփոխելով զգոյութիւնն որպէս հրեշտակն կամ զպատկեր նմանութեանն ցուցանէ տեսանելեացն. և կամ տպաւորէ՛ յերևակայութիւնն: - 145. Զի հոգին *խօսի* ընդ աստուծոյ բաղձանօքն որ մերկապարանո՛ցն է առաջի նորա: - 145. Նոյնպէս և *խօսի* հոգին ընդ հրեշտակն մարմնական կերպիւ զոր իմանայ հրեշտակն որպէս զայլ զգալիս որքան է ի մարմնի: - 145. Այլ ի մերկանալն ի մարմնոյն՝ կարօտանայ յատուկ իմն զօրութեան որով *խօսեցի* ընդ հրեշտակին: - 145. Դարձեալ՝ հոգին *խօսի* ընդ դիւին, զի զբաղձանք սրտին տպաւորէ ի զգայութիւնսն: - 145. Վասն էր՞ աստուած գրով *խօսի* ընդ մեզ որպէս մովսէսի և այլոցն: - 177. Զայս և սովո՛ր են առնել մարդիկք առ մերձաւորս և սիրելիս անընդմիջաբար *խօսին*. և առ հեռաւորս կամ ատելիս գրով կամ միջնորդով: - 177. Նոյնպէս և աստուած ընդ արժանիսն դէմ յանդիման *խօսեցաւ*. որպէս առ ադամ. և առ նոյ. և առ աբրահամ. և առ մովսէս: - 177. Իսկ առ յանցաւորսն գրով *խօսի*: - 177. Չինգերորդ՝ զի յետոյ լինելոցն էր բանն աստուծոյ մարմին. որպէս գիրն ունի յինքեան զբանն. և *խօսի* ընդ մեզ: - 177. Վեցերորդ՝ բանն *խօսեցեալ* յայտնի մեկնութեամբ: - 177. Երրորդ՝ առանց ոտից ընթանայ. առանց թևոց թռչի. առանց լեզուի *խօսի*. առանց ձեռաց գործէ: - 177. Նա՛խ՝ զի զղէմքն ընտրեաց՝ և ընդ եւայի՛ *խօսեցաւ*: - 218. Նա՛խ՝ զի զղէմսն ընտրեսցէ, այլ և զտեղի և զժամանակն, և ապա *խօսեսցի*: - 218. Չինգերորդ՝ ընդ հերձուածողաց և սատանայի մի՛ պարզմտութեամբ՝ այլ հնարիւք *խօսեսցի*: - 218. Եւ ի ձայնէն, որպէս ճնճղուկ. ծիծառն. *խօսօղ*. ագռաւ. և այլն: - 220. Եւ զոր գիրք սուրբ ո՛չ է յայտնեալ, զիա՞րդ իշխէ մարդ *խօսիլ*: - 224. Ի բերանն քաղցր. զի զամենայն բան քաղցր *խօսեսցի*: - 243. Եւ կամ որպէս ծնեալ մանուկն ունի առ ինքն ծածկեալ զհոգին. այլ նա կերակրի և ապա զգայ. և յետոյ *խօսի*: - 255. Ի ծնանիլն նախ խնդրէ միայն կերակուր և աճէ՛. յետ որոյ տեսանէ՛ կանգնի՛ և գնայ. յետ որոյ *խօսի* և իմանայ: - 267. Դարձեալ՝ մարդո՛յս է *խօսիլ* և բանաւորիլ. զի այլ կենդանեացն նմանութեամբ է և ո՛չ իսկապէս: - 275. Զթռչունսն ըմբռնել. ի վերայ ծովու գնալ. դիւաց սաստել. ձեռօք առ այլս *խօսիլ*: - 275. Երրորդ՝ զի որպէս *խօսիլ* գլխոյն է. նոյնպէս լռութիւն կողին է. զի լուռ լիցի կինն ընդ իշխանութեամբ առնն: - 276. Ի խօսակցութենէն, զի մինչ ի յորդանան այլ ո՛չ ասի հօր աստուծոյ *խօսիլ* ընդ մարդկան: - 279. Ութսունևմի, Ո՞րքան *խօսեցաւ* աստուած ընդ նախահարսն: - 285. Երրորդ՝ արիւնն կենդանի է և *խօսի* տեսութեամբն որպէս հաբէլին. վասն որոյ անուտելի է: - 295. Եւ յորժամ փոփոխի այս, այսինքն ի հանդերձեալն, յայնժամ ի լեզուս հրեշտակաց *խօսիցիմք*: - 298. Չամեղական հայն որ կարօ՛ղ է զամենայն լեզուս յինքն ամփոփել և բոլոր *խօսիլ*. և այլքն ո՛չ՝ որպէս ասացաւ ի վերոյ: - 299. Եւ յորժամ *խօսեցաւ* աստուած ընդ նմա, եցոյց զմարգարէութիւնն: - 300. Եօթներորդ՝ որպէս փեսաւէրն իսահակայ եղիազար *խօսեցաւ* զհարսն ի վերայ ջրհորոյն: - 305. Եւ մերոյն փեսային քրիստոսի՝ յովհաննէս ի վերայ յորդանանու *խօսեցաւ* զհարսնացեալ եկեղեցի: - 305. և Դարձեալ որպէս իշովն բաղամու զօգուտն *խօսեցաւ*, և ըղլեզու սուտ մարգարէին շարժեաց յանիծիցն յօրհնութիւնս: - 325. Վասն է՞ր աստուած *խօսեցաւ* ընդ յոբայ: - 325. Նախ՝ զի ունէր զամենայն առաքինութիւնս և համբերեաց նախատողացն. վասն որոյ *խօսեցաւ* աստուած և մխիթարեաց զնա: - 325. Երրորդ՝ զի մի հպարտասցի յետ յաղթութեանն սատանայի, *խօսեցաւ* աստուած և յաղթեաց բանիւ. զի տեսցէ զտկարութիւն իւր և խոնարհեսցի: - 325. Արդ զոր ադամայ ո՛չ վկայեաց, *խօսեցաւ* ընդ յակոբ և վկայեաց արդար և անարատ գոլ: - 325-326. Չինգերորդ՝ ըստ առաջին կարգին դարձեալ ասացին բարեկամքն յոբայ՝ թէ հաճո՛յ ես աստուծոյ՝ լուիցէ և *խօսեսցի* աստուած. վասն այն առաջի նոցա *խօսեցաւ* և վկայեաց: - 326. Վեցերորդ՝ *խօսեցաւ* աստուած՝ և զամենայն անճառելի գիտութիւնս վասն արարածոց ուսոյց նմա. զոր ոչ գիտէին մարդիկ զլինելութիւն երկնի և երկրի և ծովու և կենդանեաց: - 326. Վասն է՞ր յամպոյ և ի մրրկէ՛ *խօսեցաւ*: - 326. ...**բդ**՝ խլից լսել տայր. **գդ**՝ համերց *խօսիլ*. **դդ**՝ ձեռաց շարժումն. **եդ**՝ կաղաց գնալ...: - 328. Եւ այլք ասեն թէ՝ բանն աստուած էր. որպէս *խօսեցաւ* առ աբրահամ և առ մովսէս...: - 330. Դեք ո՞րպէս *խօսին* զառաջիկայն: - 336. Իսկ դեք *խօսին* զմերձաւոր հանդերձեալն: - 336. Երկրորդ՝ զի մի ոք որ կատարէ զօրէնս, պատուակա՛ն է աստուծոյ քան զամենայն աշխարհս. վասն այն ընդ մինն *խօսի*: - 340. Զի տղայո՛ց է երկիւղիւ *խօսիլ*: - 341. Եւ է բերանքն՝ է բանքն *խօսեցեալք* ի վերայ խաչին: - 347. Եօթն բերանն՝ է բանք *խօսեցեալ* կուսին յաւետարանին: - 347. Երկրորդ՝ զի ի տախտակէն *խօսեսցի* ընդ մովսէս: - 349. Տասներորդ՝ ընդ նոսա ձայնն աստուծոյ *խօսեցաւ*. և ընդ մեզ բանն: - 353. Չորրորդ՝ նոցա ձայնն միջնորդով օդիւ և մարգարէիւքն. և ընդ մեզ բանն աստուած անընդմիջաբար *խօսեցեալ*: - 353. Բաղամ մո՛գ էր և կախարդ. և սովո՛ր էր ընդ դևս *խօսիլ*. վասն որոյ յառաջեաց աստուած և *խօսեցաւ*: - 387. Նա՛խ՝ զի մի՛ *խօսեսցի* դևն և չարիս

ուսուսցէ: - 387. Վասն է՞ր *խօսեցաւ* էշն: - 388. Եւ օրհնութիւն, զի յօրհնել բերանոյ նորա՝ յառաջ եկն առ որ բերան ի բերան *խօսեցաւ* աստուած դէմ յանդիման և ո՛չ առակօք: - 407. Նա՛խ՝ զի ընդ աստուծոյ *խօսեցաւ* և ետես և լուաւ զբանն: - 411. Քանի՞ցս անգամ *խօսեցաւ* աստուած ընդ հարսն ամենայն: - 412. Երկոտասաներորդ՝ *խօսեցան* զառաջինն ի հաւանութիւն փեսային: - 422. *Խօսեցաւ* օրինօք նախ և նշանեաց զեկեղեցի սուրբ հարսն երկնաւորին: - 422. Ութերորդ՝ ընդէ՞ր սուտ *խօսեցաւ*: - 429. Երկրորդ՝ զի սուտ *խօսեցաւ* աստ. զի թէ սամուէլ էր՝ ո՛չ ուսանէր ի սաւուղայ. և դևն յերկրէ ո՛չ ելանէ: - 430. Չորրորդ՝ զի թէ սամուէլ էր որ ասաց թէ՝ տէր հեռացաւ ի քէն, և այս ո՛չ է մարգարէութիւն. զի կրկնեաց զիւր բանն. և թէ ո՛չ էր սամուէլ, այլ զանունն ընկալաւ և ինքն դև էր, սուտ *խօսեցաւ* ապա: - 430. Արդ եթէ սամուէլ յարեաւ և մեռաւ և կամ կինն, նա՛ ճշմարիտ եղիցի բանն. ապա թէ կինն ոչ մեռաւ և սաւուղ մեռաւ, սուտ *խօսեցաւ*: - 430. Քսանբ, երկոքին դուստրն խօսեցաւ դաւթի, և կրտսերն տւաւ. և փեսային քրիստոսի կրկին *խօսեցաւ* եկեղեցի և նո՛րս տուաւ: - 436. Եւ տէր մեր զամենայն առակս *խօսէր* ընդ ժողովրդեանն. և առանց առակի և ո՛չ ինչ: - 441. Եւ շուրջ զնովաւ հրեշտակք ամենայն ոչ հաւանեցան. զի նոքա զամենայնն ճշմարիտ *խօսին*. և բարի առնեն մարդկան. և յապաշխարութիւնն խնդան. իսկ սուտ *խօսիլն* և չար առնելն և ի վիշտս ուրախանալ՝ դիւա՛ցն է որ են չար հոգիքն: - 444. Եւ թէ ընդէ՞ր առն եղև *խօսեցեալ*: - 454. Եօթն բան *խօսեցեալ* ի վերայ խաչին: - 454. Ո՞րպէս *խօսէին* առաքեալքն: - 455. Որ և նովաւ զնորայս վասն նորա *խօսեսցուք*. և ի գովեստ մեծութեան փառաց նորին յանկեսցուք: - 456. Վասն է՞ր *խօսեցեալ* եղև առն կոյսն սուրբ: - 461. Նա՛խ՝ զի կոյսն սուրբ՝ նշանակեսցէ զսուրբ եկեղեցի *խօսեցեալ* քրիստոսի որ նմանապէս է կոյս: - 461. Զի որպէս սատանայ օձիւն *խօսեցաւ* առ կոյսն եւա, այսպէս տէր մեր հրեշտակիւն առ կոյսն մարիամ: - 463. Նա՛խ՝ զի աստուած էր ողջոյնառաքն. որ *խօսէր* զկոյսն ի հարսնութիւն կուսութեան, կուսաբեր լինիլ պտղովն: - 464. Այլ և ծանիր. զի է բան յիշէ սուրբ գիրք զոր *խօսեցաւ* աստուածածին կոյսն: - 465. Այսպէս թէ ուրեք մարդ միայն անուանի քրիստոս «զճշմարութիւն *խօսեալ*». և կամ՝ «աստուած կնքեալ». ո՛չ ինչ ուրէք վնասէ զմիաւորութիւնն իբր մարդ սոսկ կամ աստուած միայն. այլ աստուած համանգամայն և մարդ խոստովանի միացեալ: - 477. Ասեն վարդապետք եթէ՝ որպէս մարգարէքն և առաքեալքն *զխօսեցեալ* բանս իւրեանց ի ձեռս ունին իբր պատգամաբեր յաստուծոյ առ մարդիկ: - 481. Զի՞նչ է է բանն որ *խօսեցաւ* ի խաչին: - 492. Մետասաներորդ՝ և սուրբ գիրք ի հոգւոյն սրբոյ *խօսեցեալք* վկայեն: - 499. Եւ այսպէս սովորաբար *խօսիմք*, թէ յուրբաթի կէս օրն ելեալ ոք ի տեղւոջէ՛ մինչև գայ առ մեզ ի լոյս կիրակէին կամ ընդ առաւօտն, ասեմք թէ գ օր է ճանապարհին. նոյնպէս և յարութիւնն քրիստոսի: - 516. Երրորդ՝ համարձակութիւն քարոզութեան առանց երկիւղի *խօսիլ* զբանն առաջի ազգաց և ազանց և թագաւորաց. որպէս պետրոս ի միում ժամու զերեք հազարսն հաւատացոյց: - 524. Ո՞րպէս *խօսէին* յամենայն լեզուս: - 525. Այնց է իմանալ, ուր ժողով լինէր մի լեզուաւ *խօսէր* ոք առաքեալ, և ամենայն ոք լսէր իւր ձայնիւն: - 525. Իսկ աստուածաբանն ասէ, ուր պիտոյ էր՝ յամենայն լեզուս *խօսիլ* կարէին. զի լիցի շնորհքն խօսողաց և ո՛չ թէ լսողաց: - 525. Եւ մի և նոյն բանն *խօսեցաւ* ի նախահարս և ի մարգարէս առանց մարմնոյ: - 529. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ նոյն անձնաւոր բանն աստուծոյ է յաւետարանս *խօսեցեալ* յայնժամ բազմացեալ է անձամբ և գոյութեամբ: - 530. Ասեմք առ այս թէ՝ մի և նոյն անձնաւոր բանն աստուծոյ է յաւետարանս *խօսեցեալ*. այլ ո՛չ է բազում անձն և գոյութիւն բանին: - 530. Որպէս *խօսեցաւ* հոգին սուրբ ի մարգարէսն. և հոգին սուրբ աստուած է ճշմարիտ. ապա և *խօսեցեալքն* ի հոգւոյն սրբոյ ճշմարիտ խօսք է աստուծոյ: - 530. Ա՛րդ՝ յորժամ ամենայն ինչ նոյն է սուրբ Երրորդութեանն, որով յա՛յտ է՝ թէ հայր *խօսի*, և թէ որդի, և թէ հոգին սուրբ, մի և նոյն բանիւն *խօսին*. ապա ուրեմն ո՛չ է անյարմար եթէ հայր նոյն բանիւն վկայեսցէ ի վերայ որդւոյ. զի որդի և հայր նշանակէ զյատկութիւն անձանցն: - 530-531. Իսկ մորուս կոչին մարգարէք և առաքեալք և հայրապետք մերձ բերանոյն առ մեզ *խօսելով* զպատգամս օրինացն աստուծոյ: - 534. Երրորդ՝ մարգարէք որպէս խորհեցեալն բան. առաքեալք որպէս *խօսեցեալն*. և վարդապետք որպէս գրեալն: - 535. ...և առաքեալքն ձեռն դնելովն միայն՝ տային զհոգին սուրբ. և ի լեզուս *խօսէին*. և մարգարէանային ընդունօղքն. իսկ վարդապետք սուրբք՝ քարոզութեան նոցին հետևօղք և որդիք ծնողացն՝ երրորդ կարգին յետ նոցա: - 535. Իսկ հինգերորդ մարգարէութիւն է հոգևոր և աստուածային գիտութեամբ. զոր յայտնութեամբ սուրբ հոգւոյն ուսեալք *խօսին* առ ի զգուշութիւն մարդկան ի հոգևոր շինուածս: - 536. Նախ՝ որ գիտէ. և թէպէտ գիտէ, ասէ թէ չեմ բաւական *խօսելոյ*: - 537. Երրորդ՝ ո՛չ գիտէ. և անգիտանայ թէ ոչ գիտէ և *խօսի* անգիտաբար: - 537. Չորրորդ՝ որ ո՛չ գիտէ. և գիտէ որ ոչ գիտէ, բայց սնափառ

հպարտութեամբն լըլկի և յանդըգնի *խօսիլ* զոր ո՛չ գիտէ: - 537. Ասեմք առ այս եթէ՝ դժուարինս *խօսիս*: - 547. Իսկ յազգէս հայոց ո՛չ ոք իշխեաց *խօսիլ* հերձուած և զայլոցն ո՛չ ընկալան: - 551. Եւ այլ բազում և զանազան ազգապղծութիւն ընդ հոգևորս և ընդ մարմնաւորս. երկու եղբարց և **բ** քերց. և ընդ քերց հոգևոր մօր. և անխտիր ի բազմանկողինս և այլս բազումս որ զազիր է *խօսելոյ* օրէնքէ նոցա: - 552. Երկրորդ՝ յօժարութեամբ *խօսի* զնմանէ: - 575. Այս *խօսի* զհեղեալ առաքինութենէն լուսով շնորհացն աստուծոյ: - 578. Եւ վկայէ՛ մեզ աւետարանիչն յօհաննէս. զի ասէ՝ եսայի ետես զփառս նորա և *խօսեցաւ* վասն նորա. - 632. Առաքելոցն հրով *խօսեցաւ*: - 640. Դարձեալ՝ ունի զխորհուրդ անկմանն ադամայ որ վերջին *խօսեցաւ* աստուած և եհան ի դրախտէն: - 641. ...զի առաւել քան զայլս զբոլոր տնօրէնութիւնն քրիստոսի *խօսեցաւ*. զծնունդն. զխաչն. և զայլն ամենայն: - 644. Եւ մովսէսիւ *խօսեցաւ* զօրէնս: - 644. Իսկ սաղմոս տունն է երգ մարդկան. այսինքն է զի հրեշտակք և մարդիկ միաբանեալ օրհնեմք զաստուած փրկիչն մեր որ *խօսի* ընդ մեզ: - 644. Նա՛խ՝ գրակալն նշանակէ՛ զմովսէս. որ ընկալեալ զպատգամն աստուծոյ՝ *խօսէր* առ ժողովուրդն: - 646. Դարձեալ՝ ցուցանէ զմարգարէս և զառաքեալս. և ի գլուխ նոցա երևեալ բանն աստուած և *խօսեալ*: - 646. Դարձեալ՝ ի վախճանի ի միջոյ առաքելոց և մարգարէից *խօսեալ* և դատեալ: - 646. ...և ապա՛ ի ներքս մտեալ՝ **խ** օր աւարտեաց ընդ աստուած *խօսելով*: - 651. Չորրորդ՝ զի այս՝ է՛ խօսուն և բանաւոր պատարագ և այն անբան զենումն զոր *խօսեցաւ* վասն հնոյն...: - 658. Այլ մեծն ներսէս ասէ թէ՝ սուրբքն ի ծեռն պահապան՝ հրեշտակացն երևին. թէ յերազս թէ յարթնութեան. և օգնեն մեզ. և *խօսին*. և լսեն զաղօթս մեր: - 685. Եւ որ քարոզէ՛ առանց հաւատոյ՝ ոչ *խօսի* զբանն հաւատարիմ որ ըստ աստուծոյ: - 702. Այլ և լինի հայհոյիչ. զի *խօսեսցի* բան ընդ դէմ բարձրելոյն: - 707. ...և ընդ դէմ *խօսեսցի* աւետարանին և արգելուցու զուղղափառ վարդապետս զի մի՛ քարոզեսցեն: - 708. ...մինչ *խօսիլ* տայ բազնեաց, և լերանց գնալ, և ծառոց ծաղկիլ և չորանալ. և մեռելոց յառնել. և հրոյ իջանել յերկնից. և չար հոգւովն *խօսիլ* տայ այլ և այլ լեզուս: - 708. Եւ զբանս օդն ունի. եթէ հոգևոր եթէ մարմնաւոր. զի օդով *խօսեցաք*: - 714. Զի բոլոր Երրորդութիւնն դատէ՛ զմեղաւորս, և մարդկութեամբն *խօսի* ընդ նոսա քրիստոս: - 738. Արդ բանիւ մտաց *խօսի* ընդ բուն արդարս և ընդ հրեշտակս որք դատեն զայլս: - 739. Եւ բանիւ գործոյ *խօսի* ընդ բուն չարս և ընդ դևս որք առաքին ի տանջանս: - 739. Եւ բանիւ բերանոյ *խօսի* ընդ միջակ արդարս և ընդ մեղաւորս...: - 739. Միո՞վ բանիւ *խօսի* ընդ **բ** դասքն՝ թէ կրկին: - 739. Եօթներորդ, այլ և **գ** է գործիք բանին. խելքն որ ծնանի. սիրտն որ խորհի. լեզուն որ *խօսի*: - 742. Կամ զինչ անհնարին սաստ, եթէ ոք խոտեսցէ զսուրբ հոգւոյն *խօսեցեալս* ի գիրս սուրբս. ընտրելով զոմն յարուցեալ ի մեռելոց...: - 775

**ԽՕՍՈՂ +** Իսկ աստուածաբանն ասէ, ուր պիտոյ էր՝ յամենայն լեզուս խօսիլ կարէին. զի լիցի շնորհքն *խօսողաց* և ո՛չ թէ լսողաց: - 525

**ԽՕՍՈՒՄՆ +** Եւ առ յովսեփայ *խօսմանն* **գ** ամիս եկաց և հրեշտակն աւետեաց: - 461

**ԽՕՍՈՒՆ +** Չորրորդ՝ զի այս՝ է՛ *խօսուն* և բանաւոր պատարագ և այն անբան զենումն զոր խօսեցաւ վասն հնոյն...: - 658

**ԽՕՍՔ +** Այլ և յայտնեաց զծածուկ պատրւակեալ *խօսս* նորա: - 47. Ութներորդ՝ որպէս *խօսքն* ի մտացն է և ի բանէն. այսպէս և հոգին ի հօրէ՛ է և յորդւոյ: - 61. Ութերորդին ասեմք՝ եթէ օրինակաւ *խօսից* իմանալ զհոգին սուրբ՝ ունի ինչ ուղղութիւն և ունի ինչ թիւրութիւն: - 62. Ուղիղ է, զի որպէս *խօսքն* թարքման է մտաց և բանի, այսպէս և հոգին սուրբ՝ հօր և որդւոյ...: - 62. Նախ՝ զի *խօսքն* որ է արտաբերեալ բանն, նոյն սա՛ է ներտրամադրեալն բան: - 62. Երկրորդ՝ զի *խօսքն* միայն ի բանէն ծնանայ և ո՛չ ի մտացն: - 62. Եւ գիտելի է, զի որպէս բան կոչի որդին աստուծոյ, նոյնպէս *խօսք* կոչի հոգին սուրբ...: - 66. Նախ՝ զի *խօսքն* է ի մտացն յառաջ եկեալ, որպէս ներտրամադրեալ բանն ծնեալ. և հոգին սուրբ ի հօրէ բղխեալ. որպէս բանն ծնեալ: - 66. Երկրորդ՝ *խօսքն* ունի զիմաստ բանին և զմտացն. և հոգին սուրբ զիմաստութիւն հօր և որդւոյ: - 66. Երրորդ՝ *խօսքն* պատմէ՛ զգիտութիւն բանին և զմտացն: - 66. Չորրորդ՝ *խօսքն* նոյն է բնութեամբ ընդ բանին և մտացն. և հոգին սուրբ նոյն է բնութեամբ ընդ հօր և որդւոյ: - 66. Հինգերորդ՝ որպէս այլ է անձն՝ այլ է *խօսքն* և այլ միտքն. նոյնպէս ա՛յլ է անձն հօր, և ա՛յլ բանին, և ա՛յլ հոգւոյն սրբոյ: - 66. Յաղագս հրեշտակաց... **ԺԹ**) Վասն *խօսից* հրեշտակաց: - 102. Եւ որպէս մի է հոգի և բան և կենդանութիւն իւր. որ է՛ *խօսքն* և շունչն: - 107. Է՛ և *խօսք* հոգւոց: - 145. Ութերորդ՝ զխոհեմութեան և *խօսից* և ձայնից և տէրութեան շնորհն այժմ երևեցո՛յց ի յադամ: - 219. Զի ի կոչումն անուան՝ չորքս այսոքիկ երևին միանգամայն. բանն և *խօսքն* և ձայնն և տեսութիւնն. այսոքիւք զմարդն կատարեալ երևեցոյց աստուած: - 219. Իմաստութիւնն ո՞րպէս է...

*խօսքն* արդարութիւն: - 250. Որպէս օրինակաւ մասունք հոգւոյ ասացան, նոյնպէս է և մասունք մարմնոյն իւրաքանչիւրոցն գործի... Աղւորութիւն *խօսիցն* ի քիմսն: - 250. Դարձեալ խորհուրդ մարդոյն ճանաչի յերից. այսինքն կամ ի կերպէ՛ և յօրինակէ *խօսիցն* և ձայնին: - 250. Քսանևէ, Վասն կախարդացն. և *խօսից* դիւացն. և խստութեան սրտին. և կողոպտելն զեգիպտացիսն: - 283. Եւ որպէս է է գործիք ձայնին, որ է՛ թոքն. խռչափողն. մակալեզուն. բերանն. լեզուն. ատամունքն. և շրթունքն. և սոքա միաբանին ի *խօսքն*: - 296. Նոյնպէս լեզու առ լեզու գեղեցկանայ ի *խօսքն*: - 297. Եւ այս ևս գիտելի է, զի լեզու կոչի գործիք *խօսիցն*. և լեզու կոչի որակ *խօսիցն:* - 297. Նա՛խ՝ զի թէպէտ ի դէմս յոքայ սուտ էր *խօսք* նոցա, այլ ի դէմս ամենայն մեղաւորաց ճշմարի՛տ է: - 325. Եւ դարձեալ՝ **դ** են սեռք մեղանչելոյ. այսինքն խորհուրդ, *խօսք*, գործ, և յամառութիւն ի մեղս: - 351. Այլ որպէս յարուցեալն նմանութիւն է և ո՛չ իսկութիւն, նոյնպէս և *խօսքն* սուտ է և ո՛չ ճշմարիտ: - 428. Բե՛ր տեսցուք և զորպիսութիւն *խօսիցն*, որ թուի թէ ճշմարիտ զապագայն պատմեն դևք: - 430. Ութերորդ՝ որպէս սուտ էր յարութիւնն, նոյնպէս սուտ է և *խօսքն* և կերպարանօք: - 430. Տասներորդ՝ այն քան գերազանցեաց պատիւ կուսին, զի այնմ որ մարգարէք գուշակէին զլինելոցն. ի սմա ըստ *խօսից* հրեշտակին եղև կատարումն: - 464. Որպէս խօսեցաւ հոգին սուրբ ի մարգարէսն. և հոգին սուրբ աստուած է ճշմարիտ. ապա և խօսեցեալքն ի հոգւոյն սրբոյ ճշմարիտ *խօսք* է աստուծոյ: - 530. Դարձեալ՝ մեղքն է *խօսք* և գործք և ցանկութիւն որ լինի ըստ դէմ օրինացն աստուծոյ: - 569. Հինգերորդ՝ որ հաւասա՛ր է բանն և ձայնն ի լեզուն. որպէս բարբառ *խօսից*: - 639. ...այլ արար գործի տասն աղի. զի տասն մատամբն որպէս *խօսս* նուագեսցէ աստուծոյ: - 641. Այլ և կարդացողին պա՛րտ է նմանեցուցանել զիւր *խօսքն* ասողին գրոց: - 643. Թէպէտ ո՛չ ունին բանք և ոչ *խօսք*, այլ ընդ ամենայն երկիր ել բարբառ վկայութեան նոցա. զի ամենայն տեղիք և ամենայն ժամանակք մարդկան առ նոսա է՛ յայտնի: - 729. Իցէ՞ անդ ձայնական *խօսք*: - 739. Որով հետև ի վերայ երկրի և օդոյ է դատաստանն, հաւատալի՛ է և ձայնական *խօսից*: - 739. Իսկ լուծումն հարցմանցս այսոցիկ, ո՛չ ամենևին օտարաձայն աւելորդս խուզեալ. և ո՛չ գեղջուկ իմն աշխարհական *խօսից* յարմարեալ: - 772

**ԽՕՐԵԱՅ** (40-օրյա) - Եւ **ծ** կանգունն, զի մանուկն յարգանդի **խ***օրեայ* հոգևորի և **ծ**օրեայ շարժի: - 293. Եւ դարձեալ՝ մանուկն յարգանդի **խ***օրեայ* շնչաբերի հոգւով: - 363

# Ծ

**ԾԱԳ +** Ի յա՛յս միտս յորժամ խաչ նկարեմք, *գծագ* մատին աջոյ մեծ ի բոյթն առնեմք որ է՛ ի համարն **գ**երորդ. զկէս զին նշանակելով: - 345. Եւ տէր մեր զառաքեալս ընդ *ծագս*. որք համբաւեցին մեզ զյաղթութիւնն սատանայի և դժոխոց: - 417. Դարձեալ նշանակէ **դ** թւ խաչին՝ փրկութիւն գոլ և լոյս հոգւոյ որք ի **դ** *ծագս* տիեզերաց հաւատացեալք են: - 493

**ԾԱԳԵՄ, ԾԱԳԻՄ +** Եւ որովհետև ծանեաք զայս, արդ պատասխանեմք առարկութեանցն, եթէ որքան է՛ ի հարկաւոր պատճառ է՛, լինի բացորոշապէս բանն ճշմարիտ. որպէս բան թագաւորի. և մարդոյն մեռանիլն. և արև *ծագելն*. և լինիլն գարուն յետ ձմռան: - 10. Այսպէս և հոգւոյն բարեխօսելն է. զի ինքն *ծագէ* ի սիրտս մեր զբարեխօսոն լինիլ յաղօթս. այսինքն զայն խնդրել որ ինչ ի փառս աստուծոյ է: - 59. Զի յայս ճշմարտութենէս լոյս հաւատոյն *ծագեալ* ի միտս հաւատացելոց, անփոփոխ սերտութեամբ հաստատէ՛ զհաւատացեալս ի ճշմարտութիւնն. և զճշմարտութիւնն ի նոսա: - 121. Երրորդ՝ արեգակն յարևելից առ մեզ *ծագեալ* լուսաւորէ: - 125. Նոյնպէս իմանալի արեգակն քրիստոս ի հայրական ծոցոյ անհա՛ս է բնութեամբ՝ և ի սրբոյ կուսէն իբր ի յարևելից *ծագեալ*. և ջերմ սիրով ի մարդկային ազգս որպէս յարևմուտս խոնարհեալ. և զսառուցեալ բնութիւնս պատեալ. և ի գերեզմանէն ի բարձունս դարձեալ յարևելս առ հայր ամբարձեալ: - 126. Իսկ «առաւօտի», զի ի սկիզբն ստեղծման աշխարհի ընդ բաժանիլ ի մէջ լուսոյն և խաւարին՝ յայնժամ միայն *ծագեցին* յառաջին օրն յանկարծակի և անկան յերկնից. թէպէտ ոմանք յերկրորդ օրն ասեն: - 148. Նա՛խ՝ զի երկինքն բարձր է, և յայնմանէ առաւել զլոյսն *ծագէ* յերկիր: - 188. Իսկ Յօ՛ղ է գիճութիւն ի պարզոյ իջեալ. զոր աստեղք ի գիշերի քարշեն ի վեր. և ընդ *ծագել* առաւօտուն՝ յետ ի յերկիր անկեալ մանրամասն շիթ: - 204. Եւ զի քարշեն լուսաւորք զգոլորշին յերկրէ՝ յայտ է ի ցօղ առաւօտուն և յեղեամն. որ ի գիշերն ի վեր քարշին. և ընդ *ծագել* լուսոյն հատանին և յետս յերկիր անկանին. և յաւուրս ձմերան լինի եղեամն. և յամարան ցօղ: - 208. Զի լոյս Բանին և պայծառախօսութիւն՝ ի խելքն *ծագէ*. և Իմացականն՝ ի միջին փորուած գլխոյն: - 250. Եւ օրինակ այսմ, որպէս ի *ծագել* արևուն՝ նախ նշոյլքն երևին և ապա յետոյ արեգակն: - 255. Իսկ հոգի մի է մարդոյ ի միոյ նախախնամութենէ յառաջ բերեալ. յանկատար նիւթն եղեալ զտնկականն և զզգայականն. և ի կատարեալն զհոգի բանական *ծագեալ*: - 259. Եւ յորժամ *ծագէ՛* արեգակն, յայնժամ և նշոյլքն իւր ընդ իւր *ծագեն* և ինքեամբ լուսաւորեն զմեզ որպէս նախ նշուլիքն: - 260. Եւ ի **խա** աւուրցն ի վեր՝ երևեալ շնչոյն ձևակերպէ՛ զկերպ մարդոյ մինչ ի **խ** օր արու մանկան. և իսկոյն հեղի ի նա՛ հոգին բանական ի շնորհացն աստուծոյ *ծագեալ* ի նա: - 261. Չորրորդ՝ ըստ գերազանցութեանն. զի յանկարծակի *ծագէ՛* ի մեզ շնորհին աստուծոյ եթէ ի հաւատս՝ և եթէ յայլ ինչ գործս ի հաճոյսն աստուծոյ: - 308. Եւ տէր մեր լոյս *ծագեաց* ի բանտ դժոխոցն: - 313. Եւ փոխանակ սիւն ամպոյ՝ հոգին հովանաւոր և աւետարանին լոյս *ծագեաց* հոգւոցն: - 329. Եւ յերեկունն լոյս *ծագեաց* հոգւոց որպէս սիւն լուսոյն իսրայէլի: - 337. Նա՛խ՝ զի ցուցանէ թէ յորմէ՞ ազգէ *ծագելոց* էր արեգակն արդարութեան քրիստոս: - 377. Եւ խաչօղքն անսուրբք էին մինչ յերեկոյանալ օրինացն հնոյն և *ծագել* նորոյն. մինչև սրբեցան աւազանաւն և խոստովան եղեն զքրիստոս: - 383. ...իսկ յորժամ սպասաւորեաց հրեշտակապետն՝ զտիրական անունն ի սաստ կոչելով. յայնժամ ամպ ինչ լուսաւոր *ծագեալ* ի տեղւոջն, շիջոյց զերևումն չարին: - 410. Եւ տէրն մեր նեղէ՛ մեղաւորաց աստ ի կեանս և յետ մահու գիշերի. և ի *ծագել* լուսոյ յարութեանն՝ ստուգութեամբ դատապարտէ՛: - 418. Եւ տէրն մեր արեգակն արդարութեան *ծագեաց* երկիւղածաց իւրոց և փրկութիւն ժողովրդեանն իւրոյ: - 421. Երրորդ՝ որպէս մարմնով լոյս *ծագեաց* մարմնաւորացն և քարոզեաց զփրկութիւն: - 503. Նոյնպէս և հոգւոցն որ ի դժոխս լոյս *ծագեաց* հոգւով և քարոզեաց զփրկութիւն: - 503. Երկրորդ՝ զի վասն բացման դրանց երկնից՝ լոյս *ծագեաց* ի բանտին ըստ եսայեայ. «որք ի կապանս էք ելէք. և որք ի խաւարի յայտնեցարուք»: - 504. Ասեմք եթէ՝ ոչ ինչ գոյր նոցա արգելք հաւատոյ յորժամ լոյս *ծագեաց* քրիստոս ի դժոխս: - 508. Չորրորդ վկայ լոյսն զգալի. որ յինն ժամուն *ծագէ՛* ի գերեզմանէն ակներև ամենայն մարդկան: - 509. Եւ որպէս յինն ժամու ուրբաթուն լոյս *ծագեաց* հոգւոցն ի դժոխս, նոյնպէս և յինն ժամու շաբաթուն լոյս *ծագէ* զճառագայթս իւր արեգակն արդարութեան քրիստոս. մինչ յառաւօտուն բոլորապէս տեսանի ինքն յարուցեալ ի մեռելոց: - 509. Եւ յերեկոյին լոյս *ծագեաց* հոգւոցն. որպէս սիւն լուսոյն իէլի: - 513. Իննևժ՝ պատշա՛ճ էր ի մէջ գիշերի յառնել. զի ի նոյն ժամն սկսանի արեգակն բարձրանալ, և յառաւօտն *ծագէ՛* առ մեզ: - 515. Ա՛րդ՝ մեղանչելն մարդոյ այնպէս է որ զակն խփեաց ի լուսոյն և խաւարեցաւ. սակայն լոյսն *ծագէ՛* դեռևս ի վերայ աչացն և սակաւ փայլէ ի ներքս. և յորժամ

բանայ վաղվաղակի լոյս տեսանէ: - 562. որք հիմունք են եկեղեցւոյ և լոյս *ծագօղք*: - 614. *Ծագեաց* մեզ տէր եղջիւր ի դաւիթ: - 638. ...յորժամ առ ինքն ժողովէ և *ծագէ*, ամենայն կարծիք լուծանին: - 639. Իսկ՝ նախ ի յարնելս, ցուցանէ զմիածինն որ իբր յարնելից ի ծոցոյ հօր *ծագեցաւ* մեզ արեգակն արդարութեան - 673. Եւ խաչն բարձրացեալ զի նշան խաչին քրիստոսի յայնժամ ընդ երկնիւք *ծագեսցէ* և զչորս կողմ աշխարհի լցուսցէ: - 676. Զի արեգական *ծագելն* զծնանիլն մեր նշանակէ. և մուտն զգերեզմանն. իսկ այս առաւօտ զյարութիւնն հասարակաց: - 680. ...մինչ դարձեալ միաւորի ընդ մարմնոյն. և իբրև զարեգակն պայծառացեալ *ծագէ* ընդ քրիստոսի: - 681. Այլ և աստ երբեմն հաւասարին արժանեաց և ոչ արժանեաց. որպէս *ծագել* զարև: - 746. Շող յաստուծոյ *ծագեալ* հաւատ. զերկնից կախեալ լար իմն լուսեղէն. զորմէ բուռն հարեալ ձեռն զձեռամբ փոփոխեալ. ի ծովու սքանչելեաց յերկինս և յօդս վերանալ: - 769

**ԾԱԳՈՒՄՆ +** Ապա այս աղաչանքս զոր ինչ առնեմք ի *ծագմանէ* հոգւոյն սրբոյ, բարեխօսել ասի հոգոյն սրբոյ: - 48. Վասն որոյ միեղէն տեսանեն և պարզ. որպէս *զծագումն* լուսոյ առանց ճանապարհորդութեան լուսաւորեալ. և միշտ բարձրանան տեսութեամբ: - 119. Եւ կշռապէսն իցէ հաւասար *ծագումն* լուսոյն: - 127. Իսկ օր արուեստակա՛ն է *ծագումն* լուսոյ մինչև յերեկոյ՝ առհասարակ յամենայն ազգս: - 194. Իսկ միւսն է ընդ *ծագումն* լուսոյն. յորում զպահք և զուտիք բաժանեն. այսինքն լոյսն և գիշերն: - 194. Զի կազմողական զօրութիւնն որ է՛ ի նիւթն՝ ազդումն առեալ յարարչադիր հրամանէն, նախ կազմէ՛ և պատրաստէ՛ զնիւթն առ ի յընդունելոյ զտնկականն. և ապա զզգայականն. յետ որոյ զբանականն ի *ծագմանէն* աստուծոյ: - 254. Եւ իւրաքանչիւր ոք ծննդեամբ յառաջ եկեալ առնու զնոյն պատկերին շնորհ ի *ծագմանէն* աստուծոյ. և լնուն զնոյն թիւ որքանութեան զոր ետես աստուած նախքան զլինինլն աշխարհի որպէս ասէ առաքեալն: - 258. Եւ բնական աւուր սկիզբն է *ծագումն* լուսոյն. և շնորհականին ի մէջ գիշերն: - 508. Քսաներորդ, յա՛յտ է յա՛յսմանէ՝ որ նախ քան զքրիստոս՝ էր սկիզբն աւուր *ծագումն* լուսոյն. իսկ յետ յարութեանն քրիստոսի եղև սկիզբն աւուրն ի մէջ գիշերի. զի այժմ ի խաւարէ՛ ի լոյս ճանապարհորդիմք: - 515. Եւ ի յայս միտս զտօն ամենայն սրբոց մարտիրոսաց ի մէջ գիշերի սկսանեմք **զ** ժամով յառաջ քան *զծագումն* լուսոյն հասարակ աւուր: - 515. Տասներորդ՝ և այսմ կողմանէ՛ շարժին լուսաւորքդ ի յընթացս իւրեանց. որ են կարապետ մեծին լուսոյ *ծագմանն*: - 555. Յաւախօսն է ալևորութիւնն. և Առաւօտն ծերն է. որ մերձ է *ծագման* հանդերձելոյ աշխարհին: - 622. ...զի ի մեծի *ծագման* առաւօտուն կրեսցեն զպատիժն ըստ գործոց իւրեանց: - 669. Եւ տերև գիտութիւն հոգւոյն. և ծաղիկ *ծագումն* բանին. և պտուղ արդեանցն հօր: - 765

**ԾԱԼ +** Տասներորդ՝ զի զեղեցիկ լինի ի տեսս աչաց երփն երփն գունով և վէտս վէտս. այսինքն *ծալ ծալ* ծիծաղի երեսօք: - 208

**ԾԱԼԵՄ +** *Ծալեալ* մաշկեակն և նոր կուժն: - 413. Եւ այս՝ և պատերազմն վասն մովսիսեան մարմնոյն՝ ցուցանեն զպատերազմ հոգւոց յետ ելից մարմնոյն... *Ծալեալ* մաշկեակն: Նա՛խ՝ զի այնպէս *ծալեսցի* ջուրն: - 445. Զի՞նչ է վարշամակն *ծալեալ* և կտաւն ո՛չ: - 517. *Ծալեալ* վարշամակն նշանակէ զաստուածութիւնն որ զլուխ է. և կտաւն զմարդկութիւնն: - 517. Դարձեալ՝ որպէս *ծալեալն* ծածո՛ւկ է և մի կողմն երևի: - 517. Իսկ պատանքն ո՛չ *ծալեալ*. զի խորհուրդ տնօրէնութեանն ո՛չ ամենևիմբ յայտնի է և ո՛չ անյայտ. որպէս կտաւն բազո՛ւմ ունէր փոքրուածս: - 517. Եւ սոքա ամենայն ստուգե՛ն զյարութիւն նորա թէ ո՛չ է գողացեալ. զի գողն ո՛չ *ծալէր* զվարշամակն և զկտաւն զըմռեալ: - 517. Նա՛խ՝ այն է գալարիլն երկնի, զի եթերն որպէս մագաղաթ *ծալեալ* նուազի և նսեմանայ վասն առաւել ճառագայթից լուսաւորացն հրեշտակաց և սրբոցն յերկնէ երևեալ: - 729. Այն է *ծալիլ* և գալարիլ օդոյդ երկնի. և ո՛չ թէ հաստատութիւնն վերին էութեամբ ի բաց բառնի ըստ ոմանց: - 729

**ԾԱԼՈՒՄՆ +** Իսկ զէջն լինի ամպ. և չորն ի մէջ ամպոյն նեղեալ պատառելով *զծալմունս* ամպոյն՝ լինի որոտ և փայլատակունք ևս: - 204

**ԾԱԽ +** Իններորդ՝ և բազում *ծախիւք* և փարթամութեամբ եկն: - 442. Գրիգոր մագիստրոսն ի տարօն եկեղեցի է շինեալ. և *ծախիւք* պատկեր բերեալ և անդ եդեալ: - 639

**ԾԱԽԵՄ +** Առաջին պատճառն, զի յինչիրս և մերձենայր չարչարանօքն՝ *ծախէ՛ր* զչարչարանքն իմ: - 42. Յինգերորդ՝ արմաւ հաւուն՝ զոր այլք փիւնիկ ասեն որ է յարաքիայ. որ *ծախէ՛* ինքն զինքն հրով, և դարձեալ կենդանանայ: - 53. Վասն այն պա՛րտ է զժամանակ կենցաղոյս ի բարին *ծախել*. զի զառաջին ժամանակն ո՛չ ոք կարէ վերստին ստանալ: - 199. Ապականէ՛ և *ծախէ՛*: - 202. Պատասխանեմք յայտնի տեսութեամբ, թէ զոր ինչ այրէ հուր, *ծախէ՛* և կորուսանէ զամենայն որակսն. այսինքն զգոյն. զհամ.

զիոտ. նոյնպէս և զծանրութիւն: - 202. Այլ որ ստոյգն է ասեն թէ՝ մովսէս գրեաց որպէս պատմութիւն, և սողոմոն ստիքսեաց որպէս զիւր բանսն. յետոյ գրեաց և եզրաս հոգւովն աստուծոյ երբ *ծախեցան* գրեանքն ի հրէից: - 321. Երրորդ, աստուածահայր կոչեցաւ, պա՛րտ է առաւել զինչս հօրն *ծախել* ի տունս եկեղեցւոյ: - 643. Երրորդ, նոքա փայտ խոտ և եղէգն զներելիսն ասեն. որք անդ *ծախին* և ազատին...: - 702. Ո՛չ շփոթեալ բանն և ո՛չ *ծախեալ* մարմինն: - 770

**ԾԱԾԿԱԲԱՐ +** Ութերորդ՝ ամպն առեալ ի ծովէն *ծածկաբար*, և ապա ցօղէ՛ յերկիր յայտնապէս. և լցուցանէ զնա ամենայն բարութեամբ: - 206

**ԾԱԾԿԱԳԷՏ +** Չորրորդ՝ աստուած *ծածկագետ* է...: - 71. Եւ ա՛յս է խորհուրդն. եթէ մեր ամենայն ինչ յայտնի և բա՛ց է *ծածկագիտին:* - 635

**ԾԱԾԿԱՊԷՍ +** ...և նոքա զամենայն ինչ *ծածկապէս* տեղեկացան. զի ժողովեալքն ի քաղկեդոն ակն առին թագաւորին և կնոջ իւրոյ. և զարհուրեցան ի սպառնալեացն. և զնեստորի կարծիսն հաստատեցին. զերկու բնութիւնսն. և զ**բ** կամսն. և զ**բ** ներգործութիւնսն: - 543. Եւ գիտելի է, զի որ ի ճակատն և ի սիրտն և ի թիկնամէջն օծանէ, այն դրո՛շմ է. և որ զհինգ զգայութիւնսն օծանէ՝ այն ի խորհուրդ օծմանն է *ծածկապէս*: - 593. զի յայտնապէս զարիւնն ո՛չ տայք, և *ծածկապէս* զմարմինն. զի յօրհնեալ մարմնոյն ո՛չ տայք. այլ սոսկ հաց որ ի բեմն: - 599. Ասեմք թէ, ունիմք զխորհուրդ օծմանն, այլ *ծածկապէս*. որպէս ի մկրտութիւնն. - 604. Ասեմք թէ՝ և զայս ունիմք *ծածկապէս*. որպէս այն որ ի ջուր աւազանին խաչանման մեռոնն խառնի...: - 605

**ԾԱԾԿԵՄ +** Իններորդ՝ նա՛ ի տաճարին նստի և ուսուցանէ. և սոքա ի ներքս ի յեկեղեցի. զկերպարանս բարեպաշտի ունելով արտաքոյ՝ *ծածկեալ* են գառնենեաւ զգայլենիս: - 35. Նախ՝ զի որպէս զգեստիւն *ծածկի* մարմինն, այսպէս տէրն զաստուածութիւնն իւր ամփոփեաց մարմնովն անհաս լինիլ ի փորձողէն...: - 43. Այսպէս զհոգւոյն թէ յայտնապէս աստուած ասիլ *ծածկեցաւ*, և այլ իմն բառիւ յայտնեցաւ. որ ցուցանէ զնոյն ճշմարտապէս աստուած կատարեալ...: - 55. Իսկ թէ յայնցանէ փախչիք իբր յայտնապէս որոշումն՝ և այլիմն պատճառաւ որպէս գառնենեաւ *ծածկէք* զգայլենիս ձեր: - 89. Ահա՛ այս ի կարճոյ բացայայտութիւն *ծածկեալ* ամբարշտութեանց, որք **բ** բնութիւնս սահմանեն ի վերայ միոյն քրիստոսի. թէպէտ անձն մի համբաւեն համաձայն մեզ, սակայն որոշմամբ բնութեանց լինին տարաձայն մեզ և եկեղեցեացն աստուծոյ: - 90. Արդ՝ եթէ բոլոր աստուածութիւնն ի քրիստոս էացեալ է մարմնապէս, և *ծածկէ* զգիտութիւնն ի նմանէ, այս լինի կամ ոչ աստուած մարմնացեալ և մարդացեալ կամ զէութիւնն տըւեալ և ի գիտութենէն զրկեալ որ է սուտ: - 98. Իններորդ՝ և զաստեղս *ծածկեն*: - 125. Ա՛րդ՝ ասեմք նախ եթէ՝ ձայնն ծածկո՛յթ է բանին. յաղագս որոյ հեռաւորքն զծածկո՛յթն տեսանեն, և *զծածկեալն* ո՛չ: - 131. Երկրորդ՝ զի *ծածկեցաւ* ի յանարժանիցն մտօք և գործովք...: - 132. Ութերորդ՝ զի խորանն առաջին և երկրորդ և երրորդ՝ վարագո՛յր էր. և *ծածկէին* զմիմեանս և յայտնէին. այսպէս առաջին խորանն է աստուածայինքն. և երկրորդն հրեշտակացն. և երրորդն մերս՝ վարագուրիւք *ծածկեալ*՝ որ յայտնեն զմիմեանս: - 132. Իսկ աստուած փորձէ զմարդ՝ զի գիտէ զնա՛ բարի և հաւատարիմ. այլ *ծածկեա՛լ* է յայլոց. փորձէ՞ զի յայտնի լիցի ամենայն աշխարհի առաքինութիւն նորա: - 161. Առաջին՝ զի ամենայն գիր գործիք է բանի. և ունի իմաստութիւն և բան *ծածկեալ* յինքեան: - 177. Ի լուսոյ նորա *ծածկի*: - 186. Նմանապէս և զայլ մոլորականսն *ծածկէ* յորժամ ուղղապէս ընդ դէմ անկանի: - 187. Եօթներորդ՝ երբեմն *ծածկէ՛* զարեգակն. որպէս ի գիշերի: - 206. Ութերորդ՝ ի միջոյ ամպոյն փայլէ որ *ծածկեալ* էր ի նմա՛: - 207. Եւ է՛ միւս բարի խառնակն և պատրուակեալն. որպէս է աշխարհական բարին. զի գունով և երևելեաւ բարի է, այլ ի ներքոյ *ծածկեալ* չա՛ր է. յայսմանէ հրաժարէ՛ զմեզ ոչ մերձենալ: - 224. Երկրորդ՝ զի զօրութեամբ ունի զհոգին յինքեան *ծածկեալ*. որ յետոյ ներգործութեամբ երևի: - 254. Եւ համանգամայն երևի ասեմ. զոր օրինակ նիւթն այն ունի առ ինքն *ծածկեալ* զմասունս մարմնոյ. զձեռս և զոտս, զմիս և զմազ, որ յետոյ երևին ի նմանէ: - 255. Եւ կամ որպէս ծնեալ մանուկն ունի առ ինքն *ծածկեալ* զհոգին. այլ նա կերակրի և ապա զգայ. և յետոյ խօսի: - 255. Եւ *ծածկէին* զարիւնն: - 284. Երեքտասաներորդ՝ յովսէփ *ծածկելոց* գիտօղ կոչեցաւ: - 313. Ութերորդ՝ ցետովն զհետն *ծածկէ* : - 315. Զի զգեստ կոչի արտաքին հանդերձն որ *ծածկէ* զմարմինն: - 318. Եւ զգեստ կոչի մարմինն որ *ծածկէ* զհոգին. ըստ որում մաշկեղէն հանդերձն ադամայ որ էր արտաքին զգեստ և նշանակէր զմարմինն: - 318. Եւ ամպն *ծածկեաց* զմովսէս: - 330. ՚Ի տուէ ամպով *ծածկեալ* լինէր և ի գիշերի լուսով: - 345. Զի՞նչ է որ զարիւն անասնոյ հրամայէ՛ *ծածկել* և ո՛չ ուտել: - 371. Իսկ զարիւնն *ծածկել* հրամայէր...: - 371. Այսինքն՝ զոր *ծածկեալ* է մեզ՝ բարի կամ չար ո՛չ կարեմք ասել: - 405. Դարձեալ՝ օրէնքս յայտնի էր զոր ուսոյց. և աւետարանն *ծածկեալ*, զոր

հոգին սուրբ յայտնէ որ քննէ զխորս աստուծոյ: - 405. Զի հաւատամք զեթէ էն. այլ՝ ինչ և որպիսի ինչն *ծածկեալ* մնայ: - 406. Վասն որոյ ամպ *ծածկեաց* զնա: - 411. Յայս միտս զքահանայից թաղումն վարագուրաւ *ծածկեմք*: - 411. Եւ այն որ վիճա՛կն է՝ ծիրանեգոյն հանդե՛րձ է. որ զսեղան հացին և զխնկոցն *ծածկէին*. և տեսութիւն կամ փրկութիւն թարգմանի: - 425. Ա՛րդ՝ թէ աստուած *ծածկեաց* և սամուէլ յայտնէր հակառակ աստուծոյ, ահա՛ զի բարկացուցանէր զնա. ապա յա՛յտ է զի սո՛ւտ է և ո՛չ սամուէլ: - 429. Այլ շնորհք նորոյս կարողութեամբ արդարացուցանէ զմարդ այնպէս, մինչ զի սպիք մեղացն ջնջին և յիշատակութիւնն *ծածկի*: - 433. Չորրորդ՝ զոր *ծածկեաց* նաթան՝ յայտնեաց սիմէի և ելից: - 433. Հետիոտս փախեաւ և *ծածկեալ* գլխով. և նոյնպէս տէրն ի խաչին: - 438. Նոյնպէս և ամենայն խաչի զօրութիւնն քրիստոս է. ի ձեռս արժանաւոր և կատարեալ հաւատոց առնէ սքանչելիս. իսկ ոչ նոյնպիսեացն *ծածկէ* զզօրութիւնն: - 445. Յետոյ վասն գազանաց երկրին՝ հնազանդեցաւ գրոյն մովսէսի. և *ծածկեցին* զաստուածս իւրեանց ի լերին սոմորոն. և անդ երկիր պագին սամարացիք: - 447. Այլ արդարութիւնն երբեմն *ծածկեալ*՝ և ողորմութիւնն յայտնի, որպէս յարդարացուցանել զամբարիշտն, և յառաջին գալուստն քրիստոսի: - 459. Երբեմն արդարութիւնն յայտնի՝ և ողորմութիւնն *ծածկեալ*. որպէս պատիժն մանկանց առանց մկրտութեան մեռելոց, և յերկրորդ գալուստն քրիստոսի: - 459. Իններորդ՝ ի միջոյ ամպոյն փայլէ որ *ծածկեալ* էր ի նմա: - 523. Զի ասեն վարդապետք թէ որպիսի իւրաքանչիւր ոք *ծածկեալ* իցէ յինքեան. փո՛րձ է տուեալ նախատինքն: - 586. Դարձեալ զգուշացի զի մի՛ յամօթէ՛ կամ երկիւղէ՛ քահանային յուսահատութեամբ *ծածկէ* զմեղքն...: - 601. Երրորդ՝ թէ խոստովանօղն կիսատեաց զխոստովանութիւնն և *ծածկեաց*. - 603. Բայց կին մարդոյ ո՛չ է պարտ բանալ զգլուխն, այլ առաւել *ծածկել* յեկեղեցւոջ: - 635. Եւ վարագոյր ծածկոյթն, որպէս ի թաղումն մովսէսի ամպն *ծածկեաց*...: - 674. Եւ այսպէս *ծածկեսցեն* հողով զեօթն օր զաստիճանքն...: - 674. ...և ապա՛ ժողովուրդն *ծածկէ՛* հողով զմարմինն: - 676. ...և որպէս ի կեանքն հանդերձիւ *ծածկեմք,* նոյնպէս ի մահն հողով: - 677. ...*ծածկէ՛* զգարշութիւն մեր. որպէս մայր մանկան քան զայլ կարևորս: - 677. ...զի ինքն նեռն գտանիցէ զգանձս *ծածկեալս*...: - 708. Եւ զորօրինակ զկնի մկրտութեանն սկզբնական մեղքն ոչ երևի. նոյնպէս զկնի ապաշխարութեան ներգործական մեղքն *ծածկի* և կորնչի...: - 714. Եւ սեղանն սուրբ է զգեստուք զարդարեալ *ծածկի*: - 721. Այլ և որպէս նախաստեղծքն ի դրախտին ո՛չ ամաչէին. նոյնպէս և սուրբք ի յարութեանն. զի *ծածկեալ* են ի ներքուստ հոգւոյն լուսաւորութեամբն, և արտաքուստ պսակաւն և փառօք: - 726. Նաև համապայծառ լոյս Երրորդութեանն *ծածկէ՛* զամենայն լոյս լուսաւորացդ. զա՛յն ասէ խաւարումն արեգական և լուսնի և աստեղաց. զոր օրինակ՝ լոյս ճրագի *ծածկի* մեծ եկեալ լուսոյ արևու: - 728. Նոյնպէս և լուսաւորքն ի վերջին ժամանակս ի կատարածի *ծածկեսցին*, և դարձեալ յա՛յլ իմն յազնուականութիւն փոխեսցին: - 728. ...զի ի նմա՛ է *ծածկեալ* ամենայն գանձք իմաստութեան և գիտութեանն աստուծոյ. վասն որոյ իմաստութիւնն քննէ և դատէ: - 735. Եօթներորդ, զի ահագնակերպ երևի ի վերայ մեղաւորաց. մինչ ասիցեն լերանց թէ անկերուք ի վերայ մեր. և բլրոց թէ *ծածկեցէք* զմեզ յերեսաց բարկութեանն աստուծոյ որ նստի յաթոռ. որպէս ասէ տեսիլն: - 737. ...զի անդ արդարութիւնն *ծածկէ՛* զողորմութիւն. որպէս աստ ողորմութիւնն *ծածկէ* զարդարութիւնն: - 738. ...զի երբեմն *ծածկէ՛* ողորմութիւնն զարդարութիւն. և երբեմն արդարութիւնն զողորմութիւն. և երբեմն հաւասար երկուքն յայտնի և կամ ծածուկ. - 746. Եւ նմա աւանդել՝ յորում *ծածկեա՛լ* են ամենայն գանձք իմաստութեան. և որ քննէ զխորս աստուծոյ: - 759. Որպէս ի թաբօր *ծածկեաց* զլոյս նորա. նոյնպէս և ի յարութեանն: - 760. Եւ զա՛յն է իմանալ թօթափիլ լուսաւորացն. զի յառաւել լուսոյ նոցա՝ *ծածկին* և ստուերանան նոքա: - 760. Որպէս ասեն վարդապետք, այնքան եղիցի երջանկութիւն, ուր ոչ ինչ եղիցի չար, և ոչ ինչ *ծածկեսցի* բարի: - 765. Եւ է՛ ինչ ի ներգործութեանց հոգւոյն աստուծոյ շնորհաց. որ *ծածկէ՛* յիմաստնոց և յայտնէ տղայոց յիւրաքանչիւր ժամանակս ըստ կամաց իւրոց: - 772. Դարձեալ՝ ծածկութիւն յանցանաց՝ է՛ բնականապէս մեզ ի տերևոյ անտի. իսկ յանդիմանութիւն է *ծածկելոց* յայտ արարողութիւն. վասն որոյ ամենքեան դժկամակ երևին: - 774. Այսպէս և յամենայն գործս աստուծոյ գտանի արդարութիւն և ողորմութիւն որպէս ասեն ոմանք. այլ երբեմն արդարութիւնն *ծածկեալ* և ողորմութիւնն յայտնի. որպէս յարդարացուցանելն ամբարշտին՝ և յառաջին գալուստն քրիստոսի: - 779. Երբեմն ողորմութիւնն *ծածկեալ* և արդարութիւնն յայտնի. որպէս ի պատիժ մանկանց առանց մկրտութեան մեռելոց. և յերկրորդ գալուստն: - 779. Ասեմք նա՛խ՝ եթէ ամենայն շնորհ զինչ և իցէ տուեալ բնութեան, ո՛չ քակտի ի նմանէ. թէպէտ *ծածկի* երբեմն վասն մեղաց: - 782. Զորօրինակ, ժանգ հայելւոյ ո՛չ զընդունակութիւնն բառնայ, այլ զտեսութիւնն. և յետ սրբելոյն, նոյն *ծածկեալն* երևի ի նմա: - 782

**ԾԱԾԿՈՅԹ +** Ա՛րդ՝ ասեմք նախ եթէ՝ ծայնն *ծածկո՛յթ* է բանին. յաղագս որոյ հեռաւորքն *զծածկո՛յթն* տեսանեն, և զծածկեալն ո՛չ: - 131. Վասն է՞ր է զի մարդս ո՛չ ունի զբնութեամբ զէնս. կամ *զծածկոյթ*: - 217. Ոսկերքն ի ներքոյ սիւն է մարմնոյն, և մորթն *ծածկո՛յթ* է մսոյն և այլոցն: - 240. Իսկ մազն արտաքոյ անզգայ՝ *ծածկոյթ*՝ զգեստ՝ և պահապա՛ն է ամենեցուն: - 240. Չորրորդ՝ ամօթն. «բացան ասէ աչք երկոցունցն, և տեսին զի մերկ էին». և վասն այն արարին ի թզենւոյն *ծածկոյթ*: - 280. Որպէս ասէ աստուածաբանն թէ՝ ոչ ինչ էր *ծածկոյթ* ի մէջ նոցա և աստուծոյ. իսկ յետ մեղացն փոխեցան այսորիկ. վասն որոյ մաշկեղէն հանդերձին ցուցմամբն նշանակէ՛ զմարմինս: - 282. Եւ զի *ծածկո՛յթ* է աստուածութեանն: - 319. Երրորդ՝ զի *ծածկոյթ* ամպն նշանակէ՛ զանճառելի բնութիւնն աստուծոյ և զփառսն: - 326. Եւ զպղինձն ի բուրվառացն կորխեանց մծ իցն. յորմէ արար զնուարտանն *ծածկոյթ* պղնձի սեղանոյն. նշան յանդգնութեան նոցա: - 344. Եւ զմորթն ի բաց հանել. *զծածկոյթ* մեղացն: - 360. Թնն առաքինութիւն է որով զերծանի մարդ յորոգայթից սատանայի. և թեփն *ծածկոյթ* ամօթոյն. սուրբ են: - 364. Եւ զմորթն որ է *ծածկոյթ* մեղաց՝ ի քահանայսն տայ...: - 367. Իսկ թերափն է բոլորակ հանդերձ *ծածկոյթ* տապանակին: - 425. Եւ *ծածկոյթն*՝ զքօղ օրինացն: - 646. Եւ վարագոյր *ծածկոյթն*, որպէս ի թաղումն մովսէսի ամպն ծածկեաց...: - 674

**ԾԱԾԿՈՑ +** Երեք ազգ *ծածկոց* սրբութեանց... Կապուտն նշանակէ՛ զխորհուրդ յայտնութեանն քրիստոսի: Ծիրանին զթագաւորութիւնն: Եւ կարմիրն զարեամբ փրկութիւնն: - 379

**ԾԱԾԿՈՒԹԻՒՆ +** Իսկ զպատճառ *ծածկութեան* հոգւոյն... Զի որպէս էր հօր ծանօթութիւնն ի նախահարսն, և որդոյն ընդ աղօտ, այլ ի մարմնանալն իւր յայտնեցաւ: - 55. Եւ զի *ծածկութիւն* է զանազան գունոց: - 196. Եւ ենովք վասն անպտուղ կալոյն և զգայարանացն *ծածկութեան*, վերափոխեալ եղև: - 288. Դարձեալ՝ *ծածկութիւն* յանցանաց՝ է՛ բնականապէս մեզ ի տերևոյ անտի. իսկ յանդիմանութիւն է ծածկելոց յայտ արարողութիւն. վասն որոյ ամենքեան դժկամակ երևին: - 774

**ԾԱԾՈՒԿ +** Ութերորդ՝ զնա օ՛ձ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն զբազումս. և արտաքսեն ի դրախտէ եկեղեցւոյ. և թոյնք իժից ի ներքոյ շրթանց ունելով և խայթոց՝ զի առորս մերձենան, ի յսկիզբն բանից կամ ի վերջն՝ մահացուցանեն զհոգիս. երկճղի ունելով լեզու նենգաւոր՝ չար և բարի, *ծածուկ* և յայտնի: - 35. Այլ և յայտնեաց *զծածուկ* պատրւակեալ խօսս նորա: - 47. Իսկ յորժամ դառնամք ի մեղաց՝ յորդորէ՛ զմեզ ի *ծածուկ* իմաստիւքն իւրովք, ժուժկալ լինել ի փորձութիւնս և համբերել տանջանաց որով ինքն զփորձ էառ: - 48. *Ծածուկ* և զանխո՛ւլ է աստուածաբանութեան տեսութիւն հասարակ մտաց. և հազիւ ճանաչի կիրթ խորհրդոց՝ և նուրբ քննութեանց սրբոց: - 81. Եւ *զծածուկ* սրտին գիտել միայն աստուծոյ է..: - 97. Իսկ թէ ա՛յլ է բանին և այլ է մարմնոյն, ապա բաժանե՛ս զմարդկութիւնն ի յանձնէն. և ասես **բ** անձն. և երկու բնութիւն. ըստ նեստորի առաջնորդին քոյ. և պօղոսի սամոստացւոյ. որ մինչև ցայժմ *ծածուկ* է իր նեստորեան, և այժմ յայտնեցեր զքեզ: - 98. Իններորդ՝ մինն յայտնի է ի տասն և ի հարիւրն և ի հազարն և ի բիւրն ընդ աղօտ և *ծածուկ*: - 109. Երկրորդ՝ զի խորհրդով և *ծածո՛ւկ* է. և ո՛չ առակաւ և նշանակաւ. որպէս այլ աստուածաբանութիւնքն որպէս ասացաւ ի վերոյ: - 123. Երրորդ՝ զի խորհրդով և *ծածուկ* է պահելի ի հերձւածողաց և ի հեթանոսաց և յանվարժ մտաց ախմարաց..: - 123. Երրորդ՝ զի մեզ յայտնեսցի *ծածուկ* խորհրդով..: - 131. Երկրորդ՝ հրեշտակն պատգամաբեր և յայտնօ՛ղ լսի. և առհասարակ *զծածուկս* առնուն յառաջնոցն և յայտնեն երկրորդիցն: - 136. Բայց թէ թոյլ տըւութեամբ՝ որ մեզ երևի չար. և է՛ *ծածուկ* բարութիւն ի նմա: - 158. Նախ՝ զի *զծածուկ* առաքինութիւն արդարոյն յայտնի արասցէ այլոց ամենեցունց..: - 158. Չորրորդ՝ *ծածուկ* է ի զգայութեանց գոյն. և աստուած ի զգալեաց: - 171. Գիտելի է, զի է դրամբ փակեալ է *ծածուկ* իմացումն գրոց: - 177. Վեցերորդ՝ ամպն *զծածուկ* և զանգիտութիւն նշանակէ՛: - 206. Երրորդ՝ զի զօրութեամբ է նիւթն պա՛րտ է *ծածուկ* գոլ, զի ներգործութեամբ երևեսցի: - 256. Յայտնիքն մեզ, և *ծածուկքն* աստուծոյ: - 285. Եւ տէր մեր գիտէր զինչ կրէր ի մարդն. այլ և *զծածուկսն* հօր յայտնեաց մեզ: - 313. Եւ տնօրէնութիւն փրկչին *ծածո՛ւկ* էր..: - 315. Երկրորդ՝ զի *ծածուկ* համբերութիւն նորա յայտնի լիցի. և ամենեցուն վարժարան եղիցի: - 325. Երկրորդ ա՛յն է՝ որ յորժամ լինի կամքն մարդոյն չար և խիստ ի *ծածուկ*, և զայն յայտնէ՛ աստուած. որպէս նաբուգոդոնոսորայ. որ ունէր սիրտ գազանի՝ ի կերպարանս գազանաց փոխեցաւ: - 336. Եւ առաջին տեառն սպանանել. որ *զծածուկս* տեսանէ և ո՛չ կեղծիւք ինչ: - 360. Փորոտին *զծածուկ* խորհուրդն. զոր լուանալ հրամայէ՛ ջրով. այսինքն խոհականաւն զգարշելի մտածմունս սրբել: - 360. Այլ և մարմնոյն՝ *ծածուկ* մեղքն. և հանդերձին՝ յայտնի մեղքն: - 367. Ապա թէ բորոտիմք *ծածուկ* մեղօք ի մարմնի՝ կապեալ բերանով

առանց խոստովանելոյ, արտաքսիմք յեկեղեցւոյ՝ ի հանգստենէ՝ և ի փառաց արդարոց: - 368. Իսկ կրկին պատարագն. մին վասն բոլոր ժողովրդեանն, և մին վասն անձին ակամայիցն. ցուցանէ զկրկին խոստովանութիւնն. մին յայտնի առհասարակ եկեղեցոյն. և միւսն *ծածուկ* առանձին մեղաց: - 385. Եօթներորդ՝ աստ չարախօսէ՛ ի *ծածուկ*. և յետ մահու յայտնի. և յարութեանն ևս յայտնի առաջի դատաւորին և դատախազաց: - 394. Իսկ սիրտ՝ զհոգին ասէ. որ *ծածուկ* է. և տեղիք խորհրդոց. և մի է. և կենդանութիւն մարմնոյն: - 396. Դարձեալ՝ և դուք *զծածուկն* աստուծոյ մի՛ համարձակիք քննել. այլ զոր ինչ յայտնէ ձեզ՝ ուսուցէք որդւոց ձերոց: - 405. Դարձեալ՝ ի սուրբ գիրս զդժուարն և *զծածուկն* մի՛ քննէք: - 405. Իսկ առ մեզ Նախ *ծածուկ* ներտրամադրեալն բան. զի աստուած քննէ զսիրտս: - 406. Երկրորդ՝ *ծածո՛ւկ* է հանդերձեալն գործ. և յայտնի անցեալն և ներկայն: - 406. Անհասն անգիտելի և *ծածո՛ւկ* է մեզ: - 406. Չորրորդ՝ *ծածո՛ւկ* են աստուածայինքն ամենայն. այլ յայտնի արարածոցս գիտութիւն: - 406. Հինգերորդ՝ *ծածո՛ւկ* է աստուածային բնութեանն բան. և յայտնի դիմացն և անձանց: - 406. Երրորդ՝ յայտնել թարգմանի. իբր թէ յայտնի՛ է աստուած և ո՛չ *ծածուկ* կամ թաքուն: - 406. Եւ տէր *ծածուկ* տնօրէնութեամբն գործոց յաղթեաց բանսարկուին: - 419. Հինգերորդ՝ գզաթ էր կոյսն մարիամ. և ցօղ բանն աստուծոյ. որ աւետեօք հրեշտակապետին էջ ի վերայ նորա առանց ոտնաձայնութեան և *ծածուկ*: - 421. Նա՛խ՝ զի խաբի ի մեղաց և յայտնէ՛ *զծածուկս* սրտին: - 424. Չորրորդ՝ նախ օծաւ *ծածուկ*, և ապա՛ յայտնի ի գաղգաղայ. և տէր մեր նախ օծաւ յարգանդի, և ապա՛ ի յորդանան ի յովհաննէ: - 426. Հինգերորդ՝ ընդէ՞ր հակառակ աստուծոյ և այլ մարգարէից *զծածուկն* սաւուղի յայտնէր: - 429. ...և Երկրորդ՝ *զծածուկ* խորհուրդն որ ի յորդանան: - 445. Դարձեալ՝ առաջին գալուստն *ծածուկ* փրկութիւն և կեանս շնորհեաց. իսկ յերկրորդին յայտնապէս յարուցանէ: - 446. Եւ վկայքն հաստատեցին մեծ գոլ և *ծածուկ*՝ հրաշալի խորհուրդ միածնին փրկագործութեան երևումն առ մարդիկք: - 456. Եւ երբեմն երկոքեանն *ծածուկ*. որպէս ի նեղութիւնս իւրաքանչիւր արդարոց և անմեղաց. և ի հիւանդութիւնս տղայոց: - 459. Եւ այն զի փաթութած է՝ ըստ հրէական օրինին է. զի կոնդակ և գալարելո՛վ էր նոցա գիրն. իբր թէ *ծածո՛ւկ* է ի նոցանէ խորհուրդ մարգարէիցն և թաքուն: - 481. Դարձեալ՝ որպէս ծալեալն *ծածո՛ւկ* է և մի կողմն երևի: - 517. Նոյնպէս և *ծածուկ* է աստուածային էութիւնն և անհաս յամենայն եղանակաց. միայն խնամօք երևի որոց կամի: - 517. Երկրորդ՝ զի որ անդ ի *ծածուկ* ծանոյց զինքն յանձինս մարգարէից նոյն ինքն աստ զերրորդութիւնն յայտնեաց առաքելոցն: - 524. Նա՛խ՝ զի յայտնեսցէ *զծածուկն* և զհեռաւոր իրն ժամանակաց. զի թէ զմերձաւոր և զյայտնին ասէ՝ ո՛չ է մարգարէ: - 536. Ապա ուրեմն *ծածուկ* և յայտնի զրկես զժողովուրդն ի հաղորդութենէն քրիստոսի...: - 600. ...զի յայտնի զարիւնն չտաս. և *ծածուկ* զմարմինն..: - 600. Երկրորդ յայտնել ասի. իբր չէ *ծածուկ* այլ յայտնի է աստուածութիւն նորա յարարածս իւր: - 624. ...զի աբեղութիւնն կրօնաւորութիւն է. և կրօնաւորին պարտ է զամենայն զգայարանս *ծածուկ* պահել: - 635. Իսկ նշանս այս անմարմին է և մնացական և *ծածուկ*, ինքեանց միա՛յն գիտելի: - 719. ...զի երբեմն ծածկէ՛ ողորմութիւնն զարդարութիւն. և երբեմն արդարութիւնն զողորմութիւն. և երբեմն հաւասար երկուքն յայտնի և կամ *ծածուկ*. - 746. Երկրորդ, նշանակէ՛ *զծածուկ* սէր սրտին. որպէս ծուխն զհուր: - 749. Երրորդ՝ տիւ ասի պայծառ լուսոյն գիտութեան հասումն. և գիշեր *ծածուկ* խորոցն աստուծոյ անգիտութիւն անհասիցն: - 750. Եւ դարձեալ՝ զորօրինակ, լոյսն և ջերմութիւն են էութիւն նորին զուգասփիւռ. այլ երբեմն մինն *ծածուկ,* և երբեմն երկոքին յայտնիք, և ընդ դէմ սորա: - 779. Եւ երբեմն երկոքեանն ի *ծածուկ*. որպէս ի նեղութիւն իւրաքանչիւր արդարոց և անմեղաց: - 779. Յաղագս որոյ որ ինչ գոյ միոյն յայտնի և ներգործական մասունք, գոն նոքա և միւսոյն բնաւորապէս *ծածուկ* և զօրութեամբ: - 786

**ԾԱԿ +** Վեցերորդ՝ այլ և ոսկերքն նման են քարանց: Մարմինն հողոյ... Եօթն *ծակ* գլխոյն՝ եօթն մոլորակացն: - 232

**ԾԱՂԻԿ +** Դարձեալ ասեն հակառակօղքն, թէ բոյսք և *ծաղիկք* և պտուղք երկրի ունին զօրութիւն ազդողական. իսկ աստեղք երկնից ո՞չ ունիցին: - 12. Չորրորդ՝ ի նոցունց այլք. որպէս մեղուք ի մեղուշ արջառոյ. թէպէտ այժմ ի *ծաղկանց* լինին: - 53. Դարձեալ՝ հոգին սուրբ բղխէ ի հօրէ՛ որպէս հոտ *ծաղկի* կամ խնծորի: - 64. Վասն բուսուց և տնկոց՝ և կանաչութեան նոցա. և *ծաղկի*, և պտղոյ, և համոյ, և հոտոյ նոցա: - 155. Եւ զի արտաքս գան *ծաղիկք* և պտուղք և տերևք: - 197. Սոքա վերընձիւղեն *զծաղիկս*. և ծնանին զամպս. և առնեն անձրևս և ամբոխմունս: - 205. Իսկ միջինն է Զեփիւռն. շարժէ՛ *զծաղիկս*: - 205. Եւ զի բուսօք և *ծաղկօք* և ծառօք զարդարի: - 211. Դարձեալ պտղաբեր ծառ՝ ունի պտուղ և *ծաղիկ* և հոտ անոյշ: - 212. Նշանակեն զնոսա՝ որք ունին զպտուղս բարի գործոց. և *զծաղիկն* հաւատոյ. և

զիոտ գիտութեան՝ ամենայն մարդկան անոյշ: - 212. Վասն է՞ր նա՛խ *ծաղիկն* և ապա պտուղն երևի: - 212. Նախաշաւի՛ղ է *ծաղիկն* պտղոյն: - 212. Դարձեալ՝ *ծաղիկն* է հրոյն՝ որ նախ շարժի և երևի: - 212. Այլ հոգեպէս որպէս *ծաղիկք* երկրի, նոյնպէս աստեղք երկնից են զարդ: - 213. Եւ այլք ասեն թէ *ծաղիկք* և տերևքն լուսընկա՛լք են: - 222. Յայն՝ զի փայտ դրախտին անփուտ է. և տերևն անփտելի. և պտուղն անծորելի. և *ծաղիկն* անթառամելի. և աստուծոյ տնկեալ ձեռօք իւր. տեղի անապական ձեռագործին ադամայ: - 223. Եւ թէ տկարանաս ի զօրութիւնն աստուծոյ՝ առ մե՛զ ևս գոն քեզ հաստատութեան նշան՝ անփուտ փայտ. և անթառամ *ծաղիկ*. և մշտականաչ սաղարթ. և անթափ պտուղ: - 223. **Ի պատիւ մեծարեաց զմարդն. և նա՛խ՝ պատրաստեաց պէտս զանազան կերակրոց և ընպելեաց որպէս ասացաք. և վառեաց զճրագ լուսաւորացն. և զգեղեցիկ ձայն երգեցողաց թռչնոց. և զզուարճութիւն զանազան *ծաղկանց*. և ապա՛ զմարդն ի պատիւ էած. ըստ այնմ «մարդ ի պատւի էր և ո՛չ իմացաւ»:** - 230. Եւ դարձեալ՝ որպէս հատն ցորենոյ ունի առ ինքն զօրութեամբ զխոտն և *զծաղիկն* և զհասկն. և սոքա համանգամա՛յն են ի հատն այն զօրութեամբ. որ յետ ժամանակաւ ըստ դասի երևին: - 255. Չորրորդ՝ զի ընդ ծառս դրախտին և յանթառամ *ծաղիկս* և ի բազմապատիկ պտուղսն պշուցեալ էին, ո՛չ զերկնչիլն գիտէին և ո՛չ զամաչելն: - 278. *Ծաղիկ* զմռնեաց. նմանէ պոյտն *ծաղկի*. և Կինամոն. արմա՛տ է խոտոյ ի տմորիս հայոց. և Խնկեղէգն. որ յարմատս ո՛չ ամենայն եղեգան լինի. և Յիրիկ. խէ՛ժ է ծառոց: - 349. Իսկ ծաղկեալ գաւազանն չորս ինչ յաւելու. Դալարի. Շառաւիղ. *Ծաղիկ*. և Պտուղն ընկուզ: - 382. Ո՞ր քան են պարարտութեան աստիճանք... Երրորդ՝ ի *ծաղկանց*. որպէս մոմ: - 407. Եւ որպէս անչափ են սպեղանիք և դեղք բժշկականք մարմնոյ ի բազում և զանազան *ծաղիկս* խոտոյ և յարմատս, ի տերևս ի պտուղս. և յայլսն. զի սոքա յայտնեն զբազմութիւն հիւանդութեանց մարմնոյ: - 531. Եւ որպէս օծ յայգւոյ *ծաղկէն* մեռանի, նոյնպէս նախանձոտն սատակի ի տեսանել զբարի ընկերին: - 569. Երրորդ՝ հաւատն է որպէս արմատ ծառոյն որ է հայր. յոյսն ստեղունքն որ է որդի. սէրն հոգին սուրբ որ է՛ *ծաղիկ* և պտուղ ըստ դիոնիսեայ: - 577. Նոյնպէս և նշանն պսակին *ծաղիկն* է: - 609. Այլ և զկարգն յարութեան՝ սորա՛ է ասացեալ մեծն վարդան ի տեսութիւն անթառամ *ծաղկին*: - 637. Զի *ծաղիկն* դիւրաւ թափի յամէն փոքր պատճառէ. յանձրևոյ և ի հողմոյ և ի սաստիկ որոտոյ. վասն այն պտուղն կորնչի: - 638. Աստ զանազան ցաւոց՝ և զանազան դեղս կազմեաց արարիչն աստուած. որպէս յարմատս ի *ծաղիկս* ի պտուղս և յայլսն: - 665. ...զի *ծաղիկն* կարապե՛տ է պտղոյն...: - 721. Այլ և արդեամբք սրբոց ոռոգեցաւ, լիցի որպէս զդրախտ աստուծոյ անուշահոտ *ծաղկօք* և մանուշակօք և մարդօք զարդարեալ և գեղեցկացեալ: - 759. Ունելով տերև զգիտութիւն սուրբ գրոց. և *զծաղիկ* հաւատոյ՝ և զպտուղ բարեաց գործոց: - 765. Եւ տերև գիտութիւն հոգւոյն. և *ծաղիկ* ծագումն բանին. և պտուղ արդեանցն հօր: - 765. Ունելով տերև և *ծաղիկ* և պտուղ. այսինքն մաքրել, լուսաւորել, և կատարեալս առնել ըստ մեծին դիոնիսի: - 767. Այլ և *ծաղիկ*՝ զպայծառ և զանուշահոտ վարս առաքինութեան. և պտուղ՝ արդիւնքն ըստ գործոց. յորմէ փրկութիւն եղև ամենայն աշխարհի և վայելչութիւն արքայութեանն երկնից: - 768. Ունելով մշտասաղարթ *ծաղիկ* որ է՛ կարմիր երանգն գունոյ, և երկնագոյն հիւթով զարդարեալ: - 768. Դարձեալ՝ ծառ կենաց և տունկ երկնային՝ է՛ հաւատն կենդանարար. որոյ արմատն է հայր, և ստեղունք որդի. *ծաղիկ* և պտուղ հոգին սուրբ: - 768-769. Զոր և ես զօրէն մշակաց բազմահաւաք պտղոց. կամ փունջ մի անուշահոտ բազմերանգ *ծաղկանց*. կամ չնչին թռչնոյ զխորիսխ մեղու. կամ որպէս զլոմայս այրւոյն տառապեալ գոյիւ: - 772

**ԾԱՂԿԱԶԱՐԴ +** Երկրորդ «որ եկիր և գալոց ես». քառասնօրեայ գալստեանն, և *ծաղկազարդին*, և բուն յինանց կիրակմտին զա՛յս ասա: - 634. Այլ և զաղցից կիրակէիցն, և զնինուէացւոցն, և *զծաղկազարդի* հարցն...: - 637

**ԾԱՂԿԵՄ +** Դարձեալ՝ յետ մահու հոգի մարդոյն *ծաղկի* և գեղեցկանայ առաքինութեամբն իւրով և բնական պայծառութեամբն: - 213. Եւ զոր օրինակ՝ տունկ ի յերկրի տնկեալ՝ նախ դալարի. և յորժամ հաստատի *ծաղկի*. և յորժամ ևս հաստատի՝ ապա պտղաբերի: - 255. Այսպէս և հոգին ընդ անկատար նիւթոյն ունի զկերակրիլն. և յորժամ հաստատի զգայութեամբն *ծաղկի*. և յևս հաստատիլն՝ բանականութեամբ պտղաբերի ի վերին խնամոցն որպէս պտուղն այն յարեգակնէ՛: - 255. Այսպէս և հոգին է ի նմա *ծաղկեալ*, և յետոյ յայտնի ըստ կարգի: - 255. Յիսուսնք, Վասն կորխեանցն. և *ծաղկեալ* գաւազանին: - 284. Իսկ *ծաղկեալ* գաւազանն չորս ինչ յաւելու. Դալարի. Շառաւիղ. Ծաղիկ. և Պտուղն ընկուզ: - 382. Երրորդ, սուրբ խաչն աստուածընկալ դալար զօրութեամբ. շառաւիղ թևն. պտուղ քրիստոս *ծաղկեալ* արեամբ և ջրով: - 382. Չորրորդ, քրիստոնէական ժողովուրդն դալարացեալ ի

մեղաց. շառաւիղեալ ծննդօք. *ծաղկեալ* հաւատով և պտղաբերեալ: - 382. Չինգերորդ, ըստ փիլոնի գաւազանն է իմաստութիւնն. դալարեալ մտօք և *ծաղկեալ* ուսմամբն. և պտուղ՝ ուսուցմամբ աշակերտաց: - 382. Իսկ որ ի խորանէն բերին մովսէս և ահարօն զգաւազանն *ծաղկեալ*. զի ի սիօնէ՛ ելցէ օրէնք. որ է՛ յեկեղեցւոյ ամենայն իշխանութիւն: - 382. Այլ և գաւազանն ահարոնի որ *ծաղկեցաւ*: - 494. Ասեմք թէ՝ որպէս ծառն որ նախ *ծաղկի* և ապա՛ պտղաբերի: - 609. Այլ արկանելիք սպիտակ՝ *զծաղկեալ* նոցա առաքինութեանն երևեցուցանէ զպայծառութիւն յետ ի թանձրութենէ մարմնոյս փոխելոյն. զոր զգեցեալ են նախ քան զխոստացեալ զփառսն...: - 696. ...մինչ խօսիլ տայ բազնեաց, և լերանց գնալ, և ծառոց *ծաղկիլ* և չորանալ. և մեռելոց յառնել. և հրոյ իջանել յերկնից. և չար հոգւոյն խօսիլ տայ այլ և այլ լեզուս: - 708. Երկրորդ, որպէս հատ մերկ անկանի և բուսանի *ծաղկեալ* և զարդարեալ տերևով...: - 720. Չինգերորդ, նախ *ծաղկի* և ապա՛ առնու զպտուղն յետոյ...: - 721. ...իսկ հոգիք սրբոցն նախ *ծաղկին* բնական պայծառութեամբն իւրեանց որպէս ցուցաւ ի վերոյ, և ապա՛ յետոյ արդեամբք պտղոյն կատարին ի հանդերձեալ կեանքն: - 721. Չորրորդ յա՛յտ է յօրինակաց. զի գաւազանն ահարօնի որ *ծաղկեցաւ*՝ օրինա՛կ էր խաչին. և տախտակքն բանին. և ծառն կենաց որ ի մէջ դրախտին: - 733. Դարձեալ՝ տերև զկանաչագեղ կեանս. և *ծաղկեալ* առաքինութեամբ. և պտուղ արդեանցն հանապազորդ: - 765. Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ. երկնուղէշ զարգացմամբ մշտասաղարթ կուսութեամբ *ծաղկեալ* և պայծառացեալ հոգւոյն սրբոյ եկաւորութեամբն. և պտղաբերեալ մեզ անմահ պտուղ զբանն մարմնացեալ. յորմէ վայելեալք երկնաւորք և երկրաւորք ի շնորհաց նորին զյաւիտենից կեանսն ժառանգեցաք: - 768. Եւ որպէս զկենդանարար ջուր զընդունակս իւր դալարացուցեալ. *ծաղկեալ* յաստիս և պտղաբերեալ ի հանդերձեալն...: - 768. ...որպէս *ծաղկեալ* գաւազանն ահարօնի նշանակէր զխրատ իմաստութեանն. որով զարդարեալ տայ զպտուղ լուսաւոր նիւթոյ կերակուր ոգւոյ: - 768. Այլ և տերև է մշտասաղարթ գիտութիւն հաւատոյն. *ծաղկեալ* դաւանութեամբ և պտղաբերեալ գործով առաքինութեան: - 769

**ԾԱՂՐ +** Զի լոյս Բանին և պայծառախօսութիւն՝ ի խելքն ծագէ. և Իմացականն՝ ի միջին փորուած գլխոյն... Խորհուրդն ի սիրտն... *Ծաղրն* ի թաղանթն: - 250. Երկրորդ՝ զի իսահակ աւետեաց է որդի և խնդութեան զաւակ որպէս անունն յայտնէ իսահակ, որ է՛ *ծաղր*: - 304. Եօթներորդ՝ ցնծութիւն եղև իսահակ ազգին իւրում. ըստ որում կոչեցաւ իսահակ որ է՛ *ծաղր*. և ճշմարիտ ցնծութենէ քրիստոս ամենայն հաւատացելոց...: - 307. որ ամենայնիւ ընդ դէմն փոխի ուտելն և ըմպելն ի ծոմ և ի ծարաւ. *ծաղրն* ի սուգ. հեշտութիւնն ի տքնութիւն. և ի չարչարանս և այլն: - 657

***ԾԱՂՐ ԱՌՆԵԼ*** + Ասեն վարդապետք թէ՝ ի լուր ուրախութեան հեշտանայ լեարդն և տարածեալ լայնանայ. և այնպէս շունչն ելեալ յորդ ընդ շնչերակսն և *առնէ զծաղրն*: - 619.

***ԾԱՂՐ ԼԻՆԵԼ*** + Վասն յիմարին՝ *ծաղր լինի* իմաստութիւնն: - 491

**ԾԱՂՐԱԿԱՆ +** Իսկ գեղեցկախօսութիւն լեզուաց... *Ծաղրական* մունդն: - 299

**ԾԱՄԵԼԻ(Ք) +** Այլ և ցիցն ի ծեռին յայտելի զոր վարսեաց ընդ *ծամելիսն* սիսարայ: - 494

**ԾԱՅՐ +** Յորոյ փախչելով մեր և յերկուց *ծայրիցն*, զառ ի մէջն ունելով ուղղապէս ընթացք, ասեմք եթէ քրիստոս ըստ անշփոթ միաւորութեանն՝ աստուածային բնութեամբն մարդ է, և մարդկային բնութեամբն աստուած է: - 75. Եւ այսպէս փախչելով ի թիւր *ծայրիցն*, զմիջինն պահելով ընթացք բարեպաշտութեան, անշրոփ և անբաժան միութիւն, խոստովանիմք զքրիստոս՝ աստուած մարդացեալ. մի անձն և մի բնութիւն. և մի կամք և գործք ըստ ուղղութեանն բանի: - 81. Այլ վերին մասամբ *ծայրիւ* իմացութեան ծկտի յաստուածայինսն՝ հաւատոյն լուսով և վկայութեամբ սուրբ գրոց հաստատել: - 103. Մանաւանդ թէ իւրաքանչիւր տարերք **բ** *ծայրք* որակութեանց ունին. զմինն գոյացական և զմիւսն պատահական. ըստ այսմ պա՛րտ է ասել քեզ մետասան բնութիւն քրիստոսի: - 176. Եւ այսպէս ջերմ և ցուրտ, չոր և զէճ, թշնամիք են անհաշտելիք. և լինին միաւորեալք դարձեալ *ծայրիւքն* և մնան սիրելիք անքակտելիք այսպէս: - 181. Եւ դարձեալ ի վեր քարշեալ ժողովին ի *ծայրս* խոտոց. և ծանրացեալ կախին իբրև զմարգարիտս: - 204-205. Երկրորդ՝ զի ունի երկիցս **բ** *ծայրք*. երկայնք և լայնքն. որ է յարևելից յարևմուտս. և ի հիւսիսոյ ի հարաւ: - 210. Եւ որպէս զհուր՝ ներքին կողմն լայն է և վերին *ծայրքն* նուրբք: - 215. Եւ հուրն է ի սիրտն. զի սիրտն ջե՛րմ է և նման է հրոյ. լայն է տակն և բարակ *ծայրքն*: - 232. Պատասխանեմք եթէ՝ ոմանք յարմատս ունին զսերմն. ոմանք ի *ծայրսն*. կէսք ի տերևն. այլք ի կեղևն. թէպէտ և սոցա սերմնական զօրութիւնն է՛ ի մէջն, այլ առաւել կենդանւոյն: - 256. Եւ այսպէս միջին հասակս կատարեալ, ծգի մինչև ի **խզ** ամն. որ է **դ ժզ**. և վեցն

կատարեալ թիւ է. և աստ տիրէ ալիք և սկիզբն լինի ծերութեան մինչև ի **հբ** ամն. յորում է *ծայրք* կենաց ըստ դաւթի, և թիւ երկոտասան վեցից խորհրդաւոր: - 265. Եւ յարտաքին սրահն **հ** սիւնք արծաթապատք. և յամէն սիւն **բ** խարիսխք և խոյակք յերկոքին *ծայրսն*: - 343. Վեցերորդ՝ զի ի *ծայր* կենացն է ժամանեալ: - 378. Ես սոքա այսպէս զանազանին դարձեալ՝ մեղքն է առաջին *ծայր*. սկսեալ յանձնիշխան կամացն ադամայ: - 496. Արդ՝ երկոքին *ծայրքն*՝ այսինքն մեղքն և ապականութիւնն են պարզաբար և ամենևիմբ չար անւամբ և իրօք...: - 496. ...և Դարձեալ ասեմք, մեղքն ապականութիւնն են առաջին և վերջին *ծայրքն* կրից. իսկ մահն միջին որպէս ցուցաւ ի վերոյ: - 497. Եւ ունի մահն կրկին յատկութիւն որ ընդ դէմ է երկուց *ծայրիցն*. այսինքն զի է՛ վախճան կենաց՝ և է՛ սկիզբն կենաց: - 497. Ըմբռնելիքն ի վերին *ծայրքն*՝ է՛ յիշողականն ի մեզ: - 645. Եօթներորդ, զի հողն ամենևին ներքին *ծայրքն* է ամենայն տարերաց. անդ դնի մարմինն: - 678. Եւ որպէս այլքն այլ ինչ, և սա՛ զծխատեսակ ջերմութիւն սրտի ընդ ցնցուղս *ծայրից* արտաքարշելով ի կրկին կողմանէ որպէս ասեն բժիշկք: - 786

**ԾԱՅՐԱԳՈՅՆ +** Տասներորդ՝ **բ** սկիզբն՝ գերագոյն բարին. և *ծայրագոյն* չարն՝ կամ ըստ ինքեանց կայանան, կամ ո՛չ: - 21. Վասն այն տէրն ընկրկեաց զօրինականն թէ միայն *ծայրագոյն* բարի է՛ աստուած. և ի մարդկանէ ո՛չ ոք ունի զայս: - 47. Եւ դու ընդ է՛ր ասես լինել ինձ ըստ մարդկան երկրորդաբար բարի. զի աստուածութեամբս եմ ընդ հօր *ծայրագոյն* բարի: - 47. Զի՞նչ է *ծայրագոյն* միաւորութիւն բանին մարմնացելոյ: - 77. Ա՛յս է *ծայրագոյն* գագաթն աստուածաբանութեան: - 123. Զամենայն հրեշտակս բարի արար աստուած, այլ ո՛չ *ծայրագոյն* բարիս. այլ միջակս...: - 146. Երրորդ առ այսոքիւք՝ միաւորութիւն անուանեմք և զխառնուածս երկուց նայից ըստ զանազան որակութեանց. յորում ո՛չ ոք ի խառնեցելոցն զիւր *ծայրագոյն* որակութիւնն սեռաբար կարօղ է պահել. այլ շփոթեալ անկանի ի *ծայրագոյն* որակութենէն. որպէս զջուրց և զգինեացն խառնուած, և զմեղերաց: - 476. Երկրորդ՝ վասն գերազանց և *ծայրագոյն* միաւորութեանն քրիստոսի ընդ եկեղեցի: - 534. Զի հաւատովն տեսանի *ծայրագոյն* բարին: - 571. Եւ քաղց արդարութեան է սաստիկ տենչումն արդարութեան. կամ *ծայրագոյն* բարւոյն: - 584. Եւ վասն այն ասի արքայութիւն, զի ամենայն երանութեանց և փառաց է՛ կատարումն և *ծայրագոյն* մեծութիւն: - 754. Չորրորդն երկոցունցն *ծայրագոյն* միաւորութիւն: - 755

**ԾԱՅՐԱՆԱԼ +** Երկրորդ երիցունք են ծերքն. որք *ծայրացեալք* են կատարելութեամբ: - 711

**ԾԱՅՐՈՒԹԻՒՆ +** Եօթներորդ՝ զի և յաստուածպետականն *ծայրութիւն* բառնալով առաւել քան դնելով գամք ի ծանօթութիւն: - 132

**ԾԱՆԱԿԵՄ +** Զի այնպէս *ծանակեալ* լիցի մարմին մեղաւորին, մինչ զի հոգին գարշեսցի առնուլ զնա. և որպէս ուրուկ և որդնալից այնպէս ո՛չ կամեսցի ունել զնա: - 751

**ԾԱՆԱԿՈՒՄՆ** - Ո՞ր քան են տանջանք դժոխոցն...Հինգերորդ՝ *ծանակումն* առականաց: - 751

**ԾԱՆՈՒՑԱՆԵՄ +** Որպէս ասէր առ աբրահամ, «այժմ ծանեայ թէ երկիւղա՛ծ ես դու յաստուծոյ». այսինքն այժմ *ծանուցի* մարդկան զերկիւղ քո: - 59. Նախ՝ զի զծածուկ առաքինութիւն արդարոյն յայտնի արասցէ այլոց ամենեցունց. որպէս զյոբայն և զաբրահամոյն. ըստ այնմ որ ասէր՝ «ա՛յժմ ծանեայ թէ երկիւղած ես դու յաստուծոյ». այսինքն այժմ *ծանուցի*: - 158. Եւ զի յայտ եղև այս, *ծանուսցի* և այն, թէ վասն է՞ր աստուած միայն գոյացութիւն է և ո՛չ պատահումն: - 170. Այսինքն այժմ *ծանուցի* զքեզ ամենայն աշխարհի: - 305. Եւ զոր յայտնեաց մեզ, *ծանուցար* որդւոցդ մեր: - 405. Երկրորդ՝ ասելն «չև ևս ելեալ եմ առ հայր իմ», ցուցանէ թէ՝ զոր այժմ խնդրես, հոգին գայ և զայդ ամենայն *ծանուցանէ* ձեզ: - 517. Երկրորդ՝ զի որ անդ ի ծածուկ *ծանոյց* զինքն յանձինս մարգարէից նոյն ինքն աստ զԵրրորդութիւնն յայտնեաց առաքելոցն: - 524. Բանականն՝ աբրահամու. բանականաբար ի շարժմանց արարածոց *ծանուցեալ* զաստուած: - 528. Նա՛խ՝ մարգարէքն զհայր *ծանուցին*. ապա՛ առաքեալքն զորդի. և ապա՛ վարդապետք զհոգին սուրբ: - 535. Այժմ ճանաչեմք փոքրիշատէ. իսկ յայնժամ ծանեայց որպէս *ծանուցայ* ի նմանէ: - 767

**ԾԱՆՐ +** Իսկ հերձւածօղ գիտութեամբ ամբարշտին. որոց *ծա՛նր* է պատիժն: - 33. Իսկ թէ յանսկզբնէն և ի սկզբնաւորէն յառաջ գայ հոգին, լինի անեղ և եղական որ է մակեդոնեան և *ծանր* հայհոյութիւն: - 63. Արդ ամենայն ինչ որ զգալի է՝ ի ներքս ի սմա՛ է. ձա՛յն. գո՛յն. հո՛տ. հա՛մ. *ծա՛նր* և թեթև. և ո՛չ ինչ է արտաքոյ սորա. յաղագս որոյ և ո՛չ զգայարանաց կարօտի: - 179. Կարծեմ թէ և քեզ *ծանր* թուի հարցումնս այս. սակայն մտաւորաբար լո՛ւր: - 180. Եւ դիրք տարերացդ է այսպէս Որ երկիրն *ծանր* է քան զջուր՝ ի ներքո՛յ է: - 180. Եւ ջուրն քան զօդ. և օդն *ծա՛նր* է քան զհուր. զի սակաւ

ինչ գիճութիւն ունի: - 180. Հինգերորդ՝ երկինքն թեթև է ի վեր քարշէ. և երկիրս *ծանր* ի վայր հակէ. և այսպէս մի զմի հաստատուն պահեն: - 182. Եւ զի *ծա՛նր* է: - 211. Որ յետ յանցանացն փոխեցաւ և եղև թանձր և *ծանր* և մահկանացու և ընդդիմահար և աղտեղի: - 282. Եւ թէ ոք ասիցէ, և երկրորդն ադամ քրիստոս՝ զմարմինն ադամայ ունէր, և էր թա՛նձր և *ծա՛նր*: - 282. Իբր թէ հաւասա՛ր *ծանր* է մեղք քահանայապետին և բոլոր ժողովրդեանն: - 358. Զի ասեմք՝ տե՛ս զհամն և զհոտն. տե՛ս զքանդ. տե՛ս թէ ջե՞րմ է կամ *ծանր*: - 407. Նա՛խ՝ ի գործն և ի պատիժն. յորժամ գիտէ ոք թէ այն գործն մեղք է և գործէ՛. և գիտէ՛ զպատիժ այն մեղացն որ *ծա՛նր* է: - 564. Նոյնպէս Առնելն կամ Կրել. ընդ դէմ բնութեանն առաւել *ծանր* է քան որ առնէ և կրէ ըստ կարգի բնութեան: - 565. Երրորդ պակասութիւն է մարմնոյն՝ զի *ծա՛նր* է և ծոյլ յամենայն գործս հոգևորս: - 722. Եւ մարմինք նոցա լինին առաւել թանձր և *ծանր* և գարշելիք որպէս աստ: - 723

**ԾԱՆՐԱԲԵՌՆՈՒԹԻՒՆ +** Ի վեցերորդումն անվախճան տանջելիք... Առաջինն է աշխատութեանց... Երկրորդն *ծանրաբեռնութեան:* - 210

**ԾԱՆՐԱԳՈՅՆ +** Եւ որպէս ասեն վարդապետք՝ քան զամենայն մեղս *ծանրագոյն* գոլ զպաշտօն կռոցն վասն երկուց: - 33

**ԾԱՆՐԱՆԱՄ +** Զի խաւարի միտքն. և մոլորի՛ իմացումն. և կապի ընդարձակ տեսութիւնն. և *ծանրանայ* թեթեւութիւնն. և անջատի ի բազումս. և տգեղանայ պատկերն: - 104. Եւ դարձեալ ի վեր քարշեալ ժողովին ի ծայրս խոտոց. և *ծանրացեալ* կախին իբրև զմարգարիտս: - 204-205. Ա՛րդ՝ եթէ մնայ հինն ընդ նորոյն հանապազ. նա՛ *ծանրանայ*. և ո՛չ կարէ զայն քան ամաց բազմութիւն պտղոցն կրել, և այսպէս լինին ամենայն ծառքն կոտորեալ և ապականեալ...: - 224. Իսկ այլ կենդանեացն հողն բազում է. վասն որոյ *ծանրացեալ* ի վա՛յր հակէ: - 233. Զալէկոծեալսն մեղօք և *զծանրացեալսն* աւա՛զ կոչէ. որպէս զորդիսն իսմայէլի: - 303. Տասներորդ՝ զի ծուլացեալ է և *ծանրացեալ* յառաքինութիւնսն. ի պահս՝ յաղօթս՝ և յայլս: - 377. Հինգերորդ՝ թէ յերեք հասակս մեր ոչ արդարանամք. և ո՛չ յէ հասակին արդարանամք յորում լուծեալ *ծանրանայ* մարմինն: - 384. ...և մեղօք *ծանրացեալ* էջ ի ներքին կէտս դժոխոցն, և այլ ո՛չ կարէր բարձրանալ. մինչ ի վերին կիտէն բանն աստուած էջ ի ներքին կէտն. և ապա ել ադամ ի վերին կէտն երկնից: - 503. Վասն այն այլ վարդապետք կոչեն զայս ախտ՝ ծուլութիւն. զի ծուլութիւնն յերկու իրաց երևի. մին որ յետս դառնայ ի հոգևոր բարւոյն և *ծանրանայ* ի գործելն. այսինքն պահել՝ աղօթել և այլն. և ըստ այսմ կոչի տրտմութիւն: - 559. Ի վայր շարժումն է տրտմութիւն և ծանծրութիւն. որ է՛ ծուլութիւն. զի մինն *ծանրանայ* և ո՛չ գործէ զբարիս. և միւսն տրտմի և պակասի: - 560. Իսկ դատապարտեալքն *ծանրացեալ* մասամբք և զազիր անդամօք այր և կին. զի իւրաքանչիւր ոք ի գործիական անդամս իւր կրեսցէ զպատիժն: - 726. Իսկ մեղաւորքն ի ծախմէ. այսինքն վայր ի յերկիր *ծանրացեալ* մեղօքն. որպէս կապար ի յերկիր հակեալ. ուր բոլորով սրտիւ սիրեցին զնա: - 738. Յերկրորդումն թանձրութեամբ մարմնոյ *ծանրացեալք:* - 755. Իսկ ի ներքուստ, ի լինիլ տրտմութեանց՝ խուճապեալ մարմնոյն հոսի մաղձ դառն ի ստամոքս որովայնի. և վերացեալ գոլորշեաց նորա զօրէն շոգալեաց պուտկի առ խելապատակս գլխոյ. և *ծանրացեալ* անտի թորի՛ առ բիբն ասացեալ ական. չոր գոլով և աղէգոյն ի սևատեսա՛կն մաղձոյ: - 787

**ԾԱՆՐԱՇԱՐԺ +** Եւ որ զհողն ունի, տրտմակեաց է և *ծանրաշարժ* և ծոյլ մարմնով: - 245

**ԾԱՆՐԱՑՈՒՑԱՆԵՄ +** Ա՛յս է՝ մեղք հպարտութեանն որ է երկրային ախտ, *ծանրացոյց* և ընկէց յերկիր: - 148. Եւ դարձեալ՝ մե՛ղքն *ծանրացուցանէր* և փակէր ի դժոխս: - 504

**ԾԱՆՐՈՒԹԻՒՆ +** Չորրորդ՝ զի չարչարանօքն իւրովք փորձեսցէ՛ զհնազանդութիւնս մեր. այսինքն զկսկիծ և *զծանրութիւն* չարչարանաց մերոց. որպէս թէ ունիցի գիտել իւրովք զմերս և ողորմիլ մեզ: - 43. Եւ որպէս հուր յերկաթ միաւորեալ բառնայ ի նմանէ զցրտութիւնն և զսևութիւնն և մնայ *ծանրութիւնն*...: - 100. Նոյնպէս և տգիտութիւնն մտա՛ցն է խաւար և մոլորութիւն. և կապ. և *ծանրութիւն*. և անջատօղ. և տգեղութիւն: 103-104. Չորրորդ՝ զի իւրաքանչիւր սոքա առանձին սահման ունին և բնութիւն. և ո՛չ միաբանին ընդ միմեանս և ո՛չ ընդ մարմնի. այսինքն քանակն որակն. և *ծանրութիւնն*. և այլքն: - 175. Զի քանակն որակ ո՛չ է և ոչ ասի. և ո՛չ *ծանրութիւն*. և ո՛չ կարծրութիւնն մարմին: - 175-176. Երրորդ՝ *ծանրութիւն* երկրիս ի վայր հակէ. և բռնութիւն հողմոյ ի վեր: - 182. Չորրորդ՝ հաւասարակշիռ է երկիրս բոլորակի. և յամենայն կողմանէ *ծանրութիւնն* ի մէջն ժողովի. և այսպէս ինքն ի վերայ իւր հաստատեալ է: - 182. Յորժամ փայտն այրի, *ծանրութիւն* զի՞նչ լինի: - 202. Պատասխանեմք յայտնի տեսութեամբ, թէ զոր ինչ այրէ հուր, ծախէ՛ և կորուսանէ զամենայն որակսն.

այսինքն զգոյն. զհամ. զհոտ. նոյնպէս և *գծանրութիւն*: - 202. Դարձեալ ասեմք թէ՝ *ծանրութիւն* փայտին գիճութիւնն է և ցրտութիւնն. և հուրն ջերմութեամբ և չորութեամբ զսոսա կորոյս: - 202. Դարձեալ ասեմք թէ՝ զինչ *ծանրութիւն* որ պատահական է՝ ի ցրուիլն նիւթոյն կորնչի ծանրութիւնն: - 202. Դարձեալ ասեմք թէ՝ զինչ ծանրութիւն որ պատահական է՝ ի ցրուիլն նիւթոյն կորնչի *ծանրութիւնն*: - 202. Նոյնպէս *ծանրութիւն* փայտին պատահակա՛ն է և եկամուտ. զորս կորուսանէ հուրն: - 202. Իսկ *ծանրութիւն* երկաթոյն բնական է. վասն որոյ ո՛չ կորնչի: - 202. Եւ թա՛նձր *ծանրութեամբն* ի վայր բերեալ՝ կոչի կայծակ. և լինի յամառնային եղանակս: - 204. Գլուխն որպէս երկինք ի վերոյ. և ոտքն որպէս երկիր ի ներքոյ. զի *ծանրութիւնք* և ծորմունք ամենայն ի վայր հոսեսցին: - 233. Իսկ միայնացեալ որակ ի ձևոյն, երևի աննման. զի նմանն ի վերայ որակութեան ասի. որպէս *ծանրութիւն*: - 236. Չորրորդ՝ թուեաց զնոսա, զի յորժամ մարդամահն լինի, գիտասցեն զորքանութիւն մեռելոցն, և *գծանրութիւն* մեղացն: - 434. Յղացեալ առանց *ծանրութեան*: - 469. Եօթներորդ՝ զի յինքն կրելով զթլփատութիւնն և զայլ օրինականս, ի *ծանրութենէ* թլփատութեան և օրինացն ազատեսցէ զմեզ: - 485. և Ոտք՝ կրօնաւորք և ապաշխարօղք. որք կրեն *գծանրութիւնս* օրինացն: - 534. Երկրորդ՝ թէ տգէտ լիցի քահանայն և ո՛չ կարէր ընտրել *գծանրութիւն* մեղացն և զանազանել: - 603. ...և ապա կանայք *գծանրութիւն* երկանցն կրեսցեն: - 613. Եւ տէրն վասն կերակրոյն ո՛չ ասաց թէ ի մարմին մարդոյն ո՛չ հաւասարի. այլ զայն թէ՝ դառնութիւն և *ծանրութիւնն* արտաքս ելանէ, - 718. Քանզի մարմինս ո՛չ ըմբռնեսցի կամ իւրն *ծանրութեամբ* կամ այլ մարմնոյ ընդդիմահարութեամբ: - 766

**ԾԱՆՕԹ +** Այս է զի ի լուր պատմութեանց նախնեացն՝ կամ ի կարգէ՛ իրաց՝ կամ ի տեսս զգալեաց՝ ի *ծանօթս* գամք աստուծոյն ճշմարտի. յորմէ հաւատն լուսափայլեսցի: - 25. Հինգերորդ՝ և որպէս ընդ աղօտ ինչ նմանութեամբ ծանօթանամք ի գործն արարչութեան. այսպէս և ստւերակերպ նմանութեամբ ի *ծանօթս* գամք գործոյ նախախնամութեանն. այսինքն առնելոյն և թոյլ տալոյն: - 157. Ուխտ, յերկրորդումն ետ յովսէփ *ծանօթս* եղբարցն: - 314. Եւ տէրն մեր յերկրորդ գալստեանն տայ *ծանօթս* հարուածովք տիգին և բևեռացն: - 314. Երկրորդ՝ զի *ծանօթք* էին **ղճ** ամաւ և ատեցին: - 335. Վասն է՞ր եհարց թէ՝ ո՞յր որդի է դաւիթ. զի կապարճակիր և *ծանօ՛թ* էր սաւուղի: - 427. Այլ և օրհնութիւն բաշխեաց յաւարէն ամենայն *ծանօթից*. և տէրն առեալ աւար բաշխեաց պարգևս որդւոց մարդկան: - 437. Երրորդ՝ զի ի մէջ *ծանօթից* էր և սիրելեաց: - 490

**ԾԱՆՕԹԱՆԱՄ +** Դարձեալ՝ զգայութեամբ *ծանօթանամք* որ արտաքոյ քան զմեզ: - 103. Հինգերորդ՝ և որպէս ընդ աղօտ ինչ նմանութեամբ *ծանօթանամք* ի գործն արարչութեան. այսպէս և ստւերակերպ նմանութեամբ ի ծանօթս գամք գործոյ նախախնամութեանն. այսինքն առնելոյն և թոյլ տալոյն: - 157

**ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ +** Զի որպէս էր հօր *ծանօթութիւնն* ի նախահարսն, և որդոյն ընդ աղօտ, այլ ի մարմնանալն իւր յայտնեցաւ: - 55. Նոյնպէս փչօղ. փչեալ. փչումն. և այլ *ծանօթութիւնք* աստ յարմարին: - 105. Եօթներորդ՝ զի և յաստուածպետականն ծայրութիւն բառնալով առաւել քան դնելով գամք ի *ծանօթութիւն*: - 132. Երկրորդ՝ զի թէ ճանաչիցէ զհեռաւորն միջնորդութեամբ բարի հոգւոյն. զի թէ յայտնէ միջնորդութեամբ չար հոգւոյն՝ ո՛չ է մարգարէ. այլ ստոցն *ծանօթութիւն*...: - 536. Տասներորդն է *ծանօթութիւն* առանց տգիտութեան. յօհան ի կաթողիկեաց՝ «տեսանելոց եմք զնա որպէս և էն»: - 767. Որք տեսչութեամբն աստուծոյ՝ ի մեռելոցն զառհաւատաչեայն ընկալան յարութեան, թէ զիա՞րդ ոչ ունէին ի մտի զանտի կենացն *ծանօթութիւն.* պատմել մեզ խնդրի: - 774

**ԾԱՌ +** Իսկ երկրաւորք մերթ այսպէս և մերթ այնպէս. լինին և ո՛չ լինին. որպէս մարդ, ձի, *ծառ*, և այլն: - 8. Բայց կամեցաւ և յայտնեաց զինքն որդի և զհայր՝ ի ձեռն նշանաց աշակերտաց իւրոց. որպէս ի պտղոյն *ծառն* երևի: - 96. Կամ որպէս բունն մի է *ծառոյն*, և ճուղքն և տերևքն բազում. նմանապէս և աստուածաբանութիւնն: - 123. Վասն *ծառոյ*՝ և ձևոյ և անուան նոցին. և զի բոյսք փութով աճեն քան *գծառս*: - 155. Այլ ասիցէ ոք, թէ բազում ինչ գոն ի յայլս գոյացութիւն և ի յայլս պատահումն. որպէս ջերմութիւն ի հուրն գոյացութենէ, և ի անորակ մարմինն պատահումն. և տերևն ըստ ինքեան գոյացութիւն է, և ի *ծառն* պատահումն. այսպէս և մազն: - 169. Պատասխանեմք առ այս եթէ՝ առանց ջերմութեան անձև և անկերպ է անորակ մարմինն. իսկ տերևն զա՛րդ է *ծառոյն*. և մազն մարմնոյն: - 170. Եւ է՛ էակ որ երբեմն զօրութեամբ է. որպէս այնոքիկ որ ի լինելութեան և յապականութեան են որք միշտ փոփոխին. որպէս մարդ և ոչխար և *ծառ*: - 173. Եւ զի *ծառք* չորացեալք՝ դալարին և կանաչին: - 197. Եւ զի երկիր և *ծառք* ի պտղոց կողոպտին: - 197. Եւ զի երկիրս և *ծառք* մեռանին: - 197. Եւ *ծառք* ի ձմեռն յարմատն ժողովին: - 209. Եւ զի բուսօք և ծաղկօք և *ծառօք* զարդարի: - 211. Յի՞նչ պէտս են այնչափ

բազմութիւնք բուսոց և *ծառոց*: - 212. Դարձեալ պտղաբեր *ծառ*՝ ունի պտուղ և ծաղիկ և հոտ անոյշ: - 212. Դարձեալ՝ զի տնկականն վերափչո՛ւմն է օդոյն հանդերձ խոնաւութեամբն երկրի. վասն որոյ բոլորաձև արտաքս գայ և լինի *ծառ*: - 213. Վասն է՛ր բոյսք փութով աճին և դալարին քան զտունկ և *զծառ*: - 214. Իսկ *ծառք* միջնորդութեամբ փայտին ի հեռուստ ընդունին: - 214. Վասն է՞ր կոչին *ծառ*: - 214. Երկրորդ՝ կոչին *ծառք*, այսինքն ծուռք. զի ընդ դէմ են ձևոյ աշխարհիս և մարդոյն: - 214. Զի մարդն ունի զգլուխն ի վեր որպէս երկինքն. և զոտքն ի վայր որպէս երկիրս. վասն որոյ ամենայն ծորմունք բնականապէս զառիվա՛յր հոսին. իսկ *ծառն* ծռեալ ունի զգլուխն ի վայր, և զոտսն ի վեր. կամ թէ ծռեա՛լ ունի զոտս և զստեղունս յայս կոյս և յայն կոյս: - 214. Ո՞րպէս ասէ մեծն Ներսէս շնորհալին. ընդ *ծառոց* երկրի զգալեաց. տնկեաց և զտունկս իմանալեաց: - 221. Երկրորդ՝ իմանալի՛ է, զի իմացումն և իմաստութիւն տայ մեզ յայլ իրս. որպէս *ծառն* կենաց զքրիստոս: - 222. Եւ ամենայն *ծառք* զզուտ բարիս հոգէկանս: - 222. Եւ *ծառ* գիտութեանն զպատրւակեալ բարիս մարմնական: - 222. Այլ ա՛յս է ճշմարիտն. որ մինն *ծառ* էր կենաց՝ և մինն գիտութեան. և ի դրախտին այլ ո՛չ գոյր նման նմա. թո՛ղ թէ յերկիրս. ո՞րպէս ասեմք թէ այս է՝ կամ այն: - 224. Եթէ յամենայն ամի նորն զհինն փոխէ, այս լինի կամ թափիլ պտղոյն ի *ծառոյն*. և կամ մնալ հինն ընդ նորոյն: - 224. Ա՛րդ՝ եթէ մնայ հինն ընդ նորոյն հանապազ. նա՛ ծանրանայ. և ո՛չ կարէ զայն քան ամաց բազմութիւն պտղոցն կրել, և այսպէս լինին ամենայն *ծառքն* կոտորեալ և ապականեալ...: - 224. ...իսկ թէ թափի հինն. այս լինի կամ յատակս *ծառոցն* ծորեալ և ապականեալ. և կամ ամենայն ամբարեալ և ժողովեալ և բարձրացեալ քան *զծառս* դրախտին որ է անպատշաճ: - 224. *Ծառք* դրախտին ո՞րպէս ըմպեն ջուր, թէ անապականք են: - 224. Ասեմք թէ՝ նոյն է պատասխանին. զի պատահումն առ մե՛զ հանդիպի. այլ առ աստուած ոչ ինչ է պատահմամբ. այլ ամենայն ինչ գիտութեամբ. զի ո՛չ տերև մի ի *ծառոյ* անկանի առանց գիտութեանն աստուծոյ: - 237. Որպէս բունն մի է *ծառոյն*. և ի բազում ճիւղս բաժանի: - 244. Որպէս ճիւղ հատեալ ի *ծառէ* և տընկեալ յերկրի, ճիւղն է հատեալ ի *ծառէն*, այլ կենդանութիւնն ո՛չ. ուստի յա՛յտ է զի տընկեալ ճիւղն նոյն կենդանութեամբն բուսանի զոր ունի առ ինքն: - 257. Նմանապէս *ծառք* և տունկք՝ որ յետ երից ամաց կամ չորից ցուցանեն զպտուղս՝ յայսմ թըւոյ ո՛չ ելանեն արտաքս: - 263. Չորրորդ՝ թշնամիք եղեն հրեշտակք մարդկան. որք պահէին սրով զճանապարհ *ծառոյն*: - 277. Չորրորդ՝ զի ընդ *ծառս* դրախտին և յանթառամ ծաղիկս և ի բազմապատիկ պտուղսն պշուցեալ էին, ո՛չ զերկնչիլն գիտէին և ո՛չ զամաչելն: - 278. Իսկ զի ասէ «երերեալ» յա՛յտ է իբրև *զծառ* մարմնովն: - 287. Որպէս զխոյն ի *ծառոյն* սաբեկայ. և զլորամարգն ի ծովէն. և զաստերն ի բերանոյ ձկանն հրաշագործեաց: - 326. Ծաղիկ զմռնեաց. նմանէ պոյտն ծաղկի. և Կինամոն. արմա՛տ է խոտոյ ի տմորիս հայոց. և Խնկեղէգն. որ յարմատս ո՛չ ամենայն եղեգան լինի. և Յիրիկ. խէ՛ժ է *ծառոց*: - 349. Երրորդ՝ չտալ երկրի զբոյս. և ո՛չ *ծառոց* պտուղ: - 376. Նա՛խ եթէ՝ բնութեամբ բարի է աստուած և ո՛չ ունի բարկութիւն. զի *ծառ* բարի պտուղ չար ո՛չ առնէ. այլ մեք գործովք մեր զայրացուցանեմք զնա և արկանեմք ի բարի կամս նորա բարկութիւն: - 408. Այլ և *ծառն* սաբեկայ ուր խոյն կախեցաւ: - 494. Զորօրինակ՝ մի ոմն *ծառ* հատանէ, և այլ ոմն զհատեալն դարձեալ հերձու և բաժանէ՛ և տայ յայրումն: - 498. Արդ մի՛ մերժեսցես զիս անկատար գոլով. որպէս մայր քո եւա ի *ծառն* գիտութեան. յորժամ առ բնութեամբ իմ հայր՝ և ձեր ըստ շնորհի՝ և աստուած մարմնոյս իմոյ ես ելանիցեմ, որոտմամբ իջեալ հոգին զձեզ կատարէ՛. արժանաւորիք յայնժամ առ իս մերձենալ: - 518. Եւ ոմանք ոչ ինչ համարին զյանցանս մտաց. և ո՛չ դնեն ի կարգս մեղաց. օրինակ տալով իբր զդատարկ սեղան ոչ ինչ կերակրել. և իբր զպտուղ *ծառոց* տեսութեամբ միայն վայելել: - 555. Ուստի *ծառ* չար պտուղ չար առնէ: - 556. Որ և յարազուարճ բարերջանկութեամբ լի և ամենազան քաղցրորակ պտղաւէտութեամբ տընկեցիս *ծառ* բարձրաբերձ յընթացս հոգւոյն ի մէջ եկեղեցւոյ տանս թորգոմեան ազգիս հայկազնեան: - 558. Այս է *ծառն* չար որ պտուղ չար բերէ. և յետոյ հատանի. և ի հուրն յաւիտենից արկանի: - 570. Երրորդ՝ հաւատն է որպէս արմատ *ծառոյն* որ է հայր. յոյսն ստեղունքն որ է որդի. սէրն հոգին սուրբ որ է՛ ծաղիկ և պտուղ ըստ դիոնիսեայ: - 577. Ասեմք թէ՝ որպէս *ծառն* որ նախ ծաղկի և ապա՛ պտղաբերի: - 609. Քառասունն, Կենաց *ծառն* և երկոտասան պտուղ նորա: - 661. ...և ոտքն ընթացաւ ի *ծառն*...: - 670. ...մինչ խօսիլ տայ բազնեաց, և լերանց զնալ, և *ծառոց* ծաղկիլ և չորանալ. և մեռելոց յառնել. և հրոյ իջանել յերկնից. և չար հոգւովն խօսիլ տայ այլ և այլ լեզուս: - 708. Չորրորդ յա՛յտ է յօրինակաց. զի գաւազանն ահարօնի որ ծաղկեցաւ՝ օրինա՛կ էր խաչին. և տախտակքն բանին. և *ծառն* կենաց որ ի մէջ դրախտին: - 733. Զի՞նչ է *ծառն* կենաց և պտուղն երկոտասան զոր ասէ տեսիլն: - 765. Նա՛խ՝ *ծառն* կենաց են հաւատացելոց անձինքն տնկեալք ի վտակս հոգւոյն՝ ջրով աւազանին. հետևեալ ի մշտնջենաւոր կեանս: - 765. Երկրորդ՝

*ծառ* կենաց են բնակիչք վերնոյն սիօնի. տնկեալք յաղբիւրն կենաց որ իջանէ յաթոռոյն աստուծոյ ի մէջ նոցա. ունելով զանմահ կեանս յաւիտենից: - 765. Այսպէս կոչեսցին արդարքն *ծառ* կենաց: - 766. Դարձեալ ի վեր յառաջին բանն մեր երթիցուք որ էր *ծառ* կենաց ի մէջ դրախտին: - 767. Երրորդ՝ *ծառ* կենաց իմանին տունկք իմանալի դրախտին. այսինքն բանակք երկնաւոր զօրացն. միշտ յարազուարճ բերկրանօք բարձրացեալ ի փառս: - 767. Այսպէս վասն երկնային և իմանալի տնկոցն որ կոչին *ծառ* կենաց. ունելով յինքեան զկեանս և բաշխելով այլոց ամենեցուն զխնամս: - 767. Չորրորդ՝ *ծառ* կենաց կոչի տէր մեր յիսուս քրիստոս. ըստ որում փայտ դալար էր աստուածութեամբն. և մեզ կեանք և կենդանարար եղև յարութեամբն իւրով: - 768. Հինգերորդ՝ *ծառ* կենաց է փրկական փայտն կենդանարար սուրբ խաչին: - 768. Դարձեալ, *ծառ* կենաց և անմահական պտուղ՝ մարմին և արիւնն սուրբ. յորմէ ճաշակեալ հանապազ՝ անմահ կենացն վիճակէ զմեզ...: - 768. Դարձեալ, *ծառ* կենաց է աւետարանն սուրբ տնկեալ ի մէջ եկեղեցւոյ դրախտին. բերելով պտուղ կենաց զիմաստութիւնն երկնաւոր. որ կեանս տայ ճաշակողացն զնա. և միշտ շնորհս բժշկութեան և թողութեան մեղաց: - 768. Դարձեալ, *ծառ* կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ...: - 768. Դարձեալ՝ *ծառ* կենաց է տունկն իմաստութեան որ ի յերկնից առ մարդիկ տնկեալ: - 768. Դարձեալ՝ *ծառ* կենաց և տունկ երկնային՝ է՛ հաւատն կենդանարար. որոյ արմատն է հայր, և ստեղունք որդի. ծաղիկ և պտուղ հոգին սուրբ: - 768-769. Արդ ահա ա՛յսոքիկ են *ծառ* կենաց ի յերկինս և յերկրի տնկեալ. փոխանակ *ծառոյն* կենաց ի դրախտին եդեմայ. յորմէ հրաժարեցոյց և պարսպեաց բոցեղէն սրովն զճանապարհ նորին: - 771. Եւ արմատ *ծառոյն* գոսացեալ՝ չորանան և յառաջ եկեալ ստեղունքն: - 776. Որպէս *ծառ* մերկացեալ ի պտղոյ՝ այլ ո՛չ ըստ ունակութեանց. և նովին ունակութեամբ վերստին պտղաբերի ինքն: - 782-783

**ԾԱՌԱՅ +** Երկոտասաներորդ՝ ասեն թէ աստուած առնէ զոմն աղքատ և զոմն մեծատուն տէր՝ և *ծառայ*. իշխան՝ և իշխեցեալ: - 19. Դարձեալ ասեմք, եթէ առնէ աստուած մեծատուն և աղքատ, տէր և *ծառայ* և այլն, զի ի միմեանց օգտեսցին: - 19. Եւ ի ձեռն տէրանց խնամէ՛ *զծառայս* և զհնազանդեալս: - 19. Այս է մեկնութիւնն թէ՝ հաւասարն աստուծոյ՝ յափշտակութիւն և զրկումն չհամարէր իւր *զծառայի* կերպարանս առնուլ. զի ո՛չ ունէր յայլմէ կասկած խլելոյ զփառսն. զի ի՛ւրն է սեպհական: - 39. Դարձեալ քննեսցուք ըստ մեզ. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ հայր մեծ է քան զորդի. զի երկոքին նոյն ինքն աստուածութեանն իմանին. ըստ այնմ որ զմեր նուաստ և տկար բնութիւնս միացոյց ընդ իւրում աստուածութեանն, և անտեսանելին տեսանիւր՝ և *ծառայի* կերպիւ շրջէր վասն տնօրէնութեան՝ ասի փոքր յայս միաւորութեանս քան զհայր. իսկ ըստ այնմ որ է՛ անճառ և նախքան զյաւիտեանս ծնունդ ի հօրէ՛, հաւասա՛ր է հօր և ոչ փոքր: - 40. Իսկ զմիւսն զօրութեամբ և բնութեամբ սահմանելի. զի արարած և պաշտօնեայ և *ծառա՛յ* է ասեն: - 51. Եւ զի աստուած է՝ ո՛չ կարէ ասիլ ստեղծւած կամ արարած կամ պաշտօնեայ կամ *ծառայ*: - 52. Եօթներորդ՝ զի թէ մեք որպէս և եմք ընդ լծով ծառայութեան՝ այսպէս և նա՛, զիա՞րդ յառակսն որ յաւետարանն՝ յետ *ծառայիցն* որդի առաքի...: - 67. Վեշտասաներորդ՝ մանաւանդ զի յոյժ անվայելուչ է կարգել *զծառայն* ընդ տեառն՝ և զստեղծւածն ընդ ստեղծողին՝ յորժամ ա՛յլ է բնութեամբ: - 67. Եւ ո՛չ ասի *ծառայ* վասն ծառայական մարմնոյն. այլ միշտ տէր և ազատ: - 78. Որք **բ** անձն և **բ** բնութիւնս՝ և **բ** կամս՝ և **բ** գործս բաժանեն քրիստոսի. **բ** որդի՝ և **բ** քրիստոս յայտնապէս ասեն. զմինն տէր, և զմինն *ծառայ*, զմինն բնութեամբ որդի աստուծոյ, և զմիւսն շնորհօք. և այլն: - 82. Այն որ նըւաստացոյց զինքն ի յունայնութիւն մարդկան, եղև ի կերպ *ծառայի*՝ և գործով և կրիւք և նմանութեամբ մարդկան. և կերպարանօք գտաւ մարդ. զի ի վեր էր քան զմարդ՝ և քան զկերպարան մարդոյ: - 93. Եւ դարձեալ՝ եթէ շնորհօք որդի և օծեալ, և ո՛չ աւելի նա քան զմեզ. զի և մեք չեմք *ծառայ*, այլ՝ որդի: - 94. Ա՛րդ՝ ներքնագոյն սիրովն խնամէ աստուած զարարածս. և առաջին դասք հրեշտակաց զվերջինսն. և հարք զորդիս. և վարդապետք զաշակերտս. և իշխանք զիշխեցեալս. տեարք *զծառայս*. և այս սիրովս շարունակին ընդ նոսա: - 143. Երկրորդ՝ զի որպէս *ծառայ* առ տէրն՝ ընդդէմ աստուածակերպ իմացմանն մեղանչեաց: - 150. Իսկ Առինչ կոչի, ո՛չ որպէս առ մեզ առինչք են մակագոյեղքն. այլ գոյացական, կամ բաղդատական. որպէս ծնօղ. ծնեալ. բղխօղ. բղխեալ. կամ արարիչ և տէր արարածոց և *ծառայից*: - 172. Այլ և ըստ համարոյն՝ կնքէ՛ զինչս թագաւորաց. և չտայ գողանալ *ծառայից*. և զգողացեալն յայտնէ և յանդիմանէ: - 178. Եւ երկիրս անշարժ է տեղեաւ, ետ սմա ապականիլ երեսօք. զի տեսեալ մարդիկ եղական և *ծառայ* իմասցեն զնոսա. և մի աստուածս կարծեսցեն և մոլորեսցին. որպէս ասէ նիւսացին ի գիրս կազմութեան: - 182. Նախ՝ զի *ծառայք* են միշտ վասն այլոց. որպէս մարդս միշտ տէր է. և անասունքն տէր և ծառայք. զի *ծառայք* են մարդկան, և տէր բուսոց. իսկ բոյսք և տունկք միշտ

*ծառայք* են: - 214. Հինգերորդ՝ օգնական ետ զկենդանիքդ մարդոյն. որպէս *ծառայք* տեառնն. անուամբ պարտ էր ճանաչել զնոսա: - 219. Հինգերորդ՝ յա՛յտ է ի փախուցելոցն որ երկնչին ի մարդկանէ որպէս զապստամբեալ *ծառայս*: - 220. Հինգերորդ՝ զի մարդն իշխան և տէր է ամենայն կենդանեաց. վասն որոյ ամենայն կենդանիք գլխակո՛ր են իբրև *զծառայ* և հնազանդ. և մարդն ուղղաձև իբրև ազատ և թագաւոր: - 233. Վեցերորդ՝ զի ո՛չ պատուաւորքն մեծարեին, և ո՛չ անարգք անպատուեին. այլ ընդդիմակն սոցա. զի ո՛չ կարէին ճանաչել զտէրն և *զծառայն*. զազատն և զանազատն: - 238. Երկրորդ՝ աստուած տէ՛ր է և իշխան և ինքնակալ արարածոց. և զամենայն երևելիս հնազանդ և *ծառայ* արար մարդոյն: - 271. Եւ օրէնք՝ տեառն առ *ծառայս*: - 277. Երրորդ՝ յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ ի յօգնութիւն. զոր մարդիկ յուսահատեալ էին եթէ վասն մեղաց մերոց եթող զմեզ աստուած ի ձեռաց. և նա ի յօգնութիւն կոչեաց զանուն տեառն աստուծոյ. այսինքն զի տէր է՝ ո՛չ գարշի ի *ծառայից* իւրոց. և զի աստուած է՝ էա՛ծ զմեզ աստ ոչ ի կորուսանել, այլ ի կեցուցանել: - 289. Իններորդ՝ զի զայս ո՛չ ի ձեռս *ծառայից*, այլ ինքնին ընդ առաջ ել աբրահամու և ետ: - 302. Երեքտասաներորդ՝ որպէս զհետ իսահակայ չոքան երկուք ի *ծառայիցն* և կացին ի բացուստ: - 306. Հինգերորդ՝ յովսէփ ի տան հօրն ազա՛տ էր, և յեգիպտոս եղև *ծառայ*: - 313. Եւ տէր մեր ազատ յերկինս առ հայր, և յերկրի եղև *ծառայ* զկերպարանս *ծառայի* առեալ: - 313. Եւ այսպէս ամենայն սպասաւորք նորա և *ծառայքն* որք սրով և հրով վախճանեցան: - 322. Նա՛խ՝ գուժ լծոց եզանցն՝ և սպասաւորացն մահ. և գուժկան ձևանայր դև մի ի կերպարանս *ծառայիցն* յոբայ: - 322. Վասն է՞ր այնչափ դիմամարտս յարուցանէր բանսարկուն ի վերայ յոբայ. որպէս զկինն և զբարեկամսն և *զծառայսն* և զայլսն: - 325. Նա՛խ՝ զի *ծառայ* և գերի պահէին: - 335. Չորրորդ՝ և զայնպիսի հիւրսն գերի՛ և *ծառայ* չարչարեցին: - 335. Դարձեալ՝ որպէս *ծառա՛յ* են կենդանիք և սպասաւոր մարդկան. նոյնպէս և յօրինակ ընտրութեան մարդկան ընտրեցան զուարբս և զանսուրբս նշանակելով այսպէս: - 364. Նա՛խ՝ զի խստասի՛րտք էին և անողորմք. և ո՛չ տային հանգչիլ *ծառայիցն* և անասնոցն: - 371. Երրորդ՝ *ծառայք* և վարձկանք հրամանաւ տէրանց: - 389. Եւ որպէս կնոջ ընդ հրամանս առնն իւրոյ յանցանել պոռնկութենէ, նոյնպէս և զաւակաց, և *ծառայից*, և աշակերտաց, և հնազանդելոց, և ժողովրդոց. նոյնպէս և հոգիս մեր ելեալ ի հրամանացն աստուծոյ՝ պոռնկութիւն է նմա. եթէ ըստ գործոց. եթէ ըստ հաւատոց: - 389. Նա՛խ՝ զի երկիւղ *ծառայիցն* է, և վարձ մշակաց: - 403. Նա՛խ՝ զի մարդն տէ՛ր է և թագաւոր. և անասունքն *ծառայ* ընդ անցաւոր տէրանց. և *ծառայքն* պատուհասին. որպէս առ ջրհեղեղաւն: - 416. Երրորդ՝ *ծառայ* լինի մեղացն: - 424. Քսանևե, երանեաց զկանայս և *զծառայս* սողոմոնի: - 441. Էութիւն առ էութիւն. *ծառայ* առ *ծառայ*. բանն առ բան: - 463. Դարձեալ՝ մարդեղութեամբն տէրն եղև *ծառայ*: - 470. Իսկ ըստ կոչման, որպէս քրիստոնեայք. մկրտեալք. *ծառայք*. և ստեղծեալք: - 476. Երկրորդ՝ կապեալ ածաւ ի տունն աննայի. և ի *ծառայէն* ապտակեցաւ. և պետրոս գ անգամ ուրացաւ: - 492. Յայնժամ փախուցեալ սատանայ իբր զապստամբ *ծառայ*. և մտեալ յորջն դժոխոց կարծէր ամրանալ անդ և ունել զհոգիսն: - 503. Իններորդ, զի մկրտութիւնն է գործ քահանայութեան. և քահանայութիւնն է ազատ և ո՛չ ընդ ումեք հարկի ներքոյ. իսկ կինն *ծառայ* և ոտք է առն. վասն այսր հարկի ո՛չ է պարտ *ծառային* առնել զգործ տեառն...: - 589. ...որպէս և գրեալ է ի գիրս նիկիական կանոնացն եթէ *զծառայս* ի ժառանգութիւն եկեղեցւոյ կարգել ո՛չ հրամայեմք. - 589. ...քանի՞ ևս առաւել հերձուած մեծ է կանանց. որոյ ասաց աստուած թէ «առ այր քո դարձ քո և նա տիրեսցէ քեզ» հրաման տալ զգործ քահանայի առնել որ ազատա՛ց է և ո՛չ *ծառայից*: - 589. ...ի թէ մանկութիւնն է և թէ մեռանիլն, երկիւղի ժամանակ է. որպէս *ծառայ* ի տեառնէ: - 631. Իսկ մատռւակն յոտն կացեալ, նշանակէ՛ *զծառայն* ի գործ սպասու: - 656. Եւ բ *ծառայքն* սպասաւոր հրեշտակքն: - 682. Որպէս *ծառայքն* փարաւոնի ի տան բանտին ընդ յովսեփայ: - 689. Քսանևմի, և յառակս տնտեսին զոր կացոյց տէր ի վերայ *ծառայիցն* տալ կերակուր. զոր յետոյ տէրն եկեալ գտցէ այնպէս՝ երանի է *ծառային* այնմիկ. ապա թէ ոչ՝ ընդ մէջ կտրեսցէ: - 693. Զի որպէս աստ եղև *ծառայ* մեղաց, լիցի և անդ հարկատու պատժոց: - 751. Այլ և մանաւանդ վասն աստուծոյ ընդ *ծառայս* իւր սիրով միաւորութեանն: - 757. Նա՛խ՝ զի առ նոսա միաւորեալ է քրիստոս իբր տէր ընդ *ծառայս*. իսկ միաւորի ընդ եկեղեցի իբր փեսայ ընդ հարսին. և գլուխ ընդ անդամոց: - 757. Տէրն զգանձն մատանեաւ դրոշմեալ տայ ի *ծառայս*. և մատանին ի ձեռին է. երբ խնդրէ՝ թերին յանդիմանի: - 769. Մեր գործքն և յաստուծոյ տուեալ բարին հաւատով կնքի. և պակասն յանդիմանի այժմ ի խղճէ մտաց որպէս ի գրոյ. և անդ ի դատաւորէն, որ չար *ծառայ* կոչէ: - 769

**ԾԱՌԱՅԱԲԱՐ +** Ո՛չ թէ նոր իմն տեսակ և կամ նոր աշխարհ. այլ զեղելոցս նախախնամութիւնն. և ի նոյնութիւն կալն հայր կամի և որդի կատարէ՛. ոչ *ծառայաբար* և անուսումնապէս. այլ տիրաբար և

հանճարով: - 46. Ոչ թէ նըւաստ է քան զհայր, կամ *ծառայաբար* ծունր կրկնելով բարեխօսէ՛: - 48. Բայց սոքա և յոյնք իւրեանց ամսամտօք ո՛չ վարին. այլ *ծառայաբար* զհետ երթան այլոց: - 201. Իններորդ, նոքա *ծառայաբար* մատուցանէին. ուստի յա՛յտ է զի ո՛չ կարէին նստիլ ի սրբութիւնսն կամ ի քաւութիւնսն...: - 354

**ԾԱՌԱՅԱԿԱՆ +** Եւ ո՛չ ասի ծառայ վասն *ծառայական* մարմնոյն. այլ միշտ տէր և ազատ: - 78. Երրորդ՝ ի նոյն իսկ ի ձևոյ շինուածոյ մարդոյն. զի ուղիղ գոլով՝ զիշխանականն նշանակէ. իսկ կենդանիքն կո՛ր գլխով *զծառայականն* ցուցանեն: - 220. Եւ ակամայքն հարկաւորք են և *ծառայականք*. և առ աստուած ակամայ կիրք ո՛չ տեսանի: - 501. Իսկ տէր մեր ի մարդեղութեան իւրում՝ զակամայն ո՛չ կրեաց. զի հա՛րկ է և *ծառայական*: - 502. Զի այս որդիական երկիւղէ, և այն *ծառայական*: - 538. Դարձեալ՝ անկատար սէր է *ծառայական* երկիւղն վասն պատժոյն: - 576. Դարձեալ կոչին *ծառայականք*, զի և ի խառնուածոյ մարմնոյն գոյանան. որք ո՛չ հետևին միմեանց. զի որ ի խառնուածոյն ողջախո՛հ է, նա ո՛չ խոհեմ կամ արդար կամ արի կարէ գոլ: - 581. Եւ այսպիսիքս կոչին *ծառայականք*. զի ի հարկէ խառնուածոյ մարմնոյն լինին ողջախոհ կամ արի և այլն: - 581

**ԾԱՌԱՅԱԿԻՑ +** Եւ ասացաւ նոցա հանգչիլ. մինչև լցցին *ծառայակիցք* և ընկերք նոցա: - 648

**ԾԱՌԱՅԵԼ +** Նախ՝ եթէ աղքատութիւն և մեծութիւն տիրելն և *ծառայելն*, է՛ յաստուծոյ. սակայն ոմանց կամելով՝ և ոմանց ներելով և թոյլ տալով. այսինքն զբարի մեծատունս և զաղքատս կամելով առնէ. և ըզչարսն ներելով և թոյլ տալով առնէ: - 19. Որպէս բոյսք վասն անասնոց. այսինքն է՛ այլոցն. ուստի անասունք կերակրիլով *ծառայեն* մարդոյն: - 230. Քսանևը՝ քանի՞ ամ *ծառայեցին*. և յորո՞ւմ աւուր ելին: - 283. Չորրորդ՝ առանց ձանձրութեան *ծառայէ* նմա: - 575. Սրբութիւն սրտին զորկրամոլութիւնն. զի սրբութիւն սրտին ո՛չ *ծառայէ* որովայնին ըստ օրինակի անբան անասնոց: - 583. Կամ լինէիր ազատ որպէս զօգոստոս. որում բոլոր աշխարհ *ծառայեաց:* - 761

**ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ +** Եօթներորդ՝ զի թէ մեք որպէս և եմք ընդ լծով *ծառայութեան* այսպէս և նա՛, զիա՞րդ յառակսն որ յաւետարանն՝ յետ ծառայիցն՝ որդի առաքի. զոր տեսեալ բաժանօղք այգւոյն ասեն՝ «սա՛ է ժառանգն և սպանին զնա»: - 67. Նա՛խ՝ զի յորժամ մարդն անհնազանդ եղև տեառն իւրոյ արարչին, յիրաւի անհնազանդք եղեն և մարդոյն անասունք տուեալ նմա ի *ծառայութիւն*: - 220. Նաև յեգիպտոս **դծ** ամ խոստացաւ *ծառայութեան*. և զերեսուն ամն յաւել վասն մեղաց ժողովրդեանն: - 292. Քանի՞ ամ կացին ի *ծառայութիւն*: - 337. ի յայսցանէ զ**ճխդ** ամն ի *ծառայութեան* էին. և զայլն ի յազատութեան: - 337. Եւ կաւագործութիւնն խստացաւ ի մովսիսի **իբ** ամէն ի վեր. որ լինի **ծթ** ամ խիստ *ծառայութիւն* նոցա: - 337. Չորրորդ՝ զի յայտնեսցի թէ՝ ի մէջ *ծառայութեանն* յեգիպտոս այնքան բազմացոյց զնոսա խնամքն աստուծոյ. այսքան բազմութիւնս ի տեղիս իւրեանց խաղաղութեամբ բնակեալ՝ ո՞րքան անթիւ բազմացին: - 377. Երրորդ՝ փրկեաց ի բռնռ *ծառայութենէ* սատանայի...: - 473. Չորրորդ՝ փրկեաց ի մահուանէ...: - 473. Իններորդ՝ զի աւետիս հարցն հաստատեսցէ. զի անսո՛ւտ է խոստմունք աւետեացն աստուծոյ. և որպէս զայս աւետիս ուխտի կատարեաց, նոյնպէս և զայլսն կատարեսցէ. այսինքն ի *ծառայութենէ* ազատութիւն, և արքայութեան խոստմունքն: - 485. Եւ տէրն ի մարդեղութեանն զկամաւո՛րն կրեաց յինքեան և ո՛չ զակամայն. զի ո՛չ էր ի ներքոյ հարկի և *ծառայութեան* բնութեան որպէս մեք. այլ տէր և ազատ յամենայն կրից: - 501. ...բայց թէ ազատեալ լիցի տն կամօք. որպէս նեսիմոնս այն. իսկ թէ զայր որ ընդ *ծառայութեամբ* է՝ ո՛չ հրամայեցին հայրապետքն սուրբք գալ ի յաստիճան եկեղեցւոյ...: - 589. ...զի բազում արգելմունք գոն պսակին. որպէս ազգակցութիւնն հոգևոր կամ մարմնաւոր. կամ տկարութիւն բնութեանն. կամ պոռնկութիւնն. կամ այսահարութիւնն. կամ *ծառայութիւնն*. կամ բռնութեամբն. կամ այլ ինչ այսպիսի պատճառ. որով բաժանին այրն և կինն: - 610. Իսկ յառնելն մեր ի յօրհնութիւն, նշանակէ նախ ի մեռելութենէ մեղաց և ի *ծառայութենէ* յառնելն: - 627. Արդ եգիպտոս նշանակէ՛ զաշխարհս որ է՛ հալոց չարութեան և տեղի *ծառայութեան* մեղաց և սատանայի որ է՛ փարաւոն: - 682. ...այլ յորժամ բոլոր արարածք ազատեսցին յապականութենէ *ծառայութեան* որպէս զոր հռօմ յայնժամ և մարմինք մարդկան յանապականութիւն վերափոխեսցին: - 717

**ԾԱՍԿԵԼ +** Պտուղն որ հատանի և *ծասկի* և ի մարմին փոխարկի. ո՞րպէս է անապական: - 223. Պտուղքն դրախտին շօշափելիք են և կերակրելիք. հատանի և *ծասկի* և փոփոխի ըստ պատահական որակացն. և անապական մնայ ըստ գոյացութեանն և ներգործութեանն ի կերօղն: - 223. Իններորդ՝ աղալն յերկանս. յաղորիս հոգւոյ և մարմնոյ *ծասկել*: - 339

**ԾԱՍԿԻՉ** - Ատամունք՝ վարդապետք և մեկնիչք և *ծասկիչք* հոգևոր կերակրոյն: - 534

**ԾԱՐԱՒ +** Ջրաղցն՝ *զծարաւն* մարդո՛յն ասեն: - 85. Կիրք՝ *ծարաւն*. և Ներգործութիւն՝ արբուցումն. որ ասէր՝ «եթէ որ *ծարաւի* իցէ՝ և եկեսցէ առիս և արբցէ»: - 85. Երեսուներորդ՝ *զծարաւսն* լնու: - 207. Երկրորդ՝ զոր ախորժակն ունի զկարօտութիւն՝ զա՛յն տեսանէ. որպէս քաղցեալն զկերակուր. և *ծարաւն* զջուր: - 268. Ութերորդ՝ թշնամիք եղեն կիրք պատժոցն. այսինքն մահ՝ ապականութիւն՝ տանջանք՝ հիւանդութիւնք՝ սով՝ և *ծարաւ*՝ և այլն ամենայն սոքա ի կրիցն են: - 277. Ուրեմն յա՛յտ է զի կրեաց զկամաւորն. և զանանգոսնելին, որպէս և *ծարաւն*: - 383. Երկրորդ, քաղց և *ծարաւ* և առանց վաստակոց: - 393. Երկրորդ՝ քաղց և *ծարաւ* մեղաւորաց. և առանց վաստակելոյ և գործելոյ: - 393. Քանանէ, սուսեր եղև ծնօտն և աղբիւր *ծարաւոյն*: - 423. Քանանէ, ունա՛յն էր ծնօտն ի պատերազմին, և լի՛ էր *ծարաւոյն*: - 423. Երեսուներորդ, ի տեառնէ յաջողեալ զօրութեամբ ծնօտին, և նովաւ զօրացեալ մեծ *ծարաւն* սամփսոնի: - 423. Եւ ինքն որդիէ՛ զօրութիւն հօր. և *ծարաւ* փրկութեան մարդկան, նովաւ զովացեալ: - 423. Երրորդ՝ ջուր բեթլեհէմի է՛ տէր մեր. որ *զծարաւս* մեր զովացոյց: - 434. Եւ է՛ բնականն կիրք, որպէս քաղց. *ծարաւ*. ննջել. աշխատիլ. և այլն: - 496. Որպէս քաղցն և *ծարաւն*: - 502. Քաղց է ըստ մարմնոյ՝ թերութիւն ստամոքսի. իսկ *ծարաւ*՝ տապութիւն ջերմութեանն: - 584. Դարձեալ՝ ջուր զաղտս լուանայ. *զծարաւս* շիջուցանէ. զպատկերս ցուցանէ: - 591. Այսպէս շնորհք հոգւոյն սրբոյ ի մկրտութեանն զաղտս մեղաց լուանայ. *զծարաւ* հոգւոյն բանիւն աստուծոյ շիջուցանէ. և զկորուսեալ պատկերն աստուծոյ դարձուցանէ: - 591. ...որ ամենայնիւ ընդ դէմն փոխի ուտելն և ըմպելն ի ծոմ և ի *ծարաւ*. ծաղրն ի սուգ. հեշտութիւնն ի տքնութիւն. և ի չարչարանս և այլն: - 657. Դարձեալ՝ ցուցանէ՝ իբր թէ սիրելոյն որ մեռաւ՝ կցորդիմք և չարչարեմք զմարմինս. մերկանալով, ի սով և ի *ծարաւ*, ի մութն և ի հող որպէս նա ի գերեզմանի եղև: - 670. Իսկ առաջին պակասութիւն է մարմնոյն ստ՝ զի է՛ մահկանացու՝ յապականացու՝ և չարչարելի. որպէս քաղցն՝ *ծարաւն* հիւանդանալն և այլն. - 722. Տեսիլ դիւաց: Աղաղակ: Նախատինք: Պապակումն *ծարաւոյ*: - 751. Ոմանք ասեն պակասութիւն զքաղց և *զծարաւ*՝ զերկիւղ և զայլն. որք են պակասականք բնութեան զորս կրեաց քրիստոս...: - 781

**ԾԱՐԱՒԻ +** Չորրորդ՝ ի տիպն քրիստոսի որ ասէր *ծարաւի* եմ և ո՛չ էառք: - 434

**ԾԱՐԱՒԻՄ, ԾԱՐԱՒԵՄ +** Եւ թէ *ծարաւին* գետք որ ի ծով մտանեն. և անձրևք հանգուցանեն զնոսա: - 208. Եօթներորդ՝ մելքիսեդեկ ինքնին մատոյց զպատարագն քաղցելոց և *ծարաւելոց*. որպէս և քրիստոս ո՛չ միջնորդօք հրեշտակաց կամ մարդկան, այլ ինքնին բաշխեաց զմարմին և զարիւն իւր՝ քաղցեալ և *ծարաւեալ* ազգի: - 301. Դարձեալ՝ կարօտ էր մարդասէրն աստուած, գայ ի համբոյր *ծարաւելոյն* նմա արդարոյն: - 311. Եւ որք *ծարաւին* նմա՝ լիանան. և հակառակքն ունա՛յն մերժեցին: - 423. Դաւիթ *ծարաւեալ* ջրոյն բեթլեհէմի ծնիցելոյն ի կուռէ. և *ծարաւեալ* տէրն ի խաչին փրկութեան մարդկան ազգի: - 438. Ուստի յա՛յտ է զի յորժամ կամէր՝ քաղցնոյր և *ծարաւէր*: - 501. Զի նման է ջրգողեալ հիւանդի. որ որքան աւելի խմէ, առաւել *ծարաւի*: - 570

**ԾԱՐԱՒՈՒՄՆ +** Ո՛չ նոյնն մարմնապէս, այլ նմանն հոգէպէս. *ծարաւումն*, խաւարն, հրախառն կարկուտն, ժահահոտն, և այլն ըստ կարգի: -751

**ԾԱՒԱԼԵՄ +** Երրորդ, հոգին սուրբ որ քրիստոսիւ *ծաւալեցաւ*: - 386. Եւ շնորհք իմաստութեան ի մեզ *ծաւալեալ*...: - 532. այլ ա՛յս է՝ զի իւրաքանչիւր մարմինք սրբոց պայծառասցին էպատիկ քան զարեգակն. որպէս տեառն մերոյ ի թաբօր լերինն. և թ դասուց հրեշտակաց լոյսն յերկիր *ծաւալին*. զի զօրութիւնք երկնից շարժեսցին: - 728. Նոյնպէս և երբեմն յուզել ուրախութեանց. ի փեռեկեալ թոքոյ ի կոտորումն շնչոյն, ի թաղանթէ՛ որ առ լերդաւն՝ հիւք ինչ *ծաւալի* առ նոյն ասացեալ տեղի. ելեալ գոլորշեացն նմանապէս առաջնոյն. և լինի քաղցրագոյն արտօսր. վասն ասացեալ հիւթոյն ի քաղցրորակն անօթոյ: - 787

**ԾԱՒԱԼՈՒՄՆ +** Եւ ցուցանէ զմիոյն ի բազումս *ծաւալումն* շնորհաց հոգոյն: - 60. Պատասխանեմք, այն որ ասի հոգի քրիստոսի, և թէ՝ փչեաց, և թէ՝ առաքեաց, յայն սակս ասացան, զի *ծաւալումն* հոգւոյն սրբոյ յաղագս մարդկան՝ գալստեամբն քրիստոսի եղև: - 61

**ԾԵԾ +** Հինգերորդ՝ *ծեծ* հարկանողացն. որպէս ուռունք զերկաթս ծեծողաց: - 752

**ԾԵԾԵՄ +** Սա՛ ետես զգեղմն իմանալի յորժամ *ծեծէր* զցորեանն ի կալն: - 420. ...և ձեռամբ զծեռն *ծեծեալ*, - 670. Հինգերորդ՝ ծեծ հարկանողացն. որպէս ուռունք զերկաթս *ծեծողաց*: - 752

**ԾԵՂ +** Նա՛խ՝ զի զնման և զաննմանն ծնանի. որպէս հատն զցորեանն և *զծեղ*: - 256

**ԾԵՐ +** Ասեմք առ այս, եթէ այսու վկայե՛ս և դու մեզ՝ թէ ո՛չ է հարկ. զի ի բոլոր քաղաքն այնքան բիւր մարդիկ՝ *ծեր* և տղայ՝ ե՛րբ և ո՛ւր ի մի շարժումն աստեղաց ծնան, որք ի միասին կործանեցան. կամ

բազմութիւն զօրացն. կամ որք ի նաւին կային. զի սոքա ամենեքեան յայլեայլ ժամանակս և այլեայլ շարժումն աստեղաց էին ծնեալք. ապա ուրեմն ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. Հին աւուրց որ է *ծերն* չորս յատկութիւն ունի: - 114. Դարձեալ՝ գիտելի է, զի հին աւուրց և *ծեր* ետես դանիէլ...: - 115. Որ նշանակէ հին աւուրց *զծերն*. և մանուկ զանծերանալին: - 115. Նախ՝ նշանակէ *ծերն* զի սկիզբն է ամենայնի: - 115. Երկրորդ՝ *ծերն* նշանակէ զանսկիզբն գոլն. և մանուկն զանվախճանն. զնոյն միմեամբք՝ և ո՛չ այլ և այլ: - 115. Եւ նշանակէ *ծերն* զժամանակաւ նախն: - 115. Երրորդ՝ կոչին *ծերք*. զի *ծե՛րք* են և ի սկզբանէ՛ եղեալք յարարչադիր հրամանէն, թէ՝ «բղխեսցէ երկիր ծառ պտղաբեր» և այլն: - 214. Տղայն զմերձն տեսնու, և *ծերն* զհեռուն: - 227. Զի՞նչ է որ տղայն զմերձն աղէկ տեսնու. և *ծերն* զհեռուն: - 239. Եւ թէ այս երակս հո՛վ է և գէջ, ի հեռուն աղէկ տեսնու և ի մօտն վատ. որպէս *ծեր* մարդն: - 239. Մանուկ. Պատանեակ. Երիտասարդ. *Ծեր.* և Զառամացեալ: - 265. Իսկ ծմեռն, և յինն ժամէն մինչև յերեկոյ և բոլոր գիշերն, և սպիտակաթոյր հիւր պլղամին, և *ծեր* մարդ, ըստ նմանութեան ջրոյ ցուրտ և գէջ գոլով. վասն որոյ սպիտակի և ցրտանայ և պակասի զօրութեամբ: - 266. Յիսուն**Ե**, Թուղթ. և *ծերոցն*. և հասակի մարդոյս: - 284. Դարձեալ՝ որ քան յերկարի ժամանակս, մաշի՛ երկիր և ի ծերութիւն երթայ և տկարանայ. որպէս *ծեր* մարդոյն զօրութիւնն պակասի և ցաւքն առաւելու: - 292-293. Երկոտասաներորդ, մովսէս ի *ծերս* ընտրեաց և ետ ի հոգւոյն: - 328. Դարձեալ՝ **ղ** հասակ փոխի մարդոյս. մանուկ. երիտասարդ. կատարեալ հասակ. և *ծեր*: - 351. Չորրորդ՝ այն տղայ հասակի. և աստ երիտասարդ. և անդ *ծեր*: - 355. Ի խոստման աւետիսն *ծե՛ր* էր աբրահամ, և կինն ամուլ. զի մի՛ անյուսացին ի բնութիւնն նայելով. այլ ի բանն աստուծոյ որ ամենազօ՛ր է. վասն այն ասացաւ անթիւ լինիլ զաւակացն. և եղև այնպէս: - 377. Հինգերորդ՝ թիւն զընտրութիւն՝ զդաս՝ և զկարգն ցուցանէ. զի գո՛յ ի նմա՛ առաջին միջին և վերջին. որպէս զհնւորք. իսկ անթիւն խոտան և աննկա՛րգ է. որպէս *ծերք* և տղայք: - 377. *Զծերս* վասն է՞ր ո՛չ թուէ: - 377. Նա՛խ՝ զի *ծերն* և տղայն պակա՛ս է ի զօրութենէ: - 377. Դարձեալ՝ *ծեր* և կին և տղայք ո՛չ թուին. զի պակասեա՛լ են յարիութեանց: - 377. Երկրորդ՝ զի զգին *ծերոյն* պակաս հրամայեաց. զի **ե** ամեայ տղայոյ երկդրամեան էր. և ի ամենին ի երկդրամեան. և անտի մինչև ի **կ** ամն **ծ** երկդրամեան. և ի **կ** էն յառաջ **ժե** երկդրամեան: - 377. Երրորդ՝ զի *ծերոյն* լուծեա՛լ են տարերքն ի միմեանց. և ապականեալ առողջութիւնն: - 377. Եօթներորդ՝ զի միտքն զախտն շարժէ ի չարն. և ո՛չ ախտն զմիտքն. որպէս ասի, խորհուրդք *ծերոց* զքարինս պատառեն: - 377. Իսկ գովութիւն *ծերոյ*, Նա՛խ՝ զի խափանեալ է ամենայն մեղաց շարժմունքն: - 378. Եւ այս ամենայն պատուականութիւն է *ծերոյն*: - 378. Որ է՛ Տղայ. Մանուկ. Պատանեակ. Երիտասարդ. Ալևոր. *Ծեր*. իսկ երեխայն դեռածինն է: - 378. Որ է՛ տղայն. կատարեալն. և *ծերն*: - 378. Եւ անտի մինչ ի ամն վերջին և *ծեր*: - 378. Եւ այն որ քննէին *ծերքն* խոստովանիլն է. և ապա՛ դնէին ի քաղաքն, ապաշխարութիւնն է: - 392. *Ծեր* մարգարէն որ դարձոյց: - 413. Եւ *ծեր* և հին աւուրցն հայր ետ զթագաւորութիւն որդւոյ: - 441. Վասն է՞ր զմարգարէն սպան առիւծն. զի նա խաբեցաւ ի *ծեր* մարգարէէն: - 443. *Ծեր* մարգարէն որ դարձոյց զնա, արեան տէ՞ր է թէ ոչ: - 443. Ինն**Ժ**, Թէ ո՛չ լինէր *ծեր*՝ **Ե** կերպիւ: - 454. Եթէ ոչ էր խաչեալ քրիստոս՝ լինէ՞ր *ծեր* մարմնով: - 479. Նա՛խ՝ զի *ծեր* և հին աւուրց նշանակեցաւ հայր աստուած ի դանիէլէ՛. իսկ որդին նորածին և երիտասարդ հասակաւ: - 479. Երկրորդ՝ զի *ծերն* ո՛չ է կատարեալ հասակ, այլ դարձումն ի նուազութիւն: - 479. Եւ զպղոքոնոս աշակերտաց բազմաց վարդապետ. և *ծեր*, որ զմեռեալս յարուցանէր սքանչելեօք: - 544. Երկրորդ ասեն, **ղ** դասք էին իշխեցօղք ժողովրդեանն. այսինքն իշխանք ցեղիցն՝ և *ծերքն* և դատաւորքն՝ և ատենադպիրքն: - 609. Կամ ի զանազան դիմաց և ազգաց. որպէս այր, կին, *ծեր*, տղայ, ժողովեալ կոչի մի եկեղեցի: - 613. Հաւախօսն է ալևորութիւնն. և Առաւօտն *ծերն* է. որ մերձ է ծագման հանդերձելոյ աշխարհին: - 622. Զի՞նչ է որ առ հասարակ ամենեքեան. այր և կին՝ *ծեր* և տղայ ընդ մեռելոյն ընթանան ի գերեզմանն: - 675. Երկրորդ երիցունք են *ծերքն*. որք ծայրացեալք են կատարելութեամբ: - 711. այսպէս և ննջեցեալք ամենայն *ծեր* և տղայ՝ յառնեն ի մի չափ հասակի երեսնամեայ որ է կատարեալ հասակ որպէս ցուցանի յառաջիկայդ: - 721. Սակայն իւրաքանչիւր ոք անսխալ անդամօք իւրովք յառնէ. այլ ո՛չ երևի թէ սա այր է և նա կին. այն *ծեր* և այն տղայ. զի որպէս հրեշտակք են յերկինս: - 726

**ԾԵՐԱՆԱՄ +** Ա՛րդ՝ երեքն ո՛չ յարմարին աստուծոյ. զի ո՛չ հնանայ և ո՛չ *ծերանայ*. և ամք նորա ո՛չ պակասին...: - 114. Այսպէս ամենայն տարերք ո՛չ *ծերանան* և ոչ թուլանան: - 181. Յորժամ *ծերանայ* մարդն, և սպիտակ ջուրն որ է պալղամն առաւելու, յայնժամ մազն ընդ սպիտակ ջուրն ի դուրս անցանէ և սպիտակի՛: - 240. Եւ այլ ևս. ի վերայ սաղմոսին «մերձեցաւ անձն իմ ի հող» ասէ մեկնիչն, այժմ *ծերացեալ* է բնութիւնս՝ վասն որոյ փութայ ի հող: - 291. Երկոտասաներորդ՝ *ծերացեալ* դաւիթ նստոյց

զնա յաքոռ: - 441. Իսկ ի կատարածի ցրտացեալ լինին մարդիկ ի սիրոյն աստուծոյ իբր *ծերացեալ* աշխարհի. վասն այն ջերմ հրով պատժեսցին: - 731

**ԾԵՐՈՒԹԻՒՆ +** Լուծ. Յորժամ հիւանդանաս՝ մերձ ես դու հիւանդութեան քոյ. և յորժամ մանուկ լինիս՝ մերձ ես մանկութեանն. ի յալևորութեանն՝ *ծերութեանն* ես մերձ: - 37. Որով յա՛յտ է թէ յետ *ծերութեան* մարդկան՝ նոյն ինքն է աստուած. և զայլն նմանապէս իմացիս: - 42. Նախ՝ զի մի՛ կարծեսցի հայր տկար վասն *ծերութեան*: - 105. Նոյնպէս և կեանք մեր. այլայլի ի մանկութենէ ի *ծերութիւն*. յառողջութենէ ի հիւանդութիւն. և այլն...: - 199. Յորժամ պալղամն շատանայ ի մարդն, մազն նօսրանայ. վասն այն մարդն ի *ծերութեանն* լինի ճաղատ: - 240. Իսկ ի *ծերութեանն* լինի հողմն հիւսիսոյ հով և գէջ: - 240. Եւ ի յիսներորդէն մինչև ի **հէ** որ է՛ մետասան է, լինի հասակ *ծերութեան*: - 265. Եւ դարձեալ՝ հասակ մարդոյ չորիցս ունի զփոփոխումն. այսինքն՝ Ի մանկութիւն. Յերիտասարդութիւն. Յալևորութիւն. և *Ծերութիւն*: - 265. Եւ այսպէս միջին հասակս կատարեալ, ծգի մինչև ի **խզ** ամն. որ է **դ ժզ**. և վեցն կատարեալ թիւ է. և աստ տիրէ ալիք և սկիզբն լինի *ծերութեան* մինչև ի **հբ** ամն. յորում է ծայրք կենաց ըստ դաւթի, և թիւ երկոտասան վեցից խորհրդաւոր: - 265. Առաւօտ՝ *ծերութիւնն*: - 265. Եւ յերեկոյ՝ *ծերութիւնն*. որ երեկոյացեալ կենաց և ի մահիճ գերեզմանի ժամանեալ: - 266. Դարձեալ՝ որ քան յերկարի ժամանակս, մաշի՛ երկիր և ի *ծերութիւն* երթայ և տկարանայ. որպէս ծեր մարդոյն զօրութիւնն պակասի և ցաւքն առաւելու: - 292-293. Ութերորդ՝ զի ասացաւ աբրահամու թլփատիլ ի *ծերութեան* ժամուն իննսունինն ամաց գոլով: - 304. Մանկութեան, երիտասարդութեան, և *ծերութեան*: - 360. Եւ յայսմանէ տես զժամանակ *ծերութեանն* անպատիւ գոլ: - 377. Չորրորդ՝ նշան պատկառելի է *ծերութիւն*. որ զհին աւուրցն տպաւորէ՛: - 378. Տասներորդ՝ զմին ոտն ի գերեզմանէ դրեալ *ծերութեամբն* և պակասութեամբ: - 378. Նա՛խ՝ զի խնայեաց աստուած ի *ծերութիւն* նորա որպէս ի մովսին: - 416. Վասն է՞ր ցրտացաւ ի *ծերութեանն* դաւիթ: - 439. Այլ զի *ծերութեան* որդի էր յեսսեայ, վասն որոյ ի *ծերութեանն* ցրտացաւ: - 439. Իսկ ի քրիստոս ոչ ինչ է անկատարութիւն. ապա և ո՛չ *ծերութիւն* մարմնոյ: - 480. Երրորդ՝ զի քրիստոս զչափ հասակի զաղամայն ունէր, որ նախ քան զյանցանս և ադա՛մ ոչ ունէր հիւանդութիւն և ո՛չ *ծերութեան* փոփոխումն: - 480. Եւ տեառն մերոյ ո՛չ էր լինելոյ. ոչ հիւանդութիւն և ո՛չ *ծերութեան* փոփոխումն: - 480. Չորրորդ՝ *ծերութիւն* և այլայլութիւն մարմնոյ՝ էր դատապարտութիւն յանցանացն...: - 480. Հինգերորդ՝ դարձեալ այլք ասեն եթէ՝ մինչ յաբրահամ ո՛չ էր ալիք *ծերութեան*. զի զնմանէ՛ վկայէ՛ գիր թէ «եղև ալևորեալ և լի աւուրբք»: - 480. Այլ և երկիւղի զգայութեան չորս հասակի մարդոյն. ի մանկութեան, յերիտասարդութեան, յալիս և ի *ծերութեան*: - 493. Վեցերորդ ըստ երբին. այսինքն թէ ե՞րբ գործեն զմեղքն. ի տղայութեա՞ն, թէ ի *ծերութեան* որ մեծ մեղք է. ի սո՞սկ աւուրս, թէ ի տէրունական տօնս. զի որ ի տօնս մեղք գործէ, առաւել պատժի քան զմիւսն: - 565. Երկրորդ ըստ տնկոց ի մանկութիւն և ի *ծերութիւն*: - 663. Հինգերորդ, զի **գ** է հասակ մարդոյս. մանկութեան երիտասարդութեան և *ծերութեան* յորում փոփոխիմք վարուք. վասն սոցա **գ** հանգիստ դնեմք: - 675. Իսկ մանկութիւնն թերի է զի ո՛չ եհաս ի կատարումն. և *ծերութիւնն* պակասութիւն ունի զի անցեալ է զկատարելութեամբն: - 726. Եւ ի մէջ մանկութեան և *ծերութեան* երիտասարդութիւնն է թիւ կատարեալ...: - 726. Եւ որք ի *ծերութեանն* գան յուղղութիւն, որպէս զսէզ դալարին, և տան պտուղ զերեսնաւորն: - 757-758

**ԾԵՓԵՄ +** Եւ նաւքն կո՛ւպրն է ներքոյ և արտաքոյ *ծեփեալ* զի մի՛ վնասեսցի: - 293

**ԾԵՔԱԿԱՆ +** Եւ այլք զհայոյն՝ *ծեքական* և թիւր ուսանին. զի մասնաւո՛ր է լեզու նոցա: - 297

**ԾԻԱԾԱՆ +** Այսպէս և *ծիածանն* յինքն փոխէ զկերպարանն և լինի այլ: - 131. Երեսունենէ) *Ծիածանն*, բակն, և բռիչ աստեղաց. և լոյսն. և փայլակն. և այլն: - 155. Ձ՞ինչ է *ծիածանն* որ կոչի աղեղն: - 203. Քաանք՝ *զծիածանն* պատճառէ յամպս: - 207

**ԾԻԾԱՂԱԿԱՆ +** Դարձեալ՝ մարդն միա՛յն է *ծիծաղական*. և փառաւորիլ վասն ուրախութեան սրտին: - 275

**ԾԻԾԱՂԵԼԻ +** Ասեմք մարմնասիրեացն եթէ՝ մարմնակա՛ն կարծէք զծնունդն ըստ մեզ ո՛վ *ծիծաղելիք*: - 52

**ԾԻԾԱՂԻՄ +** Տասներորդ՝ զի գեղեցիկ լինի ի տեսս աչաց երփն երփն գունով և վէտս վէտս. այսինքն ծաղ ծաղ *ծիծաղի* երեսօք: - 208. Իսկ ներելին թէպէտ որոշի յերիս տեսակս ըստ մեծութեան և նուաղութեան. այլ մանրամասնաբար յանթիւս ելանէ. որպէս *ծիծաղիլ*. վայրաբանել. և այլն: - 568. Թէ զիա՞րդ և որ ի *ծիծաղելոյն* արտասուքն քաղցր. և ի սրտմտութենէն աղի: - 786

**ԾԻԾԱՂԿՈՏ +** Դեղնի երեսն և կարմրի. և մին մարդն սև, և մին սպիտակ լինի. և շէկ և *ծիծաղկոտ* և այլն: - 227. Եւ որ զօղն աւելի ունի, է՛ թեթևամիտ և սրընթաց և *ծիծաղկոտ*: - 245

**ԾԻԾԱՌՆ +** Եւ ի ձայնէն, որպէս ճնճղուկ. *ծիծառն*. խօսօղ. ագռաւ. և այլն: - 220

**ԾԻՆ +** Եւ այնպիսիքն տրամաբանել ո՛չ կարեն վասն հոգևորին. որպէս ի *ծնէ* կոյրն վասն գունոց, քանզի ասեն վարդապետք՝ աստուած լոյս է ո՛չ մարմնոց, այլ մտաց. զոր թէ ոք ո՛չ տեսանէ՝ կո՛յր է: - 32. Եւ ի *ծնէ* զաչս կուրին ստեղծեաց: - 70. Հինգերորդ՝ թոյլ տալով լինին ոմանք ի փառս այլոց. որպէս ի *ծնէ* կուրին. ըստ այնմ՝ «ո՛չ դորա վնաս է և ո՛չ հօր և մօր իւրոյ. այլ վասն փառացն աստուծոյ»: - 158

**ԾԻՐ +** Որպէս կարակնին կէտ անշա՛րժ է, և պատճառէ զբոլորակ *ծիրն*: - 182. Երրորդ՝ զի վեցեակ թիւն ի մէջ ամենայն թուոց առաջին կատարեալ է. և **զ** թիւն է ի բոլորակ ձևն. զի որ քան է ի միջին կիտէն ի բոլոր *ծիրն*, վեց այնչափ է իւր բոլորակ *ծիրն*: - 182-183. Եւ զի սուղ *ծիրս* ընթանայ: - 197

**ԾԻՐԱՆ +** Զի են որ զկեղևն ուտեն և ո՛չ զմէջն. որպէս *ծիրան*: - 213

**ԾԻՐԱՆԱԳՈՅՆ +** Շափիղայ՝ *ծիրանագո՛յն* է. և գտանի ի հնդիկս: - 348. Եւ այն որ վիճա՛կն է՝ *ծիրանեգոյն* հանդե՛րձ է. որ զսեղան հացին և զխնկոցն ծածկէին. և տեսութիւն կամ փրկութիւն թարգմանի: - 425

**ԾԻՐԱՆԻ +** Եւ խառնուա՛ծ է ի նոցանէ *ծիրանի* և կարմիր գոյնն: - 203. Երկրորդ՝ ի *ծիրանին*. զի արքայա՛զն է և թագաւորածին: - 271. Եւ որպէս զպատկեր թագաւորին նկարեն թագիւ և *ծիրանեաւ* և այլովն՝ և անուանեն զպատկերն թագաւոր: - 271. Եւ փոխանակ *ծիրանւոյն* զառաքինութիւն զգեցոյց. որ քան զամենայն զգեստ արքունակա՛ն է: - 271. Այսպէս կոչի և զգեստ մարմնոյն. զի արտաքին զգեստն որպէս *ծիրանին* թագաւորի ա՛յլ է ի զգեցողէն և պատահական նմա և փոփոխական. այսպէս զգեստ ո՛չ ասի մարմին նորա. այլ եկեղեցի սուրբ որպէս ասացաւ: - 319. *Ծիրանին* ջրոյ. զի կոնքիլոսն որ ներկէ՛ *զծիրանին* ի ջրո՛յ է. և Բեհեզն սպիտակ՝ երկրի. զի վուշն յերկրէ լինի: - 342. Յերկրորդ ամին աստուածածինն տրպացաւ ի սեանն, և քառասնօրեայ մանուկն յիսուս ի գիրկն. և խաչ *ծիրանի* յերկուսին ձեռինն: - 485

**ԾԽԱՏԵՍԱԿ +** Երկու գոլորշիք վերանան յերկրէ. մինն չոր և *ծխատեսակ*. և միւսն խոնաւ ի գէճ բնութեանց վերացեալ: - 204. Որ և անդ բաժանի հրատեսակն ի տեսանելիքն. և *ծխատեսակն* ի մազ գլխոյն: - 242. ...և *ծխատեսակ* հիւթն կսկծօղ վերանայ ի գլուխն և թափի՛ ընդ աչսն և լինի արտօսր: - 619. Եւ որպէս այլքն այլ ինչ, և սա՛ *զծխատեսակ* ջերմութիւն սրտի ընդ ցնցուղս ծայրից արտաքարշելով ի կրկին կողմանէ որպէս ասեն բժիշկք: - 786

**ԾԽԵՄ +** Նմանապէս և խունկ *ծխելոյ* ** դ** էր: - 349

**ԾԽՈՒՄՆ** - Նա՛խ՝ որպէս ասեն ոմանք՝ Բուրվառն նշանակէ զմարդկութիւնն քրիստոսի. և Հուրն զաստուածութիւնն. *Ծխումն* զբուրումն հոգւոյն սրբոյ: - 645

**ԾԾԵՄ +** Չորրորդ՝ զի որ քան և *ծծեն* նս խնդրեն զօղ: - 523. Հինգերորդ՝ որ քան *ծծեն* ո՛չ պակասի օղն: - 523

**ԾԾՈՒՄԲ +** Եւ ի բաքու յեզրն կազբիական ծովուն. ուստի *ծծումբն* զօրութեամբ ունի զհուրն: - 208. Արդ՝ յորժամ աղբիւրք ջրոյ՝ մերձին յերակն հրոյ որ է՛ *ծծումբն*, ջերմանան խիստ կամ թոյլ. մերձ կամ հեռի անցանելովն: - 208

**ԾԾՈՒՄՆ +** Նա՛խ՝ որպէս *ծծումն* օդոյ կենդանութիւն է մարմնոյ: - 523

**ԾԿԻԼՆ** - Քսանևէ, Յուդն եղիսէի խաչն էր. *ծկիլն* **է** անգամ: - 413

**ԾՂԻ, ԾՂԻՔ +** Քանի՞ են զօդուածք և ոսկերք մարդոյն... *Ծղինն* **բ** ոսկր: - 243

**ԾՂՕՏ +** Այսինքն նախ արմատն. և յետոյ խոտն. յետոյ *ծղօտն*. և ծնունդն. և ապա՛ տերև. պատանք. և քիստք. և ապա՛ ցորեանն ատոք ի հասկին: - 721

**ԾՆԱՆԻՄ +** Եւ շարժումն նոցա ո՛չ պատճառէ զչար և զբարիս մարդկան. այլ են պատճառք աւուրց և ժամանակաց և եղանակաց. *ծնանելոյ* և աճելոյ. և նշան ապագայից որպէս ասացաք. այլ նշանն ո՛չ է պատճառ չար լինելոյ ումեք կամ բարի: - 12. Ասեմք առ այս, եթէ այսու վկայե՛ս և դու մեզ՝ թէ ո՛չ է հարկ. զի ի բոլոր քաղաքն այնքան բիւր մարդիկ՝ ծեր և տղայ՝ ե՛րբ և ո՛ւր ի մի շարժումն աստեղաց *ծնան*, որք ի միասին կործանեցան. կամ բազմութիւն զօրացն. կամ որք ի նաւին կային. զի սոքա ամենեքեան յայլևայլ ժամանակս և այլևայլ շարժումն աստեղաց էին *ծնեալք*. ապա ուրեմն ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. Ա՛րդ՝ յորժամ *ծնաւ* քրիստոս՝ այնպէս խաղաղութիւն էր՝ որ մին մարդ տիրէր ամենայն աշխարհի: - 27. Արդ՝ թէ ինն ամսով յառաջ թագաւորեալ էր թագաւորն չար, ապա ուրեմն ի ժամանակս

Օգոստոս կայսեր *ծնաւ* քրիստոս. զոր և վկայէ՛ աւետարանն սուրբ: - 29. Առաջին Որ ասեն, կամաւ *ծնաւ*, թէ յոչ կամայ: - 29. Երկրորդ՝ Զէ՞ն *ծնաւ*, թէ զոչ էն: - 29. Երրորդ՝ *Ծնաւ* և դադարեցաւ, թէ ոչ: - 29. Հինգերորդ՝ Կարէ՞ և հայր *ծնեալ* ասիլ ի նոյն բնութենէ գոլ: - 29. Երրորդ՝ հոգին *ծնեա՞լ* է թէ անծին: - 29. Հայր կամա՞ւ *ծնաւ* զորդի թէ յոչ կամայ: - 36. Եւ կամ որպէս յղութիւն հարկ է *զծնանիլն*: - 36. Հա՛րց դու զնոսա՝ թէ դու ի քո հօրէն յառաջ եկեալ կամա՞ւ *ծնար* թէ ակամայ: - 36. Երկրորդ հարցումն չարափառաց, զէ՛ն *ծնաւ*, թէ զոչ էն: - 36. Զի թէ ասեն էր յառաջ քան զծնունդն որդի. իսկ էութիւնն հօր հայրութիւն է. և թէ ոչ էր որդւոյ հայր՝ բառնի յէութենէն իւրմէ, իսկ թէ ոչ էր և յետոյ *ծնաւ*՝ ո՞ւմ արդեօք իցէր հայր. զի ո՛չ էր որդի: - 36-37. Յէից՝ որպէս դու ի քո հօր մէջքն էիր զօրութեամբ, և յետոյ *ծնար* նոր գործութեամբ: - 37. Երրորդ հարցումն հակառակացն թէ՝ որդի ի հօրէ *ծնաւ* և դադարեցա՞ւ, թէ դեռևս *կու ծնանի*: - 37. Եւ թէ դեռևս *ծնանի*՝ անկատա՛ր է ծնելութիւնն: - 37. Այլ մեր պատասխանին առ այս՝ է՛ այս ինչ, թէ միշտ ծնունդ է ի հօրէ ըստ բնութեանն որդի. այլ անձամբ կատարեալ. որպէս լոյս ի հրոյն միշտ *ծնանի* և ոչ է անկատար՝ յօրինակ որդւոյ: - 37. Դարձեալ առարկեն, եթէ աստուած է հայր՝ և անծին է բնութեամբ, և որդի *ծնեալ* է, ապա ուրեմն ո՛չ է որդի աստուած. զի ծնելութիւն և անծնելութիւն հակառա՛կ են միմեանց. որպէս սեաւ սպիտակի կամ լոյս խաւարի: - 38. Դարձեալ զի և ադամ անծին՝ ո՛չ է միայն մարդկութիւն, այլ և *ծնեալն* ի նմանէ ասի մարդ: - 38. Այսպէս և ո՛չ միայն հայր աստուած, այլ և *ծնեալն* ի նմանէ աստուած: - 38. Հինգերորդ առարկեն, թէ իցէ մի և նոյն բնութիւն հօր և որդւոյ, և որդի *ծնեալ* ի նոյն բնութենէ, կարէ՛ ասիլ և հօր *ծնանիլ* ի յորդւոյ ի նոյն բնութենէն. զի բնութիւնն մի է: - 38. Պատասխանեմք թէ՝ կարի՛ յիմարութիւն է հարցումնդ. և զի գոյ հայր ըստ քում բանիդ ծնօղ որդւոյ. ապա ուրեմն ո՛չ կարէ ոչ լինիլ և *ծնանիլ*: - 38. Իսկ այլ վարդապետք ասեն թէ՝ բանիւս այսու՝ ցուցանի կերպ աստուածային ծննդեանն. քանզի ի ծնունդն՝ *ծնեալն* առնու զբնութիւն ծնողին որ է՛ կատարելութիւն: - 41. Արդ ասի որդին *ծնեալ* և ստեղծեալ. զի ի ստեղծմանէն իմանի անփոփոխութիւն հօրն. և ի ծննդենէն միութիւն բնութեանն հօր և որդւոյ: - 41. Զի որպէս առաջին նա՛ *ծնաւ* անսերմն ի կուսէ և ի հոգւոյն սրբոյ, այսպէս և մեք յետ նորա ի ծեռն հոգւոյն սրբոյ *ծնանիմք* ի կոյս աւազանէն: - 41. Որպէս ասէ առաքեալն՝ «աստուած տէրն մերոյ յիսուսի քրիստոսի և հայրն փառաց», այսինքն՝ աստուած վասն մարդկութեանն, և հայր փառացն որ է բանն աստուած ի բնութենէ հօրն *ծնեալ* անմարմին. որ յետոյ միաւորեցաւ ի մարմին: - 44. Հինգերորդ՝ որ բնութեամբ անկարելի է. որպէս *ծնեալն* կրկին *ծնանիլ*. և յուղտու ընդ ասեղ անցանել: - 44. Եւ պատաճառն է այս. զի թէպէտ մի է բնութիւն ծնողաց և *ծնիցելոց*, բայց ոչ ունին զմի կամս. զի հատեալ բաժանեցաւ որդին ի հօրէն: - 45. Իսկ բանն աստուած է՛ *ծնեալ* ի հօրէ՝ այլ ո՛չ բաժանեալ. որպէս ո՛չ բաժանի բան՝ ի մտաց. թէպէտ ի բազում լսելիք մտանէ. և թէ ի վերայ քարտիսի մարմին զգենու: - 45. Երրորդ՝ զի միածին է. զի զայլ ոք ո՛չ *ծնանի*: - 49. Երկրորդ՝ զի անախտ *ծնանի*: - 49. Եւ թէ էր երբեմն հայր առանց բանի և իմաստութեան, ի՞ւ խորհէր յետոյ *ծնանիլ* զորդի: - 51. Դարձեալ հարցանեն թէ՝ հոգին անծի՞ն է՝ թէ *ծնեալ*: - 52. Եւ թէ *ծնեալ*՝ ասեն հա՛րկ է զի լիցի ի հօրէ կամ յորդւոյ. թէ ի հօրէ է՝ լինին բ որդիք և եղբարք: - 52. Եւ թէ յերկուցն՝ ո՛չ է կարօղ հայր *ծնանիլ* և կարօտանայ որդւոյ օգնութեանն. և լիցի անկատար որդի: - 52. Եւ *ծնեալն* յանկատարից՝ նոյն ինքն լիցի և անկատար: - 52. Բայց ո՛չ *ծնեալ* ասեմք՝ և ո՛չ անծին. այլ արտաքս առաքեալ ի հօրէ. որպէս վկայէ քրիստոս թէ՝ «հոգին որ ի հօրէ՛ ելանէ». թերևս ճշմարիտ աստուածաբա՛ն իցէ քան զքեզ: - 52. Եւ ապա՛ զաղամ, զի ունի զսէթ ծնունդ՝ և զևա ո՛չ ծնունդ. այլ հատումն ի նոյն բնութենէ. և ընդ միով սահմանաւ գոլ ծնողին և հատմանն և *ծնիցելոյն*: - 53. Վեցերորդին պատասխանեմք, թէ ասիցես որդին անկենդան է յորմէ հոգին ո՛չ բղխէ. ապա՛ և ըստ քեզ հոգին անբան է զի ըզբանն ո՛չ *ծնանի*: - 61-62. Զի եթէ զբնութիւնն, ահա բաժանեցիք զբնութիւնն ի բղխօղ և ի բղխեալ. որպէս ի ծնօղ և ի *ծնեալ*. որ է մակեդոնի և արիոսի: - 62. Նախ՝ զի խօսքն է ի մտացն յառաջ եկեալ, որպէս ներտրամադրեալ բանն *ծնեալ*. և հոգին սուրբ ի հօրէ բղխեալ. որպէս բանն *ծնեալ*: - 66. Եօթնևժերորդ՝ զի թէ *ծնեալն* ըստ մարմնոյ՝ է առանձնապէս մարդ ապա ուրեմն ծնօղ նորին ո՛չ է աստուածածին, այլ՝ մարդածին: - 68. Կոյսն մարիամ զմիածի՞նն որդի *ծնաւ* ըստ ինքեան, և թէ զանդրանիկն որդի առանձին, և թէ զերկուսն: - 68. Զի թէ առանձին մարդկութեանն, ո՞րպէս է յերկնից իջեալ. զի ի կուսէն *ծնաւ* մարմինն: - 70. Այսպէս և խոնարհագոյնքն են աստուծոյ բանին վասն միաւորութեանն. որպէս մարդ *ծնանիլ* ի կուսէ՛ ժամանակեայ. խաչիլ և մեռանի...: - 74. Ա՛րդ՝ ընդդէմ քումդ խոհեմութեան ո՛րպէս իմանաս ի միում հասարակ բնութեան զբանն *ծնեալ* և զհոգին բղխեալ. իսկ հայր ոչ *ծնեալ* կամ բղխեալ. և անդրադարձեալ ևս: - 74. Ա՛րդ՝ դու առանձնութեամբ քո որ ունիս զհասարակ բնութիւնդ՝ *ծնար* այսօր ի մօրէ՛ կամ մեռար յաշխարհէ՛ և ո՛չ հասարակ մարդկութիւնս: - 74. Ուրեմն և

